ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

II

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2008

ՀՏԴ 941 (497.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Պ 797

Հրատարակվել է պետական պատվերով

Գրքի տպագրությանը աջակցել է
ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ
հիմնարկությունը

Պողոսյան Ստեփան
Պ 797 Հայոց ցեղասպանության պատմություն. II հատոր: Եր.: «Գրական հայրենիք» ՓԲԸ («Հայաստան» հրատ.), 2009թ., 808 էջ:

Պատմագիտական ուսումնասիրության երկրորդ ընդգրկուն հատորը ներկայացնում է Հայաստանը, հայ ժողովրդի դրամատիկ կացությունը դարասկզբին՝ Մեծ Եղեռնից մինչև 1915 թվականը, ինչպես նաև առաջադեմ մարդկության քննադատական կարծիքները Թուրքիայի հայաջինջ քաղաքականության դեմ:

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-5-540-02150-0

© Ստ. Պողոսյան, 2009թ.:
© «Գրական հայրենիք» ՓԲԸ, 2009թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԴԱՐԱՍԿԻԶԲ
1. Քաղաքական և տնտեսական ճգնաժամի հետագա խորացում.....5
2. Սասունի 1904թ-ի ինքնապաշտպանական կռիվները.....16

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՄՈՒԹՑՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՑՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՑՈՒՆԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՑԼԱՄԵՐԺՈՒԹՑԱՆ ԳՈՐԾՈՒՔ
Երիտթուրքերի անցած ուղու և հակահայկական կողմնորոշման համառոտ բնութագրություն
1. Երիտթուրքերի կուսակցությունը թուրքական այլամերժության գործիք.....76
2. Երիտթուրքերը սուլթանի ցեղասպան քաղաքականության ժառանգներ.....112

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԱԴԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԸ.....130

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԱՐԵՎՄՏԱՀԱՑՈՒԹՑԱՆ ՎԻՃԱԿԸ (1908-13 ԹԹ.).....154

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐՆ ՈՒ ՀԱՅԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՑՈՒՆՆԵՐԸ.....181

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1912-1914ԹԹ. 233

ԳԼՈՒԽ ՑՈԹԵՐՈՐԴ
1. ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՑԱՆ ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՑՈՒՆԸ.....311
2. ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՔԱՐՈԶՋՈՒԹՑԱՆ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՋ.....331
3. ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՑԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....346
4. ԵՐԻՏԹՈՒՐՔ ՊԱՐԱԳԼՈՒԽՆԵՐԸ.....363

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ.....414

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ
ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՈՒՄ.....437

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ
ԶՈՐԱՀԱՎԱՔ.....459

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ
ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ.....473

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ
ԹԵՇՔԻԼԱԹԻ ՄԱԽՍՈՒՍԱ.....488

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ
ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....507

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՋՈՐՍԵՐՈՐԴ
ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՋԱՐԴԵՐԻ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ.....570

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ
1915Թ. ԱՊՐԻԼԻ 24.....598

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ
ԱՆՏԱՆՏԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ.....615

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ
ԲՌՆԱԳԱՂԹ.....634

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ
ԲՆԱՋՆՋՈՒՄ ԲՌՆԱԳԱՂԹԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ.....680

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ
ՄԱՀՎԱՆ ՃԱՄԲԱՌԵՐ.....714

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ
1916-1917 ԹՎԱԿԱՆՆԵՐ.....729

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ
ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԲՆԱՋՆՋՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ. ԿԱՐՄԻՐՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ.....749

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԴԱՐԱՄԿԻՋԲ

1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԵՏԱԳԱ ԽՈՐԱՑՈՒՄ

Աշխարհը թևակոխել էր XX դար: Համընդհանուր զարգացման համայնապատկերի վրա, Եվրոպայի հարևանությամբ և հենց Եվրոպայում գտնվող Օսմանյան կայսրության հետամնացությունը վերածվել էր անմեկնելի անախրոնիզմի: Թուրքիայի միայն ծովափնյա շրջաններն էին ներքաշվել կապիտալիստական շուկայական հարաբերությունների մեջ, իսկ ամբողջությամբ վերցրած, տիրապետողը միջնադարն էր, ավատատիրական-բռնատիրական կարգերը: Պատճառը սոցիալ-տնտեսական, քաղաքական, հոգևոր ու ազգային վայրագ ճնշումներն էին, հարստահարությունները: Գյուղի ու գյուղացիության քայքայման գործընթացը չէր ծնում քաղաքային, արդյունաբերական հասարակական խավեր: Ֆաբրիկաների փոխարեն երկրում ամենուր հին մանուֆակտուրաներ էին՝ միջնադարյան մեքենաներով ու ձեռքի աշխատանքով:[1] Միջնադարյան էին նաև կյանքի պայմանները՝ հագեցած ոչնչով չսահմանափակված բռնություններով ու հալածանքներով: Աղետալի վիճակում էին պանդուխտները, մասնավորապես, մշակները, համալներն ու տնային ծառայողները: Շարունակում էր կյանքի, պատվի, ունեցվածքի անվտանգությունը: Ոստիկանությունն ու ժանդարմերիան, զափթիեն ու մուլթեզիմը, ավազակախմբերն ու մուհաջիրները մոլեգնում էին կայսրության ամբողջ տարածքում: 1902թ. հունիսի 26-ին Բեռլինում տեղի ունեցած հանրահավաքում է. Բեռնշտայնը հայտարարեց. «Թուրքիայի ամբողջ վարչական համակարգը միայն մահ է բերում հպատակ ժողովուրդներին»:[2] Անատոլ Ֆրանսը Թուրքիայի մասին ասել է. «Մի հրեշ, որ սարսափում է իր ոճիրներից և վախը վանում է՝ նորանոր ոճիրներ գործելով: Աբդուլ Համիդ 2-րդը 1893-96թթ. խողխողել է 300 հազար հայ և այն ժամանակից ի վեր գարշելի զգուշավորությամբ պարբերաբար ջանում է բնաջնջել այդ ժողովրդին»[3]:

Թուրքերը միանգամայն անփույթ ու անպատասխանատու էին տնտեսական կյանքում տիրող քաոսի հանդեպ, քանի որ դրա զարգացմանն էական մասնակցություն չունեին: Իթիլաֆի առաջնորդ Սաբահեդդինը նկատում է. «Մինչ նվաճված ազգերը զբաղված էին հողագործական, ճարտարագործական և առևտրական աշխատանքով, Թուրք տարրը լքում է իր օջախը, թողնում իր հողերը, ցաքուցրիվ լինում ամեն կողմ թե իբրև զինվորական և թե իբրև պաշտոնյա...»[4]: Ֆ. Էնգելսը նկատել է, որ Թուրքերն առևտրին մասնակցում էին միայն «քարավաններ թալանելով»[5]: Արդյունքում թուրքական բուրժուազիան այդպես էլ չուժեղացավ, սեփական ոտներին կանգնել չկարողացավ ու պայքարում էր ոչ թե վարչակարգի, այլ սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի դեմ: Այդ բուրժուազիան «Օսմանյան կայսրության ամրապնդումը տեսնում էր տարբամերժ նացիոնալիզմի մեջ: Նրա ձգտումն այնքան սաստիկ ու բուռն էր, որ ցեղային տիրապետությունը, ենթակա տարրերի հպատակությունը, նրանց ապազգայնացումն ու ձուլումը համարում էր հրատապ անհրաժեշտություն»[6]: Սակայն այդ բուրժուազիան նաև նենգ էր ու խորամանկ: Իշխանության հասնելու համար ձգտում էր ստանալ հպատակ ժողովուրդների աջակցությունը: 1900թ. ամռանը սուլթանի քեռայր, իթիհադական Մուհամմեդի կողմից արտասահմանում հրապարակված «Բաց նամակ հայերին» կոչում ասված է, որ Աբդուլ Համիդն իր «անձնական անվ-

1 Миллер А., նշվ. աշխ., էջ 48:
2 Օտարերկրացիները Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության մասին, պրակ I, Երևան, 1997, էջ 13:
3 ՀՀ ՊԿԱ, ֆ. 131, ց.1, գ.48:
4 «Երկրի ձայն», 1907, թիվ 10:
5 Маркс К. и Энгельс Ф. Сочинения, т. IX, стр. 25.
6 «Հնչակ», 1906, դեկտեմբեր:

տանգությունը գտավ ոչ այլուր, քան իր հպատակների արյան մեջ... Հայերը ևս Աբդուլ Համիդի զոհերն են»[7]: Երիտթուրքերի նման հուշակումները, սակայն, ավելի քիչ սադայելական չէին, քան Համիդի բռնապետությունը, որովհետև նորերի «դավանած գաղափարներն ավելի վնասակար էին, քան ծեր թուրքերինը»[8]:

Այնուամենայնիվ, թուրքական հասարակության ընդերքում ձևավորվում էին ուժեր, ճիշտ է, սաղմնային, ճիշտ է երկչոտ ու թույլ, որոնք ձգտում էին հասարակության ուշադրությունը հրավիրել օսմանյան դաժան իրականության վրա: 1906թ. օգոստոսին հրապարակված մի կոչում կարդում ենք. «Այս անգութ կառավարությունը միևնույն հայրենիքի զավակներին, տարբեր... բայց եղբայր ցեղերին, միմյանց ձեռքով կոտորել է տալիս: Եվ չբավականանալով իրար թշնամի դարձնելով, նրանց կյանքն ու երջանկությունը վտանգի տակ դնելով՝ բանտերն ու աքսորավայրերը լցնում է հայրենիքի ամենաանձնվեր զավակներով»[9]:

XX դարասկզբի Թուրքիան համոզիչ է ներկայացված ռուս լրագրող-հետազոտող Արիանդա Տիրկովայի «Հին Թուրքիան և երիտթուրքերը» հուշագրությունում: «Ասում են, թե թուրքերը մեղմ ու բարեհոգի ժողովուրդ են: Սակայն տևական դաժան և անամոթ կառավարումը ժողովրդի հոգու մեջ կուտակել է որոշակի դաժանություն և տխմարություն»[10]: Թուրքերը մերթ դժգոհում էին, որ Եվրոպան Թուրքիայում տեր ու տնօրեն էր, մերթ գտնում, թե դրանում իրենք «ինչ-որ շահեկան բան ունեին»: Օսմանյան կայսրությունը XX դար թևակոխեց խճճված սոցիալ-տնտեսական հարաբերություններով: Աբդուլ Համիդն «իր սիրելիներին նվիրում էր վիթխարի կալվածքներ: Սակայն, եթե վերջինների գրգռված ախորժակը չէր բավարարվում այդ նվիրատվություններով, ապա բնակչությունից զավթում էին ինչ ուզենային: Տեղի էր ունենում պետական հողերի բացահայտ չարաշահում և մասնավոր հողերի թալան»[11]: Գիշատիչ ավատատերերի դեմ պայքարը, ովքեր միջնադարյան բարոնների նման նստած էին լեռնային անմատչելի բերդերում, դժվար խնդիր էր: Սուլթանը հեռավոր նահանգների մեծ մասի վրա անգամ XX դարում իրական իշխանություն չուներ: Բեկերը հարկահավաքներին կաշառում էին կամ վռնդում: Կանոնավոր հարկ մուծում էին նստակյաց գյուղացիները: Այնտեղ, որտեղ բեկերը զավթել էին ուրիշների հողերը, «հարկերը հավաքում էին ոչ թե այդ բեկերից..., այլ հողագործներից»: «Հայերի թալանն առավել ագահ ու անպատիժ կատարվում էր հայկական նահանգներում, որտեղ քուրդ մահմեդականները ավանդաբար, հայերին համարելով օրենքից դուրս, նրանցից խլում էին ինչ ցանկանային»[12]: Թուրքիայի քաղաքական կյանքում բորբոքվել էր կուսակցությունների փառամոլ պայքար: «Հավանաբար Մակեդոնիայի լեռներում նստած սպաները միայն գործիք էին Ստամբուլում նստած քաղաքական գործիչների ձեռքին»: Թուրքիան առանձնահատուկ երկիր է, շարունակում է Ա. Տիրկովան. «Մարդկային փոշիացած ամբոխը, որ սովոր չէ ոչ մտածելու, ոչ քաղաքականապես ապրելու, հնազանդաբար կյանքն ընդունում է այնպես, ինչպես կա: Նույնիսկ սահմանադրությունը շարժեց միայն մեծ քաղաքների բնակչությանը և այն էլ այնքանով, որ ստիպված էր ծափահարել հաղթողներին»[13]:

«Աբդուլ Համիդի կամայական վարչակարգը,- գրում է Թալեաթը,- թե՛ կենտրոնում և թե՛ վիլայեթներում ստեղծել էր մի խավ, որին պատկանողներն աշխատում էին առաջին հերթին և ամենաառավելագույնս ապահովել իրենց շահերը: Դրա հետևանքներն ամբողջությամբ ծանրանում էին խեղճ ժողովրդի վրա... Պետության կենտրոնական մարմիններում նախարարներն ու պալատականները սերտորեն համագործակցում էին Ստամբուլի իրենց գործակիցների հետ և օժանդակում էին միմյանց: Վիլայեթներում նույնպես հարուստներն ու երևելիները, սերտ կապեր

7 «Դրոշակ», 1900, սեպտեմբեր:
8 ЦГИАЛ, ф 408, оп. 77, д. 270, лл. 5-6.
9 Նույն տեղում:
10 **Тыркова А.**, Старая Турция и младотурки, Петроград, 1916, стр. 12.
11 Նույն տեղում, էջ 64:
12 Ն. տ., էջ 65:
13 Ն. տ., էջ 70:

ունենալով նախարարների ու պալատականների հետ, շարունակում էին անարգել շահագործել ժողովրդին»[14]:

ՀԾՌ իր ծրագրում առաջ քաշելով տեղական ինքնավարության հարցը, գործնական քաղաքականությամբ սկսեց հակվել իշխանության կենտրոնացմանը: «Դրանով էլ ավելի մոտ էր երիտթուրքերին»[15]: Դաշնակները գտնում էին, որ թուրքական կողմնորոշումը հայերին կարող էր շատ բան տալ: Սակայն նրանք ևս, այնուամենայնիվ, իրենց հայացքը հառում էին Ռուսաստանին:

Թուրքիայի տնտեսական կյանքի մասին Արմեն Գարոն ասում է. «Մեր ամբողջ երկաթուղային գործը կառուցված է կեղծ հիմքի վրա: Կառավարությունն անընդհատ գերմանացիներին փող է տալիս Բաղդադի երկաթուղու համար: Իսկ ո՞ւմն է այն պետք: Միայն գերմանացիների քաղաքական և տնտեսական զավթումներին: Չէ՞ որ այդ գիծն անցնում է անապատով: Այն տնտեսական վերելք առաջացնել չի կարող, քանի որ երկրամասը բնակեցված է քոչվորներով... մեկ քառակուսի կիլոմետրի վրա կա հինգ, իսկ որոշ տեղերում՝ մեկ մարդ: ...Մինչդեռ Խարբերդի վիլայեթում արտադրվում է բամբակ, մետաքս, խաղող, հացահատիկ: Սակայն չգիտեն, դրանք ինչ անեն, քանի որ արտահանում չկա: Միայն Բիթլիսի նահանգը կարող է տալ 0.5 միլիոն տոննա հացահատիկ: Իսկ այնտեղ շատ հողեր անմշակ են, և մեծ թվով աշխատող ձեռքեր՝ անգործ: Բիթլիսից ամեն տարի Ամերիկա է արտագաղթում 30 հազար հայ... Դժբախտությունն այն է, որ Թուրքիայում պաշտպանում են ոչ թե սեփական, այլ օտար կապիտալի շահերը»[16]:

Կ. Պոլսում դարասկզբին բնակվում էր 200 հազար հայ: «Նրանք օգտվում էին լրիվ անվտանգությունից և թուրքերին հավասար ազատությունից,- գտնում է դաշնակ գործիչ Վռամյանը,- հայերը գործարար և առևտրական ժողովուրդ են... Հարուստ ու պահպանողական բուրժուազիայից բացի կա նաև շատ եռանդուն հայ մտավորականություն... փոքր չէ հայերի թիվը համալսարի և արհեստավորների շրջանում: Նրանք բավական համախումբ են... Պատկերը միանգամայն այլ է հայկական նահանգներում: Թե՛ Վանի և թե՛ Մուշի (Բաղեշի) վիլայեթներում մինչև օրս էլ սպանություններ տեղի են ունենում: Դրանք քրդերն են կատարում... Վանում նշանակված է նոր վալի՝ Հազը բեյը: Նա լավ վարկ ունի, սակայն կաշխատի քրդերին չխրտնեցնել: Թուրքերը քրդերին համարում են Ռուսաստանին սահմանակից նահանգների ամենահուսալի տարրը, իսկ մեզ՝ հայերիս, անհուսալի... որովհետև մենք քրիստոնյա ենք և չենք կարող չձգտել դեպի Ռուսաստան... Բացի այդ, մենք հեղափոխականի համարում ունենք: Չնայած իրականությունն այն է, որ մշտական ճնշումներն ու հալածանքները հայերին դարձրել են արտակարգ համբերատար»[17]:

Օսմանյան կայսրությունը տասնյակ ազգերի, ազգությունների ու ցեղերի կոնգլոմերատ էր, սակայն էթնիկական այդ խմբերից ոչ մեկը բացի արաբներից թվական գերակշռություն չուներ: Թուրք էր կայսրության 28 միլիոն բնակչից 8 միլիոնը, հույն՝ 5 միլիոնը, հայ՝ 3.5 միլիոնը, հրեա՝ 80 հազարը, ոչ մահմեդական հպատակ երեք ժողովուրդների ընդհանուր թիվն ավելի մեծ էր, քան թուրքերինը: Տնտեսական կյանքում հավասարության մասին խոսելն անհնար էր նույն այն պատճառով, որ թուրքը տնտեսական գործունեությունից խուսափում էր: Չնայած 90-ական թվականների ավերմունքներին, արդյունաբերությունը շարունակում էր հիմնականում մնալ հույների, իսկ առևտուրը՝ հայերի ձեռքում: «Թուրքն իր բնավորությամբ չռայլող, ցփնող աղա է»: Նա կալվածատեր էր, խոջա, զինվորական և պաշտոնատար: Նույնիսկ բանվորների շրջանում թուրքերը հատուկենտ էին: 7000 համալից 3500-ն էր մահմեդական, այն էլ՝ գլխավորապես քուրդ:

Կայսրության տնտեսական ու քաղաքական ճգնաժամը հասել էր բարձրակետի: Կապիտուլյացիաների համակարգը բոլոր օտարերկրացիներին էկստերիտորիալ իրավունքներով էր օժտել, նրանք որևէ հարկ չէին վճարում: Օսմանյան պարտքերի վարչությունը վերահսկողության տակ էր առել ֆինանսները: Պետական բանկ գոյություն չուներ, Օսմանյան բանկի տերերը

14 "Sabah", 1917, N 9.
15 Тыркова А., նշվ. աշխ., էջ 66:
16 Նույն տեղում, էջ 76:
17 Ն. տ., էջ 76-77:

Ֆրանսիացիներ էին: Բացի Մեքքայի երկաթուղուց, տնտեսության մնացած ճյուղերը պատկանում էին գերմանացիներին կամ ֆրանսիացիներին: Մաքսերն անգլիացիների վերահսկողության տակ էին: Միախոտի մենաշնորհը ֆրանսիացիներինն էր: Նրանց էին պատկանում նաև ճանապարհների և նավահանգիստների կառուցման կոնցեսիաները:

Գնալով սրվում էր ներքաղաքական պայքարն ու ծավալվում հպատակ ժողովուրդների ազատագրական շարժումները: Եթե քրիստոնյա հպատակները շփվում էին ու ձգտում նոր ժամանակների եվրոպական մտածողությանն ու մշակույթին, ապա «թուրքերը, կծկված իսլամի չխաթարվող ավանդույթների բեռի տակ, արգելակվել էին ինչ-որ տեղ Ասիայում, նույնիսկ միջնադարյան Ասիայում... Այն ոչ բարձր դպրոցական կրթությունը, որ դարեր շարունակ նրանց ընձեռել էին չալմայավոր ուսուցիչները, միայն աղտոտում էր մանկական ուղեղները՝ հարկադրելով խրվել անհասկանալի արաբերենով գրված Կորանի մեջ»[18]: Իշխանության տեր լինելու սովորությունը և մահմեդական միաստվածության ու անսխալականության՝ «հեթանոսական կրոնների հանդեպ» ունեցած մեծ առավելության առանձնակի համոզվածությունը թուրքերին այնքան ամբարտավան էին դարձրել, որ նրանց ինքնասիրությունը վիրավորում էին սեփական հետամնացությունն ու հպատակների առաջադիմությունը: Այս իրողությունը բազում արտացոլումներ ուներ հայերի հանդեպ ոչ միայն թուրք բաշիբոզուկի, այլև բարձրաստիճան պաշտոնատարների վերաբերմունքում:

XX դարի սկզբներին Արևմտյան Հայաստանի հայ բնակչության վիճակը կարելի է բնութագրել որպես տնտեսական գենոցիդ, ենթակա ամբողջական բնաջնջման:

Տնտեսական գենոցիդի քաղաքականության գլխավոր խնդիրը տնտեսական գործոնների միջոցով Հայաստանի հայաթափումն էր: Այդ գործոնները շարունակում էին մնալ հայ գյուղացու հողազրկումը, տնտեսական քայքայումը, որոնց ուղղակի հետևանքն էին արտագաղթն ու պանդխտությունը: 1899թ. Բ. Դուրը գաղտնի հրահանգ ուղարկեց տեղերը՝ հավաքել կոտորածների կապակցությամբ հետաձգված հարկերը, ինչն առաջ բերեց հանընդհանուր դժգոհություն: Ֆրանսիական "Oriorite'" լրագիրը 1900թ. մայիսի 30-ին գրեց. «Հայկական նահանգներում, մանավանդ Վանի կողմերում, նկատվող հուզումները հետևանք են այն հրեշավոր ձևերի, որով հավաքվում են հարկերը: Փոխանակ այդ գործը հանձնելու քաղաքացիական գործակալներին... զինվորներին են դարձրել հարկահավաք, որպեսզի նրանք այդ եղանակով ստանան իրենց աշխատավարձը: Տալիս են այնինչ գյուղն այնինչ գնդին՝ ասելով. «Կառավարությունը ձեզ այսքան է պարտք, ստացեք, այդ միջոցներից՝ գանձելով նրանց (հայերի) տուրքերը:

Դժվար չէ հասկանալ, թե հայերն ինչու են ապստամբում»[19]:

Հայ գործիչներն ուղիներ ու միջոցներ էին փնտրում արևմտահայ զանգվածներին մարտական ոգի ներարկելու, 1894-96թթ. սարսափների հոգեբանական հետևանքները հաղթահարելու համար: Այդ նպատակով ձեռնարկված միջոցառումներից էր Առաքելոց վանքի կռիվը, որը հայդուկային-պարտիզանական պայքարի գլուխգործոց էր թե ազդեցության ուժով և թե իրականացման եղանակով: Անդրանիկի 1902թ. հունվարի 7-ի նամակում տրված են այդ կռվի մանրամասներն ու հետապնդած խնդիրները: 1901թ. նոյեմբերին հայդուկների մի ոչ մեծ խումբ Անդրանիկի և Գևորգի գլխավորությամբ մտնում են Առաքելոց վանք: Թուրքերը մոտ 3000 զինվորով անմիջապես շտապում են վանքը: Քանի որ սկսվել էին ցրտերը, նրանք ձգտում էին վանքը հնարավորին չափ արագ գրավել: Սակայն նրանց բոլոր ճիգերն ապարդյուն անցան: Հայերը պաշտպանվում էին հմտությամբ ու անձնվիրաբար: Ցրտից ու հիվանդություններից թուրքական բանակում սկսվեցին մահացություններ: Իշխանությունները Մշո առաջնորդարանից պահանջեցին հայդուկներին դուրս հանել վանքից: Վերջինները մերժեցին կղերի հորդորները: Բանակցությունների համար վանք եկան թուրքական ներկայացուցիչներ: Հայդուկների պահանջներն էին՝ ազատ արձակել քաղաքական բանտարկյալներին, հատուցում տալ Սպաղանքի եղեռնի, Հիթընք և Շուշնամերկ գյուղերի հրդեհների ու հայերի սպանությունների դիմաց, հատուցել նաև Դաշտի գյուղերում կատարված սպանությունների համար, արգելել գյուղերի վաճառքը: Նաև պահանջեցին, որ թուրքերի պատասխանը պետք է վավերացված լիներ սուլթանի, պատրիարքի և դեսպանների կնիքներով: Ութ օր անց սադրազամի ու պատրիարքի ստորագրությամբ հեռագիր ստացվեց, որով համաձայնություն էր հայտնվում կատարելու հայդուկների պահանջները, եթե նրանք դուրս գային վանքից: Հայդուկները ծպտված ու գրեթե աննկատ հեռացան վանքից. նրանց մի մասն անցավ Նորշեն, որտեղ բախվեց թուրք զինվորների հետ: Առաքելոց վանքի կռիվն ունեցավ եվրոպական հնչեղություն: Անդրանիկի անունն ու փառքը դուրս եկավ կայսրության սահմաններից: Իսկ թուրքական կառավարությունն անմիջապես «մոռացավ» տված խոստումները և ավելի մեծացրեց զորքի, ոստիկանության և պետական ծառայողների տեսակարար կշիռը հարստահարողների համակարգում: 1902թ. Ուշքիլիսեից «Դրոշակին» գրում են, թե զորքերը տեղավորվել էին տեղի վանքում և դարձել տեր ու տիրական: Վանքի գյուղը նույնպես նրանց էր ծառայում: Գյուղացիները պարտավոր էին անվերապահ կատարել ոչ միայն չաուշի, այլև շարքային զինվորի բոլոր ցանկությունները, «զորքի հետ կիսեին օրվա եփած կերակուրը, տուներեն ծուխ ելավ թե չէ, զինվորը կանգնած էր օջախի կամ թոնրի գլխին... Նայած տանող զինվորի խղճին՝ կամ ամբողջ կճուճը կերթա, կամ կեսը, օրուգիշեր կլրտեսեն... գյուղացիք (պարտավոր են) անոնց ուտեստը տեղափոխել» սեփական քաշող ուժով, հակառակ դեպքում ծեծում են, տուգանում կամ բանտ նետում: Հարևանը հարևանի տուն ազատ գնալ չի կարողանում, հարցաքննում են: Եթե հայը հավաքույթ է կազմակերպում, զինվորներին ևս պետք է հրավիրի, մյուսներին ճաշ ուղարկի: Զինվորները խառնվում են ընտանիքների գործերին, իրենց ձեռքն էին վերցրել ջրաղացը և եկամուտ էին ստանում: Իսլամը գողությունը խրախուսում է. և զինվորները «կգողանան ինչ-որ ուզեն, առանձին կամ քրդերի հետ, որ հանցանքը հարկ եղած դեպքում վերջիններու վրա ձգեն...»[20]: Երբեմն զինվորների բռնություններին զոհ էին դառնում նաև մահմեդականները: Մանազկերտում զինվորները բռնաբարում են մոլլայի տղային: Տեղի հայերը, թուրքերն ու քրդերը համատեղ բողոք են ներկայացնում կայմակամին՝ պահանջելով, որ զորքը հեռանա քաղաքից: Երեք ժողովուրդների ներկայացուցիչների միացյալ ելույթը վախեցնում է կայմակամին: Եվ կատարվում է մի բան, որը բնութագրական էր թուրքական իրականության համար: Կայմակամը հայտարարում է, թե իբր հայ հեղափոխականներն են հարձակվել Մանազկերտի բերդի վրա: Եվ դա բավական էր, որ թուրքերի, քրդերի ու հայերի համերաշխությունը հօդս ցնդեր: 1904թ. մարտին մահմեդական խուժանը հարձակվում է Քղիի Խավուս գյուղի վրա: Քուրդ ցեղապետ Հայդարը, որ միաժամանակ կայմակամ էր, թույլ չի տալիս, որ խուժանը գյուղը թալանի. «Մենք՝ զազա ցեղերս, թուրք կառավարությանը ոչ տուրք, ոչ զորք կուտանք և ոչ էլ կուզենք կառավարության ձեռքին գործիք դառնալ և նեղել մեր դրացի հայերին...»[21]: Նույն քրդերը, մանավանդ համիդիե գնդերը, Ախլաթում հայերի համար անտանելի վիճակ էին ստեղծել: Դուրս լինելով քաղաքացիական դատարանների իրավասությունների շրջանակից, նաև զինվորական իշխանությունների վերահսկողությունից՝ ստեղծել էին ցեղապետերի մի ավազակախումբ: Այդ ցեղապետերը միաժամանակ համիդիե հրամանատարներ էին ու «թալանում էին հայերին, և երբ վերջինները բողոքում էին, տեղի իշխանությունները պատասխանում էին. «Մենք չենք կարող համիդիեներին դատել, անոնց մուշիրը Երզնկայում է նստում: Նրան դիմեք»[22]: Տարոնում Ալլահվերդի անունով ոմն չաուշ զորքերով շրջում էր, «ամեն գյուղում մնում էր 1-2 օր և 5-10 հազար ղուրուշ էր պահանջում: Որ գյուղը մտնում էր, զորքերի միջոցով կանանց ու տղամարդկանց հավաքում էր, մերկացնում... ջրհորներից սառը ջուր էր քաշել տալիս ու լցնում այդ խեղճերի վրա» և յուրաքանչյուրին ճիպոտով 30-50 հարված հասցնում, ապա միայն սկսում էր հարկահավաքությունը: Խլում էր ամեն ինչ: Մսագործներ էր հետը տանում, որոնք

18 Тыркова А., նշվ. աշխ., էջ 135:
19 «Դրոշակ», ապրիլ 1900:

20 «Դրոշակ», 1902, թիվ 9:
21 Նույն տեղում, 1904, թիվ 6:
22 Ն. տ., թիվ 10:

մորթում ու վաճառում էին գյուղացիների անասունները: Շատ հայեր բանտ նետվեցին հարկերը վճարել չկարողանալու համար[23]: «Պարսկաթուրք ամբողջ սահմանագլխին,- գրում է Արամ Մանուկյանը,- հատուկ սահմանապահ գնդեր չկան: Այդ պաշտոնը կամ պարտականությունը թողնված է սահմանագլխի համիդիե քուրդ գնդերին, որոնք գործը տանում են շատ յուրահատուկ ձևով՝ թալանելով, կողոպտելով և ավերելով բոլոր գյուղերը: Դրա հետևանքով 200 կմ երկարությամբ և 60 կմ լայնությամբ այդ տարածքում ոչ մի գյուղ և նստակյաց բնակչություն չկա»[24]:

Քրդերն անընդհատ մակընթացության ու տեղատվության մեջ էին, կախված իշխանությունների վերաբերմունքից, ինչին զոհ էին դառնում հայերը: «Նորադուզի հայերը փախել են Աբաղա երկու պատճառով: Նախ, որ դրացի քրդերը հարավից եկել ու նրանց հալածել են, երկրորդ... չէին կարող լեռնային Նորադուզում հողագործությամբ ապրել, իսկ ոչխարաբուծությունը ձեռնտու չէր, որովհետև դա, նախ, քրդերի ձեռքին էր, երկրորդ, որ գլխավորն էր, հեշտությամբ թալանի ու կողոպուտի ենթակա էր, իսկ հայերը զինված չլինելով՝ անկարող էին պաշտպանել իրենց տավարը»[25]: Աբաղայում, շարունակում է Ա. Մանուկյանը, հայերը միաբանվել էին քուրդ աղաների հետ: Աղան տալիս էր իր հողը և սերմացուն, իսկ հայ գյուղացին իր տավարով, մարդկանցով, գութանով և «դազգահով» վարում էր, ցանում, հնձում ու կալսում և արդյունքը կիսում աղայի հետ: 1896թ. ընդհանուր կոտորածի հետևանքով ավազակապետերի ազդեցությունն էլ ավելի ուժեղացավ: «Հենց այդ չարաբաստիկ թվականին, երբ ամեն պատահական իսլամ ինքնիշխան էր և իրեն կարող էր թույլ տալ ցանկացած զուլում կատարել..., հայ գյուղացիք կամովին մտնում էին այս կամ այն փոքրիշատե ազդեցիկ աղայի ու բեյի հովանավորության տակ: Այսպիսով, հայ գյուղ չէր մնացել, որ մի աղա կամ բեյ չունենար»[26]: Դեռ ավելին, նախկինում հայ գյուղերը քրդեր էին վարձում արտերը պահելու և ոչխարներն արածացնելու համար: Ահա այդ քրդերն էլ դարձան աղաներ, հայկական գյուղերի տերեր: Մեկ-երկու տարում «նոր աղայի քեռոչքը բարձրանում էր գյուղի ամենահարմար տեղում կառուցված հայ արհեստավորների ձեռներով և հայ գյուղացիների զուբարայի աշխատանքով հայթայթված շինանյութերով: Աղան սկզբում իրապես, ապա նաև թաբուտով յուրացնում էր գյուղերի լավագույն հողերը: Շատ գյուղերում հայերը հողազրկվեցին, դուրս քշվեցին իրենց հայրենի բնակավայրից: Օրինակ, Վանի վիլայեթի Աղբակի, Արճեշի, Նորդուզի, Խոշաբի և մի քանի այլ գավառներ ու գավառակներ 40-50 տարում լրիվ քրդացան: Ըստ Վանի առաջնորդարանի տվյալների, Նորդուզի գավառակում եթե 1895թ. կար 280 հայ տուն, ապա 1899-ին՝ միայն 168 տուն:

Հայ գյուղացին, բացի պետական հարկերից շարունակում էր բազմաթիվ տուրքեր վճարել քրդին, ձրի կատարել նրա տնային գործերը, ամեն բայրամին, մահմեդական մյուս տոներին, հարսանիքներին, մահվան դեպքերում «ի-իտ» «աչքալույս», «գլուխ ողջ» մաղթելու գնալ իր աղայի մոտ, որն «արտահայտվում էր մի ոչխարով, մի գլուխ շաքարով, մի քանի մեջիդով կամ ոսկով»:

Այս ամենը ևս նպաստեցին գյուղի քայքայմանը, գյուղացու այլասերմանը, նրա վարժվելուն ստրկական կյանքին: Ամեն տարի հազարավոր ընտանիքներ զրկվում էին իրենց հողերից ու տներից: Ընդորում՝ հայերից բռնագրավված անշարժ ունեցվածքը նրանց չէր վաճառվում, անցնում էր մահմեդականներին: Հաճախ կամուրջներ կառուցելիս, հարկադրում էին քանդել հայերի շինությունները՝ շինանյութն օգտագործելու համար[27]: Գնալով ավելի մեծ չափերի էին հասնում լրացուցիչ հարկերը, որոնք նշանակվում էին ամենատարբեր առիթներով: Օրինակ, 1904թ. մարտին «Դրոշակը» գրեց. «Վանի վրա 20 հազար լիրայի պահանջ կա, մակեդոնական շարժումն է կլանում այդ դրամը»: Գանձողները «մտնում են տները, եղած-չեղածը դուրս թափում՝ առնում են տուրքի փոխարեն՝ ենթարկելով չքավորներին սոսկալի ծեծի ու ջարդի»: «Պարսկաստանից Վան անցնելիս,- գրում է Բենգաենը,- ճանապարհին հանդիպեցի կիսաավերակ ու ավերակ դարձած հայ գյուղերի, որոնք քանդվել, կործանվել էին կառավարության ձեռքով, իսկ ժողովուրդը կոտորվել էր 90-96 թվերին: 200-ի չափ գյուղ կիսաավերակ էր դարձել: Գյուղերում մնացել են միայն մի քանի կիսավեր շենքեր, եկեղեցի և այլն... մնացած գյուղերում էլ, ինչպես Վանի շրջակայքում, այժմ հայերը քրդերի հետ խառն են ապրում, իսկ կան գյուղեր, որտեղ միայն մի քանի տուն հայ է մնացել, մինչդեռ անցյալում եղել են տասնյակ տներ»[28]:

Դարասկզբին գնալով ուժեղանում էր մահմեդականների ներհոսքը ոչ միայն հայկական գյուղեր, այլև քաղաքներ: Գաղաթիայից գրում են, որ այդ մուհաջիրների ցանկությունները բավարարելու համար իշխանություններն ամեն ինչ անում են: «Վերջերս կրկին իրադեով հանձնաժողով մը կազմվեցավ... գաղթականաց համար շրջակայ հայաբնակ գավառներու և գիւղերու մեջ կամ մոտը տուներ շինելու համար, որի նախագահն է կայսեր թիկնապահներեն Սադի փաշն: Այս հանձնաժողովը ամեն քաղաքում ու գյուղաքաղաքում մասնաճիւղեր ունի, որոնց պաշտոնն է ամենայն ուշադրությամբ հսկել գաղթականներու զետեղմանն ու հանգստութեանը»[29]: Այսինքն՝ ստեղծվել էր համակայսերական մի կառույց, որի ղեկավարությամբ իրականացվում էին մուհաջիրների ընդունման և նրանց համար կյանքի պայմաններ ստեղծելու աշխատանքները: Միայն Գաղաթիա փոքրիկ քաղաքում «54 տունե բաղկացեալ թաղ մը շինուեցավ»: Սակայն գլխավորն այդ չէր, այլ այն, որ տուն «շինել տալով, հանձնաժողովը սկսած է բռնութեամբ դրամ հավաքել... Որ գիւղի մեջ քանի մը տուն շինել տալ որոշուած է, նույն գիւղի ժողովուրդն ստիպուած է շինելու... Հակառակողը կը բանտարկուի և կը գանակոծուի: Այդ տների շինարարության վրա էին քշում ոչ միայն հայ գիւղացին, այլև նրա լծկանները»[30]: Իրավիճակը Ռ. Տերմենը ներկայացնում է հետևյալ կերպ. «Թուրքերը գիտակցում էին, որ զանգվածային արտագաղթը կործանելու է վիլայեթները, սակայն աշխատում էին ոչ թե հայերի վիճակը բարելավել, այլ նրանց բնակավայրում բնակեցնել մահմեդական չերքեզների: Վերջիններին հարկադրաբար բնակեցնում էին հայկական գյուղերում ստիպելով, որ նրանց տրամադրվեն լավագույն հողերը: Չերքեզներին ամեն ինչում հովանավորելու միջոցով ձևավորվում էր մահմեդական հողագործների կորիզ, որն առաջին հաջողությունից հետո ամբողջությամբ ոչնչացնում էր քրիստոնյա բնակչությանը... Մշո Շաքիր գյուղում մինչև 1901թ. չերքեզ չէր բնակվում, սակայն այդ թվին տեղական կառավարությունն առաջարկեց Վարդենիս գյուղում տեղավորել հինգ չերքեզ արտագաղթած հայ ընտանիքների փոխարեն»: Չերքեզները տներ կառուցեցին Վարդենիս ու Շաքիր գյուղի արանքում: Մի քանի տարի անց գյուղում արդեն բնակվում էր 75 տուն չերքեզ: Գնալով շրջակա գյուղերի հայերն աղքատանում էին, իսկ չերքեզները՝ հարստանում, որովհետև նրանք էին հարկերը հավաքում և օգտվում էին սելեմ անելու իրավունքից: Նրանք 46 լիրա պարտքի դիմաց տիրացան 48 արտի:

«Երբ ես,- շարունակում է Տերմենը,- 1907թ. հոկտեմբերին անցնում էի Վարդենիս գյուղով...», թաղում էր, նույն օրը երեք հոգու թաղեցին, ովքեր մահացել էին թերսնումից: Գյուղում ցորեն հաց ճարելն անհնար էր: Հայերը սնվում էին միայն կորեկ հացով: «...եթե Ռուսաստանն իր դռները բացեր, բոլոր հայերը կվերաբնակվեին այնտեղ... Եթե տերությունները չմիջամտեն, ասիական Թուրքիայի հայերը լրիվ կոչնչացվեն»[31]: Վիճակն այդպես էր հայաբնակ բոլոր շրջաններում: Ամենուրեք պետությունը մահմեդականների ներգաղթն իրականացնում էր ի հաշիվ տեղաբնակ քրիստոնյաների հողերի, ֆինանսական միջոցների և աշխատանքի:

Տնտեսապես քայքայված մեծաթիվ հայ ընտանիքներ, զրկվելով հողից, զրկվում էին ամեն ինչից, վերածվում ընչաքաղց հասարակական շերտի: Հողն անցնում էր նրան, ով հնարավորություն ուներ դրան տիրանալու և օգտագործելու, այսինքն՝ մահմեդականներին: Հայերին քայքայելը օսմանյան քաղաքականության հիմնական ուղղություններից էր և այն էր սաստկացող քաղաքական հալածանքներով ու բռնություններով: Նախ, խստացվեց ուղևորությունների ու

23 «Դրոշակ», թիվ 5:
24 Մանուկյան Ա. Հուշեր, Երևան, 1990, էջ 28:
25 Նույն տեղում, էջ 30:
26 Ն. տ., էջ 175:
27 «Դրոշակ», 1902, թիվ 9:

28 «Հնչակ», 1902, թիվ 1:
29 Նույն տեղում, թիվ 3:
30 Ն. տ.:
31 Термен Р. Отчет, стр. 72-73.

չփումների թույլտվություններ տալը վիլայեթների միջև և վերջիններից Կ. Պոլիս մեկնելու համար՝ նպատակ ունենալով կանխել անհաճո լուրերի տարածումը, մասնավորապես թույլ չտալ գավառներում տիրող վիճակի մասին տեղեկատվության հոսք Կ. Պոլիս ու արտասահման:

Բենգսենը վկայում է, թե կառավարությունը խստիվ հսկում էր ճանապարհները, իսկ անհնար էր դարձել ապրանքների տեղափոխությունը: «Քրդերը թալանը շարունակում են կառավարության աչքի առաջ և նորից մնում անպատիժ: Բռնությունները սովորական և կրկնվող երևույթ են... Հայերի վրա ոստիկանական խիստ հսկողություն է սահմանված, և գրեթե ամեն օր խուզարկություններ են կատարվում, բանտերը լցվում են անմեղ զոհերով: Բողոքելն անօգուտ է, նախ, որ լսող չկա և, երկրորդ, բողոքողին անմիջապես ձերբակալում են ու առաջնորդում բանտ, որտեղից ազատվելու ոչ մի հնար չկա»: Ամենուրեք նույն վիճակն է՝ «քարուքանդ գյուղեր, ամայացած շեներ»: Դիարբեքիրի ու Խարբերդի 200 գյուղերի հայեր կոտորածներից հետո մահմեդականություն էին ընդունել և, «մզկիթների վերածված հայոց եկեղեցիներում քահանաների փոխարեն մոլլաներն էին երգում»: Հայերը գերադասում էին «աշխարհում ապրել որպես կենդանի մարդ, քան մեռնել որպես հայ»[32]: Իհարկե, արևմտահայությունը նման երկընտրանքով չէ, որ ղեկավարում էր, և Բենգսենը չափազանցնում է: Հայը չէր հաշտվում սուլթանական քաղաքականության հետ, նա ընդդիմանում էր: Հայահոծ շրջաններում ընդդիմությունը նշանակալից էր: Նաև դա էր պատճառը, որ օսմանյան կառավարությունն ուժեղացրեց մուհաջիրների ներհոսքը այդ շրջաններ: Գուլախովսկին հայտարարեց. «Աշխարհում չկա մի այլ տեղ, որտեղ այնպիսի աճպարարություններ լինեն, ինչպես Կ. Պոլսում: Եթե բարենորոգումներ չգործադրվեն, դա ապացույց կհանդիսանա, որ Թուրքիային շտկելն անհնար է, չարաշուք վախճանն՝ անխուսափելի: Ձեմ ուզում մարգարեանալ, բայց կան Թուրքական հպատակներ, որոնք այլևս չեն հանդուրժելու գոյություն ունեցող վարչակարգը. կամ կնախընտրեն մեռնել, քան այդպիսի պայմաններում ապրել»:

1906թ. հունվարի 18-ին համաշխարհային ճանաչում ունեցող մի խումբ քաղաքական գործիչներ, գիտության ու մշակույթի մեծություններ դիմեցին ԱՄՆ նախագահ Թ. Ռուզվելտին՝ միջամտելու Օսմանյան կայսրությունում խաղաղություն, կյանքի, պատվի և ունեցվածքի անվտանգություն հաստատելու համար: Դիմումում կան հետևյալ տողերը. «Ձենք տարակուսում, որ դուք էլ մեզ նման խորապես զգացել եք հայ ժողովրդի եղեռնական վիճակը... Այդ ժողովուրդն այժմ հուսահատության է հասցվել և բնաջնջման վտանգի տակ է... Այս պահին հայ ժողովրդի համար չկա ունեցվածքի, կյանքի, տղամարդու, կնոջ, երեխայի պատվի անվտանգություն...»[33]: Մի քանի տարի անց Թ. Ռուզվելտը գրեց. «Հայերին վիճակված զարհուրելի ճակատագրի մասին լուրերը... նույնիսկ սոսկումներից բթացած և ուժասպառ դարձած ջղերի դեպքում կարեկցանքի ու զայրույթի նոր ցնցում պետք է առաջացնեն... Հայերի հանդեպ Թուրքերի կողմից կատարվող խժդժությունները հասել են այնպիսի չափերի..., որոնց անհնար է անուն տալ»[34]: Թ. Ռուզվելտն, իհարկե, զլացել է ասել, որ հայերի այդ անհուսալի վիճակը, օսմանյան բռնատիրության գոյատևումը հետևանք էին նաև տերությունների չահադիտական քաղաքականության՝ «Հիվանդ մարդուն» արհեստական շնչառություն էին ապահովում աշխարհի տիրակալները: Սուլթանական վարչակարգը վաղուց դադարած կլիներ գոյություն ունենալուց, «եթե նրա լծի տակ հեծող ժողովուրդները հասկանային միմյանց, համաձայնության գային իրենց ընդհանուր պահանջներում և գործեին միասին, ձեռք ձեռքի տված», քանի որ Օսմանյան կայսրությունն իրոք անբուժելի հիվանդ էր, նա իր գոյությունը քարշ էր տալիս հենված տգետ, խառնիճաղանջ ցեղերի, կաշառակեր պաշտոնյաների և տերությունների աջակցության վրա:

32 «Հնչակ», 1902, թիվ 1:
33 «Զարթոնք», 05.01.1898:
34 Նույն տեղում:

Կայսրության հպատակ ժողովուրդները դեմ էին գոյություն ունեցող վիճակին: Սակայն դա քաղաքական հանընդհանուր դիրքորոշման չէր վերածվում, որովհետև «նրանք գործում էին զատ-զատ, առանց միմյանց հասկանալու, առանց ընդհանուր նպատակի»: Նաև այս անհամաձայնությունն էր կայսրության գոյատևման հիմքը: Դեռ ավելին: Սուլթանն արաբներին ճնշում էր ալբանացիների միջոցով, ալբանացիներին՝ արաբների: Հայերին կոտորեց մյուս հպատակների բացարձակ լռության պայմաններում և քրդերի ու չերքեզների ձեռքերով: Թուրքը հույներին ջարդեց, մակեդոնացիները ձայն չհանեցին, իսկ երբ սկսեց ջարդել մակեդոնացիներին՝ լռեցին բոլորը: Բնականաբար, համերաշխության դեպքում կոտորածների քաղաքականությունը հաջողություն ունենալ չէր կարող, հպատակների համերաշխ ընդդիմության դեպքում կայսրությունը կամ փուլ կգար և կամ իրոք կբռներ վերակառուցման ուղի: Սակայն անիրականանալի մնաց այդ համերաշխության երազը և գործում էր Թուրքական ազգայնամոլության վճռականությունը՝ կայսրությունը փրկել հպատակ ժողովուրդների արյունը հեղելու օգնությամբ: «Արտասահմանում,- ասում է Է. Բեռնշտայնը,- հայերը լուրեր ստանում էին, թե Սասունում ու Մուշում նախապատրաստվում էին նոր կոտորածներ: Երբ քրդերը զինվում են, երբ կառավարությունը կանոնավոր զորք է ուղարկում հայկական նահանգներ, նշանակում է շուտով հրդեհ է բռնկվելու և կոտորած է լինելու»[35]: 1901թ. օգոստոսի 23-ի մի տեղեկագրում կարդում ենք. «Դժբախտ Մուշից լուրեր են ստացվում նոր ջարդերի մասին: Վանում ռուսական փոխհյուպատոս Ա. Տումանովը 1901թ. հոկտեմբերի 20-ին գրում է Զինովևին, թե գնալով հայերի վիճակը ծանրանում է, որ «չարը շատ խոր արմատներ է ձգել, և դրա դեմ պայքարը պահանջում է շատ երկար ժամանակ և ջանքեր»[36]: Հայերի կողքին արդեն բնակվում են քրդեր, ինչը նպաստավոր «պայմաններ է ստեղծում առաջիններին արմատախիլ անելու համար»: Իսկ արմատախիլ անելու քաղաքականություն տարվում էր նույնիսկ ամենահասարակ եղանակներով: Օրինակ, Ցխավա գյուղում գյուղատնտեսական բանկին, ինչպես նաև հարկերի գծով պետությանը հայերի պարտքերը գրվում էին որևէ մահմեդականի վրա, թե հայն իբր նրան է պարտք, մահմեդականն ի վերջո այդ «պարտքի դիմաց» դառնում էր հայերի հողերի սեփականատեր: «Սա ամենապարկեշտ ու խաղաղ եղանակն էր»: Հյուսիսային կազաներում, որտեղ կային համիդիե գնդեր, հարցը լուծվում էր ավելի պարզունակ եղանակով՝ քուրդ աղան հայերին ուղղակի քշում էր այն հողերից, որոնք իրեն պետք էին: Օրինակ, Բուլանըխի Ակրաշ գյուղում ջաբարլի ցեղի աղաներից Հայդարը նման ձևով էր վարվում: Նա գյուղի բոլոր հայերի ունեցվածքի անվիճելի տերն էր: Բիթլիսի վալու խոստովանությամբ վիլայեթում անասունները քշելն ու թալանը սովորական երևույթ էին: Հետևանքը հայկական բնակավայրերի ծայրահեղ ծանր վիճակն էր: Մուշից ավելի «կեղտոտ քաղաք չկա ոչ Պարսկաստանում, ոչ Թուրքեստանում և ոչ էլ հենց Թուրքիայում»[37]:

Պրեսանսենը "Pro Armenia"-ի 1900թ. N 5-8 համարներում տպագրեց մի հոդվածաշար: Նա գրում է. «Քանի որ 1896թ. արյունն այլևս դեպի երկինք չի աղաղակում՝ դիակները համր են, իսկ Արևմուտքի զգայարանները՝ մեռած, մենք արդեն կարող ենք ազդարարել մի նոր դիվաժողովի վտանգը՝ այժմվանից հրավիրելով հասարակության ուշադրությունը այն խուլ որոտումների վրա, որոնք լսվում էին դժբախտ Հայաստանի լեռներից ու ձորերից, արթնացնելու Եվրոպայի քաղաքական ողջամտությունը և ծնելու կանխարգելիչ որևէ գործողություն: Ոչ ոք թող չսխալվի: Անատոլիայում պատրաստվում է մի սարսափելի անակնկալ: Անիրավությունը ճակատագրականորեն առաջ է բերում ոճրի կրկնություն: Եվրոպան կարծես իրենից ընդմիշտ հեռացրել է Հայաստանի տաղտկացուցիչ ուրվականը, բայց հենց այդ ազգի նկատմամբ անտարբերությունն է, որ այսօր, ավելի քան երբևէ, հրատապ է դարձնում նրա դատը, երբ փաշաները, խրախուսված պետությունների ցինիկ անտարբերությունից, նորից են այդ ժողովրդին նետում խողխողումների անկողին»: Այդ հոդվածաշարի առնչությամբ Ֆրանսիացի հայտնի քաղաքական

35 Օտարերկրացիները Հայկական հարցի մասին, էջ 12:
36 АВПР, ф. Политархив, д. 1869.
37 Նույն տեղում:

գործիչ Դեստարնել դը Կոստան գրեց, որ Գերմանիան ոչ միայն վերակառուցեց Թուրքական բանակը, այլև «սեփական ձեռներով բորբոքեց մահմեդական մոլեռանդությունը»: Նույն թերթում Ժ. Ժորեսը ահազանգեց. «...Զարագուշակ լուրերը... Հայաստանում նոր ջարդեր են գուժում: Կարմիր խենթությունը կարծես նորից ահագնանում է: Արդյոք Եվրոպան այս անգա՞մ էլ թույլ է տալու այդ: Նա արդեն մեծ ոճիր գործել է՝ զոհելով մի ամբողջ ազգ սուլթանի մոլագար սարսափներին ու դիվանագիտական դավերին... Եթե վերսկսվեն Հայաստանի ջարդերը և Եվրոպայի անտարբերության ու մեղսակցության ոճիրը, դրան չի դիմանա անգամ «քաղաքակրթության գաղափարը»: Ժ. Կլեմանոսը իր "Blok" շաբաթաթերթի 1901թ. N 35-ում շեշտեց. «Այս անգամ Եվրոպան նախազգուշացված է: Նա նույնիսկ պատրվակի ստվեր չպետք է ունենա թափվելիք արյան պատասխանատվությունից խուսափելու համար: Հայերի ակնկալիքը Եվրոպայից միայն մեկն է՝ իր իսկ կողմից մշակված Մայիսյան ծրագրի գործադրումը, «ավելացնելով միայն մի քանի նոր երաշխավորություններ, որոնց կարևորությունն ակնհայտ դարձավ Սասունին հաջորդող կոտորածներով»: Տերությունները իրենք բազմիցս հաստատել են, որ Մայիսյան ծրագիրը «Թուրքիայից պահանջելիքի մինիմումն է»:

Հայկական հարցի վերաբերյալ խաղաղության համաշխարհային 10-րդ համաժողովը (Գլազգո, 1900թ., սեպտեմբեր) որոշեց «Բեռլինի դաշնագիրը ստորագրած եվրոպական պետություններին խնդրագիր ներկայացնել՝ հրավիրելու պաշտոնական համաժողով Հայկական հարցը լուծելու համար...»: Մեկ տարի անց, 1901թ. հոկտեմբերի 18-ին սոցիոնտերնի բյուրոն կոչով դիմեց աշխարհի բոլոր բանվորական կուսակցություններին. «Ամենաողբալի լուրեր են հասնում Հայաստանից... Թուրքիան շարունակում է կոտորածների քաղաքականությունը: Եվրոպական կառավարությունների հանցավոր անգործության դիմաց սոցիալիստական դեմոկրատիան չի կարող անտարբեր մնալ այն գարշելի արարքների նկատմամբ, որոնք կատարվել կամ կատարվելու վրա են Հայաստանի Թուրքական գավառներում: Միջազգային սոցիալիզմը... պետք է ոչ մի միջոց չխնայի ըմբոստացնելու հասարակական կարծիքը համիդյան քաղաքականության գարշանքների դեմ: Բռնություններ, գյուղերի և ագարակների հրկիզումներ, մասնակի ջարդեր ու սպանություններ անընդմեջ տեղի են ունեցել գրեթե բոլոր հայաբնակ վիլայեթներում... Բիթլիսի, Էրզրումի և, մանավանդ, Մուշի կողմերում ջարդերը շարունակվում են: Սարսափը տիրակալորեն թագավորում է ազգաբնակչության վրա... Աբդուլ Համիդի կառավարությունը մամուլի մի մասի աջակցությամբ ճգնում է լուության դավադրություն կազմակերպել հայկական գործերի շուրջը»: Բյուրոն աշխարհի աշխատավորությանը կոչ էր անում խափանել այդ ու նման դավադրությունները, թույլ չտալ նոր կոտորածներ[38]:

Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության կոչում ասված է, որ Հայաստանի «բազմաթիվ գյուղերում, նշանավոր կենտրոններում... հավանաբար մոտ ապագայում իրագործվելու են չարաշուք ծրագրեր: Դրա նշաններից մեկն է հայաշատ վայրերում զորանոցների կառուցումը և բանակային ուժերի աննախադեպ ծավալումը... Փոքր Ասիայում հանձնաժողովներ են ստեղծվում հասարակական կարծիքը մոլորեցնելու համար: Այս դեպքում եւ. մի կողմից՝ հանձնաժողով, իսկ մյուս կողմից՝ Մշո իշխանություններն արգելքներ են հարուցում Վանում ռուսական հյուպատոս Տոմանովի առաջ՝ Մուշում ուսումնասիրություններ կատարելու: Բիթլիսի վալին արգելում է ամերիկյան միսիոներներին վիլայեթում ճամփորդել: Մուշը պաշարողական վիճակում է, նույնիսկ նամակներն են բռնագրավվում»: Հայաստանը «ծանր դեպքերի թատերաբեմ է դառնում», ստացված հեռագրերից «պողթկում է մի ամբողջ ժողովրդի ողբերգության տագնապը»[39]: "La Paix" թերթը սեպտեմբերի 17-ին գրեց. «Չպետք է կորցնել ոչ մի վայրկյան, ամեն մի հապաղում կարող է առաջացնել աղետի բռնկում...»: Ֆրանսիայի խորհրդարանում 1901թ. նոյեմբերի 4-ին կատարած հարցապնդմամբ Մարսել Սանբան հերքեց արտաքին գործերի նախարարի հայտարարությունը, թե Հայաստանը վերադարձել է բնականոն վիճակի: Այդ «բնականոն վիճակը,- ասաց նա,- նշանակում է... անարդարություն, օրինազանցություն, կամայականություն, բռնարարքներ, գյուղերի ավերումներ, եկեղեցիների ու դպրոցների հրկիզումներ, բռնաբարություններ ու առևանգումներ...»[40]:

38 «Դրոշակ», 1901, թիվ 6:
39 Նույն տեղում:

Պատասխանելով Սանբային՝ արտաքին գործերի նախարար Դելկասեն ասաց, որ Հայաստանի կոտորածների հանդեպ անտարբեր մնացողը «դադարում է մարդ լինելուց... Ստույգ է... որ հայերն ընդհանուր անապահովությունից ամենաշատ տուժողներն են... երբ Սասուն ուղարկված բանակի հրամանատարն ասում է՝ եկել է հայերին պաշտպանելու քրդերից, հայերն... արձագանքում են. «Մեկի փոխարեն երկու թշնամի ենք ունենալու»»[41]:

"Le Temp"-ը 1901թ. սեպտեմբերի 28-ին գրում է, որ դրությունը Հայաստանում ծայրաստիճանի ծանր է: Սկսած 1894-ի, 95-ի և 96-ի մեծ հեկատոմբներից, սկսած այն ժամանակից, երբ երեք տարվա ընթացքում 300 հազար հայ՝ տղամարդ, կին, ծեր ու երեխա ընկավ Աբդուլ Համիդի ծառաների հարվածներից, Թուրքական Հայաստանը, չնայած սուլթանի խոստումներին ու ստանձնած պարտավորություններին, մշտապես եղել է ամեն տեսակի թշվառության, վայրենությունների, ամենաստոր և ամենագարշելի եղեռնափորձի թատերաբեմ: «Հայերի նկատմամբ ամեն ինչ թույլատրված է, ամենահանցավոր գործողությունները դառնում են օրինական: Դրանք լռելյան կամ բացահայտ խրախուսվում են Ելդզ-Քեոշքի մարդու կողմից: Քրդերը, համիդիները «սուլթանի այդ ժամանակակից ենիչերիները, ավելի անողոք և ավելի բարբարոս, քան նախկինները, տիրականորեն իշխում են հայերի կյանքի ու անձի վրա»: Նրանք հայերին զրկում են իրենց հողերից, եթե այդ իրենց հաճելի է և ապա ստիպում են որպես ստրուկ մշակել այն հողերը, որոնց տերերը քիչ առաջ նրանք էին: Հափշտակում են հայերի հոտերը, տանում հունձքը, գողանում դրամը: Առանց պատրվակի, սոսկ քմահաճույքով պաշարում են որևէ գյուղ, թալանում, գերի են վերցնում երևելի անձանց, որոնց սպանում կամ բանտ են նետում: Երբեմն նրանց հաջողվում է ահավոր սպառնալիքներով իսլամացնել բնակիչների մի մասին և այդպիսով ստորության և բնաջնջման իրենց գործը պսակում են առաքինության մի գարշելի լուսապսակով»: Այդ ինչպե՞ս է,- հարց է տալիս Թերթը,- որ մի ժողովուրդ թույլ է տալիս նման ձևով խողխողեն իրեն ու չի փորձում ընդվզումի մի լայնածավալ շարժումով գետին փռել հարստահարիչներին: Հետևում է պատասխան. «Բռնություններից ու մարդասպանություններից պաշտպանվելու համար հայերը ոչ մի միջոց չունեն, քանի որ նրանց արգելված է զենք կրել: Դանակն անգամ նրանցից խլում են, մինչդեռ բոլոր Թուրքերն ու քրդերը լավ զինված են... Հայերը անպաշտպան որս են քրդերի ու Թուրքերի համար, նրանք այդ որսին բռնում են, չարչարում, պատառոտում, հայերի տանջանքները նրանց սոսկալի հրճվանք են պատճառում»: Կողոպուտ, սպանություն, բռնաբարություն՝ այդ ոճիրները կատարվում են ամեն օր և դրանց մասին լուրերը հասնում են Եվրոպա: Եվրոպական պետությունները իրազեկ են, բայց լռում են: Նրանք իրենց անկարեկից լռությամբ ու անտարբերությամբ քողարկում են սուլթանի հրամանով կատարված ոճիրները:

Ա. Բեբելը, դիմելով հայերին, գրում է. «Մենք համոզված ենք, որ ոչ կառավարությունը և ոչ էլ Ռայխստագի մեծամասնությունը չի արձագանքելու ձեր բողոքներին: Այդ շրջանները սառնասիրտ են Հայաստանում կատարվող անցքերի նկատմամբ»: Ա. Ջիբրանին գրում է. «Ճնշման դեմ ապստամբությունն իրավունք է: Ձեր թշնամիներից սպասեք միայն ստրկություն, թշվառություն, վիրավորանք, տանջանք և ավերում: Լրիվ բնաջնջման ենթակա ժողովուրդը հույսը միայն իր հուսահատ դյուցազնական ընդվզման վրա պետք է դնի: Ուրեմն մի սպասեք, որ արդեն սկսված այս կեղտոտ ոճիրը աղջամուղջի մեջ կատարվի:

Եթե դուք մեծ պատերազմում, մեծ հեղափոխության մեջ զոհեիք 300 հազար ձեր խողխողված եղբայրներին, ազատ կլինեիք: Որևէ ժողովրդի անպատիժ սպանելն անհնար է, բացի այն դեպքից, երբ այդ ժողովուրդն ինքն է իր վիզը երկարում դահճին: Իսկ եթե գիտի և ուզում է ինքն իրեն պաշտպանել նույնիսկ եղունգներով ու ատամներով, այդ ժողովուրդը չի հաղթվի, չի նվաճվի, չի կորչի:

40 «Դրոշակ», 1901. թիվ 8:
41 Նույն տեղում:

Եվրոպայի միջամտության վրա հույս դնելը հիմարություն է: Նա նույնքան ոճրագործ է, որքան էտեպսիզ Աբդուլ Համիդը... Եթե դուք շարունակեք վախկոտ հոգի ունենալ, հպատակվել, հուսալ ու Աստծուն աղոթել, կորած եք: Ձեր Աստվածը, ձեր հույսը, ձեր հավատը պետք է լինի ձեր քաջությունը, ձեր հանդգնությունը, ձեր ատելությունը, ձեր հուսալքությունը... Որովհետև ձեր մարդասպան թշնամիները ոչ սեռն են խնայում, ոչ տարիքը, հետևաբար ձեր պաշտպանության համար ոտքի եք հանելու աղջիկ թե երեխա և կռվելու եք, հաղթելու թե մեռնելու հանուն ձեր պատվի, ձեր անվտանգության, ձեր անկախության և ձեր ազատության: Զինված հարձակմանը պատասխանեք զինված ապստամբությամբ: Ուժին՝ ուժով: Թուրքը հալածում է հային, հայն էլ թող հալածի թուրքին...

Մարդկանց համար ամեն միջոց լավ է ու բարի իրենց դահիճների դեմ կռվելու, նրանց կործանելու և սատկացնելու համար: Ամեն պատերազմ, որ տանում է դեպի ազատություն, արդար է և օրինավոր: Կամ մեռնել հերոսի պես՝ զենքը ձեռքին կռվելով, կամ մեռնել անարի ու վախկոտ, համակերպվող ու լալկան: Առաջին դեպքում ազատ լինելու բախտից զուրկ չեք, երկրորդ դեպքում ազատության հոտն անգամ չեք առնի: Ընտրեցեք»:

2. ՍԱՍՈՒՆԻ 1904Թ. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐԸ

Այսպիսով, Եվրոպայի առաջադեմ քաղաքական միտքն անմիջապես հասկացավ ու տագնապ հնչեցրեց, որ հայերը նոր արհավիրքների նախօրյակին են: "Le Temp"-ը գրեց. «Պետք է հուսալ, որ ժողովուրդների խիղճը կարթնանա և կառավարություններին կհարկադրի միջոցների դիմել մարդկության դեմ նյութվող նոր ոճրագործությունը կանխելու... Եվրոպան պարտավոր է Բ. Դռան մահմեդական մոլեռանդությունը և սուլթանի մաքիավելականությունը հաղթահարելու ուղիներ որոնել»[42]:

Դարասկզբին Տարոնի հայության վիճակը շարունակում էր մնալ ամենածանրը ամբողջ աշխարհատարածքում: Սասունում քյաֆիրությունը առավել մեծ ծավալներ ու այլանդակ ձևեր ընդունեց: Քուրդ աղային պատկանող հայն այլևս իշխանության մարմիններին, դատարաններին դիմելու իրավունք չուներ: Քուրդ աղան էր նրա թե իշխանությունը և թե դատավորը: Ստեղծված իրավիճակը Սասնո որոշ շրջաններում ծնեց հուսալքություն, Տարոնի և Բաղեշի առաջնորդները նորից դիմեցին ռուսական հյուպատոսին՝ ընդունելու ուղղափառ դավանանք. միայն թե ազատվեին անտանելի հալածանքներից: Բաբկեն վարդապետի 1900թ. տեղեկագրում կարդում ենք. «Սասունը զեղծումների, անհանդուրժելի կեղեքումների և սոսկալի ոճիրների թատերաբեմ է դարձել: Այս չարիքները գործվում են զանազան ձևերով և հայ տարրը ոչնչացնելու նպատակ են հետապնդում»[43]: Տեղեկագիրը պարունակում է տարոնահայության կյանքի ամենատարբեր կողմերին վերաբերող փաստեր, որոնք ավելի քան հաստատում են վարդապետի եզրահանգումը: Գնալով կայսրությունում ավելի ու ավելի էր մոլեգնում քաղաքական ռեակցիան, որում քիչ դեր չէր խաղում սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի աճող մոլագարությունը: Նա անընդհատ փոփոխում էր բարձրաստիճան պաշտոնատարներին, կատարում կադրային կամակոր նշանակումներ: Սովորական երևույթ դարձավ ներքինուն նախարար դարձնելը: Ժամանակակիցը գրում է. «Արյան հոտը բռնեց պալատը, չպղծված անկյուն և անարյուն սենյակ չմնաց: Դա պալատ չէր, այլ պալատական սպանդանոց»: Սուլթանի քեռայր Դամադ Մահմուդը 1900 թվին գրեց. «Աբդուլ Համիդն իր սուլթանության 25-ամյակը սկսում է Սասունի նոր կոտորածով... Որովհետև առաջին ոճիրները չպատժվեցին, համը մնաց Աբդուլ Համիդի բերանը, և նա նորից հայացքը շուռ տվեց հայերի կողմը... և բռնակալի իր դաժան հայացքը մտցրեց հպատակների արյան մեջ: Նա այն տարիներին դժբախտ Հայաստանը ջարդուփշուր էր անում»: Սակայն հասկանում էր, որ հպատակ ժողովուրդների շրջանում գնալով ուժեղանում էր վարչակարգի դեմ ընդհանուր ճակատ կազմելու անհրաժեշտության գիտակցումը: Ավելի հաճախ էր լսվում դժգոհություն ճնշված ազգերի մասնատվածության դեմ: 1905թ. արաբական երկրների լիգայի գլխավոր կոմիտեն հրապարակեց մի կոչ, որում ասվում է. «Թուրքիայից մեր անջատման շնորհիվ բոլոր ազգերը՝ քրդերը, հայերն, ալբանացիները և այլն, իրենց ազատությունը պետք է ձեռք բերեն, քանի որ արաբների միջոցով է, որ ճնշում են բուլղարացիներին: Դարձյալ արաբների ձեռքով են ճնշում քրդերին և քրդերի ձեռքով է, որ ջարդում են հայերին»[44]: Ի. Ռային «Հայերի ցեղասպանությունը օսմանյան տիրապետության շրջանում» գրքում գրում է. «... Երբ խոսվում է կրծքի երեխաների, անպաշտպան ծեր կանանց և տղամարդկանց զանգվածային կոտորածների մասին, ակամայից սառը քրտինք է պատում մեր ճակատը...»[45]: Մի թուրք սպա ասել է. «Մենք ժանդախտն ենք Ասիայի: Եթե մի հզոր զենք չուղղե մեր անել ուղին, ոչնչացնելու ենք ստորացված ազգերին»[46]:

Որքան ուժեղանում էին ճնշումները, բռնություններն ու հարստահարությունները, այնքան ստվարանում էին արտագաղթողների ու պանդուխտների շարքերը: «Հնչակը» պանդխտության մեկնողների վիճակը նկարագրում է հետևյալ կերպ. «Լեռների կողերի գաղտնի ճանապարհների, մութ ճեղքերի մեջ մեկական գավազան ձեռքներին բռնած, մերկ, ոտաբոբիկ ու քաղցած, խոցված սրտերով, աղի արցունքով, գլուխները կքած գյուղացիների, ոսկրացած մարդկանց քարավաններ են շարժվում... Թողած իրենց հայրենական օջախը, ընտանիքն ու զավակները, մերկ ու քաղցած, հևհև, կորաքամակ, դիմում են հեռու, շատ հեռու՝ մերթընդմերթ թախանձող հայացքներն ուղղելով դեպի հետ, դեպի Երկիր: Լռությունը տիրում է այդ խումբ-խումբ քարավաններին, կարծես խոսել չգիտեն, ձայն-ծպտուն չկա, այդ անմեղ զոհերը, շշմած այս քստմնասարսուռ իրականության առաջ, քայլում ու քայլում են... ճանապարհի երկայնքով շատերը՝ ընկեր, հայր, եղբայր, ընկնում են չնչասպառ ու մեռնում, բայց կրկին ձայն չի ելնում: Սով է, արհեստական սով է մեր երկրում, սա մի դիվանագիտական ճարպիկ խաղ է մեզ բնաջնջելու, արմատախիլ անելու»[47]: «Մեծ թվով մարդիկ,- գրում է «Դրոշակը»,- սիստեմատիկաբար գաղթի ճանապարհներով հեռանում են»: Այդ փախստականները «պետք է 10-20 օրվա ճամփա մը ոտքով կտրեն, գիշերներն առանց անկողնի, առանց ծածկի, քարի մը վրայ, լեռան մը, ձորի մը մեջ գիշերեն, շատ անգամ օրերով անոթի մնան... ստիպված են խոտ ուտել...» և այս տանջանքներից հետո սահմանագլխին նրանց ձերբակալում են: Գնացածների 50%-ն այդ բախտին է արժանանում: Բռնվածին չղթայակապ տեղափոխում են բանտից բանտ, լրիվ թալանում ու տանջամահ անում[48]:

Սասունցիները, որ թուրքական խարդավանքներն իրենց վրա զգալու փորձ ունեին, իսկույն հասկացան, որ իշխանությունները նորից ինչ-որ ոստայն են հյուսում: Թուրքական զորքերն ու պաշտոնատարները լեռնաշխարհ մտնելով, «անձեն ու անձուն իրենց... կամաց-կամաց ջնջելու նպատակ» ունեին: Նրանք ընդվզեցին ու որոշեցին բոլոր միջոցներով անհնար դարձնել այդ ծրագրի իրականացումը: Նախ դիմեցին Մշո կառավարչին. «Եթե ուզում եք մեզ մեր հողից գաղթեցնել, բերել տվեք մի քանի օտար հյուպատոսներ, որոնց հովանավորությամբ հեռանանք այստեղից, իսկ եթե ցանկանում եք զորանոցներ կառուցել և մեզ տեղում թողնել, չենք կարող համաձայնել, որովհետև մեր աշխատող ձեռքերը մեր կանայք ու աղջիկները լինելով, գիշեր ու ցերեկ դրսում են և անպատվվում են զորքերի կողմից, այդ տանել չենք կարող»[49]:

Կառավարիչը, ի պատասխան սասունցիների առաջարկ-պահանջի, ինչպես 1901թ. սեպտեմբերի 4-ին գրում է. "Le Temp"-ը Սասուն նոր զորքեր ուղարկեց: «... Էրզրումի 7-րդ զորաբաժնի հրամանատար Մեհմեդ Ալի փաշան, ութ վաշտերի գլուխն անցած, գնաց Սասնա գավառը՝ ուժով գրավելու: Փայտամրոցներ պիտի կառուցվեին Տալվորիկ, Սեմալ և Գելիեգուզան հայ գյուղերում»[50]: Թուրքերին հաջողվում է ոչ միայն Սասունում, այլև հայկական մյուս վիլայեթ-

42 «Դրոշակ», 1899:

43 ՀՀԿՀԳԿԱ, ֆ. 131, ց.1, գ.51:

44 «Պատմա-բանասիրական հանդես», 1987, թիվ 1, էջ 76:

45 «Սովետական Հայաստան», ամսագիր, 1987, թիվ 7:

46 Սեյլան (Արշակ Մատոյան) Հուլթա-ֆիրատ, Թիֆլիս, 1904, էջ 7:

47 Պողոսյան Ս., Պողոսյան Կ., Ինձ բահ տվեք, Երևան, 1990, էջ 211-212:

48 «Դրոշակ», 1902, թիվ 9:

49 Նույն տեղում:

50 Ն. տ.:

ների 28 կետերում զորքեր տեղակայել և հայ բնակչության վրա իրականացնել մշտական զինվորական հսկողություն: Բացի դա, հայկական գյուղերում նշանակվեցին քուրդ պահակներ իբր ավազակներից գյուղերը պաշտպանելու համար: Հայերը պարտավոր էին հոգալ այդ «պաշտպանների» սնունդն ու մյուս կարիքները, ովքեր հանձնարարություն ունեին լրտեսելու իրենց, մասնավորապես հայդուկներին: Վ. Մաևսկին, նկատի ունենալով այս և նման այլ ձեռնարկները, գրում է, որ իշխանությունները ծրագրել են Սասունի վրա հարձակումը սկսել 1901թ., սակայն «Մակեդոնիայում բռնկված ապստամբությունը... խանգարեց դրան... Հարկ եղավ սահմանափակվել Սասունի շրջափակմամբ»[51]: Կոտորածների կանխատեսումներն այնքան որոշակի էին, որ արդեն հունիսին Մուշից գրեցին. «Տաճիկ կառավարության և իսլամ տարրի վերջին վճռագիրն է՝ կոտորել Մուշն ու Սասունը... Ինչո՞ւ... Որովհետև Մուշի ու շրջակայքի հայ տարրն աչքի զարնող թիվ է կազմում, որովհետև 95-ի գազանային կոտորածի ժամանակ Մուշը համեմատաբար քիչ ջարդ ու վնաս կրեց...»[52]:

Իշխանությունները չէին դադարում քրդերին հայերի դեմ օգտագործելուց: Չիզարի թուրք աղան, բռնությամբ տիրացավ Տարոնի Ղզլաղաջ, Անձնուտ, Ավազաղբյուր և մի քանի այլ գյուղերին, միաժամանակ կոչ անելով բատկանցի քրդերին. «Իջե՛ք, դաշտի գյուղերն ավերակ դարձրեք»: Աշիրեթապետ Գառանց Ալոն, որ 1895-ին կոտորել էր 400-500 հայ, կողոպտեց ու ավերեց Տատրագոմ գյուղն ու ս. Հովհաննու վանքը: Մուշում տեղի է ունենում թուրք ու քուրդ երևելիների ժողով, որտեղ բալաքցիների ցեղապետ Ֆերոն լիազորություն է պահանջում հայկական գյուղերը ոտնատակ անելով՝ հայդուկներին ոչնչացնելու: Մութասարիֆը համաձայնում է և նրան ուղարկում Բիթլիս՝ վալու հետ հարցը համաձայնեցնելու համար: Սակայն հայդուկները ճանապարհին Ֆերոյին ու նրա խմբին ոչնչացնում են:

"Berliner Lokal Anzeiger"-ը 1901թ. սեպտեմբերի 23-ին գրում է. «Սասունը թուրքական չորս փաշաների կողմից այնպես է պաշարված, որ մինչև անգամ կես ժամ հեռու գտնվող Մուշում չեն իմանում, թե ինչ է կատարվում Սասունում... Համաձայն լուրերի՝ գործողությունները ղեկավարվում են ուղղակի Ելդզից, առանց կառավարության գիտության: Պալատը նահանգներ է ուղարկում բազմաթիվ ուլեմաների, որոնց գրգռիչ գործունեությանն են վերագրվում Սասունի նոր դեպքերը: Ընդհանուր վիճակը նման է մի քանի տարի առաջ տեղի ունեցած կոտորածների նախօրյակին»[53]: Երկու օր անց "Frankfurter Zeitung"-ը հաստատում է լուրերը, թե հայկական մի քանի շրջաններ շրջապատված են զորքերի կողմից[54]:

Սակայն գնալով ավելի զգալի էր դառնում քրդերի հակաթուրքական կեցվածքը, ինչն իշխանություններին հարկադրեց ստեղծելու նոր ուժ հայերին բնաջնջելու համար: Նրանք հավաքագրեցին հասարակության թափթփուկների և կազմակերպեցին ջանբազարների խմբեր: «Վաղուց չէ,- գրում են Վանից,- ինչ կրոնամոլ քրդերից կազմված է «ջանբազար» անվանվող կուսակցությունը, անունն ինքը բացատրում է կուսակցության սկզբունքը: Անդամներն արյունարբու ավազակներից, կրոնամոլ աղաներից և բախտախնդիր քրդերից են հավաքագրվել: Գազանների այդ ոհմակը գործում է Մշո դաշտում, բայց դեպքից դեպք մեր կողմերն էլ է երևացել: Ալշևազ գավառում նրանք սկսել են ավերումներ կատարել: Քուրդ բեկերը, կայմակամները դրանց գործիք են դարձրել հարկեր հավաքելու և ժողովրդին կեղեքելու: Կարծում եմ այդ կուսակցությունն առաջ եկավ այն բանից, որ կառավարությունը վերջերս լուրջ երկյուղ կրելով հայ-քրդական հարաբերություններից, շատ տեղերում զինաթափ արեց համիդիեներին և քուրդ ազգաբնակչությանը...»[55]:

Այդ ավազակախմբերը հարձակվում էին բնակավայրերի վրա և սպանում ազդեցիկ հայերին: Իսկ երբ հայերը դիմադրում էին, անմիջապես միջամտում էր բանակը ու ձերբակալում զենք ունեցողներին: Սովորական դարձավ իշխանությունների հրահրած ահաբեկչությունը: Մուշում

51 Маевский В. Т., նշվ. աշխ., էջ 48:

52 «Դրոշակ», 1902, թիվ 5:

53 Նույն տեղում, թիվ 6:

54 Նույն տեղում, 1901, թիվ 6:

55 ՀՀ ԿՀԿՊԿԱ, ֆ.131, գ.61:

հրոսակախմբեր ստեղծվեցին պետական ծառայողներից, որոնք դաշտի երկու գյուղերում սպանեցին 29 հայ: Այդ հրոսակախմբերի նշանաբանն էր՝ նախ «պետք է ջնջել հայ տարրը, որից հետո նրա ունեցվածքը մերն է»[56]:

Ջանբազարների հորդանների ձևավորումը նույնպես ջարդերի նախապատրաստության նշան էր: Սուլթանը պարտադիր էր համարում ջարդերի հարվածային ուժի կազմավորումը: 1894-96թթ. այդ ուժը համիդիե գնդերն էին. 1904թ.՝ ջանբազարները: Երիտթուրքերը հետևեցին Ելդզի մարդու օրինակին և Մեծ եղեռն իրականացնելու համար ստեղծեցին Թեշքիլաթը մախսուսեն (Հատուկ կազմակերպություն): Մերսինից 1902թ. մայիսին գրում են. «Ամենեն վայրագ, ամենեն կատաղի և միանգամայն մոլեռանդ թուրքերը կազմել են մի տեսակ ենիչերական... կազմակերպություն. իրենց հրամանատարության, իրենց պաշտպանության տակ առած և իրենց ազդեցության շրջանին մեջ բաժանած են քաղաքին էն սրիկա, էն բարբարոս խուժանը, որն իր քմահաճույքին համեմատ կը կեղեքե, կը կողոպտե և, իհարկե, կը սպանե արդեն արիւնաքամ ժողովուրդը: Կառավարութիւնը գաղտնապես կը դրդե և կը քաջալերե զանոնք... Նոր ենիչերները... վայրագութիւններուն առջև չեն ըմկրկիր: Նախ, որ իրենց կռնակ ունին կառավարութիւնը... և, երկրորդ, գործած ոճիրներու ականատեսները, եթե թուրք են, անկարելի է, որ թուրքին ի վնաս վկայութիւն տան, իսկ եթե հայ են, ապա չեն համարձակվի թուրքի դեմ ցուցմունք տալ»[57]:

Ջանբազարները հրկիզեցին Մառնիկ գյուղը, Մուշում հարձակվեցին հայկական թաղերի վրա: Հայերը բողոքի հեռագիր ուղարկեցին սուլթանին, որից հետո Մուշ եկավ վալին և հայտարարեց, թե անկարգությունների մեղավորը հայերն են, մասնավորապես հայդուկները: Վալու հայտարարությունը հաստատելու նպատակով Ալին, զինվորների գլուխն անցած, գնաց գյուղերը և, բռնություններ գործադրելով, ստորագրություններ հավաքեց: Բերդակ գյուղում նա գյուղացիներին քշեց եկեղեցի, նավթ բերել տվեց ու հայտարարեց. «Ստորագրեք, թե չէ գյուղը կհրդեհեմ»[58]: Կարինից Մուշ է գալիս մի հանձնաժողով, սկսվում են ձերբակալություններ: Վանում Ռուսաստանի փոխհյուպատոսը 1901թ. հոկտեմբերի 20-ին իր դեսպանին գրեց, որ Էրզրումի զինվորական հրամանատար Մահմեդ Ալին գտնվում է Մուշի մերձակայքի իր շտաբում և զբաղված է ձերբակալություններով: «Նա խնամքով զինվորական հսկիչ կետեր դրեց այն տեղերում, որտեղ երբևիցե դեպք էր տեղի ունեցել: Սակայն հայ հրոսակախմբին (մոտ 40-50 մարդ՝ Անդրանիկի հրամանատարությամբ) դեռևս չի հաջողվել բռնել և հազիվ թե կարողանա բռնել: Մուշ է եկել նաև Բիթլիսի վալի Հուսնի բեյը: Մուշի հայերից 27 հոգու մեղադրել են Շերիֆ աղայի (Քոթանլի) սպանության մեջ և դատապարտել 10-15 տարվա բանտարկության: Գյուղերի հրդեհումներն էլ վերագրում են հայ ֆիդայիներին և բոլորին հեռակա դատել են: Շուրջ 2000 ընտանիք 10-12 հազար մարդ դիմել է դառնալու ուղղափառ քրիստոնյա: Ինձ հավատացնում են, որ եթե Ռուսաստանից հոգևորական պատվիրակություն գա, բոլոր հայերը կընդունեն ուղղափառ կրոն»[59]: Բեռնշտայնը նշում է. «... Հայերի վիճակը վատ է: Անզեն, դիմադրության չնչին միջոցներով, միայն սեփական ուժերով անհնար է վտանգից խույս տալ: Նրանք այդ մասին ահազանգում են արտասահման... Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարին հասցնելու համար: Դելկասեն... բացեիբաց խոստացավ կոմիսարներ ուղարկել ջարդի վտանգին ենթակա նահանգները...»: Սակայն, շարունակում է Բեռնշտայնը, սա լոկ հույս է, քանի որ այն «ինչ տեղի ունեցավ 1896-ին Պոլսում, դեսպանների աչքի առաջ, բնականաբար, կարող է կրկնվել 1902-ին այդ հեռավոր նահանգներում, ֆրանսիական կոմիսարների ներկայությամբ...»[60]: Եվրոպայի հասարակական-քաղաքական գործիչների նման ելույթները սուլթանին, իհարկե, անհանգստացնում էին, և նա նորից քայլերի դիմեց լայն հասարակայնությանը խաբելու համար: Բ. Դուռը խոստովանեց հայկական նահանգների ծանր վիճակը և հանձնաժողով ստեղծեց դրությունն ուսումնասիրելու համար: «Գործնականում,- սեպտեմբերի 28-ին գրեց "Le Temp"-ը,- նման

56 «Դրոշակ», 1901, թիվ 6:

57 Նույն տեղում, 1902, թիվ 6:

58 Ն. տ., 1901, թիվ 6:

59 АВПР. ф. Политархив. д.1869.

60 Օտարերկրացիները Հայկական հարցի մասին, էջ 24:

հանձնաժողովներ ստեղծվում են հասարակական կարծիքը մոլորեցնելու համար»: Իսկ թե ինչու էր այդ արվում, վկայում են 1902թ. մարտի 14-ին Մուշից ստացված նամակի հետևյալ տողերը. «Տարոնից Ռուսաստանի հյուպատոս Տումանսկու մեկնելուց հետո վայրագությունները վերսկսվեցին: Կատաղած թուրք զինվորները և քրդերն իրենց հրամանատարի ղեկավարությամբ ահռելի տառապանքների են մատնում Նորչեն գյուղի դժբախտ հայերին»:

Նոր ջարդերի ու հափշտակությունների լուրեր ստացվում էին ոչ միայն Տարոնից: Աբդուլ Համիդի գահակալության վերջին 6-7 տարիներին հայերից խլվեց 26185 կտոր վարելահող, 2501 տուն, 1190 այգի, 1086 այլ շինություն, 460 մարգագետին[61]: Թուրքական իշխանությունները ձեռնարկեցին հարձակում հայ մշակույթի, հոգևոր և լուսավորչական հիմնարկների վրա, պղծվում, թալանվում ու քանդվում էին հայկական եկեղեցիները և պատմական հուշարձանները, փակվում էին դպրոցները, թերթերն ու հանդեսները, ոչնչացվում էին հայերեն գրքերը: Կեսարիայի թուրքերը պատեհ և ոչ պատեհ առիթներով կրկնում էին. «(1895թ.) Կարկանդակի միայն եզերը կարողացանք ուտել, մեջտեղը մնաց», այսինքն՝ 7000-8000 հայ սպանեցինք «փոխանակ արական սեռի գյավուրներին լրիվ ոչնչացնելու և իգական սեռին տիրանալու»[62]: Թուրքերը հայերին սպառնում էին. «Անհավատներ, դուք գյավուր թագավորների օգնությանն եք դիմում մեր դեմ: Դարունը բացվելուն պես կտեսնեք, թե ինչ արժեք ունի այդ օգնությունը: Մեր կողմից ջարդվելուց հետո դիմեք ուր ուզեք: Ամեն ինչ պատրաստ է, սուլթանի հրամանին ենք սպասում»[63]: Երզնկայից գրում են. «...Այս օրերին ընդհանուր ջարդի շշուկը դարձյալ շրջում է ժողովրդի բոլոր խավերի մեջ: Ասվում է, թե մեծ դահիճը դարձյալ հրաման է արձակել հայերին կոտորելու: Ամեն կողմ ահ ու սարսափ է տիրում, 1895-96 թվականների փորձն աչքերիս առջև է»: Վիճակը ավելի քան անտանելի էր ծայրամասային շրջաններում, մանավանդ այն տարածքներում, որտեղ մահմեդական բնակչությունը նշանակալից տեսակարար կշիռ էր կազմում: Սղերդի Տեհի գյուղի նորակառույց դպրոցը իշխանությունները քանդեցին մի նպատակով թրքացնելու 300 տուն ունեցող այդ գյուղի բնակիչներին: Տեղի պաշտոնատարները տարբեր առիթներով խոսում էին այն մասին, որ 1903թ. օգոստոսի 4-ին և 8-ին Կ. Պոլսից հեռագրեր էին ստացվել, որոնցով պահանջվում էր մահմեդական ազգաբնակչությանը զինել «հայերուն երկրորդ անգամ ջարդ տալու»: Թուրքերը «ծայրաստիճանի կատաղած են»: «Ոստիկան, փոլիս, կոմիսեր աչքերնին չորս բացած զայրացկոտ դիրքով հայերը կը դիտեն... Միշտ պատրվակ կտեղծեն հայերու հետ վեճ ունենալու համար»[64]: Հայերի մոտալուտ կոտորածների նշան էր համարվում նաև այն, որ իշխանությունները նորից արտակարգ սիրալիր էին դարձել քրդերի նկատմամբ: «Զկոցիների ցեղապետ Ղուլի խանը, որի վերաբերյալ մահվան վճիռ էր տրված... տարվեց Կարին, և համիդիե գրվելով, ոչ միայն ազատվեց, այլև կայմակամի պաշտոն ստացավ»: Այո, կոտորածների նախանշան էր նաև հայերին ճնշելու, բռնաբարելու և նույնիսկ ոչնչացնելու համար քրդերին նյութապես ու բարոյապես խրախուսելու պաշտոնական քաղաքականությունը[65]: Կոտորածների նախապատրաստումը հաստատող մի երևույթ ևս: Գրում են Ախլաթից. «Թուրքերի շրջանում շշուկ կա հայերին կոտորելու մասին: Դա մեծ երկյուղ է պատճառել: Բաղեշում հուլիսի 11-12-ին հայերը տեսան, թե փոլիսները խումբ-խումբ շրջում էին շուկայում ու թալանում: Վերջին կոտորածների ժամանակ էլ այդ նշանը տեսել էին հայերի ջարդը սկսելուց առաջ...»[66]: Գրում են Աղրակից. «Թուրք կառավարությունն այստեղ համառությամբ առաջ է տանում իր հայաջինջ քաղաքականությունը՝ ամեն կերպ աշխատելով դատարկել այս գավառն իր հայ ազգաբնակչությունից»[67]: Իսկ Պոլսից ահազանգում էին. «... Ամենուրեք ջարդերը շարունակվում են, բայց ոչ հավաքական»[68]: 1903թ. փետրվարին Բասենից գրում են, որ թուրքերի շրջանում սադրիչ լուրեր են տարածվում նրանց հայերի դեմ գրգռելու համար: Իբր «գարունը սկսելուն պես ֆանֆիդայիները Էրզրումի, Բասենի, Հասան Կալեի կողմերից մեզ վրա պիտի հարձակվեն, պայթուցիկ նյութերով պիտի կործանեն քաղաքապետարանի շենքը, զորանոցները և զենքի զորությամբ պիտի տիրանան կարևոր դիրքերի...»[69]:

Կրկին մերկապարանոց էր դառնում այն համոզմունքը, որ հայերի բնաջնջումը ոչ թե քրդական, այլ թուրքական քաղաքականություն էր, և գլխավոր գործող անձինք թուրք պաշտոնատարը, զինվորն ու ոստիկանն էին: Հայտնի ավազակ, Համիդիե գնդապետ Ցադեհը ցուցմունք տվեց. «... Չարագործությունների հեղինակը, արմատը ես չեմ, այլ եկող-գնացող կուսակալները: Եթե նրանց հրամանով ու հաճությամբ չլիներ, ոչ ես, ոչ էլ իմ մարդիկ չէին համարձակվի ժողովրդի մեկ շյուղին դիպչել: Մեղավորները նրանք են, որ թույլատրեցին... կատարելու այս ամենը: Հայաստանի մեջ կատարված բոլոր գողությունները, ոճրագործությունները, ավազակությունները կառավարության գիտությամբ ու մասնակցությամբ են տեղի ունենում»[70]:

Կոտորածի նախանշան էր նաև հայերի հանդեպ բռնաբարքների դաժանանալը: Ադանայից 1902թ. ստացված մի թղթակցություն պատմում է. «Արտօղլու գյուղից թուրքերը մի աղջիկ են փախցնում: Աղջիկը դիմադրում է: Թուրքերը նրան մերկացնում, սրունքները դաշույնով խոցոտում են և հետո դժոխային դիտավորությունը կատարում անպաշտպան և արյունլվա մի կնոջ վրա, որն արդեն մեռած էր»[71]:

Կոտորածների նախապատրաստվածության մասին է վկայում նաև պահեստայինների զորակոչը: «Թուրքերն էլ շատ դժգոհ են,- գրում են Կիլիկիայից,- և այդ դժգոհությունն իր գագաթնակետին հասավ, երբ ռեֆիֆները սկսեցին զենքի տակ կանչվել: Կառավարությունն իր կատաղությունը ուզում է թափել հայերի վրա»:

Հայերի բնաջնջումն ընթացքի մեջ էր, փոխվել էին միայն ձևերն ու եղանակները[72]: "Over de Eol d'Orient" հանդեսի 1899թ. 219-րդ համարում բնաջնջման եղանակների այդ փոփոխության մասին կարդում ենք. «Հիմա արդեն այն միահամուռ խողխողումները չեն, որոնք գործադրվում էին դժբախտ հայերի հանդեպ, 1895-96-ի այն համատարած սպանդը չէ, երբ հատուկ հրամանով ու ազդանշանով ոչնչացվում էր քաղաքի կամ գյուղի ողջ ազգաբնակչությունը: Թուրքերը հասկացան, որ Եվրոպայի դիմադրության բաժակը լցվել է: Եվ վախենալով զինված միջամտությունից՝ փոխեցին իրենց գործելակերպը: Որդեգրվեց անաղմուկ, գաղտնի ոչնչացման հրեշավոր ծրագիրը, որն ավելի քան մեկ տարի է իրականացվում է հայ ցեղի դեմ... »:

"Pro Armenia"-ի 1900թ. դեկտեմբերի համարում Պ. Քիյարը գրեց, որ դրությունը Թուրքիայում այսօր նույնն է, ինչ մեծ կոտորածների նախօրեին: Գնալով կոտորածի ալիքներն ահագնանում են: Ֆրանսիական "Revue blanche"-ը հայտնեց. «Եվրոպայում շշուկներ են լսվում հայկական կոտորածների հավանականության մասին: Բոլոր ազնիվ մարդկանց պարտքն է անհապաղ կանխել դրանք, քանի դեռ ուշ չէ ...»[73]: "Orore"-ն 1899թ. սեպտեմբերի 9-ին շեշտեց. «Պետք է ողջ Եվրոպան իմանա իր պարտականությունը և վերջապես այն կատարի, որովհետև հանցավոր է Հայաստանի թշվառության համար», իսկ "Eve'nement"-ը նկատեց. «Համիդը ավելի նպաստավոր օրերի է սպասում իր երազած համատարած բնաջնջման համար...»: Ֆ. Պրեսանսեն գրում է. «Մենք պարտավոր ենք այժմվանից գուժել մի նոր դիվային սպանդի վտանգը, այժմվանից մարդկանց հասցնել այն խուլ որոտները, որ լսվում են դժբախտ Հայաստանի լեռներից ու ձորերից՝ արթնացնելու Եվրոպայի քաղաքական ողջամտությունը: Սխալվելու իրավունք չունենք: Անատոլիայում նախապատրաստվում է սարսափելի անակնկալ: Դեռևս թարմ ոճիրներն

61 La situation des Arme'nines en Turque expose'e par des documents..., t. II, 1913, pp. 30-31.
62 ՀՀ ԿՀԿՊԿԱ, ֆ.131, ց.1, գ.48:
63 Նույն տեղում, գ.52:
64 «Դրոշակ», 1903, թիվ 5:
65 ՀՀ ԿՀԿՊԿԱ, ֆ.131, ց.1, գ.58:
66 Նույն տեղում, գ.55:
67 «Հնչակ», 1902, հունիս:

68 «Հնչակ», 1902, հունիս:
69 ՀՀ ԿՀԿՊԱ, ֆ.131, ց.1, գ.59:
70 Նույն տեղում, գ.55:
71 Ն. տ.:
72 Ն. տ.:
73 «Դրոշակ», 1899, դեկտեմբեր:

անվրդով մարսած հրեշը նոր ոճիր է որոճում»: "Le petite republigue"-ում Գուստավ Ռուանեն 1901թ. օգոստոսի 2-ին գրեց. «Կ. Պոլսում վերածնված օսմանցի Կալիգուլան 1895-96-ի ընդհանուր ջարդերից հետո, մարդասպանության մեջ ավելի հմտացած, հիմա մասնակի կոտորածների ու պարբերական հարստահարության նվազ աղմկալի եղանակն է կիրառում հայ ժողովրդին հիմնովին բնաջնջելու համար»:

Սպանություններից առավել դաժան էր անընդմեջ հալածանքների սահմռկեցուցիչ համակարգը: Մի քանի օրինակներ: Բիթլիսի վալին 200 զինվոր է ուղարկում Սասուն, որոնք հայկական գյուղերում հրեշավոր արարքներ են գործում: Անհետանում է երեք քուրդ: Մեղքը բարդում են հայերի (ոչ թե որոշակի անձանց, այլ ընդհանրապես հայերի) վրա և «վրիժառու մղումով» Հիթընքում սպանում են 7, Տալվորիկում 10 հայի: Հիթընքը հրդեհում են: Սպանում են Աղբիկի Ղազար վարդապետին և վանքի միաբանությանը հարկադրում գրավոր վկայել, որ վարդապետին սպանել են հայդուկները: Դարասկզբին սուլթանն այլևս չէր բավարարվում ոչնչացման «մեղմ» եղանակներով: Նա նորից զանգվածային արյունահեղության էր ձգտում: Այդ նկատի ունենալով Ստրաֆորդ դը Ռետկլիֆը գրում է. «Մենք չգիտենք ե՞րբ և որտե՞ղ անգղերը նորից կհրավիրվեն խրախճանքի»[74]: Իսկ Լ. Մաուլիենը տագնապ բարձրացրեց, «Հայերն անհետաձգելի օգնության կարիք ունեն, հակառակ դեպքում նրանք կոչնչանան ամենամոտ ժամանակներս»: Դրա համար պարտադիր չէ, որ վերականգնվեն 1895-96թթ. ընդհանուր կոտորածները, այլ միանգամայն բավարար են այն մասնակի կոտորածները, ընդհանուր թշվառությունն ու անապահովությունը, որոնք միշտ իշխել են դժբախտ Հայաստանում»[75]: Հայերի հանդեպ Թուրքական կառավարության ջարդարար քաղաքականությունը շարունակվում էր և նորանոր եղանակներ ծնում: Ֆրանսիական խորհրդարանում արտասանած ճառում Ռուանեն ասաց. «Մասնավոր ոճիրները չեն, որոնց ենթակա են հայերը: 1900 և 1901 թվականներին նույն դրության մեջ էին, ինչ-որ էին 1892, 1893-ին, մեծ ջարդերի նախօրեին: Բոլոր փաստերը վկայում են, որ սուլթանը... իր բնաջնջման ծրագրից ձեռք չի քաշել: Որտե՞ղ է վերջանում անհատական սպանությունը և որտե՞ղ է սկսվում կոտորածը... փաստերի վերլուծությունը ցույց է տալիս, որ 1900-1901թթ. կարելի է կոչել կոտորածների նախապատրաստության շրջան...»: Իշխանությունները մի կողմից միջոցներ են ձեռնարկում գալիք կոտորածները քողարկելու, իսկ մյուս կողմից, մահմեդական ազգաբնակչությանը հրահրում են «ամենալայն կոտորածների և եղեռնագործության: Այդ նպատակով, երբ որևէ գյուղում հայ է սպանվում, երբ տներ են հրդեհվում, երբ հոտեր են քշում, տանում, Թուրք իշխանություններն իսկույն հայտարարում են, թե այդ չարիքների հեղինակները հայ հեղափոխականներն են»[76]:

Հայկական հարցի վերաբերյալ Խաղաղության 11-րդ համաժողովի (Մոնակո, 1902թ. ապրիլ) ընդունած բանաձևում կոչ էր արվում Բեռլինի դաշնագիրը ստորագրած պետություններին. 1.Հրավիրել համաժողով՝ նվիրված Հայկական հարցին և 2. Ներկայացուցիչներ ուղարկել Մուշ Սասունին սպառնացող նոր կոտորածի առաջն առնելու համար[77]: Փարիզի "Le signal" թերթը գրում է. «... Տարակույս չկա, որ դաշնակից ունենալով Եվրոպայի անտարբերությունը, սուլթանը պատրաստվում է սկսել նոր կոտորածներ: Մեծ մարդասպանը հրամայել է այն սկսել Սասունից... Մարդասպանի հաշվարկներով քիչ ժամանակ անց այլևս հայ չի մնա»[78]:

«Հայաստանի համար» գրքում Պ. Քիյարը գրում է, որ հայերի «վիճակը ծանրանում է օրեցօր, և այդ ժողովրդի ոչնչացումը առաջ է տարվում հետևողականորեն՝ համաձայն մշակված ծրագրի: 1. Հայերին արգելված է ոչ միայն արտասահման, այլև նույնիսկ գավառից գավառ մեկնել, քաղաքից քաղաք, գյուղից գյուղ գնալ: Հայերի առևտուրը լրիվ խափանված է, և քանի որ վարչական միջոցներով կայսրության ներսում սով է կազմակերպվում, հետևաբար դյուրին է սոսկալի անել մեծ թվով մարդկանց... 2. Հարկ հավաքում են թե թուրք կառավարությունը և թե քրդական աշիրեթները: 3. Ոստիկանությունը հայերի հանդեպ դրսևորում է ստոր վարքագիծ, մղձավանջային է հայերի վիճակը բանտերում: 4. Շարունակում են հայաբնակ վայրերում մուհաջիրներ բնակեցնել հայերի պաշտպանունակությունը խորտակելու համար: 5. Իրականացնելով «մանր» սպանություններ՝ կառավարությունը ոչ մի բոպե չի մոռանում խոշոր ջարդեր կազմակերպելու անհրաժեշտության մասին»: Կան երկու վայրեր, որտեղ կառավարությունը առանձնակի ջանքեր է ներդնում բնաջնջելու հայ համայնքները, որոնք դեռևս ի զորու են լուրջ դիմադրություն ցույց տալ: Դա Զեյթունն ու Սասունն են: Պ. Քիյարը նաև նկատում է, որ 1894թ. ի վեր իշխանությունները, հավատարիմ իրենց հին մարտավարությանը, ձգտում են լեռնականներին ցած բերել Մշո դաշտ՝ այնտեղ խմբովին ջարդելու նպատակով[79]: Եվրոպական առաջադեմ մամուլի էջերում հաճախակի էին երևում Գլադստոնի խոսքերը. «Պաշտպանել հայերին ու Հայաստանը՝ կնշանակի պաշտպանել Եվրոպան»:

***

Սասունը նորից դառնում էր զանգվածային կոտորածների թատերաբեմ: Լեռնաշխարհը շրջափակված էր: Նախատեսված էր հարձակումը սկսել 1902թ. գարնանը: Այդ նպատակով տարվում էին բազմաբնույթ աշխատանքներ: 1902թ. մարտին Տարոնից գրում են. «Տեղիս կառավարությունը սկսել է պաքսիմատներ եփել տալ, ձյունը հալվելուն պես իր դիտավորությունն է ամբողջ զորքը Սասուն հանել... Արդեն հասկանում ենք, թե ինչու է Տարոնը դարձել զորքերի կենտրոնատեղի: Աշնանը Կարինից ու Խարբերդից եկած զորքերին 10 օր առաջ 500 հեծյալ զորք ևս ավելացավ»[80]: Սակայն 1902թ. հարձակումը չկայացավ: Մուշից ստացված մի նամակում դա բացատրվում է՝ «Ֆրանսիական կառավարության ազդու միջամտությամբ, որը գործակալ ուղարկեց Մուշ»[81]: Զնայած մարտական գործողությունները հետաձգվեցին, բայց պատերազմական նախապատրաստությունները ոչ մի օր կանգ չառան: Գրում են Մուշից. «Գարուն է: Տաճիկ կառավարությունն արդեն տվել է հարկավոր հրամանը՝ անցյալ տարվա (1902թ.) ծրագիրը ավելի լայն սահմաններում գործադրելու: Քրդական աշիրեթները պիտի հավաքվեն Մուշ, Հայդարանցի մի աղա 500 հոգով պիտի այցելի Ալաշկերտ ու Բասեն, իսկ ջամունտունցիների աշիրեթը պիտի հավաքվի Բասենի և Ալաշկերտի սահմանին: Ամենուրեք պատրաստություններ են տեսնում անցյալ տարվա պակասն այս տարի լրացնելու... Եթե մեր հայ եղբայրները շուտափույթ օգնության չգան, մենք ինչպես ոչխարի հոտ, անմռունչ զոհ պիտի դառնանք մարդկային սպանդանոցում և, որ ամենաաններելի ոճիրը կլինի մեզ համար, մեր մի բուռ զինվորներն ու ազատատենչ լեռնեցիները իրենց արյունով պիտի ներկեն Սասնա ժայռերը...»[82]: "D'eniformation"-ը 1903թ. հունվարի 13-ին գրում է. «Զորս քուրդ ցեղեր կանոնավոր զորքի հետ չդիմայել են Սասուն լեռնավայրը՝ ֆիդայիների բանակին տիրանալու և Սասունի ըմբոստներին մեկընդմիշտ ոչնչացնելու համար...»: Եվրոպայի առաջադեմ ուժերը հայերին կոտորածից փրկելու միակ միջոցը համարում էին տերությունների հյուպատոսներին Տարոն ուղարկելը, չնայած դա, ինչպես նշված է Խաղաղության 13-րդ համաժողովի բանաձևում, «կարող էր միայն արգելել կամ առժամանակ հետաձգել մեծ կոտորածները, բայց չէր կարող դանդաղ բնաջնջումից փրկել մի ամբողջ ժողովրդի»[83]:

Սասունը բնաջնջման իրական վտանգի առաջ էր կանգնած և, ժողովուրդը, որը թալանվում էր, բռնադատվում, բնականաբար, ի վերջո գիտակցեց, որ չկա ավելի վատթար վիճակ, քան ջարդ-կոտորածի մշտական սարսափի տակ ապրելը: Որ ահագնացող վտանգն էր հայերին մղում

---

74 «Դրոշակ», 1899, հունիս:
75 Նույն տեղում, օգոստոս:
76 ՀՀ ԿՀԿՊԿԱ, ֆ.131, ց.1, գ.44:
77 Պողոսյան Ս., Պողոսյան Կ., նշվ. աշխ., էջ 245-246:
78 Նույն տեղում, էջ 50:

79 Պողոսյան Ս., Պողոսյան Կ., նշվ. աշխ., էջ 50:
80 ՀՀ ԿՀԿՊԿԱ, ֆ.131, ց.1, գ.47:
81 Նույն տեղում, գ.53:
82 «Դրոշակ», 1903, թիվ 6:
83 Նույն տեղում:

դիմելու զենքին, վկայում է նաև "L'Europe" շաբաթաթերթն իր 1903թ N155-ում. «... եթե այսպես շարանակվեն հարստահարությունները և ջարդերը, անխուսափելիորեն Մակեդոնիայում և Հայաստանում կբռնկվի ընդհանուր ապստամբություն, այն էլ մոտ ժամանակներում, հնարավոր է, եկող գարնանը...»:

Այդ պայմաններում բնականաբար, իրար դեմ կանգնեցին օսմանյան իշխանություններն ու Սասունի հայ բնակչությունը: Սասունցիներն սկսեցին բացահայտ նախապատրաստվել թուրք ջարդարարներին հակահարված տալու: Գրում են Տարոնից. «Ապշում են թուրքերը, զարմանում այս հանդգնությունից... Դեռ շատ ժամանակ առաջ չէր, երբ քուրդը ֆիդայի էր տեսնում, ամբողջ գավառն իրար էր խառնվում, աշիրեթներ էին ոտի կանգնում... Այսօր թուրքը տեսնում է ֆիդայուն և չտեսնելու տալիս: Կառավարությունը աշիրեթներին հրամայում է ֆիդայու դեմ կռվի գնալ, իսկ նրանք մերժում են: ...Բախչիի կուսակալը... հեռագրում է Բ. Դուռ և հրաման է խնդրում նրանց (Սասունի հայդուկներին) ջնջել: Բ. Դուռը համաձայնվում է. «Եթե կարող եք գործը հաջողությամբ կատարել և 24 ժամում բոլորին ջնջել, դեռ լուրը Եվրոպա չհասած, հարձակվեք»: Կուսակալը պատասխանում է. «Ոչ 24 ժամում և ոչ էլ 24 օրում նրանց հաղթել չենք կարող»»[84]:

Թուրքական 10 հազարանոց մի բանակ դիրքեր գրավեց Կուրտիկի շրջանում և հարավ շարժվելով՝ տիրացավ ռազմավարական կարևոր կետերի: Սասունցիները, դաս քաղելով դժբախտ անցյալից, որոշեցին լեռնաշխարհի ամբողջ ուժերը կենտրոնացնել Դեբինում և Անդոկում: Այստեղ փոխադրվեց ռազմամթերք և սննդամթերք: Զենք ունցողները բաժանվեցին խմբերի, սկսեցին ամրություններ կառուցել: Ազգաբնակչությունը տեղավորվեց Դեբինի ու Անդոկի ստորոտներում. «Այլևս ծածուկ բան չկար... Երկու բանակները, որ իրարից միայն երկու ժամվա տարածությամբ էին բաժանված, առավոտից մինչև երեկո իրար էին դիտում»: Տեսնելով սասունցիների վճռականությունը՝ թուրքերը խուսափեցին հարձակումից և մարդիկ ուղարկեցին աշիրեթություններ դրանց ևս Սասունի դեմ հանելու համար: Թուրքերը նաև հույս ունեին սասունցիներին շրջափակման մեջ պահելով, ծնկի բերել առանց ռազմական գործողությունների: Մտադիր էին տիրանալ հայերի դատարկ գյուղերին և հարկադրել դրանց տերերին վերահաս ցրտերին մնալ բաց երկնքի տակ և ոչնչանալ: Սասունցիները հենց որ հասկացան թշնամու դիտավորությունը, իսկույն վերադարձան իրենց գյուղերը: Իսկ երբ ցրտերը սկսեցին, թուրքական զորքերն ու ոստիկանությունը հարկադրված եղան հեռանալ Մուշ: Սասունը փաստորեն մնաց անկախ: Ժամանակակիցը գրում է. «Այսօր հայերը Սասունի տերն են, որը գրեթե անկախ է: Կառավարությունը ոչ տուրք է հավաքում, ոչ էլ տեղի գործերին միջամտում... Սակայն անգործ նստած չէ... իր պատրաստություններն է տեսնում: Վերջերս վեց թնդանոթ բերեց Մուշ... Գարնանն ընդհարումն անխուսափելի է թվում»[85]: Հրահանգ ուղարկվեց քուրդ աշիրեթներին Սասուն գալ առանց ընտանիքների: «Կոտորածի վտանգն ընդհանուր է ...»: «Կարինի և Մուշի միջև առևտրական հարաբերությունները կառավարության հրամանով կտրվել է: Բերդը և քաղաքը պաշտպանելու համար Կարինում մնացել են միայն թնդանոթաձիգները: Տեղափոխված զորքի մի մասը թողնվել է Խնուսի բերդում, իսկ մնացածը (870 հոգի) ուղարկվել է Մուշ»: Քրդերին գրգռելու համար լուր տարածվեց, թե հայերը մտադիր են կոտորել նրանց:

Մարտավարությունը նույնն էր՝ հարձակումը սկսելու էին քրդերը, իսկ զորքերը հետևելու էին նրանց[86]: Այդ ընթացքում Տարոն բերվեց և «գյուղերում տեղավորվեց 3000 չերքեզ հրոսակ, նրանք անհամբեր սպասում էին կոտորածին, որ գնան ու գրավեն Սասնո և Սիմ լեռնաշխարհի գեղեցիկ հայ գյուղերը... օրերս այստեղ էին եկել Բուլանըխի, Մանազկերտի, Խնուսի և Վարդոյի համիդիե գնդերի պետերը, նրանք գաղտնի հրահանգված էին միշտ պատրաստ լինել, որ ազդանշան ստանալուն պես հարձակվեն Սասունի վրա... Տեղական կառավարությունը լուր է տարածել, թե զորքը գնում է Մարդին, Մանազկերտ, Տիգրանակերտ և այլն, մինչդեռ գիշերային շրջանցումով պաշարման մեջ է առել Սասունը»: Այսպիսով, իշխանությունները ոչ միայն խախտեցին 1894թ. կոտորածից հետո ստանձնած պարտավորությունը՝ քրդերին թույլ չտալ հաստատվելու Սասունում, այլև նրանց հրավիրում էին Լեռնաշխարհ: 1903թ. հունիսի 15-ին Մուշից հայտնեցին. «Մուշը չորս կողմից բռնված է զորքերով և թնդանոթներով... մի քանի գյուղ Դաշտում քանդվել է, ազգաբնակչությունը ապաստանել է լեռներում, իսկ բանտերում տեղ չկա: ... Սասունի ս. Հովհաննու և Առաքելոց վանքերը թուրքական զորքերը գրավել են, յուրաքանչյուրում տեղավորված է 60-70 զինվոր»: «Գավառ է ուղարկված անհամար զորք: Քաղաքի չորս կողմը թնդանոթներ են շարված...»[87]: Իշխանություններն արտասահմանում լուր տարածեցին, թե Բիթլիսի վիլայեթում 1400 հայդուկ կա, Բ. Դուռը նաև պաշտոնական հայտարարություն տարածեց. «Թուրքական կառավարությունն անհանգիստ է հայ հեղափոխական նոր խմբերի երևան գալով, որոնք Ռուսաստանից անցել են Բայազետի և Սասունի կողմերը»[88]: «Սասունում երևացել է Անդրանիկն իր բազմաթիվ մարդկանցով: Տեղի կայմակամը փախել է իր ամբողջ պահակախմբով: Զորրորդ զորաբանակի հրամանատար Զեքի փաշան Թևֆիկ փաշայի հետ մեկնել են Մուշ»[89]: 1904թ. հունվարի 9-ին Կարինի ռուսական հյուպատոսը հաղորդում է, որ իլայեթում կազմակերպված ջանբազարների խմբերից մի քանիսն ուղարկվում են Սասունի մերձակայքում գտնվող քրդական ցեղապետ Կալխան բեկի տրամադրության տակ: Բաղեշում իշխանությունները թուրք հետամնաց մոլեռանդներից ստեղծել են հեծյալ խումբ:

1903թ. հոկտեմբերին պալատը վալիներին ուղարկեց հետևյալ հեռագիրը. «Բուլղար ավազակների ձեռքում եղած ռումբերը պատրաստել են հայերը... Ուստի ձեր խնդիրն է աչալուրջ հետևել սահմաններն անցնող հայերի շարժումներին: Կասկածելիներին անմիջապես ձերբակալել: Այս ծառայության մեջ աչքի ընկնողներին սպասվում է կայսրական բարձր վարձատրություն»[90]: Հեռագիրը երկու խնդիր ուներ՝ ահաբեկել տեղական իշխանություններին, նրանց ակտիվ գործողությունների մղել, նաև խաբել հասարակական կարծիքը՝ իբր Սասունում կառավարության կողմից իրականացվելիք գործողությունները ոչ թե կոտորածների, այլ «ռումբերի հետ» Լեռնաշխարհը մտածների գործողությունները մեկուսացնելու, նրանց պատժելու նպատակ ունեին: Բաղեշում Անգլիայի հյուպատոսը մարտի 5-ին Կ. Պոլսի դեսպանին հաղորդեց. «Ես մահմեդական երկու աղբյուրներից տեղեկացա, որ հայերի վրա հարձակման ծրագիր է հղացված, այն տեղի է ունենալու տոներից (Բայրամ) հետո...»:

Բ. Դուռը փորձեց օգտագործել պատրիարքին հայդուկներին զինաթափելու համար: Սակայն հայդուկները հրաժարվեցին զենքերը հանձնել՝ «պատճառաբանությամբ, որ տրված խոստումների իրականացման համար սուլթանի երաշխիքները բավարար չեն, իսկ եթե այդ խոստումների իրականացման համար սուլթանի երաշխիքները բավարար տրվեն եվրոպական հյուպատոսների միջոցով, նրանք պատրաստ են զենքը վար դնել»[91]: «Անդրանիկի կեանքը, պատերազմները և յուշերը» (Բեյրութ, 1932թ.) գրքում այս կապակցությամբ կա հետևյալ վկայությունը, թե սուլթանի դրդմամբ պատրիարք Մ. Օրմանյանը գրում է Մշո առաջնորդ Հովհաննես վարդապետին՝ գնալ Սասուն տեսակցել Անդրանիկի և Հրայրի հետ, նրանց համոզել բանակցությունների մեջ մտնել Մշո իշխանությունների հետ առճակատումը խաղաղ միջոցներով վերացնելու: Վարդապետը մեկնում է Սասուն և Շենիկ գյուղում հանդիպում է Անդրանիկին ու Հրայրին: Միաժամանակ թուրքական 6000 հոգանոց մի զորամաս է շարժվում Շենիկի վրա: Այդ իրավիճակում Օրմանյանի պահանջը մերժվում է և շարժման երկու ղեկավարների ստորագրությամբ նամակ է ուղարկվում պատրիարքին հետևյալ բովանդակությամբ. «... խնդրում ենք նորին վեհափառաթեանը (սուլթանին) թող բարեհաճե մտցնել բարենորոգաթիւն հայաբնակ գավառներու մեջ... այնուհետև մենք անոր բարձր հրամանները կատարելու ընդմիշտ պատրաստ և հավատարիմ ծառաներ կըլանք»: «Մշակն» իր 1904թ. թիվ 72-ում գրում է. «...Ռուսաց հեռագրական գործակա-

84 ՀՀ ԿՊՀԿՊԿԱ, ֆ.131, ց.1, գ.57:
85 Նույն տեղում:
86 Նույն տեղում:

87 «Դրոշակ», 1903, թիվ 8:
88 ՀՀ ԿՀԿՊԿԱ, ֆ.131, ց.1, գ.53:
89 Նույն տեղում, գ.58:
90 «Դրոշակ», 1904, թիվ 3:
91 АВПР. Посольство в Константинополе, д. 2672.

լության հեռագրերը հայտնեցին... սուլթանը թույլատրել է Օրմանյան պատրիարքին ուղարկել Սասուն Մշո առաջնորդին, որ հորդորե Անդրանիկին վար դնել զենքերը և անձնատուր լինել»: Ա. Մարմարյանն էլ գրում է, որ Մշո առաջնորդը «նաև իր հետ կը բերեր սուլթան Համիդի իրադեն, որ ներում կուտար բոլոր հայ ֆիտայիներուն և կը խոստանար չը դիպչեր, եթե անոնք երկրեն դուրս ելնեին կամ հանձնվեին տաճիկ հայրական կառավարութեանը»[92]: Անդրանիկը Հովհաննես վարդապետին բացատրում է. «Մենք չենք կրնալ հավատալ կառավարութեան տուած խոստումներուն, մենք տակավին կը հիշենք 1894-ի դեպքերը...»[93]: Ոչ միայն այդ: Անգամ բանակցությունների օրերին և նույն Շենիկ գյուղում փորձ արվեց գերի վերցնելու Անդրանիկին և Հրայրին:

1904թ. Անդրանիկի, Գևորգի և Տատրակի ստորագրությամբ հուշագիր է հանձնվում Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի հյուպատոսներին և թուրքական կառավարությանը: 16 կետից բաղկացած այդ հուշագրում ներկայացված են պահանջներ, որոնք ապահովելու էին հայ-թուրքական ճգնաժամի հաղթահարումը: Այդ ժամանակ էլ Անդրանիկին այցելում են երեք տերությունների հյուպատոսներն ու հայտնում են. «Կարմիր սուլթանը վերջնականապես որոշում է զինքը սպանել և կամ դուրս հանել օսմանեան երկրեն յուր զինակիցներուն հետ միասին»[94]: Հյուպատոսների օգնությունը Սասունին դրանով ավարտվեց: Նրանք որևէ խոստում չտվեցին, իսկ թուրքերը ամբողջ թափով առաջ էին տանում հարձակման նախապատրաստությունը: Վանից գրում են. «Բացի փետրվարին գնացած գնդից, մարտի 6-ին, 8-ին և 13-ին գնացին ևս երկուական գունդ զորք (գունդը 450-480 հոգի էր): Այս օրերս (մարտի 17-ից հետո) դարձյալ գնալու է 4-5 գունդ: Մի քանի գնդեր գնում են Սասունի հարավային շրջանները, իսկ մյուսները՝ ուղիղ Մշո դաշտ: Որոշ աշիրեթների համիդիեներին նույնպես հրամայված է սլանալ այն կողմ... ժողովրդի մեջ, ինչպես նաև պաշտոնյաներն ու տաճիկները, այստեղ խոսում են, որ ապրիլի 15-ին պիտի սկսվի հարձակում Սասունի վրա: Թեև հայերն ամեն կերպ ջանում են առիթ չտալ ընդհարումների, կառավարությունը շարունակում է զորքեր կենտրոնացնել Սասունում: Մարտի 20-ին սկսվելու է հարձակումը: Առաջինը շարժվելու է Հեծելազորը, որը սկսել է նեղել Տավրոսի տակ ընկած հայ գյուղերին»[95]: Թուրքական իշխանությունները գնացին սադրանքի: «Հայերի կողմից ուղղակի գրգռման բացակայության պատճառով, թուրքերը լաճկանցի և բատկանցի քրդերին հանձնարարեցին հարձակվել Գելիեգուզան գյուղի վրա, որպեսզի դիմադրություն առաջացնեն և հայտարարեն, թե հայերը ապստամբել են: Սա նրանց պետք էր, որպեսզի պատրվակ ունենային ջարդի իրենց ծրագիրն իրականացնելու՝ լրիվ ավերելու Սասունը, որը հայկական ազատագրական շարժման օրրանն է»[96]: Պալատն ուղարկեց հետևյալ սադրիչ հեռագիրը. «Խռովարար հայերը օտարների օգնությամբ և հանգանակությամբ զենքեր, ռումբեր, դեղորայք հավաքելով, կայսրական երկրներ փոխադրելով և տարբեր տեղերում պահելով, այս ձևով գարնան սկզբին խռովահույզ գործողությունների են դիմելու: Ըստ ստացված տեղեկությունների, նորից, ինչպես նախկինում, Սասունից է սկսվելու խռովությունը»[97]:

Սասունում ու նրան հարող շրջաններում ռազմական ուժերի կուտակվելը հատկապես մեծ թափ ստացավ 1903թ. վերջին: «Մի ամիս առաջ,- գրում են Վանից,- Էրզրումից, Երզնկայից, Բաղդադից և այստեղից գունդ-գունդ զորքեր էին գնում Սասունի պաշարումը խտացնելու... քաղաքում զորք չի մնացել (հազիվ 500-800 մինչդեռ առաջ՝ 3000-3500 էր), փոքր մասը գնացել է դեպի Բայազետ, մեծագույն մասը՝ Սասուն»: Եվ ապա. «Նորից մեկ թափուր զորք ճանապարհ ընկավ դեպի Մուշ: Այս ամսին Կարինից գնացել է երեք թափուր զորք, մի թափուր զորք էլ երկու օր է, ինչ բքարգել է եղել Սևաբերում... Հրաման է ստացված դարձյալ 1600 զինվոր ուղար-

92 Մարմարեան Ա. Զօր. Անդրանիկ և իր պատերազմները, Կ. Պոլիս, 1920, էջ 90:
93 Նույն տեղում:
94 «Անդրանիկի կեանքը, պատերազմները և յուշերը», էջ 71:
95 Ավո Գևորգ Զաուշ, Բեյրութ, 1972, էջ 177-178:
96 ՀՀ ԿՀԿՊԿԱ, ֆ.131, ց.1, գ.58:
97 «Դրոշակ», 1904, թիվ 13:

կել Սասուն»: 1904թ. հունվարից «Հետզհետե 900 հոգանոց զինված վաշտեր դեպի Մուշ էին մեկնում Սեբաստիայից, Խարբերդից , Դիարբեքիրից, Տրապիզոնից, Երզնկայից, Էրզրումից, Վանից և այլն...»[98]: Անդրանիկի հուշերում այս իրողությունների մասին ասված է. «Արդեն 1903-ից ի վեր պարզ էր տաճիկ կենտրոնական կառավարության մտադրությունը: Բոլոր շարժումները, բոլոր հրամանները ու արված քայլերը կցուցանեին, որ մեր Սասնո կուժերուն գագաթներու վրայ ապաստանած հայ հեղափոխականներուն համար կմոտենային վճռական և ճակատագրական վայրկեանները»[99]: Բաղեշում անգլիական փոխհյուպատոս Հիթքոթը 1904թ. հունվարի 16-ին տեղեկագրեց. «Վերջապես որոշում է տրված գարնանը հարձակվել Սասունի հեղափոխականների վրա, և այս զինվորական շարժումը պետք է դեկավարի անձամբ 4-րդ զորաբանակի մուշիր Զեքի փաշան»[100]: Տաս օր անց Շիփլեյը հաստատեց. «Սասունի ֆիդայիների վրա հարձակումը սպասվում է ձյունը հալվելուց հետո, մոտավորապես, մայիսի կեսերին»: Անգլիայի դեսպան Օ՝Քոնորը գրում է մեծ վեզիրի հետ այդ կապակցությամբ իր զրույցի մասին՝ Ֆերիգը վստահեցրել է, թե Սասունի վրա հարձակում տեղի չի ունենա «բացառությամբ այն հանգամանքից, երբ հեղափոխականների վարքը այդ անխուսափելի կդարձնի»[101]: Ակնհայտ է, որ փաշան ստում էր, սուլթանը որոշել էր սասունցիներին ջարդել անկախ հայդուկների գործողություններից: Նույն օրերին Կ. Պոլսից գրում են. «Մոտալուտ կոտորածի սարսափը տարածվում է ամենուրեք: Ամեն կողմից շշնջում են՝ գարնանը կոտորած կա»[102]:

Սուլթանը կարծում էր՝ ժամանակը բարենպաստ էր Սասունի հարցը լուծելու: Հեռավոր Արևելքում սկսվել էր ռուս-ճապոնական պատերազմը, որն իրեն էր գամել Ռուսաստանի ուշադրությունն ու ռազմական ուժերը: Այդ պատերազմն անհավանական էր դարձրել օսմանյան գործերին նաև մյուս տերությունների միջամտությունը: Եվ թուրքական կառավարությունը գործի անցավ: Բաղեշի վալին ցինիկաբար հայտարարեց հայ համայնքի ղեկավարներին. «Սուլթան Համիդի ձեռքի վրա գտյացել է մի մեծ ուռուցք, որ նրան նեղություն է պատճառում: Անհրաժեշտ է այդ ուռուցքը վիրահատել, որպեսզի վերքն արագ առողջանա և չլինի թե վարակի մեր կայսրի ամբողջ մարմինը և պատճառ դառնա թանկագին կայսրի մահվան: Այդ ուռուցքը Սասունում գործող Անդրանիկն ու Հրայրն են: Նրանք պետք է հանձնվեն առանց արյունահեղության: Հակառակ պարագայում սուլթանը մեծ ուժ ու կարողություն ունի վերքն արագ առողջացնելու»: Բ. Դուրը նորից հայացքը հառեց քրդերին: Սակայն քրդերի մի մասը սկսել էր հասկանալ, որ հայերի ջարդը բխում էր ոչ թե իրենց, այլ թուրքերի քաղաքական նպատակներից: Սասունի վրա հարձակմանը մասնակցելու առաջարկին մի քանի աշիրեթների պատասխանը վճռական էր ու խելացի. «Սրանից առաջ էլ մեզ դրդեցիք այդպիսի բան անելու, սակայն, երբ եվրոպական քննիչները եկան, ամբողջ պատասխանատվությունը գցեցիք մեր վրա, իբր ինքնագլուխ էինք արել այդ գործը: Ու եթե հայերի ցուցմունքը չլիներ, թե քրդերը չէին, այլ՝ զորքերը, եվրոպացին այժմ մեզ ջնջած կլիներ..»[103]: Նման դիրքորոշում առաջին հերթին բխում էր իրենց՝ քրդերի շահերից: Օբայդուլայի մարգարեությունը, թե հայերի հարցը լուծելուց հետո թուրքերը շուտ են գալու քրդերի դեմ, այդ վարքագծի հիմքն էր: «Քուրդն ու թուրքը բարեկամ ու դաշնակից լինել չեն կարող: Քուրդն ազատ ու անկեղծ, իր լեռների նման կոշտ ու վայրենի, սովոր ավարառության ու հափշտակության, ասպետական դյուցազնականությամբ հիացող և անհնար է, որ համակերպվի, մանավանդ ենթարկվի թուրքին, որն իր հարեմի պես ստրուկ ու վավաշոտ, խարդախ ու երկչոտ, կնամոլ ու շահասեր հատկություններով է տոգորված և նրա միակ հաճույքը կիրքն է»: Մկրտիչ Ավետիսյանը գրում է. «Քուրդը և թուրքը ոչ մի իրական համերաշխություն չունին իրարու մեջ:

98 Մատենադարան, Կաթողիկոսի դիվան, թուղթ 237Բ., վավ. 18, թ.2:
99 «Անդրանիկի կեանքը, պատերազմները և յուշերը», Բեյրութ, 1932, էջ 71:
100 «Զարթոնք», 13.08.1971:
101 Նույն տեղում:
102 ՀՀ ԿՀԿՊԿՀԱ, ֆ.131, ց.1, գ.58:
103 Բզեյաններ Տիգրան և Մրսակ Հարազատ պատմություն Տարոնո, խմբագրեց Աղան Տարոնցին, Կահիրե, 1962, էջ 163:

Վերջինս մի խեղճ օտարական կը ճանաչվի քուրդ են ու ռոմի կը կոչուի անկե: Քուրդը այդ անունն ամեն անգամ սարսափով և զզվանքով կարտասանե, զի ինքն ալ ազատված չէ թուրք փաշաների քմահաճ կեղեքումներեն, նա ալ իր կարգին թուրքի կասկածի կենթարկվի հաճախ»[104]:

Դարասկզբին համիդիե գնդերը մնալով հանդերձ հակահայկական, միաժամանակ վերածվեցին հակակառավարական ավազակախմբերի: Իշխանությունները խստացրին ճնշումը քրդերի հանդեպ, մասնավորապես վերջինների հայամետ վարքագծի համար: Ֆաղեհ աղան բանտ նետվեց «հայերի հետ հարաբերություններ ունենալու համար»: Բ. Դռան անհանգստությունը մասամբ էր պատճառաբանված, քանի որ քրդերն այս անգամ էլ չհրաժարվեցին ջարդարար գործիքի իրենց դերից: Դրանում թուրքական իշխանությունների ձեռնարկած միջոցառումները դեր խաղացին, բայց ո՛չ գլխավոր, ո՛չ հիմնական: Քուրդը շարունակում էր մնալ քոչվոր խաշնարած, անասնապահական մթերքների իրացումը չէր ապահովում նույնիսկ աղքատ գոյություն: Նա դերադասում էր զբաղվել ոչ թե տնտեսական գործունեությամբ, այլ թալանով: Քուրդը բացի ցեղ հասկացողությունից համակեցության ոչ մի այլ տեսակի մասին գաղափար չուներ: «Ցեղակից» և «այլացեղ» բառերը նրա համար հոմանիշ էին «բարեկամ» և «թշնամի» բառերին: Իսկ ցեղապետին միշտ հաջողվում էր իր անձնական շահերը ներկայացնել որպես համացեղային շահ ու քրդերին մղել ավերելու և թալանելու: Շվեյգեր Լեոխենվելդը նշում է նաև հետևյալը. «Որպեսզի քրդերը հեռու մնան անկախության ձգտումից, կառավարությունն աշխատում է նրանց զբաղեցնել ուրիշ խնդիրներով: Այսպես, օրինակ, նա քրդերին դրդում է Քրդստանում բնակվող նեստորականների դեմ, ինչպես նաև մահմեդականներին զինում է քաղդեացիների դեմ, իսկ վերջիններս՝ եզդիների ու քրդերի դեմ: Նա այդպիսով առաջ է բերում խռովություններ այն միակ նպատակով, որ իր ձեռքում պահի գերագույն իշխանությունը... և հպատակ աղանդները չմիավորվեն ընդհանուր թշնամու դեմ»[105]: «Հայերի ու քրդերի արհեստական թշնամության պահպանումը,- գրում է Վ. Մաակին,– միանգամայն համապատասխանում է կառավարության շահերին, քանի որ այն նշանակալից գրավական է հեղափոխականների դեմ հաջողությամբ պայքարելու»[106]: Անկախ Հայաստանի ուրվականը նույնպես սուլթանի կողմից օգտագործվում էր քրդերին ահաբեկելու համար: Բեռնշտայնը 1903թ. մարտի 20-ին ռայխստագում ասաց. «Ոչ մի հայ այսօր չի մտածում անջատել Հայաստանը Թուրքիայից: Ինչ երազներ էլ ունենան հայերը հեռու ապագայի համար, նրանք լավ գիտեն, որ դեռ շատ երկար տարիներ չպետք է մտածեն անկախ Հայաստանի մասին: Այդպիսի երազը վեր է նրանց կարողությունից... Հայերը ձգտում են ոչ թե ռամկավարական... այլ շատ ավելի համեստ բարեփոփոխությունների...»[107]:

Որքան ուժեղանում էր սուլթանի հայաջինջ քաղաքականությունը, այնքան ավելի բարձրագոչ էր հնչում եվրոպական առաջադեմ հասարակական ուժերի ահազանգը: «Եթե յաթաղանը բարձրանում է Հայաստանի վրա,– ասաց Անատոլ Ֆրանսը,– զգույշ լինելը չի նշանակում լռել և ժխտել կոտորածները, խոհեմ լինելը չի նշանակում թույլատրել ոճիրն անարգ լռությամբ: Ստորությունը երբեք իմաստություն չէ: Ո՞րն է ուրեմն այս լռության իմաստը, երբ զոհի արյունը աղաղակում է»[108]: "Pro Armenia"-ն գրեց. «Քուրդ պահապաններ նշանակելը հայկական գյուղերում, նշանավոր վայրերում զորքեր տեղակայելը, հայերին օրենքից դուրս նկատելը և մահմեդական տգետ խուժանին գրգռելն անզեն հայ գյուղացիների դեմ այս բոլորը բավական չէր: Հայերի ոչնչացման ծրագրին ավելի արագ ընթացք հաղորդելու համար Համիդի կառավարությանը հարկավոր են հրդեհվող գյուղերի ծուխ, մարդկային արյան հոսք»[109]: Այս պայմաններում ոչինչ զարմանալի չկար, որ ջարդարարների դեմ կռվի ելավ Սասունի ողջ հայ բնակչությունը, չնայած նրանք միայն շուրջ 2000 հրացան ունեին: Բայց գոյամարտը ստանում էր

104 Մ. Ա. Թուրքիայի հայերն ու դրացիները, Մարսել, 1890, էջ 32:
105 «Դրոշակ», 1904, թիվ 3:
106 Маевский В.Т., նշվ. աշխ., էջ 189:
107 «Դրոշակ», դեկտեմբեր, 1903:
108 Նույն տեղում, թիվ 3:
109 Նույն տեղում:

արևմտահայության բարոյական աջակցությունը, իսկ տարոնահայությունը սասունցիներին օգնում էր նաև մարտական ջոկատներով:

Թուրքական լծի դեմ նոր կեցվածք դրսևորեցին հայ հարուստ խավերը, մանավանդ առևտրականները, որոնք 1894 թվին ազգային շարժմանը ոչ միայն չէին մասնակցել, այլև դեմ էին հակասուլթանական պայքարին ընդհանրապես: Սակայն 90-ական թվականների վերջերը շրջադարձային հանդիսացան հասարակական այդ խավերի համար, նրանք բռնի միջոցներով չպրտվեցին հետին պլան՝ իրենց տեղը զիջելով մահմեդական առևտրականներին ու վաշխառուներին: Հայ հարուստ խավի դեմ պայքարը բազմաբնույթ էր և տևական: Այդ պայքարի մեջ ներգրավված էր անգամ հոգևորականությունը, որը իսլամ ազգաբնակչությանը քարոզում էր, թե «գյավուրի հետ առևտուր անելը մեղք է»: Իշխանությունները ևս մահմեդականներին հետ էին պահում հայերի հետ տնտեսական հարաբերություններից, ամեն ինչ անում վերջիններին քայքայելու համար: Հայ առևտրականին այլևս արգելեցին ապրանքներ հայթայթել Կ. Պոլսից և մյուս ծովափնյա քաղաքներից: Փաստորեն նա նաև զրկվեց գյուղերում ապրանք վաճառելու հնարավորությունից: Նախ՝ ճանապարհներին թալանվում կամ սպանվում էր, երկրորդ՝ մահմեդականն էր տիրացել գյուղական շուկային: Այդ նոր իրավիճակը փոխեց հայ առևտրականների վերաբերմունքը ազգային շարժման նկատմամբ, նրանք դարձան դրա մասնակիցը և ուղեկիցը, իսկ տեղ-տեղ՝ նաև ղեկավարը: Գրեթե նույն բանը կատարվեց նաև հայ արհեստավորների, փողատերերի ու արդյունաբերողների հետ: Այսպիսով, յաթաղանը հայ հասարակության բոլոր խավերին կանգնեցրեց երկընտրանքի առջև՝ պայքարել կամ անհետանալ:

Տարոնում տեղի ունեցող իրադարձություններն իրենց վրա բևեռեցին նաև արևելահայության ուշադրությունը: Կովկասում աշխատանք ծավալվեց Սասունին օգնելու համար: Երկիր ուղարկվեցին մարտական խմբեր, ինչպես նաև զենք ու զինամթերք: Սակայն դրանց հիմնական մասը տեղ չէր հասնում, ոչնչացվում էր ճանապարհին կամ ընկնում թուրքերի ու քրդերի ձեռքը: Երկիր մեկնած մարտական խմբերից ամենախոշորը Նևրուզի ջոկատն էր՝ 90 հոգի, որը 1903թ. սեպտեմբերին անցավ ռուս-թուրքական սահմանը և անմիջապես բախվեց քրդերի հետ: Թշնամին զորքեր ու թնդանոթներ բերեց: Կռիվը տևեց երեք օր: Սակայն հայերին ընկճել չհաջողվեց: Խմբից 70 հոգու հաջողվեց հետ վերադառնալ: Այնուամենայնիվ, մի քանի խմբեր կարողացան հասնել Սասուն ու մասնակցել ինքնապաշտպանական կռիվներին: Բայց դրսից, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանի նահանգներից, Սասունի ստացած օգնությունն ավելին չէր, քան մի քանի տասնյակ մարտիկ ու ոչ մեծ թվով հրացան: Վահան Փափազյանը խոստովանում է. «Սասունը մնաց անհույս դրսից որևէ օգնություն ստանալու հարցում»[110]:

Սասունում ծավալվող իրադարձությունների նկատմամբ, ինչպես և պետք էր սպասել, մերժողական մոտեցում հանդես բերեց հնչակյան կուսակցությունը: «Հնչակը» 1904թ. մարտին գրեց. «Հեղափոխական գործը Թարքահայաստանում ինքնապաշտպանության գործ չէ... Ոչ: Հեղափոխականները պետք է իմանան, որ Թարքահայաստանում հեղափոխական գործը հարձակողական մեթոդ է պահանջում: Սա ապստամբական գործ է: Սա չի սպասում, որ թշնամին գա հայ ժողովրդին կոտորելու, որպեսզի միայն այդ դեպքում ինքնապաշտպանության դիմի: Սա չի ընդունում, որ փոքրիկ ցիրուցան մարտական խմբակները, պարզամտությամբ իրենց երևակայելով զինվորական վաշտեր, «հրոսակային» դիվերսանտիզմով զբաղվեն: Հայ հեղափոխականների գլխավոր և հիմնական տակտիկան պետք է լինի ընդհանուր ապստամբության նախապատրաստությունը... Մենք դեմ ենք ներկայումս եղած բոլոր մասնակի շարժումներին, որոնք առաջ անպայման ունեին իրենց կրթիչ ու նախապատրաստող հեղափոխական նշանակությունը, բայց որոնք ներկայումս այլևս երևան են գալիս կատարած ու ավարտած իրենց պատմական անհրաժեշտ դերերը»: Հազիվ թե ապացուցելու հարկ կա, որ ընդհանուր ապստամբության ժամանակ ինչպիսի «հարձակողական մեթոդ» էլ կիրառվեր Սասունում, գործն ավարտվելու էր հայերի բնաջնջմամբ: Սա այն դեպքերից էր, երբ ընդհանուր ռազմական հաղթանակն անհնար էր, և

110 Փափազյան Վ. Իմ հուշերը, Բեյրութ, 1950, էջ 298:

տվյալ պարագայում հարցերի հարցը ոչ թե հաղթանակն էր, այլ բնաջնջման օսմանյան քաղաքականության առաջն առնելը: «Հնչակը» նաև ճիշտ չէր, երբ 1904թ. իրավիճակն ու դրանից բխող պայքարի եղանակները հակադրում էր 1894 թվին: Իրականում կացությունը հիմնականում նույն բնույթի էր և նույնն էին նաև բնաջնջման քաղաքականության դեմ պայքարի եղանակները: Արդեն նշվեց, որ սասունցիներին սպառնացող վտանգի հանդեպ անփոփոխ մնաց նաև մեծ տերությունների քաղաքականությունը: Օգնելու փոխարեն տերությունների ներկայացուցիչներն Անդրանիկին առաջարկեցին Սասունից հեռանալ առանց կռվի մեջ մտնելու: Բնականաբար, Անդրանիկը մերժեց այդ առաջարկը, քանի որ լեռնաշխարհից հայդուկների հեռանալը այլ բան չէր, եթե ոչ հնարավորություն ընձեռել թուրքերին ու քրդերին առանց դիմադրության հանդիպելու կոտորելու հայ բնակչությանը: Մանավանդ, որ այլևս «կռվից խուսափելու ոչ մի ելք չկար, նախահարձակը թուրքական զորքն էր»:

Ստեղծված իրավիճակը քննելու համար Գելիեգուզանի Ռիշկներ թաղում հրավիրվեց Սասունի ղեկավարների ժողով: Անդրանիկն ասաց. «Կառավարությունը մտադիր է վերջնականապես դուրս հանել մեզ մեր սրբազան հայրենիքից, և թերևս չկարողանանք դիմանալ կենտրոնական կառավարության թվով գերակշիռ զորքերի հարձակմանը ու ստիպված լինենք նահանջել և թերևս դժբախտություն ունենանք մարտի դաշտում ձգելու մեր ամենաթանկագին ընկերներից մի քանիսին, բայց վստահ եղեք, որ դրանով կառավարությունն ավելի կտարածի հեղափոխության սերմերը»[111]: Հատկանշական են նաև Հրայր Դժոխքի խոսքերը. «Այս կռիվը թշնամին է պարտադրում, ու մենք պետք է ձգտենք օրհնական պահը ուշացնել»[112]: Ու նաև ժողովի որոշումը. «... Կռիվ տալ ճակատագրական, վերջին անհավասար մարտնչումների ճակատամարտ և ապա հեռանալ սուրբ հայրենիքից»: Այսինքն՝ սասունցիները կռվի մեջ էին մտնում ոչ թե ռազմական հաղթանակի ակնկալիքով, այլ բնաջնջման առաջն առնելու հույսով: Դա հուսահատ մարտում էր հանուն կյանքի:

Թուրքական հարձակումը սկսվեց թե հյուսիսից և թե հարավից: Առաջինը հարձակման ենթարկվեց Խիանքի Հեղին գյուղը: Սակայն Գեորգի ջոկատին հաջողվեց թշնամուն փախուստի մատնել: Մի քանի օր անց հարձակման է ենթարկվում Խուլբի Ահրոնք գյուղը: Քրդերը սպանեցին ինը խաղաղ բնակիչ: Հայդուկներին հաջողվեց նրանց այստեղից էլ դուրս քշել: Սասունի հյուսիսում առաջինը հարձակման զոհ դարձավ Հունան գյուղը: «Սպանությունները,- այդ կապակցությամբ գրեց մի Ֆրանսիացի,- կատարվում էին բծախնդիր դաժանությամբ: Ինչ վերաբերում է կանանց, նրանց առևանգում էին անկախ տարիքից»[113]: Եվրոպական լրագրերից մեկը, հաստատելով այդ իրողությունը գրում է. «120 տուն թալանվեց և հրդեհվեց: Փոքր աղջիկներին ու կանանց, այդ թվում ծննդաբերողներին, փախցրին, բազմաթիվ փոքր երեխաների կենդանի թաղեցին ձյան մեջ կամ գցեցին ջրհորները»[114]: Գյուղի 400-500 բնակիչ ձմռան սառնամանիքին մնացին անօթևան, առանց սննդի: Իսկ երբ Մշո առաջնորդը այս վայրագությունների դեմ բողոքեց սուլթանին, նրան և քաղաքի Ազգային ժողովի 12 անդամների բանտ նետեցին: Նույն օրերին իշխանությունների հանձնարարությամբ քրդերը փորձեցին դավադրաբար սպանել Անդրանիկին:

Սակայն ոչ միայն քրդերն, այլև թուրք զինվորներից շատերը դժկամությամբ էին սասունցիների հետ մարտի մեջ մտնում: «Զինվորները դասալքում են,- գրում են Վանից,- Սասուն բարձրանալ չեն ուզում»[115]: Չէին ուզում, բայց բարձրանում էին: Մարտի 27-ին քրդերը հարձակվեցին Տալավե գյուղի վրա: Հայերը նրանց, կորուստներ պատճառելով, հետ շպրտեցին: Զեքին վկայակոչելով հայերին բնաջնջելու վերաբերյալ սուլթանի իրադեն, քուրդ ցեղապետերին սպառնաց, որ հայերի վրա հարձակմանը չմասնակցողները խստորեն կպատժվեն: Ոտքի հանվեց ավելի քան 40 հազար քուրդ: «4-րդ բանակի հրամանատար Զեքին,- գրում են Բայազետից,- բա-

111 ՀՀ ԿՀԿԳԿԱ, ֆ.131, ց.1, գ.58:
112 Պողոսյան Ս., Պողոսյան Կ., նշվ. աշխ., էջ 337:
113 Pour L' Armenie et la Mace'donie...,Paris, 1904, p 21-22.
114 Sassoun et les atrocite's hamidiennes. Interpelation, Gene've, 1904, p. 28.
115 ՀՀ ԿՀԿԳԿԱ, ֆ.131, ց.1, գ.58:

նակցությունների մեջ է հեյդարանցի ցեղապետ Քոռ Հուսեինի հետ, որ սա հանձնառու լինի պատժելու ապստամբ Սասունն ու Տալվորիկը: Հուսեյինը ձգձգում է: Նա պահանջում է 2000 մաուզեր, մթերք, որպեսզի կարողանա իսպառ ջնջել քյաֆիր ֆիդայիներին»: Մարտի 30-ին կոտորվեց Լաճկան գյուղի հայությունը, ապրիլի 2-ին Ծովասարում կողոպտվեցին ու կրակի տվեցին Արդխու և Քորախու հայկական գյուղերը, միայն Սպաղանքի Մակարի հմուտ գործողությունների շնորհիվ հնարավոր եղավ բնակիչներին կոտորածից փրկել: Թուրքական մի զորամաս շարժվում է Հավատորիկի, մեկ ուրիշը՝ Շենիկի վրա: Իսկ քրդերն էլ առաջանում են Բոնաշեն ու Մրկեմոզան: Հարավից եկող ուժերը գրավում են Խուլբի գյուղերն ու շարժվում Տալվորիկի վրա, բարձրանում Անդոկի փեշերը: Հայերի պաշտպանական գիծն անցնում էր Խուլբից Անդոկ հատվածով: Հյուսիսում Քեռաա Բիմբաշու զորքերը շարժվեցին Սեմալի ուղղությամբ: Շենիկը դատարկվեց ու հրդեհվեց: Մի քանի գյուղերի բնակիչները տեղափոխվեցին Գելիեգուզան, իսկ զինված ուժերը զբաղեցրեցին ճակատային գիծը: "Daily News"-ը հունիսի 13-ին գրում է. «Թուրքական իշխանությունները վաղուց գիտենալով, որ Անդրանիկը Սասունում է և որ նա պատրաստություններ է տեսնում պաշտպանվելու, եթե թուրքերը հարձակվեին, վաղաժամ, մարտ ամսին, սկսեցին Սասունի շուրջը կենտրոնացնել զորքեր ու քրդեր: Թուրքերը դրդեցին լաճկան ու բատկան քուրդ ցեղերին հարձակում գործել Գելիեգուզան գյուղի վրա: Նպատակն էր դիմադրություն առաջ բերել: Թուրքերի դիտավորությունները գուշակելով 30-ից ավելի հայ գյուղերի բնակիչներ ապաստանեցին Գելիեգուզանում...»[116]:

Հյուսիսային ճակատում ապրիլի 13-ին թուրքերը թնդանոթային ռմբակոծության տակ առան Սեմալը, ապա սկսվեց հետևակի գրոհը: Հայերը համառ դիմադրություն ցույց տալու հետ միասին գյուղը դատարկում էին: Արյունահեղ մարտեր տեղի ունեցան նաև Ալիանքամ: Բերբերի կիրճում ու Զայի հովտում թուրքերը պարտության մատնվեցին: Նրանք կորցրեցին 800-1000 մարդ: «Երեկ՝ ապրիլի 13-ին,- գրում է Վահանը,- ունեցանք ահավոր կռիվ Սեմալում, և մենք կրկին հաղթանակ տարանք: Այսօր նոր զորք եկավ Մուշից...»[117]: Անհաջողությունից կատաղած թուրքերը հարձակվեցին Դաշտի խաղաղ բնակչության վրա: «Թշնամին վրեժ առնելու համար սկսեց ավերել անմեղ գյուղերը... Դաշտի մեջ պարբերական ջարդեր են սկսվել: Պետք է կարծել, որ շուտով դրանք կվերածվեն ընդհանուր կոտորածի, եթե Աստված մի դուռ չբացի»[118]: Զայի կռվում զոհվեց նաև Հրայր Դժոխքը:

Ապրիլի 15-ի վիճակով Սասունում ու հարակից շրջաններում էին գտնվում 40 հազարանոց թուրքական բանակը և նույնքան էլ քրդեր: Ռազմաճակատը ձգվում էր 20 կմ երկարությամբ, Ծովասարի փեշերից մինչև Գելիեգուզան: Վերջինիս վրա առաջին հարձակումը տեղի ունեցավ ապրիլի 15-ին: Թե այդ և թե դրանից հետո, մինչև ապրիլի 22-ը տեղի ունեցած բոլոր գրոհները հայերը հետ մղեցին: Ապրիլի 21-ի գիշերը հայդուկները ժողովրդին Գելիից հանեցին և Սեբաստացի Մուրադի ջոկատի պաշտպանության ներքո ուղարկեցին ապաստանելու Դաշտի գյուղերում: Հաջորդ գիշերը աննկատ գյուղից հեռացան նաև կռվող ուժերը: Հայդուկները քաշվեցին լեռներն ու պարտիզանական կռիվներ մղեցին, որոնք շարունակվեցին մինչև հունիսի 3-ը:

Սասնո կռիվները լայն արձագանք էին ունենում: «Մշակը» իր 1904թ. թիվ 105-ում գրում է. «Մայրաքաղաքի ռուսաց լրագրերում տպված են Սասունի դեպքերի մանրամասները: Գելիեգուզանի անհաջող կռիվներից հետո, որտեղ թուրքաց զորքը կորցրեց 1000 հոգի, թուրքերը օգնություն ստանալով, նորից հարձակում գործեցին: Այդ հարձակմանը մասնակցեցին 15000 կանոնավոր զորք ու նույնչափ քուրդ»:

Թուրքերն ու քրդերը առիթը բաց չէին թողնում հայերին կոտորելու: Բիթլիսի վալու հրամանատարությամբ Սասնո գետի վրա ոչնչացվեց մոտ 3000 տղամարդ, կին, երեխա: Ապա վալին վերադարձավ Մուշ, հավաքեց հայկական գյուղերի տանուտերերին և հարկադրեց սուլթանին շնորհակալական ուղերձ հղել: Մոտավորապես 17 հազար հայ ապավինել էր ժայռերին, նրանցից շա-

116 ՀՀ ԿՀԿԳԿԱ, ֆ.131, ց.1, գ.59:
117 «Դրոշակ», 1904, էջ 4-5:
118 Նույն տեղում:

տերը սպանվեցին, կամ զոհվեցին ցրտից ու քաղցից: «Թուրքերը բացեիբաց խոստովանում էին, թե իրենց մտադրությունն է Սասունն ու նրա ժողովրդին սրի քաշել ու հրո ճարակ անել»[119]:

Գելիից հետո թշնամին շարժվեց Տալվորիկի վրա: «Ութ օր շարունակ,- գրեցին եվրոպական թերթերը,- Տալվորիկի բարձունքներին սասունցիները հերոսաբար դիմադրեցին»[120]: Ականատեսներից մեկը գրում է. «Տալվորիկի մեջ զորքերն ու քրդերը շատ զորեղ դիմադրության են հանդիպում, և երբ տկարանում են հայ քաջերի դիմաց, թնդանոթի ուժին են դիմում: Ամբողջ ութը օր օրական 150-200 ռումբ են թափում հայերի վրա: Եվ չկարողանալով քաջերին վնասել՝ կանանց ու երեխաներին են ջարդում, խաբեությամբ ընտանիքների մի մասին գետն են նետում, փոքրիկ տղաներին սրախողխող անելուց հետո, նորից գետն են լցնում: Տասներկու հերոսուհիներ, իրենց պատիվը փրկելու համար, երեխաներին գրկած, ահագին բարձրությունից ջուրն են նետվում: Մի քանի շենիկցի քաջեր ևս նեղ դրության մեջ գահավիժում են»[121]:

Մայիսի 6-ին Տալվորիկն ընկավ: Թուրքերը գյուղում մնացած կանանց նույնպես խոշտանգեցին՝ կտրում էին նրանց կրծքերը, պատառոտում որովայնը, երեխաներին նստեցնում սրերի վրա, ծերերին թրատում, կտոր-կտոր անում: Սասունի շրջանն ամբողջովին ավերվեց: Մշո հարթությունը ևս դարձավ հայության սպանդանոց[122]: Համաձայն Վարդան Վարդապետի կազմած տեղեկագրի, 1904թ. ապրիլ-մայիսին միայն Անդոկի շրջանի վեց գյուղերում (Գելիեգուզան, Շենիկ, Սեմալ, Ալիանք Գելիեմսուր, Գելիեգերմավ) կողոպտվել ու այրվել էր 9 եկեղեցի, 641 տուն, սպանվել էր 1722 մարդ, այդ թվում 502 կին, 698 երեխա: "Daily News"-ը 1904թ. հունիսի 10-ին գրում է. «Նորից մեզ ծանոթ ձեռագիրը՝ բռնաբարություններ, սպանություններ, հրեշավոր խոշտանգումներ... Մահ սրից... մահ ցրտից ու... ամենուրեք մահ»: Ընդամենը 12650 մարդ էր բնակվում նշված գյուղերում: Փրկվեց 5500 կին, երեխա ու ծեր: Ամենաեղերական ջարդը տեղի ունեցավ մայիսի 9-ին Տալվորիկի, Կոչիկի, Գերինի տարածքում: «Այդ կողմերն ապաստանած ու ամրացած հայերը, որոնց հետ էին կանայք ու երեխաներ, չորս կողմից պաշարվելով, հարձակման ենթարկվեցին: Բռնություններ կատարողներն էին թուրքական զորքերի վեց վաշտերը և նրանց հետ՝ 2000 քրդեր... Սասունցիների կոտորածին մասնակցում էին նաև Դիարբեքիրից ութ վաշտ և զիլանցի շեյխ Ահմեդը... 5000-ի չափ քրդերով»: Վերջինս կոտորածից հետո գնաց և իշխանությունների հետ «Սասունի 45 գյուղերի հողերը ստանալու պայմանագիր կնքեց: Քրդերը սկսել էին տեղավորվել հայկական գյուղերի ավերակների վրա»: «Ստույգ տվյալներով,- գրեց "Daily News"-ը,- որոնք հիմնված են անգլիական և ֆրանսիական հյուպատոսների տեղում կատարած քննության վրա, 28 գյուղ քարուքանդ է եղել, 6000 հոգի կոտորվել է»[123]:

Մուշից հայտնում էին, որ վալին, նկատի ունենալով մեծ տերությունների հյուպատոսների՝ հետաքննություն կատարելու մտադրությունը, «ամեն ջանք գործ է դնում բռնությունների հետքերը ջնջելու: Դիակները ջուրն են լցվում», քանդվում են շատ գյուղերի գերեզմանները, որպեսզի հյուպատոսական քննության ժամանակ դիակները «վկայություն չտան»[124]: Թուրքերը խոստովանել են, որ ավերվել էր 25 գյուղ: "Daily News"-ը հունիսի 17-ին գրում է. «Մայիսի 8-ին Գելիեգուզանից փախչող հայերը կոտորվեցին այնպես, ինչպես 1894թ. ջարդի ժամանակ»: Հետ մնացողներն ու անձնատուր եղողները թուրքական ու քրդական նենգության զոհ դարձան: Մահվան ենթարկելուց առաջ, գազանաբար բռնաբարելուց հետո կտրում էին կանանց ստինքները: Երեխաների մի մասին կտոր-կտոր, իսկ մյուսներին էլ ժայռերին խփելով, ջարդուփշուր էին անում:

Սասունը հայերից դատարկելու քաղաքականությունն իրականացվում էր ոչ միայն կոտորածների, այլև ժողովրդին Լեռնաշխարհից դուրս հանելու միջոցով: Պատճառաբանելով, թե Սասունում սով էր, փոխանակ սննդամթերք բերելու, սասունցիներին էին տանում Դաշտ: Տեղափոխությունը կատարվում էր ոստիկանության միջոցով և ուղեկցվում բռնություններով: Խստություններ էին գործադրվում նաև Դաշտում: Կողոպուտի ակնկալիքով աշիրեթները լցվել էին հայկական գյուղերը: Իշխանությունները ձգտում էին հայերի դեմ հանել նաև Մուշի և Տարոնի մահմեդական բնակչությանը: Այդ նպատակն էին հետապնդում նաև Սասունում զոհված թուրքերի թաղման արարողությունները Մուշ քաղաքում: «Մշո դաշտը,- գրում են եվրոպական թերթերը,- ևս դարձավ սպանությունների վայր: Սկսած մայիսի 5-ից թուրքական զորքերը մեկը մյուսի հետևից գետնի երեսից ջնջեցին Բերդակի, Մկրագոմի, Ալիկրպոյի, Սըվազաղբյուրի, Առնիստի գյուղերը: Սպանությունների թիվն աճում է օրեցօր»: Կողոպտվում են Գոմեր, Դրինգ, Տատրագոմ, Շեյխ Ցուսուֆ և Ալիտան գյուղերը: Օրեզգոնք գյուղում սպանվեց 19, Տերգևանքում 9, Գեղաշենում 8 հայ: "Daily Mail"-ը գրեց. «Դրմերգ, Առնիստ, Խոտա, Մկրագոմ և մի քանի այլ գյուղեր թալանվել ու հրդեհվել են, բնակիչների մեծ մասը կոտորված է և նետված ջրհորները կամ Մուրադ գետը»[125]:

Սասունն ու Տարոնը դարձան հայի որսադաշտ: Օր չէր անցնում առանց սպանությունների, խոշտանգումների, հրդեհի ու թալանի: Մայիսի 1-ին քրդերը հարձակվում են Աշտիշատի վրա, անարգում հայ նշանավոր դեմքերի տապանաքարերը, կոտորում տեղում եղած հայերին և հրդեհում եկեղեցին: Գյուղը թալանվում է: 1904թ. հունվար-հունիս ամիսներին Դաշտում սպանվեց 190, վիրավորվեց 29, բռնաբարվեց 47 հայ, թալանվեց 5324 տուն: Եթե 1904թ. կռիվներում հայերի կորուստների թիվը չէր անցնում 1000-ից, ապա 20 օր անց յաթաղանի զոհերի թիվը մոտեցավ 8000-ի: Ըստ Մշո առաջնորդարանի տվյալների, 1904թ. առաջին կեսին կոտորվել էր 2809 տղամարդ, 2193 կին, 2771 երեխա: Ընդամենը 7773 մարդ: Թալանվել ու ապրուստից զրկվել էր 8854 հոգի[126]: 8000 կոտորվածի առկայության դեպքում անգամ տեղեկագրի հեղինակը նշում է, որ «իրավ, կոտորվածները մեծ թիվ չեն կազմում, բայց արդեն Մշո և հարակից գավառների հայերը կենդանի մեռելներ են...»: «Հայերի անհանգիստ կացությունը բուն Սասունում նույնն է մնում: Շատերը կան, որ անմատչելի լեռների, քարայրների և անտառների մեջ պահված են: Ոմանք անոթության զոհ են դառնում: Զորքերը և լրտես քրդերը անընդհատ հետախուզություններով գտնում են ու ջարդում փախստականներին»: Առանձնակի խստությամբ հետապնդում են հայդուկներին[127]:

Ինչ վերաբերում է Տարոն փոխադրված սասունցիներին, ապա երկու հյուպատոսներ անձամբ այցելեցին նրանց: Քաղաք եկածներին արգելված էր հայերի հետ հաղորդակցվել: Նրանք մնում էին մերկ, անոթի, խոնավ գետնին, հիվանդ ու վիրավոր, այնպես որ օրական 4-5 մեռած էին հանում այդ բանտերից: Հատկանշական է նաև այն, որ Մուշ բերված կանանց ու երեխաների զգալի մասի մարմնի վրա կացնի, սվինի, դաշույնի հարվածների հետքեր կային: Իսկ Մուշում «կանայք ու աղջիկներ են մուրում, խելագարվում, ոտքերի տակ երեխաներ են մեռնում, զորանոցում հայ կանայք են բռնաբարվում»[128]: Սասունցիներին համառորեն չէին թողնում իրենց տները վերադառնալ, չնայած սուլթանի իրադեռով դա թույլատրված էր: Ամեն օր նրանց տանում էին կառավարչատուն և ստիպում ասելու. «Որտեղ կառավարությունը որոշի, այնտեղ է մեր վաթանը»: «Թագավորը Սասունը չի տա ձեզ, ասում են և այդ միջոցով ուզում են նախապաշարել նրանց միտքը... Սուլթանը խնդիր էր դրել սրով ու կրակով դատարկվող Սասունի քանդված գյուղերը տալ քուրդ ցեղերին»: Մինչդեռ Տարոնում կոտորածների վտանգն այնքան իրական էր, որ հայը գերադասում էր սովամահ լինել Սասունում, քան Տարոնում զոհ գնալ յաթաղանին: «Մուշը գրավել են թուրք զինվորները: Քանդված գյուղերի 2000-ից ավելի կանայք ու երեխաներ ապաստանել են այնտեղ: Այս խեղճ, ողորմելի ժողովուրդը անոթությունից ու վախից կիսամեռ վիճակի մեջ թափառում է փողոցներում և ներկայացնում գթաշարժ տեսարան»[129]: «Դաշտում տասը կետի վրա, ինչպես և վանքերում, թուրք զինվորներ են լցված, և շարունակում են նոր զորքեր բերել:

119 «Հնչակ», 1904, հունիս:
120 Sassoun et les atrocite's..., p. 31.
121 «Դրոշակ», 1904, թիվ 7:
122 ՀՀ ԿՀԿՊԿԱ, ֆ.131, ց.1, գ.59:
123 «Հնչակ», 1904, թիվ 7:
124 «Դրոշակ», 1904, թիվ 7:

125 ՀՀ ԿՀԿՊԿԱ, ֆ.131. ց.1, գ.62:
126 Մատենադարան, Կաթողիկոսի դիվան, թղթ. 237, վավ. 18, թթ. 53-55:
127 Նույն տեղում:
128 Ն. տ.:
129 Ն. տ.:

Ասում են, թե Կրուպի թնդանոթները շարժման մեջ են դրված Դաշտին սպառնալու նպատակով»: Տեսնելով, որ միայն զենքով հարցը լուծել հնարավոր չէ, իշխանությունները դիմում էին զանազան խարդավանքների: Մշո կառավարիչ Հաֆիզը հայ համայնքի ներկայացուցիչներին ասում է, թե սուլթանից հրաման է ստացվել, որ Տարոնից հայդուկների հեռանալու դեպքում կոտորածներն ու հալածանքները կդադարեցվեն: Մշո առաջնորդն ու ՀՅԴ տեղական կոմիտեն Անդրանիկին գրեցին. «Կառավարությունը և զորաբանակը Դաշտի հոծ հայությանը ամբողջությամբ խեղդելու սև ծրագիր են որոճում: Անդարմանալի աղետ պիտի լինի, եթե խմբերը չհեռանան»[130]: Հայդուկները հարկադրված էին հաշվի առնել այդ իրողություններն ու հեռանալ Տարոնից:

Ամփոփելով 1904թ. առաջին կեսին Տարոնում տեղի ունեցած իրադարձությունները՝ Ա. Արասխանյանը «Մուրճի» 1904թ. թիվ 7-ում տալիս է Սասնո կռվի հետևանքների վերլուծությունը: Նա գրում է, որ կռվից առաջ Սասունում կար 12 հազար հայ բնակիչ: Նրանցից 2800-ը Մուշ տարվեց, իսկ մնացածը կոտորվեց: Լեռնաշխարհի ամբողջ սննդամթերքը թուրքերն այրեցին, անասունները մորթեցին կամ թալանեցին: (Հարկ ենք համարում նշել, որ 1904թ. Լեռնաշխարհի հայ բնակչության թիվը ոչ թե 12000 էր, այլ մոտենում էր 20000-ի): Կոտորածի գլխավոր ուժը քրդական սարոն, շալա, բատկան, պարիկ և ուշկոթան ցեղերն էին: Զիլանի շեյխ Մուհամմեդի (Սասնո 1894թ. ջարդին մասնակցած քրդերի առաջնորդ) որդի՝ շեյխ Ահմեդի գլխավորությամբ, քրդերը սրախողխող արեցին Տալվորիկից փախած 1500 հոգու: Աղբի գյուղի առուն լցված դիակները փակել էին ջրի հուքը, որը բացելու համար թնդանոթային կրակով ցրեցին դիակների թումբը:

Փախստական սասունցիներին Լեռնաշխարհ վերադարձնելու վերաբերյալ սուլթանի իրադեի կապակցությամբ "Humanite"-ն գրեց, որ այն «լոկ աճպարարություն էր, որի նպատակը պետություններին խաբելն էր»: Եվ զարմանալի չէր, որ իրադեի հրապարակման օրն իսկ քրդերը մեծ ավերածություններ կատարեցին, ջարդեր իրականացրին: Մուշում կյանքը շարունակվում էր մնալ հաշմված, խանութները փակ էին, հայերը չէին համարձակվում փողոց դուրս գալ: Չնայած դրան, ամեն օր փողոցներում և այլուր գտնում էին հարուստ հայերի դիակներ: Սով էր: Անդրանիկին բռնելու համար իշխանությունները խոստացան 1000 լիրա: Մուշ գնացին տերությունների փոխհյուպատոսները, որոնք պետք է հետամուտ լինեին, որ հայերի հանդեպ բռնություններ այլևս թույլ չտրվեին: Քիչ անց "Standart"-ը Կ. Պոլսի իր թղթակցից լուր ստացավ, որ հյուպատոսները Մուշում իրենց հետագա «մնալը ավելորդ են համարում, որովհետև անզոր են արգելք հանդիսանալ, որ թուրքերը անգթություններ չկատարեն հայերի հանդեպ»: «Առհասարակ,- շարունակում է թղթակիցը,- Թուրքիայում բնակվող եվրոպացիները այն կարծիքին են, որ տերությունները մինչև Բ. Դռան դեմ դիվանագիտական արշավանք սկսելը պարտավոր են որոշել, թե մինչև որ աստիճանի են առաջ տանելու այդ արշավանքը: Այլապես, թուրքերը, հմտորեն ձգձգում են ամեն մի գործ, մինչև որ եվրոպական դիվանագիտությունը հոգնի ու ձանձրանա»:

Սասունն իր պարտքը կատարեց: «Հայերի հերոսական դիմադրությունը, Սասնո լեռներում ու Մշո դաշտում ծավալված անհավասար կռիվները հիացրել էին աշխարհը: Ամենուրեք հայերի հանդեպ համակրանքի ալիք բարձրացավ»[131]: 1904թ. հունիսի 9-ին հանդես գալով Ֆրանսիայի խորհրդարանում՝ Ֆր. Պրեսանսեն շնորհավորեց հայ ժողովրդին իր իրավունքները զենքով պաշտպանելու համար: «Ես չեմ ասում, թե այդ արյունոտ ողջակիզումները միայն ջարդեր են եղել, եղել են և կռիվներ, անհավասար կռիվներ, քանի որ հայերը գրեթե անզեն են եղել, բայց դրանք այն կռիվներից են, առանց որոնց որևէ ժողովուրդ չի նվաճում իր գոյության իրավունքը... Նրանք չուզեցին նահատակվել, ինչպես 1894-ին: Նրանք պաշտպանվեցին ապրիլ ամսից ի վեր, առանց տոնելու հաղթանակ, որ անհնարին էր»[132]: Պրեսանսեն հիմքեր ուներ նման կարծիք հայտնելու: «Այս անգամ,- գրում է Ս. Ատոմյանը,- 1904 թվին Սասունը գրավելու ժամանակ թուրքերը կորցրին 15 հազար մարդ: Ռազմական տեսակետից դիմադրությունը խաստուրում ու Սասունում մարտական խոշոր գործողություններ էին, որոնք նախադեպ չունեին վերջին վեց տարում... և ցույց տվեցին, որ հարստահարված հայը ի զորու է մեծ վնասներ պատճառել կանոնավոր բանակին և ցեղերին»[133]:

"Daily News"-ը 1904թ. հունիսի 18-ին գրեց. «Դժոխային կացությունը նորից տիրել է Հայաստանին, և մենք մեկ անգամ ևս դեմ հանդիման կանգնած ենք պատմական այն կոտորածի, բռնաբարության և ավերումի դիմաց, որոնց հետ մեզ ընտելացրել է սուլթանի կառավարությունը: Վերջին կոտորածների առանձնահատկությունն այն է, որ դրանք կատարվել են պարբերաբար, անդադար, և հրկիզումներն ու մարդասպանությունները, որ մի ամսից ի վեր շարունակվում են, Եվրոպայի ուշադրությունը չեն գրավել...»: Կոլը հուլիսի 7-ին Փարիզի քաղաքային խորհրդարանում հայտարարեց. «Ամենուրեք թալան, սպանություն, ավերմունք: Շաբաթ չի լինում, որ գյուղ չթալանվի, կորստի չմատնվի: Դրա հետ միասին՝ անվերջ խաբեություններ և կեղծ լուրեր, որ ամեն օր հրապարակ են նետվում օսմանյան դեսպանության կողմից Եվրոպայի հասարակական կարծիքը քնեցնելու համար»[134]: Ժամանակակիցներից մեկը հետևյալ կերպ է նկարագրում դրությունը. «Սասունի գավառը հանդարտ է, խաղաղված: Ռազմական կետերի ստացիոնար զորամասերում պահակազորքեր են դրված: Կոտորածից փրկվածները քաղցած են, բայց փորձում են վերաշինել իրենց այրված գյուղերը: Բիթլիսի հյուպատոսությունը կոտորածից, ցրտից ու քաղցից մեռնողների թիվը նշում է 3500: Մշո գավառում ապստամբները պարտիզանական կռվի ձև են ընտրել, զորքերի ու քրդական խմբերին դարանի մեջ գցելով՝ պահանջում են մի քանի բարեփոխումներ, որոնք հիմնականում վերաբերում են տեղական վարչությանն ու տնտեսական վիճակին և չեն շոշափում կայսրության ամբողջությանը»[135]: "Daily News"-ի թղթակիցը հուլիսի 1-ին գրում է. «Թուրք խուժանն ազատ բաց էր թողնված ժողովրդի վրա»: Ֆր. Պրեսանսեն խորհրդարանում իր ելույթում պահանջեց, որ Ֆրանսիան, Անգլիան և Ռուսաստանը ռազմանավերի ցույց կազմակերպեին՝ «արգելելու համար հայ ազգի բնաջնջումը»: Նույն նիստում Դելկասեն ասաց. «Անմեղ զոհերի թիվը պարզ վկայում է, որ զինվորներն ընտրության հարցում շատ չէին մտահոգվում»: Պրեսանսեն հայտարարեց. «1894-ի և 1896-ի պատմությունն է վերսկսվել: Միևնույն վայրերն են՝ Սասուն, Մուշ, միևնույն գյուղերն են՝ Գելիեգուզան, Տալվորիկ, Սեմալ և ուրիշներ... Միևնույն մարդիկ են՝ Զեքի փաշա, Ֆերիդ բեյ, զոհերն են միայն ուրիշ, որովհետև մի քանիսը բախտ են ունեցել, այո բախտ, նահատակվել առաջին հարվածից և կենդանի մնացածների հետ չենթարկվել մեծ մարդասպանի հրահանգած ոճիրներին»: Դիմելով կառավարությանը՝ նա ասաց. «Դուք բողոքել եք... Ձեզ հետ բողոքել են նաև Անգլիան և Ռուսաստանը: Բայց սուլթանը գիտի, թե ինչ արժեն այդ բողոքները, երբ դրանց հետևում չկա վճռական որոշում հասնել նպատակին և ձեռնպահ չմնալ գործողություններից, եթե զգացվի դրանց անհրաժեշտությունը... Հիշեք, 1894թ. Սասունի ջարդերով արյունոտ վարագույրը միայն բարձրացվեց և չարիքին դարման չեղավ... Նույնիսկ Զեքի փաշան և Ֆերիդ բեյը գործից չհանվեցին: Ֆրանսիական կառավարությունը թուրքական ջրերը նավեր մտցրեց միայն այն բանի համար, որ Թուրքիան ֆրանսիական մի քանի հարուստներից վերցրած պարտքերը չէր վերադարձնում, իսկ երբ մի ամբողջ ժողովրդի արյուն է հոսում, նա էական որևէ քայլի չի դիմում»[136]: 1904թ. հունիսի 29-ին Ջ. Բրայսի նախաձեռնությամբ Լոնդոնում գումարված միջազգային համաժողովին Անատոլ Ֆրանսի հղած նամակում կարդում ենք. «Հնարավո՞ր է, որ Եվրոպան իրեն թույլ տա սուլթանին ասելու. «Կոտորիր, միայն թե վճարիր»: Հնարավո՞ր բան է, որ այդ խնամակալ Եվրոպան ... երբ հարկավոր լինի, թնդանոթի որոտով վճարել տա իր պարտամուրհակները և ինքն իրեն անզոր համարի, երբ կոտորվում է սուլթանի 300 հազար հպատակ: Մի՞թե Եվրոպային միայն տնտեսական հարցերն են հետաքրքրում: Պարոնայք, Հայկական հարցը, եթե ուզում եք իմանալ տնտեսական հարց է: Քրդերի կողմից կոտորված այս ժողովուր-

130 Սասունի Կ. Սարերի ասլանը, Բեյրութ, 1966, էջ 447:
131 Սիմոնյան Հ. Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, էջ 170:
132 «Դրոշակ», 1904, թիվ 4-5:

133 Атомян С., նշվ. աշխ., էջ 35:
134 ՀՀ ԿՀԿՊԿԱ, ֆ.131, ց1, գ.60:
135 Նույն տեղում, գ.63:
136 Ն. տ., գ.61:

դը որքա՞ն օգտակար կարող է լինել քաղաքակրթությանը»[137]:

Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունները նորից լուրեր տարածեցին, թե համատեղ ուժերով ճնշում էր գործադրվում սուլթանի վրա բարենորոգումներ մտցնելու համար: "Русские ведомости"-ն դա համարեց «միակ ելքը այն ծանր կացությունից, որում տանջվում են թուրքահայերը և, որը հասկանալի է դարձնում թուրքերի տիրապետության դեմ նրանց պարբերական ապստամբությունները: Իսկ Բ. Դուռը բարենորոգումներ մտցնելու որևէ ցանկություն չունի: Քրիստոնյա ազգաբնակչությունը նրա համար ծանր բեռ է, մի անհաշտ թշնամի, որի թիվը պետք է պակասեցնի»[138]: "Le Temp"-ը արևմտահայության փրկությունը տեսնում էր հայկական նահանգներում Կրետեի վարչական համակարգի կրկնօրինակման մեջ[139]:

Կաթողիկոսը պատվիրակություն ուղարկեց ԱՄՆ նախագահ Թեոդոր Ռուզվելտի մոտ օգնության խնդրանքով, որպեսզի Հաագայի միջազգային դատարանը քններ Հայկական հարցը: Նախագահը մերժեց հայերի խնդրանքը: 1904թ. կեսերին հայկական բարենորոգումների նոր ծրագիրը ռուսական դեսպանը հանձնեց Բ. Դռանը: Այս անգամ բարենորոգումների խնդրում ռուսական կառավարությունը մեծ շահագրգռվածություն էր հանդես բերում: Վախեցած ազգային և հեղափոխական շարժումներից, ցարը ձգտում էր Արևմտյան Հայաստանում խաղաղություն հաստատել:

Վերևում նշվեց "Русские ведомости"-ի կարծիքը «Հայերի պարբերական ապստամբությունների» մասին: Սասունի 1904թ. ինքնապաշտպանական կռիվները հաճախ են ապստամբություն անվանվում, չնայած ակնհայտ է, որ տվյալ դեպքում ևս սուլթանն իրականացնում էր Սասունը հայաթափելու քաղաքականությունը, իսկ հայերի հակազդեցությունը այլ բան չէր, եթե ոչ սեփական հայրենիքում հարատևելու կամք: Ինքնապաշտպանական կռիվներին ապստամբության պիտակ կպցրել է ինքը՝ սուլթանը, եղերական իրադարձությունների պատասխանատվությունը հայերի վրա բարդելու համար: Եվ ահա, Սասունի իրադարձությունները դնելով ապստամբության կաղապարի մեջ, փնտրում են, թե որն էր հայերի պարտության պատճառը, կարծես թե գոյություն ուներ այլընտրանք: Հայդուկները քաջ գիտեին, որ սուլթանին հաղթել չէին կարող, բայց անհավասար կռվի ելան հանուն հայ գյուղացու կյանքի, պատվի և արժանապատվության: Նրանց հաջողվեց ձախողել սասունահայությանը բնաջնջելու սուլթանական քաղաքականությունը: Այս առումով սասունցիները ոչ միայն չպարտվեցին, այլ որոշ առումով, հաղթող դուրս եկան: Սուլթանի ջարդերն ու հալածանքները չկարողացան մեղմել կայսրության ճգնաժամը, դրությունն աստիճանաբար ավելի սրվեց, վայրագ հալածանքները Թուրքիային կանգնեցրին բարոյալքման առջև:

Ինչ վերաբերում է ցարիզմին, ապա նա թշնամական կեցվածք դրսևորեց նաև Սասունի 1904թ. ինքնապաշտպանական կռիվների հանդեպ, որն արտահայտվեց սասունցի փախստականների առջև ռուսական սահմանի դռները փակելով, ինչպես նաև Անդրկովկասում Գոլիցինի հակահայ քաղաքականությամբ և խոչընդոտներով, որ հարուցում էին ցարական իշխանությունները արևմտահայկական շարժումներին արևելահայերի աջակցությանը: Ցարական իշխանությունն առանձնապես դաժան էր հայդուկային շարժման նկատմամբ: Դա նշում էին նաև ռուս պաշտոնատարները: Թուրքիայում ռուսական գործակալներից մեկը՝ Իվանովը, գրում է. «Պլաստունների (սահմանապահներ) մասնակցությունը ֆիդայիների դեմ գործողություններին հայ ազգաբնակչության վրա ծանր ազդեցություն է թողել, քանի որ, եթե հայերի մեջ դրսից օգնություն ստանալու հույս մնացել է, ապա՝ միայն Ռուսաստանից: Ընդհանրապես սխալ է կարծել, թե թուրքահայերը թշնամաբար են վերաբերվում Ռուսաստանին: Այդ հարցում նրանք բաժանում են Ռուսաստանի իրենց ցեղակիցների ձգտումները: Թուրքահայերը հանձինս Ռուսաստանի տեսնում են բնական պաշտպանի»: Հայերի դեմ թուրքերին օգնելը չի ծառայում Ռուսաստանի շահերին:

Անկախ այս ամենից, Պետերբուրգը 1904թ. հանդես եկավ ի պաշտպանություն արևմտահայության և գործնական քայլերի դիմեց հայկական նոր կոտորածների առաջն առնելու համար: 1904թ. ապրիլի 15-ին Անգլիայի արտաքին գործերի նախարար Լանզդոուն հեռագրեց Պետերբուրգի իր դեսպանին. «Ռուսական կառավարությունը տեղեկացրել է, որ թուրքական մեծաթիվ զորքեր են կենտրոնացված Հայաստանի այդ մասում (Տարոնում և Սասունում), ենթադրաբար թվով մոտ 38 հազար մարդ, մի ուժ, որ ռուսական կառավարությանը թվում է չափազանց, ինչը կարող է հասցնել լուրջ խառնակություններ և գուցե հայերի ընդհանուր կոտորածի: Կ. Պոլսի ռուսաց դեսպանը հրավիրել է Բ. Դռան ուշադրությունն այդ խնդրի վրա և հույս հայտնել, որ դեսպան Քոնրրը ևս հրահանգ կստանա նույնն անելու»[140]: Անգլիան իր միջնորդությունն առաջարկեց Բ. Դռան ու հայերի միջև բանակցություններ սկսելու համար: Բիթլիսի զորահրամանատարի հարցին, թե հայդուկների դեմ զենք գործադրի՞, Օ՝Քոնրրը հեռագրով պատասխանեց. «Եթե միայն վստահ եք, որ զինվորներն ու սպաները չեն չարաշահի իրենց տրված հրամանները և հանցագործներին ու անմեղներին չեն շփոթի»: Բիթլիսում անգլիացի փոխհյուպատոս Հեթքոթը նույնպես կողմնակից էր հայերի դեմ զենքի գործադրմանը, սակայն վճռականապես հերքում էր թուրքական պնդումը, թե նախահարձակը հայերն էին: Երեք տերությունների հյուպատոսներն իրենց կառավարություններից հանձնարարություն ստացան՝ սկսել Բիթլիսի վիլայեթի կացության հետաքննություն[141]:

Սակայն տերությունների, մասնավորապես Անգլիայի, քաղաքականությունը շարունակում էր մնալ երկդիմի: «Echo»-ն հունիսի 11-ին Անգլիայի արտաքին գործերի նախարարի՝ հայ- թուրքական հարաբերությունների վերաբերյալ մի ճառի մասին գրեց, որ այն «պարզապես թուրքին հրավեր էր անպատիժ շարունակելու իր վայրագությունները: Դիզրայելիի օրերից այս կողմ ավելի անպատիվ խոսք լսված չէր բրիտանացի նախարարի բերանից»: Բացարձակ հակահայկական էր Գերմանիայի քաղաքականությունը: Պոլսում Գերմանիայի դեսպանը հայտարարեց. «Արևելքում, ուր էլ գնանք՝ Պոլիս, Եգիպտոս, հայերը մեր քաղաքականության միակ ընդդիմադիր ուժն են»[142]:

Իսկ սասունցին կոտորված էր, անտուն ու անօթևան: Թուրքերը լրիվ զինաթափեցին ոչ միայն Սասունի, այլև Տարոնի հայությանը: Շուրջ 1000 տարոնցի խոշտանգվում էր բանտերում, ամենուրեք թալան էր ու ավերածություն: «Կարմիր ջարդերից հետո,- գրում են Մուշից,- սպիտակ կոտորած: Սասունի և Դաշտի արյունահեղություններով, հալածանքներով, անգթություններով անարգ բռնակալությունը չի բավարարվում, այլև ուզում է Մշո գեղեցիկ դաշտն ամբողջությամբ քանդել... ամեն գյուղից 20-30 տուն գաղթել է: Կառավարությունը դալալների միջոցով հայտնեց ժողովրդին, թե աղքատները կարող են ազատ հեռանալ Դիարբեքիր, նույնիսկ դյուրություններ և ճանապարհածախս տրվեց, իսկ նրանց հեռանալաց 5-10 օր անց մուհաջիրներ բերեց ու հաստատեց հեռացողների հողերի վրա: ...Սով է, բայց արհեստական սով»[143]: Սվիններով հարկադրանքով Լեռնաշխարհի մի քանի կետերում կառուցված զորանոցներում տեղավորեցին 500 զինվոր, որոնք հայդուկներ փնտրելու պատրվակով խուզարկություններ էին կատարում, զբաղվում թալանով: Գործի անցան հարկահավաքները: «Տուրքերը թե՛ գյուղերում և թե՛ քաղաքներում անասելի ձևերով էին հավաքվում»: Կուլի խանի ջանբազարները «կառավարությունից ստանում էին բարձր աշխատավարձ, ձրի հագուստ, սնունդ և հարկեր հավաքելու անվան տակ կատարում էին զազրելի բռնություններ հայերի ու քրդերի դեմ»: Սուլթանը գործարքի մեջ էր ոչ միայն քրեական հանցագործների, ավազակների, այլև, այսպես կոչված, մահմեդական խուժանի հետ:

Հայերն այլ ելք չունեին, եթե ոչ շարունակելու ինքնապաշտպանական հայդուկային կռիվները: 1904-1907թթ. Տարոնի հայդուկության ղեկավարը Գևորգն էր, որը բազում կռիվներ է մղել թուրքական բանակի, ժանդարմերիայի, ոստիկանության, քուրդ աշիրաթների դեմ: Նկատի ունենալով քրդերի տրամադրությունների մեջ կատարվող փոփոխությունները՝ նա մեծ ջանքեր թափեց հայ-քրդական դաշինք ստեղծելու համար: Հայ քաղաքական գործիչները համագործակցության եզրեր էին փնտրում նաև թուրք ընդդիմադիր ուժերի, մասնավորապես, երիտթուրքե-

137 «Մուրճ», 1904, թիվ 7:
138 Նույն տեղում:
139 Ն. տ.

140 «Դրոշակ», 1904, թիվ 12:
141 Նույն տեղում, թիվ 13:
142 «Հնչակ», 1906, թիվ 12:
143 Նույն տեղում, 1907, թիվ 3:

րի հետ: Սակայն այդ տարիները, լինելով հանդերձ հայդուկային-ինքնապաշտպանական կռիվների վերելքի շրջան, միաժամանակ դարձան հայկական հայդուկության անկման ժամանակաշրջան, ինչն ավելի արագացավ Գևորգի սպանությամբ (1907թ. մայիս):

1904թ. կոտորածներ տեղի ունեցան ոչ միայն Սասունում, այլև հայաբնակ մի քանի այլ շրջաններում: 1904թ Սալորիի և Սամսոնի կողմերում հրկիզվեց 40 հայկական գյուղ և սպանվեց շուրջ 3500 հայ: Վանում զինվորները սպանեցին ու վիրավորեցին տասնյակ հայերի: Բնականաբար, թուրքական բռնությունները ծնում էին դրանց ընդդիմանալու այլևայլ ձևեր և եղանակներ, որոնք մերթ հայդուկային կռիվների, մերթ առանց դրանց, օգտագործվում էին թուրքական հայկործան քաղաքականության դեմ[144]: Եղան նաև թուրք և քուրդ բնակչության հետ համատեղ պայքարի փորձեր: 1905թ. հարկային քաղաքականության դեմ ըմբոստացավ Բաղեշի բնակչությունը, մասնավորապես, ցույցեր եղան՝ ուղղված հացի գների թանկացման դեմ: Ցուցարարները սովի պատճառը համարում էին գյուղացիության, հատկապես հայերի, նկատմամբ իշխանությունների վարած քաղաքականությունը: Վալին երկու ժողովուրդների ներկայացուցիչների միասնական ելույթը խափանելու համար կարգադրեց բռնագրավել հայերի ունեցած հացը և բաժանել մահմեդականներին: Բիթլիսամ զանգվածային ընդվզում տեղի ունեցավ նաև 1907թ. ամռանը: Խռովարարները երեք օր քաղաքը պահեցին իրենց ձեռքում: Սուլթանը հարկադրված եղավ պաշտոնանկ անել վալուն: Դիարբեքիրում նույնպես խռովարարներին հաջողվեց պաշտոնից հանել տալ կուսակալ Աթային: Սոցիալական բնույթի ընդվզումներ եղան նաև Կարինում: 1906թ. ցուցարարները գրավեցին հեռագրատունը, զինվորները հրաժարվեցին կրակել նրանց վրա, քաղաքն անցավ ժողովրդի ձեռքը: Չնայած շարժման մասնակիցները հիմնականում թուրքեր էին, Կ. Պոլսից եկած հանձնաժողովը փորձեց կատարվածի մեղքը բարդել հայերի վրա, սակայն թուրք բնակչությունն այդ թույլ չտվեց: Գործը վերջացավ նրանով, որ վալին աշխատանքից ազատվեց, վերացվեցին գանձվող գլխահարկը և անասնահարկը, քրիստոնյաներից՝ զինվորական հարկը[145]:

1905-1907թթ. նշանավորվեցին ոչ միայն հայ ու մահմեդական բնակչության համատեղ պայքարի առանձին արտահայտություններով, այլև խառը կոմիտեների ստեղծմամբ: Այդ կոմիտեները Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներում տպագրում էին թերթեր, տարածում թռուցիկներ, ներկայացնում համատեղ պահանջներ[146]: Ռուբենի խոսքերով՝ Էրզրումում ու Վանում դաշնակցությունը նշանաբան էր դարձրել՝ «Թուրքերի հետ թուրքական կառավարության դեմ»: 1907թ. Կարինում նորից խռովություն տեղի ունեցավ, այս անգամ՝ ուղղված հացի գների թանկացման դեմ: Սկսվեց հաշվեհարդար: 1908թ. հունվարին ութ հոգի՝ մահվան, իսկ 68 հոգի տարբեր ժամկետներով բանտարկության դատապարտվեցին: 1906թ. Վանում տարածված թռուցիկներից մեկում ասված էր. «...Այժմ բացված են մեր մտքերն ու աչքերը, և մենք ալ, ենթարկվելով հայերու վիճակին ու բախտին, կձայնակցենք անոնց բողոքներուն... Անուղղակի տուրքերը, դատարանական զեղծումները, կաշառակերությունները ու ամբողջ պաշտոնական խայտառակությունները մեր ժողովրդին ծայրաստիճան թշվառության ու հետամնացության մատնեցին, որոնց այլևս չենք կարող դիմանալ»[147]: Իշխանությունները 1906թ. հուլիսին հրդեհեցին բանտը: 1907թ. հունվարին քաղաքի հայությունը դիմեց պատրիարքին՝ միջնորդելու կառավարության առաջ մեղմելու հարկային ճնշումները: Բ. Դուռը սկզբում մերժեց պատրիարքի միջնորդությունը, իսկ ապա պաշտոնազրկեց վալուն: Ընդվզումներ տեղի ունեցան նաև արհեստավորության շրջանում: Սեբաստիայում ըմբոստացած բնակչությունը հարկադրեց վերացնել նոր նշանակված հարկը, իսկ Խարբերդում հաջողվեց հասնել աշխատավարձի բարձրացման: Նման հաջողություն արձանագրվեց նաև Կարինում: 1905թ. Կարճկանի և Այլուրի գյուղացիներն ըմբոստացան Մուսա բեյի, իսկ Կուռաբաշի գյուղացիները՝ հարկահավաքների դեմ: Մուհաջիրներին հայկական գյուղերում բնակեցնելու դեմ 1907թ. ելավ Խնուսի հայությունը: Նույն

144 АВПР, ф. Политархив, д. 1869, л. 56.
145 Kars H. Z. Belgelerie, 1908, Derini ancesine Anodolu ist, Ankara, 1984.
146 Internation socialist konferansen 1917. Stockholm, 1918, p. 267.
147 «Հնչակ», 1906, թիվ 6:

տարվա մայիսին ըմբոստացան Բուլանըխի հայկական գյուղերը, սակայն դաժանորեն ճնշվեցին: 1907թ. ոստիկանությունը զենք փնտրելու պատրվակով ներխուժեց Տարոնի Հերկերտ գյուղը: Տղամարդիկ հեռացան լեռները: Մի քանի հաջող մարտերից հետո նրանք շրջապատվեցին ու ոչնչացվեցին: Տասանորդի հավաքման ընթացքում տեղ գտած զեղծումների դեմ ըմբոստացան Ալջևազի Առնե գյուղի հայերը: 1908թ. ապրիլին Գենջի հայերը ոտքի ելան համիդիեների վայրագությունների դեմ: Զմշկածագում հայ և թուրք բնակչությանը 1907թ. հաջողվեց աշխատանքից հեռացնել տալ կառավարչին:

Այսպիսով, ի տարբերություն XIX դարի վերջին քառորդի, XX դարասկզբին քաղաքական պայքարում հանդես եկավ նոր երևույթ՝ ազգային ու սոցիալական շարժումների միավորման միտում: Այո, միայն միտում և ոչ ավելին: Սոցիալական շարժումը ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլև ամբողջ կայսրությունում դեռևս խմորվելու գործընթացում էր և հասարակական կյանքի վրա էական ազդեցություն գործել չէր կարող: Այդ էր պատճառներից մեկը, որ օսմանյան իշխանություններին հաջողվում էր սոցիալական բնույթի ընդվզումները հեշտությամբ մարել և մահմեդական ազգաբնակչությանը միավորել հպատակ ժողովուրդների, մասնավորապես, հայերի դեմ:

Նաև հարկ է մերժել հետևյալ տեսակետը. Ջ. Հուսցեի «Արմին Թ. Վեգներն ու հայերի ցեղասպանությունը» գրքում կան հետևյալ մտքերը, թե XX դարասկզբի «դաժան հաշվեհարդարի դեմ ընդվզումը ... ձեռք էր բերել իսկական հեղափոխական շարժման տեսք «Մահ կամ ազատություն» նշանաբանով[148]: Բացարձակ սխալ է, որովհետև այն ինչ տեղի էր ունենում Արևմտյան Հայաստանում, այլ բան չէր, եթե ոչ ինքնապաշտպանական կռիվ: Հեղինակը նաև հնարում է, երբ գրում է. «Թուրքական տարբեր քաղաքներում հայ հպատակների ապստամբությունները գնալով ավելի բազմաթիվ էին դառնում»: Թե 1904թ. և թե Առաքելոց վանքի կռիվն ապստամբություններ չէին: Էլ չենք ասում այն մասին, որ հեղինակը կամայականորեն է վերաբերում փաստերին ու երևույթներին: Ըստ նրա 1904թ. Սասունում ոչնչացվել էր 10000, իսկ Տարոնում 8000 հայ[149]: Բացարձակ չափազանցություն է:

Այսպիսով, Թուրքիայի առանցքային խնդիրներից մեկը կայսրության, և առաջին հերթին Փոքր Ասիայի, էթնիկական դիմանկարի արմատական փոփոխությունն էր՝ այն ազգային խայտաբղետությունից վերածել ազգային միատարրության, այսինքն՝ դարձնել թուրքական:

Խնդիրը լուծելու համար դեռ XIX դարում առաջ քաշվեցին երեք ուղիներ. կայսրությունում «էթնիկական» հասկացությունը վերացնել ու փոխարինել «քաղաքական» հասկացությամբ: Ոչ թե ազգ, այլ օսմանցի: Կայսրությունը մահմեդականացնել, այսինքն՝ ազգային սկզբունքը շարքից հանել և տեղը դնել կրոնականը՝ «Օսմանյան կայսրության քաղաքացի» և «մահմեդական» հասկացությունների նույնացում: Կայսրության թուրքացում, այսինքն՝ ազգային սկզբունքի բացարձակեցում՝ Օսմանյան կայսրության քաղաքացի և թուրք հասկացությունների նույնացում: Այս երեք սկզբունքներից ոչ մեկը երիտթուրքերի երևակայության պտուղը չէր, այլ գաղափարախոսություններ, թուրք ազգի ձևավորման գործընթացի ուղեկիցներ: Դրանով է բացատրվում օսմանիզմի, իսլամիզմի ու թուրքիզմի գրեթե խաղաղ համակեցությունը: Ճիշտ է, սուլթան Աբդուլ Համիդը մերժում էր օսմանիզմը, գտնելով, որ թուրք ազգը վեր է բոլորից և վիրավորական էր նրան օսմանական ազգ հասկացության միջոցով հավասարեցնելը հպատակ ժողովուրդներին: Նույն այդ սուլթանը բացարձակ միապետություն ձևավորելուն զուգընթաց մշակեց իսլամիզմն ու փաստորեն դրեց թուրքիզմի հիմքերը՝ դրանք համարելով թուրք ազգի և թուրքական ազգային պետության ձևավորման աստիճաններ՝ կայսրության մահմեդականացման միջոցով անցում կատարել թուրք ազգի ամբողջականացմանը: Դա ազգաշինության պատմությանը մինչ այդ անհայտ եղանակ էր, երբ ազգի բնապատմական ձևավորման տեղը փորձում են դնել վարչահրամայական եղանակով ազգ ստեղծելու քաղաքականությունը: Այս խնդրում երիտթուրքերը ավելի «լայնախոհ» գտնվեցին: Նրանք գլխավորը համարեցին ոչ թե միջոցը, այլ նպատակը՝ կայսրության թուրքացումը, որին

148 Տե՛ս, «Вестник», 2004, N 2, էջ 107:
149 Նույն տեղում:

ջո Թուրք կառավարող վերնախավը նշված աշխարհայացքներից ոչ մեկից էլ ամբողջությամբ չխզվեց: Աբդուլ Համիդ 2-րդը հարում էր թե օսմանիզմին ու իսլամիզմին և թե թուրքիզմին: Նույնը նաև երիտթուրքերը, ովքեր օսմանիզմը պետական գաղափարախոսություն ունենալով հանդերձ գործնական կյանքին մեջ ճարպկորեն կօգտագործեին իրենց ներսում գոյություն ունեցող գաղափարական այլակարծությունները: «Անոնք օսման կայսրութեան քրիստոնեայ ժողովուրդներու հետ իրենց յարաբերութեան մեջ օսմանիստներ և բարենորոգչականներ էին. իսլամ ժողովուրդներու հետ իրենց յարաբերութեան մեջ՝ իսլամիստներ, իսկ թուրք տարրին հետ իրենց յարաբերութեան մեջ՝ թուրքիստներ»[158]: Դա չէին ժխտում նաև թուրքիստները: Ե. Աքչուրան գտնում էր, որ Օսմանյան կայսրությունն իր քաղաքականությունը պետք է բխեցներ օսմանականությունից, իսլամությունից և թուրքությունից: Հետևաբար չի կարելի ճիշտ համարել այն տեսակետը, թե թուրքիզմի հանդես գալուց հետո օսմանիզմը նետվեց աղբարկղ:

Այո, անցումը թուրքիզմին թելադրված էր նաև նրանով, որ օսմանյան լծից ազատվել ձգտում էին ոչ միայն այլակրոններն, այլև մահմեդական ոչ թուրք ժողովուրդները, օրինակ, արաբները: Կայսրությունում միակ հավատարիմ տարրը թուրքերն էին, որոնց շրջանում լայն տարածում ստացավ թյուրքճյուղությունը: Այն պետական լայն աջակցություն էր ստանում և տիրապետող էր հոգևոր կյանքի վրա: Թյուրքճյուղությունին թուրքիզմից բաժանող տարածությունը կարճ էր և գնալով ավելի էր կարճանում: Համաթրքության առաջ մղվելը բացատրվում է նաև այն իրողությամբ, որ Կ. Պոլսում հավաքվել էին Ռուսաստանից հեռացած մեծ թվով թուրանականներ: Համաթրքությունն ու թուրանականությունը չնայած իրար շատ նման էին, բայց չէին նույնանում, որովհետև թուրանականությունը անհամեմատ ավելի լայն ընդգրկում ունեցող հասկացություն էր, քան համաթրքությունը[159]: Թուրքիզմը «արևելքն ու արևմուտքն երկու պողպատեայ բազուկներով գրկել է հայ կմախքացած մարմինը» (Շահան Նաթալի)[160]:

Ա. Աղաևը գտնում էր. «Չկա ավելի դժվար գործ, քան որոշել աներևակայելի ընդարձակ և հպարտ թուրքական աշխարհի իսկական սահմանները»: Երիտթուրքական մի փաստաթղթում կարդում ենք. «Քրիստոնեայ ըլլան, թե իսլամ, մերինեն հիմնովին տարբեր մշակոյթներ և դարավոր անցեալ ունեցող, մերինին ուղղակի հակընդդեմ ձգտումներ ունեցող ժողովուրդներեն հայրենասիրութիւն սպասելը ոչ միայն ծիծաղելի, այլև վտանգավոր է: Անոնք չեն կրնան մեր իդեալներուն, մեր նպատակներուն ծառայել, մեզի հետ քալել, մեզի հետ նոյնանալ... Ամեն բանե յառաջ Թուրքիան ուրեմն պետք է Թրքանայ»: Կառավարությունը պետք է «Հրաժարի օսմանցիութիւն խաղալե, դադրի չփոթելե իսլամը Թուրքի հետ: Ան պետք է կոթնի բացառապես Թուրք դարդին վրայ և բացառապես ոյժ տա անոր: Միա տարրերը գոյութիւն չունին իբրև ուրոյն ազգեր, անոնք իրավունքներ չունին: Պետք է Թրքանան կամ կորսուին: «Օսմանեան ազգ» չկայ, մեկ ազգ կա, մեկ ազգ պիտի ըլլայ ասկե վերջ Թուրքիոյ մեջ և այն Թուրքն է: Այս է Թրքութիւնը»[161]:

1911թ. սկզբին Ե. Աքչուրան Կ. Պոլսում ստեղծեց «Թյուրք յուրդուս» («Թուրքական հայրենիք») պարբերականը, որն իր բնույթով թուրքիստական էր և գործում էր «Թուրքիան Թուրքերին» նշանաբանով: Իտալական և Բալկանյան պատերազմներում Թուրքիայի պարտությունները, տարածքային կորուստները, սարսափը Ռուսաստանի հանդեպ երիտթուրքերի պարագլուխներին այն համոզմանը բերեցին, որ կայսրությունը եղած սահմաններում ու տեսքով պահելն այլևս անհնար էր: Այդ կապակցությամբ Բ. Լևիսը գրում է. «Կայսրության անկման գաղափարը նոր էր և շատերը չփոթված էին. նրանք անբավարար և ոչ գրավիչ էին համարում փոքր շրջագծով ազգային նահանգը: Պանթուրքիստական շրջանակներում և մանավանդ թաթար վտարանդիների շրջանում այս մտահոգությունը առօրյա էր: Նրանք հավատում էին, որ Թուրքիային սպասում է նոր կայսրության ճակատագիր, որի խնդիրն էր ոչ թե վերարթնացնել բազմալեզու և

158 Ղազարյան Հ. Ցեղասպան Թուրքը, էջ 153-154:
159 Landau J. Pan-Turkism, London, 1995, p. 29-57.
160 Շահան Նաթալի Թուրքիզմը Անգորային Պաքու և Թրքական օրենթասիոն, Ե., 1992, էջ 31-33:
161 Զարեվանդ, Միացեալ Անկախ Թուրանիա, Ե, 1993, էջ 60-61:

բազմազգ Օսմանյան կայսրությունը, այլ ձևավորել Թուրք և Թաթար ժողովուրդներից կազմված նոր, համաթուրքական կայսրություն, որը տարածվեր Էգեյան ծովից մինչև Զինական ծով»[162]:

Համաթրքական այս զառանցանքները շատ արագ տարածում գտան, տիրապետող դարձան ոչ միայն քաղաքական շրջանակներում, այլև մտավորականության և սովորող երիտասարդության լայն զանգվածներում: 1913թ. հունվարի 23-ի պետական հեղաշրջման միջոցով նորից իշխանության գլուխ եկած և կուսակցական բռնատիրության հաստատած իթիհադը իր ղեկավար կազմը համալրեց մոլի պանթուրքիստներով, ովքեր սարսափում էին Ռուսաստանից և կառավարությանը հորդորում ոչնչացնել ազգային այն տարրերին, որոնք նպաստելու էին ռուսական առաջխաղացմանը: Նրանք առաջին պլանին դրեցին հայության բնաջնջման խնդիրը: Կովկասյան ուղղությամբ թուրքական ռազմական ուժի հիմքը Երրորդ բանակի սպայական կազմը հիմնականում Կ. Պոլսի ռազմական ակադեմիայի շրջանավարտներն էին, ովքեր մինչև ուղնուծուծը վարակված էին թուրքիզմով: Բանակի հրամանատար դարձած Էնվերը նույնպես մոլի պանթուրքիստ էր: Նա 1100 սպայի փոխարինեց թուրքիզմի լողավազանով անցած զինվորականներով:

Թուրքիզմի սուր սայրը ուղղված էր հայերի դեմ նաև այն պատճառով, որ թուրքական ազգային պետությունը ծրագրված էր ստեղծել Անատոլիայում, որի մեջ թուրքիստները մտցնում էին նաև Հայաստանը:

Բացարձակապես սխալ է այն կարծիքը, թե «պանթուրքիստական պետության ստեղծման ճանապարհին գլխավոր արգելքը հայ ժողովրդի գոյությունն էր, որը բնակվում էր թուրքերի և նրանց արևելյան եղբայրների միջև ընկած տարածքում»[163]: Միանգամայն իրավացի է Ջ. Հաուզը, երբ գրում է, թե Հայաստանի ընկած լինելը Օսմանյան կայսրության և Ռուսաստանի միջև միանգամայն շահեկան էր դարձնում երիտթուրքերի քաղաքականությունը, որովհետև ցանկացած անհաջողություն հեշտությամբ կարելի էր բարդել «ներքին թշնամու վրա»: Իհարկե, թուրք ժողովրդին արբեցնելու թույլ միջոց չէր նաև «Մեծ Թուրքիայի ստեղծման հրապույրը», որը հետին պլան էր նետում ամեն տեսակի դժգոհությունը իշխանություններից, այն ուշադրության հորիզոնը փակում էր մահմեդական-քրիստոնյա, թուրք-հայ թշնամության մաղձով: Միայն նման պարզունակ ճակատագրապաշտ և թեթևամիտ գաղափարախոսությունն էր իր ուտոպիստական մեծ երազանքով ընդունակ հասկանալի և ընդունելի լինելու մի ժողովրդի կողմից, որ սովահար էր ու տգետ: Եվ որքան խորանում էին սոցիալական չարիքները, այնքան ուժեղանում էր ազգայնամոլության ու մեծապետականության ազդեցությունը թուրքական հասարակության վրա:

Ջոն Հուայդն իր «Մեծ եղեռն՝ մեծագույն չարագործություն» աշխատության մեջ անդրադառնում է նաև երիտթուրքերի պանթուրքիզմին: Նա առաջ է քաշում մի շարք թեզեր, որոնք առաջին հայացքից թվում են չափազանցություն, բայց իրականում ճիշտ են արտահայտում պատմության իրողությունները: Նա գրում է, որ Օսմանյան կայսրությունն իր ծաղկման շրջանը «պարտական է թուրք ազգաբնակչության և քրիստոնյա փոքրամասնության թվաքանակի հարաբերությանը: Քրիստոնյա համայնքի անդամները, ովքեր թուրքերից հարուստ էին ու կրթված, թուրքերին օգտակար եղան ինչպես պետական կառավարմանն իրենց մասնակցությամբ, այնպես էլ պետական գանձարանն իրենց ներդրումներով, որովհետև պետությունը նրանցից էր հավաքում հարկերի մեծ մասը: Սակայն սուլթանները ենիչերի դարձնելու համար քրիստոնյա տղաներ, իսկ հարեմների համար աղջիկներ հավաքելով, միաժամանակ նպատակ էին հետապնդում, որպեսզի քրիստոնյա համայնքը դեմոգրաֆիկ աճ չունենար, երբ թուրք բնակչությունն աճում էր: Նաև այս միջոցով էին քրիստոնյա ժողովուրդները վերածվում փոքրամասնության ու ենթարկվում մշտական խտրականության, չնայած շարունակում էին ունենալ գոյատևելու իրավունք, թեկուզ այն պատճառով, որ դա բխում էր կայսրության շահերից»:

Իշխանության գալուց հետո երիտթուրքերն ամբողջությամբ փոխեցին իրավիճակը[164]: Նրանք փարվեցին թյուրքիզմին ու պանթուրքիզմին: Այսպիսով, պանիսլամիզմից և օսմանիզ-

162 Lowis B. The Emergence of modern Turkey. London, 1968, p. 358.
163 "Вестник", 2004, N2, стр. 109.
164 Նույն տեղում:

մից անցումը թուրքիզմին ու համաթուրքականությանը հանդիսացավ երիտթուրքերի առաջնորդների տեսական ու քաղաքական «ծառայությունը»: «Հասկանալի է, որ նման վիթխարի ծրագիրն անհնար էր իրականացնել առանց մասնատելու Ռուսաստանը և ուրիշ պետություններ, որոնց տիրապետության տակ կային թուրքական ժողովուրդներ և ցեղեր: Բեռլինում գտնվելու ժամանակ (1918-1921թթ.) Թալեաթը հրեական ծագումով իթիհադական Ն. Մազելին պատմել է բազում սխալների մասին, որ իրենք թույլ են տվել: «Մեր մեծագույն սխալը,- ասել է նա,- այն էր, որ ձեռք մեկնեցինք 2-3 ընկերների, ովքեր Եվրոպայից եկել էին նոր վարչակարգի հաստատումից անմիջապես հետո և երկրում տարածում էին խառնաշփոթ»: Խոսքը Նազրմի և Բ. Շաքիրի մասին էր: Թալեաթը նրանց անվանում էր քենոտ, բռնապետական բնավորությամբ անձինք, ովքեր դատապարտում ու հետապնդում էին ցանկացած մարդու, ով իրենց հետ համաձայն չէր: Նման մարդկանց առկայությունը կենտկոմում նրանց դարձրել էր տիրապետող ուժ, որի առաջ հաճախ հաշվետու էին լինում անգամ Էնվերն ու Թալեաթը, վկայում է Պ. Մետեռնիխը: Նա Էնվերին ու Թալեաթին անվանում է «անզոր» կենտկոմի «մոլեռանդ որոշումների» ընդունման հանդեպ: Թալեաթի կենսագիր Թ. Զավդարը նույնպես նրան համարում է թեբահավատ թուրքիզմի հանդեպ, ով ավելի հակված էր օսմանիզմին. Թալեաթը Գյոքալփին համարում էր երազող, սակայն հանուն թիմային խաղի նրան չէր առարկում:

Թե օսմանիզմն ու իսլամիզմը և թե, առավել ևս, թուրքիզմը հասարակությանը պարտադրելու գործում առաջնությունը տրվում էր ոչ թե քարոզչությանը, այլ վարչական-բռնի միջոցներին և այդ գործում կառավարման համակարգը և, ամբողջությամբ վերցրած, վարչակազմը ոչ միայն առաջատար, այլև թելադրող, կազմակերպող ու գործադրող դեր էին խաղում: Ձևավորվեց անգամ իրավական հիմք՝ ոչ թուրք անհատի կատարած հանցագործության հեղինակը միայն ինքը, այդ անհատը չէր, այլ նաև ազգությունը, որին նա պատկանում էր, որն ի վերջո հանգեցրեց այս կամ այն հպատակ ազգին հանցագործ հռչակելուն: Երիտթուրքերի թուրքիստական քաղաքականությունը համիդյան ձեռագիր ուներ՝ գրիչի մի շարժումով կամ դեմքի մկանախաղով հաշվեհարդարի ենթարկել ամբողջ ազգության կամ էթնիկական խմբի: Ոչ թուրքին ու ոչ մահմեդականին սպանելը, նրա նկատմամբ բռնություններ գործադրելը ժամանակի ընթացքում թուրքի հոգեբանության, անգամ գիտակցության մեջ դադարեց որպես հանցագործություն ընկալվել ու վերածվեց պարտականության, խրախուսանքի ակնկալությամբ կատարված գործողության:

Չնայած երիտթուրքերից շատերն ազատ էին կրոնական նախապաշարմունքներից և ի տարբերություն Աբդուլ Համիդի «թաքուն անհավատության», բացահայտ անհավատացյալներ էին, բայց օգտագործում էին մահմեդական կրոնի բոլոր հնարավորությունները թուրքացման քաղաքականությունն առաջ տանելու համար: Զավեշտ է, բայց իրողություն՝ նրանց շատ հաճախ հաջողվում էր այս կամ այն էթնիկական խմբին թուրքացնելու կամ ոչնչացնելու գործում ստանալ դրանց քաղաքական, անգամ հոգևոր որոշակի շրջանների աջակցությունը նվազագույն զիջումների միջոցով, ոչ քիչ դեպքերում նաև առանց որևէ զիջման: Երիտթուրքերը չէին թաքցնում արհամարհանքը ոչ թուրք և ոչ մահմեդական ժողովուրդների հանդեպ: Թե թվով, թե զարգացման մակարդակով իրենցից գերակշիռ արաբներին ինքնուրույն էթնոս չէին համարում: «Մեծ Թուրանի» ստեղծումը վերածվեց նշանաբանի, բայց ոչ այնքան որպես գործնական քաղաքականության, որքան Օսմանյան կայսրության խորտակվող նավը փրկելու միջոցի:

Գործնականում, գրում է Լևոն Վարդանը, օսմանիզմի ու թուրքիզմի, իսլամիզմի ու թուրքիզմի միջև տարբերությունը շատ ավելի թուրքացման եղանակների մեջ էր, քան նպատակի՝ կայսրությունը տեսնել միատարր թուրքական: «Հայկական հարցը մեկընդմիշտ լուծելու համար պետք է հայերին անհետացնել որպես ժողովուրդ, կրոնական հավաքականություն և Օսմանյան կայսրության սահմաններում իր գոյությունը զգացնող ազգություն»[165] ձևակերպման տիրահռչակ հեղինակ Քյուչուկ Սայիդը օսմանցիության և թրքության միջև տարբերություն չէր դնում:

Օսմանցիությունը օրենսդրական սահմանում ստացավ 1876թ. սահմանադրության մեջ: Այդ սահմանումն է. Բոլոր մահմեդականներն ու ոչ մահմեդականներն օրենքի առաջ հավասար

165 Նազլեան Ցովհ. Արք. Ցուշեր, հ.Ա, Բեյրութ, 1960, էջ 104:

են, օգտվում են կյանքի, պատվի, արժանապատվության և ունեցվածքի անձեռնմխելիության իրավունքից, արգելվում է վարչական որևէ միջոցառում (բանտարկություն, գույքի օտարում) առանց դատարանի վճռի: Հարկերն ամենուրեք պետք է լինեն նույնը՝ ելնելով տվյալ անձի կարողություններից, կաշառակերությունն արգելվում է[166]: Սակայն օսմանիզմի այս սկզբունքներն, առաջին հերթին, անհասկանալի, անընդունելի էին թուրքի համար: Նա չէր ուզում դառնալ ազգային կոնգլոմերատի տարր, թեկուզ գլխավոր բաղադրիչ: Նա գտնում էր, որ իսկական օսմանցին թուրքն է, միմիայն թուրքը, իսկ հպատակ ժողովուրդները հաշվի առնվել չէին կարող:

Ըստ այդմ էլ, Օսմանյան կայսրությունը «ազգային» դարձնելու համար գլխավորը ոչ թե գաղափարախոսությունն ու քարոզչությունն էին, այլ ուժը: Այդ էր թելադրում նաև թրքության պատմական փորձը: Ս. Թեհլիրյանին դատող գերմանական դատարանն արձանագրեց. «Հին թուրքական կայսրությունը և դրա բոլոր նվաճումները հանգում են զինվորական ուժի գաղափարին»[167]:

Թուրքական ռազմատենչությունը և դեպի Արևելք ձգտումը նրա շատ գործիչներին սիրահարեցրին 1839թ. Հունգարիայում լույս տեսած "Turanische Gesellschaft" գրքին: Պատահական չէ, որ Բալկանյան պատերազմներում խայտառակ պարտությունից հետո թուրքական քարոզչական բոլոր միջոցները, մասնավորապես «Թուրք Ցուդուն», «Հիլալը Ահմեդը», «Իկդամը», «Թանինը», «Թերջումանը Հաքիքաթը», «Թասվիրի Էֆքիարը», «Լևանդ Հերալդը» թուրանիզմը պայքարի դրոշ դարձրեցին: Միաժամանակ ակնհայտ է, որ թուրքական երեք գաղափարախոսություններն արտաքուստ էին իրարից սահմանազատված և հակադիր, իրականում դրանք ծառայում էին նույն նպատակին: Եթե օսմանիզմը հետապնդում էր հպատակ ժողովուրդների ազգային իղձերը, ապա թուրքիզմը՝ այդ իղձերը կրողին խեղդելու նպատակ, եթե օսմանիզմը լուծում էր ազգայնամոլական, ապա թուրքիզմը՝ մեծապետական խնդիրներ, չնայած երկրորդի ծնունդը պայմանավորված էր առաջինով, քանի որ օսմանիզմը հող պատրաստեց, որպեսզի թուրքիզմը առաջին պլան դուրս գար: Նաև աչքաթող չպետք է անել այն իրողությունը, որ թուրքական ոչ մի գաղափարախոսություն «զտարյուն» չէր, այլ պարունակում էր խառնուրդ սկզբունքներ: Դրանցում կրոնն ու աշխարհիկությունը, հավատն ու քաղաքականությունը, ռասան ու ազգը, ազգայնությունն ու քաղաքացիությունը օգտագործված էին խառը, երկիմաստ, պատմական պայմանների պահանջներին համապատասխան: Թերևս այդ էր պատճառը, որ անհավատ երիտթուրքերը արագ մոռացան իրենց հակակրանքը մահմեդականության հանդեպ և սահմանադրությունը դրեցին Կորանի պաշտպանության ներքո:

Շահան Նաթալին նույնպես նկատել է, թե համաիսլամականության, համաօսմանցիության և համաթրքության միջև տարբերությունները շատ ավելի ձևի, քան բովանդակության մեջ էին: Համաթուրանականությունը «փաստորեն և վճռականորեն նոյն և ավելի ահավոր գետնի վրայ կանգնած է հայ ժողովրդի կեանքի տեսակետեն»: Թուրքիզմը հայերի համար նշանակում էր, «Անատոլիայի միացումը Ատրպեճանի հետ Հայաստանի Դիակին վրայով»[168]: Թուրքիզմի ու համաթրքական քարոզչությունները կառուցված էին այն հիմքի վրա, թե թուրքական ռասան ամենաբարձրն է, այսինքն՝ թուրքերը ամենախիզախ, ամենաընդունակ և ամենախելոք էթնոսն են[169]: Թուրքի ռասայական առավելության գիտակցությունը մարդկանց ներարկվում էր մոր կաթի հետ, դպրոցում, ողջ կյանքում:

Եթե պանիսլամիզմի նպատակը մահմեդական ժողովուրդների քաղաքական ղեկավարության մենաշնորհին տիրանալն էր, ապա պանթուրանիզմի նպատակն էր, մի կողմից՝ միավորել թուրք-թաթարական ժողովուրդներին, իսկ մյուս կողմից՝ Թուրքիայի քրիստոնյաներին ուծացնել կամ ոչնչացնել: Այդ նպատակով Կ. Պոլսում հատուկ ընկերություն հիմնադրվեց: Պանթուրանիզմը ողողեց թուրքական մամուլի էջերը: Եթե 1900թ. մահմեդական աշխարհում լույս էին տեսել շուրջ 200, 1906թ.՝ 500, ապա 1914թ. ավելի քան 1000 անուն թուրքական և պանթուր-

166 Uepester D. The Turkey av Ataturk, 1939, p.21.

167 Դատավարութիւն, Թալեաթ Փաշայի. Սղագրություն, Վիեննա, 1921, էջ 187:

168 Շահան Նաթալի Թուրքերը և մենք, Եր, 1992, էջ 30-31:

169 Nuri C. Itlihat-I islam. Ist., 1912-1913, s. 11.

քական գրքեր: Մշտական կապեր հաստատվեցին մահմեդական երկրների միջև, գործակալների, հաջիների, քարոզիչների, ճանապարհորդների, առևտրականների, փոստի միջոցով [170]: Այս գործում առանձնապես մեծ էր մահմեդական հոգևորականության դերը, ովքեր երկրից երկիր էին անցնում, թափանցում հասարակության բոլոր խավերը, բորբոքում զանգվածների մոլեռանդությունը: Ծպտված առևտրականի, քարոզչի, ուսանողի, հեքիմի, բանվորի, մուրացկանի, ֆահիրի, լարախաղացի, հոգեկան հիվանդի անվան տակ այդ գործակալներն ամենուրեք լավ ընդունելություն էին գտնում ուղղափառներից և հուսալիորեն պաշտպանվում էին: Առաջին աշխարհամարտի նախօրյակին նրանց քարոզչության գլխավոր թեման Հյուսիսային և Հարավային Կովկասները Օսմանյան կայսրությանը միացնելուն աջակցելն էր:

Թուրք պարագլուխները մահմեդական աշխարհի արթնացման անհրաժեշտության վրա էին պնդում: Նրանք գտնում էին, որ թուրքական ժողովուրդների սեփականությունը պետք է դարձնել այն գիտակցությունը, թե նրանց ապագա բարեկեցության ու անվտանգության երաշխիքը օսմանցի թուրքերի հեգեմոնիան է:

Համախալամիզմից անցումը համաօսմանցիությանը միջանկյալ նշանակություն ուներ: 1900-ական թվականներից Ե. Աքչուրան ու մյուս պանթուրքիստները նկատել էին, որ իրականը ոչ թե օսմանցի, այլ թուրք ազգն է: «Թուրք ազգը և թուրք հայրենիքը, անկախ Անտոլուն նախ, և յետոյ միացած Ազրպեճանը, միայն կրնայ և տերն ըլլայ ինքնիրեն...»: Սահմանադրության առաջին ժամանակների ընձեռած հնարավորություններն ըստ ամենայնի օգտագործվեց թուրքիստական գաղափարները զանգվածներին հասցնելու համար: Հաջողվեց կարճ ժամանակում իրենց ենթարկել Իթիհադի Կ. Պոլսի կազմակերպությունը և գրոհել այդ կուսակցության ընդհանուր կենտրոնի վրա:

Գասպրինսկին, Հուսեին Զադեն, Աղաևը, Աքչուրան օսմանյան մայրաքաղաքում ձևավորեցին քարոզչական և կազմակերպչական ուժեղ կենտրոն, ծնվեց առաջին թուրքական օջախը: Փարիզում լույս տեսնող «Մուսուլման» հանդեսի խմբագիր Մուհամմեդբեկովը 1909թ. Կազանում հանդիպել էր երիտասարդ մի էմիսարի, որն ասել էր. «Հասել է ժամանակը մտածելու Թուրքիան և Պարսկաստանը քաղաքական մի ամբողջության մեջ միավորելու մասին: Այդ սուրբ նախագիծը իրականացնելուց հետո մահմեդական մյուս պետություններն, անշուշտ, կցանկանան կամովին մտնել մահմեդական նոր, մեծ կայսրության կազմի մեջ: Այն ժամանակ, ահա, մենք պայքարի մեջ կմտնենք քրիստոնեական պետությունների, հատկապես անիծյալ Ռուսաստանի հետ, և մեր ոխը կհանենք նրանցից...»: Մուհամմեդբեկովն ավելացնում է, որ երիտթուրքական կառավարությունը «աշխատում է ռուս մահմեդականների շրջանում... երիտթուրքական ոչ մեծ կոմիտեները տարածված են ամբողջ Անդրկովկասում, Կովկասում և Պովոլժիեում...»[171]: Խնդրի լուծման համար Ռուսաստանը պարզապես ողողել էին էմիսարներով ու գործակալներով, որոնք դեռ մինչև առաջին աշխարհամարտը տենդագին աշխատանք էին տանում մահմեդականների շրջանում: Թե այդ գործողությունն ինչ ծավալներ էր ընդունել, վկայում են Կովկասի փոխարքայի գրասենյակի հատուկ բաժնի արխիվային նյութերը: 1911թ. հունվարի 30-ին Ելիզավետպոլի նահանգապետը հայտնում է, որ Նուխի քաղաքում ձերբակալվել է Թուրքիայի քաղաքացի Ջմշուտ Ալի Օղլուն, որն արդեն ութ ամիս կեղծ փաստաթղթերով թափառում է Կովկասում և «հանդիսանում է այն խոջաներից մեկը, ովքեր ուղարկվում են Ռուսաստան պանիսլամիզմի քարոզչությամբ զբաղվելու համար»[172]: Նույն տարվա ապրիլին, Վորոնցով-Դաշկովին զեկուցում են, որ Շամախիում, Աղդամում, Գեոկչայում, Բաքվում, Ելիզավետպոլում, Շուշիում, Երևանում և մի քանի այլ քաղաքներում գործում են սպայական ուսումնարաններ, որոնցում «մահմեդականները դաստիարակվում են պանիսլամիզմի ոգով.... Ձգտում են, որպեսզի Կովկասի մուսուլմանները թուրքերի հետ ընդհանուր լեզու ունենան, իմանան նրանց բարքերն ու սովորությունները... հոգով ու մարմնով դառնան թուրք և նախապատրաստվեն մտնելու Թուրքիայի հպատակության տակ»[173]: Այդ հաստատությունները ղեկավարվում էին «Փիլիզ» անունով ընդհանուր կենտրոնից: Նշված զեկույցներում թուրքիզմ ու թուրանիզմ բառերի փոխարեն օգտագործվում էր պանիսլամիզմը, չնայած դրանց բովանդակությունը պանթուրքական էր: Պատճառները հավանաբար երկուսն էին. ա. Դեռևս լայն տարածում ուներ պանիսլամիզմը, պանթուրքիզմը նոր-նոր էր քարոզչական քայլեր կատարում, բ. Պանիսլամիզմը կովկասյան մահմեդականներին շատ ավելի հասկանալի էր, քան պանթուրքիզմը:

1912թ. հունվարի 14-ի թվագրությամբ մի տեղեկագրում նշվում է, որ «Կարսում Թուրքիայի գլխավոր հյուպատոս Հասան բեյը գլխավորում է պանիսլամական քարոզչությունը և տեղեկություններ է հավաքում ռուսական զորքերի մասին և այդ գործունեության համար մեծ գումարներ է ստանում»[174]: Փետրվարի 6-ի տեղեկագրում նշվում է Թիֆլիսի Թուրք-Թաթարական տպարանատիրոջ «կատաղի պանիսլամիստ» լինելու մասին, նաև այն մասին, որ Բաքվի աղրբեջանցի գործարանատեր Սուլեյմանը Մեքքայից վերադառնալիս հանդիպել է երիտթուրք ղեկավարների հետ[175]: Մի ուրիշ տեղեկագիր հայտնում է, որ Պետրովսկիի «Իսլամիա» հյուրանոցում բնակվում է «պանիսլամիզմի քարոզիչը», որը թուրքական էմիսար է[176]:

1913թ. փետրվարի 13-ին տեղական իշխանությունները տեղյակ պահվեցին, որ Իթիհադի երկու անդամներ անասունի գնորդների փաստաթղթերով անցնելու են սահմանը՝ «նպատակ ունենալով նվիրատվություններ կազմակերպել հօգուտ սրբազան պատերազմի»[177]: Բացառիկ հետաքրքիր զեկույց է: Այն վկայում էր, որ սրբազան պատերազմի նախապատրաստությունը սկսվել էր առնվազն 1913թ. սկզբներին: Մի շրջաբերականում ասվում է, որ Թուրքիայի բանակի գլխավոր շտաբի երկու սպա «լազերի տարազով Օլթիի մոտ սահմանն անցնելով գնում են Թիֆլիս ռուսների դեմ քարոզչություն տանելու»[178]: 1913թ. մայիսի 13-ին հայտնում են, որ Կ. Պոլսից Բաթումի են հասել 15 մարդ՝ թուրքական հատուկ ծառայության աշխատողներ, որոնց մի մասը մեկել է Սուխումի, Օդեսա, իսկ մյուս մասը՝ Թիֆլիս, Բաքու, Դաղստան[179]: Քութայիսում թուրքերը մեծ քանակությամբ ծխախոտի թուղթ են վաճառել հօգուտ ռազմանավերի կառուցման ֆոնդի[180]: Կ. Պոլսի պաշտոնական շրջանները Ուրմիայի քուրդ նշանավոր բեկերին հանձնարարում են «ազդել հպատակների վրա, որպեսզի Ռուսաստանի դեմ պատերազմի դեպքում հանկարծակի հարձակվեն Պարսկաստանում տեղավորված ռուսական զորքերի վրա»: Նամակի հեղինակը խոստանում է զենքով օգնել[181]:

Բեռլինում եղած ժամանակ Սազոնովը Վիլհելմ 2-րդին ասել էր, թե պանիսլամական քարոզչությունը վերածվել է մարտնչող շարժման, ինչը չի կարող չանհանգստացնել Ռուսաստանին: Նա ցարին գրում է՝ կայզերի հետ «իմ զրույցի ամենահետաքրքիր մասը մտքերի փոխանակումն էր պանիսլամիզմի մասին... Աշխատեցի նորին մեծության ուշադրությունը հրավիրել պանիսլամական քարոզչության զարգացման վտանգավորության վրա, որը գալիս է Կոստանդնուպոլսից և աստիճանաբար ընդգրկում է բոլոր այն երկրները, որոնք մահմեդական բնակչություն ունեն... Այն պահից, երբ պանիսլամիզմի քարոզչությունը քաղաքական բնույթ ընդունեց... մեր վերաբերմունքը դրա նկատմամբ փոխվել է... իսկ «մահմեդականների հովանավորյալի» դերում կայզերի հանդես գալը չի կարող չմեկնաբանվել որպես այդ քարոզչության խրախուսում»[182]:

---

170 Stoddart P. The Ottoman Government and the Arabs, 1911-1918, Michigan, 1963, p. 78.
171 ЦГАОП СССР, ф. 102, оп. 19102, д. 74, л. 18-20.
172 Վրաստանի ԿՊԱ, ֆ.157, ց.1, գ.201, թ.16:

173 Վրաստանի ԿՊԱ, ֆ.157, ց.1, գ.211, թթ 37-38:
174 Նույն տեղում, ֆ.4, ց.1, գ.57, թ.1:
175 Ն. տ., ֆ. 9, ց.1, գ.57, թ.9:
176 Ն. տ., ֆ.157, ց.1, գ.201, թ.60:
177 Ն. տ., գ.266, թ.40:
178 Ն. տ., թ.109:
179 Ն. տ., թ. 155:
180 Ն. տ., ֆ.10, գ.312, թ.32:
181 Ն. տ., ֆ. 157, ց.1, գ.312: Նման բովանդակություն ունեն նաև ֆ.13, ց.27, գ.3602, թթ.91-92, ֆ.13, ց.27, գ.3265, թ.14, ֆ.157, ց.1, գ.312, թ.42, 46, 51,58, 67-68 և այլն:
182 Красный архив, т. III, 1923, стр.5-6.

նդրության հերթական դրսևորումն օգտագործվեց հակահայկական հարձակում իրականացնելու համար՝ Կ. Պոլիսն այն հռչակեց համահայկական ապստամբություն: Իրականում կատարվել էր հետևյալը: 1913-ին Երզնկայի Սյուրմենենց թաղում, Անթառենց Սարգսի տանը հայերը փորձում էին ռումբ պատրաստել, սակայն անզգուշության պատճառով մի ռումբ պայթում է՝ հօդս ցնդեցնելով շենքը. զոհվում են երեք, վիրավորվում ավելի շատ հայեր: Զինվորներն ու ոստիկանները շրջապատում են շենքը: Սկսվում են ձերբակալություններ, ծայր է առնում նոր խժդժություններ հայերի շարք հայերի դեմ: Հակահայկական արշավը գլխավորում էին մոլլաները: Իշխանությունների թողտվությամբ սկսվում է հայերի զանգվածային թալան ու սպանություններ: Պոլսահայ թերթերից մեկը տեղեկագրում է. «Հուլիսի 25-ի գիշերը Ղալաթուշ գիւղին մէջ քանի մը քիւրտեր հայու մը այգիին պահապան կը վիրավորեն և ունեցածը կը կողոպտեն»: Կելենցիկ գյուղում օրը ցերեկով թալանում են մի հայի տուն, նորից ծայր է առնում ավազակությունը ճանապարհներին:

Մթնոլորտն ավելի ու ավելի էր շիկանում[222]:

Հաղթողները՝ երիտթուրքերը, արմատական փոփոխությունների դեմ էին, նրանց պայքարը սահմանադրական միապետության համար էր, այսինքն՝ ցանկանում էին սուլթանի հետ կիսել իշխանությունը: Հուլեթլաչեն գրում է, որ երիտթուրքերի իշխանության գալուց հետո «փոխվեցին միայն մարդիկ, իսկ համակարգը մնաց անփոփոխ...»[223]: Ահմեդ Ռիզան հայտարարեց. «Ինչի ձգտում էինք, հասանք՝ ստացանք սահմանադրություն: Սրանից հետո սուլթան Համիդը մեզ շատ պետք է: Նա կարող է մեզ մի շարք ծառայություններ մատուցել լուծելու ներքին և արտաքին քաղաքականության խնդիրները, քանի որ անգերազանցելի դիվանագետ է և ունի բազում անձնական բարեկամներ Եվրոպայի բոլոր ղեկավար շրջաններում: Մենք պետք է օգտվենք նրա հեղինակությունից ու հնարավորություններից: Նա մեզ պետք է»[224]:

Երկար ժամանակ չպահանջվեց համոզելու, որ իշխանության եկած երիտթուրքերը ոչ միայն պահպանում էին սուլթանական վարչակարգի ինստիտուտները, այլև մեծապետական այլամերժ քաղաքականությունը: Հայկական հարցում երիտթուրքերի քաղաքականությունը Աբդուլ Համիդի քաղաքականության շարունակությունն ու ծայրահեղ արմատականացումն էր: Անունով նրանք շարունակում էին օսմանացման քաղաքականությունը, իսկ իրականում ազգային հավասարության մասին դատողությունների ու կարգախոսերի աղմուկի տակ բացառում էին ազգային հարցի գոյության իրավունքը, սկզբունք հռչակելով. «Թուրքիայում հավասարության մասին միայն այն ժամանակ կարելի է խոսել, երբ բոլոր տարրերը կձուլվեն, օսմանցի կդառնան»[225]: Արշակ Չոպանյանը նկատում է՝ երիտթուրքերը չեն ճանաչում Թուրքիայի ոչ թուրք ժողովուրդների իրավունքները, նրանք սահմանադրությունն օգտագործում են Հայկական հարցը վերջնականապես թաղելու համար[226]: Խնդրին հետաքրքիր մոտեցում է հանդես բերում Հ. Գիբբոնսը. «Հենց սկզբից երիտթուրքերը հայ տարրը համարեցին լուրջ վտանգ իրենց համար: Նրանք սկսեցին հայերին հալածել ճիշտ այնպես, ինչպես այդ անում էր Աբդուլ Համիդը ... Սահմանադրությունը, որին հայերը ողջունեցին որպես իրենց քաղաքական ազատության արշալույս, գրեթե անմիջապես վերածվեց նրանց մահվան դատավճռի»: Մինչդեռ «ամբողջ կայսրությունում ոչ ոք այնպես սրտաբուխ չընդունեց սահմանադրական վարչակարգ մտցնելը, ոչ ոք երիտթուրքերին այնպիսի նվիրված աջակցություն ցույց չտվեց, ինչպես հայերը ... Նրանց միակ սխալն անկեղծ ուրախությունը և հուզումնալի հավատն էր, որ շատ բացահայտ էին արտահայտում ... Նրանք երիտթուրքերին հավատում էին, քանի դեռ իրենք՝ երիտթուրքերը, չխորտակեցին այդ հավատը»[227]: Թուրք պաշտոնատարներից մեկը հայերին խորհուրդ տվեց. «Անտեղի ու ավելորդ

222 Ստեփանյան Գ., նշվ. աշխ., էջ 517-518:

223 **Хаджетлаше Мухамед -бей.** Убийца на троне: Записки начальника тайной полиции Турции. Петроград, 1918, стр. 7.

224 **Սերոբյան Մ.** Հայկական մղձավանջ, Բոստոն, 1916, էջ 42:

225 Նույն տեղում:

226 «Անահիտ», 1908, թիվ 1-4:

227 **Гиббонс Г. А.** Последние избиения в Армении. Петроград, 1916, стр. 18-22.

են ցույցերը և ուրախությունները: Մենք ձեզնից լավ ենք ճանաչում սուլթանին: Նա ֆերմաներ է հրապարակում մեզ ուրախացնելու համար: Իսկ դուք գիտե՞ք, թե ում ուրախությունն է տևական՝ մե՞րը թե ձերը»[228]: Իշխանության տիրանալուց քիչ անց «երիտթուրքերի գործունեությունը ցրեց անգամ պանօսմանական քարոզչության պատրանքը»: Նրանք կանգնեցին բացահայտ ազգայնամոլական, մեծապետական ուղու վրա՝ որոշ ժամանակ հավատարիմ մնալով պանիսլամիզմին: Այդ նկատի ունենալով՝ գերմանացի թուրքագետ Պ. Լաննեն գրում է. «Երիտթուրքերն իշխանություն ուզում էին միայն մի բանի համար, որպեսզի իրականացնեին պանիսլամական արմատական ծրագիր»[229]:

Նկատի ունենալով երիտթուրքերի, իթիլաֆի և ՀԾԴ 1908թ. տեղի ունեցած բանակցությունները, Ջեմալը նշում է, թե իթիլաֆն «ավելի մեծ արտոնություններ էր պահանջում» հպատակ ժողովուրդների համար, քան դաշնակցությունը: ՀԾԴ,– շարունակում է նա,– «ցանկանալով պաշտպանել օսմանյան սահմանադրությունը, գործում էր Միություն և առաջադիմություն կուսակցության հետ համերաշխ»[230]: Արմեն Գարոն (Բաստրմաջյան) վկայում է. «Օսմանյան սահմանադրության օրերուն, երբ մենք՝ հեղափոխականներս, Կ. Պոլիս կվազեինք իրարու հետևէ, Անդրանիկ ամենուս հետ կը վիճեր, կը խրատեր ու կը թելադրեր, որ Կ. Պոլիս չերթանք և կրսեր. «Մեզի բոլորիս համար թուրքերը մեծ ու խոշոր թակարդ մը լարած են և մեզ ամենքիս ալ մեջը պիտի ձգեն», բայց մենք անտեսեցինք անոր խրատները... 1909թ. Պոլսում երեք օր լինելու ժամանակ Անդրանիկը մեզ ասաց. «Մեծ թակարդ մը կա, զգույշ եղէք, և այն երիտասարդներն ալ, որ զինվոր տվիք, այդ պատրվակին տակ պիտի կոտորվին ամենքն ալ»: Լուսահոգի Ակնունին ըսավ. «Անդրանիկ ջան, ի՞նչ հոռետես ես, քիչ մըն ալ լավատես եղիր, այլևս ոչ մեկ հայու քիթը պիտի արյունի»: Անդրանիկ պատասխանեց. «Այսքան երկար խոսելե ետք, երբ տակավին համոզված չէք խոսքերուս, խերը տեսեք ձեր Էնվերին ալ, ձեր Թալեաթին ալ »... Այս խոսքերեն 140 օր անցած էր, երբ երիտթուրքերն Ատանան կոտորեցին: Ատանայի կոտորածին Անդրանիկը Եգիպտոսեն այդպես գրած էր Ակնունիին. «Ահա իմ հոռետեսությունս և ձեր լավատեսությունը, երբ ժամանակը գա, ձեր Թալեաթն ու Էնվերը ձեզ ալ պիտի կոտորեն»»[231]:

Նույն՝ 1909թ. հնչակյանների 6-րդ համագումարում (Կ. Պոլիս) Փարամազն ասաց. «Պետք չէ խաբվիլ ժեոն թուրքերու այսօրվա մեղրածոր խոսքերեն, որոնք կըլլան Հայ յեղ. կուսակցությունները քնեցնելու և անոնց ուժը տկարացնելու համար: Ժեոն թուրքերն իրենց օսմանականութեան գաղափարականով ավելի վտանգավոր են հայութեան համար, քան սուլթան Համիդն էր: Լրիվ հավատալ անոնց խոսքերուն և զանոնք ուժավորել, պիտի նշանակե մեր ձեռքով հարվածել հայութեանը»[232]: Եղան նաև ուրիշ հայեր ու քաղաքական ուժեր, ովքեր չհավատացին երիտթուրքերին ու նրանց հեղափոխությանը: «Սահմանադրութենեն ետք մենք, մեր անցեալ քսան տարիներու դառն փորձութեան տված դասերով, բնավ երբեք հավատք չունեինք թուրք կառավարութեան անկեղծութեան վրա, կփափագեինք, որ մեր կազմակերպութեան բոլոր գաղտնիքները չհաղորդվեին երիտասարդ թուրքերուն. ընդհակառակն, մենք ավելի պետք է հետամուտ ըլլայինք իմանալու անոնց գաղտնիքները: Մենք պետք է մտահոգվեինք մեր ինքնապաշտպանութեան խնդրով»[233]: Այդ ավելի քան բնական էր նաև այն պատճառով, որ հեղաշրջումից հետո երիտթուրքերը դեն նետեցին իրենց հեղափոխական կարգախոսները, ինչը Նազարը ներկայացնում է հետևյալ կերպ. «Երբ բորբոքվեց հեղափոխությունը և հռչակվեց սահմանադրությունը, կոմիտեն հասկացավ, որ իր հեղափոխական դերը վերջացած է...»[234]: Ա. Ռիզան

228 **Կիւլբենեան Յակոբ Վեր.**, Հայուն հրաշալի գոյատևումը և յառաջադիմութիւնը անցյալի և ներկայի ապագայ հեռատեսիլով, Զիկագո, 1970, էջ 19:

229 **Lane P.**, Armenien: Der erste VÖlkermord des 20 JH, s. MÜnchen, 1977, s. 101.

230 Ջեմալ փաշա, նշվ. աշխ.:

231 **Ժամկոչյան Ա.** Անդրանիկ կը պատասխանե իր հակառակորդներուն, Փարիզ, 1945:

232 **Սիրվարդ Ե.** Փարամազ, Փարավիտենս, 1954, էջ 72-73:

233 **Բդեյան Ս., Բդեյան Մ.** Հարազատ պատմութիւն Տարոնոյ, Կահիրե, 1962, էջ 263:

234 **Алиев А. А.** Революция 1908г. Турция, см. сборник "Пробуждение Азии", Москва, 1935, стр.44.

նույնիսկ վտանգավոր էր համարում հեղափոխության հետագա խորացումը, քանի որ դրանից կօգտվեին մեծ տերություններն ու կայսրության անջատողական ուժերը: Աբդուլ Համիդին խայտառակության սյունին գամողներն աստիճանաբար վերածվեցին նրան փառաբանողների: Քաղաքական նոր ռեակցիան ավելի քան հավանական էր և այն չուշացավ: Երիտթուրքերը նախ իրենց «եղբայրներից»՝ հպատակ ժողովուրդներից, պահանջեցին հանձնել զենքերը: Դաշնակների հորդորանքով հայերի մի մասը զենքերը հանձնեց և կամ էժան գնով վաճառեց քրդերին ու թուրքերին: «...Հին գործիչ ընկերներեն շատերը, իրենց արեան գնով ձեռք բերած զենքերն այլևս անպետք նկատելով, սկսան էժան գնով զանոնք ծախել թուրքերուն և քուրտերուն և անոնց փոխարեն՝ իրենց ունեցած գոմեշներուն, եզներուն, ոչխարներուն վրա նորեր ավելցնել և այդ կողմեն մրցիլ իրարու հետ»[235]: Քրդերն, արաբներն ու մակեդոնացիները զենք չհանձնեցին, արաբները կառավարության պահանջով վերացրին իրենց համիդիե գնդերը, իսկ քրդական համիդիեները պահպանվեցին և միայն վերանվանվեցին՝ իթիհադի զորամիավորումներ. 65 գնդերում միավորված 30 հազար քուրդ թաքուն վերազինվեց հիմնականում պետության հաշվին: Երիտթուրքերը հետ կանչեցին Պարսկաստան փախած քուրդ ցեղապետերին և վերականգնեցին նրանց արտոնությունները: Սեբաստիայի վալի Մուամմերը երիտթուրքական իշխանությունների հաջողությունն էր համարում այն, որ «եթե նախկինում օտարերկրացին կայսրությունում ճամփորդում էր ժանդարմների ուղեկցությամբ, ապա ներկայումս ... այդ կարող է անել առանց պահապանի, բայց անպայման ֆեսով: Թուրքիայի ներսում եվրոպական գլխարկից հրաժարվելն արվում էր ցուցադրելու համակրանք թուրք ժողովրդի, ինչպես նաև քաղաքական վստահություն երիտթուրքերի հանդեպ»[236]: Իթիհադին հաջողվեց նաև իմանալու դաշնակցության գաղտնի ծրագրերն ու պլանները, կուսակցության կառուցվածքը, ղեկավար կենտրոնները, զենքի պահեստների տեղերը, արխիվները, կազմակերպությունների և դրանց անդամների ցուցակները, ինչը հեշտացրեց հաշվեհարդարի գործը:

Գավառներում հայերի հարստահարությունները գնալով ավելի ու ավելի համապարփակ էին դառնում: Մ. Իզմիրլյանը 1910թ. փետրվարի 16-ին գրեց. «Անուշադրության ենք մատնել բոլոր կողմերից պատրիարքարան հասած տեղատարափ գրություններն ու խնդրագրերը ... Մասնավորապես ուշադրություն չենք դարձրել գաղթականների (մուհաջիրների) չափ ու սահման անցկացրած արարքներին, պահանջներին և նույնիսկ սպառնալիքներին»[237]:

Երիտթուրքերը ազգերի հավասարություն հռչակելով, գործն ավարտված համարեցին և ոչինչ չարեցին այդ հավասարությունը կենսագործելու համար: Դրա փոխարեն բնում խեղդում էին ազգային ամեն մի շարժում: Բ. Կնունյանցի խոսքերով, երիտթուրքական հեղափոխությունը «երկիրը հասցրեց զորքի գերիշխանության, քաղաքական այնպիսի կարգի, երբ ազգը ենթակա է զինվորի հրամանին»[238]:

Նման պայմաններում ազգերի իրավունքները հարգելու մասին խոսք լինել չէր կարող: Պատահական չէ, որ օսմանյան խորհրդարանի նախագահ դարձած Ա. Ռիզան հայտարարեց. «Մենք արյան մեջ կխեղդենք անջատողական ամեն մի շարժում»: Դեռ ավելին, գործողության մեջ դրվեց թուրքիզմը, որը նշանակում էր հպատակ ժողովուրդների ձուլում կամ ոչնչացում: Հայերի հանդեպ աբդուլհամիդյան իսլամիզմի ու երիտթուրքական թուրքիզմի միջև էական տարբերություն չկար, նախ, որ երկու ուսմունքների հեղինակը նույն սուլթանն էր և երիտթուրքերի հայասպան գործողությունները ոչ թե «պատերազմական պայմաններում տեղի ունեցած ցավալի դեպքեր էին», այլ կես դար առաջ որդեգրված թուրքական քաղաքականության տրամաբանական շարունակություն և ավարտ: «Հայահոծ շրջաններում 1876, 1878, 1894-96, 1909թթ. զանգվածային ջարդերը,– գրում է Գ. Բարսեղովը,– ուղեկցվում էին ցեղասպանության փոխարկված ձևերով, ազգային խմբերի նպատակամղված ոչնչացմամբ, ընչազրկմամբ, ա-

235 Բդեյան Ս., Բդեյան Մ., նշվ. աշխ., էջ 263:
236 Голобородко И., նշվ. աշխ., էջ 81:
237 ԳԱԹ. ֆ. Ազատյան, Թ., գ. 2918:
238 Կնունյանց Բ. Ընտիր երկեր, Երևան, 1978, էջ 542:

հաբեկչությամբ, այս ամենի նպատակը մեկն էր՝ կազմակերպել հայ բնակչության զանգվածային արտաքսում և փոխել հայկական տարածքների բնակչության վիճակագրական դեմքը ... Առաջին հերթին սպանում էին երիտասարդ տղամարդկանց ու կանանց, իսկ երեխաներին բռնությամբ թուրքացնում էին...»[239]: Սասունի 1894թ. ջարդերը հետաքննող հանձնաժողովում անգլիական ներկայացուցիչ Շիպլեյը հայկական կոտորածները կոչում էր մարդաորս: «Հայերի որս է կազմակերպվել,– գրում է նա,– ինչպես պատահած կենդանուն են սպանում, այդպես էլ վարվել են հայերի հետ», որովհետև նպատակը «հայերի իսկական բնաջնջումն է...»[240]: Նույն բանը կատարվեց նաև Ադանայում և իր ապոգեյին հասավ 1914-1916թթ. կոտորածներում: Ռիչարդ Հովհաննիսյանը, անդրադառնալով այդ խնդրին, գրում է, որ հայերի հանդեպ Աբդուլ Համիդի ու երիտթուրքերի քաղաքականությունների տարբերությունն այն է, որ սուլթանը կոտորածներ էր կազմակերպում ձգտելով պահպանել պետության գոյություն ունեցող կառուցվածքը, որում հայերը մնալու էին իրենց տեղում, առանց նեխված ու իրենց ճնշող վարչակազմին ընդդիմանալու իրավունքի, մինչդեռ երիտթուրքերը, նույն բանը կատարում էին ավելի մեծ ծավալներով, որպեսզի «Status que-ի մեջ արմատական և հեռահար փոփոխություններ առաջացնեին և ստեղծեին reference-ի մի նոր շրջանակ, որում հայերը տեղ չէին ունենալու»[241]:

Քրիստոնյաների պարտադիր զինծառայության մասին օսմանյան խորհրդարանի ընդունած օրենքը թուրք զինվորականության շրջանում առաջացրեց սուր քննարկումներ : Մ. Շևքեթի կարծիքով քրիստոնյաները պետք է լինեին բանակի կազմի 20%-ը և օգտվեին նույն իրավունքներից, ինչ թուրք զինվորները և ունենային ծեսերի ազատություն: Նա նաև գտնում էր, որ ոստիկանության և ժանդարմների շարքերում ազգային փոքրամասնությունների առկայությունը լավագույն միջոց էր ջարդերի դեմ[242]: Երիտթուրքական պարագլուխները, չնայած համաձայն էին ընդհանուր զորահավաքին, բայց այդպես էլ չցանկացան կամ չկարողացան լուծել բանակում մահմեդականի և ոչ մահմեդականի իրավահավասարության հարցը: Երիտթուրքական թուրքիզմը նշանավորեց Հայոց ցեղասպանության երկրորդ ու վճռական փուլի իրականացումը:

Դաշնակցության կուսակցության պատգամավորները օսմանյան խորհրդարանում որպես կանոն պաշտպանում էին երիտթուրքական կառավարությանը: Այդ կուսակցության վերաբերմունքը շատ հստակ է արտահայտված Կ. Պոլսում 1910թ. լույս տեսած «Մեր հավատամքը» գրքում, որի հեղինակ Ատոմը լուտանքներ է թափում այն հայ գործիչների հասցեին, ովքեր Ադանայի ջարդից հետո հակված էին կարծելու, թե իթիհադը նոր աղետ է նախապատրաստում: «Կարող ենք ապահով ըլլալ, որ այլևս ամենածայրահեղ դժբախտության պարագային, գեթ միայնակ կոտորվելու չենք: Կոտորելու եկող հորդաներուն դեմ թուրք և հայ, իթիհադական և դաշնակցական միասին կանգնած պիտի դիմագրավեն վտանգը»[243]: Երբ Ադանայի կոտորածից հետո Վռամյանին հարցրին դրա կրկնվելու հնարավորության մասին, օսմանյան խորհրդարանի պատգամավորն ու ՀԾԴ նշանավոր գործիչը պատասխանեց. «Ոչ. ոչ: Այդ կրկնվել չի կարող: Ադանայի կոտորածը հին վարչակարգի մնացուկն էր: Իթիհադն ինքն էր վրդովված...»[244]: Դաշնակցության գլխավոր մարտավարությունը, շարունակում է նա, դաշինքն է իթիհադի հետ, քանի որ ի դերև են ելել բոլոր հույսերը, թե հնարավոր է մեծ տերությունների օգնությամբ բարեփոխումներ կիրառել: «...Մենք գործում ենք՝ հենվելով գլխավորապես երիտթուրքերի ձախ թևի վրա ... Թալեաթ բեյ, Ջավիդ բեյ, Հաջի Ադիլ բեյ, Նազրմ բեյ»: Մեկ տարի անց երբ խորհրդարանական ընտրություններում իթիհադը բացարձակ ապօրինություններ գործեց, Վռամյանն ասաց. «Թվում է, թե մենք սխալվել ենք: Մենք նրանց համարում էինք տգետ, բայց ազնիվ մարդիկ: Իսկ իրականում նրանք պարզապես քաղաքական ստախոսներ են...»[245]:

239 «Սովետական Հայաստան», 1988, թիվ 11:
240 АВПР, Посольство в Константинополе, д. 2672.
241 «Այլք», 04.05.1986:
242 «Մշակ», 06.05.1909:
243 Ատոմ Մեր հավատամքը, Կ. Պ., 1910, էջ 16:
244 Туркова А., նշվ. աշխ., էջ 76:
245 Նույն տեղում, էջ 80:

Ստախոսությունն ու երկերեսանությունը միշտ էլ զարդարել են թուրք պետական գործիչներին: Երիտթուրքերը նույնպես «զուրկ չէին այդ բարեմասնությունից»: Նրանց կառավարության վարչապետ Սայիդ Հալիմը հայ երեսփոխաններից մեկին համոզում էր. «Օսմանյան կայսրությունում միայն երկու ժողովուրդ կա, որ հավասարապես շահագրգռված են Թուրքիայի գոյությամբ, դրանք թուրքերն ու հայերն են»: Հայերը «մնացած բոլոր քրիստոնյաներից ավելի շատ տուժեցին հին վարչակարգի սառը դաժանությունից: Հայկական ջարդերի ահավոր նկարագրությունը հիշեցնում է հնադարյան կոտորածների ահավոր տարեգրությունը, երբ հաղթողները սպանում, տանջում, բռնաբարում և թալանում էին նույնպիսի սառնասրտությամբ, ինչին բոլոր գազաններից ամենաընդունակը մարդն է»[246]: Մինչդեռ այս վայրագություններից «վրդովված» իթիհադին բոլորովին այլ տրամադրություններ էին համակել: Կարինում Ռուսաստանի գլխավոր հյուպատոսը 1909թ. հունվարի 19-ին, այսինքն՝ դեռ մինչև Ադանայի ողբերգությունն, ահազանգեց, որ հայերի «նկատմամբ անվստահությունն աճում է ոչ թե օրեցօր, այլ ժամ առ ժամ: Միություն և առաջադիմություն կոմիտեն հայ գործիչների վրա գաղտնի հսկողություն է սահմանել և նահանգում իր լրտեսներին հանձնարարել է ռիթի դեպքում ոչ մի եռանդուն միջոցի առաջ կանգ չառնել...»[247]: Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների և, առաջին հերթին, հայերի ճակատագիրը սև խաչով էր կնքված: Նրանք օգնեցին երիտթուրքերին իշխանության հասնելու, որպեսզի կայսրությունում ժողովուրդների գոյության համար ստեղծվեր տանելի իրավիճակ: Սակայն սխալվեցին: Ամեն առաջադիմություն չէ, որ տանում է դեպի մարդասիրություն, ժողովրդավարություն և հավասարություն: Թուրք իշխողները հավատարիմ էին միայն իրենց ազգային ուխտին, այն է՝ կայսրության երկարակեցության գլխավոր պայմանը ազգային միատարրությունն է, որը լինելով ազգային քաղաքականություն, իր ամենաբացահայտ, ամենասանձարձակ և ամենամարդատյաց արտահայտությունը գտավ երիտթուրքերի գործունեության մեջ: Թուրքական քաղաքականությունը միշտ էլ աչքի է ընկել իր ցինիկ երկերեսանիությամբ, բայց այն, ինչ արեցին երիտթուրքերը, վեր էր նույնիսկ սուլթանների երևակայությունից:

Երիտթուրքական հեղաշրջման արձագանքը քրդական շրջաններում միանշանակ չէր: Եթե քուրդ առաջադիմական շրջանները ողջունեցին սահմանադրության հռչակումը, ապա վերնախավի և հետադեմ ուժերի վերաբերմունքը թշնամական էր՝ վախենալով, որ այն իրենց կզրկի ունեցած արտոնություններից: Թուրքիայում Անգլիայի դեսպան Ջ. Լոուիերը գրում է. «Քրդերը, բեյերն ու աղաները, բնականաբար, դժգոհ էին իրերի նոր վիճակից, որովհետև վախենում էին, որ Թուրքիայում կվերածվի օրենքի ու կարգուկանոնի վարչակարգ»[248]: Նույն միտքն է հաստատում ռուսական բանակի կովկասյան ճակատի շտաբը՝ քուրդը սկզբում երիտթուրքական հեղաշրջմանը վերաբերում էր անթաքույց թշնամությամբ, զգալով, որ շուտով վերջ կտրվի իր կամայականություններին[249]: Ցեղապետերից շատերը հրաժարվում էին ենթարկվել նոր վարչակարգին, իսկ «Համիդիե գնդերը, շարունակելով կողոպտել ժողովրդին, զինված դիմադրություն էին ցույց տալիս հարկահավաքներին, հայտարարելով, թե չեն ճանաչում ներկա կառավարությանը»[250]: Երբ 1908թ. սեպտեմբերին երիտթուրքական կառավարությունը որոշում ընդունեց Համիդիե գնդերը ցրելու և քրդերին կանոնավոր բանակ զորակոչելու մասին ու ձերբակալվեցին 90-ական թվականների կոտորածներն իրականացրած մի շարք քուրդ ցեղապետեր, միաժամանակ անհրաժեշտ համարվեց վերադարձնել հայերից բռնագրավված հողերը, վերացված հայտարարվեց խաֆիրություն անունը կրող ճորտային կախման համակարգը, քրդական մի քանի ցեղեր հարկադրված հեռացան Իրան: Սակայն երկար ժամանակ չպահանջվեց, որպեսզի քուրդ առաջնորդների մտավախությունը փարատվեր: Երիտթուրք պարագլուխները քրդերին հասկացրին, որ անհանգստանալու պատճառ չկա: Հետևելով սուլթանական քաղաքականությանը՝ նրանք ևս քրդերին ահաբեկեցին հայերի

246 Тыркова А., նշվ. աշխ., էջ 80:
247 АВПР, Посольство в Константинополе, 1909, д. 2677, л.л. 15-17.
248 Лазарев М.С. Курдистан и Курдская проблема, 1891-1917 гг., Москва, 1964, стр. 148.
249 ЦГВИА, ф. 2000, д. 397, л.18.
250 АВПР, Посольство в Константинополе, 1909, д. 2677, л.л. 15-17.

անկախական մտադրություններով և հայ-ռուսական գաղտնի համագործակցությունով: Իշխանության գլուխ անցնելու օրերից երիտթուրքերն օգտագործեցին պետական մեխանիզմի հնարավորությունները հայ-քրդական հակամարտությունն ավելի սրելու, հայաջինջ քաղաքականության իրականացմանը քրդերի եռանդուն մասնակցությունն ապահովելու համար:

«Երիտթուրքերը համոզում են քրդերին, թե Անդրկովկասի և Թուրքիայի հայերը Ռուսաստանի հետ համաձայնություն են ստորագրել, որ պատրաստ են օգնել ցարին Թուրքահայաստանն ու Քրդստանը նվաճելու համար: Որից հետո հայերը քրդերից վրեժ կլուծեն այն բոլոր վիրավորանքների համար, որ նրանց հասցվել էր նախկինում»[251]: Կարինում Ռուսաստանի գլխավոր հյուպատոսը գրում է. «Երիտթուրքերը սկսել են արագ զինել մահմեդականներին, հատկապես քաղաքի դաղաչներին, որոնք հայտնի են հայերի հանդեպ անսանձ լկտիությամբ և թշնամությամբ»[252]: 1908թ. նոյեմբերին Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Պառայը գրեց. «Կոմիտեն (երիտթուրքական) մինչ հիմա հաջողության է հասել լոկ հասարակության բոլոր դասակարգերին ահաբեկելով: Այդ ահաբեկումը նկատվում էր բարձրագույն վարչական զինվորական պաշտոններ զբաղեցնելիս, անգամ խորհրդարանի ընտրության ժամանակ»[253]: Երիտթուրք պարագլուխները, նախապես որդեգրած քաղաքական ծրագրով, ձգտում էին կոնսոլիդացնել թուրքական հասարակությունը և հաստատել իթիհադի դիկտատուրա: «Այս երկրում,– հայտարարեց Նազիմը,– բացի Միություն և առաջադիմություն կոմիտեից, ոչ մի այլ ընկերություն գոյություն չպետք է ունենա»[254]: Նա գտնում էր, որ իթիհադի դիկտատուրա պետք է հաստատվեր կայսրության թե պետական-քաղաքական և թե հասարակական կյանքում:

Աբդուլ Համիդն ու հին վարչակարգի կողմնակիցները միանգամայն այլ կարծիքի էին և ձեռնարկեցին 1909թ. մարտի 31-ի հեղաշրջումը, որը, Թուրք պատմաբան Մ. Թուրանի կարծիքով, շարժում էր հանուն շարիաթական օրենքների վերականգնման և ուներ կարգախոս. «Շարիաթը պետք է հիմք դառնա մեր զարգացման և առաջադիմության համար»: Մինչդեռ մարտի 31-ին հնարավոր դարձավ, որովհետև երիտթուրքական հեղաշրջումը չչոշափեց կայսրության սոցիալ-տնտեսական և քաղաքական արմատական հիմնահարցերը: Ճիշտ է, մարտի 31-ի հեղաշրջումն ընդամենը 10 օրվա կյանք ունեցավ, սակայն նկատելի ազդեցություն գործեց իրադարձությունների հետագա զարգացման վրա: Այն ջախջախելուց հետո երիտթուրքերն իսկապես կարողացան հաստատել շովինիստական արյունոտ բռնատիրություն[255]:

Չնայած թուրք մասնագետների մեծ մասը մինչև օրս էլ պնդում է, որ հեղաշրջումը սուլթանի ձեռքի գործն էր՝ ուղղված իթիհադական կառավարության դեմ, սակայն հեղաշրջման օրերից սկսած սուլթանն ու իթիհադը այլևս հակադիր ուժեր չէին, նրանց միջև սկզբունքային տարբերություն գոյություն չուներ: Թե՛ մեկը և թե՛ մյուսը ձգտում էին թուրք տարրի գերիշխանության հավերժացմանը, նրա համար բացառիկ դիրքի ապահովմանը, հպատակ ժողովուրդների բռնի ձուլմանը կամ բնաջնջմանը, նաև օսմանյան միությունը քանդելուն և թուրքական ազգային պետության ձևավորմանը:

251 Атомян С., նշվ. աշխ., էջ 23-24:
252 АВПР, Посольство в Константинополе, д. 2677.
253 Wien, HHSTA PA XXXVIII 409, Soloniki, 1908, N 15.
254 Kuran A. B. Inkilâp Tarihimaz ve jön Tür kler, Istambul, 1945, s. 262.
255 Սապահ Գյուլյան Ս. Պատասխանատուները, Բեյրութ, 1974, էջ 219:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱԴԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Ադանայում Ռուսաստանի հյուպատոսը 1909թ. հունվարին գրում է Կ. Պոլսի իր դեսպան Զինովևին. «Հայերի հրապուրվելը հռչակված ազատություններով ավելի ու ավելի է ուժեղացնում նրանց հանդեպ մահմեդականների ատելությունը... Անգամ առավել առաջադիմական երիտթուրքերի շրջանում, ովքեր դեռ ոչ վաղ անցյալում բացեիբաց հռչակում էին իրենց երախտագիտությունը հայերին Թուրքիայի ազատագրական շարժման մեջ դրսևորած նախաձեռնությունների համար, անվստահությունը հայերի հանդեպ աճում է ոչ թե օրեցօր, այլ ժամ առ ժամ... Միության և առաջադիմության տեղական կոմիտեն հայ գործիչների վրա սահմանել է լրտեսություն և իր գործակալներին հանձնարարել է հարկ եղած դեպքում կանգ չառնել ոչ մի եռանդուն գործողության առաջ»[1]:

Զինովևն, իր հերթին, տեղեկագրեց Պետերբուրգ լարվածության կտրուկ սրվելու մասին ոչ միայն քրիստոնյաների ու մահմեդականների, այլև հին թուրքերի ու երիտթուրքերի միջև[2]: Գաղթականները երկրորդ անգամ խուժեցին Գում Գափուի մայր եկեղեցի: Իզմիրլյանը կրծքաբաց դիմավորեց խուժանին, բղավելով՝ «խփեք»: Կ. Պոլսի հայ մամուլում նյութեր երևացին, թե այդ ելույթը կազմակերպել էր ՀԵԴ՝ ճնշում գործադրելու Իզմիրլյանի ինքնուրույն քաղաքական կեցվածքի վրա:

1909թ. հունվարին առաջացավ կառավարական ճգնաժամ, ռազմական և ծովային նախարարները հրաժարական տվեցին, թերթերում հոդվածներ երևացին մեծ վեզիր Քյամիլի դեմ: Երիտթուրքական մամուլը զանգվածային կրակի տակ առավ նրան, մեղադրում էին ժողովրդի դեմ դավադրության, խորհրդարանը ցրելու, հին վարչակարգի կողմնակիցների գործերի հետաքննելը դադարեցնելու, սեփական սահմանադրական կուսակցություն ստեղծելու դիտավորության մեջ[3]: Մի քանի նախարարներ անցան երիտթուրքերի կողմը: Անկարգություններ տեղի ունեցան Դիարբեքիրում, Բրուսայում, Կեսարիայում «շարիաթի և իսլամի» օրենքներ մտցնելու պահանջով[4]: Հունվարի 30-ին Քյամիլը հրաժարական տվեց, նոր մեծ վեզիր նշանակվեց Հիմլին: Այս փոփոխությունների հետևում հասարակությունը տեսնում էր իթիհադի ձեռքը և վերջինս հարկադրված եղավ այդ լուրը հերքել հատուկ հայտարարությունով: Իթիհադը նաև մեղադրվում էր, որ դավադրություն էր կազմակերպել Աբդուլ Համիդին տապալելու և գահին նստեցնելու թագաժառանգ Ցու. Էֆենդին: Իրողություն էր՝ գնալով իթիհադն ավելի ու ավելի էր ընդլայնում իր իրավասությունները: Կուսակցության կենտկոմը որոշում կայացրեց, թե սուլթանին «չանհանգստացնելու» համար Ելդզում նահանգներից և պաշտոնատարներից ստացվող հաղորդագրությունները պետք է ուղարկվեն մեծ վեզիրին, իսկ Հիմլին իթիհադի դրածոն էր և փաստական իշխանությունն անցավ վերջինս:

Խորհրդարանի հայ պատգամավորների և պատրիարքարանի ջանքերով կառավարությունը որոշում կայացրեց ստեղծել հանձնաժողով Արևմտյան Հայաստանում տիրող վիճակն ուսումնասիրելու համար: Հանձնաժողովի նախագահ նշանակվեց ծերակույտի անդամ Հալիբը, անդամներ՝ երկուական Թուրք և հայ: Սակայն սա ևս քող էր. իթիհադը Հայկական հարցը «լուծում էր» առանց կյանքի կոչելու գործնական նշանակության միջոցառումներ: Նրա ջանքերով խորհրդարանը մերժեց Արևմտյան Հայաստան հանձնաժողով ուղարկելու առաջարկը[5]:

1 "Геноцид армян в Османской Турции", Ер., 1983, стр. 188.

2 **Шепелькова В.** Младотурецкая революция 1908-1909 гг, М., 1977, стр. 207.

3 «Մշակ», 03.02. 1909:

4 Նույն տեղում, 01.02.1909:

5 Ն. տ., 11.02.1909:

Երիտթուրքական «Շուրայի Ցումեդ» թերթի 1909թ. փետրվարի 6-ի առաջնորդողում մասնավորապես ասվում էր. «Փոքր Ասիայի Հայտնի (Հայկական) նահանգներում բավականին երկար ժամանակ շատ վատ կառավարում էր, որը չի լավացել նաև սահմանադրության հռչակումից հետո»: Թերթը պահանջում էր այդ նահանգներում բարենորոգումներ անցկացնել[6]: Երիտթուրքերի այս «հոգատարության» նպատակն էր Հայկական հարցը դուրս բերել միջազգային դիվանագիտության ոլորտներից, այն դարձնել Թուրքիայի ներքին հարց, ինքնավարությունը նենգափոխել վարչական բարենորոգումներով, որոնց գլխավոր խնդիրը պետք է լիներ կառավարման կենտրոնական համակարգի ուժեղացումը: Երիտթուրքական «Թանինը» այս առիթով գրեց. «Ի՞նչ օգուտ ունենք հայերին ... բավարարվածություն պատճառելուց»: Բ. Դուրը 100 հազար ոսկի լիրա հատկացրեց ունևոր հայերին սերմեր ձեռք բերելու համար՝ նպատակ ունենալով հայերի շրջանում ստեղծելու սոցիալական հենարան: Սակայն Վանի և մի քանի ուրիշ վայրերի պատգամավորական ժողովները պահանջեցին օգնություն ցույց տալ ոչ միայն ունևորներին, այլև բոլոր գյուղացիներին[7]: Կիլիկիայի Սահակ կաթողիկոսի հրաժարականը եկեղեցական և վանքապատկան հողերի զավթումների կապակցությամբ կառավարությունը չընդունեց, Մուշի մութասարիֆը աշխատանքից հեռացվեց հայ բնակչության հանդեպ բռնություններ գործադրելու համար[8]: Միաժամանակ բանակից ազատվելու հարկն ավելացվեց մոտ հինգ անգամ[9]: Վայրիվերումներն, ընդհանրապես բնորոշ էին երիտթուրքերի քաղաքականությանը: Նրանք, մի կողմից, առիթը բաց չէին թողնում հավաստիացնելու, որ անպայման բարենորոգելու էին արևելյան կառավարումը, իսկ մյուս կողմից, նախապատրաստեցին հայ բնակչության հաշվեհարդար Էրզրումում: Ռուսաստանի հյուպատոսը 1909թ. մարտի 2-ին տեղեկագրում է. «Երիտթուրքերը սկսել են արագ զինել մահմեդականներին և հատկապես քաղաքային դաղաչներին, ովքեր հայտնի են իրենց սանձարձակությամբ և հայերի հանդեպ ատելությամբ ... մահմեդականների շրջանում խուլ հուզումներ արդեն նկատվում են Էրզրումի վիլայեթից բացի Բիթլիսի, Սըվազի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթների շատ մասերում»[10]:

"Русское Богатство"-ն 1909թ. իր թիվ 3-ում գրում է. «Ամենից առաջ հարկ է նշել մի հավաստի փաստ, որ երիտթուրքերը առաջադիմական լինելով հանդերձ, եղել ու մնում են կատաղի ազգայնամոլներ: Այս առումով նրանք հետևողական «օսմանցիներ» են, ճիշտ և ճիշտ իրենց հայրերի ու պապերի նման, ովքեր ինչ-որ ժամանակ սրով են հիմնադրել կայսրությունը»: Երիտթուրքերը սկզբունքային որևէ էական և լուրջ փոփոխություն չկատարեցին հին վարչակարգում: Թերթը համոզված էր, որ «նույն Հիմլի փաշան, որը համարվում է սահմանադրության հենարանը, որոշակի պայմաններում կդառնա դրա դահիճը»:

1909թ. մարտի 12-ին երիտթուրքերը, Ահրարը, ՀԵԴ, Հնչակը և չեզոքները ստորագրեցին միջկուսակցական համաձայնագիր, որն ըստ էության «պահանջներ էր» օսմանայն խորհրդարանին հեղափոխության նվաճումները պաշտպանելու: Խնդիր էր դրվում ազատել կուսակցությունների անդամ բանտարկյալներին, ապահովել գաղթականների իրավունքները, լուծել ագրարային հարցը: Այդ համաձայնագիրը ստորագրելուց հրաժարվեցին հունական, քրդական և արաբական կազմակերպությունները:

Կ. Պոլսում քաղաքական կրքերը ոչ միայն չէին մարում, այլև բռնկվում էին նոր թափով: 1909թ. մարտի 20-ին հանրահավաքի ելան Թուրք սպաները բանակի թվական կազմը կրճատելու կառավարության մտադրության դեմ: Երկու օր անց մահմեդական հոգևորականների հզոր հանրահավաք տեղի ունեցավ Այա-Սոֆիայում ու հարակից տարածքներում՝ հոգևորականները դժգոհ էին մյուս կրոնների հանդեպ կառավարության հանդուրժողականությունից[11]: Եվս մի

6 «Մշակ», 22.02.1909:

7 Նույն տեղում, 14.02.1909:

8 Ն. տ., 01.04.1909:

9 Ն. տ., 10.03.1909:

10 "Геноцид армян...", стр. 188.

11 «Մշակ», 24.03.1909:

քանի օր անց սպանվեց ընդդիմադիր «Սիրբերտ» թերթի խմբագիրը: Այդ առթիվ ընդդիմադիր թերթերը լույս տեսան սև շրջանակներով և «Բռնապետության սկիզբը» վերտառությամբ հոդվածներով: Սպանված խմբագրի թաղումը վերածվեց հակակառավարական ցույցի[12]:

Մարտի 31-ին Մահմեդականների միությունը, որը կազմված էր հիմնականում հոգևորականությունից և սպաներից, հակահեղափոխական հեղաշրջման փորձ կատարեց, ինչի համար Աբդուլ Համիդը հատկացրել էր 200000 ոսկի լիրա[13]: Հինգ հազար զինվոր շրջապատեցին խորհրդարանը և պահանջեցին Ա. Ռիզայի և Ա. Հիմլիի հրաժարականները. նաև պահանջեցին, որ չեղյալ հայտարարվեն շարիաթին հակասող օրենքները: Սուլթանին կանչեցին խորհրդարան բացատրություն տալու հեղաշրջման փորձի մասին: Աբդուլ Համիդի քարտուղարը խորհրդարանում ընթերցեց նրա իրադեն կառավարության հրաժարականի մասին: Մեծ վեզիր նշանակվեց Թևֆիկը: Ա. Ռիզային պաշտոնաթող անել չհաջողվեց: Երիտթուրք պարագլուխները փախան Սալոնիկ: Թալիաթին ու Հալիլին մի քանի օր թաքցրեցին դաշնակ գործիչները: Այս հեղաշրջումը իրականացվում էր սահմանադրության դեմ հանուն սահմանադրության նշանաբանով: Միաժամանակ սկսվեցին հայերի ջարդեր Ալեքսանդրեթում և Բեյրութի շրջանում[14]: ՀԵԴ բյուրոյի նիստում Ս. Զավարյանը հայտարարեց, թե իթիհադի պարագլուխները փախել են Կ. Պոլսից, որ ձերբակալվել և գնդակահարվել են երիտթուրք սպաներ: Հակահեղափոխական հեղաշրջումը սպառնալիք էր արևմտահայության համար: Նա առաջարկեց ահաբեկչության ենթարկել Աբդուլ Համիդին և Կ. Պոլսում կազմակերպել հայերի ինքնապաշտպանություն: Այդ առաջարկությունը մերժվեց պատճառաբանությամբ, թե կարող էր սնունդ տալ մահմեդականների ջարդարար կրքերին: Նաև որոշվեց ձևավորել 500 հոգանոց մարտական ջոկատ հակահեղափոխությանը հակահարված տալու համար: Որոշվեց կապեր հաստատել երիտթուրք գործիչների հետ, լուծել զենքի հարցը: Սակայն Ջեմալը դաշնակներին խորհուրդ տվեց չչտապել և նրանք հաճույքով համաձայնվեցին, որովհետև ոչ զենք ունեին և ոչ էլ միջոցներ զենք գնելու համար: Արևմտահայությունը նորից կանգնեց ջարդերի վտանգի առաջ՝ առանց պաշտպանվելու հնարավորության:

Ապրիլի 5-ին երիտթուրքերը հայտարարեցին, թե սուլթանը գահընկեց է արված: Սահմանադրական կարգերի պաշտպանության օգտին համատեղ հայտարարությունով հանդես եկան իթիհադը, Ահրարը, ՀԵԴ և մի քանի ուրիշ կուսակցություններ: Նրանց աշխատանքը համակարգելու և խորհրդարանի հետ համագործակցելու համար ստեղծվեց կուսակցական խորհուրդ, որի ներկայացուցիչները գործուղվեցին նահանգներ:

"Berliner Tag" լրագրին տված հարցազրույցում Էնվերը հակահեղափոխականների ակտիվացման պատճառը համարում էր երիտթուրքերի պառակտվելը, Ահրար կուսակցության կողմից երիտթուրքերի գլխին կախվեց լուրջ վտանգ, մի կուսակցություն, որ հիմնականում կազմված էր հայերից, արաբներից և ալբանացիներից, ովքեր պահանջում էին նահանգների ինքնավարություն: Փոխանակ գտնելու համագործակցության եզրեր, սկսել է «սիրախաղեր ռեակցիայի հետ ... նրա շուրջը համախմբվել են բոլոր մութ ուժերը, այդ թվում մահմեդական հոգևորականությունը, աշխատանքից հեռացված ծառայողներն ու զորացրված սպայությունը»: Ահրարի նշանաբանն էր. «Տապալել երիտթուրքերի կոմիտեն»[15]: Այնուհետև Էնվերն ասում է. «Ես չեմ հավատում մայրաքաղաքի կայազորի կողմից լուրջ դիմադրությանը: Ապստամբությունը ոչ ազգային է և ոչ էլ կրոնական: Սակայն մենք կձեռնարկենք միջոցներ ապագայում նման իրավիճակներ թույլ չտալու»[16]: Էնվերը տվյալ դեպքում ևս գնում էր սադրանքի, որովհետև հպատակ ժողովուրդները ոչ թե հարում էին հակահեղափոխությանն այլ սահմանադրական կարգերին, ինչը վճռական նշանակություն ունեցավ Աբդուլ Համիդի ձախողման գործում:

12 «Մշակ», 26.03.1909:

13 "Русское Богатство", 1909, N 4.

14 «Մշակ», 07.04.1909:

15 Նույն տեղում, 12.04.1909:

16 "Вестник Европы", 1909, к 5, стр. 419.

Սուլթանը հայտարարեց, թե ինքը որևէ առնչություն չունի խռովության հետ: Ապրիլի 10-ին խորհրդարանն ընդունեց բանակի հրամանատար Մ. Շևքեթի հայտարարությունը սուլթանի գվարդիայի առաջին կորպուսի ապստամբած զորամասերին պատժելու վերաբերյալ: Ուշադրություն էր դարձվում նաև Ադանայում հայերի ջարդերին, որտեղ նախնական տվյալներով զոհվել էր 15000 մարդ[17]:

Խորհրդարանը շրջաբերական ուղարկեց վիլայեթները, թե Ադանայի դեպքերը կրկնվելու դեպքում տեղական իշխանությունները խստորեն կպատժվեն: Առաջին հերթին նկատի էր առնվում Մուշն ու Դիարբեքիրը, որտեղ քրդերը ապստամբել էին հօգուտ սուլթանի և սկսել էին ջարդել հայերին, նրանց համարելով սահմանադրության ծնողները[18]:

Հարկ է նկատի ունենալ, որ Կիլիկիայի զարգացած և կիլիկիահայության կենսամակարդակի համեմատաբար բարձր լինելը գրգռում էր թուրքերի ախորժակը, իսկ նրա անառիկ բնակլիմայական պայմանները, բերդերն ու դրանց տերերի խիզախությունը վախեցնում էին նրանց: Իրականում դա վերաբերվում էր միայն Զեյթունին, իսկ Դաշտային Կիլիկիայի՝ Ադանայի, պաշտպանական հնարավորությունները խրստ սահմանափակ էին: Հետևաբար թուրքական պատմագրության ջանքերը Ադանայի 1909թ. իրադարձությունների պատճառ համարելը, որ հայերը պայքարում էին վերականգնելու Կիլիկիայի հայկական թագավորության մի ինչ-որ տարատեսակ, հիմքից զուրկ էր:

Թուրքական այս թեզին տուրք են տալիս նաև առանձին հայ պատմաբաններ: Վ. Թունյանն իր "Младотурки и армянский вопрос. 1908-1912" հետաքրքիր աշխատության մեջ անդրադառնալով այդ խնդրին գրում է. «Այսպես կոչված Ադանայի իրադարձությունները պատրաստվել էր երիտթուրքերի կողմից իշխանության հասնելու պահից, որպեսզի ձախողեին Կիլիկիայի հայության ինքնավարությունը»[19]: Այս միտքը հաստատելու համար հեղինակը վկայակոչում է Կովկասի ոստիկանական վարչության հետևյալ հաղորդագրությունը, թե երիտթուրքերն «Ադանայի իրադարձություններով ցանկանում էին միանգամից հասնել երկու արդյունքի, առաջին՝ ամբողջ պատասխանատվությունը դնել Աբդուլ Համիդի վրա և նրան զրկել Եվրոպայի համակրանքից և, երկրորդ՝ խաղաղեցնել Ադանայի վիլայեթի անհանգիստ հայ տարրին»[20]:

Սուլթանն անպայման դեր խաղացել էր Ադանայի արյունահեղության կազմակերպման գործում: Նա նախապատրաստել էր հարձակում Ադանայի վրա եվրոպական միջամտություն առաջ բերելու համար, որպեսզի մեծ տերությունները հանուն կայսրությունում կայունության վերականգնեին սուլթանի բացարձակ միապետի իրավունքները:

Իսկ ջարդերի մյուս կազմակերպիչները՝ երիտթուրքերը, ձգտում էին խեղդել «խայտառակ միջադեպը» պատասխանատվությունը հայերի վրա բարդելու միջոցով: Պետերբուրգում թուրք դեսպանը հայտարարեց, թե ջարդերի պատճառը մի հայի կողմից իր հայրենակցին պաշտպանելն էր երկու թուրքից: Ըստ նրա քաղաքում հրդեհ բռնկվեց պատահականորեն, որ նախահարձակը հայերն էին, այդ նրանք շրջապատեցին մահմեդական գյուղերը, որոնք իշխանություններից խնդրեցին օգնություն: Բնականաբար, կառավարությունն ընդառաջ գնաց և զորք ուղարկեց կարգուկանոնը վերականգնելու համար, միաժամանակ սկսեց հետաքննություն[21]: "Русское Ведомости" թերթի կարծիքով «Ադանայի իրադարձությունների պատասխանատվությունն ընկնում էր ոչ միայն «հին պահպանողականների», այլև, ընդհանրապես բոլոր թուրքերի վրա՝ կառավարություն, խորհրդարան, բանակ, կոմիտե»[22]: Այն, որ թե՛ հին և թե՛ նոր թուրքերը հայերի հանդեպ անասնական ատելություն էին տածում, նպաստեց նրանց հեշտ ու արագ միավորմանը: Ադանան այդ միավորման ծնունդն էր և հնարավոր չէ համաձայնվել այն մտքի հետ, թե 1909թ. «գործողություններն արտոնում, կազմակերպում և ղեկավարում էին երիտասարդ թուրքերը»: Ճիշտ կլինի, եթե ասվի՝ նաև երիտթուրքերը:

17 «Մշակ», 11.04.1909:

18 Նույն տեղում, 15.04.1909:

19 Թունյան Վ., նշվ. աշխ., էջ 109:

20 «Մշակ», 15.04.1909:

21 Նույն տեղում, 14.04.1909:

22 Ն. տ., 30.06.1909:

Սահմանադրությունը դեռ նոր էր հռչակվել, երբ Ադանայում սկսեցին լուրեր շրջել, թե հայերը ջարդվելու էին, քանի որ նրանք Հաճընում զենք էին կուտակել Ադանայի մահմեդականների վրա հարձակվելու համար: Սադրանքի համար թուրքերը պղծեցին Ուլու ջամիհ դուռը և բարդեցին հայերի վրա: Սահակ կաթողիկոսը գրեց. «Այս ճանավար ազգը արիւն խմելու գազանութեան հագուրդ տալու համար իւր սրբութիւնները իւր ձեռքով կը պղծե ըսելու համար, որ հայը ըրավ, դարերով այս մեթոդին հետևած են»[23]: Մոլլաները դիմում էին ամբոխին. «Գյավուրները օձ են, մինչև անոնց գլուխները չճզմենք, չենք կրնար հանգստանալ»[24]: «Իթիդալ» թերթի կազմակերպած հակահայկական հանրահավաքից հետո էր, որ խուժանը թալանեց զինապահեստը, իսկ պահապան զորքերը որևէ դիմադրություն ցույց չտվեցին[25]: Ադանայի հայության հանդեպ թուրքերի ջարդարար ծրագրերը նոր չէին: Մահմեդականներին հայերի դեմ գրգռում էին իշխանության թե տեղական և թե կենտրոնական մարմինները: 1908թ. օգոստոսին երիտթուրք պարագլուխներից Ջեմալը Կիլիկիային նվիրված խորհրդակցությունում շարադրեց երիտթուրքերի դիրքորոշումը երկրամասում կրթության և կառավարման ասպարեզների թուրքացման անհրաժեշտության մասին[26]: Հայերի թուրքացման քաղաքականությունով առանձնապես ոգևորված էր երիտթուրքերի Ադանայի կոմիտեն, որի ձայնափող «Իթիդալ» լրագիրը թուրքական շրջաններում ազգայնամոլական կրքեր բորբոքելու դիտավորությամբ սադրիչ նյութեր էր տպագրում հայկական դպրոցներում հայեցի դաստիարակության բարձր մակարդակի մասին, թե իբր այդ արվում էր հայկական ապստամբության միջոցով թուրքերին ստրկացնելու համար: Թերթը մահմեդականներին կոչ էր անում՝ պատրաստ լինել գյավուրներին հաշվեհարդարի ենթարկելու: Հայերի բողոքն Ադանայի վալիին անուշադրության մատնեց: Նրան անհանգստացնում ու զայրացնում էր, որ Կիլիկիան Համիդյան ջարդերից զերծ էր մնացել:

Մարաշի իմամը 1908թ. դեկտեմբերին մահմեդականներին հրահրում էր «ծնկի բերելու» գյավուրներին: Նա երիտթուրքերին համարում էր դավաճաններ, որովհետև ձգտում էին հավասարություն հաստատել մահմեդականների և քրիստոնյաների միջև[27]:

Զեյթունի 1895թ. կռիվներից հետո Աբդուլ Համիդը խնդիր էր դրել Կիլիկիան դատարկել հայերից: Այդ նպատակով Հալեպում ձևավորվեց ռազմական ուժ, որը պետք է Կիլիկիա գաղթեցներ 150 հազար մահմեդական[28]:

Նախատեսվում էր Ադանայում հայերի ջարդ կազմակերպել 1906–1907թթ., սակայն վալի Բահրին դրան դեմ էր և կոտորածը չստացվեց: Սահմանադրության հռչակումից հետո վալի նշանակվեց Ջևադը, իսկ զորքերի հրամանատար՝ 1895թ. «լեռնական զեյթունցիներից դաս ստացած Մ. Ռեմզին, որոնք էլ նախապատրաստեցին կոտորածները»:

Այն որ Կիլիկիայի հայերը 1890-ական թվականների կոտորածների ժամանակ ինքնապաշտպանական կռիվների շնորհիվ համեմատաբար քիչ տուժեցին, և ավելի բարվոք վիճակում էին, քան Արևմտյան Հայաստանի հայությունը[29], թուրք հայատյացներին դուր չէր գալիս: Կիլիկիահայերի կոտորածի մասին որոշումն ընդունվեց վալի Ջևադի ղեկավարությամբ կայացած խորհրդակցությունում: Որոշվեց գավառներն ուղարկել կոտորածների մասին գաղտնի հրահանգներ, մահմեդականներին զենք բաժանել, բանտերից հանել շուրջ 500 ոճրագործի:

Եթե սուլթանական վարչակարգի կողմնակիցները Ադանայի մահմեդականներին հայերի դեմ գրգռում էին՝ հայտարարելով, թե սահմանադրությունը հայերի ձեռքի գործն է, թե այն հայերին մեծամեծ արտոնություններ է տալիս, ապա երիտթուրքերի կենտրոնը թուրքերին հայերի դեմ հանում էր ոչ միայն քարոզներով, այլև կազմակերպական աշխատանքով: Ադանա ուղարկվեցին գործակալներ, ովքեր հակահայկական կրքեր էին բորբոքում: Երիտթուրքերի Ադանայի «մասնաճյուղի կենտրոնեն ստացած հրահանգի համաձայն Կիլիկիոյ, մասնավորապես Ադանայի, մեջ ընդհանուր ջարդ մը պատրաստել սկսած էր»[30]: Լուրեր էին տարածվում, թե հայերը ձգտում են Կիլիկիայում հայկական անկախ «օջախ հիմնել»: Այդ լուրերի հեղինակը տեղական իշխանություններն էին և նրանք էլ հայերի «դիտավորությունները» խափանելու համար լրացուցիչ զինված ուժեր խնդրեցին Կ. Պոլսից: Օր օրի մթնոլորտն ավելի էր շիկանում: Հայերը տագնապի մեջ էին: Ապրիլի 1-ին (Հ.տ.) երիտթուրքերի Ադանայի բաժանմունքը գաղտնի հեռագիր ուղարկեց Իթիհադի կենտրոն. «Բոլոր հայերը զինված են և շուտով ապստամբելու են: Ադանան և նրա մերձակայքը լցվելու է խոշտանգված մահմեդականների դիակներով: Սպասում ենք Ձեր հրամանին»: Անմիջապես ստացվեց պատասխան. «Ձեռնարկեք վճռական միջոցներ»[31]:

Ադանայի առաջին ջարդը տեղի ունեցավ ապրիլի 1-4-ը (Հ.տ.): Այն սկսվեց հանրահավաքով ուղղված խորհրդարանի դեմ, որից հետո ամբոխը Ջևադի և Ռեմզիի առաջնորդությամբ շարժվեց դեպի հայկական թաղերը: Ֆրանսիական "Journal"-ը գրեց, որ ի տարբերություն Բաբը Ալիի, երբ «հայերը զենք չունեին և մորթվեցին ոչխարների նման», Ադանայում պատկերն այլ էր՝ հայերը համառ դիմադրություն ցույց տվեցին և հարկադրեցին թուրքերին բանակցություններ սկսել: "Русское славо"-ն նույն իրողությունն է հաստատում. «Ադանայի ջարդը հայերին հնարավորություն տվեց թուրքերին ցուցադրելու, որ հայ բնակչությունն առաջվա նման անպաշտպան չէ, որ նա կազմակերպված է և ի զորու պաշտպանելու իր կյանքը և ունեցվածքը»[32]:

Այնուամենայնիվ խուժանին հաջողվեց լցվել հայերի տները, ոչնչացնել ոչ միայն տղամարդկանց, այլև կանանց և երեխաների: Տները, խանութները, պանդոկները թալանվեցին և հրդեհվեցին: Ջարդերը տարածվեցին Ադանայի ու Հալեպի նահանգների հայաբնակ վայրերը: Երեք օր շարունակ հայերին կոտորում էին: Ֆրանսիացի լրագրող Ադոսիտեսը գրում է. «Որոշ տեղերում հայերին սպանում էին խմբով, 100-200 մարդ միասին...»[33]: Քաղաքի գազան կտրած թուրքերը հայերին «խոցում, սպանում, կտոր-կտոր էին անում...»: Ապրիլի 9-ին Իթիհադի անդամներից Իսմայիլ Սեֆան «Իթիդալ» թերթում գրեց. «Այն, ինչ կատարվեց, դեռ ամենը չէ: Մենք միայն ընդմիջում ենք տվել...»[34]:

Ադանայի կոտորածը կազմակերպվեց 1895–1896թթ. ջարդերի պլանով: Օրեր առաջ մերձակա գյուղերից թուրք զինված գյուղացիները խումբ-խումբ լցվում էին քաղաք: Բնականաբար, դա անհանգստացրեց հայերին, նրանք ամրացրին իրենց թաղերը: Բախում առաջացնելու համար բավական էր ամենաչնչին առիթը: Եվ այն ներկայացավ: Մարտի 31-ի գիշերը ժամացույցի աշտարակի տակ սպանված գտան Լյուդվիգ անունով մի հայի: Քաղաքի հայերը հրաժարվեցին խանութները բանալ: Վալին պաշտոնատարներ ուղարկեց նրանց հանգստացնելու: Նույն պահին քաղաքապետարանում հայերին խոշտանգում էին: Ամերիկյան միսիոներ Զեմբըրսին հաջողվում է արյունահեղությունը դադարեցնել: Երկու կողմերի երևելիները գտան, որ կատարվածը թյուրիմացություն էր և անցան իրենց առօրյա գործերին:

Պատմում է իրադարձությունների ականատեսը. 1909թ. ապրիլի 1-ին մահմեդականները շրջում էին «ձեռքներին մահակներ: Մի քանի հայ թուրքական թաղով անցնելիս սպանվում են: Այս լուրն առնելով հայերը փակում են կրպակներն ու արհեստանոցները, նրանք նետվում են տուն և փակվում: Վաղ առավոտյան սկսվում է ամբոխի հարձակումը խանութների, տների վրա, պատահած հային կոտորում են: Ավերում են միայն քրիստոնյաների խանութները, շրջանցում մահմեդականների ունեցվածքը: Ապա ամբոխը շարժվում է հայերի տների վրա ու «մահակներով ու կացիններով, հրազենով կոտորում, ով հանդիպում էր»:

23 «Կիլիկեան կսկիծներ, Վավերագրեր Կիլիկիոյ կաթողիկոսարան դիվանեն», Բեյրութ, 1927, էջ 73-74:
24 Մուշեղ Եպ. Ատանայի ջարդը և պատասխանատուները, Բոստոն, 1910, էջ 23:
25 Թորոսյան Շ., նշվ. աշխ., էջ 29:
26 Մուշեղ Եպ. Ատանայի ողբերգութիւնը, Բոստոն, 1916, էջ 9:
27 «Մշակ», 25.01.1909:
28 Սերովբյան Մ. Ադանայի ջարդն ու պատասխանատուները, Կահիրե, 1909, էջ 10:
29 Bremond E. La Cilicie en 1919-1920, Paris, 1921, p.4.

30 Ռիֆաթ Մ. Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և իթիհադի հայաջինջ քաղաքականությունը, էջ 104:
31 Տատրեան Վ. Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով, Վատերտովն, 1995, էջ 117:
32 Тунян В., նշվ. աշխ., էջ 109:
33 Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, խմբ. Մ. Գ. Ներսիսյան, Եր., 1991, էջ 251:
34 Նույն տեղում:

Շփոթված հայերի մի մասը պաշտպանություն է փնտրում եվրոպացիների մոտ: Միաժամանակ հայկական «թաղամասի շուրջը բարիկադներ են կառուցվում և կազմակերպում ինքնապաշտպանություն... Պաշտպանվողների դրությունը վատթարանում է, որովհետև հարևան հայկական գյուղերի և ազարակների ավերվելու պատճառով հաջորդ օրերին 5-7 հազ. կին ու երեխա են լցվում քաղաք»: Հայերին սպանում էին ձեռքի տակ եղած բոլոր միջոցներով: «Հրդեհն ու թալանը լրացնում են պակասը... անասնական ստոր բնազդներն իրենց զգացնել են տալիս ամեն մի քայլափոխի: Ջարդն ու արյունահեղությունը շարունակվում են երեք օր ու գիշեր»: Տեղական իշխանությունները բացարձակապես ոչինչ չեն անում «ջարդն ու արյունահեղությունը դադարեցնելու համար»: Վալիի և մյուս պաշտոնատարների ներկայությամբ սպանվում են «նահանգային խորհրդի անդամները, կանայք, կողոպտվում են խանութները: Կարգը պահպանելու համար պահեստայիններ են զորակոչվում և զինվում: Սրանք միանում են բաշիբոզուկներին և ավելի ծանրացնում վիճակը»[35]:

Ապրիլի 5-ին պոլսահայերի հանրահավաքը որոշեց պատվիրակություն ուղարկել մեծ վեզիրի մոտ, պահանջով՝ անմիջապես դադարեցնել ջարդերը: Հարցը քննարկեց նաև Ազգային ժողովը: Մերսին հասան անգլիական ռազմանավերը: Օսմանյան խորհրդարանը Ադանայի իշխանություններից պահանջեց դադարեցնել բռնությունները[36]:

Առաջին ջարդից 10 օր անց Ադանա մտան Սալոնիկի ազատության բանակի երեք գունդ և տեղակայվեցին հայկական թաղերի վրա իշխող բարձունքներին: Կատարելով երիտթուրքերի կենտրոնի հանձնարարությունը՝ զինվորները հրդեհեցին հայերի դեռևս կանգուն մնացած տները, հիվանդանոցները, կոտորեցին կանանց և երեխաներին: Ներքին գործերի նախարար Հաջի Ադիլը հրահանգել էր. «Խնայեք օտարականներին», այսինքն՝ տեղացիներին՝ հայերին, ջարդեք: Ադանայի իթիհադական ակումբը հանձնարարեց. «Կարճ ուղի ընտրեք»[37]: Այն, ինչ տեղի մահմեդականները չէին հասցրել, պետք է զինվորներն անեին: «Ով չուներ թուրքի հագուստ,– գրում է «Մշակը» 1909թ. ապրիլի 18-ին,– ենթարկվում էր հարձակման: Թալանեցին ամեն ինչ, խուժեցին քրիստոնյաների տները և հրդեհեցին դրանք: Շատ հայեր գերադասում էին մեռնել սեփական տան բոցերի մեջ, քան ենթարկվել ամբոխի վայրագություններին»: Ապրիլի 12-ին սպանվեց շուրջ 1000, իսկ 13-ին՝ 2000 մարդ:

Զինովևը ապրիլի 18-ին գրում է Պետերբուրգ. «Մահմեդականների վայրագությունները Ադանայի վիլայեթում հրեշավոր չափերի են հասել: Կարճատև ընդհատված խժդժությունները քաղաքում վերսկսվեցին, հենց որ թուրքական կառավարության կարգադրությամբ ... ժամանեց ռումելիական զորքերի մի ջոկատ: Զինվորներն անցել են մուսուլման բնակչության պարագլուխների կողմը և սկսել կոտորել քրիստոնյաներին, առանց խտրություն դնելու սեռի և տարիքի միջև, թալանում ու հրդեհում են նրանց տները ... Ադանա քաղաքն այլևս գոյություն չունի ... կոտորածից խույս տված քրիստոնյա բնակչությունը սոսի է մատնվում»[38]:

Իրադարձություններն ունեցան հետևյալ ընթացքը: Ապրիլի 12 (25)-ին, օրվա երկրորդ կեսին հայկական թաղերում հրացանային կրակի ձայներ լսվեցին, որի հետևանքով շուկայում եղած հայերը խուճապահար փախան իրենց տները, որտեղ նրանք ինքնապաշտպանության կանգնեցին: Բնակչության մի մասն էլ լցվեց եկեղեցիներն ու ապաստանեց միսիոներների շենքերում: Հրկիզվեց եկեղեցիներից մեկը, որը լեփ-լեցուն էր կանանցով ու երեխաներով: Թուրքերը փորձեցին հրկիզել նաև երկրորդ եկեղեցին, սակայն Հիսուսյան հաստատության տնօրեն Բեր Ժուն, իրեն վտանգելով, խափանեց այդ դիտավորությունը:

Ջարդերից փրկված հայերը հավաքվեցին կառավարչատան դիմացի պարտեզում շրջափակված զինվորներով: Նրանք 5 օր ապաստանեցին գերմանական գործարանում:

35 "Баку", 1909 (չորս համար), էջ 197-200:

36 «Մշակ», 15.04.1909:

37 Նույն տեղում, 18.04.1909:

38 АВПР, Политархив, 1909, д. 3456.

"Arbeiter Zeitung"-ը 1909թ. ապրիլի 17-ին գրում է. «Քաղաքը երեկ չէ մյուս օրվանից բոցերի մեջ է: Փողոցներում սոսկալի կոտորած է»: «Զինվորները սկսել են կողոպուտը»: Նույն թերթը ապրիլի 23-ին գրում է. «Հյուպատոսական հեռագրերի հիման վրա Ադանայի վիլայեթում հայերի զոհերի թիվը ենթադրվում է մոտ 15000 մարդ: Զոհերի մեջ կան շատ կանայք ու երեխաներ: Ոչնչացվել են ամբողջ գյուղեր: Եվրոպայի առաջ արդարանալու համար վիլայեթի իշխանությունները հայ եպիսկոպոսից և անվանի գործիչներից պահանջում են հայտարարել, թե խժդժությունները հրահրվել են հայ հեղափոխականների կողմից: Նրանք սպառնում են ոչնչացնել բոլոր ողջ մնացածներին, եթե այդ հայտարարությունը չարվեր»:

Ադանան գրեթե ավերվեց: Վալու հաշվարկներով վիլայեթում քանդվեց շուրջ 1000 տուն, սպանվեց 30000 մարդ, հիմնականում հայեր[39]: Նյութական վնասը կազմեց երեք միլիոն ոսկի լիրա:

Ադանայի ջարդերը շարունակվում էին, իսկ Կ. Պոլսում խորհրդարանը գահընկեց էր անում «անարժան միապետին»՝ Աբդուլ Համիդ 2-րդին: Երկրից փախավ Սաբահեդդինը: Երկու միջոցառումն էլ ուժեղացրին իթիհադի դիրքերը, քանի որ նոր սուլթանը՝ Մահմուդ 5-րդը, երիտթուրքերի կամակատարը դարձավ: Նրան իրավունք վերապահեցին «գահակալել այլ ոչ թե կառավարել»: Նոր սուլթանի առաջին իրադեմ ներում էր շնորհում Ադանայի ջարդերի մասնակիցներին: Ժամանակակիցը հետևյալ կերպ է նկարագրում այդ ներումը. «Բոլոր հայերին հավաքեցին և տարան Ադանա գետ... Մի կողմում ջուր, իսկ մյուսում կրակ: Հայրս ինձ գրկել էր ... Եկավ սուլթանի հրամանը» ներման վերաբերյալ[40]:

Կոտորածներն Ադանայից անցան Մերսին, Տարսուս, Համիդիե, Միզմիա, Էրզին, Մարաշ և Դարդ-Կոլ: Մերսինում կանգնած անգլիական ռազմանավերը մինչև վերջ մնացին դիտողի դերում:

Ո՞վ կազմակերպեց այդ եղեռնը: Երիտթուրք պարագլուխները մատնացույց էին անում Աբդուլ Համիդին, իսկ վերջինս՝ երիտթուրքերին: Փոխադարձ մեղադրանքներն ի վերջո հանգեցրին նրան, որ ջարդերի կազմակերպման համար ոչ ոք պատասխանատվության չկանչվեց: Դրա փոխարեն պատեհ առիթով ջարդարարների հասցեին փառաբանություններ էին հղվում, իսկ վալին էլ արժանացավ կառավարական բարձր պարգևի: «Ինքնուրույն» կարծիքի էին երիտթուրք պարագլուխները, ինչն էլ վճռական դեր խաղաց Ադանայում կատարվածին առնչվող հարցերի լուծման գործում: Կայսրության ռազմական դատարանը, կատարելով երիտթուրքական կենտկոմի հանձնարարությունը, կեղծ ցուցմունքներ տվողներ էր հայթայթում և ամեն ինչ արեց իսկական հանցագործներին չքմեղացնելու համար: Դատարանը նույնիսկ հաշվի չառավ խորհրդարանային հանձնաժողովի այն եզրակացությունը, թե «իթիհադի կուսակցության անդամները եղել են Ադանայի ահավոր ջարդերի կազմակերպիչներն ու մասնակիցները: Այս փաստը հաստատվել է նահանգի շատ խավերի, ինչպես նաև հյուպատոսների, ամերիկյան միսիոներների ու կաթոլիկ հոգևորականների պնդումներով»[41]: Հաշվի չառավ, քանի որ կար Թալեաթի եզրակացությունը՝ հայերը «կրում են բացառիկ պատասխանատվություն»: «Ադանայի դեպքերը,– գրում է Թալեաթը,– բացառապես նրանց (Հայ կուսակցությունների) գործն էին, որ ի վերջո վերագրվել են թուրք ժողովրդին: Չնայած չեմ ուզում ասել, թե իսլամ ժողովուրդը չի մասնակցել կոտորածներին... Որ Ադանայի իրադարձությունները հայերի գրգռումների արդյունք էին, հաստատվում է նաև քննիչ հանձնաժողովի հայ անդամների վկայությամբ: Անկասկած է, որ հայերի հետապնդած նպատակն էր՝ ժողովրդական զանգվածների մոլեռանդությունը գրգռելով, ջարդեր առաջացնել և դրանով Եվրոպայի ուշադրությունն իրենց վրա գրավել ու Կիլիկիայում կազմավորել հայկական ինքնավար միություն»: Այդ Ռուսաստանն էր, որ ձգտում էր Անատոլիայում անկախ Հայաստան ստեղծելու միջոցով թուրքիային շրջափակման մեջ առնել[42]:

39 АВПР, Посольство в Константинополе, д. 1356, л.188, 207а.

40 Սվազյան Վ. Մեծ եղեռնը արևմտահայոց բանավոր վկայություններում, Երևան, 1994, էջ 29-30:

41 Դարբինյան Ա. Հայ ազատագրական շարժման օրերին (Ցուշեր, 1890-1940):

42 Talât Pasa 'ninHatiralari, s. 14.

Մայիսի 2-ին սուլթան Մահմուդ 5-րդը ընդունեց Հայ ազգային ժողովի պատվիրակությանը: Քաղաքական հանձնաժողովի նախագահ Ս. Գարանյանը սուլթանին երկար պատմեց հայ-թուրքական դարավոր բարեկամության և այն մասին, որ առճակատման ձևավորման մեղավորը Աբդուլ Համիդ 2-րդն էր: Հայերի հանդեպ թուրքական իշխանությունների անվստահությունն ու թշնամական քաղաքականությունը շեշտեց նա, շարունակվեց նաև սահմանադրությունից հետո, չնայած նրանք հանդիսացել են նոր կարգերի ամենախանդավառ կողմնակիցները: Սուլթանը խոստացավ հանձնարարել վեզիրին ձեռնարկելու համապատասխան միջոցառումներ: Սուլթանը նաև զարմացած տեսք ընդունեց: «Շատ ցավում և միաժամանակ զարմացած եմ տեղի ունեցած իրադարձությունների համար»: Նա հույս հայտնեց, որ կգտնվեն միջոցներ երևան եկած «հիվանդությունները» բուժելու, Ադանայի իրադարձությունների մեղավորներին պատժելու, տուժածների ունեցվածքը վերադարձնելու համար: Սակայն սուլթանի հետ այս հանդիպումը շատ ավելի ծիսակատարություն էր, քան արևմտահայության վտանգվածությունը հաղթահարելու միջոց:

Երիտթուրքերի ջանքերը թաղելու Հայկական հարցը՝ 61-րդ հոդվածը չեղյալ հայտարարելու միջոցով, Ադանայի ջարդերից հետո այլևս անհնար էր: Նաև այդ էր պատճառը, որ երիտթուրք պարագլուխներն ամեն ինչ անում էին համոզելու աշխարհին, որ Ադանայի ջարդերը հետևանք էին քրիստոնյաների ձգտմանը հասնելու «քաղաքական իրավունքների»՝ անկախության կամ ինքնավարության, չնայած հանդիսանում էին ազգային փոքրամասնություն: Իսկ, որ մահմեդականները կոտորեցին քրիստոնյաներին հետևանք էր այն բանի, որ Մուշեղ եպիսկոպոսը զենք էր ներկրել, գինել էր հայերին և պատրաստվում էր կոտորելու մահմեդականներին: Ինչպես Ջեմալն է իր հուշերում գրում, պլանավորված էր, որ «յուրաքանչյուր հայ սպանելու էր տասը թուրք»: Ահա թե ինչու հնարում է Ջեմալը. «... Ապրիլի 14-ին մոնսենյոր Մուշեղի հրամանով հայերն առաջինը սկսեցին Ադանայի հայտնի գործը»: Եվ այն, որ Ադանայում ոչնչացվեց 17000 հայ և միայն 850 մահմեդական, գտնում է նա, վկայում է, որ եթե հայերը մեծամասնություն կազմեին, ապա թվերը միանգամայն ուրիշ կլինեին՝ մահմեդականներ ավելի շատ կսպանվեին, քան հայեր:

Այսպիսով, Ջեմալը գտնում էր՝ Ադանայի ողբերգության միակ մեղավորը Ադանայի թեմի առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսն էր[43]: Ընդորում, երիտթուրք այդ պարագլուխը խեղաթյուրում էր ամեն ինչ: Նա անհերքելի է համարում, որ «Ադանայի վիլայեթը օսմանցիներից շատ առաջ թուրքերին էր պատկանում և նույնիսկ հայկական թագավորության շրջանում Կիլիկիայում թուրքեր էին ապրում: Սահմանադրության հայտարարումից հետո մոնսինյոր Մուշեղն իրեն ամբարտավանորեն Ադանայի հոգևոր ու քաղաքական պետ էր հայտարարել, հայ երիտասարդությանը Անկախ Հայաստանի համար պայքարի մղում: Նա Եվրոպայից զենք է բերում ու հայտարարում, թե հայերն արդեն զինված լինելով, 1894թ. կոտորածի կրկնությունից վախ չունեն, այժմ, եթե մի հայ սպանվի, փոխարենը կսպանվի տասը թուրք: Հայերը ձգտում էին եվրոպական ռազմանավերի օգնությամբ վիլայեթը գրավել ու վերականգնել հայկական անկախ պետականությունը: Բայց Ջեմալը նաև չի կարողանում ժխտել, որ Կ. Պոլսից Ադանա էին ուղարկվել մարդիկ՝ թուրքերին հայերի դեմ գրգռելու համար[44]: Ապա շարունակում է. «Ապրիլի 14-ին վերջապես Մուշեղ եպիսկոպոսի հայերին տված հարձակման հրամանով սկսվեցին Ադանայի դեպքերը»: Հայաբնակ «բոլոր վայրերում տեղի ունեցավ մի այնպիսի կոտորած, որի մանրամասների նկարագրությունն իսկ սարսափ է ազդում»: Կառավարությունը «զանգվածաբար ոտքի կանգնելու հրաման էր տվել»: Մութասարիֆ Էսադը հեռագրերով կայսրության մահմեդական բնակչությանը կոչ էր անում. «Հայրենիքն ու ազգը սիրող ամեն մի անձի պարտքն է զենք վերցնել» և շտապել Ադանա: Եվ մահմեդական ամբոխը հարձակման անցավ, անձնատուր եղավ «թալանի, քաղաքներ, գյուղեր և կալվածքներ հրդեհելուն»[45]: «Իմ անձնական համոզմունքով «Կիլիկիայի գիշեր» հրահրողը եղել է մոնսինյոր Մուշեղը, իսկ իսկական մեղավորը և պատասխանատուն այն ժամանակվա նահանգապետն էր»[46]:

43 Cemal Pasa Hatiralari, Istambul, 1959, s.353 կամ Ջեմալ փաշա Հայկական հարց, էջ 21-23:
44 Ջեմալ փաշա, նշվ. աշխ., էջ 24-25:
45 Նույն տեղում, էջ 26-27:
46 Ն. տ., էջ 28:

Թուրքական ժամանակակից պատմագրությունը կրկնում է այն, ինչ ժամանակին ասել էին ջարդերի կազմակերպիչները: Ոչ թե թուրքերն էին որոշել կոտորել հայերին, այլ հայերն ապստամբության միջոցով ձգտում էին անկախանալ: Թուրքական «Ինը հարց, ինը պատասխան» գրքույկը Ադանայի առնչությամբ ներկայացնում է «հայկական ապստամբությունների» մի ամբողջ շղթա: «Առաջին ապստամբությունը տեղի ունեցավ 1890թ. Էրզրումում: Դրան հաջորդեցին Գում Գափուի, Կայսերիի, Ցոզղաթի, Սորոմի և Մերզիֆոնի՝ 1892–1893թթ., Սասունի 1894թ. խռովությունները, Զեյթունի ապստամբությունը և Բ. Դռան վրա հարձակումը՝ 1895թ., Վանի ապստամբությունը և Օսմանյան բանկի գրավումը՝ 1896թ., Սասունի երկրորդ ապստամբությունը՝ 1904թ., Աբդուլ Համիդի դեմ մահափորձը՝ 1905թ. և Ադանայի խռովությունը՝ 1909թ.: Եվրոպայում և Ամերիկայում գտնվող հայկական հեղափոխական միությունները բոլոր այս խռովություններն ու ապստամբությունները թուրքերի կողմից հայերի կոտորած ներկայացրին և նման քարոզչությունը նշանակալից հուզում առաջ բերեց քրիստոնյա ազգերի շրջանում»[47]:

Թուրքերին կրկնում էին մի քանի եվրոպացի դիվանագետներ: Այսպես, Էրզրումում բրիտանացի հյուպատոս Գրեսը "New York Herald"-ի թղթակցի այն հարցին, թե «եթե հայ հեղափոխականները չմիջամտեին, ապստամբության չդրդեին, այդ բախումները տեղի կունենայի՞ն», պատասխանում է. «Իհարկե, ոչ: Ձեմ կարծում, որ նույնիսկ մի հայ սպանվեր»: Անգլիացի մի այլ հյուպատոս Վանից գրեց. «Անատոլիայում կատարված դեպքերի պատճառը հայ հեղափոխականների հանցագործություններն են»[48]: Հայ հեղափոխականների վրա բարդվեց նաև բարենորոգումների ձախողման մեղքը: Վկայակոչվում են Մաևակու խոսքերը, թե 1895–96թթ. հայկական հեղափոխականներն այնպիսի վիճակ ստեղծեցին, որ անհնար դարձավ բարենորոգման անցկացումը: Ըստ թուրք հեղինակների «հայկական ապստամբությունների» պատճառը ոչ թե ծանր կացությունն էր, այլ 1. հայերի քաղաքական հասունության աճը, 2. ազատության, նացիոնալիզմի և անկախության գաղափարների տարածումն ազգաբնակչության շրջանում, 3. արևմտյան տերությունների կողմից այդ գաղափարների խրախուսումը: Մաևակին գրում է, որ ոչ թե թուրքերն էին ոչնչացնում հայերին, այլ «դաշնակցական հեղափոխականները ձգտում էին ստեղծել այնպիսի դրություն, որ մուսուլմաններն ու հայերը սկսեին միմյանց կոտորել, ինչը ռուսներին հնարավորություն կտար ներխուժելու»[49]:

Թուրք պատմաբաններից «թռցրած» այս և նման մտքերը հերքվում են տրամագծորեն հակառակը հաստատող բազմաթիվ վկայություններով: Ահա թե ինչպես է ներկայացնում Ադանայի իրադարձությունները Մելվան Զադե Ռիֆաթը: Նա գրում է. «Իթիհադը և Թերաքը կուսակցությունը հայերը չէր մոռցած: Ադանայի մասնաճյուղը կեդրոնից ստացած հրահանգով Կիլիկիայում, մասնավորապես Ադանայում, սկսել էր մի ընդհանուր ջարդ նախապատրաստել...»: Իթիհադի «Ադանայի բաժանմունքը համաձայն Կենտրոնից ստացված հրամանի, ձեռնամուխ եղավ համընդհանուր ջարդերի կազմակերպմանը Կիլիկիայում, մասնավորապես Ադանայում»: Երբ մահմեդականները սկսեցին հարձակումը, «Ադանայի հայերն ահաբեկվեցին, քանի որ շրջակայ գիւղերի բնակիչները՝ զինված հրացաններով, ատրճանակներով, սրերով... և այլն, խումբ առ խումբ փախան քաղաք: Հայերը վախենում էին ինչպես գրգռված ամբոխի և հասարակ ժողովրդի հանկարծակի հարձակումից, այնպես էլ դրանց կառավարութեան աջակցութիւնից: Ահա թե ինչու նրանք հարկադրված եղան ամրացնել իրենց թաղերը ընդդեմ ցանկացած պատահականութեան և հարձակման»[50]: Իրար դեմ սպասողական վիճակում կանգնեցին երկու հակադիր ուժեր: Ռիֆաթն անդրադառնում է նաև ջարդերի պատրվակին: Ապրիլի 13-ին գրում է նա. «Սպանվեց ոմն Լյուդվիգ, որը մահմեդականացած հայ էր: Հաջորդ օրը սկսվեց մուսուլմանների հարձակումը հայոց թաղերի վրա, սակայն նրանք հակահարված ստացան և հարկադրված էին

47 New questions, pp. 21-23.
48 Նույն տեղում, էջ 22:
49 Ն. տ., էջ 18-23:
50 Ռիֆաթ Մ. Օսմանեան Յեղափոխութեան մութ ծալքերը և Իթիհադի հայաջինջ քաղաքականութիւնը, Եր., 1990, էջ 104:

խաղաղվել: Այդ օրը սպանվեց շուրջ 100 հայ և 150 մահմեդական: Իթիհադը զինվորական ուժեր բերեց ու սկսեց արյունահեղ ջարդեր: Դա ոչ թե Մուշեղ եպիսկոպոսի ձեռնարկումների հետևանք էր, ինչպես պնդում էր Ջեմալը, այլ Կ. Պոլսի հերթական խարդավանքը»[51]:

Ա. Ադոսիդեսը իր «Հայերը և երիտթուրքերը» գրքում պատմում է, որ ջարդերը նախապատրաստվում էին երկար ժամանակ, իսկ նախօրեին մահմեդականների բազում ժողովներ ու հավաքույթներ էին տեղի ունենում: Թե պաշտոնատարները և թե մահմեդական խուժանն ադիթը բաց չէր թողնում հայերին գրգռելու և բախման պատրվակ ստեղծելու համար: Տեղի ունեցան նաև սպանություններ, մահմեդականների շրջանում սադրիչ լուրեր տարածվեցին: Մարտի վերջին օրվա երեկոյան ստացվում է Պոլսի հեղաշրջման լուրը, և քաղաքն անմիջապես ընկնում է «բաշիբոզուկների իշխանության տակ», որոնց բերել էին «շրջակայքից և նույնիսկ հեռավոր գյուղերից», զինված մեխապատ մտրակներով, կացիններով, կեռ թրերով, եղաններով: Նրանց զենք բաժանվեց:

Վալու նախագահությամբ կայացած ժողովը որոշում է ընդունում. «Թույլատրվում է սպանել անհավատներին և տիրանալ նրանց ունեցվածքին»: Միաժամանակ թե հայերին և թե օտարերկրացիներին, այդ թվում նաև հյուպատոսներին, հավաստիացնում էին, որ որևէ վտանգ գոյություն չունի: Վալուն կրկնեց ամերիկյան միսիոներ Ու. Ջեմբըրսինը. «Բոլոր նախազգուշական միջոցները ձեռնարկված են կարգի և անվտանգության ապահովման համար...»: Իրականությունը միանգամայն այլ էր:

Հաջորդ օրը ջարդարարական նոր խմբեր ագարակներում գտնված հայերին սպանելով, խուժում են քաղաք: Անվտանգության նկատառումով քաղաքի բոլոր մահմեդականները կրում էին սպիտակ փաթթոց, նրանց կրպակների վրա գրված էր «Իսլամ»: Այդ ժամանակ Ադանայում գտնված Դիբբոնը նկարագրում է. «Հայկական թաղեր տանող ամբողջ ճանապարհը լցված էր թուրքերով զինված փայտերով...», որոնք հատուկ այդ օրվա համար էին պատրաստվել: Հայերի խանութները փակ էին: Շուտով դրանք ամբողջովին թալանվեցին: Քաղաքի ամենատարբեր մասերում սկսվեց կատաղի հրաձգություն: Բոլոր կողմերից կանչեր էին լսվում. «Փրթե՛ք, փրթե՛ք գյավուրներին»: «Ամբողջ քաղաքով մեկ հետապնդում էին հայերին, գրոհում սարսափից խելակորույս ժողովրդի վրա»: Սպանում էին հրացաններով, դանակներով, մահակներով, կացիններով, քարերով: «Ահա 30-40 հոգանոց ավազակների մի ամբոխ կատաղի հարձակվում է զոհի վրա, երեխայի մարմնին կար 50-ից ավելի թրի ու դանակի հարված»: «Զորամասերը գործում են խուժանի հետ համատեղ... Սպանում են իշխանության աչքի առաջ, ոստիկանների համագործակցությամբ... Եվ ամենուրեք, սպանություններից հետո, սկսվում է թալանը, թալանից հետո՝ հրդեհը»: Կաթոլիկ միսիոներուհի Մարիա Սոֆյան գրում է. «Մենք լսում ենք դռների չրխկոց, դրանք տեղահանում են, սեյֆերի շրխկոց, դրանք ջարդում են, տեսնում ենք կահույք, որ փողոց են շպրտում...»: Երեկոյան սկսվում է հրդեհը: «Տների վրա նավթ են լցնում ու վառում: Ամբողջ ընտանիքներ են դրանց մեջ խեղդվում, ածխանում: Որ դժբախտը կարողանում է բոցերից դուրս պրծնել, տեղնուտեղը ընկնում է մարդասպան լեգեոնների ձեռքից...»: Հայերը Թուրքերին համառ դիմադրություն ցույց տվեցին իրենց երեք թաղերում: Տեր-Կապուտում նրանք թուրքերին փախուստի մատնեցին ու գրավեցին մզկիթը: Հաջորդ օրը կոտորածները շարունակվեցին: Բաշիբոզուկը քաղաքով մեկ «սպանում, խոցում, փրթում, կտոր-կտոր էր անում ու հեռանում՝ հևալով, քրտինքի մեջ, արյունով շաղախված՝ ոռնալով գազանների նման: Ներխուժում էին տները, եկեղեցիներն ու դպրոցները, որոնք լեփ-լեցուն էին փախստականներով...», դիակների ու վիրավորների կույտերը վերածվում էին բարիկադների: Սպանում էին միայն հայերին, բացառությունները չնչին էին: Սպանում էին հիմնականում տղամարդկանց, իսկ կանանց ու երեխաներին «ստրկության էին դատապարտում ու Մարգարեի հավատին դարձնում»: Սակայն շատ կանայք ու երեխաներ ևս սպանվեցին «անլուր դաժանությամբ»: «Այն, ինչ ընդհանրապես ապշեցնում է Կիլիկիայում տեղի ունեցած իրադարձություններում, դա դաժանությունն է և աներևակայելի ցինիզմը, որով ոչնչացվում է մի ամբողջ ժողովուրդ»:

51 Ռիֆաթ Մ. Օսմանեան Յեղափոխութեան մութ ծալքերը և Իթիհադի հայաջինջ քաղաքականութիւնը, Եր., 1990, էջ 110:

Պատմում է ռուս պաշտոնատար Շելկովնիկովը. «Հունիսի 9-ի առավոտյան ժամանեցի Ադանա: Անհնար է նկարագրել կործանված թաղերը. քաղաքի 3/4 գոյություն չուներ, անվնաս են միայն... մուսուլմանական թաղերը: Մնացած մասերը (մոտ 5-6 հազ. տուն) խճաքարի, աղյուսի, ջարդված լուսամուտներով, փուլ եկած առաստաղներով ու պատերի մասերով... ավերակներ էին: Քաղաքի այս (հայկական) մասում մեռելային լռություն է, միայն սոված կատուներ, շներ, ագռավներ են երևում, երբեմն նաև մի դժբախտ հայ, որ քչփորում է սեփական տան ավերակները հույսով, թե իր ունեցվածքից ինչ-որ բան կգտնի»[52]: Ա. Ադոսիդիսը գրում է. «Թուրքերը միանգամից չէին սպանում տղամարդկանց, այլ նրանց տանջում էին, մինչև լողանային սեփական արյան մեջ, կանանց բռնաբարում էին նրանց աչքի առաջ... Մենք լսում էինք դժբախտների աղեկտուր ճիչերը՝ վայնասունը նրանց, ում փորն էին ճեղքում, ում կոտանքի էին ենթարկում»: Հայերին գլխիվայր կախում էին ու կացինով մանրատում, ինչպես անասունին սպանդանոցում: Կապում էին փայտե մահճակալին և այն վառում, ողջ-ողջ մեխում հատակին, դռներին, սեղաններին: Ծնողի ծնկների վրա կտոր-կտոր էին անում երեխային: Ծնողների ներկայությամբ վեր էին նետում փոքր երեխաներին և սրի ծայրով որսում օդում: Հաճախ սպանության հաճույքը երկարացնելու համար նախ քաշում էին զոհի եղունգները, կոտրատում մատները, շիկացած երկաթով դաջում մարմինը, քերթում գլուխը և նետում շներին: Կտրում էին հայի վերջույթները, ստիպում ծամել սեփական մարմնի կտորները, կանանց խեղդում էին նրանց բերանը խցկելով սեփական երեխայի միսը և այլն[53]: Կիլիկիան «ընկղմվել էր շիկացած դժոխքի մեջ»:

Ադոսիդիսի հավաքած նյութերում կա նաև Ջեբել-Բերեքեթի գավառի ջարդերի նկարագրությունը: Ասվում է, որ ջարդարարները հավաքագրվել և զինվել էին մութասարիֆ Էսադի ջանքերով և նրա ենթակաների տված ազդանշանով ու «բաց էին թողնվել քրիստոնյաների վրա»: Սպանում էին, թալանում, ավերում տները, «առևանգում մեծ թվով աղջիկների և գրաստների ու անասունների հետ խառը քշում հեռուները... մահմեդականացնում էին կանանց, երեխաներին, անգամ տղամարդկանց... Շատ հաճախ ծիսակատարություններից ու ծեսերից հետո, ներառյալ անգամ թլպատումը... սպանում էին նաև նորադարձներին...»[54]:

Հայերին զանգվածաբար բանտ էին նետում, խուզարկում նրանց տները, բռնագրավում զենքերը: Իսկ մահմեդականները ոչ միայն չէին զինաթափվում, այլև տենդագին զինվում էին, ստանում հրդեհի սարքեր ու նավթ: Նրանց միացան քաղաք բերված զորքերը, որոնք հայերին ողջ–ողջ լցնում էին փոսերն ու խմբերով այրում: Վիլայեթի գյուղերում հայերի ջարդեր իրականացնելու համար վալին տեղերն ուղարկեց հետևյալ շրջաբերականը. «Հայերը հարձակվել են մեզ վրա: Ուղարկեք պահեստի զինվորներ և միջոցներ ձեռք առեք, որպեսզի պաշտպանեք տեղի մուսուլմաններին»[55]:

Հ. Գիբբոնը գրում է. «Ես Թուրքիայում եղել եմ 1909թ. կոտորածի ժամանակ և մանրակրկիտ ուսումնասիրել եմ հայերին ներկայացրած բոլոր մեղադրանքները... ես լիակատար համոզման եկա, որ կիլիկիահայերին ներկայացրած մեղադրանքներն անհիմն են... Հայ հեղափոխականների կողմից Թուրքերին ոչինչ չէր սպառնում: Թուրքերն այդ հիանալի գիտեին... Եթե կառավարությունը ինչ-որ չափով վախենար, ապա ցանկացած պահին նրանց կարող էր ձերբակալել...», բայց նման բան տեղի չունեցավ: Դրա փոխարեն հայերին կոտորեցին և ապա մեղքը բարդեցին «հայկական հեղափոխության վրա»: Իսկ ռազմական դատարանի դրսևորած ահավոր անարդարությունը վկայությունն էր երիտթուրքերի ճգնաժամի[56]: Եվ ոչ միայն երիտթուրքերի, այլև ՀԲԴ, որը «երիտթուրքերի հետ սիրախաղերում այնքան առաջ էր գնացել, որ գլորվել էր թուրք հայաջինջների գիրկը և կորցրել վտանգի ամեն մի զգացողություն»[57]:

52 ЦГВИАР ф.2000, оп. 1, д. 1004.
53 Adossidis A. Armenians et jeunes Turcs. Les massacresa de Cilicia. Paris, 1910, p. 25-2
54 Նույն տեղում, էջ 29:
55 Ն. տ., էջ 21-79, 98-101:
56 Гиббонс Г. А., նշվ. աշխ., էջ 17-18:
57 Նույն տեղում:

Այդ ընթացքում անկարգություններ հրահրելու մեղադրանքով շարունակվում էր ձերբակալությունները ոչ միայն Ադանայում, այլև Հաճընում, Դիարբեքիրում: Ադանայի վալին խորհրդարանին ներկայացրեց, թե սպանվել է 1300 մահմեդական և 1400 քրիստոնյա: «Թյուրքիե» թերթը գրեց, թե Ադանայի վիլայեթում 150000 մարդ մնացել է անօթևան:

Ապրիլի 20-ին Գում Գափուում տեղի ունեցավ նոր ցույց, որը խնդիր առաջադրեց ստեղծելու ռազմական ուժ և ժողովրդին պաշտպանել ջարդերից: Նպատակահարմար համարվեց, որ բանակային ստորաբաժանումները «սառեցնեին մահմեդականների կրքերը և Փոքր Ասիայում տեղի ունեցածը ուսումնասիրվեր Եվրոպայի կողմից: Նաև պահանջ առաջ քաշվեց, որ պատրիարքարանը եռանդուն մասնակցություն ունենա ազգային առճակատումների իրական պատկերը ներկայացնելու գործում»[58]:

Ապրիլի 24-ին Ազգային ժողովում Հ. Ճանկյուլյանը հատարարեց, թե Ադանայի ջարդը նախապես ծրագրված էր, իսկ ՆԳ նախարարությունը հրաժարվում է բացահայտել իսկական հեղինակներին: Դրա փոխարեն համառորեն պահանջում է, որ կիլիկիահայերը հանձնեն զենքերը: Նա գտնում էր, որ միակ արդյունավետ միջոցը ինքնապաշտպանությունն է, կործանարար համարում երիտթուրքերին վստահելը: Ժողովում նշվեց թուրքական սահմանադրության հակաժողովրդական բնույթը, այն բացառում էր ինքնավարության գաղափարը: Ժողովը գտավ, որ Ադանայում կատարվածը պատահական չէր: Գր. Զոհրապը շեշտը դրեց ձախողված պետական հեղաշրջումից, ջարդերից հետո սահմանադրական կարգերի ուժեղացման վրա: Եղավ առաջարկ ռումելական բանակի սպաներից կազմելու հանձնաժողով Ադանայի դեպքերն ուսումնասիրելու և ապահովելու փախստականների վերադարձը, պահանջել ֆինանսական օգնություն տուժածներին, պետության հաշվին վերականգնել այրված և ավերված տները, դպրոցները և եկեղեցիները: Որոշվեց անհրաժեշտ ձեռնարկումները՝ իշխանությունների անաչառություն, տուժվածներին օգնության ապահովում, ազգային միլիցիայի ստեղծում և մեծ տերությունների իրական երաշխիքի ձևավորում: Առաջարկվեց թուրքական կառավարությանը Ադանայում դադարեցնել ռազմական դատարանի գործունեությունը, քանի որ այն զբաղված էր միայն մի բանով՝ անմեղ հայերի մահավճիռներ թխելով: Ժողովը պահանջեց դատական գործ հարուցել այն մահմեդականների դեմ, ովքեր առաջ են բերել անկարգություններ և մասնակցել են ջարդերին[59]: Սակայն նշված առաջարկների զգալի մասը չմտավ տեղեկանքի վերջնական տեքստի մեջ, ինչը պայմանավորված էր ժողովի ձգտմամբ՝ իթիհադի կենտրոնին մղել ստեղծելու հայ-թուրքական համատեղ հանձնաժողով Ադանայի իրադարձություններն ուսումնասիրելու համար:

Եվ իսկապես, ապրիլի 30-ին օսմանյան խորհրդարանը որոշում կայացրեց ստեղծել այդ հանձնաժողովը կազմված երկուական թուրքից ու հայից: Հայերից հանձնաժողովի կազմի մեջ մտցվեց խորհրդարանի անդամ Հակոբ Պապիկյանը և Մոնաստրի վիլայեթի դատաքննիչ Հարություն Մոստիգյանը: Նրանք երիտթուրքական կուսակցության անդամ էին: Թուրքերից հանձնաժողովի մեջ մտան Ցուսուֆ Քեմալն ու Ֆայիզը:

Կ. Պոլսի հայ վերնախավը գոհունակությամբ ընդունեց հանձնաժողովի ստեղծումը, չնայած դա համարում էին կիսատ-պռատ միջոցառում, մանավանդ, որ թուրքական մամուլը միակողմանի էր լուսաբանում Ադանայի ջարդերը: Արշարունին ծաղրեց. «Հայերի մեղքն այն էր, որ զենքով պաշտպանվեցին թալանչիներից, ովքեր սպանում էին, բռնաբարում կանանց ու աղջիկներին»[60]:

Պատրիարքարանը ստեղծեց առանձին հանձնաժողով կազմված արքեպիսկոպոս Հ. Ալանիզ ու Ազգային ժողովի պատգամավոր Ս. Սունուց: Այս հանձնաժողովին, սակայն, թույլ չտվեցին մտնել Ադանա մինչև «հանդարտություն հաստատվեր»[61]:

58 «Մշակ», 28.04.1909:
59 Նույն տեղում, 15.05.1909:
60 Ն. տ., 09.06.1909:
61 Ն. տ., 08.05.1909:

Օսմանյան խորհրդարանում 1909թ. մայիսի 1-ին լսվեց հանձնաժողովի զեկուցումը: Հանձնաժողովի նախագահ Ցուսուֆ Քեմալը հայտարարեց, որ հայերի կոտորած տեղի ունեցել է և զեկուցման համար ձայնը տվեց Հ. Պապիկյանին: Զեկուցման մեջ կային թուրքական իշխանություններին մերկացնող բազմաթիվ փաստեր: Երկու օր անց, երբ Պապիկյանը խորհրդավոր պայմաններում մահացավ, զեկուցագիրն «անհետացավ»: Միայն մի քանի տարի անց այն հայտնաբերվեց ու 1919թ. հրատարակվեց Կ. Պոլսում: Ռուսական "Новое время" թերթը 1913թ. մայիսի 22-ին գրեց. «Հակոբ էֆենդի Պապիկյանը, որին թուրքաֆիլ էին համարում, համենայն դեպս իր եզրակացության մեջ գրեց, որ Միություն և առաջադիմություն կոմիտեի անդամներն ու պարագլուխները Ադանայում օգնել են կազմակերպելու և իրականացնելու հարձակումը հայ համայնքի վրա... Այս իրողությունը հաստատված է նահանգի զանազան տարրերի, ինչպես նաև հյուպատոսների, ամերիկացի միսիոներների և լատին քահանաների կողմից»:

Ադանայում կատարվածը հաստատեց, որ հայերին սահմանադրական Թուրքիայի խոստացածները խաբեություն էին: Երկրային դրախտի փոխարեն նոր Թուրքիան կազմակերպեց հայկական նոր կոտորած, որն իր ծավալներով և դաժնությամբ հիշեցնում էր օսմանյան հին կայսրության չարագույժ ժամանակները[62]: «Համիդյան ջարդերի օրով,- կարդում ենք տեղեկագրում,– երբեմն կիներուն և տղայոց կխնայեին, իսկ Ատանայի մեջ ողջ-ողջ այրած էին հիվանդներն ու վիրավորները, ինչպես, օրինակ, Աբգարեան վարժարանի 150 վիրավորներուն հրկիզումը»: «Այս եղերական և ահասարսուռ ճշմարտությունները,– հայտնելու առթիվ բավական մտածեցի՝ խորհելով, որ իսլամ ընկերներիս սրտից արյուն է գնում և մտածեցի նրանց հոգին թեթևացնեմ»[63]: Ու ներկայացնում է սպանվածների թիվը Ադանայում 9350, Տարսոնում 1280, Սայ Գեղիդում 850, Էսկ Հաջըլում 1558 և այլն: Հայերից սպանվածներ՝ 20571, անապաստան մնացածներ՝ 30000 մարդ:

Թուրք ջարդարարներին մերկացնող ելույթներով հանդես եկան պատգամավորներ Վարդգես (Հովհաննես) Սերենկյուլյանը, Գրիգոր Զոհրապը, Դ. Տաղավարյանը, Համբարձում Պոյաճյանը (Մուրադը): Վարդգեսն ասաց. «Սահմանադրությունն բերող բանակին ու կառավարությանը կուզեմ ուղղել խոսքերս, ո՞ւր են ձեր գեղեցիկ սկզբունքները... ինչո՞ւ թույլ տուիք ջարդել անմեղ ժողովուրդ մը, որ փարուած էր սահմանադրական կարգերուն, ինչո՞վ պիտի զանազանուիք ոճրագործ Ապտուլ Համեսեն...»: Գրիգոր Զոհրապի հարցապնդմանը՝ եպարքոսը պատասխանեց. «...Ետադեմ ոճրագործ սրիկաներու այս խումբերը, ըստ երևույթին, Ատանայի հայութեանը հանկարծակիի բերելով, ջարդելու և հարստութիւնները կողոպտելու նպատակ են ունեցել»[64]: Թուրք պատգամավոր Ռիզա Թևֆիկն ասաց. «Ֆետայի ըսելով, իզուր չենք կրնար ամբաստանել հայերը: Այո, հայերը ֆետայի են, բայց ազատութիւնը վերստանալու համար մեզ օգնող ֆետայիներ են և, մեր կողմե ալ այս տեսակ վարմունք մը տեսնելով հանդերձ, հայերը աշխատում են, որպեսզի մեզմե չբաժանվին: Նմանօրինակ ժողովուրդ մը որևէ կերպով չենք կրնար ամբաստանել...»[65]: Հանդես եկավ նաև ՆԳ նախարարի տեղակալ իթիհադական Հ. Ադիլը: Նա հենվելով «տեղերից ստացված նամակների» վրա, հայտարարեց, թե նախահարձակը եղել են հայերը, ովքեր օգտագործել են ռումբ ու զենք, իսկ մահմեդականները լոկ պաշտպանվել են: Այս հայտարարությունը խորհրդարանում աղմուկ առաջացրեց և Ադիլը հարկադրված նահանջեց. «Ես չգիտեմ, ով է իրավացի և ով մեղավոր»: Խորհրդարանը որոշեց տեղական իշխանություններից պահանջել ճշմարիտ տեղեկատվություն կատարվածի մասին և օգնություն տրամադրել տուժածներին: Հայ պատգամավորները հեռացան նիստից: Մի հարցում հանձնաժողովների եզրակացությունները համընկնում էին՝ Ադանայի ողբերգության գլխավոր հանցագործները վալի Ջևադն ու զորահրամանատար Ռեմզին էին. նրանց գործողություններն էին հանգեցրել կոտորածի:

62 "Новое время", 16.06.1913.
63 Պապիկյան Հ. Ադանայի եղեռնը, Կ. Պ., 1912, էջ 42:
64 «Մանկավարժ» ամսագիր, 1990, մայիս:
65 Թերզեան Ց. Կիլիկիոյ աղետը, հ II, Կ.Պ., 1912, էջ 42:

Խորհրդարանական հանձնաժողովի տեղեկանքում ասվում է, որ ջարդերի գաղափարն առաջ քաշողներն ու իրականացնողներն այն ուժերն էին, ովքեր սահմանադրության հռչակումից հետո էլ շարունակում էին ղեկավարվել հետևյալ մտայնությամբ. «Սահմանադրությունը դեմ է իսլամությանը... շարիաթի օրենքով իսլամի ու քրիստոնյայի միջև եղբայրությունն անհնար է»:

Պատրիարքարանի հանձնաժողովն արձանագրեց՝ հայ բնակչությանը հասցրած վնասը կազմեց շուրջ 20 մլն. թուրքական լիրա: Հրդեհվեց 24 եկեղեցի, 16 դպրոց, 2320 տուն, 30 հյուրանոց, 2 ֆաբրիկա, 1429 ամառանոց, 253 ագարակ, 523 խանութ, 24 ջրաղաց և շատ ուրիշ շինություններ[66]: Կիլիկիայի ողբերգության զոհերի թիվը կազմեց 30000 մարդ, դա հաստատում են նաև ավստրիական արխիվները: Բեյրութում 1970թ. լույս տեսած «Ատանայի հայոց պատմութիւն» գրքի էջ 200-ում կարդում ենք. «...Երկու հաջորդական ջարդերու ընթացքին ապրիլի 1-11 (հ.տ.) ջարդվեցավ շուրջ 30 հազար հայ, հրկիզվեցան եկեղեցիներ, դպրոցներ ու թաղեր, թալնուեցան ամբողջ հայ շուկաներ, փչացան երկրագործական մեքենաներ և անասուններ...»: Գրքում Ադանա քաղաքի հայերի կրած վնասը նշված է «ոչ նուազ քան հինգ միլիոն օսմանեան ոսկի»: Վ. Գուրկո-Կրյաժինը շրջանառության մեջ դրել է 20 միլ. թուրքական լիրա թիվը[67]: Ա. Ադոսիդիսը սպանված հայերի թիվը նշում է «նվազագույնը» 20 հազար: Նվազագույն, որովհետև այս թվի մեջ չեն մտնում նրանք, ովքեր փախչելով մարդասպաններից ու հրաձիգներից հետագայում վախճանվել են վերքերից[68]: Միայն Ադանա քաղաքում այրվել էր 1190 տուն, 6 եկեղեցի և շուկա: Տարսոնում հրո ճարակ էր դարձել 800, Հասան-Բեյլիում 814, Բախրեում 115, Օսմանիեում 200, Ջեբել Բերեքեթի սանջակում 915 տուն և այլն: 5189 տուն կիսավեր էր[69]: Է. Ուրասի կարծիքով հայ գործիչների ներկայացրած 30000 և պատրիարքարանի նշած 21330 թվերը խիստ չափազանցված են: Հայերի կորուստների թիվը 10000 չի անցել: Թուրքական քարոզչությունը շրջանառության մեջ դրել է նաև մինչև հազար զոհված՝ որից 250-ը մահեղական:

Համաձայն Հ. Պապիկյանի հանձնաժողովի տվյալների Ադանայի վիլայեթում սպանված 20108 մարդուց մահմեդական էր 620, քրիստոնյա-սիրիացիներ՝ 318, հայ-բողոքականներ՝ 655, քաղկեդոնականներ՝ 168, հույներ՝ 69, հայ-գրիգորյանականներ 17778 հոգի: Վիլայեթում կատարված սպանությունների 90%-ի հեղինակը զինվորականներն էին: Նույն հանձնաժողովի տվյալներն ու եզրահանգումները, որոնք օսմանյան կառավարությունն ընդունեց ամբողջությամբ, արձանագրում էին, թե «Ադանայի իրադարձությունների մանրամասները եվրոպական մամուլի հրապարակումներում չափազանցեցված չէին, անգամ փոքրացված էին»: Հանձնաժողովը կատարվածի մեղքը բարդում էր հետադիմական ուժերի վրա, առանց շեշտելու Աբդուլ Համիդի խաղացած դերը: Ներկայացված էր նաև հոգևորականության «վաստակը»: Բաղեշի մուֆտին քարոզում էր, թե ազատությունն ու սահմանադրությունը քրիստոնյաների հնարածն էին: Տեղեկագրում ամենայն որոշակիությամբ հերքվում էր հայերի դերը արյունահեղ իրադարձությունների առաջացման գործում: Մուշեղ եպիսկոպոսի գործունեության կապակցությամբ Հ. Պապիկյանը հայտարարեց. «Համաձայն մեր հետաքննությունների արդյունքների եպիկոպոսը չի եղել իրադարձությունների մասնակից»: Դեռ ավելին, նա հունվար ամսին պաշտոնապես զգուշացրել էր կառավարությանը, թե ջարդեր են նախապատրաստվում: Հանձնաժողովը նաև փաստեց Ադանայի ռազմական դատարանի կողմնակալությունը: Կոտորածից մազապուրծ հայերը ձգտում էին հեռանալ Ամերիկա, բայց իշխանությունները թույլ չէին տալիս[70]: Բ. Դռան ուղղակի մասնակցության մասին գրված էր անորոշ՝ Բ. Դուրը չնայած չի մասնակցել, բայց հանդիսացել է պատճառ:

Հ. Պապիկյանի հետ համաձայն էին հանձնաժողովի բոլոր անդամները, բացի Ֆայիդից, որը «Tasfir efkiar» թերթին տված հարցազրույցում աշխատում էր ժխտել երիտթուրքական պաշտոնական ներկայացուցիչների մասնակցությունը ջարդերին: Սակայն նա նույնպես անուղղակիորեն հաստատում էր, որ սպանվել էր 20800 մարդ, բայց պնդում էր, թե Ադանա քաղաքում սպանվել էր 6000 հայ և թուրք, մյուսների թիվը ճշտելը համարում էր անհնար, քանի որ կային «հազարավոր սեզոնային աշխատողներ» և աշխատանք չունեցող շատ մարդիկ: Ֆայիդը գտնում էր, որ ջարդը կազմակերպվել էր տեղի մութ ուժերի կողմից, որոնց մեջ կային թե մահմեդականներ և թե քրիստոնյաներ: «Ադանայի իրադարձությունների առաջին պատճառը,– ասում էր նա,– հանդիսանում է տգիտությունը, երկրորդ պատճառը տգիտությունը, երրորդ պատճառը տգիտությունը»: Ֆայիդը ժխտում էր Ադանայի իշխանությունների մեղքը[71]: Նրա այս ժխտումները, հավանաբար, ոչ այնքան սեփական նախաձեռնություն էին, որքան խորհրդարանում Հ. Պապիկյանի զեկուցման կապակցությամբ պաշտոնական քաղաքականության դրսևորում: Դեռ հուլիսի 19-ին Հ. Պապիկյանին սպառնացել էին ատրճանակով, իսկ առանց ատրճանակի սպառնալիքները սովորական էին: Բայց Պապիկյանը համառ էր և պատրաստ մինչև վերջը կատարել «իսկական օսմանցու» իր պարտքը: Դա էլ իթիհադ կուսակցության հայ անդամին վերածեց սեփական կուսակցությանը մեղադրողի, ինչն արժեցավ նրա կյանքը: 1909թ. հուլիսի 20-ին գրված մի նամակում ասված է. «Երեկ գիշեր Սան Ստեֆանոյում սրտային հիվանդությունից վախճանվեց օսմանյան խորհրդարանի անդամ Հակոբ էֆենդի Պապիկյանը, որն ինչպես գիտեք, ուղարկված էր որպես քննիչ Ադանա և հանդիսանում էր ճշմարտության և արդարության ամենահզոր և բարձր պարզած դրոշը»[72]: Հ. Պապիկյանի թաղման ծիսակատարությանը Գում Գափուում մասնակցում էր 10000 մարդ: Բոլորը համոզված էին, որ «Պապիկյանը մեռել էր ոչ բնական մահով»: Բ. Դուրը հարկադրված եղավ 1909թ. հուլիսի 29-ին հանդես գալ պաշտոնական հայտարարությունով, թե Ադանայի իրադարձություններում հայերն անմեղ էին:

Պատրիարք Դուրյանի անզիջում կեցվածքը Ադանայի ջարդերի գնահատականի հարցում նրան դարձրեց ՀԲԴ թշնամի և Շահրիկյանին մղեցին ահաբեկության, նա՝ Ատոմ կեղծ անվան տակ, «Ազատամարտում» կրակ էր թափում Դուրյանի վրա, ինչն առաջացրեց Ազգային ժողովի պատգամավորների զայրույթը, մանավանդ, որ Ադանայից հետո հայերի վիճակը գնալով ավելի ու ավելի ծանրանում էր: Օսմանյան կառավարությանը Սահակ կաթողիկոսի օգոստոսի 9-ի հեռագրում նկարագրված է Հալեպի և Ադանայի հայության ողբերգական վիճակը: Այդ նահանգների հայ մտավորականությունը բանտարկված էր կամ աքսորված, հայերի ողջ սեփականությունը հրդեհված, ավերված ու թալանված էր, Ադանայի ջարդերի գլխավոր մեղավորներն ազատության մեջ էին: Զուք-Հովենի 3000 հայերի ջարդերի կազմակերպիչներն հետապնդվեցին, իսկ Հաճընամ 15 օր տևած ինքնապաշտպանության ընթացքում երեք թուրքի սպանության համար հետապնդվեց 130 հայ:

Երիտթուրքերը ևս մեկ քայլ կատարեցին հայերի քաղաքական ինքնավարության վերջին մնացորդը՝ Հայ ազգային սահմանադրությունը վերացնելու: Թալեաթը Դուրյանին ամենայն որոշակիությամբ ասաց, թե պատրիարքարանը պետք է զբաղվի միայն կրոնական խնդիրներով: Պատրիարքի հրաժարականի շուրջ քննարկումները կրեցին տևական բնույթ: Դրան գումարվեց Գ. Նորատունկյանի հրաժարականը նախարարի պաշտոնից, որը «ոչ թե ինքնակամ էր, այլ երիտթուրքերի ճնշման հետևանք»: Նման փաստերն ավելի էին խորացնում թուրք-հայկական առճակատումը:

Ադանայի կոտորածի լուրն առնելով Մեծ Մուրադը սաղրազամ մեծ վեզիր Հիլմիի երեսին շպրտեց. «Բռնության օրերին լեռներում կռվեցինք: Մի՞թե սահմանադրության այս շրջանում հարկադրված ենք լինելու նորից լեռ բարձրանալ»[73]:

«Ադանայի կոտորածները,– նկատում է Ա. Մանդելշտամը,– տխուր շղթան կկազմեն Աբդուլ Համիդի մսագործութեան շարունակման... իթիհադականներու կողմե: Համիտը և իթիհադի ղեկավարությունը նույն ատելութիւնն ունեին հայերու նկատմամբ»[74]: «Ադանայի ջարդը,– գրում

66 Գալստեան Գ. Մարաշ և Գերմանիկ և հերոս Զեյթուն, էջ 758-759 կամ Гиббонс Г., նշվ. աշխ., էջ 820:
67 Гурко-Кряжин В., История революции в Турции, М., 1923, стр. 60.
68 Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում:
69 Adossidis A., նշվ. աշխ., էջ 116:
70 «Մշակ», 26.06.1909:

71 «Մշակ», 29.07.1909:
72 Նույն տեղում, 28.07.1909:
73 «Բյուզանդիոն», 1909, թիվ 38-40:
74 Մանդելշտամ Մ. Ազգերու ընկերությունը և պետությունները Հայկական հարցի առջև, Բեյրութ, 1970, էջ 43:

է պոլսահայ գրող Զիֆթե Սարաֆը,– ժանգոտ ու կոշտ գամ մըն էր, որ կարծես կրկնակի հարվածներով կխփվեր հայութեան միսին մեջ և ամենքս ալ կըքստմնեինք ու կըգալարվեինք միևնոյն սպանիչ կտտանքին տակ իբր անքակտելի անդամները այդ միևնոյն հայութեան»[75]: 1909թ. մայիսին Դանիել Վարուժանը գրեց. «Համիդին փորասողակ թավալումը ինձի այնքան ուրախութիւն չպատճառեց, որքան Կիլիկիայի ջարդը ճմլեց աղիքներս: Ցեղին հոգին արիւն կուլայ մեջս, հրդեհված քաղաքներեն եկող ամեն լուր՝ տաք մոխիրի նման կըթափի գլուխիս և սրտիս վրայ: Հինգ դարեր պետք եղան, որպեսզի թուրքերեն մաս մը քաղաքակրթվեր, եվրոպականանար, ինչպես փտած կաթսաները կը կլայեկվեն, ով գիտե, թե դեռ որչափ հինգ դարեր պետք են և որչափ հայու արյուն՝ մյուս մեծագույն մասի համար: Երիտասարդ թուրքերը չեն դադրիր Եվրոպային հասկացնելե, թե թուրքը ի բնե բարի ժողովուրդ է, թե տաք հայերու անխոհեմությունն է աղետին սկզբնապատճառը՝ ոճիր եղած էր Եվրոպայի հայանպաստ կարծիքին դեմ հակազդելու համար, կարծիքին մը՝ որ արդեն առանց ադոր ալ պոռնկացած է: Լուրերը այնքան գեշ ազդած են վրաս, որ կցավիմ Ադանա չգտնվելուս համար»[76]:

Մ. Վարանդյանը գրում է. «Քանի որ Ադանայի կոտորածներին մասնակցել էին երիտթուրքերը, հարց առաջացավ, ի՞նչ անել: Հոգիներս կասկածը բռնեց իթիհադի քաղաքականության նկատմամբ, սակայն, այդ ահավոր օրերին, երբ իսլամի ալեկոծված ծովում մի բուռ հայեր, ինչպես տաշեղ, տարուբերվում էին ալիքների հետ, փրկության միակ փարոսը նորից մնում էր իթիհադը: Չէ՞ որ այդ կազմակերպությունը ևս արյուն էր թափել ազատության համար և ցանկանում էր երկրի ծաղկում սահմանադրական պայմաններում: Սակայն թուրք հեղափոխականների կորիզը, դժբախտաբար, շրջապատված էր կասկածելի տարրերով: Այս կորիզին էր պատկանում նաև իթիհադի ինտելեկտուալ առաջնորդ Ահմեդ Ռիզան, որին մենք գիտենք շատ վաղուց, մոլեռանդ թուրք, նաև կենտրոնացման կրքոտ ջատագով, Հայաստանի ինքնավարության թշնամի, բայց նաև սահմանադրության և խաղաղ առաջադիմության համոզված պաշտպան: Դաշնակցություն կուսակցության ղեկավարները նույնիսկ Կիլիկիայի սարսափներից հետո որոշեցին նորից ժպիտը դեմքերին դիմավորել երիտթուրքերին, շարունակել բարեկամական հարաբերությունները իթիհադի կուսակցության հետ, որը նորից դրության տերն էր»[77]: ՀԾԴ 1909թ. սեպտեմբերին կայացած համագումարը որոշեց. «Նկատի ունենալով, որ Թուրքիայի ազգու մեծամասնությունը շահագրգռված է երկրի արմատական վերակառուցմամբ, վստահում և համախմբված է Իթիհադ վե թերագրի կուսակցության շուրջը՝ մենք որոշեցինք շարունակել համագործակցությունը իթիհադի հետ խառը կոմիտեների միջոցով, որոնք կազմված են երկու կուսակցությունների ներկայացուցիչներից՝ չչեղվելով ընդհանուր ժողովի նշած ուղուց»[78]:

Շուտով երիտթուրքերի հետ դաշնակցությունը պայմանագիր ստորագրեց: Գ. Աղանյանը 1909թ. ապրիլին գրեց պատրիարքին. «Փաստ է, որ հայերը տաճիկ սահմանադրության զոհ գնացին, առիթ ու կոտորած բերելով մեր դժբախտ ժողովրդին իրանց չափազանց ոգևորությամբ և ազգասիրությամբ: Օրմանեանի հանցանքն էլ համարեցին այն, որ սահմանադրության առաջին օրը չուկայում պար չեկավ: Բայց նա խելոք մարդ է: Նա նույնիսկ գիտեր, որ հայերը քավութեան նոխազ պիտի լինեն, ուստի պետք է չեզոք մնան»[79]:

Ադանայի ջարդերը ՀԾԴ մղեց ճգնաժամի գիրկը: Գործընկեր երիտթուրքերի ձեռքերը նույնպես արյունոտ էին: Հայկական շրջանները կանգնեցին երկընտրանքի առաջ. «Մենք ո՞ւմ հետ ենք և ո՞ւմ դեմ, մեր թշնամին հին, թե՞ նոր վարչակարգն է»: Սակայն դաշնակցությունը դաշնակցություն չէր լինի, եթե հանուն իր կուսակցական շահերի սևին սպիտակ չասեր: Եվ ահա հրապարակ է նետվում մի թեզ, թե Ադանայի իրադարձությունները մի վարչակարգից մյուսին անցման գործընթացից բխած երևույթ էին: Ազգային ժողովի նիստում Ա. Շահրիկյանը հայտարարեց. «Անցման շրջանում նաև մենք ենք դժվարագույն պայմաններում: Ի՞նչ է, դուք ցանկանում եք պայքար սկսել կառավարության դեմ, փոխանակ նրան առաջ մղելու և առաջնորդելու»[80]: Դաշնակ շատ ղեկավար գործիչներ շարունակում էին իրենց համարել երիտթուրքերի ուսուցիչներ: Նման կեցվածքի հետևում կանգնած էր նոր իրավիճակին ՀԾԴաշնակցության անպատրաստ լինելը, գործունեության որևէ պլան, էլ չասած ծրագիր, չունենալը: 1909թ. հունիս 7-ին Թալեաթը խորհրդարանի քննարկմանը ներկայացրեց կազմակերպությունների մասին օրենքի նախագիծ, որի 4-րդ հոդվածը ասում էր. «Արգելվում են այն քաղաքական կազմակերպությունները, որոնք ստեղծված են ազգային և ցեղային հիմքի վրա»: Դա նշանակում էր, որ հպատակ ժողովուրդների քաղաքական կազմակերպությունները, կուսակցություններն արգելվելու էին: Արգելվելու էին նաև արտասահմանցի մեծաթիվ անդամներ և արտերկրում կենտրոն ունեցող կուսակցությունները: Ճիշտ է, խորհրդարանը մերժեց ներկայացված նախագիծը, սակայն այդ փաստը ևս ասում էր, թե կայսրության առաջատար կուսակցությունն ինչ պլաններ ուներ իր «ուսուցիչների» ու գործընկերների վաղվա օրվա հարցում:

Այո, Ադանան ոչ միայն ՀԾԴաշնակցության, այլև հայ մյուս քաղաքական ուժերին կանգնեցրեց նոր իրողությունների ու հիմնախնդիրների առաջ:

1909թ. հունիսի 29-ին Բ. Դուռը որոշեց ռազմական դատարան հանձնել Զևադին, Ռեմզիին, Ջեբել Բեյքետի կառավարիչ Էսադին և մի քանի ուրիշ պաշտոնատարների, ինչպես նաև լրագրողների ջարդերը սադրանքի ենթարկելու մեղադրանքով: Նաև որոշվեց շարունակել ջարդերի ուսումնասիրությունը, այսինքն՝ Հ. Պապիկյանի հանձնաժողովի եզրակացությունը վերջնական չէր համարվում, ինչը խնդիր ուներ ի վերջո մի կողմ նետելու այն: Բ. Դռան ձեռնարկումները ջարդերի կազմակերպիչներին դատական պատասխանատվության ենթարկելու հակասական արձագանքներ ունեցան արտասահմանում "Вестник Европы"-ն դրանք համարեց խիզախ, ազնիվ և «Թուրքիայի շահերի գիտակցում»: Իսկ "Русские Ведомости"-ն՝ «նշանակալից հաղթանակ»: Թերթը միաժամանակ նշեց, որ Ադանայի ջարդերին երիտթուրքերի տեղական կոմիտեի մասնակցությունը վկայում է, որ իթիհադի շարքերում մեծ է հին կարգերի կողմնակիցների թիվը, որ, ամբողջությամբ վերցրած, Ադանայի համար մեղքն ընկնում է թուրքական ողջ վարչակազմի, հին ու նոր թուրքերի վրա[81]:

Սակայն մամուլը վաղ էր եզրահանգումներ կատարում: 1909թ. հուլիսի 10–ին երիտթուրքական հեղաշրջման տարելիցի կապակցությամբ ներում շնորհվեց, ջարդարարների մահապատիժները փոխարինվեցին բանտարկությունով: Նույն պահին ևս յոթ հայ դատապարտվեցին մահապատժի:

Իրականում իթիհադի պարագլուխների գլխավոր հոգը Ադանան չէր, այլ հին վարչակարգի գործիչներին պատժելը: Հուլիսի սկզբին կախաղան հանվեց հակահեղափոխության 13 ղեկավար, այդ թվում չեյխ ուլ իսլամ Վահեդինը: Եթե այս սկզբունքը տարածվեր ջարդերի հանցագործների վրա, ապա համաձայն ռազմական դատարանի արտահայտած կարծիքի, կպահանջվեր կաղախան հանել, աքսորել տասնյակ հազար մարդու, բանտ նետել Ադանայի թուրք բնակչությանը: Երիտթուրքերը դրան գնալ չէին կարող, ինչը դատավարությունները հանգեցրեցին Ադանայի ջարդերի մասնակիցներին «պատժելու» խեղկատակության: Իսկ եթե նկատի առնվի, որ հանցագործությունը ուղղակի կամ անուղղակի նախապատրաստողների շղթան ձգվում էր մինչև Կ. Պոլիս. Ելդրզ ու Բ. Դուռ, ապա խոսքը գնում էր ահռելի ընդդրկումների մասին: Զմյուռնիայի «Իթիհադ» թերթին տված հարցազրույցում Հ. Պապիկյանն մասնավորապես ասել է, թե ջարդերը նախապատրաստվել էին տեսական ժամանակաշրջանում և «առանձնակի թաքուն»:

Մ. Իզմիրլյանը 1909թ. մայիսի 5-ին "Русское слово" թերթի թղթակցին ասաց, թե «սարսափելի ջարդերի» հետևանքով նորից «առաջանում է Փոքր Ասիայում բնակվող հայերի հանդեպ Ռուսաստանի հովանավորության հարցը»: Քանի որ մյուս մեծ տերությունների հետ հույսեր կապելն այլևս լուրջ չէ, որովհետև ամեն անգամ «տերությունները հայերին խոստանում են հովանավորություն, բայց որոշ ժամանակ անց հայկական ջարդերը վերսկսվում են»: Զևավորվում էր հա-

75 Փափազյան Վ. (Կոմս) Իմ ցուցերեն, հ. Ա, Բեյրութ, 1950, էջ 118:
76 ԳԱԹ, ֆ, Վարուժան Դ., գ.29:
77 Վարանդյան Մ. ՀԾԴ պատմություն, հ. II, Փարիզ, 1950, էջ 16:
78 Նույն տեղում, էջ 18:
79 ԳԱԹ Ֆ, Ազատյան Թ., գ.310:

80 Գանգրունի Հ., նշվ. աշխ., էջ 332:
81 Туян В. Младотурки и Армянский вопрос, 1908-1912, Ер., 2004, стр. 160.

մոզմունք. «Միայն Ռուսաստանի հովանավորության շնորհիվ է հնարավոր ապագայում վերջ դնելու արյունահեղությանը»: Պատրիարքը Կ. Պոլսում ռուսական դեսպան Զինովևի հետ զրույցի ժամանակ ասաց, որ «սպանված հայերի թիվը անհամեմատ ավելի մեծ է, քան հրապարակվածը»: Իզմիրլյանի հայտարարությունները թուրքական պաշտոնական շրջանների ուշադրությունից դուրս չմնաց և դարձավ լարված քննարկումների նյութ: Լոնդոնում Թուրքիայի դեսպանը Անգլիայի ԱԳ նախարար Գրեյին ասաց. «Ադանայի վիլայեթում տեղի ունեցած անկարգությունները ծանր տպավորություն են գործել...»: Տուժածներին օգնելու համար Բ. Դուռը որոշել է տրամադրել 30000 թուրքական ֆունտ: Շեյխ ուլ իսլամը Կ. Պոլսի պատրիարքի հետ միասին միջոցառումներ են ձեռնարկել ազգամիջյան բախումներին վերջ դնելու համար[82]: Նույն օրերին Ազգային ժողովի ներկայացուցիչները մեծ վեզիրին հանձնեցին երեք հեռագիր Մուշում և Դիարբեքիրում հայերի ծանր կացության ու կոտորածների օրեցօր ահազնացող վտանգի մասին[83]:

«Թանին» 1909թ. մայիսի 10-ին գրում է. «Ամբողջ հոգով ցանկանում ենք, որպեսզի Ադանայի ողբերգական իրադարձությունները հանդիսանան ավարտը այն հանցագործությունների, որոնք հավերժական բնույթ ունեին համիդյան վարչակարգի ժամանակ: Երբ հին վարչակարգի օրոք տեղի էին ունենում նման ջարդեր, կառավարության, որպես հանցագործության մեղսակցի, առաջին հոգսը լինում էր քողարկել վայրագությունները, իսկ նոր վարչակարգը, որը որևէ մասնակցություն չունի սպանություններին և թալանին, կարիքը չունի դրանք թաքցնելու»: Եվ ապա. «Արտասահմանյան թղթակիցները զոհերի թիվը հասցնում են մինչև 20-30 հազարի, մինչդեռ ըստ պաշտոնական աղբյուրների այդ թիվը չի անցնում 3-4 հազարից և դրանց մեծամասնությունը մահմեդականներ են: Սրանով մենք չենք ցանկանում ասել, թե ամբողջ պատասխանատվությունն ընկնում է հայերի վրա»[84]:

Մայիսի 11-ին խորհրդարանի քննարկմանը ներկայացվեցին Ադանայի ջարդերի հետևանքները հաղթահարելու ուղղությամբ կառավարության ձեռնարկները՝ վիլայեթում նշանակվել էր նոր վալի, ստեղծվել էր ռազմական դատարան և այլն: Նաև վստահություն էր արտահայտվում, որ այլևս նման խժդժություններ կայսրությունում չէին կրկնվի: Մինչդեռ հաջորդ օրը Զինովևը մեծ վեզիրի ուշադրությունը հրավիրեց Տարոնում հայերի ծայր աստիճանի վտանգված վիճակի վրա[85]:

Կ. Պոլսում հայերին սիրաշահելու քաղաքականության՝ մասնակի առանձնաշնորհումներ տրամադրելու հետևում քողարկվում էր նոր իշխանությունների հայատյաց բնույթը: Մի կողմից Գր. Զոհրապին ընտրում էին խորհրդարանի փոխխոսնակ, մյուս կողմից, արտասահմանում քարոզչություն էր տարվում, թե Ադանայում ջարդարարները հայերն էին, մինչդեռ կայսրության տարբեր մասերում շարունակվում էին հայերի «ոչ տեսանելի» ջարդերը[86]:

Սուլթանը հաստատեց ռազմական դատարանի վճիռը ինը մահմեդականի և վեց հայի մահապատժի ենթարկելու վերաբերյալ[87]: Տարօրինակ դատավարություն էր: Նիստերը փակ էին, թուրքերից մահվան դատապարտվեցին ոչ թե ջարդերի կազմակերպիչները, այլ շարքային մասնակիցները: Որ Օսմանյան կայսրությունում հայերի ջարդերը չէին դադարում հաստատեց նաև Մ. Իզմիրլյանը 1909թ. մայիսի 29-ին Նիկոլայ 2-րդի հետ հանդիպման ժամանակ, չնայած նա հույսեր էր կապում սահմանադրական կարգերի հետ: Արևմտահայերի անվտանգության մասին ցարի հարցին նա պատասխանեց. «Ամեն ինչ կախված է կառավարման նոր ձևի կենսունակությունից և բարի կամեցողությունից: Եթե այն ամրանա և վերջնականապես հաղթանակի, ապա թուրքահայերը կարող են լավ օրերի հույս ունենալ, հակառակ դեպքում ջարդերն ու հալածանքներն անխուսափելի են»[88]:

82 «Մշակ», 06.05.1909:
83 Նույն տեղում, 09.05.1909:
84 Ն. տ., 19.05.1909:
85 Ն. տ. 14.05.1909:
86 Ն. տ., 28.05.1909:
87 Ն. տ., 29.05.1909:
88 ՀՀՊԿՊԱ, ֆ. 151, ց. ծ. գ. 404:

1909թ. հունիսի 13-ին պատրիարքարանը Բ. Դռանը ներկայացրեց թաղրիր, որում ասվում էր, թե հայ և թուրք ժողովուրդների միջև վերածնվող խորթությունը հաղթահարելու համար անհրաժեշտ է, որ կայսրությունում երաշխավորվի հայերի պատվի անվտանգությունը, քրիստոնեությանը վերադարձվեին բոլոր իսլամացած հայերը: Նաև առաջարկվում էր «հայ-գրիգորյանական» արտահայտությունը փոխարինել «օսմանյան հայեր» արտահայտությունով, որպես ազգային առճակատումը հաղթահարելու «խոշոր միջոց»[89]: Հունիսի 19-ին Ազգային ժողովն արձանագրեց, որ կառավարությունը կիլիկիահայությանն օգնելու հարցում խոստումներից այն կողմ չէր անցնում: Ադանայում իշխանությունները շարունակում էին հետապնդել հայերին: Մուշեղ եպիսկոպոսը դատապարտվեց 101 տարվա բանտարկության: Ընդառաջելով թուրքական սադրանքներին գերմանական մամուլը նյութեր էր տպագրում, թե հայերը նախապատրաստվում էին հեղափոխական ելույթների:

Ռուսական հետախուզության տվյալներով Ադանայի իրադարձություններում «իսկական մարդասպանները և հանցավորները իշխանություններն ու Մակեդոնիայից բերված զորքերն էին: Թուրքերն անգամ չեն փորձում այդ իրողությունը թաքցնել ու դրա կարիքը չունեն... Ներկայումս նրանք են կարգը պահպանում մի երկրում, որտեղ ջարդել էին մինչև 25-30 հազար քրիստոնյա: Այն ինչ արդարադատության անվան տակ կատարվում է ռազմական դատարաններում, մասնավորապես Ադանայում, չար կատակ է»[90]:

Երիտթուրքական իշխանությունները խիստ պատիժներ կիրառելով մի քանի մահմեդական գործիչների հանդեպ, համառորեն առաջ էին տանում թուրքացման քաղաքականությունը՝ ազգային դպրոցներում մեծացնում էին թուրքերենի ուսուցման տեսակարար կշիռը, կառավարական շրջանակներում քննարկվում էր արևելյան վիլայեթներում զինվորական նահանգապետեր նշանակելու հարցը, ինչը համարվում էր «հիանալի միջոց» կարգուկանոն հաստատելու համար:

Հայերը հասկանում էին, որ երիտթուրքերի խոստումները պղպջակ էին: Դուրյանը հարց է առաջադրում. «Արդյո՞ք թուրք ազգը ի վիճակի է բարենորոգվել: Ահա ծանրագույն խնդիրը: Մենք հայերս, միամիտ ազգ ենք, բնական է, որ մի պահ հավատացինք և եղբայրական զգացմունքներ տածեցինք երիտթուրքերի հանդեպ... Սակայն տխուր է ու ցավալի հավատալ, որ թուրքերից շատերը, անգամ արևմտյան կրթություն ստացածները, չեն կարողանում իրենց միջից լրիվ դուրս նետել թուրք ցեղի այդ նախապաշարմունքները, ինչն անհնար է դարձնում ընդունելու մարդկային հասարակությանը բնութագրական սկզբունքները, առանց որի անհնար է արդարությունն ու, հետևաբար, նաև քաղաքակիրթ կառավարումը»[91]:

Որոշ պատմաբաններ Ադանայի ողբերգությունից հետո ՀԵԴ զիջող, իթիհադի հետ հաշտվողական կեցվածքը բացատրում են այն բանով, որ թուրք բարբարոս «ազգը պատրաստ է հոշոտել ժողովրդին, ուստի անհրաժեշտ է դիվանագիտությամբ, զիջումների գնալով գոնե նախապատրաստվել ինքնապաշտպանության»[92]: Այդպես չէր: Թե 1909թ. և թե մինչև առաջին աշխարհամարտի սկսվելը երիտթուրքերը ի վիճակի չէին իրականացնել հայերի համընդհանուր բնաջնջում: Պատճառները մի քանիսն էին. դրանից գլխավորն այն է, որ նրանք դեռևս չէին կարողացել ավարտել իշխանության համար պայքարը և դառնալ դրության լիիրավ տեր: Դրանով է բացատրվում ՀԵԴ և իթիհադի 1909թ. օգոստոսին ստորագրված համաձայնագրի ծնունդը: Այդ է վկայում նաև համաձայնագրի բովանդակությունը: Նշենք, որ համաձայնագրի լրիվ տեքստը 1909թ. սեպտեմբերի 3-ին տպագրվել է "Le Turquie" թերթում: Համաձայնագրի նախաբանում նշվում է, թե երկու կուսակցությունների մոտեցումները համընկնում են երկու հիմնական հարցերում. ա) քաղաքական կուրս՝ «հայրենիքի ազատություն», «քաղաքական և տարածքային ամբողջականություն», բ) ազգերի փոխհարաբերություններ՝ կայսրության ազգու-

89 «Մշակ», 05.07.1909:
90 «Հայերի ցեղասպանությունը...», էջ 194:
91 «Մշակ», 01.07.1909:
92 Ղազարյան Հ., նշվ. աշխ., հ. I, էջ 72-73:

թյունների միջև «ոչ բարեկամեցողության հաղթահարում» և «օսմանցիների միջև վստահության ամրապնդում»: «Հայրենիքի ազատությունը ապահովելու (ո՞վ էր սպառնում այդ ազատությանը), անոր հողային և քաղաքական ամբողջությունը մշտապես պահպանելու, կարգ մը անձերու մեջ գոյացած թիւրիմացիութիւնները փարատելու համար (հանճարեղ է ասված Ադանայի արյունահեղությունը ներկայացվում է որպես «կարգ մը անձերու մեջ գոյացած թիւրիմացութիւններ»), իթիհատ վե թերագը կուսակցութիւնը և ՀԾԴաշնակցութիւնը կատարեալ համաձայնութեան եկան հետևյալ հիմնական կետերուն մասին»: Առաջին՝ «Պիտի աշխատին կիրարկել Սահմանադրութիւնը և պիտի պայքարին միացած ուժերով, խնայելով ոչ մեկ զոհողութիւն: Ցեղաշրջական (հետադիմական) շարժումներու հավանականութեան դեմ... պիտի գործեն միասնաբար, հաստատակամությամբ և որոշակի ուղղությամբ»[93]: Սա միանգամայն հասկանալի կետ է և հաստատում է այն ճշմարտությունը, որ թե իթիհադը և թե ՀԾԴ պայքարելու էին սահմանադրական կարգերի վերջնական հաղթանակի համար, ինչը բխում էր ոչ միայն Թուրք, այլև հայ ժողովրդի շահերից: Ապա ասվում է. «Օսմանեան նուիրական հայրենիքը անջատումե և բաժանումե զերծ պահելը երկու կազմակերպութեան միացած գործունեութեան նպատակակետը ըլլալով պիտի աշխատին գործնականապես հանրային կարծիքին մեջ ջնջեն բռնակալ ռեժիմեն ժառանգ մնացած այն զրույցները, թե հայերն անկախութեան կը ձգտին»: Սա խորամանկ կետ է, որը, նախ հայերի ձեռքից խլում էր ինքնորոշման որևէ ձևի համար պայքարի հնարավորությունը, երկրորդ՝ ուղղված էր հայ-ռուսական բարեկամական հարաբերությունների դեմ 1909թ. վերջերն էր, երբ առաջին աշխարհամարտն այլևս սարերի հետևում չէր ու նաև հավանական էր ռուս-թուրքական բախումը: ՀԾԴ վզին փաթաթված և վերջինիս ընդունածը հաջորդ կետն է. «Երկու կուսակցութիւնները համաձայն են նահանգային իրավանց ընդարձակման, որ կերաշխավորե օսմանեան ընդհանուր հայրենիքի զարգացումը և առաջադիմութիւնը»:

Այս համաձայնագիրը ՀԾԴ ոչ միայն քաղաքական, այլև բարոյական պարտություն էր: Նա հանուն իթիհադի հետ համագործակցության հրաժարվեց իր ծրագրային հիմնարար սկզբունքներից մեկից՝ Օսմանյան կայսրության կազմում ինքնավարության պահանջից ու բավարարվեց «նահանգային իրավանց ընդարձակման» անորոշ արտահայտությունով: Սայթակումը բերում է պարտություն պարտության հետևից: Եղբայրացած երկու կուսակցությունները հռչակում են. «Իթիհատ վե թերագը և ՀԾԴաշնակցութիւնն, իբրև խրատական նախազգուշացում ընդունելով մարտի 31-ի դեպքը և Ադանայի ցավալի ջարդերը, որոշեցին աշխատիլ ձեռք ձեռքի տուած վերոհիշյալ հիմնական կետերու իրագործման համար»[94]: Կետն այնպես է ձևակերպված, որը նույն հարթության վրա էր դնում մարտի 31-ի հեղաշրջման փորձն ու Ադանայի ջարդը: Ու նաև այնպես, որ հանցագործ են ներկայացված թե՛ մահմեդականները և թե՛ հայերը: Ոչ մի խոսք այդ արյունահեղության կազմակերպման գործում իթիհադի խաղացած դերի մասին: Սա ոչ թե համաձայնագիր էր, այլ գործարք ուղղված արևմտահայության դեմ:

Ահա թե այդ մասին 1919թ. հուլիսի 15-ին ինչ է գրում Կովկասյան բանակի շտաբի պետի պաշտոնակատար Ցուդենիչը. «Այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե հայերն են կոտորել 30000 անզեն մահեդականների և հիմա դրա համար նրանց պատժում են: Հայ վկաներին ահաբեկում են, հետաքննիչ հանձնաժողովը նրանց չի հավատում, քրիստոնյայի հետ առերեսման ժամանակ մահմեդականը միշտ արդար է նկատվում: Երիտթուրքերն իրենք են խոստովանում, որ չի հաջողվել հաստատել Աբդուլ Համիդի մասնակցությունն այդ ջարդերին»[95]: Իսկ ժամանակակից Թուրք պատմաբանները ժխտում են ոչ միայն Աբդուլ Համիդի, այլև երիտթուրքերի մեղքը ջարդերի կազմակերպման գործում: Ըստ Է. Ուրասի Ադանայում հայերն էին «տանջամահ անում մահմեդականներին», որ եթե 1909թ. ապրիլի 12-ին հայերը չկրակեին թուրքական զորքի վրա, ընդհարում տեղի չէր ունենա: «Կասկածից վեր է,– գրում է մի ուրիշ թուրք պատ-

93 Ղազարյան Հ. Ցեղասպան Թուրքը, Բեյրութ, 1968, էջ 15:
94 Նույն տեղում, էջ 15:
95 ЦГВИАР, ф. 2000, оп. 1, д. 1004.

մաբան,– որ երկրորդ խառնակությունը առաջ բերեցին հայ քաղաքական գործիչները, նպատակ ունենալով առիթ ստեղծել օտար միջամտության համար»[96]:

Համաձայնագրում նաև կար կետ ուղղված հին վարչակարգի կողմնակիցների դեմ, սահմանվում էր՝ «Հետադիմական շարժումներ առաջանալու դեպքում... հակազդելու են» միասնաբար:

«Բիւզանդիոնի» վկայությամբ համաձայնագրի ֆրանսերեն տեքստում նաև կետ է եղել ՀԾԴաշնակցությունը «Օսմանյան կոմիտե դաշնակցություն» վերանվանակոչելու մասին[97]:

Նաև ասենք, որ այս համաձայնագիրը ստորագրվեց Սալոնիկի այն նույն սրահում, որտեղ իթիհադի ընդհանուր ժողովը նույն 1909–ին կուսակցության գործունեության հիմքում դրեց թուրքիզմը:

Հետագա իրադարձությունները նույնպես եկան հաստատելու, որ համաձայնագիրը ՀԾԴ կոպիտ սխալն էր: Իթիհադի համար ապակենտրոնացումը սահմանափակվեց մի քանի կիսատպռատ միջոցառումներով՝ ընդունվեց օրենք վիլայեթների դատական հիմնարկների անկախության մասին, թույլատրվեց բացելու վճռաբեկ դատարաններ, իսկ կազաներում առաջին ատյանի և առևտրական դատարաններ: Ձևականորեն դատարանները անկախ էին դառնում վիլայեթների իշխանություններից:

ՀԾԴաշնակցությունն ինչո՞ւ գնաց նման դաշինքի: Արդեն ասվեց, որ ըստ Մ. Վարանդյանի այդ էր պահանջում Ադանայից հետո ստեղծված կացությունը՝ հայ ժողովուրդը պարզապես վտանգված էր[98]: Կուսակցության 5-րդ ընդհանուր ժողովը 1909թ. սեպտեմբերին խնդիր դրեց թույլ չտալ «Նոր Ադանա»: Սակայն ժողովի կողմից պահի գնահատականն իթիհադական էր՝ Ադանան «մեռնող համիդեականության հոգեվարքի հետևանք էր»: Ժողովը գտավ, որ արևմտահայությունը պետք է մոռանա Ադանան, հիշաչար չլինի և եռանդուն մասնակցություն ունենա Թուրքիայի զարգացմանը՝ ձեռք ձեռքի տված իթիհադի հետ: Վերջինիս ՀԾԴաշնակցության աջակցությունն իսկապես, պետք էր «Ադանան հնարավորին չափ շուտ մոռանալու համար»: Իթիհադը միաժամանակ սևեռուն հետևում էր հայ քաղաքական ուժերի գործունեությանը, պատրվակներ ստեղծում հայերի «անհավատարմությունը» հրապարակայնության տալու: Այսպես, օրինակ, "Le Turguie" թերթը նույն սեպտեմբերին տեղեկացրեց, թե Արմաշի վանքում հրանոթ էր թաքցված: Այդ տեղեկատվությունը մայրաքաղաքում մեծ աղմուկ առաջացրեց: Սակայն վանքում կատարված խուզարկությունները որևէ զենք չհայտնաբերեցին[99]: Իթիհադը դրանով չհանգստացավ, տեղերը շրջաբերական ուղարկեց պահանջով. «Հայերին մղեք գործողությունների, ապա հարվածեք նրանց»:

Վ. Թունյանը նույնպես այն կարծիքին է, որ Դաշնակցության «մարտավարական գլխավոր խնդիրն էր՝ պահպանել կապերը իթիհադ կուսակցության հետ ազգային ջարդերը կանխելու համար»[100]:

Դաշնակցության դիրքորոշումը խիստ քննադատության ենթարկվեց Հնչակի կողմից. «Դաշնակցությունը ցանկացավ դառնալ իշխանություն ընդդեմ ազգային իշխանության և ազգ ընդդեմ ազգի»[101]:

«Ադանայի իրադարձությունները,– գրում է Մ. Քոչարը,– դարձան երիտթուրքերի ազգային քաղաքականության նոր ժամանակաշրջան: Եթե առաջ երիտթուրքերը օսմանիզմ ասելով հասկանում էին Թուրքիայի բոլոր ազգերի ուծացում, ապա... համոզվելով, որ քրիստոնյա ժողովուրդների ուծացումն անհնար է, անցան հայերի զանգվածային ոչնչացման քաղաքականության...»[102]:

Թուրքերը հայկական ջարդերի պատմությունը նենգափոխում են մեծագույն եռանդով, սակայն անզոր են ժխտել, որ Ադանայի կոտորածը հանդիսացավ Մեծ եղեռնի գլխավոր փորձն ու բնաջնջման եղանակների և գործիքների փորձարկումը:

96 Սարգսյան Ե., Սահակյան Ռ. Հայ ժողովրդի նոր պատմության նենգափոխումը Թուրքերի կողմից:
97 «Մշակ», 25.09.1909:
98 Վարանդեան Մ. ՀԾԴ պատմութիւն, հ. 2, էջ 434-435:
99 «Մշակ», 11.09.1909:
100 Тунян В., նշվ. աշխ., էջ 186:
101 Մուշեղ եպ. Հայկական մղձավանջ..., էջ 9:
102 Кочар М. П. Армяно-турецкие общественно-политические организация и Армянский вопрос, Ер., 1988, стр. 177.

Թուրքական պատմագրությունը, հայոց ցեղասպանությունն արդարացնելու նպատակով, պնդում է, թե հայերը հետևողականորեն հանդես էին գալիս թուրքական տիրապետության դեմ, կազմակերպում խռովություններ, ապստամբություններ ու սպանություններ: 1908թ. սահմանադրությունից հետո, «օգտվելով իթիհադականների միամտությունից, նրանք ավելի լայնորեն ծավալեցին հակապետական գործունեություն: Դառնալով խաղալիք ռուսների ու անգլիացիների ձեռքին, զինվելով ժամանակի լավագույն զենքերով՝ դարձան իսկական աղետ թուրքական պետության համար»[103]:

Իրականում թուրքացման երիտթուրքական քաղաքականությունը առնչություն չուներ հայերի կեցվածքի հետ: Սկզբում նրանք ծրագրեցին ոչ թուրք ժողովուրդներին թուրքացնել լեզվական բռի քաղաքականության, ռասիստական ու կրոնական ճնշումների միջոցով, այսինքն՝ ուծացումն իրականացնել ուժի գործադրմամբ և այդ անելիս դրսևորում էին շատ ավելի մեծ հետևողականություն ու համառություն, քան Աբդուլ Համիդը:

Ադանան «մի նոր փորձաքար եղավ» հայերի ազգային ինքնագիտակցության համար: Նորից «ավելի թափով ու կսկիծով» զգացվեց հայության «հավաքական կամքի և նախաձեռնության աղաղակող անզորությունը»: Տրամաբանական կլիներ Ադանայի կոտորածներից եզրակացնել, որ երիտթուրքերի իշխանության գլուխ անցնելը չէր վերացրել արևմտահայության բնաջնջման վտանգը և անհրաժեշտ էր միջոցառումներ ձեռնարկել դրան ընդդիմանալու համար, ինչն առաջին հերթին վերաբերում էր ժողովրդի զինմանը: Չի կարելի ասել, թե այդ խնդրին ընդհանրապես ուշադրություն չդարձվեց, բայց դժբախտաբար, շատ ավելի խոսքով, քան գործով: Իսկ վտանգն իրոք հարաճուն էր: Օսմանյան իշխանությունները շարունակեցին սոֆթաներին, փաթթոցավոր մոլեռանդներին գրոհի տանել անպաշտպան զյավուրի վրա:

Երբ 1908թ. սահմանադրությունը հռչակվեց, Գր. Զոհրապը գրեց. «Այսուհետև պիտի քալենք թուրքաց հետ, փոխադարձ հարգանքով և փոխադարձապես իրավունքներիս, պարտքներիս և արժանիքներիս ճանաչելու հիման վրա»[104]: Սակայն Ադանայից հետո հարկադրված եղավ փոխել կարծիքն ու ասել, թե «օսմանյան սահմանադրության հռչակումով երևան եկած հեղափոխությունը կատարեալ գործ մը ըլլալե հեռու է»[105]: Գրում է Ս. Ակնունին. «Օսմանեան սահմանադրութեան հրատարակումեն ետք իթիհադը մեծ համաժողով մը գումարել էր... ճշտելու համար, թե երկրին ղեկը ձեռքն առնելեն հետո ինչ պիտի ըլլայ իր դիրքը հանդեպ քրիստոնեայ տարրին... Թուրք նշանավոր փաստաբան Մունիաս Զադե Ռեֆիկ բեյի նախագահութեան տակ գումարուած այդ համաժողովը գրեթե միաձայնությամբ որոշում տուած էր թուրքաբնակ քրիստոնեային ենթարկել այնպիսի վիճակի մը, որ ստիպվի իսլամանալ և կամ շատ-շատ անունով միայն պահե իր ազգութիւնը: Ճիշտ այս նպատակով էր, որ մեջտեղ նետվեցավ «Թուրքիան Թուրքերուն»՝ «տիրող տարրին» (միլլեթը հաքիմե) նշանաբանը... Համիդի օրով արդեն գոյութիւն ուներ տիրող տարրի սկզբունքը, բայց այդ սկզբունքին վերարծարծումը սթափեցուց Թուրքիոյ փոքրամասնութիւնները, որոնք քաջ կերպով համոզուեցան, թե իրերի դրութեան մեջ ոչ իսկ տարրական փոփոխութիւն մը տեղի ունեցած էր, ընդհակառակը՝ ավելի վտանգավոր դարձած»[106]: Ադանայի «ջարդը եկավ բոլորովին համազելու մեզի, թե իթիհադը վճռած էր գործադրել Սալոնիկի համաժողովին որոշումը և քրիստոնեաներին իսլամացնելու համար կանգ պիտի չառներ ոչ մեկ միջոցի առջև»[107]:

Չնայած ՀԾԴաշնակցությունը ճիշտ էր գնահատում Ադանայի ջարդի տեղն ու դերը Մեծ եղեռնի իրականացման ճանապարհին, սակայն դա ազդեցություն չգործեց կուսակցության գործունեության վրա: Ոչինչ չարվեց ոչնչացման ահագնացող վտանգին ընդդիմանալու համար արևմտահայությանը նախապատրաստելու ուղղությամբ: Դեռ ավելին, Դաշնակցությունը հայ ժողովրդի ինքնապաշտպանության գերխնդիրը փաստորեն զոհաբերեց կուսակցական եսակենտրոն շահերին: Սակայն դժբախտությունը միայն այդ չէր, այլ նաև այն, որ նմանատիպ մոտեցման մերօրյա զարգացումները ծնեցին ցեղասպանություն, եթե ոչ իսպառ ժխտման, ապա անպայման այն կոտորածներով նենգափոխելու ձգտում, այսինքն՝ Հայոց ցեղասպանությունը ոչ թե նախապես ծրագրված էր, այլ թուրքերի «հուսահատության և խուճապահարության հետևանք» էր[108]:

Ադանան մարսելուց հետո իթիհադը հայտարարեց. «Թուրքական սահմանադրությունից և խորհրդարանական օրենսդրությունից կօգտվեն նրանք, ովքեր կթուրքանան: Հակառակվողները պետք է սրբվեն պատմության բեմահարթակից»[109]: Այդ մասին Ս. Ակնունին գրում է, որ իթիհադի Սալոնիկի համաժողովը նախագահում էր «թուրք նշանավոր փաստաբան» վերը հիշատակված Մ. Ռեֆիկը: Ժողովը միահամուռ էր. «Թուրքաբնակ քրիստոնյա տարրը ենթարկել այնպիսի վիճակի մը, որ ստիպուած իսլամանայ կամ շատ-շատ անունով պահե յուր ազգութիւնը»[110]:

Հայկ Ղազարյանը Ս. Ակնունուց մեջբերում կատարելով, Ադանայի ջարդին վերաբերյալ, չգիտես ինչու եզրահանգում է, թե իթիհադից համաժողովը «գումարվել էր 1909թ. մարտից առաջ...»: Ինչը բացարձակապես սխալ է: Բանն այն է, որ նշված խնդիրը իթիհադի բոլոր համաժողովներում (սկսած 1908թ.) քննարկվել է: Իսկ Հ. Ղազարյանի նշած ժողովը տեղի է ունեցել ոչ թե «1909թ. մարտից առաջ», այլ 1909թ. օգոստոսին: Հաջորդ համաժողովի (1910թ. հոկտեմբեր) որոշման 12-րդ կետում ասվում է. «Սպանել դեպի ազգային ինքնորոշում տանող ամեն ձգտում... Աստիճանաբար խլել ազգային հին առանձնաշնորհումները և Թուրքիոյ մեջ ապրող զանազան ազգութիւնները վերածել մեկ ընդհանուրի: Սահմանափակել ոչ թուրք դպրոցներու բացվիլը և արդեն գոյութիւն ունեցողներու մեջ պարտադիր դարձնել թուրքերենը... ջանալ խաթարելու ոչ-թուրք ազգութեանց ազգային նկարագիրը...»[111]:

Հ. Գ. Ղազարյանը վկայում է, որ իթիհադի Սալոնիկի 1910-ի 13 օր տևած համաժողովն ընդունեց բնաջնջման ծրագիր: Նախորդ, 1909թ. համաժողովը պահանջել էր սկսել հալածանք «ոչ թուրք լեզուների դեմ», հռչակվեց «Թուրքիան միայն թուրքերին» կարգախոսը[112]: Կ. Պոլսում ռուսական դեսպանությունը 03.04.1915-ին հայտնում է Պետրոգրադ. «Զանգվածային ջարդեր Էրզրումում, Դորթյոլում, Զեյթունում և շրջակայքում: Արյունահեղ ընդհարումներ Բիթլիսում, Վանում, Մուշում... Բռնություններ, թալան, սպանություններ Ակնում և ամբողջ Փ. Հայքում... ընդհանուր կոտորած»[113]:

Գրում է Արմին Վեգները. «...Իրենց հանցավոր ձեռքերին հետքեր չթողնելու համար գերավարողները... կողոպտեցին հայերի տները, կրակի տվեցին գյուղերը, քարուքանդ արեցին եկեղեցիները կամ մզկիթների վերածեցին, հափշտակեցին անասունները, զավթեցին բոլոր սայլերը, իրենց զոհերի բերանից խլեցին հացը, հանեցին նրանց շորերը, պոկեցին ոսկե զարդերը... քշեցին մի ամբողջ ժողովրդի՝ տղամարդ թե կին, ալեհեր ծերուկ թե մանուկ, հղի կին թե ծծկեր երեխա, դեպի արաբական անապատներ՝ նպատակ ունենալով նրանց սովամահ անել»[114]:

Չի կարելի համաձայնվել արդյոք Հ. Ղազարյանի այն մտքի հետ, թե Մեծ եղեռնի պատմության «ամենասև էջերը գրվեցին 1915թ. ապրիլ-դեկտեմբեր ամիսներին»[115]: Եթե այդ առումով ավելի սև չէր, ապա նաև ավելի քիչ դաժան էլ չէին 1916թ. առաջին կեսը, երբ իրականացվեց անապատ հասած հայերի զանգվածային ջարդերը ճամբարներում և այլուր:

Սխալ է նաև պնդումը, թե զանգվածային «ջարդերի ազգասպան գործողությունները սկսվեցին Վասպուրականից», ինչպես հեղինակն է գրում՝ Վանի փաշայությունից (ի դեպ այն տարիներին այլևս փաշայություններ չկային, կային վիլայեթներ)[116]:

---

103 Eroglu V. Ermeni Mezalimi, Istambul, 1973, s. 108.
104 Արևմտահայ գրողների նամականի, Երևան, 1972, էջ 42:
105 Զոհրապ Գր. Հայ պատգամավորի մը հաշվետվությունը:
106 Ակնունի Ս. Միլիոն մը հայերու ջարդի պատմությունը, Կ. Պ., 1921, էջ 3:
107 Նույն տեղում, էջ 4:

108 Journal of the Society for Armenian Studies, vol. 2, 1985-1986, pp. 212-222. Տե՛ս Ռուբեն Աղայանի հոդվածը:
109 Գանգրունի Հր. Ցեղասպան իթիհադը, Բեյրութ, 1994, էջ 79:
110 Ակնունի Ս. Միլիոն մը հայերու ջարդի պատմությունը, էջ 3:
111 Աղայան Ծ. Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Եր., 1976, էջ 456:
112 Ղազարյան Հ. Գ., նշվ. աշխ., էջ 16:
113 ЦГВИАРИ, ф. 2000, оп 1, г..3851.
114 Wegnes A. An open Letter to president Wilson, Pennsylvanio, 1964, p.75-76.
115 Ղազարյան Հ., նշվ. աշխ., հ.II , էջ 301:
116 Նույն տեղում, էջ 302:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ (1908-13ԹԹ.)

Հայ ժողովրդի դրությունն օսմանյան տիրապետության տակ այնքան ծանր, այնքան արտառոց ու երևակայությունից դուրս էր, որ անդրադարձողն ակամա հեռանում է հասարակության գոյության համընդհանուր օրինաչափություններից և հաճախ խնդիրները քննարկում այդ օրինաչափություններից դուրս, որոշ դեպքերում նաև հակառակ դրանց: Թուրքերի պնդումները, թե հայկական շարժումները հետևանք էին ոչ թե արևմտահայերի ծանր վիճակի, այլ «դրսի միջամտության», հերքվել է բոլոր նրանց կողմից, ովքեր ծանոթ են օսմանյան հասարակությանը և առնչառ վերաբերմունք ունեն խնդրին: «Ազգային պայքարը Թուրքիայում և սոցիալ-դեմոկրատիան» հոդվածում Ռոզա Լյուքսեմբուրգը գրում է, թե «հաճախ ձգտում է նկատվում Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունները ներկայացնել դիվանագիտական մեքենայությունների հետևանք, մասնավորապես Ռուսաստանի կողմից... կարելի է մամուլում այնպիսի արձագանքների հանդեպ, թե իբր Թուրքական սարսափները, ընդհանրապես, հնարված են, իսկ հայերի ապստամբությունները՝ ռուսական ռուբլով վարձված գործակալների ձեռքի գործ»: Մասնավորապես միջնադարյան Թուրքիան ներկայացվում է հեքիաթային մի աշխարհ, որտեղ տարբեր ազգություններ «դարեր շարունակ կողք կողքի խաղաղ ապրել են» ու վայելել «ամենակատարյալ ինքնավարություն»: Այդ եվրոպական դիվանագիտությունն էր, որ արհեստական դժգոհություններ գրգռեց և խանգարեց անմեղ գառ սուլթանին բարենորոգումներ իրականացնել:

Ո՞րն է իրականությունը: Օսմանյան կայսրությունն այդպես էլ մնաց առավելապես բնատնտեսական երկիր, որտեղ ամեն ազգություն, ամեն գավառ, ամեն համայնք ապրում էր ներփակ կյանքով, համբերությամբ տանում սովորական դարձած թշվառությունը: Այդ կեցությունը կենսունակ էր և խափանում էր ճնշված ժողովուրդների ընդվզման փորձերը: Սակայն Արևելյան հարցի ծնունդից սկսած իրավիճակը փոխվեց: Եվրոպական «ռազմական ուժի հետ բախումից ցնցվելով, Ռուսաստանի սպառնալիքներից ահաբեկված Թուրքիան գնաց ոչ թե ժողովրդավարության, այլ բացարձակ միապետության ձևավորման ուղիով: Ստեղծվեց մշտական բանակ և ֆինանսական նոր համակարգ, որոնք մեծ չափերով ծանրացրեցին տուրքերը»: «Հարկ յուրաքանչյուր սահմանագլխից ու յուրաքանչյուր ծղոտից, մաքսատուրք, դրոշմատուրք, հարկ ալկոհոլից, տասանորդ՝ մշտապես 1/4-ի չափ հավելումով... եկամտահարկ՝ քաղաքում 30, իսկ գյուղում 40 տոկոսի չափով», քրիստոնյաներից բանակային հարկ, բազմաթիվ ու բազմատեսակ պարհակներ, «ահա սրանցով պետք է ժողովուրդը ծածկեր բարենորոգված պետության ծախսերը»: Թուրքիայի կառավարման համակարգը «նորի ու միջնադարյան սկզբունքների տարօրինակ խառնուրդ էր՝ բաղկացած ահռելի թվով հիմնարկներից, հանձնաժողովներից»: Պաշտոնները վաճառվում էին և պետական գանձարանի կողմից չէին վարձատրվում: Պաշտոնատարների վիթխարի բանակն ապրում էր ազգաբնակչության հաշվին: Ամեն մի փաշա «ուզած ձևով կարող էր գավառը փետրահան անել», հենց որ Կ. Պոլիսը գումար պահանջեր: Կադիրը (դատավորը) ի պաշտոնե շորթում էր, քանի որ այդ պաշտոնը գնել էր և «տարեկան տուրք էր վճարում կենտրոնին»: Հարկային համակարգում թագավորում էր խառնաշփոթ ու կամայականություն, որոնք հանդիսանում էին պաշտոնեության ձեռքով «ժողովրդին սանձարձակորեն ճնշելու և շահագործելու միջոց»:

Թուրք պաշտոնատարը նախկին ավատատերն էր, որին հաջողվել էր իր պաշտոնը ժառանգական դարձնել, իսկ ունևորն էլ պահպանեց սեփականատիրոջ իրավունքը, այսինքն՝ գյուղացին տասանորդից բացի հարկադրված էր վճարել նաև հողի ռենտա, որը կազմում էր բերքի 1/3-ը, առանձին դեպքերում՝ անգամ կեսը: Հողազրկվելուն զուգահեռ թշվառությունն ավելի ուժեղ էր թակում գյուղացիության ճնշող մեծամասնության դռները: Գյուղացին քայքայվեց, բայց բանվոր չդարձավ, որովհետև արդյունաբերությունը չէր զարգանում, մանավանդ, որ երկրում բացակայում էին բուրժուական հասարակության ամենատարրական նախադրյալները, ինչպես, օրինակ, անձի և սեփականության անվտանգությունը, օրենքի առաջ թեկուզ ձևական հավասարությունը: «Եկեղեցուց անջատված քաղաքացիական իրավունքի, հաղորդակցության ժամանակակից միջոցների և այլնի բացակայությունն անհնար էր դարձնում կապիտալիստական արտադրաձևերի առաջանալը»: Վաչխառությունն էր շարունակում մնալ տեղական կապիտալը ներկայացնող գրեթե միակ ձևը: Այսպիսով, Թուրքիան տնտեսական տեսակետից մնաց ամենապարզունակ գյուղատնտեսական երկիր, որտեղ «ունեցվածքային հարաբերությունները պահպանել էին իրենց ավատատիրական բնույթը»: Սա էլ դարձավ Թուրքիայի քայքայման հիմքը: Այդ պայքայումը «հանդես եկավ երկու ծայրահեղություններով»: Մի կողմից, գյուղացիական տնտեսության մեջ առաջացավ մշտական դեֆիցիտ, այն շոշափելի դրսևորում ստացավ հանձին վաչխառուի, որը գյուղական համայնքի օրգանական տարր էր դարձել և արտահայտությունն էր արտադրական հարաբերությունների ներսում տեղի ունեցած թարախակալման գործընթացի: Ամսական երեք տոկոսով փոխատվությունը մշտական երևույթ էր Թուրքական գյուղերում, իսկ «գյուղական խաղաղ դրամայի օրինաչափ հանգուցալուծումը գյուղացու պրոլետարացումն էր, առանց սակայն երկրում համապատասխան արտադրաձևերի առկայության, որոնք հնարավոր դարձնեին գյուղացու մուռքը բանվոր դասակարգի շարքերը», որի հետևանքով էլ պանդուխտ գյուղացին ավելի հաճախ իջնում էր լումպեն պրոլետարի մակարդակին: Այս երևույթներին ավելանում էին նաև հողագործության անկումը, ավերիչ սովը և համաճարակները: Լոնդոնի և Փարիզի վաչխառուն, գործարքներ էր կատարում Կ. Պոլսում, իսկ հայ և հույն վաչխառուն՝ գյուղերում:

«Կառավարելը գնալով ավելի էր դժվարանում, կառավարվողները գնալով ավելի էին դժգոհում: Մնանկություն մայրաքաղաքում, սնանկություն գրուղում: Հեղաշրջումներ Կ. Պոլսում և ժողովրդական ընդվզումներ գավառում: Այս բոլորը ներքին անկման վերջնական ակորդներն էին»: Այսինքն՝ Թուրքիան չէր կարող «որպես ամբողջություն վերածնվել: Նա հենց սկզբից միավորում էր տարբեր երկրներ: Կացութաձևի կայունությունը, գավառների և ազգությունների փակ վիճակը չքացել էր, սակայն չէր ստեղծվել նյութական ոչ մի շահագրգռվածություն, ոչ մի համընդհանուր զարգացում այդ ազգություններին միմյանց հետ շաղկապելու»: Ընդհակառակը, ճնշումներն ու Թուրքական պետությանը համատեղ պատկանելու դժբախտությունը գնալով ավելի ու ավելի էր ծանրանում հպատակների գիտակցության վրա: Այս բոլորը հանգեցրին ենթակա ազգությունների բնական ձգտմանը՝ «պոկվել ամբողջությունից և անկախ գոյությամբ որոնել զարգացման ուղի: Այսպես տրվեց Թուրքիայի պատմական դատավճիռը՝ քայքայում»: Թեև Բ. Դռան հպատակները հավասարապես կրում էին անկում ապրող պետության ծնած թշվառությունը և, մահմեդական տարբեր ցեղեր նույնպես ապստամբում էին Թուրքական լծի դեմ, կայսրությունում «նյութական շահերի հակադրությունը հաճախ ազգային երանգ էր ստանում: Քրիստոնյան օրենքի առաջ այլ էր. նրա ցուցմունքը մահմեդականի դեմ արժեք չուներ, նա զենք կրելու իրավունք չուներ, որպես կանոն պետական պաշտոն վարել չէր կարող»: Քրիստոնյա գյուղացին մեծ մասամբ գամված էր մահմեդական հողատիրոջ հողին, մահմեդական պաշտոնյաներն էին նրան կեղեքում: Տնտեսական և իրավական ճնշման հետևանքով առաջ եկած ընդդիմությունն ազգային և կրոնական հակադրությունների մեջ պատրաստի գաղափարախոսություն գտավ: Կրոնական տարրի խառնվելն այդ հակասություններին առավել սուր և հախուռն բնույթ տվեց: Այսպիսով առկա էին այն բոլոր տարրերը, որոնք պետք է առաջ բերեին քրիստոնյա ազգերի մահացու կռիվը Թուրքիայի դեմ: Ազատագրվեցին հույները, բոսնիացիները և հերցոգովինները, սերբերը և բուլղարները: Հերթը հայերինն էր: Թուրքիայի քայքայումն ինքն իրեն չէր կատարվում: «Հունաստանի, Սերբիայի, Բուլղարիայի երկունքի ժամանակ ռուս կոզակների քնքուշ ձեռները տատմոր ձառայություն կատարեցին, իսկ ռուսական ռուբլին Սև ծովի ափերի պատմական դրամայի մշտական ռեժիսորն էր: Սակայն դիվանագիտությունը տվյալ դեպքում միայն վառվող տաշեղ է նետում դարերի անարդարությունից և շահագործումից լեռան չափ դիզված հրկիզվող նյութի մեջ»:

Բռնապետության հիմքը խարխլվում էր, սակայն Թուրքիայի զարգացման համար պայմաններ չէին ստեղծվել: Այդ պատճառով է այն «խորտակվելու էր ոչ թե որպես կառավարման ձև, այլ որպես պետություն, ոչ թե դասակարգային պայքարի հետևանքով, այլ ազգային կռիվների պատճառով»: Քրիստոնյա ժողովուրդները լոկ բռնի ուժի միջոցով էին կապված Թուրքիային և նրանից պոկվում էին սոցիալական բնականոն զարգացման, ավելի շուտ քայքայման հետևանքով ազատագրական ձգտումներն այստեղ հանդես եկան ազգային պայքարի ձևով: Թուրքական տիրապետությունից քրիստոնյա երկրների ազատագրումը միջազգային քաղաքական կյանքում նշանակում էր առաջադիմություն: Արևելյան հարցը եվրոպական տերություններին ստիպում էր խորամանկել և ձգձգման քաղաքականություն վարել, իրական շահերը կեղծ պիտակներով քողարկել: Թուրքիայի քրիստոնյա ազգերի ազատագրումով եվրոպական քաղաքականությունը լրիվ մերկացավ, զրկվեց իր վերջին գաղափարախոսական քրջից՝ «քրիստոնյաների հովանավորումից, և ի հայտ եկան դրա իսկական բովանդակությունն ու ավազակային շահերը»: Թուրքիայում ապստամբությունները փարվում էին առաջին իսկ ընձեռված միջոցին, եթե այն համապատասխանում էր տվյալ պահի շահերին, «եթե այդ միջոցն անգամ ռուսական դիվանագիտությունը լիներ: Բայց հենց որ քրիստոնյա երկրին և Թուրքիային միմյանց կապող շղթաները կտրվում էին, ռուս դիվանագիտությունը ևս հանդես էր գալիս իր իսկական կերպարանքով՝ ստորությամբ, և ազատագրված երկիրը բնազդաբար իսկույն շուռ էր գալիս Ռուսաստանի դեմ»:

Լա Բարբեն «Noe Zeitung»-ում 1897թ. տպագրած «Հարկերը Թուրքիայում և հայկական շարժումների պատճառները» հոդվածում ընդգծելով, որ հայկական շարժումների սկզբնապատճառը պետք է որոնել ժողովրդի ողբալի կացության մեջ, գրում է. «Խեղճ ժողովուրդ, վճարի՛ր տունդ կառուցելու համար, վճարի՛ր քո գլխի համար, վճարի՛ր, որ դու ծնվել ես, որ դու ապրում ես, որ դու օդ ես շնչում, վճարի՛ր քո արտի համար, քո այգու և բանջարանոցի համար: Վճարի՛ր քո ընտանիքի համար, քո քրտինքի արդյունքի համար, վճարի՛ր պետությանը, վճարի՛ր վաշխառուներին, վճարի՛ր քրդերին, վճարի՛ր քո եկեղեցուն... Վճարի՛ր, վճարի՛ր անվերջ: Եթե ծով լիներ, ապա արդեն ցամաքած կլիներ, եթե գետ լիներ, կդադարեր հոսելուց... Հայի ողորմելի գրպանը, աղքատիկ տնտեսությունը վաղուց արդեն հյուծվել և սպառվել են: Ո՞ւմ կարող է նա բավարարել: Ո՞ւմ կարող է դեռ վճարել: Ի՞նչ է մնում նրան, եթե ոչ զենքի դիմել, արյուն թափել, մինչև իսկ առանց հավատալու իր ապստամբության հաջողությանը: Այս շարժումները նման են սովյալների վերջին ջղաձգումներին: Սակայն ժողովուրդներն այդքան շուտ չեն մահանում: Օտար բռնակալները շատ ավելի շուտ են կործանվում, քան այն ժողովուրդը, որը պաշտպանում է իր հայրենիքը, իր հայրենի հողը, այն բոլորը, ինչն իր համար թանկ է»[1]:

Նշելով, որ 1912թ. երիտասարդ թուրքերի կառավարությունն իր տեղը զիջեց հակահեղափոխությանը, ապա ոչնչացնելով սահմանադրությունը նաև ձևական տեսակետից, վերադարձավ Աբդուլ Համիդի կարգերին, իսկ գերմանացիների կողմից վարժեցված թուրքական միլիտարիզմը սնանկացավ արդեն առաջին բալկանյան պատերազմում, Ռ. Լուքսեմբուրգը ընդգծում է, որ համաշխարհային պատերազմը, որի խարուսիկ խորխորատների մեջ են քաշվել թուրքերը, որպես Գերմանիայի պաշտպանյալներ, ինչպիսի ելք էլ որ ունենա, անխուսափելիորեն կհանգեցնի թուրքական կայսրության վերացմանը[2]:

Հազիվ թե մեկը վարանի ժխտել այն, գրում է Լենինը 1916 հուլիսին, որ անեքսիայի ենթարկված Բոսնիան, Սերբիան, Գալիցիան, Հայաստանն իրենց «ապստամբությունը» բռնազավթողների դեմ կանվանեն «հայրենիքի պաշտպանություն» և ճիշտ էլ կանեն[3]:

Կայսրությունը սահմանադրական համակարգ ոտք դրեց կազմալուծված: «Աչքներս որ կողմ դարձնենք՝ աջ ու ձախ, աղքատություն, խեղճություն է: Թշվառությունն ամենուրեք համայնական է... հայը, թուրքը, քուրդը բոլորն էլ անորոշ վիճակում, մութ ապագայի խարխափումների մեջ տարուբերվում են ջղագրգիռ, հուսահատ և անձկոտ»: Այս պայմաններում պատահական չէր, որ վերևների հանդեպ դժգոհությունը վերածվում էր ներքևների միջև ընդհարումների, սոցիալ-քաղաքական լարվածությունը պարպվում էր ազգամիջյան բախումների, ավազակության, առևանգումների, ավարառությունների, կաշառակերության և անիշխանության ծնած բազում ու բազմաբնույթ այլանդակությունների միջոցով, որոնք որոշ դեպքերում պատերազմի բնույթ էին կրում: Դրա հետ միասին Ասիական Թուրքիայում այդպես էլ չէր ձևավորվում հստակ նպատակադրումներ ունեցող ազգային կազմակերպված շարժում: «Հնչակ» թերթը, նկատի ունենալով, որ ԱՄՆ-ի նախագահ Թ. Ռուզվելտը հրաժարվեց միջամտել Հաագայի միջազգային դատարանում Հայկական հարցի քննությանը, գրում է, որ եթե եվրոպական պետությունները մինչև այժմ եռանդուն չմիջամտեցին և իրենց ձեռքը չվերցրեցին Հայկական հարցի վերջնական լուծումը, գլխավոր պատճառն այն էր, որ ուժ՝ տևական, կվող, մեծածավալ ուժ երևան չհանեցինք, կամ չկարողացանք հանել: Որովհետև «առանց ուժ երևան գալու չի խանգարվի եվրոպական պետությունների շահերը, իսկ առանց շահերը խանգարելու միջամտություն չի լինի»[4]: Ս. Սապահ Գյուլյանը խնդրի էությունը հետևյալ կերպ է ձևակերպում. «Հայկական հարցի գերազանցորեն վճռողը հեղափոխական ուժը պիտի լինի, մինչև որ այդ ուժը հզոր, հարատև և պահանջված չափով հանդես չգա, միջազգային ոչ մի դաշնակից, հասարակական կարծիքի ոչ մի համակրություն մեզ չի կարող նպատակին հասցնել»[5]:

Հին տեսակետներ են, որոնք սկզբունքորեն զուրկ չլինելով ճշմարտությունից, Հայկական հարցում ոչ միայն չգործեցին, այլև փոքր դեր չխաղացին Թուրք-հայկական առճակատումը սրելու ասպարեզում: Հայերի մեջ շատ ուժեղ էր Եվրոպայի միջամտությունն առաջ բերելու մտայնությունը՝ վիճակն ինչ-որ չափով բարելավելու համար, իսկ Թուրքերի կողմից այդ ձգտումն անպայման դիտվում էր որպես Օսմանյան կայսրությունից արևելյան նահանգները (Արևմտյան Հայաստանը) պոկելու քողարկված դիտավորություն, և շատ հաճախ սառը դատողությունը տեղ չէր գտնում երկու ժողովուրդների հարաբերություններում: Առճակատման տրամաբանությունը թուրքերին պարզապես անհանդուրժող էր դարձրել: Նրանց մեջ ձևավորվել էր մի մտայնություն, թե Թուրքիայի դժբախտության արմատը հայերի առկայությունն էր կայսրությունում: Իսկ նման մտայնություն ամենևին էլ դժվար չէր ձևավորել: Նախ, Արևմտյան Հայաստանը Թուրքիայի համար առանձնակի նշանակություն ուներ թե տնտեսական և թե ռազմավարական առումով: Այն Փոքր Ասիայի ամենաբերրի մասն էր, առևտրական ուղիների հանգույց, մահմեդական ժողովուրդների հետ թուրքերի կապի դարպաս: Թուրքերը միշտ էլ կայսրությունում փոքրամասնություն են եղել, ինչը դարերի ընթացքում նրանց մեջ ձևավորել էր ատելություն հպատակ ժողովուրդների, հատկապես այլակրոնների նկատմամբ: «Թուրքիայի Թուրքացում» կարգախոսն այդ հիվանդ հոգեբանության ծնունդն էր: Արևմտյան Հայաստանի հայաթափումը թուրքական ազգային ծրագրի գլխավոր կետերից էր, մանավանդ, որ Արաքսի ձախ ափին Արևելյան Հայաստանն էր «տաք ջրեր» ձգտող Ռուսաստանի կազմում: Ու նաև, ուրիշի ունեցվածքի նկատմամբ մշտապես գիշատիչ հակումներ ունեցող, ծույլ, նյութական ու հոգևոր արժեքներ արարելուց խույս տվող Թուրքի համար Հայաստանի հայաթափումը հնարավորություն էր տիրանալու հայերի ունեցվածքին: Դրան գումարվում էր հոգեվարք ապրող կայսրության վարդապետն երազանքը՝ պանթուրքիզմի դրոշի ներքո միավորել թուրքական ժողովուրդներին որպես հակակշիռ Արևելյան հարցին և, ինչու չէ, եթե բարենպաստ իրավիճակ ձևավորվեր, կուլ տալ հպատակ ժողովուրդներին: Մահմեդական խուժանի համար այս ծրագրերը թուրք ռասայի պատմական առաքելությունը նորովի իրականացնելու ի վերուստ տրված հնարավորություն էր:

Օսմանյան հասարակությունը XX դար ոտք դրեց սոցիալ–տնտեսական առումով ավատատիրական, քաղաքական առումով միապետական, բռնատիրական, տնտեսական ցածր մակարդակով: Դրա պատճառը նույնն էր՝ տիրապետող ազգը ռանտյե էր, զբաղված բանակում ու կառա-

1 Տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1987, թիվ 1, էջ 150-157:
2 Люксембург Р. Кризис социал-демократии, Москва, 1924, стр. 34.
3 Լենին Վ. Երկ, հ. II, էջ 447:

4 «Հնչակ», 1906, թիվ 4:
5 Նույն տեղում, թիվ 12:

վարման համակարգում, անտարբեր տնտեսական գործունեության հանդեպ: Թուրք բուրժուազիան «գլխավորապես ձգտում էր,– գրում է Ա. Միլերը,– մասնակցել շահութաբեր կոմպրադորական առևտրին»[6]: Թուրքն աշխատում էր հարստություն դիզել նաև տիրանալով երկրից արտաքսված մեծահարուստների և բարձրաստիճան պաշտոնատարների ունեցվածքին: «Նոր տերերը,– մատնանշում է սուլթանի նախկին գործակալներից Հալեթլաշեն,– գտնում էին թաքցրած մեծ հարստություններ»[7]: 1909թ. Սուլեյմանիեի շրջանում երիտթուրքական իշխանությունները փորձեցին պայքարել «քրդական շեյխերի ու աղալարների սանձարձակ գործողությունների դեմ», սակայն ոչնչի չհասան, բացառությամբ նրանից, որ ստիպեցին ավազակներին իրենց տալ «թալանված հարստությունների մի մասը... նման հարկադրանք նրանք գործադրում էին բոլոր ախոյանների հանդեպ, առանց հաշվի առնելու ազգային պատկանելությունը»[8]: Այդ ձևով հարստացողները «սերում էին բնակչության ցածր խավերից և հարստություն էին դիզում թուրքական այլասերված ու ծախու վարչության հովանավորության շնորհիվ»: Հարստության մեծ աղբյուր էին նաև օտար կապիտալի հետ կապերը, գրում է Հ. Ինճիկյանը, որի համար թուրքերը հիմնադրել էին ինը մենաշնորհային կազմակերպություններ, դրանցից ութը՝ բանկերի ու երկաթուղիների համակարգում էր, իսկ մոտավորապես 20%-ը՝ օտար կոնցեսիաներում: Հինգ կոնցեսիա երիտթուրքական ղեկավարության անմիջական հսկողության տակ էր, որոնցից երեքը շոգենավային ընկերություններ էին: Ցոթ ընկերություններում երիտթուրքերի ազդեցությունը մեծ էր: Եթե սուլթանական իշխանությունները 60 տարում թույլատրել էին կազմակերպել 50 օտարերկրյա կամ խառն ընկերություն, ապա երիտթուրքերը երեք տարում թույլատրեցին նման 25 ընկերության ստեղծումը և դարձան դրանց նախագահ, փոխնախագահ, տնօրեն և այլն:

1912թ. Թուրքիայի ազգային բանկի ղեկավարության կազմում էին Ջեմալ Ահմեդը, Հուսեին Ջահիդը, Ռաշիդ Սաղըրը, Շիրքեթ-ուշ Հայրին: Շոգենավային ընկերության կառավարիչներից էին Զիան ու Թալեաթը, քաղաքային, տրանսպորտի ընկերությունների կազմում էին Ջեմալը, Նուրին, Օսման Ադիլը: Երիտթուրք պարագլուխները փայատեր էին արդյունաբերության և առևտրի, նավահանգիստների և ծովափնյա շինարարության ընկերություններում: Ընդհանուր առմամբ ակնհայտ էր թուրքերի դերի մեծանալը տնտեսության բոլոր բնագավառներում: Թուրքը սկսում էր կապիտալ տրամադրել գործարաններ կառուցելուն, ճանապարհների և հաղորդակցության մյուս միջոցների զարգացմանը: Նրանք Տրապիզոնում հիմնեցին տրանսպորտային, Իզմիրում բանկային և առևտրաարդյունաբերական ընկերություններ, որոնք Բալկանյան պատերազմից հետո անցան երիտթուրք ղեկավարների վերահսկողության տակ: Թուրքական ընկերություններին հովանավորելու և օտարների ապրանքները բոյկոտելու քաղաքականությունն ամրապնդեցին օսմանցիների ազդեցության տակ էր դնում տնտեսական կյանքը: Այդ գործում պետական կառույցները վճռական դեր խաղացին, բայց ամբողջական առումով թուրքական բուրժուազիան մեկուսի գործել չէր կարողանում, գործակցում էր այլազգի կապիտալի հետ, բայց ոչ կայսրության ժողովուրդների ներկայացուցիչների: Մ. Ճեղայիրլյանին հնարավորություն տվեցին հավաքելու Բրուսայի վիլայեթի մետաքսի մաքսերը՝ պայմանով, որ պետական գանձարան մուծի 45 հազ. ֆունտ և կառուցի մետաքսամշակման հինգ ֆաբրիկա: Նրան տրվեց նաև Կ. Պոլսի ու Կրետե կղզու մաքսերը հավաքելու իրավունքը: Սա առաջացրեց մահմեդական վերնախավի դժգոհությունը և շուտով այդ հային բանտարկեցին, ունեցվածքը խլեցին: Այնուամենայնիվ, ակնհայտ էր, որ ոչ թուրք բուրժուազիան մշտապես վտանգված էր, երբեմն սնանկանում էր ժամերի ընթացքում կապիտալիստների, մաքսերի, հարստահարությունների, թալանի և բազում անօրինականությունների հետևանքով: Արտաքին կապերը նպաստեցին ոչ այնքան Թուրքիայի զարգացմանը, որքան նրա կիսագաղութ դառնալուն: Թուրքիան հումքի աղբյուր ու վաճառահանման շուկա էր: Արդյունաբերության մեջ թուրքական կապիտալը ընդամենը 10%: Երիտթուրքերը հեղաշրջումից առաջ խոստումներ էին տալիս փակելու օտար կապիտալի ճանապարհը, սակայն հակառակն արեցին: 1913թ. խորհրդարանի ընդունած «Արդյունաբերությունը խրախուսելու օրենքը» կայսրության դռները ավելի լայնորեն բացեց օտար կապիտալի առաջ: Առաջին աշխարհամարտի նախօրյակին եվրոպական տերությունների ներդրումները Թուրքիայում կազմեցին 3 միլիարդ ֆրանկ, Եվրոպային Թուրքիայի պարտքը՝ 4-5 մլն. ֆրանկ: Բրիտանացիների ձեռքում էր նավթի բաժնետոմսերի 75%-ը: Նրանք առաջատար դիրք ունեին նավաշինության, նավահանգիստների, զինարանների շինարարության մեջ: «Աշխարհի հետ Թուրքիայի առևտուրը գերակշիռ չափով բրիտանական էր», ներմուծվող ապրանքների 30%-ն անգլիական էր[9]: Ֆինանսական ամենամեծ ներդրումը ֆրանսիացիներինն էր՝ 900 միլ. ոսկի ֆրանկ: Օսմանյան պարտքի 62.9%-ի պարտքատերը Ֆրանսիան էր, 22%-ը՝ Անգլիան: Ֆրանսիացի էին ոստիկանության և ծխախոտի մենաշնորհի տնօրենները: Օսմանյան բանկի ընդհանուր տնօրենը և արդյունաբերության նախարարության ընդհանուր վերահսկիչներն անգլիացիներն էին: Բանակը գերմանացիների վերահսկողության տակ էր: Եվրոպացիներն էին տնօրինում քաղաքային տնտեսությունը, էլեկտրականները, նավահանգիստները, փոխադրամիջոցները և այլն: Այս գործում առաջնային դերը պատկանում էր առևտրին: «...Կորանն ամեն մի օտարերկրացու հայտարարում է թշնամի...», հենց այդ էլ հանդիսացավ Թուրքիայի դժբախտության գլխավոր պատճառը, որովհետև եվրոպացի առևտրականն աշխատում էր իր համար ապահովել «արտակարգ պայմաններ ու արտոնություններ, որոնք հետագայում... տարածվեցին ամբողջ ազգի վրա»: Դա էլ ձևավորեց կապիտուլյացիաների համակարգը[10]: «Կապիտուլյացիաները կայսերական հրովարտակներ էին առանձնաշնորհումներ տալու վերաբերյալ: Դրանք Բ. Դուռը տալիս էր եվրոպական տարբեր պետությունների՝ իրավունք վերապահելով անարգել մուտք գործելու մահմեդական հողերը» և զբաղվելու ամենատարբեր գործերով[11]: Այդ հրովարտակները մենաշնորհներ էին, որոնք աստիճանաբար ժամանակավոր արտոնություններից վերածվեցին մշտականի և դարձան խտրականություն հաստատող պայմանագրեր: Սուլթանը կնքված պայմանագրերը միակողմանի չեղյալ հայտարարել չէր կարող: Իհարկե, երկրի տնտեսական բարձունքները «խաղաղ միջոցներով» գրավելու գործում փոքր դեր չխաղաց նաև սուբյեկտիվ գործոնը՝ թուրք վերնախավի համար այն հարստանալու միջոց էր: 1912թ. օսմանյան պարտքերի վարչության համակարգում աշխատում էր 8931 մարդ. դա այն դեպքում, երբ կարության ֆինանսների համակարգի աշխատակիցների ընդհանուր թիվը 5472 էր: Ընդ որում, շատ տեղերում ոչ թե տեղական մարմինները, այլ այդ վարչության գործակալներն էին հարկերը հավաքում: Աշխարհամարտի նախօրյակին վարչության ձեռքում էր Թուրքիայի եկամուտների մեկ երրորդը[12]: Թուրքիան անկարող էր դարձել լուծելու որևէ տնտեսական հարց, առանց եվրոպական կապիտալի, առանց Արևմուտքի տերությունների համաձայնության:

Թուրքիան ոչ միայն վերածվել էր կիսագաղութի, որտեղ Արևմուտքը ստեղծել էր «պետություն պետության մեջ», այլև օսմանցին սեփական երկրում հարկադրված էր դառնալու «երկրորդ կարգի» ազգ, եվրոպացիներին սպասարկող: Թուրքական տարեգրքի տվյալներով 1912-ին երկրում գործող 16 խոշոր բանկերից միայն երեքում էր թուրքական կապիտալը գերակշիռ: Երկաթգծերի շինարարությունը գտնվում էր 12 օտար ընկերությունների ձեռքում: Գլխավորներն էին գերմանական (2565կմ), ֆրանսիական (2077կմ) և անգլիական (610կմ) ընկերությունները: Պատերազմի նախօրյակին Թուրքիայի հետ առևտրում Գերմանիան Անգլիային գերազանցեց հինգ, Ֆրանսիային և Ավստրո-Հունգարիային երկու անգամ: Միայն Ռուսաստանն էր, որ շահագրգռվածություն հանդես չէր բերում Թուրքիայում կապիտալ ներդնելու գործում, որովհետև գտնում էր, որ այդ կայսրությունն անպայման կործանվելու էր: Ռուս-թուրքական տնտեսական

6 «Всемирная история», т. VII, Москва, 1960, стр. 357.
7 Хаджетлаше М. Убийца на троне. Записка начальника тайнон полиции Турции, П-д, 1918, стр.6.
8 ЦГВИА, Ф. 2000, оп. 1, Д.1002, л. 233.

9 Гобиудцыллин Х. З. Малдотурецкая революция. Исторические очерки, Москва, 1935, стр. 131; Констансон Л. Реформы в Азиатской Турции, Армянский вопрос, М., 1914, стр. 4.
10 Маркс К. и Энгельс Ф. Сочинения, т. XXIII, Москва, стр. 173.
11 Նույն տեղում, հ. X, էջ168:
12 Раздел Азиатской Турции..., стр. 9.

կապերը խոչընդոտվում էին նաև Թուրքական կառավարության կողմից՝ դրանք համարվում էին արևելյան վիլայեթներում ռուսամետ տրամադրությունների զարգացման միջոց: Այնուամենայնիվ Թուրքիայի հայկական նահանգներում կապերը Կովկասի հետ գնալով զարգանում էին, չնայած դրանք չէին խրախուսվում նաև Պետերբուրգի կողմից: Այնուամենայնիվ Էրզրումում Ռուսաստանի գլխավոր հյուպատոս Աղամովի տվյալներով 1908-12 թվերին վիլայեթի առևտուրը Ռուսաստանի հետ աճեց ավելի քան երեք անգամ: Թուրքիան Ռուսաստան էր արտահանում անասուն, չմշակված կաշի և գյուղատնտեսական այլ մթերքներ[13]: Պատերազմի նախօրյակին ռուսական ապրանքների արտահանումը Թուրքիա աճեց երկու անգամ, 1911թ. 14.5 մլն. ռուբլուց 1914թ. հասավ 32 մլն. ռուբլու:

Վ. Բարտոլդը մահմեդական երկրներում բարեփոխումները, դրանց «եվրոպականացումն» անհնար էր համարում, որովհետև այդ երկրների պետական և հասարակական կյանքում ամեն մի նորամուծություն դիտվում էր որպես հանցագործություն հավատի հանդեպ[14]: Թուրք պատմաբան Ավջօղլուն Թուրքիայի հետամնացության պատճառը համարում էր արտաքին ազդեցությունները. «Թուրքիան ոչ թե հետամնաց, այլ իմպերիալիզմի կողմից հետ թողնված երկիր է»[15]: «Երիտթուրքերը,- գրում է Ա. Միլլերը,- իրենց խնդիրն էին համարում ոչ թե պայքարելու հանուն ազգային անկախության, այլ ընտրելու որևէ իմպերիալիստական խմբավորում, որի «հովանավորության» տակ, իրենց տեսակետով, ավելի ձեռնտու կլիներ դնել Թուրքիային»[16]:

Նույնիսկ ներքին խնդիրներ լուծելիս հաշվի էր առնվում օտար կապիտալի շահը: Ֆինանսական պետքերը հոգալու կարևորագույն միջոցներից մեկը երիտթուրքերը համարում էին արտաքին փոխառությունները: «Մենք արտասահմանյան կապիտալի կարիք ունենք,- հայտարարեց ֆինանսների նախարար Ջավիդը,- որպեսզի ավարտենք սկսած գործը... կապիտալի հայրենիքն այն երկիրը չէ, որտեղ գոյանում է, այլ որտեղ այդ կապիտալը ներդրվում է»[17]:

1910թ. Թուրքիայի բյուջեի պարտքը կազմեց 40 միլ. լիրա, պետական պարտքը՝ 525 միլ. լիրա: Պետական ծախսերն աճում էին հսկա քայլերով, իսկ արտադրությունն անշարժ էր[18]: «Հինգ տարում (1908-13) Թուրքիան ստացավ 58.6 միլ. թուրքական լիրա փոխառություն, այն դեպքում, երբ Աբդուլ Համիդն իր 33-ամյա թագավորության շրջանում ստացել էր միայն 45 միլ. լիրա: Պատերազմի մեջ մտնելու պահին Թուրքիայի արտաքին պարտքը կազմեց 148.5 միլ. թուրքական լիրա»[19]: «Ներկայումս,- գրում է Հաջեմուկովը,- գրեթե չի մնացել եկամուտների ոչ մի գործող հոդված, որը դրված չլինի օտարերկրացիների տրամադրության տակ:Սահմանադրական կառավարությունը, դրամ հայթայթելու տենդով բռնված, սկսել է հողերը վաճառել եվրոպացիներին[20]»: Այս քաղաքականության դեմ բարձրացավ գյուղացիությունը, հատկապես արաբները, բռնկվեցին գյուղացիական ապստամբություններ: Թուրքական վերնախավի որոշակի շրջանները ևս վախ ունեին փոխառությունների հանդեպ և, ինչպես գրում է «Tasfiri efkyoei», թուրքերը դեմ չէին եվրոպական կապիտալի մուտքին, սակայն ցանկանում էին, որ «օտար կապիտալի ներհոսքն իր հետ չբերեր քաղաքական ներդրումներ»[21]: Թերթն անկեղծ չէ: Թալեաթն իր հուշերում վկայում է. «Մենք համոզված էինք, որ գոյատևելու համար Թուրքիայի դաշինքը (Գերմանիայի) նման եվրոպական տերության հետ անհրաժեշտություն էր: Թուրքիան ի զորու է ապահովել գիտության, արհեստների, արդյունաբերության և առևտրի զարգացումը, ինչպես

13 Лесенко В. К. Ближный Восток как рынок сбыта русских товаров, С. П., 1913, стр. 293.
14 Бартольд В. В. Турция, ислам и христианство, соч., т. VI, Москва, 1966, стр. 143.
15 Avcioglu D. Turkiye' nin duzeni, onunsu baski, Birinci Kitap, Istanbul, 1976, s. 224.
16 «Всемирная история», т. VII, стр. 366.
17 «Восточный сборник», кн. II, 1916, стр. 32.
18 Գանգրունի Հ. Հայ հեղափոխությունը օսմանեան բռնատիրության դեմ (1890-1910), Բեյրութ, 1973, էջ 231:
19 «Восточный сборник», кн. II, стр. 32.
20 Ն. տ.:
21 "Санкт-Петербургские ведомости", 25.12.1913г.

նաև պահպանել տարածքային ամբողջականությունը միայն այնպիսի պետության օգնությամբ, որն ուներ զարգացման բարձր մակարդակ»[22]:

Գերմանիան ներխուժեց Թուրքիայի տնտեսության, քաղաքականության, ռազմական, քարոզչության, կարճ ասած, կյանքի բոլոր բնագավառները: Բացելով գերմանա-թուրքական հիմնադիր նիստը, խորհրդարանի նախագահ Հալիլն ասաց, որ արդյունաբերական Գերմանիան և երկրագործական Թուրքիան կլրացնեն միմյանց: Նա Թուրքիայի գերմանամետ քաղաքականությունը հիմնավորում էր, թե իբր Թուրքերն արդեն տեսնում էին «օգուտները, որ կարող էր բերել սերտ ու երկարատև մերձեցումը»[23]: Թուրքիան շատ արագ դարձավ Գերմանիայի ֆինանսական վասալը, նրա կամակատարը: Արդեն 1914-ին Թուրքիայի արտաքին վարկերի 45.4%-ը գերմանական էր: Սակայն «կամակատար» ասածը չպետք է բառացի հասկանալ, որովհետև Թուրքիան ուներ Գերմանիայից անկախ շահեր ու պլաններ և համառորեն ձգտում էր դրանց իրականացմանը:

Որքան դանդաղաշարժ, լճացած էր թուրքական տնտեսությունը, այնքան կայուն էր Թուրք հասարակության սոցիալ-դասակարգային կառուցվածքը: Այդ կառուցվածքում տեղաշարժեր երիտթուրքական հեղաշրջումից հետո չնայած նկատվեցին, բայց ոչ որակական: Ավանդական հասարակական խավերը շարունակում էին գոյություն ունենալ՝ կրելով մասնակի փոփոխություններ: Թուրքիայի սոցիալ-տնտեսական կյանքի ամորֆությունը ոչ թե վերարտադրում էր հասարակական նոր երևույթներ ու խավեր, այլ միայն գունափոխում էր հները: Եվրոպայի սրտում գտնվող այդ երկիրը շարունակում էր պահպանել ստրկատիրական, էլ չասած ավատատիրական հասարակության այլևայլ հատկանիշներ: Դրանք առանձնապես կենսունակ էին մահմեդական ընտանիքներում, որոնց առանձնահատկություններից մեկն այսպես կոչված «ընտանեկան ստրկության» առկայությունն էր: Առավելապես իգական սեռի անազատները շարունակում էին մնալ հարեմների բաղադրիչներ: Նրանք համալրում էին հարճերի և տնային ծառայողների մեծաթիվ բանակը: Չնայած 90-ական թվականներին օրենքով արգելվում էր ստրուկների վաճառքը, այն շարունակեց գոյություն ունենալ մինչև կայսրության անկումն ու նաև դրանց հետո: Անգամ մայրաքաղաքում կային չայխանաներ, որոնք փաստորեն ստրկավաճառության շուկաներ էին: Իշխանությունները դրանց մասին գիտեին, գրում է Ի. Գոլոբտրոդկոն, սակայն ձեռք չէին տալիս, որովհետև ստրուկ գնում էին «հիմնականում հարուստ և բարձր խավի մարդիկ»[24]: Սուլթանները շարունակում էին հարճեր նվեր ընդունել իրենց հարեմների համար: Մահմեդականների ուխտատեղում Մեքքայում, գործում էր ստրուկների շուկա: Տաղավարի տակ շարված էին կանայք, տղամարդիկ ու երեխաներ: Գնորդները նրանց հետ վարվում էին ինչպես անասունների՝ մերկացնում էին, շոշափում, վիճում նրանց արտաքին տեսքի ու դիմացկունության շուրջը, սակարկում: Գները բարձր չէին, երեխաներին վաճառում էին 50-100, իսկ կանանց ու տղամարդկանց՝ 200 ռուբլով: Կ. Պոլսում գները շատ ավելի բարձր էին: Արտաքին աշխարհից մեկուսացված հարեմը գրեթե անհնար էր դարձնում վերահսկողությունը տնային ստրկության վրա[25]:

1909թ. հոկտեմբերի 17-ին հրապարակվեց հետևյալ իրադեն. «Իսլամի երկրում ազատությունը բնական բան է և թող չլինի որևէ դիտավորություն ինչ-որ մեկին, ով էլ որ նա լինի, համարելու ստրուկ»[26]: Բայց երբ պարզվում էի, որ տվյալ անձը եղել է ստրուկ, տերը պնդում էր, որ նա վերադարձվեր իրեն, որովհետև այդպես էր պահանջում Շարիաթը: Սակայն, քանի որ օրենքով ստրկությունն արգելված էր և դա ամրագրված էր սահմանադրությունով, ապա այն թույլատրվում էր միայն հատուկ կանոններով և բացառիկ դեպքերում: Օրինակ, անթույլատրելի էր համարվում, որ «ի ծնե ազատ չերքեզները վերածվեին առևտրի առարկաների»: Ինչ վերաբերում է գյուղերին, ապա ինչպես վկայում է Վ. Գորդլևսկին, Արևմտյան Հայաստանի շատ վայրերում անգամ աշխարհամարտից հետո էլ հայ գյուղացին գնվում ու վաճառվում էր:

22 Talat Pasa' nin Hatralari, Ist., 1946, s. 23, Թարգմանությունը տե՛ս ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ (ձեռագիր):
23 «Летопись», 1917, N 5-6, стр. 290
24 Голобородко И. Старая и новая Турция, Москва, 1908, стр. 13
25 Նույն տեղում, էջ 14:
26 Тыркова А. Старая Турция и младотурки. Год в Константинополе, Петроград, 1916, стр. 138

Քաղաքային բնակչության ստորին խավի հաջորդ աստիճանին համալներն էին՝ բացարձակապես իրավազուրկ ու սեփականազուրկ մարդիկ: Պոլսում կար 30 հազ. համալ: «Երբ համալը պիտի ծանր բեռը շալակեր, կռանում էր այնքան, որպեսզի մեջքը հորիզոնական դիրք գրավեր: Մեջքին փալաս, դրա վրա բեռը, որը կապում էր պարանով... քանի որ համալի գլուխը ծանրության տակ խոնարհված էր և նա անցորդներին չէր տեսնում, նրանց հետ չբախվելու համար անընդհատ բղավում էր»[27]:

Տնտեսական կյանքի լճացածությունը, մահմեդական կրոնի քարոզած նորմերը Թուրքի մեջ ձևավորել էին ոչինչ չանելու՝ անբանության, ծուլության պաշտամունք: Օսմանցի Թուրքերի միջավայրում դասակարգային բաժանումն արտաքուստ ցցուն չէր: Հպատակ ժողովուրդների համեմատությամբ «բոլոր Թուրքերն ազնվականներ էին»: Դա նաև այն պատճառով, որ Թուրքերը երբեք չեն ունեցել փակ կաստայի վերածված արտոնյալ ազնվականություն: Թուրք ազնվականը նույնպես իրավազուրկ էր այն առումով, որ ամենաբարձր աստիճանին հասածն անգամ սուլթանի քմահաճույքով մի ակնթարթում կարող էր դառնալ սինլքոր:

Օսմանյան հասարակության հոգի բարքերը Թուրքին հարկադրում էին մնալ տգետ, բիրտ, պարծենկոտ, տարրամերժ, նախապաշարմունքներին գերի: «Բնությունը,– գրում է Գոլոբորոդկոն,– Թուրքերին օժտել է խելքով և սրտով, սակայն զրկել է ստեղծագործելու կարողությունից ու ճաշակից»[28]:

«New York Times»–ը 1915Թ. հունիսի 26-ին գրում է. «Ցավալի է, որ մենք շատ երկար չհասկացանք Թուրքերին և Թերագնահատեցինք... Նրանց ներկայացնում էինք ծայրաստիճան պարզ մարդիկ՝ ֆեսով, փոթուր (պարկանման) տաբատներով չայխանայում բազմած նարգիլե ծխելիս, նարգի խաղալիս կամ պարապ-սարապ ման գալիս շրջապատված հարեմի կանանցով: Երբեմն նրանց պատկերացնում էինք յաթաղանով և ոչինչ չկասկածող հայերի հանդեպ անասելի վայրագություններ գործելիս: Նրանց կանանց համարում էինք գեղեցիկ, Թեթևամիտ, բանտարկված Թիթեռներ...»: Սակայն այդ ամենը Թուրքի արտաքինն էին: Նա արյունռուշտ էր, ստրուկին հատուկ դաժանությամբ ու ատելությամբ: Թուրքի ազատ լինելը նույնպես արտաքուստ էր: Գիշատիչ ավատատիրոջ դեմ պայքարը, ովքեր միջնադարյան բարոնների նման բազմած էին լեռների անմատչելի բերդերում, կառավարության համար բարդ խնդիր էր: Հեռավոր նահանգների մեծ մասում Բ. Դուռն իրական իշխանություն չուներ: Մասնավորապես քուրդ բեկերը հարկ չէին մուծում, հարկահավաքներին մի քանի ոսկով կաշառում էին կամ ղուլամների միջոցով դուրս քշում: Ավատատերերից շատերը մեծ պարտքեր ունեին, սակայն դա չէր խանգարում նրանց հարուստ ու չվայտ կյանքին: Հարկերի ծանրությունն ընկած էր գյուղացու վրա, նույնիսկ զավթված հողերի համար հարկ վճարում էր ոչ Թե բեկն, այ գյուղացին, որին նախկինում պատկանել էր այդ հողակտորը: Հողերի Թալանը զանգվածային բնույթ ուներ հայկական նահանգներում, որտեղ հայն օրենքից դուրս վիճակում էր և Թալանվում էր անարգելք: Վիճակը փոփոխություն չկրեց նաև Սահմանադրության հռչակումից հետո, մանավանդ, որ հայերի հողերի զավթումների մեջ ներքաշված էին նաև երիտԹուրքերը:

1910Թ. սեպտեմբերի 29-ին Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսը գրում է. «Չնայած երկու տարի առաջ մտցված սահմանադրության և Թուրքերի ու հայերի քաղաքացիական իրավունքների երևակայական հավասարեցման, վերջինները Թուրքերի հետ բախումների ժամանակ համարվում են մեղավոր և պայքարում են ամենայն խստությամբ, ինչպես այդ արվում էր առաջներում. եթե հայ է, ապա մեղավոր է»[29]:

Նախկինում հայերի հողերի վաճառքի համար պահանջվում էր նաև պատրիարքարանի գրավոր համաձայնությունը, մինչդեռ հողային նոր օրենքով այդ իրավունքն ամբողջությամբ հանձնվել էր մուխտարներին ու իմամներին, որոնց էլ բաժին էր հասնում առևտրական այդ գործարքների տոկոսները[30]: Շարունակվում էին քրդերի ավազակային հարձակումները հայերի վրա: Այդ առնչությամբ Գր. Զոհրապը Թալեաթին ասել է. «...Ես հանգել եմ այն եզրակացության, որ Մուշում գործում է ինչ-որ չար ձեռք»: Թալեաթը չի առարկել[31]:

ԵրիտԹուրքերի 1910Թ. համագումարը Նաղշի զեկուցման կապակցությամբ ընդունեց բանաձև, որում ասված էր, Թե անհնար է իրականացնել սահմանադրության հռչակած ազատությունները և ցանկալի չէ սահմանափակվել սուլթան Աբդուլ Համիդի վարչակարգի իրականացրած մասնակի ջարդերով: Մերժվեց «հայկական բարենորոգումները» պատճառաբանությամբ, Թե դրանք կխախտեին կայսրության ամբողջականությունը և կհանգեցնեին «հայկական անկախության»: Այդ բանաձևը նաև կողմնորոշում էր՝ ոչնչացնել «Օսմանյան կայսրության հայերին և ստեղծել միատարր Անատոլիա»: Պահանջվում էր. ա) վերջնականապես լուծարել Հայկական հարցը, բ) Թուրքական պետությունը զերծ պահել արտաքին միջամտությունից, գ) հայ տարրին վերացնել, ինչը մեծ հնարավորություններ կընձեռեր Թուրքերի կենսագործունեության համար, դ) սեփականաշնորհել հայ բնակչության ունեցվածքը՝ այն դարձնել օսմանյան Թուրքիայի սեփականություն, ե) Անատոլիան վերածել էթնիկ առումով միատարր Թուրքական երկրի, զ) հեռացնել «գլխավոր խոչընդոտը» պանԹուրքիզմի գաղափարներն իրականացնելու ճանապարհին[32]: ԵրիտԹուրքերը գործնական քայլեր կատարեցին նաև Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը վերացնելու ուղղությամբ, բայց հաջողության չհասան: Համառ ջանքեր էին գործադրվում հայ-քրդական առճակատումն ավելի բորբոքելու համար[33]: Սկսեցին իշխանության բարձր ոլորտները մաքրել հայերից: Օրինակ, հասարակական աշխատանքի նախարար Հալաջյանը գործից հանվեց «զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու» պատճառաբանությամբ, չնայած նա հանրահայտ էր որպես Բ. Դռան ամենաձեռնահաս գործիչ: Ե. Օտյանը գրում է. «Արևելքում Ազատություն, Սահմանադրություն, Հավասարություն և Միասնություն ուրիշ արդիւնք չտվին, բացի անորից, որ հայոց սպանություններ, չարագործություններ, բռնություններ և ճնշումներ փոխանակ դառնալու եվրոպական մամուլի սեփականությունը, սկսեցին հրապարակուել տեղական Թերթերում... Համիդը տապալուած է, բայց նրա տակառիկը եղել և մնում է երջանիկ երկրում»[34]: Բաղեշի առաջնորդը 1911Թ. մարտի 1-ին գրում է պատրիարքին. «Վալի Հաքդը բեյի գալու հետ հույս կար, որ բռնատիրության վերջին մոհիկանների կողմից իրականացվող ավերմունքներին վերջ կդրվի: Դժբախտաբար այդ հույսերը չիրականացան: Ներքին գավառներում, որտեղ չինովնիկները դեռևս հետ չեն սովորել կաշառակերությունից ու Թալանից, հանցագործություններն ամենևին էլ չեն պակասել». Իշխանությունները միայն աշխատում են տպավորություն ստեղծել, Թե հայերի հանդեպ ոտնձգությունների դեմ պայքարում են, սակայն իրականում ոչինչ «չի ձեռնարկվում վերջ դնելու մեր նահանգում տիրապետող հանցագործություններին»[35]: Նաև ասվում է, որ Ս. Գևորգի եկեղեցին քրդերը վերածել են մեջեդի: Դրեթե նույն օրերին Ադանայի վալու Թողտվությամբ կործանվեց Հասան Բեյլիի եկեղեցին: Թուրքերը կարծում էին սահմանադրություն հռչակելը բավական էր կայսրությունը քաղաքակրթելու:

«Թանինը» գրեց. «Օսմանյան բոլոր հպատակները ընդունում են, որ սահմանադրական կայսրության առաջին բարեմասնությունը, դա պետության գլխին Մահմեդ 5-րդի նման մեկին ունենալն է: Նրա կառավարման յուրաքանչյուր րոպեն ծառայում է սահմանադրության ամրապնդմանն ու տերության արժանապատվության բարձրացմանը»: Մինչդեռ նահանգներից ստացվող լուրերը չարագույժ էին: Ադանայի առաջնորդը 1911Թ. մայիսին պատրիարքին գրում է ջարդերի իրական վտանգի մասին: Նասիլ գյուղում Թուրքերը հրդեհել էին մի հայի տուն, Քյուրքչի գյուղում յոԹ Թուրք հարձակվել էր հայ ամուսինների վրա: Զարսանջակցի 4000 հայ

27 Голобородко И. նշվ. աշխ., էջ 15:
28 Նույն տեղում, էջ 23:
29 «Մշակ», 16.09.1910:
30 Ն. տ., 10.10.1910:

31 «Баку», 08.09.1910.
32 Մնացականյան Ա. Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ, Ե. 1963, էջ 32-33:
33 «Закавказье», 18.11.1910.
34 «Մշակ», 16.03.1911:
35 «Баку», 23.04.1911.

պահանջում էր վերադարձնել իրենցից խլված հողերը: Աղթամարից գրում էին. «Կավշայի շրջանի քուրդ ցեղերը հայերին պահում են սարսափի մեջ: Իսկ Մշո առաջնորդ Ն. Բարախանյանն էլ հրաժարական տվեց դպրոցներում դաշնակների օգնությամբ տարվող քաղաքականության պատճառով: Մասնավորապես խոսքը գնում էր Հ. Զավրիևի ինքնագլխությունների մասին»[36]: Դերսիմից պատգամավոր Լ. Ֆիքրին «Tansl minat» թերթում դատապարտեց Արևելյան Անատոլիայում ութ հայերի սպանությունը: «Բիւզանդիոն» գրեց. «Հայերու դրութիւնը Թուրքիայում վատանում է, դժգոհութիւնը վերածվում է զայրույթի և, հավանաբար, մենք գտնվում ենք նոր ահավոր իրադարձութիւններու նախօրեին»[37]: «Ազատամարտը» 1911 հունիսի 10-ին գրում է. «Անատոլիայում զանգվածային թալանների մեջ նորից հարկ է նկատել կառավարության թուլության ապացույցներ... Երկրամասում թագավորում է կոպիտ բռնությունը և գյուղացիությանը ոչինչ չի մնում, եթե ոչ ինքնաոչնչացումը կամ արտագաղթը»:

Թերևս այս վիճակը նույնպես դեր խաղաց, որ 1912թ. խորհրդարանական ընտրություններում ՀԾԴ նորից հարեց իթիհադի կենտրոնացման քաղաքականությանը: Ա. Տիրկովան նկատում է, որ հայ առաջատար կուսակցության կարծիքով. «Սկզբում պետք է ստեղծել բոլորի համար պարտադիր օրենք, հետո միայն հոգ տանել տեղական կյանքի ուժեղացման մասին»[38]:

Նկատվեցին դեպքեր, երբ այս կամ այն հայաբնակ գավառում տարվում էին աշխատանք հայերի ջարդեր նախապատրաստելու ուղղությամբ: Երբ Ադանայի հայերը տեղեկություն ստացան նախապատրաստվող ջարդի մասին ու դիմեցին տեղական իշխանություններին, վերջինները նրանց մեղադրեցին կեղծ լուրեր տարածելու համար: Պարիարքը Ադանա ուղարկեց Գ. Պալաքյանին վիճակը պարզելու: Վերադառնալիս Պալաքյանը Ազգային ժողովում հայտարարեց, թե Կիլիկիայում ջարդը նախատեսված էր իրականացնել պասի օրը, բայց տեղի չունեցավ, որովհետև Մերսին հասավ գերմանական ռազմանավը, որի հրամանատարը հայտարարեց, թե ջարդի դեպքում դեսանտ կիջեցնի: Նույն բանը հաստատեց ծովակալ Թրումլերը՝ հայտարարելով, թե ինքը իրավասություն ունի ջարդի դեպքում զորք հանել ջարդարարների դեմ:

Ազգային ժողովի հուշագիրը՝ աշխատանքից ազատել Ադանայի վալուն, պատժել հայերի հանդեպ բռնություններ գործադրողներին, ուշադրության չարժանացավ: Մինչդեռ Մերսինում «Parazan» թերթը շարունակում էր բացեիբաց պահանջել կոտորել հայերին: Քաղաքի մահմեդական բնակչությունը լքում էր հայկական թաղերը, ինչը նույնպես գուժում էր, որ ջարդ էր նախապատրաստվում: Ադանայի վալին շարունակում էր համագործակցել իթիհադիստ Ցա. Զեմալի հետ, որը նախկինում հայկական ջարդերի համար դատապարտվել էր: Օսմանիեի մութասարիֆ նշանակվելու կապակցությամբ Ռեսիֆը հայտարարեց, թե հայերի թշնամին է: Նա արգելեց հնչեցնել հայ եկեղեցու զանգերը և մատուռ կառուցել Ադանայի զոհերի գերեզմանատանը: Զեյթունում իշխանությունները հայերից պահանջեցին հանձնել 100 ատրճանակ, մինչդեռ յուրաքանչյուր մահմեդականի տանը մի քանի զենք կար: Մահմեդական քարոզիչները թուրքերին հայերի դեմ հանելու նպատակով հայտարարում էին, թե «նրանք զինված են ու պատրաստ ջախջախելու մուսուլմաններին»[39]: Դրությունը գնալով ավելի էր սրվում ռուս-թուրքական սահմանամերձ շրջաններում:

Հայ զինվորներին կասկածում էին ռուսների հետ կապի մեջ և նրանց հետ քաշեցին Բայազետից: Սկսվեց նաև հոգեբանական հարձակում հայերի վրա: Հրատարակվեց Աթեշբեյի «Դավաճաններ» գրվածքը, որի հիմնական միտքն էր՝ օսմանյան տերության համար գլխավոր վտանգը կայսրությունում քրիստոնյա բնակչության առկայությունն էր: Հայերն անվանվում էին «դավաճաններ»: Քարոզչական ճնշումը համապարփակ ու համակարգված բնույթ ստացավ, երբ երիտթուրքերը 1912թ. ստեղծեցին կենտրոնական «Թուրքական օջախ», որը մի քանի տասնյակ բաժանմունքներ ուներ կայսրությունով մեկ: «Թուրք յուրդու» ակումբները ծավալեցին թուրքիստական սանձարձակ քարոզչություն: Դրությունը հատկապես ծանր էր Դիարբեքիրում:

36 «Մշակ», 09.06.1911:
37 «Баку», 08.06.1911.
38 Тыркова А. Старая Турция..., с. 6.
39 «Մշակ», 05.05.1913:

Քուրդ ավազակների ձեռքերին ազատություն էին տվել: Բիթլիսի նահանգում մոլեգնում էր Սայիդ Ալիի ավազակախումբը: Տեղական ծառայողները հայտարարում էին, թե կայսրության բոլոր դժբախտությունների մեղավորը հայերն էին և դրությունը շտկելու միայն մի միջոց կա՝ ոչնչացնել նրանց: «Je Turquie» թերթին տված հարցազրույցում պատրիարք Արշարունին ասում է. «Օր չի անցնում, որ պատրիարքարանը գանգատներ չստանա իր ծխերից քրդերի ճնշումների և բռնությունների վերաբերյալ, որն արգելելու համար իշխանությունները ոչինչ չէին անում: «Օրինական ինքնապաշտպանության» ժամանակ մի քրդի սպանելու համար բանտարկվեց 100 հայ... Պատասխան երկու քրդի սպանության համար ոչնչացվեց երկու հայկական գյուղ»: Արշարունին գտնում էր, որ պետք է Եվրոպայի վերահսկողության ներքո անցկացնել վիլայեթների կառավարման համակարգի, ոստիկանության և ժանդարմերիայի բարենորոգումներ, վերջ դնել անիշխանությանը, պատժել բռնությունների մեղավորներին, ստեղծել դպրոցներ հայերի ու քրդերի համար, հիմնովին վերափոխել հաղորդակցության համակարգը: Նա նաև առաջ քաշեց Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը, հակահարված տալով հայերին անջատողականության մեջ մեղադրողներին: «Մեզ մեղադրում են,- ասաց նա,- անջատողականությանը զարկ տալու և Հայաստանի ինքնավարության ձգտման մեջ... Ոչ, մենք բաժանվելու կողմնակից չենք և ազնվորեն կատարում ենք օսմանցիների բոլոր պարտականությունները՝ շատ ավելի լավ, քան թուրքերն ու քրդերը»:[40] Պատրիարքը պահանջում էր եվրոպական վերահսկողությունը վալիների, ոստիկանության և ժանդարմերիայի գործունեության վրա: Եվրոպայի հայ ուսանողների 19.04.1913թ. հրապարակած կոչում օրվա գլխավոր խնդիրը համարվում էր ինքնապաշտպանությունը և սեփական ուժերին ապավինելը: «Վերջապես, բավական է մեզ խղճան որպես դասական զոհ բռնության և ջարդերի: Այդ ցավակցությունն այլևս ամոթալի է ու վիրավորական»[41]: Դրան հետևեց կովկասահայերի առաջարկությունը փոխարքայությանը՝ զենք տրամադրել արևմտահայերի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար:

1913-ի ապրիլի 29-ին պատրիարքի գլխավորած պատվիրակությունը հուշագիր հանձնեց մեծ վեզիրին, որում խոսքը գնում էր հայ ժողովրդին սպառնացող «դժբախտության» մասին, ինչն արտահայտվում էր բռնությունների չեչտակի աճով, մահմեդական բնակչության թշնամության ահագնանալով: Կայսրության բոլոր դժբախտությունների պատճառը հռչակվեցին հայերը: Վտանգի իրական լինելու իրողությունը հաստատելու համար մատնացույց արվեցին Ադանայի ջարդերի կազմակերպիչների ակտիվանալը, հայերից զենքերի խլելը, մահմեդական մարդասպաններին ազատ արձակելը[42]: Մեծ վեզիր Մ. Շևքեթը պատասխանեց, թե հանձնաժողով է կազմված հայկական նահանգներում բարենորոգումներ անցկացնելու և կոչ արեց աջակցել դրանց իրականացմանը, թե «ոչ միայն հայերն են տուժում ավազակներից, այլև թուրքերն ու քրդերը»: Անդրադառնալով Բալկանյան պատերազմին նա ասաց. «Բարձրաձայն հայտարարում եմ, որ քրիստոնյա հպատակներից հայերն ամենանվիրվածներն են: Վերջին պատերազմում նրանք մարտնչեցին խիզախ և առատորեն հեղեցին իրենց արյունը հանուն մեր թշվառ հայրենիքի»[43]:

Սակայն գնալով վիճակն այնքան սրվեց, որ երբ Վանի գործիչները որոշեցին նշելու օսմանյան սահմանադրության երրորդ տարին, իթիհադը թույլ չտվեց, թե տարելիցն իրավունք ունի նշել հայ ժողովուրդը, այլ ոչ թե նրա կուսակցությունները: Շատախի և Աղթամարի հայերը խնդրեցին Բ. Դոանը իրենց պաշտպանելու Միր Մհեի ավազակներից[44]: Զարսանջակի հայերը փորձեցին անցնելու ուղղափառ կրոնին: Խարբերդի վիլայեթում հայրի հողերի զավթումները զանգվածային բնույթ ստացան[45]: Այնթափի գյուղացիներն ահազանգում էին, թե իրենց բանտ էին նետել արհեստագործական միություններ կազմակերպելու համար: Խառնակչություն էր

40 «Մշակ», 05.05.1913:
41 Ն. տ.:
42 «Сборник дипломатических документов...», Е. 22, с. 32.
43 Ն. տ. 11.15.1913:
44 «Баку», 21.07.1911.
45 Ն. տ.:

տիրում Մուշում, Կ. Պոլսից հանձնաժողով ուղարկվեց պատճառները պարզելու: Երբ խասգյուղի հայերն ու քրդերը գանգատ ներկայացրին 4-րդ բանակի հրամանատար Օսմանին թուրքերի բռնությունների վերաբերյալ, փաշան պատասխանեց. «Դուք, հայերդ, վնասակար տարր եք... դուք խռովարար ժողովուրդ եք»: Նա հայերին մեղադրեց հողային խնդրի առաջացման և թուրքերի հետ առճակատման հարցում. «Դուք ստեղծեցիք հողային հարցը և քրդերին զրկեցիք գոյության միջոցներից... Քրդերը հայերի զոհերն են, դրա համար էլ կառավարությունը երբեք հողերը չի վերադարձնի հայերին...»[46]: Մուշիրը ոչ միայն հողային հարցում, այլև հայերի հետ կատարված ամեն ինչի մեղավոր համարում էր իրենց՝ հայերին: «Գիտեմ,- ասաց նա,- ձգտում եք ռումբ, դինամիտ ու զենք ձեռք ձգել ձեր նպատակներն իրականացնելու համար. արդեն սկսել եք զենք պատրաստել քրդերի դեմ, բայց չարաչար սխալվելու եք... Դուք ասելու եք, եթե չարտագաղթեիք, Ձեզ կսպանեին: Իսկ ես ասում եմ՝ հանդարտ մնայիք, որ չսպանեին»[47]: Իսկական թուրքական տրամաբանություն է՝ եթե թուրքին չենթարկվեք, ոչնչացվելու եք: Բիրտ ուժին գերակայությունը տալու հոգեբանությունը գոյություն է ունեցել Թուրքիայի ամբողջ պատմության ընթացքում, ինչը ձևավորել էր կառավարման ահաբեկչական եղանակ՝ հպատակներին մշտապես պահել սարսափի մեջ: Իզուր չէր «Баку» թերթը 1911-ի օգոստոսի 4-ին գրում. «Այս ճառը լսող հայերը, սարսափից գունատվեցին, մինչդեռ քրդերը գլուխները բարձրացրեցին և չարագույժ հայացք հառեցին նրանց դեմքերին»:

Զարսանջակի դեպքերի կապակցությամբ ՆԳ նախարար Խալիլը սպառնաց. «Դաշնակցությունն ու հոգևորականությունը Ազգային ժողովում և ուրիշ տեղերում գրգռում են ժողովրդին հողային և ուրիշ հարցերի առնչությամբ, ինչը հասկանալի պատճառներով ունենալու էր վատ հետևանքներ[48]: Մինչդեռ Զարսանջակի հարցը լուծելու բողոքները քաղաքական աստառ բացարձակապես չունեին: Բանն այն էր, որ 1860թ. քուրդ բեկերը զավթել էին Գավառի հայերի հողերը: 42 տարի շարունակ հայ գյուղացիները պայքարել էին օրինական միջոցներով հետ ստանալու այդ հողերը: Բազմիցս դիմել էին նաև Բ. Դռանը, բայց ապարդյուն: Հողերի հափշտակություն տեղի ունեին գրեթե ամենուրեք: Օրինակ, երբ Մոտկանի հայերն այդ հարցով դիմեցին դատարան, երկար քաշքշուկից հետո հարցում արվեց Կ. Պոլսի արխիվին համապատասխան փաստաթուղթ ստանալու համար: Հասկանալի է, որ որևէ փաստաթուղթ չստացվեց, և հարցը մնաց չլուծված»: Տնտեսական պայքարի ընթացքում սակայն գծագրվեցին այն պահանջները, որոնք առաջ քաշվեցին հայկական բարենորոգումների շուրջ բանակցություններում: Այդ պահանջները հետևյալն էին. հայկական վիլայեթների կառավարման համակարգի կադրերի փոփոխություն, հանցագործություն թույլ տված ավատատերերի աքսորում, արդար դատաստան հայկական վիլայեթներում օրինազանցություններ թույլ տվածների հանդեպ, բռնի մահմեդականացման արգելում, հայ բնակչությանը քրդերի հարձակումներից պաշտպանելու համար գյուղերում սահմանել զինված պահակություն, ստեղծել հետաքննիչ հանձնաժողով կառավարիչների գործունեությանը վերահսկելու և մեղավորներին պատժելու համար, վերադարձնել ապօրինաբար գանձված «կապալն» ու «խաֆիրը», համիդիե գնդերը ենթարկել բանակային օրենքներին, քրդերին զինաթափել կամ զենք կրելու իրավունք տալ նաև հայերին[49]:

Պատրիարքարանի տեղեկագրերից մեկում կարդում ենք. «Թիւրքիոյ շովեն քաղաքականութիւնը երթալով սաստկացել էր: Հայաստանի մեջ այս քաղաքականութիւնը քիւրդերու հանդեպ ներողամիտ և որոշ կերպով քաջալերի բնույթ մը կառներ... Օսմանեան երեսփոխանական ժողովին մեջ իսլամական շովենական հոսանքներն ավելի ուժգին էին... ապացույց այն ծափերը, որոնք ողջունեցին Ատանայի ջարդին առթիվ Մուսթեջար Ատիլ պեյի հերիւրանքները»[50]:

90-ական թվականների ջարդերի հետևանքով տնտեսական կյանքում շեշտակիորեն աճեց

46 «Баку», 29.07.1911.
47 «Մշակ», 24.07.1911:
48 Նույն տեղում, 04.08.1911:
49 «Баку», 14.08.1911.
50 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 707:

Թուրքերի տեսակարար կշիռը: Այդպես էր ոչ միայն գյուղատնտեսության, այլև արդյունաբերության և առևտրի մեջ ձևավորվեց թուրք արդյունաբերական բուրժուազիան, որը շուտով բախման մեջ մտավ հին վարչակարգի հետ, նաև անընդունակ դիմակայելու օտար կապիտալին, քանի որ գոյություն ունեցող վարչակարգն անհաղթահարելի խոչընդոտ էր գործարարության, ձեռնարկատիրության զարգացման առաջ և անխուսափելիորեն հանգեցնում էր առճակատման: Ուստի պատահական չէ, որ ծառայողների ու մտավորականության հետ միասին թուրքական բուրժուազիայի որոշակի խավեր սկսեցին պայքարել հասարակական հարաբերությունների վերակառուցման համար: Սակայն թուրք բուրժուազիայի պայքարի գլխավոր ուղղությունը ոչ թե օտար կապիտալն էր, այլ հպատակ ժողովուրդների ձեռքից տնտեսական լծակի խլելը, առաջատար դառնալը: Դրա համար էլ դաշինքի մեջ մտավ վարչակարգի հետ ընդդեմ հպատակ ժողովուրդների, ինչն ավելի ծանրացրեց վերջինների, մասնավորապես հայերի վիճակը: Արևելյան նահանգներում կատարյալ անիշխանություն էր, մահմեդական մոլեռանդության վայրագությունների համար միանգամայն բարենպաստ միջավայր:

Հայերի առաջատար դերը առևտրում ի չիք դարձնելու գործում սուլթանական վարչակազմն օգտագործեց նաև գերմանացիներին: Գերմանական ապրանքների առաջ լայնորեն բացվեցին Թուրքիայի դռները և հայ առևտրականներին վարկով էժան ապրանքներ առաջարկվեց: Հայերը խայծը կուլ տվին, վարկեր վերցրեցին ու մեծաքանակ ապրանքներ գնեցին, սակայն դեռ պայմանաժամկետը չլրացած և ապրանքները չիրացրած՝ պահանջեցին վարկերը մարել: Դրան գումարած նաև այն, որ ավանդաբար Թուրքիայում տնտեսական գործունեությամբ զբաղվող եվրոպացիներն ավազակաբարո վարկի տեր էին, ովքեր ունենալով սեփական կառավարությունների հովանավորությունը, թալանում էին տեղացիներին:

Գյուղացիության վիճակը մնում էր ծայրահեղ ծանր: «...Գյուղացին, ինչպես համիտեան բռնակալութեան օրոք, այսօր սահմանադրական ռեժիմին մեջ ալ պիտի մեռնի անոթութենե»[51]: Մուշում համատարած «քաղցի ու բացարձակ չքավորության պատճառով հայերը լքում են իրենց օջախները և փախչում են Տիգրանակերտ և այլուր մուրալու, մի կերպ գոյություն քարշ տալու համար, իսկ նրանց տներն ու հողերը գրավում էին քրդերն ու չերքեզները, որոնք պարարզիտների նման ծծում էին մնացածների արյունը»[52]: Բուլանըխի հայահոծ գյուղերը գրեթե ամայացել էին: Հայաբնակ 27 գյուղերում, որտեղ բնակվում էր 3.5 հազ. հայ ընտանիք, 5-6 տարի անց մնաց 900 ընտանիք: «Կոչնակը» նկարագրում է Վասպուրականի գյուղացիության արտագաղթը. «Լեռների կողերի գաղտնի ճանապարհների, մութ ճեղքերի մեջ մեկական գավազան ձեռքներին, մերկ ու ոտաբոբիկ, քաղցած ու անսվաղ, խոցված սրտերով, աղի արցունքով, գլուխները կքած գյուղացիները, այդ ոսկրացած մարդկանց քարավաններն են նկատվում: Երբեմնի պողոտյա այդ մարդիկ, թողած իրենց հայրենական սուրբ օջախը, ընտանիքն ու զավակները, մերկ ու քաղցած, հևիհև, կորաքամակ դիմում են հեռո՛ւ, շա՜տ հեռուները, մերթընդմերթ խանձող հայացքներն ուղղելով դեպի ե՜տ, դեպի երկի՜ր: ...Այդ անմեղ զոհերը շշմած այս քստմնասարսուռ իրականության առաջ՝ քայլում ու քայլում են... Ճանապարհի երկայնքով շատերը՝ ընկեր, հայր, եղբայր, ընկնում են շնչասպառ ու մեռնում, բայց կրկին ձայն չի ելնում: Սով է, արհեստական սով է մեր երկրում. սա մի դիվանագիտական ճարպիկ խաղ է մեզ բնաջնջելու, արմատախիլ անելու»: Հայաստանի հայաթափման գործընթացներում առանձնահատուկ դեր էին խաղում մանր ու մեծ կոտորածները: 1908թ. հունվարի 27-ին Վանի մահմեդական խուժանը հարձակվեց հայկական թաղերի վրա և կոտորածներ սարքեց, որին զոհ գնաց 60 մարդ և նույնքան էլ վիրավորվեց: Չնայած հանցագործներից շատերն իշխանություններին հայտնի էին, ոչ ոք չձերբակալվեց: Բ. Դուռն անուշադրության մատնեց ռուսական դեսպանի պահանջը գործի օբյեկտիվ հետաքննություն կազմակերպելու վերաբերյալ: Իսկ տերությունների Վանի հյուպատոսների հետաքննությունով պարզվեց, որ այս ոճրի սադրիչներն ու մասնակիցներն վերաքննիչ

51 Օտյան Ե. Եժ, հ.4, Եր, 1962, էջ 679:
52 «Հնչակ», 1907, թիվ 3-4:

դատարանի նախագահը և ժանդարմական երկու սպաներ էին: Երբ Կարինից երկու թապուր զորք մեկնեց Վան «քաղաքում կարգը վերականգնելու համար», Ալաշկերտի Զլկան գյուղի գետը վարարել էր և առանց կամուրջն անցնելը դժվար էր: Զինվորականները հրացանների հարվածների տակ հայերին իրենց սայլերի հետ գետը լցրեցին, որ «կամուրջ» պատրաստեին: Նրացից յոթը մեռավ ջրից դուրս չեկած: Զինվորները դրանով չբավարարվեցին՝ հայերին թալանեցին և ապա միայն անցան «կամրջով» և հեռացան:

Իշխանությունները թուրք բնակչությանն ամեն կերպ հորդորում ու շահագրգռում էին զենք ձեռք բերելու: Նույնիսկ աղքատ գյուղացիները հարյուրավոր կիլոմետր ճանապարհ էին կտրում, իրենց աղքատիկ ունեցվածքը վաճառքի հանում և նոր մակնիշի զենքեր էին գնում: Կ. Պոլսի զենքի խանութներում մշտապես երկար հերթեր էին: Զենքը շատ թանկ արժեր, և թուրքերը հավանաբար ինչ-որ տեղից, գուցե անգամ իշխանություններից, դրամական օգնություն էին ստանում զենք գնելու համար: Նրանք նաև վերանորոգում էին ունեցած հին զենքերը, վառոդի պաշարներ կուտակում: Բանակից դուրս գրված հրացաններն ամենաէժան գներով վաճառվում էին թուրք գյուղացիներին: Զինվում էին նաև լազերը, չերքեզները, գյուրջիները (թուրքացած վրացիները):

Միանգամայն հակառակ պատկեր էր հայկական միջավայրում, նույնիսկ հարուստ հայերը զենքի վրա փող չէին ծախսում: Եթե մահմեդականը զինվում էր հայի վրա հարձակվելու համար, հայը «ինքնապաշտպանության էր պատրաստվում» առանց զենքի: Նա գերադասում էր գնել կահկարասի, ոսկեղեն, այլևայլ զարդեղեններ, իսկ զենք, պաշտպանության միջոց՝ մեծ դժվարությամբ, այն էլ հայ քաղաքական ուժերի հարկադրանքի ներքո: Եվ պատահական չէ, որ երբ երիտթուրքական հեղաշրջումից հետո այդ նույն քաղաքական ու կրոնական ուժերը պահանջեցին զենքերը հանձնել իշխանություններին, հայերը չընդդիմացան: Դարերով ձևավորված կրավորական դիրքորոշումը հային զրկել էր սեփական ուժով իր ընտանիքը պաշտպանելու, համազգային շարժման բարձրանալու, ընաջնջման գործողությունների դեմ զենքով մարտնչելու անհրաժեշտության գիտակցումից: «Սա ուղղակի մի ախտ է,– գրում է Ս. Սապահ Գյուլյանը,– մի հիվանդություն, որով վարակված են լինում ռայա ժողովուրդները, ովքեր դարեր շարունակ իրենց գոյության առանցքը ոչ թե սեփական բազկի մեջ էին տեսնում, այլ տիրողի գթասրտության, արդահատության մեջ: Այս տեսակետից հայ ժողովուրդը հատկապես ախտահանության կարիք ունի»[53]:

Ազգային ժողովի 1908թ. 3-րդ նստաշրջանի արձանագրությունում կարդում ենք. «...Ավարառություններն ու բռնությունները կը շարունակուին... Մինչ կենաց, պատուոյ և ինչքի ապահովութիւնը բացարձակապես կը պակսի գավառներուն մեջ և ժողովուրդը սովամահ ըլլալու տագնապին ալ ենթարկուած է... կառավարութեան ընթացքը ձգձգումներ և խոստումներե անդին չանցներ... Դժբախտաբար օր չըլլար, որ նոր խժդժութեան մը լուրը չհասնի և, որ ավելին է՝ տեղ-տեղ ջարդի երկիւղներ իսկ կան... ամեն վարկեան ահ ու սարսափի մեջ ենք... Հայաստանի վիճակն անհանդուրժելի է... երկրագործին ձեռքեն եզն ու արօրն ալ կը խլուին: Հայաստանեն եկած նամակներեն կսկծալի նկարագրութիւններ կը պարունակեն.... Հայոց տուներուն դռները կավճով գծուած են... ջարդի խնդիրն է, որ կը կրկնուի 13 տարիներե ի վեր... գիւղացին ո՛չ եզ ունի, ո՛չ արոր, իւր բոլոր ունեցվածքը յափշտակութեան առարկայ կը դառնայ և հարստահարիչները, չարագործները բանտին մեկ դռնեն կը մտնեն՝ միւս դռնեն դուրս ելլելու համար... Ատանայի դեպքը դիտումնավոր եղած է, քանի անգամ է, որ դիմում կը կատարուի Ատիլ Պեյը (ՆԳՆ խորհրդական) ուշադրութիւն չընծայեր: Մի կողմե զենքերու հավաքման խնդիր կը յարուցուի... նորեն տգետ բազմութիւնը մեր դեմ կը հանե (զինվորականությունը): Սահմանադրական շրջանին մեջ ալ կացութիւնիս նոյնն է, ինչ–որ էր բռնապետութեան շրջանին... դժբախտ պայմաններու մեջ կը գտնուինք»[54]:

Կայսրությունում, առաջին պլան դուրս եկավ ագրարային հարցը. 1908թ. իթիհադը հարկադրված եղավ իր ծրագրում մտցնել գյուղացիական-ագրարային հարցի լուծմանը վերաբերող

53 «Հնչակ», 1908, թիվ 8-12:

54 «Ազգային ընդհանուր ժողով» (ատենագրություն), 1908, նիստ Գ, էջ 42-44:

կետեր: Նշվում էր, որ «կառաջարկվեն օրենքներ, որոնք հնարավորություն կտան գյուղացիներին դառնալու հողի սեփականատեր», կայսրությունում իրականացնել ամբողջ հողատարածքի հաշվառում և հողատերերին տալ համապատասխան փաստաթղթեր տվյալ տարածքի նկատմամբ սեփականատիրական իրավունքի մասին: Հողային կադաստրների բացակայության հետևանքով մանր ու միջին հողատիրությունը քայքայվում էր և հողերն անցնում էին խոշոր կալվածատերերին: Բնականաբար այդ գործընթացը ևս առանձնակի սուր տեսք ընդունեց Արևմտյան Հայաստանում, որտեղ քուրդ և թուրք կալվածատերերը հայերին պարզապես քշում էին նրանց պատկանող հողերից կամ կեղծ փաստաթղթերով տիրանում էին դրանց[55]:

Հատկապես ծանր վիճակի մեջ ընկան Ռուսաստանից վերադարձած հայերը: Նրանք մնացին առանց հողի ու օթևանի: Երիտթուրքերը, չբավարարվելով հայ փախստականների հողերը և ունցվածքը քրդերին ու թուրքերին թողնելով, վերջիններին դրդում էին բռնությունների ու թալանի ենթարկելու հայերին, իթիհադական կառավարությունն ամեն ինչ անում էր, որպեսզի «կրճատեր, անգամ ոչնչացներ հայկական հողատիրությունը»[56]: Թուրք պաշտոնատարները հարկադրում էին հայերին փաստաթուղթ ստորագրել իրենց հողերը մահմեդական մուհաջիրներին «զիջելու» վերաբերյալ: Հարկերի դիմաց վաճառում էին հայերի տները, հողերը և ունեցվածքը[57]:

Թուրք և քուրդ հարուստները, կարդում ենք պատրիարքի 1911թ. մայիսի 31-ի թագրիրում, կառավարության հավանությամբ իրենց հայտարարում են հայերի տների, հողերի, այգիների և ամբողջ ունեցվածքի սեփականատեր: Արևմտյան Հայաստանը լցնելով մուհաջիրներով իշխանությունները նրանց թույլ տվեցին յուրացնելու եկեղեցիների, վանքերի, գերեզմանների տարածքները:

Կարելի է առանց չափազանցության ասել, գրում է ռուս դիվանագետ Վիշինսկին, որ Թուրքիայի արևելյան նահանգների հայ բնակչության համար ստեղծվել է ավելի ծանր վիճակ, քան էր համիդյան վարչակարգի ժամանակ: Անպատժելիության պայմաններում քրդերն ազատություն տվեցին իրենց ավազակային բնազդներին և սպանում ու թալանում էին: Կյանքի և ունեցվածքի անվտանգությունը չքացավ: Քրդերը շարունակում էին բռնության գործադրմամբ հայերից տուրքեր հավաքել: Դիմադրության, անգամ առարկության ամեն մի փորձ խստորեն պատժվում էր: Հայերի գանգատները մնում էին անպատասխան:[58] Երբ նրանք փորձեցին հողային հարցով հանրագիր կազմել, իշխանությունները կազմակերպիչներին բանտ նետեցին: Ա. Մյասնիկյանի տվյալներով երիտթուրքերի կառավարման չորս տարիներին հայերից խլվել էր 28000 կտոր վարելահող, 200 խոշոր և 40 000 ուրիշ մանր ու միջին կալվածք[59]:

Մասնավորապես Բալկանյան պատերազմից հետո իթիհադն ուշադրությունը շուռ տվեց դեպի արևելյան նահանգներ: «Կրկնապատկված եռանդով,– գրում է Վիշինսկին,– հարձակվում է հայերի վրա, որպեսզի ուժեղացնի իր դիրքերը Ռուսաստանի սահմանին, միավորի անջատ-անջատ մահմեդական խմբերը, ստեղծի իսլամի համատարած և հզոր պատվար»[60]: Մուհաջիրների հոսքը Արևմտյան Հայաստան էլ ավելի սրեց հողային հարցը, ուժեղացրեց հայերի արտագաղթը, մեծացրեց մուսուլմանական տարրերի տեսակարար կշիռը[61]: Երբ թուրքական պարտված զորքերը Բալկաններից հեռացան՝ իրենց հետ տանելով մահմեդական ունեզրկված զանգվածներին: 200 հազ. մուհաջիրների խուժումը հայաբնակ շրջաններ, և այն, որ կորցնելով եվրոպական Թուրքիան, երիտթուրքերը որոշեցին հիմնավորապես հաստատվել արևելյան նահանգներում, ինչպես նաև հայերի հանդեպ երիտթուրքերի թշնամանքի անընդհատ աճը վերջինների վիճակը դարձրեց ողբերգական:

Զարիկովը 1911թ. հոկտեմբերի 8-ին գրում է. «Վերջին ժամանակներս հայերի սպանություններն ու նրանց կյանքի, պատվի և ունեցվածքի վրա հարձակումները ոչ միայն չեն նվա-

55 Ленский Н. А. О правовом положении землевладения в Турецкой Армении. Петроград, 1916, стр. 72.

56 Վրաստանի ՊԿՊԱ, ֆ. 85, ց. 58, թթ. 18-20:

57 АВПР, «Политархив», д. 1044 л. 233.

58 ЦГВИА, Ф. 2000, оп. 1, Д. 991, лл. 432-437.

59 «Մշակ», 25.12.1913:

60 ЦГВИА, Ф. 2000, оп. 1, Д. 991, лл. 447.

61 Минахорян В. Трагедия Турции, Баку, 1919, стр. 16 .

զել, այլև, ընդհակառակը, ավելի ու ավելի հաճախակի են դարձել: Հայերը հատկապես վատ են զգում, որ հանցավորները մինչև օրս, գոնե օրինակի համար, ոչ պատժվել են և ոչ էլ արդարադատության կողմից լրջորեն հետապնդվել»[62]: «Քաղաքացիների կյանքի ու պատվի վրա ոտնձգությունները, որ ուղեկցվում է նրանց թալանով, առևանգումներով, և բռնի մահմեդականացումը դարձել են խրոնիկական երևույթներ: Հարկ է նշել, որ այս ահավոր գործողությունների կազմակերպիչների թվում հոլովվում են պետական ծառայողների անուններ... Մալաթիայի համայնքը պատրիարքին հայտնել է, որ կառավարությունը հանցավորներին փոխանակ պատժելու, նրանց ավելի բարձր պաշտոնների է նշանակել»[63]: Կեսարիայի մութասարիֆի օգնականը 1911թ. օգոստոսին ասել է. «Եթե այս իթիհադականները մնան, հայ ազգի գլխին նոր և խիստ փորձանքներ պիտի առաջ բերեն»: 1912թ. երիտթուրքերը հրապարակավ կոչ էին անում. «Հայերին չխնայեք, կենդանի չունչ չթողնեք, կայք, գույք, ամեն բան խլեք»: «Օ՜, ծանր է, խիստ ծանր է անգամ մտաբերել այդ արյունով շաղախված դժոխքը: Այնտեղ մահվան սարսուռն է տիրապետում, այնտեղ գիշեր ու զոր մահվան ուրվականն է աներևսաբար քարշ գալիս մեն մի թշվառ հայ գյուղացու, մեն մի տարաբախտ հայ մարդու ետևից...»[64]:

Թուրքական պատմագրությունը նենգում է, երբ աշխատում է համոզել, թե, ծանր էր ոչ միայն հայերի, այլև կայսրության բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև թուրքերի վիճակը:

«Այն հայտարարությունը, թե այս 30 տարվա ընթացքում, և նույնիսկ այժմ, հայերի կրած տառապանքները հար և նման են թուրքերի տառապանքներին, որ թուրքական կայսրության բոլոր ժողովուրդները նույն հալածանքների, նույն տանջանքների, նույն զրկանքների են ենթարկված,- դա կարող է ասել նա, ով աչք է փակել իրականության առաջ: Հային դատարկում են իր երկրից, նրան ստիպում, բռնադատում են հեռանալ իր օջախից, կառավարական կարգադրությունը նրան զրկում է իր հողից, իր եկամուտից և այդ բոլորը հանձնում է թուրք տարրին: Դատարկված հայ գյուղերում ովքե՞ր են բնակվում և ո՞ւմ թելադրանքով ու կարգադրությունով: Կամ, այսօր ամեն մի թուրք ազատ երթևեկում է ողջ Տաճկաստանում, հայը նույն իրավունքն ունի՞, թուրք տարրն ազատ է արտասահման գնալ և ետ գալ. հայը կարո՞ղ է նույնն անել»[65]:

«Gazete de Lozanen» 1913թ. ապրիլի 19-ին գրում է. «Դարեր շարունակ հայը թուրքի կողմից դիտվել է որպես հարկատու, որին ըստ ցանկության կարող է ձրի աշխատեցնել և մորթել: Աբդուլ Համիդի օրոք այս նահանգների թուրքացումն ավելի մեծ փութաջանությամբ առաջ տարվեց, քան երբևէ: Հողերի բռնագրավումներ, աղջիկների ու կանանց առևանգումներ և դիմադրության դեպքում հնտեղականորեն կազմակերպված կոտորածներ: Հայասեր մամուլում հրապարակված նկարագրությունների իրականությունը շատ ավելի վատ է»: Կաթողիկոսին հասցեագրված մի նամակում ասվում է, թե հայը թողնում էր իր հայրենի երկիրը ոչ այն պատճառով, որ չէր կամենում հերկել հողը, ապրել իր ճակատի քրտինքով, խույս էր տալիս ծանր աշխատանքից, հրաժարվում էր կատարել իր քաղաքացիական պարտականությունները: «Ոչ, հազար անգամ ոչ: Նա գլուխն առած փախչում է, գաղթում է բարբարոս քուրդ հրոսակների անթիվ ասպատակություններից և ավազակություններից, տաճիկ փաշաների և պաշտոնատարների անտանելի կամայականություններից բռնադատված»: Հայաստանն իր բազմադարյան պատմության ընթացքում «այս տեսակ հալածանքի չի ենթարկվել: Այսօրվա հալածանքի բուն նպատակը ոչ այլ ինչ է, եթե ոչ բնաջինջ անել հայ ժողովուրդը, մի բուռ քրիստոնյա ժողովուրդ զոհ է բերվում բարբարոսության սեղանին: Նրան զրկում են գույքից, կյանքից, պաշտոնից, նրա աչքի առաջ լկում, բռնաբարում են անմեղ կույսերին, այրում, հրկիզում են բնակարանները, ավերում դաշտերը, քշում հոտերը, մի խուզով, ամբողջ Հայաստանը դարձել է սպանդանոց, որտեղ բնիկ քրիստոնյա ժողովուրդն անմռունչ ոչխարի նման փողոտվում է բարբարոս մահմեդականների ձեռքով»[66]:

62 АВПР, «Политархив», д. 3457, лл. 68-70:
63 Ն. տ.:
64 «Հորիզոն», 29.03.1913:
65 «Հնչակ», 1908, թիվ 8-12:
66 ԳԱԹ, ֆ. Առաքելյան Հ. գ.1944:

Էրզրումում Ռուսաստանի գլխավոր հյուպատոս Շտրիխտերը 1910թ. սեպտեմբերի 29-ին գրում է, որ չնայած սահմանադրությունով հայերին ու թուրքերին հավասար իրավունքներ են տրվել, սակայն թուրքերի հետ ընդհարումների ժամանակ միշտ մեղավոր են դուրս գալիս հայերը և «պատժվում են ամենայն խստությամբ հին սկզբունքով՝ հայ է, նշանակում է մեղավոր է»: Հայերի հողերի գրավման պատճառով հայ-քրդական բախումների մեծ մասն ավարտվում է ի վնաս հայերի: Հայերի գանգատները, որպես կանոն, մնում են անհետևանք: Նաև ասվում է, որ քաղաքում շարունակվում են «զենքի ու զինվորական հանդերձանքի առաքումները... Նոյեմբերի 18-ին Բիթլիս առաքվեց 38 արկղ հրացան: Բիթլիսի Սերտ գյուղում հին մակնիշի հրացանները, մաուզերները փոխարինվեցին նորերով՝ հինգհարվածայիններով: Վերջիններից ուղարկվել են նաև Ալաշկերտ ու Կարաքիլիսե»[67]: Նույն հյուպատոսը վկայում է, որ Մուշում հարկեր վճարելու համար հայերն իրենց ունեցվածքն աճուրդի են հանել և հուսահատված դիմել են անցնելու ուղղափառ հավատին[68]: Նկարագրելով Աղանայի վիճակը ջարդերից շատ ժամանակ անց՝ ռուսական փոխհյուպատոս Մավրոմատին նկատում է, որ հին վարչակարգի օրոք վիլայեթում կացությունը շատ ավելի քիչ երկյուղ էր ներշնչում: Իթիհադը կարողացավ միայն մի բան անել՝ վիլայեթում ստեղծել ընդհանուր անիշխանություն, իսկ ռազմական դատարանը հանցագործներին ազատ արձակեց և կախաղան հանեց մի քանի անմեղ հայերի: «Զարմանալի չէ, որ վալին և քաղաքացիական աստիճանավորները... այս իրադարձությունները (ջարդերը) վերածելով իրենց ընչաքաղցությունը հագեցնելու աղբյուրի՝ ոչնչի հանգեցրնցին արդարադատության վերջին խղճուկ մնացորդները: Բավական է, որ մարդը քրիստոնյա լինի, որպեսզի նրա գործը տանուլ տրվի դատարանում...»[69]: Վիշինսկին նորից է ահազանգում, որ մոլեռանդ և թշնամի մուսուլմանների շրջապատում գտնվող հայերի վիճակը սարսափելի է: «Ցուրաքանչյուր ժամ, յուրաքանչյուր րոպե նրանք ստիպված են դողալ ոչ միայն իրենց ունեցվածքի համար, այլև՝ իրենց կյանքի, քանի որ նախապատրաստվող ջարդերի մասին լուրերը երբեք չեն դադարում»: Ով կարող է, արտագաղթում է, մնում են նրանք, ովքեր այս կամ այն պատճառով ի վիճակի չէին արտագաղթել:

Հայկական ջարդերի չափերը չի կարելի հաշվել միայն կոտորածի անմիջական զոհերով: Այն արտահայտվում է նաև ծննդաբերության նվազմամբ, որը հանգեցնում էր բնակչության թվի կրճատման, մարդկանց ֆիզիկական, հոգևոր և մանավանդ նյութական հնարավորությունների սպառման մեջ[70]:

Է. Վիլյամսը Անգլիայի արտաքին գործերի նախարարությանը գրեց, թե Թուրքիայում քրիստոնյաների բոլոր դասակարգերը «կոտորածի սարսափի տակ են», թե մեծ ազդեցություն ունեցող թուրք նախարարներից առնվազն մեկի հաստատ քաղաքականությունն է երկիրը ձերբազատել քրիստոնյա հպատակ ցեղերից[71]: Սակայն երիտթուրքերը չէին բավարարվում արևմտահայության բնաջնջումով: Պատերազմի մեջ Թուրքիայի մտնելու դիմաց Գերմանիան պարտավորվել էր ա) պաշտպանել Ռուսաստանի կողմից վտանգված օսմանյան երկրամասերը, բ) օգնել Թուրքիային վերացնելու կապիտուլյացիաները և գ) «Թուրքիայի համար ապահովել նրա արևելյան սահմանի փոքրիկ սրբագրություն, որ հնարավորություն տար ուղղակի չփման մեջ մտնել Ռուսաստանի մահմեդականների հետ»[72]:

Ռոբերտ քոլեջի տեսուչը Անգլո-հայկական կոմիտեին գրեց, թե Թալեաթ բեյը, «ինքնազսպումի անատակ» մի մարդ, դարձել է ներքին գործերի նախարար, դա նշանակում է, որ հասել է հայերի հանդեպ չարագործությունների պահը: Վտանգված են հազարավոր կյանքեր:

67 АВПР, Посольство в К-поле, д. 2678, л. 15 или Турцкая политка истребления армян (1880-1922), документы и материалы (летопись), 1951, спр. 182-183.
68 Ն. տ.
69 Ն. տ., պ. 3459, սս. 68-69:
70 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1004, лл. 433-436.
71 FO 371/2116/51007
72 Trumpener U. Germany and the Ottoman Empire 1914-18. Princetion, 1968, pp. 15, 28

Անգլիայի արտաքին գործերի նախարարության պատասխանատու աշխատողներից մեկի կարծիքով միայն Ռուսաստանի կողմից Հայաստանի գրավումն էր ի վիճակի խափանելու ջարդերը: Նման գրավումը ցանկալի չէ, իսկ հայերի հարցում Թուրքական կառավարությանը բողոքներ ներկայացնելը «լրիվ անօգուտ է»: «Խիղճը հանգստացնելու համար կարող ենք հրահանգել սրը Ջ. Լոտհերին, որ հարցի վրա ուշադրություն բևեռի...»[73]: Այսինքն՝ Բրիտանիան, ի տարբերություն մասնավորապես 1890–1900-ական թվականների, վերադարձել էր status que-ի՝ Օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելու քաղաքականությանը, չնայած Լոնդոն, արտաքին գործերի նախարարություն հասնում էին լուրեր, որ հայկական նահանգներում քաղաքներից դուրս «հասարակական անվտանգություն չկար»: Այդ տարածքներում ավելի քան 1 000 մղոն ձիով ճամփորդած Վ. Գինեսը մեծ քանակությամբ նյութեր էր ներկայացրել քրիստոնեական գյուղերում հարստահարությունների ու բռնությունների վերաբերյալ: Արտաքին գործերի նախարարությունը նույնպես արձանագրում էր, որ հայաբնակ նահանգներում «իրավիճակն ահավոր է»[74]:

Պաշտոնական Անգլիան հայերին սպառնացող վտանգին, իսկապես, քաջատեղյակ էր, սակայն գերադասում էր այն հրապարակայնության չտալ: Երբ Քենդրբերի արքեպիսկոպոսը հայերի վտանգված վիճակի մասին Գրեյին տվյալներ ներկայացրեց, վերջինս պատասխանեց, թե ուրախ է, որ «կարող է ասել՝ այդ սարսափելի կացությունը չի հիմնավորվում»[75]:

Հենց աշխարհամարտը սկսվեց, և Թուրքիան հրաժարվեց պատերազմի մեջ մտնել Անտանտի կողմում, Անգլիայի վերաբերմունքը նորից 180°–ի փոփոխություն կրեց: Նա այլևս չէր թաքցնում արևմտահայության աղետալի վիճակը, այլ օգտագործում էր հակաթուրքական քարոզչության մեջ: Վարչապետ Ասկուտը հայտարարեց, թե օսմանյան կառավարությունը իր տիրապետության մահվան ղողանջն էր հնչեցրել: Ճնշելով ու ոչնչացնելով օսմանյան հպատակներին՝ սուլթանն ու Բ. Դուռն ինքնասպանություն են գործել, սեփական ձեռներով իրենց գերեզմանը փորել: Լլոյդ Ջորջը Թուրքերին անվանեց «մարդկային քաղցկեղ, սողացող հոգեվարք... նյարդերը փչացնող»: Ճակատագրի մեծ ժամացույցը հնչեցրել է Թուրքի հաշիվները մաքրելու ժամը: Տիտանական այս ճակատամարտում Թուրքը վերջնական պատասխանատվության է կանչվելու մարդկության դեմ իր անարգ վերաբերմունքի երկարաձիգ ժամանակաշրջանի համար[76]:

Քարոզչական այս մարաթոնի եզրահանգումն էր՝ միայն Անտանտի հաղթանակը կարող է ապահովել հայերի պաշտպանությունը: Հայ ժողովուրդը բռնությունների, ոչնչացման, ավազակությունների օսմանյան ծովում օրհասական վիճակում էր և խեղդվողի նման ձեռքը մեկնում էր փրփուրին, բոլոր այն ուժերին, ովքեր ի վիճակի էին փրկել: Այլ բան է, որ այդ ուժերը հայ ժողովրդի օգնության կանչն օգտագործեցին իրենց շահադիտական նպատակների համար, և, ի վերջո, դավաճանելով նրան, անօգնական շպրտեցին օսմանյան տիրակալներին հոշոտելու: 1915 թիվը նաև այդ իմպերիալիստական քաղաքականության հետևանքն էր:

Հայ ժողովրդի դարավոր փորձն ու իմաստությունը նրան դեռ XVIII դարում հանգեցրին այն մտքին, որ միակ իրական ուժը դա Ռուսաստանն էր, որ կարող էր օգնության ձեռք մեկնել և փրկել հայերին, չնայած ցարական կառավարությունը նույնպես Հայկական հարցը ծառայեցնում էր իր գաղութատիրական քաղաքականության շահերին: Կոմիտասը 1912թ. դեկտեմբերի 25-ին Ա. Զոպանյանին գրում է. «Ուրեմն չիք փրկություն արտաքոյ Ռուսիոյ: Պետք է նախ բոլոր հայերը խմբվեն մեկ տերության, մեկ օրենքի տակ, աճեն ու զարգանան բարոյապես ու նիւթապես և ապա ժամանակն ինքն է, որ պիտի բերի մեզ մեծ ազատություն. շտապելով, առաջինը չարած երկրորդ քայլի դիմելով, բոլորովին պիտի կորչինք, տաճիկեն ոչ մի հույս մի ունենաք, մի սպասեք, նորա ուղեղը քարե ժայռից է... Զպետք է բաժանվինք, չպետք է խաբվինք Եվրոպայի զանազան խոստումնալից խաբկանքներեն, միանալու ենք և գործնական ճամփան բռնելու...»: Կոմիտասի տագնապն ավելի քան հիմքեր ուներ: Ալ. Բեկզադյանը Լենինին գրում է.

73 FO 371/1773/19706.
74 FO 371/1773/5086.
75 Davidson P. Bok on Armenia, Grey to Archbishop of Conterbury 18 Dec, 1913, FO 371/2116/51007.
76 «The times», 10.11.1914, 11.11.1914.

«Ռուսահայերն արձագանքում են տաճկահայերին ի տես հայերի նկատմամբ գործադրվող այն նոր գազանությունների, որոնք տեղի են ունենում Վանում, Մուշում, Կարինում: Նույնիսկ դաշնակցականները բարյացակամ են նրանց նկատմամբ, ովքեր ցանկանում են միանալ Ռուսաստանին»[77]: «Վճռված էր,– գրում է «Новое время»–ն,- կամ բոլորովին բնաջնջել միլիոնավոր հայ բնակչությանը կամ համենայն դեպս այնքան ուժասպառ անել քաղաքականապես և տնտեսապես, որ հայերը դադարեին համիսլամության համար արգելք լինելուց»[78]: 1913թ. «Правда»-ն գրում է, որ Թուրքիայում հայությունը կանգնած է կործանման եզրին, որ փրկության ելքը երիտթուրքերի տապալումն է[79]:

Կործանումից փրկվելու մի ելք էր մնում՝ զինվել: Հայ քաղաքական կուսակցությունները դրա ակնհայտ անհրաժեշտությունը չհասկացան: Իսկ իթիհադը գործում էր: «Երկրի ամենահեռավոր անկյուններում անգամ իթիհադն իր «կլուբները» տարածում, այդ թույնի որջերը պահում էր գլխավորապես տեղական հայ վաճառականների ոսկիներով,– գրում է Ս. Սապահ Գյուլյանը,– Բալկանյան պատերազմի ատեն մի քանի ժամվայ մեջ հայ վաճառականները 30 հազ. ոսկիով պատասխանեցին իթիհադի բացած «Ազգային հանգանակութեանը»: Հայտնի վաճառական Ի-ը 10 հազ, ոսկի թափեց սեղանի վրայ...»[80]:

Ռուսաստանի ՆԳ նախարարության ոստիկանական բաժնի 1914թ. հունվարի 23–ի N16609 տեղեկագրում, որը կազմված էր Կ. Պոլիս ուղարկված գործակալ Կրասիլնիկովի հայթայթած նյութերի հիման վրա, նշվում է. Կ. Պոլսի «Նուրի օսման» ակումբում նորից իթիհադի և հրեաների պանիսլամական ժողով էր տեղի ունեցել: Մասնակցել էր 700 հոգի, այդ թվում Թալեաթը, Ջավիդը, Բեդրին, Սայիդը, Ռուսաստանի «Պանիսլամական կոմիտեի» ներկայացուցիչներ Ա. Ազաևը, Ջ. Կորխմազովը, Մ. Թաղիևը, Զիան և ուրիշներ: Ժողովում առաջ քաշվեցին Ռուսաստանի դեմ գործելու մի քանի միջոցառումներ, այդ թվում հայերի ու հույների առևտրի բոյկոտումը: Թալեաթը հայտարարեց, որ կայսրության ուժերը մոբիլիզացվում են ոչ թե Արևմուտքի, այլ Ռուսաստանի դեմ: Բոլոր կողմերից զորքեր էին բերվում, ամրացվում սահմանամերձ շրջանների բերդերը[81]: Ամենուրեք գնում էր հայերի կոտորածների նախապատրաստություն: 1913թ. մարտի 21-ին Հասան Կալեի պանդոկում կապիտան Հասան աղան հայերի ներկայությամբ քրդերին ասում է. «Մեր այժմյան բոլոր դժբախտությունները մեր քրիստոնյա ռայայից են գալիս... ես Բասենի կազայի քրդական բոլոր գյուղերի քրդերին հորդորել եմ այլևս չհապաղել կոտորելու հայերին և նրանց ունեցվածքը թալանելու, այդ նույն խորհրդով դիմում եմ նաև ձեզ»[82]: Դիարբեքիրում ֆրանսիացի հյուպատոսը գրում էր, որ քաղաքում «չի բացառվում հայերի նոր կոտորած»[83]: Վանից Շիրկովը 1913թ. մայիսի 7-ին հեռագրեց, թե սպանություններն ու կոտորածներն այլևս անվերջանալի են դառնում: Հայերի վիճակն անտանելի է, Խիզանի, Երունի և Թաթիկի գավառներում նրանք վախենում են տնից դուրս գալ: Սարվան գյուղից 72 ծուխ հայ փախել է Թաթիկ՝ Ռուսաստան գաղթելու համար[84]: Պատրիարքը 1913թ. մայիսի 18-ին թագրիր ներկայացրեց մեծ վեզիրին, որում մատնացույց էր անում հայերին սպառնացող կոտորածի վտանգը՝ սպանությունների թիվը գնալով աճում էր, հայ բնակչությունն ահաբեկված գաղթում էր: Պատրիարքը դիմեց նաև ռուսական դեսպան Հիրսին՝ խնդրելով ձեռք առնել բոլոր միջոցները կոտորածները կանխելու համար: Էրզրումում Ռուսաստանի գլխավոր հյուպատոս Աղամովը հայտնում էր, որ մահմեդականներին գրգռում էին հայերի դեմ, այդ նպատակով իթիհադականների տներում

77 Բեկզադյան Ա. Նամակներ, հոդվածներ, փաստաթղթեր, Երևան, 1981, էջ 15:
78 Կիրակոսյան Ջ. Ս. Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, 1914-1918, Երևան., 1965, էջ 66-67:
79 «Правда», 07.07.1913.
80 Սապահ-Գյուլյան Ս. Պատասխանատուները, Բեյրութ, 1974, էջ 20:
81 «Ալիք», 25.06.1974:
82 АВПР, Посольство в К-поле, д. 2684, лл. 36-37.
83 Ն. տ., д. 3460, лл. 136.
84 АВПР, «Политархив», д. 3461, л. 37.

ժողովներ էին տեղի ունենում: Իթիհադի կենտկոմից որպես կոմիսար ուղարկված Ա. Հալիմի ղեկավարությամբ երիտթուրքերի ակումբը հակահայկական եռանդուն քարոզչություն էր տանում: Տեղական խուլիգան դադաշները, որոնց պարագլուխը կանչվել էր գերմանական հյուպատոսարան, զինված են: Հայերից ոմանք գտնում են, որ Գերմանիան դիտմամբ ձգտում էր անկարգություններ առաջացնել, որպեսզի խափանի բարենորոգումների իրականացումը[85]: «Новое время» թերթը 1913թ. մայիսի 22-ին գրում է. «...Երեք շաբաթում տեղի են ունեցել 70 բռնաբարություն և սպանություն» և այդ ամենը կատարվել է «երիտթուրքական կենտրոնական կառավարության բարեհաճ թողտվությամբ և գիտությամբ...»:

Իսկ Էրզրումում երիտթուրքական ժողովները շարունակվում էին, դրանցում «բացեիբաց խոսում էին հայերի կոտորածի մասին»: Ամեն ինչ պատրաստ էր, սպասում էին մայրաքաղաքի ազդանշանին: «Տրամադրությունները տագնապալի են,– ահազանգում է Ադամովը,– և ցանկալի կլիներ վճռական միջոցներով կանխել կոտորածը...»[86]: Մի քանի օր անց, 1914թ. հունվարի 4-ին նա գրում է, որ քաղաքում վիճակը ծայր աստիճան լարված է, իթիհադականներն ավելի են ուժեղացնում լարվածությունը, գերմանացի հյուպատոս Անդերսի հետ կազմակերպում են ատրճանակից կրակելու մրցություն, որին մասնակցում են միայն մահմեդականները[87]: Քաղաքի «Թուրք գյուիրջի» ընկերության կազմակերպած իթիհադական ակումբների 200 անդամներ ամեն ուրբաթ արշավ-զբոսանքի են դուրս գալիս: Նրանց ղեկավար սպա Համիդը կազմակերպության անդամների պարտքն էր համարում տիրապետել ռազմական գործին ռուսներին դիմակայելու համար: Փաստորեն, ստեղծվում էր «ժողովրդական միլիցիա», որը «նախատեսված էր օգտագործելու ոչ միայն արտաքին թշնամիների», այլև հայերի դեմ: Հանգանակություն անցկացվեց 600-1 000 հրացան գնելու համար, դիմեցին իթիհադի կենտրոնին 4 000 ատրճանակ ձեռք բերելու խնդրանքով[88]: Մահմեդականներն ուժեղ էին փնտրում հայերի վրա հարձակվելու համար[89]: Ռուսական սահմանի հարևանությամբ գտնվող Քյոփրի Քյոյ գյուղի մերձակայքում գտան սպանված ժանդարմի դիակ և, չնայած սպանողները հայտնի էին՝ Էմբակամ գյուղի քրդերը, տանջեցին հայերին: Վերջինների բոլոր գանգատներն ապարդյուն անցան[90]: Ռուսական սահմանի հարևանությամբ զորաշարժեր էին կազմակերպվում, մահմեդական բնակչությանը զենք էր բաժանվում «հայերի առաջիկա կոտորածների համար»[91]:

Բայազետի փոխհյուպատոսը Հիրսին գրում է, թե «իշխանությունները շարունակում են զինել ավազակախմբերին: Հայերը խուճապահար փախչում են Ռուսաստան՝ վախենալով կոտորածից, որին սպասում են օր օրի»[92]:

Պատրիարքի 1911թ. փետրվարի 14-ի թագրիրում, որն ուղարկվել էր արդարադատության նախարարին, ասվում է, թե հայերի հանդեպ անարդարությունների վերաբերյալ գանգատներն անուշադրության մատնելը Թուրքիայում ավանդույթ է դարձել: Այն գիտակցությունը, որ հայերն «օրենքի պաշտպանությունից զրկված են», նրանց մղում է ծայրահեղ գործողությունների: Հայը շարունակում է սեփականազրկվել ամենաապօրինի ու բռնի միջոցներով խլում են նրա հողը, տունը, կահկարասին: Նոր վարչակարգի օրոք նշված գործընթացները ոչ միայն շարունակվում էին, այլև «հայերուն վիճակվեցավ կրել այնպիսի եղեռնական, սոսկալի արհավիրք մը, որ համիտեան շրջանի պատմական արյունահեղություններն ու տառապանքները գերազանցեցին»: Նոր կառավարությունը, վատթարացնելով հայաբնակ նահանգների վիճակը, հայերին հուսախաբ արեց: 1910թ. օգոստոսի 6-ի օրենքով կառավարությունը փաստորեն օրինականացրեց հայերի

85 Ն. տ., պ. 3465, ս. 66:
86 Ն. տ., ս. 125:
87 АВПР, Посольство в К-поле, д. 3726, л. 94.
88 Ն. տ., 2685, лл. 13-14.
89 Ն. տ., лл. 31-32.
90 Ն. տ., սս. 47-48:
91 АВПР, «Политархив», д. 3484, л. 18.
92 Ն. տ., պ. 3504, ս. 9:

հողերի զավթումները, «չարաչար կնճռոտեց հողային վեճերը և թշնամություն բորբոքեց բռնակալների ու զրկվածների միջև՝ պատճառ դառնալով արյունահեղությունների, ոճիրների, որպիսիք են Թեմրանի ու Խուլթի քստմնելի ոճիրները, դժբախտ հայերի հոշոտումը...»: Հանցագործների «հանդգնությունն ու կառավարության համակերպվելն այն աստիճանի է հասել, որ օրորոցում նշանված աղջկան անգամ կանգնեցնում են Շերիի դատարանի առաջ իսլամացնելու համար»: Ամենաբարձր պաշտոններ զբաղեցնողներն իսկ անհամերաշխության «սերմեր են ցանում ու մնում անպատիժ»: Այս և դրանց դեմ գանգատներն անուշադրության մատնելու կենտրոնական կառավարության վարքագիծը հանգեցրեց հայկական նահանգներից արդարամիտ վալիների հեռանալուն: Այդ ամենի հետևանքով՝ 1. կասեցվեց խաղաղեցման գործը, ավելի վատթարացավ քաղաքական անվտանգությունը, 2. հողային հարցը վերածվեց արյունահեղությունների գլխավոր պատճառի, քանի որ այն ոչ միայն չլուծվեց, այլև «թույլ տրվեց բոլորովին նոր հափշտակութեանց, որոնք նոր թաբուներով, ինթիգալներով, իլամներով... նվիրագործվեցան իշխանություններու ու դատարաններու կողմեն», 3. հանրահայտ ոճրագործներից ոչ մեկը համապատասխան պատժի չարժանացավ: Նրանցից շատերը չհետապնդվեցին, իսկ ոմանք անգամ, պաշտոնների տիրացան, 4. կառավարությունը չթույլատրեց, որ Մուշում ընթացք տրվեր Դիետի դատին, հազարավոր կյանքեր խլած այդ խայտառակությանը: 5. Առևանգումները շարունակվեցին, քանի որ դրանց հեղինակներն ու բռնի մահմեդականացնողները չէին պատժվում, 6. պետության մեջ պետություն հանդիսացող ավատատիրությունը, քաջալերված ու հզորացած, խաֆիրության նման տուրքերի ու պարհարկների էր ենթարկում հայերին, 7. զենք կրելն արգելելու վերաբերյալ օրենքը տարածվեց միայն հայերի վրա, 8. տեղական իշխանությունը շարունակեց մնալ հին հանցագործների ու ավատատերերի ձեռքում, ովքեր արժանի էին ամենախիստ պատիժների: Գավառային իշխանությունների աշխատանքներում բացակայում էին անաչառությունն ու օրինապահությունը, 9. հարստահարությունների գլխավոր հեղինակ քրդերը մնացին անպատիժ, նրանց նստակյաց չդարձրեցին, փաստորեն խրախուսվում են քրդերի հարձակումները և հայերի ունեցվածքի թալանը[93]: Պատրիարքարանը տեղերից շարունակում էր ստանալ չարագույժ լուրեր: Աղթամարի կաթողիկոսությունից՝ «Անվտանգության բացակայության հետևանքով ժողովուրդը հուսահատության մեջ է...»[94]: «Ատանայի ահավոր կոտորածով սկսավ այնպիսի նոր շրջան մը, որտեղ անպակաս եղան ամենուրեք նորանոր չարագործութիւնք», մասնավորապես Վանում, Աղթամարում, Բաղեշի, Մշո և Սղերդի վիճակներում: Հենց նոր ստացված հեռագրերը գուժում են սպանություններ, առևանգումներ, բռնի իսլամացումներ տեղական իշխանությունների աչքի առջև ու նրանց բացարձակ անտարբերության, գուցե, նաև թաքուն խրախուսանքի ու մեղսակցության պայմաններում: Այդ ամենի մասին բազմաթիվ թագրիրներ են ներկայացվել Բ. Դռանը: Հանձնաժողով է ստեղծվել գործերը հետաքննելու համար, խոստացել են զորքեր ուղարկել չարագործներին զսպելու, սակայն ոչինչ չի արվել: Դրա հետևանքով վիճակը դարձել է ավելի քան վտանգավոր: Հարկադրված մի պատգամավորության միջոցով դիմեցի նախարարներին: Սակայն դարձյալ՝ լոկ խոստումներ[95]: Մեկ ամիս անց, հոկտեմբերի 13-ին կաթողիկոսին դիմում է Տարոնի առաջնորդ Ն. Խարախանյանը: Նա գրում է, որ թեմի «մութ անկյունները»՝ Սասուն, Խուլթ, Բռնաշեն, Մոտկան և այլն «նոյնիսկ ենթարկուած մնացին հնեն ի վեր տիրող բռնութեանց ներքև և, որն աստիճան մը ավելի ծանրացավ, որովհետև ... ճնշվածները շարժում մ՝ ըրին անոնց լուծը թոթափելու, սպանութիւններ, առևանգութիւններ, ավարառութիւններ և գողութիւններ շարունակուեցան, և չարագործները մնացին անպատիժ»: Գյուղ չկա, որ հողերի հափշտակություն տեղի ունեցած չլինի: Սահմանադրության հռչակումից հետո գաղթականությունից վերադարձած հայերը չկարողացան հետ ստանալ ոչ իրենց տները և ոչ էլ հողերը: Ընդորում բռնագրավված են ոչ միայն գաղթածների, այլև տեղում եղած հայերի հողերն ու տրված է մուհաջիրներին: Սահմա-

93 ՀՀ ՊՊԿԱ., ֆ. 57, ց. 5, գ. 15, թթ. 3-8:
94 АВПР, «Политархив», д. 3459, лл. 68-69.
95 Ն. տ., д. 3459, лл. 70-73.

նադրությունից հետո Մանազկերտում ևս հայերի հողերը խլեցին ու տվեցին չերքեզներին: Սասունի Հիթընք և Դաշտպատրիկ գյուղերի հողերը դատարանի վճռով տրվեցին քրդերին, իսկ Խաբլջոզ գյուղում երեք հայ ընտանիքներ իրենց տներից դուրս նետվեցին, և նրանց ամբողջ սեփականությունը հանձնվեց քրդերին:

«Համիտ ինկած, մեջտեղեն ելած է, բայց համիտական հայաջինջ քաղաքականութիւն հավատարմաբար կշարունակուի: Իզուր կամբաստանուին քիւրտերը, չերքեզները և կամ ուրիշ ավազակաբարո տարրերը, չարութեան ու նենգութեան բույնը Թուրք կառավարութիւնն է, որ կուսակցութիւնն ալ ըլլայ զայն վարողը՝ իթիհատ կամ իթիլաֆ, տարբերութիւն չկայ: Քիւրտն ինչպե՞ս երես չառնի և իր ամեն ուզածը չընե, երբ, հակառակ յուր ոճրագործութիւններուն, պաշտպանութիւն կը վայելե թե զինուորական իշխանութենեն, թե ոստիկանութենեն և թե ժանտարմներեն, և ասոր ընդհակառակը կը տեսնի, որ հայերը կը հալածվին, անոնց բողոքներու հանդեպ աչքերնին և ականջներնին կը փակեն, անոնց վրա տեսնուած ամենահասարակ զենքն իսկ կը գրավեն և զանոնք պատժի կը ենթարկեն, կը տեսնեն, որ անոնց հետ կը վարուին թշնամիի պես, մինչ իրենք՝ քիւրտերը, ոտից գլուխ զինեալ կը շրջին և երբեք դիտողութիւն մը չեն լսեր: Ահա այսպես, թիւրք կառավարութիւն ի գործ կը դնե երկու չափ և երկու կշիռ, և անոր համար հայ ժողովուրդը, սկսեալ գեղջուկ ռամիկեն մինչև քաղաքացին, տգետն ու ուսեալը, հավասարապես հուսահատուած են...»: Պաշտոնեությունն ազգայնամոլական կեցվածք ուներ հայության հանդեպ: «Եթե Թուրք կառավարութիւնը մնայ, հայը դատապարտուած է հավիտենական» ստրկության:

Հայերի ծանր վիճակի մյուս պատճառը տասանորդի «կապալառուների (մուլթեզիմ) գործ դրած բռնություններն» էին, որոնք կեղեքում էին հայ և քուրդ գյուղացիությանը, «չաբաթներով կալերը երեսի վրա կը ձգեն, մաքրուած ցորենը չեն չափեր՝ ավելորդ հարկ պահանջելով, մինչև որ զոհացում ստանան... այսինքն՝ չափը դիզված, առանց փայտ զարնելու կառնեն, գիշերով ցորենի չեղջերու կնիքը գաղտնի ավրել տալով՝ առավոտուն տուգանք կը պահանջեն: Դատախազն ալ, դատավորն ալ իրենք ըլլալով, ո՞վ կռնայ դիմադրել: Եթե երբեք գտնուին ոմանք, որ համարձակին կառավարութեանը դիմել, ոչ միայն ապարդիւն ետ կը դառնան, այլ ավելի ծանր տնասներու կենթարկուին... բավական է, որ բողոքողները քրիստոնեաներ ու ամբաստանեալները մահմեդական են՝ հետևանքը հայտնի է»: Երկրագործական մյուս մշակություններից ևս եռապատիկ տուրք էին պահանջում: Տասանորդի քայքայիչ նշանակության մասին խորհրդարանում ասաց նաև եկամտի նախարարը: Ճանապարհների համար տարեկան գանձվում էր 12-ական ղրշ., սակայն ճանապարհներ չկային: Շատ անգամ մեռածներից էլ էին հարկ գանձում: Ավազակներից ոչ պակաս չարիք էին դարձել ժանդարմները՝ ծեծում էին, խոշտանգում, կեղեքում, ձրի կերակրվում: Այս արարքների դեմ ոչ մի գանգատ չէր հանգեցնում մեղավորին պատժելուն: Եվ ժանդարմները քաջալերված իրենց անպատժելիությունից, գործում են սանձարձակ:

Չնայած հայերը Բալկանյան ռազմաճակատում արյուն էին թափում Թուրքիայի համար, Թուրքերը գերադասում էին վերացնել հայերի զինվորագրությունը և վրեժխնդիր էին լինում հայ զինվորներից: Զորանոցը հայ պատանու համար դժոխք էր: Մուշ քաղաքի զորանոցում եղած 80 հայ զինվորից 25-30-ը հիվանդություններից մեռան[96]: Դեկտեմբերի 11-ին կաթողիկոսին նամակով դիմեցին 3 000 վասպուրականցիներ: «Ատանայեն յետոյ ալ ժեոն–Թուրքերը շարունակողը եղան Համիտեան հայաջինջ քաղաքականութեան, ոչ միայն սահմանադրութեան վրայ յոյս դնելով վերադարձեալ հայ գաղթականներու հողերը չվերադարձուեցան իրենց... այլ շարունակեցան Հայաստանին մեջ սիսթեմաթիկ ջարդեր մեկով, հինգով, տասով: Վերջին վեց ամսուան մեջ միայն Վասպուրականի մեջ 60-ե ավելի հայեր ջարդուեցան... ժեոն–Թուրքերը համիսլամական ծրագիր մըն ալ մշակելով և երկրի ուրիշ տարրերու, մանավանդ քրիստոնեից հանդեպ թշնամական ընթացք բռնելով, ցույց տուին, որ իրենք ալ կատարեալ ետևողներն են սուլթան Համիտի

96 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 15, թթ. 39-50:

քաղաքականութեան»[97]: Պատրիարքի 1913թ. մարտի 31-ին թագրիրում, ուղարկված մեծ վեզիր Մ. Շևքեթին, նշվում է, թե հայերի կոտորածներ հրահրողները չեն հետապնդվում, պաշտոնատարները շարունակում են վիրավորել մարդկանց, որովհետև հայ են, որ վտանգը գնալով աճում է, սպանությունները, առևանգումները, հարստահարությունները զանգվածային ջարդերի բնույթ են ստանում: Հայ ազգին ոչնչացում է սպառնում: Հայերն ապրում են աննկարագրելի ճնշված, նույնիսկ վախենում են դուրս գալ դաշտերը մշակելու: Ստացվում է, որ հայերն այլևս իրավունք չունեն ապրելու Օսմանյան կայսրությունում, նրանք օրենքից դուրս են դրված: Ապա պատրիարքը ներկայացնում է մայիս ամսին կատարված դեպքերը: Դրանց թվում էին Խարզանի Կիանիկոյ և Բըշեր գյուղերի թալանը, 300 ավազակների հարձակումը Զարսանջակում, Դազբեյ գյուղի բնակիչների փախուստը Բիթլիսի հայտնի ավազակ Սևիդ Ալիի հարձակումներից փրկվելու համար, Դիարբեքիրի Բեջերի գյուղում ավազակ Հասո Իբրահիմի կատարած սպանություններն ու թալանը, գավ ցեղի հափշտակությունները և սպանությունները Շատախում, Խիզանում 59 հայի սպանությունը, արտագնա աշխատանքից վերադարձածներին կողոպտելը, սպանությունները Մուշում և Սղերդում, հայ կնոջ բռնաբարությունը ութ զինվորների կողմից, չորս հայերի առևանգումը Բաղեշի Գելհոք գյուղում, Երզնկայի հայերի փախուստ-արտագաղթը և այլն[98]:

Նույն ժամանակ ՀՀԴ հետևյալ պահանջներն առաջ քաշեց երիտթուրքերի հետ դաշինքը չարունակելու համար: Այդ պայմաններն էին. ա) Բ. Դուռը պաշտոնապես հայտարարեց, որ հայերի հանդեպ ապօրինի գործողությունները Աբդուլ Համիդի վարչակարգի քաղաքականության հետևանք էին, բ) լրիվ վերականգնել մինչև 1890թ. հայերի ունեցած առանձնաշնորհումները, խառը հանձնաժողովի միջոցով լուծի հայերի և քրդերի հողային վեճերը, մահմեդական գաղթականներին կառավարության կողմից ցույց տվող օգնության համակարգը տարածի նաև հայերի վրա: Մուհաջիրներին տեղափոխի հայկական նահանգներից: Զբաղեցրած պաշտոններից հեռացնի բոլոր նրանց, ովքեր մասնակցել են հայերի 1890-ական թվականների հալածանքներին: Ահա այն ամենը, ինչը մնացել էր հայկական նահանգների ապակենտրոնացման ՀԵԴ պահանջներից. անգամ դրանք իթիհադը որակավորեց «դաշնակցական անջատողականություն»[99]: Հետևեց ՀԵԴ սպառնալիքը կուսակցության համագումարում քննարկման դնել իթիհադի հետ հարաբերությունները խզելու հարցը[100]: Հաճընի հայերի խանութների պատերին երևացին խորհրդավոր նշաններ, թուրքական, անգամ պաշտոնական մամուլը ողողվեց հակահայկական հրապարակումներով: Այդ պայմաններում որպես պաշտոնական սադրանք հնչեցին իթիհադի 1910թ. համագումարի մշակած նոր սկզբունքներ Հայկական հարցում Եվրոպան անտարբեր է այդ հարցի հանդեպ. թույլ չտալ հայերին ինքնապաշտպանության, հայերին կոտորելու գործում օգտագործել կուսակցական կառույցները, մասնակի ջարդերն արդյունավետ չեն և հեռանկարային է հայերի ամբողջական բնաջնջումը:

Ասվածից հետևում է. ա. եթե տասնամյակներ և հարյուրամյակներ շարունակ հայերի կոտորածներն կազմակերպում և ղեկավարում էին օսմանյան պետական կառույցները, ապա այդուհետ՝ նաև երիտթուրքական կուսակցությունը և բ. եթե անցած տասնամյակին հայերի ցեղասպանության նախապատրաստողը իթիհադի ընդհանուր կենտրոնն էր, ապա այդուհետ՝ նաև նրա տեղական կազմակերպությունները: Այս հաստատումները պատահական չէին, քանի որ երիտթուրքական կուսակցությունը ա) թուրքական մեծապետական-ազգայնամոլության կրողն էր, բ) ձգտում էր կայսրությունում ձևավորել կուսակցական բռնատիրություն, այսինքն՝ իր ձեռքը վերցնել կառավարման կենտրոնացած համակարգը, վերջնականապես հրապարակից դուրս նետել Հայկական

97 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 15, թթ. 64-66:
98 АВПР, «Политархив», д. 3465.
99 «Кавказ», 19.02.1912.
100 «Баку», 24.08.1911.

հարցը, ինչը կնվազեցներ տերությունների միջամտությունը կայսրության գործերին: Նշանաբան դարձավ. «Մենք Եվրոպայի կարիքը չունենք, երկրագնդի վրա կա 300 միլիոն մահմեդական»: «Եթե Եվրոպան ուզում է մեզ կործանել, ապա մեզնից հետո կթողնենք միայն գերեզմաններ»[101]:

Արդեն ասվել է, որ 1912թ. օգոստոսի 20-ին քրդերը Վասպուրականում ավերեցին հայկական երեք գյուղ և սպանեցին 54 հայ[102]: «Новое время»-ն 1912-ի օգոստոսի 30-ին հայտնեց Փոքր Ասիայում մի քանի օրում 130 հայի սպանության մասին: «Jevand Herald»-ը (Կ. Պոլիս) գրեց, թե կայսրությունում վարչակարգը փոխվել է, բայց հայերի աղետալի վիճակը շարունակվում է[103]: 1912թ. սեպտեմբերի 4-ին Արշարունին գրում է կաթողիկոսին. «Սպառնում են հայ ժողովրդին ամբողջությամբ ջնջել երկրի երեսից...»[104]: Նույն օրերին պատրիարքարանը հեռագրեր ստացավ Բիթլիսում և Վանում հայերին սպառնացող վտանգի մասին: Դիարբեքիրից հայտնում էին, որ Բայրամի օրերին Սիլվանի մուֆտին սադրիչ արտահայտություններ էր օգտագործել հայերի հասցեին, միաժամանակ ահաբեկչության էր ենթարկվել քաղաքի երևելի հայերից մեկին: «Закавказская речь»-Ե 06.01.1913-ին գրում է. «Երեկ հեռագրով լուր ստացվեց, որ Կ. Պոլսի պատրիարքն ու տեղի Ազգային ժողովը հրաժարական են տվել... այն բանի համար, որ կառավարությունը չհարգեց հայերի խնդրանքը՝ վերջ դնելու իրենց հայրենակիցների կոտորածներին Փոքր Ասիայում և պատժելու չարագործությունների մեղավորներին...»: «Մշակում» Հ. Առաքելյանը նորից այն միտքն առաջ քաշեց, որ ստեղծված վիճակից ելքը մեկն էր՝ Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալը: Առաջադրվում էին նաև հայ բնակչության ինքնապաշտպանության կազմակերպման, թուրքական խորհրդարանի ընտրությունները բոյկոտելու, ինչպես նաև քրիստոնեական երկրներում բողոքի հանրահավաքներ անցկացնելու հարցերը: Կ. Պոլսում մեծ տերությունների դեսպանները 18.09.1912թ. նոտա ներկայացրեցին Բ. Դռանը սանձահարելու քրդերի վայրագությունները, մասնավորապես նշվում էր Վանի և Մուշի շրջաններում կատարված գազանությունների մասին: Խորհրդանշական է, որ այդ օրերին մամուլում նորից երևաց Աղանայի վալի Ջավիդի հեռագիրը իթիհադի կենտրոնին. «Ձեր հրամանը կատարված է, բոլոր չափահասները սպանված են...»: Սադրիչ հոդվածով հանդես եկավ նաև Աղանայի «Իթիդալ» թերթի խմբագիր Հ. Ֆիքրին: Նա գրում էր, որ իթիհադն ու իթիլաֆը մեկ ամբողջի մասեր են, «իրար արժեն և որպես թուրք անընդունակ են իրականացնել որևէ բարենորոգում: Հետևաբար, հայերին չպետք է ներշնչեն, թե կպաշտպանեն նրանց կյանքը, պատիվն ու սեփականությունը... Մենք ուրիշ միջոց չունենք, եթե ոչ սպասել մի նոր վարչակարգի...[105] 1912թ. կեսերին Կ. Պոլսի և մերձակա գավառների մզկիթներում մոլլաները բացեիբաց կոչ էին անում հաշվեհարդարի ենթարկել քրիստոնյաներին՝ «Մահ գյավուրներին»: Լուրեր տարածվեցին, թե Բուլղարիայում սպանում են մահմեդականներին: Այդ առթիվ հանրահավաքներ տեղի ունեցան Բերայում ու Ղալաթիայում: Ոստիկանությունը չեզոք կեցվածք որդեգրեց: «Русское слово»-ն գրեց, որ Բ. Դուռը «ցանկանում է XX դարում կրկնել Վարֆոլոմյան գիշերվա միջնադարյան սարսափները»[106]: Համառ խոսակցություններ էին գնում, որ երիտթուրքերի Աղանայի կոմիտեն հայ բնակչության նոր կոտորած է նախապատրաստել, որ այն սկսելու համար Աղանայի վալին սպասում է Կ. Պոլսի հրամանին: «Русское утро» թերթը 1912թ. սեպտեմբերի 30-ին տպագրեց հարցազրույց Արշարունու հետ: «Ձեք պատկերացնում, թե ես,- ասում է պատրիարքը,- ինչպիսի լարված վիճակում եմ, որովհետև չեմ կարողանում հոգ տանել այն բռնադատվածների մասին, ովքեր ենթակա են ահավոր ահաբեկչության... Ինձ զարմացնում է Ռուսաստանի սառը և անտարբեր վերաբերմունքը: Ինչո՞ւ Ռուսաստանը հանդես չի գալիս մեր օգտին... Բոլոր փորձերը ստանալու Ռուսաստանի հովանավորությունը հանդիպում է խուլ լռության»: Պատրիարքն անդրադառնում է նաև մյուս տերու-

101 «Вестник Европи», 1911, т. в., кн. 11.
102 Сборник дипломатических документов, N. 8, с. 13.
103 «Մշակ», 13.12.1912:
104 «Реформы в Армении», П-град, 1915, с. 273-274.
105 «Закавказская речь», 20.12.1912.
106 Ն. տ., 21.12.1912:

թյունների անտարբերությանը Հայկական հարցում և ավելացնում է, որ միայն հայերի ջարդերի մասին լուրերի բացակայությունն է վերածվել միջազգային կյանքի սենսացիայի: Տերությունների ղեկավարները զարմանում են. «Ինչո՞ւ այս տարի հայերին չեն ջարդում, ե՞րբ է տեղի ունենալու հայերի հաջորդ ջարդը»: Իսկ Բ. Դուռը չի ցանկանում հետապնդել բռնություններ գործադրողներին: Ոստիկանությունը չի ձերբակալում ավազակներին, ազդեցիկ ավատերերն աջակցում են հայ-քրդական առճակատման խորացմանը»: Դրանք բոլորն ընդունում էին որպես թույլատրելի գործողություններ:

Վանի վալի իզեթը բացահայտ համագործակցում էր քուրդ ջարդարարների հետ: Սասունում և Աղիբազարում քուրդ աղաները կրկնապատկեցին հայերից գանձվող տուրքերը: Հիրսի հետ հանդիպման ժամանակ Արշարունին ասաց. «Մեզ, հայերիս համար ակնհայտ է, որ մեր փրկությունը թուրքերից գալ չի կարող: Մենք համոզված ենք, որ թուրքերը, եթե անգամ ցանկանան, անզոր են մեզ համար ստեղծել կյանքի լավ պայմաններ: Մեր միակ հույսը քրիստոնյա մեծ տերությունն է...»[107]: Պատրիարքն ավելի քան անհանգստացած էր, որովհետև Բ. Դուռը գնում էր սադրանքի՝ հայերի գանգատներին հակադրում էր վալիներից ստացված հեռագրերը, թե հայերը կազմակերպում են զինված ավազակախմբեր: Մեծ վեզիր Քյամիլը գտնում էր, որ հայերն այդ ձևով ցանկանում են գրավել մեծ տերությունների ուշադրությունը: Միաժամանակ հայերին սպառնում էին, թե քրդերը թույլտվություն էին խնդրում հայերի ջարդելու համար: Հայկական հարցի լուծման համար ռուսական պաշտոնական շրջաններում շրջանառության մեջ դրվեց երկու տարբերակ՝ Արևմտյան Հայաստանի բռնազավթում և բարենորոգումների իրականացում: Առավելությունը տրվում էր երկրորդին, չնայած չէր բացառվում նաև առաջինը, պատճառաբանությամբ, թե Թուրքիայում տիրող անիշխանության պայմաններում բարենորոգումներն անզոր են խաղաղություն հաստատելու և ռուսական զորքի «մտնելն այդ մարզերը կարող է և անհրաժեշտություն հանդիսանա»[108]: Հայկական հարցը շարունակվում էր օգտագործվել որպես գործիք Թուրքիային հնազանդեցնելու համար: Հիրսը Թուրքիայի ԱԳ նախարարությունից պահանջեց խույս տալ հայկական ջարդերից և այլևս Հայաստան չուղարկել մուհաջիրների[109]: Ի պատասխան դրան «Ալեմդարն» ու «Իկդամը» հանդես եկան հայերին հաշվեհարդարի ենթարկելու պահանջով:

Հայկական բարենորոգումների մասին լուրերը այդ գործին ավելի էին չիկացնում մթնոլորտը, մանավանդ տերությունների մասնակցությունը: 1913թ. դեկտեմբերին Կ. Պոլսում Անգլիայի դեսպան Լ.Մալեն տեղեկացրեց, թե բարենորոգումների խնդրում «հզոր» դիմադրություն է ցուցաբերվում եվրոպական որևէ միջամտությանը: Երկու անգամ քարկոծվեց մի հայ քահանա, հայկական եկեղեցիներից մեկը կարմիր ներկվեց[110]: Լոնդոնում կայացած հանրահավաքում նշվեց. «Մերձավոր Արևելքը ճանաչողներից ոչ ոք չի կարող հուսալ, թե թուրքերն իրենց քրիստոնյա հարևաններից վրեժ չեն լուծելու կրած պարտությունների համար», իսկ Բալկանյան կոմիտեն հայտարարեց, թե հայերն իրենց ճակատագրի հանդեպ լցված են մռայլ նախազգացումներով[111]:

Թուրքերը նամակներով սպառնում էին Պ. Նուբարին, որ եթե շարունակի Եվրոպայում հայկական հարցը բարձրացնել, «վերջ են դնելու նրա կյանքին»: Պոլսեցի մի հայ գրում է. «Թուրքական թերթերը միահամուռ հայտարարում են, թե իրենք չեն ընդունելու եվրոպական վերահսկողությունը՝ սպառնալով բնաջնջել Թուրքիայում գտնվող բոլոր հայերին, եթե վեց պետությունները համարձակվեն ճնշում գործադրել թուրքական կառավարության վրա»[112]: Օր օրի հայերի հանդեպ թուրքական իշխանությունների վերաբերմունքն ավելի ահավոր էր դառնում: «...Մեր յոյսերը զինուորական տուրքի կանոնավորման, անէացան: Այս տուրքերը կը պահանջուին վերջին ծայր խստաթեամբ, առանց բնավ նկատի առնելու դոյզն չափով ժողովրդի թշվառությունը, նոյնիսկ անոնք, որ կտոր մը հաց չունին ուտելու, կառաջնորդուին բանտ»[113]:

107 «Մշակ», 01.01.1913:
108 «Из истории агресивной внешней полотики германского имперализма», м., 1959, с. 24.
109 «Մշակ», 01.01.1913:
110 BDOW, X, 1. pp 449, 483, 535.
111 FO 371/1520/68361.
112 Ն. տ., Ե. Ռուբինսոնի 1914թ. հունվարի 8-ի նամակը Մակմիլանին:
113 Թուրքիոյ հայոց կացութիւնը վավերաթուղթերով պարզուած, 1908-1912, էջ 36:

«...Կեանքը, պատիվը և ինչքը,– գրում է Սահակ կաթողիկոսը,– հայ ժողովուրդին Մալաթիոյ և շրջակայ գիւղերուն մեջ, կեղեքումի և անիրաւ հարկահանութեան ենթարկուած են... Քիւրտ ցեղերու միջև կռիվ... Քետխորեի 200 տուն հայերը նախ կը զոհեն: Իւրաքանչիւր կողմ իր մարդոց նախ հայերուն նշան առնել կը յանձնարարե.. Միւտիր Ֆեհմի... Սառա անուն հայ աղջիկ մը առևանգած է Քիախտեի մեջ և... պաշտոնի բարձրացում ստացած է»[114]: «Հայաստանի մեջ,– վկայում է Ա. Ալպոյաճյանը,– համիտական շրջանի հատուկ կեղեքումները, հարստահարութիւնները և ջարդի սպառնալիքները շարունակուեցան թերևս ավելի յավելեալ և ճոխացեալ, հայերը որոշ տեսան, թե խաբեութիւն մը և կեղծիք մըն էին... երկրին մեջ արդարութիւն և ապահովութիւն հաստատելու խոստումներն, որոնք թուրքերը կընեին»[115]:

«Մշակը» 07.11.1913թ. տպագրեց Եղիյանի տեղեկանքը հայերի ունեցվածքի բռնագրավումների մասին: Համաձայն այդ տեղեկագրի հայերից խլվել էր 25049 հողակտոր, որից 22.046-ը Էրզրումի և Բիթլիսի նահանգներում, 2557 տուն, որից 1640-ը նշված երկու վիլայեթներում, 1965 արոտավայր, որից 1677-ը նույնպես այդ երկու վիլայեթներում: Ամբողջությամբ վերցրած հայերից խլվել էր 34681 միավոր սեփականություն, որից 28605-ը Էրզրումի և Բիթլիսի նահանգներում: Տոկոսային առումով զավթվածները կազմում էին հայերի ունեցվածքի՝ Բիթլիսի վիլայեթում 45.7%, Էրզրում 36.7%, Սեբաստիայում 7.3%, Խարբերդում 4.5%, Վանում 3.7%, Դիարբեքիրում 2.15%: Ընդ որում Բիթլիսի վիլայեթում հափշտակվել էր հայերի արոտավայրերի 68.4 %, տների 88.4%, Էրզրումի նահանգում յուրաքանչյուր հինգերորդ եկեղեցին, Խարբերդի նահանգում յուրաքանչյուր չորրորդ այգին: Ամենաշատը զավթվել էին ջրաղացներ Բիթլիսի (38.1%), Էրզրումի (25.6%), Վանի (13.1%), Դիարբեքիրի (11.25%) նահանգներում: Թուրքական մամուլն ու իշխանությունները վայրենի ոռնոցով ընդունեցին պատրիարքարանի այս հրապարակումը, հնչեցին սպառնալիքներ:

Այսպիսով, 1908թ. հուլիսյան հեղաշրջմանը հաջորդած ժողովրդավարական բռնկումների կրակները շատ արագ մարեցին, և Օսմանյան կայսրությունը վերադարձավ «հին Թուրքիայի» վիճակին՝ դրան տալով առավել ընդգծված մեծապետական, այլամերժական բնույթ, ինչը հայ ժողովրդին կանգնեցրեց բնաջնջման իրողության առաջ: Հին և նոր վարչակարգերի հակահայ քաղաքականության արդյունքների միջև կային նաև էական տարբերություններ: Եթե սուլթանների քաղաքականությունը հանգեցրել էր հայության թվական աճի կասեցման, հայ մշակույթի և հոգևոր հաստատությունների, քաղաքների ու գյուղերի ավերման կամ ծայրաստիճան անմխիթար վիճակի դատապարտման, տնտեսական ճգնաժամի, ժողովրդի անվերջ թալանի ու հարստահարության, մշտական բնույթ ստացած արտագաղթի, Հայաստանի, ազգագրական դեմքի խաթարման՝ մահմեդական տարրերի ներհոսքի, քրիստոնյաների կրած ծանր հարվածները հոգևոր, մշակութային կյանքին, նրա մարտունակությանը, պայքարի ոգուն, ինչը հող նախապատրաստեց Հայաստանի հայաթափման համար, ապա երիտթուրքական քաղաքականությունը հանգեցրեց արևմտահայության ամբողջական բնաջնջմանը:

114 Ալպոյաճեան Ա. Պատմութիւն Մալաթիոյ հայոց, Բեյրութ, 1961, էջ 862:
115 Ն. տ., էջ 879:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐՆ ՈՒ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երիտթուրքերի հակասահմանադրական շրջադարձն ու բնաջնջման քաղաքականությունը որդեգրելը հիմնավորել հայերի կամ մյուս հպատակ ժողովուրդների, նրանց հասարակական-քաղաքական ուժերի վարքագծով ոչ միայն ճիշտ չէ, այլև անարդար է:

Անդրադառնանք հայ քաղաքական կուսակցություններին, հոգևորականության, մամուլի, մտավորականության գործունեությանը հետսահմանադրական շրջանում:

ՀԱԾ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ.- Ընդունված է ասել, որ սահմանադրության հռչակումով սկսվեց ՀԾ Դաշնակցության և Իթիհադի «եղբայրացման» մեղրամիսը: «Դրոշակը» 1908-թ հուլիսի 7-ին տպագրեց «Կը բացուի նոր դարագլուխ» խմբագրականը: Կուսակցությունը հիմնարար էր համարում նահանգների վարչական ապակենտրոնացումը, մշակութային ինքնավարությունը, ազգային միատարրության սկզբունքի հիման վրա վարչական նոր բաժանումը: ՀԾԴ ցուցադրականություն, շուք էր հաղորդում իթիհադի հետ հարաբերություններին առնչվող մեծ ու փոքր իրադարձություններին ու դեպքերին: «Դաշնակցության ու իթիհադի եղբայրությունը,– գրում է Լեոն,– այլևս սահմաններ չէր ճանաչում, և դաշնակ գործիչները Փարիզից Կ.Պոլիս Սաբահեդդինի հոր՝ Դամադ փաշայի, աճյունը ճանապարհելու ծիսակատարությունը վերածեցին հայ-թուրքական բարեկամության ցույցի: Ելույթ ունեցող հայերն ու թուրքերը հավերժական բարեկամության երդում տվեցին: Եղբայրական ողջագուրումը շարունակվեց Գր. Օտյանի գերեզմանի շուրջը: Ելույթներում այն միտքն էր շեշտվում, որ երիտթուրքական հեղաշրջումից հետո հաստատված ազատությունը կառուցվել էր «հայ զոհերի վրա»»[1]:

ՀԾԴ իրատեսություն հանդես չբերեց, գերագնահատեց Սահմանադրական կարգերի հաստատման գործում իր մատուցած ծառայությունները և, մասնավորապես, այդ ծառայությունների ընձեռած հնարավորությունները: Նա «իրեն համարեց դրության տերը, երիտթուրքերի հետ հավասար իրավունքներով»: Դաշնակցության գործիչներն առիթը բաց չէին թողնում թուրքերին հասկացնելու, որ առանց հայերի ջանքերի Սահմանադրությունն անհնար էր: Նրանք իրենց կուսակցությանն, ու ընդհանրապես հայերին, համարում էին Աբդուլ Համիդի արյունարբու վարչակազմի դեմ պայքարի գլխավոր ուժը: Եվ պատահական չէ, որ երբ սուլթանի կողմից Երուսաղեմ աքսորված Մ. Իզմիրլյանը Կ. Պոլիս վերադարձավ, «կուսակցության ու կառավարության բարձր մարմիններն այնպիսի մի շքեղ ու փառավոր ընդունելություն ցույց տվին նրան, որի նմանը դեռ ոչ մի տեղ չէր տեսնված»[2]: Տպավորությունն այնպիսին էր, որ հեղափոխությունից հետո ՀԾԴ իրեն կարծում էր, եթե ոչ կառավարող, ապա կառավարող կուսակցությանը համազոր քաղաքական ուժ: Դաշնակցությունն իրոք ձգտում էր երիտթուրքերի հետ ձեռք ձեռքի տված կայսրությունը հանել առաջընթացի ուղի: «Դրոշակը» գրեց, որ ՀԾԴ «ներշնչված ազգերի համերաշխության մեծ սկզբունքով, կը շարունակե իր աշխատանքը, թև թևի տված երիտասարդ Թուրքիայի ռազմիկների հետ, մինչև որ ստացվեն ռամկավարական սահմանադրության հաստատուն երաշխիքները»[3]:

1908թ. հուլիսի 30-ին դաշնակցության Պոլսի պատասխանատու մարմինը շրջաբերականթռուցիկ հրապարակեց. «Օսմանեան կայսրութեան մի ծայրից միւսը հնչում է ազատութեան, հավասարութեան, եղբայրութեան կոչը: Երեկուան հանրաբանտը վերածուած է ազատաշունչ

1 Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 217:
2 Ն. տ., էջ 219:
3 «Դրոշակ», 1908, թիվ 7:

երկրի: Մոայլ, երկչոտ դեմքերի տեղ երևում են բերկրալից աչքեր, լուութեան փոխարեն թագավորում է շարժում, ատելութեան և քենի ավերակների վրա փչում է սիրոյ շունչը... Հանրային կեանքը կերպարանափոխված է, փողոցներում այլևս չկայ երեկուան բռնապետութեան սոսկալի գործակալը՝ գաղտնի լրտեսութիւնը: Բանտերը դատարկուած են... «Դեպի՜ բանտ» գոչողներն իրենք են գնում բանտերը: Արտասուք տարածողներն իրենք են ողբում: ... Դերերը փոխուած են...»[4]: Մ. Վարանդյանը գրում է. «1908 թվականը ոսկե տառերով կարձանագրուի համաշխարհային պատմութեան էջերում: Նոր հորիզոններ բացուեցան Ազատութեան գաղափարի առջև, մարդկային նոր զանգվածներ վեր բարձրացան մրափի ու անոթութեան անդունդներից և գրկեցին համամարդկային քաղաքակրթութեան դրոշը: ...«Իթիհադը» չի բավականանում ֆրանսիական մեծ հեղափոխութեան երրորդութեան նշանաբանով. «Ազատութիւն», «Հավասարութիւն». «Եղբայրութիւն» շարանին նա ավելացնում է «Արդարութիւն»[5]:

Հեղաշրջումից հետո ՀԹԴ հասարակությանը ներկայացրեց իր ծրագիրը: Ծրագրում նախ նշվում է՝ Հայկական հարցն այլևս Թուրքիայի ներքին խնդիրն է և նրա լուծումը պետք է սպասել Օսմանյան խորհրդարանից: Այսինքն՝ կուսակցությունն անջատողական որևէ նպատակադրում չուներ և գտնում էր, որ Հայկական հարցի ամենաճիշտ լուծումը վարչական ապակենտրոնացման սկզբունքի ներդրումն էր: «Մենք պետք է համերաշխ ընթանանք այն տարրերի հետ, որոնք պաշտպանում են ապակենտրոնացման համակարգը և «շրջանային ու տեղական ամենալայն» ինքնավարությունը», քանի որ միայն «վարչական ապակենտրոնացման և մշակութային ինքնուրույնության» համակարգում հայ ժողովուրդը հնարավորություն կունենա «ազատորեն, առանց վերուստ տեղացող ճնշումների, զարգացնել իր ազգային քաղաքականութիւնը, ապահովել իր ուրույն անհատականութիւնը, իր տնտեսական-սոցիալական բարօրութիւնը»[6]: Կա կարծիք, թե այդ շրջանում ՀԹԴ ձգտում էր ազգային «ինքնուրույնության», այսինքն՝ անկախության: Նման կարծիքի համար ոչ դաշնակցության ծրագրային փաստաթղթերը և ոչ էլ գործունեությունը հիմքեր չեն տալիս: ՀԹԴ պարզապես պահանջում էր հայերի համար մշակութային զարգացման ազատություն, ներքին կյանքի կառավարման ինքնավարություն, դեն նետել հայահալած սուլթանական քաղաքականությունը, ապահովել անվտանգ ու անարգելք տեղաշարժի հնարավորություն, ազատել քաղաքական բանտարկյալներին, պանդուխտներին ու արտագաղթվածներին ապահովել տունդարձի հնարավորություն, հայ գյուղացուն վերադարձնել նրանից խլված հողերը:

ՀԹԴ մի քանի ծրագրային բնույթի փաստաթղթեր ևս հրապարակ հանեց, որոնցից մեկը 1908թ. սեպտեմբերին ներկայացվեց օսմանյան խորհրդարանին: Այդ փաստաթղթում ավելի մանրամասնված ու հստակեցված էին կուսակցության պահանջները: Այն Օսմանյան կայսրության քաղաքական կառուցվածքի լավագույն ձևը համարում էր «դաշնակցային ապակենտրոնական» վարչակարգը, որը պետք է ստեղծվեր ոչ թե անմիջապես, այլ ժամանակի ընթացքում, աստիճանական բարեփոխումների միջոցով: ՀԹԴ օսմանյան խորհրդարանին առաջարկեց Արևմտյան Հայաստանը համարել «անկախ ու ամբողջական Օսմանյան կայսրության» անբաժան մաս: Օսմանյան համադաշնությունում արտաքին քաղաքականությունը, բանակը, դրամը, մաքսային համակարգը, երկաթուղին, կապը և մի քանի այլ բնագավառներ գտնվելու էին կենտրոնական կառավարության իրավասության ներքո: Օրենսդիր, դատական և տեղական կառավարման մարմինների ընդհանուր, հավասար և գաղտնի ընտրություն, որը «գործադրվեր բոլոր ազգերու և կրոններու համար հավասարապես»[7]: Տեղական իշխանությունների իրավասությունների մեջ մտնելու էին ճանապարհաշինությունը, առողջապահությունը, կրթությունը, ջրաբաշխումը, ոստիկանությունը, գյուղատնտեսական գիտելիքների տարածումը և այլն: Հարկերի 20–23%–ը պետք է ծախսվեր տեղական կարիքների համար: Վալիները, մութասարիֆները, կայմակամները, մյուդիրները պետք է նշանակվի, իսկ տեղական մյուս պաշտոններն ընտրովի լինեին: Պահանջվում էր իրականացնել ազգային սկզբունքի հիմքի վրա վարչական նոր բաժանում, ազգային համախմբումներ ստեղծելու միտումով: Վերացվեր առանձին ազգերի արտոնությունները, բոլորն օգտվեին հավասար հնարավորություններից և իրավունքներից: Խղճի, ժողովների և գործադուլների ազատություն, անձի և ունեցվածքի անվտանգություն, իրականացնել ընդհանուր, ձրի և պարտադիր տարրական կրթություն, բոլոր դպրոցների իրավահավասարություն, դասավանդումը մայրենի լեզվով: Պետական լեզուն մնար թուրքերենը, որի գիտենալը պարտադիր էր բոլորին, իսկ վարչական ամեն մի շրջանի մեծամասնություն կազմող ազգության լեզուն՝ տեղական պաշտոնատարների համար: Պարտադիր զինվորական ծառայություն: Համիդիե գնդերի ցրում: Վերացվեին պարհակները, աշարը սահմանվեր մինչև բերքի 1/15-ի չափով, իսկ աղնամը կրճատվեր 1/13-ով:

ՀԹԴ առաջադրած այս ծրագիրը համեմատած Միդհատյան սահմանադրության հետ առաջադիմական լուրջ քայլ էր, ազգային-բարենորոգչական սկզբունքներով մոտ Մայիսյան ծրագրին և շատ հեռու համադաշնային համակարգը ձևավորող սկզբունքներից: Մինչդեռ երիտթուրքերը վերապահումներով էին վերաբերվում անգամ Միդհատյան սահմանադրությունով նախատեսված շատ ավելի չափավոր փոփոխություններին, չնայած ամբողջությամբ վերցրած, այդ սահմանադրությունից բացակայում էր շիտակությունը: Հավասարությունն ու համաօսմանյան եղբայրությունը լոկ շլացնելու կոչված բառեր էին: «Թուրք» բառը «օսմանցի» բառով փոխարինելը չէր վերացնում ռայայի իրավազրկությունը: Այսինքն՝ ծրագրային սկզբունքների առումով ՀԹԴ ու իթիհադի միջև ընդհանուր ոչինչ չկար, իսկ եթե նկատի առնվի, որ առաջինն ուներ սոցիալիստական կողմնորոշում, ապա անխուսափելի էր նրանց միջև ոչ միայն սառնությունը, այլ նաև թշնամությունը: Կայսրության մյուս առաջադեմ քաղաքական ուժերը եթե սկզբում իթիհադին հավատում էին, համենայն դեպս նրա հետ համագործակցեցին սուլթանական վարչակարգը տապալելու համար, ապա կարճ ժամանակ անց շատերը շրջադարձ կատարեցին իթիհադի դեմ, որովհետև այն իր ձեռքում կենտրոնացրեց ամբողջ իշխանությունը և «կրկներգում էր համիդյան հին մեղեդիները»: Մինչդեռ ՀԹԴ երկար մնաց երիտթուրքերի կողքին, մնաց նաև այն ժամանակ, երբ հեղաշրջման խելահեղ գինարբուքը վաղուց անցել էր: Նորից է պահանջ առաջանում հարցնելու «ինչո՞ւ»: Սահմանադրության հռչակումից հետո էլ Թուրքիայում ոչ նոր կուսակցություններ ստեղծվեցին և ոչ էլ ձևավորվեցին հասարակական-քաղաքական նշանակալից ուժեր: Միակ կազմակերպված ուժը մնում էր իթիհադը, որը շուտով փաստորեն իր մեջ առավ կառավարման մարմինները և դարձավ կայսրության բախտի տնօրենը: Այդ պայմաններում կայսրության ամենահզոր և կազմակերպված քաղաքական ուժերից մեկը՝ դաշնակցությունը, պետք է ընդհատակ անցներ և կամ գործարքի մեջ մտներ իր խղճի հետ: Նկատի էր առնվում նաև այն, որ թուրքական ուրիշ քաղաքական ուժի բացակայության պայմաններում երիտթուրքական կուսակցության մեջ էին մտել այս կամ այն չափով լուսավորյալ, երկրին անկեղծորեն նվիրված տարրեր և հնարավորություն կար ազդելու պետական քաղաքականության վրա: Առանձին դեպքերում դաշնակցությանն այդ հաջողվեց: Օրինակ, պարտադիր զինծառայությունը քրիստոնյաների վրա տարածելու, վիլայեթների մասին և մի քանի այլ օրենքների ընդունումը[8]:

Թե ժամանակին ոչ միայն դաշնակցության շարքային անդամներն, այլև գործիչներն ինչպիսի մոտեցում ունեին ՀԹԴ–իթիհադ դաշինքին, ցույց է տալիս հետևյալ մեջբերումը. «Ինչպես դաշնակցությունը,– գրում է Ս. Վրացյանը,- այնպես է երիտթուրքերը հանդիսանում էին հեղափոխական կուսակցություններ, որոնք ցանկանում էին վերջ դնել Համիդի կամայականություններին: Դաշնակցության կարծիքով սահմանադրական կառավարումը կբարելավեր հայերի վիճակը: Եթե մենք կարող ենք համագործակցել երիտթուրքերի հետ, որոնք, ինչպես երևում է, ազնվորեն շահագրգռված են հայերի ճակատագրով, ինչո՞ւ այդպիսի փորձ չանել»[9]: Ջեմալ փաշան, անդրադառնալով իթիհադ-ՀԹԴ հարաբերություններին, գրում է, որ 1908թ. վերջերին բանակցություններ տեղի ունեցան այդ երկու կուսակցությունների միջև: Երիտթուրքերի պատվիրակու-

4 «Նիւթեր ՀԹ Դաշնակցութեան պատմութեան համար», հ. Ա, Բեյրութ, էջ 175:
5 Վարանդեան Մ. Վերածնուող հայրենիքը և մեր դերը, Ժնև, 1910, էջ 91-92,94:
6 «Դրոշակ», 1908, թիվ 8:
7 Նույն տեղը,, թիվ 9-10:

8 «Նիւթեր ՀԹ Դաշնակցութեան պատմութեան համար», հ. Ա, էջ 176:
9 Атомян С. Армянская община, Москва, 1956, стр. 42.

թյան մեջ մտնում էին Թալեաթը, Բ. Շաքիրը և Ջեմալը, իսկ ՀԾԴ՝ Մալումյանն ու Շահրիկյանը: «Թագաժառանգ Սաբահեդդինի հայացքները շատ թե քիչ համանման էին դաշնակցության հայացքներին... Տարօրինակն այն էր, որ Ռեշադ Նեհադն (Սաբահեդդինի ներկայացուցիչը) ավելի լայն արտոնություններ էր պահանջում, քան հայ հեղափոխական կուսակցությունը: Եվ որովհետև մենք մերժում էինք ընդունել այդ արտոնությունները, ուստի մեզ հետ համաձայնության չեկան... Մալումյանը... հետևյալ առաջարկությունն արեց. «Դաշնակցությունը, ցանկանալով պաշտպանել օսմանյան սահմանադրությունը, գործում է Միություն և առաջադիմություն կուսակցության հետ համերաշխ, սակայն յուրաքանչյուր կուսակցություն սեփական ծրագիրն իրագործելու համար իրեն իրավունք է վերապահում ազատ լինել իր գործունեության մեջ»»[10]:

Սա նշանակում է, շարունակում է Ջեմալը, որ Դաշնակցությունը երկրում պահպանում է իր հեղափոխական կազմակերպությունը, մի տարբերությամբ՝ մինչ այդ գաղտնի էր գործում, իսկ դրանից հետո՝ բացահայտ[11]: Ջեմալը, խոսելով հպատակ ազգերի կուսակցություններին իթիհադի մեջ ձուլելու վերջինիս դիտավորության մասին, նշում է, թե այդ չհաջողվեց, որովհետև «մեր և նրանց նպատակներն իրարից շատ էին տարբերվում»: Դաշնակները «ցանկանում էին, որպեսզի ինքնավարության և անկախության համար մինչ այդ գաղտնորեն տարած և մեծ վտանգների հետ կապված իրենց քարոզչությունը շարունակեն հրապարակորեն... մինչ մենք ձգտում էինք հանձինս Միություն և առաջադիմություն կուսակցության Օսմանյան կայսրության մեջ մտնող բոլոր ազգությունների հեղափոխական կուսակցություններից մի կենտրոնական դաշնություն կազմավորել և դրա հետ միասին ստեղծել մի պետություն, որ հանդիսանար օսմանյան բոլոր ազգերի միություն...»[12]: Սակայն քաղաքական կուսակցություններից ոչ մեկը չցանկացավ ընդունել իթիհադի «վերազգային կողմնորոշումը»: Իրականում այդ քաղաքականությունը ոչ միայն վերազգային չէր, այլև սանձարձակ ազգայնամոլական-թուրքիստական էր: Երիտթուրքական հեղաշրջման երրորդ օրը «Արևելքը» սկսեց տպագրել Ռաֆֆու «Խենթը», ինչն առաջացրեց թուրքական թերթերի միահամուռ զայրույթը և վեպի տպագրությունն անմիջապես դադարեցվեց: Խմբագրությունն անգամ ներողություն խնդրեց: Թուրքական մամուլը և ղեկավար շրջանները հաճախ էին առաջ քաշում 61-րդ հոդվածը վերացնելու հարցը՝ պատճառաբանությամբ, թե այլևս Հայկական հարց գոյություն չունի, այն տարրալուծվել է Թուրքիայում իրականացվող համընդհանուր բարենորոգությունների մեջ: ՀԾԴ առաջարկում էին դառնալ ՀԴ, այսինքն՝ կուսակցության անվան միջից դեն նետել «հեղափոխական» բառը, որովհետև հեղափոխությունն արդեն տեղի էր ունեցել և այլն, և այլն:

ՀԾԴ չհապաղեց ընդառաջ գնալու իթիհադի ցանկությանը, նա իր անունը չփոխեց, բայց հայտարարեց, որ օսմանյան հեղափոխության շնորհիվ Բեռլինի դաշնագրի 61-րդ և 23-րդ հոդվածներն այլևս ավելորդ են, որ Հայկական ու Մակեդոնական հարցերը վերցվել են միջազգային դիվանագիտությունից և դարձել են օսմանյան պետության ներքին խնդիրներ[13]:

Մի առանձնահատկություն կա, եթե ռուսական ընդդիմությունը կովում էր վարչակարգի, այլ ոչ թե պետության դեմ, Թուրքիայում տեղի էր ունենում ուղիղ հակառակը: Հպատակ ժողովուրդների պայքարը օսմանյան պետության դեմ տեղատվություններ կարող էր ունենալ և ունենում էր, բայց անհետանալ՝ երբեք, որովհետև քանի դեռ կար օսմանյան լուծը, լինելու էր նաև պայքարը դրա դեմ, անգամ եթե սուլթանական վարչակարգն ամբողջությամբ փոխարինվեր հանրապետականով:

Իթիհադի ու ՀԾԴ միջև սկզբունքային բնույթի շատ անհամաձայնություններ խոր արմատներ ու երկար պատմություն ունեին: Այդ երկու կուսակցությունների բոլոր համատեղ փաստաթղթերը, անգամ առանցքային հարցերում, լի են փոխզիջումներով: Տպավորությունն այնպիսին էր, թե իթիհադի և ՀԾԴ համար գլխավորը ոչ թե գործունեության նպատակն էր, այլ համագործակցությունը: Հիշենք 1902թ. համաժողովի բանաձևը: «1. Մեր մտադրությունն է կայսրության զանազան ժողովուրդներուն և ցեղերուն միջև գոյացնել համաձայնություն մը, որ բոլորին անխտիր պիտի ապահովե կատարեալ վայելքն իրավունքներու- հաստատուած «խաթերով» և նուիրագործված միջազգային համաձայնագրերով- տեղական վարչության մեջ պաշտոններ պիտի հայթայթե անոնց, զանոնք պիտի դնե քաղաքացիական իրավունքներու և պարտականության հավասար գետնի վրայ և պիտի ներշնչե զանոնք հավատարմությամբ մը դեպի գահն ու Օսմանեան արքայատոհմը, առանց որու կարելի չէ միություն գոյացնել... 3. Պիտի ջանանք ամեն պարագայի բոլոր Օսմանեան ժողովուրդներու փափագներն ու հայրենասերներու ջանքերը կենտրոնացնել հետևյալ նշանաբաններուն շուրջ. Ա.– Օսմ. կայսրության ամբողջականության պահպանում. Բ.– Որպես յառաջադիմության անհրաժեշտ պայման, վերահաստատել ներքին կարգապահություն և խաղաղություն: Գ.– Ցարգանք կայսրության հիմնական օրենքներուն հանդեպ, մասնավորաբար 1876-ի Սահմանադրության, որ անվիճելի գրավականն է ընդհ. բարենորոգության, Օսմ. ժողովուրդներու իրավունքներուն և քաղաքական ազատության և հակասողը՝ կամայականությանց»[14]: «Թուրքիան վերակառուցել և ստեղծել այնպիսի պայմաններ, որպեսզի նրանում բնակվող այլացեղ, այլակրոն տարրերը ժամանակի ընթացքում վերածվեն մի զանգվածի, մի մարմնի, մի ժողովրդի, մի ազգության: «Օսմանեան ազգ» մեկնեղ բերելով նոր արիւն և ավիւն պետք է ներարկվեր Թուրքիային: Երիտթուրքերը գտնում էին, որ «հարել եղած դեպքում, հնարավոր ու արդար են օտար համայնքների ամբողջական կոտորածները»: Նրանց կարծիքով կայսրության կյանքում փոփոխություն պիտի կատարվեր միմիայն «հօգուտ տիրող օսմանյան տարրի»: Նրանք առաջնահերթ էին համարում Աբդուլ Համիդի զահընկեցությունը, բայց հին վարչակարգի հաստատությունները, սուլթանիզմի և խալիֆայության պահպանումը, բացառում օտար միջամտությունը, ինչպես նաև հայկական, մակեդոնական, կրետական, արաբական և ալբանական շարժումները: Չէին ճանաչում ո՛չ Հայկական և ո՛չ էլ Մակեդոնական հարցերը, պահանջում հպատակ տարրերի շահերը ենթարկել Օսմ. կայսրության միության և ամբողջականության հարատևման հիմնահարցերին, իրականացնել օսմանյան քաղաքականություն, աջակցել իսլամական շարժումներին աշխարհի բոլոր ծայրերում[15]:

Չնայած Իթիհադի և ՀԾ Դաշնակցության ծրագրերի միջև ոչ միայն տարբերություններ, այլև հակադրություններ կային, սակայն ակնհայտ է, որ ՀԾԴ հայերի համար ավելին չէր պահանջում, քան մյուս հպատակների կուսակցություններն իրենց ժողովուրդների համար:

Ա. Տիրկովան գրում է. «Հայկական սոցիալիստական կուսակցությունը, որի ծրագրում շատ այլ կետերի հետ միասին նշված էր... եկեղեցին պետությունից բաժանելու անհրաժեշտությունը, գործնական քաղաքականության հետ առաջին իսկ հանդիպումից հետո հարկադրված եղավ պնդելու եկեղեցու պետական իրավունքների վրա: Սեփական լեզվով սովորելու գոյություն ունեցող իրավունքից բացի հայերը պետական գանձարանից ֆինանսավորում էին պահանջում: Քանի որ լուսավորության նախարարության բյուջեն կազմավորվում էր հարկերից, վճարում էին բոլոր ազգությունները, այդ թվում նաև հայերը, արդարությունը պահանջում էր, որպեսզի այդ միջոցները ծախսվեին բոլոր ազգությունների դպրոցների վրա: Վարչակազմն ու դատարանը բարեփոխման կարիք ունեին ամբողջ Թուրքիայում, և ամենուրեք բազմացող բնակչությունը պնդում էր, որ պաշտոնատարները միայն թուրքեր չլինեին և նշանակվեին նաև մյուս ազգությունների ներկայացուցիչներ: «Այդ առումով Մակեդոնիան և Էրզրումի կամ Վանի վիլայեթները մոտավորապես նույնանման պահանջներով էին հանդես գալիս»[16]: ՀԾԴ 4-րդ համագումարի ընդունած ծրագրում ասված է. «Թուրքահայաստանը կը կազմե օսմանյան սահմանադրական պետության անբաժան մասը, հիմնված տեղական լայն ինքնավարության վրա»[17]: ՀԾԴ գործիչները բազմիցս հայտարարել են, որ այլևս նույնիսկ չպետք է հիշատակվի Բեռլինի կոնգրեսի 61-

10 Ջեմալ փաշա Հայկական հարցը, Երևան, 1927, էջ 19:
11 Ն. տ., էջ 19:
12 Ն. տ., էջ 20:
13 «Դրոշակ», 1909, թիվ 4:

14 Գանդրունի Հ. նշվ. աշխ., էջ 240:
15 Սապահ Գյուլյան Ս. Երիտասարդ Թուրքիա, «Հնչակ», 1900, թիվ 76, 1901, թիվ1, 2, 3 կամ Փարիզ 1908:
16 Тыркова А. նշվ. աշխ., էջ 65-66:
17 Ծրագիր ՀԾ Դաշնակցության, ժնև, 1911, էջ 15-16:

րդ հոդվածը, այլև պահանջում էին դադարեցնել հակաթուրքական քարոզչությունը: ՀԾԴ առաջնորդությունը բաց չէր թողնում իթիհադին հավաստիացնելու, թե երկու կուսակցությունների հարաբերությունների միավորման խնդիրներն անհամեմատ ավելի հզոր էին, քան առճակատմանը: Դաշնակցական պարագլուխներից Շահրիկյանը (Ատոմ) պանթուրքիստ Ջ. Նուրիի բացարձակ մեծապետական, մարդատյաց գաղափարներով լեցուն «Օսմանյան կայսրության անկման պատմությունը» գրքի վերլուծության մեջ ամեն կերպ աշխատում է «լեզու գտնել» երիտթուրքերի հետ: Նա դիմում է իթիհադին. «Ամենից առաջ մենք ենք ձեր բնական դաշնակիցը ու գործակիցը»[18]: Դաշնակները մի կողմից պահանջում էին դաշնային կարգավիճակ, իսկ, մյուս կողմից, շարունակում էին համագործակցել երիտթուրքերի կուսակցության հետ, որը վճռականապես դեմ էր դրան: Նույնիսկ այն բանից հետո, երբ քրիստոնյաներին ծերակույտում տեղ չտվին, և Աբդուլ Համիդը հայտարարեց, թե «ծերակույտն ազգի և սահմանադրության վերաքննիչ ուժն է, և նրա անդամների ճնշող մեծամասնությունն անպայման պետք է լինեն թուրքեր ու մահմեդականներ»[19], այնուամենայնիվ «դաշնակները երախտապարտ էին եղբայր երիտթուրքերին»:

Նրանք գործնականում զինաթափեցին արևմտահայությանը[20]: «Հին գործիչ ընկերներեն շատերը՝ իրենց արեան գնով ձեռք բերած զենքերն այլևս անպետք նկատելով, սկսան աժան գնով զանոնք ծախել թուրքերուն և քիւրտերուն...»[21]:

Օգտագործելով ՀԾԴ գործիչների դյուրահավատությունը՝ իթիհադին հաջողվեց իմանալ այդ կուսակցության պլանների, նպատակների, մասնաճյուղերի գործունեության մասին, զենքի պահեստների վայրերը: Իրենք՝ դաշնակցական գործիչներն էին խոստովանում, թե նման ընթացքը «կաշկանդեց հայ ինքնապաշտպանության թևերը» և անպաշտպան ժողովրդին մատնեց նոր արհավիրքների[22]: «...Դաշնակցությունը զենքերը վար դրեց,- գրում է ՀԾԴ գործիչներից Ս. Ատոմյանը,– իր մարտական ջոկատներին հրամայեց դադարեցնել կրակը և գնաց երիտթուրքերի հետ հաստատելու խորհրդարանային ազնիվ հարաբերություն»[23]:

ՀԾԴ այս անվերապահ իթիհադասիրությունն, իհարկե, արտահայտություն չէր հայերի համազգային տրամադրությունների, մասնավորապես խնդրին վերապահումով էին մոտենում հայդուկները: «Սահմանադրութենեն ետք մենք մեր անցեալ 20 տարիներու դառն փորձութեան տուած դասերով, բնավ երբեք հավատք չունեինք թիւրք կառավարութեան անկեղծութեան վրա, կը փափագեինք, որ մեր կազմակերպութեան բոլոր գաղտնիքները չհաղորդեին երիտասարդ թուրքերուն, ընդհակառակը, մենք ավելի պետք է հետամուտ ըլլանք իմանալու անոնց գաղտնիքները: Մենք պետք է մտահոգուեինք մեր ինքնապաշտպանութեան խնդրով, անոր համար միջոցներ խորհեինք և զենք ու ռազմանյութ ձեռք բերելու մասին լրջորեն խորհրդակցեինք»[24]:

Պատմագիտական որոշ աշխատություններում պարզունակ և կողմնակալ է ներկայացվում ՀԾԴ այդ շրջանի գործունեությունը: Արդեն ասվեց, թե պլատոնական սերը չէր, որ դաշնակցությանը մերձեցնում էր իթիհադին, այլ քաղաքական նկատառումները: Կարելի է քննադատել նրա մոտեցումները, քաղաքական իրավիճակի գնահատականները, բայց սխալ է, երբ ձգտում են այդ կուսակցության պատմությունը ներկայացնել որպես դավաճանությունների շարք: Հավանաբար դժբախտությունը ոչ թե կուսակցության կողմնորոշումների, այլ մարտավարության, աշխատանքի ձևերի ու եղանակների մեջ էր: Թերևս փոքր դեր չխաղաց նաև ավելորդ ինքնավստահությունը, որը ծնեց աղետաբեր անփութություն: Թե դաշնակցությունը և թե հնչակյաններն իրականում երիտթուրքերին ոչ միայն չէին վստահում, այլև զգում էին այդ կուսակցության վտանգավորությունը: Դա նկատի ունենալով նրանք երբեմն զբաղվում էին նաև ժողովրդին զինելու գործով, պահանջում, որ ամենքը զենք ունենան, սակայն այդ այնքան բացահայտ, այնքան ցուցադրական էին անում, որ, իհարկե, թուրքերը տեսնում էին: Ժնևից «Դրոշակի» խմբագրությունը բեռներով Կ. Պոլիս էր ուղարկում հայդուկային գրականություն և նկարներ: Այս ապրանքը տարածվում էր մայրաքաղաքում ու գավառներում:

Դաշնակցությունը մտել էր ամեն տեղ, տիրացել էր բոլոր ազգային, հասարակական, կրթական հաստատություններին: Ազգային ժողովի մեջ նա էր ուղղություն տվողը: Եվ նրա ուժն առավելա պես հենվում էր ռազմական կազմակերպության վրա: «Հաջողություններից ամբարտավանության ծայրը հասած, նա երևակայում էր իրեն ռազմական մեծ կարողության տեր...»[25]: ՀԾԴ քաղաքական դիրքորոշման ու նրա առանձին գործիչների վարքագծի միջև թե հակասություններ, թե անգամ հակադրություններ կային: Դա վերաբերում էր ոչ միայն Կովկասում գործող դաշնակցականներին, ովքեր հաճախ էին անպատասխանատու մոտեցումներ հանդես բերում արևմտահայ շարժումներին, այլև արևմտահայ գործիչներին, ովքեր Լեոյի նշած «ամբարտավանության ուժով կորցրեցին զգուշությունը և որդեգրեցին իրենց արևելահայ գործընկերների դիրքորոշումները: Դրան նպաստեց նաև այն, որ արևելահայ դաշնակցականներից մի շարք գործիչներ, խույս տալով ստոլոպինյան հալածանքներից, անցան Արևմտյան Հայաստան և եռանդուն գործունեություն ծավալեցին Էրզրումում և այլուր, սկսեցին հրատարակել «Ցառաջ» թերթը»: Ազգային ժողովում Մալումյանը ողջունելով Մ. Իզմիրլյանին կաթողիկոս ընտրվելու կապակցությամբ, խորհուրդ տվեց կռվել բռնակալության դեմ խոստանալով, որ «այդ կռվում նրա տրամադրության տակ կլինեն Ռուսաստանի դաշնակցության բոլոր ուժերը»[26]:

Բ. Դռան հրատարակած մի ժողովածուում նշվում է, որ ի վիճակի է հայկական աղբյուրներով ապացուցել հայերի ընդհանուր ապստամբության իրողությունը: Դրանք ամենից առաջ արտասահմանում հայերի հրատարակած թերթերն էին, որոնք աջ ու ձախ լուրեր էին տպագրում այս կամ այն վայրում բռնկված «ապստամբության» մասին: Բերենք մի քանի քաղվածքներ այդ մամուլից: «Մոկսի մեջ ապստամբությունը 1.5 ամիս տևեց: Մուշի մեջ ապստամբությունը Ռուբենի գլխավորությամբ պայթեցավ նոր ուժով: Ապստամբները ելլելով քաղաքեն, ուր էրզրումեն 8 000 ասկեր զրկուած էր, անտառապատ լեռներու մեջ մասնական կռիվ կը մղեն»: «Սասունի մեջ հայ խումբերը քաշուած են լեռները և ցոյց կուտան կորովի դիմադրություն: Մուշի և շրջակայից հայերը ընդհարվեր են քիւրտերու հետ: Վանի մեջ կը շարունակվին հայերու ընդհարումները զորքերու հետ: Նոյնը և վիլայեթին և մանավանդ Շատախի մեջ, որտեղ հայ խմբերը կը շարունակեն կռվել զորքերու ու քիւրտերու հետ: Ապստամբութենեն մտահոգ թուրքերը և զորքերը կը քալեն Մուշի վրայ»: «Խաչատուր Պոնապարթեան, որ ուրն ամիսներ Էրզրումի թուրք բանակի մեջ ծառայած էր իբր բժիշկ, իր ընկերներուն հետ ապրիլի կեսերուն ձիով փախած է թուրք բանակեն և Ծանծաղ գետն անցնելով անձնատուր եղած է ռուսներուն: Էրզրումի օսմանեան բանակին հայ զինուորներն ու սպաներն իրենց զենքերով կանցնեին ռուսական ճակատը, զենքերնին կը դարձնեին թուրք բանակին դեմ»[27]: Մեջբերումներ դաշնակցական մի գործչի 1915թ. կազմած տեղեկագրից. «Հայերը Ռուսաստանում կազմակերպեցին իրենց պետական կամավորական զորախմբերը, Թուրքիայում բարձրացրին ապստամբության դրոշակը... Թուրքիան բավականաչափ հիմքեր ունի անխնա լինելու: Կամավորական խմբերի կազմավորումը... մի բացարձակ մարտահրավեր է, որ հայերը շպրտեցին Թուրքիայի դեմքին... մանավանդ, որ կամավորները 3/4 մասով բաղկացած են հենց նրա հպատակներից: Իրենց տանը հայերը կատարել են ամենածանր հանցանքներ այն վճռորոշ պահին, երբ խաղաթղթի վրա էր դրված Թուրքիայի գոյությունն անգամ, նրանք դավաճանեցին պետությանը, զենքը ձեռքին ապստամբեցին նրա դեմ և բացահայտ անձնատուր եղան թշնամուն: Այս պիսի գործողությունները չեն ներվում և դրանց հետևանքն ահա տեսնում ենք: Թուրքիայում հայերն այս բոպեին էլ օրենքից դուրս են դրված: Նրանց կոտորում են հազարներով կամ քշում են հեռավոր անապատները սովից մեռնելու. նրանց ունեցվածքը հափշտակում են կամ ոչնչացնում, տնե-

---

18 Ատոմ Օսմանեան կայսրութեան անկման պատմութիւնը, Կ. Պոլիս, 1913, էջ 96:
19 «Մարմարա», 26.10.1965:
20 Բդեյաններ Ս., Մ. Հարազատ պատմութիւն Տարոնոյ, Կահիրե, 1962, էջ 294:
21 Ն. տ., էջ 294-295:
22 Զարեվանդ Ինչ կը ծրագրեն Թուրքերը, Միացյալ անկախ Թուրանիա, Բոստոն, 1926, էջ 140:
23 Атомян С. Նշվ. աշխ., էջ 42-43.
24 Բդեյաններ Ս. Մ. Նշվ. աշխ., էջ 263:

25 Լեո, Նշվ. աշխ., էջ 226:
26 Ն. տ.:
27 Ն. տ., էջ 330-331:

ը քանդում են և այրում: Անկասկած է, որ Հայաստանը հայերից մաքրելու արյունոտ խնդիրը մի անգամ էլ դրված է հերթի: Սրանում մեզ համար անսպասելի ոչինչ չկա: Մենք գիտեինք՝ ինչի էինք գնում, ինչ սարսափելի փորձության էինք ենթարկում մեզ... Մի տարի սրանից առաջ թուրքահայերը կարող էին ազատորեն ընտրություն կատարել Ռուսաստանի և Թուրքիայի միջև... Այսուհետև հայերին անհնար է ապրել ոչ Թուրքիայում և ոչ էլ Թուրքիայի հետ. նրանց մնում է բաժանվել կամ ոչնչանալ»[28]: Լեոն իսկույն եզրահանգում է. «Եվ նրանք ոչնչացան: Որովհետև հավատացել էին»: Իբր եթե չհավատային, կփրկվեին: Լեոն միամիտ էր ձևանում: Նա լավ գիտեր, որ հայերի «լոպազությունները» չէին կարող պատճառ դառնալ հայոց ցեղասպանության համար, որ վճռորոշը Թուրքերի ազգային պետության ձևավորման տրամաբանությունից բխող աշխարհատարածքային հիմնախնդիրներն էին: Նա մեխանիկական մոտեցում է դրսևորում ազատագրական պայքարի ձևերին ու եղանակներին, դրանք չի քննարկում դիալեկտիկական միասնության մեջ, բաժանում «ընդունելիների և անընդունելիների»: Ցիդությունը նա մերժում էր հիմքից և անվերապահ, որովհետև զուրկ էր «ժողովրդավարական բնազդից»: Նա մերժում էր նաև ինքնապաշտպանությունը, արհամարհանքով արտահայտվում, օրինակ, Ուրֆայի և Շապին Կարահիսարի ինքնապաշտպանական կռիվների վերաբերյալ: 1915-ի ողբերգության գլխավոր պատճառը համարում էր «ֆիդայական մտայնության գերագույն տիրապետությունը»[29]:

Եթե ՀԹԴ ու մյուս հայ քաղաքական ուժերն ապստամբական նկրտումներ ունեին, ապա ինչո՞ւ պետք է ցրեին հայդուկային խմբերը, ժողովրդին կոչ անեին զինաթափվել, «հարևանների հետ հաշտ ապրել»: Դեռ ավելին, ՀԹ Դաշնակցությունը երկար ժամանակ, ընդհուպ մինչև 1915թ. սկզբները, չնայած 1913թ. պաշտոնապես հեռացել էր իթիհադից, առիթը բաց չէր թողնում ցուցադրելու իր անկեղծ վճռականությունը համագործակցելու նրա հետ, գործելու «հօգուտ օսմանյան հայրենիքի բարգավաճման»: ՀԹԴ այդ ուղղությամբ հասնում էր ծայրահեղությունների, ինչն առաջ էր բերում հայկական շրջանների դժգոհությունն ու զայրույթը: «Նույնիսկ Ադանայի կոտորածը,– գրում է Ռ. Դարբինյանը,- որը հայերի սրտերում առաջացրեց առաջին սարսափելի կասկածը երիտթուրքերի իսկական էության վերաբերեալ, չսթափեցրեց հայ քաղաքական ղեկավարներին և նրանց ետ չպահեց երիտթուրքերի հետ համագործակցությունից»[30]:

Օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների հիմնական մասը դաշնակցական էին, ովքեր գրեթե լուռ մնացին Ադանայի դեպքերի հանդեպ: Եվ երբ «Բյուզանդիոնի» խմբագիր Քեչյանը գրեց, թե հայ պատգամավորները շատ լավ գիտեն, որ «եթե խոսելն արծաթ է, լռելը հոսկի է, որ ամեն ամիս տրվում է նրանց պետական գանձարանից իբրև ռոճիկ», դաշնակցական տղաները հարձակվեցին նրա վրա և ծեծեցին:

Լեոն նկատում է, որ «դժվարություններ ստեղծել երիտթուրքական կառավարության դեմ դաշնակցությունը չէր ուզում»[31]: ՀԹԴ նաև չէր ուզում իր «դաշնակիցների՝ երիտասարդ թուրքերի, խաթրին դիպչել»[32]: Դաշնակցությունը համաձայնեց երիտթուրքերի պահանջին. «Ադանայի արյունահեղությունը պետք է մոռացության տրվեր»:

Դաշնակ-իթիհադ մտերմությունն իրողություն էր, և վերջինս դեռևս պատճառ չուներ իրենից «խրտնեցնելու դաշնակցությանը: 1909թ. հեղաշրջումից հետո իթիհադի համար ստեղծվել էր խախուտ հավասարակշռություն»: Պահպանողական ուժերը հզոր էին և նրանց դեմ պայքարում, իթիհադին դաշնակից էր պետք: Երիտթուրք և դաշնակ գործիչների միջև ձևավորվել էր նաև անձնական, մտերմիկ հարաբերություններ: Դրանք ավելի սերտացնելու համար դաշնակցությունը ծավալեց հակառուսական քարոզչություն: ՀԹԴ կոչերից մեկում ասվում է. «Սահմանի այս կողմը՝ օսմանյան հողի վրա ազատություն կա այսօր, բայց սահմանի մյուս կողմը ցարիզմի խելացնոր կառավարությունն է իշխողը... Սահմանադրական ազատություններ վայելող

28 Լեո, նշվ. աշխ., էջ 332-333:
29 Ն. տ.:
30 «Գործ», 1917, թիվ 1, մաս 2, էջ 92:
31 Լեո, նշվ. աշխ., էջ 229-230:
32 «Պայքար», 1917, թիվ 65:

տաճկահայ ժողովուրդը երբեք չի կարող անտարբեր մնալ ի տես ոստիկանական այն բիրտ ճնշումների, որոնց ենթակա են մեր հարազատները օր ու գիշեր»: ՀԹԴ երիտթուրքերի հետ միասին բողոքի հանրահավաքներ էին կազմակերպում Կ. Պոլսի հայոց եկեղեցիներում ցարիզմի դեմ: «Դաշնակցության կոմիտեն մեր նկատմամբ շատ բարեհամբույր էր,- գրում է Ջեմալ փաշան,– և ազնվորեն վախենում էր, որ հանկարծ Հայաստանը չընկնի ռուսական լծի տակ: Նա պահպանեց իր կազմակերպությունը և բացահայտ հայտարարեց իր մտադրության մասին՝ շարունակել աշխատանքը հանուն իր քաղաքական նպատակների իրականացման»[33]:

Երկու կուսակցությունների կողմից համատեղ մշակված մի փաստաթղթում գրված է. «Օսմանեան նվիրական հայրենիքն անջատումն և բաժանումն զերծ պահելը՝ երկու կազմակերպութեանց միացեալ գործունեութեան նպատակակետը ըլլալով, անոնք պիտի աշխատին գործնականապես ցրել հանրային կարծիքին մեջ բռնակալ ռեժիմեն ժառանգ մնացած այն սուտ զրույցները, թե հայերն անկախութեան կը ձգտին»[34]: «Ազգերու համագործակցութեան ստանձնելիք դերն է,– 1910 թվին գրեց Ատոմը,– որ պիտի փրկե ընդհանուր հայրենիքը, պիտի հաստատե ու ամրապնդե ռամկավար սահմանադրութիւնը: Կարող ենք ապահով ըլլալ, որ այլևս ամենածայրահեղ դժբախտութեան պարագային, գեթ միայնակ կոտորուելու չենք: Կոտորելու եկող հորդաներուն դեմ թուրք և հայ, իթիհադական ու դաշնակցական միասին կանգնած պիտի դիմադրավեն վտանգը»[35]:

Իհարկե, այս և նման հայտարարությունները հաճախ բխում էին ոչ թե իթիհադի հետ հայցքների ներդաշնակությունից, այլ քաղաքական շահարկումներ էին՝ կոչված լուծելու գործնական խնդիրներ՝ տվյալ դեպքում պահպանելու երկու կուսակցությունների դաշինքը: Չնայած նման դաշինքը տեսական լինել չէր կարող, որովհետև տվյալ դեպքում վճռորոշը երկու կուսակցությունների տրամագծորեն հակադիր շահերն էին: Այդ ապացուցող ևս մի օրինակ: Եթե ՀԹԴ իր ծրագրային գերխնդիրը համարում էր ինքնավարությունը, ապա իթիհադի պարագլուխ Ահմեդ Ռիզան գտնում էր, որ «ինքնավարությունը դավաճանություն է. դա նշանակում է անջատում»:

1909թ. մարտի 31-ի պետական հեղաշրջումը ձախողելու համար Շևքեթ փաշայի զորքերը մտան Կ. Պոլիս, 1500 հոգաներ ճողոպրեցին քաղաքից, իսկ Համիդը, գործն իր անձի համար անվտանգ ավարտելու համար, իթիհադին հանձնեց դավադիրների հետ համագործակցած երիտթուրք գործիչների՝ Բ. Շաքիր, Սայիդ Հալիմ, Մուրադ, Իլիաս, Մելվան Ռիֆաթ և ուրիշներ, թվով 543 հոգու ցուցակը[36]: Նույն այդ պահին ՀԹԴ և հնչակյանների ակտիվիստները «ընդառաջելով Սալոնիկի բանակի հրամանատարի, այսինքն՝ իթիհադի կոչին, ձեռնամուխ եղան քաղաքի թաղերի պաշտպանությանը, նաև բժշկական օգնություն ցույց տվեցին վիրավոր զինվորներին, հանգանակություն կազմակերպեցին Շևքեթի զորքերին կերակրելու համար: Դա պատահական չէր, քանի որ այդ հեղաշրջումը, նշում է թուրք պատմաբան Մ. Թուրանը, իր հիմքում շարժում էր շարիաթական օրենքների, այսինքն՝ հին հարաբերությունների վերականգնման համար: Սա նշանակում է, որ ոչ միայն ՀԹԴ, այլև Հնչակը, նրանց հետ միասին արևմտահայությունը համիդյան վարչակարգի վերականգնման դեմ պայքարում իթիհադի կողքին էին, ինչը միանգամայն հասկանալի և օրինաչափ էր: Ի դեպ նույն բանն էր կատարվում Օսմանյան կայսրության ուրիշ ժողովուրդների, այդ թվում նաև թուրքերի առաջադիմական ուժերի հետ: Նաև դրանով է բացատրվում իթիհադի անդամների թվի թռիչքային աճը: Եթե 1909թ. այդ կուսակցությունն ուներ մոտ 400, ապա 1911-ին 100 հազ. անդամ:

Սակայն Ադանան ցույց տվեց, որ իթիհադ-ՀԹԴ «հեղափոխական մեղրալուսինը» լոկ խոսքերից ու ծեսերից էր կազմված, ինչը նույնպես հասկանալի և օրինաչափ էր, բազմիցս կրկնված աշխարհի ամենատարբեր երկրների քաղաքական կյանքում: Բայց որևէ տեղ դաշնակից կուսակցությունների «ամուսնալուծությունը» ոչ միայն ցեղասպանություն չէր ծնել, այլև զենքի միջամտություն առաջացրել էր բացառապես հետամնաց, բարբարոս երկրներում: Ադանան ջրի երես հանեց երիտթուրքերի էությունը, նրանց «օսմանիզմը» վերջնականապես վերածվեց թու-

33 Djemal Pasha Memoires of a Turkish Statesman, 1913-1919, London, 1923, p. 248.
34 «Դաշնակ», 1909, թիվ 10-11:
35 Ատոմ, Մեր հավատամքը ազգային հարցի մասին, Կ. Պոլիս, 1910, էջ 88, 106:
36 «Ազատարար շարժման բանակին յաղթական մուտքն ի Կ. Պոլիս», պրակ Ա, Կ. Պոլիս, 1909, էջ 164-165:

նոտ շովինիզմի: Մանավանդ, որ աշխարհը գնում էր դեպի համաշխարհային սպանդ, որը բորբոքել ու ամենուրեք մեծ թափ էր հաղորդել ազգայնամոլությանը: Երիտթուրքերն արդեն գտնում էին, որ օսմանիզմի գաղափարը հնացել է և չի կարող ապահովել կայսրության միասնությունը, որ այդ միասնությունը կարող է պահպանվել միայն թուրքիստական քաղաքականության միջոցով, այսինքն՝ կայսրությունում պետք էր հաստատել ազգային միատարրություն: Զիա Գեոքալփն ասում էր, որ կայսրությունը կործանումից փրկելու միակ հույսը Թրքությունն է: «Նախ՝ կառավարությունը պետք է հենվի բացառապես Թուրք տարրի վրա, երկրորդ, չպետք է ափսոսալ Եվրոպայում տարածքների կորստյան համար, այլ հարկ է հետ քաշվել ու հզորանալ բնական սահմաններում, երրորդ, Թուրքերի քաղաքական իդեաներն իրականացնելու համար անհրաժեշտ է ամենից առաջ Թուրքացնել Թուրքիան, և, վերջապես, չորրորդ, մերժելով «օսմանյան եղբայրների» անբնական միասնությունը, ստեղծել էթնիկական-ազգային միատարրություն և միասնություն բուն Թուրքիայում»: Դա նշանակում էր, որ «բուն Թուրքիայի» բոլոր ժողովուրդները պետք է անմիջապես ուծացվեին, կորցնեին իրենց լեզուն և ազգային բոլոր մյուս հատկանիշները, ձուլվեին Թուրքերին: Ինչը, բնականաբար, նշանակում էր նաև, որ Թուրքիայում իսլամից բացի այլ կրոնի համար տեղ չէր լինելու: Օրվա կարգախոս էր դառնալու «Եկեղեցիների զանգերի ատելի ղողանջը պետք է իսպառ վերացնել այս երկրից» պահանջը: Երիտթուրքերը զինվեցին Ֆուադի կտակի հանրահայտ խոսքերով. «Ներքին գործերի մարզում մեր բոլոր ջանքերը պետք է ձգտեն միայն մեկ նպատակի՝ մեր ցեղերի համաձուլմանը: Առանց այս համաձուլման կայսրության միությունն ինձ անկարելի է թվում»»[37]: Անատոլիան հռչակվեց Թուրքերի «սուրբ հայրենիք», հույսը դրվեց նրա «կոչտ գյուղացու բնական և բնազդական Թրքության վրա», Զիա Գյոքալփը պատրաստվում էր պատվաստելու «գիտակից Թրքություն»: Թուրքերն Անատոլիայի մեջ մտցրին նաև Արևմտյան Հայաստանը, որին անվանում էին «Արևելյան Անատոլիա, որտեղ ևս իրավունք ունեին ապրելու միայն Թրքախոս մահմեդականները»[38]:

Երիտթուրքական հրապարակումներում ուշադիր դարձան իթիհադի 1910 և 1911 թվերի համագումարները: Դրանք Թուրք ժողովրդին կողմնորոշում էին դեպի Թուրքիզմ, այսինքն՝ դեպի հպատակ ժողովուրդների ձուլում կամ բնաջնջում: Երիտթուրք գործիչ՝ Երոզլի Ֆեյսելը գտնում էր. «Դառնալով խաղալիք ռուսների ու անգլիացիների ձեռքին, զինվելով ժամանակակից զենքով՝ նրանք (հայերը) դարձան իսկական աղետ Թուրքական պետության համար»[39]: Զեմալ փաշան հռչակեց. «Ջնջեք ազգությունների առանձնահատկությունները, և յանդուգն քայլով մը Թրքացնել ամեն ինչ ամեն տեղ»[40]: Երիտթուրք սպաները հայտարարեցին. «Այս կայսրությունը մեզ կը պատկանի և քանի դեռ մեկ հատիկ Թուրք ապրում է, Թույլ չենք տար, որ այստեղ Թուրքերից բացի որևէ ուժ օրենք գործադրե...»[41]: Էնվերը 1909Թ. հուլիսի 15-ին հայոց պատրիարքարանում հայտարարեց. «...Եթե հայ ազգն օսմանեան նոր և ազատ վարչակարգի դեմ ալ գլուխ բարձրացնե, անջատողական նպատակով... ապա համարձակորեն կըսեմ, թե մենք՝ իթիհատականներս, այնպիսի խստությամբ պիտի պայքարենք այդպիսի ազգային դավաճանության դեմ, որ պիտի փնտռեք սուլթան Համիդի բռնակալության ամենասև օրերը»[42]:

Երիտթուրքերի Սալոնիկի 1910Թ. համագումարը հաստատեց Հայկական հարցի երիտթուրքական լուծման ծրագրի առաջին տարբերակը: Ահա այն. «1. ...Բոլոր հայ ընկերությունները փակել և նրանց վարչական մարմիններում եղածներին, ովքեր գործում են իթիհադի կառավարության հակառակ, բոլորին ձերբակալելով Մոսուլի, Բաղդադի նահանգները ղրկել և ճանապարհին կամ այլ տեղերում ոչնչացնել: 2. Բոլոր հայերի զենքերը հավաքել: 3. Առանձնակի նպատակահարմար միջոցներով իսլամներին նախապատրաստել Վանի, Էրզրումի և Ադաբազարի նման տեղերում, որտեղ հայերն արդեն իսկ իրենց ընտանիքներով իսլամների զայրույթն են շահել, կազմակերպել միջադեպեր՝ ինչպես Ռուսաստանն արեց Բաքվում: 4. Էրզրումի, Վանի, Էլ Ազիզի և Բիթլիսի նահանգներում (բնաջնջման) գործողությունն ամբողջությամբ ժողովրդին թողնելով, զորքերն ու կարգը պաշտպանող ուժերն իբր օգտագործել ջարդերն արգելելու համար: Իսկ Ադանայում, Բրուսայում, Նիկոմեդիայում, Իզմիթում, ընդհակառակն, իսլամներին օգնել ռազմական ուժով: 5. Բնաջնջումը գործադրել մասնավորապես հիսուն տարեկանից ցածր տղամարդկանց և դպրոցի ուսուցիչների վրա: Աղջիկներին ու երեխաներին թողնել իսլամացնելու համար: 6. Փախածների ընտանիքները վերացնել և միջոցներ ձեռք առնել երկրի հետ նրանց կապը լրիվ խզելու համար: 7. Կառավարության հայ պաշտոնյաներին, պատճառաբանելով, թե լրտեսությամբ են զբաղվել, վտարել բոլոր պաշտոններից: 8. Բանակում գտնվողներին բնաջնջել: 9. (Բնաջնջման) գործողություններն ամենուրեք սկսել միաժամանակ և այդպիսով ինքնապաշտպանության համար ժամանակ չթողնել: 10. Այս հրահանգը մեկից երկու հոգու մեջ գաղտնի պահելու մասին հոգ տանել»[43]:

Հայերը հայտնվեցին մի իրողությունում, երբ «չէին հասկանում իրենց դիրքը վերանորոգվող, սահմանադրական Թուրքիայում...»: Երիտթուրքերին նրանք լավ ճանաչել չէին կարողանում: «Չէին տեսնում, որ Սալոնիկի զորաբանակի սվինների վրա հաստատված նոր վարչակարգը ծայրահեղ ազգայնամոլական է, և որ երիտթուրքը Աբդուլ Համիդից ավելի թշնամի է ամեն մի առանձին ազգային շարժման, որ նրա մեջ ապրողը, գործողը հին միդհատյան գաղափարն է՝ բոլոր ազգությունների ձուլում մի ընդհանուր անվան՝ օսմանցիության մեջ»[44]: Երիտթուրքերը գործողության մեջ էին դնում իրենց որդեգրած այլամերժ քաղաքականությունը: Նրանք խորհրդարանական ընտրություններին օգտագործեցին ամենաանսահմանադրական եղանակներն օրենսդիր ժողովում Թուրքերի մեծամասնությունն ապահովելու համար: Դրանից հետո էր, որ Բուլղարիայի սահմանադրական ակումբը հյուպատոսություններին տեղյակ պահեց. «Երկրի ազգությունների միջև... համերաշխություն ու եղբայրություն այլևս չկա»[45]: Պառայում Ավստրո-Հունգարիայի հյուպատոսը 1908Թ. նոյեմբերի 13-ին գրեց. «Կոմիտեն մինչև օրս հաջողության է հասել հասարակության բոլոր խավերին ահաբեկելու միջոցով: Այդ ահաբեկումը նկատվում է... անգամ խորհրդարանի ընտրությունների ժամանակ»[46]:

Բուլղարացի պարտիզանները նորից զենք վերցրեցին: Նույնն արեցին հույները, որոնք թաքուն անցան սահմանն ու մտան Թուրքիա: Նաև երիտթուրքերի քաղաքական սադրանքները 1909Թ. ոտքի հանեցին իսլամական հետադիմությանը: Այդ օրերին իսլամականները բազմամարդ հանրահավաք կազմակերպեցին Սոֆիայում: Նրանց պաշտոնաթերթ «Էլ իսլամը» գրեց, որ իսլամական կոմիտեի նպատակն է «հակահարված տալու իսլամի դեմ գործող ընդդիմությանը»[47]: Նույն թերթը գտնում էր, որ անհնար է զինվորական ծառայությունը տարածել ոչ մահմեդականների վրա, ցանկալի չէր համարվում անգամ ալբանացիների ու քրդերի զորակոչը:

Մարտի 31-ի սուլթանական հեղաշրջման կապակցությամբ «Arbeiter Zeitung»-ը 1909Թ. ապրիլի 14-ին գրեց. «Անհանգստացնող են կրոնական ուժեղացած տրամադրությունները, մահմեդական հոգևորականության և սոֆիաների... ցույցը և ամբոխի մասնակցությունը շարժմանը: Մեծ թվով երիտթուրքեր փախել կամ անհետ կորած են, հավանաբար թաքնվել են... հին Թուրքական պահպանողականներն ու հոգևորականները լիակատար առավելության են հասել և վերացրել երիտթուրքական տիրապետությունը...»[48]: Ցո. Լեփսիուսը գրում է. «Երբ 1909Թ. տապալվեց երիտթուրքական կառավարությունը, և Աբդուլ Համիդը նորից իր ձեռքը վերցրեց իշխանությունը, երիտթուրք ղեկավարների կյանքը կոպեկ իսկ չարժեր... նրանք թաքնվել էին իրենց հայ բարեկամների տներում: Հալիլ բեյը՝ արտաքին գործերի նախարարը... փախավ իր բարեկամ Զոհրապի բնակարանը, որը սեփական կյանքը վտանգելով նրան 14 օր իր մոտ թաքցրեց...»[49]: Հայերի տներում

---

37 «Արօր», 1910, թիվ 6:

38 Ամուրեան Ա. Հայ դատ. Հայ ժողովրդի ազատագրական ճիգերը, Թեհրան, 1977, էջ 2439:

39 Eroglu V. Ermeni Mezalimi, Istanbul, s. 108:

40 Գանգրունի Հ. նշվ. աշխ., էջ 203

41 Ն. տ., էջ 268:

42 Վարանդյան Մ. ՀԲ Դաշնակցության պատմությունն, հ. 2, Կահիրե, 1950, էջ 19:

43 Pinon R. L'Europe et la Jeume Turquie: les aspets nouveaux de la question d'Orient, Paris, 1913, p.99.

44 Լեո, նշվ. աշխ., էջ 226-22:

45 Wien HHSTA PA XXXVIII 410 Saloniki, 10 November 1908, 411, Saloniki, 13 November 1908, Nr. 279.

46 Ն. տ.:

47 «Ardeiter Zeitung», 04.04.1909.

48 Ն. տ., 11.04.1909:

49 Lepsius J. Der Todesgang des armenischen Volkes, Potsdam, 1930, s. 147.

թաքնվեցին նաև Թալեաթն ու Շևքեթը, մյուսներն ապաստանեցին «Ազատամարտի» խմբագրատանը: Նույն բանը կատարվեց նաև նահանգներում: Կարինի դաշնակցականները նրանց տարան հյուպատոսարաններ, ապաստան տվեցին իրենց տներում, փախցրեցին Բեյրութ: Այդ նույն ժամանակ սոֆթաները հայերին կոտորում էին, հեղվում էր Ադանայի հայության արյունը:

Երիտթուրքական հեղաշրջումը տարբեր մոտեցումներ առաջացրեց: Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը հավանություն չտվեցին դրան, բայց ոչ այն պատճառով, որ ազգայնական էր, այլ որովհետև արդեն ձևավորվել էին պետությունների բլոկներ՝ Անտանտն ու Եռյակ զինակցությունը: Դրանով է բացատրվում Գերմանիայի դիրքորոշումը, որի համար գլխավորը ոչ թե սուլթանական կամ երիտթուրքական, այլ ուժեղ Թուրքիան էր:

Իսկ երիտթուրքերի քաղաքականության ձևափոխման պատճառը նրանց սարսափը չէր մահմեդական մոլեռանդության հանդեպ, այլ թուրքիզմի գաղափարի շուրջ թուրքերի համախմբման նպատակադրումը: Եթե սուլթանական վարչակազմը հենվում էր բռնության և իսլամի վրա, ապա երիտթուրքերը դրան ավելացրեցին նաև թուրքիզմը: Նրանք հաճույքով հրաժարվեցին իրենց իսկ հռչակած ժողովրդավարությունից, իսկ ազգային փոքրամասնությունների հանդեպ քաղաքականությունում կրկնօրինակեցին Աբդուլ Համիդին: Դա որոշ հետազոտողների զարմանքն առաջացրեց: Թ. Լորենսը երիտթուրքական վերնախավը համարում է սելջուկական ծագում ունեցողներից և օսմանցիներից բացի, թուրքահպատակ բոլոր ազգությունների ներկայացուցիչներից կազմված կոնգլոմերատ: Իհարկե, սկզբում երիտթուրքական հեղաշրջումը հույսեր ներշնչեց հպատակ ժողովուրդներին: Նրանք ոգևորությամբ տրվեցին իթիհադի ծրագրերի իրականացմանը, ինչից երիտթուրքերը սարսափեցին և ձեռնամուխ եղան ազգությունների ոգևորության հրդեհը հանգցնելուն[50]:

Երիտթուրքական ահաբեկչության զոհերը միայն հայերը չէին: Այդ ահաբեկչությունն ատիճանաբար միջազգայնացվեց և իր ճիրանների մեջ առավ կայսրության նաև ուրիշ ժողովուրդների: 1910թ. օգոստոսին բուլղարական և սերբական սոցիալ-դեմոկրատները 2-րդ ինտերնացիոնալի Կոպենհագենի կոնգրեսին բողոք ներկայացրին հպատակ քրիստոնյա ժողովուրդների հանդեպ երիտթուրքերի կառավարության բարբարոս քաղաքականության դեմ[51]: Բալկանյան երկրորդ պատերազմի ժամանակ, 1913թ. հուլիսին թուրքերը հայերի, բուլղարների և մյուս քրիստոնյա ժողովուրդների ջարդեր կազմակերպեցին բուլղարական բանակի թողած քաղաքներում Ռոդոսթո, Մալգարա, Միրիոֆիտ: Ռոդոսթոյում մորթվեց 700 մարդ: Այդ կապակցությամբ պատրիարքի, Գր. Զոհրապի և մի քանի ուրիշ հայ գործիչների հարցմանը Թալեաթը պատասխանեց. «Տեղեկություն չունեմ»[52]: Իթիհադի ղեկավարներից մեկը 1912թ. հրահանգեց. «Թշնամու կրակի դեմ դուրս բերեք արաբներին, աշխատեք բոլոր միջոցներով նրանց թիվը նվազեցնել»:

Արաբ հեղինակները բազմիցս անդրադարձել են երիտթուրքերի ազգային քաղաքականությանը, դատապարտել այդ քաղաքականության մեծապետական այլամերժ բնույթը: «Բռնակալ կառավարության (իթիհադի) ոճիրները,– գրում է արաբ հեղինակ Ա. Եամմինը,– անհանդուրժելի են, իթիհադը մոլեռանդ մտայնության ներկայացուցիչ է, որն ընկնելով Գերմանիայի ցանը՝ ջարդեր գործադրեց մարդկանց և ազգերի դեմ: Երկիրը քաղցի մատնել, մարտիրոսել նրա բնակչությանը, արգելել սննդի ներմուծումը, դատապարտել ազգին սնվելու խոտով, տեսնել դիակներով ու քայքայված մարմիններով լի ճանապարհներ ու անտառներ, բռնաբարել ամեն իրավունք ու պատիվ, հափշտակել տներ ու քաղաքներ, կախել ու ապտրել՝ ահա թե ինչպիսին էր թուրքերի ծրագիրը լիբանանցիների և սիրիացիների նկատմամբ...»[53]: «Բազմաթիվ լիբանանցիներ ապաստանեցին վանքերում և լեռնային շրջաններում զինակոչից խուսափելու համար»[54]: 1902–14թթ. Օսմանյան կայսրությանն ահաբեկողը ոչ թե հայերն էին, այլ ալբանական ապստամբությունը, տրիեպոլիսյան պատերազմում Իտալիայի հաղթանակները, Մակեդոնիայի հայդուկության հերոսամարտերը, Թուրքիան մասնատելու հույների պահանջները: Բալկանյան պատերազմներում թուրքերը զրկվեցին եվրոպական տարածքներից, ինչը երիտթուրքերին մղեց իրենց հայացքը շուռ տալ արևելք՝ Հայաստան: Հարկ էր խեղդել հայերին, թուրքացնել կամ մահմեդականացնել նրանց բնօրրանը: Եվ Հայաստանը ողողվեց Մակեդոնիայից ու Թրակիայից արտագաղթած թուրքերով, որոնք ատելությամբ էին լցված քրիստոնյաների հանդեպ, ովքեր հարկադրել էին լքել իրենց բնակավայրերը և ունեցվածքը: Հասկանալի է, որ նրանց հայ քրիստոնյաների դեմ հանելը դժվար խնդիր չէր:

Երիտթուրքական հայատյաց քաղաքականությունը հեղաշրջեց հայերին: Տրապիզոնի ավստրո-հունգարացի հյուպատոսը 1912թ. սեպտեմբերի 9-ին գրում է. «Հայերը մինչև հիմա պաշտպանում էին երիտթուրքերին, որոնց պարտական են Աբդուլ Համիդի սարսափելի բռնապետությունից և անդադար հետապնդումներից ու խոշտանգումներից ազատվելու համար», սակայն իթիհադի այլամերժ քաղաքականությունը հայերին հարկադրեց մտածելու, որ «սահմանադրական կառավարության պայմաններում էլ պիտի զգաստ լինեն: Հայերից, իսկապես, չէր կարելի պահանջել, որ սեր տածեին թուրքերի հանդեպ»[55]: 1912թ. սեպտեմբերին Զմյուռնիայի հայերի ներկայացուցիչների ժողովը որոշեց. 1. Դիմել Կ. Պոլսին՝ անհապաղ միջոցների դիմել կարգ ու կանոնը վերականգնելու: 2. Բողոքել, որ չնայած բազմիցս տրված խոստումներին ոչինչ չի արվում կյանքի պայմանները բարելավելու համար: Հայերը նաև զգուշացնում էին, որ իրենց հանդեպ «անարդար վերաբերմունքը կարող է վտանգի տակ դնել հասարակական անդորրը և ծնել բողոքի այնպիսի արտահայտություններ, որոնցից կարող են տուժել ամբողջ երկրներ»[56]:

Անգլիայի վարչապետ Ասքվիթը տալիս է երիտթուրքերի հետևյալ գնահատականը. «Երիտթուրքը վերարտադրեց հին վարչակարգի բոլոր ապականությունները, առանց ունենալու նրա առույգությունն ու ճկունությունը»[57]: Հայ հեղափոխականների կողմից, գրում է Ա. Բարքին, թուրքերին ոչինչ չէր սպառնում: Վերջինները դա հիանալի գիտեին: Եթե կառավարությունը գոնե ինչ-որ չափով նրանցից վախենար, ապա ցանկացած ժամանակ կարող էր բռնել: Ադանայում բավական էր բանտարկել 30-40 երիտասարդի, որպեսզի անմիջապես վերջ տրվեր քարոզչությանը: Դրա փոխարեն սպանվեց մինչև 6 000 մարդ, քաղաքի կեսը հրդեհվեց: Եվ այս ամենը վերագրվեց հայկական հեղափոխությանը:

Ադանայում տեղի ունեցածի հանդեպ ռազմական դատարանի դրսևորած ահավոր անարդարությունը հանդիսացավ երիտթուրքական վարչակարգի անկման սկիզբը: Դա համընդհանուր քմծիծաղ էր թուրքերի հավաստիացումների վրա, թե ցանկանում են վերածնել Օսմանյան կայսրությունը «ազատություն, հավասարություն և եղբայրություն» սկզբունքների հենքի վրա[58]:

Տրումպեները նկատում է. «Նախորդ հարյուրամյակում իրենց անկախության համար բալկանյան ժողովուրդների մղած բարեհաջող պայքարից հետո, 1914թ. Օսմանյան կայսրությունում մնացած ամենաստվար քրիստոնյա ազգությունը հայերն էին... Դարեր շարունակ հանդուրժելով օրինականացված խտրականությունը, տագնապներն ու բիրտ կառավարումը... Թուրքահայաստանի հայերից շատերը XIX դարի ընթացքում հետզհետե դարձան համառ և ազգայնականորեն տրամադրված»: Գիտակցելով, որ խաղաղ միջոցներով այլևս որևէ բանի հասնել չեն կարող, նրանք ձեռնամուխ եղան «անլեգալ» և բռնի եղանակներով օսմանյան լուծը թոթափելուն[59]: Դժվար չէ հասկանալ, որ ասվածը ոչ այնքան պատմական փաստերից բխած եզրահանգում է, որքան տրամաբանական ընդհանրացում: Սահմանադրության հռչակումից հետո թեև հայկական որոշ խմբեր ձգտում էին համագործակցել նոր վարչակարգի հետ, շարունակում է նա, երիտթուրքերը շուտով հասկացնել տվեցին, որ իրենք մտադիր չեն կայսրության ոչ թուրք հա-

50 Օհանջանյան Ա. 1915 թվական. Անհերքելի վկայություններ, Եր., 1997, էջ 43:
51 История дипломатии, т. II, Москва, 1963, стр. 734-735.
52 «Հորիզոն», 13.08.1913:
53 Եամմին Ա., Զորս տարուան թշվառութիւնը: Լիբանանն ու Սիրիան պատերազմի տարիներին, Կահիրե, 1922, էջ 5:
54 Ն. տ., էջ 36:

55 Wien HHSTA PA XXXVIII 375 Trapezunt, 9 September 1912, 365, Trapezunt, 10 September 1912.
56 Ն. տ.:
57 Պողոսյան Ս. Քրդերը և Հայկական հարցը, Երևան, 1991, էջ 172:
58 Բարքի Հ. Սարսափի երկրին մեջ. Նահատակ Հայաստան, Կ. Պոլիս, 1919 էջ 17-18:
59 Սահակյան Ռ. Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990, էջ 38:

մայնքներին շնորհելու քաղաքական հավասարություն, շատ գավառներում հայ բնակչության նկատմամբ շարունակվեցին հալածանքների ավանդական ձևերն ու մերթ ընդ մերթ կիրառվող գազանությունները: «Թեպետ Պոլսի հայ պատրիարքը և ուրիշ ներկայացուցիչներ պատերազմը սկսվելուց անմիջապես հետո հրապարակավ հայտարարեցին, որ Օսմանյան կայսրությունում բնակվող հայերը պաշտպանելու են կառավարությանը, ակնհայտ էր, որ թուրքահպատակ շատ հայեր հավանություն չէին տալիս Բ. Դռան ինտերվենցիոնիստական գծին կամ ուղղակի ապավինում էին թուրքերի նկատմամբ Անտանտի հաղթանակին»[60]: Տրումպեների եզրահանգումը միանգամայն արդարացված է: Բազում անգամներ ապացուցվել է, որ երիտթուրքերի հակահայկական և հայաջինջ քաղաքականությունը հայերին մղեց առճակատման:

Մարկվարտը գրում է, որ երիտթուրքերը փոխ առան Աբդուլ Համիդի կարգախոսը. «Երբ հայեր չեն լինի, չի լինի նաև Հայկական հարցը... Ադանայի սարսափելի ջարդը ցույց տվեց, որ երիտթուրքերը... իրենց դաժանությամբ ոչնչով չէին զիջում մեծ դահիճ Աբդուլ Համիդին»[61]:

«Նույնիսկ տխրահռչակ թուրքական սահմանադրությունը,– գրում է Ց. Վեսելովսկին,–... արմատապես չփոխեց քարացած իրավիճակը: Հենց միայն այն, որ նոր վարչակարգի պայմաններում կարող էին... տեղի ունենալ, ինչպես նախկինում Աբդուլ Համիդի օրոք, Ադանայի նման ջարդեր՝ մեկն առավել արյունահեղ ջարդերից, պերճախոս վկայում է, թե ինչ ամոլ զբաղմունք է նոր գինին հին տիկերի մեջ լցնելը, թե որքան անզգույշ քայլ է հույս դնել վերացական սկզբունքների վրա, երբ պետական կառույցի ընդհանուր ոգին ու համակարգը մնում են անփոփոխ»[62]:

Այսպիսով, իշխանության գլուխ անցնելուց հետո իթիհադը դավաճանեց իր հռչակած կարգախոսներին: Նա ոտնձգություններ սկսեց քաղաքական կուսակցությունների և հալածանք՝ լեզուների դեմ: Ընտրությունների ժամանակ ֆիզիկական բիրտ ուժի օգնությամբ խափանեց ընդդիմադիր հոսանքների թեկնածուների ընտրվելը: Արգելքներ հարուցեց քրիստոնյաների դպրոցների դեմ: Երիտթուրքերը մի կողմ թողեցին Սահմանադրությունը, որը նրանց պայքարի դրոշն էր ու հաղթանակ բերեց, և գործողության մեջ դրեցին 147 ժամանակավոր կանոնադրություններ, որոնք խնդիր ունեին հաստատելու իթիհադի մենիշխանությունը: Նրանք վերացրին հասարակական կազմակերպությունները, հալածանքի ենթարկեցին քրիստոնյաների հաստատությունները: Այդ ամենի տրամաբանական շարունակությունը հանդիսացավ անցումը Հայկական հարցի լուծման համիդյան քաղաքականությանը:

Այս պայմաններում ի՞նչ դիրք պետք է որդեգրեին հայերը, նրանց քաղաքական կազմակերպությունները, այդ թվում նաև ՀԲԴ: Իհարկե խզվել և առճակատման գնալ ջարդարար ծրագրերին: Իսկ ի՞նչ արին նրանք: Ադանայի կոտորածներից հետո ՀԲԴ մտադրվեց խզել հարաբերություններն իթիհադի հետ: Սակայն նկատի ունենալով ծանր կացությունը, «հայությանը սպառնացող ընդհանուր ջարդի վտանգը» և ժամանակ շահելու հրամայականը՝ որոշեց ժամանակավորապես ձեռնպահ մնալ խզումից: Դժվար է միանշանակ պատասխանել այդ ճի՞շտ քաղաքականություն էր թե ոչ: Սակայն առանց երկմտելու կարելի է ասել, որ մի կողմից «ապատամբության» մանկամիտ ցուցադրումները, իսկ մյուս կողմից՝ աջակցությունն ու մասնակցությունը ժողովրդի զինաթափմանը կոպիտ սխալ էր: 1910թ. մայիսին Տարոնի դաշնակցական կազմակերպության ժողովում, որը տեղի ունեցավ Առաքելոց վանքում, Գարմենն ու Ս. Վրացյանը դեմ արտահայտվեցին հայերի զինմանն ու երիտթուրքերի դեմ գործողություններին[63]: Դա Վրացյանի անձնական կարծիքը չէր, այլ ՀԲԴ քաղաքական կողմնորոշումը:

Դեռ ավելին: «Դաշնակցության ղեկավարները մշտապես շփվելով իթիհադի պետերի հետ՝ նրանց տեղյակ էին պահում իրենց պլաններին»[64]: Կ. Պոլսում Կոմսի բնակարանում 1909թ. բանակցություններ տեղի ունեցան դաշնակցության և իթիհադի ներկայացուցիչների՝ մի կողմից, Իթիհադի գլխավոր քարտուղար Մ. Շուքրիի ու Նազիմի, իսկ մյուս կողմից՝ Գ. Բաստրմաջյանի (Արմեն Գարո) ու Վ. Փափազյանի (Կոմսի) միջև, որոնց արդյունքները տպագրվեց «Ազատամարտի» 1909թ. օգոստոսի 24-ի և սեպտեմբերի 6-ի համարներում[65]: «Հայրենիքի ազատությունն ապահովելու,– ասված է այդ հրապարակումում,– անոր հողային և քաղաքական ամբողջությունը մշտապես պահպանելու, կարգ մը անձերու մեջ գոյացած թիւրիմացութիւնները փարատելու և օսմանեան տարբերու միջև լավագոյն յարաբերութիւններ հաստատելու նպատակով՝ իթիհատ վե թերաքքը և ՀԲ Դաշնակցութիւն կուսակցութիւնները կատարեալ համաձայնութեան եկան...»: Ապա թվարկվում են այն հարցերը, որոնց շուրջ համաձայնություն էր ձեռք բերվել:

Հռչակվեցին հետևյալ սկզբունքները. 1. Սահմանադրության իրականացման և երկրում հասարակական զարգացումն անսասանորեն ամրապնդելու համար անհրաժեշտ է համատեղ պայքարել՝ չխնայելով ուժերը: 2. Հետադիմական շարժումների հանդեպ գործել համաձայնեցված՝ օգտագործելով օրինական եղանակներ: 3. Երկու կուսակցությունների համատեղ գործունեության վերջնական նպատակը համարել օսմանյան հայրենիքի ամբողջականության պահպանումը, նրանք պետք է գործնականում ցրեն բռնատիրական վարչակարգից ժառանգած լուրերն այն մասին, թե հայերը ձգտում են անկախության: 4. Երկու կուսակցությունները հայտարարում են այն մասին, որ իրենք միահամուռ են վիլայեթների իրավունքների ընդլայնման գործում և աջակցում են օսմանյան ընդհանուր հայրենիքի զարգացմանն ու առաջընթացին: 5. Իթիհադ վե թերաքը և Դաշնակցություն կուսակցությունը մարտի 31-ի Ադանայի ողբերգական իրադարձությունները համարելով դաս քաղելու նախազգուշացում, որոշեցին գործել համատեղ հիմնական կետերն իրականացնելու համար[66]: ՀԲԴ 5-րդ համագումարի հայտարարության մեջ ասվում է. «...Դաշնակցութիւնը պիտի շարունակե նոր թափով... համագործակցիլ երիտասարդ թուրք կուսակցութեան և մտավորականութեան հետ... դաշնակցութիւնը վճռականապես ետ մղելով անջատողական ձգտումները, պիտի տքնի վերակազմել երկրի քաղաքական և տնտեսական կարգերն օսմանեան պետութեան ամբողջութեան մեջ, հիմնուած բոլոր շրջաններուն տեղական լայն ինքնավարութեան վրայ...»[67]:

Սակայն դաշնակցության շատ գործիչներ միանգամայն հակառակ կարծիքի և այդպիսիք կային նաև 1908թ. հեղաշրջումից հետո. «Պատրաստ լինել ինքնապաշտպանության: Դա մեծագույն քաղաքացիական պարտք է, որ դարձել է անհետաձգելի անհրաժեշտություն այս և գալիք օրերին: Թուրքական նացիոնալիզմը մեզ չի խնայի, նրա շողոքորթությունները, մեղրի նման քաղցր հայտարարությունները մեկ նպատակ են հետապնդում՝ ժամանակ շահել և ամեն գնով ջնջել հայերին երկրի երեսից»[68]: «Դրոշակն» ահազանգեց. «Ինչպես տաշեղ են մեզ շպրտում ալիքները փոթորկի ժամանակ, և մենք չենք կարող և չենք ուզում նրանց ընդդիմանալ: Ալիքներն ավելի ու ավելի ուժեղանում են, իսկ մենք անընդհատ օրորվում ենք նույն տեղում, ծույլ ու անպատրաստ և օգնություն ենք կանչում... Աստված գիտե, թե դրա համար մենք ինչպես ենք պատժվելու ապագայում, երբ ամբողջ ազգը կնստի գործող հրաբխի վրա»[69]: Մ. Վարանդյանը գրում է. «Կազմակերպությունն իր բոլոր օրգաններին հրահանգեց ստեղծել զենքի պահեստներ, զինել ժողովրդին և երիտասարդությանը: Հրահանգեց, որ ժողովուրդն ինքը հոգ տաներ իր պաշտպանության մասին, որպեսզի յուրաքանչյուրը զենք ձեռք բերեր և սովորեր այն օգտագործել»[70]:

Այնուամենայնիվ, Ադանայի «կոտորածներից շատ չանցած երիտթուրքերը բորբոքում էին մահմեդականների կրոնական ֆանատիզմը, դա մասնավորապես եռանդուն կատարվում էր Էրզրումի նահանգում, իսկ հայկական կուսակցությունները հորդորում էին ժողովրդին հանգիստ մնալ, սաղրանքների չենթարկվել»[71]: Երբ 1911թ. սկսվեց թուրք-իտալական պատերազմը, դաշ-

60 Սահակյան Ռ. Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990, էջ 39:
61 Marquart J. L'origine et la reconsitution de la nation armenienne, Paris, 1919, p.11.
62 Весловский Ю. Трагедия Турецкой Армении, Москва, 1915, стр. 19.
63 «Արարատ», 30.12.1962:
64 Աստուածատրեան Ա. Իթիհատ-դաշնակեան յարաբերութիւնները: Տե՛ս «Հայրենիք», 1964, թիվ 2:

65 Վարանդեան Մ. ՀԲ Դաշնակցութեան պատմութիւն, հ. 2, էջ 21:
66 Ն.տ., էջ 19:
67 Ն. տ., էջ 21:
68 Մկրտչյան Ռ. Ցեղափոխականի մտքերը, Ժնև, 1931, էջ 188:
69 «Դրոշակ», 1909, Մկրտչյան Ռ., նշվ. աշխ., էջ 189:
70 Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 36:
71 Նույն տեղում, էջ 41:

նակցությունը հայերին կոչ արեց բոլոր հնարավորությունները տրամադրել Թուրքիայի հաղթանակի համար: Նա կուսակցություններին առաջարկեց մի կողմ դնել հակասություններն ու նվիրվել հայրենիքի փրկությանը[72]: 1911թ. Սալոնիկում իթիհադի ու դաշնակցության միջև նոր համաձայնագիր կնքվեց, սակայն առաջինը շարունակում էր իր սև գործը: «Կառավարությունն աստիճանաբար բանտից ազատում է մարդկանց, ովքեր դատապարտվել էին Կիլիկիայի ահավոր հանցագործությունների համար... դրանով հասկացնել տալով, որ կարելի է անպատիժ թալանել, սպանել, կործանել...»[73]: ՀԲ Դաշնակցությունն իթիհադի հետ հարաբերությունները հաճախ կառուցում էր ոչ թե օբյեկտիվ իրականության թելադրանքների հիմքի, այլ զգացմունքայնության վրա: «Դաշնակցությունը Թուրքիոյ Սահմանադրական վարչակարգի ամբողջ շրջանին իթիհատական շարքերեն իր նախընտրությունը ըրավ Թալեաթ պեյի վրայ, մասնավորապես, և զանիկա պատուեց «ընկեր Թալեաթ» և «մեր Թալեաթը» պատուանշաններով»[74]:

Ի դեպ, նման վայրիվերո մոտեցումներ ուներ ոչ միայն ՀԲԴ: Երբ առաջարկություն եղավ իթիհադի խորհրդարանային խմբակցության նախագահ դառնալու կապակցությամբ Թալեաթին ՆԳ նախարարի պաշտոնից ազատելու մասին, «Մշակը» ափսոսանք հայտնեց: «Նա սահմանադրական կառավարման շրջանում ամենալավ նախարարն էր... նա բոլոր դիմողներին լսում էր, անհրաժեշտության դեպքում հանձնարարություններ էր տալիս ում որ պետք էր»[75]:

Ա. Տիրկովայի հետ զրույցի ժամանակ Վռամյանն ասաց. «Երիտթուրքերի մեջ կան ազնիվ մարդիկ, որոնց կարելի է վստահել: Խորհրդարանի ներկայիս նախագահ Ահմեդ Ռիզան, Հուսեին Ջավիդը: Վերջապես Թալեաթ բեյը: Նա կրթված մարդ չէ, բայց ոգեշունչ և ազնիվ հայրենասեր է: Նա հասկանում, է, որ Թուրքիայի փրկությունը բարեփոխումների մեջ է»:

- Իսկ ո՞րն է հայերի փրկությունը,– հարցնում է Տիրկովան:– Ջէ՞ որ... երիտթուրքերի օրոք տեղի ունեցավ Աղանայի կոտորածը: Դուք արդյո՞ք ապահովագրված եք, որ այն այլևս չի կրկնվի...

- Ոչ, ոչ: Դա կրկնվել չի կարող,– հուզված ասաց Վռամյանը,– Աղանայի կոտորածը հին վարչակարգի մնացուկն էր: Իթիհադն ինքն էր վրդովված... Այո, թե Վանի և թե Մուշի վիլայեթներում, մինչև օրս սպանություններ տեղի ունենում են: Դրանք կատարում են քրդերը: Ամենագլխավոր ավազակներից մեկը՝ Սայիդը, մինչև օրս մնում է անպատիժ... Թուրքերը քրդերին համարում են... ամենահուսալի տարրը, իսկ մեզ՝ հայերիս, անհուսալի: Որովհետև մենք քրիստոնյա ենք և չենք կարող չգնել դեպի Ռուսաստան... ապա՝ մենք հեղափոխականի համարում ունենք: Չնայած իրականում մշտական ճնշումներն ու հայածանքները հայերին դարձրել են արտակարգ համբերատար:

- Այժմ, ո՞րն է ձեր քաղաքական մարտավարությունը:

- Գլխավորը՝ դաշինք իթիհադի հետ: Մենք կորցրել ենք բոլոր հույսերը, որ բարենորոգումներ հնարավոր են քրիստոնյա տերությունների օգնությամբ... Մենք գործում ենք՝ հենվելով հիմնականում երիտթուրքերի ձախ թևի վրա.... Թալեաթ բեյ, Ջավիդ բեյ, Հալիլ բեյ, Աղիլ բեյ, Նազըմ բեյ»: Այս զրույցը 1911-ի դեկտեմբերին էր: Իսկ 1912-ի գարնանը Վռամյանը խոստովանեց. «Թվում է, թե մենք սխալվել ենք: Մենք նրանց համարում էինք տգետ, բայց ազնիվ մարդիկ: Իսկ նրանք պարզապես ստախոս քաղաքական սրիկաներ են... Եթե այս անգամ էլ նրանք խաբեն... մենք կգործենք այլ ձևով»[76]: Տարօրինակ նվիրվածություն, թե՞ կապվածություն: Գիտեն, որ սրիկաներ են, բայց շարունակում են չխզվել, սպասում են մի անգամ ևս խաբվելու, ապա միայն որոշեն քակել «եղբայրական» կապերը, թե՞ ոչ:

Ընդհանրապես ՀԲԴ ձգտում էր հարաբերություններ զարգացնել ոչ թե հայ կուսակցությունների, այլ իթիհադի հետ, ոչ թե միավորել սեփական ժողովրդի ուժերն իթիհադի ջարդարար քաղաքականության դեմ, այլ համագործակցել երիտթուրքերի հետ: Բայց ո՞ւմ դեմ: Ճիշտ է գրել «Տաճար» թերթը 1913թ. փետրվարի 2-ին. «...Հայ կուսակցությունները միայն խեղճ ու կրակ ժողովուրդն օվկեան թշվառություններ են, կրած անտանելի զուլումներեն ազատելու, ապահովելու, ինքնապաշտպանության և աներկիւղության առաջնորդելու միակ ու միակ պետք է փարին եղբայրացած ու գործակցած»: ՀԲԴ այլ կարծիքի էր և սխալվեց: Նրա ու իթիհադի հարաբերությունները կայուն չէին անգամ մարտավարական խնդիրներում: Նրանց մտերմությունը երկար չտևեց, որովհետև երկու կուսակցություններն իրենց կառուցվածքով և աշխատանքի բովանդակությամբ կատարյալ հակադրություններ էին: Երիտթուրքական կառավարությունն անընդունակ գտնվեց բարեփոխումներ մտցնել: Նոր վարչակարգն արտաքին քաղաքականության բնագավառում կրում էր պարտություն պարտության հետևից: Բանակը մեծացնելու նպատակով զենքի տակ կանչվեցին նաև քրիստոնյաները, ինչը դժգոհություն առաջացրեց թե հայերի և թե մուսուլմանների շրջանում: Անկարող լինելով լուծելու ազգային հարցը՝ երիտթուրքերը մնացին սուլթանական վարչակարգի նախապաշարումների շրջանակներում, այսինքն՝ Թուրքիայի դժբախտության պատճառը համարում էին նրա կազմում եղած ոչ թուրք ազգություններին: Երիտթուրքերը հեռացան Թուրքիայի ավանդական դաշնակից Ֆրանսիայից և մերձեցան Գերմանիային, որը խրախուսում էր իթիհադի համաիսլամական ձգտումները, ինչն աստիճանաբար վերածվեց համաթրքականության: Երիտթուրքերը ոչ միայն չկարողացան, այլև չցանկացան լուծել հողային հարցը:

Համառ լուրեր էին տարածվում, թե պատրաստվում էին հայկական նոր ջարդեր: Որքան իթիհադն ամրապնդում էր իր դիրքերը, որքան իշխանությունը կենտրոնացնելով դառնում էր եզակի կառավարող ու թելադրող ուժ, այնքան իր հետ համագործակցող, իր «կողքին կանգնած» դաշնակցությանը մղում էր հետին պլան և անտեսում կամ ուղղակի արհամարհում նրան[77]: Դաշնակցությանը ոչինչ չէր մնում, եթե ոչ հետևողականորեն խուզել իր հավակնությունները: Ոչ վաղուց նույնիսկ ապակենտրոնացումով չբավարարվող ՀԲԴ հարկադրված էր առաջին պլան մղել «Թուրքիոյ հայոց ազգային սահմանադրութեամբ» նախատեսված ինքնավարության ճանաչումը: Նահանջն ավելի քան բախտորոշ էր: Հայ գործիչները նահանջում էին նաև հողային հարցում. «Հողավեճերը լուծել վարչական եղանակով և խառն հանձնաժողովների միջոցով հենվելով օսմանյան հողային օրենքներուն և անոնցմե բխող լրացուցիչ լուսաբանութիւններուն: Վիճելի հողերու և ջրերու նկատմամբ սեփականութեան իրավունք ճանաչել հին վավերաթղթեր ներկայացնողին...»[78]: Իսկ ընդամենը մի տարի առաջ ՀԲԴ համագումարը որոշել էր. «...Հայ գիւղերեն հեռացնել բոլոր այն բռնակալները, որոնք... 1890-են ի վեր բնակութիւն հաստատած են հոն»[79]:

Ռ. Տեր–Մինասյանցը հարկադրված էր խոստովանել, որ ՀԲԴ դարձել էր երիտթուրքերի «քաղաքականութեան ամենեն հավատարիմ կողմնակից»: Խուզով պահանջելով կայսրության վարչական ու մշակութային ապակենտրոնացում, «իրական կեանքի մեջ մենք ձուլուած էինք իթիհատի հետ...»[80]: Մինչդեռ երիտթուրքերը զնալով կրճատում էին դաշնակցական պաշտոնյաների և օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների թիվը[81]: Օլֆերովը 1911թ. օգոստոսի 6-ին գրում է, որ երիտթուրքերի ու դաշնակցականների հարաբերությունները լրիվ փոխվել են՝ «կրկին հարություն են առել հին հաշիվները և սրությամբ զգացվում է ատելություն գյավուրների հանդեպ»[82]:

Իթիհադի ոտնձգություններն առաջացրեցին շատ դաշնակցականների զայրույթը: Վանում դաշնակցականները «խզելով հարաբերությունները տեղի իթիհադականների հետ... առանձնահատուկ եռանդով քննադատում են թուրքական կառավարության միջոցառումները, նպատակ ունենալով վերադարձնել իրենց կուսակցության հանդեպ հայերի հարգանքը»[83]: Իսկ ՀԲԴ բյուրոն շարունակում էր մնալ անորոշ կողմնորոշմամբ:

---

72 Լեո, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, Փարիզ, հ. Բ, 1935, էջ 63-64:
73 «Վեմ», 1933, թիվ 1:
74 Գանգրունի Հ., նշվ. աշխ., էջ 204:
75 «Մշակ», 19.02.1911:
76 Тыркова А., նշվ. աշխ., էջ 76-80:

77 Համբարյան Ա. Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը և ազգագրական շարժումները Արևմտյան Հայաստանում. 1908-1914, Երևան, 1979, էջ 342:
78 «Դրոշակ», 1911, թիվ 7-13:
79 Ն. տ.:
80 Տեր-Մինասեան Ռ. Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Զ., Լոս Անջելես, 1952, էջ 42:
81 Համբարյան Ա. նշվ. աշխ., էջ 342:
82 АВПР, «Политархив», д. 482, л. 99.
83 ՀՀ ԿՀԿՊԿԱ, ֆ. 1300, ց. 29, գ. 56, թ. 58:

Երիտթուրքերի պարագլուխների անպարկեշտությունը սահմաններ չէր ճանաչում: «Սահմանադրութեան հռչակումեն ետք,– գրում է Ս. Ակնունին,– երբ համաձայնութիւն կայացավ դաշնակցութեան և իթիհատի միջև որոշ խնդիրներու մեջ համագործակցելու համար, իթիհատն իր ձեռքով դաշնակցութեանը տրամադրեց բավական մեծ քանակութեամբ զենք ու ռազմանիւթ, ամեն գավառի մեջ ի հարկին գործածուելու համար մարտի 31-ի յեղաշրջական շարժումի մը պահուն: Այս զենքերն էին, որ երևան կը հանուեին և ցոյց կը տրուեին, որպես թե թուրքերուն դեմ գործածուելու համար գնուած են...»[84]: Վեհիբը «Մշո և Սասունի դաշնակցական գործիչների հետ առանձին հանդիպումներ ունեցավ, նրանց հանգստացրեց՝ ասելով, թե թուրքական «հեղափոխության» շահերի տեսակետից առայժմ նպատակահարմար չեն զինված միավորումները»[85]:

Սա օրինակներից մեկն է, թե ինչպես էին իթիհադականները միամտացնում դաշնակցությանը: Չէ որ խոսքը գնում էր ըմբոստ հայերի վրա հարձակումներ գործող քրդերի դեմ ռազմական գործողություններ ձեռնարկելու մասին: Արդյունք չեն տալիս նաև «թուրք մտավորականության հետ համագործակցության ջանքերը... նրանց մեջ կամք չկա, ցանկություն չկա ընդառաջելու հայ ժողովրդի ամենատարրական պահանջներին, և իթիհադականների վերաբերմունքը դեպի հայերը տարբերվում է Համիդի քաղաքականությունից միայն իր «արդիական կեղևով»»[86]: Երիտթուրքերի տրամաբանության ելակետը որոշակի էր. «Ամեն ինչից առաջ թուրք ազգն է,– «Թանինի» 1908թ. հոկտեմբերի 25-ի համարում գրեց երիտթուրք պարագլուխներից Հ. Ջահիդը,– և այն պիտի մնա տիրող ազգ»:

1911թ. Կ. Պոլսում տեղի ունեցավ ՀԾԴ-ի 6-րդ ընդհանուր ժողովը, որի օրակարգի գլխավոր հարցն էր՝ վերաբերմունք երիտթուրքական կուսակցությանը: Համագումարը նշելով, որ իթիհադական կառավարությունը «ոչ միայն չի նպաստած այլակրոն և այլացեղ ազգերու համերաշխ համակեցությանը, այլ ընդհանրապես տեղի տուեր է անվստահութիւններու արծարծման և ազգային իրավունքներու ճնշումին, որ իթիհատը միջոցներ ձեռք չառավ պայքարելու և մաքրելու իր կազմը աջակողմեան խայտաբղետ տարրերե, որոնք հետզհետե բազմանալով կուսակցութեան մեջ գերակշիռ ազդեցութիւն մը ձեռք բերին», որոշում ընդունեց «Հայկական պահանջները հետապնդել անկախորեն», որովհետև «հայ ժողովրդի վերաբերեալ կենսական պետքերու մասին համաձայնութիւններն անհետևանք մնացած են, իթիհատը չէ խորհրդակցած երկրի կացութեան վերաբերեալ հարցերում դաշնակցութեան հետ և անպատիժ կը թողու չարագործները...»[87]:

Գնալով ակնհայտ էր դառնում, որ իթիհադը որդեգրել է հայակործան քաղաքականություն: 1911-ին երիտթուրքական կենտրոնը գաղտնի հրահանգներ ուղարկեց իր տեղական ակումբներին՝ աննկատ և անուղղակի միջոցներով սահմանափակել հայերի գործունեության շրջանակներն ազգային, կրթական և տնտեսական ոլորտներում, վերահսկողություն հաստատել կուսակցությունների վրա: «Շատ ջանք թափեցինք,– գրում է Ատոմը,– յանուն համերաշխութեան. մեկ կողմ դրինք մեր բուն հայեցակետերը, մեր հավատոյ հանգանակը՝ ժողովուրդի ինքնապաշտպանութիւնը»[88]:

Երիտթուրքերի քաղաքականության հետևողական կոշտացումը տարընթացություն առաջացրեց հայկական շրջաններում: Ընդհանուր առմամբ, նկատել է Ս. Թեհլիրյանը, «հայ յեղափոխականներու մեջ բարոյալքութիւնը ընդհանուր էր, շատերը... սկսեցին քարոզել բարձրանալու լեռ... թեև սրտով չէր, որ հայ յեղափոխականները մոտենում էին այդ ելքին, բոլոր միջոցները սպառած էին, ուրիշ ելք չկար»[89]: ՀԾԴ ընդհանուր ժողովը որոշեց իթիհադին դիմել մի հայտարարությունով, որը պետք է պարունակեր համատեղ գործունեության համար անհրաժեշտ պայմաններ: Եվ եթե երիտթուրքերը չփոխեին իրենց քաղաքականությունը, Արևմտյան բյուրոյին իրավունք վերապահել խզելու կապերն իթիհադի հետ: Նաև նկատի ունենալով, որ արևմտա-

84 Ակնունի Ս. Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը. 1914-1916, Կ. Պոլիս, 1921, էջ 84:
85 Թուրշյան Հ. Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1969, էջ 70-71:
86 Մինախորյան Վ. 1915 թվականը. Արհավիրքի օրեր: Վենետիկ, 1949, էջ 39:
87 Ն. տ., էջ 51-52:
88 Ն. տ.:
89 Թեհլիրեան Ս. (Դրի առավ Վ. Մինախորեան): Վերյիշումներ, Թալեաթի ահաբեկումը: Վենետիկ, 1921, էջ 32:

հայության անվտանգությունը գնալով խարխլվում էր, դրությունը ծանրանում, ժողովը ստեղծեց ինքնապաշտպանության մարմին, որի վրա դրվեց զինամարտական աշխատանքների իրականացման պատասխանատվությունը[90]: Սակայն նշված հայտարարությունն ինչ-ինչ պատճառներով երիտթուրքերի կենտրոնին հանձնվեց միայն 1912թ. սկզբներին, երբ օսմանյան խորհրդարանն արդեն լուծարված էր և սկսվել էին նոր ընտրություններ: Իթիհադը ոչ միայն ընդառաջ չգնաց ՀԾԴ, այլև միջոցառումներ ձեռնարկեց հայ երեսփոխանների թիվն ավելի կրճատելու համար: Գնալով բռնությունները սաստկանում էին, և ՀԾԴ հայտնվեց կիսաանկեղալ վիճակում: Դաշնակցությունը չփոթված էր:

Դաշնակցության խորհուրդը 1912թ. սեպտեմբերին վերակառուցվում է Արտակարգ խորհրդի: Ինչ վերաբերում է ինքնապաշտպանական մարմնին, ապա այն պարզապես փորձեց կատարել Արևմտյան բյուրոյի պարտականությունները: Վերջինս դիմեց տեղական կազմակերպություններին. «Նկատի ունենալով երկրում տիրող բարդ իրադրությունը և հայության ծանր վիճակը... եռանդուն աջակցություն ցույց տալ ինքնապաշտպանության գործին...»[91]:

Այսպիսով, ՀԾԴ հայ քաղաքական ուժերից միակն էր, որ համագործակցեց իթիհադի հետ՝ հույս ունենալով, որ այդ քայլը կարող է ավելի օգտակար լինել, սակայն Ադանայի ջարդերից հետո «չկրցավ կամ չէր ուզած կտրուիլ իթիհատեն և ընկած էր ջայլամային քաղաքականութեան մեջ՝ մոտեն չհետևելով Սալոնիկի մեջ անոր առած որոշումներուն թաքուն նպատակներուն»[92]: 1912թ. խորհրդարանական ընտրություններում Դաշնակցությունը համաձայնեց իթիհադի հետ նորից հանդես գալ ընդհանուր ցուցակով: Այդ առիթով «Կոհակ» թերթը գրեց. «...ՀԾԴ իթիհատի հետ համաձայնութեան ակտովը ոչ միայն ստուեր ձգեց իր անցեալին վրայ, այլև ամբողջ հայ յեղափոխութեան, նոյնիսկ հայ ժողովուրդի պատմական ճիգի, ձգտումներուն վրայ, դրավ անեղծելի արատը, որ չեմ գիտեր, թե կարելի՞ է սրբել և մաքրուիլ անկե»[93]: ՀԾԴ ամբողջ հոգով ձգտում էր դեպի իթիհադը, իսկ վերջինս կոնֆետի քաղցրությունը ճաշակելու հրապույրով գաթակղեցնում ու, առանց որևէ զիջումի, իր քաղաքականության կառքին լծած էր պահում դաշնակցությանը: Ռ. Դարբինյանը դաշնակցության անորոշ դիրքորոշման մասին գրեց. «Հայերիս «ինտելիկենցիա»-ն Տաճկաստանում ցոյց տուեց իր կատարեալ խակութիւնը, սկզբից ևեթ երիտթուրքերի հետ բարեկամանալը երեխայական միամտութիւն էր: Այդ բարեկամութեան հետևանքն այն եղավ, որ կարճ ժամանակամիջոցում երիտթուրքերը ծանոթացան հայերի գաղտնիքներին, չափեցին, կշռադատեցին մեզ, քննեցին ոտից գլուխ և վերջն ասացին՝ գնացեք, քանզի ձեզ այլևս պետք չունինք: Միայն այն ժամանակ մերոնք արթնացան լեթարգեան քնից, երբ ամեն ինչ վերջացեալ և կատարեալ էր»: Նման հանցագործ անպատասխանատվությունն ավելի քան դատապարտելի է, որովհետև երիտթուրքերն իրենց հայակործան մտադրություններն ու գործողությունները չէին քողարկում: Նրանք պարզապես հայերի աչքին թոզ փչեցին ամենաողորմելի զիջումների միջոցով «հայկական գիմնազիոն բանալու իրավունք տալ, դատարաններում հայերին յարգել, գործադրելով արևելեան կեղծավորութիւնը (այն էլ միայն նահանգական քաղաքներում) էֆենտի ասել»: Դաշնակցականները «պարծենում էին, որ թուրք կառավարութիւնը յոյներին, պուլկարներին... ատում էր, իբրև դեպի անջատումը հակուողների, իսկ մեզ առերես մեծարում, գովաբանում, գլուխներիս տակ փափուկ բարձ դնում»[94]: Ա. Տիրկովան գրում է. «Երկրի ժամանակն ու ուժերդ ծախսվում են դաժան երկպառակության վրա և մարդկանց մի փոքր խումբ, որը մազլցել է հասարակական բուրգի գագաթը, իր անձնական կատաղած հաշիվների համար մոռացել է, որ իրենց թիկունքի հետևում 25 միլիոն բնակիչ ապրում են թշվառ կյանքով, որոնց բարեկեցության համար պետությունը ոչինչ չի արել»:

90 Տասնապետեան Հ., ՀԵ Դաշնակցութիւնը իր կազմութենեն մինչև Ժ ընդհանուր ժողով, 1890-1924, Աթենք, 1988, էջ 103:
91 «Նիւթեր ՀԾԴ պատմութեան համար», հ. Ա, էջ 182-183:
92 Գանդրունի Հ., նշվ. աշխ., էջ 392:
93 «Կոհակ» (Կ. Պոլիս), 1912, էջ 483:
94 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 27, գ. 394:

Թուրքիան առանձնահատուկ երկիր է: Մարդկային փոշիացած ամբոխը, որ սովոր չէ ոչ մտածելու, ոչ քաղաքականապես ապրելու, հնազանդորեն կյանքն ընդունում է այնպես, ինչպես այն կար: Սահմանադրությունը չարժեց միայն մեծ քաղաքների բնակչությանը և այն էլ այնքանով, որ նրան ստիպեց ծափահարել հաղթողներին: Մինչդեռ «պետական նոր այրեր չափից ավելի հրապուրվեցին՝ ամուր իշխանություն ստեղծելով և շատ քիչ մտահոգվեցին երկրի իրական շահերով, տնտեսության զարգացմամբ, որը Թուրքիայում ամենացածր մակարդակի վրա էր»[95]:

Նորից լսենք Ռ. Դարբինյանին. «Կոմիտեի ահ ու սարսափի տակ ընտրուեցին 270 պատգամավորի դիմաց միայն (9-10) դաշնակցականներ: Այդ ժամանակ մերոնք արթնացան... բայց ավա՜ղ փառաց անցավորի: Այդ ընտրութիւնից յետոյ մերոնք իրենց խաբուած զգան և սկսեցին վայնասուն բարձրացնել փոխանակ կարմրելու և լռելու ամօթից: Մոտ ապագայում ավելի են պարզվելու կուսակցութեան սխալ դիրքերը, երբ երիտթուրքերն իրենց զենքերն ուղղեն մեր կուսակցութեան պարագլուխների դեմ...»[96]: Ռ. Դարբինյանը նկատի ունի, որ 1912 թվի խորհրդարանական ընտրություններում երիտթուրքերը դաշնակցությանը խոստացել էին պատգամավորական 20 տեղ: Մինչդեռ խորհրդարանում Թուրք էր 125-ը, ոչ մահմեդական՝ 14-ը, որից հայ՝ 10-ը:

Տարօրինակ էր ՀՅԴ մոտեցումներն ինքնապաշտպանությանը: Աղանայից հետո Բյուրոն իր տեղական կազմակերպություններին հրահանգեց ստեղծել զենքի պահեստներ, զինել ժողովրդին, կազմակերպել, որպեսզի արևմտահայերն ինքնազինվեն: Սակայն այս կողմնորոշումը հրահանգներից այն կողմ չանցավ, մանավանդ, որ որոշ ժամանակ անց ցուցում տրվեց զենքերը հանձնել: Առաջատար կուսակցության նման անսկզբունքայնությունը, իհարկե, չէր կարող օգնել լայն զանգվածների զինվելուն և ինքնապաշտպանության կողմնորոշմանը: Թվում էր, թե գործին կօգներ վերկուսակցական ազգային մարմինների ստեղծումը: Կազմվեց ազգային վարչություն, որի մեջ մտան հնչակյաններ Մեծ Մուրադն ու Ն. Զաքարյանը, ՀՅԴ Վ. Փափազյանն ու Փաշայանը, չեզոքներից Տ. Երկանյանը, Լ. Տեմիրճիպաշյանը, Ռ. Մարտիկյանը, Ս. Սյունին: «Դրոշակի» 1913թ. ապրիլի «Մահաբեր պատրանք» վերնագրով խմբագրականում նշվում է. ««Սահմանադրական» Թուրքիան Աբդուլ Համիդի չարակամությամբ ու դիվական եռանդով զինված, բայց նրանից ավելի նենգորեն և ավելի մեթոդիկ, այս չորս տարում հայ ժողովրդի արյունը ծծեց վամպիրի պես, նրա անդարձ կորստյան վիհը փորեց, և մենք՝ ազնվորեն դյուրահավատներ, պատրանքներով աչքերնիս շլացած, անզգալիորեն, քայլ առ քայլ դեպի այդ ճակատագրական անդունդները դիմեցինք:

Ցրենք վերջապես այդ մահաբեր պատրանքը... Զխաբենք մեզ և չխաբվինք ուրիշներից: Հայ ժողովրդի լինել չլինելու խնդիրն է հրապարակի վրա. կամ այսօր նա կապահովի իր ազգային գոյությունն իրական երաշխիքներով կամ պիտի պատրաստվի որպես քավության նոխազ կործանվող Թուրքիայի ավերակների տակ թաղվելու... խավարում դարբնվող դժոխային դավը, հայ ժողովրդի դեմ այլևս գաղտնիք չէ, Թուրք կառավարությունը՝ երիտթուրքերն, այլևս կարիք չի զգում, քողարկելու, սքողելու նյութվող ոճիրը»:

Երիտթուրքերը հետապնդում էին հնարավորին չափ շուտ Հայաստանը հայերից դատարկել, հայկական գավառները լցնել մուհաջիրներով և ստեղծել իսլամական միատարր պետություն: Դրա համար էլ առևանգում, սպանում էին հայերին, գրավում նրանց հողերը, զինում էին հրոսակներին և նեղում էին ապօրինի հարկերով, բռնագրավում էին զենքերը:

«Դրոշակը» 1913-ի հունիսին գրում է, թե արդյո՞ք պատահական է, որ իրադարձությունների տրամաբանությունը ցանկացավ, որ հայն ահռելի ճգնաժամի պահին իր ճանապարհին ունենար «լավագույն համարված Թուրք հայրենակցին՝ Թալեաթ բեյին, վերջապես համոզվելու, որ անգամ լավագույն Թուրքը հայակործան քաղաքականությունը որդեգրում է որպես հավատամք, համիսլամական սկզբունքը՝ որպես առաջնորդ ու ղեկավար, իսկ ջարդը, ավերածությունը և հավիտենական կեղծիքը՝ որպես կառավարման եղանակ»:

ՀՅԴ իթիհադասիրությունը վերածվեց անախրոնիզմի: Նույնիսկ մահմեդականներն էին զարմացած: Շերիֆը գրեց՝ քանի՜ անգամ ՀՅԴ «զգուշացրեցի իթիհատի դեմ, որի սև հոգին կը

95 Тыркова А., նշվ. աշխ., էջ 67:
96 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 27, գ. 394:

ճանչնայի: Գոնե Ատանայի ջարդերը, որոնք իթիհատ կոմիտեի հրամանովը կազմակերպուեցան, պետք է որ դաշնակցականներին իրողութիւններու իմաստը հասկանալու մղեին: Ինքզինքնին իթիհատ վե թերաքը կոմիտեին հետ համերաշխ հոչակելով փոխանակ իրենց դատը պաշտպանելու՝ ասոր դեմ դավաճանած եղան»[97]:

ՀՅԴ գործակցում էր իթիհադի հետ հույսով, որ դրա դիմաց կստանա «պետական ինքնավարություն» կամ Արևմտյան Հայաստանի կառավարման ապակենտրոնացում: Դա արտահայտվեց նաև Հիրսի հետ Ս. Զավարյանի և Հ. Զավրիևի հանդիպման ընթացքում: Նրանք դեսպանին հավաստիացրեցին, որ ՀՅԴ ձգտում է «պաշտպանել հայերի շահերը միմիայն Ռուսաստանի հովանավորության պայմաններում: Ինչ վերաբերվում է իթիհադի հետ իրենց կուսակցության մերձանալուն, ապա այն մի խնդիր ունի՝ հնարավորին չափ չեզոքացնել Կ. Պոլսի հակահայկական ոտնձգությունները:

Գր. Զոհրապը Զավրիևի մասին գրում է. «Նա հանրահայտ դաշնակներեն առաջինն էր, որն ընդունում էր այն ճշմարտությունը, թե Թուրքական կառավարման պայմաններում հայերին, բացի բնաջնջվելուց, ուրիշ ոչինչ չի սպասում: Իսկ Ռուսաստանի հետ ... հայերի հոգեկան խորթությունը ամենածանր սխալն է»[98]: Հիրսը գրում է Սազոնովին. «Պր. Զավրիևը այն կարծիքին է, որ ջարդեր թույլ չտալը ամբողջությամբ կախված է Թուրքական իշխանություններից. լոկ Ռուսաստանի եռանդուն նախազգուշացումները կարող են աղետը կանխել»: Հիրսը միաժամանակ գտնում էր. «Կարևոր է, որ ողջ Եվրոպայի աչքում Հայերը շարունակեն երևալ որպես Թուրքական կամայականության զոհեր, այլ ոչ թե վերածվեն հեղափոխականների, ովքեր ցանկանում են օգտվել Թուրքերի ժամանակավոր անհաջողություններից իրականացնել իրենց ազգային ձգտումները... Ուստի հայերը չպետք է գրգռեն Թուրքերին, առավել ևս, չպետք է ապստամբեն և Եվրոպային ներկայացնել քաղաքական ինչ-ինչ պահանջներ»:

Ընդունված է համարել, թե ՀՅԴ իթիհադի հետ հարաբերությունները խզեց Բալկանյան պատերազմի և երիտթուրքերի կողմից Թուրքիզմը պաշտոնական գաղափարախոսություն դարձնելուց հետո: Հավանաբար դրանք նույնպես դեր խաղացել են, բայց ոչ վճռական: Դաշնակցությունն իթիհադի հետ կապերը խզեց Պետերբուրգի Թելեգրանքով՝ կապված հայկական բարեկարգումների նոր ծրագրի առաջ քաշման, այդ հարցում տերությունների ջանքերը միավորելու պայքարի հետ: Խզման կապակցությամբ դաշնակցության հրապարակած բանաձևում ի միջի այլոց ասված է. «Հինգ տարի շարունակ Միություն և առաջադիմություն կոմիտեն, չնայած հանդիսավոր խոստումներին, չբավարարեց հայ ժողովրդի ամենատարրական պահանջները» և ապա՝ «Կոմիտեն միայն ձևականորեն էր ընդունում ապակենտրոնացման սկզբունքը... Թուրքական կառավարության ավանդական քաղաքականությունը, որ մահմեդականներին դնում է արտոնյալ վիճակում, մնում է անփոփոխ»:

Ոչ միայն քրիստոնյաները, այլև ոչ Թուրք մահմեդականները՝ արաբները, ալբանացիները, սիրիացիները, մասամբ նաև քրդերը, նշմարեցին երիտթուրքերի նոր քաղաքական տեսության էությունը և չընկան նրանց ցանցը: Զառարկելով «օսմանիզմ» տերմինին, քանի որ բացարձակապես նշանակություն չուներ, թե այդ տեսությանն ինչ անուն կտան՝ նրանք հենվեցին ավելի իրական դրույթների վրա, այսինքն՝ սահմանադրությամբ իրենց տված իրավունքների վրա:

1913թ. օգոստոսին ՀՅԴ Կարինում անցկացրեց իր 7-րդ ընդհանուր ժողովը, որը որոշեց. «Քաղաքական բարդություններու ատեն, համախորհուրդ ընկերավարական մյուս կուսակցություններուն՝ օրինական բոլոր հնարավոր միջոցներով կանխել զինուած ընդհարումները»: Համաժողովին ներկայացվեց երիտթուրքերի հետ ՀՅԴ խզման պատճառները՝ իթիհադը որդեգրել էր Թուրքիայի ավանդական քաղաքականությունը՝ շարունակում է ճնշել փոքրամասնությանը, մասնավորապես քրիստոնյաներին, ինչը որևէ երաշխիք չէր թողնում օսմանյան հպատակ հայության անվտանգության համար:

97 Լեփսիուս Յո. Հայկական ջարդերը, Բեյրութ, 1965, էջ 287-288:
98 Возобновление Армянского вопроса, с. 238.

Տարընթացությունները և հակասությունները գնալով խորանում էին հենց դաշնակցության ներսում. երիտասարդ ուժերը պահանջում էին արմատական քայլեր, իսկ ավագներն ու երեսփոխանները դրան դեմ էին: Այս պայմաններում ինքնապաշտպանության խնդիրը բանաձևերի գրառումներից այն կողմ չանցավ, ինչը կործանարար նշանակություն ունեցավ եղեռնի տարիներին:

Համագումարը մշակեց նոր վերաբերմունք իթիհադի նկատմամբ: «Դրոշակը» գրում է. «Վերջապես ցրենք մահաբեր խաբկանքը: Հասել է ժամանակը զզվանքով երես դարձնել թուրքական պաշտոնատար անձանց շողոքորթ ժպիտներից»[99]:

Երիտթուրքերի կառավարությունը «այս չորս տարվա ընթացքում վամպիրի նման ծծել է հայ ժողովրդի արյունը, անդունդ է փորել, և մենք խաբված երազանքներով, հեշտությամբ հավատալով կեղծ խոստումներին, դանդաղ, քայլ առ քայլ գնացինք դեպի ճակատագրական անդունդը: ...Չխաբվենք և չխաբենք ուրիշներին»: Համագումարը հայտարարեց. «Մենք ձեզ (երիտթուրքերին) չենք հավատում, մենք այլևս չենք կարող հայ ժողովրդի ապագան ձեզ վստահել և նրա փրկությունը կփնտրենք միայն Եվրոպայի երաշխիքների խոստումներում»[100]:

Դաշնակցությունը պաշտոնապես խզեց կապերը իթիհադի հետ ու դարձավ ընդդիմադիր կուսակցություն, չնայած մեծ տերությունների հետ ևս մեծ հույսեր չէր կապում և ինչպես «Հորիզոնն» է գրում. «Չկա ոչ մի միջազգային երաշխիք, որ նշված պահանջները կկատարվեն և, հետևաբար, մենք ոչ մի հիմք չունենք հավատալու, որ Հայկական հարցը կլուծվի թեկուզ անցման էտապում»[101]:

Անգամ 1914թ. հոկտեմբերին դաշնակցության ղեկավարները չէին հավատում, որ երիտթուրքերն օգտագործելու էին պատերազմական իրավիճակը հայերին կոտորելու համար: Հոկտեմբերի 12-ին Ակնունին կուսակցության Արևմտյան բյուրոյում պատմելով Թալեաթի հետ իր զրույցի մասին, մասնավորապես ասաց. «Գործնականում ոչ մի պատճառ չկա, որի համար կառավարությունը մեզ չվստահի: Մենք իրավացիորեն կարող ենք հուսալ, որ կառավարությունը կտեսնի մեր անկողմնակալությունը»[102]:

ՀԾԴ որքան սրտաբաց ու հանդուրժող էր իթիհադի, նույնքան ժխտողական ու արհամարհական էր հայկական հաստատությունների հանդեպ: Նա իրեն այդ միջավայրից վեր էր համարում:

Երբ ծայր առավ բարենորոգումների շուրջ քննարկումները և պատրիարքարանում ստեղծվեց հանձնաժողով ծրագրի նախագիծ պատրաստելու համար, ՀԾԴ սահմանազատվեց ու ստեղծեց սեփականը, որն, ի դեպ, ի վիճակի չեղավ որևէ արդյունավետ քայլ կատարել:

Այս նոր սահմանազատման պատճառը նույնն էր՝ ՀԾԴ շարունակում էր հույսեր կապել իթիհադի հետ:

Հր. Տասնապետյանը գրում է, թե այդ օրերին ոչ ոք չէր կարող «պատկերացնել այն ահավոր տարողությունը, որ պիտի ունենային Թուրք պետության կազմակերպած ջարդերը 1915-16-ին հայության ամբողջական բնաջնջման իրենց ծրագրուած առաջադրանքով: Ոչ ոք կրնար նախատեսնել ցեղասպանությունը... ամենահոռետես ղեկավարներն անգամ ավելին չէին նախատեսեր, քան 1895-96-ի համիտեան ջարդերը յիշեցնող կոտորածներ. ու տրամաբանորեն, թրքահայությունը, շատ ավելի լավ կազմակերպուած և ավելի լավ զինուած, քան 20 տարի առաջ, պիտի կարենար, ինքնապաշտպանության դիմելով, համեմատաբար ավելի քիչ թվով զոհեր տալով դուրս գալ փոթորիկեն»[103]:

Սա անճար արդարացում է, քանի որ թե սուլթանը և թե իթիհադը նպատակ էին դրել բնաջնջելու հայ ժողովրդին: Այն, որ 1894-96թթ. ոչնչացվեց ոչ թե արևմտահայության մեծ մասը, այլ 300 հազ. մարդ, Աբդուլ Համիդի «բարի կամքի դրսևորում» չէր, այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի գործոնների արդյունք: Հավանաբար 1894–96թթ. իրադարձություններից միանգամայն այլ եզրակացություն պիտի հանվեր, քան հանեց ՀԾԴ: Այդ եզրակացությունը լինելու էր հետևյալը՝ քանի որ 1894-96թթ. թուրքական իշխանություններին չհաջողվեց լրիվ իրականացնել իրենց հայաջինջ ծրագրերը, նրանք օգտագործելու էին առաջին իսկ հնարավորությունը դրանք ամբողջությամբ կենսագործելու համար: Բ. Դուռն ըստ ամենայնի հաշվի առավ 1894–96-ի դասերը՝ կոտորածների իրականացում առանց նախապես հայ բնակչության մարտական ուժերի ոչնչացման, հայ ազգաբնակչության զինաթափում, բանագաղթ, թուրքերին առաջատարի դերի հատկացում և այլն: Իսկ հայերը, դժբախտաբար, դաս չքաղեցին առաջին խոշոր ջարդերից: Նրանք 1915 թվականի գործունեության նույն եղանակներով, երբ ինքնապաշտպանության համար նախապատրաստվում էին, առանձին վերցրած, այս կամ այն շրջանները, այլ ոչ թե ամբողջ հայությունը, երբ ինքնապաշտպանությունը շարունակում էր մնալ տեղական նախաձեռնություն, անելանելի վիճակի պոթկում, այլ ոչ թե ծրագրված գործունեություն, ընդհանուր ղեկավարության, ռազմաքաղաքական հստակ գործելակերպի, փոխկապակցվածության և փոխօգնության բացակայություն: Համազգային աղետի վտանգն իսկ անզոր եղավ համախմբելու արևմտահայությանը, իրարամերժ շահերն ու հայացքները շարունակում էին բզկտել հայ հասարակությանը: Ավածն առավելագույնս վերաբերում էր ՀԾԴ, որն իրեն հռչակելով «ազգի ղեկավար», իր վրա էր վերցրել համազգային խնդիրների լուծման, ամենից առաջ ինքնապաշտպանության ըստ ամենայնի կազմակերպման պարտականությունը, ռազմավարական և մարտավարական ծրագրերի մշակման և իրականացման պատասխանատվությունը: Դժբախտաբար հայ առաջատար կուսակցությունն անընդունակ գտնվեց այդ արտակարգ ծանր իրավիճակում վեր կանգնելու նեղ կուսակցական առճակատումներից, լծվելու ժողովրդի փրկության գործին՝ դրան ենթարկելով ամեն ինչ:

Դաշնակցությունը, որ երիտթուրքական հեղաշրջումից հետո ձեռք էր բերել իշխող դիրք հայ կյանքում, առանալով իթիհադի աջակցությունը, այն օգտագործում էր ՀԾԴ չպատկանող կամ հարող հայերի դեմ: Իսկ հենց դրվեց բարենորոգումների հարցը, լքեց երիտթուրքերին ու անցավ տերությունների կողմը... Ոչինչ արդարացնել չի կարող դաշնակցության երկդիմի ու նենգ դիրքորոշումը՝ նա մի կողմից պայմանավորվում էր Ռուսաստանի հետ, իսկ մյուս կողմից օգտագործում էր իր կապերը Միության և առաջադիմության հետ, որպեսզի ազդեցություն ունենար բարենորոգումների ընթացքի վրա[104]:

1914թ. հուլիսիս Էրզրումում գումարվեց Դաշնակցության 8-րդ համագումարը, որը տևեց երկու շաբաթ: Առաջին աշխարհամարտն արդեն իրողություն էր դառնում, նաև ակնհայտ էր, որ երիտթուրքերը հակված էին պատերազմի մեջ մտնել եռյակ զինակցության կողմում: Համագումարը, նկատի ունենալով իթիհադականների այդ կողմնորոշումը, նրանց համաթուրանական բաղձանքները, հայահալած քաղաքականությունը, որոշեց. «...Կուսակցությունը հանդես կգայ իթիհատի նկատմամբ անկիրք դատավորի և անհաշտ ընդդիմության դերում, կպայքարի նրա մնասակար ազգայնամոլական և հակապետական քաղաքականության դեմ: Ժողովը չի բացառում համագործակցությունը կարևոր համապետական խնդիրներում...»[105]:

ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ. - Հնչակյանների նախապատերազմական շրջանի քաղաքական գիծը որոշվեց կուսակցության 5-րդ համագումարում (1909թ.), ինչպես նաև Արևմտյան Հայաստանի Հնչակյան կազմակերպությունների պատգամավորական առաջին և երկրորդ ժողովներում (1910թ., 1912թ.):

Որ ուղին ընտրել՝ «օրինակա՞ն թե հեղափոխական», սա էր գլխավոր հարցը: Համագումարում Փարամազը, Սապահ Գյուլյանը, Ազատ Ոստանիկն անվստահություն հայտնեցին Թուրքական «պոչատ» սահմանադրությանը և գտան, որ կուսակցությունը պետք է շարունակի գոյություն ունեցող վարչակարգը հեղափոխական եղանակներով տապալելուն նպատակաուղղված պայքարը: Հակառակ կարծիքին էին Ա. Աչկպաշյանը, Ն. Զաքարյանը, Մուրադ (Համբարձում) Պոյաճյանը: Նրանք գտնում էին, որ արևմտահայությունն ուժասպառ է եղել և ի վիճակի չէ բռնի միջոցներով հաջողության հասնել: Նրանք հույս ունեին, որ «ժողովուրդներու միջև ատելությունը տակավին կրնայ մեղմանալ և խաղաղ պայմաններու մեջ կարելի է ավելի լավ կազմակերպել ժողովուրդի ինքնապաշտպանության ուժերը: Որպեսզի երբ մոտենայ Թուրքիոյ քայքայման պահը, հայ ժողովուրդը կարենայ դիմել վճռական քայլին»[106]:

99 «Դրոշակ», 1913, թիվ 4:
100 Ն. տ.:
101 «Հորիզոն», 1914, թիվ 35:
102 Գուստ, էջ 145:
103 Տասնապետեան Հ. նշվ. աշխ., էջ 113:

104 A. M. A. E., Guerre 1914-1918, Turquie, tome 888, ff 143-145:
105 Լեո, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հ. 2, Փարիզ, 1935, էջ 76:
106 Գանգրունի Հ., նշվ. աշխ., էջ 383:

Հարկ է նշել, որ Սահմանադրության հռչակման առաջին շրջանում տիրապետողը հետևյալ կարծիքն էր, «Մերժել ցանկացած գաղափար Սահմանադրական Թուրքիայից անջատվելու վերաբերյալ»: Նույնիսկ այն բանից հետո, երբ ակնհայտ դարձավ, որ թուրքական ազգայնամոլները գիտակցաբար ձգտում էին մասնատել, ջլատել կայսրության հպատակ ժողովուրդներին և նրանց տարրալուծել Թուրք ազգի մեջ «օսմանցիներ կամ օսմանյան ազգ» անվան տակ, հնչակյան համազումարն առաջ քաշեց ոչ թե կայսրության կազմից դուրս գալու ծրագիր, այլ կողմնորոշում «վճռականապես պայքարել ազգայնամոլական այդ ուղղության դեմ, քննադատության կրակի տակ առնել թուրքական իշխանությունների հակահայկական քաղաքականությունը, ցույց տալ, որ «քաղաքական մշտական սկզբունք են դարձրել ժողովուրդների, մասնավորապես հայերի բնաջնջումը»»[107]: Համագումարը որոշեց. «Տաճկաստանի մեջ գործել օրինական գետնի վրայ, ցորչափ այդ օրինական իրավունքները չեն խլուած աշխատավոր ժողովրդին ձեռքեն»: Նկատի ունենալով, որ Թուրք ազգայնամոլ քաղաքական գործիչները գիտակցաբար ձգտում էին «ապազգայնացնել Թուրքիայի բաղկացուցիչ ոչ Թուրք տարրերին և նրանց ձուլել Թուրք ազգությեան մեջ «օսմանցի» ընդհանուր անվան տակ», ժողովը մերժեց ապազգայնացման գաղափարը և որոշեց պայքարել այդ ուղղության դեմ ընդունելով ազգերի ազատ զարգացման և ինքնորոշման իրավունքը: Համագումարը, սակայն, վստահ չէր, որ «օրինական միջոցները» բավարար էին խնդրի լուծման համար, չէր բացառում ջարդերի հնարավորությունը: Ուստի նաև որոշել «նպատակահարմար հիմունքներով կազմակերպել ինքնապաշտպանության գործերը...»[108]: Անհրաժեշտ համարվեց Օսմանյան խորհրդարանում ունենալ «հնչակյան երեսփոխաններ, իրավունք տալով անոնց, որ կազմեն յարմար խմբակներ և ի պահանջի հարկին համերաշխին ուրիշ խմբակի մը հետ...»[109]: Խոսքը գնում էր ոչ թե հայ կամ հպատակ մյուս ժողովուրդների ներկայացուցիչների հետ համերաշխվելու, այլ առավելապես «Թուրք սոցիալ-դեմոկրատներու թոյլ ջանքերուն աջակցելու» մասին:

Համագումարը փորձեց հստակեցնել վերաբերմունքն իթիհադի հանդեպ: «Ազգայնական, կործանարար հոսանքին դեմ ընդդիմադիր ուժ ստեղծելու և Թուրք տարրին յառաջադիմական հոսանքին նպաստելու և անոր մեջ ազատական ոգի զարգացնելու համար, նախապատվություն տալ այն Թուրք քաղաքական կուսակցության, որը համեմատաբար ավելի ձախ կեցուած է և կը ներկայացնե յառաջադիմական սկզբունքներ»: Նաև նշվում է. «Ընդհանուր ուղղությամբ Թուրք կուսակցություններեն մեկուն հետ ժամանակավոր գործակցություն հաստատելով հանդերձ, ուշադրություն դարձնել մեր ազգային իրականության մեջ գործող հայ կուսակցություններուն...», սակայն միայն կուսակցությունների կենտրոններին, այլ ոչ թե մասնաճյուղերին: Նույն տարվա փետրվարի 7-ին համաձայնագիր ստորագրվեց հնչակյան և Թուրքական իթիլաֆ կուսակցության միջև, համաձայն որի՝ «Օսմանեան պետությունը կազմող զանազան ազգությիներու քաղաքացիական իրավունքները պիտի պաշտպանուին և բոլորովին կը մերժուի մեկ ազգին քաղաքականապես ստորադասումը միւսին: Դպրոցներն ազգային բնոյթը պիտի պահեն և անոնց վկայականները համազոր պիտի համարուին պետական նոյնաստիճան վկայականներուն: Բռնի գրաւուած հողերն ու կալուածները ըստ օրինական դատի օրինական տերերուն պիտի վերադարձուին: Թուրք գաղթականները, առանց տեղացիներու սեփականության իրավունքին մնասելու, պետական թափուր հողերու վրայ միայն պիտի բնակեցուին: Բանուորի, հողազուրկ գիւղացիի և մարապայի վիճակը բարվոքող օրենքներ պիտի հաստատուին»[110]: Բնութագրական է այդ պայմանագրի 8-րդ կետը. «Օսմանեան պետության ամբողջականությունը և սահմանադրության պաշտպանությունը ցանկալի են երկու կողմերի համար, հետևաբար, պետությունից անջատվելու ամեն մի ձգտում և ամեն մի հակասահմանադրական շարժում վճռականապես մերժվում է»[111]:

107 Ս. Դ. Հնչակեան կուսակցության հիմնամեակը, 1887-1937, էջ 262-266:
108 Ն. տ., էջ 284:
109 Ն. տ., էջ 383 :
110 Կիտուր Ս. Պատմություն Ս. Դ. Հնչակեան կուսակցության. 1887-1962, հ.I, Բեյրութ. 1962, էջ 345-348:
111 Ն. տ., էջ 397:

«Այսպիսով Հնչակը դաշինքի մեջ մտավ մի կուսակցության հետ, որը Թուրքական որոշակի շրջանների կողմից ամբաստանվում էր որպես հետադիմական, հակասահմանադրական, Թուրքիայի ամբողջականության հակառակորդ, հայրենիքի դավաճան»[112]: Սակայն այդ դաշինքը երկար կյանք չունեցավ. իշխանության համար պայքարում իթիհադն ու իթիլաֆն այնքան առաջ գնացին, որ գլխավոր զենք դարձրին ահաբեկչությունը: Իթիլաֆական Շերիֆը և Սադրխը նույն 1912-ին իթիհադի դեմ դավադրություն կազմակերպեցին: Վերջինս դա ըստ ամենայնի օգտագործեց և դավադրության մասնակից հռչակեց նաև հայերին: Որ հնչակյանների ու իթիլաֆի միջև ինչ-որ պայմանավորվածություն եղել է, կասկածից վեր է: Իթիլաֆի անդամներից մեկը այդ հաստատող նյութեր է հասցնում իթիհադի Կ. Պոլսի կենտրոն և դրանք տպվում են երիտԹուրքական «Թանին» թերթի 1913թ. հուլիսի 31-ից 1914թ. հուլիսի 22-ի համարներում: 1915թ. մարտին, երբ հնչակյան առաջնորդներն արդեն բանտում էին, «Թանինը» գրեց. «Փարիզում կազմակերպված էր դավադրություն Թալեաթի կյանքի դեմ... այդ դավադրության ղեկավարներն էին Սադրխ բեյը և Փարիզի հռչակավոր Շերիֆ փաշան ու Գյումյուլջինայի Ի. Հակը բեյը: Սադրխ բեյը Եգիպտոսում այս հարցով հարաբերություններ էր հաստատել հնչակյան հայտնի պետ Սապահ Գյուլյանի հետ: Այդ կուսակցության Քեոդենջի համագումարը բաժանվեց երկու մասի. Սապահ Գյուլյանի ղեկավարության տակ եղած մասը որոշել էր ոչ օրինական հեղափոխական գործունեություն ծավալել: Սադրխ բեյի և Սապահ Գյուլյանի միջև կայացած համաձայնության հիման վրա արտասահմանից Պոլիս են ուղարկվել երեք ահաբեկիչներ, ովքեր քաղաքի տարբեր մասերում այլևայլ դեպքեր կազմակերպելու միջոցով խուճապ էին առաջացնելու և սպանելու էին Թալեաթին: Պետական հեղաշրջման հաջողության դեպքում նոր կառավարությունում ֆինանսների նախարարի պաշտոնը տրվելու էր Սապահ Գյուլյանին: Մահափորձը գլուխ բերելու համար Անգլիայի ռազմական նախարար լորդ Քիչենը խոստացել էր 20 հազ. ոսկի... Սապահ Գյուլյանը Սադրխ բեյից ուզել էր դրամի մի մասն ահաբեկիչներին Պոլիս ուղարկելու համար և ստացել էր 500 ոսկի: Գումարը ծախսվեց ձերբակալված 100-ից ավելի հնչակյան գործիչներին փրկելու վրա:

Իթիհադը միջոցների միջև խտրականություն չէր դնում իր քաղաքական հակառակորդների շարքից հանելու համար: Սադրխի վկայությամբ՝ սկսած 1913թ. փետրվարից 30 հազար իթիլաֆականներ չեզոքացվել, աքսորվել, բանտարկվել էին: Իր հերթին Սադրխի մարդիկ սպանեցին Մահմուդ Շևքեթին: Կազմվեց նոր կառավարություն, որի վրա մեծ էր իթիլաֆի ազդեցությունը: Սակայն երկրի անվանի քաղաքական գործիչներից կազմված այդ կառավարությունը չհասցրեց որևէ էական բարեփոխում մտցնել: Հնչակը համաձայնվելով կայսրության ամբողջականության պահպանման հետ, միաժամանակ առաջ քաշեց պատրիարքարանի իրավունքների պաշտպանության խնդիրը: Ըստ Ս. Սապահ Գյուլյանի Հնչակը գնաց իթիլաֆի հետ դաշնակցելու, քանի որ իթիհադի թշնամի էր և աջակցությունը ընդդիմադիր կուսակցությանն ավելի էր սրելու պայքարը Թուրքական երկու կուսակցությունների միջև: Դրա շնորհիվ կամ Թուրքիան կդառնար իրոք սահմանադրական պետություն և կամ կկործանվեր ու, նրա ավերակների վրա կբարձրանար ինքնավար Հայաստանը: ՀԵՌ քննադատում էր Հնչակին և գտնում, որ իթիհադը, չնայած իր թերություններին, վստահության արժանի էր, ինչը չէր կարելի ասել իթիլաֆի մասին, որի անդամների մեջ մեծ տոկոս էին կազմում քաղաքական բարոյականությունից զուրկ անձինք: Նույն ինքը՝ Դամադ Ֆերիդը, երկու տարի առաջ հանդես էր եկել տիրապետող ազգի ու սուլթանի իրավունքներն ընդլայնելու կոչով, այդ կուսակցության պատգամավորները քվեարկել էին քրիստոնյաներին բանակ զորակոչելու դեմ[113]:

Սալոնիկում Ռուսաստանի գլխավոր հյուպատոսը 1912թ. հունվարին տեղեկագրում է, որ իթիհադի դեմ հաղես էր գալիս նաև «Իսլամի ընկերությունը» («Ջեմիեթի իսլամիեն»), որը նրան մեղադրում էր մասոնականների հետ կապի մեջ և պատասխան էր պահանջում «երկիրը կառավարելու իր մի քանի գործողությունների համար»: ԵրիտԹուրքերի ջանքերն այս ընկերությանն իր կողմը գրավելու՝ անցան ապարդյուն: Մի տեղեկագրում նշվում է նաև տեղի սոցիալիստների հակաթիհադական դիրքորոշման մասին: Նրանք երիտԹուրքերին մեղադրում էին ոչ Թուրք ժողովուրդների օսմանացման քաղաքականության մեջ[114]: Ադրիանապոլսում արտասանած ճառում Թալեաթն

112 Գանգրունի Հ., նշվ. աշխ., էջ 397:
113 «Ազատամարտ», 1912, թիվ 807:
114 АВПР, «Политархив», д. 1155, лл. 4-5.

իթիլաֆի ծրագիրը համարեց ազգադավ, որի իրագործումը կնշանակեր ոչ միայն կայսրության կործանում, այլև ողջ մահմեդականության տիրապետող դիրքի կորուստ[115]: Դա Թուրքերին զգաստացրեց, մանավանդ, որ երիտթուրքերը կրքեր բորբոքելու համար ասում էին. «Դուք հասկանում եք, թե դա (իթիլաֆը) ինչ կուսակցություն է, եթե բոլոր քրիստոնյաները նրա հետ են»[116]:

Իթիլաֆի թեկնածուներից մեկը՝ Լյուտֆի Ֆիքրին Բեյրութում հայտարարեց, որ ժողովուրդների միացումն ու ձուլումն անհնար է: «Օսմանիզմի» գաղափարը չի կարելի արտահայտել «իթիհադ» բառով: «Իթիլաֆ» (Համաձայնություն) բառը շատ ավելի ճիշտ է արտահայտում միտքը[117]: Ընտրությունների ընթացքում երկու կուսակցություններն էլ դիմեցին կեղծիքների ու բռնությունների, բայց քանի որ իշխանությունը երիտթուրքերի ձեռքում էր, նրանց հնարավորությունները շատ ավելի մեծ էին: Քաղաքներում ոտքի հանվեց մահմեդական ամբողջ տականքը, որի հետևանքով ընտրություններին մասնակցելը քրիստոնյաների համար ոչ միայն տհաճ էր, այլև վտանգավոր[118]: Սալոնիկում,– նշում է Ռուսաստանի հյուպատոս Բեյլաևը,– պատգամավորները ոչ թե ընտրվում, այլ նշանակվում էին իթիհադի կոմիտեի կողմից՝ գործադրելով ամենաայլանդակ բնույթի կեղծիքներ ու բռնություններ, այդ թվում նաև ընդդիմադիր ուժերի ղեկավարների ձերբակալություններ[119]: Ընտրությունների համակարգը նույնիսկ կեղծիքների համար դուռ էր բացում: Ադրիանապոլսի 0,5 միլիոն քրիստոնյաները կարողացան ընտրել միայն մեկ քրիստոնյա (հայ) պատգամավոր[120]: Էրզրումում Ռուսաստանի լիազոր հյուպատոս Շորիտերը դեսպան Ն. Զարիկովին գրում է. «Ոստիկանությունը բծախնդիր ստուգում է Էրզրումի ընտրության իրավունք ունեցող թուրքերի թիվը, անգամ այն մեծացնում է, որպեսզի հայերից ընտրվի ոչ թե երկու (ինչպես նախորդ ընտրություններին), այլ մեկ պատգամավոր»[121]: Այդ ընտրությունները կնքվեցին «Մահակի միջոցով կատարված ընտրություններ» անունով:

1910թ. դավադրությունը հարկադրեց երիտթուրք պարագլուխներին, նկատի ունենալով իրավիճակի վտանգավորությունը, բռնել ժամանակավոր նահանջի ուղին: 1911թ. հրաժարական տվեց Թալեաթը: Նույն թվի ապրիլին խորհրդարանում իթիհադի խմբակցությունը մասնատվեց, որի անդամների մեծ մասը Հոջա Մեջդիի ղեկավարությամբ ստեղծեց «Տարակարծիքների խմբակցություն, որը համընդհանուր պայքար հայտարարեց մասոնականությանը, ինչպես նաև իթիհադի բռնատիրությանը»: Վերջինս ահաբեկված էր և համաձայնեց ներկայացված բոլոր 10-ը պահանջներին՝ դրանց վերջնական ընդունման իրավասությունը թողնելով համագումարին: Սաղրխի հրատարակած ծրագրում երիտթուրքերի կուսակցության մասին կարդում ենք. «Կոմիտեն (երիտթուրքական) պետք է զարգանա բնականոն պայմաններում, որպեսզի կարողանա դառնալ, առանց ցեղի ու կրոնի խտրականության, բոլոր օսմանցիների ամենահզոր կազմակերպությունը: Կոմիտեն պետք է ձերբազատվի «գաղտնի կառավարության նկարագրից»: Բանակի պարտականությունը սահմանադրության, այլ ոչ թե առանձին շրջանակների, քաղաքական կարծիքների պաշտպանությունն է: Սպաներն իրավունք չունեն ոչ քաղաքականությամբ զբաղվել և ոչ էլ կոմիտեների անդամ լինել: «Իթիհադը երկրի բոլոր հեղափոխական ուժերի ձգտումների արտահայտիչը չէ: Նոր Թուրքիան ստեղծվել է... խոնարհ ու համեստ քաղաքացիների միասնական ջանքերով: Օսմանյան տարբեր տարրերի միությունը չի կարող տեղի ունենալ այս կամ այն անհատի շուրջ: Սակայն նաև չպետք է կուրորեն ենթարկվել «ամբոխի տրամաբանությանը»՝ այն դնելով ազգային վեհապետության տեղ, որովհետև ամբոխի մոլեռանդությանը ենթարկվելը երկիրը կտանի դեպի կործանում»[122]: Սաղրխին զորացրեցին: Պաշտոնաթող գեներալն անցավ գավառները և լայն քարոզչություն ծավալեց մասոնականության և իթիհադի պարագլուխների դեմ: Այդ քարոզչության սուր ծայրն ուղղված էր Թալեաթի դեմ, որը ՆԳ նախարարի պաշտոնից հրաժարվելուց հետո գլխավորում էր իթիհադի խորհրդարանական խմբակցությունը: Քննադատության կրակ էր տեղում նաև ֆինանսների նախարար, ազգությամբ հրեա, Ջավիդի, «Թանին»-ի խմբագիր Հ. Ջահիդի, կրթության նախարար Ի. Հակի հասցեին: Նրանք բոլորը հարկադրված եղան հրաժարական տալ: Դրա փոխարեն իթիհադն ահաբեկչության միջոցով մեկը մյուսի հետևից շարքից հանեց ընդդիմության շատ գործիչների:

1912թ. ապրիլի 19-ի ընտրություններին իթիհադի դեմ հանդես եկավ սպայությունը և իթիհադական կառավարությանը հարկադրեց հրաժարական տալ: Մանդելշտամը 1913 թվի հունվարի 10–ից հունիսի 29-ը ընկած շրջանն անվանեց «Երիտթուրքերի սարսափի» շրջան: Այդ իրողությունը երիտթուրքերին ավելի մղեց համիսլամության գիրկը. Կ. Պոլսում ստեղծվեցին «Իսլամական միություն» և «Հանրային կրթության համիսլամական ընկերություն» կազմակերպությունները: Գաղտնի գործակալներ ուղարկվեցին Հնդկաստան, Եգիպտոս, Ռուսաստան: Նույն ժամանակ պանթուրանականները Պոլսում երեք ակումբ բացեցին ու պանթուրքիստական լայն քարոզչություն ծավալեցին: Այսպիսով, շարունակում է Ա. Մանդելշտամը, երիտթուրքերը, «թերացան Օսմանյան կայսրությունը վերածնելու իրենց առաքելության մեջ, որովհետև ազատությունը զոհեցին բռնությանը, վերադարձան դեպի անհաշտ համիսլամականություն և բռնաբարեցին ազգերի նվիրական իրավունքները»[123]:

Երիտթուրքերն անմիտ էին համարում բարենորոգումները, որովհետև, ինչպես հայտարարեց Թալեաթը, հայերն արևելյան նահանգներում կազմում են ազգաբնակչության միայն 20%-ը[124]:

Օլֆերովը 1911թ. փետրվարի 20-ին գրում է, որ «Դաշնակցություն կուսակցության անդամները խզելով իրենց հարաբերությունները տեղական երիտթուրքերի հետ, որոնցից սպասում էին բարենորոգում, այժմ ավելի մեծ կրքոտությամբ են քննադատում թուրքական կառավարության միջոցառումները...»[125]: Այո՛, նույն կառքին լծված թուրքական և հայկական կուսակցությունների կապը գնալով թուլանում էր: «Դաշնակցական կուսակցությունը նետվեց ցարիզմի, իսկ երիտթուրքերը՝ համիդականության գիրկը: Երկու գրկերն էլ... ընդհանուր գերեզման էին թուրքահայերի համար»[126]:

«Հորիզոնը» վկայում է. «Քրիստոնյաների դեմ պայքարը մայրաքաղաքից անցավ գավառները՝ Ամասիա, Սեբաստիա, Կեսարիա, Տրապիզոն: Պատրիարքություն, խմբագրություններ գնում էր նամակների և հեռագրերի հոսք: Նրանցում խոսվում է ահագնացող վտանգի մասին...»[127]:

Կառավարության գործակալները, բարենորոգումների անցկացման կապակցությամբ թուրք և քուրդ զանգվածներին թունավորում են հայերի դեմ: «Կոտորածների վախն այնքան մեծ ու իրական է, որ փարիզյան հայասեր և Արևելքի գերազանց գիտակ Վիկտոր Բերարն արդեն տագնապ է հնչեցնում այս գարնանը թուրքերը Հայաստանում կոտորածներ են կազմակերպելու»[128]:

Պարտությունները Բալկանյան ռազմաճակատում սրեցին հակասությունները նաև կառավարության ներսում, մասնավորապես Ղազի Մուխտարի և Քյամիլի միջև, մանավանդ այն բանից հետո, երբ բուլղարական բանակը սկսեց սպառնալ Կ.Պոլսին, իսկ հույները տիրացան ամբողջ Մակեդոնիային: Քյամիլի կառավարությունը կատարյալ անկարող ու ապաշնորհ գտնվեց, որին տապալելու պատրվակ դարձավ մեծ վեզիրի կողմից այսպես կոչված «Երևելիների ժողովի» կազմակերպումը: Երիտթուրքերի պարագլուխները 1913թ. հունվարի 23-ին հարձակում կազմակերպեցին Բ. Դռան վրա: Գործողությունները ղեկավարում էր Ջեմալը: Թալեաթի ազդանշանով Բ. Դռան դիմացի «Պաշտոնատարների սրճարանից» մոտ 10 հոգի ավանդական տարազով և ձեռներին մեկական ձող ու կարմիր–կանաչ դրոշ բարձրաձայն աղոթելով՝ շարժվեցին դեպի կառավարական տուն ու փակեցին մուտքը: Գնալով բազմությունը մեծացավ: Կազմակերպիչներն աշխատում էին տպավորություն ստեղծել, թե Բ. Դռան վրա հարձակվողները սուլթանական վարչակարգի կողմնակիցներն էին: Էնվերը, նրա եղբայր Նուրին, հորեղբայր Հալիլն ու չորս

115 Ն. տ., Գ. 214, ս. 8:
116 Ն. տ.:
117 «Ազատամարտ», 1912, թիվ 819:
118 Ն. տ., Գ. 214, ս. 5:
119 Ն. տ., Գ. 1155, ս. 48:
120 Ն. տ., Գ. 1155, ս. 16:
121 АВПР, Посольство в К-поле, д. 2682, л. 8.
122 Գանդրունի Հ., նշվ. աշխ., էջ 394-395:

123 Mandelshtam A. N. Le Sorte de l'Empire Ottoman, Lausanne-Paris, 1917, p. 128.
124 «Mecheroutiette», June, 1911.
125 АВПР, «Политархив», д. 719, л. 99.
126 Լեո Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հ. 2, էջ 65:
127 «Հորիզոն», 1912, թիվ 259:
128 Ն. տ., թիվ 29:

ենթասպաներ մտան ներս: Էնվերի ատրճանակի զնդակից սպանվեց ռազմական նախարար Նազիմը: Քիչ անց ամբողջ քաղաքն արդեն գիտեր, որ Քյամիլի կառավարությունը տապալվել է: Էնվերը մեծ վեզիրի պաշտոնի համար սուլթանին առաջարկեց Շևքեթի թեկնածությունը, որը և Փաղիշահի կողմից խոնարհաբար հաստատվեց: Շևքեթը միաժամանակ ռազմական նախարարն էր: Շեյխ ուլ իսլամ նշանակվեց Մուսա Քյազիմը: Թալեաթին տրվեց կապի, Իբրահիմ Բեյին՝ արդարադատության, Շուքրիին՝ կրթության նախարարությունները: Դա ջախջախիչ հարված էր իթիլաֆին, որն այլևս ոտքի վրա մնալ չկարողացավ ու բաժանվեց երեք մասի՝ Սաբահեդդինի կողմնակիցներ՝ կայսրության ապակենտրոնացման քաղաքականության ջատագովներ, Քյամիլի և Սայիդի կողմնակիցներ՝ պահպանողականներ, Հուրրիեթ և իթիլաֆի կուսակից հոջաներ՝ Անգլիայի վարչակարգն ընդօրինակելու համար պայքարողներ:

Հեղաշրջումը վրեժխնդրության մղեց իթիլաֆին հարող երիտասարդությանը: Հունիսի 11-ին ռազմական նախարարության մուտքի մոտ Շևքեթը սպանվեց: Ռազմական դատարանն այս սպանության գործով 24 հոգու մահվան դատապարտեց, 650 հոգի աքսորվեց: Կայսրությունում հաստատվեց իթիհադի բռնատիրություն[129]: Կատարվածն ավելի քան անհանգստացրեց հայերին: Հնչակյան կենտրոնը մի կոչ հրապարակեց, որում կա հետևյալ հարցը. «Թուրքիոյ նոր տերերուն նպատակը չէ՞ բնաջինջ ընել աշխատասեր, քաղաքակիրթ և կորովի ազգ մը»: Մենք թուրք ժողովուրդին դեմ չենք, դժբախտաբար ան տիրող դասակարգին գործիքը կը դառնայ յաճախ և չերկրորդեր հայ ժողովուրդի ջանքերը երկրին ներս ընդհանուր դրութիւնը բարելավելու համար»: Կոչում նաև շարադրված էր Հայկական հարցի լուծման հնչակյան տարբերակը. «...Հայկական հարցի անմիջական լուծումը դարձել է մի ստիպողական անհրաժեշտություն, և այդ լուծումը պետք է լինի ընդարձակ ռամկավարական ոգով, բնական ու պատմական պայմաններին համաձայն և ամփոփուած այնպիսի ձևերում, որ տրուի ազատ ասպարեզ բոլոր քաղաքական, սոցիալական ու տնտեսական գաղափարներին...»[130]: Երիտթուրքական սահմանադրությունն անվանվում է «զինվորական ըմբոստության վիժվածք»: Բարենորոգումը թուրք ժողովրդի համար չունի որևէ հրապույր, որովհետև նա միշտ դեմ է եղել բարենորոգմանը, որից օգտվել են տիրող վարչակարգերը: Իսկ հպատակ ժողովուրդները շարունակում են ձգտել կյանքի և ունեցվածքի անվտանգության երաշխիքների: «Թուրքը բնաջինջ ընել կը ձգտեր այն քրիստոնեա ազգը, որ կը փորձեր արդար և իրավացի պահանջներ ներկայացնել: Ահա այդպես է, որ ահավոր ճնշումներն ու կոտորածները դարձած են ծրագրուած ավանդական քաղաքականութիւն՝ որուն դիմած են սուլթաններն ամեն անգամ, երբ ուզեցել են ոչնչացնել իրենց իշխանութեան տակ հեծող այս կամ այն քրիստոնյա ժողովրդին...»[131]: «Մեծ Հայքի 2/3-ը հայեր են, մնացածը մոտ 800 հազար հոգի՝ մահմեդականներ... Մենք չենք ուզեր, որ այսօրուան ճնշողները վաղուան ճնշուածները դառնան»[132]:

Հնչակյան կուսակցության 7-րդ համագումարը (1913թ. սեպտեմբեր) ըստ ամենայնի դրեց ջարդի վտանգին ընդդիմանալու խնդիրը: «Համոզուած ըլլալով, որ կուսակցություն մը, որպիսին է Ս.Դ.Հ.Կ.–ը, Օսմանեան պետութեան տուած ներկայ պայմաններով չի կրնար այլևս իր որդեգրած գաղափարներու իրականացումը հետապնդել և հայ ազգի գլխուն կախուած մահաբեր սուրը ետ մղել... –այսուհետև կանգնիլ միմիայն իր սկզբունքներեն բխող ոչ օրինական գետնին վրայ... մինչև որ ավելի քաղաքական ու տնտեսական նպաստավոր պայմաններ ստեղծուին»: Համագումարը որոշեց պաշտպանել ինքնավար Հայաստանի գաղափարը: Նկատի ունենալով, որ իթիհադի քաղաքականությունը վտանգավոր ու մնասակար է բաղկացուցիչ տարրերի համար՝ խստորեն «կարգելէ իր բոլոր գործադիր մարմիններուն որևէ գործակցութիւն ունենալ անոր հետ և կորոշէ ամեն միջոցներով անողոք պայքար մղել անոր դեմ... Կորոշէ բոլոր շրջանները պարտավորեցնել ուժ տալու Տաճկահայաստանին. Տաճկահայ դատին»: «Երիտասարդ Հայաստան» թերթը գրեց. «Հայ յեղափոխութիւնը դաշոյնը պատրաստ պահելու է իր պատեանում... ...Մեր մինիմալ պահանջն է ինքնավար Հայաստան...»:

129 Ռեֆաթ Մ., Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը և իթիհատի հայաջինջ ծրագրերը, Երևան, 1990, էջ 53-62:
130 Գանգրունի Հ., նշվ. աշխ., էջ 384:
131 Ն. տ.:
132 Ն. տ., էջ 385:

Ս. Սապահ Գյուլյանի կարծիքով հայ ժողովուրդն իր խանդավառության օրերից սթափվել է և սկսել է վերագնահատել սահմանադրությունն ու իթիհադական քաղաքականության միտումները. «Ս.Դ.Հ. կուսակցությունը ձգտում է արթնացնել ժողովրդին և ինքնապաշտպանութեան մղել...»: Նաև նշվում էր, որ հայ աղաներն ու էֆենդիները «դեռ իրենց թրքասիրական զգացումներից բոլորովին վար չեն իջել, թև տատանողական դիրքի մեջ են մտել»: Հայ գյուղացին, հայ աշխատավորը շատ հստակ տեսնում էին բռնագրավման և քայքայման այն գործընթացը, որ հետապնդում էր իթիհադը և Հնչակն «իր ուժերի սահմանների մեջ ջանք է թափում կազմակերպելու և զինուելու ամեն պատահականութեանց հանդէպ»:

«Հնչակ» թերթն ահազանգեց. «Իթիհատը ոգի ի բուն աշխատում է հայկական մեծ կոտորած սարքել...»:

Եվ իսկապես, պարտվելով Բալկանյան պատերազմում, երիտթուրքերը կացությունը սթափ գնահատելու փոխարեն, պարտության պատճառները օսմանյան փտած քաղաքական համակարգի և տնտեսական հետամնացության մեջ փնտրելու փոխարեն, այն վերագրեցին հպատակ ժողովուրդների դավաճանությանը, նրանց ազգային շարժումներին և որոշեցին հաշվեհարդարի ենթարկել այդ ժողովուրդներին, և առաջին հերթին, հայերին: Սապահ Գյուլյանը գրեց. «Երեք անգամ ճամփորդեցի Փոքր Հայք, վերջին եզրակացութիւնս՝ կամ մենք պիտի սպանենք իթիհատը, կամ իթիհատն է. որ մեզ պիտի սպանե... ինչ ալ պատահի, վաղ թե ուշ իթիհատն իր արմատական հայաջինջ քաղաքականությունը ձեռք պիտի առնե, ուստի ոչ միայն պետք է պատրաստուիլ, այլ իթիհատին սպանելը քաղաքական առաջին և անմիջական ձգտումը պիտի ըլլայ ժամանակի ոգին ու պահանջը հասկացող հայ գործչի համար»[133]: 1912թ. սեպտեմբերի 26-ին Կ. Պոլսում տեղի ունեցան բանակցություններ Հնչակի և իթիհադի միջև: Հնչակյանները երիտթուրքերին մեղադրեցին պանիսլամական և պանթուրքական, ոչ մահմեդական ժողովուրդներին ուծացնելու և ոչնչացնելու քաղաքականության մեջ:

«Հայկական ազգային ժողով չի կարող լինել, քանի որ հայ ազգ գոյություն չունի, Թուրքիայում մեկ ազգություն կա՝ օսմանյան»,– գրեց երիտթուրքական «Թանին» թերթը: Հուսեին Ջավիդի կարծիքով. «Օսմանյան կայսրության արևելյան նահանգների բարենորոգման համար 61-րդ հոդվածի կիրառումն անհնար է, և մենք երբեք նման հարցերով զբաղվել չենք կարող»: Երիտթուրքական լրագրերում բացահայտ քարոզչություն էր տարվում հայկական բարձր կարգի ուսումնական հաստատությունները փակելու համար, որովհետև այդ դպրոցների գոյությունը համարում էին օսմանյան պետության թուլացման պատճառ: Հայկական լիցեյները հիմնադրելու թույլտվությունը համարվեց կոպիտ սխալ[134]: Սապահ Գյուլյանն իթիհադին անվանեց. «Ահավոր, հայերին սպանող...»[135]: Երբ 1913-ին երիտթուրքերն իշխանութեան վերադարձան, թուրք գեներալներից մեկը հայտարարեց, որ նրանց հարվածը «նախ Թուրքիոյ բաղկացուցիչ տարրերը պիտի զգան, ի մասնավորի հայերդ: Եվ այդ քայլը կը նշանակե նստած ճիւղն իր ձեռքով կտրել»:

Բնականաբար թուրք իրականության և երիտթուրքերի քաղաքականության նման գնահատականներից հետևությունը կարող էր լինել մեկը՝ **անջատվել այդ ջարդարար համակարգից, ձեռք բերել անկախություն կամ ինքնավարություն:** Այսպիսով, 1913թ. հնչակյան կուսակցությունը, վերջապես գործնականում առաջ քաշեց անկախության համար պայքարի անհրաժեշտությունը: Հնչակյանների Կոստանցիայի համագումարն արձանագրելով, որ «...իթիհադ կուսակցությունը մարմնավորում է ագրեսիվ նացիոնալիզմ իր ամբողջ ստորությամբ ու անազնվությամբ, որ այն վտանգավոր ու մնասակար է... կուսակցությունը բոլոր միջոցներով կմղի անողոք պայքար, որպեսզի նրան ջախջախի ու տապալի»[136]:

Կանխազգալով հայկական ողբերգությունը՝ «Հնչակը» 1913թ. մարտին գրում է. «Որպես անվիճելի ճշմարտություն հետևում է հետևյալը՝ հենց որ հարմար պահ ներկայանա, համոզված լինելով, որ իր արարքները կմնան առանց հետևանքի, թուրքական ազգայնամոլությունը, որի ձեռքում է այժմ իշխանությունը, չի տատանվի սկսելու հայերի ոչնչացումը: Եվ այս անգամ, ավելի անխնա,

133 Գանգրունի Հ., նշվ. աշխ., էջ 401:
134 Մկրտչյան Ռ., նշվ. աշխ., էջ 180-181:
135 Սապահ Գյուլյան Ս., նշվ. աշխ., էջ 283:
136 Կիտուր Ս., նշվ. աշխ., էջ 364:

քան 1895–96 թվերին, ավելի մոլեգին, քան Ադանայի ողբերգության ժամանակ»»: Կոտորածների հոգեբանական պատճառը նույնն էր համարվում: Այն խոր արմատներ ուներ, որին «չի կարելի հեշտությամբ դուրս մղել Թուրք նացիոնալիստների հիմար գլուխներից», Թուրքական նացիոնալիզմի ներկայացուցիչները ոչ մի կերպ չէին կարողանում հաշտվել հայ ժողովրդի գոյության և կենսունակության հետ, նրանց ընդհանուր մարտավարությունն էր՝ «սահմանադրության պատրանքով հայերին օրորելով, նրանց ոչնչացնել, կոտորել»[137]: «...Քանի որ Թուրքական նացիոնալիզմը թաքուն պատրաստվում է հարձակման, պետք է օգտագործել բոլոր միջոցները, որպեսզի նրան ափթ չտրվի: Միաժամանակ անհրաժեշտ է հոգ տանել քաղաքացիական պաշտպանության մասին»[138]: Այս միտքը հաստատելու համար մի շարք փաստեր էին բերվում, այդ թվում նաև երիտթուրքերի պաշտոնաթերթ «Թանինի» հրապարակումը. «Ոչինչ փոխուած է Թուրքիոյ իրականութենեն ներս,– գրել է Հնչակյան 20 նահատակներից մեկը՝ Ռ. Կարապետյանը,– սուլթանիզմեն շատ ավելի վտանգավոր են երիտթուրքերը, որոնց ազգայնական մեծապետականութիւնը մեծ աղետի մը ձայները լսել կուտայ»[139]:

Ադանայի ջարդից հետո նախապատրաստվում էր կոտորած Կեսարիայում: «Մարտին տեսանք, -գրում է Ա. Գալֆայանը,- որ հարիւրավոր վրաններ կան Կեսարիոյ շուրջ, Թուրք զինեալ խումբերով լեցուն»: Հայերը Ազատ Ոստանիկի (Մ. Սարգսյան) ղեկավարությամբ պատրաստվեցին ինքնապաշտպանության: Մահմեդական բնակչությունը զինված էր, իսկ զենք ստանալու հայերի խնդրանքն իշխանությունները մերժեցին: Ապրիլի 12-ին Ֆերիդը 200 զինյալներով պաշարեց Հնչակյանների ակումբը և պահանջեց հանձնել Ա. Ոստանիկին: Վերջինս զենքը ձեռքին հայտնվեց տանտիրին ու բղավեց. «Հեռացեք... եթե չեք ուզում շան սատակ դառնալ»: Թուրք ամբոխը փախավ: Ջարդ տեղի չունեցավ: Քիչ անց Ոստանիկը կամովին հանձնվեց իշխանություններին, իսկ 1913-ին մեկնեց Վան, որտեղ սպանվեց իթիհադականի արձակած գնդակից[140]:

«Հոն ուր կախաղաններն են ճոճում,
Ացատութիւնն է ման գալիս,
Հոն, ուր մեռելներն են ննջում,
Ցարութիւնն է մոտալուտ»
(Փարամազ):

1912թ. փետրվարի 3-ին Հնչակյանների և իթիլաֆականների միջև կնքված համագործակցության պայմանագրում[141] ասվում էր. «Օսմանեան պետութեան բաղկացուցիչ ազգութիւնների քաղաքական իրաւունքներն ամբողջութեամբ պետք է պաշտպանվեն և պետք է լիովին մերժվի մեկ ազգի քաղաքական ստորադասումը մյուսի կողմից»[142]: 1913թ. հունվարի 30-ին Հնչակը Փարիզում հրապարակեց մի կոչ, որը դատապարտում էր իմպերիալիստական պատերազմ հրահրողներին: «Մենք կրում ենք մեր սրտում անհաշտ և անսահման ատելություն դեպի այն պատերազմները, որոնց նպատակն է յափշտակութիւն, նուաճում և մի ժողովրդի տիրապետութիւնը միւսի վրայ»[143]: Հնչակը ջանքեր էր լարում կայսրությունում «բազմազգ համերաշխություն» ստեղծելու ընդդեմ պատերազմն ու այլամերժությունը: Այդ փնտրտուքի ընթացքում կապեր հաստատեց նաև երիտթուրքական այն ուժերի հետ, ովքեր դեմ էին իթիհադի վարած քաղաքականությանը: Դրանցից մեկը իրավաբան Մ. Ռեթիկն էր, ով հավանություն էր տալիս Հնչակյան ծրագրին և կողմնակից էր համատեղ պայքարին: Հնչակյանների աջակցությամբ նա ստեղծեց մի կազմակերպություն, որին անդամագրվեցին նաև չերքեզներ և այլանացիներ: Հնչակյանները Մ. Ռեթիկի թեկնածությունն առաջադրեցին օսմանյան խորհրդարանում ընդգրկելու համար[144]:

137 «Հնչակ», 1913, թիվ 3:
138 Միքայելեան Ռ., նշվ. աշխ., էջ 188:
139 Գանգրունի Հ., նշվ. աշխ., էջ 281:
140 Գալֆայեան Ա. քհն., Գիրք եղից հայոց, Կ. Պոլիս, 1920:
141 ՀՀ ՊԿՊԱ, Ֆ 4045, ց. 1, գ. 167:
142 Ն. տ.:
143 «Պատմութիւն Ս. Դ., Հնչակեան կուսակցութեան Հ. Ա.», Բեյրութ, 1963, էջ 352:
144 Սապահ Գիլկեան Ս., Պատասխանատուներն, Բեյրութ, 1974, էջ 278:

Մի հանգամանք ևս. Հնչակը Հայկական հարցի լուծման գործում հույսը կապում էր Ռուսաստանի հետ: Տիրապետող կարծիք էր, որ Ռուսաստանի ռազմավարական շահերը նրան կմղի ստեղծելու ինքնավար Հայաստան[145]: Այդ ինքնավար Հայաստանի մեջ բացի վեց վիլայեթներից, մտնելու էին նաև Կիլիկիան, Ուրֆան, Ադանան, Գուլան, Ճեպելը-Բերեքեթը, Մերսինը, Մարաշը: Կուսակցության շատ գործիչներ նույնպես գտնում էին, որ եվրոպական տերություններն անպայման կօգնեն հայերին, եթե վերջինները բարձրացնեն իրենց հարցը և այն լսելի դարձնեն: Բայց փոքր չէր նաև նրանց թիվը, ովքեր մերժում էին այդ կողմնորոշումը:

Սյունին գտնում է. «Եվրոպական դիվանագիտությունը չէ, որ իր պարտականութիւնն ու պաշտոնը համարե քաղաքական աշխարհում հայկական խնդիր հուզելը... Հնչակները իրենց ուժերը կը նետեն Հայաստանի ազատութեան կռվի մեջ, և այն ժամանակ դիվանագիտութիւնն էլ ափթ, տրամադրութիւն կունենայ զբաղվելու հայկական խնդրով»[146]: Երբ Ռուսաստանը բարձրացրեց հայկական բարեփոխումների հարցը, Հնչակյանները Բ. Դռանը և երիտթուրքերին ներկայացրեցին Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու պահանջը: Հնչակը ծավալում էր նաև սոցիալական շարժում: 1910թ. Կ. Պոլսում ստեղծվեց «Սոցիալ-դեմոկրատական ուսանողական միություն», որի «Կայծ» հանդեսը 1911-1914 թվերին սոցիալիստական քարոզչություն էր տանում:

Հնչակյանների 7-րդ համագումարն արձանագրելով, թե երիտթուրքերը ոչ միայն դրական ոչինչ չեն արել հայ ժողովրդի վիճակն ինչ-որ չափով բարվոքելու համար, այլև նրանց ազգային խտրական քաղաքականությունն ավելի էր ծանրացրել հայության վիճակը: Որոշեց անցնել անլեգալ գործունեության, խզել բոլոր հարաբերությունները երիտթուրքական կայսրության հետ: Հնչակի Թուրքիայի մասնաճյուղի 3-րդ պատգամավորական ժողովը (24.07.1914) կոչ արեց արևմտահայությանը՝ կանգնել ինքնապաշտպանության: Ժողովի տարածած հայտարարության մեջ մասնավորապես ասվում է. «...Աշխարհասասան փոթորիկին՝ Թուրքիոյ և անոր ենթակայ ազգերու և, մանավանդ, մեր դժբախտ ժողովրդի ճակատագրին վրայ կատարվելիք ահռելի ավերի արդիւնքը պիտի կրենք շուտով»[147]:

ՎԵՐԱԿԱԶՄՅԱԼ ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ. - Այս կուսակցության դիրքորոշումն էր. Արևմտյան Հայաստանը «կայսրության անբաժանելի մաս նկատելով հանդերձ, մենք պիտի աշխատենք, որ հայկական գաղութները վայելեն տեղական ինքնավարություն վարչական, կրթական և օրենսդրական գործերու մեջ»[148]: Խնդրի լուծման ճանապարհին անհրաժեշտ էր համարվում հայերի պարտադիր զինվորական ծառայությունը, համիդիե գնդերի ցրումը, պատգամավորների արդար ընտրությունը[149]: Կուսակցությունը 1908թ. սեպտեմբերի 12-ին ազդարարեց՝ կկանգնի այն ընդդիմադիր ուժերի կողքին, ովքեր «փոթորկոտ օրերուն մեջ արդարութեան աննկուն նախակարապետները եղան»[150]:

Հայտարարությունում նաև ասվում էր, թե երիտթուրքերը «դեռ երեկ հրեշավոր բռնակալութեան մը դեմ արիաբար մաքառեցան ու այսօր ազատութեան անհողդողդ ախոյանը մնալ կը շարունակեն անխտրական գնահատելի ոգով»[151]:

Երիտթուրքական հեղաշրջումը համարվում էր «համերաշխ և հավաքական շարժում»[152]: Շուտով վերակազմյալները հրաժարվեցին Հայաստանի ազատագրության գաղափարից և կանգնեցին կայսրության տարածքային ամբողջականությունը պաշտպանելու դիրքերում. «Վերակազմեալ Հնչակեան կուսակցությունը որևէ անջատողական ձգտում և նպատակ չունի»[153]:

Դեռ 1909թ. հունվարին կուսակցության ղեկավարներից Ա. Արզոյանը հայտարարեց, թե հայերը չեն քարոզում ոչ մի անջատողական գաղափար և «մտադրութիւն չունեն քայքայելու Օսմանյան

145 «Հնչակ», 1913, թիվ 2:
146 Ն. տ.:
147 «Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան», հ. Ա., էջ 374:
148 Տե՛ս Գալֆայեան Ա. քհն. Գիրք եղից հայոց, Կ. Պոլիս, 1920:
149 «Ձայն Հայրենեաց» (Կ. Պոլիս), 23.10.190:8
150 ՀՀ ՊԿՊԱ, ֆ 408, ց. 1, գ. 162, թ. 1:
151 ՀՀ ՊԿՊԱ, ֆ 282, ց. 1, գ. 2:
152 Ն. տ.:
153 Ն. տ.:

կայսրության միասնությունը, նրանք երազում են օսմանյան ժողովուրդների սահմանադրական հզոր հայրենիքը տեսնել երջանիկ, որն օտարերկրացիների մեջ հարուցի հարգանք»[154]:

«Ձայն հայրենեացը» գտնում էր, որ բարենորոգման կարիք ունեն բոլոր ժողովուրդները, բայց այդ բարենորոգումները պիտի սկսել հայերից, ելնելով այն «իրական փաստից, որ կայսրության բոլոր ժողովուրդներից ամենաանտանելին հայերի վիճակն է»[155]: Նաև ասվում էր, թե «խոսելով բարենորոգումների մասին մենք լոկ նկատի ունենք կյանքի, ունեցվածքի անվտանգությունը...»[156]: Նշվում էր, որ կուսակցությունը դադարեցնում է «զինված ապստամբության ծրագիրը», կողմնակից է Օսմանյան կայսրության «ամբողջական պահպանումին»[157]: Կուսակցությունը միաժամանակ հռչակում էր, որ անհրաժեշտության դեպքում, կանգնելու է ինքնապաշտպանության, որպեսզի թույլ չտրվի 61-րդ հոդվածի անտեսում, որովհետև դա կհանգեցնի «հայկական նահանգների խղճալի վիճակի» հավերժացման: Իսկ եթե Բ. Դուրը հօգուտ հայերի մտցնի այնքան բարելավում, ինչքան խոստանում է 61-րդ հոդվածը, այլևս հարկ չի լինի տերություններին դիմելու: Կուսակցության կոչերից մեկում ասվում է, որ իթիհադը երկերեսանի դիրքորոշում ունի՝ խոսքով եղբայրության, հավասարության կողմ է, իսկ գործով թույլատրում է հայերի կեղեքումներ: Չնայած հայերը որևէ անջատողական գաղափարի չեն հարում և «ոչ ալ Օսմանեան կայսրության քաղաքական միութիւնը խանգարելու միտում ունին: Անոնք կփափագին տեսնել Օսմանեան ազգերու սահմանադրական հզոր հայրենիքը հարգուած՝ օտարներեն և երջանիկ՝ ներքնապես»[158]:

Վերակազմյալները Ադանայի կոտորածների մեղավոր համարում էին իթիհադին: «Առավոտ» թերթն իթիհադին սուր քննադատության համար դատի տվեցին[159]: Կուսակցությունը հանդես եկավ հայերից խլված հողերը վերադարձնելու օգտին: Ընդհանուր առմամբ վերակազմյալը վերապահ մոտեցում ուներ տերությունների օգնությանը դիմելուն:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ.– Նույնպես ողջունեց Օսմանյան սահմանադրության հռչակումը, սակայն նաև խորհուրդ էր տալիս չխանդավառվել դրանով, չթուլացնել «լարված, պրկված ջիլերը»: Ռամկավարները գտնում էին, որ հայ հասարակական-քաղաքական ուժերը պարտավոր էին համախմբվել և մշակել միասնական ազգային ծրագիր. «Չէ... հայ հեղափոխութիւնն այնքան թեթևամիտ և ողորմելի չի կարող ըլլալ, որ ներկայ խանդավառութեան մեջ պատասխանատու դերին գիտակցութիւնը կորցնե...»[160]: Ռամկավարները միաժամանակ գտնում էին, որ երիտթուրքական հեղաշրջումից հետո հարկ էր դադարեցնել հեղափոխական գործունեությունը ու զբաղվել սահմանադրական կարգերի ամրապնդմամբ և «երկրին տևական անդորրութիւն ու բարօրութիւն համեմատորեն քիչ ժամանակի մեջ ապահովելու» խնդրով[161]: Նրանք մերժում էին ազգերի ձուլումը: «Մեծամասնութիւն կազմող տարրը պետք է հարգե փոքրամասնութիւններու իրավունքները», դեմ էին օսմանիզմին՝ գտնելով, որ «հայութիւնը կներկայանայ Թուրքիոյ մեջ երկու որոշ հանգամանքով՝ իբրև օսմանեան քաղաքացիութիւն և իբրև հայ ազգութիւն»[162]: Այս կուսակցությունը, բացի Վանից, մյուս նահանգներում թույլ էր և փաստորեն ապավինում էր պատրիարքարանի հովանավորությանը: 1913թ. հունվարին Կ. Պոլսի ռամկավարները հայտարարեցին. «Մենք ապստամբներ չենք, և Հայկական հարցն անջատողական շարժում չէ»[163]: «Տվեք հայ ժողովրդին իր տարրական քաղաքացիական իրավունքները: Մեզ տվեք մեր սուրբ իրավունքը՝ մեր կյանքի, ունեցվածքի և պատվի անձեռնմխելիութիւնը...»[164]: «Մենք մի անգամ ևս մատնանշում ենք, որ հայ ժողովուրդը դժգոհ է, բայց

154 «Ձայն հայրենեաց», 1909, թիվ 11-12:
155 Ն. տ., թիվ 16:
156 Ն. տ.:
157 ՀՀ ՊԿՊԱ, Ֆ 408, ց. 1, գ. 162, թ. 1:
158 «Ձայն հայրենեաց», 118.10.1909:
159 «Մշակ», 23.03.1912:
160 «Ազգ», 29.08.1908:
161 «Բիւզանդիոն», 19.11.1908:
162 Ն. տ.:
163 «Վան-Տոսպ», 1913, թիվ 1:
164 Ն. տ.:

ապստամբ չէ»: Երեսուն տարվա ընթացքում հայն այլ նպատակ չի հետապնդել, բացի իր հողի վրա վերակառուցված, բարենորոգման ենթարկված օսմանյան պետության կազմում ինքնուրույն մշակութային զարգացումից: Միշտ այդպիսին է եղել մեր ազգային նշանաբանը[165]:

Հայ հասարակական-քաղաքական ուժերը մեծ տերությունների օգնությանն ու միջամտությանն էին դիմում, ոչ թե իրենց «սկզբունքային քաղաքական կողմնորոշման» մղումով, այլ այն պարզ պատճառով, որ օսմանյան պետական քաղաքականությունը հայերին զրկել էր քիչ թե շատ «մարդավարի ապրելու», որևէ այլ միջոցի գործադրման հնարավորությունից: Այդպես էր 1877 թվին, այդպես էր նաև առաջին աշխարհամարտի նախօրյակին:

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.– Մ. Օրմանյանը գտնում էր, որ բարձրագույն նպատակն արևմտահայության գոյատևումն էր և սխալ ու վնասակար էր համարում հայ կուսակցությունների կողմնորոշումները դեպի պետությունները: Նա «հեղափոխական միջոցները համարում էր ինքնասպանություն»: Դեմ էր հայերի հարստահարությունների համար փոխհատուցում պահանջելուն: Հայության փրկությունը, գտնում էր նա, «խաղաղության մեջ է»: Սահմանադրություն հռչակելու կապակցությամբ հարկ էր համարում շնորհակալական ուղերձ հղել սուլթանին, բայց հարկադրված եղավ այդ մտքից հրաժարվել, որովհետև, պոլսահայերը խուժեցին պատրիարքարան ու նրան հարկադրեցին հրաժարական տալ:

Մ. Օրմանյանին փոխարինած Ե. Դուրյանը նույնպես հայերին հորդորում էր չհիշել անցյալի դառնությունները, «խաղաղության մեջ է մեր փրկությունը»: Պետք է թուրք եղբայրների հետ քայլել միասին, համոզված, որ «երկրին օրենքը մեկ է, կայսրը մեկ է, երկրի շահերը մեկ են»:

Սահմանադրության հռչակման հանդեպ հայ եկեղեցու դրական մոտեցումն ու ոգևորությունն այնքան մեծ էր, որ անգամ «երկաթե պատրիարք» Մ. Իզմիրլյանը, 1908թ. սեպտեմբերի 22-ին ընտրվելով պատրիարք, հայտարարեց, որ չնայած միդհատյան սահմանադրության կիսատ-պռատության, հայերն այն ընդունեցին խանդավառությամբ: Դա հասկանալի էր, քանի որ սուլթանական վարչակարգի համեմատությամբ «առաջընթաց քայլ էր»: «Ձայն հայրենեացի» 1908թ. նոյեմբերի 6-ի համարում տպագրվեց Իզմիրլյանի հորդորը հայությանը. «Հայոց ազգը՝ հավասարութեան, արդարութեան և ազատութեան վրա հիմնեալ Օսմ. սահմանադրական ազգին մեկ տարրը կազմելով՝ ամենքս պիտի աշխատինք մեր քաղաքացիական պարտականութիւնը կատարելու ընդհանուր երկրին սահմանադրական կազմակերպութեան համար: Այն եղբայրակցութիւնն, որ այս սկզբունքի վրա հաստատուած է, ամենուս անխախտ սկզբունքը պիտի ըլլայ և պիտի աշխատինք հանուն երկրին բարեկարգութեան և յառաջադիմութեան, որովհետև այդ կերպով միայն կարելի է ձեռք բերել երկրին բարիքը, խաղաղութիւնը և անդորրութիւնը... Հայոց ազգը 500 տարիե ի վեր պահած է իր հավատարմութիւնն առ կայսրութիւնն Օսմանեան: Այսօր պարտավոր ենք հավատարիմ մնալու սահմանադրական կառավարութեանը: Մենք ամենքս մեր թիւրք, հայ–հոմեական, հայ-բողոքական և մյուս ամեն կարգի հայրենակիցներու հետ պիտի պահենք մեր համերաշխութիւնը երկրին մեջ»[166]:

Հետաքրքրությունից զուրկ չէ հետևյալ փաստը: Ընդունելով Իզմիրլյանին Աբդուլ Համիդ 2-րդն ասաց. «Շատունց ի վեր հայ և թուրք ժողովրդեան միջև անհամաձայնութեան ոգի մը կտիրեր, ուրկե ես ինքս չափազանց ազդուած էի. այժմ ինքզինքս բարեբախտ կզգամ, որ այդ ամենը վերացան, և եղբայրութիւն, արդարութիւն և հավասարութիւն կտիրեն մեր ժողովրդին ամեն տարրերուն մեջ՝ շնորհիվ սահմանադրութեան, որուն պահպանման համար մեր կողմեն ևս երդում եղած է հրապարակավ ...ես ու նախարարներս ոչ մեկ օժանդակութիւն չպիտի խնայենք հայոց երջանկութեան համար, այսօր ապահով կրնաք ըլլալ: Բարևներս հաղորդեցեք բովանդակ հայ ազգին»[167]:

Ապացուցելու հարկ չկա, որ այս ու նման հայտարարություններն իրավիճակի գնահատականի հարցում կոչված էին խաբել հայությանը:

«Տեղական իշխանությունները,– գրում է պատրիարքն արդարադատության նախարարին,– նվիրագործեցին բոլոր հափշտակություններն ու նաև... իլթիզամի ու թաբուի բազմաթիվ խարդախ գոր-

165 «Վան-Տոսպ», 1913, թիվ 1:
166 «Ձայն հայրենեաց», 06.11.1908:
167 «Մշակ», 29.11.1908:

ծողութիւններ կատարեցին և մուհաջիրներ զետեղեցին բռնի հալածվածների հողերուն վրայ, իւրացնել տալով նաև բազմաթիվ եկեղեցիներու, վանքերու, գերեզմանատներու հողերը, նոյնիսկ շենքերը... Հայերին վիճակվեց ապրելու այնպիսի եղեռնական, սոսկալի արհավիրք, որ Համիդյան շրջանի պայմանական արյունահեղութիւններն ու տառապանքները դերազանցեցին... կառավարութեան տատամսող, վերապահ քաղաքականութիւնն ունեցավ անմիջական ու տխուր ներգործութիւն, վատթարացնելով հայաբնակ նահանգների վիճակը՝ ոչնչացնելով օրենքի ու արդարութեան հոյսերը»: Կառավարության վերաբերմունքը «բռնակալների կողմից իրավամբ մեկնաբանվեց իբրև իրենց քաջալերանք...»: «Պետական խորհրդի անսպասելի միջամտութիւնը չարաչար կնճռոտեց հողային վեճերը, և թշնամութիւն բորբոքելով բռնակալներու և զրկվածներու միջև, պատճառ դարձավ արյունահեղութիւններու և ոճիրներու»: Պատրիարքը նշում է, որ «հուսախաբ է սահմանադրութեան տարիներին կառավարութեան անփույթ վերաբերմունքից, մանավանդ Բաղեշի, Վանի, Դիարբեքիրի և Խարբերդի նահանգների հանդեպ, որտեղ կյանքի, ունեցվածքի և պատվի անվտանգութիւնն իսպառ բացակայում է»[168]:

Պատրիարքարանի տեղեկագրերից մեկում ասվում էր, որ սահմանադրական վարչակարգի վրա դրած հույսերը կարճ ժամանակում ի դերև եղան: Թուրքերի մեծապետական քաղաքականությունը գնալով սաստկացավ: Սահմանադրությունից հինգ տարի անց «Թուրքիայի հայերը թուրքական կառավարության հանդեպ մազի չափ հավատ չունեն»: «...Մայրագոյն յիմարութիւն է հավատալ տակավին,- գրում է Կիլիկիայի Սահակ կաթողիկոսը 1911թ. դեկտեմբերի 11-ին,– որ ներքին խռովութիւններու ատեն տարբեր տարրերու առաջին ջարդարարներն անոնք (թիւրիհադականները) չըլլան»[169]:

ՄԱՄՈՒԼ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ. - Սկզբնական շրջանում սահմանադրության հանդեպ դրական մոտեցում հանդես բերեց հայ մամուլի մեծ մասը: «Արարատը», ողջունելով սահմանադրության վերահաստատումը, միաժամանակ ուշադրություն էր հրավիրում գավառներում հայերի ծանր վիճակին, կոտորածների սպառնալիքին: Բայց որոշ ժամանակ անց հիասթափվելով երիտթուրքերի հայատյաց քաղաքականությունից, նորից հույսը կապեց տերությունների միջամտության հետ: Թերթը գրում է, թե հայ ժողովուրդը «բացարձակ ազատութիւն չէ, որ պահանջում էր, այլ... անձի և ունեցվածքի անձեռնմխելիութիւն»: Թերթն առաջ քաշեց հետևյալ երկընտրանքը. «...Կամ հայը ևս պետք է զինուի, որպեսզի... յուր անձն ու ունեցվածքը պաշտպանել փորձի, կամ այդ մշտական մղձավանջին վերջ դնելու համար պետք է արտաքին միջոցների դիմի...»[170]: «Հայկական հարցն այսօր քաղաքակրթութեան նուրբ ու բազմաձալ լաբիրինթի մեջ է և եթե որևէ լուծում կայ – այդ դիվանագիտութիւնից ու քաղաքականութիւնից է, որ գալու է»[171]:

Եթե «Արարատը» վերապահ մոտեցում ուներ երիտթուրքերին, ապա «Արևելքը» պարզապես փառաբանում էր նոր վարչակարգը, սահմանադրության հռչակումը համարում էր քայլ, որը երջանկացրեց սուլթանի «միլիոնավոր հպատակներուն... և օսմանցիներու պանծալի հայրենիքի առջև զարգացման, ծաղկման և առաջադիմական նոր դարաշրջան մը բացավ»[172]: Թերթն արևմտահայերի համար ոչ անկախություն էր պահանջում և ոչ էլ ինքնավարություն, այլ միայն անձի և ունեցվածքի անվտանգություն: Միաժամանակ մերժում էր երիտթուրքերի օսմանացման և թուրքացման քաղաքականությունը: «Ամենեն փնթի տարրն իսկ,– գրում է Թերթը,- չի զիջաներ ուրանալ իր ցեղային ինքնուրոյնութիւնը և ձուլուել որևէ ուրիշ տարրի հետ» և պահանջում է ազգերը ձուլելով զբաղվելու փոխարեն հոգ տանել ընդհանուրի բարեկեցության համար:

Սահմանադրության հռչակումը ողջունեց նաև «Բիւզանդիոնը», չնայած Աբդուլ Համիդին անվանում էր «Մեծ սուլթան», «Մեծագոյն հայը օսմանեան ժողովրդի»: Թերթը հայերին կոչ էր անում պայքարել սահմանադրության պահպանման համար և թույլ չտալ, որ սև ուժերն ի չիք դարձնեին ճեռք բերված հաղթանակները:

«Մշակը» վերապահ էր սահմանադրության հռչակման գնահատականներում՝ այն համարելով դիվանագիտական քայլ՝ կայսրության գործերին Անգլիայի և Ռուսաստանի միջամտությունը

168 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 15, թ. 3-8:
169 Գանգրունի Հ., նշվ. աշխ., էջ 281:
170 «Արարատ», 1912 սեպտեմբեր, էջ 795-797:
171 Ն. տ., 1913 փետրվար-մարտ, էջ 267-268:
172 «Արևելք», 13.07.1908:

կանխելու համար: Թերթը պահանջում էր ոչ թե կայսրության կազմից դուրս գալ, այլ ապակենտրոնացում: «Միայն վարչական լայն աշխարհայացքը և տեղական ինքնավարության սկզբունքների խոր ըմբռնումը կարող են կանոնավոր և ամուր հիմքերի վրա դնել այնպիսի պետության քաղաքական և քաղաքացիական զարգացումը, ինչպիսին Թուրքիան է, որտեղ խմբված են զանազան ազգագրական, պատմական և մշակութային տարրեր»[173]: Թերթը 1908թ. հեղաշրջումը համարում էր Թուրքիայի ազատության արշալույս և գտնում էր, թե հայերը պետք է աշխատեին պահպանել իրենց ինքնավար իրավունքները՝ Ազգային սահմանադրությունը, որից ավելին պահանջելը վտանգավոր է նրանց ազատագրության գործի համար: «Մշակը» նույնպես դեմ էր օսմանացման քաղաքականությանը: Թող երիտթուրքերը կազմեն «օսմանյան պետություն, որի բաղկացուցիչ մասերը և տարրերը կունենան իրենց սեփական ինքնավարությունը, սեփական մշակույթը, բայց միևնույն ժամանակ կապված, զոդված կլինեն ընդհանուր պետության հետ, իբրև նրա քաղաքացիներ»[174]: Արևմտահայությունը ոչ թե պայքարում էր անկախության, այլ լավագույն դեպքում «մշակութային ինքնավարության, տեղական լայն ինքնավարության համար»[175], այսինքն՝ ձգտում էր դառնալ կայսրության լիիրավ քաղաքացի, դուրս գալ ռայայի վիճակից, որպեսզի չկողոպտվեր և չհալածվեր, կարողանար ազատ տնօրինել իր ազգային գործերը: Նա միայն այդ դեպքում կդառնար «օրինավոր քաղաքացի», չէր դիմի եվրոպական պետությունների օգնությանը և «Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածն ինքնըստինքյան կանհետանա»: Սակայն «Մշակի» հետ էլ կատարվեց նույնը, ինչ մյուս թերթերի ու կուսակցությունների հետ: Համոզվելով, որ երիտթուրքական վարչակարգը ժառանգել էր Համիդյան ջարդարար քաղաքականությունը, Թերթը 1912թ. սեպտեմբերի 5-ին գրեց, որ հայերի վիճակի բարելավումը պահանջում է սահմանելու եվրոպական վերահսկողություն: «Տեղական ինքնավարություն եվրոպացիների հսկողության ներքո և զենք կրելու իրավունք՝ ինքնապաշտպանության համար...», -սա է փրկությունը, գրում է «Մշակը»:

Նույն կամ գրեթե նույն դիրքորոշումն ունեին նաև մամուլի մյուս մարմինները և ոչ միայն դրանք, այլև հասարակական գործիչները: Գր. Զոհրապը ողջունեց սահմանադրության հռչակումը: «Այսուհետև,- գրեց նա,- պիտի քալենք Թուրքաց հետ փոխադարձ հարգանքով ու փոխադարձապես իրավունքներնիս, պարտքերնիս և արժանիքնիս ճանչնալու հիման վրայ»[176]: Նա Ա. Զոպանյանին գրում է. «Օսմանեան Սահմանադրութիւնն անխախտ կերպով վերահաստատուած է հոս... Կառավարութիւնը ժեոն թիւրքերու քոմիթեներու ձեռքին է: Ես այս մարդիկը մոտեն քննելով համոզմունք գոյացուցի, որ ճշմարտապես ազատամիտ և մասնավորապես հայերուն հանդեպ ամեն ազնուութեան ու բարեկամութեան հազար տեսակ ապացոյցներ տալու վրայ են: Հստակ ջանադրութիւն մը ունին մոռցնելու մեզի և ընջելու արիւնալի անցեալը, որ զմեզ իրենցմե կը բաժաներ»[177]: Ազգային ժողովի 15-րդ նիստում նա առաջարկեց. «Ամեն ժամանակ ավելի փարիլ Օսմանեան Սահմանադրութեանը, որ ավել ուժովցած է»[178]: Հուլիսի 31-ին հայ և իսլամ զոհերի հիշատակին նվիրված բազմահազարանոց հանրահավաքում հայտարարեց. «Դավանութիւններս տարբեր, բայց կրոնքնիս մեկ է: Ամենուս ալ կրոնքն ազատութիւնն է»[179]: Խորհրդարանային ընտրությունների ժամանակ հայ քաղաքական գործիչները պատրաստեցին հայ պատգամավորներին կողմնորոշող ծրագիր, և Զոհրապը հասարակական-քաղաքական գրեթե բոլոր հոսանքների՝ դաշնակ, հնչակ, իթիհադական, կաթոլիկ և այլն, անունից հայտարարեց հավատարմություն «իրավանց բացարձակ հավասարութեան վրա հաստատուած սահմանադրական և անբաժանելի օսմանեան հայրենիքի հանդեպ մերժել ամեն անջատողական գաղափար: Թուրքիոյ Հայաստանը այս հայրենիքի անբաժան մասն է»: Ծրագիրը գտնում էր, որ հայ ազգային հարցերը պետք է լուծել ոչ

173 «Մշակ», 27.07.1908:
174 Ն. տ., 25.09.1908:
175 Ն. տ., 03.10.1908:
176 Արևմտահայ գրողների նամակներից, Երևան, 1972, էջ 42:
177Վավերագրական նյութեր արևմտահայության մասին, Երևան, 1983, էջ 5-8:
178 Գանգրունի Հ. նշվ. աշխ., էջ 331:
179 «Հայաստան» (օրաթերթ), 17. 07. 1991:

թե անջատ, այլ «օսմանյան հայրենիքի», «օսմանցիության» ընդհանուր շահերի համակարգում: Այն նախատեսում էր, որ խորհրդարանում և ծերակույտում «իւրաքանչիւր ազգի՝ իր թիվին համեմատ ներկայացուցիչ ունենալու», կրոնի, խղճի, խոսքի, մայրենի լեզվով ուսուցման, զինապարտության հավասարության իրավունքների «խստիվ պահպանման», հափշտակված հողերն ու կալվածքները վերադարձնելու, տուրքերը թեթևացնելու, կատարելու «համիդիե գունտերու խլուսյն ջնջման» մասին պահանջները: Ըստ Զոհրապի՝ «այդ ծրագիրն ամենեն յառաջադիմականն է և գուցե ամենեն կատարեալը»: Նա օսմանյան սահմանադրությունից էր ակնկալում Հայկական հարցի լուծումը: Նույնիսկ, Ադանայի ջարդերից հետո հայերին հորդորում էր հավատ ունենալ խորհրդարանի՝ «այդ գերագույն մարմինին բարի տրամադրութեանց վրայ և ամեն ժամանակ ավելի փարիլ Օսմ. Սահմանադրութեան...»: Ռուսական դեսպան Զարիկովը զարմացած էր Թուրքական կառավարության նկատմամբ Զոհրապի «բարեհաճ վերաբերմունքից»: Բայց Զոհրապն իր հայրենակիցների դժբախտություններին անկարեկից չէր: Նա այցելում էր վարչապետներ Քյամիլ ու Հիլմի փաշաներին, ինչպես նաև Ահմեդ Ռիզային, Թալեաթին, բողոքում հարստահարությունների, սպանությունների դեմ, պահանջում պատժել մեղավորներին: 1911թ. նոյեմբերի 25-ին Ազգային ժողովի փակ նիստում նա հայտարարեց, որ սահմանադրության հաստատումով Թուրքիայում «դեռ բան մը փոխված չէ», որովհետև չի հարգվում «սահմանադրութեան մը առաջին պայմանը՝ հավասարութիւնը», հայն ու իսլամն անհավասար վիճակում են, «այդ հավասարութեան բացակայութիւններ կը գտնենք ամեն տեղ, նույնիսկ Օսմանեան խորհրդարանին մեջ»: Նա միաժամանակ զգուշության կոչ էր անում. «Հայերն են մինակ այս երկրին մեջ, որ առաջին ցնցումեն կոտորածի վտանգի կենթարկվին: Քաղաքական սխալ ավելի ծանր բան մը, ոճիր մը պիտի ըլլար հայոց դժնդակ և վտանգավոր կացութիւն մը ստեղծել մեր ձեռքովը և մեր խոսքերովը»:

Զոհրապը գտնում էր, որ «հայերը երբեք քաղաքական նպատակներ չեն սնուցած: Կեանքի ապահովութիւն, պատվի, ինչքի ապահովութիւն, աշխատելու և իրենց աշխատանքի պտուղը վայելելու կարելիութիւն, իրենց ազգային մշակոյթը պահելու իրավունք - այս ամենը կազմած են և այսօր ալ կը կազմեն իրենց միակ փառասիրութիւնը»: 1911թ. նոյեմբերի 11-ին նա երիտթուրքական վարչապետին գրեց, որ սահմանադրության հռչակումից հետո անցած տարիներին «Անատոլուի հայաբնակ նահանգներու կացութեան մեջ բարելավման ոչ մեկ նշան երևցած է, ընդհակառակը՝ վերջին երկու տարվայ ընթացքին այդ կացութիւնն անհանդուրժելի աստիճանի հասած է: Հիշեալ նահանգներու մեջ ինչքի, կեանքի ու պատվի ապահովութիւն չէ մնացած, ու ջարդի սպառնալիքները պատճառ եղած են, որ ժողովուրդն ահ ու սարսափի մեջ ապրի... կհասկացվի, որ հայաբնակ գավառները դարձեալ արեան մեջ պիտի մնան, ինչպես էր ատեն մը»[180]: Նա Ա. Զոպանյանին ասել է. «Վայ հայ ժողովրդին, եթե համաեվրոպական պատերազմ ծագի, Թուրքերը՝ իթիհատեն ղեկավարված՝ անպատճառ կմիանան Գերմանիային, և Թուրքահայութեան համար մահացու վտանգ կա այն ատեն»[181]: Զոհրապի նշանավոր հիշատակագիրն իրերն իրենց անունով կոչելու համարձակ փաստաթուղթ է, որը հայերի «ճնշումներու ու հարստահարութիւններու անվերջ ու հարաճուն եղանակով մը շարունակումը» համարում է ոչ պատահականություն, ոչ էլ անփութության արդյունք, այլ «պետութեան կողմե որոշուած քաղաքականութեան փաստեր»: Թուրքիայում սահմանադրական վարչակարգը հասել է «բացարձակ սնանկութեան»[182]:

Ադանան հիմնավորապես փոխեց Զոհրապի մոտեցումները, ինչը հանգեցրեց Թշնամական կեցվածքի նոր վարչակազմի հանդեպ: Սակայն լինելով չափավոր հայացքների տեր, Զոհրապը դեմ էր արմատական միջոցներին և հարցի լուծումը տեսնում էր Ռուսաստանի վերահսկողության տակ վեց նահանգներում բարենորոգումներ մտցնելու մեջ: Նա մինչև վերջ էլ հույսը չկտրեց, որ հնարավոր էր ինչ-որ դրական լուծումներ գտնել երիտթուրքական վարչակազմի միջոցով: Նա Սայիդ Հալիմին գրեց, որ սահմանադրության հռչակումից հետո «հայերի վիճակն անտանելի է դարձել... Ունեցվածքի, պատվի և կյանքի անվտանգության մասին խոսք լինել չի կարող, ջարդի սպառնալիքները մշտապես բնակչությանը պահում են սարսափի մեջ», հայաբնակ նահանգները նորից նետվում են «արյան հորձանուտը...», ինչը «պետության կողմից ծրագրված քաղաքականության արդյունք է: Սահմանադրությունից հետո հայերի գոյությունն իսկ անհնար է դառնում Օսմանյան կայսրությունում»[183]: Թվում էր, թե նման եզրահանգման եկած գործիչը ոչ թե կդիմի հայերի համար այդ անելանելի վիճակ ստեղծողների օգնությանը, այլ քայլերի, որոնք փրկեին ազգը կործանումից: Բայց ոչ:

Ադանան սթափեցրեց նաև Ա. Զոպանյանին, նա այդ ջարդերի հեղինակ համարում էր նաև երիտթուրքերին: Աչխարհը տեսավ, գրում է նա, թե «նոր ըսուած վարչակարգի մեջ ինչքան մեծ չափով կենդանի կմնար հին վարչակարգը, հին բարբարոս մտայնութիւնը»[184]: Չնայած դրան, Զոպանյանը հայ ժողովրդի վաղվա օրը կապում էր վերածնված Թուրքիայի հետ, գտնում, որ հայերը չպետք է պահանջեն ոչ անկախություն և ոչ էլ թագավորություն, քանի որ դրանք անիրականանալի էին: Նա Հայկական հարցի լուծման գործում վճռական դերը հատկացնում էր Ռուսաստանին, վճռականորեն մերժում օսմանիզմը և գտնում էր, որ հայը պետք է «ամեն օտարացման փորձութեանը հակառակ հայ մնա»[185]: Որքան ժամանակն առաջ էր գնում, այնքան Զոպանյանի մոտեցումներն արմատական էին դառնում, և ի վերջո հանգեցին Օսմանյան կայսրության կազմից Արևմտյան Հայաստանը հանելու անհրաժեշտությանը, որովհետև համոզվեց, որ բարենորոգումները չեն կարող լուծել «Թուրքահայ տարաբախտ հարցը»:

Արևմտահայության հանդեպ տագնապը մեծանում էր հայ մտավորականության բոլոր հատվածներում, սակայն այն ամբողջանում էր Կ. Պոլսում: Պատրիարքարան էին հոսում գավառահայության դժնդակ վիճակին վերաբերող գանգատագրեր, փրկության կանչեր: Պատրիարքական տեղապահ Ե. Դուրյանը, չնայած նոր իրավիճակին և իշխանություններին հնազանդ մնալու իր կողմնորոշմանը, հարկադրված էր Ազգային ժողովում հայտարարել, որ գավառներում «հին վարչակարգին շարունակութիւնն է, որ կը տիրե տակավին»: Ազգային ժողովի 1908թ. հոկտեմբերի 28-ի նիստում հնչեցին ահազանգեր, որոնք գուժում էին հայերի վիճակի ավելի ծանրացում: Գ. Ասլանյանն ասաց. «... Պատուոյ և ինչքի ապահովութիւնը բացարձակապես կը պակսի գավառներուն մեջ և ժողովուրդը սովամահ ըլլալու տագնապին ալ ենթարկուած է... Կառավարութեան ընթացքը ձգձգումներե և խոստումներե անդին չանցնիր»: Հ. Ճանկուլյանը հայտարարեց. «...Ցառաջիկայ ձմեռ սով պիտի տիրե ամբողջ Հայաստանի մեջ»: Պ. Փափազյանը դժգոհեց. «Դժբախտաբար օր չըլլար, որ նոր խժդժութեան մը լուրը չհասնի և ավելին՝ տեղ տեղ ջարդի երկիւղներ իսկ կան...»: Ա. Գասպարյանը բացականչեց. «Ամեն վարկեան ահ ու սարսափի մեջ ենք...»: Հ. Շահրիկյանը հաստատեց. «Հայաստանի վիճակն անհանդուրժելի է...»: Ղ. Չալաքյանն արձանագրեց. «Կառավարութեան ղեկը հին վարչակարգի մարդոց ձեռքն է տակավին... Մի մոռցեք, որ Խասգիւղի հայոց տուներուն դռները կավիճով գծուած են...»: Հ. Դիմաքսյանը տագնապ հարուցեց. «...Ջարդի խնդիրն է, որ կը կրկնուի 13 տարիներե ի վեր»: Հաջորդ նիստին Գր. Զոհրապը ներկայացրեց բանաձևի նախագիծ, որով Բ. Դռանն առաջարկվում էր փոխել հին վարչակազմից եկած կադրերին, հայերին վերադարձնել նրանցից խլված հողերը: Մ. Իզմիրլյանն ասաց, որ հայի ունեցվածքը «...յափշտակութեան առարկայ կը դառնայ, և հարստահարիչները, չարագործները բանտին մեկ դռնեն կը մտնեն՝ մի այլ դռնեն դուրս ելլելու համար...»: Մեծ Մուրադը հանդիմանեց. «Ժամանակին կրսեինք յեղափոխականներուն, թե չի մոռնաք զենք հայթայթել ժողովրդին: Մոռցա՞նք այդ պատուերը: Զոք Մարզուան և Հաճըն իրենց ինքնապաշտպանութեան շնորհիվ ընդդիմացան և ազատեցան ջարդե», երիտթուրքերին վստահել չի կարելի, «ո՞վ գիտե, թե ի՞նչ վիճակի հանդեպ պիտի գտնուինք յառաջիկային... Որքան ատեն, որ սահմանադրութիւնը ժողովրդական չէ, պետք է աչքի առջև ունենանք Ատանայի ջարդը»[186]: "Армянский вестник"-ը 1917թ. իր թիվ 16-ը դրում տպագրեց ամերիկյան լրագրող

180 Զոհրապ Գ. Մեր կեանքեն. քրոնիկներ, նշմարներ. հրապարակական էջեր, ուղևորի նոթեր, Կահիրե, 1945, էջ 179:
181 «Անահիտ», 1930, թիվ 3, էջ 8-9:
182«Հայաստան» (շրջ.), 17. 07. 1991:

183 Վավերագրական նյութեր..., էջ 6:
184 «Անահիտ», 1909, թիվ 3-4, էջ 137:
185 Ն. տ., 1910, թիվ 11-12, էջ 252:
186 Գանգրունի Հ. նշվ. աշխ., էջ 330-331:

Ու. Ուիլյամսի «Հայկական ակնկալիքներ» հոդվածը, որը մերժում էր հայերին վերագրված ցնորամիտ ակնկալիքները: Նա գրում է. «... Ինչ վերաբերում է հայերի ակնկալիքների բնույթին, պետք է արտակարգ ճշգրիտ լինել: Դրանք հրեշավոր ձևով աղավաղված են Թուրքամետ մամուլի կողմից: Ամենից առաջ հարկ է հայտարարել, որ հայերը չեն երազում վերականգնելու Հայաստանի թագավորությունը»: Նա բերում է Ֆերտի "Fortnightly Review"-ի 1915-ի մայիսի գրքում տպագրված խոսքերը, թե հայերը «որպես ազգ քաղաքական ունակություններ չունեն», նրանք ոչ թե այդ ունակություններից զուրկ են, այլ «Հայաստանի հին թագավորության վերականգնման ամենափոքր հույս անգամ չկա»: Հայերն իրենք են նման ցանկությունը համարում ցնորական ու անիրականանալի: «Երկու բացարձակապես տարբեր բաներն իրար հետ չփոթելը,- գրում է Ուիլյամսը,- խնդիր ունի մնասելու Հայկական հարցին, առաջացնելու բողոք դրա դեմ»: Հայերը ցանկանում են մի բան՝ ինքնավար ազգային գոյություն, «ինչը միանգամայն հիմնավոր, գործնական և օրինական ձգտում է»: Հայերի ձգտումների աղավաղումը նրանց նաև հավակնություն վերագրելն է, թե ցանկանում են տիրապետող դառնալ Փ. Ասիայի մյուս ժողովուրդների վրա: «Հայերը զայրույթով են դա մերժում... նրանք ձգտում են հավասարության... ոչ միայն իրենց սիրելի Հայաստանի, այլև ամբողջ Փ. Ասիայի վերածննդի»: Չնայած Ռուսաստանի նկատմամբ համակրանքին, արևմտահայերը բարեխղճությամբ էին կատարում Թուրքահպատակի իրենց պարտականությունները: Սակայն Թուրքերը որոշել էին հայերին բնաջնջել և վերջինների վարքագիծն այլևս նշանակություն չուներ: Նրանք հայերից պահանջում էին այլևս չակնարկել բարենորոգումների մասին, այլապես բոլոր հայերի՝ ծեր Թե մանուկ, «փորոտիքը Թափելու են ուղղակի փողոցներու մեջ»: «Ազը» Թերթը բացեիբաց գրում էր, որ «չատ չանցած հայությունը, հայ ցեղը կկործանվի մեծ չառաչյունով»[187]: Սպառնալիքը գործի էր վերածվում: Իշխանությունները շարունակում էին քրդերին ու Թուրքերին զաղտնի զինել հայերի դեմ: «Կը լսվի,- գրում է «Հորիզոնը»,- Թե Արտամետի Ֆեյզո անունով Թուրք մը Ոստանեն ուԹ ձիաբեռ զենք բերած ցրած է Արտամետ գյուղի Թուրքերուն: Կը լսվի նոյնպես՝ Ոստանի կայմակամ մեծ Թվով զենք սկսած է բաժնել շրջակայ քիւրտերուն»[188]: «Ընդհանուր կոտորածի ուրվականն ամեն տեղ է, որը դամոկլյան սրի պես կախված է հայի գլխին: Եվ կառավարությունը ոչ միայն չի աշխատում ջարդի երկյուղը ցրել, այլ ընդհակառակը, էլ ավելի է սաստկացնում այդ երկյուղը և ինքն է այդ նպատակով բացորոշ պատրաստության մեջ մտնում»[189]:

Հայկական շարժումը Թուրքիայում ծնվեց ոչ Թե ուղղված Թուրք ժողովրդի, այլ սուլթան Աբդուլ Համիդի դեմ: Սահմանադրությունից հետո նույնպես այն ուղղված էր ոչ Թե Թուրք ժողովրդի, այլ իթիհադի հայահալած քաղաքականության դեմ: Դեռ 1894Թ. Մինաս Չերազը գրում էր. «Թիւրք կառավարութեան ապուշ ընթացքն էր, որ հայերը կստիպեր խիզախ, բայց բացարձակապես անհրաժեշտ դարձած դիմումն ընելու: Հակառակ այն տխուր պայմաններուն, ուր Թուրք ռեժիմը կպահեր հայերը Թիւրքական Հայաստանի մեջ, ասոնք ամենամեծ մասամբ համոզված էին, որ իրենց ազգային գոյութիւնը պահպանելու համար նախընտրելի էր կապված մնալ Թուրքիոյ հետ: Բայց այն կոյր համառութիւնը, որով Թիւրք կառավարութիւնը կթողուր զզվելի կեղեքման մը շարունակվիլը Հայաստանի մեջ՝ ճարահատութեան մղեց հայերը»: Հայ երեսփոխաններից մեկն օսմանյան խորհրդարանում ասաց՝ Էրզրումի վալիին հարցրել են, Թե ինչո՞ւ է Թուրքական կառավարությունը Թույլ տալիս, որ «քիւրտ ելուզակները հայոց պես օգտակար տարր մը ջախջախեին»: Վալին պատասխանել է, Թե «ատիկայ հիւմեթի կառավարական գաղտնիք մըն էր: Բոլոր Թիւրք նախարարները, որ ներկայ էին այդ նիստին, լսեցին վալիին այդ չնական բառը և նշանակալից լռութիւն մը պահեցին»[190]: «... Անհրաժեշտ էր ազատուիլ այդ ստրուկի, կացութենեն,- շարունակում է Մ. Չերազը,- զոր Թիւրք ռեժիմը կպարտադրեր ռայաներուն, հայերը դիմեցին ուրեմն Եվրոպային, զոր կներկայացներ Ռուսիան: Ճշմարիտ է, որ նոյնիսկ այդ դիմումին մեջ, Թուրքիայեն բաժանվիլ չէ, որ կպահանջեին, լուրջ պաշտպանութիւն մը կը պահանջեին իրենց անձեռնմխելի իրավանց». Հայերն ուզում էին «վարչական ինքնավարութիւն մը... Լիբանանայ մեջ հաստատուած ռեժիմի նման բան մը»[191]: «Եթե քանի մը սահմանափակ տարրեր գաղտնի ընկերութեանց մեջ կձգտեին երբեմն գեղեցիկ երազներու վրա հիմնված ծրագիրներու, կովող խմբերուն մեծամասնությունը տրամաբանական ու բանավոր պահանջմանց գործում գերազանցապես գործնական հողի մը վրա կմնար»[192]:

1912Թ. դեկտեմբերի 21-ին տեղի ունեցավ Ազգային ժողովի փակ նիստ, որը նկատի ունենալով ստեղծված ծայրահեղ վտանգավոր վիճակը, կենտրոնական վարչությանը (նախագահ Ստեփան Գարայան) տվեց լայն լիազորություններ: Վերջինս ստեղծեց ինքնապաշտպանության մարմին՝ «Անվտանգության հանձնաժողով», որ պետք է զբաղվեր հայերի քաղաքական խնդիրների լուծմամբ, այդ Թվում և՝ վեց վիլայեթների ինքնավարության հարցով: Հանձնաժողովի անդամներն էին Ե. Դուրյանը, Գ. Պալաքյանը, Լ. Թեմիրջիպաշյանը, Վ. Մարտիկյանը, Վ. Փափազյանը: Նրանց պիտի օգնեին Մ. Պոյաճյանը, Հ. Շահրիկյանը և Գ. Զոհրապը: Հանձնաժողովը տեղական կազմակերպություններին գրեց, որ հայաբնակ շրջաններում տեղի ունեցող սպանությունները դեռևս արտաքուստ ավազակային բնույթ են կրում, բայց կարող են աճել և անխուսափելիորեն տանել անիշխանության, մուԹ ուժերի ջանքերով կարող են ստանալ ազգային կրոնական բնույթ: Տեղերն ուղարկվեց նաև ՀԲԴ ընդհանուր ժողովի նամակը. «Նկատի ունենալով երկրում տիրող վտանգավոր իրադրությունը և հայ ժողովրդի ծանր վիճակը, ժողովն իր բոլոր քաղաքական մարմիններին առաջարկում է եռանդուն աջակցություն ցույց տալ ինքնապաշտպանության գործին...»[193]: Ինքնապաշտպանության մարմինը դիմեց կենտրոնական կառավարությանը հայկական շրջաններում կազմակերպելու պահակային խմբեր՝ զինված պետական զենքերով, որոնց պարտականությունը լիներ՝ պաշտպանելու սահմանադրությունը: Տեղական կոմիտեներին առաջարկվեց «ջանքեր չխնայելով ստեղծեն պահակային խմբեր, որոնք լավագույն միջոցն են ներկայ պայմաններում... մեր ժողովրդի անվտանգության համար»[194]: Այս առաջարկության հետ երիտԹուրքերն արտաքնապես համաձայնեցին: Բայց որոշ ժամանակ անց այն հուչակեցին «հեղափոխության ու սահմանադրության դեմ պայքարող ուժեր ստեղծելու փորձ»[195]: 1913Թ. նոյեմբերի 12-ին երիտԹուրքերի որոշ ղեկավարներ պատրիարքին գրեցին. «Դուք անիծյալներ, դուք մեր հին վարչակարգի հարգարժան կառավարությանը դժբախտության մատնողներ: Դուք պատրվակ ստեղծեցիք օտարերկրացիների հարձակումների համար: Դուք Եվրոպայի աչքում վարկաբեկեցիք մեր ազգը և հատկապես երիտԹուրքերի պատիվն ու փառքը: ...Այժմ... դուք պետք է գիտակցեք, որ երիտԹուրքերն արԹնացել են: ...(Նրանք) չեն հանդուրժում մարդկանց, որոնք ուզում են իրենց կամքը Թելադրել: ...Մի մոռացեք, Թե դուք որտեղ եք ապրում... մենք ձեզ նախազգուշացրել ենք: Ձեր հարուցած ցավը պահել ենք մեր հոգու խորքում: ...Միջամտել կառավարության գործերին և ազգային քաղաքականությանը ոչ ոք ձեզ Թույլ չի տա: Այդ իմացեք: Հակառակ դեպքում օսմանցիները, երիտասարդ Թուրքերը զոհվելով կկատարեն իրենց սրբազան պարտքը»[196]: Զորս օր անց պատրիարքարանում երիտԹուրք պարագլուխների ստորագրությամբ մի նոր նամակ-սպառնալիք ստացվեց. «Ով, հայ գյավուրներ, դուք լավ գիտեք, որ մոծակը հենց Թևերը Թափահարում է, նրա կյանքը կարճանում է: Դուք, Թևավոր պարզունակներ, նման եք մոծակի, մոռանալով, որ դրանով կարճացնում եք կյանքը: Հեռու չէ ձեր կեղտոտ վախճանը: Մի կասկածեք, որ մենք շուտով ձեր, ձեր պատրիարքի, ձեր ժողովրդի Թևերը կտրելու ենք: Թուրքական յաթաղանը միլիոնավոր գյավուրների գլուխներ է կտրել, և մենք պատրաստ ենք ևս միլիոնավոր գլուխներ կտրելու: Գիտեք չէ՞, որ Թուրքերը երդվել են իրենց երկիրը մաքրել Թոքախտի բացիլի նմանվող հայ-գյավուրներից»[197]:

187 Գանգրունի Հ., նշվ. աշխ., էջ 323:
188 «Հորիզոն», 30. 03. 1913:
189 Սապահ Գյուլյան Ս., նշվ. աշխ., էջ 320:
190 "L' Armenien", 1894, սեպտեմբեր:

191 Զոպանյան Ա. Երկեր, Երևան, 1988, էջ 448-449:
192 Ն. տ.:
193 Մկրտչյան Դր., նշվ. աշխ., էջ 199:
194 «Նիւթեր ՀԲ Դաշնակցութեան պատմութեան», հ. Ա, էջ 183-184:
195 Ermeni Komitelerinin ve Harekat-I Ihtilaliyeti mechrutiyetten evvel ve Sonra, Istanbul.
196 Լևոն Վարդան Թող Թուրքը խոսի, Բեյրութ, 1957, էջ 24-25:
197 Ն. տ., էջ 25-26:

Այդ օրերին էր, որ պատրիարքը հայտարարեց. «Վերսկսված այս բոլոր հանցագործությունները մեծ եղեռնի սկիզբ են»[198]: Նույնիսկ նման պայմաններում հայ հասարակական հոսանքներն անկախության համար պայքարելու, Թուրքիայի կազմից դուրս գալու կոչ էին անում, Ազգային ժողովը գտնում էր, որ «խոսելով բարենորոգումների ծրագրի մասին, հասկանում ենք մեր և ուրիշների կողմից առաջարկվող այնպիսի համակարգ, որն իր առաջ խնդիր է դնում հիմնավորել հայերի քաղաքական իրավունքները: Նման ծրագրի հիմք կարող է լինել ազգային անվտանգության ապահովման ամուր երաշխիքը»[199]: Այդ ընթացքում ձերբակալվում և Կեսարիայում բանտ է նետվում Մեծ Մուրադը: Նա հրաժարվում է պատասխանել տեղի կառավարիչ Զեքիի հարցերին. «Ան անտրտունջ կը կրե բոլոր տանջանքները, մինչև որ ջախջախուած, շարժուելու անկարող վիճակի մեջ, կը ղրկուի բանտին հիվանդանոցը դարմանուելու համար»[200]: «Երիտասարդ Հայաստան» թերթը 1914թ. մայիսի 10-ին գրում է. «Թիւրքական ղեկավար դասակարգն այսօր էլ կանգնած է նոյն ուղղութեան վրայ, ինչ-որ էր երեկ: Սահմանադրական կատակերգութիւնը նույն ձևով է խաղացվում: Փոփոխուած ոչինչ կայ Թուրքիայի չքնաղ երկնքի տակ: Հին փոթորիկները շարունակվում են գործադրուել և այժմ: Կանգուն է սուլթանական և խալիֆայական բռնապետութիւնը, խուլ թափով առաջ է տարվում համիսլամիզմի և համաթրքական քարոզչութիւնը: Խորհրդարանը մի գործիք է տիրող դասակարգի ներկայացուցիչ իթիհատի ձեռքում: Ընդդիմադիր հոսանքները չեն կարող ազատորեն արտահայտուել, ռամկավարական ազատութիւնները սեղմուած են և կաշկանդուած: Սպառնալիքը, սուրը, կախաղանը միահեծան իշխում են ազատ խոսքի և գրչի վրայ... Այսօր, երբ երեկի կրկնութիւն է, զիջումների ու երկընտրանքի քաղաքականութիւնը դադրած է իմաստութիւն լինելուց: Հայ ճնշուած ու ճարահատուած զանգվածը պետք է որոշակի դիրք բռնի, նա պետք է ցոյց տայ, որ ինքը ցանկանում է ապրել և իր տեղը գրավել արեգակի տակ»:

Իթիհադականների գնահատականի հարցում հայ քաղաքական ուժերի մոտեցումների միջև էական տարբերություններ չկային: Տիրապետողը Ա. Զոպանյանի արտահայտած հետևյալ կարծիքն էր. երիտթուրքերը չեն ճանաչում կայսրության ոչ թուրք ժողովուրդների իրավունքները, նրանք սահմանադրությունն օգտագործում են Հայկական հարցը վերջնականապես թաղելու համար[201]: Պատրիարքն առաջարկեց փրկության ուղին: Էրզրումում պատարագի ժամանակ նա ասաց, որ «առանց զինված պայքարի, հնազանդ ենթարկվածությամբ անհնար է հասնել ինքնուրույնության, չպետք է վախենալ նոր արյունահեղությունից, այլ զենքը ձեռքին հասնել ազատության»[202]: Բայց արհավիրքի նախօրեին արևմտահայ քաղաքական-հասարակական կյանքը շարունակում էր մնալ բզկտված, ինչը ժամանակ ու հնարավորություն չէր ընձեռում լայն զանգվածներին համախմբելու և գործողության մղելու ջարդարարների ու ջարդարարության դեմ: Դա ավելի քան անհանդուրժելի էր նաև այն պատճառով, որ ոչ փոքր թվով հայ գործիչներ երիտթուրքական հեղաշրջումից հետո անմիջապես կռահեցին, թե հանձինս իթիհադի ինչպիսի վտանգավոր ուժ է դրության տեր դարձել: «Օսմանյան նոր վարչակարգի քաղաքականության հետևանքով «Մշակի» 1909թ. հոկտեմբերի 4-ի համարում գրում է Հ. Առաքելյանը,- հայ ժողովրդի ազգային գոյությանն ու ինքնատիպությանը սպառնում է մեծ վտանգ», նա ՀՑԴ-իթիհադ համաձայնագիրը գնահատում է որպես «համընդհանուր ուծացման քաղաքականության արտահայտություն: Չնայած երիտթուրքական կառավարության ղեկավարները (Հիլմի, Թալեաթ) շարունակում էին հայերին մեծամեծ խոստումներ տալ: Չնայած Ադանայի վալի Ջեմալի հռչակումին, թե տեղի հայերի ու թուրքերի միջև հաստատվել էր «եղբայրական հարաբերություններ», իրականում ադանահայերը զանգվածաբար լքում էին վիլայեթը նոր ջարդերի վերաբերյալ լուրերի պատճառով: Դրա հետ միասին, օրինակ, պոլսահայ գաղութում աստիճանաբար առաջին պլան էին դուրս գալիս չափավոր քաղաքականության կողմնակիցները (Վ. Թեքեյան, Ս. Սյունի, Ե. Օտյան), ինչը տանում էր դեպի ՀՑԴ կուսակցական դիկտատի կազմալուծում: Երբ այդ կուսակցության Տրապիզոնի մասնաճյուղը որոշում է տեղի եկեղեցում կազմակերպել թատերական ներկայացում և հոգևոր առաջնորդն ընդդիմանում է, ՀՑԴ զինված ջոկատը հարձակում է գործում Տրապիզոնի ազգային ակումբի և առաջնորդարանի վրա»[203]: Դաշնակները փորձեցին հանրահավաք անցկացնել Գում Գափուի մայր եկեղեցում, սակայն դիմադրության հանդիպելով՝ այն անցկացրին Սկյուտարի եկեղեցում: Երբ Ա. Շահրիկյանը փորձեց Սամուրիայի եկեղեցում ճառ արտասանել, ներկաները թույլ չտվեցին: Ակնի առաջնորդարանը փակվեց ՀՑԴ և հակադաշնակների միջև լարված հարաբերությունների պատճառով: ՀՑԴ ջախջախիչ պարտություն կրեց Քաղաքական ժողովի ընտրություններում: Եթե դաշնակցությունը շարունակում էր սիրախաղը իթիհադի հետ, ապա պատրիարքարանի հարաբերությունները փաստորեն խզվել էին օսմանյան կառավարության հետ: Իսկ պատրիարքարան-ՀՑԴ չփումները ոչ միայն փլուզվում էին, այլև աստիճանաբար ստանում էին առճակատման բնույթ: Ձևավորվում էր վտանգավոր իրավիճակ, ինչը լրջմիտ ուժերին մղեց քայլերի այն հաղթահարելու համար: Նրանք 1919թ. հոկտեմբերի 30-ին ստորագրեցին համաձայնագիր[204]: ՀՑԴ-ն ընկրկում էր և գլխավոր պատճառն այն էր, որ նրա գործընկերը՝ իթիհադը, ոչ միայն քայլեր չէր կատարում հայերի հանդեպ ջարդարար տրամադրությունները չեզոքացնելու, այլև, օրինակ, Հիլմիի կառավարության հրաժարականը պահանջեց, նաև այն պատճառով, որ Ադանայի ջարդերի համար այդ կառավարությունը համարձակվել էր 36 մահմեդականի հետ միասին ներում շնորհել մի խումբ հայերի[205]: Նոր մեծ վեզիր Հաքը առատ խոստումներ տվեց, բայց նույնպես գործեց հակառակ ուղղությամբ: Հայերը պահանջեցին օգնություն կազմակերպել Ադանայի ջարդերի տուժածներին և որբացածներին, վերականգնել վնասված եկեղեցիներն ու դպրոցները, զոհվածների սեփականությունը հանձնել նրանց ազգականներին, լուծել հայերի հողերի հարցը[206]: Այս պահանջները չբավարարվեցին: Դրա փոխարեն լուրեր էին հասնում Կ. Պոլիս, թե Ադանայի իշխանությունները փողոցային «ամբաստանությունները հիմք ընդունելով հայերին դատի էին տալիս»: Ադանայի ջարդերն իրականացրած և դրա համար տաժանակիր աշխատանքի դատապարտված 6000 զինվորի ներում շնորհվեց[207]: Մշո առաջնորդ Խարախանյանը նույն օրերին գրում է պատրիարքին. «Բազմաթիվ վկայություններ կան, որ հետադիմականներն անց են կացնում թաքուն ժողովներ...»: Հայերի կյանքը, պատիվն ու արժանապատվությունը նորից վտանգված է: Դրությունը փոխելու վերաբերյալ կառավարության խոստումները չեն կատարվում[208]: Բաղեշից լուրեր էին հասնում, թե թուրքերը ջարդերի էին նախապատրաստվում[209]: Դուրյանը կոնդակ հրապարակեց, որը հավաստում էր հայ ժողովրդի հավատարմությունը սահմանադրական կարգերին, հայերին կոչ էր անում սեփական շահերը չտարբերել պետական շահերից: «Մեծ է մեր հավատը,- ասվում էր կոնդակում,- օսմանյան սահմանադրական կառավարության ապագայի հանդեպ չնորհիվ լուսավորյալ սուլթանի և արդար կառավարության տված խոստումների»[210]: Կաթողիկոս Մ. Իզմիրլյանի 1910թ. հունիսի 25-ի կոնդակով արգելվում էր չթույլատրված հանրահավաքները, մասնավորապես, այնպիսիները, որոնք ունեին քաղաքական բնույթ և հայկական հարցը մեկնաբանում էին քաղաքական հոսանքների տեսանկյունից[211]:

Որ երիտթուրքերի իշխանության անցնելուց հետո աստիճանաբար ոչ միայն «սառչում էին» իրենց հայ դաշնակիցների, մասնավորապես, դաշնակցության հանդեպ, այլև պատրվակներ էին հնարում նրանց վրա ճնշում գործադրելու: 1910թ. հուլիսին իշխանությունները հայտարարե-

198 «Ազդակ», 20. 04. 1965:
199 «Վեմ», 1933, թիվ 2, էջ 84 :
200 «Ձայն հայրենեաց», 23. 10. 1908 :
201 «Անահիտ», 1908, թիվ 1-4:
202 ՀՀ ՊԿՊԱ. ֆ. Քաղվածքներ, գ. 37:

203 «Մշակ», 08. 11. 1909:
204 "Русское слово", 07. 11. 1909:
205 «Մշակ», 27. 12. 1909:
206 Ն. տ., 06. 02. 1910:
207 Ն. տ., 19. 02. 1910:
208 Ն. տ., 25. 02. 1910:
209 Ն. տ., 24. 04. 1910:
210 «Արարատ», 1910, թիվ 8:
211 "Баку", 16. 07. 1910:

ցին, թե հայերն Առաքելոց վանքում զենք են թաքցրել և նախապատրաստվում են խռովության: Վանքում կատարված խուզարկությունները զենք չհայտնաբերեցին: Ազգային ժողովը հայտարարեց, թե դա իշխանությունների սադրանքն էր բախում առաջացնելու համար: Բարդ իրավիճակ էր Վանում՝ մինչև այն աստիճան, որ «անգամ հարևան վարչական միավորների բնակչությունն ու իշխանությունները բողոքում են կենտրոնական կառավարությանը վալի Թահիրի խայտառակությունների դեմ»: Վալին հայերից խլում էր բոլոր և ամեն տեսակի զենքերը՝ պատճառաբանելով, թե դրա հետևանքով «քրդերը հարկադրված են զենք կրել ինքնապաշտպանության նպատակով, քանի որ վախենում են հայերից»: Վանից անընդհատ ահազանգեր էին հասնում Կ. Պոլիս, թե Թահիրի թողտվությամբ հայերի սպանությունները շարունակվում էին: «Եթե անհրաժեշտ միջոցառումներ չձեռնարկվեն, ապա ամենաանչնչան դեպքն իսկ կարող է Անատոլիան վերածել նոր ջարդերի թատերաբեմի»: Դրությունը ավելի էր բարդանում նաև այն պատճառով, որ հայկական նահանգներում լուծված չէին հիմնարար բնույթի հարցեր՝ հողային, վարչական, իրավական, ազգային[212]: Իհարկե, իրավիճակի վտանգավորությունը հայ քաղաքական ուժերին հարկադրեց զգուշանալ և համախմբվել: Գր. Զոհրապի նախաձեռնությամբ Ազգային ժողովը ձևավորեց «Ազատական» կոալիցիոն խմբակցություն բարենորոգումներ անցկացնելու ծրագրեր մշակելու նպատակով: Հայ կուսակցությունների համատեղ հայտարարության մեջ շեշտվում էր միացյալ ուժերով գործելու անհրաժեշտությունը: Նաև ստեղծվեց հանձնաժողով եկեղեցական բարեփոխումների ծրագիր մշակելու համար և այլն: Սակայն հայերի ու մահմեդականների հարաբերություններն անհամեմատ ավելի արագ էին սրվում, քան հզորանում էր դրանք կանխելուն միտված միջոցառումների ազդեցության ուժը, որովհետև առաջինը ոչ միայն ստանում էր պետական աջակցություն, այլև վերածվել էր կառավարման եղանակի: Այսպես, օրինակ, Պոլսի հանձնարարությամբ Քիլստրայում հայերի հողերը խլեցին ու տրամադրեցին մուհաջիրներին: Այդ առթիվ Մշո առաջնորդարանը գրում է պատրիարքին. «Եթե հողերը չվերադարձվեն, երկու գյուղերի բնակիչները ոչնչացնելու են միմյանց: Մեր արդարացի խնդրանքը իշխանություններն անպատասխան են թողնում»[213]: Դրա հետ միասին շարունակում էին հայերին մղել կրոնափոխության, ինչն աստիճանաբար սպառնալից ծավալներ էր ընդունում: Հասան Բեյլիում 40 ընտանիք որոշեց ընդունել կաթոլիկություն, իսկ Հարփիում՝ 170 ընտանիք՝ ուղղափառություն: Ուղղափառ դառնալու խնդրանքով Կ. Պոլսի ռուսական դեսպանին դիմեցին Թեորա-Ցոլի հայերը[214]: Բ. Դռան երկայր քաղաքականությունն ավելի քան բարձրացնում էր կայսրությունը հայաթափելու աշխատանքների արդյունավետությունը նաև այն պատճառով, որ առաքելական եկեղեցուց հրաժարվելու հարկադրանքը հայերի խոշոր հատվածներին նետում էր ոչ թե քրիստոնեական տարբեր դավանանքների, այլ մահմեդականության գիրկը՝ հզոր խթան հանդիսանալով թուրքացման և քրդացման համար:

Այս վարակից հայերի պաշտպանության եղանակները միասեռ լինել չէին կարող. դրանք ընդգրկում էին քարոզչությունից մինչև զինված պայքարի մարտավարությունների դրեթե բոլոր տեսակները: Եթե Ազգային ժողովի ղեկավարությունը ձգտում էր խաղաղ միջոցներով հասնել հայության վրա ծանրացած խնդիրների գոնե մի մասի լուծմանը, ապա, օրինակ, Զմյուռնիայում «Հայ հեղափոխականների միությունը» ծավալում էր ընդհատակյա, արմատական լուծումներ իրականացնելուն միտված գործունեություն: ՀԲ Դաշնակցության կազմում ձևավորվեց Արզունյան անունը կրող խմբակցությունը, որը ահաբեկչական գործողություններ էր իրականացնում բնակավայրերում, այդ թվում նաև՝ օսմանյան մայրաքաղաքում: Նման բազմազանությունը նաև սրում էր ներքաղաքական պայքարը: Մուշից հայտնում էին, որ բնակչությունը դժգոհ է «ազատականներից», ովքեր «թափառում են... առանց որոշակի զբաղմունքի և կատարում անթույլատրելի անկարգություններ»: Միանգամայն հակառակ մոտեցում ուներ Սիմոն Զավարյանը, ով այն տարիներին կատարում էր Տարոնի դպրոցների հրահանգչի պարտականությունները:

212 "Баку", 15. 07. 1910.
213 Ն. տ., 03. 09. 1910:
214 Ն. տ., 31. 08. 1910:

Եթե ներկուսակցական տարընթացություններն ընդմիջումներ ունենում էին, ապա միջկուսակցականները ոչ մի ժամ կանգ չէին առնում, միմյանց վարկաբեկում էին ամենաանչնչան առիթներով ու պատրվակներով: «Հայրենիք» թերթը 1910թ. փետրվարին մի քանի անգամ հանդես եկավ Մինաս Չերազի դեմ, իսկ «Ժամանակը» նրան մեղադրեց, թե իր հոդվածներով Աբդուլ Համիդին գրգռել էր հայերի դեմ: Ուստի պատասխանատու է հայերի դժբախտությունների համար: Մ. Չերազն արձագանքեց, թե ջարդերի քաղաքականության էությունը Հայկական հարցն է: Հայկական հարցը, գրում է նա, ծնվեց 1876թ., երբ պատրիարք Ն. Վարժապետյանը Լոնդոնում հրատարակեց Թուրքահայաստանում կատարված բռնությունների մասին ծավալուն գրագրություն տեղեկանքը: Որից հետո մինչև 1894թ. կոտորածները բռնություններ չեն նկատվել չնորհիվ նույն Վարժապետյանի գործունեության օրինական բնույթի, չնայած նա ու իր կողմնակիցները «գրչով ու խոսքով» պաշտպանում էին ազգային շահերը: Չերազը գտնում էր, որ պատրիարքարանի քաղաքականությունը շահեկանորեն տարբերվում էր կուսակցական առճակատումներից: Նրա կարծիքով 1907թ. հեղաշրջումից հետո պահանջվում էր փոխել պայքարի միջոցներն ու եղանակները: «Անհրաժեշտ էր պայքարել չարի դեմ. մենք պետք է պայքարենք նաև բարու դեմ... Համիդի ժամանակ մեր հեղափոխականները հարձակվեցին օտոմանյան բանկի վրա և տեղի տվեցին ջարդի»: Չերազը համոզված էր, որ եվրոպական պետությունները կաջակցեին Հայկական հարցի լուծմանը, եթե շահագրգռություն ունենային:

Արտահայտելով հայ լիբերալների կարծիքը՝ Չերազը գրում է. «Այսօր ազգի շահերը պահանջում են, որ իմ համեստ հնարավորությունները տրամադրեմ հօգուտ սահմանադրական վարչակարգի, որպեսզի համիդեականությունը ուժեղանալով կրկին ձեռնամուխ լինի հայերի բնաջնջմանը: Սա ստրկական հարմարվողականություն չէ, այլ ազգի գոյությունը պահպանելու գիտակցում»[215]: Այս կարծիքին հակադրվող դաշնակ «արմատականներից» էր Շահրիկյանը, որ հայտարարեց. «Հայ ազգը պետք է բռնի կամ դաշնակցության և կամ պատրիարքի կողմը» և զարմանում էր, որ այդ ընտրությունը կատարվում էր հօգուտ վերջինի[216]: Նույն օրերին "Times"-ը տպագրեց Ռ. Բատլերի «Դաշնակցությունը և երիտթուրքերը» հոդվածը, որում մասնավորապես ասված էր, թե հայ եկեղեցու և ՀՅԴ շահերը բախվեցին Ադանայի ջարդերի առնչությամբ: Այդ ողբերգության կապակցությամբ պատրիարք Դուրյանը հրաժարական տվեց, իսկ դաշնակցությունն ու երիտթուրքերը համաձայնագիր ստորագրեցին ու համատեղ հանդես եկան պատրիարքարանի դեմ: «Դաշնակցությունը,- շարունակում է հոդվածագիրը,- երիտթուրքական կառավարության հետ համախորհուրդ ցանկանում էր խուզել պատրիարքի իրավունքները՝ դրանք հանձնելով բացառապես կրոնական գործերին: Կասկած չկա, որ այդ պայքարի ընթացքում դիտավորություն ուներ հարվածելու պատրիարքարանի քաղաքական կարգավիճակին»: ՀՅԴ կարծիքով Ադանան անցյալում կատարված իրադարձություն էր, իսկ «ապագան դեռևս հնարավոր էր փրկել»: Կուսակցական գործիչների ազգայնամոլությունն ու պաշտոնամոլությունը շաղախված են հակասություններով. «Ոչ բոլոր դաշնակներն են համարձակ և նրանցից ոչ բոլորն են աշխատում հօգուտ հասարակության»[217]: Պատրիարքարան-ՀՅԴ պայքարում գերակշռությունը դաշնակցության կողմում էր և ի վերջո պատրիարքարանը համաձայնվեց թույլ տալ հանրահավաքներն ու ժողովները անցկացնելու նաև եկեղեցիներում, դրա փոխարեն ՀՅԴ-ն պետք է գործնական քայլեր կատարեր ազգային հարցի լուծման և երիտթուրքերից զիջումներ կորզելու ուղղությամբ: Դժբախտաբար այդ անել չհաջողվեց: Պատրիարքը 1910թ. մարտի 10-ին գրում է մեծ վեզիրին քրդերի բռնությունների և եկեղեցական հողերի զավթումների մասին Տարոնում, Սասունում, Մանազկերտում, Զարսանջակում, Բալուում և այլուր,[218] ինչպես նաև ռազմական տրիբունալի կողմից Մարաշում հայերի հանդեպ դրսևորված անօրինականությունների մասին[219]: Կիլիկիայի կաթողիկոսը գրում էր մեծ թվով հայերի բռնի մահմեդականացման, թուրք պաշտոնատարների թողտվության, լեռներում փախստականների առկայության մասին[220]: Նաև նշվում էր, որ

215 «Մշակ», 27. 02. 1910:
216 Ն. տ., 11. 03. 1910:
217 Ն. տ., 18. 03. 1910:
218 "Баку", 24. 03. 1910:
219 «Մշակ», 14. 03. 1910:
220 Баку", 28. 03. 1910:

մարտի 19-ին թուրքական զինվորները խուժել էին Դիարբեքիրի վիլայեթի Ալի Բուքարի վանքը զենք գտնելու պատրվակով: Նրանք վայրագություններ են գործել, ջարդել են վանքի դռները, բայց ոչինչ չեն գտել[221]: Այս պայմաններում էր ՀՅԴ-ն եկեղեցիներում թույլատրված ու չթույլատրված հանրահավաքներ կազմակերպում: Անգամ «Ժամանակը» հանդես եկավ դպրոցներում, բարեգործական միություններում և եկեղեցիներում դաշնակցության գործունեության քննադատությունով[222]: Բնականաբար դա ծնեց հիասթափություն ՀՅԴ-ի հանդեպ: Կայսրությունից հեռացան մի քանի առաջատար դաշնակցականներ: Սակայն ՀՅԴ-ն համառ էր և Զմյուռնիայի ս. Ստեփան եկեղեցում բռնություն գործադրելով հանրահավաք անցկացրեց: Մինչամտեց ոստիկանությունը[223]: Կ. Պոլսի ռուսական դեսպանությունը գտնում էր, որ դաշնակցության նպատակն էր իր ազդեցության տակ առնել հայ եկեղեցին: «Կան վկայություններ, որ առաջիկա հավաքում որոշվելու էր վերացնել կաթողիկոսությունը Ռուսաստանում, այն տեղափոխել Թուրքիա և էջմիածինը մտցնել Երևանի թեմի մեջ»[224]: Ռուսական դեսպանությունում նույնպես գտնում էին, որ նշված գաղափարի մեջ երևում էր «երիտթուրքերի հերթական քաղաքական խարդավանքը՝ վերացնելու կաթողիկոսությունը Ռուսաստանում և այն տեղափոխելու Թուրքիա»[225]: Այդ պլանն իրականացնելու գործում ևս ՀՅԴ-ն համագործակցում էր իթիհադի հետ և շարունակում էր պահանջել պատրիարքից աջակցել հրավիրելու համահայկական եկեղեցական ժողով «եկեղեցական բարեփոխումների» վերաբերյալ որոշումներ կայացնելու: Իսկ այդ «բարենորոգումների» հետևանքը լինելու էր հայ եկեղեցու հակադրվելը Ռուսաստանի հայկական քաղաքականությանը[226]: Եթե պատրիարքարանը ենթարկվեց դաշնակցության կամքին, ապա առաջնորդարանները մերժեցին «հոգևոր ժողով հրավիրելու ու բարենորոգումների ծրագիր մշակելու առաջարկը»[227]: Թուրք-իտալական պատերազմի ժամանակ դաշնակցությունն անվերապահ կանգնեց իթիհադի կողքին: Արևմտյան բյուրոն տարածեց «Օսմանյան հարենակիցներին» անունը կրող թռուցիկը, որով արևմտահայերին կոչ էր արվում համախմբվել արտաքին թշնամու դեմ հանուն «ընդհանուր հայրենիքի»: Մինչոցներ հավաքելու և ռազմաճակատ կամավորներ ուղարկելու համար իթիհադի Վանի կոմիտեն ստեղծեց հանձնաժողով: Տեղի դաշնակցությունը հավաքագրեց 100 կամավոր: Այդ նույն ժամանակ ՀՅԴ 6-րդ համագումարն արձանագրեց, թե իթիհադը չի կատարել հայերին տված խոստումները, թե ՀՅԴ-ն իթիհադի դաշնակցից վերածվել է նրա արբանյակի ու գործում է վերջինիս թելադրանքով: Նորից առաջ քաշվեց «ինքնավար հայ ժողովուրդ» պահանջը, որի չիրականացման դեպքում դաշնակցությունը սպառնում էր խզել հարաբերությունները երիտթուրքերի հետ: Շարունակվում էին ահազանգերը գավառներում հայերին սպառնացող վտանգի մասին: Բերվում էին օրինակներ. կայմակամի հրամանով եկեղեցու զարդանախշ քարերն օգտագործվում էին մեջիդի շինարարությունում, քրդերը զավթել էին ս. Խաչ վանքը, որտեղ պահվում էին արժեքավոր ձեռագրեր, մի քանի վայրերում առկա էին հայերի սպանության փաստեր[228]: Իտալական պատերազմի հրահրած չովինիստական կրքերի պայմաններում իթիհադը 1911թ. հոկտեմբերին բանաձև ընդունեց Օսմանյան Թուրքիայի զարգացման վերաբերյալ: Բանաձևում ասվում էր. «Կայսրության բնույթը պետք է լինի մահմեդական. մահմեդական հաստատություններն ու ավանդույթները պետք է արժանանան հարգանքի: Մյուս ազգություններին պետք է մերժվի կազմակերպվելու իրավունքը, քանի որ ապակենտրոնացումն ու ինքնագոյությունը նշանակում են դավաճանություն թուրքական կայսրությանը»: Նաև ասվում էր, թե վարչակարգն այնքան հզոր է, որ ուծացմանն ընդդիմանալու քրիստոնյա ազգությունների ջանքերն էական դեր խաղալ չէին կարող: «Փոքրամասնությունը ներկայացնում է մի այնպիսի մեծություն, որին կարելի է առանց վտանգի անուշադրության մատնել»: Թուրքացումը համարվում էր գլխավոր խնդիր և շեշտվում թուրքերենի պար-

221 Ն. տ., 31. 03. 1910:
222 «Մշակ», 10. 04. 1910:
223 Баку", 02. 07. 1910:
224 ЦГИА ПФ. Ф. 821,оп.139, д. 34:
225 Ն. տ.:
226 Ն. տ.:
227 «Արարատ», 1910, թիվ 10:
228 Ն. տ., 1911, թիվ 11 և 12:

տադրման առանձնակի նշանակությունը[229]: Այս ու նման փաստաթղթերը, որ հրապարակ էին հանում երիտթուրքերը և դրանց պարունակած դրույթներն անմիջապես վերածվում էին պետական քաղաքականության սկզբունքների: Իհարկե, այդ ամենն անհանգստացնում էր հայերին, քանի որ կառավարող կուսակցության նման կեցվածքը գործողությունների էր մղում մահմեդականներին: Գրեթե բոլոր վիլայեթներում զանգվածային դարձան բռնի մահմեդականացումներն ու ավազակային հարձակումները, որոնց հեղինակները, որպես կանոն, չէին պատժվում: Պոլսահայ գործիչները, մասնավորապես, Ազգային ժողովն ու պատրիարքարանն առաջարկի հետևից էին ուղարկում Բ. Դուռ, ինչպես նաև այլևայլ գերատեսչություններ՝ ահազանգող վտանգի առաջն առնելու: Պահանջվում էր Բիթլիսում և Խարբերդում նշանակել բարեխիղճ վալի, Վանի և Բիթլիսի վալիներին արտակարգ իրավասություններով օժտել, կարգուկանոն հաստատելու համար արևելյան վիլայեթներում մեծացնել ոստիկանների ու ժանդարմների թիվը, կարգի պաշտպանության գործում ներգրավել նաև բանակային սպաներին, դատել սահմանադրական կարգերի ժամանակաշրջանում կատարված հանցագործությունների հեղինակներին, աշխատանքից հեռացնել չարագործ պաշտոնատարներին, իսկ բռնարարքներով զբաղվող բեկերին տեղափոխել ուրիշ վիլայեթներ և այլն: 1911թ. նոյեմբերի 25-ին Հայ քաղաքական 25 հոսանքների ներկայացուցիչների դռնփակ ժողովում Գր. Զոհրապը հայտարարեց. «Հայերի ապագան շատ անորոշ է, քանի որ կառավարությունը թույլ է ու անպատասխանատու»: Վ. Փափազյանի կարծիքով՝ կառավարությունն ուներ «որոշակի դիտավորություններ», երբ խրախուսում էր բռնությունները Արևմտյան Հայաստանում[230]:

***

Հայ քաղաքական ուժերի հեղհեղուկ, վայրիվերո գործունեությունը Մեծ եղեռնի տարիներով չսահմանափակվեց: Մեծ հաշվով այն վերածվեց նաև ազգային բնավորության և տարբեր երանգներով դրսևորվում է մինչ օրս:

1917-ի ապրիլի 20-ին Իգնատիոս անունով մեկը Թիֆլիսից գրում է. «Դժբախտաբար այս ծանր, դժբախտ պահին, փոխանակ ուժեն օգտվելու, մեր կուսակցականները բոլորովին տարբեր ուղղության կը հետևին և փոխանակ բոլորուելու մեկ սեղանի շուրջ և միանալու, ընդհակառակն. ավելի ևս իրարմե կը հեռանան... գաղթականական մարմիններու տված չորս միլիոնի միայն 1/4 ծախսված է, իսկ մնացածը որու ձեռքն ընկած է փչացուցած են և հաշիվ կրցած չեն տալ. ո՞վ է փնտռողը: Միակ տիպար հաստատություններ Երևանում և Ալեքսանդրապոլում ամերիկյան միսիոներներինն է, որք զերծ են զեղծումներե»[231]: Մեկ ամիս անց Հ. Տևկանցը գրում է. «Ինչո՞ւ լրջորեն ուսած և ծանրախոհ մարդիկ մեկ կողմ քաշուելով թող տային, որ արկածախնդիրները առաջնորդեին ազգը դեպի կործանում»[232]: Նույն տարվա հոկտեմբերի 20-ին Երևանից գրում է Թ. Ամիրյանը. «...Այստեղ ևս կուսակցություններ կը ջանան համերաշխությամբ գործել, բայց ես, որ ամենեն յոռետեսն եմ դաշնակցական գործիչների հանդեպ, շատ անգամ կը կասկածիմ, որ նրանք համերաշխություն ան ատեն կընդունին, երբ դիմաց զորավոր ոյժ կա կամ երբ իրենց կուսակցամոլական գծուծ շահեր այդպես կը պահանջեն: Այն օրվնե, երբ կարդացել եմ «Թափառական հրեայ» գիրքը, երբեք տարբերություն մը չեմ տեսներ ճիզուիթ վարդապետներու և դաշնակների գործունեության միջև... եթե մեր ազգային ղեկը նոյն կուսակցության մնայ, ինչքան ազատուեցավ Ռուսաստան «պոլշևիկների» ձեռքով, և Թուրքիա «իթիհադականների» ձեռքով, նոյնպես Հայաստան ազատուած է և կարող է ազատուիլ նրանց քոյր «դաշնակցության» ձեռքով... անոնց բոլոր գործունեությունն դեպի կործանում պիտի առաջնորդե, եթե լուրջ և խորհող ու կարող հայ անձնավորություններ յառաջ չգան և... լուրջ միջոցներ ձեռք չառնեն... սնապարծություն և անձնապարտություն՝ ահա (դաշնակ գործիչների) ներքին ճգտումը իրենց ամեն արարքներու մեջ. առ քեզ հոս հրատարակության տրուած «Մեծ դեպքեր Վասպուրականի» Ա-Դոյի գիրքը Վանի և Շատախի հերոսամարտի մասին. ամեն ինչ հոս պատմուած է

229 Тунян В. Младотуркн. т. 1, стр. 329.
230«Մշակ», 13. 12. 1911:
231 Տոնապետեան Պ., Նշվ. աշխ., էջ 74-75:
232 Ն.տ., էջ 115:

այն աստիճանի միակողմանի, որ ամեն մի կարդացող, ով քիչ մը տեղեկութիւն ունի, զարմանքով պիտի կարդայ սոյն Դաշնակցութեան գրուածքը, որոյ մէջ քանի մը վախկոտ հերոսների պատկեր իսկ հրատարակուած են, չըսեմ, որ եղբոյրդ անուն անգամ չի կայ այդ գրուածի մէջ թեև գործեր գրուած են, և անունն ջնջելով նոյն գործերն անգամ իրենց վերագրել տալու կարծիք կը տրուի ընթերցողին, իսկ թե ինչո՞ւ. նրա համար, որ եղբայրդ ուրիշ կուսակցութեան կը պատկանի, նրա անունը կրնար դաշնակցականների գործունեութիւն նսեմացնել, որովհետև Շատախեն զատ միւս բոլոր գավառներ հակառակ իրանց ունեցած շատ ոյժին շնորհիվ իրենց զինվորներ ամեն տեղ փախան թշնամուն թողնելով իրենց ընտանիքներ, ունեցածներ և պատիվ...»[233]: «Մի ընտանիքի տեր,- շարունակում է Պ. Տոնապետյանը,- որ ունի իւր տունն հաստատուած մի գիւղի մէջ, որտեղ շրջակայի տնուորներն այլացեղ են և այլակրոն, բանական օրենքով և բնազդումով կզգայ թե իւր տան և ընտանիքի գոյութեան կենսական շահը անհրաժեշտորեն կը պահանջէ համերաշխ կենսակցութիւն և յոժարակամութիւն դէպի շահով և կեանքով այդ օտարացեղ դրացի բազմութիւնը: Իսկ եթե այդպիսի մի ընտանիքի պետ կանգիտանայ այս էական պայմանն ու ցնորական զգացումներե մղուած կուղղե իւր համակրութիւնը ծովերե անդին եղած մի մեծ գիւղի օտար ու խորթ մարդոց վրայ, զուտ այն մտածումով, որովհետև նոքա դիպուածով կրոնակից են իրեն, և եթե այդ մարդիկ կուգան իւր գիւղի վրայ իւր հարևաններու ինչքին տիրանալու, և նա գործքով և խոսքով կօգնե նոցա և իւր հակակրութիւնը կը ժայթքե իւր այրացեղ և հզոր հողակիցներու դեմ, այդ տեսակ ընտանիքն ու տունը անխուսափելիորեն դատապարտուած են կորստեան և այդ կորստեան համար, միակ յանցավորը ոչ կատաղած դրացին է, ոչ սրտով ու զգացմունքով խորթ կրոնակիցը, այլ բուն իսկ ինքը՝ այդ ընտանիքի տերը»[234]: Թուրքական սուլթանները ոչ թե իրենց բարեհաճութեան, այլ քաղաքակիրթ գործունեության համար թուրքերի անընդունելը ոչ թե իրենց բարեհաճութեան, այլ քաղաքակիրթ գործունեության համար թուրքերի անընդունելը, մասնավորապես կայսրության մայրաքաղաքում էին հավաքում հայ գործիչների, մասնավորապես արվեստի մարդկանց: Սուլթանական պալատը հատկապես ուշադիր էր հայ ամիրաների հանդեպ: 1850թ. մի անգլուհի գիրք է հրատարակում Կ. Պոլսի մասին, որում հայերը ներկայացված են «մայրաքաղաքի առանձնաշնորհեալ և ամենաբարգավաճ հպատակ ցեղ և տերութեան ամենավստահելի համարուած հպատակ տարրը»: Գրքում կան հետևյալ որակավորումները՝ «Պանծալի հայ», «Հավատարիմ թուրք», «Անվստահելի հույն», «Ստրկաբարո հրեա»: Օսմանյան կայսրությունում հայերին անդրադառնալիս թուրք և օտար հեղինակների ելակետը մեկն էր. հայերն ի վիճակի չէին ունենալ սեփական անկախ պետություն և դրա համար էլ այն ինչ թուրքիայում արվում էր նրանց ինքնավստահություն հիշեցնող իրավունքներ տալու ուղղությամբ համարվում էր երկնքից թափվող մանանա: Այդ առնչությամբ բնութագրական են Լինչի մտքերը, թե հայկական թագավորության վերակենդանացման շուրջ խոսակցությունները «ծայր աստիճան հողմային և անոտի են: Մի՞թե հավանական է, որ 20-րդ դարում հայերը պատրաստ են վերակենդանացնելու մի քաղաքականություն, որ նրանց գործողությունները սեղմելու է վիթխարի կայսրության մի չնչին իշխանության սահմանափակ բեմի շուրջը»[235]: Լինչն առանձնապես մեծ դեր էր հատկացնում Հայ ազգային սահմանադրությանը, մասնավորապես հայ մշակույթի՝ կրթության, արվեստի զարգացման գործում: Շեշտելով սուլթան Աբդուլ Ազիզի դերը Պ. Տոնապետյանը նաև գրում է. «Մինչև անգամ սուլթան Համիտ իւր թագավորութեան առաջին 12 տարիների ընթացքին շարունակաբար իր Հովանավորութիւնը կը շնորհեր հայոց միացեալ ընկերութեան և դպրոցասեր տիկնաց միութեան տարեկան պարահանդեսներին, որպեսզի մեծ հասույթ գոյանար, և ինքը ևս այդ առթիվ 500-ական և 1000-ական ոսկի կը նուիրեր»: «Թե Կ. Պոլսոյ և թե մանավանդ գավառների մեջ թուրք բարձրաստիճան պաշտոնեաները և կուսակալները զոհութեամբ ներկայ կը լինեին հայոց դպրոցների տարեկան հանդեսներին, որոնց սրահների պատերին սուլթան Համիտի պատկերի կողքին կախված էին Հայկայ, Վարդանայ, Սահակ-Մեսրոպի և այլ պատմական հայ դիւցազների պատկերներ, և ուր ազգասիրական մեծաղղորդ ճառեր կարտասանուեին և մեզ ծանոթ սահմանադրական հայրենաշունչ երգերը կերգուեին ամենայն ազատութեամբ...»: Զարկ ստացավ

233 Տոնապետեան Պ., նշվ. աշխ., էջ 212-213:

234 Տոնապետեան Պ. Ձայն տառապելոց: Անդուրէ անդունդ, Փարիզ, 1922, էջ 374:

235 Лынч Армения, стр. 436.

հայ թատրոնը: Սակայն սա նույն թուրքական քաղաքականության մեդալի միայն մի կողմն էր: Մեդալի մյուս երեսը վայրագություններն էին, կաշառքը, զեղծարարությունը, օրինազանցությունը, թուրք չարագործների անպատժելիությունը, որից առաջին հերթին տուժում էին հայերը: Հայ-թուրքական առճակատման հիմնադիրը ցարական կառավարությունն էր: 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմի Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը փաստորեն հանձնվեց հայ հրամանատարներին՝ Լորիս Մելիքով, Լազարև, Տեր-Ղուկասով: Երբ նրանք Պետերբուրգի հրահանգով այցելեցին Գևորգ 4-րդ կաթողիկոսին և խնդրեցին նրա աջակցությունը ռուսական բանակին, կաթողիկոսը պատասխանեց. «Ինչպես իմ պարտականությունն է հոգ տանել Ռուսիոյ հայ հոտիս համար, նույնքան և պարտականությունս է վտանգի չենթարկելու սուլթանի իշխանության տակ ապրող ժողովրդանս կեանքը: Այդպիսի մի կոնդակ անպայման զայրոյթով պիտի լեցնե սուլթանն և իւր կառավարությունը և առիթ պիտի ստեղծե հայկական հալածանքի և կոտորածի...»[236]: Պ. Տոնապետյանը այս իրավացի հարցադրումից հետո հարձակվում է Ն. Վարժապետյանի վրա, որ նրա ջանքերով Սան-Ստեֆանոյի պայմանագրի մեջ մտցված 16-րդ հոդվածը հանդիսանում էր «յանուն հայոց կեանքի և ինչքի ապահովության Թուրքահայաստանի իրական և վերջնական կլանում ռուս կայսրության մեջ»[237]:

Սոլսբերին 30. 03. 1878թ. գրում է Լեարդին, թե Լոնդոնը պնդում է, որ պայմանագրի այդ կետերը «եթե ոչ ջնջուին և ոչ կրճատուին», ապա անհրաժեշտ է վերացնել դրանց բացասական ազդեցությունը ոչ միայն Թուրքիայի, այլև Անգլիայի շահերի վրա: «Ասիական Թուրքիան,-շարունակում է նա,- կը պարունակե բազմաթիվ ցեղեր ու դավանություններ... ովքեր ոչ ինքնավարության ոյժ և ընդունակություն ունեն և ոչ անկախության տենչանք, բայց իրենց անդորրությունը և իրենց առավել կամ նվազ քաղաքական բարելավության երևույթը ամբողջովին կը պարտին սուլթանի իշխանությանը... Եթե ստոյգ չլինի թե Բաթում, Արտահան և Կարս պիտի չի դառնան հիմք, որտեղեն խառնակչության գաղտապատուիրակներն յառաջ պիտի խաղան, պատեհ ժամանակին նոցա հետևելով արշավող բանակներ, այդ տեղերի Ռուսիոյ ձեռքին մնալը մեծ ազդեցություն պիտի գործե Դրան ասիական տիրապետության քայքայման վրայ»[238]: «Լորդ Ցոլսբերիի քաղաքական նախատեսությունն իրականացավ,- եզրահանգում է Պ. Տոնապետյանը,- քնած հնադարյան աղետաբեր ոգին, որ պատճառած է Հայաստանի անկախության մահը և խորտակած Կիլիկիոյ հայոց թագավորությունը, մի անգամ ևս կեանք առավ հայկական ազգասիրության ... մարմնի մեջ, մի անգամ ևս զայն կախարդեց քրիստոնեական պաշտպանության խաչի հմայքով և նորա պատրաստակամ և փրկարար աջակցության կոյր հավատքովն: Այսպես սկսան ծնիլ ազգային անկախության նորօրինակ առաքեալներ, որոնց աչքերը արհամարհանքով չուռ եկան թուրքին և անհիմն լիահավատությամբ դարձան... դեպի Ռուսիա և ապա Ռուսիոյ հակառակորդ Բեռլինի վեհաժողովը»[239]: 1877-78թթ. պատերազմի ավարտին անգամ Հ. Լեարդն էր Ն. Վարժապետյանին խոհեմության դասեր տալիս, նկատելով, որ ստեղծված իրավիճակը կարող է հանգեցնել «հայ ցեղի բնաջնջման»: Նա նույն միտքը ներկայացրեց Գլադստոնին հասցեագրված 27. 04. 1880թ. նամակում: Լեարդը գրում է. «Հայերը, խրախուսուած այն համակրութենեն, որ ընդունեցան Անգլիոյ մեջ... կը նային եթե ոչ անկախ, ապա ինքնավար Հայաստանի ստեղծմանը...Որևէ փորձ դեպի դրա իրականացումը... կարող է առաջնորդել յոյժ ծանր հետևանքների և աղետների բուն իսկ ի կորուստ հայ ժողովրդեան: Պետք չէ մոռացուի թե նոքա կը կազմեն երկրի բնակչության փոքրամասնությունը... Ցուրաքանչիւր պահանջ Հայաստանի ինքնուրույնության կարող է առաջնորդել կոտորածների... Ռուսիան հավանորեն երբեք պիտի չթույլատրե Հայկական ինքնավար կամ անկախ պետություն, և ուստի փորձ կազմելու այդպիսի մի բան պիտի վերջանայ հայոց կլանումով ռուս կայսրության մեջ»:

Սկզբում սուլթանը ուշադրությամբ ընդունեց բարենորոգումների անգլիական առաջարկները,

236 Տոնապետեան Պ., նշվ. աշխ., էջ 379:

237 Ն .տ., էջ 380:

238 Ն. տ., էջ 381:

239 Ն. տ., էջ 381-382:

բայց «աստիճանաբար կը փոխուեր և կսկսեր ընդդիմութիւն ցոյց տալ»: Լոնդոնը համոզված էր, որ դա հետևանք էր Գերմանիայի և Ռուսաստանի դեսպանների գործունեության: Գլադստոնի կառավարությունն ընկրկեց: Լեարդին հանձնարարվեց այլևս Հայկական հարցով չզբաղվել: Պ. Տոնապետյանը եզրահանգում է. «Եթե խնդիրը մնացած լիներ զուտ Թուրքիոյ հայ հանրային մարդոց ողջամտութեանն, ամենայն հավանականութեամբ ոչ 1895-ի կոտորածները տեղի պիտի ունենային և ոչ 1915-ի բնաջնջումը: Թուրքիոյ հայոց ազատագրութեան տենչի յեղափոխական փոթորիկը պայթեցավ ոչ թե սուլթանի իշխանութեան տակ եղած հայերեն... այլ ցարի իշխանութեան տակ եղած՝ իրենց ազգային իրավունքներեն շատ ավելի զուրկ հայերեն, որոնք Թրքահայոց վիճակի անհարազատ ըմբռնողներն էին: Լորդ Սոլսբերիի կարծիքը, թե Թուրքիան պիտի սկսի նկատուիլ արագ կործանման վիճակի հասած մի տերութիւն, սկսած էր մի կատարեալ հավատք դառնալ Ռուսիոյ հայոց համար: Եվ ռուսահայ մեծ բանաստեղծը, որ երևի Թուրքիոյ ինչ լինելն չէր գիտեր, և որ ոչ միայն Թուրքահայաստան չէր տեսած, այլև ոչ ռուսական Հայաստանի ժողովրդեան մասին ուղիղ հասկացողութիւն ուներ, Մոսկուայեն, Պետերբուգեն, թե՞ Նոր Նախիջևանեն երգեց ազգասիրական անհեթեթութեան գլուխգործոց երգը. «Մեր բահերն էլ նրանց կանեն շանսատակ»[240]: Ռուսահայերը գործի են անցնում. նրանք իրապես համոզված էին, թե «անձնուեր ազգասերների մի խումբ սահմանն անցնելով կարող էին իրենց բահերով շանսատակ ընել Թուրքն ու օսմանեան կայսրութիւնը»[241]:

Լսելով հնչակյան կուսակցության ստեղծման մտադրության մասին, մանավանդ որ դրա հիմնադիրներն այդպես էլ Արևմտյան Հայաստանում չեղան (չրջագայության համար ֆինանսներ չունեին) և որոշեցին կուսակցության ծրագիրն արտագրել ուրիշ երկրների նմանատիպ կուսակցությունների ծրագրերից, ժամանակի խոշոր մտավորական գործիչ Արք. Մելիքսեթ Մուրադյանն ասաց, թե դա «ամենավնասակար քայլն է հայ ազգի համար»: Այդ առթիվ նա գրեց. «Ռուսիոյ մեջ մեր կրոնը և լեզուն են հալածուած՝ սպառնալով մեր գոյութեանն իբրև մի ազգ. մինչդեռ Թուրքիոյ մեջ մենք կը վայելենք կատարեալ ազգային ազատութիւն: Կառավարութիւնը չի միջամտեր մեր կրոնական և կրթական գործերուն, և շնորհիվ ազգային սահմանադրութեան ընդարձակ իրավունքներուն մենք կարող ենք զարգանալ և դառնալ մի զորեղ ազգային մարմին, եթե գնահատենք մեզ շնորհուած այդ առանձնաշնորհումները պահպանելով կառավարութեան վստահութիւնն մեր հավատարմութեամբ դեպի օսմանեան գահը: Դիպուածական անարդարութիւններ, պատահական ավազակութիւններ և սպանութիւններ չեն կարող մնասել մեր ազգային կեանքի ընդհանուր յառաջադիմութեան, բայց այնպիսի ըմբոստամիտ քաղաքականութեան որդեգրութիւնը և ցուցադրութիւնն անտարակոյս պիտի զրկե մեզ մեր գոյութիւն ունեցող ազատութիւնեն և կարող է բերել զարհուրելի աղետ մեր ժողովրդեան վրայ... Եվ ռուս կառավարութիւնը պիտի ուրախանայ մեր կրելիք աղետի վրայ»[242]: Երբ հանդես եկան «Արմենիան» և «Հնչակը» Աբդուլ Համիդ 2-րդը Ելդզ կանչեց մի խումբ հայ երևելիների և բացեիբաց զգուշացրեց. «իմ ջերմ փափագն է, որ շարունակեմ պահպանել նախնեացս ավանդական վստահութիւնը դեպի իմ հայ ժողովուրդն՝ իր անխախտ հավատարմութեան համար առ օսմանեան գահն: Ցավոք կը դիտեմ, որ այդ հավատարմութիւնը հետզհետե կը խախտուի արտաքին խառնակիչ ազդեցութեան հետևանքով: Խորհուրդ կուտամ ձեզ, որ յորդոր կարդաք ձեր ժողովրդեան, որպեսզի չչեղին իրենց դարավոր հավատարմութեան ճանապարհեն, և մանավանդ մարդ ղրկեք Եվրոպա խրատելու այնտեղի յեղափոխականները, որ դադրեցնեն իմ տերութեան դեմ ուղղած իրենց վնասակար գործունեութիւնը և հրատարակութիւնները»[243]: «Հնչակ»-ն ու «Արմենիա»-ն «զոռոզ արհամարհանքով» պատասխանեցին սուլթանի սպառնալիքին: Իրենց հրապարակումներում նրանք սուլթանի խոսքերն այնպես ներկայացրեցին, թե Համիդը «սկսած էր դողալ նոցա ուժի առաջ»: Մինչդեռ սուլթանը ձգտում էր թույլ չտալ, որ տերությունները, մասնավորապես Ռուսաստանը,

240 Տոնապետյան Պ., նշվ. աշխ., էջ 386:
241 Ն. տ., էջ 288-289:
242 Ն. տ., էջ 288-289:
243 Ն. տ., էջ 391:

օգտագործեին հայերին կայսրության ներքին կյանքին միջամտելու համար: Դրան հետևեցին բռնությունները, ձերբակալությունները, մատնությունները: «Թուրք կառավարութիւնը ոչ թե թուրք ոստիկանի, այլ բուն իսկ նախկին յեղափոխական հայ լրտեսի և գլխավորապես նոր ձերբակալուած հայ յեղափոխականի ձեռքով կը բռներ, կը պատժեր, կը ջախջախեր... հայ յեղափոխականները»[244]: Ոստիկանության նախարար Նազրմը Պ. Տոնապետյանին ասել էր. «Բուլղարիան հայերու համար օրինակ ծառայել չի կարող. վերջինները, ի տարբերութիւն առաջինների, փոքր ուժ ունեն... Եթե բոլոր հայերին ալ ոչնչացնենք Եվրոպայի հոգը չի պիտի լինի: Ոչ դրացի է, որ իւր հանգիստը խռովի և ոչ շահ ունի հայ ժողովրդեն, որ այդ շահի պատճառով մեզի դեմ ելնե: Անգլիան է հայոց միակ բարեկամը, բայց ան ալ թռչուն չէ, որ Եվրոպայի միւս ծայրեն թռչելով գայ և փրկե հայերը: Բայց եթե մենք նոյնիսկ յոժար կամքով իշխանութիւն տանք հայոց, ռուսը մեզ չպիտի թողնի, որ Հայաստան մը ստեղծենք իւր սահմանին կից»[245]: Պ. Տոնապետյանը Արևմտյան Հայաստանի հայկական շարժումների կազմակերպիչներին անվանում է «վտանգազերծ պարագլուխներ»[246]: Նա, իհարկե, զրպարտում է, երբ գրում է. «Զգտիլ սպանել տալ միլիոնավոր հայ կիներ և երեխաներ, որպեսզի նոցա աղիողորմ աղաղակի և արիւնլուայ դիակների ազդեցութեան ներքո Եվրոպան ստիպուեր ստեղծեր մի ազատ Հայաստան. այդ էր ուրեմն հայ ազգափրկիչների խելագար տեսակետը 1893-ին, և այս տեսակետը ամենայն կուրամտութեամբ շարունակեց թագավորել մինչև որ հասավ իւր նպատակին 1915-ի ամբողջական սպանութեամբը»: «...Թշուառ հայ ժողովուրդը դարձած էր մի անճողոպրելի որս յեղափոխական խելագարութեան ճանկերի մեջ»[247]:

Պ. Տոնապետյանը նկատում է, որ Տրապիզոնում Բահրիի ահաբեկումը «այլևս փշրեց Թուրքի կատաղութեան շղթան և դուրս թափեց հայ ժողովրդեան վրայ նորա սրտի մեջ կուտակուած թույնը: Տասնեակ հազարաւ անմեղ հայեր ոչխարի պես մորթուեցան...»[248]: «Բայց այն կուսակցութիւնը, ով ստեղծողն էր այս կացութեան, դարձավ հզոր և ահարկու այնպիսի դրամատեր հայ անհատների աչքին, որոնցմե դրամ կը պահանջուեր յանուն այդ կուսակցութեան...»[249]: Հենց նաև այդ պատճառով «խաղաղութեան վերահաստատութիւնը չէր կարող նպաստավոր լինել հայ յեղափոխության պարագլուխների և նոցա արբանեակների շահերին»: Դաշնակցությունն կուսակցության ղեկավարները «լավ կըմբռնեին, թե յեղափոխական ցոյցը կը հանգեցներ անվրիպելի կոտորածների հայ ժողովրդի, բայց ավելի լավ գիտակ էին, թե ցոյցը ապահովաբար կը բերեր և փառք, և թող... նոքա անշուշտ գիտեին, թե այս երկուսեն որ մեկն է գերադասելի իրենց համար...

Մի ճշմարտապես յեղափոխական կուսակցութիւն պիտի երբեք հետամտեր նորից փորձելու մի զենք, երբ նման նախկին փորձի սոսկալի աղետը բոլորովին ակներև էր... Դաշնակցական կուսակցութիւն... կազմակերպեց ցոյց ոչ թե սուլթանի կառավարության դեմ, այլ Մեծ պետությանց դեմ 48 ժամ ժամանակ տալով նոցա, որ հնազանդեին իւր կամքին, եթե ոչ օդը պիտի հաներ օսմանեան բանքը»:

"Times"-ն իր 20. 08. 1896թ. առաջնորդողում ծաղրում է. «Մայրայեղորեն յատկանշական է յեղափոխական կոմիտեներին և նոցա գլխավոր գործակալներին մանրամասն լավ խնամք տանիլն իրենց անձական կաշիին... երեքը դիպուածավ գնդակահարուեցան մի քանի անմեղ բանքի գրագիրների հետ... Այն պարագլուխները և նոցա հետևողները, որ չփախան, իրենց օձիքը ազատեցին բացարձակապես անվնաս, մինչդեռ նոցա դիտավորութեանց իսպառ անգիտակ հազարավոր հայեր փողոցների մեջ կոտորուեցան մի կատղած ամբոխե», իսկ իրական գրգռիչները բացառապես անվտանգության մեջ էին[250]: Իսկ "Morninig Post"-ը 01. 09. 1896թ. գրեց. «...Այս խռովարարների գործողությունը.. անշուշտ պիտի խափանե հայկական բարենորոգմանց յառաջադիմությունը: Այս իսկ պատճառով և ուրիշ պատճառների համար նոցա գործողությունը պետք է ստանայ ամենակատարեալ դատապարտություն ամեն մեկի, ով շահագրգռված է Թուրքիոյ ասիական նահանգների խաղաղությամբ»: Մամուլի անբարյացակամ կարծիքն է՝ «Հայ յեղափոխության պարագլուխները պարտ էին խորին ուշադրության առնել, եթե իսկապես իրենց անկեղծ նպատակն էր ծառայել ազգի բարելավության համար: Դժբախտաբար մինչև այսօր, երբ հայությունն

244 Տոնապետեան Պ., նշվ. աշխ., էջ 394:
245 Ն. տ., էջ 397:
246 Ն. տ., էջ 399:
247 Ն. տ., էջ 415:
248 Ն. տ., էջ 415-416:
249 Ն. տ., էջ 416:
250 Ն. տ., էջ 423:

այլևս ոչնչացած է ազգային քաղաքական գոյութիւն ունենալու կենսական կարողութենն, նոցա և նոցա հակայեղափոխական յաջորդների խղճերը տակավին կը յարատևեն մնալ առանց խայթի... և նոցա հակացողութիւնը առանց զիղջի և առանց ուղղաշրջման»: Պոլսի դէպքին ոչ միայն զոհ գնաց 10 000 հայ, այլև ծայր աստիճանի վատթարացավ ամբողջ արևմտահայության վիճակը: «Նոցա ազատ երթևեկութիւնը... բոլորովին կաշկանդուեցավ ամենուրեք: Կոտորածների ուրվականը և հավանական սպանվելու սարսափը, դրանից հետո դարձավ օսմանեան հողի վրայ քայլող ամեն մի հայի անբաժան ընկերը... Այսպիսով ռուսահայ մտավորականութեան ստեղծած յեղափոխութիւնը թրքահայերեն առավ թե նոցա կեանքը և թե ազատութիւնը»: Տասնյակ հազարավոր հայերի ոչնչանալը և ավելի մեծ թվերների մահմեդականալը «մեղապարտ յեղափոխութեան խիղճը ոչ միայն չխաթարեց... այլև ցոյցը փառաբանուեցավ իբրև դիւցազնական մի արարք»: «Ինչո՞ւ հայ անհատներ, որ կատարեալ գիտակցութեամբ իրենց ցեղի անմեղ և անպաշտպան զավակները հարիւրհազարներով պարբերաբար սպանել կուտային Մեծ մարդասպանի ձեռքով, պետք է իրավունք ունենան կոչուելու հայ ազգի հերոսներ... այդպիսի հայ անհատները հայութեան համար եղած են ավելի յանցավոր մեծ չարագործներ, քան բուն իսկ սուլթան Համիդ»[251]: Պատահական չէր, որ Եգիպտի յանցավոր մեծ չարագործներ, քան բուն իսկ սուլթան Համիդ»[251]: Պատահական չէր, որ Եգիպտոսի վարչապետ Նուբարը հայ «հեղափոխականներին խորհուրդ տվեց. «Գնացեք առեք մի կտոր չվան, անցուցեք ձեր վզեն և կախեցեք ձեզ»[252]: Բայց այդ յեղափոխականները չհետևեցին Նուբարի խորհրդին, որովհետև «իրենց սպանութիւնը կը տեսնեին մահ հայ ազգի ազատութեան համար. իսկ հայ ժողովրդի իրական սպանութեան մեջ նոքա կը տեսնեին ամենափայլուն ազատութիւնը հայ ազգի համար: Հետևաբար իրենց կեանքը մի անհրաժեշտութիւն էր հայ ազգի համար, և հայ ազգի մահը մի անհրաժեշտութիւն էր իրենց կեանքի համար»[253]: Այս իրողութիւն Հ Յ դաշնակցության ներսում իսկ ծնեց ահաբեկչություն, դաշնակ ահաբեկիչները չէին վարանում սպանել անգամ կուսակցության առաջատար գործիչներին (օրինակ, Հակոբ Վարդ Պատրիկյանին): Գնալով հեղափոխականների հանդեպ հայ հասարակության վերաբերմունքը կարծրանում էր, «յեղափոխութեան անունն և յեղափոխական անհատները մինչև իսկ ավելի ատելի էին դարձած, քան հայասպան Թուրքը»[254]: Լինչը զարմանում է. «Ինձ համար մի անհասկանալի առեղծված են ձեր (հայ) հեղափոխականները: Ի՞նչ նպատակի են ուզում ծառայել... Ես տարակույս չունեմ, թե նրանց ընթացքը ապացուցում է, որ իրենք հետամուտ են սպանել տալ Օսմանյան կայսրության հայ ժողովրդին: 1895-ի և 1896-ի համատարած կոտորածները և եվրոպական դիվանագիտության բռնած դիրքը չափից ավելի խրատական դաս եղան, որ նրանք բարեշրջեին իրենց աղետալի գործունեության եղանակը: Սուլթանի սպանությունով նրանք ի՞նչ բարիք կարող էին ստանալ հայ ժողովրդի համար: Բացարձակապես ոչինչ: Իսկ եթե երբևէ խալիֆը սպանվեր մի հայկական ռումբից, մոլեռանդ Թուրք ամբոխը հավանաբար այնպիսի սոսկալի կոտորած պիտի սարքեր անպաշտպան հայ ժողովրդի վրա, որ գուցե այլևս հայ չմնար Թուրքիայում... Եթե այդ մարդիկ պարկեշտ հայեր են և նրանց անկեղծ ցանկությունն է գործել ի նպաստ իրենց ազգային գոյության և առաջադիմության, նրանք պարտավոր են փոխել իրենց ընթացքը... Նրանց առաջին պարտքը պետք է լինի հարթել այն ատելությունը, որ ռուս քաղաքականությունը անուղղակի և ուղղակի հնարքներով ստեղծեց Թուրք կառավարության և նրա հայ հպատակների միջև, և որի գլխավոր գործիքը եղան իրենք Ռուսաստանի և արտասահմանի հայ հեղափոխական կոմիտեները: Եթե այդ մարդկանց մոտ կա ողջամտություն և բարի կամք, դյուրությամբ կարող կլինեն մեղմացնել Թուրքի խիստ ընթացքը...»[255]: Երիտթուրքերի իշխանության գալուց հետո Հ Ց Դ-ն այլևս բանտարկյալ չուներ և ամենայն եռանդով զբաղված էր Կովկասի ազգասիրական ընդհանուր արտերի մեջ աչալրջորեն հնձելով փող իրենց Սուրբ գործի համար: «Ազգային ազատության, բանտարկյալների փրկության, հայ փախստականների պահպանության և որբերին խնամելու անվան տակ հասարակությունից դրամ հավաքելն ու անափառության, անձնափառության և անձնական ապրուստի համար գործածելու այս գործընթացում վերջին չորս տարիների փաստերը ապացուցում են, որ հակահեղափոխական ազգափրկիչները ոչ նվազ են կատարելագործված, քան բուն հեղափոխականները»: Ջնայած 1908-ին իթիհադը հզոր ուժ էր դարձել, «նրանք միշտ ջանացին մնալ ստվերում և ոչ թե դաշնակների նման կանգնեցին տանիքներին և կոկոզավիզ աքաղաղների պես կուկուլիկուներով հոխորտացին սուլթան Համիդին կամ կանխաձայնել, թե որ ժամին և որ լուսամուտից պիտի ներս մտնեին իրենց կտուցներով կուրացնելու նրա զույգ աչքերը և իրենց պոչերով տապալելու նրա գահը և իշխանությունը»[256]: Երբ իթիհադականները իշխանության եկան, սուլթանին պահեցին: Նրանք բոլոր քաղաքական փախստականներին և հեղափոխականներին հրավիրեցին վերադառնալ հայրենիք և ծառայել նրան: Այդ կոչին արձագանքեցին նաև հայերը: Դաշնակները սկսեցին սանձարձակ հոդվածներ տպագրել հայ մամուլում՝ ճգնելով հավատացնել, թե «Թուրքիայի հին վարչակարգը տապալող և նորը հաստատող իրական ուժը հայ հեղափոխականներն էին...»[257]: Դաշնակները սկսեցին ավելի սիրելի դառնալ նոր վարչակարգի ղեկավարներին: «Ադանայի կոտորածը բնավ չվրդովեց դաշնակցականների հեղափոխական ոգին և ազգասիրական զգացմունքը և նրանք հանգիստ խղճով և ուրախ սրտով մասնակցեցին նոր վարչակարգի՝ ի պատիվ օսմանյան սահմանադրության Ելդըզի պալատի խնջույքին»: Մյուս կուսակցությունները մերժեցին մասնակցել: Հ Ց Դ փոխեց իր «յեղափոխական չապիկը» և վերածվեց «զուտ օսմանյան քաղաքական կուսակցության»: Հ Ց Դ-ն հայտարարեց. «Թուրքիայի հայությունը երբեք այնպիսի ապահով կյանք չէր վայելել, ինչպես վայելում էր երիտթուրքական հեղաշրջումից հետո մինչև Թուրքիայի պատերազմի մեջ մտնելը: Բալկանյան պատերազմների ժամանակ Հ Ց Դ -ն հայությանը կոչ արեց՝ անվերապահ կանգնել օսմանյան դրոշի տակ ընդդեմ բալկանյան ժողովուրդները: Հ Ց Դ-ն հավատարիմ էր իրեն. նրա համար ազգային շահ ասածը լոկ իր կուսակցության շահն էր և ոչ ավելին: Երբ Կովկասում մի խումբ դաշնակցականներ բռնություն գործադրելու միջոցով հարուստ հայերից դրամ առնելու և ուրիշ հակապետական արարքների պատճառով բանտարկվել էին, և նրանց բանտարկության համար Կովկասի հայերը ոչ թե դժգոհ, այլ շնորհակալ էին ռուս իշխանություններին, Հ Ց Դ արևելյան շրջանի շրջանային ժողովը մի կոչ հրապարակեց ուղղված արևմտահայությանը՝ հանգանակություն կատարել բանտարկվածներին օգնելու համար: «Հեղափոխական կախարդության արուեստի մեջ Հ Ց Դ-ի ղեկավարները կատարելագործված էին մի այլանդակ նրբամտությամբ: Հեղափոխությունը դարձել էր մի նոր տեսակի վաճառականություն, որտեղ շահագործելի ապրանքը հայ ժողովրդի ճակատագիրն էր. նախ Ռուսաստանից դեպի բարբարոս Թուրքիան, ապա սահմանադրական և հանգստավետ Թուրքիայից դեպի ամենաբարբարոս Ռուսաստանը: Օսմանյան բանկի ցույցով դաշնակցությունը Թուրքիայի հայ ժողովրդին մահացու հարված հասցնելուց հետո թողեց սուլթան Համիդին և պետություններին դիմավալ և իր նոր ճակատամարտը սկսեց ցարի դեմ: ...Ռուս պաշտոնյաները վրդովեցին և նրանցից ոմանք ստեղծեցին թշնամություն թաթարների և հայերի միջև, որը հանգեցրեց «մի քանի հազար հայերի կոտորածի... Եթե Կովկասը... լիներ Թուրքիայի պես մի մահմեդական իշխանության տակ, դաշնակցության գրգռիչ ընթացքի հետևանքով ռուսահայերի ճակատագիրը նույնպես պիտի հավասարվեր Թուրքահայերի ճակատագրին... Հայաստանի փրկիչները բռնանում էին նրա վրա. «Ոչ, մենք պետք է քեզ ազատենք և մեզ պետք է փող տաս, որ մի Հայաստան ստեղծենք, եթե չտաս, քեզ կպանենք»: Այսպիսի հեղափոխական ռազմագիտության դեմ հանդիման հայ ժողովրդի ազատվելուն միայն մեկ ելք էր մնացել՝ սպանվել... Տասնյակ տարիների ազգասիրական փքուն բանաստեղծության, ցնորահույս վիպասանության և ի լրացումն բոլոր կեղծ ու պատիր տեղափոխության անիմաստ քաջությունների ներբողները և անհեթեթ պոռոտաբանությունները՝ Թուրքիայի կամ Ռուսաստանի նման հսկա կառավարությունների հասցեներին, անխուսափելի էր, որ այլասերվելու էր հայ երևակայությունը և նրանում ստեղծեին մի ընդհանուր վատառողջ մտածողություն... դրանով արծարծվեց և առաջ տարվեց Հայ դատը»[258]:

«... Անվիճելի է, թե Թուրքիոյ դեմ լեզուով կամ ցոյցով պատերազմող տարրը հայ յեղափոխութիւնն էր, թե պահպանողական տարրերը մոլեգնաբար դեմ էին այդ յեղափոխութեան և կամբաստանեին նորա վարիչները որպես գլխավոր պատասխանատու թրքահայոց կոտորածի և թշվառութեան... Ինչպես անցեալի անհերքելի ապացոյց են, նոյնպես և մեր ներկայ շարժումների մերկացումներով մի անգամ ևս կը հաստատենք մեր ազգային տղայամտութիւնը, դեռ բան մը չեղած՝ ձգտելով մեր արտասահմանեան թերթերի մեջ երևան մեր չարած կամ անելիք քայլերի ամեն մի հետքը, և այսու կանխաձայնել Բ. Դռան ականջին. «Մեր Դոնքիխոտական զենքերով կսպառազինուինք քեզ դեմ»»[259]:

Ռոստոմը 1915-ի հունվարին, երբ հայերն արդեն կոտորվում էին, ասել է. «Թուրքիոյ հայերը երբեք այսպես ապահով և հանգիստ կեանք չէին ունեցել Թուրքի իշխանութեան տակ, ինչպես որ ունեին օսմանեան նոր վարչակարգի հաստատումեն ի վեր... Կառավարութիւնը բնավ չէր խառնվում մեր ազգային գործերին և հայ ժողովուրդը գրեթե երկրին տերն էր»: Կարինի վալու հարցին,

251 Տոնապետեան Պ. նշվ. աշխ., էջ 425-426:
252 Ն. տ., էջ 430:
253 Ն. տ., էջ 431:
254 Ն. տ., էջ 432:
255 Ն. տ., էջ 133-134:

256 Տոնապետեան Պ., նշվ. աշխ., էջ 438:
257 Ն. տ., էջ 439:
258 Ն. տ., էջ 443:
259 Ն. տ., էջ 459-461:

թե Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու դեպքում ի՞նչ դիրք են գրավելու հայերը, Ռոստոմն անմիջապես պատասխանել է, թե «կառավարությունը կարող էր բոլորովին վստահել մեր անկեղծությանը՝ մենք չափազանց զոհ էինք օսմանյան հայրենիքից և մեր ու մեզ հետևողների նուիրական պարտքը պիտի լիներ հայ ժողովուրդի հետ միասին պաշտպանել մեր հայրենիքը արտաքին թշնամի դեմ՝ ով որ լիներ այդ թշնամին: Այսպիսի պաշտոնական պատասխան տուինք կուսակալին նաև ի դիմաց դաշնակցության ընդհանուր ժողովին»[260]: Նույն բանը հաստատեց նաև դաշնակցության էրզրումի համագումարը: «Բայց թրքական հողեն դուրս բնակվող հայության զգացումը այդ պատեհ րոպեին կարող էր շահագործվել հակաթրքական քաղաքականության համար և դառնալով խմբապետներ կամավորական շարժման շարքերում մարտնչելու թուրքական բանակի դեմ: Մանավանդ, որ Կովկասի ռուս իշխանությունը ձգտում էր Թիֆլիսի հայոց թեմական առաջնորդի, Ազգային բիւրո կոչված մարմնի և ուրիշ հայ գործիչների միջոցով Կովկասի հայության շրջանում ցուցադրական դարձնել հակաթրքական զգացումի բուռը նշաններ, որպեսզի թուրք կառավարությունն ի տես այդ ցոյցերի իւր կատաղության ռումբը անպատճառ պայթեցներ Թրքահայաստանի ժողովրդի գլխին: Նոքա խաբեցին մեր հողմավար հայրենասերներին, թե ռուս կառավարությունը իրենց խոստացել էր ստեղծել մի անկախ Հայաստան: Եթե այս խաբեությունեն գինովցած հայրենասերները անընդունակ էին ըմբռնել իրենց կարդացածը, անշուշտ, անընդունակ պիտի լիներն նաև ըմբռնելու, թե ինչպե՞ս հնարավոր պիտի լիներ ստեղծել մի անկախ Հայաստան, եթե թուրքը, գրգռուած նոցա ողորմելի կամավորական խմբերի հեռանկարեն, զայրանար ու ջնջեր այդ Հայաստանի ամբողջ հայությունը»[261]: Ինչպե՞ս կարող էր մի կուսակցություն միաժամանակ հրճվել հայերի վիճակով Թուրքիայում, աղաղակել, թե ցարական կառավարության քաղաքականության հետապնդած նպատակը արևելահայության անհետացնելն էր ռուսականացման միջոցով, բայց միանար ասիմիլյատոր ռուսի հետ ընդդեմ «կուսակցական եղբայր» երիտթուրքերը:

Միայն կամավորական շարժմամբ չէ, որ «հայկական ցեղի հակաթրքությունը կը ցուցադրուեր: Զենք կրելու անգիտակ և կրելու ևս անյոժար, ազգասերներ Կովկասեն մինչև Ամերիկա սկսան իրենց մելանաթաթախ գրիչներով և դիտաշարժ լեզուներով արձակել փքուն բառային ռումբեր Օսմանեան կայսրության վրայ և սպառնալ նորա կործանումը: Մի այնպիսի ժամանակ, երբ բոլոր պատերազմող պետությունները արտասովոր ջղային վիճակում էին, երբ ամենաթեթև թշնամական արտահայտություններին կարևորություն կը տուեր և երբ ամեն ինչ կիմացուեր և ուշադրության կառնուեր ամենուրեք հաստատուած պետական խիստ գրաքննության միջոցով, թուրքի ոչ մեկ պատերազմիկ իրական թշնամի մամուլն այնպես նախատական և սանձարձակ լեզու չէր գործածեր նորա դեմ, ինչպես կը գործածեր դիւրագնաց և անպատասխանատու հայը ոչ միայն թուրքի, այլև հավասարապես և Բուլղարիոյ և Գերմանիոյ դեմ»: Ամերիկահայ երկու գործիչներ 1914թ. նոյեմբերին նամակ հղեցին Վաշինգտոնի անգլիացի և ռուս դեսպաններին «առաջարկելով 10 000 հայ կամավոր Թուրքիայի դեմ կռվելու համար, թեև իրականում իրենց տրամադրության տակ չունեին անգամ մեկ կամավոր, որը գիտակցաբար պատրաստակամ էր երթալու և թուրքի հրացանեն գնդակահարուելու: Եվ իրենց այդ անհեթեթ նամակները հրապարակել տուին ամերիկեան թերթերի մեջ պարզապես ի ցոյց մարդկանց և ի փառս իրենց անունց»[262]: Դիմելով հայ կուսակցական գործիչներից մեկին Գ. Գյուլբեկյանը բղավեց. «Ա՛ս ի՞նչ է ըրածնիդ, խեղճ թրքահայոց անցյալում կրած դժբախտությունները բավական չեղա՞ն մեթե, որ հիմա նորեն կը ջանաք կոտորել տալ և բոլորովին ոչնչացնել զանոնք»[263]: Պ. Տոնապետյանը կամավորական շարժումն անվանում է «աննպատակ բախտախնդրական և միանգամայն ազգակործան ձեռնարկ»[264]:

Հայ շատ գործիչների, պատմաբանների հեղինակած գործերում կարելի է հանդիպել նման կամ տրամագծորեն հակադիր մտքերի ու տեսակետների, ինչը հաստատում է, որ հայի համազգային գիտակցությունը շատ էր հետ մնացել հայ ազգի ձևավորումից: Դեռ ավելին, գնալով ավելի էր խորանում հայության երկու հատվածների շահերի, աշխարհընկալման, սեփական ժողովրդի ապագայի վերաբերյալ կարծիքների տարբերությունը, հակադիր մտածելակերպը:

260 Տոնապետեան Պ., նշվ. աշխ, էջ 473-474:
261 Ն. տ., էջ 475:
262 Ն. տ., էջ 478
263 Ն. տ., էջ 479
264 Ն. տ.

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1912-14ԹԹ.

XX դարասկզբին ակնհայտ դարձավ, որ աշխարհը բաժանելու իմպերիալիստական պլանները և դրանք իրականացնելու համար ձևավորվող ռազմաքաղաքական բլոկները տանում էին դեպի մինչ այդ մարդկությանն անծանոթ համաշխարհային սպանդի սանձազերծում: Կատարվում էր ուժերի վերախմբավորում, ճշգրտվում էին տերությունների ծրագրերն այս կամ այն աշխարհատարածքի հանդեպ, համաշխարհային հիմնախնդիրների ընդհանուր հանգույցի մեջ միախառնվում էին բազմաթիվ մեծ ու փոքր «հարցեր»: Այդ «համաշխարհային տեղաշարժից» դուրս չմնացին նաև Օսմանյան Թուրքիան ու Հայկական հարցը, չնայած Թուրքիան շարունակում էր մնալ status que-ի եվրոպական համակարգի օբյեկտ:

Status que-ի քաղաքականության մասին Մարքսը գրում է, որ սկսած 1815 թվի Վիեննայի կոնգրեսի ժամանակներից «դա համընդհանուր համաձայնություն էր պահպանելու իրերն այն վիճակում, որի մեջ մի անգամ հայտնվել են պարագաների տարերային կամ պատահական դասավորության հետևանքով»[1]: «Այդ քաղաքականությունը,- շարունակում է Մարքսը,- Դռան քրիստոնյաների համար պարզապես նշանակում էր Թուրքիայի կողմից նրանց ճնշման հավերժացումը»[2]:

Քանի որ Օսմանյան կայսրությունում դեմ հանդիման կանգնած էին երկու հակադիր ուժեր՝ իշխող թուրքերը և ճնշված ժողովուրդները, Թուրքիայի նկատմամբ մեծ տերությունների քաղաքականությունը չէր կարող լինել այլ բան, եթե ոչ դաշնակցություն տիրող թուրքերի հետ ընդդեմ ճնշված ժողովուրդների, կամ դաշնակցություն ճնշված ժողովուրդների հետ ընդդեմ իշխող թուրքերի: Տերությունները նախընտրեցին դաշնակցել թուրքերի հետ: Ինչո՞ւ: Քանի որ «Ասիական գերիշխելու համար պետք էր այն պահել տնտեսապես ծեծված վիճակում, և որ թուրքական պետությունը, հետադիմության հանդեպ իր հակումներով, ամբողջ ներքին նեխվածությամբ, իրենց բնական դաշնակիցն է դառնում»[3]: Status que-ի «քաղաքականությունն ամենից առաջ ուղղված լինելով Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների ազատագրության դեմ, ուղղված էր նաև նրանց գոյության դեմ: Դա էր այդ քաղաքականության ՄԻՋՈՒԿԸ ԵՎ ԿՈՐԻԶԸ» և հանդիսանում էր «...հայկական ազատագրական շարժումների դեմ մեծ տերությունների և Թուրքիայի ընդհանուր ճակատի իրողության գաղտնիքը»: Հակառակ դիվանագիտական զանազան և տարբեր ժամանակաշրջանների լարախաղացության «մեծ տերություններին միշտ խոչընդոտել են հայ ժողովրդին թոթափելու թուրքական լուծը և այդպիսով անմիջական մասնակիցն ու պատասխանատուն են հայ ազգի դեմ կատարված ցեղասպանության և մյուս բոլոր ոճիրների»[4]:

Սկսած 1853-56 թվերից, երբ «Անգլիան ու Ֆրանսիան Ղրիմի պատերազմով փրկեցին Թուրքիային... հայերը... դարձան քաղաքակրթության զոհեր»[5]: Բեռլինի վեհաժողովը մեծ տերությունների հակահայկական քաղաքականության ոչ թե սկիզբն էր, այլ միջօրակը: Հայկական գործերում կոլեկտիվ վերահսկողությունը հանդիսանում է հայ ժողովրդի բոլոր փորձանքների և ամենից առաջ՝ ցեղասպանության ըմբռնման մեխը և դրանում մեծ տերությունների մասնակցությունը բացահայտող բանալին[6]: Սկսած XIX դարի երկրորդ կեսից Մերձավոր Արևելքը միջուկն էր «բոլոր քաղաքական հարցերի, որոնք դուրս էին գալիս եվրոպական ցամաքային տերությունների անմիջական շահերի շր-

1 Маркс К. и Энгел Ф. Сочинения, т. X, стр. 4.
2 Ն. տ. հ. IX, 1957, էջ 31:
3 Ադոյան Ա. Ստատուս քվոյի քաղաքականությունը հայասպան քաղաքականություն է: Տե՛ս «Լենինյան ուղիով» (ամս.), 1990, թիվ, 4 էջ 79:
4 Маркс К. и Энгельс Ф. Сочинения, т. IX, стр. 47.
5 Գիբոնս Հ. Նորագույն պատմության ամենասև էջը. Վերջին կոտորածները Հայաստանում, 1917, էջ 22:
6 «Լենինյան ուղիով», 1990, թիվ 4, էջ 80:

ջանակներից»[7]: Իսկ Մերձավոր Արևելքի միջուկը Հայաստանն է: Նա «Սիրիայի բանալին է, Սիրիան՝ Եգիպտոսի, իսկ ով նվաճի Եգիպտոսը՝ կստանա Աֆրիկայի բանալին»[8]: Հայաստանը ոչ միայն Աֆրիկայի բանալին էր Ռուսաստանի համար, այլև արևմտյան տերությունների բանալին առաջանալու դեպի Կովկաս և Միջին Ասիա, երկու հակադիր կողմերի համար բանալի՝ հասնելու Միջագետք ու Պարսկաստան և դրանց վրայով Արաբիա ու Հնդկաստան: Հայաստանը նաև կամուրջ է Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի միջև[9]: Այն մեծ տերությունների համաշխարհային քաղաքականության կլիմայաստեղծ կարևորագույն գոտիներից մեկը: Ահա թե ինչու հայերի ազգային զարթոնքը և իրենց կարևոր տեղի ու դերի գիտակցումը պետություններին ձեռնտու չէր: Անգլիան սարսափում էր դեպի հարավ Ռուսաստանի առաջխաղացումից ու նրա դեմ պատնեշ էր փնտրում: Այդպիսին կարող էր լինել անկախ Հայաստանը, սակայն Հայաստանի անկախացումը նաև կարող էր վտանգավոր լինել նույն այդ Անգլիայի համար[10]: Եվ Լոնդոնը կողմնորոշվեց ոչ թե հօգուտ Հայաստանի, այլ Թուրքիայի: Դրա համար էլ աշխատում էր հայերի դեմ տրամադրել մեծ տերություններին: Դեռ Սոլսբերին էր սպառնում հայերին, որ եթե չհամակերպվեն թուրքական լծի հետ, նրանց հանդեպ կկիրառվեն դաժան միջոցներ: Հայաստանի դեմ տերությունների առաջին բլոկը Անգլիան ստեղծեց Բեռլինի վեհաժողովում, երկրորդը՝ Եգիպտոսի գաղութացման շրջանում 1881-82թթ., երրորդը՝ 1890-ական թվականներին ինքնապաշտպանական կռիվների ժամանակ, չորրորդը՝ Բալկանյան ճգնաժամի տարիներին՝ 1910-12թթ.: Հինգերորդ շրջանում Լոնդոնն առաջնությունը զիջեց Գերմանիային՝ 1914-18թթ., վեցերորդում Անգլիան Հայաստանի դեմ բլոկ ձևավորեց վերջինիս անկախության կործանման շրջանում՝ 1919-23թթ.: Լ. Ջորջը գրում է. «1878 թվի տրակտատը Անգլիայի մեծագույն հաղթանակն է... Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հասցրեց 1895-97 և 1909 թվականների սարսափելի կոտորածներին ու 1915-ի ահավոր ջարդերին... Մենք հնարավորություն տվեցինք կատարելու այդ ոճիրը... որի համար պատմությունը միշտ մեզ վրա կբարդի հանցանքի պատասխանատվությունը... Հայաստանը Անգլիայի զոհն է»[11]:

Տերությունները մեկը մյուսի ետևից Թուրքիայի հարավից ու արևմուտքից տարածքներ էին պոկում և Թուրքիան մղվում էր արևելք՝ Հայաստան: Դա նույնպես հերքում է այն պնդումը, թե «Հայասպանդի պատճառը եղել է հայերի ռուսական կողմնորոշումը»: Նախ՝ կողմնորոշման համար ամբողջ ժողովրդի սպանդն արդարացում ունենալ չի կարող: Երկրորդ՝ հպատակ ժողովուրդների մեջ այդ կողմնորոշումների ծնողը թուրքական բռնապետությունն էր: Երրորդ՝ հայերին ոչնչացնում էին ոչ թե կողմնորոշման փոփոխության, այլ դրան հավատարիմ մնալու համար:

Օսմանյան կայսրության հանդեպ տերությունների քաղաքականության մասին Ն. Ադոնցը գրում է, որ այն «մի դատարկ նավ է: Թուրքերը պետք է անսահման երախտապարտ լինեն եվրոպական դիվանագիտությանը, որը կասեցրեց արտաքին գրոհը և մեկ դարով հետաձգեց Թուրքիայի կործանումը՝ հռչակելով օսմանյան տիրույթների տարածքային անձեռնմխելիությունը»: Սակայն XX դարում այդ քաղաքականությունը կորցրեց «իր հրամայական տոնը», և հիվանդ մարդու փրկությունը դառնում էր անհնար: Մանավանդ, որ աշխարհի բարձր զարգացած քաղաքակրթության պայմաններում Երկիր մոլորակի հենց սրտի վրա շարունակում էր գոյություն ունենալ «Նիզամ ալթնդա հայդութ» (կազմակերպված թալան) սկզբունքը:

Status que-ի քաղաքականությունն ու Արևելյան հարցը նույն երևույթի երկու դրսևորումներն էին, որոնք նույնանում էին, երբ տերությունները հանուն «եվրոպական հավասարակշռության չխախտման» գերադասում էին պաշտպանել Օսմանյան կայսրության տարածքային անձեռնմխելիությունը, կամ միմյանց հետ հակադրության մեջ էին մտնում, երբ տերությունները կամ դրանցից որևէ մեկը ձգտում էր թուրքիայից տարածքներ կորզել: Առաջին աշխարհամարտը սրբեց, հրապարակից հանեց թե status que-ի քաղաքականությունը և թե Արևելյան հարցը, որովհետև դադարեց գոյություն ունենալ դրանց օբյեկտը՝ օսմանյան 500-ամյա կայսրությունը:

Հայկական հարցի էության վերաբերյալ պատմագիտական գրականության մեջ տեղ են գտել մի քանի կարծիքներ: Դրանցից հիմնականներն են՝ Հայկական հարցն Արևելյան հարցի բաղկացուցիչն էր[12]: Հայկական հարցի ծնունդը կապվում էր տերությունների քաղաքականության հետ[13]: Հայկական հարցը Արևմտյան Հայաստանի ազատագրության հարց էր[14]: Նաև արտահայտվել է կարծիք, թե Հայկական հարցի ծնողներն առաջին աշխարհամարտի նախօրեին և ընթացքում տեղի ունեցած իրադարձություններն էին[15]: Թվարկված տարբերակները խնդրը բնույթը փոխել չէին կարող, այն մնաց սեփական հայրենիքում հարատևելու հայ ժողովրդի իրավունքի և հրամայականի հարց:

Ա. Ջիվելեգովը հայ-ռուսական հարաբերությունների հիմքում դնում էր հայերի ռուսականացումը, ինչի հետ անհնար է համաձայնվել: Նա հայերի հանդեպ ռուսական իշխանությունների ոչ բարեկամական-թշնամական մոտեցումը բացատրում է հայերին ուծացնելու դժվարությամբ, գրեթե անհնարինությամբ[16]: Վրացիները նույնպես դժվարությամբ էին ենթարկվում ուծացմանը, բայց նրանց հանդեպ ռուսական քաղաքականությունն անհամեմատ մեղմ էր, անգամ սիրալիր: Հայկական դպրոցների փակումը ցարական իշխանությունները պատճառաբանում էին հայերի անջատողական ձգտումներով, ինչը մերժվում է Ջիվելեգովի կողմից, համաձայն նրա ցարական քաղաքականության պատճառը ոչ թե սեպերատիզմն էր, այլ հայության համառությունը չենթարկվելու ռուսականացման քաղաքականությանը, քանի որ արևելահայերը երբեք անջատողական տրամադրություն չեն ունեցել, որովհետև դրա համար հիմք չկար[17]: Ինչ վերաբերում է արևմտահայերին, ապա սեպերատիզմի մասին խոսակցությունները լոկ պատրվակ էին, որոնց «օգնությամբ ցանկանում էին տալ որոշ բնականություն և արտաքին բարեհամբույրություն հայկական մշակույթի, դպրոցի, մամուլի, եկեղեցու հանդեպ հալածանքներին»:

Ա. Ջիվելեգովը տերությունների օսմանյան քաղաքականության հիմքը համարում է այն, որ Թուրքիայում «տիրապետողը քաղաքական կամ, ավելի ճիշտ, միջազգային անզորություն էր, տեղական կապիտալի թուլություն ու նաև տնտեսական մեծ հեռանկարները, որոնք եվրոպական կապիտալի և դրան ենթարկվող դիվանագիտության համար խաղալու էին... բաց չուկայի դեր... Այստեղ կապիտալի համար աշխատելն ավելի հեշտ էր, քան Եվրոպայում, քանի որ ավելի թույլ էր մրցակցությունը և, հետևաբար, ապահովվում էր ավելի բարձր շահույթ»[18]: Հայկական բարենորոգումների նախնական նախագիծը միտում ուներ ընդգրկելու Ադանայի վիլայեթը, Հալեպի նահանգի Այնթափ, Մարաշ, Քիլիս սանջակները, Սև և Միջերկրական ծովերի միջև ընկած տարածքները Տրապիզոն, Ալեքսանդրեթ, Ցումուր-Թալիք և Մերսին նավահանգիստներով, որտեղ բնակվում էր 5.212.800 մարդ (հայեր շուրջ 2 միլիոն), ըստ վիլայեթների՝ Վանի՝ 379.800, Բիթլիսի՝ 398.700, Էրզրումի՝ 645.700, ըվազի՝ 1.057.500, Խարբերդի՝ 575.200, Դիարբեքիրի՝ 471.500, Տրապիզոնի՝ 1.265.500, Ադանայի՝ 422.400: Վանի, Բիթլիսի, Ադանայի նահանգներում հայերը բացարձակ մեծամասնություն էին: Հայերը փոքրամասնություն էին կազմում Տրապիզոնի վիլայեթում մինչև Իեշիլ-Իրմակից՝ Սամսոնից արևմուտք ընկած գավառները, մինչև Սըվազի վիլայեթի արևմտյան և հյուսիս-արևմտյան գավառները, Բիթլիսի և Դիարբեքիրի նահանգների հարավային մասերը, որոնց բնակչությունը չէր անցնում կես միլիոնից:

Հայկական հարցը, չնայած Արևելյան հարցի բաղադրիչներից մեկն էր, իսկ սկսած 1870-ա-

7 Рорбах П. Война и германская политика, Москва, 1915, стр. 10.

8 Watson Seton Disraeli, Gladston and the Estern question, London, 1935, p. 222.

9 Watshon Seton նշվ. աշխ., p.222 Scheiner A. Zur Geschichtlichte der Deutschen ausen Polotik 1871-1945, Berlin, 1955, s. 30.

10 Watsot Seton, նշվ. աշխ., էջ 22:

11 Ллойд Джордж Правда о мирных договорах, т. II, Москва, 1957, стр. 390.

12 Սապահ Գյուլյան Ս. Հայաստանի ինքնավարությունը, գ. Բ., Կահիրե.:

13 Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարայնությունը, Փարիզ, 1934, հ. I, էջ 72-81:

14 Հայ ժողովրդի պատմություն, հ. Ե., 1981, էջ 109:

15 ИГИАРФ, ч. 821, оп 150, g. 2810.

16 Дживелегов А. Армяие в России, 106.

17 Նույն տեղում:

18 Дживелегов А. Будеще Турецкой Армении, М., 1911.

կան թվականների վերջերից դրա գլխավոր բաղադրիչը, ի տարբերություն թե status que-ի քաղաքականության և թե Արևելյան հարցի, չէր հետապնդում լուծելու տարածքային խնդիրներ: Այն միջազգայնացավ որպես սեփական հայրենիքում արևմտահայության անվտանգ ու արժանապատիվ հարատևելու հարց: Դրա համար էլ հենց սկզբից վերածվեց Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ մտցնելու հարցի: Այդպիսին էին Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ, Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածները, այդպիսին էին մեծ տերությունների կառավարությունների կողմից 1880թ. մշակված բարենորոգումների և 1895 թվի մայիսյան ծրագրերը:

Հայկական հարցը որպես Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ մտցնելու հարց ոտք դրեց XX դար և այդպիսին էր նաև 1911-14 թվերին: Հայկական հարցը մի առանձնահատկություն նույնպես ուներ. եթե status que-ի քաղաքականությունն ու Արևելյան հարցը հիմնականում ուղղված էին ռուսական առաջխաղացման դեմ, ապա Հայկական հարցը, այդպիսին լինելով հանդերձ, միաժամանակ միջոց էր նույն Ռուսաստանի ձեռքն իր նվաճողական քաղաքականությունն առաջ տանելու համար: Դա առավել որոշակիությամբ արտահայտվեց Սան Ստեֆանոյի պայմանագրում: XX դարում Ռուսաստանը փաստորեն դարձավ Հայկական հարցի եզակի սուբյեկտ, այն առաջ մղող միակ երկիրը:

Բարենորոգումների նոր փուլի սկիզբ հանդիսացան 1911թ. փետրվարի 11-ին պատրիարքարանի կողմից Բ. Դռանը ներկայացրած հետևյալ առաջարկությունները. 1. Անատոլիայի ժողովուրդը չի կարող օգտվել Սահմանադրության ընձեռած բարիքներից, եթե անհրաժեշտ օրենքներ չընդունվեն: Դա նշանակում է. վերանայել կառավարման և դատական մարմինների կադրերի կազմը, այդ մարմինները մաքրել մարդկանցից, ովքեր զբաղեցրած պաշտոնն օգտագործում են անձնական շահերի համար, ովքեր մոլեռանդ ատելություն ունեն հպատակների հանդեպ, սանձարձակ են ու անընդունակ. արգելել կարևոր պաշտոնների զբաղեցնելը տվյալ վարչատարածքի ազդեցիկ անձանց կողմից, որովհետև անձնական շահերն ու ազգակցական կապերն առաջին պլան են հանում պաշտոնատարների ազգակիցներին, ինչը հող է ստեղծում օրենքի խախտումների համար. օրենքն ու արդարությունը նաև պահանջում են, որպեսզի բավարար թվով հայեր առաջ քաշեն համապատասխան աշխատանքների, խոսքն առավելապես վերաբերում է կառավարչական և դատաիրավական հիմնարկներին:

2. «Mutlessarie»-ի և ավատատիրական սեփականատերերի գոյությունը երկրի վտանգելու պատճառներից մեկն է: Այդպիսիները թալանում են քրիստոնյա և մահմեդական ժողովուրդներին, իրենց ձեռքում պահում իշխանությունը, տարածում սանձարձակություններ և զինված ավազակախմբերի միջոցով կատարում անլուր հանցագործություններ: Հետևաբար դրանց վերացումը հրատապ անհրաժեշտություն է: Նաև հարկ է հեռացնել հայկական գյուղերից քրդերին և մյուս քոչվորներին, ովքեր բիրտ ուժի զորությամբ իրենց հռչակում են այդ բնակավայրերի տերեր, հարստահարում հայերին:

3. Օրենքի արդյունավետ գործադրման համար առաջարկվում էր՝ սահմանադրության հռչակումից հետո սպանություն, թալան, գողություն և նման այլ հանցագործություններ կատարողների հանդեպ կիրառել պատիժներ՝ առանց որևէ խտրականության, արգելել ապօրինի հարկերի գանձումը, օսմանյան սահմանադրությունը հռչակել է խղճի ազատություն և պատվի անվտանգություն, մինչդեռ հետսահմանադրական շրջանում ավելի շատ, քան բռնատիրության տարիներին, տեղի են ունենում գողություններ, ավազակախմբերի հարձակումներ, բռնի իսլամացումներ: Անհրաժեշտ է օրենսգրքում մտցնել հոդված, որն արգելի այլակրոնների նկատմամբ բռնությունները[19]:

Որոշ պատմաբաններ հավասարության նշան են դնում հայերի հանդեպ Անգլիայի և Ռուսաստանի քաղաքականությունների միջև: Ոմանք անգամ պնդում են, թե Հայկական հարցում Ռուսաստանի ու Թուրքիայի շահերը համընկնում էին, ինչը և հանգեցրեց հայ ժողովրդի բնաջնջմանը: Այդ ապացուցելու համար օգտագործվում է Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի հանրահայտ ասույթը՝ հայ ժողովրդի ողբերգության պատճառն այն է, որ նա «դժբախտություն ունի գտնվելու Թուրքական Սցիլլայի և ռուսական Քարիբդայի արանքում»: Ընդհանրապես սխալ է արևմտահայության հանդեպ քաղաքականությունում հավասարության նշան դնել մեծ տերությունների միջև: Այդ անել չի կարելի ոչ թե նկատի առնելով տերությունների քաղաքականության մարդասիրական հենքը, այլ շահերը: Ակնհայտ է, որ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի շահերը միշտ ու բոլոր դեպքերում հակադրության մեջ են եղել հայ ժողովրդի շահերի հետ և, եթե նրանք ինչ-որ ժամանակահատվածում օգնել են հայկական շարժումներին, ապա միմիայն Թուրքիայի վրա ճնշում գործադրելու միջոցով նրանից պատառներ խլելու համար: Այլ է Ռուսաստանի պարագան: Խնդիրն այն է, որ Ռուսաստանի և հայության շահերը գրեթե միշտ համընկել են և բացի 1880-90-ական թվականներից, Ռուսաստանի Թուրքական քաղաքականությունն օբյեկտիվորեն կրել է հայամետ բնույթ: Բայց հայ ժողովրդի համար այդ հայամետ քաղաքականությունը դժբախտ հետևանք ունեցավ, որովհետև, նախ՝ այն շատ հաճախ էր հետապնդում եվրոպական պետությունների միավորված հակազդեցությանը, երկրորդ՝ ռուսական քաղաքականության տարընթացությունները Թուրքիայի կողմից անմիջապես օգտագործվում էին հայերին հաշվեհարդարի ենթարկելու համար:

Հայկական հարցը ներքաշվեց առաջին աշխարհամարտը նախապատրաստող հիմնախնդիրների համակարգի մեջ: Այն առաջադրեց Ռուսաստանը՝ նպատակ ունենալով տիրանալու Հայկական ամբողջ բարձրավանդակին: Պետերբուրգն աշխարհաքաղաքական այդ խնդրի լուծմանը ենթարկեց ոչ միայն իր հայկական, այլ նաև ամբողջ մերձարևելյան քաղաքականությունը: Ցարական իշխանությունները հրաժարվեցին լորանով-գոլիցինյան հայատյաց կեցվածքից՝ այն փոխարինելով հայերին սիրաշահելու քաղաքականությամբ:

Ջեմալ փաշան նկատում է. «Վերջին տարիներս ռուսների վերաբերմունքը դեպի կովկասահայերը փոխվեց... նրանք էջմիածնի վանքին վերադարձնում են խլված կալվածքները, հայ քաղաքական հանցավորներին ընդհանուր ներում են շնորհում և հանդեպ հայերը ցուցադրում են մեծ բարյացակամություն»: Նույնիսկ ՀԵ Դաշնակցությունը հրապուրվեց և, երբ «մենք առաջարկեցինք բարենորոգումների հարցում հրաժարվել օտարների միջնորդությունից, որովհետև, Բալկանյան պատերազմի ավարտից հետո հնարավորություն ունեինք քրդերին կարգի հրավիրելու և դրանով հայերին խաղաղ կյանք ապահովելու», ՀԵԴ պատասխանեց. «Քանի որ այդ գործում արդեն մասնակցում են մեծ պետությունները, բարենորոգումներից այլևս հրաժարվել չենք կարող»[20]:

Մենք, շարունակում է Ջեմալը, պատրաստակամ էինք կատարելու ստանձնած բոլոր պարտավորությունները, բայց Ռուսաստանը խանգարեց, որովհետև ձգտում էր Հայաստանի նկատմամբ հովանավորության, որից հետո քրդերին հանելու էր Բ. Դռան ու հայերի դեմ: Այդ նպատակով Աբդուլ-Ռիզա Բեդրբխանին տարավ Ռուսաստան և նրան «դրամական մեծ միջոցներ տալով Սինայում քրդական իշխանություն» կազմավորեց[21]:

Նույն միտքը հաստատում է Լեոն. «Ռուսական շահերն այժմ այլ տեսակ դասավորություն են ստացել Թուրքահայաստանում... ցարական դիվանագիտությունն ուզում էր դարձնել Հայկական հարցն իր համար մի մշտական գործիք Թուրքական կառավարության վրա ազդելու համար: Ցարական կառավարությունը ձգտում էր արևմտահայության հետ կապված խնդիրները լուծել միայնակ, առանց մյուս տերությունների, իսկ ավանդականորեն Կ. Պոլսի հայ մտավորականությունը դրան դեմ էր և ուզում էր փրկվել Եվրոպայի միջոցով»[22]:

Մի բան ակնհայտ էր, որ ռուսական զորքերի կանգնած լինելը Բաթում-Վան սահմանագծի երկարությամբ զսպաշապիկ էր, որպեսզի Թուրքերը զսպեն արևմտահայությանը բնաջնջելու իրենց կրքերը: 1912թ. գարնանը ցարը հաստատեց Գևորգ Սուրենյանին ամենայն հայոց կաթողիկոս ընտրելու քվեարկության արդյունքները: Նոր կաթողիկոսը հայրենիքի նվիրյալ էր, գործունյա, քաղաքական պայքարի հմուտ մարտիկ: Հունիսին այցելելով Պետերբուրգ նա «Новое время»-ում հայտարարություն հրապարակեց, թե հայկական միջավայրում անթույլատրելի է

19 Գանգրունի Հ. նշվ. աշխ., էջ 319:

20 Ջեմալ փաշա նշվ., աշխ., էջ 47:
21 Ն. տ., էջ 48:
22 Լեո Անցյալից, էջ 250-251:

հեղափոխական շարժումը, որովհետև այն հակասում է հայ ազգի շահերին ու հակումներին: Նա ցարին ներկայացրեց արևմտահայերի ծանր վիճակը:

Պատերազմը թակում էր հին աշխարհի դռները, և տերությունները դաշնակիցներ ու համակիրներ էին փնտրում, մասնավորապես փոքր և վտանգված ժողովուրդներին մեծամեծ խոստումներ տալիս: 1911թ. նոյեմբերին ռուսական դեսպան Զարիկովը Կ. Պոլսի պատրիարքի տեղապահ Մանկունուն ասաց. «Քանի դեռ հայերը հավատարիմ են իրենց վեհափառին, պետք է համոզված լինեն, որ կօգտվեն Ռուսաստանի պաշտպանությունից, որովհետև սերը քրիստոնեության հանդեպ ռուսական կառավարության համոզմունքն է»[23]: Բ. Դուռը նույնպես ձեռնպահ չմնաց, պատերազմի ահագնացած վտանգն օգտագործելու կայսրության ժողովուրդներին իր դրոշի տակ համախմբելու, ներքին հակասությունները հետին պլան մղելու համար: Դրա հետ միասին օսմանյան խորհրդարանում հնչում էին ելույթներ քրիստոնյաների կողմից սպառնացող վտանգի մասին և ակնարկներ արվում ջարդերի հնարավորության վերաբերյալ: Ռազմական նախարար Մ. Շևքեթը հայտարարեց. «Նայեք չորս կողմ: Իսլամական բոլոր պետություններն անհետացել են: Զավթել են նաև Մարոկոն և Պարսկաստանը»: Ապա դիմելով քրիստոնյա պատգամավորներին ասաց. «Եթե օսմանյան տերությունը կործանվի, քրիստոնյաները նույնպես կործանվելու են»[24]: Առանձնակի ձգտում կար սիրաշահելու և թուրքերի դեմ գործողություններից հետ պահելու հայերին: ՆԳ նախարար Ջեմալը Արշարունուն ասաց. «Հենց նոր խմբագրեցի առաջարկված ծրագիրը, որը նախատեսում է բարեփոխումներ Անատոլիայում»[25]:

1912թ. հունվարին Բ. Դուռը որոշեց հանձնաժողովներ ուղարկել Անատոլիա և Ռումելիա բարենորոգումներ անցկացնելու համար: Առաջին հանձնաժողովի նախագահը ՆԳ նախարար և իթիհադի քարտուղար Ադիլն էր, որը հանդես գալով խորհրդարանում ասաց, թե պետք է նվաճել կայսրության բոլոր ժողովուրդների համակրանքը, օրենքներ ընդունել նրանց քաղաքական գոյության իրավունքներ ապահովելու՝ ճանաչել քրիստոնյա պատրիարքությունների կարգավիճակը: Նախարարի ելույթն արժանացավ լիբերալների բուռը հակազդեցությանը[26]:

Թե ինչ արժեին, այս ձեռնարկումները ցույց է տալիս հայոց գերեզմանատան հետ կապված միջադեպը: Բ. Դռան որոշմամբ գերեզմանատան պատը 15մ հետ էր քաշվելու՝ ազատված տարածքում առևտրական կետեր ստեղծելու և տրամվայի գիծ անցկացնելու համար[27]: Արշարունին տարածքի համար պահանջեց 30 հազ. լիր, բայց կառավարությունը համաձայնվեց տալ միայն դրա 10%: Պատրիարքը խնդրեց, որ իրեն ընդունի սուլթանը: Պատասխանը բացասական էր: Արշարունու սպառնալիքը՝ եթե գերեզմանատան տարածքն օտարվի, պատրիարքարանը փակելու է, ազդեցություն չգործեց: Սակայն Թալեաթի միջամտությամբ հաջողվեց միջադեպը խաղաղ ավարտել: «Թանինը» գրեց, թե գերեզմանապատի առնչությամբ «իթիհադականներն ու իթիլաֆականները շատ էին զայրացել Կ. Պոլսի պատրիարքարանի վրա: Բայց իզուր»[28]: Արտաքուստ շրջադարձ էր կատարվում նաև Թուրքիայի հանդեպ ռուսական քաղաքականությունում:

Մյուս կողմից գնալով ավելի էր գծագրվում, որ ցարական կառավարությունը հեռանում է օսմանյան Թուրքիայի հանդեպ 90-ական թվականներին որդեգրած քաղաքականությունից: Դրա առաջին արտահայտությունը Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Զարիկովի հրաժարականն էր 1912թ. մարտին: Նոր դեսպան նշանակվեց Մ. Հիրսը: Թե նա և թե նոր կաթողիկոսը Հայկական հարցը խաղաղ միջոցներով լուծելու կողմնակիցներ էին:

1912թ. ապրիլի խորհրդարանական ընտրությունները եկան մի անգամ ևս հաստատելու երիտթուրքերի անզնիվ խաղերը քաղաքական հակառակորդների ու նաև ՀՀԴ հետ՝ խոստացած 20-ի փոխարեն հայերին տվեցին 11 պատգամավորական տեղ: Ընդ որում խորհրդարանից դուրս մնացին իթիհադին մեծ վերապահումներով վերաբերող հայ գործիչները: Երիտթուրքերի վարքագիծն ընտրությունների ընթացքում նաև ցույց տվեց, որ նրանք այլևս ձեռնպահ էին

23 «Մշակ», 0312.1911:
24 Նույն տեղում, 06.01.1912:
25 Նույն տեղում, 12.01.1912:
26 Նույն տեղում, 25.01.1912:
27 Ն.տ., 09.02.1912:
28 Ն. տ., 29.09.1912:

արևմտահայության ներկայացուցչությունը խորհրդարանում դաշնակցության միջոցով ապահովելուց: Դաշնակ գործիչներ Ս. Քյաթիբյանի, Հ. Խոսրովյանի, Ա. Սիմոնյանի փոխարեն պատգամավոր անցկացրին իրենց հետ համագործակցող Հ. Բոյաջյանին, Գ. Տեր-Կարապետյանին և այլոց, իսկ խորհրդարանի նախագահի տեղակալ ընտրեցին Հալաջյանին: Ազգային ժողովի նախագահ նույնպես ընտրվեց Բ. Դռան հետ «խաղաղ» գոյակցելու կողմնակից Գ. Նորատունկյանը: Դրա հետ միասին Բ. Դուռը հունիսի 14-ին հայ մամուլին արգելեց նյութեր տպագրելու գավառահայության վիճակի մասին[29]: Գնալով ավելի ու ավելի էր սրվում ներքաղաքական պայքարը իթիհադի և ընդդիմադիր ուժերի միջև: «Руссккое слово» թերթը հնարավոր էր համարում «հեղափոխական նոր շարժման» ծավալումը[30]: Սպառնալից էր դառնում նաև պետական հեղաշրջման վտանգը: Հույն պատգամավորներից մեկը հայտարարեց, թե իթիհադը իր կառավարման 33 ամիսներին «ավելի շատ հանցագործություններ է կատարել, քան Աբդուլ Համիդը 33 տարում»: Սովորական դարձավ բոլոր մեղքերը իթիհադի վրա բարդելը: Հուլիսի 4-ին հրաժարական տվեց Սայիդի կառավարությունը, օգոստոսի 5-ին ցրվեց խորհրդարանը:

Այս պայմաններում, ինչպես սպասվում էր, հայերի հանդեպ ցարիզմի քաղաքականությունը գնալով սիրալիր էր դառնում: Անսպասելի մեղմ էր Դաշնակցության գործով դատավճիռը: Ներքաղաքական ճգնաժամը, Անտանտի կառավարությունների, մասնավորապես Պետերբուրգի օսմանյան քաղաքականության մեջ տեղի ունեցող տեղաշարժերը՝ սրվող հակազդեցությունները երիտթուրքերին ավելի մղեցին դեպի ազգայնամոլության: Նրանք վերջնականապես որդեգրեցին մահմեդական համերաշխության և թուրքացման սկզբունքը: Նոր պայմաններում արևմտահայության վտանգվածությունը հաղթահարելուն միտված հայ քաղաքական ու կրոնական գործիչների ջանքերը դատապարտված էին: Սակայն անցումը թուրքիզմին հպատակ ժողովուրդներին նպատակամղեց համատեղ գործողությունների, այսինքն՝ թուրքական բռնատիրության դեմ պայքարում հրաժարվել մեկուսացած գործողություններից և գնալ ճնշված այլազգիների ուժերի միավորման և նրանց հետ համերաշխվելու ուղիով: Հրապարակ հանվեց «Հունաստանը հույներին, Հայաստանը հայերին, Արաբիան արաբներին» կարգախոսը: Քաղաքական ուժերի կոլեկտիվ գիտակցության մեջ հաստատվում էր նոր մտածողություն. «Լեզու, գրականություն և պատմություն ունեցող ժողովրդի համար ուրիշ ժողովրդի գաղափարախոսությունն ընդունելը հանդիսանում է ինքնասպանության տարատեսակ»[31]: Այս իրողությունը հասկանում էին նաև իթիհադի պարագլուխները: Նրանք որոշեցին «հայերին ամբողջությամբ ոչնչացնել և այդ եղանակով վերացնել վեց վիլայեթների հարցը»[32]: Ինչպես գրում է Հ. Ֆիրբյուխերը, երիտթուրքերը ձգտում էին համաիսլամականության օգնությամբ «Թուրքիան զերծ պահել Անգլիայի և Ռուսաստանի կողմից հոշոտվելուց... Սկսած 1914թ. միջոցառումներ էին իրականացվում ոչ թուրքական ամեն ինչի դեմ... Առաջին հարվածն ուղղված էր հայերի դեմ: Նրանք գտնում էին, որ հայերը պետք է հաշվեհարդարի ենթարկվեին առաջինը, որովհետև նրանք անպաշտպան էին»[33]:

1912թ. հոկտեմբերի վերջերին Թիֆլիսում տեղի ունեցավ հայության ներկայացուցիչների ժողով, որը որոշեց հրավիրել համագումար ընտրելու «մի լիազոր մարմին Հայկական հարցի շուրջ աշխատելու համար»: Ընտրվեց ժամանակավոր բյուրո կազմված 7 հոգուց՝ Ս. Հարությունյան, Ալ. Խատիսյան, Ա. Քալանթար, Հ. Առաքելյան, Ա. Պողոսյան, Հովհ. Թումանյան, Ն. Աղբալյան: Նոյեմբերի 25-ին տեղի ունեցավ ազգային համագումար, որը քննեց «Դիվանագիտական միջամտության և ինքնապաշտպանության հարցեր»: Ընդունվեց որոշում օգնել կաթողիկոսին Հայկական հարցի լուծմանը միտված գործողություններում, կապեր հաստատել արտասահմանում Հայկական հարցով զբաղվող կազմակերպությունների հետ, քարոզչության միջոցով ռուս հասարակությունում և պաշտոնական շրջաններում նպաստավոր մթնոլորտ ստեղծել Հայկական հարցի շուրջ: Բյուրոյի կազմում լրացում կատարվեց՝ նոր անդամներ ընտրվեցին Կ. Ստե-

29 «Руссккое слово» , 16.06.1912.
30 Նույն տեղում:
31 Ռեքիկ Ա. Երկու կոմիտե, երկու հանցագործություն, Ե., 1987, էջ 30-31:
32 Նույն տեղում, էջ 33:
33 Фирбюхер Г. Армения 1915, Е., 1991, с. 40-45.

փանյանն ու Ա. Ջամալյանը: Նաև առաջ քաշեց արևմտահայության ինքնապաշտպանության կազմակերպման անհրաժեշտության հարցը: Այս համագումարը որոշ առումով համաարևելահայկական էր, որի աշխատանքներին մասնակցում էին Թիֆլիսի, Հայաստանի ու հայաբնակ շրջանների, ինչպես նաև հայ մամուլի ներկայացուցիչներ: Այսպես ստեղծվեց Ազգային բյուրոն, որը դեր խաղաց Հայկական հարցի լուծումն առաջ տանելու քաղաքական-դիվանագիտական պայքարում: Բյուրոն իր ծնունդը ներկայացնում է հետևյալ կերպ. «1912թ. աշնանը Բալկանյան պատերազմը սկսվելուց հետո Թուրքահայ ժողովրդի վիճակը նորից և բուռն կերպով հայ հասարակության զանազան խավերի մտահոգության առարկան դարձավ: Մի կողմից հնարավոր ջարդերի սպառնալիքը և մյուս կողմից՝ Թուրքիայի գործերը վերջնականապես կարգավորելու համար հրավիրվելիք միջազգային կոնֆերանսի վրա դրված հույսերն ափթ տվին հայ մտավորականության զգայուն մասին համախմբել ջանքերը ըստ կարելույն ավելի լավ օգտագործելու նպաստավոր պատմական պահը, մանավանդ, որ հայտնի էր դարձել ռուս կառավարության շատ նպաստավոր տրամադրությունը դեպի Թուրքահայերի դատը...»[34]:

Նորից հրապարակ հանվեց խնդրի լուծման երկընտրանքը՝ զինվել կամ ստանալ արտաքին աջակցի օգնությունը: Պոլսահայերն ավելի ոգևորվեցին, երբ իմացան, որ կաթողիկոսը խնդրել էր Կոսվկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովի աջակցությունը, որ Ռուսաստանը ստանձներ Հայկական հարցի լուծման նախաձեռնությունը: Մեսրոպ եպիսկոպոսը հանդիպումներ ունեցավ Վ. Կոկովցևի և Ս. Սազոնովի հետ ու խնդրեց, որ Բալկանյան պատերազմի արդյունքով Լոնդոնում հրավիրվելիք համաժողովում Ռուսաստանը կատարի արևմտահայության խնդրանքը՝ աշխատել լուծել Հայկական հարցը: Ոչ միայն վարչապետն ու ԱԳ նախարարը, այլև անձամբ ցարը խոստացավ խաղաղության համաժողովում պաշտպանել Հայկական հարցը: Ցարը խորհուրդ տվեց հայերին հասնել նաև Անգլիայի և Գերմանիայի համաձայնությանը: Դա նշանակում էր՝ ցարը խուսափում էր, որ Ռուսաստանը նորից միայնակ չմնար Հայկական հարցում: Սազոնովը ռուսական դեկավարների պատրաստակամության մասին տեղյակ պահեց Պետերբուրգում օսմանյան դեսպանին ու միաժամանակ առաջարկեց, որ Կ. Պոլսի պատրիարքը և Ազգային ժողովը պաշտոնապես դիմեն Ռուսաստանին իրենց շահերը ներկայացնելու գալիք համաժողովում: Ռուսական մամուլը («Новое время», «Речь» և այլն) նյութեր էր տպագրում արևմտահայերի ծանր վիճակի ու վտանգավորության մասին, առաջարկվում էր, որ Ռուսաստանը տիրանար Արևմտյան Հայաստանը և Քրդստանը մեծ տերությունների անունից կառավարելու մանդատին[35]: Հայկական շրջաններում Պետերբուրգի պահանջը Ազգային ժողովի պաշտոնական խնդրանքի վերաբերյալ ընդունվեց սառը: Արևելահայ գործիչները գտնում էին, որ կաթողիկոսի խնդրանքը միանգամայն բավարար էր Ռուսական միջամտության համար, իսկ արևմտահայ գործիչների կարծիքով պատրիարքի և Ազգային ժողովի դիմումն առաջացնելու էր Թուրքական իշխանությունների հակազդեցությունը:

Բնականաբար Հայկական հարցի լուծման անհրաժեշտության լուրջ քննարկումները չմնացին Քռի ափին, որովհետև խնդրի բարձրացման իրական նախաձեռնողները ոչ թե Թիֆլիսի Երևանյան հրապարակում ճեմող հայ ինտելեկտուալներն էին, այլ ցարական պալատն ու պոլսահայ վերնախավը: 1912թ. նոյեմբերի 26-ին Հիրսը գրեց Սազոնովին, որ իրեն այցելել են Գր. Զոհրապն ու Մարտիկյանը, որոնք մասնավորապես ասել են. «Մենք ցանկանում ենք միայն մեր անձի և ունեցվածքի անձեռնմխելիություն, ապրելու իրավունք օրենքի սահմաններում: Անգամ այդ իրավունքը Թուրքական կառավարությունը չի ուզում կամ չի կարողանում ապահովել մեզ համար... Քրդերն առաջվա պես թալանում են, բռնաբարում և սպանում անպաշտպան հայ բնակչությանը, իսկ Թուրքական վարչությունն առաջվա պես երկերեսանիորեն ներկա է լինում այդ բոլոր սարսափելի իրադարձություններին՝ ոչ մի միջոց չձեռնարկելով դրանց վերջ տալու համար: Քրդերի զավթած հողերը չեն վերադարձված հայերին... Վերջին ժամանակներս ուժգնանում են նախապատրաստվող նոր ջարդերի մասին չարագուշակ լուրերը»: Նրանք ամենայն

34 Լեո Անցյալից, էջ 244-245

35 «Сборник дипломатических документов...», N11, с. 20

որոշակիությամբ հայտարարեցին, որ հայ ժողովուրդը ոչ մի այլ ելք չի տեսնում, բացի Ռուսաստանին դիմելը, միայն նա կարող է փրկել իրենց, քանի որ կորցրել է ամեն մի հույս Թուրքական որևէ բարենորոգության նկատմամբ՝ «Թեկուզ նույնիսկ եվրոպական հսկողության տակ», որ կիսատ-պռատ բարենորոգումները ելք չեն և փրկության ուղին միայն մեկն է՝ «Հայկական վիլայեթների ռուսական բռնակցումը»: Մի քանի օր անց պատրիարք Արշարունին կրկնելով հայ պատգամավորների տրտունջները՝ նույնպես խնդրում է ցարի հովանավորությունը[36]:

Ռուսաստանի հանդեպ համակրանքը համակել էր հայության բոլոր խավերին: «Վանում, Բայազետում, Բիթլիսում, Էրզրումում և Տրապիզոնում մեր հյուպատոսների արած հարցումները միահամուռ վկայում են,- գրում է Հիրսը,- որ այժմ բոլոր հայերը, բոլոր կուսակցությունները Ռուսաստանի կողմն են»[37]: Նույն օրերին կաթողիկոսը Կովկասի փոխարքայի միջոցով դիմում է ցարին և «Հանուն Աստծո աղերսում իր հովանավորության տակ առնել Թուրքահայաստանում ապրող բազմաչարչար հայ ժողովրդին»[38]: «Պետք է խոստովանել,- շարունակում է Հիրսը,- որ կաթողիկոսի դիմումը լիովին ճիշտ է արտահայտում Թուրքական կայսրության հայ բնակչության ժամանակակից տրամադրությունը Ռուսաստանի նկատմամբ»: Բաղդադի ռուսական փոխհյուպատոսը հայտնում էր, որ «Հայերն, անկախ կուսակցական պատկանելության, Թուրքիային շատ թշնամաբար են վերաբերվում և շատ են ցանկանում Ռուսաստանի գերիշխանությունը»[39]: Պոլսահայ գործիչ Թագվորյանը վկայում է, որ ռուսասիրությունն իշխող տրամադրություն էր, «ռուսասիրական քաղաքականությունն այժմ ժողովրդական քաղաքականություն է Թուրքահայերու մեջ», և դա «ամբողջ ազգի տրամադրության արտահայտությունն է...»[40]:

Բայց եթե կողմնորոշման խնդրում ամեն ինչ հստականում էր, ապա բարենորոգումների բնույթի ու բովանդակության հարցում անորոշություն էր: «Մշակը» ծաղրում էր, թե ոմանք այն համարում էին Եվրոպային հայերի հոգսերի ներկայացում, մյուսները խնդիրը քննարկում էին ոչ թե քաղաքական, այլ բարոյական տեսակետից, երրորդներն աշխատում էին Արևմուտքին հասկացնել, թե ինչ պարտք ունի հայ ժողովրդի հանդեպ և այլն[41]: Իսկ ՀԹԴ ու «Հորիզոնը» պարզապես հոխորտում էին. «Թող լավ իմանան, Տաճկաստանի բախտը ներքուստ տնօրինող Թուրք պետական գործիչները ոչ տաճիկ կառավարությունը և ոչ էլ տաճիկ պետությունն այլևս զրոյի արժեք չեն կարող ունենալ հայերի աչքում և նրանք ստիպված են լինելու իրենց գոյությունը պաշտպանելու համար մտածել ուրիշ ճանապարհների մասին»[42]:

Կաթողիկոսի վերը նշված նամակում նաև ասվում էր, թե Բալկանյան պատերազմները վերստին և ամբողջ ուժով առաջ քաշեցին Թուրքիայի տիրապետության տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների դրության բարելավման վաղուց հասունացած հարցը: «Եկել է այն պահը, երբ ամենքը սրտի դողով սպասում են Ռուսաստանի պատմական մեծ առաքելության իրականացմանը՝ դարավոր տառապանքներից Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդների ազատագրմանը: Այդ ժողովուրդների թվում է... բազմաչարչար հայ ժողովուրդը, որի մարտիրոսությունը հանրահայտ է»: Արևմտահայ բնակչության «գոյությանը սպառնացող ակնհայտ վտանգը նրան իրավունք են տալիս օգնության կանչել ռուսական մեծ տերությանը՝ ապահովելու Թուրքահայերի կյանքի, պատվի և ունեցվածքի իսկական անվտանգությունը և հնարավորություն ստեղծելու նրանց հոգևոր և մշակութային ազատ զարգացման համար, Թուրքահայաստանում Չերդ կայսերական մեծության հզոր հովանավորության տակ անհրաժեշտ բարենորոգումների անցկացումով»[43]:

Երբ նամակը հայ պատվիրակները հանձնեցին փոխարքային (1912թ. դեկտեմբերի 26□ին) Վորոնցով-Դաշկովն ասաց, թե Ռուսաստանն այժմ չի «կարող մտնել Տաճկաստան, քանի որ պայ-

36 АВПР, Политархив:, д. 3460.

37 Ն. տ., Գ. 3465:

38 Ն. տ.:

39 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 685:

40 Ն. տ., քաղվածքների ֆոնդ, գ. 33:

41 «Մշակ», 27.03.1914:

42 «Հորիզոն», 07.09.1912:

43 АВПР, Политархив:, д. 3460.

մանները նպաստավոր չեն»: Պատվիրակները պնդեցին իրենց խնդրանքը՝ պատճառաբանելով, որ «Տաճկաստանի հայաբնակ գավառներում տաճիկ պաշտոնյաները վերջերս շարունակ երկյուղ են արտահայտում, թե հնարավոր է, որ ռուսական զորքը մտնի Տաճկաստան հայերի հանդեպ քրդական և թուրքական բռնությունների առաջն առնելու համար: Դրա համար էլ վալիներն առայժմ նախազգուշացնում են քրդերին և թուրքերին՝ ափթ չտալ և զգույշ մնալ հայերին ճնշելուց: Թուրքերի այդ երկյուղը ժամանակավոր է և կախված է ռուսների վարքագծից»: Հաջորդ օրը հայ պատվիրակները ստացան կաթողիկոսի դիմումին փոխարքայի պատասխանի տեքստը, որը համաձայնեցված էր Պետերբուրգի հետ: Այն շատ ավելի հրահանգի տպավորություն էր թողնում: Փոխարքան գտնում էր, որ կաթողիկոսը մյուս տերությունների կառավարություններին չպետք է դիմի, քանի որ գոյություն ունեցող տարաձայնությունների պատճառով բարենորոգումների խնդիրը Լոնդոնի համաժողովում չէր քննարկվելու: Հայ պատվիրակները փորձեցին Վորոնցով-Դաշկովին համոզել, թե նրա պատասխանը խրախուսելու է հայերի վրա մահմեդականների հարձակումները: Ի վերջո Վորոնցով-Դաշկովն ու պատվիրակությունը համաձայնության եկան՝ 1. բոլոր հայերն, առանց կուսակցական խտրականության համերաշխ են, որ Թուրքահայաստանի բարենորոգումների նախաձեռնողը պետք է լինի Ռուսաստանը եվրոպական պետությունների համաձայնությամբ, ընդ որում՝ բարենորոգումների իրականացման վերահսկողությունը նույնպես հանձնվելու է Ռուսաստանին: 2. Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի գործադրման վրա վերահսկողությունը Ռուսաստանին հանձնելու նպատակով կաթողիկոսը պետք է պատվիրակություն ուղարկեր հարցը տերությունների կառավարությունների հետ համաձայնեցնելու, դիվանագիտական շրջանակներում համապատասխան տրամադրություն ձևավորելու համար:

Հայերն առաջարկեցին, որ փոխարքան հանդես գա հայտարարությունով, թե Հայկական հարցը փակված չէ, այլ ընթացքի մեջ է: Կոմսը պատասխանեց՝ Լոբանովի քաղաքականությունը Հայկական հարցում այլևս չի կրկնվի: Ռուսական դիվանագիտությունը գտնում էր, որ արևմտահայության անվտանգությունը պետք է դառնա Թուրքիայի հետ Պետերբուրգի առանձնահատուկ հարաբերությունների հարց: Նման կողմնորոշումն ինքնին շատ կարևոր էր, որովհետև թուրքական իշխանությունները վախենալով ռուսական միջամտությունից, զսպելու էին քրդերին ու թուրքերին: Հայերին պաշտպանելու «այդ եղանակն ավելի քիչ աղմկոտ կլիներ, ավելի քիչ գրգռիչ, քանի որ հարցը չէր դրվում Հայաստան ստեղծելու... այլ միայն պահանջվում է բարեկարգել նահանգական և գավառական վարչությունները...»[44]:

Նույն օրերին պատրիարքը թագրիր ուղարկեց Բ. Դուռ, թե Բալկանյան պատերազմի սկսվելուց հետո հայերի վիճակը կտրուկ վատացել է, նրանց «գլխին կախված է զանգվածային կոտորածի վտանգը: Հայերը պատանդ են դարձել մուսուլմանների ձեռքին... սպանությունների թիվը չի դադարում աճելուց... (իսկ) դրանց բնույթը վկայում է հայերին ահաբեկելու ակնհայտ մտադրության մասին: Հալեպից մինչև Վանա լիճ հայ ժողովուրդն ապրում է վաղվա օրվա հանդեպ մշտական վախի մեջ»[45]:

Հիրսն արևմտահայերի ներկայացուցիչներին ասաց, որ ինքը ևս Բ. Դռանը տեղյակ է պահել հայերի դանդատների վերաբերյալ: Նա նաև հայտնեց Պետերբուրգ, թե հայերի պահանջներն արժանի են «ամենաուշադիր վերաբերմունքի», այլապես նրանք կդիմեն եվրոպական պետություններին: Խորհուրդ էր տալիս հայերին «ընդհանուր բնույթի հավաստիացումներ» տալ, քանի որ Արևմտյան Հայաստանի գրավումն անժամանակ է և հրատապ կդառնա, եթե «ռուսական զորքերի մուտքը Հայաստան անհրաժեշտություն նկատվի»[46]: «Իրերի նման վիճակը,– եզրակացնում է Հիրսը,– բավարար չափով պարզում է, թե ինչու է հայ ժողովուրդը մշտապես հակվում դեպի Ռուսաստան: Հայաստանում գտնվող ռուս հյուպատոսները միաբերան վկայում են այդ տրամադրությունների համատարած լինելը: Հայերը պահանջում են, որ բարենորոգումներն իրականացվեն Ռուսաստանի վերահսկողության ներքո կամ անգամ առաջարկում են, որ Ռուսաստանը գրավի իրենց երկիրը: Կաթոլիկ դավանանքին պատկանող հայերը խնդրում են Ռուսաստանին. «Արևելքի քրիստոնյաների ավանդական պաշտպանին, հանուն Ամենաբարձրյալի, իր պաշտպանության տակ առնել Թուրքահայաստանի հայ ժողովրդին»: Դեսպանը գտնում էր, որ օսմանյան կառավարությունն անհրաժեշտ միջոցներ պետք է ձեռնարկեր հարցը կարգավորելու համար: Նկատի ունենալով անիշխանությունը, որ տիրում էր Թուրքիայում, հնարավոր էր, որ անգամ բարենորոգումները ցանկալի խաղաղություն չբերեին, և «մեր զորքն այդ շրջանը մտցնելու կարիք» առաջանար»[47]:

Վանում ռուսական փոխհյուպատոս Ս. Օլֆերովը պատմում է, որ երբ ինքը Հայկանետ գյուղում էր, մոտեցել է մի չքավոր հայ գյուղացի և մեկնելով հին ռուսական ռուբլիանոց՝ ասել է. «Ես սրանից բացի ոչինչ չունեմ, տալիս եմ ինչ-որ ունեմ, վերցրու այս ռուբլին և միջնորդիր ցարի առաջ, որ ռուսները շուտ գան այստեղ»[48]:

Ի դեպ, փոքր չէր այն դերը, որ Օսմանյան կայսրությունում գործող շատ ռուս դիվանագետներ խաղում էին արևմտահայության շրջանում Ռուսաստանի հանդեպ ջերմ վերաբերմունք ներարկելու գործում: Նման դիվանագետներից էր ինքը՝ Ս. Օլֆերովը: Վանի Երամյան վարժարանի հիմնադիր-տնօրեն Փ. Երամյանը 1913թ. հունիսի 23-ին Հ. Առաքելանին գրում է, որ Օլֆերովը «ամենաարժանավոր տեղեկատուն է մեր նահանգի ընդհանուր տնտեսական, վարչական, հարստահարական, կրթական... վիճակի մասին: Այդ պատվական անձնավորությունը մեր ցավերով էր համակված և մեր բոլոր վարժարաններին օգնում էր: Մեծ դիրք էր ձեռք բերել և իր կառավարության հայանպաստ նոր քաղաքականությունն ուժգնորեն էր ցույց տալիս իր բոլոր հարաբերություններում»[49]:

Հասկանալի է, որ Օլֆերովի և ռուս ուրիշ դիվանագետների հայամետ գործունեությունը հենվում էր Պետերբուրգի նոր քաղաքականության վրա: Վորոնցով-Դաշկովը կաթողիկոսին գրում է, թե ցարը «կատարյալ բարյացակամ» արտահայտվեց հայերի վիճակը բարելավելու խնդրի վերաբերալ, թե «Թուրքիայի կառավարությանն առաջարկվել է այլևս թույլ չտալ հայերի հանդեպ» վայրագություններ: Դրա հետ միասին ցարն ասել է, թե հայերի շահերին չի համապատասխանի, եթե առաջիկայում արևմտահայերի հարցը քննարկվի պետությունների կողմից, քանի որ հիմքեր ունի կասկածելու, թե եվրոպական պետությունները միակամ կլինեն հայերի համար կենսական հարցի լուծման խնդրում, իսկ, ինչպես պատմական փորձն է ապացուցել, տարաձայնությունները ստեղծում են «չափազանց բարեպատեհ միջավայր տևական թուրք վարչության համար խուսափողական վերաբերմունք ցուցաբերելու հայերի դրության բարելավմանը»: Պահանջվում է «առանձնակի զսպվածություն ու տակտ և անժամանակ կոլեկտիվ դիմումներով չբարդացնել կայսերական կառավարության կողմից Թուրքահայերի վիճակի խնդիրը»[50]: Վորոնցով-Դաշկովը պատրաստում է հետևյալ առաջարկություններ ցարի հայկական քաղաքականության համար՝ Կ. Պոլսի ռուսական դեսպանին և Թուրքիայում գործող հյուպատոսներին հրահանգել թուրքական կառավարության առաջ շարունակն բարձրացնել հայերին քրդական և թուրքական ճնշումներից պաշտպանելու խնդիրը: Ռուսական վարչապետի համաձայնությամբ Նուբար փաշան նշանակվում է կաթողիկոսի ներկայացուցիչ եվրոպական պետությունների կոնֆերանսում, որը զբաղվելու է ռուսական վերահսկողության ներքո Թուրքիայում բարենորոգումներ իրականացնելու խնդրով: Այդ նշանակումն արժանանում է նաև Կ. Պոլսի հայոց պատրիարքի և Ազգային ժողովի համաձայնությանը: Բարենորոգումների խնդրում մերժել օսմանյան կառավարության նախաձեռնությունը, քանի որ ներքին գործերի նախարար Ռեշիդի այդ նպատակով ստեղծած հանձնաժողովը, որի մեջ մտնում էր նաև չորս հայ, հայկական շրջաններում ոչ մի վստահություն չի վայելում և խնդիր ունի՝ «ռուսների միջամտության առաջն առնելու»:

44 Լեո Անցյալից, էջ 257-258:
45 АВПР. Политархив, д. 3465.
46 Реформы в Армении, С. П., 1915, стр. 3.

47 Ջեմալ փաշա, նշվ. աշխ., էջ 30-31:
48 «Հորիզոն», 04.04.1914:
49 ԳԱԹ, Ֆ. Առաքելյան Հ., գ. 599:
50 «Հայրենիք», 1929. թիվ 7:

Ռուսաստանի հայկական քաղաքականության բնույթն ու նպատակները հասկանալուն օգնում է Վորոնցով-Դաշկովի 1912թ. հոկտեմբերի 12-ի նամակը ցարին: Նշելով, որ սկսած Պետրոս Մեծի ժամանակներից Մերձավոր Արևելքում ռուսական քաղաքականությունը մշտապես հիմնված է հայերի բարյացակամ վերաբերմունքի վրա, ովքեր ռուսական զորքերին ըստ կարելույն օգնություն են ցույց տվել ու նաև այն, որ ցարերը մշտապես օգտագործել են էջմիածնին՝ ունենալու «Ռուսաստանի համար օգտակար ազդեցություն քրիստոնյա, ազգաբնակչության վրա Փոքր Ասիայում», որով «անցնում է մեր առաջխաղացման վաղեմի ճանապարհը դեպի հարավային ծովեր», նկատում է, թե հովանավորելով հայերին, Ռուսաստանը ձեռք է բերում հավատարիմ դաշնակցի՝ պատրաստակամ մատուցելու «մեծ ծառայություններ»: Հայ-ռուսական 150-ամյա հարաբերությունները, շարունակում է Կոմսը, մշտապես եղել են բարեկամական, բացառությամբ 90-ական թվականների, երբ Ռուսաստանը կտրուկ շրջադարձ կատարեց հայերի հանդեպ իր «ավանդական քաղաքականությունից» և որդեգրեց հակահայկական կեցվածք, ինչը հանգեցրեց «տխուր հետևանքների»՝ Կովկասում հայերի դեմ ուղղված ձեռնարկումները զարգացրեցին հակառուսական տրամադրություններ և հայերին «մղեցին ռուսական կառավարությանը թշնամի հեղափոխական շարժումների գիրկը»: Լորանով-Գոլիցինյան քաղաքականությունը մերժելու ու հայերի հանդեպ լոյալություն հանդես բերելու շնորհիվ, «Հանձինս ռուսահայերի, Ձերդ Մեծությունն այժմ ունի հավատարիմ հպատակներ, Ձեզ են ուղղվում նաև Թուրքահայերի հայացքը» խոր գիտակցությամբ, որ հայը միայն Ռուսաստանից կարող է ստանալ իր կյանքի, պատվի և սեփականության անվտանգության երաշխիք:

Փոխարքայի հաստատ համոզմունքն էր, որ հասել էր ժամանակը վերադառնալու «Թրքահայերին հովանավորելու ռուսական վաղեմի քաղաքականությանը: Նա հարկ էր համարում, նախ, «կտրուկ հայտարարություն» անել Բ. Դռանը և հենվելով Բեռլինի դաշնագրի վրա՝ պահանջել երաշխիքներ հայերի անվտանգությունն ապահովելու մասին: Ռուսաստանն իրավունք չունի ձեռքից բաց թողնելու «հօգուտ հայերի միջամտության» նախաձեռնությունը, այլապես վերջինները կդիմեն ուրիշ տերությունների օգնությանը, ինչը մեծ հարված կհասցնի «Փոքր Ասիայի քրիստոնյաների շրջանում Ռուսաստանի վարկին», վերջնականապես կսպանի Ռուսաստանից երբևիցե օգնություն ստանալու հայերի հույսերը: Դա վտանգավոր է մասնավորապես «ներկա-յումս, երբ ամենայն հավանականությամբ հայկական նահանգները շուտով դառնալու են պատերազմական գործողությունների թատերաբեմ»: Սակայն քաղաքական այդ շրջադարձը պետք է ուղեկցվի մի հայտարարությունով, թե «մենք նպատակ չունենք հողային նվաճումներ կատարելու ի հաշիվ Թուրքիայի», որպեսզի «չփոթություն չառաջացնենք ոչ միայն Թուրքերի, այլև հայերի շրջանում... ներկայումս այսպես կոչված Թուրքահայաստանի գրավումը, որի բնակչությունը կազմված է առավելապես վայրենի քրդերից, կարող է միայն մնասակար լինել մեզ համար, ստեղծելով մեծ հոգսեր այդ խայտաբղետ, միմյանց թշնամի և մոլեռանդ ազգաբնակչությամբ լցված երկրի կառավարման գործում»[51]:

Հայամետ քաղաքականություն, բայց ոչ Արևմտյան Հայաստանի գրավում, ահա Վորոնցով-Դաշկովի տեսակետը, որը կոչված էր արտաքին քաղաքական խնդիրների հետ միասին լուծելու ներքին հիմնահարցեր՝ սիրաշահել և ցարամետ դարձնել արևելահայությանը:

Հավանաբար ռուսական քաղաքական շրջաններում կային նաև այլ կարծիքներ: Գերմանիայի պետական քարտուղար Ցագովը 1913թ. հունվարի 25-ին Կ. Պոլսում իր դեսպանին գրում է, որ Հայկական հարցում Ռուսաստանում կա երկու տեսակետ: «Կովկասի նահանգապետ Վորոնցով-Դաշկովը դեմ է Ռուսաստանի միջամտությանը...», իսկ Սազոնովն, ընդհակառակը, կողմ է: Նկատի ունենալով, որ Ռուսաստանն անհաջողություններ էր կրել Բալկաններում և անհրաժեշտ էր համարում այդ տպավորությունը վերացնել որևէ «հաջող գործողությունով», ինչը հնարավոր էր միայն Հայաստանում և Դարդանելում[52]:

51 Լազեան Գ. Հայաստանը և Հայ դատը Հայ և ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, 1991, էջ 150-153:

52 R 14077, Ab. 1718pr.

Թվում է, թե ցարական պալատում հաղթել էր Վորոնցով-Դաշկովի տեսակետը, քանի որ, երբ Գրեյը Սազոնովին ասաց, թե «մենք անհրաժեշտ ենք համարում Թուրքիայի ասիական մասի հետագա ամբողջական գոյությունը և այդ գործում ամեն մի միջամտություն կունենա ամենալուրջ հետևանքներ», Սազոնովը պատասխանեց, թե Հայաստանի հանդեպ Ռուսաստանը որևէ մտադրություն չունի, նաև «ցանկություն չկա ներքաշվելու պատերազմի մեջ»[53]: Այնուամենայնիվ, Հայկական հարցում ռուսական քաղաքականության շրջադարձն ակնհայտ էր, ինչն արտահայտվեց նաև արևելահայերի հանդեպ ռուսական իշխանությունների կեցվածքում: Դադարեցվեցին հալածանքները, փակվեց տարիներ շարունակ քաշքշված «Դաշնակցության դատավարությունը»:

Խնդրի պարզաբանման համար անհետաքրքիր չէ Վորոնցով–Դաշկովի նաև 1913թ. մայիսի 2-ի նամակը Սազոնովին, որում նա վերաշարադրում է կովկասահայերի պատվիրակության կարծիքը Հայկական հարցը նորովի բարձրացնելու վերաբերյալ: «Ռուսաստանը,– գրում է նա,– վաղ թե ուշ ասելու է իր ծանրակշիռ խոսքը՝ Թուրքիային ստիպելու է իրականացնելու բարենորոգումներ, սակայն դա պետք է շտապ արվի, որովհետև վիճակն այնպիսին է, որ ամենամոտ ապագայում հայերը փորձությունների են ենթարկվելու: Թուրքահայաստանից ավելի հաճախ են լսվում ինքնապաշտպանական ճիչեր, որովհետև Թուրքահպատակ հայի կյանքը վտանգված է: Միայն հուսալի պաշտպանությունն է ի զորու «բռնավորին հետ պահել գազանություններից», և կովկասահայերը խնդրում են չմերժել իրենց եղբայրներին ինքնապաշտպանության միջոցներ, գոնե բերդանկաներ ու փամփուշտներ, տրամադրել՝ հավաստիացնելով, որ դրանք բացառապես ինքնապաշտպանության համար են»: «Թուրքահայերը սարսափով են սպասում Մակեդոնիայից գաղթող մուսուլմաններին և իրենց հողերի վրա նրանց բնակեցնելուն»: Հայերի վիճակն իրոք անելանելի է դառնում, և նրանք, գուցե ոչ առանց հիմքի, վախենում են, որ «ամենամոտ ապագայում սպասվում են շատ ավելի ծանր ժամանակներ, քան ապրել են մինչ այժմ...»[54]:

«Русское слово» թերթը կոչ արեց. «Զենքը ձեռքին միջամտել ի պաշտպանություն Հայաստանի»[55]: Հայերին պաշտպանելը ոչ միայն անհրաժեշտ է, ընդհանրապես, այլև Ռուսաստանին հարկավոր է «սեփական անվտանգության տեսակետից»: Միլյուկովը շանթեր էր արձակում հօգուտ հայերի. «Ես խոսում եմ Թուրքահայաստանի մասին: Այդ վայրերը մեզ անհրաժեշտ են տնտեսապես, որպես վաճառահանման շուկա, և ռազմավարական առումով»: Նա ցարական կառավարությունից պահանջում էր Հայաստանի համար ապահովել «Լիբանանի նման» ինքնավարություն[56]: Նրա նախաձեռնությամբ ստեղծվեց Հայասերների մոսկովյան կոմիտե[57]: Կրկնում ենք, սխալ է այն կարծիքը, թե նախապատերազմյան շրջանում Հայկական հարցի բարձրացման նախաձեռնողը թիֆլիսահայ վերնախավն էր, որի առաջարկով Գևորգ 5-րդը դիմեց փոխարքային: Իրողությունն այլ է՝ թե այդ վերնախավը, թե կաթողիկոսը գործում էին ՀԲ Դաշնակցության, իսկ վերջինս էլ համագործակցության մեջ էր փոխարքայի հետ, որը քայլեր էր կատարում արևմտահայության ազատագրության խնդիրը ենթարկելու Ռուսաստանի աշխարհաքաղաքական ծրագրերին:

Բ. Բորյանի կարծիքով. «Պատերազմի նախօրյակին, ոչ թե անհրաժեշտությունը, այլ կացությունը խաղաց վճռական դեր Թուրքահայերի մտածողության և որոշումների ձևավորման գործում»: Անցած տասնամյակները նրանց ինչ-որ բան սովորեցրել, հասունացրել ու ավելի իրատես էին դարձրել: Դրա համար էլ «Թուրքական ու գերմանական դիվանագիտությունը չկարողացավ նրանց իր ազդեցության տակ առնել և թելադրել իր կամքը... Մինչդեռ ռուսահայությունն ու Կ. Պոլսի հայերը վերածվեցին հնազանդ զենքի ռուսական դիվանագիտության ձեռքին... սեփական ազգի դավաճանների և ցարական իմպերիալիստական դիվանագիտության գործակալների: Պատերազմի սկզբին նրանք առաջ քաշեցին ու պաշտպանեցի ոչ թե հայ ազգի շահերն ու ֆիզիկական գոյության հիմնահարցը..., այլ իմպերիալիստական տերությունների զավթողական քաղա-

53 R 14077, Ab. 1987.

54 АВПР, «Политархив», д. 3461, лл. 1-4.

55 «Русское слово», 10.11.1912.

56 «Речь», 14.12.1912.

57 R 14083, Ab. 25650.

քականությունը...» Այդ մասնավորապես վերաբերում է ՀԵԴ, որը կոչ արեց. «Հասել է Հայաստանի ազատագրության ժամը: Հայե՛ր, ի զեն ընդդեմ Թուրքերի»[58]:

Այս հարցում ևս Բ. Բորյանը միակողմանի է, գնահատականներում ծայրահեղ ու անարդար: Բացարձակապես անհիմն է «ազգային դավաճանության» մեղադրանքը:

Սակայն, որ Հայկական հարցին առնչվող իրադարձությունների դիրիժորական փայտիկը ցարի ձեռքում էր, ակնհայտ է: Պետերբուրգը մինչև 1913 թվականը Արևմտյան Հայաստանը Օսմանյան կայսրության կազմից դուրս բերելու խնդիր չէր դնում, նույն դիրքորոշումն ուներ նաև Ազգային բյուրոն:

«Հորիզոնը» 1912թ. նոյեմբերի 23-ին գրում է, որ արևմտահայ հարցը կարող է լուծվել միմիայն Ռուսաստանի միջոցով Բեռլինի դաշնագիրը ստորագրած կառավարությունների մասնակցությամբ և այդ հարցի լուծումը համարում էր «...կյանքի, գույքի և պատվի անվտանգություն և մշակութային զարգացման հնարավորություն»՝ խնդրի քաղաքական լուծումը վերապահելով մեծ պետություններին: Երկու ամիս անց, 1913-ի փետրվարի 2-ին նույն թերթն արդեն պահանջում էր ստեղծել ինքնավար Հայաստան Ռուսաստանի հովանու ներքո: ՀԵԴ «ռուսապաշտությունը» դրանով չսահմանափակվեց: Ռուսաստանը նախապատրաստվում էր պատերազմի Թուրքիայի դեմ և նրան չէր բավարարում հայերի միայն բարոյական աջակցությունը, նա ձգտում ու պարտադրում էր, որպեսզի հայերը Թուրքական բանակի թիկունքում քայքայիչ գործունեություն ծավալեին, պարտիզանական կռիվներ տանեին: ՀԵԴ անմիջապես արձագանքեց՝ սկսեց զինել արևմտահայությանը, արտասահմանից զենքեր ներկրել, ռումբեր պատրաստել, վերահավաքել իր իսկ կողմից ցրված հայդուկային խմբերը: Այդ ամենը կատարվում էր գաղտնիության պահանջների կոպիտ խախտումներով և, պատահական չէ, որ իշխանություններն անմիջապես խուզարկություններ կազմակերպեցին և բռնագրավեցին կուտակված ռազմամթերքը[59]:

1912թ. նոյեմբերին Պետերբուրգում ստեղծվում է «Հայկական խմբակ» անունը կրող մի ժամանակավոր հանձնաժողով կաթողիկոսի ձեռնարկումներին աջակցելու համար: Նրա կազմում էին Պետդումայի անդամ Մ. Աջեմովը, պրոֆ. Վարդանյանը, Պետական խորհրդի նախկին անդամ Ի. Սաղաթելյանը: Հանձնաժողովն իր առաջ խնդիր էր դրել պատրաստել նյութեր Հայկական հարցի վերաբերյալ և շփումներ իրականացնել Ռուսաստանի նշանավոր գործիչների հետ[60]:

«Հայկական խմբակը» երկու ներկայացուցիչ, որոնցից մեկը Ն. Ադոնցն էր, ուղարկեց Կ. Պոլիս, որտեղ հանդիպումներ ունեցան Մ. Օրմանյանի և Գ. Նորատունկյանի հետ: Մ. Օրմանյանի կարծիքով Հայկական հարցի լուծման լավագույն տարբերակը Լիբանանի կարգավիճակով վարչական միավորի ստեղծումն էր: Նա միաժամանակ անհրաժեշտ էր համարում Ռուսաստանի ներառնդուն միջամտությունը, անգամ Արևմտյան Հայաստանի զավթումը[61]: Շատ ավելի զգույշ էր Գ. Նորատունկյանը: Նա գտնում էր, որ հայկական բարենորոգումներն անհնար էին առանց ամբողջ կայսրության բարեկարգման, ինչն էլ հազիվ թե իրականացվեր[62]:

Օգոստոսի 17-ին պատրիարք Ի. Արշարունին ՆԳ նախարարին ներկայացրեց Վանի վիլայեթի հայ բնակչության ողբերգական վիճակը և խնդրեց կանխել սպառնացող ջարդը: Նախարարը խոստացավ: Բայց երկու օր անց քրդերը ոչնչացրեցին վիլայեթի հայկական երկու գյուղ: Նոր բողոքին հաջորդեց նոր ջարդ, որն իրականացրեց հայերին պաշտպանելու համար նախարարության կողմից երաշխավորված քուրդ ավազակապետ Ալի Քամբուն: Որպես բողոքի արտահայտություն պատրիարքն ու Ազգային ժողովը սեպտեմբերի 18-ին հրաժարական ներկայացրին:

1912թ. նոյեմբերի 26-ին Հիրսը գրեց Բ. Դռանը. «1894-96թթ. հայտնի դեպքերից հետո էլ, երբ Փոքր Ասիան և Կ. Պոլիսը հեղեղված էին հայերի բարբարոսական ջարդերի արյունով, իրավիճակն ամենևին չի փոխվել: Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի ճնշման տակ 1895-ի հոկտեմբերի 20-ին Աբդուլ Համիդի ստորագրած բարենորոգումների ծրագիրը չի իրագործվել: Օրեցօր ավելի է սրվում ագրարային հարցը, հողերի մեծ մասը զավթել կամ զավթում են քրդերը, իսկ իշխանություններն անօրինական գործողություններին հակազդելու փոխարեն, հովանավորում ու նպաստում են այդ հափշտակություններին: Մեր ստացած հյուպատոսական տեղեկագրերը քրդերի հարձակումների, անընդհատ շորթումների, հայերի սպանությունների և հայ կանանց բռնի կրոնափոխումների հարցում համահունչ են: Զարագործները դրեթե ոչ մի անգամ դատական հետապնդման չեն ենթարկվում: Բ. Դռան և ՆԳ նախարարին հայոց պատրիարքի հանձնած հուշագիրը ներկայացնում է սուլթանի հայ հպատակների հալածանքների ճշմարիտ պատկերը...»[63]:

1912թ. նոյեմբերի 8-ին Գևորգ 5-րդ կաթողիկոսը կոնդակով Նուբարին նշանակում է իր լիազոր ներկայացուցիչը Բեռլինի դաշնագիրը ստորագրած կառավարությունների մոտ: Նուբարը ծագումով ղարաբաղցի էր: Նրա պապերը զինակցել էին Դավիթ Բեկին: Ինքը եգիպտահայ մեծահարուստներից էր, որի ընտանիքի անդամները Եգիպտոսում զբաղեցնում էին բարձրագույն պաշտոններ[64]: Կաթողիկոսը նրան հանձնարարեց ստեղծել Ազգային պատվիրակություն: Նուբարը պատվիրակությունը ձևավորեց հետևյալ կազմով, նախագահ՝ Պ. Նուբար, անդամներ՝ Գ. արք. Ցուլթինջյան, Ցաղուբ Արթին, Մինաս Ջերազ և Հ. Մոստիչյան:

Մի քանի օր անց կաթողիկոսը նամակով ցարին խնդրում է՝ Բալկանների հարցին նվիրված լոնդոնյան համաժողովում դնել նաև արևմտահայության հարցը: «Եթե հայերը հիմա էլ չրջանցվեն,– գրում է նա,- դա հավասարազոր կլինի վերջնական բանաձևման»[65]: 1912թ. դեկտեմբերի 16-ին բացվեց Լոնդոնի կոնֆերանսը: Հայկական բարենորոգումների հարցի քննարկմանը մասնակցելու համար Լոնդոն մեկնեցին հայ հոգևոր և աշխարհիկ գործիչներ: Մեծ թվով հեռագրեր ստացվեցին խնդրանքով՝ հարկադրել Բ. Դռանը մտցնելու բարենորոգումներ:

Նուբար փաշան եվրոպական մայրաքաղաքներում ափթը բաց չէր թողնում հայտարարելու, թե «Թուրքահայերն ամենևին էլ չեն ցանկանում դնել անկախության կամ հպատակության փոփոխության հարցեր, թե նրանց միակ փափագն է՝ իրականացնել Բեռլինի պայմանագրով նախատեսված և Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի կողմից մշակված բարենորոգումների ծրագիրը»: Նա ասում էր, թե «Հայկական հարցը ոչ միայն հայկական է, այլև՝ եվրոպական»[66]:

Բ. Դուռը վճռական քայլեր կատարեց Լոնդոնի համաժողովում Հայկական հարցի քննարկումը ձախողելու համար, նորից հրապարակ հանվեց Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ մտցնելու ծրագրի նախագիծը: Խոսքը գնում էր միայն չորս վիլայեթների՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի մասին: Նախագծում բացակայում էր տերությունների դեսպանությունների կողմից վերահսկողությունը գլխավոր հրահանգչի վրա, ոչինչ չկար կառավարմանը քրիստոնյաների մասնակցության մասին և այլն: Այսինքն՝ Թուրքական այս նախագիծը հայերի համար ավելի անընդունելի էր, քան 1895թ. Մայիսյան ծրագիրը: Բացի դա, նախագծի քննարկումից մեկուսացվեցին թե պատրիարքարանը և թե Ազգային ժողովը: Քննարկումը հանձնարարվեց չափավոր հայացքներ ունեցող գործիչների՝ Պ. Գյուլբեկյան, Ն. Թազվորյան, Տ. Քելեքյան և Մ. Օրմանյան: Սակայն Բ. Դռան հույսերը չարդարացան, որովհետև չորս գործիչների առաջարկները հանգեցին հետևյալին՝ գործողության մեջ դնել Մայիսյան ծրագրի սկզբունքներն ու նաև համագործակցել պատրիարքարանի հետ[67]:

Նկատի ունենալով արևմտահայության վտանգվածությունը՝ Ազգային ժողովը 1912թ. դեկտեմբերի 12-ին ստեղծեց ազգային անվտանգության գաղտնի հանձնաժողով, որի առաջ խնդիր դրվեց՝ մշակել Արևմտյան Հայաստանի բարենորոգումների ծրագրի նոր նախագիծ, բանակցություններ վարել տերությունների հետ, քարոզչական աշխատանք ծավալել արևմտահայության վիճակի շուրջ: Հանձնաժողովը գլխավորում էր պատրիարք Արշարունին: Մշակվեց բարենորո-

58 Борян Б. А. նշվ. աշխ. , էջ 346-348:
59 «Բիւզանդիոն», 1913, թիվ 5025, 5033:
60 «Закавказская речь», 20.01.1913.
61 ՀՀ ՊԿԱ, ֆ. 57, ց. 2, գ. 685:
62 Ն. տ.:

63 Геноцид армян..., стр. 219:
64 Djemal Pasha Erisnnerungen eins Turkischen Staatsmannes, Munchen, 1922, s. 371.
65 Լազեան Գ. նշվ. աշխ., էջ 163:
66 Բարկեն վարդապետ Հայկական հարցը և Պողոս Նուբար փաշան, Վաղարշապատ, 1914, էջ 9:
67 «Մշակ», 06.01.1913:

գումների նոր ծրագրի նախագիծ: Այդ առնչությամբ հրապարակ հանվեց հետևյալ վիճակագրական տվյալները վեց վիլայեթներում, եթե 1881թ. բնակվում էր 820.106, ապա 1910թ. 1.172.600 հայ, ինչը կեղծիք էր, որովհետև 1850-1880-ական թվականներին կայսրությունում հայերի թիվը տատանվում էր 3.5 միլիոնից 2.7 միլիոնի միջև: Անվիճելի էր, որ 1881-1910 թվերին հայերի թիվն աճել էր 30.1%-ով, չնայած բնականոն իրավիճակում կարող էր աճել երեք անգամ: Միանգամայն իրավացի էր Գր. Զոհրապը, երբ գրում էր. «Թուրքիայի ազգաբնակչության, հատկապես հայերի թվին վերաբերող տվյալները, վստահության արժանի չեն»: Մի հանգամանք ևս. «Եթե ընդունենք, որ հայերը իրապես փոքրամասնություն էին, այնուամենայնիվ, չի կարելի մոռանալ, որ որակական առումով ունեին անվիճելի առավելություն՝ հանդիսանալով տնտեսական և մտավոր ուժ, համախումբ զանգված էին այն բոլոր հատկանիշներով, որոնք եվրոպական հասկացողությամբ բնութագրական էին ազգի համար»: Զոհրապը եվրոպական փորձի հիմքի վրա ներկայացնում է ազգին բնորոշ գծերը՝ ռասա, լեզու, կրոն, տարածք, պատմություն, սովորություններ, ընդհանուր խնդիրներ, ձևավորված ազգային գիտակցություն: Ցանկացած էթնիկ խումբ... ունի իր ազգային քաղաքականությունը: Եվրոպական պետություններում ազգերի ինքնորոշման եղանակներ համարում էին ինքնավարության տարբեր ձևերից մինչև ազգային պետականությունը[68]: 1912թ. դեկտեմբերի 14-ին պատրիարքարանի խառը հանձնաժողովը քննարկեց Բ. Դռան կոչը Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ, հիմք ընդունելով Մայիսյան նախագիծը: Բ. Դուռը Անգլիայից խնդրեց տրամադրել հինգ անգլիացու կայսրության ժանդարմերիան վերակառուցելու համար: Լոնդոնի խորհրդաժողովի կապակցությամբ տարածված լուրերը, թե Հայաստանին ինքնավարություն է տրվելու՝ անհանգստացրեցին թուրքերին: ՆԳ նախարար Ռեշիդը հարկադրված էր «Իկդամ» թերթի 1912թ. դեկտեմբերի 18-ի համարում հայտարարություն տպագրել, թե հայերի հույսերն ապարդյուն են: Դրան հակառակ «Закавказская речь» թերթը նույն օրը տպագրեց Ռեշիդի հայտարարությունը, թե «Հայաստանի ինքնորոշումը անիրականալի երազ է...»: Դրա դեմ հանդես եկավ «Закавказская речь» թերթը: «Առաջադեմ հայերի երազը՝ ինքնավար Հայաստանը մոտ է իրականություն դառնալուն: Թուրք գործիչները ընտելացել էին դրան և փնտրում էին բարեհաջող ելքի հնարավորություն»: Բնականաբար հայերը «նույնպես զգում էին պահի լրջությունը և միջոցների էին դիմում, որպեսզի հասնեին իրենց նվիրական նպատակին»: Մասնավորապես եռանդուն էր գործում Պ. Նուբարը: «Ֆրանսիան համաձայնվեց պաշտոնապես առաջ քաշելու Հայկական հարցը»:

Դեկտեմբերի 21-ին Ազգային ժողովը որոշեց որդեգրել երկու հիմնարար կողմորոշումներ՝ շարունակել բանակցությունները օսմանյան կառավարության հետ բարենորոգումներ իրականացնելու համար և ստանալ «լուրջ երաշխիք, որ բարենորոգումները կիրականացվեն»[69]: Այսինքն՝ խոսքը նորից գնում էր մեծ տերությունների աջակցության մասին, ինչը կատաղեցրեց Թալեաթին: Իսկ երբ Բալկանյան պատերազմում հայկական ջոկատը Անդրանիկի և Նժդեհի հրամանատարությամբ մասնակցեց Բուլղարիայի կողմում, Թուրքիայում կազմավորվեցին ջարդարարների հարվածային ջոկատներ: ՀԵԴ կոչ արեց ստեղծել ինքնապաշտպանության խմբեր: Ժողովրդին զինելու նպատակով կազմակերպվեց հանգանակություն: Եվրոպա մեկնեցին հայ հրապարակախոսներ՝ հասարակական շրջանների ուշադրությունը հրավիրելու Հայկական հարցի վրա: Ֆրանսերեն լեզվով հրապարակվեց փաստաթղթերի երկու ժողովածու՝ նվիրված հայկական վիլայեթներում տիրող վիճակին և հայերի հողերի զավթումներին: Պետերբուրգում Թուրքիայի դեսպան Թուրխանը գրեց Բ. Դռանը, թե ցարական կառավարությունը պահանջում է լուրջ ուշադրություն դարձնել Արևմտյան Հայաստանի վիճակին: Անիշխանությունը շարունակվելու դեպքում Ռուսաստանը պարտավոր է ապահովելու քրիստոնյաների անվտանգությունը[70]:

Քյամիլը հանձնարարեց դեսպանին հասնել այն բանին, որ Ռուսաստանը հրաժարվեր Լոնդոնում բարձրացնելու Հայկական հարցը: Դրա դիմաց նրան արտոնություններ էին խոստանում Թուրքիայի սևծովյան ափերին[71]:

68 Восточный вопрос по внешней политике России конец XIII- начало XX в. М., 1978, с. 367-368.
69 «Մշակ», 15.11.1912:
70 «Возобновление Армянского вопроса», ц. 244.
71 «Մշակ», 01.01.1913:

Տարվա վերջին Բ. Դուռը որոշեց բարենորոգումներ անցկացնել վեց վիլայեթներում, որոնք բաժանվելու էին երկու գոտու գլխավոր հրահանգիչների գլխավորությամբ: Միաժամակ մամուլում հոդվածներ երևացին քրդերին ինքնավարություն տալու մասին որպես հակակշիռ հայկական բարենորոգումներին: Կ. Պոլիսը գործում էր եռանդուն, որովհետև Ռուսաստանի համար Հայկական հարցը միայն մի նշանակություն ուներ՝ ոչ թե այն լուծել, այլ օգտագործել Թուրքիայից նոր պատառներ խլելու համար: Իզվոլսկին «Temps» և «Time» թերթում 1913թ. հունվարին գրեց. «Մինչև Բալկանյան ճգնաժամի ավարտը, Հայկական հարցը բարձրացնելը հարմար չէր, քանի որ դա կարող էր մեծ տերությունների միջև առաջացնել տարաձայնություններ և քայքայում»[72]: Նույն բանը կրկնեց Ս. Սազոնովը[73]: Չնայած դրան հայ քաղաքական ուժերը շարունակեցին առաջին պլանին թողնել այդ հարցը՝ դրսի միջամտությամբ լուծելու տարբերակը: Նորից առաջնությունը տրվում էր Ռուսաստանին: Գերմանիան նույնպես շահագրգռվածություն էր հանդես բերում: 1913թ. հունվարի 10-ին Ա. Ցիմերմանը Գ. Ցագովին հանձնարարեց Հայկական հարցում դրսևորել եռանդ, հաստատել, որ Գերմանիան է հանդիսանում հայկական բարենորոգումների երաշխավորը: Նա գրում է. «Լինելով Բեռլինի դաշնագրի ստորագրողներից մեկը և նկատի ունենալով մեր նշանակալից շահերը Թուրքիայի ասիական մասում, մտադիր չենք միայն Անտանտին թողնել հայերի ճակատագիրը որոշելու հարցը»[74]: Նույն օրերին Վանգենհայմը հայտարարեց. «Գերմանիան երբեք թույլ չի տա Ռուսաստանին ճնշում գործադրելու Թուրքիայի վրա... Ոչ այժմ և ոչ էլ ապագայում թույլ չենք տա ձեռք դնելու Անատոլիայի վրա»[75]:

Հասկանալի է, որ Հայկական հարցում տերությունների հետաքրքրությունների հանդեպ Կ. Պոլիսն անտարբեր չէր: Նպատակ էին հանվում հայկական բարենորոգումների ծրագրի նոր տարբերակներ: «Ալեմդարը» գրեց. «Մեր խեղճ հայրենակից հայերը նեղվում ու տանջվում են: Այդ վիճակին կառավարությունը վերջ կդնի՝ ձգտելով օր առաջ իրականացնելու բարեփոխումներ»[76]: Կ. Պոլիսը Հայկական հարցում գնալով հակվում էր դեպի Բեռլին, նաև այն բանի համար, որ հարցի լուծման գերմանական առաջարկները հանգում էին հետևյալին՝ ապահովել հայերի պատվի, արժանապատվության պաշտպանությունը և կրոնական ազատությունը, ինչպես նաև տեղական կառավարմանը նրանց համամասնական մասնակցությունը: «Մեծ վեզիրին հրապուրում է մի գաղափար, -1913թ. փետրվարի 24-ին Բեթման Հոլվեգին գրում է Վանգենհայմը,- գերմանական ներկայացուցչություններին հայերի մերձեցման միջոցով չեզոքացնել ռուսական քարոզչությունը»:

Բնականաբար հայերը գերմանացիների առաջարկած բարենորոգումները համարում էին ոչ բավարար: Հայ գործիչների Փարիզի 1913թ. հունվարի խորհրդակցությունը առաջին պլանին դրվեց 61-րդ հոդվածը և Ռուսաստանի հովանու տակ հայկական ինքնավարության ստեղծումը: Նույն առաջարկով հանդես եկավ նաև Վ. Բերարի «Pour les peuples d' orient» շաբաթաթերթը: Դեռ ավելին, թերթը վեց վիլայեթներից բացի պահանջում էր հայկական ինքնավարության մեջ մտցնել որևէ նավահանգիստ կամ ծովափնյա տարածք[77]: Հայկական բարենորոգումների քննարկումներով էր զբաղվում նաև Ազգային ժողովը: Իսկ Պ. Նուբարը Լոնդոնում առաջարկեց հայկական նահանգներից ձևավորել «Հայկական շրջան» Եվրոպայի կոմիսարի կառավարման ներքո, որին ընտրելու էր սուլթանը և հաստատելու էին տերությունները[78]:

Ձեռքերը ծալած նստած չէր նաև պատրիարք Արշարունին: Դրա հետ միասին Գերմանիան ամեն ինչ անում էր ուժեղացնելու իր քաղաքական և տնտեսական դիրքերը Ադանայի, Կոնիայի, Անկարայի և մի քանի ուրիշ նահանգներում, ինչը հնարավորություն կտար առաջանալու

72 «Закавказская Речь», 09.01.1913.
73 «Восточный вопрос во внешнех политике России конец XVIII- начало XX в. м., 1978, с. 369 », ц. 244.
74 «Հայկական հարցը և հայոց ցեղասպանությունը...», էջ 27:
75 Повлович м., Борба за Азию и Африку, М., 1923, с. 56.
76 «Մշակ», 09.02.1913:
77 ՀՀ ՊԿՊԱ, ֆ 43, ց. 1, գ 83:
78 «Մշակ», 07.05.1913:

Արևելք և գերիշխող դիրք գրավելու Առաջավոր Ասիայում: Հասկանալի պատճառներով գերմանական այդ պլանները հանդիպում էին Անգլիայի և Ռուսաստանի հակազդեցությանը: Այս առումով Ռուսաստանի ուժեղանալը Արևմտյան Հայաստանում մեծ խոչընդոտ էր առաջին հերթին Գերմանիայի ծավալման դեմ: 1913թ. ապրիլի 22-ի 8եմերմանը գրում է Վանգենհայմին, թե գլխավոր խնդիրը Փոքր Ասիայում օսմանյան տերության դիրքերի ամրապնդումն է հայերի օգնությամբ: Դրա համար պահանջվում էր նրանց չնորհել տեղական ինքնավարություն: «Թուրքիայի եվրոպական մասի անջատվելուց հետո,- ասվում է այդ փաստաթղթում,- Թուրքական կառավարության կարևոր խնդիրը դառնում է՝ իրական բարենորոգումների և հայ տարրին տեղական ինքնակառավարման մեջ ներգրավելու միջոցով նրան մղել համագործակցելու Ասիայում կայսրության (օսմանյան) վերականգման համար»[79]: Նպատակահարմար էր համարվում օգտագործել 61-րդ հոդվածը, որը Բ. Դռանը կմղեր «անցկացնելու բարենորոգումներ հայկական նահանգներում և տերություններին էլ վերահսկելու իրավունք կվերապահեր»: Նաև առաջարկվում էր գործել տերությունների հետ համագործակցված: «Մենք հաճույքով կօգնենք Թուրքական կառավարությանը... մշակելու բարենորոգումների ծրագիր...»: «Berliner Tag»-ը գրում է. «Մենք, գերմանացիներս, ռուսներից ավելի քիչ չենք շահագրգռված հայկական վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու հարցում... Հայերը հանդիսանում են ֆրանսիական դիվանագիտության հիմքը, և մենք ամբողջ ուժող կձգտենք կարգավորելու նրանց իրավական դրությունը: Միայն այդպես Թուրքիան ի վիճակի կլինի կանգնել քաղաքակիրթ ուղու վրա»[80]:

Նա Հիրսին հանձնեց Հայկական հարցի լուծման ևս մի նախագիծ: Ազգային բյուրոն էլ հրահանգով հանեց երկու նախագիծ՝ մինիմում և մաքսիմում: Մինիմում ծրագրի համար հիմք էր ընդունվել Վ. Բերարի «Փարիզյան ծրագիրը», իսկ մաքսիմումի համար՝ Պատրիարքարանի ծրագիրը: Վերջինիս հիման վրա Ա. Մանդելշտյամը ստեղծեց «Հայկական նահանգների և Անատոլիայի բարենորոգումների ծրագիրը, որը հայկական գլխավոր նահանգապետության մեջ մտցնում էր վեց վիլայեթներ, բացառությամբ Հաքիարիի, ինչպես նաև Սղերդի, Սըվազի և Խարբերդի նահանգների առանձին մասերից: Հայկական նահանգը կառավարելու էր եվրոպացի գերագույն նահանգապետը, որը գործելու էր Անտանտի վերահսկողության ներքո: Նա ընտրվելու էր երեք մեծ տերությունների՝ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի կողմից: Նրա առաջ խնդիր էր դրվում իրականացնել Բեռլինի դաշնագրի հետ հոդվածը և 1895թ. Մայիսյան ծրագիրը[81]: Ա. Մանդելշտյամի ծրագրին մենք մանրամասն կանդրադառնանք, այստեղ միայն ցանկանում ենք հաստատել, որ անգամ 1913թ. Ռուսաստանը պնդում էր Արևմտյան Հայաստանի ամբողջականության և տարածքային ինքնավարության վրա:

Գնալով հայկական բարենորոգումների շուրջ քննարկումներն աշխուժանում էին: 1913թ. սկզբներին այդ հարցով մի քանի հանդիպումներ ունեցան պոլսահայ գործիչներն ու երիտթուրք ղեկավարները: Վերջինները հայերին առաջարկում էին հրաժարվել օտարների միջամտությունը հայցելուց և վստահել բարենորոգումների Թուրքական քաղաքականությանը:

Հանդիպումներից մեկի ժամանակ Թալեաթն ասաց. «Եթե այս անգամ էլ չլսեք մեզ և չարուն-նակեք օտար ուժերով ճնշում գործադրել, միևնույն է, որևէ բանի չեք հասնի, չէ՞ որ հազարավոր ուղիներ կան բարենորոգումները վիժեցնելու»[82]:

Բանակցությունները որևէ արդյունք չունեցան, հայերը պարզապես երիտթուրքերին չէին հավատում և դրա համար ավելի քան հիմքեր ունեին: Երիտթուրքերի հանդեպ հայերի անվստահությունն ամբողջացավ, երբ բացահայտ դարձավ, որ նրանց քաղաքականությունը նպատակ ուներ «բռնությամբ օսմանացնել բոլոր ոչ Թուրք օսմանցիներին» և դա անել «կրակով ու սրով»[83]:

Այդ ամենով հանդերձ Հայկական հարցը մի անգամ ևս միջազգայնացվեց դիվանագիտական և քաղաքական քննարկումների առումով: 1912-13 Թվերի հյուպատոսական զեկուցագրերում ու դիվանագիտական այլևայլ փաստաթղթերում գնալով ավելի ու ավելի հաճախակի էին անդրադարձները Արևմտյան Հայաստանին ու հայերին: Այդ վավերագրերը պարունակում են մեծ քանակությամբ արժեքավոր նյութեր արևմտահարության վիճակի և Հայկական հարցի տարբեր կողմերի մասին: Եթե եվրոպական մայրաքաղաքներում Հայկական հարցին մոտենում էին ճակատային, առանց հաշվի առնելու նրա բաղադրիչներն ու դրանք օգտագործելու հնարավորությունները, ապա Թուրքիայում գործող մի շարք եվրոպացի դիվանագետներ փորձում էին Հայկական հարցը քննարկել մաս-մաս, ելնելով ոչ Թե հայկական կամ Թուրքական, այլ եվրոպական այս կամ այն պետության մանր ու մեծ շահերից: Ադանայում Գերմանիայի հյուպատոս Բյուգը 1913թ. ապրիլի 8-ին իր դեսպանին գրեց, Թե Կիլիկիան «արևելյան նահանգներից հեռու է ընկած» և վերջիններիս համար ձեռնարկվող միջոցառումները Կիլիկիային վերաբերել չեն կարող: «Անատոլիայի արևելյան նահանգներում բացակայում է օտար պետությունների վրա հենվելու հավանականությունը, նաև չկա մի պետություն, որն իր հերթին խիստ շահագրգռված լինի տվյալ գործում: Այդ նախադրյալի բացակայության պայմաններում անհիմն է ուժ գործադրել անջատողական նպատակով: Ադանայի վիլայեթի հայերը, բացառությամբ Հաճընի ու Դորթյոլի սանջակներից, մեծամասամբ զենք չունեն և մահմեդական բնակչության համեմատությամբ փոքրամասնություն են կազմում... Դրա համար էլ որոշ Թերթերում երևացող լուրերը երկրի այս մասում հայերի կանխամտածված հուզումների մասին հանդիսանում են մասամբ հայերի հանդեպ ոտնձգությունների վերաբերյալ հաղորդագրության սխալ ընկալում, մասամբ էլ հնարովի հաղորդագրությունների հավաքածու, որպեսզի դրանք պատրվակ օգտագործվեն հայերի նկատմամբ գործողությունների համար: Իրականում հայերն ապրում են իրենց մահմեդական համերկրացիների դաժանությունների պայմաններում: Նրանք գաղտնի կազմակերպություններ չունեն: Նրանք մերժեցին իրենց զենք մատակարարելու հույների առաջարկը: Հարկ է անպայման ընդունել, որ հայ ազգի գանգատն ընդհանուր առմամբ ճիշտ է: Բարենորոգումների հանդեպ այստեղ տածում են փոքր կամ գրեթե ոչ մի վստահություն, համենայն դեպս, դեռևս հայտնի չէ, Թե հնարավո՞ր է Թուրքիայից ձևավորել այնպիսի պետություն, որտեղ մահմեդականների ու քրիստոնյաների համար լինի հավասար իրավունքների երաշխիք: Հայերի կարծիքով, եթե նման զարգացումը հավանական լիներ... ապա իրենք Թուրքիայում անհամեմատ ավելի լավ վիճակում կլինեին, քան որևէ այլ պետության կազմում»:

Հյուպատոսը նաև նշում էր, որ հայերը միշտ դեմ են եղել Թուրքիայում գերմանացիների քաղաքականությանը և «իրենց Թերթերում Աբդուլ Համիդի կողքին, զետեղել են հանգուցյալ բարոն Ֆոն Մարշալլի նկարը որպես հայերի խոշորագույն Թշնամու... նրանք քննադատում են մեր քաղաքականությունը, Թե այն պաշտպանում է Թուրքական կամայականությունները...»[84]: Բեռլինը Հայկական հարցում գլխավորը համարում էր ոչ Թե հայության փրկությունը, այլ ռուսական վտանգի չեզոքացումը և գործում էր ըստ այդմ: «Գերմանիան, - գրում է Ն. Ադոնցը,– ինչպես և Թուրքիայով շահագրգռված եվրոպական մյուս տերությունները, դիտում էին Հայաստանն ու Հայկական հարցն ինչպես մի ավելորդ կշռաքար կշեռքի ռուսական Թաթին: Այստեղից էլ բխում էին անտարբերությունը և հակազդեցությունը Հայկական բարենորոգումների նկատմամբ»[85]:

Նոյեմբերի 30-ին Սազոնովը Հիրսին հանձնարարեց՝ խորհուրդ տալ Թուրքիայի արտաքին գործերի նախարարին մտածել բարենորոգումներ իրականացնելու մասին, որովհետև, հակառակ դեպքում, դրսի միջամտությունն անխուսափելի էր: Հիրսը Գ. Նորատունկյանից նորից պահանջեց վերջ դնել հայերի հալածանքներին ու հաշվեհարդարներին[86]: Ռուսաստանն աստիճանաբար ուժեղացնում էր ճնշումը Կ. Պոլսի վրա: Հիրսն անգամ հայտարարեց, Թե Պետերբուրգը մտադիր է «հասկացնելու Բ. Դռանը համաձայնել, որպեսզի խաղաղ պայմաններում» ռուսական զորքեր մտցվեն Կովկասին սահմանակից Թուրքական տարածքները[87]: Դա ոչ միայն սթափեցրեց, այլև ահաբեկեց Թուրքերին ու նրանց հովանավորներին:

79 «Армянский вопрос и геноцид армян...», с 38 (Վ. Միքայելյան):

80 «Մշակ», 07.05.1913:

81 ՀՀ ՊՀՊՍ, ֆ. 57, ց. 5, գ. 56:

82 Геноцид армян..., стр. 222.

83 Ն. տ. :

84 Konst/Ankara 165, Ab. 53a.

85 Ադոնց Ն. Հայկական հարց, Երևան, 1996, էջ 57:

86 Коковцев В. Из моего прошлого, Москва, 1992, стр. 289-290.

87 Реформы в Армении, стр. 28.

Գերմանիան Բ. Դռանն առաջարկեց արագացնել բարենորոգումների գործը[88]: Ցագովն այն անվանեց «չատ փափուկ քայլ»՝ գտնելով, որ եթե տերությունները մտադիր են պաշտպանելու հայերին, ապա չպետք է մոռանան «նաև քրդերի շահերը»[89]: Այսպիսով քրդական հարցը Բեռլինի, իսկ Հայկական հարցը Պետերբուրգի համար նորից միջոց դարձան Թուրքիայի վրա ճնշում գործադրելու ի փառս Գերմանիայի և Ռուսաստանի շահերի:

Երիտթուրքերը կացության վտանգավորությունը հաշվի առնելով՝ որոշեցին իրենց ձեռքը վերցնել բարենորոգումների իրականացման նախաձեռնությունը: Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին 1912թ. դեկտեմբերի 12-ին տեղեկագրում է, «որ այս անգամ բարենորոգումների գործը կառավարությունն է նախաձեռնել՝ թերթերում հրապարակելով արևելյան նահանգներում բարենորոգումների վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություն: ...Քիչ անց Տաղավարյանը մամուլում բարենորոգումների մի նախագիծ հրապարակեց, որը որոշ չափով ձևափոխում ու ծավալուն էր դարձնում կառավարության առաջարկած միջոցառումները»: Թուրքիայի ԱԳ նախարարը հայտարարեց, Բ. Դուռը շուտով «օրենքին համապատասխան» նախագիծ կներկայացնի խորհրդարան: «Կասկածից վեր է,– ավելացնում է դեսպանը, -որ թուրքական կառավարությունը միայն ճնշումների տակ է զբաղվում հայկական բարենորոգումներով...»[90]:

Սաղոնովը Պետերբուրգում Ավստրո-Հունգարիայի դեսպան Թունին ասաց, թե աննպաստ լուրեր է ստացել Հայաստանից, որտեղ ըստ ռուսական հյուպատոսների հաղորդումների իշխանությունները զենք են բաժանում մահմեդական բնակչությանը, թե Ռուսաստանը ոչ մի դեպքում չի հանդուրժի հայկական կոտորածների կրկնություն: Նախարարը թուրքական դեսպանի ուշադրությունը հրավիրեց այն լուրջ հետևանքների վրա, որոնք կառաջանան հայերի դեմ ոտնձգություններից: Հատկանշական է, գրում է Ավստրիայի դեսպանը, որ վերջին ժամանակները Պետերբուրգում «բուռն հետաքրքրություն կա Հայաստանի նկատմամբ, մի կողմից՝ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու ակնհայտ դիտավորություն», մյուս կողմից՝ նաև առկա են «դեռևս հստակ չձևակերպված պլաններ»[91]:

Ռուսաստանը գործակալներ ուղարկեց Հայաստան իրավիճակը ուսումնասիրելու և համապատասխան առաջարկություններ ներկայացնելու, ավելի շուտ, միջամտելու պատրվակ ստեղծելու համար: Պալավիչինիի կարծիքով, չնայած հայերի հանդեպ գործադրվող բռնություններին, հայ-թուրքական հարաբերությունները ընդգծված սուր բնույթ չունեին: Տրապիզոնի վալին իր շքախմբով այցելել էր տեղի հայ առաջնորդին և շնորհակալություն հայտնել Բալկանյան պատերազմներում «Հայերի քաջ վարքի» համար: Տեղական թերթերը ևս գովասանքներ էին հղում հայերի հասցեին: Սակայն հայկական շրջաններում բարենորոգումների պահանջը շարունակում էր տիրապետող մնալ: Հայերը հասկանում էին, որ թուրքական սիրաշահումներն անցողիկ էին և հետապնդում էին միայն մի խնդիր՝ չեզոքացնել բարենորոգումներ մտցնելու շուրջը ծավալված պայքարը:

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա դեռ 1912թ. մայիսի 24–ին Պետերբուրգը Բեռլինի պայմանագիրը ստորագրած կառավարություններին առաջարկել էր աչքի առաջ ունենալ հայկական բարենորոգումների խնդիրը: Ֆրանսիան և Անգլիան դրան դեմ չէին և Կ. Պոլսի իրենց դեսպաններին հանձնարարեցին մասնակցել բարենորոգումների ծրագրի նախագծի մշակմանը: Թուրքիան նկատի ունենալով իրավիճակը, չընդդիմացավ: Դա իթիլաֆի կառավարությունն էր, իսկ երբ պետական հեղաշրջման հետևանքով իշխանության վերադարձան երիտթուրքերը Կ. Պոլսի դիրքը կոշտացավ, ինչն Ազգային պատվիրակությունից պահանջեց տևական ծանր աշխատանք եվրոպական մայրաքաղաքներում: Այդ նույնպես խթանում էր արևտահայերի հույսերը՝ թե այս անգամ բարենորոգումները գլուխ են գալու: Ավստրո-Հունգարական հյուպատոսը

88 Ն. տ., էջ 38-39:
89 Ն. տ., էջ 80:
90 Wien HHSTA PA XII 462, Konstantinopel, 31 Dezember 1912.
91 Wien HHSTA PA XII 462, Petersburg, 11 Jnner 1915.

1913թ. հունվարի 30-ին Էրզրումից գրում է. «Անատոլիայում բարենորոգումների հարցը, անշուշտ, բույն է դրել հայերի գլուխներում... Բոլորի ասածն այն է, որ իրենց կյանքի և ունեցվածքի անվտանգության համար երաշխիք ապահովվի... պահանջում են ամբողջ հայկական մարզը եվրոպական վերահսկողության տակ դնել»[92]:

1913թ. մարտի 22-ին Սազոնովը Բեռլինի ռուսական դեսպանին հանձնարարեց՝ առաջարկել գերմանական կառավարությանը միանալու դիմումին, որ տերություններն ուղարկելու էին Բ. Դռանը: Դա այն օրերին էր, երբ պարտված Թուրքիան Լոնդոնում հարկադրված էր ստորագրել խաղաղության նախնական պայմանագիր, որով բուլղարա-թուրքական սահմանն անցնելու էր Ցենոս–Միդիայի միջով: Իսկ հայերը Կ. Պոլսում տոնում էին հայ գրերի գյուտի 1500-ամյակը: Այդպես, թուրքերը սգի, հայերը տոնակատարության մեջ էին:

1913թ. մայիսի 14-ին Բ. Դուռը քննարկելով Լոնդոնի համաժողովում թուրքական պատվիրակության զեկույցը, որոշեց աջակցել Փոքր Ասիայում երկաթուղիների կառուցմանը և բարենորոգումների անցկացմանը: Մեկ օր անց ստորագրված անգլո-թուրքական համաձայնագրով Անգլիան պարտավորվում էր 30 միլ. ռուբլի տրամադրել Սիրիայում և Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու համար[93]: Նաև ավարտվեց Գերմանա-անգլիական բանակցությունների Օսմանյան կայսրությունն ազդեցության գոտիների բաժանելու վերաբերյալ, որով Փոքր Ասիան հայտարարվում էր գերմանական և ռուսական ազդեցության գոտի: ՀԾԴ դիմումը Լոնդոնի խորհրդաժողովին՝ հայկական վիլայեթներին ինքնավարություն տալու նպատակով Հայաստանի կառավարման մանդատը հանձնել մեծ տերություններից մեկին՝ նկատի էր առնվում Ռուսաստանը, մերժվեց, Անգլիան ճնշում գործադրեց Բ. Դռան վրա վերջ տալու հակահայկական քաղաքականությանը: «Դրոշակը» արշավ սկսեց երիտթուրքերի դեմ: Թերթն իթիհադի վարած քաղաքականությանն «ավելի ստոր» էր համարում, քան Կարմիր սուլթանինը: «Օրակարգում դրված է հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը,- գրում է թերթը: -Կամ նա այսօր ի վիճակի կլինի իր գոյությունն ապահովել իրական երաշխիքներով, կամ իբրև քավության նոխազ կործանվելու է Թուրքիայի ավերակների տակ»: Նոր քաղաքականության համար նախապայման էր համարվում «ինքնախաբեությունից» հրաժարվելը[94]: ՀԾԴ և ռամկավարները հեռագրեցին Բ. Դռան, թե նրա վարած քաղաքականությունը հանգեցնելու է հայերի ջարդերի: Հայկական հարցի լուծման համար քաղաքական ուժերի ջանքերը համակարգելու համար 1913թ. մայիսի սկզբներին Ազգային ժողովն ընտրեց Ազգային դիվան Գ. Նորատունկյանի ղեկավարությամբ[95]:

Երիտթուրքերը մի կողմից բանակցում էին հայերի հետ բարենորոգումներ անցկացնելու շուրջ, իսկ մյուս կողմից ուժեղացնում էին ճնշումը: 1913թ. մայիսին արևելյան նահանգներ ուղարկվեց Ա. Բաքիրը: Երիտթուրքերի կենտկոմը որոշում կայացրեց՝ մերժել բարենորոգումների իրականացման վրա եվրոպական վերահսկողության անհրաժեշտության մասին հայերի առաջարկը: Մի կողմից փորձ էր արվում բարենորոգումներն ամբողջությամբ հանգեցնել ազգաբնակչության անվտանգությունն ապահովելուն միտված միջոցառումներին, իսկ մյուս կողմից՝ քրդերին գրգռում էին հայերի դեմ: Պաշտոնական բնույթ ստացան հայ բնակչության ֆիզիկական բնաջնջման սպառնալիքները: Հայ գործիչներին ասվեց, թե «հեղափոխական թեկուզ աննշան գործողությունը հայերի համար ունենալու է անկանխատեսելի հետևանքներ»: Սակայն Թալեաթի ու այլոց համար բոլորովին անսպասելի 1913-ի մայիսին Հայկական հարցը քննարկեց անգլիական խորհրդարանը: Լոնդոնին անհանգստացնում էին Ռուսաստանի հավակնությունները Արևմտյան Հայաստանի հանդեպ: Անգլիան Թուրքիայից պահանջում էր բարենորոգումներ անցկացնել ռուսական հավակնությունները ի չիք դարձնելու համար: Նույն օրերին Ֆ. Նուբարին ընդունեց Անգլիայի թագավոր Գեորգ 5-րդը և հուսադրող խոստումներ տվեց: Մ. Շեքե-

92 Wien HHSTA PA XII 462, Trapezunt, 30 Jnner 1913.
93 «Մշակ», 08.05.1913:
94 Գանգրունի Հ., նշվ. աշխ., հ. 2, էջ 332:
95 «Մշակ», 30.05.1913:

թը հայտարարեց, թե պատրաստվում է նախագիծ, որը պարունակելու է «լայն ինքնավարություն» և մտադրություն կա Հայաստանի գլխավոր նահանգապետ առաջարկել լորդ Մինչերին, լորդ Քերզոնին կամ Միլներին: Սակայն քիչ անց այդ պաշտոնն առաջարկվեց Հադին: Միաժամանակ Անատոլիա էին ուղարկվում հոջաներ և մոլլաներ հակահայկական քարոզչությունն ուժեղացնելու համար: Պատրիարքը գրեց Մեծ վեզիրին. «...Վանանդն ահազանում է և սպանությունները, բռնությունները, առևանգումները և թալանը, առանց չափազանցության, կրում են զանգվածային ջարդերի բնույթ»[96]: Կես ամսում (1913թ. ապրիլ-մայիս) կատարվել էր 21 հանցագործություն՝ 6 կողոպուտ, 9 սպանություն և այլն:

Պատրիարքը նաև գրում է, որ բռնությունների պատճառով Դաղդեյ գյուղի բնակիչները ճողոպրել են Բիթլիս, Երզնկայի սանջակի հայերը հեռանում են Ամերիկա: Միայն Հարոն գյուղում սպանվել էր 54 հայ, Վանա Թիմար գյուղում ութ զինվոր բռնաբարել էին հայ հղի մի կնոջ[97]: Նա եզրահանգում էր, թե հայերի ոչնչացման փաստերը պատահական երևույթներ չէին, այլ արտահայտություն հայ բնակչության հանդեպ պետական ահաբեկչության: «...Հայ դժբախտ բնակչությունը,- գրում է Արշարունին,- որին սպառնում է ջարդը, միաժամանակ, ենթական է չինովնիկների անտանելի ճնշումներին: Մարդիկ ընկճված են: Հողագործը վախենում է հողը մշակելու համար գյուղից դուրս գալ... շատ հայեր արտագաղթից բացի այլ ելք չգտնելով խմբերով պանդխտում են, ինչպես այդ տեղի էր ունենում նախկին վարչակարգի ժամանակ»: Նա եղած փաստերի հիման վրա հանգում է հետևյալ եզրակացության. «...Հայերն այլևս իրավունք չունեն բնակվելու Օսմանյան կայսրությունում», հայերը վերածվել են անհետացող ազգի, քանի որ «եղած իրավիճակը հանգեցնելու է հայ բնակչության ոչնչացման»: Հունիսի 2-ին պատրիարքը հուշագիր հանձնեց նաև Հիրսին. «Հալեպից մինչև Վանա լճի ափերը հայ ժողովուրդն ապրում է մշտական սարսափի մեջ... Եթե զանգվածային ջարդեր տեղի չեն ունեցել, ապա շնորհիվ այն բանի, որ այդ ահավոր հանցագործությունների զոհերն իրենք են հրաժարվել անգամ դիմելու արդարադատությանը, վախենալով, որ իրենց կմեղադրեն սադրանքի մեջ»[98]: Միաժամանակ փորձեր էին արվում համախմբելու հպատակ ժողովուրդներին թուրքական վայրագությունների դեմ:

ՀԵԿ համաձայնագիր ստորագրեց արաբների հետ վիլայեթներում ապակենտրոնացման սկզբունք մտցնելու վերաբերյալ: Սակայն այդ քայլն ավելի ամբողջական նպատակադրումներ ուներ:

Երբ Պետերբուրգն առաջարկեց մեծ տերությունների կառավարություններին Կ. Պոլսի դեսպաններին հանձնարարել մշակելու հայկական նահանգներում բարենորոգումների ծրագրի նախագիծ, վերջինները համաձայնվեցին պայմանով, որ պահպանվի թուրքիայի տարածքային ամբողջականությունը, հարգվի սուլթանի սուվերեն իրավունքները, և քննարկումները ապահովվի Բ. Դռան ներկայացուցչի մասնակցությունը: Բ. Դուռը Պետերբուրգի առաջարկությունը գտավ վտանգավոր և գործողությունների դիմեց թույլ չտալու, որ Հայկական հարցում ձևավորվի մեծ տերությունների միասնական ճակատ: Այդ նպատակով տերություններին տրամադրում էր տարբեր առանձնաշնորհումներ, նրանց ներքաշում կայսրության կառավարման համակարգի բարենորոգումների մեջ: Ֆրանսիային առաջարկվեց մասնակցելու կայսրության ֆինանսների, փոստի և հեռագրի վերակառուցմանը, Իտալիային՝ ժանդարմերիայի գործունեության կարգավորմանը: Սակայն ամենաեռանդունը Գերմանիան էր, ինչն անհանգստացնում էր Գրեյին, որը Սազոնովին առաջարկեց դիմելու վճռական քայլերի: Իսկ Վանգենհայմը առաջարկեց հանդիպակած պլան, համաձայն որի Ավստրո-Հունգարիան պետք է իրականացներ Թուրքիայի քաղաքացիական կառավարման, Ֆրանսիան՝ ֆինանսների, Անգլիան՝ մաքսային համակարգի ու նավատորմի, Գերմանիան՝ բանակի բարենորոգումները: Ռուսաստանը դուրս էր թողնվում բարենորոգիչների ցուցակից: Այս առաջարկներն արժանացան Բ. Դռան և իթիհադի հավանությանը: Թերևս մի բանի համար, որ բացառում էին ռուսական միջամտությունը:

96 «Геноцид армян...», N 125, с. 260.
97 Ն. տ. էջ 280:
98 Ն. տ.:

Իրավիճակը հարկադրում էր թուրքերին սիրաշահելու հայերին: «Azm» թերթը ապացուցում էր հայերի և թուրքերի համակեցության կարևորությունը: «Կամ պետք է միասին ապրենք, կամ միասին կործանվենք: Համոզված ենք, որ եթե կորցնենք հայերի համակրանքը, վստահությունը և աշխատասիրությունը, կկորցնենք նաև Օսմանյան կայսրությունը»: Մյուս կողմից «եթե օսմանիզմն ու իսլամիզմը տիրապետող չլինեն Անատոլիայի արևելյան վիլայեթներում, ապա շուտով հայությունը, հայ ազգությունը հավետ կանհետանա «Հյուսիսային երկրում»: Այս անգամ, շարունակում է թերթը, տրված խոստումները մեր հայերի համար չեն, հայերին «խաբելու» համար չեն, այլ մեր գոյության համար են... Եթե հայերն ու թուրքերը ի սրտե մերձենան, միասնաբար կգործեն որպես օսմանական և իսլամական մեծ տերության բնակիչներ»[99]:

1913թ. մայիսի 12-ին պատրիարք Արշարունին հուշագիր ներկայացրեց մեծ վեզիր Շևքեթին: Նա Բ. Դռան ուշադրությունը հրավիրեց հայերի հանդեպ մահմեդականների ու իշխանությունների գրգռված վերաբերմունքի վրա՝ մահմեդականները հայերին են պատասխանատու համարում պատերազմում թուրքական զորքի անհաջողությունների համար:

Նույն օրերին Հիրսը բողոք ներկայացրեց Դիարբեքիրում հայերի հալածանքների ու կոտորածների վերաբերյալ[100]: Ապրիլի 29-ին Բ. Դռանը նոր հուշագիր ներկայացրեց պատրիարքը՝ Ադանայի և Վանի վիլայեթներում հայերին զինաթափել և մահմեդականներին զինել ու նաև այն կապակցությամբ, որ Վանում ցուցադրաբար ազատ էին արձակվել մի հայի սպանած երկու մահմեդականներ[101]:

1913-ի հունիսին Ռուսաստանը, Անգլիան ու Ֆրանսիան համաձայնություն եկան բարենորոգումներին այնպիսի բովանդակություն հաղորդել, որ դրանք մոտենան ինքնավարության: Օրինակ, նման միտում ուներ այն կետը, որ գլխավոր նահանգապետին իրավունք էր վերապահվում փոխելու բոլոր թուրք պաշտոնատարներին, այդ թվում նաև վալիներին: Գերմանիան դեմ էր այդ կողմնորոշմանը, ինչը և ծնեց պահանջ մի գլխավոր նահանգապետի փոխարեն ունենալու երկու գլխավոր հրահանգիչ: Նաև մերժվում էր այդ պաշտոնատարների քրիստոնյա լինելու և վալիներին աշխատանքից ազատելու իրավունքը, հաստատվում էր, որ նահանգային օրենսդիր մարմնում թուրքերի և հայերի ներկայացուցիչների թիվը որոշվելու էր ըստ այդ նահանգներում երկու ազգությանը պատկանող բնակչության թվի: Պահանջվում էին նաև փոփոխություններ հարկերից ստացված միջոցների ծախսման, զինվորական ծառայության և մի քանի ուրիշ նախատեսումներում: Հարկ է նկատի ունենալ, որ սահմանադրության հռչակումից հետո հայերը լավատեսությամբ էին առաջ քաշում վարչական ինքնավարության հարցը, հավատալով երիտթուրքերի տված խոստումներին: Սակայն իշխանության գալուց հետո իթիհադը «մոռացավ» տված խոստումները և որևէ քայլ չարեց հայերի ծանր վիճակը ինչ-որ չափով բարվոքելու: Հենց այդ էլ վերջիններին հարկադրեց նորից ապավինելու տերությունների օգնությանը: Սակայն, ի տարբերություն XIX դարավերջի՝ «հավատակիցներին օգնելու» աղաչանքներին, աշխատում էին լոկ շահագրգռել նրանց, գործելու հօգուտ իրենց վարչակարգի: Այս կողմնորոշումն էլ հայերի հայացքը շուռ տվեց Արևելք՝ Ռուսաստան, որ ոչ միայն ամենամեծ շահերն ուներ տարածաշրջանում, այլև հակված էր այդ շահերն առաջ տանել՝ հենվելով հայերի վրա: Մանավանդ, որ հայկական շրջաններում ավելի ու ավելի որոշակի էր դառնում ձգտումը՝ Հայաստանի ինքնավարություն Ռուսաստանի կազմում: Ընդ որում՝ խոսքը գնում էր ոչ միայն հայկական վեց նահանգների, այլև Ադանայի (Կիլիկիա) և Տրապիզոնի նահանգների մասին: Ի դեպ, Կիլիկիայի հարցում տաք բանավեճ էր գնում Պ. Միլյուկովի և Ա. Ջիվելեգովի միջև: Առաջինը վճռականորեն դեմ էր Կիլիկիան «Մեծ Հայաստանի» մեջ մտցնելուն[102]:

Դիվանագիտական քննարկումների աշխուժացումը, սակայն, անզոր էր մեղմելու զանգվածային նոր ջարդերի վտանգը: Իսկ արևմտահայերի վիճակը գնալով օրհասական էր դառնում:

Մայիսի 15-ին Պալավիչինն զգուշացնում է. «Պետք է վախենալ Հայաստանում քրիստոնյանե-

99 «Մշակ», 01.06.1913:
100 «Геноцид армян...», с 256.
101 АВИР, ф. Политарив, д. 3471.
102 «Армянский вестник», 1916, N 1.

րի ջարդերից»: Շևքեթ փաշան հաստատեց այդ մտավախությունը: «Իրավիճակը Հայաստանում լավ չէ և ինչ-որ բան պետք է արվի»: Նա մտադիր էր ժանդարմական լրացուցիչ ուժեր ուղարկել հայկական վիլայեթները, որպեսզի հնարավոր լիներ պաշտպանելու բնակչության կյանքը և ունեցվածքը: «Իսկ հենց որ խաղաղություն հաստատվի,– հայտարարեց Մեծ վեզիրը,– կառավարությունը կձեռնարկի արմատական բարեփոխումներ Անատոլիայում»[103]: Հայերն ազգանի մեջ էին: 1913թ. մայիսին Վանի վիլայեթի քրդերն ըմբոստացան իշխանությունների դեմ: Բայց որովհետև հայերը դրան չմասնակցնցին, քրդերը հարձակվեցին նրանց վրա: Քրդերի դեմ ուղարկվեց 3 000 հոգանոց զորամաս, սակայն խռովությունը ճնշել չհաջողվեց: Հարցը լուծեցին Վանի հայկական կազմակերպությունները, որոնց հաջողվեց քրդերին դուրս քշել քաղաքից[104]:

Պետությունների միջամտությունը կանխելու համար Բ. Դուռը հրապարակում է հայկական վիլայեթներում բարենորոգումների իր նախագիծը: Եվ չնայած հայերին հնարավորություն չտվեց ծանոթանալու դրան, պահանջեց, որ Ազգային ժողովը հայտնի իր կարծիքը նախագծի մասին: Այդ նախագծով առաջարկվող բարենորոգումների բովանդակությունն այնքան ձևական էր, որ անգամ Մ. Օրմանյանը դեմ դուրս եկավ և պահանջեց տեղերում դատական, ժանդարմական և ոստիկանական պաշտոններում նշանակել օտարերկրացիների, թույլատրել թուրքերենի հետ հայերենի գործածությունը դատարաններում, լուծել հողային հարցը[105]: Ռեշիդը «Իգդամ» թերթում հայտարարություն հրապարակեց, թե «Հայաստանի ինքնավարությունն անիրականալի զառանցանք է»: Նա հայերին առաջարկեց բավարարվել թուրքական նախագծով, համաձայնել հայկական նահանգների փոքրացման հետ, իսկ տերություններին սպառնաց՝ Թուրքիան չի ճանաչելու Լոնդոնի խորհրդաժողովի որոշումները և այլն[106]: Խնդիրը ոչ միայն բարդանում, այլև տանում էր դեպի Բ. Դռան հետ առճակատման: Եվ դա նույն այն պատճառով, որ թուրքական կառավարությունը ձգտում էր բարենորոգումների գործն իր ձեռքում պահել, որքան հնարավոր էր տերություններին այդ խնդրից մեկուսացնել, մասնավորապես չեզոքացնել Ռուսաստանին, որպեսզի կարողանար անել այն, ինչ արեց Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի և Մայիսյան ծրագրի հետ, այսինքն՝ տապալել բարենորոգումները: Ահա թե ինչու Ազգային ժողովը խիստ, որոշ առումով նաև անզիջում կեցվածք որդեգրեց Բ. Դռան մշակած նախագծի ու դրա քննարկման կարգի հանդեպ: Ժողովի որոշման մեջ ասված էր. «Թուրք կառավարության խմբագրած և հրատարակած բարենորոգումների ծրագիրը ոչ 1880 և ոչ 1895-ի Մայիսեան ծրագրի բնույթն ու խորհուրդն ունի, նա չի համապատասխաներ երբեք ներկայ ժամանակի ոգվոյն և պահանջներուն...»[107]:

Ստ. Կարայանի կարծիքով բարենորոգումների ծրագիրը պետք է հանդիսանար մի «համակարգ, որ նպատակ ունենար հիմնավորել հայերու քաղաքացիական իրավունքները: Այն հիմը պիտի ըլլայ մեր ազգային գոյության պահպանման, ապահովուած կատարեալ երաշխիքներով»[108]: Ժողովը նորից հարց բարձրացրեց տերությունների առջև կյանքի կոչելու այնպիսի բարենորոգումներ, որպեսզի Հայաստանն ինքնավարություն ստանար և այն երաշխավորված լիներ Եվրոպայի կողմից[109]: Խնդրով հետևողականորեն զբաղվելու համար ստեղծվեց «Անվտանգության հանձնաժողով» պատրիարք Արշարունու նախագահությամբ: Հանձնաժողովի անդամներ ընտրվեցին Ե. Դուրյանը, Գր. Պալակյանը, Գ. Կալեմքարյանը, Ստ. Կարայանը, Ոստ. Մարտիկյանը, Վ. Փավլազյանը, պրոֆ. Տեր-Հակոբյանը: Թուրքերին չգազազեցնելու համար նպատակահարմար համարվեց գործել կաթողիկոսի միջոցով: Միջկուսակցական վեճերին վերջ դնելու համար ստեղծվեց մի ուրիշ հանձնաժողով (Գ. Զոհրապ, Հ. Շահրիկյան, Վ. Թեքեյան, Հ. Գալֆայան և

103 Ն. տ., Konstantinopel, 13 Mail 1913:
104 Ն. տ., 15 Mail 1913:
105 АВПР, «Политархив», д. 1044, л. 320.
106 «Закавказская речь», 27.11.1914.
107 Լազեան Գ. Նշվ. աշխ., էջ 159-160:
108 Ն.տ.:
109 Սերոբեան Մ. Մեր պայքարը հայ ազատագրական ուղիներով, Կահիրե, 1948, էջ 223:

Տեր-Մովսիսյան): Հոկտեմբերի 11-ին հայ գրերի գյուտի 1500-ամյակի կապակցությամբ Ազգային ժողովը հայտարարեց, թե բացի կրոնական խնդիրներից բոլոր հայերն այլևս օգտվելու են Ազգային սահմանադրությունից: Սկսվեց աշխատանքներ բարենորոգումների ծրագրի նախագիծ ստեղծելու և արևմտահայության թիվը ճշտելու ուղղությամբ: Պատրիարքարանի նախագծի հեղինակներն էին Գ. Զոհրապը, Ե. Դարյանը, Է. Ակնունին, Վ. Մալեզյանը: (Այդ ընթացքում էր, որ բարենորոգումների նախագիծ մշակեց նաև Պ. Նուբարը Վիկտոր Բերարի մասնակցությամբ:) Հայերը պնդում էին, որ եթե իրենց մշակած նախագիծը Բ. Դուռը չընդունի ու չգործադրի, հարկադրված կլինեն դիմելու ռուսների օգնությանը: Նրանք միաժամանակ ասում էին, թե «քանի դեռ գործը չի հասել բնաջնջման, իրենք կգերադասեն, որ հայ ազգը զարգանա թուրքական կայսրության կազմում մեծ տերությունների ընձեռած երաշխիքներով, այլ ոչ թե լինի Ռուսաստանից կախյալ վիճակում, որովհետև ուղղափառությունը հայ ժողովրդին կյանելու համար ավելի մեծ վտանգ է, քան իսլամը»[110]:

Պատրիարքարանի նախագծի մշակման համար հիմք ընդունվեցին 1880թ. կանոնագիրը, 1895-ի Մայիսյան ծրագիրը, Արևելյան Ռումելիի և Լիբանանի ինքնավարության կանոնները, ինչպես նաև Բ. Դռան մշակած ծրագիրը, վիլայեթների մասին օրենքը և տերություններին տարբեր ժամանակներում ներկայացրած հուշագրերը: Բոլոր նախագծերը կենտրոնացվում են Ազգային բյուրոյում վերջնական տարբերակ ստեղծելու համար: Քննարկումների արդյունքով որպես մինիմում տարբերակ ընդունվեց Փարիզի, իսկ որպես մաքսիմում՝ պատրարքարանի ծրագիրը, որն, ի տարբերություն Նուբարի նախագծի, զլխավոր կոմիսար առաջադրում էր ոչ թուրքի և չէր նախատեսում եվրոպական հսկիչ մարմնի ստեղծում: Վ. Փափազյանը 1913 փետրվարին մեկնում է Փարիզ հանդիպելու Նուբարին և երկու նախագծերի հիմքի վրա մշակելու նորը: Արդյունքների մասին 1913թ. ապրիլի 21-ին զեկուցում է Ազգային ժողովին: Հաստատվում է միասնական նախագիծ, որը հանձնվում է ռուսական դեսպանությանը: Սակայն պարզվում է, որ ծրագրի նախագիծ էր մշակում նաև Կ. Պոլսի ռուսական դեսպանատունը: Չնայած դրան, Բյուրոն գտավ, որ հայերն առաջադրելու են պատրիարքարանի նախագիծը, որն արժանացել էր նաև Հիրսի հավանությանը: Միաժամանակ խնդիր էր առաջադրվում, որ ա) հայերը մեկ ընդհանուր ծրագիր պետք է առաջ քաշեն, բ) այդ ծրագիրը չպետք է հակասի ռուսական շահերին, որովհետև «ռուս կառավարության աջակցությունն ամենից կարևորն է Հայ դատի հաջողության համար», գ) ծրագիրը պետք է առաջ քաշվի կաթողիկոսի անունից, որովհետև «նա է ճանաչվում Հայոց դատի գերագույն ղեկավարը»[111]: Ս. Զավարյանի, Հ. Զավրիևի, Գ. Բաստրմաջյանի և Վ. Փափազյանի ջանքերով կազմվում է արևմտահայության վիճակագրական տեղեկագիր, հիմք ունենալով նախկին վիճակագրությունների, ինչպես նաև եվրոպական ճանապարհորդների և գիտնականների հրապարակած դեմոգրաֆիկ նյութերը: Բ. Դուռն խուսափեց ընկալեց Ազգային ժողովի ձեռնարկումների հեռահար նպատակը և պատրիարքից պահանջեց հանձնարարել Պ. Նուբարին բարենորոգումների խնդրով բանակցություններ վարել ոչ թե եվրոպական տերությունների, այլ օսմանյան կառավարության հետ:

Պատրիարքարանի նախագծի վրա աշխատանքների ընթացքում հանձնաժողովի անդամները հանդիպումներ ունեցան Կ. Պոլսում պաշտոնավարող օտար դիվանագետների հետ: Ա. Մանդելշտամը Ռ. Մարտիկյանին ասաց, թե տվյալ պահին Ռուսաստանը Հայկական հարցը բարձրացնել չի կարող, որովհետև հույս չունի, թե կստանա Անգլիայի և Ֆրանսիայի աջակցությունը: Պրոֆ. Տեր-Հակոբյանին ընդունեց Անգլիայի դեսպանը և տվեց մի ցինիկ պատասխան. «Ցավոք, անգլիական նավերը չեն կարող լողալ դեպի Վան ու Մուշ»[112]: Այդ պատասխանի անպարկեշտությունն ավելի ակնհայտ կդառնա, եթե նկատի առնվի Ս. Սազոնովի հետևյալ խոսքերը. «Հայկական հարցի լուծման ամենագործոն միջոցը ռուսական զորքերի հզորացումն է Փոքր Ասիայում,

110 Wien HHSTA PA XII 462, Smyrna, 14 August, 1913.
111 ՀՀ ՊԿԱ. ֆ. 222, ց. 1, գ. 1:
112 ՀՀ ՊԿԱ. ֆ. 57, ց. 2, գ. 685:

սակայն դրա հնարավորությունն իսկ անհանգստացնում է Ֆրանսիայի և Անգլիայի կառավարություններին»[113]:

Պատրիարքարանի մշակած նախագծով Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Սեբաստիայի, Խարբերդի և Դիրբեքիրի վիլայեթներից կազմվելու էր գեներալ-նահանգապետություն, որի նահանգապետը լինելու էր եվրոպացի՝ նրա թեկնածությունն առաջարկվելու էր պետությունների և նշանակվելու էր սուլթանի կողմից: Վարչական սահմանները որոշելու հիմքում դրվելու էր ազգային սկզբունքը: Բարձրագույն մարմնի անդամների կեսը լինելու էին քրիստոնյաներ: Կոմիսարին (նահանգապետին) կից ստեղծվելու էր վարչական խորհուրդ, որում մեծ թիվ էին կազմելու արտասահմանցիները: Ոստիկանության և ժանդարմերիայի կազմում ընդգրկվելու էին նաև քրիստոնյաներ, իսկ հրամկազմը համալրվելու էր օտարերկրացիներով: Զորակոչվածները բանակային ծառայությունն անցկացնելու էին նահանգապետության տարածքում: Հայերից զավթված հողերը վերադարձվելու էին, դադարեցվելու էր մուհաջիրների բնակեցումը հայկական նահանգներում, ճանաչվելու էր հայերի կրոնական, ազգային, կրթական ու վարչական իրավունքները: Բարենորոգումների անցկացումը վերահսկելու էին տերությունները, իսկ գործադրման փաստացի հսկողությունը՝ Ռուսաստանը: Այս նախագիծը ևս առաջադրում էր ինքնավարության պահանջ, բայց ոչ ազգային, ոչ հայկական, ինչպես այն որակավորում էին ոմանք, այլ լոկ վարչական: Նահանգների ազգաբնակչության մեծ մասը հայեր չէին, հայկական չէր նաև կառավարման համակարգը: Ուստա՜ հայրենասիրության վրա հենված նախագիծը ոտքերից ու ձեռներից զուրկ հաշմանդամ էր առանց քաղաքական, ռազմական և իրավական հիմքերի: «Ես սկզբեն,– գրում է Գ. Զոհրապը,– մեր պատրաստած ծրագրին կուսակից չէի... ես ատենին ընդդիմացայ՝ չափազանց յառաջացեալ պահանջներուն դեմ յարուցվելիք դժուարութիւնները ճաշակելով, այս ատեն ալ կուսակցութիւններու հայրենասիրական պահանջներու մեջ զիրար գերազանցելու տենչն իր դերը խաղաց: Իսկ խելքը գլուխը եղողը կընդուներ, որ ասիկայ ավելի մշտական հայկական իրձ մը կը ներկայացներ, քան թե իրապես ու գործնապես ձեռք բերելիք բան»[114]:

Կաթողիկոսը մինչև ցարական կառավարության ցուցումների ստանալը Նուբարին որևէ հրահանգ չտվեց, չնայած վերջինս, առանց դրան էլ անցավ եռանդուն գործունեության: Բայց նաև անհամբեր սպասում էր ռուսական կառավարության դիրքորոշման վերաբերյալ կաթողիկոսի կարծիքին: Վորոնցով-Դաշկովի հետ հայերի բանակցությունների ընթացքում ձևակերպվեց հետևյալ կետը. «Պողոս փաշա Նուբարը նշանակված է կաթողիկոսի կողմից, հավանությամբ պատրիարքի և Ազգային ժողովի, որպեսզի աշխատի եվրոպական կառավարությունների մոտ 61-րդ հոդվածի իրագործման համար, հայաբնակ նահանգներում բարենորոգումներ մտցնելու վերաբերմամբ ռուսաց կառավարության նախաձեռնությամբ և նրա վերահսկողության տակ»: Կաթողիկոսի ներկայացուցչի պաշտոնում Նուբարի առաջին հայտարարության մեջ, որը տպվեց «The Times» թերթում, նշվում էր, թե ինքը հետապնդում է «ոչ բաժանումի, ոչ էլ անկախության, ոչ էլ քաղաքական ինքնավարության», այլ միայն Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով խոստացված բարենորոգությունների գործադրություն»[115]: Այդ դիրքորոշումը նա հաստատեց Փարիզում Գերմանիայի դեսպանի հետ զրույցի ժամանակ՝ թե հայերն անկախության չեն ձգտում, այլ պայքարում են իրենց կյանքի պայմանները բարվոքելու համար: Հայերը տանջվում են թուրքական կամայականություններից ու բարբարոսություններից, կոտորածների վտանգը դարձել է մշտական, ինչը հեշտությամբ կարող է պատրվակ դառնալ ռուսական միջամտության համար: Սակայն Հայաստանի լավագույն ուղեղները «լսել անգամ չեն ուզում ռուսների հովանավորության կամ գերիշխանության մասին և ցանկանում են մնալ Թուրքիայի տիրապետության տակ, բայց օգտվեն մեծ տերությունների հովանավորությունից և վերջինները երաշխավորեն իրենց կյանքի և ունեցվածքի անվտանգությունը»[116]: Մեկ տարի անց, 1914թ. փետրվարին,

113 Օտարերկրացիները Հայկական հարցի և հայոց ցեղասպանության մասին, Երևան, 1997, էջ 30:
114 «Նայիրի», 1975, թիվ 46-50:
115 «The Times», 23.05.1913:
116 FO 371/1773/19706.

երբ բարենորոգումների ծրագիրն արդեն հաստատված էր, նա նորից գրեց. «Հայկական նահանգների բնակչությունը լոկ խնդրում է մնալ օսմանյան հպատակ՝ պայմանով, որ Բեռլինի դաշնագրով համաձայնեցված բարենորոգումներն իրականացվեն», որոնց անկեղծ ու անվերապահ գործադրումից հետո Հայկական հարցը կդադարի գոյություն ունենալուց: Այս կարծիքի կողմնակիցների թիվը փոքր չէր: Նրանց շարքում էին Ա. Զոպանյանը, Բալկանյան կոմիտեն: Վերջինս Գրեյին հորդորում էր, թե հայերը չեն պահանջում Հայաստանի «բացարձակ անկախություն կամ խզում Թուրքական կայսրությունից»: Նրանց ցանկացածը լավ կառավարումն է: «The Times»-ն այդ միտքը հաստատելու համար վկայակոչում է հայերի խիզախությունները Բալկանյան պատերազմներում[117]: Նույն կարծիքին էր նաև վերակազմված անգլո–հայկական կոմիտեն, որը գտնում էր, թե հայերն ազատագրական և աշխարհագրական պատճառներով անկախություն ունենալ չեն կարող, բայց նրանք պետք է ունենան առնվազն կյանքի անվտանգություն և մշակութային ինքնավարություն: Հրավիրվեց հայերի շահերը պաշտպանող կոմիտեների ներկայացուցիչների միջազգային ժողով: Այն տեղի ունեցավ 1913թ. ապրիլին համայնքների պալատի շենքում, որի տեղեկագիրը հանձնվեց Գրեյին: Ժողովում ազգային պատվիրակությունը ներկայացնում էին Պ. Նուբարը և Հ. Մոստիչյանը: Ժողովը միաձայն որոշեց պայքարել, որպեսզի Հայկական հարցի լուծումը դառնա Բալկանյան պատերազմի արդյունքներով կնքվելիք պայմանագրի մաս: Նպատակահարմար համարվեց Արևելյան նահանգներում ունենալ եվրոպական ընդհանուր կուսակալ, որը պետք է առաջադրվեր մեծ պետությունների կողմից ու նշանակվեր սուլթանի իրադեով: Վարչական, ֆինանսական և դատական մարմինների վրա վերահսկելու էր այդ նպատակով ստեղծվելիք հատուկ հանձնաժողովը[118]:

Ժողովի մասնակիցների թվում էին Ջ. Բրայսը, Նոյել Բաքստոնը, Ցո. Լեփսիուսը, Լ. Ֆավթը: Ժողովը նաև որոշեց կոմիտեի մասնաճյուղեր կազմակերպել տարբեր երկրներում Հայկական հարցի շուրջ հասարակական կարծիք ձևավորելու և սեփական կառավարությունների վրա ազդելու համար՝ «... (միաժամանակ) պահպանելով Թուրքական կայսրության ամբողջականությունը... Տերությունները պետք է Հայկական հարցի լուծումը դարձնեն Թուրքիայի բարենորոգումների կարևոր բաղադրիչ»: Ժողովն աշխույժ հետաքրքրություն առաջացրեց Գերմանիայի քաղաքական շրջաններում: Լեփսիուսի 1913թ. մայիսի 10-ի հեռագրում տրված է մանրամասն հաշվետվություն այդ մասին: Նա ժողովի հիմնական խնդիրը ճևակերպեց հետևյալ կերպ՝ «գտնել Հայաստանի քաղաքական ապագայի ֆորմուլան»: Նշվեց, թե Նուբարի առաջարկած ծրագիրն արժանի է պաշտպանության, քանի որ այն ըստ էության «նույնն է, ինչը կազմվել էր տերությունների կողմից 1895թ. և որը Բ. Դուռն ընդունել էր»: Պ. Նուբարն ասաց, թե ընթացիկ պահն ամենաբարենպաստն է «բավարարելու հայ ժողովրդի չափավոր և սրտաբաց պահանջները»:

Համաժողովի որոշումներում, չնայած ոչ բացահայտ, բայց տեսանելի էր հակառուսական դիրքորոշումը: Արձանագրվեց, որ «Հայկական հարցով պետք է զբաղվեն բոլոր տերությունները», որ «Հայկական հարցի լուծումը պետք է դարձվի Թուրքիայի համընդհանուր բարենորոգման էական բաղկացուցիչ»: Նույնիսկ պահանջ առաջադրվեց ներկայացնելու «Հայկական նահանգի գլխավոր կոմիսարի թեկնածու, որը նշանակվելու էր սուլթանի և հաստատվելու տերությունների կողմից», այլ ոչ թե հակառակը, ինչպես առաջարկված էր Նուբարի ծրագրում: Վերջինս սկզբում տերություններին ներկայացրեց երկու ծրագիր՝ «Հայերի պահանջները» և «Հայկական բարենորոգումներն ու Թուրքիայի ամբողջականությունը» անուններով: Որոշ ժամանակ անց նա ներկայացրեց մի նոր ծրագիր ևս՝ նվիրված եվրոպական վերահսկողությանը, որը համարում էր «բարենորոգումների կենսունակության միակ երաշխիքը»: Այդ վերահսկողությունը լինելու էր ոչ միայն պարտադիր, այլև արդյունավետ: Դրա համար տերությունները պետք է ունենային միջնորդներ, որպեսզի բարենորոգումներն իրականացնելուն կոչված տեղական պաշտոնատարները գործն առաջ տանեին առանց քաշքշուկի և չենթափոխեին դրա էությունը: Հիմնականում պաշտպանելով Նուբարի առաջարկությունները, ժողովը գտավ, որ դրանք հարգում են «Թուրքական

117 FO 371/2116/56207.
118 «The Times», 23.05.1913.

կայսրության ամբողջականությունը» և բացի էական բնույթի բարենորոգումներից այլ բան չէին պահանջում տեսակետ, որին «հավանություն էր տալիս հայ ժողովրդի ստվար մեծամասնությունը»[119]: Անգլո-հայկական կոմիտեի նորընտիր նախագահ Է. Վիլսոնը գրեց, թե հայերը իսկապես ցանկանում են մնալ օսմանյան հպատակության տակ, եթե նրանց տրվի հանդուրժելի կառավարում: Իսկ Թուրքիայում իրական բարենորոգում հնարավոր է միայն եվրոպական վերահսկողության և Թուրքիային տնտեսական բավարար օգնություն ցույց տալու պայմաններում[120]:

Որ հայկական բարենորոգումներն անհնար էին առանց եվրոպական վերահսկողության, տիրապետող կարծիք էր: «The Times»-ը գրեց. «Ոչ մի բարենորոգում Թուրքիայում հաջողություն ունենալ չի կարող առանց եվրոպական վերահսկողության»: Կլեմանսոն ասաց. «Խոստացված, բայց չիրականացված բարենորոգումները, ինչպես այդ եղավ Մակեդոնիայում, հանգեցնելու են պատերազմի... պահանջվում է արդյունավետ վերահսկողություն»: Վիկտոր Բերարը հայտարարեց. «Արդյունավետ բարենորոգմանն արդյունավետ վերահսկողություն՝ այս ձևակերպումից դուրս օսմանյան բարենորոգումը չունի կյանք ապագա ոչ հայ ժողովրդի և ոչ էլ Ասիայում թուրքական սուվերենության համար»: «Թանը» գրեց. «Այսօր ավելորդություն կլինի խոսել բարենորոգումների մասին առանց դրանց վրա էական վերահսկողության»: Թուրքիայում ևս կային վերահսկողության կողմնակիցներ, նույնիսկ կառավարությունը խոսքով չէր ժխտում դրա անհրաժեշտությունը[121]: Սայիդ Հալիմը Պ. Նուբարին առաջարկեց նախարարի պաշտոն այդ վերահսկողությունն իրականացնելու համար: Նուբարը հրաժարվեց ձևական պատճառաբանությամբ, թե 30 տարի կտրված է եղել կայսրության կյանքից:

Ընդհանուր առմամբ Անտանտի պետությունները գտնում էին, որ պետք է ստեղծվեր հայկական նահանգ, որի գլխավոր տեսուչը նշանակվեր մեծ տերությունների կողմից: Երբ Գերմանիան հայտարարեց, թե ինքը «ոչ հնարավորություն և ոչ էլ ցանկություն ունի Թուրքիային հարկադրելու ընդունելու այն, ինչ նա կամավոր չի ընդունում», Հիրսը գրեց. «Բ. Դուտը երբեք կամավոր չի համաձայնվի բարենորոգումներ անցկացնել, և ոչ մի տերություն չի դիմելու հարկադրական միջոցների»[122]: Որ Ռուսաստանը բարենորոգումները որպես ծխածածկույթ էր օգտագործում Հայաստանը զավթելու համար, Թուրքական շրջաններում դառնում էր համընդհանուր կարծիք: Ռուսաստանի պահանջին Ջավիդը պատասխանեց՝ Թուրքիայի համար «Հայկական հարցն անկյունաքարային» է, և Ռուսաստանի պահանջը «խախտում է Թուրքիայի սուվերենությունը», իսկ Թալեաթն անհանգստացած հրավիրեց հայ երեսփոխաններին և խնդրեց «օգնել Թուրքիային վերջ դնելու Հայկական հարցին»:

Իթիհադը բարդ խաղի մեջ էր. մի կողմից խուսանավում էր, խաբում հասարակական կարծիքը, թե բարենորոգումներն անցկացնելու լուրջ մտադրություն ունի, մյուս կողմից՝ հետևողականորեն խուզում էր հայերի, առանց այդ էլ խղճուկ, քաղաքական իրավունքները, առաջ տանում նրանց արտամղելու քաղաքականությունը: «Երիտթուրքերը բոլոր միջոցներով ձգտում էին թաղել Հայկական հարցը», պատճառաբանելով, թե հայերին զիջելը «կառաջացնի նման պահանջ նաև արաբների կողմից»[123]:

Այդ ընթացքում Փարիզում գումարված արաբական համաժողովի պատվիրակությունը Ֆրանսիայի ԱԳ նախարար Բիշոնին տեղյակ պահեց, թե իրենց նպատակը «արաբական նահանգների համար Օսմանյան կայսրությունից բարենորոգումներ» կորզելն է[124]: Ջեմալը հայկական և արաբական մոտեցումների այդ համընկնելն անվանեց ռուս-ֆրանսիական դավադրություն Թուրքիան մասնատելու[125]:

119 Toybee A. J. The Western Question in Greecce and Turkey, Lomdon, 1922, Prefece, p. IX.
120 «The Times», 12.07.1913, 13.08.1913, 31.10.1913.
121 R 14080, Ab. 13238.
122 Реформы в Армении, стр. 77.
123 Ն. տ. էջ 102:
124 Ջեմալ փաշա նշվ. աշխ., էջ 81:
125 Ն. տ., էջ 32:

Երիտթուրքերի գնալով խստացող հակահայկական քաղաքականությունը հայերին ավելի ու ավելի էր մղում Ռուսաստանի գիրկը: Վորոնցով-Դաշկովը հայտարարեց, թե Ռուսաստանում հայկական հարց չի եղել և չկա: Այդ հարցը մենք՝ ռուսներս, ստեղծեցինք: «Հայերի շրջանում որևէ անջատողական տրամադրություն գոյություն չունի»: Հավանաբար այս խոսքերը կոչված էին նաև պարտամուրհակի դեր խաղալու: Իսկ Կ. Պոլսում Գերմանիայի ազդեցությունն օր օրի աճում էր: Բեռլինը լսել անգամ չէր ուզում, թե Թուրքիային առնչվող որևէ հարց հնարավոր էր լուծել շրջանցելով իրեն: Ցիմերմանը 1913թ. հունվարի 10-ին գրեց. «...Նկատի ունենալով մեր նշանակալից շահերը Ասիական Թուրքիայում մտադիր չենք միայն Անտանտին թողնելու հայերի բախտի հոգացողությունը: Ընդհակառակը, մենք և մեր դաշնակիցները նշանակություն ենք տալու, որպեսզի մասնակից լինենք հայերի վիճակի վերաբերյալ տերությունների միջև հնարավոր բանակցություններին»[126]: 1913թ. հունվարի 2-ին Վանգենհայմը գրեց կանցլեր Բեթման Հոլվեգին, թե ռուսական կառավարությունը Էջմիածնի կաթողիկոսի ուշադրությունն է հրավիրել այն բանին, որ աշխարհում տիրող կացությունը կարող է հարմար պահ ստեղծել հասնելու Թուրքիայում բնակվող հայերի վիճակը բարելավելուն միտված շարժման ծավալման համար: «Կ. Պոլսում այդ շարժումը ղեկավարում է Մ. Օրմանյանը»: Անգլիայի դեսպան Ֆիցմորիսը վերջինին ասաց, թե այդ շարժումը միանգամայն համապատասխանում է ժամանակի ոգուն և որ Անգլիան, հավանաբար կհարի բոլոր այն քայլերին, որոնք կձեռնարկի Ռուսաստանը[127]:

Բ. Դուտը համոզվեց հայկական բարենորոգումների անհրաժեշտության մեջ նույն պատճառով դրանք վերացնում էին միջամտելու պատրվակները և նպաստելու էին status que-ին: Տպավորություն ստեղծելու համար, թե արդեն ձեռնամուխ է եղել բարենորոգումների գործադրմանը, Բ. Դուտը Անգլիայից 15 մասնագետ խնդրեց գործը սկսելու համար[128]: Հասկանալի է, որ Բ. Դուտը դեմ էր եվրոպական վերահսկողությանը: Ռուսաստանը ձգտում էր զավթել Հայաստանը, սակայն Պետերբուրգը քաջ գիտեր, որ դրա դեմ ընդվզելու էին բոլոր տերությունները: Ահա թե ինչու Ռուսաստանը սկզբունքով կողմ էր հայկական շարժմանը հանուն բարենորոգման, միաժամանակ պահը հարմար չհամարելով արմատական լուծումների համար: Մինչդեռ Գերմանիան բարենորոգումների հարցում շահագրգռված չլինելով հանդերձ ձգտում էր սեփական վերահսկողության ներքո բարենորոգումներ մտցնել Կիլիկիայում, քանի որ այդ շրջանում տնտեսական մեծ շահեր ուներ[129]:

Դրա հետ միասին Կ. Պոլսում Գերմանիայի դեսպանը 1913թ. փետրվարի 24-ին կանցլերին տեղեկացրեց, թե սփռված լինելով ամբողջ Փոքր Ասիայում և Հյուսիսային Պարսկաստանում, կրոնական ու էթնիկական պատճառներով մահմեդական իշխողների հետ գտնվելով արմատական բնույթի հակասությունների մեջ, հայերն ամենահարմար տարրն են Առաջավոր Ասիայում քարոզչություն ծավալելու համար: Վանգենհայմը սադայելական խաղի մեջ էր. մի կողմից ձգտում էր հայերին օգտագործել Գերմանիայի աշխարհաքաղաքական խնդիրների լուծման գործընթացներում, մյուս կողմից, Թուրքերին մղում էր հարձակվելու նրանց վրա: Նա գրում է. «...Ամբողջ հայ բնակչությունը ստանալու է ժամանակակից զենքեր, որպեսզի պատրաստ լինի Ռուսաստանի ազդանշանով հարվածելու Թուրքերին»: Ճիշտ է՝ «հայերը չեն ուզում դառնալ ոչ ռուս, ոչ բյուզանդացի, ոչ արաբ, պարսիկ կամ Թուրք...», բայց նրանք հրապուրվում են ռուսների խոստումներով, որովհետև «ռուսական կառավարությունը միակն է, որի հարվածներն ավելի հաճույքով են ընդունում, քան պլատոնական խոստումները», նաև կասկածից վեր է, որ հայերը Թուրքիայում պաշտպանված չեն կամայականություններից ու ճնշումներից: Բայց իրողություն է նաև այն, գրում է դեսպանը, որ «անհնար է ազգագրական կամ պատմական հիմքի վրա որոշել Հայաստանի ինքնավարության սահմանները»: Այդ ինքնավարությունն անհնար է նաև այն պատճառով, որ հայերը զուրկ են կառավարման փորձից ու ավանդություններից և նրանց «ինք-

126 Գերմանական աղբյուրների զգալի մասը վերցված են Լեփսուսի Տեղեկագրից և Վ. Մկրտչյանի Армянский вопрос и геноцид армян в Турции, 1913-1919, Ереван, см R 14077, Ab. 257:
127 Микаелян В. նշվ. աշխ. էջ 28:
128 R 14076, Ab. 5233.
129 R 14088, Ab. 2888.

նավարություն տալը կարող է հանգեցնել միմիայն անցանկալի ֆիասկոյի»: Վանգենհայմն առաջարկում է փոխել քաղաքականությունը հայերի հանդեպ: «Մենք շարունակելով անտեսել արմատական լուծումների ձգտող հայերին, միաժամանակ պետք է աշխատենք շահել հայ գյուղացու և առևտրականի համակրանքը, որի համար պահանջվում է արդյունավետ երաշխիքներ կյանքի, սեփականության և կրոնի անվտանգության, տեղական կառավարմանը համապատասխան թվով և կրթական մակարդակ ունեցող հայ տարրերի մասնակցություն»: Սրանք պահանջներն են, որոնցից Թուրքիան այլևս խույս տալ չի կարող... Մ. Շևքեթը վերջերս ինքը խոսք բացեց Հայկական հարցի մասին և ցանկություն հայտնեց, որպեսզի գերմանական կառավարությունն օգնի հաղթահարելու եղած դժվարությունները: Մեծ վեզիրին, անկասկած, հրապուրում է հայերին գերմանացիների լոյալ ներկայացուցիչների հետ մերձեցնելու միջոցով մնասազերծել ռուսական ավերիչ քարոզչությունը»:

Թուրքական պաշտոնական շրջանները Բեռլինին համոզում էին, որ «առանց Արևելյան Անատոլիայում երկաթուղիներ կառուցելու անհնար է քրդերին հնազանդեցնել: Համաձայն ռուսների հետ ունեցած պայմանագրի, բացի նրանցից ոչ ոք այդ անելու իրավունք չուներ, իսկ իրենք՝ ռուսներն, էլ հրաժարվում էին կառուցել»[130]:

Վանգենհայմն ամեն ինչ անում էր մասնավորապես Կ. Պոլսի Հայության շրջանում ձևավորելու հակառուսական շարժում օգտագործելով արևմտյան կողմնորոշում ունեցող հայ գործիչներին: Հասկանալի է, որ խնդիրը լուծելու համար գերմանացի դիվանագետների հայացքն առաջին հերթին ուղղվեց Մ. Օրմանյանին և Գ. Նորատունկյանին: 1913թ. հունվարի 10-ին Ցիմերմանն անդրադարձավ Մ. Օրմանյանի հայտարարությանը, թե իր գործունեությունը կշարունակի, եթե «Հայ ժողովուրդն ու Թուրքիայի կառավարությունն իրեն որոշակի մանդատ տան»: Նույն օրերին Վանգենհայմը նույնպես տեղեկացրեց, թե Կ. Պոլսում բարենորոգչական շարժման կենտրոնական դեմքը Օրմանյանն է, որն այդ հարցով դիմումներ է կատարել Կ. Պոլսի դեսպաններին և մի քանի կառավարություններին[131]: «Մեր խնդիրն է հրաժարվել թուրքերի խորհրդատուի առանձնահատուկ դերից,- առաջարկում է Վանգենհայմն իր կառավարությանը,– մյուս տերությունների հետ օգնություն ցույց տալ թուրքական կառավարությանը բարենորոգումների նախագիծը մշակելու գործում»: Ցանկալի է, որ կայսերական կառավարությունը «մշտապես ուշադրություն դարձնի հայկական գործերին», չնայած վտանգավոր է «հանձնարարել մեր հյուպատոսներին պահպանելու և պաշտպանելու հայերի շահերը», քանի որ Թուրքիան մեզ վրա կբարդի հայկական արմատական տարրերի անօրեն գործողությունների պատասխանատվությունը, իսկ հայերն էլ կձգտեն հարկադրել մեզ հատուցել, եթե մենք Կ. Պոլսում չպաշտպանենք նրանց, հաճախ նաև անիրագործելի, հավակնությունները»: Հայկական շահերը մեր մամուլի միջոցով քարոզելու հարցում ևս զգույշ պետք է լինել:

Դրա փոխարեն նպատակահարմար է Թուրքիայում մեծացնել գերմանական հյուպատոսությունների թիվը և ընդլայնել գերմանական դպրոցների ցանցը[132]: Վանգենհայմը ձգտում էր համոզել իր կառավարությանը Հայկական հարցում ավելի որոշակի դիրք որդեգրելու հօգուտ Կ. Պոլսի: Թուրքիայի քաղաքական շրջանների կարծիքով, գրում է նա, «Գերմանիան երես է շրջել մուսուլմաններից և դեմքով շուռ է եկել դեպի հայերը», չնայած մեծ վեզիրը լավ գիտի՝ «մեզ համար կարևոր է թույլ չտալ, որ հայերն ամբողջությամբ ընկնեն ռուսների ազդեցության տակ»: Ապա ավելացնում է, թե «մեր գործողություններն ինչ ազդեցություն կունենան հայերի ճակատագրերի վրա, ասել պետք չէ»: Իսկ եթե Անտանտը հարց բարձրացնի, «խնդրում եմ բացատրել՝ հայկական բարենորոգումները պահանջում են բոլոր տերությունների համագործակցությունը: Խնդրում եմ մտերմաբար ասել ս-ր է. Գրեյին, որ մենք հայկական բարենորոգումների հարցն առաջ քաշելուց ձեռնպահ ենք մնում... քանի որ այդ կոգևորի հայերին վերականգնելու քարոզչությունը և կծանրացնի Հայաստանի վիճակը»[133]:

130 R 14078, Ab. 4311
131 R 14077, Ab. 1718 pr.
132 R 14078, zu Ab. 4311/4707.
133 R 14079, zu 11384.

Այն պահին, երբ անմիջական հարևանությամբ գտնվող ասիական Թուրքիան վերանալու վտանգի առջև է, շարունակում է Վանգենհայմը, Ռուսաստանի համար մեծ նշանակություն է ձեռք բերում ունենալու քարոզչական այնպիսի գործիք, ինչպիսին հայերն են: Արևմտահայերի շրջանում քարոզչություն ծավալելու համար Ռուսաստանն ունի մեծ առավելություններ, նախ Ամենայն հայոց կաթողիկոսը նստում է ռուսական տարածքում: Ռուսաստանը Անատոլիայում և հյուսիս-արևմտյան Իրանում պահում է 15 հյուպատոս և հայկական քարոզչության վրա ծախսել է 2.5 միլիոն ռուբլի: Պարբերաբար կրկնվող հայկական ջարդերը Գերմանիայում դիտվում էին որպես բնական ռեակցիա, հայ գործամոլների շորթումներին: Հայերին անվանում էին Արևելքի հրեաներ՝ մոռանալով, գրում է Վանգենհայմը, որ Անատոլիայում կան «հայ գյուղացիության ուժեղ արմատներ, առողջ գյուղական բնակչության լավ որակներ»: Ռուսական վտանգով Բեռլինին ահաբեկելու համար Վանգենհայմը գերմանական կառավարությանը տեղյակ պահեց «Սաբահ» թերթի խմբագիր Տ. Քելեկյանի հետ իր հանդիպման մասին, որը գանգատվում էր ռուս ագիտատորների քայքայիչ գործունեությունից՝ նրանք ամենուրեք տարածում են խառնակչություն, որպեսզի առաջացնեն հայերի ընդվզումներ: Քելեկյանն ասել է, թե ցարական կառավարությունը կաթողիկոսի հետ համաձայնության է եկել Հայաստանի ազատագրության վերաբերյալ[134]:

Հանդես գալով համայնքների պալատում Է. Գրեյն ասաց. «Ասիական Թուրքիայում բարենորոգումների հարցը վերաբերում է եվրոպական բոլոր պետություններին... Տերությունները, նաև Թուրքերը, գիտեն, որ խռովություններն ու ջարդերն ասիական Թուրքիայի գավառներում անխուսափելիորեն նոր հարցեր կառաջացնեն...»[135]: Անգլիան անհանգստացած էր, և Գրեյը Սազոնովին ասաց, որ Մեծ Բրիտանիան «անհրաժեշտ է համարում Թուրքիայի ասիական մասի հետագա ամբողջական գոյությունը և այդ խնդրում ցանկացած միջամտություն կարող է ունենալ ամենալուրջ հետևանքներ»: Սազոնովը պատասխանեց, թե Ռուսաստանը Հայաստանի հարցում որևէ մտադրություն չունի և խնդրին կմիջամտի երկու դեպքում. նախ՝ եթե պատերազմի վերսկսման դեպքում Բուլղարիան հետ շպրտվի, և երկրորդ՝ եթե Բ. Դուռը նորից ցանկանա զավթել պարսկական սահմանագծի վիճելի կետերը[136]:

Լոնդոնը գտնում էր, որ ասիական գավառների բաժանումն ըստ շահերի ոլորտների օգտակար չէր, ընդհակառակն, այն լրջորեն մնասելու էր քաղաքական հավասարակշռությանը Միջերկրական ծովում, ինչպես նաև «մեր դիրքերին Եգիպտոսում, Պարսից ծոցում, էլ չասելով Հնդկաստանի մասին, այն կարող է հանգեցնել եվրոպական պատերազմի»[137]: Կ. Պոլսում Անգլիայի դեսպանի կարծիքով համիդյան ժամանակների համեմատությամբ հայերի վիճակը չէր վատացել և նրանց ծանր կացությունը չափազանցվում էր, որ եվրոպական քաղաքներում ավելի քիչ սպանություններ չեն կատարվում: Կ. Պոլսում Անգլիայի դեսպանը Վանգենհայմին ասաց. «Ցանկանանք, թե ոչ, Թուրքիան պահպանելու անհրաժեշտությունը միավորելու է Անգլիային ու Գերմանիային»[138]:

Վանգենհայմը ձգտում էր, որպեսզի բարենորոգումների նախաձեռնությունը Անգլիան իր ձեռքը վերցներ: Նա ուղղակի ասում էր, որ եթե Անգլիան շահագրգռված չէ Օսմանյան կայսրության պահպանմամբ, ապա վերջինիս կործանումը լոկ ժամանակի հարց է:

Բարենորոգումների նկատմամբ Ռուսաստանի դիրքորոշումն անգլիացի դեսպանին հիմքեր էլ տալիս հետևյալ հայտարարության համար. «Արևմտյան Հայաստանի նկատմամբ իր պահանջներում Պետերբուրգը չափից շատ էր առաջ գնում», որ «ռուսները ցանկանում են հայկական նահանգներում ունենալ ռուս կառավարիչ»[139]: Լոնդոնը ձևականորեն պաշտպանեց ռուսական նախագիծը, լոկ մի նպատակով՝ չկազմալուծել Անտանտը, սակայն նաև չէր ուզում, որ այդ նախագիծն ընդունվեր ու փորձեց այն տապալել Գերմանիայի միջոցով: Եվ դա նրան հաջողվեց, որովհետև Բեռլինին խոստացավ, թե Լոնդոնի կոնֆերանսում հանդես է գալու Հայկական հար-

134 R 14078, zu Ab. 4311/47071.
135 Wien HHSTA PA IX 465, London, 30 mai, 1913.
136 Schollagen G. Imperialismus snd Gleichgewicht, Deutschland, England und die orientalische Frage. 1871-1914, Monchen, 1984, s. 360.
137 Նույն.:
138 R 14077, Ab 1987.
139 Георгиев В. А., Кинятина Н. С., Понченкова М. Т., ШерметВ. И. Восточный вопрос политике России, XVII-начала XXвв. Москва, 1978, стр. 369,372.

ցի քննարկման դեմ: Անգլիական դիվանագիտությունը գերադասում էր հետին թվով սրտաբաց լինել, իսկ գործնական քաղաքականության մեջ՝ երկիմաստ: Որպեսզի ձախողի Հայկական հարցի քննարկումը Լոնդոնի խորհրդաժողովում, Անգլիան հայտարարեց, թե այդ «կարևոր ու սուր հարցն օրակարգի մեջ կմտցվի պատերազմի ավարտից անմիջապես հետո, երբ քաղաքական իրավիճակը կազատվի լարվածությունից: Մինչև Բալկանյան ճգնաժամի ավարտը Հայկական հարցի բարձրացումը նպատակահարմար չէ, որովհետև այն կարող է մեծ տերությունների միջև տարաձայնություններ առաջացնել ու դժգոհություններ առաջ բերել...»[140]:

Այդ ընթացքում տերությունների կառավարություններում թաքուն մշակվում էր Օսմանյան կայսրության բաժանման պլանը: Ֆրանսիան ակնկալում էր ստանալ Լիբանանն ու Սիրիան, Իտալիան՝ Զմյուռնիայի վիլայեթի մեծ մասը, Անգլիան՝ Պաղեստինն ու Արաբիան, Գերմանիան՝ Կիլիկիան, Անկարայի և Կոնիայի վիլայեթները, Ռուսաստանը՝ նեղուցները, Կ. Պոլիսն ու Արևմտյան Հայաստանը: Այս հավակնություններն անմիջապես ակնհայտ դարձրեցին, որ XX դարում Արևելյան հարցի բավիղներում գլխավոր հակասությունները Ռուսաստանի և Գերմանիայի միջև էին: Վանգենհայմը 1913թ. հունվարի 29-ին հայտարարեց. «Գերմանիան երբեք Ռուսաստանին թույլ չի տա ճնշում գործադրելու Թուրքիայի վրա... և մտադիր չէ զոհելու Անատոլիայում իր ունեցած կենսական շահերը: Ոչ ներկայումս և ոչ էլ ապագայում մենք ոչ ոքի թույլ չենք տա ձեռք դնել Անատոլիայի վրա»[141]:

Գերմանիայի հավակնություններն Փոքր Ասիայում այնքան բուռն էին, որ Աբդուլ Համիդը զարմացած գրեց. «...Գերմանական թերթերն արդեն պահանջում են գերմանացիներով բնակեցնել Բաղդադի երկաթուղուն հարակից գերմանական գոտին: Ինչ են երևակայում այդ լրագրերը: Նրանք գուցե մտածում են, թե գերմանական գաղութարարներին պիտի տանք երկիրը, որին մեր նախնիները տիրացել են այնքան մեծ զոհերի ու ջանքերի գնով», կայսրության մյուս մասերում թույլատրել ենք օտար տարրերի մուտքը, բայց «Անատոլիայում մենք պետք է միայնակ լինենք»[142]:

Ստեղծվել էր մի իրավիճակ, երբ, բացի Ռուսաստանից, բոլոր տերությունները դեմ էին բարենորոգումներին, բայց նաև այլևս չէին կարող չարձագանքել ռուսական նախաձեռնությանը: Արևմուտքի անհանգստության պատճառը մեկն էր՝ թույլ չտալ, որ այն մնասի Թուրքիայի տարածքային ամբողջականությանը և «համատեղելի լինի սուլթանի հեղինակության հետ», այսինքն՝ չթողնել, որ Ռուսաստանը տիրանա հայկական նահանգներին: «Բարենորոգումների մասին սուտը,– գրում է Պալավիչինին,- այստեղ (ասիական Թուրքիայում) նույն դերը պիտի խաղա, ինչ որ ժամանակին՝ Մակեդոնիայում: Բարենորոգումների նախագծերը կմշակվեն, բայց միաժամանակ կարվի ամեն ինչ իրական բարենորոգումները ձախողելու համար: Շուտով այստեղ (Կ. Պոլսում) կլսենք ռումբերով մահափորձի, ապա նաև Հայաստանում ջարդերի մասին, և Ռուսաստանը ստիպված կլինի դիմելու ռազմական միջամտության: Դա կարող է հասցնել թուրքական բանակի լիակատար ջախջախման և Ռուսաստանին այլևս ոչինչ չի խանգարի իրականացնելու իր պլանները և իր սահմանները մոտեցնել Կ. Պոլսին: Մինչդեռ մյուս տերությունները, բացառությամբ Անգլիայի, ասիական Թուրքիայի մասնատման հետևանքով, լավագույն դեպքում, գաղութներ էին ձեռք բերելու, որոնք... օդում կախված են լինելու...»[143]:

Ռուսական կառավարությունը հայտարարեց, որ ինքը ևս ձգտում է պահպանել Թուրքիայի տարածքային ամբողջությունը և որ բարենորոգումները Հայաստանում ամենից առաջ բխում են Թուրքիայի շահերից և արդյունավետ լինել չեն կարող առանց եվրոպական վերահսկողության, որ Ռուսաստանը շահագրգռված է բարենորոգումներով, որովհետև ունի 1.5 միլիոն հայ բնակչություն և ձգտում է, որպեսզի իրեն սահմանամերձ տարածքում խաղաղություն լինի:

Մ. Շևքեթը հայկական վիլայեթներ ուղարկեց 5 000 ժանդարմ և լրացուցիչ ստեղծեց 32 դատարան, միաժամանակ աղմկելով, թե Ռուսաստանն ամենևին էլ մտահոգված չէր հայերի վիճակով ու բարենորոգումների անցկացմամբ, այլ ձգտում էր միջամտության ու այլևայլ խարդավանքների: Թուրքերին շատ էր անհանգստացնում, որ Հիրսը սկսել էր հաճախակի հանդիպել հայոց պատրիարքին:

Կ. Պոլսում Անգլիայի դեսպան Մալեն տեղեկագրեց, թե բարենորոգումներին օտար պետությունների միջամտության դեմ մեծ շարժում է սկսվել: Հայոց պատրիարքն ահաբեկիչ նամակներ է ստացել. հայ քահանային ծեծել են, իսկ եկեղեցիներից մեկը ներկել են կարմիր[144]: Քայլեր արվեցին հայերին պառակտելու ուղղությամբ: Կաթոլիկ հայերը հռչակվեցին օրինակելի, իսկ առաքելականները՝ հեղափոխական:

Հայկական հարցի վերաբերյալ Իտալիայի կառավարության 1913թ. հունիսի հայտարարության մեջ ասվում է. «Իտալական կառավարությունը հոգով կողմնակից է Թուրքիայի ասիական մասում Օսմանյան կայսրության անձեռնմխելիությանը, նաև կարծում է, որ այդ շրջանում խաղաղությունը նշանակալից չափով կախված է Հայկական հարցի լուծումից»: Խորհրդարանական Գալլին ասաց, որ 35 տարվա ընթացքում ոչ միայն չկատարվեց 61-րդ հոդվածը, այլև «Թուրքիան Եվրոպայի անտարբեր հայացքի առաջ գնալով ավելի դաժան է վարվում դժբախտ երկրի հետ և Հայաստանի տարեգրության մեջ ավելացնում արյունով գրված նոր էջեր»: Գալլին նաև ցավ հայտնեց, որ «մեծ տերությունները դեռևս չեն պայմանավորվել ստեղծելու վճռական գործողությունների ծրագիր», այն հաշվով, որպեսզի խաղաղություն և ազատություն ապահովվի քրիստոնյաներով բնակեցված այն երկրում, որը հարուստ է առաքինի ավանդույթներով և ընդունակ է ապահովելու մշակութային զարգացման բարձր մակարդակ[145]:

Հայկական հարցը քննարկվում էր մեծ տերությունների մայրաքաղաքներում, բայց այդ քննարկումների հնոցը Կ. Պոլիսն էր: Հիրսը պատրիարքի հետ իսկապես եռանդուն գործունեություն ծավալեց: Դիվանագիտական խոշոր շփումների կենտրոն էր դարձել Էջմիածինը: Կաթողիկոսն աշխարհի ամենատարբեր մասերից տեղեկագրեր էր ստանում և դրանց կրկնօրինակներն ուղարկում Թիֆլիս՝ Ազգային բյուրոյին: Դաշնակցությունը ղեկավար ուժ էր ոչ միայն Էջմիածնում, այլև Կ. Պոլսի պատրիարքարանում: Մեսրոպ Տեր-Մովսիսյանը, Բագրատ Վարդազարյանը, Արշարունի և Զավեն պատրիարքները, Խորեն Մուրադբեկյանը և շատ ուրիշ աշխարհիկ ու կրոնական գործիչներ ապավինել էին Ռուսաստանին, «մոռանալով, որ 1895/96-ին Անգլիան ավելի քիչ հեղինակություն չուներ, քան ցարը 1912-13-ին, բայց հարյուր հազարավոր հայեր ջարդերի զոհ դարձան: Տվյալ դեպքում, գլխավորն այն չէր, որ սուլթանը ստորագրեր ծրագիրը, քանի որ մի անգամ այդ ստորագրված ծրագիրն անհետացավ հայերի արյան հեղեղում: Բեռլինը տիրապետող ուժ էր դառնում Կ. Պոլսում...»[146]: Իսկ հայերը շարունակում էին ապավինել Ռուսաստանին նաև այն ժամանակ, երբ Սազոնովը հայտարարեց, թե Թուրքիայում հայ գրեթե չկա, ըստ նրա տվյալների նույնիսկ Վանում հայերը բնակչության 16%-ն էին կազմում, որ ռուսներն այդ տարածքներում ցանկանում էին ունենալ բուֆեր և դրա համար էլ գերադասում էին քրդերին: Այս միտքը Սազոնովին ներշնչել էր Թավրիզում Ռուսաստանի նախկին հյուպատոս Միլլերը, որին նշանակել էին փոխարքայի խորհրդական»[147]:

Նույն ժամանակ Նուբարը խնդիրը քննարկում էր Մ. Օրմանյանի և Փարիզում Թուրքիայի դեսպանի հետ, խնդրագիր ուղարկում Քյամիլին: Նրա խորհրդատուն Գ. Նորատունկյանն էր: Վահան Փափազյանի կարծիքով Նորատունկյանը ձգտում էր փոխել ազգային վարչության գործող կազմն ու այն համալրել իր կողմնակիցներով[148]: Փափազյանը նաև հայտնում էր. «Պատրիարքի և այժմ նաև Եվրոպայի կարծիքն է, ամենևին չդիմել Թուրք կառավարությանը, հավատ չընծայել Բ. Դռան խոստումներին և որևէ բանակցության մեջ չմտնել նրա հետ:

Սազոնովը հայտարարեց, թե «հայերն այժմ կարող են հանգիստ լինել, քանի որ մեծ վեզիրը Քյամիլն է»: Նրան պատասխանեցին, թե «նախկին ջարդերում Քյամիլը մեծ բաժին ուներ»[149]:

---

140 «The Times», 04.01.1913

141 Павлович М. П. Малоазиатские перспективы, см. «Современник», 1973, кн. VII, стр. 310

142 Ն. տ., էջ 320

143 Ավտրո-հունգարական աղբյուրների որոշ նյութեր վերցված են Ա. Օհանջանյանի «1915 թվական» ուսումնասիրությունից: Տե՛ս Wien HHSTA PA XII 463, Jenikoj, 10 Juni 1913:

144 Wien HHSTA PA XII 463, Jenikoj, 10 Juni 1913.

145 R 14079, Ab 1/522.

146 Լեո Անցյալից, էջ 262:

147 Ն. տ.:

148 Ն. տ.:

149 Ն. տ., էջ 265:

Մեսրոպ եպիսկոպոսը 1913թ. հունվարի 8-ին գրում է, որ երբ հայ և օտար մամուլը սկսեց ե-ռանդուն բարձրացնել Հայկական հարցը, Բ. Դուռը կատաղեց, թուրքական կիսապաշտոնական թերթերը սկսեցին ջարդերով սպառնալ: Պատրիարքը դիմեց Բ. Դռանը: Սակայն դիմումը մնաց անհետևանք: Միջամտեց ռուսական դեսպանը: Թերթերի լեզուն փոխվեց և նախարարությունն ինքը սկսեց մտածել բարենորոգումների մասին: Նորատունկյանը Բ. Դռանն առաջարկում էր խոր-հրդակցել հայ երևելիների հետ, որոնց նա նախապես հրահանգավորել էր: Օրմանյանը դեմ էր նման քայլերին, և երևելիները հրաժարվեցին այլևս Բ. Դռան հետ հանդիպումներին մասնակցե-լուց: Նորատունկյանը համոզում էր Ազգային ժողովի վարչության անդամներ Գ. Պալաքյանին և Ստ. Կարայանին՝ բավարարվել Բ. Դռան խոստացածով և այլևս Եվրոպային չդիմել: Սակայն հա-մոզել չհաջողվեց: Իսկ Նորատունկյանի կողմնակիցները «Բյուզանդիոն» և մի քանի այլ թերթերի միջոցով քարոզչություն ծավալեցին ռուսական միջամտության դեմ օգտագործելով վիրավորա-կան արտահայտություններ: Նրանք գտնում էին, որ հայ գործիչները սխալ էին թույլ տալիս, երբ փորձում էին Հայկական հարցը լուծել առանց Թուրքիայի մասնակցության՝ հույս ունենալով, որ Եվրոպան կհրամայի և Թուրքիան կկատարի այդ հրամանը: Դա վտանգավոր մոտեցում էր, Թուր-քիան ամենից ավելի կատաղում էր դրսի միջամտությունից: Գ. Նորատունկյանի ջանքերը ոչ միայն ապարդյուն անցան, այլև «ամբոխային դատողությունը» պիտակավորեց դրանք՝ «դավա-ճան, վաճառում է ազգը: Սպառնալից հեռագրեր ուղարկեցին այն չորս հայերին, ովքեր հրա-վիրված էին կառավարության կողմից բանակցությունների համար»: Գ. Նորատունկյանը, որի «կարողությունները խոստովանում էին անգամ եվրոպացի դիվանագետները, մեկուսացվեց»[150]:

Իսկ ՀԾԴ հասել էր «այն ամբարտավան մեծամտությանը, թե ինքը հայոց ազգն է ներկայաց-նում... հետևաբար չէր կարող թույլ տալ, որ Հայկական հարցը լուծում ստանար առանց իր ե-ռանդուն մասնակցության... Եվ իրավ... նա էր, որ կազմեց բարենորոգումների ծրագիրը... ռու-սական դեսպանության հետ բանակցությունների բովանդակությունը նույնպես թելադրում էր ՀԾԴ: Զավրիևը սկսեց ինքնուրույն բանակցություններ Հիրսի հետ»: Կովկասում դաշնակցու-թյունը գործում էր Ազգային բյուրոյի միջոցով: Փոխարքայի ռազմական հարցերի գծով օգնա-կան գեներալ Շատիլովի հետ 1913թ. մարտին հանդիպում են Մեսրոպ եպիսկոպոսը, Խատիսյա-նը, Հարությունյանը, Քալանթարը, Պապաջանյանը և խնդրում զենք տրամադրել արևմտահա-յերին զինելու համար: Ռուսական կառավարությունը մերժում է, պատճառաբանելով, թե ար-դեն միջոցներ ձեռնարկված են արևմտահայերին պաշտպանելու համար: Լեոն իր առջև խնդիր էր դրել ոչ այնքան բացահայտելու Մեծ եղեռնի հնարավորության պատճառները, որքան հետա-դարձ ակնարկով ողբերգության մեղքի մի ծանրակշիռ բաժին իթիհադից վերցնել և դնել հայ գործիչների վրա: Եվ պատահական չէ, որ որակավորումների այդ թեք հարթության բարձուն-քին երկար մնալ չի կարողանում և մի քանի սկզբունքային հարցերում գլորվում է թուրքական տեսակետների գիրկը: Պարզապես անհնար է հավատալ, որ նա իրապես մտածում էր այնպես, ինչպես գրում է իր առանձին աշխատություններում, մի շարք դեպքերում արտահայտելով տրա-մագծորեն հակառակ կարծիքներ: «Իթիհադը ՀԾԴ մեղադրեց դավաճանության մեջ,– գրում է նա,- իբր կազմակերպել էր ռուսական միջամտությունը: Որպես ապացույց բերվում էր ՀԾԴ Ա-մերիկայի կենտկոմի կոչը. «Բալկանեան պատերազմի վերսկսումով քաղաքական շրջանակը կը-կին չփոթեցավ, ու Հայկական դատի այժմեութիւնը կարծես մեղմացավ: Իրականին մեջ, սակայն, այդպես չէ, որովհետև որոշ մարդիկ, մարմիններ և մեր կուսակցութիւնը, մասնավորապես քաղա-քական դիմումներով կը ձգտեն հող պատրաստել Հայկական դատը յառաջիկային ամեն գնով դնելու համար դիվանագիտութեան սեղանի վրա և պահանջել անոր նպաստավոր լուծումը: Այդ մասին բիւրոյեն եկած նամակներեն կքաղենք հետևյալ կարևոր տեղեկությունները... «Ա. Որ մեր հարցն այս դեսպանախորհրդին չպիտի տրվի: Բ. Երեք պետություններ՝ Ֆրանսիա, Անգլիա և Ռուսաստան, որոշեր են մեր խնդիրը ձեռք առնել խաղաղութեան վերջնական հաստատումեն հե-տո: Գ. Երեք պետութիւնն ալ տրամադիր են հայկական նահանգներուն մեջ հատուկ վարչութիւն հաստատելու, ուրիշ խոսքով, ապահովելու բարենորոգումների գործադրությունը»[151]:

150 Լեո Անցյալից, էջ 266:
151 Ն. տ., էջ 273-275:

Հիրսը 1913թ. հունիսին Մանդելշտամին հանձնարարել էր մշակել հայկական նահանգների բարենորոգումների ծրագրի նախագիծը՝ հիմք ունենալով 1880 և 1895թթ. ծրագրերը: Եվ քա-նի որ ձեռքի տակ էր նաև պատրիարքարանի նախագիծը, Մանդելշտամը խնդիրն արագ լուծեց և նույն ամսվա վերջին նախագիծը, որը հայտնի է Ա. Մանդելշտամի կամ Ռուսական անունով, հանձնվեց տերությունների Կ. Պոլսի դեսպանություններին[152]:

Հուլիսի 9-ին Պետերբուրգը շրջաբերական ուղարկեց տերությունների կառավարություններին, հրավիրելով Կ. Պոլսում անցկացնելու դեսպանաժողով նվիրված Հայկական հարցին: Շրջաբերակա-նում մասնավորապես ասված է. «Ռուսական կառավարությունը հարկադրված է այդ քայլին դի-մել, քանի որ հայկական վիլայեթներում տիրող վիճակի մասին լուրերը հնչում են ավելի ու ավելի սպառնալից և Ռուսաստանը, իբրև սահմանակից երկիր, ինչպես նաև հանուն սեփական հայ բնակ-չության, ամենաշատն է շահագրգռված Հայաստանում խաղաղության պահպանմամբ»[153]: Դեսպա-նաժողովի աշխատանքի համար որպես հիմք առաջարկվում էր Մայիսյան ծրագիրը[154]:

Ֆրանսիայի ու Անգլիայի կառավարություններն անմիջապես համաձայնեցին:

Իրադարձությունները զարգացան հետևյալ կերպ: Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի դեսպանները կազմեցին հայկական բարենորոգումների ծրագրի նախագիծ[155]: Այն կրում էր «Հայկական վիլայեթների կառուցվածքի կանոնադրություն» անունը: Հիրսն առաջարկում էր ստեղծել Հայկական մարզ, որի կառավարումը լինելու էր հայկական, այսինքն՝ հանդիսանալու էր ազգային-պետական կառույց: Բարենորոգումների ռուսական նախագիծը նախ քննարկեցին Անտանտի տերությունների Կ. Պոլսի դեսպանությունների խորհրդականներ Ա. Մանդելշտամը, Ֆիցմորիսը և Սեն-Կանտեն: Այն հուլիսի 17-ին արժանացավ նաև դեսպանների հավանությա-նը: Բեռլինն անհանգստացավ: Ցագովը տերությունների դեսպաններին տեղյակ պահեց, թե Գերմանիան հրաժարվում է բարձրացնել Հայկական հարցը, թե այդ հարցը պահանջում է ոչ միայն Անտանտի կառավարությունների, այլև բոլոր մեծ տերությունների մասնակցությունը: Նորից իշխանության եկած երիտթուրքերը, մասնավորապես Թալեաթը, եռանդուն քայլեր կա-տարեցին հայ քաղաքական ուժերը միմյանց հակադրելու միջոցով խորտակել պատրիարքարա-նի դիմադրությունը: «Դրոշակը», նկատի ունենալով Թալեաթին, գրում է. «Անգամ պարագլխի և ղեկավարի դերում լավագույն թուրքը համակված է հայերին ոչնչացնելու քաղաքականու-թյամբ...»[156]: Չնայած դրան, հայկական շրջաններում գնալով տիրապետող էր դառնում այն հա-մոզմունքը, թե Օսմանյան կայսրությունը հոգեվարքի մեջ էր: Բեռլինն արտաքուստ ցույց էր տալիս, թե դեմ չեր ռուսական նախագծին, բայց իրականում այն վերածում էր Բ. Դռան հետ բանակցությունների գործիքի: Վանգենհայմը համառորեն պահանջում էր Թուրքիայի մասնակցությունը բարենորոգումների ռուսական նախագծի քննարկմանը:

Բ. Դուռը վկայակոչելով Կիպրոսի կոնվենցիան Լոնդոնին առաջարկեց գլխավոր հրահանգիչ-ներ ուղարկել Հյուսիսային և Արևելյան Անատոլիա, սպառնալով, թե մերժողական պատասխա-նի դեպքում նույն առաջարկով կդիմի մյուս տերություններին: Անգլիան նահանջեց և պահան-ջեց, որ Թուրքիան ևս մասնակցի նախագծի քննարկմանը: Հունիսի 14-ին Թարխանը Սազոնո-վին ներկայացրեց բարենորոգումների ծրագրի թուրքական նախագիծը, որով Անատոլիան բա-ժանվելու էր վեց գոտու, որոնցից երկուսը ներառելու էին հայկական վիլայեթները և կառավար-վելու էին եվրոպայի, մասնավորապես, անգլիացի տեսուչների կողմից: Այս նախագիծը խնդիր ուներ իրար դեմ հանել Լոնդոնին և Պետերբուրգին, մեկուսացնել Ռուսաստանին: Թուրքական առաջարկը դժգոհությամբ ընդունվեց նաև Փարիզում: Պիչոնը Անգլիային և Ռուսաստանին ա-ռաջարկեց կայսերական կոմիսար Արևմտյան Հայաստանում, նա հետևելու էր կարգուկանոնին, միաժանակ առաջ էր տանելու բարենորոգումները: Կ. Պոլսում խուճապ առաջացավ, որովհետև կայսերական կոմիսարի առկայությունը Արևմտյան Հայաստանում անշրջելի էր դարձնելու բա-

152 Օտարերկրացիները Հայկական հարցի մասին, էջ 34:
153 Реформы в Армении, стр. 43.
154 R 14079, Ab. 11500.
155 «Сборник дипломатические документов...», N 36, с. 43.
156 Туян В. Младетурки и Армянский вопрос, 1912-1914, Е 2005, с. 122.

բենորոգումների գործընթացը: Սակայն այս առաջարկությունը տապալվեց և այն տապալեց ոչ թե սուլթանը, այլ ցարը, որ Փարիզին հարկադրեց հրաժարվել իր նախաձեռնությունից[157]*:*

1913թ. հունիսի 20-ին Կ. Պոլսում սկսվեց բարենորոգումների ծրագրի ռուսական նախագծի քննարկումը: Եոյակ զինակցության ներկայացուցիչներն առաջարկեցին մինչև այդ նախագծի քննարկումը ծանոթանալ թուրքական նախագծին: Անգլիայի ներկայացուցիչները գտան, որ հիմք պետք է ընդունել ռուսական նախագիծը, այն լրացնելով օսմանյան դրույթներով: Վանգենհայմի ջանքերով գնացին բուռն քննարկումներ ոչ միայն դեսպանների, այլև կառավարությունների մակարդակով:

Այդ ընթացքում նորից ամենայն հստակությամբ գծագրվեցին տերությունների հավակնությունները: Ֆրանսիան Արևմտյան Հայաստանում բարենորոգումների օգտին քվերակելու դիմաց պահանջում էր Կիլիկիան և Փոքր Հայքը: Վանգենհայմը հունիսի 25-ին գրում է Բեռլին, թե «Ռուսաստանը ձգտում է հայկական բոլոր նահանգներն առնել իր կառավարման տակ»: Նրա կարծիքով Գերմանիայի համար շահեկանը ոչ թե հայկական բարենորոգումներն էին, այլ համակայսերական ձախողումից չխորշելու, նույն կարծիքին էր նաև Անգլիան[158]*: Պետերբուրգը շտապեցնում էր բարենորոգումների անցկացումը՝ պատճառաբանելով, թե ստեղծված վիճակը բացասաբար էր անդրադառնում Կովկասի վրա: Հիրսի տեղեկատվությունով հայկական նահանգներում հուզումները և քրդերի բռնարարքները մեծ ծավալների էին հասել: Բեռլինն իր հերթին գտնում էր, որ հայկական վեց վիլայեթների միավորումը հակասում էր Բ. Դռան շահերին, որովհետև դրանք «ռազմական և վարչական առումով գրեթե բաժանվում էին Օսմանյան կայսրությունից»*[159]*: Ռուսական ծրագիրը նույնացվում էր Օսմանյան կայսրության բաժանման հետ, քանի որ «Անատոլիայի կեսը կազմելու էր Հայաստանը»: Կ. Պոլիսն անցավ սպառնալիքների: Ա. Աղաևը հայտարարեց, թե Թուրքիան հնարավորություն ուներ հրաժարվելու բարենորոգումների վրա եվրոպական վերահսկողությունից, որովհետև չկա մի պետություն, որը հանուն «հայերի սև աչքերի» համաձայներ պատերազմել: Ինչ վերաբերում է պատրիարքի բողոքներին, ապա դրանք լոկ «պատրիարքական սադրանք էին»: Բ. Դուռը պահանջեց աշխատանքից ազատել Մշո և Սղերդի առաջնորդներին, որպես «հրահրողներ և աղմկարարներ»: Տարօրինակ էր ռուսական դիվանագիտության կեցվածքը: Հունիսի 30-ին Հիրսը հայտարարեց, թե նախագիծը, որ ներկայացվում է դեսպանաժողովին, ոչ թե Ռուսաստանի կառավարության պաշտոնական փաստաթուղթ է, այլ Ա. Մանդելշտամի անձնական նախաձեռնությունը: Պալավիչինին առաջարկեց այդ նախագիծն ուղարկել դեսպանների ներկայացուցիչների քննարկմանը: Նա նաև օգտակար համարեց թուրքական նախագծի միաժամանակյա քննարկումը: Վանգենհայմը հայտարարեց, թե Գերմանիան շահագրգիռ է մեծ և փոքր Հայաստանների հայերի բախտով: Միաժամանակ ասաց, թե ռուսական նախագիծը Օսմանյան կայսրության բաժանման սկիզբն էր: Վանգենհայմն ու Պալավիչինին պայմանավորվեցին ամեն ինչ անել բանակցությունները ձգձգելու համար, որպեսզի Թուրքիային հնարավորություն տային «խաղաղեցնելու Արևմտյան Հայաստանը և պարզելու Անգլիայի դիրքորոշումը: Գերմանիան ու նրա դաշնակիցները հրաժարվեցին քննարկել ռուսական նախագիծը, եթե չքննարկվեր Բ. Դռան հուլիսի 1-ի շրջաբերականը, որը հայտարարվեց որպես բարենորոգումների նախագիծ: Սակայն այդ առաջարկությունը չընդունվեց:*

Երբ 1913թ. հուլիսի 1-ին թուրքերը գրավեցին Ռոդոսթո քաղաքն ու հաշվեհարդարի ենթարկեցին բուլղարներին ու հայերին, Արշարունին այցելեց Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպաններին խնդրանքով՝ ապահովելու կայսրության հայ բնակչության անվտանգությունը: Դիմումներ եղան նաև Բ. Դռանը, սակայն ապարդյուն, որովհետև Թալեաթը հայտարարեց, թե կառավարությանը հայտնի չեն հայերի հանդեպ բռնությունների փաստեր: Սակայն Ռոդոսթո մեկնեց Էնվերը «կարգը վերականգնելու համար»: Արգելվեց ՀՅԴ պաշտոնաթերթը երիտթուրքական վարչակարգին քննադատելու համար: Ժամանակակիցներից մեկի վկայությամբ ծրագրված էր, որ «Ռոդոսթոն դառնար երկրորդ Ադանա»[160]*:*

157 «Армяни в документах...», N 69, с. 224.
158 «Армянский вопрос и геноцид армян...», с. 66.
159 «Армяни в документах...», с. 239.
160 «Մշակ», 14.07.1913:

«Новое время» թերթի թղթակցի հարցերին Զմյուռնիայի թեմի առաջնորդ Ս. Մաթևոսյանի պատասխանում ասում էր. «Հայաստանը հայերից զրկելու Համիդի ձգտումներից մեկը թուրքերի ու քրդերի շրջանում հայերի հանդեպ ատելություն բորբոքելն էր, ովքեր սպանում ու թալանում էին, իսկ կառավարությունը ոչինչ չէր ձեռնարկում»: Ռոդոսթոն գրավելուց ու հայերին հաշվեհարդարի ենթարկելուց հետո թուրքերը շրջապատեցին Մարմարայի ծովափնյա հայաբնակ Մալգար գյուղը: Ալիի զորքերը երեք օր շարունակ գյուղում իրականացրեցին վայրագություններ: Սպանեցին տասնյակ հայերի: Արդեն 1913 կեսերին հստակ գծագրվեց, որ երիտթուրքերը ձգտում էին հայերին ոչնչացնելու և արտամղելու միջոցով Փոքր Ասիայում ստեղծել ազգային-կրոնական միատարր պետություն: Հայկական կազմակերպությունները համառ ջանքեր էին լարում երիտթուրքերի ծրագրի գործադրումը խափանելու համար: Ներկայացվեց Հայկական մարզի մի կանոնադրություն, որը նախատեսում էր ձևավորելու հայկական ինքնավարություն Ռուսաստանի հովանու տակ: Հայկական հարցին նվիրված միջազգային համաժողովը հստակեցրեց տերությունների մոտեցումներն այդ հարցին. ակնհայտ էր՝ նրանք բոլորը գտնում էին, որ Օսմանյան կայսրության ամբողջականությունը պետք է պահպանվեր մի պայմանով կայսրությունը բաժանել ազդեցության գոտիների: Դրա արտահայտություններից էր նաև Ռուսաստանի առաջարկը Հայկական մարզ ստեղծելու վերաբերյալ: Բնականաբար, դրան դեմ էր Գերմանիան և պահանջում էր հայ բնակչությանը տալ տեղական ինքնավարություն: Շարունակում էր տարօրինակ երկմտության մեջ մնալ Պետերբուրգը: 1913թ. հուլիսի 25-ին Սազոնովը գրում է, թե ռուսական նախագծով առաջ քաշված «միացյալ հայկական նահանգի» ստեղծումը և ընդհանուր գլխավոր նահանգապետի նշանակումը սխալ է և նպատակահարմար էր համարում բարենորոգումների ենթակա տարածքները բաժանել երկու գոտու[161]*:*

1913թ. հունվար-հունիս ամիսներին արձանագրվեց հայերի հանդեպ բռնությունների ու սպանությունների 889 դեպք: Հնչակյանների 7-րդ համագումարում Ս. Սապահ Գյուլյանը հայտարարեց. «Կամ հայ ժողովուրդը կտապալի իթիհադին, թուրքական ազգայնամոլությանը... կամ իթիհադն է ջախջախելու հայերին, ոչնչացնելու որպես ազգ»[162]*: Ռուսական այս քայլը պատմաբաններից ոմանք համարում են զիջում Հայկական հարցը լուծելու նպատակով*[163]*: Կարծում ենք, որ գլխավոր պատճառը «հին կասկածամտությունն էր»՝ միավորված Արևմտյան Հայաստանը հակասում էր ռուսական շահերին:*

Հասկանալով, որ Ռուսաստանը կգնա նոր զիջումների, Ցագովը հրահանգեց. «Թուրքիան մեզ համար ունի կարևոր նշանակություն, և մենք ուզում ենք, որ երկար դոյատևի, այնքան մինչև որ մենք կարողանանք հաստատվել մեր գործողությունների ներկայիս գոտիներում և պատրաստ լինենք բռնակցումների համար»[164]*: Ստացվեց այնպես, որ Օսմանյան կայսրության քաղաքական կյանքում առաջին պլան դուրս եկավ բանակը և դադարեց կատարելու Բ. Դռան հանձնարարությունները: «Օսմանյան բանակն իր ձեռքում է պահում պետության ճակատագիրը և խոհեմ քաղաքականությունն այլևս երկրում ձայնազուրկ է: Զինվորներն են որոշում Թուրքիան պետք է ապրի թե մեռնի»: Գնալով ահագնանում էր պատերազմատենչությունը: «Ներկայումս կառավարությունն ու ժողովուրդը հետևում են բանակին, ավելի ճիշտ՝ Էնվերին ու նրա մի քանի արբանյակներին»,- գրում է ժամանակակիցը*[165]*:*

1913թ. օգոստոսի 4-ին Վանգենհայմը Բեթման Հոլվեգին ուղարկեց ռուսական և թուրքական նախագծերի հիման վրա իր կազմած նախագիծը՝ եվրոպական վերահսկողություն բարենորոգումների վրա, վիլայեթների վարչական խորհուրդներում տեխնիկական մասնագետների օգտագործում, նահանգային ժողովները հրավիրում է վալին՝ այդ ժողովների անդամների 2/3-ի համաձայնությամբ, խուզել նահանգային ժողովների և սանջակների ու կազաների իրավասությունները, եվրոպական մասնագետների օգնությամբ վերակառուցել ոստիկանությունն ու ժանդարմերիան, լուծարել համիդիե գնդերը, վերացնել քոչվորների ընտրական իրավունքը, գոր-

161 "Сборник дипломатических документов..." с. 77.
*162 **Սապահ Գյուլյան Ս.** Պատասխանատոներ, 1916, 15 328:*
*163 **Тунян В.** Младотурки и Армянский вопрос, 1912-1914, 2005, с. 232.*
164 «Армянский вопрос и геноцид армян...», с. 123.
165 «Армения в документах...», с. 276-277.

ծավարությունը տանել Թուրքերեն, քրդերեն և հայերեն, կրթությունն իրականացնել ազգային լեզուներով, ճանաչել հայերի առանձնաշնորհումները, այդ թվում Ազգային սահմանադրությունը, իշխանության մարմիններում ներկայացուցիչներ ունենալ ըստ տվյալ վարչական տարածքի ազգային կազմի[166]: Ակնհայտ է, որ այն նախագիծը մերժում էր հայերի ինքնավարությունը և հրապարակ էր հանվել նկատի ունենալով Ռուսաստանի զիջողական կեցվածքը: Այն նաև նպատակ ուներ ռուսներից խլելու Հայկական բարեփոխումների նախաձեռնությունը, թեկուզ այն բանի համար, գրում է դեսպանը, որպեսզի «հայերի մեջ չամրապնդենք կարծիք, թե մենք լուրջ չենք վերաբերում Հայկական բարենորոգումներին և իբր Թուրքական կառավարության համակրանքը մեր հանդեպ բարձր ենք դասում հայերի շահերից»[167]: Իսկ Թուրքերին էլ կասեք, թե «հանդես ենք գալիս բարենորոգումների մեր պլանի պաշտպանությամբ միայն այն բանի համար, որպեսզի թույլ չտանք Ռուսաստանին հանդես գալու իր ծրագրի շատ հեռու գնացող նախագծով, որ սպառնում է Թուրքիայի ամբողջականությանը»[168]:

Թուրքերի դիրքորոշումը Հայկական հարցում տվյալ պահին հանգում էր հետևյալին.

1. «Հայկական հարցը Թուրքիայի համար մնում է որպես անկյունաքարային»[169]: 2. Հայկական բարենորոգումները ոտնձգություն են Բ. Դռան սուվերեն իրավունքների հանդեպ, 3. Արևմտյան Հայաստանում զլխավոր տեսուչների նշանակումը միջամտություն է կայսրության ներքին գործերին[170]: **«Երիտթուրքերը ձգտում էին բոլոր հանցավոր միջոցներով թաղել Հայկական հարցը՝ տվյալ պայմաններում այն համարելով Թուրքիայի կենսական շահերը շոշափող ամենալուրջ հարցը»**[171]:

1913թ. նոյեմբերին Բեռլինում տեղի ունեցած Լեփսիուս-Զավրիև հանդիպման ժամանակ վերջինի ներկայացրած փաստաթղթում, որ կոչվում էր «Դաշնակցություն կազմակերպության դիրքորոշումը բարենորոգումների հարցում», կրկնվում էր այն միտքը, եթե բարենորոգումները ձախողվեն, կուսակցությունն ընդունակ կլինի Արևմտյան Հայաստանում բարձրացնել «զինված ապստամբություն», թե ՀԾԴ պատրաստ է իրադարձության ցանկացած շրջադարձին անդամ փոխելու Թուրք-ռուսական հարաբերությունների ընթացքը: Ասվում էր, թե 1903-1905թ. ինքնապաշտպանական կռիվներն ու հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման կապակցությամբ ՀԾԴ գործունեությունը հաստատում էր, որ կուսակցությունն ի վիճակի էր լուծելու նշված խնդիրը: Առաջարկվում էր նկատի առնել, որ տվյալ պահին թե Թուրքիան և թե Ռուսաստանը թույլ էին և հնարավորություն կար Գերմանիայի օգնությամբ ստեղծել անկախ Հայաստան»[172]: **Ապացուցելու հարկ չկա, որ սա ՀԾԴ հերթական լոպազությունն էր: Իրականում Հայաստանում էական ոչինչ չէր արվում ոչ թե ապստամբության, այլ անգամ ինքնապաշտպանության համար:**

1913թ. մայիսին Սազոնովը Բեռլինում ռուսական դեսպան Սվերբեևին հանձնարարում է տեղյակ պահել Գերմանիայի կառավարությանը, թե Ռուսաստանը ցանկանում է արագացնել հայկական նահանգներում բարենորոգումների հարցի քննարկումը: «Միաժամանակ,- գրում է Ս. Սազոնովը,- դեսպան Սվերբեևը պետք է պարզաբաներ, որ մենք ձգտել ենք խուսափել այս հարցում եվրոպական կառավարությունների որևէ մրցակցությունից... որ, իր վրա վերցնելով այդ գործի նախաձեռնությունը, Ռուսաստանի կառավարությունը մտադրություն չի ունեցել ոտնահարել Բ. Դռան իրավունքները, այլ ցանկացել է, ելնելով սեփական շահերից, կանխել իր սահմաններին վտանգավոր բարդության հնարավորությունը»[173]:

Սակայն ոչ միայն Գերմանիան, այլև զինակցության մյուս տերությունները՝ Ավստրո-Հունգարիան և Իտալիան, վերապահ կեցվածք որդեգրեցին. թե կմասնակցեն բարենորոգումների ծրագրի քննարկմանը: Ցագովը կասկածի տակ առավ դեսպանաժողովի աշխատանքի հաջողությունը և, ինչպես գրեց Սվերբեևը, Գերմանիան հակված էր ձախողելու բանակցությունները[174]: Բայց կատարվեց հակառակը, ստանալով ռուսական նախագիծը շրջաբերականի հետ՝ Ցագովը նույն օրը դրանք ուղարկեց կայզերին: Վիլհելմ 2-րդը մակագրեց. «Հազիվ էինք ազատվել մակեդոնական անիծյալ բարեփոխումներից, հիմա էլ՝ հայերը»[175]: Ռուսական առաջարկը Բեռլինում իրարանցում առաջացրեց և, որպեսզի Ռուսաստանին չմնա նախաձեռնությունը, գերմանական ղեկավարությունը պահանջեց, որ իրեն էլ մասնակից դարձնեն բարենորոգումների ծրագրի մշակմանը: Բեռլինի կողմնորոշմանը հետևեց Վիեննայի արձագանքը. «Գերմանական կառավարությունը զբաղված է, մի կողմից՝ ապահովելու գերմանական տնտեսական շահերը Փոքր Ասիայում, մյուս կողմից՝ կանխելու Ռուսաստանի հեռահար հավանական ծրագրերը... Ավստրո-Հունգարիան նույնպես մեծապես շահագրգռված է Ասիայում պահպանելու օսմանյան տիրապետությունը» և պատրաստ է աջակցելու Գերմանիայի ձեռնարկներին[176]: Պալավիչինին գտնում էր, որ Հայկական հարցում համաձայնություն գալու Պետերբուրգի շահագրգռվածությունը նրա «կողմից վաղուց ծրագրված մի մեծ գործողության նախաբանն է»:

1913թ. մայիսի 24-ին Անտանտի երկրների համաձայնությամբ Ռուսաստանը հրապարակել էր մի կոչ տերությունների կառավարություններին Կ. Պոլսի իրենց դեսպանների միջոցով ներկայացնելու բարեփոխումների ծրագրի նախագիծ: Գերմանիան դեմ էր, բայց նաև մտավախ, որ «Ռուսաստանը կփորձի խնդիրը լուծել միայնակ կամ Անտանտի հետ՝ առանց եռյակ զինակցության»: Ա. Մանդելշտամի նախագծին ծանոթանալուց հետո Վանգենհայմը ասաց, որ այն «Անատոլիայի տարածքի կեսի վրա ստեղծելու էր Թուրքիայի հետ թույլ կապված Հայաստան... Դա կլինի կայսրության բաժանման սկիզբը»: Բեռլինին ամենաշատն անհանգստացնում էր, որ հայերը տնօրինելու էին մի մեծ տարածք, որը ռուսների օգնությամբ հեշտությամբ կարող էր վերածվել պետության, ինչի հետ Բեռլինը համաձայնվել չէր կարող, որովհետև այն Ռուսաստանի առջև բացում էր Միջերկրական ծովի դռները: Վանգենհայմը գրում է, երիտթուրքերն ավելի կողմնակից էին «Թուրքիայի կործանմանը, քան այն թողնել տերությունների քաղաքական վերահսկողության տակ»: Լեփսիուսը հայերին խորհուրդ էր տալիս ձեռք քաշել ռուսական նախագծից և գնալ փոխզիջումների, ինչն առանց նրանց արեց Բ. Դուռը և հասավ զիջումների: Օրինակ, նախագծի տեքստից հանվեց մուհաջիրներին հայկական շրջաններում չբնակեցնելու, հայերից խլված հողերը վերադարձնելու, բարենորոգումների իրականացման եվրոպայի երաշխիքների մասին և մի քանի ուրիշ կետեր:

Հիրսի առաջարկով Պալավիչինին դեսպաններին հրավիրեց հունիսի 30-ին անցկացնելու նախագծի նախնական քննարկում, միաժամանակ հայտարարելով՝ թե նախագծերն, այդ թվում նաև Ա. Մանդելշտամինը, ինքը մերժելու է: Նախնական քննարկման ժամանակ Հիրսը ներկայացնելով Ա. Մանդելշտամի նախագիծը՝ ասաց, թե կոնֆերանսի հրավիրման նախաձեռնողը Ռուսաստանն է և նաև ավելի քան որևէ ուրիշ պետություն շահագրգռված է «Արևելյան Անատոլիայով և Հայկական հարցով»: Նա նաև ասաց, թե հնարավորին չափ պետք է արագ ավարտել նախագծի քննարկումը և նկատի ունենալ, որ Հայաստանին Լիբանանի կարգավիճակ տալը միակ միջոցն է խնդիրը լուծելու համար: Այսինքն՝ Ռուսաստանին արդեն չէր բավարարում հայկական նահանգներում բարենորոգումներ մտցնելը և առաջարկում էր Արևմտյան Հայաստանին տալ ինքնավարություն: Հիրսի ելույթը մասնակիցները դժկամությամբ ընդունեցին և, առանց քննարկելու, ռուսական նախագիծը մերժեցին: Լսելով այդ մասին՝ Հայ համայնքի ներկայացուցիչները հանդես եկան բողոքի հայտարարությունով: Դա անհանգստացրեց Վանգենհայմին: Նա մտածում էր, որ կոնֆերանսի ձախողվելը հայերի շրջանում հուզումներ էր առաջ բերելու և Պալավիչինիին համոզեց հետ կանգնելու մերժողական կեցվածքից: Մանդելշտամի նախագծի մասին Վանգենհայմը գրում է, թե այն հայկական նահանգներին շատ ավելի մեծ իրավունքներ

166 «Армянский вопрос и геноцид армян...», с. 125.
167 Ն. տ.:
168 Ն. տ., էջ 126:
169 «Армения в документах...», с. 289-290.
170 Ն. տ. էջ 290:
171 Ն. տ. էջ 285:
172 «Армянский вопрос и геноцид армян...», с. 133.
173 Реформы в Армении, стр. 49.

174 R 14079, Ab. 11500.
175 Schollagen G. նշվ. աշխ., էջ 360:
176 Wien HHSTA PA XII 463, Wien, 5 Juni, 1913.

է տալիս, քան ունի անգամ Լիբանանը: «Նախագծի իրականացումը Անատոլիայի կեսի վրա ստեղծելու է Հայաստան, որը Թուրքիայի տարածքի 2/3-ի հետ ազատ կապ է ունենալու միմիայն սուլթանի սուվերենիտետի միջոցով: Դրա համար էլ այդ Հայաստանի հանդեպ առաջինը Ռուսաստանն է պահանջ ներկայացնելու, քանի որ հայերի մյուս կեսը բնակվում է Ռուսաստանում: Դա Թուրքիայի բաժանման սկիզբն է լինելու: Ֆրանսիան գործողությունների ազատություն է ստանում Սիրիայում... Նախագիծը Հայաստանի մեջ է մտցնելու նաև Դիարբեքիրի վիլայեթը, որը մասամբ մտնում է մեր գոտու մեջ»[177]: Դուայենի առաջարկով խորհրդակցությունը նախագիծն ուղարկեց դեսպանությունների ներկայացուցիչների հանձնաժողովի քննարկմանը:

Պետերբուրգում Գերմանիայի դեսպան Պուրտալեան 1913թ. հունիսի 12-ին իր կառավարությանը գրում է, թե Սազոնովը դեմ է, որ Կ. Պոլսի խորհրդակցությանը մասնակցի Թուրքիան, քանի որ Թուրք ներկայացուցիչն ամեն ինչ կանի խորհրդակցության աշխատանքը խճողելու և բացասաբար ազդելու դրա արդյունքների վրա: Սազոնովն այն կարծիքին է, որ պետք է մշակվի արդյունավետ բարենորոգումների ծրագիր և ապահովվի եվրոպական վերահսկողությունը, ինչը բխում է նաև Թուրքիայի շահերից[178]:

Վանգենհայմը գնաց անազնիվ խաղի՝ չհակառակվել ռուսներին, որովհետև «գլխավորը ժամանակ շահելն էր, որպեսզի... արևմուտքից եկող թուրքական բանակը կարողանար հասնել Հայաստան և որպեսզի ստացվեր նախնական տվյալներ Անգլիայի դիրքորոշման մասին: Եթե Լոնդոնը հավանություն տար ռուսների առաջարկին, դրանով կապացուցեր, որ մտադիր չէ խոչընդոտել Թուրքիայի բաժանմանը»[179]: Բ. Դուտը, վկայակոչելով Կիպրոսի համաձայնագիրը, խնդրեց Անգլիային «Արևելյան և Հյուսիսային Անատոլիաների համար» տրամադրել գլխավոր տեսուչի մեկական թեկնածու՝ պայմանով, որ եթե Լոնդոնը մերժեր, դիմելու էր մի այլ տերության: Թուրքերը նուրբ քայլ կատարեցին, որ գլխավոր նպատակը ոչ թե տեսուչների թեկնածուների հարցի լուծումն էր, այլ ռուսական ծրագրի ձախողումը: Ի հակադրություն Մանդելշտամի նախագծի թուրքերը մեկ նահանգի փոխարեն առաջարկում էին երկուսը, այսինքն՝ բացառում էին Արևմտյան Հայաստանի տարածքների ամբողջական միավորումը: Սազոնովը հանդես եկավ թուրքական առաջարկի դեմ: Նրա կարծիքով պետք է հայկական վեց վիլայեթները մտցվեին վարչական մեկ միավորի մեջ, և դրա գլխավորը տեսուչը պետք է լիներ քրիստոնյա, ցանկալի էր՝ ոչ թուրքիայից: Նա գտնում էր, որ Մայիսյան ծրագիրը նոր պայմանների համար բավարար չէր, և նոր ծրագիրը ոչ թե պիտի կրկներ, այլ միայն բխեր 1895թ. ծրագրից ու բավարարեր նոր ժամանակների պահանջները:

Մանդելշտամի նախագծի շուրջ կրքերը բորբոքվեցին:

1913-ին կրկնվում էր 1878 թվականը: Հայկական բարենորոգումների հարցում Լոնդոնն արտաքուստ առանձնակի եռանդ չէր դրսևորում: Վանգենհայմը նույնիսկ գրեց, թե Անգլիան «կարծես հեռացել էր բեմից»[180]: Բայց այդ միայն արտաքուստ: Արդյունքում Անգլիան նորից շահեց՝ ա) թույլ չտվեց, որ Ռուսաստանը Օսմանյան կայսրությունից տարածքներ պոկեր, բ) 1913թ. մայիսին Թուրքիայի հետ ստորագրեց համաձայնագիր, որով իրավունք ստացավ ամրանալու Իրանում և Պարսից ծոցի շրջանում, գ) դադարեցվեց Բաղդադի երկաթուղու շինարարությունը, որպեսզի «այն չմոտենար անգլիական շահերի գոտուն», դ) Թուրքիան Անգլիային զիջեց Քուվեյթը: Դրա փոխարեն Լոնդոնը պարտավորվեց «բոլոր ջանքերը գործադրել հայերին հանգստացնելու և թույլ չտալու օտարերկրյա որևէ միջամտություն հայկական շարժման քողի տակ»[181]: Անգլիան երաշխավորում էր ասիական Թուրքիայի տարածքային ամբողջականությունը քառասուն տարով[182], թուրքական բանակի վերակառուցմանը տրամադրում էր երեք միլիոն ֆ. ստեռլինգ: Գրեյը 1914թ. մարտին խորհրդարանում խոստովանեց. «Անգլիայի քաղաքակա-

177 R 14080, Ab. 13152.
178 R 14080, Ab. 11869.
179 R 14080, Ab. 13152.
180 «Армянский вопрос и геноцид армян в Турции», 1913-1919, 1995, с. 128.
181 «Հորիզոն», 15.05.1913:
182 Davison R. The Armenian Crisis. 1912-1914. New York, 1948, p. 25.

նությունն ուղղված է Թուրքիայի անձեռնմխելիությանը»[183]: Գերմանիան իր շահերի թելադրանքները կյանքի էր կոչում միանգամայն ուրիշ եղանակով: Վանգենհայմը 05.06.1913 թվին գրում է Ցագովին, թե մեր խնդիրն է՝ «... Հայերին թեքել մեր կողմը և նրանց հանել ռուսական ազդեցությունից: Առանց Հայկական հարցի լուծման ցանկացած քաղաքականություն, որն ուղղված է պահպանելու թուրքական գերիշխանությունը, հեռանկարից զուրկ է: Եթե գործը հասնի Թուրքիայի բաժանման, ապա հայերը պետք կլինեն ամրապնդելու Բրիտանիայի տիրապետությունը նրա շահերի գոտում»[184]: Վանգենհայմը այն կարծիքին էր, որ հյուպատոսություններն անզոր են կանխելու հայերի վրա թուրքերի հարձակումները: Նա գտնում էր. որ անհրաժեշտ է ունենալ եվրոպական վկաներ, ովքեր «անմիջապես մարտի մեջ մտցնեին ժանդարմների և զորքերի դեմ»: Դա հնարավոր է, եթե «վտանգավոր տեղերում պահվեին արտասահմանյան տեսուչներ և սպաներ համապատասխան իրավասություններով»[185]:

Չնայած Գերմանիան և Ավստրո-Հունգարիան հավանություն տվել էին բարենորոգումների ծրագրերի քննարկանն ու փաստորեն մասնակցում էին դրան, չէին դադարում ծավալել դիվանագիտական գրագրություն մեկ նպատակով՝ գտնել առավելագույն նպատակահարմար միջոց բարենորոգումները ձախողելու արդեն ծրագրերի քննարկման փուլում:

1913թ. հունիսին Վանգենհայմը ծածկագրեց Բեռլին. «Մեծ վեզիրը խնդրում է նորին մեծություն կայսրին հաղորդել, որ ուղարկվեն գերմանացի գեներալներ, որպես թուրքական բանակի ղեկավարներ»[186]: Նոյեմբերին այդ առաքելության հետ ստորագրվում է պայմանագիր: Սկզբում առաքելությունը կազմված էր 42 հոգուց, պատերազմի ժամանակ այդ թիվը հասավ 800 հոգու: Շուտով հայկական բարենորոգումների քննարկումների մեջ մտավ նաև Ավստրո-Հունգարիան, որը նույնպես «շահագրգռված էր Ասիայում օսմանյան տիրապետության պահպանման մեջ»[187]: Բեթման-Հոլվեգին 1913թ. փետրվարի 8-ին գրած նամակում Վանգենհայմը մասնավորապես նշում է. «...Պ. Նուբար փաշան գտնում է, որ բարենորոգումները տեղից կշարժվեն, եթե ծրագրի մշակմանը գործնական մասնակցություն ունենա Գերմանիան»: Գերմանիան չնայած ուղղակիորեն շահագրգռված չէ բարեփոխումներով, բայց երևի ձգտում է, որ դրանք անցկացվեն նաև Կիլիկիայում իր վերահսկողության տակ: Գերմանիան... դրանով երաշխիքներ կստեղծեր տնտեսական ու քաղաքական գերիշխանության համար»[188]: Պալավիչինին անվերապահ դեմ էր Փոքր Ասիայում Ռուսաստանի ազդեցությանը և ըստ այդմ էլ մերժում էր Պետերբուրգի հովանու տակ բարենորոգումների անցկացումը: Եվ ապա. «...Ռուսաստանի կողմից հայկական բարենորոգումների առաջ քաշման մեջ ես տեսնում եմ լուկ նրա էքսպանսիայի հին քաղաքականության վերսկսում և չեմ կարող հավատալ, որ Ռուսաստանն անկեղծորեն կձգտի Ասիայում Թուրքերի իշխանության հզորացմանը»[189]:

Գերմանական խմբակցությունն, իհարկե, հաճույքով կձախողեր բարենորոգումների ծրագրի մշակումը, բայց, ինչպես գրում է Վանգենհայմը. «Համաժողովի ձախողումն ահիթ կդառնար հայկական հուզումների համար»: Ուստի վտանգավոր է դրա դեմ «կտրուկ հանդես գալը»: Նման դիրքորոշումը դեսպանի նախաձեռնությունը չէր, այլ Բեռլինի հրահանգը՝ «...Գերմանիան չի բարձրացնի հայկական բարեփոխումների հարցը, իսկ եթե Անտանտը այն բարձրացնի, խնդրում եմ բացատրել,- թելադրում է Գերմանիայի ԱԳ նախարարը,- որ հայկական բարենորոգումները պահանջում են բոլոր մեծ տերությունների համագործակցությունը... Մենք խուսափում ենք հայկական բարեփոխումների հարցը բարձրացնելուց, որովհետև... դա կարող է հայերին մղել նոր քարոզչության...»[190]:

183 «Մշակ», 08.03.1914:
184 PA-AA/R 14079.
185 Ն. տ.:
186 Մնացականյան Ա. Գերմանո-Թուրքական զավթիչների գործակալության ձախողումը Կովկասում, Ե., 1948, էջ 37:
187 Ohangjanian A., Osferreich-Armenien 1872-1936, Wien, 1995, &. 398.
188 «Армянский вопрос и геноцид армян...», с. 30-32.
189 Ohangjanian A., նշվ. աշխ. էջ 4022:
190 «Армянский вопрос и геноцид армян...», с. 53-54.

Ուստի պատահական չէր Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի կառավարությունների մերժողական վերաբերմունքը Ա. Մանդելշտամի նախագծին: «Այն կլիներ Ասիական Թուրքիայի բաժանման առաջին քայլը»,- գրում է Պալավիչինին[191]: «Ռուսական նախագիծը,- գտնում է Վանգենհայմը,- նվազեցնում է սուլթանի սուվերենիտետը... Ռուսական նախագիծը նպատակ ունի Հայաստանը դարձնել ինքնավար նահանգ, ինչը վնասակար է Թուրքիայի տարածքային status que-ի համար»[192]: Նման կողմնորոշման պայմաններում երկու երկրի դեսպանները ոչ միայն արձանագրում էին իրողությունը, այլ գործում էին բարենորոգումները ձախողելու ուղղությամբ: Պալավիչինին հուլիսի 11-ին գրում է Վիեննա. «Մինչև հիմա հաջողվել է ձգձգել բարեփոխումների նախագծի քննարկումը առանց ռուսների կասկածը հարուցելու»[193]: Վանգենհայմը նաև գտնում էր. «...Մեր շահերի տեսանկյունից առաջարկվում է տերությունների հետ անհապաղ բանակցություններ սկսել բարեփոխումների շուրջ՝ վերահսկողությունը պետությունների ջեռքը վերցնելու համար, այլապես ռուսները կշարունակեն թունավորել հայ բնակչությանը»[194]: Այս տրամաբանության ընթացքը գծագրում է Հայկական հարցի լուծման հետևանքով առաջանալիք մի համաեվրոպական քաոս, որը կարող էր ծնել փոքր ու մեծ բախումներ:

Տրապիզոնում Ավստրիայի հյուպատոսը 1914թ. հունվարի 30-ին գրում է, թե Ռուսաստանը հայերին խոստացել է Ֆինլանդիայի նման ինքնավարություն: «Բարեփոխումներն իրականացնելու դեպքում Ռուսաստանը կհրահրի հայերին թուրքերի դեմ, այդ նպատակով շատ փող կբաժանի, հեղափոխականներին ծածուկ զենք կտրամադրի և, եթե բռնկվի հայկական ապստամբություն, կմիջամտի», այսինքն՝ կսկսվի ռուս-թուրքական նոր պատերազմ անկանխատեսելի հետևանքներով[195]: Այս տրամաբանությունը միանգամայն հասկանալի էր, որովհետև աշխարհը աշխարհամարտի նախօրեին էր ու թե Անտանտը և թե գերմանական բլոկը պայքարում էին իրենց կողմում ունենալու Թուրքիային:

1913թ. նոյեմբերի 23-ին Հիրսը գրում է Սազոնովին. «Ինչպես Ձեզ հայտնի է... Գերմանիայի կառավարությունը վերջին ժամանակներս լարում է բոլոր ուժերը Օսմանյան կայսրությունում և, հատկապես, նրա փոքրասիական նահանգներում, իր ազդեցության ուժեղացման համար»[196]: Նաև այդ խնդրին էր ծառայում Սանդերսի առաքելությունը՝ ուժեղացնել Գերմանիայի ռազմական, տնտեսական, քաղաքական ազդեցությունը, ինչն ուղղակի հակասում էր ռուսական շահերին: Գերմանիայի հավակնությունները խափանելու համար Սազոնովը 23.10.1913թ. առաջարկում է ցարին թույլ չտալ Թուրքիայի կազմալուծում, դիմել ամենածայրահեղ միջոցների՝ զավթել Կ. Պոլիսը, Նեղուցները ու Հայաստանը որպես Փոքր Ասիայի հիմնարար դարպասներ: Երիտթուրքերը դրան հակադրեցին հակահայկական աննախադեպ շարժում, որպեսզի հարկադրեն հայերին հրաժարվելու եվրոպական վերահսկողությունից: Կ. Պոլսի արվարձաններից մեկում բացահայտվեց դավադրություն հայերի դեմ ջարդեր, եկեղեցիների և դպրոցների ավերումներ: Ամբոխը փողոցներում աղմկում էր. «Ոչ ոք իրավունք չունի հայ ժողովրդի անունից միջամտել Թուրքիայի ներքին գործերին»: «Թասքիր էֆքյարը» պատրիարքարանին մեղադրեց Պ. Նուբարի հետ համագործակցության համար: Թերթը գտնում էր, որ արևելյան վիլայեթներում հայերի թիվն այնքան փոքր էր, որ նրանք խորհրդարանում տեղեր կարող էին ունենալ միայն թուրքերի ու քրդերի հետ միասին: Ձեռնարկվեցին նաև հոգեբանական գրոհ պատրիարքարանի վրա: 13.11.1913-ի գիշերը մահմեդական էքստրեմիստները սև ներկ քսեցին Կ. Պոլսի Մաքրիքիոյ, արվարձանի հայկական և հունական եկեղեցիների դռներին, ապա դրանք ջարդեցին և թալանեցին: Նույն օրը պատրիարքը ստացավ սպառնալիքներ պարունակող նամակներ[197]: Խորհրդարանական ընտրությունների առիթով, գրում է Հիրսը Սազոնովին, Էրզրումում «մահմեդականներին գրգռում էին հայերի դեմ», նրանց սպառնում ջարդով, եթե ընդունվեր «տերությունների մշակած բարենորոգումների» ծրագիրը:

Դեռ 1912թ. նոյեմբերի 5-ին Սազոնովը Հիրսին հարցրել էր «Թուրքահայերի պաշտպանության» անհրաժեշտության վերաբերյալ: Հիրսը պատասխանել էր. «Ես խոստովանում եմ, որ կաթողիկոսի դիմումը ճշմարիտ է արտահայտում Թուրքահայերի տրամադրությունները Ռուսաստանի վերաբերյալ... Հարկ է ինչպես կաթողիկոսին, այնպես էլ Կ. Պոլսի պատրիարքին հավատ ներշնչել, որ կայսերական կառավարությունը կընդառաջի հայ ժողովրդի խնդրանքին և հարկ եղած պահին նրան կհովանավորի»[198]: Նոյեմբերի 30-ին Սազոնովը օսմանցի դեսպանին ասում է. «Մեր կարծիքով, եթե Տաճկահայաստանում ժամանակին չանցկացվեն լուրջ բարեփոխումներ, ապա Թուրքիայի կառավարությունը գործ կունենա Հայկական հարցի այնպիսի սրվածության հետ, ինչը կարող է առաջացնել Եվրոպայի տերությունների միջամտությունը»[199]: Պետերբուրգը Կ. Պոլսից պահանջում էր դադարեցնել հայկական ջարդերը և հայկական տարածքներում մուհաջիների բնակեցումը: Նոյեմբերի 30-ին Սազոնովը Թուրքիայի դեսպանին ասաց, թե «վերջին ժամանակներս Փոքր Ասիայում հայերի վիճակը նշանակալիորեն վատացել է, նրանց արդարացի բողոքն են առաջացնում քրդերի կողմից հալածանքները, անձի և ունեցվածքի անվտանգության բացակայությունը, ինչը հետևանք է տեղական վարչությունների ոչ կրոնական աշխատանքի»[200]: Ամբողջ 1912-13 թվականների ընթացքում Հայկական հարցը ծանրակշիռ տեղ էր գրավում տերությունների արտաքին քաղաքականության, դիվանագիտական հանդիպումների ու գրագրության մեջ:

Սուր քննարկումներ էին գնում նաև թուրք հասարակության ներսում: «Թասֆիրի էֆքյարը» դատապարտում էր «անարդար միջամտությունը», որ Եվրոպան կատարում էր հանուն քրիստոնյաների շահերի: Թերթը զարմանում էր, որ Բ. Դուռը կարողանում էր «պահպանել սառնասրտություն» դրսի անտեղի առաջարկությունների հանդեպ: Իսկ Սազոնովը Հիրսին հանձնարարում էր. «Բ. Դռանը մատնացույց անել սպառնացող վտանգը, եթե նա միջոցներ չձեռնարկի հայկական նահանգներում անկարգությունները կանխելու ուղղությամբ»: Սայիդ Հալիմը ռուսներին խնդրեց «գնահատել Թուրքիայի կատարած զիջումները, որոնք ծանր են անդրադառնում նրա ինքնասիրության վրա»[201]: Դրան հակառակ Վանգենհայմը գտնում էր, որ բարենորոգումների ռուսական նախագիծն այլ բան չէր, եթե ոչ գործիք, որը «պետք է ծառայեր ոչ թե հայերի շահերին, այլ ռուսական քաղաքականությանը»[202]: Նա վկայակոչում էր Ակնունուն հաստատելու այն միտքը, թե նույնիսկ Ադանայի ջարդերից հետո հայերը «հրաժարվեցին վերադառնալ ահաբեկչական (պետք է հասկանալ հայդուկային) գործողությունների, քանի որ նրանց ճնշող մեծամասնությունը, չնայած բոլոր հիասթափություններին, հանդես է գալիս թուրքական կայսրության պաշտպանության օգտին»: Այսինքն՝ անգամ 1913թ. դաշնակցությունը կանգնած էր երիտթուրքերի հետ համագործակցելու դիրքերում և պահանջում էր միայն բարենորոգումներ անցկացնել և նաև, որպեսզի որևէ տերություն կամ «տերությունների խումբ հանդես գար այն բանի օգտին, որ վերջ տրվեին հայերի հանդեպ մշտական անկարգություններին»: Բ. Դուռն այդ էր անում, որովհետև չուներ անհրաժեշտ ուժ: «Եթե այս անգամ էլ չձեռնարկվեն իրական բարենորոգումներ, ուրիշ հնար չի մնում, բացի Ռուսաստանի օգնությունից»[203]: Գերմանիայի շահերը պահանջում էին, գրում է Վանգենհայմը, Թուրքիային հզորացնել Ասիայում: Առաջ քաշելով բարենորոգումների անհրաժեշտության խնդիրը՝ Գերմանիան չպետք է ձգտեր Հայկական հարցում առաջատար դերի, հակառակ դեպքում դա կառաջացներ տերությունների անվստահությունը[204]:

191 Ohangjanian A. նշվ. աշխ. էջ 4036:
192 «Армянский вопрос и геноцид армян...», с. 78-79.
193 Ohangjanian A. նշվ. աշխ. էջ 4080:
194 «Армянский вопрос и геноцид армян...», с. 115.
195 Ohangjanian A. նշվ. աշխ. էջ 4300:
196 «Сборник дипломатических документов...», с. 122.
197 Լևոն Վարդան Թող Թուրքը խոսի, Բեյրութ, 1975, էջ 24-25:

198 «Реформы в Армении...», N1, с. 4.
199 «Сборник дипломатических документов...», Реформы в Армении, Բ-գ, 1915, N 2, с. 5-6.
200 Ն. տ.:
201 R 14077, Ab. 1718pr.
202 R 14080, Ab. 5408.
203 Ն. տ.:
204 Ն. տ.:

Ա. Մանդելշտամի նախագծով բարենորոգումները նախատեսված էին Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի Սեբաստիայի վիլայեթների համար: Նախագծում վարչական բաժանումների հիմքում դրված էր ազգային-տարածքային սկզբունքը: Հայկական նահանգի գեներալ-նահանգապետ (վալի ումումի) պետք է լիներ կամ օսմանահպատակ քրիստոնյա կամ էլ եվրոպացի, որին նշանակելու էր սուլթանը եվրոպական պետությունների համաձայնությամբ: Գեներալ-նահանգապետը նահանգի գործադիր բարձրագույն իշխանությունն էր: Նա էր նշանակելու բոլոր պատասխանատու աշխատողներին, այդ թվում նաև դատավորներին: Նրան էին ենթարկվելու նաև ոստիկանությունն ու ժանդարմերիան: Պահանջի դեպքում նահանգապետի տրամադրության տակ դրվելու էր զորքը: Նահանգապետին կից ստեղծվելու էր վարչական խորհուրդ խորհրդակցական իրավունքով: Խորհրդի կազմը նշանակովի էր՝ բաղկացած նահանգային հիմնարկների պետերից, կրոնական ղեկավարներից, տեղում պաշտոնավարող եվրոպացի խորհրդականներից՝ հավասար թվով մահմեդական և քրիստոնյա անդամներով, ովքեր ընտրվելու էին կազաների ընտրական կոլեգիաների կողմից: Ժողովն ընտրվելու էր հինգ տարով և գումարվելու էր տարեկան մեկ անգամ երկու ամսով: Գեներալ-նահանգապետն ունենալու էր իրավունք ժողովն արձակելու. արձակման և գումարման հրամանները տալու էր սուլթանը: Նահանգային ժողովի ընդունած օրենքները հաստատվելու էին սուլթանի կողմից: Վարչական խորհուրդներ ստեղծվելու էին նաև սանջակներում և կազաներում: Նահիեների սահմանները նույնպես գծվելու էին ազգային սկզբունքով, այսինքն՝ այնպես, որ մի գյուղախմբում առավելագույնս միավորվեին միևնույն ազգությանը պատկանող բնակչություն ունեցող գյուղերը: Այն կառավարելու էր մյուդիրը ընտրովի խորհրդի հետ միասին: Մյուդիրը պետք է լիներ տվյալ նահիեի ազգային մեծամասնության, իսկ տեղակալը՝ փոքրամասնության ներկայացուցիչը: Ցուրաքանչյուր համայնքի համար նշանակվելու էր մեծամասնություն կազմող ազգությանը պատկանող հաշտարար դատավոր: Սանջակի դատարանները լինելու էին միայն քաղաքացիական, իսկ քրեական գործերը լսելու էին երդվյալ դատարանները: Նահանգն ունենալու էր մեկական ոստիկանական և ժանդարմական գունդ, որոնց կազմի կեսը՝ քրիստոնյա: Դրանք ղեկավարվելու էին օսմանյան ծառայության մեջ գտնվող եվրոպացի սպաների կողմից: Համայնքներին կից գործելու էին գյուղական պահակներ: Խաղաղ ժամանակ զինակոչվածները ծառայությունն անցկացնելու էին իրենց համայնքներում: Համիդիե գնդերը լուծարվելու էին: Վարչական ծառայողների ու նահանգի դատավորների կեսը լինելու էին քրիստոնյա: Ընտրելու և ընտրվելու իրավունք ունենալու էր միայն նստակյաց բնակչությունը: Պաշտոնական գրագրությունը տարվելու էր թուրքերեն, հայերեն, քրդերեն: Դատարանում քաղաքացին կարող էր հանդես գալ մայրենի լեզվով, դատավճիռներն արձակվելու էին թուրքերեն, նաև տալով դրանց թարգմանությունը: Համայնքներին իրավունք էր վերապահվում հիմնելու ազգային դպրոցներ և դրանք պահելու համար տվյալ համայնքում սահմանելու տուրքեր: Դասավանդումը տարվելու էր մայրենի լեզվով: Բոլոր դպրոցներում թուրքերենի դասավանդումը մնալու էր պարտադիր: Գեներալ-նահանգապետի նախագահությամբ ստեղծվելու էր հայերից խլված հողերի հարցով զբաղվող հանձնաժողով: Ճանաչվելու էին 1863թ. հայ Ազգային սահմանադրությունը և սուլթանի կողմից հայերին տրված մյուս առանձնաշնորհումները: Հայաբնակ նահանգներում մուհաջիրների բնակեցումն արգելվում էր: Բարենորոգումների վրա վերահսկողությունն իրականացնելու էին մեծ տերությունները[205]:

Զեմալն իր հուշերում ներկայացնում է Ա. Մանդելշտամի նախագիծն ու ավելացնում. «Ես կարծում եմ, և դա կասկածից դուրս է, որ այս նախագիծն ընդունելուց ամենաուշը մի տարի անց Էրզրումի, Սըվազի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Մամուրեթ ուլ Ազիզի վիլայեթները կամ Ռուսաստանի հովանու տակ կլինեին կամ, որ ավելի հավանական է, Ռուսաստանը կտիրանար դրանց»[206]:

Թուրքերի մերժողական կեցվածքի պատճառը միայն այդ չէր, այլ նաև այն, որ նրանց համար հոգեբանական պատնեշ էր «հավասարություն և արդարություն» հասկացությունը: Հպատակներին հավասարություն տալը նշանակում էր թուրքի մենատիրության և գերակայության

205 «Реформы в Армении...», стр. 61-69. Զեմալ փաշա Հայկական հարցը, էջ 33-41:
206 Ն. տ., էջ 41:

վերջ: Ֆրիցմորիսի խոսքերով թուրքը դրանց հետևանքը համարում էր իր «մի կողմ քաշվելը» և տեղը զիջելը հպատակ ժողովուրդներին: «Ըստ երևույթին, թուրք ղեկավարները կրցան լուծում մը գտնել գերիշխանության հարցին մեջ ինքնապահպանումի իրենց բնազդին և հավասարության և ազդեցության նոր գաղափարներու իրագործումին միջև յառաջացած ընդհատումին»[207]: Ավելի առաջադեմ քրիստոնյա ազգությունների վրա մահմեդականի տիրապետությունն ամեն կերպ պահելու վճռականությունն, ըստ էության, մեկն էր ջարդերի գլխավոր և «իրական պատճառներից»[208]: Ինչպես գրում է անգլիացի գործակալներից մեկը, թուրքական գերակայությունը պահվել էր միայն ուժի և մերթընդմերթ գործադրվող ջարդերի միջոցով: Եթե ոչ մահմեդականներին իրավունք տրվեր զարգանալու, թուրքերը կհայտնվեին անելանելի կացության մեջ: Հետևաբար թուրքը չէր կարող հոժարակամ զիջել իր գերակայությունը[209]:

Թուրքական դարավոր գերիշխանությունը և ազգերի հավասարության գաղափարն անհարիր էին: Հակամարտությունը խաղաղ լուծվել չէր կարող: Հավանաբար նաև հավասարության վախն էր խթանում խտրականությունների սաստկացում:

Միջազգային կյանքում տեղի ունեցած առճակատումը և երկու բլոկների ստեղծումը ևս դեր խաղացին: Ինչպես նշում է Ահմեդ Էմինը, երիտթուրքերը մտավախ էին, որ եթե չտաք միջոցներ չձեռնարկվեին, Թուրքիայի հանդեպ վերաբերմունքը կնմանվեր չունչը փչած որսի հանդեպ վերաբերմունքին: Երիտթուրքերը քայքայման առաջն առնել չկարողացան: Նրանց օրոք կայսրությունը կորցրեց 424 հազ. քառ. մղոն տարածություն և գրեթե դուրս քշվեց Եվրոպայից: Նախ դրա համար կառչեցին Անատոլիայից[210]: Երիտթուրքերը նաև չկարողացան Թուրքիան փրկել Եվրոպայի տնտեսական ստրկացումից. «Թուրքիոյ արգելուած է այսօր վայելել բոլոր անկախ պետութիւններուն շնորհուած իրաւունքը...»[211]: Երրորդ բանակի բժշկական ծառայության պետի կազմած տեղեկանքում նշված է, որ Արևելյան նահանգների բնակչության 72%-ը ոչնչտ էր, միայն 0.7%-ը գիտեր գրել-կարդալ: Մինչդեռ քրիստոնեական գյուղերում գրել-կարդալ գիտեր 21%-ը[212]: Այս և նման բազմաթիվ իրողությունները նորից ու նորից համոզում էին թուրքերին, որ հավասար պայմաններում հայերն անպայման գերակշիռ վիճակում էին լինելու: Այդ պատճառով էլ թուրքի համար բարենորոգումներն ու հայկական նահանգների կորուստը միևնույն բաներն էին: Ի դեպ, այդպես էին մտածում ոչ միայն թուրքերը: Ժ. Կայզերը եզրահանգեց. «Հիվանդ մարդը կարծես մեռնում է»[213]: "Новое время"-ն 1913թ. մայիսի 28-ին գրեց. «Հայ ժողովրդի վերածնունդը մնասակար է թուրքական պետության շահերի համար: Բարենորոգումները հայկական նահանգներում խանգարում են պանթուրքիզմի ոգով թուրքական Փոքր Ասիայի զարգացմանը»:
Եվ պատահական չէր, որ Կ. Պոլսում «մեծ տերությունների դեսպաններն իրենց հյուպատոսություններից ամեն օր տեղեկություններ էին ստանում թուրքերի ու քրդերի կողմից հայ բնակչության նկատմամբ գործադրվող վերջ չունեցող բռնությունների մասին: Թուրքիայի կառավարությունը ոչ միայն չէր խոչընդոտում այդ անկարգություններն, այլև խրախուսում էր...»[214]:

Ինչպես նշում է Ա. Միլլերը, պանթուրքիզմը «ուղղված լինելով Ռուսաստանի դեմ, կտրուկ վատթարացրեց, առանց այն էլ լարված ռուս–թուրքական հարաբերությունները»[215]: Հակառուսական հիստերիան գագաթնակետին հասավ դեսպանաժողովում Մանդելշտամի նախագծի քննարկման օրերին: Հակառակ Ռուսաստանի հորդորներին՝ արագացնելու ծրագրի ընդունումը, տերությունների դեսպանները նախագծի քննարկումը ոչ միայն հանձնարարեցին դեսպանությունների երկրորդական պաշտոնատարներից կազմված հանձնաժողովին, այլև իրենց ներկայացուցիչներին ցուցում տվեցին ձգձգել քննարկումը[216]:

207 Նասիբյան Ա. Բրիտանիա և Հայկական հարցը. 1915-1923, Բեյրութ, 1994. էջ 25:
208 BDOW, X, 1, pp. 511-512, FO Handbook no. 59, Anatolia, p. 36:
209 FO 371/546/30969; Bryce Papers, UB64, Lowther to Tyrrel, 30.08.1909.
210 Ahmad E. The Young Turks, pp. 152-153.
211 Օտարերկրացիները Հայկական հարցի մասին, էջ 63:
212 Emin A. Turkey in the World War, New Haven, 1930, pp. 83, 81.
213 Кайзер Ж. Европа и новая Турция, Москва, 1925, стр. 7.
214 Օտարերկրացիները Հայկական հարցի մասին, էջ 36:
215 Миллер А. Ф. Краткая история Турции, Москва, 1948, стр. 137.
216 Wien HHSTA PA XII 463, Jenikoj, 10 Juni 1913.

Կ. Պոլսի Ենի-Քյոյ արվարձանում, Ավստրո-Հունգարիայի դեսպանատան ամառանոցում 1913թ. հուլիսի 3-ին աշխատանքը սկսած Հայկական բարենորոգումների հանձնաժողովից եռյակ զինակցության երկրները նորից պահանջեցին ռուսական նախագծի հետ միասին քննարկել թուրքական նախագիծը: Անտանտի երկրները չհամաձայնեցին: Հարցի քննարկումը հետաձգվեց: Վանգենհայմը թուրքական առաջարկները շատ ավելի ընդունելի էր համարում, քան «ռուսական վտանգավոր ծրագրերը»: Մեծ վեզիրը հայտնեց, թե համաձայն է ստեղծել Հայաստանի վրա վերահսկողություն իրականացնող հանձնաժողով[217]:

Մանդելշտամի ծրագրով նախատեսված մեկ ընդհանուր նահանգի գաղափարը հիմնավորված էր վարչական ծախսերը կրճատելու, վալու ընտրությունը հեշտացնելու, նրա հեղինակությունը հզորացնելու փաստարկներով: Գերմանացիները դրան պատասխանում էին՝ Հայաստանում խոշոր վարչական միավորի ստեղծումը խիստ վտանգավոր էր, և կառավարման համար անհարմար՝ մանավանդ ձմեռները, երբ ճանապարհների զգալի մասը փակվում էր, հեռագիրն էլ անկանոն էր աշխատում: Բացի դա, տեղերում խաղաղություն հաստատելու համար կպահանջվեր զինվորական մեծ ուժեր, որոնք քաղաքներում վալիներ չլինելու հետևանքով դառնալու էին իրավիճակի տերերը և խոչընդոտելու էին բարենորոգմանը:

Հայկական այդ նահանգի մեջ նախատեսված էր միավորել Թուրքիայի տարածքի 1/7-ը, այսինքն՝ Գերմանիայի տարածքի կեսի չափ՝ հավասար Ռումինիայի և Բուլղարիայի տարածքներին՝ միասին վերցրած: Դրա հետ միասին նահանգից դուրս էին մնում տարածքներ, որտեղ հոծ հայ բնակչություն կար: Օրինակ, գրում է Վանգենհայմը, Ադանայի վիլայեթի հյուսիսը, որտեղ «հայ տարրն ամենամեծաթիվն է ու խիստ բնակեցված: Հետևաբար, եթե ռուսներն իրականում շահագրգռված լինեին միմիայն հայ բնակչության վիճակի բարելավմամբ, ապա չպետք է փոքրացնեին վիլայեթների թիվը, այլ ընդհակառակը, հարկ էր ավելացնել Հալեպի, Մոսուլի, Ադանայի, Անկարայի վիլայեթների զգալի տարածքներ»: Միայն հայ տարրից կազմված վարչական միավորի ստեղծմամբ ռուսական կառավարությունը նկատի ուներ, որ վաղ թե ուշ այդ հայերը ձգտելու են մերձենալ իրենց ազգակիցներին, ինչը կօգներ իրենց ազդեցության ուժեղացմանը: Գերմանիայի համար ռուսական ծրագիրն անընդունելի էր, գրում է դեսպանը, նաև այն պատճառով, որ վարչական միավորի հարավային շրջաններն ընկնում էին Գերմանիայի ազդեցության գոտում՝ նկատի էր առնվում Բաղդադի երկաթուղու պլանավորված ճյուղավորումների կառուցման հեռանկարը: Դրա հետևանքով գերմանական ազդեցության գոտու բնակչության մի մասի վիճակը բարելավվելու էր, իսկ մյուս մասինը՝ ոչ, ինչը, անկասկած, մեծացնելու էր Ռուսաստանի հեղինակությունը և վնասելու Գերմանիայի հեղինակությանը: Թուրքիայի ամենալավագույն մասերից մեկում ամենախաղաղ բնակչության համար բարենորոգումներ մտցնելը վտանգում էր Օսմանյան կայսրության բուն գոյությունը: Քանի որ նրա մյուս մասերն էլ կպահանջեին տարածքային բարենորոգումներ, կայսրությունը կբաժանեին մանր միավորների[218]:

Եռյակ զինակցության երկրների հակաքայլերը չեզոքացնելու համար Պետերբուրգում այդ երկրների դեսպաններին հանձնվեց արտասահմանում գործող ռուսական դիվանագետներին ուղարկված հրահանգը, որում ասված էր, թե Ռուսաստանը, ինչպես և մյուս տերությունները, բացասաբար են վերաբերվում Օսմանյան կայսրության բաժանման մտքին, թե Թուրքիայի ամբողջականության պահպանումը զգալիորեն կախված է հայերի վիճակի բարելավումից, քանի որ նրանք ամենաշատն են տուժել վատ կառավարումից, թե Ռուսաստանն այլևս երկար հանդուրժել չի կարող «խրոնիկական դարձած անիշխանությունը» հարևան Թուրքիայում, որը կործանարար ազդեցություն ուներ Կովկասի վրա: Սազոնովը հայտարարեց. «Հայերը ոչ սլավոններ են և ոչ էլ ռուսների հավատակիցներ, այսինքն՝ հայկական բարենորոգումների զգացմունքային կողմը նկատի առնվել չի կարող»: Նա նաև նշեց, «Թուրքիայի հաշվին որևէ տարածք բռնագրավելու մասին Ռուսաստանը չի մտածում, դեռ ավելին, ունի ազնիվ ցանկություն, որ Թուրքիան շարունակի մնալ իր ներկայիս տիրույթներում և համախումբ»[219]: Հետևեցին Գերմանիայի և Անգլիայի հայտարարությունները՝ Մանդելշտամի նախագիծը «անխուսափելիորեն հանգեցնելու է Թուրքիայի բաժանմանը»[220]:

217 R 14080, Ab. 13363.

218 Реформы в Армении, стр. 74-75.

219 R 14080, Ab. 13761.

Դեսպանաժողովի ութ նիստերում բուռն քննարկումներ գնացին: Ավստրիայի ներկայացուցիչն առաջարկեց պահպանել վալիների հաստիքները: Մեծամասնությունը դեմ արտահայտվեց վեց վիլայեթներում մեկ գլխավոր նահանգապետ ունենալուն: Պահանջվեց ձևավորել երկու նահանգ երկու նահանգապետով, ովքեր կնշանակվեին առանց որևէ օղակի հետ համաձայնեցնելու: Նշվեց, որ ռուսական նախագիծը խուզում էր սուլթանի սուվերեն իրավունքները, ինչը թույլատրելի չէր, որ այդ նախագիծը միտված էր Հայաստանը դարձնել ինքնավար նահանգ, ինչը սպառնալիք էր stasus que-ի քաղաքականությանը: Մանդելշտամը եռյակ զինակցության կառավարությունների ներկայացուցիչներին անվանեց սուլթանի ու ջարդերի կազմակերպիչների փաստաբաններ[221]:

Վանգենհայմը, բնութագրելով Անգլիայի քաղաքականության երկդիմի բնույթը, գրում է. «Այն բանից հետո, երբ Անգլիան խոստացավ պաշտպանել արևելյան և հյուսիսային գոտիների համար երկու գլխավոր տեսուչներ ունենալու առաջարկությունը, կարծեցինք, թե անգլիական դեսպանությունը եռանդով կկնդի Մանդելշտամի նախագծի վրա, եթե մենք մեծ զսպվածություն չդրսևորեինք: Սակայն այդ կանխագուշակությունը չարդարացավ», նա մինչև դեսպանաժողովն էր արտահայտել իր բացասական վերաբերմունքը ռուսական նախագծին: Անգլիայի իսկական կարծիքն այդպես էլ չէր բացահայտվում: Մինչդեռ ժողովում «ոչ մեկի մտքով իսկ չէր անցնում, թե մենք թույլ կտանք Մեծ Հայաստանի ստեղծում: Մեր և ռուսական դեսպանության միջև միաբանություն չկա: Հակասությունները նոր չեն, այլ այն օրվանից, երբ ձեռնամուխ եղանք մեզ համար Փոքր Ասիայում «գործողության գոտի» ստեղծելուն»: Հանդես գալով հավասար, այլ ոչ թե համամասնական ներկայացուցչության դեմ Վանգենհայմը նկատում է, որ նահանգներում քրիստոնյաները, ինչպես օրինակ Վանում, Խարբերդում, կազմում են բնակչության 60%-ը, իսկ, օրինակ, Հալեպի վիլայեթի հյուսիսային մասում 20%-ը: Արտագաղթի հետևանքով խիստ կրճատվել է քրիստոնյա ազգաբնակչության թիվը: Սակայն բարենորոգումներ մտցնելուց հետո կսկսվի հակառակ գործընթացը, ինչը կարճ ժամանակում կփոխի Հայաստանի բնակչության ազգային կազմը հօգուտ հայերի: Ներկա պահին Հայաստանի առանձին մասերում քրիստոնյաների և մահմեդականների թվի ճիշտ հարաբերակցությունը հայտնի չէ անհրաժեշտ վիճակագրության բացակայության պատճառով: Միայն ընտրությունների ժամանակ է ներկայացվում Հայաստանում ազգաբնակչության տեղաբաշխման շատ թե քիչ պարզ պատկերը... Այս եղանակով ձևավորվում է մշտական բանաձև ազգաբնակչության երկու տարրերի հարաբերակցությունը որոշելու համար, որպեսզի սահմանվի ընտրովի մարմիններում յուրաքանչյուր ազգությանը տրվող տեղերի թիվը»[222]: Եռյակ զինակցության երկրները նորից առաջարկեցին բարենորոգումների համար հիմք ընդունել Բ. Դռան ծրագիրը, այն լրացնելով ռուսական ծրագրի առանձին կետերով՝ բարենորոգումների անցկացման վրա եվրոպական վերահսկողություն, վիլայեթների վարչական խորհուրդներում ունենալ տեխնիկական խորհրդատուներ, վալին պարտավոր էր հրավիրել նահանգային ժողով, եթե այդ էր պահանջում անդամների 2/3, ստեղծել ոստիկանական և ժանդարմեական զորամասեր եվրոպական մասնագետների մասնակցությամբ, ցրել համիդիեն, քոչվորներին զրկել ընտրական իրավունքից, թուրքերեն, հայերեն և քրդերեն լեզուներին տալ հավասար կարգավիճակ, բոլոր ազգություններն ազատ լինեն դպրոցներ բացելու գործում, ճանաչել հայ Ազգային սահմանադրությունը, շտապ լուծել ագրարային հարցը:

Ռուսաստանը վախենում էր, որ Մանդելշտամի նախագծի չընդունվելը հայերին կմղեր մյուս տերությունների գիրկն ու թույլ չէր տա իրականացնել իր պլանները[223]:

Գր. Զոհրապը գերմանական դեսպանատուն ներկայացրեց հայերի պահանջները՝ հաշվի առնել հայերի կողմից նախապես ներկայացրած նախագիծը և տերությունների համաձայնության

220 Реформы в Армении, стр. 76-77.

221 Mandelsdtam A. N. Le Sort de l'Empire Ottoman, Paris, 1917, p. 229.

222 R 14081, Ab. 15902.

223 R 14081. Ab. 16298.

պարտադիր լինելը միացյալ նահանգապետի թեկնածուի հարցում: Այդ պահանջներն ընդունելու դեպքում հայերը կհամաձայնվեին Հայաստանը բաժանել գոտիների ու վիլայեթների, նաև պայմանով, որ դրանց պաշտոնատարների ոչ միայն ազատումը, այլև աշխատանքի նշանակումն իրականացներ ընդհանուր նահանգապետը: Ներկայացուցչական մարմիններում հավասար տեղեր: Հայերը բացառում էին հայկական բարենորոգումների նույնացումը կայսրությունում ընթացող բարենորոգումների հետ[224]: Հիրսը դժգոհ էր, դժգոհ նաև հայերից, որոնց շարքերում Գերմանիայի ջանքերով տարընթացություն էր սկսվել, նրանցից ոմանք այլևս անվերապահ չէին պաշտպանում ռուսական նախագիծը, նաև վախենալով, որ «առաջիկա խորհրդարանային ընտրություններում մահմեդականները հայ թեկնածուներին կձախողեն»: Տվյալ պահին, նկատում է Ցագովը, նույնիսկ Ռուսաստանն էր ցանկանում պահպանել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը: Մենք ձգտում ենք Մանդելշտամի նախագծի շուրջ համաձայնության գալ, քանի որ հակառակ դեպքում Ռուսաստանը, նրա հետ նաև Անգլիան ու Ֆրանսիան, այլևս կձգտեն ձախողել մեզնից բխած ցանկացած նախաձեռնություն[225]:

Դեսպանաժողովի անհաջողության գործում փոքր չէր Լոնդոնի մեքենայությունների դերը: Ֆիտցմորիսը նկատում է, որ իր կառավարությունը պնդում էր 1895թ. ծրագրի վերահաստատման վրա, ինչն անգլիական ներկայացուցչին դրել էր անորոշ վիճակում, որովհետև անգլիացիները խոսքով ռուսական, իսկ գործով թուրքական նախագծի կողմն էին: Անգլիայի արտաքին գործերի նախարարության քարտուղար Լ. Մալլեթը գտնում էր, որ Թուրքիայի համար ճգնաժամային պահին ռուսական առաջարկության ընդունումը նշանակում էր կործանել Օսմանյան կայսրությունը[226]: Քաջալերված էր նաև Գերմանիայի դեսպանը, որովհետև անգլիական դիվանագիտության ղեկավարներ Է. Գրեյը, Լ. Մալլեթը, Ա. Նիքոլսոնը ըստ էության համաձայն էին նրա հետ:

Ֆիտցմորիսի վկայությամբ դեսպանաժողովը վերածվել էր Ռուսաստանի և Գերմանիայի միջև մենամարտի: Հուլիսի 24-ին հանձնաժողովն ավարտեց աշխատանքը: Այն ընդհանուր հայտարարի չեկավ: Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և Իտալիան շարունակեցին պաշտպանել Թուրքական նախագիծը: Ա. Մանդելշտամի նախագիծը մերժվեց: Եվ մերժվեց ոչ թե, որովհետև կխախտեր սուլթանի սուվերենությունը, ինչպես կարծում են մերօրյա «իմաստունները», այլ պարզապես խնդիր էր դրված «ռուսների ծրագրի նախագիծն անընդունելի» համարել և դրա իրականացմանը դեմ լինել[227]:

Այդ ընթացքում Քելեքյանը պատրիարքարանի անունից դեսպաններին երկու հուշագիր հանձնեց: Դրանցից մեկը վերաբերում էր հայերի արտագաղթին: Այն 1913-ին աննախադեպ չափերի էր հասել որպես հետևանք թուրքական բռնությունների սաստկացման: Երկրորդը ևս մեկ անգամ պահանջում էր հայաբնակ նահանգներում ստեղծել միացյալ վարչական միավոր, որի գեներալ նահանգապետը նշանակվեր տերությունների կառավարությունների համաձայնությամբ, իսկ այդ նահանգների խորհրդարաններում և պաշտոնեության կազմում ապահովվեր հայերի ու մահմեդականների հավասար ներկայացուցչություն, հայոց լեզուն ընդունվեր որպես պաշտոնական լեզու, բարեփոխվեր արդարադատությունը, վերադարձվեին հայերից խլված հողերը: Պալավիչինին գրեց, թե այդ առաջարկությունները քննելիս «անմիջապես նկատում ես... լիակատար նմանություն ռուսական նախագծին: Նմանությունն այնքան ակնհայտ է, որ ակամա միտք է ծագում, թե ռուսական դեսպանությունն ու հայկական պատրիարքարանը համագործակցել են կամ պատրիարքարանն առնվազն ծանոթ է պարոն Մանդելշտամի խզբզանքին...»[228]: Հակառակ կարծիքին էր Բերգֆելդը, որը 1913թ. դեկտեմբերին կանցլերին գրեց, թե, որպես կանոն, հայերը գրեթե երբեք բարենորոգումների բովանդակությանը չեն անդրադառնում, այլ միայն աշխատում են նկարագրել իրենց ծանր վիճակը, որից էլ պետք է բխեր բարենորոգումների բնույթը:

224 Kons/Ankara 166 Ab. 53*.
225 R 21 25 sek, zu, Ab. 15416.
226 FO, 195/2450, Rol. 48.
227 Wien HHSTA PA XII 463, Jenikoj, 11 Juni 1913.
228 Wien HHSTA PA XII 462, Jenikoj, 22 Juni 1913

Այս խնդրում հայերն ամենատարբեր կարծիքի են, «որքան մարդ, այնքան կարծիք»[229]: Այնուամենայնիվ զգալի թվով հայեր գերադասում էին մնալ Թուրքիայի կազմում երկյուղելով, որ ռուսական ուղղափառ եկեղեցին կռուսականացնի հայերին: Պատմության դառը կատակ: Հայերը քրիստոնեությունն ընդունեցին չձուլվելու համար, բայց նաև քրիստոնեական ուղղափառությունը մերժում էին սպանդի ենթարկվելու համար: Սակայն դա շատ ավելի կղերի տրամադրությունն էր, քան ժողովրդի: Ակնունին 1913թ. օգոստոսին Զմուռնիայում Ավստրո-Հունգարիայի հյուպատոսին ասաց. «...1908թ. հետո հայերի շրջանում գերիշխող թուրքաֆիլ տրամադրությունն այժմ տեղի է տվել ռուսաֆիլությանը, դրա մեղքն առաջին հերթին պետք է փնտրել երիտթուրքական կառավարության սխալների մեջ»: Նա նաև գտնում էր, որ «եթե բարենորոգումների ծրագիրը բավարար լուծում ստանա, ապա կվերանա հայկական սահմանամերձ շրջանները Ռուսաստանին միացնելու վտանգը»:

Ռուսների ձեռքից հայոց բարենորոգումների նախաձեռնությունը խլելու համար Բեռլինն օգտագործեց անգամ Լեփսիուսի հեղինակությունը, որն աշխատեց հայերին համոզել՝ «մի կողմ դնել բարենորոգումների ռուսական առաջարկությունները և ընդունել թուրքական կառավարության նախագիծը հետևյալ լրացումներով՝ հայաբնակ շրջաններում մուհաջիրներ կարող էին բնակեցվել միայն գեներալ-տեսուչների թույլատվությամբ, տեղական զինակոչով ձևավորված զորքերը պետք է գործեին միայն հայաբնակ նահանգներում, բացի արտակարգ իրավիճակներից, տերությունները պետք է մասնակցություն ունենային գեներալ- տեսուչների ընտրությանը, տեղական կառավարման ներկայացուցչական մարմինները ձևավորվեին մահմեդական և քրիստոնյա բնակչության հավասար թվով ներկայացուցիչներով»: Հայերը համաձայնեցին, չնայած, ինչպես նշված է պատրիարքարանի տեղեկագրում, «Գերմանիայի դեսպանը դոկտոր Լեփսիուսի միջոցով ամեն կերպ կջանար մեզ անջատել ռուսներին, չեզոքացնել և իրեն հետ կապելով, ուղղակի հարաբերության մեջ դնել օսմանեան կառավարության հետ»[230]: Գերմանիան Հայաստանում բազում շահեր ուներ, թե տնտեսական, թե ռազմավարական և թե քաղաքական: Կիլիկիան զավթելուց բացի աշխատում էր Փոքր Ասիայում իր եսակենտրոն շահերի համար օգտագործել հայերին: Կլեմանսոն գրում է. « Գերմանիան հետևողականորեն նախապատրաստվում է զավթելու Հայաստանը քաղաքականապես (բարենորոգումներ և բանակի վերակազմություն), տնտեսապես (երկաթուղիներ) և կրթական (բարձրագույն, միջնակարգ, ցածր և տարրական)[231]: Գերմանական մամուլը տարափողում էր, թե Անատոլիայում գերմանացիների ու հայերի շահերն «ընդհանուր» էին, թե Գերմանիան ի զորու է հայերին տալու ինքնավարություն[232]: Քայլեր կատարվեցին Հայաստանը ներքաշելու Գերմանիայի մշակութային-կրթական ազդեցության գոտի: Լեփսիուսը հավատիացնում էր, թե նրանք վայելում էին Գերմանիայի համակրանքը և ոչ մի ժողովուրդ հայերի հոգերը թեթևացնելու համար այնքան շատ բան չի արել, որքան Գերմանիան[233]: Իսկ Ռոհրբախը պահանջում էր «ջանք թափել կապ հաստատելու հայ ժողովրդի հետ», որ Փոքր Ասիայում, Գերմանիայի դիրքերը զորացնելու համար տնտեսականից բացի պետք է իրականացնել հոգևոր-մշակութային հաղթարշավներ: «Հայերը մեզ անհրաժեշտ են», որովհետև հայն, ավելի քան որևէ այլ արևելյան ազգ, «ունի ցանկություն և ընդունակություններ անհրաժեշտի յուրացման համար»[234]:

Աշխուժացան գերմանական գործիչների շփումները հայերի հետ, ինչին անմիջապես արձագանքեց Պետերբուրգը: Սազոնովը հայտարարեց, թե «հայ-գերմանական կոմիտեի շուրջ բարձրացված աղմուկը կարող է վնասել հայ-ռուսական հարաբերություններին: Հայերը քաղաքական սխալ թույլ կտան, եթե չկարողանան ժամանակին կանգ առնել և մեզ լուրջ առիթներ տան տարակուսանքի համար», քանի որ «գերմանացիները մեր նկատմամբ թշնամական քաղաքականություն են վարում»[235]: Նա Պետական դումայի անդամ Պապաջանովին ուղարկեց Բեռլին հանձնարարությամբ՝ դադարեցնելու հայ-գերմանական կոմիտեի գործունեությունը:

229 «Германские источники о геноциде армян», Ереван 1991, стр. 215
230 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 707:
231 «Հորիզոն», 27.07.1913:
232 «Красный архив», т. I, 1928, стр. 99.
233 «Հորիզոն», 28.06.1913:
234 ՀՀ ՊԿՊԱ, Քաղվածքների ֆոնդ, գ. 61:
235 Ն. տ., ֆ. 57, ց. 2, գ. 685:

Հայկական բարենորոգումների խնդիրն ավելի սուր բնույթ ստացավ Բալկաններում ուժերի փոխհարաբերություններում տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով: Թուրքիայի կողմից Ադրիանապոլսի գրավումը ռուսական դիվանագիտությանը դրեց բարդ խնդրի առաջ՝ այն լուրջ հարված էր Ռուսաստանի հեղինակությանը, մանավանդ, որ ռուսները ձախողվել էին նաև Ենի Քյոյեի խորհրդաժողովում: Պետերբուրգը եվրոպական տերություններին առաջարկեց ռազմանավերի միացյալ ցույց կազմակերպել Թուրքիայի դեմ, բայց նրան մերժեցին: Դրան հետևեց ցարական կառավարության սպառնալիքը՝ Ադրիանապոլիսը հետ չտալու դեպքում գրավելու է Արևմտյան Հայաստանը[236]: Սկսվեց ռազմական ուժի կենտրոնացում Կովկասում: Պլանավորվեց դեսանտ իջեցնել Տրապիզոնում: Ռուսաստանի քայլերն ընդհանուր դժգոհություն առաջացրին: Գերմանիան սպառնաց, թե սկսում է զորահավաք: Միահամուռ է հակազդեցությունը Բ. Դոանը ոգևորեց: Նա հայտարարեց, թե «գրավված հողերից ոչ մի թիզ չի զիջի»[237]: Պետերբուրգը հարկադրված էր նահանջել և հայտարարել, թե Արևմտյան Հայաստանը զավթելու որևէ մտադրություն չունի[238]:

Դեռ 1913թ. հունվարին հայ պատվիրակների հետ ունեցած զրույցի ընթացքում Վորոնցով-Դաշկովը փորձեց իմանալ, թե կաթողիկոսն ինչպես կվերաբերվեր, եթե Արևմտյան Հայաստանը բաժանվեր երկու մասի՝ գերմանական և ռուսական[239]:

Փոխարքան նաև հետ կանգնեց ինքնապաշտպանության նպատակով հայերին զենք տալու նախկինում իր արտահայտած կարծիքից, քանի որ «զենքի բացակայությունն անպայման նրանց կտրիպի ձեռնպահ մնալ ամեն տեսակի ակտիվ երևույթներից»: Ռուսաստանը պատրաստ չէր Արևմտյան Հայաստանի համար դիմելու ռազմական գործողություններ: Սազոնովը խոստովանեց, թե որքան անզոր էր սպառնալիքը գործի վերածելու, քանի որ դա կնշանակեր եվրոպական պատերազմ[240]: Սազոնովին հասկանալ կարելի է, քանի որ բալկանյան հրդեհը Ռուսաստանին հարկադրում էր զգույշ լինել Եոյակ միությունը չքանդելու համար: Նա Լոնդոնի և Փարիզի իր դեսպաններին հանձնարարեց, որ Բալկանյան պատերազմի շրջանում պատեհ չէ Հայկական հարցի քննարկումը միջազգային ասպարեզում, քանի որ Թուրքիան կօգտագործի պետությունների միջև եղած հակասությունները, մանավանդ, որ Լոնդոնում Թուրքիայի դեսպանն Անգլիային համոզում էր, թե Հայկական հարցն «այն լուրջ նշանակությունը չունի», ինչպիսին ուզում են դրան տալ, թե Ստամբուլը սեփական նախաձեռնությամբ պրդեն սկսել է բարենորոգումները[241]:

Հայկական հարցում միահամուռ չէր նաև ռուս հասարակությունը: «Հայերին օգնելու» կոչերի կողքին «Русское знамя» թերթը հնչեցնում էր՝ չպաշտպանել «խռովարար հայերին», ինչո՞ւ պետք է ռուս զինվորի «թանկագին արյունը թափվի ինչ-որ ասիական թափթփուկների համար»[242]: «Новое время»-ն խիստ հարձակումներ էր գործում ինքնավար Հայաստանի գաղափարի վրա, նշելով, որ այն «Թուրքիայում կծնի շատ տագնապներ և խռովություններ և, ի վերջո, կվերացնի ոչ միայն Ռուսաստանի հարաբերությունները հայերի, այլև վրացիների հետ, որոնք նույնպես չեն հապաղի հայտարարել ինքնավարության հարցում իրենց իրավունքների մասին»[243]: Ռուսաստանին այլ ելք չէր մնում, բացի զիջումների միջոցով հասնելու հայկական բարենորոգումների իրականացմանը տարածաշրջանում իր խարխլված հեղինակությունը փրկելու համար: Հույս չունենալով Ֆրանսիայի և Անգլիայի աջակցության վրա, Պետերբուրգը բանակցություններ մեկնարկեցին Բեռլինի հետ: Հուլիսի 25-ին Սազոնովը գերմանացի դեսպան Ֆ. Պուրտալեսին հանձնեց բարենորոգումների ծրագրի վերափոխված նախագիծ: «Ռուսաստանին,- գրում է պատմաբան Լ. Խոյադինը,- ուրիշ ոչինչ չէր մնում, բացի անմիջականորեն դիմել Գերմանիային»[244]: Հարցը հոկտեմբերի 22-ին Բեռլինում մանրամասն քննարկեցին Սազոնովն ու կանցլեր Բեթման-Հոլվեգը, որը խոստացավ աջակցել ռուս-թուրքական բանակցությունների հաջողությանը:

236 Материалы по истории франко-русских отношений за 1910-1914гг. Сб. документов бывшего российского МИД, 1922, стр. 393-395.
237 «Русская знамя», 25.07.1913.
238 «Новое время», 17.07.1913, «Հորիզոն», 27.07.1913.
239 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 61:
240 Davision R. The Armenian Crisis 1912-14, New. York, 1948, p. 18.
241 «Новое время», 04.12.1912.
242 «Русское знамя», 22.05.1912.
243 «Новое время», 24.12.1912.
244 Хоянян Л. Г. Експансия германского империализма в Турции и русско-германские противоречия по Армянскому вопросу, 1912-1914гг. Из истории агрессивной внешней политики германского империализма. Сб. Ст. Москва, 1959, стр. 42.

Նախագծի նոր տարբերակով տերությունների համաձայնությամբ գլխավոր տեսուչի պաշտոնի համար ներկայացվելու էր երկուական թեկնածու, որոնցից մեկին էր սուլթանը նշանակելու: Գլխավոր տեսուչն էր կադրերն ընտրելու տերությունների վերահսկողության ներքո: Նահանգային խորհուրդները կազմվելու էին հավասար թվով քրիստոնյաներից ու մահմեդականներից:

Թուրքերը չընդունեցին նաև այս տարբերակը, նրանք դեմ էին իրենց «ներքին գործերին միջամտելուն»:

Բանակցությունները ձգձգվեցին, հայերը հասկացան, որ շարունակվում է բազմիցս կրկնված կատակերգությունը և սկսեցին զինվել ինքնապաշտպանության համար: Դա էլ պատրվակ դարձավ, որպեսզի բանակցությունները ձախողվեին: Օտար դիվանագետները հայերի զինված լինելու դեմ քարոզչական շուներ կազմակերպեցին: Հալեպում Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Դանդինին գրեց. «Հայերը շատ լավ զինված են, մեծ քանակությամբ պայթուցիկ նյութեր ունեն: Նրանք որոշել են պաշտպանվել մինչև վերջ»[245]:

Ռուսաստանի հետ բանակցությունների մեջ մտնելը Գերմանիային ավելի քան ձեռնտու էր: Նախ՝ վերանում էր Թուրքիա ռուսական ներխուժման պատրվակը, երկրորդ՝ Ռուսաստանի ձեռքից խլվում էր բարենորոգումների նախաձեռնությունը, երրորդ՝ Ռուսաստանին ընդդիմանալը բարձրացնում էր Գերմանիայի հեղինակությունը Թուրքիայում, նաև հայերի շրջանում, միաժամանակ նրան ազատելով պատասխանատվությունից, եթե բարենորոգումները ձախողվեին կամ հայերի ջարդեր տեղի ունենային[246]:

Ֆոն Սակկայը հետևյալ կերպ է բնութագրում հայկական հարցում ռուս-գերմանական հարաբերությունները. «Դիվանագիտական հին լեզուն ասում է, որ Պետերբուրգի համար ուղին դեպի Ոսկեղջյուր անցնում է Վանի վրայով: Իրոք, Թուրքիայի դեմ ցարական կառավարության յուրաքանչյուր գործողություն ուղեկցվում է Հաբսբուրգների կայսրության հետ բախումներով... Սակայն այսօր նույն իրավունքով կարելի է ասել, որ դեպի Հայաստան ճանապարհը Ռուսաստանի համար անցնում է Բեռլինով, քանի որ Բաղդադի երկաթուղին և դրա հետ կապված համընդհանուր քաղաքական հիմնահարցերը Գերմանիայի համար այնքան մեծ նշանակություն են ձեռք բերել, որ Նևայի ափերին չեն կարող չհասկանալ, թե Թուրքիայի վրա յուրաքանչյուր հարձակում հանգեցնելու է պատերազմի անտանելի «գերմանացիների» հետ»[247]:

Կ. Պոլսում Գերմանիան դիվանագիտական լուրջ հաղթանակի հասավ Ռուսաստանի նկատմամբ: Օգոստոսի վերջին Կ. Պոլսի ռուսական և գերմանական դեսպանությունների առաջին խորհրդականները սկսեցին բանակցությունները: Ռուսները համաձայնելով մեկի փոխարեն երկու վարչական միավոր ունենալու գերմանական պահանջի հետ, առաջարկեցին երկու հատվածներ ունենալ ոչ թե «Հյուսիս-Հարավ», այլ «արևելք-արևմուտք» տեսքով: Գերմանական կողմը պնդեց իր առաջարկը, ապա նաև առաջ քաշեց փոքրաթիվ հայ բնակչություն ունեցող Տրապիզոնի վիլայեթը «Հյուսիսի» մեջ մտցնելու պահանջը: Խոսքը գնում էր վարչական միավորների ազգային կազմի մասին: «Հյուսիս-Հարավ» բաժանման դեպքում երկու հատվածներում էլ բնակչության մեծամասնություն լինելու էին մահմեդականները: Կային անհամաձայնություններ նաև մի քանի ուրիշ հարցերում: Օրինակ, գերմանացիները գտնում էին, որ գլխավոր տեսուչների թեկնածուները տերությունների կառավարությունների հետ չպետք է համաձայնեցվեին: Օգոստոսի 29-ին Բեռլինը հայտարարություն հրապարակեց, թե այլևս անհնար էր համարում ռուսական նախագծի անընդունելի կետերը Բ. Դոան վզին փաթաթելը և առաջարկում էր հրավիրել պետությունների ներկայացուցիչների նոր խորհրդաժողով և բարենորոգումների ծրագիրը մշակել՝ հիմք ունենալով թուրքական նախագիծը: Ռուսները հարկադրված էին զիջել, և սեպտեմբերի 2-ին սկսվեցին բանակցությունները Հիրսի ու Վանգենհայմի միջև: Նույն ամսվա 10-ին փոխզիջումային տարբերակը պատրաստ էր:

245 Wien HHSTA PA XXXVIII 358, Allepo, 15 Dezember 1913
246 Boghos Nubar Note sur la question armenienne, Paris, 1916, p.9
247 «Die Hilfe» (Berlin), 1915, N 36

Այն կազմված էր վեցը կետից: Պետերբուրգը գոհ էր, որովհետև արդեն ուներ Գերմանիայի ընկերակցությունը նախագիծը Բ. Դռան կողմից ընդունել տալու համար: Իսկ Գերմանիան գոհ էր, որովհետև այլևս խոսք լինել չէր կարող, թե Արևմտյան Հայաստանը վերածվում էր ռուսական ազդեցության գոտու[248]: Լոնդոնը հայտարարեց, թե համաձայնեցված նախագիծը «ամենահաստատ միջոցն էր վտանգավոր բարդացումներից խույս տալու համար»: Փարիզն անհանգստացավ՝ չլինի, թե ձևավորվում էր ռուս-գերմանական դաշնություն, բայց շուտով համոզվեց, որ դա անհնար էր և նույնպես հավանություն տվեց: Այդ ընթացքում ծայրաստիճան սրվեցին երիտթուրքեր և ՀՑ Դաշնակցության հարաբերությունները: Լեփսիուսը գրում է, թե երբ օգոստոսի 1-ին (1913թ) ինքը գավառները շրջագայելուց հետո վերադարձավ Կ. Պոլիս, հայկական շրջաններում տիրում էր մեծ հիասթափություն բարենորոգումների շուրջ բանակցությունների ընթացքից: Ըստ Լեփսիուսի, ռուսական ծրագրի իրական հեղինակը ոչ միայն Ա. Մանդելշտամն էր, այլև հայկական որոշակի շրջանակները: Ռուսները, շարունակում է նա, ձգտում էին՝ 1. շահել թուրքահայերի համակրանքը՝ նրանց տալով այն, ինչ ցանկանում էին, 2. Արևելյան Անատոլիայից առանձնացնել ռուսական շահերի գոտի: Խոսքը գնում էր այն մասին, որ ռուս նահանգապետն էր ղեկավարելու նոր ձևավորվող Հայաստանն անսահմանափակ իրավունքներով և նա էլ գլխավորելու էր այդ տարածքների բռնագրավումը: Գերմանիան տրամագծորեն հակառակ ծրագիր ուներ՝ 1. թույլ չտալ, որպեսզի ռուսական խնամակալության տակ ստեղծվի նոր տարածքային միավոր, 2. հեշտացնել Բ. Դռան խնդիրը բարենորոգումների ծրագրի ընդունման գործում: Դրա համար Գերմանիան համաձայնեց հայկական վիլայեթները երկու գոտիների բաժանելու թուրքական առաջարկության հետ: Նուբարը հայտարարեց, որ հայերը չեն բացառում երկու գոտիների ստեղծման հնարավորությունը: Նաև ակնհայտ էր, որ ոչ միայն Գերմանիան ու Անգլիան, այլև Ռուսաստանը ձգտում էին պահպանել ասիական Թուրքիայի ամբողջականությունը: Պետերբուրգը սառն էր վերաբերվում հայկական նահանգներին տիրանալուն նաև այն պատճառով, որ դա մեծացնելու էր հայերի թիվը Ռուսաստանում: Այդ սառնությունն արտահայտվեց ոչ միայն բանակցություններում ռուսական ներկայացուցիչների անվճռականության մեջ, ինչպես արդեն ասվել է, այլև այն տարօրինակ երևույթում, որ բարենորոգումների ծրագրի նախագիծը քննարկման ներկայացվեց ոչ թե ռուսական կառավարության կամ դեսպանության անունից, այլ լոկ որպես Ա. Մանդելշտամի նախագիծ:

Լոնդոնում Գերմանիայի դեսպան Քյուլմանը բացատրում է՝ հայերն ավելի մեծ չափով, քան հրեաները, իրենց դրսևորել են որպես ապակայունացնող տարր և հեղափոխության վտանգավոր համախոհներ: Կովկասը երկար ժամանակ խմորումների մեջ է և առաջին հերթին հայերը հարկադրեցին ցարին ձեռնարկելու նախազգուշական խիստ միջոցներ: Դրա հետ միասին Ռուսաստանն առանձնահատուկ շահագրգռվածություն է հանդես բերում, որպեսզի հայկական նահանգներում խաղաղություն տիրի, այլապես խառնակ տրամադրությունները հայկական պարից կներխուժեին Կովկաս[249]: Ցիմերմանը 1913թ. հոկտեմբերին գրեց, թե «Ռուսաստանի հետ վստահելի չփումները Թուրքիայի ասիական մասի խնդրով մեզ համար ավելի կարևոր են, քան հայկական ամբողջ ծրագիրը: Առայժմ մենք թույլ չենք տալիս Ռուսաստանին խուսանավելու, ինչ-որ ուղղությամբ թեքվելու, մենք անտարբեր ենք նաև, թե հայերի շրջանում մեր հեղինակության համար բարենորոգումների ծրագրում հօգուտ Թուրքիայի մեր առաջարկություններն ինչ ազդեցություն կունենան»[250]:

Իհարկե այս միջպետական սատանայական խաղերն անհանգստությամբ էին ընդունվում հայկական շրջաններում: Լեփսիուսի հետ զրույցի ընթացքում Զավրիևը նկատեց, որ Բ. Դռան փորձերը խույս տալու տերությունների կողմից ընդունված բարենորոգումների ծրագրից, նրա հրաժարվելն ընդունելու եվրոպական գլխավոր տեսուչներին և պնդելն օսմանյան տեսուչ ունենալու վրա, ինչպես նաև թույլատրել միայն եվրոպացի խորհրդականներ և մերժել տերություն-

248 «Оранжевая книга», N 79. стр. 94.

249 R 14082, Ab. 20886.

250 R 14082, zu Ab. 21477.

ների վերահսկողությունը, եթե այս խնդիրներում տերությունները զիջեն Թուրքերին, հայերն այդ գնահատելու են որպես բարենորոգումների ձախողում: Ընդ որում, Բ. Դուռը հայերին նորից ու նորից խոստանում էր, որ կբավարարի նրանց բոլոր պահանջները, եթե տերություններից ճեռք քաշեն: Իրականում իթիհադին միայն մի բան էր հետաքրքրում՝ խույս տալ տերությունների միջամտությունից և «Հայաստանում շարունակել ճնշումների քաղաքականությունը»[251]:

ՀՑԴ հայտարարեց, որ եթե Թուրքիային հաջողվի նորից ձախողել բարենորոգումները, ինքն ի վիճակի է «շարունակելու զինված դիմադրությունը Թուրքահայաստանում...»: Դաշնակցությունը գտնում էր, որ գլխավոր տեսուչները կադրային հարցերը պետք է համաձայնեցնեն ՀՑԴ հետ: Նաև պահանջում էր օսմանյան խորհրդարանում ՀՑԴ պատգամավորական տեղերի թիվը հասցնել 20-ի: Տեղական ժանդարմերիայի և ոստիկանության կազմի 30%-ը ձևավորել հայերից, հայկական նահանգներում նշանակել հայ պաշտոնատարներ, գյուղացիներից կազմել գյուղերը պաշտպանող ջոկատներ: Դրա համար գյուղացիներին զենք և ենթասպա տրամադրել: Հայերին վերադարձնել նրանցից խլված հողերը, իսկ քրդերին հողատարածք տրամադրել հայկական նահանգներից դուրս: Նաև պահանջում էր դատել ավազակապետերին: Ավազակությամբ զբաղվողներին պետական ծառայության չվերցնել, թույլ չտալ մուհաջիրների բնակեցումը հայկական տարածքներում:

Հետագայում կատարվածը հասկանալու համար հարկ է նկատի ունենալ հետևյալը: Բալկանյան պատերազմներում թուրքերի պարտությունները հպատակ ժողովուրդների հանդեպ թուրքերի մեջ առաջացրեցին վրեժխնդրություն: Հայերը, սակայն, պահպանեցին չեզոքություն և կատարեցին իրենց քաղաքացիական պարտքը՝ հայ դասալիք զինվորների թիվն ամենափոքրն էր: Քրդերը հակառակ կարծիքի էին: Նրանք ձգտում էին օգտվել թուրքերի ծանր վիճակից և լուծել ազգային մի շարք խնդիրներ: Անգամ փորձ արեցին ձևավորել հայ-քրդական համագործակցություն: Հայերն ընդառաջ չգնացին՝ գլխավորը համարելով բարենորոգումների իրականացումը:

Երիտթուրքերն, իրենց հերթին, նոր փորձ կատարեցին հայերի հետ լեզու գտնելու: Չնայած նման քայլերի մարտավարական բնույթին, ՀՑԴ համաձայնեց սկսելու բանակցություններ, որպեսզի իթիհադը չչահարկեր, թե թուրքերի նեղ պահին հայերը դավաճանեցին: Երիթուրքերը չմերժելով ՀՑ Դաշնակցության առաջարկների արդարացիությունը, հայտարարեցին, թե դրանց իրականացումը տանելու է դեպի կայսրության կործանում: Գնացին սուր քննարկումներ: Ի վերջո Թալեաթը հայտարարեց, որ անմիջապես կնշանակվեն եվրոպական նահանգապետ, կոմիսար և ոստիկան, եվրոպական սպաների ղեկավարությամբ կվերակառուցվի ժանդարմերիան:

Սակայն, երբ դարձավ ՆԳ նախագահ, կատարվեց հակառակը՝ հայկական ծրագիրը հետևողականորեն խուզվեց և հայ մամուլին արգելվեց դրա մասին գրել: Քրդերը նորից խրախուսվեցին հայերի հանդեպ բռնություններ գործադրելու: Նման մերկապարանոց անբարոյական շրջադարձի գլխավոր պատճառներից մեկն այն էր, որ իթիհադին հաջողվեց խորհրդարանական ընտրություններում հաղթել: Երիտթուրքերին ՀՑԴ այլևս պետք չէր, ընդդիմադիր թշնամի ուժ էր և խարդախ միջոցներով հայերի պատգամավորական տեղերի թիվը 12-ից իջեցրեց ինի, պետական պաշտոնների առաջ քաշվեցին հայկական ավազակաբարո տարրերը, նոր թափ առան հայերի հողերի զավթումները:

Պարզորոշ դարձավ, որ հայկական նահանգներում տիրող ահաբեկչությունը ոչ թե համընդհանուր անիշխանության, այլ ծրագրված հակահայկական քաղաքականության հետևանք էր:

Բնութագրական են նաև հետևյալ փաստերը:

Այդ ընթացքում ռուսական և գերմանական դեսպանները եռանդուն բանակցություններ էին վարում մեծ վեզիրի հետ: Մինչ այդ Հիրսին հաջողվել էր գոտիների հարցում զիջումներ կատարելու միջոցով ստանալ Վանգենհայմի համաձայնությունը, որ բարենորոգումների խնդիրների քննարկման համար հիմք է ընդունվելու ռուսական նախագիծը: Հիրսին նաև հաջողվեց Սայիդ Հալիմին հակել զիջումների: Բ. Դուռը դիմեց մեծ տերություններին՝ խնդրելով երաշխավորելու

251 Kons./Ankara 167 Ab. 22929.

խորհրդականների թեկնածուներ: Համաձայնեց, որ գլխավոր տեսուչը չի կարող ձեռնարկել որևէ վարչական միջոցառում, առանց նախապես համաձայնեցնելու խորհրդականների հետ: Անհամաձայնության դեպքում նախապատվությունը տրվելու էր խորհրդականների առաջարկներին: Երիտթուրքերի իրական կարծիքն արտահայտեց Ջեմալը, որը դեմ էր գլխավոր տեսուչի խորհրդականներին տերությունների կողմից նշանակելուն: Նա պահանջում էր, որպեսզի Բ. Դուռը ընտրեր գլխավոր տեսուչների: Ջեմալի կարծիքով առանց Բ. Դռան համաձայնության եվրոպացի տեսուչի նշանակումը երիտթուրքերի դեմ էր հանելու մուսուլմաններին: Նա գտնում է, որ իթիհադը կանգնած էր երկընտրանքի առջև՝ բռնատիրություն կամ անիշխանություն: «Բացի դա,- գրում է նա,- Ռուսաստանը երիտթուրքերին համարում է իր թշնամին և օգտագործում է անարժանապատիվ միջոցներ նրանց տապալելու համար»: Իսկ թուրք պաշտոնատար Սալիհի կարծիքով. «Ռազմական բռնատիրությունն իրողություն էր: Ջեմալ բեյը հանձնարարություններ էր տալիս, իսկ մյուսները ենթարկվում էին: Ջեմալը շատ ընդունակ էր և Թալեաթի նման եռանդուն: Սակայն ոչ թե Թալեաթը, այլ Ջեմալն էր բռնապետ»: «Ջեմալն ու Թալեաթը ոչ միայն ցանկանում, այլև գործում են,- գրում է Վանգենհայմը:- Ես հիանում եմ նրանցով»[252]:

Դեսպանը մեծ վեզիրին ասաց. «Մինչ այժմ և, հատկապես, 1908 թվից Հայկական հարցը չլուծված առանձնահատուկ հարց է Ռուսաստանի և Թուրքիայի միջև: Այն պատճառ բռնելով Ռուսաստանը ցանկացած պահի կարող է զինված միջամտություն իրականացնել: Բայց երբ Ռուսաստանն ընդունեց, որ Հայաստանի հարցում բոլոր տերությունները կարող են արտահայտել իրենց կարծիքը, այլևս բացառվեց, առանց նախապես տերությունների հետ համաձայնեցնելու, հայկական իրադարձությունների պատճառով պատերազմի մեջ մտնել Թուրքիայի դեմ: Հայաստանի հարցում իրավաքաղաքական օղակը հանդիսանալու է Եվրոպական կոնցերտը, որտեղ Թուրքիայի բարեկամները ձայնի իրավունք են ստացել»: Մեծ վեզիրը պատասխանեց, թե Թուրք ժողովրդի կարծիքով տերությունները միավորվելու են Թուրքիայի սուվերենության վրա գրոհելու համար, որպեսզի նախապատրաստեն կայսրության մասնատումը[253]:

Պատրիարք դառնալուց մի քանի օր անց Զավեն Եղիայանը հուշագիր ներկայացրեց արդարադատության նախարարությանը՝ պահանջելով, որ ապահովվի հայերի իրավունքը խորհրդարանում ունենալու խոստացած թվով ձայներ: Պատասխանը չուշացավ: Նախարարությունն անթույլատրելի համարեց պատրիարքի միջամտությունն այդ հարցին, որովհետև նրա պահանջն ուղղված է «օրենքի ու ավանդությունների դեմ և ոտնահարում է օսմանյան ժողովրդի իրավունքները»: «Թանինը» գրեց, թե հայերի պահանջները կարելի է հասկանալ, եթե բավարարվեն խորհրդարանում համամասնական ներկայացուցչությունով, սակայն նրանք կոպիտ սխալ թույլ տվեցին՝ պահանջելով անցկացնել առանձին, զուտ հայկական ընտրություններ, որն առաջ կբերի ռասայական ընդհարումներ: «Հայերը ձգտում են ժողովրդի ներկայացուցչից դառնալ ռասայի ներկայացուցիչ, ինչը կառաջացնի ճգնաժամ, որից ամենաքիչը կօգտվեն իրենք՝ հայերը»: Ակնարկելով ռուսներին՝ թերթը գրում է. «Ոչ ոք իրավունք չունի հայ ժողովրդի անունից միջամտելու Թուրքիայի ներքին գործերին»: «Թասվիր էֆքյարին» գրեց՝ գոյություն ունի տեսանելի փոխադարձ կապ պատրիարքի և հայկական պատվիրակության ձեռնարկումների միջև, որը Նուբարի գլխավորությամբ շրջում է եվրոպական մայրաքաղաքները: Սակայն մեկը պետք է խելամտորեն զիջեր մյուսին: Կամ պատրիարքարանը պետք է սպասեր բարենորոգումների հարցում հայկական շրջիկ հանձնաժողովի աշխատանքի արդյունքներին կամ թե վերջինները պետք է կանգ առնեին, և հայերը վստահաբար իրենց ցանկությունները ներկայացնեին կառավարությանը:

Հայկական հարցում կրքերը բորբոքվում էին ոչ միայն Թուրքիայում: 1913-ի նոյեմբերի 18-ին Փարիզում բացվեց հայասերների համաժողով: Արևմտահայերի ներկայացուցիչները գտնում էին, որ Հայկական հարցի լուծման ուղին մեկն է՝ դիմել տերություններին ապահովելու 61-րդ հոդվածի կատարումը, իսկ արևելահայ ներկայացուցիչները պնդում էին այդ խնդրում Ռուսաստանի բացառիկ դերի վրա: Փարիզում Ռուսաստանի դեսպան Իզվոլսկու պահանջով ժողովը

252 R 14082, Ab. 23448.
253 R 14082, Ab. 23741.

ձեռնպահ մնաց որևէ դիմում ներկայացնելուց և դերադասեց զբաղվելու բարենորոգումների ծրագրի նախագիծ կազմելով[254]: Այս ժողովից հետո հայասերների կոմիտե ստեղծվեց Ս. Պետերբուրգում, որն իր գլխավոր խնդիրն էր համարում զբաղվել Արևմտյան Հայաստանի վիճակով ռուս հասարակության մեջ շարժում առաջացնել հօգուտ բարենորոգումների[255]:

«Կովկասյան բոլոր ժողովուրդներից հայերը,– գրում է Պ. Միլյուկովը,– չնայած դաժան վիրավորանքներին, որ ռուսական վարչակազմը հասցրեց նրանց ազգային գիտակցությանը, մնացին Ռուսաստանին ամենահավատարիմ ժողովուրդը: Նրանք մասնակցեցին Թուրքիայի դեմ ռուսական բոլոր պատերազմներին: Դա հասկանալի է, քանի որ փոքրասիական թերակղզու ազգաբնակչության ուղիղ կեսը հայեր և, ընդհանրապես, քրիստոնյաներ էին: Թուրքահայերն ապրում են աչքից հեռու և նրանց վիճակի մասին դրսում լավ չգիտեն: ...Թուրքերն ու, մանավանդ, քրդերը, վայրենի ազգություններ են, ապրում են պարզունակ կենցաղով... և վերջին քառասուն տարում, շարունակ ջարդում են հայերին, կարծես հետևելով մի սկզբունքի՝ «Հայկական հարցի լուծում նշանակում է հայերի բնաջնջում»: Այս տառապալից ուղու վերջին փուլում Ռուսաստանը միջամտեց դիվանագիտական ճանապարհով: «1913թ. ես ականատես եղա Կ. Պոլսում ռուսական դեսպանության քարտուղարի կողմից հայերով բնակեցված վեց վիլայեթները մեկ ինքնավար նահանգի մեջ միավորելու նախագծի մշակմանը: ...Տերությունները, մասնավորաբար Գերմանիան, միջամտեցին, և սկսվեց ռուսական նախագծի սովորական դարձած վերաձևումը Թուրքիայի ցանկությանը համապատասխան»: Փարիզում համաժողովի հավաքված յոթ տերությունների ներկայացուցիչները քննարկեցին վարկ տալուց հրաժարվելու միջոցով Թուրքիայի վրա ճնշում գործադրելու հարցը: «Մեր կոնֆերանսը,- շարունակում է Պ. Միլյուկովը,- Պողոսի նախագահությամբ, պետք է ուսումնասիրեր բոլոր նյութերը: Այս հիմքի վրա հասունացավ վեց վիլայեթներից «Մեծ Հայաստան» ստեղծելու գաղափարը: Այժմ դժվարությամբ ես հավատում այդ պլանի պաշտպանության հնարավորությանը: Թվում է, թե Թուրքիայի հետ սկսված պատերազմը դյուրացնում էր դրա կենսագործումը: Սակայն Թուրքիան այն կանխեց 1915թ. սարսափելի կոտորածով»[256]:

1913թ. հոկտեմբերի 4-ին Հիրսը մշակած ծրագիրը ներկայացրեց Սայիդ Հալիմին: Նույն բանն արեց Վանգենհայմը, որը հայտարարեց, թե Գերմանիայի ջանքերի շնորհիվ Հայկական հարցը միջազգայնացվել է հօգուտ Թուրքիայի՝ Ռուսաստանին զրկելով հնարավորությունից բռնությունների դիմելու Թուրքիայի հանդեպ[257]: Բ. Դուռն առանձնապես խանդավառված չէր վերակազմված նախագծով և առաջարկեց գլխավոր տեսուչ նշանակել ոչ թե եվրոպացու, այլ Թուրքի:

1913թ. նոյեմբերի 24-ին Պ. Նուբարին ընդունեց Գերմանիայի արտաքին նախարարի տեղակալ Ցիմերմանը: Նուբարին հաջողվեց նրան համոզել, որ բարենորոգումները խաղաղություն կհաստատեն Գերմանիայի շահերի շրջանակում գտնվող տարածքներում: Ցիմերմանը նրա ներկայությամբ հեռագրեց Կ. Պոլսի գերմանացի դեսպանին՝ չընդդիմանալ «տերությունների դեսպանների» առաջարկներին:

1913թ. նոյեմբերին կնքվեց գերմանա-թուրքական համաձայնագիր: Դեկտեմբերի 4-ին Սանդերսը նշանակվեց առաջին բանակի հրամանատար, ռազմական դպրոցների հրահանգիչ և բանակի ռազմական խորհրդի անդամ[258]:

Ռուսաստանը Կովկասում սկսեց զորահավաք, իսկ Սև ծովում՝ զինավարժություններ: Էնվերը Սանդերսին ազատեց առաջին բանակի հրամանատարի պաշտոնից: Նա նշանակվեց բանակի գլխավոր տեսուչ: Գերմանիան շարունակեց ջանքեր լարել վերահսկողության տակ առնելու Թուրքական բանակը, սակայն այդ անել չէր կարողանում առանց Պետերբուրգի թողտվության: Համաձայնությունը կայացավ, սակայն նաև իսկույն ձախողվեց հրապարակ նետված սադրանքի պատճառով: Այդ մասին Պոմյակովսկին 1914թ. հունվարի 18-ին գրում է. «...Համառ լուրեր են պտտվում, որ գարնանը հայերը Ռուսաստանի հովանավորությամբ զենքի են դիմելու: Պ-

254 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 1172, թ. 10.
255 R 14083, Ab. 25650.
256 **Милюков П. Н.** Воспоминания, Москва, 1991, стр. 365-370.
257 АВПР, «Полотархив», д. 3470, л. 1.
258 **Покровский М. Н.** Внешняя политика, Москва, 1918, стр. 153.

դում են, թե հայ հեղափոխական շարժումը հարյուր հազարից ավելի մարդ է ոտքի հանելու... հայերը մեծ քանակությամբ զենք ունեն և դրանք օրեցօր համալրվում են Կովկասից»[259]: Դժվար չէ ենթադրել, որ այս և նման սադրանքների ակունքին կանգնած էին գերմանացի դիվանագետները՝ հայաբնակ նահանգներում գերիշխանության հիմքեր ստեղծելու համար: Էրզրումի ռուսական հյուպատոսության աշխատակից Դ. Դավիդովը 1913թ. դեկտեմբերի 4-ին գրում է. «Թուրքահայաստանի ներկա քաղաքական վիճակը ռուսական քաղաքականության շնորհիվ նպաստավոր հանգամանք ստանալու վրա է: Ֆրանսիական ձեռնարկատերերը սկսել են լայն ուսումնասիրություններ կատարել արևելյան նահանգներում, մյուս կողմից՝ գերմանացիներն էլ հյուպատոսական հիմնեցին նույնիսկ մեր քաղաքում և ուզում են պայքարել ֆրանսիացիների և, մանավանդ, ռուսական ազդեցության դեմ»[260]: Գուլկևիչը 1914թ. փետրվարի 8-ին հեռագրեց Սազոնովին. «Գերմանիան մեզ հետ համաձայնության մեջ մտավ երկու նպատակով. առաջինն այն է, որ դրանով ուզում էր Բ. Դռանը հավաստիացնել, որ համաձայնելով Թուրքիայի համար ավելի քիչ վտանգ ներկայացնող սահմանափակ բարենորոգումների հետ, Գերմանիան Թորքիային ազատում է ավելի լայն բարենորոգումներ անցկացնելու անհրաժեշտությունից: Երկրորդ՝ ցանկություն ուներ շահել հայերի համակրանքը Կիլիկիան իր ազդեցության տակ վերցնելու համար»[261]: Հասկանալի պատճառով գերմանական քաղաքականության նպատակադրումներին թուրքական զգեստ էր փորձում հագցնել նաև Լեփսիուսը: Նա գրում է, որ Թուրքիայի կազմում ասիական շրջանների պահպանման գործում Գերմանիայի շահագրգռվածությունը պատճառաբանվում էր նաև նրանով, որպեսզի սահմանափակվեր ռուսական շահերի գոտին և հեշտացվեր Բ. Դռան կողմից բարենորոգման նախագծի ընդունումը: Գերմանիան ուզում էր թուրքական ֆասադը պահել, իսկ Ռուսաստանը՝ ոչնչացնել[262]: Գուցե նաև այդ պատճառով գերմանական դիվանագիտությունը ընդունեց հայկական բարենորոգումների անհրաժեշտությունը:

Թալեաթը դժգոհ էր: Նա հրավիրեց օսմանյան խորհրդարանի հայ անդամներին և պահանջեց հետ կանչել Նուբարին[263]: Պետերբուրգում իսկույն զգուշացան և Ցիմերմանին ասացին, որ «չեն կարող գործը ձգձգել՝ թուրքական կառավարությանը վարժեցնելով այն մտքին, թե ամեն ինչ կավարտվի խոսակցություններով...»[264]: Քայլեր կատարվեցին նաև Անգլիայի ու Ֆրանսիայի երկիմաստ կեցվածքը հաղթահարելու ուղղությամբ, նրանց նույնիսկ վախեցրեցին ռուս-գերմանական մերձեցման հնարավորությամբ: Անգլիան շտապեց թուրքական դեսպանին հանձնել Հայաստանում կատարված վայրագությունների վերաբերյալ տեղեկագիր՝ նշելով, որ նման երևույթների կրկնության հետևանքը լինելու է դրսի միջամտությունը[265]: Վանգենհայմը հասկանում էր Բալկանյան պատերազմի հետևանքով Թուրքիայի համար ստեղծված վտանգավոր վիճակը և Բ. Դռանը խորհուրդ տվեց անմիջապես ընդունել բարենորոգումների ծրագիրը, եթե ոչ Ռուսաստանը կգրավի Հայաստանը: Թուրքական և գերմանական այս զիջողական կեցվածքը ձևավորման գործում դեր խաղաց նաև Ֆրանսիայից փոխառություն ստանալու համար ֆրանս-թուրքական պայմանագրի կնքումը: 1913թ. հոկտեմբերի 10-ին Բ. Դուռը ռուսական դեսպանությանը հայտնեց, թե մտադիր է իրագործել բարենորոգումների ծրագիրը[266]: Դեկտեմբերի 16-ին դեսպաններին հուշագիր հանձնեց գերագույն կառավարիչների նշանակման և նրանց իրավասությունների վերաբերյալ: Թուրքիայի այն ժամանակվա շովինիստական կառավարությունից (Հալիմ, Թալեաթ, Ջեմալ) դժվար էր սպասել հավասարության սկզբունքի ներմուծում առանց ճնշման արտակարգ գործողությունների:

259 Wien KAPras 74-1/33, Allepo, 25 Februar 1914.
260 ԳԱԹ, ֆ. Առաքելյան Հ., գ. 1763:
261 Ջեմալ փաշա նշվ. աշխ., էջ 47:
262 R 14082, Ab. 20222.
263 Реформи в Армении, стр. 80.
264 Ն. տ.:
265 Ն. տ., էջ 81:
266 Ն. տ., էջ 99:

1913թ. նոյեմբերին Ջեմալը հայտարարեց. «Մինչև վերջին ժամանակներս կոմիտեն (երիտթուրքական) դեռևս հավատում էր Ռուսաստանի աջակցությանը Հայկական հարցում... (Մինչդեռ) Ռուսաստանը կոմիտեին համարում է իր հակառակորդը և գործում է ոչ պարկեշտ միջոցներով հանուն նրա տապալման... դրա համար Կոմիտեն ծայրաստիճան անվստահությամբ է վերաբերվում բարենորոգումների վերաբերյալ ռուսական առաջարկներին»[267]: Իսկ Սայիդ Հալիմը Պալավիչինիին ասաց. «Համաձայն Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի, հնարավոր է խոսել հայկական բարենորոգումների իրականացման վրա տերությունների որոշ վերահսկողության մասին, բայց Թուրքիան ամբողջ ուժով կընդդիմանա միջամտությանը իր ներքին գործերին»[268]:

Բալկանյան պատերազմից հետո, գրեց «Թավսիր Էֆքիարին», Թուրքական ու մահմեդական աշխարհում շատ բնական հակազդեցությունը հասկանալի է: Թուրքերի ու մահմեդականների շրջանում նկատվում է մեզ առավելագույնս զգացնող զարթոնք: «Նրանք հետզհետե ըմբռնում են տնտեսական գործունեության ուժը: Տնտեսական արդար ճնշումը շատ ավելի ոչ թուրքերի ու մահմեդականների գերագույն իղձն է, որոնք ուզում են իրենց միասնական գոյությունը դրսևորել նաև տնտեսական կյանքում»[269]: «Թանինը» 1914թ. հունվարի սկզբներին հանդես եկավ սպառնալիքով. «Իսկապես կոմիտեն ոքա՞ն կարող է այս բանակցություններում առաջ ընթանալ առանց իր սկզբունքները կամ օրենքի հստակ տրամադրությունները ոտնակոխ անելու: Թվում է, թե մեր ոչ մահմեդական հայրենակիցներն այդ չեն հասկանում: Իթիհատ վե Թերաքը պարզապես քաղաքական կուսակցություն է, որը չնայած կառավարության համար հենարան է, բայց պետք է ելնի գործող օրենքներից՝ իր ուժը պահել կարողանալու համար: Կուսակցությունը մի քանի փոքր զիջումներից ավելին կատարել չի կարող: Եթե համագործակցության այս ափիթը բաց թողնվի, մեծապես ցավելու ենք: Սակայն ամեն ինչ իր սահմանը և նույնիսկ համբերությունն ունի: Եվ եթե այսօր ափիթը բաց թողնվի, վախենում ենք վաղն արդեն ուշ լինի»[270]:

Բ. Դուռն ու Բեռլինը շարունակում էին հնարավորություններ փնտրել հայ գործիչներից ձևավորելու Հայկական հարցում Ռուսաստանի քաղաքականությանն ընդդիմադիր ուժ[271]: Վերջապես 1914թ. փետրվարի 8-ին Կ. Պոլսում Ռուսաստանի հավատարմատար Գուլկևիչը և մեծ վեզիր ու արտաքին գործերի նախարար Սայիդ Հալիմը ստորագրեցին ռուս-թուրքական համաձայնագիր, որը նախատեսնում էր՝ նշանակվելու էին օտարերկրացի գլխավոր տեսուչներ. մեկը Էրզրումի, Տրապիզոնի, Խարբերդի և Սեբաստիայի, իսկ մյուսը՝ Վանի, Բիթլիսի և Դիարբեքիրի վիլայեթների համար: Նրանց վերահսկողության տակ դրվելու էին այդ վիլայեթների գործադիր իշխանությունը, արդարադատությունը, ոստիկանությունն ու ժանդարմերիան: Հարկ եղած դեպքում տեսուչներին տրամադրվելու էր նաև զորք: Տեսուչներն իրավունք ունեին աշխատանքից ազատելու պաշտոնատարներին, սուլթանին առաջարկելու նահանգների ղեկավարների թեկնածուներ: Կադրերի փոփոխության դեպքում տեսուչները պարտավոր էին տեղյակ պահել համապատասխան նախարարություններին: Վալիներին աշխատանքից ազատելու իրավունքը վերապահվում էր Բ. Դռանը՝ տեսուչների ու ՆԳ նախարարության ներկայացմամբ: Տեսուչների նշանակման գործում Բ. Դուռը տերությունների միջամտությանը դիմելու էր, եթե տասը տարի այդ հարցը լուծել չկարողանար: Օրենքներն ու գրագրությունները հրապարակվելու և տարվելու էին տվյալ շրջանում «գործածելի լեզվով», վարչական մարմիններում և դատարաններում անձը կարող էր հանդես գալ մայրենի լեզվով: Դատավճիռները հրապարակվելու էին Թուրքերեն և ապա թարգմանվելու էին կողմերի լեզուներով, «եթե դա հնարավոր համարվեր»: Ազգային դպրոցներին միջոցներ հատկացվելու էին համաձայն տվյալ ազգային խմբի վճարած հարկերի: Խաղաղ ժամանակ զինվորական ծառայությունն անց էր կացվելու «տեսչության շրջանակում», բայց վերջինները պարտադրված էին լինելու զինակոչիկներ տրամադրել Եմենում, Ասորեստանում և Հեջազում ծառայելու համար: Համիդիեն վերակազմվելու էր որպես պահեստային հեծե-

267 R 14082, Ab. 23448
268 Wien HHSTA PA XII 463, Jenikoj, 2 Sept. 1915, N 50/E
269 "Die Orient", 11.01.1914, p. 51
270 Ն. տ., 04.02.1914
271 Ալպոյաճյան Ա., նշվ. աշխ., էջ 920

լազորային գնդեր ու դրվելու էր բանակային սպաների հրամանատարության տակ: Գունդ ընդունվողը պարտավոր էր ունենալ ձի իր սարքով: Այդ գնդերում իրավունք էր ունենալու ծառայել (ծառայության տևողությունը մեկ տարի) յուրաքանչյուր ոք, անկախ ազգային պատկանելությունից: Երկու վարչական մարմինների սահմանները որոշվելու էին մեկ տարվա ընթացքում մարդահամարից հետո: Մինչ այդ դրանց գլխավոր խորհուրդների և ժողովների անդամների կեսը լինելու էին քրիստոնյա, իսկ մյուս կեսը՝ մահմեդական[272]:

Այսպիսով, ռուս-թուրքական համաձայնագրով Արևմտյան Հայաստանի մեջ մտնում էին յոթ վիլայեթ և երկու սեկտոր: Համաձայնագիրը հաստատեց այն իրողությունը, թե Վանի, Բիթլիսի և Էրզրումի նահանգներում հայ բնակչության հոծ զանգվածներ կային: Համաձայնագրով Սեբաստիայի, Խարբերդի և Դիարբեքիրի կառավարման համակարգում մահմեդականները մեծամասնություն էին կազմելու: Հայկական բարենորոգումները վարչաիրավական բնույթի էին և հանգում էին տեղական ոչ միայն մշակութային, այլև որոշ առումով նաև վարչական ինքնավարության, որը ենթադրում էր իրավական բազմաթիվ նոր ակտերի ստեղծում: Հայերին սկզբունքային զիջումներ էր կատարվում կրթության բնագավառում: Սակայն բանակի և ընդհանրապես, ռազմական ուժի հարցում երիտթուրքերն աներեր էին, բացառում էին ազգային որևէ տեսակի ռազմական ուժի գոյությունը: Հիրսը գտնում էր, որ, ընդհանուր առմամբ, համաձայնագիրը «հայ ժողովրդի համար բաց էր անում ավելի երջանիկ ժամանակաշրջանի դռները», ինչը որոշակի պայմաններում կարող էր հանգեցնել նաև հայկական պետության ստեղծմանը: Նա համոզված էր, որ «կատարվեց թուրքական լծից հայերի ազատագրման առաջին քայլը»[273]: Համաձայնագրի գնահատման գործում միանգամայն այլ ելակետ ուներ Գերմանիայի դեսպանը: Վանգենհայմն այն գնահատում էր որպես լուրջ քայլ թուրքական պետության գոյությունը երկարացնելու ուղղությամբ: Համաձայնագրով «Բ. Դուռը հասավ դիվանագիտական զգալի հաջողության, որն ի զորու է ներկա վարչակարգի հանդեպ Եվրոպայում ապահովելու վստահություն... հաշվի առնելով Թուրքիայի վաղվա օրվա անորոշությունը, այնուամենայնիվ, գերմանա-ռուսական համագործակցությունը արևելյան քաղաքականության հարցում հասցրեց դրական արդյունքի, ինչը կարող է դիտարկվել որպես հաճելի միտում և դրական նախադեպ»[274]:

Գուլկևիչը համաձայնագրի մասին գրեց Սազոնովին. «...1914թ. փետրվարի 8-ի համաձայնությունը, անկասկած, հայ ժողովրդի պատմության մի նոր բախտավոր ժամանակաշրջան է նշանակում... Հայերը պետք է զգան, որ թուրքական լծից նրանց ազատելու առաջին քայլն արված է... համաձայնագիրը միաժամանակ վիթխարի նշանակություն է ներկայացնում Ռուսաստանի համար... այն Թուրքիային պարտավորեցնում է... մեծ պետություններին ներկայացնել մի հուշագիր, որում ընդգծվում է Հայկական հարցում Ռուսաստանի ունեցած ղեկավարի դերը և որոշ չափով հաստատվում է Սան Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը... ինչը ցարի անունը Մերձավոր Արևելքի քրիստոնյաների աչքերում լուսավորելու է փառքի նոր լույսով...»[275]: Գուլկևիչի կարծիքի հետ Ջեմալը համաձայն լինելով հանդերձ զարմանում է, որ «հայերի հանդեպ Ռուսաստանի ունեցած քաղաքական նպատակների այդ արտահայտությունը» հրապարակվում է բացահայտ: Ջեմալին հասկանալ կարելի է, իսկ Գուլկևիչին՝ ոչ: Ա. Մանդելշտամի մշակած նախագիծն ավերվել էր հիմնավորապես: Պետերբուրգը կեցվածք ընդունեց, թե բավարարված չէ կատարվածով: Սազանովն ասաց, թե վերջին շաբաթներին Ռուսաստանն անընդհատ զիջումների է գնում և դա հիմնականում հայերի խնդրանքով: Նա միաժամանակ չթաքցրեց իր «ատելությունն ու անվստահությունը Թուրքիայի, մասնավորապես երիտթուրքերի հանդեպ: Եթե Թուրքիայի հետ չափից ավելի բարեկամաբար վարվես,- ասաց նա,- միշտ կգտնի միջոց խույս տալու բոլոր հարցերի պատասխաններից»[276]:

272 Ջեմալ փաշա, նշվ. աշխ., էջ 43-46:
273 «Будущее устройство Армении», П-г, 1915, с. 79, 87.
274 АВПР. ф. Политархив, д. 3465.
275 Ջեմալ փաշա նշվ. աշխ., էջ 46-47:
276 R 14083, Ab. 3217.

Գուլկևիչի կարծիքով Գերմանիան հանդես եկավ հօգուտ համաձայնագրի, նախ որպեսզի Ռուսաստանին թույլ չտար իրականացնելու ավելի ծավալուն բարենորոգումներ և, երկրորդ՝ շահել հայերի համակրանքը: Այդպիսով Գերմանիան գտավ միջոց, մի կողմից, Թուրքիային հանելու դժվար կացությունից, մյուս կողմից, հրաժարվելով Մանդելշտամի նախագծից ձգտում էր չվարկաբեկվել Թուրքիայում միաժամանակ պահելով գործողությունների ազատության հնարավորությունը:

Ռուսական մամուլում համաձայնագրի գնահատականները միանշանակ չէին: «Закавказская речь»-ը հունվարի 26-ին համաձայնագիրն անվանեց ռուսական նախաձեռնություն, որը Գերմանիայի ջանքերով զրկվել էր բովանդակությունից, չնայած ճշմարիտ գնահատականը հնարավոր էր միայն գործադրման արդյունքների հիման վրա[277]: Վանգենհայմը համաձայնագիրը համարում էր Գուլկևիչի ջանքերի պտուղ և ռուսական դիվանագիտության հաղթանակ, որը սակայն զուրկ էր գործնական լուրջ նշանակությունից, քանի որ պարունակում էր «մերկ դրույթներ, որոնք ոչինչ չէին պարտադրում» և կասկածելի էր դրանց կենսագործման հնարավորությունը: Դեսպանը համաձայնագրի ամենաթույլ դրույթը համարում էր գլխավոր տեսուչների ինստիտուտը, որի արդյունավետությունն ամբողջովին կախված էր այն բանից, թե ովքեր էին զբաղեցնելու այդ պաշտոնները[278]: «Frankfurter Zerfung»-ը համաձայնագիրը համարում էր «ռուս-գերմանական», որն արդյունք էր Գերմանիայի համառության ու հեռատեսության[279]: Ա. Ռիզան հայտարարեց, թե երիտթուրքերը միտք չունեն կատարելու համաձայնագիրը: Նա շեշտը դնում էր հայ քաղաքական ուժերի հետ երիտթուրքերի փոխհարաբերությունների վրա, երկերեսանի ու կեղծիք անվանելով տերությունների խոստումները[280]:

Թալեաթը հայտարարեց, թե համաձայնագրի ստորագրումից հետո Թուրքիան պարտադրված է մերձենալու Ռուսաստանի հետ: Իթիհադը համաձայնվեց օսմանյան խորհրդարանում հայերին տրամադրելու 16 պատգամավորական տեղ[281]: Գևորգ 5-րդը հայտարարեց. «Մեր ազգային գործը ձեռք բերեց առաջին նվաճումը»[282]: Գր. Զոհրապը 1914թ. հունվարի 31-ին գրում է Ա. Զուպանյանին. «Կը շնչենք թեթև», որովհետև համաձայնագիրը համարում էր ոչ մեծ հաջողություն և ոչ էլ ձախողում: Հաջողություն էր համարում այն, որ հայերը ստացան Եվրոպայի վերահսկողությունը Հայաստանում[283]: Սակայն համաձայնագիրը «չի լուծում մեր ճակատագրի հանրահայտ հարցերը: Մենք լոկ ապահովեցինք խաղաղ զարգացման մի ժամանակահատված»:

Հարցի հիմնավոր լուծումը, գտնում է Հիրսը, պահանջում է Ռուսաստանի և Եվրոպայի պաշտպանություն, Թուրքիայի թուլանալ ու կործանում, հայկական ուժերի համաձայնեցված գործողություններ, հայերի մշակութային և տնտեսական հզորացում և ազգաբնակչության թվի մեծացում[284]: Պ. Նուբարը համաձայնագիրն անվանեց «դիվանագիտության հաղթանակ», այն կարողացավ բավարարել բոլոր կողմերի պահանջները[285]:

Ռուս գործիչները չեշտում էին բարենորոգումների համար պայքարում հայ քաղաքական ուժերի համաձայնեցված գործողությունները (Հիրս), նրանց չափավորությունը: «Ինձ շատ ուրախացնում է,- ասել է Սազոնովը,- որ հայ հասարակությունը դրական է վերաբերում բարենորոգումներին և դրանք արժեքավորում է, չնայած նաև տեսնում է դրանց թերությունները: Բարենորոգումներն առաջին քայլն են հայերի վիճակը բարելավելու ուղղությամբ, ապագան կախված է ինչպես ռուսական քաղաքականությունից, այնպես էլ իրենցից՝ հայերից»:

Ամիսներ անց Ս. Սազոնովը Պետական դումայում հայտարարեց. «Երբ Բերլինում համոզվեցին Հայաստանի բարեփոխումների ծրագրի իրականացմանը հասնելու մեր հաստատակամության

277 «Будущее устройство Армении...», с. 87.
278 «Армянский вопрос и геноцид...», с. 149.
279 «Закавказская речь», 25.01.1914.
280 Ն. տ. 25.01.1914:
281 «Մշակ», 23.02.1914:
282 Ն. տ., 13.03.1914:
283 Помятники армянского права. Е. 2000, с. 860.
284 Ն. տ., էջ 861:
285 «Մշակ», 26.02.1914:

մեջ, գերմանական դիվանագիտությունը պատրաստակամություն հայտնեց կիսելու մեր աշխատանքը՝ դիտավորություն ունենալով խոչընդոտել բարեփոխումների ճիշտ կենսագործումը...»[286]: Դումայի նույն նիստում հնչեց Կովալևսկու խոսքը՝ 1914թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը «հատկապես կարևոր է նաև այն առումով, որ Ռուսաստանին հատկացվել է բացառիկ դերակատարում այդ հարցում»[287]: Սակայն դումայականները նաև լավ գիտեին, որ գործողության մեջ էր դրվում Բեռլինի դաշնագրի ոչ միայն 61-րդ այլև 23-րդ հոդվածը, որը պահանջում էր բարենորոգումներ նաև Մակեդոնիայում, ինչին Կ. Պոլիսը պատասխանեց ցեղասպան ընույթի երկու խոշոր ջարդերով Մակեդոնիայում: Թալեաթն ու նրա կուսակցությունը փողոց հանեցին տասնյակ հազարավոր թուրքեր և սպառնացին գրավել Սերբիան, Հունաստանն ու Բուլղարիան: Թուրքական սպառնալիքները համախմբեցին բալկանյան ժողովուրդներին, նրանք Ռուսաստանի աջակցությամբ միացյալ բանակ ստեղծեցին և թուրքերին խայտառակ պարտության մատնեցին: Թուրքիան դուրս նետվեց Բալկանյան թերակղզուց՝ տալով տասնյակ հազարավոր սպանված, վիրավոր և գերի: Թուրքերը սգի մեջ էին, մայրաքաղաքը շնչահեղձ էր լինում Բալկաններից ճողոպրած թուրքերի հոսքից՝ մուհաջիրները գիշերում էին փողոցներում, մզկիթներում, նրանց հնձում էին սովն ու համաճարակները: Ահա այդ պահին է Պ. Նուբարի պատվիրակությունն այցելում Եվրոպա՝ տերությունների կառավարությունների հետ քննարկելու հայկական բարենորոգումների հարցը: Խնդրին միջամտում է նաև պատրիարքը, թե «շատ կը խնդրեմ, հայկական հարցն ալ նկատի առէք... Թուրքերը բոլորովին անտարբեր են և որևէ բարենորոգում չի կատարուիր»: Իթիհադի ղեկավարների զայրույթը սահմաններ չէր ճանաչում. «Մենք Բալկանները կորցրեցինք, մեծ է վտանգը, որ կկորցնենք նաև արևելյան նահանգները»[288]:

ԱԳ նախարար Հալիլ Մենթեշը խորհրդարանում հայտարարեց, թե Բալկանների կորուստը ստվերի մեջ կարող է մնա, կա ավելի մեծ վտանգ, դա արևելյան նահանգները կորցնելն է՝ բարենորոգումների ծրագրի գործադրման պատճառով[289]: Բնականաբար հարց էր առաջանում՝ Թուրքիան Մակեդոնիայի համար պատերազմ սանձազերծե՞ց, արդյո՞ք նա նույն, գուցե շատ ավելի կատաղած պատերազմ չէր սանձազերծի հանուն «Արևելյան Անատոլիայի», այս անգամ արդեն անմիջականորեն Ռուսաստանի դեմ և արդյո՞ք Ռուսաստանը պատերազմի մեջ կմտներ: Իսկ եթե չմտներ, ի՞նչ կկատարվեր հայության հետ: Սա տվյալ պահին հարցերի հարց էր, որ ամենաշատն էր անհանգստացնում արևմտահայությանը և որոշում նրանց վարքագիծը, ձևավորում տրամադրությունների չփոթ ու տարընթացություններ:

Դա Պետերբուրգում նկատել ու զգուշանում էին:

Ակնհայտ է, որ ստորագրվել էր համաձայնագիր: Ռուսական նախագիծը խմբագրվեց նախ նահանգների վարչական բաժանման առումով, եթե այդ «նախագիծը ենթադրում էր սանջակներ ու կազաները սահմանագծել ազգագրական հիմքի վրա», ապա համաձայնագրով դա բացառվում էր: Էապես խուզվում էին տեսուչների իրավասությունները: Նրանց հանձվում էր միայն արդարադատության, ոստիկանության և ժանդարմերիայի վերահսկողությունը: Վիլայեթներում գործադիր իշխանության ղեկավար շարունակելու էր մնալ վալին, ով «գլխավոր տեսուչների բարենորոգումների բոլոր քայլերին, անշուշտ, կհակադրեր ձգձգման թուրքական փորձված մարտավարությունը»: Գլխավոր տեսուչն իրավասու էր պաշտոնազրկելու ցանկացած պաշտոնատարի, սակայն միմիայն համապատասխան նախարարության համաձայնությամբ, որին էր պատկանում վերջնական վճռի իրավունքը: Գլխավոր տեսուչներն իրավունք ունեին նշանակելու ստորադաս պաշտոնյաների, իսկ բարձրաստիճանների թեկնածուների վերաբերյալ՝ միայն առաջարկություն ներկայացնել: Քանի որ Մանդելշտամի նախագծով նահանգային խորհուրդներում պետք է լինեին հավասար թվով մուսուլման ու քրիստոնյա պատգամավորներ, իսկ համաձայնագրով ընդունված է համամասնության սկզբունքը, ինչպես նկատում է Պալավիչինին, իշխանություններն անպայման հոգ կտանեն, որպեսզի նախատեսված մարդահամարով

286 «Русские ведемости», 28.01.1915.

287 ГАОТОМС, Т I, с. 236.

288 Տատրյան Վ. Ակնարկներ Հայկական ցեղասպանության մասին, Ե, 2004, էջ16:

289 Ն. տ.:

«բոլոր վիլայեթներում մահմեդականները մեծամասնություն կազմեին»: Ռուսական նախագծով խորհրդարանի կողմից ընդունված օրենքները, եթե դրանք երկու ամսվա ընթացքում չէին մերժվել, համարվելու էին հաստատված, մինչդեռ համաձայնագրով այդ խորհուրդները գործելու էին ըստ վիլայեթների մասին օրենքի: Մանդելշտամի նախագծով մյուդիր պետք է նշանակվեր տվյալ համայնքում մեծամասնություն կազմող ազգության ներկայացուցիչը, իսկ համաձայնագիրը դա մերժում էր: Այն լռում էր դատական համակարգի վերակառուցման հարցում: Ռուսական նախագծով ոստիկանության և ժանդարմերիայի կեսը պետք է լիներ քրիստոնյա, իսկ ծրագրով այդ սկզբունքը տարածվելու էր միայն ազատված հաստիքային տեղերի վրա: Ռուսական նախագծով ոստիկանության ու ժանդարմերիայի ղեկավարությունը հանձնարարվելու էր եվրոպացի սպաներին, ինչը համաձայնագրում լռության էր մատնված: Ռուսական նախագծով անձը զինվորական ծառայությունն անցկացնելու էր նահանգում, իսկ համաձայնագրով՝ միայն «խաղաղության և հանդարտության ժամանակ», որից դուրս՝ որտեղ Բ. Դուռը ցանկանար: Ռուսական նախագծով նախատեսվում էր ցրել համիդիեն, իսկ համաձայնագրով՝ դրանք դարձնել պահեստային հեծելազոր, որը զենք ստանալու էր զորահավաքների ու զորախաղերի ժամանակ: Ռուսական նախագծով պաշտոնատարների ու դատավորների կեսը պետք է քրիստոնյա լիներ: Համաձայնագիրն այս հարցում ևս համր էր: Այն հրաժարվում էր ռուսական նախագծի մի այլ դրույթից ևս՝ ընտրելու և ընտրվելու իրավունք ունենալու էին միայն տեղաբնակները: Ռուսական նախագիծը պահանջում էր զավթված հողերի հարցով բողոքները քննելու համար ստեղծել հանձնաժողով, իսկ համաձայնագիրն արձանագրում էր. «Գյուղատնտեսական խնդիրներում բախումներն ընդհանուր տեսուչների քննության տակ են լինելու»: Համաձայնագրում խոսք չկար 1863թ. սահմանադրության և հայերի մյուս առանձնաշնորհումների մասին, ինչը Մանդելշտամի նախագծում ձևակերպված էր հստակ: Ռուսական նախագիծը որոշակի ձևակերպումներ էր պարունակում նաև մուհաջիրների հարցում, իսկ համաձայնագիրն այդ խնդիրը շրջանցում էր: Մանդելշտամը նախատեսում էր ձևավորել Բ. Դռան և տերությունների ներկայացուցիչների հանձնաժողով՝ որոշելու հայկական վիլայեթների կարգավիճակը: Համաձայնագրում այդ իրավունքը վերապահվում էր Բ. Դռանը, մերժվում էր բարենորոգումների նկատմամբ տերությունների վերահսկողությունը: Համաձայնագիրը ռուսական ծրագրի հետ համընկնում էր օրենքների ու հրամանագրերի հրապարակման, դատարանում օգտագործվելիք լեզվի, դպրոցների ազատականացման հարցերում: **Այսպիսով, «եթե համեմատվի Ռուսաստանի հզորությունը Թուրքիայի թուլության հետ և Մանդելշտամի նախագիծը՝ համաձայնագրի հետ, ապա ակնհայտ կդառնա, որ Բ. Դուռը հասել էր դիվանագիտական որոշակի հաջողության և դա շնորհիվ Ռուսաստանի հանդեպ կոշտ կեցվածքի»**[290]:

Գուլկևիչը հունվարի 27-ին գրեց. «Դիմելով հունվարի 26-ի (փետրվարի 8-ի) ակտի գնահատմանը, պետք է ընդունել, որ այն հայերին չի տալիս ինքնավարության այն ընդարձակ իրավունքները, որ նրանց համար ուզում էր ապահովել ռուսական նախնական նախագիծը: Հայերով բնակեցված բոլոր տարածքները մեկ գեներալ-նահանգապետի գլխավորությամբ մեկ նահանգում նախատեսված միավորման փոխարեն, հարկ եղավ բավարարվել երկու գոտիների ստեղծմամբ երկու գլխավոր տեսուչների հսկողության տակ և այդ գոտիների մեջ մտցնելով նահանգների մասեր, որոնցում բացառապես մահմեդականներ են բնակվում: Չհաջողվեց ամբողջ Թուրքական Հայաստանի համար ստեղծել մեկ ժողով, ընդլայնել վիլայեթների գլխավոր խորհուրդների իրավասությունները գոնե մինչև այն աստիճանի, որ 1880թ. Եվրոպական Թուրքիայի համար առաջարկվել էր միջազգային հանձնաժողովի կողմից: Հարկ եղավ հրաժարվել ռուսական նախագծի նաև մի քանի ուրիշ երկրորդական կետերից»[291]:

Զարմանալի ոչինչ չկա, որ հայկական բարենորոգումների համար պայքարող ռուս դիվանագետները գերագնահատում էին հունվարի 26-ի համաձայնագրի նշանակությունը: Ա. Մանդելշտամը գրեց. «Ռուսաստանի համար հունվարի 26-ի (փետրվարի 8-ի) ակտի իսկական նշանակությունն այն է, որ բովանդակում է Թուրքիայի կողմից արևմտահայերի նկատմամբ ռուսական

290 R 14083, Ab. 2968.

291 Чалхушьян Г. Красная книга, Ростов на Доны, 1919, стр. 18.

հովանավորության պաշտոնական ճանաչումը, այսինքն՝ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածից մեզ վերստին բերեց Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածին»[292]:

Մանդելշտամը դրա իրավունքն ուներ: Նա այդ գործում հօգուտ հայերի մեծ ջանքեր թափեց ու ազնիվ նվիրում հանդես բերեց:

Գերմանական կողմի տրամաբանությունը շատ ավելի բարձր էր: Գերմանա-հայկական կոմիտեի 1914թ. փետրվարի թռուցիկում կան հետևյալ մտքերը, թե Գերմանիան ամենաշահագրգռված երկիրն է բարենորոգումների խնդրում, որովհետև Թուրքիայում նրա ձեռնարկությունների մեծ մասը տեղադրված են հայաբնակ շրջաններում, սակայն հայերի հանդեպ նախապաշարումը շարունակում է խանգարել երկու ժողովուրդների փոխհարաբերությունների զարգացմանը: Դա հաղթահարելու համար կոչ էր արվում «Գերմանական մամուլին ապահովել Հայաստանի մասին թարմ և ճշմարտացի տեղեկատվությունով, ծավալել թարգմանչական գործունեություն, Գերմանիայում հիմնադրել հայագիտական կենտրոն»[293]: Էրզրումում գերմանական հյուպատոսը գրեց, որ բարենորոգումների ծրագիրը քաղաքում ընդունվեց հանգիստ: Վալին և թուրքական ավագանին մասնակցեցին հայկական բարեգործական երկու ձեռնարկների և կատարեցին զգալի նվիրատվություն: Միակ միջադեպն այն էր, որ «պ-րն Ադամովի կազմակերպած Նոր տարվա հանդեսին հայերը թույլ չտվեցին, որ իրենց կանայք պարեին թուրք սպաների հետ»:

Հայերը հավաստիացնում էին, որ բարենորոգումները համապատասխանում էին ոչ միայն իրենց, այլ նաև թուրքերի շահերին[294]: Նուբարը գտնում էր, որ Ասիական Թուրքիայի հարցը դեռևս երկար չի լուծվելու, և հայերը պետք է տրամադրվեն, որ շատ տարիներ են մնալու Թուրքիայի տիրապետության տակ[295]:

Սակայն համաձայնագրից բավարարվածությունը երկար չտևեց: Աստիճանաբար դրան սկսեցին վերապահումներով մոտենալ անգամ ջատագովներից շատերը: Դրան Սազոնովի նախկին ոգևորությունից գրեթե ոչինչ չմնաց, նա Հիրսին հանձնարարեց մինչև մարդահամարը հայ բնակչության համար ապահովել որոշակի ներկայացուցչություն վիլայեթների ընդհանուր ժողովներում, որպեսզի թուրքերը չկարողանային կեղծել մարդահամարի արդյունքները, ինչի հետևանքը լինելու էր հայերի մեկուսացումը կառավարման համակարգից: Թուրքերը համառեցին, Լոնդոնը Սազոնովին խորհուրդ տվեց բավարարվել ձեռք բերվածով, մանավանդ որ, ըստ ֆրանսիական ներկայացուցչի, Բ. Դուռը «մեծ զիջումների չէր գնա»: Եվ դա ճիշտ էր: Թուրքական շրջաններում այն կարծիքն էր տարածված, որ համաձայնագիրը քրիստոնյաներին պաշտպանելու քողի տակ կայսրության ներքին գործերին Եվրոպայի «անարդարացի միջամտություն» էր: Առանձնապես զայրացրել էր, որ մի քանի վիլայեթներում թույլատրված էր հայերի ու մահմեդականների «հավասար ներկայացուցչությունը, ինչպես նաև գլխավոր տեսուչներին լայն իրավասություններ տալը»[296]: Մինչև տեսուչների տեղ հասնելը թուրքերը թափուր պաշտոններում նշանակում էին մահմեդականների, միաժամանակ պաշտոնազրկվում էին, առանց այդ էլ փոքրաթիվ, հայ պաշտոնյաները: Մշակվում էր Ռուսաստանի սահմանակից շրջաններից հայերին տեղահանելու ծրագիր: Պ. Ռորբախը 1913թ. նոյեմբերի 23-ին «Գերմանիա-Ասիա ընկերությունում» «Թուրքիայում Գերմանիայի խնդիրները» ճառում ասաց, թե Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման շահերը պահանջում էին անփոփոխ թողնել արևելյան նահանգների կարգավիճակը, ինչի համար անհրաժեշտ էր այդ նահանգների հայ բնակչությանը տեղափոխել Միջագետք՝ մի մասին Բաղդադի երկաթուղու շրջան, իսկ մյուսներին կոտորել քրդերի միջոցով: «Հայաստանը,- հայտարարեց նա,- ամենավտանգավոր և գրեթե միակ օջախն է, որտեղ կարող են ծագել ներքին լուրջ անկարգություններ», որոնք տարածվելու են կայսրության մյուս նահանգները: «Այդ պատճառով Հայաստանում խաղաղ վիճակը պետք է դառնա թուրքական կառավարության ամենաառաջնակարգ խնդիրներից: Հետևաբար, դա հան-

292 **Мандельштам А. Н.** Младотурецкая держава, Москва, 1915, стр. 34.
293 R 14084, Ab. 8873.
294 Kons./Ankara, 168 Ab. 53.
295 R 14084, Ab. 5647.
296 АВПР, ф. Политархив, г. 3465.

դիսանում է նաև մեր՝ գերմանական, քաղաքականությունը... Երկրամասում հայերի ոչնչացումը հանգստության հաստատման միջոցներից մեկն է»: Գերմանա-թուրքական կոմիտեն հավանություն տվեց ծրագրին[297]:

1914թ. մարտին Բիթլիսում սկված քրդական հուզումները, ինչը լարված վիճակ ստեղծեցին ամբողջ Հայաստանում: Հուզումները հետևանք էին այն բանի, որ բարենորոգումների ներդրման պատճառով քրդերը հայտնվում էին ոչ շահեկան վիճակում, դա էլ ստեղծեց համապատասխան քարոզչական նյութ»[298]: Վանգենհայմը քրդական հուզումների հետևում տեսնում էր Ռուսաստանի ձեռքը: Նա հաղորդեց Բեռլին. «Ռուս գործակալներին, որոնց մասին ժամանակին ինձ ասել էր Հալիլբեյը, հաջողվել էր սադրել քրդերին հանդես գալու բարենորոգումների դեմ: Կառավարությանը մեղադրում են, որ երկիրը տվել է Ռուսաստանին»: Թուրքական իշխանությունները հանդես բերեցին թուլություն քրդերին սանձահարելու գործում: 2000 քրդի դեմ կանգնած էր միայն 400 թուրք զինվոր, չնայած «հնարավորություն կա դրանց թիվը հասցնել 1000-ի»[299]: Երիտթուրքերը համոզված էին, թե Ռուսաստանն ուզում է բռնազավթել Արևմտյան Հայաստանը, չնայած համոզվում էր, որ Ռուսաստանը շահագրգռված չէր «Հայաստանի գործերին միջամտելու: Ընդհակառակը, հուզումների շարունակվելու դեպքում ռուսական կառավարությունը կհայտնվեր թշնամական միջավայրում»[300]:

Քրդական հուզումների կապակցությամբ պատրիարքի և ուրիշ հայ գործիչների անհանգստությանը Թալեաթը պատասխանեց, թե զորք է ուղարկված քրդական հուզումների շրջաններում խաղաղություն հաստատելու: Իսկ Սազոնովն ասաց. «Քրդական հուզումներն իրեն շատ էին անհանգստացրել, թվում էր, որ սկսվել էր աղետ և այն, ինչ մինչև այդ ստեղծվել էր, փուլ էր գալիս»: Սակայն Կ. Պոլիսը հավաստիացրեց, որ թուրքական «կենտրոնական իշխանությունները չեն ցանկանում անկարգություններ»[301]: Քրդական շարժումը ճնշվեց՝ խլելով 60-70 թուրքի և երեք հայի կյանք: Բիթլիսում ռուսական փոխհյուպատոսին քրդերի առաջնորդ Սելիմը հավաստիացրեց, թե քրդական հուզումները հօգուտ հայերի էին: Նույն միտքը Սելիմը հայտնեց պատրիարքին հղած նամակում[302]:

Բարենորոգումների հաջող ընթացքի համար Սազոնովը նպատակահարմար էր համարում ձևավորելու հայ-քրդական միություն:

1914թ. մարտին իթիհադը որոշեց պատերազմի դեպքում որդեգրել պասիվ կեցվածք, խույս տալ Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ բախվելուց: Ապրիլի 9-ին ստորագրվեց Ֆրանս-թուրքական համաձայնագիրը՝ Բ. Դուռը ստացավ 800 մլն ֆրանկ վարկ[303]: Պայմանավորվածություն ձեռք բերվեց տասը տարում կառուցելու Հեյդար փաշա-Սեբաստիա-Խարբերդ-Արղին-Բաղեշ-Վան երկաթուղին, նաև նախատեսվում էր կառուցել Արղին-Դիարբեքիր, Էրզրում-Տրապիզոն, Էրզրում-Երզնկա-Սեբաստիա երկաթուղագծերը:

Ապրիլի 27-ին Ղրիմում Նիկոլայ 2-րդն ընդունեց թուրքական պատվիրակությանը, որից հետո Գուչկովը հայտարարեց, թե Թուրքիայի հետ Ռուսաստանն այլևս վարելու է բարեկամական քաղաքականություն: Զավրիևը պատասխանեց. «Աղմուկը, որ հասարակության մեջ ու մամուլում բարձրացել էր Լիվադիայի (թուրք-ռուսական հանդիպման վայր), նշանակության և ռուս-հայկական հարաբերությունների շուրջ, չեն վախեցնում հայերին, քանի որ մենք՝ հայերս, դեռ չորս տարի առաջ ասել ենք շատ նախարարների, թե Թուրքիայի փրկությունը ռուսամետ քաղաքականությունն է, իսկ բարեկամությունը Գերմանիայի հետ թուրքերի վրա թանկ է նստելու: Դրա համար էլ մենք՝ հայերս, ողջունում ենք այս իրադարձությունը... Սակայն կարևոր է իմանալ, թե դա որքանով է անդրադառնալու Ռուսաստանի կողմից մեր հարցի պաշտպանության վրա»: Գուչկովը պատասխանեց, որ թուրքական բարձր մակարդակի պատվիրակությու-

297 **Պալաքյան Գ.** Հայ գողգոթան, Ե., 1991, էջ 38:
298 «Армянский вопрос и геноцид армян...». с. 158.
299 Ն. տ., էջ 156:
300 Ն. տ., էջ 157:
301 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 43, ց. 1, գ. 83:
302 Ն. տ., էջ 78:
303 **Силин А.** Германо-Турецкие отношения... с. 15.

նը, որի մեջ էր նաև Թալեաթը, վարած բանակցություններում ասվեց, որ դրանք չեն կարող ազդել հայ-ռուսական հարաբերությունների վրա: «Ռուս-թուրքական բարեկամությունը միայն կօգնի իրականացնելու հայկական բարենորոգումները, որովհետև թուրքերը կդառնան ավելի զիջող, գիտենալով այդ հարցում մեր կարծիքը՝ չեն ուզենա մեզ զրդռել»[304]:

Ծրագիրն ընդունվելուց հետո սկսվեց գլխավոր տեսուչների թեկնածուների փնտրտուքը: Ռուսաստանը հինգ թեկնածու առաջադրեց՝ Բելգիայի բրիգադային գեներալ Դը Գիզ, Բելգիայի ավագ լեյտենանտ Անրի, Հոլանդիայի ռազմական նախարարության գլխավոր քարտուղար Դոուման, Հնդկաստանում նահանգապետ, նիդեռլանդացի Վեստենենկ, նորվեգացի մայոր Հոֆֆ: Ապրիլի 15-ին Բ. Դուռը հայտարարեց, թե առաջադրված թեկնածուներից ընտրված են նիդեռլանդացի Վեստենենկը և նորվեգացի Հոֆֆը: Այս երկու թեկնածուները Կ. Պոլիս հասան մայիսի սկզբներին: Մայիսի 6-ին նրանց ընդունեց Հիրսն ու ասաց, թե չի ուզում, որ գլխավոր տեսուչները ներքաշվեն քաղաքականության մեջ, որ քանի դեռ Թուրքիան խաղաղության է ձգտում, Ռուսաստանը Հայաստանը չի գրավի:

Բ. Դուռը մի կողմից գլխավոր տեսուչների թեկնածուներ էր փնտրում, մյուս կողմից՝ ռուս-թուրքական համաձայնագիրը միտումնաբար հակամահմեդական հռչակելով, լայն աշխատանք ծավալեց տեսուչների դեմ: Հրահրվում էին ցույցեր, որոնք պահանջում էին՝ թույլ չտալ նրանց ժամանումը Թուրքիա: Մինչև գլխավոր տեսուչները Կ. Պոլիս կհասնեին, Բ. Դուռը հանձնարարեց կոմս Օստրորոգին, որը Թուրքիա էր հրավիրված բարենորոգումների ծրագիր ստեղծելու համար, մշակել նրանց հետ համաձայնագրի նախագիծ: Այդ նախագծով տեսուչների իրավասություններն այնպիսի չրջանակների մեջ էին դրվում, որը գործնականում անհնար էր դարձնում համաձայնագրով տրված իրավասություններից օգտվելը: Սակայն տեսուչները հարկադրված էին հաշտվել և մայիսին 24-ին Թալեաթի հետ ստորագրեցին համաձայնագիր:

Պատրիարքարանը պատրաստեց 35 կետից կազմված «Հրահանգների նախագիծ գլխավոր տեսուչների համար» մի փաստաթուղթ, որը վերջինների խնդիրն էր համարում բարենորոգման չրջանակներում, առնվազն նահանգներում ապահովել «հասարակական անվտանգություն» և պայմաններ ստեղծել կառավարման բարելավման, «երկրի տնտեսական, ֆինանսական և մտավոր մակարդակի բարձրացման համար: Փաստաթղթում տեսուչը համարվում էր «կենտրոնական կառավարության և վալիի միջև կապի մարմին»[305]: Նրանք պետք է իրավունք ունենային հասարակական կարգը պաշտպանելու համար օգտագործել ռազմական ուժ, վալին պարտավոր էր վիլայեթի բյուջեի նախագիծը համաձայնեցնել տեսուչի հետ, վերջինը նաև պարտավոր էր վերահսկել համիդիե գնդերի ցրման գործընթացները[306]: Գլխավոր տեսուչը հանդիսանալու էր բարենորոգումների երաշխավոր: Հրահանգի նախագիծը հանձնվեց Հիրսին, որն ասաց. «Հայերը ճիչտ վարվեցին պատչաճը մատուցելով բարեփոխումներին...»: Հայոց կաթողիկոսը ցարին երախտագիտություն հայտնելով՝ աղոթում էր, որ ռուս-թուրքական համաձայնագիրը բարի ծիլեր արձակեր: 1914-ի ապրիլի 26-ին Զավեն պատրիարքը ընդունեց տեսուչներին, որից հետո հայտարարեց, թե Հ. Զավրիևը կարողացել է հաջողությամբ կատարել թեկնածուներ ընտրելու հանձնարարությունը[307]: Մինչդեռ ինքը՝ Զավրիևը, այդ կարծիքին չէր. «Այդ մարդիկ ոչ առաջին կարգի են և ոչ էլ արծիմներ»[308]:

ՀԵԴ 8-րդ համագումարի բանաձևում 1914թ. փետրվարի 8-ի ռուս-թուրքական համաձայնագրի մասին ասված է. «... Եթե օսմանյան կառավարությունը չանա հակադրվել այս համեստ նախագծի իրականացմանը, ժողովը հայտարարում է, որ այդ դեպքում հայ ժողովրդի իրավունքները պաչտպանելու և կառավարության անբարյացակամությանը հակադրվելու իրավասությունը պատկանալու է կուսակցությանը»[309]:

304 ՀՀ ՊԿԱ, ֆ. 57, ց. 2, գ. 28:
305 РГВИА, ф. 1, оп. 48, г. 35456.
306 Ն. տ.:
307 Զավեն արքեպիսկոպոս Պատրիարքական հուշեր, էջ 40-41:
308 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28:
309 Uras E. Tarishe Ermeniler ve Ermeni meselesi. Ankara, 1950, E. 589.

Իսկ իրավիճակը գնալով սրվում էր, դառնում պայթունավտանգ: Գուլկևիչը հայերին խորհուրդ տվեց գլխավոր տեսուչների հետ հանդիպումներից ձեռնպահ մնալ թուրքերին չգրգռելու համար:

Ադամովը 1914թ. մարտի 15-ին գրում է Հիրսին. «...Իթիհադական ակումբի կողմից հայերի դեմ հրահրումները բնավ չեն հանդարտվել...»: Տեղի թեմի առաջնորդ Ս. Սահաղետյանը բողոք ներկայացրեց վալուն, իսկ վերջինը հայերին մեղադրեց բոլոր մեղքերի մեջ: Նա առաջնորդին գրեց, թե հայերը «միայն մտածում են, որ հրահրվեն անկարգություններ՝ ամբողջ մեղքը մահմեդականների վրա գցելու համար»[310]:

«Քրիստոնյաների զինաթափումը, հրոսակախմբերի ոչնչացումը, պատրիարքարանների և էքզուրքականների բնաջնջումը, քրիստոնյաների գյուղերում մահմեդական գաղթականների բնակեցումը հողմացրիվ կանեին... քրիստոնյա ազգությունների բոլոր պատրանքները... Մեր հարաբերությունները մահմեդական մյուս պետությունների հետ դարձել են ավելի սերտ և թույլ են տալիս մեծ հույսեր տածել իսլամի ապագայի հանդեպ»[311]:

Իթիհադի Սալոնիկի համաժողովում կուսակցական գործիչ լիցեի տնօրեն Իհսանը հայտարարեց. «...Ադրիանապոլսի կոմիտեն պահանջում է բուլղարական տարրի նվազեցում կամ այդ վիլայեթում, որտեղ բնակչության մեծամասնությունը քրիստոնյա է, մեծաթիվ մուհաջիրների բնակեցումը կամ երիտթուրքերին թշնամաբար տրամադրված բոլոր քրիստոնյաների բնաջնջում»[312]:

Գնալով ավելի էր աճել իթիհադի ատելությունը քրիստոնյաների հանդեպ: Է. Նաջին 1914թ. մայիսին հայտարարեց. «...Իսլամականությունը մեզ տվել է աստվածային բարեհաճություն: Աշխարհը կարող է քարուքանդ , ամբողջովին տակնուվրա լինել, բայց իսլամականությունը չի կարող անհետանալ... Օսմանցին խալիֆաթն ու իսլամը համարում է ավելի սուրբ, քան սեփական կյանքը»[313]:

Այսպիսին էր մթնոլորտը կայսրությունում 1914-ի առաջին ամիսներին: Այն ավելի մթագնեց տեսուչների գալուց հետո:

Տեսուչների հետ կնքված համաձայնագրով նրանք փաստորեն դառնում էին ՆԳ նախարարի ենթականեր: Վալին համարվում էր վիլայեթի բարձրագույն պաչտոնատարը, և տեսուչը նրան պաչտոնազրկելու իրավասություն չուներ: Սահմանափակվում էին տեսուչների իրավունքները նաև մութասարիֆների, կայմակամների և չատ այլ ծառայողների պաչտոնանկ անելու գործում: Բ. Դուռը բարձրաստիճան պաչտոնատարների ցուցակում մտցրել էր անգամ թարգմանչին, դպրոցական տեսուչին, ուսուցչին, քննիչին[314]: Դատական պաչտոնատարներին աչխատանքից ազատելու համար տեսուչը պարտավոր էր դիմել արդարադատության նախարարին և գլխավոր դատախազին[315]:

Կայսերական իրադեով Վեստենենկին և Հոֆֆին չնորհվեց բեյի տիտղոս՝ ֆես կրելու պարտադիր հարկադրանքով: Ընդ որում, երիտթուրքերը գլխավոր տեսուչներից պահանջեցին մոռանալ հունվարի 26-ի պայմանագիրը և առաջնորդվել մայիսի 10-ի հրահանգներով: Նրանց չվստահեցին անգամ իրենց օգնականներ ընտրել: Հոֆֆն իր հետ Վան էր տանելու Բ. Դռան առաջադրած 11 օգնական, որոնցից 5-ը թուրք էին, երեքը՝ հայ և երկուսը՝ նորվեգացի:

Գլխավոր տեսուչները հեչտությամբ էին համաձայնվում իրենց կարգավիճակի իջեցման հետ: Վեստենենկը Զավրիևին ասաց, որ իրեն աչխատանքի է հրավիրել սուլթանը, և ինքը նրա պաչտոնյան է, որ հայերն իրեն չատ քիչ են հետաքրքրում, որ ինքը բոլորովին անտեղյակ է հայկական հարցին: «Հայկական հարցի մասին ոչինչ չգիտեր» նաև Հոֆֆը[316]:

Թուրքերը նաև ամեն ինչ արեցին, որ գլխավոր տեսուչների կողմից իրենց պաչտոնական պարտականությունների կատարման անցնելը ձգձգվեր, քաչքչուկ էին ստեղծում անգամ նրանց աչխատավարձի վճարման, զինվորական զորամասերի, ինչպես նաև չարիաթի դատարաններին նրանց վերահսկելու իրավունքի և մի չարք ուրիշ հարցերում:

310 «Геноцид армян...», с. 269, 270.
311 AMAS, PS, Turquie, tome 7.
312 Նույն տեղում:
313 «La jeune Turquie», 31.06.1911.
314 «Արարատ», օգոստոս, 1914, էջ 697-706:
315 ՀՀ ՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, թթ. 97-98:
316 Ն. տ., ց. 2, գ. 676:

Այդ ընթացքում Գերմանիան, նկատի ունենալով տրանսպորտային և այլ դժվարությունները, հրաժարվեց Թուրքիան ազդեցության գոտիների բաժանելու մտքից: Հասկանալի է, որ դա նոր խթան հանդիսացավ թուրք-գերմանական մերձեցման համար: Երբ պատերազմի չունչն արդեն համապարփակ էր, հայ գործիչները վերանայեցին իրենց մոտեցումները, գտան, որ բարենորոգումների անցկացման գործում պետք է ապավինել Գերմանիային, որն ըստ նրանց, բարենորոգումներում ուներ «էական նշանակության շահեր»: Զավրիևը գտնում էր, որ գլխավոր տեսուչները հանդիսանում էին Եվրոպայի ներկայացուցիչները՝ բարենորոգումների ընթացքին վերահսկելու և պատասխանատու էին թե տերությունների և թե Բ. Դռան առաջ: Թալեաթը հակառակ կարծիքի էր, նրա համար տեսուչներն ավելին չէին, քան թուրքական չինովնիկներ, մասնավորապես հունվարի 26-ից հետո, երբ տերությունները «մոռացան» հայոց բարենորոգումները: «Գլխավոր տեսուչները,- գրում է Զավրիևը,- թողնվեցին ինքներն իրենց և չփոթվեցին: Նրանք ենթադրեցին, որ իրենք ոչ թե տերությունների գործակալներ էին, այլ միայն Բ. Դռանը ենթակա ծառայողներ»[317]: Իսկապես, տեսուչներն աննկատ դարձան թուրքական կառավարության ստորադասներ: Կ. Պոլսի հայ գործիչները հասկանում էին, որ բարենորոգումների նոր փորձը նույնպես վերածվում էր քաոսի, նրանք դիմեցին ռուսական դեսպանին. «Բ. Դուռը ցանկանում է բարենորոգումներն իրականացնել ի վնաս հայերի»:

Արմեն Գարոյի հետ հանդիպման ժամանակ Թալեաթն առանձնահատուկ շեշտեց հայ գործիչների հետ փոխըմբռնման կորստի մասին: Պատասխանը եղավ՝ պատճառը պանթուրքիզմն է: Գարոն հայտարարեց, թե հայերը թույլ չեն տա, որ Արևմտյան Հայաստանը բնակեցվի քրդերով և մահմեդականներով[318]: Խոսք գնաց նաև այն մասին, որ հայկական վիլայեթներում չկար ոչ մի հայ վալի կամ մութասարիֆ: Կար միայն մի հայ կայմակամ: Հայերն աննշան տոկոս էին կազմում ժանդարմերիայում և ոստիկանությունում[319]: Մ. Պապաջանովի հետ զրույցի ժամանակ Սազոնովն ասաց. «Ես հասկանում եմ հայերի անհանգստությունը և այն, որ նրանք հուզվում են, որ գլխավոր տեսուչների հրահանգները հաճախ փոփոխվում են, հաճախ անտեսվում է համաձայնագիրը: Մենք, իհարկե, դա չենք հանդուրժի: Մենք արդեն պաշտոնապես հայտարարել ենք Բ. Դռանը և գլխավոր տեսուչներին, որ նրանց կազմած հրահանգներն ու ստորագրած պայմանագրերը չեղյալ ենք համարում[320]...»

Իսկ Զավրիևին ասաց. «Լիվադիայում ամենայն վճռականությամբ Թալեաթին ասել է, որ մենք սպասում ենք հայկական բարենորոգումների բարեխիղճ անցկացմանը»[321]: Մինչդեռ Թուրքիայում գնալով ուժեղանում էին ռազմատենչ տրամադրությունները: 1914թ. մայիսին հրապարակված օրենքով բանակ զորակոչելիս այլևս հաշվի չէին առնվելու ընտանեկան վիճակը, զորակոչվելու էին նաև ուսուցիչները, մեծացվում էին ծառայության փոխարեն դրամական վճարումների չափերը՝ դրանք հասցվեցին հարյուր հազար և ավելի լիրայի: Նույնիսկ այն բանից հետո, երբ Թալեաթը խարփանեց գլխավոր տեսուչների հետ պայմանագրի ստորագրումը, Կ. Գուլկևիչն ասաց Զավրիևին. «Նա (Թալեաթը) մեր անկեղծ բարեկամն է և ամենայն լրջությամբ ցանկանում է բարենորոգումների հարցում մեզ օգնել»: Զավրիևն առարկեց, թե տեսուչների հետ հարցերի լուծման գործում քաջքշովների հեղինակը Թալեաթն էր, իսկ «Գուլկևիչն իր սեփական քաղաքականությունն է վարում և դեսպանատանը պառակտում է առաջացել, դեսպանը դեռևս չի որոշել իր դիրքորոշումը»: Գլխավոր-տեսուչների հետ հանդիպումից հետո Հիրսը Զավրիևին ասաց. «Ես նույնպես, ինչպես և դուք, ստացա նույն տպավորությունը՝ մի ինչ-որ լարվածություն և անորոշություն, որ սահմանափակ է նրանց՝ որպես Թուրքիայի չինովնիկների, և Եվրոպայի վերահսկիչների միջև»[322]: Դեսպաններն այդ բարդությունից այդպես էլ ազատվել չկարողացան՝ մինչև կայսրությունից հեռանալն էլ շարունակում էին իրենց համարել սուլթանին ենթակա ծառայողներ և գտնում, որ իրենց անձնական

317 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28:
318 Селин А. Германо-Турецкие..., с. 71.
319 «Сборник дипломатических документов...», с. 53.
320«Русское слово», 08.10.1914.
321 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 55:
322 Ն. տ., ց. 2, գ. 28:

հաջողությունը կախված է երիտթուրքական վարչակազմի բարիկամեցողությունից: Հոֆֆն ու Վեստենենկն, իհարկե, հասկանում էին կացության միտումնավոր խճճվածության պատճառը, բայց անզոր էին փոխելու իրադարձությունների ընթացքը:

Երբ պատրիարքարանը բողոքեց ընդհանուր տեսուչներին օգնականներ նշանակելու ժամանակ հավասարության սկզբունքի խախտման դեմ, Թալեաթը հայտարարեց. «Մենք այնպես չենք հասկանում հավասարությունը, ինչպես հայերն են ցանկանում մեկնաբանել: Դա նշանակում է ընդհանրապես բոլոր օտոմանների հավասարություն... ինչի՞ց եք դժգոհում: Դուք ցանկանում էինք Եվրոպայի օգնությամբ ստանալ բարենորոգումներ...Ահա ձեզ և բարենորոգումներ»[323]:

«Հունվարի 26-ի համաձայնագրի կնքումից անմիջապես հետո երիտթուրքական կառավարությունը սկսեց հապճեպ լրացնել հայկական վիլայեթներում թափուր պաշտոնները, նոր չինովնիկներն ընտրվում էին բացառապես Մակեդոնիայից տեղափոխված մահմեդականներից, որոնք աչքի էին ընկել քրիստոնյա բնակչության նկատմամբ գործած չարագործություններով: Ինչ վերաբերում էր փոքրաթիվ հայ պաշտոնատարներին, ովքեր դեռևս ծառայում էին հայկական վիլայեթների թուրքական վարչություններում, իթիհադականները նրանց կամ հապշտապ տեղափոխում էին կայսրության հեռավոր շրջանները, կամ պարզապես պաշտոնազրկում: Թուրքական դատարաններն առանց ձգձգումների և որպես կանոն հօգուտ մահմեդականների էին ավարտում հողային վեճերի կապակցությամբ հայերի քննարկումները: Հայկական վիլայեթների ոստիկանության և ժանդարմերիայի ոչ միայն սպայական կազմը, այլև շարքային ծառայողները համալրվում էին միմիայն մահմեդականներով: Երիտթուրքական կառավարությունն ավելի ուժեղացրեց մուհաջիրների վերաբնակեցման քաղաքականությունը: Հունվար-մայիս ամիսներին միայն Սեբաստիայի վիլայեթում վերաբնակեցվեց ավելի քան 10 հազ. մահմեդական»[324]:

Տեսուչները պաշտոնական պարտականությունների կատարմանը պետք է անցնեին հուլիսի 5-ին: Մայիսի 18-ին Վանգենհայմը հեռագրեց Բեռլին. «Հայաստանի ընդհանուր տեսուչներ Հոֆֆն ու Վեստենենկը վերջերս եկան այստեղ: Նրանցից առաջինին երաշխավորել էր Փարիզում գերմանական հավատարմատարը: Վեստենենկը, ընդհակառակը, թվում է հակված է դեպի ռուս-ֆրանսիական ազդեցությունը և բացեիբաց պատմում է, որ իրեն աշխատանքի հրավիրելուն... մասնակցություն է ունեցել ռուսական դեսպանը»[325]: «Ինձ համար պարզ դարձավ, որ Հոֆֆն ամբողջովին միաբան է թուրքերի հետ: Թուրքերը նրա քթից բռնած ուզածի պես ման են ածում»[326]: Այդ էր պատճառը, որ Վանգենհայմի ու Թալեաթի ցանկությամբ հյուսիսային նահանգները տրվեցին Վեստենենկին, իսկ հարավայինները՝ Հոֆֆին: Վերջինս մեկնեց Վան, իսկ Վեստենենկը դեռ Կ. Պոլսում էր, երբ պայթեց առաջին աշխարհամարտը: Սեպտեմբերի 8-ին Թալեաթն ընդունեց Վեստենենկին և ասաց, թե նոր իրավիճակը հարկադրում է գլխավոր տեսուչների աշխատավարձը կրճատել կիսով չափ: Հոլանդիայի դեսպանը խորհուրդ տվեց մերժել Թալեաթի առաջարկությունը, իսկ Հիրսն ընդհակառակը՝ ընդունել: Վեստենենկը համաձայնեց Հիրսի փաստարկներին և սեպտեմբերի 10-ին Թալեաթին տեղյակ պահեց, որ ընդունում է նրա առաջարկը: Բայց քանի որ Թալեաթը, պատճառաբանելով նոր իրավիճակը, հետաձգում էր գլխավոր տեսուչների պաշտոնավարության անցնելը, Վեստենենկը թույլտվություն խնդրեց մեկնելու Հոլանդիա, պայմանով, որ պաշտոնավարությունը սկսելու մասին Բ. Դուռը տեղյակ էր պահելու: Սակայն նա այդպես էլ լուր չստացավ: Բ. Դուռն իրեն իրավունք վերապահեց գլխավոր տեսուչներին աշխատանքից ազատել՝ վճարելով տուգանք կես տարվա աշխատավարձի չափով:

Բնորոշ մի փաստ ևս: Երբ Հոֆֆը Վան հասավ, վալին դիմավորելու չգնաց: Նրան անգամ թույլ չտվեցին քաղաք մտնել, այլ տեղավորեցին քաղաքից դուրս՝ Արտամետում, և պահում էին շրջափակման մեջ՝ բացառելով որևէ շփում հայերի հետ: Հոֆֆը եռանդուն էր և կարողացավ հաղթահարել տեխնիկական բնույթի դժվարությունները: Նա իր գրասենյակը տեղավորեց Վանի հյուրա-

323 АВПР, «Политархив», оп. 482, д. 3475, л. 139.
324 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 28, թթ. 104-105:
325 R 14084, Ab. 9737.
326 Tagebucher von Westenenk, 1986, s. 16.

նոցներից մեկում: Հավանաբար այդ համառությունը դեր խաղաց, որ երիտթուրքերը նրան տեղակալ նշանակեին Դիարբեքիրի վալի հայակեր Ռեշիդին: Երբ Հոֆֆին հետ կանչեցին, պատմեց բարենորոգումներին թուրքական իշխանությունների «համառ դիմադրության մասին»: Նրա հանձնարարականները չեղյալ էին հայտարարվում վալիների կողմից: Ժանդարմերիան սիրախաղի մեջ էր քրդերի հետ, իսկ տեսուչի միջամտությանը պատասխանում էին սպառնալիքներով[327]:

Դատվանում մի հայի հաջողվում է հաղորդակցվել Հոֆֆի հետ: Տեսուչն ասում է. «Երբ երթաք Վան, ձեր առաջնորդին և ազգային ղեկավարներին ասեք, որ զգույշ ըլլան և աչալուրջ: Թուրքերու դիտավորությունները վատ կը տեսնեմ»[328]:

Տեսուչների հեռանալուց հետո Արևմտյան Հայաստանում հաստատվեց ռազմական իրավիճակ: Մարդկանց բանտ էին նետում առանց դատ ու դատաստանի: Դրությունը չփրկեց նաև այն, որ ՀԾԴ Արևմտյան բյուրոն օգոստոսի 22-ին հրաժարվեց կամավորական շարժմանը մասնակցելուց ու հռչակեց, թե օսմանահպատակ հայերը մնալու են օրինապահ: Դա ևս որևէ նշանակություն չունեցավ: Հայերը թալանվում էին, պետությանն էին անցնում նրանց ունեցվածքն, անասունները: Քղիում 3-4 օրում հավաքվեց 5000 ոսկե լիրա, իսկ միայն Էրզրում քաղաքից՝ 20.000 լիրա:

1914թ. օգոստոսի 25-ին սուլթանի մասնակցությամբ տեղի ունեցած մի ժողովում քննարկվեց գերմանական դեսպանի վերջնագիրը՝ 48 ժամվա ընթացքում պատասխանել, թե ինչպիսին էր Թուրքիայի կողմնորոշումը: Վանգենհայմը սպառնում էր, եթե Բ. Դուռը հրաժարվեր պատերազմի մեջ մտնելուց, հետ էին կանչվելու գերմանական ռազմական առաքելությունը, ռազմանավերը և նավատորները: Իսկ դրական պատասխանի դեպքում Թուրքիան ստանալու էր Մակեդոնիան ու Կովկասը: Ժողովի 68 մասնակիցներից 46-ը քվեարկեց հօգուտ պատերազմի: Հաջորդ օրը խնդրին անդրադարձավ նաև կառավարությունը: Բայց տարընթացությունը շարունակվում էր:

Հունիս ամսին Վռամյանն ու Բաստրմաջյանը լինում են Թալեաթի ու Հալիլի մոտ, իրենց դժգոհությունն արտահայտում տեսուչների աշխատակազմի ձևավորման առիթով: Վռամյանն առաջարկում է Հոֆֆի օգնական նշանակել Բաստրմաջյանին: «Նա շատ խելք է,- ծաղրում է Հալիլը:- Մենք նման պաշտոնյաներ ունենալ չենք ուզում»[329]:

Թալեաթն ընդունելով հայ գործիչներին՝ ասաց, թե հայերն օսմանյան խորհրդարանում ունեն 15, իսկ ռուսական դումայում՝ միայն մեկ տեղ: Ապա հայացքը հառելով Վարդգեսին՝ հանդիմանեց, թե դաշնակներն առաջացրին եվրոպական միջամտությունը Թուրքիայի ներքին գործերին: «Դրա հետևանքով,- ասաց նա,- հայերը շատ ավելի քիչ ստացան, քան ցանկանում էր նրանց տալ թուրքական կառավարությունը»: Պապաջանովի դիտողությանը, թե Ադանայում սպանվեց 30.000 հայ, Թալեաթը պատասխանեց. «Ադանայի դեպքերի ժամանակ զոհվեցին շատ երիտթուրքեր»: «Հայերի ու թուրքերի զոհերի թիվն անհնար է համեմատել»,- նկատեց Պապաջանովը[330]: Թալեաթը ժպտաց: Պետերբուրգում Պապաջանովն այցելեց իշխան Տրուբեցկոյին և առաջարկեց Արևմտյան Հայաստանին տալ պետական ինքնավարություն կամ բռնակցել Ռուսաստանին: Տրուբեցկոյը նման առաջարկը համարեց վտանգավոր ու սադրիչ[331]: 1914թ. ապրիլի 23-ին Զավրիևին ընդունեց Ցիմերմանը: ՀԾԴ գործիչն ասաց. «Թուրքիայի համառության պատճառով բարենորոգումները վերածվեցին ոչնչի: Պետք են լավ գլխավոր տեսուչներ»: Նա անվերապահորեն մերժեց հայերի անկախական տրամադրությունների մասին Ցիմերմանի կարծիքը և ասաց, թե հայերի միակ նպատակը օսմանյան պետության իրավահավասար քաղաքացի դառնալն է: Հայ գործիչը Հայկական հարցի դժբախտ ընթացքի պատճառը համարեց Գերմանիա-Ռուսաստան առճակատումը: Նա ասաց. «Վերջին 25 տարում հայերի արյունաներկ պատմությունը հետևանք է, որ երկու մեծ տերությունները, որոնք իրար խանդում էին և ամեն մի հայի կասկածում են մրցակցին համակրելու համար՝ դրա համար էլ նույնիսկ չհագրգիռ էին, որ հայերն անգամ

327 «Русское слово», 24.08.1914.
328 Սասունի Կ., Պատմութիւն Տարոն աշխարհի, Բեյրութ, 1957, էջ 711:
329 ՀՀ ՊԿԱ, ֆ. 43, ց. 1, գ. 83, թ. 76:
330 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 65:
331 Ն. տ.:

պատժվեին: Սա ձերբազատում է թուրքական կառավարությանը և խրախուսում նրա խժդժությունները... Ներկայումս հայերը չեն ցանկանում նորից դառնալ երկու մեծ տերությունների նոր մրցակցության օբյեկտ» և ձգտում են, որ հայկական տարածքներում այն դադարեցվի[332]: Ցիմերմանը խոսեց Հայկական հարցի կարևորության մասին նաև Գերմանիայի համար և խոստումներ տվեց: Այդ նույն Ցիմերմանն էր 1913-ի վերջերին հայտարարել. «Ըստ էության հայերը Գերմանիային պետք չեն: Հայերով բնակեցված Հայաստանը մնասակար է վերջինիս շահերին»[333]:

Երբ Վանգենհայմը լսում է տեսուչների մեկնումի մասին, իրողությունը ճշտելու նպատակով հարցնում է Թալեաթին, որը, ինչպես բնութագրում է թուրք հեղինակներից մեկը, «...խոսակցի աչքերի մեջ նայելով ստելու ընդունակություն ուներ» և դեսպանին պատասխանեց. «Տեսուչների մեկնումը ժամանակավոր է, պատերազմից հետո նրանք վերադառնալու են իրենց պաշտոններին»[334]:

Ահա թե ինչ է գրում Զեմալը. «Օսմանյան կառավարությունը գիտեր... ուշ թե շուտ պատերազմի մեջ է մտնելու: Եվ որովհետև նախատեսում էր, որ պատերազմի երկար ու ծանր տարիներին անկարող էր ներքին բարենորոգումներով զբաղվել, ուստի հարկավոր համարեց Արևելյան Անատոլիայի նահանգները կառավարելու համար նշանակված երկու օտարազգի վերատեսուչների լիազորությունները երկարացնել»: Զեմալը նաև խոստովանում է, որ թուրքիան կբարենորոգվեր, եթե վերանար ցարիզմն ու նրա միջամտությունները «մեր ներքին գործերին»: Եվ այդ նպատակին մենք կհասնեինք միայն մի պայմանով, եթե համաշխարհային պատերազմին մասնակցելով հրապարակ հանեինք «մեր պատերազմական բոլոր կարողությունները»[335]:

Պատմության թուրք կեղծարարները համաձայնագրի չիրագործման պատճառը համարում են պատերազմը՝ գտնելով, որ վերահաս աշխարհամարտը երիտթուրքերին հնարավորություն չտվեց կյանքի կոչելու հայկական բարենորոգումները: Այդ կերպ նրանք ձգտում են երիտթուրքերին ոչ միայն ազատել պատասխանատվությունից, այլև կոծկել եղեռնի նախապես մտահղացված լինելը: Թե համաձայնագիրը կնքելու և թե դրա կատարումը ձախողելու ընթացքում Հայկական հարցի շուրջ քննարկումները շարունակվում էին: Ինչպես ասում են. «Հույսը վերջինն է մեռնում»: Հայերը շարունակում էին հույսեր կապել Ռուսաստանի ազատարար առաքելության հետ: «Հայ ժողովրդի,- գրեց Ա. Ջիվելեգովը,- որը հազար թելերով կապված է Ռուսաստանի հետ, ցանկությունը մեկն է՝ ապագայի ազատ Հայաստանը գտնվի ռուսական հովանավորության տակ»[236]: Իհարկե հայերի այս ջերմ զեղումներով չէ, որ առաջնորդվում էր Պետերբուրգը, այլ այն իրողությունով, որ Ռուսաստանի համար Հայաստանի նշանակությունը կայսկածի ենթակա չէր և այդ մասին բազմիցս ասել են ռուս քաղաքական գործիչները: Սակայն հյուսիսային արջի շահերը պահանջում էին ոչ թե Հայաստանի ինքնավարության ստեղծում, այլ Հայկական բարձրավանդակի ամբողջական նվաճում: «Հերթի էր կանգնած Հայաստանի օկուպացումը,- գրում է Մ. Պոկրովսկին,- որը ռազմավարական և տնտեսական առումով Փոքր Ասիայի արևելյան մասում հրամայական դիրք ունի. ճանապարհը Սև ծովից Պարսկաստան և Տիգրիսի ու Եփրատի վերին հոսանքները գնում են Էրզրումով ու Տրապիզոնով, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի քաղաքներով»[337]:

Հայաստանի հարցում ռուս հասարակության մեջ, պաշտոնական շրջաններում, իրոք, տիրապետողն իրարամերժ մոտեցումներն էին: 1914թ. սկզբներին արտաքին գործերի նախարարության ղեկավարներից Մուրավյովը Վիլհելմ 2-րդին ասաց, թե արևմտահայ ազգային շարժումն օսմանյան հայաջինջ քաղաքականության դեմ հանդիսանում է համաշխարհային հեղափոխության մասը, որը պետք է ճնշվի իր սաղմում: Նույն օրերին սևհարյուրակային Մարկովը Պետական դումայում հայտարարեց. «Ռուսաստանի ինչի՞ն է պետք Կովկասում Մեծ Հայաստանի ստեղծումը: Այն շատ ավելի վատ է լինելու, քան Մակեդոնիայում կատարվածը: Դա կլինի երկրորդ

332 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 28:
333 Акопян С. Армения в планах империалистических держав. Е. 1967, с. 42.
334 Նանսեն Ֆ., նշվ. աշխ., էջ 262:
335 Զեմալ փաշա, նշվ. աշխ., էջ 48-49:
336 Джевелегов А. Будущее Турецкой Армении, сб. §Армянский сборник:, Москва, 1915, стр. 149.
337 Покровской М. Н. Дипломатия и войны царской России в XIXв., М., 1923, стр. 386.

Լեհաստան: Հայերը լավ են ապրում թե վատ, այդ նրանց հարցն է, իսկ հայկական պետության ստեղծմանն աջակցելը նշանակում է օժանդակել ամբողջ Կովկասի կորստյանը»: Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայևիչը Գևորգ 5-րդին ասաց. «Ռուսաստանում, ինչպես որ չկա յակուտական հարց, այնպես էլ գոյություն չունի Հայկական հարց»: Կաթողիկոսը սրտնեղած պատասխանեց. «Բայց չէ՞ որ Հայկական հարց կա Թուրքիայում»: 1914թ. նոյեմբերին Նիկոլայ 2-րդը Ֆրանսիայի դեսպան Պալիոլոգին ասաց. «Փոքր Ասիայում ես պետք է բնականաբար զբաղվեմ հայերով: Իհարկե, նրանց չի կարելի թողնել թուրքական տիրապետության տակ: Ես Հայաստանը պետք է միացնե՞մ Ռուսաստանին: Կմիացնեմ միայն հայերի հատուկ խնդրանքով: Եթե ոչ, ես նրանց համար կստեղծեմ ինքնուրույն կառավարություն»[338]: Իրողությունն այն էր, որ Հայկական հարցն ամբողջովին գրավել էր Արևելյան հարցի դիվանագիտական դաշտը, իսկ Արևելյան հարցը, գրում է ֆրանսիացի հետազոտողներից մեկը, «ընդունում է տնտեսական բնույթ, չնայած տերությունների համար հանդիսանում է գոյության պայքարի ձևերից մեկը»[339]:

Նույն մերկ շահադիտությունը շարունակեց ընկած մնալ Հայկական հարցի շուրջ շարունակվող դիվանագիտական պայքարի հիմքում: Հայ հասարակական-քաղաքական ուժերի վերաբերմունքը դիվանագիտական այդ պատերազմին միանշանակ չէր: 1914թ. մայիսի 9-ին Ազգային ժողովում արտասանած ճառում պատրիարքը հույս հայտնեց, որ բարենորոգումները բոլոր պայմանները կստեղծեն հայ ժողովրդի խաղաղ, անվտանգ զարգացման համար: Հունիսի 30-ին նա դիմեց արևմտահայությանը՝ վերջ տալ ներքին անհամաձայնություններին և միահամուռ ուժերով լծվել հայրենիքի վերաշինության գործին[340]: Պատրիարքարանի պատրաստած ընդհանուր տեսուչների իրավունքների ու պարտականությունների մասին հրահանգը ոչ Բ. Դուռը և ոչ էլ տեսուչները ուշադրության չարժանացրին: Չնայած դրան դաշնակցական մամուլը Լ. Վեստենենկին ու Ն. Հոֆֆին անվանում էր հայ մարզպաններ[341]:

Ընդհանուր առմամբ ուշագրավ էր, մասնավորապես, արևմտահայ գործիչների գործելակերպը մինչև տեսուչների հեռանալը: Նրանք անկեղծորեն ձգտում էին օգտագործել համաձայնագիրը երկրի զարգացման, բարեփոխության համար: Պատրիարքը թեմերին կոչ արեց անցկացնելու հայ ազգաբնակչության մարդահամար, կազմել հայերից զավթած հողերի վիճակագրություն, նաև ցուցակներն այն հայերի, ովքեր իրենց կրթությամբ ու մակարդակով կարող են աշխատել կառավարման համակարգում: Թեմերի առաջնորդներին հանձարարվեց պատրաստել տեղական կարիքներից բխող բարենորոգումների նախագծեր եւ հանձնել գլխավոր տեսուչներին: Ապրիլի 26-ին Գևորգ 5-րդ կաթողիկոսը հրապարակեց կոնդակ, որով կոչ էր անում բոլոր հնարավորություններն օգտագործել Արևմտյան Հայաստանում կրթական գործն առաջ տանելու համար: Նա խորհուրդ էր տալիս հանրակրթական ուսուցման հետ միասին զարկ տալ մասնագիտական կրթության զարգացմանը: Կաթողիկոսը խնդիր էր դնում կասեցնել արտագաղթը և ձեռնամուխ լինել ներգաղթի կազմակերպմանը[342]:

Պ. Նուբարը "The Times"-ի 1914թ. փետրվարի 20-ի համարում, երախտագիտություն հայտնելով տերությունների կառավարություններին ու սուլթանին համաձայնագրի համար, գրեց. «Հայկական նահանգների բնակչությունը խնդրում է մնալ օսմանյան հպատակ՝ պայմանով, որ իրականացվեն Բերլինի դաշնագրով նախատեսված բարենորոգումները», այդ դաշնագրի պայմանների կատարումը կնշանակի Հայկական հարցի վերջ: Սա ամենատարածված տեսակետն էր, որի կողմնակիցների թվում էին Ա. Զոպանյանը, Բալկանյան կոմիտեն, Գրեյը և շատ ուրիշ անձինք ու կազմակերպություններ: Պ. Նուբարը ծրագրեց ընդլայնել բարեգործականի գործունեությունը, մասնավորապես արևմտահայերի կրթությանը, ինչպես նաև հողազուրկ գյուղացիությանը օգնելու համար: 1914թ. փետրվարին Մանթաշովը ռուսական կառավարությունից խնդրեց թույլ տալ Արևմտյան Հայաստանում բացելու բանկ: Ապրիլի 12-ին Գր. Զոհրապի բնակարանում խորհրդակցություն տեղի ունեցավ նվիրված ազգային բանկի ստեղծմանը: Արևմտյան Հայաստանի տնտեսական կյանքը զարգացնելու և լուսավորչական աշխատանքներ ծավալելու գործին աջակցելու պատրաստակամություն էին հանդես բերում նաև ցարական իշխանությունները: Քայլեր կատարվեցին Հայաստանում ռուսական հյուպատոսական ծառայությունների ցանցն ընդլայնելու, հայկական դպրոցներում ռուսերենի դասավանդումը ֆինանսավորելու, հիվանդանոցներ կազմակերպելու ուղղությամբ:

Կարելի է հանդիպել բազմաթիվ հյուպատոսների, որոնք անվերապահ մերժում ու պիտակավորում են հայ քաղաքական ուժերի կողմնորոշումները: Դրանք կարդալով, հառնում է մինչև օրս անպատասխան մնացած մի հարց. նման դեպքերում ինչպե՞ս կվարվեին այդ մերժողներն ու պիտակավորողները: Կհրաժարվեի՞ն Անտանտի տերությունների օգնությունից: Ընդ որում, այդ կողմորոշումը լոկ դաշնակցությանը չէր, այլ, չնչին բացառությամբ, համազգային: 1914թ. մայիսին Թիֆլիսում գումարվեց հայկական հերթական համագումարը, որն ավելի խորացրեց ռուսական կողմորոշումը: Սազոնովը նույնպես Ազգային բյուրոյին խորհուրդ տվեց քաղաքական-դիվանագիտական գործունեությունից բացի հիմնել բանկ, որը գործելու էր Փոքր Ասիայում, այսինքն՝ պայմաններ ստեղծել, որպեսզի կապիտալը հոսեր Արևմտյան Հայաստան: Համագումարն ընդունեց այդ առաջարկությունը և որոշեց Արևմտյան Հայաստանում հիմնադրել բանկ երեք միլիոն դրամագլխով[343]: Պետերբուրգը սկսեց նախանձելի համառություն հանդես բերել նաև մուհաջիրների խնդրում: Նա Բ. Դռնից համառորեն պահանջում էր մահմեդական գաղթականներին չբնակեցնել հայկական վիլայեթներում:

«Բյուզանդիոնը» 1913թ. հոկտեմբերի 26-ին գրեց, թե բարենորոգումներն անհնար են առանց Եվրոպայի միջամտության և քրդական կեղեքիչներին պատժելու: Մերժելով բարենորոգումները բնակչության ազգային կազմի հետ կապակցելը՝ թերթն այն դիտում է որպես ժողովրդավարությանը միտված միջոցառում, անհրաժեշտ որքան հայերին, այնքան էլ թուրքերին ու քրդերին[344]: Թերթի 1913թ. դեկտեմբերի 30-ի համարում պրոֆ. Կ. Թումանյանը խորհուրդ էր տալիս, որպեսզի բարենորոգումների խնդիրը բարձրացնեին արևելահայերը, իսկ արևմտահայերն այդ անեին Բ. Դռան միջոցով: Նա հայերի վիճակի բարելավումը տեսնում էր ամբողջ կայսրության բարենորոգման համակարգում: Հայերի դիրքորոշումը պետք է լիներ՝ «ներկայ պարագայի մեջ չեզոք և սպասող, մեր վիճակին բարելավումը մեր սահմանադրական կառավարութեանն կակնկալենք»: «Արմենիան» համոզմունք էր արտահայտում, որ Հայկական հարցը վաղ թե ուշ լուծվելու է, քանի որ այդ են պահանջում պետությունների շահերն ու Թուրքիայի փրկության հրամայականը: «Մեզ՝ հայերուս, կմնայ չնորհավորել ու ողջագուրել զիրար մեր հայրենիքին ու մեր տանը մոտալուտ վերաշինութեան համար, որն անդառնալիորեն որոշուած լմնցած գործ մըն է ինչպես կերևի»[345]: «Մշակը» ողջունեց պատրիարքարանին, որ մերժեց երիտթուրքերի առաջարկը բարենորոգումների շուրջ անջատ բանակցություններ վարելու: Թերթն ընդունված ծրագիրն անվանեց «չատ համեստ», բայց միանգամայն գոհացնող, որովհետև իրականացվելու էր Եվրոպայի վերահսկողության ներքո: 1914թ. փետրվարի 13-ին «Մշակը» գրեց. «Ողջունում ենք նույնիսկ այդ կրճատված ռեֆորմները, միայն թե դրանք չմնան թղթի վրա...»: Երկու ամիս անց, ապրիլի 13-ին, այդ կասկածն ավելի որոշակի արտահայտվեց: Հ. Առաքելյանը գրեց, թե երկյուղ, վտանգ և սարսափներ են կախված արևմտահայերի գլխին: Նրանց համար դարձյալ ստեղծվել է «մի անորոշ դրություն, մի սպառնալից վիճակ»: «...Հայ ժողովուրդը չի հավատում ո՛չ հայկական ինքնավարության ցնորքին և ո՛չ էլ եվրոպական վերահսկողության միջոցով երկիրը բարեկարգելու հույսերին... Հայ ժողովուրդն ունի մի իրական հույս, դա ռուսական գրավումն է...»[346]:

Գր. Զոհրապը հարցի լուծում համարում էր Ռուսաստանի կողմից արևմտահայերի անձի և ունեցվածքի պաշտպանությունը: «Հայ ժողովուրդը չի տեսնում այլ ելք, բացի Ռուսաստանին դիմելը...»: «Հայկական հարցը վավերագրերի լույսի տակ» գրքույկում, որը 1913թ. Փարիզում

338 Полелог М. Царская Поссия во время мировой войны, Москва, 1923, стр. 169.
339 "Колониальный восток":, Москва, 1924, стр. 34.
340 «Բիւզանդիոն», 10.05.1914:
341 Ն. տ., 02.07.1914:
342 ՀՀ ՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 69, թթ. 1-2:

343 ՀՀ ՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 70, թթ. 2-5:
344 «Բիւզանդիոն», 16.11.1913:
345 «Արմենիա», 05.11.1913:
346 «Մշակ», 17.05.1913:

ֆրանսերեն հրատարակել էր Ա. Զոպանյանը, Գ. Զոհրապը գրում է, որ իր ձգտումն է Թուրքիայում ու հատկապես արևելյան նահանգներում ստեղծել ժողովրդավարական վարչաձև: Նա հանգամանալից անդրադառնում է Հայկական հարցի պատմությանը, մասնավորապես հայերի զանգվածային արտագաղթին 1800թ. Բիթլիսում ու Սլիվանում, 1820թ.՝ Թորթումում, Բաբերդում և Էրզրումում, 1830թ.՝ Համշենում ու Տրապիզոնում: Նշելով հայերի արտագաղթի ահագնացող իրողությունը, նա միաժամանակ նշում է, որ այնուամենայնիվ «հայկական մեծ զանգվածը կապված էր մնում իր հայրենի հողին»[347]: Գր. Զոհրապը Հայկական հարցի ծագումը կապում է ռուսական առաջխաղացման հետ, որի առաջն առնելու համար սուլթանը ցանկացավ ստեղծել «տեսակ մը պատնեշ-պետութիւն» և 1877-ի նոյեմբերին առաջարկեց հայերին «հայ բնակչությամբ նահանգներուն համար քաղաքական ինքնավարութիւն մը պահանջեն օսմանեան գերիշխանութեան տակ», սակայն Անգլիայի ռազմական միջամտությունը նրան հետ պահեց այդ ուղուց և Սան Ստեֆանոյում հասավ այն բանին, որ հայկական նահանգներին ինքնավարություն տալու տեղը ձեռնամուխ եղավ այդ նահանգներում Ռուսաստանի վերահսկողության ներքո «բարենորոգում և բարելավում» մտցնելու գործին, իսկ Բեռլինում վերացրեց նաև «Ռուսաստանի վերահսկողությամբ» պահանջը: Նա նշում է, որ Բեռլինից հետո Եվրոպայի անտարբերության հետևանքով «հայերու հալածանքն առաջ տարվեցավ այնպիսի մեթոդով և հետևողականությամբ մը, որ հազվադեպ է Թուրքիոյ մեջ»[348]: Եվրոպական կառավարությունները ոչինչ չարեցին, երբ 1890-ական թվականներին սուլթանը ոչնչացրեց հարյուր հազարավոր հայերի:

Հայկական հարցը լուծելու գործում անպարկեշտ գտնվեցին հատկապես երիտթուրքերը, ովքեր իշխանության հասնելուց հետո հրաժարվեցին իրենց խոստումներից, իսկ Ադանայի ջարդերը «ցույց տուեցին, թե կրոնական մոլեռանդութիւնը ոչինչ կորսնցուցած էր իւր ուժեն սահմանադրութեան վարչակարգի տակ»[349]:

Նա խիստ քննադատության է ենթարկում երիտթուրքերի հայկական քաղաքականությունը, նրանց հրապարակած բարենորոգումների նախագիծը, մերժում է իթիհադի պնդումը, թե օսմանյան օրենքները պաշտպանում են կայսրության բոլոր բնակիչների շահերը, ցույց տալիս, որ օսմանյան սահմանադրությունը չի ապահովում մահմեդականների ու քրիստոնյաների հավասարությունը, որ երիտթուրքերը չեն վստահում հայերին, նրանց հեռու են պահում կառավարման համակարգից, ճնշում են, թալանում, տնտեսապես քայքայում և երկրից արտաքսում: Մինչդեռ հայերը «քաղաքական նպատակներ չեն սնուցած», այլ ձգտել են միայն կյանքի և ունեցվածքի անվտանգության: Զոհրապը թուրքական խոստումներին հավատալը ոչ միայն անօգուտ, այլ նաև վտանգավոր էր գտնում. միակ ելքը նա Եվրոպայի վերահսկողությունն էր համարում: «Ոչ մեկ բարենորոգում կրնայ կատարվիլ այնքան ատեն, որ Եվրոպայի կառավարիչ մը դրուի հայկական նահանգներուն գլուխը»[350]: Նա գտնում է, որ այդ կառավարիչը պետք է բացարձակ ազատ լինի իր գործունեության մեջ, մասնավորապես «ընտրելու իր աշխատակիցները, նշանակելու կամ պաշտոնազրկելու պաշտոնատարներ և ամեն կարգի դատավորներ, մշակելու և գործադրելու վարչական կանոններ...[351] Իթիհադը պարտավոր է հայկական նահանգներին տալու ինքնավարություն: Հայկական բարենորոգումներ ասածը նշանակում է՝ Եվրոպայի նահանգապետի նշանակում, որն ունենա գործելու լիակատար ազատություն, հայերի համամասնական մասնակցություն կառավարմանը, վարչական ապակենտրոնացում: Գր. Զոհրապը իր ծրագրի ամենաթույլ կետը համարում էր եվրոպական վերահսկողությունը, որի արդյունավետությունը կասկած էր հարուցում: Նրան շատ ավելի հրապուրում էր Ռուսաստանի միջամտությունը և դժգոհում էր հայերի հանդեպ նրա անվստահությունից: «Երբեք կարելի չէ եղած ամբաստանելը և դժգոհում էր հայերի հանդեպ նրա անվստահությունից: «Երբեք կարելի չէ եղած ամբաստանել մասին փաստ մըն են, թե կապուած են այդ երկրին» և եթե Ռուսաստանն իրոք իրականացնի հայկական բարենորոգումներ, ապա «երախտագիտութեան նոր տիտղոսներ կը շահե» հայերից[352]:

Հայկական հարցի մանրակրկիտ ուսումնասիրությունն ու եզրահանգումները Ա. Զոպանյանին մղեցին ասելու, որ այն «Հայկական հարցին վրայ հայերու կողմե գրուած գործերուն լավագոյններեն մինն է...»[353]:

Գր. Զոհրապը գնալով ավելի ու ավելի էր մխրճվում արևմտահայ գյուղացիության հիմնահարցերի, մանավանդ հողային հարցի մեջ: Նա բազմաթիվ զեկուցագրեր, տեղեկագրեր, առաջարկներ ներկայացրեց թուրքական կառավարության հողային հարցի վերաբերյալ: Նա հողային հարցը ձգտում էր լուծել ագրարային ռեֆորմի, այսինքն՝ թուրքական կառավարության միջոցով: Ընդ որում՝ թե ազգային, թե հողային ու թե բանվորական հարցերում հանդես էր գալիս որպես համակարգերական լուծումների ջատագով:

Արևելահայ ստեղծագործական մտավորականությունից Հայկական հարցին առանձակի մեծ ուշադրություն է նվիրել Հովհ. Թումանյանը: Նա գտնում էր, որ Հայկական հարցը «իր սկզբնական շրջանում զուտ քաղաքական խնդիր էր և հետամուտ էր ձեռք բերելու հայի կորցրած քաղաքական անկախությունը»[354]: Գրողը միանգամայն ճիշտ է նկատել այդ հարցի բովանդակության մեջ ժամանակի ընթացքում կատարված փոփոխությունը: «Էսօր,– գրում է Հ. Թումանյանը,– նա հանդես է գալիս արդեն լոկ որպես քաղաքական ազատության խնդիր, որ իր պահանջը վերջիվերջո ձևակերպում է էսպես՝ կյանքի, գույքի, պատվի և կուլտուրական զարգացման ապահովություն»[355]: Նա հայկական հարցի լուծումը կապում էր Ռուսաստանի հետ, հայկական ջարդերի համար մեղավոր համարում ոչ միայն թուրքային, այլև Անգլիային, Ֆրանսիային և Գերմանիային: «Ով վեր է կացել Ռուսաստանի հաղողության դեմ, վեր է կացել հայկական հարցի հաղողության դեմ, և ով Ռուսաստանի դեմ պաշտպանել է Տաճկաստանին, նա մեղսակից է տաճկական գազանություններին ու հայկական սարսափներին»[356]: 1912թ. նա գրեց. «Նորից ոռնում է հին ծանոթ գույժը, Տաճկաստանում կոտորում են հայերին...»[357]:

Հ. Թումանյանը հայկական ողբերգության պատճառը համարում էր ոչ թե կրոնական, այլ քաղաքական՝ թե սուլթանը և թե երիտթուրքերը ձգտում էին բնաջնջել հայերին ու նրանց հայրենիքը դարձնել թուրքական հող: Նա մարգարեանում է. հայկական հարցը Թուրքիային «հուզող ամենածանր ցավերից մինն է, և հետզհետե թերևս դառնա ավելի ու ավելի ծանր, քանի թուրքն ստիպված լինի սեղմվել դեպի էս կողմերը: Եվ ահա էս հարցից ազատվելու հնարը, էսպես վճռել է թուրքի պետական հանճարը, հայերին կոտորել կամ հալածել, քշել, գաղթեցնել»: Եվ սկսվեցին հայերի ջարդերն ու գաղթը, որոնք այլևս վերջ չունեին և տանում էին դեպի «պատմության ասպարեզից» հայերի անհետացման: Փրկությունը մեկն է՝ զենքի ուժով պաշտպանել ապրելու իրավունքը: Նա այդ իրավունքի համար պայքարի հաղողության գրավականը համարում էր Ռուսաստանին ապավինելը և համոզված էր, որ Ռուսաստանը «վերջ կդնի հայ ժողովրդի էս անվերջ կոտորածին, վայրենի ժողովուրդների անվերջ բարբարոսությանը, քաղաքակիրթ աշխարհի էս անվերջ խայտառակությանը»[358]: Նա նույնպես դժգոհեց, երբ հրապարակվեց 1914թ. հունվարի 26-ի համաձայնագիրը: «Զնայելով հայոց կաթողիկոսի ու նրա ներկայացուցիչ Նուբար փաշայի շնորհավորական հեռագրերին՝ հայ ժողովուրդն ամեն տեղ էս հարցի դեմը խորին լռություն է պահպանում, ծանր ու իմաստուն մի լռություն, իսկ երիտասարդ թուրքերը Ռուսաստանի սահմանի վրա զորահանդեսներ են սարքում»[359]:

Անդրադառնալով հայկական բարենորոգումների հանդեպ եվրոպական պետությունների վերաբերմունքին՝ Ն. Ադոնցը գրում է, որ այդ պետությունները հայկական բարեփոխումները

347 Զոհրապ Գ. Հայկական հարցը փաստաթղթերու լոյսին տակ, Բեյրութ, 1976, էջ 7:
348 Ն. տ., էջ 8:
349 Ն. տ., էջ 10:
350 Ն. տ., էջ 14:
351 Ն. տ., էջ 24:

352 Զոհրապ Գ. Հայկական հարցը փաստաթղթերու լոյսին տակ, Բեյրութ, 1976, էջ 30-31:
353 «Անահիտ», 1930, թիվ 3:
354 Թումանյան Հ. ԵԺ, հ. VI, Երևան, 1951, էջ 226:
355 Ն. տ., էջ 206:
356 Ն. տ., էջ 230-231:
357 Ն. տ., էջ 203:
358 Ն. տ, էջ 206:
359 Ն. տ., էջ 294:

դիտում էին, թե «դրանք այլ բան չէին, եթե ոչ Հայաստանի համար լրիվ ինքնավարություն: Թուրքական փաստարկումները և վիճակագրությունը նպատակ էին հետապնդում ապացուցելու, որ Հայաստանի ինքնավարության գաղափարը ոչ մի էթնիկական հիմք չունի, քանի որ հայերն ամենուրեք փոքրամասնություն էին: Բայց, եթե նույնիսկ ընդունենք այդ արհեստական հաշվարկումները, հեշտ է առաջ քաշել մի խիստ էական առարկություն ad hoc թուրքական կառավարության հիմնական կոնցեպցիային: Եթե մի ազգության թվական գերակշռությունը բացարձակ պայման է ինքնավարության և անկախ գոյության համար, ապա ինչպե՞ս է, որ մի քանի միլիոն թուրք տիրակալում են բազում միլիոն տարբեր ազգությունների... Թուրքերի տեսակետը Հայկական հարցում անտրամաբանական էր, անհետևողական և նույնիսկ անբարոյական, քանի որ նրանք հայերից պահանջում էին այն, ինչ իրենք չունեին՝ թվական գերակշռություն անհրաժեշտ բարեփոխումներ մտցնելու համար...» Եթե բնակչության ազգային կազմը հիմք ընդունվի, ապա Թուրքիայի հավակնությունները չպետք է անցնեին Տրապիզոն-Ադանա գծից արևելք, որովհետև այնտեղ Հայաստանն է «Փոքր Հայքը Հայկական Կիլիկիայով և Մեծ Հայքը»: Ադոնցը տալիս է Հայաստանի տարածքի բնութագրությունը՝ Տրապիզոնի սանջակի արևելյան կեսը, սկսած Կերասունից, Գյումուշխանեի սանջակը, Սըվազ և Կարահիսար սանջակները, Ադանայի, Կոզանի և Ջեբելբերեքեթի սանջակները, Մարաշի սանջակը, Էրզրումի, Բիթլիսի, Խարբերդի վիլայեթները, Վանի և Աղբակի սանջակները և Դիարբեքիրից սանջակի հյուսիսային անկյունը: Այսինքն՝ Հայաստանից դուրս էին թողնվում Սըվազի վիլայեթի երկու սանջակները, Հաքիարին, Մարդինի սանջակը, Կիլիկիայի և Տրապիզոնի ծովափի փոխարեն[360]:

Երբ հրապարակվեց բարենորոգումների ծրագիրը, «Հորիզոնը» գրեց, որ այն հայերի համար ստեղծում է «վերին աստիճանի անհաստատ դրություն: Ոչ մի միջազգային երաշխիք չկա, որ ընդգծված պահանջներն իրագործվելու են, հետևաբար և ոչ մի հիմք մեզ համար՝ հայկական խնդիրը հենց թեկուզ անցողական ստադիայի համար լուծված նկատելու»[361]: Դրա պատճառը «Դրոշակը» համարում էր Գերմանիան, որի ջանքերով ծրագիրը «դարձավ իր ձևով անորոշ, անբովանդակ, հեղհեղուկ, գործնական հետևանքներով չափազանց առեղծվածային մի փորձ, որ բազմաթիվ փորձությունների աղբյուր է դառնալու»[362]:

Արդեն ասվել է, որ երիտթուրքական հեղաշրջումից հետո ՀԾԴ ամեն ինչ արեց ազգի պարագլուխ դառնալու համար և դա հաջողվեց: Նա անողոք կռիվ սկսեց մյուս կուսակցությունների ու եկեղեցու դեմ, չնայած ձեռնպահ չէր իր ծրագրերն ու պլաններն իրականացնելու խնդրում հոգևորականությանն օգտագործելուց: ՀԾԴ գտնում էր, որ պատրիարքարանը քաղաքական խնդիրներով չպետք է զբաղվի և պիտի «սահմանափակվի իր կրոնական հանգամանքներուն ու գործերուն մեջ»[363]: ՀԾԴ հոգևորականներին պարզապես քշում էր ասպարեզից և ազգի ղեկավարությունը վերցնում իր ձեռքը: Օրինակ, Բայազետում մի խումբ դաշնակցականներ «առաջնորդարանի բոլոր պաշտոնական մարմինները դուրս հանած և ըսած են, որ այլևս իրենք պիտի կառավարեն ազգային գործերը»[364]:

Ակնում դաշնակները պահանջեցին վաճառել եկեղեցու ունեցվածքն ու դրամը հանձնել իրենց, Այնթափում փորձեցին բռնությամբ խլել եկեղեցին ու վերածել ժողովատեղի, նման փորձը Զմյուռնիայում վերածվեց արյունահեղության: ՀԾԴ տիրացավ Աղթամարի վանքի կալվածքներին[365]: Ուժի ու ահաբեկչության հարկադրանքով պատրիարքարանի թույլտվությունը ստացավ եկեղեցիներում ժողովներ ու հանրահավաքներ անցկացնելու: ՀԾԴ բոլոր հնարավոր ու անհնար միջոցներով նվաստացնում էր ազգային մյուս կուսակցություններին, մանավանդ խորհրդարանական ընտրություններում հանդես գալիս «ազգի միակ ներկայացուցչի» դերում, տիրանում պատգամավորական մանդատներին, առանց հաշվի առնելու, թե իր առաջադրած թեկնածուները որքանով էին պի-

360 Ադոնց Ն. Հայկական հարցի լուծման շուրջը, Երևան, 1989, էջ 64-99:
361 «Հորիզոն», 18.02.1914:
362 «Դրոշակ», 1914, թիվ 4:
363 «Բիզանդիոն», 12.02.1912:
364 Ն. տ.:
365 «Աշխատանք», 1912, թիվ 7,8:

տանի խորհրդարանային աշխատանքի համար: Օրինակ, Վ. Փափազյանը ստացել էր «համր երեսփոխան» մականունը, որովհետև թուրքերեն արտահայտվել չէր կարողանում: Նույն պատճառով Վռամյանի մասին ասում էին, թե նրա «պես շատախոս մարդու համար խորհրդարանում սֆինքսային լռություն պահելու պարտավորված լինելն ամենից մեծ պատիժն» էր[366]:

ՀԾԴ հայ գյուղացիներից հավաքում էր զանազան տուրքեր ու կային փաստեր, երբ հավաքված միջոցները ծախսվում էին այս կամ այն գործչի անձնական կարիքների համար: Բազմաթիվ էին գյուղացիների գանգատները դաշնակցականների «կեղեքումների դեմ», իսկ Մշո դաշտի շատ գյուղերում՝ Այնթափում, Դիարբեքիրի, Ուրֆայի ու մի քանի այլ շրջանների չինականները պարզապես վռնդում էին դաշնակցական հարկահավաքներին[367]: Վ. Շիրկովը 1909թ. հունվարի 17-ին գրում է, որ Բիթլիսի վիլայեթի շատ հայեր դժգոհ էին դաշնակցականներից, բայց վախենալով ահաբեկչությունից կատարում էին նրանց կամքը[368]: Իսկ Ս. Օլֆերովը նկատում է. «Իմ չփոմները Վանի հայերի հետ թույլ է տալիս եզրակացնել, որ դաշնակցականներն արդեն կորցրել են իրենց ազդեցությունը և համակրանքը: Գիտեմ դեպքեր, երբ գյուղացիներն անիծելով ու ծեծելով վռնդել են նրանց իրենց գյուղերից ու ավաններից»[369]:

Երբ կարդում ես ՀԾ Դաշնակցության մի քանի պարագլուխների գրածները հայ-ռուսական հարաբերությունների մասին, զարմանում ես երկդիմության, նաև մտածողության ու վարքագծի անբարոյականության վրա: Ահավասիկ Ռ. Դարբինյանի «Ռուսական վտանգ» հորինվածքը, որն անպատասխանատու և բարոյականությունից զուրկ մտածողության բացառիկ նմուշ է: Դաշնակցական այդ գործչի կարծիքով հայի համար ռուսն ու թուրքը նույնն են, երկուսն էլ ոխերիմ թշնամի: Ատելությունն այդ պարագլխին կուրացրել էր մինչև այն աստիճանի, որ հայտարարում էր. «Հայ ազգն իր պատմության վերջին շրջանում եղել է երկու մեծ ժողովուրդների՝ ռուսի և թուրքի, լուծի տակ և հզորապես ենթարկուել է նաև նրանց մտավոր և բարոյական ազդեցությանը»[370]: Հետևաբար «հայության ազատագրական պայքարը պիտի մղուեր այդ երկու ճակատների վրայ»: Սակայն, ափսոսում է նա, հայությունը «կռվել է միայն մեկ ճակատի՝ թուրքական ճակատի, վրայ», չնայած ոչ թե թուրքերն, այլ ռուսներն էին բոլոր ջանքերը թափում «տարրալուծելու հայ ազգությունը, ձուլելու այն իւր մեջ...»[371], որի հետևանքով «հայ ինտելեգենցիան և հայ բուրժուազիան յարաճունորեն ենթարկվում էին այլասերման, օտարացման, բարոյաքքման»: Ռուսները «մահացու հարված» էին հասցնում «մեր ազգային ուրոյն կուլտուրայի» զարգացմանը, այնքան են «ապազգայնացրել նրա վերջին խավերին», որ նույնիսկ առաջին աշխարհամարտի տարիներին հայ կյանքում «առաջ չեկավ որևէ քաղաքական հոսանք ընդդեմ ռուս պետության, մենք, կարծես, զրկուել էինք ընդունակությունից զատելու հայ ազգի շահերը»: Իսկ հայերի ռուսական «յախտուն օրիենտացիան ոչ թե արդիւնք էր ռեալ քաղաքական մտածողութեան կամ հաշիվների, այլ մի անհաղթելի հասարակական պսիխոզ էր...»: Հայերն այդպես էլ չըմբռնեցին, թե իրենց ինքնորոշման ճանապարհին, հանձինս ռուսների, ինչպիսի «մեծ չարիքից էին ազատվում»[372]: «...Ներկա պահին չկայ ավելի մեծ թշնամի, քան ռուսն է, և նրա դեմ պետք է ուղղված լինեն մեր բոլոր ուժերը՝ «թե՛ ֆիզիկական, թե՛ մտավոր, թե՛ բարոյական», ներշնչվենք, որ «մենք կարող ենք կռուել և պետք է կռուենք նրա դեմ էլ նույնքան սեղմ շարքերով ու անվերապահութեամբ, որքան թուրքերի դեմ...», «...մեր կեանքի բոլոր ասպարեզներում արմատախիլ անել այն գերազանցապես բացասական հետքերը, որ թողել է մեկ դարու ռուսական տիրապետությունը»»: «Ռուսաստանը... պետք է մերժուի... ոչ միայն որպես քաղաքական սիստեմ, այլև իբրև կուլտուրական ազդեցություն...», նույն այն բանի համար, որ «Ռուսաստանին այսօր սպառնում է Տաճկաստանին վիճակուած բախտը... ռուսական աշխարհակալութիւնը մահուան է դատապարտուած, ինչպես և թուրքականը»:

366 «Մշակ», 17.06.1912:
367 «Բիզանդիոն», 08.01.1910: «Մշակ», 16.03.1911:
368 АВПР, «Политархив», оп. 482, д. 543:
369 Ն. տ., գ. 781:
370 Դարբինյան Ռ. Ռուսական վտանգ, Երևան, 1991, էջ 9:
371 Ն. տ., էջ 11:
372 Ն. տ., էջ 14:

Այնուամենայնիվ հայերն անվերապահ կանգնեցին Ռուսաստանի կողքին աշխարհամարտի հենց սկզբից: Ինչո՞ւ: «...Գիտենալով, որ ռազմական գործողությունների տեղափոխվելը Թուրքահայաստան սպառնում է այնպիսի սարսափով, որի առաջ խամրելու էին Բելգիայի և Լեհաստանի արհավիրքները, հայերն «անմիջապես» մտան պատերազմի մեջ իրենց վաղեմի թշնամու դեմ... Թուրքահայերը հույսով ու հավատով սպասում են իրենց ազատագրմանը...»[373]: «Այժմ եկել է թուրքական լծից Հայաստանը լրիվ ազատագրելու ժամանակը»,- Պետական դումայի 27.01.1915թ. նիստում հայտարարեց Կովալևսկին[374]:

Վանգնհայմը Ցագվին 05.06.1913թ. գրած նամակում մի ուշագրավ միտք է արտահայտում, թե հայերը թուրքերի հետ մի պետությունում ապրել չեն կարող և դա «հիմնավորվում է հայերի համեմատությամբ թուրքերի անընդունակությամբ տնտեսական կյանքում»: Այդ միտքը հաստատելու համար նա բերում է Ադանայի օրինակը: «Մի քանի տարի առաջ այնտեղ իրականացվեց հայերի ջարդ և նրանց պատկանող ամեն ինչ ամբողջովին այրվեց: Այժմ ավերված տներն ու խանութները նորից կանգուն են, անգամ ավելի գեղեցիկ, քան առաջներում: Թուրքերը նախանձում են ու մտմտում նոր բռնի գործողություններ: Հայերի դեմ մահմեդականներին գրգռողները հանդիսանում են վերջինների հետ միացող թուրք առևտրականները, որոնց աջակցում են սոֆթաներն և մոլլաներն իրենց կրոնական մոլեռանդությամբ»[375]: Սա ավելի քան համոզիչ պատճառ է, բայց ոչ միակը և գուցե նաև՝ ոչ գլխավորը: Դրանք նորից թվարկելու հարկ չկա:

Ռուսական քաղաքական շրջանները նույնպես հասկանում էին, որ Հայկական հարցում մեծ տերությունները խաղի մեջ էին: «Բարեփոխության մասին խոսք անգամ լինել չի կարող,- 1914թ. նոյեմբերի 23-ին գրեց «Искра» շաբաթաթերթը:- Դաշնակիցները իրենց վրա են վերցնելու Թուրքիայի կողմից ճնշված ժողովուրդների ազատագրության գործը, և ռուսական արծվի հովանու տակ հայկական գավառները կստանան խաղաղ զարգացման հնարավորություն»:

Շաբաթաթերթի ցանկությունը կարող էր իրականություն դառնալ անգամ այն դեպքում, եթե ոչ թե բոլոր տերություններն, այլ գոնե միայն ցարական կառավարությունը քաղաքական շահագրգռվածություն և կամք հանդես բերեր խնդրի արմատական լուծման համար: Դժբախտաբար Պետերբուրգը հավատարիմ էր իրեն՝ ձգտում էր ոչ թե տիրանալ Հայաստանին, այլ այն որպես նվեր ստանար: Իսկ նման նվեր նրան ոչ ոք չէր տա:

1913թ. սեպտեմբերի 7-ին Կոստանցա քաղաքում տեղի ունեցած հնչակյան կուսակցության 7-րդ համագումարը որոշեց պայքարել իթիհադի դեմ՝ «մինչև որ ավելի հարմար քաղաքական ու տնտեսական պայմաններ առաջանան»[376]: Խնդիր դրվեց «պաշտպանել ինքնավար Հայաստանի գաղափարը՝ եվրոպական վերահսկողությամբ», անգիջում կռվել իթիհադի ձուլման քաղաքականության դեմ, անցնել ընդհատակ և գործել անլեգալ: Հնչակը հրաժարվելով Ռուսաստանի հովանավորությամբ ինքնավարությունից, բնականաբար դեմ էր կաթողիկոսի քաղաքականությանը: «Երիտասարդ Հայաստանը» բարենորոգումների ծրագրի մասին գրեց. «Ինչ գործնական արժեք կարող է ներկայացնել մի նախագիծ, որի միջից բարենորոգումների միակ իրական հիմքը՝ Հայաստանի աշխարհագրական միությունը և գործադրության միակ անհրաժեշտ նախապայմանը՝ եվրոպական վերահսկողությունը, բացակայում է... Հայկական հարցը լուծված չէ... Հայ ճնշված ու հարստահարված զանգվածը՝ պատնեշի վրա կանգնած, պետք է շարունակի իր ազատագրական պայքարը, մինչև որ իր սիրով փայփայած իղձերի պակումը՝ եվրոպական վերահսկողությամբ ինքնավար Հայաստանի ծրագիրն իրականանա...»[377]: 1913թ. հունվարին ռամկավարները հայտարարեցին. «Մենք ապստամբներ չենք և Հայկական հարցն անջատողական շարժում մը չէ երբեք, մեր պահանջները տարրական ազատության պահանջներն են... հայ ազգը դժգոհ է, բայց ոչ ապստամբ», հայն այլ նպատակ չի ունեցել, քան «ինքնուրույն մշակույթի զարգացումը նորոգված ու բարեկարգ օսմանյան պետության մեջ»[378]: Ռամկավարները գտնում էին, որ Հայկական հարցի լուծման ամենազորեղ ազդակները հայ ժողովրդի մեջ են՝ դա հայության ոգին է: «Վան-Տոսպը» կոչ էր անում քաղաքական կուսակցություններին՝ դեն թողնել ներքին տարաձայնությունները և համախմբվել «տաճկահայկական հարցի» շուրջը[379]:

Ռամկավարները սկզբում դրական գնահատեցին հունվարի 26-ի համաձայնագիրը, գտնելով, թե հայ ժողովուրդն «այսօր... կրնայ քիչ մը ավելի հույսով ու վստահութեամբ նայիլ ապագային...»[380]: Սակայն քիչ անց լցվեցին թերահավատությամբ, վախենալով նոր «խոշոր հուսախաբությունից»: Չնայած դրան «Ազգը» 1914թ. մարտի 18-ին գրեց. «...Պետք է առանց հոռետեսության քիչ մը հույսով նայինք անոր վրայ և մեր կողմե աշխատինք դիւրացնելու անոր գործադրութիւնը»:

Հայկական հարցի շուրջ ծավալված դիվանագիտական գործընթացներին արձագանքեցին նաև կոմունիստները: «Рабочая правда»-ն «Փոքր Ասիան և Հայկական հարցը հոդվածում» գրում է, որ Եվրոպան պատրաստվում է գաղտնի բաժանել Ասիական Թուրքիան: Գերմանիան երազում է տիրանալ Անատոլիայի մեծ մասին, Ֆրանսիան՝ Սիրիային, Անգլիան՝ Միջագետքին ու Պաղեստինի ծովափնյա շրջաններին: Նրանցից ոչ մեկին հայերի ծանր վիճակը չի հետաքրքրում: 1914թ. փետրվարին «Հայկական հարցի շուրջ» հոդվածով հանդես եկավ «Путь правды»-ն: Նշելով, որ Հայկական հարցը դարձել է օրվա խնդիր՝ թերթը դիվանագիտական աղմուկի նպատակը համարում է ոչ թե հայ ժողովրդի վիճակի բարելավումը, այլ նոր շուկայի ձեռք բերումը: «...Թուրքահայաստանի բախտի որոշման գլխավոր դերը կարող է և պետք է պատկանի իրենց՝ թուրքահայերին»,- գտնում է թերթը:

Ստ. Շահումյանը վճռականապես մերժում էր Հայկական հարցը մշակութային ինքնավարության միջոցով առաջ տանելու հայկական շրջաններում լայնորեն տարածված կարծիքը: Խնդրի լուծումը տեսնելով պրոլետարական հեղափոխության մեջ՝ նա գտնում էր, որ ազատագրված երկրում պետք է իրականացվեր վարչական նոր բաժանում, լայն տեղական ինքնավարություն, ապահովվեր լեզուների կատարյալ ազատություն: Նա պարտադիր էր համարում ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչումը: Շահումյանը գրում է. «...Մենք պահանջում ենք, որ պետական սահմանադրությունը երաշխավորի ազգերի ինքնորոշման իրավունքը... մենք ինքնորոշման իրավունքը ճանաչում ենք, ինչպես օրինակ, ճանաչում ենք խոսքի ազատության կամ խղճի ազատության իրավունքը»[381]: Նա արևմտահայության ողբերգության պատճառը համարում էր թուրքական վարչակարգի հայահալած և հայակեր քաղաքականությունը, իսկ հայ կուսակցություններն էլ չկարողացան ճիշտ կողմնորոշվել, ժողովրդին հնարավորին չափով զերծ պահել կոտորածներից:

Ակ. Մյասնիկյանը «Ազգային հարցի մասին» հոդվածում մերժում է ազգային հարցի լուծման համաշխարհային և ինքնավարական եղանակները՝ գտնելով, որ միայն ինքնորոշման իրավունքն է ապահովելու Հայկական հարցի արդարացի լուծումը: Մի այլ անգամ նա նշում է, որ արևմտահայ շարժումը համահայկական շարժում չէ, այդ շարժման էությունը «Թուրքահայերի բարեկեցության, նրանց կյանքի ու գույքի, կյանքի ապահովության, նրանց մարդավայել կենցաղի հարցն է»[382]: «Թուրքահայից լավ ո՞վ կարող է ըմբռնել այդ հարցը, ո՞վ կարող է ավելի հաջող կրվի տանել հօգուտ հայկական դատի, եթե ոչ ինքը՝ թուրքահայը: Դրսի ղեկավարությունը մեծ մասամբ հիմնված էր լինում անտեղյակության ու տհաստության վրա...»[383]: Սակայն դա չի նշանակում, թե արևելահայերն անմասն պետք է մնան իրենց եղբայրների պայքարից: Ակ. Մյասնիկյանը հունվարի 26-ի համաձայնագիրն անվանեց իրական արժեքից զուրկ փաստաթուղթ: Բան նրա գլխավոր տեսուչները ձևական գործոն էին, քանի որ իրավունքներ չունեին նահանգապետների հանդեպ, իսկ վալիները «տեղական փոքրիկ թագավորներ էին» և «ավելի ևս սանձարձակ, ավելի ևս վայրագ գործունեություն էին առաջ տանելու»[384]: Բարենորոգումների ծրագիրն անլուծելի էր թողնում հողային հարցը և մի շարք ուրիշ կենսական նշանակության խնդիրներ: «Մեր կարծիքով,- ամփոփում է Ակ. Մյասնիկյանը,- հայկական բարենորոգումների նախագիծը ոչ մի պատասխան չի տալիս այն «անիծյալ հարցին», որի անունն է թուրքահայ խնդիր: Դա թուրքահայերի տնտեսական դժնդակ կացության և նրանց կառարյալ իրավազրկության հարցն է: Բարենորոգումների նախագիծը ոչ մեկի և ոչ էլ մյուսի մեջ ոչ մի սղագրություն, շոշափելի սղագրություն չի մտցնում»[385]:

373 ГАОТОМС, II, с. 235.
374 Ն. տ., էջ 236:
375 PA-AA/ R 14079.
376 Դարբինյան Ռ., նշվ. աշխ., էջ 66:
377 «Երիտասարդ Հայաստան», 09.06.1914:
378 «Վան-Տոսպ», 1913, թիվ 1,2:

379 «Վան-Տոսպ», 1913թիվ 4:
380 Ն. տ., 1913, թիվ 8:
381 Շահումյան Ս. ԵՀԺ, հ. II, Երևան, 1957, էջ 416:
382 Մյասնիկյան Ակ. Երկեր, հ. I, Երևան, 1987, էջ 237:
383 Ն. տ., էջ 239:
384 Ն. տ., էջ 243:
385 Ն. տ., էջ 246:

Դիպուկ է գրում Կլեմանսոն. «Հայկական բարենորոգումներ: Դա մի հին երգ է... 1893-97 թվերին հայկական գյուղերը կոտորածների զարհուրելի դաշտեր դարձան: Կին, երեխա, ծեր, բոլորը բնաջնջվեցին... Բեռլինի տրակտատի Եվրոպան ոչինչ չարեց, իսկ մեռնողների թիվը հարյուր հազարների հասավ... Այդուհանդերձ բարենորոգումների ծրագիր էին ընդունել: Անշուշտ ոչ մի րոպե չէին այն գործադրել»[386]: Վ. Բերարը վախ արտահայտեց, որ «բարենորոգումների առաջին հետևանքը լինելու է, որ այդ պաշտոնական ավազակները կոչ կանեն ժողովրդական մոլեռանդությանը», որ «բարենորոգումներն առանց վերահսկողության կոտորած են»[387]:

Տերությունների այլ բան սպասելը միամտություն էր: Հայի բախտն ամենից առաջ իր ձեռքում է: Հետևաբար պետք է «նախապատրաստել ժողովրդին, պետք է նրան ուժ տալ, պատրաստել ամեն մի անակնկալի և լուծման սպասել հանգամանքների հաջող դասավորման դեպքում»[388]:

Որ Թուրքիան երբեք մտադրություն չի ունեցել անցկացնելու բարոնորեգումներ, վկայում է նաև Վանգենհայմի 1915թ. փետրվարի 2-ի հեռագիրը կանցլերին. «...Թուրքական կառավարությունը չի ցանկանում շարունակել հայկական բարենորոգումների ծրագիրը, պատերազմում Թուրքիայի պարտության դեպքում հայ ազգաբնակչությունը կռվելու է հաղթողի կողմում»[389]: Դեռ ավելին, Վարդեսի հետ զրույցի ժամանակ Թալեաթն ասել է. «...Այն ինչ արվում է հայերի դեմ, արդյունք է արևելյան նահանգներում բարենորոգումների հասնելու նրանց ձգտումներին»[390]: Թուրքերի այս տրամադրությունները նկարագրում էին ոչ միայն Գերմանիայի ներկայացուցիչները: Կ. Պոլսի Ֆրանսիացի դեսպան Բոմպարը 30.09.1914-ին գրում է Դելկասեին. «...Ակնհայտ է, որ քանի դեռ Եվրոպան չի կարող վերահսկողություն սահմանել, բարենորոգումների տեսուչների առաքելությունը Հայաստանում չի ունենա գործնական որևէ արդյունք: Բ. Դուռն աշխատում է օգտվել հանգամանքներից, աստիճանաբար վերացնելու այն»[391]:

Ամփոփենք. բարենորոգումների հարցում հայերի անզուսպ շահագրգռվածության պատճառը ոչ այնքան կյանքի պայմանները բարելավելու ձգտումն էր, որքան բնաջնջման սպառնացող վտանգի առաջն առնելու ինքնապաշտպանական մղումը: Դժբախտաբար այդքան բաղձալի բարենորոգումներ կոչվածը արևմտահայության կյանքը ոչնչով չբարվոքեց. դրա փոխարեն նրան կանգնեցրեց բնաջնջման վտանգին դեմ հանդիման:

386 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 709:
387 «Մշակ», 29.01.1914:
388 Մյասնիկյան Ալ., նշվ. աշխ., էջ 398:
389 «Deutschland und Armenien, 1914, 1198», Bremen, 1986, S 29.
390 Լևոն Վարդան, Ժամանակագրություն... էջ 37:
391 Բեյլերյան Ա., նշվ. աշխ. փ. թ. 4:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

1. ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1908թ. Սահմանադրությունը շատ ավելի քաղաքական հռչակագիր էր, քան հասարակական, սոցիալական նոր որակների ներդրում: Մանավանդ որ միդհատյան սահմանադրությունն ամենևին էլ արմատական լուծումներ չէր ենթադրում: Ստեղծվեց սահմանադրական միապետություն, որը սուլթանին թողնում էր լայն իրավասություններ՝ կառավարության կազմի հաստատում, խորհրդարանի հրավիրում ու ցրում, պետությունների հետ պայմանագրերի կնքում կամ կնքված պայմանագրերի հաստատում, պատերազմի հայտարարում և այլն: Սահմանադրությունը բացառում էր ոտնձգություն Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության հանդեպ, մերժում ազգային-ազատագրական շարժումների գոյության իրավունքը: Սահմանադրության հիմքում դրված էր օսմանիզմը՝ կայսրության բոլոր բնակիչները, անկախ ազգային և կրոնական պատկանելության, համարվում էին օսմանցիներ, այսինքն՝ հպատակ ժողովուրդների թուրքացումը հռչակվեց որպես սահմանադրական նորմ: Անձի ազատության մասին հայտարարությունն իրական բովանդակությունից զուրկ էր, քանի որ ազատության բաղադրիչների հիմնական մասը մերժվում էր: Կրոնների ազատություն թույլատրվում էր, բայց պետական կրոն համարվում էր միայն իսլամը: Հռչակվում էր խոսքի, մամուլի ազատություն, բայց «օրենքի սահմաններում»: Կրթությունն ազատ էր, բայց անպայման պետական վերահսկողության ներքո: Օրենքի առջև բոլոր օսմանցիները հավասար էին, բայց պետական ծառայության մեջ ընդունվել կարող էին միայն թուրքերեն իմացողները: Սահմանադրությունը չէր նախատեսում մեխանիզմներ օրինազանցության, անիշխանության, պաշտոնական դիրքի չարաշահման և նման այլ երևույթների դեմ:

Խորհրդարանը կազմված էր երկու պալատից՝ ծերակույտ և երեսփոխանական ժողով, որոնց կազմի 1/3-ին նշանակում էր սուլթանը: Պահպանվում էին կրոնական (շարիաթի) քաղաքացիական (նիզամի) դատարանները: Կայսրությունը վարչաքաղաքական առումով շարունակում էր մնալ կենտրոնացված համակարգ, նահանգներին որոշ ինքնավարություն էր տրվում միայն տնտեսական կյանքում (ճանապարհաշինություն, արտադրական գործունեություն, մշակութային ձեռնարկումներ): Եթե կայսրության որևէ մասում խռովություն ծագեր, կառավարությունն իրավունք ուներ այն հայտարարել «պաշարման մեջ և ճնշել», իսկ մեղավորներին արտաքսել երկրից[1]:

1876թ. խորհրդարանի բացմամբ Աբդուլ Համիդ 2-րդի ներկայացրած ճառում ասվում էր. «Իմ նախորդները երբեք արգելք չեն եղել խղճի ու կրոնի ազատությանը և միայն դրա շնորհիվ է... որ իմ անձնվեր ժողովուրդները կարողացել են պահել իրենց ազգային հատկանիշները, իրենց լեզուն ու կրոնը»: Ճառի ընթերցման ժամանակ «լեզու» բառը բաց թողնվեց: Հույների բողոքին խորհրդարանի նախագահը պատասխանեց. «Մենք ուրիշ լեզու այստեղ ճանաչել չենք կարող, բացի թուրքերենից»: Խորհրդարանը ցնծությամբ ընդունեց նախագահի հայտարարությունը: Տասնամյակներ էին անցել, բայց խոսքի ու գործի միջև ցինիկ անջրպետը ոչ միայն չէր վերացել, այլև ավելի էր խորացել ու ազգային-պետական բնավորություն դարձել: Պատահական չէ նաև այն, որ Աբդուլ Համիդի ծննդյան օրն իթիհադի պարագլուխները պալատ գնացին ու նրա ձեռքը համբուրեցին: Դա լոկ հարգանքի տուրք չէր Մեծ մարդասպանին, այլև հավաստիացում, որ իշխանության են եկել նրա գործի շարունակողները:

1909թ. հունիսի 9-ին օրենք ընդունվեց հրապարակային ժողովների՝ հանրահավաքների մասին, որով իշխանություններին իրավունք էր վերապահվում ցրելու ցանկացած հանրահավաք, եթե դրանցում «ծավալված քննարկումներն ու հանդիմանությունները վնասում են հասարակական կարգին»: Մամուլի և տպարանների մասին օրենքներով իթիհադի վերահսկողության

1 «Ազգ», 28, 29. 08., 12. 09. 1908:

տակ անցան թերթերն ու հրատարակչական գործը: Փաստորեն վերականգնվեց նախնական գրաքննությունը: Ասոցիացիաների մասին օրենքով արգելվեց ստեղծելու այնպիսի քաղաքական կազմակերպություններ, որոնք «հակադրվում էին բարի բարքերին, վտանգում հասարակական կարգը, պետության ամբողջականությունը կամ միտված էին փոխելու գոյություն ունեցող կառավարման համակարգը»: Օրենքի 15-րդ հոդվածն արգելում էր ազգային բոլոր կոնստիտուցիոնալ ակումբները[2]: «Ազատամարտը» ծաղրեց, թե փակվելու բախտին կարող է արժանանալ նաև Իթիհադը, եթե «չկարողանա ապացուցել, որ ոչ թե մաքուր Թուրքական, այլ համապետական կուսակցություն է...»[3]: Ոչ մահմեդականների զինապարտության մասին 1909թ. օգոստոսի 7-ին ընդունված օրենքով վերացվում էր զինվորական հարկը և մահմեդականները զորակոչվում էին բանակ: Նպատակը «զորանոցները... հնարավորություն կտան մերձեցնելու մահմեդականներին ու քրիստոնյաներին»[4]: Դատական օրենսդրությունով փորձ արվեց պետությունը բաժանել մահմեդական կրոնից: Դատավորների 50%-ն աշխատանքից ազատվեց: Դատարանները հանվեցին տեղական իշխանությունների իրավասության տակից: «Ոստիկանությունը,- հայտարարեց Թուրքական ոստիկանության պետ Սամին,- արդարադատության մարմին է, դրա համար էլ այն իր գործողություններում պետք է լինի խստագույնս օրինապահ: Ես նախ որոշեցի անձնակազմը մաքրել՝ ոստիկանության շարքերը չհամալրել հասարակության տականքից, ինչպես այդ մինչև այժմ արվել էր»[5]: Տեղական ժանդարմերիան դրվեց վալիների իրավասության տակ: Վիլայեթների մասին 1913թ. մարտի 13-ի օրենքը շատերը «համարեցին քողարկված քայլ հետագա կենտրոնացման ուղղությամբ»[6]: Այն ուղղված էր օսմանյան վարչակարգը փոխելու, ապակենտրոնացում մտցնելու «դրսի» դիտավորությունների դեմ:

Իթիհադի և 1911թ. ստեղծված Հուրիեթ վը Իթիլաֆի միջև սուր պայքար գնաց 1912թ. խորհրդարանական ընտրություններին: Իթիլաֆի կողմն անցան դժգոհ իթիհադականները: Իթիլաֆը ստեղծվել էր Իթիհադի դեմ պայքարելու համար: Նրա գործիչներից մեկը՝ Ռ. Նուրը, երիտթուրքական «Թանինի» խմբագրին ասաց. «Այն օրը, երբ դուք տապալվեք, մեր կուսակցությունը կցրվի»[7]: Իթիլաֆը լրացուցիչ ընտրությունների ժամանակ Կ. Պոլսում հաղթեց: Նրա հեղինակությունն ու անդամների թիվը օր օրի աճում էին: Դա վախեցրեց Իթիհադին, որը 1912թ. հունվարին ցրեց խորհրդարանը, որում նրա 220 պատգամավորներից մնացել էին 140: Մնացածն անցել էր Իթիլաֆի կողմը[8]: Այս իրավիճակում վճռորոշ դեր խաղալու էին հպատակ ժողովուրդների ձայները: Սկսվեց խոստումների հեղեղը: Հ8 դաշնակցությունն օգնում էր Իթիհադին, իսկ Հնչակը՝ Իթիլաֆին:

Մեղհատյան սահմանադրությունն ու իշխանությանը տիրացած Իթիհադը չկարողացան, չէին կարող և չցանկացան փոխել երկրի քաղաքական կյանքի մթնոլորտը: Այլամերժ մարդատյաց ազգայնամոլությունը Թուրք հասարակության մեջ ներդրվել էր հետևողականորեն և հարյուրամյակներ շարունակ: Այս գործում դեր էին խաղացել Թուրքական բոլոր գաղափարախոսությունները, բայց, իհարկե, առաջնության դափնին պատկանում էր սուլթան Համիդին: Նա այդ արեց իսլամիզմի ու պանիսլամիզմի մեծապետական սկզբունքների մշակման և պետական քաղաքականության մեջ ներդրման միջոցով: Սակայն նրա գլխավոր «ծառայությունը» Թուրքիզմի տեսության և քաղաքականության մշակումն էր և այդ հիմքի վրա պանթուրքիստական գաղափարների որդեգրումը: Սուլթանի թուրքիստական կողմնորոշումը դարակազմիկ ազդեցություն ունեցավ Թուրքերի ոչ միայն պետական քաղաքականության, այլև ամբողջ հասարակական-քաղաքական զարգացման վրա: Արդուլ Համիդը ձևավորեց Թուրքերի համար բախտորոշ

2 Sarrou A. La Turquie et la Revolution, Pariz, 1912, p. 254 .

3 «Ազատամարտ», 20. 07. 1909:

4 Moulin R. Force et Faiblesse de la Jeune Turquie, Paris, 1910, p. 41.

5 Кауфман А. Дни свободы в Константинополе. В кн. "Турецкий сборник", Ц. П., 1909, стр. 210-211.

6 Лутский В. Г. Новая история арабских стран, Москва, 1966, стр. 304.

7 Tunaya T. Z. Turkiyede siyasi partiler. 1859-1952, Istambul, 1952, s. 320.

8 «Ազատամարտ», 1912, թիվ 801:

նշանակության սկզբունքը՝ կենտրոնական Անատոլիայում, այսինքն, Թուրքերի ազգային պետության օջախ դարձնել Փոքր Ասիան: Մի Թուրք սպա Ռենե Պինոնին ասել է, որ մենք պետք է Բալկաններից հեռանանք Անատոլիա: «Այնտեղ մենք կբարեկարգվենք... կվերադառնանք մեր հին հավատին և նորից կնետվենք դեպի աշխարհակալություն և այն ժամանակ կհասնենք Վիեննա»[9]:

Որ Թուրք ժողովուրդը մշտապես մեկուսացած մնաց կայսրության մյուս ժողովուրդներից ու սուլթանական վարչակարգի դեմ պայքարից, ունի մի քանի պատճառներ, որոնցից երկրորդական չէին իսլամը և այն, որ սուլթան-խալիֆը Ալլահի տեղապահն էր և պայքարը սուլթանի դեմ համարվում էր պայքար Ալլահի դեմ: Վարչակարգը ձևավորող պաշտոնատարների դեմ պայքարելն անթույլատրելի էր, քանի որ նրանց պաշտոնների էր նշանակել սուլթանը: Բայց Թուրք բուրժուազիայի մեկուսի վիճակը նույն պատճառներով բացատրելն անհնար է: Այդ բուրժուազիան չէր կարող կայսրության մյուս ժողովուրդների պայքարի դաշնակից լինել, որովհետև Թուրքիայի ապագան տեսնում էր ազգային միատարրության մեջ՝ Թուրքիան պետք է պատկաներ միայն Թուրքերին: Թուրքական բուրժուազիայի ուժեղացմանը զուգընթաց հայերի նկատմամբ բռնությունները դաժանանում էին: Անհամար օրինակներից միայն մեկը: Խարբերդից ու Վանից շատ հայեր Ամերիկա պանդխտության էին մեկնում Կիլիկիայի նավահանգիստներից: Թուրքերը նրանց բռնում էին, նախ, դրամն էին խլում, ծաղրուծանակի ենթարկում, ապա բանտ նետում և Թուրք բանտարկյալներին ասում. «Վերցրեք, որս ենք բերել, ինչ ուզում եք արեք»: Նրանց 5-6 ամիս պահում էին, շղթայակապ բանտից բանտ տանում ու անհետ կորցնում[10]:

XX դարասկզբին արմատական շրջադարձ կատարեց նաև արևմտահայ բուրժուազիան: Մինչև 1894-96թթ. կոտորածները հայ սեղանավորները ջերմեռանդությամբ պաշտպանում էին սուլթանական վարչակարգը, քանի որ պղտոր ջրերում իրենց լավ էին զգում: Սակայն 90-ականի կոտորածներին հայ սեղանավորն ու առևտրականը հիմնավորապես թալանվեցին, ու Թուրք բուրժուազիան նրանց ունեցվածքը զավթելով առաջ անցավ: Մահմեդական կրոնավորներն առօրյա քարոզչություն դարձրեցին. «Գյավուրի հետ առևտուր անելը մեղք է»: Այս պայմաններում հայ առևտրականը փակուղի մտավ, նա թալանվում էր թե՛ ապրանք տեղափոխելու ճանապարհին և թե՛ առևտրական կետերում: Հայ առևտրական դասը կանգնեց անհետանալու հրամայականի առջև: Նույնը նաև հայ արհեստավորն ու գյուղացին, առաջինից խլում էին աշխատանքի գործիքները, իսկ երկրորդից՝ հողը: Այսինքն՝ ի տարբերություն XIX դարի, XX դարասկզբին հայ հասարակության հիմնական խավերում ձևավորվեց միասնական վարքագիծ Թուրքական վարչակարգի հանդեպ: Այդ վարքագիծը մերժողական էր: Ստեղծվեց մի իրավիճակ, երբ իրար դեմ կանգնեցին ոչ թե երկու ժողովուրդների առանձին քաղաքական ուժերը, այլ բոլորը բոլորի դեմ: Ընդորում՝ Թուրք հասարակությունում ճաշակի ձևավորողը շարունակում էին մնալ սուլթանական վարչակարգի ու իսլամի ավանդույթները: Եվ եթե ծնվում էին ինքնուրույն կողմնորոշում ունեցող քաղաքական ուժեր, ապա վարչակարգին սպառնացող վտանգը կանխելու ձգտումից: Անգամ Իթիհադի ծնունդն ու կոչումը պայմանավորված էր ոչ թե կայսրության ներքաղաքական-սոցիալական խնդիրների լուծման հրամայականով, բյուրոկրատական հաշիվներով, այլ վարչակարգին սպառնացող վտանգով, այսինքն՝ խնդիր ուներ կանխելու կայսրության անկումը, չեզոքացնելու եվրոպական միջամտությունը, խեղդելու հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարը: Իսկ այդ անելու միջոցները շատ ու բազմաբնույթ էին: Օրինակ, 1907թ. Վանի վալի նշանակված ազգությամբ չերքեզ Ալին պահանջեց հավաքել 23 տարիների պարտք մնացած հարկերը: Բնականաբար, խնդիրը լուծելու Թուրքերի միակ զենքը սադիստական գործելակերպն էր: Հայոց ձորում զափթիեները, չբավարարվելով, որ հասանելիքից ավելին արդեն հավաքել էին, հարկի դիմաց հայ երիտասարդներին տնային ծառայության էին վերցնում, բռնաբարում և նման այլ այլանդակություններ կատարում: Ալիին բռնություն-

9 «Հնչակ», 1907, թիվ 8:

10 «Հնչակ», 1906, թիվ 12:

ներից հետ պահելու բոլոր ջանքերն ապարդյուն անցան: Մնում էր մի ելք՝ ֆիզիկապես ոչնչացնել ու սկսվեց ահաբեկչական մարդասրս: Փաշան փախավ Ռուսաստան, բայց փրկվել չկարողացավ՝ սեծովյան նավահանգիստներից մեկում ահաբեկչության ենթարկվեց: Նշենք նաև, որ այս հայատյաց գազանի որդին՝ Ս. Զեքին սկզբում թաթախվեց Էնկյուրիի հայության արյան մեջ, իսկ ապա առաջ քաշվեց ու նշանակվեց Դեր Էլ Զորի սանջակի մութասարիֆ և ոչնչացրեց 200000 հայ: Սա օրինակներից մեկն է, բայց ամենևին էլ ոչ միակը: Թուրքական բարբարոս վարչակարգի անհագ երախը կուլ էր տալիս հայ հասարակության բոլոր խավերին և, առաջին հերթին, գյուղացիությանը, որին պարզապես զրկեցին գոյության միջոցներից ու հարկադրեցին հեռանալ հայրենի օջախից: «Քաղաք թափվող աղքատ գյուղացիների, մանավանդ կանանց ու աղջիկների, կմախքացած ու դալկացած դեմքն ու մերկությունը երբ տեսնում ես, ուղղակի ոսկորներդ սարսռում են: Կառավարության հրեշավոր գործունեությունը, թանկությունը, միացած... գործազրկության հետ, անդամահատելով սպանում են մեր ժողովրդին»[11]:

1894-96 թվերի կոտորածների սահմռկեցուցիչ իրողությունը չարունակում էր շնչահեղձ անել արևմտահայերին, որն այդպես էլ մնաց ահաբեկված և զգացողություն ուներ, թե «մի շունչ, մի հոտ կա մթնոլորտի մեջ, որը գալիս է 95-96թթ. անդունդներից»: Բոլորն ունեին կանխազգացում՝ նոր փոթորիկ է պայթելու և այն իր «հրեշային ավերումով ստվեր է ձգելու 95-96թթ. ավերումների վրա»: Իսկ թուրքերը ձգտում էին հպատակ ժողովուրդներին միամտացնել, հանել ահաբեկվածության զգուշավորությունից: Դրա արտահայտություններից մեկն էլ կայսրության ընդդիմադիր կուսակցությունների Փարիզի 1907թ. համագումարն էր: Այն նախապատրաստվեց որպես հավասար իրավունքներ ունեցող կուսակցությունների համաժողով, որի նախապատրաստման համար ստեղծված բյուրոյում համազոր տեղեր ունեին «Դրոշակյան կոմիտեն (ՀՑԴ)», «Միություն և առաջադիմություն կոմիտեն» և այլն: Բյուրոյի հրապարակած հայտարարությունը հուշակում էր, որ համաժողովը պետք է «ճանաչի ու հարգի Օսմանյան կայսրության անկախության և ամբողջականության սկզբունքը» և խնդիր ունի քննարկելու գոյություն ունեցող վարչակարգի տապալման, խորհրդարանային կարգերի հաստատման միջոցների ու եղանակների հարցերը: Սա ոչ թե «Դրոշակյան բյուրոյի», այլ միայն իթիհադի ծրագիրն էր՝ գահընկեց անել Աբդուլ Համիդին, բայց պահպանել թագավորական դինաստիան, թույլ չտալ օտար պետությունների միջամտությունը Թուրքիայի ներքին գործերին, մերժել հպատակ ժողովուրդների ինքնավարության բոլոր եղանակները, մահմեդական կրոնի իրավասությունները թողնել անփոփոխ: Իթիհադը էն գլխից մերժեց իր գործընկերոջ՝ ՀՑ Դաշնակցության ծրագրի գլխավոր սկզբունքը՝ չճանաչեց Հայկական հարցը և դրա դեմ պայքարեց «ծերունիներից» ոչ պակաս դաժանությամբ: Երիտթուրքերը գտնում էին, որ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը, Մայիսյան ծրագիրը «օսմանյան անկախության սկզբունքը ոտնակոխող» փաստաթղթեր էին, ուստի բոլոր միջոցներով կռվելու էին դրանք կյանքի կոչող ուժերի դեմ: Իթիհադը խուսափում էր հրապարակավ հանդես գալ ջարդերի օգտին, սակայն հավատարիմ էր «թուրքական ազգային քաղաքականության» համիդյան սկզբունքներին, որոնցում հայերի ջարդն առաջին պլանին էր: Իթիհադի պարագլուխները լավ գիտեին, որ ընդհանուր կոտորածի գաղափարը Ելզրզզ Քեոչքից վաղուց դուրս էր հորդել ու ներծծվել «թուրք ամբոխի ոսկրի ու արյան մեջ», որ, չնայած թուրքական բանակը, ոստիկանությունը, ժանդարմերիան. պաշտոնեությունը մասնակցել էին հայերի կոտորածներին, բայց դրանց իրականացման գլխավոր գործիքը մահմեդական խուժանը՝ թուրք, քուրդ, չերքեզ ամբոխն էր: Հայը ոչնչացվում, տնտեսական, ազգային, կրոնական հալածանքների էր ենթարկվում, քշվում էր իր հայրենիքից, նրա ողջ ունեցվածքը հանձնվում էր թուրքին ու քրդին: Այս գործընթացն իրականացվում էր տնտեսական ու քաղաքական բիրտ ճնշման, ընդհուպ զենքի ուժով հայերին իրենց բնակավայրերից քշելու միջոցով:

Աբդուլ Համիդի օրինակով իթիհադը ևս լուրջ չէր ընդունում եվրոպական տերությունների հոխորտանքները:

11 «Հնչակ», 1907, թիվ 3-4

Որ իթիհադի կողմնորոշումը դեպի հայկական ջարդերն ավելի շուտ էր ձևավորվել, քան 1915թ. կան ուղղակի բազմաթիվ փաստեր: Երիտթուրքերի կառավարության ֆինանսների նախարար Ջավիդը "Touf- Paris"-ի 20. 10. 1913թ. գրում է . «Արդեն անհրաժեշտություն չկա անհանգստանալու սլավոններից: Ներկայումս նրանք կայսրությունում կազմում են աննշան թիվ: Հույների մեծ մասը բնակվում է իր մայր էջլադայում: Բացի Կ. Պոլսից և Իզմիրից հույն տարրը Փոքր Ասիայում չնչին դեր է խաղում, իսկ Փոքր Ասիան հանդիսանում է թուրքերի և մահմեդական աշխարհի սիրտը»: Այստեղ մնում են հայերը: Հայ-թուրքական հարաբերությունների լարվածությունը կապված է արտաքին ճնշումների հետ: «Հակառակ միջազգային մեքենայություններին, Հայկական հարցը չի կարող մեզ համար հանդիսանալ տհաճ ակնկալ և պատրվակ մշտական միջամտությունների»:

Թուրքերն անվերապահ հնազանդություն էին պահանջում. 1910թ. ձուլումն ու թուրքացումը հուչակվեցին պետական քաղաքականություն: Իթիհադի 1910թ. համագումարը գտավ, որ 1. «Իշխանությունը պետք է բոլոր ուժերով պայքարի ազգային շարժումների դեմ և աջակցի, որ մահմեդական տարրը դառնա գերակշիռ»: 2. «Իշխանությունը պետք է գործադրի բոլոր ուժերը, որպեսզի քրիստոնյաները չկարողանան ձեռք բերել հողի սեփականություն»: 3. «Պետք է լրիվ զինաթափել քրիստոնյա բնակչությանը, իսկ մահմեդականներին (որտեղ նրանք փոքրամասնություն են կազմում) թաքուն զինել»: 4. «Ապակենտրոնացման սկզբունքը թուրքական հայրենիքին դավաճանելու գաղափար է»: 5. «Ոչ մահմեդական տարրերը կազմում են արհամարհելի թիվ և պետք է ընդունել նրանց իրավունքը կրոնի, այլ ոչ թե լեզվի հանդեպ»:

Նաև հարկ է նկատի ունենալ, որ օսմանյան կառավարման համակարգում դրության տերը իթիհադն էր և օսմանյան խորհրդարանը վերածվել էր այդ կուսակցության որոշումները ֆիքսելու գրասենյակի, իսկ նախարարությունները՝ գործադիր մեխանիզմի: Սուլթանը կենդանի սիմվոլն էր կայսրության անցյալ փառքի, առանց իրական իշխանության՝ վերածված իթիհադի կամակատարի: Ժողովրդավարական նշանաբանները չարունակեցին մնալ նշանաբան առանց կյանք մտնելու:

1913թ. սկզբներին արտաքին գործերի նախարար Ասքմը խորհրդարանում հայտարարեց. «Եվրոպայի հավասարակշռության համար Թուրքիայի հարատևությունն ամենափոքր տարակույս իսկ չի հարուցում»[12]: Իսկ լուսավորության նախարար Էմթուլլահը սպառնաց. «Եթե օտար պետությունները փորձեն հարձակվել մեր երկրի վրա, այն ժամանակ քարը քարի վրա չի մնա, նրանք տեր կդառնան միայն մոխրակույտի»[13]: Այդ ինքնավստահության ակունքներից մեկն էլ այն էր, որ համիսլամությունն ու համաթրքությունը վերածվել էին հզոր ուժի, իրենց մեջ ներառելով տասնյակ միլիոնավոր մարդկանց տարբեր մայրցամաքներում: Թուրքերի կարծիքով բավական էր մի ազդանշան և մահմեդականությունը ոտի կելներ «Դանգեսից մինչև Ուրալ, Դանուբից մինչև Վոլգա, Ասիա» և «համաշխարհային պատերազմի ղողանջ կհնչեցներ»: Թուրքերի ինքնավստահության համար հիմք էր ծառայում նաև իրենց անցյալի «ռազմական փառքը», պատերազմել կարողանալը: «Թուրքական բանակը,-հայտարարեց ռազմական նախարար Մ. Շևքեթը,- աշխարհում առաջինն է իր քաջությամբ: Նա անպարտելի է... Ես որոշել եմ օսմանյան փառապանծ դրոշը հավիտյան ծածանել Ադրիանապոլսի, Սկյուբի, Մոնաստրի, Շկոտրայի վրա»[14]: «Էոփ», «Գորշուն», «Սիլահ» և մյուս ազգայնամոլ լրագրերը թուրքերին հավաստիացնում էին, որ օսմանյան բանակի համար «մինչև Մոսկվա հասնելը մի քանի շաբաթվա զինվորական զբոսանք է» լինելու, իսկ Սոֆիան, Բելգրադը և Աթենքը կարելի է արդեն գրավված համարել: Թուրք հրամանատարներից մեկը հոխորտաց. «Մի անգամ Վիեննա գնացինք և Եվրոպային 300 տարի լռեցրինք, ներկայումս երկրորդ անգամ ենք հասնելու այնտեղ, որպեսզի բոլորին դատապարտենք 600 տարվա բացարձակ լռության»[15]:

12 «Հնչակ», 1913, թիվ 2:
13 Ն. տ.:
14 Ն. տ. :
15 Ն.տ.:

Այս մթնոլորտում էր նորից հրապարակ իջնում հայկական բարենորոգումների հարցը: Ֆրանսիական "Charles Vellay" թերթը 1913թ. փետրվարի 3-ին գրեց. «Կոտորածը, բռնաբարումը, բռնի կրոնափոխությունն այսօր նույն վայրագությամբ և նույն կատաղությամբ են շարունակվում, ինչպես որ էին Աբդուլ Համիդի վարչակարգի օրոք: Ուրեմն ավելի քան հրատապ է, որպեսզի Հայաստանը վերջապես ազատվի այս հարստահարությունից... Հայերն այսօր չափազանց պահանջկոտ չեն և Եվրոպան անգամ իր շահերի և օգուտի տեսակետից պետք է գոհացում տա նրանց պահանջներին»: "Gazette de Lausanne" թերթը նույն թվի փետրվարի 24-ին գրեց, որ հայ ժողովրդի «առջև պարզվող հեռանկարը բնավ վստահություն ներշնչելու բնույթ չունի»: «Վաղը, երբ պատերազմը (Բալկանյան) վերջանա, Պոլսի կառավարության կողմից ռազմաճակատ բերված ասիական կամավորները պիտի ուղարկվեն իրենց բնակավայրերը: Ասիական Թուրքիան հաջորդ օրն իսկ ողողվելու է սովյալ, մոլեգին հորդաներով, որոնք վրեժխնդիր են լինելու իրենց կրած զրկանքների ու նվաստացումների համար: Տարակույս չկա, որ նորից հայերն են տուժելու: Այս ժողովուրդը, որի պատմությունը գրված է արյունով, նորից է թափելու իր արյունը... հայերը զրկված են պաշտպանվելու հնարավորություններից: Մեծ թվով հայեր զորակոչված են կռվելու Թրակիայում և այլուր... Օսմանյան զինվորները շատ ուրախ կլինեն իրենց դիմաց տեսնելու անզեն հայերի՝ ծերերի, կանանց, երեխաների՝ զրկված հայրերից և զավակներից»: Գործը սկսեցին ոչ թե մուհաջիրները կամ ռազմաճակատից վերադարձածները, այլ Բ. Դուրը, որը 1913թ. փետրվարին հրապարակեց «Գրավման օրենքը», այն նշանավորեց հայերի ունեցվածքի պետական թալանի մի նոր ժամանակաշրջանի սկիզբը: Իսկ երիտթուրքերը շարունակում էին իրենց ու աշխարհին համոզել, թե աշխարհակալ ոչ մի ազգ այնքան համբերատար ու մեծահոգի չի եղել նվաճված ժողովուրդների հանդեպ, որքան թուրքերը: Սուլթաններն ինքնակամ թույլ էին տվել, որպեսզի հպատակ ժողովուրդները գոյատևեին, պահեին իրենց լեզուն, կրոնը, սովորությունները, այսինքն՝ հարգել էին հպատակ ազգերի «պատմահայրենասիրական գոյության իրավունքը»: Այս առումով իրենք՝ թուրքերը, «ավելի ազատամիտ, լայնախոհ են եղել... քան քրիստոնյա պետությունները»: Հետևաբար, կայսրությունում ծագած «ազգային գույն ունեցող հարցերը ոչ այլ ինչ են, եթե ոչ ուղղակի արդյունք ներքին և արտաքին խարդավանքների»: Մինչդեռ, գրում է Ս. Սապահ Գյուլյանը, աշխարհակալ ոչ մի ազգ այնքան վայրագ ջանքեր չի թափել հպատակ ժողովուրդներին քայքայելու, կործանելու, բնաջնջելու, բռնությամբ ուծացնելու, որքան օսմանցի իշխողները: Օսմանյան պատմությունն արյան վիթխարի շաղախ է: «Թուրքիան հակամարդկային արարքների դասական երկիր է»: Մահմեդականի համար քրիստոնյան պատանդ էր և նրա վիճակն ու գոյությունը կախված էր առաջինի ցանկությունից: «Ոչ թուրքերեն խոսողների լեզուն կտրելը, մայրենի լեզվով արտահայտվելու բացառությունից:

ծին նշանակություն տալու»[22]: Սեբաստիայի զինվորական հրամանատարը մտնելով հայի խանութ, ասում է. «Դուք՝ հայերդ, մեր ստրուկն եք, որոնց 15-20 դուրուշով գնել ենք ուրիշներից և ձեր կյանքը դրանից ավել չարժի...»: Պաշտոնեությունը բազմիցս վկայել է, թե Հայաստանում տեղի ունեցող բոլոր դեպքերը՝ սպանությունները, քրդերի հարձակումները մասն են կազմել իթիհադի ծրագրի գործադրման:

Մի քանի վիլայեթներում, այդ թվում՝ Սեբաստիայում, վալի Մուամմերը դեռ 1913-ին հայերի բնաջնջման բոլոր նախապատրաստական -կազմակերպչական աշխատանքներն ավարտել էր: Վարչական միավորումներում հրահանգիչ-կազմակերպիչներ էին նշանակված: Վեզիր-Քեոփրիում (Մարզվանից 7-8 ժամի վրա) զինվորներին փամփուշտներ էին բաժանվել. սպասում էին ջարդերը սկսելու հրամանին, նույնիսկ պատրվակն էր որոշված՝ հայերը ռումբեր էին նետել մզկիթները, նախապատրաստված էին նաև այդ հաստատելուն պատրաստակամ երկու վկաներ: Ռազմաքաղաքական իրադրությունները թույլ չտվեցին իրականացնելու ջարդերի ծրագիրը: Սակայն վտանգը ոչ միայն չվերացավ, այլև գնալով ավելի ահագնացավ: Այդ պայմաններում թշնամու «լարած բազմացանց զսպանակներն ի դերև հանելու համար, պետք էին նախազգուշական միջոցներ, պատրվակ չստեղծել, քաղաքական իմաստություն հանդես բերել, միաժամանակ կանգնելով ինքնապաշտպանության դիրքերում»:

Բնականաբար, Թուրքիայի ներքաղաքական կյանքի վայրիվերումները, մասնավորապես նոր ջարդերի հնարավորության մասին լուրերը, արձագանք էին գտնում արտասահմանում: Ս. Այգ-Վարդյանը գրում է. «Ռուսական հասարակական կարծիքն այս օրերին անտարբեր չէ դեպի այն ամենը, ինչ վերաբերում է Հայաստանին ու Հայկական հարցին: Մամուլը՝ պաշտոնական և ոչ պաշտոնական, կուսակցական և ոչ կուսակցական, չեն դադարում ընդարձակ էջեր նվիրել դրանց: Այդ բոլորի արտահայտության ընդհանուր ձևը, չափը, միտումները համակրական և աջակցող են: Բոլորն այն կարծիքն են հայտնում, որ տաճկահայերի վիճակն անտանելի է, հարկավոր է մի բան անել և ռուսական կառավարությունն այդ հարցում որոշակի պարտականություն ու իրավունք ունի»: Որ ռուս առաջադիմական մամուլը միշտ համակրել է հայերին, հանրահայտ է: Նորությունը հօգուտ հայերի պաշտոնական և կիսապաշտոնական ազգայնական թերթերի վերաբերմունքի շրջադարձն էր: Ամուր, վերածնված Թուրքիան ցանկալի չէր Ռուսաստանին, մանավանդ ազգայնամոլական, համազերմանական միտումներով առաջնորդվող իթիհադական Թուրքիան: Ու. Ռայտի կարծիքով Ռուսաստանի դժգոհությունը, թե իր օգնությամբ Թրքական լծից ազատագրված ժողովուրդները «ռուսական ռունգներով» չէին շնչում, իրեն չարդարացրեց, քանի որ սեփական ռունգներով շնչող այդ պետությունների (Հունաստան, Սերբիա, Ռումինիա, Բուլղարիա) գոյությունը նրա համար շատ ավելի շահավետ էր, քան իր կողքին հզոր Թուրքիա ունենալը: Հայկական հարցը նորից դիվանագիտական շրջանառության մեջ դրվեց: Եթե Բիսմարկը սուլթանին բարեկամաբար խորհուրդ էր տալիս ինչ-որ կերպ լուծել Հայկական հարցը, որպեսզի նրա վարակիչ ալիքները չտարածվեին, ապա 1913-ին մի ուրիշ գերմանացի՝ սոցիալիստ Լեդեբուրը ռայխստագում կոկորդ էր պատռում. «Վանում տեղի ունեցած դեպքերի հեղինակը Ռուսաստանն է, որն այդ ձևով ուզում է Հայկական հարցը վերարծարծել և Հայաստանը գրավել»[23]:

Ձևավորվում էր կարծիք, թե եվրոպական տերությունները Հայկական հարցը լուծել չէին կարող, որ նրանք այդ հարցն արծարծելու սպառնալիքներով Թուրքիայից արդեն շատ բան ստացել էին, բայց այդպես էլ ոչինչ չարեցին այն լուծելու համար: Միայն Ռուսաստանն էր ընդունակ զենքի ուժով հարկադրել Թուրքիային հայերին ինքնավարություն տալու: Գերմանիան Թուրքիայում մեծ շահեր ուներ և Ռուսաստանի առաջխաղացումը դեմ էր այդ շահերին: Բեռլինը ձգտում էր Թուրքիայի գրեթե ամբողջ տարածքը դարձնել իր բացարձակ ազդեցության շրջան: Նման հեռանկարի հնարավորությունը Ռուսաստանին մղում էր ստեղծելու այնպիսի ինքնավար Հայաստան, որն ի վիճակի լիներ պատնեշ դառնալու գերմանական առաջխաղացման դեմ: Ի դեպ, Թուրքիան վաղուց վերածվել էր եվրոպական ապրանքների համար վաճառահանման շուկայի ու նաև ֆինանսական մեծ միջոցների ներդրման երկրի: Ֆրանսիան ներդրել էր 100 միլիոն, Գերմանիան՝ 36 մլն, Անգլիան 30մլն ֆունտ ստեռլինգ: Արտասահմանյան երկրներում ներդրված ֆրանսիական կապիտալի 1/15 մասը բաժին էր ընկնում Թուրքիային: Այդ ներդրումներից միայն 2,4%-ն էր բաժին ընկնում արտադրությանը, մնացածն ապրանքների արտահանությունն էր Թուրքիա: Բնականաբար տնտեսական գործոնը երկրորդական դեր չէր խաղում եվրոպական պետությունների Թուրքական քաղաքականության մեջ:

Անգլիայում և Ֆրանսիայում կարծիքներ էին հայտնվում հայկական ապագա ինքնավար կազմավորման մեջ վեց վիլայեթներից բացի մտցնելու Ադանայի, Մերսինի, Ջեբել-Բերեքի, Գոզանի, Մարաշի և Ուրֆայի սանջակները: Վարչական այդ միավորումում բնակվելու էր մոտ 13 մլն հայ, որոնք հարաբերական մեծամասնություն էին կազմելու: "Gazette de Lauzanne"-ն 1913թ. մարտի 7-ին գրեց, թե Օսմանյան կայսրությունում գոյություն ունեցող հիմնահարցերից «ամենածանրակշիռը և ամենահրատապ լուծում պահանջողը Հայկական հարցն է»:

Տեսնելով, որ Ռուսաստանը Հայկական հարցում առանձնակի եռանդ է դրսևորում, Բ. Դուրը դիմեց Աբդուլ Համիդի գործելակերպին: Սուլթանը 1878-ին Սան Ստեֆանոյի բանակցությունների ժամանակ պատրիարք Ն. Վարժապետյանին մղում էր Ռուսաստանի առջև հնարավորին չափ ավելի շատ հարցեր դնել, նկատի ունենալով, որ հարցերի շատությունը լուրջ խոչընդոտ է դրանց լուծման առաջ: Իթիհադն էլ Հայկական հարցի շուրջ բանակցությունների մեջ փորձեց ներքաշել Բեռլինի դաշնագիրը ստորագրած բոլոր պետություններին: Դրա հետ միասին, որքան տերություններն ուժեղ էին թակում Օսմանյան կայսրության դռները, իթիհադն այնքան տենդագին էր զբաղվում հպատակ ժողովուրդներին տկարացնելու խնդիրներով: Օսմանացումն ու Թրքացումը դարձան այն հիմնախնդիրները, որոնց լուծման շուրջը փաստորեն համախմբվեցին Թուրքական բոլոր քաղաքական ուժերը, Թուրք ժողովուրդը: Երիտթուրքերը նորից հրապարակ հանելով օսմանյան ազգ հասկացությունը նենգափոխում էին ազգ հասկացության բուն բնույթը՝ յուրաքանչյուր մարդ միաժամանակ պատկանում է երկու ազգի՝ ազգի էթնիկական բովանդակությամբ և ազգի որպես քաղաքական միավոր: Երկրորդ դեպքում պետականությունն ու ազգությունը դառնում են հոմանիշ: Իսկ ազգություն հասկացությունը ձևավորվելով քաղաքացիության, հպատակության հիմքի վրա, հետին պլան էր մղում էթնիկական պատկանելությունը: Այն գործնական քաղաքականության մեջ միանգամայն այլ սկզբունքներ էր առաջ քաշում, որոնք մեկ գերխնդիր ունեին՝ արագացնել այլազգիների Թուրքացումը: Ազգային միատարրությունը հռչակվեց կայսրության գոյության գրավական, որի ձևավորման մի քանի ուղիները՝ արտամղում, Թուրքացում, ոչնչացում, վաղուց էին փորձարկվում: Գործողությունների եղանակների առումով երիտթուրքերն հայտնագործություններ չկատարեցին: Այդ ասպարեզում Թուրքերն ունեին դարավոր փորձ և գործելակերպերի ավելի քան հարուստ զինանոց:

Իթիհադի Սալոնիկի 1910թ. ընդհանուր ժողովից մի քանի շաբաթ առաջ կուսակցության ղեկավարների փակ հավաքում, վկայում է Մոնաստրի անգլիացի փոխհյուպատոս Ա. Գրինը, հպատակ ժողովուրդներից կայսրությունը մաքրելու անհրաժեշտության մասին ելույթով հանդես եկավ Թալեաթը: Նոյեմբեր ամսին նույն Սալոնիկում իթիհադական ընդհանուր ժողովից հետո կուսակցության հինգ ղեկավարների փակ խորհրդակցությունն ընդունեց նույն բովանդակությամբ որոշումներ: Տեղեկատվության հեղինակ՝ Սալոնիկում Անգլիայի գլխավոր հյուպատոս Հ. Լեմբն առանձնացնում է այդ որոշումների ընդունման գործում Նազիմի խաղացած դերը, նրան անվանում իթիհադի կոմիտեի «շարժիչ ոգի, նշմարելի անձ»: Խորհրդակցության ավարտին Նազիմը հայտարարեց «քրիստոնյաներին կոտորելու» անհրաժեշտության մասին[24]: Նա ասաց. «Այս պահին մեզ համար առաջնայինը ոչ թե այդ գաղափարի տեսական վերլուծություններն ու հիմնավորումներն են, այլ դրա իրականացման միջոցների ճնշումը»: Իսկ Սալոնի-

22 «Հնչակ», մարտ:

23 «Հնչակ», 1914, թիվ 2:

24 FO 195/2359/149.

կում Նազըմն արդեն կուսակցության ղեկավարներից մեկը չէր միայն, այլ նաև նրա փոխնախագահը, Սալոնիկի կոմիտեի գլխավոր քարտուղարը: Վ. Տատրյանը գտնում է, որ «Սալոնիկի մասնաճյուղը երկար ժամանակ գերիշխող վիճակում էր կուսակցության մեջ»: Նա նաև գրում է, որ ժողովն ընդունեց Նազըմի առաջարկը ֆինանսական միջոցներ տրամադրելու, որպեսզի Բալկանյան մահմեդականները վերաբնակեցվեն Ռուսաստանի և Պարսկաստանի սահմանամերձ շրջաններում[25]: Եվրոպական դիվանագիտությունը, իհարկե, զգում, հասկանում էր երիտթուրքերի այդ և նման քայլերի վտանգավորությունը: Լ. Մալլեթը գրեց Էդ. Գրեյին, որ իթիհադի վերջին որոշումները խնդիր ունեն «թող փչելու աշխարհի աչքերին»[26]: Անգլիացին իրավացի էր. երիտթուրքական թուրքիստական վայրիվերումներն ավելի էին սրում մահմեդականների ու այլակրոնների հարաբերությունները:

Կ. Պոլսի թերթերը կոչ էին անում թուրքերին հայերի հետ առևտուր չանել: «Իսլամը միայն իսլամի հետ պետք է առևտուր անի»: Ավելի ուշ իշխանությունները ստեղծեցին «բոյկոտի կոմիտեներ»[27]: Սամսոնից ստացված մի հեռագրում ասվում էր. «Ժանդարմերիայի պետը Քարազ գյուղ գնալով շրջակա յոթ գյուղերի քրիստոնյաներին սպառնացել է, թե կհրդեհի նրանց տները, եթե Մակեդոնիայի իսլամ գաղթականներին օթևան չտան»: Հայերն ընդդիմանում են: Երկու հայ սպանվում է, 6-ը՝ վիրավորվում: Դա պատերազմական դրություն էր:

Հին էր Հայկական հարցի գոյության մերժումը: Բեռլինում Թուրքիայի դեսպան Մուխտարը բացականչեց. «Հայկական հարց: Այդպիսի խնդիր չունենք... Կառավարության նպատակը հայերի և քրդերի միջև եղած դժգոհությունների հաղթահարումն է»[28]: Սկսեցին արհամարհել ու նաև մերժել քրիստոնեական արժեքները, դրանց գործնական կիրառությունը:

«Թասֆիրը Էֆքյար» թերթը գրում է. «... Մեր ազգային և կրոնական բարքերից և ոչ մեկը թույլ չի տալիս, որ կիրակին որպես հանգստյան օր դիտվի»[29]: Իթիհադի պարագլուխներին հաջողվում էր հայ քաղաքական ուժերին խաբել, որոշ դեպքերում նրանց ծառայեցնել իրենց շահերին: Հատկանշական է Թալեաթի կարծիքը ՀԵՌ մասին. «Դաշնակցությունը, մխրճված պաշտոնական աթոռների մեջ, օսմանցիությանը վտանգավոր լինել չի կարող»[30]:

Կայսրությունում սկզբում հաստատվեց իթիհադի, ապա նաև վերնախավի, ավելի ճիշտ երիտթուրքերի գաղտնի կոմիտեի բռնատիրություն: Կառավարությունն ու իշխանության մյուս մարմինները պարտավոր էին առանց առարկության կատարել գաղտնի կոմիտեի որոշումները: Իթիհադն ամեն ինչ անում էր, որպեսզի երկրում ուրիշ քաղաքական կուսակցություններ չստեղծվեին: Ըստ այդ կոմիտեի իշխանությունների գլխավոր պարտականությունն էր՝ թույլ չտալ ազգային խլրտումներ, ապահովել ենթակա ժողովուրդների անվերապահ հպատակությունը: Կոմիտեն մերժելով ինքնավարության բոլոր տեսակները, ապակենտրոնացման պահանջը համարում էր դավաճանություն: Սակայն կոմիտեի գործիչները կայսրության վաղվա օրվան լավատեսորեն չէին նայում, մանավանդ որ առաջին աշխարհամարտն իրողություն էր դառնում: «Թազմինաթ» թերթը գրեց. «500 տարի առաջ Թուրքը մտավ Եվրոպա մի զույգ տրեխներով և այսօր նույն տրեխներով վերադառնում է Ասիա»[31]: Բարդ էր երիտթուրքերի հարաբերությունները մահմեդական կրոնի հետ: Նրանք մի կողմից ձգտում էին դուրս գալ կրոնական դոգմերի կապանքներից, իսկ մյուս կողմից, աշխատում էին օգտագործել դրանք իրենց իշխանությունն ամրապնդելու համար: Իսլամը հզոր զենք էր նաև իթիհադի ազգայնամոլական այլամերժ քաղաքականությունն առաջ տանելու գործում: Կորանի շատ սուրահներ պարզապես համահունչ էին երիտթուրքական համագումարներում ընդունված բանաձևերի հետ: Կորանը «Ալլահի սահմանած կարգերի և օրենքների մատյան է, որով պետք է կարգավորվեն աշխարհի ժողովուրդների

25 Dodrian V. Warrant for Genocide, p. 98
26 Ն. տ.:
27 «Հնչակ», 1914, թիվ 1:
28 Ն. տ., թիվ 2:
29 Ն. տ.:
30 Ն. տ.:
31 Ն. տ.:

բոլոր գործերը», իսկ այդ «սուրբ գիրքը» հռչակում էր. «Մահմեդական համայնքից դուրս բոլոր կրոնական հաստատությունները պիղծ են. եթե այդ համայնքներն իրենց ունեցածը տան իսլամին, այն ժամանակ միայն կխնայվի նրանց կյանքը, այն էլ, եթե իսլամները կամենան» (Սուրահ 3): «Կռվիր գյավուրների դեմ վրեժխնդրությամբ և անգութ եղիր նրանց նկատմամբ»: «Ամենազոր Ալլահը թող օգնի, որ կտրտենք անհավատների մարմինը...»: «Հավատացյալներ, ոչ ոքի հետ անկեղծ բարեկամություն չհաստատեք, բացի ինքներդ ձեր հետ»: Երիտթուրքերը չհրաժարվեցին նաև Շարիաթից, դատարանում մահմեդականը և ոչ մահմեդականը շարունակեցին մնալ ոչ իրավահավասար: Բացի այդ, Շարիաթն անարգում էր այլակրոնների հոգևոր ու կրթական հաստատությունները, արդարացնում նրանց ունեցվածքի բռնագրավումը, քարոզում խտրականություն ոչ մահմեդական պաշտոնատարների ու զինվորականների հանդեպ, քաջալերում իսլամացումը, զինաթափումը և այլն: Իզուր չէին ասում, որ Շարիաթը Կորանի բանաձևն է, համիսլամության ամենահզոր զենքը, նաև զենքը համաթրքական գաղափարախոսության:

Երիտթուրքերն իշխանության եկան շնդալից և նրանց գալն ընդունվեց ոգևորությամբ: Երկիր մոլորակի կենտրոնում փուլ էր եկել միջնադարյան վայրագությունների վերջին ամրոցը: Իշխանության եկածները դրոշակ էին դարձրել ֆրանսիական մեծ հեղափոխության հռչակած կարգախոսները, որոնք մեկ դարից ավելի համաշխարհային ժողովրդավարության սյուներն էին: Օսմանյան կայսրության ժողովուրդների համար առանձնակի նշանակություն ուներ հավասարության սկզբունքը, այսինքն՝ խոստումը վերացնելու մահմեդականի իշխող և ռայայի իրավազուրկ վիճակը, դարեր շարունակ գոյություն ունեցած համակարգը, որին զոհ էին գնացել գյավուրների ամբողջ սերունդներ, բարբարոսության կանոններով ճզմվել, խեղդվել էին մարդկանց և ազգությունների բոլոր, այդ թվում նաև՝ ապրելու, գոյություն ունենալու իրավունքը: Խոստումները, որով երիտթուրքերն իշխանության եկան, իրոք, գայթակղիչ էին: 1902թ. այդ կուսակցության համագումարը հռչակեց «Մենք, օսմանյան ժողովուրդներս՝ զլանում ենք որևէ միասնություն այն վարչակարգի հետ, որի իշխանության ներքո ապրում ենք 25 տարի՝ մի հարստահարիչ վարչակարգ, որը միակ աղբյուրն է կայսրությունում տեղի ունեցող բոլոր չարիքների: Մենք հաստատում ենք մեր անվերապահ մտադրությունը հարգել միջազգային համաձայնագրերը, մասնավորապես Բեռլինի դաշնագիրը...»[32]: Երիտթուրքական «Մեշվերեթը» գրեց. «Անհնար է արդարացում գտնել հայկական կոտորածների համար»[33]: Այս և նման բովանդակությամբ նյութերով ու հոդվածներով լի էին նախահեղափոխական երիտթուրքական հրապարակումները, ինչը, բնականաբար, էական ազդեցություն գործեց հայերի տրամադրությունների ու կողմնորոշումների վրա:

Սահմանադրության հռչակումից հետո, գրում է Ֆ. Նանսենը, «ուրախությունը տիրեց ամբողջ Թուրքիայ մեջ, բանտերը բացուեցան, Կ. Պոլիսը լուսավորուեցավ, բազմութիւնները դիմեցին դեպի հասարակաց հողակոյտերը, ուր թաղուած էին 1896-ի հայ զոհերը: Մահմեդական պետերն այդ զոհերուն մասին խոսեցան, զանոնք որակեցին «մարտիրոսներ» ի սեր ազատութեան ինկած»[34]: Հայերը նույնպես խանդավառությամբ ընդունեցին երիտթուրքական հեղաշրջումը և դա հասկանալը դժվար չէ: Նախ, հին վարչակարգը դաժանությամբ ճնշել ու կեղեքել էր, առաջին հերթին, հային և, երկրորդ, «օսմանյան կայսրությունում եղած ազգային խմբերից իրենց քաղաքական կուլտուրայով հայերն էին պատրաստ ընկալելու սահմանադրության նշանակությունը»: Ավելի ճիշտ խոսքը գնում էր ոչ այնքան կատարվածի քաղաքական արժեքավորման, որքան փոփոխության իրողության մասին: Հազարամյակներ շարունակ սուլթանական վարչակարգի կրնկի տակ ճզմված ժողովրդի համար այդ վարչակարգի ամեն մի, թեկուզ ամենաաննշան, փոփոխություն հույսի ինչ-որ դուռ էր բացում, և հայկական կուսակցությունները ողջունեցին այդ փոփոխությունն ու փարվեցին դրան: Կ. Պոլսի հայ գործիչները, գրում է Բաբկեն Վարդապետը, «հիացմունքով ողջունեցին և ունեցած բոլոր հնարավորություններով փառաբանում էին սահմանադրական կառավարությունը, հավատալով երիտթուրքերի կուսակցության

32 Feech P. Constantinople aux derniers jors d'Abdul Hamid, Paris, 1907, p. 368.
33 "Mechveret", 1897, N6.
34 Նանսեն Ֆ., նշվ. աշխ., էջ 257:

տված խոստումներին...»[35]: «...Ամեն օր հրապարակային ցույցեր տեղի կունենային, Թուրք և Հայ ճառախոսները կը ջատագովեին երկու ազգերու համերաշխութիւնն ու հավասարութիւնը»: «Բազմաչարչար հայերը, մոռացության տալով իրենց կրածները, անկեղծորեն նվիրվեցին Փոքր Ասիայում սահմանադրության ամրապնդմանը»[36]:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո ստեղծված կացությունը հասարակական-քաղաքական ուժերից պահանջեց վերադիրքորոշվել, նոր իրողություններին համապատասխան հստակեցնել գործունեության սկզբունքները, մասնավորապես որոշակիացնել մոտեցումները կայսրության ղեկը վերցրած Միություն և առաջադիմություն կուսակցությանը: Հայ քաղաքական կուսակցությունների նոր կողմնորոշումները հասկանալու համար հարկ է նկատի ունենալ մի քանի հանգամանք: Հեղաշրջման առաջին օրերին տպավորությունն այնպիսին էր, թե Թուրքիան ձգտում է վերածնվել, ընթանալ նոր, սուլթանականից տարբեր ուղիով: «Այդ պայմաններում Թուրքահայաստանի ապագայի խնդիրը հնարավոր էր լուծել միմիայն Թուրքիայի ներսում, նրա հետ դաշնակցութեան, այլ ոչ թե Թուրքիայի սահմաններից դուրս՝ անկախութեան ուղիներում»[37]: Վ. Փափազյանը վկայում է, որ «գավառներու մեջ կեղեքումները պահ մը դադրած էին և մեղրածոր ժպիտներ կը բաշխեին ժողովուրդին, սպասելով նոր կարգերու ձևավորման»: Ակնունին հիացմունքը զսպել չկարողանալով բացականչեց. «Այնպիսի օրերու մեջ կապրինք, որ Թուրք ոստիկանը պիտի պաշտպանե հայ կնոջ պատիվը»: Մանավանդ որ, ասում էր նա, «իթիհատն առաջին ամիսներուն շատ սիրալիր ու պատրաստակամ խոստումներ կը շռայլեր, միաժամանակ ... կուզեր սահմանադրական ռեժիմն ամրապնդել, իսկ երբ բնական վիճակ ստեղծուեր, հարցերեն մեկը պիտի դարձներ առաջին հերթին հայկական պահանջները...»[38]: Նա իր ընկերներին համոզում էր «իթիհադի ղեկավարների խոստումներին վերաբերվել անվերապահ վստահությամբ»[39]: «Այն օրերուն բացարձակապես չկար հայ մը, որ ուրախութեամբ լեցուած չըլլար լրիվ»[40]: 1908թ. մոտ 50 հազ. գաղթական հայ Կովկասից վերադարձավ քանդված տունը վերաշինելու և այլն: «Արտասահմանցի գրեթե բոլոր դիտորդները,- գրում է Ա. Թոյնբին,- ովքեր ազատության գալու պահին երկրում (Թուրքիայում) էին, կարող են վկայել ատելության հրաշքային փոխվելը սիրո: Հայերը, որոնք այդ օրվանը սպասում էին ավելի մեծ անհամբերությամբ, քան նրանց հարևաններից որևէ մեկը, կարող էին համոզվել, որ երիտթուրքերի իդեալները համընկնում էին իրենց իդեալների հետ»[41]: Հայոց գերեզմանատանն ու պատրիարքարանում, Բերայի մայր եկեղեցում կայացած հանրահավաքներում ելույթներ էին ունենում Թալեաթը, Էնվերը, իթիհադի մյուս պարագլուխները, ծնրադրում դեռևս սուլթանական գահին բազմած Աբդուլ Համիդի զոհերի գերեզմանների մոտ, հավերժ եղբայրության խոստումներ տալիս[42]:

Եվ իսկապես, 1908թ. օգոստոսից- 1909թ. մարտ ամիսներն Օսմանյան կայսրության հարյուրամյակների ընթացքում հայ ժողովրդի ապրած միակ ազատաշունչ ամիսներն էին: Բացվում էին նոր թերթեր, հրատարակվում մեծ թվով գրականություն, ստեղծվում նորանոր կրթական օջախներ, արվեստի հիմնարկներ, եռում էր ազգային կյանքը, տեղի էին ունենում ազգային-մշակութային տարելիցներին նվիրված շռնդալից միջոցառումներ և այլն: Հայը, մասնավորապես պոլսահայը, ազգային-հոգևոր թռիչքի մեկնարկում էր, նա վերջապես իրեն լիիրավ մարդ էր զգում: Սահմանադրության հռչակումի ցնծությունների ժամանակ, գրում է Լեփսիուսը, նույնիսկ տերտերներն ու մոլլաներն էին համբուրվում: Ամենանշանավոր Թուրք աշխարհիկ և կրոնական գործիչները եկել էին Կ. Պոլսի հայոց ս. Երրորդության եկեղեցին ու հայերին ասում էին. «Ուզում ենք ձեզ հետ ձեր գերեզմանատունը գնալ ու հայ նահատակներին ավետել ազատության հաղթանակը: Նրանց թափած արյան համար մենք մեղք չունենք: Եկեք դուք էլ մեզ հետ Ազատության բլուրը ելեք, որ միասին տոնենք փրկության տոնը»[43]: Հաջորդ օրը Թուրք ամբոխը զինվորական վարժարանի սաների առաջնորդությամբ լցվեց Ֆրենկ Քյոյի գերեզմանատուն խոնարհվելու 1895-ի ջարդերի զոհերի շիրիմներին, իսկ հայերը Թուրքերի հետ ցնծացել էին օսմանյան քայլերգի և սուլթան Աբդուլ Ազիզի «Ազատության փառերգի» հնչյունների խանդավառ մթնոլորտում: Միասին սգացին ու հարգանքի տուրք մատուցեցին Թուրք և հայ նահատակների հիշատակին[44]: Դա զանգվածների ազնիվ ցնծություն էր, որովհետև համոզված էին, որ բարեկամության այդ մթնոլորտը հավերժ էր: «...Սկզբի օրերը,- գրում է ականատեսը,- այնքան վառ ու խոստումալից եղան, հռչակուած սահմանադրութենեն ակնկալութիւնները՝ այնքան մեծ, որ հայերս հավատացինք, թե այլևս վերջ գտած են մեր դարավոր տառապանքները, այսինքն թե՝ ոչ Թուրքը և ոչ ալ մանավանդ քուրդ ավազակն ալ պիտի չհալածեն ու չկոտորեն մեզի»[45]: Հայ կուսակցությունների ոգևորությունն այնքան հախուռն ու Թուրքերի համար տարօրինակ էր, որ օսմանյան պաշտոնատարներից մեկն ասաց. «Պետք չկա անտեղի և ավելորդ ցույցերի և ուրախությունների: Մենք ձեզնից լավ ենք ճանաչում մեր սուլթանին: Նա ֆերմաներ (հրամանագրեր) է հրապարակում ձեզ ուրախացնելու համար և ապա ֆերմանները չի գործադրում մեզ ուրախացնելու համար: Եվ դուք գիտեք, թե որի ուրախությունն է տևական՝ մե՞րը, թե ձերը»[46]:

Այդ խանդավառությունն անհանգստացրեց թե մահմեդական զանգվածին, որովհետև նա հանձինս կատարվածի տեսավ վտանգ իր արտոնությունների համար և թե իրենց՝ երիտթուրք պարագլուխներին: «Հայերի միակ սխալը,- գրում է Ա. Բարբին,- սահմանադրական կարգերի առաջին ինն ամիսներին նրանց ազնիվ ուրախությունն ու հուզումնալից հավատն էր Սալոնիկի գործիչների հանդեպ, ինչը ծայրաստիճան բացահայտ էին արտահայտում: Նրանք հավատում էին հեղաշրջման անկեղծությանը և ամենայն հիացմունքով արտահայտվում նոր վարչակարգի մասին: Նրանք երիտթուրքերին հավատացին այնքան ժամանակ, մինչև որ այդ նույն երիտթուրքերը ջարդուփշուր արեցին այդ հավատը... Հետագայում էլ հայերը շարունակեցին հավատալ Թուրք պաշտոնատարների խոստումներին: Իտալական և բալկանյան պատերազմներում Թուրքական բանակում եղած հայերն իրենց եղբայր մահմեդականների հետ ուս ուսի խիզախորեն կռվեցին ընդհանուր հայրենիքի համար»: «Վտանգի, ստորացման պահին արևմտահայերը հավատարմորեն կանգնեցին հանուն հայրենակիցների՝ Թուրքերի: Իրենց արյունը հեղեցին Թուրքիայի համար»: Եվ դա այն դեպքում, երբ, ինչպես նկատում է Լ. Օշերովսկին, «Թուրքիայի տարածքում բնակվող բոլոր ժողովուրդներից Թուրքերի համար ամենից ավելի հայերն էին հանդիսանում շահագործման, բռնության, կոտորածի և զայրացուցիչ դաժանության օբյեկտ»:

Հայերի իթիհադամետ-Թուրքամետության այս տևականությունն ու դրա հանդեպ Թուրքերի առաջին հայացքից տարօրինակ վերաբերմունքը մեկ անգամ ևս հաստատում է, որ սուլթանի հետ իշխանությունը կիսելով երիտթուրք պարագլուխները գործն ավարտված համարեցին, նրանք հեղափոխությունը զարգացնել, խորացնելը վտանգավոր էին համարում: Կուսակցության առաջնորդ Ահմեդ Ռիզան հայտարարեց, որ սահմանադրության հռչակումով մեր հեղափոխական առաքելությունն ավարտվեց: Երեկ իրենց հեղափոխական վերափոխումների ջատագով համարող գործիչները հուլիսի 24-ից հետո դարձան սուլթանի, սուլթանական վարչակարգի, օսմանյան ավանդական հասարակական հարաբերությունների մոլեռանդ պաշտպաններ, փոփոխությունների ու առաջադիմության կատաղի թշնամիներ: Ա. Ռիզան գրեց. «Հայրենիքի հանդեպ իմ սերը ստիպում է չկասկածել սուլթանի բարեխղճության վրա»[47]:

35 Բալկեն Վրդ. Հայկական հարցը և Պողոս Նուբար փաշան, Վաղարշապատ, 1914, էջ 22:
36 Բդեյաններ Ս. Մ. Նշվ. աշխ., էջ 261:
37 Գյուլպայան Գ., Հայ քաղաքական մտքի զարգացումը և ՀԲ Դաշնակցութիւնը, Փարիզ, 1922, էջ 134:
38 Գանգրունի Հ., Նշվ. աշխ., էջ 231:
39 Աստուածատրեան Ա., Նշվ. աշխ., «Հայրենիք» ամս., 1964, թիվ 12:
40 Թազվորեան Գ. Երազանքի ու տառապանքի տարիներ, Կահիրե, 1961, էջ 12:
41 Toynbee A. J. Treatment of Armenians in the Ottoman Empire, London, 1916, p. 633.
42 Гиббонс Г. А. Самая черная страница новейшей истории. Последние избиения в Армении, Пб., 1916, стр. 22.

43 Լեփսիուս Յո. Դաղտնի տեղեկագիր Հայաստանի ջարդերի մասին, 1918թ., Բեյրութ, 1968, էջ 214:
44 Թեոնոն Իվ. Մի ցեղասպանության պատմություն, Փարիզ, 1977, էջ 172-173:
45 Պատմութիւն Պաղնատան, Բոստոն, 1965, էջ 133:
46 Կիւրլեքեան Յ. Հայուն հրաշալի դոյատևումը և յառաջադիմութիւնը անցեալի և ներկայի՝ ապագայ հեռատեսիլքով, Զիկագո, 1970, էջ19:
47 Алиев Г. З. Турция в период правления младотурок, 1908-1918 гг., Москва, 1972, стр. 116.

Երիտթուրքերի նախընտրական կոչերում խնդիրն ավելի որոշակի էր դրված. «Հայերուն ու Հույներուն ազատութիւն տալը տերութեան կործանում կը նշանակէ... ուստի իսլամի ճշմարիտ բարեկամները լուրջ կերպով պիտի մտածեն և միջոցներ ձեռք առնեն Հայերուն ջնջելու և պետութիւնը անկումից փրկելու համար»[48]: Նաև հաստատված է, որ երիտթուրքական հեղափոխությունն անկումից փրկելու համար»[48]: Նաև հաստատված է, որ երիտթուրքական հեղափոխությունն իր բնույթով հեղափոխություն էլ չէր, այլ հեղաշրջում, որովհետև այն Ելդըզ Քյոշքի պարիսպներից դուրս չեկավ և բավարարվեց սուլթանի անսահմանափակ իշխանությունից խորհրդարանին բաժին տալով: Ընդորում՝ պահպանվեց ոչ միայն սուլթանությունը, սուլթանական դինաստիան, այլև գահին թողնվեց արյունարբու Աբդուլ Համիդ 2-րդը: Այսինքն՝ նույնիսկ քաղաքական համակարգում փոփոխությունները շատ ավելի հարդարման, քան հեղափոխական վերակառուցման բնույթ ունեին: Ինչ վերաբերում է կյանքի մյուս բնագավառներին, մասնավորապես սոցիալ-տնտեսական հարաբերություններին, ապա դրանք մնացին գրեթե անփոփոխ: Շարունակեցին գոյություն ունենալ այն բոլոր քաղաքական, վարչա-հոգևոր ինստիտուտները, որոնք դարեր շարունակ ձևավորել էին օսմանյան հասարակություն կոչվածը: Այդ էր պատճառը, որ թուրք գյուղացիությունը 1908 թիվը լուրջ չընդունեց: Նրա համար սուլթաններից մեկը, որ թուրք գյուղացիությունը 1908 թիվը լուրջ չընդունեց: Նրա համար սուլթանխալիֆը մնաց նույնը, ինչ եղել էր 500 տարի շարունակ:

Երկար ժամանակ չպահանջվեց, որպեսզի առաջին պլան դուրս գային նոր վարչակարգի նաև հոռի կողմերը: Դա խոստովանում էին նաև իրենք՝ երիտթուրքերը: «Ես հիշեցի. այսօր մեր կեղծ հոռի կողմերը: Դա խոստովանում էին նաև իրենք՝ երիտթուրքերը: «Ես հիշեցի. այսօր մեր կեղծ հեղափոխության երկրորդ տարեդարձն է,- գրում է Օ. Սեյֆերդինը,- այդ անարյուն, ողորմելի, հնարովի թուրքական հեղափոխության, որն ըստ էության իրենից ներկայացնում է լոկ անմիտ ցնծություններ»[49]: Երիտթուրք գործիչ Բեհան վկայում է. «Առաջ ասում էին, որ գուցե սահմանադրությամբ կարելի լինի այս երկիրն ազատել: Եկավ սահմանադրությունը և մեր նեխածությունը, մեր փտածությունն էլ ավելի մերկապարանոց երևան հանեց... մենք անկարող ենք Թուրքիայի մեջ եղող բոլոր ազգերին ոչ ձուլել, ոչ էլ կատարեալ իրավահավասարության վրա դրուած նորագոյն պետություն ստեղծել: Դրա համար հարկ պիտի լիներ մեր պետության ամբողջ յորինվածքը փոխել: Խտրականության, նուաճողականության մեր նախապաշարումները, մեր պապենական խելքը, մեր ժառանգական միտումները, ունակությունները... Մենք նորից պիտի վերածնունենք, հիմնադիր ժողով կազմենք, որը հին բոլոր հաստատությունները փլցնի և նորերն առաջ բերի, իսկ մենք չենք կարող... Դրա համար հարկ պիտի լիներ մի նոր յեղափոխության: Իսկ ո՞վ պիտի դա աներ, ո՞վ պիտի յառաջնորդեր: Կարո՞ղ ենք, ունե՞նք այդ տարրը: Ոչ և ոչ»[50]: Ահա այդ նույն սահմանադրությունը, գրում է Ա. Գիբբոնսը, որին հայերը ողջունեցին որպես իրենց քաղաքական ազատության արշալույսի, գրեթե անմիջապես դարձավ նրանց մահվան դատավճիռը:

Այդպիսին էին երիտթուրքերը, որովհետև այդպիսին էր նրանց ծնող թուրք բուրժուազիան, որն ունենալով ավատատիրական ծագում և երազելով Չինգիզ խանի կայսրության վերստեղծման մասին, ամեն ինչ ենթարկում էր թուրքական մեծապետականության շահերին: Օսմանյան հասարակական հարաբերությունները միանգամայն բավարարում էին նրան և պատրաստ էին դրանք հավերժացնել հանուն կայսրության տարածքային ամբողջականության հարատևման, հանուն Մեծ Թուրանի երազանքների իրականացման: Եվրոպայի կողքին գտնվող այդ բուրժուազիայի շահագրգիռ ուշադրությունը հառած էր ոչ թե Արևմուտքի առաջադիմությանը, այլ Արևելքի թուրք-թաթարական քոչվոր անասնապահներին:

Բ. Կնունյանցը գրում է. «Երիտասարդ թուրքերի հեղափոխությունը զարկ կտա օսմանյան ազգային զարթոնքին, սա է դրա պատմական հսկայական նշանակությունը, բայց այդ հեղափոխությունն ինքնին դեռ բնավ չի նշանակում անցում արևելյան բռնատիրությունից դեպի եվրոպական պառլամենտարիզմ»[51]: Այդ էր պատճառը, որ հեղափոխությունն անմիջապես կծկվեց անորոշ ծրագրերի ծանրության տակ և վերածվեց մոլի հետադիմության՝ Առաջադիմության,

48 Ցովակիմեան Ց. Պատմութիւն հայկական Պոնտոսի, Բեյրութ, 1967, էջ 178-180:

49 Seyfeddin Omer Kulliyal, Istanbul, 1938, s. 91.

50 Սապահ Գյուլյան Ս. Պատասխանատուները, էջ 283:

51 Կնունյանց Բ. Ընտիր երկեր, Երևան, 1978, էջ 544:

ժողովրդավարության և եղբայրության թշնամու: Նազիմը գրեց. «Երբ բորբոքվեց հեղափոխությունն ու հռչակվեց Սահմանադրությունը, կոմիտեն հասկացավ, որ իր հեղափոխական դերը վերջացած է, և որ այսուհետև իր գործունեության մեջ պետք է հետևի էվոլյուցիոն խաղաղ եղանակներին»: Ա. Ռիզան գտնում էր, որ հեղափոխության հաղթանակը լիակատար էր և դրա հետագա խորացումից կօգտվեին միայն օտար տերությունները և ներքին անջատողական ուժերը: Երիտթուրքերը սկսեցին համագործակցել ավատատիրական-ինքնակալական ուժերի և սուլթանի հետ և ազգային հարցում շարունակեցին Աբդուլ Համիդի քաղաքականությունը: Արդեն «եղբայրացման» օրերին նրանք ազգային կուսակցություններից պահանջեցին հանձնել զենքերը: Սահմանադրության հռչակումից 20 օր անց Ահմեդ Ռիզան հայտարարեց. «Այսուհետև մենք հնչակիստ-դաշնակիստ չենք ճանչնար և անոնց հետ խորհրդակցելու պետք չունինք... եթե դրոշակիստները և հնչակիստները շարունակեն իրենց փրոպականդը, մենք պիտի յարձակինք անոնց վրայ ու գիտցած եղէք, որ նորեն պիտի ջարդուին»[52]: Երիտթուրքերի նախընտրական կոչերում խնդիրն ավելի որոշակի էր դրված. «Հայերուն և Հույներուն ազատութիւն տալը տերութեան կործանում կը նշանակէ... ուստի իսլամի ճշմարիտ բարեկամները լուրջ կերպով պիտի մտածեն և միջոցներ ձեռք առնեն Հայերուն ջնջելու և պետութիւնը անկումից փրկելու համար»:

Օտարներն այս շրջադարձն անմիջապես նկատեցին: Էրզրումում Ռուսաստանի գլխավոր հյուպատոսը 1909թ. հունվարին Կ. Պոլսի իր դեսպան Ի. Զինովևին գրում է, որ երիտթուրքերի հռչակած ազատություններով հայերն այնքան էին ոգևորվել, որ առաջացրեցին մահմեդականների ատելությունը: Եթե երիտթուրք պարագլուխները ոչ վաղ անցյալում երախտագիտությամբ էին արտահայտվում հայերի մասին հեղափոխությանը մատուցած ծառայությունների համար, ապա այժմ գաղտնի հսկողություն են սահմանել «հայ գործիչների վրա, և գավառների իրենց ներկայացուցիչներին հրավիրել են «ատիթի դեպքում կանգ չառնել ոչ մի միջոցի առաջ...»: Ահմեդ Ռիզան սպառնաց. «Մենք արյան մեջ կխեղդենք անջատողական ամեն մի շարժում»: Երիտթուրքերը միայն չէին սպառնում, այլև գործում էին: Նրանք հաշվեհարդարի էին ենթարկում ընդդիմադիր ուժերին և ազգային-ազատագրական շարժումները հենված բանակի, ոստիկանության և ժանդարմերիայի վրա: Նրանք արյան բաղնիքներ սարքեցին նաև առանց որևէ, այդ թվում՝ անջատողական որևէ շարժման ահաբեկիչ մթնոլորտ ձևավորելու համար. այդ նպատակին էր ծառայում նաև Ադանայի կոտորածը: Կարճ ասած, երիտթուրքերի շրջադարձը դեպի բռնատիրություն հիմնավորել հայերի կամ մյուս հպատակ ժողովուրդների, նրանց հասարակական-քաղաքական ուժերի կեցվածքով ոչ միայն ճիշտ չէ, այլև անարդար է: Ինչը դժբախտաբար հանդիսանում է թուրք քաղաքական գործիչների, պատմաբանների մտածողության, հարցադրումների, մոտեցումների ու քարոզչության առանցքը: Իրականությունը միանգամայն ուրիշ է: Հայերի ցեղասպանության ակունքները գտնվում են ոչ թե հայերի նպատակադրումների, այլ թուրքիզմի բավիղներում:

Մինչև իշխանության գալը երիտթուրքերը, Ռ. Նիյազի խոսքերով, գտնում էին, որ իրենց նպատակը «Կայսրության բոլոր ազգություններին ու կրոններին ազատություն տալն էր»[53]: Իսկ թե նրանք ինչ էին հասկանում «ազատություն» ասելով, վկայում է Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչ Գիզլերը, որին երիտթուրք ղեկավար գործիչներից մեկը ասել է. «Քրիստոնյաներին այլևս չունենք անվանի, պայմանով, որ նրանք հրաժարվեն իրենց նպատակներից: Այս երկիրը պատկանում է մեզ ու քանի դեռ կա մի թուրք, թույլ չենք տա, որ թուրքերից բացի, ուրիշները հրամայեն»[54]:

Երիտթուրքերի գաղափարախոսական տհաստությունը և ժողովրդավարական արժեքների հանդեպ մահմեդական ազգաբնակչության բացահայտ թշնամությունը շատ արագ ի չիք դարձրեցին 1908թ. հռչակած սկզբունքները: Արդեն 1909թ. ապրիլին տեղի էին ունենում բազմամարդ հանրահավաքներ Շարիաթին վերադառնալու կոչերով, վերացնելու այն իրավունքները, որ սահմանադրությունը տվել էր քրիստոնյաներին, անհնար էր համարվում մահմեդականների

52 Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց. 1890-1925, Ֆրեզնո, 1930, էջ 143:

53 Գուստ Վ. Հայերի ցեղասպանությունը, աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը, Ե., 2002, էջ 113:

54 Նույն տեղում, էջ 113-114:

և ոչ մահմեդականների համակեցությունը: Սակայն կողմնորոշումային այդ տարընթացությունները միակողմ երթևեկության փողոց չէին: Իրար դեմ կանգնեցին իսլամիստներն ու արևմտյան քաղաքակրթության կողմնակիցները: Արևմտականների շարժման հիմնադիր Ա. Ջևդեթը գտնում էր. «Միայն մի քաղաքականություն կա և դա արևմտյանն է: Այն պետք է քաղել վարդերով ու փշերով հանդերձ...Կամ մենք կգնանք դեպի Եվրոպա, կամ Եվրոպան կգա դեպի մեզ»[55]: Երկու ուղղությունների մեջտեղում Թուրք ազգայնամոլներն էին, որոնք նույնպես միասեռ չէին: Թուրքիայում ծնված ու մեծացածները գտնում էին, որ պետք է բավարարվել Փոքր Ասիայով: Իսկ Թուրքիայից դուրս ծնված ու մեծացածները համաթրքության ջատագովներ էին՝ միավորել Արևելքի բոլոր թուրքական ցեղերին ու ժողովուրդներին: Կային նաև թուրանականներ, ովքեր ձգտում էին համախմբել ամբողջ աշխարհի թրքությանը:

Հաճախ թուրքերի «տարածքային ագահությունը» բացատրում են այդ էթնոսի թերություններով: Դեռ դարեր առաջ նրանց համարում էին «կոպիտ ու անտաշ», «անշնորհք», «դժվար հասկացող, տգեղ դեմքով խաբեբա, գամփռի նման անճոռնի»: Անգամ XIX դարում օսմանցիները խուսափում էին իրենց անվանել «թուրք»: Կորանում նույնպես թուրքի բնութագիրը ավելի քան բացասական է: Նման գնահատականը Աքչամն անվանում է «իսլամի հավատի հիմնադրույթներից»: Սակայն գլխավորն այն է, որ «օսմանյան ազգությունների պետության ստեղծմանն ավելի շատ նպաստել է իսլամական հավատի համար պայքարը, քան թուրք ժողովրդի գիտակցությունը»: «Իսլամական ազգություններից ոչ մեկը,- գրում է Բ. Լյուքսը,- այնքան չի նույնացել իսլամական կրոնի հետ, որքան թուրքերը»: Ալի Քեմալի կարծիքով «թուրքական մշակույթը, մտածողությունն ու պատմությունը» մարել սկսեցին մահմեդականություն ընդունելուց հետո: Շատ դանդաղ ու դժվար է ընթացել թուրքերի հավաքական գիտակցության ձևավորման գործընթացը: Այս և թուրքին բնորոշ մի քանի ուրիշ ընդհանրական գծեր շարունակում էին գոյություն ունենալ նաև XX դարում և երիտթուրքական հեղաշրջումն անզոր էր հաղթահարել դրանք: Այդ էր պատճառը, որ թուրքերի ազգային բնույթն անմիջապես վերածվեց բացարձակ ազգայնամոլության: Ամբողջ պատմության ընթացքում թուրքերը հեղհեղուկ պատկերացում են ունեցել վաթանի՝ հայրենիքի մասին, իսկ երիտթուրքերն այն վերածեցին անբացատրելի սրբության, որում, բացի թուրքից, ուրիշ ազգություն տեսնել չէին կարողանում: Այս առումով ֆրանսիական հեղափոխության կարգախոսները նրանք ընդունելի էին համարում միայն թուրք ժողովրդի համար, այն էլ լոկ սկզբունքի նշանակությամբ, առանց խորանալու դրա կերպարի մեջ, մանավանդ որ անգամ թուրք մտավորականությունը միշտ անփույթ է եղել քաղաքագիտության և, ընդհանրապես, հասարակագիտության հանդեպ: Թ. Աքչամը երիտթուրքերի գաղափարախոսությունն անվանում է «գաղափարազրկության գաղափարաբանություն»: Աշխարհը, ըստ երիտթուրքերի, կազմված է թուրքերից և ոչ թուրքերից. առաջիններն ամեն ինչ են, իսկ երկրորդները՝ ոչինչ, արժանի միայն հպատակ լինելու և ահաբեկման:

Գոլցը գտնում էր, որ երիտթուրքերի իշխանության գալով «մի բռնապետությունը փոխարինվեց մի ուրիշ բռնապետությունով»: Ինքը Թալեաթը երիտթուրքերի վարչապետն անվանում էր «մտավորականների բռնապետություն»: «Թուրք գյուղյու» թերթի խմբագիր Ք. Թահսինը գրում է. «Ցուրաքանչյուր ձեռք պետք է ջարդվի, յուրաքանչյուր սուր՝ ջախջախվի, պաշտպանվող ամեն մի ամրություն՝ նվաճվի: Թուրքերի երկաթե ճիրանները պետք է նորից բռնեն ամբողջ աշխարհի կոկորդը և աշխարհը նորից դողալու է այդ ճիրաններից: Դա է թուրքական ուժի իղձը»: Երիտթուրքերն ավելի քան չափազանցում էին թուրքերի նշանակությունը, ինչը դրսևորվում էր նաև «ուրիշ ազգային խմբերի վրա նախահարձակումով»: Նազրմը հայտարարում էր, որ կայսրության բոլոր ժողովուրդները պետք է բռնությամբ թուրքացվեին: Հայերի հետ համագործակցելը տևական եղավ միայն մի պատճառով, ասում էր նա, որովհետև իթթիհադը «օգուտ էր քաղում նրանց հնարավորություններից»: Արդյունքում, ինչպես գտնում է Վռամյանը, «Շահարկելով մեր զգացմունքները հայ ժողովրդին մեծ չարիք պատճառեցինք»[56]:

55 Գուստ Վ. Հայերի ցեղասպանությունը, աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը, Ե., 2002, էջ 123:

56 Ն. տ., էջ 127-128:

Թուրք ժողովրդի հետամնացությանը, նրա վարկի թերություններին գումարվում էր քաղաքական գործունեության համար իթթիհադի պարագլուխների, առաջին հերթին Թալեաթի, Էնվերի և Ջեմալի անպատրաստ լինելը: Պոմիակովսկին գրում է. «Երեքն էլ դիլետանտներ էին, ովքեր մասնագիտական գիտելիքների պակասը լրացնում էին մեծ եռանդով, վայրենի անպատկառությամբ և նույնիսկ դաժանությամբ»[57]: "Keolnisherzeitung"-ի թղթակից Հ. Շտուերմերը Էնվերի մասին գրում է. «Նա ոչ ականավոր հոգևոր առաջնորդ էր, ոչ լավ կազմակերպիչ և ոչ էլ նշանավոր զորավար»[58]: Ըստ Շտուերմերի Ջեմալը «ազգայնամոլ, ագահ, կատաղի, մոլեռանդ երիտթուրք էր, թերևս վատթարագույններից մեկը»: Թալեաթն ամեն ինչ արել է «սոսկ թուրքի նեղսիրտ, ցեղամոլ զառանցանքի մեջ: Այսօր Թուրքիայում սավառնողը Թալեաթի ոգին է»[59]: Երիտթուրքերը օսմանյան բարքերի ծնունդ էին և որպես քաղաքական ուժ կրում էին «օսմանյան բնավորության ազդեցությունը»: «Օսմանյան» էր նաև այդ ուժի ձևավորման գործընթացը:

Օսմանյան կայսրության համընդհանուր ճգնաժամը ծնեց «կայսրությունը փրկելու» կազմակերպություններ, այդ թվում՝ Անձնական նախաձեռնության և ապակենտրոնացման ընկերություն (Սաբահեդդին), Օսմանյան սահմանադրականների լիգա, որն ազգամիջյան միություն էր և թույլատրելի էր համարում քաղաքական ահաբեկչությունը հանուն սահմանադրության՝ չնայած լիբերալներ էին՝ ազդեցիկ առևտրականների և կալվածատերերի ներկայացուցիչներ, «ովքեր ձգտում էին կառավարման համակարգի ազատականացմանը և համիդիենների գնդերի ցրմանը: Ստեղծվեց նաև արմատական ժողովրդավարացման կազմակերպություն՝ «Օսմանյան հեղափոխականների միություն» անունով և այլն»[60]:

Սակայն կայսրությունը վերակառուցելու առաջատար ուժը «Միություն և առաջադիմություն» կուսակցությունն էր. նա էր ձգտում վերականգնել միդհատյան սահմանադրությունը կայսրության ընդդիմադիր ուժերի համախմբման միջոցով՝ նշանաբան ունենալով ստեղծել «օսմանյան ազգային միություն», «օսմանյան հավասարություն», և հանել Թուրքիայի վերածնդին: 1907թ. սկզբին օսմանյան հեղափոխական ընկերությունը կոչով դիմեց կայսրության բոլոր ժողովուրդներին՝ պայքարել հանուն եղբայրության, ազատության և հավասարության: 1897թ. իթթիհադի պաշտոնաթերթ «Մեշվերեթը» տպագրեց կուսակցության ծրագիրը, որը հաստատում էր երիտթուրքերի գլխավոր նպատակը՝ վերականգնել 1876թ. սահմանադրությունը, որպեսզի «առողջանա հիվանդ մարդը, որի մահճակալի շուրջ հավաքվել են եվրոպական ապաքինողները, և սեփական ուժերով նրան ոտի կանգնեցնել»: Փաստաթուղթը գտնում էր, որ պետք է պահպանվի թուրքական պետության իսլամական-կրոնական բնույթը սուլթան խալիֆի գլխավորությամբ: Խնդիր էր դրվում ոչ մահմեդականներին ապահովել սահմանադրական իրավահավասարություն: Միաժամանակ պայման էր առաջադրվում, որ նրանք պետք է հեռու մնային ազգային շարժումներից: «Ով բարձրացնի անջատողականության դրոշը, կհանդիսանա մեր կատաղի թշնամին»[61]: Այդպիսին էր թուրքական բնավորությունը՝ արտաքուստ գովասանք առաջացնող կեցվածք, իսկ իրականում եղածի, թուրքականի, անգամ հոռի բարքերի, սովորությունների, մտածողության համակարգի ու այլամերժ հոգեբանության հաստատում:

«Երիտասարդ Թուրքիա» անունը վերցված էր «Երիտասարդ Իտալիա» բառակապակցությունից, որը Եվրոպայում խորհրդանշում էր ազգային վերածնունդ: Ի տարբերություն «հին թուրքերի», երիտթուրքերն իրենց հռչակեցին հնի, ավատատիրականի թշնամիներ: Սկզբնական շրջանում նրանք հաշտ չէին կրոնի հետ: Նաև ճշմարտություն է, որ երիտթուրք կուսակցության հիմնադիրների մեծ մասն ուներ եվրոպական կրթություն, բայց որովհետև ծնվել ու մեծացել էին մահմեդական հետամնաց-մոլեռանդ միջավայրում, այդպես էլ չկարողացան ձերբազատվել, խզվել «հին թուրքերի» մտածողության համակարգից:

57 Գուստ Վ., նշվ. աշխ, էջ 133:

58 Ն. տ., էջ 134:

59 Ն. տ., էջ 134:

60 Тер-Арутюнов А. Политические партии в современной Турции, см. "Русская мысль", 1908, кн. 9, см. 167-170.

61 Նույն տեղում, էջ 168:

Երիտթուրքերը հին թուրքերից ժառանգեցին հպատակ ժողովուրդներին ուծացնելու, թուրքացնելու, փոքրամասնություն դարձնելու ձգտումը և աշխատում էին բարձրացնել թուրք ազգի մեծապետականությունը: Երիտթուրքական ազգայնամոլությունը հրապարակ իջավ 1896թ. Փարիզում հրատարակվող "La Jeune Tuquie" թերթի էջերում: Զևի և բովանդակության երկատվածությունը ի վերջո հանգեցնում է բովանդակության հաղթանակին: Այդպես ստացվեց նաև իթիհադի հետ: Նա Արևմուտքից փոխառած երիտթուրք անունը պահպանեց, բայց շարժուման արտամղեց «Ազատության», «Եղբայրության», «Հավասարության» համար պայքարը և մեր դարձավ «հայերից անջատվելու» համիդյան քաղաքականությանը: Շտրիտերը 1910թ. գրում է, որ առաջներում հողային հարցի վերաբերյալ հայերի գանգատները բավարարվում էին, իսկ «ներկայումս ամեն կերպ ձգտում են վերադառնալ անցյալին՝ հին վարչակարգի ժամանակները»[62]: Եթե 1909-1910թթ. երիտթուրքերը ձգտում էին քրիստոնյաներին ձուլելու գործը կազմակերպել իշխանության մարմինների միջոցով, ապա 1914թ. Սալոնիկում Թալեաթն առաջադրեց, թե այդ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ էր նահանգներում պետական իշխանության մարմիններին զուգահեռ ստեղծել իթիհադի կուսակցական կառույցներ իշխանության մարմինների գործունեությունը վերահսկելու իրավասություններով: Նա նաև ասաց. «Չի կարելի մոռանալ, որ մենք ունենք ուրիշ պարտավորություններ, որոնք պետք է թաքցվեն պետական ծառայողներից»[63]: Դրանով ավարտվում էր իթիհադի զուգահեռ կառույցների ձևավորումը՝ իթիհադը որպես կառավարող կուսակցություն և իթիհադը որպես գաղտնի կառույց, որի համար սահմանադրությունը լոկ թղթի կտոր էր: Իթիհադ, որ պետությունից վեր էր և իթիհադ, որ ձգտում էր ազգային հարցը լուծել հրով ու սրով: Այս ուղու առաջին կայարանը պետական խորհրդի 1910թ. սեպտեմբերի 1-ի որոշումն էր հողերի զավթումն օրինականացնելու վերաբերյալ: «Պետական խորհրդի այդ անսպասելի միջամտությունը,- բողոքում է պատրիարքը,- ավելի քան բարդացրեց հողային վեճերը, որ հրահրելով թշնամություն ճնշողների և ընչազուրկների միջև, դարձավ պատճառ արիւնահեղութեան և այնպիսի զզվելի երևույթների, ինչպիսիք են հանցագործությունները Թեմրանում և Խութում, դժբախտ հայերի հոշոտումները և այլն»:

"Русское слово" թերթը 1912թ. հունվարի 3-ին գրում է. «Թուրքական կառավարության «թյուրմացություններն» ապշեցուցիչ են: Նա ձգտում է գործադրել Աբդուլ Համիդի ժամանակի հին կանոնները, երբ տարբեր ազգություններին բաժանելն ու միմյանց հակադրելը հանդիսանում էր քաղաքականության անկյունաքարը: Սակայն տարբեր ազգություններ դադարել են վստահել թուրքերի սիրաշահումներին... կայսրության բոլոր մասերը կենտրոնախույս ուժերի ազդեցության ներքո ձգտում են պոկվել կենտրոնից և ստանալ ոչ մեծ ինքնուրույնություն... Ճակատագրականը պետք է կատարվի և քայքայումը գրեթե անխուսափելի է, եթե Եվրոպան արհեստական միջոցներով մի անգամ ևս չփրկի անհույս հիվանդին»:

Սուլթանական արտաքին քաղաքականությունը այդպես էլ չկարողացավ լուծել կայսրության համար ռազմավարական նշանակության հիմնահարցեր: Կողմնորոշումը դեպի մահմեդականների համերաշխությունն ու համաթրքությունն ազդեցություն ուներ միայն, մասնավորապես, քոչվորների շրջանում, ովքեր ձգտում էին Թուրքիայի օգնությամբ անկախություն ստանալ: Բացի այդ, իշխանության էին եկել կառավարման փորձ չունեցող «հեռագրավարները», ռոմանտիկ մտավորականներն ու զինվորականությունը, որը չուներ և այդպես էլ չկարողացավ մշակել կայսրության կառավարման, նրա վաղվա օրվա առանցքային հիմնահարցերը: 1907թ. հեղաշրջումից հետո էլ կառավարության սանձերը մնացին համիդյան կադրերի ձեռքում (Սայիդ, Քյամիլ, Հազը): դեռ ավելին, երիտթուրքերի թուրքիզմն անզոր գտնվեց անգամ կայսրության կառավարման համակարգը թուրքացնելու, որովհետև բացակայում էին թուրք գրագետ կադրեր պետական մարմիններում աշխատանքի առաջ քաշելու համար: Անարդյունավետ եղավ

62 АВПР, Политархив, оп. 482, д. 1646.
63 Тунян В. Россия и Армянский вопрос, Е., 1998.

նաև թուրքացման քաղաքականությունը, քանի որ թուրքը զարգացման մակարդակով հպատակներից հետ էր մնում[64]: Դրա փոխարեն գնալով ահագնանում էր կառավարող, բայց հետամնաց ազգի չարությունը և ինչու չէ, նաև նախանձը հպատակ ժողովուրդների հանդեպ: Եվ պատահական չէ, որ երբ 1913թ. երիտթուրքերը վերատիրացան Բ. Դռանը, մեկը մյուսի հետևից ծնվեցին ջարդարար խմբեր, որոնք սպասում էին Կուրբան Բայրամին՝ երբ հրաման էր լինելու սկսել ջարդերը: Դա խոստովանեց նաև ոստիկանության նախկին պետ Նեջիդը. «Ջարդ էլ կլինի, ամեն ինչ կլինի նման հեղաշրջումից հետո»[65]: Նա հիմքեր ուներ այդպես մտածելու, որովհետև 1910թ. հոկտեմբերի 30-ին երիտթուրքերի համագումարի ընդունած ծրագրում ասված էր. «Բնաջնջել Օսմանյան կայսրության հայերին և ստեղծել միատարր Անատոլիա», ինչը նշանակում էր՝ վերջնականապես փակել Հայկական հարցը, կայսրությունն ազատել դրսի միջամտություններից, հայ տարրի վերացման միջոցով հնարավորություն ստեղծել թուրքերի կենսագործունեության համար, հայերի միջոցները բռնագրավել ու սեփականացնել, Անատոլիան դարձնել ազգային կազմով միատարր թուրքական երկիր, վերացնել համաթրքության ծրագրի իրականացման ճանապարհի գլխավոր խոչընդոտը: 1913թ. փետրվարին երիտթուրքերը նորից առաջ քաշեցին հայկական դպրոցները փակելու հարցը: Բ. Դռան որոշումը Արևմտյան Հայաստանում բնակեցնել Կ. Պոլսում կուտակված մուհաջիրներին «Թասֆիր էֆքյարը» հիմնավորեց՝ «տեղի հայ բնակչությունը չի կարողանում մշակել մեծ քանակությամբ ազատ հողատարածքները»[66]: Միանգամայն հակառակ կարծիքին էր հունական «Նեա Պապիս» թերթը՝ Բ. Դուռն այդանում էր հայերին իրենց բնակավայրերից քշելու նպատակով: Շատ ավելի հստակ արտահայտվեց կայսրության ֆինանսների նախարար Ջավիդը "Berliner Tag" թերթին տված հարցազրույցում, որը 1913թ. մարտի 7-ին արտատպեց "Osmanicher Loyg"-ը: Նա ասել էր. «Թուրքերը շատ են կորցրել Եվրոպայում և կորցրածի դիմաց պետք է փոխհատուցվեն Անատոլիայում»:

Բ. Դուռն օգտագործում էր ամեն մի առիթ հայերին «ապստամբական դիտավորությունների մեջ մեղադրելու համար: Երբ 1913թ. ապրիլի 30-ին Երզնկայում մի հայի տանը ռումբ պայթեց՝ խլելով տանտիրոջ ու մի ուրիշ քրիստոնյայի կյանք, Բ. Դուռը որոշեց հայկական նահանգներ ուղարկել Ռումելիայի ժանդարմներին, որպեսզի ապահովեն բնակչության անվտանգությունը հայ հեղափոխականներից»[67]:

Իթիհադ-ՀԾԴ ներկայացուցիչների բանակցություններում վերջինս առաջադրում էր ապահովել արևմտահայության լիակատար անվտանգությունը, մահմեդականների հետ նրանց իրավահավասարությանն առնչվող խնդիրներ: Երիտթուրքերն արդար էին համարում այդ պահանջները, սակայն նաև ասում էին, որ այդ պահանջների բավարարումը հանգեցնելու է կայսրության կործանման: Ի վերջո Թալեաթը համաձայնվեց, որ նշանակվեր Եվրոպայի նահանգապետ և հայկական վիլայեթներում վերակառուցվեին ոստիկանությունն ու ժանդարմերիան: Դրա փոխարեն 1913-ի մարտի 13-ին Բ. Դուռը որոշեց ընդլայնել վիլայեթների իրավունքները, չեղյալ հայտարարեց նահանգային խորհուրդներում հայերի և մահմեդականների հավասար ձայներ ունենալու մասին օրենքը[68]: Մտցվեց պատգամավորների ընտրության բազմաստիճան համակարգ: Այդ օրենքները փաստորեն սահմանափակում էին հայերի ընտրական իրավունքները: «Սաբահ» թերթի խմբագիր Քելեքյանը 1913թ. մարտի 13-ին ասաց Վանքենհայմին. «Բարենորոգումները այն տեսքով, ինչը նախատեսվում է, էական նշանակություն ունենալ չեն կարող: Դրանք հայերին հետ չեն պահի, որ հանձինս Ռուսաստանի, շարունակեն տեսնել իրենց միակ փրկարարին»[69]:

Երիտթուրքերը ՀԾԴ-ին առաջարկեցին Հայկական հարցը հանել միջազգային քննարկումների օրակարգից, նկատի ունենալով, որ վեց վիլայեթների բնակչությունը բազմազգ

64 Вестник Европы, 1912, кн. 5, стр. 319.
65 ՀՊԿՊՀ, ֆ. 113, ց. 3, գ. 1172:
66 «Մշակ», 09. 03. 1913:
67 Ն. տ. 07. 04. 1913:
68 Памятники Амянского. Е., 2002, стр. 849-850.
69 «Մշակ», 09. 04. 1913:

էր և հայերի համար առանձին բարեփոխումներ անհնար էին: Նրանք ասում էին. «Ներկայումս ցույց տվեք մի տարածք, որը բնակեցված լինի միայն հայերով և մենք անհապաղ կուղարկենք այնտեղ հայ նահանգապետ, ողջ վարչությունն ու ժանդարմերիան կկազմենք հայերից: Եվ քանի որ դուք չեք կարող ցույց տալ նման տեղ, ապա ցանկանում եք մահմեդականներով բնակեցված տարածքների կառավարումը հանձնել քրիստոնյաներին»:

Ռուսական «Новое время»-ն 1913թ. մարտի 26-ին գրում է. «Հայ ժողովուրդը Թուրքիայում ապագա չունի, չնայած նրա բոլոր հույսերն ու մահմեդականների հետ ապրելու ցանկությունը ապացուցելուն»: Թերթը հայերին համարում էր անհետացող ազգ: «Եթե գոյություն ունեցող վիճակը պահպանվի ևս մի քանի տարի, ապա Թուրքիայում հայ ժողովրդի մասին միայն հիշողություն կպահպանվի և Հայկական հարցը կլուծվի ինքն իրեն»: Թերթը ներկայացնում է դրսի օգնությամբ Հայկական հարցը լուծելու չորս տարբերակ՝ Ռուսաստանի կողմից օսմանյան կայսրության բոլոր հայաբնակ տարածքների զավթում, բացառությամբ Մերսինի և Ալեքսանդրեթի շրջաններից, Հայաստանի ինքնավարության ստեղծում Ռուսաստանի կազմում կամ Հայաստանի ինքնավարության ստեղծում Գերմանիայի հովանու ներքո, Հայաստանի ինքնավարության ստեղծում առաջատար երկրների հովանու ներքո:

Արևմտյան Հայաստանի հանդեպ Ռուսաստանի հավակնություններին Բ. Դուռը հակադրեց քուրդ առաջնորդների պահանջը ստեղծելու քրդական Շարք-ուլ - խարիբ անունը կրող պետականություն հիմնականում կազմված հայկական տարածքներից, որը պետք է բուֆերի դեր խաղար Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև: Եղան նաև «հարցի լուծման» այլևայլ առաջարկություններ: Սակայն դրանք բոլորն ավելին չէին, քան ծխածածկույթ մարդաորսի նախապատրաստությունը քողարկելու համար:

«Ամենաշատը երկու կամ երեք նախարար են իմացել հակահայկական միջոցառումների իրական բնույթը», խոստովանել է Հատուկ կազմակերպության ղեկավարներից է. Քուչչուբաշը: «Իսկական որոշումները,- գրում է Հ. Բայարը,- թաքուն կայացրել են երկու կամ երեք հոգի: Դրա համար էլ բնական է, որ կառավարության նիստերի արձանագրություններում դրանք չկան: Նույնիսկ մեծ վեզիրն էր անտեղյակ, որ տեղի էին ունենում գաղտնի խորհրդակցություններ»: Շատ նախարարներ էլ տեղյակ են եղել ոչ թե որպես նախարար, այլ որպես իթիհադի կենտկոմի անդամներ: Կուսակցությունն է «գաղտնաբար ղեկավարել և վերահսկել հայերի հալածանքները»: Թալեաթի կենսագիր Թ. Զավդաթը իթիհադը համեմատում էր այսբերգի հետ, որի «չատ փոքր մասն էր տեսանելի»: Մ. Նուքրին ռազմական դատարանում պատմեց, որ որոշումներ կայացնում էր «գաղտնի, չորրորդ իշխանություն» կոչված երիտթուրք կենտկոմը: Որոշումներն ընդունվում էին առանց որևէ առարկության: Ռազմական դատարանի մեղադրական եզրակացությունում ասվում էր. «Հայերի ջարդերն ու բնաջնջումը հետևանք էին Միություն և առաջադիմություն կուսակցության կենտկոմի որոշումների»: Ըստ Նազրմի, Հայկական հարցի լուծումը որոշվել էր «մանրակրկիտ ու խորը քննարկումից հետո»:

Սակայն անգամ այդ որոշումների ընդունմանը մասնակցել էին կենտկոմի միայն 2-3 անդամ, վկայում է թուրք պատմաբան Բայուրը: Կուսակցության տեղական կոմիտեներին օգնելու համար նահանգներ էին ուղարկվում համապատասխան գործիչներ: Դատարանի մեղադրական եզրակացությունում ասված է. «Իթիհադի գործակալներին գաղտնի հրահանգներով ուղարկել են երկրի բոլոր անկյունները», ովքեր հրահանգավորում էին տեղական կոմիտեներին: «Կազմված էին երկու խումբ,- գրում է Վ. Տատրյանը,- մեկը բաղկացած էր իթիհադի առաջնորդներից, մյուսը՝ նախկին սպաներից... ովքեր թողել էին զինվորական ծառայությունը, որպեսզի գավառներում ստանձնեին իթիհադի հատուկ առաքելությունների իրականացումը»[70]:

70 Գուստ Վ., նշվ. աշխ., էջ 194:

2. ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ

Սկզբնական շրջանում երիտթուրքերը ծրագրում էին «առանց ջարդերի ու կոտորածների, որոնք կարող էին առաջ բերել մեծ տերությունների միջամտությունը, բնաջնջել հայ տարրը՝ աստիճանաբար տնտեսապես ոչնչացնել և նրա հետագա գոյությունը դարձնել անհնար», հայերին հողազրկել, սեփականազրկել և հարկադրել ուրանալ կամ վերցնել գաղթականի ցուպը: Խնդիրը լուծելու համար սեփականազրկման գործընթացին զուգահեռ ուժեղացվում էր բռնի կրոնափոխությունն ու մահմեդական տարրերի ներհոսքի կազմակերպումը: Իսկ այդ ամենի համար որպես քող ու պատրվակ կրկնվում էր ռուսների օգնությամբ հայերի ապստամբության միջոցով կայսրությունից տարածքներ խլելու վտանգի վերաբերյալ հեքիաթները:

Սկսած 1911-12 թվերից մուհաջիրների հոսքը կայսրություն նորից զանգվածային բնույթ ստացավ: Եթե բալկանյան մահմեդականների ներհոսքը պայմանավորված էր Բալկանյան պատերազմներով և Թուրքիայի պարտությունով, ապա կովկասյան լեռնականների և քրդական ցեղերի լցվելը կայսրություն կազմակերպվում էր իթիհադական իշխանությունների կողմից: Մուհաջիրների համար ստեղծվում էին արտոնյալ պայմաններ, մանավանդ հայերի հանդեպ: Նրանց հիմնականում բնակեցնում էին Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում ու հնարավորություն տալիս տիրանալու, նախ, պանդխտության մեկնած հայերի հողերին ու շինություններին, ապա խլում էին ոչ մի տեղ չմեկնած հայերի հողերը, վերջիններին հարկադրում մուհաջիրներին «օգնել»՝ կերակրել, անասուն, գյուղատնտեսական գործիքներ, քաշող ուժ, տնային իրեր տալ: Մուհաջիրը զինված էր, հայը զուրկ զենք ունենալու իրավունքից, և պատահական չէ, որ կարճ ժամանակում մուհաջիրը հայի հանդեպ ձեռք էր բերում բացարձակ իրավունքներ:

1913թ. սեպտեմբերին Բուքստոն եղբայրները Վանի վիլայեթում ականատես եղան, թե ինչպես իշխանության ներկայացուցիչները հայ գյուղացուն քշում էին սեփական հողերից ու դրանք տրամադրում եկվոր մահմեդականներին[71]: Լ. Օշերովսկին գրում է. «Թուրքիայում ոչ մի ժողովուրդ չի ապրում այնքան ողբերգական տառապանքով և օրհասական ճիգով, ինչպես հայերը»[72], իսկ Ա. Բերեզովսկին նկատում է՝ հայի համար իր հայրենիքը վերածվել էր «տանջանքի ու ճնշման, վշտի ու աղքատության հովտի՝ թունավորված մահվան սպասումի ամենօրյա մղձավանջով»[73]:

Դեռ 1908թ. ստեղծվեցին թուրքիզմի քարոզչական մարմիններ: 1909թ. հունվարի 8-ին կազմակերպվեց թուրքական միությունը, որի հիմնադիրներն էին Ա. Միդհատը, Էմրուլլահը, Վելեդը, Նեջիբը, Ասըմը, Գ. Զելալը, Աքչուրան, Ռայիֆը, Ֆերիդը, Թևֆիքը: 1911թ. օգոստոսի 31-ին կազմակերպված Թուրք Ցուրդի հիմնադիրներն էին Մ. Էմինը (բանաստեղծ), Ա. Հիքմեթը, Ա. Ահմեդը, Հ. Ալին, Ա. Մուխթարը և Աքչուրան:

Նույն տարվա հուլիսի 3-ին բժշկական ֆակուլտետի ուսանողները ստեղծեցին «Թուրք օջախը», որի հիմնադիրներն էին Մ. Էմինը, Ա. Ֆերիդը, Ա. Ահմեդը, Ֆ. Սալիհը և Աքչուրան: Նրանց հետ գործակցում էին Հալիդե Էդիպը, Ց. Սուլհին, Զիա Գյոքալփը, Ք. Ֆուադը, Հ. Ալին: Թուրք օջախներն ունեին 35 կետից կազմված ծրագիր և 16 կետից՝ կանոնադրություն: Նպատակ էր հռչակվում «Թուրքական մշակույթի միավորումը և քաղաքակրթության զարգացմանը ծառայելը»: Կազմակերպությունը երիտթուրքական կողմնորոշում ուներ և իր առջև խնդիր էր դրել հավատարիմ լինել իթիհադի քաղաքականությանը: Իսկ այդ քաղաքականության մեջ աստիճանաբար առաջին պլանին էր դուրս գալիս թուրքիզմը: Այդ էվոլյուցիան սկզբում տեղի ունեցավ երևույթի բովանդակության և ապա միայն անվան մեջ: Մի քանի տարի շարունակ թուրքիստական պոստուլատները ներկայացվում էին օսմանիզմի անվան տակ:

71 «Մշակ», 1-ը հոկտեմբերի 1913թ.:
72 Ошеровский Л. Идея автономного строя в Турецкой Армении под протекторатом России, Пятигорск, 1915, стр. 11.
73 "Русское слово", 20 декабря 1913г.

Հին գաղափարախոսություններից նորերին անցումն ակնհայտ դրսևորվեց երիտթուրքերի 4-րդ համագումարում (1911թ.), որտեղ ընդունված կանոնադրությունը պահանջում էր «խոչընդոտել ... նրանց նպատակների իրականացմանը, ովքեր ձգտում են ազգային ու կրոնական տարբերություններն օգտագործելու, ինչպես նաև այլ միջոցներով երկպառակտություն ու խռովություն սերմանել օսմանցիների շրջանում»[74]:

Օսմանիզմից իթիհադի վերջնական հեռանալը տեղի ունեցավ 1913թ. և իր արտահայտությունը գտավ կուսակցության թե ծրագրի և թե կանոնադրության մեջ: Տեղերն ուղարկված մի շրջաբերականում ասվում է, թե սահմանադրական իրավունքներից ու ազատություններից ավելի լավ օգտվեցին ոչ մահմեդական ժողովուրդները, ովքեր իրենց ավազակախմբերը վերածեցին կուսակցությունների և սպառնում են տիրանալու«կառավարման մեքենային»: Դրա առաջն առնելու համար ոչ մի կերպ թույլ չպետք է տրվի, որ խորհրդարանական ընտրություններում ոչ մահմեդականները մեծամասնություն ստանան: Դա իրոք օսմանիստական քաղաքական կուրսից անցում էր իսլամիստականի, որը Ֆերոզ Ահմադն անվանեց «Մահմեդական օսմանիզմ»[75]: Իսլամության ոգով փոփոխություններ մտցվեցին նաև կուսակցության ծրագրում, և Զիա Գյոքալփը «Իսլամ» հանդեսում գոհունակությամբ նշեց իսլամության ազդեցության աճը իթիհադի քաղաքականության վրա: Դա հասկանալի էր, քանի որ օսմանիզմի չափավորությունն ազգայնամոլության թոհուբոհում, մանավանդ պատերազմական պայմաններում, երկար գոյատևել չէր կարող: Թուրքական ահաբեկչությունն իր դիրքերը ամրապնդելուց անմիջապես հետո հրաժարվեց չափավորությունից և անցավ թուրքիզմի դիրքերը՝ հայտարարելով, որ թուրք ազգը բոլորից բարձր է, և ոչ թուրքերը պետք է անվերապահ ենթարկվեն նրան կամ ոչնչանան: Երիտթուրք գործիչ Զելալ Նուրին ոչ մահմեդական հպատակներից պահանջում էր հաշտվել իրենց վիճակի հետ և ձեռք քաշել ազգային իդեաներից, քանի որ կայսրությունում հաստատված կարգերն իդեալական են: Իսկ իսլամը հրաշք կրոն է, որը թե բարոյական օրենսգիրք է և թե կառավարման ձև[76]: Այսինքն՝ երիտթուրքական ընդհանուր ժողովների ընդունած որոշումների «բարեհամբույր ժողովրդավարության» արտաքինի տակ թաքնված էր թթու այլասերժությունը:

«Թրքություն, առաջադիմություն և հավասարություն» բացականչող երիտասարդները, գրում է Բ. Գեմբարսկին, իշխանության գլուխ անցնելով, ավելի էին «սեղմում օղակն ազգային փոքրամասնությունների կոկորդին»: Երկրորդ անգամ իշխանության գալուց առաջ (1913թ.) իթիհադը հայերին խոստացավ «քաղաքական ու մշակութային ինքնավարություն, միաժամանակ սկսեց գաղտնի նախապատրաստական լայն աշխատանքներ կատարել իրագործելու նախապես մշակված ծրագիրը՝ իսպառ բնաջնջել հայերին»[77]: Թուրքական այդ հարձակումը առաջ էր տարվում հպատակ ժողովուրդների հանդեպ թուրք սուլթանների «մարդասիրական» դարավոր քաղաքականության փառաբանման թոհուբոհի ուղեկցությամբ: Ի դեպ, այդ քարոզչության հետևողական կողմնակիցներից մեկը Մ. Քեմալն էր: Նա 1919թ. դեկտեմբերի 31-ին Անկարայում հայտարարեց. «Հիրավի, մեր պատմությունը, մեր ժողովուրդը դեռևս հնագույն ժամանակներից արել են ամեն անհրաժեշտը ոչ մահմեդականների կյանքի և ապրուստի անվտանգության ապահովման, նրանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնման համար... Այն մեծ արտոնությունները, որոնցից օգտվում էին ոչ մահմեդական տարրերը Կ. Պոլսի գրավումից հետո մինչև մեր օրերը, ակնհայտորեն վկայում են, որ մեր ժողովուրդը աշխարհի ամենահանդուրժող, ամենամեծահոգի ժողովուրդն է ինչպես քաղաքական, այնպես էլ կրոնական հարցերում»[78]: Նա 1927թ. հոկտեմբերին հռչակեց, թե «հայկական ջարդերի վերաբերյալ պնդումները, անկասկած, չէին արտացոլում իրերի իսկական վիճակը... Հայերն էին կերտողները այդ վայրենության, որ նախադեպ չուներ պատմության մեջ»[79]: Թուրքերը իրենց իրավունք էին վերապահում ամբողջ ժողովուրդների «հարցերը լուծել», որովհետև, ինչպես գրում է Աքչուրան, «Թուրքը տիրապետող և հրամայող ցեղ է...»[80]: Այդ ամենակարողության արտահայտությունն է նաև «Թանինի» հետևյալ տողերը. «Երիտթուրքերը, առանց վայրկեան մը իսկ կորցնելու կը թրքացնեն այսօր Օսմանեան կայսրութեան մէջ գտնուող բոլոր ցեղերը: Այս մասին բնաւ պէտք չէ տարակուսել»[81]: Բալկանյան պատերազմից հետո հասկացան, որ դա գրեթե անհնարին է, ինչը սակայն հանգեցրեց ոչ թե ձուլման գաղափարից հրաժարվելուն, այլ ավելի վայրենի միջոցների դիմելուն[82]:

Օսմանիզմ-իսլամիզմ-հակաիսլամականություն-թուրքիզմ-թուրանիզմ աշխարհայեցողությունների բարդույթներում երիտթուրքերը երկար դեգերեցին: Օսմանիզմից իսլամիզմին և իսլամիզմից թուրքիզմին ու համաթուրքականությանը անցումները կատարվեցին աստիճանական, աննկատ: Ոչ քիչ դեպքերում թուրքիստական գաղափարները հրամցվում էին նաև համաիսլամության շապիկով, մանավանդ որ մահմեդական հոգևորականությունը շարունակում էր կառչած մնալ իսլամիզմին ու համաիսլամականությանը, համենայն դեպս նման անուններին, և ոչ քիչ դեպքերում, ինչպես այդ անում էր Աբդուլ Համիդը, քարոզում էին թուրանականություն, պանթուրքիզմ: Մեքքա մեկնողներին հորդորում էին. «Դուք և ձեր հայրենակիցները պետք է ազնվորեն ենթարկվեք թուրքական սահմանադրությանը, ինչպես նաև մարգարե Մուհամմեդի (տեղապահ) խալիֆին, սրբություններից ամենասրբազնագույնին՝ նորին մեծություն թուրքական սուլթանին: Ձեզանից յուրաքանչյուրը պարտավոր է ինչ-որ գումար զոհաբերել իսլամի վերածննդի օգտին: Մեր տիրույթները կազմում են երկրագնդի 1/3-ը և դրանց բնակչությունը գերազանցում է աշխարհի բնակչության 1/5-ին, սակայն դժբախտաբար մեր միջև վերացված է եղբայրությունը և իրար ատելով, մենք հանդիստ սպասում ենք կործանման... Եթե մենք չկազմենք միավորված մահմեդականների ամրոց Արևմուտքի դեմ, ապագայում դժբախտանալու ենք: Եթե ինչ-որ տեղ վիրավորեն որևէ մահմեդականի, ապա այդ մասին պետք է անմիջապես իմանան մյուս բոլոր մահմեդականները և ձգտեն օգնել նրան... Ներկայումս, որպեսզի կարողանանք պաշտպանել իսլամի իրավունքները, ինչպես նաև մահմեդական կրոնը, պետք է ձեռք բերենք նորագույն զենք և ուսումնասիրենք դրա արտադրությունը, քանի որ միայն այդ դեպքում կկարողանանք դիմադրել թշնամիներին»[83]:

Արդեն նշվեց, որ 1910թ. երիտթուրքերի կենտկոմի կազմում փոփոխություններ կատարվեցին: Նրա մեջ մտան ծայրահեղ ազգայնամոլ հայացքներ ունեցող անձինք: Դրանց թվում է Զիա Գյոքալփը, որ դարձավ կոմիտեի գլխավոր տեսաբանը: Տեսությունն ու փիլիսոփայությունը, որ նա զարգացրեց, ողբալի հետևանք ունեցան հայերի համար: Նա անհնար էր համարում ազգային փոքրամասնությունների, մասնավորապես հայերի համախմբումը երիտթուրքերի քաղաքական ծրագրի շուրջը, գտնելով, որ ապագայում թուրքական ազգը պետք է բաղկացած լինի միայն թրքախոս մահմեդականներից: Զիա Գյոքալփի կենսագիր Ուրել Հեյդը գրում է. «Հետագա տարիներին Գյոքալփը, Հալիդե Էդիպը և նրանց համախոհները երազում էին բոլոր թուրքերին մի իշխանության տակ միավորելու մասին, որը պետք է վերածներ Աթիլայի, Չինգիզխանի և Թամերլանի ժամանակները»: Ըստ Գյոքալփի՝ թուրքացման քաղաքականությունը հայերի վրա տարածել հնարավոր չէր, որովհետև նրանք ունեին լեզվի և կրոնի դարավոր ավանդություններ, որոշակի ազգային ինքնատիպություն: Բայց կարծում էր, որ ի վերջո հայերի դիմադրությունը նույնպես ջարդվելու էր:

Երիտթուրքերը ձգտում էին թուրքերին և թուրքական տարրերին համախմբել ոչ միայն գաղափարախոսական, այլև կազմակերպչական առումով: Ձևավորել կազմակերպչական, ոչ քիչ դեպքերում ռազմական ու կիսառազմական կառույցներ «Թրքության համախմբման համար»: Երիտթուրք պարագլուխներն անձամբ էին զբաղվում այդ խնդիրներով: Էնվերն էր ղեկավարում թուրքական երիտասարդական շարժումը («իզշի»), որը նման էր անգլիական սկաուտներին: Կազմակերպության խորհրդանիշը գորշ գայլն էր[84]:

74 Tunaya T. նշվ. աշխ., էջ 212:

75 Ahmad F.նշվ. աշխ., էջ 136:

76 Nuri Celal, Osmanli emparatorlugunun tarih-I tedennisi. Ist., 1931, s. 90 (արաբատառ).

77 Գեմբարսկի Բ., Նամակներ աշխարհին, Եր., 1990, էջ 79):

78 Кемаль М. Путь новой Турции, т. 2, М., 1932, стр. 300-301.

79 Ն. տ., հ. 3, էջ 13:

80 Զարեվանդ, Միացյալ..., էջ 70:

81 «Ազատամարտ», 19-ը հունվարի 1909թ.:

82 Tarihi, silt III, Ist., 1931, s. 137.

83 "Siratela Mustagime", թերթ, 4-ը դեկտեմբերի 1910թ., Վրաստանի ԿՊԱ, ֆ. 157, ց. 1, գ. 212, թթ. 219-220:

84 Walker Cr., նշվ. աշխ., էջ 191:

Արդեն 1910թ. երիտթուրքերը դաղարեցին ընդունել, որ կայսրության բոլոր ժողովուրդները իրավահավասար են: Դա պարզ երևաց, երբ նրանք հրաժարվեցին սուլթանի ժամանակ խլված հողերը հայերին վերադարձնելուց: Լոութերը նշում է, որ երիտթուրքական կոմիտեն գերադասում էր երկրում ռասաների բաժանումը պահպանել: Իթիհադը նաև ձգտում էր անմիջական վերահսկողության տակ առնել հպատակ ժողովուրդների հոգևոր-մշակութային հաստատությունները՝ դպրոցներ, ակումբներ, մամուլ: Գնդապետ Լամուշի «Թուրքիայի պատմություն» գրքի առաջաբանում Ռընե Բինոնը գրում է, որ երիտթուրքերն «ավելի անհանդուրժող, ավելի ազգայնական, ավելի մահմեդական, ավելի թուրք եղան, քան Աբդուլ Համիդի միապետությունը... Իթիհադի հայրենասիրությունը շուտով փոխակերպվեց թուրքական ազգայնամոլության»[85]: Նա, ընդհանրապես, բացի իրենից, ուրիշ քաղաքական ուժ չէր հանդուրժում, ինչը դժգոհություն առաջացրեց նույնիսկ բանակում: Սակայն թուրքական քաղաքական հոսանքները մի գերխնդիր ունեին՝ ստեղծել զուտ թուրքական պետություն: Բնականաբար հպատակ ժողովուրդների քաղաքական ուժերը միանգամայն այլ կարծիքի էին: 1905թ. մայիսի 31-ին «Երիտասարդ Հայաստան»-ը (Բոստոն) գրեց. «Թուրքիան կամ կը խորտակուի բեկորների վերածուելով, բաժան-բաժան լինելով և կամ կապրի, եթե մշակի այնպիսի վարչակարգ, որ բոլոր ժողովուրդները ի զորու լինեն պահել իրենց անհատականութիւնը և ինքնուրոյնութիւնը»: «Իթիհադը,- գրում է Սապան Գյուլյանը,- միայն Միհդատյան սահմանադրության շուրջ կուզե միացնե Համիտի դեմ պայքարողները, անոնց համար Պերլինի 62-րդ հոդվածը «կատակաբանութիւն է»: Մինչդեռ Միհդատեան սահմանադրութիւնն նոյնպես կատակաբանութիւն էր, քանի որ «իրենց մտածումները այնքան հին էին, որքան ծեր թուրքերինը, ուստի իրենց պատմության մէջ չերիտասարդացած՝ ծերացած կը մնային նոյն օսմանցիները, ինչ-որ էին իրենց պապերը, նախապապերը թէև եվրոպական զգեստները վրանին առած»[86]:

«Հյուրիեթն» իր ազգայնամոլական ձգտումներում այնքան վայրագ էր, որ անկեղծությամբ հայտարարում էր, թէ «օսմանականութեան, օսմանեան ազգայնականութեան մէջ չձուլուող և ընդդիմացող ցեղերը հարկավոր էր բնաջնջել որպէս անհրաժեշտութիւն և ապահովութիւն ապագային»: Իթիհադը «դեռևս առաջները կատաղի յարձակումներ է գործել տաճկահայերիս դեմ իսլամության շահի անհրաժեշտության տեսակետից: Նա մէկն է համիսլամական այն բազմաթիվ համոզողներից, որ Միջերկրականից մինչև Ջինաստան, Ղազուանից մինչև Հնդկական օվկեանոսը մոտիկ ապագային ընդհանուր սեփականութիւն են համարում իսլամության»[87]: 1909թ. խորհրդարանի ընտրությունների նախօրյակին պատերին փակցվեցին հետևյալ թռուցիկները. «Հայերուն և հույներուն ազատութիւն տալը պետության կործանում կնշանակե և Օսմանեան կայսրութիւնն արդեն կանգնած է կործանման վիհի առաջ, ուստի իսլամի ճշմարիտ բարեկամները լուրջ կերպով պիտի մտածեն ու միջոցներ ձեռք առնեն հայերը ջնջելու և պետութիւնը անկումից փրկելու համար»[88]: Այս պայմաններում հայերի համար կենսական խնդիր էր ինքնապաշտպանությունը:

«Երիտթուրքերի մտապատկերներն էին Աթիլա, Ճենկիզխան, Տուղրիլ, Արփասլան, իսկ Լենկթեմո՞ւր.- ասոնց փառապսակը, Մոնկոլ - թիւրք քաղաքականութեան և քաղաքակրթութեան տարածիչը, աշխարհականացնողը, ժողովրդականացնողը... հիացումով, աքանչացումով» էին խոսում նրանց մասին, «օր մը, իհարկէ, զանոնք գերազանցելու մտոք»: Դարեր շարունակ լինելով իշխող ազգ, գրում է Թ. Նուրեդդինը, թուրքերի մեջ վերացել էր նախաձեռնելու ոգին: «Հայերը իրենց երեխաներին ուղարկում էին եվրոպական համալսարաններ, իսկ թուրքերը դրան նայում էին թերահավատությամբ»[89]: «Իթիհադն ինքն է հրահրում մահմեդական բնակչությանը, որպեսզի այդ ձևով հարկադրի հայերին հրաժարվելու իրենց իրավունքներից... Բալկանյան պատերազմից հետո 1,5 միլիոն մուհաջիրներ հրով ու սրով գրավեցին հայոց հողերը...»[90]:

85 Հ. Գանգրունի, նշվ. աշխ., էջ 268:
86 Ն. տ., էջ 269:
87 Շահրիկեան Հ., նշվ. աշխ., էջ 68:
88 Ցովակիմեան Ց., նշվ. աշխ., էջ 178-180:
89 Հ. Գանգրունի, նշվ. աշխ., էջ 274:
90 Նույն տեղում, էջ 49:

Երիտթուրքերի աջքին դաշնակցականներն այլևս ավելորդ էին և նրանք դիտմամբ անուշադրության էին մատնում Դաշնակցության բոլոր պահանջներն ու նույնիսկ արհամարհում դրանք: Երիտթուրքերը իշխանության գլուխ անցնելով և իրենց հզոր զգալով, այլևս համիսլամական ձգտումները քողարկելու «չահ մը չունեին: Սուլթանեն նուազ խորամանկ, նուազ քաղաքագետ այս ինքնակալ յեղափոխականները կորոշեն շարունակել Ապտիլ Համիտին արիւնոտ գործը, այն է՝ ոչնչացնել կայսրութեան ոչ մահմեդականները և եթե բարեգործութիւն մը կերազեին, այդ ալ իրենց գործերուն Եւրոպական ամեն միջամտութիւն ջնջելու» տենչանքից: Իրապես, համիսլամությունը չէր, որ իշխում էր երիտթուրքերի ձգտումներում, այլ համաթրքությունը՝ մահմեդական ազգայնականության այն տարատեսակը, որը շատ ավելի տարամերժ էր, քան Աբդուլ Համիդի վարդապետությունը, որովհետև գտնում էր, որ միայն թուրքերն էին ընդունակ առաջադիմության: Անհավատներին ստրկացած ժողովուրդներ էին համարում, անընդունակ ազատ զարգացման և կուզե աշխարհի «300 միլիոն մահմեդականը ենթարկել գերիշխանութեանը «Միութիւն և առաջադիմութիւն» կուսակցութեան: Կը հալածե կամ կ՝ոչնչացնե մահմեդական ընդարձակ երկրներու մէջ ապրող բոլոր անհաւատները: Ասիկայ Մահմետի սիսթեմի նորոգումն էր ի նպաստ իշխանութեան, վայելքի և հարստութեան ծարաւի... ասիկայ կայսերապետութեան ամենաանարգ ձևն էր:

Երիտասարդ թուրքերը հենարան մը կը հաստատեն ոճիրներու վրայ, որոնց համար կամբաստանեն հայերը, մեղաւորներ են անոնք, կըսեն, մասնակից խռովութիւններու և մատնութիւններու: Ցետոյ ուժ առած այս երևակայական հանցապարտութենեն, կը սկսին գործադրել Թալեաթ պեյի տուած մահուան վճիռը»[91]:

Այսպիսին էին Իթիհադին տեսնում ժամանակակիցները՝ ժողովրդավարության դրոշով իշխանության եկած քաղաքական ուժ, որը ոչ ինքն էր պատրաստ ժողովրդավարությանը և ոչ էլ ցանկություն ուներ էական փոփոխության ենթարկելու հին վարչակարգը:

Երիտթուրքերի կուսակցության կազմակերպչական ամբողջանալու գործընթացը, նրա կառույցներն ու աշխատակարգը ձևավորվեց տևական ժամանակահատվածում: Պահանջվեց 14-15 տարի, որպեսզի Իթիհադը ստեղծեր իրեն ժամանակակից կուսակցությունների կառուցվածքներին համապատասխան մարմիններ: 1908թ. հեղաշրջումից հետո միայն երիտթուրքերը ձևավորեցին կազանների, սանջակների ու վիլայեթների կազմակերպություններ: Ընդ որում, միայն վիլայեթների կուսակցական ղեկավարությունն իրավունք ուներ հաղորդակցվելու ընդհանուր կենտրոնի հետ: Երիտթուրքերի համագումարներին նահանգներից մասնակցում էին երկուական հոգի: Այսինքն՝ ներկայացուցչությունը ձևավորում էր ոչ թե կուսակցության անդամների թվի, այլ վարչական միավորի հիմքի վրա: Երիտթուրքական կուսակցության կազմը խայտաբղետ էր՝ էշրաֆներ, բեկեր, հին վարչակարգի գործիչներ, տարբեր խավերի ներկայացուցիչներ: «1910թ. նոյեմբերի 1-13-ին, երբ որոշուեցաւ ցեղասպանութեան նպատակները կուսակցութեան ժողովներու մէջ, ամեն ջանք թափեցին իրենց հակակշռի տակ առնելու ամբողջ հասարակութեանը և վերացնելու ընդդիմադիրներուն»[92]:

1911-ին Բալկաններում ջարդեր տեղի ունեցան և Թալեաթը ուղարկվեց «դարման մը գտնելու համար»: Սակայն նա ոչ թե ջարդարարներ հայտնաբերեց, այլ հին ու նոր ջարդարարներին միավորեց: «Իթիհադ կուսակցության կողմնորոշումները մշակողները «քառասուն» գլխավոր անձեր էին, զրեթե հավասար հեղինակությամբ... Նախապես լայնամտություն կեղծող այդ չեֆերը դարձած էին նենգամիտ, բռնավոր, ուրացող... և մահվան սպառնալիքով լռեցնող իրենց հակառակորդները: Չնայած կայսրությունում բնակչության միայն 25%-ն էր թուրք, նրանք ոչ թե «միություն և առաջադիմություն» քարոզեցին, այլ միատարրություն և ձուլում չատագովեցին»[93]:

Իրենց հոգի կողմնորոշումը երիտթուրքերը բացատրում էին այն իրողությունով, որ կայսրությունն անկասանելիորեն դեպի անկում էր գնում և արտակարգ բնույթի միջոցառումներ էին անհրաժեշտ այն փրկելու համար: «Կայսրությունը դեպի անկում է գնում և, բացի թրքությունից, մի այլ ուժ չկար, որ կարողանար այդ թույլ չտար,- գրում է Աքչուրան,- իսկ թրքությունը

91 Մորգան Ժ. Հայոց պատմութիւն, Բոստոն, 1947, էջ 343-344:
92 Ղազարեան Հ., նշվ. աշխ., էջ 49:
93 Ն. տ.:

նշանակում էր բոլոր թուրք ցեղերի և ժողովուրդների ընկերային, լեզվական, քաղաքական և կրոնական միաձուլում»[94]: Նման տրամադրություններն էին տիրապետող, երբ հրավիրվեց չորրորդ համագումարը: Կայսրությունն ապրում էր դժվար, շրջադարձային ժամանակներ: Թուրք-իտալական պատերազմն ընթացքի մեջ էր: Համաժողովը հաստատեց նախկինում ընդունած որոշումները, ավելի շեշտելով դրանց ազգայնամոլական տրամադրությունները: Համագումարի ընդունած բանաձևերից մեկում կարդում ենք. «Կայսրությունը պետք է լինի կենտրոնացված, հիմնված բացառապես թուրք տարրի գերիշխանության վրա: Այն կառուցելու է միայն իսլամական հիմքի վրա... Մակեդոնիայի քրիստոնյաները պետք է զինաթափվեն, իսկ մահմեդականներն՝ ամենուրեք պահեն իրենց զենքերը: Այնտեղ, որտեղ մահմեդականները փոքրամասնություն են կազմում, իշխանությունները պետք է դրանց (քրիստոնյաներին) ցրեն: Կասկածելիները պետք է տեղահանվեն: Թե ոստիկան-զորքերին, և թե բանակին ազատություն տրվի: Ռազմական ատյանը պետք է մշտական կապ պահի կոմիտեի հետ և խստորեն պատժի հանցագործներին, որպեսզի օրինազանցները չկարողանան պատժից խուսափել: 200 հազար մահմեդական պետք է զետեղվեն հունական և բուլղարական սահմանների վրա. այս նպատակի համար պետք է ծախսվի 220 հազար թուրքական ոսկի: Կովկասից և Թուրքեստանից ներգաղթը պետք է քաջալերել, ներգաղթողներին հող հայթայթել և քրիստոնյաների եկամուտի աղբյուրները կտրել: Որպես փոխվրեժ հակաբուլղարական ճնշումների դրեթե ձախողման, իրականացնել ուսուցիչների, կրոնավորների և պաշտոնատարների պաշտոնազրկում: Հակահույն շարժումը առաջ տանել ու ղեկավարել կոմիտեի միջոցով, որովհետև մինչև նավատորմը չչեզոքացվի, հույների հետ հնարավոր չէ պատերազմի մեջ մտնել: Պետք է արգելել երեսփոխանական ժողովում և, ընդհանրապես, երկրի ներսում նոր խմբակցությունների կազմավորումը և նոր «ազատամիտ գաղափարների» տարածումը: Թուրքիան հիմնավորապես մահմեդական երկիր պետք է դարձնել, որտեղ իսլամական գաղափարներն ու մահմեդական ազդեցությունը պետք է գերակայություն ունենան: Կրոնական ամեն տեսակի քարոզչություն պետք է ճնշել: Կայսրության գոյությունը կախված է երիտասարդ թուրք կուսակցության ուժից և բոլոր թշնամի գաղափարների ճնշումից... Բոլոր գլխավոր պաշտոնները պետք է հանձնվեն միմիայն իթիհադական մահմեդականներին, իսկ քրիստոնյաները կարող են թեկնածու լինել երկրորդական պաշտոնների համար: Մահմեդականությունը պետական կրոն է, ուստի պիտի դառնա ընդհանուր կրոն և ըստ այդմ էլ, եթե պահանջվի, պետք է այն պարտադրել նույնիսկ զենքի ուժով, որպեսզի կայսրությունը ձեռք բերի մահմեդական նկարագիր: Կայսրության լեզուն թուրքերենն է: Փոքրամասնությունները կարող են պահել իրենց կրոնը, բայց ոչ լեզուն, որովհետև պատգամավորական ժողովը հավատում է, որ թուրքերենի տարածումը աքանչելի միջոց է մահմեդական գերակայություն հաստատելու և ոչ թուրք հավաքականությունները թրքացնելու համար:

Կայսրության բաղկացուցիչ տարրերից ոչ մի ժողովուրդ կազմակերպվելու իրավունք չունի, որովհետև կազմակերպվելը նշանակում է ապակենտրոնացում և ինքնավարություն, իսկ դրանք կայսրության ամբողջականության դեմ դավաճան քայլեր են: Ավելին, կապիտուլյացիաների մերժումն ու վերացումը իրավական և իրավական երաշխիքներ են երկրի ամբողջականությունն ապահովելու, ուստի կայսրության սահմաններում արդարադատության վերակառուցումից առավել անհրաժեշտ են նշված ձեռնարկները... Որևէ պատերազմի ժամանակ կովողների միջև հավասարակշռված չեզոքությունը լավագույն գրավական է Օսմանյան կայսրության անվտանգության համար...»[95]:

Համագումարը նաև որոշեց. «Մեծ տերությունների նկատմամբ Թուրքիան իրեն պահելու է վերապահ դիրքում և չպիտի կնքի որևէ դաշնակցություն, մինչև որ ռազմական տեսակետից հզորանա, այլապես նրա անկախությունը կարող է վտանգվել: Թուրքիան նաև վճռել է երկու ցամաքամասերում ունենալ զգալի ազդեցություն, եթե մահմեդականները կարողանան փշրել օտարի լուծը: Նույնիսկ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը կարող է վախենան դրանից: Թուրքիան նաև չի կարող մեծ վստահություն տածել Եոյակ համաձայնությանը, սակայն

94 Zankovsky S. A. նշվ. աշխ. էջ 38-39:

95 Lepsius J., նշվ. աշխ., s. XVII Ittihad ve Terakki Kongresleri, "Memleket", 19-ը դեկտեմբերի 1947թ.:

բոլոր միջոցները գործադրելու է նրա հետ բարեկամական հարաբերություններ ունենալու համար: Թուրքիան պահելու է իր չեզոքությունը և հեռու է մնալու որևէ պաշտոնական դաշնակցությունից: Համենայն դեպս՝ Թուրքիան փորձելու է շահել Անտանտի տերությունների համակրանքը»[96]: Համագումարն առանձնակի ուշադրություն դարձրեց հպատակ ժողովուրդների ուծացման հարցին: Այդ կապակցությամբ ընդունված բանաձևում ասվում է. «Ուշ թե շուտ Թուրքիայի բոլոր հպատակների կատարյալ թրքացումը իրականացվելու է: Չնայած դրան, պետք է հստակ հասկանալ, որ այս նպատակը համոզելու միջոցով երբեք չի կարող իրագործվել: Ընդհակառակը, այն պետք է իրականացնել զենքի ուժով: Կայսրության նկարագիրը լինելու է մահմեդական և մահմեդական կրոնի ու ավանդույթների հետ իրագործվելու է համակերպություն: Կազմակերպություններ ունենալու մյուս ազգությունների իրավունքը չեղյալ է հայտարարվելու, քանի որ ապակենտրոնացումն ու ինքնավարությունը դավաճանություն են թուրքական կայսրության դեմ: Փոքրամասնություններն աննշան թիվ են կազմում: Նրանք իրենց կրոնը կարող են պահել, բայց ոչ լեզուն: Թուրքերենի համընդհանուր տարածումը լինելու է հիմնական միջոցներից մեկը մահմեդական գերակայություն ապահովելու և յուրացնելու գոյություն ունեցող ազգությունները»: Կրոնական ազատություն թույլատրելը հակասում է կայսրությանը մահմեդական բնույթ տալու որոշմանը...[97] Կառավարությունը պարտավոր է ցանկացած ձևով ու միջոցներով պայքարել ազգային փոքրամասնությունների նացիոնալիզմի դեմ և աջակցել օսմանյան ռասայի գերիշխանության հաստատմանը նույնիսկ այն վայրերում, որտեղ նրանք փոքրամասնություն են:

Կառավարությունն ու կոմիտեն, որոնք միավորված են գաղափարախոսություններով ու միասնական են այն իրագործման վճռականությամբ, պետք է գնան ցանկացած զոհողության ու դժվարության, որպեսզի քրիստոնյաներին զրկեն ունեցվածքից, հատկապես անշարժ սեփականությունից... Կենտրոնական կոմիտեն պետք է սերտ կապեր հաստատի համանման կոմիտեների հետ, որոնք գործում են Պարսկաստանում, Կովկասում, Թուրքեստանում, Եգիպտոսում:

Անգլիան և Եգիպտոսը ունեն մեծաթիվ մահմեդական հպատակներ, որոնց հայրենասիրական ոգին, շնորհիվ թուրքական հեղափոխության, արթնացել է: Մի քանի տարի հետո հարց կառաջանա այդ մուսուլմաններին միավորելու խալիֆաթի մեջ: Պանիսլամական շարժումը շատ ուժեղ է Մարոկկոյում, Թունիսում, Ալժիրում, Հնդկաստանում... Մենք, երիտասարդ թուրքերս, լի ենք խիզախությունով ու հավատով»[98]:

Համագումարի ընդունած բանաձևերի տեքստերի այս խայտաբղետությունը և մտքերի կրկնողությունները հետևանք են այն բանի, որ դրանք այդպես էլ ամբողջությամբ չհրապարակվեցին և հրապարակված տեքստերը կազմված են համագումարի պատվիրակների գրառումներից: Դրա փոխարեն այդ բանաձևերը բաժանվեցին զինվորներին ու ոստիկանությանը: Մշակվեց ծրագիր հայերի հանդեպ ատելություն զարգացնելու համար: Միայն «բազմաթիվ և վտանգավոր թշնամիների ոչնչացումից հետո կարող ենք հարցը լուծված համարել»: Համագումարը ջարդարար կողմնորոշումներում միահամուռ չէր: Պատվիրակներից ոմանք լքեցին իթիհադին և անցան իթիլաֆի կողմը, ինչը վերջինիս զգալիորեն ուժեղացրեց 1911թ. խորհրդարանական ընտրություններում: Ստեղծվեց ուժեղ ընդդիմություն, որը կասեցնում էր համագումարի որոշումների կատարումը: Այդ գործում վախվորած կեցվածք ուներ ինքը՝ իթիհադը, երկնչելով Անտանտի տերությունների միջամտությունից: Համագումարը հզոր խթան հանդիսացավ համաթրքական այլամերժ քաղաքականության ու տրամադրությունների զարգացման համար: Հրապարակ ելավ իթիհադի արյունատենչ քայլերգը, որը նաև թուրքական զինվորական քայլերգ էր.

Ելեք, արշավանքը սկսվեց,
Տղերք, Կովկասի վրա ենք հարձակվում մենք,
Թուրանն է սպասում մեզ,

96 «Ցուշամատեան Մեծ եղեռնի», էջ 274-275:

97 Lepsius J., նշվ. աշխ., էջ XVII, «Ցուշամատեան Մեծ եղեռնի», էջ 274:

98 Lepsius J., նշվ. աշխ., էջ 248, Guttman J., The beginnings of genocide. A brief account of the Armenian massacres in World war I. New York 1948, p. 16.

Մի կողմից՝ Կահիրե,
Մյուսից՝ Բաթում, Կարս,
Մի կողմից՝ Հինդ, Ավղանստան,
Մյուսից՝ Մարոկկոն է սպասում մեզ...[99]

Երիտթուրք գործիչները հաստատեցին, որ այդ քայլերգերի հռչակումներն իրենց կուսակցության ծրագիրն են, նպատակը: Հ. Ջահիդը գրեց. «...Երկրում տիրապետող ազգը թուրքերն են և առաջիկայում էլ այդպես կլինի...»[100]*: Փորձեր կատարվեցին թուրքական երեք գաղափարաբանությունները միավորելու մեկ քաղաքական ծրագրի մեջ: Փաստորեն այս համագումարից հետո սկսվեց թուրքիզմի քարոզչության ծավալումը համապետական ընդգրկումով: Այդ նպատակով կենտկոմին կից գաղտնի բաժին ստեղծվեց Նազիմի գլխավորությամբ: Սակայն նույնիսկ համագումարից հետո կուսակցության ղեկավարների մեծ մասը շարունակում էր թերահավատ վերաբերվել թուրանականությանը: «Թալեաթն ու Ջեմալը չէին պատկերացնում, թե կործանման շեմին կանգնած կայսրությունն ինչպես է իրականացնելու թուրքական ժողովուրդների ազատագրումը»*[101]*: Մինչդեռ Բեհաեդդին Շաքիրը գտնում էր, որ միայն թուրքիզմն է ի վիճակի միավորելու կայսրությունը: Էնվերը տարբերություն չէր տեսնում օսմանիզմի և թուրքիզմի միջև: Սակայն տարբեր կարծիքների տեր այս բոլոր գործիչները հայերի բնաջնջման հարցում համակարծիք էին: Երիտթուրքերի համագումարը բացառելով կայսրության ժողովուրդների ազգային և կրոնական իրավահավասարությունը, դավաճանություն էր համարում ապակենտրոնացում հետապնդող ազգային շարժումները: Համթուրանական-իսլամական այդ ազգայնամոլությունն ուղղված էր ոչ միայն ոչ մահմեդական, այլև ոչ թուրք մահմեդական ժողովուրդների դեմ: Խնդրի լուծման համար նախ պետք էր այդ փոքրամասնություններին թալանել ու տնտեսապես քայքայել, խմբակային ոչնչացման ենթարկել, կենդանի մնացածներին ուծացնել: Սակայն կայսրության էթնիկական դեմքը հօգուտ թուրքերի փոխելու համար դրանք բավարար չէին: Պահանջվում էր իրականացնել թուրք-մահմեդական տարրերի ներգաղթ: 1913-ին Գոլցը հայտարարեց, թե Թուրքիան բնակեցվելու էր «կորցրած տարածքներից» փախած մահմեդականներով*[102]*: Իթիհադի համագումարի պատվիրակ, Կարինի փոստի և հեռագրի գրասենյակի տնօրեն Հալիբն իր հայ ընկերներին ասաց. «Եթե կարողանայի մանրամասն պատմել համագումարում ընդունված որոշումների մասին, Ձեր մազերը ցից-ցից կկանգնեին»: Բ. Դուրը նրան աչխատանք առաջարկեց Կ. Պոլսում, սակայն Հալիբը հրաժարվեց՝ կենտրոնի հղացած հանցագործություններին մասնակից չլինելու համար: Հալեպում էր աշխատում, երբ սկսվեց բռնագաղթը: Նա անմիջապես բողոքի հեռագիր ուղարկեց Բ. Դրանը, իսկ քիչ անց ինքնասպան եղավ*[103]*:*

Այսպես որոշակիացան երիտթուրքերի քաղաքականության երեք գլխավոր ուղղությունները՝ Թուրքիայի թուրքացում, ոչ մահմեդականների բոյկոտ, համթուրանականություն: «Թանինը» հույս էր տալիս, որ Փոքր Ասիան թուրքացնելու քաղաքականության հաջողությանը նպաստում է մանավանդ այն հանգամանքը, որ տեղական թուրքական իշխանությունները... լիովին ըմբռնել են ներքին գաղութացման ու մուհաջիրների վարվելաձևի ազգային մեծ նշանակությունը[104]*: Բայուրը հաստատում է. «Ազգային տնտեսություն ստեղծելու համար ուղի նկատվեց բոյկոտի քաղաքականությունը, որը երիտթուրքերի կարծիքով... դյուրացնելու էր թուրք բուրժուազիայի խիստ թույլ դիրքերի ամրապնդումը»*[105]*: Պետական խորհրդի նախագահ Հալիլը 1914թ. մայիսի 19-ին խորհրդարանում ունեցած ելույթում հորդորեց. «Կը խնդրեմ մեր ուսուցիչներին, մեր խմբագիրներին և մեր բանաստեղծներին ու մեր բոլոր մտավորականությունը, որ իրենց դասերով, իրենց գրություններով, իրենց բարոյական ամբողջ ազդեցությամբ միշտ հիշեցնեն ներկա և ապագա սերունդներին, թե սահմանի մյուս կողմում փրկելու եղբայրներ, ազատելու հայրենիքի բեկորներ կան»*[106]*: Ջելալ Նուրին ավելի հստակ էր արտահայտվում. «...Իրաքը, Եմենը պիտի դառնան լրիվ թուրքական... կայսրական շահերի պահապան, թուրքերի գոյության համար հարկ է թուրքացնել արաբական հողերը, ճնշել արթնացող ազգայնականությունը արաբ երիտասարդ սերնդի մեջ... արաբները դժբախտություն են Թուրքիայի համար... թուրքական ռազմական նվաճողի ձին ավելի լավ է, քան որևէ ազգի մարգարեն»*[107]*:*

Գուտմանը նշում է Սալոնիկի 1911թ. համագումարի որոշումների ջարդարարական բնույթը՝ քանի որ միայն խաղաղ միջոցներով թուրքացնելն անհնար էր, ապա պետք էր «օգտագործել նաև բանակը»: Կոստանսոնը նույնպես այն կարծիքին էր, որ սահմանադրության ընձեռած հնարավորություններն ամենաարդյունավետ օգտագործեցին հայերը, ինչն առաջացրեց «թուրքերի անվստահությունը նրանց հանդեպ: Այդ նույնպես թուրքերի մեջ միտք հղացրեց հայերի հանդեպ կիրառել արևելյան նվաճողների հին դասական միջոցը՝ ոչնչացնել ազգաբնակչությանը, եթե նրա գոյությունն իսկ սպառնալիք էր իրենց համար»[108]*: Գուրկո Կրյաժինը երիտթուրքական վարչակարգը բնութագրում է՝ «Օսմանիզմ ազգային հարցում, ամենախոր հետադիմություն սոցիալական հարաբերություններում և ծայրահեղ ռազմատենչություն արտաքին քաղաքականության մեջ»*[109]*: "Новое время"-ն ուշադրություն է սևեռում հպատակ ժողովուրդների անշարժ ունեցվածքը խլելու, նրանց տնտեսապես քայքայելու*[110]*, իսկ Ֆ. Մակլերը քրիստոնյաներին պետական հիմնարկներից հեռացնելու երիտթուրքական քաղաքականության վրա*[111]*: Ա. Թոյնբին մեջբերում է կատարում ռազմական ուսումնարաններին հասցեագրված մի շրջաբերականից՝ երիտասարդությանը թուրքերի «ռասայական առավելությունների ոգով դաստիարակելու» անհրաժեշտության մասին*[112]*: Ի. Գոլոբորդկոն ընդգծում է երիտթուրքերի քաղաքականությունը հպատակ ժողովուրդների կազմակերպությունների հանդեպ: Այդ ժողովուրդներին արգելում էին հասարակական կազմակերպություն ունենալ, պատճառաբանելով, թե Թուրքիայի բոլոր ազգությունները օսմանցիներ են և բացի պետական հիմնարկներից, ուրիշ հիմնարկներ չպետք է ունենան*[113]*: Երիտթուրք սպաները հոխորտում էին. «Այս կայսրությունը մեզ է պատկանում, և քանի դեռ ապրում է թեկուզ մի թուրք, թույլ չենք տա, որ այստեղ թուրքերից բացի որևէ մեկը օրենք գործադրի...»*[114]*: Երիտթուրք գործիչ Հ. Ջահիդի կարծիքով՝ «Թալեաթն իր հեռատես ու պայծառ ըմբռնումով թե ինձ փրկեց և թե պայմաններ ստեղծեց Թուրքիայի փրկության համար»*[115]*: Ժ. Մորգանը գտնում էր. «Հայերը գործիք մը եղած էին յեղափոխութեան գլուխ անցած ավազակներուն, որոնք զորավոր զգալով, այլևս իրենց համախլամական ձգտումները ծածկելու պատճառ մը չունեին: Սուլթանեն նուազ խորամանկ, նուազ քաղաքականագետ այս ինքնակալ յեղափոխականները կ'որոշեն Ապտիլ Համիտի արիւնոտ գործը՝ այն է՝ ոչնչացնել ոչ մահմետականները»*[116]*: «Շուտով յայտնի եղաւ՝ թե Ժեոն-Թուրքերուն ծրագիրն էր՝ ստեղծումը «մեծ Թուրքիոյ», պաշտօնական լեզուն պիտի ըլլար թիւրքերեն, պետութեան վարչական մեքենան պիտի գործեր միայն թուրքերուն ձեռքով: Նույնիսկ արաբները հեռու պիտի կացուցուին հանրային պաշտօններեն: Գալով քրիստոնեաներուն, մանաւանդ հայերուն, հարկ էր զանոնք սանձել միանգամ ընդմիշտ: Ցեղերուն հաւասարութիւնն ընդունելի չէր: Եթե ըլլար ընդունելի, քրիստոնեաները, իրենց մշակոյթով, խելքով, քարոզչութեամբ և աշխատանքով տեր պիտի*

99 «Արարատ», 1-ը փետրվարի 1985թ.:
100 Aksin S., Jon Turkler ve Ittihad ve Terakki. Ist., 1987, s. 169:
101 Kemal Ali Meran, նշվ. աշխ., էջ 119:
102 Goltz V. La defeite la jeune Turquie et la posibilite de son relevement, Paris 1913, p. 60.
103 Լաչեան Գ., նշվ. աշխ., էջ 148:
104 Stuermer H., նշվ. աշխ., էջ 157:
105 Bayur L., նշվ. աշխ., էջ 294:

106 «Ազատամարտ», 20-ը մայիսի, 1914:
107 "Turkey: A past a future reprented": տե՛ս "The Roud Table"(London), june 1917, p. 25.
108 Коснтансон Л. де, Реформы в Азиатской Турции, Армянский вопрос, М., 1914, с. 23.
109 Крижин Г. История революции в Турции, с. 46.
110 "Новое время" 28 мая 1913.
111 Macler F. La nation Armenienne. Son passe, ses Malheurs, Paris, 1925, p. 49.
112 Toynbee A., նշվ. աշխ., p 26:
113 Голобородько И., նշվ. աշխ., p. 288:
114 Հ. Գանգրունի, նշվ. աշխ., էջ 268:
115 Մինախորեան Վ. 1915թ., Վենետիկ, 1949, էջ 39:
116 Մորգան Ժ. նշվ. աշխ., էջ 342:

դառնային իշխանութեան... Միակ տարբերութիւնը կար Ժեոն-Թիւրքերու և հին Թիւրքերու հալածանքներուն միջև, հայերուն դէմ սարքած հալածանքներուն կակնարկեմ, հետևեալն էր. Ժեոն-Թիւրքերու հալածանքները հետևանք էին խնամքով պատրաստուած ծրագրի մը, հետևաբար անբաղդատելիորեն աւելի վտանգաւոր էին»[117]: Այսպիսով, գրում է Ա. Էմինը. «Կոյր և յարձակողական կայսրութիւն մը եղաւ տիրական շարժիչը իթիհադի քաղաքականութեան»[118]: Եվ հնչեցին թուրանականության քայլերգի խոսքերը.

«Լաց մի լինի ղարիբ Թուրան,
Մենք գալիս ենք դեպի քեզ, հավատա»[119]:

Նախընտրական թռուցիկները ազդարարում էին. «Հայերուն և հույներուն ազատութիւն տալը տերութեան կործանում կը նշանակէ և Օսմանեան կայսրութիւնը կանգնած է կործանման վիհի առաջ: Ուստի իսլամի ճշմարիտ բարեկամները լուրջ կերպով պիտի մտածեն ու միջոցներ ձեռնարկեն հայերուն ջնջելու և պատմութիւնը փրկելու համար»[120]: «Թուրքերն իրենց աշխարհակալի հանգամանքով ունեն որոշ իրավունքներ և մենաշնորհներ,- գրեց «Թանինը», - կարիք չկա մյուս ցեղերի համար ճանաչել քաղաքական հավասարություն»[121]: Թուրքական մանկական երգերը նույնպես զերծ չմնացին ազգայնամոլական խելագարություններից.

«Կարսն իմն է,
Էրզրումն իմն է, Երզնկան իմն է,
Թուրք եմ
Երանի ինձ...»[122]:

Բայց թուրանիստական ծրագրերի իրականացումն անհնար էր, եթե թուրքիզմի առաջ քաշած գլխավոր խնդիրը լուծված չէր, այսինքն՝ Թուրքիան Թուրքացված չէր: «Ամեն բանե առաջ ուրեմն,- գրում է Զարևանդը,- Թուրքիան պէտք է Թրքանայ: Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի կառաւարութիւնը հրաժարի օսմանցիութիւն խաղալե, դադրի չփոթել իսլամը Թուրքին հետ: Ան պետք է կոթնի բացառապես Թիւրք տարրին վրա և բացառապես ոյժ տա անոր: Միւս տարրերը գոյութիւն չունին իբրև ուրոյն ազգեր և իրաւունքներ չունին: Պէտք է Թրքանան և կորսուին: Օսմանեան ազգ չկայ, մէկ ազգ կայ, մէկ ազգ պիտի ըլլայ ասքե վերջ Թուրքիոյ մէջ, ան Թուրքն է»[123]:

Երիտթուրքական կենտրոնը 1911թ. համաժողովի որոշումների ոգով բազմաթիվ թռուցիկներ ցրեց ոչ միայն զորքի ու ոստիկանության, այլև բնակչության շրջանում: «Մահմեդականնե՛ր, բարձրացնենք մեր ձայնը և թուրն ալ ձեռքում, հրացանը ձախ ձեռքում, ռումբերը գրպաններումս և Ալլահի անունը շրթներիս, լույս հավատը սրտներումս հռչակենք հետևյալ պահանջները.

Օսմանյան կայսրությունը օսմանցի մահմեդականների համար,
Եգիպտոսը Եգիպտոսի մահմեդականների համար,
Պարսկաստանը Պարսկաստանի մահմեդականների համար,
Թուրանը Թուրանի մահմեդականների համար,
Բուխարան Բուխարայի մահմեդականների համար,
Կովկասը Կովկասի մահմեդականների համար»[124]:

Հ. Մորգենթաուն գտնում է, որ «Թուրքիան Թուրքերին» և, ամբողջությամբ վերցրած, թուրքիստական ու թուրանական կարգախոսները ձևավորվել են սահմանադրության հռչակումից հետո: Դա սխալ կարծիք է, որովհետև թե այդ և թե «Թուրքիան Թուրքերի համար» կոչերը գործածության մեջ էին դեռ 1890-ական թվականներին: 1909թ. դրանք պարզապես վերածվեցին իթիհադի պաշտոնական կարգախոսների, որոնցում հռչակված սկզբունքների համար մշակվեց գործունեության ծրագիր՝ «վերջնականապես ոչնչացնել քրիստոնյա ազգաբնակչությանն արյունից

117 Նանսեն Ֆ. Հայաստանը և Մերձավոր Արևելքը, Բեյրութ, 1956թ. էջ 259-260:
118 Զարեվանդ, նշվ. աշխ., էջ 42:
119 Ալպոյաճեան Ա. Պատմութիւն Մալաթիոյ Հայոց, էջ 935:
120 Յովակիմեան Յ., նշվ. աշխ., էջ 178-180:
121 Եազըջեան Գր. Ապտիւլ Համիտ 2-րդ Կարմիր սուլթանը, Բեյրութ 1980, էջ 663:
122 Թուրքական հեռուստատեսություն, 28-ը հունվարի 1985:
123 Զարեվանդ, նշվ. աշխ., էջ 68:
124 Վրաստանի ԿՊԱ, ֆ. 2. գ. 3265, թ. 120:

հագեցած այս հողի վրա...»[125]: Երկար ժամանակ չպահանջվեց, որպեսզի թուրքիստական քարոզչությանը միանան նաև թուրք մտավորականության լայն շրջանները: Պանթուրքիստները Կովկասում ու Թուրքեստանում ունեին մոտ 50 թերթ («Հայաթ», «Թազե Հայաթ», «Իշլաթ», «Թերաքը», «Հաքիքաթ վե իքբալ», «Ֆյուզուզաթ»), որոնց ծախսերը հոգում էին ադրբեջանական և թուրքական միլիոնատերերը, մանավանդ Թաղիևը:

Միայն Կազանում հրատարակվում էր« «Ելդրզ», «Դանկո», «Դանկ Ելբրզ», «Բեյան ուլ Հակկ»: Պանթուրքիստական քարոզչություն էին տանում նաև Կ. Պոլսում՝ «Թուրան», «Թուրք Յուրդու», «Թուրք դերնեյի», «Բիլգի», «Եէնի Մենշմուա», «Թուրք գատրճը»: Իզմիրում՝ «Քյոյլու»:Կոնիայում՝ «Բաբալրգ», «Թուրք Սյոզու» թերթերը: «Ժեոն-Թուրք» թերթը գրեց. «Պիտի փրկեմ օսմանյան այն հողերը, որոնք նվաճված էին մեր նախնիների արյունով», իսկ «Սիլահը» կոչ արեց պատերազմ սկսել Ռուսաստանի դեմ. «Մենք կզոհաբերենք Անատոլիայի բոլոր ռազմական ուժերը Ռուսաստանին խորտակելու համար»[126]:

Երիտթուրքական մամուլին աշխատակցում էին Հալիդ Զիան, Ահմեդ Էմինը, Ագա Գյունդուզը, Զիա Գյոքալփը, Յակուբ Կադրին, Ջելալ Մահիրը, Յահեա Քեմալը, Ահմեդ Ռեֆիքը, Ալի Ուլվին, Մահմեդ Էմինը, Սեյֆեդին Գալիբը, Մուհիդդինը, Հալիդե Էդիպը և այլք: Այդ թերթերի շարադրանքը պարզունակ էր, գինը՝ էժան կամ նույնիսկ ձրի: Ստեղծվեց գրատուն, որը միայն թուրքիստական գրքեր էր վաճառում: Լայն տարածում ստացան թուրքական հեքիաթները, առասպելները, դյուցազներգությունները, վեպերը և այլն: Այդ ոգով ստեղծվեցին նոր դասագրքեր: Կազմակերպվեցին «Միլլի» (ազգային) ընթերցարաններ՝ մտահղացված թուրանականների կողմից: Թատրոններում գերիշխող դարձան ազգային-պատմական թեմաներով ներկայացումները: «Թուրք պատմական կեանքը սկսաւ ներկայացուիլ հանրութեանը իր խաներով, սուլթաններով, ժամանակի տարազներով, բարքերով, խոսելու և հրամայելու ձևերով. «Հերոսական անցեալ» մը կը ցուցադրուեր միամիտ ամբոխին...»[127]:

Ե. Սարգսյանը գրում է. «Նոր գաղափարախոսությունը՝ պանթուրքիզմը, կոչված էր հեշտացնելու նրանց՝ երիտթուրքերի քաղաքականությունը Թուրքիայի քրիստոնեական ազգաբնակչության բռնի թուրքացման գործում: Պանթուրքիզմը դառնում է թուրքական շովինիզմի նոր ձևը, երիտթուրքերի ձուլման քաղաքականության զենքերից մեկը»: "Nineteenth century"-ի 1906թ. հուլիսի համարում Վամբերին գրեց. «Ցարի մահմեդական հպատակների կարգախոսն է. «Միություն» բառը... Թաթարների գլխավոր ճիգն ունի մեկ թիրախ՝ թուրք ազգության տարբեր ճյուղերի, տոհմերի և ընտանիքների սերտ զինակցություն»[128]:

Համաթուրանականներին դեմ էին իսլամճիները՝ Սուլթյան Նազիֆ (քուրդ): Սրանք էլ կազմակերպություն ունեին: Դեմ էին նաև Ալի Քեմալը, Ջելալ Նուրին, Լուֆթի Ֆիքրեթը և առհասարակ Արհար կուսակցությանը հարողները: Սակայն նրանք թուրքիզմի տարածման առաջն առնել չկարողացան: Այն ծավալվեց աներևակայելի արագությամբ:

Վ. Ենիգոմեչյանը նկատում է. «Մամուլը, բեմը, հրատարակչությունները, թատրոնը, ընկերությունները, նույնիսկ երաժշտությունը օգտագործուեցաւ Աղաևի խմբակի կողմե: Շուտով թուրք մտավորականութեան ստուար մեծամասնությունը հակուեցաւ դեպի պանթուրքիզմ: Անոնց շուրջ հաւաքուեցան պետական անձեր, ծերակոյտականներ, երեսփոխաններ, պաշտոնեաներ, համալսարանի փրոֆեսորներ, ուսուցիչներ և ուսանողներ: Քանի մը տարի ետք արդեն իթիհադի կեդրոնը, մասնաւորաբար կրթական և զինուորական նախարարությունները թուրանիստներու ձեռքն անցած էին»[129]:

Յուսուֆ Աքչուրան Եգիպտոսի «Իթթիհադ» ընդդիմադիր թերթում տպագրեց հոդվածաշար «Երեք քաղաքականություն» խորագրով, որտեղ Համիդի վարչակարգը վարկաբեկելու հետ միասին քննում է Թուրքիայի վերակառուցման ազդակները, վերլուծում քաղաքականության

125 TACC, Объектив, 1988, х. 2, стр. 21.
126 Գանգրունի Հ., նշվ. աշխ., էջ 299:
127 Ն. տ., էջ 297-298:
128 Ն. տ., էջ 294:
129 Ն. տ., էջ 297:

այն տարբերակները, որ Թուրքիայի ղեկավարները հնարավորություն ունեին վարելու: Առաջինը համաիսլամականությունն իրականացնելն էր, ինչն անհնար էր համարվում, քանի որ իսլամներն ազգային դիմագիծ չունեին և օսմանյան կառավարության համար հենարան չէին դառնա: Երկրորդը օսմանցիական քաղաքականությունն էր, որին տրվել էին իթիհադականները սահմանադրության օրերին: Երրորդը պանթուրքիզմն էր: Պանթուրքիստների նշանաբաններից էին. «Մեծ Թուրանը կարող է ստեղծվել հրով և սրով»: «Ազգն աճում է պատերազմի ժամանակ», «Ցեղերի պայքարը անխուսափելի է», «Մեր ցեղի բարօրության համար ստիպված կլինենք երկար պատերազմել»: «Հօգուտ մեր ամենափոքր իսկ բարօրության կարելի է զոհաբերել ամբողջ աշխարհի շահերը», «Մի մտահոգվեք մարդկության համար, մենք ի՞նչ ունենք նրա հետ»[130]: Վ. Գորին գրում է. «Թրքական կայսերապաշտության համար բնորոշ էր երկու գաղափարախոսությունների՝ քաղաքական պանթուրքիզմի և կրոնական պանիսլամիզմի, յուրահատուկ զուգակցումը»[131]:

1914-ի հունվարին Թալեաթի գլխավորությամբ տեղի ունեցած պանիսլամական մի հանդիսավոր հավաքում ճառեր արտասանվեցին Ռուսաստանի և քրիստոնյաների դեմ, վերահաստատվեց առևտրական բոյկոտի անհրաժեշտությունը հայերի և հույների դեմ: Հանդիսավոր հավաքի ավարտին Թալեաթը հայտարարեց, թե Թուրքիան թույլ չի տա եվրոպական որևէ վերահսկողություն Անատոլիայում:

Բալկանյան պատերազմի ընթացքում Միություն և առաջադիմություն կոմիտեի քարոզչությունը թափանցեց նաև Երևանի նահանգը: Տեղի թաթարներին կոչ էին անում ռուս-թուրքական պատերազմի դեպքում պաշտպան կանգնել հավատին: Հարձակողական ազգայնամոլ ոգով թուրքիկները հորդորում էին ոտքի ելնել ստեղծելու այսպես կոչված «Մեծ Թուրան ծայրեծայր՝ Պոլսից Չինաստան, Հնդկաստանից Սիբիր»: Ահմեդ Աղաևը գրեց. «Չկա ավելի դժվար գործ, քան որոշել երևակայությունից դուրս ընդարձակ և հպարտ թրքական աշխարհի իսկական սահմանները»[132]: Հալիդե Էդիպը «Նոր Թուրան» վեպում անսանձ ատելությամբ է խոսում սլավոնների մասին և ուղիներ նշում համաթուրքական կայսրություն հիմնելու համար[133]: Թեքին Ալփը գրում է. «Եթե այսօր թուրքերը գերմանացիների դաշնակիցն են, ապա դա համաշխարհային պատմության սովորական բարեկամական քմահաճույք չէ, այլ զենքի հազարամյա բարեկամության գիտակցված արտահայտություն: Երկու ժողովուրդները ավելի քան մեկ հազարամյակ կանգնած են ընդհանուր թշնամի սլավոնների դեմ»[134]: Ք. Կարաբեքիրը հաստատում է, թե թուրքերը Կովկասյան ճակատը համարում էին Թուրանի ճանապարհ և դրա հետ համեմատած մյուս ռազմաճակատները երկրորդական նշանակություն ունեին[135]: Ա. Շիրակյանն անդրադառնալով այս խնդրին, գրում է. «Մոլեռանդութիւնն ու նեղ ազգայնականութիւնը ծայր աստիճանի հասցնելով, իշխանութեան գլուխ գտնուող երիտթուրքերը ձեռնարկեցին ոչ թուրք ազգութիւններն իրենց մէջ ձուլելու՝ թուրքացնելու քաղաքականութիւն, բան մը, որ սուլթանական վարչակարգը իր 500 տարիներու իշխանութեան ընթացքին չէր կրցած իրագործել... Պալքանեան պատերազմեն պարտուած դուրս եկած Թիւրքիան փոխանակ զգաստանալու՝ մխրճուեցաւ համաթուրանական ծաւալուն կայսրութիւն մը ստեղծելու արկածախնդրութեան մէջ»[136]:

Թուրանականությունը մեծ բռնկում ունեցավ Բալկանյան և համաշխարհային պատերազմների տարիներին, երբ թուրքիզմն ու համաթրքականությունը բանաձևից վերածվեցին գործունեության ծրագրի, քաղաքականության: Այդ քաղաքականության առաջին քայլը պետք է հանդիսանար կայսրության մի քանի հպատակ ժողովուրդների ոչնչացումը: Երիտթուրքերն ասում էին. «Ամենից առաջ մենք պետք է ոչնչացնենք բազմաթիվ և վտանգավոր թշնամիներին մեր

130 Գանգրունի Հ., նշվ. աշխ., էջ 290:
131 Ն. տ., էջ 300:
132 Ն. տ., էջ 301:
133 Гасанова Э., Идеология буржуазного национализма я Турции в период младотурок, Баку, 1960, с. 117.
134 Tekin Alp, The Turkish and Pan-Turkish Ideal, London, 1915, p. 46.
135 Karabekir K. Cihan ha8bine neden girdik, nasil idare ettik, Kitab II, Ist. 1938, s. 29.
136 Շիրակեան Ա., նշվ. աշխ., էջ 29-30:

տարածքում: Միայն դրանից հետո է հնարավոր հաշիվ մաքրել հարևանների հետ»: Պատահական չէ, որ խնդիր դրվեց նախ «լուծելու» արաբների, հայերի և հույների հարցերը: 1911թ. Դամիդ Սալեհը հայտարարեց. «Իթիհադը որոշել է կոտորել հայերին...»[137]: Մեկ տարի անց Թուրքիայի զինվորական շտաբը կազմեց ռազմավարական պլան «Ռուսաստանի դեմ գրոհի ծրագիր» անունով, որտեղ ասվում է. «11-րդ և 12-րդ բանակային կորպուսները, որոնք տեղակայված են Պարսկաստանի սահմանի վրա, Մակուի վրայով կշարժվեն հյուսիս և շրջանցելով Արարատը կհարձակվեն Շահթախտի վրա: Նրանք հեշտությամբ կմտնեն Նախիջևան ու զարգացնելով հարձակումը կգրավեն Երևանը, Անդրկովկասն ու Կովկասը»[138]: Հատկանշական է նաև այն, որ թուրքական հրամանատարությունն այդ պլանում առանձնակի դեր էր հատկացնում հայ բնակչության դեմ մարտական գործողություններին: Մի քանի տարի անց Ալի Իհսանը խոստովանեց. «Եթե չլինեին հայերը, մենք կգրավեինք Կովկասը»[139]:

Ամբողջ թափով ծավալվեց թուրքական ռասայական քարոզչությունը: Ջելալ Նուրին հռչակեց. «Թուրքական ռասան բարձր է, որովհետև թուրքերը բոլորից խիզախ, խելք և ընդունակ են»: Այս խոսքերը դարձան կարգախոս ոչ միայն թուրքական քաղաքականության, այլև գիտության համար: Տարիներ անց Թուրքիայի պատմության ուսումնասիրության ասոցիացիայի գլխավոր քարտուղար Մուզեքերը գրեց. «Գիտական վերջին տվյալները համընկնում են մարդկային երկու տեսակների գոյության մասին տեսակետի հետ, նկատի ունենալով գանգի ձևը: Դրանցից մեկը վերագրվում է Կենտրոնական Ասիայի սարահարթի բնիկներին: Այս շրջանից ծագում առած անհատները միշտ անվանվել են թուրքեր, որոնք լեռների հետ մարտի բռնվելով՝ հիմք դրեցին մետաղի դարաշրջանին: Երբ մարդկությունը դեռ տգիտության մեջ էր, թուրքերը ընթանում էին Աստծո հավատի ուղիով: Թուրքական զանգվածները նվաճեցին Չինաստանը, Ճապոնիան, Օկեանիան, Մեքսիկան, Պերուն, Սիբիրը, Ռուսաստանը, Թրակիան, Հունաստանը: Թուրանական ծովը ձգվեց մինչև Իտալիայի ափերը: Այս ռասան հասավ Բալթիկա, Իրլանդիա և Իսլանդիա, անցավ Ֆինլանդիայով, որի ազգաբնակչությունն ընդունում է իր թուրքական ծագումը: Ոչ մի ուժ չկարողացավ կանգնեցնել նրա շարժումը: Թուրքերը թափանցեցին Ֆրանսիա, Ալպերին ու Գալերին անուն տվեցին: Պատմական փաստ է նաև այն, որ Էտրուսկները ծագել են թուրքական մի այլ ճյուղից: Քաղաքակրթությունը ծագել է Կենտրոնական Ասիայում...»[140]:

Իթիհադը ոչ միայն ծրագրում էր, պլաններ մշակում, քարոզչություն ծավալում, այլև գործում էր: Ոճիրների միջոցով կրկին իշխանության գալով իթիհադը գաղտնի գործակալներով ու լրտեսներով ողողեց հայկական նահանգները՝ առևտրական բոյկոտ կազմակերպելու և թուրքերին հայերի դեմ գրգռելու համար: Է. Նաջին գործուղվեց Կենտրոնական Անատոլիա, Մ. Նեջիբը՝ Մերձսևծովյան շրջաններ, Մուհամմերը՝ Փոքր Հայք և այլն, իսկ դոկտ. Նազիմը նշանակվեց Փոքր Ասիայի ընդհանուր լիազոր:

1913թ. կեսերին Բայազետում տեղի ունեցավ համաթուրանիստականների համաժողով, նախագահում էր Էնվերը, մասնակցում էին իթիհադի ղեկավարները, ինչպես նաև Աղաևը, Թոփչիբաշևը: Համաժողովը քննարկեց «արևելյան» (Կովկասի) և «արևմտյան» (Թուրքիայի) մասերի թուրքերի համագործակցության հարցը և կնքվեց պայմանագիր համատեղ գործունեության մասին: Նշվեց, որ գալիք պատերազմին Թուրքիայի մասնակցությունը հնարավորություն կստեղծի իրականացնելու զավթողական ծրագրեր, կարագացնի Ռուսաստանում բնակվող մահմեդական ժողովուրդների ապստամբությունը: Խնդիր դրվեց ստեղծելու «Թուրքերի արևելյան և արևմտյան հատվածների միություն»[141]: Այդ նպատակով որոշվեց Ռուսաստանի հարավային շրջաններ ուղարկել քարոզիչներ ու գործակալներ, պանիսլամական ու պանթուրքիստական գրականություն, գրգռել ազգամիջյան բախումներ:

Համաժողովին Թալեաթի բացակայությունը մեկ անգամ ևս հաստատում է, որ եթե Էնվերն առաջին պլանին դնում էր պանթուրքիստական, ապա Թալեաթը՝ թուրքիստական ծրագրերը:

137 Կիրակոսյան Զ. Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք երկրորդ, էջ 158:
138. Վրաստանի ԿՊԱ, ֆ. 85, գ. 107, թ. 90-91:
139 «Ցուշամատեան Մեծ եղեռնի», էջ 30:
140 Cherchille W. The World Crises, 1914-1918, Barselona, 1944, p. 260.
141 Տե՛ս Արզումանյան Մ. Հայաստանը 1914-1918թթ., Եր., 1969, էջ 140-141:

Նրա հետ համակարծիք էր Ջեմալը՝ «Ջնջել ազգություններու առանձնաշնորհումները և յանդուգն քայլով մը թրքացնել ամեն ինչ...»[142]: «...Հանցանքի պլանը,- գրում է Գ. Մոնթգոմերին,- գծվել էր և դեկլարատավորվել իթիհադի կենտկոմի կողմից»[143]:

Թուրանականության ծրագիրը ռազմաքաղաքական միջոցներով կենսագործելու խնդրում նույնպես երիտթուրք պարագլուխները տարբեր մոտեցումներ ունեին և առաջ էին քաշում տարբեր պլաններ և լուծումներ: Ի տարբերություն Էնվերի, Ջեմալը գտնում էր, որ ոչ թուրք մահմեդականները բարեհույս չեն, որ արաբներին վստահել չի կարելի: Նրա կարծիքով պետք էր նախ գրավել Կովկասը, բնաջնջել հայերին ու վրացիներին և ապա, անցնելով Կենտրոնական Ասիա, տարածվել հյուսիս և արևելք, հովանու տակ առնել բոլոր անազատ թուրքերին ու ստեղծել մի հսկայածավալ կայսրություն:

Հակառակ տեսակետի կողմնակիցները նույնպես չէին բացառում մահմեդական կայսրություն ստեղծելու հնարավորությունը: «Շատեր կը յուսային մինչև անգամ, որ Մեծ Թուրքիան անգամ մը իրականացնելէ յետք, պիտի կրնար արեգակը դառնալ մահմեդական տիեզերածաւալ քաղաքական դրութեան և համախմբել իր մոլորակներն ու արբանյակները: «Անկախ և Միացյալ Թուրքիան» կրսեին Թուրքհիները, պէտք է կազմե իսլամական աշխարհի կեդրոնը: Արաբիա, Եգիպտոս, Մարոք, Ալժերիա, Թունուզ, Պարսկաստան, Աֆղանստան և այլն, ներքին կատարեալ անկախութիւն վայելելով հանդերձ, արտաքին մէկ ճակատ պիտի ներկայացնեն: Իսլամական աշխարհը քաղաքական անբաժանելի միաւոր մը պէտք է ըլլայ»[144]:

Սահմանադրության հռչակման օրերին, իթիհադի անդամների թիվը 400-ից չէր անցնում: 1914թ. այդ թիվը հասավ 350 հազարի: Ով այդ կուսակցության անդամ չէր, պաշտոն ստանալ չէր կարող կամ ազատվում էր զբաղեցրած պաշտոնից: Երբ խորհրդարանում իթիհադականների դեմ ուժեղ ընդդիմություն էր առաջանում, այն ցրում ու ընտրություն էին նշանակում:

Խորհրդարանի նախագահ Հալիլը խոստովանեց. «Հայերի դեմ անարդարություններ գործել ենք»: Իսկ Ահմեդ Ռիզան գրեց. «Ես հպարտ եմ, որ թուրք եմ ծնվել և իմ երջանկությունն ուրիշների դժբախտության մեջ չեմ փնտրում»[145]: Երիտթուրք պարագլուխը կեղծում էր: Ճիշտ է, նա մյուս գործիչների համեմատությամբ լիբերալ հայացքներ ուներ և կողմնակից էր անարյուն քաղաքականությանը, բայց իրողություն է, որ լինելով Օսմանյան խորհրդարանի նախագահ, չորս տարի աչք փակեց հայկական ջարդերի առաջ և կոտորածների քաղաքականության դեմ ձայն բարձրացրեց միայն 1918թ.: Այս գործչին են պատկանում հետևյալ խոսքերը. «Մենք արյան մեջ կխեղդենք անջատողական որևէ շարժում»: «Եթե ջարդերի մասին հարցին սուլթանը պատասխանի. «Ես ապստամբած հպատակներիս եմ պատժում», տերություններն ասելիք կունենա՞ն»[146]:

Բալկանյան պատերազմում խայտառակ պարտությունից և, ընդհանրապես, կայսրության եվրոպական տարածքները կորցնելուց հետո թուրքերը խուճապի էին մատնվել և նորից «սկսան» ամբաստանել սուլթան-խալիֆները..., որ ատենին ամենակատարեալ կերպով որդեգրած չէին այս (ոչ թուրքերի թուրքացում կամ կոտորում) լուծումը, զոր մասնակի կերպով միայն գործադրած էին»[147]: Ջելալ Նուրին սուլթաններին դատապարտելով, որ նրանք այլազգիներին չեն ձուլել և կայսրությունում ազգային միատարրություն չեն ստեղծել, հանգում է եզրակացության, թե ձուլման միջոցով հնարավոր չէ միատարրության հասնել: Այդ անելու միայն մեկ ուղի կա՝ բանջնջում: Հրապարակ նետվեց նա մի լոզունգ. «Ով չի թրքանում, պետք է սրի քաշվի»:

Ահա թե Բրայսն ինչպես է ներկայացնում թուրքական բյուրոկրատիայի կեցվածքն ու պատասխանատվությունը այդ հարցում. «Գլխավոր հանցագործներն օսմանյան կառավարության պաշտոնատարներն էին... Ժանդարմների վարքագիծը, օրինակ, կատարյալ վայրագ էր... Հրահրվելով հրամանատարների կողմից, նրանք իրենց պաշտպանությանը հանձնված հայերի

142 Գանգրունի Հ., նշվ. աշխ., էջ 203:
143 Տե՛ս "Current History" October 1922.
144 Ջարեվանդ, նշվ. աշխ.:
145 Riza A., La Crize de L'Orient. Paris, 1907, p. 147.
146 Սերոբեան Մ. Հայկական մղձավանջ, Բոստոն, 1916, էջ 36, կամ "Mesveret" 1-ը հունվարի 1904թ.:
147 Նազլեան Հ. Ցուցեր..., հ. 1, էջ 5:

նկատմամբ գործադրեցին ամեն տեսակի չարիք»: Բայց ժանդարմները չէին և չեն կարող անկախ լինել: Նրանց վարքագծի պատասխանատվությունն ընկնում է տեղական իշխանությունների, կենտրոնական կառավարության և կամ երկուսի վրա, միաժամանակ: Նահանգների և գավառների կառավարիչները՝ վալիները, մութասարիֆները ու կայմակամները խորապես մեղավոր են... Մի տեղ հայ տղամարդիկ կոտորվեցին, մի այլ տեղ նրանց ծով տարան ու խեղդեցին, ուրիշ տեղ աքսորեցին: Նույնը պատահեց նաև կանանց հետ, որոնց կյանքը տեղ-տեղ խնայվեց, իսկ մյուս տեղերում տղամարդկանց նման նրանց էլ կոտորեցին: Պատասխանատվության լուրջ բաժին է ընկնում այնպիսիների վրա, ինչպիսիք են Ջևդեթի կամ Ուրֆայի կուսակալի նման վայրագ կերպարները, բայց և այնպես գործելու նրանց ազատությունը համեմատաբար սահմանափակ էր: Հայերի նկատմամբ ոճրագործությունների համար կենտրոնական իշխանությունները նրանց տվել էին ազատություն, միաժամանակ նրանք երբեք չէին կարող իրենց տրված հրահանգները թեկուզ չնչին չափով մեղմացնել: Մարդասեր և հարգալից կուսակալները, որոնց թիվը շատ փոքր էր, անզոր էին պաշտպանելու իրենց նահանգների հայերին: Կենտրոնական կառավարությունը տեղերում իր գործակալներն ուներ՝ երիտթուրքերի տեղական կազմակերպության ղեկավարը, տեղական ժանդարմների պետը և քիչ դեպքում՝ նաև կուսակալների վարչական այլևայլ աշխատողները: Եթե այս գիշատիչ կուսակալները հրահանգները գործադրելու մեջ թերանային, կվարկաբեկվեին ու կանտեսվեին, իսկ եթե հրաժարվեին դրանց ենթարկվելուց, կպաշտոնազրկվեին և կփոխվեին ավելի ճկուն անձանցով: Կենտրոնական կառավարությունը խստորեն հսկում էր իր մշակած ծրագրի իրագործման վրա: Երիտթուրքական նախարարներն ու նրանց գործակիցները ուղղակիորեն և անձնապես պատասխանատու էին հայերի բնաջնջման համար[148]:

1914թ. նոյեմբերին երիտթուրքերի ղեկավարությունը մի նամակով դիմեց տեղական կազմակերպություններին, որով արդարացվում էր Թուրքիայի մտնելը պատերազմի մեջ, իբր այդ էր պահանջում «ազգային իդեալը»: «Մեր ժողովրդի և մեր երկրի ազգային իդեալը,-կարդում ենք նամակում,- մեզանից պահանջում է մոսկովյան թշնամու ոչնչացում, որպեսզի դրանով իսկ հաստատենք մեր կայսրության բնական սահմանները, որոնք իրենց մեջ կառնեն և կմիավորեն մեր ցեղի բոլոր մասերը: Մեր կրոնական զգացմունքը մեզ մղում է իսլամի աշխարհը ազատագրելու անհավատների տիրապետությունից»[149]: Թուրքն այդպես էր մտածում, որովհետև պատրաստվում էր հայերի կոտորածները վերածելու նրանց համընդհանուր բնաջնջման: Վ. Լենինը նշում է, որ առաջին աշխարհամարտը «անգեն ժողովուրդների ամենագազանային բնաջնջման, ոչնչացման պատերազմ էր»[150]:

Եվ բնաջնջեցին ու այդ արեցին ամենաահավոր եղանակներով: Սակայն չի կարելի նաև չնշել, որ թուրք գործիչներից կատարված մեջբերումները թերի ու սխալ են պատասխանում հարցին, թե ինչու թուրքերը ձեռնամուխ եղան հայերի բնաջնջմանը: Տվյալ դեպքում մենք գործ ունենք ոչ այնքան գիտական տեսակետի, որքան քարոզչության հետ. հայերը խոչընդոտ չէին թուրքերի թուրանական ծրագրի իրագործման ճանապարհին:

Մեծ ժողովրդականություն վայելող և ամենևին էլ ազգայնականությամբ աչքի չընկած բանաստեղծ Ճենաբ Ճեհաբեդդինը «Ազըմ» օրաթերթի 1913թ. հուլիսի 7-ի համարում տպագրում է նամակ իր որդուն: Նա գրում է. «Մենք պարտուեցանք (Բալկանյան պատերազմում) և արտաքին աշխարհեն թշնամութիւն ցոյց տրուեցաւ մեզի, որովհետև շիտակի ու սխալի, մարդկայնութեան ու քաղաքակրթութեան մեր կարծիքներուն մէջ դարձած էինք շատ խոհական, շատ մշակուած և շատ ազնուացած: Պուլկարական բանակին օրինակը ցոյց տուաւ մեզի, որ թշնամիին դիմակայող իւրաքանչիւր զինուոր պետք է որ վերադառնա բարբարոսութեան օրերուն, պապակի արիւն, ըլլայ անգութ՝ մանուկներն ու կիներն, ծերերն ու անկարները սպանած ատեն, և անտեսե ուրիշներուն ինչքը, կեանքը և պատիւը: Արիւն, տառապանք, անարդարութիւն, սուգ սփռենք...»[151]:

«Իգդամ» օրաթերթը գրում է. «Մեր թշնամիներուն արարքները երկիր են իջեցուցած Ա-

148 Bryce J., նշվ. աշխ., p. 652-653.
149 Лукашевич Е. Ф., Турция в годы первой мировой войны, с. 61.
150 Լենին Վ. ԵԼԺ, հ. 32, էջ 102:
151 Ahmed Emin (Yalman), The Development of Modern Turkey as Measured by it's Press, New York, 1914, p. 108.

տուծոյ զայրոյթը: Հոյսի ճաճանչ մը երևցած է: Բոլոր մահմեդականները, երիտասարդ ու ծեր, այր, կին թե մանուկ, պարտին կատարել իրենց պարտականութիւնը... Որչափ մեծ գործեր կրնան կատարուիլ բազուկներովը կորովի մարդերուն և օժանդակութիւնովը կիներու, մանուկներու և ուրիշներու... Գործելու ժամանակը հասած է: Պետք է կռուինք մեր բովանդակ ոյժով, մեր ամբողջ հոգիով, ատամներով և եղունգներով, մեր մարմիններուն և հոգիներուն բոլոր կարողութիւններով: Եթե կռուինք՝ ապահովված է փրկութիւնը ստրկացած մահմեդական երկիրներուն»[152]: Էդիպը հեռագրում հացեպագրված Մուսթաֆա Քեմալին (10 օգոստոսի 1919թ.) դժգոհում է երիտթուրքերից այն բանի համար, որ նրանց կատարած ջարդերն ամբողջական ու լրիվ չէին, որի հետևանքով փոքրամասնության հարցը չի վերացել և խաղաղության դաշնագրի հոդվածները ինչ էլ որ լինեն՝ տակավին քրիստոնյա փոքրամասնություններ պիտի մնան: «Անոնք պիտի վայելեն Օսմանեան քաղաքացիներու առանձնաշնորհումները, և հենուելով օտար երկիրներուն՝ եւրոպական որևէ ոյժի վրայ, պիտի միշտ ալ դժուարութիւն հարուցանեն: Այդ տեսակն կերպով միջամտութեան պատճառ պիտի ստեղծե, և տարիե տարի մեր անկախութենեն որոշ աստիճան մը պիտի կասեցնենք ի նպաստ այս փոքրամասնութիւններուն»[153]:

3. ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՑՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1914թ. հունվարի 17-ին «Իզդամը» գրեց. "Голос Москвы" թերթը մատնանշում է գերմանա-թուրքական մի ծրագրի գոյությունը, որի նպատակն է հայաբնակ նահանգներից հայերին հեռացնել և դեպի Միջագետք տանել: Ռուսական թերթը նկատում է, որ Գերմանիայի և Թուրքիայի «շահերին համապատասխանում է Հայաստանում բնակեցնել մահմեդականներին, որոնք, իհարկե, միանալով Կովկասի մահմեդականների հետ, կարող են լուրջ խոչընդոտ դառնալ սլավոնական ոտնձգություններին»: Առարկելով մոսկովյան թերթին, «Իզդամը» զարմանում է. «Մի՞թե կարելի է հարյուր հազարավոր հայերին քշել Միջագետք: Եթե նույնիսկ հայերը համաձայնվեն էլ, դրա իրականացումը անհնար է: Ինչ կարիք կա այդքան անտրամաբանական բաները լուրջ ներկայացնել: Նպատակը միայն մեկն է՝ դժվարություններ հարուցել օսմանյան կառավարությանը»: Այո, նույնիսկ թուրքական թերթին անհավատալի ու անհնար էր թվում մի ամբողջ ժողովրդի բռնագաղթը: «Իզդամը» չի հավատում, սակայն "Голос Москвы" թերթում տպագրված հոդվածը լրացուցիչ ապացույց է, որ հայերի բնաջնջման ծրագիրը մշակված էր դեռ 1913թ.:

Եթե երիտթուրքերն այդ հրեշավոր միջոցառումով ուզում էին սեփականացնել Հայաստանն ու նաև Թուրանի ճանապարհը մաքրել հայերից, ապա գերմանացիները ցանկանում էին Բաղդադի երկաթուղու հարևանությամբ ունենալ աշխատասեր հային: Դրա համար էլ նրանք թուրքերին խորհուրդ տվեցին հարյերին քշել Դեր Զոր, սակայն չէին կարծում, որ թուրքերը նրանց ոչնչացնելու էին դեռ Դեր Զոր չհասած:

Մտադրվելով իրականացնել հայերի բռնագաղթն ու ոչնչացումը, երիտթուրքերը ձեռնարկեցին բազմազան և բազմատեսակ միջոցառումներ համաշխարհային հասարակայնությանը խաբելու համար: Գերմանական «Վոլֆ» հեռագրական գործակալության միջոցով Եվրոպա հասավ հինգ հաղորդագրություն, բոլորն էլ երիտթուրքական խողովակներով անցած ստահոդություններ էին: 1915թ. օգոստոսին թուրքական կառավարությունը ժնևի իր դեսպանի միջոցով եվրոպական թերթերին ուղարկեց պաշտոնական հերքում, թե թուրքական բարեխնամ կառավարության պաշտպանության ներքո բոլոր հայերը՝ տղամարդ, կին, երեխա, վայելում են կատարյալ ազատություն: Դրա հետ միասին ոստիկանական պաշտոնաթերթ «Փոլիս մեջմուասի»-ի մեջ տպագրվում էին հայերի դավաճանությունը և հակաթուրք գործունեությունը «լուսաբանող» բազմաթիվ հոդվածներ, լուսանկարներ և այլն: Հրապարակվեց նաև մի ալբոմ՝ չորս լեզվով ծանուցում - մակագրություններով: Այն պարունակում էր հայերի «հեղափոխական գործունեությունը պատկերող 70 լուսանկար, այդ թվում՝ նրանցից բռնագրված զենքերի ու զինամթերքի, ինչպես նաև հայերի կողմից սպանված թուրքերի»[154]: Այդ

152 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 171:

153 Gazi Mustafa Kemal, A Speech, October, 1927, Leiptzig, 1929, p. 84.

154 «Ցուշամատեան Մեծ եղեռնի», էջ 1082:

զենքերը, վկայում է Գ. Պալաքյանը, նույնպես ժանդարմներին էին պատկանում: Ոստիկանները դրանք դիզում էին իրար վրա, ապա ավելացնում էին ձեռնատումբեր ու լուսանկարում: Դիարբեքիրում սպանված հայերին քրդի տարազ էին հագցնում և լուսանկարում:

Իշխանության գլուխ անցնելուց հետո իթիհադականները կայսրությունում փաստորեն պաշարողական դրություն հայտարարեցին, իսկ երկրորդ անգամ իշխանությանը տիրանալուց հետո թե՛ կենտրոնական և թե՛ տեղական մարմինները մաքրազարդեցին բոլոր այն տարրերից, ովքեր երիտթուրքական կուսակցության անդամ չէին, կամ կուսակցությանը չէին համակրում: Իթիհադական էր օսմանյան խորհրդարանը: Այդ ամենով հանդերձ Թալեաթն ու նրա համախոհները չհամարձակվեցին բռնագաղթին ու բնաջնջմանը վերաբերվող օրենքներն անցկացնել խորհրդարանով: Բայց նրանց հաջողվեց 1915թ. փետրվարի 20-ին ժամանակավորապես՝ վեց ամսով, դադարեցնել խորհրդարանի աշխատանքները: Սեփական ձեռքերին ազատություն տալով երիտթուրք գաղտնի կոմիտեն սկսեց, մի կողմից, ջարդերը Զեյթունում, Մարաշում, Պոլսում, Սասունում, իսկ մյուս կողմից՝ Սայիդ Հալիմին հարկադրեց ստորագրելու տեղահանության մասին ժամանակավոր օրենքը (1915թ. մայիսի 27-ին): Եվ այդ արվեց Օսմանյան սահմանադրության մի շարք կետերը խախտելով: Համաձայն սահմանադրության, կառավարության ընդունած ժամանակավոր օրենքներն անմիջապես պետք է ներկայացվեին խորհրդարանի հաստատմանը: Սակայն իթիհադականներն այդպես չվարվեցին: Խորհրդարանն իր աշխատանքը վերսկսեց 1915թ. սեպտեմբերի 28-ին, երբ հայերի բռնագաղթը հիմնականում ավարտված էր, բայց բռնագաղթվածների բնաջնջումը դեռևս ընթացքի մեջ էր: Բայց ինչու տեղահանության մասին ժամանակավոր օրենքն այդպես էլ խորհրդարանի հաստատմանը չներկայացվեց ոչ 1915թ. սեպտեմբերին և ոչ էլ 1916-17թթ.: Օրենքը հաստատման ներկայացվեց միայն պատերազմում Թուրքիայի պարտվելուց հետո՝ 1918թ. նոյեմբերին, այն էլ ոչ թե կառավարության, այլ առանձին պատգամավորների կողմից: Բռնագաղթի հրամանի (Էնվերի) երկրորդ կետի՝ «Ռազմական նկատառումներով կամ լրտեսության և դավաճանության դեպքում կարող են գյուղերի ու քաղաքների բնակիչներին, անհատ կամ խմբերով, տեղահանել և այլ վայրերում հաստատել», միտքը հանդիսանում էր տեղահանության անօրինության հիմք ու ժողովրդի բնաջնջման հրահանգ»:

Ռուսաստանի դեմ Թուրքիայի բոլոր պատերազմները աղետաբեր էին եղել հայության համար, որովհետև պատերազմական գործողությունների գլխավոր բեմահարթակը մշտապես հանդիսացել էր Հայաստանը: Նույն էր նաև Առաջին աշխարհամարտի տարիներին: Հայկական տարածքները Թուրքիայի արևելյան ծրագրի իրականացման համար կենսական նշանակություն ունեին: Բացի դա, հայ ժողովրդի երկատված վիճակը՝ 2,6 միլիոն Թուրքիայի և 1,7 միլիոն Ռուսաստանի կազմում, նրան դրել էր երկու բանակների աքցանի մեջ և հարկադրում հայերին միմյանց դեմ կռվելու: Հայության վիճակը ծանր լինելուց բացի, վտանգված էր, որովհետև թուրքական բանակը Կովկասյան ռազմաճակատում կռվում էր ոչ միայն տարածքների, այլև երկրամասի թուրքացման համար:

Երիտթուրք գործիչներից Ի. Հաքը "Bejamul Hakk" թերթում գրեց. «Հալածանքները, որ ուղղված են խաղաղ բնակչության դեմ, բարբարոսական են ու անխիղճ... Օսմանյան կայսրությունում բնակվող հույների ու, հատկապես, հայերի նկատմամբ ամենասարսափելի հանցագործություններ են կատարվում: Մարդկային լեզուն ու գրիչը ի վիճակի չեն թվելու փաստերի անգամ հարյուրերորդ մասը: Կեղծ հայրենասերներն ու կարճատես քաղաքագետները ջանում են քողարկել Թուրքիայում իշխող հարաբերությունները: Մինչդեռ մենք, որպես իսկական հայրենասերներ, այսօր գոտում ենք մարդկության ու քաղաքակիրթ Եվրոպայի երեսին, հայերի ու հույների հալածանքները շատ ավելի սոսկալի չափեր են ընդունել, քան ներկայացվում է մամուլում: Հայերին ու հույներին անողոքաբար հալածում են: Նրանց կյանքը, ունեցվածքը և պատիվը մշտապես վտանգի տակ են: Ամեն օր հեռավոր շրջաններում հարյուրավոր հայեր են սպանվում»[155]:

"Journal de Jnev"- ի 1910թ. սեպտեմբերի 18-ի համարում տպագրվեց Մեհմեդ Շերիֆի հոդվածը, որտեղ կարդում ենք. «Եթե կա մի ցեղ, որ իր հավատարմությամբ, ծառայություններով, իր սեփական գործիչներով ու պաշտոնատարներով նվիրված է եղել երկրին, խելքով, որ դրսևորել է կյանքի բոլոր բնագավառներում... մոտ է կանգնած մեզ, Թուրքերիս, դա հայերն են... Հիմա, երբ մի այդպիսի բարձրատաղանդ ժողովուրդ, որը կարող էր դառնալ Օսմանյան կայսրության նորոգման գործընթացում ամենաբարեբեր ֆերմենտը, կանգնած է պատմությունից վերանալու, ոչ միայն ճնշվելու, այլև ոչնչացվելու կետին, ապա անգամ ամենաանզգա մարդու սրտից արյուն է կաթում: Ես կուզենա-

155 Lepsius J. Der Turkenherrschaft, Potsdam, 1930, s. 239.

յի սրանով այդ մարտիրոսվող և մեռնող ազգի անունից իմ վրդովմունքը արտահայտել նրա դահիճներին և իմ անսահման կարեկցանքը նրանց զոհերին...»:

Դահիճները հասկանում էին, որ իրենց կատարածի համար վճարելու էին: Մեծ վեզիրը 1917թ. հունվարի 20-ին ավստրո-հունգարացի դիվանագետներից մեկին ասաց. «Թուրքիան մի անգամ... ստիպված կլինի ամբողջ աշխարհի առաջ պատասխանելու հայերի նկատմամբ իր վարվելակերպի պատճառով թշնամիների չդադրող կշտամբանքներին... Պետք է անընդհատ շեշտել, որ այն միջոցառումների պատճառը, որոնց դիմելու իրավունք Թուրքիան ոչ միայն ուներ, այլև, հանգամանքների բերումով, ստիպված էր, որովհետև դրանք ռուսների, ինչպես նաև անգլիացիների և ֆրանսիացիների մեքենայություններ արդյունք էին: Այնպես որ, կատարվածի ամբողջ մեղքը նրանց վրա է ընկնում...»[158]: Իրականում խնդիր էր դրված հայերին ամենուրեք դարձնել չնչին փոքրամասնություն: Թուրքիայի գյուղատնտեսության նախարարությունը հրաման արձակեց. «Հայերին, անկախ նրանց դավանանքից, այնպես տեղաշարժել, որ ոչ մի տեղ ազգաբնակչության 5%-ից ավել չլինեն»[157]: Ադրիանապոլիսի իշխանությունները չքմեղացան. «Կատարված դեպքերի համար իրենք պատասխանատվություն չեն կրում, որովհետև գործում են Կ. Պոլսից եկած հրամաններով»[158]: Իսկ Հալիլը խոստովանեց. «Այն եղանակը, որով գործել էր կառավարությունը, սխալ էր»[159]: Նույն բանն ասաց Ջավիդը. «Հայերի հալածանքը... նախկին տարիների մեծագույն վրիպումն էր... քաղաքական տեսակետից մեծ սխալ է ձգտել ամբողջ ազգերի հալածանքին, ոչնչացմանը»[160]: Ջարդարարների պարագլուխներն հատկապես անողոք էին նրանց հանդեպ, ովքեր փորձում էին խանգարել իրենց: «Հայերի մասին իր պատկերացումներով Մետեռնիխը հուսահատության է հասցնում թուրքական կառավարությունը,- կատաղած բղավեց Էնվերը:- Նա իրեն ամբողջովին նվիրել է հայկական գործին»: Փաշայի պահանջով Մետեռնիխը ետ կանչվեց Կ. Պոլիսի դեսպանի պաշտոնից[161]: Սաիդ Հալիմն այլ կարծիքի էր. «Թուրքահայերի տեղահանումը ռազմական տեսակետից լիովին հիմնավորված է եղել, միայն խայտառակություն է, որ դա ուժի է ծառայել գազանությունների գործադրման համար... չեմ հասկանում Հայաստանի սահմաններն այդքան նեղացնելու կառավարության ցանկությունը: Ընդհակառակը, այն պետք է բավական մեծ լիներ թուրքահայերի համար, որպեսզի հնարավորին չափ մեծ թվով հայեր դեպի այնտեղ ձգտեին և ազատեին կայսրությունը իրենց ներկայությունից»[162]: Մեծ վեզիրին հասկանալը դժվար չէ: Թ. Աքչամը նկատում է. «...Հազիվ թե հրեաների զանգվածային ոչնչացումը գերմանացիներին տնտեսական ու քաղաքական որևէ օգուտ բերեց: Հայերի գենոցիդի դեպքում բանը բոլորովին այլ էր: Այդ բնաջնջումը Թուրքերին խոստանում էր որոշակի օգուտներ... Այլ կերպ ասած, հայերի ցեղասպանությունն իրականացվեց ոչ թե հանուն վերացական գաղափարախոսության, այլ շոշափելի օգուտ ստանալու դիտավորությամբ»: Աքչամի կարծիքով, երիտթուրքերը տնտեսական շահ ստանալու առումով չարաչար սխալվեցին, որովհետև հայերի բնաջնջումը «Թուրքիային 150-200 տարով հետ շպրտեց: Դրա պատճառած տնտեսական ավերածությունները աղետալի էին»[163]:

Հայերի բնաջնջումը երիտթուրքերի կողմից օգտագործվում էր նաև ներկուսակցական խմբակային պայքարում: Այն շահարկվում էր ոմանց կողմից մյուսներին հարվածելու համար: Ահա թե ինչ է գրում երիտթուրք գործիչ Մ. Զեքին իր կուսակցական գործընկերոջը՝ վերևում հիշատակված Ի. Հազի մասին. «Մենք գիտենք, որ Ի. Հազ բեյը միայն Թալեաթ փաշայի հետ չէ, որ յարաբերում է սերտորեն, այլև դոկտոր Նազիմի և Հալեպի նախկին կուսակալ Պետրիի հետ: Հայտնի է, որ հայկական ողբերգությունն կազմակերպող և գործադրողները... այս երեքն են»[164]: Երիտթուրքերի ղեկավարների դատավարության մեղադրական եզրակացության մեջ ասված է. «Մի առանձին համայնք կազմող ամբողջ ժողովրդին կոտորելը, բնաջնջելը և նրա ունեցվածքի հափշտակությունը մտահղացվել և իրագործվել է կուսակցության գաղտնի խմբի արյունախում (անդամների) կողմից... Վերծանված ծածկագիր հեռագրերից պարզվում է, որ այս չարագործ հանձնախումբը իշխող դիրք է ունեցել պետության վրա, իսկ կառավարությունը պարզ խաղալիք էր նրանց անարդ մտահղացումների իրականացման գործում»: Կառավարությունում մշտապես առկա էր «հաբեկչական ներքին ուժի ազդեցությունը»[165]:

Ահմեդ Էմինը (Ցալմանը) 1930թ. հրապարակեց «Թուրքիան համաշխարհային պատերազմում» գիրքը, որտեղ նկատում է, որ երիտթուրքերը քաջ գիտենալով, որ իրենց արարքները անեծքի, դատապարտման են արժանի, այնուամենայնիվ այն իրականացրին[166]:

"Journal de Jnev"-ի 1915թ. սեպտեմբերի 19-ի համարում Շերիֆը նորից անդրադառնում է Մեծ եղեռնին. «Պարոն խմբագիր, թույլ տվեք Ձեր հարգարժան թերթում (հրապարակել) իմ անձնական վրդովմունքը այն միջոցների նկատմամբ, որոնք օգտագործվում են Միություն և առաջադիմություն արյունարբու խմբակի կողմից: Նրանք 20-րդ դարում հարություն են տալիս «քաջության» այն հիշողություններին, որոնք ժամանակին հնարավոր դարձան պարզապես խավարամտության և բարբարոսության հետևանքով: Սակայն նրանք գերազանցեցին Չինգիզխանի և Թամերլանի գազանություններին: Ես ավելի քան վեց տարի անընդհատ մերկացրի այդ մարդկանց... Նախազգուշացնելով Ֆրանսիային և Անգլիային այն դավի մասին, որ հյուսվում է օսմանյան ազգությունների ու, հատկապես, հայերի դեմ»:

Երիտթուրքական պարագլուխները քաղաքականապես ենթակա էին սուլթանի ազդեցությանը: Նրանք զանազան ձևերով սերտ կապերի մեջ էին պալատի հետ և մեծագույն պատկառանք ու հարգանք էին դրսևորում սուլթանի անձի հանդեպ: Իշխանության գրավումը նրանց պետք էր ոչ թե հանրապետական-ժողովրդավարական կարգեր հաստատելու, այլ թուրքիզմի սկզբունքների վրա կայսրությունը վերակառուցելու, այն ընդլայնելու ու հզորացնելու համար:

Գործնականում իթիհադը պետություն էր պետության մեջ: Նրա գործունեության հիմքում դրված էր մարտնչող շովինիզմը: Այդ կուսակցությունը չարիք դարձավ կայսրության ազգային փոքրամասնությունների համար: Գերմանացի մի զինվորական, գրում է "The New York Times"-ը, գնում է մուֆասարիֆի մոտ և խնդրում «խղճալ երեխաներին»: Թուրքը պատասխանում է. «...Հայ երեխաները պետք է մահանան իրենց ազգի հետ»: Ցուրաքանչյուր մահմեդական սպա պարծենում էր անձամբ կատարած կոտորածով, կարծելով, թե դա Թուրքիային ազատում է հայ ցեղից: Ամերիկայի և Գերմանիայի դեսպանների ներկայությամբ Էկրանն ասաց, որ իրենց մտադրությունն էր բնաջնջել հայ ցեղը: Հայերի նկատմամբ մոլեռանդ ատելությունը և վայրագությունը,- ասել է թագաժառանգ Աբդուլ Մեջիդը,- գավառցի պաշտոնյաների համար միջոց էր, մինչդեռ մամուլը հասարակությունից թաքցնում էր փաստերը: Կայսերական ընտանիքի անդամները օգտվելով իրենց հեղինակությունից, փորձեցին արգելք հանդիսանալ դրան, բայց տնային կալանքի ենթարկվեցին[167]: Նույն իրողությունը, այսինքն՝ հայոց բնաջնջման գործում իթիհադի դերի մասին հարուստ նյութեր կան մասնավորապես երիտթուրքերի դատավարության արձանագրություններում: Մի հատված այդ արձանագրություններից. Նախագահը Զիա Գյոքալփին. «Շատերն ասում են, որ ցեղասպանությունը վճռված է եղել Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեում, մի շարք ղեկավարների մտահղացմամբ ու որոշմամբ... Առաջին հերթին այն տեղի է ունեցել Բեհաեդդին Շաքիր բեյի և դոկ. Նազիմի հրահրմամբ... Կենտրոնական կոմիտեի կողմից քաջալերվելով՝ նրանք ճնշում են գործադրել ռազմական նախարարության վրա և իրականացրել են ջարդեր: Տեղահանության ընթացքում, մի շարք վայրերում կոտորածներ, կողոպուտ ու հափշտակություն են տեղի ունեցել, իսկ կենտրոնական կոմիտեն մնացել է դիտողի դերում...»: Զիա Գյոքալփ. «Կենտրոնական կոմիտեն բավական ուշ իմացավ: Այն էլ ոչ բոլոր, այլ մասնակի դեպքերի մասին: Կենտրոնական կոմիտեն տեղեկանալուց հետո պահանջեց, որպեսզի ներքին գործերի և ռազմական նախարարները արգելեին այդ բոլորը և հանցագործներին էլ պատժեին: ... Այդ մասին հարցումին մեզ պատասխանեցին, որ մի շարք հետաքննող հանձնաժողովներ են ուղարկվել...»: Նախագահ. «Համենայնդեպս տեղահանությունն ու կոտորածը շարունակվում էր իրականացվել: Կարևորություն չներկայացնող խնդիրների համար նրանք (կենտկոմի անդամները) ամեն ջանք գործադրել են, իսկ ինչո՞ւ կոտորածի հարցով ոչինչ չեն նախաձեռնել... Այստեղից եզրակացություն՝ Կենտրոնական կոմիտեն հավանություն է տվել կոտորածին»[168]:

156 Wien HHSTA PA XII 221 Konstantinopol, 20 janner 1916, N6/P.A.

157 Wien HHSTA PA XII 221 Konstantinopol, 13 august 1915, N66/P.B.

158 Wien HHSTA PA XII 463 Adrianopel, 29 october, 1915, Z95/P.

159 Wien HHSTA PA XII 463 Adrianopel, 10 Marz, 1916, N21/P.B.

160 Wien HHSTA PA XII 221 Konstantinopol, 24Marz, 1917, N25/P.B.

161 Wien HHSTA PA III172 Berlin, 18 august, 1916,N102/P.B.

162 Wien HHSTA PA X157 Jenikoj, 20 august 1918, N72/P.C.

163 Акчам Т. Турецкое национальное "Я"... стр. 103.

164 Թեհլիրեան Ս. Վերհիշումներ: Թալեաթի ահաբեկումը, Վենետիկ, 1921, կահիրե 1956, էջ 253:

165 "Takvim-I Vekai", 1919, N571.

166 Smin A., Turkey in the World War, New Haven, 190.

167 "The New York Times", 27-ը նոյեմբերի 1918թ.:

168 "Takvim-I Vekai", 14-ը մայիսի 1919թ.:

Թուրքիզմը հանդիսացավ հայերի բնաջնջման գլխավոր նշանաբանը: Իշխանությանը տիրանալուց հետո երիտթուրքերը նպատակ հռչակեցին՝ ա) ստեղծել այնպիսի կենտրոնացված պետություն, որում թուրքերը ոչ միայն գերակշիռ, այլև բացարձակ տիրապետող լինեին, բ) կայսրությունը վերակառուցել զուտ իսլամական հիմքի վրա, որտեղ բացառվում էին ազգությունների և կրոնների հավասարությունը: Ու քանի որ խտրականությունը տարածվում էր բոլոր ոչ թուրք, այդ թվում նաև մահմեդական ժողովուրդների վրա, առաջացրեց լուրջ հիմնահարցեր: Նաև դրանով են բացատրվում եվրոպական տարածքների կորուստը, արաբների ընդվզումները և այլն: Ազգայնամոլությունն ու աննեղողամտությունը դարձան պետական-քաղաքական վարքագիծ: Պատահական չէր, որ երիտթուրքերը դավաճանություն որակեցին ապակենտրոնացման ու ինքնավարության ամեն մի պահանջ: Դրանից բխում էր հայերի հացեին սպառնալիքը՝ եթե նրանք հրաժարվեն բարենորոգումների պահանջից, ջարդվելու էին այնպես, որ համիդյան ջարդերը թվալու էին երեխայական խաղ: Որ 1914թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրով հայերին տրվել էր բարենորոգման իրավունքը, ինչը «օրինականացնում էր» երիտթուրքերի վրեժխնդրությունը նրանց հանդեպ, ովքեր ոչ միայն պայքարել, այլև ստացել էին բարենորոգում: Եվ պատերազմը հնարավորություն էր վրեժխնդիր լինելու՝ ոչնչացնելու հայությանը: Երիտթուրքերը գործողության մեջ դրեցին հայերի բնաջնջման իրենց ծրագիրը, ծրագիր, որ քննարկվել էր 6-7 տարի, բայց, որքան էլ տարօրինակ էր, երբ այն սկսեց իրականացվել, հայերը երկար ժամանակ չէին ընկալում դրա նպատակը: Հայ քաղաքական ուժերը փոխանակ ժողովրդին կազմակերպելու բնաջնջման քաղաքականության դեմ, եվրոպական մայրաքաղաքներում քննարկում էին Հայկական հարցի լուծման հին ու նոր տարբերակները. մամուլում հաճախակի նյութեր էին երևում մի կործանարար երկընտրանքի շուրջ՝ Ռուսաստանի՞ թե Թուրքիայի տիրապետության տակ: Մոսկվայի հայկական կոմիտեի քարտուղար Կ. Կուսիկյանը գտնում էր, որ Արևմտյան Հայաստանի ներքին կառուցվածքը Թուրքիայի հայերին է վերաբերում և չպետք է որոշվի Ռուսաստանի ցանկությամբ: Այս և նման հրապարակումները, բնականաբար, անարձագանք չէին մնում:

Լեփսիուսը միանգամայն ճիշտ է նկատում, որ Թուրքիայի տիրապետության տակից դուրս չգալու ՀԾԴ ծրագրային դրույթը ոչ թե անորոշ մտածողության հետևանք էր, այլ միանգամայն մտածված և հեռահար խնդիրներ հետապնդող մոտեցում, որն ուղղակիորեն հակադիր էր Ռուսաստանի ծրագրերին, ինչը հայերին կանգնեցնում էր ճակատագրական նշանակության երկընտրանքի առաջ՝ Թուրքիայի կազմում թե՞ նրա դեմ, Ռուսաստանի հետ, թե՞ նրա դեմ: Այն նաև բզկտում էր հայությանը՝ արևելահայերն ու հայկական վիլայեթների հայության ճնշող մեծամասնությունը ռուսական կողմնորոշում ուներ, իսկ արևմտահայ ու նաև արևելահայ քաղաքական վերնախավի զգալի մասը հակառակ ուղին էր ընտրել: Թերևս այդ ծրագրային կողմնորոշմամբ կարելի է բացատրել արևմտահայության ինքնապաշտպանության հանդեպ ՀԾԴ անփույթ ու անպատասխանատու մոտեցումը, ինչը ողբերգական հետևանք ունեցավ հայության այդ հատվածի պատմական ճակատագրի համար:

ՀԾԴ նվիրվածությունն իթիհադին, նրա «ուղղամտությունը» (Լեփսիուսի օգտագործած բառն է) Շերիֆն անվանում էր «տխմարություն և ոճիր» և դաշնակցությանը «պատասխանատու համարում հայ ժողովրդի կործանման համար»[169]:

«Միանգամայն ակնհայտ է, որ ցեղասպանությունը պատերազմի ընդունված նորմերից հեռացում չէր, այն չարագործության պատահական ու ժամանակավոր արտահայտություն չէր, որը ծնեց զանգվածային սպանություններ: Ավելի շուտ, գրում է Վ. Տատրյանը, դա հանդիսանում էր օսմանյան քաղաքական սուբկուլտուրայի ժամանակակից տարեգրության առանձնահատկությունը, որը հնարավորություն է տալիս ինչպես սովորական երևույթ դիտելու ջարդի որպես ճնշումների և հետապնդումների պետական միջոց ընդդեմ դժգոհ ժողովուրդներն ու փոքրամասնությունները, քանի որ դժգոհությունը դիտվում էր որպես ընդդիմություն թեոկրատիկ իշխանություններին և պետության կայսրական իրավասություններին»: Տրապիզոնի ռազմական դատարանի 22. 05. 1919թ. վճռում ասված է՝ հայերի բռնագաղթի նպատակը «կոտորածն ու ոչնչացումն էր» («takil ve ifna»), ինչը «նպատակադրված» հանցագործություն էր: Այն իրականացնելու հրամանները ստանում ու տեղերն ուղարկում էին վալի Ջ. Ազմին և երիտթուրքերի պետական կոմիտեի կոմիսար Ե. Նաիլը: Այստեղ նույնպես հանցագործներին բանտերից հանում էին «ավազակային խմբեր ձևավորելու համար»: Բացի ծովը նետելուց, «շատ անպաշտպան կանայք բռնաբարվեցին», «երիտասարդ աղջիկները պղծվեցին»:

Իտալական "H. Messogero"-ն 25. 08. 1915-ին տպագրեց Տրապիզոնում Իտալիայի հյուպատոս Ջ. Հորրինի հարցազրույցը, որում նա ասում է. «Եթե իտալացիներն իմանային այն ամենը, ինչ ես գիտեմ, ինչ ես տեսել եմ սեփական աչքերով... ընդվզելու էին Թուրքիայի դեմ, հաշվեհարդարի էին ենթարկելու նրա կառավարությանը, Միություն և առաջադիմություն անխիղճ կոմիտեին և պատասխանատվությունը տարածելու էին Թուրքիայի դաշնակիցների վրա, ովքեր հանդուրժել կամ անգամ հովանավորել էին այդ զզվելի հանցագործությունները, որին հավասարը չունի ոչ ժամանակակից, ոչ հին պատմությունը: Ամոթ, սարսափ ու խայտառակություն»:

Ուշադրության արժանի է ռազմական դատարանի ձևակերպումը, թե Տրապիզոնի հայության բնաջնջումը «նախապես» մտահղացված իրադարձություն էր, որի պլանավորողներն էին Թալեաթը, Բ. Շաքիրը, Մ. Նազիմը:

«1915 մայիսի մեջ մունետիկն ընդհանուր հանրահավաքի հրավիրեց բոլոր թուրքերուն քաղաքեն (Էրզրում) դուրս փաչա Քեոչք ըսած տեղը,- գրում է ականատեսը:- Հավաքուեցավ 10 հազարե ավել թուրք: Հայ երբեք չթողուցին այնտեղ: Վալին՝ Թահսին փաշան սկսաւ խոսել, ըսավ, ցավոք սրտով ձեզ յայտնում եմ, որ հայերը Վանը խլեցին և յանձնեցին մեր թշնամուն՝ Մոսկովին: Հայերը մեծ վտանգ են մեր կառավարութեան, ուստի որտեղ հայ կա, հոն վտանգ կայ Վանայ տխուր իրանութեան կրկնումին: Ձեզ հարցնեմ, ի՞նչ ընթացք պիտի բռնենք դեպի հայերը: Բոլոր ժողովուրդը պոռացին. «Կոտորենք, ոչնչացնենք գյաուրներուն»: Խօսեցաւ Սեյֆուլլան... Բոլոր ժողովը միաբերան գոռաց. «Սպաննենք, ոչնչացնենք հայերուն, գյաուրներուն»: Յետոյ խոսած է Սեֆերը, առաջարկելով բոլոր հայերուն կոտորել անխնայ, մեծ, պզտիկ և ազատել երկիրը անոնցմե: Ըսաւ. «Մենք 1895-96-ին խնայեցինք երեխաներին, բայց որքա՜ն սխալուեցանք. մեր խնայած այդ երեխաներն այսօր մեծցած, իբր կամաւոր, մեր դեմ կապար կը նետեն, մեզ կը կոտորեն, Վանը կառնեն մեր ձեռքեն և վտանգ կա, որ միւս քաղաքներն ալ խլեն մեր ձեռքեն: Հանրահավաքը միաձայն կվճռեն անխնայ կոտորել բոլոր հայերուն: Սակայն դոկտոր Նազիմը կառաջարկե քաղաքներու, գիւղերու մեջ արիւն չթափել, որովհետև կրսե, կհոտին դիակները, հիվանդութիւններ առաջ կուգան, լաւ է քշել ամայի վայրեր և անդ կոտորել և ձգել: Այսպես ալ կորոշուի և բանաձևը հեռագրով կը ծանուցի Պոլիս»[170]:

Իթիհադի կործանարար քաղաքականության մասին ավելի քան բավարար խոստովանություններ կարելի է հանդիպել երիտթուրքգործիչների ասածներում ու գրածներում: Նրանցից Հ. Ռեֆիկը, որը երիտթուրքական կառավարությունում նախարար էր, այդ կուսակցության պարագլուխների մասին գրում է. «Ավելի քանդեցին, քան շինեցին, մեկ հոգու բարիք էին անում, 5000-ի սիրտն էին կծում, մեկի կյանքն էին փրկում, 5000 անմեղների արյունն էին ծծում, մեկ բարիքի դիմաց հազար չարիք էին հասցնում: Ժամանակ եղավ, որ մեռելների ոսկորներով ապարանքներ կառուցեցին: Իրենց բարձերը որբերի մազերով լցրեցին... Սովյալների ճիչը նրանց ավելի որպես երաժշտություն էր հնչում, որբերի արցունքը բաժակների մեջ լցրեցին և նահատակների վերջին շունչը համադամի տեղ գործածեցին, հայրենիքի կյանքը խաղասեղանի վրա վաճառեցին, թղթի տեղը կյանքեր ոչնչացրին... դրամի տեղը հոգի առան... նրանց զբոսավայրերը պատերազմի ռազմաճակատներն էին, իսկ դիտարանները՝ մահ սփռող տարածքները, ժամանցի տեղերը՝ հրկիզված վայրերը... կարդացածները՝ մահավճիռները, գրածները՝ պատերազմական հրահանգները, իսկ ծրագիրները՝ դավադրություն և ընդհանուր ջարդն էին»[171]:

«Սաբահ» թերթը վկայում է, որ «կոտորածների պլանը կազմել էր ռազմական նախարարության հետաքննության բաժինը՝ հիմք ունենալով երիտթուրքերի կենտրոնի առաջադրանքները»[172]: Մի գերմանացի, որը 1915թ. հուլիս-օգոստոս ամիսներին ճանապարհորդել էր Փոքր Ասիայում, գրում է. «Կարդի փաշան Մարաշում ինձ ասաց. «Դիտեմ, որ 3-րդ բանակի շրջանում (տեղակայված տարածքներում), համաձայն կառավարության հրամանի, (հայերի) ամբողջ արու բնակչությունը սպանված է»»[173]:

169 Լեփսիուս Ցո., նշվ. աշխ., էջ 162:

170 ՀՀ ՊՊԱ, ֆ. 57, դ. 1, գ. 632, էջ 17-18:

171 Ռեֆաթ Մ., նշվ. աշխ., էջ 47:

172 «Արիամարտ», 13-ը դեկտեմբերի 1918թ.:

173 Material u sur Bearteilung des Schieksais der Armenier im jaahre 1915-16. Basel, Haft 1-2, s. 18.

«Անհնար է ժխտել,- գրում է Դ. Լանգը,- որ բնաջնջումը կանխապես ծրագրված և իրականացված էր երիտթուրքական խունտայի հրամանով: Թալեաթ փաշայի գաղտնի հրահանգները աշխարհամարտից հետո հայտնաբերվել են կենտրոնական ու գավառական գրասենյակներում: Դրանցում տրվում են ամենաստույգ ու մանրամասն հրամաններ բոլոր հայերին ոչնչացնելու վերաբերյալ: Այդ հրահանգներում, իհարկե, օգտագործվում են այնպիսի այլաբանություններ, ինչպես «բնակչության տեղափոխում», «անձնակազմի վերադասավորում» և այլն, ինչպես դա արվում էր հիտլերյան վարչակազմի կողմից՝ հրեաներին ոչնչացնելու ժամանակ»[174]:

Երիտթուրքերի պարագլուխների դատավարության առիթով «Թուրքչի Իստամբուլ» թերթը գրեց. «Իթիհադական պարագլուխների ձերբակալությունն ամեն կերպ արժանի է գնահատության: Արդարև, ինչ կա ավելի ուրախալի, քան տեսնել արդարության ձեռքը հանձնված հայրենիքի այն դավաճաններին, որոնք առաջնորդեցին երկիրը դեպի անկումի խորխորատները, ոտնակոխ արեցին երկրի արժանապատվությունը, բռնաբարեցին պատիվներ, խոշտանգեցին, կոտորեցին, մի խոսքով գործեցին ամեն տեսակի գազանություններ»: «Թասֆիրի էֆքյար» թերթը եզրակացրեց. «...Ֆրանսիացիները իրենց թնդանոթներով, գնդացիրներով ու հրացաններով այնքան գերմանացի չեն սպանել, որքան թուրքերը՝ հայ»: «Daily Telegraph»-ը հայ ժողովրդին անվանեց «գազանային ջարդերի զոհ դժբախտ ազգ»: 1919 թվի Կ. Պոլսի դատավարության մեղադրական եզրակացությունում կարդում ենք. «Իթիհադ վե թերաքին վերագրվում է չարիքների նույն շղթան, որ սկսվում է սահմանադրության հրապարակումից հետո և որը պարունակում է ջարդի, ավերումի, հափշտակության և թալանի նման սև ու արյունոտ իրողություններ: Օսմանյան պետությունը շատ ավելի վնասվեց ընդհանուր պատերազմի ընթացքում կատարված ներքին ջարդերից ու շահադիտություններից, քան ռազմաճակատում թափված օսմանցի քաջերի արյունից: Ջարդի և շահամոլության նման գազանային և ստոր ոճիրները, դժբախտաբար, վերագրվում են իթիհադի ընդհանուր կենտրոնին, այդ կուսակցության բոլոր անդամներին և Թեշքիլաթի մախսուսային ու այն անձանց, որոնք այսօր դատի են կանչված ոչ թե որպես նախարարներ և պաշտոնյաներ, այլ իբրև իթիհադի կենտրոնի ու ընդհանուր ժողովների անդամներ: Արդարությունն է միայն, որ պետք է կարողանա մաքրել արյան բծերը, որոնք մի սև խարան դարձան օսմանյան ճակատին: Ահա այս բիծը մաքրելու համար է, որ այսօր աշխատում ենք»[175]: Ընդհանուր դատախազ Ֆերիդունը Տրապիզոնի ջարդերի մասին ասաց. «Հայերի տարագրության վերաբերյալ իթիհադական կառավարության որոշումները Տրապիզոնում և նրա շրջաններում գործադրվեցին սկզբում տղամարդիկ, ապա կանայք և երեխաներն են տարագրվել: Տղամարդկանց մեծ մասը Դեմինդերեյի կողմերում անգթորեն կոտորվել են: Կանայք և երեխաները նավակներով ծովի խորքերն են տարվել ու ծովը թափվել: Մի մասին էլ բուժելու պատրվակով Կարմիր մահիկի հիվանդանոց տարան և այնտեղ թունավորեցին: Դրանից հետո տարագրվածների գույքն ու գոհարեղենը թալանվեց: Ամբողջ մարդկությունը անեծքով և զզվանքով պիտի հիշի վերոհիշյալ ոճիրները»: «Արևմտահայ ժողովրդի բնաջնջումը միայն իթիհադի և նրա ղեկավար դեմքի՝ Թալեաթի գործը չէր: Կար մի հին, արյունոտ անցյալ, որ դարերի ետևից դեռ ցցած էր իր մռայլ դեմքը: Թալեաթը ժառանգել էր տիրողների միջև գոյություն ունեցող այդ հին, արյունոտ ու ատելավառ անցյալը: Սակայն Թալեաթի անձը, անկախաբար այդ անցյալից, իր մեծ դերն ունեցավ»[176]:

Բնականաբար ոչ երիտթուրքական կոմիտեն և ոչ էլ Բ. Դուրը անկարող էին իրականացնել զանգվածային ջարդերը առանց մահմեդական լայն շրջանների աջակցության: Այդ ամբողջությունից Գր. Զալլուշյանն առանձնացնում է որոշակի հասարակական խմբերի ու անհատների: Նա գրում է. «Հայերի կոտորածի մեղավորներն են... ինքը՝ թուրքական կառավարությունը, բոլոր նահանգների և Միություն և առաջադիմություն կուսակցության ակումբների ղեկավարները: Հայերին անմիջապես սպանել են չեթեների, ժանդարմների, ակյարների հատուկ գումարտակները և թուրք ազգաբնակչության մի մասը: Իսկ կոտորածների ուղղակի մասնակիցներից ինձ հայտնի են հետևյալ անունները... Բ. Շաքիր, երիտթուրքերի պարագլուխ, Կ. Պոլսից հատուկ գործուղված էր չեթեներ և կոտորածներ կազմակերպելու համար, Էրզրումի ոստիկանապետ Խուլուսի և նահանգապետ Թահսին բեյերը, Էրզրումի 2-րդ տեղամասի քաղաքապետ Լաչին, Էրզրումից խորհրդարանի պատգամավորներ Սոյֆուլլան և Հելոդոն, Տրապիզոնի նահանգապետ Ազմին, գլխավոր շտաբի գնդապետ Ալի Ռիզան, երիտթուրքական գործիչներ Հիլմին և Միհդատը, ժանդարմական ենթասպա Սուլեյմանը, որը Երզնկայում անձամբ 150 հայ էր սպանել, երրորդ բանակի հրամանատար Մահմուդ Քյազիմը, գնդապետ Խայրին (պատերազմից հետո Երզնկայի քաղաքապետ)»[177]:

Լեփսիուսը գրում է. «Գերմանական փաստաթղթերի հրապարակումից հետո աքսորներ կազմակերպող պատասխանատու անձանց հանցանքը և դրանց հետևանքները դադարում են վիճաբանության նյութ լինելուց: Հայերի դեմ տարվող քաղաքականության ոգին երիտթուրքերի Միություն և առաջադիմություն կոմիտեն էր, իսկ դրա պաշտոնական ղեկավար անձինք ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը և վիլեգեներալիսիմուս Էնվեր փաշան: Ոչ ոք ի վիճակի չէ, կրկնենք Վոլֆ-Մետեռնիխի 1916թ. հունիսի 30-ի նամակի միտքը, սանձահարելու կոմիտեի հիդրային, ոչ էլ վերջ տալու մեծապետականությանն ու մոլեռանդությանը: Կոմիտեն պահանջում է բնաջնջել վերջին հային, և կառավարությունը պետք է ենթարկվի: Սակայն կոմիտեն չի սահմանափակվում միայն մայրաքաղաքում կառավարական կուսակցության կազմակերպումով: Այն առկա է բոլոր վիլայեթներում: Վալիից սկսած մինչև կայմակամ, ամեն մի պաշտոնյա իրեն ուզում է տեսնել որպես օգնական կոմիտեի այն անդամին, որին հանձնարարված է իրեն օգնել կամ վերահսկել»[178]: «Ոչ մի կասկած,- գրում է Մարկվարտը,- որ օսմանյան կառավարությունը համաշխարհային պատերազմի մուտքումը գնահատեց որպես առավել բարենպաստ պահ՝ երկար ժամանակ իր փայփայած նախագիծը կենսագործելու համար: Ջիհադը՝ ի պատիվ Ալլահի կատարվող սպանությունն ու կողոպուտը, մեղմ ասած, այդ «սրբազան պատերազմը», որ Թուրքիան հայտարարեց գերմանական կառավարության հրահրմամբ կամ, համենայն դեպս, նրա հավանությամբ... միայն այն հետևանքն ունեցավ, որ թուրքերին հնարավորություն ընձեռեց ավելի հեշտությամբ իրականացնելու իրենց ծրագիրը՝ Արևելքի բոլոր քրիստոնյաների և, առաջին հերթին, հայերի գրեթե լրիվ ոչնչացումը»[179]: «Տեղահանությունների և դրանց իրականացման մասին հրամանի պատասխանատվությունն ընկնում է Կ. Պոլսի կենտրոնական կառավարության վրա»[180]: Ոչ միայն դրա, այլև հայ ժողովրդի հանդեպ բոլոր անօրինական գործողությունների հիմնական մեղավորը երիտթուրք կենտկոմն ու նրա տեղական ակումբներն էին: Վերջիններս էին ղեկավարում բանտերից ազատված «քրեական տարրերից ավազակախմբերի կազմակերպումը»[181]: Ոտքի հանվեցին ոչ միայն իթիհադի կառույցներն ու անդամները, այլև մահմեդական հասարակության ամենալայն խավերը:

«Կայսրությունով մեկ ցրված 1,5 միլիոն բնակիչների տեղահանությունները,- գրում է Լեփսիուսը,- որևէ կերպ չի կարելի արդարացնել ռազմական նկատառումներով... խոսքը գնում է ներքին քաղաքականության մի պլանի մասին, որը նպատակ էր հետապնդում նախապես մտածված ու սառնասրտորեն հաշվարկված եղանակով բնաջնջել հայ էթնիկական տարրը»[182]: Նա սերտ կապ էր տեսնում երիտթուրքերի հակահայ քաղաքականության և թուրքիզմի ու պանթուրքիզմի միջև: «Պանթուրքիզմը դարձավ յուրօրինակ մի կուռք և ամենախիստ միջոցներ ձեռնարկվեցին բոլոր ոչ թուրք տարրերի դեմ»[183]: 1915թ. օգոստոսի 10-ին Լեփսիուսի հետ հանդիպման ժամանակ Էնվերն ընդունեց իր պատասխանատվությունը աքսորների, կոտորածների կազմակերպման ու դրանց հետևանքների համար: Լեփսիուսը հարցրեց, թե Էնվերն արդյոք գիտեր և հավանություն տալի՞ս էր այս ամենին, ինչ տեղի էր ունենում երկրում: «Նա գիտեր, թե ես ինչ եմ ուզում իմանալ և պատասխանեց. «Ողջ պատասխանատվությունը ինձ վրա եմ վերցնում»[184]: Իսկ Ջեմալը Երուսաղեմի գերմանական հյուպատոսին բացատրեց, թե ինքը միայն հակել է, որպեսզի ներքին գործերի նախարար Թալեաթի հրամանները բանակային միջոցներով ի կատար ածվեին: Նա ավելացրեց. «Թալեաթն է որոշում աքսորների ծավալը»[185]:

---

174 Lang D. The Armenians, London, 1977, p. 288-289:

175 «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի», Ե., 1988, էջ 36-41:

176 Թեհլիրյան Ս., նշվ. աշխ., էջ 33:

177 Чалхушьян Гр., նշվ. աշխ., էջ 86-87:

178 Le crime de silence. La Genocide des Armeniens. Paris, 1984, p. 238.

179 Marquarty J. Die Entstehung und Wiederherstellung der Armenischen Nation, Berlin, 1919, s. 52-53.

180 Lepsius J. Der Turkenherrschaft... s. 193.

181 Ն. տ., էջ 197:

182 Ն. տ., էջ 259:

183 Ն. տ. 261:

184 Ն. տ. էջ 13:

185 Ն. տ., էջ 150:

Այս հայտարարությունները ինչ-որ չափով հակասում են գեներալ Լիման ֆոն Սանդերսի վկայություններին Թեհլիրյանի դատավարության ժամանակ, ինչը կրկնել է իր հուշագրություններում: Առանց ցանկանալու երիտթուրքերի կառավարության վրայից վերցնել աքսորների պատասխանատվությունը, ասում է նա, այդ հրամանները ի կատար ածելու ընթացքում տեղի ունեցած դժվարությունները հիմնականում թուրքական օժանդակ ոստիկանության գործն էին, «որոնք, իհարկե, լավագույն տարրերից չէին կազմված՝ ավազակներ էին, կամ գործազուրկներ: Պարզ է, որ այդ մարդիկ կարգ ու կանոնի չէին ենթարկվում»[186]: Նա կոտորածների համար հանցավոր էր համարում ստորադաս պաշտոնյաներին և քրդերին՝ «հայերի բոլոր ժամանակների թշնամիներին»[187]: «Չեմ կարող ասել, թե ինչ չափով է Թալեաթը անձամբ խառնված այս դեկրետների արձակման գործին: Որքան գիտեմ, հայերի աքսորների վերաբերյալ առաջին հրամանը նա արձակել է 1915թ. մայիսի 20-ին... դրանք պետք է, որ հաստատված լինեին ռազմական խորհրդի կողմից... հրամանները ի կատար ածելու պատասխանատվությունը վալիների, երկրորդական պաշտոնյաների և հատկապես այդ սարսափելի ոստիկանության վրա էր»[188]:

Ռազմական դատարանը մահվան դատապարտեց չորս հոգու, իսկ ի կատար ածվեց միայն երկու դատավճիռ: Կախաղան հանվեցին գավառական մակարդակի երկու պաշտոնատարներ, դրանցից մեկը Ցոզղատի փոխմութասարիֆ Քեմալն էր: Բնութագրական է, որ թուրք ամբոխը հանդես էր գալիս նաև այդ մահապատժի դեմ, իսկ դահիճ-մահապարտը, դիմելով թուրքերին, ասաց. «Սիրելի ազգակիցներ: Ես թուրք պաշտոնյա եմ և գործադրեցի ստացածս հրամանը՝ իմ պարտականությունը կատարեցի բարեխղճորեն»:

Ըստ Նազրմի, եթե կուսակցության կենտկոմը մարդն էր, ապա սուլթան Մահմեդ 5-րդ Ռեշադը՝ միայն նրա կնիքը: Նա 1919թ. օգոստոսի 15-ին Զմյուռնիայում հայտարարեց՝ սահմանադրությունը, ընտրությունը և խորհրդարանը բացարձակ դատարկ բաներ են: «Սա քողարկված ինքնակալություն է»: Պոլսի թերթերից մեկը Օսմանյան խորհրդարանի ցրման մասին սուլթանի հրովարտակից (21-ը դեկտեմբերի, 1918թ.) մի քանի օր առաջ գրեց. «Խորհրդարանն իր հերթին եղել է երիտասարդ թուրքերի մեղսակիցն ու գործակիցը: Մեղսակից, այն լռությամբ, որ գիտակցաբար պահպանեց ամենազզվելի ոճիրների գործադրման ընթացքում, չնայած տեղյակ էր այդ ոճիրների կազմակերպմանը, որոնք տեղի ունեցան իրենց (երեսփոխանների) աչքի առջև:

Գործակից, որովհետև երեսփոխաններից շատերը անձամբ վարեցին կոտորածները: Նրանք քվեարկեցին մի շարք ժամանակավոր, անօրեն, եղեռնագործ օրենքների օգտին»[189]: Մի ուրիշ թերթ գրեց. «Տարիներ շարունակ այս երեսփոխանական ժողովը թույլատրեց, որ գործվեին պատմության մեջ անանախադեպ կոտորածներ, կողոպուտների, ապօրինությունների մի անհամար շարք...»[190]: Եվ ապա՝ «...Մի ժողով (խորհրդարան), որ նշանավոր է ամեն մի առաջարկությանը, սկսած Ներոնի ժամանակներից երբևիցե գոյություն ունեցած ամենաոճրագործների առաջարկներին տված հավանությամբ»[191]:

«Ալեմդարը» գրում է. «Ոճրագործ են քարդերի մեծ ու փոքր պաշտոնյաներն ու նրանց հրամայող բորենիները: Խուզը վերաբերում է նախարարությանը, պաշտոնեությանը, խորհրդարանին ու դրանց գերագույն ղեկավար իթիհադին»[192]:

Ինչո՞ւ էր այդպես: Երիտթուրքերի ղեկավարների դատավարության մեղադրական եզրակացության մեջ (22 մայիսի 1920թ.) ասված է, որ իթիհադի կենտկոմի անդամները, նրա «պատասխանատու քարտուղարներն ու ներկայացուցիչներն ընդգրկված են եղել կուսակցության պարագլուխների գաղտնի խմբավորման կազմում, իսկ մեջլիսի ընդհանուր կազմը բաղկացած է եղել Կենտրոնական կոմիտեի անդամներից, նախարարներից և մի քանի պատգամավորներից: Այսպիսով, մեջլիսի անդամների մեծ մասը, եթե բաղկացած լինի կուսակցության նման գաղտնի խմբավորում ունեցող պատգամավորներից, ապա միանգամայն ակներև կդառնա նրա բուն էությունը»[193]: Այսինքն՝ պետական մարմինները և կուսակցական կառույցները ոչ միայն սերտաճած էին միմյանց, այլև նույն կազմն ունեին և բնականաբար նաև

186 «Vwlkermond Genocide», 1980, s. 61.

187 Ն. տ., էջ 62 :

188 Ն. տ., էջ 63:

189 «La Renessance», 13-ը դեկտեմբերի 1918թ.:

190 Ն. տ., 24-ը դեկտեմբերի 1918 թ.:

191 «Ազատամարտ», 23-ը դեկտեմբերի 1918թ.:

192 «Ալիք», 28-ը ապրիլի 1985թ.:

193 «Takvim-I Vekai», 1919թ. N571.

նույն կողմնորոշումները: Մեղադրական եզրակացությունում ուշադրակի է արձանագրված, որ «կենտրոնական կոմիտեն և ընդհանուր մեջլիսը զանազան, թաքուն գործերով համագործակցել են իրար հետ»[194]:

«Ըստ միահամուռ կարծիքի,- գրում է Տարլեն,- (որին թուրքական իշխանությունները բնավ էլ չառարկեցին, քանի դեռ նրանց թվում էր, թե իրենց ռազմական գործերը բարեհաջող էին և որ հաղթողներին չէին դատում) այդ ջանքերի արդյունքը հանդիսացավ համաշխարհային պատմության նոր ժամանակներում իրոք նախադեպը չունեցող, պլանավորված և հաջողությամբ իրականացված՝ ժողովրդի 2/3-ի միտումնավոր բնաջնջումը... Դա տևեց մինչև 1915թ. դեկտեմբերը, որից հետո սկսվեց կենդանի մնացածների բռնի իսլամացումը, ինչը նույնպես ուղեկցվում էր կատաղի ջարդերով և շարունակվեց մինչև Թուրքիայի պարտվելն ու անձնատուր լինելը»[195]:

Իթիհադը հայերի բնաջնջման ոչ միայն ծրագրողն էր, այլև ղեկավարն ու կազմակերպիչը: Կուսակցության ղեկավարությունը ձևավորեց ջարդերի հրահանգավորման, կազմակերպման, քարոզչական ապահովման հստակ համակարգ: Այդ համակարգն ուներ մի քանի օղակներ: Դրանցից առաջինը կուսակցության «հատուկ պատվիրակների» գործուղումներն էին նահանգները: Օրինակ, երիտթուրքական կենտկոմի անդամներ Խալիլն ու Ահմեդը, մեկնելով Կ. Պոլսից, «անցան ողջ Անատոլիայով և ամենուրեք... ոչնչացնել էին տալիս հայ տղամարդկանց և երիտասարդներին, աքսորում կանանց և երեխաներին...»[196]:

Երիտթուրքերի դատավարության մեղադրական եզրակացության մեջ կարդում ենք. «... Տարագրությունների քարավանները ենթարկվել են հատուկ նպատակով կազմակերպված հրոսակախմբերի հարձակումներին և ոչնչացվել են, իսկ նրանց ունեցվածքն ու կահկարասիները թալանվել... մինչդեռ կառավարությունը ոչ միայն չի պատժել և արգելել այդ կոտորածներն ու կոտորածները սանձազերծող հանցագործներին, այլև պաշտոններից հեռացրել է այն վալիներին ու մութասարիֆներին, որոնք պատասխանատվություն իրենց վրա վերցնելով հրաժարվել են գործադրել տեղահանություններ և կոտորածներ»[197]: Ոչ քիչ դեպքերում տեղերը գործուղված իթիհադական գործիչները պարզապես արհամարհում էին տեղական իշխանություններին, մեկուսացնում էին կամ գործում հակառակ նրանց կարծիքի: Այսպես վարվեցին վերը նշված Խալիլն ու Ահմեդը Ուրֆայում: Երիտթուրքական այդ գործակալներին անվանում էին նաև «աքսորների կոմիսարներ»: Նրանց տրամադրվում էր տրանսպորտային միջոցներ, ֆինանսներ, ծածկագրերը վերծանելու հնարավորություններ, զենք-զինամթերք: Տեղերն ուղարկված այդ գործակալներն «իրենց ղեկավարների ցուցումներով ... առանց ազգի ու հավատքի խտրականության, սկսեցին ժողովրդին կոտորել, կողոպտել, նրա ունեցվածքն այրել և շատերին տանջամահ անել: Չնայած ահաբեկման սլաքը հիմնականում ուղղված էր հայերի դեմ, այնուհանդերձ պատժեցին նաև այլ տարրերի և մեծ թվով թուրքերի»[198]:

Բռնագաղթի նախապատրաստության և իրականացման շրջանում իշխանության մարմինները ամբողջությամբ անցան իթիհադականների ձեռքը: Ճիշտ է, թուրքական իշխանությունները ջարդերի ամբողջ պատասխանատվությունն երիտթուրքերի վրա դնելու նպատակով չափազանցում են այս երևույթը, բայց միանգամայն ակնհայտ է, որ երիտթուրքերը պետական կառավարումը նենգափոխեցին կուսակցության դիկտատուրայով: Դա արտահայտվում էր ոչ միայն իշխանության մարմինների իթիհադականացմամբ՝ կուսակցության անդամները հեղեղեցին այդ մարմինները, այլև նրանով, որ դրանց պաշտոնատարներին պարզապես չէին թույլատրվում կուսակցության քաղաքականությանը չհամապատասխանող վարքագիծ դրսևորել: Ով այդ պահանջն անտեսում էր, խստորեն պատժվում էր, եղան նաև գնդակահարության դեպքեր: Դեռ ավելին, կուսակցությունը պարզապես իր վրա էր վերցրել պետական իշխանությունների իրավասությունները: «Թանին»-ը 1917թ. սեպտեմբերի 24-ին գրեց, թե կուսակցությունն իր վրա է վերցրել Կ. Պոլսի պարենավորման բոլոր հարցերը և դրանց բաշխումը տապալեց նաև այն պատճառով, որ հավաքված 700 000 լիրա փոխառությունն օգտագործվեց կուսակցության կարիքների համար: Իթիհադի կենտկոմի նախաձեռնությամբ ընդունվեց «տեղահանության մասին» օրենքը, ստեղծվեց հատուկ կազմակերպությունը գաղտնի նպատակներ իրա-

194 «Takvim-I Vekai», 1919թ. N571:

195 «Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 1051-1052:

196 «Le Crime...», p. 78.

197 «Takvim-I Vekai», 1919թ. N571.

198 «Memoirs of Halide Edip, New York», London, 1924, p. 389.

կանացնելու համար: Կենտրոնը նաև զբաղվում էր ահաբեկչությամբ: «Լիովին ապացուցված է, - կարդում ենք երիտթուրք ղեկավարների դատավարության մեղադրական եզրակացության մեջ,- որ Արևելյան բոլոր վիլայեթներում տեղահանությունը կյանքի էր կոչվել Միություն և առաջադիմություն կուսակցության ղեկավար անդամներից կազմված թեշքիլաթի մախսուսա հանցախմբի կողմից, որի նախագահը Բ. Շաքիր բեյն էր, իսկ հանձնարարված խնդիրների լուծման համար էլ Բ. Շաքիրն օգտագործել էր Միություն և առաջադիմություն կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարներին, լիազորներին և քննիչներին»[199]: «Միություն և առաջադիմություն կոմիտեն,- ասված է դատարանի նյութերում,- անտեսելով երկրի գործադիր իշխանությունների իրավասությունները, ահաբեկչական ուժի միջոցով իր ձեռքն էր վերցրել երկրի ամբողջ կառավարումը» և իրականացնում էր «կործանարար նպատակներ և ծրագրեր»: Այդ խնդիրը լուծելու համար Էնվերին նշանակեց ռազմական նախարար: «Հայերի ցեղասպանության ժամանակ մի շարք վիլայեթների վալիներին հատուկ հրահանգներ տալու գաղափարը նույնպես կուսակցության կենտկոմինն էր»[200]:

Ժամանակակիցների վկայությամբ իթիհադի ղեկավարները տեղերից բացեիբաց պահանջում էին. «Բնաջնջել բոլոր հայերին»: «Լքյալ գույքերի մասին» օրենքում, որ հրապարակվեց «Takvim - i Vekai»-ի թերթում, նշվում է. «Կառավարությունը և իթիհադի մեծ կոմիտեն կոչ են անում և հրամայում են ձեզ բոլոր ուժերով աջակցել իթիհադի տեղական մարմիններին» և հայերի հարցը լուծել դոկտ. Նազըմի խոսքերով՝ «Բնաջնջել հայերին Պոլսից մինչև Բայազետ, Բայազետից մինչև Ադանա և Ալեքսանդրիա»: Տեղերն ուղարկվեցին նման բազմաթիվ հեռագրեր, նամակներ, ծածկագրեր, հրահանգներ, շրջաբերականներ: Բ. Շաքիրը, ի կատարումն երիտթուրքերի կենտկոմի 1915թ. փետրվարի կեսին տեղի ունեցած նիստերի որոշումների, փետրվարի 18-ին ծածկագիր-շրջաբերական ուղարկեց նահանգները. «320 75 384 317 430 198 123 119 193 148 176 114 46 (Թուրքիայում եղած բոլոր հայերին ամբողջությամբ) 327 354 198 123 111 193 152 123 123 (մեռցնել ու ոչնչացնել է որոշված)»: Մի ուրիշ ծածկագրով հաղորդում էր հայերի ոչնչացման վայրերը և հրահանգում՝ «Հայ տարագիրներու անցնելիք տեղերը մեզ հայտնեք»[201]:

Վճռական դեր է խաղում Թալեաթի հեռագիրը վալիներին ու իթիհադի վիլայեթային կազմակերպությունների ղեկավարներին: Դրանց մի մասը, Ա. Անտոնյանի հրապարակումից բացի, տպագրվեց «Carny Historic» 1921թ. հուլիսի համարում:

Իթիհադի կենտրոնը տեղահանության և բնաջնջման կազմակերպումը վստահեց առաջին հերթին բանակի հրամանատարությանն ու վիլայեթների իշխանություններին: Ժանդարմական սպա Նումանը ցուցմունք է տվել, թե Ցոզղատի հազարապետ Սալիմը հանձնարարություն «ստացավ կոտորելու Սորկունի գյուղերի..., իսկ Ռիզա Զաուշը՝ Սարայի շրջանի հայերին: Զարդավայր նշանակված էր Քելլերը: Ում հանձնարարված էր իրականացնելու ջարդը, իր պարտականությունը կատարեց կատարյալ խղճմտությամբ՝ հնազանդվելով մեծավորներից ստացած հրամաններին»[202]:

Թալեաթը եղեռնի քաղաքականության իրականացման գլխավոր ուժն ու կազմակերպիչը համարում էր Միություն և առաջադիմություն կուսակցության ֆունկցիոներներին, հաստիքային և արտահաստիքային աշխատողներին ու ակտիվիստներին, նա համառորեն հանձնարարում էր իթիհադի տեղական ներկայացուցիչներին հնարավորն ու անհնարը անել խնդիրը լուծելու համար[203]: Իշխանության և կուսակցության կենտրոնական և տեղական մարմինների պատասխանատվության բարձրացումը ցեղասպանության իրականացման գործում հասկանալի է: «Times» թերթի Կ. Պոլսի նախկին թղթակից Ֆ. Գրավեսը 1915 թ. սեպտեմբերին գրում է Լլոյդ Ջորջին. «Ելնելով իմ փորձից և նկատի ունենալով բոլոր նրանց փորձը, ովքեր շատ թե քիչ գիտեն Թուրքիան, կարող եմ ասել, որ Թուրքիայում երբեք որևէ կոտորած տեղի չի ունենում, բացառությամբ այն դեպքերից, երբ կառավարությունն ուղղակիորեն ակնարկում է, թե կոտորած է ուզում»[204]: Երիտթուրք ղեկավարների դատավարության ժամանակ սպա Ահմեդը ցուցմունք տվեց. «Գիշերն ինձ արթնացրին զինված մարդիկ: Նրանք հանձնեցին փակ ծրար, որը պարունակում էր հայերին արտաքսելու հրաման: Այն կատարելու համար կցվում էր քաղաքացիական մի ծառայող: Ինձ իրավունք էր տրվում սպանելու նրանց, եթե ընդդիմանան իմ հրամաններին: Նույնը կարող էին անել և ինձ հետ»[205]: Իսկ Մամուրեթ ուլ Ազիզի զորահրամանատար Ս. Ֆայեզը խոստովանեց, որ 3-րդ բանակի հրամանատար Մ. Քյամիլից բազմաթիվ հեռագրեր է ստացել, որոնք պահանջում, հրամայում էին կոտորել հայերին: Ուրեմն հայերի բնաջնջման գործում երիտթուրքերը միավորել էին քաղաքացիական և զինվորական կառույցների հնարավորությունները:

Իթիհադը կայսրությունում ձևավորել էր կուսակցական ծավալուն կառույց, որի կազմակերպչական աշխատանքը, առաջին հերթին տեղական կազմակերպությունների (ակումբների), պատասխանատու քարտուղարների աշխատանքն անմիջականորեն ղեկավարում էր կուսակցության գլխավոր քարտուղարը, որը պատերազմի տարիներին Մ. Շուքրին էր: Իշխանությունը թե կենտրոնում և թե տեղերում կենտրոնացնելով իթիհադի ներկայացուցիչների ձեռքում, Թալեաթը ոչ քիչ դեպքերում մեկուսացնում էր վալիներին, մութասարիֆներին ու կայմակամներին: Ռազմական դատարանի նախագահ Ֆ. Մուստաֆան 1919թ. մայիսի 9-ին հարցում է կատարում Անկարայի վալուն փոխարինող Աթըֆին, թե նա արդյոք տեղյա՞կ էր, որ «ընդհանուր կենտրոնի կողմից պատասխանատու պատվիրակներ և պատասխանատու քարտուղարներ են ուղարկվել Անկարա, Կաստամունի, Ցոզղաթ, Երզնկա, Տրապիզոն, Սեբաստիա և շատ այլ տեղեր, ովքեր վալիներին, մութասարիֆներին այլևայլ գաղտնի հրամաններ են հաղորդել»[206]: Աթըֆը իթիհադի համար պատահական մարդ չէր, նա կուսակցության կենտկոմի անդամ էր, աշխատել էր պատասխանատու քարտուղար, անմիջական կապի մեջ էր Թալեաթի հետ, նրա ջանքերով Անկարայի վալի Մազհարին ջարդերին դիմադրելու պատճառով աշխատանքից ազատվեց: Համաձայն վկաներից մեկի ցուցմունքի, երբ Մազհարին հիշեցրեցին բռնագաղթն ու սպանությունները կազմակերպելու իր պարտականության մասին, նա բացականչեց. «Օ՜, ներեցեք: Ես ինչպե՞ս կարող եմ անմեղ մարդկանց կոտորելու հրաման արձակել»: Այդ լսելով Աթըֆը գրպանից դուրս քաշեց մի թուղթ և ցույց տալով բղավեց. «Այդ դեպքում կուսակալը ես եմ», ապա խորամանկ ժպիտը դեմքին հոխորտաց. «Էնկիւրիի 1200 և Սթանոս գյուղի 350 հայերին...»՝ սպանեցինք[207]: Դատարանում Ուստին ցուցմունք տվեց, թե երբ Մազհարին հարցրեցին իր հրաժարականի պատճառի մասին, պատասխանեց. «Հայերի տեղահանության առնչությամբ ՆԳ նախարարության հրամանները չհասկանալ ձևացրեցի... Վրա հասավ Աթըֆ բեյը և հայտնեց հայերի տեղահանության, կոտորածի ու բնաջնջման մասին ՆԳ նախարարի բանավոր հրամանը: Ես նրան ասացի. «Ոչ, Աթըֆ բեյ, ես կառավարիչ եմ և ոչ թե չարագործ մարդասպան, իմ աթոռը թողնում եմ, դու տեղս նստիր և գործադրիր տեղահանության հրամանը»[208]: Ռային Աթըֆին խնդրեց ներել մի դրամատեր հայի: Աթըֆը մերժեց, ասելով, թե վերադասից հրաման կա ոչ մի հայի կենդանի չթողնել և անպայման տեղահանել:

Այս ապօրինություններում Թալեաթը ստորադասներին անձնական օրինակ էր ցույց տալիս: Նա Դեր Զորի կառավարչին ծածկագրեց. «Վալիին և նրա թիկնապահ կոմիսար Մեհմյուին պետք է մահապատժի ենթարկել», որովհետև հրաժարվել էին կոտորել հայերին»[209]: Նույն վկաների համոզմամբ հայերի հանդեպ գործադրած գազանությունները հիմնականում ոչ թե խուժանի, այլ բարձր պաշտոններ զբաղեցնողների երևակայության պտուղ էին: Խուժանը սեփական նախաձեռնությամբ չէր մերկացնում սպանդանոց տարված հայերին, այլ կատարում էր հազարապետ Հարոյի հրամանը. «(Հայերի) հագուստները հանեք, որպեսզի չվնասվեն, իսկ տերերի մարմինները ծակեք»[210]:

Ընդհանրապես, պատասխանատու քարտուղարներին իրավունք էր վերապահված, կենտրոնի հետ համաձայնեցնելով, պաշտոնանկ անել վալիներին, մութասարիֆներին, կայմակամներին, եթե վերջինները հրաժարվեին կատարել նրանց հանձնարարությունները: Թալեաթը բազմիցս չեշտել է պատասխանատու քարտուղարների առանձնակի կարևոր դերը հայերի բնաջնջման գործում: Նա պա-

199 «Takvim - i Vekai», 1919թ., N571 .
200 «Takvim - i Vekai», 1919թ., N571.
201 Ղազարեան Հ. Ցեղասպան թիւրք, էջ 41:
202 Անտոնեան Ա. Մեծ ոճիրը, էջ 276-277:
203 «Ցուշամատեան Մեծ եղեռնի», էջ 528:
204 «Le Crime», p. 78.

205 «La renessance», 1919 թ., N 14.
206 «Takvim - i Vekai», 1919թ., N3772 .
207 Թեհլիրյան Ս., նշվ. աշխ., էջ 316, 318:
208 Դ. Ե. N 251:
209 Անտոնեան Ա. Մեծ ոճիրը:
210 Թեհլիրյան Ս., նշվ. աշխ., էջ 317:

հանջում էր կառավարության ֆունկցիոներներից՝ ոչինչ չխնայել առաջադրված խնդիրը լուծելու համար: Օրինակ, Անկարայի պատասխանատու քարտուղար Նեջաթին 1915թ. հուլիսի 20-ին գնում է Ցոզղաթ և հայերին կոտորելու հրամանը հանձնում մութասարիֆ Ջեմալին և զինվորական հրամանատար Սալիմին: Վերջինները համաձայնվում են հայերին տեղահանել, բայց՝ ոչ կոտորել: Սելևիայի մութասարիֆ Էդիպը դատարանին ցուցմունք տվեց. «... Մենք իմացանք հայերի աքսորի և տեղահանության հրամանի մասին, երբ այդ հրամանը գործադրելու վերաբերյալ Ցոզղաթ էր եկել Միություն և առաջադիմություն կուսակցության Անկարայի պատասխանատու քարտուղարը»: Նեջաթին մութասարիֆ Ջեմալին նաև ասել էր, «թեև տրված հրամանն արտաքնապես հայերին աքսորելն է, սակայն կուսակցության կենտկոմի և ՆԳ նախարարության իսկական նպատակը հայերին բնաջնջելն է...»[211]: Ջեմալը 1918թ. դեկտեմբերի 18-ին ռազմական ատյանին ցուցմունք տվեց. «Անկարայի Միություն և առաջադիմություն կուսակցության պատասխանատու քարտուղար Նեջաթի բեյը Ցոզղաթ եկավ ու ինձ ցույց տվեց կուսակալ Աթըֆի ստորագրած մի նամակ՝ այն պահելով ափերում: Նամակն ինձ հրամայում էր Նեջաթի բեյի հետ խորհրդակցել և կարգադրություն անել տեղահանելու» հայերին: Ջեմալը հրաժարվում է և մի քանի օր անց պաշտոնանկ է արվում: Նեջաթին, որին իթիհադի կենտրոնը դեռ Բալկանյան պատերազմի ավարտին էր նշանակել Անկարայի վիլայեթի պատասխանատու քարտուղար, մեծ եռանդ ու սատանայական հնարքներ գործադրեց հայերին ոչնչացնելու համար: Այդ գործում նա առանձնակի շահագրգռվածություն էր հանդես բերում նաև այն բանի համար, որ կոտորելով հայերին, թալանում էր նրանց ունեցվածքը և կարճ ժամանակում մեծ հարստության տեր դարձավ: Նրա ամենամտերիմն ու եռանդուն հարազատը Ցոզղաթի քաղաքապետ Ահմեդն էր, որն իր ջարդարար գործունեության համար ճանաչվեց Միություն և առաջադիմություն կուսակցության «ամենաազդեցիկ անդամներից մեկը և հաջողացրեց Պոլսի (երիտթուրքերի) համագումարին մասնակցել»[212]:

Որ կոտորածների իրական կազմակերպիչները, երիտթուրքական կուսակցության ներկայացուցիչները, մասնավորապես պատասխանատու քարտուղարները, ակումբների նախագահներն էին, վկայում է նաև ռազմական դատարանի արձանագրությունը. «Երիտթուրքերի պատասխանատու քարտուղարները կատարեցին տեղահանություններ, կոտորածներ, աքսորներ, ավերեցին կալվածքներ և գործեցին գարշելի ոճիրներ»[213]: Դատարանին ներկայացված փաստաթղթերի թվում էր Ցոզղաթի ավագանու ներկայացուցիչ Ռիֆաթի վկայությունը. «Թևֆիկ բեյն իր պաշտոնավարության ընթացքում,- կարդում ենք այդ վկայությունում,- ներկայացել է որպես Միություն և առաջադիմություն կուսակցության կոմիտեի ներկայացուցիչ... Երբ կառավարությունը հայերին աքսորելու հրաման արձակեց, այս մարդն իր շուրջը հավաքեց ոճրագործների ու հրոսակների ոհմակ և սկսեց իր հրոսակային, չեթեական գործունեությունը... Սկզբում Թևֆիկ բեյը Ցոզղաթի հայերի՝ 15-75 տարեկան այրերին Ցոզղաթից երեք ժամ հեռավորության վրա գտնվող Տաղ Բունար գյուղ աքսորեց, կացիններով սպանել տվեց, նրանց ամբողջ զարդեղենը և ինչքերն իր տուն փոխադրել տվեց...»: Կեսարիա աքսորելու պատրվակով հավաքեց 1800 կին, աղջիկ, երեխա, նրանցից գեղեցիկներին առանձնացրեց քրդերի ու չերքեզների համար, բոլոր զարդեղենները կողոպտեց և տեղահանվածներին տանելով Բողազլանի մոտ գտնվող գյուղի մերձակայքը, կացնահար անել տվեց, դիակները գցել տվեց Կարասու գետը, իսկ աղջիկներին բաժանեց հրոսակներին... Ցոզղաթի 8500 հայերին այսպես մեռցնելուց, նրանց հարստությունը կողոպտելուց հետո...»: Գում Գույու գյուղում 150 ընտանիքի (ավելի քան 850 մարդու) հրո ճարակ արեց:

«Ազդաղմադեմի և Բողազլյանի բազմաթիվ հայկական գյուղերի տներն ու բնակիչներին այրելուց հետո, այդ հրեշը գնաց Թերզիլ և Զաթ գյուղերը: Այդ գյուղերի հայերը ևս հանձնվեցին առանց դիմադրության»[214]: Ռազմական դատարանները հանցագործներ ճանաչեցին և տարբեր ժամանակների բանտարկության դատապարտեցին 22 երիտթուրք պատասխանատու քարտուղարի և կուսակցության ներկայացուցչի: Դրանց թվում էին Բալուի պատասխանատու քարտուղար Միթհադը, Էսքիշեհիրի՝ Բեսիմ Զոնդին, Հալեպի՝ Մեհմեդ Ջեմալը, Բրուսայի՝ Ահմեդ Միթհադը, Ալի Ռիզան, Կոնիայի՝ Աբդուլ Քադիրը, Կաստամոնույի՝ Մյունիրը, Հասան Ֆեհմին և ուրիշներ: Իսկ Տրապիզոնի և Խարբերդի պատասխանատու քարտուղարներ Նայիլն ու Ռ. Նազըմը մահվան դատապարտվեցին: Տարբեր ժամկետների բանտարկության դատապարտվեցին նաև իթիհադի ներկայացուցիչները՝ Կոնիայի՝ Ֆերիդը, Աղաբազարի՝ Համիդը, Սեբաստիայի՝ Ղանին, Բոլվադինի՝ Մեհմեդ Ալին, Հաջի Աթան, Կարա Հասանը, Հաջի Ահմեդը և ուրիշներ:

Նեջաթի մասին ռազմական դատարանում ցուցմունքներ տրվեցին, որ 1915 թ. հուլիսի 23-ին երիտթուրքերի Ցոզղաթի ակումբում հրահանգներ տրվեց լքյալ գույքերի հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ: Հաջորդ օրը Նեջաթին ժողով հրավիրեց և ցուցմունքներ տվեց հայերի ունեցվածքի գույքագրման փաստաթղթերի կազմման և բանագրավման վերաբերյալ, ապա սպառնաց, թե «ոչ ոք կրնայ հակառակիլ բարձրագույն կառավարության կողմե տրուած ուղղութեան, որ դա է կուսակցութեան ուղղութիւնը... Յաջորդ ուրբաթ օրը հայերը հաւաքուեցան մատեաններու արձանագրութեանց համաձայն առանց պատահարի և բանտ դրուեցան: Կիրակի առաւոտ յուլիսի 26-ին 477 հոգի դուրս ղրկուեցան առաջին քարավանով... Թեև Ճեմալ պեյ իրա արած հրամաններուն համեմատ գործեց, սակայն Նեճաթի պեյի մատնութեամբ ան պաշտօնանկ եղաւ, և Պողազլեանի գայմագամ Քեմալ պեյ ժամանակաւոր միութեսարիֆ եղաւ Եոզղատի: Այսպիսով Միութիւն և առաջադիմութիւն կուսակցութեան անդամները, ինչպես նաև անոնք, որոնք կը բաղձային չարաշահութեամբ հարստանալ, հասան իրենց նպատակներուն և ցաւալի ոճիրներ գործեցին՝ աննախընթաց մարդկային պատմութեան մեջ: Այնպիսի գարշելի արարքներ գործեցին, որ հաւաքատեղերում խժդժութիւնները ստուերի տակ մնացին...»: Ցոզղաթի ոստիկանության հրամանատարները ամիսներ շարունակ պնդում էին, որ տեղի հայերը դաշնակ և հնչակ չէին: «Նեջաթի պեյի հասնելե յետք ան իր լեզուն փոխեց և պնդեց, որ Եոզղատի հայերը կոմիտեներու անդամներ էին: Անձամբ ինքը ղեկավարեց կալանքները: Ասկե աւելի հաստատուն ապացոյց կրընա՞յ ըլլալ Միութիւն և առաջադիմութիւն կուսակցութեան չարութիւնը ցոյց տալու համար»: Նեջաթին օգտվելով ընդհանուր զորակոչի հրամանից, շարունակեց տարագրել հայերին: «Հիմա ան շատ հարուստ է և 200 000ե աւելի թուրքական ոսկիի դրամագլուխի տիրացած է... Ամեն անգամ Եոզղատ գալուն, քաղաքապետարանի տնօրեն Ահմետ Էֆենտիի տունը հիւր կըլլար: Անոր հետ միասին Նեճաթի պեյ կարգադրութիւններ ըրաւ և լուծեց բոլոր հարցերը»: Իսկ այդ Ահմեդը միաժամանակ իթիհադի տեղական կազմակերպության նախագահն էր: Նա և Նեջաթին համատեղ էին գործում: Նրա ապօրինի հայատյաց քաղաքականության դեմ զանգատները Նեջաթին չեզոքացնում էր: Այդ նրանք էին տեղերը մարդ ուղարկում հայերին տեղահանելու և նրանց ջարդերը կազմակերպելու համար, նշանակում էին ջարդի վայրերը: Նեջաթիի և Ահմեդի ներկայացուցիչներն «անձամբ կը ղեկավարեին ջարդերը իրենց հաստատիմ ծառայութիւնը ցոյց տալու համար կառաւարութեան արժանաւոր եղանակով մը»:

Ցեղասպանության մեքենայի անիվները իթիհադի պատասխանատու քարտուղարներն էին: Նրանք սերտաճել էին մսագործ չեթեների խմբերին ու խումբանին և ղեկավարում էին ոճիրների, մարդասպանության, ջարդերի, բռնաբարությունների, կողոպուտի գործողությունները, տարագրության երթուղիների վրա դարանակալման կետեր էին ստեղծում, ղեկավարում դրանց գործունեությունը, անդամակցում լքյալ գույքերի հանձնաժողովներին, մեծ մասամբ ղեկավարում դրանց աշխատանքը: Դատավարությանը ներկա էին երիտթուրքական դահիճ՝ պատասխանատու քարտուղար Մանսիայի՝ Ավնին, Բելոզլուի Սալահեդդինը, Էսքիշեհիրի՝ Ա. Ղանին, Կոնիայի Ա. Կադիրը, Կոստամունիի՝ Մյունիրը, Հասան Ֆեհմին, Կարահիսարի (Աֆիոնի)՝ Սահիբը: Դատավարության մեղադրական եզրակացության մեջ որպես հանցագործներ նշված էին նաև Անկարայի երեսփոխան Հիլմին, Աֆիոնի (Կարահիսարի) երեսփոխան Ահմեդը, փոխգնդապետ Մյուստաֆը, երեսփոխաններ՝ Սաբրին, Ս. Ջիմնոզը, Հ. Թոսունը, պատասխանատու քարտուղարներ Ի. Նամըգը, Բրուսայի՝ Ալի Ռիզան, Բոլվադինի՝ Մահմեդ Ալին, Կոնիայի նախկին վալի՝ Ս. Ռիֆաթը, համալների պետ Ֆերիդը և ուրիշներ: «Կուսակցության պատասխանատու քարտուղարներն իրենց գործունեության ընթացքում,- ասված է մեղադրական եզրակացության մեջ,- անընդհատ միջամտել և իրենց կամքն են թելադրել պետական բոլոր գործերում... Միություն և առաջադիմություն կուսակցության առաջնորդները մի ներքին ահաբեկչական ուժ ստեղծելով՝ զանազան ձևերով այլափոխել են Օսմանյան կայսրության սահմանադրական օրենքները և իրենց քմահաճ գործարքներն իրականացրել են վիլայեթներում «պատասխանատու քարտուղարներ և լիազորներ» անվան տակ իրենց մարդկանց միջոցով»[215]: Նաև արձանագրվեց, որ պատասխանատու

211 Դ. Ե. Մ 534:

212 Դ. Ե. Մ 574-Մ 577:

213 «Takvim - i Vekai», 1919թ., N3549:

214 Դ. Ե. N Մ469:

215 «Takvim - i Vekai», 1919թ., N3586.

քարտուղարներն իրենց ոճրագործություններում բացարձակապես ազատ էին, պատերազմի ընթացքում «կատարել են գեղծարարություններ, նաև տարագրություններ, ջարդ, աքսոր, սեփականության ավերումներ... Բանակի տրամադրության տակ վերցրած ամենի թաբուրների զինվորներին աշխատեցնելով ակումբներ են կառուցել, տարագրված հայերի մի շարք տներ ակումբների են վերածել և նրանց լքյալ գույքերով տներն են զարդարել... Սպառնալիքի քաղաքականությունից բացի, եթե մեկը օրինակներն հանդգներ ընդդիմություն ցույց տալ, զանազան ձևերով սպառնալիքի էր ենթարկվում...

Վերջապես պետության կենսական խնդիրները լուծելու ... վայր ընտրվել էր իթիհադ վե թերաքը կուսակցության ընդհանուր կենտրոնը և այնտեղ էին մշակել ոճիրների մանրամասները և ապա գործադրել մասնավորապես տարագրության, ջարդերի, սեփականության հափշտակությունների և հարստություն դիզելու համար ոճիրներ և չարաշահումներ են գործել: 1915թ. մայիսի 27-ի ժամանակավոր օրենքով տարագրությունն իրենց անձնական շահերին ծառայեցրեցին: Վերոհիշյալ ընդհանուր կենտրոնը գործել էր կազմակերպությունների ցանցի, ոճրագործների խմբերի և խուժանի միջոցով, մասնավորապես հայերի ջարդերին ու բնաջնջմանն, նրանց սեփականության, գույքի կողոպուտին և հափշտակությանը վերաբերող գործերը կատարել են վերոհիշյալ պատասխանատու քարտուղարները: Ոմանց իբր դյուրություններ տալու պատրվակով դավադրել են և տիրացել նրանց թողած ունեցվածքին, այս ամենը տեսնված ու ապացուցված է»:

«...Ընդհանուր կենտրոնի անդամներից և թեչքիլաթի մախսուսայի ղեկավար Բ. Շաքիր բեյը Էրզրումից հետևյալ ծածկագիրն ուղարկեց Խարբերդի պատասխանատու քարտուղար Ռեսնեցի Նազըմ բեյին. «Ձեր տարագրած հայերը բնաջնջվելու են...»:

«...Անկարայի պատասխանատու քարտուղար Նեջաթի բեյը Ցոզղատի նախորդ մութասարիֆ Ջեմալ բեյին պաշտոնանկ արեց և Բողազյանի կայմակամ Քեմալը, որը հետագայում կախաղան հանվեց, նշանակվեց Ցոզղատի փոխկառավարիչ... չնայած Կաստամունիում հայերը փոքրամասնություն էին և տարագրության օրենքում նշված հանցանքներից զերծ էին, ուստի վալի Ռեշիդ փաշան ասաց. «Ես ձեռներս արյունով չեմ ներկի»... Կաստամունիի պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմի էֆենդին նրա դեմ բազմաթիվ դիմումներ հղեց պաշտոնանկ անելու համար և հաջողացրեց: Բալուի պատասխանատու քարտուղար դոկտ. Միդհատը «Հայերին չենք ուզում» ասելով հանրահավաքներ էր կազմակերպում և իր ազդեցությունն օգտագործելով հաջողացրել էր նրանց տարագրել տալ, իսկ երբ Բալուի փոխմութասարիֆ Ալի Իլմին ընդդիմացել էր, Միդհատը գնում է Կ. Պոլիս և նրան պաշտոնանկ անել տալիս»: Ահա թե ինչ է վկայել Կաստամունիի նախկին վալի Ռեշիդը. «Հասան Ֆեհմի էֆենդին մնասակար արարած է, շարունակել է իր գրգռությունները և ասել է, թե «մեր վալին հայերի պաշտպանն է», ավելի ճիշտ՝ «գյավուների վալին է» և գոռում գոչումներով խառնակություն է առաջացրել, ամենատգեղ ձևերով միջամտել է կառավարության գործերին և մշտապես ձանձրացնելու պատճառով վռնդվել է կառավարության պաշտոնատնից, սակայն հանդգնությունը բազմապատկել, ծածկագրեր է ուղարկել ՆԳ նախարարություն...»: Իսմայիլ Հագ բեյը ցուցմունք տվեց. «Հասան Ֆեհմին հայերի լքյալ գույքերից արժեքավորները յուրացրել է»: Զորավար Ասաֆը վկայեց. «Հասան Ֆեհմիի տանը ակումբի հրդեհի պահին հայտնաբերվել են հայ առևտրականների ապրանքները: Զարաշահումն ակնհայտ էր»: Վահիտը ասաց. «Տարագրության ընթացքում Ֆեհմին ամենազոր դերն է խաղացել...»[216]: Փոխգնդապետ Խուրշուդը գրավոր ցուցմունք տվեց. «Հասան Ֆեհմի էֆենդին... վալի Աթըֆ բեյի ժամանակ կառավարական գործերն իր ձեռքն է վերցրել»: Գնդապետ Իզեթն ասել է, որ «բռնագաղթի հետևանքները շատ վատ են լինելու», որի համար սրվեցին նրա և Աթըֆի հարաբերությունները: Իսկ Հ. Ֆեհմին հայտարարել է, թե «հայերի բռնագաղթը խոչընդոտելու համար թուրքական պատմությունն ու գալիք սերունդը անիծելու են Իզեթ բեյին»[217]: Եղան նման բազմաթիվ ուրիշ վկայություններ՝ «Հասան Ֆեհմին բռնագաղթը կազմակերպողների և ղեկավարների շարքում գործոն դեր ուներ»: «Հասան Ֆեհմին լքյալ գույքերի հանձնաժողովի անդամ լինելով, մտնում էր հայերի գույքերով լեցուն խանութները, պետական ապրանքները լցնելով պարկերի ու կողովների մեջ, ուղարկում էր իր տուն, ապա միայն խանութի պատուհանները բացում ու սկսում էր աճուրդը, նա այդ ժամանակ վալիից ազդեցիկ էր և նրան խոչընդոտող չկար»[218]:

216 «Takvim - i Vekai», 1919թ., N3772.

217 Ն. տ.:

218 Ն. տ.:

Աբդուլ Ղանին 1915թ. մարտից մինչև օգոստոս Սեբաստիայում պատասխանատու քարտուղար էր, Կ. Պոլսից հրահանգ էր բերել հայերի բնաջնջման վերաբերյալ, վալի Մուամերի հետ միասին ոչնչացրեց 5000 հայ, զբաղվեց հայերի ունեցվածքի թալանով: Նրան քննիչի պաշտոնով աշխատանքի տեղափոխեցին Էդիրնե, որտեղ շուտով շատ ազդեցիկ և կառավարությանը թելադրող դեմք դարձավ: Նա զբաղվում էր դրամաշորթությամբ: Մի շարք վկաների ցուցմունքով «բազմաթիվ հայերի էր սպանել տվել... բռնագաղթի վրա մեծ ազդեցություն էր գործել և տարագրության ժամանակ զինված չեթեներ խմբի ոստիկանական կայաններից և պահականոցներից կողոպտել էր տվել տարագրված հայերի դրամները»: Դատարանում հարցաքննվելիս նա խոստովանեց. «Էդիրնեից բոլոր տարագրյալներին խուզարկել է տվել, բոլորի դրամները, զարդերը, արժեքավոր գույքը թալանել է տվել, նրանց զրկելով անգամ ապրուստի միջոցներից և տեղահանել է տվել առանց ժամանակ տալու»: Նա տարագրել է հայերի երեք քարավան[219]: Դատարանում մի խումբ հայերից ստացվել էր հեռագիր. «Թերթերում կարդացինք Միություն և առաջադիմություն կուսակցության Էդիրնեի պատասխանատու քարտուղար Աբդուլ Ղանի բեյի դատավարության մասին: ...Եղած փաստերն ապացուցում են, որ մասնակցել է Էդիրնեի հայերի տեղահանությանը: Օրինակ, տարահանվածների մի մասի գույքը հափշտակելով վաճառել են իրենց մերձավորներին, այն էլ՝ արժեքի 2-3%-ով: Մեր կրած կորուստը չափազանց ծանր է»[220]: Նա հայերի կահկարասիներով կահավորում էր իթիհադի ակումբները: Նոր ակումբներ կառուցելու համար հանգանակություն էր անցկացնում, էժան գներով տների էր տիրանում: Մաղթուն խանումի ձեռքից նրա տունը առավ, տան գինը ինքը նշանակեց: Երբ բողոքեցին, ասաց. «Ես տան գինը 300 ոսկի նշանակեցի և մեկ ոսկի իսկ ավել չեմ տա»: Նա հայ զինվորներին աշխատեցնում էր նոր ակումբների շինարարության վրա, առանց երկմտելու ոտնակոխ էր անում օրենքները: Մեղադրական եզրակացությունում ասված էր. «Հասան Ֆեհմին, դոկտ. Միդհատը և Ա. Ղանին... մասնակից են ընդհանուր կենտրոնի ապօրինի գործերին, նրա գաղափարակիցներն են և տարագրության պատրվակով հայերին կոտորել են, ունեցվածքը թալանել և այլ ոճիրներ գործել... Օժանդակելով գլխավոր ոճրագործին դարձան մեղսակից» և հանցագործ[221]: Դատական արձանագրությունում Ա. Ղանիի մասին նաև կարդում ենք, որ նա տարբեր վայրեր տարագրվող քարավանները բռնագրավել է, դրանց ունեցվածքը կողոպտել ու ավարի տվել: Այդ նպատակով կազմակերպել է չեթեներ և մասնակից է ոճիրներին... Զբաղվել է չարաշահումներով՝ հարստություն դիզելու նպատակով..., ինքնագլուխ գործերում պաշտոնյաներին գործիք ու միջոց է դարձրել և չարախոսել է սահմանադրությամբ որոշված կառավարման ձևի հացեին: Իթիհադ վե թերաքը կուսակցությունը հրապարակ է հանել մի գաղտնի ուժ օսմանյան նահանգներում, հնարվել են նոր միջոցներ կուսակցության գործունեությունը ծավալելու և պատասխանատու քարտուղարների խողովակով կենսագործել է իր նպատակները: Այս գործերը կազմակերպողները գլխավոր հանցագործներ են[222]:

Ֆոն Տիցկան 1915թ. սեպտեմբերի 30-ին գրել է, որ ՆԳ նախարարությունում զրուցել էր Հասան Ֆեհմիի հետ և հարցրել մի հայի աշխատանքից ազատելու պատճառը: Ֆեհմին պատասխանել էր. «Հայեր չենք ուզում պաշտոնյաների շարքերում և մյուս հայ ծառայողներն էլ են աշխատանքից ազատվելու»[223]: «Թուրքը,- շարունակում է Տիցկան,- միայն անպաշտպան ժողովրդին է կողոպտում ու սպանում: Էդիրնեի, Բրուսայի, Անկարայի, Ցալովայի, Կաստամունիի գավառներում, առանց որևէ արդարացնող պատճառի, տարագրեցին ու բռնագաղթեցրին 250 000 անմեղների, ովքեր ռազմաճակատի հետ որևէ կապ չունեին»[224]:

«Երիտթուրքերի «սեկցիաները»,- գրում է Լեփսիուսը,- երկրի խորքի քաղաքներում շարժիչ ուժ էին հանդիսանում, նրանց դերը շատ վճռական էր: Դաժան բռնությունները կազմակերպելու և ի կատար ածելու գործում նրանք էին աքսորվողների ցուցակները կազմում»: Այդ «սեկցիաների» գործունեության մեջ առաջնայինը «հայ քաղաքական առաջնորդների սպանություններն էին»: Աքսորների հրամանների կատարումը վստահում էին բանակի ղեկավարներին և վիլայեթների քաղաքացիական

219«Takvim - i Vekai», 1919թ., N3772:

220 Ն. տ., 28-ը հունիսի 1919թ.:

221 Ղազարեան Հ., նշվ. աշխ., էջ 255:

222 Ն. տ., էջ 259:

223 Ն. տ.:

224 Ն. տ., էջ 255:

իշխանություններին: Հաճախ հրամանները հաղորդում էին բանակի ղեկավարությանը, դրանք փոխանցում էին վալիներին, մութասարիֆներին ու կայմակամներին: Վերջիններս, չնչին բացառությամբ, մեծագույն հաճույքով և առանց ամենաչնչին խղճահարության էին ի կատար ածում այդ հրամանները: «Կենտրոնական կառավարությունը տեղական իշխանություններին պարտավորեցրել էր աքսորների հրամանները ի կատար ածել ամենաճշգրիտ և ամենադաժան ձևով, չխնայելով ո՛չ կանանց, ո՛չ երեխաներին»[225]: Միություն և առաջադիմություն կուսակցության պատասխանատու քարտուղարների դատավարության դատավճռում նաև ասված է. «...Պատասխանատու քարտուղարների և լիազորների հարցաքննություններից պարզվեց, որ Միություն և առաջադիմություն կուսակցությունը ամբողջ երկիրն իր ձեռքը վերցնելուց հետո, այն ներքաշել է համաշխարհային պատերազմի մեջ, կատարել տեղահանություններ, կոտորածներ և կողոպուտ... Տեղահանված հայերի բնակարանները ակումբի վերածելով կահավորել են լքյալ գույքով... (Պատասխանատու քարտուղարները) մասնակցել են պետության գործերին միջամտող Միություն և առաջադիմություն կուսակցության կենտկոմի կատարած հանցագործություններին: Նրանք հատկապես մասնակցել են տեղահանություններին, կոտորածներին և հափշտակված, կողոպտված ապրանքներով դիզել հսկայական հարստություն: 1915թ. մայիսի 27-ին հրապարակված տեղահանության ժամանակվոր օրենքն օգտագործել են անձնական շահույթ ձեռք բերելու նպատակով: Վերջնականապես բացահայտված է, թե ինչպես վերոհիշյալ պատասխանատու քարտուղարներից և լիազորներից մի քանիսը նպաստել և օժանդակել են կենտկոմի ծրագրի իրականացմանը, իրենց մասնաճյուղերում հավաքագրված մարդասպանների և այլ հանցագործների միջոցով կազմակերպել են հայերի կոտորածն ու կողոպտել նրանց ունեցվածքը: ...Այն ժամանակ, երբ Կաստամունիի վալի Ռեշիդ փաշան, ըմբոստանալով տեղահանության դեմ հետևյալ խոսքերով. «Ես ձեռքերս արյան մեջ չեմ թաթախի», հեռացվել էր պաշտոնից նույն վիլայեթի պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմի էֆենդու նախաձեռնությամբ, որը մեծ եռանդով իրականացրել է տեղահանությունը և պատճառ հանդիսացել ողբերգական իրադարձությունների... Բոլոր ապացույցներն ու փաստերը լիովին ապացուցում են, որ կոտորածներն անմիջականորեն իրականացվել են Միություն և առաջադիմություն կուսակցության ստեղծած թեչքիլաթի մախսուսայի կողմից, իսկ պատասխանատու քարտուղարներն իրենց մասնակցությամբ նպաստել ու հեշտացրել են այդ գործը»[226]:

Ղոսեյնն իր տեսածներից ու լսածներից եզրակացնում է, որ «Հայոց նշած խժդժութիւններուն պատասխանատուութիւնը կերթայ Իթթիհատ վե թերաքքիի անդամներուն, որոնք երկրին ղեկը ձեռք առած էին և որ հայոց հանդեպ ցեղային մոլեգնութենեն և նախանձեն մղուած միայն գործեցին»: Ղոսեյնի համոզմունքն է, որ «ոչ միայն հայոց կողմե ջարդեր կամ խռովութիւններ տեղի չունեցան, այլ նաև ոչ իսկ ամենապզտիկ դեպքի տեղի տուին, արդարացնելու համար իրենց հանդեպ թուրքերուն անգութ արարքները»[227]:

Հայերի բռնագաղթի ավարտին իթթիհադի կենտրոնը ավելի լայն թափ էր հաղորդում կատարվածն արդարացնելու քարոզչությանը: Հնարվում էին ամենատարբեր հեքիաթներ հայերին, ոչ թե անհատներին, այլ ամբողջ հայությանը հանցագործ հանելու համար: «Մեղադրանքների» այդ շարքը ձևավորեց մի ամբողջ համակարգ:

Մեքքայի չերիֆ Հ. Ալիի 26. 06. 1916թ. հայտարարության մեջ ասված էր. «Անգամ խղճից զուրկ մարդիկ իրենց թույլ տալ չէին կարող մի հարվածով կործանել այնքան կյանք, եթե անգամ լինեին անապատի գազաններ: Նրանք մարդկանց բացեիբաց սպանում էին փողոցներում... ինչպե՞ս ներենք նրանց... ովքեր ժողովրդին արտաքսեցին սեփական բնակավայրերից, տղամարդկանց մեկուսացրին իրենց զավակներից ու կանանցից: Վերջիններին պատվաստեցին, ովքեր տեսան իրենց զավակների սպանվելը սեփական ձեռքերի մեջ, երկար ու տանջալի ճանապարհ՝ չկար սնունդ, ցրտից ու արևից պաշտպանվելու միջոց»[228]:

225 Lepsius J., նշվ. աշխ., էջ 51:

226 «Takvim - i Vekai», 1919թ., N3772:

227 «Ցուշամտեան Մեծ եղեռնի», էջ 419:

228 «Հայոց ցեղասպանության պատմություն», 2005, թիվ 10-11, էջ 166-167:

4. ԵՐԻՏԹՈՒՐՔ ՊԱՐԱԳԼՈՒԽՆԵՐԸ

Իթթիհադի, որպես քաղաքական կուսակցության, ձևավորումը միանգամից չկատարվեց: «Երիտասարդ թուրքեր» անվան տակ հանդես էին գալիս ամենատարբեր, որոշ դեպքերում նաև գաղափարախոսությամբ ու գործելակերպով իրարամերժ խմբեր ու անձինք: Նրանց մի մասը ժամանակի ընթացքում հիասթափվելով հեռացավ շարժումից, մի մասը ձևավորեց Իթթիլաֆ կուսակցությունը: Թուրքական պատմագրության մեջ երիտթուրքական կուսակցության առաջանալը ներկայացված է հետևյալ ձևով. «Սուլթան Համիդի անհեռատես, անպատվաբեր և ճնշող վարչակարգը օսմանյան մարտականորեն տրամադրված երիտասարդության մի մասին մղեց ընդվզման: Դրանք նոր օսմանցիներ, Գենչ թուրքլեր (Երիտթուրքեր) անունը վերցրին ու արտասահմանում թերթեր հրատարակեցին: Օսմանյան կառավարությունը բավական զբաղվեց, մերթ բացահայտ և մերթ գաղտնի աշխատեց նրանց հրապարակից մաքրել, բայց հաջողություն չունեցավ... Հայ հեղափոխական շարժումները, Կրետեի և Մակեդոնիայի հարցերը, ներքին տնտեսության քայքայումը, Աբդուլ Համիդի իշխանության զեղծումները ուժեղ տվեցին երիտթուրքերի պայքարի համար»[229]:

Երիտթուրքերի հիմնադիր առաջնորդները (Ահմեդ Ռիզա, Մուրադ բեյ, Թեմոն և ուրիշներ) աստիճանաբար անցան երկրորդ պլան, չնայած շարունակեցին կուսակցության շնորհներին արժանանալ: Այդ «բնական ընտրության» արդյունքում դրության տեր դարձան երիտթուրքերի Սալոնիկի կենտրոնի ղեկավարները, որոնց մեծամասնությունը թուրքական ծագում չուներ: 1906թ. Սալոնիկում ստեղծվում է երիտթուրքական մասնաճյուղ, որի կազմում էին Բուրսալը Թահիրը, Նաջին, Թալեաթը, Մեդհատ Շուքրին, Ռահմին, Էոմեր Նաջին, Քյազըմ Նամին, Իսմայիլ Ջանփոլադը, Իսմայիլ Հաքը և Սուլեյման Ֆեհմին: Մասնաճյուղի տասը անդամներից վեցը զինվորական էր: Նիստերը տեղի էին ունենում Ի. Ջանփոլադի և Մ. Շուքրիի բնակարաններում: 1907-1908թթ. կազմակերպությանն անդամակցել սկսեցին Էնվերը, Սալահեդդինը, Նիազին, Էյուբ Սաբրին: Մասնաճյուղեր ստեղծվեցին Ռեսնեում և Օխրիտայում: Նազըմը Փարիզից անցավ Զմյուռնիա և հազարապետ Թահիրի հետ միասին կազմակերպեց իթթիհադական բջիջներ: Տեղական կազմակերպությունների հետ իթթիհադի կապն իրականացնում էր Բեհաեդդին Շաքիրը: Երիտթուրքերի 1907թ. համաժողովը վերանայեց կուսակցության կանոնադրությունը, հոդվածների թիվը 30-ից հասցվեց 67-ի, որից տասը պատիժներ սահմանող հոդվածներ էին:

Երիտթուրքերը, գրում է Հ. Մորգենթաուն, տապալեցին Աբդուլ Համիդի վարչակարգը, սակայն որդեգրեցին սուլթանի «սիրելի» աշխատաեղանակները: Մի Աբդուլ Համիդին փոխարինեցին բազմաթիվ Համիդներ: «Ձերբակալություններն ու աքսորները քսաններով էին հաշվվում, և քաղաքական հանցագործների, այսինքն՝ կառավարող հրոսակախմբի դեմ ելնողների համար կախաղանները լոկ շաբաթային միջոցներ էին»[230]: «Երիտթուրքերն իրենց ընկերների հետ,- ասում է զորահրամանատար Ա. Իզեթը,- անդամալուծեցին և քանդեցին երկիրը, բարոյապես ապականեցին այն հօդուտ իրենց գրպանի»[231]: Քեմալ Աթաթուրքը իթթիհադի պարագլուխների մասին ասել է. «Նախկին երիտթուրքերի այս մնացորդները, որոնք պատասխան պետք է տային միլիոնավոր քրիստոնյա հպատակների զանգվածային և անողոք տարագրությունների և ջարդերի համար, ըմբոստացան հանրապետական վարչակարգի օրոք: Մինչև օրս նրանք ապրել են կողոպուտի, գողության, կաշառակերության միջոցով և անընդունակ դարձան, չհաշտվեցին իրենց ճակատի քրտինքով պարկեշտ ապրելու գաղափարի հետ»[232]: Քեմալի կարծիքով՝ պանիսլամիզմի թուրք հետևորդների մեջքով թուրքիան կորցրեց արաբական երկրները[233]: Նա նաև գտնում էր. «Իթթիհադ վե թերաքքին ժողովրդավարական իմաստով կուսակցություն լինելուց առաջ գաղտնի կոմիտե էր»: Ա. Քուրանն իր «Osmanli Imperatorlugunda inkilap hareketleri ve milli muscadele» (Ist., 1956) ծավալուն աշխատության մեջ գրում է. «Պետական գործերը Իթթիհադի գաղտնի նիստերով էին առաջ մղվում... նրանց պարագլուխներից յուրաքանչյուրն իրեն նախարար էր համարում: Երկրի բոլոր նահանգներում և մասերում մեկական

229 «Tahirih», cilt III, s. 140.

230 Մորգենթաու Հ. Հուշեր, էջ 18:

231 Izzet A. Pasa, Denkwurdigkeiten des Marshalls Izzet Pascha. Leipzig, 1927, s. 299:

232 Գևորգեան Կ. Ամենուն տարեգիրքը, Բեյրութ, 1965, էջ 268:

233 Kemal A. «Nutuk»(1919-1927), Istanbul 1938, s. 508-509:

հակիչ-քարտուղարներ էին նշանակել...: Բանակը նույնպես նրանց հրամանատարության ներքո էր, երկրի պետական մեխանիզմն ամբողջությամբ տարվում էր կեղծարարությունների ուղիով»[234]: Նրանց ջանքերով «մարդիկ են անհետացել», «Երկիրը փուլ է եկել, խոշոր կայսրությունը մի քանի մարդու զոհն է դարձել»[235]: «Կայսրության անկման գլխավոր պատճառը,- շարունակում է Քուրանը,- Իթիհադի կենտրոնն էր: Կայսրությունը դարձավ նրանց եսասիրության զոհը»[236]: Եվ ապա. «Իթիհադի պարագլուխների մեջ ազնիվ նպատակադրմամբ հայրենասերներ կային, բայց խորհրդատու, լայնախոհ՝ գրեթե ոչ մեկը չկար»[237]:

Հերբերտ Ադամսը մի փոքր այլ կարծիքի էր. «Համոզմունքով, ազնիվ և անկեղծ գործող երիտթուրքերի թիվն այնքան փոքր էր, որ նրանք ոչինչ անել չէին կարող այնպիսի մարդկանց դեմ, ինչպիսիք Միություն և առաջադիմություն կոմիտեի անդամներն էին, որոնց վառ ներկայացուցիչներն էին Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Ջավիդը, Խայրին, Ա. Ռիզան, Նազիմը, Հ. Ադիլը, Բեդրին և Հուսեին Ջահիդը»: Մանավանդ որ մահմեդականներն այնքան հետամնաց էին, որ «սահմանադրության անկեղծ կողմնակիցներն անզոր էին նրանց աջակցությունը ստանալ»: Դրան պատրաստ էին միայն քրիստոնյաները: Հենց այդ պատճառով է, որ հայ տարրն անմիջապես համարվեց «լուրջ վտանգ նոր կառավարության համար»: Եվ երիտթուրքերը սկսեցին հայերին հետապնդել ճիշտ այնպես, ինչպես այդ անում էր Աբդուլ Համիդը, որը վախենում էր, թե հայերը կարող են «նշանակալից դեր խաղալ Թուրքիայի վերածննդի գործում: Սահմանադրությունը, որին հայերը ողջունեցին որպես իրենց քաղաքական էմանսիպացիայի արշալույս, գրեթե անմիջապես ճակատագրայնորեն դարձավ նրանց մահվան վճիռը»[238]:

Իթիհադը փոխանակ զբաղվեր կայսրության փրկությամբ, «ուրիշներին փրկելու խնդրով էր մտահոգված», որով «գրգռեց հարևան երկրներին»: «Իթիհադի ծրագրին չհետևողները որակվեցին «Վաթան խայինի... ժողովրդի հանդեպ վերաբերմունքը կարոտախտ առաջացրեց Աբդուլ Համիդի օրերի հանդեպ... Իթիհադի կենտկոմի համար բուլղարացիները, սերբերը, հույները և հայերը երկրի թշնամիներն էին, իսկ արաբները, ալբանացիները ու քրդերը՝ հայրենիքի թշնամիներ: Ընդդիմադիր թուրքերը՝ «փարա իլե սաթըմըշ» մարդիկ էին[239]: Ոչ միայն Իթիհադն էր հակադրվում մյուս քաղաքական ուժերին, այլև Իթիհադի ներսում կային լուրջ հակադրություններ: Քուրանը նշում է. «... Թալեաթին և Կարասունուն սպանել ցանկացող Քեմալը և Հազը, Ջեմալին սպանել ուզեցող ժանդարմերիայի հրամանատար Մեհմեդը, մահապատժի դատապարտվեցին... Ջեմալ փաշայի միջնորդությամբ պատժից ազատվեց Մելվան Զադեն: Էնվեր փաշան հրապարակ հանեց թեչքիլաթի մախսուսա խմբակը: Դրա նպատակը բոլոր իսլամներին մի դրոշի տակ համախմբելն էր և անգամ Զիա Գյոքալփի մտքերն Իթիհադին ներարկելը, նոր քաղաքականությամբ զբաղվելուն մղելը և պանիսլամիզն ու պանթուրքիզմը հզորացնելը»: Իթիհադականները նաև ահաբեկիչներ էին, մահափորձ կազմակերպեցին Շերիֆի և մի շարք ընդդիմադիր գործիչների դեմ: «...Կոմիտեն (Իթիհադի) եղբայրաբար իր կազմի մեջ ընդունում էր ամեն ազգի ու հավատի մարդկանց»: Նրա ղեկավարների թվում կային հույներ, հայեր, հրեաներ, թուրքեր և ուրիշներ: Կոմիտեն գաղտնի կապի մեջ էր Մակեդոնիայի մի քանի փոքրամասնությունների հետ: «Թեև կոմիտեի անդամներն արտասահմանում հայտնի էին որպես երիտթուրքեր, սակայն նրանք իրենց չէին համարում թուրք ազգայնականներ»: Իթիհադի կենսագրությունն ուսումնասիրողներից շատերը զարմանում էին թուրք բուրժուազիայի ներկայացուցիչների պարբերական գունափոխության վրա: 1908թ. Ռեսնեում 250 երիտասարդ սպաներ խիզախաբար ձեռնոց նետեցին օսմանյան Փադիշահին: Նրանք Սալոնիկի գլխավոր տեսուչ Հիլմի փաշային ուղարկեցին հեռագիր, թե «իշխանությունները ճնշում են ժողովրդին և ոտնահարում նրա իրավունքները, այսինքն՝ երաշխավորված չէ կյանքի, պատվի և ունեցվածքի անվտանգությունը... Եթե սուլթանը

234 Kuran A. Osmanli Imperatorlugunda ve Turkiye cumhurriyetinde inkilab hareketleri. Istanbul 1959, s. 479.

235 Ն. տ., էջ 481:

236 Ն. տ., էջ 497:

237 Ն. տ., էջ 538:

238 Ադամս Հ., նշվ. աշխ., էջ 22-23:

239 Kuran A., նշվ. աշխ., էջ 539:

շարունակի (այս ամենի մասին) լռել, մենք և մեր երիտթուրք ընկերները պատրաստ ենք մեր արյան վերջին կաթիլը թափել արդար գործը հաղթանակի հասցնելու համար»[240]: 11 Հուլիսի 24-ին Ազգային հեղափոխական կոմիտեի անունից տարածվում է հետևյալ կոչը. «31 տարի շարունակ կ. Պոլսում մի քանի պատվազուրկ անհատների կողմից, ովքեր սողոսկել են ազգի և տիրակալի միջև, օրենքները ոտնահարվում են, պետական բոլոր պաշտոնները իջեցվել են առուծախի ապրանքների աստիճանին, ազգը արյունաքամ է եղել և կործանվում է: Նույն ժամանակ ստոր արարածները միլիոններ են գրպանում և պալատներ կառուցում, բանակը քրքրված հագուստներ է կրում... կաշառված վարչակազմը պետք է հեռացվի և փոխարինվի ժողովրդական ներկայացուցիչներով»[241]: Նույն օրը ստացվեց «Ազգային կոմիտեի» պատասխան հեռագիրը. «Մենք, այստեղ հավաքված 10 000 հոգիս, բոլոր դասերի ներկայացուցիչներս, վիլայեթի բոլոր կայաններում այսօր հրետանու 21 համազարկով ազատություն հռչակեցինք: Մեր նպատակն է՝ «Սահմանադրություն կամ մահ»[242]: Հեռագրի ընթերցումն ավարտելուց հետո ներկաները երգեցին «Մարսելյոզը»: Ցերեկվա ժամը 2-ին Պոլսից հեռագիր ստացվեց, որ սուլթանը վերականգնում է սահմանադրությունը: Սկսվեց հաղթանակի խրախճանքը: Բանտերի դռները բացվեցին:

Բայց ահա թե տասնմեկ տարի անց ինչ գնահատականի արժանացան «ազատության այդ ավետաբերները»: Երիտթուրքերի դատավարության մեղադրական եզրակացության մեջ ասված է. «Կան ապացույցներ, որոնք վկայում են, որ Կոմիտեն (Իթիհադի) մեղադրվում է մի շարք սպանությունների, թալանի և անօրինականությունների մեջ... այդ Կոմիտեի ազդեցիկ ղեկավարների պատասխանատվությունը հաստատված է... օգտվելով, որ Եվրոպայում մտքերը զբաղված են համաշխարհային պատերազմով, ձգտեցին չլուծված հարցերը լուծել բռնի ուժով... Լիովին ապացուցված է, որ կոտորածները տեղի էին ունենում Թալեաթ, Էնվեր և Ջեմալ բեյերի հրամաններով և գիտությամբ...»[243]: «Էնվեր, Թալեաթ և ընկերները բացարձակ իշխանության հասան և իշխեցին սարսափազդու միջոցներով: Ով նրանց դեմ էր, անմիջապես անհետանում էր, ինչպես այդ անում էր սուլթան Աբդուլ Համիդը»[244]: Պատերազմի սկզբից կոմիտեում սկսեցին զբաղվել գտնելու եղանակը, որով կարողանային պատերազմի առիթը օգտագործել հայերին պատուհասելու համար, որոնք ձգտել և հաջողացրել էին ստանալ բարենորոգումներ: Դա դիտավորություն էր մեկընդմիշտ վերջ դնելու Հայկական հարցին: Թուրք նախարարներից մեկը հայտարարեց. «Պատերազմի ավարտին Պոլսում ոչ մի քրիստոնյա չի լինելու»[245]: Երիտթուրքերի կենտկոմի անդամները բազմիցս հայտարարել են. «Օտարականները պետք է անհետանան Թուրքիայից, նախ հայերը, հետո հույները, հետո հրեաները և ամենավերջում եվրոպացիները»: Մի թուրք սպայի ասում են, որ ինքը մի քանի հանցավորների հետ պատժում և ոչնչացնում էր անմեղների մեծաթիվ ամբոխի: Նա պատասխանում է. «Նույն հարցն ուղղում էին մեր մարգարե Մուհամմեդին»: «Թող Աստծո խաղաղությունը ձեզ հետ լինի,- պատասխանել է մարգարեն,- եթե քեզ լուն կծի, մի օր բոլոր լվերին սպանելու ես»[246]:

Մ. Թուրանը երիտթուրքերին ներկայացնում է հետևյալ կերպ. «Սահմանադրության հռչակումից անմիջապես հետո մարդասպանները բանտերից դուրս եկան և մտնելով Իթիհադի շարքերը սպանություններ կատարեցին... լրագրողներ Զեքիին, Հասան Ֆեհմիին, Ահմեդ Սամիին որպես Իթիհադի հակառակորդների ոչնչացրեցին... Զոհրապին ու Վարդեսին սպանողները նույնպես բանտից ազատված մարդասպաններն էին... Թաշքըշլայի զորանոցի զինվորներին հրահրողները և կռվելու վերաբերյալ սուլթանին վերագրվող հրամանի և կնիքի կեղծողները Իթիհադականներն էին... Դրանով ձգտում էին Համիդին տապալել և այդ նրանց հաջողվեց...»: Նա գտնում է, որ Իթիհադի պատմությունը սկզբից մինչև վերջ լի էր սպանդներով: «Քիչ մնաց, որ նրանք թուրքերի լրիվ ոչնչացման պատճառ դառնային... Վիթխարի պետությունը տասը

240 Wien, HHSTA PA XXXVIII 409 Saloniki, 18 Juli 1908, Nr.

241 Ն. տ., 24 Juli 1908, Nr. 15:

242 Ն. տ.:

243 «Takvim- i Vekai», 1919, N 3540.

244 Charlies V., My Compain in Mesopotamia. London, 1920, p. 382.

245 «Ցուշամատեան Մեծ եղեռնի», էջ 1077:

246 Ն. տ.:

տարում հաշմեցին... միլիոնավոր թուրք զավակների գլուխներ կերան»[247]: Ռ. Կարաբեքիրը գրում է. «Իթիհադի կենտրոնը դարձել էր պետության մեջ պետություն... Թուրքիան պատերազմի մեջ չպետք է մտներ, խաղալիք չպետք է դառնար գերմանական սպաների ձեռքին և չպետք է ձգտեր Մեծ Թուրքիայի ծրագրերի իրականացմանը..., այլ զբաղվեր բուն Թուրքիայի պաշտպանությամբ... Մեծ պատերազմի մեջ մտնելով շատ զոհեր տվինք և շատ բան կորցրեցինք, Օսմանյան կայսրությունը կտոր-կտոր եղավ...»[248]: Իշխանության տիրանալու առաջին իսկ օրից երիտթուրքերի հայացքը հառած էր գերմանացիներին: 1908թ. հուլիսի 24-ին Մահմուդ Շևքեթը հեռագրեց Գոլցին. «...Ձեր հնազանդ աշակերտները ստիպեցին թուրքական հին կառավարությանը... ընդունելու սահմանադրություն»[249]: Գոլցը չհավատաց Թուրքիայի ժողովրդավարացմանն ու իր օրագրում նշեց. «Մի բռնապետությունը փոխարինեց մյուսին»[250]:

Իթիհադը նշանավորեց մասոնականության հաղթանակ: Հունգարական օթյակները շնորհավորեցին Սալոնիկի իրենց եղբայրներին: Միլանի «Corriera dela serra» լրագրում հեղաշրջման ղեկավարներից մեկը գրեց. «Մեր կազմակերպությունն օգտագործել է մասոնության ձևերն ու ծեսերը»[251]: «Սալոնիկի մասոնները,- պատմում է Մ. Թուրանը,- կարծես թե Թալեաթ բեյին ապագայում օսմանյան կայսրության վարչապետ դարձնելու մտահոգությամբ, նրան անմիջապես իրենց շրջապատը մտցնելով առաջ մղեցին... և նրան ամսական անգլիական 10 հնչյուն ոսկի վճարեցին»: Դա Կարասուի գործն էր, որը փաստաբանական գրասենյակ բանալով Թալեաթին էլ աշխատանք տվեց, նրան բռում պահել կարողանալու համար»[252]:

Մի երևույթ ևս: Գերմանացի հրեաները հավանություն էին տալիս Թուրքիայի հանդեպ կայզերի քաղաքականությանը, ինչպես նաև խրախուսում էին գերմանացիների միգրացիան Թուրքիա, գտնելով, որ դրան պետք է մասնակցեն նաև գերմանախոս հրեաները, ինչը հնարավորություն կստեղծեր ապահովելու Գերմանիայի հովանավորությունը հրեաների հանդեպ Պաղեստինում: Այսինքն՝ գոյություն ուներ իթիհադի ու սիոնիստների փոխադարձ համակրանք: Սակայն 1913-ին վիճակը փոխվեց, երբ երիտթուրքերը կառավարական պաշտոններ տրամադրեցին զտարյուն թուրքերին, իսկ «սրբազան պատերազմի» հայտարարելն ավելի ուժեղացրեց հակասեմիտական տրամադրությունները: Թուրքերը հետապնդում էին հրեաներին հույսով, որ այդպիսով կնվաճեն Անտանտի երկրներում բնակվող մահմեդականների համակրանքը: Պաղեստինում բնակվող շատ հրեաներ հարկադրված եղան մահմեդականություն ընդունել, կամ արտագաղթել: Հրեաներին սպառնում էր բռնագաղթն ու ոչնչացումը: Ռ. Կարաբեքիրը նույնպես անդրադառնում է մասոնական օթյակներին, որոնց թիվը հասել էր 58-ի և դրանց անդամակցում էին իթիհադի հանրաճանաչ ղեկավարները, որոնք նույնպես տխուր դեր խաղացին Օսմանյան կայսրության կործանման գործում: Մ. Թուրանը գրում է. «Թալեաթ փաշան, Սուլեյման Ասքերին, Վեհիբը, Էյուբ Սաբրին և բոլոր ալբանացի սպաները մասոններ էին: Փարիզի Ռիզա բեյն ու իր ընկերները սրանց միացան»: Նրա կարծիքով՝ սկսած 1900 թվից իթիհադականները «որոշեցին մասոնա-սիոնիստական հացին յուղ քսել սիոնիզմի հակառակորդ Համիդ 2-րդին ամեն գնով տապալելու համար»: Հրեաները կայսրությունում իրենց վատ չէին զգում: Բայց սիոնիստական վեց մեծերը Ռևալի ժողովում որոշեցին մասնատել Օսմանյան կայսրությունը: 1897-ին հրեական համաժողովը Թեոդոր Հերցլի առաջարկով որոշում ընդունեց Պաղեստինում ստեղծել հրեաների հայրենիք: Ըստ Մ. Ռիֆաթի՝ պատերազմ սկսելու նախաձեռնության հեղինակներից Կարասուն էր, որը դեռ 1901թ. Ավստրիայի արտաքին գործերի նախարար հրեա Էրենթալի միջոցով Աբդուլ Համիդին առաջարկել էր 20 000 000 ոսկի փոխառություն առանց տոկոսի և 5 000 000 ոսկի էլ նվեր, որպեսզի հրեաներին հող հատկացվեր Պաղեստինում: Սակայն երբ Հերցլն այդ գումարը փորձեց տալ սուլթանին, վերջինս նրան դուրս քշեց: Դա սիոնիստներին դարձրեց սուլթանի կատաղի թշնամիներ: Սուլթանին գահընկեց անելու նպատակով հրեաները կապեր հաստատեցին նաև հայկական կազմակերպությունների հետ: Նրանց «հրահանգով կատարվեց 1905թ. մահափորձը սուլթանի վրա»: Սիոնիստները բանակցություններ սկսեցին նաև երիտթուրքերի հետ, մանավանդ որ իթիհադի շարքերում առաջատար դեր էին խաղում բալկանյան հրեաների ներկայացուցիչներ Նազրմը, Մ. Շուքրին, Ջավիդը, Ռահիմը, Ռեմզին և ուրիշներ: Կարասուն Սալոնիկի Ռիզորթա ֆրա-Մասոն օթյակի հետ կարողացավ Սալոնիկի քաղաքական, կրոնական և զինվորական գլխավոր գործիչներին մասոն դարձնել: Այդպիսիների թվում էին Թահիրը, Մուսա Քյազիմը, Խայրին, Ռիզա Թևֆիկը, Կազիմ Նամին: Կարասուն մի քանի նոր օթյակներ հիմնադրեց նաև Կ. Պոլսում, որոնք կադրեր էին հավաքագրում իթիհադի համար: Ֆրանսիական օթյակի ղեկավարը, որի կազմում էր նաև շեյխ ուլ իսլամը, ֆինանսների նախարար Ջավիդն էր: Իթիհադի հրեաները «տեռոմներ կը կոչուեին: Անոնք ժամանակին Սպանիայեն գաղթած էին, իսլամացած... իբրև իթիհատականներ անոնք կանդամակցեին գաղտնի որմնադրական օթեակներուն: Ասոնցմե ոմանք կը կուչուեին «Իզմիրլի», կածիլեին իրենց կզակը: Կային «Սապաթայի որդիներ» կոչուածները, որոնք կածիլեին իրենց գլուխը: Կար երրորդ հատուած մը... որ կը հետևեր Օսման Պապա կոչուած լիտրրին: Ասոնք իսլամի կը նմանուեին... Ճավիտ պեյը և իթիհատական ընկերներեն շատերը այս տեռոմներեն էին»[253]: Է. Թեյլորը նույնպես նկատել է, որ երիտթուրք գործիչներից շատերն անդամակցում էին մասոնական օթյակներին, որոնք կապված էին «Մեծ Արևելք» ռազմամոլ Մեծ օթյակի հետ: Մասոնությունը, անկասկած, մեծ դեր է խաղացել նրանց հայացքների ձևավորման գործում: Համենայն դեպս, կարելի է ենթադրել, որ երիտթուրքական դավադրության մեջ խառն էր Սալոնիկում իտալական հյուպատոսարանի մատը, որին հովանավորում էր «Մակեդոնիա Ռիզորտա» օթյակը: Նույն միտքն է հաստատում նաև Մ. Ռիֆաթը. «Սիոնիստական միությունը, երբ չկարողացավ դրամի ուժով Պաղեստինի անկախությունը ստանալ. ծրագրեց ներքին յեղափոխություններ... Ավստրիայի ԱԳ նախարար հրեա պրն Էրենթալի հետ համաձայնելով Մակեդոնիոյ յեղափոխական կուսակցութեան գործիչներեն Սանտանսկին Իաքուպ հրավիրելով համաձայնագիր ստորագրեց... կարճ ժամանակի ընթացքին դրամի ուժով Գ. բանակի շատ մը սպաները կրցած էր համոզել և Իթիհատ վե թերաքքը անունով յեղափոխական կուսակցութիւն մը հիմնել և Մանսուրիի, Իսկուպի և Շեստրայի մեջ ալ մասնաճիւղեր բանալ»: Սիոնիստները երիտթուրքական ապստամբությամբ ահաբեկում էին սուլթան Համիդին[254]: Անգլիացիները սրամտում էին. «1908 թիվը դա ժիդո-մասոնական հեղաշրջում էր»: Կ. Պոլսի «Փեյամ» թերթը 1922թ. օգոստոսի 17-ին գրեց. «Հայերի և հույների կոտորածը կատարվել էր դեռոմների ձեռքով, քանի որ ցանկանում էին նրանց տեղը բռնել առևտրում և տիրանալ նրանց հարստությանը»:

Ադանայի ահավոր կոտորածը ցույց տվեց՝ երիտթուրքերը, ովքեր Եվրոպայում լիբերալի համարում էին ձեռք բերել, ցուցադրեցին, որ կամակոր դաժանությամբ ոչնչով չէին զիջում Մեծ մարդասպան Աբդուլ Համիդին: Ազգային միատարրություն ստեղծելու նրանց ձգտումը խորացավ Բալկանյան պատերազմի ժամանակ «համագերմանականների և գլխավոր շտաբի հարաճուն աղմկոտ պահանջներով, որոնց կարծիքով Թուրքիան իր բանակի մարտունակությունը պետք է վերականգներ նախ և առաջ նրանից հեռացնելով քրիստոնյաներին...»[255]: «Օսմանյան կառավարությունը, անկասկած, դեռ այն ժամանակ մոտալուտ աշխարհամարտը առավել նպաստավոր պահ էր համարում վաղուց ի վեր փայփայած ծրագրի կենսագործման համար: Զիհադը, որ Թուրքիան հայտարարեց գերմանական կառավարության հրահրմամբ կամ հավանությամբ, ունեցավ մի հետևանք, որ թուրքերին օգնեց իրականացնելու բնաջնջման իրենց ծրագիրը՝ կազմակերպելու Արևելքի քրիստոնյաների, հատկապես հայերի, գրեթե լիակատար բնաջնջումը: Եվ այդ արվեց, որովհետև հայի միակ մեղքն այն էր, որ չէր հրաժարվում իր ազգությունից ու հավատից և չէր համաձայնվում ընդունելու մահմեդականություն»[256]:

247 Turan M., Teskilata 31 Mart... s. 88-91.
248 Karabekir K. Cihan Harbine... s. 138.
249 Von der Goltz, Denkwurdigketten, Berlin, 1929, s. 312.
250 Ն. տ., s. 314:
251 Wien, HHSTA, PZ 192, 6 october 1908, od. 5.
252 Turan M., նշվ. աշխ., s. 37.

253 Ղազարեան Հ., նշվ. աշխ., էջ 91-93:
254 Ռիֆաթ Մ., նշվ. աշխ., էջ 77-86:
255 Marquart Die Entstchung und Wiederherstellung der Armenischen Nation. Berlin, 1919, s. 45-48
256 Նույն տեղում, էջ 53:

«Իրենց իշխանությունն ամրապնդելու համար,- գրում է Պարտիզակի ամերիկյան դպրոցի ուսուցչուհի Ադա Զեմբերսը,- եռյակը՝ Էնվերը, Թալեաթը և Ջեմալը, օգտվեցին մի դիվային պլանից և արձակվեց Թուրքական նացիոնալիզմի ճիչը՝ «Թուրքիան Թուրքերի համար», որ նշանակում էր, թե բոլոր այլազգիներին հարկ է ոչնչացնել»: Այս ցնցող հետևությունը չքննադատվեց և ոչ մի Թուրք մտավորականի կողմից[257]:

Ա. Մանդելշտամը հաստատում է. «Այո, Էնվերը և Թալեաթը՝ կայսրության երկու բռնապետերն են, հայերի նախճիրի գլխավոր մեղավորները: Շատ հավանական է, որ նրանք եղեռնագործության էին հրավիրվել չարագուշակ դոկտորներ Բ. Շաքիրի և Նազիմ բեյի կողմից... Սա ասելով, չենք ուզում հանել պատասխանատվությունը Սայիդ Հալիմի կառավարության մյուս անդամների վրայից... Ոչ մեծ վեզիր Ս. Հալիմ փաշային՝ դատարկամիտ ու փքված, ոչ մեծ իրավաբան Հալիլ բեյին և ոչ էլ Նենգ Ջեմալ փաշային չի հաջողվի սեփական անունների վրայից մաքրել ահավոր կեղտը»[258]: Էնվերը Լեփսիուսին բացահայտ ասել էր (10-ը օգոստոսի 1915թ.), թե թույլ չի տա Նրան կամ որևէ օտարերկրացու իրականացնելու հայ տարագիրներին օգնելու որևէ ծրագիր, որ հակահայկական միջոցառումներն ընթացքի մեջ են և ներկայումս պետք է վերջ տրվի հայերին[259]:

1908 թվականին իթիհադի նպատակաուղղվածություններն ամփոփված են հետևյալ չորս կետերի մեջ՝ կրոնի ազդեցության չեզոքացում, Թուրքիայի հարստության աղբյուրները վերահսկողության տակ առնել, խալիֆի իշխանությունը թուլացնել, պատեհ առիթով սուլթանին տապալել և հռչակել հանրապետություն: Սակայն երբ ընդդիմադիր ուժի «արդարամտության և արդարության համար մարտնչողի» ցանկությունն ու պատրաստակամությունը սառեցին, անմիջապես խզում առաջացավ ցանկության, խոսքի և կատարածի միջև ու հազիվ մի քանի ամիս անց ակնհայտ դարձավ, որ օսմանյան սահմանադրությունը պատրանք էր: Թուրքը մնում էր Թուրք՝ հին թե նոր: Հայտնի դարձավ նաև, որ Սահմանադրության հռչակելու նպատակը եվրոպային խաբելն էր: «Իթիհադը,- գրում է Թալեաթը,- ուներ երկու բյուրո: Մեկը խորհրդարանում կուսակցության վարչական խորհուրդն էր, որը զբաղվում էր ներկայացուցչական խնդիրներով, մյուսը՝ խորհրդարանից դուրս, որը կոչվում էր ընդհանուր կենտրոն և զբաղվում էր ընտրություններով, քարոզչությունով, ներքին ու արտաքին քաղաքականությունով: Սա էր կուսակցության ղեկավար մարմինը և ընտրվում էր համագումարի կողմից մեկ տարի ժամանակով»: Թալեաթը «մոռանում է» նշել, որ կար նաև երրորդ կենտկոմը՝ գաղտնի կենտրոնը, որը կազմված էր իթիհադում ամենա-ամենաբարձր դիրք ունեցող ութ անձից, որը ոչ ոքի կողմից չէր ընտրվում, բայց հանդիսանում էր ոչ միայն կուսակցության, այլև պետության փաստացի բարձրագույն իշխանությունը[260]: «Թալեաթ, Էնվեր և Ճեմալ յայտնի ներկայացուցիչներն էին,- գրում է Մորգենթաուն,- բայց իրենց ետևը կը գտնուեր Միութիւն և Առաջադիմութիւն կուսակցութիւնը, բաղկացած մոտավորապես 40 անդամե: Այդ կուսակցութիւնը կը հավաքուեր գաղտնապես, կը պատրաստեր ընտրութիւնները և հանրային պաշտոնները կը վերապահեր իր մարդերուն, կուսակցութեան կենտրոնը կը գտնուեր Պոլիս և իր գերագոյն պետը, որ անոր կը նուիրեր իր ամբողջ գործունեութիւնը, իր հրահանգները կը հաղորդեր իր ստորադասներուն: Այդ պաշտոնատարները, իրենց կարգին, կը կառավարեին կուսակցութիւնը և երկիրը... Այսպես ամբողջական կազմակերպութիւն, աքանչելի պատկեր մը կը ներկայացներ այն բանին, զոր մենք յաճախ կը կոչենք «անտեսանելի կառավարութիւն» անունով»[261]: Ինչպես սովորաբար լինում է տոտալիտար երկրներում, զուգահեռ գործում են երկու կառավարություններ՝ մեկը Սահմանադրական կառավարություն, որը սակայն զուրկ էր փաստական իրավասություններից, ինքնուրույն որոշումներ ընդունելու իրավունքից, մյուսը՝ արտաքուստ չերևացող, բայց բացարձակ իրավունքներից օգտվող կենտրոն՝ վերածված կառավարական համակարգի: Կայսրությունում

257 Chambers A. In an Anatolian valley. New York, 1955, p. 221.

258 Mandelstam A. Le sort de l' Empire Ottoman, Lausanne-Paris, 1917, p. 278.

259 Lepsius J. Berchte, փաստ. N13.

260 Թալեաթ Հուշեր (ձեռագիր), ՀՀ ԳԱԱ, Արևելագիտության ինստիտուտի գրադարան:

261 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 5 (մեմուար):

հաստատվել էր կուսակցական դիկտատուրա, որի բարձրագույն մարմինը ոչ թե սուլթանն էր կամ խորհրդարանը, այլ իթիհադի գաղտնի կոմիտեն: Եթե սուլթանական վարչակարգում անսահմանափակ էին միապետի, ապա հետսահմանադրական շրջանում՝ այդ գաղտնի, որևէ պատասխանատվություն չկրող կենտկոմի իրավունքները, որը որոշումներ էր կայացնում երկրի ու պետության համար ամենակենսական հարցերի վերաբերյալ: «Journal de Geneve» թերթը 1915թ. սեպտեմբերի 9-ին գրեց. «Էնվեր փաշան ցինիկ ժպիտով ինքն է այդ խոստովանել... Երիտթուրքական կոմիտեի որոշման համապատասխան Էնվեր փաշան հրաման է արձակել Անատոլիայի և Կիլիկիայի բոլոր մասերից ամբողջ հայ բնակչությանը արաբական անապատները... արտաքսելու մասին»[262]: Երիտթուրք ութ պարագլուխներից յուրաքանչյուրը իրավասու էր սեփական քմահաճույքով, առանց դատ ու դատաստանի, կառափնարան ուղարկել ոչ միայն առանձին անձանց, այլև մարդկանց խմբերի:

Երիտթուրքերը կեղծիքն անբարոյականություն չէին համարում և դրանից օգտվում էին «գլուխները բարձր պահած»: Նրանք հավատարիմ մնացին քրիստոնյա ժողովուրդների հանդեպ համիդյան քաղաքականությանը, բազմիցս նշվել է, նոր և հին վարչակարգերի աջակցությունը: Նրանք հայերին ապերախտության մեջ էին մեղադրում (Աբդուլ Համիդի նկատմամբ), որպեսզի արդարացնեն իրենց քաղաքականությունը այդ նույն հայերի հանդեպ: «Քրիստոնյա ազգությունների նկատմամբ քաղաքականության մեջ արմատական փոփոխություններ կատարելուց երիտթուրքերի հրաժարվելը... նրանց քաղաքականության ճգնաժամի սկիզբն էր»[263]: Այդ ճգնաժամը միայն սուբյեկտիվ գործոնի հետևանք չէր «Թուրքիայի մեջ, մեկ կողմե ամբոխները խորապես տգետ էին ռամկավարական վարչութեան մը արժեքը գնահատելու համար և մյուս կողմե, երկիրին ընդհանուր ավերումը և շրջափոխությունները ազգը գործնականապես առանց կառավարութեան ձգած էին, հետևաբար, դիւրին որս մը հաստատամիտ արկածախնդիրներու հրոսակախումբի մը: Միութիւն և Առաջադիմութիւն կուսակցութեան մարդերը, գլուխ ունենալով Թալեաթ պեյը, եղան այդ տխուր հերոսները... բոլոր կարևոր քաղաքներուն մեջ կազմակերպուեցան ենթակուսակցութիւններ, անոնց համախոհներ կը հավաքուեին գաղտնապես, կուսային անհրաժեշտ որոշումները և անոնց գործադրութիւնը կը վստահեին իրենց կուսակիցներեն անոնց, որոնք կը վարեին հանրային պաշտոններեն մեծ մասը...

Թալեաթ, Էնվեր և Ճեմալ իրենց «սիսթեմին» ավելցուցած էին մանրամասնութիւն մը՝ ... սպանութիւնը և խմբական մահապատիժը: Անոնք իրենց իշխանութիւնը շահած էին միւս հերձուածներուն վրայ գործածելով այս ընթացքը»[264]:

Սակայն գործածելով չէին բավարարվում, այլ նաև հնարում էին ամեն տեսակի սուտ ու կեղծիք իրենց չարագործությունների հետքերը կորցնելու: Կայսրությունում ներքաղաքական կյանքը այդպես էլ չիդգթափվեց, դրան ավելացան պատերազմի հարուցած տնտեսական դժվարությունները: Ուրուգվայական «Ultima hora de la tribuna popular» թերթը 1915թ. հոկտեմբերի 15-ին գրեց. «Պոլսի բնակչությունը անհանգիստ է տիրող անհուսալի վիճակի տագնապից... Վախ կա, որ տեղի են ունենալու լուրջ հուզումներ, որոնք կարող են վերածվել ընդհանուր ապստամբության»: Թուրքիայի ներքին վիճակի վատթարացման մասին տեղեկատվությունը այնպիսի վարկաբեկիչ արձագանք էր ունենում, որ Նազիմը հարկադրված մամուլի ասուլիս անցկացրեց: Նա հավաստիացրեց, թե ներքին կյանքում Թուրքիան որևէ լուրջ խնդիր չունի, որ մթերքների առատություն է: Իսկ երբ լրագրողներն անդրադարձան հայկական ջարդերին, Նազիմը «խիստ գրգռված պատասխանեց, որ հայերի հալածանքների մասին լուրեր տարածում են հայկական, հունական և հրեական աղբյուրները»[265]:

Մայիսին Կ. Պոլսում հեղաշրջման փորձ արվեց: Նույն թերթը մայիսի 20-ին գրեց, որ Կ. Պոլսում «ձերբակալվել են Մեծ Թուրքերի կուսակցության մի քանի հեղինակավոր անդամներ, որոնք մասնակցել են վերջերս ձախողված հայկական դավադրությանը: Թուրքական մամուլը գրում էր, որ

262 «Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց. 1890-1925», Ֆրեզնո, 1930, էջ 143:

263 Армянский вестник, 1917, N 3:

264 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 17:

265 «El Dia» (Ուրուգվայ), 24-ը դեկտեմբերի 1915թ.:

այդ դավադրությունը կազմակերպվել է Շերիֆի, Իսմայիլի և երիտթուրքերի ուրիշ առաջնորդների կողմից: Դավադիրները նպատակ են ունեցել Դարդանելի անկումից հետո սպանել Էնվերին, Թալեաթին և Անտանտի տերությունների հետ կնքել խաղաղության դաշինք: Կառավարությունը զենքեր, ռումբեր և վարկաբեկիչ փաստաթղթեր է հայտնաբերել շատ հայերի և թուրքերի տներում»: Թերթը նաև նշում է, որ թուրք նախարարները վախենալով ահաբեկչությունից, միայն մեքենայով են փողոց ելնում, այն էլ հեծելազորի ուժեղ հսկողությամբ»: Այսպիսով, արտասահմանյան մամուլն ընդգծում էր Թուրքիայում ուժեղացող հակապատերազմական ու հակաթիհադական խմորումները: Նույն բանն է վկայում անգլիական մի գործակալի զեկուցագիրը, որտեղ գրված է. «Շերիֆ փաշայի և իշխան Սաբահեդդինի դավադրության մեղսակցության կասկածով ձերբակալված է 180 թուրք: Կարծես թե Շերիֆը նույն ատեն հարաբերություն մեջ էր հնչակյաններուն հետ»[266]:

Դավադրությունը ճնշվեց, բայց երիտթուրքերի քաղաքականության նկատմամբ դժգոհությունները ու ընդվզումները գնալով ուժեղանում էին: Դա բացատրվում էր երկրի սոցիալ-տնտեսական ծանր և օրեցօր վատթարացող վիճակով, ինչպես նաև ռազմական անհաջողություններով: «Թանին» 1915թ. մարտի 1-ին գրեց. «Իթիլաֆի ներկայիս ղեկավար Սաղըխ բեյը և Փարիզի հռչակավոր Շերիֆ փաշան ու Գյումյուշինայի Իսմայիլ Հաքը բեյն էին այդ դավադրության գլուխ կանգնած: Սաղըխ բեյը Եգիպտոսում այս խնդրի շուրջ հարաբերություններ մեջ էր մտել հնչակյան կուսակցության հայտնի ղեկավար Սապահ Գյուլյանի հետ և բանակցություններ էր վարել: Նույն կուսակցության... համագումարը բաժանվեց երկու մասի, Սապահ Գյուլյանի ղեկավարության տակ գտնվող մասը որոշել էր անօրինական և հեղափոխական գաղտնի գործունեություն իրականացնել: Սաղըխ բեյի և Սապահ Գյուլյանի միջև կայացած համաձայնության հետևանքով արտասահմանից Պոլիս ուղարկված երեք ահաբեկիչներ, առանձին դեպքեր առաջացնելով Պոլսի զանազան կետերում, պետք է ահ ու սարսափ առաջացնեին և սպանեին Թալեաթին: Պետական հեղաշրջման հաջողության դեպքում նոր կառավարությունում ֆինանսների նախարարի պաշտոնը պիտի զբաղեցներ Սապահ Գյուլյանը: Անգլիայի ռազմական նախարար լորդ Կիչենները 20 հազ. ոսկի է խոստացել այս մահափորձն իրականացնողին»:

Երկրի վիճակը գնալով ճգնաժամային էր դառնում: «Նոր Այնթափ» թերթը մատնացույց է անում, որ Անտանտի կողմից Թուրքիայի տնտեսական շրջափակումը անհետևանք չէր մնում: Պոլսում չկար դեղորայք և ածուխ: Արդյունաբերական ձեռնարկությունները վառելանյութ չլինելու պատճառով չէին աշխատում: Կառավարությունում ծայր էին առել լուրջ տարակարծություններ: Դրանցից գլխավորը Էնվեր փաշայի և Թալեաթ բեյի թելադրանքով որդեգրված հակահայ և հակահույն քաղաքականության դեմ ընդվզումն էր: «El Tiempo»-ն պնդում է, որ նույնիսկ մեծ վեզիրը՝ Սայիդ Հալիմ փաշան, իր դժգոհությունն էր արտահայտել այդ քաղաքականության կապակցությամբ: Այս առթիվ տեղին է հիշեցնել հետևյալ փաստը: Հայ բժիշկ Վ. Թորգոմյանը խնդրում է գահաժառանգ Աբդուլ Մեջիդին հորդորելու իր հորը՝ սուլթան Ռեշադին դադարեցնելու հայերի տեղահանությունն ու ջարդը, այլապես կատարված անմարդկայնությունների համար Աստված պատասխանատու է գտնելու սուլթանին, իսկ ժողովուրդները՝ նրա թագավորության շրջանը համարելու են սև էջ թուրքական պատմության մեջ: Սուլթանը պատասխանում է, որ բազմիցս նախազգուշացրել է Թալեաթին, բայց իրեն չի լսել: Ինքն անկարող է[267]:

Թուրքական քարոզչական կեղծարարությունները աննախադեպ ծավալներ, վայրագ ու ցինիկ բնույթ ընդունեցին: Դրա համար օգտագործվում էին ամենատարբեր եղանակներ, որոնց ամբողջացումը դարձավ «փաստաթղթերի» ժողովածուն՝ «Ճշմարտություն հայ ազգային շարժման և կուսակցությունների ձեռնարկած միջոցների մասին», ռուսական մամուլն այն կնքեց «Սպիտակ գիրք» անունով: Այս ժողովածուում մի խոստովանություն կա, որն իր տեսակի մեջ առաջինն էր՝ թուրքական զինվորական ու քաղաքացիական իշխանությունների կողմից թույլ են տրվել բռնություններ ու չարաշահումներ կառավարության ձեռնարկած միջոցառումների իրականացման ընթացքում: Դրանով էլ թուրքերի ճշտախոսությունն ավարտվում է: Եվ սկսվում է հայերին բամբասելու ու կատարածների իրողությունը ժխտելու մի անվերջ շարք: Նույն հազար անգամ ասված թեզն է՝ հայ տարրը թե սահմանադրությունից առաջ և թե հետո Թուրքիայում ապրել է արտոնյալ կյանքով: Այս թեզն անվերջ կրկնվում է, որովհետև հայերի ցեղասպանությունն արդարացնելու «ամենահամոզիչ» փաստարկը լինելու հետ միասին հաստատում է այն իրողությունը, որ հայերի հանդեպ ջարդարարական քաղաքականության հեղինակը ոչ թե վարչակազմն էր, այլ պետության բնույթը, այսինքն՝ այդ քաղաքականությունը ոչ թե անցողիկ, այլ փոխանցվող գործելակերպ էր: Այսպես ձևավորվեցին հայոց ցեղասպանության պատմության կեղծարարության սկզբունքները, որոնք թուրք քարոզչամիջոցների կողմից օգտագործվում են մինչև օրս: «Հայերը,- կարդում ենք գրքույկում,- միշտ եղել են կայսրական կառավարության հովանավորության տակ... դրա համար էլ նրանց մեծամասնությունը զբաղեցրել է կարևոր պաշտոններ»[268]: Հայերը կայսերական կառավարությունից ստանում էին «այնպիսի կոնցեսիաներ և արտոնություններ, որոնց նմանը երբեք որևէ պետություն չէր տվել որևէ ազգության»: Եվ եթե հայերը դիմում էին օտար պետությունների օգնությանը, միայն այն պատճառով, որ ընդունակ չէին «գնահատելու արդարության և բարեկեցության բարիքները»: Նրանք չէին «խորշում օգտագործելու բոլոր ադիթները Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականությանը խոչընդոտելու համար»: Գրքույկը հայերի երջանիկ ժամանակները համարում է Աբդուլ Համիդի թագավորության շրջանը: Չնայած հայերի երախտամոռությանը, «կայսերական կառավարությունը սահմանադրության վերականգնումից հետո, առանց որևէ կողմնակալության, ձգտեց օսմանյան բոլոր հպատակներին տալ հնարավորություն օգտվելու քաղաքացիական իրավունքի բարիքներից, այսինքն՝ այն ամենից, ինչը հռչակել էր նոր վարչակարգը և բոլոր ջանքերը գործադրեց» ամբողջությամբ բավարարելու հայ տարրին: Սակայն քանի որ նախկինում՝ հին վարչակարգի ժամանակ, հայերին դուր չէր գալիս «արդարադատությունը», հասկանալի է, որ «նոր վարչակարգի» կողմից հռչակված «քաղաքական իրավունքը» նրանց մեջ էլ ավելի ամրապնդեց հին սովորությունը՝ «նպաստել կայսրության թուլացմանն ու անկմանը»: Այդ ապացուցելու համար վկայակոչվում էին Ադանայի դեպքերը: «Սահմանադրության վերականգնման հաջորդ օրը, երբ կառավարությունը խեղդվում էր ներքին դժվարություններից, որն իր արտահայտությունը գտավ մարտի 31-ի հետադիմական շարժման մեջ, հայերը, հավատարիմ իրենց ծրագրերին, անմիջապես օգտագործեցին այդ շարժումը, որպեսզի նույն օրը առաջացնեին հեղափոխական իրադարձություններ, որոնք արյունով ներկեցին Ադանան»[269]: Չնայած նրանք իրենց վերաբերմունքը չփոխեցին նույնիսկ Բալկանյան պատերազմի ժամանակ, երիտթուրքերը չդադարեցին հոգ տանել «հայկական տարրի» մասին, նրան արժանացնելով «բացառիկ ուշադրության»: Դրա արտահայտություններից էր երիտթուրքերի ձգտումը բարենորոգումներ անցկացնելու արևելյան նահանգներում: Սակայն հայերն աշխատեցին «կայսերական կառավարության» համար ստեղծել ամեն տեսակի արգելքներ՝ առաջացնելով «Եվրոպայի միջամտությունը»[270]: Արդյունքում «մահմեդական բնակչությունը իրեն հաշիվ տվեց, որ երկրի գործերին արտաքին վիրավորական միջամտության համար ինքը պարտական է հայերի մեքենայություններին և չէր կարող չզգալ խորը չարություն իր ուխտադրուժ և դավաճան հայրենակիցների հանդեպ»:

Ահա այս վիճակում Թուրքիան մտավ պատերազմի մեջ: Գրքույկում բերվում են «փաստեր» հայերի անհավատարմությունն ապացուցելու համար: Դրանցից մեկը ցարի նամակն էր ուղղված հայերին, որը հրապարակվեց «պատերազմի մեջ Թուրքիայի մտնելուց մեկ ամիս առաջ»: Թվարկվում է մահմեդականների հանդեպ հայերի գործադրած «Բռնությունները» և ավելացվում՝ թուրքական կառավարությունը «ձեռնպահ մնաց հայերի նկատմամբ որևէ բռնարար միջոցի դիմելուց մինչև այն օրը, երբ բռնկվեց Վանի ապստամբությունը»:

Գլխավոր միջոցառումը ռազմաճակատային գոտիներում գտնվող գյուղերից ու քաղաքներից ամբողջ հայ բնակչության հեռացնելն էր: Սակայն հետագայում այդ միջոցառումը տարածվեց

266 «Նոր Այնթափ», 1987թ., N11-12, էջ 61:

267 Զավեն Արք., նշվ. աշխ., էջ 131, կամ «Վեմ», 1937թ. N2: Տե՛ս Վ. Թորգոմեան, Ցուշատետրես:

268 «Армянский вестник», 1916, N 17.

269 Ն. տ., N 27:

270 Ն. տ.:

ամբողջ Հայաստանի վրա, որպեսզի «Հայ տարրը» բնակեցվի ավելի «Հուսալի և օտար միջամտության գոտուց դուրս» վայրերում:

Չնայած կառավարությունը բռնագաղթվածների անվտանգությունն ապահովելու համար միջոցառումներ ձեռնարկել էր, սակայն «այդ միջոցառման իրականացման ժամանակ հայերը երբեմն զոհ էին դառնում ցավալի չարաշահումների ու բռնություններ, սակայն եղած փաստերը որքան էլ ցավալի լինեն, անխուսափելի էին հայերի հանդեպ մահմեդական բնակչության զայրույթի հետևանքով, քանի որ նրանք ձգտում էին ապստամբությունների և դավաճանության միջոցով վտանգի ենթարկել այն երկիրը, որի բնակիչներն էին»[271]: Այնուամենայնիվ, 53 հոգի դատի է տրվել տեղափոխության ընթացքում չարաշահումներ ու բռնություններ գործադրելու համար: 56 հոգի դատապարտվել է մեկ տարվա բանտարկությունից մինչև երեք տարվա տաժանակիր աշխատանքի: Դրանք բոլորը զինվորական և քաղաքացիական իշխանությունների ներկայացուցիչներ էին: Բացի այդ, 46 սպա և զինվոր կանգնելու են ռազմական դատարանի առաջ, դատապարտվել է 34 պետական ծառայող: Չորս հոգի կախաղան է հանվել գողության համար:

Թ. Աքչամը գրում է, որ բռնագաղթի ընթացքում «տեղ գտած չարաշահումների և ապօրինությունների փաստերն ուսումնասիրելու համար ռազմական նախարարությունում հատուկ հանձնաժողով էր ստեղծվել: Հանձնաժողովը մեղավոր ճանաչված պաշտոնատարների գործերը հանձնում էր դատարան: Դատարան հանձնվեց 1397 հոգու գործ, որոնցից «չատերը դատապարտվեցին բանտարկության, ոմանք էլ մահապատժի ենթարկվեցին»[272]: Թուրքական քարոզչությունն այս փաստը հաճախ է օգտագործում, որպեսզի ժխտի հայերի բնաջնջման ծրագրի գոյությունը: Իրականում պատժի ենթարկվածների մեջ հատուկենտ մարդիկ էին մեղադրվել հայերի հանդեպ ապօրինություններ թույլ տալու համար: Հիմնականում պատժվել էին իթիհադին ընդդիմադիր մարդիկ: Ընդ որում, Եվրոպա, Ասիա, Աֆրիկա գործակալներ էին ուղարկվում նույնպես իթիհադի հակառակորդներին ոչնչացնելու համար: Ըստ երիտթուրքերի՝ հայերի ողբերգության պատճառը Անկախ Հայաստանի գաղափարով հրապուրվելն էր: «...Իրենց ազգային իդեալին հասնելու երազի համար դժբախտ հայերը նետվեցին այդ վիթխարի պայքարի մեջ»[273]: «Էնվերն ու Թալեաթը համոզում էին, որ սկսած հին դարերից թուրքական կառավարության կողմից բարենորոգումների արժանացած հայերը հանկարծ չուռ եկան խաղաղ, երջանիկ կյանքի ուղուց և Վանի իրադարձություններով ընտրեցին նոր, ահավոր ուղի... դեպի Գողգոթան»[274]:

Թուրք քարոզչությունն ու պարագլուխները պարզապես ստում էին. արևմտահայի վարդագույն երազները Թուրքիայի կազմում անվտանգ ու արժանապատիվ ապրելու ցանկությունից այն կողմ չեն անցել: «Баку» թերթն այդ առնչությամբ գրեց. «Հետադարձ հայացք ձգելով հայ ժողովրդի կյանքի այս կարճ ժամանակահատվածի վրա, որքան էլ այդ ցավալի լինի, չի կարելի չխոստովանել, որ իրականում երիտթուրքերի հանդեպ հայերի դյուրահավատությունը հենվում էր նրանց կրքոտ ցանկության վրա՝ բոլոր միջոցներով նպաստել իրավական գաղափարների ամրապնդմանը բռնատիրական պետությունում, և այդ այն ժամանակ, երբ իշխանությունը զավթել էին մի խումբ դավադիրներ, ովքեր ղեկավարվում էին միմիայն փառասիրությամբ»: Նույնիսկ Վանի «ապստամբությունը», եթե նկատի առնվի հանգամանքների ամբողջությունը, որոնք անմիջականորեն նախորդել են դրան, կասկածի տեղիք տալ չէին կարող՝ հայերին ինքնապաշտպանական կռվի մղել էին թուրքերը: Մինչդեռ Վանի «ապստամբությունը» Հայաստանում տեղի ունեցած մյուս իրադարձություններից առանձնացնելը նշանակում է թուրքական կառավարության կողմից նախապես մշակված համակարգին համապատասխան կատարված հանցագործությունների շղթայից պոկել նրա կարևոր օղակներից մեկը: Դրա համար էլ ամենից առաջ անհրաժեշտ է հայերի բնաջնջման համակարգում գտնել ընդհանուր տարրեր, որոնք ակնհայտ կդարձնեն Հայաստանում աննախադեպ չարագործությունների էնվերի և Թալեաթի քաղաքականության և

271 «Армянский вестник», 1916, N 27.
272 Акчам Т. Турецкое национальное..., стр. 102.
273 «Армянский вестник», 1916, N 27.
274 Ն. տ., N 29:

Թուրքիային պատերազմի մեջ ներքաշելու նրանց արկածախնդրության միջև եղած սերտ կապը: «Այն ժամանակ պարզ կլինի,- շարունակում է Թերթը, - թե ինչու սկսելով այնքան վտանգավոր պատերազմը, երիտթուրքերը որոշեցին օգտվել Բալկանյան պատերազմում մահմեդական ազգաբնակչության ստորացման և խայտառակության դառը զգացողությունից և երբեք չմարող կրոնական մոլեռանդությունից, որպեսզի բորբոքեին տգետ զանգվածի ամենախավար բնազդները»: Այդ դեպքում դժվար չի լինի բացատրել այն, ինչ առաջին հայացքից թվում է անմտություն՝ պատերազմ անմիջապես երկու ճակատով, ընդ որում՝ մի ամբողջ ժողովրդի բնաջնջումը ևս խլեց նշանակալից պահեստային ուժեր և բանակի թիկունքի համար մեծ վտանգ ստեղծեց:

Երիտթուրքական բախտախնդիրները հասկանում էին, որ պատերազմի մեջ մտնելը դժվար ու վտանգավոր էր, եթե նախապես չապահովեին իրենց հանդեպ մահմեդական բնակչության վստահությունն ու համակրանքը: Նրանք աշխատեցին այդ անել կրոնական մոլեռանդության օգնությամբ: Թուրքերի հոգու այդ խավար կողմի վրա կառուցված քաղաքականությունը տանուլ տրվեց և էնվերի ու Թալեաթի բախտախնդրությունը հենց սկզբից ձախողվեց: Այնուամենայնիվ քրիստոնյա տարրերի նկատմամբ վերաբերմունքը սերտորեն միահյուսվեց պատերազմի հետ, ավելի ճիշտ, դարձավ «հիմնական պայմանը անպատասխանատու բախտախնդիրների պլանների իրականացման համար»:

Տեղին է նշել, որ պատերազմի սկզբին երիտթուրքերը վերացրին Լիբանանի ինքնավարությունը: Սրբազան պատերազմ հայտարարելը չնայած գործնական արդյունք չտվեց, սակայն այն թուրքական կառավարության համար տրամաբանական հիմք էր թուրքի հոգում սպանելու կասկածները, թե ոչ մահմեդական բնակչության համար ապահովվելու էր արտոնյալ պայմաններ: Մնում էր մի բավականին տհաճ հանգամանք՝ պետությունը, որի հետ դաշնակցած էր Թուրքիան պատերազմում, նույնպես մահմեդական չէր: Թուրքական թերթերը մահմեդական բնակչությանն ապացուցում էին, թե «կայզերը քրիստոնյա տիրակալներից միակն է, որը մահմեդականների հանդեպ անկեղծորեն բարյացակամ էր և մահմեդական սրբություններին նույնիսկ թանկարժեք զարդեր էին նվիրում»[275]: Սակայն երիտթուրքերը Գերմանիային նույնպես չէին վստահում: Այդ է վկայում նաև երիտթուրքերի կենտկոմի 1914թ. հոկտեմբերի նիստի արձանագրությունը: Թալեաթ. «Մի խոսքով, վախենում եմ, որ Գերմանիան պատերազմում հաղթանակ տանելուց հետո կապվի առավել ամուր և ընդունակ հույն և հայ տարրերի հետ»: Զիա Գյոքալփ. «Հույները կասկածելի են: Վաղ թե ուշ ստիպված կլինենք պայքար մղել նրանց դեմ: Իսկ հայերի կոտորածը կվախեցնի նրանց: Հունաստանը չի համարձակվի նոր պատերազմ սկսել՝ վախենալով Թուրքիայում ապրող հույների համար»: Ջավիդ. «Գուցե դուք իրավացի եք, բայց ինչ կլինի, եթե այս պատերազմում պարտվենք: Ես լավ եմ ճանաչում հայերին: Բավարարելով հինգ պահանջներից միայն մեկը՝ կարող ենք նրանց մեր կողմը գրավել: Պետության անվտանգության համար կարելի է վերաբնակեցնել նրանց, բայց պետք չէ սպանել, չէ որ այդ ձևով կկորչեն նաև այնպիսինները, որոնց հնարավոր է ստիպել իսլամություն ընդունել և հետո օգուտ քաղել նրանցից»: Դոկտ. Նազիմ. «Զարմանում եմ, որ ոմանք պաշտպանում են հայերին: Չէ որ նրանք խանգարում են մեզ՝ Կովկասյան ռազմաճակատում անհնարին դարձնելով մեր մուտքը Ռուսաստան: Այնտեղի հայերը կամավոր մտնում են ռուսական բանակի շարքերը, իսկ մեզ մոտ դասալքում են: Անհրաժեշտ է հիմնովին լուծել Հայկական հարցը՝ բնաջնջելով բոլոր հայերին»[276]:

«Էնվեր փաշան և Հալիլ բեյը,- գրում է Լեփսիուսը,- պնդում են, թե իրենք մտադիր չէին կոտորելու: Պատճառաբանում են ռազմական անհրաժեշտությունը, իսկ ապստամբները պետք է պատժվեին և խուսափում են ամբաստանությունից, որ հարյուր հազարավոր կանայք, երեխաներ ու ծերեր թշվառության են մատնված և կորչում են»:

Ջեմալ փաշան ամեն կերպ աշխատում էր հավատացնել, թե նախապես տրված հրամաններն անհրաժեշտություն էին, սակայն դրանց իրագործումը վատ կազմակերպվեց: Նա չի ժխտում, որ դա տխուր հետևանքներ ունեցավ, որ Հալեպի մերձակայքում տարագիրների երթուղին ու կացարանները թշվառության հետևանքով վարակված էին, ու նաև ասում, որ «ինքը աքսորյալնե-

275 «Армянский вестник», 1916, N 29.
276 Գեմարսկի Բ. նշվ. աշխ., էջ 180-181:

րին կողոպտող շատ անձանց կախել է տվել»: Ջեմալի շտաբի պետ Ֆոն Կրեսսը Լեփսիուսին հայտնել է, թե թշվառությունն անպատմելի է, երևակայությունից դուրս[277]: Ջեմալն իր այդ շտաբի պետին ասել է. «Հայերի հանդեպ կատարվածը կրոնական խնդիր չէ, այլ քաղաքական: Թուրքիան նմանվում է մի մարդու, որի վրա բոլոր կողմերից հարձակվում են և, բնականաբար, ամենամեծ վտանգի մեջ ընկածը պետք է ամենախիստ միջոցների դիմի: Ցուրաքանչյուր երկրում էլ ժողովուրդը, մանավանդ խռովահույզ ժամանակներում, հեշտությամբ առաջ է ընկնում կառավարության ձեռնարկած խիստ միջոցներից և գործում է անկարգություններ, որոնք արդարացում չունեն: Թուրքիայում այդպես վարվեցին քրդերը: Թուրքական կառավարությունը հայերի դեմ գործել էր ոչ թե նրա համար, որ քրիստոնյա էին, այլ որովհետև հայ էին և պետության գոյությունը վտանգված էր: Նման դեպքերում արաբների հետ նույն ձևով ենք վարվելու»[278]: Մետեռնիխի հուլիսի 30-ի զեկուցագրում կա մի ուրիշ վկայություն. «Հայերի գործը վերջացած է: Երիտթուրքական ոհմակն անհամբեր սպասում է այն րոպեին, թե երբ է Հունաստանը հարձակվելու Թուրքիայի վրա: Հույները կազմում են Թուրքիայի քաղաքակիրթ տարրը: Նրանք էլ պիտի ոչնչացվեն, ինչպես հայկական տարրը»[279]:

Համընդհանուր տեղահանության որոշումը կայացրել էր երիտթուրքական կոմիտեն: Դա մասն էր «համաթրքական, համաիսլամական մի պետություն ստեղծելու ծրագրի», որում «քրիստոնյաների համար տեղ չէր լինելու». այդ ծրագիրը հղացել էր Էնվերը[280]:

Ֆահրի Բելենը հավատաց իթիհադի կեղծարարություններին և գրեց. «Թուրքական բանակի թիկունքում ծայր առած հայկական ապստամբության կապակցությամբ կառավարությունը հրաման արձակեց հայերին ճակատային գծից հեռացնելու և Սիրիա ու Իրաք ուղարկելու մասին»[281]: Ա. Ն. Մանդելշտամը քաջատեղյակ էր և գրեց իր հանրահայտ տողերը. «Հակառակ թուրքական կառավարության կեղծ հայտարարությունների, չի եղել հայկական ոչ մի խռովություն կամ հեղափոխություն: Հայերը զենքի դիմեցին միայն այն ժամանակ, երբ տեսան ջարդի սպառնալիքը և հետևեցին իրենց կյանքը որքան հնարավոր է թանկ ծախելու բնական ձգտմանը... Բոլոր դեպքերում զինված դիմադրություն մենք տեսնում ենք ոչ թե հեղափոխականների, այլ դժբախտ մարդկանց կողմից, որոնք ինչ-որ զենքեր են թաքցրել և գերադասում են կռվել մինչև մահ, քան ոչնչանալ չարչարանքներով, կամ տանել տեղահանության տառապանքները... Սակայն... հայերի մեծամասնությունը պատերազմի սկզբին զենքը հանձնեց իշխանություններին: Եվ այդ պատճառով նրանք ստիպված էին, առանց նվազագույն իսկ դիմադրության ընդունել այն դաժան ճակատագիրը, որը կառավարությունը պատրաստել էր իրենց համար»[282]: Խարբերդի ամերիկյան հյուպատոսը նշելով 800 հայերի սպանության մասին, գրում է. «Այդ մարդկանց դեմ որևէ մեղադրանք առաջ չի քաշվել: Նրանք բոլորը ձերբակալվեցին և սպանվեցին սոսկ այն պատճառով, որ կառավարության գլխավոր պլանը պահանջում էր ազատվել հայ ազգից»[283]: «Այսպես կոչված խռովությունը Վանում,- գրում է Լեփսիուսը,- օրինական ինքնապաշտպանության մի արտահայտություն էր և մի դրվագ ջարդերի պատմության մեջ, բայց ոչ մի դեպքում՝ դավաճանություն: Այդ բանը հաստատում են նաև պաշարմանը ականատես գերմանացիները»: «Երկու իրադարձությունները՝ Վանի հայերի օրինական ինքնապաշտպանությունը նրանց սպառնացող ջարդերի դեմ հանդիման և ռուսների հարձակումն իրար հետ ոչ մի կապ չունեին...»[284]:

Գերմանացի զորավար Հինդենբուրգին են պատկանում հետևյալ խոսքերը. «Թալեաթի և Էնվերի նման վստահելի ու նվիրված անձանց ուրիշներով փոխելը մեզ համար անհնար է»: Սա գրում է մի մարդ, որը մեծ դեր է խաղացել երիտթուրքական կառավարության քաղաքական և ռազմական գործունեության մեջ և քաջ գիտեր իթիհադի գործիչներին, ինչպես նաև կայսրությունում տիրող վիճակը և իրականացվող միջոցառումների իսկական նպատակները: «Հայկական հարցը,- գրում է նա,- Թուրքիայի համար եղավ ամենադժվար լուծվող հարցերից մեկը: Այդ խնդիրը պատկանում է պանթուրքիզմի գաղափարախոսության ընդդիմադիր հարցերի շարքին: Թուրքերի մոլեռանդությունը, այս խնդիրը լուծելու կերպը պատերազմի ժամանակ զբաղեցրեց բոլոր ազգերին: Մեզ, գերմանացիներիս ևս ուզեցան խառնել այն բարբարոս դեպքերի մեջ, որոնք գործադրվում էին Թուրքական ամբողջ կայսրությունում և նաև տեղի ունեցան Անդրկովկասում պատերազմի ավարտին... Մենք հավաստիացումներ ստացանք օսմանյան կառավարության ղեկավարներից, սակայն չկարողացանք հաղթահարել նրանց դիմադրությունը... մեզ պատասխանում էին, որ Հայկական հարցը քաղաքական ներքին խնդիր է: Թուրքերը շատ դյուրագրգիռ էին դառնում, երբ մենք չոչափում ենք այդ հարցը»:

Օսմանյան կայսրության մյուս դաշնակցի՝ Ավստրո-Հունգարիայի Կ. Պոլսի դեսպան Պալավիչինին նույնպես հայերի ողբերգության մեղավոր համարում է երիտթուրքական կառավարությանը: «Կասկած չի կարող լինել, որ հայերի հանդեպ կառավարության գործելակերպը սխալ էր»[285]: Սա ասվում է բռնագաղթի առաջին շրջանում, իսկ օգոստոսի 13-ին նա գրեց, թե ինքը «Մեծ վեզիրի ուշադրությունը հրավիրեց այն բանի վրա, որ կգա ժամանակ, երբ կայսրությանն օգտակար այդ ժողովրդին բնաջնջելու համար Թուրքիան պատասխանատվության կենթարկվի...»[286]: Ավստրիական բանակի հրամանատարության կապի բաժինը 1915թ. սեպտեմբերի 12-ին գրեց. «Ինչպես երևում է, թուրքական կառավարությունը մտադրվել է ոչնչացնել ամբողջ հայ ազգը»[287]: Նույն հաղորդագրությունում ասված է, որ հայերի բռնագաղթի մասին օրենքը կարծես «ստեղծվել է միայն մի բանի համար՝ հայերի բնաջնջումն իրականացնել օրենքի հովանու ներքո»: Ավստրիացի մի ուրիշ դիվանագետ՝ Թրաուեթմանսդորֆը սեպտեմբերի 30-ին Կ. Պոլսից հաղորդել էր. «Բոլոր լուրերը մի բանում համընկնում են՝ կառավարության վերջին միջոցառումներն անհամեմատ ավելի շատ մարդկային կյանք են խլել, քան Աբդուլ Համիդի ջարդերը»[288]: «Թալեաթ բեյն ինքը վերջերս անթաքույց գոհունակությամբ ինձ ասաց, որ էրզրումում հազիվ թե մի հայ գտնվի»[289]: Պալավիչինիի ևս մի քանի հաստատումներ. «Հալիլ բեյը ստիպված էր ինձ խոստովանել, որ կառավարության գործելու եղանակը սխալ էր»[290]: «Ցավոք, երիտթուրքական պարագլուխները, որոնք այս միության (քաղաքական միության) հովանու տակ ուժեղ են զգում իրենց ծրագիրը գործադրելու համար, օգտվեցին իրադարձությունից ամենախիստ միջոցներով գործելու ոչ թուրք ազգությունների դեմ: Թալեաթը, Էնվերն ու նրանց կողմնակիցները միայն պատերազմի պայմաններում էին ի վիճակի գործել հայ ազգի դեմ»: «Եթե կառավարությունն ուզենար մի նոր հալածանքով ոչնչացնել հայ ազգի մնացորդները Թուրքիայում ու այդպիսով վերջնականապես վերացներ Հայկական հարցը, դա լրիվ կհամապատասխաներ թուրքերի իղձերին»: Թրաուեթմանսդորֆը 1917թ. հունվարի 30-ին գրեց Վիեննա. «Իհարկե, անհնար է ենթադրել, թե Թուրքիան կկարողանա պատասխանատվությունից ազատվել մեղքն ուրիշների վրա բարդելու միջոցով: Թուրքիային նաև չի հաջողվի չնկատել տալ, որ հայ ազգաբնակչության դեմ ձեռնարկած միջոցառումները չլսված բիրտ էին և օրինակ ասիական վայրենության»:

Հալեպում լույս տեսնող «Վահդետ» թերթը 1928թ. հուլիսի 8-ին տպագրեց թուրք քաղաքական-պետական գործիչ, լրագրող Ռեֆիկ Խալիդի «Հուլիսի հուշեր» վերնագրով հոդվածը, որում երիտթուրք պարագլուխների մասին ասված է. «... Նրանց սնունդը մարդկային մարմիններն են, խմածները՝ արյուն-արտասուքը, շնչածները՝ վառոդի ծուխը, արդարությունը՝ կախաղանը, եղբայրությունը՝ տարագրությունը, հավասարությունը՝ սպանությունը և ազատությունը՝ բանտի խորքերը...»: Իսկ «Պարոններ, դեպի ո՞ւր» հոդվածում նա դիմելով երկրից փախած երիտթուրք պարագլուխներին, գրում է. «Հինգ տարի է, ամենուրեք մարդկային դիակներից ագռավի խնջույքներ սարքեցիք, դրանց երեխաների մսով կերակրեցիք»[291]:

277 Lepsius, նշվ. աշխ., s. 209:
278 Ն. տ., s.360:
279 «Սողոմոն Թեհլիրյանի դատավարությունը» , Երևան, 980, էջ 107:
280 Ն. տ.:
281 Belen F. XX yuzyilda Osmanli devleti. Istanbul, 1973, s. 243.
282 Mandelstam A., նշվ. աշխ., p. 248-250:
283 Lepsius, նշվ. աշխ., s. 96:
284 Ն. տ., էջ 128-129:

285 Wien, HHSTA PA XX 209, Konstantinople, 24 juni 1915.
286 Wien, HHSTA PA XX 209, Jenikoj, 8 september 1915.
287 Wien, KA AOK NA 1915, Fasz 5632, Konstantinople, 12 september 1915.
288 Wien, HHSTA PA XX 209, Konstantinople, 30 september 1915.
289 Wien, HHSTA PA XX 209, Konstantinople, 20 janner 1916.
290 Ն. տ.:
291 Ռիֆաթ Մ., նշվ. աշխ., էջ 188:

Ռազմական դատարաններում քննարկումները ապացուցեցին, որ երիտթուրքական պարագլուխներն ավելի քան տեղյակ էին տեղերում կատարվածների մասին և ամեն կերպ խրախուսում էին ջարդերն ու ջարդարարներին: Մեղադրանք էր ներկայացվել և մեղավոր ճանաչվեցին ու բանտարկության դատապարտվեցին երիտթուրքական 17 պարագլուխ, որոնցից Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Նազիմը, Բ. Շաքիրը, Ռուշդուհին, Ազիզը դատարանում ներկա չէին, փախուստի մեջ էին, իսկ Սայիդ Հալիմը, Հալիլը, Ա. Նեսիմին, Իբրահիմը, Քյուչուկ Թալեաթը, Ռիզան, Մ. Շյուքրին, Զիա Գյոքալփը, Քեմալը, Զևադը, Աթըֆը դատարանում ներկա էին: Դատավճռում հստակ ասվում է, որ այս պարագլուխների մասնակցությամբ տեղի ունեցած նիստերում որոշվեց, որ քանի դեռ Եվրոպան «զբաղված է համաշխարհային պատերազմով», աշխատեն «ահաբեկչությամբ, բռնի ուժով լուծել այնպիսի հարցեր, որոնք ճակատագրական նշանակություն ունեին և «խիստ» ծանրացրին ժողովրդի վիճակը...»: Հանցագործներին բանտերից ազատ արձակելով, ստեղծվեց թեչքիլաթի մախսուսան, որը գաղտնի հրամանները ստանում էր իթիհադի ղեկավար գործիչներից: Դիարբեքիրի խժդժություններն ու կոտորածները տեղի ունեցան Թալեաթի հրահրմամբ: Դեր Զորի մութասարիֆ Ալի Սուադը Թալեաթին ծածկագիր ուղարկեց՝ առաջարկելով Ռեշիդին և կոմիսար Մեմդուհին մահապատժի ենթարկել վայրագություններ կազմակերպելու համար: Ծածկագրի վերծանված տեքստի վրա մակագրված է. «Ի պահ դնել»: Նույն բախտին են արժանացել նաև Բրուսայից, Կաստամունիից, Էրզրումից ստացված համանման ահազանգերը: Բերվում է Բ. Շաքիրի ծածկագրի տեքստը հասցեագրված Խարբերդի վալի Սաբիթին. «Եղբայր իմ, մեզ պարզորոշ տեղեկացրեք, այդտեղից ուղարկվող հայերին զտո՞ւմ եք, թե ոչ: Վտանգավոր մարդկանց, որոնց աքսորելու ու վտարման մասին հայտնել ենք, ոչնչացնո՞ւմ եք, թե ճամբու եք դնում»:

Մի շարք փաստաթղթեր ապացուցում են, որ թեչքիլաթի և ջարդերի հարցում իթիհադի կենտրոնն ու ՆԳ նախարարությունը գործում էին համագործակցված: Մեղադրական եզրակացությունում ուղղակի ասվում է, թե կոտորածները տեղի էին ունենում Թալեաթի, Էնվերի ու Ջեմալի հրամանով ու գիտությամբ: Եթե հայերի ջարդերին մասնակցելուց խուսափողներին կնքում էին «հայրենիքի դավաճան» պիտակով, ապա եռանդուն ջարդարարներն արժանանում էին այլևայլ շնորհների: Օրինակ, Անկարայի ոստիկանապետ Բեհեդդինին Թալեաթը հատուկ ծանուցագրով ծառայության ուղարկեց արևելյան զորքերի օպերատիվ զորախմբի հրամանատար Վեհիբ փաշայի մոտ: Միաժամանակ նա աշխատել է Սամսոնի ռազմական ատյանում, այնուհետև նոր նշանակում ստանալով, մեկնել է անհայտ ուղղությամբ»: Իթիհադի կենտրոնի ժողովներից մեկի ժամանակ նախագահողը Թալեաթին է հանձնում մի դիմում, որում նկարագրվում էին հայերի հանդեպ վայրագություններն ու ջարդերը և պահանջվում էր սկսել հետաքննություն մեղավորներին պատժելու համար: Խոսքը գնում էր Ռեշիդի, Ազմիի, Սաբիթի, Մուամմերի, Աթըֆի, Իբրահիմի մասին: Թալեաթը դիմումը մի կողմ էր շպրտել: Ջմյուռնիայի պատգամավոր Ի. Օննիկը, երբ ասում է, թե Նազիմն ու իր ընկերներն են բռնությունների հեղինակները, Թալեաթը պատասխանում է. «Ես տեղացիներին նույն ճակատագրին կարժանացնեի»: Երբ Ջեմալը հարցնում է Ջելալին Հալեպի վալու պաշտոնից հեռացվելու մասին, Թալեաթը պատասխանում է՝ Հայկական հարցում նրա կարծիքը չի համընկնում Բ. Դռան դիրքորոշման հետ: Նա նաև ասել է, որ հայերի նկատմամբ քաղաքականությունը համակողմանիորեն մշակված և միանգամայն ճիշտ է: Խայրին ցուցմունք տվեց, որ իր ջանքերը հայերի հանդեպ կատարվածը թույլ չտալու, որևէ արդյունք չեն ունեցել և իրեն էլ աշխատանքից հեռացրել են: Անթիլիայի մութասարիֆ Սաբուր Սամին ստանալով Բ. Շաքիրի «Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Սըվազի, Տրապիզոնի շրջաններում ոչ մի հայ չի մնացել, բոլորն արտաքսվել են Մոսուլի և Զորի կողմերը: Իսկ դուք ի՞նչ եք անում Անթիլիայում» հանրահայտ հեռագիրը, պատճենը ուղարկում է Թալեաթին, բայց որևէ պատասխան չի ստանում:

***

Քաղաքական իրողություններն ու նկատառումները, իհարկե, ազդեցություն ունեցել են երիտթուրքական շարժման, իթիհադական վարչակարգի քաղաքականության վրա: Սակայն փոքր չէր նաև երիտթուրք առաջնորդների անձնական հատկանիշների, նրանց մտածողության համակարգի և գործելակերպի դերը:

Սահմանադրական կարգերը, չնայած կառուցված էին ժողովրդավարության սկզբունքների վրա, սակայն շատ ավելի անունով, քան իրականում: Ըստ այդմ էլ երիտթուրքական վարչակազ-

մում պարագլուխների զբաղեցրած տեղերը տարբեր էր կուսակցության ղեկավարությունում նրանց ունեցած դիրքից: Օրինակ, վարչապետ (մեծ վեզիր) Սայիդ Հալիմի դերը կուսակցությունում ավելին չէր, եթե ոչ ֆինանսական ծախսերի հոգալը, քանի որ նրան կուսակցություն էին բերել սեփական հարստությունները իթիհադական շարժման վրա ծախսելը: Նազիմն ու Զիա Գյոքալփը կուսակցության տեսաբաններն էին, Բեհեդդին Շաքիրը կազմակերպական գործունեության շարժիչը, բայց պետական կառույցներում երկրորդական պաշտոններ էին զբաղեցնում:

Երիտթուրքական շարժումը հասկանալուն շատ բանով նպաստում է նրա պարագլուխների, տվյալ դեպքում Թալեաթի, Էնվերի, Ջեմալի, Նազիմի և Բ. Շաքիրի, որպես գործիչների ճշմարտացի բնութագրությունը: Սովորաբար երիտթուրք գործիչներից առանձնացնում են Թալեաթ, Էնվեր, Ջեմալ եռյակին, սակայն այդ եռապետությունը մի մեծ թերություն ուներ՝ ազատված չէր միջնադարյան-մահմեդական, եթե ոչ հետամնացությունից, ապա մոլեռանդությունից:

Շատ հաճախ ուշադրությունը սևեռելով ոչ կանոնավոր կրթություն ստացած Թալեաթին, Ջեմալին, անուշադրության են մատնում եվրոպական կրթություն ստացած Նազիմին և Շաքիրին: Իսկ իրականությունն այն է, որ հայերի բնաջնջման անհրաժեշտությունը տեսականորեն հիմնավորեց ու կուսակցության քաղաքական ծրագիր դարձրեց Նազիմը, իսկ այդ ծրագրի իրականացումն անմիջականորեն գլխավորեց Բ. Շաքիրը:

Հարկ ենք համարում մի անգամ ևս շեշտել, որ Հայկական ցեղասպանության նախապատրաստողները, ղեկավարներն ու իրականացնողները՝ Միություն և առաջադիմություն կոմիտեն ու նրա պարագլուխներն էին: Հետևաբար այդ կուսակցության ու դրա պարագլուխների գործունեության ուսումնասիրությունն առաջնակարգ նշանակություն ունի Հայոց ցեղասպանության պատմության կեղծարարներին հակահարված տալու, պատմական ճշմարտությունը հաստատելու համար: Բ. Կարաբեքիրը հետևյալ կերպ է բնութագրում երիտթուրք պարագլուխներին. «Թալեաթն ու Էնվերը մեր բանակների կործանման պատճառ դառնալուց, Անատոլիայի արյունն անխղճորեն ծծելուց հետո... փախան... Նրանք ոչ տնտեսություն և ոչ էլ որևէ նվաճում չթողեցին... ամեն ինչում տմարդություն հանդես բերեցին...»[292]:

Իթիհադի պարագլուխների դիպուկ գնահատականներ է պարունակում Ահմեդ Ռեֆիկի «Երկու կոմիտե՝ երկու ոճիր» հուշագրություն-պամֆլետը: «Սադրազամ Սայիդ Հալիմ փաշան,- գրում է Ա. Ռեֆիկը,- իշխանության էր բերվել արտաքին խնդիրները կարգավորելու համար...(նա) հեղինակություն չէր վայելում: Ողջ վեզիրությունը, ողջ իշխանությունն ու ազդեցությունը Թալեաթի ձեռքին էր: Քաղաքականության և կառավարման մեջ Թալեաթի խորհրդականը պատգամավոր նշանակված, իբր կամակատար հերթական սպանության կատարող, իթիհադի սպաների կողմից բանտից փախցված ու մինչև ՆԳ նախարարություն առաջխաղացած շրջահայաց մի սպա էր... Այն, որ Թալեաթը տգետ էր, հայտնի էր նաև նրա շուրջը հավաքվածներին»[293]: Իթիհադի ջոջերը վաղուց էին ծրագրել հայերի բնաջնջումը և սպասում էին հարմար առիթի: Վանի իրադարձությունը պատրվակ դարձավ «իթիհադականների կողմից իրենց ազգային նկրտումների իրականացման համար: Այդ դեպքում, երբ արդարադատությանն ու ուժին ապավինող որևէ իշխանության դեմ ոտնձգություն է կատարվում, ապա այդ իշխանությունը պատժում է իր դեմ կատարած ապստամբության կազմակեպիչներին: Սակայն իթիհադականները ցանկանում էին խպառ ջնջել հայերին և այս ձևով մեջտեղից հանել վեց վիլայեթների հարցը... Հայ, թուրք՝ հայրենիքի հազարավոր զավակներ, ճզմվեցին կոմիտեի ոտքերի տակ»: Պատերազմի սկզբում Ստամբուլից բազմաթիվ հրոսակախմբեր ուղարկվեցին Անատոլիա: Այդ հրոսակախմբերը բանտերից դուրս բերված մարդասպաններից ու հանցագործներից էին կազմված: «Սրանք... մեկ շաբաթ մարզվելուց հետո» ուղարկվում էին արևելյան նահանգներ[294]: «Էնվերն ու Թալեաթը, սովորաբար, Գերմանիայի խոսքից մեկ քայլ անգամ չէին կարող դուրս գալ: Հնարավոր չէր ոճիրն իրականացնել ապավինելով միայն հանցագործ ուժերին: Անկասկած է, որ նրանք ապավինում էին Գերմանիայի հաղթանակին...»[295]:

---

292 Karabekir K. Istklol Harbimiz, s. 33-34.

293 Ռեֆիկ Ահմեդ Երկու կոմիտե՝ երկու ոճիր, Երևան, 1997, էջ 26:

294 Ն. տ., էջ 32-33:

295 Ն. տ., էջ 44:

Հայերի բնաջնջումն արդարացնելու համար լուրեր էին տարածում, թե նրանք միանալու էին թշնամուն, Ստամբուլում ապստամբություն էին բարձրացնելու, սպանելու էին իթիհադի առաջնորդներին: «Այս նողկալի խաբեությունները կարողացան համոզել միայն հասարակ ժողովրդի այն հատվածին, որ չէր գիտակցում իր քաղցած լինելը[296]: Սուլթանական ընտանիքի հետ բարեկամանալուց (սուլթանի դստեր հետ ամուսնանալուց) հետո, Էնվերի մտադրությունները ամբողջովին փոխվել էին: Նա միտք ուներ փրկել սուլթանական տոհմն ու փառաբանել այն... Ազատության այս հերոսը, որը մի ժամանակ խստագույնս դեմ էր փաշայությանն ու աստիճանակարգին, այժմ և հորը, և եղբորը փաշայի տիտղոսներ էր շնորհում: ...Նա հողակտորներ էր վերցնում, հողաբաժիններ զավթում, փորձում էր հարստություն կուտակել»: Եվ որովհետև գիտեր, որ մի օր կորցնելու է, դրանք գրում էր կնոջ վրա: Ցոփ կյանք էր վարում: «Քանի որ զինվորականների մի հատվածը շարունակում էր վաշխառությամբ զբաղվել, կշռաքարերի քաղաքային ընկերությունը իթիհադականների համար առևտրի նոր աղբյուր դարձավ»: Այն ժամանակ, երբ Թալեաթը վաշխառությանը կողմնակալ հովանավորության միջոցով սովամահ էր անում Ստամբուլի ազգաբնակչությանը, «Էնվերը... բազմաթիվ զինվորներ էր զոհաբերում, Ջեմալ փաշան էլ Սիրիայում արաբներին էր ... կախաղան բարձրացնում»[297]:

Իթիհադի իշխանությունը կայսրության ժողովուրդների, այդ թվում նաև թուրքերի համար այնքան դառն էր, որ «Սուլթան Աբդուլ Համիդի մահվան օրը ժողովուրդը հոգեկան ցնցման մեջ էր: Փողոցները, որտեղով դիակը տանելու էին, լի էին մարդկանցով: Աբդուլ Համիդի դիակը տանելիս մարդիկ աղոթում էին... աղիողորմ ողբում էին, մի քանի կին արցունքն աչքերին, ձեռքները երկինք պարզելով գոչում էին.

-Գլուխդ բարձրացրու, տես, մեզ ումն ես թողնում»[298]:

Մեհմեդ Թալեաթ.- Ծնվել է Էդիրնեի Կիրջալի գյուղում 1872թ., մահմեդականացած գնչուի ընտանիքում: Ծնողներն աղքատ էին: «Թալեաթի ծագումն անչափ մթին էր,- գրում է ժամանակակիցներից մեկը,- և բազմաթիվ պատմություններ կը շրջաբերեին իր հաշվին: Ոմանք կը պատմեին, թե պուկկար գնչու մըն էր, ուրիշներ զայն կը կոչեին փոմաք... Թուրք կայսրութեան այս ճշմարիտ տերը երբեք թուրք չէր...»: 1909 թ. մարտի 31-ի հեղաշրջման օրերին նա ապաստանեց ոչ թե թուրքերի, այլ հայերի մոտ՝ սկզբում Ակնունու տանը, ապա հայկական ակումբում ու փրկվեց: Թալեաթը փորձեց դառնալ փաստաբան, սակայն քննությունները հանձնել չկարողացավ և այլևս չսովորեց: Ծառայության անցավ Ադրիանապոլսում որպես շարքային հեռագրավար: 1908թ. նշանակվեց ՆԳ նախարար, 1909 թ. պաշտոնից ազատվեց: 1911 թ. պետական հեղաշրջումից հետո Հազը նրան նորից առաջարկեց ՆԳ նախարարի պաշտոնը, սակայն Թալեաթը հրաժարվեց: Նա ՆԳ նախարար դարձավ 1913թ. հեղաշրջումից հետո: «Լինելով արտակարգ հարմարվող ու կեղծ,- գրում է Շերիֆը,- նա նվաճեց Միություն և առաջադիմություն գաղտնի կոմիտեի իր օգնականների վստահությունը, հենց սկզբից դարձավ նրանց գերագույն առաջնորդը: Թալեաթի ղեկավարությամբ ստեղծվեց ֆեդանների կամ քաղաքական մարդասպանների ընկերությունը: Նա երկրի ներքին քաղաքականության մեջ ներդրեց ահաբեկչությունը: Անձամբ կազմակերպեց 1913 թ. հունվարի 23-ի հեղաշրջումը... երկրորդ գնդակն արձակեց Նազըմ փաշային»:

Թալեաթը Սալոնիկի մասոնության պարագլուխն էր: Սազոնովը նրա մասին գրում է, որ Թալեաթն «առանց չափազանցության համաշխարհային ամբողջ պատմության ամենաամբարտավան գործիչն էր... Կ. Պոլսո մեր դեսպան Հիրսն ինձ նախազգուշացրեց, չհավատալ Թալեաթի ոչ մի բառին: Այս նախազգուշացումը լրիվ համընկնում էր նրա մասին իմ իմացածի հետ: Հոգու խորքում ես ցանկանում էի, որքան հնարավոր էր, նրա հետ քիչ հաղորդակցվել, միաժամանակ շահագրգիռ էի անձնապես ծանոթանալու, քանի որ նրանից էր կախված հայկական բարեկարգումների բախտը... որի հաջողության գործում ես շահագրգռված էի: Ֆիզիկապես Թալեաթն իսկական թուրք էր, չմայած ընդունում էր իր գնչուական ծագումը. նա միջահասակ էր,

296 Ռեֆիկ Ա., նշվ. աշխ., էջ 50-51:
297 Ն. տ., էջ 70-73:
298 Ն. տ., էջ 74:

բայց պնդակազմ... խելացի աչքեր, որոնց նա աշխատում էր տալ մեղմ արտահայտություն: Սակայն Թալեաթի դեմքին ես նկատեցի որոշակի չփոթմունք և վեհոտություն, ինչը հատուկ է տգետ մարդկանց, երբ նրանք հայտնվում են բարձր հասարակությունում: Իմ զրույցը Թալեաթի ու Իզեթ փաշայի հետ հաջող չես անվանի: Նրանք ուշադրությամբ լսում էին ինձ, առանց իրենց կարծիքն արտահայտելու: Այդ լռությունը բացատրում էին նրանով, որ չունեն եպարքոս Սայիդ Հալիմի հրահանգը, որը, ինչպես մենք գիտենք, կառավարությունում որևէ դեր չէր խաղում և բոլոր հարցերը որոշում էին միայն Միություն և առաջադիմություն կոմիտեի ղեկավարները՝ Թալեաթը, Էնվերն ու Ջեմալը»[299]: Նա իշխանության համար երիտթուրքերի պայքարի ոգին էր: Նա էր, որ 1910-ին հրդեհեց Ջրազան: Սայիդ Հալիմի վարչապետության շրջանում կառավարության փաստական ղեկավարն էր: «Գլխավոր շարժիչն, անշուշտ, Թալեաթն էր,- գրում է ավստրիացի պատմաբան Վ. Բիլը,- նա էր վալիներին հրահանգներ ուղարկում, սակայն բռնագաղթի մասին որոշումն ընդունել էր ամբողջ կոմիտեն»[300]: Կարաբեքիրը Թալեաթի մասին ասում է. «Պետական մարդ լինելուց շատ հեռու էր... օտար լեզու չգիտեր և հեռատես չէր»[301]: Թալեաթի հետ հանդիպումներից մեկի մասին Հ. Մորգենթաուն գրում է. «Թալեաթը կարծելով, որ հաղթանակն ու անպատիժ մնալն ապահովված է, ցինիկաբար խոստովանում էր, թե պարզապես որոշված է վերջնականապես բնաջնջել մի ամբողջ ցեղ...»:

Պ. Միլյուկովը պատմում է Թալեաթի հետ իր առաջին հանդիպման ու նրա թողած տպավորության մասին, երբ գնացքով Կ. Պոլսից մեկնում էր Սալոնիկ: «Վագոնի բաժանմունքում դիմացս նստած էին երկու ուղևոր. մեկը թուրք էր, մյուսը՝ բուլղարացի: Թուրքը հագած էր հնամաշ մոխրագույն կոստյում, սակայն շուտով նկատեցի, որ գնացքի յուրաքանչյուր կանգառում նրան սպասում էր պատվիրակություն: Ուղեկիցս ամեն անգամ դուրս էր գալիս դիմավորելու եկածներին: Նրանց հետ կարճատև զրույցներ էր ունենում: Նրա ոչ կանոնավոր ֆրանսերենը չէր վկայում բարձր կուլտուրայի մասին, սակայն նաև չէր խանգարում, որ յուրայինների շրջանում կարևոր դեր խաղար: Ես աստիճանաբար իմացա, որ նա փոստային ծառայող էր, անունը՝ Թալեաթ: Տեղի ազգաբնակչության շրջանում նա համարվում էր երիտթուրքական գլխավոր առաջնորդներից մեկը: Իսկ բուլղարացին, հավանաբար, մակեդոնական հեղափոխական շարժման մասնակից էր: Նա ցնծալի արտահայտություններով, անվերապահորեն ողջունում էր երիտթուրքական հեղաշրջումը. «Մեր խժդժություններն այժմ արդեն վերջ գտան, պայքարն ավարտված է: Այժմ մենք բոլորս հավասար ենք, մենք բոլորս «օսմանացի» ենք, իրավահավասար քաղաքացիներ, առանց ռասայի ու կրոնի տարբերության»: Դա ինձ համար անսովոր և անսպասելի էր: Իմ դիմաց նստած էին երեկվա տերն ու ստրուկը, դահիճն ու զոհը, և ինքս ինձ մտածում էի՝ ո՞ւր կորան դարավոր տիրապետության սովորությունները՝ մի կողմից և քրիստոնեական ռայայի ինքնամփոփությունը՝ մյուս կողմից: Եվ ի՞նչ կլինի, եթե «հավասարությունը» արտահայտվի թեկուզ այն կրոնական հովանավորության կորուստով, որի տակ թաքնվում էր քրիստոնեական համայնքների փաստական անձեռնմխելիությունը: Ես, համենայն դեպս, ենթարկվեցի ընդհանուր տրամաբանությանը և հակված էի հավատալու, որ հեղափոխությունը հրաշք է գործել»[302]:

Գերմանական «Freiheit» թերթը գրեց. «Նրանք «պետական անհրաժեշտություն» են նկատում այն ամենը, ինչ տեղի ունեցավ Թուրքիայում: Իսկ Թալեաթ փաշային՝ իբրև անհատ, գառնուկի տեղ են դնում, որովհետև նա միայն «քաղաքական և պատերազմական պայմանների մեջ»էր, որ հայերի հանդեպ կոտորածի միջոցներ կիրարկեց, իր գործադիր մարմիններն էին, որ «չափազանցուած խստութեան» հասցրին այդ միջոցները» և որ «խաղաղ պայմանների մեջ Թալեաթ փաշան երբեք այդպիսի խիստ «միջոցների» չէր դիմի: Թերթը բերում է «Berliner Tageblat»-ի էջերից Թեոդոր Վոլֆի խոսքերը Թալեաթի մասին. «...Թալեաթը ոչ միայն Պիղատոսի դեր էր կատարել»... այլև «նա մի քաղաքագետ էր, որ ուզում էր երկրի մեջ միատարրություն ապահովել, օտար կրոնների ժողովուրդների ոչնչացումով»[303]: «Երիտասարդ թուրքերի ղեկավարները,- շարունակում է թերթը,- օգտագործում էին իրենց պաշտոնները հարստանալու

299 Sazonov S. Les annes fatales, Paris 1927, p. 141.
300 Bihl W. Die Kaukasus-Politik der Mittelmachte, Band I, Wien, 1975, s. 172.
301 Karabekir K. Cihan harbine neden girdik, nasil idare ettik, Ist., 1937. s. 138.
302 Милюков П. Воспоминания. М., 1991.
303 Թեհլիրյան Ս., նշվ. աշխ., էջ 440-441:

հսկայական կաշառքների, զորքի մատակարարման գործը կապալով տալու միջոցով: Դրամի մի մասը, որ պարզապես գողացել էին ժողովրդի գրպանից, տեղավորեցին արտասահմանի դրամատներում... որոնց օգնությամբ քաղաքական ոճրագործները կարող են անհոգ կյանք վարել... Թալեաթ փաշայի իշխանության օրով էր, պատերազմի ժամանակ, որ հայկական անողոք սպանդանոցներ կազմակերպվեցին, որոնց զոհ գնաց մեկ միլիոն մարդ»:

Գերմանական «Die Volkstimme»-ն գրեց. «Հարդենբերգեր շտրասեում ատրճանակի հարվածի բոցերում մի վայրկյանի մեջ տեսանելի եղավ մի ամբողջ ժողովրդի աննկարագրելի մարտիրոսությունը... Վերջապես այս հրեշը գնդակի մի հարվածով մեռավ շատ արագ, մինչդեռ հարյուր հազարավորների, որոնց կորուստը նրա հաշվի մեջ պարտքի կողմ պետք է արձանագրել, դանդաղ ու տանջալից մահվան դատապարտեցին...»[304]:

«Ինչպես որ Թալեաթը,- գրեց «Die Zikunft»-ը,- ուրանում էր, բայց նրա մեղսակցությունը ապացուցված է իր իսկ հայրենակիցների համոզմամբ: Անտիկ աշխարհի Հիպպարինիան, Հիպիասը և Գեսլերը համեմատ Թալեաթ-Էնվեր-Ջեմալի հետ երեխաներ են գազանության մեջ: Գերմանական ժողովուրդը նրանց հետ անբաժան չորս ամբողջ տարի ուս ուսի եղբայրացած էր: Վայ նրան, որ համարձակվեր ամենափոքր ակնարկություն իսկ անել այդ ստահակների ոճրագործության մասին»[305]:

Ս. Թեհլիրյանի դատապաշտպանը դատարանում հայտարարեց. «Թալեաթը մեկն էր նրանցից, որ թեև զինուորականի համազգեստ չէր կրում, բայց կաղամարի առջև նստած՝ հրամաններ կը յղե և գազանորեն կը պաշտպանե բռնության դրոշը: Մի ամբողջ ժողովուրդ տեղահանելու հրամանը ամենից հրեշային բանն է, որ կարող է ծնունդ առնել միայն ռազմատենչ ուղեղի մեջ... եթե Երիտ. Թուրք Կոմիտեն համոզուած է, որ լավ ժանտարմաները հեռացուած էին ու մնացել էին միայն սինլքորները, այդ դեպքում իրավունք չուներ տեղահանության հրաման արձակելու: Եւ եթե տեղահանության գործը յանձնեց նրանց, ուրեմն ինքն է պատասխանատուն հեռանքների: Եթե հայերը մինչև իսկ դաշնակցած լինեին ուրիշ ժողովուրդների հետ և դաւաճանած, երիտթուրքերը այնուամենայնիվ գիտեին, որ կային հազարավոր կանայք, երեխաներ, որոնք այդ գործից ոչ մի լուր չունեին, և հետևաբար տեղահանության հրամանի առաջին պայմանը պիտի լիներ խիստ կարգադրություն՝ հոգալու կանանց, երեխաների և այն այրերի մասին, որոնք կապ չունեին «դավաճանների հետ»»[306]:

Օվգյուստ Կովին անգլիական «Seba»-ում գրեց. «Թալեաթը 1,5 միլիոն հայերու բնաջնջման հրաման տուողն է: Անտարակույս, իբրև հավանող ու մեղսակից ունեցած էին իթիհատի կառավարության և կոմիտեին մյուս անդամները և գերման դեսպանատունը: Առանձին չէր գործեր: Ան վարկաձև մը և մեթոտ մը կը մարմնավորեր: Բայց իբրև հավատարիմ համիտեան բռնակալության, խարդախուած բարենորոգչի, որոշած էր ջնջել հայկական խնդիրը կայսրության մեջեն, հայերը բնաջնջելով: Ոչ մեկ ատելութիւն կոգևորեր զայն, ծրագիր մը կը գործադրեր: Վայրագ և չենչող խղճի կատարեալ հանդարտությամբ հարթումի և կայսրության միության կը հետամտեր: Այս մարդը... ամենեն ահավոր ավերիչներեն մեկն եղած է մարդկության պատմության մեջ... Պոլինի իր տիպարները, վիթխարի ծրագիր մը կը հետապնդեր... Կրթությունե զուրկ՝ ուղեղը լեցուած էր անկարգորեն, բնածին տրամաբանությամբ մը ուներ և անդիմադրելի կամք մը... Շատ մարդ խաբած էր: Էնվերի և Ջեմալի հետ խալիֆա սուլթանը վերածեց «իրատեի մեքենայի»... անհավատ, ազատ մտածող, արհամարոտ Կորանի բոլոր պատուերներուն հանդեպ, անձնատուր եղավ համիսլամական և թուրանական քաղաքականության... Այս եռապետությունը (Թալեաթ, Էնվեր, Ջեմալ) կը կառավարեր վեհապետորեն, առանց ուշադրություն ընելու ոչ Սուլթանին, ոչ երեսփոխանական ժողովին, ոչ ծերակույտին»[307]: Թալեաթն ամբարտավան էր, բայց քաղաքականության մեջ վախկոտ, խուճապի մատնվող: Դարդանելի ճակատամարտի օրերին նա Սարահեդդինին հրավիրեց Վիեննա և առաջարկեց վերադառնալ Կ. Պոլիս և գլխավորել Բ. Դուռը, եթե դաշնակիցները քաղաք մտնեին: Բայց Դարդանելը կանգուն մնաց և դրանից «ամենաշատը տուժեցին հայերը»[308]:

304 Թեհլիրյան Ս., նշվ. աշխ., էջ 441-443:
305 Ն. տ., էջ 446-447:
306 Ն. տ., էջ 415:
307 Ն. տ., էջ 403-404:
308 Einstein I., նշվ. աշխ., էջ 219:

Պատմում է ռուս լրագրող Ա. Տիրկովան. «Ես չգիտեմ, դիտավորյալ թե պատահականորեն նա (Թալեաթը) կարծես միշտ թաքնվում էր, կանգնում էր երկրորդ շարքում: Բոլորը գիտեին նրա դերը, գիտեին, որ նա կոմիտեում ամենափորձառու և ճարպիկ կազմակերպիչն է, որ մնացած բոլորին բռի մեջ է պահում: Խորհրդարանում, մամուլում, օտարերկրյա թղթակիցների հետ զրույցներում միշտ հանդես էին գալիս ուրիշները, իսկ Թալեաթ բեյը մի կողմ էր մնում: Եվ լոկ պաշտոնապես էր նա համարվում փոստի և հեռագրի նախարար: Խորհրդարանի կողմարահներում ... երբ Թալեաթը կանգնած էր լինում շրջապատված պատգամավորներով, բոլորը փոքրինչ այդ կողմն էին թեքվում, իմանալով, որ այնտեղ է կենտրոնը: Ամուր, լայնաթիկունք, սև բեղերով, դուրս ցցված սևաչքերով, հանդարտ և վճռական դեմքով, Թալեաթ բեյը թե պահելաձևով և թե ուրիշների հետ խոսելիս համեստության աստիճանի պարզ էր: Մանավանդ, երբ խոսում էր ֆրանսերեն... Եղել է ստորին, աննշան ծառայող, սակայն Մակեդոնիայում նախապատրաստում էր երիտթուրքական հեղափոխությունը: Զորքերը Կ. Պոլսի վրա շարժող երիտասարդ դեսպաններ՝ Էնվեր բեյն ու Նազըմ բեյը լոկ զենք էին այդ լռակյաց և տիրական փոստատարի ձեռքին: Իմ բարեկամներից մեկը ծիծաղելով պատմեց, որ նախորդ օրը երեկոյան, երբ աստղային գիշերն արդեն իջել էր Ստամբուլի վրա, ինքը Թալեաթին տեսել էր մի նեղ, կիսամութ փողոցում: Նա կանգնած էր մսի կրպակի մոտ, որը մի կերպ լուսավորված էր նավթի լամպով և ոչխարի միս էր գնում:

-Դուք ինչո՞ւ եք այստեղ: Չէ՞ որ այս խճճված նրբանցքներում ձեզ սպանելը դժվար չէ: Ընդդիմությունը հետապնդում է ձեզ,- նրան ասել էր իմ ծանոթը: Թալեաթը ժպտալով ուսերը վեր էր քաշել և թուրքերեն պատասխանել. «Կարող է պատահել... ճակատագիր է... Ղսմաթ...»:

Քաղաքական պայքարի ամենաբուռն ժամանակն էր, երբ բոպե առ բոպե սպասում էին, որ ընդդիմության աջակցությունը վայելող սպայությունը նորից հեղափոխություն էր կազմակերպելու, պարզ ասած, ձեռք էր ձգելու բոլոր նշանավոր երիտթուրքերին և նրանց հաշվեհարդարի էր ենթարկելու թուրքական ձևով... Այդ ժամանակ մենք Թալեաթին տեսանք օրը ցերեկով Ստամբուլը եվրոպական թաղերին միացնող կամրջի վրա: Նա հանգիստ, դանդաղ քայլում էր, ինչպես մի մարդ, որից վերցրել են բոլոր պարտականությունները և շտապելու տեղ չուներ:

-Դուք ի՞նչ եք այդպես շրջում: Չէ՞ որ ընդդիմությունը բացահայտ սպառնում է ձեզ: - Նա ժպտաց իր մշտական, անթափանցելի ժպիտով և պատասխանեց. «Ղսմաթ է»:

Եթե Հուսեյն Ջահիդը թողնում էր խոհուն հրապարակախոսի և շնորհալի ստեղծագործողի, իսկ Ջավիդ բեյը՝ ճարպիկ, խելոք և ճկուն գործնական մարդու տպավորություն, ապա Թալեաթ բեյը ծնում էր ինչ-որ խճճված, բարդ զգացողություն: Նրա դուրս ցցված սև աչքերում կար ծանր, մռայլ ինչ-որ բան նույնիսկ այն ժամանակ, երբ ժպտում էր: Նա մեզ՝ եվրոպացիներիս չէր սիրում: Եվ որպես հայրենասեր իրավացի էր: Եվրոպան Թուրքիան ամբողջությամբ իր ձեռքն էր առել: Թալեաթը չէր ձևացնում, չէր կեղծում, նույնիսկ առանձնապես չէր ձգտում իր տգիտությունը թաքցնել: Երբ երիտասարդ դիվանագետները նրա մոտ էին գնում օսմանյան կառավարության և հպատակների միջև այլևայլ խճճված գործերով, Թալեաթ բեյը իր մի փոքր գոռոզ ժպիտով ասում էր. «Իսկ դու, ջանմ, ասա մեզ մոտ Թուրքիայում նման օրենք կա՞ թե ոչ: Միայն ճիշտն ասա, մի փչիր»: Օրենքներ չգիտեր և պետական գործչի համար անհրաժեշտ էլ չէր համարում դրանց գիտենալը: Եռանդուն, տիրական, անպայման նվիրված իր երկրին՝ ինքը նրա համար օրենք դարձավ: Հնարավոր է հենց Թալեաթի միջոցով էր երիտթուրքական բարակ քղանցքի միջից առանձնահատուկ կոպտությամբ ցցվում ծեր Թուրքիայի դաժան դեմքը»[309]:

Ահա նաև Կ. Պոլսում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպան Մորգենթաուի ևս մի քանի դիտարկում. «Զափազանց քիչ կը մտահոգուեր մահմետականությունով, որովհետև իր կուսակցության պետերուն մեծամասնության նման՝ բոլոր կրոնքներուն անհաշտ էր: «Կ'ատեմ բոլոր «կղերականները»... Թալեաթ որևէ ուշադրություն չէր ընծայեր իր կրոնքին զանազան պատուիրաններուն, մասնաւորաբար ըմպելիի վերաբերողներուն. ան հոգին էր ակումբի մը, որ հաստատուած էր ամերիկեան դեսպանատունեն ոչ հեռու և որուն հաւաքոյթները երբեմն կրնային Բաքոսեան համարուիլ»[310]:

309 Тюркова А. Старая Турция и младотурки. Год в Константинополе. Петроград, 1916, стр. 124-127.
310 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 22:

«Ան գիտեր որ վտանգաւոր ճամբու մը մէջ մտած էր և կը սպասեր բուռն կերպով անհետանալ: «Ձեմ յուսար անկողինիս մէջ մեռնիլ», ըսաւ ինծի: Ներքին գործերու նախարար ըլլալով, Թալեաթ ձեռք առաւ ոստիկանութեան և նահանգներու կամ վիլայեթներու վերհսկողութիւնը որմե ազդեցութեան վերաճում մը, որ ամրապնդեց իր դիրքը Քոմիթեին մէջ: Ան դիմեց օժանդակութեանը բոլոր կարևոր կուսակցութիւններուն, կամաց-կամաց անոնց ներկայացուցիչները նախարարութեան ուրիշ պաշտոններու կոչելով: Թեև ինք եղբեն ըլլար հարիւր հազարաւոր հայերու ջարդին պատասխանատու կազմակերպիչը, այդ թուականին Թալեաթ կը պնդեր որ՝ Քոմիթեն կողմնակից էր Կայսրութեան բոլոր ցեղերուն միացումին, և այդ ծրագրով, իր առաջին Դահլիճը կազմուեցաւ քրիստոնեայ արաբով մը, Տեոնմեով մը, հայով մը...»[311]: Ամերիկյան «Outlook»-ը 1915թ. դեկտեմբերի 8-ին տպագրեց հետևյալ երկխոսությունը: «Ի՞նչ կասէք Թալեաթ բեյի մասին»: «Նա ավելի խորամանկ է, քան Էնվեր բեյը: Նա է ծրագրում և ի կատար ածում այս բոլոր սարսափելի պլանները՝ հայկական կոտորածները և Էնվերին պատասխանատու դարձնում դրանց համար: Թալեաթ բեյը բացեիբաց պարծենում էր, որ երեք ամսում ավելին արեց «լուծելու» Հայկական հարցը, քան Աբդուլ Համիդը 30 տարում: Նա նմանապես սպառնում էր սպանել Թուրքիայում ապրող բոլոր հրեաներին և հույն քրիստոնյաների հետ վարվել այնպես, ինչպես վարվեց հայերի հետ: Թալեաթ բեյը հանցավոր է հայերի արտաքսման գործում»: «Դուք վստա՞հ եք, որ 600000 հայ սպանվել է»: «Օհ, այո: Ավելին: Դրա համար Թալեաթ բեյը պարծեցել է նույնիսկ ամերիկյան դեսպանի առաջ: Նա ցինիկաբար և անամոթաբար հայտարարել է, որ Հայկական հարցից ազատվելու համար գլուխը պետք է ազատի հայերից: Նա և Էնվեր փաշան ասում են, որ նրանք նույն ձևով կվարվեն հրեաների և հույների հետ, և վերջում որպես փառահեղ ավարտ՝ գերմանացիների հետ»:

Թալեաթը բանսարկության շնորհիվ հասավ ամենաբարձր դիրքերի: Սակայն նրա ճակատագրի ծառը որքան բարձրացավ, այնքան ակնհայտ դարձավ, որ արմատներն աղբի մեջ էին... Նրա եպարքոսությունը յուրատիպ օձային արքայություն էր... Հասկացել էր, որ նույնիսկ իրեն դատապարտողների աչքում «արհամարհված արձան» էր: Ինքը նույնպես զգացել էր, որ թե իր դիրքը և թե համբավը պատմության առջև իրեն մեղադրող վկաներ են լինելու: Նրա համար հույսը սյլա միայն շնչարգելությունն էր: Ամեն մի հաջողության մեջ կար նրան սպասող անքնություն, որը որևէ այլ մղձավանջից շատ ավելի տառապանք պատճառող էր: Կյանքը նրա էությունը կրծող որդի էր վերածել, այտերը վաղ խոռոչացած և մազերը ծերացան 40 տարեկան չդարձած: Զգացվում էր, որ դագաղը չէր ուշանալու, որպեսզի չափի նրա իսկական հասակը: Հակառակ իր պաշտոնական փայլին Թալեաթը դժբախտ կյանքով ապրեց: Ամեն ինչի արժանացավ, առանց որևէ բան վայելելու... Շինծու ժպիտով անտաշ զորություն ցույց տալու համար բռնադատում էր ինքն իրեն... Թալեաթն ուներ սատանայական գոռոզություն, որը ձգտում էր թաքցնել խորամանկության մտերմիկ ձևերի տակ: Նրա գոռոզության համար քաղաքական պարտությունն անհանդուրժելի հեռանկար էր: Չնայած դրան, զգում էր, որ յուրաքանչյուր քայլը իրեն մոտեցնում է այդ հավանականությանը...[312] Թալեաթի անձնական քարտուղար Ֆ. Աթայը, որը հետագայում դարձավ Մ. Քեմալի զինակիցը և հրատարակում էր «Ուլուս» պաշտոնաթերթը, Թալեաթին անվանում է «նենգամիտ ստախոս և խաբեբա»[313]: Հ. Էդիպի վկայությամբ՝ Թալեաթը խոստովանել է անմարդկային արարքները և դրանք արդարացրել ազգային շահերի հրամայականով՝ համոզված, որ երբ մի ազգ սեփական շահերի համար բաներ է անում և դրանք հաջողվում են, աշխարհը հավանությամբ է ընդունում: «Ես պատրաստ եմ մեռնել այն բանի համար, ինչ կատարեցի և գիտեմ, որ մեռնելու եմ հենց դրա համար»:

1918թ. երիտթուրք պարագլուխների փախուստից հետո թուրքական թերթերը «մռայլ գույներով էին նկարագրում պետական գանձարանի կողոպուտը... միայն Թալեաթի տրամադրության տակ եղել էր 10 հազ. օսմանյան հնչուն ոսկի»[314]: Թալեաթը, պատմում է թուրք գործիչներից մեկը, շահմար օձ էր, աչքերի շուրջը արյան բծեր, պարանոցը կարճ, թուրք պաշտոնյայի կիրթ ձևերով: Կեղծավորությունը, խորամանկությունը, խաբեբայությունը քանդակված էին

311 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 26:

312 Գանդրունի Հ. Հայ հեղափոխությունը օսմանեան բռնատիրութեան դեմ 1890-1910, Բեյրութ, 1973, էջ 468-472:

313 «Արմենիա», 20-ը մարտի 1987:

314 Թեհլիրյան Ս., նշվ. աշխ., էջ 209:

դեմքին: Խոսում էր գլխահակ, հայացքը մշտապես հառած վար, խոսքը շարունակելիս թարթիչներն անընդհատ իրար էր բերում, խոսակցի երեսին նայում էր թաքուն, տեսնելու, թե ինչ տպավորություն է թողնում իր ասածը: Իսկ խոսակցին լսում էր անթարթ հայացքով և ժպիտով ու հավանության նշաններով, որով թաքցնում էր իր ներքինը[315]: Հ. Շտուրմերը Թալեաթին անվանում է Թուրքիայի «չթագադրված թագավոր»[316]: Զիա Շաքիրը գրում է. «Նա գլխավորապես օգտագործում էր Հագը փաշայի (մատի վրա խաղացնելու) և Սայիդ փաշայի (անվճռականություն և տատանվողականություն) մարտավարությունը... Լինելով կոմիտեական, իսկ հետագայում՝ մեջլիսի պատգամավոր, Թալեաթը հայտնի էր իր վճռականությամբ և անխոնջությամբ: Զբաղեցնելով պատասխանատու պաշտոն, նա վերածվեց լրջմիտ էֆենդու: Նա կարող էր մարդկանց, եթե նրանց կարիքն ուներ, օգտագործել, իսկ ապա առանց երկմտելու հեռացնել ճանապարհից (ոչնչացնել): Իմ անձնական արխիվում պահվող վերծանված գրագրության բնօրինակները բավական ակնհայտ ցուցադրում են Թալեաթ փաշայի բնավորության այդ գիծը: Ընկերության (երիտթուրքերի կուսակցության) ֆիդայիների թվում էր ոմն Զերքեզ Ահմեդը: Այս արյունախումը, լինելով կոմիտեական, կատարել է տարբեր գաղտնի հանձնարարություններ: Մի անգամ վերևի հանձնարարությամբ, գիշերը Բակիրկեոյում նա գազանաբար սպանեց ընդդիմության ներկայացուցիչ Զեքի բեյին: Քանի որ հանցագործության հետքերը չհաջողվեց ոչնչացնել, գործը հասավ դատի ու հետաքննության: Զերքեզ Ահմեդն անհետացավ և մինչև Հայերի տեղահանությունը այլևս ոչ մի տեղ չերևաց»[317]: Տեղահանության բուռն պահին նա հանկարծակի հայտնվեց: Հատված Ջենանի Շեհաբեդդինի «Գիշատիչ թռչուններ» հոդվածից, տպված «Պեյամ Սաբահ» պարբերականում. «Թալեաթը կատաղի փառամոլ էր, երեսփոխանությունը չբավարարեց նրա փառասիրությունը, բավարար չեղավ նաև նախարարությունը, թերևս արհամարհեց նաև մեծ եպարքոսությունը: Ամեն գնով ձգտեց ընդարձակել ազդեցության շրջանակները: Ցանկացավ, որ իր շուրջը կազմվի գովաբանողների օղակ, ստրկամիտների շրջանակ... Թալեաթի համար դրամը երբեք նպատակ չդարձավ, սակայն ոսկի և արծաթ սիրում էր, որովհետև դրանց փայլով հնարավոր էր երևալ: Նրա իդեալն էր երևալ, միշտ երևալ, միշտ մի քիչ ավելի բարձրանալ: Այս ստորածնի մեկնակետից մինչև հասած դիրքն ընկած ուղին միայն ուղղահայաց գիծ է, չնայած դրան, դեռ չի հագեցել բարձրանալուց: ... Թալեաթը հեշտությամբ ինքնախաբեությանը անձնատուր եղավ... այլևս չէր կարողանում պատկերացնել որևէ պատնեշ իր դեմ: ... Ճիշտ է, քանի բարձրացավ, այնքան տեսանելի դարձավ, սակայն նրա տեսողության դաշտը չընդլայնվեց... Կարծես արև է այն հրդեհը, որ շրջապատել էր իրեն: Անկարող էր զանազանել կենսատու և կիզիչ ջերմությունը... ոճիրը, եթե իր օգտին էր, առաքինություն էր: Ճանաչում էր միայն այն օրենքները, որոնք ծառայում էին իր ցանկություններին: ...Լեզվով միշտ հանրային սեր էր, իսկ սրտում՝ միայն անձնական սեր: «Մեծ» էր համարում նրանց, ումից վախենում էր և վախկոտների մեջ արժանիք էր տեսնում: ...Թալեաթի համար ազգային եղբայրներ էին «մերքեզը ումումիի անդամները», իսկ հայրենիքն էին իթիհադի ակումբները: Իր թշնամին իթիհադի թշնամի, իթիհադի հակառակորդն էլ ազգի թշնամի էր: Նախընտրում էր, որ պետությունն իր ձեռքի մեջ մեռներ, քան բարգավաճեր ուրիշի ձեռքերում, իր փառատենչությանը հազուրդ տալու համար Տրիպոլում պատերազմ սկսեց, Բալկանյան պատերազմը սկսել տվեց, զենքով գրավեց ու գրավել տվեց Բաբը Ալին... Նա ոչինչ չէր: «Կոմիտեական էր»... չար տաղանդ ուներ, թակարդ լարելու, դարանակալելու, հանկարծակիի բերելու ընդունակ, խարդախ, լարախաղաց, խաբեբա տաղանդ: Թե իր անձնական և թե հասարակական կյանքում Թալեաթի հենարանը, լծակը, ուժը, տոկունությունը նույնն էր՝ բանսարկությունը»: 1909թ. Թալեաթը խորհրդարանի փոխնախագահներից էր և ծանոթացել էր Ադանայի ջարդերի մասին Հ. Պապիկյանի կազմած տեղեկագրին, համաձայն որի Ադանայում զոհվել էր 9350, Տանրք Վերդում՝ 1280, Սայ Գեղիդում՝ 850, Էսե Հաջլում՝ 1558 հայ: Ամբողջությամբ վերցրած սպանվել էր 20571 և անապատան մնացել 30 հազ. հայ: Նույնիսկ այս չափավոր գնահատականը, որ Հ. Պապիկյանը ծանոթացրեց Թալեաթին, նրան զրկեց ապրելու իրավունքից և Պապիկյանին մեռած գտան իջևանատանը:

315 Սապահ Գիլեան Ս., նշվ. աշխ., էջ 255:

316 Stuermer H. The War Years in Constatinople, New York, 1917, p. 195.

317 Zuya Sakir Yeni tarihinde onemli uc adamlari, Tallat, Enver ve Cemal, Istanbul, 1944, s. 52-53.

Ժամանակակիցների վկայությամբ Թալեաթը խուսափում էր Բալկանյան պատերազմում Թուրքիայի պարտության պատճառների մասին խոսելուց, բանն այն է, որ «ԻԹԻՀԱԴ վը Թերաքք կուսակցության անդամ սպաները չէին քաշվում ռազմական գործը ձախողել և բարոյալքել զինվորներին. նրանց մտքում կուսակցական փառասիրությունը գրավել էր հայրենասիրության տեղը»: Արևմուտքում խայտառակ պարտության հետևանքները որոշվեց օգտագործել իրականացնելու արևելյան ծրագիրը: Շարքային չէր Թալեաթի դերը Աբդուլ Համիդ 2-րդի տապալման գործում: Սակայն սահմանադրության հռչակման հաջորդ օրը նա գնաց Ելդզ ու համբուրեց Փադիշահի ձեռքը, իսկ երբ 76-ամյա սուլթանը մահացավ, հոնգուր-հոնգուր լաց եղավ: Հավանաբար այս հոգեհարազատությունն էր պատճառը համիդյան քաղաքականությունը շարունակելու երիտթուրքերի վճռականության: Եթե Փադիշահը հայերի 1894-96ԹԹ., ապա Թալեաթը 1914-1918ԹԹ. ցեղասպանության կազմակերպիչն էր:

1918Թ. փախչելով Գերմանիա Թալեաթը որոշ ժամանակ թաքնվում է զորավար Ֆոն Շելենդորֆի տանը: Ի դեպ, այս զինվորականը եղել է Թուրքիայում ծառայող գերմանական սպաների թվում: Նա Սարիղամիշում էնվերի շտաբի պետն էր: Միակ գերմանացին էր, որ Թալեաթի սպանության կապակցությամբ «Deuche Algmainezeitung»-ում հօգուտ նրա հոդված տպագրեց: Թալեաթը սպանվեց Բեռլինում 1921-ին Ս. Թեհլիրյանի կողմից:

1946. Ցալչընի առաջաբանով լույս տեսավ մի գրքույկ, որը կոչվում էր «Թալեաթի հուշեր»: Ցալչընը գրում է, թե Թալեաթի հուշերը կիսատ-պռատ են և դա բացատրում է նրանով, որ «Հանգամանքներն ու պայմանները նրան (Թալեաթին) հնարավորություն չտվեցին գրելու ամբողջական հուշեր»[318]: Գիտնականներից ոմանք նկատի ունենալով, որ տասնամյակներ շարունակ Թալեաթի հուշերի մասին որևէ տեղեկություն չի եղել, որ հուշերի ձեռագիրը չի պահպանվել, և այն, որ տպագրված «Հուշերը» չունեն տրամաբանական հստակ կառուցվածք, կասկածանքի տակ են առնում Թալեաթի հուշերի գոյությունը, իսկ Պոլսում հրատարակվածը համարում են քաղաքական որոշակի խնդիր հետապնդող հավաքածու կամ՝ ուղղակի կեղծարարություն: Այս եզրակացության համար որպես հիմնավորում նաև նշվում է, որ այդ գրությունում «ամեն կերպ նենգափոխված են փաստերը և պատմական իրականությունը»[319]: Եթե մի կողմ թողնենք հուշերի սկզբում Թուրքիայի 1914-1918ԹԹ. ներքին և արտաքին իրադրությանը վերաբերող համառոտ շարադրանքը, ապա առանց վարանելու կարելի է ասել, որ այդ գիրքը նվիրված է հիմնականում Հայկական հարցին: «Հուշերը» տարբերվում են թուրք մյուս պետական գործիչների նմանատիպ ստեղծագործություններից: Շատ քիչ տեղ է տրված անձնական գրառումներին և հիմնականում բերված են «փաստաթղթեր»: Դրանք վերցված են 1916Թ. Թուրքիայում լույս տեսած հանրահայտ գրքույկից: Ա. Փափազյանը գրում է. «...Թալեաթ փաշայի հուշերի վերլուծումը մեզ բերում է այն եզրակացության, որ արևմտահայությանը վերաբերող նյութերը միտումնավոր աղավաղված են և չեն համապատասխանում իրականությանը: Խիստ կասկածելի է նաև հուշերի հեղինակի ինքնության հարցը: Միգուցե Թալեաթն ունեցել է օրագրության կամ հուշերի ձևով շարադրված էջեր, բոլոր դեպքերում հրատարակիչները նենգ նպատակներով ընդարձակել են դրանց ծավալը, խմբագրել և կցել շինծու «փաստաթղթեր»»[320]:Համաձայն լինելով այս հարցադրման հետ, միաժամանակ դժվար է ընդունել եզրակացությունները: Ինչո՞ւ: 1. Որ Բեռլինում Թալեաթը հուշեր գրելու և երիտթուրքերի քաղաքականությունը արդարացնելու հարկադրանք ուներ, ակնհայտ է: Առաջին աշխարհամարտից հետո հասարակայնությունը պահանջում էր առատորեն հեղված արյան համար հատուցում՝ հանցագործներին դատաստանի առաջ կանգնեցնել: Ուստի հասկանալի էր, որ պատերազմի ու կոտորածների հանցագործները, այդ թվում նաև Թալեաթն ինքը, արդարանալու այլևայլ միջոցների էին դիմում: Նման միջոցներից էին նաև հուշագրությունները: 2. Հայկական հարցում Թալեաթի և մերօրյա թուրք պատմաբանների ու քաղաքական գործիչների հայացքների միջև էական տարբերություն

318 «Talaat Pasanin hatiralari», Istanbul, 1946.

319 «Մերձավոր և Միջին Արևելքի երկրների և ժողովուրդներ. Թուրքիա»: Երևան, 1985, էջ 92-95:

320 Ն.տ.:

չկա, «Հուշերի» հրատարակիչները կարիք չունեին Թալեաթին վերագրելու մտքեր ու փաստեր: 3. «Հայ կոմիտեների հեղափոխական շարժումներն ու ծրագրերը» գրքույկի «փաստագրական» նյութերին «Հուշերում» լայն տեղ տալը ոչ թե կասկածի տակ է դնում, այլ, ընդհակառակը, հաստատում է, որ դրանց հեղինակը Թալեաթն է: Քանի որ. 4. նշված գրքույկի նյութերը հավաքվել են Թալեաթի հանձնարարությամբ: Նա գրքույկի ստեղծմանը նաև հեղինակային մասնակցություն էր ունեցել: Գրքույկում հավաքված նյութերի մի մասը 1916 Թ. նա օգտագործեց երիտթուրքերի համագումարին ներկայացրած զեկույցում:

Բեռլինի պայմաններում գրքույկի «փաստագրական» տվյալները Թալեաթի համար ոչ միայն ամենահեշտ հայթայթված, այլև ամենաշահեկան նյութերն էին՝ առանց լրացուցիչ ջանքերի իրեն ու իր կուսակցությանն արդարացնելու համար: «Հուշերը» նոր մոտեցումներ, իրադարձությունների քաղաքական վերագնահատումներ չի պարունակում: Այն ինքնարդարացման, սեփական քաղաքականության ճշմարտացիությունը հաստատելու ճիգ է:

Թալեաթի «Հուշերի» ընդհանուր հարցադրումն ամփոփվում է գերմանացի ժուռնալիստ Պ. Սթելտեմանի հետ 1916 Թ. ապրիլի 4-ին կայացած զրույցում. «Հայերին իրենց երկրից հեռացնելը ռազմական անհրաժեշտություն էր: Միջագետք տեղափոխելիս նրանք հարձակման ենթարկվեցին թուրքերի կողմից և մի մասը սպանվեց: 1915Թ. մարտին, Դարդանելի կռիվների ժամանակ անհրաժեշտ համարվեց Պոլսի և շրջապատի հայերին հեռացնել: Կառավարությունը հրամայեց նրանց տեղափոխել Զոր: Դժբախտաբար այս միջոցառումն իրականացնող վատ պաշտոնյաները չափազանցություններ գործեցին... մենք բարբարոսներ չենք: Այդ սարսռեցնող իրադարձությունների մասին պատմությունները ինձ հարկադրել են մի քանի գիշեր անքուն անցկացնելու»:

«Հուշերը» բաղկացած է 151 էջից: Սկսվում է Հ. Ջահիդի «Երկու խոսքով», որում նշվում է, թե «Հուշերը» գրվել են Թալեաթի սպանվելուց (1921Թ.) քիչ առաջ և խնդիր ունեն ԻԹԻՀԱԴԻՆ ու թուրք ժողովրդին պաշտպանել «անիրավ վերաբերմունքից»: Գրքույկի հրատարակիչ է. Պոլայրը Թալեաթին համեմատում է Ա. Սյոքյուլլայի և Միդհատ փաշայի հետ, խոնարհվում ողբացյալ «փաշայի հիշատակի առաջ»: «Հուշերի» համար բնաբանի նշանակություն ունեն Ջ. Գյուրսելի հեղինակած առաջաբանի հետևյալ խոսքերը. «Հայկական ջարդ չի եղել: Հայերը հանկարծակի խփեցին մեր բանակի թիկունքին, փակեցին ճանապարհները... և ոչ միայն թուրքական, այլև ցանկացած բանակ պարտադրված էր դիմադրել»[321]: Թալեաթը գրում է. «Հայերն ու բուլղարացիները սահմանադրության պարգևած ազատության շնորհիվ, առաջին իսկ բարենպաստ առիթով դուրս եկան կառավարության դեմ, որպեսզի Եվրոպայի միջամտությամբ ինքնավարություն, ի վերջո նաև անկախություն ձեռք բերեին»: Թալեաթի այս թեզը կրկնվում է մինչև օրս: Եվ ոչ միայն այդ: Թալեաթի հուշագրությունները Աբդուլ Համիդի հուշերի հետ միասին կազմում են այն հիմքը, որի վրա կառուցվում է խնդրի վերաբերյալ թուրքական պատմագրության կոնցեպցիաների շենքը: Պատահական չէ, որ հիմնական հարցերում սուլթանական վարչակարգին հակադրվող Թալեաթը, Հայկական հարցում համերաշխվում է: Նա դժգոհում է հայերից, որովհետև նրանք «հարձակվում էին թե նոր և թե հին կառավարությունների» վրա: Եթե 1909Թ. նա հասկացնում էր, որ Ադանայի կոտորածի հեղինակը հին վարչակարգի կողմնակիցներն էին, ապա հուշագրություններում գրում է. «Ադանայի դեպքերը... բացառապես հայերի գործն էին, որոնք ի վերջո վերագրվեցին թուրք ժողովրդին»: Ադանայում կատարվածի նպատակն է եղել «ժողովրդական զանգվածների մոլեռանդությունը գրգռելով հնարել ջարդի պատրվակ, այդ ձևով Եվրոպայի ուշադրությունը գրավել իրենց (հայերի) խնդրի վրա և Կիլիկիայում ստեղծել հայկական ինքնավարություն»:

Թալեաթի հուշերը ունեն մի արատավոր գիծ, որը հատուկ է հանցավորի հոգեբանությանը՝ դրանց ամբողջ հոգը սեփական անձի արդարացումն է և, եթե պաշտպանական խոսքեր են ասվում թուրք այս կամ այն գործչի, անգամ ԻԹԻՀԱԴի հասցեին, նորից նույն միտումով՝ արդարացնել իրեն, աշխարհին ներկայանալ բոլորովին այլ կերպարանքով, քան իրականում եղել է: Թալեաթը տարիներ շարունակ ուղղակի կամ անուղղակի ժխտել է, որ տեղյակ է եղել հայ մտավորականության ձերբակալություններին, իսկ բնաջնջման ժամանակ հայերի հանդեպ խժդժու-

321 Talaat Pasanin hatiralari, նաև տե՛ս «Մարմարա» 30-ը ապրիլի և 1-ը մայիսի 1965Թ.:

թյունները համարել է իր կամքին հակառակ և առանց իր գիտության կատարված հանցագործություններ: Հայերը, գրում է նա, 1912-1913 թթ. Օսմանյան կայսրության ծանր վիճակից եզրակացրեցին, թե «հասել է անկախություն ձեռք բերելու առիթն ու ժամանակը և սկսեցին գործել Կ. Պոլսում ռուսական դեսպանության թելադրանքով», «Հայ կոմիտեները այդ իրողությունը մեզնից չէին էլ թաքցնում»: Երբ հայերին առաջարկեցինք՝ «մի կողմ թողնել արտաքին միջամտությունները և միասին իրականացնենք բարենորոգումները», նրանք մերժեցին:

Թալեաթը բացահայտում է հայ ժողովրդի հաշվին ցարի ու սուլթանի գործարքները: Ցարը պարտավորվել էր թույլ չտալ Ռուսաստանում գտնվող արևմտահայերի վերադարձը Թուրքիա: Դրա փոխարեն սուլթանը Ռուսաստանին տրամադրեց Եփրատից արևելք ընկած տարածքներում երկաթուղիների կառուցման մենաշնորհը: Թալեաթը փախչում է Գերմանիայի հետ պայմանագիր կնքելու պատասխանատվությունից և գրում է, որ այն կնքվել է վարչապետ Սայիդ Հալիմի նախաձեռնությամբ, մինչդեռ իրականում երիտթուրքական կառավարությունում այդ պայմանագրին դեմ էին վարչապետն ու Ջեմալը, իսկ կողմակիցներն էին Էնվերն ու Թալեաթը: Նա փաստարկների անպարկեշտ խաղով է զբաղվում պատերազմի մեջ Թուրքիայի մտնելու հարցում, գտնելով, թե այն ճիշտ էր, եթե պատերազմը տևեր երկու տարի: Պատերազմի ձգձգվելով է փորձում բացատրել նաև հայերի կոտորածները՝ իբր ոստիկանության և ժանդարմերիայի կադրային սպաները ռազմաճակատ էին մեկնել, թիկունքում նրանց փոխարինել էին պահեստային սպաները՝ պատահական, անազնիվ մարդիկ, ովքեր կատարած հանցագործությունների համար չէին պատժվում: Թալեաթը ճգնում է համոզել, որ եթե կադրային սպաները թիկունքում մնային և նրանք կազմակերպեին հայերի տեղահանությունը, բռնություններ և կոտորածներ տեղի չէին ունենա: Այսինքն՝ հայերի կոտորածները ոչ թե ծրագրված բնաջնջում էին, այլ պատերազմի հետևանք: Այս, ինչպես նաև մի քանի այլ խնդիրներում նա մեղքը բարդում է էնվերի ու նրա շրջապատի գործիչների վրա: Նույն անձանց, մասնավորապես բանակի մատակարարման պետ Ի. Հազին է մեղադրում կայսրությունում լայն ծավալ ստացած չարաշահումների, թալանի համար:

«Ամբաստանությունը,- շարունակում է ստել Թալեաթը,- թե ընդհանուր կենտրոնի գործիչները Մուրություն և առաջադիմություն կուսակցության անդամների միջոցով մասնակցել են հայերի և հույների տեղահանությանը և այդ խնդիրների վերաբերյալ հրամաններ են արձակել, կարող է վերաբերվել միայն Ստամբուլի ձերբակալություններին...»: Ահա ցինիզմի ևս մի դասական օրինակ. «Թեև ձերբակալությունները կատարվել են դաշնակից պետությունների պնդմամբ, սակայն կառավարությունը պարտավոր էր ձեռնարկել միջոցներ այդ պետությունների դեմ»: Բայց, կարծես, ինքն իր գրածից ամաչելով, սկսում է արդարանալ՝ «ընդունենք, որ այդ կենտրոնի անդամներից մի քանիսն իսկապես մասնակցել են ընդհանուր նախճիրին (ուրեմն նախճիրի լինելն ընդունում է), սակայն ինչպե՞ս կարելի է տվյալ անդամի ինքնակամ գործած ոճրի համար պատասխանատու համարել» ուրիշներին: Բանականությունից չզրկված ամեն մեկի մեջ այս տողերն իսկույն հարց են առաջացնում. «Ինչպե՞ս կարելի էր մի խումբ մարդկանց, անգամ առանձին կուսակցության, հակակառավարական գործունեության համար ոչնչացնել մի ամբողջ ժողովուրդ՝ կին, երեխա, ծեր, հիվանդ»: Թալեաթն անդրադառնում է նաև Հայկական հարցի ձևավորմանը: Նա գրում է, թե բալկանյան ժողովուրդների անկախանալուց հետո հայերը «Արևելյան Անատոլիայում, Կովկասում, Ստամբուլում, Ժնևում և Եգիպտոսում ստեղծել էին կազմակերպություններ և Թուրքերի ու քրդերի կատարած հարստահարությունների մասին կեղծ լուրեր էին տարածում: Հայկական կուսակցությունները «մերժեցին իթիհադի առաջարկությունը սուլթանին վախեցնելու համար Ստամբուլում և Սալոնիկում... ռումբեր պայթեցնելու»»: Հետաքրքիր խոստովանություն է: «Սահմանադրության հռչակումից անմիջապես հետո,- պատմում է Թալեաթը,- Ստամբուլ եկած հայկական կոմիտեների պետերին և աքսորավայրից վերադարձած պատրիարք Իզմիրլյան էֆենդուն դիմավորեցին մեծ ցույցերով: Թե մայրաքաղաքում և թե նահանգներում երիտասարդ թուրքերը մասնակցեցին բռնակալական վարչակարգի դեմ պայքարում նահատակվածների հիշատակին նվիրված սգո հանդեսներին: Երկու կողմերն էլ երկար ճառեր արտասանեցին: Երիտասարդ թուրքերը, սահմանադրության հռչակման պահին, հայ հայրենակիցներին վերաբերվել

են ամենայն անկեղծությամբ և ապագային նայել են կատարյալ վստահությամբ: Սակայն հայ դաշնակ և հնչակ կոմիտեները 1908-1918 թվականներին Թուրքիայում ընդլայնեցին հեղափոխական շարժումները և մեծ ջանքեր թափեցին ժողովրդին զինելու համար»: Իր միտքը հաստատելու համար Թալեաթը բերում է մի կոչի ամբողջական տեքստը, որն առաջին պլան է մղում ռուսահայերի օգնությամբ զինվելու խնդիրը: Ակնհայտ է, որ այս կոչը հետապնդում էր ինքնապաշտպանական նպատակներ, իսկ Թալեաթն այն ներկայացնում է որպես հեղափոխություն՝ հանուն անկախության: Որպես դրա ապացույց բերվում է նաև սոցիալիստական ինտերնացիոնալի Կոպենհագենի (1910 թ.) կոնգրեսին ՀԲ Դաշնակցության ներկայացրած հուշագրում հայերի զինվելու և գիշերները զինավարժություններ կատարելու մասին հիշատակությունը:

Բիթլիսի ռուսական հյուպատոսը 1910թ. դեկտեմբերի 3-ին գրում է, որ դաշնակցության անդամները հիմնականում ուսուցիչներ էին և նրանց կենտրոնը Մուշն էր 20 մասնաճյուղերով: Դաշնակները մի ծրագիր առաջարկեցին խորհրդարանում քննարկելու համար: Իթիհադը չհամաձայնվեց, որովհետև ըստ այդ ծրագրի թուրքերից, արաբներից, քրդերից, հայերից, բուլղարներից, սերբերից և մյուս ժողովուրդներից կազմված Օսմանյան կայսրությունը պետք ճանաչի հպատակ ժողովուրդների քաղաքական ինքնավարությունը: «Մինչև Բալկանյան պատերազմի պայթելը,- խոստովանում է Թալեաթը,- դաշնակները որևէ ապստամբություն չձեռնարկեցին: Նրանց գործունեության նպատակն էր Համիդի ժամանակ օտար երկրներ մեկնած հայերի ունեցվածքի հետ ստանալը: Որոշում ընդունվեց այդ հայերի հողերը հետ տալ: Հայերը դա անբավարար համարեցին, ինչը ձգձգեց բարեփոխումների իրականացումը: Հողային հարցի լուծման հապաղման, երբեմն էլ դրա պատճառով տեղական բնույթի խառնաշփոթություններից առաջացած անվստահության հետևանքով բողոքներ բարձրացնելով՝ հայերը Եվրոպայի ուշադրությունը շարունակ իրենց վրա էին պահում»: Թալեաթը, մեղմ ասած, ստում էր: Պանդխտության մեկնածների հողերն իրենց տերերին վերադարձնելու վերաբերյալ Թուրքական կառավարության վերաբերմունքը խոստումներից այն կողմ չանցավ: Այդ խնդրի վերաբերյալ որոշման ընդունումը տարիներ շարունակ քաշքշվեց: Ի վերջո, իթիհադի պարագլուխները բացեիբաց հրաժարվեցին խնդիրը լուծելուց: Հողերի հարցն իթիհադն օգտագործեց, նախ, խորհրդարանական ընտրություններում իր կողմը պահելու հայերին, և, երկրորդ, էլ ավելի սրելու հայ-քրդական հարաբերությունները:

Թալեաթը մեջբերում է կատարում ՀԲԴ մի հրահանգից, որում մասնավորապես ասված է. «Բալկանյան պատերազմի նոր բռնկումով քաղաքական մթնոլորտը ծածկվել էր սև ամպերով: Կային մարդիկ, ովքեր այդ հանգամանքը Հայկական հարցի համար չափազանց նպաստավոր էին համարում: Սակայն դա ճիշտ չէ: Տարբեր անձինք, զանազան կենտրոններ և հատկապես մեր կազմակերպությունը Հայկական հարցը շահավետ լուծելու նպատակով շատ միջոցառումներ են իրականացրել: Այս խնդրի առնչությամբ մեզ ուղարկված բազմաթիվ նամակները առաջարկում են. 1. Լոնդոնում ընթացող դեսպանաժողովում Հայկական հարցը քննարկման նյութ չպետք է դառնար: 2. Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը որոշել էին պատերազմի ավարտից հետո անդրադառնալ Հայկական հարցին: 3. Նույն այդ տերությունները գտնում էին, որ հայկական նահանգներում կառավարելու համար պետք է ստեղծվեր առանձին վարչություն: Նաև նշվում էր, որ հայերի վիճակն այնքան էր ծանրացել, որ առաջին պլան էր դուրս եկել ինքնապաշտպանությունը»: Փաստաթղթում, ավելացնում է Թալեաթը, շեշտվում է, թե հայերի վիճակի հետագա ծանրացման դեպքում, Ադրբեջանից հայկական նահանգներ են մտնելու ռուսական զորքերը: Նշենք, որ ՀԲ Դաշնակցության կոչում այդ մասին բառ կամ ակնարկ իսկ չկա: Բ. Դուռը, գրում է Թալեաթը, լավ գիտեր, որ արևելյան նահանգներում բարենորոգումներ մտցնելու Եվրոպայի ցանկությունը միշտ նշանակել է միջամտություն Թուրքիայի ներքին գործերին և հետևանք է Ռուսաստանի սադրանքների և որոշեց մինչև տերությունների ձեռնարկումները, սեփական նախաձեռնությամբ բարենորոգումներ մտցնել: Այդ նպատակով խնդրեցինք Անգլիային բավարար թվով մասնագետներ տրամադրել: Ռուսաստանի ջանքերով այդ առաջարկությունը մերժվեց: Մեր նախաձեռնությամբ վերսկսվեցին բանակցությունները հայերի հետ, որոնք տեղի ունեցան Չինարարության նախկին նախարար Հալաճյանի բնակարանում: Ես դիմելով հայերին ասացի, որ մենք պատրաստ ենք բարենորոգումներ մտցնել և խնդրեցի, որ նրանք հրաժարվեն օտար միջամ-

տությունից... Սակայն հայերը մերժեցին այդ անկեղծ առաջարկը... Շատ լավ հասկանում էի, որ նրանք ոչ թե բարենորոգումներ, այլ ռուսական միջամտության միջոցով ինքնավարություն էին ուզում, որին հետևելու էր Հայաստանի անկախությունը: Թալեաթը «մոռանում է» նշել, որ մինչև 1913 թ. իթիհադը լուրջ բարենորոգումների, անգամ ազգային-մշակութային ինքնավարության մասին լսել իսկ չէր ուզում, որ «անբնական էր» հռչակում նույնիսկ Հայ ազգային սահմանադրությամբ հայ համայնքի ներքին կյանքը ինքնավար կարգավորելու իրավունքները:

Թալեաթն անդրադառնում է նաև հնչակյան կուսակցության Կոնստանցիայի (1913 թ. սեպտեմբեր) համագումարին, որը պահանջ դրեց արմատական բնույթի փոփոխություններ իրականացնել հայկական նահանգներում: Համագումարը գտավ, որ սահմանադրության հռչակած սկզբունքներից «ոչ մեկը չի իրականացվել», որ «կառավարության նոր օրենքների ու ձեռնարկումների նպատակը զանազան ազգությունների ոչնչացումն է: Միություն և առաջադիմություն կուսակցության հետապնդած ծրագիրն է՝ կառչած մնալ թուրքական բյուրոկրատիային և խոչընդոտել առաջադիմական կառավարություն ստեղծելուն: Նրա քաղաքականությունն է՝ հարկ եղած դեպքում ճզմել հպատակ ազգերին և նրանց մշտապես պահել ճնշման տակ... Հայ ազգը այս քաղաքականության և մշտապես իր դեմ գործող ուժերի պատճառով հասել է ոչնչացման եզրին... Հայերը համոզված են, որ ազատագրվելու և իրենց գլխին կախված մահաբեր ամպը ոչնչացնելու համար պարտավոր են հետևել հաստատուն և համարձակ գործելակերպի՝ ծավալել ընդհատակյա գործունեություն հանուն քաղաքական և տնտեսական նոր բարվոք պայմանների»: Ցուրաքանչյուր ողջամիտ մարդ համագումարի այս դիրքորոշումը կհամարեր միանգամայն տրամաբանական, հավատարիմ խաղաղ և ժողովրդասիրական գործելակերպին: Սակայն հայերի հարցում Թալեաթը Աբդուլ Համիդից ժառանգել էր տրամաբանության հետ ընդհանուր ոչինչ չունեցող վարքագիծ՝ անասնական վախ դավադրության մշտական առկայության: Մեջբերում է կատարվում հնչակյանների նաև 7-րդ համագումարի բանաձևից. «Հնչակյան կոմիտեն միանգամայն համոզված է, որ առանց անկախ Հայաստանի ստեղծման, նրա բնակչությունը չի կրող անվտանգ ապրել ու զարգանալ և արտաքին հարձակումներից պաշտպանել իր ազգային գոյությունը»: Հետևում են Թալեաթի խոսքերը. «Հայերի այս պահանջները պատմական ոչ մի հիմք չունեն... Օսմանցիներին ապավինած այդ ժողովուրդը լավ ընդունելություն է գտել և միշտ հայրենակցի վերաբերմունքի արժանացել... Եթե բացառություն համարվի քրդերի հարևանությամբ եղած շրջանները, նրանք երկրի բոլոր կողմերում լավ վերաբերմունքի են հանդիպել: Իսկ քրդերի հետ համատեղ բնակության շրջաններում կառավարությունը չէր կարողանում կարգը պահպանել: Ընդ որում, թուրք և քուրդ գյուղերի վիճակը հայ գյուղերի վիճակից չէր տարբերվում... Հայրենիքի բոլոր բարիքներից օգտվող այդ ժողովուրդը երբեք չէր մասնակցում նրա վշտերին ու դժվարություններին: Հայերը հայրենիքի համար ոչ մի պատերազմի չմասնակցեցին և ոչ մի կաթիլ արյուն չթափեցին: Ընդհակառակն, պատերազմների ժամանակ շարունակում էին իրենց առևտուրը և հանձնառական գործերի մեջ մտնելով, շատ դրամ էին շահում, թե լավ և թե վատ օրերին ապրում էին հանգստության ու անդորրության մեջ: Որպես շնորհակալություն, այժմ ուզում են մեծամասնությանը վռնդել և անկախություն ձեռք բերելու համար պոկել օսմանյան հայրենիքի մի մասը: «Պատմությունը չի արձանագրել նման ապերախտության մի այլ օրինակ: Ընդհանուր պատերազմը ուշացրեց ինքնավարությունը, որի իրականացման հարցում հայերը այլևս վստահ էին: Նրանք իրենց հույսը կապել էին պատերազմի ելքի հետ և Ռուսաստանի հաղթանակի համար որոշեցին գործի դնել իրենց ողջ ուժերը»: Տիպիկ թուրքական տրամաբանություն: Կայսրության գոյության հարյուրամյակների ընթացքում հայերը մշտապես պայքարել են բանակ զորակոչվելու իրավունքի համար: Օսմանյան կառավարությունները մշտապես մերժել են հայերի այդ ցանկությունը, որովհետև անհավատ գյավուրներ էին, զուրկ զենք կրելու իրավունքից: Այդ իրավունքը նրանց տալը և բանակ զորակոչելը նշանակում էր ռայային նույն կարգավիճակի բարձրացնել, ինչ ունեին մահմեդականները, որը հավասարազոր էր կրոնական սկզբունքի վրա հիմնված օսմանյան քաղաքական համակարգի կրախին: Դրա համար էլ այլակրոն հպատակներին, այդ թվում նաև հայերին, բանակ չէին զորակոչում և դրա դիմաց հարկադրում էին ծանր հարկ վճարել:

Թալեաթը ճիշտ չէ նաև, երբ խոսում է առաջին աշխարհամարտի տարիներին հայերի դրսևորած վարքագծի մասին: Արևելահայերը ռուսական բանակին տվեցին 250 հազար զինվոր, որոնք հերոսաբար կռվեցին թե Արևմտյան և թե Կովկասյան ռազմաճակատներում: Արևմտահայերը թուրքական բանակ ուղարկեցին 300 հազ. զինվոր, որոնց մեծամասնությանը ոչ թե զենք տվեցին ու ռազմաճակատ տարան, այլ աշխատեցրեցին շինարարություններում ու ոչնչացրեցին նույն այդ Թալեաթի հրամանով: Թալեաթը մեջբերում է կատարում Դամասկոսի մասնաճյուղին ՀԹ Դաշնակցության բյուրոյի 1914 թ. նամակից: Բաքվի «Արև» թերթը 1914 թ. հուլիսի 11-ին տպեց «Կարևոր պահի առաջ» հոդվածը: «Վաղը կամ մյուս օրը սահմանների վրա կարող են պատմական իրադարձություններ տեղի ունենալ,- գրված է այդ հոդվածում,- համաշխարհային պատերազմի աղմուկները կարող են Հայաստանի հորիզոնի վրա հակազդեցություն առաջացնել: Հայերը պետք է պատրաստ լինեն այդ գալիք օրվա համար, և այն դիմավորեն ոչ միայն հավատարմության և միաբանության պարզ խոսքերով, այլև գործով ու շարժումով»:Միանգամայն չիտակ ու տրամաբանական դիրքորոշում: Թալեաթը մեջբերում է կատարում Սարայ Բոսնիայի մահափորձից հետո նույն թերթում հնչակյան կոմիտեի հրապարակած կոչից. «Հնչակյան կոմիտեն իր նյութական և բարոյական բոլոր ուժերը ի մի հավաքելով, ազգերի գոյության համար կատարվող այս ահավոր գոտեմարտում պիտի մասնակցի իր հեղափոխական սրով և լինելով դաշնակից եռյակ համաձայնության և, մասնավորապես, ռուսական բանակների, իր տրամադրության տակ ունեցած բոլոր քաղաքական և հեղափոխական միջոցներով պիտի օժանդակի համաձայնական պետություններին»: «Զորաշարժի ժամանակ,- շարունակում է Թալեաթը,- զենքի տակ կանչված հայերի մի մասը փախավ արտասահման, իսկ մի մասն էլ իրենց զենքերով՝ երկրի ներսերը, և այդ վայրերում նույնիսկ բախումներ տեղի ունեցան: Ընդհանուր հրամանատար Էնվեր փաշան հայերի պատրիարքին իր մոտ հրավիրեց և հայտնեց, որ Թուրքիան այս պատերազմում հայ հայրենակիցներից սպասում էր հավատարմություն, մինչդեռ ստացված պաշտոնական տեղեկագրերը պարզ ցույց են տալիս, որ զենքերով գավառները փախած հայերը հարձակվում են գյուղերի վրա և սպանում պաշտոնյաներին: Էնվեր փաշան շատ պարզ կերպով հայտնեց, որ եթե այս շարժումը ընդհանուր բնույթ ստանա, զինվորական իշխանությունները հարկադրված կլինեն ամենախիստ միջոցներ գործադրել... Այդ հանձնարարությունները ոչ մի արդյունք չտվին... Պատերազմը սկսվելուց անմիջապես հետո Մուշի, Բիթլիսի և Վանի նահանգներում սկսվեցին հայերի ապստամբություններ»: Թալեաթը Էնվերի սպառնալիքը հիշում է, բայց մոռանում է նրա շնորհակալական խոսքերն ու հեռագիրը նույն պատրիարքին ու Կոնիայի հայոց առաջնորդին Սարիղամիշի ճակատամարտում հայ զինվորների խիզախության ու նվիրվածության մասին (նաև այն մասին, որ թուրքական փոխգնդապետիսմուսը հազիվ թե կենդանի մնար, եթե չլիներ հայերի անձնազոհությունը):

«Ընդհանուր շտաբում հայերի տեղահանման մասին մի օրենք պատրաստվեց և ներկայացվեց նախարարների խորհրդին (մեղքը Էնվերի վրա է բարդում),- շարունակենք ունկնդրել Թալեաթին,- ես այս օրենքի լրիվ իրագործմանը դեմ էի: Ոստիկան զինվորներն ամբողջությամբ, իսկ քաղաքապահ ոստիկանությունն էլ՝ մասամբ, վերցվել էին կանոնավոր բանակ և նրանց փոխարինել էր միլիցիան: Ես գիտեի, որ տեղահանումը այդ միջոցներով կատարվելու պարագայում ունենալու էր շատ տգեղ հետևանքներ: Դա նկատի ունենալով, պնդեցի օրենքի անգործադրելիության վրա և կարողացա կասեցնել դրա կիրառումը: Որոշ ժամանակ անց ռուսների կամ, ավելի ճիշտ, հայ կամավորական հրոսակների կողմից գրավվեց Վանը: Հետո պարզվեց, որ այդ հրոսակները օսմանյան խորհրդարանում դաշնակցական կոմիտեի անդամներ Բաստրմաջյանի և Փափազյանի ղեկավարության տակ էին: Մի կերպ փրկված մի քանի անձանց վկայությամբ պարզվեց, որ Վանի գրավման ժամանակ փախչել չկարողացած իսլամ ժողովուրդը կոտորվել էր, կանայք բռնաբարվել և շատ երիտասարդ հարսների ու աղջիկների հավաքել են հասարակաց տներում: Վանից փախչող հազարավոր կանանց, տղամարդկանց և երեխաներին հայերը գնդացրային կրակի տակ են առել:

Վանի այս դեպքերին հետևեցին մի շարք այլ ապստամբական շարժումներ: Պարզվեց, որ այս հրոսակների կողմից ոչնչացվել էին զինվորական զորամասեր: Բանակի վարչությունը նորից պնդեց տեղահանության օրենքը գործադրելու վրա: Ես դարձյալ դեմ արտահայտվեցի: Որով-

հետև ռուսներն անմիջապես հայերի կողքին էին, ուստի ես հենց սկզբից գիտեի, որ այդ կողմերում տեղի ունենալիք անկարգությունները օգտագործվելու էին մեր դեմ... գործընկերներիցս ոմանք ինձ անգամ մեղադրեցին անզգայության և հայրենիքին անհավատարմության համար: Արդարև բանակը չափից դուրս վտանգավոր կացության մեջ էր: Նշված օրենքը հրապարակելուց առաջ էլ բանակը հնարավորություն ուներ դիմելու անհրաժեշտ միջոցների: Դրա համար էլ օրենքի գործադրման ձգձգումը անօգուտ էր: Օրենքը իրավունք էր տալիս բանակի և զորաբանակի հրամանատարներին այլ շրջաններ տեղափոխել ապստամբած ժողովրդին: Պատերազմի պատճառով երկրում հայտարարված պաշարողական վիճակի հետևանքով քաղաքացիական վարչությունն էլ ենթակա էր զինվորականությանը»: Թալեաթը նորից խաղում է իրադարձությունների և մարդկանց անտեղյակության վրա: Նա «համեստորեն» լռում է, որ հայերի բնաջնջման հարցն ինքն անձամբ առաջ է քաշել դեռ 1910 թ. իթիհադի Սալոնիկի համագումարում, որ այն կուսակցության քաղաքական ծրագրի վերածվեց Բալկանյան պատերազմից անմիջապես հետո, որ հայերին ջարդելու մասին հրամանը Էնվերը ստորագրել էր դեռ 1914թ. նոյեմբերի 29-ին, որ երիտթուրքական գաղտնի կոմիտեն 1915թ. փետրվարի 15-ի, այսինքն՝ Վանի իրադարձություններից երկու ամիս առաջ, վերջնական որոշում էր ընդունել հայերի տեղահանության (այսինքն՝ բնաջնջման) մասին և այդ նիստը ղեկավարել ու կոտորածների պատասխանատվությունն իր վրա վերցրել էր ոչ այլ ոք, եթե ոչ անձամբ ինքը՝ Թալեաթը: Վ. Փափազյանի վարքագիծը ևս պատճառ համարելը պարզապես ծիծաղելի է: Վ. Փափազյանը (Կոմսը) օսմանյան խորհրդարանի անդամ էր: 1914 թ. աշնանը, երբ խորհրդարանային արձակուրդներից հետո նա Վանից գնում է Մուշ տեղի խորհրդարանական ջարդարար Իլյաս Սամիի հետ Կ. Պոլիս մեկնելու համար, հիվանդանում է տիֆով և հարկադրված է լինում մնալ Մուշում: Սկսվում է պատերազմը: Ոչ նա և ոչ էլ տեղի հայերը մինչև Տարոնի ջարդերը (1915 թ. հուլիսի 28) իշխանությունների դեմ որևէ անօրեն քայլ չեն արել: Իսկ երբ ակնհայտ է դառնում, որ տեղի հայ բնակչության կոտորածն անխուսափելի է, Վ. Փափազյանը մի խմբի գլուխն անցած բարձրանում է Քանասար և այնտեղ թաքնվում է՝ սպասելով ռուսական բանակի գալուն: Այդ ողորմելի վախկոտին, բացի սեփական մորթուց, այլ բան չէր հետաքրքրում, ուր մնաց թե նա ղեկավարեր սասունցիների կռիվը թուրքական բանակի դեմ:

Տեղահանումը սկսվեց Էրզրումից: «Կուսակալ Թահսին բեյը,- գրում է Թալեաթը,- ՆԳ նախարարությանը տեղեկացրեց, որ առաքման ժամանակ հայերը ենթարկվել են քրդերի հարձակումներին: Կուսակալին հեռագրի մոտ կանչեցի ու հրամայեցի օգնության համար դիմել բանակին և չարագործության հեղինակներին խստորեն պատժել: Արդարև բանակի հրամանատարությունը մի վաշտ զինվոր ուղարկեց և ձերբակալված քրդերը գնդակահարվեցին»: Ապստամբական շարժումը նախապես սկսվել էր Զեյթունում:Զորահավաք հայտարարելուց անմիջապես հետո հայերը բացահայտ ապստամբեցին:Մերժեցին տուրքեր վճարել և ընդդիմացան զորակոչի հրամանին: Զինվորական ծառայության մեկնող մահմեդականները փողոցներում հարձակման էին ենթարկվում, կողոպտվում ու սպանվում էին: Զեյթունի հայերը հրամանատարների և սպաների ղեկավարությամբ կազմակերպեցին միլիցիա: Նրանք «Զեյթունի հեղափոխական գունդ» ստեղծելով՝ ձգտում էին պաշտպանել քաղաքը: Ի վիճակի չլինելով իրենց այդ մտադրությունը իրականացնել, նրանք մաուզերներով ու մարտինի զենքերով բարձրացան լեռները և հարձակվելով մահմեդական գյուղերի վրա, դժվարացրեցին ռազմական փոխադրումները: 1914 թ. օգոստոսի 17-ին, այսինքն՝ զորահավաքից մի քանի օր անց Էդերնայի մահմեդականները հարձակման են ենթարկվել և շատերը սպանվել են: Նույն օրը կրակել են բանագանձում կատարող ոստիկանական սպաների վրա: Մարաշի ճանապարհին Բեշանլի գյուղում շատ իսլամներ են սպանվել: Օրեր տևող հետապնդումներից հետո ավազակներից 60 հոգի ձերբակալվել է, նրանց մոտ գտնվել են ռումբեր, դինամիտ, հրացաններ: 1915 թ. դեկտեմբերին (այսինքն, երբ հայերի բռնագաղթն ամբողջությամբ, իսկ ոչնչացումը հիմնականում արդեն ավարտվում էին) ապստամբական շարժումը նորից աշխուժացավ, հարձակումներ կատարվեցին ուղղակի օսմանցի պաշտոնյաների բնակարանների և ոստիկանների վրա: Խստիվ պահանջեցի, որ ոճրագործությունների հեղինակները պատժվեն, իսկ ժողովրդին պաշտպանելու համար զինվորական ջոկատներ ուղարկվեն: Բացի դրանից, համապատասխան պետական ամենաբարձր մարմիններից՝ վճռաբեկ ատյանից, պետական խորհրդի անդամներից և քրեական դատարանի նախագահներից չորս քննիչ հանձնաժողով կազմելով, ուղարկեցի Անատոլիա: Այս հանձնաժողովները բազմաթիվ անձանց պաշտոնազրկելով, հանձնեցին ռազմական ատյաններին... Թե տեղահանման և թե ապստամբության հետևանքով հայերը մեծ կորուստներ են կրել: Սա պետք է խոստովանել: Սակայն իրականություն է նաև այն, որ արևելյան նահանգների մուսուլմանները ևս մեր հայ հայրենակիցների ջանքերով նույն չափով կորուստներ են ունեցել: Վանը, Բիթլիսը, Մուշը և Էրզրումը ռուսների կողմից գրավելու ժամանակ, նույնիսկ ռուսների խոստովանությամբ, այն աստիճանի բռնություններ ու վայրագություններ են կատարվել, որ մուսուլման ժողովուրդը իր բնակավայրում մնալու համարձակություն չի ունեցել և քաղցած ու մերկ վիճակում գաղթել է: Այդ պայմաններում գաղթած մուսուլմաններից 600 հազ. մարդ է մեռել: Ըստ էության լոկ ռազմական նախազգուշական միջոցառում հանդիսացող տեղահանությունը, անխիղճ, նկարագիր չունեցող մարդկանց պատճառով ստացել է ողբերգական կերպարանք: Ես նպատակ չունեմ թաքցնելու այդ գործերի տգեղությունը: Պարզապես ցանկանում եմ ասել, որ լոկ այդ դեպքերի համար, ամբողջ կառավարության, Միությունն և առաջադիմություն կոմիտեի վարչական կենտրոնին և այս գործի հետ ոչ մի առնչություն չունեցող նրա անդամներին ամբաստանելը անիրավ ու կամայական գործ է: Միություն և առաջադիմություն կոմիտեի անդամները հայերի նկատմամբ կատարվածից վերին աստիճանի ազդվել են և այդ դեպքերը կանխելու համար միշտ աշխատել են ներգործել կառավարության վրա: Մի շարք չարամիտ, թշնամի պրոպագանդիստներ հայկական դեպքերի կապակցությամբ հարձակվել են Գերմանիայի արժանապատվության վրա, ասելով, թե հայերի բնաջնջման գործում գերմանացիները քաջալերել են թուրքերին: Մինչդեռ իրադարձությունները հակառակն են ապացուցում, որովհետև, երբ մի նոր դեպքի մասին տեղեկություն էր ստացվում, գերմանական կառավարությունը դրանք վերջ տալու պահանջով նոտաներ էր հղում»:

Թալեաթը նորից է անդրադառնում կոտորածներին: Բանակի վարչությունը երկրի ներսում տիրող ընդհանուր ապստամբության պատճառով բոլոր կողմերում սկսեց գործադրել տեղահանություն: Դրա հետևանքով երկու կողմերի միջև սկսեցին ներքին պատերազմի բնույթի ուժեղ բախումներ ու կռիվներ: Թուրք զինվորներն ու ժողովուրդը համոզված էին, որ հայերը մերձեցել էին ռուսներին՝ նպատակ ունենալով վերացնելու թուրք բնակչությանը: Թալեաթը խոսում է ընդհանուր ապստամբության մասին առանց հաշվի առնելու, որ տեղահանության իր իսկ մշակած մեխանիզմը անհնար էր դարձնում ոչ միայն ապստամբություն, այլև տեղական բնույթի նշանակալից ընդվզում: Հավանաբար զգալով, որ անսանձ ճակատայնությունն անվստահություն է ծնելու իր ասածների հանդեպ, անաչառության և արտացավության դիմակ է հագնում: Նա գրում է. «Թե պաշտոնական քննությունների արխիվներից և թե ընտրական տարածքներից վերադարձող պատգամավորների տեղեկատվություններից հասկացվում է, որ մի շարք անխիղճ, անբարոյական և ստոր մարդիկ ցանկացել են կացությունից անձնական շահ ունենալ և դարձել են հեղինակ շատ ոճրագործությունների: Պատասխանատվությունից խուսափելու համար կուսակալները և կառավարիչները դեպքերը Բ. Դուռ ներկայացրել են հնարավորին չափ աննշան տեսքով և մասամբ էլ հանցանքը բարդել են քուրդ ժողովրդի վրա: Պատգամավորների բերած լուրերն իրոք ողբերգական էին»:

Թալեաթի համար փաստերի և իրողությունների ինչպիսին լինելը նշանակություն չունեին: Դրանք այնպես է ներկայացնում, ինչպես իրեն ձեռնտու է: Նախ, նա ջարդերի, հայերի հանդեպ վայրագությունների մասին ոչ թե իմացել է ուրիշներից, այլ դրանք հետևանք էին իր իսկ հրամանների: Նա նաև սեփական աչքերով է դրանք տեսել: Նահանգներ կատարած շրջագայությունից վերադառնալուց հետո 1915թ. դեկտեմբերի 18-ին Մետեռնիխին ասել է. «Վերջին կես տարվա ընթացքում իրականացված հակահայ անվտանգության միջոցառումներից տուժել են շատ անմեղ մարդիկ: Մրաքիրը ներկայումս մոտենում է ավարտին, և ամեն ինչ արվել է դատապարտված ընտանիքներին հետագա բռնություններից, քաղցից և այլ դժբախտություններից պաշտպանելու համար...»[322]:

322 FO, Turkei, 183, Bd 40, Վ. Մետեռնիխի 1915թ. դեկտեմբերի 18-ի նամակը Բեթման Հոլվեգին, փաստ. N325.

Նշենք, որ այս այցելությունից հետո տեղի ունեցան Ռաս ուլ Այնի, Մեսքենեի, Բաբի, Դեր Զորի, Իթթիլիի և այլ զանգվածային սպանդները, որոնք խլեցին ավելի քան կես միլիոն հայի կյանք: Թալեաթը գործն այնպես է ներկայացնում, թե ինքն ու երիտթուրքական կենտրոնը դեմ են եղել զանգվածային ջարդերին, թե դրանք տեղի են ունեցել կառավարության որոշումներով, ինչը նույնպես կեղծիք է, որովհետև նախ Բ. Դուռը իթիհադի կենտրոնի կամակատարն էր և առանց վերջինիս համաձայնության որևէ քայլ չէր անում, երկրորդ, տեղահանության մասին որոշումներն ընդունվել են իթիհադի կենտրոնում և ապա միայն ներկայացվել որպես կառավարական որոշում ձևակերպելու համար և, երրորդ, կառավարության կազմում էին իթիհադի գրեթե բոլոր պարագլուխները՝ Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Ջավիդը, Ջանփոլադը և ուրիշներ: Թալեաթն ի վերջո «զիջում է». «Ես ամբողջությամբ խոստովանում եմ, որ տեղահանության ընթացքում հայերի հանդեպ վատ վերաբերմունք է ցուցաբերվել և համարձակություն ունեցա դրանց մասին պատմել: Այժմ հերթը մեր հակառակորդներին է... խոստովանելու հայերի կողմից մահմեդականների հանդեպ գործադրած ոճիրներն ու բռնությունները»[323]:

Թալեաթը զարմանում ու զայրանում էր, որ պատերազմի ավարտին երիտթուրքերը, անգամ նրանք ովքեր «տեղահանությանը դեմ են քվեարկել, մեղադրվեցին հայերի հանդեպ գործադրված բռնությունների համար: Մյուս կողմից, հարյուր հազարավոր սպանված իսլամների մի մասին սեփական ձեռքերով ոչնչացրած... գեներալը, որպես հայերի առաջնորդ, հարգանքով է ընդունվում Լոնդոնում և Փարիզում»[324]: Մի իրողություն ևս. Թալեաթը շատ հաճախ է իրեն ներկայացնում հայերի «բարեկամ», քննարկում նրանց համար «կենսական նշանակության հարցեր»: Ռուսների նպատակն էր ստեղծել առանց հայի մի Հայաստան, ողբում է նա, իսկ կոմիտեների նպատակն էր բնակչության հազիվ 1/10-րդը կազմող հայերով, այդ շրջանում մեծամասնություն կազմող մյուս ժողովրդին զանազան ճնապարհներով ոչնչացնելով, հիմնել հայկական պետություն: «Ոչ մի իրավունքի վրա չհենվող այս նպատակների իրագործման հետապնդումը իմպերիալիստական մտայնության հետևանք է: Մի ժամանակ գուցե կարելի լիներ իրականացնել այն, իսկ այժմ նման սկզբունքի գործադրումը նշանակում է հաճույք զգալ տվյալ երկրներում բնակվող ժողովրդի կողմից տևականորեն միմյանց կոտորելուց: Եթե ընդունվում է, որ շատ հայեր գաղթել են և մեծ մասն էլ թշվառությունից ոչնչացել, պետք է խոստովանել, որ նշված համեմատությունն այսօր լրիվ փոխվել է: Բնակչության 90 տոկոսը թուրք է, մի մասն էլ քուրդ՝ բոլորն էլ մուսուլմաններ: Էրզրումի, Երզնկայի, Դիարբեքիրի, Խարբերդի, Աղանայի և մասամբ Սեբաստիայի նահանգներից մի հայկական պետություն կազմակերպելու դիտավորությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ ներկայիս արյունալի բախումները հավիտենականացնելու ցանկություն: Հետևաբար «անտրամաբանական պետություն կազմակերպելուց հրաժարվելով, պետք է ապահովվի մեծամասնության իրավունքները»:

Թալեաթականությունը դատապարտված է, դատապարտված ոչ միայն ցեղասպանության, այլև մարդկության զարգացման տրամաբանության դեմ գնալու համար: «Ամենահրեշավոր հերետիկոսությունը,- գրում է Ֆ. Նանսենը,- բոլոր ոճիրներից ամենասարսափելին փոքր ժողովուրդների գոյությունը ջնջելն է»[325]:

Մենք անհամաձայնություն ենք հայտնում վաստակաշատ գիտնականի՝ Վ. Տատրյանի այն կարծիքի հետ, թե «Հայկական հարցի առնչությամբ նույնիսկ ամենազոր նկատուող Էնվեր և Թալեաթ ստիպուեցան ենթարկուել երեք անձերուն»՝ Բ. Շաքիր, Նազըմ, Զիա Գյոքալփ: Եթե Էնվերը համաթուրանականության հակումներ ուներ, ապա Թալեաթն այն չի ունեցել: Նաև խոսք լինել չի կարող, թե «1911-1912-ին իթիհատ կուսակցության ղեկը ձեռքն էր այս երեք անձերուն, որոնք յետոյ մեծ դեր կատարեցին ցեղասպանության կազմակերպության մեջ»[326]: Մինչև իրենց փախուստը Էնվերի և Թալեաթի ձեռքում էին Օսմանյան կայսրության ղեկավարման բոլոր թելերը: Իրապես Թալեաթն էր ղեկավարում ցարի հետ բանակցությունները Ղրիմում, հայկական բարենորոգումներին առնչվող բոլոր կարևոր խնդիրները լուծվում էին Թալեաթի ղեկավարությամբ: Այդ Թալեաթն էր, որ 5000 բալկանյան մուհաջիրների դարձրեց ժանդարմներ և ուղարկեց հայկական նահանգներ, ովքեր հայոց տարագրության և ջարդերի ժամանակ նշանակալից դեր խաղացին: Նրա ղեկավարությամբ 1913-14 թթ. փոխվեց նահանգների մեծ մասի ղեկավարությունը, բացարձակ մեծամասնություն դարձան իթիհադի գործիչները, կուսակցության ակտիվիստներից ձևավորվեց գաղտնի ծառայություն հայ գործիչների «դոսյեները» կազմելու համար:

Երբ պատերազմի սանձազերծմանը զուգընթաց ծավալվեցին հայերի բնաջնջման գործընթացները, Գր. Զոհրապը հարցնում է Թալեաթին, թե որն է դրա պատճառը: Թալեաթը պատասխանում է. «Զոհրապ, ինծի լոյն մի կարդա: Երբ մենք Պալքանեան պատերազմին ահագին պարտութիւններ կրեցինք, դուն չէի՞ր, որ հայկական բարենորոգումներու հարցը արծարծեցիր, գացիր բոլոր դեսպանատունները՝ ռուսական, անգլիական, դրդելու համար, որ եվրոպացիները միջամտեն... Դուն թուրքահպատակ մը, թուրք խորհրդարանի անդամ մը, առանց թուրք կառավարութեան գիտութեան՝ ի՞նչ գործ ունիս ռուսական դեսպանատունը»[327]:

Իհարկե, այս ասելով հանդերձ չի կարելի բացառել Նազըմի ու Բ. Շաքիրի դերը տեղահանության ընթացքում հայերի հանդեպ գործադրված վայրագություններում: Այդ երկու գործիչները իթիհադի կենտրոնի այս թևին էին պատկանում, ովքեր պնդում էին հայերի բնաջնջման վրա: Իսկ որ Թալեաթը Նազըմին ու Բ. Շաքիրին էր համարում կատարվածի մեղավորներ, այլ բան չէր, եթե ոչ իր վրայից բնաջնջման մեղքն ուրիշի վրա բարդելը:

Պետական քաղաքականության բնույթն այնպիսին է, որ երբ նրանում առաջնային է դառնում այս կամ այն կողմնորոշումը, առաջին պլան են դուրս գալիս այդ կողմնորոշման համար պայքարողները: Նույնը կատարվեց նշված գործիչների հետ, ովքեր ոչ թե պետական և կուսակցական քաղաքականության ձևավորողներն ու կողմնորոշողներն, այլ այդ քաղաքականության մարտավարության մշակողներն ու գործադրման առաջատար դեմքերը:

Ահմեդ Էնվեր.- Ծնվել է 1881թ. Կ. Պոլսում: Մտավոր ունակություններով աչքի չի ընկել: Ռազմական կրթություն ստացել է Կ. Պոլսում և ոչ Գերմանիայում ինչպես գրականության մեջ հաճախ նշվում է: Զինվորական ծառայության է նշանակվել Մակեդոնիայում, որտեղ հարել է Ֆաիդ բեյի գլխավորած սպայական հակասուլթանական շարժմանը: Ղեկավարել է 1908թ. հեղաշրջումը: Որոշ ժամանակ անց նշանակվել է Բեռլինում թուրքական դեսպանության ռազմական կցորդ, միաժամանակ հաճախել է սպայական դասընթացներ և դարձել Գերմանիայի ռազմական արվեստի ջատագով: Նրա ամուսնությունը սուլթան Մուհամմեդ 5-րդի դստեր հետ շատերի կողմից գնահատվեց որպես դավաճանություն սահմանադրական շարժմանը: Մինչև 1913թ. հեղաշրջումը նա փաստորեն ուշադրության չէր արժանանում: 1914թ. հունվարին 32 տարեկան Էնվերին շնորհվեց գեներալի կոչում: Նա նշանակվեց ռազմական նախարար և գլխավոր շտաբի պետ: Բիշոֆը Էնվերին անվանում է «պատերազմի աստված»[328]: Ինքը՝ Էնվերը համոզված էր, որ ծնվել է հատուկ առաքելության համար, որի կատարման գործում պատերազմը միակ միջոցն էր: Անձամբ սպանեց Նազըմին: Նրա սադրանքով սպանվեց Մ. Շևքեթը:

Համոզված էր, որ պատմությունը գրվում է սրով և զարգանում է սվինի ուժով: Մեծամիտ էր, չհավասարակշռված, պանթուրանիզմի գաղափարով տարված, իրեն նվիրեց թուրքական այնպիսի կայսրության ստեղծմանը, որը պետք է ներառեր թուրքաբնակ բոլոր երկրները: Գլխավորելով ռազմական նախարարությունը, ունենալով անսահմանափակ հնարավորություններ, վարում էր արկածախնդիր կյանք: Թուրքեստանում ներկայացավ որպես իսլամական ուժերի գլխավոր հրամանատար, խալիֆի փեսա և «Ալլահի ներկայացուցիչ»: Այդտեղ էլ կնքեց իր մահկանացուն Մելքումովի արձակած գնդակից:

Պատմաբանները ոչ քիչ դեպքերում դժվարանում են որոշել, թե ով էր երիտթուրքական համույթի առաջին ջութակը՝ Թալեաթը թե Էնվերը: Բնավորության գծերով ու դաստիարակությամբ հակոտնյա էին, բայց հենց սկզբից՝ միասին, քաջ գիտենալով, որ միասին հաղթելու են: Թալե-

323 Թալեաթ, նշվ. աշխ., էջ 80:
324 Ն. տ., էջ 81:
325 «La Rassonne», 6-ը ապրիլի 1915թ.:
326 Տատրեան Վ., նշվ. աշխ., էջ 17:

327 Տատրեան Վ., նշվ. աշխ, էջ 20:
328 Bischoff N. La Turquie dans le monde l'Empire Ottoman, La Republique Turque, Paris, 1936, p. 27.

աթը ժուժկալ էր, կրթական ոչ բարձր մակարդակով, նա գավառական քաղաքի աննշան իրավունքներով ծառայող էր, իսկ Էնվերը ռազմական կրթություն ստացած, ազնվական ճաշակով ու անսահմանափակ հավակնություններով անձնավորություն էր: Թալեաթ-Էնվեր համագործակցությունը մարդկային երկու հակադիր բնավորությունների միություն էր: Դրանով է բացատրվում, որ նրանց տևական ու բախտորոշ համագործակցությունն այդպես էլ չվերածվեց անձնական բարեկամության: «Էնվերը,- գրում է Ա. Միլլերը,- վերածնելով իր պանթուրքական, պանիսլամական պլանները, ձգտելով գրավել ողջ Կովկասը, երազում էր նաև արշավել դեպի Վոլգա, Թուրքեստան և Հնդկաստան»[329]: Հ. Մորգենթաուն Էնվերին բնութագրում է. «...Հեղափոխության դուցազն» մականուն, կը բացատրե, թե՝ ինչո՞ւ Թալեաթ և Քոմիթեին իրեն վստահած էին այդ կարևոր պաշտոնը: Ան զինուորական որոշ համբավ կը վայելեր, թեև՝ ռազմական ճշմարիտ յաջողութիւն մը չհաջած չըլլար: 1908թ. Յեղափոխութիւնը, որուն գլխաւոր պարագուխներեն մեկը եղած էր, մարդկային շատ կյանք արժած էր: 1912-ին Տրիպոլիսի մեջ իտալացիներու դեմ բանակի մը հրամանատարը եղած էր, բայց, իրապես, այդ պայքարը նափոլեոնական ոչինչ ունեցած էր... Իր քով տիրական էր յատկանիշ մը՝ յանդգնութիւնը, որ ճակատագրապես զինքը յաջողութեան պիտի առաջնորդեր Թիւրքիայի պես անկազմակերպ երկրի մը մեջ: Արագ որոշող, միշտ պատրաստ իր կեանքը և ապագան խաղի ենթարկելու՝ պարզ բաղդախնդրութեան մը յաջողութեան համար, մինչև այդ ատեն մարզուած էր բաղդե նպաստաւորուած տագնապներու շարքի մը մեջ: Եւ թեև ըլլար վայրագ, անգութ, կամքով անընկճելի, իր կանոնաւոր գիծերով դեմքը, իր պզտիկ՝ բայց կորովի մարմինը, իր հաճելի կերպերը, վերջապես ոչինչ չէր մատներ իր իսկական բնաւորությունը: Նոյնպես, ան որ ով զինքը միայն ճամբան տեսած ըլլար, չպիտի կռահեր այն անսանձ փառատենչությունը՝ որմե կը դողար: Իր բարեկամները զինքը «Նափոլեոնիք» կը կոչեին, պզտիկ Նափոլեոն, մակդիր՝ որ կատարելապես կը խորհրդանշեր իր յաւակնությունները: Կը յիշեմ գիշեր մը, իր տունը, զինքը դիտած ըլլալս, երբ նստած էր երկու նկարներու մեջտեղը, մեկը Նափոլեոնին նկարը, միւսը Ֆրեդերիք Մեծինը, պարզ իրողություն մը՝ որ կըրնայ գաղափար մը տալ իր ունայնության վրայ: Ան խոր հիացում մը ուներ իր երկու հերոսներուն վրայ, որոնք թե պատերազմիկ էին և թե պետական մարդու կը կարծեմ, որ Էնվեր կը սիրեր խորհիլ, որ ճակատագիրը իրեն վերապահած էր անոնց ասպարեզին նման ասպարեզ մը: Մնաց որ, այն գործոն մասնակցությունը, զոր քսանըվեց տարեկանին ունեցած էր Ապտիւլ Համիտը գահընկեց ընող յեղափոխության մեջ, զայն բնականաբար կը մղեր ինքզինքը Պոնափարթի հետ բաղդատելու, և քանի-քանի՜ անգամներ ինծի խոստովանեցաւ որ՝ ինքզինքը «մեծ ապագայի մը կուչուած» կը նկատեր: Կը սնուցաներ հաւատքը թե՝ երկնային առաքելութիւն ստացած էր Թիւրքիայի փառքը վերակենդանացնելու և ինքն իսկ ըլլալու Թիկդադորը: ...Իր արտաքինը փափուկ և գրեթե կանացի բան մը ուներ: Կը պատկաներ մարդերու այն տիպարին, զոր Ամերիկայի մեջ երբեմն կը կոչեն «սիրտերու դահիճ» անունով և կիները զինքը ընթացիկ կերպով կորակեին «անդիմադրելի»: Ոչ մեկ խորշում չէր ակսեր իր դեմքը, ճշմարիտ դիմակ, որ չէր մատներ ոչ իր յուզումները, ոչ իր մտածումները. միշտ խաղաղ էր, սառնային, անխռով...

Տարիներ ի վեր, իր համակրությունները հակած էին Քայզերին: Գերմանական կայսրությունը, անոր բանակը և նաւատորմիղը, անոր լեզուն, անոր միապետական կառաւարությունը, վերջապես ամեն բան, ճակատագրական հմայք մը գործեցին Թիւրք ռամկաւարության այս հիմնադիրին վրայ: Ապըտիւլ Համիտի անկումին ատեն, Էնվեր պաշտօնով Պերլին կը գտնուեր, ուր Քայզերը, որ անոր մեջ անմիջապես ճանչցաց էր՝ Արևելքի մեջ իր ծրագիրներուն ուժ տալու կարող գործիք մը, զանազան կերպերով կապուեցաւ անոր: Ան երկար ատեն Պերլին ապրեցաւ, զինուորական կցորդի հանգամանքով, ինչ որ զինքը ալ աւելի մօտեցուց Գերմանիային. այնպես որ երբ Էնվեր վերադարձաւ Պոլիս, գրեթե աւելի Գերման էր, քան Թիւրք: Երբ պատերազմական նախարար եղաւ, Վանկենհայմ զայն շոյեց, շողոմեց, զուարճացաւ անոր երիտասարդական փառատենչություններով և առանց որևէ կասկածի, պարտաւորեցաւ անոր խոստանալ Գերմանիայի բացարձակ աջակցությունը՝ այդ փառասիրությունները իրականացնելու համար: ...Անհատական տեսակցություններու մեջ Էնվեր չէր ծածկեր հիացումը՝ այդ երկրին համար: Այնպես որ, իր պատերազմական նախարար անուանումը ճշմարտապես գերմանական յաղթանակ մը եղաւ:

329 Миллер А. Краткая история Турции, М., 1948, стр. 163.

Տակավին բանակին շարքերուն մեջ կային մեծ թիւով սպաներ, որոնց հակումները կը թեքեին աւելի դեպի հին «ռեժիմը», քան դեպի Ժեոն Թիւրքերը: Ասկե զատ, անոնց մեջեն շատերը սպաննուած նախարարին՝ Նազրմի կողմնակիցներ էին: Առանց վարանելու, Էնվեր անոնցմե երկու հարիւր վաթսունութ հատը պաշտօնանկ ըրաւ և անոնց տեղը դրաւ Միութիւն և Առաջադիմութիւն Քոմիթեին որոշապես կապակցուած Թիւրքեր և քանի մը Գերմաններ:

Այսպես, օսմանեան բանակին բրոնիականացումը սկսաւ Էնվերի կողմե հրամանագրուած միջոցներով, թեև Թալեաթ, իր պաշտօնակիցը, այդ մասին երբեք նոյնչափ եռանդոտ չեղաւ: Թալեաթ երբեք միտքե չէր անցներ Գերմանիայի խաղալիքը ըլլալ, և էն առաջ կաշխատեր Քոմիթեին և ինքզինքին համար. բայց չէր կրնար իր ծրագիրները իրականացնել՝ առանց բանակին օժանդակությանը և ատոր համար է՝ որ Պատերազմական Նախարարության պաշտօնին բարձրացուց Էնվերը... որ տարիներով իր ամենեն մտերիմ ընկերը եղած էր Քոմիթեին քաղաքականության մեջ: Որովհետև իրեն պետք էր զօրաւոր բանակ մը, այդ նպատակով ան դարձաւ Գերմանիայի կողմը, որ, իր կարծիքով, կարող էր իրեն օժանդակութիւն ընծայել: 1913-ի վերջերուն մօտ Վանկենհայմի հետ կարգադրութիւն ըրաւ որ՝ Քայզերը զինուորական պատգամաւորութիւն մը ղրկե՝ Թիւրք բանակը վերակազմելու համար[330]: Վիլհելմ 2-րդի՝ Թուրքիա երկրորդ այցելության ժամանակ կատարված մի լուսանկարում Էնվերը կայզերի կողքին է: Դա պատահական չէր: «Թուրք Նապոլեոնիկը» համոզված էր, որ Գերմանիայի օգնությամբ Թուրքիան իր սահմանները տարածելու է մինչև Կենտրոնական Ասիա:

Էնվերի հետ հանդիպումից հետո Ս. Սապահ Գյուլյան գրեց, թե «Կնամարդու տպավորութիւն» թողեց... «մի մարդ, որ գրեհիկ հոգի ունի, շքեղազարդ հանդերձով, սեթևեթալ, կնոջական ծեկծեք ձևերով: Կոտրտաքը, նազանքը, դիմացինին ամեն գնով հաճելի երևալու ունակությունն այդ մարդու մեջ ծայրագունութեան էր հասել...»[331]: Հիդենբուրգը Էնվերի զորավարական ընդունակությունները հավասարեցնում էր զրոյի: Դրա փոխարեն՝ Գերմանիայի շահերի համար պայքարում, նշում էր նա, «ընթացող պատերազմի ժամանակ այս թուրքի ներդրումը եղավ անսահման»: Էնվերը Թուրքիային գերմանական սայլին կապեց և առաջին հերթին նրա ջանքերով էր, որ կայսրությունը պատերազմի մեջ մտավ որպես Գերմանիայի դաշնակից: Գերմանիայում Թուրքիայի փոխարեն օգտագործում էին «Էնվերլանդ» բառը: «...Պատերազմական ախտով վարակված մի անփորձ երիտասարդ (Էնվերը) իր գերմանասեր հակումներով է ղեկավարում պետությունն ու բանակը, ինքնագլուխ ամեն օր նոր հիմարություններ որպես օրենք հրատարակելով» (Գ. Զոհրապ): Լ. Սանդերսը Էնվերի մասին գրել է. «Փորձից ու ինտելեկտից լրիվ զուրկ, աննշան անձնավորություն է»: Դանիշմենդը գրում է. «Սարիղամիշի պարտությունը ամենախոշոր պարտություններից մեկն է ... և հետևանք է մեկ անհատի (Էնվերի) փառք վաստակելու մարմաջի»:

1914թ. հոկտեմբերի 31-ին Էնվերը հրամայեց 3-րդ բանակի հրամանատարին չորս հեծյալ դիվիզիաներով անմիջապես հարձակվել Կովկասի վրա՝ Ղարաքաղ-Բաքու-Կապուտան գծով, ռուսական բանակի մատակարարման համակարգը ոչնչացնելու և մահմեդականներին ապստամբության հրահրելու համար: «...Քարը քարի վրա չթողնել, քանդել երկաթուղիները և կամուրջները, հրդեհել կայարանները, ոտի հանել ողջ Կովկասի ժողովրդին»[332]: Էնվերի աշխարհակալական ցնորամտությունները հանրահայտ էին և ստացել էին պաթոլոգիկ բնույթ: Իր համաթուրանական երազներով, սակայն, նա նաև հմայիչ կերպար էր թուրք մեծապետական ազգայնամոլների համար, իրողություն է նրա խաղացած դերի գերագնահատումն ի հաշիվ Թալեաթի «ծառայությունների»: Թուրք պատմաբան Ա. Քուրանը գրում է. «Էնվեր փաշան Թալեաթի մախսուսայի խմբեր ստեղծեց: Նրա նպատակը բոլոր մահմեդականներին մի դրոշի տակ համախմբելն էր... Երբեմն Թալեաթ փաշայի հասցեին այնքան գովեստներ է շռայլվում, որ մարդու նախանձն է գրգռվում... Մոռանում են՝ նրա պատճառով էր, որ Օսմանյան կայսրությունն անցավ պատմության գիրկը...»[333]: «Թուրք բռնապետը» ձգտում էր համաշխարհային կայսրության, որը հիմնակա-

230 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 31-33:

231 Սապահ Գյուլյան Ս., նշվ. աշխ., էջ 251:

332 Kuran A., նշվ. աշխ., s.539, 591:

333 Aydemir S. Suyun Arayan Adam. Istanbul,1967, s. 160.

նում ձևավորվելու էր դեպի Արևելք նվաճումներով: Իսկ այդ նվաճումների առաջին տարածքը Հայաստանն էր: Նրան են պատկանում հետևյալ խոսքերը. «...Հայերի մնացորդներին այնպես պետք է ցաք ու ցրիվ անենք երկրով մեկ, որ հարկադրված լինեն Թուրք տարրի հետ ձուլվել»[334]:

1915թ. ապրիլին Վանգենհայմին Էնվերի ասած խոսքերին, թե՝ «Թուրքիայում համոզմունք կա, որ Կովկասյան ռազմաճակատում Թուրքերի անհաջողությունը զգալի չափով պետք է վերագրել հայերին և եթե վերջինները շարունակեն նման համառությամբ գործել հօգուտ Ռուսաստանի... ապա դեպի Թիֆլիս Թուրքերի ուղին զգալիորեն դժվարանալու է: Թուրքերը դա չեն կարող ներել հայերին: Դրա համար են այնքան չարությամբ հարձակվում նրանց վրա», հետևեց եզրակացություն՝ «Թուրքերի պետական շահերը հարկադրում են Հայաստանից աքսորել բոլոր հայերին»: Նա խնդրեց, որ Գերմանիան այդ անելուն չխանգարի: Գերմանացիները չխանգարեցին, բայց եթե նրանք միայն «հայերի տեղափոխման, ապա Թուրքերը՝ նաև բռնագաղթի կողմնակից էին»[335]: «El Siglo»-ն օգոստոսի 13-ին գրեց, որ Թուրքական իշխանությունները նորից հայերի դեմ արտակարգ բռնություններ են կիրառում, պատճառաբանելով, թե նրանք դավադրություն էին կազմակերպել վարչակազմի դեմ, որ երկրում աննախադեպ լայն ծավալներ է ընդունել պանիսլամական քարոզչությունը. Էնվերը բոլոր իսլամական երկրներին հուշագրեր ուղարկեց, թե Թուրք-եռյակ զինակցության ուժերը նորանոր հաղթանակներ էին տանում: Նա կոչ արեց Մուհամմեդի դրոշի տակ գտնվող բոլոր անձանց ու ժողովուրդներին հավատարիմ մնալ օսմանյան սուրբ դատին և կատարել Ալլահի հրամանը՝ կոտորել քրիստոնյաներին:

Էնվերն իրեն անկախ ու գոռոզ էր պահում, արհամարհական վերաբերմունք դրսևորում իր գործընկերների հանդեպ, ինչը, բնականաբար, վերջիններիս շրջանում ծնում էր հակազդեցություն: «El Tiempo» թերթը 1915թ. օգոստոսի 29-ին գրեց, որ Թուրքական կառավարության ներսում լուրջ տարաձայնություններ են առաջացել, որոնց հիմնական պատճառը հայերի զանգվածային հալածանքներն են, որոնք ծրագրվել և իրականացվում են Թալեաթի և Էնվերի կողմից: Այդ քաղաքականությունից դժգոհ էր նաև Մեծ վեզիրը, որը հայտարարեց՝ եթե այդ դեպքերը կրկնվեն, հրաժարական է տալու:

Բայց Էնվերի հանդեպ հակազդեցությունն էական հետևանքներ չէր ունենում, որովհետև նա և Թալեաթը գրեթե բոլոր առանցքային հարցերում, այդ թվում նաև հայերի հանդեպ քաղաքականության խնդրում, նույն դիրքորոշումն ունեին: Սակայն նման դիրքորոշումը միայն արտաքին քող էր, որովհետև երիտթուրքական եռապետության անդամները միասնական էին միայն այն ժամանակ, երբ ինչ-որ ուժեր սպառնում էին նրանց իշխանությանը:

Ամբողջությամբ վերցրած իթիհադը, որպես կուսակցություն, միասնական չէր և չուներ ամբողջական գաղափարաքաղաքական հիմք, խայտաբղետ էր նաև կուսակցության կազմը: Ղեկավար գործիչները մտավորականության, սպայության և չինովնիկների ներկայացուցիչներ էին: Կուսակցության ներսում փոքր մասնաբաժին չունեին նաև մանր բուրժուազիայի և աղքատ խավերի ներկայացուցիչները: Թերևս նաև դա էր պատճառը, որ կուսակցությունում ցենտրալիզմը բացարձականացված էր, ներքին օղակները կուրորեն ենթարկվում էին վերադաս մարմինների որոշումներին: Չնայած դրան, կուսակցության ներսում տարաձայնությունները, այն էլ առանցքային խնդիրների շուրջ, միշտ գոյություն ունեցել են: Օրինակ, իթիհադը եվրոպական տիպի քաղաքական կուսակցություն պետք է լիներ, թե ընկերություն, ինչպիսին էին լինելու բանակը և քաղաքականությունը, արտաքին քաղաքական կողմնորոշումները: Ահմեդ Ռիզան տագնապ էր հնչեցնում, թե կուսակցության կենտկոմի լուռ հավանությամբ մի քանի անձինք սեփական հայեցողությամբ որոշում են կայսրության բախտը: Իշխանության գլուխ կանգնելուց հետո տարաձայնությունների հաղթահարման գլխավոր միջոցների առաջին շարքերում հանդես եկան ընդդիմադիր գործիչների ահաբեկումը և Կ. Պոլսից հեռացնելը:

334 Ց. Վ. Տաշեան, Հայ ազգային տարագրութիւնը գերմանական վավերագրերու համեմատ, Վենետիկ, 1921, էջ 21-23:

335 Чалхушян Гр., նշվ. աշխ., էջ 106:

Պատմագրության մեջ ոչ քիչ դեպքերում իթիհադի պարագլուխների միջև եղած տարաձայնություններով են բացատրվում նաև երևույթներ, որոնք ամենևին էլ այդպիսիք չեն: Ցու. Պետրոսյանը գրում է, որ Հատուկ կազմակերպության ստեղծման գործում Թալեաթն ու Էնվերը գործում էին համատեղ, բայց նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր այդ կազմակերպությունը ենթարկել իր շահերին: Ի վերջո, նրանք համաձայնության եկան: Թալեաթը, այսինքն՝ իթիհադի կենտրոնը, նշանակում էր կազմակերպության ղեկավարներին, իսկ Էնվերին «պատկանում էր վճռական խոսք կազմակերպության ծրագիրն ու գործունեության ոլորտները որոշելու գործում»[336]: Նման եզրակացության հանգելու համար պետք չէ գիտենալ, որ եղել է երկու Հատուկ կազմակերպություն: Մեկը ստեղծվել էր Բալկանյան պատերազմի վերջին ամիսներին և կոչված էր իրականացնելու պատերազմական խնդիրներ (այն ամբողջությամբ ենթակա էր ռազմական նախարարությանը), իսկ մյուսը սկսեց ձևավորվել 1914թ. կեսերից և կոչված էր լուծելու ջարդարար խնդիրներ: Այն ամբողջությամբ ենթարկվում էր ՆԳ նախարարությանը և իթիհադի կենտրոնին, այսինքն՝ Թալեաթին: Ռազմական նախարարության առնչությունն այս երկրորդ թեչքիլաթի հետ սահմանափակվում էր զենքի ու ռազմամթերքի մատակարարմամբ և որոշ թվով սպաներ տրամադրելով: Էնվերի համար այդ նաև լրացուցիչ հնարավորություն էր բանակից հանելու իրեն ընդդիմադիր սպաներին: Ի դեպ, թե Թալեաթը և թե Էնվերը «հեռացման» քաղաքականությունը կիրառեցին նաև եռապետության ներսում: Նրանց ջանքերով Ջեմալը 1914թ. նոյեմբերի 13-ին հեռացվեց մայրաքաղաքից, որպեսզի, ինչպես ասել է Թալեաթը, եթե «այդ արշավանքը ձախողվի, Ջեմալ փաշան կամ սպանվելու է ռազմաճակատում, կամ ինքնասպանություն է գործելու»: Ջեմալը համաձայնվեց, որովհետև այդ փառամոլը Կ. Պոլսում իրեն ստորացված էր զգում Թալեաթի ու Էնվերի ազդեցության ուժի մեծությունից: Նա Սիրիայում շատ արագ դարձավ անսահմանափակ իրավունքներով օժտված տիրակալ, ինչը նույնպես դուր չեկավ Էնվերին ու Թալեաթին: Նրանք Նազըմին, Բ. Շաքիրին և Ի. Ջանփոլադին ուղարկեցին Սիրիա Ջեմալի դեմ փաստեր հավաքելու համար: Բ. Դուռը երկու անգամ Ջեմալին կանչեց մայրաքաղաք, սակայն վերջինս ձևական պատճառաբանությամբ չմեկնեց:

Իսկ Էնվերի ու Թալեաթի միջև հակասություններն առավել ցցուն արտահայտվեցին Անտանտի հետ սեպարատ համաձայնության հասնելու հարցում: Արդեն 1915թ. կեսերին Թալեաթը՝ նկատի ունենալով, որ ա) պատերազմի մեջ Թուրքիայի մտնելու գլխավոր խնդիրները գրեթե լուծված էին՝ վերացվել էր կապիտուլյացիաների համակարգը և տարագրվում էր հայ բնակչությունը և, բ) օրեցօր մեծանում էր տագնապը, որ պատերազմը շահելու է Անտանտը, ինչը կնշանակեր կայսրության անկում, գտնում էր, որ պետք է Անտանտի հետ համաձայնություն կայացնել ու պատերազմից դուրս գալ: Էնվերը վճռականապես դրան դեմ էր և թույլ չէր տալիս: Նա անգամ չխնայեց թագաժառանգ Ցու. Իզեթին՝ նրան սպանել տվեց: Սակայն նույնիսկ այդ քայլը չկանգնեցրեց պատերազմից դուրս գալու տրամադրությունների աճը, մանավանդ որ նույն կարծիքին էր Թալեաթը՝ քողարկված և Ջավիդը՝ բացահայտ: Վերջինս Բեռլինում հայտարարեց, որ եթե Գերմանիան Թուրքիային 300 մլն մարկ փոխառություն չտա Կովկասյան ռազմաճակատ գերմանական զորքեր չուղարկի, Թուրքիան պատերազմից դուրս կգա: Կ. Պոլսում երևացին թռուցիկներ՝ ուղղված Էնվերի ու Գերմանիայի դեմ: 1916թ. գարնանը իրար դեմ կանգնեցին պատերազմից դուրս գալու կողմնակիցները՝ Թալեաթի և պատերազմը շարունակելու կողմնակիցները՝ Էնվերի գլխավորությամբ: Էնվերի շուրջն էին համախմբված առավել արյունարբու հայատյացները: Նրանցից Հազը հայտարարեց, թե Բ. Դուռը չէր կարող կամ չէր ուզում ոչ մի գնով զինաթափել քուրդ ազերիներին, ինչքան էլ նրանք հակաօրինական գործեր կատարեին, որովհետև «Հայերի պատճառով քիւրտերին պետք չէր հալածել»[337]: «La Democracia» թերթը 1915թ. սեպտեմբերի 12-ին տպագրեց լուր, թե երբ մի դիվանագետ Էնվերին մատնացույց էր արել այն իրողությունը, որ քրիստոնյաների հալածանքը Թուրքիայում քաղաքական գործարք էր, Էնվերը պատասխանել էր, որ իթիհադական քաղաքականությունն այդուհետ մի-

336 Петросян Ю. Турция в период правления младотурок. Москва, 1972, стр. 289.

337 Սապահ Գյուլյան Ս., նշվ. աշխ., էջ 309:

տում ուներ իրագործելու «Թուրքիան Թուրքերի համար» սկզբունքը, որ իրենք սկսել են ազատվել հայերից, ապա անցնելու են հույներին ու հրեաներին: Էնվերը ցինիկաբար հայտարարել էր, որ հետագայում հերթը գալու է Թուրքիայում ապրող եվրոպացիներին, այդ ճակատագրից զերծ չէին մնալու նաև գերմանացիները: «El Siglo»-ն արտատպեց«Թանինի» խմբագրականներից մեկը, որում ասվում էր, թե Թուրքիան միշտ վտանգված կլինի, եթե չոչնչացնի բոլոր հայերին, կամ եթե նրանց չստիպի ընդունել իսլամը: Էնվերը Լեփսիուսին ասել էր. «Վերջապես առիթը գտած ենք հայերեն ազատուելու և որոշել ենք այդ առիթը գործածել»[338]: Էնվերը հայկական հարցի լուծման երկու ուղի էր առաջարկում, ավելի ճիշտ ոչ թե առաջարկում էր, այլ վերահաստատում Աբդուլ Համիդ 2-րդի քաղաքականությունը՝ արտամղելու, ուծացնելու միջոցով հայերին թվաքանակով խեղճացնել, ապա նաև ոչնչացնել: Այսինքն՝ հարցի լուծման առաջին ու գլխավոր միջոցը հայ էթնոսի խեղճացումն էր, որից հետո բնաջնջումն ավելին չէր, եթե ոչ սակավաթիվ ու կազմալուծված հայության մնացորդներին հաշվեհարդարի ենթարկելը:

«El Siglo»-ն 1915թ. օգոստոսի 13-ին գրեց, որ իթիհադը ձեռնամուխ է եղել պանիսլամական ծավալուն քարոզչության: Էնվերը բոլոր իսլամական երկրների ղեկավարներին հայտնել է գերմանո-ավստրո- հունգարական բանակների մեծ հաղթանակների մասին: Խոստացել է օգնել բոլոր նրանց, ովքեր հավատարիմ կլինեն օսմանյան սուրբ դատին: Էնվերը իսլամական երկրների ղեկավարներին հորդորել է գործադրել Ալլահի հրամանը՝ սպանել քրիստոնյաներին: Նույն հաղորդագրությունը սեպտեմբերի 9-ին տպագրեց նաև «El Dia» թերթը, ավելացնելով, որ երիտթուրքերն իրենց ավելի ուժեղ են զգում Լեհաստանում գերմանացիների տարած հաղթանակից հետո և երազում են զավթել ողջ Արևելքը, վերագրավել Թրակիան, Մակեդոնիան և Այբանիան: Բարձրագույն դուռը գոռոզացել է և անզիջող դարձել Բուլղարիայի նկատմամբ: Գերմանիան վախենալով, որ Բուլղարիան Թուրքիայի անզգուշությունների հետևանքով կարող է փոխել իր դիրքորոշումը, հատուկ պատվիրակություն էր ուղարկել Սոֆիա: Սեպտեմբերի 9-ին «El Dia»-ն հայտնում է, որ ավստրիացիները և գերմանացիները մեծ ուժեր էին կենտրոնացնում դանուբյան ճակատում: Պոլսո մզկիթներում հայտարարվում էր, որ շուտով դրան կմիանա նաև Թուրքիան: Ենթադրվում էր, որ Ռումինիան անտարբեր ու պասիվ մնալ չէր կարող: Պատրաստվում էր Դանուբյան օպերացիան:

«Էնվե՞րը,- հարց է տալիս Ք. Կարաբեքիրը և ինքն էլ պատասխանում,- Թուրքիայի սպայակույտի անդամներ վերցնում էր իր մերձավոր բարեկամներից... Գերմանիան Էնվերի միջոցով ամբողջ Թուրքիան իր ազդեցության տակ առնելու հնարավորություն ստացավ»[339]: «Ողբերգությունը վրա հասավ,- շարունակում է նա,- երբ Էնվերը դարձավ պանթուրանիզմի դրոշ... նա մինչև վերջ էլ թուրքական բանակը բոլոր ռազմաճակատներում ոչնչացնել տվեց ու թուրք ժողովրդին էլ... կրակը նետեց»: Եվ ապա՝ «Երբ Էնվերը Սարիղամիշի ճանապարհով պանթուրքիստական ծրագրերն իրականացնել չկարողացավ, փորձեց դրան հասնել Պարսկաստանի վրայով և տարօրինակ կատակ... հարյուրհազարավորների մահվան պատճառ դառնալուց հետո ինքն էլ Թուրանի կենտրոնն իր արյունով ներկեց...»[340]: «Էնվերը,- մի այլ անգամ ասել է Ք. Կարաբեքիրը,- աղետ բերեց մեր գլխին, մեզ մի բան էր մնում՝ պաշտպանել Անատոլիան... Թալեաթն ու Էնվերը մեր բանակների ջախջախման պատճառ դառնալուց հետո Անատոլիայի ունեցվածքն անխղճաբար ծծելուց հետո, Իհսան փաշայի 6-րդ բանակի ջախջախումը, չորս տարվա մեր կորուստները տեսնելուց հետո... փախան... խեղճ Անատոլիա»[341]: «Էնվերը,- գրում է Սանդերսը,- առանց առարկություններին ուշադրություն դարձնելու, ձմռանը հարձակվեց Սարիղամիշի վրա և օսմանյան մարտական լավ վիճակում գտնվող բանակը շարքից հանեց... Էնվերն ինձ ասաց՝ գլխավոր խնդիրը պատերազմը շահելն է... Սարիղամիշում 90 հազ. թուրքական բանակից 9000 հոգի մնաց»[342]: «Ընդհանուր հրամանատարի փոխանորդ նշանակված Էնվերը,- գրում է Մ. Ռիֆաթը,- ռուսական ճակատը քննելե և անոր «տկարությունը» իմանալե ետք նոր փառք շահելու տղայամտությունը ունեցած էր և առանց նկատի առնելու եղանակն ու կլիման, ինչպես նաև կեդրոնեն հեռանալիք բանակի պարենավորման դժվարությունները, իր հրամանատարությամբ ռուսներու դեմ յարձակում մը շղթայազերծել ուզած և այս նպատակը տեղեկացուցած էր Կովկասի ճակատի հրամանատար Տամատ Հաֆըզ Իսմայիլ փաշային, ով համամիտ չգտնուելով, բոլոր բանակի սպայակոյտի անդամները և բարձրաստիճան սպաները հրավիրելով խորհրդակցած էր ժամերով: Շատերը հարմար տեսած էին, որ ձմեռը պաշտպանողական վիճակի մեջ անցուցեին և մինչև ամառ պատրաստություն տեսնելե յետոյ յարձակման անցնեին: Հակառակ անոր, Էնվերին ընկերացող ընդհանուր սպայակոյտի նախագահ գերմանացի զորավար Պրոնզո փաշա, գերման բանակին դեմ ճակատող ռուսական ուժերը տկարացնելով Գերմանիոյ բեռը թեթևցնելու սատանայամտությամբ՝ Էնվերը համոզած և թրքական բանակին իր՝ ընդհանուր հրամանատարին պատասխանատվությունը ստանձնելով, յարձակման անցնիլ թելադրած էր»[343]: Դա, այլ ոչ թե հայերի դավաճանությունն էր Սարիղամիշում թուրքական բանակի ոչնչացման պատճառը:

Էնվերը Մորգենթաուին ասում է. «Գիտե՞ք, թե ինչ պատահեցավ Վանի մեջ: Հայերը տիրացան քաղաքին, ուժանակներ նետեցին կառավարական շենքերու վրա, և բազմաթիվ իսլամներ սպանեցին: Մենք գիտեինք, թե հայերը ուրիշ տեղերու մեջ ալ ապստամբություններ կը սարքեին: Դուք պետք է ըմբռնեք, թե մենք Տարտանելի մեջ կը կռուինք մեր գոյությեան համար և հազարավոր մարդ կը զոհենք: Մինչ այս տեսակ պայքարի մը բռնուած ենք, մենք չենք կրնար թույլատրել մեր իսկ երկրին մեջ գտնուող մարդոց, որ մեր կռնակեն զարնեն մեզ: Մենք ստիպուած ենք արգելել ատիկայ, խնդիր չէ, թե ինչ միջոցի դիմել հարկադրուած ենք: Բացարձակապես ճշմարիտ է, որ ես հակառակ չեմ հայերուն՝ իբր ժողովուրդ: Ամենամեծ հիացումը ունիմ իրենց մտացիության և ճարտարահնարությեան համար, անոնք մեր ազգին մեկ մասը եղած են: Բայց եթե անոնք մեր թշնամիներուն միանան, ինչպես ըրին Վանի նահանգին մեջ, այն ատեն փճացուելու են: Ես միջոցներ ձեռք առած եմ, որպեսզի ոչ մեկ անարդարություն չգործուի, դեռ վերջերս է, որ հրահանգ տուի երեք հայերու համար, որոնք տարագրուած էին, որպեսզի իրենց բնակավայրերը վերադարձուին, երբ տեղեկացայ, որ անոնք անմեղ էին: Ռուսիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա և Ամերիկա հայերուն բարիք չեն ըներ՝ անոնց համակիր ընթացք ցուցնելով և զանոնք քաջալերելով... Վստահ եմ թե, եթե այդ օտարերկրները չքաջալերեին հայերը, անոնք պիտի լքեին ներկայ կառավարության դեմ ելլելու իրենց բոլոր ջանքերը և պիտի դառնային օրինապահ քաղաքացիներ: Հիմա այս երկրին բացարձակ վարչության տերը մենք ենք և կրնանք դիւրին կերպով վրեժ լուծել յեղափոխականներեն... (Խաղաղության ատեն) կրնանք պղատոնական միջոցներ գործածել խաղաղացնելու հայերը և յոյները, բայց պատերազմի ժամանակ չենք կրնար հետաքննել և բանակցել... Պոլսի մեջ 70 հազ. հայ կա և անոնց նեղությունն չպիտի տրուի, բացի անոնցմե, որոնք դաշնակցական են և անոնցմե, որոնք թիւրքերու դեմ կը դավին: Սակայն ես կը կարծեմ, որ ամբողջ խնդիրին մասին միտքերնիդ կրնաք հանգստացնել, որովհետև ալ հայերու ջարդեր տեղի չպետք է ունենան: (Զեյթունում կուտակված հայերին օգնություն ցույց տալու Մորգենթաուի առաջարկի կապակցությամբ) Եթե որևէ ամերկացի ըներ այդ բանը, պիտի քաջալերեր բոլոր հայերը և նոր խռովություններ պիտի յարուցաներ... հայերուն հետ մեծագոյն կնճիռը ան է, որ անոնք անշատողականներ են: Անոնք որոշած են սեփական թագավորություն մը ունենալ, և կը տարուին ռուսներեն խաբուելու: Ռուսներուն բարեկամությանը ապավինելու համար հայերը այս պատերազմին մեջ օգնեցին ռուսներուն: Մենք որոշ կը տեսնենք, որ անոնք ճիշտ թուրքերուն ըրածի պես կը վարուին: Դուք յիշելու եք, որ երբ Թիւրքիայի մեջ ծանոթ յեղափոխությունը յարուցինք, միայն երկու հարիւր հոգի էինք: Այդ փոքրաթիվ ընկերներով մենք կարող եղանք Սուլթանը և հասարակությունը խաբելու, որոնք կարծեցին, թե մենք մեծապես ավելի բազմաթիվ և զորեղ էինք, քան որչափ էինք... Յեղափոխություններու մասին մեր փորձառությունն է, որ մեզ վախեցնել կու տայ հայերեն: Եթե 200 թիւրքեր կրնան տապալել կառավարությունը, քանի մը ուշիմ և զարգացած հայեր ալ կրնան նույն բանը ընել:

338 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 285:
339 Karabekir K., նշվ. աշխ., s. 138:
340 Ն.տ. էջ 82:
341 Ն. տ., էջ 32:
342 Ն. տ.:

343 Ռիֆաթ Մ., նշվ. աշխ., էջ 91-92:

Հետևաբար մենք գիտակցաբար որդեգրած ենք զանոնք ցիր ու ցան ընելու ծրագիրը, որպեսզի մեզի մնաս չկարողանան հասցնել: Հայերուն համար նախապատիվ է, որ ամերիկացի միսիոներները հեռու մնան հայերեն: (Հայերին սովամահությունից փրկելու առնչությամբ) Ինչպե՞ս հաց կրնանք հայթայթել հայերուն, երբ բավականաչափ հաց չենք կրնար գտնել մեր իսկ ժողովրդի համար... Մենք չենք ուզեր, որ ամերիկացիները սնուցանեն հայերը: Ատիկայ ամենագեշ բանն է, որ կրնայ իրենց պատահիլ... Եթե դուք՝ ամերիկացիներդ սկսեք անոնց ուտեցնել և զգեստ բաժանել, անոնք պիտի խորհին, որ իրենք Միացյալ Նահանգներուն մեջ ուժով պաշտպաններ ունին: Ասիկա զիրենք կրկին ըմբոստության պիտի քաջալերե և մենք ալ պիտի ստիպուինք ալ ավելի պատուհասել զանոնք: Եթե ձեր ստացած դրամը մեզի՝ Թիւրքերուս տաք, մենք պիտի ջանանք զայն գործածել հայերուն օգնելու: Հայերը պետք չէ գիտնան, որ իրենք Միացեալ Նահանգներու մեջ պաշտպաններ ունին: Այդ բանը բացարձակապես պիտի կործաներ զիրենք: Նախապատիվ է, որ անոնք սովամահ ըլլան...»[344]:

Անտանտի տերությունների մայիսի 24-ի հայտարարությունը ենթադրում էր, որ ոչ միայն Թալեաթը, Էնվերն ու Ջեմալը, այլև Սայիդ Հալիմը դատվելու էին որպես «պարզ մարդասպաններ»: Այդ էր պատճառը, որ հայերի ջարդերի մասին ամեն մի հիշատակություն առաջացնում էր «նյարդային ճգնաժամ»:

Երիտթուրք պարագլուխները աչքի չէին ընկնում իրենց պարկեշտությամբ, մութ գործարքներով հարստություն չդիզելու վարքով: Սակայն անգամ Թալանչի կաշառակերների այդ զանգվածում Էնվերն առանձնանում էր հարստություն կուտակելու իր անհագուրդությամբ: Ալի Իհսան Սաբիսը գրում է, որ պատերազմի նախօրյակին Էնվերի ընդունարանը մշտապես լիքն էր ազատ ու տարօրինակ հագնված մարդկանցով, ովքեր Էնվերին փառաբանում էին, առաջ մղում «Թուրանական ուղին» անցնելու «Թուրքական նվաճումների» անհրաժեշտությանը և դրա դիմաց պարգևատրություններ ու առանձնաշնորհումներ ստանում: Նրանք Էնվերի մազերի մեջ եղած սպիտակ գծերը համարում էին «նվաճողի» նշան, նրան ի վերուստ տրված «Թուրանը նվաճողի» շնորհ: Ա. Սաբիսը գրում է, որ նախարարության հատուկ ֆոնդից բանակի շտաբի պատասխանատու աշխատողներին վճարված գումարները Էնվերի ծախսած միջոցների համեմատությամբ ավելին չէին, քան մատուցողին տրված կոպեկները: Էնվերի աչքածակության, գռփելու անհագ ախորժակի մասին գրում է նաև Թալեաթը: Նա նշում է, որ Էնվերը պատասխանատու պաշտոններում նշանակում էր մարդկանց, օրինակ, բանակի մատակարարումների բաժնի պետ Իսմայիլ Հագին, որը կատարում էր վիթխարի ծավալների չարաշահումներ և յուրացումներ: Հագի վրա զանգատները Էնվերը, որպես կանոն, անուշադրության էր մատնում: Նա անգամ սպառնում էր, որ եթե Հագի վերաբերյալ զանգատները քննության առարկա դառնան, ինքը հրաժարական կտա: Մասնավորապես ասվում էր, որ Էնվերն ու իր խումբը օգտագործում էին ճանապարհաշինության ու տրանսպորտային միջոցների ծանր վիճակն անձնապես հարստանալու համար: Վագոններ տրամադրելու համար Էնվերն ու իր մարդիկ մեծ գումարներ էին ստանում: Տրանսպորտի վրա հսկող վարչությունը վերածվել էր «մեքենայությունների կենտրոններից մեկի և երկրին վիթխար մնաս հասցրեց: Էնվերն ուներ մի քանի պալատներ ու դղյակներ: Նրա կողմից պետական միջոցների չարաշահումն այնպիսի մեծ ծավալներ ստացավ, որ չեյխ ուլ իսլամ Խայրին, որպես բողոքի նշան, հրաժարական տվեց: Երբ իշխանությունից հեռացավ, Էնվերը նախարարության գումարներից վերցրեց 40 000 լիրա:

Ահմեդ Ջեմալ.- Ծնվել է 1872թ. Միտելինում: Համատեղել է Կ. Պոլսի ռազմական նահանգապետի և անվտանգության ծառայության պետի պաշտոնները: 1914թ. նշանակվել է ծովային նախարար, գրեթե անկախ կարգավիճակով:

Եթե Էնվերն ու Թալեաթը միանգամայն տարբեր բնավորություններ ունեին, ապա Ջեմալն առավել ևս: Նա բնավորությամբ Թուրք էր բառի ամբողջ տարողությամբ: Բոլոր երիտթուրքերի նման սերված էր հասարակության ներքին խավերից: Առաջին հայացքից նա տպավորություն չէր թողնում՝ գրեթե կարճահասակ, գեր և փոքր-ինչ կորաքամակ: Բայց հենց շարժվում էր, իսկույն նկատելի էր դառնում նրա ֆիզիկական կառուցվածքի ամրությունը: Երբ ձեռք էր սեղմում, միաժամանակ ծակող հայացքով դիմացինի վրա հիպնոսացնող ազդեցություն էր գործում: Նա մեկն էր, որի համար անօրեն սպանությունը նույնն էր, ինչ մահապատիժը: Միություն

344 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 286-299:

և առաջադիմություն կոմիտեի հնագույն անդամներից էր: Շնորհիվ ունեցած հեղինակության և երկաթյա կամքի՝ կարճ ժամանակում կարողացավ կուսակցության պարագլուխ դառնալ: Ղեկավար մասնակցություն ունեցավ Իթիլաֆի կառավարության տապալմանը և պետական հեղաշրջումից հետո նշանակվեց Կ. Պոլսի զինվորական կառավարիչ: Համառ էր, դաժան և սարսափազդու: 4-րդ բանակի հրամանատարի պաշտոնով մեկնեց Պաղեստին: Նորից ձայնը տանք Հ. Մորգենթաուին. «Ճեմալ մեկ աւելի յատկանշական նմանութիւններ ուներ Մարկոս Անտոնիոսի հետ: Իր հռոմեացի նախահայրին պես, իր ներքին կեանքը անբարոյական էր. Անտոնիոսի պես՝ անյագ խաղասեր մըն էր և իր հաճոյքի ժամերուն մեծ մասը Սեռքլը տ'Օռիանի մեջ, թղթախաղի սեղանին շուրջ կը վատներ: Ուրիշ յատկանիշ մը՝ որով կը նմաներ հռոմայեցի մեծ ճարտասանին, իր ահարկու սնափառութիւնն էր: Թրքական աշխարհը Ճեմալի օրով կը թուեր անդամահատուիլ, ճիշդ ինչպես որ Հռոմեական Հանրապետութիւնը կը լուծուեր Անտոնիոսի օրով: Ճէմալ կը հաւատար թե՝ ինք կրնար անոր մեկ աւելի նահանգներուն ժառանգորդը դառնալ և հաւանորեն հարստութիւն մը հիմնել: Կը յուսար որ՝ այն զինուորական արշաւանքը՝ որուն իբր հրամանատար կը մեկներ, զինքը ոչ միայն Թիւրքիայի գեղեցկագոյն նահանգին նուաճողը պիտի դարձներ, այլ նաև աշխարհի հզօր դեմքերեն մեկը: Եղբեն, Սուրիայի մեջ, ան իշխեց այնչափ անկախօրեն, որչափ միջնադարեան կողոպտիչ պարոն մը, որուն կը նմաներ ուրիշ մասնայատկութիւններով: Ան դարձաւ տեսակ մը փոխսուլթան, որ սեփական արքունիքը ուներ, իր սելամլըքը ուներ և սեփական հրահանգները կը հայտարարեր, ազատորեն գործադրելով իրեն յատուկ արդարութիւը և յաճախ արհամարհելով Պոլիսի իշխանութիւնները:

Այն ցնծութիւնը, որով Ճեմալի ընկերակիցները կը փութացնեին մեկնումը, բոլորովին անշահախնդրական չէր: Իրողութիւնը ան էր, որ՝ անոնցմե շատերը ծայրայեղորեն ուրախ էին անոր երթալը տեսնելով: Անիկա ատեն մը Թալեաթի և Էնվերի կողքին՝ փուչ մը եղած էր, և անոնք կատարելապէս գոհ էին որ՝ ան իր գոռոզ և բիրտ վարքը պիտի գործադրեր սուրիացիներու, հայերու և միջերկրականեան նահանգներու ուրիշ ոչ իսլամ տարրերուն դեմ: Ճեմալ Պոլիսի մեջ ժողովրդական մարդ մը չէր: Եռապետութեան միւս անդամները, իրենց քիչ փափաքելի յատկութիւններուն յաւելուածորեն, զանազան առինքնող յատկանիշներ ունեին- Թալեաթ՝ իր բիրտ կորովը և բնածին միամտութիւնը, Էնվեր՝ իր յանդգնութիւնը և անձնական շնորհալիութիւնը. բայց Ճեմալի վրայ քիչ բան կար, որ հաճելի ըլլար: Ամերիկացի բժիշկ մը, որ դիմագիտութեան մասնագետ էր, Ճեմալը հիանալի ենթակայ մը նկատած էր: Ան ըսաւ ինծի թե՝ երբեք չէր տեսած դեմք մը, որ վայրենութիւնը այնչափ միացներ հեղինակաւորութեան և կորովամտութեան: Էնվեր, ինչպես իր կեանքը կը ցուցներ, կրնար անգութ և արիւնածարաւ ըլլալ, բայց ան՝ իր նենգաւոր յատկութիւնները կը ծածկեր մեղմ, անխորշում և նոյնիսկ հաճելի դեմքի մը տակ: Սակայն Ճեմալ չէր ծածկեր իր հակումները, որովհետև իր դեմքը յստակօրեն կը պատկերացներ ներքին հոգին: Իր աչքերը սև ու թափանցող էին. անոնց սրութիւնը, արագաթարթութիւնը և խայթողութիւնը, որով կը սևեռեին մեկ առարկայեն միւսին, քանի մը փայլականման ակնարկի մէջ յայտնապես՝ ընդգրկելով ամեն բան, կը մատնեին ծայրայեղ աստիճանով խորամանկութիւն, անխղճութիւն և անձնապաշտութիւն: Նոյնիսկ իր խնդուածքը, որ մեկտեղը կը հաներ իր ճերմակ ակռաները, անհաճոյ և կենդանակերպ էր: Իր սև մազերը և սև մօրուքը, որոնք հակադրութիւն կը կազմեին իր տժգոյն դեմքին հետ, այդ տպաւորութիւնը կը սաստկացնեին միայն: Եկավ ժամանակ, երբ Ճեմալ Դահլիճի անդամ եղաւ, բայց չի կրցաւ իր ընկերակիցներուն հետ ներդաշնակորեն գործել. ան միշտ վրդովիչ ընկեր մըն էր: Համաձայնութեան հետ խզումի նախընթաց օրերուն, ան հանրութեան մեջ ֆրանսասեր մը նկատուած էր: Ինչ զգացում, որ ալ Ճեմալ տածած ըլլայ Համաձայնութեան հանդէպ, ան քիչ ճիգ գործեց ծածկելու իր արհամարհանքը՝ Գերմաններուն հանդէպ: Կը պատմուի թե՝ անիկա իրենց ներկայութեանը կը քթիր անոնց, անշուշտ թիւրքերեն լեզուով, և անիկա թիւրք կարևոր հաղուագիտ պաշտօնատարներեն մեկն էր, որ երբեք անոնց իշխանութեան տակ չինկաւ: Իրողութիւնը ան էր, որ Ճեմալ կը ներկայացներ այն ձգտումը, որ արագորեն գերակշռութիւն կը շահեր թիւրք քաղաքականութեան մեջ՝ համաթրքութիւն: Ան կատեր օսմանեան երկիրին հպատակ ժողովուրդները, արաբները, հոյները,

հայերը, չերքեզները, հրեաները և իր փափաքն էր՝ թրքացնել ամբողջ կայսրությունը: Իր անձնական փառատենչությունը զինքը յաճախ վեճի կը բռնուցներ Էնվերի և Թալեաթի հետ, որոնք քանի անգամներ ինծի ըսած են, թե չէին կրնար զայն զսպել: Այս պատճառով էր, որ, անոնք ուրախ էին Ճեմալի երթալը տեսնելով. ոչ թե իրապես յուսալնուն, որ ան Սուեզի ջրանցքը կը գրավե և անգլիացիները Եգիպտոսեն կը վտարե»[345]: «Ջեմալ փաշան, նկատում է Կարաբեքիրը,- որը թուրքական հողերը վատնեց, իսկ Պաղեստինի անապատներում անմտորեն արյուն թափեց... իր սխալներին երկու տողով չանդրադարձավ»[346]:

Ինչպես որ ոճրային էր այն միջոցը, որով երիտթուրքերը իշխանության հասան, ոճրային մնաց նրանց նաև գործերն այդ իշխանությունում իրենց գրված դիրքերը պահպանելու համար: «Ջեմալը, բացի իր պաշտոններեն, Պոլսի զինուորական կառավարիչն էր, և այդ պատճառով ոստիկանության վերակազմությունը կը կատարեր: Այդ դերին մեջ ան կատարելագործեց Ֆուշեի մը բոլոր ձիրքերը և այնչափ լավ կատարեց իր առաքելությունը, որ ամեն անձ, որ կը դավաճաներ Ժեոն Թուրքերու, ստիպուեցավ քաշուիլ Փարիզ կամ Աթենք»[347]: Ջեմալը երիտթուրք մյուս դահիճների նման ամեն կերպ աշխատում էր Հայկական հարցում չքմեղանալ, մեղքն ուրիշների վրա բարդել: Նա Գերմանիայի հյուպատոս Լոյտերդին ասել է. «Կցանկանայի հայերի վիճակը հնարավորին չափ թեթևացնել, բայց խիստ հրաման ունեմ Կ. Պոլսից՝ թույլ չտալու հայերի համար նպաստամատույց ձեռնարկ գերմանացիների և ամերիկացիների մասնակցությամբ, քանի որ թուրքական կառավարության դեմ հայերի ներքին ընդդիմությունը դրանով միայն կարող է խրախուսվել»[348]: Մորգենթաուն նկատում է, որ Ջեմալը «չափազանց կը նեղանար այն շահագրգռութենեն, զոր ամերիկեան հիւպատոսները կը ցուցանեին հայերուն... Թղթաբերը ըսավ, թե Ճէմալ չէր կրնար անմեղը յանցավորեն զանազանել, որով պիտի պարտավորուել ամենքն ալ պատժել»[349]:

Ջեմալը մինչև վերջ էլ դրսևորեց երկակի մոտեցում՝ խոսքով հայերի պաշտպան, իսկ գործով՝ նրան դահիճ: 1919թ. նա գերմանական «Frankfurter Zeitung» թերթում գրեց, թե ինքը դեմ է եղել հայերի հանդեպ բարբարոսություններին, որ ինքը հրաման էր արձակել մեղմելու հայերի հանդեպ քաղաքականությունը, դադարեցնելու զանգվածային սպանությունները: Նույն Ջեմալը դրանից չորս տարի առաջ, 1915թ. մարտի 29-ին հայտարարում էր, թե հայերի նկատմամբ իրականացվող միջոցառումները թելադրված են հայկական ապստամբություններով: Ռեոսլերը 1915-ի օգոստոսի 25-ին գրեց Բեռլին, թե ՆԳ նախարարության հրամանով թույլատրվում էր բողոքականներին չտարագրել, բայց Ջեմալը կատարեց հակառակը: 1916թ. մայիսի 12-ին Ջեմալը հրաման արձակեց բռնգաղթել և ոչնչացնել Մարաշում մնացած հայերին, պատճառաբանելով, թե դավադրություն են սարքել և զենք են թաքցրել[350]:

Ջեմալը նույնպես հուշեր գրել է: Այն 1923թ. հրատարակվեց Թիֆլիսում ռուսերեն «Записки 1913-1914 гг.» վերնագրով: Գրքի «Հայկական հարց» գլուխը սկսվում է հայ և թուրք ժողովուրդների «դարավոր բարեկամության» փառաբանությունով: Նա գրում է, թե եվրոպացուն դեռևս անծանոթ էր «ազգային փոքրամասնության իրավունք» հասկացությունը, երբ օսմանյան սուլթաններից մեկը»... հայերի համար, որոնք մինչ այդ քուրդ ավատատերերի լծի տակ էին, պատրիարքություն է հիմնում շնորհելով նրանց ամուսնության, ժառանգության և լուսավորության գործում մի շարք արտոնություններ»: Այդ արտոնությունների շնորհիվ էր, որ հայերը «պահպանցին իրենց կրոնն ու ազգությունը... Մի՞թե ռուս «մուժիկի» վիճակն ավելի տանելի էր, քան հայերի վիճակը Թուրքիայում... մինչև 1856թվի Ղրիմի պատերազմի ավարտը թուրքերը հայերի հետ ամենամեծ համերաշխության մեջ էին գտնվում և հայերի նկատմամբ ոչ մի բռնություն չեն գործել»[351]: XIX դարի կեսերին վիճակն արմատապես փոխվեց, շարունակում

345 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 144-147:
346 Karabekir K., նշվ. աշխ., s. 30-31:
347 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 18:
348 Լեփսիուս Ցո., նշվ. աշխ., էջ 105:
349 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 302-303:
350 Lepsius J., նշվ. աշխ., էջ 265:
351 Ջեմալ փաշա, Հայկական հարց, էջ 6-8:

է Ջեմալը, որովհետև «առևտրական կամ ուսումնառության նպատակով Եվրոպա և Ամերիկա մեկնած հայ երիտասարդությունը տարվեց գաղափարով, թե իր ազգին ևս անհրաժեշտ է ձգտել ձեռք բերելու անկախ կյանք... Այս գաղափարական ձգտումը... ողջունվեց ռուս դիվանագիտության կողմից և, սկսած այդ պահից, ամեն ջանք գործադրվեց, որպեսզի հայերին գրգռի թուրքերի դեմ»[352]: «Ահա թե ինչ է Հայկական հարցը և ինչպես այն ծնվեց»,- եզրահանգում է Ջեմալը: Կեղծիք է: Օսմանյան կայսրության ձևավորման օրերից սկսած հայը ենթակա է եղել ամենավայրագ բռնությունների ու հարստահարությունների: Ինչ վերաբերում է քրդերի ճնշումներից հայերին փրկելուն, ապա քրդերին Հայաստան բերեցին թուրքերը և ոչ միայն բերեցին, այլև Արևմտահայաստանի փաստական կառավարումը հանձնեցին նրանց, անզեն ու անպաշտպան հայերը տրվեցին ավազակաբարո քրդերի «հոգացողությանը»:

Հայկական հարցը ծնունդ էր ոչ թե արևմտահայ շարժումների, այլ թուրք ազգի ձևավորման ընթացքում ծնունդ առած մեծապետական ազգայնամոլության՝ հպատակ ժողովուրդներին անհետացնելու միջոցով «Անատոլիայում կառուցել թուրքերի ազգային պետություն»: Հայ-թուրքական հարաբերությունները սրեցին ոչ թե «ամենուրեք առաջ եկած շատ լավ կազմակերպված հայ հեղափոխական գաղտնի կոմիտեները», այլ 1870-ական թվականների վերջերին ձևավորված հայերի բնաջնջման թուրքական քաղաքականությունը: Ջեմալը հիմնովին «խմբագրում է» նաև Ադանայի 1909թ. ջարդերի պատմությունը: Թե ինչպիսի «բարձր մակարդակով է» այդ արվում, վկայում են հետևյալ մեջբերումները: «Անհերքելի փաստ է, որ Ադանայի վիլայեթն հայերից շատ առաջ թուրքերին էր պատկանում... ներկայումս Ադանայի վիլայեթում ապրող հայերի մեծագույն մասը Դիարբեքիրի, Սըվազի և Մամուրեթ ուլ Ազիզի բնիկներն են, որոնք 19-րդ դարում բախտ որոնելու հույսով գաղթել էին Ադանա»: Ադանայի առաջնորդ Մուշեղը «Եվրոպայից հրացաններ ու ատրճանակներ է բերել տալիս... թուրքերը հետևում են հայերի օրինակին»: Սկսեցին լուրեր տարածել, թե «հայերը թուրքերին ոչնչացնելու նպատակով շուտով ոտքի են կանգնելու»: Այդ նշանակում էր, որ նրանք առիթից օգտվելով վիլայեթը եվրոպական նավատորմի միջոցով գրավել էին տալու և դրանով հաջողացնելու էին հայկական թագավորությունը»: «Իմ անձնական համոզմունքով «Կիլիկիայի գիշեր» առաջացնելու հեղինակը եղել է մոնսինյոր Մուշեղը...»: Հուշագրության «Եզրակացությունում» Ջեմալը գրում է, որ հայ-թուրքական ողբերգության մեղավորը մոսկովյան քաղաքականությունն էր, որ այդ երկու ժողովուրդներին իրար դեմ հանեց... թուրքերը հաստատ կարծելու հիմքեր ունեին, որ եթե ցանկանում էին ապահովել իրենց կյանքը, պետք է կոտորեին հայերին», այնինչ հայերն ասում էին, որ «ապրել շարունակելու և առաջադիմության հասնելու համար անհրաժեշտ է, որ իրենք կոտորեն թուրքերին»: Ջեմալի սադիստական տրամաբանությունը նրան հանգեցնում է երևակայության սահմաններում չտեղավորվող եզրահանգման. «Ռես ուլ Հենզարից դեպի Գոլֆ, Ալեքսանդրեթից սկսած Դորթյոլի վրայով, Մուսա-Բարա, Հալեպ, Այնթափ, Ուրֆա և Զեյթուն տարածվող հայկական ապստամբությունը կարող էր Սիրիան բաժանել Փոքր Ասիայից»[353]:

Ջեմալը երիտթուրք պարագլուխներից առաջինն էր, որ ընդունեց Եղեռնի իրողությունը: Պատահական չէ, որ նրա «Հուշերը» ոչնչացվեց, չնայած դրանք այլ բան չեն, եթե ոչ ինքնարդարացման ճիգ՝ ապացուցելու, որ անձամբ ինքը կոտորածների կազմակերպմանը մասնակցություն չի ունեցել: Իհարկե, Ջեմալը ճիշտ չէր, չնայած նաև անհնար է ժխտել նրա առանձնակի մոտեցումը հայերի տարագրությանը: Նրան են պատկանում հետևյալ հեռագրերը, որ հաճախ էր ցուցադրում որպես վկայություն իր անմեղսունակության: 1915թ. ապրիլի 28-ին Մարաշի կառավարիչը նրան հեռագրում է. «Ձեր հրամանը հաղորդեցի Մարաշի ամերիկյան միսիոներներին: Նրանք կառավարության և բնակչության կողմից վտանգ չեն զգում իրենց կյանքի և ունեցվածքի հանդեպ», այսինքն՝ Ջեմալի հրամանը միսիոներների ու նրանց հովանու տակ գտնվող հայերի անվտանգությունն ապահովելու վերաբերյալ ի կատար էր ածվել: Մայիսի 25-ին Ջեմալը հեռագրում է իր տեղակալ Ֆահրիին. «Խնդրում եմ ուշադիր լինել այն անձանց նկատ-

352 Ջեմալ փաշա, նշվ. աշխ., էջ 6-8:
353 Ն. տ. էջ 86-88:

մամբ, ովքեր աքսորվում են քաղաքական հայացքների համար, նրանց վերաբերվել սոցիալական դիրքին համապատասխան և թույլ տալ ուղեկցելու իրենց ընտանիքներինը: Մի քանի օր անց նա հանձնարարում է. «Հիվանդներին ու հղի կանանց խնամողներին դեռևս չտարագրել: Նրանց մեկնումը հետաձգել: Տարագրվող հայ ընտանիքները պետք է տեղավորվեն վագոններում և տեղափոխվեն, ինչպես զորքերը: Նրանց սննդի, ճամփորդության մյուս միջոցների հարցը պետք է լուծվի ճիշտ այնպես, ինչպես արվում է բանակայիններ տեղափոխելիս»: Հունիսի 10-ին նա Հալեպի վալուն հեռագրեց. «Ռազմական պատճառները հարկադրում են հայերի մեծ մասին հեռացնելու Դորթյոլից և Հասանբեյլիից: Երկրի շահերը պահանջում են, որպեսզի այդ հայերի տեղափոխությունն ու տեղավորումը կատարվի մեծ հոգատարությամբ»:

Ջեմալը բազմիցս անդրադարձել է հայերի բռնագաղթի ու կոտորածի վերաբերյալ որոշումների ընդունմանը իր մասնակցությանը և պնդում է, որ ոչ միայն որևէ մասնակցություն չի ունեցել, այլև անգամ տեղյակ չի եղել: «Միայն մի օր,- գրում է նա,- ՆԳ նախարարության հրապարակած ժամանակավոր օրենքից տեղեկացա, որ Արևելյան Անատոլիայի հայերը մինչև պատերազմի ավարտը պետք է բնակեցվեին Միջագետքում»: Ջեմալի գրառումներում հաճախ կարելի է հանդիպել աղաչանքի նման հավաստիացումների, թե ինքը միշտ ցանկացել է օգնել հայերին, բայց չի կարողացել, որովհետև Կ. Պոլսից ստացված հրամանները հարկադրում էին գործել սեփական համոզմունքներին հակառակ: Նա մտերիմ հարաբերությունների մեջ էր հայկական որոշակի շրջանակների, մասնավորապես Կիլիկիայի Սահակ կաթողիկոսի հետ: Սակայն դա չէր խանգարում, որ հանդիսանար հայոց ցեղասպանության կազմակերպիչներից մեկը: Ջեմալն այդ գործում ամենևին էլ երկրորդական դեր չի խաղացել: Նա էր հայերին սպառնում. «Մենք վերացնում ենք մեր ճանապարհից այն ամենը, ինչ խանգարում է հասնելու մեր նպատակներին: Դուք միշտ ռուսների հետ եք, նրանց առաջապահն եք, իսկ ռուսները մեր ոխերիմ թշնամիներն են»[354]: Եվ զարմանալու ոչինչ չկա, որ Ջեմալը նույնպես ահաբեկչության ենթարկվեց հայերի՝ Պ. Տեր-Պետրոսյանի և Ա. Գևորգյանի կողմից Թիֆլիսում 1922 թվին: Թալեաթի ու Էնվերի նման Ջեմալը նույնպես դահիճ էր, մի տարբերությամբ, որ նա կայսրության համար գլխավոր վտանգը համարում էր ոչ թե հայերին, այլ արաբներին: Պատահական չէ, որ նրան անվանում էին «Արաբների դահիճ»: Հասկանալի է, որ թուրքական արաբամերժ քաղաքականությունը դժգոհության ալիք բարձրացրեց արաբների շրջանում: Ջեմալը խոստովանել է, որ Դամասկոսում գտնվելու առաջին իսկ օրերն իր մեջ համոզմունք ստեղծեցին, որ արաբական երկրները վառոդի տակառներ են[355]: Նա մտքովն իսկ չէր անցկացնում, որ այդ տակառների ստեղծման գործում մեծ դեր է խաղացել նաև իր քաղաքականությունը, որը ղեկավարվում էր «արաբների հանդեպ թուրքերի գերակա գերիշխանության զգացողությամբ»[356], որ արաբական վիլայեթներում ոչ թե Սահմանադրությունն էր որոշիչը, այլ «նրա խոսքն էր օրենք»: Սիրիայում, Լիբանանում և Պաղեստինում վերացրեց քաղաքացիական դատարանները, որովհետև դրանք երբեմն խոչընդոտներ էին հարուցում նրա ինքնագլխության առջև: Նրա հրամանով վերացվեց (1915թ.) Լիբանանի ինքնավարությունը, տեղի նահանգապետի փոխարեն իշխանությունը հանձնեց մի թուրք սպայի, հայտարարելով, թե «Լիբանանը նույնքան թուրքական է, որքան Կոնիան»[357]: Լիբանանի ժանդարմերիայի գրեթե ամբողջ հրամկազմը ձևավորվեց թուրքերից: Փոխվեցին նաև այդ վիլայեթների վալիները: Բաղդատի վալի նշանակվեց Բեկիր Սամին, իսկ Բեյրութի վալի՝ Կ. Պոլսի նախկին ոստիկանապետ Ազմին: Արաբական առաջնորդներին կաշառելու համար նա մեծ միջոցներ էր ծախսում, սակայն երբ ռազմաճակատներում թուրքական բանակի պարտությունները ի դերև հանեցին այդ ջանքերը, Ջեմալը կաշառքը փոխարինեց կախաղաններով: Սուեզում առաջին անհաջողությանը հետևեց Լիբանանի 300 գործիչների ձերբակալությունը: Մինչև 1916-ի սկզբները Սիրիայից, Լիբանանից ու Պաղեստինից աքսորվեց 10 000 «կասկածելի ընտանիքներ»[358]: Ջեմալն անգամ հպարտանում էր, թե իր կողմից աքսորված մարդկանց

354 Հարոնեան Խոհեր... էջ 175:

355 Cemal pasa Hatiralar ve vesikalar, Istanbul, 1933, s. 177.

356 Atay F. Zeytindagi, Istanbul, 1957, s. 458.

357 Emin A. Turkey in the World War., p. 101.

358 Atay F., նշվ. աշխ., էջ 44:

«կարելի է հանդիպել ամենուրեք»[359]: Ջեմալի դաժանությունների պսակ հանդիսացան Լիբանանի Ալեյ քաղաքի դատարանները, որտեղ նա ձեռքը խփում էր սեղանին և դատարանին հրամայում մահվան վճիռ կայացնել: 350 մարդուց 56-ը մահապատժի դատապարտվեց: Այս դատարանի վճիռներով 1915-1916 թվերին մահապատժի ենթարկվեց 820 արաբ գործիչ[360]: Ոչ քիչ դեպքերում Ջեմալը մարդուն սպանում էր, ապա դատարանը այդ անձի վերաբերյալ մահապատժի վճիռ էր կայացնում: «Ալեյ գավառակում ստեղծված ռազմական դատարանը,- գրում է Մ. Ռիֆաթը,- արաբների քրիստոնյա և մահմեդական երևելիներին ու մտավորականներին ձերբակալելով, չինծու պատճառներով կախաղան էր բարձրացնում:

«Դու ժամանակին մի ժողովում Թալեաթին ապտակել ես, մահապատիժ: Դու ապակենտրոնացմանը համակրող ես, մահապատիժ: Դու արաբներին ապստամբության մղող ստեղծագործություններ ես գրել, մահապատիժ: Դու Փարիզում մասնակցել ես արաբների համաժողովին, մահապատիժ: Դու որպես բանախոս, ճառեր արտասանելով ժողովրդին գրգռում ես, մահապատիժ: Դու մամուլի միջոցով ժողովրդին լուսավորում և կառավարության դեմ հոսանք ես ստեղծում, մահապատիժ: Դու հակառակորդ կուսակցությանն ես պատկանում, մահապատիժ: Դու Ֆրանսիացիներից աշխատավարձ ես ստանում, մահապատիժ: Դու Ջեմալի սիրուհուն ու նրա սիրած դեղին բլբուլին ծուռ աչքով ես նայել, մահապատիժ»: 1916թ. մայիսի 6-ին Դամասկոսում ու Բեյրութում նույն օրը կախաղան հանվեցին 21 արաբ նշանավոր անձինք: Թուրքիայի զանազան վայրերում կախաղան հանվածների, գնդակահարվածների թիվը շատ մեծ է: Տեսնելով Ալեյի դատավարության առաջացրած ցասումը և վախենալով վրեժխնդրության բռնկումից, իթիհադականները Սիրիայի բոլոր քաղաքների ու գյուղաքաղաքների ազդեցիկ երևելիներին մաս - մաս, խումբ - խումբ իրենց ընտանիքներով աքսորեցին Անատոլիայի խորքերը: Մահապատիժները, ծայրահեղ բռնությունները նույնպես պատճառ հանդիսացան Հեջազի ապստամբության համար: Այն ժամանակ Դամասկոսում գտնվող իշխան Ֆեյսալը (հետագայում դարձավ Թագավոր) մահվան դատապարտվածներից ոմանց համար միջնորդեց Ջեմալի առաջ, պատիժը ցմահ կամ բանտարկությամբ փոխարինելու համար, սակայն Ջեմալը մերժեց ու գոռաց. «Եթե հարկ լինի, քեզ էլ եմ կախելու»[361]:

Ջեմալն ավելի «մարդասեր չէր հայերի հանդեպ, չնայած մինչև վերջ չդադարեց ջանքեր թափել այդպիսին երևալու համար»: «Ես անչափ վրդովվեցի,- գրում է նա,- երբ իմացա, որ աքսորված հայերը Բոզանտի են գալիս, որպեսզի այդտեղից Տավրոսի ու Ադանայի վրայով Հալեպ հասնեն, քանի որ արգելք էին հանդիսանում աքսորի ճանապարհի ազատ երթևեկությանը և կարող էին ահագին մնաս հասցնել Սուեզի ջրանցքի արշավանքին:

Գլխավոր հրամանատարի պաշտոնակատարի հետ ունեցած իմ նամակագրությունը պահվում է բանակի ռազմական օրագրության մեջ: Հետագայում, երբ այդ օրագրերը լույս տեսնեն, բոլորը կհամոզվեն, որ ես անհրաժեշտ եմ համարել պնդել, որ հայերին, փոխանակ Միջագետք քշելու, տեղավորեն Կոնիայի, Անգորայի և Կաստամունիի խորքերում: Եվ քանի որ ես չէի կարող փոխել կառավարության կարգադրությունը, որ հիմնված էր օրենքի վրա և, բացի այդ, կտրուկ հրաման ստացա՝ չարգելել հայ գաղթականների հոսքին Ադանայի, Հալեպի վրայով դեպի Միջագետք, բնական է, ստիպված էի տեղի տալ: Երբեմն ինձ լուրեր էին հասնում, որ գաղթող հայերը, Մամուրեթ ուլ Ազիզի և Դիարբեքիրի վիլայեթներով անցնելիս, բռնությունների էին ենթարկվում: ... Գաղթականական գործերը ղեկավարում էին քաղաքացիական մարմինները, բանակը ոչ մի մասնակցություն չուներ: Սակայն, քանի որ ինձ համար անհանդուրժելի էր, որ իմ բանակի շրջանից անցնող հայերի նկատմամբ բռնություններ գործադրվեր, մի բան, որ տեղի էր ունենում մյուս շրջաններում, ուստի այդ մասին համապատասխան հրաման արձակեցի: Անդադար գանգատներ էին լսվում, թե քաղաքացիական իշխանությունները Բոզանտիի ու Հալեպի ճանապարհին չէին կարողանում գաղթող խմբերին բավականաչափ պարեն մատակարարել և այդ պատճառով էլ մարդիկ երկարատև ճանապարհորդության հետևանքով ամենախղճալի վի-

359 Atay F., նշվ. աշխ., էջ 49:

360 АВПР, Политархив, п. 4657, л. 71:

361 Ռիֆաթ Մ., նշվ. աշխ., էջ 147-150:

ճակում էին: ...Երբ Անատոլիայի հայերին տեղահանելուց հետո քաղաքացիական իշխանությունները հրաման ստացան Ադանայի բոլոր հայերին Հալեպ գաղթեցնել, ես նորից դրա դեմ բողոքեցի: Մի ընդարձակ տեղեկագիր ուղարկեցի Կ. Պոլիս, որում պնդում էի, որ այդօրինակ կարգադրությունը իմ բանակի շրջանի տնտեսության և, մանավանդ, գյուղատնտեսության համար ամենավատ հետևանքներ կարող է ունենալ: Բայց ինձ հակացնել տվին, որ չպետք է խառնվեմ քաղաքացիական իշխանությունների գործերին, այլ, ընդհակառակը, պետք է նրանց օգնեմ, դրա համար էլ ես այդ հրամանն ի կատար ածելուն չկարողացա արգելք լինել: Երբ համոզվեցի, որ տեղահանած հայերին Մինջագետք աքսորելը նրանց թշվառության է մատնելու, նպատակահարմար գտա մի մեծ խմբի տեղավորել Բեյրութի և Հալեպի սիրիական վիլայեթներում: Դա ինձ հաջողվեց Կ. Պոլիս արածս եռանդագին դիմումներից հետո միայն և, վերջապես, թույլտվություն ստացա: Այդպիսով ինձ հաջողվեց մոտ 150 000 հայի տեղափոխել հիշյալ վիլայեթներում:

Չնայած մատուցած այդ ծառայություններին, արտասահմանի մեր թշնամիներն ուզում են ինձ բարոյապես պատասխանատու համարել անցած-գնացած դեպքերի համար: Եվ կառավարության այն ծաղրանկարը (ռազմական դատարանը), որը զինադադարից հետո կազմվել էր Կ. Պոլսում, ինձ մինչև իսկ մահվան է դատապարտել, ամբաստանելով հայերի տեղահանման ու նրանց կոտորածների հանցանքի մեջ... Գալով այն հարցին, թե, եթե այդ ժամանակներում ես Կ. Պոլսում լինեի և, իմանալով այն հանգամանքները, որ տեղի էին ունենում զորքի թիկունքում՝ Արևելյան Անատոլիայում, և եթե մասնակցեի այդ խնդրի քննարկմանը, արդյոք համամիտ չէի լինի հայերի աքսորին: Այդ հարցին նախապես պատասխան տալ չեմ կարող: Համենայն դեպս, կարծում եմ, որ իմ քաղաքական ընկերները, նախքան այնպիսի սոսկալի որոշում ընդունելը, որպիսին հայերի տեղահանությունն էր, և որը գրգռեց մեր դեմ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը, պետք է, որ ունենային ծանրակշիռ շարժառիթներ... Համենայն դեպս, ես այն հաստատ համոզման եմ, որ հայերը ծրագրել էին մի ապստամբություն, որը վտանգում էր մեր բանակի թիկունքը... Այդ նկատի ունենալով, իմ ընկերները եկել են այն որոշման, որ անհրաժեշտ է ամբողջ հայ ժողովրդին տեղափոխել մի այնպիսի երկիր, որտեղ նրանք մեզ չէին կարող վնաս հասցնել. այնինչ, հայերին իրենց տեղերում թողնելով, նրանք օսմանյան հայրենիքը ենթարկած կլինեին մի աղետի, որը տեղի կունենար, եթե Ռուսաստանը Փոքր Ասիային տիրեր: Ինչ վերաբերում է աքսորի ընթացքում տեղի ունեցած անցքերին, ապա դա պետք է վերագրել այն խտացած ատելությանը, որ վաթսունյոթանասուն տարիներ ի վեր գոյություն ուներ Թուրքերի, քրդերի և հայերի միջև...

Անշուշտ, 1915թ. տեղահանության ժամանակ հայերի նկատմամբ գործած հանցանքներն ամենայն իրավամբ զզվանք են առաջ բերում, սակայն այն բոլորը, ինչ որ արեցին հայերը Թուրքերի և քրդերի դեմ, երբ ապստամբել էին, իրենց անխղճությամբ ու լրբությամբ, առաջինների արածներից հետ չէին մնում: Կառավարությունը հայերի տեղահանությունը համարում էր Թուրք և քուրդ ազգաբնակչության պաշտպանության, զորքի և օսմանյան պետության քաղաքական գոյության տեսակետից միակ դրական ու կտրուկ միջոցը, սակայն, մյուս կողմից, այս միջոցը Թուրքերին ու քրդերին հնարավորություն տվեց հանցագործության արհեստի մեջ վարժվելու: Մի՞թե հնարավոր չէր այս հարցն այլ կերպ լուծել, կամ մի՞թե չէր կարելի գաղթողներին կոտորածից փրկել... Ընդունենք, որ օսմանյան կառավարությունը մեկ ու կես միլիոն հայերի Արևելյան Անատոլիայի նահանգներից տեղահանեց և որ նրանցից վեց հարյուր հազարը մասամբ սպանվեցին, մասամբ էլ քաղցի ու թշվառության հետևանքով կորավ»:

Զեմալը Թալեաթից ու Էնվերից միանգամայն տարբեր բացատրություն է տալիս, թե ինչու և ինչպես Թուրքիան մտավ պատերազմի մեջ: «Ցավալին այն է,- գրում է նա,- որ համաշխարհային պատերազմի նախօրյակին, մեր թերթերը գերմանական մամուլից սուտ լուր տպեցին, համաձայն որի՝ անգլիական բարեկարգիչ հանձնախմբի հրահանգով, Թուրքական նավերի նորոգման ընթացքում, ամենակարևոր մասերը հանվել էին, որի հետևանքով նրանց արագությունը նվազել էր... Էնվեր փաշային տեղյակ պահեցի, որ այդ լուրը բացարձակ սուտ է... և խնդրեցի, որ այն ծովային նախարարության կողմից հերքվի... Գերմանացիները համաձայնվել էին, որ մինչև մեր զորահավաքի ավարտը, չեզոք էինք մնալու... սակայն Մառնի պարտությունից հետո, երբ հարկադրված եղան իրենց բանակը ետ քաշել և պաշտպանության անցնել, ու, երբ ռուսական բանակը Արևելյան Պրուսիան ոտքի տակ տալով հաղթականորեն առաջ էր շարժվում, իսկ հարավում ներխուժել էր Գալիցիա, գերմանացիների վիճակը խիստ վատացավ ու նրանք կտրուկ պահանջ դրին, որ մենք պատերազմին մասնակցենք, որովհետև ի վիճակի էինք Կովկասում ռուսական, իսկ Եգիպտոսում անգլիական խոշոր ուժերի «զբաղեցնել»: Դեսպան Վանգենհայմից հրավերք ստացա մասնակցելու հոկտեմբերի 11-ին Տարապիոյի դեսպանատանը կազմակերպված ճաշկերույթին: Դեսպանատանն էին Եպարքոս փաշան, Թալեաթ և Խալիլ բեյերը ու Էնվեր փաշան... Ճաշից հետո դեսպանի աշխատասենյակն անցանք: Վանգենհայմը հայտնեց, որ Գերմանիան համաձայնվել է ֆինանսական խնդիրը լուծել... Այդ միջոցին Էնվեր փաշան հայտարարեց «Գեբեն» և «Բրեսլաու» հածանավերի Սև ծով մտնելու մասին: Արգելելը անիմաստ էր, որովհետև ծովակալը մի շարք օրինավոր պատճառաբանություններ էր առաջ քաշում: Սակայն մեր նավերի հետ այս երկուսի Սև ծով մտնելը անպայման կարող էր պատրվակ դառնալ պատերազմի մեջ մտնելու համար... Հոկտեմբերի 29-ին Սև ծովում տեղի ունեցած ընդհարման վերաբերյալ ծովակալ Սուշոնի տեղեկագրով ռուսական նախահարձակումն էր առիթ տվել, որ մենք ծովային գործողություն ձեռնարկեինք, սակայն դա պատճառ դարձավ, որ ռուսները, ապա նաև անգլիացիներն ու ֆրանսիացիները պատերազմ հայտարարեն օսմանյան պետությանը»[362]:

Զբմեղանալու Զեմալի ջանքերն ամենևին էլ ապարդյուն չէին անցնում: Երիտթուրքական եռապետության այդ անդամը, չնայած իր կառավարության վարած հայաջինջ քաղաքականությանը, ձեռք բերեց հայերի հարցում Թալեաթի ու Էնվերի քաղաքականությունից տարբեր մոտեցում ունեցողի համարում: Զեմալի «հայասիրությունը» քաղաքական նշանակություն ստացավ: Անտանտի պետությունները նույնիսկ քայլեր կատարեցին նրա միջոցով պետական հեղաշրջում իրականացնելու ուղղությամբ, Զեմալին խոստանալով օսմանյան թագը, իսկ նրա փոքր որդուն, որին հայրը, ոչ առանց աշխարհակալ նկրտումների, կնքել էր Զինգիզ անունով, դարձնելու թուրք-թաթարական ապագա կայսրության սուլթան-խալիֆ: Անգամ ծրագրվեց Գյուլբենկյանի միջոցով կաշառել Զեմալին: Սակայն Նիկոլայ 2-րդ ցարը դեմ արտահայտվեց Զեմալի հետ գործարքին և դրանից ոչինչ չստացվեց:

Հալիլ փաշան՝ օսմանյան խորհրդարանի նախագահը Մորգենթաուին. «Կընդունիմ, որ կառավարությունը ծանրակշիռ սխալներ գործած է հայերուն հանդեպ իր վարմունքին մեջ, բայց չարիքն արդեն գործուած է: Ի՞նչ կրնանք ընել հիմա... Ձեզի չափ ես ալ կը ցավիմ այն ծայրահեղություններուն և չարաշահություններուն համար, որոնք գործուած են: Կուզեմ ձեզի ներկայացնել Բ. Դուռին տեսակետը: Կընդունիմ, որ արդարացում չէ ադ, բայց կը կարծեմ, թե կան մեղմացուցիչ պարագաներ՝ զորս պետք է նկատողութեան առնեք օսմանեան կառավարությունը դատելե առաջ»[363]:

Եպարքոս Սայիդ Հալիմը երիտթուրքական վերնախավում մեծ ազդեցություն չուներ: Նա Թալեաթի ու Էնվերի կամակատարն էր: Նա միաժամանակ արտաքին գործերի նախարարն էր, բայց օտար դիվանագետները գերադասում էին Ս. Հալիմին շրջանցել, որովհետև նա ձեռնպահ էր ինքնուրույն որևէ հարց լուծել: «Թուրք չէր ան,- գրում է Մորգենթաուն,- այլ եգիպտացի և դաստիարակուած ու կրթուած մարդ, անհավանական չէր թուեր, որ հպատակ ժողովուրդներու հանդեպ քիչ մը տարբեր վերաբերմունք մը ունենար: Բայց կը սխալեի: Եպարքոսը հայերուն ճիշդ այնչափ թշնամի էր, որչափ Թալեաթ և Էնվեր»:

Նազըմ.- Երիտթուրքական կուսակցության ոչ միայն պարագլուխներից էր, այլ նաև գաղափարախոսը, պանթուրքիզմի տեսաբաններից մեկը: Որոշ ժամանակահատվածում եղել է իթիհադի ընդհանուր քարտուղար, կրթության նախարար: Գործել է Զիա Գյոքալփի հետ համատեղ: 1919-ին ռազմական ատյանը նրան հեռակա մահվան դատապարտեց: 1920-21թթ. Բեռլինում և Մոսկվայում էր, ապա վերադարձավ Թուրքիա:

«Մենք,- գրում է Նազըմը,- սուլթանին դրեցինք վնաս հասցնելու անկարելիության մեջ: Մենք գահի վրա նրա ներկայության կարիքն ունենք... Խալիֆը դեռ ունի բարոյական անսահման հեղինակություն, մենք ուզում ենք, որ նա իր ստորագրությունը դնի մեր որոշումների

362 Զեմալ փաշա Հայկական հարցը:
363 Ն. տ., էջ 300-309:

տակ: Սուլթանը պարզապես մի ուրվական է»: Նազըմի հայացքներին բնորոշ է նրա վարքագիծը երիտթուրքերի կուսակցության կենտկոմի 1915 թվի փետրվարի կեսերին տեղի ունեցած նիստում: Նա ասաց. «...Հայերը այս անգամ պատերազմը համարելով առիթ, հակառակ չեզոքություն պահպանելու իրենց խոստումին, ռուսական բանակի մեջ կամավոր մտնող հրոսակախմբեր ստեղծելով գրավված գյուղի, քաղաքի բնակչությանը, առանց խղճահարության, սպանեցին և տեղնուտեղը ապստամբություն բարձրացնելով մեզ վրա հարձակվեցին և բանակի նահանջի գծերին սպառնացին... Մեր ազգային կալվածքում կարող ենք թույլ տալ միայն թուրքի առաջադիմություն և ծաղկում: Պարտավոր ենք մաքրել մեր հողը հնից մնացած ոչ ազգակից ու վնասակար ժողովուրդներից, նրանց արմատախիլ անել ինչպես մոլախոտի: Սա մեր հեղափոխության նպատակն ու նշանաբանն է... Եթե Թուրքիայի տարածքում շարունակեն բնակվել այլ ազգեր, մեծ տերությունները դա միշտ պատրվակ կդարձնեն մեր ներքի գործերին խառնվելու և սադրանքներ հրահրելու համար: Ոչ թուրքերին պետք է բռնի թուրքացնենք»[364]:

Երիտթուրքերի Սալոնիկի (1911թ.) համաժողովում Նազըմը հայտարարեց. «Երիտթուրքերը սահմանադրությամբ հռչակված ազատությունները տալ չեն կարող: Երիտթուրքերը չեն կարող հարցը լուծել միայն մասնակիորեն, ինչպես դա արվեց Ադդուլ Համիդի օրոք: Երիտթուրքերը չեն կարող հայերի պահանջած բարեփոխումները մտցնել ու դրանով հարվածել կայսրության շահերին, քանի որ դրանք տանելու են դեպի հայերի անկախություն: Ահա թե ինչու առաջարկում եմ հայերից իսպառ ազատվել՝ նրանց ոչնչացնել: Առանց խնդրի լուծման բարդությունների վրա ուշադրություն դարձնելու հարկ է գործել՝ ազատվելով խղճի խայթից, մարդասիրական զգացմունքից, քանի որ հարցը... լոկ քաղաքական է, որը սերտորեն առնչվում է Թուրքիայի բարգավաճման և ապագայի հետ: Դրա շնորհիվ անմիջապես կվերանա Հայկական հարցը: Թուրքական կայսրությունը կազատվի իր ներքին գործերին արտաքին միջամտության պատրվակից: Երկիրը կմաքրվի հայ ռասայից, ինչը լայն հնարավորություններ կստեղծի թուրքերի համար: Հայերի հարստությունները կդառնան թուրքերի սեփականությունը: Անատոլիան կվերածվի զուտ թուրքերով բնակեցված տարածքի: Կվերացվի պանթուրքիզմի ճանապարհին եղող ամենամեծ արգելքը»[365]: «Սուլթանները իրենց հանցագործ մեղմությամբ թույլ տվեցին, որպեսզի իրենց կողմից նվաճված երկրներում ապրեն, զարգանան բնիկները, փոխանակ թուրքացման քաղաքականության միջոցով ձուլեին, լուծեին ազնվական թուրք ժողովրդի մեջ: Մի մոռացեք, որ մեր պապերը եկել են Թուրանից և այսօր Հարավային Կովկասի, ինչպես նաև Կասպից ծովից արևելք ընկած լայնարձակ տարածքներում թուրք ցեղերը բնակվում են գրեթե միատարր, դժբախտաբար մեր դարավոր թշնամու՝ Ռուսաստանի տիրապետության տակ: Մեր քաղաքական հորիզոնը բաց է միայն այդ ուղղությամբ, և մենք պետք է իրականացնենք բոլոր ցեղերի միավորումը Միջերկրական ծովից մինչև Արալի ծով: Թուրքական քաղաքական գործիչները, հավատարիմ իրենց ծագմանն ու պատմական կոչմանը, ղեկավարվել կարող են միայն այդ հեռանկարով և դրանով ոգևորեն ժողովրդին ու երիտասարդությանը... Քաղաքական ծրագրի իրականացման նախապայմանը հանդիսանում է Հայկական հարցի արմատական լուծումը»[366]: Նազըմը մի այլ անգամ հայտարարել է. «Մեծ ու բարգավաճ Թուրքիա վերստեղծելու համար գոյություն ունի մի պարզ միջոց՝ արտաքսել օտարներին և նրանց փոխարինել զուտ թուրքական ռասայով»[367]: Ազգային հարցում Նազըմի անզիջողականությունը հետևանք էր նրա թթու ազգայնամոլության. «Ազգայնական չենք կարող չլինել, քանի որ մեր ու մեր կուսակցության գոյությունը... ատով է պայմանավորված. ազգայնականության մեջ է, որ մենք կտեսնենք մեր յարատևության հիմնական գրավականը: Զրկալ ազգայնական կը նշանակեր թուրք, տիրապետող օսմանցի չդառնալ»[368]:

Արամ Անտոնյանի կողմից օգտագործված փաստաթղթերը նույնպես Նազըմին ներկայացնում են որպես կատարված բոլոր հանցագործությունների անորսալի ու անտեսանելի կազմակերպչի: Փետրվարի 18-ի հեռագիրը, որը նաև նա էր ստորագրել, բացահայտում է Թուրքիայի

364 Ռայի Ի. Հայերի սպանությունը օսմանյան տիրապետության շրջանում, Թեհրան, 1973, էջ 43:
365 Կիրակոսյան Ջ. Երիտթուրքերը, Գիրք 1-ին, էջ 85:
366 «Արարատ», 8 սեպտեմբերի 1963թ.:
367 Capitaine H. Seinnobase. Turcs at Turquie. Paris, 1920, p. 61.
368 «Հայ հեղափոխությունը օսմանյան բռնատիրության դեմ», էջ 251:

ապագայի նրա կանխատեսումներն ու թուրքիստական փառասիրական ձգտումները: Ռազմական դատարանի մեղադրական եզրակացության մեջ օգտագործված ցուցակում եղածներից յոթ հոգին հանդիսանում էր Հատուկ կազմակերպության ելուզակների ղեկավար, իսկ Նազըմը՝ դրանց գլխավոր կազմակերպիչ: Նրա այդ դերը պարզվել է խաչաձև հարցաքննություններով: Այսպես, օրինակ, դատավարության երկրորդ նիստում Նազըմի այդ դերը հաստատել են Աթըֆը, Սևադը՝ Կ. Պոլսի քաղաքապետը, Զիա Գյոքալփը և Մ. Շուքրուն, 4. Մե 3543 վերջինս իր ցուցմունքը կրկնել է 4-րդ, 5-րդ և 7-րդ նիստերում: 5.Մե 3518, 3549, 3553, 3554 Շուքրուն՝ իթիհադի կուսակցության գլխավոր քարտուղարը, նշեց, որ Նազըմը Շաքիրի հետ միասին ի զորու էր պաշտոնազրկել գավառապետերին ու շրջանի լիազորներին: 6. Մե 3557 Քուչուկ Թալեաթը 3-րդ նիստում ցուցմունք տվեց, որ Նազըմը գործում էր այն վիլայեթներում, որտեղ Հատուկ կազմակերպությունը զորավարժություններ էր անցկացնում[369]: Նազըմ ղեկավարում էր Արևմտյան վիլայեթներում գործող Թեչքիլաթի գործունեությունը, նա միաժամանակ համակարգում էր կայսրության ամբողջ տարածքում գործող Հատուկ կազմակերպության աշխատանքները, զբաղվում չեթեական խմբերի ձևավորման, դրանց մատակարարման և զինման խնդիրներով:

Հալեպի կուսակալ Ջելալը վկայություն տվեց, որ ինքը գնացել էր Կ. Պոլիս, որպեսզի Թալեաթին և Նազըմին հետ պահեր բնաջնջման գործը շարունակելուց: Երկուսն էլ նրան կտրուկ մերժել էին: Նազըմը ոչ միայն մնաց «անհրաժեշտ և օգտակար միջոցների» կողմնակից, այլև մի քանի քայլ առաջ գնաց՝ պնդելով, թե «այս միջոցառումը կլուծի Արևելյան հարցը»[370]: «Morning post»-ի հատուկ թղթակիցը տեղեկացրեց, որ «»դոկտոր Նազըմը հպարտանում է, որ միլիոնավոր հանցագործություններ է կատարել հայերի դեմ: Լուսաբանելով Նազըմի դերը ցեղասպանության գործում, «Times»-ը իր 1926թ. օգոստոսի 28-ի համարում գրել է. «Հենց որ սկսվեց մեծ պատերազմը, Նազըմը և նրա կողմնակիցները սկսեցին ռմբակոծել Թալեաթ փաշային հակահայկական քարոզչությամբ... և մինչև 1916 թվականը հայ համայնքի կեսը բնաջնջված էր»: Անդրադառնալով առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Նազըմի մութ գործերին, Թուրք գրող Սուրեյա Այդեմիրը, նրան ներկայացնում է որպես այն «մարդկանցից մեկը, որը կուսակցության պատժիչ ձեռքն էր»: Մեկ այլ գրքում նույն հեղինակը գրել է. «Նրա անձը արյունահեղության մեջ ամենամեծ պատասխանատվությունն է կրում և մարմնավորում է մեր կայսրության ամենամութ ժամանակաշրջանի ամենարյունահեղ եղելությունները»: Նույն կարծիքն է հայտնված Բրիտանիայի Գերագույն լիազոր Ռամբոլդի՝ Բալֆուրին հղած երկտողում: Նա «տխրահռչակ դոկտոր Նազըմին բնութագրում է (որպես) միգուցե ամենագլխավոր անձը բոլորից (իթիհադականներից) ... որոնք գործում էին հետին պլանին»: Նազըմը 1926 թ. մեղադրվեց Մ. Քեմալին սպանելու դավադրության մեջ ու կախաղան հանվեց:

Բեհաեդդին Շաքիր.- Միություն և առաջադիմություն կուսակցության ամենաառաջատար գործիչներից մեկը: Կրթությունը ստացել էր Սորբոնում: Սուլթանական պալատի բժիշկներից էր: 1914-ի նոյեմբերին չեթեների միջոցով կոտորեց Արդանուշի հայերին: Կոտորածները ղեկավարելու համար կենտրոնատեղի ընտրեց Էրզրումը: Մշտական կապի մեջ էր Թալեաթի և Էնվերի հետ: 1918-ին փախավ Բեռլին, որտեղ սերտ համագործակցության մեջ էր Ռադեկի և Զինովևի հետ: Սպանվեց 17. 04. 1922թ. Արամ Երկանյանի և Արշավիր Շիրակյանի ձեռքով, ովքեր ի կատար ածեցին Թուրքական ռազմական դատարանի վճիռը նրան մահապատժի դատապարտելու վերաբերյալ: Երզվյալ հայատյաց, քաղաքական ստոր խաղերի հեղինակ, Անդրկովկասում հայ-ադրբեջանական բախումներ ու հայկական կոտորածներ հրահրողներից մեկը: Մի նամակում նա գրել է. «Մենք պետք է օգտագործենք նրանց (Դաշնակցության կուսակցության) հնարավորությունները: Հենց որ վերցնենք իշխանությունը, կհեշտանա դաս տալ նրանց, ովքեր ձգտում են վարչական ինքնավարության»:

1915-ի մայիսի 23-ին նա գրում է. «Հայերը կանգնած են մեր համաթուրանական, համաթրքական սրբազան իդեալների իրականացման ճանապարհի վրա, և մենք անխուսափելիորն բախվելու ենք նրան հետ... Հարկադրված ենք ոչնչացնելու մեր ճանապարհին այն ամենն, ինչ արգելք է մեր ազգային սրբազան նպատակների իրականացմանը»: Թուրքիան դեռ աշխարհամար-

369 Մե 3547 կամ «Journal d'Orient», 7-ը մայիսի 1919թ.:
370 Մե 3540, էջ 8, 17 :

տի մեջ չէր մտել, երբ Բ. Շաքիրը սպառնաց հայերին. «Թուրքերը կը սպասեին, որ պատրիարքարանն ու կուսակցությունները ուղղակի համաձայնեին Բ. Դռան հետ, որով Պողոս Նուբար փաշան պետք չէ մնար իր պաշտոնին: Թեև կառավարությունն չի քաջալերեր պայքարը, բայց նաև իթիհատանք իրենց կրոնակիցներուն վրայ բռնանալ չեն կրնար, որ անպատճառ հայոցմե առնուտր ընեն: Թուրքերը ուշ կը բարկանան, բայց երբ անգամ մը բարկանան, երկար ատեն քեն կը պահեն»[371]:

Ռուսական զորքերի կողմից Էրզրումի գրավման նախօրյակին Բ. Շաքիրը սպառնաց, որ «եթե Էրզրումի թուրքերի գլխից մի մազ պակասի, կենդանի մնացած բոլոր հայերը կոչնչացվեն: Մեզ պետք է, որպեսզի Կ. Պոլսից մինչև Հնդկաստան ու Չինաստան լինի միայն մահմեդական բնակչություն... Գերմանացիների գիտականությունն ու կազմակերպչական տաղանդը և թուրքերի խիզախ ձեռքը կիրականացնեն այդ վիթխարի ծրագիրը»[372]: Նա իր գրագրությունների օրինակները պահում էր: Դրանք 1918թ. դեկտեմբերի 12-ին հայտնաբերվեցին նրա փեսա Ա. Ռամզիի տունը խուզարկելու ժամանակ: Այդ նյութերի, մասնավորապես նամակների մի մասը, որոշ ժամանակ անց երևաց նաև մամուլում: «Թասֆիրի էֆքիարը» 1919թ. փետրվարի 3-ին գրեց, թե երիտթուրքերի առաջնորդների հանցագործությունների մասին վկայող նամակներն ու փաստաթղթերը թաքցված են անվտանգ տեղերում, դրանք ունեն նաև լուսանկարված տարբերակներ: Վ. Փափազյանի վկայությամբ, Բ. Շաքիրն ունեցել է օրագիր, բայց մինչև օրս հայտնաբերված չէ[373]: Ռամզիի տանը գտնվեց Շաքիրի նաև հետևյալ հանրահայտ հեռագիրը հասցեագրված Անթալիայի մութասարիֆին. «Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Սըվազի, Տրապիզոնի վիլայեթներում ոչ մի հայ չի մնացել, բոլորն արտաքսվել են Մոսուլի և Զորի կողմերը: Իսկ դուք ի՞նչ եք անում Անթալիայում»: Այնտեղ էր նաև Բ. Շաքիրի հրահանգ-բանաստեղծությունը:

Դաշնակիցների գերագույն լիազորության սպա Ռյանը վկայում է, որ Բ. Շաքիրը նստատեղի ընտրելով Էրզրումը համակարգում էր ոչ միայն այդ, այլև Վանի, Բիթլիսի և Սեբաստիայի նահանգների հայության տարագրության աշխատանքները: Բ. Շաքիրը նաև հայոց բնաջնջման տեսաբանն էր, այն հիմնավորող երիտթուրք գործիչներից մեկը: Շաքիրին է պատկանում քրեական հանցագործներին բանտերից ազատելու, զինելու և Հատուկ կազմակերպության՝ Թեշքիլաթի մախսուսայի մեջ միավորելու միտքը: Այն կոչված էր իրականացնելու հայերի թալանն ու կոտորածը: Երիտթուրքերի պարագլուխների դատավարությունը նույնպես հաստատեց, որ Բ. Շաքիրը գաղտնագրեր էր ուղարկել նահանգները բռնագաղթված հայերին ոչնչացնելու մասին: Խարբերդի դատարանի դատավճռում գրված է. «Կուսակցության կենտկոմի անդամ, մեղադրյալ դոկտ. Բ. Շաքիր բեյը, որպես Հատուկ կազմակերպության նախագահ, Ստամբուլից դուրս գալով, շրջագայել է Տրապիզոնի, Էրզրումի և այլ վիլայեթներում: Միևնույն ժամանակ բանտերից դուրս բերված ոճրագործներից և այլ հանցագործներից կազմված հրոսակախմբերի գլուխն անցնելով՝ տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում կոտորել է տեղահանված հայերին և նրանց ունեցվածքը ենթարկել կողոպուտի: ... Իր պարտականությունները կատարելու ընթացքում հաճախ բանավոր կարգադրություններ և երբեմն էլ ծածկագիր հրահանգներ է ուղարկել և Թեշքիլաթի մախսուսայի հրոսակախմբերին օգտագործել է իր անմիջական հրամանատարության ներքո՝ հայերին կոտորելու և բնաջնջելու նպատակով»[374]: Տարեցտարի նորանոր նյութեր են հայտնաբերվում Հատուկ կազմակերպության ավազակախմբերի գազանությունների մասին: Արդահանի և Արտվինի շրջանում 1914թ. ձմռանը թուրքերը մարտական գործողություններին զուգահեռ կոտորում էին տեղի հայ խաղաղ բնակչությանը, ինչը հետապնդում էր հայերի բնաջնջման նպատակ: Այդ գործողությունները ղեկավարում էր Բ. Շաքիրը[375]: Բ. Շաքիրի հանդեպ հայերն առանձնակի ատելություն էին տածում: Դա պատահական չէ, նաև այն պատճառով, որ Հայոց ցեղասպանության իրականացմանն ուղղված ծածկագրերի և հեռագրերի մի

371 Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 920:
372 Morgan J., Contre les Barnares de l'Orient. Paris, 1918, p. 31-39.
373 Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. 2, Բեյրութ,1982, էջ 295:
374 «Takvim -I Vekai», 1920թ., N 3771.
375 «Botschaft Konstantinopol», 170, N3841 (1915).

զգալի մասի հեղինակը Բ. Շաքիրն էր: Դրանց մի մասը հրապարակվեց ռազմական դատարաններում: Այդ նա էր համառորեն պահանջում, թե հայերի դեմ գործադրվելիք միջոցները պետք է լինեին «վերին աստիճանի դաժան»[376]: Մի ծածկագրով, որի լուսանկարը ներկայացվեց դատարանին, Բ. Շաքիրը Խարբերդի իթիհադական պատասխանատու քարտուղարին հարցնում է. «Ձեր շրջանի տեղահանված հայերը բնաջնջվե՞լ են, կոտորվե՞լ, թե՞ պարզապես աքսորվել են»[377]: Դատարանը նաև այս ծածկագրերը հիմք ընդունելով էր, որ Բ. Շաքիրին մահվան դատապարտեց: Իթիհադի պատասխանատու քարտուղարների դատավարության ժամանակ հանդես եկավ Հալեպի պատասխանատու քարտուղար Ջեմալը, որին էին հասցեագրված Բ. Շաքիրի երկու ծածկագրերը, երբ նա դեռ աշխատում էր Ադանայում: Գլխավոր դատախազ Շևքեթը իր եզրափակիչ խոսքում բռնագաղթը անվանեց «կոտորածների նախօրյակ»: Վեհիբ փաշան վկայեց, որ «կոտորածների, ինչպես նաև այլևայլ գազանությունների իրականացման համար Բ. Շաքիրը 3-ր բանակի շրջանում պատրաստել էր հատուկ մարդասպաններ և անձամբ ղեկավարել դրանք: Նույնիսկ պետության ղեկավարներն են ենթարկվել Բ. Շաքիրի հրամաններին և հրահանգներին: 3-րդ բանակի կողմից կատարված բոլոր բռնությունների, խարդավանքների և բանսարկությունների մտահղացողը նույնպես Բ. Շաքիրն էր: Նրա կողմից հավաքագրված թեշքիլաթականների մի մասը մահապատժի ենթակա հանցագործներ, իսկ մյուս մասն էլ՝ արնախում ժանդարմներ էին[378]: Մեղադրական եզրակացության մեջ կան հետևյալ տողերը. «Լիովին ապացուցված է, որ արևելյան վիլայեթներում տեղի ունեցած տեղահանությունը կյանքի էր կոչվել իթիհադի ղեկավար անդամներից կազմված Թեշքիլաթը մախսուսա հանձնախմբի կողմից, որի նախագահն այդ շրջանում Բ. Շաքիր բեյն էր: Իսկ խնդիրը լուծելու համար Բ. Շաքիր բեյը օգտագործել էր Միություն և առաջադիմություն կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարներին, լիազորներին և քննիչներին»[379]:

Թվում է, թե թուրք պատմաբանները նույնպես միամտաբար չափազանցում են Բ. Շաքիրի դերը հայերի բնաջնջման կազմակերպման գործում: Նպատակը նույնն է՝ թուրքական պետությունը չքմեղացնել, քանի որ Բ. Շաքիրը կուսակցական գործիչ էր, այլ ոչ թե պետական: Դոդան Ավշի օղլուն այդ ուղղությամբ այնքան է առաջ գնում, որ գրում է. «Տեղահանությունները կյանքի են կոչվել իթիհադի վերին մարմիններում Բ. Շաքիրի կողմից»[380]:

Մեղադրական եզրակացությունն ամենայն հստակությամբ է հաստատում, որ Բ. Շաքիրի «ծածկագրերը ոչ միայն պահանջում էին հայերին տարագրել, այլև ոչնչացնել»[381]: Տրապիզոնի դատավարության ժամանակ Էրզրումի վալին ցուցմունք տվեց Բ. Շաքիրի կազմակերպած չեթեների կողմից տեղահանվածների քարավանների վրա հարձակումների մասին: Նա Բ. Շաքիրին ներկայացրեց որպես Հատուկ կազմակերպության գործադիր ղեկավար, որը հատուկ ծածկագիր ուներ Թալեաթի և Էնվերի հետ կապի համար: Դատարանը նաև հաստատեց, որ զինակոչի անվան տակ չեթեական հրոսակախմբերի համար անդամներ էին հավաքագրում, որոնք գործում էին թե ռուսական բանակի թիկունքում և թե ռազմաճակատամերձ վիլայեթներում, որ Բ. Շաքիրը թեշքիլաթի շարքերը համալրել էր մարդասպաններով ու քրեական հանցագործներով, որոնց միակ առաքելությունը տարագիրների քարավանների ոչնչացումն էր[382]: Վեհիբ փաշային հայտնի էր դարձել, որ Սեբաստիայում տեղավորված աշխատանքային գումարտակի 2000 հայ զինվորներ փոխանակ տարվելու Հալեպ, բնաջնջվել էին: Վեհիբի ցուցմունքը հիմնված էր վեց նահանգներում հայերի տեղահանության իր իսկ տեսած փաստերի վրա: Տասներկու թերթ այդ ցուցմունքի վերջին չորս էջերը վերաբերում են Կովկասում գտնվող հայ կամավորների հանդեպ վրիժառության գործողություններին: Վեհիբը Բ. Շաքիրին ներկայացնում է որպես այդ ոճրագոր-

376 ՄԵ, 3540, գ. 44, թ. 8:
377 ՄԵ, 3540, գ. 9, թ. 6:
378 «Takvim -I Vekai», 1919թ., N 3540.
379 Ն. տ., N3571:
380 Dogan A. Milli Kurtulus tarihi. Istanbul, 1981, s. 125.
381 ՄԵ, 3772, էջ 1:
382 ՄԵ 3540, էջ 6, 7; 3771, էջ 1:

ծության իրականացման ծպտյալ ղեկավար: Նրան պարտավոր էին ենթարկվել բոլոր բարձրաստիճան պաշտոնյաները և բանգաղթն իրականացնողները: Վեհիբը գրում է. «Մարդկային բոլոր ողբերգությունները, սադրանքները և անառակությունները ղեկավարվում էին Բ. Շաքիրի կողմից, որը հավաքագրում և հրահանգավորում էր մարդասպանների ջոկատները՝ կազմված սրիկաներից և արյան մեջ թաթախված ձեռքերով ու արյունակալած աչքերով ժանդարմներից, դահիճներից»[383]: Վեհիբը եզրակացնում է. «Անհնար է գազանության և վայրենության նման մի այլ օրինակ գտնել Իսլամի տարեգրության մեջ»: Նա պատմել է Մշո Ջրիկ գյուղում կանանց և երեխաներին կենդանի հրկիզելու մասին: Նրա ցուցմունքի որոշ հատվածներ տեղ են գտել Խարբերդի դատարանի մեղադրական եզրակացության և դատավճռի մեջ[384]: Վեհիբի ցուցմունքը լրիվ ընթերցվել է 1919թ. մարտի 29-ին Տրապիզոնի դատավարության երկրորդ նիստում: Ցուցմունքի մեծ մասը տպագրել է Օսմանյան կայսրության շահերի պաշտպանության լիգայի ֆրանսալեզու «Le Curiere de Turquie» պարբերականը (1919 թիվ, ապրիլ 1, 2): Բնագրի պատճեն Երուսաղեմի եկեղեցական արխիվում է[385]:

Շաքիրի անսահմանափակ իշխանության մասին, որն ընդգրկում էր օսմանյան ռազմական նախարարության և Գերագույն հրամանատարության իրավասությունների շրջանակը, վկայել են նաև գեներալ Իսան Սաբիսը և գնդապետ Արիֆ Բեյթը: Ղալիբ Վարդարը, որը Էնվերի վստահելի անձն էր և Հատուկ կազմակերպության ղեկավար պաշտոնակատար, գրում է, թե Էրզրումի իր զորականից էր Շաքիրը ղեկավարում արևելքում Հատուկ կազմակերպության գործողությունները: Նա նաև վկայել է, որ Հատուկ կազմակերպությունը ստեղծվել էր երիտթուրքերի կենտրոնական կոմիտեի կողմից և խնդիր ուներ մաքրել ոչ թուրք տարրերից: Ռիչարդ Հուլմանը Շաքիրին ներկայացնում է որպես իթիհադականների ղեկավարության «ամենաազդեցիկ անդամ», իսկ Գերմանիայի ներքին գործերի նախարարության անվտանգության բաժնի մի գաղտնի զեկուցագիր չեշտում է, որ Շաքիրը արևելյան գավառներում գործում էր իթիհադականների անունից: Դա հաստատում է նաև փոխգնդապետ Սթեյնջի գաղտնի զեկուցագիրը, պատրաստված Գերմանիայի ռազմական պատվիրակության համար: Սթեյնջը գերմանական բարձրաստիճան սպա էր, և ղեկավարում էր Թուրքիայի սահմանամերձ գոտում գործող պարտիզանական խմբավորումները, որոնք ի վերջո վերածվեցին հայ գաղթականների վրա հարձակումներ գործող հրոսակախմբերի: Իթիհադական պարագլուխների դատավարության ժամանակ (1919թ. մայիսի 6) Աթրֆը՝ Հատուկ կազմակերպության կադրերի ընտրության գործի ղեկավարը, ցուցմունք տվեց, որ Շաքիրի բաշիբոզուկները պարտիզանական կռիվներ էին մղում սահմանամերձ գոտում: Սթեյնջը հայտարարել է, որ իր նպատակն է մերկացնել «Թուրքական կառավարության ջանքերը, որոնք ուղղված են քողարկելու և նվազեցնելու» հայերի զանգվածային կոտորածը, ինչն անասնական դաժանությամբ իրականացվում էր ավազակախմբերի ու «տականքների» կողմից: Ավազակներին «զվարճություն էր պատճառում գաղթականներին թալանելը, բռնաբարելն ու սպանելը»: Նրանք այդ անում էին «զինվորականների ներկայությամբ և նրանց աջակցությամբ»:

Սթեյնջի կարծիքով ռազմական նկատառումները պարզապես «հաջող պատրվակ» էին օգտագործելու պատերազմի ընձեռած հնարավորությունները իրականացնելու «ազգաբնակչության ջարդի» վաղուց փայփայած ծրագիրը: Նրա կարծիքով ծրագրի գլխավոր իրագործողներն էին Բ. Շաքիրը և այն ժամանակվա 3-րդ բանակի հրամանատար Մ. Քյամիլը: Երբ 1920թ. հունվարի 13-ին Լոնդոն հաղորդեցին Շաքիրի վերաբերյալ զինվորական դատարանի մահվան դատավճռի մասին, բրիտանական գերագույն լիազոր, ադմիրալ Ջոն դը Ռոբեկը գրեց. «Նա Միություն և առաջադիմություն կոմիտեի կենտկոմի ստեղծած Թեշքիլաթի մախսուսա գաղտնի կոմիտեի անդամ էր, որի նպատակն էր կազմակերպել հայերի բնաջնջումը»: Շաքիրի պարագլուխ լինելը նշում է նաև Թուրք գրող Ավջիօղլուն. «Տեղահանություններ սկսելը առաջարկվել է իթիհադականների նեղ շրջանում Բ. Շաքիրի կողմից և դրանց իրագործումը վստահվել է իթիհադականներին և Հատուկ կազմակերպությանը»: «Բ. Շաքիրը,- գրում է Բ. Կարաբեքիրը,- անպատասխանատու մարդ էր... Նրա համար Թուրանական կայսրության ժամանակը եկել էր և այդ պահը ձեռքից բաց թողնելը համարում էր հանցագործություն... Նրա կարծիքով պանիսլամիզմը և պանթուրքիզմը քաջալերողը Գերմանիան էր»[386]: Մի ուրիշ անգամ Կարաբեքիրը գրում է. «Խաբեության, բիրտության և վայրագության մարմնացում... Թուրանի ստեղծման համար տքնեց օր ու գիշեր, տեղեկացրեց, զեկուցեց, սուտն ու ճիշտն իրար խառնեց, գրգռեց, հնարեց խուժանին ու նաև՝ խուճապային հոգեբանություն, մինչև որ անտեղի և անփորձ ելուզակներով դեպի Արդահան շարժվելով և այնտեղի թուրքերին ոտի հանելով՝ ժողովրդին ոչնչացնելու պատճառներից մեկը հանդիսացավ»[387]: Ֆ. Աթայը Բ. Շաքիրին անվանում է «Կոմիտեջի, որը հետամուտ էր հայերի բնաջնջմանը»[388]: Գնդապետ Բեյթին նշում է Շաքիրի «մեծ ազդեցությունը նաև Էնվերի վրա, որը տեղի տալով Շաքիրի ցանկությանը, 9-րդ բանակային կորպուսի հրամանատարին ազատեց և նրա փոխարեն նշանակեց գեներալ Ի. Ջիրեսոնլուին: Իթիհադի ղեկավարներից հիմնականում Բ. Շաքիրն էր իրականացնում կապը Ռուսաստանի թուրքալեզու և մահմեդական ժողովուրդների հետ: Ադրբեջանի ազգայնամոլները գործում էին նաև նրա հրահանգներով: Շաքիրը Ադրբեջանին առանձնակի տեղ էր հատկացնում պանթուրքիզմի ծրագրերում: Նա գրում է. «Ադրբեջանը պետք է դառնա բերդ մեծ հայրենիքի, մեծ և ուժեղ Թուրանի մասը»[389]:

1920 թ. հունվարի 13-ին ռազմական դատարանը մահվան դատապարտեց Բ. Շաքիրին: Դատավճռում գրված էր. «Հայերի կոտորածն ու բնաջնջումը և նրանց ունեցվածքի ու կալվածքների կողոպուտը արդյունք են Միություն և առաջադիմություն կուսակցության կենտկոմի որոշումների: 3-րդ բանակի տեղակայման շրջանում Բ. Շաքիր բեյը կազմակերպեց ու գործի դրեց մարդ-մսագործների: 3-րդ բանակի շրջանում եղած խժդժությունները, մարդկային չարիքները, ոճիրներն ու անկարգությունները Բ. Շաքիր բեյի ձեռքով կազմակերպված դեպքեր են: Հրոսակներից ոմանք ազատված էին կախաղանից ու ցցից, մյուսներն էլ արյունարբու ռազմիկներ էին և ոստիկաններ՝ կազմակերպված ոճիրներ գործելու համար... Եվ պետությունը նրանց թիկունքին էր կանգնած: Նրանք բնաջնջեցին մարդկային զանգվածներ, որոնք զուրկ էին որևէ պաշտպանությունից: Կոտորածները կազմակերպված էին հատուկ ծրագրով և իրագործվեցին առանձնահատուկ նպատակի համար: Կենտրոնական կոմիտեի երկարատև խորհրդակցություններից հետո տրված որոշումները գործադրվեցին Միություն և առաջադիմություն կուսակցության պատասխանատու քարտուղարների միջոցով, և ապա այն անհատների կողմից, որոնք գործեցին բոլոր օրենքներն ու կանոնները մի կողմ նետելով՝ կուսակցական վերնախավի ու կառավարության կարգադրություններին համապատասխան»: Բ. Շաքիրի վերաբերյալ թուրքական դատարանի դատավճիռը ի կատար ածեց Արամ Երկանյանը 1922թ. ապրիլի 17-ին Բեռլինում:

Վերջում մի քանի խոսք Մելման Զադե Ռիֆաթի մասին, որն իթիհադի առաջատար գործիչներից չէր, բայց հեղինակն էր ժամանակաշրջանի մասին սկզբունքային կարևոր նշանակություն ունեցող աշխատության: Մելման Զադե Ռիֆաթը քաղաքական գործիչ ու լրագրող էր, մասնակցել էր երիտթուրքերի կենտկոմի նիստերին, որոշումների ընդունմանը, իրականացրած քաղաքականությանը: Մի շարք սկզբունքային հարցերում տարաձայնության մեջ էր իթիհադի պարագլուխների հետ: Այդ տարաձայնությունների պատճառով նա իթիհադից հեռացավ և մտավ Իթիլաֆի շարքերը: Առաջին աշխարհամարտի տարիներին աքսորված էր: Երիտթուրքերի կառավարության տապալումից հետո վերադառնում է քաղաքական գործունեության: 1926թ. նա ևս մեղադրվեց Մ. Քեմալի դեմ դավադրություն կազմակերպելու մեջ, բայց պատժից խույս տվեց: 1928թ. գրեց իր «Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և իթիհադի հայաջինջ ծրագրերը» աշխատությունը, որը չնայած թուրքական պատմագրության վայրահաչոցներին, բացառիկ արժեք ունի: Հեղինակը քննարկած հիմնահարցերի ոչ միայն ժամանակակիցն էր, այլև իրադարձությունների ակտիվ մասնակիցը:

---

383 ՄԵ 3540, գ.17; թ. 3, 7:
384 ՄԵ 3771, թ. 1-2:
385 Դե Սերիա 7, քարտարան 13, թ. 174-182:

386 Karabekir K., նշվ. աշխ., s. 138:
387 Ն. տ., kitap II, s.28-29:
388 «Արմենիա», 20-ը մարտի 1927թ.:
389 Sakir Z. 1914-1918. Cihan harbine idare ettik, s. 127.

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Դեռ 1908թ. փետրվարին Վորոնցով-Դաշկովը Նիկոլայ 2-րդին գրել էր. «Ջնայած Ռուսաստանի հետ բարեկամության վերաբերյալ Թուրքիայի հավաստիացումներին, զորահավաքը կայսրությունում շարունակվում է, ինչն այլ բան չէ, եթե ոչ պատերազմի նախապատրաստություն մեր դեմ: Սակայն Թուրքիան հազիվ թե պատերազմի՝ առանց համոզված լինելու, որ կստանա մի ուժեղ տերության աջակցությունը»[1]:

Փոխարքայի մտահոգությունը հիմնազուրկ չէր: Կովկասի ոստիկանական վարչության 1911թ. սեպտեմբերի 5-ի տեղեկագրում նշվում է, որ թուրքական էմիսարները զանազան միջոցներով թափանցում էին Կովկաս ու պանիսլամական քարոզչություն տանում: Այդպիսի քարոզչությամբ զբաղվում էին նաև Կովկասի մահմեդական շատ թերթեր: Թուրքամետ կոչերից մեկում ասվում է. «Դուք և ձեր հայրենակիցները պարտավոր եք, առանց երկմտելու, ենթարկվել թուրքական սահմանադրությանն ու խալիֆին»[2]:

Կովկասում բացվում էին մահմեդական դպրոցներ, «որպեսզի տեղի մահմեդականներն ունենային թուրքերի հետ մեկ ընդհանուր լեզու, ծանոթանային նրանց բարքերին ու սովորություններին և հոգով ու մարմնով դառնային թուրք: Այդ ամենը նպատակ ուներ նրանց նախապատրաստել միանալու Թուրքիային ու դառնալու նրա հպատակները»[3]: Ռուսաստանում թուրքերի քարոզչական ու կազմակերպչական գործունեությունն այնպիսի ծավալներ ընդունեց, որ Սազոնովը Գերմանիայի կայսրին ասաց, «թե այդ գործունեությունը Պետերբուրգին շատ է անհանգստացնում»[4]:

Պատերազմական տրամադրությունները Թուրքիայում տիրապետող էին սկսած իտալական պատերազմի օրերից և ավելի խտացան Բալկանյան պատերազմի ժամանակ: 1912թ. սեպտեմբերի 21-ին Կ. Պոլսի Սուլթան Ահմեդի մզկիթի մոտ տեղի ունեցավ հանրահավաք 100 000 մարդու մասնակցությամբ՝ նվիրված Բալկանյան պատերազմին: Ելույթ ունեցողների թվում էր նաև Տ. Քելեքյանը: Ինչպես մյուս ճառասողները՝ Թալեաթ, Հ. Ֆեհմի, Ջ. Աթըք, Հ. Պոյաճյան, նա նույնպես փառաբանեց Բուլղարիայի դեմ պատերազմի գաղափարը: Հայ մի ուրիշ հռետոր՝ Փաշայանը, հայտարարեց. «ՀՑ Դաշնակցությունը չի կրնար յուր համամտությունը չյայտնել պայքարի մը, որ նպատակ ունի պաշտպանել հայրենիքը դուրսեն եկող յարձակումներուն դեմ»[5]:

«Կամավոր գրուեցան բազմաթիվ հայեր ալ, ինչպես կը գրուեին Պուլկարիոյ մեջ»[6]:

Նույն 1912թ. Թուրքական բանակի գլխավոր շտաբն ավարտեց «Ռուսաստանի դեմ գրոհի ծրագիր» անունը կրող պատերազմական պլանը[7]:

Այն նախատեսում էր Կովկասում ծավալելու հարձակողական գործողություններ: «Ցարձակումը սկսել հետևյալ ուղղությամբ. 11-րդ և 12-րդ բանակային կորպուսները... Մակուի վրայով կը շարժուին և շրջանցելով Արարատ սարը, կը յարձակուին Նահթախտի վրայ, հեշտությամբ կը մտնին Նախիջևան, ապա զարգացնելով յարձակումը, կը գրավեն Երևանը, Անդրկովկասը և Կովկասը»[8]:

Այդ օրերին թռուցիկներ տարածվեցին. «Ռուսները պետք է դուրս մղվեն Կովկասից, և երկրամասը պետք է կցվի Թուրքիային»: «Սև ծովը պետք է դառնա թուրքական ներքին ծով»[9]:

1 "Красный архив", т. I (XXVI), Москва, 1928, стр. 110.
2 Վր. ՊԿԱ. ֆ. 13, գ. 27, գ.1847, թ. 3:
3 Վր. ՊԿԱ. ֆ. 157, գ. 1, գ.211, թթ. 37-38:
4 "Красный архив", т. III, 1923, стр. 5-6:
5 Անտոնեան Ա. Պատկերազարդ ընդհանուր պատմութիւն Պալկանեան պատերազմին, հ. Ա. Կ. Պոլիս, 1912, էջ 439:
6 Ն. տ., էջ 443:
7 Վր. ՊԿԱ. ֆ. 85, գ. 107, թթ. 90-91:
8 Ն. տ.:
9 Ցուշամատեան Մեծ եղեռնի, էջ 31:

Այսինքն՝ առաջին աշխարհամարտից դեռ տարիներ առաջ որոշակի էր, որ Թուրքիան մասնակցելու էր պատերազմին, մասնակցելու ոչ թե Անտանտի, այլ Եռյակ (Քառյակ) զինակցության կողմում և նրա համար գլխավոր ուղղությունը Ռուսաստանն էր: Ակնհայտ էր, որ Գերմանիայի և Թուրքիայի ռազմավարական շահերը համընկնում էին՝ երկու երկրների թիվ մեկ թշնամին Ռուսաստանն էր:

Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի զինվորական կցորդ Ց. Պոմյանկովսկին գրում է, որ գերմանացիները «ձգտում էին դանդաղ գրավել Թուրքիայի ամբողջ տարածքը հովանավորության կամ քաղաքական պայմանագրի միջոցով և, բացի այդ, ունեին ինչ-որ այլ, մինչև Ասիայի խորքը, գուցե և մինչև Հնդկաստան հասնելու մտադրություն»[10]:

Բալկաններում ռուսական ազդեցությունը փորձությունների էր ենթարկվում, նկատում է Պ. Միլյուկովը, և Գերմանիան անմիջապես օգտվեց դրանից: Սկզբում Թուրքիայում հրահանգիչ նշանակվեց Գոլցը, ապա՝ Լիման ֆոն Սանդերսը: «Ցարը որոշեց բողոքել այդ նշանակումների դեմ, որպես «թուրքական մայրաքաղաքի ու Նեղուցների նկատմամբ ամբողջ իշխանությունը Գերմանիային անցնելու հավասարազոր երևույթի»: Բողոքը գերմանական կառավարությանը և Վիլհելմին ներկայացնելու գործը հանձնարարվեց վարչապետ Կոկովցևին: Բեթման Հոլվեգը ռուսների անհանգստությանը արտաքուստ հասկացողությամբ վերաբերվեց: Բայց 1913թ. նոյեմբերի 19-ի ընդունելության ժամանակ կոպտությամբ հայտարարեց. «Անցած տարվա նոյեմբերին Պոտսդամում կայացած հանդիպման ժամանակ ցարը համաձայնել է ձեռնարկված միջոցառումներին (Նիկոլայը հետագայում դա հերքեց)»: Նույն օրերին Վիլհելմը նախաճաշի ժամանակ փոխառության գրասենյակի պետ Դավիդովին ասաց. «...Ես տեսնում եմ երկու ռասաների՝ ռոմանո-սլավոնական և գերմանական, ահագնացող բախում և այդ մասին չեմ կարող ձեզ չնախազգուշացնել... Դուք ենթադրում եք, որ գերմանիզմն առաջինը կսկսի թշնամական գործողություններ: Եթե պատերազմն անխուսափելի է, ապա նշանակություն չունի, թե ով այն կսկսի... »[11]:

Նիկոլայ 2-րդը 1913թ. դեկտեմբերի վերջին հանձնարարեց Կոկովցևին արտաքին գործերի, ռազմական, ծովային նախարարությունների և գլխավոր շտաբի մասնակցությամբ քննարկել թուրքական հարցի մասին Սազոնովի տեղեկագիրը, որտեղ արձանագրված էր, թե «թույլ թուրքիայի պահպանումը Ռուսաստանի համար շահեկան է մինչև նրա վերջնական անկումը, իսկ այդ անկման առնչությամբ... հարկ է պատրաստվել բանակցությունների Ֆրանսիայի ու Անգլիայի հետ», և նկատի առնել «գործնական միջոցներ»: Սազոնովը հպանցիկ հիշատակեց Բոսֆորում դեսանտային գործողություն նախապատրաստելու մասին: Նա հատկապես մատնանշում էր Թուրքիայի հետ ցամաքային ճակատում «ռազմավարական կետերը», այսինքն՝ Տրապիզոնն ու Բայազետը, գրավելու անհրաժեշտությունը: Կոկովցևն այդ կապակցությամբ առարկություն չընդունող եղանակով հայտարարեց, որ տվյալ պահին թուրքական հարցի հարուցումը ծայրաստիճան վտանգավոր է՝ նկատի ունենալով Գերմանիայի հետ «ռազմական բախման սպառնալիքը»: Խորհրդակցությունը գտավ, որ եզրակացության հանգելուց առաջ պետք է սպասել «Եվրոպայում իրադարձությունների ընդհանուր ընթացքին»: Միլյուկովի կարծիքով՝ Թուրքիայի հանդեպ քաղաքականությունում պետք է «հենվել ոչ թե սլավոնաֆիլական միստիկական գաղափարախոսության, այլ ռուսական հարավի տնտեսական արագ զարգացման վիթխարի փաստի վրա, որն այլևս անկարող է մնալ առանց բաց ծով դուրս գալու»[12]: Իսկ բաց ծով դուրս գալու հնարավորությունը երկընտրանք ուներ՝ Բոսֆորի և Դարդանելի գրավում կամ Հաստանի վրայով Միջերկրական ծով հասնել:

Ռուս-գերմանական հակասությունները հանգուցվում էին ոչ միայն Նեղուցներում ու Բալկաններում, այլև Հայկական լեռնաշխարհում, Տիգրիսի ու Եփրատի շրջանում: Ռուսաստանն անպայման քաջալերում և օգնում էր Բալկանյան միությանը (Չերնոգորիա, Սերբիա, Բուլղա-

10 Pomiankowski J. Der Zusammenbrugch des ottomanischen Reiches: Erinnerungen an die Turkei aus der Zeit der Weltkriges, Vienna, 1928, s. 51.
11 Милюков П. Н. Воспоминания, стр. 187.
12 Ն. տ.:

րիա և Հունաստան): Հավանաբար ռուսական օգնությունը երկրորդական նշանակություն չունեցավ այդ միության անսպասելի հաղթանակների, այն իրողության հաստատման գործում, որ Բալկանյան զորքերը հայտնվեցին Կ. Պոլսի դարպասների մոտ: Բալկանյան պատերազմում հայերը կռվում էին թե թուրքական բանակի կազմում և թե այդ բանակի դեմ: Թուրքերի դեմ կռվողների շարքում էր Անդրանիկի և Նժդեհի հրամանատարությամբ գործող հայկական ջոկատը: ՀԾԴ «արտաքին գործերի շրջիկ նախարար» Զավրիևը նույնիսկ հույս ուներ հայկական հարցը լուծել Ֆերդինանդ թագավորի օգնությամբ, որովհետև վերջինս հրապարակ նետեց կարգախոս՝ «Բուլղարիայի պատերազմը Թուրքիայի դեմ խաչի պատերազմն է մահիկի դեմ»[13]:

ՀԾԴ արտաքին քաղաքական գործունեությունը թելադրվում էր Կովկասի փոխարքայի կողմից, իսկ վերջինս արտահայտում էր Պետերբուրգի այն շրջանների կարծիքը, ովքեր գտնում էին, թե ժամանակն էր Մերձավոր Արևելքում ձեռնարկելու եռանդուն գործողություններ:

Եթե Վիլհելմ 2-րդի նշանաբանն էր երեք Բ-երը (Բեռլին- Բաղդադ- Բասրա), ապա ցարինը՝ երկու Պ-երն էին (Պետերբուրգ-Պարսից ծոց): Ռուսներն արդեն Սալմաստում էին և Պարսից ծոց հասնելու համար մնում էր ևս մի ցատկ: Բայց Պարսից ծոց հասնելու համար Ռուսաստանը հարկադրված էր լինելու պատերազմել Պարսկաստանի և առնվազն խզելու հարաբերություններն Անգլիայի հետ: Իսկ այդ անել չէր կարող և Բալթիկայի ափերին բազմած միապետի հայացքը մեխվեց Պաղեստինին՝ Միջերկրական ծովափին:

1914թ. օգոստոսին Էնվերը Ռուսաստանին առաջարկեց համաձայնագիր ստորագրել «փոխադարձ զիջման պայմանով»: Թուրքիան անգամ պատրաստակամություն էր հայտնում իր բանակը դնելու Ռուսաստանի տրամադրության տակ: Պետերբուրգը խուսափողական պատասխան տվեց, որը ժամանակ շահելու նպատակ ուներ: Բացի դա, ցարը ոչ թե թուրքական բանակի, այլ Կ. Պոլսի կարիքն ուներ[14]:

Լենինի խոսքերով Ռուսաստանը պատերազմում նպատակ ուներ «գրավել Հայաստանը, Կ. Պոլիսն ու մի քանի այլ տարածքներ»[15]:

Հայկական հարցը դարձավ այս նկրտումների դիվանագիտական շապիկը:

Չի կարելի անտեսել այն, որ Ռուսաստանի հետ սիրախաղերը երիտթուրքական կառավարության համար միանվագ վարքագիծ չէին: Ղրիմում գտնվելու ժամանակ (1914թ. մայիսի) Թալեաթը նույնպես առաջարկել էր կնքելու ռուս-թուրքական դաշինք: Սակայն, երբ Պետերբուրգը հետամուտ էր եղել այդ խնդրին, պարզվել էր, որ երիտթուրք պարագլուխը պարզապես ստել էր:

Իր հուշերում Սազոնովը գրում է. «Հայկական վիլայեթներում բարենորոգումներ մտցնելու ռուսական նախաձեռնությունը, որին ես մեծ կարևորություն էի տալիս, իթիհադական կառավարության համար հատկապես անախորժ էր, քանի որ այդ համարում էր հարված իր անկախությանը: Թալեաթի հետ տեսակցության միջոցին իմ հետապնդած միակ նպատակն էր համոզել նրան, որ մենք Հայկական հարցին չափից ավելի մեծ նշանակություն ենք տալիս և մտադիր ենք աներեր հետևել, մինչև որ բարենորոգումներն իրականացվեն»[16]:

Կովկասյան ուղղությամբ պատերազմը նախապատրաստելիս, մարտական գործողությունների մարտավարությունը որոշելիս ռուսական կողմը չէր կարող շրջանցել Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդներին, մասնավորապես հայերին, քրդերին և ասորիներին: Թե այդ ժողովուրդներից որի ուժերն ինչպես պետք է օգտագործվեր պատերազմի ժամանակ, երկար քննարկվեց թե՛ Պետերբուրգում և թե՛ Թիֆլիսում: Կարծիքները միասեռ չէին: Կովկասյան բանակի շտաբը գտնում էր, որ հիմնականում պետք է հենվել հայերի վրա և անհրաժեշտ է նրանց զինել: Շտաբի զեկուցագրերից մեկում մանրամասն հիմնավորվում էր արևմտահայերին զենք բաժանելու անհրաժեշտությունը. «Հայերի մասին թուրքերի կարծիքը, թե նրանք խանգարում են թուրք-թաթարներին մի ամբողջության մեջ ձուլվելու, հասնելու իրենց երազի իրականացմանը, նպաստել է,

13 Покровский М. Н. Империалистическая война, Москва, 1928, стр. 172-177.

14 Ն. տ.:

15 Ленин Соч. т. XII стр. 99.

16 Sazonov S. Les annees fatales, Paris, 1927, pp. 144-145.

որ Թուրքիայի սահմանադրական ոչ մի կառավարություն չարքից չհաներ «Ոչնչացնել հայերին» կարգախոսը»: Նույն այդ կարգախոսը որդեգրել էր նաև Գերմանիան: Բեռլինը համոզում էր Թուրքիային, թե՛ նրան ձեռնտու էր, որ Ռուսաստանի հարավում միայն լիներ թուրք-թաթարական բնակչություն: «Թուրքիան ճնշելու ու բռնությունների է ենթարկելու հայերին թե՛ հաղթանակի և թե՛ պարտության դեպքում... Նահանջելիս մահմեդականները վրեժից մղված մորթելու են հայերին... հարձակվելիս նրանք հայերին ոչնչացնելու են նվիրական նպատակին ավելի հեշտ հասնելու համար»: Հայերի կորուստները կարելի է մինիմումի հասցնել միայն մի դեպքում, եթե ամենուրեք ազգաբնակչությունը զինված ինքնապաշտպանության կանգնի: Փորձը ցույց էր տվել, որ մահմեդական ավազակախմբերը «լուրջ ավերածություններ չեն կատարում, անգամ չեն հարձակվում, եթե պաշտպանվող գյուղացիներն ունեն բավարար քանակությամբ զենք»[17]:

Հայերին պետք է զինել հանուն Թուրքիայում այդ ազգի գոյատևման, որովհետև միայն նման միջոցով է հնարավոր կանխել թուրք-թաթարների ամբողջականացումը, միավորումը:

Պետերբուրգում կար մի կարծիք ևս, որը գոյատևեց անգամ աշխարհամարտի մեջ Թուրքիայի մտնելուց հետո էլ: Այդ կարծիքը պարզորոշ շարադրված է Սազոնովի 1914թ. օգոստոսի 13-ի նամակում՝ հասցեագրված Վորոնցով-Դաշկովին: Նշելով, որ Թուրքիայի հետ խաղաղ հարաբերություններ պահպանելու հնարավորությունը դեռևս սպառված չէ և անհրաժեշտ է ձեռնպահ մնալ այն ամենից, ինչը «կարող է առճակատում առաջացնել»՝ Սազոնովը գրում է. «Պատերազմի դեպքում քրդերը, հայերն ու ասորիները, իհարկե, կարող են մեզ շատ օգտակար լինել և նրանց հետ պետք է ունենալ բարեկամական հարաբերություններ: Միաժամանակ անհրաժեշտ է նրանց համառորեն երաշխավորել առանց մեր հրահանգի ոչինչ չձեռնարկել»: Ռազմական նախարարությանը հանձնարարվում է զենք տրամադրել «մասնավորապես քրդերին»[18]:

Ռուսական դիվանագիտական ու լրտեսական ծառայությունները միահամուռ հաստատում էին, թե պատերազմի դեպքում մահմեդական բնակչությունը «հավատի կռիվ է մղելու մոսկովյան հեթանոսների դեմ», սակայն, միևնույն է, ցարական կառավարության հակահայկական համառությունը տրամաբանության հետ հաշտ չէր: 1914թ. հոկտեմբերին Հիրսը Սազոնովին գրեց, որ թուրքերը մեծ հույսեր են կապում Կովկասի մահմեդականների ապստամբության հետ, որպեսզի ռուսական զորքերի մի մասը հարկադրված լիներ արևմտյան ռազմաճակատից տեղափոխվել Անդրկովկաս: Ինչ վերաբերում է հայերին, շարունակում է դեսպանը, ապա նրանք Ռուսաստանի դեմ ապստամբություն չեն բարձրացնի, բայց բարեխղճությամբ կկատարեն օսմանյան հպատակի իրենց պարտականությունները:

Հայ քաղաքական կուսակցությունների, պատրիարքարանի կեցվածքը ճշմարտացի գնահատելու համար հարկ է նկատի ունենալ հետևյալ հիմնարար նշանակության հանգամանքները: Արևմտահայության բնաջնջումն օսմանյան պետական քաղաքականություն էր, այն զանազան դրսևորումներով իրականացվել էր շուրջ 30-35 տարի և ակնհայտ էր, որ երիտթուրքերը կօգտագործեին պատերազմական իրավիճակը բնաջնջման այդ քաղաքականությունն իր տրամաբանական վախճանին հասցնելու: Մեծ տերությունների համար հայերի ողբերգական վիճակը դարձել էր մանր դրամ իրենց ոչ միայն ռազմավարական, այլ նաև մարտավարական խնդիրների լուծման գործում: Հայն անելանելի կացության մեջ էր՝ շրջափակված մահմեդական ազգաբնակչությունով, գրեթե զրկված կազմակերպվելու և գոյության իրավունքի համար համազգային պայքարի բարձրանալու հնարավորությունից:

Այս իրողություններով էին պայմանավորված հայ քաղաքական կուսակցությունների վարքագծի էկլեկտիկությունը, մի ծայրահեղությունից մյուսն ընկնելու հակումը, հետևողական գծի բացակայությունը, որոնք արևմտահայությանը հնարավորություն չտվեցին կազմակերպվելու, մարտական նշանակալից ուժեր ձևավորելու, յաթաղանի դեմ համազգային ընդվզման ելնելու, չնայած պատմության թուրք կեղծարարները պնդում էին և շարունակում են պնդել, որ հպատակ ժողովուրդները, մասնավորապես հայերը, «մահացու վտանգ էին» կայսրության համար և

17 ЦГВИАР. Ф. 2000, оп. 1, Д. 3851, л. 10.

18 Ն. տ.:

Բ. Դուռը պարտադրված էր այն անպայման վերացնել: Ջելալ Բայուրը գրում է. 1914թ. առաջին ամիսներին օսմանյան իշխանությունները բախվեցին երկու հիմնախնդրի. 1. անզուսպ ընդդիմության՝ պատրաստ չարաշահելու ամեն տեսակի ազատություն, 2. ոչ թուրքական տարրերի կողմից բացահայտ կամ թաքուն սպառնալիք կայսրության ամբողջականությանը: Դրանցից առաջինը քաղաքական և լուծելի հիմնահարց էր, իսկ երկրորդը մահացու վտանգավոր էր: Ինչպես կառավարությունը, այնպես էլ Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնը և ռազմական նախարարությունը մշակեցին պլան այդ վտանգը կանխելու համար:

Պատերազմում Հարավային Կովկասի ժողովուրդների կեցվածքը միանման չէր: Դ. Անանունի խոսքերով՝ պատերազմը «հայերի հոգիներում հույսի կրակներ վառեց, որ տերությունների հաղթանակով համաձայնություն ձեռք կբերվի լուծելու և Հայկական հարցը... Այս հույսն արթնացրեց հայերին, որոնք իրենց բախտը կապեցին ռուսական զենքի հաջողության հետ և պատրաստվում էին անելու ամեն ինչ այդ հաջողության համար»[19]:

Այդպես էր մտածում թե արևելահայությունը և թե արևմտահայության գերակշիռ մասը:

Տրամագծորեն հակառակ կեցվածք ունեին վրացիները և, մասնավորապես, ադրբեջանական թաթարները: 1914թ. հոկտեմբերի 31-ին Հիրսը գրում է Սազոնովին, որ Կովկասում թաթարների ծրագրած ապստամբության նպատակն է. «Մեր զորքերի մի մասին արևմտյան ռազմաճակատից հանել: Վարակի բույնը Բաքուն է»[20]:

«Բաքվի մտավորականությունը միշտ տենչացել է պանիսլամիզմի մասին: Նրանց պանիսլամիզմի ծրագրի իրականացմանը խանգարում էին հայերը: Այստեղից էլ հայերի նկատմամբ թաթարների անհաշտ թշնամությունը»[21]:

«Ռուսների հաջողությունները թևավորում էին հայերին... իսկ թաթարները չէին կարողանում թաքցնել իրենց տխրությունը... և քանի որ Բաքվում նրանք ինչ-որ պատճառով ավելի շուտ էին տեղյակ լինում, ապա նրանց դեմքի արտահայտությունից կարելի էր իմանալ թուրքերի հաջողության կամ անհաջողության մասին»: Մուսաֆթաթական կուսակցությունը «Պարսկաստանի վրայով Թուրքիա էր հասցնում Ռուսաստանին վերաբերող բոլոր տեղեկությունները և Կ. Պոլսում հաստատված Ահմեդ Աղաևի միջոցով հիանալի տեղյակ էր գործերի վիճակին»[22]:

Պոլսում գաղտնի բանակցություններ էին գնում Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Թուրքիայի միջև: Պլաններ էին մշակվում պատերազմի դեպքում Կովկասում խռովություններ հրահրելու: 1914թ. հուլիսի 20-ին Պալավիչինին տեղեկագրեց. «Ես այսօր զրույց ունեցա Էնվերի հետ: Նա ասաց, որ Թուրքիան 20 օրում կարող է 200 հազարանոց լավ զինված զորք տրամադրել, իսկ եթե մի ամիս՝ լրացուցիչ 100 հազ. հոգի: Նա հասկացրեց, որ եթե Ռուսաստանը պատերազմի մեջ մտնի, Թուրքիան ի վիճակի կլինի Ռուսաստանի և Ադրբեջանի մահմեդականներին ապստամբության հանել»[23]:

Օգոստոսի 2-ին Թուրքիայի նախաձեռնությամբ ստորագրվեց Թուրք-գերմանական գաղտնի համաձայնագիրը, որը լրացվեց սեպտեմբերի 6-ին ստորագրված մի նոր համաձայնագրով: Նախատեսվում էր, որ եթե Ռուսաստանը ռազմական միջամտություն ցույց տա Ավստրո-Հունգարիային և Սերբիայի առճակատմանն ու Գերմանիան հարկադրված լինի պաշտպանելու վերջինին, Թուրքիան չեզոք չպետք է մնա:

Պատերազմի դեպքում Գերմանիան Թուրքիայի «տրամադրության տակ» կդներ զինվորական ուժեղ հանձնախումբ, իսկ Թուրքիան երաշխավորում էր հանձնախմբի «մեծ ազդեցությունը Թուրքական բանակի ընդհանուր ղեկավարության վրա: Գերմանիան պարտավորվում էր զենքով պաշտպանել Թուրքիայի տարածքները, եթե դրանք վտանգվեին: Երկու պետությունները համագործակցելու էին միջազգային հարաբերություններում»: «Գերմանիան Օսմանյան

19 "Сборник армянской литературы", стр. XLVI.

20 Чалхушьян Г. նշվ. աշխ., стр. 30.

21 Ն. տ.:

22 Ն. տ., էջ 31:

23 Wien HHSTA PA I 552, Jenikoj, 20 Juni 1914.

կայսրությանը կօգնի չտկելու իր արևելյան սահմաններն այնպես, որպեսզի ապահովվի անմիջական կապ Ռուսաստանում բնակվող մահմեդական բնակչության հետ»[24]:

Համաձայնագիրը ստորագրեցին Կ. Վանգենհայմն ու Սայիդ Հալիմը: Այն ուժի մեջ էր մնալու մինչև 1918թ. դեկտեմբերի 31-ը:

Երբ աշխարհամարտը սկսվեց, Մոլտկեն ու գեներալ Կոնրադը պահանջեցին, որ Թուրքիան քայլեր կատարեր Կովկասում հնարավորին չափ ռուսական մեծ ուժեր կաչկանդելու: Բեռլինի ճնշմամբ Բ. Դուռը էմիսարներ ուղարկեց վիլայեթներ՝ մահմեդականներին սրբազան պատերազմի մղելու Անտանտի դեմ:

Ռուս-Թուրքական պատերազմի վտանգը հայերին շատ էր անհանգստացնում նաև այն պատճառով, որ մարտական գործողություններն ընթանալու էին Հայկական բարձրավանդակում և, անկախ պատերազմի ելքից, հայերն ամենաշատն էին տուժելու: Չնայած կային նաև ուժեր, ովքեր հույս ունեին, թե պատերազմը կչահի Ռուսաստանը. ռուսները կգրավեն Արևմտյան Հայաստանն ու վերջնականապես կլուծեն Հայկական հարցը[25]:

Դեռ մինչև ՀՅԴ 8-րդ ժողովի սկսվելը Թուրք գործիչները Էրզրումում և Վանում բանակցություններ սկսեցին ՀՅԴ ներկայացուցիչների հետ՝ ստեղծել հայ կամավորների ջոկատ և մասնակցել Ռուսաստանի դեմ պատերազմին: Հաների Բարբին գրում է. «Այդ պարտականությունն իրենց վրա էին վերցրել Միություն և առաջադիմություն կոմիտեի պատվիրակներ Նաջի և Շաքիր բեյերը, որոնք հայերի ներկայացուցիչներին հայտարարեցին. «Մեզ օգնեք, կազմակերպեք կամավոր դրուժինաներ՝ միաժամանակ ձգտելով Կովկասում առաջացնել հայերի ապստամբություն և հենց այն օրը, երբ մենք այնտեղից ռուսներին քշենք, ձեզ ինքնավարություն կտանք, ինչի մասին այդքան վաղուց երազում եք»[26]:

Թուրքական պատվիրակությունը Նաջիի ղեկավարությամբ բանակցություններ էր վարում ՀՅԴ ներկայացուցիչներ Ռոստոմի, Վռամյանի և Ակնունու հետ:Քիչ անց նրանց միացան Էմիլ Հիքմեթը և մահմեդական 27 ցեղերի ներկայացուցիչները: Տարածված կարծիք է, թե Թուրքական պատվիրակությունը ղեկավարում էր Բեհաեդդին Շաքիրը, որն այդ նպատակով էր Կ. Պոլսից եկել: Իրականում Շաքիրը հունիս ամսից Էրզրումում էր և ղեկավարում էր թեշքիլաթե մախսուսեի (Հատուկ կազմակերպության) շտաբը: Նա ՀՅ Դաշնակցության ղեկավարների հետ ավելի շուտ էր հարաբերությունների մեջ մտել, որովհետև վերջինները ՀՅԴ 8-րդ ժողովի կապակցությամբ հավաքվել էին Էրզրումում: Բ. Շաքիրը համագումարում գործակալ ուներ և մանրամասը տեղեկություններ էր ստանում այնտեղ կատարվածների մասին, մանավանդ որ համագումարի մասնակիցները գործում էին անզգույշ՝ նիստերն ավարտվելուց հետո, իբր թաքուն հավաքվում էին ռուսական հյուպատոսությունում, որտեղ կայացած քննարկումների մասին նույնպես Բ. Շաքիրը մանրամասն տեղեկատվություն ստանում էր[27]:

Երիտթուրքական պատվիրակները հայերին մեծամեծ խոստումներ էին տալիս, անվերապահ ընդունում բարենորոգումների անհրաժեշտությունը, հավաստիացնում, որ «Կովկասի մեջ ստեղծելու են հայ, վրաց, ատրպեճանական և հյուսիսային կովկասեան պետութիւններու միութիւն մը՝ Պոլսոյ սուլթանի խնամակալութեան ներքոյ... Ուստի նախընտրելի էր, որ հայերը, ձեռք քաշելով օտար դիվանագիտութեան դասերը ափ առնելու գաղափարեն, միանային Թուրքիոյ և Կովկասեան միւս ժողովուրդներուն, կազմեին կամավորական գունդեր և սահմանի երկու կողմերուն վրայ կատարեին թիկունքային աշխատանք՝ կայսրութեան սահմաններեն ներս օգնելով իթիհատական կառավարութեան և Կովկասի մեջ թիկունքեն հարվածելով ռուսական կովկասեան բանակին»[28]:

24 Լևոն Վարդան, Հայկական տասնհինգը..., էջ 24:

25 Gibbons H. Armenia in the World War, New York, 1926, p. 127.

26 Բարբի Հ. նշվ. աշխ., էջ 77-78:

27 Teskilati Harpte Teskilati Mahsusa. "Vakit", 15-17. 11. 1933.

28 Ցուշամատեան Մեծ եղեռնի, էջ 443:

Պահպանվել է բանակցություններում Բ. Շաքիրի ճառի հետևյալ հատվածը. «Ռուսաստանը և իր դաշնակիցներն ի վիճակի չեն դիմադրելու կենտրոնական կայսրություններին: Ամբողջ մահմեդական աշխարհը՝ Մարոկկոյից մինչև Բելուջիստան և Աֆղանստան, համախմբվել է Թուրքիայի շուրջը՝ ընդդեմ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի: Կովկասում մեզ կհարեն վրացիներն ու մուսուլմանական ցեղերը, որոնց Թուրքիան կկազմակերպի և զենք կմատակարարի: Բայց Կովկասում մեր գործերի հաջողությունն ամբողջովին ձեր (հայերի) ձեռքին է, և ձեր կողմից հակառուսական շարժման գլուխ կանգնելու վերաբերյալ համաձայնություն տրվելու դեպքում բավական կլինի Կովկաս շարժել 200-300 հազարանոց մի բանակ, որպեսզի ռուսները հետ շպրտվեն Կովկասյան լեռներից այն կողմ: Ռուսներին արտաքսելուց հետո հյուսիս-արևմուտքում մենք կկազմակերպենք ինքնավար Վրաստան... հյուսիս-արևելյան մասում կառանձնացնենք ինքնավար մուսուլմանական մի մարզ... և, վերջապես, կենտրոնական մասում կկազմենք ինքնավար Հայաստան...»[29]:

«Երիտթուրքերի ռազմավարական պլանը,- գրում է Լեոն,- Հարավային Կովկասը հեշտ ճանապարհով զավթելու պլան էր և, անկասկած, ուներ գերմանական ակունք»: Պատմում է Գր. Զալդուչյանը. «Թուրք պատվիրակությունը հայտարարեց, որ վրացիների ու ադրբեջանցիների հետ արդեն համաձայնություն կա, որ եթե հայերը, որպես «առավել եռանդուն» տարը, իրենց վրա վերցնեն նախաձեռնությունը և Անդրկովկասում ապստամբեն Ռուսաստանի դեմ, նրանք ևս ոտքի կելնեն»: Դրա փոխարեն վրացիներին կտրվեն Քութայիսի և Թբիլիսիի նահանգները, Բաթումի մարզն ու Տրապիզոնի վիլայեթի մի մասը: Դաղստանին՝ մինչև Վլադիկավկազ ընկած լեռնային շրջանները, Բաքվի նահանգն ու Ելիզավետպոլի նահանգի մի մասը տրվելու է ադրբեջանցիներին, իսկ հայերին՝ Կարսի մարզը, Երևանի նահանգը և Ելիզավետպոլի նահանգի մի մասը, Վանի վիլայեթը, Բիթլիսը և Էրզրումի վիլայեթի մի մասը: Այդ ժողովուրդները կստանան «անկախ ինքնավարություն Թուրքիայի գերիշխանության տակ»»:

Դաշնակները պատասխանեցին, որ Ռուսաստանի դեմ պատերազմը համարում են կործանարար և ամեն ինչ կանեն այդ պատերազմը կանխելու, իսկ եթե այն համենայն դեպս սկսվի, ապա հայերը լրիվ կկտարեն իրենց քաղաքացիական պարտքը թե Ռուսաստանի և թե Թուրքիայի հանդեպ, որ իրենք ոչ մի դեպքում Կովկասում խառնակություններ չեն մտցնի: «Դա դավաճանություն է,- բղավեց Բ. Շաքիրը:- Դուք Ռուսաստանի կողմն եք անցնում մի պահի, որից բախտորոշը չի եղել: Դուք հրաժարվում եք պաշտպանել կառավարությանը: Դուք մոռանում եք, որ օգտվում եք նրա հյուրընկալությունից»[30]:

Թուրք պատվիրակները նաև հայտարարեցին, որ դաշնակների տեսակետն այլ բան չէ, եթե ոչ ռուսաֆիլություն, որ այլևս նման պատմական պահ չի լինի Ռուսաստանի հետ նախկին բոլոր նվաստացումների համար հաշիվներ մաքրելու և նրան դարձնելու երկրորդական տերություն ռուսական սահմաններում, որ այդ կարվի նաև առանց հայերի օգնության, բայց վերջինները թող դաշնակներին մեղադրեն, եթե իրենց բախտը տխուր դասավորվի: Նման առաջարկությունով Թուրքերը դիմեցին նաև Վանի և Մուշի դաշնակներին: Պատասխանը նույնն էր[31]:

ՀԾԴ 8-րդ ժողովի ընդունած բանաձևում կարդում ենք. «Հաշվի առնելով պետական քաղաքականության նեղմտությունն ու էկլեկտիկությունը... որի հետևանքներն արտահայտվում են բոլոր ոչ թուրք ժողովուրդների տնտեսական, լուսավորչական, վարչական կյանքի նկատմամբ ճնշումներում, նկատի ունենալով բարենորոգումները տապալելու կառավարության վարած քաղաքականությունը, ընդհանուր ժողովը եկավ այն եզրակացության, որ կուսակցությունը հանդես կգա իթիհադի նկատմամբ անկիրք դատավորի և անհաշտ ընդդիմության դերում, կպայքարի նրա մնասակար ազգայնամոլական և հակապետական քաղաքականության դեմ: Ժողովը չի բացառում համագործակցությունը համապետական խնդիրներում...»[32]:

29 АВПР, "Политархив", д. 3484.

30 Կիրակոսյան Զ. Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք 2-րդ, Երևան, 1983, էջ 11:

31 Чалхушьян Г., Красная книга, Ростов на Дону, 1919, стр. 20-23.

32 Լեո, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հ. 2, էջ 76:

Ժողովը նաև գտավ, որ բոլոր միջոցներին պետք է դիմել «թույլ չտալու, որ Թուրքիան պատերազմի մեջ մտնի, քանի որ նման քայլը կործանարար կլինի ոչ միայն հայ ժողովրդի, այլև օսմանյան պետության համար»: Անկախ ՀԾԴ լոյալ տրամադրվածության Էրզրումի բանակցությունների ձախողվելը խզում էր, վերջնական խզում և այլևս խոսք լինել չէր կարող երկու կուսակցությունների ոչ միայն համագործակցության, այլև տանելի հարաբերությունների մասին:

ՀԾԴ 8-րդ ժողովի դիրքորոշումը հստակ էր: Ցուրաքանչյուր ոք պետք է մնա «օրինապահ իր ապրած երկրի վերաբերմամբ»[33], «... Արևմտահայությունը չպետք է ապստամբուի, պատերազմի ընթացքին յստակ ազգային խնդիր չպետք է յարուցանե, իր վրայ ընկնող բոլոր քաղաքացիական պարտականությունները պետք է կատարե, բարեխիղճ, համբերող և պարտաճանաչ պետք է լինի Թուրքիոյ և թուրքերու հանդեպ»[34]:

Հայերը երիտթուրքերին համոզում էին, որ եթե Գերմանիան հաղթեր, Թուրքիային ավելի ուժեղ էր կեղեքելու, քան, եթե հաղթեր Ռուսաստանը, միաժամանակ քաջ գիտեին, որ թուրքերը պատերազմը համարում էին միակ միջոցը լուծելու «իրենց ազգային խնդիրները», որոնք այլ բան չէին, եթե ոչ Էնվերի կարգախոսի կենսագործում՝ «Ռուսները պետք է դուրս մղվեն Կովկասից և այն պետք է կցվի Թուրքիային...»: Թուրքերն առիթը բաց չէին թողնում հայերին հանդիմանելու. «Ռուսներին Անդրկովկաս դուք եք բերել և դուք էլ պիտի վռնդեք»:

Ջստանալով ՀԾԴ համաձայնությունը՝ Բ. Շաքիրը պլան մշակեց Դաշնակցության ժողովի կազմը ոչնչացնելու: Սակայն ինչ-որ ձևով դաշնակներին հաջողվում է այդ մասին իմանալ և թաքնվել ու փրկվել:

Հայերը նաև լավ գիտեին, որ Էրզրումից հետո իրենք, բացի Ռուսաստանին ապավինելուց, այլ ելք չունեին: Նման եզրահանգման գալուց հետո թվում է տարօրինակ, որ արևելահայ գործիչները, մասնավորապես ՀԾԴ-ն, շարունակեցին արևմտահայությանը հորդորել՝ ինչ էլ որ լինի անվերապահորեն ենթարկվել թուրքական իշխանությունների ձեռնարկումներին: Թերևս դա էր պատճառը, որ շուտով արևմտահայության հետ կապը խզվեց, ՀԾԴ բյուրոն դադարեց ղեկավարելուց Արևմտյան Հայաստանի իր կազմակերպություններին ու ամբողջովին տարվեց կամավորական շարժման ձևավորման կազմակերպչական աշխատանքներով՝ այն համարելով հայերի միակ իրական ուժն արևմտահայությանը փրկելու գործում: Դա սխալ, ճակատագրական նշանակության կողմնորոշում էր, որի հետևանքով արևմտահայության կրավորականությունն ավելի խորացավ, այլև նրա համար գլխավորը ոչ թե գոյության համար մաքառումն էր, այլ հույսը «դրսի վրա դնելը», և քանի որ դրսի աջակցությունը շոշափելի չէր, ավելի ճիշտ, բացակայում էր, արևմտահայը հուսալքվեց և առանց կոլեկտիվ լուրջ դիմադրության ենթարկվեց յաթաղանի քմահաճույքին:

Քանի որ իթիհադի պարագլուխները ՀԾԴ ընդհանուր ժողովի որոշումն անվանեցին «դավաճանություն», միջոցներ ձեռնարկեցին հայերի հետ խզումը տրամաբանական վախճանի հասցնելու համար: Շաքիրը հեռագրեց Կ. Պոլիս. «...Հայերը տրամադիր չեն մեզ հետ հավաքաբար գործելու: Հետևաբար, հարկ է նրանցից թաքցնել մեր ձեռնարկած միջոցները»[35]:

Նույն հանձնարարականն էր պարունակում նրա մի այլ հեռագիր. «... Ձեռնարկվող բոլոր միջոցները պետք է գաղտնի պահել հայերից: Պետք է ստեղծել տպավորություն, որ պետությունն ու կառավարությունը փափագում են, որ հայրենակիցները մնան անվտանգ»[36]:

Բ. Շաքիրը հայերին չվստահելու կոչով չբավարարվեց: Նա Բ. Դռանը հայտնեց. «Կովկասում հայերն ակնհայտորեն հանդես եկան Ռուսաստանի կողմում և խոչընդոտ են Թուրքիայի ձգտումներին»[37]:

Ու. Ջերչիլը Էրզրումի համագումարի որոշման մասին գրում է. «Նրանք ընդունեցին ուշադրության արժանի որոշում՝ եթե պատերազմ ծագեր, հայ ժողովրդի թուրքական և ռուսական հատվածները պետք է կատարեին իրենց քաղաքացիական պարտականությունը պատկան կա-

33 Տերտերեան Հ. Հայկական գոյամարտը, Թեհրան, 1957, էջ 202:

34 Զարբդ Ղազար, Կարինապատում, Բեյրութ, 1957, էջ 461-462:

35 «Արև», 27. 05. 1953:

36 Փափազեան Ա. Արաբական կախարաններն ու հայկական ջարդերը, Հալեպ, 1992, էջ 77:

37 АВПР, "Политархив", д. 3484.

ռավարությունների հանդեպ: Նրանք նախընտրելի համարեցին եղբայրասպան կռիվը, քան իրենց գոյության հարցը կապել նրանցից որևէ մեկի հաղթանակի հետ»: Այդ այդպես էր, բայց հայերի վարքագիծը «վրեժխնդրություն առաջացրեց, ինչն այն ժամանակ կանխամտածված ծրագրի մասն էր կազմում»: Խորհրդանշական է, որ Էրզրումի համագումարի ընթացքում հայ-թուրքական բանակցությունների փաստը թուրք պատմաբանները ժխտում են: «Դա,- գրում է Ժ. Ուրասը,- ամբողջությամբ երևակայության պտուղ է, որը որևէ ապացույց չունի...»[38]:

Ուրասը հաշվի չի առնում նաև թուրքական աղբյուրների վկայությունները: "Takvin-vakayi"-ն 12. 05. 1919թ. հրապարակել է Բ. Շաքիրի 15. 08. 1914թ. հեռագիրը երիտթուրքերի կենտկոմին, որում ասված է, թե հայ առաջնորդների մոտ իր առաքելությունը հաջողություն չի ունեցել: Է. Նաջին բազմիցս Վանում և Մուշում հայտարարել է, թե հայերը, չնայած հավատարիմ են օսմանյան գահին, բայց վճռականապես դեմ են մասնակցելու հակառուսական գործողություններին[39]:

Հայերը տարընթացության մեջ էին: Գր. Զոհրապը գրեց. «Ես նախընտրում եմ բարենորոգումները, չնայած դրանց չեմ հավատում: Թուրքիայում մենք գոնե ի վիճակի ենք պահպանելու մեր ազգային ոգին, լեզուն, իրավունքը: Իսկ Ռուսաստանը, պահպանելով հայերի ֆիզիկական գոյությունը, մեռցնում է նրանց ոգին և իր հզոր քաղաքակրթությունով ճնշում է հայ մշակույթը»:

Երիտթուրքերի կենտկոմում աշխարհամարտի հարցում կար երկու մոտեցում: Ջեմալն ու Ջավիդը դեմ էին պատերազմին մասնակցելուն, իսկ Թալեաթն ու Էնվերը՝ կողմ: Ի վերջո որոշվեց. հարկադրական իրադրության դեպքում պատերազմի մեջ մտնել Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի կողմում, սկսել զորահավաք և Էնվերին նշանակել գլխավոր հրամանատար:

Դա կուսակցական դիկտատի վերջին ակորդն էր. այդուհետ երիտթուրք կենտկոմը վերածվեց ձևականության, դրության տեր դարձավ գործիչների այն խումբը, որը իշխող էր ոչ միայն կուսակցությունում, այլև կառավարությունում[40]:

Այս խումբը գործում էր իր իսկ ձևավորած Սայիդ Հալիմի կառավարության միջոցով, որում ՆԳ, ռազմական, ծովային, ֆինանսների և արդարադատության նախարարները երիտթուրք ղեկավար գործիչներն էին:

Երբ 1914թ. հուլիսի 22-ին Թալեաթն ու Էնվերը Վանգենհայմին հայտնեցին, թե պատերազմի դեպքում Թուրքիան դաշնակցելու է Գերմանիայի հետ, դեսպանը գրեց Բեռլին. «Ես համոզված պայքարում եմ Թուրքիայի այդ գաղափարի դեմ... Ներկայումս նա անընդունակ է դաշնակից դառնալու, քանի որ իր դաշնակիցների համար կստեղծի միայն դժվարություններ, որովհետև անընդունակ է նրանց փոքր-ինչ օգնել առավելություն ստանալու: Բուլղարիայի հետ Թուրքիայի դաշինքն ուղղակիորեն սադրելու է Ռուսաստանի հակահարվածը Հայաստանում»: Նա նպատակահարմար էր համարում Թուրքիայի չեզոքությունը, որ կհարկադրեր Ռուսաստանին «մի քանի զորամիավորումներ պահելու հայկական սահմանի վրա»[41]:

Կայզրը չհամաձայնվեց: Նրա կարծիքով Թուրքիայի միանալը կարևոր էր Եոյակ զինակցության համար: Իսկ Հայաստանը կորցնելու կապակցությամբ նա գրեց. «Համենայն դեպս դա ավելի լավ է, քան... Թուրքիային մղել Անտանտի կողմը»:

Պատերազմի մեջ Թուրքիայի մտնելու մասին Ջեմալը գրում է. «Իհարկե, մենք հույս ունինք... ազատվել մեր վզին փաթաթված շատ պարտավորություններից, որոնք պատրվակ էին միջամտելու մեր ներքին գործերին. մենք ենթադրում էինք, որ պատերազմից հետո կդառնայինք ազատ, անկախ ժողովուրդ... Հայկական բարենորոգումների հարցում մենք ձգտում էինք խույս տալ այն պարտավորություններից, որոնք մեր վզին էին փաթաթել ռուսները»[42]:

Չեզոքության մասին Կ. Պոլսի նախնական հայտարարությունը նպատակ ուներ ժամանակ շահել զորակոչն ավարտելու և բանակը հանդերձավորելու համար: Դեռ ավելին, 1914-ի

38 "Сборник дипломатических документов...", стр. 21.
39 "Русское слово", 26. 08. 1914.
40 "Русское ведомости" 12. 02. 1916.
41 "Русское слово", 23. 08. 1914.
42 Մատենադարան, ֆ, 1, թղթ. 938, պ.մ. 161:

օգոստոսի 5-ին Էնվերը Ռուսաստանին առաջարկեց ռազմական դաշինք: Սայիդ Հալիմը մի անգամ ևս Հիրսին հավաստիացրեց, որ Թուրքիան մնալու է լրիվ չեզոք: Գերմանիայի հետ լրացուցիչ համաձայնագիր ստորագրելու հաջորդ օրը, օգոստոսի 7-ին Ջեմալը անգլիացի դեսպան Մ. Մելտին առաջարկեց խաղաղության պայմաններ՝ հրաժարվել կապիտուլյացիաների համակարգից, տրամադրել երկու ռազմանավ, չմիջամտել կայսրության ներքին գործերին, աջակցել, որպեսզի վերադարձվեն Արևմտյան Թրակիան և արխիպելագի հունական կղզիները: Օգոստոսի 9-ին Լոնդոնը համաձայնվեց վերացնելու կապիտուլյացիաների համակարգի որոշ բաղադրիչներ, երաշխավորել կայսրության տարածքային ամբողջությունը, փոխարենը պահանջեց՝ բանակից հանել գերմանական սպաներին, արտոնություններ տալ Անգլիայի առևտրական նավերին և պահպանել չեզոքություն[43]:

Նույն օրը Սազոնովը հանձնարարեց Հիրսին Բ. Դռանը զգուշացնել պատերազմի մեջ մտնելու վտանգավոր հետևանքների մասին: «Մեր դեմ Թուրքիայի գործողություններից չենք վախենում»: Նման քայլ կատարելով Թուրքերը վտանգի են ենթարկում իրենց գոյությունը, նրանք ի վիճակի չեն մեզ հասցնելու նշանակալից մնաս[44]:

Երիտթուրքերը գործում էին ճկուն, բայց հակասական: 1914թ. օգոստոսի 5-ին Բ. Դուռը վերացրեց գլխավոր տեսուչների հաստիքները: Երկու օր հետո Պետերբուրգում օսմանյան դեսպան Ֆահրեդդինը հայտարարեց, թե աշխարհամարտում Թուրքիան չեզոք է մնալու: Նա առաջարկեց ռազմական միություն Ռուսաստանի հետ հետևյալ պայմաններով՝ երաշխիք Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության, կայսրության ռազմական ուժերը դնել Ռուսաստանի տրամադրության տակ, Ռուսաստանը պետք է հրաժարվեր աջակցելուց հայկական պահանջներին բարենորոգումների հարցում, քանի որ «Թուրքիան վախենում էր, որ Ռուսաստանը հակվելու էր տիրանալու հայկական նահանգներին», Ռուսաստանը պետք է ճանաչեր Օսմանյան Թուրքիայի տարածքային ամբողջականությունը: Սազոնովը համաձայնվեց բոլոր կետերի հետ, բացի հայկական բարենորոգումներից հրաժարվելը:

Կաթողիկոսն առաջ քաշեց մի նոր տարբերակ՝ եթե հնարավոր չլիներ հայկական վիլայեթներն ազատագրել, ապա դրանցից ձևավորել Հայկական մարզ քրիստոնյա կառավարիչով, որը երաշխավորվելու էր Ռուսաստանի կողմից և չէր ենթարկվելու Բ. Դռանը: Մինչև խնդրի վերջնական լուծումը կաթողիկոսը առաջարկում էր ցարական կառավարությանը ճնշում գործադրել երիտթուրքերի վրա, որպեսզի միջոցառումներ ձեռնարկվեին հայերի կյանքը և ունեցվածքը պաշտպանելու և գլխավոր տեսուչներին առանց հապաղելու ուղարկել իրենց պաշտոնատեղերը հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի կատարումն ապահովելու համար: Դիվանագիտական քայլերն ու պատերազմի նախապատրաստությունը գնում էին զուգահեռ: Ռուսաստանի դեմ կռվելու համար համալրվում էր թուրքական երրորդ բանակը, 130 հազ. քուրդ, Կովկասից մահմեդականներ, արաբական հեծյալ զորամասեր, 54 թեթև և լեռնային թնդանոթներ. Կովկասում ռազմական գերակշռություն էր ստեղծվում թուրքերի համար[45]:

Օգոստոսի կեսերին տեղի ունեցավ օսմանյան կառավարության և երիտթուրքերի կենտկոմի համատեղ նիստը: Էնվերը պահանջեց անմիջապես պատերազմ հայտարարել Ռուսաստանին: Ջեմալը հակառակ կարծիքին էր: Նա Էնվերին անվանեց նախկին ռազմական նախարար Նազիմի դահիճ: Նիստն ընդհանուր եզրակացության չհանգեց: Թալեաթը հայտարարեց. «Մենք վախենում ենք ռուսական հարձակումից»[46]:

Օգոստոսին հայ գործիչներն արդեն համոզված էին, որ ռուս-թուրքական պատերազմն անխուսափելի էր: Գավառներից Կ. Պոլիս հասնող զանգատները պատմում էին հայերի հանդեպ թուրքերի և քրդերի սաստկացող ոտնձգությունների մասին: Իշխանավորները սկսել էին սպառնալիքներով խոսել հայերի հետ: Օր օրի ավելանում էին լուրերը սպանությունների, տնե-

43 "Русское слово", 08, 09, 09, 1914.
44 Ն. տ., 31.10. 1914:
45 Тунян В., Նշվ. աշխ., էջ 477:
46 «Մշակ», 17. 11. 1914:

րի, խանութների հրդեհումների մասին: Սազոնովը ահազանգ էր հնչեցնում. «Պատերազմի ժամանակ քրդերը, հայերն ու ասորիները, իհարկե, կարող են մեզ շատ օգտակար լինել, դրա համար էլ պետք է նրանց հետ ունենալ բարեկամական հարաբերություններ... Սակայն նրանք ոչինչ չպետք է ձեռնարկեն առանց մեր հանձնարարության»: Հայերը, սակայն, կազմալուծված էին: Մի բնութագրական փաստ. "Pro Armenia"-ի խմբագիր Վ. Բերարը խորհուրդ տվեց հաշվի առնել Օսմանյան կայսրության մոտակա կործանումը և զինվել: Պողոս Նուբարը հակառակ կարծիքին էր, նա գտնում էր, որ ինքնապաշտպանությունը հանգեցնելու է ջարդի: Եթե երիտասարդ դաշնակները հանդես էին գալիս հեղափոխական եղանակների՝ «հին ավանդույթների», այսինքն՝ բռնի միջոցների օգտագործման օգտին, ապա ավագ սերունդը, որը զբաղված էր լեգալ, խորհրդարանային գործունեությամբ, կողմնակից էր «խաղաղ քաղաքականությանը»: Նույն ժամանակ երիտթուրքերի գլխավոր քարտուղար Շուքրին գրում է Բ. Շաքիրին, թե հայերը չեն ցանկանում կռվել թուրքերի կողքին և առաջարկում էր միջոցներ ձեռնարկել «Հայ հայրենակիցների սիրտը» հանգստացնելու համար: Ակնհայտ էր, որ երիտթուրքերը, մի կողմից, սպառնում էին ոչնչացնել հայերին, իսկ մյուս կողմից, ձգտում էին հայ պարագլուխներին ներքաշել քաղաքական արկածախնդրությունների մեջ:

Առնվազն տարօրինակ է, որ Թուրքիայի պատերազմի մեջ մտնելը հայ շատ գործիչների հանկարծակի բերեց: Ս. Վրացյանը հիշում է մի քանի կուսակցական ընկերների կարծիքն այդ մասին.

«Սահրատ,- Այո, ամեն ինչ փոխվելու վրայ է... այս թակարդից էլ ելք չկայ... մեր վրա կախված է պատերազմի մղձավանջը»: «Արդար լինելու համար պետք է խոստովանել,- գրում է Ս. Վրացյանը,- որ ես պատերազմի մղձավանջ չէի տեսնում: Եվ մեր շրջապատում ոչ ոք չէր տեսնում»[47]:

Ս. Վրացյանն ու նրա կուսակիցները կուրացել կամ այդպիսին էին իրենց ներկայացնում, քանի որ վիճակը, սկսած Բալկանյան պատերազմի ավարտից, գնալով վատթարացել էր: Ռ. Պինոն գրում է. «...Դանդաղ հարստահարութիւն մը սկսաւ: Թալան, սպանութիւն, բռնի կրոնափոխութիւն, առևանգում շատ եղան, բայց ոչ ընդհանուր: Ֆրանսիական և անգլիական դիվանագիտութիւններուն կորովի ազդարարութիւնները և Ռուսիոյ սպառնական միջամտութիւնն արգելեցին սպանդի ընդհանրացումը... երիտթուրքերը նպաստավոր առիթի մը կը սպասեին իրականացնելու համար իրենց աղետավոր մտադրութիւնը»[48]:

Նպաստավոր ոչ միայն առիթ, այլ նաև հնարավորություն կարող էր հանդիսանալ պատերազմը, որին Թուրքիայի մասնակցությունը բացատրում էին ամենածիծաղելի ու հնարովի պատճառներով: Պատերազմի մեջ Թուրքիայի մտնելուն դեմ եղողների թվում կային ազդեցիկ ուժեր: Սուլթան Մեհմեդ 5-րդը, լսելով պատերազմի մեջ մտնելու մասին, բացականչեց. «Կռվել Ռուսաստանի դե՞մ: Բայց չէ՞ որ բավական է նրա մի գնդակը, որ մեզ ճզմի»: Պատմում է Մ. Ռիֆաթը. «...Պոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմը մի օր երեկոյան այցելում է վարչապետ Սայիդ Հալիմ փաշայի Նոր գյուղի ապարանքը և ասում է. «Նորին վսեմություն, այսօր շատ ուրախալի լուր եմ բերել՝ վաղվանից կարող եք «Գեբեն» և «Բրեսլաու» զրահանավերի անունը փոխել և գերմանականի փոխարեն նրանց վրա օսմանյան դրոշակ պարզել ... այդ նավերը գիտության ու արտադրության վերջին խոսքով են կառուցված և ռազմական շատ մեծ նշանակություն ունեն: Ձեր ծովայիններն այն, ինչպես հարկն է, շահագործել չեն կարող, այդ նկատի ունենալով՝ իմ կառավարությունը նավերի ամբողջ անձնակազմը մինչև պատերազմի ավարտը դրել է Ձեր հրամանի տակ: (Ժպտալով), ուրեմն վաղվանից կարող եք նրանց հագուստները փոխել և ֆես դնել տալ...»[49]:

Եպարքոսն անմիջապես հեռախոսով հայտնեց իթիհադի ընդհանուր կենտրոնին, մինչդեռ Վանգենհայմը նրանց խնդրանքով էր այցելել Ս. Հալիմին: Ընդհանուր կենտրոնում Թալեաթը, Ջեմալը, Ջավիդը նույն խնդիրն էին քննարկում:

47 Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, Կահիրե, 1955, էջ 147:
48 Պինոն Ռ., նշվ. աշխ., էջ 18, 23 :
49 Ռիֆաթ Մ. նշվ. աշխ., էջ 10-11:

Էնվեր.- Այլևս հավատում եմ, որ Մակեդոնիայի կորստի կրկնապատիկն եմ ստանալու: Քանի պողպատե բանակների տեր հզոր Գերմանիան մեր թիկունքին է, ոչ միայն Մակեդոնիան, այլև Կովկասը և Եգիպտոսն էլ կարող ենք իթիհատ և թերաքքի իշխանության տակ առնել և Թուրքիան վերածել աշխարհի ամենահզոր կայսրության:

Ջավիդ.- Ընկեր Էնվեր, այդքան երևակայությամբ մի տարվիր: Լուրջ մտածիր ու նկատի առ, որ այսօր մենք նյութապես սնանկացած վիճակում ենք: Էնվեր.- Տարակույս չկա, որ... մեզ այսքան օգտակար Գերմանիան կարող է անհրաժեշտ դրամն էլ հայթայթել: Ջեմալ.- Հենց առաջին քայլն անելիս չսխալվենք... Մեր դեմ են ելնում Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանն ու նրանց դաշնակիցները, իսկ մենք գործակցելու ենք Գերմանիայի հետ... Կարա Քեմալ.- Մի կողմից Կիկիրիկը (Անգլիան), Տանգոն (Ֆրանսիան) և Հյուսիսային արջը (Ռուսիան), մյուս կողմից՝ անպարտելի Գերմանիան: Կեցցե, Գերմանիան: Թալեաթ.- Գերմանիայի դեսպանը թեև հայտարարում է, թե նշված նավերն իրենց ամբողջ կազմով մեր տրամադրության տակ են դրված, սակայն նրա հայտարարությունը երկդիմի է: Ջեմալն ուզում է, որ այդ նավերի դեկն ամբողջությամբ մեզ հանձնվի ...Նավերը մերն են և մեր նավահանգստում: Ուրեմն, ասեք, նրանց ի՞նչ անունով կոչենք:

Ջեմալ.- «Գեբենը»՝ «Ցավուս» և «Բրեսլաուն» «Միթիլլի» անվանենք... Եթե նպատակահարմար գտնեք, Մարմարայում իմ հրամանատարությամբ ռազմափորձ կատարենք: Դրանով, թե մեր ծովայինների կարողությունները և թե մեր հրամանատարությանը գերմանացիներին ենթարկվելը կարող ենք պարզել: Թալեաթ.- Շատ լավ կլինի: ...Բոլորս կգնանք դիտելու[50]:

Այս առնչությամբ "Тифлисский листок"-ը ծաղրեց.

Немец турку обещал золота и славу,
А пока в задаток дал "Гебен" и "Бреслау".

Հոկտեմբերի 3-ին Հիրը հաղորդեց, որ «Գեբենի» և «Բրեսլաուի» հայտնվելը թուրքերին լրիվ գլխահան արեց, ինչից չհապաղեցին օգտվել գերմանացիներն ու ավստրիացիները թուրքային վերջնականապես իրենց կողմը գրավելու համար[51]:

Վանգենհայմին որոշ չափով հաջողվել էր Ջավիդին, Թալեաթին և մանավանդ դեռ երիտասարդ Էնվերին համոզել: Սակայն Սայիդ Հալիմի գլխավորությամբ ընդդիմադիրների մի խումբ կար: Լսել եմ,- երիտթուրքերին ասաց Վանգենհայմը,- որ ձեզնից ոմանք Բուլղարիայից վախենում են: Այդ վախն անտեղի է: Վստահեցնում եմ, որ Բուլղարիայի հետ զինակցությունը ձեզ համար է: Բեռլին-Պոլիս գիծն ապահովելով, նեղուցներն ամրացնելով՝ Ռուսաստանին արտաքին օժանդակությունից զրկել և ձեր ուժերով նրան ճզմել: Կովկասը ձեզ տալով, ուզում ենք ձեր առջև Թուրանի ճամփան բանալ, Թուրքիայի ամբողջությանն ընդդիմացող տարրերին կոչնչացնեք և դեռ Պարսկաստանը կգրավեք, վերջապես, Բալկանյան պատերազմում պարտության արատը պատվով ու հաղթանակով կսրբեք: Որպես միջնորդ խորհում եմ ու ձեր տատանման պատճառը չեմ կարողանում գտնել, թե անգլիացիներից խաբվե՞լ եք ուզում: Արդարև, վարչապետի աթոռ զբաղեցնող Սայիդ Հալիմ փաշան, եգիպտացի լինելով, կարող է վախեցած է անգլիացիների հալածանքներից, կարող է Եգիպտոսում եղած իր կալվածքների ու շահերի մասին է մտածում: ...Հետևաբար նրա կարծիքը կեղծ է, այն ճշմարիտ լինել չի կարող, բայց դուք՝ Նորին Վսեմություն, հռչակավոր Էնվեր, հմուտ զորավար, քաջ զինվոր և Օսմանյան Սահմանադրության հիմնադիր, դուք, որ երկար ժամանակ բնակվել եք Գերմանիայում, մոտիկից ուսումնասիրել եք գերմանական ռազմական ուժը և այն մյուս պետությունների հետ համեմատել, դուք կարող հրամանատար եք, և դեռևս ձեր տատանվող ընկերներին խնդիրը լուսաբանելու և կատարելու նրանց համոզելու պարտականությունը: Էնվեր.- Վստահ եղեք, Ն. Վսեմություն, Գերմանիայի կողքին պատերազմելն ինձ համար մեծ պատիվ է ... և բոլոր ուժերովս այդ ուղղությամբ աշխատելու եմ, միայն... ֆինանսական խնդիրն էլ պետք է լուծվի, այս օրերին մեր նյութական վիճակը շատ ծանր է: ...Վանգենհայմ (մի քիչ խորհելուց հետո).- Կաշխատեմ, որ ձեր ուզած պահին հատկացվի տասը միլիոն հնչուն ոսկի կանխավճար...

50 Ռիֆաթ Մ., նշվ. աշխ., էջ 17-21:
51 МОЭУ, сер. III, 8. VI, докл. 336, стр. 333.

Երիտթուրքերի կենտրոնի գաղտնի նիստում նախագահում էր Թալեաթը: Առաջին խոսքը տրվում է Էնվերին՝ Անգլիայի և նրա դաշնակիցների հետ հասկացողության գալու հնարավորությունները սպառվել են, քանի որ նրանց հարել է մեր դարավոր թշնամի Ռուսաստանը և, դաշնակցության ձեռք է երկարել, պայմանները մեզմ են և չմերժելու աստիճանի նպաստավոր: ...Գերմանիայի առաջարկները ... պարտավոր ենք ընդունել: Մեր ազգային շահն այդ է պահանջում և վատնած յուրաքանչյուր րոպեն դավաճանություն է հայրենիքին... Զանազկալեի նեղուցը միայն մեր ուժերով պաշտպանել չենք կարող... և կարիք ունենք մի հզոր պետության աջակցության: Մինչդեռ Գերմանիան այս գործն էլ է ստանձնում: ...Անգլիան, Ֆրանսիան և նրանց դաշնակիցներն իրենց բոլոր ուժերը սպառելով հանդերձ, չկարողացան Գերմանիայի բանակներն իրենց դիրքերից մի թիզ անգամ հեռացնել: Գերմանական բանակը պողպատյա ամրոց է: Հետևաբար, Ռուսաստանը չի կարող Կովկասից մեծ ուժերով մեզ վրա հարձակվել և ստիպված կլինի պաշտպանողական կռիվներ մղել: Որոշակի է նաև այն, որ Անգլիան էլ չի կարողանալու Եգիպտոսը պաշտպանել: Գերմանիան համաձայն է, որ մենք Եգիպտոսը, Կովկասը վերագրավենք, և նույնիսկ Պարսկաստանը գրավենք և հնարավորություն է ստեղծված, որ այդ երկու կողմերն էլ մտնենք զինվորական շրջագայությունով: Այս միջոցով, տարակույս չկա, մենք կկարողանանք Թուրանի ճամփան բանալ և ապահովել թուրքական միությունը... Բեհաեդդին Շաքիր.- ...Թուրքիայի հաղթանակի ճանապարհը Էնվերի ցույց տվածն է: Գերմանիայի կողքին լինելը նախընտրելի է. այդ ճամփան փրկության և Թուրանի ճամփան է: Դոկտ. Նազիմ.- Ով թուրք, տեսնում եմ, որ բախտիդ արևը ծագելու է: Թուրանի ճամփան բացելով, լույսերն աչքեր են շլացնելու (ոտքի ելնելով ու բարձրաձայն)՝ «Ով մեծն Ալլահ, ով սիրելի Հայրենիք, խնդրում ենք մեզ ասա, ո՞րն է քո ուղին»: Սայիդ Հալիմ.- Գերմանական ռազմական ուժի արտաքին տեսքը թող մեզ չշլացնի: Կարծում եմ, անմիջապես Գերմանիայի գիրկը նետվելը վտանգավոր է, երևակայվող հաղթանակն ու շահ ձեռք բերելը՝ կասկածելի...Անձնական համոզմունքովս և դեսպաններից ստացված տեղեկություններով մեզ համար ամենաանվտանգը զինված չեզոքությունն է: Թալեաթ.- ...Ես տեսնում են, որ Սայիդ Հալիմ փաշան Անգլիայի դեսպանի ազդեցության տակ է: Չի մտածում, որ անգլիացի դեսպանի հետ իր տեսակցությունից անմիջապես հետո թերթերը կգրեն, թե երեկ վարչապետ Ս. Հալիմ փաշան Անգլիայի դեսպանի հետ հատուկ հանդիպում է ունեցել, և այս լուրը կարդացող գերմանացի դեսպանը Պոլսից Բեռլին կմեկնի: Ահա այն ժամանակ ամեն ինչ կկորչի... Հայրենիքը վտանգի մեջ է: Ռուսական վտանգը մեր աչքի առջև, մեր քթի տակ է: Սայիդ Հալիմ.- Զգուշացնում եմ, որպեսզի հետո Բալկանյան պատերազմի նման փորձանքի չհանդիպեք... (Նա գրպանից հանում է Փարիզում Թուրքիայի դեսպան Ռիֆաթ փաշայի հեռագիրը: Էնվերը նրա ձեռքից վերցնում ու բարձրաձայն կարդում է): «Ձեռներդ, ոտներդ եմ համբուրում, պատերազմին մի մասնակցեք: Մասնավորապես ստուգված է, որ գերմանացիները Մառնի ճակատամարտից հետո անհաջողություններ են կրելու: Իսլամությանը նոր աղետի մի ենթարկեք»: Թալեաթ.- Խեղճ ծերուկ, դեռևս ձեռ ու ոտ համբուրելուց չի ձերբազատվել...

Հիքմեթ.- Ընկերներ, խնդրում եմ չջղայնանաք ու եկեք լրջորեն խորհրդակցենք...համաձայնականների դեմ մեր սահմանների պաշտպանությունը դյուրին չի լինելու, մանավանդ Մառնի պարտությունից հետո Գերմանիայի վրա հույս չպետք է դնել: Անգլիային ու Ֆրանսիային մի շարք տնտեսական շահեր մատնացույց անելով, ներկա համաշխարհային պատերազմում զինված չեզոքություն պահելն իրո՞ք հնարավոր չէ: Մենք մինչև այժմ Գերմանիայից ի՞նչ օգուտ ենք տեսել (իսկ վնասներ ինչքան ասես): Հայկական բարենորոգումներին Գերմանիայի՝ միայն վերջերս դրսևորած մոտեցումը հնարավո՞ր է մեր նկատմամբ բարեկամություն համարել: Նրա բարեկամությունը միայն մի բանում է՝ թույլ չտալ ռուսական ազդեցության տարածումը մինչև Բաղդադի երկաթուղին: Վտանգի պահին մեզ պաշտպանելը նրա ծրագրի մեջ չի մտնում... Հարկ է Անգլիայի ու Ֆրանսիայի հետ համաձայնության գալ և նրանց ապավինելով այս պատերազմում չեզոք դիրք գրավել...Հալիլ.- Անուրանալի ճշմարտություն է, որ Ռուսաստանը Օսմանյան կայսրության ոխերիմ թշնամին է և, որ նրա նպատակը Պոլսին տիրելն է: Ռուսաստանին այս

գաղափարից հեռացնելն անհնար է... Եգիպտոսին իշխող Անգլիան Բասրայի ծոցից ներս տնտեսական նպատակներ հետապնդող Գերմանիային ավելի վտանգավոր է համարում, քան Պոլսի և ամբողջ Անատոլիայի նկատմամբ հավակնություններ ունեցող Ռուսաստանին, հետևաբար չպիտի հապաղի Միջերկրականի փոխարեն Ռուսաստանին հանձնել Պոլիսը, իսկ Ֆրանսիան՝ Սիրիայում իրեն արգելքներ չհարուցելու պայմանով, Թուրքիայի բաժանմանը չի ընդդիմանալու: Դաշնակիցների շահերի ու իր ձգտումների նույնությունը տեսնող Ռուսաստանը կձգտի՝ որքան հնարավոր է մեկուսացնել Թուրքիային: Էնվեր.- Անտանտի պետություններից Անգլիան ձգտում է Եգիպտոսն ամբողջությամբ իր տիրապետության տակ առնել, Միջագետքը՝ նույնպես, իսկ եթե հնարավոր է, նաև Պաղեստինը ձեռք գցել և ամբողջ Արաբական թերակղզու վրա իր ազդեցությունը տարածել: Տարիներ ի վեր Ֆրանսիան ծրագրել է անպայման Սիրիան գրավել և ամենաչնչին առիթն օգտագործում է այդ ծրագիրն իրագործելու: Ապացուցելու հարկ չկա, որ Ռուսաստանը Թուրքիայի թշնամին է ու բոլոր միջոցներով ձգտում է Պոլսին տիրանալ: Այս տերություններից ոչ մեկն այսօր մեզ չի օգնում: Գալով եռյակ զինակցության պետություններին՝ Ավստրո-Հունգարիան և Իտալիան Թուրքիայից պահանջ չունեն: ...Իսկ Գերմանիան... ով ինչ ուզում է թող ասի, նա Թուրքիայի հզորացմանը ձգտող պետություն է: ... Գերմանիան չի կարող Թուրքիային գաղութի վերածել, նրա ոչ աշխարհագրական դիրքը և ոչ էլ հնարավորություններն այդ թույլ չեն տալիս... Թալեաթի ազդարարությամբ քննարկումն ավարտվեց: Գերմանիայի հետ զինակցության առաջարկված պայմանները նույնությամբ ստորագրելու օգտին քվեարկեց մեծամասնությունը: Դա նշանակեց, որ Գերմանիան թիհադի կենտրոնում հաղթանակ էր տարել[52]:

Գերմանիայի հետ հարցերը լուծված էին, իսկ Ռուսաստանի հետ՝ ոչ: Թուրքիան չեզոքության հավաստիացում էր տալիս աջ ու ձախ: Իսկ Անտանտը պահանջում էր, որ եթե Թուրքիան չեզոք է, պետք է զինաթափվի և արձակի բանակը, ինչի դիմաց երաշխավորում էր Թուրքիայի տարածքային ամբողջականությունը: Մինչդեռ Զմյուռնիայից, Սիրիայից, Անատոլիայի խորքերից զորքեր էին տեղափոխվում Կովկասի սահման: Էնվերը, փաստորեն, դարձել էր Թուրքիայի դիկտատոր: Հիրսը հոկտեմբերի 6-ին հեռագրում է. «Վստահելի աղբյուրներից իմացա, որ երեկ Ավստրո-Հունգարիայի դեսպանը հայտարարել է Մեծ վեզիրին, թե գերմանական և ավստրիական դաշնակից կառավարությունները գտնում են, որ մեր դեմ հարձակման համար պահը եկել է և թուրքական նավատորմը հենց այժմ պետք է հարձակվի մեր սևծովյան ափերի վրա»[53]:

«Օգոստոսի 11-ի երեկոյան,- գրում է Ջեմալը,- ես սովորականի նման գնացի նախարարների խորհրդի նիստի... Էնվեր փաշան մոտեցավ և թաքուն ասաց. «Մեզ տղա է ծնվել... «Գեբենն» ու «Բրեսլաուն» այսօր առավոտյան երևացել են Դարդանելում, և քանի որ անգլիական նավատորմը հետապնդում էր դրանց, մեզ խնդրեցին թողնել անցնելու նեղուցները: Ես համաձայնեցի, որովհետև չեմ ցանկանում, որ մեր դաշնակից պետության նավերը կործանվեն: Նավերն արդեն մտել են նեղուցները... Դրա հետևանքով բախվում ենք նոր դժվարությունների»[54]:

Գերմանացի ծովակալ Սուշոնը նշանակվեց թուրքական ռազմածովային ուժերի հրամանատար և անմիջապես եռանդուն գործունեություն ծավալեց նավատորմը պատերազմի պահանջների ոգով վերակառուցելու ուղղությամբ: Նա գերմանացի սպաների տնօրինությանը հանձնեց ափամերձ պաշտպանությունը: Սանդերսը Բեռլինից ստացավ հանձնարարություն. «Ցանկալի է, որպեսզի Թուրքիան հնարավորին չափ շուտ մտնի» պատերազմի մեջ[55]:

Հոկտեմբերի 25-ին ծովային նախարարը հրաման տվեց, թե Սուշոն «գործում է սուլթանի բարձրագույն հրամանի համաձայն, և նավատորմը պարտավոր է նրան ենթարկվել»[56]:

---

52 Ռիֆաթ Մ. նշվ. աշխ., էջ 20-35:
53 "Вторая оранжевая книга", докл. 83, стр. 54.
54 Записки Джемала Паши 1913-19гг., Тифлис,1923, стр. 98.
55 Лерей Г. Операции германо-турецких морских сил в 1914-28гг., М., 1938, стр. 67.
56 Նշ.տ.:

Գերմանացի ծովակալ Լորենսը նշում է, որ հածանավերի գալուց հետո Թալեաթն ու Էնվերը կանգնեցին Գերմանիայի կողքին:

Այս ամենը, սակայն, Ռուսաստանում միանշանակ չգնահատվեց: Գեներալ Ցանուշկևիչը գրեց. «Թուրքիայի հետ բարդություններ չկան»[57]:

Սա պատահական գնահատական չէր: 1910-1914թթ. Ռուսաստանի ռազմական պլաններում Թուրքիային տեղ չէր տրվում, ինչ վերաբերում էր Կովկասյան ռազմաճակատին, ապա այն, ընդհանրապես, բացառվում էր: Միայն 1914թ. կեսերին հաջողվեց փոխել Պետրոգրադի կարծիքը: Չնայած պատերազմական պլաններում Կովկասին այդպես էլ առաջնային նշանակություն չտրվեց, անգամ հնարավոր համարվեց պատերազմական գործողությունների ընթացքում այնտեղից հետ քաշվելը:

Երիտթուրքերի կենտրոնում էին Թալեաթը, Ջավիդը, Էնվերը, Ջեմալը, Շուքրին, Հալիլը և Սայիդ Հալիմը:

Ջավիդ.- Մեր դիրքերը ճշտվեցին, մնում է ֆինանսական խնդիրը: Հավատացնում եմ, որ եթե մինչև վաղը Գերմանիայից 2-3 միլիոն կանխավճար չստանանք, աշխատավարձ վճարել չենք կարողանալու, ի վիճակի չեմ ռազմական նախարարությանը նույնիսկ մեկ սանթիմ տալ: **Էնվերը**, հեռախոսի լսափողը ձեռքին, տեղից բարձրացավ ու ասաց. -Ալո, ալո, Գերմանիայի դեսպանին միացրեք: ...Ձեզ հայտնում եմ, որ քննարկման նյութ դարձած զինակցությունն ընդհանուր Կենտրոնի կողմից ընդունվել է: Թուրքիան Գերմանիայի կառավարությանը կատարելապես վստահում է... մի փոքր խնդրանք ունեմ: Մեր ֆինանսների նախարարությունը վաղվա իր անհրաժեշտ պետքերը հոգալու համար 10 միլիոն ոսկու կարիք ունի: Պարտավորեցրած կլինեք, եթե առանց դաշնագրության փոխանակությանը սպասելու, իմ երաշխավորությամբ կանխավճար գումար փոխանցվի: «Վաղը Դոյչ Օրիան դրամատնից 10 միլիոն ոսկի կարող ենք ստանալ»: Էնվերը, Թալեաթի համաձայնությունը ստանալով, գնաց Վանգենհայմի մոտ... **Վանգենհայմ.**- Կարծեմ, վաղը ծովային ռազմախաղեր եք սկսելու: **Էնվեր.**- Այո, ծովային նախարարն այդպես ասաց: Վանգենհայմ.- Այդ ռազմախաղերը Մարմարայից հետո Սև ծովո՞ւմ էլ են կրկնվելու: Շատ լավ եք մտածել: ...**Էնվեր** (շփոթված).- Սև ծովում կատարվելիք ռազմախաղերից տեղյակ չեմ և կարծում եմ, որ դրանք անմիջապես կհանդիպեն Ռուսաստանի ընդդիմությանն ու միջադեպ կառաջացնեն: **Վանգենհայմ.**- Այսօրվանից ձեր բարեկամները և ձեր թշնամիները նաև մերն են և՝ ընդհակառակը: Երբ Գերմանիան Ռուսաստանի դեմ պատերազմի մեջ է՝ օսմանյան կառավարությունը նույնպես պատերազմի մեջ է... Խնդիրը շատ պարզ է: Թուրքական նավատորմիղը Մարմարայի ռազմախաղերը բավարար չհամարելով, այն կրկնում է Սև ծովում, ճանապարհին ռուսական նավատորմիղի հանդիպելով հարձակման է ենթարկվում: Թուրքական նավատորմն ինքնապաշտպանության համար ստիպված գնդակոծում է Օդեսայի պաշտպանական ամրություններն ու դրանք ոչնչացնում է, ապա ռուսական նավատորմիղին մասամբ խորտակելով և մասամբ էլ նահանջի մատնելով, անվնաս Պոլիս է վերադառնում: Օսմանյան կառավարությունն այս անակնկալ դեպքը պատճառաբանելով, Ռուսաստանի դեմ բողոքում է: **Էնվեր.**- Ինչ լավ ծրագիր է[58]:

«Վանգենհայմից հրավերք ստացա մասնակցելու հոկտեմբերի 11-ին դեսպանատանը կազմակերպված ճաշկերույթին,- գրում է Ջեմալը,- այնտեղ էին Եպարքոս փաշան, Թալեաթ և Հալիլ բեյերն ու Էնվեր փաշան: Ճաշից հետո դեսպանի աշխատասենյակն անցանք... Էնվեր փաշան հայտարարեց, որ «Գեբեն» և «Բրեսլաու» հածանավերի Սև ծով մտնելն արգելելն անիմաստ է, որովհետև ծովակալը մի շարք օրինավոր ռազմական պատճառաբանություններ է առաջ քաշել: Սակայն մեր նավերի հետ այս երկուսի Սև ծով մտնելն անպայման կարող է պատերազմի մեջ մեր մտնելու համար պատրվակ դառնալ...»: Նույն օրը Վանգենհայմը Սուշոնին հանձնարարեց, որ երկու հածանավերը նեղուցներ մտնելով՝ թուրքական դրոշ պարզեն, որովհետև արդեն «Օսմանեան նավատորմիղին կը պատկանին...»:

57 ЦГВИАР, Ղ. 2000, оп.1, д. 1848, л. 159.

58 Ռիֆաթ Մ., նշվ. աշխ., էջ 35-39:

Այդ տարիներին Անգլիան Թուրքիայի համար կառուցում էր երկու ռազմանավ, որի միջոցները գոյացել էին հանգանակությունից: Սակայն, երբ պատերազմը սկսվեց, Անգլիան հրաժարվեց այդ նավերը տալ: Վանգենհայմի ջանքերով թուրքական մամուլը հակաանգլիական մեծ աղմուկ բարձրացրեց և առիթն օգտագործեց երկու հածանավերը Թուրքիային առաջարկելու համար, իբր Թուրքիան դրանք գնել էր, չնայած ակնհայտ էր, որ Կ. Պոլիսն անկարող էր նման գնում կատարել: Հածանավերն այդպես էլ թուրքերին չհանձնվեցին ու մնացին գերմանացի նավաստիների ու սպաների տրամադրության տակ: «Եթե գերմանացիները հաղթեն,- ասաց Թալեաթը,- այդ նավերն այստեղից չեն տանի, իսկ եթե պարտվեն՝ փախչել չեն կարողանալու»: Իսկ երբ Անտանտի երկրները գործարքի դեմ բողոքեցին, հայտարարվեց, թե նավերը Թուրքիայի սեփականությունն են: Գերմանացիները որոշել էին հակառուսական սադրանքը մինչև վերջ հասցնել. «Օր մը Կեոպենը Վոսփոր ելավ, ռուս դեսպանատան դեմը կանգ առավ և խարիսխ նետեց: Սպաներն ու նավաստիները կամրջակին վրայ շարվեցան... Հանդիսավորաբար հանեցին իրենց ֆեսերը և անոնց տեղը գերմանական գդակներ դրեցին», իսկ նվագախումբը հնչեցրեց «Գերմանիան ամեն ինչից բարձր է...» և գերմանական ուրիշ երգեր[59]:

«...Այդ գերման նավերուն նեղուցեն անցքը Թուրքիայի ճակատագիրն ամրացուց Գերմանիայի ճակատագիրին հետ և Թուրք կայսրութեան բախտը վճռեց»[60]:

Այդ գործողությունով «գերմանացիները գրավեցին Թուրքիան»:

Գերմանիայում չէին թաքցնում, որ «ռազմանավերը կառուցվում էին նաև Թուրքիայի համար», որ Թուրքիայի հետ ռազմական դաշինքը Գերմանիային հնարավորություն կտա ջախջախել Ռուսաստանի Սևծովյան նավատորմը և վերջինիս համար տնտեսական առումով բացառիկ նշանակություն ունեցող հարավային մարզերը կմնային անպաշտպան: «Թուրքական զորքերը կարող կլինեին հասնելու Ռուսաստանի ջրերն ու ցամաքը և սկսած Կովկասից մինչև Ղրիմ մահմեդական բնակչությունը նրանց կողջուներ որպես փրկարարների»[61]:

Սուշոնը հաճախ էր հածանավերը ռազմավարժությունների ուղարկում Սև ծով, հույսով, որ կբախվեն ռուսական նավերի հետ: Իսկ երիտթուրք պարագլուխները հավանության ժպիտով էին նայում գերմանացիների սադրանքներին, որովհետև վերջնականապես անցել էին Գերմանիայի կողմը՝ համոզված, որ նա հաղթելու է: «Ռուսիան մեր մեծագոյն թշնամին է,- ասաց Թալեաթը,- և մենք անկե կը վախենանք: Սա միջոցին, երբ Գերմանիան Ռուսիայի վրայ կը յարձակի, եթե մենք կարող ենք անոր շատ ուժգին աքացի մը տալ, այնպես որ ան ատեն մը անզոր դառնայ մեզի վնասելու, Թուրքիայի պարտականությունն է այդ աքացին իջեցնել»[62]:

Իսկ թուրքերն արդեն ռմբակոծում էին Օդեսան: Այդ լսելով՝ Ջեմալը բացականչեց. «Ոչինչ չգիտեմ: Դա իմ հրամանով չի կատարվել»: Նույն բանն ասաց նաև Թալեաթը: Մի այլ անգամ Ջեմալը հոխորտաց. «Լավ է, սակայն եթե հետևանքը վատ լինի, այն ժամանակ այդ Սուշոն կլինի առաջինը, որին ես կախաղան եմ հանելու»[63]:

Պատերազմի մեջ մտնելու կապակցությամբ թուրքական կառավարության հրապարակած կոչում ասված էր. «Մեր ազգային իդեալը մղում է ոչնչացնելու մեր մոսկովյան թշնամուն, որի շնորհիվ կստեղծվեն մեր կայսրության բնական սահմանները: Մեր կրոնական զգացմունքները մեզ պետք է մղեն մուսուլմանական աշխարհն ազատագրելու անհավատների տիրապետությունից...»[64]:

Օգոստոսի 6-ին Գերմանիայի և Թուրքիայի միջև ստորագրված լրացուցիչ համաձայնագրով Բեռլինը ճանաչում էր կապիտուլյացիաների չեղյալ հայտարարելը, Բալկաններում ու Կովկասում հօգուտ Թուրքիայի սահմանների «չտկումը»[65]:

59 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 69:

60 Ն. տ., էջ 70:

61 Фишбюхер Г. Армения 1915, Ереван, 1991, стр. 23.

62 Մորգենթաու Հ. նշվ. աշխ., էջ 105:

63 Ցուշամատեան Մեծ եղեռն, էջ 277:

64 Լևոն Վարդան, Հայկական տասնհինգը... էջ 25:

65 Саркисян Е. К. Экспансионистская политика Османской Империи в Закавказье накануне и в годы мировой войны, Ереван, 1962, стр. 154.

Թուրքիայի գերմանամետ շրջադարձի գործում փոքր դեր չխաղացին Տաներերգում ռուսների 1914թ. օգոստոսի 8-ի պարտությունը: Սկզբնական շրջանում Էնվերի գերմանական կողմնորոշմանը հարում էր միայն Թալեաթը: Ջեմալը մինչև հոկտեմբերի 15-ը չեզոք էր: Որովհետև գահաժառանգ Ց. Իզեթը դեմ արտահայտվեց այդ կողմնորոշմանը, նրան սպանեցին ու հայտարարեցին, թե ինքնասպանություն է գործել: Բժշկական տեղեկանքը ստորագրողների թվում էր նաև Բ. Շաքիրը: Կառավարության անդամներից պատերազմին դեմ էին միայն Ոսկան Մարտիկյանը և Սուլեյման Էլ Բոստանին: Վարչապետն ու մյուս նախարարները տատանվում էին:

Սեպտեմբերի 8-ին Թալեաթը չեղյալ հայտարարեց կապիտուլյացիաները և Բեռլինի դաշնագիրը: «Հոկտեմբերի 1-ից սկսած,- 1914թ. սեպտեմբերի 16-ին գրեց "The Orient"-ը,-չեղյալ համարել կապիտուլյացիաները և դրանց նախորդող կամ դրանցից առաջացած իրավունքներն ու առանձնաշնորհումները... »: Գործնականում դա նաև նշանակեց Հայկական բարենորոգումների ջնջում: Հոկտեմբերի 9-ին Էնվերը ֆոն Մոլտկեին գրեց. «Թուրքական հարվածող ուժերին հրահանգված է, որպես նախապատրաստական քայլ, իրականացնել հետևյալը. 1. Առանց պատերազմ հայտարարելու պետք է հարձակվել ռուսական նավատորմի վրա՝ Սև ծովում գերակշռություն ստանալու համար: Հարձակման պահը թողնված է ծովակալ Սուշոնի հայեցողությանը: Ռուսաստանի դեմ պատերազմը հաջող սկսելուց հետո նորին վեհափառությունն սուլթանը սրբազան պատերազմ (ջիհադ) է հայտարարելու Թուրքիայի, Գերմանիայի և Ավստրիայի թշնամիներին: 2. Հայաստանում գտնվող թուրքական բանակը պետք է հուժկու հարձակում գործի Կովկասում եղող ռուսական զորքերի վրա... 3. Պատրաստություններ են տարվում 3-4 բանակներ Օդեսայում ափ հանելու, ծովում գերակայություն ապահովելու համար... ռազմական գործողությունների ժամկետը կախված է... գերմանական և ավստրիական հարձակման ընթացքից...»[66]:

Հոկտեմբերի 24-ին Թալեաթի և Ջեմալի հետ համաձայնեցնելով՝ Էնվերը հրաման է արձակում. «Նավատորմի հրամանատար ծովակալ Սուշոնին՝ թուրքական նավատորմը Սև ծովում պետք է գերակշռություն ունենա: Փնտրեք ռուսական նավատորմը և, առանց պատերազմ հայտարարելու, հարձակվեք նրա վրա, որտեղ որ գտնեք»[67]:

Հերման Լորեյը գրում է. «1914թ. հոկտեմբերի 15/28-ին, կեսօրին, Էնվերի գաղտնի հրամանով, Օդեսայի վրա հարձակում տեղի ունեցավ: «Գեբեն» ռազմանավը ...ռմբակոծեց Սևաստոպոլը: Հոկտեմբերի 16-ին նավը վերադարձավ Բոսֆոր: Իսկ «Բրեսլաուն»՝ նախ Թաման, ապա Նովոռոսիյսկ գնաց և Սինոպի մոտակայքից վերադարձավ Կ. Պոլիս... Գերմանական հածանավերը, ջրասույզ արեցին երկու առագաստանավ, «Շուրա» նավը, «Իդա» շոգենավը, մեկ ականաձիգ նավ՝ «Պրուտ», «Մեծ իշխան Ալեքսանդր» շոգենավը և «ՎՖ Մ3»-ը: Սկսվեց ռուս-թուրքական պատերազմը:

Բեռլինում Թուրքիայի դեսպան Մուխթարը խոստովանեց. «Առաջին համաշխարհային պատերազմում դաշինքը Օսմանյան կայսրության հետ պանգերմանացիների նկրտումների առջև բաց էր անում համաշխարհային գերիշխանության գայթակղիչ հորիզոններ: Ամբողջ երկրագնդով մեկ տարածված հարյուր միլիոնավոր մահմեդականների բարոյական ու նյութական օգնությունը Գերմանիայի համար ակնհայտորեն կարող էր դառնալ ծանրակշիռ ուժ ռազմական ու քաղաքական հաշվեկշռում»[68]:

«Թասֆիրի Էֆքիար» թերթը գրեց. «Մեկ կողմե Եգիպտոս մտնելով, այդ ճամփով փրկութեան թուական մը բանալ մեր 300 միլիոն կրոնակիցներուն, միւս կողմե մինչև Կարս և Թիֆլիս յառաջանալով՝ Կովկասն ազատել, Աֆղանստանի ու Հնդկաստանի պես մահմեդական երկրներու ճամբան բանալ մեր առջև, այս է զոր մեր վրա առած ենք»[69]:

Մորգենթաուի կարծիքով. «Գերմանիան ան ատեն իր տիրապետությունը կը պարտադրեր Սերբիայի, Պուլկարիայի, Ռումինիայի, Թուրքիայի, ան գործնականապես իրականացած կրնար նկատել Հիւսիսային ծովեն մինչև Պարսկական ծոցը տարածուող գերմանական նոր կայսրության մը յղացումը»[70]:

66 Թուրքահայերը Թուրքերի մասին, Երևան, 1980, էջ 137-138:
67 Лудшувейт Е. Ф. Турция в годы первой мировой войны, 1914-18гг., Москва, 1966, стр. 68.
68 General Moukhtar Pacha M. La Turquie, l'Allemange et L'Europe, Paris, 1924, pp. 1-2.
69 Ջոպանեան Ա., Հայաստան թիւրք լուծի տակ, Բոստոն, 1918, էջ 36:
70 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 8:

Թուրքիային կամակատար դարձնելու խնդրի լուծումը Բեռլինը հանձնարարեց Վանգենհայմին, որի հետ կայզրը «օրեր անցուցած էին խորհրդակցելով» Արևելքում Գերմանիայի գերիշխանությունը հաստատելու խնդիրների շուրջ: Վանգենհայմի միակ «կրոնական բնազդը» կայզրին աստվածացնելն էր[71]:

Թուրքիային դաշնակից ունենալով Գերմանիան հնարավորություն էր ստանում Ռուսաստանի առջև փակելու Դարդանելը, ինչը ռուսական բանակին կզրկեր սպառազինություն ներմուծելու և հացահատիկ արտահանելու հնարավորությունից: Կ. Պոլսում Գերմանիայի հաջողությունները շատ բանով պայմանավորված էին այն իրողությամբ, որ երիտթուրքերը դադարել էին «գոյություն ունենալ իբր վերածննդի դրական ուժ», հրաժարվել էին երկրի բարեկարգումից ու իթիհադի պարագլուխները «անձնատուր էին անձնական իշխանության անյագուրդ ախորժակի մը»[72]:

Տիրապետող է այն կարծիքը, թե Թուրքիայի հանդեպ Անտանտի երկրների վերաբերմունքն էր Կ. Պոլսի գերմանական կողմնորոշման պատճառը: Նաև գտնում են, որ այդ կողմնորոշումը վճռական դեր խաղաց կայսրության կործանման համար: Պատերազմին մասնակցելը Թուրքիայի վրա ծանր նստեց, ընդհանրապես: Թուրքիայի պետական պարտքը հասավ 2 200 մլն դոլարի, որի կեսը պատերազմական ծախսերն էին: Իսկ ամբողջությամբ պատերազմական ծախսերը կազմեցին 6 400 մլն դոլար[73]:

Թուրք մասնագետների կարծիքով պատերազմին Օսմանյան կայսրության մասնակցությունով «Համաշխարհային սպանդը երկարաձգվեց երկու տարի»[74]:

Պատերազմող երկրներից ամենաշատը տուժեց Թուրքիան, որը չկանգնեց Անգլիայի կողքին, որովհետև Եգիպտոսին անգլիացիների տիրանալը դեռ թարմ էր Թուրքերի հիշողության մեջ: Անգլիայի և Ռուսաստանի ազդեցության տակ էր Պարսկաստանը, որը «կը կազմեր մշտական սպառնալիք մը» կայսրության համար: Անգլիան գտնում էր, որ Թուրքիան պետք է վերջնականապես հեռանար Եվրոպայից, Լոնդոնը խզեց տնտեսական կապերը Օսմանյան կայսրության հետ, այդ երկրից դուրս հանեց իր կապիտալը: Նա Բալկանների անվտանգությունը նախապայման էր համարում իր արևելյան քաղաքականության հաջողության համար: Ինչ վերաբերում էր Ռուսաստանին, Թուրքերը շարունակում էին նրանից սարսափել, համարելով թիվ մեկ թշնամի, կայսրության մասնատման, մասնավորապես Բալկաններից զրկվելու հիմնական մեղավոր, Նեղուցներին, Կ. Պոլսին և արևելյան նահանգներին տիրանալու հավակնորդ: Նման պատճառներով Թուրքիան չէր կարող դաշնակից լինել նաև Ֆրանսիային:

Գերմանիան Թուրքիայում կենտրոնացրել էր քաղաքագետների, դիվանագետների և ռազմական գործի խոշոր մասնագետների ստվար բանակ: Այնտեղ էր «Համագերմանականության ռահվիրան»՝ Պոլ Վայցը, որ 30 տարի շարունակ եղել էր "Frankfurter Zeitung"- ի թղթակիցը և փայլուն գիտեր Օսմանյան կայսրությունը: Այնտեղ էր ծովային կցորդ Հյումանը, որն իր կյանքն անցկացրել էր Թուրքիայում: Ապա եկան Գոլցը, Սանդերսը, Սուշոն և տասնյակ ուրիշ առաջնակարգ գործիչներ: Գերմանացիների հոսքը Թուրքիա մեծ թափ առավ 1914 թվի սկզբներից, երբ Էնվերը դարձավ ռազմական նախարար: «Հեղափոխության դյուցազնը կյանքի խնդիր էր համարում գերմանացիներին իր կողքին ունենալը»: Թուրքիայի պատերազմի մեջ մտնելը Գերմանիայում ընդունվեց ցնծությամբ: Պ. Ռորբախը գրեց. «Թուրքերն իրենց պահեցին այնպես, ինչպես նրանց մասին ասել էին Բիսմարկն ու Մոլտկեն՝ նրանք իրոք Արևելքի ջենտլմեններն են»: Ֆ. Ֆիրբյուխերը նկարագրում է այն հրճվանքը, որ այդ օրերին ապրում էր գերմանացին: «Էնվերին դարձրին Զիգֆրիդ, Թալեաթը դարձավ Բիսմարկ, և Թուրքերն էլ մեզ ներկայացվեցին որպես մի ժողովուրդ, որն աշխարհի արարումից հետո չի ունեցել ավելի կրքոտ ցանկություն, քան կռվել գերմանացի ժողովրդի կողքին»[75]:

71 Ն.տ., էջ 9:
72 Ն. տ., էջ 16:
73 Мирсый С. К. К вопросу об определении стоимости мировой войны для Турции, см. "Новый Восток", 1923, N3, стр. 472.
74 Лудшувейт Е. Ф. Турция в годы первой мировой войны, 1914-18гг., Москва, 1966, стр. 309.
75 Фичбюхер Г. Армения 1915, Ереван, 1991, стр. 22, 23.

Հ. Մորգենթաուն գրում է. «Կարդալով 1914թ. օգոստոս ամսուան թերթերը... զարմանքս գրավեց հիացումը, զոր մամուլը կարտահայտեր այն սքանչելի թռիչքին համար, որով մեկ օրեն միւսը, քաղաքային բնակչութիւնը բանակի կը փոխակերպուի»[76]:

Եվ դա մի ժամանակ, երբ Թուրքիայի «քաղաքական ներկայացուցիչները բացահայտորեն կը յայտարարեին՝ խիստ չեզոքութիւն մը պահելու իրենց դիտավորութիւնը»[77]:

Հիրսը սեպտեմբերի 16-ին հայտնեց Պետրոգրադ. 1914թ. հուլիսի 30-ին հրապարակվեց զինակոչի մասին օրենքը, որը փակցվեց շենքերի պատերին համապատասխան հայտարարության հետ միասին. «Մոնետիկները թմբուկներով հավաքում են գերմաներեն իմացող մինչև 45 տարեկաններին»[78]:

Ինչպես նաև բոլոր 20-25 տարեկաններին: Հաղորդվում էր Գերմանիայից սեպտեմբերի 2-ին ժամանած մին բերող ութ, թնդանոթներ բերող ինը և ռազմամթերք բերող 30 վագոնների մասին:

Թուրքիան, սակայն, բացարձակապես պատրաստ չէր պատերազմին: Մորգենթաուն նկարագրում է թուրքական զինակոչը. «Արաբներ, բոկոտն... քայլվածքնին դանդաղ և դեմքներնին սարսափ», կային նաև բեդվիններ, որոնք «փութանակի անապատեն ժողվուած էին»: Զորահավաքը ոչնչով նախապատրաստված չէր, մարդկանց հավաքել էին որտեղից պատահեր, «ոմանց իրենց ագարակներուն, ոմանց խանութներուն մեջ, մեծ մասը միայն ցնցոտիներ կը կրեր և անոնց մեջ շատերն անոթութենե կես-մեռած կը թուեին, անոնք պատկերն էին յուսահատութեան, համակերպութեան... ճակատագիրի մը, որմե գիտեին թե չէին կրնար փրկուիլ: Մոտալուտ կռիվին կոչուելնուն համար ոչ ուրախութիւն, ոչ ալ ազնիվ դատի մը համար զոհաբերութեան գիտակցութիւնն ունեին»: Թուրք զինվորը բանակ էր գնում արդեն հուսահատ[79]:

Բանակը չի ապահովված հանդերձանքով, հրացանով, սննդամթերքով: Սկսվել է սովն ու դասալքությունը: Հայկական կոտորածը հետաձգվել է հարուստ մահմեդականների պահանջով:

Հիրսը տեղեկագրեց, որ Էրզրումում «մեծ զորաշարժեր են սկսվել ռուսական սահմանի մոտ: Մուսլմաններին զենք են բաժանում հայերի առաջիկա կոտորածի համար: Կապիտուլյացիաների վերացումը նկատի ունենալով՝ կոտորելու են նաև հյուպատոսություններում, որտեղ նրանք կթաքնվեն»[80]:

Խանդավառ ու եռանդուն էին միայն գերմանացի սպաները, ովքեր Կ. Պոլսում տեր ու տիրական էին: Գոլցը «փոխարքայի մը պես, ամեն օր Պոլիսը կպտեր խենթ արշավով... խոշոր ինքնաշարժի մը մեջ, որուն դռնակին վրայ կը բոցափայլեր գերմանական արծիվը: Առջևի կառուղիյի նստարանին վրայ փող մը՝ ինքնաշարժին անցքին՝ աղմկայուզ վրդովիչ ազդարարութիւններ կարձակեր... Գերմաններն ինքզինքնին երկրի տերը կը նկատեին և չէին ջանար այդ բանը քողարկել»[81]:

Հիրսը պատմում է, որ Կ. Պոլսի շրջանում ռազմական նախապատրաստությունների առանձնահատուկ աշխուժություն էր տիրում: «Զգացվում է լարվածություն և շտապողականություն... ռազմական նախապատրաստությունները գնում էին ամբողջ թափով»[82]:

Զորաշարժն ուղեկցվում էր բռնագրավումներով, ինչը «քաղաքացիներու կողոպտում էր պարզապես... Թուրքերը կը գրավեին ձիերը, ջորիները, ուղտերը, ոչխարները, կովերը»: Էնվերը խոստովանել է, որ այդ եղանակով հավաքվել էր 150 հազ. կենդանի: Բազմաթիվ գյուղերում միայն «երկու կով և երկու զամբիկ թողեցին»: Դրա հետևանքով քայքայվեց գյուղատնտեսությունը և մեծ թվով մարդիկ սովի մատնվեցին: «Ցեղուզակային եղանակներով» բռնագրավեցին նաև սննդամթերքը, պահեստների ու խանութների ապրանքները և «այդ վաճառականներուն մեջ ոչ մեկ իսլամ չի կար, անոնք քրիստոնեայ էին»: Այդ ձևով ոչ միայն բանակի կարիքներն էին հոգում, այլև թուրք պաշտոնյաների գրպանները լցնում: Թալանվեցին նաև քրիստոնյաների կրոնական հաստատությունները: «Ժողովուրդին մեծագույն մասին համար,- գրում է Մորգենթաուն,- գրավումը հոմանիշ էր կործանումի», դա բանակի կարիքների հոգալ չէր, այլ ավազակություն: «Բանակի կարիքների համար» խլում էին կանացի գուլպաներ, սեղմիրաններ, նորածնի հագուստներ, ձկնկիթ, կանացի սպիտակեղեն: Բռնագրավված շատ ապրանքներ անմիջապես վաճառքի էին հանվում:

«Արական սեռի չորս միլիոն չափահաս բնակչությունից զորակոչվեց 1.5 միլիոն մարդ: Զինվորին ամսական վճարում էին 25 ցենտ, իսկ նրա ընտանիքին 20 դոլարին համարժեք դրամ կամ այլևայլ ապրանքներ: Դրա հետևանքով «կայսրությունն իր թիւրք ազգաբնակչության 1/4 կորսնցուց»: Մինչդեռ Էնվերը հպարտանում էր, որ առանց դրամ ծախսելու կարողանում էր վիթխարի բանակ հավաքել: Ով խուսափում էր զորակոչից, մահվան էր դատապարտվում: Սկզբում 190 դոլար վճարողն ազատվում էր զորակոչից: Բայց հետո սկսեցին զորակոչել բոլորին, առանց հաշվի առնելու զինվորական տուրք վճարել էին, թե ոչ: Բռնագրավումներից անմասն չմնացին նաև գերմանացիները և անգամ գերմանական կառավարությունը: Հյումանը 1914թ. սեպտեմբերի 14-ին հեռագրում է. «Տերինեե շոգենավին բեռնուած բաժինը գերման կառավարութեան համար իմ կողմե գրաւուած է»[83]:

Դեռ մինչև պատերազմի մեջ Թուրքիայի մտնելը հայերի շրջանում անհանգստություն էր տիրում, որը շատ տեղերում վերածվեց խուճապի: Ադանայի նախկին առաջնորդ Մուշեղ Եպ. Սերոբյանը 1914թ. սեպտեմբերի 11-ին հայտարարեց. «Թուրքն ուշ կամ կանուխ պատերազմին պիտի մասնակցի Գերմանիոյ կողքին, և առաջին յաղթանակներուն պիտի յաջորդե այնպիսի ջարդ մը, որուն նմանը տեսած պիտի չըլլայ և անկե վերջ թերևս սերմնցու հայ մը դժուար ըլլայ գտնել Թուրքիոյ մեջ»[84]:

Թուրքիայում հակահայկական տրամադրությունների նոր ալիք առաջացրեց պատերազմը սկսելու կապակցությամբ Նիկոլայ 2-րդի նամակը Թիֆլիսի հայ վերնախավին. «Հինգ դար տևած գերության և բռնապետական լծից հետո, որի ընթացքում ձեզնից ինչքան հոգիներ ընկճվեցին և որքանն էլ դեռ ենթակա են ամենազզվելի նախատինքների, վերջապես հասել է ազատության ժամը: ...Հայեր, միացեք ձեր արյունակից եղբայրներին: Ցարական մականի տակ վերջապես կվայելեք ազատության և արդարության բարիքները»[85]: «Թանին» թերթն այդ նամակի կապակցությամբ 1914թ. սեպտեմբերի 9-ին գրեց. «Զգիտենք, թե ցարի ներկայացուցչի կողմից այս հայտարարությունը կարդալու ընթացքում հայ մեծամեծներն իրենց ականջները փակեցի՞ն թե ոչ: ... Սակայն մենք վստահ ենք, հայերը, որ հինգ դարից ավելի բնակվում են Օսմանյան կայսրությունում և պահել են իրենց ազգությունը, լեզուն և կրոնը, երկրում գրավել են կարևորագույն պաշտոններ, մեծապես կգարմանան ռուսներին հանկարծ համակած ազատության ու անկախության սիրուց... Նույնքան էլ վստահ ենք. այս հայտարարությունը, որ հրապարակվեց հատկապես կովկասյան սահմանի այս կողմում լսելու համար, ոչ մի ազդեցություն չի ունենա մեր հայրենակիցների վրա, որոնց օսմանցիությանը հարելն ու հավատարմությունը մնացել են անխախտ՝ հակառակ տարիներ ի վեր այս ուղղությամբ կատարված ամեն տեսակի գրգռումների և ջանքերի»[86]:

Իսկ կաթողիկոսն օգոստոսի 2-ին Վորոնցով-Դաշկովին գրեց. «Երջանիկ եմ Ձերդ սրբազանությանը հավաստիացնելու, որ հայ ժողովուրդը... արձագանքելով ցարի կոչին՝ կկատարի իր սրբազան պարտքը կայսերական մեծության և հայրենիքի հանդեպ»: Կաթողիկոսը ռուսներին կոչ էր անում գրավել հայկական նահանգները և իրականացնել «Թուրքիայի լծի տակ դարերով տառապող քրիստոնյա ժողովուրդների ազատագրական պատմական առաքելությունը»[87]:

Գավառների հայ բնակչությունը զգում էր գալիք արհավիրքի արյան հոտը և հայ կուսակցություններին խնդրում աղետը կասեցնելու քայլերի դիմել: Սակայն, ինչպես գրեց դաշնակցության պաշտոնաթերթը 1915թ. փետրվարի 2-ին. «Պոլսոյ մեջ Դաշնակցութեան հանդեպ կառա-

76 Մորգենթաուն Հ. նշվ. աշխ., էջ 55:
77 Ն. տ.:
78 АВПР, Канцелярия, д. 386, л. 16.
79 Մորգենթաուն Հ. նշվ. աշխ., էջ 56-57:
80 АВПР, Канцелярия, д. 386, л.16.
81 Մորգենթաուն Հ. նշվ. աշխ., էջ 58:
82 АВПР, Канцелярия, д. 386, л.16.

83 Մորգենթաուն Հ., նշվ. աշխ., էջ 60:
84 Սերոբեան Մ.. Դիտումներ և դատումներ, Բեյրութ, 1932, էջ 84:
85 «Ժուռնալ» լրագիր (Կ. Պոլիս), 17. 09. 1914:
86 "The Orient",14. 10. 1914. p. 408:
87 Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, Երևան, 1991, էջ 330-332:

վարութեան ունեցած անվստահութիւնն այնքան մեծ է, որ անոր հետ կացութեան մասին խոսիլը գրեթե անկարելի է»[88]:

Երիտթուրքերն իրենց մտադրության մասին սկսեցին խոսել երկիմաստ, բայց բարձր: 1914թ. դեկտեմբերին «Թասվիրի Էֆքիարը» գրեց. «Օսմանեան կառավարութիւնը պարզորեն օգտուելով ռուսական յարձակողականին ստեղծած առիթեն՝ իր բոլոր ճիգերն ի գործ պիտի դնե իր թշնամիները ճզմելու և ծունգի բերելու համար և այս պայքարին մեջ անպայման պիտի ունենայ ազգին և մահմետական աշխարհին ամենեն անկեղծ և լավագոյն օգնութիւնը: Եվ ի վերջոյ, Ալլահի օգնութիւնով պիտի յաղթական դուրս գայ»[89]:

Ինչո՞ւ Թուրքիան պատերազմի մեջ մտավ Գերմանիայի կողմից, չնայած Անտանտը երաշխավորում էր նրա տարածքային ամբողջությունը և պատերազմում էլ վերջինիս հաղթանակի հավանականությունը ավելի մեծ էր, քան Քառյակ զինակցությանը: Հիմնականում դեր խաղաց երեք պատճառ. Գերմանիան խոստանում էր իրողություն դարձնել երիտթուրքերի պանթուրքիստական երազը՝ ուղի հարթել դեպի Արևելքի թուրքական ցեղերն ու ժողովուրդները: Կապիտուլյացիաների վերացումը: Խաղաղ պայմաններում անհնար էր, որ տերությունները հրաժարվեին Թուրքիայում իրենց առանձնաշնորհումներից, զոհեին իրենց ֆինանսական շահերը, Թուրքական դատարանին հանձնեին իրենց քաղաքացիներին, ձեռք քաշեին Թուրքիայի ներքին գործերին միջամտելուց և նոր առանձնաշնորհումների համար պայքարից: Հայկական հարցի արմատական և վերջնական լուծման «անհրաժեշտությունը» բխում էր՝ ա. Այդ հարցը տասնամյակներ շարունակ Թուրքիայի համար նեղ պահերին օգտագործվել էր տերությունների կողմից և բ. բարենորոգումները տանելու էին դեպի անկախ Հայաստանի ստեղծում: Հայերի հավակնությունների չեզոքացումը Թուրքերի համար նպատակ էր, որի լուծման միջոց կարող էր լինել, ամենից առաջ, նրանց ամբողջական բնաջնջումը: Երիտթուրքերն արյունախում դաստիարակություն էին ստացել, և ոչնչացնելը նրանց համար արտակարգ գործողություն չէր: Անգլիայի վարչապետ Ասքուիթին Քիլտը Հոլում արտասանած ճառում ասած. «Երբ այս պատերազմը սկսվեց, մեր դաշնակիցների հետ համախորհուրդ, Թուրքական կառավարությանը հասկացրինք, որ եթե չեզոք մնա, իր կայսրությունն ամբողջականությունից կամ հեղինակությունից ոչինչ չի կորցնելու»: Սակայն Թուրքիան չեզոք չմնաց: Գերմանիան նրան խոստացավ Կովկասը, և դա դարձավ հրամայականներից մեկը պատերազմի մեջ հօգուտ Քառյակ զինակցության նրա մտնելու համար[90]:

"Westminster Gazette"-ը գրեց. «Երիտթուրքերը նույնքան վատ դուրս եկան, որքան ծեր թուրքերը: Թուրքերի բնավորության մեջ երեք ազգակներ վճռական դեր են խաղում: Նրանք չունեն մշակույթ և չեն կարող մի ազգի հետ համագործակցել, որն այն ունի: Մահմեդական կրոնով կնոջը հատկացված վիճակն անհնար է դարձնում, որ Թուրքերը կարողանան կառավարել մի ազգի, որն ունի քրիստոնեական բարոյականություն: Վերջապես, իշխելու ոգին Թուրքերի համար դարձել էր երկրորդ բնավորություն»: Ֆրանսիայի խորհրդարանի անդամ, ակադեմիկոս Դ. Գոշեն գտնում էր, որ երիտթուրքերը «Գերմանիայի ոչ թե բարեկամները, այլ խոնարհ ծառաները դարձան... 8 000 գերմանացի մարզիչներ 1 000 սպաներով բաժանվել են Թուրքական գյուղերի վրա»: Պատմագրության մեջ ոչ քիչ դեպքերում չափազանցվում է Հայկական հարցի դերը միջազգային քաղաքականության մեջ:

Է. Գրանվելը գրում է. «Համաշխարհային դրամայի նախապատրաստական պահերում Հայկական հարցն ամենակարևորներից մեկն էր, որը բախման հանգեցրեց մեծ տերություններին»: Նման գնահատականի պատճառն այն էր, որ հարցը «չափից դուրս խառնաշփոթ էր», որի հիմնական նշանակությունը պարզ էր միայն փոքրաթիվ դիտորդներին: «Բալկանյան տագնապի և համաշխարհային պատերազմի միջև ընկած կարճ ժամանակահատվածում» դիվանագիտությունը երկյուղով էր «հետևում Հայկական հարցին՝ կանխատեսելով, որ դրանում աճող վտանգ կա Եվրոպայի խաղաղության համար»[91]:

88 *Լեփսիուս Ցո.* նշվ. աշխ., էջ 209:
89 *"The Orient", 14. 12. 1914.*
90 *«Հնչակ», 1914, թիվ 2:*
91 *Աղոնց Ն.* նշվ. աշխ., էջ 38-39:

Կոտորածների ահագնացող վտանգը նորից համադրեց հայության երկու հատվածների մոտեցումները: Արևմտահայերը զգուշանում էին արևելահայերի բացահայտ հակաթուրքական կեցվածքից: Վանի դաշնակցականները Հ. Քաջազունին ուղարկեցին Թիֆլիս զգուշացնելու Ազգային բյուրոյին, որ ձեռնպահ մնան արևմտահայ խնդիրներով զբաղվելուց: Դա բազմիցս խոստովանել էին նաև արևելահայ գործիչները: Նրանք մասնավորապես նշում էին Շահրիկյանի անհանդուրժողականությունն այդ հարցում, Ռոստոմը նրանց հանձնարարում էր զբաղվեին իրենց գործերով և «չխառնվեին Թուրքահայերի գործերին», քանի որ, ասում էր նա, Անդրկովկասի «հայերի գործունեությունը Հայաստանին ոչ միայն ազատություն չէր բերի, այլ, եթե Թուրքահայերը հետևեն ու պաշտպանեն ձեր քաղաքականությունը, ապա այդ նրանց կտանի կործանման», ոչ թե կազատագրի, այլ մահվան կդատապարտի:

Էրզրումի համաժողովը (8-րդ) «որոշեց իրականացնել լրիվ լոյալություն և զենքը ձեռքին պաշտպանել Թուրքիայի անկախությունը», իսկ Անդրկովկասում կամավորական շարժմանը «Թուրքական կառավարությունը և զինվորական իշխանությունները պատասխանեցին դաժանագույն բռնություններով: Մուշում, Վանում և այլ շրջաններում տեղի էին ունենում անօրինական բռնագրավումներ, մինչև 45 տարեկան հայերի հարկադիր հավաքագրումներ, սադրիչ նպատակներով քաղաքական սպանություններ և այլն»[92]:

Նույն օրերին, երբ ստորագրվում էր բարենորոգումների վերաբերյալ համաձայնագիրը, Կ. Պոլսում մի թուրք բարձրաստիճան պաշտոնատար հայտարարեց. «...Ահռելի կերպով պիտի ջարդեն հայերը, ինչպես ըրին Ադանայում»[93]:

Մեծ եղեռնին անցնելու առաջին քայլը հանդիսացավ հայ պաշտոնատարների պաշտոնանկությունը. այն սկսվեց 1914թ. հունվարին: «Ցունուար 1914-են սկսեալ ՆԳ նախարարութեան և արդարադատութեան ու կրոնից նախարարութեան հրամաններով և հրահանգներով նահանգներու և գավառներու մեջ պետութեան և վարչական շրջաններու մեջ պաշտոն վարող հայերը պաշտոնանկ եղան, քիչ բացառութեամբ, և անոնց տեղ բերուեցան իսլամ և թուրք պաշտոնեաներ. այնպես որ մեկ տարուան 1914-1915 ընթացքին հայ պաշտոնեաներեն գրեթե հարիւրեն 90-ը փոխարինուած էին: Պոլսոյ պատրիարքարանը 16 ապրիլ 1914-ին բողոք ներկայացուց կառավարութեան, սակայն պաշտոնանկութիւնները ավելի սաստկացան և բազմացան: Նոյեմբեր 1914-ին արդեն վեց հայ նահանգներու և գավառներու մեջ պետութեան և վարչական շրջաններու մեջ պաշտոն վարող հայերը հեռացուած էին իրենց պաշտոններեն»[94]:

Երկրորդ խոշոր հարվածը հայերին՝ զենքերի հավաքումն էր: Զենքերի հավաքման գործում երիտթուրքերին աջակցում էին թե դաշնակցությունը և թե պատրիարքարանն ու հոգևորականության նշանակալից մասը: Ցոզղաթի առաջնորդ Դանիելյանը հանձնարարեց եկեղեցիներում ընթերցել պատրիարքի հրահանգը և ժողովրդին հորդորում էր հանձնել զենքերը «օրենքը յարգած ըլլալու համար»[95]:

Զենքերի հավաքումն ուղեկցվում էր վայրագ խժդժություններով: Ոստիկանի համազգեստ հագած անհայտ զբաղմունքի տեր մարդիկ «կը մտնեին հայերու տուները, կիներն ու աղջիկները կը մերկացնեին և կարմրած երկաթով կայրեին անոնց մարմնի ամենեն փափուկ մասերը ստիպելու համար, որ յայտնեն այրերու պահուած թաքստոցները և զենքերու տեղերը»[96]:

1913թ. հոկտեմբերին հայ գրերի գյուտի հոբելյանի օրերին Աղիբազարի հայերը սպանել էին մի թուրք ոստիկանի: Այդ պատճառով այստեղ ծայրահեղ միջոցների դրծադրմամբ էին զենքերը հավաքում: «Հայերեն շատեր իրենց զենքերը յանձնեցին... Թեև թուրքերն ալ յանձնեցին... սակայն մեկ ձեռքով կուտային, իսկ միւսով ետ կառնեին: Կառավարութիւնը հավաքուած զենքերուն վրայ կարգ մը պետական զենքեր ալ ավելցուց ու կառավարութեան

92 *Гурко-Кряжин В. А.* նշվ. աշխ., էջ. 78-79:
93 *Թեոդիկ* Ամենուն տարեցույց, Կ. Պոլիս, 1916-20, ԺԴ տարի, էջ 50:
94 «Հայկաշեն տարեգիրք», Ա տարի, Կ. Պոլիս, 1922, էջ 108-110:
95 Ն. տ., էջ 122, 141:
96 *Գրիկեր*, նշվ. աշխ., էջ 113:

չենքին առջև ցուցադրեց և լուսանկարել տուավ, մեկ կողմե Թուրքերը հայերու դեմ գրգռելու և, միւս կողմեն, ալ Պոլիս տեղեկագրելու հայերու կողմե երևակայական յարձակումներու և ապստամբութեանց պատրաստ ըլլալու»[97]:

«Հայերը,- գրում է Ջ. Բրայսը,- զենք կը գնեն իսլամներե, զանոնք հանձնելու Թուրք իշխանութեան, որպեսզի իրենց ենթարկած անագորույն տանջանքներեն վայրկեան առաջ փրկուեին: Այս պարագան հաստատվում է բոլորովին անկախ և անաչառ բազմաթիվ ականատեսներու կողմե»[98]:

Այդ էին հաստատում նաև գերմանացիք. «Շատ հայեր ստիպված էին բարձր գներով զենք գնել իրենց Թուրք ու չերքեզ դրացիներեն, որպեսզի կառավարութեանը հանձնեն»[99]

Մարզվանում մի հայ արհեստավոր մարզական խաղերի համար երկաթե գունդ էր պատրաստել. Թուրքերն այն վտանգավոր համարեցին ու հեղինակին դաժանորեն ծեծեցին:

Գր. Զոհրապի կարծիքով պատերազմը տևելու էր մի տարուց ավելի: Եթե Զոհրապն ու Գարոն գտնում էին, որ Թուրքիայում կար ապստամբության հնարավորություն, ապա Վարդգեսը այդ հնարավորությունը բացառում էր: Երեքը համակարծիք էին, որ Թուրքիան տարածքներ էր կորցնելու: Զոհրապի կարծիքով Արևմտյան Հայաստանի մի մասն անցնելու էր Ռուսաստանին, բայց նաև տեղի էին ունենալու ջարդեր: Գարոն ու Վարդգեսը բացառում էին ջարդերի հնարավորությունը: Զոհրապի ու Գարոյի կարծիքով հայերը պատերազմից դուրս էին գալու շահած, իսկ Վարդգեսը դա բացառում էր: Այսպիսով, եթե նկատի առնվի, որ այդ երեք առաջատար գործիչների կարծիքները մոտավոր ճշտությամբ արտացոլում էին արևմտահայության տրամադրություններն ու տիրող կարծիքները, ապա ակնհայտ էր, որ հայը պատերազմը դիմավորում էր անորոշության մեջ, չուներ ոչ միայն հստակ կարծիք, այլև, ընդհանրապես, գործողության ու վարքագծի ծրագիր ու կողմնորոշում:

Արևմտահայությունն առանձնապես մոլորված էր գլխավոր հարցում՝ ռուս-Թուրքական պատերազմի դեպքում ի՞նչ դիրք գրավել: Ըստ Զոհրապի՝ այս հարցի պատասխանը կարող էր տալ միայն Դաշնակցությունը: «Պատրիարքարանում,- գրում է նա,- չկան անհատականություններ: Երկրորդական կուսակցությունները նշանակությունից զուրկ են: Միայն Դաշնակցությունն է ոտի վրա, որն էլ, սակայն, ավելի լի է հույսերով, քան գործող ուժով»:

1914թ. հոկտեմբերի 15-ին (հ.տ) Էթիհադի կենտրոնը քննարկեց հայերի հանդեպ վերաբերմունքի հարցը և հաստատեց բռնագաղթի որոշումը: Հոկտեմբերի 20-ին Ազգային ժողովը հանձնարարեց պատրիարքին հայության անվտանգությունն ապահովելու նպատակով «լավ հարաբերություններ հաստատել Թուրքիայի կառավարության հետ և այդ ոգով շրջաբերական ուղարկել տեղերը: Հոկտեմբերի 26-ին պատրիարքը հայերի կողմնորոշման վերաբերյալ որոշումը ներկայացրեց Բ. Դռանը: Արձագանքը բոլորովին էլ այն չէր, ինչ սպասում էին հայերը և ծլարձակվում էր կարծիք, թե գերմանացիների հաղթանակի դեպքում Թուրքական հողի վրա վերջ էր դրվելու հայերի գոյությանը»[100]:

Դեկտեմբերի 29-ին պատրիարքը Վանգենհայմին ասաց՝ հայերի զորահավաքը բնակչությանը թողնում էր անպաշտպան, որ արդեն սկսվել էին հարձակումները հայկական գյուղերի վրա: Հետևաբար դեսպանի պահանջ-խնդրանքը՝ օգնել, որ հայ ժողովրդի մեջ ձևավորվի դրական վերաբերմունք Գերմանիայի հանդեպ[101]:

97 Զավեն արքեպս. նշվ. աշխ., էջ 451-452:
98 Մերազնց Վ. Հայկական ջարդերու փաստաթղթեր, կ. Պոլիս, 1920, էջ 24:
99 Տաշեան Հ., Հայ ազգի տարագրությունը գերմանական վավերագրերու համեմատ, Ա մաս, Վիեննա, 1921, էջ 71:
100 Армянский вопрос и геноцид армян… стр. 163.
101 Ն. տ., էջ 168-170:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՈՒՄ

Փաստորեն 1914թ. հոկտեմբերի 27-ը, երբ Սուլթանի հրամանով սկսվեց հարձակումը Սևաստոպոլի, Օդեսայի, Նովոռոսիյսկի, Թեոդոսիայի վրա, հանդիսացավ ռուս-Թուրքական պատերազմի սկիզբը: Երկու օր անց Սազոնովը Հիրսին հանձնարարեց հեռանալ Թուրքիայից: Հիրսի փորձերը՝ մեծ վեզիրին տեղյակ պահելու այդ հեռագրի մասին, հաջողություն չունեցան, Թուրքական կառավարության ղեկավարը «հիվանդ էր»: Իսկ մի քանի օր անց Սայիդ Հալիմը Հիրսին ասաց, որ հարձակումը տեղի է ունեցել հակառակ իր հրամանի: Նա խոստացավ «կարգի հրավիրել գերմանացիներին»[1]:

Հոկտեմբերի 31-ին Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային: Պատերազմը սկսելու կապակցությամբ Նիկոլայ 2-րդի հռչակագրում ասվում էր, որ Ռուսաստանը պատերազմում է Թուրքիայի դեմ որպես «քրիստոնեական հավատի և բոլոր սլավոնական ժողովուրդների հին հարստահարիչի դեմ»:

Թուրքական բանակը Կովկասյան ռազմաճակատում հարձակման անցավ երկու ուղղություններով. հյուսիսում՝ Սարիղամիշ-Կարս- Արդահան-Բաթում- Թիֆլիս-Բաքու, հարավում՝ Ուրմիա-Թավրիզ: Վանգենհայմը արձանագրեց՝ պատերազմի մեջ Թուրքիայի մտնելու կարևոր նշանակությունը ոչ թե այն էր, որ հանձին Թուրքական բանակի եռյակ զինակցությանը սատար էր կանգնում հզոր ռազմական ուժ, այլ դա հնարավորություն էր Անտանտի դեմ հանելու մահմեդական աշխարհը: Օսմանյան կայսրության թեոկրատական բնույթը միշտ էլ խոչոր գործոն է եղել նրա պատմության մեջ: «Մեր ամբողջ պատմության հիմքը կրոնն է,- գրում է Արդուլ Համիդը:- Եթե իսլամի միութեան գաղափարը վերջանա, մեր պետությունն էլ կվերջանա»[2]: Երիտթուրքերը գործնական քայլեր կատարեցին մահմեդական կրոնը ծառայեցնելու համաթրքական քարոզչությանը, դրան ներարկելու թրքական ոգի: Եվ զարմանալի չէ, որ մտադրվելով մտնել առաջին աշխարհամարտի մեջ, նրանք որոշեցին լրիվ օգտագործել մահմեդական կրոնը Անտանտի դեմ : Ահա թե ինչու էր առանձնահատուկ նշանակություն տրվում ջիհադին՝ «սրբազան պատերազմին»: «Սրբազան պատերազմի գաղափարը,- գրում է Ա. Շիրակյանը,- հղացվել և ծրագրվել էր Գերմանիայի կողմից, որը կարծում էր, թե գրգռելով իսլամ աշխարհի կրոնական մոլեռանդությունը, 300 միլիոն մահմեդականներին ոտքի պիտի հաներ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեմ»[3]: Հավանաբար գոյություն են ունեցել ջիհադ հայտարարելու մի քանի տեքստեր: Այն կազմված է եղել 5 000 բառից (կա նաև վկայություն 10 000 բառից կազմված լինելու մասին): Հայտարարության տեքստը գրվել էր պատերազմի մեջ Թուրքիայի մտնելուց առաջ: Սանդերսի համարով Մուլմանի վկայությամբ այն պատրաստ էր դեռ 1914թ. հոկտեմբերի 9-ին, այսինքն՝ նույն օրը, երբ Էնվերը Սուլթանին հրամայեց սկսել հարձակումը ռուսական նավահանգիստների վրա: Դա արյունոտ փաստաթուղթ է: «Երկիրը մաքրել ոչ ցանկալի տարրերից: Միակ ուղին է»: «Անհավատների արյունն անարժեք է»: Սրբազան պատերազմի իրադեում «անհավատ» բառը օգտագործված չէ, սակայն Թուրքը քաջ գիտակցում էր, որ այդ «սրբազան պատերազմը» նախ ուղղված էր օսմանահպատակ ոչ մահմեդականների՝ հայերի և հույների դեմ: Պալավիչինին գրեց Վիեննա. «Անհանգստացնող է ղեկավար մարմինների և, մասնավորապես, Էնվերի ակնհայտ մտադրությունը որպես գործիք օգտագործել իսլամ բնակչության կրոնական մոլեռանդությունը»: Բացարձակապես որոշակի է, որ «սրբազան պատերազմի» կոչի ազդեցությունը մեծ լինել չէր կարող: «Բոլորովին այլ է, երբ խոսքը գնում է մի փոքր մարզի քրիստոնյա բնակչության դեմ սադրանքների հրահրման մասին»[4]:

Իր «Հինգ տարի Թուրքիայում» գրքում Սանդերսը գրում է. «Ջիհադը Թուրքիայում գործադրվեց ամբողջությամբ միայն հայերի դեմ և տարագրությունը հրամայված էր կառավարության կողմից: Քաղցից մեռան նաև շատ Թուրքեր, որովհետև հայերը տարագրված էին և երկիրը վերածված էր ավե-

1 "Вторая оранжевая книга", докл. 90, стр. 56-57.
2 «Հորիզոն», 1913, թիվ 41:
3 Շիրակյան Ա., նշվ. աշխ., էջ 34-35:
4 Գուստ, նշվ. աշխ., էջ 45:

բակի»: Մորգենթաուն նույնպես նկատում է, թե ջիհադը «միմիայն հայերի դեմ գործադրվեց»[5]: «Թուրք ժողովրդի առնուազն հարիւրեն ութսունը մասնակցել էր սպանութեանց և կողոպուտի»[6]: «Թրքական փաղանգները, թրքական քաղաքացիական և զինուորական պաշտոնեաները և թուրք ժողովրդին ճնշող մեծամասնութիւնը դատապարտուած են իբրև ցեղասպան՝ պատմութեան դատաստանի առջև: Արեան գինը, անձնական և ազգային սեփականութեան արժէքը, նուազագոյն 5 000 000 000 ոսկի տոլար, և իր պատմական և պապենական հողերուն վերադարձը, միջազգային դաշնագրային պարտաւորութեամբ, Ուիլսոնեան սահմաններով»[7]: Մորգենթաուն նկատում է, որ պատերազմ հայտարարելու վերաբերյալ սուլթանի հոկտեմբերի 27-ի ֆերման, իրականում ջիհադ սկսելու կոչ էր: Մ. Ռիֆաթի վկայութեամբ, սուլթան Մուհամեդ Ռեշադ 5-րդը, լինելով իթիհադի անդամ, չեյխ ուլ իսլամ Մուսա Քյազիմի ստորագրած կոչի տակ, հակառակ վերջինիս կարծիքի, ավելացնել էր տվել «Հայտարարել սուրբ պատերազմ» բառերը: Ռիֆաթը նաև գրում է. «Ցավուզ Սելիմից հետո Օսմանյան գահին տրված խալիֆայության հանդամանքը փակ տուփում գտնվող և ազդեցությունը չփորձած ռումբի էր նման. այն շատ վտանգավոր ուժ էր: Ոչ ոք ի զորու չեղավ որոշելու նրա ուժն ու ազդեցության շրջանակը»: Սուլթանի հայտարարած սուրբ պատերազմը, ավելացնում է Ռիֆաթը, լրիվ հակասում էր կրոնական օրենքներին: Մի քանի քրիստոնյա պետությունների դեմ սուրբ պատերազմ հայտարարելով, խալիֆը մի քանի այլ քրիստոնյա պետությունների հետ զինակցած, ուզում էր իսլամական աշխարհը ուղի հանել հօգուտ այս զինակիցների շահերի: Դրանով է բացատրվում սրբազան պատերազմի ձախողվելը, այն չէր բխում կրոնական օրենքների տրամաբանությունից: Այդ հռչակագրում կարելի է հանդիպել հետեւյալ տողերի. «Պետք է հիշենք, որ բացարձակապես ապօրինի է կռուել ուրիշ կրոնքի ժողովուրդներէն որևէ մեկուն դեմ, որոնք թշնամութիւն յայտնած չեն խալիֆայական աթոռին դեմ...»[8]: Իսկ աշխարհի մահմեդականների համար անհասկանալի էր, թե ինչու պիտի սրբազան պատերազմ մղեին բոլոր քրիստոնյաների դեմ, բացի գերմանացի և ավստրիացի գլխավորներից:

Քաղվածքներ 1914թ. հոկտեմբերի 11-ին չեյխ ուլ իսլամ Քյազիմի կողմից ստորագրված սուրբ պատերազմի հայտարարությունից. «Ժամանակը եկած է կազմակերպելու գաղտնի և հրապարակային ընկերություններ, սրբազան պատերազմ յայտարարելով, մաքրելու համար երկրին անբաղձալիները և յաղթանակ տանելու անկախութեան ուժով... Սրբազան պատերազմը պարտականութիւն մըն է, պետք է ըլլայ գաղտնի կամ հրապարակային: Կորանը ըսած է. «Անհավատները բռնեցեք, սպանեցեք, ուր որ գտնեք: Ձեր ձեռքին մեջ գտնուողին դեմ գերագոյն ուժ ի գործ դրեք... Թուրքերն անոթի են և կը տառապին, իսկ անհավատները լիութեան և պերճանքի մեջ կապրին: Ժամանակն է իւրաքանչիւրին առնելու մեկ ձեռքի մեջ՝ սուր, միւս ձեռքի մեջ՝ հրացան և գրպաններուն մեջ՝ մահացու գնդակներ»»[9]:

Սրբազան պատերազմ հռչակելու հրովարտակի հետ շրջանառության մեջ դրվեց մանրամասն հրահանգ, որը տարածվեց ամբողջ մահմեդական աշխարհում.

«Ով հավատացեալ ժողովուրդ և ով սիրեցեալ իսլամներ, աչքի առջև բերեք. հոգ չէ թեկուզ կարճ վայրկեան մը, իսլամական աշխարհի ներկայ վիճակը: Որովհետև եթե քիչ մը նկատի առնեք զայն, դուք երկար ատեն պիտի լաք: Դուք պիտի տեսնեք գործերու խառնակ կացութիւն մը, որ արցունք պիտի հոսեցնե աչքերնուդ և վշտի կրակը պիտի այրե ձեզ: Տեսեք Հնդկաստան մեծ երկիրը, որ հարիւր միլիոններով իսլամ կը պարունակե, կրոնական երկպառակութիւններու և տկարացումներու պատճառով՝ Աստուծոյ թշնամիներուն՝ անհավատ անգլիացիներուն ճանկն ինկած է: Տեսեք Ճավայի մեջ 40 միլիոն իսլամներ ստրկութեան և տառապանքի շղթաներով կաչկանդուած են հոլանդացիներու լուծին տակ... Տեսեք Եգիպտոսը, Մարոքը, Թունուզը, Ալճերին և Սուդանը, որոնք տարապայման չարչարանքներով կը տառապին և կը հեծեն Աստծոյ և իր առաքեալին թշնամիներուն ճանկին մեջ: Տեսեք ընդարձակ Սիպերիան և Թուրքիստանը և Խիվան և Պուխարան և Կովկասը և Խրիմը և Քազանը և Աժտերհանը և Խուժիստանը, որոնց իսլամ ժողովուրդները Աստծոյ միութեան կը հավատան, բայց ուղի կոխան եղած են իրենց բռնակալներուն, որոնք արդեն մեր կրոնքի թշնամիներն են: Դիտեցեք Պարսկաստանը, որ բաժան-բաժան ըլլալու նախօրեակին մեջ է և տեսեք խալիֆայական քաղաքը, որ

5 Sanders L. von Funf jahre Turkei, Berlin, 1919, ss. 35, 159.

6 Մորգենթաու Հ. նշվ. աշխ., էջ 170:

7 Ն. տ., էջ 48:

8 Ն. տ., էջ 141:

9 Ղազարեան Հ. Ցեղասպան Թուրքը, Բեյրութ, 1968, էջ 174:

տարիներով կուրծք-կուրծքի կռիվ մղած է մեր կրոնքին թշնամիներուն դեմ, հիմա նշանակետ դարձած է ճնշումի և բռնության: Այսպես, որ կողմը որ դիտեք, կը տեսնեք, որ ճշմարիտ կրոնքի թշնամիները, մանավորապես անգլիացիները, ռուսները և ֆրանսիացիները, ճնշած են իսլամութիւնը և անոր իրավունքներն ամեն հնարավոր միջոցներով բռնաբարած են: Չենք կրնար թուել այն անարգանքները, զորս կրած ենք այդ ազգերուն լուծին տակ, որոնք կրաղման ենթել իսլամութիւնը և աշխարհի երեսեն վտարել բոլոր մահմեդականները: Այս բռնակալութիւնը տանելի ամեն սահման անցած է, մեր ստրկութեան բաժակը յորդելու չափ լեցուած է...

Կարճ խոսքով, իսլամները կաշխատեն և անհավատները կվայելեն: Իսլամներն անոթի են և կը տառապին, մինչդեռ անհավատները յափրանքի կը յդփանան և պերճանքի մեջ կապրին... Այս բոլորն այն պատճառով է, որ իսլամները լքեցին Քուրանի կողմե գծուած օրենքը և մոռցան անոր հրամայած սրբազան պատերազմը... Բայց հիմա սրբազան պատերազմի ժամանակը եկած է և անոր միջոցով իսլամութեան հայրենիքը յափրտեան պիտի փրկուի զայն ճնշող անհավատներու իշխանութենեն: Այս սրբազան պատերազմը հիմա նվիրական պարտականութիւն մը դարձած է: Գիտցեք, որ իսլամական երկիրներու մեջ անհավատներու արիւնը կրնայ թափուիլ անպատիժ կերպով, բացի անոնցմե, որոնց ապահովութիւնը խոստացած է իսլամական իշխանութիւնը և որոնք զինակից են: Իսլամութեան վրա իշխող անհավատները սպանելը սրբազան պարտականութիւն մը դարձած է. հոգ չէ, թե գաղտնապես կատարեք կամ բացահայտորեն, ինչպես Քուրանը հրամանագրած է. «Բռնեցեք զանոնք և սպանեցեք, երբ որ գտնեք: Գիտցեք, որ մենք զանոնք ձեր ձեռքը յանձնած ենք և ձեզի գերագոյն իշխանութիւն տուած անոնց վրայ»: Ան, որ մեր վրա իշխողներեն նոյնիսկ մեկ անհավատ մը կը սպանե գաղտնապես ըլլայ, թե բացահայտորեն, պիտի վարձատրուի Աստուծմե: Եվ թող իւրաքանչիւր իսլամ, աշխարհի որ կողմն ալ գտնուի, հանդիսավոր երդում կատարե իր վրայ իշխողներեն գոնե 3 կամ 4 անհավատ սպաննելու, որովհետև անոնք Աստծոյ և հավատի թշնամիներ են: Թող իւրաքանչիւր իսլամ գիտենայ, թե այդ արարքը գործելուն համար իր վարձատրութիւնը պիտի կրկնուի Աստծոյ կողմե... Այն իսլամը, որ այս գործը կը կատարե, փրկուած պիտի ըլլայ դատաստանի օրուան՝ մեռելի յարութեան սարսափներեն: Ո՞վ է այն մարդը, որ կրնայ մերժել այդ տեսակ վարձատրութիւն մը այդ տեսակ չնչին գործքի համար... նաև եկած է ժամանակը, որ մենք ամենքս ուղի կանգնինք մեկ մարդու պես, որ մեկ ձեռք ունի սուր մը, միւս ձեռքը հրացանը մը, գրպանը հրացնի գնդակներ և մահ սփռող ատրրկեցներ, սիրտը վառուած հավատքի լոյսով և պետք է բարձրացնենք մեր ձայնը, գոչելով՝ Հնդկաստանը՝ հնդիկ իսլամներուն, Ճավան՝ ճավանցի իսլամներուն, Ալճերիան՝ ալճերացի իսլամներուն, Մարոքը՝ մարոքցի իսլամներուն, Թունուզը՝ թունուզցի իսլամներուն, Եգիպտոսը՝ եգիպտացի իսլամներուն, Պարսկաստանը՝ պարսիկ իսլամներուն, Թուրանը՝ թուրանեան իսլամներուն, Պուխարան՝ պուխարացի իսլամներուն, Կովկասը՝ կովկասցի իսլամներուն և Օսմանեան կայսրութիւնը՝ օսմանցի թուրքերուն և արաբներուն»[10]:

Հրապարակվեցին սրբազան պատերազմին նվիրված մի շարք այլ հրահանգներ: «Գոյութիւն պիտի ունենա «սիրտի պատերազմ» մը- Մարգարեի իւրաքանչիւր հետևորդ միշտ իր մտքին մեջ ատելութիւն պիտի սնուցանե անհավատների հանդեպ: «Խոսքի պատերազմ» մը- իւրաքանչիւր իսլամ լեզվով ու գրիչով պիտի տարածե այս նույն ատելութիւնը՝ ուր որ մահմեդականներ կապրեն: «Գործի պատերազմ»՝ զարնել ու սպանել անհավատը՝ որտեղ որ գլուխը ցոյց տա: Ա՛ռ ճշմարիտ պատերազմ է: Գոյութիւն պիտի ունենան «պզտիկ սրբազան պատերազմ» մը և «մեծ սրբազան պատերազմ» մը: Առաջինը կը կազմե այն պայքարը, զոր իւրաքանչիւր մահմետական պարտավոր է մղել իր գտնուած հասարակութեան մեջ՝ ամեն քրիստոնեայ դրացիի դեմ: Երկրորդն աշխարհային մեծ պայքարն է, զոր Հնդկաստանի, Արաբիայի, Թիւրքիայի, Ափրիկեի և ուրիշ երկրներու միացեալ իսլամութիւնը պարտավոր է մղել անհավատ բռնավորներուն դեմ: Սրբազան պատերազմը երեք ձև ունի: Առաջին՝ անհատական պատերազմը, որ կը բաղկանայ անհատական անձնական գործքերե: Ամիկայ կրնայ կատարուիլ կտրող, սպանող գործքներով... Երկրորդ, հավատացեալները կը հրավիրուին կազմակերպել «խումբ»-եր և երթալ քրիստոնեաները սպանել: Ամենեն օգտակարները գաղտնի կազմակերպուած և գաղտնի գործողներն են... Երրորդ... կազմակերպուած պայքարով կատարուածը, այսինքն մարդուած բանակներով»[11]:

Երբ բազում թշնամիները միացել են իսլամի դեմ,- գրում է "The Orient"-ը 1914թ. սեպտեմբերի 16-ին, -երբ իսլամի երկրները կողոպտվում են, իսլամ ժողովուրդը հարստահարվում է և բռնադատվում, երբ այս պայմաններում իսլամների խալիֆը, համաձայն Կորանի սուրբ պատվիրանների, սուրբ

10 Ղազարեան Հայկազ, նշվ. աշխ., էջ 137-139:

11 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 138-139:

պատերազմ է հայտարարել, պատերազմելը բոլոր իսլամների պարտականությունը չէ՞, երիտասարդ կամ ծեր, հետևակ կամ հեծյալ, և բոլոր իսլամները ևս պարտավոր չե՞ն սուրբ պատերազմ մղելու իրենց կառավարություններու դեմ: Պատասխան՝ այո[12]: Սրբազան պատերազմի ֆետվան Աստծո ու նրա մարգարեի անունով երկնային երջանկություն էր խոստանում այդ պատերազմի մասնակիցներին: Ամենից գրգռիչը, սակայն, արաբերեն հրատարակված գրքույկն էր, որտեղ մանրամասն ցուցմունքներ էին շարադրված սրբազան պատերազմի մասին, նկարագրված էր թե ինչպես Ասիայում և Աֆրիկայում մահմեդական ժողովուրդները գտնվում էին Ալլահի թշնամի քրիստոնյաների «անարգ լծի տակ, ենթակա նրանց չարչարանքներին և կեղեքումներին»: «Իմացեք,- գրված է այդ գրքույկում,- որ անհավատների արյունը, բացի դաշնակիցներից, որոնց պաշտպանությունն ենք խոստացել, կարող է անպատիժ թափվել... Իրաքանչիւր մահմետական աշխարհի որ անկիւնում էլ գտնուի, թող հանդիսավոր երդում տա՝ իր շրջապատում գտնուող քրիստոնեաներից նվազագույնը երեք կամ չորս հոգու սպանել... ով որ հնազանդուի այս օրենքին, կազատվի վերջին դատաստանի սարսափից և կարժանանայ հավիտենական հարութեան: Կառավարությունը և բանակն իրենց վիճակված պարտականությունները են կատարելու, իսկ ժողովուրդն ատելություն պիտի սերմանե քրիստոնեաների նկատմամբ և չեթեական գնդեր կազմած պիտի գնայ կոտորելու նրանց»[13]:

Կովկասի մուսուլմաններին ուղղված կոչերից մեկում ասվում է. «Մուսուլմաններ, Կովկասի գրանիտե լեռներից լսվում է մահմեդական զորքի հերոսության փառաբանում: Ողջույն քեզ, Կովկասի մահմեդական ժողովուրդ, մեր մարգարե Մուհամմեդի տեղապահ խալիֆի անունից: Ներկայումս նա քեզ սրբազան պատերազմի է կոչում... կովկասցի մահմեդական: Ներկայումս դուք և մյուս մահմեդականները պետք է ապստամբեք մեր արյան ու հավատի թշնամիների՝ ռուսների դեմ և նրանց հայտարարեք սրբազան պատերազմ... Համախմբվեք և զինվեք հրացաններով ու դաշույններով Կորանի թշնամու դեմ, և հանուն սրբազան պատերազմի, վռնդեք նրան մեր հայրենիքի սահմաններից, բոլոր միջոցներով խոչընդոտեք ռուսական զորքին՝ Ռուսաստանից եկող օգնությանը...»[14]:

Եվս մի կոչ. «Մեծ մարգարե Մահմեդի տեղապահ խալիֆի անունից ողջույն քեզ Կովկասի մահմեդական ժողովուրդ: Այժմ նա քեզ սրբազան պատերազմի է կոչում...Այժմ դուք, ինչպես մյուս բոլոր մահմեդականները, պիտի բարձրանաք մեր հավատի և արյան թշնամիների դեմ և նրանց սրբազան պատերազմ հայտարարեք... Համախմբվեք և զինվեք հրացաններով և թրերով ընդդեմ Կորանի թշնամիների և... քշեք նրանց մեր հայրենիքի սահմաններից, ամեն ինչ արեք, որ ռուսական զորքերն օգնություն չստանան, քանդեք երկաթուղային գծերը, կամուրջները, հեռագրատները ու հեռախոսները, հարձակվեք թշնամու վրա ու հեռակռվեք նրան: Ունկնդրեք Թուրքիայից եկած կազմակերպիչների խոսքին, նրանց ճանապարհները ցույց տվեք»[15]:

Երիտթուրքերի կենտկոմը նույնպես կոչով դիմեց Կովկասի մահմեդականներին (ապրիլ 1915թ.). «Եղբայրներ, մահմեդականներ, Ալլահի կամքով և Մարգարեի լեզվով հայտարարում ենք, որ այժմ հասել է օրը... Հարյուր հազար ազգայրներ արդեն անցել են սահմանը, մտել Կովկաս, որ ազատագրեն մահմեդականներին: Հայերն ու ռուսները մահմեդականների հավատի և արյան թշնամիներն են, ուստի անհրաժեշտ է նրանց հայտարարել «սրբազան պատերազմ», նրանցից պետք է մաքրվել, հանուն ինչի իրենց արյունն են թափում Մուհամմեդի զավակները»[16]:

Իսկ մեծ վեզիրի կոչում ասվում է. «Սպանեցեք նրանց, ովքեր Ալլահի կողքին թույլ են տալիս, որ գոյություն ունենան ուրիշ աստվածներ, սպանեցեք ամենուրեք, որտեղ էլ որ նրանց գտնեք, բռնեցեք, կանգնեցրեք նրանց, փակեք նրանց ճանապարհները, վերջապես սպանեք նրանց ամեն տեղ, որտեղ որ գտնեք»[17]:

«Այն կետը, որ ես վտանգավոր եմ համարում,- գրում է Պալավիչինին,- էնվեր փաշայի կողմից իսլամ բնակչության կրոնական մոլեռանդ զգացմունքները որպես գործիք օգտագործելու ակնհայտ դիտավորությունն է: Լսել եմ, որ շեյխ ուլ իսլամը ֆետվա է արձակել, որը հրապարակվել է Մեքքայում, համաձայն որի բոլոր օրինավոր մահմեդականները պարտավոր են ռուսներին, անգլիացիներին և

12 Շիրակյան Ա. նշվ. աշխ., էջ 34-35:
13 Նազլեան Հովհ. արք. Պետական տեսութիւն անարատ յղութեան հայ քոյրերու և միաբանութեան վրայ: Բեյրութ, 1948 կամ Миллер А. Ф. Краткая история Турции. Москва, 1948, стр. 158.
2. Վր. ԿՊԱ, ֆ. 13, ց. 27, գ. 3602, թթ. 91-92:
15 Ն. տ.:
16 Ն. տ., ֆ. 63, գ. 2796, թթ. 89:
17 Վր. ԿՊԱ, ֆ. 2, գ. 3255, թ. 121:

ֆրանսիացիներին, որպես իսլամի թշնամիների, սպանել... ենթադրում եմ, որ նման ֆետվան, բացի որևէ փոքր մարզի կամ քաղաքի քրիստոնյա ազգաբնակչության դեմ տեղական սադրանքների, մեծ ազդեցություն ունենալ չի կարող: Սակայն, եթե այդ սադրանքները մեծ մասշտաբի հետևանքներ ունենան, ապա ծայրահեղ վտանգավոր կլինեն, որովհետև դրանց մեղքը... Գերմանիայի վրա է: Համոզված եմ, որ հնարավոր ջարդերը շատ վատ տպավորություն կունենան չեզոք երկրներում...»[18]:

Թուրքերը սկզբում ակնարկներ, իսկ ապա նաև բացահայտ սպառնալիքներ էին հղում հայերին: Պալավիչինին 1915թ. հունվարի 28-ին հայտնեց. «Գաղտնի աղբյուրներից իմացել եմ, որ կառավարությունը կասկած է տածում հայերի հանդեպ, և որ Թալեաթ բեյը վերջերս հայ պատրիարքի ուշադրությունն է հրավիրել հայերի հակակառավարական քարոզչության հնարավոր հետևանքների վրա»[19]:

Լեփսիուսը սրբազան պատերազմի ձախողվելը բացատրում է այն բանով, որ «մյուս իսլամական ազգությունները թքած ունենային թուրքական նացիոնալիզմի վրա... նրանք իրենց ավելի լավ էին զգում ռուսների և անգլիացիների, քան թուրքերի միջավայրում»[20]:

Երիտթուրքական նացիոնալիզմն իր բնույթով «տարօրինակ էր», բայց նաև կատաղի, որովհետև այն կրող վերնախավը թուրքական ծագում չուներ: Լեփսիուսը դիպուկ է նկատել. «Ջեմալ բեյը... արաբ է և հարավի նկատմամբ նույնն է, ինչ էնվերը հյուսիսի համար», նրանք հակադիր շահեր ունեին, բայց հակառակորդի հանդեպ դրսևորում էին առանձնակի դաժանություն: Հյուսիս-արևելյան շրջաններում զանգվածային ջարդերի նախաձեռնողն էնվերն էր, իսկ «արաբների դահիճը»՝ Ջեմալը:

Բնականաբար, հայերը սրբազան պատերազմի հայտարարելն ընդունեցին որպես գործողություններ, որոնք առաջին հերթին ուղղված էին իրենց դեմ: Գերմանիան Թուրքիային հարկադրելով սրբազան պատերազմ հայտարարելու, նպատակ ուներ հեղափոխականացնել մահմեդական աշխարհը: Դա գերմանացի գիտնական ու դիվանագետ Մ. Օպենհայմի առաջարկած ծրագիրն էր: Կովկասում վիճակն այլ էր. առանց հայերի մասնակցության այնտեղ հակառուսական լուրջ շարժում անհնար էր: Դրա համար էլ ՀՅԴ Էրզրումի ընդհանուր ժողով ուղարկվեցին իթիհադի կոմիտեի անդամներ: Սակայն հաջողության չհասան: Դրանով հայերին սպառնացող վտանգն ավելի ահագնացավ: Ակնունին գնաց Թալեաթի մոտ և քննարկեց հայերի վիճակի հարցը: Թալեաթը Էրզրում հեռագիր ուղարկեց՝ հայերին, մասնավորապես, դաշնակներին լավ վերաբերվել[21]:

Իրականում հակահայ տրամադրությունների զարգացումը դարձավ թուրքական ակումբներում ու մզկիթներում քարոզների գլխավոր բովանդակությունը. «Մեր թշնամիները համաձայնական տերությունները՝ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը չեն: Մեր բուն թշնամիները մեզ մոտ, մեր մեջ են՝ հայերը, որոնք այսօր ամբողջ աշխարհին մեր դեմ են հանել: Մեր արյունը թափել են տալիս, մեր պետության ու հայրենիքի հիմքերն են քանդում, ուստի հարկ է, որ, նախ, մեր այդ ներքին թշնամիներին մաքրենք, մեր միջից՝ բնաջնջենք»[22]: «Վիջտան» թերթի խմբագիր Խալիդը սպառնաց. «Հայեր, չգիտեք, չեք երևակայում, թե ձեզ համար ինչեր է պատրաստվում, ինչ դժբախտություններ են գալու ձեր գլխին, չգիտեք, թե ձեզնից ով որ լեռան գագաթը, որ անապատներն է նետվելու, մահ եք փնտրելու ու գտնել չեք կարողանալու»[23]: Բեհաեդդին Շաքիրը Էրզրումը ռուսական զորքերի կողմից գրավելու նախօրյակին հոխորտաց. «Հայտնեցեք ռուսական զորքերի հրամանատարին, որ եթե թեկուզ մի մազ պակասի Էրզրումի թուրքերի գլուխներից, կենդանի մնացած բոլոր հայերը կոչնչացվեն: Մեզ պետք է, որպեսզի Կ. Պոլսից մինչև Հնդկաստան ու Չինաստան լինի լոկ մահմեդական բնակչություն: Սիրիան կլինի կապող օղակ Ասիայի ու Աֆրիկայի միջև, գերմանացիների գիտականությունը, կազմակերպական տաղանդը և թուրքերի արի ձեռքը կիրականացնեն այդ վիթխարի նախագիծը»[24]: Ջիհադի հայտարարելու օրը Անկարայում 100 հայ երեխաների հրապարակավ թլպատեցին և հայտարարեցին, որ նրանք դարձել են մահմեդական:

18 Wien HHSTA PA 1943, Jenikoj, 5 November 1914.
19 Ն. տ. Konstantinopel, 28 Janner 1915.
20 PA-AA/R 14088.
21 Lepsius J. Der Todesgang, s. 177.
22 Ցուշամատեան Մեծ եղեռնի, էջ 500:
23 Ն. տ.:
24 Morgan J. Contr les barbares de l'Orient, Paris, 1918, p. 42-51:

Միություն և առաջադիմություն կուսակցության կենտկոմի դեկտեմբերի 2-ի շրջաբերականում կան հետևյալ տողերը. «Զմոռնանք, որ համաշխարհային պատերազմին մեր մասնակցութեան նպատակը մեզ վերահաս կորուստե փրկելը չէ, այլ մենք կը հետապնդենք ավելի անմիջական նպատակ մը՝ մեր ազգային իդեալին իրականացումը: Մեր ժողովրդին և հայրենիքին ազգային իդեալը մեզի մեկ կողմե կը մղե խորտակելու մոսկովեան թշնամին, ատով հասնելու մեր կայսրութեան համար բնական սահմանի մը, որուն մեջ կը պարփակուին ու կը միանան մեր բոլոր ազգակից եղբայրները: Միւս կողմե, մեր կրոնական զգացումը կը մղե մեզ մահմեդական աշխարհն ազատագրելու անհավատներու տիրապետութենեն... Մենք կը կռուինք մեր ազգին, մեր կրոնին և մեր ազգային իդեալին համար»[25]: «Թատվիրի էֆքիարը» 1914թ. դեկտեմբերին գրեց, որ օսմանյան կառավարությունը պարզապես օգտվելով ռուսական հարձակման առիթից, բոլոր ճիգերը լարելու է իր թշնամիներին ճզմելու և ծնկի բերելու համար ու այս պայքարում պետք է ստանա ազգի և մահմեդական աշխարհի ամենաանկեղծ և լավագույն օգնությունը: Ի վերջո, Ալլահի ողորմածությամբ հաղթական դուրս կգա[26]: Շրջանառության մեջ դրվեցին մահմեդական քարոզչության բոլոր միջոցները, մասնավորապես Կորանի հռչակումները. «Ով հավատացյալներ, Ձեր հարևան դրուժանների հետ կռվեք, նրանք թող միշտ ձեզ մոտ խստաբարո ընդունելություն գտնեն[27]: Երբեք թուլություն մի դրսևորեք և բնավ դրուժաներին խաղաղության կոչ չանեք, երբ դուք ավելի ուժեղ եք և Աստված ձեզ հետ է[28]: Այս կրոնի համար գիշեր ու ցերեկ կռվի գնալն ավելի լավ է, քան աշխարհն ու նրանում եղած ամեն ինչը: Եվ հիրավի, ձեզնից յուրաքանչյուրի համար կռվողների շարքերում լինելն ավելի լավ է, քան վաթսուն տարի տան մեջ ճշտապահ աղոթելը»[29]:

Մահմեդական, պանիսլամական, պանթուրքիստական քարոզները հեղեղեցին քաղաքներն ու գյուղերը: Հ. Ֆիրբյուխերը նկատում է, որ հույսերը ջհադին կապելը հոգեբանորեն ահավոր բնույթ ուներ, քանի որ իսլամի սուննիթ թևը շատ ռացիոնալ բնույթի է: Մահմեդականները քաջ գիտեին, որ իսլամության խալիֆ թուրք սուլթանների մտահոգությունը մեկն էր՝ պահպանել և ընդարձակել թուրքական պետությունը: Այդ էր պատճառը, որ նրանք թերահավատ էին Կ. Պոլսի կոչերի հանդեպ: Թուրք գործիչ Սեյֆեդդին Օմարը 1914թ. նոյեմբերին գրեց. «Սկզբում կփրկենք և կընդունենք մեր քաղաքական սահմանների մեջ թուրքերին՝ կրոնով ու լեզվով մեր եղբայրներին, որոնք գտնվում են ռուսների ճնշման տակ: Կգրավենք Կովկասը, ապա կշարժվենք դեպի Թուրքեստան, որը հանդիսանում է մեր հայրենիքը և որտեղ ապրում է 50 միլիոնից ավելի մուսուլման... (դրանով) մենք 14 միլիոնանոց օսմանյան պետության ազգային հզորությունը կկրկնապատկենք, իսկ քաղաքական սահմանները հասցնելով մինչև Պամիր և Սիբիր, կստեղծենք թուրանական մեծ պետություն[30]: Ձիա Գյոքալփը թելադրեց. «Շտապ գրավեք այդ Կովկասը»[31]:

1914թ. դեկտեմբերի 14-ին օսմանյան խորհրդարանում սուլթանի առաջին քարտուղար Ֆուադն ընթերցեց Ռեշադ 5-րդի ճառի տեքստը պատերազմ հայտարարելու վերաբերյալ:

Ռուսական բանակի գլխավոր ուժերը շարժվեցին Քեփրի-Քեոյի ուղղությամբ, սակայն թուրքական 9-րդ և 11-րդ կորպուսներին հաջողվեց նրանց հետ մղել մինչև սահման: Աշխարհամարտին մասնակցում էր թուրքական չորս բանակ: Առաջին և երկրորդ բանակները գործում էին Կ. Պոլսի և նեղուցների շրջանում, 3-րդ բանակը՝ Արևմտյան Հայաստանում, իսկ 4-րդը՝ արաբական երկրներում: Թուրքական բանակում կար 640 000 մարդ, ինչպես նաև 229 000 անասուն, 1 247 թնդանոթ և 520 այլ մակնիշի հրետանի: «Ենի թուրքիյեն» 1959թ. գրեց.«Առաջին աշխարհամարտի սկսվելու պահին... ոչ-իթիհադական սպաների հեռացված լինելու չնորհիվ էր, որ իթիհադն իշխանության գլուխ մնալու անհրաժեշտ ուժեր ուներ»:

Աբդուլ Համիդ 2-րդը պատերազմին Թուրքիայի մասնակցության հարցում միանգամայն այլ կարծիք էր: Նա գրեց. «Պարտութենեն բացի ելք չկայ: Այս ազգը պատերազմի մեջ մտնելու օրեն արդեն

25 Tekin A. (Levi Kohen) Turkismus und Panturkismus, Weimar, 1915, ss. 50-52 կամ Лудшувейт Е. Ф. նշվ. աշխ., էջ 25-33:

26 "The Orient", 14. 12. 1914.

27 «Կորան», սուրահ Թ. էջ 124:

28 Ն.տ., սուրահ Ժ, էջ 4, 11, 37:

29 Ցուշամատեան Մեծ եղեռնի, էջ 186-187:

30 Seyfeddin Omer Yarnin Turani, Istanbul, 1958, ss. 21-22.

31 Aydemir S.S. Suyu Arevan Adam, Istanbul, 1967, s. 160.

դատապարտված էր... Օվկիանոսներու և ծովերու տեր անգլիական կայսրութեան դեմ Ավստրիայի և Գերմանիայի նման ցամաքային սահմաններու մեջ բանտարկված պետութիւններու կողքին լինելը և կրակի մեջ նետուելը սխալ քայլե բացի նաև նշանակում է յիմարութիւն»[32]:

Պատերազմի քաղաքականությանը հավանություն չէին տալիս նաև շատ ուրիշ թուրքեր: Ռազմաճակատում առաջին անհաջողություններն ավելի ուժեղացրեցին հակապատերազմական տրամադրությունները: Արդեն 1915թ. մարտի 3-ին Վիեննա է ուղարկվում հետևյալ ծածկագիրը. «Գերմանիայի հանդեպ տածած սկզբնական ոգևորությունը շեչտակի անկում է ապրում: Պատերազմի դեմ արտահայտվողների թիվն աճում է: Անվերապահորեն հուսալի են միայն Էնվերն ու Թալեաթը: Էնվերը գիտի, որ ճակատագիրը կապված է այս պատերազմի և Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի հետ: Նա նաև գիտի, որ իր կյանքը լրջորեն վտանգված է, ուստի անվտանգության լուրջ միջոցներ է ձեռնարկել: Նա վստահում է ... միայն ռազմական ոստիկանությանը...»[33]:

"Associated Press"-ի թղթակցին Թալեաթն ասել է, թե Թուրքիան պատերազմի մեջ մտավ, որովհետև «Իսլամի վշտաբեկ աչքերն ուղղված էին Թուրքերին... Օսմանյան բանակի հաջողությունը կհանգեցնի Ռուսաստանի, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի տիրապետության դեմ մուսուլմանների ընդվզմանը»[34]:

Իրարամերժ կարծիքները մնում էին կարծիք, իսկ պատերազմն արդեն դաժան իրողություն էր:

"Кубанский курьер" թերթում Եկատերինոդարի ոստիկանության նախկին պետ Դ. Զախարովը գրում է. «Դեռ թուրքերը չէին հայտարարել Ռուսաստանին պատերազմ հայտարարել, երբ քրդերը՝ Շավչեթի, Արդանուշի տեղամասերի բնակիչները և հատկապես Խոդ սահմանային գյուղից, եկան Արդանուշ ու ամեն ինչ թալանեցին, կանանց բռնաբարեցին: Զինայեցին նաև աղջիկներին, բոլորին մինչև 13 տարեկանը ներառյալ գնդակահարեցին: Այս ամենը կատարվեց հարազատների աչքի առաջ: Ծնողներին, ով հարմարակվում էր պաշտպանել իր երեխային, տեղնուտեղը մորթում էին: Այս ձևով մորթեցին 150 մարդ և բոլորին շպրտեցին խոր կիրճը, որով Արդանուշ գետն է անցնում: Այստեղ շպրտեցին նաև կենդանի մարդկանց՝ 4-5 հոգու միասին կապած: Քրդերը սպանեցին մի կնոջ, որը դիմադրում էր բռնաբարությանը, սպանեցին նաև երեխաներին՝ նախապես հարկադրելով ինքնակամ տրվել: Քահանային եկեղեցու մեջ սպանեցին և ապա թալատեցին, ու որպես մահմեդական թաղեցին իրենց գերեզմանոցում: Քրիստոնյա բնակիչներին առաջարկեցին մահմեդականություն ընդունել՝ խոստանալով խնայել իրենց կյանքը, բայց որովհետև ոչ ոք չհամաձայնվեց, դրա համար էլ ամենուրեք դիակներ են, դիակներ...»:

Առաջին հարվածը թուրքերը հասցրեցին պարսկաբնակ ոչ մահմեդականներին: Ռուսական "Искры"-ն անդրադառնալով Ուրմիային, գրում է, որ «տեղական բնակչության թվում շատ էին հայ կաթոլիկներ և ասորիներ»: Քրդերն «առանձնանում են վայրենությամբ և թշնամությամբ»[35]:

Թուրքիան դեռ մինչև պատերազմի մեջ մտնելն էր զորքեր տեղակայել Վանի, Սարայի, Բաշկալեի և Շամդինանի տարածքներում: Ռուսական զորքերը շուտով գրավեցին Խոյը, Ուրմիան և Թավրիզը: Նրանց օգնում էին ասորիները, որոնց վիճակն անգամ մինչև պատերազմը, իրոք, անտանելի էր: Դա էր պատճառը, որ նեստորական ասորիների մեծ մասն ընդունել էր ուղղափառ կրոն՝ հույսով, որ Ռուսաստանն օգնության ձեռք կմեկնի: Հանուն դրա ասորիները խոստացել էին ռուսական հրամանատարության տրամադրության տակ դնել 40 000 զինյալ: Ասորիների ռուսական կողմնորոշմանը թեհրանը պատասխանեց թշնամական գործողություններով՝ համագործակցեց թուրքերի և քրդերի հետ: Վերջինները 1914թ. սեպտեմբերին Ուրմիայի շրջանում հրդեհեցին ավելի քան 30 հայկական և ասորական գյուղեր: Միայն Քանաչար գյուղում ոչնչացվեց 200 ասորի[36]: Ուրմիայում Ռուսաստանի փոխհյուպատոս Վեդենսկին ներկայացնում է իր տեսածը. «Անգար գյուղում տեսա ասորիների այրված դիակներ, որոնց փորերը խոցված էին մեծ, սրածայր ցցերով»[37]: Ասորիներն ու հայերը զանգվածաբար փախչում էին յաթաղանից: 1914թ. դեկտեմբերին Ուրմիայից ռուսական զորքերի հետ հեռա-

32 Եազճեան Գ. Ապտիլ Համիտ 2-րդ. Կարմիր սուլթանը, Բեյրութ, 1980, էջ 786:

33 "Osterreich Armenien". Bd. VI, 1914-1915, s. 4524.

34 «Հայերի ցեղասպանության պատմությունից...», էջ 52:

35 "Искры", 08. 02. 1915.

36 Саргизов Л. Ассирийцы стран Ближнего и Среднего Востока, Е. 1979, стр. 26.

37 ՎՀ ՊԿՊԱ, փ. 13, ց. 27,գ. 3361.

ցան 40 000 հայ և 8100 ասորի[38]: Գնալով փախստականների թիվն աճում էր՝ ըստ Նյու Յորքի համալսարանի պրոֆեսոր, ազգությամբ ասորի Ա. Յոհաննանի՝ 25 հազար, իսկ ըստ «Մշակի» թղթակից Ս. Մելիքյանի՝ 40 000 մարդ: Նա գրում է. «Դիրման չհասած մեր առջև մեկը մյուսի հետևից բացվում էին անվերջանալի աղետների տեսարաններ, որին ենթակա էին ասորի գաղթականները»[39]: "New York Times"-ը 1916թ. փետրվարի 8-ին գրում է, որ 1915թ. «Ռուսական զորքերի հետ Ուրմիայից հեռացավ ևս 14 000, իսկ շրջակա գյուղերից 1000 ասորի... Նրանցից շատերը մահացան ճանապարհին»: 1914թ. ավարտին թուրքական զորքերը Ուրմիայի շրջանում ավերեցին և հրդեհեցին ասորական 98 գյուղ: 500 հոգի սպանվեց, 800 կին և աղջիկ առևանգվեցին: 750 մարդ գլխատվեց ասորական Հաֆթվան գյուղում, 5000 ասորի քշվեց թուրքական հարեմները, թվարկում է Ա. Խոսրոյանն «Ասորիների ջարդերն Իրանի թուրքաբնակ վայրերում առաջին աշխարհամարտի տարիներին» ուշագրավ հոդվածում[40]: Ռուսական զորքերի Սալմաստ հասնելուց մի քանի օր առաջ քրդերն ու թուրքերը «հավաքեցին հայ և ասորի տղամարդկանց՝ 400-ին ուղարկեցին Խոսրովա, իսկ մյուս 400-ին՝ Հաֆթվան: Նրանցից ոչ մեկը ողջ չմնաց»[41]: Ուրմիայի Գուլփաշան գյուղում բնակվում էր շուրջ 2500 ասորի: «Գյուղի աչքի ընկնող ասորի տղամարդկանց գլուխը գնդակահարեցին գերեզմանոցում: Թուրքերը բռնաբարեցին կանանց ու աղջիկներին: Ավելի քան 800 հոգի սպանվեց»[42]: Ասորի կանաց զանգվածային բռնաբարությունների մասին գրելիս ֆրանսիացի գիտնական Ռ. Լաբարեն այդ երևույթը համարում է բնաջնջման «ծրագրի կանխամտածված մաս»[43]: Դժբախտաբար նա չի մանրամասնում՝ կատարվածն ահաբեկչական, թե վրիժառու խնդիր էր հետապնդում: Խոսրովա գյուղում քրդերը մի վայրում հավաքեցին 7000 ասորու և բոլորին կոտորեցին, մի ուրիշ տեղ հայտնաբերվեց իրար կապված հարյուր դիակ, որոնց վրա փլցրել էին պատը: Ադա գյուղի եկեղեցում ողջակիզեցին 300 հոգու, իսկ Գյոքթափեի վանքում՝ 70 հոգու: Ոչնչացրեցին Խանիչա գյուղի բոլոր հայերին և ասորիներին[44]: Դիլմանի շրջանում սրի քաշվեց ասորաբնակ 20 գյուղի բնակչությունը: Դիլմանում սպանվեց 800, ևս մի քանի հարյուր ասորուհու սպանեցին կենտրոնական փողոցում, որով «հոսում էր սպանված կանանց արյունը»[45]: Ասորիները տուն, ունեցվածքը թողած փախչում էին: Մի քանի օրում Ջուլֆայում կուտակվեց 44 000 փախստական: «20-30 հազարի չափ նեստորական ասորիներ և հայեր,- գրում է "New York Times"-ը 1915թ. ապրիլի 26-ին,- զանգվածաբար հեռացան Իրանական Ադրբեջանից: Ավելի քան 1500 հոգի կոտորվեց, 2000-ի չափ մահացավ հիվանդություններից...»: 22 000 ասորի պատսպարվել էր ամերիկյան և ֆրանսիական կրոնական հաստատություններում, որոնց զգալի մասը մահացավ քաղցից, ցրտից ու համաճարակներից: Ուրմիայի Զոմալան, Քեաֆսին և մի քանի ուրիշ գյուղերի չափահաս բնակչության մեծ մասին հաջողվեց հեռանալ Կովկաս, իսկ ծերերն ու անչափահասները մեռան կամ ոչնչացվեցին: Թուրքերը երեխաներին «ողջ-ողջ կոտոր-կոտոր էին անում, գցում թոնիրն ու խորովում, ապա մայրերին հարկադրում ճաշակել նրանց մարմնի մսից»: «Մշակ», 19. 03. 1915 1916թ. նոյեմբերին "New York Times"-ը գրեց. «Միայն հայերը չեն, որ անբախտ են, ասորիներին նույնպես ոչնչացրեցին և յուրաքանչյուր տասներորդին հնձեցին»[46]: Իսկ "Atlantic Monthly"-ն նկատեց. «Վեց ամսվա ընթացքում երիտթուրքերն արեցին այնքան, որքան չէին կարողացել անել հին թուրքերը վեց դարում: Հազարավոր ասորիներ անհետացան»[47]: Նույն թուրքական ձեռագիրն էր:

Թեհրանում ամերիկյան դեսպանորդ Ջ. Քալդվելին հունիսի 23-ին տեղեկագրում է, որ մինչև մայիսի 24-ը՝ ռուսական զորքերի վերադարձը, սպանվել կամ մեռել էր 5000 քրիստոնյա: «Թուրքական

38 Ա-Դո Մեծ դեպքեր Վասպուրականում 1914-1915թթ., Ե., 1917, էջ 114:
39 Саргизов Л. նշվ. աշխ., էջ 46:
40 «Հայոց ցեղասպանության պատմություն...», 2004, թիվ 9, էջ 91:
41 "New York Times", 29. 04. 1915.
42 Kloian R. The Armenian genocide, California, 1985, p. 40.
43 Ն.տ., էջ 17:
44 «Մշակ», 25. 02. 1915:
45 Nooyem J. Shall this nation die, New York, 1921, p. 288.
46 Kloian R., նշվ. աշխ., էջ 188-189:
47 Ն. տ., էջ 193:

զորքերի հրամանատար Ջևդեթ փաշայի գլխավորությամբ Սալմաստի Նաֆրդիվան գյուղում սպանվել էր 750 տարբեր տարիքի տղամարդ՝ շատերին տանջամահ և կտոր-կտոր էին արել»[48]: "Кавказ" թերթը 04. 01. 1915թ. գրում է. «Խոսրովը մի մեծ գյուղ էր, ուներ 500 ընտանիք, այժմ լրիվ ամայացել է»: 1915թ. փետրվարի 14-ի գիշերը Խոսրով և Մեհլեմ գյուղերում սպանվեց 707 հայ: Այդ մասին Կ. Մարտիկյանը գրում է Կովկասյան բանակի հրամանատարությանը. «Մինչև ամսի 14-ը հայերը շնորհիվ պարսիկների մնացել էին անմնաս: Բայց թուրքական կառավարությունը ... սպառնաց պատժել բոլոր այն պարսիկներին, ովքեր կթաքցնեին քրիստոնյաներին... Կայմակամ Ռուստամ բեկը հրամայեց քրդերին ու զինվորներին պարսիկների տներից հանել քրիստոնյաներին և սպանել նրանց թաքցնողներին: Հրամանը կատարվեց անմիջապես... հայերին տարան Հարիվան և Խոսրով գյուղերը, որտեղ էլ... տանջանքներով սպանեցին: Ես սեփական աչքերով փոսերի մեջ տեսա հարյուրավոր մորթոտված դիակներ, որոնք գարշահոտությունով էին լցրել օդը: Տեսա գլխատված մարմիններ, կացնով կտրված ձեռքեր, ոտքեր, կտրված մատներ, մաշկահանված գանգեր, տասնյակ դիակներ քանդված տների ու ցանկապատների տակ...»[49]: "New York Times"-ը 1915թ. մարտի 20-ին հայտնում է, թե թուրքերն ու քրդերը թալանել են Ուրմիայի գյուղերը, սպանել բնակիչներին: Թուրքերի հրահանգով «Անտվատի բոլոր հայ բնակիչներին... հավաքել են, 600 տղամարդու դատապարտել մահվան, իսկ կանանց հարկադրել են ընդունել մահմեդականություն...»: Նույն թերթը «Քրիստոնյաների մեծ գաղթը» անունը կրող լրատվությունում նշում է, որ Ուրմիայից ռուսական զորքերի հեռանալուց հետո 20 000- 30 000 հայ... փախուստի դիմում, ճանապարհին թողնելով մեծ թվով սպանվածներ և հիվանդներ: Ճամփեզրին երեխաներ էին ծնվում: Խելագարված մայրերը երեխաներին նետում էին գետը... մարդիկ մեռնում էին անխտիր, առանց ափսոսանքի և, թվում էր, կենդանի մնացածները նախանձում էին նրանց[50]:

Ամերիկյան գործակալ Թ. Ակենը տեղեկագիր էր ներկայացրել Ուրմիայի շրջանում տեղի ունեցած իրադարձությունների մասին: Քանի որ այն, բացի ասորիներից, ուղղակիորեն առնչվում է պարսկահայերի ջարդերին, փորձենք փոքր-ինչ մանրամասն անդրադառնալ դրան: Մինչև աշխարհամարտի սկիզբը ռուսական զորքերը գրավել էին Ատրպատականի հյուսիսը: Գրեթե նույն ժամանակ Համադան հարձակվեց Մերգավառի և Թերգավառի պարսկական գյուղերի վրա: Ռուսական զորքերի հետ այդ գյուղերի բնակիչները գաղթեցին Ուրմիա: Հոկտեմբերին թուրքերը հարձակվեցին Ուրմիա քաղաքի վրա: Սակայն Բլրի ճակատամարտում թուրքերն ու քրդերը պարտվեցին և նահանջեցին: Բայց թուրքերին հաջողվեց առաջանալ: Դեկտեմբերի 31-ին ռուսական զորքերն ընդհանուր նահանջի հրաման ստացան: Ասորիները նույնպես հեռացան. նրանց զգալի մասը ճանապարհին մեռավ: Մոտ 800 ասորի ոչնչացվեց տեղում: Հարձակման ենթարկվեցին նաև հայերը: Թուրքերը գրավեցին քաղաքն ու Ուրմիայի հարթավայրը: 1915թ. հունվարի 1-ից մայիսի 24-ը «բոլոր քրիստոնեական գյուղերն ու մուսուլմանական գյուղերում բնակվող քրիստոնյաները թալանվեցին, տղամարդիկ սպանվեցին, կանայք անարգվեցին, մոտ 200 աղջիկ գերեվարվեց: Շատերին ստիպեցին մահմեդականանալ, հազարավորները մահացան հիվանդություններից»: 1915-ի մայիսի 24-ին ռուսները վերադարձան. նրանց հետ՝ նաև ասորիները: Օգոստոսին ռուսները նորից նահանջեցին: Թուրքիայում բնակվող ասորիները հայերի հետ միացած փախան Վանում և Մարմարայում գտնվող ռուսական բանակի գրաված շրջաններն ու հաստատվեցին Խոյ, Սալմաստ և Ուրմիա գավառներում[51]:

Թեհրանում ԱՄՆ դեսպան Ջ. Բոլդուելի հանձնարարությամբ ամերիկյան միսիոներ Ռև. Շեդի կազմած տեղեկանքն այն մասին էր, թե ինչ տեղի ունեցավ այդ երկրամասում, երբ ռուսական զորքը 02. 01. 1915թ. հեռացավ, իսկ 24. 05. 1915-ին վերադարձավ: Այդ ընթացքում 1000 հայ սպանվեց և 4000-ը մեռավ համաճարակից: Նրանցից 3600-ը թալվեց տեղի երկու քոչեշների տարածքներում, այսինքն, քաղաքն ու մերձակայքը կորցրեց իր հայ բնակչության շուրջ 20%-ը: Ռուսական բանակի հետ հեռացավ 6500 ընտանիք: Մնացած հայերը թալանվեցին, զրկվեցին շարժական ունեցվածքից. կանգուն մնացած տներից միայն 1000-ն ուներ դուռ ու լուսամուտ, դրանց կեսը զուրկ էր ծածկից: Հայերին հասցված վնասը կազմեց 25 մլն դոլար: Ավելի քան 100 կին ու աղջիկ մահմեդականացվեցին, հարյուրավորներն անարգվեցին:

48 Լևոն Վարդան, Ժամանակագրություն... էջ 29:
49 ՀՀ ՊԿՊԱ ՀԳԿ փաստաթղթեր, ֆ. 4712, թղթ. 2, գ. 2:
50 «Հայերի ցեղասպանության պատմությունից...», էջ 54:
51 U.S. State Department Record Group 59,867. 4016 /39/.

Ուրմիայի վրա հարձակումն իրականացնում էին թուրքական բանակն ու քրդերը: Զարքաշի ու Մավանայի ճակատամարտերի ընթացքում կործանվեց 8-10 հայկական գյուղ: Վերադառնալուց հետո ռուսները զինեցին շուրջ 3000 հայի, ովքեր վրեժխնդրական գործողությունների դիմեցին: Ի պատասխան քրդերի տեղահանության թուրքերը Նոկիայից արտաքսեցին հայ բնակչության մեծ մասին: Երբ ռուսները հեռացան, նորից սկսվեց հայերի թալանն ու ջարդը: Հատկապես կատաղի էին քրդերը, չնայած «քուրդ ցեղերի մասնակցությունն արշավանքին կազմում էր թուրքական ծրագրի մասը», նրանց ստիպելով էին հարձակման մասնակից դարձել: Թուրք հրամանատարությունն ու մոլլաները քրդերին ու պարսիկ գյուղացիներին հայերի վրա էին տանում «սրբազան պատերազմի» կոչերով: Մի-այն Ջեռքթափա գյուղում ամերիկյան դոկտոր Փեքարդը ջարդից փրկեց հազար հայի, իսկ երբ ռուսները դադարեցին մարտական գործողություններին մասնակցելուց, հայերի ջարդերը զանգվածային բնույթ ստացան: Հատկապես մեծ կորուստներ ունեցան այն հայերը, ովքեր ԱՄՆ ներկայացուցչի հորդորով հանձնել էին զենքերը և ովքեր դիմադրություն ցույց չտվեցին: 20 000 հայ լցվեց ամերիկյան միսիաների շինությունները, մյուսները թաքնվեցին մահմեդական գյուղերում, սակայն սպանություններն այդպես էլ չդադարեցին. երկրում տեղաշարժվելը գործնականում դարձել էր անհնար, փողոցներում երևացող քրիստոնյան թալանվում կամ սպանվում էր: «Փետրվարի վերջերին թուրքերն իրականացրեցին երկու կոտորած: Նրանք, նախ, ներխուժեցին ֆրանսիական միսիայի շենքը և գերի տարան 160 հայ տղամարդու: Բայց երբ քաղաք այցելեց Թուրքիայի գլխավոր հյուպատոսը, նրանցից 48-ին Թուրքիա տեղափոխելու պատրվակով, աչքից հեռու մի վայրում միմյանց կապեցին ու գնդակահարեցին: Նույն գիշեր հինգ հոգի կախաղան հանվեց առանց դատ ու դատաստանի: Երկու օր անց Գյուրփաշան գյուղում սպանեցին 50 տղամարդու և բռնաբարեցին գյուղում մնացած կանանց ու աղջիկներին: Մարդկանց առանց որևէ պատճառի բանտ էին նետում և փրկագին պահանջում. նրանց ծեծում էին, կապկպում, նետում մենախցերը, մի քանիսին էլ կախեցին կամ գնդակահարեցին: Թուրքական բանակում ծառայող հայերին գնդակահարում էին: Հեռագրալարերը վերականգնող 60 հայի քաղաքից հանեցին ու սպանեցին: Սալմաստում սպանվեց 750 հայ. նրանք բոլորը խոշտանգվեցին և այդ արվեց թուրքական զորամասի հրամանատար Ջևադի հրամանով: Տղամարդկանց ջարդի հետևանքով գավառից գաղթած հայերի մեծ մասը կանայք ու երեխաներ էին: Ու. Շեյդը գրում է, որ Պարսկաստանի հյուսիս-արևմտյան շրջաններում կատարված ջարդերի ամբողջ պատասխանատվությունն ընկնում է թուրքերի վրա, նրանք էին կոտորած ու թալան իրականացնողները»[52]:

1914թ. հունիսի 15-ին Ցագովը ծածկագրում է Կ. Պոլսի իր դեսպանին. Էրզրումում «ժողովներ են անցկացվում, որոնցում բացահայտ խոսվում է կոտորածների մասին: Մոլլաների հանձնարարականով բնակչությանը հագցրել են չալմաներ: Ջարդի համար ամեն ինչ պատրաստ է. այն կսկսվի Կ. Պոլսի ազդանշանով»: Իթիհադը իր վրա է վերցնում ջարդի պատասխանատվությունը[53]: Հայերի հանդեպ ոչ միայն պաշտոնեության, այլև մահմեդական բնակչության վերաբերմունքը գնալով դառնում է ավելի դաժան ու նենգ: Գերմանական դիվանագետ Շվարցը 05. 12. 1914-ի գրում է Վանգենհայմին. «Էրզրումի սարահարթի Ոգնի գյուղի մեծ հարգանք վայելող քահանային դեկտեմբերի 1-ին այցելել են երեք թուրք դասալիք, հյուրասիրվել են, գիշերել, իսկ հաջորդ օրը ստիպել են իրենց ուղեկցել մինչև գյուղի ծայրը, որտեղ նրան սպանել են... Թենիկ գյուղում 12 հոգանոց մի ավազակախումբ գյուղի բոլոր տղամարդկանց տներից դուրս է քշել, կապկպել և պահանջել 100 թուրքական ֆունտ»: «Մյուս գյուղերից էլ կան նման լուրեր... Ինչպես երևում է այդ նախանշաններից, կարծես, նորովի է ժայթքել հայերի հանդեպ թուրք բնակչության վաղեմի ատելությունը»[54]: Հոֆմանը 07. 03. 1915-ին տեղեկագրում է Ալեքսանդրեթում տիրող վիճակի մասին: «Գերագույն հրամանով (ըստ լուրերի Կ. Պոլսից) օրերս բոլոր քրիստոնյա հպատակների ... տները խուզարկվեցին: Որոշ տներից բռնագրավեցին մի-այն փաստաթղթեր, թերևս այն պատճառով, որ դրանք օտար լեզվով էին: Նույն ճակատագրին արժանացան նաև գրքերը... Որքան ծանոթ եմ այստեղի ոչ մեծաթիվ բնակչության բնավորությանն ու գործունեությանը, չեմ կարծում, որ զբաղված լինեին դավաճանությամբ... Վերջին շրջանում կառավարական օղակներում քրիստոնյա բնակչության հանդեպ... ուժգնացել է անվստահությունը»: Հայերի խուճապն «ավելի սրվեց... Դորթյոլ գյուղի վրա զինվորական հարձակումով»[55]: Բեթման Հոլվեգին հասցեագրված զեկուցագրում Վանգենհայմը գրում է. «...Չնայած բոլոր տառապանքներին հայերն իրենց պահում են լոյալ և հավասարակշռված... Կառավարամետ կուսակցությունները, ինչպիսին դաշնակցությունն է (ուրեմն 1915-ին էլ ՀԲԴ իթիհադի կողքին էր), այլևս չեն կարողանալու զսպել զանգվածներին և վտանգ կա, որ ռուսների առաջխաղացման ժամանակ հայերը ոչ միայն կանցնեն ռուսների կողմը, այլև թուրքական բանակի թիկունքում ևս կստեղծեն ապստամբության օջախներ»[56]: Վանգենհայմը վկայում է, թե «Բ. Դուրը հենց հիմա հակված է վերացնելու պաշտպանական այն իրավունքները, որոնք օտար տերություններն իրականացրել են թուրքահպատակների նկատմամբ»[57]: Դեսպանն անհանգիստ է. «...Մեր թշնամիներն ատիթը բաց չեն թողնի հայերի հանդեպ դրսևորված անարդարությունների համար պատասխանատու դարձնել մեզ և նրանց լարել մեր դեմ»[58]: Մորտմանը 28. 04. 1915-ին գրում է. «... հայերն իրենց հանգիստ կպահեին, եթե թուրքերը չճնշեին և չգրգռեին նրանց»[59]: Վանգենհայմը Բեթման Հոլվեգին 08. 05. 1915թ. ուղարկած նամակում փորձ էր անում արդարացնել թուրքերին: Նա գրում է, թե «շատանում են այն նշանները, որ այդ (հայկական) շարժումը տարածվել է ավելի հեռու, քան մինչև հիմա ենթադրվում էր և որ դրան նպաստում է արտասահմանից օգնությունը հայկական հեղափոխական կոմիտեին»[60]: Դեսպանն անդրադառնում է նաև Կեսարիայում հայտնաբերված ռումբերին, թե իբր Ամերիկայից վերադարձած մի հայ բնակություն էր հաստատել Էվերեքում և զբաղվում էր ռումբեր պատրաստելով: «Երեք ռումբ պատրաստելուց հետո, չորրորդը պատրաստելիս զոհվել է... Հետագա որոնումները հայտնաբերել են 24 դատարկ, դեռևս չլիցքավորված հրազենափողեր...»: ՆԳ նախարարը Կեսարիայում գտնված ռումբերի թիվը նշել է մոտ 400: «Բացի այդ, իբր Դիարբեքիրում էլ են հայտնաբերվել ռումբեր...»[61]: Դեսպանն ավելի է առաջ գնում, թե «հայկական շարժումը վերջին շաբաթներին ստացել է մտահոգիչ բնույթ, ինչը կառավարությանը դրդել է դիմելու խիստ միջոցների»: 7. Ն.տ. Տեղին է նշել, որ հիպերբոլիկ թվաբանությունը միշտ էլ թուրքական իշխանությունների և քարոզչության կողմից անամոթաբար օգտագործվել են աշխարհին ահաբեկելու, թե հայերը մեծ քանակությամբ զենք ունեին և զենք էին պատրաստում:

"Кавказское слово" թերթը 01. 01. 1915թ. գրում է. «Նորից ամբողջ հայկական հողը դարձել է արյունահեղության և ամայացման ասպարեզ, նորից տասնյակ հազարավոր հայեր, սոված ու մրսած, ձգվում են ձյունոտ բարձունքներով դեպի նոր երկրամասեր: Մահն ու խելագարությունը հնձում են նրանց շարքերը: Սարսափն ու հուսահատությունը տանում են նրանց առաջ և առաջ: Երեխաները սառչում են, ծերերն ընկնում, կանայք նետվում են անդունդները...»: Տպագրվեց մի նամակ հասցեագրված Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսյանին: Նամակում կան հետևյալ տողերը. «Սարսափները, որոնց ականատես ենք լինում առաջավոր գծում այնքան ցնցող են, որ հոգիդ ուզում է աշխարհով մեկ ճչալ: Խոսքը ... տարաբախտ հայ ժողովրդի ողբերգության մասին է... Սարսափելի պատկեր է. դիակներ են, դիակներ, դիակներ... տղամարդ, կին, կրծքի երեխա՝ խեղված և գազանաբար այլանդակված»[62]: "Кавказ" թերթը հունվարի 3-ին գրում է, թե Սարիղամիշի և Արդահանի հայերը փախչում են Ռուսաստան, «Իգդիրը և մերձակայքը լեփ-լեցուն են փախստականներով, որոնք մեծ խմբերով գալիս են Կարաքիլիսեյից, Բայազետից, Դուտախից և շրջակա գյուղերից: Նրանց թիվն արդեն հասնում է մի քանի հազարի, բայց գալիս ու գալիս են նորանոր խմբեր: Նրանք քաղցած են, մերկ, պատառոտված շորերով ու մրսած... Զոհվել են շատերը, հատկապես կանայք ու երեխաները... Իգդիրն ու շրջակա գյուղերը վերածվել են իսկական «հիվանդանոցների, որտեղ չկան բուժողներ՝ բոլո-

52 U.S. State Deparment record Group 59,867, 4016/270.
53 PA-AA/R 14085 (De-001).
54 PA-AA/R (Կ. Պոլսի դեսպանատուն):

55 PA-AA/R (Կ. Պոլսի դեսպանատուն):
56 Ն. տ, 168:
57 Ն. տ.:
58 Ն. տ.:
59 PA-AA/R 14085.
60 Ն. տ.:
61 Ն.տ.:
62 ՀՀ ՊԿՊԱ, հավաք. ֆ. , ց. 1, գ. 200:

ը թողնված են բախտի քմահաճույքին...»: "Кавказское слово" թերթի 09. 01. 1915թ.-ում տպագրված է Ս. Հարությունովի հեռագիրը Կովկասի բարեգործական ընկերությանը. «Ամեն օր Թուրքիայից Կարս ու Կարսի մարզ են հասնում փախստականների նոր խմբեր... այն գյուղացիները, ովքեր չեն հասցրել փախչել, կոտորվել են: Մարզում կա 50 000 փախստական... Հիմա գաղթն ուժեղացել է Կաղզվանի կողմից, վիճակը ողբերգական է»:

Ա. Կերենսկին 1915-ի հունվարի 20-ին հայտարարեց. «Երբ սկսվեց Թուրքական հարձակումը... դեպի հյուսիս ձգվեցին փախստականների գնացքները... Դա գաղթ չէ: Ոչ: Դա մի ողջ ժողովրդի վերջն է»: "Кавказская мысль" թերթը նույն օրն անդրադառնալով այդ հայտարարությանը, գրում է. «Կերենսկին ինքն է տեսել, թե ինչպես պատառոտված շորերով, քաղցած ու հյուծված հազարավորներ հուսահատ քայլում էին՝ ճանապարհի եզրին թողնելով կրծքի երեխաների սառած դիակներ»:

Այս հրապարակումից երկու օր առաջ Կ. Պոլսի Ավստրո-Հունգարիայի դեսպանատունը ստացվել էր նամակ Հայաստանից, որում ասվում էր, թե «հին հակամարտությունը հայերի նկատմամբ հրեշավոր չարագործությունների տեսքով սանձազերծված է ... իշխանություններն այս հրեշավոր չարագործությունները դիտողի դերում են»[63]: Թվում էր, թե էնվերի մեկնելը արևելյան ռազմաճակատ փոխելու էր իրավիճակը, դադարելու էին հարձակումները հայերի վրա, բայց ստացվեց միանգամայն հակառակը[64]: Մեկ շաբաթ անց ստացված մի ուրիշ հեռագիր հաստատում էր. «Շատ հաճախ հայ զինվորներին ուղարկում են ռազմաճակատի առաջին գիծ սպանվելու: Քրդերը վերսկսել են հայ գյուղացիների կոտորածները, բայց մեկուսացած գործողություններով, որ կապած չհարուցեն, թե հայերին կոտորում էին ամենուրեք»[65]: «Մեծ չափերի» հասան և որոշակի բնույթ ստացան հայերի ձերբակալությունները»[66]:

Էվերեկի ուժեվանապետը, պատրվակ դարձնելով մի հայի սպանությունը, ձերբակալում է մեծ թվով հայերի, ոմանց անընդմեջ գանվածում և տանջում են: Գերմանուհի ավանատեսի վկայությամբ՝ շատերը, չդիմանալով խոշտանգումներին, մեռան[66]: «Ազատամարտը» 27.02. 1915թ. գրում է. «Գյուղերում մնացած բոլոր երիտասարդ կանանց ու աղջիկներին առևանգել են և ստիպել ընդունել իսլամ: Ինչպես երևում է, կառավարության նպատակը հայերին իրենց կենտրոններից հեռացնելն է... Կառավարությունը դաշնակցականներին չի վստահում»[67]: Իսկ «Մշակը» 27.02. 1915թ. գրում է. «Կ. Պոլիս լուրեր են հասնում, որ Ալաշկերտի գավառում ջարդեր են կատարվում, կանանց ու աղջիկներին ստիպում են կրոնափոխ լինել»:

Հայերի հանդեպ վայրագություններն անհանգստացրեց նաև օտար դիվանագետներին: Աղրիանապոլսում Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Նադամլենցկին 1915թ. մարտի 8-ին գրում է Պալավիչինին. «Հազարավոր մարդիկ հանձնված են անպատասխանատու անձանց, ավազակախմբերի քմահաճույքին: Մի՞թե նրանք անպատիժ շարունակելու են իրենց գործը: Մի՞թե մենք հնարավորություն և ուժ չունենք կատարվածին վերջ դնելու, որը սև բիծ է մեր հեղինակության վրա»[68]: Բացարձակապես օրինաչափ էին հայ գործիչների տագնապալից դիմումները Թուրք ղեկավարներին: Կիլիկիայի Սահակ կաթողիկոսի դիմումին Ջեմալը պատասխանեց. «Ջեռնարկված միջոցառումները վերաբերելու են միայն օրինազանցներին, անմեղ և հավատարիմ ժողովրդի գույքը, կյանքն ու պատիվը սուրբ են և անձեռնմխելի»: Դրությունը գնալով ծանրանում էր: «Ազատամարտը» 11. 03. 1915թ. արձանագրում է. «Բայբուրդի ողջ բնակչությունն ապրում է համընդհանուր կոտորածի մղձավանջի պայմաններում»: Հայերի հանդեպ Թուրքական բռնարարքները նորություն չէին, բայց այն, ինչ կատարվում էր աշխարհամարտը սկսվելուց ի վեր, գուժում էր ջարդերի վտանգ: Կ. Պոլսում Բուլղարիայի լիազոր նախարար Ն. Կոլուշևը 1915թ. մարտի 13-ին տեղեկագրում է Սոֆիա, թե Իտալիայի ու ԱՄՆ-ի դեսպանները հայերի հետ կատարվածն անվանում են «հայերի ընդհանուր կոտորածների նախագուշակ»: Կ. Պոլսում և երկրի խորքերում տեղի են ունեցել հայերի ձերբակալություններ»: Որպես կոտորածի ազդանշան ծառայելու էր հնչակյան գործիչներին կախաղան հանելը[69]:

63 "Osterreich-Armenien" Bd VI, 1914-1915, p. 4497.
64 HHSTA, PAXL, 272.
65 Ն. տ.:
66 "Osterreich-Armenien" Bd VI, p. 4552:
66 Նալբան Հ. Ցուշեր, Բեյրութ, 1960, էջ 655:
67 Wien, HHSTA PA XII 463, Adrianopel 1915, NZ 21/p.
68 "Deutschland und Armenien...", s. 226-227:
69 «Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում բուլղարական դիվանագիտական փաստաթղթերի լույսի ներքո», Ե., 1996, էջ 10-11:

Լեփսիուսը գրում է, որ Կարինի ոստիկանապետի տեղակալ Սուլեյմանը 30 ժանդարմի գլուխ անցած երգնկայի գյուղերը շրջելով դրամ էր պահանջում, զենք գտնելու պատրվակով գյուղացիներին ծեծում էր, ծաղրում, խուզարկություններ կատարում: Սերաֆիմովը 1915թ. մարտի 15-ին հայտնում է Պետերբուրգ. «Հայերի դրությունը Թուրքիայում որոշակիորեն վատացել է»[70]: «Էրզրումի շրջակայքի 17 գյուղից փրկվել է միայն երեքը: Մյուսները թալանված ու ոչնչացված են»: «Ամբողջ երկրով մեկ,- շարունակում է Սերաֆիմովը,- հայերը ձերբակալվում են»[71]: Խարբերդի վալին հայտարարեց գերմանական հյուպատոսին. «Թուրքիայի հայերը պետք է բնաջնջվեն: Նրանք այնքան են հարստացել ու բազմացել, որ Թուրքերի համար վտանգավոր են դարձել... բնաջնջումը միակ դեղամիջոցն է»[72]: Գրեթե նույն կարծիքն է հայտնել նաև Ջեմալը, որը Վ. Ռոսպերին ասել է. «...Ինչ վերաբերում է կառավարության կողմից հայերի դեմ կիրառվող միջոցառումների խստությանը՝ դրա պատճառը զեյթունցիների ապստամբությունն է»[73]: 1915թ. մարտին Կարինից ու Բիթլիսից գրում են. «Գյուղերում տիրող կողոպուտի և վտանգի հետևանքով դժվարություններն աճում են: Սարսափելի է հայերի տնտեսական դրությունը: Նրանք ամենուրեք մատնված են մուրացկանության... ընդհանուր ջարդերի վտանգը կախված է մեր գլխին»: Թուրքերն ասում են, որ դուք՝ հայերդ եք պատասխանատու այս պատերազմի համար և «բնաջնջելու ենք ձեզ»[74]: "The New York Times"-ը 1915թ. մարտի 20-ին հայտնեց. «... Ալաշկերտի հովիտը ծածկված է տղամարդկանց, կանանց ու երեխաների դիակներով: Այդ շրջանից ռուսական զորքերի նահանջին հաջորդեց քրդերի հարձակումն անօգնական ժողովրդի վրա: Տղամարդկանց սպանում են, կանանց՝ տանում լեռները»:

Սոֆիայից ստացված մի հեռագիր տեղեկացնում է. «Համատարած կոտորած է Էրզրումում, Տերդոլանում, Զեյթունում և շրջակայքում: Արյունահեղ բախումներ են Բիթլիսում, Վանում, Մուշում: Ապստամբություն է Կիլիկիայում: Բռնություններ, թալան սպանություններ են Ակնում և ամբողջ Փոքր Հայքում: Ողջ ժողովուրդը սնանկ է»[75]: Մի հեռագիր գուժում է. «Թուրքական կառավարությունը վերջնականապես որոշել է իրականացնել Խարբերդի հայերի բնաջնջման ծրագիրը, սկսվել են ձերբակալություններ և բանտարկություններ»[76]:

Կովկասյան ռազմաճակատը ձգվում էր Սև ծովից մինչև Ուրմիա լիճը: Նոյեմբերի 2-ին Թուրքական զորքերը ներխուժեցին Բաթումի մարզ: Տեղի մահմեդական բնակչությանը զենք բաժանեցին ու զինված ելույթներ հրահրեցին ռուսական բանակի թիկունքում: Ականատեսը գրում է. «Արդվինի գավառն այլևս գոյություն չունի, ամեն ինչ թալանված է, բնակչության մեծամասնությունը՝ սրի քաշված ... Կարող եք լինել տասնյակ գյուղերում և ոչ մի տեղ չհանդիպեք կենդանի արարածի...»: Դեկտեմբերի 22-ին սկսվեց Սարիղամիշի ճակատամարտը, որին Թուրքական կողմից մասնակցում էր 90 000, իսկ ռուսական կողմից՝ 64 000 մարդ: 9-րդ կորպուսի հրամանատար Ա. Ֆեյզին, 3-րդ բանակի հրամանատար Հ. Իզեթը, Սանդերսը թերահավատ էին էնվերի ձեռնարկի հանդեպ: «Ընդհանուր հրամանատարի փոխանորդ նշանակված էնվերը,- գրում է Մ. Ռիֆաթը,- ռուսական ճակատը քննել է և անոր «տկարությունը» իմանալե ետք նոր փառք շահելու տղայամտությունն ունեցած էր և առանց նկատի առնելու եղանակն ու կլիման, ինչպես նաև կեդրոնեն հեռանալիք բանակի մը պարենավորման դժուարությունները, իր հրամանատարությամբ ռուսներու դեմ յարձակում մը շղթայազերծել ուզած և այս նպատակը տեղեկացուցած էր Կովկասի ճակատի հրամանատար Տամատ Հաֆիզ Իսմայիլ փաշային, որ համամիտ չգտնուելով, բոլոր բանակի սպայակոյտի անդամները և բարձրատիճան սպաները հրավիրելով խորհրդակցած էր ժամերով: Շատերը յարմար տեսած էին, որ ձմեռը պաշտպանողական վիճակի մեջ անցնին և մինչև ամառ ամեն տեսակ պատրաստություն տեսնելե յետոյ յարձակման անցնին: Հակառակ ասոր, էնվերին ընկերակցող ընդհանուր սպայակոյտի նախագահ գերմանացի զորավար Պրոնզո փաշան՝ գերման բանակին դեմ ճակատող ռուսական ուժերը տկարաց-

70 Լեփսիուս Յո. Գաղտնի տեղեկագիր... էջ 35-37:
71 АВПП, Политархив, д. 3504:
72 Bryce J. The Threatment of Armenians..., p. 258:
73 Նալբան Ց., նշվ. աշխ., էջ 468:
74 Լեփսիուս Յո. Գաղտնի տեղեկագիր... էջ 127:
75 АВПП, Политархив, Տտ. 482, Պ. 3504:
76 Նալբան Ց., նշվ. աշխ., էջ 297:

նելով Գերմանիոյ բեռը թեթևցնելու սատանայամտութեամբ՝ Էնվերը համոզած և թրքական բանակին... իր ընդհանուր հրամանատարի հանգամանքով պատասխանատվութիւնը ստանձնելով յարձակման անցնիլ թելադրած էր»[77]: Էնվերը թուրքական հուսալքված ուժերին շունչ հաղորդելու համար տվեց դեմագոգիկ հրաման. «Զինվորներ, ես այցելեցի ձեզ բոլորիդ: Տեսա, որ բոլորիկ էք և ձեր ուսերին չկա չինել: Սակայն ձեր դեմ կանգնած թշնամին վախենում է ձեզանից: Շուտով դուք հարձակման էք անցնելու և մտնելու էք Կովկաս: Այնտեղ դուք գտնելու էք ամեն տեսակի սննդամթերք և հարստություն: Ամբողջ մուսուլմանական աշխարհն հետևում է ձեր վերջին ջանքերին»[78]: Գոլցը հեգնեց՝ Էնվերը «նորահայտ արևելյան նապոլեոնիկ է»: Փաշան կոչ հղեց Կովկասի մահմեդականներին. «Այժմ դուք, ինչպես մյուս բոլոր մահմեդականները, պետք է ապստամբեք մեր արյան ու հավատի թշնամիների՝ ռուսների դեմ և նրանց սրբազան պատերազմ հայտարարեք»[79]:

Թուրքերի հարձակումը Սարիղամիշի և Օլթիի ուղղությամբ ընթանում էր ծանր պայմաններում: Սառնամանիք էր, 32 աստիճան ցուրտ: Զինվորները ցրտահարվում էին, սառցամահ լինում: Սակայն Էնվերն ուշադրություն չէր դարձնում և թուրքական զորքերին առաջ էր մղում: Սարիղամիշը գրավվեց: Բայց շուտով ռուսներն ուժեղ հակագրոհի անցան և նրանց Սարիղամիշից դուրս քշեցին: Թուրքական 9-րդ կորպուսը շրջապատման մեջ ընկավ ու լրիվ ոչնչացվեց, ամբողջ դիվիզիաներ ու գնդեր պարզապես դադարեցին գոյություն ունենալուց: Էնվերին այդպես էլ չհաջողվեց խուճապի առաջն առնել, ինքն էլ գերի էր վերցվելու, եթե մի հայ չփրկեր: Նա բանակի հրամանատարությունը հանձնեց ուրիշի ու փախավ:

Սարիղամիշի պարտությունն այնքան անսպասելի, ցնցող ու վտանգավոր էր, որ Կ. Պոլսում խստագույնս արգելվեց այդ մասին գրել կամ խոսել: Նույն բանն արվեց Գերմանիայում: Սանդերսի տվյալներով՝ թուրքական 90 հազարանոց բանակից ողջ մնաց 12 հազար մարդ: Ռուսների կորուստները կազմեցին 20 հազար, որից 6 հազարը ցրտահարվեց: «Նշված ճակատամարտը,- գրում է նա,- որտեղ 3-րդ բանակի գլխավոր հրամանատարությունը ստանձնել էր անձամբ ինքը՝ Էնվերը, ավարտվեց այդ բանակի ոչնչացմամբ»[80]: «Գերմանական շրջանակներում կովկասյան պարտությունը բացատրվում է գերմանացիների խորհուրդներին թուրքերի և Էնվերի լսել չցանկանալով: Իսկ թուրքերն անհաջողությունը վերագրում էին գերմանացիներին ու ցրտերին: Նրանք բացահայտ էին արտահայտում իրենց հակակրանքը գերմանացիների հանդեպ: Եղան զինվորների կողմից հրահանգիչներին (գերմանացի) ծեծելու դեպքեր»[81]: Իսկ Սուշոնը պաշտոնազրկվեց: Հ. Ֆիրբյուխերը Թուրքիայի պարտության պատճառներից մեկը համարում է թուրք ասկյարի ողորմելի վիճակը, որն անասունի վիճակում էր և դարեր շարունակ տանջվել էր թե պարտության և թե հաղթանակի դեպքում, մշտապես լինելով բութ հուսահատության մեջ: «Թուրք զինվորին ծեծում էին անասունի նման, նրա ընտանիքը սովահար էր լինում»: Քաղցած էր թուրքական ամբողջ բանակը:

Եվս մի քանի վկայություններ: Երբ Էնվերը ստանձնեց արևելյան բանակի հրամանատարությունը, պարծեցավ, թե ինքը Ալեքսանդր Մակեդոնացու նման կհասնի մինչև Հնդկաստան: Սակայն Սարիղամիշում Էնվերն ու նրա ոտաբոբիկ զինվորները սոսկալի պարտություն կրեցին: «Մի փոքր տարածքում,- գրում է ֆրանսիացի գրող Ժ. Մեշլը,- ռուս պարեկները գտան 30 000 հետևակայինի սառած դիակ»: Ռազմական պատմաբան Կ. Մյուլմանը գտնում է. «Հրամանատարության սխալը Թուրքիային արժեցավ մի ամբողջ բանակ»: Իսկ Վանգենհայմը կեղծելով իրականությունը գրեց Բեռլին, թե ռուսները «խուճապահար հետ են քաշվում... Կարճ ժամանակամիջոցում ոչ մի ռուս չի մնա Թուրքական հողում»: Ռուսական բանակի հաղթանակն ակնհայտ էր: Պարտությունը սրեց Էնվերի, զլխավոր շտաբի պետ Շելենդորֆի և առաջին բանակի հրամանատար Սանդերսի հարաբերությունները: Սակայն Էնվերն ու Շելենդորֆը «եկքը գտան». որոշեցին պարտության մեղքը բարդել հայերի վրա: Էմիսարների վկայությամբ, զինվորականներն ու ժանդարմները միտումնաբար վեճեր էին հրահրում հայերի հետ: Լեփսիուսը նկատում է. «Չնայած իրենց թշվառության հայերը սաղրանքի չէին են-

77 Ռիֆաթ Մ., նշվ. աշխ., էջ 91:

78 Корсун Н. Г. Сарыкамышская операция на Кавказском фронте мировой войны в 1914-1915гг., Москва, 1937, стр. 33.

79 Վր. ԿՊԱ, ֆ. 13, ց. 27, գ. 3602, թ. 91:

80 Sanders L., նշվ. աշխ., ss. 54-56:

81 Վր. ԿՊԱ, ֆ. 1087, ց. 2, գ. 73, թ. 21:

թարկվում, մնում էին հանգիստ»: Բայց տեղ-տեղ նաև եղան բախումներ: Օրինակ, Առաքելոց վանքի տարածքում տեղի ունեցած փոխհրաձգության ժամանակ սպանվեց մի քանի թուրք զինվոր: Նրանց դիակները ցուցադրաբար տարան Մուշ: Թաղման ժամանակ կառավարիչը հրապարակավ երդում տվեց. «Ձեր գլխի ամեն մազի համար հազար հայ եմ մորթել տալու»: Մեկ մի, մեկ մի ուրիշ վայրում «հայերի դավադրություն էր հայտնաբերվում» և գենքի ուժով վերացվում: Շոյքներ Ռիխտերը 1915թ. մարտի 3-ին գրում է իր դեսպանին. «Բիթլիսի վիլայեթից հայտնում են հայերի դիմադրական շարժման և նրանց հարձակումների մասին: Զինվորականները խիստ պատժամիջոցներ են կիրառել»: ՀՅԴ պաշտոնաթերթը գրեց. «Կարծես կառավարության դիտավորությունը հայերին իրենց կեդրոններից հեռացնելն է»: Մարտի 24-ին Բայբուրդից ստացվեց լուր. «Ամբողջ բնակչությունը համընդհանուր ջարդի մղձավանջ է ապրում», իսկ ապրիլի 2-ին արդեն պարզ էր, որ աղետը սկված էր: «Համընդհանուր ջարդի սարսափը սավառնում է մեր գլխավերևում»: Թուրքերն ասում են. «Դուք հայերդ էք մեղավոր այս պատերազմի չարաղետության համար և պետք է ձեզ ոչնչացնենք»[82]:

Սարիղամիշի պարտությունը միայն ռազմական չէր, այն ռուսական բանակի առջև բացում էր Մի-ջերկրականը տանող ուղին, միանգամայն իրական դարձնում ռուսների դարավոր իղձը: Սարիղամիշը նորից հրապարակ հանեց Հայկական հարցը, արևմտահայությունը երբեք այնքան լիաթոք չէր շնչել թուրքական լծից ազատագրվելու հույսը: Սարիղամիշը խուճապ առաջացրեց օսմանյան շրջանակներում: Հայերի գոյությունը հայկական վիլայեթներում նշանակում էր ռուսական բանակի հետագա առաջխաղացման համար մայրուղու առկայություն: Սակայն իրականությունն այն է, որ Սարիղամիշն արագացրեց Մեծ եղեռնը՝ հայերի վերջը պետք էր տալ մինչև ռուսական բանակի երևալն այդ վիլայեթներում, մանավանդ որ աշխարհամարտը դրա համար բացառիկ բարենպաստ պայմաններ էր ստեղծում:

Արդեն ասվել է, որ երիտթուրքական կենտրոնը 1915թ. հունվարին ամբողջությամբ գործողության մեջ դրեց հայերի բնաջնջման դեռ 1909 թ. ցրցամ տված «Տասը կետերը»: Հետևաբար, հայերի բնաջնջման հունվարյան որոշումը ոչ թե Մեծ եղեռնի կողմնորոշման սկիզբն էր, այլ ծրագրի համապարփակ իրականացման պարտադրանք: Այն տեղերն ուղարկվեց ծածկագիր՝ ծանոթանալուց հետո անպայման տեքստը վերադարձնելու պայմանով: Եղան նաև այն չընդունող պաշտոնատարներ:

Էնվերը երիտթուրքերի կենտկոմի նիստում հայտարարեց. «Թեև Սարիղամիշի ճակատամարտում մենք արտաքնապես պարտվեցինք, սակայն, ըստ էության, հաղթել ենք, որովհետև Սարիղամիշի անտառներից մինչև Էրզրում ճանապարհներին թողեցինք մի քանի տասնյակ հազար քուրդ երիտասարդների դիակներ»:

1913-ի փետրվարի 11-ին Անտանտի զորքերը սկսեցին ռմբակոծել Դարդանելը և մինչև մարտի սկիզբը կարողացան ավերել նեղուցի արտաքին ամրությունները: Նրանք մարտի 18-ին ձեռնարկեցին վճռական գրոհը, որը սակայն անհաջողություն կրեց: Դա տարօրինակ «անհաջողություն էր»: Ոչ թե թուրքերը կասեցրեցին գրոհները, այլ իրենք գրոհողները: Առաջինները գրեթե պատրաստ էին դիրքերը լքել, քանի որ ռազմամթերքը սպառվելու վրա էր: Հավանաբար պատճառը Կ. Պոլիսը գրավելուց Անգլիայի ձեռնպահ մնալն էր: Լոնդոնը չէր ուզում այն գրավել Ռուսաստանին նվիրելու համար: Մինչդեռ Դարդանելի գրավումը կնշանակեր խոշոր հարված Քառյակ զինակցությանը, որովհետև դրանից հետո Թուրքիան պատերազմից դուրս էր գալու: Անգլիայի դիրքորոշումը Թուրքիային հնարավորություն տվեց ոչ միայն վերախմբավորել իր ուժերը, ռազմաճակատի մատակարարումը բարելավել, այլև բարոյապես զտեպնդվել և թույլ չտալ, որ Անտանտի զորքերը գրավեին Գալիպոլը, ինչն իթիհադին նաև վստահություն ներշնչեց ու նա ձեռնամուխ եղավ լուծելու երկրորդ գլխավոր հարցը՝ բնաջնջել հայերին:

Կարինում կենտրոնացած թուրքական 150 հազարանոց բանակը չէր մատակարարվում և իր պահանջմունքները մասամբ բավարարում էր բնակչության, մասնավորապես հայերին թալանելու միջոցով: Զորքի մի մասը տեղավորված էր հայերի բնակարաններում, ապրում էր նրանց հաշվին, և եթե հայերը զինվորականների կարիքները հոգալ չէին կարողանում, անարգվում էին: Դանակոծումը դարձավ սովորական երևույթ: Քաղաքում համաճարակ էր, որը հնձում էր ոչ միայն բնակչությանը, այլև զորքին: Էրզրումում ու վիլայեթում 110 հազար մարդ զոհ գնաց հիվանդություններին: Գերմանական հյուպատոսի վկայությամբ. «Թուրքական գնդերի... մեկ երրորդը հիվանդացել էր, մեկ երրորդն

82 Գուստ, նշվ. աշխ., էջ 149-150:

էլ դասալիք էր դարձել»: Սեբաստիայում գերմանական հյուպատոսության քարտուղար Կ. Վերտեն գրում է, որ եթե ռուսները Հասան Կալեն գրավելուց հետո առաջ շարժվեին, հեշտությամբ կտիրանային նաև Էրզրումին: Սակայն նրանք այդ չարեցին, ինչը տեղի տվեց զանազան մեկնաբանությունների: Վերտեն անձամբ լինում է Հասան Կալեում ու փորձում պարզել դրա պատճառը: Նա գրում է, որ ամբողջ ճանապարհը նման էր ահռելի գերեզմանոցի, որի երկու կողմերում թափված էին ցրտահարված մարդիկ, մասնավորապես զինվորներ, ինչպես նաև անասուն: 30-35աստիճան սառնամանիք, թեթև հագնված և մի կտոր հացով սնվող զինվորներ: Սայլերը տեղափոխում էին ձեռքերն ու ոտքերը ցրտահարված զինվորականների, որպեսզի ռուսների ձեռքը չընկնեին: Ճանապարհի ամբողջ երկայնքով թուրքերը խրամատներ էին փորում ու փշալարեր անցկացնում: Հասան Կալեում մնացել էր միայն մի քանի թուրք: Տեղում մնացածների վկայությամբ, երբ ռուսները մոտեցան, թուրքերը փորձեցին հրդեհել քաղաքը, բայց չհաջողվեց ու հեռացան, ռուսներին թողնելով ամեն ինչ, այդ թվում՝ սննդամթերքի ու հագուստի պահեստները: Ռուսներն օդային ռմբակոծության ուղեկցությամբ փետրվարի 16-ին գրավեցին քաղաքը:

Պարսկաստանի գլխավոր հյուպատոսի, ինչպես նաև Էրզրումի մի շարք հեղինակավոր անձանց վկայությամբ թուրքական 3-րդ բանակի հրամանատար Մահմուդ Քյամիլը տառապում էր հետապնդվելու հիվանդությամբ և ինքն էր հետապնդում բոլորին, ով թուրք չէր, անգամ խուսափում էր դիվանագետների հետ հանդիպելուց: Վերջինները հեռացան դեպի Երզնկա ու ճանապարհին տեսան մեծ թվով ցրտահարված անասուն ու մարդ: Թուրք զինվորները մեռնում էին ոչ միայն ցրտից, այլև քաղցից: Այդպես էր ոչ միայն Էրզրումում ու ռազմաճակատային գոտիներում: Պատմում է ժամանակակիցը. «Թուրքիայում ցորեն չէր մնացել, եղածն էլ իթիհադ վե թերաքքը կուսակցության ականավոր չարաշահողների ձեռքն էր անցել: Ժողովրդին օրական տրվող 300 գրամ հացն ավելով հավաքված կեղտի խառնուրդ էր: Շրջանառության մեջ մտցված թղթադրամն արժեզրկվել էր 10 անգամ: Ժողովուրդը թանկությունից ու սովից տառապում էր, սննդամթերքի գինը բարձրացել էր 200 անգամ: Զարաշահումներն ամենուրեք ու ամեն ինչում էին: Պետական պաշտոնատարները, իթիհադի ղեկավարները, ժողովրդի ներկայացուցիչ հանդիսացող երեսփոխանները «սրիկա վաճառական էին դարձել»; Վագոն վաճառելը հարստանալու միջոց էր: Ղեկավարներն իրենց փառաբանողներին կամ արժեքավոր նվերներ տվողներին էին վագոն ստանալու թույլտվության արժանացնում: Ստացողն այն գործատերերին էր վաճառում ու հարստանում: Այս և այլ միջոցներով մինչև պատերազմը 10 փարա չունեցող սինլքորները միլիոնների տիրացան: «...Մի կողմից, պարսավելի շռայլություն և ցոփություն, մյուս կողմից՝ ողորմելի քաղց ու թշվառություն էր»: Այս ալան-թալանի շրջանում ամենանողկալին Հուսեին Ֆահրիի ղեկավարած չարաշահումների դեմ պայքարի հանձնաժողովն ու Կարա Քեմալի հիմնած Ազգային արդարություն ընկերությունն էին: Բերքի գինը ընկերությունն էր որոշում: Այդ գործարքում մնասվողը գյուղացին էր, իսկ հարստացողները՝ ընկերությունն ու նրա լիազոր-գործակալները: Բերքը ոչ միայն չնչին գներով էր գնվում, այլև դրամի փոխարեն մուրհակ էր տրվում: Գնված բերքը մինչև զինվորական պահեստները գյուղացիների միջոցով էր փոխադրվում: Պահեստների պաշտոնյաները ստացված ապրանքները քաշի 10%-ից պակաս էին ցույց տալիս և գողացածը բաժանում էին իրար մեջ: Թշվառության ու քաղցի հետևանքով տարածվեցին զանազան վարակիչ հիվանդություններ՝ տիֆը ժանտախտից ավելի ավեր էր գործում: «Սով, աղքատություն, բարոյական անկում... փողոցները սովյալների ու թշվառների տուն էին դարձել»: Գյուղատնտեսությունը քայքայվել էր, առանց այդ էլ թույլ արդյունաբերությունն անկում էր ապրում: Քաոս էր տիրում ֆինանսական համակարգում:

Երիտթուրք գործիչներից մեկը, նկատի ունենալով «ազգի հերոս» տիտղոսակիր Էնվերի ապրելակերպը, գրում է. «Ընդհանուր պատերազմի ժամանակ, երբ բանակում զինվորները սովածությունից հյուծվում ու մեռնում են, նման շռայլություններն աններելի են... Սուլթանական ընտանիքի այդ փեսան իր հորը, որ մինչ այդ ճանապարհաշինական հարյուրյակի պետ էր, անմիջապես շահութաբեր աշխատանք է տալիս արքունիքում: Երիտթուրք այս պարազլուխը փոքր կարողություններ ունեցող, հիմնավոր կրթություն չստացած, բանսարկուի մեկն էր: Այդ փառամոլը, ռազմական նախարար դառնալուց հետո, ելնելով իր եսասիրական շահերից, պաշտոնից հեռացրեց 1 200 լավագույն սպաների, ինչը չէր կարող բացասական լուրջ ազդեցություն չունենալ բանակի մարտունակության վրա»: Դանիշմենդի կարծիքով, «Սարիղամիշի պարտությունն օսմանյան ամենախոշոր պարտությունների մեկն

էր ... հետևանք մեկ անհատի (Էնվերի) փառքի հասնելու մարմաջի... Էնվերը չլսեց 3-րդ բանակի հրամանատար Իզեթի խորհուրդը , նրան հարկադրեց հրաժարական տալ, ինքը կանգնեց բանակի գլուխը»: Դրա հետևանքը եղավ պարտությունը, որն ուղեկցվում էր թուրքական բանակի ջարդարար գործողություններով: «Բիթլիսի, Մուշի շրջանները գրավելուց հետո գործած աներևակայելի խժդժությունները մարդկության երեսն ամոթից կարմրացնող անմարդկային արարքներ են», «մակուկներով տեղափոխված ու Վանա լճի մեջ շպրտված մանուկների, կանանց, պառաւնիների ու ծերերի թիվը միայն Աստված գիտե»:

Երկրում ստեղծված ծանր կացությունը, բնականաբար, ծնեց դժգոհություններ: "El dia"-ն «Դժգոհություններ Կ. Պոլսում» հոդվածում, վկայակոչելով Հռոմի "Tribun"-ային, նշում է, որ խռովությունը գնալով աճում է Ադրիանապոլսի թուրքական գնդերում, որոնք հրաժարվում էին մեկնել Կ. Պոլիս՝ գիտենալով, որ անմիջապես ուղարկվելու էին ռազմաճակատ: Վիճակն այնքան վտանգավոր էր, որ Էնվերն անձամբ գնաց Ադրիանապոլիս: Քաղաքում բացահայտվեց դավադրություն, 50 հոգի կախաղան հանվեց:

Երիտթուրքերը ռազմաքաղաքական ճգնաժամը փորձեցին հաղթահարել նաև հակահայ հիստերիայի միջոցով՝ մահմեդական ազգաբնակչության մոլեռանդությունը բորբոքելով համախմբել իրենց մեծապետական գրոշի շուրջ: Այս ուղղությամբ իթիհադականներն այնքան առաջ գնացին,-գրում է Ջ. Բրայսը,- որ թուրքացումը նրանց ուղեղներում «դարձավ բևեռուած գաղափար ու անոնց վերջին հարուածը եղավ հռչակել թուրք լեզուն որպես բացարձակ միջոց կայսրութեան պաշտոնական առուծախի մեջ... Պատերազմի շղթայազերծումին մեջ հայերը չունին որեւէ յանցանք, և ուստի ապագայ գերիշխանութեան մեջ ալ անոնք չունին որեւէ պատասխանատուութիւն: Եվ սակայն անոնք շատ ավելի տուժած են, քան մեզմե որեւէ մեկը»[83]:

Ռազմական պարտություններն էլ ավելի բորբոքեցին մեծապետական-զավթողական կրքերը: «Երբ սկսվեց ընդհանուր պատերազմը,- գրում է Ռ. Պինոն,- Օսմանեան կայսրութեան ոչ միայն ոչ թիւրք ժողովուրդները, այլև թիւրքերու մեծամասնութիւնը կը ձգտեր նոր վարչակարգի՝ ավելի ազատական՝ նուազ ստրուկ օտար կարգերու: Հակառակ օսմանցիներու մեծամասնութեան կամքին էր, որ թիւրք կառավարութիւնը կամ, ավելի ճիշդը Էնվեր փաշան, մղեց Թուրքիան եվրոպական համաշխարհային բախումին, հպատակելու համար Գերմանիոյ»[84]:

Թուրքիայի մուտքը պատերազմ, բնականաբար, օգտագործվեց խափանելու Հայկական հարցը բարենորոգումների միջոցով լուծելու հնարավորությունը: Նաև ակնհայտ էր, որ պատերազմի մեջ Թուրքիայի մտնելը խիստ բարդացրեց հայության վիճակը: Կովկասյան ռազմաճակատում պատերազմական գործողությունները ծավալվեցին Արևմտյան Հայաստանի տարածքում, այսինքն ոչ միայն ջարդերի, այլև պատերազմական գործողությունների պատճառով արևմտահայերը վտանգվեցին: Ա. Թոյնբին զարմանքով է նշում հայերի կեցվածքի մի առանձնահատկություն: «Հայերը,- գրում է նա,- Սահմանադրությանը հավատարիմ մնացին այնքան ժամանակ, քանի դեռ երիտթուրքերը քիչ թե շատ ազատական և ժողովրդավարական քաղաքականություն էին վարում: Ադանայի կոտորածը սառը «ցնցուղ» էր հայ-թուրքական հարաբերությունների համար... հայերն իրենց հավատարմությունը փաստեցին, երբ թուրքերը 1912-ին կռվում էին գոյության համար...Հայ զինվորները հավատարմությամբ ծառայեցին և նույնիսկ գնահատվեցին իրենց թուրք հրամանատարների կողմից: Տարօրինակ չէ՞..., որ մի քանի տարի առաջ Ադանայում իրենց ծնողների սպանվելը տեսած հայերը խանդավառությամբ մտան մարդկանց տրամադրության տակ, ովքեր կազմակերպել էին այդ ջարդերը»[85]:

Երիտթուրք պարագլուխներն այլ բարոյականություն ու սաղայելական տրամաբանություն ունեին: Աշխարհամարտի մեջ մտնելուց մի օր առաջ թուրքական կառավարության հրապարակած հայտարարության մեջ կան հետևյալ տողերը. «Հայերը... միակ արգելքն են մեր քաղաքականության հաջողության, քաղաքականություն, որ պետք է բացի Հնդկաստան տանող ճանապարհը: Անհրաժեշտ է ոչնչացնել հայերին և նրանց դիակների վրայով քայլելով հասնել մեր նպատակին: Հետևաբար, մի խնայեք ոչ ոքի և ճշտությամբ կատարեք այն, ինչ ձեզ խստորեն հրամայված է»[86]: Կ. Պոլսում ստացված մի նամակում կարդում ենք. «Ներքին գավառների վիճակն օրըստօրե կծանրանա: Ընդհանուր

83 Լորդ Պրայս Հայկական ջարդերու փաստաթղթերը, Ա մաս, Կ. Պոլիս, 1920, էջ 37:
84 Բընե Բինոն Հայերի բնաջնջումը: Գերմանական մեթոդ և թրքական գործելակերպ, Կ. Պոլիս, 1919, էջ 17:
85 Գանդրունի Հ., նշվ. աշխ., էջ 274:
86 Թորլաքեան Մ. Օրերուս յետ, Լոս Անջելես, 1953, էջ 470:

զորակոչի պատճառով զինվորական պաշարողական վիճակ է ստեղծվել... Հայերը (դրականապես) պատասխանեցին զորակոչին: Արեցին ամեն բան, ինչ կարող էին, որպեսզի բոլոր հայերը որպես օսմանյան քաղաքացի, կատարեին իրենց պարտականությունները»: Դա նույնպես նշանակություն չուներ: Երիտթուրքերը որոշել էին կոտորել հայերին: Այդ խնդիրը լուծելու համար նրանց հիմնական պատրվակներն էին՝ հայերը Ռուսաստանի և Անտանտի կողմն էին հենց պատերազմի սկզբից ու դավաճանեցին թուրքերին, հայերը Ռուսաստանի հետ համագործակցած ցանկանում են Թուրքիայի տարածքի վրա հայկական անկախ պետություն ստեղծել, թուրքական բանակի հայ զինվորները դասալքում են կամ անցնում թշնամու կողմը, ապստամբության և այդ միջոցով թուրքական բանակին թիկունքից խփելու համար հայերը շատ գավառներում զենքեր ու ռումբեր են կուտակել, հնչակյանների Կոստանդիայի համագումարը որոշում էր կայացրել պայքարելու Հայաստանի անկախության համար:

Իսկ պատերազմը շարունակվում էր: 1915թ. ապրիլին Հալիլի հրամանատարության տակ եղած զորքերը գրավեցին Ուրմիան: Ռուսական զորքերը շարժվեցին Վանի ուղղությամբ թուրքական բանակի թիկունքը կտրելու համար: Ապրիլի 27-ին գրավվեց Մանազկերտը, գեներալ Նիկոլաևի զորքերն անցնելով Թափարզայի լեռները, մտան Վան: Շուտով ռուսներին անցան նաև Արճեշը, Կոփը, Վանա ծովի ամբողջ արևելյան ափը: Թուրքերը նահանջեցին Բիթլիսի ուղղությամբ, բայց Դիլմանում գլխովին ջախջախվեցին: Քրդերին ահաբեկելու նպատակով ռուսական մի զորամիավորում հունիսի սկզբներին Դիլմանից առաջացավ Բաշկալա-Խոշաբ-Վան- Արճեշ-Ադրյջևազ գծով: Վանա լճի շրջանն ուներ տնտեսական, քաղաքական, ռազմավարական առանձնահատուկ նշանակություն, և թուրքերն ամեն ինչ անում էին այն պահելու համար: Իսկ հակառակ կողմը Ալաշկերտն էր, Կոփը, Մուշը, Բիթլիսը, այսինքն՝ ուղի, որ տանում էր Մեջագետք: Չնայած թուրքերի կատաղի դիմադրությանը, ռուսական զորքերը տիրացան լայնածավալ տարածքների, սակայն դրանով բարդացրին իրենց վիճակը՝ ցրվածությունը, մատակարարման և կապի դժվարությունները, լեռնային տեղանքը հնարավորություն չտվեցին կանգնեցնելու հակառակորդի ամառային հարձակումը: Դրանով է բացատրվում ռուսական բանակի հուլիսյան «տարօրինակ» նահանջը: Ռուս հեղինակներ Դ. Վերժխովսկին և Վ. Լյախովը գրում են. «Կովկասյան 4-րդ կորպուսի ընդհանուր ճակատը կազմում էր մոտ 400 կիլոմետր և ձգվում էր Դայար գյուղից մինչև Թավրիզ... Կորպուսի վիճակը ծանրանում էր նրանով, որ թուրքական հրամանատարությունը, կատարելով գերմանական գլխավոր շտաբի մշակած պլանը, ձգտում էր, որ Պարսկաստանը և Աֆղանստանը հարձակվեին Ռուսաստանի և Անգլիայի զորքերի վրա: Թեհրանը պահանջեց ռուսական բանակը դուրս հանել պարսկական Ադրբեջանից: Այդ պահանջը ռազմական ուժով ամրապնդելու համար թուրքական հրամանատարությունը Ուրմիա լճի շրջան ուղարկեց երկու հետևակային դիվիզիա... Գործել սկսեց նաև քրդերի ջոկատը»: Ահա թե ինչու Սազոնովը համառորեն պնդում էր, որպեսզի Իրան մեկնի Բարաթովի հատուկ էքսպեդիցիոն հեծյալ կորպուսը: Էնվերն ու նրա գերմանացի խորհրդականները որոշեցին Մանազկերտ-Ալաշկերտ-Կաղզվան գծով անցնել ռուսական բանակի թիկունքը և ճախողել ռուսների հարձակումը Էրզրումի ուղղությամբ: Թուրքերը հուլիսի 9-ին հարձակման անցան Արևելյան Եփրատի շրջանում և ճեղքեցին ռուսական ճակատը: Կորպուսի հրամանատար գեներալ Օգանովսկին գրեց. «14 օրվա մարտերը խիստ հյուծել են կորպուսին: Թշնամին մարտի մեջ է մտցնում նորանոր ուժեր: Թուրքերի ճնշման տակ Ամասիայի ջոկատն այսօր հեռացավ Կոփի դիրքերից... մյուս ջոկատները ևս հարկադրված հետ քաշվեցին...»[87]: Իր հուշերում այդ մարտերի մասնակից, դիվիզիայի հրամանատար Նազարբեկովը գրում է. «Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի շտաբի չփոթմունքն այնքան մեծ էր, որ թուրքերի հարձակման ընթացքում շտաբը մեր սահմանն անցավ Ախտայի կիրճով և կանգ առավ Կարսի մարզի Նովո-Նիկոլաևկոյե գյուղում, իսկ թուրքերին ջախջախելուց հետո անցավ Ն. Դերաբի գյուղը»[88]: Սակայն այստեղ ևս երկար մնալ չկարողացավ ու անկանոն նահանջեց, որից օգտվեցին թուրքերը ընակչությանը հաշվեհարդարի ենթարկելու համար: Թուրք հրամանատարությունը ռուսների նահանջը համարում էր սեփական գործողությունների արդյունք, թե իրենք ռուսներին «քշում էին մի դիրքից մյուսը»:

87 **Вержеховский Д. В., Лахов В. Ф.** Первая мировая война, 1914-1918гг., Москва, 1964, стр. 141.
88 ՀՀ ԿՊ ԿԱ, Գեն. Նազարբեկովի անձնական արխիվ, տետրակ թիվ 7, էջ 106:

Հուլիսի 22-ին գեներալ Բարաթովի ջոկատը Դայար գյուղի մոտ հակահարձակման անցավ: Թուրքերը խուճապահար փախան: Հուլիսի 17-ին Անդրանիկը տեսնելով Վանա ծովի շրջանում ռուսական բանակի նահանջը, գեներալ Տրուխինին ասաց. «Այս նահանջը լրիվ կեղծիք է: Դուք ուզում եք, որ Հայաստանը մնա առանց հայի... Բնությունը ձեզ տրամադրել է անանցանելի, անհասանելի լեռներ, բերդեր և բոլոր հնարավոր խոչընդոտները թշնամուն կասեցնելու համար: Ինչո՞ւ չեք ուզում ամրանալ դիրքերում և խայտառակ ձևով նահանջում եք 20կմ, չհամարձակվելով անգամ հետ նայել... ինչո՞ւ փախչել, երբ մեր դեմ միայն երեք բարոյազրկված թուրքական դիվիզիաներ են»: 24 000 թուրքերի դեմ կանգնած էր 64 000 ռուս[89]: Նազարբեկովի վկայությամբ Անդրանիկը կրծքից պոկեց Գեորգևյան խաչն ու ասաց, թե իր գնդում հիմնականում մշեցիներ են և ինքն այլևս նահանջել չի կարող[90]: «Այս անվերջ նահանջները պատճառ դարձան 100 հազար սովյալ անմեղ մարդկանց կործանման համար»[91]: Նույն փողն է փչում Ս. Վրացյանը. «Թուրք-հայկական հարցը լուծվեց թուրքերի ձեռքով: Թուրքահայաստանն առանց հայի, սա համապատասխանում էր նաև ռուսական շահերին: Երբ թուրքերը տարված էին հայերի կոտորածներով ու բռնագաղթով, ռուս զորավարները կաղրիլ էին պարում: Մի քայլ առաջ, մի քայլ ետ, անվերջ շարժումներով ու նահանջներով վերջնականապես ավերվեցին ու քանդվեցին իթիհադ դահիճների ձեռքից փրկված Ալաշկերտն ու Վասպուրականը: Միտումնավո՞ր էին այդ նահանջները, թե թելադրված էին ռազմական նկատառումներով, միևնույն չէ՞ հայ ժողովրդի համար»[92]: Նույն կարծիքին է Լեոն. «Գրեթե միաժամանակ սկսվեց անհասկանալի խուճապով նահանջը Վանից ու Մանազկերտից մինչև ռուսական սահմանը»[93]:

1915թ. մայիսի 7-ին Մանազկերտի թեմի տեղապահ Հ. Տեր-Ավետիսյանը կաթողիկոսին հասցեագրված նամակում նկարագրում է Բուլանըխում, Ախլաթում և Խնուսում թուրքերի կատարած վայրագությունները: «Ներքին Բուլանըխի 13 հայկական գյուղերի 2000 ընտանիքից, Ախլաթի 22 գյուղերի 4500 ընտանիքից և Խնուս, Կարաչորան, Գումնդակ, Սալորիկ և Ղրիմ Խան գյուղերի 4000 ընտանիքից անտառներով ու կիրճերով հազիվ 150 հոգի կարողացավ թաքուն փախչել և տխուր լուրեր բերել մեր սպանված եղբայրների ու պղծված քույրերի մասին»[94]: Նա մեղադրում է ռուսական հրամանատարությանը «կասկածելի» տեղաշարժերի համար: «Դժբախտ ժողովուրդ, որ իր հարևան քրիստոնյա Ռուսաստանի զորքին ընդունեց որպես փրկարար... Բայց նա հազիվ էր ոտք դրել Հայաստան, երբ սկսվում է նահանջը», և բնակչության հույսերը հօդս ցնդեցին[95]: Աել, որ ռուսական բանակի այդ վարքագիծը միտումնավոր քաղաքականության հետևանք էր, սխալ է, բայց որ միտումնավորություն կարող էր դրսևորվել այս կամ այն դրվագում ռուս այս կամ այն հայատյաց մեծապետական հրամանատարի կողմից, միանգամայն հավանական է:

Ռուսական "Искры" շաբաթաթերթը 28. 06. 1915թ. հոդված տպագրեց նվիրված Ցուդենիչին, որում կան հետևյալ տողերը. «Ծանր պահերին, երբ թուրքական հրոսակները հեղեղեցին մեր Անդրկովկասը ավելի քան 200 վերստ ձգվող ճակատով մեկ, Սև ծովից մինչև Արաքս, և երբ իրենց ճանապարհին թուրքերն անսպասելի գտան տեղացի աղարների և քրդերի ավազակային հրոսակախմբերի աջակցությունը, անհրաժեշտ էր մեծագույն ինքնատիրապետում և անխորտակելի հավատ ռուս զինվորի հանդեպ, որ նահանջելու հրաման չտրվեր»: Իսկ այդ հրամանը տրվեց և տրվեց ոչ առանց օբյեկտիվ պատճառների: Դրանցից առաջինն այն էր, որ Կովկասյան ռազմաճակատը, ինչպես արդեն նշվել է, ձգվում էր Սև ծովից մինչև Թավրիզ և այն պաշտպանելու համար լրացուցիչ ուժեր էին պահանջվում, մանավանդ որ Էնվերը պատրաստվում էր ճեղքել ռուսական հարձակման գիծը:

Համենայնդեպս հազիվ թե լուրջ կարելի է համարել պնդումը, թե հանուն հայերի բնաջնջման ռուսները լքում էին 50-60հազ. քառակուսի կիլոմետր տարածք, որը գրավելու համար հազարավոր զոհեր էին տվել: Մանավանդ որ Մուշ-Ալաշկերտից նահանջելն ինքնին վնասակար լինելով հանդերձ, նաև խիստ բացասական էր անդրադառնում թե ռազմաճակատի Սարիղամիշի և թե Իրանի ուղղությունները:

89 Լալեճեան Լ. Կ. Զոր. Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը. 1914-1918, Բոստոն, 1924, էջ 36:
90 ՀՀ ԿՊ ԿԱ, Գեն. Նազարբեկովի անձնական արխիվ, տետրակ թիվ 7, էջ 133:
91 Կիտուր Ս., նշվ. աշխ., էջ 470:
92 Վրացեան Ս. Հայաստանի Հանրապետութիւն, Փարիզ, 1928, էջ 112:
93 Լեո, նշվ. աշխ., էջ 181:
94 ЦГАОРР, ф.579, оп. 1, д. 1887, л. 1.
95 Ն. տ.:

ների վրա, թուրքերի համար հնարավորություններ ստեղծում ձևավորելու ընդհանուր ճակատ ռուսների դեմ, օգտագործելու այդ շրջանների քրդական մարտունակ ուժերին: Դրա ապացույցներից մեկն այն է, որ 1915թ. ռուսները գրեթե ամբողջությամբ թողեցին Բաթումի մարզը: Ու նաև այն, որ Սարիղամիշի ճակատամարտից հետո Կովկասյան ռազմաճակատի առջև որպես գլխավոր խնդիր դրվեց՝ պաշտպանել պետական սահմանները և թույլ չտալ թուրքերին մտնելու Կովկաս և Իրան:

Գեներալ-ադյուտանտ Կուրոպատկինին 1915թ. սկզբներին հանձնարարվեց մշակելու Արևմտյան Հայաստանի ապագա կարգավիճակի ու վարչական կառուցվածքի սկզբունքները: Համաձայն մշակված նախագծի Արևմտյան Հայաստանի տարածքը բաժանվելու էր երկու մասի. Էրզրումի գեներալ-նահանգապետություն, որի մեջ մտնելու էին Էրզրումի, Խարբերդի, Բիթլիսի, Վանի, Դիարբեքիրի և Տրապիզոնի վիլայեթները: Սրվազի գեներալ-նահանգապետություն, որի մեջ մտնելու էին Սրվազի և Կաստամոնուի վիլայեթները, Բրուսայի վիլայեթի մի մասն ու Ջանիկի սանջակը: Ակնհայտ է ցարական կառավարության միտումը՝ ավելի ու ավելի մոտենալու Միջերկրականի ափերին:

Հայկական հարցը որոշ դեպքերում շարունակում էր շահարկվել կամ օգտագործվել ռուսական վերնախավի պալատական խարդավանքներում: Օրինակ, Ստոլոպինն այդ հարցն օգտագործում էր Վորոնցով-Դաշկովի դեմ: Սակայն այն, ինչ տեղի ունեցավ Կովկասյան ռազմաճակատում, հետևանք էր՝ ա. նախապատրաստական լուրջ աշխատանք չէր տարվել, բ. կառավարության, բարձր հրամանատարության ուշադրությունը գամված էր եվրոպական ռազմաճակատին և աչքաթող էր արվել Կովկասյան ռազմաճակատը, գ. նկատվում էր այս աշխարհատարածքի նշանակության թերագնահատում, նույնիսկ կարծիք էր հայտնվում, թե Ռուսաստանը Կովկասում պետք է տարածքային զիջումների գնա հանուն ռազմական հաջողությունների Եվրոպայում: Պատերազմի հենց սկզբին Սազոնովը հայտարարեց, որ ցարը «որոշել է ոչ մի զինվոր չհանել գերմանական ռազմաճակատից: Մեզ ամենից առաջ անհրաժեշտ է հաղթել Գերմանիային: Գերմանիայի պարտությունն անխուսափելիորեն հանգեցնելու է Թուրքիայի անկման: Եվ այդպես, թուրքական բանակի և նավատորմիղի հարձակման դեմ մենք բավարարվելու ենք փոքր վարգույրով»[96]: Դրան գումարվում էր ռուսական որոշ գեներալների (Ցուդենիչ, Աբացիև, Շարանդոյ) հակահայ գործունեությունը՝ չճանաչել հայերի սուվերեն իրավունքները, հայերի, հայ գործիչների հետ միջադեպեր ստեղծել, հայության հասցեին լպիրշ արտահայտություններ օգտագործել:

Բայց նաև ինչո՞ւ մոռանալ, որ «Հայաստանն առանց հայերի» կարգախոսը ռուսական քաղաքականությունից լրիվ դուրս էր նետված, որ 1913-ին ռուսական կառավարությունը նախաձեռնեց հայկական բարենորոգումների համար պայքարը և այն հետևողականորեն առաջ տարավ, որ ցարական իշխանությունները ձևավորեցին հայ կամավորական շարժումը, «հայերին բնաջնջել ցանկացող» այդ սպիտակ արջը միակ երկիրն էր, որ պետական օգնություն էր ցույց տալիս հայ փախստականներին: Բացի դա: Իրադարձությունների ականատեսները բազմաթիվ փաստեր են բերում հայ գաղթականների հանդեպ ռուսական բանակի, ռուս զինվորի սրտացավության մասին: Նրանցից մեկը, գեներալ-լեյտենանտ Ն. Կորսունը պատմում է, որ Մանազկերտից նահանջող ռուսական զորամասը «անկազմակերպ վիճակում էր, նրան խառնվել էր հայ փախստականների ամբոխն անասունների վիթխարի հոտերով, սայլերով, կանանցով ու երեխաներով: Խուճապահար նահանջելով այդ փախստականները ոչ ոքի կողմից չէին կառավարվում և քշվում էին կրակոցների ձայներով, որոնք լեռներում կրկնվում էին բազմակի արձագանքներով: Ամբոխը լցվում էր զորքի մեջ ու առաջացնում աներևակայելի խառնաշփոթ: Հաճախ հեծելազորը և հետևակը վերածվում էին այդ աղմկող ու լացող, քրդերի հարձակումներից վախեցող մարդկանց պաշտպանների, քրդերը կոտորում ու բռնաբարում էին տեղում մնացածներին և կոտորում էին ռուս գերիներին»[97]: Ինչո՞ւ է դեն նետվում այն իրողությունը, որ 1915թ. ամռանը ռուսական զորքերը, իրոք, չկարողացան դիմադրել թուրքական հարձակմանը: Ինչո՞ւ չմտածել, որ ռուսական բանակի այդ անբացատրելի տարընթացությունները հետևանք էին նաև Կովկասյան ռազմաճակատի ռուս հրամանատարության անպատասխանատվության ու անճարակության:

1915թ. կեսերին, երբ ակնհայտ դարձավ, որ սրբազան պատերազմը ձախողված է, ու նաև այն, որ պանթուրքիստական ծրագրերը պատմական տվյալ պահին անիրականանալի էին, որ վտանգված էր ինքը՝ Օսմանյան կայսրության գոյությունը, Թալեաթն ու Էնվերը դեն նետեցին սրբազան պատերազմի ու պանթուրքիզմի լոզունգները և որդեգրեցին «բարբարոս ռուսների և անգլիացիների զոհի» կեցվածք:

96 Палеолог М. Царская Россия во время мировой войны, Москва, 1991, стр. 123.
97 Корсун Н. Г. Алашкертская и Хамаданская операции, стр. 110.

Նրանք այլևս ոչ թե համաթուրանական և համիսլամական կոչեր էին անում, այլ օգնություն հայցող աղմուկ բարձրացնում: Թուրքական պաշտոնական մի հայտարարության մեջ ասվում է, երբ թուրքական բանակը հետ գրավեց Մանազկերտը, «այն ահավոր վիճակում էր: Ռուսներն այդ քաղաքը բացարձակ ավերակի էին վերածել: Բաշկալեում մահմեդականներից կենդանի մնացել էր միայն երեք ծեր կին»: Մի այլ տեղ «գտնվել են երեխաների և տեղի բնակիչների բազմաթիվ դիակներ, ովքեր սպանվել են ռուսական զորքերի կողմից, ինչպես նաև մեր զինվորների դիակներ՝ փորված-հանված աչքերով»[98]: Այս հայտարարությունը թվագրված է 1915թ. հուլիսի 15, այսինքն, երբ ամբողջ թափով առաջ էր տարվում հայերի բռնագաղթն ու կոտորածը: Թուրքերն ասում էին, թե մենք հայերին «տեղափոխում ենք», իսկ ռուսները մահմեդականներին ուղղակի ոչնչացնում են իրենց բնակավայրերում: Այդ պահին հայերի հանդեպ վերաբերմունքում շրջադարձը նաև հետևանք էր խայտառակ պարտությունների մեղքն իր՝ թուրքական բռնատիրության վրայից դեն նետելու, այն հայերի «դավաճանության» հետևանք համարելու Էնվերի ջանքերի: Հայերի վարքագիծը հոչակվեց կայսրության գլխին կախված «վտանգ», որը վերացնելու միայն մի միջոց կար՝ նրանց «հավաքել և ուղարկել ուրիշ վայրեր»[99]:

Էնվերը, նրա հետ միասին թուրք պատմաբանները պնդում են, թե ռուսական սահմանամերձ շրջաններում, մասնավորապես Վանում ու Վասպուրականում, ռուսներն ու հայերը ոչնչացրել էին տասնյակ հազարավոր մահմեդականների: Բացարձակ կեղծիք է, որովհետև թուրքական բանակի նահանջի հետ միասին հեռացան նաև մահմեդական բնակչության լայն զանգվածները, հեռացան Բաղեշի ուղղությամբ, որտեղ նրանցից շատերին օթևանեցին հայերն իրենց տներում, շատ թուրքեր հայերին պահ տվեցին իրենց թանկարժեք իրերը: Թուրքերի հանդեպ հայերի վերաբերմունքն այնքան մարդասիրական էր, որ Ջևդեթը մի քանի հայերի պարգևատրեց:

«Ռուսական զորքերին աքցանի մեջ առնելու Էնվեր փաշայի մշակած պլանը լրիվ ձախողվեց,- գրում է Գ. Զուբարը,- թուրքական բանակի ջախջախումը, Բայազետի և Էրզրումի անկումը, ռուս արծիվների հաղթական արշավանքը դեպի Ցարգրադ չփոթեցրին թուրքերին: Մզկիթներում զայրալից քարոզներ էին հնչում գյավուր հայերի դեմ: «Այդ նրանք դավաճանեցին մեզ... նրանք ոտի հանեցին ռուսներին: ...Մահ հայերին: ...Մահ»: Եվ սովյալ ամբոխը բորբոքված ուլեմաների և Թալեաթ բեյի ու Էնվերի ագիտատորների կողմից բացահայտ խոսում էր կոտորածի, ջարդերի մասին»[100]:

Թուրքերը Խանքենդ գյուղը վերածել էին կենտրոնական էվակուացիոն կետի, որտեղ բերվում էին վիրավորները: Բոլոր տներում ասկյարներ ու գպաներ էին պառկած, և ազգաբնակչությունը պարտավոր էր նրանց կերակրել, նաև ձեռք բերել զինվորական հիվանդանոցներին անհրաժեշտ ամեն ինչ: Հայերն այդ պարտականությունները կատարում էին բարեխղճությամբ: Բայց մի օր փողոցում հնչեցին կրակոցներ և օդում թնդացին ցասումալից կանչեր. «Մա՛հ դավաճաններին, մա՛հ գյավուրներին»: Գոռում-գոչյունները միացան սպանվողների սրտաճմլիկ ողբը, կանանց, երեխաների լացը: «Քրդե՛րը... Քրդերը մորթում են»: Մեկ շաբաթ անց ռուսական հետախուզական մի ոչ մեծ ջոկատ մտավ Խանքենդ: Ագռավների երամն առնելով լեշերի հոտը, թռչում էր գյուղ վրա: Ջրհորի մոտ ընկած էր երկու դիակ: Մեկի ճակատին խոր խոռոչ կար: ... Լեռան ստորոտին կոզակները եղբայրական գերեզման փորեցին և թաղեցին սպանվածներին: ...Փոքրիկ բացատում ընկած էին սպանված, խոշտանգված կանանց, տղամարդկանց, պատանիների ու երեխաների մարմինների կույտեր: Այդ կույտերն աճում էին, բացատը լայնանում էր և թվում էր, թե մեռածների այս թագավորությունը, զոհերի այս զանգվածը վերջ չունի[101]:

Մեծ հաշվով հայերի ջարդերը Ադանայից հետո այդպես էլ կանգ չառան, դրանք մերթ թուլանում էին, մերթ ուժեղանում, բայց մշտապես շարունակվում էին: Միայն մի քանի փաստեր:

"National Review"-ն 1913թ. ամռանը իր թիվ LXI-ում գրում է, թե միայն մեկ ամսում Բիթլիսում սպանվել էր 27 հայ, 50 հայի հարկադրել էին քաղաքից հեռանալ: «Հայերի հուսահատությունն ահռելի էր»: 1914թ. սեպտեմբերին անգլիական խորհրդարանի անդամ Ա. Ուիլյամսը Գրեյին տեղյակ պահեց, թե թուրք նախարարները որոշել էին «ազատել երկիրը հպատակ քրիստոնյա ազգություններից»[102]:

Ոչ փոքր թվով հայ գործիչներ, պատմաբաններ, օտար հեղինակներ Մեծ եղեռնի սկիզբը կապում են 1915թ. առաջին ամսին տեղի ունեցած այս կամ այն իրադարձության հետ: Օրինակ, "Армянский

98 ЦГВИАР, ф.2003, оп. 1, д.1138, л.38.
99 Yalcin H. C. Siyasi Anila, Istanbul, 1976, s. 233.
100 "Армянский вестник", 1916, N25.
101 Ն. տ.:
102 FO 371/1234/29868.

вестник"- ը (12. 03. 1917) այդ կապակցությամբ գրում է. «Սարիղամիշում ջախջախվելը, որ թուրքերի կողմից վերագրվում է հայերին, ունեցավ ողբերգական հետևանքներ»: Ուրիշները շեշտում են Դարդանելում անգլիացիների պարտության դերը[103]: Թ.Աքչամը այն կապում է թեչքիլաթի մախսուսայի ստեղծման հետ[104]: Ամերիկյան դիվանագետ Լ. Էյնշտեյնը նույն կարծիքին էր, թե Դարդանելից հետո երիտթուրքերը պահը հարմար համարեցին իրենց հակահայ քաղաքականության գործադրման համար[105]: Անգլիական գործիչ լորդ Քինռոսը գտնում էր. «Գալիպոլիում անգլիական զորքերի անհաջողությունը երիտթուրք եոյակին հնարավորություն տվեց, չվախենալով արտաքին միջամտությունից, իրականացնելու հայ ազգի ոչնչացման նախապես մշակված ծրագիրը»[106]: Հ. Գիբբոնսը գտնում է, որ դեռ մինչև Դարդանելն էր քայլ կատարվում կոտորածներն իրականացնելու: «Դաշնակիցների կողմից Դարդանելի պաշարման սկզբին,- գրում է նա,- Կ. Պոլսում բոլորը գիտեին, որ հասել է ժամանակը... Բ. Դրան և սերասքիրատի արխիվներում թաքցրած մահվան դատավճիռը վերջապես ի կատար է ածվելու»[107]: Հ. Գիբբոնսի խոսքերից նույնպես հետևում է, որ հայերի բնաջնջման պլանը 1915-ին ոչ թե «ծլարձակում էր», այլ վաղուց գոյություն ուներ: Հայերի բնաջնջման քաղաքականության սկսելը Դարդանելի պարտության հետ կապելուն որոշ վերապահումներով էր մոտենում Ու. Զերչիլը: Նա շեշտը դնում էր աշխարհամարտի իրողության վրա, երբ թուրքերը «ժամանակը հարմար գտան... երկիրը մաքրելու քրիստոնյա ռասայից... լիովին հնարավոր է, որ Գալիպոլիի թերակղզու բրիտանական գրոհն է՛լ ավելի ուժեղացրեց թուրքական կառավարության կատաղությունը»[108]: Իրավիճակը շատ ավելի ճիշտ է ներկայացնում Ի.Պոմիանկովսկին: Նա գրում է, որ Բ. Դուրը մինչև 1914թ. էր պատրաստ օգտագործելու պատեհ առիթը հայ ժողովրդին վերացնելու համար[109]: Այո, երիտթուրք պարագլուխները երազում էին ստեղծել Մեծ Թուրան, այո, Հայաստանն ընկած էր այդ ճանապարհին, բայց, նախ, Թուրանի ճանապարհին հայերը գլխավոր խոչընդոտը չէին և երկրորդ՝ հայերը ոչ միայն «էթնիկական հզոր արգելք» չէին, այլև առանց դրսի օգնության բացարձակապես անկարող էին թուրքերին էական դիմադրություն ցույց տալ: Հայոց ցեղասպանությունը համաթրքական ծրագրով հիմնավորելը քննադատության չի դիմանում: Ով քիչ թե շատ ուսումնասիրել է Օսմանյան կայսրության վիճակը XIX դարավերջին և XX դարասկզբին, որևէ կասկած ունենալ չի կարող, որ գոյությունը մի կերպ քարշ տվող Թուրքիայի համար նման ծրագիրը երազային ցանկությունից այն կողմ չէր անցնում: Ոչ փոքր թվով մասնագետներ համարում էին, որ ցեղասպանության գլխավոր պատճառ Լոնդոնն ու Պետերբուրգը ձգտում էին ողբերգության հանգամանքներն իրենցից հեռացնել: Տարօրինակ է, որ համաթրքությունը գլխավոր պատճառ համարող հեղինակը հռչակում է, թե «հայերի բռնագաղթի համար ռազմաստրատեգիական որևէ պատճառ գոյություն չուներ»: Նույն հեղինակը հռչակում է. «... Ավելի քան երկու միլիոն հայություն, ովքեր բնակվում էին Արևմտյան Հայաստանում ու Թուրքիայի մյուս մասերում և հեռու էին պատերազմական գործողությունների թատերաբեմից, բռնագաղթը ոչ մի կերպ չի կարելի արդարացնել ռազմական նկատառումներով»[110]:

Նախ, 1915թ. բռնագաղթվածների թիվը երկու միլիոնից պակաս էր: Այն բռնագաղթի ճանապարհին զոհվածների հետ միասին չէր անցնում 1,3 միլիոնից: Համենայն դեպս, 1915թ. Հայաստանի սահմաններից հանվել էր մոտ մեկ միլիոն մարդ: Երկրորդ, Արևմտյան Հայաստանը ոչ միայն պատերազմական գործողություններից հեռու չէր, այլ հանդիսանում էր ռազմական գործողությունների գլխավոր թատերաբեմը, որտեղ թշնամաբար տրամադրված ազգաբնակչության առկայությունը չի հանդուրժել պատերազմող որևէ կողմ: Դ. Լանգն իրավացի է, երբ գրում է. «Հայերի վերացումը երիտթուրքական քաղաքականության գլխավոր խնդիրն էր»[111]: Բայց ինչո՞ւ: Պատճառը նույնն էր՝ հայերի բնաջնջման միջոցով ազատվել հայկական հարցից:

---

103 Սարուխանյան Ն. Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում և Մեծ Բրիտանիան, Ե. 2005, էջ 48:
104 Akcam T. Dialogue Across an International Diyide...Cambridge and Toronto, 2001, p. 44:
105 Einstein L. Inside Constantinople, New York, 1918, p. 7.
106 Սահակյան Ռ. Հայոց ցեղասպանության պատմությունից, Ե., 1990, էջ 250:
107 Гиббонс Г. Последние избиения в Армении. 1916, стр. 26.
108 Արզումանյան Մ. Հայաստանը 1914-1917թթ., Ե., 1969, էջ 305:
109 "Zeitschrift fur Geschfswissenschoft", 1973, Heft 2, s. 219.
110 Густы В. и З. Геноцид армян. Е., 2005, стр. 17.
111 Lang D. Armenia: crodle of civilisotion, London, 1970, p. 287.

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ԶՈՐԱՀԱՎԱՔ

Համաձայն Սալոնիկի համագումարի որոշման օրենք ընդունվեց, որ թուրքական բանակ զորակոչվում էին 20-30 տարեկան երիտասարդները՝ անկախ կրոնական պատկանելության, բայց, ինչպես նկատել է Ռենե Պինոնը «կամայական օրենք մը», ընդունվեց, որը նպատակ ուներ «հայ ժողովուրդն առանց հայ տղամարդու» թողնել, որպեսզի հնարավոր լիներ «զայն ջարդել առանց դիմադրութեան հանդիպելու՝ 18-48 տարեկան հայերը կը զորակոչուեին: Ասոնցմե կազմուեցան տարապարհակ աշխատանքի բանակներ, որոնք ենթակայ էին ամեն տեսակ չարչարանքի և տառապանքի, ատելութեան և վարկաբեկումի...»[1]:

Ընդհանուր զորահավաքը հայտարարվեց 1914թ. հուլիսի 21-ին: Ցուրաքանչյուր ոք պարտավոր էր ներկայանալու «զինվորական մարմնին»: Ամեն գյուղախմբի համար գործում էր այդպիսի մեկ մարմին: Օրինակ, Զեյթունում էին զինվորագրվում Ալպիստանի, Գոկիսոնի, Անտրունի և մի քանի այլ բնակավայրերի բնակիչները: Դրա հետևանքով զինվորագրման կենտրոնում առաջանում էին մարդկանց մեծ կուտակումներ՝ յուրաքանչյուր տանը հյուրընկալվում էր 20-30 մարդ[2]:

Շատերն էլ գիշերում էին դրսում, ծառերի և ժայռերի տակ, փողոցներում: Եվ այդպես օրեր շարունակ, քաղցած կամ կիսաքաղց: Զորակոչիկներին օգնելու նպատակով Զեյթունի Տիկնանց միությունը հանգանակություն կազմակերպեց, կանայք նրանց համար հաց էին թխում, շարժական խոհանոցներ ստեղծում: Զորակոչային կետերում տարբեր ազգությունների պատկանող երիտասարդների կուտակվելը հաճախ ծնում էր ընդհարումներ: Զորահավաքը սկսվեց, երբ թուրքերը ոչ միայն պատերազմի մեջ չէին մտել, այլև աշխարհին հավաստիացնում էին, թե որևէ մտադրություն չունեն խախտելու չեզոքությունը: Մինչդեռ զորակոչն անցկացվեց այնպիսի խստությամբ ու դաժանությամբ, որն իրեն կարող էր թույլ տալ միայն պատերազմող երկիրը: Խստությունները համընդհանուր չէին՝ հիմնականում տարածվում էին հայերի ու հույների վրա և դա ոչ թե այն պատճառով, որ այդ երկու ժողովուրդները խուսափում էին զորահավաքից, ոչ էլ թելադրված էին ռազմաճակատի կացությունով, այլ իրողությունով, որ զորահավաքն ուրիշ բան չէր, եթե ոչ զանգվածային ջարդերի սկիզբ, այսինքն՝ գործողության մեջ էր դրվում ցեղասպանության քաղաքականությունը: Կ. Սասունին գրում է, թե «երկու զորահավաք էր տեղի ունենում մեկ անվան տակ: Փաստորեն թիւրք կառավարութիւնը հայ բոլոր տղամարդիկը... իր ափին մեջ կառներ և կը կալանավորեր զինուորական պարտականութիւն կոչուած բանտին մեջ»: Այսինքն՝ զենք կրող հայերի 90%-ը «հավաքուած և շղթայի տակ էր առնուած», որից հետո միայն սկսվեց զանգվածային հարձակումը կռվելու անընդունակ հայ բնակչության վրա: Որ զորահավաքը նշանակում էր բնաջնջում, վկայում է նաև այն, որ զորակոչված հայերի միայն փոքր մասին ռազմաճակատ տարան, այն էլ ամենածանր տեղամասեր, թուրք զինվորների հսկողության տակ, երբ դիմացից հակառակորդն էր խփում, իսկ թիկունքից՝ թուրքը:

«Զորակոչի հրամանն այնքան սպառնալից էր,- գրում է «Նոր կեանքը» 16. 01. 1919թ.,- որ ոչ մեկը չը խորհեց դասալիք դառնալու մասին»: Բաղեշից ստացված մի հանրագրում կարդում ենք, որ զորակոչում էին բոլորին, զորակոչում էին նաև հիվանդներին ու տկարներին և ուղարկում ռազմաճակատ: «Անոնք սիստեմատիկորեն ջարդուեցան, ճակատեն գնդակ չստացողը թուրք զինվորներու կը յանձնուեին, որ բանակեն կես ժամ հեռացնելով կը ջարդեին»[3]:

Նույն միտքն է հաստատում Օ. Մխիթարյանը. «Տարապայման ծառայութիւնը՝ հասցրած մինչև եգիպտական հին դարերը հիշեցնող ստրկական վիճակի, չարաչուք ծեծը, անողորմ բռնութիւնը և ամենափոքր կասկածով իսկ մահուան պատժի գործադրումը հայ զինուորի

---

1 Ռընե Բինոն, նշվ. աշխ., էջ 21:
2 Նորաշխարհյան Լ. Զեյթունը 1914-1921թթ., Երևան, 1984, էջ 8:
3 Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 747:

հանդեպ՝ անխուսափելի և բնական երևույթ էր: Սովորական էր նաև ամենօրյա ծաղրի ու հայհոյանքի առարկայ դարձնել հայ զինուորի ցեղային պատիվը, լեզուն և կրոնական հավատալիքները»[4]:

Զորակոչված հայերի մեծամասնությանը ոչ միայն զենք, այլև զինվորական համազգեստ չտվեցին և թուրք ու քուրդ զինված ջոկատների խիստ հսկողության տակ քշեցին կատարելու զանազան տաժանակիր աշխատանքներ և մեռցրեցին քաղցի, համաճարակների ու զենքի միջոցով: Եթե զորակոչում էին 18-60 տարեկան հայերին, ապա զորակոչը տարածվում էր միայն 22-40 տարեկան մահմեդականների, այն էլ ոչ բոլորի վրա: Թուրքերին լայնորեն ներգրավեցին մինչ այդ հայերի զբաղեցրած պաշտոններում, նրանցից շատերը դարձան զորահավաքի գործակալներ և ջանբեզարներ՝ հանձնարարությունով՝ հայերին հալածել, հյուծել, սպանել: Իսկ քրդերը զանգվածներով լցվեցին համիդիե զորագնդեր, մնացին իրենց բնակավայրերում և նույնպես զբաղվում էին հայերին կողոպտելով ու սպանելով: Ընդհանուր դրան, հայերը որևէ էական դիմադրություն զորահավաքին ցույց չտվեցին: Էրզրումի վիլայեթում «զորակոչին ամբողջ հայերն ընդառաջ գնացին, բոլոր տեսակի պետական և արտակարգ զինվորական տուրքեր տալիս էին, տանում էին ամեն տեսակ զրկանքներ և հարստահարություններ...»: Նույնը նաև Վանում, որտեղ ռազմական միջոցառումներն իրականացվում էին վալի Թահսինի և տեղի դաշնակցական կոմիտեի համատեղ ջանքերով «Դաշնակցութեան ղեկավար գործիչները, առանձնապես Արամը, տավուլ-զուռնան ետևը ձգած, ոգևորում ու հրահանգում էր ժողովրդին ճակատ մեկնելու...»[5]:

Նույն դրությունն էր Տարոնում ու Սասունում: Դաշնակցությունը բոլոր միջոցներով օգնում էր իշխանություններին: Նա կազմակերպել էր «1. Զորակոչի յանձնախումբ, որ շրջում էր հայ գիւղերը, համոզում և ոգևորում երիտասարդներին: 2. Կորիւնի յանձնախումբը, որ դասալիքներին էր ձերբակալում ու յանձնում: 3. Կոտոյի Հաճու յանձնախումբը, որ փոխադրութիւններն են ղեկավարում... 4. Դեղամի (էրզրումցի) յանձնախումբը..., որ գործի էր լծել բոլոր կանանց ու պատերազմելու անընդունակ տղամարդկանց»[6]:

Մանդելշտամը նշում է, թե սկսած 1914թ. աշնանից բանակ էին զորակոչվում 18-50 տարեկան «բոլոր հպատակները, այդ թվում նաև՝ հայերը», անգամ նրանք, ովքեր զինվորական հարկ էին վճարել: Մինչ այդ ով բանակում ծառայել չէր ուզում, վճարում էր 50-190 ոսկի: Դրանք հիմնականում ոչ մահմեդականներն էին, քանի որ, նախ, իշխանությունները դեմ էին նրանց բանակ զորակոչելուն և զենք տալուն, երկրորդ՝ ոչ մահմեդականները խուսափում էին թուրքական բանակում մահմեդականների միջավայրում ծառայելուց, որովհետև հայտնվում էին տաժանակիր նվաստացուցիչ պայմաններում: Սարիղամիշի պարտությունից հետո ոչ մահմեդականների զորահավաքը շարունակվեց և հայ զինվորներն ամբողջությամբ հավաքվեցին «բանվորական գումարտակներ» մեջ, ճանապարհաշինության և ամրությունների կառուցման վրա աշխատելու համար: Իրականում սեպտեմբերի՝ զորահավաքի, ենթարկվում էր ամբողջ հայ արու բնակչությունը:

Թուրքական բանակում ծառայող հայերի վիճակը, իրոք, անտանելի էր: «Հայ զինվորներին,- 1915թ. հունվարին տեղեկագրել է ավստրո-հունգարական գործակալներից մեկը,- հաճախ ուղարկում էին ռազմաճակատի առաջին գիծ, որպեսզի զոհվեին»[7]:

Մարտի 16-ին Կիլիկիայի Սահակ կաթողիկոսը գրեց. «... Ցստակորեն կը տեսնենք, որ կառավարիչը, Զեյթունին զինուորական հրամանատարին հետ համախորհուրդ, քանի մը դասալիքներ պատճառաբանելով, կը պատրաստե զսպողական անլուր միջոց մը»[8]:

Վանում Զևդեթ բեյը «հայ տղամարդկանց զինուորական ծառայութեան անունով... գիւղերից, գործատեղից, դաշտերից և ամեն տեղից բռնոտել ու բանակ էր ուղարկել, այնտեղ կոտորելու համար»[9]:

«Բանակ զորակոչելու պատրվակով,- 1915թ. ապրիլի 10-ին գրեց Սերաֆիմովը,- մարդկանց բանտարկում են առանց հաշվի առնելու տարիքը: Նրանց բռնում են փողոցում, եկեղեցիներում, խանութներում, տրամվայներում և այլուր, ժամանակ չտալով կարգավորելու իրենց գործերը, տեղյակ պահելու հարազատներին... Հայ բնակչությունը ենթարկվում է ամեն կարգի հալածանքների, հաճախ՝ նաև խոշտանգումների: Զինվորական ծառայության կանչելու պատրվակով բանտարկում են անխտիր բոլոր տարիքի մարդկանց...»[10]:

Դավաճանության շինծու մեղադրանքով 16-60 տարեկան տղամարդկանց զորակոչեցին... նրանց տարան լեռներն ու հրացանազարկ արեցին, առանց դատի ու դատաստանի[11]: «Զինուորագրութիւն ասածը կազմակերպություն է,- գրում է Զոհրապը,- քրիստոնեաներուն թալանելու մի այլ միջոց»:

Թ. Աքչամը շատ ավելի արմատական նշանակություն է տալիս զորահավաքին: Նա այն համարում է «Ցեղասպանության նախապատրաստության առաջին էտապ», որով երիտթուրքերը սկսեցին իրականացնել «Անատոլիան ազգային առումով միատարր դարձնելու ծրագիրը»: Արտաքին քաղաքականության բնագավառում այդ պլանը խնդիր ուներ իրականացնելու պանիսլամիզմի ու պանթուրքիզմի նպատակադրումները[12]:

«Պատերազմի առաջին իսկ օրից,- գրում է Լեփսիուսը,- թուրքահայերը, ընդհանուր առմամբ, ցուցաբերում էին քաղաքացիական օրինապահություն՝ արձագանքելով զորակոչին: Ռուսահայերը, իրենց հերթին, զորակոչվեցին ռուսական բանակ և ուղարկվեցին եվրոպական ռազմաճակատներ: Պատերազմի առաջին ամիսներին որոշ թվով ռուսահայեր մտան կամավորական գնդեր ցարական բանակին հետախուզական օգնություն ցույց տալու համար, որը ռուսական հակադարձումն էր մի քանի ամիս առաջ Կարինում հայերին առաջարկված թուրքական ծրագրի: Հայերի մերժումը և կամավորական գնդերի կազմակերպումը հետագայում թուրքերն օգտագործեցին հայերին դավաճանության մեջ մեղադրելու համար: 1915թ. հունվարից հայ բոլոր բանակայիններն ու ոստիկանական ծառայողները զինաթափվեցին և 500-1000 հոգանոց խմբերով օգտագործվում էին նախ ճանապարհաշինության և բեռներ տեղափոխելու գործում, ապա աստիճանաբար քշվեցին ամայի վայրեր բնաջնջվելու...»: Բայց ահա թե ինչպես է ներկայացնում վիճակը «Ազատամարտը» 1914թ. հոկտեմբերի 20-ին. «Համընդհանուր զորահավաքի հետևանքով պաշարողական դրություն է հայտարարվել... Հայերը հնազանդվել են զորահավաքի հրամանին: Մենք արել ենք, ինչ կարող էինք և խորհուրդ ենք տվել, որ յուրաքանչյուր հայ կատարի օսմանյան հպատակի իր պարտքը: Այնուամենայնիվ, ինչպես թուրքերի շրջանում, այնպես էլ մեր ժողովրդի մեջ եղան մարդիկ, ովքեր չհնազանդվեցին զորահավաքի հրամանին: Կառավարությունը նրանց դեմ խիստ միջոցներ է ձեռնարկել... Դասալիքներին գնդակահարում են: Ցավոք դրանից տուժում են նաև լրիվ անմեղ մարդիկ: Վանի վիլայեթում նման հինգ դեպք է եղել: Այդպիսի դեպքեր տեղի են ունեցել նաև Կիլիկիայում»[13]:

Երբ սկսվեց զորահավաքը, թուրքական իշխանություններն ամեն կերպ տպավորություն էին ստեղծում, թե իրենք ոչ թե նպատակադրված էին ոչնչացնելու զինվորներին, այլ նրանց ուժերը արդյունավետ օգտագործելու պատերազմական պայմաններում: Անգամ Հ. Հիպլընգին հավատաց այս կեղծիքին: Նա գրում է. «Ունևորներեն զինուորական փրկանք ընդունուեցաւ: Բայց քանի մը շաբաթ ետք աննկատ թողած զինուորական փրկագնի ստացագիրները, անոնց զինուորագրութիւնը վերսկսաւ: Պոլսոյ շրջանակները գտնվող հայ դեռատի դասու զինուորները գործող բանակին մեջ զետեղուեցան... Իսկ միջին տարիք ունեցողները և հեռավոր վայրերու հայերը գործացուեցան ճամփաներու, երկաթուղիներու և ամրութիւններու շինութեանց վրա»[14]:

Ամիսներ պահանջվեց, որպեսզի հայերի մասին թուրքական հրապարակումների տրամադրվածությունները գլխիվայր շուռ գային: Թուրք գործիչ Կարագյոզի խոսքերը՝ «Հայերի դեմքը կայսրության ջերմաչափն է: Երբ այն ուրախ է, նշանակում է, որ համաձայնականները հաջողության մեջ են, իսկ երբ տխուր է՝ անհաջողության մեջ են», դարձան քարոզչության լեյտմոտիվ[15]:

4 «Հայրենիք» (ամս.), ապրիլ, 1924, էջ 90:
5 Ռուբեն Հայ-Թրքական կնճիռը, Կահիրե, 1924, էջ 89:
6 Ն. տ., էջ 93-102:
7 Wien HHSTA PA I 943, Konst., 18 Jänner 1915.
8 Lepsius J., նշվ. աշխ., էջ 212:
9 Սահրադեան Ս. Կեանքիս յուշերից, Թեհրան, 1961, էջ 69-70:

10 АВПР, "Политархив", д. 3508, л.4, д. 3804, л.22.
11 Lepsius J., Հայկական ջարդեր, էջ 28-30:
12 "Геноцид –преступление против человечества", Москва, 1997, стр. 70.
13 Lepsius J., նշվ. աշխ., էջ 184:
14 Կիպլընգ Հ., նշվ. աշխ., էջ 26:
15 Բրնե Բինոն, նշվ. աշխ., էջ 22:

Զինակոչի մասին օրենքի գլխավոր նպատակը ոչ թուրք երիտասարդությանը բանակում վերահսկողության տակ պահելն էր: Զորակոչը տևեց վեց ամիս: Կազմվեց 120 աշխատանքային վաշտ (ամենե թապուր), դրանք, ըստ Պոմիակովսկու, հիմնականում բաղկացած էին հայերից: Նրանց զենք չտրվեց և հետագայում դավաճանաբար սպանեցին Թաքուն վայրերում: Թոյնբին գրում է. «Հայ զինվորների այդ տմարդի ջարդը թուրք զինվորական և քաղաքացիական իշխանությունների գործակցությամբ և միջոցով, աշխարհում կատարված ոճիրներից ամենաչնչականն է, ամենաստորը և ամենավատթարագույնը»[16]:

Սակայն ոչ բոլոր զորակոչված հայերին էին բանվորական վաշտեր ուղարկում: Գիբբոնսը գրում է, որ Կ. Պոլսից ոչ հեռու բնակվող հայ երիտասարդներին զորակոչում էին գործող բանակ ու ցրում թուրքական զորամասերում, իսկ ավելի տարեցներին և հայկական նահանգներում հավաքագրվածներին օգտագործում էին ամրությունների և խճուղային, երկաթուղային ճանապարհների շինարարություններում: «Զորակոչված հայ երիտասարդներին,- առարկում է Մ. Ռիֆաթը,- ուղարկելով ճանապարհների շինարարության վրա, տաժանակիր աշխատանքով ոչնչացնել սկսեցին»:

Օտարերկրացի ականատեսներից մեկը գրում է. «Կարինում ու գավառային այլ քաղաքներում պետական և անձնական շենքերը խճողված են զորակոչիկներով: Զորակայանների շրջակայքում կարելի է տեսնել 18-65 տարեկան մարդկանց, որոնց տխեղծ դեմքերից երևում է, որ սննդի պակասից կամ վատ սնունդից տառապում են: Ասում են, նրանցից շատերը կույր, կաղ և ֆիզիկական ուրիշ պակասություններ ունեն: Վիճակը շատ ավելի ողբերգական է, երբ դիտարկում ենք զորակայանի ներսում գտնվողներին: Կոշիկի պակասից շատերը բոբիկ են և համազգեստի փոխարեն քրջերի մեջ են: Ոչ անկողին կա և ոչ էլ ճաշ: Զինվորական իշխանություններին պահանջում են, որ զորակոչիկներն իրենք հայթայթեն հագուստ ու հինգ օրվա սնունդ: Պատերն ամբողջական կլինի, եթե նկատի ունենանք, որ հայերը, ինչպես նաև թուրքերն իրենց բերքը լքել էին, նրանց ընտանիքները՝ վտանգված և ենթակա եկող ձմռան անխուսափելի սովին: Ովքեր սպանների պետքերը հոգալ չէին կարողանում, անարգվում էին: Ընդհանուրի ներկայությամբ գանակոծումը սովորական է»[17]:

Ա. Հիրսը 1914թ. հոկտեմբերի 9-ին հեռագրեց Պետրոգրադ. «Բանակը (թուրքական) չի ապահովված հանդերձանքով, հրացանով ու սննդամթերքով: Սկսվել է սով և դասալքություն»: Սկսվեց նաև համաճարակ, որ հնձում էր ոչ միայն ազգաբնակչությանը, այլև զորքին: Կարինի վիլայեթում համաճարակից ու ցրտից մեռավ 110 հազար մարդ:

Գերմանացի հրամանատար Բոսիլդը, լսելով կեղեքումների ու թալանի մասին տեղի հայության բողոքը, թուրքերին առաջարկեց անմիջապես զինաթափել բանակում եղած հայ զինվորներին, նրանց ռազմաճակատից հետ բերել և օգտագործել ճանապարհաշինության վրա[18]:

Այնուամենայնիվ հայ զինվորները հինգ անգամ ավելի քիչ դասալքվեցին, քան թուրքերն ու քրդերը (Լեփսիուս): Արաբիայում ծառայող հայերը փրկության հույս ունեին, իսկ Անատոլիայում՝ ոչ: Շվեդուհի Թ. Վեդել-Յարլսբերգն ու գերմանուհի Ե. Էլվերսը բազմիցս ականատես էին եղել, թե ինչպես հայ զորակոչիկները հարյուր հոգանոց խմբերով քշվել էին դաշտեր ու սպանվել: Նրանք Սեբաստիայի միսիոներական հիվանդանոցում տեսել էին ծանր վիրավոր մի հայի, որը պատմել էր, թե հայ զինվորների 95 հոգանոց ջոկատին շարք էին կանգնեցրել և տասը ժանդարմ կրակել էր նրանց վրա, իսկ երբ փամփուշտները վերջացան, սպանեցին դանակով ու քարերով[19]:

Մի թուրք զինվոր Տրապիզոնի ամերիկացի հյուպատոս Օ. Հայցերին պատմել է, որ իրենց զորամասից 180 հայի տարել էին մի ամայի վայր, բոլորին սպանել էին ու իրեն հանձնարարել էին թաղել դիակները: «Մենք արդեն գիտեինք,- գրում է Այնթափի ամերիկյան դպրոցի տնօրեն Մ. Ֆրիերսընը,- որ տղամարդկանց ստիպում էին ճանապարհ բացել, աշխատանքն ավարտելուն պես նրանց կանգնեցրել էին ճանապարհի երկայնքով և դաշույններով սպանել, սպան հրամայել էր հայերի վրա վառոդ չվատնել»: Ց. Քյունցլերը վկայել է, թե հայ ճանապարհաշինարար զինվորներին սպանելու համար «ավելի հաճախ դանակ էին օգտագործում: Մի տեղ հայերին ստիպել էին նետվել բարձր ժայռից, հետո բոլորին դանակահարել են»: Հ. Մորգենթաուն գրում է. «Որոշ հայ զինվորների ստիպում էին նախապես փորել իրենց գերեզմանները», մյուսներին նետում էին անդունդները: Քյունցլերը նկատում է. «Մի քանի տարի անց գարնանային հեղեղները դաշտ քշեցին կմախքների սևացած ու արևահար ոսկորները»[20]:

Հայերի տարագրության երկրորդ փուլը (առաջինը մտավորականների աքսորն էր) հայության արական սեռի ոչնչացումն էր, գտնում էր Լեփսիուսը, որը զորակոչված էր կամ զորակոչվեց: «Բանակում եղած հայերը, ովքեր ռազմական նախարարի վկայությամբ ռուսների դեմ քաջաբար կռվել էին ոչ միայն Դարդանելում, այլև Կովկասյան ճակատում, մեծ մասամբ զինաթափվեցին և օգտագործվեցին իբրև բեռնակիրներ և ճանապարհ կառուցողներ: Գրեթե բոլոր գավառներից լուրեր էին ստացվում, որ հայ զինվորները սպանվեցին իրենց մահմեդական ընկերների կողմից... սպանների հրամանով զինվորներն ու ժանդարմները նշան էին բռնում 80, 100 կամ ավելի հոգանոց ջոկատների վրա և գնդակահարում էին: Թերևս երբեք ... չպիտի իմացվի այդպես սպանված հայ զինվորների թիվը»[21]:

Իհարկե դասալքում, առավել ևս զորահավաքից խույս էին տալիս նաև հայերը: Գերմանական հյուպատոս Բյուգեն Վանգենհայմին է ուղարկում ոմն Ս. Աղաբալյանի զեկուցագիրը Զեյթունի զորահավաքի մասին: Հայերը, գրում է նա, խուսափում են հարկեր վճարել, որովհետև դրանց չափերը մեծացել էին, ու նաև զորահավաքի ներկայանալ:

«... Դասալքությունն այստեղ սովորական երևույթ է: Դասալիքները փախչում են լեռները և ապրում քարավանների և ուղևորների վրա հարձակվելով: Նրանք ավազակային արարքներ կատարում են առանց տարբերություն դնելու հարձակման ենթարկվածի ազգության և կրոնի միջև: Նրանց բռնելու ջանքերը հիմնականում ապարդյուն են անցնում, քանի որ նմանների ձերբակալությունը նպաստում է նոր վրիժառու-դասալիքների հանդես գալուն»: Իշխանությունները զորակոչիկներին սկսեցին տանել Հալեպ և ձերբակալել: «Կառավարությունն այնքան դաժան էր վարվում ձերբակալվածների հետ, որ նրանցից մեկը մեռավ ճիպոտահարվելուց»: Հեղինակն այնուհետև հաստատում է, որ «զորահավաքը բնակիչներին մղեց ընդհարման իշխանությունների հետ»[22]:

Ս. Աղաբալյանն այնուհետև նշում է. «Հարկեր վճարելուց և զինծառայությունից հրաժարվելը եզակի երևույթ չէ... Դրանք հանդիպում են ամենուրեք, կարելի է ասել, յուրաքանչյուր վիլայեթում, որտեղ մեկուսի բնակվում են արաբներն ու չերքեզները, ովքեր հարկեր չեն վճարում և զինծառայության չեն մեկնում»[23]:

«Վերջին շրջանում ավելի է ուժգնացել քրիստոնյաների հանդեպ մերժողական վերաբերմունքը, քանի որ նրանց, գրեթե առանց բացառության, օգտագործում են որպես շինարար-բանվորներ և զենք չեն տալիս»[24]:

Թուրքական իշխանությունները օգտագործում էին զորահավաքից դժգոհությունները և դրանք ներկայացնում որպես ապստամբություն: 26. 03. 1915թ. Վանգենհայմը Բեթման Հոլվեգին հավաստիացնում էր, թե «ոչ մի լուր չկա, որ հայերը նախապատրաստում են ապստամբություն, խոսքը, հավանաբար, զորահավաքի առիթով առանձին օրինազանցությունների մասին է... տեղի կաթողիկոսը հատկապես նշում է, որ կառավարությունը Զեյթունի բնակիչներից հավաքել է բացարձակապես բոլոր զենքերը»[25]:

Վանգենհայմը Բեթման Հոլվեգին նաև տեղյակ պահեց, որ Ադանայի նահանգի «Դորթյոլի արական սեռի ամբողջ բնակչությանը տեղափոխել էին Հալեպի վիլայեթ, որտեղ նրանց օգտագործում են ճանապարհաշինության վրա. երբք հոգու գնդակահարել են փախուստի փորձ կատարելիս»[26]:

16 Ղազարեան Հ., նշվ. աշխ., էջ 22:
17 «Արարատ» (Լոնդոն), սեպտեմբեր, 1914թ.:
18 Bruse J. The treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916, London, 1916, pp. 447-448.
19 Գուստ Վ., նշվ. աշխ., էջ 21:

20 Գուստ Վ., նշվ. աշխ., էջ 22:
21 Լեփսիուս Ցո. նշվ. աշխ., էջ 18:
22 PA-AA/R14088 (Կ. Պոլիս դեսպ.), 168:
23 Ն. տ.:
24 Ն.տ.:
25 Ն.տ.:
26 PA- AA/ Կոստ. դեսպ., հ. 168.

Մորգենթաուն տեղեկագրում է. «... Բանակում հայերի մեծ մասին, ինչպես հույն զինվորներին, զինաթափում և օգտագործում էին ֆիզիկական այլևայլ աշխատանքներում»[27]:

Աղանայից գրում են պատրիարքին. «...14 օրից ավելի է, ինչ հայ զինվորներին, նաև այնպիսիներին, ովքեր նախկինում ծառայել են բանակում, զինաթափել են և, ինչպես նրանց, այնպես էլ նորակոչիկներին օգտագործում են ճանապարհաշինության և նման ուրիշ ծառայություններում»[28]:

Ոչնչացնում էին ոչ միայն զինակոչիկներին: «Մշակը» 27. 04. 1915թ. տպագրում է թղթակցություն Դիադինից, թե «հայկական բոլոր գյուղերից, ռազմական կարիքների համար աշխատացնելու պատրվակով, հավաքում են տղամարդկանց և խումբ-խումբ գնդակահարում»: Վանգենհայմը 15. 04. 1915-ին Բեռլինին տեղյակ պահեց. «Մուշի հայ գյուղացիներին օգտագործում էին որպես քաշող անասուն ռազմամթերք և պարեն տեղափոխելու համար: Շատերը մեռան անմարդկային վերաբերմունքի հետևանքով»[29]:

Մի վավերագրում կարդում ենք. «Զինաթափված հայ զինվորները օգտագործվում են որպես գրաստ... չչուկներ են պտտվում հարյուրավոր գնդակահարված, ջրախեղդ և դաշունահարված, անհետ կորած հայ զինվորների մասին... Դասալքության պատճառ էր նաև իսլամների, հատկապես 16-60 տարեկան քրդերի զինումը և հայաբնակ վայրերում պահելը»[30]:

Մորտմանը գրում է, որ համաձայն գեներալ Փոսելդի վկայության, «Հայերն իրենց խաղաղ կպահեին, եթե թուրքերը նրանց չճնշեին... Հայերի վարկն անբասիր էր: Գեներալը նաև բացառել է այն պնդումը, թե հայ զինվորները կրակել էին իրենց թուրք ընկերների վրա»[31]:

Ֆրանսիական ԱԳ նախարարության մի փաստաթղթում նույնպես ասվում է, թե զորակոչված հայերը «զինաթափվել և աշխատում էին Էրզրում-Երզնկա ճանապարհին և բոլորը կոտորվել են: Սպանվել են նաև Դիարբեքիրի նահանգի հայ զինվորները Դիարբեքիր-Ուրֆա և Դիարբեքիր-Խարբերդ ճանապարհին: Խարբերդի 1300 երիտասարդ հայեր կոտորվել են Արղանայում»[32]:

Գ. Ահարոնյանը գրում է. «Նախ զենքի տակ կանչած էին, ընդհանուր զորաշարժի օրենքին տրամադրությունները օգտագործելով, ամբողջ արևմտահայ երիտասարդությունը - այն հստակ մտադրությամբ, որ շուրջ 300 հազ. հայ զինուորներուն ձեռքը զենք պիտի չտային բնավ, այլ զանոնք բանուորական ջոկատներու մեջ շահագործելէ ետք՝ մաս առ մաս պիտի սպաննեին, և այդ ձևով պիտի կտրեին հայ ժողովրդի մարտական բազուկը, անոր ինքնապաշտպանության գլխավոր ուժը»[33]:

Հայերն այդ լավ էին հասկանում: Տեսնելով թուրքական բանակում լայնորեն ծավալված դասալքությունը, իրենք էլ միացան դրան, մանավանդ երբ հայ զինվորներից զենքերը վերցրեցին: Սակայն դասալքության մեջ հայերին մեղադրելը շատ ավելի հնարավի էր, քան իրականության արտահայտություն, քանի որ դասալքությունն ամենամեծ տարածում ուներ հենց իրենց՝ թուրքերի շրջանում: «Հիվանդությունները, համաճարակները, հոսի պարենավորումը, աճող դասալքությունը զարհուրելի չափով բանակը նոսրացնում էին»: Կարինի գերմանական հյուպատոսը գրում է, որ բանակի «ամբողջ միավորումներ սովամահ են եղել կամ սառել են», անգամ ռազմաճակատում էին հազարներով սովամահ լինում: Երկրորդ բանակը Քղի-Մուշ գծի վրա կորցրեց 60 հազար մարդ սովից ու հիվանդությունից: Սանդերսը գրում է. «Բոլոր չափերն անցած դասալքությունը» հասցրեց նրան, որ «թուրքական բանակն արդեն ավելի քան 300 հազ. դասալիք ուներ»: Դրանք ոչ թե թշնամուն հանձնված մարդիկ էին, այլ կայսրության խորքերը փախածները և զբաղվում էին հափշտակություններով, թալանով ու երկիրն ավելի «վտանգներով լեցուն դարձնում»: Դասալքության դեմ պայքարելու համար հատուկ գնդեր ստեղծվեցին, սակայն «փախչում էին, ուր կարող էին, նույնիսկ հաշվի չառնելով, որ փախուստի ժամանակ կարող են գնդակահար լինել: Իրենց դուրս էին նետում ընթացող գնացքից»[34]:

27 "Genocide: Crime against Humanrty", Spring, 1984, vol. 31, N1.
28 PA- AA/ Կոստ. դեսպ., հ. 168:
29 "Deutschland und Armenien", s. 48-49.
30 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 227, գ. 416:
31 Deutschland und Armenien", s.51-52.
32 A.M.A.R., Guerre 1914-1918, Turque, tome 887, ii 250-251.
33 Ահարոնեան Գերսամ, Մեծ երազին ճամբուն վրայ, Բեյրութ, 1964, էջ 3:
34 Sanders L., նշվ. աշխ., s.408:

«... Էրզրումի նահանգի հայ զինվորները, ովքեր աշխատում էին Էրզրում-Երզնկա ճանապարհի շինարարության վրա, կոտորվել են: Դիարբեքիրի նահանգի հայ զինվորները ևս...»[35]:

Դիարբեքիրում շինարարության վրա աշխատող հայ զինվորներից «ամեն օր մեկը կամ երկուսը սպանվում էր»,- վկայել են ամերիկյան միսիոներները, ովքեր «ճանապարհորդության ընթացքում տեսել են գետնին թափված երիտասարդների դիակներ»[36]:

Ոչ քիչ դեպքերում աշխատանքային գնդերում հավաքում էին նաև դեռահասների: Շուրջ 20 թուրք զինվորի հսկողությամբ «նրանց ուղարկում էին որևէ մեկուսի վայր՝ զուրկ սննդամթերքից և ջրից»: Փախուստի կամ չենթարկվելու ամեն մի փորձին հետևում էր վերահսկիչների արձակած գնդակը: «Մեկ կամ երկու օր անց կարելի էր տեսնել, թե այդ վերահսկիչներն ինչպես էին միայնակ վերադառնում: Թուրքերն այդ ոչնչացումն արդարացնում էին, թե իբր հայերը կամ «փախուստի էին դիմել, կամ ապստամբել էին»[37]:

1915թ. ապրիլի 16-ին Զևդեթը ստանում է մի տեղեկագիր հետևյալ բովանդակությամբ. «Հայ դասալիքներու թիվը սկզբում շատ սահմանափակ էր... Ատոր հակառակը դժբախտ և աղետավոր անվստահութիւն մը կառավարութեան կողմե հայերու հանդեպ, իր անմիջական կարգ մը հետևանքներով, ինչպես նաև հայերու գոյութեանն իսկ սպառնացող կարգ մը ծանր պարագաներ ծանրագոյն պատճառներ դարձան դասալքումին ընդհանուր երևոյթ մը տալու համար: Այդ նոր պատճառներն են՝ 1. Հայ զինուորներու և ժանդարմներու զինաթափումը, որ քաղաքական անվստահութեան հեղձուցիչ մթնոլորտ մը ստեղծեց անմիջապես հայերու շուրջը և նպաստեց լարելու միջցեղային յարաբերութիւնները հային և իսլամին միջև: 2. Զինաթափ եղած հայ զինուորները գրաստի տեղ մը դրուեցան, որ գերազանցապես վիրավորեց անոնց ազգային և մարդկային ինքնասիրութիւնը, միանգամայն ստորացնելով զանոնք իրենց իսլամ հայրենակիցներու աչքին: 3. Զինաթափ եղած այդ հայերը, գտնվելով զինուած իսլամներու հսկողութեան տակ և հարկադրուած լինելով անգեն շրջելու արդեն գրգռուած և սպառազեն իսլամներու մեջ, անոնց կեանքը վտանգի ենթարկուեցավ: Հասարակութեան մեջ համառորեն կը շրջեն չչուկներ հարիւրավոր գնդակահար, ջրախեղդ ու դաշունահար եղած ու անհետ կորսուած հայ զինուորներու մասին, մասնավորապես, Կարսոյ և Իրանի ռազմադաշտին մեջ կամ քովերը: 4. Ծանոթ քուրտ ոճրագործներու ներումը և զինումը, անոնց մնալը իրենց գիւղերուն կամ հայաբնակ շրջաններուն մեջ... 5. Զինաթափ եղած հայ զինուորները այլևայլ պատրուակով հեռացուեցան իրենց գավառներեն դեպի անծանոթ վայրերը: 6. Բոլոր իսլամներու, յատկապես քիւրտերու անխտիր զինումը 16-60 տարեկան միլիսի պատրուակին տակ: 7. Միլիսներու շահատակութիւնները հայ գիւղերուն մեջ... բռնութիւններ և սպանութիւններ... բռնաբարումներ... բազմաթիվ քիւրտ դասալիքներու փախուստը դեպի Վանի և Բիթլիսի վիլայեթներու լեռնոտ շրջանները և անոնց տուն տեղերը սպառնալից կենալը: 8. Համիդիեներու գնալը հայաբնակ գավառները և անոնց կատարած ավերն ու կողոպուտը... 9. Վերջապես, Բաշկալեի և շրջակայ հայ գիւղերու, ինչպես նաև Ախոռիկի, Հասան Թամրանի, Հազարենի, Դաշօղլուի և Ազարեկի ջարդերը, որոնք իրականութիւններ են հակառակ պաշտոնական ամեն հերքումներուն: 10. Քուրտերու մեծ թվով և զինեալ փախուստը բանակեն: Այսօր Վանի ու Բաղեշի կուսակալութեանց լեռնային գավառները լեցուած են այդ դասալիքներով»: Տեղեկագրի հեղինակն ընդհանրացնում է. «Բանականութեան, խղճի և առողջ քաղաքականութեան հակառակ գործած պիտի լինի կառավարութիւնը, եթե ստիպե հայը մտնել անգեն ծառայութեան մեջ, որ վտանգ կը սպառնայ իւր կեանքին առանց որևէ օգուտի մը ընդհանուր հայրենիքին համար, մինչև միևնոյն ատեն իւր անպաշտպան ընտանիքը ամեն վարկեան ենթակայ է կիսավայրենի դրացիներուն արիւնոտ քմահաճոյքներուն... Ուստի այս դասալիքներու հիշուած պատճառները կրոնական, քաղաքական և ընկերային հիմքեր ունեն: Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Դիարբեքիրի մեջ մեր մատնանշած պատճառներով հայ օջախները տղամարդցմե զրկուած են և վտանգի տակ կը գտնուին: Հազա-

35 Բեյլերյան Ա., նշվ. աշխ., փ.թ. 156:
36 A.M.A.R., Guerre 1914-1918, Turque, tome 887, 253.
37 Բեյլերյան Ա., նշվ. աշխ., փ.թ. 298:

բավոր անգեն հայերը բանակին օգուտ մը չտալով, միւս կողմեն երկրագործական այնքան կարևոր ու անհրաժեշտ աշխատանքեն ալ զրկուած են»[38]:

Լեփսիուսը գրում է. «Գիւղերը լրիվ դատարկուած են, զինվորական փախստականներին պատժելու պատրվակով ոստիկաններն այրել են անհաշիվ տներ ու բռնագրավել գույքը: Մահմեդականների մեջ փախստականներն ավելի շատ են, բայց նման ոչ մի բան չի կատարվում: Քանի մը վայրերում ոճրագործներին բանտերից ազատել ու զինել են»: Գրեթե բոլոր գավառներից նույն ահազանգն էր ստացվում. «Մեր գլխին ընդհանուր ջարդերի սարսափն է կախվել: Թուրքերը մեզ ասում են, թե այս պատերազմի դժբախտության պատճառը դուք՝ հայերդ եք: Ձեզ պետք է բնաջնջենք»[39]:

Աշխատանքային վաշտերի հրամանատարները հիմնականում թոշակի անցած մոլեռանդ սպաներն էին: Նրանցից երկուսի՝ 3-րդ բանակի սպաներ Բեքիրի և Նիհատի մասին ականատեսները գրում են, որ սկսած 1914թ. նոյեմբերի 23-ից հայ զինվորներին հարկադրում էին շալակով բեռներ տեղափոխել Տրապիզոն-Բայբուրդ-Կարին գծով: Այդ խնդրին 1935թ. անդրադարձավ նաև թուրքական «Գուրուն» թերթը: Միայն Մուշ-Էրզրում ճանապարհին «3 000 մարդ կքվեցին, մեռան բեռների ծանրության տակ»[40]:

Լեփսիուսը հետևյալ կերպ է ներկայացնում այդ գործընթացը: «Զինվորական ծառայության մեջ գտնվող հայերը, ովքեր ռազմական նախարարի վկայությամբ խիզախաբար մարտնչել էին ոչ միայն Դարդանելում, այլև Կովկասյան ճակատում Ռուսաստանի դեմ, զինաթափվեցին և օգտագործվեցին բանակի կարիքների համար... Գրեթե բոլոր գավառներից լուրեր ստացվեցին, որ մեկուսացված վայրեր քշվեցին և իրենց մահմեդական ընկերների կողմից սպանվեցին ոչ միայն պարտադիր աշխատանքում զբաղված հայերը, այլև ամբողջ ջոկատներ, կազմված 80-100 և ավելի մարդուց, որոնց գնդակահարում էին թուրք ոստիկաններն ու զինվորները սպաների հրամանով»[41]:

Այդպես ոչնչացվեց մոտ 300 հազ. հայ: Այս ոճրագործության մասին լուրերը տարածվում էին և բնական է, որ հայերը բոլոր միջոցներին դիմում էին սեֆերբերլիքից խույս տալու համար: Դրան իշխանությունները պատասխանում էին ամենազազրելի միջոցներ գործադրելով՝ «զինվորական ծառայության անվան տակ... գյուղերում, աշխատատեղերում, դաշտերում, ամենուրեք բռնում և բանակ էին ուղարկում կոտորելու համար»[42]:

«Թուրքիայում հայտարարվեց զորահավաք,- գրում է Հ. Բարբին,- և հայ պատանիներին զինակոչելու պատրվակով սկսեցին բռնագրավել հայերի ունեցվածքը, թալանել նրանց խանութները, զավթել անասունը՝ մի խոսքով սնանկացնել հայ առևտրականին, արհեստավորին և գյուղացուն: Շուտով թուրքական իշխանություններն անցան ճնշումների, իսկ ապա նաև աքսորի և կոտորածի համակարգին: Իհարկե, հայերը քաջ գիտեին, որ միայն դաշնակիցների հաղթանակն իրենց կբերի խաղաղություն և ազատություն: Սակայն հայերը ոչնչում և ոչնչով չդրսևորեցին իրենց համակրանքը Անտանտի հանդեպ»: Հ. Հիպենզին հետևյալ կերպ է ներկայացնում զորահավաքը: «1914-ի աշնանը թուրքական բանակի համար քրիստոնյաների ու իսլամների զորահավաք սկսվեց: Ամբողջ Թուրքիայում վեց ամիս շարունակ հայերը ծառայության կանչվեցին: Ուսանողներից զինվորագրությունից ազատվելու փրկագին ընդունեցին: Բայց մի քանի շաբաթ անց, առանց հաշվի առնելու այդ փրկագնի ստացականները, զորակոչեցին: Պոլսի շրջանակներում գտնվող հայ դեռատի դասի զինվորները մտցվեցին գործող բանակ... իսկ չափահասներին և հեռավոր վայրերի հայերին գործի դրեցին ճանապարհներ, երկաթուղիներ և ամրություններ կառուցելու վրա: Հայերը, որտեղ որ հանձնարարվեց, իրենց պարտականությունները կատարեցին, աշխատեցին հօգուտ Թուրքիայի պաշտպանության: Քաջ զինվորներ և ուշիմ, ժրաջան ու շինարար աշխատավորներ էին»[43]:

"Армянский вестник" -ի 1916թ. 62-ում կարդում ենք. «Թուրքական բանակի հայ զինվորների վիճակի մասին գրեթե չի գրվել, մինչդեռ հայ ժողովրդի ընդհանուր ողբերգության մեջ նրանց

38 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 227, գ. 227:

*39 **Lepsius J.**, Le rapport secret du Dr. Johannes Lepsius, p. 208.*

*40 **Բարբի Հ.**, նշվ. աշխ., էջ 215:*

41 Bericht Über die Lage des armenischen Volkes inder TÜrkei, ss. 28-29:

*42 **Սահրադեան Ս.** նշվ. աշխ., էջ 69-70:*

*43 **Ցուշամատեան Մեծ եղեռնի**, էջ 1028:*

վիճակվածն ամենադառն է»: Նախ ծանր էր նրանց հոգեկան վիճակը: Հայ զինվորները ռուսական բանակին համարում էին ազատարար, բայց հարկադրված էին կռվել նրա դեմ, մանավանդ, որ այդ բանակի շարքերում էին թե հայ զինվորները և թե հայ կամավորական գնդերը, որոնց կազմում մեծ թիվ էին կազմում արևմտահայերը: Հայերի ռուսամետությունը նկատի ունենալով՝ Էնվերը նրանց կռվելու էր ուղարկում Միջագետք, Սիրիա և Եվրոպա: Սակայն մեծ թվով հայեր ծառայում էին նաև 3-րդ բանակի շարքերում, որը կռվում էր Ռուսաստանի դեմ: Այդ բանակի յուրաքանչյուր գումարտակում կար 80-100 հայ ասկյար, որոնց որպես կանոն քշում էին ռազմաճակատի առաջին գիծ: Դրանով հայ զինվորը դրվեց դեմքով դեպի մահ՝ «հնարավորություն չունենալով հետ գնալ կամ առաջ վազել. հարկադրված էր թանկ վաճառել իր կյանքը, իսկ նրա զոհվելը լոկ թեթևացնում էր հրամանատարության հոգը»: Դրան գերմանական զինվորականները կոչում էին «կասկածելի զինվորների օգտակար օգտագործում»: Որպեսզի հայերը չփախչեն, անցնեն ռուսների կողմ, նրանց խրամատներում պահում էին միայն ցերեկները և այն էլ վերակացու թուրքերի հսկողության տակ: Չնայած դրան հայերից փախչողներ եղան, որոնց մի մասը զոհվեց, իսկ մյուս մասը հասավ ռուսական խրամատներ:

«Պատերազմն սկսվելուց մեկ ամիս անց թուրքերը համոզվելով, որ ոչինչ չի կարող հայերին գրավել իրենց կողմը, սկսեցին նախապատրաստել ջարդեր: Անհրաժեշտություն առաջացավ անդրադառնալու նաև հայ ասկյարների վիճակին: Որքան էլ փոքր լիներ վերջինների թիվը, այնուամենայնիվ, թուրքական կառավարությունը վախենում էր, որ կոտորածների ժամանակ հայերը դիմադրություն ցույց տալու են...»: Մյուս կողմից, որոշակի էին հայերի տրամադրությունների փոփոխությունները, անգամ ապստամբության վտանգը, որում հայ ասկյարները կարող էին մեծ դեր խաղալ: Նախապատրաստելով կոտորածները՝ կառավարությունը հոգ տարավ հայերից խլելու վերջին զենքը, չբացառելով անգամ պապենական կայծքարային հրացանները: Այդ ժամանակ էլ որոշվեց զինաթափել նաև հայ ասկյարներին, որոնց որպես բանվորական ուժ ուղարկել էին թիկունք՝ Էրզրումն ամրացնելու և ճանապարհներ գցելու համար: Գերմանական գործակալներից Հ. Հումանը տեղեկացնում է՝ արդեն 1914թ. հոկտեմբերի սկզբին Էնվերի հրամանով սկսեցին ձևավորվել աշխատանքային գումարտակներ, որոնք պետք է կազմված լինեին հայերից ու հույներից[44]:

«Աշխատանքի պայմաններն այնպիսին էին,- նշում է "Армянский вестник"-ը,- որ անգամ մինչռեֆորմյան տաժանակրությունը դրախտ էր թվում: Որպես սնունդ տալիս էին մեծամասամբ բոված ցորեն այնքան, որ բանվորը հյուծվելուց չմեռներ մինչև ծառայության ժամկետի լրանալը: Սակայն հյուծվածությունից մահերը շատ էին: Վերակացուներից յուրաքանչյուրը մեկական տիրակալ էր, այն էլ դաժան ու անխիղճ: Որոշակի է, որ այդ դերի համար ընտրվում էին Էրզրումի թափթփուկի ամենատգետ ու մոլեռանդ տարրերը: Ցուրաքանչյուր հայի փախուստի դեպքում գնդակահարում էին ամբողջ խմբերի...»[45]:

Հայ երիտասարդներին «...սկզբները կը ղրկեին Զանգալեի (Դարդանելի) ճակատը և հոն ողջ մնացողները կը փոխադրեին ամրաշեն վաշտերուն մեջ կամ ճամբաներու շինութեան՝ ամելե թապուրի և զանոնք կը ջարդեին խումբ-խումբ»: Սեբաստիայում շալակավորներին, բեռը տեղ հասցնելուց հետո, սպանում էին: Սեբաստիայի կուսակալ Մուամմերը կոտորել տվեց 20 հազ. հայ զինվոր[46]:

«Հայերն իրենց կյանքը փրկելու համար,- գրում է Վ. Գորդևսկին,- բանակ զորակոչվելիս ընդունում էին իսլամ կամ, ավելի ճիշտ, բռնությամբ մահմեդականացվում էին: Երբ շարքում անվանականչի ժամանակ մի այդպիսի նորադարձ մուսուլման ներկայացել էր իր քրիստոնեական անունով, գնդակահարվել էր...»: Մորգանը ներկայացնում է ականատեսի պատմածը. «Օր մը պատահեցանք աշխատավորներու բազմութեան մը: «Զանոնք բոլորն ալ պիտի մորթվին»,- կըսե մեր ճանապարհակից ժանդարման: Բլուրի մը բարձունքեն մեր կառապանն իր մտրակով ցույց կուտայ մոտավորապես 400 գործավորներ, որ զառիվայրի մը եզերքը, մեծ գծի վրայ կը շարուին: Գիտենք, թե ինչ է պատահածը: Ուրիշ տեղ մը, մինչ ժանդարմները կը գնդակահարեին, թուրք գործավորները զոհերուն վերջին հարվածներ կուտային՝ դանակներով ու քարերով»[47]:

*44 **Dinkel C.** Einfluss hoher deutscher Offiziere in Osmanischen reich auf die zum Voelkermord an den Armenier fuchrenden Massnuhmen, s. 38.*

45 "Армянский вестник", 1916, N22.

*46 **Շիրակյան Ա.**, նշվ. աշխ., էջ 95:*

*47 **Մորգան Ժաք դը**, նշվ. աշխ., էջ 345-346 (դանիացի հիվանդապահուհու պատմածը):*

Մի վկայություն կա. «Բոլոր 20-43 տարեկան և ավելի ուշ՝ 18-48 տարեկան քրիստոնյաները զորակոչվեցին, չնայած օրենքն արգելում էր 27-ից բարձր տարիքի տղամարդկանց զինվորագրությունը: Նրանք, ովքեր ի վիճակի չէին զինվոր լինել, օգտագործվեցին որպես գրաստ»: Մորգենթաուն առանձնակի է անդրադառնում որպես փոխադրամիջոց օգտագործվողների խնդրին[48]:

«Իրենց կռնակը կը բեռցուեին ամեն տեսակի պաշարներ կքելով բեռին տակ ու քշուելով Թուրքերու խարազաններեն և սուիններեն, կը բռնադատուեին իրենց յոգնած մարմինները քաշկոտել Կովկասի լեռներուն մեջ»: Բեռան տակ կքված այդ երիտասարդները ձմռանը հարկադրված էին անցնել ձյունառատ, անճանապարհ վայրերով, մինչև գոտկատեղը խրվելով ձյունի մեջ: Ամբողջ ժամանակ դրսում էին, քնում էին բացօթյա, գետնին, որտեղ մթնում էր: Նրանց չնչին սնունդ էր տրվում, «եթե հիվանդային, կը թողուեին հոն, ուր ինկած էին», իսկ թուրքերն ընկածների մոտ եղած ամեն ինչ, այդ թվում նաև հագուստները, կողոպտում էին:

Ա. Ցոհանսոնի վկայությամբ, մի գյուղում բեռները ռազմաճակատ հասցնելու համար հավաքել էին 300 ծեր ու զառամյալ և 12 տարեկան չալակավորներ: Նրանցից խլել էին ամեն ինչ, նրանք թերսնված էին, վատ հագնված, նրանցից միայն 30-40 հոգին ողջ վերադարձավ: «Մնացածը սպանվեց կամ մեռավ սովից ու ցրտից»: Փոխադրումներին մասնակից էին դարձնում նաև հայ զինվորներին: Նրանք մի քանի շաբաթ շարունակ չալակած սննդամթերք կամ ռազմամթերք, քայլում էին հարյուրավոր կիլոմետր մինչև ռուսական ռազմաճակատ: Նրանք սպանվում էին քրդերի հարձակումների ընթացքում, մեռնում ուժասպառ: Լեփսիուսը գրում է. «Նրանց կեսը մեռնում էր ճանապարհին, հաճախ վերադառնում էր հազիվ քառորդ մասը»[49]:

Վանգենհայմը 1915թ. ապրիլի 28-ին գրում է Բեթման Հոլվեգին. «...Հայ գյուղացիներին օգտագործել են որպես բանող անասուն զինամթերք և սննդամթերք տեղափոխելու համար, որոնցից շատերը զոհվել են վայրագ վերաբերմունքի պատճառով և քչերին է հաջողվել... հազիվ 1/4, վերադառնալ իրենց գյուղերը»[50]:

«Եթե կեանքի համար ոգորողներ յաջողեին սահմանուած տեղը հասնիլ, անոնք շատ յաճախ կը ջարդուեին»: Հայ զինվորները սպանվում էին ամենատարբեր եղանակներով, «գրեթե ընդհանուր սովորութիւն մը դարձած էր զանոնք պաղարիւն սպաննելը»: Ամելե Թապուրում եղած հայերին խմբերով բնակավայրերից հանում էին և հանկարծ «հրացաններու պայթիւններու ձայնը կը լեցներ օդը...» ու զինվորները վերադառնում էին իրենց կացարանները: Իսկ երբ գնում էին սպանվածներին թաղելու, որպես կանոն, դիակները մերկ էին լինում, «թիւրքերը գողացած կըլլային անոնց բոլոր զգեստները», շատերին էլ հարկադրում էին իրենց գերեզմանները փորել:

Մորգենթաուն նկարագրում է Խարբերդում եղած 2000 հայ ամելեների վիճակը: Տեղի հայերը վալուն խնդրեցին նրանց կյանքը խնայել: Վալին երդվեց, որ ամելեին որևէ վտանգ չէր սպառնում: Սակայն այդ 2000 հոգին էլ փոքր խմբերով սպանվեցին ու նետվեցին մի նկուղ: Նրանցից ոմանց հաջողվեց փախչել ու պատմել այդ սպանդի մասին: Մի քանի օր անց 2000 հայ զինվորի ճանապարհ հանեցին դեպի Դիարբեքիր: Որպեսզի նրանք տեղ չհասնեին, տանում էին ամայի վայրերով և քաղցած: Քրդերին նախապես հայտնել էին խմբերի մեկնման մասին, որոնք իրենց կանանց հետ, մսագործի դանակներով հարձակվեցին քարավանի վրա: «Բովանդակ թիւրք կայսրութեան մեջ,- ամփոփում է Մորգենթաուն,- կանոնավոր ջանք մը գործուեցաւ սպանելու բոլոր քաջակազմ այրերը, ոչ միայն մեջտեղեն վերացնելու նպատակով բոլոր արուները..., այլ նաև ժողովրդին տկարագոյն դասակարգը դիւրին որս մը դարձնելու նպատակով»[51]:

Ամելե Թապուրներում եղած հայերից փրկվածները հետագայում բռնագաղթվեցին տեղահանված հայ բնակչության հետ:

Հայ երիտասարդության զորակոչի միջոցով ամելե Թապուրներում օգտագործումը շարունակվեց անգամ 1916 թվին: Դրա վկայություններից է Թալեաթի 1916թ. փետրվարի 20-ի հեռագիրը Հալեպի կառավարչին: «Զինուորական իշխանութիւնը կը հաստատեն զինուորական տարիքի մեջ գտնուող վերոհիշեալ մարդկանց անհրաժեշտ գործածութիւնը զինուորական ծառայութեան մեջ,- հրահանգում էր Թալեաթը:- Կը խորհինք, որ կարելի պիտի չըլլայ զանոնք ղրկել պատերազմական գոտիներ, և քանի որ անոնց համար արտոնուած ալ չէ քաղաքի մեջ մնալ, ձեզ կարտոնենք զանոնք

48 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 265:
49 Գուատ Վ., նշվ. աշխ., էջ 147:
50 PA-AA / Կոստանդ. դեսպան./, հ. 168:
51 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 248-252:

գործածել քաղաքեն դուրս ճամբայ չինելու կամ ուրիշ որևէ անհրաժեշտ գործի մեջ, պայմանով, որ անոնց ընտանիքները պետք է քշուին աքսորեալներու մնացորդին հետ...»[52]:

Ֆրանսիական «Թանը» հայ զորակոչիկների հետ կատարվածի մասին գրում է. «Ռուսները տեսել են ժայռերից կախված հայ զինվորներ և այդ արել էին նրանց թուրք ընկերները... զորակոչից հետո սկսվեցին... նախճիրները»[53]:

50 000 զորակոչված հայեր պատերազմի երրորդ և չորրորդ ամիսներին, մասնավորապես ռուսական ռազմաճակատի Քյոփրի-Քյոյի կռիվներից հետո, պատրվակ բռնելով մի քանի հայ զինվորների դասալքությունը, զինաթափ արվեցին ու ուղարկվեցին Փոքր Ասիայի խորքերը ճանապարհաշինության: Նրանց պահում էին դժոխային պայմաններում, վատ սնում, հագուստ չէին տալիս, բացակայում էր բուժսպասարկումը, որի հետևանքով ամելե Թապուրի հայ զինվորները զոհ դարձան քաղցին ու հիվանդություններին: 1915թ. հուլիս-օգոստոս ամիսներին կենդանի մնացածներին կոտորեցին:

Մի հայ զինվորական պատմել է. «Մենք 250-300 հոգի էինք և զինաթափվելուց հետո զբաղվում էինք շինարարությունով: Այդ ընթացքում մենք ավելի ու ավելի համոզվեցինք, որ տրված էինք մեզ պահպանող թուրք զինվորների կամայականություններին: Մեզ այնքան սնունդ էին տալիս, որ հազիվ կարողանում էինք գոյություն պահպանել, մինչդեռ մեզանից պահանջում էին բարձր արտադրողական աշխատանք, իսկ ճիպոտն ու խզակոթը հարկադրում էին, որ լարեինք մեր վերջին ուժերը: Աշխատանքն ավարտելուց հետո մեզ չորսական հոգու կապեցին միմյանց, շարք կանգնեցրեցին, տարան կիրճ և հարկադրեցին պպզել մեջք մեջքի տված: Ձորի թեքություններն զբաղեցրեցին զինվորները, ժանդարմները և քրդերը, ովքեր սկսեցին կրակել մեր վրա...»[54]:

Թալեաթին հասցեագրված նամակում Վռամյանը գրում է, որ Կարճկանի կազայում և Գավաշում զինաթափվել են օսմանյան բանակի հայ զինվորները և թուրք զինվորների կողմից գրաստների նման քշվել են այլևայլ վայրեր: Այդ ընթացքում թուրքերն ու քրդերը ավերում էին հայկական գյուղերը[55]:

«Թուրքական զորքերը 1915թ. փետրվարին պաշարում են Դորթ Ցոլը և 1600 հայ երիտասարդի քշում ճանապարհաշինության վրա աշխատելու»[56]:

Աղանայում գերմանական հյուպատոս Բյուգեն 13. 03. 1915թ. գրում է Վանգենհայմին, թե Դորթյոլի ողջ արական բնակչությանը տարել են Հալեպի նահանգ ճանապարհներ կառուցելու[57]:

Կ. Պոլսի ռուսական դեսպանության թարգման Սերաֆիմովը հեռագրում է Պետերբուրգ. «Զորամասերում ծառայող բոլոր հայերը զինաթափված են»: «Ազատամարտը» 11. 03. 1915թ. գրում է. «Կառավարությունը կարգադրել է զինաթափել բոլոր հայ զինվորներին և ամենաչնչին ատիթով գնդակահարել»:

Բաղդադում ամերիկյան հյուպատոս Բրիսելը գրում է. թե բանակում ծառայող բոլոր հայերի զենքերը հավաքել են և նրանց ստիպում են աշխատել Մոսուլի երկաթուղու շինարարության վրա[58]:

Գերմանացի միսիոներ Հ. Բեռնքինդը հայտնում է, որ Մալաթիայում զորակոչված 700 հայից 150-ն արդեն մահացել է հիվանդություններից ու կյանքի դաժան պայմանների պատճառով[59]:

1915թ. ապրիլին Սոֆիայից հեռագրում են Ա. Խատիսովին. «Կա սուլթանական հրաման հայ զինվորների զինաթափման մասին»[60]:

Նույն ամսվա վերջին Վիեննա ուղարկված մի ծածկագրում ասված է. «Բրուսայում 20 օր առաջ զորակոչվել են մինչև 45 տարեկան հայ զինապարտներ և տարվել հեռավոր նահանգներ... Նրանց թիվն անցնում է մի քանի հարյուրից»[61]:

Որ զորահավաքն ու դասալքության դեմ պայքարի պատրվակով կատարվող խժդժությունները ցեղասպան գործողությունների համակարգի բաղադրիչներից էին, որ հայ երիտասարդության զորակոչի գլխավոր նպատակը հայության զինաթափումն էր, հաստատում է նաև Մ. Ռիֆաթը:

52 Անտոնեան Ա., նշվ. աշխ., էջ 162:
53 «Հնչակ», օգոստոս, 1915:
54 "Deutscher Hilfsbund fur christl", Frankfurt M., 1919, Februar.
55 «Հայաստան» (Սոֆիա), 07. 03. 1915:
56 Տաշյան Հ., Հայ ազգի տարագրութիւնը, էջ 50-51:
57 Ն. տ.:
58 АВПР, Политархив, д. 3504.
59 US State Deparment Record Group 59, 86700/779.
60 L'Revue d'histoire armenienne contemporaine, t. II 1998, p270.
61 АВПР, Политархив, оп. 482, д.3504:

Դրանով էր բացատրվում աշխատանքային վաշտերի ստեղծման միջոցով հայ երիտասարդության ոչնչացումը, արձանագրեց նաև ժողովուրդների մշտական դատարանը (1984թ. Փարիզ):

Դաշնակցության Կ. Պոլսի կենտրոնը համադրելով գավառներից ստացված լուրերը, հոկտեմբերի 14-ին գրեց. «... Ներքին գավառներու վիճակն օրըստօրե կը ծանրանայ: Ընդհանուր զորակոչին պատճառով զինուրական պաշարումի վիճակ է յայտարարուած: Անկե ի վեր հայերը (դրական) պատասխանեցին զորակոչին: Ըրինք այն, ինչ-որ կրնայինք, որպեսզի բոլոր հայերը, որպես օսմանեան քաղաքացիներ, կատարեին իրենց պարտականութիւնները»[62]:

Գիտնականները զորակոչի իրականացումը համարում են ցեղասպանությանը միտված միջոցառումներից ամենախոշորը: «1914թ. սեպտեմբերին,- գրում է Տարլեն,- հայկական բոլոր վիլայեթներում զորահավաքի անողոք ու համատարած անցկացումից հետո հայ ազգաբնակչությունից տեղերում մնացին միայն կանայք, երեխաներ և շատ ծեր տղամարդիկ... Այդ ժամանակ ՆԳ նախարար Թալեաթն ու ռազմական նախարար Էնվերը որոշեցին գործողության մեջ դնել հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման ծավալուն պլանը...»: Մորգանը գրում է, որ Թուրքերի համար 20-50 տարեկան հայերի զորակոչը շատ ավելի «նախազգուշական», քան բանակը համալրելու միջոց էր, որով ամբողջ արական բնակչությանը ոչնչացրեցին և բնակավայրերում մնացին «միայն կանայք, երեխաներ և ծերեր, որոնց դժվար չէր քշել սպանդանոց»: Իսկ «Հնչակը» 1914թ. դեկտեմբերին խնդրին անդրադարձավ հետևյալ կերպ. «Մեծագույն պատուհասներից է նաև զորահավաքը... առանց տարիքին, դիրքին, առողջությանն ուշադրություն դարձնելու, բոլոր հայերին, անգամ զինվորական հարկ վճարողներին, կոպտությամբ, ծեծով քշում են իրենց ընտանիքներից... և հեռատես զգուշավորությամբ ուղարկում են կայսրության հեռավոր մասերը՝ Սիրիա, Արաբիա, Մինջագեռք: Կոմիտեն խնդիր է դրել հայ ամբողջ բնակչությանը հայաշատ վայրերից տեղափոխել թրքաշատ տեղեր և թուրքական կառավարությունը սրի գործադրությունը փութկոտ առաջ է տանում»:

Հայերի ոչնչացման այս եղանակի մասին հարուստ նյութ են պարունակում բժիշկ Թոփալյանի հուշագրությունները: Թոփալյանը մտցված էր մի հանձնաժողովի մեջ, որը պետք է բանվորական զորամասերում քննություն կատարեր և առողջներին ընտրեր ռազմաճակատ տանելու համար: Հանձնաժողովը մեկնեց Պոլսից ոչ հեռու գտնվող Ագբունար վայրը, որտեղ չինարարական վաշտերն աշխատում էին գերմանացի հարյուրապետ Վոլֆի ղեկավարության ներքո: «Տեսարանը պարզապես սահմռկեցուցիչ էր: Նույնիսկ թուրք գյուղացիները տեսնելով հայերի ու արաբների դիակների սարսափելի վիճակը՝ կառավարության հասցեին անեծք էին կարդում»: Մենք տեսանք 200 անթաղ դիակ: Գյուղացիներն ասում էին, որ ավելի շատ դիակ կար մացառներում ու ժայռերի խոռոչներում: «Բժիշկներս եզրակացության եկանք՝ այդ զինվորները սովի, մերկության ու հոգնածության պատճառով այն աստիճանի քայքայված ու հուսահատված են եղել, որ իրենց կյանքին վերջ տալու համար քաշվել են մացառների խորքը և ժայռերի խոռոչները, կծկված սպասել են մահվան գալուն: Նրանցից շատերը, ժայռաբեկորները մեջքներին կապած, չորացել, մնացել էին, մյուսները գիշատիչ գազանների ու թռչունների կողմից բզկտված, ոմանց փորը պատռված ու փորոտիքը դուրս թափված, ուրիշների թևերն ու սրունքները մարմիններից անջատված և ծամծմված, շատերի դեմքերը կոծված, աչքերը փորված, առանց քթի ու ականջի... Ոճիր բառը պետք եղած ուժը չունի կատարված դեպքերը բացատրելու, այս թրքահնար ոճիրը ճիշտ արտահայտելու համար պետք է նոր բառ գտնել... Մենք Վոլֆին առաջարկեցինք գտնե թաղել դիակները: Նա թե՝ «ես ժամանակ չունեմ մարդկանց դիակներով զբաղվելու... Ինձ 150 հազար մարդ են տվել և հանձնարարել թեկուզ այդ 150 հազարի կյանքի գնով ավարտելու աշխատանքը»: Մենք առաջարկեցինք մարդկանց այնքան չհյուծել, որ մահանային: Նա թե՝ «զոհվածների տեղը համալրելու համար մարդ դեռ շատ կա»: Վոլֆն այդ հայերի ձեռքով հաց էր թխում, երկաթյա գործիքներ էր պատրաստում ու նորոգում, մարդու թամբ սարքում հնարավորին չափ շատ բեռ շալակելու համար: Այդպիսի թամբեր մենք տեսանք մի քանի դիակների մեջքին կապած: Մենք տեսանք մարդկային այս զանգվածի կյանքի գնով կառուցված կամուրջներ: Վոլֆի օգնական Նուրֆադին բեյն ասաց. «Տեսնո՞ւմ եք այս ժայռի կտորները: Դրանք գլորելու փորձերը մեծ թվով մարդկանց կյանք են խլել, որովհետև բոլոր այն խմբերը, որոնք ժայռը տեղից չարժել չէին կարողանում, տեղն ու տեղը գնդակահարվում էին»: Անտանելի ծանր էր զինակոչված ու այս աշխատանքներում օգտագործվող հայ երիտասարդների վիճակը: Բացօթյա տարածությունը փշալարերով շրջապատված էր, կարծես այս կիսամեռ խեղճերն ի վիճակի էին փախչել: Օրվա տաժանակիր աշխատանքից հետո այդտեղ էին հավաքվում իբր քնելու և հանգստանալու համար՝ կարծր քարն ու սև հողը նրանց բարձն ու անկողինն էին, իսկ երկնակամարը՝ անգութ վերմակը: Անհնար է երևակայել, թե ինչ էին դառնում այդ անկողինն ու վերմակը ցրտին ու բքին, երբ բնությունը խռովում էր և անկողինը դառնում էր ցեղաջրի լիճ, իսկ վերմակը՝ մութ ամպերի լալկան վերմակ ու սավան: Այս գործավորները գիշերը ծածկվելու ոչ մի հնար չունեին, հագուստներն այնքան բզկտված էին, որ նրանց մերկությունը չէին ծածկում... Ուղտապահ սպան ասաց, որ անասունները գին ունեն, իսկ զինվորները ձրի են»:

Մարդկային այս սպանդանոցում երեք ամսվա ընթացքում Վոլֆի տրամադրության տակ դրված 150 հազար հայից ու արաբից 16 հազարը դադարել էր գոյություն ունենալուց: Փոխադրումների վրա աշխատող արաբների մոտ կեսը մեռել էր, իսկ մյուս կեսը սննդի պակասի և աղքատության ու ոջիլների չափազանց առատությունից հալվել, մաշվել, շարժվող կմախք էր դառել: Սրանք էլ, ինչպես հայերը, թուրք պետության կողմից ապրելու իրավունքից զրկված, մահվան դատապարտվածներ էին: Թուրք աղաները հայ և արաբ զինվորների դահիճներն էին: Այս ճամբարում գտնվող բոլոր թուրք զինվորներն արտոնյալ վիճակում էին: «Գարնան ձնհալքի հետ այդ մարդկանց հսկա զանգվածը հալվել վերջացել էր..., իսկ Վոլֆը դրա դիմաց չքանչան էր ստացել և աշխատանքի առաջ քաշվել Իրաքի ճակատում»:

Այդ ամիսներին Տարոնում հայերի կացության մասին մանրամասն տեղեկություններ կան Մշո առաջնորդական փոխանորդ Ե. Պարսամյանի հուշագրություններում: «Մեկ կողմե երիտասարդները,- գրում է նա,- մահու սպառնալիքին տակ գունդագունդ կերթային զինուորագրուելու, միւս կողմեն նախապես կազմուած ցուցակի մը համաձայն պարտադրուեցաւ, որ յուրաքանչիւր տուն՝ կառավարութեանը յանձներ որոշ թիւով ձի, հոգ չէ, թե տունը ձի չունենար, պետք է գնե և յանձնե... Հայերուն թալանելու վայրկեանը հնչած էր: ...Կառավարութեան կողմե կարգուած մասնաւոր պաշտոնեաներու միջոցաւ խանութներեն կը սկսին գրաւումները: Կը տանին ինչ-որ կը գտնեն և ինչ-որ կը փափագին... քանի մը օրուան մեջ քաղաքին (Մուշ) շուկայի խանութները մերկացան իրենց զարդերեն ու հրապոյրեն...»: Գյուղերում դրությունն ավելի ծանր էր: «Տավարներն ու ոչխարներն արդեն կառավարութեանն էին... Օրե օր զորահանութիւնը կը սաստկանայ, պոլսական հրամանները մեկը միւսեն ավելի սասանեցնող կը հասնին ու կը ծանուցուին ժողովրդին... օրը մի քանի անգամ թմբու

փողոցները կայցելե զարհուրանքի մեջ պահելու համար սարսափահար ժողովուրդը... Ու ահա ամբողջ Տարոնը զորանոց դարձավ: Տարապարհակ աշխատանքը զորահավաքեն ավելի աղետալի երևույթ մըն էր... Հայ կիներ, աղջիկներ և 10 տարեկան տղաներեն սկսած... յատկացուեցան շալակով փոխադրութեան: Բանակին պետքերը պետք է տարուեին մինչև Քոփրի Քյոյ և մինչև Հասան Կալե. 10 օրուա ճանապարհ, կմնայով, անբավական սնունդով, ծեծի ու չարչարանքի տակ: Պետք էր քալել ու արագ քալել, վազել նոյնիսկ, ժանտարմներու ձիերուն հետ մեկտեղ, այլապես մտրակն ու փայտը կը գործեին անողոքաբար... Ու խարազանը կը շաչե, ու տղան կիյնայ անկանգնելի, կինը կը վիժե ու կը մեռնի, ծերը կը փռուի գետինը, իսկ ինկնողի բեռը իյնալիքները կվերցնեն ու կանցնին, իբր թե ոչինչ պատահած ըլլար...»[63]:

Հայ շալակավորներից մեկը պատմում է, որ Հասան Կալեի «ճանապարհին փռուած էին դիակներ, բոլորն ալ հայերու դիակներ էին... Թուրքերն ըսին, թե վիրավոր զինուորներ են, որ գիշերը դուրս մնալով՝ մեռած էին»[64]:

«Իւրաքանչիւր երեք ու դարձին 30 առ հարիւրը կը մեռնեին ծեծի տակ ճանապարհին, դիակները ձգուած ճամբուն եզերքը...», իսկ կենդանի մնացածների մեծ մասը վերադառնալուց հետո էր մահանում հիվանդություններից և հյուծվածության հետևանքով: Հայ բնակչությունը լրիվ թալանվեց, սովը համատարած էր: «Կառավարութիւնը բացե ի բաց ջարդ մը կուզեր ստեղծել և պատճառներ կփնտրեր, բայց կը զգուշանային... Սարսափն ու զարհուրանքը նիւթականացուած էր ամեն տան մեջ»[65]:

62 **Lepsius J.**, *Le rapport secret du Dr. Johannes Lepsius*, p. 208.

63 **Պարսամեան Ե.**, Տարոնի ինքնապաշտպանութիւնն ու ջարդերը, էջ 21-26:

64 **Սասունի Կ.**, նշվ. աշխ., էջ 750:

65 **Պարսամեան Ե.** նշվ. աշխ., էջ 26-29:

Սասունի հայկական գյուղերի զգալի մասը, ի տարբերություն Արևմտյան Հայաստանի մյուս շրջանների, զորահավաքին վերապահումով մոտեցավ: Ամեն գյուղից զինվորագրության էր ուղարկվում մի քանի հոգի և այլևս հրաժարվում էին զինվոր տալուց: Իշխանությունները խուսափում էին լեռնաշխարհի հայության հանդեպ բռնություններ գործադրել, որովհետև չունեին անհրաժեշտ ուժեր: Սասունցիները նաև շալակավորներ չէին տալիս: Ապարդյուն անցան Մշո առաջնորդի և ՀՅ Դաշնակցության կոմիտեի միջամտությունները:

Թուրքական իշխանությունները քրդերի միջոցով շրջափակեցին Սասունը: Տեղի ունեցան մի քանի բախումներ, սակայն սասունցիները բացարձակ առճակատման չէին գնում և փորձում էին կառավարիչ Սերվեթի հետ հաշտության եզրեր գտնել: Եվ քանի որ Սասունում զենքի գործադրումը հղի էր բարդություններով, իշխանություններն արտաքուստ համաձայնեցին Սասունը խաղաղ թողնել: Դրա փոխարեն սկսեցին տարբեր պատրվակներով լեռնաշխարհի ազդեցիկ դեմքերին ձերբակալել ու անհետ կորցնել: Դա առաջին քայլերն էին, որոնք տարան դեպի սասնահայության ողբերգությունը:

Վանգենհայմի երևակայությունը նրան մղում է պնդելու, թե հայերի հանդեպ դաժանությունների սաստկացման պատճառը նրանց դասալքությունն էր և գործողությունները թուրքերի դեմ: 1915թ. ապրիլի 15-ին նա գրում է Բեթման Հոլվեգին, թե հայերի ու թուրքերի միջև «փոխադարձ անվստահությունը գնալով աճում է», հայերի հետապնդումները «ավելի մեծ թիվ են կազմում... Նրանց հանդեպ վատ տրամադրվածությունը մեծանում է արտասահմանում հայերի պահվածքի վերաբերյալ լուրերի պատճառով... Նրանցից հազարավորները կամավոր մտել են ռուսական բանակ... դաշնակցություն կուսակցության ռուսական բաժանմունքը Թուրքիայի համար պատերազմի անհաղող ելքի դեպքում, պահանջելու էր թուրքերի նահանջած շրջանների մահմեդական բնակչության բնաջնջում... Կովկասյան ռազմաճակատում թուրքական բանակի շարքային հայ զինվորները... իրենց զենքը բազմիցս ուղղել են թուրքերի դեմ»:

Սակայն հայերի հեղափոխական դիտավորությունները մերժում է անգամ Վանգենհայմը: Նա ամենայն որոշակիությամբ գրում է. «... Սահմանադրության հաստատումից հետո հայերը հրաժարվել են հեղափոխության մտքից և դրա համար ոչ մի կազմակերպություն չունեն»[66]:

Անկասկած հիմա Անատոլիայում,- շարունակում է դեսպանը,- առկա են հայերի դեմ օրինազանցություններ և բռնություններ... Հայերը դրանց համար մեղադրում են 1. որպես աշխարհազոր ռազմականորեն կազմակերպված թուրքական անկանոն խմբավորումներին և թալանչի հրոսակներին. 2. Միություն և առաջադիմությանը կից ակումբներին... Հատկապես Էրզրումի մասնաճյուղին են վերագրում սև ցուցակների կազմումն ու հեղինակավոր հայերի սպանությունների ծրագրումը: Այդ ակումբները Ադանայի 1909-ի իրադարձություններում ճակատագրական դեր են խաղացել: 3. Մեղադրում են նաև Մուշի մութասարիֆին և Վանի վալիին... Ռուսների գրավումից հետո Ալաշկերտի 2000 մահմեդական ընտանիքների բնակեցրեցին Տարոնում, որի հայ բնակչությունը հալիվ է իր գոյությունը քարշ տալիս... Վանի երկու կազաներում, կայմակամների գիտությամբ իսկական սպանդ է եղել»[67]:

66 PA - AA /Կոստանդ. դեսպան./ հատոր 168:
67 Ն. տ.:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Հայկական շարժումները պատրվակ դարձնելով՝ թուրք, ինչպես նաև առանձին հայ գործիչներ, ցեղասպանության պատճառը համարում են իրենց՝ հայերին: Խոսքը վերաբերում է հայդուկային շարժմանը, թուրքական բանակի թիկունքում հայերի քայքայիչ գործունեությանը, կամավորական շարժմանն ու լեգեոնների ստեղծմանը:

Սկսենք վերջինից. Հայկական լեգեոն ստեղծելու փաստաթուղթը Նուբար փաշան ստորագրել է 1916թ. հոկտեմբերի 26-ին Լոնդոնում, այսինքն՝ ցեղասպանության ավարտից հետո: Ճիշտ է, դեռ 1915թ. ապրիլին Վաշինգտոնում Մեծ Բրիտանիայի դեսպան Ս. Ռայսը ռուսական դեսպանից տեղեկացավ, որ հայերն առաջարկում էին 1000 կամավոր ուղարկել մասնակցելու Կիլիկիայում ընթացող կռիվներին, որ նրանք «պատրաստ էին վճարել զինվորական տարազի» և մինչև Կանադայի նավահանգիստներից մեկը տեղափոխելու ծախսերը: 1915թ. մարտի 23-ին նման առաջարկով Էդ. Գրեյին դիմել էր Ամերիկայի ազգային պաշտպանության հայկական կոմիտեն[1]: Սակայն Լոնդոնում մերժեցին այդ առաջարկությունները: Առաձնակի եռանդ էին հանդես բերում եգիպտահայերը[2]: Նրանք պատրաստ էին տրամադրել 10 000 կամավոր[3]:

Իրավիճակը փոխվեց 1916թ. կեսերին: Հնդկաստանում գտնվող հայ ռազմագերիներն ազատվեցին՝ նրանք մտցվելու էին Կիպրոսում կազմավորվելիք զորամիավորման մեջ: Անգլիացիները, սակայն, այդ հայերին մտադիր էին ոչ թե միավորել հայ կամավորական շարժման մեջ, այլ ուղարկել Աֆրիկա ջորեպահ աշխատելու: Մի քանի ամիս անց Անգլիան ու Ֆրանսիան համաձայնության եկան Կիպրոսում Արևելյան լեգեոն ստեղծելու վերաբերյալ և հայերն ընդգրկվեցին դրանում: Ասվածից պարզ է, որ հայկական լեգեոնի ստեղծումը գործնական գետնի վրա դրվեց միայն 1916թ. վերջերին: Այդ մասին մանրամասն կանդրադառնանք հետագա շարադրանքում: Իսկ այժմ արևելահայության կամավորական շարժման մասին:

Կամավորական շարժման տարեթվերը հիմք ընդունելով՝ հնարավոր է գործին անտեղյակ մարդուն համոզել, որ այն իրոք դեր խաղացել է: Իրականում այդպես չէ: Նախ, կամավորական գնդերի կազմավորումը միայն արտաքուստ էր կամավոր: Դրանց իսկական նախաձեռնողն ու իրականացնողը ցարական իշխանություններն էին: 1915թ. ռուսական բանակում ծառայում էր 250 000 հայ, որից 80 000-ը կռվում էր եվրոպական ռազմաճակատում: Հայերը ծառայում էին նաև Անտանտի մյուս երկրների բանակներում: Մոտ 300 000 հայ էլ կռվում էր Անտանտի դեմ: Թուրքական պաշտոնական փաստաթղթերից մեկում ասվում է, որ պատերազմի հենց առաջին ամիսներին կայսրության տնտեսական և քաղաքական ճգնաժամի պատճառն ազգային փոքրամասնությունները, մասնավորապես, հայերն էին: «Այդ շրջանում,- կարդում ենք նշված փաստաթղթում,- հայ պարտիզաններն աշխուժացրեցին գործողությունները և մասնագիտացան ահաբեկչության մեջ: Արևելյան ռազմաճակատում սպանվեց 59 462 թուրք զինվոր և 461 321 բնակիչ: Սպանությունների մեծ մասը կապված էր Հայկական հարցի հետ...»: Հայերը թիկունքից հարվածում էին թուրքական բանակին: Դրա համար էլ հարկ եղավ նրանց հեռացնել ռազմաճակատային գոտիներից: Ապա ստեղծվեցին հայերի կամավորական գնդեր պարտիզանների գործը շարունակելու, այսինքն՝ մահմեդական բնակչությանը ոչնչացնելու համար:

Ինչպես և սպասվում էր, աշխարհամարտի մեջ մտնելը հայամետ դարձրեց ռուսական քաղաքականությունը Կովկասում: Հայերը մեծ եռանդով էին մասնակցում զորակոչին՝ 100 հայից 13-ը բանակ մեկնեց: Հայերի եռանդը բացատրվում էր ռուսական զենքի օգնությամբ օսմանյան լուծը թոթափելու հույսով: Պետրոգրադն ու նրա կովկասյան չինովնիկները հայ գործիչների բարձրացրած հարցերը լուծում էին առանց սովորական քաշքշուկների: Կաթողիկոսի

1 Fo 371/2485/51438.
2 FO 371/2485/100769.
3 Fo 371/2485/41444.

խնդրանքը՝ աքսորից ազատելու «Դաշնակցության գործով» դատապարտված 180 հոգուն, բավարարվեց: Վորոնցով -Դաշկովը առաջարկեց Արևմտյան ռազմաճակատում կռվող հայ սպաների մի մասին փոխադրել Կովկասյան ճակատ: Փոխարքան կաթողիկոսին տեղյակ պահեց, որ «ռուսական կառավարությունը ոչ մի դեպքում ոչ մի զիջում չի անի Հայկական հարցում՝ Թուրքիայի հայկական նահանգներում բարենորոգումները կատարվելու էին ռուսական սկզբնական ծրագրով և Ռուսաստանի բացառիկ վերահսկողության ներքո»[4]:

Նույն բանը հաստատեց ցարը կաթողիկոսի հետ հանդիպման ժամանակ. «Հայկական հարցը կլուծվի համաձայն հայերի սպասումների»: Արևմտահայերին հասցեագրված 1914թ. նոյեմբերի 24-ի կոչում Նիկոլայ 2-րդը գրում է. «Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթների և դրանց հետ անխզելիորեն կապված Կիլիկիային ինքնավարություն տալը մեծ Ռուսաստանի հզոր հովանու տակ, որին հասնելու ենք դաշնակիցների հետ համաձայնության գալով»[5]:

Այս խոստումները, իհարկե, հայության շրջանում առաջացնում էին ոգևորություն: Կ. Սասունին գրում է. «Կովկասահայության ոգևորության ալիքը իր գագաթնակետին էր հասել»[6]:

Նույն մթնոլորտն էր գաղթօջախներում: «Տուն, գործ, քոլեջ կամ համալսարան կը լքեն դեպի Հայաստանի ռազմաճակատ աճապարումով»[7]:

Ոգևորված էր նաև Հովհ. Թումանյանը. «Երրորդ զարկով հյուսիսի հսկան՝ մեծ Ռուսաստանը վճռում է հայոց ազգի հին, արյունոտ խնդիրը, ապահովում է նրա ապագան...»[8]:

1917թ. նոյեմբերին հրապարակված «Հայկական հարցի առթիվ» հոդվածում գերմանացի հոգևորական է. Շտիրը գրում է, եթե «հայերը դիմեցին ինքնապաշտպանության և հայացքը հառեցին ռուսներին... դա, իհարկե, հասկանալի էր», քանի որ կեղծիք էր 1917թ. սեպտեմբերի 24-ին իթիհադի համագումարում «Թալեաթի առաջ քաշած այն թեզը, թե հայերի կոտորածները հետևանք էին նրանց անհնազանդության, ռուսական կողմնորոշման, արտասահմանի հորդորների ու քաջալերանքների»: Շտիրը նկատում է, որ ջարդեր տեղի են ունեցել նաև Կիլիկիայում, որը պատերազմական թատերաբեմ չէր, ինչը նշանակում է, որ տեղահանումների ու դրանց հետևանքների մեղքը ընկնում է Թուրքիայի կենտրոնական կառավարության վրա. «Թալեաթը ձգտում էր մոլորեցնել հասարակական կարծիքը»[9]:

«Թուրքիան հայերին ճնշելու և նեղելու է,- գրում է Կովկասյան բանակի հետախուզական բաժանմունքի պետ Դրոցենկոն,- թե պարտության և թե հաղթանակի պարագայում: Պարտության դեպքում մուսուլմանները նահանջելով հայերին կկոտորեն վրիժառությամբ, երկրորդ տարբերակում՝ հարձակվելով Ռուսաստանի վրա, նրանք հայերին կոչնչացնեն իրենց փայփայած նպատակին հասնելու համար»: Դրոցենկոն կրկնում է շահարկվող այն կարծիքը, թե Թուրքերը հայերին համարում էին թաթարների հետ իրենց միավորման խանգարողներ: Նա դրանով է բացատրում, որ «Թուրքում էին թաթարների հետ իրենց միավորման խանգարողներ: Նա դրանով է բացատրում, որ «Թուրքական սահմանադրական ոչ մի կառավարություն չի մերժել հայերի ոչնչացման համիդյան կարգախոսը»: Դրոցենկոն ելքը մեկն է համարում՝ զինել հայերին: «Եթե Ռուսաստանին շահեկան չէ օսմանների փառքի և հզորության վերածնունդը,-գրում է նա,- եթե Ռուսաստանի համար շահեկան չէ թույլ տալու, որ հզորացած Թուրքիան դառնա Առաջավոր Ասիայի մուսուլմանությանը Եվրոպայի մեճնշումից ազատագրության և անկախության խորհրդանիշ, ապա ամենաօգտակար միջոցներից մեկը հայերին սատարելն ու Թուրքիայի սահմաններում նրա ֆիզիկական և մշակութային ամրապնդումը: Հենց դրա համար էլ Ռուսաստանը պետք է Թուրքահայերին զենք մատակարարի»[10]:

Ռուսաստանի կողմից հայկական բարենորոգումների հարցի բարձրացումն ու խնդրի լուծման ուղղությամբ առաջին քայլերը հայերի շրջանում առաջացրեցին համազգային համակրանք

4 АВПР, Политархив, оп. I, д. 34-64.
5 Ն.տ.:
6 Սասունի Կ. Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ, Բոստոն, 1927, էջ 26:
7 Երեմեան Հ.. Ցուշարձան Վան-Վասպուրականի, Ալեքսանդրիա, 1929, էջ 320:
8 Թումանյան Հովհ.. Ուսումնասիրություններ և հրապարակումներ, Ե., 1964, հ. 2, էջ 354:
9 Ավետիսյան Հր.. Հայկական հարցը 1918թ., Ե., 1997, էջ 25:
10 РГВИА, ч. 2000, оп. I, д.3851:

ռուսների հանդեպ: Պատերազմը ճախողեց բարենորոգումները, և կաթողիկոսը դիմեց Պետրոգրադին՝ առաջարկելով հայերի ծառայությունը Թուրքիայի դեմ: Պատասխանը չուշացավ: Ցարը, ողջունելով հայերի պատրաստակամությունը, այնուամենայնիվ, հանձնարարեց գործել ռուսական իշխանությունների հրահանգներով: Վորոնցով-Դաշկովի մոտ տեղի ունեցած խորհրդակցությունը, մասնակցությամբ արքեպիսկոպոս Մեսրոպի, Ա. Խատիսյանի, Ս. Հարությունյանի և Զավրիևի, նպատակահարմար համարեց ստեղծել զինված խմբեր փորձված հայդուկների ղեկավարությամբ, որոնք գործելու էին ռուսական զորամասերի կազմում: Փոխարքայի ծրագրով ստեղծվելու էր չորս գունդ, յուրաքանչյուրը 400 հոգուց: Այդ գնդերի գլխավոր խնդիրն էր լինելու հետախուզությունը, ռուսական բանակին առաջնորդելը, այսինքն՝ առաջապահ զորքի դերում լինելը: Իշխանությունները թույլատրեցին բոլոր փախստական հայերին վերադառնալ Կովկաս, խոստացան աքսորից ազատել հին հայդուկներին ու խմբապետերին, ընդհանուր ներում շնորհել: Զինված խմբերի կազմակերպման գործն իր վրա վերցրեց Ազգային բյուրոն, որը, փաստորեն, այդ կապակցությամբ էր ծնունդ առել:

Իրողությունն այն էր, որ ցարիզմը որոշել էր օգտագործել հայերի մարդկային և նյութական հնարավորությունները Թուրքիայի դեմ պատերազմում: Ա. Թերզիպաշյանը գրում է, թե ո՛չ «Արևելեան պիւրոն, ո՛չ ալ Էջմիածնի կաթողիկոսը, եթե ուզեին ալ, պիտի չկրնային այլևս կասեցնել տարերային շարժումը, զոր ցարական Ռուսիան՝ շնորհիվ հենց Կաթողիկոսին և Պիւրոյին, ավելի ճիշտը, Թիֆլիսի պուրժուազիային, որուն ձեռքին մեջ պարզ խամաճիկներ էին թե՛ մեկը և թե՛ միւսը, յառաջ բերած էր արդեն: Շարժումին մեջ Գևորգ կաթողիկոսն իր անմահութիւնը կը փնտռեր, Դաշնակցութիւնն՝ իրենը»[11]:

Հավանաբար ասվածն իրավացի է, սակայն նաև չի կարելի աչք փակել այն իրողության առաջ, որ արևելահայ ջոջերը, մասնավորապես ՀՅԴ պարագլուխները, ազգային շուրջպարի նոր հնարավորություն ստացան և այն պարեցին խելահեղ՝ վայրկյան իսկ չմտահոգվելով, որ դա թանկ է արժենալու արևմտահայերին: Հայոց ջոջերն այսպես էին հասկանում կացությունը. «Երբ Թուրքիան խառնվեց մեծ պատերազմին, հայության հույսերն ավելի հաստատուն դարձան և բնական մղումով նա, մի կողմից ձևակերպեց ավելի արմատական պահանջներ՝ ինքնուրույնություն, մյուս կողմից՝ հայոց հարցի լուծմանը միջամտելու մի նոր ձև՝ զինվորական աջակցություն Ռուսաստանին»[12]:

Այդ գործիչների վարքագծի ամբողջ անլրջությունն այն է, որ նրանք հասկանում էին վտանգը՝ «դա նոր ու անսովոր կոտորածների սարսափն էր», բայց հանուն Ռուսաստանում ունեցած իրենց շահերի ինչեր ասես, որ չէին զոհի ազգային ձևացող «խելահեղ ռոմանտիկները»[13]:

Զարմանալ կարելի է, թե ինչպես Թիֆլիսում բազմածները չհասկացան ցարական իշխանությունների նենգությունը: Ռուսական բանակում գտնվող 250 հազ. հայի առկայության պայմաններում 5-7 հազ. կամավորների շուրջը բարձրացած աղմուկը ռազմական նպատակներ չէ, որ հետապնդում էր: «Վորոնցով-Դաշկովը շատ լավ գիտեր, որ զինվորական տեսակետից կամավորական շարժումն արժեք չուներ որպես ռեալ զինվորական ուժ, սակայն Ռուսաստանի զորքերի առաջխաղացման ընթացքում նրան անհրաժեշտ էր, որ տաճկահայության ամբողջ համակրանքը լինի ռուսական զորքերի կողմը և դրան գերազանցապես կարող էր նպաստել կամավորական շարժումը»[14]:

Սակայն այն խնդրի լուծման միջոցներից չնայած կարևորը, բայց միակը չէր: Փոխարքան կաթողիկոսից պահանջում էր, որպեսզի «մեր հայերն արտասահմանյան հայերի հետ միասին պատրաստ լինեին կատարելու... այն հանձնարարությունները, որոնք ես, ժամանակի պայմաններին համապատասխան, կնշեմ իրագործելու և դրանք կներկայացնեմ կատարման համար»[15]:

11 Թերզիպաշյան Ա. Անդրանիկ, Փարիզ, 1942, էջ 129-130:
12 ՀՀ ՊԿԱ, ֆ. 57, գ. 729:
13 Ն. տ.:
14 Երզնկյան Ա. Աշխատավորության դատի առջև, Թիֆլիս, 1927, էջ 62:
15 ՀՀ ՊԿԱ, ֆ. 57, գ. 729:

«Պատերազմի հոգեբանությունը,- գրում է Իս. Տերտերյանը,- սակայն, գռեհիկ, անհոգի և անողորմ էր: Մենք չցանկացանք տեսնել նաև Հայկական հարցի դաժան երեսը, այն, որ թշնամին կարող էր ջարդել մեր ժողովուրդին միայն նրա համար, որ կարողանա ազատվել մի տարրից, որը, ձգտելով ազատության, կոտորակեր իր երկիրը, որ ձեռնտու չէր իրեն՝ Թուրքին: Մենք սիրեցինք տեսնել երևույթների միայն լուսավոր կողմերը, առանց անդրադառնալու պատերազմի սևավոր կողմերի վրա, որի մասին հեռատես մարդիկ դեռ շատ առաջ մեզ զգուշացրել էին...»[16]:

Դ. Անանունը կամավորական շարժում ծավալելու ցարական իշխանությունների ձգտումը բացատրում է հետևյալ կերպ. «Պետք էր օգտագործել Թուրքահայերի կենդանի ուժը և հրահանգվում էր կամավորներ ընդունել առավելապես Թուրքահայերից: Դա արվում էր երկու նպատակով. առաջինը՝ մի չնախատեսված այժ էր օգտագործվում, երկրորդ՝ դա մի այնպիսի գայթակղիչ այժ էր, որ սահմանից այն կողմը բիւրապատիկ շահ էր ընձեռում...»[17]:

Հայ կամավորական շարժումը միայն ռուսական ակունքներ չուներ: «Հայրենիք» օրաթերթի 1942թ. օգոստոսի 5-ի և 6-ի համարներում Մալխասը պատմում է հետևյալը: Պատերազմը դեռ նոր էր սկսվել, երբ Ֆրանսիայի վարչապետ Դումերկը հարցնում է Վ. Բերարին, թե հայերը պատերազմում ում կողմում են լինելու և հանձնարարում հորդորել ՀՅ Դաշնակցության բյուրոյին, որպեսզի կռվեն Անտանտի կողմում: Վարչապետը հայերին խոստանում է «նվազագույնը դքսություն» Արևմտյան Հայաստանում:

Արևմտյան բյուրոն սկզբունքորեն դեմ չէր կամավորական շարժմանը, եթե այն տեղի ունենար Կովկասում: Արմեն Գարոն Արևմտյան բյուրոյի անունից Մալխասին հանձնարարում է Արևելյան բյուրոյին տեղյակ պահել, որ խոսքը գնում է 30 000 հոգանոց կամավորական բանակի մասին, որը պատերազմը սկսվելուն պես մտնելու է Երկիր որպես ռուսական բանակի առաջապահ: Արևելյան բյուրոն խանդավառությամբ ընդունեց այդ առաջարկությունը, որովհետև գործընթացը փաստորեն արդեն սկսվել էր, չնայած մի շարք դաշնակցական գործիչներ դեմ էին կամավորական շարժմանը: Վ. Փափազյանի վկայությամբ, Արամ Մանուկյանը «Թրքահայ ժողովրդի համար կորստաբեր կը համարեր կամավորական շարժումներու կազմակերպութիւնը և մանավանդ գործոն մասնակցութիւնը՝ ենթարկուելով ռուսական բանակին»[18]:

Կ. Պոլսի հայ գործիչներին ահաբեկեցին այն ցուցադրական աղմկոտ միջոցառումները, որոնք անցկացվում էին կապված կամավորական գնդերի կազմակերպման հետ, նրանք լուր ուղարկեցին Կովկաս հրաժարվելու «ցուցական գործունեութենե, և գաղտնի» գործելու: Բայց կովկասահայութեան ոգևորութեան ալիքն իր գագաթնակետին հասած էր...»[19]:

ՀՅԴ 8-րդ համագումարը նույնպես զգոնության կոչ արեց, բայց, ինչպես նշում է Ա. Խատիսյանը, Կովկաս վերադառնալով՝ համագումարի պատվիրակները «չկարողացան դիմադրել ընդհանուր տրամադրութիւններուն և անցան կամավորական բանակներու կազմակերպման գործին գլուխը»: Ի դեպ, Խատիսյանը նաև նշում է, որ պատրաստվում էին ահաբեկիչներ իթիհադի պարագլուխներին հաչվեհարդարի ենթարկելու համար: Նման գործունեությամբ զբաղվում էր նաև Թուրքական կառավարությունը: Կ. Պոլսում, Էրզրումում, Վանում, Մուշում հայերի հետ բանակցություններ գնացին, որոնց մասնակցում էին Թալեաթը, Հալիլը, Բ. Շաքիրը, Հիլմին, Թահսինը, Նազիմը և ուրիշներ: Նրանք հայերին ասում էին. «Միավորվենք ընդհանուր թշնամու դեմ: Մենք երբեք չենք իրականացնի դրսից մեզ պարտադրված բարենորոգումները, բայց բարենորոգումներ կմտցնենք փոխադարձ համաձայնության դեպքում: Այս պատերազմում մենք և Գերմանիան հաղթելու ենք: Մեզ օգնեք Կովկասում, որտեղ եթե հայերը մեր կողմն անցնեն, կարճ ժամանակում կնվաճենք Կովկասը և ինքնավարություն կտանք ձեզ և վրացիներին, իսկ թաթարներին Կովկասից կվերաբնակեցնենք Թուրքիայի խորքերը: Մեզ չահեկան է Թուրքիայի և Ռուսաստանի արանքում ունենալ հայկական և վրացական ինքնավար մարզեր, որպեսզի մեր սահմանները պաշտպանենք Ռուսաստանի ոտնձգություններից»[20]:

16 Տերտերյան Իս. Հայկական գոյամարտ, հ. VI, Թեհրան, 1957, էջ 192:
17 Տե՛ս Լազեան Գ. Հայաստանը և հայկական դատը, Երևան, 1991, էջ 180:
18 Փափազեան Վ. Իմ յուշերը, հ. Բ, Բեյրութ, 1952, էջ 294-295:
19 Սասունի Կ. Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ, 1914-18, Բոստոն, 1927, էջ 26:
20 "Голос Армении", 20. 04. 1995:

Երբ պարզ դարձավ, որ Կովկասում հայ կամավորական գնդեր են կազմակերպվելու, Թուրքերն արևմտահայերին առաջարկեցին ազդել արևելահայերի վրա դադարեցնելու այդ գնդերի ստեղծումը: Չնայած հայերը պատասխանեցին, թե իրենք պատասխանատվություն չեն կրում արևելահայերի գործունեության համար, բայց նաև զգուշացան ու անհանգստացան, մանավանդ որ կամավորական շարժման մասիմ Թուրքիա էին հասնում չափազանցեցված լուրեր՝ թե իբր միայն Անդրանիկի ջոկատում կար 12 հազ. մարդ: Երիտթուրքերին հատկապես կատաղեցրել էր այն, որ կամավորների շարքերում էին մեծ թվով արևմտահայեր, Օսմանյան կայսրության քաղաքացիներ, անգամ Օսմանյան խորհրդարանի անդամ Գարեգին Բաստրմաջյանը (Արմեն Գարոն): Նրանք որակավորեցին, թե հայ ժողովուրդը պատերազմ է հայտարարել Թուրքերին: Չնայած կամավորական գնդերը Վորոնցով-Դաշկովի «հայասեր» ջանքերով էին ձևավորվում, Ազգային բյուրոն տարերքի մեջ էր: Դաշնակցությունն աշխատեց հետ չմնալ. ստեղծեց կամավորական գնդերի կարգադրիչ մարմին, որի մեջ մտան Ռոստոմը, Զավարյանը (Զավրիև), Գյուլխանդանյանը, Արմեն Գարոն, Վրացյանը, Արղությանը և Աղբալյանը[21]:

Կամավորական ուժերի գլուխ կանգնեցին Անդրանիկը, Վարդանը, Քեռին, Համազասպը, Դրոն, Դաշնակցական Խեչոն, Արղությանը, Արմեն Գարոն: Եթե ռուսական հրամանատարությունը կամավորական գնդերը համարում էր լոկ հոգեբանական ազդեցության ռազմական ուժ, ապա հայ գործիչները՝ կոտորածի վտանգի մեջ գտնվող հայերին օգնության հասնելու հնարավորություն: Այս էլ հանդիսացավ գլխավոր պատճառը, որ կամավորների ու ռուս հրամանատարության միջև առաջացան հակասություններ: Եթե սկզբում ռուսները հայերին մեծամեծ խոստումներ էին տալիս՝ «ինքնավարութիւն 8 վիլայեթների և նրանց անբաժան մաս Կիլիկիայի՝ Ռուսաստանի հզոր հովանու տակ», ապա որոշ ժամանակ անց այդ կարգախոսն օգտագործելն իսկ պարսավանքի պատճառ էր դառնում: Թույլ չտրվեց Անդրանիկին ու Դրոյին, որոնք հասել էին Բիթլիս, օգնության գնալ Մշո դաշտի և Սասունի ժողովրդին, նրանց փրկել կոտորածից: Նման օգնությունն ավելի քան անհրաժեշտ էր, որովհետև ոչ միայն Սասունում, այլ ամենուրեք քաղաքական անկազմակերպվածության, ՀՅԴ անզոր վայրիվերումների հետևանքով, հայերն ինքնապաշտպանության էին կանգնում միայն վերջին պահին, երբ յաթաղանն արդեն դրված էր նրանց կոկորդին: Արևելահայերն իրենց գործունեությունը ծավալեցին՝ արձագանքելով ցարի հակաթուրքական կոչերին: Կովկասահայ մամուլը հարձակման անցավ Թուրքերի դեմ՝ պահանջելով Հայաստանն անջատել Թուրքիայից: Արտասահմանյան հայությունը գտնում էր, որ ազատագրության պատմական պահը հասել էր և զգուշություն չէր դրսևորում, մոռացած օսմանահայերի անվտանգության խնդիրը: Թուրքերի համար ոչ թուրքահպատակ հայերի վարքագիծը պատրվակ էր օսմանահպատակ հայերին բնաջնջելու համար: Մանավանդ որ հայերը լրիվ աչքաթող արեցին ինքնապաշտպանության գործը:

Հայկական ազգային համագումարում (Թիֆլիս, 1915թ. փետրվար) դաշնակցության ներկայացուցիչը հայտարարեց. «Ինչպես հայտնի է, ռուսական կառավարությունը պատերազմի սկզբին տրամադրել է 242 900 ռուբլի նախնական ծախսերի համար, որպեսզի զինենք ու նախապատրաստենք Թուրքահայերին, պատերազմի ժամանակ Թուրքիայում ապստամբություն կազմակերպենք: Մեր կամավորական ջոկատները պետք է ճեղքեին, անցնեին Թուրքական բանակի շղթան և, միավորվելով ապստամբների հետ, թիկունքում ու ռազմաճակատում ստեղծեին անիշխանություն և դրանով ապահովեին ռուսական զորքերի առաջխաղացումն ու Թուրքահայաստանի գրավումը: Մենք մինչև պատերազմ հայտարարելը հավաստիացրել էինք ռուսական կառավարությանը, թե ղեկավարվում էինք Թուրքահայերի ցանկությամբ, և կառավարությունը դրանում համոզված է, իսկ իրականությունն այլ է: Թուրքահայերը դեմ են մեր գործունեությանը, գործողությունների եղանակներին ու ձևերին՝ դրանք համարելով վտանգավոր և կործանարար իրենց շահերի համար: Նրանք ազնվաբար աշխատում են որպես Թուրքիայի հպատակներ: Ռուսական կառավարության առաջարկները կատարելու մեր բոլոր ջանքերն ապարդ-

21 Խատիսեան Ա. Քաղաքապետի մը յիշատակները: Տե՛ս «Հայրենիք» (ամս.), 1932, թիվ 12, էջ 156:

յուն անցան: Թուրքահայերը միշտ դեմ են եղել մեր գործունեությանը, և ռուսական կառավարությունն այդ գիտի, հավանաբար նաև գիտի, որ մենք ծրագրում ենք ինքնավար Հայաստան Թուրքիայի սուվերենության ներքո: Բնականաբար, այս ամենը հանգեցնում է նրան, ինչն ինձ Թաքուն ասաց գեներալ Օգանովսկին, որ «այժմ հայերը ռուսական կառավարության համար հանդիսանում են անբարեհաճ» տարր, քանի որ նրան խաբել են, կեղծել են իրերի իսկական վիճակը Թուրքահայաստանում... Մենք հետապնդում ենք հետևյալ նպատակը՝ պատերազմից հետո հնարավորություն ունենալ անմիջապես զինաթափել հայերին, քանի որ վտանգ կա, թե խաղաղության համաժողովում նրանք կարող են ոտի կանգնել և համաժողովը հարկադրված կլինի նրանց հետ հաշվի նստել, ինչը կհակասի Ռուսաստանի արմատական շահերին: Ռուսական կառավարությունը... հետամուտ է իր պետական շահերին, այլ ոչ Թե Հայաստանի ինքնավարության հայերի նվիրական ցանկություններին: Ռուսական կառավարության համար ցանկալի է, որ հայերը փոքր տոկոս կազմեն Թուրքահայաստանում»[22]:

Կամավորական շարժման առիթով երիտԹուրք գործիչներն անցան հայերի բացահայտ ահաբեկման: Նրանցից Է. Նաջին Վանում հայտարարեց. «... ԵԹե հայերը Ռուսիոյ կողմը բռնեն, մենք զանոնք պիտի ջարդենք: Պիտի ջարդենք անխնայորեն, առանց նկատողուԹիւններու, առանց աչ ու ձախ նայելու...»[23]:

Կամավորական շարժմանը «Թուրքական վարչակազմը և ռազմական իշխանությունները պատասխանում են դաժանագույն բռնություններով: Մուշում, Վանում և մյուս շրջաններում տեղի էին ունենում անօրինական բռնագրավումներ, մինչև 45 տարեկան հայերի հարկադիր զորահավաքներ, քաղաքական սպանություններ սադրիչ նպատակներով և այլն»[24]:

«Այս ամենի հետևանքով հայերը Վանում 1915Թ. ապրիլին ապստամբեցին և դրանով ձևական պատրվակ տվեցին իրենց լրիվ բնաջնջմանը Թուրքահայաստանում... Ազգերի ապստամբությունը ճնշումներից ազատագրվելու... օրինական միջոց է ազատագրական պայքարում: Այս առումով նաև հայերի ապստամբությունն էր հանդիսանում նրանց պատմական և օրինական իրավունքը: ԵԹե պետությունը դաժանորեն ճնշում է ժողովրդական ապստամբությունը և խաղաղեցնում է ապստամբներին, այդ ևս հանդիսանում է նրա պատմական և օրինական իրավունքը... Բայց եԹե պետությունը ոչ միայն խաղաղեցնում է տվյալ շրջանի ապստամբներին, այլև բռնի միջոցները տարածում է նաև ամբողջ ազգի վրա, առանց տարիքը, սեռը և այլն հաշվի առնելու, այդ արդեն ոչ պետության ինքնապաշտպանության միջոց է և ոչ էլ երկրում իրավիճակի պաշտպանություն, այլ վրեժխնդրության գործողություն և ոչնչով չարդարացված սպանություն՝ նախապես մտահղացված նպատակով»[25]:

Թուրքերը որոշել էին ջարդել հայերին և այդ անելու էին, առանց հաշվի առնելու հայ կամավորներ կային Թե ոչ:

Թ. Աքչամը կամավորական շարժման մասին գրում է, որ այն լոկ պատրվակ էր ջարդերի համար: Նա նշում է, Թե «որոշ հայկական ջոկատներ... անցնում էին սահմանը և լրացնում Ռուսաստանում հավաքագրվող միավորումների շարքերը: Անատոլիայի զանազան ծայրերում ստեղծում էին զինված ջոկատներ», որոնք մարտի մեջ էին մտնում քրդերի և Թուրքական զորքերի դեմ: Որ հայ կամավորները կռվում էին Թուրքերի դեմ հետևանք էր հայտնի իրողության՝ «վերջին քառորդ դարում հայկական համայնքը դաստիարակվում էր» հակաԹուրքական հոգեբանությամբ: «Այդ հոգեվիճակը լիցքաԹափման կարիք ուներ և այդպես էլ եղավ»[26]: Թ. Աքչամը գիտակցաբար Թե ոչ, խեղաթյուրում է իրավիճակը: Բնաջնջման վտանգը ծնեց կամավորական շարժում:

Գիտնականները միահամուռ նշում են նաև հետևյալ հանգամանքը, որ Աբդուլ Համիդը կոտորածի վերաբերյալ իր հրամանով (1894-95) հայերի արյունով հեղեղեց ամբողջ Արևելյան Անատոլիան: Նա ուզում էր «ոչնչացնել հայ զանգվածին նաև Անդրկովկասում, մի խնդիր, որ իրենց առջև դրեցին Թուրքական բոլոր կառավարությունները, այդ Թվում նաև՝ երիտԹուրքերը»[27]:

Կ. Պոլսի և Ռուսաստանի այդ երկկողմ ոտնձգությունները հանդիսացան հայոց ողբերգությունը սնող արմատները: Հայերին Թուրքերի դեմ պայքարի հանելու համար ցարական քաղաքականության օգտագործած միջոցներից առավել ազդեցիկ դեր խաղացին հետևյալները. ա) Օսմանյան կայսրությունը ձգտում է համաշխարհային Թուրքական տերության ստեղծման, ինչն անխուսափելի էր դարձնում «հայկական սեպի» վերացումը, այսինքն՝ հայ ժողովրդի բնաջնջումը: Պետերբուրգում և Լոնդոնում ձևավորված այս տեսությունը մի խնդիր ուներ՝ հայերի բնաջնջման Թուրքական քաղաքականության հրահրումը պատճառաբանել ոչ Թե այդ երկու տերությունների տարածքաքաղաքական ագահությամբ, այլ Թուրքերի զավԹողական-ջարդարար նկրտումներով: Իհարկե, Թուրքիայում նշված նկրտումներ ունեցող քաղաքական ուժեր ու հոսանքներ կային և այսօր էլ կան: Բայց լուրջ չէ պնդել, Թե դեպի անկում սողացող Օսմանյան կայսրությունը, որ XX դարում բոլոր պատերազմները տանուլ էր տվել, կարող էր նվաճողական քաղաքականություն վարել, այն դարձնել պետական քաղաքականություն: բ) Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ մտցնելու գործոնի օգտագործումը, ընդհանրապես, և 1912Թ. այդ խնդրի բարձրացնելը, մասնավորապես: Ցարական կառավարությունը քաջ գիտենալով, որ Առաջին աշխարհամարտի սկիզբը ամիսների հարց էր, այսինքն՝ բարենորոգումների իրականացումն՝ անհնար, բայց քանի որ հայերի վերաբերմունքը աշխարհամարտի կովկասյան ճակատում կարևոր նշանակություն ուներ, նրանց հանեցին Թուրքերի դեմ: գ) Կամավորական շարժումը ռուսներին քիչ Թվաց, քիչ Թվաց, որ հայերն իրենց կողմում էին, անհրաժեշտ էր տպավորություն ստեղծել, որ նրանք, և, առաջին հերԹին, արևմտահայերը, կամավոր կռվում էին Թուրքերի դեմ: Չափազանցություն չի լինի, եԹե ասենք, որ այս երրորդ միջոցի օգտագործումը Մեծ եղեռնը ծնող գործոններից մեկն էր: Բայց միայն մեկը:

Կրկնում եմ՝ հայերի ջարդերը սկսվել էին մինչև կամավորական գնդերի պատերազմի մեջ մտնելը: Եվ վերջապես ինչ էին այդ գնդերը համեմատած 600 հազ. հայերի հետ, որոնց կեսը կռվում էր ռուսական, իսկ մյուս կեսը՝ Թուրքական և այլ երկրների (50 հազ.) բանակների կազմում: Բայց որ կամավորական շարժման ծավալումը նպաստեց ջարդերին, անմիջապես համընդհանուր բնույԹ հաղորդեց, անվիճելի է: Պ. Մակինցյանը գրում է. «Հենց որ սկսվեց պատերազմը Թուրքիայի հետ, հայերը, ինչպես նախկիններում, հանդես եկան դարավոր ճնշողների դեմ: Ռուսաստանում ծավալված կամավորական շարժումն արձագանք գտավ ամենուրեք, որտեղ հայ էր բնակվում: Մի շարք դրուժինաներում ընդունվեցին հեռավոր Ամերիկայից եկած մարդիկ: Եվ ահա ջոկատները, որոնց կազմում Թուրքահպատակ հայերի զանգվածներ էին, Ամենայն հայոց կաԹողիկոսի օրհնությամբ, բացահայտ ձևով հանդես էին գալիս Թուրքիայի դեմ՝ հանուն հայրենիքի ազատագրման»[28]:

Կամավորական շարժումը Ազգային բյուրոյի միջոցով ղեկավարում էր ՀՅ Դաշնակցությունը, որի գործակալները լինում էին աշխարհի տարբեր մասերում, կազմակերպում կամավոր գրվելու գործը: 1914Թ. սեպտեմբերին տեղի ունեցավ ՀՅԴ կովկասյան շրջանային ժողովը, որը քննության առավ կամավորական շարժման հարցը: Նշվեց, որ փոխարքայությունն իր վրա էր վերցնում կամավորների հանդերձավորումն ու պարենավորումը, իսկ կազմակերպչական աշխատանքը, մասնավորապես ուսուցումը, կազմակերպելու էր դաշնակցությունը:

Սկզբում կազմակերպվեց կամավորական չորս գունդ, ապա ևս երեքը, որոնցում ընդգրկված էր 7 000-9 000 մարդ: Մինչև 1915Թ. ավարտը հանգանակվեց մոտ 115 միլիոն ռուբլի: 1915Թ. փետրվարին ընտրվեց Ազգային բյուրոյի նոր կազմ՝ Մեսրոպ եպիսկոպոս (նախագահ), Ալ. Խատիսյան և Հ. Խունունց (փոխնախագահներ), Ա. Բաբախանյան, Հ. Թումանյան, Հ. Սպանդարյան, Ս. Հարությունյան, Խ. Աֆրիկյան, Կ. Ստեփանյան, Ջ. ՔալանԹարյան, Ս. Կյուլպենկյան, Ա. Աբելյան, Ստ. Լիսիցյան (անդամներ), այսինքն՝ բյուրոյի նոր կազմը նույնպես հիմնականում դաշնակցական էր: Դաշնակցությունը շարունակեց մնալ կամավորական շարժման ղեկավար: Դաշնակցության Արևելյան բյուրոն գտնում էր. «Կամավորների կազմակերպումով նպատակ ու-

22 Борян Б. А., նշվ. աշխ., стр. 363:
23 Թերզիպաշյան Ա., նշվ. աշխ., էջ 128:
24 Кряжун Б. История революции в Турции, Москва, 1925, стр. 79.
25 Борян Б. А., стр. 365-366.
26 «Բնօրրան», 1995, Թիվ 1, էջ 99:

27 Кайзер Ж. Европа и Новая Турция, Москва, 1925, стр. 64.
28 "Сборник армянской литературы", стр. CIV .

նենք մեր մասնակցությունը բերելու այս պատերազմին, որով ընդհանուր հաշվեհարդարի միջոցին ավելի մեծ իրավունքով պահանջել, որ գումարվելիք վեհաժողովը լուծի մեր հարցն էլ», հույսով՝ Անտանտի հաղթանակի շնորհիվ Արևմտյան Հայաստանը կստանա ինքնավարություն: 1914թ. աշնանը Կովկասի ժանդարմերական վարչությունը հայտնեց. «Դաշնակցություն կուսակցությունը վերջին ժամանակները ոչ մի հեղափոխական գործունեություն հանդես չի բերում և միայն զբաղված է մարտական ջոկատների կազմակերպմամբ, ուսուցմամբ և Թուրքիա ուղարկելով՝ Թուրքական կառավարության դեմ պայքարելու»:

Կամավորների հավաքագրումը սկսվեց 1914թ. սեպտեմբերից և անմիջապես արձագանք գտավ հատկապես Թուրքահայերի շրջանում: Կովկասից ու Ռուսաստանից, Մինչև Ասիայից ու Ղազախստանից, Բալկաններից ու Եգիպտոսից, Եվրոպայից ու Ամերիկայից եկան հայեր՝ կամավոր գրվելու համար:

"El Dia"-ն 1915թ. հոկտեմբերի 21-ին, վկայակոչելով Պետրոգրադի մամուլը, գրում է. «Ստեղծվում է կամավորական բանակ Թուրքերի դեմ կռվելու համար: Կամավորներ կարող են ցուցակագրվել ամբողջ աշխարհից»: Դիմումներն այնքան շատ էին, որ լրացուցիչ ստեղծվեցին ևս երեք գնդեր՝ Գրիգոր Ավշարյանի, Հայկ Բժշկյանի, Հովսեփ Արղությանի հրամանատարությամբ: Արդեն հոկտեմբերի վերջերին գնդերը պատրաստ էին պատերազմի: Առաջին գնդում կար 1 200, երկրորդում՝ 382, երրորդում՝ 430, չորրորդում՝ 470, պահեստային 600 հոգի: Առաջին և ամենախոշոր գունդը Անդրանիկի հրամանատարությամբ հոկտեմբերի 23-ին շարժվեց դեպի Ջուլֆա և Խոյ: Երկրորդ գունդը Դրոյի հրամանատարությամբ հոկտեմբերի 24-ին շարժվեց դեպի Բայազետ: Երրորդ գունդը Համազասպի հրամանատարությամբ շարժվեց Ալաշկերտի ուղղությամբ, իսկ չորրորդ գունդը Քեռու հրամանատարությամբ Սարիղամիշից մեկնեց Աղվերան ու Խոշաբ: Ադրբեջանական (պարսկական) ռազմաճակատի հրամանատար Զեռնոզուբովը գրեց կաթողիկոսին. «Նոյեմբերի 5-ին հայկական դրուժինան Անդրանիկի հրամանատարությամբ ցուցաբերեց բազում խիզախություններ և ինքնազոհություն»: Նոյեմբերի 7-17-ը այդ դրուժինան գրավեց Կաչկոկ, Կոթուր և Արադել քաղաքները: Անդրանիկը քրդերին ջախջախեց և գերի վերցրեց չորս ցեղապետերի: Երկրորդում գունդը Թափարզայի կիրճում երկու օր կռվեց, Դրոն ծանր վիրավորվեց, գունդը հրաման ստացավ շարժվել Կարաքիլիսեի ուղղությամբ: Այս գունդը կազմակերպեց Ալաշկերտի հայության տեղափոխությունը Դիլմանի ուղղությամբ: Երրորդ գունդը գրավեց Անդոկ, Ալագյոզ և Քյափանիկ սարերը: Դեկտեմբերի 6-ին գունդը հանկարծակի հարձակման ենթարկվեց ու մեծ կորուստներ ունեցավ: Գեներալ մայոր Գուլիչի հրամանում այս գնդի մասին ասվում է. «Համազասպի դրուժինան մասնակցել է իմ հրամանատարության տակ գործող զորքերի կռիվներին (նոյեմբերի 22-դեկտեմբերի 16)... բոլոր մարտերում դրուժինան դրսևորել է քաջություն և արժանացել բազում պարգևների»: Չորրորդ գունդը Սարիղամիշից դուրս գալուց հետո հարձակման է ենթարկվում Թուրքերի կողմից, սակայն թշնամուն հետ է շպրտում ու շարժվում Օլթիի ուղղությամբ:

Մարտական գործողությունների հարուստ կենսագրություն ձևավորեց մասնավորապես Դրոյի հրամանատարության տակ գտնվող երկրորդ գունդը, որ մասնակցեց 40 մարտի և չորրորդ գունդը Քեռու հրամանատարությամբ, որ մասնակցեց 60 մարտի:

Հայ կամավորական միավորումները առանձնակի դեր խաղացին Սարիղամիշի, Դիլմանի, Շեյխին Գյարուսիի, Ռևանդուզի և տասնյակ ուրիշ ճակատամարտերում, ինչպես նաև Բերկրիի, Մոկսի, Վանի, Խնուսի, Բիթլիսի, Մուշի, Էրզրումի ազատագրության գործում, բազմիցս արժանացան ռուսական վերին հրամանատարության խրախուսանքներին:

Երկու ամսում հայկական գնդերը կորցրեցին՝ սպանված 156 և վիրավոր՝ 743 հոգի: Կամավորները մեծ օգնություն էին ստանում Թուրքիայի հայ բնակչությունից և իրենք էլ այդ բնակչությանը պաշտպանում էին Թուրքերի դաժանություններից: Գնալով գնդերի կազմը մեծացավ: Վորոնցով-Դաշկովի ծրագրով հայկական գնդերը մտցվեցին զորաբաժինների մեջ, ստացան հաստիքներ և միջոցներ: Ցուրաքանչյուր գունդ ունենալու էր 1 000 մարդ: Քանաքեռում ձևավորվեց հինգերորդ գունդը, բայց զենք չունենալու պատճառով մարտական գործողությունների չմասնակցեց: Բացի առաջին գնդից, մյուս չորսը միավորվեցին և կոչվեցին Արարատյան ջոկատ Վարդանի հրամանատարությամբ: Ստեղծվեց նաև վեցերորդ գունդը: Գեներալ Բարաթովը հեռագրեց Թիֆլիս. «... Ջոկատը խորապես սգում է իր քաջարի հրամանատարի (Ավշարովի) մահը, որը խելացի և վարպետ հրամանատարության շնորհիվ հանդես եկավ ամենալավ կողմերով»: Կամավորական գնդերը, գրում է Խատիսյանը, «հանդիսանում էին հայ ժողովրդի հարազատ զավակները... հանուն որի մարդիկ լքեցին իրենց ընտանիքները», եկան Թուրքիայից, Ամերիկայից, Անդրկովկասից, Բալկաններից, եկան մեծ խանդավառությամբ ու նվիրումով: Հանձինս կամավորական գնդերի ժողովուրդը տեսնում էր հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը ցեմենտող միջոցի: Մ. Պապաջանովի կարծիքով՝ հայ կամավորները «հանդես էին բերում անօրինակ քաջություն, իսկ հետախուզությունում... բառացիորեն անփոխարինելի էին», որովհետև ծանոթ էին տեղանքին: Դումայականը շատ չի չափազանցում, երբ արևմտահայության կոտորածը հետևանք էր համարում այն բանի, որ «հայ կամավորների գործունեությունն իշխանությունների աչքից աննկատ չէր մնում, որոնք իրենց վրեժխնդրության չարությունը թափում էին Թուրքիայում կենդանի մնացած անպաշտպան հայերի վրա»[29]:

Հանդես գալով Պետական դումայի 27. 01. 1915թ. նիստում՝ նա ասաց. «Կատարելով իրենց պարտքը մեծ հայրենիքի հանդեպ և հաճույքով պատերազմ ուղարկելով պահեստայիններին, հայերը գերազանցապես կամավոր մեկնեցին Արևմտյան և Կովկասյան ճակատներ ու ձևավորեցին կամավորական ջոկատներ, որոնք հաջողությամբ կատարեցին երկամսյա արշավ, գտնվելով առաջին դիրքերում... Ռուսաստանի հայ եղբայրներից... հետ չեն մնում նաև Ֆրանսիայի և Անգլիայի հայերը, որոնք նույնպես ձևավորեցին ջոկատներ, մտնելով մեր դաշնակիցների զորքերի կազմը... զանգվածաբար կամավորներ են գալիս բոլոր տեղերից»[30]:

10. 04. 1915թ. Ռուսաստանի ԱԳ նախարարությունը ստանում է հետևյալ տեղեկատվությունը. «Առավոտյան Դիադին եկան 23 տղամարդ, ովքեր փրկվել են Արչետից և Սոսոմունից: Նրանք պատմում էին Թուրքական իշխանությունների հրահանգով ոստիկանության կողմից տեղի հայերին գնդակահարելու և ջարդելու մասին»[31]:

Որ կամավորական գնդերի կազմակերպումը անհամեմատ ավելի դաժանացրեց Թուրքերի վերաբերմունքը հայերի հանդեպ, վկայում է նաև Վանգենհայմը կանցլերին հասցեագրված 15. 04. 1915թ. տեղեկագրում: Նա գրում է. «Հայերի հանդեպ վատ վերաբերմունքն աճում է արտասահմանի հայերի որդեգրած դիրքի պատճառով, ասում են, որ նրանցից հազարավորները կամավոր մտնում են ռուսական բանակ ոչ միայն Կովկասից, այլև Ամերիկայից, Բուլղարիայից և ուրիշ երկրներից...»[32]:

Մի օրինակ, թե հայ կամավորների գործողություններն ինչպես էին օգտագործվում ոչ միայն Թուրքական, այլև գերմանական քարոզչության կողմից: Գրում է Վանգենհայմը. «Հայերի ապատամբական շարժումը Անատոլիայի սահմանամերձ նահանգներում... ի վերջո հանգեցրեցին Վանի հայերի բախմանը... Պատերազմի սկզբին Թուրքական նախկին պատգամավոր Գ. Բաստրմաջյանը դարձավ ավազակախմբերից մեկի ղեկավար: Այդ խմբերը ձևավորվել էին հայ կուսակցական ղեկավարներ Դրոյի և Խեչոյի կողմից և զենքով մատակարարվում էին ռուսների կողմից: Բայազետը գրավելուց հետո նա ավերեց, առանց բացառության, մահմեդական գյուղերը... և մորթեց դրանց բնակիչներին... Սա և ուրիշ իրողություններ, ինչպես օրինակ, հայերի մոտ զենքի և ռումբի հայտնաբերմամբ դեսպանն արդարացնում էր իշխանությունների դաժան գործողությունները հայերի դեմ... և ներելի դարձնում մահմեդական բնակչության պատահական անկարգությունները»[33]:

Գերմանական դեսպանին հասկանալ կարելի է, որովհետև կանգնած է եղել Մեծ եղեռնի ակունքում: Նա լռության է մատնում, որ կամավորական գնդերում փոքր չէր յաթաղանից փրկված հայ երիտասարդների թիվը: "Русские ведомости" թերթը 07. 04. 1915թ. գրում է, որ Արճեշի կոտորածներից «կարողացավ փրկվել մի քանի հարյուր երիտասարդ՝ փախչելով Ռուսաստան, որոնց մեծ մասը միացավ հայկական կամավորական ջոկատներին...»: Իրողությունը սա

29 "Армяне и война", 1916, N1.
30"Геноцид армян"(Барсегов),т. I, М., 2002, стр. 234-235.
31 АВПР, Политархив, д. 3504.
32 Dr /PA-AA/ R 14085.
33 PA-AA (Կ. Պոլսի դեսպ.) 169:

է: Բայց այն աղավաղվում է և այդ արվում է ոչ միայն գերմանական, այլև ֆրանսիական որոշ գործիչների կողմից: «... Հայ կամավորներն անցնում էին Թուրքական սահմանը,- գրում է ֆրանսիացի զորահրամանատար Լարշերը,- զինվորագրվելու համար ռուսների կողմից կազմակերպված հայկական գումարտակներին»: Փորձելով հիմքեր գտնել յաթաղանի գործողությունների համար, ֆրանսիացի սպան շարունակում է. «Պարտիզանները հաճախ գրոհում էին հետ մնացած զինվորականների և թուրքական գումակների վրա: Աշխատանքային պարհակից և զինծառայությունից խույս տալը համընդհանուր բնույթ էր կրում, երբեմն դասալքում էին զինված»[34]:

Այդ գնդերի ստեղծումը, ինչպես նաև Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերի շարքերում հայ զինվորականների առկայությունը ծանր կացություն ստեղծեց մասնավորապես օսմանյան բանակի կազմում եղած հայերի համար. նրանց հարկադրում էին կրակել իրենց հայրենակիցների վրա: Ոմանք հրաժարվում էին այդ անել, ուրիշները դասալքում էին կամ անցնում ռուսների կողմը: Թուրքերը նաև դա պատրվակ դարձրեցին իրենց պարտություններն արդարացնելու համար: Նրանք ջանքերը լարեցին կամավորական շարժումը ձախողելու համար: Տարօրինակ է, որ այդ անելու գործում նրանք մեծ հույսեր էին կապում Վանի դաշնակցականների աջակցության հետ[35]:

Դաշնակցության գործիչները սինխրոն չէին կամավորական շարժման գնահատման հարցում: «Այս կամ այն չափով,- գրում է Գ. Լազյանը,- կամավորական շարժումը պատճառ ծառայեց թուրքերուն համար, որպեսզի կատարուի հայերու տարագրությունը և որպեսզի մեկ միլիոն զոհեր տանք»[36]:

Ազգային բյուրոյի ղեկավարներից Հ. Խանունցը երախտապարտ էր հայ կամավորական գնդերին, որ արևմտահայությանը հասցրեցին Կովկաս[37]:

Ըստ Աղբալյանի՝ հայ կամավորական շարժումն ինքնաբուխ էր: Շարժումը համակարգելու համար ստեղծվեց համահայկական ազգային կենտրոն՝ Կարգադրիչ մարմին: Ն. Աղբալյանի կարծիքով՝ կամավորական շարժումն ունեցել է երկու փուլ՝ մինչև 1915թ. ապրիլ և 1916թ. մարտ՝ գնդերի ցրում և հայկական ազգային գումարտակների ստեղծում: «Այդ շարժումով,- գրում է նա,- հայ ժողովուրդն ապրեց ամբողջ երեք տարի: Դա բարոյական վերածնունդի տարեթիվ է հայ ժողովրդի համար: 10 000-անոց անձնվեր բանակ հանել, մեր պատմության մեջ եզակի երևույթ է... Նախքան կամավորական շարժումը մենք ենթադրում էինք, թե կարող ենք պետականորեն կազմակերպվել ու պաշտպանվել, իսկ հիմա դրա ապացույցն ունենք: Կամավորական շարժման մի շարք թերություններ նսեմանում են այս մեծ, դրական կողմերի առաջ...»[38]:

Նաև ակնհայտ դարձավ, որ հայը «կարող է պաշտպանել իր երկիրը, ցուցաբերել ռազմական ոգի և ուժեղացնել հայերի ինքնազգացումը»:

Կամավորական գնդերը փրկեցին մեծ թվով արևմտահայի: Անդրանիկը 1914թ. դեկտեմբերին տասնյակ հազարավոր հայի Դիլմանի, իսկ Դրոյի գունդը՝ Ալաշկերտի շրջաններից տեղափոխեցին Արևելյան Հայաստան, երկրորդ գունդը նաև հնարավորություն ստեղծեց 200 հազ. հայի համար Բերկրիի վրայով անցնելու Ռուսահայաստան: Փրկվեցին հազարավոր որբեր[39]:

«Կամավորների թիվը,- գրում է Զավրիևը,- հասնում է 5 000 հոգու և կարող է նշանակալից չափով աճել, սակայն խանգարում է զենքի պակասը...»: Դրա համար էլ փոխարքան կարգադրեց ժամանակավորապես բավարարվել վերը նշված թվով[40]: Հակառակ ռազմական մասնագետների մտավախությանը, հայ կամավորներն անմիջապես տիրապետեցին բանակային կյանքի կանոններին, գնդերում ստեղծվեց ռազմական ամուր կարգապահություն, կռիվներում հայերը դրսևորեցին օրինակելի մարտունակություն, հնարամտություն, խիզախություն և նվիրում: Ռուս զինվորական Վ. Շչերբինը գրում է. «Վերջերս ձևավորված հայկական երեք դրուժինաները՝ Վարդանի, Դրո Կանայանցի, Խեչոյի և Համազասպի հեծյալները, գնում էին առաջնամասում, մարտական և կարգապահական առումով իրենց դրսևորեցին շատ լավ: Չնայած ձյան հաստ շերտին և ճանապարհների բացակայությանը, հայերը խիզախաբար առաջ էին շարժվում այնքան արագ, որ գեներալ Նիկոլաևը հարկադրված եղավ նրանց մի քանի օր կանգնեցնել Վանի տակ՝ Ջանիկում, մինչև Վերին և Ներքին Սորի մարտերի ավարտն ու Արճեշի գրավումը...»[41]:

"Армянский вестник"-ն իր 1916թ. NN30 և 34-ում տպագրեց դրվագներ Անդրանիկի հրամանատարությամբ գործող գնդի մարտական գործողություններից: 1914թ. վերջերին ռուսական բանակի հետ միասին նահանջող հայկական առաջին գունդը կանգ առավ պարսկա-թուրքական սահմանի վրա՝ Քոթոտ գյուղում: Անդրանիկը լուր ուղարկեց Սալմաստի հայերին տեղափոխվելու Ջուլֆա: Գունդը նույնպես շարժվեց այդ ուղղությամբ և ճանապարհին հանդիպեց գաղթող հայերի: «Մայրերն իրենց ուսերին էին տանում երեխաներին: Տղամարդիկ բարձած ձիերով, ավանակներով, գոմեշներով և եզներով, մինչև գոտկատեղը ցեխի մեջ, հոգնած ու տանջված հալիվ էին քայլում... Անգամ այդ անհույս ճանապարհին սալմաստցի պառավ մայրիկները չմոռացան համբուրել... Վարդան Մամիկոնյանի գերեզմանը, որը բլրի գագաթին էր, Տղմուտ գետի ափին... Չորս օր անց գունդը գաղթականների հետ հասավ Ջուլֆա: Թուրքերն առաջ էին շարժվում և շուտով գրավեցին Թավրիզն ու Սոֆյավանը, որը Ջուլֆայի խճուղու վրա էր և սպառնալիք էր ռուսական բանակի համար: Անդրանիկի գունդը շարժվելով դեպի Սոֆյավան, հակառակորդին գլխովին ջախջախեց ու հարկադրեց նահանջել, ապա ամրացավ Ատրպատականում և այն մաքրեց թշնամուց, որի բանակում կար 35 000- 40 000 թուրք ու քուրդ: Ավարայրի դաշտում թուրքերն ամուր դիրքեր էին գրավել և երեք օր արյունահեղ կռիվներ գնացին: Ռուսական բանակին հաջողվեց ջարդել թշնամու դիմադրությունը և փախուստի մատնել: Ռուսներին շրջապատելու թուրքերի փորձը ձախողվեց կամավորների անձնուրաց կռվով: Նահանջող թուրքերը ոչնչացրեցին հայ բնակչությանը, չխնայեցին անգամ երեխաներին: Գունդը կանգ առավ Բարդուղիմեոսի վանքում, որը չնայած ռմբակոծվեց, բայց կանգուն մնաց: Մայիսի 4-ին կամավորները շարժվեցին դեպի Բաշկալա: Հայերն արդեն տիրացել էին Վանին, և ռուսներն ու հայ կամավորները քաղաք էին մտել: Այդ լուրն առնելով Հալիլը դադարեցրեց դիմադրությունն ու շարժվեց Մոսուլի ուղղությամբ:

Մայիսի 18-ին Նորադուզի կիրճում թուրքերը 1 500 սպանված տալով՝ փախան: Անդրանիկի գունդը շարժվեց Ջուլամերիկի ուղղությամբ, ապա գնաց Վարագ, որտեղ արժանացավ Վանի երիտասարդության ջերմ ընդունելությանը: Հունիսի 4-ին գունդն Այգեստանում էր: Դիմավորելու էր դուրս եկել քաղաքի ամբողջ բնակչությունը: Նվագախումբը հնչեցնում էր հայկական քայլերգ: Անդրանիկը Վանից շարժվեց Բիթլիսի ուղղությամբ, որտեղ թշնամին մեծ ուժեր էր կուտակել: Դեպի Բիթլիս էին շարժվում նաև 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կամավորական գնդերը և հասան մինչև Մշո դաշտ, սակայն ադ ժամանակ ստացվեց հրաման նահանջելու մինչև Ավարայր: Անդրանիկի գունդը նահանջեց Վանա լճի հյուսիս-արևմտյան ափով դեպի Բերկրի: Ռուսական զորքերը կամավորներից երկու օր շուտ էին նահանջել, և թուրքերը փորձեցին դրանից օգտվել և կտրել վերջինների նահանջի ճանապարհը, մանավանդ որ հայերը ոչ հրանոթ ունեին, ոչ էլ գնդացիր, իսկ փամփուշտները սպառվելու վրա էին: Թուրքերն ունեին նաև թվական մեծ գերակշռություն: Հայերը մարտն ընդունեցին և թշնամու հարձակման շղթան ճեղքելով դուրս եկան Բերկրի:

1914 թվի նոյեմբերի 3-ին Անդրանիկի կամավորները մոտեցան Դիլմանին: Խիստ ձմեռ էր: Նոյեմբերի 5-ին հայերը շարժվեցին Աշնակ գյուղի վրա: Թուրքերը կատաղի դիմադրություն ցույց տվեցին: Անդրանիկը, տեսնելով իրավիճակի բարդությունը, հրամայեց՝ ինչ գնով էլ լինի կանգնեցնել քրդերի հարձակումը: Սմբատի, Սեպուհի և Արշակի ջոկատները հարձակման անցան: Նրանք հակառակորդին դուրս քշեցին ու գրավեցին նրանց դիրքերը: Նոյեմբերի 8-ին մարտը թեժացավ, թշնամին ամբողջ ճակատով հարձակման անցավ, սակայն Անդրանիկի զինվորների կրակը նրանց գամեց տեղում և հնարավորություն ստեղծեց ռուսների հակահարձակման համար: Հաջորդ օրը թուրքերը նոր հարձակում սկսեցին, սակայն Սեպուհի և Սմբատի կամավոր-

34 Larcher M. La Guerre turque dans la Guerre mondial. Paris, 1926, p. 395.
35 Ա.-Դ., նշվ. աշխ., էջ 97-98:
36 Լազեան Գ. Հայաստանը և Հայ դատը Հայ ռուսական յարաբերութիւններու լոյսին տակ, Ե., 1991, էջ 180:
37 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 221, ց. 1, գ. 21:
38 Ն.տ.:
39 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 3:
40 МОЭУ,сер.III, т.VII, ч.II,стр. 455.

41 АВПР, "Политархив", д. 3504, л. 29.

ները հրետանային կրակի ուղեկցությամբ առաջ նետվեցին: Թուրքերը խուճապահար փախան: Կամավորները մտան Խանիկ գյուղ: Երեք օր կռիվ գնաց Կաշկուլիի լեռնանցքի համար: Օգնության հասան գեներալ Նազարբեկովի ուժերը: Կամավորներն անցան նրա հրամանատարության տակ: Նոյեմբերի 16-ին հրաման ստացվեց մտնելու Քոգուր գյուղը: Կամավորների ջոկատն անցավ լեռնային ձյունածածկ կածանով և հաջորդ օրը գրավեց գյուղը: Աշնակ գյուղի շրջանում Անդրանիկի գունդը համառ կռիվներ մղեց համիդիեի դեմ և նոյեմբերի 18-ին մտավ Սարայ քաղաքը: Ապա առաջանալով՝ գրավեց մի քանի բնակավայրեր ու կանգ առավ Ասուրլի գյուղում: Դեկտեմբերի 5-ին կամավորները գրավեցին Բելեջիկ գյուղը, սակայն հրաման ստացվեց նահանջել: Դա բացատրվում էր ոչ միայն Սարիղամիշի ճակատամարտով, այլ նաև Թավրիզում թուրքական մեծ ուժերի կուտակմամբ: Փետրվարի 19-ին գունդը մարտեր էր մղում Խոյի շրջանում և նույն ամսի 27-ին մտավ Խոյ, ապրիլի 7-ին ամրացավ Շաքիր Ալի գյուղում: Ապրիլի 15-ին հրաման ստացվեց մտնելու Դիլման, որտեղ գնդապետ Նալգիևի զորքերը շրջափակվել էին:

Դիլմանում հաղթելու դեպքում թուրքական բանակի առջև բացվում էր ճանապարհ դեպի Արևելյան Հայաստան: Դրա համար էլ այստեղ թուրքերը մեծ ուժեր էին կուտակել՝ երեք հավաքական դիվիզիա, ոստիկանական և սահմանափակ զորքեր, քրդական հեծյալ գնդեր, 12 հրանոթ: Ռուսական զորքերի հրամանատարը Նազարբեկովն էր: Ապրիլի 16-ին թուրքերը գրավեցին Դիլմանը: Անդրանիկը Հալիլի առաջ փակեց Խոյի ճանապարհը: Ապրիլի 18-ին տեղի ունեցավ կատաղի ճակատամարտ: Կամավորները հետ շպրտեցին թուրքական գերակշիռ ուժերի բոլոր հարձակումները: Գունդը դիրքեր գրավեց Համզաքանդ գյուղում, որտեղ ծանր ճակատամարտ տեղի ունեցավ: Այդ օրը ռազմաճակատի ձախ թևում, գրեթե անելանելի վիճակում, Անդրանիկը հակահարձակման անցավ և գրավեց Բորչալու գյուղը: Հաջորդ օրը տեղի ունեցավ մեծ ճակատամարտ: Անդրանիկը զինվորներին անձամբ մարտի տարավ: Զիլան Դարասի վայրը թուրքերը վերածել էին ռազմական ամրարի: Բաթնոսի և Արճեշի շրջանում քրդերը սեպի նման խրվել էին ռուսական դիրքերի մեջ: Անդրանիկին հանձնարարվեց վերացնելու այդ սեպը. նա այդ արեց արագ ու առանց մեծ կորուստների: Դեկտեմբերի 31-ին կայացավ խոշոր բախում թուրքերի Բաթնոսյան զորախմբի հետ: Ապա հայկական գունդը մաքրեց Ախլաթը և փետրվարի 23-ին շարժվեց Մուշի ուղղությամբ, համախմբելով երեք կետերում՝ Զուխար-Նորշեն, Խասգեղ, Մանրիկ: Թուրքերը մեծ ուժեր կենտրոնացրեցին Դիարբեքիրի և Սղերդի ուղղությամբ: Խնդիր էր դրված ոչ միայն չհանձնել Դիարբեքիրը, այլև հետ գրավել Էրզրումը: Թուրքական ուժերն առաջացան Սղերդի և Մուշի ուղղությամբ: Ռուսական բանակը մի քանի ուղղություններով շարժվեց դեպի Վանա լիճ, փորձեց ամրանալ Բիթլիսում և Մուշում, ու Խնուսի կողմից հարձակվել Բինգյոլի վրա, գրավել Կոպն ու Մանազկերտը: Սակայն խնդիրը լուծել չհաջողվեց: Մարտական գործողություններն այլ ընթացք ունեցան:

Պատերազմում հայ կամավորների և, ընդհանրապես, արևմտահայության խաղացած դերը նենգափոխվում է ոչ միայն թուրքերի, այլև որոշ ռուս հեղինակներից կողմից: Թուրքական «Ինը հարց, ինը պատասխան» գրքույկում կարդում ենք. «Երբ ռուսական զորամասերը մտան օսմանյան տարածք և առաջացան Արևելյան Անատոլիայում, առաջնորդվեցին ռուսահայերի և տեղական հայ կամավորների կողմից, որոնց միացան թուրքական բանակի հայ դասալիքները: Նրանցից շատերը նախընտրեցին պարտիզանական կռիվներ մղել՝ օգտագործելով այն ռազմամթերքը, որ տարիներ շարունակ թաքցրել էին դպրոցներում ու եկեղեցիներում, կողոպտելով թուրքական մատակարարման կետերը, խոչընդոտելու թուրքական բանակի տեղաշարժերը ռուսական ներխուժման դեմ: Պատերազմի սկզբի մի քանի ամսվա ընթացքում նրանք սերտորեն համագործակցած ռուսների հետ հարձակումներ գործեցին արևելյան շրջանների բնակավայրերի վրա, անխնա կոտորեցին բնակիչներին, կատարեցին ավերիչ վնասակար գործողություններ ռուսների առաջխաղացումը հեշտացնելու համար... Հայ կամավորների խժդժություններն այնքան գազանաբարո էին, որ ռուսական հրամանատարությունը հայերին հարկադրեց հեռանալ ռազմաճակատից և նրանց օգտագործեց թիկունքում»[42]:

42 Լեո, Անցյալից, էջ 171-184:

Հիմնականում կեղծարարություն է և միանգամայն հասկանալի դրդապատճառներով: Անհասկանալի էր որոշ ռուս պետական-ռազմական գործիչների դիրքորոշումը: Իրավիճակը հստակ արտացոլված է Վորոնցով-Դաշկովին ուղղված Ազգային բյուրոյի 1915թ. հուլիսի 9-ի նամակում, որը ստորագրել էին Մեսրոպ եպիսկոպոսը, Ա. Խատիսյանը և Ս. Հարությունյանը: Մի քանի քաղվածք այդ նամակից. «Ձերդ վեհափառության բարձրագույն վստահությամբ Թուրքիայի հետ պատերազմը սկսվելու նախօրյակին մենք լիազորված էինք կազմակերպելու հայկական կամավորական գնդեր (դրուժինաներ): Տասնմեկ ամիս շարունակ ամեն ինչ արեցինք ստանձնած պարտավորությունը լավագույն ձևով կատարելու համար: Մեր, ինչպես նաև դրուժինաների գործունեությունն ընթացել է իշխանությունների ցուցումներին համապատասխան... Սակայն դրուժինաների մարտական գործունեության բուռն շրջանում, Վանի գրավումից հետո, Խատիսովը, որը լիազորված էր հարաբերություններ ունենալու զինվորական իշխանությունների հետ, ստանում է ս/թ հունիսի 1-ի հմ. 6348 հաղորդագրությունը, հետևյալ բովանդակությամբ. «Բանակի հրամանատարը հեռագրում է գլխավոր հրամանատարին, թե գեներալ Նիկոլաևը Վանից հայտնում է հայ կամավորների կողմից մեր զորքերի վրա կրակելու դեպքի մասին, երբ նրանք հայերին թույլ չէին տվել զբաղվելու թալանված ունեցվածքով: Բացի դա, հայ կամավորների շրջանում բազմիցս նկատվել են խժդժությունների ու թալանի դեպքեր: Նման հանցագործություններին վերջ տալու համար Վանում ստեղծվել է դաշտային դատարան...»»:

Նկատի ունենալով այսքան ծանր մեղադրանքը հայ կամավորների հասցեին, որոնց մարտական գործունեության մասին մինչ օրս նրանց անմիջական պետերից ստացվել են միայն լավագույն արձագանքներ, կամավորական գնդեր կազմակերպող հայկական բյուրոյի կողմից Վան են գործուղվել հատուկ լիազորություններ ունեցող անձինք՝ բյուրոյի անդամ... Ն. Խունունցը և հայ գրող Հովհաննես Թումանյանը, բանակի հրամանատարի թղթում շարադրվածի մանրամասներին ծանոթանալու համար: Վան հասնելուն պես Խունունցն ու Թումանյանն ընդունվում են գեներալ Նիկոլաևի կողմից, որը հայ կամավորների մարտական գործունեության մասին գովասանքով է արտահայտվել և, իմանալով նրանց գալու նպատակի մասին, հայտնել է, որ ռուսական զորքերի վրա հայ կամավորները չեն կրակել, նրանց կողմից նաև խժդժություններ ու թալան չի նկատվել և, որ ինքը նման զեկուցագիր պետերին չի ուղարկել: Իմիջիայլոց, հայ կամավորների մասին գեներալ Նիկոլաևի ասածները հաստատում է նաև նրա նամակը հասցեագրված Խատիսովին. «Հունիսի 5-ի ձեր սիրալիր նամակի կապակցությամբ հայտնում եմ, որ արդեն երկու ամիս իմ ենթակայության տակ ունենալով հայկական երեք դրուժինաներ և հետևելով իմ ջոկատում նրանց մարտական ծառայությանը, իրավունք եմ վերապահում միանշանակ հայտարարել, որ հայերի ծառայության ընթացքում զանգվածային բացասական դրսևորումներ չեմ նկատել, իհարկե, եղել են կարգի խախտման առանձին ոչ ցանկալի դեպքեր, որոնք վերագրել հայ կամավորների գործունեությանն ինձ իրավունք չեմ վերապահում»: Ապա մեր կողմից լիազորված անձինք հարցաքննել են Վանի քաղաքացիական վարչության ղեկավարներին: Նույն պատասխանը ստացվել է նաև նրանցից: Ասվածից հարկ է եզրակացնել, ա) որ գեն. Նիկոլաևն իր պետերին զեկուցագիր չի ներկայացրել հայ կամավորներին վերագրվող վերը նշված փաստերի մասին և բ)հայ կամավորների կողմից ռուսական զորքերի վրա կրակելու, ինչպես նաև նրանց կողմից խժդժությունների և թալանի դեպքեր իրականում չեն եղել... Այս ամենին հետևեց ոչ միայն կամավորական գնդերի կազմավորման դադարեցումը, այլև գործող գնդերի ցրումը»: Մինչդեռ հայ կամավորական շարժումը ժողովրդական պատերազմի ամենացայտուն և ամենաշիտակ դրսևորումն էր թե Կովկասյան և թե աշխարհամարտի մյուս ռազմաճակատներում[43]:

Ինչո՞վ բացատրել ցարական վարչակազմի այս «տարօրինակությունները»: Նախ, որ ցարական կառավարությունը Գոլիցին-Իգնատևյան քաղաքականությունը վերացված հայտարարելուց հետո էլ հայերին չէր վստահում: Երկրորդ, ցարը ձգտում էր տիրանալ ոչ թե արևմտահայերին, այլ Հայկական բարձրավանդակին: Հետևաբար, վտանգավոր էր համարվում հայերին զինելը նաև Անդրկովկասում խաղաղությունը չվնասելու համար: Սազոնովը գտնում էր, որ պա-

43 Le probleme Armenian. Neuf question, nouf reponses. Ankara, 1982, pp. 22-23.

տերազմի հաջող ելքի դեպքում կամավորական գնդերը քաղաքական առումով նույնպես խանգարելու էին Ռուսաստանին իր հայեցողությամբ տնօրինելու Հայաստանի բախտը: Պետական դումայում հարձակումներ կատարվեցին Վորոնցով-Դաշկովի վրա կամավորական գնդեր կազմակերպելու համար: Նրա այդ քաղաքականությունը Մարկով 2-րդը համարեց պետության համար «չափազանց վտանգավոր, վնասակար և ծայրահեղ անցանկալի»[44]: Վորոնցով -Դաշկովը մեղադրանքներին պատասխանեց, որ «այդ շարժման և նրանից առաջանալիք հետևանքների մասին պատասխանատվությունն իր վրա է վերցնում»[45]: Նա լավ էր հասկանում, որ ավելի ձեռնտու էր անհանգիստ և վտանգավոր արևմտահայ զինյալներին զբաղեցնել պատերազմում, քան թողնել «անգործ» և հուզումների օջախներ ստեղծել:

Պատմում է Վարդգես Ահարոնյանը. 1915թ. դեկտեմբերին Անդրանիկը Խոյում երկու հանդիպում ունեցավ Ատրպատականի բանակի հրամանատար գեներալ Զեռնոզուբովի հետ. քննարկվեց նաև հայ կամավորական գնդերը «չտատի», այսինքն՝ ռուսական բանակի կազմի մեջ վերցնելու խնդիրը: Նույն խնդրին անդրադարձավ նաև գեներալ Նիկոլաևը, որի վկայությունները 1917թ. տպագրվեցին «Հայաստան» թերթի 48-53 համարներում: Նա պատմում է Մուխանջիկի ճակատամարտի մասին: «Ռուսական հարձակման ձախ թևը զբաղեցնում էր հայկական դրուժինան փառապանծ Անդրանիկի հրամանատարությամբ... Անդրանիկից ոգեշնչված դրուժիննիկները վեր էին բոլոր գովեստներից: Նրանցից շատերն ամբողջ հասակով կանգնում էին խրամատների հողաթմբերի վրա՝ ինչ-որ բացականչություններ անում թուրքերի հասցեին: Ես ստիպված էի կարգադրել, որ վերջ տան, քանի որ դա հասցնելու էր անխմաստ զոհերի... Նրանց գործողություններում կար կատարյալ արհամարհանք մահվան հանդեպ... Անդրանիկը փայլուն կատարեց մարտական առաջադրանքը... դրուժիննիկները նրա գլխավորությամբ թշնամու գնդակների տարափի տակ... գրոհի նետվեցին և, չգիտես ինչու, բոլորն էլ առանց փափխների: Թուրքերը չդիմացան և շտապով մաքրեցին Բարշիթի գյուղը... դա մեծ տպավորություն գործեց... դրանից հետո մեզ վրա թուրքերի ճնշումը թուլացավ... գյուղի գրավումը զգալի ազդեցություն ունեցավ Դիլմանի ճակատամարտի ընդհանուր հաջողության վրա»[46]: Գեներալ Զեռնոզուբովն ասել է. «...Այժմ ես ինքս կորպուսի հրամանատարի իրավունքներ ունեմ և կարող եմ ուղղել մեր բոլոր սխալները և անարդարությունները Անդրանիկի վերաբերմամբ... Ասացեք Անդրանիկին... որ նրա դրուժինային Դիլմանի կռվի համար առանձնացված է 20 խաչ և 20 մեդալ... պատրաստ եմ Անդրանիկի համար անելու ինչ-որ նա ցանկանա»:

Անդրանիկի դրությունն ու հարաբերությունները ռուսական հրամանատարության հետ բարդ էին, բայց նրա կողմից՝ նաև սկզբունքային ու չիտակ: Զեռնոզուբովը Խոյում Անդրանիկին հանձնարարում է ոչնչացնել Արճեշի զինված քրդերին, բայց երբ նա փորձում է մարտական գործողություններ սկսել, թույլ չեն տալիս. նրան հանձնում են գլխավոր հրամանատարի հրամանը. «Աշխատեք քրդերին գրավել մեր կողմը: Զեռք չտալ խաղաղ քրդերին: Օգտվել նրանց ծառայություններից... Քրդերին թույլ չտալ հարձակվելու հայերի ու պարսիկների վրա: Ամեն կերպ աշխատեք հաշտեցնել հայերին ու քրդերին»: Այնուամենայնիվ Նորշենի մերձակայքում Անդրանիկը ջախջախիչ հարված հասցրեց քրդերին ու գրավեց մերձակա գյուղերը, որտեղ գտան «մի քանի հայ երեխաների ու կանանց, որոնք գերի էին եղել քրդերի ձեռքում»: Սիփանից մինչև Վանա լիճ թուրքերը փակեցին գնդի ճամփան: Անդրանիկը չեշտակի հարվածով, նախ, փախուստի մատնեց թշնամու ձախ թևին, իսկ Կոճերում ջախջախեց նրանց: Քուրդ տղամարդկանցից ոչ ոք «անձնատուր չեղավ... Կռվողները բոլորն ընկան, անձնատուր եղան միայն կանայք ու երեխաները, նրանց թվում 32 հայ գերի...»: Հաջորդ օրը թշնամին առանց կռվի հանձնեց Ալշևազը, և Անդրանիկը շարժվեց Ախլաթի վրա: Քրդերը խուճապահար փախչում էին: Գունդը Ախլաթում ազատեց հայ կանանց ու երեխաների և շարժվեց Բիթլիսի ուղղությամբ: Ռահվի-Դուրան ձորում ճանապարհը

44 ՀՀ ՊԿՊԱ, Քաղվածքների ֆոնդ, գ. 43:

45 Գեղամյանց Ե. Հայերի ազատագրական շարժումները XX դարում կամ Հայկական հարցի յոթերորդ շրջան, Բաքու, 1917, էջ 595-596:

46 ՀՀ ՊԿԱ, ֆ. 370, գ. 77, թ. 13:

փակեցին թուրքական ուժը վաշտ թնդանոթներով և մի քանի հազար քուրդ: Ռուսներն ունեին 1000 հոգի հետևակ, երկու թնդանոթ և չորս գնդացիր: 700 կոզակներ հետ էին մնացել, որովհետև 1-2 մետր հաստությամբ ձյուն էր նստած, և ձիերն առաջանալ չէին կարողանում:

Մշո դաշտը դատարկվում էր, քրդերն ու թուրքերը ռուսական բանակի գալու ահից փախչում էին: Փետրվարի 15-ին Անդրանիկը մտավ Բիթլիսի ձորը, գիշերը սվինամարտով թուրքերին դուրս քշեցին դիրքերից: Գնացին ծանր մարտեր, թշնամին ամրացավ անմատչելի ժայռերին և կատաղի դիմադրություն էր ցույց տալիս: Երեք օր անց գիշերը ռուսները ներխուժեցին Բիթլիս: Ազատվեցին շուրջ 200 հայ կին ու երեխա: Հաջորդ օրը շարժվեցին դեպի Մուշ: Այստեղ հավաքվել էր 3 000-4 000 մշեցի և սասունցի հայ: «Մշո դաշտում գտնված ժամանակ բավական թվով հայեր (երբեմն տասնյակներով, անգամ հարյուրներով) փախան Խութի քրդերի ձեռքից և եկան մեզ մոտ»: Նրանց բոլորին տեղավորեցինք Մուշ քաղաքում և օգնություն կազմակերպեցինք:

"The Temps" թերթի 1919թ. նոյեմբերի 8-ի համարում տպագրվեց. «Հանդիպում գեներալ Անդրանիկի՝ հայ ազատագրական շարժման հերոսի հետ» հոդվածը, որտեղ կարդում ենք. «Հենց նոր տեսակցեցինք գեներալ Անդրանիկի հետ, որն ազնիվ ու քաջարի հայրենասեր մարտիկի մարմնացում է: Նա Օսմանյան Հայաստանում երկար տարիներ տարել է դաժան ու հանդուգն պայքար Աբդուլ Համիդի բռնապետության դեմ և մեծ պատերազմում եղավ հայ կամավորական խմբերի կազմակերպիչներից ու ղեկավարներից մեկը, որոնք համագործակցեցին Կովկասյան բանակի հետ՝ թուրքերի դեմ մղած պայքարում: Պատերազմի թեժ պահին նա ռուսական հրամանատարությունից ստացավ գեներալ-մայորի կոչում: Պատերազմի առաջին օրվանից մինչև զինադադարը Անդրանիկը կռվեց Հայաստանի, Անտանտի համար: Վերջերս կայացած մի հանդիպման ժամանակ Ֆրանսիայի Հանրապետության նախագահը նրան շնորհավորեց ազատության գործին մատուցած ծառայությունների և քաջության համար»:

Իսկ ահա Անդրանիկին ինչպես են գնահատել ՀԾ Դաշնակցության գործիչները: «Իր դերը մեծ է մեր նորագույն պատմության մեջ,- գրում է Ն. Աղբալյանը,- դաշնակցությունն անոր հնար տվավ իր կարողությունները լայնորեն գործադրելու հանրային դատի համար և դաշնակցության հզոր պատուանդանի վրա նա արձանացավ իբր ազգային հերոս: Այդպես ալ նա կանցնի պատմությանը: Իր հռչակը ծավալվեց դաշնակցության ծավալմանը զուգահեռ... Բայց այն վայրկյանին, երբ նա ոչ թե մտածեց, ո՛չ, ես չեմ հավատում, այլ նրան մտածել տուին, թե երկու ազգակներից ինքն է մեծագույնը և ոչ թե դաշնակցությունը, Անդրանիկի աստղը թեքվեց... Նա եղավ մեծ ու նշանավոր գործերով, որ կատարեց դաշնակցության հետ և նրա ծոցում... Անդրանիկը զորավոր կրքեր և մեծ կարողություն ուներ. մարտիկի դժվարին կեանքը և Դաշնակցության միջավայրը մշակեցին նրա մեջ գաղափարի զինվորին և հայությանը տվին համազգային մի հերոս»[47]:

Այդպես եղել է և այդպես է նաև մեր օրերում: Երբ ՀԾՌ Անդրանիկի կարիքը զգացել է, նրան հռչակել է «իր պնչից թռած», իսկ երբ նրա անհրաժեշտությունը չի զգացել, մերժել է անգամ նրա գոյությունը: 2000թ. Երևանում լույս տեսավ «Հայկական հարցի պատմություն» դասագիրքը 9-րդ դասարանի համար: Հեղինակը ոչ անհայտ դաշնակցական «պատմաբան» Ռ. Փիրումյանն է: Այս դասագրքում ում լուսանկարն ասես, որ չկա որպես «Հայ ազատագրական շարժման խոշոր գործչի», բացակայում է միայն... Անդրանիկի լուսանկարը:

47 «Մշակ» (Ֆրեզնո), 11. 11. 1977:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ԹԵՇՔԻԼԱԹԻ ՄԱԽՍՈՒՍԱ
(Հատուկ կազմակերպություն)

Հայաջինջ քաղաքականության ծնած ամենահզոր ջարդարար կառույցը Հատուկ կազմակերպությունն էր, «Թեշքիլաթի մախսուսա», որը գործնականում հանդիսացավ ջարդերի իրականացման գործիք: Սանդերսը գրում է. «Էնվերը, որ տակավին գնդապետ էր, 1913-ի դեկտեմբերի վերջին ընդհանուր հրամանատարի հաղուստ էր հագել... Ընկերներն անապասելիորեն նրան ռազմական նախարար հռչակեցին: Այդ պաշտոնը մինչ այդ վարում էր սպարապետ Ահմեդ Իզեթ փաշան»[1]:

Սանդերսը լավ էր ճանաչում իթիհադի պարագլուխներին և Լայպցիգում 1927թ. հրատարակած իր հուշերում գրում է, որ Էնվերն ու նրա ընկերները «փառասեր ու եսասեր էին», «հայրենասիրությունից զուրկ և իրենց գրպանները լցնելու հետևից ընկած ոճրագործներ էին»:

Էնվերին շնորհավորելու և նրա հետ խորհրդակցելու համար,- շարունակում է Սանդերսը,- եկել էին դոկտ. Նազիմը և ռազմական հետախուզության պետ, Թեշքիլաթի մախսուսայի կազմակերպիչ Էշրեֆ բեյը: Թուրք զինվորականներն արդեն նախապատրաստություններ էին տեսնում իթիհադի 1910 և 1911 թվերի համագումարների ցեղասպանության վերաբերյալ գաղտնի որոշումները գործադրելու համար: Սկսել էին չեթեների խմբեր կազմակերպել Բալկաններում, մասնավորապես Թրակիայի և Իզմիրի շրջաններում: 1913թ. Էնվերի հորեղբայր Հալիլը 5 000 չեթեներով հարձակվեց Թրակիայի հունական գյուղերի վրա և բռնություններ և սպանություններ կատարեց:

1913թ. հունվարի 24-ին Էնվերը հանձնարարում է Էշրեֆին Իզմիրի շրջանում Թեշքիլաթի կազմակերպություններ ստեղծելու և «Թուրքճիլիքին (թուրքականություն) ուժ տալու», քանի որ, ըստ նրա, «Իզմիրի շրջանում հունական և հայկական եկեղեցիներում զենք ու ռազմամթերք է թաքնված, եկեղեցիները զինանոցների են վերածված և բոլոր քահանաներն ավազակախմբերի պետեր են դարձել: Հետևաբար նրանց դեմ մաքրագործման գործողություններ պիտի սկսվեն»[2]:

1914թ. փետրվարին Էնվերը Էշրեֆի հետ զրույց է ունենում չեթեների աշխատանքի կազմակերպման և ոչ թուրքերին ճնշելու ու բնաջնջելու հարցի շուրջ: Նաև ասենք, որ Թեշքիլաթի բարձրագույն հրամանատարը համարվում էր Էնվերը, իսկ օգնականը՝ Էշրեֆը: Կայսրության արևմտյան շրջաններում չեթեական ջոկատները ղեկավարում էին նաև Ս. Աքերին և Փեթեը:

1914թ. վերջնականապես ձևավորվում է չեթեական այդ կազմակերպությունների կառուցվածքը: Էնվերը դրանց կազմակերպումն ու ղեկավարությունն ամբողջությամբ հանձնում է Էշրեֆին, ստեղծելով նաև նրա հետ ծածկագիր կապի միջոց, խոստանում Թեշքիլաթի մախսուսայի ծախսերը հոգալ ռազմական նախարարության միջոցների հաշվին: Եվ իսկապես, չեթեական այս խմբերը մատակարարվում էին ռազմական նախարարության կողմից և գործում զինվորական հրամանատարության ղեկավարության ներքո: Ջեմալ Քութայը նկատում է, որ Թեշքիլաթի մախսուսան իր ներկայացուցիչներն ուներ բանակի սպայակազմում: Էշրեֆի հետ Թեշքիլաթիի խնդիրներով զբաղվում էին մի շարք նախարարներ, երեսփոխաններ, իթիհադական պարագլուխներ, ոստիկանության ղեկավար աշխատողներ: Նրանցից մեկի՝ Մեդինեի զինվորական հրամանատար, Զեյթունի և Ուրֆայի հայերի արյունախում Ֆախրինին Լոուրենսն անվանում է «հին մսագործ»:

Թեշքիլաթի գործունեության համակարգում ժանդարմերիայի աշխատանքի կազմակերպումը դժվար չէր, ինչը չի կարելի ասել չեթեների մասին: Վերջիններին «գործի դնելու» համար մեծ էր Ֆ.Հիլմիի ծառայությունը: Նա Բ. Շաքիրի տեղակալն էր և կարողացավ ջոկատները համալրել պրոֆեսիոնալ մարդասպաններով և քրդերով: Ընդորում՝ նա քրդերի հետ բանակցություններ վարում էր իթիհադի կենտկոմի անունից: Բայց Բ. Շաքիրին հաջողվեց 1914-ին ձևավորել Թեշքիլաթի թուրքերից կազմված ջոկատներ և այլա քուրդ վարձկանների կարիքը վերացավ: Սակայն դա չէր նշանակում, թե քրդերին ընդհանրապես մերժում էին մտնելու Թեշքիլաթի շարքերը: Մի մեջբերում Հիլմիի նամակից քուրդ առաջնորդներից մեկին: Նա գրում է. «Գործը, որի մասին մենք զրուցել ենք Երզնկայում, հասուն է... Թեև մենք ասել ենք, որ ձեզանից մեծ թվով մարդիկ ենք պահանջելու, բայց անհրաժեշտ չենք համարում այսօր այդքան ուժեղ լինել: Խնդրում ենք միայն 50 քաջարի կռվող»[3]: Նամակը գրված է 05. 09. 1914թ. և ստորագրված՝ «Էրզրումի նահանգի միություն և առաջադիմություն կոմիտեի լիազոր Հիլմի»:

Թեշքիլաթի ղեկավարները, այնուամենայնիվ, առաջնությունը տալիս էին հրոսակներին: Տրապիզոնում Ավստրիայի գլխավոր հյուպատոս Է. Քվիատովսկին 08. 11. 1914թ. տեղեկագրում է. «Այստեղ և Ռիզե քաղաքում զինում են հրոսակախմբեր՝ շուրջ մի քանի հարյուր հոգի Կովկասում խռովություններ բարձրացնելու համար... Մասնակիցներն ապահովվում են նոնակներով, նրանց գործողությունները վերահսկում են գերմանական սպաները, ովքեր Ռիզեում անդամ բանտարկյալներին են ընդունում զորագնդեր»[4]: Կալանավոր ընդունվել է «ծառայելու հրոսակախմբերում»:

Զորս օր է, որ «զորագնդերը մեկնել են երկրի խորքերը. նույն օրն այստեղ ափ դուրս եկավ 1000 մարդ: Ճանապարհը կշարունակեն գնացքով. մյուս ծովափնյա վայրերում էլ կազմակերպվել են հրոսակախմբեր Կովկասում գործողություններ ծավալելու համար»[5]:

Գերմանացի ինժեներ Լինսմայերի մոտ ձիապահ աշխատող ոմն Սայիդը կամավոր գրվեց, որպեսզի հնարավորություն ունենար «մորթելու» մի քանի հայի: Նրան խոստացել էին բնակարան: Կայսրության հարավում նման «կամավորների» թիվը մեծ էր[6]:

Թեշքիլաթի ստեղծումը Մեծ եղեռնի իրականացման չորրորդ փուլն էր, ինչն իրականացնում էին երիտթուրքական տեղական ակումբները, որոնք «ներքին գավառների բոլոր քաղաքներում զորավոր էին և ավելի ազդեցիկ, քան պետական ամենաբարձր պաշտոնյաները»: Այդ նրանք բանտերից ազատեցին ոճրագործներին ու ձևավորեցին հրոսակախմբեր, որոնց անվանում էին չեթեներ: «Բանակում ծառայելու համար ներգրավվեցին նաև տխրահռչակ քուրդ հրոսակախմբերը: Նրանց տվեցին լիակատար ազատություն հայկական գյուղերի վրա հարձակվելու, հայերին թալանելու, տղամարդկանց սպանելու, կանանց ու աղջիկներին առևանգելու համար»: Դա հայկական նահանգներում ձևավորեց ավերածությունների մի վայրագ համակարգ սկսած պատերազմի առաջին օրերից և շարունակվեց տարագրության ամբողջ ընթացքում: Չեթեներն ամենաեռանդուն մասնակցությունն ունեցան տարագրության քարավանների վրա հարձակումներին[7]:

Թեշքիլաթի ստեղծման թվականի հարցում գիտնականները միակարծիք չեն: Ա. Բեյլերյանը գրում է . «Թեշքիլաթի մախսուսա»-ն... հիմնադրվել է 1914թ. հոկտեմբերին Էնվեր փաշայի խստաշունչ հրամանով[8]:

«Կովկասյան ռազմաճակատում,- շարունակում է նա,- առաջնորդ ունենալով դոկտ. Բ. Շաքիրին, չեթեներ կոչվող ավազակների այս հրոսակախմբերը, որոնցից յուրաքանչյուրը կազմված էր 10-15 անձից, սկսեցին ամայացնել հայկական գյուղերը» ռուսական զորքերի հենարանը թուլացնելու համար: «Սակայն այս անկարգապահ «կամավորները», որոնք տենչում էին կողոպտել և սպանել, գերադասում էին ավազակային գործողություններ իրականացնել տարածաշրջանի խաղաղ, անպաշտպան բնակչության հանդեպ...»:

Էրզրումի երիտթուրքական ակումբը կազմել էր 22 հայի ցուցակ, ովքեր ոչնչացվելու էին: «Հակահայկական շարժում հրահրողները,- գրում է Մորգանը,- իբր հանդիսանում են ոմն Շաքիր բեյը (իմիջիայլոց Արդվինի մոտ նա ղեկավարել էր կամավորների հրոսակախումբ), նրա օգնական Հալիլն ու Էրզրումի ոստիկանապետը»[9]:

1 Sanders L., von Funt years in Turkey, Leipzig, 1927, s. 7.

2 Kutay C. Birinci Dünya Harbinde Teskilat-I Mahsusa ve Heyberde Türk Şengi, Istanbul, 1962, ss. 60-62.

3 Գուստ Վ. նշվ. աշխ., էջ 236:

4 Ն. տ. 169:

5 Ն. տ., էջ 236-237:

6 DR /PA-AA /R 14087,փ. թիվ 144:

7 Լեփսիուս Յո., նշվ. աշխ., էջ 19-20:

8 Բեյլերյան Ս., Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), Ե., 2005, էջ 29:

9 PA /AA/ R 14085:

Միայն մեկ օրինակ Կովկասյան ռազմաճակատում թեչքիլաթի գործունեությունից: Երբ 1915թ. մարտին ռուսական զորքերը մոտեցան 1914թ. ռուս-թուրքական սահմանին Կարսի, Բաթումի, Արդահանի, Օլթիի և Արդվինի թուրքերն էմիսարների գլխավորությամբ ապստամբեցին, գրավեցին մի քանի քաղաք ու գյուղ: Տեղի հայերը կոտակվեցին Արդահանում (7000 հոգի) և Օլթիում (1500 հոգի): Մարտի 15-ին Արդահան է գնում տխրահռչակ քուրդ Աբդուլահը 200 հեծյալով և արժանանում տեղի մահմեդականներից կազմված իշխանության ջերմ ընդունելությանը: Հաջորդ օրը սկսվում է հայերի կոտորածը: Աբդուլահի հրոսակները և տեղի թաթարներն ու աջարացիները հարձակվում են հայերի տների վրա, դուրս քաշում տղամարդկանց ու սպանում սեփական տան չեմի վրա, փախչելու փորձ անողները գնդակահարվում էին: Եզակի թվով հայերի հաջողվում է թաքնվել ձեղնահարկերում և նկուղներում: Ականատեսների վկայությամբ սպանվեցին նաև մեծ թվով կանայք ու երեխաներ: Նրանց մեծ մասին փակեցին տներում ու հրդեհեցին: Նույն կերպ վարվեցին նաև Օլթիում: Մոտ 8000 հայ ոչնչացվեց այդ երկու բնակավայրերում[10]:

«Քրեական հանցագործները, որոնք մինչ այդ բանտերից հանվում էին միայն ռազմական նախարարի հրամանով, սկսած 19. 02. 1915թ. ազատվում էին կառավարության որոշումով՝ զինվորագրվելու համար չեթեների խմբերին. նրանց հրամայված էր կոտորել տեղահանված հայերին»[11]:

1915թ. փետրվարի 13-ին Վռամյանը գրում է Թալեաթին. «Բանտերից արձակված նախկին գողերը, ավազակները և բանակից փախած քրդերը Բաշկալեում և մերձակա գյուղերում ջարդում էին հայերին»[12]:

Ս. Ակնունին արձանագրում է, որ նույն փետրվար ամսին «բանտերեն ազատված մարդասպաններեն և ոճրագործներեն կը կազմուի ջարդարար մի յատուկ ոյժ, որը... մայիսի կեսերին կը կոտորե Կարինի մերձակայքում աշխատող զինաթափուած հայ զինուորները»[13]:

Պոլսի «Նուրը Օսմանիե» երիտթուրքական կենտրոնում տեղի ունեցած թեչքիլաթի խառը ժողովում Թալեաթը ներկայացնում է հայերի տեղահանման ձևերի ու ընթացքի, լքված ու լքվելիք գույքի, տների և գյուղերի տնօրինման վերաբերյալ մի ընդարձակ տեղեկագիր[14]:

Թալեաթը հեռագրով տեղական իշխանություններին հանձնարարեց, որ հայերին պաշտպանող քրիստոնյաներին և նրանց հետ համագործակցող մուսուլմաններին հանձնել ռազմական դատարան[15]:

Նախնական պլանով թեչքիլաթը ստեղծվելու էր որպես թուրքական բանակին աջակցող ուժ, որն առաջին հերթին գործելու էր ռուս-թուրքական ռազմաճակատի երկու կողմերում, ռուսական բանակի թիկունքում զբաղվելու էր քայքայիչ գործունեությամբ և տեղական մահմեդական բնակչությանը ռուսների դեմ ապստամբության հանելով, իսկ թուրքական բանակի թիկունքում՝ հայ և ոչ մահմեդական մյուս բնակչության թալանով և ջարդերով: Թուրք գեներալ Ա. Սաբիսը գրում է, որ «պատերազմի հենց սկզբից ռազմական նախարար Էնվեր փաշայի ընդունարանը միշտ լիքն էր ծիծաղելի հագնված մարդկանցով, ովքեր փաշային համոզում էին, առաջարկություններ անում «թուրանական նվաճումների մասին և ստանում պարգևատրություններ ու առանձնաշնորհումներ»[16]:

Սակայն ռազմաճակատում և հակառակորդի թիկունքում թեչքիլաթի ջոկատները հաջողություն չունեցան, իսկ ռուսական բանակի թիկունքում՝ Կովկասում վերածվեցին ավազակախմբերի: Երիտթուրք գործիչներից մի քանիսն առաջարկեցին ստեղծել նոր թեչքիլաթ՝ հայերին բնաջնջելու համար: Գերմանիայի հետ գաղտնի պայմանագիր կնքելու օրվա՝ 1914թ. օգոստոսի 2-ի երեկոյան, իթիհադի կենտկոմը լսեց Հատուկ կազմակերպության հարցը և որոշեց այն ծառայեցնել համիսլամական և համթուրքական նպատակների իրականացմանը:

Բնութագրական է, որ թեչքիլաթի ղեկավար մարմնում տեղեր հատկացվեցին թե կուսակցական (Նազիմ, Բ. Շաքիր, Շուքրի), թե վարչական-ոստիկանական աշխատողների (Ազիզ, որն իրականացնում էր կապը ՆԳ նախարարության հետ) և թե բանակային գործիչներին: Լայն իրավասությունները, որ տրված էին այդ ղեկավար մարմնին, հնարավորություն ստեղծեցին կարճ ժամանակում սերտ հարաբերություններ հաստատել բանակի հրամանատարության, կուսակցության ղեկավարության և ՆԳ նախարարության հետ[17]:

1913-14թթ. մշակվեց համապարփակ ծրագիր թեչքիլաթի և կառավարության համագործակցության վերաբերյալ: Այդ գործի մեջ ներքաշվեցին Թալեաթը, Ջավիդը, Իբրահիմը, Ալի Շուքրին, Բ. Շաքիրը, Նազիմը, Հասան Ֆեհմին, Աղա օղլու Ահմեդը, Զիա Գյոքալփը և ուրիշներ: Թեչքիլաթի մասին նյութեր կարելի է գտնել Թալեաթի, Բ. Շաքիրի, Սուլեյման Ասքերիի և Ջավիդի հուշերում: Էշրեֆը, որը Հայոց ցեղասպանության գլխավոր գործող անձերից էր, իր հուշագրություններում նշում է, որ թեչքիլաթի մախսուսան, սերտաճած լինելով բանակի հետ, իր ներկայացուցիչներն ուներ գլխավոր շտաբում: Էշրեֆն իրեն զգում էր հավասար Թալեաթի և Էնվերի հետ: Դա է վկայում նրանց նամակագրությունը: Նա խոստովանել է, որ վերջիններից մի անգամ ստացել է 50 հազ., մի այլ անգամ՝ 300 հազ. ոսկի: Այդ ավազակը փախցրեց Մեդիների կառավարչի որդուն, որին ազատելու համար հայերը մեծ փրկագին վճարեց: Շորթած գումարներով Էշրեֆը գնում է ուղտ ու մի մեծ խմբով շրջում արաբական քոչվորների կացարաններում: Էնվերի հանձնարարությամբ մի քանի մարդ է սպանում ու որպես վարձատրություն նշանակվում է գաղթականության հարցերով քննիչ և մեծ գումարներ գտիում: Արաբական շեյխերին կաշառելու համար 1916թ. մեկնում է Արաբիա, որտեղ մասնակցում է շեյխերից մեկի դեմ կազմակերպված ահաբեկչությանը: Բայց բռնվում է, նրա 107 հոգուց կազմված խումբը՝ ոչնչացվում, իսկ ինքը հանձնվում է անգլիացիներին և տարվում սկզբում Եգիպտոս, իսկ ապա Մալթա: Այստեղ նա անգլիացիներին մանրամասն տվյալներ է հաղորդում հայերի կոտորածների մասին[18]:

Կարաբեքիրը նշում է, որ Հատուկ կազմակերպության ղեկավար կոմիտեի մեջ մտնում էին Մ. Շուքրին, Զիա Գյոքալփը, Բ. Շաքիրը, Մ. Նազիմը, սպաներ Հիլմին, Ռիզան, Քյուչուք Թալեաթը և Աթրֆը[19]:

Ըստ նրա, Բ. Շաքիրը ծրագրում էր թեչքիլաթի մեջ հավաքել 40 հազ. մարդ: Նաև գրում է, թե նա «անժամանակ և անփորձ ոչ կանոնավոր զինյալներով դեպի Արդահան կատարած շարժումով և այնտեղ գտնվող թուրքերին էլ ոտքի հանելու քաջալերող դառնալով՝ ժողովրդի ոչնչացման պատճառ հանդիսացողներից մեկը եղավ»[20]:

Իզուր չէր, որ Իվ Թերնոնը Բ. Շաքիրին և Նազիմին անվանում էր «գենոցիդի ճարտարապետներ»[21]:

Էրզրումի օպերատիվ շրջանը բաժանվեց երեք ռազմական տեղամասերի, որոնք դրվեցին Բ. Շաքիրի հրամանատարության տակ: Բանակում և քաղաքացիական հիմնարկներում նրա վստահելի անձինք ապահովում էին բոլոր կարևոր գաղտնի հրամանների կատարումը, պլանավորում և իրականացնում էին հարձակումներ գյուղերի և մարտական դիրքերի վրա, հետապնդում «ոչնչացման ենթակա անձանց»:

Որպեսզի տպավորություն ստեղծվեր, որ այդ և նման գործողությունների կազմակերպմանն իթիհադը չէր մասնակցում, որոշում ընդունվեց 3-րդ բանակի ենթակայության տակ ստեղծել «Կովկասի հեղափոխական միություն», որի կարևորագույն խնդիրն էր «Ձևավորել ավազակախմբեր երկրում և արտասահմանում»[22]:

Երզնկայի, Բայբուրդի, Դերջանի և Քղիի կառավարիչներին հասցեագրված հեռագրերում ասվում է. «3-րդ բանակի հրամանատար փաշայի համաձայնությամբ և Բ. Շաքիրի ղեկավարությամբ ստեղծվում է իսլամական միլիցիայի ջոկատ»[23]:

Թեչքիլաթի համար ծխածածկույթ հանդիսացող 3-րդ բանակի հրամանատար Մ. Քյալիմը նույնպես Էնվերի մերձավորներից էր ու, երբ ռուսները գրավեցին Էրզրումը, վերադարձավ Կ.

10 "Osterreich Armenien", Bd VIII, 1918, s.b 223.
11 Բեյլերյան Ա., նշվ. աշխ., էջ 293:
12 «Հայաստան» (Սոֆիա) 07. 03. 1915:
13 Ակնունի Ս. Միլիոն մը հայերու... էջ 140 :
14 «Ցուշամատեան Մեծ եղեռնի», էջ 201-202:
15 Авакян А. Геноцид 1915г., стр. 44-45.
16 Sabis A. Horb Hatiralarim, cilt I, Istanbul, 1943, s. 147.

17 "Геноцид-преступление против человечества", Москва, 1997, стр. 71.
18 Kutay C., նշվ. աշխ., էջ 309:
19 Karabekir K. Cihan harbine neden girdik, nasil idare ettik. Kitab II, Istanbul, 1937, ss. 25-28.
20 Ն. տ., էջ 28-29:
21 Ternwn Y. Enqunte sur la ne'gation d'un ge'nocide, Marseille, 1989, p. 143.
22 "Vakit", 07. 10. 1933 .
23 Ն. տ., 15. 10. 1933:

Պոլիս և աշխատեց Էնվերի խորհրդական: Նա տգետ էր, հոգեկան խանգարում ուներ:

Թ. Աքչամը նշում է, որ Արևելյան Անատոլիայում թեչքիլաթի ավազակախմբերի ստեղծմանը ձեռնամուխ եղան 1914թ. օգոստոսի երկրորդ կեսից: Դրանք հավաքագրվում էին հիմնականում ազգաբնակչության երեք խմբերից, ամենից առաջ՝ քրդական ցեղերից: Քրդական ցեղապետերից մեկին ուղղված նամակում կարդում ենք. «Մոտենում է ժամանակն իրականացնելու այն, ինչ մենք քննարկել էինք Երզնկայում... Ես կցանկանայի ունենալ քո ցեղի 50 խիզախներին... Այստեղ նրանց կապահովեմ բոլոր հարմարություններով... Դու նախապատրաստիր ու ամեն ինչ հայտնիր մեծապատիվ բեյ-էֆենդի Բ. Շաքիրին»[24]:

Աքչամը գրում է, թե Էրզրումի իթիհադական կազմակերպության պատասխանատու քարտուղար Հիլմիի այս նամակն իրեն տվել է քուրդ ցեղապետի թոռը: Այն թվագրված է 4-ը սեպտեմբերի 1914թ.:

Երկրորդ խավը, որով ձևավորվում էին թեչքիլաթի չեթեների ջոկատները, բանտերից ազատված հանցագործներն էին: Էրզրումի և Տրապիզոնի թեչքիլաթի բաժանմունքից կառավարությանը հասցեագրված հեռագրով անհրաժեշտ էր համարվում բանտերից ազատել այն բանտարկյալներին, որոնք պետք է ենթարկվեին սպաներին[25]:

Եվ ազատեցին անգամ չսպասելով կառավարության թույլտվությանը: Հանցագործներին բանտերից հանելու գործընթացը ծավալվեց ամբողջ երկրով մեկ[26]:

«...Իթիհատական պարագլուխները փութով պատրաստեցին ջարդի և կողոպուտի մասնավոր մեքենականությունը: Անոնք բանտերեն և զնտաններեն ազատ արձակեցին բոլոր մարդասպանները, հանցագործները, գողերն ու ավազակները, և հայ ժողովուրդեն իսկ գանձուած դրամով զինելե ետք, մարզեցին և պատրաստեցին զանոնք՝ «մասնավոր առաքելության» մը համար՝ կողոպտել ու չարչարել արևմտահայ զանգուածներն աքսորի ճամբաներու երկայնքին, յափշտակել, բռնաբարել ու անարգել հայ կիները, մաս առ մաս ջարդել ու բնաջնջել հայ ցեղը»[27]:

Էշրեֆը հպարտանում էր. «Մենք իրագործեցինք նպատակներ, որոնք առնչվում էին ազգային գերագույն շահերին և որոնք որևէ օրինավար կառավարություն ի վիճակի չէր մտահղանալ՝ ուր մնաց թե իրականացներ... Մենք պետություն էինք պետության մեջ... բացի 1-2 նախարարներից, անգամ կառավարության անդամներից էինք գաղտնի պահում մեր առաքելությունը»[28]: Պագր-Մատենում հանցագործներին բանտից ազատելու ժամանակ մունետիկը կանչում էր. «Կառավարությունը թագավորին հրամանով ձեզ կը ներե... այն պայմանով, որ հայերը ջարդեք... մեծերեն պզտիկները, բայց ոչ մուսուլմանները»[29]:

Թ. Աքչամը նույնպես թեչքիլաթին է համարում «հայերի զանգվածային բնաջնջման» իրականացնողը: Այդ կազմակերպության մեջ ընդգրկված էին «բանտերից ազատ արձակված ոճրագործները, ինչպես նաև Բալկաններից և Կովկասից եկած փախստականները»: Թեչքիլաթի ամենակարևոր պարտականությունը «Տեղահանության մասին» օրենքի կիրառումն էր, ավելի ճիշտ՝ եռանդուն մասնակցությունը հայերի բնաջնջմանը: Այդ նպատակով նրանք մարտական պատրաստություն էին ստանում ռազմական նախարարության վերահսկողության ներքո[30]: Պատերազմի առաջին իսկ ամիսներին, շարունակում է Աքչամը, այդ կազմակերպության ստորաբաժանումների կողմից իրականացված թալանն ու սպանություններն այնպիսի ծավալներ ընդունեցին, որ մի շարք նահանգապետեր գանգատվեցին և պահանջեցին կառավարությունից վերջ դնելու այդ խայտառակություններին[31]:

"New York Times"-ը 1915թ. սեպտեմբերի 29-ին գրեց. «3000 հանցագործ մահմեդական ազատվել

24 "Askeri Tarih Belgeleri Dergisin", 1983, N 2.

25 "Vakit", 05. 10. 1933:

26 Said Halim ve Mehmed Tatal Pasalar Kabinelernin Divani Ali'ye Sevleri Hakkinda Divaniye Mebusu Fuad Bey Merhum Tarafindan Verlen Takrir Uzernine Berayi Tahkikat Kur' a isabel Eden Besinci Sube Tarafindan icra Oluman Tahkikat ve Zabt Edilen Ifadati Muhtevidir, Istanbul, 1918, s. 5.

27 Ահարոնեան Գ., նշվ. աշխ., էջ 4:

28 «ՀԵՄ» (Եռամսյակ), ապրիլ-հունիս, 1995:

29 Պերպերեան Ե., Պագր-Մատեն, Նյու Յորք, 1984, էջ 143-144:

30 «Բնօրրան», 1995, թիվ 1, էջ 91-92:

31 Նույն տեղում, էջ 99:

էր բանտից և կազմել ավազակախմբեր, իբր «զինվորական խիստ կարգապահությամբ»: Այդ ավազակախմբերի պարտականություններից էր գյուղերի թալանը, գողությունն ու մարդասպանությունը»:

Նոյեմբերի 17-ին Բ. Շաքիրը թալեաթի միջոցով տեղյակ է պահում ընդհանուր կենտրոնին, որ Էրզրումում իրեն փոխարինելու է Իսմայիլ Հագը, իսկ ինքը մեկնում է ղեկավարելու Արդվինի զինվորական ուժերը: «Երեկ մասամբ տեղ հասավ թեչքիլաթի մախսուսայի համար հատկացված ռազմամթերքը... Այն կարծիքին եմ, որ մարտիկների կողմից չօգտագործվող հրացանները, եթե բաժանվեն աշխատանքային վաշտերում գտնվող մահմեդականներին, ապա Արդվինից մինչև Մուրղուլ գտնվող և բոլոր միջոցներից զուրկ թեչքիլաթին որոշակի ուժով օգնած կլինեմ: Բասենի կողմերում մոտ 250 ընտիր հեծյալ ունեմ»: Նույն օրը նրան հանձնարարվում է մեկնել Տրապիզոն «առավել կարևոր մի պարտականություն ստանձնելու համար»: Ռազմական դատարանում Կոստանդնուպոլսի նախկին պարետ Ա. Ջևադը ցուցմունք տվեց, որ թեչքիլաթի մարտիկները «զինվում էին ռազմական նախարարության և բանակի շտաբի տրամադրած զենքերով»[32]:

Ցոզղաթի կառավարիչ Ջեմալը ռազմական դատարանում վկայեց, որ «բանտերից հանված կալանավոր ոճրագործներն օգտագործվեցին հայերի կոտորածներն իրականացնելու համար... Խոհարարուհիս ինձ ասաց, որ մարդասպանության համար բանտարկված իր եղբորն էլ ազատ են արձակել և ուղարկել հայերին կոտորելու...»[33]:

1915թ. մարտի 3-ին Անկարայի կենտրոնական բանտից ազատվեց 249 հանցագործ, իսկ մայիսի 15-ին Ցոզղաթի բանտից հանվեց 65 հոգի, որից 51-ը՝ մարդասպան[34]:

Մի թուրք վկայել է. «...Արդարադատության նախարարն արյունարբու մարդասպան ոճրագործներին բանտերից ազատ արձակեց: Արդարադատության նախարար Իբրահիմ բեյն անձամբ այդ մարդասպաններից հրոսակախմբեր կազմակերպեց...»[35]:

Ոճրագործներից չեթեական խմբեր կազմակերպող հանձնաժողովի անդամ Մ. Ռեմզին վկայել է. «Բժշկական քննությունից հետո տեղի ունեցան ոճրագործների արձակման ձևակերպումները՝ իբր զինվորագրելու համար: Հետագայում իմացանք, որ այդ ոճրագործներն ուղարկվել են Զորումի հրոսակների թիվն ավելացնելու...»[36]:

Երիտթուրքերի Բրուսայի կոմիտեն սեպտեմբերի 19-ին տեղեկացրեց իթիհադի կենտկոմին, որ ՆԳ նախարարության ծածկագրով պահանջվում է մեկ շաբաթվա ընթացքում հավաքագրել 200 հոգի: Արդեն այդքան մարդ գրվել է, «բայց նրանք զինվորական ծառայության համար պիտանի չեն... Թեև կառավարությունը հրամայել է հավաքագրել և ուղարկել նաև ոճրագործների ու ավազակությանը վարժված անձանց, սակայն նույնիսկ մեր միջավայրում նման բարոյականության տեր անհատները փոքրաթիվ են... շատ դժվար է գտնել անհատներ ու փախստականներ, ովքեր վարժված են թալանելու և կողոպտելու... չզորակոչված երիտասարդության մեջ կան... կառավարության պահանջներին համապատասխանող դատվածներ ու ավազակներ... նմանները զենքի տակ առնվել չեն կարող: Բրուսայի նահանգում հնարավոր է հավաքագրել նման 500-1 000 հոգի»[37]:

Իզմիրի մյուֆթի Զուհդի Ահմեդը նոյեմբերի 23-ին իթիհադի կենտրոնին հեռագրեց. «Բերդամայի կազայում, Ռեչադիյի նահիյի անձնատուր եղած ավազակներից չեչեն Համիդ աղան օգնություն է խնդրել... եթե իրեն թույլ տրվի, ապա Դիարբեքիրում մի կարևոր թեչքիլաթ ստեղծելով, շարժվելու է դեպի սահման... Թանկագին եղբայրներ, դա հայրենասիրական նախաձեռնություն համարելով, խնդրում եմ ձեր թույլտվությունը...»[38]:

Նույն օրերին իթիհադի գլխավոր քարտուղար Մ. Շուքրին ստանում է այդ լիգայի ղեկավարի հեռագիրը. «Սրանից մեկ շաբաթ առաջ ՆԳ նախարարությունից մութասարիֆությանս մի հրաման եկավ, որ իմ լիգայում գտնվող չերքեզներից, բանտարկյալներից և այլ մարդկանցից մոտ

32 "Takvim-I Vekayi", 04. 05. 1919:

33 Դիվան Երուսաղեմի, թիվ Մ492-Մ494:

34 Ն. տ., թիվ Մ534:

35 Ն.տ., թիվ Մ256:

36 Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 535:

37 "Takvim-I Vekayi", 25. 05. 1919:

38 Ն. տ., 14. 05. 1919:

200 հոգի հավաքեմ և ուղարկեմ Կովկասում չեթեություն անելու համար»: Մ. Շուքրին հեռագիրն ուղարկում է Նազրմին հետևյալ մակագրությունով. «Հագցնել միանման: Անհրաժեշտ ծախսերը կատարել այդտեղի բնակչության հաշվին և ուղարկել: Զինվելու են այստեղ: Բարձր հանձնաժողովի պահանջի դեպքում նրանց ստուգումը կատարվելու է Ցակուբ (Զեմիլ) բեյի կողմից»[39]:

Երիտթուրք պարագլուխներ Ազիզը, Աթըֆը և Նազրմը գրում են Բ. Շաքիրին. «Կոմիտեն պահանջում է, որպեսզի Ղալաթացի Խալիլը պատժվի» Թեչքիլաթի կազմակերպման նպատակով տրամադրված գումարը յուրացնելու համար: Խալիլն արդարանալով, որ այդ գումարները տրվել են չեթեական երեք խմբերի պետերին, նաև հաղորդում է, թե 100 հոգուց կազմված մի խումբ ուղարկվում է զորակոչի անվան տակ: «Բանտարկյալներին բանտից հանելու համար պետք է, որ նախարարությունը հրաման ուղարկի»[40]:

Դեկտեմբերի 16-ին Մ. Շուքրին գրում է Նազրմին, թե 55 հոգուց կազմված չեթեական հինգերորդ խումբն «ուղարկեք նավով»: 1914թ. նոյեմբերին Սրվազի կուսակալի կարգադրությամբ Բինյանի բանտից ազատ արձակվեց 24 ոճրագործ: Նույն բանտից ազատեցին նաև հայտնի ավազակապետ Մահիրին և 123 այլ հանցագործների և ուղարկեցին ոչնչացնելու հայերին: Ռաս ուլ Այնում բանտից ազատված չեթեներից մի ջոկատ կազմակերպեցին հայերին թալանելու, ոչնչացնելու համար: Նրա անդամներից ոմն Աբդուլլահը 1 200 հայ սպանեց Մալաթիայի նահանգապետարանի բակում, մեկ ուրիշը՝ Հումդին՝ 210 հոգու գլխատեց[41]:

Արդարության պալատում Իբրահիմը, Պոլսի զորքերի ընդհանուր հրամանատար Հալիլը, Բ. Շաքիրը, Նազրմը, Աթըֆը, Ազիզը բազմաթիվ խորհրդակցություններ ունեցան Թեչքիլաթի ջարդարարական գործունեության ձևերն ու եղանակները մշակելու համար: Թալեաթն ամեն օր Իբրահիմին տվյալներ էր տրամադրում հայերի քարավանների երթուղիների ու կոտորածների նախատեսված վայրերի մասին: Ավելի ուշ արդարադատության նախարարությունն իրավական տեսք տվեց բանտերից հանցագործներին ազատելուն՝ նրանց պաշտոնապես ներում չնորհելու միջոցով: «Մի շաբաթ շարունակ,- վկայում է Ա. Ռեֆիկը,- բանտից ազատվածները զբաղվում էին զինվորական քայլքով ռազմական նախարարության մարզահրապարակում, ապա Հատուկ կազմակերպության միջոցով ուղարկվում էին Կովկասի սահման»[42]:

Այդ ժամանակաընթացքում ձևավորված ավազակախմբերը «կատարեցին ամենասարսափելի հանցագործությունները»:

Սկզբում նախատեսվում էր աշխատավարձի փոխարեն կազմակերպության անդամներին թողնել հայերից թալանված ունեցվածքն ու դրամը , կանանց ու աղջիկներին, բայց քիչ անց այդ ունեցվածքն ու միջոցները նպատակահարմար համարվեց դնել պետության տրամադրության տակ, ինչը չեթենների շրջանում դժգոհություն առաջացրեց: Այս առթիվ Թալեաթը երիտթուրքերի կուսակցության Մալաթիայի կազմակերպության քարտուղարին հեռագրեց. «Չեթենների մասն են կազմում բանտից հանված կամ դրսից հավաքված մարդասպանները, բայց վերջիններս իրենց սպանած հայերի ունեցվածքին ձեռք տալու իրավունք չունեն: Նրանք երդում են տվել, որ գրավված ամբողջ կայքը կենտրոն պետք է բերվի», որ այդ «ապրանքների կեսը տրամադրվելու է կուսակցությանը, իսկ մյուս կեսը բաժանվելու է չեթենների»: «Եվ իւրաքանչիւր չեթեի 15 000 ոսկի բաժին ինկած է: Ասկե կրնանք դատել, թե ինչ քանակութեան կրնայ հասած ըլլալ ընդհանուր կեդրոնին բաժին ինկած գումարը»[43]:

Երկար ժամանակ չանցավ, որ հայերի ունեցվածքը թալանելու գործում չեթենների միանային ոստիկանները, դասալիքները, համիդիեները, քրդական և արաբական քոչվորները, թուրք խուժանը: Արդարադատության նախարար Իբրահիմը հրամաններ ու հրահանգներ ուղարկեց տեղերի դատավորներին ու դատախազներին, որ չհետապնդեն ջարդարարներին ու կողոպտիչներին, բացառությամբ նրանցից, ովքեր իրենց կողոպուտից բաժին չեն հանել թուրքական կառավարությանը և երիտթուրքերի կուսակցությանը:

Թեչքիլաթի ավազակախմբերի շարքերում գրանցումները կատարվում էին կայսրության դատախազի հրամանով, Արդարադատության պալատում: Իբրահիմը հրամայել էր հատուկ ուշադրություն դարձնել չեթեների ընտրության վրա, դրանք պետք է լինեին ոճրագործներից ու մարդասպաններից ամենակատաղիներն ու ամենաարյունարբուները: Ընտրությունը կատարում էին վերաքննիչ դատարանի ընդհանուր դատախազը և ռազմական նախարարության մի բարձրաստիճան սպա, որն անձամբ էր ստուգում ոճրագործների ֆիզիկական կարողությունները: Բոլորը բժշկական ստուգման էին ենթարկվում: Ընտրվում էին ֆիզիկապես ուժեղ և առողջ հանցագործները:

Թուրքական բանակի շտաբը 1914թ. նոյեմբերի 26-ին հեռագրեց իր ստորադասներին. «Բանտարկյալներին և դատապարտվածներին բանակի մեջ առնելու և նրանց ծառայության կարգի մասին ընդունված է հատուկ օրենք, որի հրապարակումից հետո (վալիները) գործելու են համաձայն դրա: Տարբեր բանտերից ուղարկված 2 267 անձանց վերաբերյալ տեղեկանքի տվյալներով առայժմ անհրաժեշտություն չկա որևէ գործողություն ձեռնարկելու: Հատուկ նպատակի համար կազմակերպվող 531 հոգանոց ջոկատը համալրեք և ուղարկեք նշված վայրը»[44]:

Թե ինչպիսին էր այդ ջոկատների բարոյահոգեբանական վիճակը, պարզում է մի թուրք զինվորի պատմածը. «Մանոթներից մեկն ինձ ասաց, թե (երիտթուրքեր) կենտկոմը հավաքագրում է քաղաքացիական անձանց կամավորական ջոկատների համար... Շաբաթվա կեսին ... մտա կենտկոմ: Լսելով իմ խնդրանքը, դոկտ. Նազրմը ժպտաց... Այդ ջոկատների մեջ մենք հավաքագրում ենք միայն բանտարկյալների,- ասաց նա,- դրանք ձեր նման երիտասարդների տեղը չեն: Ես ապշած էի: Ինչի՞ համար էր անհրաժեշտ մարդասպանների բանակի ստեղծումը»[45]:

«Հատուկ կազմակերպությունը,- գրում է Մ. Ռիֆաթը,- այլ բան չէր, եթե ոչ անպատասխանատու և ոչ լրիվ պաշտոնական թալանչիների խումբ: ...Պետության մեջ պետություն և կուսակցություն», նրանում հաշվվում էր մոտ 10 հազար մարդ, որոնք բոլորը «լինելով մարդասպանությամբ, կեղեքումով, տուն ու տեղ այրելով և թալանով, առևանգությունով և զանազան տեսակի ոճրագործություններով սնված մարդիկ, առանց խղճահարության կատարում էին եռյակի տված հրահանգները: Հետապնդման և բանտարկության վախ չկար. գործադրված ոճրագործություններն ու վայրագությունները դիտվում էին որպես հայրենիքին մատուցած ծառայություն»[46]:

Ի դեպ, Մ. Ռիֆաթը սխալվում է: Ստեղծվել է ոչ թե 10 հազար, այլ 30 հազար մարդուց կազմված կազմակերպություն[47], չնայած հայ պատմաբանները սովորաբար օգտագործում են Ռիֆաթի տվյալները[48]:

Թեչքիլաթի շարքերի համալրման մյուս աղբյուրը մուհաջիրներն էին Բալկաններից և, մասնավորապես, Կովկասից, մանավանդ որ վերջինները ծանոթ էին տեղանքին[49]:

Թեչքիլաթի ստեղծման, կառուցվածքի, կազմի հարցերում կարծիքները միատեսակ չեն. այն, ինչ մենք շարադրեցինք, դրանցից մեկն էր, բայց կան նաև ուրիշ կարծիքներ, որոնք, չնայած լուրջ հակասություններ չունեն ներկայացվածի հետ, բայց մի քանի խնդիրներում (ժանդարմների դերը, առաջին Թեչքիլաթի ստեղծման տարեթիվը, ղեկավար կազմը և այլն) ուրիշ են: Այս երկրորդ տեսակետի հեղինակը Վ. Տատրյանն է: Համառոտ անդրադառնանք նաև այդ տեսակետին: Շատ գիտնականներ Թեչքիլաթի խաղացած դերը համեմատում են ֆաշիստական ss-ի հետ: Դրա ստեղծումը, ըստ գերմանացի պատմաբան Հյոսի, պայմանավորված էր այն բանով, որ «Թուրքիան առաջին աշխարհամարտում դեռ չուներ արևմտյանի նման լրատվական և լրտեսական ցանց...»[50]:

Այդ կազմակերպության մասին ամերիկյան պատմաբան Ֆ. Սթոդդրդը գրում է, որ այն «երիտասարդ արկածախնդիրներով՝ հիմնականում բանակի ենթասպաներով համալրված ուժ էր, ովքեր իթիհադի կոմիտեին ծառայելու մեջ աչքի են ընկել ահաբեկչական գործողություններով և սպանություններով»[51]:

Վ. Գուստի կարծիքով՝ կազմակերպությունը ստեղծվել էր 1911թ. դեկտեմբերին Թուրք

39 "Takvim-I Vekayi", 25. 05. 1919.
40 Ղազարեան Հ. Ցեղասպան Թուրքը, Բեյրութ, 1968, էջ 162:
41 Շահան Նաթալի Գիրք մատուցման և հատուցման, Բոստոն, 1949, էջ 22:
42 Ռեֆիկ Ա. Երկու կոմիտե՝ երկու ոճիր, Երևան, 1997, էջ 33:
43 Անտոնեան Ա. Մեծ ոճիրը, Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Բոստոն, 1921, Երևան, 1990, էջ 288:

44 "Takvim-I Vekayi", 1919, N3548.
45 Rifki A., Zeytindagi, Istanbul, 1981, s. 35.
46 Ռիֆաթ Մ., նշվ. աշխ., էջ 112-113:
47 Stoddard P. The Ottoman Government and the Arabs, 1911-18, Michegan, 1963.
48 Համբարյան Ա., Ստեփանյան Ս. Հայոց ցեղասպանություն, Երևան, 1995, էջ 15:
49 Sakir Z., 1914-18. Şihan Harbini Nasil Idare Ettik, Istanbul, 1944, s. 50.
50 Գուստ Վ., նշվ. աշխ., էջ 195:
51 Ն. տ.:

սպանների կողմից: Տրիպոլիտանական պատերազմում այն ուներ 500 անդամ: Կազմակերպության խնդիրն էր կասեցնել կայսրության փլուզումը հատկապես արաբական տարածքներում, մահմեդականների խռովություններ կազմակերպել Կովկասում՝ Արևելյան Հայաստանում ու նաև Միջին Ասիայում, անգամ՝ Հնդկաստանում: Կազմակերպությանը ֆինանսավորում էր նաև Գերմանիան: Համաձայն Սթոդդրդի՝ կազմակերպության բուռն գործունեության ժամանակ թեչքիլաթը Գերմանիայից ստացել էր չորս միլիոն ոսկի լիրա (200 միլիոն մարկ): Կազմակերպությունը կայսրության տարբեր մասերում զենքի և ռազմամթերքի պահեստներ էր ստեղծել պարտիզանական կռիվներ մղելու համար: Առաջին պլանին, իհարկե, հարձակումներն էին հայերի վրա: Ռազմական դատարաններից մեկը հաստատել է, որ «1914թ. հունիսի 21-ի զորակոչից հետո իթիհադի կենտրոնական կոմիտեն ստեղծեց Հատուկ կազմակերպություն, որն իր նպատակներով ու էությամբ բոլորովին այլ էր, քան եղածը»: Նույն իրողությունը հաստատել է նաև Կ. Պոլսի զինվորական պարետ Ջևադը. «Ռազմական նախարարությունը մեզ տեղեկացրել էր,- վկայել է նա,- որ կա երկու թեչքիլաթ: Մեկը ենթարկվում էր ռազմական նախարարությանը, մյուսը կցված էր երիտթուրքական կուսակցությանը»[52]:

Այդ երկու կազմակերպությունները սերտ կապերի մեջ էին, դրանց համագործակցությունը համակարգում էր Մ. Նուքրին: Տրապիզոնի կազմակերպության կապավոր Ցու. Ռիզան գտնում է, որ նոր թեչքիլաթը բացառապես ծառայել է հայերի բնաջնջմանը: Դժվար է հաստատ ասել, թե ով էր այդ նոր կազմակերպության փաստացի ղեկավարը՝ Թալեաթը թե Բ. Շաքիրը: Սակայն վկայություններ կան, որ դրա կազմակերպիչներն ու ղեկավարները եղել են Մ. Նազիմը, Աթֆը, Ազիզը և Կ. Պոլսի պարետ Ջեմալը:Կազմակերպության կապերը իթիհադի կենտրոնի և նախարարությունների միջև իրականացնում էր Հ. Էրթուրքը, իսկ նահանգների հետ՝ Ց. Ջեմիլը: Կազմակերպության գլխավոր շտաբի նստատեղն էր Էրզրումը: Թեչքիլաթի աշխատանքը համակարգել է Ջևադը, իսկ մարտական ջոկատները ղեկավարել է Ց. Ջեմիլը:

Հատուկ կազմակերպության զորաջոկատները, ըստ Վ. Տատրյանի, բաժանված էին երեք խմբի՝ ա) ժանդարմները և գավառական ոստիկանությունը: Երբեմնի «իսկապես ընտիր զորամասը»՝ 85 հազ. հոգի՝ վկայել է Լիման ֆոն Սանդերսը Թեհլիրյանի դատավարության ժամանակ: Նա գտնում էր, որ այդ «ընտրյալներին» փոխարինելու էին եկել «ոստիկանության անճոռնի խառնազանգվածը՝ մասամբ ավազակներ, մասամբ գործազուրկներ»: Սանդերսը նաև նկատում է, որ վերջինների կարգապահությունը չափազանց ցածր մակարդակի վրա էր: Նրանք ձևականորեն ենթարկվում էին տեղական պաշտոնատարներին, բայց իրականում՝ թեչքիլաթի ղեկավարներին կամ իթիհադի առաջնորդներին: Ռազմական դատարանները դրանց բնութագրեցին որպես «ժանդարմների, ովքեր ենթարկվել էին Հատուկ կազմակերպության ուժերին... և որոնք հայերի վրա հարձակումներ և զազրելի գործեր են իրականացրել» «այլասերված և հանցագործ հսկիչների» համագործակցությամբ: բ) Չեթեները (ավազակախմբերը), ովքեր անմիջականորեն ենթարկվում էին թեչքիլաթին: Դատական մի փաստաթղթում կարդում ենք, որ չեթեների գլխավոր խնդիրը «հարցերը վայրագ եղանակով լուծելն էր», այսինքն՝ իրականացնել հայ տարագիրների ոչնչացումը: գ) Բանտերից ազատ արձակված քրեական հանցագործները: Այդ քրեական հանցագործների մասին մի դատավճռում ասվում է, որ նրանք «օրինազանցներ կամ ազատ արձակված քրեականներ են», ովքեր կազմակերպել են «կոլեկտիվ սպանություններ», իրավասու էին հայերին «կործանելու և բնաջնջելու». նրանք նման էին «կախաղանների խուռներամ թռչունների»: Հ. Թահսինը պատմում է 28. 07. 1915թ. ուղարկված հեռագրի մասին, համաձայն որի չեթեները գործում էին Հատուկ կազմակերպության անունից և ժանդարմների հետ միասին պետք է հարձակվեին հայ տարագիրների վրա: Ելնելով նման վկայություններից պատմաբան Հյոսը եզրակացնում է, թե այդ ավազակախմբերը խիստ նպատակային էին սպանելու հայ տարագիրներին: Տրապիզոնի դատարանն ուղղակի արձանագրեց, որ չեթեական հրոսակախմբերը «հարձակվում էին տարագիրների քարավանների վրա», թալանում էին, հայերին «տանջում և սպանում»: Կանանց քշում էին տարբեր տեղեր, նրանց զարդերը, դրամն ու հագուստեղենը խլելուց հետո, բռնաբարում էին: Չեթեներին ստիպում էին ամիսներ շարունակ տարագիրներին «ուղեկցել... որպեսզի բռնագաղթվածներն ուժասպառ դառնային: Այդպիսով հայերի մեծ մասը մեռավ քաղցից, ծարավից և հյուծվածությունից»[53]:

52 Գուստ Վ., նշվ. աշխ., էջ 196:
53 Ն. տ., էջ 198-199:

09. 07. 1915-ին Վանգենհայմը հեռագրում է՝ թուրքական խժդժությունները «կատարվում են կոմիտեի միջոցով, որի անդամներն այնտեղ (Էրզրումում) գործում են որպես երկրորդ իշխանություն և ճակատագրական դեր են խաղում»: Շոյքներ-Ռիխտերը 05. 08. 1915-ին հայտնում է. «... Կա թերարժեք, բայց ուրիշներին ահաբեկող մի խումբ, որն անձնական նկատառումներով և մղված ընչաքաղցությունից քարոզում են հայերի բնաջնջման ռազմարշավ: Այդ մութ սադրիչների ազդեցությունն այնքան ուժեղ է, որ հնարավոր չէ պատկերացնել»[54]:

Իսկ մի քանի օր անց, 23. 08. 1915-ին Շտանգեն հայտնում է, թե հայերի ոչնչացումը «որոշված է եղել երիտթուրքերի Կ. Պոլսի կոմիտեի կողմից, այն լավ կազմակերպվել և իրականացվել է բանակի և հրոսակախմբերի մասնակցությամբ»[55]:

Նույն իրողության առկայությունը Ուրֆայում հաստատում է Բ. Էքարտի նամակը. «Երկու սարսափազդու հյուրեր սպայական արտահագուստով 1915-ի օգոստոսի սկզբին ժամանեցին քաղաք: Նրանք Կ. Պոլսի իթիհադի կոմիտեի պատվիրակներն էին: Նրանցից մեկը պետք է, որ լիներ Էնվերի զարմիկը»: Այդ «սատանայի պատվիրակները» անմիջապես կարգադրեցին սպանել բոլոր բանտարկյալներին, ասելով, թե «Հանուն ինչի՞ շարունակենք կերակրել նրանց»[56]:

Հայտնում է Մերսինի ամերիկյան հյուպատոս Նաթանը. «Ադանայի երիտթուրքական կոմիտեի երեք արյունարբու անդամների քշեցին քաղաքից, որովհետև հայերին հալածում էին, ինչպես շներին»: Նույն միտքը հաստատել է անգլիացի միսիոներ Ու. Զամբերսը, թե «Կ. Պոլսից եկած կոմիտեի մի էմիսար հասավ նրան, որ... անմիջապես գործադրվեցին տեղահանության հրամանները»[57]:

Վանգենհայմը չեթեներին կոչեց «ռազմականորեն կազմակերպված թուրք օրինազանցների և դիակապտողների հրոսակախմբեր», իսկ Բ. Էքարտը տեղյակ է պահում. «Կ. Պոլսից եկած և համազգեստի մեջ քողարկված, ազատ արձակված ոճրագործների» մասին և թուրքերից տեղեկացել է, որ հայերին կոտորել են «վարձու մարդասպանները»[58]:

Որ հայերին ջարդելու հարցում իթիհադն ու չեթեները համագործակցում էին, վկայում են նաև մի քանի ուրիշ արտասահմանցիներ՝ Բերգֆելդը Բայբուրդ-Էրզրում ճանապարհին տեսել է «մեծ հրոսակախմբեր», գերմանացի ենթասպա Կ. Շլիմեն Էրզրում-Տրապիզոն ճանապարհին էր տեսել «400 հոգուց կազմված ուժեղ հրոսակախումբ՝ ֆրանսերեն խոսող առաջնորդների հետ», այսինքն՝ երիտթուրքական կոմիտեի անդամների հրամանատարությամբ:

Երիտթուրքերի կենտկոմի նիստերից մեկում Էնվերն առաջարկեց հայերի բնաջնջման ծրագրի իրականացման գործնական-կազմակերպական աշխատանքը ղեկավարելու համար ստեղծել հանձնախումբ: Առաջարկությունն ընդունվեց: Ընտրվեց երեք հոգուց կազմված հանձնախումբ. այն անվանվեց Երեքի կոմիտե, որում ղեկավար դերը պատկանում էր Բեհաեդդին Շաքիրին: Կոմիտեն ներքին գործերի և ռազմական նախարարությունների հետ համատեղ մշակեց ջարդերի պլանը: Կոմիտեն բացարձակ անկախ էր և պետական որևէ օղակի համակարգի մեջ չէր մտնում: Ուներ իր կանոնադրությունը, տեղական մարմինները, զինված ուժերը: Կոմիտեի նիստերը տեղի էին ունենում իթիհադի ընդհանուր կենտրոնում:

Երեքի կոմիտեի կողմից հաստատված «Լրիվ ոչնչացման միջոցներն ու դրանց կիրառումը» փաստաթղթում գրված է. «Քաղաքի և գյուղաքաղաքի մեջ, որտեղ հայ կա, թե նրանցից ում պետք է առաջին հերթին ոչնչացնել, կորոշենք ՆԳ նախարարության տեղական (ներկայացուցիչների) հետ և յուրաքանչյուր շրջանին պահանջված թվով այս ուժերից (բանտերից ազատված հանցագործներից) կուղարկենք: Նրանք ճանապարհների մեր նշանակած հարմար վայրերում կսպանեն հայերի քարավաններին: ՆԳ նախարար Թալեաթն այդ քաղաքների վարչական աշխատողներին կհրահանգի, որ բոլոր հայերին պատերազմական շրջաններից դուրս բերելու պատրվակով խումբ-խումբ, օրը երկու անգամ ոստիկան-զինվորների հսկողության տակ տվյալ ճանապարհով որոշված տեղն ուղարկեն»: Եվ ապա. «Ոստիկան պաշտոնյաները, համաձայն այս հրամանի, (հայերին) ... կհանձնեն նրանց սպասող հատուկ կազմակերպությանը՝ չեթեներին և

54 Ն.տ., էջ 199:
55 Ն. տ.:
56 Ն. տ., էջ 200:
57 Ն. տ.:
58 Ն. տ.:

կվերադառնան, իսկ չեթեներն այդ հայերին մինչև վերջին մարդը կսպանեն և, որպեսզի հանրային առողջությանը չվնասեն, դիակները նախապես պատրաստված փոսերը կգցեն և կթաղեն: Ահա այս ձևով հաջորդաբար կիրականացնեն բնաջնջումը»[59]:

Երևանի կոմիտեի առաջին նիստում Բ. Շաքիրն ասաց. «Մենք պետք է ձևավորենք այնպիսի զինված ուժեր, որոնք դուրս լինեն իշխանության տեղական մարմինների վերահսկողությունից... Դրանք մեր հրամանները պետք է գործադրեն ...(իսկ) մենք պետք է միայն կենտրոնական կառավարությանը ճանաչենք և նրա ներկայացուցիչը հանդիսացող նախարարների խորհրդի հետ խորհրդակցենք... Մեր ստանձնած պարտականությունը հայերին (առանց բացառության՝ կին, երեխա, աղջիկ, ծեր ու հիվանդ) մինչև վերջին մարդը սպանելն ու բնաջնջելն է... այդ գործը չենք կարող կատարել ոչ զինվորի և ոչ էլ ժողովրդի միջոցով... Սա հասարակ և վայրագ ոճրագործություն է: Զինվորը կաթնակեր մանկանը մոր գրկից հափշտակելով, մոր աչքի առաջ չի կարող նրա գլուխը ջախջախել... Նման հրամանի գործադրումը նա իր զինվորական պատվին հակառակ կհամարի և կրմբոտանա: Ինչպես նաև զինվորն անկարող է ձեռքերը կապած ծերունուն կրծքից սյունին մեխել...»: Իսկ ժողովրդին զինելը վտանգավոր է, որովհետև «մի շարք բախտախնդիրների ադիթ ու ուժ կտանք մեր դեմ հանդես գալու համար: Ես կարծում եմ, որ մեզ համար հարմար մարդիկ գտել եմ... նրանց բանտերի մեջ գտա: Դրանք ոճիր գործած, մարդասպանության և զինվորական ծառայությունից խուսափելու պատճառով (բանտ ընկած) մարդիկ են: Եթե նրանց ազատ արձակենք և խմբերի բաժանենք, կարծում եմ, որ մի շատ լավ հատուկ կազմակերպություն կստեղծենք»[60]:

Բ. Շաքիրի առաջարկությունն ընդունվեց: Բանտերից հանեցին քրեական հանցագործներին, մարդասպաններին ու ավազակներին, նրանց զգեստավորեցին, զինեցին, յուրաքանչյուր 10-50 հոգուն դրեցին երիտթուրք խմբապետի ղեկավարության տակ: Թուրքական ռազմական դատարանի 1919թ. մայիսի 22-ի դատավճռի մեջ ասված է. «Այս ոճրագործներն ու ավազակները, հազիվ քարավանները քաղաքից դուրս էին գալիս, նախ տղամարդկանց բաժանում էին կանանցից, նրանց տանում էին մարդկանց աչքից հեռու վայրեր, որտեղ կողոպտում էին և, ամեն տեսակի տանջանքների ենթարկելուց հետո, կոտորում էին: Ապա կանանցից խլում էին գոհարեղենը և ունեցած դրամը, որից հետո նրանց մերկացնում էին, շատերին՝ բռնաբարում և ամիսներ շարունակ քայլեցնում էին այնքան ու այնպես, որ շատերն ընկնում էին և ճանապարհի ահավոր չարչարանքից հետո մեռնում էին քաղցից ու ծարավից»[61]:

1920թ. հունվարի 13-ին ռազմական դատարանը մահվան դատապարտեց Բ. Շաքիրին: Դատավճռում գրված է. «...Բ. Շաքիր բեյը, որպես «Հատուկ կազմակերպության» նախագահ, Ստամբուլից դուրս գալով, շրջագայել է Տրապիզոնի, Էրզրումի և այլ վիլայեթներում: Միաժամանակ բանտերից դուրս բերված ոճրագործներից և այլ հանցագործներից կազմված հրոսակախմբերի գլուխն անցնելով՝ տարբեր ժամանակներում, տարբեր վայրերում կոտորել է տեղահանված հայերին և կողոպտել նրանց ունեցվածքը... 3-րդ բանակի տեղակայման շրջանում Բ. Շաքիր բեյը կազմակերպեց և գործի դրեց մարդու մսագործների: Բոլոր խժդժությունները, չարիքները, ոճիրներն ու անկարգությունները Բ. Շաքիրի կազմակերպածներն էին: Հրոսակներից ոմանք ազատված էին կախաղանից ու ցցից, մյուսներն էլ արյունարբու ռազմիկներ էին և ոստիկաններ՝ կազմակերպված ոճիրներ գործելու համար... Պետությունը նրանց թիկունք էր կանգնած: Նրանք բնաջնջեցին մարդկային զանգվածների, որոնք զուրկ էին որևէ պաշտպանությունից: Կոտորածները կազմակերպված էին մի հատուկ ծրագրի համապատասխան և իրագործվեցին առանձնակի նպատակի համար»[62]:

Թեչքիլաթի անդամներն առանձնահատուկ իրավունքներ ունեցող մարդասպաններ էին, որոնք ոչ միայն պիտի կատարեին ցեղասպանների հրամանները, այլև պատժեին այդ հրամանները կատարելուց խուսափող, թերացող կամ խղճահարություն ցուցաբերող պաշտոնյաներին: Կազմակերպությունն օգտվում էր լիակատար արտոնություններից և կարող էր հաշվեհարդարի ենթարկել նույնիսկ բարձր պաշտոնատարներին:

59 Le Crime de silanse de genocide des Armeniens, Paris, 1984, p. 78.
60 Ռիֆաթ Մ., նշվ. աշխ., էջ 113-118:
61 "Takvim-I Vekayi", 22. 05. 1919 կամ տե՛ս «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի», Երևան, 1985, էջ 168:
62 "La Renessance", 1914, N 14.

Հատուկ կազմակերպության ծախսերը հիմնականում հոգում էր Ազգային պաշտպանության հիմնադրամը, այսինքն՝ հայերի ոչնչացումը դիտվում էր որպես ազգային պաշտպանության խնդիր: Կազմակերպության գործունեության համար նյութատեխնիկական հնարավորություններ ստեղծելու նպատակով, բացի պետական հատկացումներից, դրամական և այլ միջոցներ հայթայթվում էին ամենատարբեր և ամենազզրելի եղանակներով: Պատերազմի մեջ մտնելուց դեռ կես տարի առաջ Էնվերի հանձնարարությամբ ու իթիհադի գանձապահ և բանակի պարենավորման, մատակարարման ծառայության ղեկավար Ի. Հաքի միջոցով ձեռնամուխ եղան հիմնադրամի ստեղծմանը:

Աթըֆը չեթեական խմբերի կազմակերպման մասին ռազմական դատարանում ցուցմունք տվեց. «Մեզ իրավունք էր տրված այդ մարդկանց... պարենավորել, զինել և ուղարկել»: Հանցագործներին բանտերից հանեցին համաձայն այդ մասին հրապարակված օրենքի[63]:

Միաժամանակ մահապատժի էր ենթակա այն պաշտոնատարը՝ կուսակալ թե սպա, ինչպես նաև որևէ քաղաքացի, ով հայերի հարցում կանտեսեր կենտրոնից ստացված հրամանները:

Թեչքիլաթի ընդունած որոշումները հաստատելու իրավունքը վերապահված էր երիտթուրքերի Կ. Պոլսի կենտրոնի ղեկավար Ջևադին: Բնականաբար, այս ասպարեզում նույնպես վճռորոշը իթիհադի գաղտնի կենտրոնի որոշումներն էին: Գերմանացի Միկուշի վկայությամբ, ութ հոգուց բաղկացած այդ կոմիտեին էր վերապահված որոշումների ընդունումը: Ջևադը միաժամանակ ղեկավարում էր սպայակույտի իրավասություններ ունեցող մարմինը, որն իրականացնում էր ջարդերի ծրագրերի կենսագործման ղեկավարությունը: Այն ենթարկվում էր վարչական մարմնին, այսինքն՝ այն օղակին, որը հաստատում էր տարագրության և ջարդերի կարգը, ուղերթները, կոտորածի վայրերը, ջարդարարների գործելակերպը, տարագրության օրացուցակները: Ջարդերը կազմակերպելու համար գումարների՝ կապի, ծածկագրերի ու դրանք վերծանելու միջոցների, զինվորական ավտոմեքենաների և այլնի հետ տեղերն ուղարկվեցին մեծ թվով մարդիկ: (Բ. Շաքիրը մեկնեց Էրզրում, Ռիզան՝ Տրապիզոն, Ն. Էմիրը՝ Կենտրոնական Անատոլիա, Մ. Նեջիբը՝ Սև ծովի ափերը, Մուամմերը՝ Փոքր Հայք, իսկ Նազիմը համակարգում էր մեկնածների աշխատանքը): Վիլայեթներում ստեղծվեցին Հատուկ կազմակերպության հանձնաժողովներ, որոնց մեջ մտան տվյալ նահանգի վալին, զինվորական հրամանատարը, դատախազը, դատավորը, ոստիկանապետն ու առողջապահության տնօրենը: Թեչքիլաթի անդամ էին նաև մի խումբ գերմանացի և ավստրիացի զինվորականներ: Հետագայում Գերմանիա փախած ջարդարարները երեք տարի պատսպարվեցին Ֆոն Շեֆենդրֆի տանը, որը նույնպես կապված էր այդ կազմակերպության հետ: Նա Թուրքիայում գերմանական առաքելության անդամ էր, Էնվերի շտաբի պետը, Սարիղամիշի ճակատամարտի մասնակիցը:

1918թ. Ֆուաադը 20 հոգուց կազմված հանձնաժողովի անունից խորհրդարանին ներկայացրեց 10 կետից բաղկացած ամբաստանագիր, որի 10-րդ կետում ասված էր. «Երկրի ներսում վարչական վայրիվերումներ ստեղծեցին ազատության, կյանքի, սեփականության և պատվի վրա հարձակվող չեթեներին օգնեցին և աղետների մեղսակից եղան»[64]:

Երիտթուրքերի դատավարության նյութերում կարդում ենք, որ բանտերից հանված մարդասպաններից և ավազակներից «շատերը ժանդարմական համազգեստով ծպտված ընկերացան տեղահանության քարավաններին» և այդ կատարվում էր «համաձայն ՆԳ նախարարության հրահանգների»[65]:

Հատուկ կազմակերպության ավազակախմբերի ձևավորումն ու հայերի վրա դրանց հարձակումները տեղի էին ունենում գրեթե միաժամանակ: Առաջին հարձակումները կատարվեցին 1914թ. օգոստոսի վերջերին Կովկասի և Իրանի սահմանամերձ շրջանների հայկական գյուղերի վրա: Սեպտեմբերին Բ. Շաքիրը գրեց Թալեաթին. «Մենք փորձ ենք ձեռք բերել և ամենուրեք ջախջախում ենք ռուսներին: Մինչ ներկա պահն ավար ենք վերցրել ավելի քան 1 000 ոչխար և շուրջ 400 գլուխ խոշոր եղջերավոր անասուն»[66]:

Թուրքերի վկայությամբ՝ «Բ. Շաքիրի կողմից ավազակախմբերում ներգրավված էին 9-րդ բանակի լավագույն սպաները, որոնց հրամանատարն էր Իսմեթը, ինչպես նաև Էրզրումի ամենախիզախ բնակիչները: Հետագայում տեսա, որ նրանք ոչ միայն մեր նահանգներում էին գործում, այլև մարտական գործողությունների թիկունքում՝ թալանում էին գյուղերը»[67]:

63 "Takvim -I Vekayi", 14. 05. 1919.
64 Kutay C., նշվ. աշխ., էջ 72:
65 Դիվան Երուսաղեմի, թիվ Մ532.
66 "Vakit", 17. 10. 1933:
67 Koprulu S. Sarikamis ihata Manevrasi ve Meydan Muhaberesi, Istanbul, 1922, s. 112.

Թեչքիլաթում ծառայող գերմանացի սպաները հայտնել են, որ տեղական պաշտոնատարների և կուսակցական աշխատողների կողմից ղեկավարվող այդ ավազակախմբերն «իրենց գլխավոր խնդիրը համարում էին թալանի միջոցով արագ հարստանալը, ու նաև ազգաբնակչությանը վատ վերաբերելու միջոցով առաջացնել դժգոհություններ»[68]:

«Անհնար է այդ մարդկանց հետ պահել վայրագություններից ու թալանից»[69]:

Կայսրության բնակիչների, մասնավորապես, հայերի վրա հարձակումները կատարվում էին հարկեր հավաքելու, դասալիքներ բռնելու և զենքեր հայտնաբերելու պատրվակով: Ռուս-Թուրքական պատերազմի սկզբին Թեչքիլաթի ավազակախմբերը հատկապես մեծ վայրագություններ գործեցին Կարսի մարզում: Այդ ժամանակ էլ տեղի ունեցան առաջին զանգվածային կոտորածները: Սակայն սահմանամերձ շրջաններում չեթեների գազանությունները տևական բնույթ չկրեցին, որովհետև հայ կամավորական գնդերը դաժանությամբ էին վերաբերվում դրանց և ջախջախիչ հարվածներ հասցրեցին: Դրա փոխարեն հայերի ջարդերի մեջ գնալով ներքաշվում էին թուրք և քուրդ հասարակության ավելի ու ավելի լայն խավեր: Գրում է Գ. Պալաքյանը. «Թուրք հարյուրապետ մը՝ ինքն ինծի պատմեց, թե գավառները ոստիկաններ ղրկուեր են, ինչպես նաև 12-13 հազար գյուղացիներ՝ կացիններով և ուրիշ երկաթե գործիքներով զինուած, մասնակցելու համար «սուրբ պատերազմին». իրենց թույլ տրվեցավ բոլոր հայերն անխնայ սպաննել և միայն գեղեցկազույն աղջիկներն իրենց հետը տանել»: Այնուհետև այդ թուրքն ասում է. «Մեզի Կ. Պոլսեն հրաման տրուած է ամենքը սպանել, վասնզի սուրբ պատերազմ հռչակած ենք... Երբ զինուոր մը պատերազմի մեջ մեկը սպանե, յանցավոր չէ. այսպես գործեցի ես ալ, յետոյ՝ ջարդին ետքը աղոթք մը (նամազ) ըրի և արդարացայ»[70]:

«...Հատուկ կազմակերպությունը,- պատմում է Մ. Ռիֆաթը,- նուազագոյնը տասը, առավելագոյնը յիսուն հոգիե բաղկացած խումբերու բաժանուած և ասոնց հրամանատարները մարդասպանութեամբ, կեղեքումով, տուն ու տեղեր այրելով և թալանելով, առանգութեամբ և տեսակ-տեսակ ոճրագործութիւններով սնած մարդիկներ ըլլալով, Երէքներու գործադիր կոմիտեեն տրուած հրահանգներն առանց խղճահարութեան կը գործադրեին: Գավառներուն քաղաքային պաշտոնեաները՝ կեդրոնեն ստացուած... կտրուկ հրահանգին վրայ գործի փարած էին: Կարգ մը կուսակալներ, կառավարիչներ և տեղակալներ... տրուած հրամանը մեղմիվ և հեռատեսութեամբ կը գործադրեին, ոմանք ալ, Աստուած հեռու ընե, կուսակցականութիւնը կառավարութենեն նախընտրելով՝ մեկ-մեկ դժոխային սատանաներ դարձած էին: Ամեն կողմ, առանց խնայելու, մեծ ու փոքր, ծեր ու անկարող հայերը կը հավաքեին, ասոնցմե իսլամութիւնը ընդունողներն առժամեայ կերպով ազատ կը ձգեին, մնացածները ոստիկան-զինուորներու հսկողութեան տակ որոշուած ճամբաներով խումբ-խումբ կը տարագրեին: Եռեակ գործադիր կոմիտեին ենթակայ մասնավոր կազմակերպութեան չեթեները դիակներու սպասող ագռամներու նման որոշուած վայրերուն մեջ հայերու խումբերուն հասնելուն կը սպասեին: Ճամբու նեղութիւններեն յոգնած, հոգեպես բարոյալքուած, չինած ու սնած տունեն ու տեղեն բաժնուելու վիշտեն ընկճուած՝ այս խղճալի խումբերը, չեթեներու գտնուած վայրը հասնելով, ոստիկան զինվորներն իրենց ստացած հրահանգին համաձայն, անոնց յանձնելով կը վերադառնային:

Բառի բուն նշանակութեամբ խղճալի ու ողբալի, նույնիսկ քարասիրտ վայրենիներու գութը և կարեկցութիւնը շարժող թշուառ վիճակի մեջ, իրենց զավակներով սպանդանոց առաջնորդուող ոչխարի հոտերու նման տարագրուող այս մարդկային խումբերը «մասնավոր կազմակերպութիւն» անունով հրեշներու ձեռքն իյնալով, երևակայութենե և նկարագրութենե վեր խժդժութիւններու և հրահանգներու կենթարկուեին: Մասնավոր կազմակերպութեան այս կատաղած դահիճները, իրենց տուներեն, տեղերեն, երջանիկ բոյներեն բռնութեամբ դուրս հանուած, միայն հայ ըլլալուն համար տարագրուած այս մարդիկը իբր սովորական գործ սպանելով՝ զոհերուն, գոյքերը յափշտակելով, իրենց սրտին մեջ ամբարուած վայրագութիւնը և քինախնդրութիւնը չէին հագեցներ: Այս ոճրագործներու ոհմակի ի գործ դրած ոճիրներուն և վայրագութիւններուն ձևը նկարագրած ժամանակ գրիչը կը դողայ և կը խպնի: Տակավին ծծկեր, աշխարհին անտեղեակ, գութի ու սիրոյ կարոտ, մոր գրկին մեջ քնացող և կամ հրեշտակային ժպիտներով ու նայուածքով հոգին հրճուեցնող

68 AA (Bonn) Der WELtkrieg, NIld Secr. Bd 4, A 9305.

69 Ն. տ., Bd 9, A 37451:

70 Ցուշամատեան Մեծ եղեռնի, էջ 94-95:

ձագուկ մը, մորը գրկեն խլելով կացինի հարուածով մը, աչքերեն արցունքի տեղ արիւն հոսեցնող մոր աչքին առջև և այս վայրագութիւնը խնդուքներով ծափահարել և միւս կողմե մահուան սպասող ուրիշ տարագիրներ ալ ծափահարելու ստիպել... Դեռևս 7-8 տարեկան աղջիկներին ծեծի տակ լլկելով, վախի, սարսափի և դողի մատնուած այդ խեղճերի վրա իրենց անասնական կրքերը գոհացնող այդ հրեշների ոճիրները նկարագրելու ժամանակ գրիչը ինչպե՞ս չդողայ»[71]:

«Հատուկ կազմակերպության ստեղծումը,- գրում է Իվ Թեռնոնը,- ապացուցում է, որ իթիհադի կենտկոմն աշխարհամարտի սկսվելուց հետո, մինչև կառավարությունը կորոշեր Թուրքիայի մասնակցությունը դրան, ձեռնամուխ եղավ պանթուրքական ծրագրի իրականացմանը», ծրագիր, որը պարունակում էր մի քանի ասպեկտներ ու փուլեր և դրանց «բոլոր խոչընդոտներն առաջնային նպատակի իրականացման ճանապարհին անխնա վերացվելու էին»: Հատուկ կազմակերպությունը դարձավ հզոր գործիք Հայկական հարցը վերացնելու համար: Թեռնոնն այդ կազմակերպությունն անվանում է «պանթուրքիզմի գաղտնի բանակ», որը հայերի բնաջնջումն իրականացնելուց բացի, կոչված էր լուծելու աշխարհակալ ծրագրեր[72]:

Նրա կարծիքով Թեչքիլաթի մախսուսայի կազմակերպությունը մտահղացվել էր 1911 թվին և նույն տարվա դեկտեմբերին Տրիպոլիտանիայում պատերազմող թուրք սպաները ստեղծել էին նրա առաջին ջոկատները, որոնք ծառայություններ մատուցեցին Ադրիանապոլիսը գրավելու ժամանակ: Այդ մարդիկ, շարունակում է Թեռնոնը, կողմնակից էին թե Ջեմալ Էդդին Աֆղանիի պանիսլամիզմին և թե Էնվերի պանթուրքիզմին: Պատերազմի մեջ մտնելուց հետո կազմակերպության ղեկավարությունը հանձնվեց Բ. Շաքիրին, որը չեթեների մեծ մասին մասնակից դարձրեց ցեղասպանությանը: Մի այլ «Հատուկ կազմակերպություն» էլ ստեղծել էր երիտթուրքերի կոմիտեն և ամբողջությամբ ուղղված էր հայերի դեմ և ցրվեց երիտթուրքական կառավարության անկումից անմիջապես հետո, իսկ 1919թ. վերստեղծվեց և վերանվանվեց «Թեչքիլաթը միլլեթ», որը, համաձայն Ադրբեջանի կառավարության և Անկարայի Ազգային մեծ ժողովի ներկայացուցիչների միջև 1919 թվի նոյեմբերի 29-ին կնքված գաղտնի համաձայնագրի, վերածնվեց ու հատակ հակահայկական տեսք ընդունեց վեց ամիս անց ստորագրված մի նոր համաձայնագրով: Այն նախատեսում էր հատուկ կազմակերպությունն օգտագործել Ադրբեջանը ոչ թուրք տարրերից, մասնավորապես՝ հայերից, մաքրելու համար[73]:

Թեչքիլաթի մախսուսայի ղեկավարներից Ազիզը 1918թ. հոկտեմբերի սկզբին, երբ Թալեաթը պատրաստվում էր փախչել արտասահման, երիտթուրքերի կենտրոնի ու Թեչքիլաթի արխիվներն անհետացրեց: Սակայն խորհրդարանի 5-րդ հանձնաժողովի արխիվներում հայտնաբերվեցին վավերագրեր, որոնք փաստեցին մարդասպաններից ու բանտարկյալներից չեթեական խմբեր ստեղծելու վերաբերյալ ծածկագրերի (սկսած 1914թ. նոյեմբերից) առկայությունը: Հայտնաբերվեցին 1914թ. նոյեմբերի 16-ի, 20-ի, դեկտեմբերի 16-ի, 19-ի գրությունները, որոնք հաստատեցին, որ չեթեական խմբերը ձևավորվել էին մինչև Սարիղամիշի ճակատամարտն ու Վանի ինքնապաշտպանությունը: Երիտթուրքերի դատավարության ընթացքում ոչ միայն հաստատվեց այդ գերգաղտնի կազմակերպության գոյությունը, այլև բացահայտվեցին դրա կառուցվածքին, իրավասություններին առնչվող շատ մանրամասներ: Օրինակ, Ցոզղաթի դատավարության երկրորդ նիստում Սևադն ու Աթըֆը վկայեցին, որ Նազըմն ու ազգային անվտանգության գերտեսչության պետ Է. Ազիզն անմիջական մասնակցություն են ունեցել Թեչքիլաթի համար «կամավորների հավաքագրման» աշխատանքներին, որ չեթեական ջոկատների հրամանատարները նշանակվել են մայրաքաղաքում բանակային սպաներից, որ ռազմական նախարարության 10-րդ վարչության պետի տեղակալ գնդապետ Բ. Էրկինը 1914թ. նոյեմբերի 25-ին ծածկագրեր է ուղարկել Հատուկ կազմակերպության պետին և հայտնել օրենքի մի նախագծի մասին, որով թույլատրվում էր բանտերից ազատել հանցագործներին «բանակում ծառայելու համար»:

Ռազմական դատարանի նյութերով նույնպես հաստատվում է, որ Հատուկ կազմակերպությունը երկու փունկցիա է ունեցել. արտաքին՝ լրտեսություն, դիվերսիա, ահաբեկչություն Ան-

71 Ռիֆաթ Մ., նշվ. աշխ., էջ 91, 112, 120-121:

72 Ternon Y., Les Armeniens.Histoire d'un genocide, Paris, 1977, p. 101.

73 Ternwn Y., Enquete sur la negation d'un genocide, Marseille, 1989, pp. 155-156.

տանտի երկրների դեմ և ներքին՝ «համապատասխան վերաբերմունք» «ներքին թշնամու»՝ հայերի հանդեպ: Ընդ որում, եթե առաջին ֆունկցիան պլանավորում և մշակում էր բանակի գլխավոր շտաբը, ապա երկրորդը՝ իթիհադի կենտրոնը: Նույն դատավարության 4-րդ նիստում նախագահողը, ամփոփելով դատաքննության արդյունքները, հայտարարեց, թե դատարանը նույնպես այն համոզմունքին է, որ գոյություն է ունեցել Հատուկ կազմակերպության երկու տարբերակ, որոնցից մեկը ենթարկվել է ռազմական նախարարությանը, իսկ մյուսը՝ իթիհադի կենտրոնին: Դատարանում Քյուչուկ Թալեաթը վկայեց, որ այդ երկուսի միջև գոյություն ուներ սերտ կապ, փոխկապակցություն ու փոխադարձ կախվածություն: Կապի նախարար Մ. Քյազիմը խոստովանեց, որ ինքը ռազմական նախարարի հրամանով այրել է բոլոր հեռագրերը: Իսկ այն հարցին, թե ինչու փոքր էր Հատուկ կազմակերպության ղեկավարներին ուղարկած ծածկագրերի թիվը, Սևադը պատասխանեց՝ դրանց մի մասը վերադարձվել էր ուղարկողին[74]:

Դատավարության նյութերում տվյալներ կան, որ սկսած 1914թ. հուլիս ամսից բանտերից հանվեցին հազարավոր հանցագործներ[75]:

Վ. Տատրյանը գտնում է, որ թեչքիլաթի «մարդասպանական վարքագիծը հասկանալու համար հարկ է ուսումնասիրել իր թաքուն կապերն իթիհադի կուսակցության կենտկոմի հեղինակավոր քանի մը անդամներուն հետ: Իրականությունն այն է, որ այդ կազմակերպությունն ամեն բանե առաջ կուսակցական «արարած» մըն էր»[76]:

Թվում է, Հատուկ կազմակերպության հետ իթիհադի ու Բ. Դռան կապերի գաղտնիությունը պատմական գրականության մեջ արհեստականորեն չափազանցված է. տպավորությունն այնպիսին է, որ այդ կապը ոչ ոքի համար գաղտնիք չէր, բացի դրա վրա պնդող պատմաբաններից: Առավել ևս սխալ է թեչքիլաթին կուսակցական «արարած» անվանելը: Այն, որ այդ կազմակերպության ստեղծման նախաձեռնողն իթիհադի կենտրոնն էր, չի ամրագրում, թե այն կուսակցական կառույց էր: Նույն հաջողությամբ կարելի է կուսակցական, տվյալ դեպքում սուլթանական, անվանել նաև համիդիեներին, որովհետև դրանց կազմակերպման և կառավարման սանձերը սուլթանի ձեռքում էին: Ճշմարտությունն այն է, որ թե մեկը և թե մյուսը պետական կառույցներ էին՝ կոչված իրականացնելու հայերի ջարդերի ոչ երիտթուրքական, այլ թուրքերի ազգային-պետական ծրագիրը: Առնվազն տարօրինակ է Տատրյանի պնդումը, թե թեչքիլաթը «Թալեաթի տնօրինությամբ մարմին առած, և բժիշկներ Նազիմի և Շաքիրի կարգադրություններով «Հատուկ առաքելության» մը համար զորաշարժի ենթարկուած» կազմակերպություն էր[77]: Այս միտքը հաստատելու համար ասում է, թե էնվերն «առհասարակ համաձայնած էր այս դասավորումին, բայց իր ընդհանուր բանակատեղիին մեջ կը գործեր սպայակոյտի գնդապետ Սեյֆին... Երբ պրպտուի լիազորության հարցը, յայտնի կրլլայ, որ Հայատուկ կազմակերպությունն արքայական հրովարտակով օրինականացնելու խնդրին մեջ իթիհադականները ծանծաղամիտ և երկչոտ սուլթան Ռեշատը մոլորեցնելով իրատեի Շահանն կորզեցին իրմե իբրև բացատրություն, հարևանցի կերպով իրեն ըսած էին, որ կազմակերպությունը պիտի ջանայ ազգային նպատակներ և իդեալներ հետապնդել և պետության ծոցին մեջ գաղափարի, համերաշխության և միահամուռության կարգուսարք ապահովել»[78]:

Միամտություն է տուրք տալ թուրքական պատմագրությանը, թե ջարդարարների կազմակերպության ստեղծմանը ոչ կառավարությունն է մասնակցել և ոչ էլ երիտթուրքերի կուսակցությունը: Ինչ վերաբերում է սուլթանին, ապա թյուրիմացության մեջ գցելով են հաջողացրել ստանալ նրա ստորագրությունը: Ասել է թե, ոչ սուլթանը, ոչ կառավարությունը և ոչ էլ երիտթուրքական կուսակցությունը (էլ չասած թուրք ժողովրդի մասին) անտեղյակ են եղել ջարդարար քաղաքականության միջոցների ստեղծումից և օգտագործումից: Մինչդեռ թեչքիլաթիր տատները եղել է էնվերը, այն մշտապես ֆինանսավորվել ու մատակարարվել է ազգային պաշտպանության, այսինքն՝ բանակի բյուջեից, կառույցի ղեկավարու-

74 "Геноцид-преступление против человечества", стр. 43-44.

75 Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 532:

76 Տատրեան Վ. Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով, Վատերտովն, 1995, էջ 127:

77 Ն.տ.:

78 Kutay C. նշվ. աշխ., էջ 39:

թյան մեջ բանակն ուներ մեծ թվով ներկայացուցիչներ, ովքեր և ապահովում էին բանակի ու թեչքիլաթի համագործակցությունը: Բացի դա, ինչպես նշում է ինքը՝ Վ. Տատրյանը, այդ կազմակերպությունը չէր բավարարվում միայն հայերին ոչնչացնելով, այլև մասնակցում էր Թուրքիայի «ներքին ապահովության և վերակառուցման» աշխատանքներին, այսինքն՝ «Թուրքիան ամբողջապես թրքացնելուն, բոլորովին իսլամական համայնք ստեղծելուն...», բայց այդ «չափն ավելի խիզախ և քաջակորով» գործունեությունն այնքան թաքուն էր ծավալում, որ «դահլիճի նախարարներն անգամ լուր չունեին»[79]:

Այս միտքը հաստատելու համար բերվում են էշրաֆի ինքնագոհ խոսքերը. «Հայկական տեղահանությանց առնչուող խնդիրներուն ներքին ծալքերուն ծանոթ և ատոնցմե բխող գործողություններուն մեջ պարտականութիւն մը ստանձնած է»[80]:

Թուրքական հեքիաթ է: Այս առումով միանգամայն իրավացի է Կառզուն, երբ գրում է, թե հայերի ոչնչացմանը «պարտադիր մասնակցություն են ունեցել պետության բոլոր պաշտոնատարները՝ ինչպես քաղաքացիական, այնպես էլ զինվորական»[81]:

Ոչ մի կերպ չի կարելի համաձայնել նաև հետևյալ մտքի հետ. «... Յատուկ կազմակերպութիւնն իթիհատի այն մահասփիւռ դժոխային մեքենան էր, որուն միջոցով այդ կուսակցութիւնը յաջողեցավ ներթափանցել թրքական պետական հաստատութիւնը, այլափոխել այդ պետութեան կառուցուածքային և առաքելութեան հետ կապուած ընոյթը և պարտադրել պետութեանը՝ իթիհատի կուսակցութեան առաջադրութիւններուն որդեգրումը»[82]:

Եթե նույնիսկ անտեսենք, որ Սայիդ Հալիմի խոսքերն այն մասին, թե Հատուկ կազմակերպության «գեշ մարմինը» ստեղծվել էր առանց կառավարության գիտության, քաղաքական այդ գործչի հերթական չքմեղանքի արտահայտություն չէ, ապա անգամ այդ դեպքում անհնար է հավատալ, թե թեչքիլաթը ի զորու էր էական ազդեցություն գործել կառավարության ու դրա փաստացի կրող՝ իթիհադի կենտրոնի վրա: Թեչքիլաթն ավելին չէր, եթե ոչ գործիք իթիհադական պարագլուխների ձեռքում, որը հլու-հնազանդ կատարում էր վերջինների հանձնարարությունները թեկուզ նաև այն պատճառով, որ կազմակերպության բոլոր օղակների ղեկավարներն իթիհադականներն էին կամ նրանց նշանակած անձինք:

Պարզապես զարմանալի է, թե մենք՝ հայերս, որքան հեշտությամբ ենք ընկնում թուրքերի հյուսած սարդոստայնները: Ջ. Քուրթայի միտքը, թե հանձինս Հատուկ կազմակերպության իթիհադականները գտան մի որջ, որտեղ «ազգայնականությունը վերածվել էր կուռքի», որի միջոցով «հսկա կայսրությունը» դարձավ «կուսակցական բռնակալություն», այլ բան չէ, եթե ոչ հայերի ցեղասպանության մեղքը թուրք ժողովրդից և թուրքական պետականությունից հեռացնելն է: Իթիհադը կայսրությունը «կուսակցական բռնակալության» վերածեց Բալկանյան պատերազմից հետո, երբ թեչքիլաթը մտահղացված էլ չէր: Հատուկ կազմակերպությունը համադրում էր ցեղասպան ծրագրի իրականացումը, շրջանցելով «անկարող» վալիներին: Այն իր մեջ ներառավ նաև Քասաբ թաբուրուն՝ մարդասպանների զորախմբին և չեթեների ահաբեկչական ջոկատներին:

Եվս մի քանի վկայություններ և հարցադրումներ:

Ամերիկյան պատմաբան Ֆ. Սթոդդարդն խոսում է երիտթուրքական գաղտնի օղակի մասին, որը համալրված էր «Երիտասարդ արկածախնդիրներով, հիմնականում բանակի ենթասպաներով, ովքեր Միություն և առաջադիմություն կոմիտեում աչքի էին ընկել սպանություններով և ահաբեկչությամբ»[83]:

Կարծիքը, թե Հատուկ կազմակերպությունը ստեղծվել էր 1911-ին, ամենայն հավանականությամբ ճիշտ է: Նոր թեչքիլաթը նույնպես ստեղծվել էր մինչև առաջին աշխարհամարտի սկսվելը: Այդ հաստատել է նաև ռազմական դատարանը. «1914-ի հունիսի 21-ի զորակոչից անմիջապես հետո Միություն և առաջադիմություն կենտրոնը ստեղծեց Հատուկ կազմակերպությունը, որն իր նպատակներով և էությամբ բոլորովին այլ էր, քան մինչ այդ գործողը»: Ժանդարմները ավելի շուտ ենթարկվում էին Հատուկ կազմակերպությանը կամ իթիհադի առաջնորդներին: Ցեղասպանների դատավարությունների նյութերում հաճախ կարելի է հանդիպել հետևյալ

79 Kutay C. նշվ. աշխ., էջ 18, 36-38:

80 Տատրեան Վ., նշվ. աշխ., էջ 140:

81 Carzou J. M., Genocide Exemplaire. Armenie, 1915, Paris, 1975, p. 123.

82 Տատրեան Վ., նշվ. աշխ., էջ 131:

83 Գուատ Վ., նշվ. աշխ., էջ 195:

հաստատումների՝ մեծ էր այն ժանդարմների թիվը , ովքեր «ենթարկվել են Հատուկ կազմակերպությանը և հայերի դեմ քրեական հանցագործություններ և զազրելի գործեր են կատարել»[84]:

Տրապիզոնի դատավճռում ասվում է «այլասերված ու հանցագործ հսկիչների» մասին, որոնց հատկացրել էին այնպիսի ժանդարմներ, ովքեր պատրաստ էին համագործակցելու հանցագործ «անհատների հետ»: Հատուկ կազմակերպության տրամադրության տակ էին նաև չեթեները, որոնք առաջադրանք ունեին «առկա խնդիրները լուծելու վայրագ ուժով», և դա արվում էր ռազմական առաջադրանք կատարելու քողի տակ:

Վանգենհայմը հայտնում է, որ Էրզրումում երիտթուրքերը 1914-ի դեկտեմբերին կազմում էին հալածանքի ենթակաների ցուցակները: Այդ մասին վկայում են նաև Էրզրումի ամրոցի պարետ Փոսելթը: Ռայխի գործակալ Պ. Շվարցը գրում է, թե ջարդերը իթիհադի «նյութած չարժման» հետևանք էին: Շոյքներ Ռիխտերը տեղեկագրում է, թե զարհուրելի իրողությունները երիտթուրքերի՝ որպես «երկրորդ իշխանության», կազմակերպածներն էին: «Պատերազմի սկզբում,- գրում է Ա. Ռեֆիկը,- Ստամբուլից բազմաթիվ հրոսակախմբեր ուղարկվեցին Անատոլիա: Այդ հրոսակախմբերը բանտերից հանված մարդասպաններից ու հանցագործներից էին կազմված: Սրանք ռազմական նախարարության մարզահրապարակում Հատուկ կազմակերպության միջոցով մեկ շաբաթ վարժվելուց հետո Կովկասի սահման էին ուղարկվում: Հայերի նկատմամբ իրականացվող բռնություններում ամենից մեծ հանցագործություններն այս հրոսակախմբերն են կատարել»[85]:

Ա. Ռեֆիկին կարելի է հականալ. այն տարիներին դժվար չէր չփոթվել՝ կարծել ոչ թե երկու, այլ մի հատուկ կազմակերպություն է գոյություն ունեցել: Արևմտահայերին ոչնչացրեցին ոչ այնքան «Կովկասի սահման» ուղարկված հանցագործները, որքան բնաջնջման նպատակով ստեղծված ավազակախմբերը: Թուրք պատմաբան Ս. Պարիրը գրում է. «Բռնագաղթի օրենքի կիրառումը դրված էր Թեշքիլաթի մախսուսա կազմակերպության վրա...»[86]:

Նույն միտքը հաստատում է Թ. Աքչամը. «Անատոլիայի ոչ թուրք ժողովուրդների ոչնչացման կարևոր կետերից մեկի իրականացման պարտականությունը դրված էր Թեշքիլաթի մախսուսայի վրա, որը գործում էր Արևելյան Անատոլիայում»[87]:

Դեռ 1909թ., ապա նաև Բալկանյան պատերազմում գործում էր «ֆիդայիների կազմակերպություն» անունը կրող մի ոչ կանոնավոր ռազմական ուժ: Կազմակերպությունը կից էր իթիհադի կենտրոնին և ոչնչացնում էր նրա թշնամիներին ու ընդդիմադիրներին: Այդ կազմակերպությանն է վերագրվում նաև Հ. Պապիկյանի սպանությունը: Կազմակերպության շարքերում էին իթիհադի այնպիսի հայտնի գործիչներ, ինչպիսիք էին Հալիլը, Ա. Կաղիրը, Ս. Հազը, Օ. Նաջին, Կ. Էշրեֆը և այլք:

1913թ. հեղաշրջումից անմիջապես հետո երիտթուրք ֆիդայիների ջոկատների հիմքի վրա ստեղծվեց Հատուկ կազմակերպությունը: Այն սկզբում ձևավորվեց որպես բանակային դիվերսիոն ուժ, որը գործեց ոչ միայն Բալկանյան պատերազմում, այլև ռուսների դեմ և ռազմական նախարարության տրամադրության տակ էր: Քիչ անց ստեղծվեց երկրորդ Հատուկ կազմակերպությունը ՆԳ նախարարության ենթակայության տակ: Ռազմական ատյանին տված ցուցմունքում իթիհադի կենտկոմի անդամ Ռիզան ասաց. « ... Երկրորդ թեշքիլաթի մախսուսան ստեղծվել է, որպեսզի մի շարք վիլայեթներում, սանջակներում, կազաներում իրականացնի տեղահանությունը»[88]:

Անդրադառնանք նաև հայ հեղինակների վկայություններին ու ներկայացրած նյութերին:

Գրիկերը գրում է. «... 21 յուլիս 1914-ի զորակոչեն անմիջապես ետք Երիտասարդ թուրքերու կուսակցութեան կեդրոնական կոմիտեն կազմակերպած է Թեշքիլաթը մախսուսա մը, որ բոլորովին տարբեր է արդեն գոյութիւն ունեցող Թեշքիլաթը մախսուսայեն իր նպատակով և իր կազմութեամբ: Այս նոր Թեշքիլաթը մախսուսային մեջ ընդունուեցան ներքին գործերու և արդարութեան նախարարութիւններու հրահանգով բանտերեն ազատ արձակուած դատապարտեալ ոճրագործները, որոնք չէին ընդունուած պատերազմական նախարարութենեն կախում ունեցող Թեշքիլաթը մախսուսայի մեջ: Բանտերեն ոճրագործներուն ազատ արձակելու ատեն կուսակցութիւնը հանրային կարծիքը մոլորեցնելու համար լուրեր տարածեց, թե բանտերեն հանուած ոճրագործները պիտի գործածուին պատերազմի ճակատներուն վրայ, մինչդեռ իրականութիւնը այն էր, որ անոնք ղրկուեցան կանխապես որոշուած ջարդավայրեր հայ կարավանները կողոպտելու և կոտորելու համար»[89]:

Թեշքիլաթի առաջ խնդիր դրվեց. «Մեռցնել հայերը, նրանց կողոպտել և բռնաբարել համաձայն գործադիր իշխանութեան հրամանների»: Հետագայում Թեշքիլաթում ընդգրկվածների թիվը հասցվեց 40 000-ի, բայց ոչ 100 000-ի, ինչպես նշում են որոշ պատմաբաններ: Ընդունված որոշման մեջ նաև ասված է. «Թալեաթին հետ կը դասավորենք բնաջնջելիք հայերուն քաղաքները և ավանները: Կը բաժնենք շրջաններու և պետք եղածին չափ չեթե կը ղրկենք ճամբաներուն վրայ որոշ տեղեր, որտեղ անոնք կը սպասեն... (տեղի) պաշտոնեաներուն հրահանգ կը տրուի ոստիկաններով և ժանդարմներով կարավանները դուրս հանել և հսկողութեան տակ բերել և յանձնել չեթեներուն»: Այնուհետև ասվում է. «Սպանութիւնները լրացնելե յետոյ դիակները կը նետուին նախապես պատրաստուած խրամներու, փոսերու մեջ և կը թաղուին հանրային առողջութիւնը պահպանելու համար: Կիներու և աղջիկներու բռնաբարութեանց հանդեպ լուռ կը մնանք»[90]:

Եվս մի վկայություն: 1914թ. հոկտեմբերին Էնվերը հրաման տվեց ստեղծելու թեշքիլաթը: Կազմվեց մի հանձնաժողով՝ Աթրֆ, Նազըմ և Կ. Պոլսի անվտանգության կոմիտեի պետ Ազիզ: Կազմակերպության ստեղծումը վերահսկելու համար թեշքիլաթի հրամանատար նշանակվեց Ս. Ասքերին[91]:

Ռազմաճակատին օգնող թեշքիլաթը ստեղծվել էր 1913թ. սկզբին Բալկանյան պատերազմի ժամանակ, որը հետագայում գործեց նաև Կովկասյան ռազմաճակատում: Այդ թեշքիլաթի հետ Բ. Շաքիրը գործ չի ունեցել: Ուրիշ բան է, որ նոր թեշքիլաթը նույնպես գործում էր նաև Կովկասյան ռազմաճակատի շրջանում, սակայն ոչ թե ռուսների, այլ հայ բնակչության դեմ: 1915թ. փետրվարի 19-ին չեթեական այդ խմբերի ղեկավարությունը վերցվեց ռազմական նախարարությունից ու հանձնվեց քաղաքացիական իշխանություններին ու երիտթուրքական կոմիտեներին[92]:

Թեշքիլաթն ուներ չորս բաժանմունք՝ Ռումելիայի, Կովկասյան, Աֆրիկյան և Արևելյան վիլայեթների: Բ. Շաքիրը վերջին բաժանմունքի ղեկավարն էր: Թեշքիլաթը «կառավարութեան և օրենքներու միջամտութենեն զերծ էր և յուր քայլերուն մեջ անկախ՝ միայն Երեքի գործադիր կոմիտեին հրամանով գործող...»: Գործադիր կոմիտեն նույնպես «անկախ, ոչ պաշտոնական, ոչ պատասխանատու մարմին մըն էր, որ ուներ իր սեփական քարտուղարութիւնը, քննիչները... Կառավարութեան մեջ կառավարութիւն մը, կուսակցութեան մեջ կուսակցութիւն մը, և լրջորեն վտանգավոր տարր մըն էր»[93]:

Հայկազ Ղազարյանը թեշքիլաթի գործելակերպը բնութագրում է հետևյալ կերպ. «Մինչև պատերազմին վերջանալը այրած-մրկած էր երկրին հայ ժողովուրդը, և զինադադարի տարիներուն ալ... շատ արժեքավոր անձերու արիւնը մտած էր, տուներ ավերած, քաղաքներ և գիւղեր փճացուցած էր»: Նրանց շարքերում կային «Ռումելիեն եկած օրինազանց և ինքնութիւնին կասկածելի անզուսպ անձեր, ոճրագործներ, կողոպտիչներ»: (Նրանք)«զորախմբերու ձևով դասերու բաժանուած էին և ատոնց վրայ նշանակուած էին պետեր, զինուորական սպաներ կողոպտելու, տուն, խրճիթ, ընտանիք այրելու, թալանելու և պատիվ բռնաբարելու՝ նման ոճիրներ և չարիքներ գործելու»[94]:

Թեշքիլաթի ստեղծման ու դրա գործունեության մասին պահպանվել են նաև Թալեաթի հրամանը և օրենքը: Սխալվում է պրոֆ. Հ. Ղազարյանը, երբ Հատուկ կազմակերպությանց ստեղծման տարեթիվը հարմարեցնում է այդ օրենքի ընդունման տարեթվի հետ՝ 1915թ. մայիսի 14: Առաջին անգամ չէր, որ Կ. Պոլիսը այս կամ այն խոշոր նշանակության քայլը կատարում էր և ապա միայն որոշում կամ օրենք հրապարակում: Դա հասկանալ կարելի է, որովհետև այդ քայլերի հեղինակը ոչ թե պետական համապատասխան մարմիններն էին, այլ իթիհադի գաղտնի կենտրոնը: Միանգամայն արդարացի է Գրիկերը, երբ գրում է. «Պոլսոյ մեջ Երիտասարդ թուրքերու կուսակցութեան ակումբը՝ Նուր էլ Օսմանիե, դարձած էր պետական որոշումներու և գործունեութեան ընդհանուր կեդրոն կամ կառավարական զանազան վարչական մասնաճիւղերու

84 Գուստ Վ., նշվ. աշխ, էջ 197:
85 Ռեֆիկ Ա., նշվ. աշխ., էջ 33:
86 Partar S. Osmanli' dan Gunumuze Gizli Devlet. Ist., 1997, s. 76.
87 Akgam T. Insan Haklari ve Erment Sorunu Ittihat ve Terakkiden Kurtulus Savasina, Ist., 1999, s. 221.
88 "Takvim-I vakayi", 1919, թիվ 3554:

89 Գրիկեր Եղղատի Հայասպանութեան վավերագրական պատմութիւնը, Նյու Յորք, 1980, էջ 263:
90 Ղազարեան Հ., նշվ. աշխ., էջ 37:
91 Բեյլերյան Ա., նշվ. աշխ., հ. 1-ին, էջ 29:
92 «Սաբահ», 14. 12. 1918:
93 Նույն տեղում, էջ 38-39:
94 Ղազարեան Հ. նշվ. աշխ., էջ 39:

գործատեղի: Հոն էր, որ վճռած էին հայերու տեղահանութեան գործողութեան մանրամասնութիւնները, հոն էր, որ ծրագրած էին հայերու կոտորածներուն մանրամասն որոշումները և ոճիրներու գործադրութեան վայրերը կանխապես նշանակուած էին, հոն էր, որ վճռած էին բանտերեն ազատ արձակել դատապարտեալ ոճրագործները: Նոյնպես կուսակցութեան կեդրոնական կոմիտեն Օսմանեան կայսրութեան հայաբնակ նահանգներուն, գավառներուն և գավառակներուն մէջ տարածած էին կազմակերպական ցանցեր՝ հոն նշանակելով պատասխանատու քարտուղարներ և պատուիրակներ, որոնք տեսակ մը լիազորութիւն ունէին պաշտոնական վարչութեան վրայ հայերու տեղահանութեան և բնաջնջումի գործերուն կարգադրութեան մէջ»[95]:

Հատուկ կազմակերպության ստեղծմամբ և դրա գործունեության կազմակերպմամբ զբաղված էին պաշտոնական և ոչ պաշտոնական նշանակալից թվով անձինք և մարմիններ: Դա, նախ, երիտթուրքական կուսակցությունն էր, դրա գաղտնի կառույցները, կուսակցության կենտրոնն ու առաջնորդները, նահանգների և գավառների պետական և կուսակցական օղակները: Սակայն կազմակերպության անմիջական ղեկավարությունը, ինչպես արդեն ասվեց, իրականացնում էր Երեքի կոմիտեն (Բ. Շաքիր, Նազըմ, Շուքրի), որի գործակալների թվում էին հասարակության բոլոր խավերին պատկանող հազարավոր անձինք: Թեչքիլաթի ջոկատները ղեկավարում էին օսմանյան բանակի սպաները: Այդ ջոկատները հիմնականում հավաքագրվում էին հանցագործներից, ավազակներից, մարդասպաններից: Ցոզղաթում թեչքիլաթի շարքերը համալրելու համար բանտից հանված 65 հոգուց 51-ը մարդասպան էր, 12-ը՝ ավազակ[96]:

«Իթիհադի կուսակցության գերադաս մարմինը,- գրում է Վ. Տատրյանը,- յատուկ կարգադրությամբ այդ ոճրագործները կայսրության մէջ բանտերեն ազատ արձակել տուավ և ջարդի գործին լծեց: Ատիկա ընելու համար, սակայն, պետք ուներ արդարության, պատերազմական և ՆԳ նախարարութիւններու աջակցութեան: Քանի որ այդ նախարարութիւնները կը կառավարուէին կուսակցութեան կողմե նշանակուած վարիչներով, հարցը դիւրութեամբ լուծուեցավ: Բանտերու վարչութիւնը... մեծապես դիւրացուց գործը... Պատերազմական նախարարութիւնը թրքական խորհրդարան ղրկեց գնդապետ Պ. Էրքինը օրենսդիր մարմնի անդամները համոզելու համար, որ հայրենիքին պիտի ծառայեն դատապարտեալ ոճրագործները: Արդարության նախարարութիւնը ըրավ նոյնը, հոն ղրկելով ավագ խորհրդական Ե. Քեմալը: Այսինքն, կառավարության գրեթե բոլոր իշխանութիւնները լծուեցան իթիհատի կուսակցական ոճրապարտ ծրագիրները իրագործելու նպատակին»[97]:

95 Ղազարեան Հ. նշվ. աշխ. էջ 229-230:
96 Դ. Ե., թիվ Մ534:
97 Տատրեան Վ. նշվ. աշխ., էջ 131-132:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայերի բնաջնջման նախապատրաստությունն ու կոտորածներն ընթանում էին զուգահեռ և հանդիսանում էին ցեղասպանության բաղադրիչները: Մեծ եղեռնի նախապատրաստությունը ոչ թե ամիսներ, այլ տարիներ է տևել: 1914թ. սեպտեմբերի 20-ին Հիրսը գրում է Սազոնովին, որ ռուսական սահմանի մոտ տեղի են ունենում թուրքական զորքերի զորաշարժեր: «Մուսուլմաններին զենք են բաժանում հայերի առաջիկա կոտորածների համար»[1]:

Բայազետում «իշխանությունները շարունակում են զինել ավազակախմբերին: Հայերը խուճապահար փախչում են Ռուսաստան...»[2]:

Նոյեմբերի 8-ին կաթողիկոսը Վորոնցով-Դաշկովին տեղյակ պահեց. «Թուրքական իշխանություններ, զորքերի, մանավանդ անկանոն զորախմբերի և մոլեռանդ ամբոխի կողմից սպասվում են այնպիսի աղետներ, որպիսիք մարդկային երևակայությունը դժվար թե ի զորու լինի պատկերացնել»[3]:

Ժան-Մարի Կառզուն նկատում է, որ եղեռնին նախորդեցին տեղական նշանակության բազմաթիվ փաստեր և իրադարձություններ, որոնց ուշադիր դիտարկումը հանգեցնելու էր այն մտքին, թե փոթորիկը մոտենում էր, Թուրքիայի հայերը վտանգված էին և բնաջնջման քաղաքականությունը գործողության մեջ էր դրվել: Այդ մասին բազմաթիվ վկայություններ ու եզրահանգումներ կան դիվանագիտական զեկուցագրերում[4]:

Հայոց բնաջնջման նախապատրաստության մասին տեղեկություններ ստացվում էին դեռ 1910 թվին: Դա պատահական չէ, քանի որ Մեծ եղեռնի արմատները երիտթուրքերի 1910 և 1911թթ. համագումարների միջով ձգվում էին մինչև զուլումի տարիները և հանդիսացան հայոց ցեղասպանության երկրորդ ու վճռական փուլը: Սակայն այդ փուլի սկիզբը մինչև օրս որոշակիացված չէ: Խորհրդանշականն ավանդականի ուժով վերածվել է պատմական հավաստիության նշանակություն ունեցող արժեքի: Նաև ակնհայտ է, որ հայերի բնաջնջման որոշում ընդունելու և դրա իրականացման սկզբի վերաբերյալ հարցի ցանկացած միանշանակ պատասխան թերի է: Թերևս դրա պատճառը պատասխանների առատությունն ու խայտաբղետությունն են, որոնք ընդգրկում են աշխարհաքաղաքական, ռազմավարական սոցիալ-տնտեսական և գաղափարախոսական-կրոնական խնդիրներ և իրողություններ: Երիտթուրքերի առաջին սերունդն ասպարեզ իջավ որպես պանիսլամիստ, ապա հարեց օսմանիզմին, հետո վերադարձավ պանիսլամիզմի մի տարբերակի, որը չփման մեծ մակերես ուներ թուրքիզմի և համաթրքության հետ: Իթիհադը Բալկանյան պատերազմի մեջ մտավ համիսլամիստ, իսկ դուրս եկավ համաթուրքիստ: Այս հանգրվանում թուրքիզմն իր դրսևորումը գտավ կայսրությունը հայ բնակչությունից չուտափույթ դատարկելու կողմնորոշման մեջ:

Բիթլիսի ռուսական հյուպատոսի վկայությամբ՝ թուրքերը եղեռնի նախապատրաստությանը ձեռնամուխ էին եղել մինչև աշխարհամարտի սկսվելը: Նա գրում է, թե իշխանությունները «շարունակում են զենք ու զինվորական հանդերձանք ուղարկել զանազան քաղաքներ»: Մեկ օրում Բիթլիս ուղարկվեց 38 արկղ զենք: Սղերդում մահմեդականների հին մակնիշի հրացանները փոխարինվեցին նորերով: Ամերիկյան "Die Sutluk" հանդեսը 1915թ. սեպտեմբերի 30-ին գրեց. «Հիմք կա հավատալու, որ հայերի վրա հարձակման որոշումը կայացվել էր Կովկասյան ռազմաճակատից Էնվեր փաշայի վերադառնալու ժամանակ»:

Կառզուն գտնելով, որ բնաջնջման որոշումը երիտթուրքերն ընդունել են մինչև Վանի կռիվները, մատնանշում է, թե «հայերի տեղահանությունը թելադրված չէր ռազմական նկատառումներով», և որևէ փաստ չկա վկայելու, որ հայերը պատրաստվել էին ապստամբելու[5]:

1 АВПР."Политархив", д. 3484, л. 18.
2 Ն. տ., Պ. 3504, ս. 9:
3 ՀՀ ՊԿՊԱ, ֆ.1, ց. 1, գ. 200:
4 Carzou J., նշվ. աշխ., էջ 110-111:
5 Ն. տ., էջ 120-121:

Նա շեշտում է, որ հայերի բնաջնջումը կատարվում էր «Նևրոզով բռնված գործընթացի տրամաբանությամբ»: Բուխարեստի գերմանական դեսպանատանը հայտնաբերված փաստաթղթերը վկայում են, որ 1914թ. հուլիսին թուրքական և գերմանական պաշտոնատարները քննարկել և հավանություն էին տվել հայերի բռնագաղթի ծրագրին, որի առաջին տարբերակը ծնվեց իթիհադի 1911թ. համագումարում, ամբողջականացվեց 1913թ., վերամշակվեց և վերջնական տեսք ստացավ 1914թվի կեսերին: 1914թ. դեկտեմբերին և 1915թ. հունվարին Թալեաթն ու Էնվերը բռնագաղթի հարցի շուրջ խորհրդակցություններ են ունեցել Վանգենհայմի հետ: Քննարկումներից մեկի ժամանակ, փետրվարի 15-ին, Թալեաթը ֆրանսերեն ասել է. «Այժմ միակ հարմար պահն է»: Նույն օրը թուրքական թերթերը գրեցին. «Կասկածելի հայերը, անհատ կամ խմբովի, ուրիշ վայրեր են տեղափոխվելու»: Լեփսիուսը հաստատում է, որ երիտթուրքերը հայասպան ծրագրի մշակմամբ սկսել էին զբաղվել 1911 թվին: Դեմբարսկին գտնում է, որ բնաջնջման «պլանավորված, մանրակրկիտ նախապատրաստությունը» սկսվեց 1914թ. սեպտեմբերին[6]:

Իվ Թեռնոնը դժվարանում է նշել հայերի բնաջնջման մասին որոշման ընդունման ճշգրիտ տարեթիվը՝ պատճառաբանելով, թե իթիհադի կենտրոնի նիստերի արձանագրությունները չեն պահպանվել: Նա հավանական է համարում 1915թ. հունվար-փետրվար ամիսները, քանի որ «անհրաժեշտ էր նվազագույնը երկու ամիս այդ դժոխային պլանի իրականացումը նախապատրաստելու համար»: Նա գրում է, որ երիտթուրքերը հենց իմացան, որ օսմանիզմի վարդապետությունն անիրատեսական է, իրենց գաղափարական զենքը դարձրեցին «կոլեկտիվ մոլագարությունը»: Գաղափարախոսությունը փոխվեց և հայերը դատապարտվեցին[7]:

Ուոքերը նույնպես կարծում է, որ բնաջնջման վերջնական որոշումը կայացվել է 1915-ի փետրվարի կեսերին: Նա գրում է. «Դրանից հետո կատարված դեպքերից, որոնք լրիվ հաստատված են փաստաթղթերով, մենք կարող ենք եզրակացնել, թե կատարվածն ինչ էր՝ օսմանյան հայերի բնաջնջում»: Նման որոշումը բնականաբար բխում էր զարգացում ապրած թուրքական ռասիզմից: Թուրքական ազգայնամոլությունը, դրան գումարած պանթուրքիզմի հավակնությունները՝ «Թուրքիան դեմքով դեպի Արևելք», նշանակում էր, որ Հայաստանը պետք է մաքրվեր հայերից: Պատերազմը երիտթուրքերին գործելու համար նպաստավոր պայմաններ էր ընձեռում[8]:

Թ. Աքչամը Մեծ եղեռնի նախապատրաստական աշխատանքների սկիզբը համարում է երիտթուրքերի կենտրոնի 1914թ. օգոստոսի 2-ի երեկոյան ընդունած որոշումը ռազմական նախարարության իրավասության տակ եղող թեչքիլաթը մախսուսեն վերակառուցելու վերաբերյալ, որը խնդիր էր դնում իրականացնելու «իսլամական միություն և թուրքերի միավորում թուրքիզմի դրոշի ներքո...»[9]:

Նաև խնդիր դրվեց, անկախ այն բանից, Թուրքիան պատերազմի մեջ կմտնի թե ոչ, անհրաժեշտ էր ստեղծել զինված ավազակախմբեր ռուսական տարածք թափանցելու համար: Աշխատանքները համակարգելու պատասխանատվությունը դրվեց ռազմական նախարարության վրա:

Աստվածաբան Ֆ. Լիթելը ցեղասպանություններին, այդ թվում նաև Մեծ եղեռնին բնութագրական է համարում՝ արհամարհված և վիրավորված փոքրամասնության գոյությունը, մեծամասնության ցածր մշակութային մակարդակը, կառավարություններին գործիք ծառայող գաղափարական, քաղաքական շարժման առկայությունը, որն արտահայտվում էր ահաբեկչության ձևով, բազմակազմության արհամարհումն ու դրա ավանդական բացակայությունը, ինչը «ներքին թշնամուն» ավելի վտանգավոր է համարում, քան պատերազմական իրավիճակը, որը ցեղասպանին գործելու անսահման հնարավորություն է ընձեռում, իսկ ազգային փոքրամասնություններին դարձնում է ավելի անօգնական, այդ փոքրամասնությունների անպաշտպան, դիմադրության անկարող վիճակը, բռնության և դաժանության փիլիսոփայության առկայությունը, պատասխանատվությունից խուսափելու կեղծարար միջոցների օգտագործումը, զինված ուժերի քաղաքականացումը, իշխանության համալրումը մոլեռանդ տարրերով, սպանության

6 «Հայաստան» (օրթ.), 10. 05. 1990:

7 Ternon Y. Les Armeniens. Histoire d'un genocide, p. 101.

8 Walker C. Armenia, Survival of a nation, New York, 1984, p. 236-237.

9 Mil A. Umini Harpte Teskilat-I Mahsusa, 02. 10. 1933.

ծրագրի իրականացումը հանցագործների միջոցով, ավարառությունը ոչնչացումը խթանելու միջոց դարձնելը, քավության նոխազի փնտրտուքը[10]:

Թեռնոնը ցեղասպանությունը համարում է այն հանցագործությունը, որը նշանակում է պետության կողմից մարդկային որոշակի խմբի ոչնչացում: Հայկական ցեղասպանությունն ազգայնամոլության ոչնչացնող ուժի առաջին դրսևորումն էր և հանդիսանում է ամենամաքիավելականը: Անկախ գոյություն ունեցող ձևակերպումներից, ցեղասպանության զլխավոր գիծն ազգային, էթնիկական- ռասայական, կրոնական խմբերի ոչնչացումն է՝ լրիվ կամ մասնակի: Ցեղասպանության ամենածայրահեղ ձևը, որը տանում է դեպի ֆիզիկական ամբողջական ոչնչացում, ջարդն է: Ցեղասպանությունը չի կարելի պայմանավորել հասարակության սոցիալ-ազգային զարգացման մակարդակով: Ոչ թե այդ գործոններով, այլ «գերազգայնական իշխող վերնախավի» նախադեպը չունեցող մեծ կարողություններով են պայմանավորված զանգվածային բնաջնջումները, որոնց առանձնահատկություններն են՝ կազմակերպչական ինքնօրինակությունը, ծրագրվածությունն ու պահի ընտրությունը, համապարփակվածությունը, տեխնոլոգիական կարողությունն ու գաղափարախոսական հիմնավորումը[11]:

Ցեղասպանները, նկատի ունենալով ճգնաժամային փակուղին, առաջ էին քաշում սոցիալ-քաղաքական փոփոխության գաղափարախոսություն, սակայն անմիջապես ակնհայտ է դառնում, որ «նորերի» ճգնաժամն արագ է վրա հասնում և ավելի ակնհայտ է, քան ամբողջ հասարակությանը, որի հետևանքով առաջինը որդեգրում է ծայրահեղական գաղափարախոսություն: Այդ վերնախավը քաղաքական և գաղափարախոսական առումով հիվանդ է և ձգտում է իր տկարությանը համաչափարհային հնչեղություն տալ: Պարտադիր պայման է զանգվածների հիվանդ լինելը նաև երբ համապատասխանություն գոյություն ունի խեղված վերնախավի և զանգվածների հոգեբանական ճգնաժամի միջև: Ցեղասպան ազգն իր անհաջողությունների համար քավության նոխազ է փնտրում և փրկության միջոց է համարում վերջինիս ոչնչացումը: Օսմանյան կայսրության սոցիալ-քաղաքական ճգնաժամն ու կործանման ահագնացող վտանգը ծնեցին թուրքիստական ռասիզմ ու դրա կրող իթիհադին: Եթե մինչև XIX դարի կեսերը կայսրությունը հենվում էր իսլամի միավորող ուժի վրա, ապա վերջինս աստիճանաբար զրկվեց այդ ուժից և օսմանյան լուծը թոթափելու պայքարի մեջ ներքաշվեցին նաև մահմեդական ժողովուրդները: Համիսլամականությունը չկարողացավ երկար մնալ «հիվանդ մարդու» փրկարարի դերում, թուրքերը դա շուտ հասկացան ու որդեգրեցին թուրքականությունը:

Դժբախտաբար պատմագրությունում, այդ թվում նաև որոշ հայ պատմաբանների աշխատություններում, շարունակում է զլխավոր տեղ հատկացվել եղեռնի այն գործոններին, որոնք ծնունդ են հայ ժողովրդի վարքագծի: Գր. Սյունին եղեռնի պատճառ է համարում հայերի ռուսական կողմնորոշումը: Այդ «գիտնականը», քիչ է ասել, սխալ է: Հայ ժողովրդի ողբերգության մեջ նա մեղադրում է հայերին, ովքեր թուրքերի հանդեպ մշտապես ունեցել են ընդգծված ատելություն, անգամ «ռասայական արհամարհանք»: Հայերի մյուս «մեղքն» այն է, որ «իրենց համեմատում էին եվրոպացիների հետ», որ հայ «գրական և լրագրային զարթոնքն ընդունեց հեղափոխական և սոցիալիստական բնույթ», որովհետև «սոցիալիզմը Հայոց դատը դարձրեց միջազգային շարժման մի մասը» և հարուցեց Եվրոպայի «քաղաքական առաջնորդների անվստահությունը» իր հանդեպ: Գր. Սյունին նաև գտնում է, որ թուրքական ազգայնականությունը զարգացավ «ի հակակշիռ քրիստոնյա փոքրամասնությունների ազգայնականության», դրա համար էլ բախումը հայերի և թուրքերի միջև անխուսափելի էր: Նա գտնում է, որ ցեղասպանության պատճառները հանգում են հետևյալին. բարենորոգումների ձախողումը ցույց տվեց, որ անհնար է ներքին, հեղափոխական միջոցներով հայերի վիճակը բարելավել: Հայ հեղափոխականների գործունեությունն առաջացրեց թուրքական իշխանությունների հակազդեցությունը: Արևելյան Անատոլիայում հայերի ու թուրքերի միջև կատաղի մրցակցություն սկսվեց հողի և տեղական իշխանության համար: Թուրքական կառավարությունն ուզում էր վերացնել հայկական վտանգն իր հյուսիս-արևելյան սահմաններին: Շատ թուրքեր համոզված էին, որ հայերն ավելի հավատարիմ էին Թուրքիայի թշնամիներին, քան այն երկրին, որում ապրում էին: Պատերազմը թուրքերի համար լավ հնարավորություն ստեղծեց լուծելու Հայկական հարցը բնաջնջման միջոցով[12]:

10 Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1990, էջ 9-10:

11 Dekmejian H. Determinants of Genocide. Armenians and Jews as case Studies, Oxsford, 1986, p. 46.

12 Suny R. G. Armenia in the twentieth century, California, 1983, pp. 11-12, 16-17, 18.

Ռ. Մելսընն իր «Սադրանք կամ ազգայնամոլություն» գրքում (Օքսֆորդ, 1986թ.) խնդրին մոտենում էր տրամագծորեն հակառակ դիրքերից և գտնում է, որ եղեռնը բխեցնելը հայկական սադրանքներից անթույլատրելի է, որ եղեռնը հետևանք էր 1908-1915թթ. ռազմաքաղաքական իրադարձությունների ծնած թուրքական ազգայնամոլության:

Վ. Տատրյանը հայոց ցեղասպանության գործում առանձնակի դեր է հատկացնում Բալկանյան պատերազմին: Նա գտնում է, որ «...այդ պատերազմի արդյունքը մեծ դեր մը խաղաց Հայկական ցեղասպանութեան գաղափարին սաղմնավորման մեջ: Արդարև, իթթիհատի ծայրահեղական պարագլուխները, օգտուելով ... Թուրքիոյ մեջ ստեղծուած ճգնաժամային հոգեվիճակեն, յաջողեցան տիրական դիրքի մը հասնիլ իթթիհատի գերագույ մարմինը հանդիսացող կենտկոմի մեջ... Հայկական ցեղասպանութեան ստոյգ մտահղացումը...» կապվում է այդ փոփոխության հետ[13]:

Նա նաև նշում է Թուրքիայում ազգային հարցի ավանդական սուր բնույթը և այն, որ Բալկանյան պատերազմով «Արևելեան և Հայկական հարցերը գիրկընդխառնուելով կը զոդուեին, կայսրութեան համար դառնալով անիրագործելի բարենորոգումներու կործանարար պատուհաս մը»[14]:

Մանավանդ որ Թուրքիայի համար այդ տարիներին ամենավտանգավոր համարվող Մակեդոնական հարցը «գրեթե տարրալուծուելով նոյնացավ Հայկական հարցի հետ»: Թվում է, թե Տատրյանն այս գործոնի նշանակությունը գերագնահատում է: Մասնավորապես անհնար է համաձայնել նրա այն մտքի հետ, թե հայերի բնաջնջումը հետևանք էր հպատակ ժողովուրդների հանդեպ թուրքերի մեջ պատերազմի ծնած անզորության զգացողության, այն մտահոգության, թե եթե Մակեդոնիայի հետ կապված իրադարձությունները կրկնվեն արևելյան նահանգներում, կարող էին կործանարար լինել կայսրության համար: Այդ միտքը հաստատելու համար նա բերում է արյունարբու Աբդուլլա Ջևդեթի խոսքերը. «Այս որոտալի գոռում-գոչումները, որոնք մեր եվրոպական սահմաններեն կուգան, արդեոք այս հարուածները մեզ պիտի կրնա՞ն արթնցնել: Ինքզինքնիդ մի խաբեք մտածելով, թե քանի որ մեր մտահոգութիւնները եվրոպական Թուրքիոյ կառնչուին, հարկ չկայ Անատոլուի համար մտահոգուելու: Անատոլուն մեր կեանքի ամեն մեկ մանրաթելին ակնաղբիւրն, մեր սիրտը, գլուխը և մեր շնչած օդն է»[15]:

Տատրյանը մեջբերում է կատարում նաև «Թանին» թերթից. «Ո՞վ պիտի ապահովցնե, թե այսօր իրենց ողջնցնել ուզած 23-րդ յողուածին վաղը 61-րդ յողուածը պիտի չյաջորդե... Հետևաբար, երբ Եվրոպայի միջամտութեան և Եվրոպայի կողմե մեր ներքին գործերը հակակշռի ենթարկելու մասին կը խոսինք, պետք է խորհինք ոչ միայն Ռումելիի, այլև՝ Արևելեան Անատոլուի մասին, որովհետև Ռումելիին սպասող վախճանեն կարելի պիտի չըլլայ փրկել նաև Անատոլուն»[16]:

Ակնհայտ է, որ երկու մեջբերումն էլ Տատրյանի թեզը չեն հաստատում, այլ պարզապես ասում են Հայկական հարցին Եվրոպայի նոր միջամտության և Հայաստանը կորցնելու, այլ ոչ թե դրա հետևանքով կայսրության կործանման հնարավորության մասին:

Գեղամ Տեր-Կարապետյանը հայոց ջարդերի խնդրում գրեթե վճռական դեր է հատկացնում Բարենորոգումների համար հայերի պայքարին: Նա գրում է. «Բարենորոգմանց խնդրոյ բանակցութեանց տաք ժամանակը՝ 1914-ի ձմռանը սուլթանի պալատին մեջ իթթիհատականներու և անոնց համախոհներու ներկայութեամբ գիշերային ժողով մը գումարուած էր, ուր ... Էնվեր, Թալեաթ և այլոք ամենախիստ կերպով արտահայտուեր էին հայերու դեմ, զանոնք ներկայացնելով իբր անջատողականներ, Ռուսիոյ, Անգլիոյ գործիքներ, խռովարարներ ու ծանր որոշումներ տուեր էին ազգին դեմ»: Թալեաթը սպառնացել էր. «Քննիչներու առաջարկները չպիտի լսենք ու հայերը նպաստավորել չպիտի տանք... Դեռ չխրատուեցան, չեն գիտեր, որ մեր կամքին հակառակ որևէ ձեռնարկ կը ջախջախուի, թող սպասեն, հարկավ մեզի ալ պատեհութիւններ չպիտի պակսին...»: Տատրյանն ուղղակի գրում է. «Հայերու բնաջնջումի սև խորհուրդն այդ օրերեն մանավանդ մեծ մղում ստացավ»[17]:

13 Տատրեան Վ., նշվ. աշխ., էջ 118-119:
14 Ն. տ., էջ 119:
15 Tunaya T. Z. Türkiyede siyasi paltiler, 1859-1952, Istanbul, 1984, s. 463.
16 Անտոնեան Ա., նշվ. աշխ., հ. Գ, կ. Պոլիս, 1912, էջ 499:
17 Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 838:

Բարենորոգումների ծրագրերի նախագծերի քննարկման ընթացքը, իհարկե, ավելի սրեց հայ-թուրքական հարաբերությունները, մանավանդ որ հայերն այդպես էլ չընդառաջեցին թուրք պարագլուխների առաջարկներին ու սպառնալիքներին՝ այդ հարցում ձեռնպահ մնալ Եվրոպայի միջամտությունից: Դեռ ավելին, ՀԲ Դաշնակցության գործիչները թուրքերի սպառնալիքին փոխադարձ սպառնալիքով պատասխանեցն: Արմեն Գարոյի վկայությամբ իրենք Մ. Շուքրիին և Քյուչուկ Թալեաթին սպառնացին. «Եթե գավառներու մեջ որևէ կոտորածի դեպք պատահի, մենք անմիջապես պիտի վերսկսենք մեր յեղափոխական գործունեությունը Պոլսոյ մեջ, և պատասխանատուները չեն ազատիր մեր ձեռքեն»[18]:

Գ. Զոհրապը պատմում է, որ Ջեմալը Վարդգեսին հոխորտացել էր, թե եվրոպական միջամտությանը կհետևի հայերի ջարդը, իսկ Խալիլն ասել էր. «Թուրքերը նախամեծար կը համարին մեռնիլ, քան թե հայկական խնդրոյ մեջ որևէ օտար պետութեան միջամտութիւնը ընդունիլ, նոյնիսկ եթե երկիրն ալ միասին պիտի մեռնի»[19]:

Եվս Երկու մեջբերում երիտթուրքերից. «Թանինի» 1914թ. օգոստոսի 8-ի համարում տպագրվեց Զիա Գյոքալփի մի բանաստեղծություն, որում կան հետևյալ տողերը. «Բերդը ոսոխին պիտի դառնայ ավերակ, Թիւրքիան մեծնայ, ըլլայ Թուրան ծագեծագ»[20]:

Երիտթուրքերի դատավարության ընթացքում հաստատվեց, որ Մ. Շուքրին 1914թ. օգոստոսի 17-ին գրել էր. «... Գործողությունները պլանավորված են եղել պատերազմը սկսվելուց շատ առաջ»:

Եվրոպական պատմագրության մեջ ամենատարածվածն այն կարծիքն է, որ բնաջնջման ծրագիրը մշակված էր շատ վաղուց, բայց գործողության մեջ դրվեց Դարդանելի վրա Անտանտի զորքերի հարձակման նախօրյակին՝ 1915թ. ապրիլի 24-ին: Այդ տեսակետն առաջ քաշողների թվում է անգլիացի պատմաբան Ջ. Գրաբերը, որի «Ապրիլի երկու օրը» գիրքը պարունակում է խնդրի սթափ վերլուծություն[21]:

«...Պալքանեան պատերազմներեն ետք,- գրում է Ռ. Ջերչիլը,- փան-թուրքիստները մեկդի դրին «օսմանացումն» ու «թուրքացումը» որպես միջոց իրենց պետութիւնը վերստեղծելու: Անոնք իրենց երկրին ոչ-թուրք ցեղերուն կը վերագրեին մասամբ այն աղետները, որոնց ենթարկուած էր թրքական կայսրութիւնը: Բիրտ, բայց հասկանալի լեզուով մը անոնք եզրակացուցին, թե այս ցեղերը «արժանի չէին նկատի առնուելու իսկ, բեռ ու արգելք էին, թող գրողը տաներ զանոնք»: Այն վերստեղծուած պետութիւնը, զոր հայրենասեր թուրքերը կը յուսային մեջտեղ բերել՝ պետք է կազմուած ըլլար միմիայն թուրքերե: Այս նպատակին կարելի էր հասնել, եթե երբեք կարենային հասնիլ երկար ու դժուարին ճամբայ մը կտրելե ետք միայն: Հետևաբար, որքան կանուխ և որքան փութկոտութեամբ սկսեր թուրք ժողովուրդն այդ ճամբով յառաջանալ, այնքան ավելի լավ էր: Եվ թե անոնք այդ ճամբեն քայլեցին 1912-են սկսեալ: Եվ այն իրողութիւնը, թե անոնք այս ուղղութեան կը հետևեին՝ երկար ատեն չարունակեց անծանոթ մնալ եվրոպացիներուն: Ամեն պարագայի, հայերն ավելի լավատեղեակ էին: Անոնք տեսան, թե եթե իրագործուեր Կովկասի իսլամ շրջաններուն միաձուլումը թրքական մեծ պետութեան մը մեջ, Հայկական բարձրավանդակը, ռուսական Հայաստանն ալ ներառեալ՝ դրուած պիտի ըլլար թրքական գերիշխանութեան տակ և պիտի վտանգուեր իրենց ցեղին ապագան: Մեծ պատերազմին պայթիլն այս հարցերը շարժման մեջ դրավ»[22]:

Կարծիքների ցուցակը կարելի է երկար շարունակել հաստատելու ճշմարտությունը, որ բնաջնջման որոշման ընդունումն ու դրա իրականացմանը ձեռնամուխ լինելը տեղի են ունեցել ապրիլի 24-ից շատ առաջ: 1914թ. գարնանը Սանդերսը, պատասխանելով թուրքական կառավարության պաշտոնական հարցմանը, ասաց, որ Թուրքիայի արևելյան սահմաններից ու ծովափնյա շրջաններից պետք է տեղահանել բոլոր այն ժողովուրդներին, որոնց հավատարմությունը կայսրությանը կասկածելի է: Համաձայն այդ կարծիք-ցուցումի՝ ծովափնյա շրջաններից

18 Արմեն Գարո Ապրած օրեր, Բոստոն, 1948, էջ 191-192:
19 «Նայիրի» (բացառիկ), 1975, թիվ 46-50, էջ 3-4:
20 Karabekir K., նշվ. աշխ., s. 206:
21 "Зеркало", 1991 N26.
22 Ցուշամատեան Մեծ եղեռնի, էջ 1040-1041:

հույների տեղահանությունը սկսվեց 1914թ. մայիսին, իսկ օգոստոսին Թալեաթը ստորագրեց նույն շրջաններից հայերի տեղահանության հրամանը:

1915թ. հոկտեմբերի 28-ին Կ. Պոլսում աշխատած անգլիացի ծովակալ Ռոբեկը գրեց մի նամակ, որը 1920թ. հունիսի 19-ին Սև ծովի շրջանի անգլիական ուժերի հրամանատար ուղարկեց Քերզոնին: Նամակը պահվում է Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության արխիվում (E 7556/7554/44): Ահա մի քաղվածք այդ նամակից. «Հեռ Բոդրիխը չբողոքեց ռազմական նախարարության հանձնաժողովի որոշումների դեմ, այլ նույնիսկ համաձայնեց, որ իր ստորագրությամբ ևս այդ որոշումները վավերացվեն», այսինքն՝ իր ստորագրությունը դնել տեղահանության որոշումների տակ: «Իրողությունն այն է,- շարունակում է Ռոբեկը,- որ այդ վավերագրերը ... կրում են ոչ թե թուրքական, այլ գերմանական ստորագրություն, ինչն արժեք է ունենալու նաև թուրքերի համար», ինչպես կծու բառերով նշեց բանակային գործավարը»:

Ա. Մանդելշտամի կարծիքով Գերմանիան պաշտպանում էր Բ. Դռան ձեռնարկումները՝ միաժամանակ ձգտելով ձեռք բերել հայերի «համակրանքը» որպես Փոքր Ասիան գաղութացնելու «տնտեսական գործոնի»[23]:

Գիբբոնսը գտնում է. «...Հայերի ոչնչացումը բխում էր որոշակի ազգի շահերից, սակայն առանց երկմտելու կարելի է ասել, որ այդ ազգը թուրքերը չէին: Սեփական նախաձեռնությամբ թուրքերը երբեք հայերին չէին կոտորի, այսինքն՝ այդ ուղղությամբ չէին գործի առանց կողքից ուղղակի սադրանքի և հրահանգի»[24]:

Կատարված մեջբերումներն ասում են, որ հայերի բռնագաղթը (եթե ոչ՝ կոտորածը) Գերմանիայի կողմից թելադրված թուրքական քաղաքականություն էր:

1914թ. ընթացքում տեղի ունեցան իթիհադի կենտրոնի մի քանի գաղտնի նիստեր, որոնցում քննարկվեցին հայերի ընդհանուր կոտորածին առնչվող հարցեր: Քննարկումներում երևան եկան տարբեր մոտեցումներ: Հոկտեմբերի 14-ի նիստը սկսեց Թալեաթը: «...Վախենում եմ,- ասաց նա,- որ Գերմանիան պատերազմում հաղթանակ տանելուց հետո կապվի ամենից ամուր և ընդունակ հույն և հայ տարրերի հետ»: Զիա Գյոքալփը համաձայնեց. «Հույները կասկածելի են... իսկ հայերի կոտորածը կվախեցնի նրանց: Հունաստանը չի համարձակվի պատերազմ սկսել՝ վախենալով Թուրքիայում բնակվող հույների համար»: Ջավիդը, չբացառելով պատերազմում պարտվելու հնարավորությունը, առարկեց. «Ես լավ եմ ճանաչում հայերին: Բավարարելով նրանց հինգ պահանջներից միայն մեկը՝ կարող ենք մեր կողմը գրավել: Պետության անվտանգության համար կարելի է վերաբնակեցնել նրանց, բայց չպետք է սպանել. չէ որ այդ ձևով կկորչեն նաև այնպիսիները, որոնց հնարավոր է բռնի մահմեդականացնել և հետագայում օգտվել նրանց ծառայությունից»: Նազըմն ըմբոստացավ. «Զարմանում եմ, որ ոմանք պաշտպանում են հայերին: Չէ որ նրանք խանգարում են մեզ Կովկասյան ռազմաճակատում՝ անհնար դարձնելով մեր մուտքը Ռուսաստան: Այնտեղի հայերը կամավոր են մտնում բանակ, իսկ մեզ մոտ դասալքում են: Անհրաժեշտ է հիմնովին լուծել Հայկական հարցը՝ բոլոր հայերին իսպառ բնաջնջելով...»: Թալեաթը նիստն ամփոփեց հետևյալ խոսքերով. «Իմ անձնական պատասխանատվությամբ հայերի դեմ գործադրելու եմ այն ամենը, ինչ անհրաժեշտ կհամարեմ, քանի որ, թեև նրանք ցույց են տալիս, թե մեր կողմն են, բայց վաղը կարող են փոխել իրենց վերաբերմունքը»: Ջայների մեծամասնությամբ որոշվեց՝ հայերին վերաբնակեցնել և նրանց անապատում ոչնչացնել:

Բ. Գեմբարսկին Թալեաթի ճառում ընդգծելով «թե մեր կողմն են» բառերը, դա համարում է խոստովանություն, որ հայերի վարքագիծը չէր ցեղասպանության պատճառը[25]: Ջելալ Բայարի կարծիքով. «1914թ. առաջին ամիսներին օսմանյան իշխանությունները բախվեցին երկու հիմնախնդրի. 1 անզուսպ ընդդիմություն՝ պատրաստ չարաշահելու ամեն տեսակի ազատություն, 2 ոչ-թուրքական տարրեր՝ բացահայտ կամ թաքուն սպառնալով կայսրության ամբողջականությանը: Դրանցից առաջինը քաղաքական և լուծելի հիմնահարց էր: Իսկ երկրորդը մահացու

23 Мандельштам А. Н. նշվ. աշխ., էջ 50:
24 Последние избиения в Армении, Пд., 1916, стр. 24-25.
25 Գեմբարսկի Բ. Նամակներ աշխարհին, Երևան, 1990, էջ 80-81:

վտանգավոր էր: Ինչպես կառավարությունը, այնպես էլ Միություն և առաջադիմություն կուսակցության կենտկոմը և ռազմական նախարարությունը մշակեցին պլան այդ վտանգը կանխելու համար: Ռազմական նախարարությունում անցկացվող գաղտնի խորհրդակցությունների գլխավոր թեման ռազմավարական շրջաններում համախումբ բնակվող և արտաքին ուժերի ազդեցությանը ենթակա ոչ-թուրք ժողովուրդների վերաբնակեցումն էր: (Նման)խորհրդակցություններ Էշրեթ Կուչչուբաշու վկայությամբ անցկացվում էր նաև 1914 թվի մայիս, հունիս և օգոստոս ամիսներին, որոնց մասնակցում էին Միություն և առաջադիմություն կուսակցությանը նվիրված, հայրենասեր և անձնազոհության պատրաստ անդամները, որոնք տարբեր պատրվակներով հրավիրվում էին Ստամբուլ: Հետաքրքիր է, որ այդ խորհրդակցությունների մասին չգիտեին նույնիսկ կառավարության որոշ անդամներ»[26]:

Ջ. Բայարը ևս հաստատում է, որ ասիական Թուրքիայի էթնիկական մաքրազարդումը սկսվել էր 1915թ. ապրիլի 24-ից գրեթե մեկ տարի առաջ, չնայած խեղաթյուրում է ձեռնարկված միջոցառումների դրդապատճառները:

Կազմվեցին մանրամասն զեկուցագրեր և պլան Անատոլիայի «էթնիկական մաքրազարդման» ու թուրքացման եղանակների մասին, և դրանք սկսեցին իրականացնել պատերազմից դեռ շատ առաջ: Պլանը կազմված էր երեք մասից. ա) կառավարության կողմից ձեռնարկվելիք ընդհանուր միջոցներ, բ) բանակի կողմից ձեռնարկվելիք հատուկ միջոցներ, գ) Միություն և առաջադիմություն կուսակցության կողմից ձեռնարկվելիք միջոցներ[27]:

Մի թուրք սպա ասել է, թե թուրքերի «նպատակն էր բնաջնջել հայերն այն օրեն սկսեալ, երբ Նուպար փաշայ հայկական խնդիրը կը ներկայացներ եվրոպական դահլիճներուն: Քափիթիւլասիոններու ջնջումն օրհնութիւն մը եղավ մեր նպատակներուն համար: Եթե միայն յանցավորները պատժելը ըլլար մեր նպատակը... ժողովուրդը պետք է խնայեինք»[28]:

Թ. Աքչամի կարծիքով հայերի բնաջնջման իթիհադական քաղաքականության համար Սարիղամիշի ճակատամարտը «շրջադարձային հանգրվան հանդիսացավ»: Ըստ նրա՝ հայ զինվորների զինաթափումն ու աշխատանքային ջոկատների կազմակերպումը նույնպես տեղի են ունեցել այդ ժամանակ, այսինքն՝ 1915թ. փետրվարին: Վանի ինքնապաշտպանությունը նա անվանում է այդ քաղաքականության «երկրորդ ալիքի սկիզբ», որից հետո սկսվեցին զանգվածային ձերբակալությունները, չնայած խոստովանում է, որ շատ վայրերում ձերբակալությունները սկսվել էին ապրիլի 19-ին: «Որոշ տեղերում կալանավորներին հրապարակավ սպանում էին մյուսներին ահաբեկելու համար... Այս բոլորը ծառայում էր մեկ նպատակի՝ հայ ազգաբնակչության տեղահանության դեմ դիմադրությունը հասցնել նվազագույնի»: Աքչամի կարծիքով հայ ազգաբնակչության զինաթափման հարցը որոշվել էր դեռ մինչև պատերազմի մեջ մտնելը: Սակայն մինչև 1915թ. ապրիլ ամիսն իրականացված միջոցառումները, գրում է նա, «նախապատրաստական միջոցներ էին համատարած բնաջնջումից առաջ», չնայած անգամ բռնի տեղահանությունները սկսվել էին ավելի շուտ: Օրինակ, մարտի 15-ից սկսած զանազան պատրվակներով բռնագաղթվեց Մարաշի և Ադանայի հայությունը[29]:

Թ. Աքչամն ամեն ինչ ճիշտ է ներկայացնում ու գնահատում, բացի մեկից՝ հրաժարվում է ընդունել, որ հայերի բնաջնջումը ծրագրվել էր տարիներ առաջ և որոշիչ կապ չուներ հայերի քաղաքական կեցվածքի հետ: Իսկ որ հայերի բնաջնջումը ոչ թե արտաքին գործոնների առաջացրած իրողությունների հետևանք էր, այլ բուն Թուրքիայի ընդերքում ձևավորված մտադրություն, բացարձակապես ակնհայտ է: «Հայերի բռնագաղթը Միջագետք չի կարելի համարել պատերազմական պայմաններից բխած գործողություն, քանի որ թելադրված չէր Օսմանյան կայսրության անվտանգության հրամայականով, այլ միջոց էր Թուրքահայաստանը հայաթափելու, հայերին բնաջնջելու համար...»[30]:

26 Bayar C. Ben de Yazdim Trnak icindeki tum ifadeler, cilt V, Ist., 1967, ss. 1573-1574.
27 Ն. տ.:
28 Մարտիրոսեան Ե. Թուրքվոյ գեհենեն: Հայ ընտանիքի մը հրաշալի փախուստը, Ալեքսանդրիա, 1918, էջ 45:
29 «Բնօրրան», 1995, թիվ 1, էջ 99-100:
30 "Раздел Азиатской Турции по секретным документам ", МИД, М.-Л., 1925, стр. 136-138, 141-142.

Հայերն ապրիլի 24-ը հռչակեցին Մեծ եղեռնի սկիզբ, և Թուրքերը հաճույքով համաձայնեցին, որպեսզի ապրիլի 24-ի միջոցով մերժեին հայոց ցեղասպանության իրողությունը: Տրամաբանությունը հստակ էր՝ ապրիլի 24-ը այն օրերից էր, երբ Թուրքիան մահվենաց կռիվ էր մղում երեք ճակատով՝ եվրոպական, ռուսական և հարավային՝ Պաղեստին և Միջագետք: Այդ ծանր պահին հպատակ ժողովուրդները՝ հույները, հրեաները, հայերը, քրդերը, արաբները, ասորիները գլուխ բարձրացրին, պայքար ծավալեցին օսմանյան տարածքների վրա անկախ պետություններ ստեղծելու, այսինքն՝ կայսրությունը կործանելու համար: Նրանք Թուրքերի դեմ բացեցին մի նոր, ավելի քան վտանգավոր, նրանց գոյությանը սպառնացող ճակատ և դատապարտելի ոչինչ չկար, որ օսմանցիները պայքարի ելան հանուն հայրենիքի, հանուն իրենց գոյատևման: Իրականությունը բոլորովին այլ է՝ առաջին աշխարհամարտին Թուրքիայի մասնակցությունը ոչ թե հայերի բնաջնջման պատճառ էր, այլ հնարավորություն, այդ բնաջնջումը ոչ թե հայկական ընդվզումների հետևանք էր, այլ պատճառ:

Նույն օրերին «Միլլի Մուսթաֆա» պարբերականը գրեց. «Կասկածից վեր է, որ այն կորովի մարդերը, որոնց վստահուած է մեր պետութեան ղեկավարութիւնը՝ բնավ պիտի չազդուին միացեալ բանակներու սպառնալիքներեն, որոնք իրականութեան մէջ փրփուր են միայն: Փառք Էնվեր փաշայի և Ճեմալ փաշայի անսպառ կորովին, մեր բանակն ու նավատորմիղը պիտի գիտնան իրենց պարտականութիւնները և, ի հարկին, գործադրեն մեր արդարացի պահանջները: Չենք մոռանար, որ մեր պատերազմական նախարարը ըսած է, թէ մենք մաքրելիք արատ մը ունինք: Այսօր ի վիճակի ենք այդ մեկը ընելու»[31]:

Այս միտքը հաստատում է նաև Մեհեմնիխը, որի կարծիքով պատերազմին Թուրքիայի մասնակցության գլխավոր պատճառը «իրենց ծրագրին առաջին կետը՝ հայոց փչացումն» էր, որոնց պիտի հաջորդեին այլ ազգեր, մինչև որ «Թուրք պետությունը վերակազմուի զուտ մահմեդական, համաթուրքական հիման վրայ, ամեն ոչ-մահմեդական և ոչ-Թուրք բնակիչք բռնի պիտի մահմեդականացուին և Թուրքացուին և ուր ասի կարելի չէ՝ ջնջուին...»[32]:

Ըստ Դիարբեքիրի կուսակալ Ռեշիդի, քրիստոնյաներն Օսմանյան կայսրության մարմնի վրա մանրէներ էին և պետք է ոչնչացվեին[33]:

Երիտթուրք գործիչ Ֆեյզին 1914թ. օգոստոսի 27-ին Անգլիայի փոխհյուպատոսին ասել է. «Հայերն ամբողջ ազգով ու բոլոր կուսակցություններով համակրում են Անգլիային ու նրա դաշնակիցներին: Դա հիմարություն է ու սխալ: Չպետք է մոռանան, որ իրենք Թուրքիայի հպատակներ են, և հետևաբար լավ կանեն, եթե Կովկասի հայերի միջոցով խռովություն բարձրացնեն Ռուսաստանում և դրանով օգնեն Թուրքիային վերստանալու այդ շրջանը... Բայց եթե հայերը շարունակեն իրենց հիմար ընթացքը, շատ ծանր է նստելու նրանց վրա: Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը չեն կարող օգնել ու ազատել նրանց, մինչդեռ մենք նրանց նկատմամբ կարող ենք անել ինչ-որ ուզենք և մեր դաշնակիցներ Գերմանիան և Ավստրիան ձայն չեն հանելու... Հայերը պետք է լուրջ մտածեն: Իրենք քիչ են, երբ ջարդվեն՝ կվերջանան: Մենք շատ ենք, մեր կեսն էլ որ զոհվի, մյուս կեսը կմնա: Մանավանդ որ շահելու ենք այն, ինչ կորցրել ենք վերջին ավելի քան 200 տարիներին»[34]:

Հայերի բնաջնջումը որպես ռազմավարություն դրված էր իթիհադի առաջին ծրագրի տողատակերում, այն գաղափարախոսական հիմնավորում ստացավ կուսակցության մի քանի համագումարներում և վերածվեց իթիհադի քաղաքականության 1908 թվականից: Բայց պետական քաղաքականություն դարձավ 1914թ. կեսերին: Սարիղամիշում օսմանյան բանակի ջախջախումից հետո, երբ ռուսական զորքերը տիրացան Արևմտյան Հայաստանի նշանակալից մասին, երբ իրականություն էր դառնում Արևմտյան Հայաստանը կորցնելու վտանգը, որի առաջն առնելու միջոցներից մեկն իթիհադը համարեց աշխարհաշրջանը ռուսամետ հայ ազգաբնակչությունից դատարկելն ու դրա «մահմեդականցման գործընթացի» ամբողջականացումը, ինչն ապագա բա-

31 "The Orient", 21. 10. 1914 .

32 Տաշեան Θ. Հ. Հայ ազգի տարագրութիւնը գերմանական վավերագիրներուն համեմատ, մաս Ա, Վիեննա, 1921, էջ 52:

33 Ն.տ., էջ 628-629:

34 Θուշամատեան Մեծ եղեռնի, էջ 406-407:

նակցություններում կարող էր էական դեր խաղալ աշխարհաշրջանի պատկանելությունը հօգուտ մահմեդականների լուծելու համար, հայերի բռնագաղթն ու ջարդը ձեռք բերեցին համընդհանուր բնույթ: Դրան եկավ միանալու Սուեզում Թուրքական արկածախնդրության ձախողվելը (1915թ. փետրվարի 2)՝ Արևմուտքում՝ Դարդանելի ափերից Անտանտն ուղղակիորեն սպառնում էր կայսրության մայրաքաղաքին: Չնայած հաջողվեց դաշնակիցներին հետ մղել, Թուրքերի հաղթանակը պյուրոսյան էր, նրանք այլևս անզոր էին դիմակայելու թշնամու հարձակմանը: Հեյդար փաշայի կայարանում գնացքները պատրաստ կանգնած էին՝ սուլթանին, կառավարությանը Կոնիա տեղափոխելու համար: Ինչ վերաբերում է հայերին, ապա հենց սկսվեց ռուս-Թուրքական պատերազմը, նրանք մոռացան իրենց բոլոր հավակնությունները՝ թե բարենորոգումներ մտցնելը և թե ինքնավարությունը կամ հպատակության փոխելը: Պատրիարքը թեմերի առաջնորդներին գրեց, թե պատերազմական պայմաններում ազգային որևէ հարց չբարձրացնել: Նա քաջ գիտեր, որ Թուրքերը պատերազմն օգտագործելու են հայերին հաշվեհարդարի ենթարկելու համար: Պատերազմը սկսվելուց շատ և շատ առաջ 1913թ. մայիսի 31-ին պատրիարքարանը Բ. Դռանը գրեց, որ հայությանը «ոչնչացում է սպառնում», գյուղացին չի համարձակվում անգամ գնալ դաշտային աշխատանքների: Արտագաղթը զանգվածային բնույթ է ստացել, Օսմանյան կայսրությունում հայերի «ապրելու իրավունքը» վերացել է, նրանք օրենքից դուրս են դրվել[35]:

Ա. Շիրակյանը պատմում է. ««Փոլիս մեճմուասին»՝ ոստիկանության պաշտոնաթերթը, իր հայտարարութիւններով կրակի վրա յուղ կը թափեր: Իր հրատարակած մեծադիր պատկերներուն մէջ կերևային Թուրք ժանդարմաներ մեծաքանակ զենքերու կոյտերուն առջև, որոնք իբրև թե բռնուած ու հավաքուած էին գավառի հայոց տուներեն: Տգետ ու մոլեռանդ ամբոխն այս զրպարտութիւններով և անհիմն ամպաստանութիւններով ավելի ևս թունավորուած, լարուած էր հայ տարրուն դեմ... և ահթի կը սպասեր իր ջարդարարի բնազդներուն գոհացում տալու համար»: «Թուրք խուժանը ցոյցեր սկսավ քրիստոնեայ տարրին դեմ և հարձակումներ ընելով քրիստոնեայ հաստատութեանց վրա: Թոգաթլեանի մեծ ցուցափեղկերուն ջարդուփշուր ըլլալուն ականատես եղած եմ: Ամբոխը գայլերու ոհմակի նման թափած էր ԲԵՐԱ քրիստոնյա թաղը և ՇԻՏԱԿ ճամբայեն ելլելով ասդին անդին կը խուժեր կոտրել-թափելու համար: Բնականաբար ոստիկանութիւնը հանգիստ կը մնար, քաջալերելով խուժանն իր չեզոք կեցվածքով»[36]:

Կ. Պոլսում հայերի հանդեպ վերաբերմունքը համեմատած գավառների հետ զուսպ էր: Գավառներում հայությունն օրենքից դուրս, հանցագործի վիճակում էր դրված և հալածվում էր ամենուրեք և բոլորի կողմից: Մինչև 1914թ. վերջը գավառներից Կ. Պոլիս փախավ 15 000 մարդ[37]:

«Թասվիրի էֆքիարը» թերթը 1914թ. հունվարին գրեց, թե ամբողջ պատմության ընթացքում Թուրքերը ոչ մահմեդականի քիթ չեն արյունոտել: «Եվ եթե այսօր բոլոր դժբախտություններից հետո խոր և անզուսպ թշնամություն են զգում Ապոստոլիների հպատակ քրիստոնյաների հանդեպ, չեմ հասկանում, թե որևէ մեկն ինչպե՞ս կարող է անտրամաբանական բան գտնել այդ զգացմունքի մեջ: Այսուհետև յուրաքանչյուր Թուրք և մահմեդական ազգայնական նկարագիր պիտի տա նույնիսկ 10 փարայի առևտրին, և դա փնովել կամ քննադատել չի կարելի... Թուրքերի մոտ նշմարվում է մեզ առավելագույնս գոհացնող զարթոնք: Նրանք հետզհետե ըմբռնում են տնտեսական գործունեության ուժը: Տնտեսական այս ճնշումը շատ արդար, ոչ, գերագույն իղձն է Թուրքերի և մահմեդականների, որոնք այդպիսով են ցանկանում արտահայտել տնտեսական ասպարեզում իրենց միասնական գոյությունը»[38]:

Ակնհայտ է, որ թերթը հայերին հրապարակից հանելով է պայմանավորում Թուրքերի նաև տնտեսական առաջընթացը: «Հայերը տնտեսական գործունեության հրապարակը պետք է ազատեն»,- ահա Թուրք ազգայնամոլների գլխավոր կարգախոսներից մեկը: «Թանինը» գանգատվում էր, որ Բ. Դուռն ու երիտթուրքերը դանդաղում էին ոչ մահմեդական հպատակների դեմ վճռա-

35 АВПР, "Политархив", д. 3465.

36 Շիրակյան Ա., նշվ. աշխ., էջ 86:

37 Ն. տ., էջ 95:

38 "The Orient", 11. 02. 1914.

կան միջոցների գործում, զուր ժամանակ ծախսում այլևայլ կուսակցությունների հետ բանակցություններում: Հայկական նահանգներում բարենորոգումներ մտցնելու խնդիրը Թուրքերի համար շատ ավելի պատրվակ էր հայերի հետ առճակատումը խորացնելու, քան մտահոգություն, որ դրանք ի վիճակի էին բարդությունների առաջ կանգնեցնել կայսրությանը: Այն միաժամանակ միջոց էր քողարկելու Թուրքիայի ծավալապաշտական նկրտումները:

Հարկ է նաև նշել, որ ցեղասպանության գործադրման դրդապատճառների խնդրում հստակ դիրքորոշում չունեն նաև մի շարք հայ հեղինակներ: Դա հետևանք է այն բանի, որ մեզ համար անհասկանալի է երիտթուրքերի կողմից ազգային հարցի մերժումը: Թուրքի համար ի սկզբանե գոյություն է ունեցել տարածքի, այլ ոչ թե ժողովրդի, ազգի խնդիր: Նա տարածքներ էր նվաճել և ոչ թե ժողովուրդներ: Եթե տվյալ տարածքը թուրքինն է, ապա նրա սեփականությունն են այդ տարածքի վրա եղած ամեն ինչ, այդ թվում նաև ժողովուրդները և վերջիններս որևէ հավակնություն ունենալ չեն կարող, որովհետև այն ամենը, ինչ ուղղված է Թուրքի անսահմանափակ իրավունքների դեմ, անբնական է, հանցագործ և պետք է անպայման պատժվի: Թուրքական կառավարությունն ինքն էլ հավատացած չէր,- գրում է Լեփսիուսը,- թե հայ ժողովուրդը հեղափոխական ըմբոստությամբ ինքն իրեն մեղավոր է դարձրել: Ամբողջ ամիսներ մենք թուրքական մամուլի մեջ կարդում էինք, թե հայերը հավատարիմ են մնացել իրենց թուրքական հայրենիքին: Պատերազմի առաջին իսկ օրից ամբողջ հայ մամուլը հայ ժողովրդին կոչ էր անում պաշտպանելու օսմանյան հայրենիքի միությունը: Արևմտահայությունը բարեխղճությամբ էր կատարում իր քաղաքացիական պարտականությունները, կանոնավոր մասնակցեց զորակոչին, մեծ օգնություն ցույց տվեց պատերազմական ծախսերը հոգալու գործին: Էնվերը մի քանի անգամ «արտահայտել է իր առանձնահատուկ գոհունակությունը հայ զինվորների վարկի ու քաջության կապակցությամբ, որոնք գերազանց էին կռվում»[39]:

Ինչպե՞ս պատահեց, հարցնում է Լեփսիուսը, որ հայ ազգի նվիրվածության վերաբերյալ կարծիքը հանկարծակի փոխվեց և պատասխանում է, թե Վանի, այսպես կոչված, «ապստամբությունը» հայ ժողովրդի ճակատագրի ողբերգական պահը դարձավ: Սա արձանագրելով հանդերձ չի ասվում, թե ռազմական նախարարի թիկունքում կանգնած ուժերի՝ հայերին բնաջնջելու քաղաքականությունը գործողության մեջ դրվել էր Վանի իրադարձություններից շատ առաջ: Լեփսիուսը դա լռության է մատնում հաստատելու այն միտքը, թե «չրջադարձը սկսվեց ապրիլին, երբ Իրանական Ադրբեջանում թուրքական առաջխաղացման ժամանակ հայերը խռովություն հրահրեցին թուրքական բանակի թիկունքում, որի ընթացքում զոհվեց 18 հազարից ոչ պակաս մահմեդական: Եվ զարմանալի չէ, որ մահմեդականներն այդ պատճառով վրեժխնդիր եղան»: Լեփսիուսը հակասում է ինքն իրեն: Նա բազմիցս նշել է, որ **հայերի բնաջնջումը ոչ թե հայերի վարքագծից բխող վրեժխնդրություն, այլ էթնիկա-աշխարհատարածքային հիմնախնդիրներից ծնված և նախապես մտահղացված ծրագրի գործադրում էր:**

Հայերի հանդեպ օսմանյան քաղաքականության հիմքում Լ. Զորմիսյանը դնում է Թուրքերի հնարած այն թեզը, թե կայսրությունում հայերը վտանգավոր տարր էին, որովհետև իրենց աշխատասիրությամբ ու շնորհքով «երկրի իրական տերը դառնալու ուղու վրա էին»: Բացարձակ սխալ եզրահանգում է, որովհետև, ինչպես արդեն ասվեց, 1894-96թթ. ջարդերից հետո, Թուրքիայի քաղաքական և, մասնավորապես, տնտեսական կյանքում հայերի դերը գնալով նվազում էր: Թուրք բուրժուազիան, ճիշտ է դանդաղ, բայց հետևողականորեն կայսրության տնտեսական կյանքում նորանոր դիրքեր էր գրավում, ինչ վերաբերում է քաղաքական կյանքին, ապա այն ի սկզբանե իշխող էր, իշխանության տեր և ուներ լծակներ, որոնք ավելի քան զորու էին կյանքի բոլոր բնագավառներում ապահովելու Թուրքերի գերակայությունը: Հայերի առաջն առնելու Թուրքերի անզորության մասին խոսակցությունը լուրջ չէ: Լ. Զորմիսյանը նաև սխալվում է, երբ գրում է. «Ոմանք կը կարծեն, որ հայերու բնաջնջման ծրագիրը յղացուած է անոր (Աբդուլ Համիդի) կողմե... Չեմ կարծեր, որ իրական և ճիշտ ըլլայ նման կարծիք, երբ աչքի առաջ ունենանք Համիտեան կոտորածներու խուժանային նկարագիրը, առանց հիմնական և հետևողական մեթոդի»[40]:

39 "Osmanischer Lloyd", 26. 01. 1915.

40 Ցուշամտեան Մեծ եղեռնի, էջ 167:

Հայ ժողովուրդը սարսափի տակ, իշխանության հանդեպ հլու և «կամավոր ստրկութեան մը մեջ պահելու գործնական միջոց միայն եղած էին զանազան վայրերու մեջ, զանազան պահերու, իրարու հետ որևէ առնչութիւն չունեցող ջարդերը: Տարագրութեան ծրագիրը բոլորովին տարբեր նկարագիր ունի: Այն ռազմական ծրագրի նման ամբողջական ծրագիր էր, ճշգրտված անգամ մանրամասների մեջ»[41]:

Իհարկե, երիտթուրքական կառավարության կողմից հայերի ջարդերը շատ ավելի խնամքով ու բազմակողմանի էին կազմակերպված, քան Համիդյան կոտորածները: Սակայն ջարդերի եղանակները լոկ միջոցներ էին լուծելու ընդհանուր հիմնահարցը՝ ոչնչացնելու արևմտահայությանը: Մի տարբերությամբ՝ Աբդուլ Համիդը խնդիր էր դրել զանգվածային ջարդերի միջոցով հայերին Արևմտյան Հայաստանում փոքրամասնություն դարձնել, այսինքն՝ ոչնչացնել և արտամղել մեկ միլիոն հայի, իսկ երիտթուրքերը նպատակ ունեին ոչնչացնելու ամբողջ արևմտահայությանը՝ շուրջ 2.5 միլիոն մարդու: 1915 թիվը համեմատելով Համիդյան ջարդերի հետ՝ Ուոքերը գրում է. «...1915-16թթ. գաղափարական մոլեռանդությունը և ծայրահեղ դաժանությունը, որ չէր մեղմացել կրոնական արգելքներով, ծառայում էին սպանությունները ծավալելու ագրեսիվ վճռականությանը»: Աբդուլ Համիդը փորձեց իր կայսրությունը պահպանել իրեն ծանոթ պարզունակ եղանակներով, որ նրա նախորդները հաճախ էին օգտագործել: «Երիտթուրքերը, ընդհակառակը, ներծծված էին ռասայական գիտակցությամբ, որը XX դարի գիտակցություն էր իր դաժանությամբ և այն բանով, որ բացառում էր ամեն մի այլ նկատառում»[42]:

«Երիտթուրքերը,- շարունակում է նա,- կանխամտածված ձեռնարկեցին բնաջնջելու բոլոր հայերին Թուրքահայաստանում և Կենտրոնական Անատոլիայում... Հայերի գենոցիդը հիրավի XX դարի երևույթ է՝ ռասիզմի և ռացիոնալիզմի խառնուրդով...»[43]:

Թե մեկ և թե մյուս դեպքում հայ ժողովրդի բնաջնջումը ոչ թե բխում էր Թուրք ժողովրդի շահերից, առավել ևս՝ նրա բնույթից, այլ հետևանք էր թուրքական բուրժուազիայի մեծապետական խառնվածքի, որը ձգտում էր երկրի տնտեսական և քաղաքական կյանքի տերը դառնալ մյուս ժողովուրդներին ոչնչացնելու կամ ձուլելու միջոցով: Այդ նկրտումների իրականացման համար օգտագործվեց առաջին համաշխարհային պատերազմը, չնայած աշխարհամարտին մասնակցելը հակացուցված էր հետամնաց և կիսագաղութային կայսրության գոյությանը:

Զարլզ Վելին "Revue de Paris" թերթում գրում է, որ երիտթուրքերի կառավարությունը, որպեսզի խոչընդոտի հայկական ցեղի զարգացումը, արգելում էր հայերի լեզուն ու ավանդական սովորությունները, ինչը Աբդուլ Համիդը չէր համարձակվում անգամ քննարկել: Հայերը երկու քարի արանքում էին. մի կողմից՝ քրդերը, այդ գիշատիչ ու դաժան ավազակները, սպանում ու կողոպտում էին, մյուս կողմից՝ Թուրքերը: Քուրդ և Թուրք ժողովուրդները ոչ միայն ներքաշվեցին ցեղասպան գործողությունների մեջ, այլև դարձան դրանց գործադրման գլխավոր ուժերից: «Օսմանյան սահմանադրական կառավարությունն իրականացրեց գազանային բռնություններ հայերի նկատմամբ: Մինչ Թուրքերը կոտորում էին հայերին, քրդերը տիրանում էին նրանց տներին և ունեցվածքին: Պատրիարքի ներկայացրած տեղեկագրում նշված է, որ միայն վերջերս Թուրքերը 7 000 դաշտ ու ագարակ էին խլել հայերից»:

Ավստրո-Հունգարիայի դիվանագետներից մեկը դեռ 1912թ. դեկտեմբերի 7-ին էր հաղորդել, թե Էրզրումում «մահմեդականների տրամադրվածությունը քրիստոնյաների հանդեպ շատ լարված է... 10 օր առաջ քրդերը դիտավորություն են ունեցել հրդեհելու քրիստոնյաների տները, այդ նպատակով մեծ քանակությամբ նավթ է բաժանվել»[44]:

Նույն տարվա օգոստոսի 12-ին Օլֆերովը հաղորդեց. «Այն, ինչ ներկայումս տեղի է ունենում Վանի նահանգում, կարելի է համարել քաոսի սկիզբ: Վերջին օրերին սպանեցին 27 հայի: Անասունների թալանը սովորական երևույթ է: Ավազակությունն ընդհանուր բնույթ է ընդունում:

41 Ցուշամտեան Մեծ եղեռնի, էջ 167:

42 Walker C., նշվ. աշխ., pp. 236-237:

43 Ն. տ.:

44 Wien HHSTA PA XXXVIII 357, Trapezunt, 7 Dezember 1912.

Սարսափելին այն է, որ այդ հանցագործություններից ոչ մեկը չի բացահայտվել: Ավազակախմբերը մոտենում են քաղաքին»[45]:

Մի քանի օր անց սեպտեմբերի 4-ին պատրիարք Հ. Արշարունին գրեց կաթողիկոսին. «Նորի նորոյ հասած հեռագրերը գուժեցին սպանութեանց, ավարառութեանց, առևանգումներու դեպքեր, և բռնազբոսիկ իսլամացումներ, նոյնիսկ անչափահասներու, որք տեղական իշխանութեան պաշտոնեից աչքին առջև է և անոնց... գաղտնի համամտութեան կամ մեղսակցութեան չնորհիվ...»[46]:

Ադանայում ռուսական փոխհյուպատոսը նույնպես հաստատում է այն իրողությունը, թե «անցյալ վարչակարգի օրոք իրադրությունն այս վիլայեթում շատ ավելի քիչ երկյուղ էր ներշնչում, քան այժմ, չնայած այն ժամանակ Հայկական հարցը չափազանց սուր էր դրված»[47]:

Մի այլ նամակում, գրված սեպտեմբերի 25-ին, կարդում ենք. «Առաջվա նման... կյանքի, գույքի և պատվի անվտանգության երաշխիք չկա»[48]:

«Սպանություններ, առևանգություններ և ավարառություններ ու գողություններ շարունակվեցան, և չարագործները մնացին անպատիժ... կառավարությունը չէ բավականացած գաղթող հայերու հողերը գրավել ու չերքեզ և թուրք գաղթականներուն տալ, այլ իրենց տեղերեն չշարժուող ու հայրենիք մնացող բազմաթիվ հայերու հողերն ալ առած՝ մահմետական գաղթականներուն է տուած»[49]:

Հողերի համար բախումներ տեղի ունեցան Տարոնի Վարդենիս, Առնիստ, Դրմերդ և Բոստանա գյուղերում: Բանակ զորակոչված հայ երիտասարդների հետ «այնքան գեշ կերպով և խորական հոգիով կվարվին», որ զորանոցը նրանց համար «դժոխք կը դարձնեն»: Մշո զորանոցում եղած ութ հազար զինվորից 25-30 տիֆից մեռավ[50]:

Գավառներում լիակատար անիշխանություն է, մոլեռանդ մահմեդականների մեջ ապրող հայերի վիճակն «իրոք սարսափելի է»: Ցուրաքանչյուր պահ, գրում է Վիշինսկին, «նրանք ստիպված են դողալ ոչ միայն իրենց գույքի, այլև կյանքի համար, քանի որ նախապատրաստվող ջարդերի մասին լուրերը երբեք ... չեն դադարում»[51]:

Հայոց կոտորածների չափերը սխալ է միայն ջարդերի ժամանակ սպանվածների թվով որոշելը: Դրանց ազդեցությունը հայ բնակչության վրա անհամեմատ ավելի մեծ էր ոչ միայն ծնելիության կրճատման, այլև ջարդերին ուղեկցող ֆիզիկական հյուծման, հոգևոր ճգնաժամի և սնանկացման առումով: Բայազետի փոխհյուպատոսը Պետրոգրադ հաղորդեց. «Իշխանությունները շարունակում են զինել ավազակախմբերին, հայերը խուճապահար փախչում են Ռուսաստան, որպեսզի փրկվեն կոտորածներից, որոնք սպասվում են օր օրի վրա»[52]:

Ռուսական բանակի շտաբում ստացված մի տեղեկագիր հայտնում է. «Թուրքական իշխանությունները Վանի և Բաշկալեի շրջաններում թուրքական և քրդական ավազակախմբերին բաժանել են մոտ 1 000 հրացան»[53]:

Պանթուրքիստները հայ բնակչության բնաջնջումը նախապատրաստում էին նաև գաղափարախոսական-քարոզչական առումով, դիմում նենգ միջոցների, կեղծիքների: «...Գաղափարապես զինում էին պանթուրքիստ քարոզիչներին, լրտեսներին, ոստիկաններին, սպայությանը, մահմեդական հոգևորականությանը»[54]:

Սկսած 1913թ. ապրիլ ամսից Բաղեշի, Վանի, Կարինի, Մուշի հյուպատոսներն ահազանգեր հնչեցրեցին, որ կոտորածներն անխուսափելի էին: 1912 թվից մինչև 1913թ. մայիս ամիսը, ըստ պատրիարքարանում ստացված տեղեկագրերի, կատարվել էր 167 սպանության, անարգանքի,

45 Ցուշամատեան Մեծ եղեռնի, էջ 30:
46 АВПР, "Политархив", д. 3459, лл. 7073.
47 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 679, թ. 1:
48 Ն. տ., ց. 5, գ. 15, թթ. 39-50:
49 Ն. տ.:
50 ЦГВИАР, ф. 2000, оп.I, д.1004, лл. 433-444.
51 Ցուշամատեան Մեծ եղեռնի, էջ 30:
52 Ն. տ.:
53 Ն. տ.:
54 Ն. տ., էջ 31:

թալանի դեպք, որոնց կատարողներից ոչ մեկը պատասխանատվության չէր կանչվել: Դիարբեքիրի վալին խրախուսում էր քրիստոնյաներին ջարդողներին նրանց «ատելությունը բորբոքելու համար... և չի բացառվում հայերի նոր կոտորածի հնարավորությունը»[55]:

Վորոնցով-Դաշկովը 1913թ.մայիսի 2-ին գրեց. «... Թուրքիայում իրադարձությունների ընթացքը հայերին ստիպում է մտածել այն փորձությունների մասին, որոնք ամենամոտիկ ապագայում, հավանաբար, ստիպված պիտի լինեն կրել... Ավելի ու ավելի հաճախ են լուրեր ստացվում հայերի դեմ կատարվող բռնությունների մասին, և դժբախտ անգեն հայերը՝ թուրքահպատակները, ակամա օգնության ճիչեր են արձակում... քանզի յուրաքանչյուր թուրքահպատակ հայի կյանքին այս րոպեին անմիջական վտանգ է սպառնում»[56]:

Շիրկովը մայիսի 7-ին հեռագում է, որ «սպանություններն ու կողոպուտներն անվերջանալի են դառնում... հայերի վիճակն անտանելի է...»[57]:

Մասնավորապես, 1914թ. սեպտեմբեր-հոկտեմբերը սպասումների ծանր շրջան էր: Ընդհանուր զինակոչից հետո դրությունն օրեցօր վատանում էր, մանավանդ հայկական նահանգներում:

«Թուրքական կառավարությունը,- գրում է Տարլեն,- արտաքին պատերազմի հետ միաժամանակ ձեռնամուխ եղավ հայերի ոչնչացման վիթխարի գործին, որպեսզի վերջնականապես և դարերով իրեն ապահովի Կովկասի կողմից եկող վտանգից... Այն, ինչ Թուրքիայում այդ առումով կատարվեց, իր ծավալներով հանդիսանում էր բացառիկ համաշխարհային պատմության մեջ, սկսած Չինգիզ խանի ժամանակներից»:

«Պատերազմը չյայտարարուած, օգոստոսեն և սեպտեմբերեն արդեն Պոլսոյ Պատրիարքարան կը հասնեին հայկական գավառներու մեջ ի գործ դրուած բռնութիւններուն լուրերը՝ բռնագրավում, կողոպուտ, հարձակում և հայերու մասին թուրքերը գրգռող ամբաստանություններ: Ավելի խստութիւն ցոյց տուավ կառավարութիւնը բռնագրավումներու մեջ. գյուղացիներու անասունները, ձմեռուան պաշարը, փոխադրական միջոցները, շալակավորները բռնի տարուեցան ու ծառայեցին զորքին. ծեծի ու բռնութեան տակ հարյուրավոր ու հազարավոր մարդիկ տարուեցան գյուղերեն բանակի թիկունքային աշխատանքները կատարելու համար. քաղաքներու մեջ հայոց պատկանող խանութներն իրենց ապրանքներեն պարպուեցան, հարուստներեն մեծ գումարներ կորզուեցան...»: Դա բացարձակ կողոպուտ էր, «որուն մասնակցեցան կառավարութեան պաշտոնեաները, ոստիկանները, աղաները, քիւրտ պեյերը և նոյնիսկ պարզ գյուղացիներն ու քաղաքացիները: Ցայտնի կը դառնար, որ այս միջոցներն ու հարկերը, որոնց մեծ մասեն զերծ էին թուրքերը, պարտադրուած էին մասնավոր կերպով հայերուն»[58]:

Երիտթուրքերը նորանոր միջոցների էին դիմում, ավելի ու ավելի բազմազան ու բազմաբնույթ դարձնում ջարդարար գործողությունները: Սադրանքների համակարգը վերածվեց այդ քաղաքականության հզոր զենքի: Նանսենը նշում է, որ երբ ստեղծվեց Պ. Նուբարի պատվիրակությունը, «երիտասարդ թուրքերը կատաղած ... մահ սպառնացին հայերին և ռազմական դատարանի առաջ հանեցին Նուբար փաշային, թեպետ նա ոչ թե թուրքական, այլ եգիպտական հպատակ էր: Նուբար փաշան հեռակա մահվան դատապարտվեց, կորցրեց իր «պատիվը» և ունեցվածքը: Այս վճիռը գործադրվեց, բառիս բուն իմաստով, ամբողջ հայ ժողովրդի նկատմամբ»:

Կարինում գերմանական հյուպատոս Շվարցը գրում է. «1914թ. փետրվարի 5-ին մի շարք դեպքերի հետևանքով Էրզրումի նահանգի հայ բնակչությունը, և մանավանդ գավառներում, խիստ մտահոգ է և ջարդերի նշաններ է տեսնում»: Իրոք, բաշիբոզուկները կողոպտում և սպանում էին անգեն հայերին, մինչ իշխանությունները մնում էին դիտողի դերում: Էնվերը 1914թ. հոկտեմբերի 9-ին հեռագրեց. «Մաքրել երկիրն անբաղձալիներեն: Ասիկա միակ ուղին է: ...Անհավատներու արիւնն անարժեք է... Երդում տուէք սպանելու առնուազն երեք կամ չորս անհավատ: Ատկե ավելի բարի գործ չկա»[59]:

55 АВПР, "Политархив", д. 3460, л. 136 .
56 Ն. տ., պ. 3461, սս. 1-4:
57 Ն. տ., պ. 3461, ս. 37 :
58 Շիրակյան Ա., նշվ. աշխ., էջ 33-34:
59 Ղազարեան Հ., նշվ. աշխ., էջ 27:

Թ. Աքչամը, անդրադառնալով Մեծ եղեռնի սկզբի հարցին, գրում է, թե ապրիլի 24-ը խորհրդանշական տարեթիվ է, քանի որ «տեղահանություններն ու ջարդերը սկսվել էին ...շատ ավելի վաղ»: Այս ճշմարիտ մտքին նա ավելացնում է, որ «գոյություն չունի որևէ փաստաթուղթ, որը պարունակի հայերի բնաջնջման մասին որոշում կամ հրաման: Առկա փաստաթղթերը հրապարակվել են տեղահանության սկսվելուց անմիջապես հետո: Եվ դրանցում տեղ են գտել այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են «տեղափոխել նրանց այլ վայրեր», «տեղահան անել և բնակեցնել նախորոք այդ նպատակով առանձնացված շրջաններում»: Նախ, նման փաստաթղթեր կան և դրանք կներկայացնենք հետագա շարադրանքում, երկրորդ, դա լուրջ փաստարկ չէ Մեծ եղեռնը չընդունելու, հայոց ցեղասպանության իրողությունը հերքելու համար: Ինքը՝ Թ. Աքչամը, հիմնվելով Բ. Շաքիրի հեռագրերի վրա, եզրահանգում է. «Նման հեռագրերը մատնանշում են ջարդերի կազմակերպված բնույթը»: Աքչամն առաջարկում է Մեծ եղեռնի պատմության ուսումնասիրության ինքնատիպ ու տարօրինակ տարբերակ. «դեպքերի ընթացքն ու դրանց առնչվող հրահանգներն» ուսումնասիրել առանձին-առանձին: Սակայն նաև գտնում է, որ «դեպքերի ընթացքի վերաբերյալ... լրիվ պատկերացում կարելի է կազմել ականատեսների վկայությունների, հյուպատոսական զեկուցագրերի, օտարերկրյա զինվորականների, գթության քույրերի և միսիոներների պատմածներով»: Աքչամը միանգամայն իրավացի է, երբ գրում է, թե «տարբեր վայրերում ծառայող և իրարից անկախ զեկուցագրեր կազմած այս մարդկանց ներկայացրած փաստերը հիմնականում իրար կրկնում են, ինչը վկայում է հայերի բնաջնջման միասնական ծրագրի գոյության մասին»[60]:

1914թ. սեպտեմբերի 6-ին Բ. Դուռը հայաբնակ նահանգներ ուղարկեց գաղտնի հրաման, պահանջելով խիստ հսկողության տակ վերցնել հայ կուսակցությունների ղեկավարներին և ազդեցիկ հայերին: Ամբողջ արևմտահայությունը հայտարարվեց անվստահելի և նրա դեմ հալածանքներն ուժեղացան: Երիտթուրքերը հրապարակավ կոչ էին անում մահմեդականներին. «Հայերին չխնայել, կենդանի մարդ չթողնել, խլեցեք կայք, գույք՝ ամեն ինչ»: Օլֆերովն ահազանգ էր հնչեցնում. «Այն, ինչ ներկայումս (1912թ.) տեղի է ունենում Վանի նահանգում, կարելի է համարել քաոսի սկիզբ»:

Պատերազմի մեջ Թուրքիայի մտնելուց հետո հպատակ բոլոր ժողովուրդների հանդեպ պետական քաղաքականությունն էլ ավելի խստացավ: «Աքդամ» թերթի տնօրեն, երիտթուրք գործիչ Ջալալ Նուրին կոչ էր անում. «Թրքացնել արաբական հողերը և արաբ երիտասարդության հոգում սպանել ազգային ազատագրության զգացումը... Արաբները փորձանք են Թուրքերի գլխին»: Այդ ամենով հանդերձ բնաջնջման համար հպատակ ժողովուրդներից ընտրել էին հայերին, իսկ արտաքսման համար՝ հույներին:

Ենթակա ժողովուրդներից օսմանյան գործիչների վախը բացատրվում է կայսրությունում ի սկզբանե Թուրքերի փոքրամասնությամբ և զարգացման ցածր մակարդակով: Հ. Մորգենթաուն հայերի հանդեպ դաժանությունը վերագրում է այն բանին, որ վերջինները, չնայած «զրկուած իրենց քաղաքական անկախութենեն, բայց երբեք չեն կլանուած զիրենք նվաճողներեն... Հայերը յամառորեն կառչած են իրենց ցեղային ավանդութիւններուն, կրոնին, լեզուին, իտեալներուն», իրենց հին պատմությանը:

Չնայած հայերը խանդավառությամբ ընդունեցին 1908-ի հեղաշրջումը, «կառավարութեան գործունեութեան պատճառած «զարհուրելի յուսախաբութիւնը», երիտթուրքերի «տիրատենչ և ազգայնամոլ ընթացքը», շուտով համոզեցին, թե հին հարաբերությունները մնացել են անփոփոխ և նրանց նորից մղեց եվրոպական տերությունների օգնությամբ փրկվելու ուղին: Մինչդեռ երիտթուրքերը, պատերազմի մեջ մտնելու նախօրյակին, «օտար հպատակներու առանձնաշնորհական իրավունքները ջնջեցին, խափանեցին բոլոր օտար նամակատունները, մաքսային տուրքերն ավելացուցին», այսինքն՝ օգտագործեցին տերությունների ռազմական բախումը կայսրության ամբողջական ինքնիշխանությունը վերականգնելու համար: Իսկ Դարդանելում տարած հաղթանակը նրանց հույս ներշնչեց, թե «իրենք կրկին աշխարհային ուժ մը պիտի դառնային»:

Պատերազմի սկզբին երիտթուրքերը հայ գործիչներին տեղյակ պահեցին, որ եթե որևէ հայ «ամենաչնչին օժանդակութիւն իսկ մատուցանի ռուսներուն՝ անոնց Թուրքիայ արշավուած ատենը, իրենք հետաքննութիւն կատարելու համար ժամավաճառ չպիտի ըլլային», այլ ատոր

60 «Բնօրրան», 1995, թիվ 1, էջ 97-98:

համար ամբողջ ցեղը պիտի պատժեին: 1914-ի գարունին Թուրքերը հայ ցեղը բնաջնջելու իրենց ծրագիրը կը մերկացնեին» և պատերազմը հարմար պահ համարեցին «15-րդ դարուն մեջ իրենց նախահայրերուն գործած սխալը», այսինքն՝ հայերին արմատախիլ չանելը, վերացնելու[61]:

Կ. Պոլսի դեսպաններն արգելք եղան մայրաքաղաքից հայերի տեղահանությանը,- գրում է Լեփսիուսը: Ցեղասպանությունը վրեժխնդրություն համարողներից առաջինը Թալեաթն էր, որը դա ապացուցելու համար իր «Հուշերում» նույնպես բերում է զրույցը Վարդգեսի հետ: Վերջինս Թալեաթին հարցնում է, թե ինչ է սպասում հայերին և ստանում է հետևյալ պատասխանը. «Մեր տկարության օրերին մինչև կոկորդներս հասաք և հայկական բարենորոգումների հարցը բարձրացրիք, այդ պատճառով մենք էլ այժմ մեզ համար ստեղծված նպաստավոր պայմաններից պիտի օգտվենք՝ ձեր ազգն այնպես ցիրուցան անելու, որ 50 տարի բարենորոգումների գաղափարը ձեր մտքից վանեք»: Վարդգեսը վրա է բերում. «Ուրեմն պետք է հասկանալ՝ շարունակելու եք Աբդուլ Համիդի գործը»: Թալեաթը պատասխանում է. «Այո...»:

Այս միանգամայն ճշմարիտ դիտարկումներով Լեփսիուսը նորից փորձում է ինչ-որ չափով թեթևացնելու Թուրքերի մեղքը: Նա գրում է. «Իմ նպատակն է ցույց տալ, որ պետությունների քաղաքագիտական խաղը հասցրեց նրան, որ, նախ, Աբդուլ Համիդը և ապա երիտթուրքերն այնքան կասկածամիտ դարձան, որ եզրակացրեցին, թե հայերին ոչնչացնելուց բացի ուրիշ բան անել հնարավոր չէ: Թուրքերին ներշնչել էին, թե ուզում են Հայաստանն անկախացնել, որով վտանգվելու էր Ասիական Թուրքիայի գոյությունը...»: Բնականաբար, տերություններ ասելով Լեփսիուսը նկատի ուներ Անգլիային և Ռուսաստանին: Նա կարծես չէր ուզում տեսնել, որ ցեղասպանություն իրականացրած պետությանը ոչինչ արդարացնել չէր կարող:

Սխալվում է նաև Գ. Պալաքյանը, երբ գրում է. «Այժմ տեսնելով, որ ռուս պետությունը 1913-ի Բալկանեան պատերազմի միջոցին միակ ստրուկ մնացած հայերուն վեց նահանգներու (Կարին, Վան, Բաղեշ, Սեբաստիա, Խարբերդ և Տիգրանակերտ) բարեկարգութեան ծրագիրը հետապնդելով, օսմանյան երկիրը կրկին անդամահատել կը փորձեր, Թուրք պետութիւնը կա, այս անգամ ի նպաստ հայերու, իր սրտին վրայ կատարուելիք հավանական անդամահատութեան առջևն առնելու համար իսպառ բնաջինջ ընել որոշեց հայ ցեղը»[62]:

Նորից անհասկանալի նրբանկատություն ջարդարարների հանդեպ ու նորից հայերի ազգային վարքագծով եղեռնի բացատրություն, ինչն իրականության հետ ընդհանուր ոչինչ չունի: Եվ պատահական չէ, որ երբ Պալաքյանը սկսում է թվել ջարդերի նախապատրաստական աշխատանքները, ինքնաբերաբար հերքում է իր առաջադրած թեզը: Նա ներկայացնում է բնաջնջման հետևյալ մեխանիզմը. ա) զորահավաքի պատրվակով հավաքել 20-46 տարեկան բոլոր հայ տղամարդկանց, որով հայը զրկվում էր կռվող ուժից ու աշխատող ձեռքից՝ մնում անպաշտպան ու տնտեսապես անապահով, բ) մտավորականության ձերբակալություն, գ) զինաթափում, դ) Զեյթունի դատարկում, ե) Վանի հայության (ըստ պատրիարքարանի տվյալների՝ 200 հազար մարդ) ընկճում:

Լեփսիուսը հայերի ոչնչացումը ներկայացնում է հետևյալ հերթականությամբ՝ 1914թ. նոյեմբերից 1915թ. ապրիլի 20, այսինքն՝ պատերազմի մեջ Թուրքիայի մտնելուց մինչև Վանի իրադարձությունները; 1915թ. ապրիլի 20-24-ից մինչև նույն տարվա դեկտեմբերը, երբ հիմնականում իրականացվեց հայերի աքսորն ու ոչնչացումը 1915թ. դեկտեմբերից մինչև 1918թ. հոկտեմբեր, երբ Թուրքիայում մնացած հայերը բռնությամբ իսլամացվում էին կամ ոչնչացվում; 1918թ. փետրվարի 15-ից մինչև սեպտեմբերի 15-17-ը, երբ տեղի ունեցան Կովկասի իրադարձությունները[63]:

Սա Հայոց ցեղասպանության պատմության կամայական պարբերականացում է: Նախ, ամբողջությամբ բաց է թողնված ցեղասպանության առաջին շրջանը, որը սկսվեց 1878թ. և ավարտվեց1909թ.: Այն ուներ հետևյալ էտապները՝ Զուլումի տարիներ՝ 1879-1890թթ. Սասունի ջարդեր՝ 1891-1894թթ. Համիդյան զանգվածային ջարդեր՝ 1895-1896թթ. Ադանայի կոտորածներ՝ 1909թ.:

61 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 343-344:

62 Պալաքեան Գ. Հայ գողգոթան, Երևան, 1991, էջ 62 :

63 Lepsius J. Deutschland und Armenien, Potsdom, 1919, s. IX.

Երկրորդ շրջան

1914թ. օգոստոս-նոյեմբեր, զորահավաք, զինաթափում, թալան, մասնակի ջարդեր:

1914թ. նոյեմբեր-1915թ. փետրվար: Թուրքիայի պատերազմի մեջ մտնելը և ջարդեր թուրք-ռուսական և թուրք-պարսկական սահմանամերձ շրջաններում; 1915թ. մարտ-ապրիլ՝ Կիլիկիայի հայաթափում, հայ մտավորականության աքսորում, Վանի ինքնապաշտպանություն; 1915թ. ապրիլ-դեկտեմբեր՝ բռնագաղթ ու ջարդեր; 1915թ. դեկտեմբեր-1916թ. հունիս՝ անապատ աքսորված հայերի ոչնչացում; 1916թ. հուլիս-1918թ. կեսեր՝ եղեռնից փրկվածների մահմեդականացում կամ ոչնչացում. ջարդեր ռուսական բանակի լքած նահանգներում; 1918թ. հուլիս-1921թ.՝ ջարդեր Արևելյան Հայաստանում, Հարավային Կովկասի տարբեր շրջաններում, ինչպես նաև Կիլիկիայում և Զմյուռնիայում:

Այս ամենում խառնաչփոթը շատ է: Թ. Ռ-ի. Густы "Геноцид армян" գրքի էջ 19-ում կարդում ենք, որ հայերի բռնագաղթը (բացի Վանի վիլայեթից) տեղի ունեցավ 1915թ. մայիսի վերջից մինչև հունիսի վերջը: Ապա ասվում է, թե հայերը պաշտոնազրկվեցին հունիսին: Ստացվում է, որ մի քանի վիլայեթներում բռնագաղթն ավելի շուտ կամ միաժամանակ էր տեղի ունեցել պաշտոնազրկման հետ, ինչն անհեթեթ է: Հայերի պաշտոնազրկումը սկսվել էր դեռ 1914 թվին: Վանգենհայմը թուրքական իշխանություններին մեղադրում է Արևելյան Անատոլիայում հայերի դեմ իրականացրած խժդժությունների համար, թե երիտթուրքերը «ժամանակին նախազգուշական միջոցառումներ չձեռնարկեցին և հետին թվով միջամտում էին անտեղի խստությամբ»: Այդ խստությունները հետևանք էին, որ իշխանությունները հանդես չեկան ոչ կանոնավոր ուժերի և ավազակախմբերի ձևավորման դեմ. նրանց մեղադրում են բազմաթիվ հափշտակությունների, հայ գյուղական բնակչության թալանի, սպանությունների առաջը չառնելու, երիտթուրքական ակումբներում մեծ թվով անազնիվ տարրեր հավաքագրելու մեջ: Ասում են, թե այդ ակումբները, մասնավորապես Էրզրումինը, կազմել էին ցուցակները հայ անվանի անձանց սպանությունների, որոնք տեղի ունեցան 1914թ. դեկտեմբերին: Ռուսական գրավման շրջաններից 2000 մահմեդական ընտանիքի տեղավորեցին Տարոնի գյուղերը, ովքեր ապրում էին հայերի հաշվին: Հայ գյուղացին շալակով էր փոխադրում զինամթերքը և սննդամթերքը, շալակավորներից շատերը զոհվեցին բարբարոս վերաբերմունքի հետևանքով. նրանց միայն 1/4-ը կարողացավ վերադառնալ[64]:

Էրզրումում անհատական սպանությունները գնալով ծավալվում էին, իսկ մարդասպանները մնում էին անպատիժ: Նորից անդրադարձ Մեծ եղեռնի սկզբին: Գիտնականների մեծ մասն այդ սկիզբը առաջ է տանում, բայց քչերն են այն հասցնում մինչև 1914թ. օգոստոսի սկիզբը: Օրինակ, Ա. Օհանջանյանը գտնում է, որ հայերի հալածանքները սկսվել էին 1915թ. հունվարին[65]:

Իրականում 1915թ. հունվարին այդ հալածանքները ոչ թե սկսվել, այլ շարունակվում էին, եթե ցեղասպան գործողություններ համարվեն նաև զինաթափումը, զորահավաքը և այլն:

1915թ. մարտին Կ. Պոլսում հրապարակվեց զենքերը հանձնելու հրաման, ինչը նպատակ ուներ զինաթափելու քաղաքի 120 հազ. հայությանը: Նույն օրերին սկսեցին զինաթափել Զեյթունի և Վանի հայությանը: Մասնավորապես Վանում զինաթափումն ուղեկցվում էր ամենազազրելի գործողություններով, որը և առաջացրեց վանեցիների ընդվզումը: «Թե Վանի հայությունը ստուգիվ ապստամբական որևէ կանխորոշ նպատակ և մասնավոր պատրաստություն չուներ, անով կարելի է դիւրավ ապացուցանել, որ Վանի կուսակալութեան ամբողջ հայութիւնը, գլուխ ունենալով օսմանյան խորհրդարանի անդամ և դաշնակցական պետերեն ողբացեալ Վռամեան... հաջորդաբար գաղտնի պատվիրակներ կուղարկեին ս. Էջմիածին... և Թիֆլիս ազգային բիւրոյին, որպեսզի կովկասահայ կամավորական շարժումին վերջ մը տալով, վերապահ և սպասողական ընթացք մը բռնեն, չի գրգռելու համար իթթիհատական ոճրածարավ թուրք կառավարութիւնը...»[66]:

Անգամ Թուրքիայում գործող, Օսմանյան կայսրության կյանքին քաջատեղյակ գերմանացի դիվանագետներն էին այն կարծիքի, թե «հիմարություն է մեղքը բարդել հայ հեղափոխականների

64 DR/PA-AA/R 14085.

65 Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին, Ե., 2004, էջ 4:

66 Պալաքեան Գ., նշվ. աշխ., էջ 64-65:

վրա: Առավել ևս ազգը որպես այդպիսին մեղավոր լինել չի կարող»: Շոյքներ-Ռիխտերը քրիստոնյա-մահմեդական բախումները համարում էր ոչ թե հավատքների տարբերությունից բխող ճակատագրական անխուսափելիություն, այլ մի իրողություն, որը «սնվում ու հրահրվում է Թուրքիայի կողմից»: Նա նաև զգուշացնում էր. «Տեղեկությունները, որ ստացվում են թուրքական և թուրքամետ շրջաններից, պետք է բացարձակապես մերժել կամ վերլուծել մեծ անվստահությամբ»: Դրա համար անհրաժեշտ էր համարում, որ գերմանական կողմը ոչ կանխակալ մարդկանց հանձնարարեր հանդես բերելու հակացողություն խնդրի կրոնական կողմի հանդեպ, բռնի մահմեդականացած հայերին հնարավորություն տրվեր կատարելու հետադարձ անցում և այդ արվեր այնպես, որ նրանք չվախենային իրենց կյանքի համար, մահմեդականների ընտանիքներում գտնվողների ազգականներին իրավունք տրվեր նրանց հետ պահանջելու, վերադարձվեին աղոթարաններն ու դպրոցական շենքերը, անշարժ ունեցվածքը, թույլատրվեր հայերի արտագաղթը, արգելքներ չհարուցվեին քրիստոնեական ծիսակատարություններին[67]:

Հայերի հանդեպ թուրքական քաղաքականության շարժը հանգամանալից և հիմնականում ճիշտ շարադրված է Շոյքներ-Ռիխտերի ևս մի քանի տեղեկագրերում: Նա նախ անդրադառնում է հայերի «դավաճանության և ապստամբության» խնդրին և բերում է Անտանտի պետությունների 1915թ. մայիսի 24-ի հայտարարությանը թուրքական կառավարության հունիսի 4-ի պատասխանում եղած հետևյալ խոստովանությունը՝ «Հավաս» լրատվական գործակալության հաղորդագրության մեջ նշված վայրերի հայերը չեն կատարել գործողություններ, որոնք կարողանային խանգարել հասարակական հանգստությունը և կարգ ու կանոնը: Դրա համար էլ նրանց հանդեպ պատժիչ որևէ գործողություն չի ձեռնարկվել: Նույն թվի օգոստոսի 27-ին ժնևում Թուրքիայի գլխավոր հյուպատոսը, չնայած գրեթե ողջ հայությունն արդեն տարագրված էր, մամուլի համար արած հայտարարություններից մեկում պնդում էր. «Ամբողջ հայ ազգաբնակչությունը, գտնվելով լրիվ անվտանգության մեջ, օգտվում է իշխանությունների պաշտպանությունից, կային միայն մի քանի մեղավորներ, ովքեր պատժվեցին քաղաքացիական դատարանների կողմից»: Հինգի հայտարարությունում նշված են միայն հետևյալ փաստերը՝ մի հայ խորհրդարանական (խոսքը Արմեն Գարոյի մասին է) մինչև պատերազմի սկսվելը փախել էր Ռուսաստան և այնտեղ կազմակերպել պարտիզանական խմբեր: Թուրքիայի դեմ կռվելու համար երկու հայ գնացքները ցած էին նետել երկաթուղագծերից, մի ուրիշ հայ փախել էր ճանապարհային աշխատանքներից և սպանել ժանդարմին: Բացի Զեյթունի և Վանի իրադարձություններից, նշվում է նաև Շապին Կարահիսարում հայերի զինված դիմադրությունը բռնագաղթին: Հետագայում, երբ ջարդն ու բռնագաղթը ընթացքի մեջ էին, նույնը տեղի ունեցավ Ուրֆայում, Մուշում, Սասունում, Մուսա լեռան վրա:

Նաև որևէ փաստ չկար, որը հիմք ծառայեր պնդելու Անգլիայի կողմից հայկական դավադրության սադրանքի մասին: «Ռիֆաթի պնդումները թյուրիմացություն են, ինչը բացահայտվեց դեռ պատերազմից առաջ թուրքական ընդդիմադիր կուսակցության դավադրության ընթացքում»: Դավադրությանը մասնակից էին հնչակյան կուսակցության միայն մի քանի անդամներ: Հայերի «ապստամբության մասին տեղեկատվություն առաջին անգամ տարածել է Բեռլինում թուրքական դեսպանությունը 1916թ. Վոլֆ բյուրոյի միջոցով: Ոչ այդ և ոչ էլ 1915թ. հայտարարությունում հայերի երկու հատվածների միջև տարբերություն չէր դրվում, այսինքն՝ նկատի չէր առնվում, որ ռուսահայերը պարտավոր էին ծառայել ռուսական բանակում, այլ միայն նշվում էր Ռուսաստանում կազմակերպված պարտիզանական (կամավորական) ջոկատների մասին, որոնց մասնակցում էին նաև արևմտահայերը: Նմանատիպ են թուրքական կառավարության կողմից հրատարակված «Հայ հեղափոխականների նախասիրությունները, մոլությունները և շարժումները» անունը կրող լուսանկարների ժողովածուի պարունակած նյութերը: Ով թերթի այդ ժողովածուն, անմիջապես կնկատի, թե թուրքերն ինչքան քիչ նյութեր ունեին հայկական շարժումների մասին»: Լուսանկարների մի մասում պատկերված են հայերից խլված զենքերը, քաջ գիտենալով, որ «Արևելքում բոլոր ժողովուրդները զինված են: Նկարների մյուս մասը, եթե ռուսահայերին չեն վերաբերում, ապա պատկերում են մինչսահմանադրական շրջանը, երբ իրենք՝ երիտթուրքերը, նույնպես հեղափոխական կուսակցություն էին, ընդ որում դրանք մեծամասամբ վերաբերում էին դեպքերի, որոնք այլ բան չէին, եթե ոչ «արտահայտություն ազգային ինքնագիտակցության»:

67 R 14097, Ah 23271.

Հայ ժողովրդի բռնագաղթը, շարունակում է Ռիֆտերը, զուրկ էր հիմնավոր պատճառներից և որպես մեղադրանք հայերին ներկայացված իրադարձությունների զգալի մասի սադրիչն ու հեղինակն իրենք՝ երիտթուրքերն էին: Այդ իրադարձությունները մոտավորապես խմբավորվում են հետևյալ կերպ. 1. Դեռ մինչև Ռուսաստանին պատերազմ հայտարարելը Թուրքիան ձգտում էր հեղափոխականացնել ռուսահայերին: Այդ նպատակին էր ծառայում կառավարության թույլտվությունը, որպեսզի ՀՅ Դաշնակցության համագումարները հրավիրվեին Էրզրումում: Կովկասում ապստամբելու երիտթուրքերի առաջարկին 8-րդ համագումարի ռուսահայ մասնակիցները պատասխանեցին, թե նման ձևով գործել չեն կարող, բայց խոստացան՝ որքան հնարավոր է խույս տալ եռանդուն գործողություններից: Իթիհադն իր պլանի ձախողման մեղքը բարդեց արևմտահայերի վրա, ինչն ուժեղացրեց հակակրանքը նրանց հանդեպ: 2. Պատերազմի նախօրյակին հայերը ջանում էին հայկական նահանգներում անցկացնել բարենորոգումներ: Խնդիրը նրանք համառորեն բարձրացրեցին նաև օսմանյան խորհրդարանում և հասան վիլայեթների մասին օրենքի ընդունմանը: Թուրքական կառավարությունը, կեղծելով հայերի այս ձգտումը, այն ներկայացրեց ինքնավարության հասնելու դիտավորություն: Մինչդեռ հայերը գործում էին թուրքական օրենքների շրջանակում և խոսքը գնում էր թուրքական պետության ներսում կարգուկանոնի հաստատման մասին, որպեսզի ապահովվեր հայերի կյանքի և ունեցվածքի անվտանգությունը: 3. Երիտթուրքական կառավարությունը կրողն էր կենտրոնացման գաղափարի: Նա ձգտում էր ստեղծել թուրքական ուժեղ կայսրություն միմիայն թուրքական ռասայի հիմքի վրա, իսկ թուրքերը կայսրության բնակչության նույնիսկ կեսը չէին կազմում: Դրա համար էլ երկրորդ պլան էին մղվում նաև մահմեդական հպատակները, նույնիսկ արաբները: Այդ նպատակի իրականացման համար երիտթուրքերը գտնում էին, որ իրենց ամենաշատը խանգարում էին հայերը, որովհետև նրանք աչխատասեր էին, իսկ զարգացման մակարդակով՝ բարձր Թուրքիայի բոլոր ժողովուրդներից: 4. Թուրքիան մնում էր թեոկրատական պետություն, և համարում էին, որ կայսրության միասնության համար քրիստոնյաները խանգարող տարր էին: Ահա թե ինչու իսլամացած հային խնայում էին: Սրբազան պատերազմ հայտարարելը շատ բանով նպաստեց քրիստոնյաների, տվյալ դեպքում հայերի, դեմ մահմեդականների կրքերը բորբքելուն:

Այսպիսով, որոշ առումով բռնագաղթը կարելի է ընկալել նաև որպես քրիստոնյաների հետապնդում»[68]:

Մի ուրիշ անգամ Շ. Ռիֆտերն իրավիճակի զարգացման հեռանկարների մասին գրում է. «Երիտթուրքերի կոմիտեի անդամների մեծ մասն այն տեսակետին էր, որ թուրքական կայսրությունը պետք է կառուցված լիներ միայն մաքուր մահմեդական սկզբունքների, պանթուրքիզմի հիմքի վրա»: Ոչ մահմեդական և ոչ թուրք բնակչությունը պետք է մահմեդականցվեր ու թուրքացվեր, իսկ որտեղ այդ հնարավոր չէր, ոչնչացվեր: Երիտթուրքերին, ոչ առանց հիմքի, թվում էր, որ իրենց պլանի կենսագործման համար ամենաբարենպաստը պատերազմական իրավիճակն էր:

Հայերի բնաջնջումը հիմնավորելու համար ասվում էր՝ իբր թե ՀՅԴ ապստամբություն էր նախապատրաստում, ուռճացվում էին լուրերն անկարգությունների մասին և հայերի ինքնապաշտպանական ձգտումները պատրվակ օգտագործում նրանց սահմանամերձ շրջաններից տեղահանելու համար: Գրեթե նույն ժամանակ արևելյան Քրդստանում Մոսուլի վալի Հայդարը նեստորականներին դուրս քշեց իրենց օջախներից և մասամբ ոչնչացրեց: Հյուսիսային Պարսկաստան Հալիլի արշավանքի հետևանքը եղավ տեղի հայկական և ասորական բնակչության հաշվեհարդարը և հայ, ասորի ու պարսիկ բնակչության դուրս քշելը Հյուսիսային Իրանից: Միջոցներ էին փնտրում մաքրելու նաև արաբների հաշիվը, սակայն պատերազմական պայմաններն այդ անելու համար հարմար չհամարվեց: Դրա փոխարեն համընդհանուր զորահավաքի միջոցով ձևավորեցին ծայրաստիճան վատ հանդերձավորված արաբական զորքեր և ճմռանն ուղարկեցին կլիմայական անբարենպաստ պայմաններ ունեցող վայրեր (1914թ. Էրզրում, 1915թ. Հյուսիսային Պարսկաստան), ...ցրտից ու քաղցից ոչնչանալու համար:

Կողմնակիորեն նույն միտքն էր հաստատում ռայխստագի անդամ Դ. Մումի 1917թ. դեկտեմբերի 7-ի նամակն արտաքին գործերի նախարարությանը: Նա գրում է. «...Հավանաբար շուտով կատագրվեն Ռուսաստանի կողմից զավթված հայկական տարածքները: Եթե թուրքերը նորից տիրանան այդ վայրերին, լուրջ վտանգ կառաջանա, որ կրկնվեն ... հայկական կոտորածները: Էնվեր փաշան վարում է ավելի միատարր Թուրքիա կազմավորելու քաղաքականություն»[69]:

Երիտթուրքական կենտրոնը տեղական իշխանություններին և իթիհադի ակումբներին հանձնարարեց. «Նկատի ունենալ, որ հայկական կոմիտեները ռումբեր և ատրճանակներ են պահում (զինամթերքի մի մասը գտնվել է Սիրիայում և Սրվազում), ստեղծել են կամավորական գնդեր՝ մեծ մասամբ կազմված թուրքահայերից, հետապնդում են երկիրն ապատակելու նպատակ և ծրագրում են թիկունքից հարվածելու թուրքական բանակին: Այդ ամենի մասին նյութեր հայտնաբերվել են նրանց կազմակերպություններում և հրատարակչություններում: Նկատի ունենալ, որ Թուրքիայի կառավարությունը չի կարող աչք փակել և հանդուրժել այդ կազմակերպությունների գոյությունը... որ նման կոմիտեներն անկայունության աղբյուր են, չի կարելի նրանց օրինական համարել: Ու նաև այն, որ դրանք վերացնելու համար պահանջվում են առանձնահատուկ միջոցներ, մենք, համաձայնելով զինվորական ընդհանուր հրամանատարության հետ, ընդունեցինք հետևյալ որոշումը՝ պետք է նախապատրաստական միջոցառումներից հետո անմիջապես փակել նահանգներում գործող դաշնակ, հնչակ և նույնանման կոմիտեների կենտրոնները: Այդ կոմիտեներում հայտնաբերված փաստաթղթերը բռնագրավել՝ թույլ չտալով, որ դրանք ոչնչացվեն: Կոմիտեների բոլոր գործող ղեկավարներին ու անդամներին, որոնք կառավարության համար վտանգավոր և վնասակար են, պետք է անմիջապես ձերբակալել, կենտրոնացնել հարմար վայրերում նրանց փախուստն անհնար դարձնելու համար: Խուզարկեցեք կասկածելի վայրերը և գտեք թաքցրած զենքերը: Հայերի դիմադրությունը կանխելու համար նախ դիմեք տեղի բանակային կենտրոններին՝ անհրաժեշտ միջոցառումներն ապահովելու համար: Բոլոր փաստաթղթերը պետք է ուսումնասիրվեն, իսկ ձերբակալված անձինք հանձնվեն զինվորական ատյանին: Ձերբակալվածների անունները և կենսագրական մանրամասները, մահապատժի վճիռներն անպայման ուղարկեք»[70]:

Արդուլ Ռեշիդը 1912-ի մարտին, այսինքն՝ դեռ մինչև Բալկանյան պատերազմը, Ռումելիի իթիհադական ակումբում հայտարարեց. «Եթե ամբողջ Եվրոպան մեզ վրա հարձակվի բնաջնջելու համար, այդ ժամանակ ստիպված ենք լինելու մեր հպատակ քրիստոնյա ժողովուրդների դեմ այնպիսի վրեժխնդրական ծրագիր գործադրել, որ եվրոպացիներն ապշեն և չկարողանան մեր դեմ որևէ քայլ կատարել»[71]:

Բալկանյան պատերազմում Թուրքիայի պարտության օրերին չորս անգամ օսմանյան վարչապետ նշանակված, հայերի բնաջնջման քաղաքականությունը ձևավորողներից Քյամիլը Եգիպտոսում էր և այնտեղից սուլթանին գրեց. «Երկրի բոլոր դժբախտությունների պատճառն իթիհադն է»: Այսինքն՝ ոչ բոլոր թուրք գործիչներն էին համակարծիք իթիհադականների հետ, նրանց քաղաքականությունը համարում էին կայսրության համար կործանարար: Սակայն քաղաքականության ղեկը ոչ թե նրանց, այլ իթիհադի ձեռքում էր և նա հետևողականորեն առաջ էր տանում արևմտահայության բնաջնջման գործընթացները: 1914թ. դեկտեմբերի 26-ին «Ազատամարտը» գրեց, թե կովկասահայերի դիրքորոշումը հիասթափեցրել է կառավարությանը: Այլևս դժվար էր թուրքերին համոզել, որ ՀՅԴ Թուրքիայի ամբողջականության կողմնակից էր և դեմ էր Հայաստանի միացմանը Ռուսաստանին: Արդեն նոյեմբերին Վանում և Վասպուրականում գյուղեր էին դատարկվում, դասալիքներին պատժելու պատրվակով ժանդարմները բազմաթիվ բնակարաններ էին հրդեհում ու թալանում: Իսկ մահմեդական դասալիքների հանդեպ ոչ միայն որևէ քայլ չէր կատարվում, ոչ միայն ավազակությամբ զբաղվողներին չէին հետապնդում, այլև ներում էին շնորհում: Բանտերից հանեցին ու զինեցին անգամ ամենատխրահռչակ ավազակապետերին:

«...Օսմանեան իշխանութիւնները պատերազմական բացառիկ վիճակի պատրուակով,- գրում է Գ. Ահարոնյանը,- կապերը խզեցին մայրաքաղաքի հայութեան ու գավառի հայութեան միջև, ինչպես նաև անկարելի դարձան յարաբերութիւնները գավառեգավառ ու քաղաքեքաղաք: «Երկաթե վարագոյրներ» բարձրացուցին իւրաքանչիւր գավառի կամ նահանգի շուրջբոլորը, որպեսզի կղզի-

68 R 14098, Ab 39028.

69 R 14098, Ab 163.

70 «Ալիք», 28. 10. 1985:

71 Ղազարեան Հ., նշվ. աշխ., էջ 320:

ացվեին կամ մեկուսացվեին հայ համայնքները, և տեղեակ չլլային իրարու ճակատագրեն ու հնարավորութիւն չունենային համագործակցաբար դիմադրելու ցեղասպան ճիվաղներուն»[72]:

Պատերազմը սկսելուց հետո հայկական գավառները փաստորեն շրջափակվեցին, գնալ գալը դադարեցվեց, իսկ 1915թ. մայիսին ընդունված օրենքով հատուկ գրավոր թույլտվություն էր պահանջվում ուղևորության և տեղից տեղ տեղափոխվելու համար, ինչը հայերին ստանալն անհնար էր[73]:

1914թ. հոկտեմբերի 5-ի իրադեով գրագրությունները պետք է կատարվեին միայն թուրքերեն, արաբերեն, գերմաներեն և ֆրանսերեն: Որոշ ժամանակ անց արգելվեց նաև ֆրանսերենը, իսկ 1915թ. հունիսին՝ բոլոր օտար լեզուները և օտար ամեն ինչ, անգամ ցուցանակները[74]:

Թալեաթը, արգելելով գերմաներենի օգտագործումը, խնդիր էր հետապնդում գերմանացիներին կից ունենալ թուրք թարգմանիչ կամ խորհրդական: Նա գերմանացիներին հարկադրեց ֆես կրել և թուրքերեն սովորել: Անգլերեն նամակներն ընդունվում էին, եթե դրանք, այսպես կոչված, «ամերիկերենով» էին գրված: Թույլատրում էին միայն գերմանական դիվանագիտական թղթակցությունների ծածկագրերը[75]:

Ֆրանսիական, անգլիական և ռուսական դեսպանությունների ու դիվանագետների հեռանալուց հետո վերացվեցին նաև օտար երկրների փոստային ծառայությունները:

Հայը թուրքի հետ մնաց մեն մենակ: Հայկական գավառներում, «բռնագրավումները կողոպուտի նկարագիր» ստացան: Հայերն անբերակայելի խոշտանգվում էին, որպեսզի երեակայական զենքի պահեստների տեղերը ոստիկաններին հայտնեին: Այդ վայրագություններից մեծ թվով մարդիկ մահացան: Գնալով համընդհանուր թալանի բույթ ստացան «բանակի կարիքները հոգալուն կոչված» բռնագրավումները: Զավթում էին ամեն ինչ՝ դուռ ու պատուհան, ածուխ ու վառելիք, վերմակ ու գորգ, դույլ ու ամանեղեն, հաց ու այլևայլ մթերքներ, մահճակալ ու սեղան, զարդեղեն ու դրամ, անասուն ու կառք: Հայերի տներում զինվորներ տեղավորեցին: Հայը պարտավոր էր նրանց խնամեր ու կերակրեր, նրանց տները վերածվեցին հիվանդանոցի, օթևանների, անկելանոցների: Գողություն, ծեծ, բռնաբարություն, մարդկանց առք ու վաճառք[76]:

«...Օսմանեան հայրենիքին պաշտպանութեան համար զոհողութեան պատերազմական բացառիկ հարկահավաքութեան պատրուակով թուրք իշխանութիւնները ջնջեցին տնտեսապես փչացնել հայ համայնքները, որպեսզի անոնք ի վիճակի չլլային նոյնիսկ գաղտնի զենք գնելու, այլ վերածուեին անօգնական, յուսահատ ու թշուառ ռայաներու»: Հայերի տնտեսական հյուծումն իրականացվում էր ոչ միայն զինաթափման, այլև «նվերների» պիտակով հարուստներին կողոպտելու միջոցով: Բանակի կարիքները հոգալու անվան տակ հայերի խանութներից վերցնում էին ամեն ինչ: Ազգաբնակչության թալանը նաև խնդիր ուներ ավելի սրելու հայ-թուրքքուրդ հարաբերությունները: Հայ պաշտոնատարներին հանձնարարվում էր բռնագրավումները կատարել քրդաբնակ, իսկ թուրք պաշտոնատարներին՝ հայկական գյուղերում: Ի դեպ, հայերից 3-4 անգամ ավելի շատ մթերք, անասուն ու պիտույքներ էին վերցնում, քան մահմեդականներից: «Գիւղացիութիւնն իր միջոցներով պարտական էր պաշտոնեայի ձեռքը եղած ցուցակի և ցուցմունքի համաձայն իր հանձնելիքը կենտրոն հասցնել»: Դժոխք էր, ամենուրեք «զորահավաք, տրահավաք, ձիահավաք, իշահավաք, եզահավաք...»: Հայերը սոսկումով էին նկատում, որ նախկինում հալածված համիդականները նորից հրապարակ են իջել բացարձակ արտոնյալ իրավասություններով: Բռնագրավումներից ու զինվորագրումից նրանք ազատված էին: Տարոնի տխրահռչակ Մուսա և Ղասըմ բեյերը կառավարությունից զենք ու ռազմամթերք էին ստանում իրենց բազմանդամ ավազակախմբերի համար: Մուսան հարձակվեց ու լրիվ կողոպտեց Ավզուտը, ամբողջ ընտանիքներ լցրեց մարգն ու հրդեհեց, Մուշեղաշեն գյուղի տանուտիրոջ ընտանիքի բոլոր անդամներին մորթեց, հարսներին ու աղջիկներին առևանգեց: Երբ Վարդենիսի

72 **Ահարոնեան Գ.**, նշվ. աշխ., էջ 4:
73 "The Orient", 26. 05. 1915.
74 Ն. տ., 30. 06. 1915:
75 **Lepsius J.**, նշվ. աշխ., p. 211:
76 **Ահարոնեան Գ.**, նշվ. աշխ., էջ 747-748:

հայերը հետ չպրտեցին չեթեների հարձակումը, ոստիկանական ջոկատ ուղարկվեց, որը խժդժություններ սարքեց և 15 տարեկանից բարձր արու ողջ բնակչությանը շղթայակապ տարավ Մշո բանտ: Բաղեշում հանրահայտ ջարդարարներ էին Ն. Նուսրեդդինը, Մ. Մուսան, Հ. Ցուսուֆը, Ջ. Ալին, Ս. Դուրսան, Մ. Նասրուլլահը, Հ. Շեմսեդդինը, Հ. Խալիլը: «Այդ գլխավորներուն գործակալները հազարավոր էին, որոնք գիշեր-ցերեկ հայ գիւղերը կը թալնեն, կը ջարդեն, կառևանգեն և կը լկեն. ուրկե որ բողոք ըլլար, կամ դիմադրութիւն, կառավարութիւնն իր ոստիկանական ջոկատները հոն կը փութացներ անոնց պակասը լրացնելու»[77]:

Գլխավոր գյուղի թուրքերն ու քրդերը Բաղեշի հայկական հինգ գյուղերի բոլոր տղամարդկանց մորթեցին, գյուղերը թալանեցին, կանանց առևանգեցին[78]:

Բրուսայում Ավստրո-Հունգարիայի հյուպատոսարանի աշխատակիցը հաղորդել է Վիեննա, որ մի հարուստ հայի կանչում են հարկահավաքության գրասենյակ, «լավ մշակում են», որից հետո նա ասում է, թե իր կալվածքը վաճառում է: Բայց երբ դրամը (կալվածքի գինը) վերցրած գնում է դեպի ելքը, ուրիշ թուրք պաշտոնյաներ հարձակվում են ու հայից դրամը խլում: Քայլեր կատարվեցին հայերից խլած միջոցներով կազմակերպելու թուրքական առևտրական ընկերություններ:

Հայերին զինաթափելու և թալանելու միջոցով իշխանությունները երկու կարևոր խնդիր լուծեցին՝ թուրքերի շրջանում բորբոքվող ազգայնամոլական կրքերի մթնոլորտում սկսեցին պատերազմը Ռուսաստանի դեմ՝ հավաստիացնելով ազգաբնակչությանը, թե ժամանակն է Օսմանյան կայսրության դարավոր թշնամուց խլելու թուրանական տարածքները, ապա նաև թուրք ժողովրդին ոտքի հանեցին «թուրքիան թուրքացնելու համար»:

Շարունակվում էր հայերի պաշտոնազրկման գործընթացը: Օրինակ, Սեբաստիայի հայ պաշտոնյաներին առանց նախաշգուշացնելու պաշտոնանկ արեցին, չեղյալ հայտարարեցին հայ գործարարների հետ կնքված պայմանագրերը[79]:

Գերմանական մի տեղեկագրում կարդում ենք, որ Հ. Համաղյան ազգանունով մեկը 26 տարի շարունակ բարեխղճությամբ ու հմտությամբ աշխատել էր ՆԳ նախարարությունում, բայց հանկարծակի ազատվում է աշխատանքից առանց որևէ պատճառաբանության: Գերմանացու հարցմանը պատասխանեցին. «Ձեր բարեկամի ազնվությունը կասկածից դուրս է: Նա աշխատանքից ազատվել է միայն այն պատճառով, որ ընդհանուր միջոցառումներ են իրականացվում»:

ՆԳ նախարարության պատասխանատու աշխատողներից մեկը գերմանացի իր ծանոթին ասում է, թե Թալեաթն «ուզում է աշխատանքից հանել նախարարության բոլոր հայ աշխատողներին, որովհետև թուրք պաշտոնատարներն այլևս չեն ուզում նրանց հետ աշխատել», թե հայերից պետք է ազատվի կառավարական ամբողջ համակարգը[80]:

Վիեննա ուղարկված մի փաստաթղթում նշվում է. «Հայ պաշտոնյաների միայն 2%-ն է ծառայության մեջ մնացել: Օրինակ, շինարարության նախարարության 150 հայ ծառայողից մնացել էր հինգը»[81]:

Զեյթունում պաշտոնազրկված մի հայի խնդրանքին Թալեաթը պատասխանեց. «Այլևս հայերի համար պաշտոն չկա, իսլամ դարձիր և թերևս որևէ պաշտոն ստանաս»[82]:

Պատասխանելով հայերին պաշտոնազրկելու վերաբերյալ Անկարայի փոխկոնսուլ Աթըֆի ծածկագրին՝ Ցոզղաթի մութասարիֆ Ջեմալը գրեց. «Համաձայն Ձերդ գերազանցության հրամանների ձեռնարկված են անհրաժեշտ միջոցներ տնտեսական ճյուղերի հայ պաշտոնյաների նկատմամբ (նրանք հեռացված են աշխատանքից): Խնդրում եմ... հայտնեք արդյո՞ք նպատակահարմար է նույն միջոցները ձեռնարկել այն հայերի նկատմամբ, որոնք քաղաքապետարանի վարչական խորհուրդների կամ հանձնաժողովների, ինչպես նաև գրավումի (գույքի) հանձնաժողովի անդամ են»[83]:

77 **Սասունի Կ.**, նշվ. աշխ., էջ 747-748:
78 Ն. տ. :
79 **Նազլեան Ց.**, Ցուշեր, էջ 254 :
80 DR/PA-AA/R 14088, փաստ. թիվ 176:
81 "Osterreich-Armenien", Bd VI, 1914-15, s. 4729.
82 «Հայկաշեն տարեգիրք», Ա տարի, Կ. Պոլիս, 1922, էջ 108-110:
83 Դիվան Երուսաղեմի, թիվ Հ 614:

Թուրքական մամուլը ողողվեց հակահայկական նյութերով, բացահայտ կոչեր էին հնչում «գյավուրներից ազատվելու, նրանց հետքն իսկ կորցնելու» վերաբերյալ: Մահմեդականների մոլեռանդությունը բորբոքելու նպատակով ավելի եռանդուն էին օգտագործվում Կորանի դրվագները: «Ո՛վ հավատացյալներ,- հռչակում է Կորանը,- ձեր դրացի դրուժաններուն հետ կռուեցեք. անոնք միշտ խստաբարո ընդունելութիւն թող գտնին ձեզ մոտ»[84]:

«Գիշեր ու ցերեկ այս կրոնքին համար կռվի երթալն ավելի լավ է, քան թե աշխարհը և այն, ինչ-որ կայ անկե ներս: Եվ յիրավի, ձեզմե որևէ մեկին կռիվի շարքերուն մեջ կենալն ավելի լավ է, քան 60 տարի բծախնդրորեն տունին մեջ կատարած անոր աղոթքները»[85]:

Ամենուրեք լսվում էին կոչեր. «Ով գյավուրի արյունով ներկի իր ձեռքը, դրախտ կգնա: Գյավուրի անասունը, պատիվը, կյանքը հալալ է մահմեդականին»: «Է՜յ, մահմեդական եղբայրներ, մեզ էլ դանակ և գյավուրի գլուխ տվեք, որ մենք էլ կատարենք մեր պարտքը և արժանանանք դրախտին»: Մեծ վեզիրի կոչերից մեկում ասվում էր. «Սպանեք նրանց, ովքեր Ալլահից բացի, հանդուրժում են ուրիշ աստվածների գոյությունը: Սպանեք նրանց ամենուրեք, որտեղ հանդիպեք, բռնեք նրանց, փակեք բոլոր ճանապարհները»[86]:

1915թ. փետրվարի 10-ին արտասանած ճառում Սազոնովը գովեստի խոսքեր շռայլեց հայերի հասցեին, առանց մտահոգվելու, թե դրանք ինչ հետևանքներ կարող էին ունենալ օսմանահպատակ հայերի համար: Նա հայտարարեց՝ հայկական նահանգների հայությունն ըմբոստանալով արդեն իսկ սկսել է համագործակցել ռուսական բանակի հետ և բախումներ առաջացնել Վանում և Զեյթունում: Երիտթուրքերը չհապաղեցին այս ճառը նույնպես օգտագործել և արագացրին բնաջնջման աշխատանքը, այլ ոչ թե «ընդհանուր հայութիւնը բնաջնջելու սկզբնական ծրագիր մը մշակեցին», ինչպես գրում է Լ. Վարդանը, քանի որ այդ «սկզբնական ծրագիրը» պատրաստ էր շատ վաղուց[87]:

Պահպանվել է Հալեպի փոխկուսակալ Ղալիպի հեռագիրը. «Չորրորդ բանակի հրամանատարության 1915թ. օգոստոսի 12-ի հեռագրի ու կարգադրության համաձայն ոչ մի հայի, անկախ նրա տարիքից ու սեռից, չպետք է թույլատրվի երկրից դուրս գալ»: Միաժամանակ կազմվեց քաղաքների ու գյուղերի ազդեցիկ հայերի, հասարակական գործիչների ու մտավորականների ցուցակները:

Փակվեցին հայկական պարբերականները, բացառությամբ «Ժամանակ», «Բյուզանդիոն», «Վերջին լուրեր» և «Ջերիտիե չուրգիե»-ից: Գրաքննության ծայրահեղություններ հասցվեցին բացարձակ անմտությունների: Նամակները փոստ պետք է հանձնվեին ոչ միայն բաց, այլև մի թերթի վրա՝ առաջին էջին տեքստը, իսկ երկրորդին հասցեն: Բանակ զորակոչվեցին 14-60 տարեկան, մինչ այդ չզորակոչված թուրքերը: Նրանց զինեցին ու նախապատրաստեցին ոչ թե ռազմաճակատի, այլ ջարդերին մասնակցելու համար: Ստեղծվեց գաղտնապահության կատարյալ համակարգ, Կ. Պոլիսը պահանջում էր ստացված բոլոր հեռագրերը հետ ուղարկել:

Սիսի Սահակ կաթողիկոսը գրեց. «Մեզ մեծ դժբախտություն է սպասվում»: Արհավիրքի հանդեպ մնալով անօգնական՝ հայերը չփոթվեցին: Օգոստոսի 29-ին Կ. Պոլսի ազգային հոգևոր խորհուրդը որոշեց իշխանությունների հանդեպ զգույշ և հաշտ վերաբերմունք որդեգրել: Հուսալքված ու բարոյալքված էին նաև հայ կուսակցությունները: Նրանք նույնպես հաշտվողական դիրք գրավեցին և ժողովրդին կոչ արեցին զենքերը հանձնել: Արևմտահայության չփոթմունքը նկատի ունենալով Գ. Զոհրապը 1914թ. օգոստոսի 18-ին գրեց. «... Ո՞ւր է մեր ազգը, ամենուրեք փնտրում և չեմ կարողանում գտնել. հյուլեացած, ցրված, անկապակից ազգ. ամեն մարմին ներքին ձգողության ուժով է կազմվում, մեր ազգը կարծես ներքին վանողության զորությամբ գոյություն ունի: Ազգ, որ ոչ գլուխ ունի, ոչ ձեռք և ոտք, ոչ ուղեղ ունի, ոչ զգայնություն, միաբջիջ կակղամորթ արարածների նման ինքնաշարժ կծկումներ ունի միայն ամեն ինչի հետ չփվելիս»: Ա. Մանուկյանը գրեց, որ հայ ժողովուրդը «քաղաքական բացառիկ պայմաններում հրաշքի արժանի գործողություններ է անում: Մի բան, որ աչքի է զարնում, դա կազմակերպող ու ղեկավարող ուժերի բացակայությունն է: Երկիրն իր ծոցից մարդիկ չի տալիս, իսկ հեղափոխական շկոլա չի ստեղծվում այդ բացը լրացնելու համար... ժողովուրդը մնում է երեսի վրա: Սրանից հետո ինչ պահանջել այս ժողովրդից... Մյուս կողմից էլ, հեղափոխական դրոշի տակ առաջ է եկել հացկատակների ահագին կուսակցություն... այդ պատճառով է, որ անցյալում և մասամբ ներկայումս հեղափոխականի վարկը բավական ընկած է քաղաքի ազդեցիկ դասակարգի և մտավորական կոչված մասի մեջ»: Սեպտեմբերի 29-ին «Ազատամարտը» հայերին համոզում էր, թե ջարդերի որևէ վտանգ չկա, եթե հայերը բարեխղճությամբ կատարեն օսմանյան հպատակի իրենց պարտականությունները: Հայերի վրա հարձակումների փաստերն անվանվում էր «լրագրողների զրպարտություն»: ՀՑ Դաշնակցության բյուրոն հոկտեմբերի 10-ին կոչ արեց. «Այժմ ավելի քան երբևէ անհրաժեշտ է լարել բոլոր ուժերը ժողովրդին դժբախտությունից զերծ պահելու համար: Պետք է խուսափել միջադեպերից և քաղաքական թյուրիմացություններից»[88]:

Փրկության փնտրտուքներում արևմտահայության հայացքն ամբողջությամբ հառվեց Ռուսաստանին: Գ. Զոհրապը գրեց. «Ռուսական դեսպանատունը մեր միակ ապավենն է»: Նա մի քանի անգամ հանդիպեց Հիրսի հետ և ահազանգեց, թե օր օրի «ուժեղանում են չարագույժ լուրերը պատրաստվող ջարդերի մասին»: Նույն դիրքորոշումն ուներ նաև պատրիարքը. «Ռուսաստանի դեսպանը մենակ է մնացել Հայկական դատը պաշտպանելու գործում»: Նա նաև անհանգստացած էր Պետերբուրգի երկդիմի քաղաքականությունից և Ա. Մանդելշտամին ասաց. «Եթե մեզ համար որևէ բան չպետք է անեք, խնայեցեք մեզ, որովհետև հետևանքներն աղետալի են լինելու...»: Պատրիարքի կեցվածքը չնայած պարզունակ էր, բայց հստակ: Եթե Ռուսաստանը Հայկական հարցը չի լուծելու, թող արևմտահայության գործին չխառնվի: Նա նաև դեմ էր արևելահայության միջամտությանը: Այս խնդրում ևս պատրիարքն ու ՀՅԴ-ն համահունչ էին գործում: Արևելահայերը շարունակում էին իրենցը համարել արևմտահայության ազատագրության հարցը և ձգտում էին այդ անել Ռուսաստանի միջոցով: 1914թ. հուլիսին պատրիարքը Թիֆլիս ուղարկեց Ն. Տաղավարյանին, որն այնտեղ «տեսակցություններ ունեցավ հայ մտավորական ու խելահաս անձանց հետ՝ խնդրելով մեծ զգուշությամբ շարժին, վասնզի իրենց թրքահայ եղբայրներուն կեանքը կրնայ վտանգվիլ անխորհուրդ ձեռնարկներով ու ավելորդ ցոյցերով»: Դոկտ. Տաղավարյանը վերադարձավ լրիվ հուսահատ, որովհետև նրա «հորդորները ոչ մեկ արդիւնք ունեցած էին և ռուսահայոց մտայնությունը բոլորովին տարբեր կը թվեր»[89]:

Պատրիարքը 1914թ. հոկտեմբերի 20-ին հավաքում է հայ գրեթե բոլոր քաղաքական ուժերի ներկայացուցիչներին՝ Վ. արք. Մանկունի, Հ. Պոյաճյան, Դիմաքսյան, Պ. Հալաճյան, Տ. Քելեկյան, Հ. Շահրիկյան, Դ. Տեր-Մովսիսյան, Մ. Մուրադյան և ուրիշներ, ստեղծված կացությունը քննելու համար: Խորհրդակցությունը համամիտ էր պատրիարքի հետ և հանձնարարեց բարվոք հարաբերություններ որդեգրել երիտթուրք կառավարության հետ և «անմիջապես շրջաբերական-հրահանգ մը ղրկել բոլոր գավառները և հրավիրել ժողովրդին կատարելու յուր պարտականութիւնը»[90]:

Պատրիարքը բարեխղճությամբ կատարում է նման հավաքների և ՀՑԴ խորհուրդներն ու հանձնարարականները: Վերը նշված ժողովի որոշման հիման վրա նա տեղերն ուղարկեց շրջաբերական. «Շրջահայեաց ըլլալ, ամեն կերպով օժանդակել և դիտողութիւններ տալ օսմանեան կառավարութեան, ամեն զոհողութիւն և անձնուիրութիւն յանձն առնել յօգուտ հայրենիքի գերագույն շահերուն, լավ դրացիութիւն և յարաբերութիւններ մշակել այլազգիներու հետ, նիւթական օժանդակութիւններե զատ յորդորել ժողովուրդը, որ որքան ալ անվարժ զինուորական կեանքին, չխնայե մինչև իսկ կեանքը, եթե հայրենիքը պետք ունի անոր: Ազգային շենքերու և ժողովրդին տուներուն մեջ պատսպարել հիվանդ կամ վիրավոր զինուորները»[91]:

84 Կորան, սուրահ Թ, 124:

85 Seinkz av Mohamed, New York, 1958, p. 30.

86 Վր ՊԿԱ, ֆ. 2, գ. 3255, թ. 121:

87 Ցուշամատեան Մեծ եղեռնի, էջ 187:

88 Lepsius J., Der Todesgang des armenischen Volkes, s. 183.

89 Զավեն արքեպիսկոպոս, Պատրիարքական յուշերս. վավերագրեր և վկայութիւններ, Կահիրե, 1947, էջ 49-50:

90 Ն. տ., էջ 74-75:

91 Կարպիսեան Գ. Վրդ., Հայ սրբավայրերու պղծումը և հայ կղերականներու նահատակութիւնը: Տե՛ս «Ցուշամատեան Մեծ եղեռնի», էջ 500:

Նոյեմբերի 20-ին պատրիարքը նոր շրջաբերական ուղարկեց. «Մեր երկիրն այսօր քանի մը պետութեանց հետ պատերազմական վիճակին մէջ կը գտնուի: Հայ ազգը, որ դարերե ի վեր բնատուր հավատարմութիւն և անձնուիրութիւն ցոյց տուած է, ներկայ պատերազմի ընթացքին ևս պիտի փութայ իր հայրենասիրական անհրաժեշտ պարտականութիւնները կատարելու: Ասիկա ստոյգ ըլլալով հանդերձ, կարևորութեամբ կը յանձնարարուի և կազդարարուի կրկին անգամ յորդոր կարդալ ժողովրդին, որպեսզի ետ չկենայ ամեն կարգի զոհողութենե՝ փառք ու պատիվին բարձրացմանը համար օսմանեան գահին, որուն յարած է տոկուն յավատարմութեամբ և մեր նուիրական հայրենիքին պահպանութեան և պաշտպանութեան համար»[92]:

Պատրիարքը մերթ գտնում էր, թե աշխարհամարտը փոթորիկ էր, որից հայերը հազիվ թե անվնաս դուրս գային և շրջահայեցության էր կոչում, մերթ էլ հորդորում էր հայությանը «կատարել իր պարտքը», կանգ չառնել զոհողությունների առաջ: Նույն ձևով հանդես եկան նաև շատ հայ գործիչներ, մտավորականներ, գրեթե բոլոր հայկական պարբերականները: «Հայ ժողովուրդը չպետք է որևէ օտար կառավարության առուծախի կամ սպեկուլյացիայի առարկա դառնա: Հայ զինվորն անձնազոհ պիտի կռվի կայսրության սահմանների անձեռնմխելիության համար»[93]:

Տեղերում հավանություն տվեցին այս դիրքորոշմանը և համապատասխան հեռագրեր հղեցին պատրիարքին: Եկեղեցիներում ծեսեր կատարվեցին նվիրված օսմանյան զենքի հաղթանակին: Կիլիկիացիները 10 հազար գուլպա նվիրեցին օսմանյան բանակին: Ռազմական նախարարությունը նոյեմբերի 22-ին շնորհակալական հեռագիր ուղարկեց շարժական հիվանդանոցի և գուլպաների հանգանակության կապակցությամբ, նշելով, որ այդ «հայրենասիրական ցոյցն ամեն կերպով գնահատելի նկատուած է զինուորական իշխանութեան կողմե...»[94]:

Հայ ազգաբնակչությունը պետությանը տրամադրեց նաև մեծ քանակությամբ պարեն, փոխադրամիջոց, դրամ, հագուստեղեն և այլն: Հայերի ճնշող մեծամասնությունը պարտաճանաչորեն կատարեց զորակոչի հրամանը: Դեկտեմբերի 2-ին երիտթուրքերը հայտարարություն հրապարակեցին, որում ասված էր. «Օսմանեան կայսրութեան փառքին և մեծազորութեան պահպանման համար ամեն ատեն անձնվիրութիւն ցոյց տալե ետ չկեցող հայերն այս անգամ ևս ապացուցեցին, թե օսմանեան հայրենիքի զավակներ են... ազգին զավակներուն այս կարգի հայրենասիրական արտահայտութիւններն ամենեն զորավոր հերքումն են թշնամի թերթերու տարածած այն զրույցներու», թե երկպառակութիւն և անջատողականութիւնն է հայերի բնավորութիւնը[95]:

Պրոֆ. Է. Թալան գրեց. «Հայ հայրենակիցների դերն այս երկրում չի մոռացվի: Խոնարհվում եմ նրանց պատվաբեր հիշատակի առջև»:

Թուրքերի այս և նման գնահատականները, իրականությունը ճիշտ արտահայտելով հանդերձ, անկեղծ չէին և խնդիր ունեին բթացնելու հայերի զգոնությունը: Իթիհադի խոսքի և գործի միջև հակադրությունն ակնհայտ էր: Սեբաստիայում թուրք երեսփոխանները հայտարարեցին. «Մեր բուն թշնամիները մեր մեջ են»: Պատրիարքը «բազմաթիվ թաղրիրներով» շարունակում էր Բ. Դռան ուշադրությունը հրավիրել Էրզրումի, Վանի, Բիթլիսի նահանգներում ջարդերի, հողերի հափշտակությունների, ավարառությունների վրա: Տարվա վերջերին, երբ դեպքերը սկսեցին ստանալ զանգվածային բնույթ և տեղի ունեցան Բողաս-Քեսեհի, Բելուի, Բաշկալեի, Հարազանի, Սաթմանիսի, Արշամի, Հասան-Թամրանի, Տաշ-Օղլուի, Գարա-Ջորիկի և այլ գյուղերի հայերի կոտորածներն ու ավարառությունները, պատրիարքը ջանք չխնայեց, որպեսզի գալիք մեծ պատուհասները կարողանա կանխել և կանխել միայն օրինական միջոցներով[96]:

Սակայն բարենորոգումների ծրագրի ընդունումը հայերի տրամադրությունը վտանգավորության աստիճանի բարձրացրել էր: Դրա համար էլ նորընտիր պատրիարք Զավեն Եղիայանի առաջին կոնդակը խոհեմության և զգոնության կոչ էր. «Բարոյական և նիւթական ոյժերը չվատնել, որովհետև ատոնց պետք ունի հայ քրիստոնեութիւնդ, օսմանեան հայ քաղաքացիութիւնդ»[97]:

92 Կարպիսեան Գ. Վրդ., Հայ սրբավայրերու պղծումը և հայ կղերականներու նահատակութիւնը: Տե՛ս «Ցուշամատեան Մեծ եղեռնի», էջ 500:
93 Lepsius J., նշվ. աշխ., s.160:
94 Ակնունի Ս., նշվ. աշխ., էջ 18:
95 Lepsius J., նշվ. աշխ., s.160.
96 Թեհլիրեան Ս., նշվ. աշխ., էջ 211:
97 Ակնունի Ս., նշվ. աշխ., էջ 7:

Որքան տեղին էր պատրիարքի այս զգուշացումը, նույնքան էլ անտեղի, մնասակար ու վտանգավոր էր նրա, ազգային մարմինների և կուսակցությունների հորդորների հեղեղը հասցեագրված ժողովրդին՝ կատարել քաղաքացիական պարտականությունները պետության հանդեպ, «կառավարութեան և թուրքերուն որևէ դժգոհութիւն և վիրավորանք պատճառելու առիթ չտեղծել, զորակոչին պատասխանել առանց տրտունջի, նիւթապես օգնել բանակին...»[98]:

Հնազանդության կոչերը հեղվում էին առատության եղջյուրից, մինչդեռ գործելու, կազմակերպվելու, ինքնապաշտպանության նախապատրաստվելու հանձնարարականները գնալով պակասում էին, իսկ 1914թ. վերջերին խսպառ անհետացան: Արևմտահայությունն իր ջոջերից այդպես էլ չստացավ գլխավոր հարցի պատասխանը՝ ի՞նչ անել, եթե թուրքերը գործողության մեջ դնեն ամբողջական բնաջնջման քաղաքականությունը: Իսկ որ այդ քաղաքականությունը սարերի հետևում չէր, բոլորին էր հայտնի: Դեռ 1914թ. հունիսին Հրանտը Ս. Վրացյանին ասել էր. «95-ի սարսափները պիտի կրկնվին ավելի մեծ չափով, եթե պատերազմ լինի...»[99]: Անդրանիկն արտասահմանից խորհուրդ էր տալիս, որ մտավորականները, քաղաքական գործիչները, աչքի ընկնող անձինք հեռանան Թուրքիայից:

Պատրիարքը հոկտեմբերի 25-ին այցելեց ՆԳ և արդարադատության նախարարներին ու հավաստիացրեց, թե հայ ազգը հավատարիմ է օսմանյան հայրենիքին և պատրաստ է իր ուժերը դնել կառավարության տրամադրության տակ: Նա կրկնեց իր պատրաստակամությունը, որ եթե կառավարությունը հարկադրված լինի տեղափոխվելու Կոնիա, ինքն էլ կգնա Կոնիա: Երիտթուրքերի ղեկավարները շնորհակալություն հայտնեցին «հայրենիքի հանդեպ ունեցած սիրոյն և տերութեան հանդեպ հավատարմութեան համար»[100]:

Նա Բերայի հայկական հիվանդանոցում 150 մահճակալ հատկացրեց վիրավոր զինվորներին, մասնավորապես Դարդանելի ճակատում վիրավորվածներին: Նման հատկացումներ կատարվեցին նաև Զմյուռնիայում և մի քանի այլ քաղաքներում: Շատ հայ աղջիկներ ու կանայք դարձան գթության քույր ու խնամում էին վիրավոր զինվորներին: Պատրիարքարանը բացեց բուժքույրերի դասընթաց, որտեղ թրքուհիները գիտելիքներ էին ստանում զինվորական հիվանդանոցներում աշխատելու համար[101]:

Պատվիրակություն ուղարկվեց Վանգենհայմի մոտ՝ խնդրելու Գերմանիայի բարյացակամությունը հայերի հանդեպ: Դեսպանը պատասխանեց, թե քանի դեռ Գերմանիան ու Թուրքիան դաշնակիցներ են, «... բոլորովին ոչ մեկ հայու քիթը պիտի արիւնի ոչ հոս և ոչ գավառներու մեջ»: Նման մի պատվիրակություն այցելեց նաև Թալեաթին: «Կոտորած չի կրնար ըլլալ գավառներու մեջ,- պատասխանեց հրեշը,- որովհետև կառավարութիւնը համամիտ չէ»[102]:

Կոտորածները կանխելու խնդրանքով ապրիլի 8-ին Թալեաթի մոտ գնաց ինքը՝ պատրիարքը: «Հայոց դեմ որևէ մասնավոր քաղաքականություն» կառավարությունը չունի, եղավ ՆԳ նախարարի պատասխանը:

Պատրիարքը չէր հավատում, որ թուրքերը հայերի բնաջնջման ծրագիր ունեին: Կիլիկիայի Սահակ կաթողիկոսը մարդ է ուղարկում պատրիարքին տեղյակ պահելու ահագնացող աղետի մասին: 1915թ. մարտի 8-ին կարդալով Սահակ կաթողիկոսի նամակը՝ պատրիարքն ասաց. «Կիլիկիոյ կաթողիկոսն այս որքան հոռետես անձ եղեր է...»: Երկու օր անց նա նամակագրին ասում է, թե Վանգենհայմն իր «կառավարության անունից վստահեցնում է, որ կոտորած չի լինելու և ոչ էլ հայերը տեղահանվելու են», թե ՆԳ նախարար «Թալեաթ փաշան նույնպես մեզ հավաստիացրեց, որ հայ ժողովրդին իր բնակատեղերում թողնելու համար կարվի ամեն ինչ: Հավաքվելու են միայն կառավարության համար կասկածելի անձինք և հանցագործները»:

Պատրիարքը կիլիկիահայությանը պատվիրեց «պաշտոնատարների հետ լավ վարվեն և զգուշանան գրգռիչ քայլերից, միայն առօրյա գործերով զբաղվեն և հնազանդ լինեն պետական հրամաններին ու հրահանգներին»[103]:

98 Ցուշամատեան Մեծ եղեռնի, էջ 165:
99 «Դպրություն», 23. 02. 1990:
100 Զավեն արքեպիսկոպոս, նշվ, աշխ., էջ 78:
101 Ն. տ., էջ 84:
102 Ն. տ., էջ 94 :
103 Պալաքեան Գ., նշվ. աշխ., էջ 77:

Դժվար է հաստատապես ասել սա պատրիարքի համոզմունքն էր, թե պարտադրված կարծիք: Եթե մինչև երիտթուրքական հեղաշրջումը պատրիարքարանը կատարում էր պոլսահայ վերնախավի քաղաքական կամքը, ապա, ինչպես արդեն նշվեց, հեղաշրջումից հետո՝ ՀՑ Դաշնակցության: Եկեղեցական կառույցները վերևից ներքև ենթարկված էին քաղաքական կառույցներին, առաջին հերթին՝ ՀՑԴ-ին: Հոգևորականները վերածվել էին կուսակցական ակտիվիստների ու գործակալների, կատարում էին այն, ինչ ՀՑԴ թելադրում էր: Դաշնակցական բյուրոն դեպքից դեպք հայությանը կոչ էր անում ամեն կերպ աջակցել Անտանտի պետությունների բանակների մարտական գործողություններին: ՀՑԴ պաշտոնաթերթերից «Հորիզոնը», որ լույս էր տեսնում Թիֆլիսում, գրեց. «Հասել է ժամը վերջ տալու այն արյունալից պատմությանը, որ հայտնի է «թուրքահայի մարտիրոսություն» անունով... Հայությունը, առանց երկարացնելու, առանց ամենաչնչին տատանման, իր օգնությունը տալիս է Եռյակ համաձայնությանը և իր բոլոր ուժերը տրամադրում է Ռուսաստանին»[104]:

Սակայն դաշնակցությունը միասնական կարծիք չուներ: Եթե Արևելյան բյուրոն անտեսեց Էրզրումի համագումարի որոշումները և շարունակեց հակաթուրքական և ռուսամետ քաղաքականությունը, ապա Արևմտյան բյուրոն հավատարիմ մնաց այդ որոշումներին և մինչև զանգվածային ջարդերը ձգտում էին համագործակցել իթիհադի հետ և արևմտահայությանը հորդորում էր հնազանդ մնալ:

Կ. Պոլսի հայոց ազգային ժողովը եզրակացրեց. «Կա երկու ելք՝ արտագաղթել երկրից կամ թե հուսահատված գնալ ծայրահեղ քայլի՝ դիմել քրիստոնյա պետություններին խնդրանքով՝ միջամտելու թուրքական պետության առաջ պաշտպանելու մեր ունեցվածքը, կյանքն ու պատիվը»[105]:

Պոլսահայ վերնախավին այդպես էլ չհաջողվեց ձերբազատվել կրավորական դիրքորոշումից: Նա գնաց դեպի մահ, այն «միամիտ հավատն ունենալով, թե անմեղն ու թուրքի բարեկամը չի կարող կոտորուել նոյն թուրքից... եթե հավատարմության (այդ) շղթան չկաշկանդեր հայութեան ձեռքերը, թուրքին յաթաղանն այնքան հեշտ չէր իջներ անոր գլխին»: Նույն միտքն է հաստատում Կ. Սասունին. «Կոտորածների ահռելի վտանգի դիմաց... հայութիւնն անպատրաստ էր», դրան գումարվեց հայ ղեկավարների «հնազանդության քարոզը... խիզախութիւնը, անհատական և խմբական ըմբոստութիւնն արգելուած էին...»:

Երիտթուրքերը հայերի հանդեպ իրենց կոշտ դիրքը բացատրում էին նրանով, որ վերջինները նորից դիմումներ էին հղում մեծ պետություններին հայկական նահանգներում բարենորոգումներ մտցնելու խնդրանքով: Ջեմալը Վարդգեսին սպառնաց. «Եթե դուք պնդեք եվրոպական վերահսկողության վրա, մենք ստիպված ենք լինելու ընդունել: Բայց դրա հետևանքն այն է լինելու, որ այդ վեց վիլայեթներում իսլամ բնակչությունը ոտի կելնի և 300-400 հազար հայ կոտորվելու է»[106]:

Պարզից էլ պարզ էր, որ հայերի բնաջնջման ծրագրողն ու նախապատրաստողն իթիհադի գաղտնի կենտրոնն էր: Պատրիարքը կաթողիկոսին գրեց, որ երիտթուրքերը «սպառնում են երկրի երեսից իսպառ վերացնել հայ ժողովրդին...»: Սակայն հայերն այլ ելք չունեին:

1914 թվականը Մեծ եղեռնի կազմակերպչական նախապատրաստության և այն սկսելու տարին էր: Բնաջնջման գործողությունների համար առանձնացվեցին զինվորական , ոստիկանական, կուսակցական ուժեր, ձևավորվեցին չեթեական խմբեր: Նախապատրաստական աշխատանքներ ծավալվեցին ծրագրի իրականացմանը մասնակից դարձնելու թուրք ժողովրդին: Երիտթուրքերին դա հաջողվեց:

Համենայնդեպս՝ ցեղասպանության թուրքական քաղաքականությունը, թուրքական կառավարության ձեռնարկումները բողոքներ չառաջացրեցին թուրք հասարակությունում, որի բոլոր խավերը, բացառությամբ առանձին անհատների, համաձայն էին այդ քաղաքականությանը, թուրք գյուղացիներից հատուկենտ մարդիկ օգնեցին իրենց հայ բարեկամներին, մյուսները մնացին անտարբեր կամ եռանդուն մասնակցություն ունեցան ջարդերին՝ մղված իսլամական մոլեռանդությունից, ազգայնական ոգուց կամ պարզապես հարստանալու ձգտումից: Թուրքիայում որևէ լուրջ խոսք չհնչեց ջարդերի հեղինակների հասցեին: Ընդհակառակը, թուրքերի ոչ փոքրաթիվ մասը հայության բնաջնջումը համարում էր թուրքերի պատմության մեծագույն երևույթներից, դրա հեղինակները հռչակվեցին ազգային հերոսներ: Հետևաբար, ցեղասպանության մեղադրանքներն ուղղվում են ոչ միայն իթիհադին, այլև ամբողջ թուրք ժողովրդին, նրա պետական կառույցներին՝ օսմանյան թե թուրքական[107]:

Մի հարց ևս. արևմտահայերից շատերը, մասնավորապես պոլսեցիները, մերձավոր հարաբերությունների մեջ էին թուրքական իշխանությունների, կառավարության անդամների ու քաղաքական ղեկավարների հետ, տեղյակ էին տեղաշարժերին, տրամադրություններին, սակայն, տարօրինակ է, որ չընկալեցին սպասվող վտանգը, ավելի ճիշտ, գործնական լուրջ քայլ չարեցին դրա դեմ: Նրանցից ոմանք նույնիսկ կարծում էին, թե պատերազմում Օսմանյան կայսրությունը կկործանվի, և Հայկական հարցն ինքնաբերաբար կլուծվի հօգուտ հայերի: Հետևաբար գլխավոր խնդիրը պատերազմից նվազագույն կորուստներով դուրս գալն էր: Թուրքերը դա հասկանում էին, իսկ կայսրությանը բարեխիղճ ծառայելու պատրիարքական կոչերն ընդունում էին որպես պատերազմական պայմաններում հայերի զգուշավորության արտահայտություն, այլ ոչ թե իրենց հանդեպ համակրանք: Մանավանդ որ հայերը միանգամայն այլ կեցվածք ունեին: Պարզապես անհավատալի է թվում, որ օսմանյան կառավարությունը շարժման մեջ էր դրել բնաջնջման մեքենան, իսկ հայ գործիչները համառորեն չէին ուզում նկատել այդ: Հոկտեմբերի 12-ին ՀՑԴ արևմտյան բյուրոն գրում է, որ գավառներում հայերի դեմ կիրառվող խստությունները ոչ թե կենտրոնական կառավարության, այլ տեղական իշխանությունների ցուցումով էին կատարվում: Բյուրոն մերթ գրում էր. «Ցավալի է, որ Ապտիլ Համիտեան այդ ձևը մուտք է գործած սահմանադրական կառավարութեան գործելակերպին ալ ներս, բան մը, որ կրնայ շատ դէշ արդիւնք ունենալ»[108], մերթ էլ տեղական կազմակերպություններին ցուցում էր տալիս. «...Ուշադրութիւն հրավիրել կայսրութեան ծանրակշիռ վիճակին վրայ, որուն մէջ կը գտնուի մեր հայրենիքը ընդհանուր պատերազմի պատճառով: Մեր կողմե կարգ ու կանոնի և ընդհանուր ապահովութեան պահպանումին մասնակցելով՝ պետք է խուսափիլ ամեն առիթե, որ կարող է պատահարներու կամ ժողովրդի զանազան հատուածներուն միջև անհասկացողութիւններու դուռ բանալ»[109]: Շրջաբերական ուղարկվեց, թե «իրար անցնելու հարկ չկայ: Բալկանեան պատերազմի հետևանքով թուրքերու խզումները ժամանակավոր են և կանցնեն... Մանր խնդիրներ ստեղծելու պատճառ չլինիք, գործակցեք տեղի իթթիհատի կուսակցութեան հետ և հաշտ ապրեք թուրքերու հետ»[110]:

«Բյուզանդիոնը» հոկտեմբերի 25-ին գրեց. «Օսմանեան տերութիւնը մեծ պատերազմի մը ճգնաժամին մատնուած է, և մեր ամենուս պարտքն է կատարել մեր վրայ ինկած պարտականութիւնը»: Այժմ, երբ թշնամին, շարունակում է թերթը, ոտ է դրել մեր հողի վրա, «ամեն ոք ուրիշ բան չի կրնար մտածել, բայց եթե փութալ պաշտպանել հայրենի երկիրը»: Սակայն արդեն 1914թ. վերջին տագնապը համակել էր ոչ միայն հայ մարդուն, որտեղ էլ նա բնակվեր, այլ նաև քաղաքական ուժերին: Դրա վկայությունն են նաև հետևյալ կոչերը, որոնցից առաջինի հեղինակը Երիտասարդ դաշնակցականների Բաքվի կազմակերպությունն էր, իսկ մյուսինը՝ ՀՑԴ-ի Բալկանյան կոմիտեն: Առաջին կոչում ասված է. «Անչափ իրավազուրկ և անչափ դժբախտ Տաճկահայաստանում՝ անասելի բռնության և համատարած ժողովրդական աղքատության այդ երկրում հնարավոր է միայն մի կոփվ՝ բոլոր դասերի ժողովրդավարական կոփվ քաղաքական ազատության համար»[111]:

Երկրորդ կոչում, որը թվագրված է 1914թ. դեկտեմբերի 21-ին, ասվում է. «Աղետն այս անգամ ո՛չ արհեստականորեն հալածված Հայկական հարցի հետևանք է և ո՛չ էլ ազգային հավակնությունների կամ անխոհեմների սխալ գործունեության չար ծնունդ, այլ համամարդկային ծով աղետի մի մասն է, որը ճակատագրականորեն եկավ լափելու մարտիրոս ժողովրդի երեկվա արհավիրքներից դեռ չվերանորոգված բույնը, ցանուցիր անելու մեր աշխատավոր գյուղացիությանը, քանդելու շինականի գոմն ու հյուղակը, սարսափահար փախցնելու երեխաներին, կանանց

104 Սերոբեան Մ. Հայկական հարցը և անոր փուլերը, Բեյրութ, 1937, էջ 143-144:
105 «Վեմ», 1933, թիվ 2, էջ 82:
106 Արմեն Գարո, Ապրած օրեր, Բոստոն, 1948, էջ 19:

107 Ցուշամտեան Մեծ եղեռնի, էջ 167-168:
108 Լեփսիուս Ցո. Հայաստանի ջարդերը, Կ. Պոլիս, 1919, էջ 208:
109 Կիտուր Ա. Պատմութիւն Մի հնչակեան կուսակցութեան, հ. II, Բեյրութ, 1962, էջ 430:
110 Lepsius J. Deutschland und Armenien 1914-1918, s. 205:
111 ԳԱԹ, ֆ. Հ. Առաքելյան, գ. 2044:

ու ծերերին, սրբելով կրակով ու սրով կայք ու կենդանի ամեն ինչ, որ կարող է պահել աշխատավոր հայ մարդու գոյությունը: Ո՛չ Կենտրոնական Եվրոպայում մղվող ճակատամարտերին և ո՛չ էլ այլուր կատարվող թշնամական ընդհարումների միջոցին չենք հանդիպի այնպիսի զարհուրելի տեսարանների, քանդման ու բնաջնջման գազանային բնազդների, որպիսիք մենք՝ հայերս ապրում ենք Մերձավոր Ասիայի այսօրվա ռազմաբեմի վրա: Երկրագնդի այդ վայրերը, որտեղ նույնիսկ խաղաղ ժամանակներում քաղաքակրթական ալիքները շարունակ ետ էին մղված, այսօր... գալիս են ուլտրավայրենության վերջին խոսքն ասելու ժամանակակից մարդկությանը:

Հյուսիսային Հայաստանը, սկսած Արածանիի ակունքներից մինչև Ճորոխի ափերը, Հայկական բարձրավանդակից մինչև Մաղկոտնի սարերը, դատարկվեցին հայությունից... Ո՞ւր փախան նրանք Հայաստանի ամեհի ձմռան ձեռքից... այդ չգիտենք... Մեր անհյուրասեր սարերը, Բասենի և Ալաշկերտի միապաղաղ ձյունածածկ հանդերն անկարեկից, սառը վկաներ եղան նրանց ծով տառապանքից թռչող հուսահատ հառաչանքի... փայտացած դիակների: Կովկասյան լրագրերը գուժում են, որ փախստական հայերի դիակներն անտեր սփռված են ամբողջ Արածանիի հովտից մինչև ռուսական հողը, իսկ ազատվողների քարավանները՝ կիսամեռ, ցրտից կարկամած և թշվառությունից այլանդակված, տասնյակ հազարներով թափառում են Հարավային Կովկասում՝ Կարս, Ալեքսանդրապոլ, Երևան և այլն...»[112]:

Նման լուրերը գնալով չատանում էին: Եթե Պոլսում հայերի վիճակը դեռևս մտահոգություն չէր առաջացնում, ապա գավառներում բնաջնջման իրողությունը գնալով ահագնանում էր: Սկզբում տագնապալից լուրեր ստացվում էին Էրզրումի և Բիթլիսի, իսկ ապա՝ նաև Վանի վիլայեթներից: Վասպուրականի գյուղերում զինվորներն ու չեթեներն անլուր բռնություններ էին գործադրում հայերի հանդեպ[113]:

Համիդականները շրջապատեցին Ալաշկերտի գյուղերից մեկը, որտեղ «մնացած բոլոր կիներն ու աղջիկներն առևանգվեցան և իսլամություն ընդունելու պարտադրուեցան: Երբ հունվարի կեսերին ռուսները եկան, մահմեդականները վախենալով քրիստոնյաներուն դեմ իրենց կատարած չարիքներուն համար պատժուելե, լքեցին իրենց գիւղերը և կառավարութեան օժանդակութեամբ վերահաստատուեցին Մանազկերտի և Պայազետի հայկական գիւղերու մեջ»[114]:

ՀՑ Դաշնակցության օրագրում կարդում ենք. «Գիւղերու թալանին և ընդհանուր անապահովութեան պատճառով մտահոգութիւնը կը բարձրանայ: Հայերի տնտեսական վիճակը սարսափելի է, ամեն կողմ մուրացկանի վերածուցան (նրանք): ...Ընդհանուր ջարդի մը սարսափը մեր գլուխներուն վերև է կախուած. թուրքերը կըսեն մեզի՝ այս պատերազմին դժբախտության պատճառը դուք՝ հայերդ էք, ձեզ պիտի բնաջնջենք: Ավելի քան երբեք, հիմայ Հայաստանի դրութեան վրայ (ուրիշների) ուշադրութիւնը գրավելու, այլապես փոխան Հայաստանի ավերակներու դեզ պիտի ունենաք»[115]:

Տխրահռչակ ավազակ Սեիդ Ալիի ահաբեկչությունների պատճառով Դադբեյ գյուղի բնակիչները փախան Բիթլիս: Բեյերի վայրագություններից փրկվելու համար հայրենի գյուղը լքեցին նաև Տարոնք Ավզուտի հայերը: Նույն պատճառով ցաքուցրիվ եղան Դիարբեքիրի Էլիվո գյուղի բնակիչները: Սպանություններ Գավաշում, Խարզանում, առևանգումներ Էդրեկում, Բիթլիսի Գորգոր գյուղում և այսպես ամենուրեք և անվերջ[116]:

Ռուսական "Новое время"-ն հայերի հանդեպ խժդժությունների կազմակերպիչն ու խրախուսողը համարում էր իթիհադի կենտրոնը[117]:

Երիտթուրքերի ղեկավարությամբ տեղի էին ունենում գաղտնի ժողովներ, որոնցում բացեիբաց խոսում էին հայերին կոտորելու մասին: Գնում էր նախապատրաստական բազմակողմանի աշխատանք: Աշխարհամարտի սկսվելուց անմիջապես հետո Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի

112 ԳԱԹ, ֆ. Հ. Առաքելյան, գ. 2069:
113 Lepsius J., նշվ. աշխ., s. 209.
114 Ն. տ.:
115 Ն. տ., էջ 211:
116 АВПР, "Политархив", д. 3465.
117 "Новое время", 23. 05. 1913.

զինվորական կցորդ Ե. Պոմիանկովսկին տեսակցություն է ունենում Վանգենհայմի հետ, որը նրան ասում է. «Հայաստանում բարենորոգումների գործադրումը Բ. Դռան կողմից լրիվ ձախողված է և գործադրելու համար այլևս անպետք է դարձել: Հայերին մնում է մի ելք՝ իրենց կյանքը և ունեցվածքը փրկելու համար իսլամանալ»[118]:

Իհարկե, հետագայում երիտթուրքերը հայերի հետ հարաբերությունների սրվելու մեղքն ամբողջությամբ բարդեցին ՀՑ Դաշնակցության վրա, ինչը բացարձակ կեղծիք էր: Ասվածի համոզիչ ապացույց էր ՀՑԴ Վանի կոմիտեի գործունեությունն ու դրան իթիհադականների անդրադարձը: Տեղի դաշնակցության ղեկավար Վռամյանն ամեն ինչ անում էր հայ-թուրքական հարաբերությունները կանոնավորելու համար: 1915թ. փետրվարի 13-ին նրա նախաձեռնությամբ Վանից օսմանյան խորհրդարանի անդամները Թալեաթին հանձնում են առաջարկություններ, որ Հանրի Բարբին անվանեց նոտա: Փաստաթղթում խոսքը գնում է այն մասին, որ «կառավարության և հայ ժողովրդի միջև հարաբերությունները դարձել են արտառոց», իսկ Բ. Դուռը անտեսում է, չնայած այդ մասին իշխանություններին բազմիցս ներկայացվել են թե բանավոր և թե գրավոր տեղեկանքներ: Ստեղծված անհանդուրժելի վիճակի «պատճառները չորսն են, որոնք բխում են միմյանցից և մեկով բացատրվում է մյուսը»: Այդ պատճառներն են՝ հայ զինվորների ու ժանդարմների զինաթափումը, հայ ժողովրդի գոյությանը սպառնացող իրավիճակների վերածնվելը, ջիհադ հայտարարելուց հետո ընդհանուր զորահավաքը[119], դասալքությունը, ինչը հետևանք է այն բանի, որ 24 տարեկանից բարձր հայերը չգիտեին զենքի հետ վարվել, անծանոթ էին պատերազմի դժվարություններին, բանակում արհամարհվում էին նրանց կրոնական պահանջմունքները: Կառավարությունը ոչ միայն ոչինչ չարեց այդ պատճառները վերացնելու, այլև հայերի հանդեպ դրսևորեց անվստահություն, ինչը դասալքությանը տալիս էր «քաղաքական տհաճ գունավորում»: Այսպիսով, հայ զինվորների և ժանդարմների զինաթափումը, գրում է Բարբին, հայ ժողովրդի շուրջն անվստահության մթնոլորտ առաջացրեց, լարված հարաբերություններ ձևավորեց հայերի ու թուրքերի միջև: Այդ զինաթափումը հայերին վերածեց «քաշող անասունի և դրանով խորապես վիրավորեց նրանց ազգային ինքնասիրությունը»: Անգեն հայերը զինված մահմեդականների հսկողության տակ էին կամ պարզապես հարկադրված էին գտնվելու նրանց շրջապատում և իրենց լրջորեն վտանգված էին համարում: Համառ լուրեր էին տարածվում, թե հարյուրավոր հայ զինվորներ խեղդվել, խոշտանգվել կամ մորթվել էին, մասնավորապես Էրզրումի շրջակայքում և պարսկական սահմանի մերձակայքում: Անգեն հայերին քշել էին հարազատ բնակատեղերից և աքսորել լրիվ անծանոթ վայրեր[120]:

Միլիցիա կազմելու պատրվակով 14-60 տարեկան թուրքերին և քրդերին զինակոչում էին և աշխատանքի ուղարկում ոստիկանությունում կամ դարձնում ժանդարմ: Մահմեդական թափթփուկներին օժտել էին բոլոր իրավասություններով, որից օգտվելով նրանք թալանում էին հայկական բնակավայրերը, իրականացնում սպանություններ ու բռնություններ: Օրինակ, Թահարի միլիցիոներները բռնաբարություններ և սպանություններ էին կատարել Հավաննես, Ալաի և Էնիկ հայկական գյուղերում, Բիթլիսի միլիցիոներները թալանել էին Կաճկանը, Բելուն և Քհանիկը: Բրշերի Զաթոյի 600 հոգուց կազմված ավազակախումբն ամայացրել էր Մանազկերտի գյուղերը, թալանել Վանի վիլայեթի հյուսիս-արևելքի գյուղերը: Մահմեդական ավազակախմբերը չարագործություններ էին կատարել Էրզրումի մերձակայքի հայկական գյուղերում, իսկ քուրդ կամավորները՝ Մշո դաշտի բնակավայրերում և միայն Մոսուլի գերմանական հյուպատոսի եռանդուն միջամտության շնորհիվ դադարեցրեցին թալանը: Քրդերը բազում բռնություններ և սպանություններ էին գործել Դիարբեքիրի մերձակայքի 20 գյուղերում: Տխրահռչակ ավազակապետեր Մեհմեդ Էմինը, Մուսա և Ղասրմ բեյերը ներման էին արժանացել: Քուրդ դասալիքները հեղեղել էին հայկական գյուղերը, հատկապես լեռնային շրջաններում: Համիդիե գնդերին տեղավորում էին հայկական գյուղերում, որոնք կատարում էին բազմաթիվ ու բազմատեսակ հանցագործություններ: Դրությունը մասնավորապես ծանր էր Հասան-Թամրանում, Ազորիքում, Սաթմանիսում, Բողազում, Քեսենեում, Խազարեում, Մենդենում և Քուրդզոտում: Սադմ բեյը թալանեց Քուչուկ Քեյը[121]:

118 Ղազարեան Հ., նշվ. աշխ., էջ 321:
119 Բարբի Հ. նշվ. աշխ., էջ 137:
120 Ն. տ., էջ 138:
121 Ն. տ., էջ 139-140:

Չնայած պաշտոնական հերքումներին, Բաշկալեի և Հարևան գյուղերի հայերը կոտորվել էին: Այդպիսի իրավիճակն էր հայերին մղում առաջ քաշելու իրենց պատիվը, կյանքը և ունեցվածքը պաշտպանելու հարցը: Դրան գումարվում էր հայերի հանդեպ իշխանությունների անվստահությունը: «Ընդունելով, որ պատվի, կյանքի և ունեցվածքի պաշտպանությունը յուրաքանչյուրի բնական ու սրբազան իրավունքն է, կառավարությունն իրականում վարում է կործանարար քաղաքականություն, երբ անզեն հայերին թողնում է բանակում, չնայած պետությունը նման ծառայություններից ոչինչ չի շահում: Ծառայության մեջ գտնվածների ընտանիքները վտանգված են, մշտական կախման մեջ իրենց զինված կիսաքոչվոր հարևանների արյունարբու քմահաճույքից»: Հայ զինվորներին, որոնցից խլել էին զենքը, դասալիք անվանելն անարդար է, շարունակում է Հ. Բարբին, նկատի ունենալով նաև այն, որ, չնայած հայտարարված ջհադին, իրենք՝ մահմեդականները, նույնպես դասալքում էին: Բացարձակապես ակնհայտ էր՝ քանի դեռ լուծված չէր «դասալքության հարցը, երկիրը գտնվելու էր սոցիալական, գուցե նաև ազատամարտության վտանգի առաջ՝ օրենքի և սովի կողմից հետապնդվող դասալիքը խռովարար ուղիներում էր փնտրելու փրկություն և գոյության միջոցներ»[122]:

Դրությունը շտկելու համար առաջարկվում էր՝ զենքի տակ պահել միայն 20-25 տարեկան այն հայերին, ովքեր ստացել էին զինվորական պատրաստություն: Հայերին թողնել ծառայելու իրենց շրջանների ժանդարմերիայում, մինչև որ վերականգնվեր փոխադարձ վստահությունը: Զինակոչից ազատելու համար չափավոր հարկ գանձել, այն էլ միայն 25-ից բարձր տարիք ունեցողներից: Օրենքի ամբողջ խստությամբ պատժել Բաշկալեի, Ահորիկի և Քխուզերիկի մարդասպաններին: Հնարավորին չափ արագ գործողության մեջ մտցնել գյուղական ավագների մասին օրենքը: Քանի դեռ քրդերը զինաթափված չէին, հայերին նույնպես թույլատրել զենք կրելու: Միլիցիոներներին թույլ չտալ գիշերելու հայկական գյուղերում: Հատուցել կոտորածների ժամանակ հայերի կրած վնասները: Գտնել և վերադարձնել հայկական եկեղեցիներից թալանված գույքը: Ազատել փախցրած երիտասարդ կանանց ու աղջիկներին:

Նման պահանջների համար էր, որ Վանի վալի Զևդեթը կազմակերպեց ոչ միայն Վռամյանի, այլև Իշխանի դավադիր սպանությունը և հարձակվեց ՀՅԴ տեղական կազմակերպության վրա: Ինչ վերաբերում է հնչակյաններին, ապա իթիհադը նրանց հուշակեց «հայրենիքի դավաճան» և ձերբակալեց կուսակցության ղեկավարներին: «Դավաճան» մեղադրանքի կապակցությամբ Փարամազը դատարանում հայտարարեց, թե հնչակյանները հնարավոր և անհնար ամեն ինչ արեցին Թուրքիան բարեփոխելու, հայ և թուրք ժողովուրդների համերաշխության համար, սակայն թուրք տիրակալները «գիտակցաբար հետամուտ եղան մեր բնաջնջումին» և իրենց վայրագություններն արդարացնելու նպատակով հնարեցին հնչակյան անկախ Հայաստանի ամբաստանությունը: Դրան հնչակյանները պատասխանեցին. «Մենք անջատողական չենք... ընդհակառակը ինքն (իթիհադը) է, որ կանջատվի մեզմե...»[123]:

Սահմանադրական ռամկավար կուսակցությունը հենց սկզբից կանգնեց Բ. Դոան պաշտպանության դիրքերում: «Վան-Տոսպը» 1914թ. նոյեմբերի 1-ին գրում է. «Ամեն օսմանցի միակ նշանաբան մը պետք է ունենայ- կատարել պարտականութիւնը խղճի մտոք»: Թերթը կոչ էր անում պատերազմի ժամանակ հրաժարվել ներքին խառնակությունից: Ռամկավարները դեմ էին նաև կամավորական շարժմանը, պատճառաբանությամբ, որ այդ շարժումը «պիտի բորբոքե թուրքերու մինչև այժմ զսպված բարբարոսական կիրքը և այս անգամ թրքահայութիւնն անխնայորեն պիտի ջարդուի ամեն տեղ...»[124]:

Օսմանյան հայրենիքի պաշտպանության օգտին արտահայտվեցին հայ բոլոր կազմակերպությունները և քաղաքական գործիչների հիմնական մասը: Գր. Զոհրապը կանխազգաց, որ աշխարհամարտն աղետ է դառնալու հայության համար, որովհետև թուրքերն «անպատճառ կմիանան Գերմանիային»[125]:

122 Բարբի Հ., նշվ. աշխ., էջ 140 -141:
123 Սիրվարդ Փարամազ Փրովիտենս. 1954, էջ 106:
124 Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 254:
125 «Անահիտ», 1930, թիվ 3:

Նա Թալեաթին սպառնաց. «Ես, խորհրդարանի մեջ իբրև հայ մեպուսի, ձեզնե հաշիվ պիտի պահանջեմ»[126]:

Սա էր հայերի միակ «ըմբոստությունը»:

Այսպիսով, հայերին ապստամբ ներկայացնելու իթիհադի ջանքերն իրականության հետ ընդհանուր ոչինչ չունեին: Ընդհակառակը, հայ հասարակության թե հոգևոր և թե աշխարհիկ ղեկավարներն ամեն ինչ արեցին թուրքական իշխանությունների բարյացակամությանն արժանանալու: Էնվերի չարախոսությունները լռեցնելու համար պատրիարքը հայ զինվորներին հորդորում էր կյանքը չխնայել հայրենիքին, իսկ ազգաբնակչությանը՝ ամեն ինչ զոհաբերել հանուն հաղթանակի, մեծ օգնություն կազմակերպեց Կարմիր մահիկին, ստեղծեց բարեգործական հիմնադրամներ: Թուրքական բանակին օգնելու հարցում հայերը մրցակից չունեին:

Եվրոպական շատ հեղինակներ ոչ միայն չդատապարտեցին, այլև փորձեցին «օբյեկտիվ պատճառներ» գտնել թուրքերի ցեղասպան բնազդների համար: Նմաններին Մարկվարտն անվանում է «թուրքասեր քաղաքականության ներկայացուցիչներ», ովքեր բնականոն էին համարում XX դարում . «1. Մեծ թվով քրիստոնյաներին մահմեդականություն պարտադրելը, հարյուրավոր եկեղեցիներ ու վանքեր ոչնչացնելը կամ մզկիթների վերածելը: 2. Հազարավոր քրիստոնյա կանանց ու աղջիկներին անարգելն ու թուրքական հարեմներին վաճառելը: 3. Հազարավոր տների ու քրիստոնեաբնակ գյուղերի ավերելն ու քրիստոնյա ողջ բնակչությանը կողոպտելը»: Մորգանը նույնպես անդրադառնում է այդ խնդրին, ոչնչացնող ծաղրի ենթարկում ցեղասպանության հեղինակներին արդարացնելու փորձերը: Նա ներկայացնում է հայ ազգաբնակչության անպաշտպան, անելանելի դրությունը: «Իշխանությունների հրամանով նախապես զինաթափված հայերը, որոնք հիմնականում փոքր համայնքներով բնակվում էին իրենց թշնամի բնակչության շրջապատում, ի վիճակի էին միայն աննշան դիմադրություն ցույց տալ»:

Հատկանշական մի երևույթ ևս. ռազմաճակատում թուրքերի վիճակի վատացմանը զուգահեռ ուժեղանում էր հայերի հասցեին մեղադրանքների ու վայրահաչոցների տարափը, ավելի ու ավելի հստակ էին հնչում այլադավաններին բնաջնջելու պահանջները: Միաժամանակ իթիհադի առաջնորդների փառաբանությունները հեղեղել էին թուրքական քարոզչության ամբողջ համակարգը: Մետեռնիխի վկայությամբ՝ պատերազմին Թուրքիայի մասնակցության երիտթուրքական «ծրագրի առաջին կետը՝ հայերի ոչնչացումն» էր, որից հետո բոլոր ոչ թուրք և ոչ մահմեդական բնակիչները պետք է բռնի մահմեդականացվեին ու թուրքացվեին, իսկ որտեղ դա հնարավոր չէր, բնաջնջվեին...»[127]:

Մետեռնիխը բացարձակապես ճիշտ է՝ հայերի բնաջնջման կողմնորոշումն աշխարհամարտի մեջ Օսմանյան կայսրության մտնելու առաջնահերթ պատճառը հանդիսացավ, որովհետև իթիհադի մշակած միջոցառումներն այնպիսի բնույթ և ընդգրկումներ ունեին, որ խաղաղ պայմաններում «աշխարհի աչքի առաջ» դրանք գործադրելը գրեթե անհնար էր: Բ. Գեմբարսկին հեգնում է. «Թուրքերը հաճախ գործածում են այնպիսի բառեր, ինչպես «ազատություն», «առաջադիմություն», «համերաշխություն» ու «արդարություն»... և օգտագործում են որպես իրենց կուսակցության անուն, չնայած, մանավանդ Աբդուլ Համիդի անկումից սկսած, Թուրքիայում ո՛չ ազատություն կա, ո՛չ համերաշխություն, ո՛չ արդարություն, իսկ առաջադիմությունը գրեթե անհնար է, թեև այդ ընթացքում լատինական այբուբեն մտցվեց և արգելվեց ֆես կրելը... Քաջության, ինչպես և առաջադիմության տարբեր տեսակներ են լինում: Քաջություն պետք է ունենալ սեփական կյանքը մահվան վտանգի ենթարկելու, քաջություն պետք է ունենալ նաև երեխա սպանելու համար: Երիտթուրքական կառավարությունն օժտված էր այս երկրորդ տեսակի քաջությունով»[128]:

Հայերին մի քանի ամիս ջարդելուց հետո Բ. Դոուը շուտ եկավ նրանց առաջնորդներին և այդ արեց ինքնավստահ, քանի որ գիտեր՝ գործ ուներ անճարակ գործիչների հետ: Դաշնակցությունն իր երեկվա «եղբայրներին» այլևս հարկադրված էր դիմել հեռակա: Թալեաթի նախկին մերձա-

126 Աբրահամեան Ա. Անհետացող դեմքեր. Գրիգոր Զոհրապ, էջ 245:
127 Տաշեան Թ. Հ. Հայ ազգի տարագրութիւնը գերմանական վավերագիրներուն համեմատ: Մաս Ա., Վիեննա, 1921, էջ 52:
128 «Հայաստան» (օր.), 20. 05. 1990:

վոր ընկերները նրան հեռագրեցին, թե Դաշնակցությունը, որն իր ջանքերը միավորել էր կառավարության ջանքերի հետ ի բարօրություն կայսրության, այժմ գտնվում է այնքան տարօրինակ ու անհասկանալի դրության մեջ, որն ամոթալի է: Կառավարությունը պիտի հաշվի առնի, որ հայ ժողովրդի ներկայացուցիչների հանդեպ այսպիսի վերաբերմունքը չի կարող չփչացնել երկու ազգերի հարաբերությունները և չօտարացնել նրանց միմյանցից[129]:

Ահագնացող վտանգը, իհարկե, ինչ-որ գործողությունների մղում էր հայ քաղաքական ուժերին: Գ. Պալաքյանը, որ այդ տարիներին Կ. Պոլսի հայ կյանքի շարքային դեմքերից չէր, միանգամայն սև գույնով է ներկայացնում պոլսահայ գործիչների վարքագիծը: Նա գրում է. «Անհասկանալի լավատեսությամբ էին տրամադրված հայ քաղաքական կուսակցությունների որոշ ղեկավարներ»: Պոլսի գործիչներն այդպես էլ չփորձեցին խորանալ կացության մեջ, չփորձեցին կռահել, թե իրադարձությունները դեպի ուր են տանում: Հայկական շրջաններում տարածված էր կարծիք, թե քանի դեռ իրական իշխանությունը հայերի սիրելի Թալեաթի ձեռքին է, վախենալու հիմք չկա:

Թուրքիան մտավ պատերազմի մեջ, հայերը չեզոք դիրք գրավեցին, նրանք վստահում էին երիտթուրք պարագլուխներին, համարում պարկեշտ մարդիկ: Երբ ոստիկանությունը Ակնունուն տանում էր բանտ, նա ապշահար հարցնում է՝ իսկ Թալեաթը գիտե՞: Ոստիկանը ցույց է տալիս Թալեաթի ստորագրությունը կրող ձերբակալման հրամանը, Ակնունին ապշահար բացականչում է, թե ինքը քիչ առաջ Թալեաթի հետ ճաշում էր, ինչո՞ւ նա ձերբակալության մասին ոչինչ չասաց: Եվ դա այն Թալեաթը, որ 1909թ. մարտի 31-ին հեղաշրջման օրերին թաքնվել էր Ակնունու տանը: Երբ Ակնունուն սպանելու էին տանում, ընկերներին ասաց. «Ձեմ ցավում մահվանս համար... այլ միայն ցավում եմ, որ այս թուրք սրիկաներից խաբվեցինք»[130]:

Մի այլ գործչի՝ Կիլիկիայի կուսակցական ղեկավար Վահանին, ընկերները խորհուրդ են տալիս հրապարակային գործունեությամբ չզբաղվել, զգույշ լինել: Նա պատասխանում է. «Քանի Ջեմալ փաշան ողջ է, մաղիս կպչող չի լինի... Կեցցե իմ մտերիմ և հայասեր բարեկամս՝ Ջեմալ փաշան»: Նույն այդ Ջեմալի հրամանով նրան կախաղան հանեցին:

Շատ հարցերում հնարավոր չէ համաձայնել Պալաքյանի հետ, բայց անհնար է չնկատել, որ նա նաև դառը ճշմարտություններ է ներկայացնում: Վիճակը գնալով ողբերգական էր դառնում: Արևմտյան Հայաստանի անզեն հայությունը փաստորեն նետված էր հոշոտվելու մահմեդական տարրերի կողմից: Ոչ քիչ դեպքերում, երբ խոսք է գնում հայկական ջարդերի մասին, շատ ավելի մեծ ջանքեր է ծախսվում դրանց պատճառների օբյեկտիվ կողմերը, քան մարդկության դեմ կատարված զազրելի հանցագործությունը ներկայացնելու վրա: Միանգամայն իրավացի է Ա. Մանդելշտամը, երբ գրում է. «Այդ ի՞նչն է մեզ արգելում Թուրքիային ասելու՝ «Զարագործ, կործանվի՛ր»: Արգելում է Թուրքի պատասխանը. «Ես նույնպես պայքարում եմ իմ գոյության համար»: Եվ մենք հավատում ենք նրան՝ հակառակ այն ոխակալությանը, որ մեզ ներարկել է մահմեդական արյունալի բարբարոսությունը... որովհետև նախ Հայկական հարցը, հայերի կոտորածը համարում ենք Թուրքիայի ներքին խնդիրը, մի հին մեծ պետության հոգեվարքի դրվագ, որը չի կարողանում թույլ տալ իրեն սպարնեն առանց արյունահեղության մի վերջին փորձի: Երկրորդ, կարծում ենք, թե Հայկական հարցը Թուրքիայի անհետանալու վտանգ է պարունակում»[131]:

Հայերը լրջորեն չգնահատեցին ստեղծված իրավիճակի ճակատագրական նշանակությունը, այլ «ընդհակառակը, ըստ սովորության ... մղված մեր ցեղային վրեժխնդրական կրքերեն, առաջին օրեն (պատերազմի) իսկ արդեն կոյրզկուրայն ազգովին նետուած էինք գահավեժ բախտախնդրության մը մեջ... Այսպես կը գրգռեինք մեր դարավոր չարանենգ թուրք թշնամին, որ վաղուց արդեն պատրուակ կը փնտրեր սրբագրելու... և մեկ հարուածով բնաջնջելու Թուրքիոյ ամբողջ հայությունը»[132]:

«Մենք՝ հայերս, առանց կանխորոշ սակարկության և անխորհուրդ կերպով, մեր արդեն քամուած արիւնը հորդահոս կերպով ի սպաս դրած էինք Անտանտին: Փարիզի և Սոֆիայի մեջ

129 Lepsius J. Der Todesgang des armenischen, p. 196.

130 Պալաքեան Գ. նշվ. աշխ., էջ 60:

131 Մանդելշտամ Ա. Օսմանեան կայսրութեան ճակատագիրը և Հայկական հարցը, Կ. Պոլիս, 1919, էջ 48:

132 Պալաքեան Գ., նշվ. աշխ., էջ 47:

Ամերիկային գունդագունդ եկած հայ կամավորներու զենքերն, հրապարակային հանդիսավորությամբ... կօրհնվեին... թուրք դեսպաններու գաղտնի լրտեսներուն աչքին առջև... Թուրք մայրաքաղաքի 120 հազարի հասնող հոծ հայությունը, առանց ի նկատի ունենալու հույժ փափուկ կացությունը», փոխանակ շրջահայացության, «առաջին օրեն իսկ սկսած էր արդեն ինքզինք փրկուած համարել...»[133]:

Հազիվ թե հնարավոր է համաձայնել նման գնահատականի հետ: Այո, պոլսահայությունն ավելի քան կես դար արևմտահայության փրկության հույսը կապել էր մեծ տերությունների, մասնավորապես Անգլիայի և Ռուսաստանի հետ, ուստի զարմանալու, առավել ևս զայրանալու որևէ պատճառ չկար, որ այդ նույն հայությունը որպես թուրքահպատակ բարեխղճությամբ կատարելով իր քաղաքացիական պարտքն Օսմանյան կայսրության հանդեպ, միաժամանակ որպես հավաքականություն, ոչ առանց ավելի քան լուրջ հիմքի, համակրում էր Անտանտին:

Գ. Պալաքյանը միանգամայն իրավացի է, երբ գրում է, որ ազգային որոշակի քաղաքականություն գոյություն չուներ, չկար ազգային միավորող ու համախմբող կարգախոս: Անպատասխանատու կեցվածքը հայ կյանքի, նրա կուսակցությունների գործունեության համար բնութագրական էր: Իրոք, Պոլսո հայությունը, կարծես, ոչ միայն փրկությունը, այլև թուրքական լծից ազատագրությունը որոշված էր համարում և համապատասխան բովանդակությամբ միջոցառումներ էր կազմակերպում՝ Կոմիտասի մեծ համերգներ, Եսայան վարժարանի ցերեկույթներ, գրական հավաքույթներ, թաղային հանդիսներ, պարահանդեսներ, սպորտային մրցումներ, սկաուտական հավաքներ և բազմաթիվ այլ զվարճություններ: Իթիհադական կառավարությունը ոչ միայն չէր խոչընդոտում, այլև խրախուսում էր նման միջոցառումները: Ընդհանուր անհոգությունը գերիշխող էր, իսկ ով դրա դեմ հանդես էր գալիս, հարկադրված էր լինում բացատրություն տալ քաղաքի ոստիկանապետ Բեդրիին. իթիհադական հավասարության, ազատության և եղբայրության Թուրքիան վաղուց վերածվել էր բանտի, հպատակ ժողովուրդների համար՝ դժոխքի:

Գավառների հետ պոլսահայերի կապերը խոչընդոտվում էին ամենավայրագ եղանակներով: Նամակների գրաքննությունը հասցված էր ծայրահեղության: Պատրիարքարանի կապն առաջնորդարանների հետ խզվեց: Գավառահայությունը բացարձակապես անտեղյակ էր Կ. Պոլսի հայ ղեկավարների որդեգրած կեցվածքից ու ծրագրերից: Ամենախոշոր առաջնորդական վիճակներն ու թեմերը՝ Սեբաստիա, Դիարբեքիր, Վան, Երզնկա, Արաբկիր, Ակն, Մուշ, Գաղաթիա, ինչպես նաև Կիլիկիայի ինը թեմեր տարիներ ի վեր առաջնորդներ չունեին, չնայած Կ. Պոլսում 20-ից ավելի եպիսկոպոսներ ու վարդապետեր անգործության էին մատնված: «Մի տարի առաջ Դիարբեքիրից բերված պատրիարք Զավենը կատարյալ անկարողություն էր հանդես բերում կացությունն ըմբռնելու գործում, քանի որ բացարձակապես անծանոթ էր մայրաքաղաքի հասարակական-քաղաքական կյանքին, իսկ նրա շրջապատն էլ թաղված էր եսակենտրոն չահարկումների ճահիճը»: Նույն անտեղյակությունն էր տիրում պատահական անձանցից ընտրված Քաղաքական ժողովում: Ազգային հիմնարկները ողողված էին դավաճաններով ու լրտեսներով: Պեշիկթաշի Մկրտչյանն էր հեղինակն աքսորված հայ մտավորականների սև ցուցակի: Թալեաթի անձնական լրտեսն էր պատրիարքարանի գործավարը: Լրտեսներ էին ներդրված նաև հայ կուսակցություններում:

Գ. Պալաքյանը, իհարկե, չափազանցում է: Իրականությանն ավելի մոտ է Ա. Շիրակյանի նկարագրությունը. «Թուրք կառավարության և ժողովրդի տրամադրությունները, հոս ու հոն ազդող շշուկները, ինչպես նաև շրջաններեն տեղացող լուրերը, զուշակել կուտային մոտալուտ վտանգի մասին: Բայց անոր բնոյթը և զայն կանխելու միջոցները դեռ անյայտ կը մնային: Այս պայմաններուն մեջ պատրիարքարանի և միւս կազմակերպութիւններու կեդրոնական մարմինները երկար խորհրդակցութիւններ ունեցան և, նկատի ունենալով պատերազմի պատճառով ստեղծված փափուկ կացութիւնը, հրահանգեցին շրջաններուն զգոյշ ու համբերատար ըլլալ և տեղի չտալ գրգռութեան, խորհուրդ տրուեցաւ խաղաղութեամբ փակել միջադէպերը և նոյնիսկ աչք գոցել գործուած կարգ մը գրգռութիւններու և անիրաւութիւններու վրայ: Հաշտուած էին վատին հետ՝ խուսափելու համար վատագոյնեն... Պատրիարքարանը հեռագիր և շրջաբերական ղրկեց բոլոր առաջ-

133 Պալաքեան Գ., նշվ. աշխ., էջ 47:

նորդարաններուն, յորդորելով, որ տեղական կառավարութիւններուն ամբողջական աջակցութիւն ցոյց տան. հայութիւնը «իբրև անբաժան մեկ մասը օսմանեան հայրենիքին, ինչպես որ դարեր ի վեր ապացուցած է պետութեանն իր հավատարմութիւնը, այս անգամ ևս լրիվ կերպով պիտի կատարե իր զինուորական և քաղաքացիական պարտականութիւնները: Զավեն պատրիարքի այս հրահանգներն այնքան գնահատված էր, որ Ահմետ Սլտղի պեյը «Ժեոն Թուրք» թերթին մեջ գրած էր, թե «յարգելի Հովիվին խոսքեր կը կազմեն կանոնները ճշմարիտ օսմանցիութեան»...»[134]:

Վերաբերմունքը հայերի նկատմամբ գնալով չեչտակիորեն վատթարանում էր: Իշխանությունների հրահանգով սպանվեց Երզնկայի առաջնորդ Սահակ վրդ. Օդաբաշյանը, լուրեր էին շրջում գավառներից հայերին տեղահանելու մասին: Հայերի հանդեպ բռնություններն աճում էին ամենուրեք: Դրանք աննախադեպ ծավալներ ու բնաջնջող բնույթ ստացան 1914թ. կեսերից և գործնականում հանդիսացան Մեծ եղեռնի առաջին շրջանը: Ցեղասպան զանգվածային գործողություններն աստիճանաբար վերածվեցին ամբողջական բնաջնջման քաղաքականության:

Որ հայերի ցեղասպանությունն սկսվել էր ոչ թե 1915թ. ապրիլին, այլ դրանից 8-9 ամիս առաջ, վկայում են նաև բուլղարական աղբյուրները: Ռուսե քաղաքում 1915թ. հունիսի կեսերին տեղի ունեցած մի ժողով վարչապետ Վ. Ռոդոսլավովին դիմեց հետևյալ պահանջով. «Ահա տարի մըն է, որ հայ ժողովուրդը ենթակայ է բնաջնջման թիւրք կառավարութեան կողմեն... Թիւրք կառավարութիւնը սոսկալի հարածանքներով, բռնութիւններով ու ջարդերով կոչնչացնե խաղաղ հայ ազգաբնակչութենը»[135]:

Պրոֆեսորներ Ա. Համբարյանի ու Ս. Ստեփանյանի հեղինակած «Հայոց ցեղասպանությունը» գրքույկում տրված է Մեծ եղեռնի հետևյալ պարբերականացումը՝

-1914թ. նոյեմբերի 1-ից մինչև 1915թ. ապրիլի 20-ը

-1915թ. ապրիլի 20-24-ից մինչև 1915թ. դեկտեմբեր

-1915թ. դեկտեմբերից մինչև 1918թ. հոկտեմբեր:

Համարձակվում եմ չհամաձայնել նման պարբերականացման հետ: Ըստ իս առաջին շրջանը սկսվեց ոչ թե 1914թ. նոյեմբերին, այլ օգոստոսին. Ծովափնյա շրջաններից հույների տեղահանությունը սկսվեց 1914թ. մայիսին, իսկ օգոստոսին Թալեաթը հրաման ստորագրեց տեղահանելու նաև այդ շրջաններում բնակվող հայերին: Զորահավաքի մասին հրամանը հրապարակվեց 1914թ. հուլիսի 25-ին և գործողության մեջ դրվեց օգոստոսի սկզբներից, իսկ դա միայն անունով էր զորահավաք՝ իրականում հայ չափահաս արական սեռի բնակչության մեկուսացում ու ոչնչացում էր: Օգոստոսի 2-ին և 6-ին Թուրքիան գաղտնի համաձայնագրեր կնքեց Գերմանիայի հետ, որով Կովկասն անցնելու էր Թուրքիային: Օգոստոսի 2-ի երեկոյան երիտթուրքերի կենտկոմը որոշում ընդունեց ջարդարարական Հատուկ կազմակերպության (Թեշքիլաթի մախսուսա) մասին: Օգոստոսին փորձ արվեց ոչնչացնելու ՀՅԴ-ի 8-րդ համագումարի կազմը (Երզրումում), որը սակայն չհաջողվեց: Օգոստոսին տեղի ունեցավ վերջնական խզումը հայ կուսակցությունների, կազմակերպությունների հետ, սկսվեց հայերի զանգվածային պաշտոնազրկությունը: Այս շրջանի ավարտը հարկ է համարել ոչ թե ապրիլի 20-ը այլ 18-ը, որովհետև ամսի 19-ին սկսվեցին մտավորականների ձերբակալությունները:

Թ. Աքչամը գրում է, թե օգոստոսի 2-ի գերմանա-թուրքական համաձայնագիրը և զորահավաքը հանդիսացան հայերի բնաջնջման ուղղությամբ երիտթուրքերի առաջին քայլերը: «Այդ նույն օրը,- գրում է նա,- կառավարող Միություն և առաջադիմություն կուսակցությունը սկսեց կյանքի կոչել «ազգային կազմով միատարր Անատոլիա ստեղծելու» պլանը, որ մշակել էր սկսած տարվա սկզբից: Արտաքին քաղաքականության տեսանկյունից այդ պլանը կոչված էր իրականացնելու պանիսլամական և պանթուրքական նպատակներ, ներքաղաքական տեսանկյունից՝ Թուրքիայի բնակչության քրիստոնյա մասի ոչնչացում»[136]:

Վ. Տատրյանը հետևյալ կերպ է ներկայացնում Հայոց ցեղասպանության գործընթացը՝ Համիդյան ջարդերը և Ադանայի կոտորածը որպես «նախապատրաստական փորձ», 1913թ. սկզբներին 5000

134 Շիրակյան Ա., նշվ. աշխ., էջ 35-36:

135 «Հայաստան» (Պլովդիվ), 15. 06. 1915:

136 Тунян В. Младотурки и Армянский вопрос, 1912-1912, стр. 470.

ռումելական զինվոր-ժանդարմների առաքում Արևմտյան Հայաստան, Գերմանիայի ռազմական միսիայի այցելություն Թուրքիա, «Հատուկ կազմակերպության» ստեղծում (1914թ., օգոստոս):

Վ. Թունյանը հարում է մի ուրիշ տեսակետի՝ հայերի հանդեպ թուրքական քաղաքականությունն ուներ պերմանենտ բնույթ և կոչված էր ոչնչացնելու հայ ժողովրդին: Այս տարբերակի կողմնակիցները Աբդուլ Համիդի քաղաքականությունը բնութագրում են որպես նախագենոցիդ, որի բովանդակությունը կազմում էին ֆիզիկական բնաջնջումն ու բարոյական ոչնչացումը, ազգային գործիչների հետապնդումը, Ազգային սահմանադրության գործածության շրջանակների հետևողական նեղացումը, հայ ժողովրդի պատմության «խմբագրումը», քաղաքական կուսակցությունների գործունեության խափանումը, օսմանիզմի և «իսկական նացիոնալիզմի» արմատավորումը:

Երիտթուրքերը սկզբում շարունակեցին սուլթանի քաղաքականությունը, բայց հետո նրանց բավարարեց այդ քաղաքականության կրկնությունն Ադանայի ջարդերի տեսքով և ընդունվեց Սալոնիկի 1910թ. հոկտեմբերի ծրագիրը: Քայլեր կատարվեցին Հայկական հարցն անհետացնելու համար Անատոլիայում միատարր թուրքական հավաքականություն ձևավորել հայ բնակչության ոչնչացման միջոցով:

Ըստ էության երկու տարբերակները նույն էին: Պարզապես տարբեր էին քայլերի որակավորումները: Մի բան, սակայն, հստակ է՝ Համիդյան շրջանը ոչ թե «ցեղասպանության նախապատրաստություն», այլ դրա առաջին էտապն էր:

1914թ. օգոստոսի 26-ին Պալավիչինին գրեց, թե Մ. Մելետը և Հ. Մորգենթաուն պահանջեցին Վանգենհայմից դադարեցնել հայերի կոտորածները: Պատասխանը եղավ. «Քանի դեռ Անգլիան չի հարձակվել Դարդանելի կամ թուրքական որևէ նավահանգստային քաղաքի վրա, վտանգը բացառված է... Հակառակ դեպքում ոչ մի լավ բան չի սպասվում»[137]:

Նույն օրերին ավելի քան սրվեցին թուրք-հունական հարաբերությունները: 100 000 հույն լքեց բնակավայրերն ու հեռացավ Թուրքիայից: Պատճա՞ռը: Ահա այն Թալեաթի խոսքերով. «Որպեսզի մեր երկրի մնացած մասը գոյատևի, մենք պետք է ազատվենք օտար ժողովուրդներից»[138]:

Կայսրությունում ընթանում էր հույների ջարդ, օր օրի ահագնանում էր թուրք-հունական պատերազմը, ինչը սպառնում էր կայսրությանը կանգնեցնել անկանխատեսելի իրողությունների առջև: Հունաստան պետության գոյությունը փրկեց Թուրքիայի հույներին իսպառ բնաջնջումից:

Իսկ հայերը ոչ միայն սեփական պետություն, այլև իսկական հովանավոր չունեին: Էրզրումի բանակցությունների ձախողումը երիտթուրքերն օգտագործեցին մահմեդականներին բարձրացնելու հայերի դեմ: Մորգենթաուն և Վանգենհայմը միանգամայն իրական էին համարում հայերի կոտորածը: Վանգենհայմը չէր թաքցնում իր ատելությունը հայերի հանդեպ: Նրան են պատկանում. «Մենք, գերմանացիներս, հայերին ատում ենք»[139] ու նաև. «Հայերն իրենց լեռների բարձունքից , ինչպես հզոր մարտկոց, վերահսկում են կիրճերն ու հարթավայրերը, որոնցով անցնում է Բաղդադի երկաթուղին: Հայկական բարձրավանդակը եզերված Զեյթունի լեռներով՝ Ամանոսի և Տավրոսի գագաթներով, իշխում է դժվար անցանելի գծերի վրա, որոնցով էին տեղի ունենում առևտրականների ու բանակի տեղափոխությունները Անատոլիայի սարահարթից Սիրիա և Եփրատի ու Տիգրիսի հովիտներ իջնելու համար»: Հայաստանի հյուսիսային մասը սահմանակից է Ռուսական Հայաստանին, ինչը հայերի մեջ ծնել է ռուսաֆիլություն: Արևմտյան Հայաստանի բարենորոգումը չի համապատասխանում Գերմանիայի շահերին: Որպեսզի հայերը զենք չդառնան ռուսական քաղաքականության համար, մենք նրանց տվեցինք բարենորոգումներ, նրանց մեջ լիակատար ինքնավստահության հույսեր ծնեցինք: Եկը մեկն է՝ պաշտպանել երիտթուրքերի թուրքիզմը, որը խնդիր ուներ ձուլելու միջոցով վերջ դնելու հայերի և արաբների ազատագրական ձգտումներին՝ ցեղերին ձուլելու միջոցով Հայաստանը Գերմանիայի քաղաքական-տնտեսական շահերի շրջանակում է, իսկ այդ շահերը պահանջում են «հայերի անհետացում»[140]:

Այսպիսով, Հայկական հարցում Օսմանյան կայսրության և Գերմանիայի շահերը համընկնում էին՝ հարցը պետք է լուծվեր հայերի բնաջնջման միջոցով: Գերմանիան խոստանում էր Օսմանյան

137 ԲՀԱ, 1990, թիվ 3, էջ 39:

138 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 48:

139 «Աշխարհ», 04. 05. 1963:

140 "Русские ведемсти", 07. 07. 1916.

կայսրության կորցրած տարածքները՝ Հյուսիսային Աֆրիկան, Բալկանները, անգամ Հնդկաստանը նրան տալ: Այս ծրագրի իրականացման գործում հայերը պարտավոր էին Կովկասում ապստամբել Ռուսաստանի դեմ և հեշտացնել թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի Թուրան:

Նաջին Վ. Փափազյանին խորհուրդ էր տալիս Կովկասում ստեղծել կամավորական ջոկատներ Ռուսաստանի դեմ կռվելու համար, փոխարենը հաշվի կառնվեր նրանց շահերը Կովկասի հայերի դաշնակցային պետություն ստեղծելու ժամանակ: Այդ թուրք գործչի կարծիքով՝ հայության երկու հատվածների միավորումը հնարավոր էր միայն Կովկասում: Ռուսական կառավարությունը տրամագծորեն հակառակ կարծիքին էր՝ պատերազմից հետո Թուրքիայի կազմում ստեղծել Հայաստան ռուսական հովանավորության ներքո: Դրա փոխարեն թե ռուսահայերը և թե արտասահմանաբնակ հայերը պարտավոր էին անվերապահ կատարել Կովկասի փոխարքայի հանձնարարությունները:

1914թ. սեպտեմբերին Օսմանյան կայսրությունում վերացվեցին կրոնական համայնքների բոլոր առանձնաշնորհումները, հոգևոր դպրոցներում մտցվեց թուրքերենի ուսուցում: Քայլեր կատարվեցին հայկական գործոնը հայերի դեմ ուղղելու համար: Հոկտեմբերի 7-ին Հիրսը հայտնեց Սազոնովին, թե Թուրքիան պատերազմի մեջ կմտնի այն պահին, երբ Գերմանիայից ստանա խոստացված ոսկին: Հաջորդ օրը Էնվերը հայտարարեց. «Ոչ ուշ, քան երկու շաբաթից պետք է սպասել մեծ իրադարձությունների»[141]:

Մի օր անց նա տեղյակ պահեց Մոլտկեին, որ հրամայված է թուրքական նավատորմին Սև ծովում հարձակվել ռուսական նավատորմի վրա, իսկ ցամաքային զորքերը Արևելքում հարձակվելու էին Կովկասի վրա: Շրջաբերական ուղարկվեց նաև երիտթուրքերի տեղական կոմիտեներին, որում ասված էր, թե պատերազմի մեջ մտնելով՝ Թուրքիան նպատակ է հետապնդում «... իրականացնել մեր ազգային իդեալը, որը պահանջում է, որպեսզի ջախջախելով մոսկովյան թշնամուն, մեր կայսրությունը հասցնել իր բնական սահմաններին, միավորել բոլոր ցեղակից ժողովուրդներին»[142]:

Սահմանամերձ գյուղերում թեչքիլաթը սկսել էր զբաղվել բռնագրավումներով: Հոկտեմբերի 15-ին երիտթուրքերի կենտկոմի նիստում Թալեաթը հայտարարեց, թե երկյուղ կա, որ պատերազմից հետո Բեռլինն օգտագործելու է հայերին և հույներին, ինչը Օսմանյան կայսրությունը կվերածի Գերմանիայի գաղութի, հետևաբար, այդ առումով ևս քրիստոնյաներին հաշվեհարդարի ենթարկելը կենսական խնդիր է: Զիա Գյոքալփն ասաց՝ պետք է բավարարվել հայերի հարցը լուծելով, թե հույներին ձեռք չպետք է տալ, որովհետև նրանք ունեն իրենց ազգային պետությունը[143]:

Թուրքերը գործողության մեջ էին դնում հայերի բնաջնջման քաղաքականությունը: Իսկ Ազգային ժողովը հոկտեմբերի 20-ին որոշեց լավ հարաբերություններ հաստատել օսմանյան կառավարության հետ: Հավանության արժանացավ Գր. Զոհրապի առաջարկությունը՝ կոչով դիմելու հայ բնակչությանը: Ավում էր, որ 1878թ. հետո իրավիճակը հայերի համար ավելի քան վատացել է և այլևս անհնար է Բ. Դռան հետ խոսել Ն. Վարժապետյանի նման: «Այն ժամանակ,- ասաց Զոհրապը,- կային հզոր Ռուսաստանը և նախկին Եվրոպան: Այսօր չկա ոչ մեկը և ոչ էլ մյուսը: Մենք պատանդի վիճակում ենք Թուրքիայի ձեռքում: Ջանանք փոքր կորուստներով (մարդկանց և միջոցների) գոյատևել մինչև փրկության ժամը, որը մոտ է»: Թուրք ղեկավարների հետ բանակցելը հանձնարարվեց Պ. Գալաջյանին: Ազգային ժողովը գտավ, որ պատրիարքը պետք է լավ հարաբերություններ ունենա իթիհադի և Բ. Դռան հետ, նրանց ծանոթացնի գավառահայության դրությանն ու ձգտումներին: Պատրիարքը մի անգամ ևս հնազանդության կոչով դիմեց հայությանը: Հոկտեմբերի 26-ին Պ. Գալաջյանը զեկուցեց, թե երիտթուրքերի ղեկավարները հավաստիացրել են իրենց «բարեկամական կողմնորոշումը» հայերի հանդեպ: Հոգի մեկնելու կապակցությամբ Թալեաթը նրան ասաց. «Հայկական հարցը լուծված է մեկընդմիշտ»: Այս խոսքերը հայ գործիչներից շատերն ընդունեցին որպես հայկական բարենորոգումների հարցում խաբեության վերջ: Նրանք հավատում էին, իսկ հոկտեմբերի 15-ին երիտթուրքերի կենտկոմն արդեն ստեղծել էր թեչքիլաթի ղեկավար մարմինը՝ Երեքի կոմիտեն: Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց հետո հայերին ջարդելու թուրքական քաղաքականությունը կյանք մտավ գլխապտույտ արագությամբ:

141 "Русское слово", 08. 09. 1914.
142 Зареванд Турция и пантюркизм, Париж, 1930, с. 107.
143 Գեմբարսկի Բ., Նամակներ աշխարհին, Ե., 1990, էջ 80:

Երկրորդ շրջանն ավարտվեց ոչ թե 1915 թվի դեկտեմբերին, այլ նոյեմբերին և հանդիսացավ զանգվածային բռնագաղթի շրջան: Երրորդ շրջանն սկսվեց 1915թ. դեկտեմբերին և ավարտվեց 1916թ. հունիսին: Այն նշանակեց բռնագաղթեցված հայության զանգվածային բնաջնջում: Չորրորդ շրջանը ձգվում էր ոչ թե մինչև 1918թ. հոկտեմբերը, այլ մինչև Ռուսաստանի հոկտեմբերյան հեղափոխությունն ու Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Այս շրջանում ջարդեր գրեթե տեղի չունեցան, որովհետև Արևմտյան Հայաստանի հիմնական մասը ռուսները գրավել էին: Հինգերորդ շրջանը սկսվեց Բրեստ-Լիտովսկի պայմանագրով, երբ թուրքերը, օգտվելով Ռուսաստանում ստեղծված ծանր կացությունից, թուրքիզմից անցան համաթուրանական քաղաքականությանը, այսինքն՝ փորձեցին ոչնչացնել նաև արևելահայությանը և ձևավորել Կ. Պոլիս-Ալթայ համատարած թուրքական գոտին: Ի դեպ, նշված խնդիրներում մոտեցումների բազմազանությունն ավելի քան ակնհայտ է: Օրինակ, Բ. Գեմբարսկին գտնում է, որ երիտթուրքերի կոմիտեի 1914թ. հոկտեմբերի 15-ի գաղտնի նիստով սկսվեցին «պլանավորված, մանրակրկիտ նախապատրաստություններ մի ամբողջ ժողովուրդ սպանելու համար...»[144]:

Անդրադառնանք բնաջնջման գործողություններին: Փորձենք ներկայացնել դրանց համայնապատկերը: Երիտթուրքերը ոչ միայն ազատություն տվեցին քրդերի ձեռքերին, այլև նրանց կազմակերպեցին, զինեցին ու գրոհի ուղարկեցին հայ անզեն բնակչության վրա: Շատ տեղերում քրդական ավազակախմբերը դրության բացարձակ տերերն էին, նրանց տրամադրության տակ էին իշխանության բոլոր լծակները: Ալաշկերտի և Բայազետի կողմերում «քրդերն ու չեթեները միակ զինվորականներն են, որոնց ծախսերը հոգում է կառավարությունը»[145]:

Թուրքական բանակի 1915թ. սկզբների նահանջից հետո գանգատներ ստացվեցին,- գրում է գերմանացի կրոնական գործիչ Շտիրը,- թե քրդական անկանոն զորքերը հաստատվել են հայկական գյուղերում և կանանց հանդեպ այլանդակություններ են կատարում, զբաղվում թալանով: Երբ հայերը փորձում են պաշտպանվել, սկսվում են ջարդեր, ոչնչացվում են ամբողջ գյուղեր: Հայ գործիչների «գանգատներն իրենց բարեկամ երիտթուրքերին ոչ մի արդյունք չտվեցին»[146]:

«Արևելյան Անատոլիայի (Արևմտյան Հայաստանի) վիլայեթներում ,- գրում է Թ. Աքչամը,- հարկեր հավաքելու և դասալիքներին հետապնդելու պատրվակով գյուղերի վրա հարձակումներ տեղի ունեցան, կատարվում էին թալան ու տեղական բնույթի սպանություններ: Այս գործողություններում գլխավոր դերը հատկացվում էր քրդական համիդիե գնդերին և Թեչքիլաթը մախսուսա կազմակերպությանը, որի շտաբն արդեն Էրզրումում էր»[147]:

1914թ. դեկտեմբերի սկզբներին Ահմեդն ու Շերիֆը ռուսների նահանջից հետո հարյուր ժանդարմների և հարյուր հիսուն համիդիեների գլուխն անցած ասպատակում են Բաշկալեն և «թալանում ու այրում են հայերի տները, սպանում տղամարդկանց ու դիակներն ընկած թողնում փողոցներում, իրենց հետ տանում գեղեցիկ աղջիկներին... Հարևան հայկական գյուղերը նույն բախտին են արժանանում: Պազ, Արաք, Պիսս, Ալալիան, Ալոզ, Սորան, Ռասուլան և Ավագ գյուղերի բոլոր հայերին տարել են հովիտ ու կոտորել»[148]:

1914թ. դեկտեմբերի 22-ին, այսինքն՝ Սարիղամիշի ճակատամարտի սկսվելու օրը, համիդիե գնդերը շրջապատեցին Ալաշկերտի գյուղերը:

Կարինում գերմանական հյուպատոս Շվարցը 1914թ. դեկտեմբերի 5-ին գրում է. «Մի շարք դեպքերի հետևանքով Էրզրումի նահանգի հայ բնակչությունը, մանավանդ գավառներում, խիստ մտահոգ է ու ջարդերի նշաններ է տեսնում»: Եվ, իրոք, բաշիբոզուկները կողոպտում, սպանում էին անզեն հայերին, մինչ իշխանությունները մնում էին դիտողի դերում[149]:

Ռուս-թուրքական պատերազմը մեծապետական-թուրանականության սանձերը լրիվ արձակեց, սակայն անգամ այդ պայմաններում առաջնայինը համարվում էր թուրքիզմը, Թուրքիայի

144 Գեմբարսկի Բ., նշվ. աշխ., էջ 209:
145 Lepsius J., նշվ. աշխ., s. 209:
146 R 14098, Ab 39028.
147 Акчам Т. Турецкое национальное "Я" и Армянский вопрос, М., 1995, стр. 90.
148 Barby H., Au pays de l'epouvante. L'Armenie marture, Paris, 1917.
149 «Աշխարհ», 28. 06. 1986:

թուրքացումը: Նույնիսկ կապիտուլյացիաների համակարգի վերացման խորհրդարանային քննարկումների համաթուրանական աղմուկի համայնապատկերի մայր գույնը թուրքիզմն էր: 1914թ. դեկտեմբերի 14-ին օսմանյան խորհրդարանում հրապարակվեց սուլթանի ճառը, որում մասնավորապես ասվում էր. «Մեր կառավարութեան կողմից ժամանակին օտարներուն տված առանձնաշնորհումներն իրենց ձևը և նպատակը փոխելով՝ մեր թագավորական իրավասութիւնները կաչկանդած և վտանգավոր հանգամանք մը առած էին, ուրեմն միջազգային ու ոչ մեկ օրենքներու յարմարող և գաբիթուլասիոն յորջորջուող այս օտարականներու առանձնաշնորհումները ջնջել հրամայած, և ինչպես ուրիշ օտար երկրներու, իմ երկրիս մեջ ալ օտարներու և ասոնց վերաբերեալ խնդիրներու միջազգային օրենքներու համաձայն լուծելու ձևը յարմար տեսած եմ»[150]:

Խորհրդարանի պատասխան ճառում մասնավորապես ասված է. «...Քանի որ երկրագունտին վրայ հարիւր միլիոններով իսլամ գոյութիւն ունի, իսլամական բարձր իշխանութիւն մըն ալ գոյութեան իրավունք ունի և այս իրավունքին պաշտպանութիւնն ամենեն առաջ օսմանցիներուն պարտականութիւնն է: Ուրեմն յանուն իսլամութեան պատվոյն Ձեր գահուն և մեր ս. Հայրենիքին պաշտպանութեան համար բոլոր ազգը զոհուելու պատրաստ է... Ահա այս արդար դատը պաշտպանելու և իրենց կրոնական պարտականութիւնը կատարելու պատրաստ և միայն Ձեր բարձր հրամանին սպասող 300 միլիոն իսլամներ, իսլամութեան թշնամի վերոհիշեալ պետութեանց և անոնց զինակիցներուն դեմ շարժելու համար իրենց տրամադրութիւնը կը յայտնեն»[151]:

Թուրքիայում անվտանգության բացակայությունը հարկադրում էր բնակչությանը զենք ունենալ: Այդ իրավունքից օգտվում էին բոլոր ազգերը, բացի հայերից, ինչը նրանց միանգամայն անպաշտպան էր դարձնում զինված ու ավազակաբարո մահմեդական խուժանի առաջ: Մինչև սահմանադրության հռչակումը երիտթուրքերն իրենք էին օգնում, որ հայերը զինվեին, սակայն հենց իշխանության գլուխ անցան, պահանջեցին զենքերը հանձնել: Արտաքուստ դա արվում էր բանակը զենքով ապահովելու համար: Հայերի բացարձակ մեծամասնությունը զենքերը հանձնեց, բայց եղան նաև մարդիկ, ովքեր նոր կոտորածների սպառնալիքի պատճառով խուսափեցին այդ անել: Սարիղամիշից հետո հրաման արձակվեց զինաթափելու բոլոր հայերին: Քաղաքացիական բնակչության զինաթափումը հանձնարարվեց տեղական իշխանություններին[152]:

Լեփսիուսը նշում է, որ զենքեր հավաքելու հրամանը տրվեց 1914թ. դեկտեմբերին և գործադրվեց «առանց որևէ միջադեպի», այսինքն՝ դիմադրության: Չնայած դրան, կիրառվում էին խոշտանգման զազրելի եղանակներ[153]:

«Իշխանությունները չէին մեկնաբանում զենքերը հավաքելու հրամանը,- գրում է Լեփսիուսը,- զինվոր-ոստիկանները մտնում էին գյուղ, պահանջում որոշակի քանակությամբ՝ 200-300 հրացան, որքան որ հարմար գտնեին»: Եթե հրամանն անմիջապես չէր կատարվում, գյուղապետին, ծերերին բանտարկում էին, ծեծում: Նախասիրած եղանակը գանակոծումն էր, որը հաճախ զոհերին մահվան էր հասցնում: Պոկում էին տղամարդկանց մազերը, դուրս քաշում եղունգները, մարմնին շիկացած պայտ փակցնում, իսկ կանանց ու երեխաներին այնքան էին լկում, ստորացնում, որ դահիճների պահանջը կատարելու, խոշտանգումներից ազատվելու համար հայերը «ճարահատ տավարը վաճառում և հարևան թուրքերից, քրդերից և չերքեզներից թանկ գնով զենք էին գնում, հանձնում»[154]:

Եթե հայի մոտ զենք էին գտնում, բանտ էին նետում ու տանջամահ անում: Շատերին բանտարկում էին անգամ զենք չգտնելու դեպքում՝ պատճառաբանելով, թե զենքն ապահով տեղ է թաքցրել: «Բոլոր դահիճները,- պատմում է Մարզվանի քոլեջի ամերիկյան միսիոներներից մեկը,- նախապես զոհին ասում էին, թե ինչ ցուցմունք են սպասում նրանից և ծեծում էին այնքան, մինչև լսում էին իրենց ուզածը»[155]:

150 Ռիֆաթ Մ., նշվ. աշխ., էջ 73:
151 Ն. տ., էջ 74-75:
152 Toynbee A. J. Documents reliting to treament of Armenians and assyrian Christians in the Ottoman Empire and Northwestern Persia, 1915-1916, London, 1916, p. 638.
153 Lepsius J. Bericht ube die Lage des armenischen Volkes in der Turkei, Potsdam, 1916, s. 5.
154 Լեփսիուս Յո. Տեղեկագիր, էջ 48:
155 Ն. տ., էջ 84:

Ամենուրեք զինաթափումն ուղեկցվում էր խուզարկություններով, թալանով, բռնաբարություններով, դրամաշորթությամբ:

Զինաթափումն հայերի տարագրության երրորդ փուլն էր: Լեփսիուսն այս առնչությամբ գրում է. «Երիտթուրքական կոմիտեի համաձայնությամբ հայ ժողովրդի սահմանադրական կազմակերպությունը՝ դաշնակցական կուսակցությունը, երբ ռեակցիայի սպառնալիք էր առաջանում, զենք կրելու իրավունք է ունեցել, որպեսզի կարողանար պաշտպանել իր բարեկամների՝ երիտթուրքերի դատը»: Միայն առանձին տեղերում (օրինակ՝ Վանում) հայերը մերժեցին հանձնել զենքերը, որովհետև զգուշանում էին ջարդերից: Բացի Վանից ու Շապին Կարահիսարից, քաղաքներում զենքերը հավաքվեցին առանց որևէ միջադեպի: Դա վերաբերում էր նաև Կ. Պոլսին, որտեղ զենքերը հավաքվեցին ապրիլի 29-ից մայիսի 9-ը: Իշխանություններն անգամ ստացականներ տվեցին: Իսկ ներքին գավառներում զենքերի հավաքումը առաջ բերեց վայրագություններ: Դա ոչ թե զենքերի խաղաղ հավաքում էր, այլ բռնի ուժի գործադրում, ոչ թե նախապես հայտարարվում էր, որ ունեցած զենքերը հանձնել, այլ ամեն բնակավայրի համար նախապես նշանակում էին զենքերի թիվ և ահաբեկությունների միջոցով պահանջում: Եթե պահանջն անմիջապես չէր կատարվում, ձերբակալում էին գյուղապետին, ծերերին ու տանջանքների ենթարկում՝ ծեծում էին դաժանաբար, ինչը ոչ քիչ դեպքերում հանգեցնում էր մահվան: Պոկում էին մազերը, հանում եղունգները, օգտագործում շիկացած երկաթ, կանանց ու երեխաների վրա գործադրում խայտառակություններ: Այդ նույն ժամանակ թուրք բնակչությանը զինում էին[156]:

Զինաթափման ևս մի առանձնահատկություն: Եթե Բալկանյան պատերազմի ժամանակ պահանջում էին միայն հրացաններ ու ատրճանակներ, ապա 1914-15-ին՝ ամեն ինչ՝ յաթաղան, դանակ և այլն:

Հայերին ու թուրքերին թշնամացնելու նպատակով զանազան լուրեր էին տարածում՝ դաշնակցության զինանոցներում հայտնաբերված հազարավոր հրացանների ու ռումբերի, հայ կանանց պատրաստած հազար ածելիների մասին, որոնցով իբր կտրելու էին թուրքերի կոկորդը և այլն: Երզնկայի Մինն գյուղի մի բնակիչ նկարագրել է, թե ինչպես էին զինվոր-ոստիկանները մարդկանց վրա կրակելով զվարճանում, իբր թաքցրած զենքի տեղն իմանալու համար բրածեծ արեցին, բռնաբարեցին իրիցկնոջը: Վերջում տերտերին մի քանի գյուղացիների հետ «... ավազակների նման զինեցին մինչև ատամները և տարան Քերնախի մահմեդական թաղը՝ թուրքերին հայերի դեմ գրգռելու համար: Դրանից հետո նրան բանտ նետեցին: Գյուղացիները պատվիրակություն ուղարկեցին ոստիկանապետի փոխանորդի մոտ բողոքելու, թե ի՞նչ իրավունքով են ռումբ փնտրելու պատրվակով գանակոծել քահանային, տանջել կանանց, երեխաներին, ինչո՞ւ հայ գյուղացիներին զինեցին ու մահմեդականների թաղը տարան, երբ ոչ ոքի մոտ զենք չէին գտել: «Մենք իրավունք ունենք կիրառելու մեզ դուր եկած բոլոր միջոցները»,- եղավ պատասխանը[157]: Պատմում է Թ. Աքչամը. «Միայն առանձին դեպքերում հայերը մերժեցին զենքերը հանձնել, որովհետև իրավունք ունեին վախենալու ջարդերից: Այսպես եղավ Վանում և Շապին Կարահիսարում: Բայց դրանք բացառություններ էին, քանի որ ընդհանուր առմամբ քաղաքներում զենքերը հավաքեցին առանց միջադեպի: Կ. Պոլսում այդ գործը կատարվեց ապրիլի 29-ից մինչև մայիսի 9-ը, իշխանությունները նույնիսկ ստացականներ տվեցին: Իսկ ներքին գավառներում զենքերի հավաքումը տեղի ունեցավ վայրագ ճնշումների պայմաններում: Զենքերի հավաքման վերաբերյալ որոշումը նախապես չհայտարարվեց և ոչ էլ սպասեցին, որ զենքերը կամավոր հանձնվեին, այլ նախապես սահմանված թվով հրացան պահանջեցին»:

Միաժամանակ շարունակում էին զինել թուրք բնակչությանը: Իթիհադական ակումբները, որոնք ներքին գավառների բոլոր քաղաքներում զորավոր էին, ավելի ազդեցիկ էին, քան կառավարական բարձր պաշտոնատարները, հրոսակախմբեր էին կազմել մասամբ բանտերից ազատ արձակված ոճրագործներից: Հանրահայտ քրդական ավազակախմբերը վերցվեցին բանակ: Դրանց ազատություն տրվեց, որպեսզի հարձակվեն հայ գյուղերի վրա, թալանեին, տղամարդկանց սպանեին, կանանց ու աղջիկներին առևանգեին: Զոհերի բողոքներին իշխանություններն արձագանքում էին միայն երևութապես»:

156 Լեփսիուս Յո., նշվ. աշխ., էջ 19:
157 Ն. տ.,, էջ 62-65:

«Պատերազմը սկսվելուն պես Վանի, Կարինի ու Բաղեշի վիլայեթներում սկսվեցին ավերածություններ... Դրանք շարունակվեցին տարագրության ժամանակ և լրացրեցին վերջինիս՝ Անատոլիայի մեկուսի հովիտներով անցնող քարավանների վրա հարձակումներով: Շատ քարավաններ այս հրոսակախմբերի կողմից կիսով չափ կամ ամբողջապես ոչնչացվեցին»: «Այն պատիժը, որին ենթարկվեցին այս անսաստողները, կազմում էին ժամանակակից պատմության ամենաահավոր գլուխներից մեկը,- գրում է Հ. Մորգենթաուն,- չեմ կարծում, որ ամենախավար դարերում անգամ եղած լինեն այնպիսի զարհուրելի տեսարաններ, ինչպիսիք ներկայումս տեղի են ունենում ամբողջ Թուրքիայում: Թուրք ոստիկան-զինվորները ոչ մի նվիրական բան չէին ճանաչում: Պահված զենքերը փնտրելու անվան տակ նրանք կողոպտեցին եկեղեցիները, ամենածայրահեղ սրբապղծությունների ենթարկեցին խորանները և նվիրական առարկաները... Քահանաներին գանակոծում էին ուշաթափության աստիճան՝ պատրվակով, թե եկեղեցիները խռովության բուն էին: Երբ զենք չէին գտնում, երբեմն եպիսկոպոսներին ու քահանաներին հրացաններով, ատրճանակներով ու սրերով զինում էին, քարշ տալիս ռազմական դատարան, որպես զենք կրողների: Արձանագրված են դեպքեր, որ իբր զենք պահելու մեջ ամբաստանված կանայք մերկացվել ու գանակոծվել են ծառերի նոր կտրված ճյուղերով: Բռնաբարությունների ուղեկցելը զենքի փնտրտուքներն այնքան սովորական էր դարձել, որ հայ կանայք ու աղջիկները ոստիկան-զինվորների գալու մասին լսելով, փախչում էին անտառներ, սարեր կամ քարանձավներ»[158]:

«Բոլորովին էլ զարմանալի չէ, որ հայերը զենք ունեին,- գրում է Մարզվանի ամերիկյան վարժարանի տնօրեն Էլմերը,- դա անխուսափելի է մի երկրում, որտեղ մեծ է կյանքի և ունեցվածքի անապահովությունը»: Բայց շատ շուտ պարզ դարձավ, որ այդ հրամանն ուղղված էր միմիայն հայերի դեմ, իսկ հայերի մահմեդական հարևանները զենքեր կարող էին պահել»[159]:

Խարբերդում, երբ Ցո. Էհմանի խորհրդով հայերը զենքերը հանձնեցին (Թուրքերը խոստացել էին այդպիսիների հանդեպ բռնություններ չգործադրել), նրանց բանտ նետեցին: Նույն բանը կրկնվեց մի քանի անգամ: Էհմանը նաև վկայում է, թե 17 000 հայ բնակչություն ունեցող Մարզվանում ստեղծվեց զենք փնտրող կոմիտե: Շուտով իշխանությունների պահանջած քանակի զենք հավաքվեց: «Այնուամենայնիվ, որոշ ժամանակ անց հրապարակվեց տեղահանության հրամանը»: «Թուրք ծառայողներից ոմանք,- վկայում է Է. Քոլդը,- հաճախ իրենց հավաքած զենքը վաճառում էին հայերին»: Իսկ գերմանուհի Կ. Պֆայֆերը պատմում է. «Զինվորները շրջափակում էին գյուղերը, տղամարդկանց կապկպում և սարսափելի ծեծում, որովհետև չէին հավատում, թե ամբողջ զենքը հանձնվել էր: Թե ինչեր քաշեցին որոշ հայեր, հնարավոր չէ բառերով նկարագրել»[160]:

«Եթե Թուրքերը կասկածում էին, որ էլի զենք է թաքցված,- վկայում է Էհմանը,- ապա գանակոծում էին՝ մահակով հարվածներ տեղում ոտնաթաթերին»: «Հռոմեացիների ժամանակ,- պատմում է գերմանացի միսիոները,- հարվածների թիվը սահմանափակվում էր քառասունով: Թուրքիայում այդ թիվը հասցնում էին 200, նույնիսկ 800 հարվածի և, չնայած այտուցված ոտքերին, պատառոտված մաշկին, հաջորդ գիշեր էլ էին նույն բանտարկյալին տանջանքների ենթարկում»: «Գանակոծությունից հետո,- նկարագրում է ամերիկուհի Գեյջը,- բաց վերքի վրա եռացրած ջուր էին լցնում: Իսկ եթե շարունակում էին չհայտնել զենքի թաքստոցների տեղը, բերանը կղկղանք էին խցկում, հանում աչքերը, քաշում եղունգները: Մի մասը մեռնում էր, մյուսը՝ խելագարվում»[161]:

Էվերիկի կայմական Զեքին, պատմում է գերմանացի ականատես Ֆ. Հունեքեն. «Հայերին ոչ միայն գանակոծում էր, այլև ոտքերին ծծմբաթթու լցնում, մարմինը դաղում շիկացած երկաթով... Բանտերում գտնվող 640 հայից 30-ի ոտքերն այնպես էին ծվատվել, որ ձերբակալված հայ բժիշկները ճարահատված անդամահատեցին»[162]:

«...Իթթիհատական վանտալները,- գրում է Գերսամ Ահարոնյանը,- իրենց տևտոն խորհրդատուներուն ցուցմունքով, ձեռնարկած էին արևմտահայ ժողովրդի ամբողջական ապասպառազինումին, հայ մարդոց ձեռքեն խլելով նույնիսկ որսի հրացանն ու դաշույնը, և շարք մը շրջաններու մեջ հավաքելով նոյնիսկ խոհանոցի մեծկակ դանակները: Նպատակը, անշուշտ, հայ հավաքականութիւններն ու անհատներն ինքնապաշտպանութեան տարրական միջոցներեն իսկ զրկելն էր»[163]:

Զինաթափման մասին հրամանը, նկատում է Ա. Մանդելշտամը, սկիզբ դրեց «մի ահաբեկիչ գործելակերպի հայկական բոլոր նահանգներում»: Երբ հայերը հանձնում էին զենքերը, անմիջապես հայտնում էին Կ. Պոլիս՝ իբր դավադրություն է հայտնաբերվել: Երբ խուզարկությունը ցանկալի արդյունք չէր տալիս, գործադրվում էին սարսափելի խոշտանգումներ: «...Ոմանք, կռահելով, որ հայերի զինաթափումը կոտորածի նախաբանն է, զենքերը թաքցրեցին ինքնապաշտպանական նպատակով, որոշելով սեփական կյանքն ավելի թանկ ծախել, քան իրենց հայրենակիցները 1895 թվին»[164]:

Ալեքսանդրեթում Գերմանիայի փոխհյուպատոս Հոֆմանը 07. 03. 1915-ին գրում է. «Վերջին օրերին այստեղի բոլոր ռայաների՝ հայերի, սիրիացիների, հույների, առանց բացառության, բարձրագույն հրամանով ենթարկեցին տնային խուզարկության: Մի քանի տներում բռնագրավվեցին արժեքավոր թղթեր... Նույն բախտին արժանացան նաև գրքերը... Որքանով ծանոթ եմ այստեղի բնակչությանը, չեմ կարծում, թե նրանք զբաղված էին պետական դավաճանությամբ»[165]:

Խնդրին մի ուրիշ տեսանկյունից է մոտենում Զմյուռնիայում Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Գերենտը: Նա գրում է. «Հայերի տներում խուզարկությունները... շարունակվում են... Բազմաթիվ կալանավորվածներից մոտ 50 անձ է կալանքի մեջ թողնվել՝ հիմնականում հնչակյան և դաշնակցություն կուսակցությունների ակտիվիստներ: Երկու հայի տներում հայտնաբերվել են ռումբեր, ձեռքի նռնակներ: Հայերը պնդում են, որ դրանք 1909-ին տվել են երիտթուրքերը»[166]:

Հյուպատոսը չի հապաղում նաև արձանագրել, որ Զմյուռնիայում հայ կուսակցությունները «վերջին տարիներին որևէ նշանակալից դեր չեն խաղացել»: Նահանգում ՀՅԴ անդամների թիվը 40-50 հոգուց չէր անցնում: Տրապիզոնի հյուպատոսը 31. 05. 1915թ. գրում է Վիեննա, թե Սամսոնում խուզարկությունների ընթացքում «հայտնաբերվել է զենք և ձեռքի նռնակներ, ինչպես նաև մի թնդանոթ: Ձերբակալվածները տարվել են Բաֆրա...»[167]:

Հայերի զինաթափումը համընդհանուր էր. զինաթափում էին բոլորին՝ թե քաղաքացիական բնակչությանը, թե հայ ոստիկանությանը և զինվորականությանը: Նաև հարկ է նկատի ունենալ, որ հայերի զինաթափումն ու մահմեդականների զինումը հանգեցնում էին հարաբերությունների ծայրահեղ սրման, դրանց հաղորդում պատերազմական բնույթ՝ այն տարբերությամբ, որ հարձակվողը, գիշատիչը եռանդուն գործում էր, կազմակերպում, իսկ պաշտպանվողը՝ զոհը, չէր գործում, դիմադրելու, փրկվելու փորձ իսկ չէր անում: Ուրբաթ օրերը հայերի համար վերածվեցին դժոխային: Մահմեդականները չէին աշխատում և նրանց զգալի մասը զբաղվում էր «գյավուրների հարցը լուծելով»: Էրզրումում 1914թ. դեկտեմբերի առաջին ուրբաթ օրն իսկական խուճապ էր: «Առավոտյակ կրպակների մեծ մասը փակ էր, և հայերը բոպե առ բոպե սպասում էին հարձակման»: Քաղաքի ծայրամասերում «հրացանաձգության մրցություններ էին», որին զինված դաղաչների հետ միասին մասնակցում էին Գերմանիայի հյուպատոսը, ինչպես նաև մերձակա գյուղերի զինված գյուղացիները: Կոտորած կարող էր սկսվել ամեն պահ: Երիտթուրք պարագլուխ Հիմլին ասում էր, որ որոշված էր «Թյուրք գյուրջի» ընկերության անդամների համար անցկացնել ռազմական վարժությունների, համաքայլվածքի, հրաձգության ուսուցում: Ճիշտ է, դա արվում էր իբր ռուսական հարձակմանն ընդդիմանալու համար, բայց, փաստորեն, ստեղծվում էր մահմեդական մոլեռանդներից կազմված միլիցիա հայերի դեմ: Զենքի հայթայթման խնդիրը լուծելու համար տուրքեր էին հավաքվում Եվրոպայում հրացան գնելու: Նույնիսկ թատերական

158 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 252-253:
159 Գուտտ Վ. նշվ. աշխ., էջ 16:
160 Ն. տ., էջ 19:
161 Ն. տ., էջ 20:
162 Ն. տ.:

163 Ահարոնեան Գ., նշվ. աշխ., էջ 3:
164 Bryce J. The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916, london, 1916, pp. 687-688.
165 DR / PA-AA (посольство в К-поле) Bd VI, p. 4574.
166 "Osterreich Armenien'' BdVI, p. 4574.
167 Ն.տ., p. 4577:

ներկայացումներ էին տրվում դրամ հայթայթելու համար: Հիմլին իթիհադի կենտրոնի հետ բանակցություններ էր վարում 4 000 ատրճանակ ստանալու և տեղի երիտթուրքերին ու նրանց համախոհներին զինելու: Այսինքն՝ խնդիր էր դրված հայերի դեմ զինելու նաև խաժամուժին[168]:

Քաղաքի մերձակա Աղտաձոր գյուղում մահմեդականները թույլ չտվեցին հայերին նշելու բարիկենդանը: Տեղի ունեցավ արյունահեղ ընդհարում: Մահմեդականներն ամենուրեք ոռիթ էին փնտրում հարձակվելու հայերի վրա: Տրապիզոնի թեմի առաջնորդ Նազլյանը նույնպես վկայում է, որ «գավառներու մեջ բոլոր բնակիչներուն, քրիստոնեայ թե իսլամ, զինաթափութիւն սկսած էր... սակայն մինչ քրիստոնեաներեն առնուած զենքերը նոյն ընդ նոյն կը գրավուին, իսլամներեն առնուածները ետքեն գաղտնորեն կը վերադարձնեին իրենց: Ցետոյ հայերուն զենքերը, որոնց վրայ կառավարութիւնն ուրիշներ ալ ավելցնելով, դեզ կը կազմուին ու կը լուսանկարուին և այս լուսանկարները կը ծառայեին պատկերազարդելու հակահայ քարոզչական գրքոյկները...»[169]:

Մեծ թվով հայեր, մասնավորապես կուսակցական գործիչներ և համայնքների ղեկավարներ, բանտ նետվեցին և խոշտանգվեցին ամենաահավոր եղանակներով, որպեսզի նրանց հարկադրեին «խոստովանելու», որ իրենք հեղափոխականներ են և ասեն զենքերի թաքստոցների տեղերը: Հարցաքննության պարտադիր տարր էր ճիպոտահարությունը: Բարակ ճիպոտներով հարվածում էին ձերբակալվածի ոտատակերին, որը զարհուրելի ցավ էր առաջացնում, ոտքերն ուռչում էին և պատռվում, ինչը ոչ քիչ դեպքերում հանգեցնում էր ոտը հեռացնելուն: Զոհին այնքան էին հարվածում, որ ուշաթափ էր լինում, ջուր լցնելով ուշքի էին բերում ու նորից ծեծում: Հարցաքննությունները կատարվում էին գիշերը. թմբուկի ու մարդկանց աղմուկով չեզոքացնում էին զոհերի «սրտակեղեք կանչերի» աղմուկը:

Մեծ արձագանք ունեցավ «Հնչակի» 1914թ. դեկտեմբերի համարում տպագրված «Սահմանի այս ու այն կողմերում» հոդվածը, որում տրվում է արևմտահայության վիճակը պատերազմի մեջ Թուրքիայի մտնելուց հետո: «Հայը տագնապալի, ճգնաժամային օրեր է ապրում՝ սարսափահար ընդհանուր կոտորածի վախից, որը դամոկլեսյան սրի նման միշտ կախված է նրա թշվառ գլխին, մանավանդ որ թուրքական կառավարության հրահանգներով թուրք տարրը զինվում է, քուրդ ցեղապետերն իրենց ցեղակիցներին գրգռում են հայերի դեմ: Պատրիարքարանի իրավասություններն ու առանձնաշնորհումները Կոմիտեի սրի մոգական հարվածով վերացվել են: Ամեն ինչ օսմանացրել են: Նույնիսկ պսակին, ամուսնալուծությանը և ծնունդին վերաբերող հարցերը, որոնք մինչև այժմ հայ եկեղեցու տնօրինության տակ էին, մտցվել են կառավարության իրավասությունների մեջ... Հայ հասարակության շատ թե քիչ աչքի ընկնող անդամները... բանտերում են: Ձերբակալված, շղթայված, մուտ զնդանների խոնավ հողին նետված, թուրքական խելապտույտից ժայթքող աներևակայելի բարբարոս չարչարանքների, անլուր խոշտանգումների են ենթարկվում բազմաթիվ գործիչներ: Հայ ժողովուրդն, առավել քան երբևիցե, իջեցվել է արհամարհելի ռայայի դասին, որի տուն ու տեղը, ունեցվածքն ու ընտանիքը թուրքերի տրամադրության տակ են, նրանք տիրող նման ազատ, համարձակ ցանկացած ժամի մտնում և ելնում են հայերի տները խուզարկություններ կատարելու և ինչ-որ գտնում են՝ սննդամթերք, հագուստ, վերցնում, տանում են: Ալան-թալանը, պղծում-լկումը, լաց ու շիվանը պաշտոնական արարողությունների շարքն են անցել, որոնց ինքնակոչ ծիսակատարը կարող է լինել որևէ բոկոտն՝ բավական է, որ նա թուրք կամ մահմեդական լինի: Հայոց լեզուն արգելված է, նամակ ու հեռագիր արգելված է հայերեն գրել: Ժողովուրդը թշվառ վիճակում է, սովը և հացի պակասն ամեն տեղ զգալի է: Զրկանքը ծնել է զանազան համաճարակներ: Ժողովուրդը հեռանում է Կովկաս և Պարսկաստան: Եղան բողոքի ելույթներ, Զեյթունում հրաժարվեցին բանակ մեկնել: Զեյթուն ուղարկվեց 20 վաշտ: Մարզվանում 700 հայ քաշվեց լեռները...»:

1914թ. վերջերին, երբ թուրքական բանակը մտավ Օլթի և Արդվին, Օլթիի մահմեդականները, զինված իթիհադի տրամադրած զենքերով, հարձակվեցին տեղի հայերի վրա, հրդեհեցին հայկական թաղերը, մեծ թվով մարդկանց սպանեցին: Ինչ տանել չէին կարողանում, ոչնչացնում

168 АВПР, Посольство в К-поле, д. 2685, лл. 13-14.

169 Նազլեան Հ., նշվ. աշխ., էջ 563:

էին: «Արդվինի բնակչության միայն մի մասին հաջողվեց քաղաքից հեռանալ, Արտանուշի, Տանձուտի և Շավշետի գավառակի չորս գյուղերի հայ բնակչությունն ամբողջությամբ կոտորվեց»:

Ֆրանսիական «Թանը» նշելով, որ նախճիրները շատ ավելի վաղ սկսվեցին, քան Վանի իրադարձությունները, գրում է, որ տեղի ունեցան «Արճեշի, Աղջկազի, Աբաղայի, ինչպես նաև Բաշկալեի հովտի, Արդվինի, Օլթիի նախճիրները: Ամենուրեք հայկական արյուն հեղվեց, 500 հայ կին ու աղջիկ պատանդ վերցնելով, ուղարկեցին Էնկյուրիի վիլայեթ ու հանձնեցին իսլամ բնակչությանը: Աղաներն օգտվեցին անիշխանությունից և բազմապատկեցին իրենց հարեմների կանանց թիվը»[170]:

Սարիղամիշի պարտությունն էլ ավելի սրեց իրավիճակը: Թալեաթի խոսքերը, թե հայերին կոտորելով ինքը վրեժ էր լուծում Սարիղամիշում էնվերի պարտության համար, ինչպես երիտթուրք այդ պարագլխի շատ այլ արտահայտություններ, իսկույն դարձավ «գիտական թեզ» ոչ միայն թուրքական, այլեւ բազում ուրիշ պատմաբանների կողմից:

Մինչդեռ կոտորածներն ավելի վաղ էին սկսվել, քան տեղի կունենար այդ ճակատամարտը և Սարիղամիշը ցեղասպանության պատճառ հանդիսանալ չէր կարող: «Գուրուն» թերթում թուրքերն իրենք են գրում, որ հայկական ջարդերի հրամանները տրվել էին 1914թ. հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 5-ի շրջանում: Ճակատամարտի սկսվելու օրը համիդիեն արդեն շրջապատել էր Ալաշկերտի բնակավայրերն ու սկսել էր հայ բնակչության ջարդը: Բ. Շաքիրը կոտորածները կազմակերպելու նպատակով էրզրում, ապա Մուշ մեկնեց 1914թ. դեկտեմբերին և գտնվում էր 34-րդ դիվիզիայի շտաբում: Ք. Ուղքերն այս տեղեկատվության կապակցությամբ գրում է. «Կուսակցության գլխավոր գաղափարախոսի և քաղաքացիական գործչի ներկայությունը բանակային կենտրոնատեղում դժվարություն է հարուցում պատկերացնելու, որ Փարիզում կրթություն ստացած այդ բժիշկն ու մտավորականը եղել է ջարդի գլխավոր կազմակերպիչը»: Իբր գերմանական, իտալական, իսպանական ֆաշիստները, ովքեր ստեղծում էին համակենտրոնացման ճամբարներ, մարդկանց զանգվածաբար ոչնչացնելու տեխնոլոգիաներ, Եվրոպայում չէին կրթություն ստացել: Ուղքերն իզուր է զարմանում: Հիրոսիմայի և Նագասակիի ատոմային սպանդի հեղինակները նույնպես բարձր կրթություն էին ստացել աշխարհի ամենաառաջնակարգ ուսումնական հաստատություններում և գիտական կենտրոններում:

1915թ. հունվարի 18-ին ավստրո-հունգարական մի լրտես հաղորդել է. «Հայկական վիլայեթներից պատրիարքարանը տեղեկություններ է ստացել, որ թուրքերի կողմից հայերի հանդեպ կիրառվում են ամենատարբեր չարագործություններ: Մեծ ջարդեր դեռևս չեն եղել, բայց տարբեր տեղերում սպանել են ունևոր հայերին ու թալանել նրանց ունեցվածքը... Իշխանություններն անտարբերությամբ են նայել այդ ամենին... Էնվերը վերջին մարդն է, որ կարող էր հավանություն տալ հայերի վրա հարձակումներին և չհասկանալ այն վտանգը, որով հղի են դրանք: Թուրքիայի համար այսօր, ավելի քան երբևէ, անհրաժեշտ է հայերի չեզոքությունը... նաև անհրաժեշտ է հաշվի առնել, որ թուրքերի կովկասյան բանակում համեմատաբար շատ հայեր կան»[171]:

Իսկ այդ ասկյար հայերի վիճակը գնալով անտանելի էր դառնում: Փետրվարի 27-ին «Ազատամարտը» գրեց, որ գյուղերում կանանց ու աղջիկներին ստիպում են իսլամ ընդունել: Հայաստանում պարբերական ջարդեր են՝ գրում է ժամանակակիցը: «Վերջին վեց ամսում միայն Վասպուրականի մեջ 60-ե ավելի հայեր ջարդուեցան... շարունակուեցան առևանգութիւններ, թալան և այլն, իսկ ... ժեռն թուրքերը համիալամութեան ծրագիր մըն ալ մշակելով և երկրի ուրիշ տարրերու, մանավանդ քրիստոնեից հանդեպ թշնամական ընթացք բռնելով, ցոյց տվին, որ իրենք ալ կատարեալ հետևողներն են սուլթան Համիտի քաղաքականութեան...»[172]:

Օսմանյան խորհրդարանի անդամ Իբրահիմ Արվասը, նկատի ունենալով Վասպուրականում տիրող վիճակն, ասաց. «Իթթիհատ ձեռքի տակի ժողովուրդը գրգռելով հայերու վրայ յարձակուելու կը մղեր»[173]:

170 «Հնչակ», 1915, թիվ 3:

171 Wien HHSTA PA, Konstantinopel, 18 Janner 1915.

172 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 15, թթ. 64-66:

173 «ՀԵՄ եռամսեայ», ապրիլ-հունիս 1995:

Մորգենթաուն նկատել է, որ ռուսական բանակի նահանջից հետո փոխանակ «մարզված մարդկանց դեմ կռվելու, Թուրքերն իրենց զենքերը դարձրեցին Վանի գյուղերի հայ կանանց, երեխաների ու ծերերի վրա»: Գեղեցիկ աղջիկներին ու կանանց իրար մեջ բաժանեցին, մյուսներին ջարդեցին: Ապրիլի 15-ին Ականցում 500 երիտասարդի հավաքեցին սուլթանի ինչ-որ իրադե հրապարակելու համար: Խուժանը նրանց անմիջապես շրջապատեց, գյուղից դուրս հանեց ու սառնասրտությամբ բոլորին սպանեց: Նույն բանը կրկնվեց Վանա լճի հյուսիսային կողմի գրեթե բոլոր հայկական գյուղերում: Ութ օրում սրախողխող արվեց 24 հազ. մարդ:

Անրի Բարբին իր "В стране ужасов. Мученица Армения" գրքի հավելվածում զետեղել է 1914թ. վերջերին և 1915թ. սկզբներին հայերի հանդեպ կատարված բռնարարքների մի ցուցակ՝ համառոտ մեկնաբանությունով, որը նրան տվել էր Վանում Իտալիայի հյուպատոսության աշխատակից Սպոյդոնը: Հասկանալի է, որ ցուցակը համընդգրկուն չէ, սակայն էական տեղեկություններ է պարունակում արևմտահայության վրա հարձակումների վերաբերյալ: Թվենք դրանցից մի քանիսը: 1914թ. դեկտեմբերի 3-ին Բելու գյուղում սպանվեց մի ժանդարմ: Գյուղ եկավ Ոստանի կայմակամ Շուքրի բեյը: Նա մի քանի հոգու ձերբակալեց, հրդեհեց վեց տուն, փայտի հարվածներով սպանեց չորս գյուղացու: Ահաբեկված հայերն ամեն ինչ թողած փախան հարևան գյուղեր: Հաջորդ օրը գյուղ են լցվում քաղցած գայլերը և խժռում անասուններին: Մի քանի քրդի հետ գյուղ է վերադառնում կայմակամն ու զբաղվում թալանով: Ութ ժամ չարունակ հայերին կոտորեցին: Ջերքեզ աղայի ավազակախումբը գյուղը հրդեհեց[174]:

Նույն օրերին Էդելքում երևացին քուրդ ավազակներ, իսկ Սպիտակ վանքի կողմից գյուղի վրա հարձակվեցին Խուրշուդ աղայի քրդերը: Հայերին հաջողվեց հարձակումը հետ մղել, իսկ աղային սպանել[175]: Բողասքեսանի դեպքերը տեղի ունեցան 1914-ի նոյեմբերի 26-ին: Երկու հայ սպանվեց, եկեղեցին ու գյուղացիների ունեցվածքը թալանվեց: Դեկտեմբերի 30-ին կոտորածներ եղան Արչան, Հասան-Թամրան, Թաչօղլու և Սերայի գյուղերում: Ժանդարմները Ակհորիք գյուղում հայտարարում են, թե կայմակամի հրամանով բոլոր հայ տղամարդիկ պետք է հավաքվեն Սարախում զորանոց կառուցելու և, որպեսզի հայերը խույս չտան, նախորդ օրը նրանց փակեցին մի քանի տներում: Հաջորդ առավոտյան նրանք քրդերով ու ժանդարմներով շրջապատված գյուղից հանվեցին, և բոլորին (29 հոգի) գնդակահարեցին: Կայմակամն այդ «քաջագործության» հեղինակ սուլթանին թեյի հրավիրեց: Սպանվածների դիակները հավաքեցին Ավզարիկի կանայք: Կայմակամը քրդերին հանդիմանեց, որ կանանց թույլ են տվել դիակները թաղել: «Մեր զինվորները,- ասաց նա,- մնացել են առանց թաղելու, գայլերն ու շներն են նրանց հոշոտում: Ինչո՞ւ եք թույլ տալիս գյավուրներին թաղել իրենց մեռելներին»: Նրա հրամանով գերեզմանները քանդում են և երկու հայի հարկադրում դիակները հանել: Նույն օրը կոտորած տեղի ունեցավ Հասան Թաղրանում: Սպանվեց 100 հայ, երեխաներին պառկեցրեցին գետնին ու բերանները փայտ խոթեցին: Թաչօղլու գյուղից փրկվեց միայն երկու հոգի: Հարդասարիկ գյուղում գեղեցիկ աղջիկներին քրդերն իրենց հետ տարան: Այդ երեք գյուղերի կանայք, ծերերն ու երեխաները ձմռան սառնամանիքին ժանդարմների հարվածներով քշվեցին դեպի պարսկական սահման: Պառավներին ու հաշմանդամներին գնդակահարեցին: Կանանց ու երեխաների մեծ մասը խեղդվեց բքից: Սալմաստ հասավ միայն 70 հոգի: Տեր Վարդանին սպանեցին խոշտանգումներով՝ ականջներն ու քիթը կտրեցին, աչքերը հանեցին, իսկ նրա կնոջը կնության տվեցին մի քրդի: Կոտորվածների ունեցվածքին տիրացան քրդերն ու ժանդարմները[176]:

Դեկտեմբերի 15-ին Հասարանում քրդերը սպանեցին 10 մարդ, թալանեցին 5 600 անասուն, 5 900 չափ հացահատիկ, 1 600 բատման յուղ, պանիր, ինչպես նաև կահույք, տնային իրեր, արծաթ, լրիվ կողոպտեցին նաև եկեղեցին, իսկ կենդանի մնացած գյուղացիներին քշեցին գյուղից գյուղ: Հինգ օր անց ժանդարմների ուղեկցությամբ Սաթմանիս է գնում մի սպա և հայտարարում, թե կարգադրություն կա, որ բոլորը պետք է գյուղից հեռանան: 80 հոգու ճամփա են հանում: Մինչև Կրեշ հասնելը ցրտից մեռնում է 12 երեխա: 120 հոգու փակում են մի տան մեջ, իսկ երեք օր անց՝

174 Барби А. В стране ужасов. Мученица Армения, Тифлис, 1919, стр. 128-129.
175 Ն. տ., էջ 130:
176 Ն. տ., էջ 132-134:

գյուղից դուրս քշում: Նրանցից 17-ը ճանապարհին մեռավ: 1915-ի հունվարի 14-ին ոմն Հուսեինը և մոլա Սայիդը Ավզուրիկ գյուղի բոլոր հայերին մտցնում են բժիշկ Ռեսի տունը: Երկու հոգի գնդակահարվում է, 24 հոգու հաջողվում է փախչել Շեմսեդին գյուղ, 43 տղամարդու, 64 կանանց ու աղջիկների մի մասին սպանում են կամ քշում Սալմաստ, իսկ մյուսներին՝ մահմեդականացնում[177]:

Կենտրոնական քաղաքացիական և ռազմական իշխանությունները մեկը մյուսի հետևից սադրիչ բնույթի հրամաններ էին ուղարկում տեղերը: Բանակի հրամանատարության 1915թ. N8682 հրամանը տեղական մարմինների ուշադրությունն էր հրավիրում հայերի գործունեության վրա Անատոլիայի հարավարևելյան և արևելյան մասերում ու Հալեպի շրջակայքում՝ իբր Կեսարիայում մեծ քանակությամբ զենք, պայթուցիկ նյութեր, գաղտնագրեր էին հայտնաբերվել: Բանակի հրամանատարությունը պահանջում էր հայերին չօգտագործել ռազմաճակատում, նրանց պաշտոններ չտալ, մանրամասն հրահանգավորվում էր, թե խռովություն ծագելու դեպքում զորքն ինչպես պիտի գործի: Հասկանալի է, թե նման հրահանգները սրբազան պատերազմի պայմաններում մոլեռանդ ամբոխի վրա ինչպիսի մեծ ազդեցություն էին գործում, նրան մղում վայրագությունների բոլոր հայերի հանդեպ՝անկախ սեռից, տարիքից, առողջական վիճակից: Խատիսյանը 1915թ. հունվարի սկզբներին ռազմաճակատից գրեց. «Մի շարք հայկական գյուղեր... բառիս բուն իմաստով մորթված են: Սարսափելի տեսարան է: Դիակներ, դիակներ, դիակներ: Տղամարդիկ, կանայք, կրծքի երեխաներ: Հաշմված, այլանդակված, բարբարոսաբար պղծված: Անհնար է զսպել արցունքը: Միայն Մոլլա-Սուլեյման գյուղում... մեր սակրավորներն ընդհանուր գերեզմանում թաղեցին 13 կին, 14 երեխա, 18 տղամարդ»[178]:

Կովկասյան ռազմաճակատի առաջին բանակի հրամանատարի տեղակալի հաղորդումը, թե հետաքննությամբ պարզվել է, որ Հարիվ, Խոսրով և Մեհլեմե գյուղերում փետրվարի 14-15-ի գիշերը սպանվել է 707 մարդ, հետևանք էր նաև պարսիկների դիրքորոշման փոփոխության: Մինչ այդ պարսիկները հովանավորում էին հայերին և թույլ չէին տալիս նրանց սպանել: Փետրվարի 14-ին մուսեթիկները պարսիկներին ահաբեկեցին, սակայն վերջինները դրանից չերկնչեցին: Վալի Ռուստեմը քրդերին ու զինվորներին հրամայեց պարսիկների տներից հայերին հանել: Ցոթ հայի գտան, ապա հայտնաբերեցին ևս 700 հոգու, գրավեցին Հաֆիվան ու Խոսրովը: Այստեղ էլ շտաբի ներկայացուցչի հրամանով հայերին մեռցրեցին խոշտանգումներով, որոնք «անհնար է նկարագրել ու բացատրել»: «Սեփական աչքերով տեսա հարյուրավոր դիակներ թափված փոսերը, գարշահոտությունը վարակել էր օդը, տեսա գլխատված դիակներ, կացնով կտրված ձեռքեր, սրունքներ, մատներ, մաշկազերծ գանգեր, դիակներ փլատակների տակ, տասնյակ զոհվածներ ցանկապատերի հետևում...Սպանություններ եղել էին նաև հայկական ուրիշ շատ գյուղերում»[179]:

Սոֆիայից մարտի վերջերին ստացված մի հեռագիր հայտնում է.«Պարբերական կոտորածներ Էրզրումում, Տրապիզոնում, Զեյթունում և շրջակայքում: Արյունալի ընդհարումներ Բիթլիսում, Վանում, Մուշում: Ապստամբություն Կիլիկիայում: Բռնություններ, թալան, սպանություններ Ակնում և Փոքր Հայքում: Ամբողջ ժողովրդի տնտեսապես քայքայում: Հայ զինվորների զինաթափման մասին սուլթանական իրադե: «Ազատամարտը» փակված է: Խմբագիրներից մեկն աքսորված է Անկարա»: Սովորական դարձան հայ բնակչության բռնի տեղափոխությունները ու գաղթերը, որոնք 1915թ. մայիսից համընդհանուր դարձան[180]:

Նույն հարցադրումներն ու գնահատականներն է պարունակում Ս. Թեհլիրյանի դատապաշտպանի ճառը. «Ժողովրդին տեղահանելու հրամանն ամենից հրեշավոր բանն է, որ կարող է ծնվել ռազմամոլների ուղեղներում: Եթե երիտթուրքերի կոմիտեն ուներ այն համոզմունքը, թե լավ ժանդարմները հեռացվել էին և իր ձեռքի տակ իբրև ժանդարմներ մնացել էին միայն սինլքորները, այդ պարագայում իրավունք չուներ տալու տեղահանության հրամանը: Եվ եթե, այնուամենայնիվ, հրամանը տվեց և նման մարդկանց վստահեց տեղահանությունը, ապա

177 Барби А. В стране ужасов. Мученица Армения, Тифлис, 1919, стр. 135-136.
178 ՀՀ ՀԲԿՊԱ, կոլեկցիոն ֆոնդ, ց. 1, գ. 200, թ. 13:
179 ՀՀ ՀԲԿՊԱ, ֆ.47/2, գ. 2:
180 АВПР, "Политархив", оп. 482, д. 3504, л. 20.

հետևանքի համար ինքն է պատասխանատու»: Բռնագաղթի ճանապարհին ոճիրներ գործած ժանդարմները հանցագործ էին, բայց ոչ այնքան, որքան «Պոլսում նստած անձը, ով տեղահանության գործը հանձնեց նման մարդկանց»: Եթե հայերը մինչև իսկ դավաճանած լինեին, երիտթուրքերը գիտեին, որ հազարավոր կանայք ու երեխաներ բացարձակապես անմեղ էին: Բարբաջանք է, երբ ասվում է, թե տեղահանությունը նրա համար էր, որ հայերը դաշնակցել էին ռուսների հետ, և որ «ռազմական անհրաժեշտությունն էր այդ թելադրում»: Վալիներին ուղարկած հեռագրերով երիտթուրքերը հրամայում էին, որ «հայ ժողովուրդն այլևս գոյություն չպետք է ունենա»: «Մենք գործ ունենք ժողովրդի սպանության հետ, որի ոչնչացման պատասխանատվությունն ընկնում է երիտթուրքերի կոմիտեի, մասնավորապես նրանց ամենաազդեցիկ նախարար Թալեաթի վրա»[181]:

Մի փաստաթղթում, որը կազմված 1915թ. մարտի 15-ին, կարդում ենք. «Բանակում ծառայող բոլոր հայերը զինաթափ են արված... Էրզրումի շրջակայքում եղած 17 գյուղերից միայն երեքն են անվնաս մնացել: Մյուսները թալանվել ու ոչնչացվել են: Ամբողջ երկրում իրականացվում է հայերի ձերբակալություն»: Այդ նույն ժամանակ Էրզրումում, Դերջանում, Զեյթունում ոչնչացնում էին զինաթափ արված հայերին:

Արևմտահայերի վիճակին արևելահայերի անդրադարձի արտահայտություն է Գր. Զալղուշյանի 1915թ. հունվարի 2-ի նամակը Մոսկվայի քաղաքագլուխ Մ. Զելենոկովին: Նամակում մասնավորապես ասվում է. «Իմ ժողովրդին այժմ թուրքերը գնդակահարում, քայքայում ու ոչնչացնում են ոչ միայն Թուրքիայում, այլև Պարսկաստանում... ձեզ հայտնի սարսափները չնչին բան են մեր տանջանքների համեմատությամբ: Սերբիան, Բելգիան, Լեհաստանը քայքայվում են, բայց այնտեղ սպանում են կռվի դաշտում: Մեզանում ոչ միայն տեղի է ունենում քայքայում, այլև ամբողջական ոչնչացում: Եղել են նաև առաջին հայացքից անհնար թվացող դեպքեր՝ Ռուսաստանի տարածքում թուրք գերիներ տեղափոխող վագոններում գտել են խեղդված հայերի: Թուրք զինվորներն այստեղ՝ Ռուսաստանում, սպանում են հայ զինվորներին: Պատկերացնել կարո՞ղ ես, թե ինչ է կատարվում այնտեղ՝ սարսափի երկրում»: Երբ գերի էին վերցնում հայ կամավորներին, նրանց գերի չէին համարում, այլ տանջում էին, մորթում, կախում էին:

Քրդական ավազակախմբերի մի քանի պետեր, շարունակում է Զալղուշյանը, որոնք մասնակցել են Վանի հայության կոտորածին, «այժմ գտնվում են ռուսական բանակում որպես պատվավոր ռազմագերիներ: Նման քուրդ ավազակներից մեկը՝ Քարաքենդ գյուղից Ալի բեկը, որը հայտնի է որպես Բայազետի հայերի ջարդերի կազմակերպիչ, իր համախոհների հետ գերի ընկավ և ապրում է ազատության մեջ, օգտվելով հոգացողության բոլոր ձևերից: Դրա կողքին վիրավորական է վերջերս երեք հայերի գնդակահարումը Բերկրի կալեում, որովհետև նրանք հրացանաձգության մեջ են մտել քրդերի հետ...»: Արամ Մանուկյանը Կովկասյան N2 բանակի հրամանատարին գրեց, որ Բայազետում գործող ռուսական զորքերի հրամանատարը հրամայել էր «հայերին տեղյակ պահել, որ կորպուսի հրամանատարությունը թույլատրել է հանձնվող քրդերին վերադառնալու իրենց գյուղերը... ընդ որում համառորեն հայ բնակչությունից պահանջվում է չհարձակվել և չթալանել քրդական գյուղերը»[182]:

Քրդերն ավերեցին ու կրակի տվեցին բնակելի տներ եւ եկեղեցիներ Ադիլչևազի, Արճեշի, Բերկրիի, Սարայի, Բաշկալեի, Խոշաբի, Հայոց Ձորի, Գյավաշի, Քարաքարի և Կարճկանի հայկական գյուղերում: Հրդեհեցին հետևյալ նշանավոր վանքերը՝ Տեր-Ոսկան Որդի (սրբ. Ստեփանոսի), Սրբ. Բարդուղիմեոսի՝ Բաշկալեի մերձակայքում, Սորբը և Ուրանցը Կարճկանում, սրբ. Գրիգորի, Կարմրավորը, Վարագը: Քրդերի կողմից կատարված կոտորածների, ավերումների, թալանի հետևանքներին ականատես եղան ռուսական բանակն ու հայ կամավորները: Քրդական ցեղերը թուրքական զորքերի կողքին կռվում էին ռուսական բանակի դեմ պարսկական սահմանի վրա և պարտություն կրելով, հայտնեցին, թե հնազանդվում են ռուսական իշխանություններին: Բայց հենց որ սկսվեց ռուսական զորքերի նահանջը, նրանք անմիջապես նորից միացան թուրքական զորքերին ու հետապնդեցին ռուսներին[183]:

181 Թեհլիրյանի արդարահատույցը, Բեյրութ, 1981, էջ 198-201:
182 Чалхушьян Г. նշվ. աշխ., стр. 111-117.
183 Ն. տ., էջ. 113-117:

Ռուսական զորքերի կողմից Երզնկայի գրավումից հետո Դերսիմի քուրդ-կզլբաշները ռուսական հրամանատարությունից զենք և ռազմամթերք ստացան, ձևավորեցին ջոկատներ և հանդես եկան նույն ռուսական զորքերի դեմ: Կզլբաշներին ղեկավարում էր ռուսների կողմից աշխատանքի ընդունված Ալիշերը: Այսպիսով, հայերը հայտնվել էին փակուղու մեջ. Թուրքերն ու քրդերը նրանց ոչնչացնում էին, իսկ ռուսները՝ արհամարհում, անուշադրության մատնում[184]:

Մ. Պապաջանովը հանդես գալով Պետական դումայի 1916թ. մարտի 11-ի նիստում, ասաց. «Աշխարհում ոչ մի ժողովուրդ այս պատերազմում այնքան զոհ չունեցավ, որքան հայերը... Երիտթուրք քաղաքագետներն ըստ էության հանդիսանում են կարմիր սուլթան Աբդուլ Համիդի քաղաքականության շարունակողները, քաղաքականություն, որը ձգտում է Թուրքիայում Հայկական հարցը լուծել հայ ժողովրդին բնաջնջելու միջոցով»: Դեռ թուրքերը պատերազմի մեջ չէին մտել, երբ հայերը մեղադրվեցին լրտեսության մեջ հօգուտ Ռուսաստանի: Սկսեցին զինաթափել ու սպանել հայ զինվորներին: Մոտ 1 800 հայ զինվոր սպանվեց Դիարբեքիրի մերձակայքում: Մի քանի գյուղերում ոչնչացվեց ամբողջ տղամարդ բնակչությունը, մյուսներում չխնայեցին նույնիսկ կրծքի երեխաներին ու ծերերին: 1915թ. մարտ-ապրիլ ամիսներին եղան բազմաթիվ խժդժություններ ու հափշտակություններ, մի քանի վայրերում հայերը դիմեցին պաշտպանական գործողությունների:

«Ազատամարտը» մարտի 24-ին գրեց. «Զեյթունի մեջ բախում տեղի ունեցած է. այլ լուրեր Պիթլիսի, Թերճանի և Բաբերդի մեջ ոստիկան-զինուորներու կատարած խժդժութիւններու մասին կը հաղորդեն: Բաբերդեն կը գրեն. բոլոր ժողովուրդն ընդհանուր ջարդի մը սպառնալիքին ներքև կապրի: Կառավարութիւնը հրահանգած է զինաթափութիւնը բոլոր հայ զինվորներուն: Ամենեն չնչին պատճառով անոնք բոլորն ալ պիտի ջարդուին»[185]:

Երբ ռուսական բանակը 1915-ին մտավ Ատրպատական և Տարոն, ականատես եղավ հայերի կոտորածների ահավոր տեսարանների: Հարիսան գյուղի հայ բնակչությունը սրի էր քաշվել. «Կին, երեխա, ծեր, պառավ կողք կողքի, անջատ-անջատ, խորտակված դռների մոտ, հյուղակներում, պատերի տակ, գոմերում, կտուրներին, ծառերի տակ, ամեն տեղ ընկած էին ... մորթված... Ճանապարհների կողքին... ընկած էին շուրջ 20 աղջիկների դիակներ բզկտված հագուստներով, սարսափից ապտիկացած, կապոյտին յառած աչքերով»[186]:

Թեհլիրյանը մայիսի կեսերին Բիթլիսի մոտակայքում, Սիկունիս գյուղում տեսել է խենթացած պառավների: «Գիւղը բնաջնջուած էր»[187]:

Տիվերիկի կոտորածի մասին ականատեսը պատմում է. «Նախապես այրերը բաժնեցին կիներեն և զավակներեն, ապա սուրի հարվածով, դանակով, հրացանի սուիններով, անգթութեան հազար նրբութիւններով կը սպանեին զանոնք»[188]:

Կ.Պոլսում ռուսական դեսպանության թարգման Սերաֆիմովը մարտի 15-ին հեռագրեց. «Հայերի վիճակը Թուրքիայում նկատելիորեն վատացել է: Բանակում ծառայող բոլոր հայերը զինաթափվել են... Էրզրումի մերձակայքի 17 գյուղերից չի ազատվել միայն երեքը: Այլևայլ թալան ու ոչնչացումներ: Ամբողջ երկրում տեղի են ունենում հայերի ձերբակալություններ: Կ. Պոլսում ձերբակալվել է 14 հնչակյան և հանձնվել ռազմական դատարանին»[189]:

Երեք օր անց Սերաֆիմովը տեղեկագրեց. «Քրիստոնյա բնակչությունը, մասնավորապես հայերը, ենթարկվում են ամեն տեսակի հալածանքների,շատ հաճախ՝ նաև խոշտանգումների... Դրությունը գնալով ավելի անհանգստացնող է դառնում և բարելավվելու հույս չկա, եթե արտաքին իրավիճակը չհամոզի Բ. Դռանը, որ պատիժն անխուսափելի է»: Թուրքիայում ծառայող ռուս մի այլ դիվանագետ ապրիլի 10-ին հաղորդեց. «Դիադինից եկած 23 տղամարդիկ, ովքեր փրկվել էին Արճեշից ու Սոսեմունից, պատմում են թուրքական իշխանությունների հրահանգով ոստիկանության կողմից տեղի հայերի համատարած գնդակահարությունների մասին»[190]:

184 "Кавказское слово", 1917, N237.
185 Lepsius J., նշվ. աշխ., p. 211:
186 Թեհլիրեան Ս., նշվ. աշխ., էջ 67:
187 Ն տ., էջ 70:
188 Ն. տ., էջ 78:
189 АВПР, "Политархив", д. 3504, л.19.
190 АВПР, "Политархив", д. 3508, л.23.

«...Անատոլիայում ամենուրեք,- գրում է ռուս գիտնական Մ. Կովալևսկին,- հայերը զոհ են չորթումների, սպանությունների և այլնի. նրանց տներն ու դաշտերը զավթված են, անմեղ արյունը գետ է դարձել՝ մի խոսքով ամեն ինչ կատարվում է հնի նման , կարծես սահմանադրության հռչակումից հետո պետական կարգերում որևէ փոփոխություն տեղի չի ունեցել»[191]:

1915 Հալեպի վալի Ջելալը 1915թ. ապրիլի 12-ին Ռեոսլերին ասաց. «... Ակնհայտ է, որ թուրքական կառավարությունում գերիշխող է դարձել մի ուղղություն, որը բոլոր հայերին կասկածելի կամ, առավել ևս, թշնամի է համարում»[192]: Վորոնցով-Դաշկովի խոսքերը, թե «հայ կամավորների կողմից գրավված թուրքական հողերն իրենց է մնալու», արևմտահայերին շատ չէր ոգևորում: Նրանց ամբողջ մտահոգությունը բնաջնջման վտանգն էր:

Վանի դեպքերից չորս ամիս առաջ հայերի բռնագաղթի վճիռը կայացված էր: Ադանայի բարձրաստիճան պաշտոնատարներից մեկը 1915թ. փետրվարի սկզբներին ասել է. «Հայոց գլխուն կրկին նոր փոթորիկ պիտի պայթի, որը պիտի գերազանցե ցարդ բոլոր պատահածները»: Նա իր բարեկամ հային խորհուրդ տվեց անցնել Եվրոպա, այլապես հետո զղջալու էր: Այդ հայն իր որդիներին տեղյակ է պահում. «Զեյթունի, Հաճընի, Տեորթեոյի, ինչպես նաև Ադանայի ամբողջ հայերը տեղահան պիտի ըլլան և Հարստութիւնին պիտի գրավվի, նոյնիսկ ձեր կիներն ու աղջիկները ձեզի չի պիտի մնան...»[193]:

Կաթողիկոսն ապրիլի 7-ին հեռագրեց Սազոնովին. «... Կոտորածներ են տեղի ունեցել Էրզրումում, Դերջանում, Զեյթունում ու շրջակայքում»[194]:

Նա նման հեռագրեր ուղարկեց նաև ԱՄՆ-ի նախագահին ու Իտալիայի թագավորին[195]:

Սահակ կաթողիկոսը շտապում է Ջեմալ փաշայի մոտ, որի հետ լավ հարաբերությունների մեջ էր: «Նախարարների խորհուրդում այս խնդրի քննարկման ժամանակ շատ ջանք թափեցի,- պատասխանեց փաշան,- որ փոխանակ ամբողջ հայ ժողովուրդը տեղահանելու և աքսորելու, ամեն քաղաքից միայն գրչի տեր, մտավորական և հայ քաղաքական կոմիտեների ղեկավար 15-20-ական հոգի աքսորվի..., սակայն ցավում եմ, որ ձայնս լսելի դարձնել չկարողացա»[196]:

Հայերի դեմ ամենաարմատական միջոցներ կիրառելու ջատագովներն էին Թալեաթը, Բ. Շաքիրն ու Նազիմը: Իթիհադի կենտրոնական ակումբում Թալեաթը, Բ. Շաքիրը, Նազիմը և Մ. Շուքրին վաղուց էին ավարտել հայաջինջ ծրագրի գործադրման միջոցառումների մշակումը: Ելակետը հետևյալն էր՝ պատերազմն ամենահարմար պահն էր բնաջնջման համար, մանավանդ հավատացած էին, որ հաղթելու է Թուրքիայի դաշնակից Գերմանիան, այսինքն՝ պատերազմից հետո որևէ տերություն անզոր էր լինելու հաշիվ պահանջել: Իսկ եթե նույնիսկ պարտվեին և կորցնեին ամեն ինչ, այդ դեպքում էլ Թուրքիայի ավերակների վրա ստեղծվելիք Հայաստանը սակավաթիվ բնակչությամբ թույլ պետություն էր լինելու, ինչը չէր բացառում հարմար պահին դրա ոչնչացումը:

Սանդերսի Թուրքիա գալուց հետո հայերի տեղահանությունը վերածվեց թուրքական բանակի ռազմավարական ծրագրի, որի անհապաղ իրականացումը «անվտանգ կդարձներ թուրքական բանակի թիկունքը»: Իսկ բանակի թիկունք հայտարարվեց ոչ միայն ամբողջ Արևմտյան Հայաստանը, այլև գրեթե ողջ Անատոլիան՝ Կասթամունիից, Անկարայից մինչև Հալեպ ու Կիլիկիա: Նման մոտեցումը ձեռնտու էր անձնապես Թալեաթին՝ առաջին պլան էին մղվում ռազմական նկատառումներն ու Էնվերը, իսկ ինքը մնալու էր աննկատ: Սակայն այդպես չստացվեց: Էնվերը տրվեց պատերազմական գործողություններին և հայերի բռնագաղթի ու կոտորածի իրականացման ղեկավարությունը թողնվեց Թալեաթին:

Հայկական վիլայեթների հայ բնակչության տարագրությունը կատարվելու էր երկու հանգրվանով: «Ընդհանուր կարգադրություն կար,- գրում է Լեփսիուսը,- հայ ժողովրդին զրկելու իր

191 "Вестник Европы", т. III, N 6.

192 Aus den Aufzeichnungen eines in der Turkei verstorbenen Seutschen ("Material sur Basel"), p. 25.

193 Պալաքեան Գ. նշվ. աշխ., էջ 73-74:

194 Ն. տ. Պ. 3508, ս.22:

195 АВПР, "Политархив", д. 3508, л.22.

196 Պալաքեան Գ., նշվ. աշխ., էջ 75:

ղեկավարներից և իր կազմակերպություններից, որպեսզի հնարավոր լիներ տարագրությունն իրականացնել առանց աղմուկի և ընդդիմության: Նաև ուզում էին թույլ չտալ, որ ներքին գավառների լուրերը շուտ հասնեին հասարակությանը և Եվրոպային: Սկսած հունիսից բոլոր հայ պաշտոնատարներն աշխատանքից հանվեցին», բոլոր բժիշկները բանտ նետվեցին: Հարգված ու կրթված հազարավոր հայերի ձերբակալությունները տեղի ունեցան առանց օրինական որևէ ձևակերպման: Երբեք և որևէ ձևով նրանց դեմ ամբաստանություն չհարուցվեց պետության դեմ որևէ արարք գործելու կամ ծրագրելու համար[197]:

Մյուս հանգրվանն ընդհանուր զորակոչն էր: Բանակում եղած հայերը, որոնք, համաձայն ռազմական նախարարի վկայության, քաջությամբ կռվել էին ոչ միայն Դարդանելում, այլև Կովկասյան ռազմաճակատում Ռուսաստանի դեմ, մեծագույն մասով զինաթափվելու էին և բանակում օգտագործվելու իբրև բեռ տեղափոխող և ճանապարհներ վերանորոգող, ապա սպանվելու էին: Ջարդերն ընթացքի մեջ էին, բայց շարունակում էին կրել մասնակի ու տեղական բնույթ, ինչն իթիհադի պարագլուխներին բավարարել չէր կարող, քանի որ նման տեմպերով կպահանջվեր տևական ժամանակ խնդրի լուծման համար: Անհրաժեշտ էին արմատական և համընդհանուր լուծումներ, բնաջնջման «արդյունավետ և սրընթաց, եղանակներ: Ֆրանսահայ պատմաբան Ա. Բեյլերյանը Անգլիայի արտաքին գործերի նախարարության արխիվում հայտնաբերել է մի փաստաթուղթ այն մասին, որ 1915թ. հունվարի սկզբին իթիհադի կենտրոնում տեղի ունեցած գաղտնի նիստերից մեկում, որին մասնակցել են հինգ հոգի՝ Թալեաթը, Բ. Շաքիրը, Ի. Ջանֆոլադը, Նազիմը, ռազմական նախարարության քաղաքական բաժնի փոխտնօրեն Սեյֆին, երկար քննարկումից հետո ընդունվել է «Տասը հրահանգ», որով նախատեսվում էր.

1....Միություն և առաջադիմություն կոմիտեի ծրագրի երրորդ և չորրորդ հոդվածների հիման վրա արգելել բոլոր հայկական միությունները, ձերբակալել այն հայերին, ովքեր զբաղվում են հակակառավարական գործունեությամբ, աքսորել նրանց այնպիսի գավառներ, ինչպիսիք են Բաղդադը կամ Մոսուլը և ոչնչացնել ճանապարհին կամ նշանակված վայրը հասնելուց հետո:

2. Բռնագրավել հայերի զենքերը:

3. Գրգռել մահմեդական հասարակությանը նույն եղանակներով, որոնք կիրառվել են այնպիսի նահանգներում. ինչպիսիք են Վանը, Էրզրումը կամ Ադանան, որպեսզի հայերն իրենց դեմ հարուցեին մահմեդականների ատելությունը և առաջ բերեին կազմակերպված ջարդ...

4. Դա իրականացնելու համար հենվել Էրզրումի, Վանի, Մամուրեթ ուլ Ազիզի և Բիթլիսի նահանգների բնակչության վրա և օգտագործել հասարակական կարգի պահպանության ուժերը (ինչպես օրինակ ոստիկանությունը), որպեսզի այն արտաքուստ կրի ջարդը դադարեցնելու բնույթ և, ընդհակառակը, այդ նույն ուժերին ներգրավել մահմեդականներին ակտիվ օգնություն ցույց տալու այնպիսի նահանգներում, ինչպիսիք են Ադանան, Սըվազը, Բրուսան, Իզմիթը և Իզմիրը:

5. Միջոցառումներ ձեռնարկել ոչնչացնելու մինչև 50 տարեկան բոլոր տղամարդկանց, քահանաներին և ուսուցիչներին: Թույլ տալ օրիորդներին ու երեխաներին ընդունելու իսլամի դավանանքը:

6. Տեղահանել այն ընտանիքներին, որոնց չափահաս անդամներին կհաջողվի փրկվել և այդպիսով խզել նրանց բոլոր կապերը հայրենի երկրի հետ:

7. Վկայակոչելով, որ հայ ծառայողները կարող են լրտեսներ լինել, հեռացնել նրանց բոլոր պաշտոններից և այն հիմնարկներից , որոնք ենթարկվում են պետական վարչությանը:

8. Նպատակահարմար եղանակներով ոչնչացնել բանակում ծառայող բոլոր հայերին՝ այդ գործը հանձնարարելով զինվորականներին:

9. Ամենուրեք գործողություններ սկսել միաժամանակ, այն հաշվով, որ հայերին ժամանակ չտրվի ձեռնարկելու պաշտպանական միջոցներ:

10. Հետևել այս հրահանգի խիստ գաղտնի մնալուն, այն չպետք է հայտնի լինի ոչ ավել, քան 2-3 հոգու[198]:

Ստեղծվեց կոտորածների կազմակերպման մասին իշխանություններին հրահանգավորման համակարգ: Այդ հրահանգները հիմնականում տրվում էին բանավոր, բայց լինում էին դեպքեր,

197 Լեփսիուս Ցո., նշվ. աշխ., էջ 27-30:

198 Beylerian A. Les Grandes Puissances, l'Empire ottoman et les Arme'niens dans les Archives Francaises. 1914-1918, Paris, 1983, pp. XXIX-XXX .

երբ երիտթուրքերի տեղական կոմիտեները ստանում էին նաև հեռագրեր: Դրանցից մի քանիսը պահպանվել են և պատկերացում են տալիս հայկական ցեղասպանության իրականացման կառուցվածքի մասին: Արագ ու գաղտնի կապի համար գործում էր երկու տեսակի ծածկագիր. մեկը կենտրոնից տեղերն ուղարկվող հրահանգների, իսկ մյուսը տեղերից կենտրոն ուղարկվող զեկույցների ու տեղեկագրերի համար: Առաջինում տառի փոխարեն գործածվում էր երեք, իսկ երկրորդում՝ երկու թիվ: Օրինակ, 320, 430, 327 թվակապակցությունը նշանակում էր. «Բնաջնջել Թուրքիայի բոլոր հայերին»:

Այս հրահանգ-վճիռն այն տարիներին քողարկված կամ գաղտնի չէր: Այն երևաց նաև մի քանի երկրների մամուլում ամենատարբեր խորագրերով, ձևակերպումներով և անուններով: Եվ ինչպես դա հաճախ է հանդիպում նման բախտորոշ իրադարձությունների բազմազան ու բազմաբնույթ շրջանառությունը հավաստելու փոխարեն ծնում է ամենատարբեր մեկնաբանություններ, չփոթ ու կեղծարարություն:

«Նախագիծ 10 հոդվածներով» («Տասը հրահանգներ կամ կետեր») երիտթուրքական ծրագրի ընդունման հարցում տարակարծությունները շատ են: Ոմանք դրա ընդունման տարեթիվը համարում են 1915թ. առաջին ամիսները: Մինչդեռ տեղերն ուղարկված փաստաթղթի տակ, որ ստորագրել էին Թալեաթը, Բ. Շաքիրն ու Նազիմը, նշված է 1914թ. փետրվարի 14, այսինքն՝ առաջին աշխարհամարտի սկսվելուց ամիսներ առաջ: Ոմանք դա տարեթվի չփոթ են համարում, սակայն Արա Գրիգորյանն հակառակն է ապացուցում: Նա փաստաթղթի բովանդակությունը վերցրել է Մարկոս Ֆիլ ծածկանունով մի հայից, որը համոզել էր, թե որոշումն ընդունվել էր ցեղասպանությունից 13-15 ամիս առաջ: Հարցը սկզբունքային է. եթե ծրագիրն ընդունվել էր 1914թ. սկզբներին, ապա գերմանացիների կողքին պատերազմի մեջ մտնելը բացատրվում է այդ որոշման իրականացման նկատառումներով, որովհետև չկար մի այլ ծանրակշիռ պատճառ, որ կործանվող կայսրությանը մղեր համաշխարհային պատերազմին մասնակցելուն, քանի որ այդ մասնակցությունը կարող էր հավասարազոր լինել Օսմանյան կայսրության կործանմանը: Դեռ 1910թ. նոյեմբերին Սալոնիկի ֆրանսիացի հյուպատոս Մ. Շուբլիեն գրել էր, որ երիտթուրքերի արմատական խմբակցությունը քարոզում էր «իթիհադին թշնամի բոլոր քրիստոնյաների ոչնչացում»: Աշխարհամարտից դեռ շատ առաջ միայն Վանգենհայմը այն կարծիքին չէր, թե հայերը ողջ մնալու մի հնարավորություն ունեին՝ ընդունել իսլամը: Օրինակ, Սեբաստիայի Շարքիշլա քաղաքում թուրք պատգամավորներից մեկը հայերին առաջարկեց երկընտրանք՝ ընդունել իսլամ կամ բնաջնջվել: 1912թ. զինվորական հրամանատար Սաբիհը Սապահ Գյուլյանին ցույց է տվել հույժ գաղտնի փաստաթղթեր, որոնց վրա եղել է Բ. Դռան կնիքը: Դրանցում կային հանձնարարություններ. «Չխնայել հայերին, ոչ մեկին կենդանի չթողնել, բռնագրավել նրանց ապրանքներն ու ամբողջ ունեցվածքը»: Հնչակների առաջնորդը նաև գրում է, որ մի թուրք ինժեներ՝ Սամին, իրեն «ցույց է տվել հայերի բնաջնջման իթիհադի ծրագրի ճշգրիտ մանրամասները»: Ծրագիրն արժանացել էր երիտթուրքերի պարագլուխների հավանությանը: Թալեաթն ու մյուսներն այն անվանում էին արժանապատիվ՝ «Թուրքիան դանդաղ մեռնելու փոխարեն նախընտրում է արագ, բայց պատվով կործանումը»: Վանգենհայմը 16. 06. 1913-ին հաղորդում է Բեռլին, որ Բալկանյան պատերազմներում Թուրքիայի պարտությունը հետևանք էր այն բանի, որ երիտթուրքերի «որոշ արմատական տարրեր մղվել էին առաջին պլան»: Ով դեմ էր նման կողմնորոշմանը, ենթարկվում էր հալածանքների: Հալեպում ավստրիացի հյուպատոս Սիլվան 15. 12. 1913թ. հայտնել էր, որ «տեղի երիտթուրքերը դժգոհ են վալիից և նրան հանդիմանում են այլազգիների հանդեպ կարեցյալ համակրանքի համար»: 18. 01. 1914թ. Պոմիանկովսկին ամփոփելով Թուրքիայում իր գործակալների հավաքած նյութերը, գրում է Վիեննա, թե հայերի դեմ ինչ-որ բան է նախապատրաստվում: Նա գրում է. «Իմ ֆրանսիացի պաշտոնակիցը կարծում է, որ Հայկական հարցը սրվել է և մոտենում է շտապ լուծմանը»[199]:

Արդեն 1914թ. հունվարի 15-ին Ցագոն արձանագրում է, թե Էրզրումում «ամեն ինչ պատրաստ է կոտորածի համար, որը սկսվելու է Կ. Պոլսից տրված ազդանշանով»: Երիտթուրքերն անգամ մոգոնել էին, թե «ջարդերն ուղղված են այն ուժերի դեմ, ովքեր ուզում են միջամտել բարեփոխումներին»[200]:

Ջ. Բայլրը իր հուշերում գրում է, թե իթիհադի ակումբում գաղտնի հավաքների թեման «ոչ-թուրքերի վերացումն էր»: Այդ գաղտնի ժողովները, համաձայն Հատուկ կազմակերպության պարագլուխներից մեկի՝ Էշրեֆի, կայացել են «1914-ի մայիսին, հունիսին և օգոստոսին»[201]:

199 Գուստ Վ., նշվ. աշխ., էջ 234:
200 Ն. տ.:
201 Ն. տ., էջ 235:

Իսկ նախապատրաստությունները սկսվել էին շատ ավելի վաղ՝ 1913-ին: Թուրքական ժանդարմերիայում ծառայող անգլիացի սպա Ռ. Հոուքերը վկայել է. «Էրզրումի, Բիթլիսի և Վանի վիլայեթների համար նախատեսված 1200 ժանդարմներին արդեն ռազմերթի են հանել» դեպի արևելյան նահանգներ: Հայերն իսկույն հասկացան, որ «նոր ժանդարմներին օգտագործելու են միայն իրենց հայրենակիցների դեմ»[202]:

Դեռ 1914թ. նոյեմբերին Ա. Ցոհանսոնը Մուշից տեղյակ պահեց, որ մութասարիֆ Սերվեթը բացեիբաց հայտարարել էր, թե առաջին իսկ հարմար առիթով հայերը կվերացվեն որպես ցեղ: Իր հուշերում Ցո. Պոմիանկովսկին գրում է. «Կասկած չի հարուցում, որ երիտթուրքական կառավարությունը դեռ մինչև պատերազմն էր որոշել պատեհ առիթն օգտագործել նախկին սուլթաններ սխալները մասամբ շտկելու... Շատ հավանական է, որ այդ նկատառումը կամ մտադրությունը կարևոր ազդեցություն էր ունեցել Բ. Դռան վրա կենտրոնական տերություններին միանալու վճիռ ընդունելու և ռազմական գործողությունները սկսելու ժամկետի որոշման գործում»[203]:

Նույն միտքը հաստատում է նաև բրիտանական մի փաստաթուղթ և թուրք պատգամավորի հավաստիացումը Քյունցլերին:

Հայերի բնաջնջմանը նվիրված երիտթուրքերի մի նիստի մասին վկայել է նաև Զմյուռնիայում բրիտանացի հյուպատոս Պ. Հեդվինսոնը: 1919-ի հունվարին կայացած այդ հավաքի մասին փաստաթղթերը ստացել էր բրիտանացի փոխծովակալ Ս. Սմիթը օսմանյան գաղտնի ծառայության երկրորդ բաժանմունքի պետ Ա. Էսադից, որն անդամակցում էր թուրքական սահմանադրության պաշտպան «Հասարակական անվտանգության տնօրինություն» կազմակերպությանը: Ա. Էսադը վկայել է, որ մինչև զինադադարն են ոչնչացվել բոլոր կարևոր փաստաթղթերը, բայց հայերի բնաջնջմանը վերաբերող հրամանների մի քանի բնագրեր պահպանվել են: Դրանք տրամադրելու համար նա պահանջել է 10 000 բրիտանական ֆունտ: Մինչև Էսադի ձերբակալությունը հաջողվեց նրանից ստանալ չորս խումբ փաստաթուղթ, որոնցից երկուսն Էսադն անձամբ էր արտագրել:

Բնաջնջման ծրագիրը ստորագրել էին իթիհադի հինգ գործիչներ՝ Թալեաթ, Բ. Շաքիր, Մ. Նազիմ, Ի. Ջանփոլադ, գնդապետ Սեյֆի:

Թալեաթը գլխավոր դերակատարն էր, Բ. Շաքիրը իթիհադի կենտկոմի անդամ էր 1912թ.: Նա էր Հատուկ կազմակերպության ղեկավարը: Նազիմը կենտկոմի անդամ էր 1910 թվից: Ջանփոլադը հասարակական անվտանգության տնօրինության ղեկավարն էր, ՆԳ նախարարության քարտուղարը, նրան էր ենթարկվում ժանդարմերիան, նա էր վերահսկում բռնագաղթը, երբ Թալեաթը դարձավ մեծ վեզիր, նա նշանակվեց ՆԳ նախարար: Սեյֆին կայսրության գերագույն շտաբի գաղտնի ծառայության բաժնի պետն էր և ռազմական նախարարության քաղաքական բաժնի տնօրենը: Նա էնվերի տեղակալն էր՝ ղեկավարում էր Հատուկ կազմակերպությունը:

Բնաջնջման ծրագիրն այլ բան չէր, եթե ոչ «Տասը կետը» մասնակի փոփոխություններով: Անգլիացիներն այն անվանեցին «Տասը պատվիրաններ»: Ահա դրանք.

Առաջին. Բոլոր հայկական ընկերությունները փակել և ձերբակալել այն հայերին, ովքեր աշխատում են ղեկավար մարմիններում, հատկապես նրանց, ովքեր դեմ են կառավարության իթիհադի քաղաքականությանը: Նրանց տանել կայսրության խորքերը, օրինակ, Մոսուլի և Բաղդադի վիլայեթներն ու սպանել ճանապարհին և կամ տեղ հասցնելուց հետո:

Երկրորդ. Բռնագրավել հայերի զենքերը:

Երրորդ. Մահմեդականներին մասնակից դարձնել ջարդին: Վանի, Էրզրումի և Աղանայի վիլայեթներում, որտեղ հայերն իրենց կեցվածքով առաջացրել են մահմեդականների թշնամությունը, պետք է կազմակերպվեն ջարդեր, ինչպես ռուսներն արեցին Բաքվում:

Չորրորդ. Էրզրումի, Վանի, Մամուրեթ ուլ Ազիզի վիլայեթներում ջարդերը հանձնարարել բնակչությանը և տպավորություն ստեղծել, թե համապատասխան մարմինները ձգտում են վերականգնել անդորրն ու կարգուկանոնը: Աղանայում, Սըվազում, Բրուսայում, Նիկոմեդիայում և Զմյուռնիայում հայերին պետք է կոտորեին այդ նույն ուժերը:

Հինգերորդ. Ոչնչացնել հիսունից ցածր տարիքի բոլոր տղամարդկանց, հատկապես, մտավորականներին: Աղջիկներին ու երեխաներին մահմեդականացնել:

202 Ն. տ., էջ 235-236:
203 Գուստ Վ., նշվ. աշխ., էջ 237:

Վեցերորդ. Ամբողջությամբ վերացնել այն ընտանիքները, որոնց անդամների թվում կան փախստականներ կամ արտագաղթածներ: Թույլ չտալ, որ նրանք այլևս որևէ կապ ունենան մեր երկրի հետ:

Յոթերորդ. Լրտեսությամբ զբաղվելու պատրվակով նախարարություններից հեռացնել բոլոր հայ պաշտոնատարներին, որոնք պետք է ունենան նույն ճակատագիրը, ինչ ծառայողները:

Ութերորդ. Ռազմական գերատեսչությունները պետք է ձեռնամուխ լինեն օսմանյան բանակում ծառայող բոլոր հայերի վերացմանը:

Իններորդ. Ժամանակ չտալ, որ հայերը իրականացնեն պաշտպանական միջոցառումներ:

Տասներորդ. Բոլոր հրահանգները պահել խիստ գաղտնի[204]:

Անգլիացիների կարծիքով՝ ծրագրի վերջնական տարբերակը հաստատվել է 1914-ի դեկտեմբերին կամ 1915-ի հունվարին: Հայկական վիլայեթների վալիների հետ Բ. Շաքիրը ծրագիրը քննարկել է Էրզրումում 1915-ի փետրվարին:

Վանի իրադարձություններից դեռ շատ առաջ էին տեղերը ցուցումներ ստացել եղեռնի կապակցությամբ: Հ. Քյունցլերը 1915թ. հունվարին Պարսկաստան ուղևորվելու ճանապարհին ծանոթանում է Թուրք սպա Նաֆիսի հետ, որը, գրում է Քյունցլերը, 1908թ. «ողջագուրվել էր հայերի հետ ու եղբայրաբար համբուրվել»: Նա ասել էր, թե այլևս հայերի հետ համակեցությունն անհնար էր, թե «պատերազմը հնարավորություն է տվել նրանցից ազատվելու թեկուզ ոչնչացման կամ աքսորի միջոցով»: Ցու. Լեփսիուսը վկայում է, թե 1915-ի հունվարին Էրզրումում հայերին բարեկամ թուրքերն ասել են, որ իթիհադը կոտորած է ծրագրում: Շատ թուրքեր էլ գտնում էին, թե «Աբդուլ Համիդը սխալ է թույլ տվել, որ հիմնարար ջարդ չի կազմակերպել, ոչ բոլոր հայերին է ոչնչացրել»[205]:

«1915-ի ապրիլի սկզբին,- գրում է չվեդուհի Ալմա Յոհանսոնը,- ոմն Էֆրան բեյ գերմանացի մայոր Լանգեյի, գերմանական և ամերիկյան հյուպատոսների ներկայությամբ բացեիբաց ասել է կառավարության վճռականության մասին՝ վերացնելու հայ ցեղը»:

Կան նման բովանդակությամբ ուրիշ վկայություններ ևս, սակայն դրանց թիվը մեծ չէ: Պատճառներից գլխավորը հետևյալն էր: Եղեռնը նախապատրաստվում էր խիստ գաղտնի: Նախապատրաստության գլխավոր բովանդակությունն իշխանության և իթիհադի տեղական մարմիններին, զորամասերի հրամանատարներին հրահանգավորելն էր, բնաջնջման սխեմայի հետ ծանոթացնելը: Այդ գործում մեծ եռանդ էր դրսևորում Բ. Շաքիրը: Վեհիբի վկայությամբ՝ նա նահանգից նահանգ էր անցնում հրահանգներ տալու համար: «Ես լսել եմ,- ասել է Վեհիբը,- որ Տրապիզոնի և Էրզրումի հայ տարագիրներին նետել են Եփրատ և այդ արել են Շաքիրի հրահանգով»: «Տրապիզոնում տեղահանումը սկսեցին կուսակցության ներկայացուցիչների հետ Շաքիրի անցկացրած գաղտնի խորհրդակցությունից հետո»,- դատարանում ցուցմունք տվեց Զեքի Լևոնը: Լեփսիուսը պարզել էր, որ Էրզրումում նույնպես զորահրամանատարը տեղահանման հրամանը տվել էր Շաքիրի այցից հետո: Ռազմական դատարաններում արձանագրվեց, որ հրահանգավորման մեկնածները հրաժարվել էին գրավոր հրամաններ ցույց տալ, ինչն առաջ էր բերել վեճեր և դժգոհություններ: Դրա պատճառով առանձին տեղերում հրաժարվեցին բանավոր հրահանգները կատարել:

Հալեպի վալի Ջեմալը, որ նախկինում աշխատել էր Կ. Պոլսի համալսարանի ռեկտոր, Լեփսիուսի վկայությամբ բնաջնջման ծրագիրն անվանել էր «ոճրագործ և բոլոր միջոցներով ընդդիմացել իր նահանգում տեղահանում կատարելուն»: Նույն իրողությունը հաստատել է նաև ամերիկուհի Ռ. Էյնսլին: Նա գրում է, որ Ջեմալը մեկնել էր Կ. Պոլիս ու տեղահանման հրամանի նպատակահարմարությունը քննարկել Թալեաթի և Նազիմի հետ: Պատասխանը եղել էր. «Դրանք անհրաժեշտ և օգտակար միջոցառումներ են, որոնք հանգեցնելու են արևելյան հարցի լուծմանը»: Դրանից հետո Ջեմալին աշխատանքի են տեղափոխում Կոնիա: Նա այստեղ նույնպես հրաժարվում է Թալեաթի հրամանները կատարելուց, ինչի համար էլ ազատվում է աշխատանքից:

Սկզբում չափավոր մոտեցում ուներ նաև Էզրումի վալի Թահսինը: Ամերիկյան միսիոներ Ռ. Սթեփլթոնը վկայել է, որ նա «հրաժարվել է որոշ հրամաններ կատարելուց և հայերին հալածելուց, բայց «վերևների ճնշման» տակ ընկրկել է: Նույնը վկայում է նաև Շոյբներ-Ռիխտերը: Թահսին նրան խոստովանել էր, որ կատարվածները «խայտառակություն էին»: Նման վարքագիծ են դրսևորել նաև Մալաթիայի կառավարիչ Նաբին, Յոզղաթի չորս կազմերի կայմակամները և ուրիշներ: Այդպիսիներին պաշտոնանկ էին արել, կամ նրանք վճարել են իրենց կյանքով[206]:

Մասնավորապես ծայրամասային գավառներում բնաջնջման հրամանները տրվում էին նաև բանավոր: Հրամաններն առաքվում էին չորս հասցեներից: Ամենաշատը Թալեաթի ուղարկած ծածկագրերն էին տեղական քաղաքացիական և զինվորական ղեկավարներին, ապա իթիհադի կենտրոնի հեռագրերը կուսակցության տեղական կազմակերպությունների ղեկավարներին, Հատուկ կազմակերպության կենտրոնի հեռագրերը ստորադասներին, Էրզրումի կենտրոնի հեռագրերը մյուս նահանգների իրենց գործընկերներին: Եղել են նաև հորիզոնական կապեր՝ իթիհադ-Հատուկ կազմակերպություն, ռազմական նախարարություն՝ իթիհադի կենտրոն և այլն:

Ռ. Նոգելասը վկայում է, որ երբ Վանա շրջանի մի բնակավայրում հրամայեցի դադարեցնել սպանդը, «չատ զարմացա, երբ թուրքն ասաց, թե ինքը ենթարկվում է միայն վերևի գրավոր հրամանին, չնայած այդ հրամանը ստորագրել էր վալին (Զևդեթը), որով հանձնարարվում էր «ոչնչացնել 12 տարեկանից բարձր բոլոր հայ տղամարդկանց»: Ռ. Սթեփլթոնի վկայությամբ, երբ մի թուրքի դատում էին հայերի հանդեպ գործած ոճրագործությունների համար, նա նամակ է ցույց տալիս դատավորին՝ հրաման էր՝ «վարվել այնպես, ինչպես ես եմ արել»: Իզմիթի մերձակայքում մի գերմանուհի փորձել էր միջամտել, որ դաղարեն ծեծելուց իր հայ ամուսնուն: Խոշտանգողներից մեկը գոռացել էր կնոջ վրա. «Կորիր այստեղից, թե չէ քեզ էլ կծեծեմ»: «Ես գերմանացի եմ»,- բողոքել էր կինը: Ժանդարմը պատասխանել էր. «Ինձ ի՞նչ քո կայսրը, ինձ հրաման է տալիս Թալեաթ բեյը»:

Գործածության մեջ դրվեց հրամանների հետ վարվելու սրամիտ եղանակ: Սպանության հրամանները վերացվում էին հակահրամաններով՝ իբր դրանք կոչված էին պաշտպանելու հայերին ու եվրոպացիներին. այդպիսի հեռագրերն անգամ ներկայացվեցին իբրև արդարանալու վկայություն: Թուրքերն այդ հրամաններն օգտագործում են նաև մեր օրերում Մեծ եղեռնի պատմությունը կեղծելու համար:

Հ. Մորգենթաուի պահանջով Թալեաթն ու Էնվերը «ձևականորեն երաշխավորել են, թե տեղերին հրամաններ են տվել, որ հյուրանոցների և դպրոցների հայերին չտեղահանել: Երբ գերմանական մի գործավար, գրում է դպրոցի տնօրեն Էլլերը, նահանգապետին ցույց է տվել մեր դեսպանի հեռագիրը, վերջինը պատասխանել է, թե ինքը ստացել է միանգամայն հակառակ բովանդակությամբ հրամաններ...»: Նաև տարածված էին հրամանների տարաբնույթ մեկնաբանությունները: Սուլթանի հրամանը պահանջում էր՝ «բոլոր դասալիքներին առանց դատի գնդակահարել»: Անմիջապես ստացվում էր նաև ծածկագիր հեռագիր-պարզաբանում. «Դասալիքները հայերն են»[207]:

Մեծ տեղ էին գրավում դատական ֆարսերը: Մերսինի ամերիկյան հյուպատոս Նաթանը 1915թ. հոկտեմբերի 6-ին տեղեկացնում է. «Սուլթանական կարևոր հանձնաժողով է եկել ուսումնասիրելու տեղի գործիչների չարաշահումները, մի քանի եվրոպացի դիտորդներ հավատացին այդ խաբեությանը»: «Պետք է նաև ասել,-Ադանայից գրում է անգլիացի հոգևորական Ու. Զամբերսը,- իբր թե մի մահմեդական մահապատժի է ենթարկվել տեղահանվող քրիստոնյաներին կողոպտելու համար»: Եվրոպացիներին խաբելը օսմանյան ավանդական գործելակերպ էր: Հոհենլոհե-Լանգենբուրգը 07. 09. 1915-ին հայտնում է հյուպատոսներին. «Բ. Դուռը նահանգներին տեղյակ է պահել, թե հայերի հանդեպ բռնությունները հետապնդվում են քրեորեն...»: Ադանայի հյուպատոս Օ. Բուգեն դա համարեց «անպատկառ խաբեություն», քանի որ մի ուրիշ հրահանգով այդ կարգադրությունը չեղյալ էր հայտարարվում և պաշտոնատարները գործում էին համաձայն երկրորդ հրահանգի: Օրենքների ու կարգադրությունների հետ «նման խաղի» մասին վկայել է նաև Տրապիզոնում Իտալիայի հյուպատոս Ջ. Գորինին[208]:

Բիթլիսի հայության ջարդարար Աբդուլհադ Նուրին Հալեպի վալի նշանակվելու կապակցությամբ զրույց է ունեցել Թալեաթի հետ: Հրեշը նրան տարել էր պատուհանի մոտ ու ասել. «Այդ անիծյալ հայերին այլևս Թուրքիայում տեսնել չեմ ուզում»: Ա. Նուրին նաև Բիթլիսի կայմակամ Իհսանին է ասել. «Ես անձամբ Թալեաթից եմ ստացել բնաջնջման հրամանը»:

---

204 Գուստ Վ., նշվ. աշխ., էջ 203:
205 Ն. տ., էջ 204:

206 Գուստ Վ. նշվ. աշխ., էջ 205-206:
207 Ն. տ., էջ 206-207:
208 Ն. տ., էջ 208-209:

Երիտթուրք պարագլուխներն ամեն կերպ խթանում էին մահմեդական քաղաքացիական բնակչության մասնակցությունը ջարդերին, նրա մեղսակցությունն ապահովելու համար: «Փաստաթղթերի վերլուծությունը վկայում է,- հաստատում է բրիտանական գլխավոր կոմիսար Դ. Քոլթորփը,- որ ուժերը խնայելու համար թուրքերն ըստ տարածաշրջանների տարբերակում էին, թե որտեղ կարող են թողնել, որ բնակչությունն առանց օգնության իրականացնի կոտորածը, և որտեղ էր անհրաժեշտ ռազմական ներկայություն, նկատի ունենալով, որ բնակչությունը չէր դրսևորի անհրաժեշտ վճռականություն»:

Ջարդերին վերաբերող պաշտոնական հեռագրերում օգտագործվում էին բառակապակցություններ, որոնք օգնում էին խուսանավելու: Օրինակ, հայերին անվանում էին «հայտնի անձավորություններ», բնաջնջումը՝ «գործ», սպանությունը՝ «հայտնի միջոցներ» կամ «իսկական նպատակներ», իսկ բնաջնջման ճամբարները՝ «առաքման տեղ», «աքսորավայր», «հարմար տեղեր»: Կան նաև ոչ քիչ թվով փաստեր, երբ ոչնչացման հրամանները տրվել են բացահայտ: Օրինակ, Թալեաթի հետևյալ հրամանը. «Տեղահանման նպատակը բնաջնջումն է»: Բողազյանի ժանդարմերիայի հրամանատար Հուլուսին պարզաբանել է. «Մեր շրջանի որոշակի թվով հայեր տեղահանվեցին, այսինքն՝ կոտորվեցին»: 1915թ. դեկտեմբերի 6-ին Թալեաթը հեռագրել էր Հալեպ. «Թաքուն ոչնչացրեք արևելյան գավառների բոլոր հայերին...», նաև Մալաթիայի իթիհադի ակումբին. «Ոչնչացրեք հայերին... պատասխանատվությունը վերցնում եմ իմ վրա»: Թալեաթի ևս մի հեռագիր վալիներին. «Ոչնչացրեք բոլոր հայերին առանց կարեկցանքի՝ սկսած մեկ ամսականից մինչև 80 տարեկանը: Հետևեցեք, որ դա չկատարվի քաղաքում ու բնակչության աչքի առաջ»[209]:

Մեծ վեզիր Սաիդ Հալիմի հրամանները վերածվել էին «սպանության մանդատների»: Գերմանացիներն այդ առթիվ գրում են. «Տեղահանությունն ու բնաջնջումը թուրքերեն նույն նշանակությունն ունեին» (Հ. Բերգֆելդ): Ցոզղաթի դատարանը պարզեց, որ «տեղահանություն» բառը հանդիսանում էր «բնաջնջման» և «կոտորածի» ծածկագրություն: «Թաքթիլը» թարգմանվում էր «սոքը-ըրմ», որ նշանակում էր բնաջնջում: Բ. Շաքիրն ու Նազիմը հրահանգում էին. «Հայերին սպանելու հրամանները կատարեք կետ առ կետ», նաև հետաքրքրվում էին. «Արդյոք կատարե՞լ եք հայերին կոտորելու հրամանները»: Շաքիրը նաև թելադրել է բնաջնջման կերպը. «Այլևս ոչ մի հայ չպետք է գոյություն ունենա, մեծերին խեղդել, գեղեցկուհիներին՝ ընտրել, մյուսներին՝ տեղահանել»: Թալեաթը պահանջում էր. «չխնայել անգամ օրորոցի երեխաներին»: «Զբացառել կանանց, երեխաներին և հիվանդներին... առանց խղճի ձայնին անսալու վերջ տալ նրանց գոյությանը»: Նա հրահանգում էր. «Քանի որ կառավարությունը երեխաների գոյությունը համարում է վտանգավոր, նրանց կյանքը երկարացնելու ժամանակը չէ»: Թալեաթը պահանջում էր բացառություն կազմել միայն այն որբերին, «ովքեր չեն կարողանալու հիշել սարսափներն ու իրենց ծնողներին»[210]:

Թալեաթը հետամուտ էր, որ ոչ մի հայ չփրկվի: «Մենք տեղեկացանք, որ նրանց (հայերին) ուղարկել են Սիրիա կամ դեպի Երուսաղեմ,- ծածկագրել է նա 1915թ. դեկտեմբերի 14-ին,- նման հանդուժողականությունն անուղղելի սխալ է: Աքսորավայրը ոչնչացում է»:

Հայ երեխաներին սառեցնելու միջոցով ոչնչացնելու համար Թալեաթը պահանջում էր նրանց հետ բերել Սըվազի բարձունքները: Պաշտոնատարներին հասկացնում էին, որ եթե «որբերին այդ ցրտին ուղարկեին նշված վայրերը, ապահովված կլիներ նրանց հավերժական քունը»: «Այդ տեղափոխությունը,- նկատում է Ն. Զեֆան,- նպատակ ուներ սպանելու երեխաներին»: Երբ իմացավ, որ հայ որբերին տեղական իշխանությունները կերակրել էին, Թալեաթը կատաղեց: Ռազմական դատարանում պարզվեց, որ Տրապիզոնում գնդապետ Մուհթարը հրաման էր ստացել տարագիրների մի քարավան ծովով «ուղարկել» երկրի խորքերը՝ Մոսուլ: Գնդապետը հասկացել է, որ իրեն հանձնարարվում էր ջրախեղդ անել հայերին: Երբ Աբդուլհադ Նուրին Դեր Զորի կառավարիչ Ալի Սուարին հանձնարարում է. «Հազարավոր հայերի Ռաս ուլ Այնում թողնելը կառավարության սուրբ նպատակին դեմ է: Քշեցեք նրանց», ստանում է պատասխան. «Եթե նպատակը նրանց սպանելն է, ապա ես դա չեմ կարող անել և ոչ էլ թույլատրել»[211]:

Մ. Նազիմը հայտարարեց. «Հույժ անհրաժեշտ է հայ ժողովրդին ամբողջությամբ ոչնչացնելը, որ երկրագնդի վրա ոչ մի հայ չմնա և վերանա Հայաստան անունն իսկ: Մենք հիմա պատերազմում ենք և չկա ավելի բարենպաստ հանգամանք: Մեծ տերությունների միջամտությունն ու մամուլի բողոքներն ուշադրության չեն արժանանա. եթե անգամ այդ պատահի, ապա կատարված փաստի առաջ կլինեն»[212]:

209 Գուստ Վ., նշվ. աշխ., էջ 210:
210 Ն. տ., էջ, էջ 211-212:
211 Ն. տ., էջ, էջ 212-213:
212 Ն. տ., էջ 215-216:

1915թ. մարտի 3-ին իթիհադի կենտրոնը Ադանայի կազմակերպության ղեկավար Ջեմալին գրում է. «Կենտրոնական կոմիտեն որոշել է հայրենիքն ազատել այդ անիծյալ ցեղի հավակնություններից և իր հայրենասեր ուսերին է առել խայտառակության պատասխանատվությունը...»: «Կենտրոնական կոմիտեն որոշել է վերացնել Թուրքիայում բնակվող բոլոր հայերին՝ ոչ ոքի կենդանի չթողնել և կառավարությանն էլ օժտել է համապատասխան արտակարգ իրավունքներով: Կառավարությունը նահանգապետերին ու բանակի հրամանատարներին տալու է ջարդերը կազմակերպելու անհրաժեշտ հրահանգներ: Միություն և առաջադիմություն կոմիտեի բոլոր պատվիրակները, անկախ զբաղեցրած պաշտոնից, պետք է հետամուտ լինեն այդ նախագծի իրագործմանը: Ձենք հանդուրժի, որ որևէ հայ օգնություն և պաշտպանություն ստանա»: Ապրիլի 7-ին կենտկոմը հաստատում է ոչնչացման որոշումը. «... Արմատախիլ անել և իսպառ ոչնչացնել այն ուժերին, ովքեր տարիներ շարունակ կռվել են մեր դեմ: Կենտկոմը, ցավոք, ստիպված է դիմելու չափազանց արյունոտ միջոցների... Կենտրոնական կոմիտեն ուրիշ ուղի չի տեսնում, եթե ձգտում է իր գոյությունը հարատևել: Քանի դեռ հայտնի անձանց դեմ ձեռնարկումներն արդյունք չեն տվել, անխմաստ է հոգալ մյուսների մասին»[213]:

Վերջապես կան օտարերկրացիների վկայությունները: Վանգենհայմ. 07. 06. 1915թ. «Թալեաթը Մորտմանին խոստովանել է, թե ցանկանում են օգտագործել համաշխարհային պատերազմը (կայսրության) նեղքին թշնամիներից (քրիստոնյաներից) երկիրը հիմնավորապես մաքրելու համար»[214]: Մորգենթաու. Թալեաթն «ինձ պատմում էր, որ կոմիտեն այդ գործը քննարկել է բոլոր մանրամասներով...Տեղահանությունները եղել են երկար ու մանրաման խորհրդածությունների արդյունք... Մենք անհերթ որոշում ենք կայացրել. մինչև պատերազմի ավարտը նրանց (քրիստոնյաներին) վնասազերծելու... Մենք այլևս ոչ մի հայ չենք ուզում ունենալ Անատոլիայում»[215]:

218-219 Ա. Ռիզա. «Հայերի զանգվածային կոտորածը պաշտոնապես վավերացված ոճրագործություն էր»[216]:

Այմա Ցոհանսոնը դեռ 1914թ. նոյեմբերին Մուշից հայտնում էր, որ մութասարիֆ Սերվեթը բացեիբաց հայտարարել էր, թե առաջին իսկ հարմար պահին հայերը կվերացվեն[217]:

Սխալվում է Վ. Գուստը, երբ գրում է, թե «Տասը պատվիրանները» պատրաստվել էին ոչ թե 1914թ. փետրվարին, ինչպես նշված է փաստաթղթում, այլ 1915-ին: Արդեն ասվել է, որ այդ պատվիրանների մշակումը սկսվել էր դեռևս 1910-ին և հաստատվել 1913-ին: Արա Գրիգորյանը 1981թ. Ֆրանսիայում հրատարակեց Թեհլիրյանի դատավարության նյութերը՝ "Justicler du Genocide Armenien" խորագրով, որում զետեղված են մեծ թվով վավերագրեր: Վերը նշված փաստաթուղթը վերցրել էր Շտուտգարտում բնակվող մի հայից Մարկուս Ֆիլ ծածկանունով: Նա պնդել է, որ պատվիրանները հաստատվել են ցեղասպանությունից 13 կամ 15 ամիս առաջ: Եթե ընդունենք, որ Մեծ եղեռնի սկիզբը 1915թ. ապրիլն էր, ապա այդ փաստաթուղթն հաստատվել էր 1914թ. փետրվար-մարտին, իսկ եթե փետրվարին, ապա 1913թ. ապրիլ-մայիսին: Երկու դեպքում էլ այն ընդունվել է մինչև աշխարհամարտի սկսվելը:

Մի բան անվիճելի է, որ Սալոնիկի 1910թ. համաժողովի դռնփակ նիստում քննարկվել էր «թուրքական հպատակների լրիվ օսմանացման հարցը»: Այդ կապակցությամբ Անգլիայի դեսպան Ջ. Լաուֆերը գրում է. «Օսմանացում ասելով նրանք, իհարկե, նկատի ունեին «թուրքացումը», և նրանց արդի քաղաքականությունն էլ կուսակցության ոչ թուրք անդամներին թուրքական սանդի մեջ տորոելն է»[218]:

Սալոնիկում ֆրանսիական հյուպատոս Մ. Շուլիեն 1910թ. նոյեմբերին վկայել էր, որ երիտթուրքերի մի արմատական խմբակցություն քննարկում էր «թշնամի բոլոր քրիստոնյաների ոչնչացման» հարցը: Քննարկման մասնակից մի թուրք էրզրումի ֆրանսիական հյուպատոսության աշխատակցին ասել էր, որ այդ ծրագրի բնույթից «իր գլխի մազերը բիզ-բիզ են կանգնել»[219]:

Մեկ տարի անց, գրում է Տատրյանը, Սեբաստիայի Շարքիշլա քաղաքում մի թուրք պատգամավոր հայերից պահանջել է ընդունել իսլամ կամ ոչնչացվել: Հայերին որպես ազգ անհետացնելու միջոցներից մեկը համարվում էր իսլամացումը: Աշխարհամարտի սկսվելուց դեռ շատ առաջ Վանգենհայմը ասել էր, թե հայերը կենդանի մնալու մի միջոց ունեն՝ ընդունել իսլամ: Ս. Սապահ Գյուլյանը գրում է,

213 Գուստ Վ., էջ 216:
214 Ն. տ., էջ 218:
215 Ն. տ., էջ:
216 Ն. տ., էջ 220:
217 Ն. տ., էջ, 231:
218 Ն. տ., էջ 232:
219 Ն. տ., էջ 233:

թե Կեսրիայի կառավարչի տեղակալը 1911-ի ամռանը նախազգուշացրել էր հայ հեղափոխականներին. «Եթե այս երիտթուրքերը մնան իշխանության գլուխ, հայերին կպատահեն նոր ու ավելի մեծ աղետներ»: Սապահ Գյուլյանը եզրահանգում է՝ ինչ-որ բան որոշվել էրգքանի որ այդ «նախազգուշացումը անձնական կարծիք չէր, այլ ելնում էր ստացված որոշակի տեղեկատվությունից, իսկ վերջինները հիմնված էին ձեռքի տակ եղած փաստաթղթերի վրա, որոնց հավաստիությունը նա երաշխավորում էր»:

1912թ. Նիքսարի կայմակամ Իհսանը զինվորական հրամանատար Սաբիհին խիստ գաղտնի փաստաթղթեր էր ցույց տվել, որոնց վրա կար իթիհադի կենտրոնական ղեկավարության կամ իթիհադի կառավարության կնիքը: Դրանցից մեկում ասված էր. «Ջինայել հայերին, ոչ մեկին կենդանի չթողնել, բռնագրավել նրանց ապրանքներն ու ամբողջ ունեցվածքը»: Կայմակամը նաև ասել էր. «Իթիհադի ղեկավարների սպանությունը հայերի ազգային պարտքն է»[220]:

1912-ին սամսոնցի մի թուրք Ս. Սապահ Գյուլյանին «ցույց է տվել հայերի բնաջնջման իթիհադի ծրագրի ճշգրիտ մանրամասները»: Ընդդիմադիրների ղեկավար Դ. Սալիհը «պատվով երդվել և հայտարարել է, որ իթիհադի ղեկավար օղակները վճռել են հայերին բնաջնջել,եթե անգամ այդ ձեռնարկը Թուրքահայաստանում տարածքներ կորցնելու հետևանք ունենար»[221]:

Ծրագիրն արժանացել էր իթիհադի գրեթե բոլոր առաջնորդների հավանությանը: Այդ իրողությունը հաստատել էր նաև Վանգենհայմը, ավելացնելով Թալեաթի հանրահայտ խոսքերը. «Դանդաղ մեռնելու փոխարեն Թուրքիան նախընտրում է արագ, բայց պատվով կործանումը»: 1913թ. հունիսի 16-ի տեղեկագրում դեսպանը բնաջնջման ծրագրի վաղ հանդես գալու պատճառ համարում է նաև այն, որ Բալկանյան պատերազմում պարտության պատճառով երիտթուրքերի «որոշ արմատական տարրեր մղվեցին առաջին պլան»: Բնական է, որ նման մթնոլորտում ձևավորվում էր հակակրանք նրանց հանդեպ, ովքեր դեմ էին «արմատական լուծումներին»: Հալեպում Ավստրիայի գլխավոր հյուպատոս Ա. Դանդինի դե Սիլվան 1913-ի դեկտեմբերի 15-ին ծածկագրում է, թե «... այստեղի երիտթուրքերը դժգոհ են վալիից (Զեմալից) և նրան հանդուրժում են օտարների հանդեպ կարծեցյալ համակրանքի համար»: Զեմալը հայտարարել է. «Թուրքիայի կացությունը նույնիսկ Բալկանյան պատերազմի ընթացքում այնքան անբարենպաստ վիճակում չի եղել, որքան հիմա...»: Պոմիանկովսկին նույնպես անհանգստացած 18. 01. 1914-ին հայտնում է Վիեննա, թե հայերի դեմ ինչ-որ բան է նախատեսվում: «Իմ ֆրանսիացի պաշտոնակիցը կարծում է, որ Հայկական հարցը սրվել է և գնում է դեպի արագ լուծում»: Պետերբուրգում Գերմանիայի դեսպանը հայտնում էր, թե իմացել է, որ «ամեն ինչ պատրաստ է կոտորածի համար, որը պետք է սկսվի Կ. Պոլսից տրված ազդանշանով», իթիհադը նույնիսկ ստորագրություններ է հավաքում բողոքի նոտաների համար, թե «ջարդերն ուղղված են այն ուժերի դեմ, ովքեր ձգտում են միջամտել բարենորոգումներին»[222]:

Իսկ բարենորոգումները Մակեդոնիայում հանգեցրեցին «Թուրքերի նախահայրենիք» համարվող այդ երկրի կորստին, նույն բանը կարող է կատարվել Հայաստանի հետ: Ջ. Բայարն իր հուշագրություններում պատմում է պաշտպանության նախարարությունում կայացած քննարկումների մասին: «Գաղտնի հավաքների թեման հայերի վերացումն էր, որոնք գտնվում էին ռազմավարական կարևոր կետերում և ենթակա էին օտար բացասական ազդեցություններին»: Հատուկ կազմակերպության պարագլուխներից Է. Քուչրուքաշի հուշագրերում ասված է, որ այդ հավաքները տեղի են ունեցել «1914թ. մայիս-օգոստոսին», և քննարկել են Թուրքիայի կողմնորոշումը պատերազմին մասնակցելու հարցում: Դեռ ավելին, վերանայվեց ժանդարմերիայի տեղաբաշխումը: Անգլիացի սպա Ռ. Հոուքերը վկայել է, թե «Էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայեթների համար նախատեսված 1200 ժանդարմներին ռազմերթի են հանել: Ավելի քան 400-ն արդեն ժամանել է՝ բաշխվել նահանգներում», որտեղ նրանք երկու տարի անց կոտորելու էին հայերին[223]:

Սրանից տասը օր հետո, 29. 12. 1913թ. Էրզրումում Գերմանիայի հյուպատոս Է. Անդերսը հայտնում է. «Հայերը պնդում են, որ նոր ժանդարմներին օգտագործելու են միայն իրենց հայրենակիցների դեմ»[224]:

Նույն ժամանակ, նույն նահանգներում Բ. Շաքիրի օգնական Ֆ. Հիլմին կազմակերպում էր թեչքիլաթի ջոկատներ ու դրանք համալրում մարդասպաններով ու քրդերով:

220 Գուստ Վ. նշվ. աշխ., էջ 233:
221 Ն. տ.:
222 Ն. տ, էջ 234 :
223 Ն. տ., էջ 235-236:
224 Տատրեան Վ., Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներում, Վատերտովե, 1995, էջ 131-132:

Վ. Տատրյանը գրում է. «Կառավարական ղեկը 1913թ. հունվարին ամբողջովին իր ձեռքն առնելուց հետոյ, սաղմնային վիճակին մեջ գտնուող հակահայկական իր տրամադրութիւնները հարաճուն կերպով սկսան բիւրեղանալ և կառավարութեան հունին մեջ արմատավորվիլ»[225]:

«...Իթիհադականները ցանկանում էին խպառ ջնջել հայերին,- գրում է Ա. Ռեֆիկը,- և այս ձևով մեջտեղից հանել վեց վիլայեթների հարցը: Ենթադրելով, թե օր օրի մոտենում է հայերի փրկության պահը, Անատոլիայի արևելյան սահմաններում կատարվող շուտափույթ ձեռնարկումները վերաճեցին կոտորածների: Հայ, թուրք՝ հայրենիքի հազարավոր զավակները ճզմվեցին կոմիտեի ոտքերի տակ»[226]:

1914թ. նոյեմբերի 8-ին Տրապիզոնում Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Է. Քվիատովսկին գրում է. «Այստեղ, Ռիզե քաղաքում զինվում են շատ հրոսակներ՝ մի քանի հարյուր մարդ Կովկասում խռովություններ բարձրացնելու համար ... մասնակիցներին ապահովում են ձեռքի նռնակներով. այդ գործողություններին հետևում էին գերմանացի սպաները. Ռիզեում անգամ բանտարկյալներին էին ընդունում զորագնդերը»: Նաև հայտնում է, որ հրոսակախմբերում ընդգրկված է 169 կալանավոր: Նոյեմբերի 10-ին հյուպատոսը տեղեկագրեց. «...Գնդերն ուղարկվեցին երկրի խորքերը. նույն օրն այստեղ ափ իջավ 1000 հոգի: Ճանապարհը կշարունակեն գնացքով. մյուս ծովափնյա բնակավայրերում նույնպես ստեղծվել են հրոսակախմբեր Կովկասում գործելու համար»[227]:

Սակայն այդ ջոկատներն այդպես էլ Կովկաս չհասան և օգտագործվեցին «ներքին կարիքների համար»:

Ց. Պոմիանկովսկու խոսքերով. «Կասկած չի հարուցում, որ երիտթուրքական կառավարությունը դեռ մինչև պատերազմն էր որոշել հարմար առիթն օգտագործել նախկին սուլթանների սխալները մասամբ չտկելու համար... Շատ հավանական է նաև, որ այդ նկատառումը կամ մտադրությունը կարևոր դեր խաղացին Բ. Դռան՝ կենտրոնի պետություններին միանալու վճռի և ռազմական գործողությունների ժամկետները որոշելու գործում»: Մի թուրք պատգամավոր Քյունցլերին ասել է, թե հայերի վերացման հարցը որոշված է եղել մինչև պատերազմը: Այն, ինչ կատարվում էր Արևմտյան Հայաստանում, մասնավորապես, 1914թ. երկրորդ կեսին, հաստատում է այդ կարծիքը: Օրինակ, 1914թ. նոյեմբերին իշխանությունները նահանգի գյուղական բնակչությունից պահանջեցին տեղափոխվել քաղաք[228]:

Իսկ Տարոնի և բաղեշի հայերին աշխատում էին կուտակել քրդական գյուղերում և այդ արվում էր անլուր վայրագությունների ուղեկցությամբ:

Հայ ժողովրդի բնաջնջման երիտթուրքական ծրագրի իրագործումը ենթադրում էր հետևյալ խնդիրների լուծման ապահովում՝ հայերին զրկել կայսրությունում տեղաշարժվելու իրավունքից, նույնիսկ հարևան գյուղ կամ քաղաք գնալ չէր կարելի: Անգամ կարգախոս ձևակերպեցին. «Ով հայ է, թող իր ապրած տեղը մնա»: Արգելել զանգվածների վրա ազդեցություն ունեցող կրոնական թե աշխարհիկ, կուսակցական թե անկուսակցական, ազատական թե պահպանողական միություններն ու կազմակերպությունները, դրանց անդամներին բանտարկելով չեզոքացնել: Հայերից խլել բոլոր զենքերը, անգամ խոհանոցի դանակները: Աքսորի պատրվակով հայերին տեղահանել և կոտորել, չխնայել անգամ օրորոցի երեխաներին, քաղցի, չարչարանքի, ծարավի միջոցով մեռցնել անապատում: Թույլատրել, որպեսզի գեղեցիկ կանանց ու աղջիկներին հարեմներ տանեն: Մերժել իսլամանալու խնդրանքները: Հայերի ողջ ունեցվածքն ու հարստությունը հաշվառել էնվալ մաթուկե հանձնաժողովի միջոցով ու պետականացնել: Ոստիկանությունը կազմելու էր սպանդ տարվող հայերի ցուցակները և դրանց մի օրինակն ուղարկելու էր ՆԳ նախարարություն, ինչը հնարավորություն կտար տեղյակ լինելու, թե որ օրը որքան հայ էր սպանվել: Այս ծրագիրն իրականացնելու համար նախատեսվում էր՝ բանտերում գտնվող մարդասպաններին ու ոճրագործներին ներում շնորհել և նրանցից կազմել հրոսակային (չեթեական) խմբեր բանակային սպաների հրամանատարությամբ և դրանց միջոցով իրականացնել հայերի ջարդերը: Կենտրոնի հայաջինջ հրամանները չկատարող պաշտոնատարներն անմիջապես աշխատանքից ազատվելու էին: Ծրագրի իրականացման միջոցառումները ղեկավարելու էին իթիհադի տեղական կոմիտեները:

Բ. Դուռը խորհրդարան մտցրեց օրենքի նախագիծ՝ հայերին տեղահանելու և նրանց անշարժ և շարժական ունեցվածքը պետականացնելու մասին: Նախագիծն ընդունվեց առաջին ընթերցմամբ: Զանկրրի աքսորականներն այս օրինագիծն անվանեցին «Հայ ազգի տապանագիր»:

225 Տատրեան Վ., Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներում, Վատերտովե, 1995, էջ 131-132:
226 Ռեֆիկ Ա., Երկու կոմիտե, երկու ոճիր, Ե., 1997, էջ 33:
227 Գուստ Վ. նշվ. աշխ., էջ 236-237:
228 «Նոր կեանք», 25. 01. 1919:

Ցեղասպան միջոցառումների գործադրումը սկսվեց անմիջապես: Շեյխ ուլ իսլամը ֆետվա հրապարակեց, որով հայերը հռչակվում էին իսլամական կրոնի և հայրենիքի թշնամիներ: Թալեաթը պաշտոնանկ արեց ջարդերին ու տեղահանությանը հավանություն չտվող վալիներին, մութասարիֆներին և մյուս պաշտոնատարներին (օրինակ՝ Էնկյուրիի, Ցոզղատի, Երզնկայի): 1915թ. մարտի 28-ին Կ. Պոլիս է կանչվում Դիարբեքիրի կուսակալ Համիդը և «քիչ եռանդ ցուցաբերելու համար» պաշտոնանկ է արվում: Նոր վալի է նշանակվում Մոսուլում արյունարբու գործունեությամբ հայտնի դարձած, ծագումով չերքեզ Ռեշիդը, որն իր հետ Դիարբեքիր տարավ մի քանի տասնյակ ավազակաբարո պաշտոնատարներ: Ադանայից Դիարբեքիր տեղափոխվեց գիշատիչ կոմիսար Մուհամեդ բեյը:

Հայերի բռնագաղթի կազմակերպումը թուրքական իշխանությունների կողմից մշակվել էր բոլոր մանրամասներով, տեսական ժամանակում: «Պետք չէ մտածել, որ բռնագաղթի մասին որոշումը ընդունվեց շուտափույթ կերպով,- հետագայում խոստովանեց Թալեաթը,- այն արդյունք էր երկար ու լուրջ քննարկումների»[229]:

Օտոմոնյան բանկի Տրապիզոնի բաժանմունքի ղեկավարը հայտնում էր, որ «հայ ազգության պատկանող 500 զինվոր զինաթափվել, բռնագաղթվել է ու սպանվել ճանապարհին»: Սկսվեցին զանգվածային տեղահանության և սպանության գործողություններ: «Եվ Դեգերմեն գետի ջրերն ամեն օր քշում, տանում էին ծով բացարձակ մերկ կանանց դիակներ, որոնց մարմինները անդամահատված էին, իսկ կրծքերը կտրված»[230]:

Գերմանացի կապիտան Ռիտմայստերը Դիարբեքիրից Ուրֆա մեկնելիս ճանապարհին տեսել է անհամար չթաղված դիակներ: Դրանք բանվորական գումարտակների անզեն հայ զինվորներն էին, որոնց «կոկորդները կտրված էին»: Այս ցուցմունքը հաստատվում է նաև Ռեուպերի վկայությամբ[231]:

Շոյլեր Ռիխտերը 1916թ. դեկտեմբերի 4-ին գրում է Բեռլին, որ Հալիլը (Կուտ)՝ Էնվերի հորեղբայրը հրամայեց «մորթել հայկական գումարտակները»[232]:

Նման վկայություն ունի նաև Տրապիզոնում ԱՄՆ հյուպատոս Հեյսլերը: Նույն Հալիլի հրամանատարության տակ ծառայող թուրք սպան վկայել է, որ «մեր կորպուսի բոլոր հայ ապաներն ու զինվորները Հալիլի հրամանով մորթվել են»: Հետագայում «Հալիլն առանց խղճի խայթի մորթեց նաև ամբողջ հայ բնակչությանը (տղամարդ, կին, երեխա) Բիթլիսի, Մուշի և Բայազետի շրջաններում: Իմ վաշտը նույնպես ստացավ նման հրաման: Զոհերից շատերին թաղեցինք կենդանի հառուզ փորված հորերում»[233]:

Նման վկայություններ կան նաև Տրապիզոնում ավստրիացի և ամերիկացի հյուպատոսների, գերմանացի կապիտանի զեկուցագրերում: «Գեներալ Հալիլի հրամանով մի անգամ 800, իսկ մյուս անգամ 1000 հայ զինվոր, սպա և բժիշկ, ովքեր ծառայում էին նրա էքսպեդիցիոն կորպուսում, զինաթափ արվեցին ու սպանվեցին նույն կորպուսի թուրք զինվորների կողմից»[234]: Պատերազմից հետո գրած իր հուշագրություններում Հալիլը հպարտանում է, թե սպանել է շուրջ 300 000 հայ: Նրան են պատկանում նաև հետևյալ խոսքերը. «Ես ձգտում էի երկրի երեսից սրբել հայ ժողովրդին՝ մինչև վերջին մարդը»:

Գրում է Լեփսիուսը. «Բոլոր երիտասարդ կանանց և մանավանդ աղջիկներին, ովքեր մնացել էին գյուղերում, առևանգեցին և հարկադրեցին ընդունել իսլամություն: Հունվարի կեսերին, երբ ռուսները վերադարձան, մահմեդականները քրիստոնյաների դեմ գործած չարիքների պատճառով վախեցան պատժվելուց... թողեցին գյուղերը և ընտանիքներով հաստատվեցին Մանազկերտի և Բուլանըխի հայկական գյուղերում: Փախստականները հաշվում էին շուրջ 2000 ընտանիք»[235]:

Զանկըրիի մութասարիֆ Ասաֆը տրտնջում էր. «Հայերու հանդեպ կառավարական քաղաքականութիւնն աղեկ չեմ տեսներ, դարձեալ բաներ մը պիտի պատահին, նայեցէք, որ ժամ առաջ դուք ձեզ Պոլիս նետէք, նոր փոթորիկներու նշաններ կը տեսնեմ»: Նա Քելեքյանին կարդաց Թալեաթի հեռագիրը. «Ուղղակի հեռագրեք մեզ՝ որչափ հայ արդեն մեռած է և որչափ դեռ ողջ մնացած է» ու շարունակեց. «Պոլսում նստողներն ու հրամայողները մեզի ամեն ինչ ընել տալե վերջ, երբ օր մը նեղը մնան և պատժի օրը գա, կը ձգեն, կը փախչեն և զմեզ՝ ստորադաս պաշտոնեաներուս, ոտքի ներքև կը թողուն: Ես 1909-ին Օսմանիեի կառավարիչ էի, երբ Ադանայի հայերի կոտորածը պատահեցավ, քիչ մնաց ինձ կախաղանի պիտի դատապարտեին, հազիվ օձիքս ազատեցի»[236]:

229 Le crime du silence. Le Genocide des Armeniens, Paris, 1984, p. 16.

230 Viscount Bryce, Toynbee A. The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916, London, 1916, p. 293.

231 AA Turkei 183/44, A24663, U3. 183/41, A2888, N1, IV (R14090).

232 AA Turkei 183/45, A 33457(R14094).

233 "Les massocres d1Armenie d'apres un temwin oculaire", տե՛ս "La Voix de l'Armenie", Paris, 15. 12. 1918, p. 901.

234 Чалхушян Гр. Красная книга, Ростов на Доны, 1919, стр. 43-44.

235 Լեփսիուս Յո., նշվ. աշխ., էջ 126:

236 Ն. տ., էջ 6-8:

Թուրքիա մտնողներն ու դուրս եկողները խստագույնս խուզարկվում էին: Մաքսատներում նրանցից խլվում էին թղթի վերջին, նույնիսկ չգրված կտորները: Ով թուրքերի պաշտոնական քաղաքականության դեմ նյութեր էր հրապարակում, դաժանորեն պատժվում էր: Այդպիսիներն անվտանգ չէին նաև արտասահմանում[237]:

Պանթուրքական ծրագիրը դրվեց Վանի դեպքերից դեռ շատ օրեր առաջ Կիլիկիայի և Էրզրումի վիլայեթներից արտաքսումների ու զանգվածային ձերբակալությունների հիմքում, նույն այդ ծրագիրը Հյուսիսային Պարսկաստանում 1914-15 թվականների ձմռանն առաջնորդեց թուրքական ու քրդական ջոկատներին Ուրմիայի և Սալմաստի խաղաղ սիրիացի և հայ բնակչության դեմ: Այս ծրագրով համընդհանուր հալածանք սկսվեց քրիստոնյաների նկատմամբ Դիարբեքիրի և Մոսուլի վիլայեթներում, ինչին, առանց խտրականության, զոհ գնացին յակոբյանները, խալդեյացիները, նեստորականները և հայերը: Վանի կործեցյալ «ապստամբությունը» ընդամենը ինքնապաշտպանության գործողություն էր սպառնացող ջարդի դեմ, որը տարբեր տեղերում սկսվեց միաժամանակ: Մինչդեռ այն որպես քող օգտագործվեց կայսրության ներսում թուրքացման և իսլամացման վաղուց մշակված ծրագրի կենսագործումն արտասահմանին ներկայացնելու ռազմական անհրաժեշտությունից բխող ձեռնարկում և հենց իթիհադի ներսում ճնշելու այդ ծրագրի իրականացման՝ առաջին հերթին հայ ժողովրդի բնաջնջման, արմատական ձևի դեմ ամեն տեսակ առարկություն: Տպագրվեցին ու տարածվեցին կոչեր հասցեագրված մահմեդականներին. «Ամենուրեք կազմակերպել սպանությունների գաղտնի միություններ»: Սեբաստիայում, Կեսարիայում, Ադանայում և այլուր կեղծ ամբաստանություններով հայեր կախաղան հանվեցին: Էրզրումում բանկի փոխտնօրեն Ս. Բաստրմաջյանի սպանության հարցն ուսումնասիրեց գերմանացի Գուգեն և ապացուցեց, որ այդ հանցագործության հեղինակն իշխանություններն էին: Քննադատությունից զերծ մնալու համար Թալեաթի հարկադրանքով սուլթան Մ. Ռեշիդը խորհրդարանին մարտի 1-ին արձակուրդ ուղարկեց մինչև սեպտեմբերի 15-ը[238]:

1915 Հայերի բնաջնջումով երիտթուրքերը մի գնդակով երկու նապաստակ էին խփում՝ բաց էին անում Թուրանի ճանապարհը և կշտացնում էին քաղցած մահմեդականներին: Նայիմ բեյի վկայությամբ՝ հենց պատերազմը սկսվեց, «Թուրքիայում ծայր առան անոթությունն ու թշվառությունը: Այդ թշուառները (թուրքերը) խաբել, կշտացնել պետք էր, և ասիկա ալ՝ հայերուն թողելիք ապրանքներն ու դրամը կրնային իրականացնել: Էրզրումի, Պիթլիսի, Տիարպեքիրի, Մամուրեթ իլ Ազիզի, Սըվազի նահանգներուն մեջ՝ հայոց ջարդն ու ինչքերուն կողոպուտը սկսավ: Այդ զբաղումը ժողովրդին ամեն բան մոռնել կու տար»[239]:

Էմիլ Լենկիելը այս միտքը հաստատելով՝ ավելացնում է. «Պատերազմը շարունակելու համար օսմանյան կառավարությունը դրամի կարիք ուներ... Հայերը հռչակված էին որպես Օսմանյան կայսրության դրամատերեր: Նրանցից շատերը հարուստ էին, և գերմանացիները համոզվեցին, որ այդ հարստությունը պետք էր, որպեսզի պատերազմի առաջին երկու տարիներին նյութապես ապահովեր թուրքերին: Գերմանացիներն ուզում էին, որ թուրքերը հաղթեին, բայց ոչ իրենց համար: Նրանք թուրքերին համարում էին փչացած ժողովուրդ, որն ամեն ինչ վերջնականապես քանդելու է: Հաղթանակից հետո գերմանացիներն ուզում էին տիրանալ նրանց երկրին... Հայերի բնաջնջումով գերմանացիներն առևտրական, շինարարական և ֆինանսական գործառույթներում վերացնում էին հավանական մրցակիցներին: Հայկական ջարդերը Բեռլին-Բաղդադ երկաթուղուն տիրանալու նախապատրաստության մասն էին»[240]:

Թվում է, թե Նայիմ բեյը և թե Լենկիելը չափազանցնում էին: Իհարկե, թալանի միջոցով լրացուցիչ նյութական միջոցներ ստանալու հնարավորությունը դեր խաղացել է թե երիտթուրքական և թե գերմանական կողմնորոշումներում, բայց ոչ առաջնային և գլխավոր:

1915-ի սկզբներին հայտնաբերվեց Անտանտի նավատորմիղի հրամանատարությանը հասցեագրված մի հեռագիր, որով իտալացի և ֆրանսիացի հոգևորականները Կ. Պոլսի քրիստոնյաների անունից դաշնակիցներին օգնություն էին խոստանում Դարդանելը գրավելու համար: Դա պատրվակ դարձավ: Նախ ձերբակալվեց 60 կաթոլիկ հոգևորական, ապա զինաթափվեցին թուրքական բանակում ծառայող քրիստոնյաները՝ հայ և հույն զինվորները[241]:

237 Պալաքեան Գ., նշվ. աշխ., էջ 165:

238 "The Orient", 03. 03.

239 Անտոնեան Ա., նշվ. աշխ., էջ 246:

240 Lengyel E., Turkey, New York, 1941, p. 195.

241 Wien HHSTA PA XL 272, Konstantinopel, 19 November 1915.

Երիտթուրքերը հայերի համար մշակեցին նոր կանոնադրություն, այսինքն՝ վերացրեցին Ազգային սահմանադրությունը: Համաձայն այդ կանոնադրության արևմտահայ եկեղեցին անջատվում էր Էջմիածնի կաթողիկոսությունից և Երուսաղեմում ստեղծվում էր նոր հոգևոր կենտրոն: Վերացվում էր հայոց Ազգային ժողովը, ինչը նշանակում էր, որ այլևս պատրիարքը նշանակվելու կամ ազատվելու էր սուլթանական ֆերմայով: Եպիսկոպոսներն ու քահանաները կարող էին ծառայությունից հեռացվել նաև Բ. Դռան կողմից: Բոլոր դպրոցները դրվում էին կրթության նախարարության վերահսկողության տակ: Վերացվում էին Աղթամարի և Սսի կաթողիկոսությունները: Այդ օրենքը հրապարակվեց 1916թ. օգոստոսի 10-ին, բայց Կ. Պոլսի պատրիարքարանը ոստիկանության կողմից փակվել էր շատ ամիսներ առաջ[242]:

Ազգային սահմանադրությամբ ձևավորված ինստիտուտների վերացումը հիմնավորվեց նրանով, որ դրանք վերածվել էին կուսակցությունների կամակատարների:

***

Արդեն նշել ենք, որ «Միություն և առաջադիմություն կոմիտեն միաժամանակ ուներ երկու հատուկ կազմակերպություն, որոնցից մեկը ճանաչվում էր որպես պաշտոնական և հանդես էր գալիս պաշտոնապես (հրապարակավ), իսկ երկրորդը գաղտնի էր, գործում էր գաղտնի բանավոր հրահանգներով, կրում էր գաղտնի կոմիտեի բնույթ»[243]:

Ահա այս գաղտնի կոմիտեն էր ղեկավարում հայերի բնաջնջման գործը: Այն ութ հոգուց կազմված մարմին էր, որտեղ խնդիրները քննարկվում էին ազատ: Որոշումներն ընդունվում էին ձայների մեծամասնությամբ, բայց այդ մեծամասնությունն իրականում ապահովվում էր Թալեաթի, Էնվերի և Ջեմալի կողմնորոշմամբ: Կենտրոնը «աշխատում էր բանավոր», դրա անդամները հաճախ էին երդում տալիս, որ հավատարիմ կլինեն գաղտնապահության սկզբունքներին, ինչը մեծ դեր խաղաց ցեղասպանության վերաբերյալ պաշտոնական մի շարք փաստաթղթերի շուրջը եղած անորոշությունների, իրադարձությունների մեխանիզմի որոշ կողմերի մասին պատկերացումների խառնաշփոթի:

Այնուամենայնիվ, ձեռքի տակ եղած նյութերը միանգամայն բավարար են վերարտադրելու Մեծ եղեռնի գիտական, անաչառ պատմությունը: Այդ գործում առաջնակարգ դեր են խաղում ժամանակի մամուլի համապատասխան հրապարակումները: Համառոտակի անդրադառնանք ամերիկյան մայրցամաքի որոշ երկրների պարբերականներում այն տարիներին հրապարակված նյութերին, նկատի ունենալով, որ այդ երկրները Մերձավոր Արևելքում շահեր գրեթե չունեին, և դրանց մամուլի հրապարակումներն ավելի մեծ վստահություն են ներշնչում, քան շահագրգիռ երկրների զանգվածային տեղեկատվության միջոցները:

"New York Times" թերթը 1915թ. մարտի 19-ին գրեց. «...Փաստորեն Ալաշկերտի ամբողջ հարթավայրը ծածկված էր տղամարդկանց, կանանց ու երեխաների դիակներով: Երբ ռուսական զորքերը նահանջեցին այս շրջանից, քրդերը հարձակվեցին անօգնական ժողովրդի վրա և նրանց փակեցին եկեղեցիներում: Տղամարդիկ սպանվեցին, իսկ կանայք քշվեցին լեռները: Անտվանի ամբողջ հայ բնակչությանը հավաքեցին: 600 տղամարդ մահվան դատապարտվեց, իսկ կանայք մահմեդականացվելու նպատակով ուղարկվեցին տարբեր քաղաքներ»: «Հայաստանի հարթավայրերը,- գրեց թերթը մարտի 25-ին,- լցված էին Թուրքիայից փախչող գաղթականներով: Գրեթե բոլոր հայ տղամարդիկ քշվեցին թուրքական ռազմաճակատներ, իսկ ձյունածածկ սարահարթերում ու հովիտներում հազարավոր կանայք, ծերեր ու երեխաներ մահանում էին քաղցից»: Ապրիլի 26-ին թերթը գրեց. «Մի երիտասարդ՝ Աստուր անունով, պատմում է իր փախուստի մասին ջրհորից, որի մեջ լցված էին դիակներ: Նրան հաջողվել էր դիակների վրայով բարձրանալ ու դուրս գալ»: Ցաթաղանից մազապուրծ հայերը փախչում էին Ռուսաստան: «Հասնելով Ջուլֆա, Ռուսաստանի սահմանը, ժողովրդի տառապանքների վրա ավելացավ նաև անձնագրի դժվարությունը: Այրի կանայք նեստում էին իրենց երեխաներին Արաքսը, որպեսզի ազատեն նրանց ցրտի ու քաղցի տառապանքներից»:

Թե ինչպիսին էր օսմանահպատակ ոչ մահմեդականների վիճակը Թուրքիայում Մեծ եղեռնի սկզբին, պարզ պատկերացում են տալիս նաև հեռավոր Ուրուգվայի մամուլի հրապարակումները, որոնք հավաքել ու առանձին գրքով հրատարակել է Դ. Կարամանուկյանը[244]:

242 Wien HHSTA PA 1 833, Haag, 20 Mai 1917.

243 ՀՀ ՊԿԱ.Ֆ. 200ց.1, գ. 237, թթ 50-51:

244 Կարամանուկեան Դ. Հայկական ցեղասպանութիւնը 1915թ. ուրուգվայական մամուլում, Մոնտեվիդեո, 1985:

"El tempo" թերթը 1915թ. հունվարին գրեց, որ հույն-թուրքական հարաբերությունները, Փոքր Ասիայի հույների հալածանքների պատճառով, տագնապալի են դարձել: Թուրք ավազակները սպանել են հույներին, իսկ իշխանությունները հանցագործներին պատժելու ուղղությամբ ոչինչ չեն անում: Նույն օրերին "El Dia"-ն գրեց, որ Դարդանելում շարունակվող մարտերը ծանրացրել են Թուրքիայի քրիստոնյաների վիճակը. նրանք անվտանգ չեն նույնիսկ խոշոր քաղաքներում:

Թալեաթը հույն պատրիարքին հայտարարեց, թե ապագա Թուրքիայում տեղ են ունենալու միայն թուրքերը: "El tempo"-ն հունվարի 14-ին գրեց, որ Կ. Պոլսում թալանում են քրիստոնյաների խանությունները, բռնություններ գործադրում կանանց վրա, փողոցներում մեծ թվով հույներ են սպանվել, Սիդոնում և Զմյուռնիայում նախապատրաստվում է հույների ընդհանուր ջարդ: "El dia"-ն հունվարի 12-ին հայտնեց, թե Դարդանելի ճակատամարտը պատճառ է դառնալու քրիստոնյաների արյունահեղության: Վանգենհայմը հայտարարեց, եթե դաշնակիցները գրավեն Դարդանելը, Թուրքերը սրի են քաշելու կայսրության բոլոր քրիստոնյաներին: Նույն թերթը վկայում է, որ նման հայտարարություն է կատարել նաև Սիրիայում թուրքական բանակի հրամանատարը: Ջեռնպահ չի մնացել նաև Թալեաթը: "Le Rozon"-ը հայտնում է, որ ռազմական ամրություններ կառուցելու պատրվակով Զմյուռնիայի ոչ թուրք բնակչությանը քշում են Հայաստանի խորքերը:

"El dion"-ը հունվարի 14-ին ներկայացնում է Թուրքիայի քրիստոնյա բնակչության ողբալի վիճակն ու պատմում Ռուսաստան հայերի զանգվածային փախուստի մասին: Հունվարի 27-ին նույն թերթը հայտնում է, որ ռուսական սահմանն անցել էր 30 000 հայ: Թերթը հունվարի 16-ին տպագրեց «Քրիստոնյաների կոտորածը» հոդվածը. «... Փոքր Ասիայում շարունակվում է քրիստոնյաների կոտորածը, մահմեդականներն ուժեղացրել են հալածանքը նրանց նկատմամբ: Հալեպում բանտարկվել է 700 քրիստոնյա: Սարսափելի դեպքեր են տեղի ունենում Տավրոս լեռան շրջանում: Մեծ թվով քրիստոնյաներ են ձերբակալվել Զմյուռնիայում: Դասալիք զինվորականները գնդակահարվում են»: "El amigo del obrero" թերթը հենվելով Լոնդոնի և Փարիզի մամուլի տեղեկատվության վրա, հունվարի 16-ին գրեց, որ Փոքր Ասիայում զանգվածային սպանություններ են տեղի ունենում: Նույն օրերին "Diaro del Plata"-ն տպագրեց «Թուրքական բարբարոսությունները Կովկասում» լուրն այն մասին, որ թուրքերն ավերում էին հայկական գյուղերը, սպանում բնակիչներին: Մասնավորապես մեծ խժդժություններ էին տեղի ունենում Կարսի մարզում, որտեղ շատ գյուղեր հրդեհվեցին, բնակիչները սրի քաշվեցին: Բնակչությունը զանգվածաբար փախչում էր՝ ահաբեկված մահմեդականների մոլեռանդությունից: Նույն խնդրին է հունվարի 30-ին անդրադառնում նաև "El dia"-ն: Միայն Կարսի մարզում ավերվել էր 50 գյուղ, դրանց մեծ մասը հրդեհվել էր: Տղամարդկանց ձերբակալել են, շատերին սպանել: "El tempo"-ն հունվարի 19-ին պատմում է թուրքական գրաքննության նյութերի հիման վրա մեծ թվով մարդկանց դատավարության մասին: Թերթը գրում է, որ Գերմանիան աշխատում է Պարսկաստանն ու Աֆղանստանը ներքաշել հակառուսական կռիվների մեջ: "El dia"-ն հունվարի 25-ին գրում է, որ հարավից Ջուլֆա է անցել 15 000 քրիստոնյա: Ուրմիայի հայերի մի մեծ խումբ ապաստանել է ամերիկյան հյուպատոսարանում, իսկ 2 000 հոգի՝ տեղի եկեղեցում: Նրանցից շատերը մահացել են սովից ու հիվանդություններից: Կախաղան է հանվել 76 հոգևորական: Նույն թերթը մարտի 16-ին գրեց, Կ. Պոլսում մահմեդականների խոշոր ցույցեր են տեղի ունենում քրիստոնյաների ու Գերմանիայի դեմ: Նման ցույցեր են եղել կայսրության նաև այլ քաղաքներում: «Նվազագույնը,- գրում է թերթը,- 20 հազ. հոգանոց բազմություն է հավաքվել սուլթանի պալատի մոտ»: Ցուցարարները պահանջել են դուրս գալ պատերազմից: Երեք օր անց թերթը նորից է անդրադառնում Ուրմիայի հայերի վիճակին և գրում է, որ թուրքական բանակն ավերում ու հրդեհում էր հայերի բնակավայրերը, սպանում խաղաղ բնակչությանը:

"El siglo" թերթը մարտի 22-ին տեղեկացրեց, որ Ուրմիայում Թուրքիայի հյուպատոսը 700 զինվորի գլուխ անցած հարձակվել էր ամերիկյան միսիոներական հաստատության վրա, որտեղ մի քանի հազար հայ կար: Ամերիկացիները դիմել էին ռուսական բանակի օգնությանը: Նույն թերթը մարտի 25-ին գրում է, որ Ուրմիայի բոլոր գյուղերը, բացի երեքից, հրդեհված են: Ուրմիա քաղաքի քրիստոնյաների թաղերը հարձակման են ենթարկվել և բնակիչների մեծամասնությունը սպանվել է, կանանց գերեվարել են: 10 000 հայ փախել է Ռուսաստան: 7 000 հայ շրջանակում է փակված մնալ ամերիկյան և ֆրանսիական միսիոներների մոտ: Միայն Ուրմիայի շրջանում կոտորվել է 20 000 մարդ,-գրեց "El dia"-ն մարտի 26-ին: -Կոտորվել էին նաև ասորի-

ները: "El siglo"-ն նույն օրը հայտնեց, որ Կ. Պոլսի ամերիկյան դեսպանը Բ. Դոանը բողոք է ներկայացրել Ուրմիայում տեղի ունեցած գազանություններ կապակցությամբ: Թերթը նաև հայտնում է, որ Պարսկաստանի մի շարք շրջաններում գործողության մեջ է դրվել ջիհադը, որ այդ գավառների թուրքական հյուպատոսները մահմեդականներին գրգռում են քրիստոնյաների դեմ: «Շատ տեղերում արձանագրված են մեծ թվով սպանություններ: Վտանգը գնալով մեծանում է»: Միսիոներների կազմակերպությունների տվյալներով,- նկատում է "El dia"-ն (մարտի 27-ին),- հաստատվում է, որ Ուրմիայի մերձակայքում բոլոր տղամարդկանց սպանել են, կանանց բռնաբարել: Շատերը կախաղան են հանվել: "Diaro del Plata"-ն ապրիլի 3-ին գրում է, որ Սալմաստի դաշտավայրը գրավելուց հետո թուրքերը ջարդել են մեծ թվով ռուսների ու հայերի: Նրանք խուզարկել են մահմեդականների տները և հայտնաբերած քրիստոնյաներին ոչնչացրել են: Երբ ռուսները մտան Սաֆտուան, գտան 720 դիակ, որոնց մեծ մասը մերկ էր ու այլանդակված: Երեք օր շարունակ 300 մարդ զբաղված էր դիակները խրամներից ու փոսերից հանելով ու թաղելով: Ուրմիայում սպանվել էր 8 000 և մահացել 2 000 հայ: Մահմեդականներին քրիստոնյաների դեմ գրգռում էին թուրք և գերմանացի գործակալները: "El siglo"-ն ապրիլի 7-ին զգուշացրեց, որ թուրքերի ու քրդերի կողմից պատրաստվում է նոր արյունահեղություն: Քրդական աշիրեթները նախապատրաստվում են նոր հարձակման: "El dia"-ն ապրիլի 18-ին անդրադարձավ Վանի իրադարձություններին: Նշվում է, որ Բաշկալեի հայերը ջարդի վտանգի մեջ են:Հանձինս Մեծ եղեռնի մենք գործ ունենք դառը, բայց իրական ճշմարտության հետ՝ թուրք կառավարությանը հաջողվեց խաբել հայ ժողովրդին, նրան հանկարծակիի բերել: Նա ամենայն կարողացավ անել քաղաքական դեմագոգիայով և նրբորեն մշակված մարտավարությամբ: Օգտագործելով հայերի մտքերի ու զգացմունքների վրա ազդեցության բոլոր միջոցները երիտթուրքերը կոտորածները նախապատրաստեցին քայլ առ քայլ, գաղտնապահության պայմաններում: Այդ ուղղությամբ կառավարության յուրաքանչյուր գործողություն լայն շրջանների համար անմիջապես ստանում էր քարոզչական համոզիչ հիմնավորում: Հ. Մորգենթաուն գրում է. «Բավական ժամանակ անցավ, մինչև որ հայության դեմ գործադրվող խժդժությունների մանրամասն լուրերն ամերիկյան դեսպանատուն հասան: 1915թ. հունվարին ու փետրվարին մեզ հասնող լուրերն էնվերն ու Թալեաթն անուշադրության մատնեցին՝ ասելով, որ պատահածը միայն մասնակի բնույթ ուներ, թե տեղական իշխանությունները շուտով կարգ ու կանոն կհաստատեն: Հիմա ես տեսնում եմ՝ այն, ինչ սկզբնական ամիսներին այնքան հստակ ու ակներև էր՝ Թուրքիայի կառավարությունը որոշել էր, որքան հնարավոր է այս լուրերը թաքցնել արտաքին աշխարհից: Հաստատ էր, որ նրա նպատակն էր Եվրոպայից ու Ամերիկայից գաղտնի պահել հայերի ջարդը, մինչև դրա ամբողջական իրականացումը»:Նախ՝ ժողովրդի մոտ եղած զենքերը հավաքեցին՝ պատճառաբանելով, թե պատերազմական վիճակն է այդպես թելադրում: Բայց քիչ անց մահմեդականներից հավաքած զենքերը թաքուն վերադարձվեցին տերերին: Հայ ժողովրդին զինաթափելու գործողությունները «Հայկական բոլոր նահանգներում վերածվեցին զանգվածային ահաբեկչության»: 18-50 տարեկան 300 հազար հայի բանակ զորակոչեցին՝ պատերազմի ժամանակ միանգամայն տրամաբանական միջոցառում: Բայց իրապես դա արվեց հայերի կռվող ուժը ոչնչացնելու համար: Հայ երևելիներին ու մտավորականներին առաջարկեցին ժամանակավորապես, մինչև պատերազմի ավարտը, անվտանգության նկատառումներով, տեղափոխվել ռազմաճակատից հեռու շրջաններ: Հնարավոր բարդություններից խուսափելու համար շատ տեղերում հայերին մյուս ազգերի տղամարդկանց հետ կանչում էին կառավարչատներ պատերազմական տուրք պահանջելու պատրվակով: Բայց այլազգիներն անմիջապես բաց էին թողնվում, իսկ հայ տղամարդկանց բանտարկում ու խոշտանգելով բոլորին կոտորում էին: Նրանց ընտանիքները նույնիսկ կեղծ հեռագրեր ստացան, որ «ողջ-առողջ հասել ենք մեզ համար նշանակված նոր բնակավայրը և բարվոք վիճակում ենք»: Մնացած ազգաբնակչությանը հեշտ էր հանել բռնագաղթի ու կոտորել, որովհետև դիմադրող ուժ այլևս չկար: Եվ կոտորեցին : «Հայերի տեղահանությունն ու սպանդը,- գրում է Մ. Ռիֆաթը,- շատ վայրագ քաղաքական ոճիր էր»:

Այսպիսին են փաստերը, բայց հասարակական կարծիքը մոլորեցնելու համար երիտթուրք ղեկավարները ստեղծում և տեղերն էին ուղարկում փաստաթղթեր և նույնիսկ օրենքներ, որոնք իբր կոչված էին ապահովելու հայերի անվտանգությունը: Դրանք գերմանական դիվանագետների և այլոց միջոցով նաև արտասահման էին առաքվում, տպագրվում Արևմուտքի մամուլում: Մի կողմից, կայսրության ամենատարբեր մասերում հայերը կոտորվում էին, իսկ մյուս կողմից, իթթիհադական քարոզչությունը համառորեն ժխտում էր այդ իրողությունը: Նույնիսկ հրամաններ էին արձակվում հայերի հանդեպ ոտնձգություններ կատարելու դեպքում խիստ պատիժների արժանանալու սպառնալիքներով: 1915թ. մարտի 16-ին հրապարակվեց հրաման, որով հռչակվում էր, թե հայ և մուսուլման ազգաբնակչության ունեցվածքը, կյանքը և պատիվը վերցված են օսմանյան կառավարության պահպանության ներքո: «Նրանք կարող են համոզված լինել, նշվում է հրամանում, որ ենթակա չեն լինի ոչ մի ճնշման, և ազատ են հանգիստ զբաղվելու իրենց գործերով: Հայի նկատմամբ հանցավոր արարք կատարող մահմեդականը կմեղադրվի թալանի մեջ և կհանձնվի ռազմական դատարանին: Ոչ ոք չի կարող ուղղակի կամ կողմնակիորեն միջամտել կառավարության ձեռնարկած միջոցառումներին»:

Ձեռնամուխ լինելով բնաջնջման քաղաքականության գործադրմանը, իթթիհադի պարագլուխները գործնականում ձևական դարձրեցին պետական-կառավարական կառույցների իրավասությունները և իրական իշխանությունը կենտրոնացրեցին երիտթուրքական կուսակցության ձեռքում, որը նույնպես մաքրազարդվել էր կուսակցական ժողովրդավարության տարրերից ու վերածվել բռնատիրական սկզբունքներով ղեկավարվող կառույցի:

Ինչո՞ւ հենց 1915թ. սկզբին ծավալվեցին զանգվածային բռնագաղթն ու կոտորածը: Դրա պատճառը ռազմաճակատում կրած խայտառակ պարտություններն էին: Թուրքերը խուճապի մեջ էին: Կառավարությունը պատրաստվում էր թողնել Կ. Պոլիսը: Հ. Մորգենթաուն մարտ ամսին Պոլսում տիրող վիճակի մասին գրում է. «Այդ պահին մայրաքաղաքից արդեն սկսել էին մեկնել կանայք և երեխաները, նրանք երկրի խորքերն էին տարվում, բանկերին կարգադրված էր իրենց ոսկիները Փոքր Ասիա ուղարկել: Բարձրագույն դռան պաշտոնաթղթերը էսկիշեհիր էին տեղափոխվում և միաժամանակ, գրեթե բոլոր դեսպանները, նրանց տեղակալներն ու պաշտոնատարները կարգադրություններ էին անում, թե ինչ պետք է արվեր, եթե հարկադրված լինեին քաղաքը դատարկելու: Կ. Պոլսի արվեստի գործերի մեծ մասը թաղվեց նկուղներում կամ որևէ կերպ թաքցվեց... Բոլոր նախապատրաստությունները ավարտված էին՝ կառամատույցում այն գնացքակազմերը, որոնք սուլթանին, կառավարությանը և դեսպաններին պետք է Փոքր Ասիա տանեին, շոգին միացած, պատրաստ՝ առաջին իսկ ազդանշանով մեկնելու և մենք բոլորս սպասում էինք դաշնակիցների նավատորմիղի հաղթական ժամանմանը»: Բայց ավաղ: Շուտով նրանք ետ քաշվեցին, չնայած դա չվերացրեց ափ դուրս գալու վտանգը: Իսկ եթե դաշնակիցները Պոլիս մտնեին, հայ գործիչների քաղաքում գտնվելը թուրքերի համար ցանկալի չէր:

Պոլսահայ գաղութի ղեկավարները տեսնելով ահագնացող վտանգը 1915թ. ապրիլի 23-ին պատրիարքարանում ժողովի հավաքվեցին, որը հանձնարարեց Գրիգոր Զոհրապին և Զարեհ Դիլբերին կառավարությանը ներկայացնելու համար մի տեղեկանք պատրաստել: Տեղեկանքում պետք է ցույց տրվեր կառավարությանը հայերի հավատարմությունը, ներկայացվեր գավառներում տիրող ծանր վիճակը, հայ ժողովրդի գլխին կախված վտանգը և կոչ արվեր հայերի նկատմամբ բարյացակամ լինել:

Ճակատագիրը ծաղրել գիտե: Այդ նույն ժամանակ իշխանություններն ավարտում էին նախապատրաստական աշխատանքները Կ. Պոլսի հայ գաղութի ղեկավարներին ու մտավորականությանն աքսորելու համար: Հուսեին Զահիդն իր հուշերում պատմում է, որ տեղահանությունից քիչ առաջ, երբ արդեն լուրեր էին պտտվում ոստիկանությունում հավաքվող ինչ-որ ցուցակների մասին, Վարդգեսը, որ խորհրդարանի անդամ էր, դիմում է Թալեաթին, պարզաբանման և հօգուտ հայերի աջակցություն ստանալու:

Հետևում է Թալեաթի հանրահայտ պատասխանը. «Հիմա հերթը մերն է, Վարդգես: Դու գիտե՞ս, թե ինչպես ինձ արյուն փսխել տվիր: Գիտե՞ս, ինչ փորձանք էիք ստեղծել այս երկրի գլխին... Սա քաղաքականություն է, Վարդգես: Այդպես է: Հիմա մենք ենք ուժեղը: Թուրքական շահն ինչ պահանջի, այն էլ պիտի անենք...»:

Հալիլը՝ Էնվերի հորեղբայրն ու օսմանյան խորհրդարանի նախագահը, 1909թ. հեղաշրջման օրերին իթթիլաֆ կուսակցության կողմից հետապնդվելով թաքնվեց Գ. Զոհրապի բնակարանում և փրկվեց: Երբ Զոհրապին բանտարկում են, նրա կինը՝ Կլարան, դիմում է Հալիլի օգնությանը: «Ոչինչ անել չեմ կարող»,- լինում է պատասխանը: Կլարան դիմում է վարչապետին, ասում, որ իր ամուսինն օսմանյան պետության դեմ ոչ մի հանցանք չի գործել: Հետևում է պատասխան. «Զգիտե՞ք, որ թաց խոտն էլ է չորի հետ վառվում»:

ԳԼՈՒԽ ՏԱՄՆԶՈՐՍԵՐՈՐԴ

ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՋԱՐԴԵՐԻ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ

Թե երիտթուրք պարագլուխների մեջ երբ միտք հղացավ հայերի բնաջնջումն իրականացնել բռնագաղթի միջոցով, հայտնի չէ, բայց որ իթիհադի իշխանության գլուխ կանգնելուց հետո տեղահանություններ կատարվում էին, ակնհայտ է: Զանգվածային տեղահանության իթիհադական ծրագրի մշակումն իրականացվել է տևական ժամանակաշրջանում և անցել է ձևավորման որոշակի փուլեր՝ իր մեջ ներառելով վարչական և անլեգալ-լրտեսական միջոցառումների մի ամբողջ շղթա: Կայսրության անվտանգության գերատեսչության ոստիկանական վարչության երրորդ բաժանմունքում կազմակերպվեց հայերին լրտեսելու և հետապնդելու կառույց, որն անձամբ ղեկավարում էր տխրահռչակ Բեդրին: Այն իր գործունեությունն սկսեց հայ ազդեցիկ անձանց ու մտավորականների անձնական գործերը կազմելով, որոնք փաստորեն լրտեսագրերի ժողովածուներ էին: Պատերազմի սկզբին ստեղծվեց մի ուրիշ մարմին, որի խնդիրը հայերի ահաբեկումն էր: Սա ղեկավարում էր Թալեաթի մտերիմը՝ անվտանգության ընդհանուր տնօրեն Ջանփոլադը, անդամներն էին Բեդրին, նրա տեղակալ Մ. Ռեշադը և անվտանգության տնօրինության բաժինների պետեր Ազիզը և Էսադը: Հակահայկական գործունեությամբ մասնավորապես աչքի ընկան Բեդրին (նա լավ հայերեն գիտեր) ու Ջանփոլադը, որը պատերազմի տարիներին մի կարճ ժամանակահատվածում գլխավորեց նաև ՆԳ նախարարությունը: Նրա ենթակայության տակ էին տեղահանությունն իրականացնող ոստիկանական վաշտերը[1]:

Հայերին հաշվեհարդարի ենթարկելու շուրջ իթիհադի ղեկավարների գաղտնի ու բացահայտ հավաքները սկիզբ առան 1914թ. բարենորոգման ծրագրի մշակման եւ ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրման ժամանակներից:

Պարսիկ պատմաբան Ռային, նկատի ունենալով ռուսական պահնորդական բաժնի գործակալների կողմից Պետրոգրադ ուղարկված փաստաթղթերը, որոնք արտաքին գործերի նախարարություն էին հասնում Փարիզի ռուսական դեսպանության միջոցով, գրում է, թե Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Թուրքիայում ցարական Ռուսաստանի դեսպանը տեղափոխվում է ԱՄՆ և իր հետ տարած արխիվային փաստաթղթերը հանձնում Ստենֆորդի համալսարանին: Այդ փաստաթղթերից երկուսը, որոնք պահվում են 16 609 և 177 090 թվահամարներով, ունեն հետևյալ բովանդակությունը. «Այսօր (1915թ. հունվարի 23) Նուրի Օսմանիե ակումբում կրկին գումարվեց մի գաղտնաժողով, որտեղ ներկա էին Միություն և առաջադիմություն կուսակցության և պանիսլամիստների ներկայացուցիչները, մոտ 700 մարդ, այդ թվում՝ Թալեաթ Բեյը, Բեդրի բեյը, Սեյիդ բեյը, Ֆաքեր բեյը, ռուսական պանիսլամիստներ Ահմեդ Աղաևը, Ջալալ Կորխմազովը, Մահմադ Թաղիևը, Ջիա բեյը, նրա եղբայր Ասլան բեյը և ուրիշներ: Եղան հակառուսական և հակաքրիստոնեական ելույթներ: Որոշվեց բոյկոտ հայտարարել հայերի և հույների դեմ... Նիստի վերջում Թալեաթը հայտարարեց, որ օսմանները դեմ են Անատոլիայում ամեն տեսակ եվրոպական վերահսկողության...

Երկրորդ փաստաթղթում ասվում է. «1914թ. դեկտեմբերի 31-ին Նուրի Օսմանիե ակումբում պանթուրքիստների մի մեծ խումբ որոշեց Եդյակ զինակցությանն առաջարկել քննարկելու Վոլգայից մինչև Ղրիմ ընկած տարածքները քրիստոնյաներից մաքրելու և այնտեղ Օսմանյան կայսրության ներքո մահմեդական վարչակարգ ստեղծելու, Կիրգիզիան, Բուխարան, Թուրքեստանը միավորելու Կասպից ծովից հարավ ընկած տարածքների հետ և Օսմանյան կայսրության կազմում ինքնավարություն կազմավորելու հարցերը»:

Այդ ժողովներում մինչև 15թ. փետրվարը անդրադարձներ եղան հայերի տեղահանությանը և ջարդերի կազմակերպմանը՝ սկսած նրանց ունեցվածքի գույքագրումից մինչև եկեղեցիների, դպրոցների, հիվանդանոցների հաշվառման գրքերի կազմումը, արաբերենի հիմքի վրա ծածկագրերի ստեղծումից մինչև հայերի խոշտանգումների տեսակների որոշումը: Բեդրին Մորգենթաուին պատմել է, որ հայերի խոշտանգումների ձևերն իրոք իթիհադի գաղտնի կենտրոնի դիշերային քնարկումների առարկա են եղել: Ցուրաքանչյուր նոր առաջարկ խրախուսվում էր, և մասնակիցները «լարում էին իրենց մտավոր ունակությունները, որպեսզի հնարեն խոշտանգումների նոր եղանակներ... Քրքրում էին իսպանական հավատաքննության արխիվները, խոշտանգումներին առնչվող ուրիշ աղբյուրներ, որոնց օգնությամբ ծնվում էին նոր հրեշավոր մտահղացումներ»[2]:

Զավեշտ է, բայց նաև ողբերգական իրողություն: Էսադը զինադադարից հետո անգլիական իշխանություններին հանձնեց իթիհադի կենտրոնի մի խիստ գաղտնի փաստաթուղթ, որը հայոց ջարդերի ծրագրի տարբերակներից մեկն էր և քննարկվել էր իթիհադի ղեկավար մարմնում: «Բարենորոգումանց խնդրոյ բանակցութեանց տաք ժամանակը,- պատմում է Գեղամ Տեր-Կարապետյանը (Տատրակ),- 1914-ի ձմռանը , սուլթանի պալատի մեջ իթիհատականներու և անոնց համախոհներու ներկայութեամբ գիշերային ժողով մը գումարուած էր, ուր իթիհատական շեֆերը՝ Թալեաթ պեյ, Էնվեր պեյ և այլք, ամենախիստ կերպով արտահայտուեր էին հայերու դեմ, զանոնք ներկայացնելով իբր անջատողականներ, Ռուսիոյ, Անգլիոյ գործիքներ, խռովարարներու ծանր որոշումներ տուեր էին ազգին դեմ:

Արդեն Թալեաթ պեյը չէր քաշուած, ուրիշ առթիվ ու քանիցս յայտարարել՝ հայերը կը կարծեն, որ Հոֆն ու Վեսթենենկը ընդհ. քննիչ անուանել տալով բան մը պիտի շահին... ոչ ապաքեն գործադրութիւնը մեր ձեռքն է. քննիչներու առաջարկները չպիտի լսենք և հայերը նպաստավորել չպիտի տանք... Ուրիշ անգամներ ալ իթիհատականները սպառնագին կանչ-լուրեր էին՝ հայերը նոր Պուլկարիա մը ստեղծել կուզեն: Դեռ չխրատուեցան, չեն գիտեր, որ մեր կամքին հակառակ որևէ ձեռնարկ կը չախչախուի, թող սպասեն, հարկավ մեզի ալ պատեհութիւններ չպիտի պակսին... Թուրքիան միայն թուրքերուն է: Հայերու բնաջնջումի սև խորհուրդը այդ օրերեն մանավանդ մեծ մղում ստացավ:

Իթիհատը, որ քրիստոնեայ ցեղեր անհետացնելու կամ անոնց ուրոյն ազգութիւն կազմող դրոշմը ջնջելու սկզբունքն ուներ, բարենորոգմանց խրտուիլակը իրեն զենք ըրավ՝ այս անգամ հայկական ցեղին դեմ գրգռելու բոլոր ոչ-իթիհատական իսլամներուն ալ և տենդոտ կերպով միջոցներ կուսումնասիրեր հայերու բնաջնջումը փութացնելու: Միջոցներ չէր, որ կը պակսեին, այլ պատեհութիւնը ու հայ ազգի ճակատագրական դժբախտութիւններեն՝ այդ պատեհութիւնը չուշացավ:1914-ի պատերազմը և թուրքերու պատերազմական հանգամանքը սև խորհուրդը գործնականի վերածեցին: Ու իթիհատականները դժոխային քմծիծաղով չփեցին իրենց ձեռքերը»[3]:

Գեղամ Տեր-Կարապետյանը ճշտությամբ է ներկայացնում հայերի բնաջնջման երիտթուրքական քաղաքականության ամբողջականացման գործընթացը: Պատերազմի սկզբնական շրջանում այդ քաղաքականության առանցքը Ռուսաստանի սահմանամերձ շրջանների հայերի և մյուս ոչ մահմեդական տարրերի ոչնչացումն էր: Եվ դա երկու պատճառով. նախ, իրականացնելու Կովկասին տիրանալու գերմանա-թուրքական պայմանավորվածությունը և, երկրորդ՝ ռազմաճակատամերձ շրջանները «մաքրելու» ոչ մահմեդական տարրերից: 1914թ. ավարտին արդեն իրականացվել էր Ուրմիայի շրջանի նեստորականների ջարդը. խնդիր էր դրված աղրբեջանական Ատրպատականի, Պարսկահայքի ու Վասպուրականի միջև ստեղծել համատարած թուրքաբնակ գոտի: Մի թուրք ժանդարմ հայտարարեց. «Նախ կսպանենք հայերին, ապա՝ քրդերին»[4]:

Ա. Անտոնյանն առաջինն էր, որ միանգամայն որոշակի ասաց, որ Մեծ եղեռնը վաղուց էր նախապատրաստվում: Նա գրում է, թե այդ գաղափարը թուրքերի մեջ ծնվեց բարենորոգումների համար դիվանագիտական պայքարի ժամանակ՝ 1913-ին: Անտոնյանը դա բացատրում է նրանով, որ թուրքերը «իրենց դարավոր գերիշխանութեան և վեհապետական իրավունքներուն տրուած ծանր հարուածը երբեք չներեցին» հայերին և, օգտվելով միջազգային կյանքում տիրող խառնաշփոթից, «ծրագրեցին ու գործադրեցին այդ ահավոր եղեռնագործութիւնը»[5]:

Ա. Անտոնյանը միայն մի հարցում է սխալվում՝ թուրքերը ցեղասպանության գնացին, ոչ թե որովհետև հայերը վիրավորել էին իրենց «վեհապետական իրավունքները», այլ գործողության մեջ էին դնում Թուրքիան թուրքացնելու աբդուլհամիդյան ծրագիրը: Ա. Անտոնյանը վկայակոչում է "Daily Telegraph"-ի 1914թ. օգոստոսի 27-ի համարում տպագրված տեղեկատվությունը,

1 Երուսաղեմի դիվան, ծրար 22, թթ. 203-220:

2 «Ամերիկյան դեսպան Հ. Մորգենթաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները», Երևան, 1990, էջ 255

3 Սասունի Կ. Պատմութիւն Տարոնի աշխարհի, Բեյրութ, 1957, էջ 838:

4 "Miscellaneous" (London), 1916, N31.

5 Անտոնեան Ա. Մեծ ոճիրը. Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշան, Բոստոն, 1921, եր., 1990, էջ 120-121:

թե համաձայն Մորգենթաուի մի հեռագրի, Կ. Պոլսի մահմեդականները որոշել են օգտվել առաջին աշխարհամարտի ընձեռած հնարավորությունից և ջարդել քրիստոնյաներին ու հրեաներին: Այս լուրը Կ. Պոլսում այնպիսի իրարանցում առաջացրեց, որ ամերիկյան դեսպանատունը հարկադրված եղավ այն հերքել: Սակայն դա, մասնավորապես, հայերին չհանգստացրեց, որովհետև նրանք տեսնում էին՝ կառավարությունն իրենց դեմ ինչ-որ բան էր պատրաստում: Երիտթուրքերի կենտրոնի գործունեությանը հետևողն անմիջապես կնկատեր այն հետևողականությունն ու նպատակասլացությունը, որ նրանք դրսևորում էին օսմանյան հասարակությունը հայերի դեմ բարձրացնելու գործում: Իրենց գործունեության հիմքում դրեցին Սալոնիկի համագումարների որոշումները, մասնավորապես 1910թ. օգոստոսի 10-ին ընդունված միջոցառումների գաղտնի պլանը, որը հետագայում մասնակի փոփոխությունների ենթարկվեց և ստացավ «Տասը հրահանգ» անունը: Երիտթուրքերը հայերի ամբողջական բնաջնջման իրականացման նախապատրաստական փուլի ավարտական շրջանը սկսեցին այդ հրահանգը (հունվարի սկզբին) տեղերն ուղարկելով: Փաստաթուղթն ստորագրել էին Թալեաթը, Բ. Շաքիրը, Ի. Ջանփոլադը, Նազիմը և Սեյֆին:

«Տասը հրահանգը» հետևյալն էր. «1. Միություն և առաջադիմություն կոմիտեի (կանոնադրության) 3-րդ և 4-րդ հոդվածների հիման վրա արգելել հայկական բոլոր միությունները, ձերբակալել բոլոր այն հայերին, ովքեր զբաղվել են հակակառավարական գործունեությամբ, նրանց աքսորել այնպիսի գավառներ, ինչպիսիք են Բաղդատը կամ Մոսուլը և ոչնչացնել ճանապարհին կամ նշանակման վայրը հասնելուց հետո: 2. Բռնագրավել հայերի զենքերը: 3. Մահմեդական հասարակությանը զրգռել նույն եղանակներով, որոնք կիրառվել են Վանի, Էրզրումի, Ադանայի նահանգներում, որտեղ հայերն իրենց դեմ հարուցել էին մահմեդականների ատելությունն ու առաջացրել կազմակերպված ջարդ... 4. Նույնն իրականացնելու համար հենվել Էրզրումի, Վանի, Մամուրեթ ուլ Ազիզի և Բիթլիսի նահանգների բնակչության վրա և օգտագործել հասարակական կարգի պաշտպանության զինված ուժերը (օրինակ՝ ոստիկանությունը), այն հաշվով, որ իշխանությունների գործողություններն արտաքուստ կրեն ջարդը դադարեցնելու բնույթ, և, ընդհակառակն, այդ նույն ուժերին ներգրավել մահմեդականներին եռանդուն օգնություն ցույց տալու այնպիսի նահանգներում, ինչպիսիք են Ադանան, Սըվազը, Բրուսան, Իզմիրը, Իզմիրը: 5. Ոչնչացնել մինչև 50 տարեկան բոլոր տղամարդկանց, քահանաներին և ուսուցիչներին: Թույլ տալ օրիորդներին և երեխաներին իսլամանալու: 6. Տեղահանել այն ընտանիքներին, որոնց չափահաս անդամներին կհաջողվի փրկվել և այդպիսով խզել նրանց բոլոր կապերը հայրենի երկրի հետ: 7. Վկայակոչելով, որ հայ պաշտոնատարները հնարավոր է, որ լրտեսներ են, հեռացնել նրանց բոլոր պաշտոններից ու դիրքերից... 8. Նպատակահարմար եղանակով ոչնչացնել բանակում ծառայող բոլոր հայերին՝ հանձնարարելով այդ գործը զինվորականներին: 9. Ամենուրեք գործողություններն սկսել միաժամանակ, որպեսզի հայերը ժամանակ չունենան ձեռնարկելու պաշտպանական միջոցներ: 10. Հետևել այս հրահանգների խիստ գաղտնի բնույթին, դրանք պետք է հայտնի լինեն ոչ ավելի, քան 2-3 հոգու»[6]:

Զանգվածային ջարդերի անցնելու մասին անհնար է ավելի հստակ ու բացորոշ ասել: Եվ պատահական չէ, որ այն անմիջապես ընկալվեց ոչ միայն պաշտոնեության, այլև մահմեդական ողջ բնակչության կողմից: «Գյավուր հայերին ոչնչացնել. սա է սուլթանի ցանկությունը»,- ահա նախադասություն, որ դարձավ ջարդարարների նշանաբան ու ջարդերի արդարացում:

Մ. Ուոքերը հաստատում է նույն իրողությունը, թե թուրքերը հայերի հանդեպ դաժանություններ գործադրում էին նաև մինչև Սարիղամիշի ճակատամարտը, բայց վերջնական որոշումն ընդունեցին 1915-ի փետրվարին: Նա թվարկում է երիտթուրքերի ձեռնարկած միջոցառումները՝ սկսած փետրվարից: Ամսվա երրորդ տասնօրյակին աշխատանքից հանվեցին հայ ծառայողները, հայ զինվորներին հավաքեցին ամալե թապուրներում, հայ սպաներին բանտ նետեցին: Ուոքերը հայերին ամբողջությամբ բնաջնջելու որոշումը հետևանք է համարում «թուրքական ռասիզմի զարգացման... Թուրքական ազգայնամոլություն գումարած «Թուրքիան պետք է լինի Արևելքում» կարգախոսը նշանակում էր «Հայաստանն առանց հայերի»[7]:

1915թ. փետրվարից հայ ազգաբնակչության զինաթափումը համընդհանուր բնույթ ստացավ: Միանգամայն համաձայն լինելով Ուոքերի հարցադրման հետ, միաժամանակ հարկ ենք համարում նշել, թուրքական ռասիզմի առաջին ու գլխավոր արտահայտությունը ոչ թե «Թուրքիան պետք է լինի Արևելքում», այլ «Թուրքիան թուրքերին» նշանաբանն էր: Պանթուրքիզմի հիմքը, այն ծնողն ու առաջնայինը թուրքիզմն էր: Դա այդպես էր ոչ միայն փիլիսոփայական-տեսական, այլև գործնական քաղաքականության առումով: Պատահական չէ, որ հայերին հաշվեհարդարի ենթարկելու գործը չսահմանափակվեց ռազմաճակատամերձ շրջաններով: Սիսի կաթողիկոսի՝ մարտի 16-ի նամակը, թե «վստահ ենք, որ մեծ դժբախտություն մը կը սպասե մեզի... կառավարիչը Զեյթունի զինուորական հրամանատարին հետ համախորհուրդ քանի մը դասալիքներ պատճառաբանելով կը պատրաստե զսպողական անլուր միջոց մը»[8], ասվածի ապացույցն է: Կիլիկիան ոչ Ռուսաստանին սահմանակից էր, ոչ ռազմաճակատային գոտի էր և ոչ էլ Արևելքում:

Կիլիկիայում բռնագաղթն արդեն ընթացքի մեջ էր, երբ վիճակը տագնապալի դարձավ Վանում: Ջևդեթի հրամանով «հայ տղամարդկանց, զինուորական ծառայութեան անունով... գիւղերից, գործատեղից, դաշտերից ու ամեն տեղից բռնոտել ու բանակ էին ուղարկել, այնտեղ կոտորելու համար»[9]: Ջարդեր տեղի ունեցան Բաշկալեի, Սարայի, Արճակի, Թիմարի գյուղերում, ապա Հայոց ձորի, Մոքսի, Կարճկանի և Գավաշի կողմերում: Ռուսների նահանջից հետո թուրքական բանակը զենքը դարձրեց «Վանի գիւղերուն հայ կիներուն, մանուկներուն և ծերերուն վրայ... Ըստ իրենց սովորութեան, հայ աղջիկներուն գեղեցկագույները բաժանեցին մահմետականներուն, թալանեցին ու հրկիզեցին հայ գյուղերը և շարունակ ջարդեցին: Ապրիլի 15-ին Ակունցի մեջ 500 երիտասարդների հավաքեցին սուլթանին մեկ հրամանը լսելու համար, և արևմուտեն ետք բնակավայրին դուրս հանելով՝ պաղարիւնով սպաննեցին: Այս գործելակերպը կրկնուեցավ Վանայ լճի հիւսիսակողմի գրեթե 80 հայկական գիւղերու մեջ, եւ երեք օրուան մեջ 24 հազար հայ վայրագորեն խողխողուեցավ»[10]:

Շատախի հայության հաշվեհարդարի լուրը հուզումներ առաջ բերեց Վանում: Կուսակալը ձերբակալեց և կախաղան հանեց հնչակյանների հինգ ղեկավարի. հերթը դաշնակցականներինն էր: Նա թուրք երևելիների ժողովում հայտարարեց. «Ատրպաճանի հայերն ու ասորիները բնաջնջեցինք, այժմ պետք է, որ նույն ձևով շարժինք Վանի հայերուն հանդեպ»[11]:

Պոլսի ձերբակալությունից հետո Սայիդ Հալիմի հայտարարությանը, թե դրանք ուղղված էին միայն քաղաքական կուսակցությունների դեմ որպես զգուշացում, իսկ ամբողջ հայ ժողովուրդը անհանգստանալու որևէ պատճառ չունի, հաջորդեց Թալեաթի հայտարարությունը, որի մասին Նազլյանն իր օրագրում ապրիլի 25-ին գրեց, թե Թալեաթը գտնում էր, որ ձերբակալությունները պետք է ներառնեին բոլորին[12]:

Զանգվածային ջարդերի անցնելու որոշում ընդունած երիտթուրքական կենտրոնի հանրահայտ նիստը, Բ. Շաքիրի վկայությամբ, պետք է որ կայացած լիներ 1915թ. փետրվարի կեսին: Այն տևել էր երեք օր: Ոմանք գտնում են, որ նիստը տեղի էր ունեցել փետրվարի 14-16-ին, իսկ մյուսները՝ 15-17-ին: Նիստին, գրում է Հայկազ Ղազարյանը, մասնակցում էին Սայիդ Հալիմը, Էնվերը, Թալեաթը, Խայրին՝ չեյխ ուլ իսլամ, Փ. Իբրահիմը՝ արդարադատության նախարար, Հալիլը՝ պետական խորհրդի նախագահ, Մ. Շերիֆը՝ առևտրի նախարար, Քեմալը՝ պարենավորման նախարար, Ջանփոլադը՝ անվտանգության նախարար, Ալի Մունիֆը՝ հանրօգուտ աշխատանքի նախարար[13]:

Լևոն Վարդանը մասնակիցների թվում նշում է նաև Միդհատ Շուքրիին, Բեհաեդդին Շաքիրին, Մեհմեդ Նազիմին, Հուսեին Ջահիդին, Մելման Ջադե Ռիֆաթին: Մասնակիցների թվում նշում են նաև Հասան Ֆեհմիին, Աղա օղլու Ահմեդին: Նիստերը հերթականությամբ ղեկավարել են Թալեաթն ու Ջիա Գյոքալփը: Նիստերին չեն մասնակցել Ջեմալը, որը գտնվում էր Եգիպտոսի ռազմաճակատում և կոմիտեի հայ անդամ Պետրոս Հալաջյանը: Երիտթուրքական կենտրոնի նիստերի մասնակիցների կազմի նման խայտաբեղ թվարկումը հավանաբար հետևանք է այն բանի, որ տարբեր հեղինակներ նկատի են ունեցել տարբեր օրերի նիստերին ներկա գտնվողներին: Նիստերի ամենամանրամասն նկարագրությունը տվել է Մ. Ռիֆաթը,

6 Beylerian A. Les Grandes Pussances, I Empire ottoman et les Armeniens dans les Archives Francaise. 1914-19, 1983. pp. XXIX-XXX.

7 Walker C., Armenia Survival of a nation, New York,1980, pp. 200-201.

8 «(Լեփսիուս) Հայկական ջարդերը: Տոքթ. Յոհ. Լեփսիուսի տեղեկագիր կամ «Հայկական ջարդերը», Կ. Պոլիս, 1919, էջ 12:

9 Սարհատեան Ս. Կեանքիս յուշերից, Թեհրան, 1966, էջ 69-70:

10 Մորգենթաու Հ., նշվ. աշխ. էջ 297:

11 Lepsius J., աշխ.., էջ 94:

12 «Յուշամատեան Մեծ եղեռնի. 1915-65», Բեյրութ, 1965, էջ 200:

13 Ղազարյան Հ., Յեղասպան Թուրքը, Բեյրութ, 1968, էջ 323:

թը: Նա գրում է. «Հայկական տեղահանությունը և սպանդը շատ վայրագ քաղաքական ոճիր է... ԻԹԻՀադ վե թերաքքը կուսակցությունը, ընդհանուր կենտրոնում գաղտնի նիստ գումարելով, որոշել էր անկախ սեռի և տարիքի, հայերին, առանց նույնիսկ մեկ հոգու կենդանի թողնելու պայմանով, բնաջնջել, և դրա գործադրությունը հանձնել էր ոճրագործներից և մարդասպաններից բաղկացած հատուկ կազմակերպությանը, իսկ վերջինիս ղեկավարությունն էլ «Եռյակ գործադիր հանձնաժողով» անվան տակ դոկտ. Նազիմին, դոկտ. Բեհաեդդին Շաքիրին և կրթության նախարար Շուքրիին էր վստահել...» [14]:

Լևոն Վարդանը գտնում է, որ բանագաղթի և կոտորածների մասին որոշումն ընդունվել էր մայիս ամսին, այն էլ ոչ թե երիտթուրքերի գաղտնի կենտրոնի, այլ Թեչքիլաթի կենտրոնական վարչության կողմից: Ըստ նրա՝ այդ գաղտնի նիստը տեղի էր ունեցել մայիսի 22-25-ի արանքում: Այն մայիսի 21-ից շուտ կայանալ չէր կարող, քանի որ նիստում Թալեաթը Վանի անկման մասին մեջբերումներ էր կատարել Ռոստովի թերթերից մեկից, որն այդ մասին գրել էր մայիսի 21-ին և մայիսի 25-ից ուշ տեղի ունենալ չէր կարող, քանի որ նիստում բառ իսկ չէր ասվել Անտանտի կառավարությունների՝ մայիսի 24-ի հայտարարության և Բ. Դռան պատասխանի մասին: Նիստին մասնակցել էին ԻԹԻՀադի բոլոր պարագլուխները: Ըստ Լևոն Վարդանի՝ զեկուցումով հանդես էր եկել Նազիմը և առաջարկել իրականացնել հայերի համընդհանուր բնաջնջում: Թվում է, թե Լ. Վարդանը ճիշտ չէ: Պարզապես Թեչքիլաթի վարչությունը քննարկել էր ԻԹԻՀադի կենտկոմի որոշման կատարման ուղղությամբ կազմակերպության անելիքները և զարմանալու ոչինչ չկա, որ Նազիմը զեկուցումով հանդես էր եկել թե երիտթուրքերի կենտկոմի, որի առաջատար անդամներից էր, և թե Հատուկ կազմակերպության վարչության նիստերում, որովհետև նաև Եռյակ կոմիտեի անդամ էր:

Մ. Ռիֆաթը գրեթե սղագրական մանրամասներով ներկայացնում է ԻԹԻՀադի կենտրոնի նիստում տեղի ունեցածը: Նա հատուկ ուշադրություն է արժանացնում Նազիմի զեկուցումը: Համաթուրանականության այդ մոլի երկրպագուն մասնավորապես ասել էր. «Հայերն այս պատերազմը հարմարելով հարմար առիթ և հակառակ չեզոքություն պահելու իրենց խոստումին, ռուսական բանակի կազմում կամավոր հրոսակ խմբեր ստեղծելով, գրավված գյուղի ու քաղաքի բնակչությանն առանց խղճահարության սպանեցին, տեղ-տեղ ապստամբություններ բարձրացնելով՝ մեր վրա հարձակվեցին և մեր բանակի նահանջի գծերին սպառնացին: Ի՞նչ են ուզում հայերը. նրանք մեզ բնաջնջելով, մեր գյուղերին ու կալվածքներին տիրանալով՝ ուզում են ասել. «Ո՞վ թուրք, դու վեր կա՛ց այստեղից, հեռացի՛ր, դու այս հողի տերը չես... Դրանք աշխարհի ստեղծումից առաջ մերն էին»: Հայերը մահացու վերքի են նման... եթե ժամանակին... չվիրահատվի, չհանվի, անպայման մեռցնելու է»:

Նազիմը մանրամասն կանգ է առնում հայերի բնաջնջման առանձնահատուկ նշանակության վրա ոչ միայն «Թուրքիայի թրքացման», այլև համաթուրանական նպատակադրումների իրականացման գործում. նա ուղղակի ասաց, թե առանց հայերի հարցի լուծման Օսմանյան կայսրության վաղվա օրն անորոշ է: «Հայ ժողովրդին պետք է արմատախիլ անել, որպեսզի մեր հողի վրա ոչ մի հայ չմնա և մոռացվի նույնիսկ հայ անունը: Այժմ պատերազմի մեջ ենք, այնքան հարմար առիթ այլևս չի լինի: Մեծ տերությունների միջամտությունը և համաշխարհային մամուլի աղմկոտ բողոքները կմնան աննկատ, իսկ երբ իմանան, ապա արդեն կանգնած կլինեն կատարված փաստի առաջ, և դրանով հարցը կփակվի... Ես դարձա ձեր ընկերը, զինակիցն ու եղբայրը նրա համար, որպեսզի վերածենք Թրքությունը: Ես ուզում եմ, որպեսզի այս հողի վրա թուրքը և միայն թուրքն ապրի ու անբաժան տիրապետի: Թող ՆՆՁվեն բոլոր ոչ թուրք տարրերը՝ որ ազգությանն ու կրոնին պատկանելիս լինեն: Այս երկիրը պետք է մաքրել ոչ թուրք տարրերից: Կրոնն ինձ համար արժեք չունի, իմ կրոնը Թուրանն է»:

Ապա ելույթ ունեցավ Բեհաեդդին Շաքիրը: Նա ասաց. «Եթե մի այնպիսի ողորմելի, ինչպիսին Մովսեսն էր, այնպիսի թափառական, ինչպիսին Հիսուսն էր և այնպիսի որբ, ինչպիսին Մուհամմեդն էր, կարողացան ստեղծել ինքնուրույն մեծագույն կրոններ, ապա ինչո՞ւ մենք՝ ուժեղ կամքի ու խելքի տեր մարդիկս, չենք կարող ստեղծել ու տարածել Թուրանի կրոնն ու գաղափարը: Մենք՝ հեղափոխականներս, հանուն թուրք ազգի ազգայնականության սկզբունքների վրա կառուցելով օսմանյան պետությունը, հաստատեցինք ԻԹԻՀադի իսկական իշխանություն: Մեր ազգային մշակույթում կարող

14 Ռիֆաթ Մ. Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը և ԻԹԻՀատի հայաջինջ ծրագիրները, Եր., 1990, էջ 91:

ենք թույլ տալ միայն թուրքական սերմի ծաղկում: Մենք պարտավոր ենք մաքրել մեր հայրենիքը դեռևս գոյություն ունեցող ոչ ազգակից ժողովուրդներից, նրանց արմատախիլ անել, ինչպես մոլախոտը: Հենց դրա համար էլ ԻԹԻՀադի իշխանությանը մենք տվեցինք «Նոր Թուրքական պետություն» անունը, զրոյի հասցնելով «օսմանցի» անվանումը: Տարբեր տարրերից կազմված օսմանյան շաղախը չունի իր ազգային դեմքը, նա նման է մի ագարակի մեջ տնային տարբեր կենդանիների հավաքածուի: Հայ, հույն, բուլղար, բոսնիացի, պոմակ, սերբ, ալբանացի, քուրդ, չերքեզ, արաբ, վրացի, լազ՝ բոլոր այս իրարից տարբեր տարրերը, իբրև թե կազմում էին մի ամբողջություն՝ օսմանցի անվան տակ: Պետք է հրաժարվել նման հասկացողությունից: Ինչպես բակում բադը, սագը, հավը, ոչխարը, կովը, ցուլը և հորթը ապրում են կողք կողքի, առանց իրենց տեսակը փոխելու, ճիշտ այդպես էլ՝ այդ ժողովուրդները մնացել են մեր հողի վրա առանց փոխելու ազգությունը: Բարենպաստ պայմաններում նրանք նեղել են թուրքերին և առանձնացել նրանցից՝ խլելով հողեր, ինչպես այդ արեցին, օրինակ, ռումինացիները, սերբերը, բուլղարացիները և վերջապես՝ մակեդոնացիները: Մեր ազգային կալվածքում կարող ենք թույլ տալ միայն թուրքի առաջադիմություն և ծաղկում: Մենք պարտավոր ենք մաքրել մեր հողը հնից մնացած ոչ ազգակից ու մնասակար ժողովուրդներից, նրանց մոլախոտի նման արմատախիլ անել: Սա մեր հեղափոխության նպատակն ու նշանաբանն է...»:

Հասան Ֆեհմի. «...Քանի որ հայերի մնասն ապացուցված է, քանի որ մեր նվիրական ԻԹԻՀադ վե թերաքքը կուսակցության դեմ ապստամբել են... այլևս նրանց մեր երկրում տեղ չկա, նրանց, մինչև վերջին անհատը, բնաջնջելն օրինական է... Հիմա պատերազմի մեջ ենք, զենք վերցնելու կարող հայ երիտասարդներին պատերազմի առաջին գիծ կուղարկենք, այնտեղ դիմացից ռուսները, իսկ հետևից, մեր կողմից այդ նպատակով ուղարկված ուժերը, նրանց կրակի մեջ կառնեն և կոչնչացնեն: Հայերի տանը մնացած հիվանդ ու ծեր, կին ու երեխա տարրերին էլ կհրամայենք, որ ոչնչացնեն մեր հավատացյալները: (Հայերի) ունեցվածքը կկողոպտենք, աղջիկներին կառևանգենք»:

Ջավիդ. «Թուրքն այս երկրում միայն անունով է իշխող: Թուրքն արևի կիզիչ ճառագայթների տակ արտում աշխատում է, բերքը բերում և քաղաքի հային է վաճառում, նրան հարստացնում, նրա հանգիստը ապահովում: Տնտեսական իշխանությունը հայի ձեռքին է, հայերի լրիվ բնաջնջումը մեր ազգային քաղաքականության տեսակետից որքան հարկադրական անհրաժեշտություն է, այնքան էլ թուրքերի տնտեսական գերիշխանության համար կարևոր է»[15]:

Ի դեպ, այսպես էր մտածում ոչ միայն Ջավիդը, ոչ միայն թուրքական լայն շրջանները, այլև գերմանական ոչ քիչ թվով հասարակական ու պետական գործիչներ: 1915-ի հոկտեմբերի 9-ին "Frankfurter Zeitung"-ը գրեց. «Շնորհիվ բանական առավելությունների և առևտրական գործերում ընդունակությունների, հայերին հաջողվեց իրենց ձեռքը վերցնել ամբողջ առևտուրը. երբ Թուրքն աղքատանում էր, հայը հարստանում էր: Ահա թե ինչու Արևելքում ամենաշատը չեն սիրում հայերին, և շատ դեպքերում այդ ատելությունը լրիվ հասկանալի է... Չնայած դրան, զարմանալու ոչինչ չկա, որ Անատոլիայի տգետ ժողովուրդը կիսագրագետ կառավարիչների հետ իր ատելությունը տարածեր ամբողջ հայ ժողովրդի վրա և ոչնչացներ թե մեղավորներին և թե անմեղներին: Պետք է ուշադրություն դարձնել նաև այն դժվարություններին, որոնց հանդիպում է թուրքական կառավարությունը Հայկական հարցի լուծման ընթացքում՝ Անատոլիայում հաղորդակցության տանելի ուղիների անբավարար լինելը, իշխանության և դրա ստորին ներկայացուցիչների շրջանում նախաձեռնության խպառ բացակայությունը, ազգաբնակչության վայրագությունը»: Իհարկե, ստորին պաշտոնատարների շրջանում նախաձեռնության բացակայությունը կարող էր պատճառ հանդիսանալ նրանց անգործության համար, եթե մոլեռանդության բռնկում տեղի ունենար ներքևից, սակայն ակնհայտ է, որ հանցագործությունը կազմակերպված էր վերևից: Թերթի ներկայացրած երկրորդ արդարացումը՝ «հաղորդակցության ուղիների բացակայությունը», նույնպես տվյալ դեպքում անհիմն է, քանի որ Թուրքիայի յուրաքանչյուր մեծ քաղաք հեռագրով կապված էր Կ. Պոլսի հետ: Էնվերն ու Թալեաթը հեռագրով էին հրամաններ ուղարկում ենթականերին: Ինչ վերաբերում է հայերի հաջողությանն առևտրի բնագավառում, ապա հավիվ թե հարկ լինի ապացուցելու, որ այն ոչ մեծ թվով խթաններից մեկն էր, որոնք հնարավորություն էին տալիս օսմանյան փտած հասարակությանը քարշ տալու իր գոյությունը:

15 Ռիֆաթ Մ., նշվ. աշխ., էջ 91-101:

Երիտթուրքական վերը նշված նիստերում գնացին բուռն քննարկումներ, տեղի ունեցան մոտեցումների ու կարծիքների բախումներ: Տարակարծիք էր Աղա օղլու Ահմեդը, որն ասաց. «Հայ դաշնակցությունն ինչպե՞ս կարող է ամբողջ հայ ազգը ներկայացնել, կարող է խոստանալ կուսակցությանը պատկանողների անունից, բայց ոչ ամբողջ ազգի: Այդ պատճառով էլ ամբողջ ազգը չի կարող պատասխանատու համարվել: Դուք հայերի մի մասի, այսինքն՝ դաշնակցության հետ եք համաձայնության եկել, մյուս հայերը չէին կարող այդ ընդունած լինել: ...Մեր երկրում բնակվող հայերին համաձայն օրենքի զինվորագրում ենք և կարող ենք նրանց պատերազմի ուղարկել Ռուսաստանի դեմ: Ուրեմն, ռուս-թուրքական պատերազմում հայերի չեզոք մնալու վերաբերյալ դաշնակցական կուսակցության խոստումը ի՞նչ արժեք կարող է ունենալ»: Թալեաթ. « ... Դաշնակցությունը հայտարարել էր, որ ինքն ամբողջ ազգն է ներկայացնում... Եթե մեզ խաբել են, պատասխանատուն մենք չենք, այլ իրենք»[16]:

Հ. Ջահիդը և Կ. Բեմալը նույնպես առաջարկեցին հայերի հանդեպ մեղմ գործողություններ ձեռնարկել: Հալիլը, համաձայն Ս. Ակնունու օգտագործած աղբյուրների, ընդհանուր բնույթի հակահայկական միջոցառումներին դեմ էր, պատճառաբանելով, որ հայերի բնաջնջման պատճառով խաղաղության համաժողովում Թուրքիային «թերևս ավելի ծանր պահանջներ ներկայացնեն»[17]:

Նա գտնում էր, որ տեղահանությունն իրականացնել միայն սահմանամերձ շրջաններից: Հալիլը կրկնում էր Գոլցի տեսակետը, թե Թուրքիան աղետից փրկելու համար «անհրաժեշտ էր, որ ռուս- թուրքական սահմանակից տարածքների՝ Վանի, Բաղեշի, Կարինի հայությունը հեռացվեր և փոխադրվեր Հալեպ և Մեծագետքի կողմերը, իսկ արաբ մահմեդականները փոխադրվեին հայերի տեղերը»[18]:

Թալեաթը բանավեճն ավարտեց հայտարարությունով. «Որպես ներքին գործերի նախարար, հարկ եղած դեպքում, իմ անձնական պատասխանատվությամբ հայերի նկատմամբ գործադրելու եմ այն, ինչ նպատակահարմար կհամարեմ»[19]:

Երիտթուրքերի կենտկոմը միաձայն քվեարկեց հայերի տեղահանության օգտին:

Նիստերում անդրադարձներ եղան տեղահանության և ջարդերի եղանակներին, ճշտվեց այդ միջոցառումներին գործադիր իշխանությունների, բանակի, ոստիկանության, ժանդարմերիայի մասնակցության ձևերը: Աշխատանքի բաժանում կատարվեց, հաստատվեցին տեղերն ուղարկվելիք հրահանգների տեքստերը: Հանձնարարություններ ստացան նաև երիտթուրքական կուսակցության անդամ երեսփոխանները: Տարածվեց մի գրություն, որը խորհրդավոր արտահայտություններով սպառնում էր հայրենիքի դավաճաններին, թե նրանց «պատժելու առաքելությունը հանձնվելու է մահմեդական ժողովրդին»:

Նիստերի ավարտից անմիջապես հետո, փետրվարի 18-ին տեղերն ուղարկվեց հետևյալ շրջաբերական-նամակը, որն այլ բան չէր, եթե ոչ իթիհադի կենտկոմի որոշումների շարադրանք, այդ որոշումները տեղական կուսակցական և պետական մարմիններին հասցնելու եղանակ: Շրջաբերականում ասված է. « Թիւրքիոյ մեջ իթթիհատ վե թերաքքրի քաղաքական կյանքը խափանելու կարող մեկ հատիկ ոյժը հայերն են: Վերջերս Դահիրեեն իրարու հաջորդող լուրերեն կը հասկացուի, որ դաշնակցութիւնը ճամիյեթին (երիտթուրքերի կոմիտեի) դեմ վճռական հարձակում մը կը պատրաստե: Անցեալին ամբողջ պատմական պարագաները, եթե մանրազնին քննենք, պիտի տեսնենք, որ ճեմիյեթին հայրենասիրական ջանքերու ճամբուն վրա յայտնուած բոլոր փոթորիկները հայերուն ցանած խռովութեան սերմերուն արդիւնքն են: Տոքթ. Նազըմ պեյ կը գրե. «Ես ամբողջ Թիւրքիան իթթիհատ վե թերաքքրի մեկ ազտիկ նշանովը ուղած ճամբան մտնելու վիճակին կը հասցնեմ, եթե հայերը չըլլան: Ճեմիյեթը հայրենիքը այդ անիծեալ ցեղին ցանկութենեն փրկելու և այս մասին օսմանեան պատմութեանը քսուելիք արատի պատասխանատվությունը իր հայրենասեր ուսերուն վրայ առնելու որոշում տուած է: Վրեժի շարքերով լեցուն անցեալին նուաստութիւնն ու դառնութիւնները մոռանալու անկարող ճեմիյեթը, իր ապագային մասին յուսալից ըլլալով, Թիւրքիոյ մեջ ապրող բոլոր հայերը, առանց անհատ մը ողջ ձգելու, փճացնել որոշած և այս մասին կառավարութեան ընդարձակ իրավասութիւններ տուած է: Ջարդի կարգադրութեան մասին կառավարութիւնը կուսակալներուն և բանակի հրամանատարութեանց պետք եղած բացատրությունները պիտի տայ: Իթթիհատ վե թերաքքրի բոլոր պատուիրակները իրենց գտնուած տեղերը այս խնդրին հետապնդութեամբ պիտի զբաղին: Ջպիտի թիւլատրուի, որ հայ մը օգնութեան և պաշտպանութեան արժանանայ:

Թողուած գոյքերը, ի վերջոյ, ճեմիյեթին կազմակերպութիւնը ընդարձակելու և հայրենասիրական նպատակներու համար ծախսուելու պայմանով, առ այժմ կառավարութեան յարմար տեսած եղանակով պիտի գրավուին ու պահուին: Այս մասին, եթե պետք տեսնուի, կազմուելիք յանձնաժողովներեն բացատրութիւններ առեք: Մատակարարութեան մեջ գեղծում մը տեսնեք, թե կուսակալներուն և թե մեր մոտ պետք եղած դիմում կրնաք ընել»[20]:

Երիտթուրքերի կենտկոմի նշված նիստերում փորձ արվեց ձևավորել համապարփակ տեսակետ՝ սկսած թուրքերի էթնիկական հիմնահարցերից, կայսրության պատմության առանցքային հարցերից մինչև ապագային առնչվող բազում ու բազմատեսակ խնդիրների վերաբերյալ: Դրանցից առաջինը թուրքերի լայնախոհության և հպատակ ժողովուրդների ապերախտության վերաբերյալ մոտեցումն էր և սուլթանների ազգային քաղաքականության գնահատականը: Երիտթուրքերը միակարծիք էին, որ սուլթանները հպատակ ժողովուրդներին մարդկության պատմության մեջ նախադեպը չունեցող լայն ինքնավարություն էին տվել, որի շնորհիվ այդ ժողովուրդները ոչ միայն հարատևեցին, ազգային-մշակութային զարգացում ապրեցին, այլև հզորացան և «պատեհ ափթով մերժեցին թուրքական տիրապետությունը և կայսրությունից պոկած տարածքների վրա անկախ պետություններ ստեղծեցին: Սուլթանները որևէ քայլ չեն կատարել ազգային առումով կայսրությունը միատարր դարձնելու ուղղությամբ»: Այս թեզը պատմագրության կողմից հիմնավորապես մերժվել է և հազիվ թե դրան կրկին անդրադառնալու անհրաժեշտությունը կա: Միայն նշենք հետևյալը, ազգային-կառավարչա-մշակութային այն կառույցները, որոնք հռչակվում էին «սուլթանական ժողովրդավարության, արդարության և անաչառության» խորհրդանիշներ, այլ բան չէին, եթե ոչ մահմեդական անհանդուրժողականություն և իրավազուրկ ռայայի շահագործումից առավելագույն օգուտ ստանալու ձգտման արտահայտություն: Թուրք պատմաբանները ափթը բաց չեն թողնում նաև կրկնելու, թե սուլթանները կայսրության հպատակ ժողովուրդներին զանազան արտոնություններ են տվել: Իրականում վերջինները արտահայտությունն էին այն արհամարհանքի, որը տածում էր թուրքը ոչ մահմեդականի հանդեպ: Ինչո՞ւ օտարերկրացիներին իրավունք էին տվել ունենալու իրենց դատարանը, բանտը, փոստը և այլն, որովհետև նրանք «քրիստոնյա ազգերին համարում էին պիղծ»՝ անարժան օգտվելու օսմանյան հիմնարկներից: Նույնը նաև միլլեթների համակարգը, որով ոչ թե ձգտում էին զարկ տալ հպատակ ժողովուրդների զարգացմանն ու բարօրությանը, այլ, որովհետև նրանց համարում էին գարշելի, օսմանական վարչակազմին անարժան: Հպատակների հանդեպ արհամարհանքն ու ատելությունը ներծծված է յուրաքանչյուր թուրքի արյան մեջ: Ուրիշ բան է, որ սուլթանական այդ քաղաքականությունը, մասնավորապես միլլեթների համակարգը, Հայ ազգային սահմանադրությունը, արևմտահայերի կյանքում խաղացին նաև դրական դեր: Նշված և մի քանի այլ միջոցները համարվեցին առանձնաշնորհումներ և սկսեցին դրանք հետ վերցնել՝ դպրոցները փակեցին կամ թուրքացրեցին, ոչ թուրք առևտրական հաստատություններում թուրքերին աշխատանքի խցկեցին, ապա հարկադրեցին, որպեսզի այդ հաստատությունների փաստաթղթերը կազմվեին թուրքերեն, ամենուրեք մտցրեցին թուրքերենի մենիշխանություն և այլն: Նախկին սուլթանները, գրում է Մորգենթաուն, «հպատակ ժողովուրդներու հետ կը վարուեին իբր իրենց ոտքին տակի ցեխը, բայց նորեն հավատք ունեին, թե անոնք որոշ օգտակարութիւն մը ունեին և չէին արհամարհեր զանոնք իրենց ստրուկները դարձնել: Բայց Միութիւն և առաջադիմութիւն քոմիթեն... որոշեց զանոնք ամբողջովին մեջտեղեն վերացնել»[21]:

Թրքացման քաղաքականության հայրը «մեծագույն հրեշներից մեկն էր՝ Կարմիր սուլթանը», որը կայսրության «փոքրանալու», դրա անկման վտանգի պատճառը համարում էր հպատակ ժողովուրդների խնդիրներով մեծ տերությունների միջամտությունը Թուրքիայի ներքին գործերին: Օսմանյան հպատակներից կայսրության մեջ շարունակում էր մնալ «համախումբ ցեղ մը, որ ազգային ցանկութիւններ և ազգային զորութենականութիւններ ուներ»[22]:

16 Ռիֆաթ Մ.՝ նշվ. աշխ., էջ 94:
17 Միլիոն մը հայերու ջարդի պատմությունը. 1914-16, Կ. Պոլիս, 1920, էջ 28.:
18 Տերտերեան Ի. Հայկական գոյամարտը, Թեհրան, 1957, էջ 229-230:
19 Ակնունի Ս., նշվ. աշխ. էջ 187-188:

20 Անտոնեան Ա., նշվ. աշխ., էջ 129-133:
21 Մորգենթաու Հ., նշվ., աշխ., էջ 236:
22 Ն .տ., էջ 237:

Հայերն էին, երկրի՝ Հայաստանի, բնիկները, ովքեր Հայտնի էին «իրենց ճարտարուեստով, իրենց ուշիմութիւնով և կանոնապահ կեանքով: Անոնք իմացականապես և բարոյապես» շատ են գերազանցում Թուրքերին: Աբդուլ Համիդը մտածեց, թե «իր ամենեն տկար կետը Հայաստանն էր»: «Եվ անկե եւոք, մոտավորապես 30 տարի, Թիւրքիոյ աշխարհը ներկայացուց ջարդով կառավարելու պատկեր մը... Եվ ամբողջ այդ տարիներու ընթացքին հայերու կյանքը շարունակական մղձավանջ մը եղավ»[23]:

Սուլթանի գործը շարունակեցին երիտթուրքերը, որոնք և ստանձնեցին արևմտահայությանն ամբողջովին բնաջնջելու գործը: Դ. Լանգը գտնում էր. «Զանգվածային սպանությունները մեծ չափով հանդիսանում էին ցեղասպան քաղաքականության գործնական արտահայտություն...»[24]: Ու նաև ծավալապաշտություն, ինչպես Հալիդե Էդիպն էր սահմանում. «Հայաստանն ու Վրաստանն էլ միացվելու էին միացյալ Թրքական պետությանը»[25]: Նրան արձագանքեց երիտթուրք գործիչ Մ. Նեջիբը. «Մեր երկրում ապրող տարրերը շատ տարասեռ են, իրարու խորթ և կայսրության գոյության համար պարտադիր է խիստ կենտրոնացում կամ միատարրություն»: Շատ ավելի որոշակի է արտահայտվել Թալեաթը 1915թ. հունվարին. «Ապագայում թուրքական կայսրությունում տեղ կունենան միայն թուրքերը»[26]:

Վավերագրերը, վկայությունները, հենց իրենց՝ երիտթուրք պարագլուխների արտահայտած կարծիքները, հրամանները, հեռագրերն ու ծածկագրերը հաստատում են, որ Օսմանյան կայսրությունում բնաջնջումը պետական քաղաքականություն էր, և այն թելադրված էր ոչ թե ռազմական անհրաժեշտությամբ կամ հայերի «դավաճանական կեցվածքով», այլ կայսրությունն ու թրքությունը նոր հիմքի վրա վերածնելու նպատակադրմամբ: «Խնդիրը ոչ թե պատահական սպանությունների, այլ իշխանությունների կողմից նախապես մշակված զանգվածային բնաջնջման մասին է»,- գրել է Հալեպում գերմանացի հյուպատոս Ռեսլերը: Պատահական չէ, որ տեղահանությունը կյանքի կոչեց իթիհադի գաղտնի կենտկոմը, որը ձգտում էր ստեղծել «Համաթրքական, համաիսլամական մի պետություն,- գրում է Լեփսիուսը,- որտեղ քրիստոնյաները տեղ չէին ունենալու... Էնվեր փաշան էր հղացել...» այդ գաղափարը: Հ. Դիպենգին գտնում էր, որ «Աղանայի ջարդը առաջին փորձն էր նրանց կողմից, որոնք յուրացրեցին Աբդուլ Համիդի քաղաքականությունն ու միջոցառումները, երբ հափշտակեցին հայերին բնաջնջելու առաջնությունը: Այն օրերին ես մեկից ավելի երիտթուրքերից լսեցի, թե հայկական հարցին վերջ տալու լավագույն ձևը հայության ոչնչացումն է»[27]:

«Բոլոր հայերը ֆիդայիներ են և նրանց բոլորին պետք է ոչնչացնել»,- հայտարարեց երիտթուրք գործիչ Ալի Ռիզան[28]: «Եթե ջարդ լինի,- ասաց Բեդրին,- ապա այն չի լինի Աբդուլ Համիդի ժամանակ կատարվածի նման, ոչ մի հայ չի մնա»[29]: Մի երիտթուրք գործիչ իր ծանոթ հային. «Այս կայսրությունում թե մեր և թե ձեր համար տեղ չկա և աններելի թեթևամտություն կլինի, եթե մենք չօգտվենք պատերազմից՝ ձեզանից ազատվելու համար»[30]: Մեծապետական, ազգայնամոլական մոլեռանդության ալիքների վրա իրենց դրախտում էին զգում սրիկաները, բախտախնդիրները, «հանուն ազգի» հարստություն դիզողները:

Երիտթուրք պարագլուխները հասկանում էին, որ համաշխարհային հանրությունը, նույնիսկ շատ թուրքեր չէին հասկանա ժողովրդի բնաջնջումը, եթե դրա համար չկար ավելի քան ծանրակշիռ պատճառ: Ընդ որում, պատճառը պետք է այնպիսին լիներ, որը շոշափեր յուրաքանչյուր թուրքի շահերը, նրա անվտանգությունը: Այդ նպատակով հրապարակ նետվեց մարդատյաց երկընտրանք՝ եթե թուրքերը չոչնչացնեն հայերին, ապա հայերն են ոչնչացնելու թուրքերին: Նշված միտքը այս կամ այն չափի որոշակիությամբ տեղ ուներ իթիհադի բոլոր գործիչների ելույթներում և

23 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 239:
24 Lang D. The Armenians: A people in exile London, 1980, p.1.
25 Գանգրունի Հ., Հայ յեղափոխությունը Օսմանեան բռնատիրութեան դեմ. 1890-1910, Բեյրութ, 1973թ., էջ 301:
26 "El Dia", հունվար, 1915:
27 «Ապագա», 10-ը հունիսի 1985:
28 Ներկայան Ա. Կտակն էր նահատակներուն, Բեյրութ, 1965, Երևան,1992, էջ 87:
29 Լեփսիուս, նշվ. աշխ. , էջ 283:
30 «Ցուշամատեան Մեծ եղեռնի», էջ 1077:

հրապարակումներում, բայց առավել հստակ արտահայտել են Թալեաթը, Նազիմը, Բ. Շաքիրն ու Դիարբեքիրի վալի Ռեշիդը, որը շատ կարճ ժամանակում հայկական ջարդերի հարցում դարձավ Թալեաթի աջ ձեռքը, նրա փաստացի տեղակալը: Ահա թե ինչպիսին է այդ արյունախում գործչի մտքի ընթացքը. «Երկու հավանականություն կայ... կամ հայերը թիւրքը պիտի մաքրեն, կամ թե թիւրքերուն կողմե պիտի մաքրագործուին: Այս երկընտրանքը ընելու (լուծելու) անհրաժեշտությեան առջև երկար ատեն չվարանեցայ: Թրքությունը հաղթանակեց բժշկությեանը: «Փոխանակ թույլ տալու, որ անոնք մեզ բնաջնջեն, մենք զանոնք կը բնաջնջենք»,- ըսի... Բայց այս գործը տեսայ ոչ անձնական հպարտությեանս գոհացում տալու, ոչ ալ գրպանս լեցնելու համար: Տեսայ, որ հայրենիքը ձեռքե կելլե, իսկոյն աչքս գոց յառաջ նետուեցայ՝ համոզուած, որ հօգուտ ազգիս կը շարժիմ... Եթե այս ընթացքիս հետևանքով մեր պատմությունը զիս պատասխանատու նկատե՝ այժմեն կընդունիմ: Բայց ուրիշ ազգերու պատմությունը իմ մասին ինչ-որ ալ գրե՝ փույթս չէ»[31]:

Քաղաքական սրիկային և փողոցային աճպարարին վայել մտածողություն: Նա հանրահայտ էր հարստանալու իր անհագ ախորժակով և հնարավոր ու անհնար բոլոր միջոցներով օգտագործում էր իր պաշտոնական դիրքը հարստություն կուտակելու համար: Նա Դիարբեքիր գնաց երկու պայուսակով, բայց վերադարձավ երկու վագոնով՝ լցված հայերից թալանված ապրանքներով: Նա իր հետ տարավ 43 տուփ գոհարեղեն և երկու սնդուկ թանկարժեք քարեր: Այդ վկայել է ականատեսներից մեկը. «Անձամբ տեսա, երբ հասավ Հալեպ...»: Իթիհադի ընդհանուր քարտուղար Միդհատ Շուքրին գրում է, որ Ռեշիդը հայերին անվանում էր «մանրէ» և ավելացնում. «Բժշկի պարտականությունն է մանրէները՝ ոչնչացնել»[32]:

Այդ բժիշկ հրեշը հայ բանտարկյալների սիրտը շիկացած երկաթ էր մտցնում, նրանցից երիտասարդներին պայտում էր, 800 երեխայի հավաքեց ու այրեց: Երբ Ռեշիդին հարցրեցին կատարած գազանությունների մասին, պատասխանեց. «Ջարդերի հրամանը ստացել եմ ՆԳ նախարար Թալեաթից»[33]:

Երիտթուրքերի կենտրոնը՝ ամրագրեց, գործողության նպատակ դարձրեց՝ երևան չհանել կոտորածների հարցում իրենց գլխավոր նպատակը՝ հայերի բնաջնջման միջոցով սեփականացնել նրանց հայրենիքը: Ա. Թոյնբին իթիհադի կենտրոնի ընդունած ծրագրի իմաստը համարում է Օսմանյան կայսրությունում բնակվող ողջ քրիստոնյա բնակչության ոչնչացումը: Պատերազմի ժամանակ օսմանյան կառավարությունն ազատվել էր այն թեթև վերահսկողությունից, որ եվրոպական պետությունները կարողացել էին մինչ այդ գործադրել: «Կապիտուլյացիաների վերացումը խորտակել էր այդ օրինական խոչընդոտը, որ բարձրացրել էին մեծ պետությունները և որի հետևում թուրքական կայսրության հպատակ քրիստոնյաները գտել էին ավել կամ նվազ անվտանգ ապաստան: Ուրեմն թուրքական կառավարությունը հարկադրված էր սպասել հարմար առիթի, որպեսզի տար բնաջնջման ազդանշան»[34]:

Ճիշտ է, Թոյնբին գերագնահատում է տերությունների ազդեցության ուժի ու շահագրգռվածության դերը թուրքերի ջարդարար հակումները զսպելու գործում, սակայն այն, ինչ նա ասում է, պարունակում է ճշմարտության զգալի չափաբաժին:

1915թ. փետրվար-ապրիլը հանդիսացան արևմտահայերի ամբողջական բնաջնջումն իրականացնելու համար քաղաքացիական, ռազմական իշխանությունների և իթիհադի տեղական մարմինների հրահանգավորման, կազմակերպական համապատասխան կառույցների ձևավորման և գործելակերպի ճշգրտման ամիսներ: Կ. Պոլսից ծածկագրերի հեղեղ էր հոսում վիլայեթները: Ահա դրանցից մեկը, որը ոչ ամսաթիվ ունի և ոչ էլ հայտնի է հեղինակը: Այն միանգամայն հստակ է պատասխանում հարցին, թե երբ է մտահղացվել բնաջնջումը: «Դարեր ի վեր պետության ամուր հիմքեր քանդել ցանկացող և կառավարության համար խոշոր փորձանքի նշանակություն ստացած հայ տարրի բնաջնջումը թեև մշտապես մտադրված էր, բայց ժամանակի հանգամանք-

31 Նալչեան Հ. Ցուշեր: Մերձավոր Արևելքի 1914-28թթ. շրջանի կրոնական-քաղաքական դեպքերի մասին, Բեյրութ, 1960, էջ 629:
32 «Հայրենիք», 24.01.1987, Վ. Տատրյանի «Թուրք բժիշկների դերը առաջին աշխարհամարտին օսմանեան հայերու ցեղասպանութեան մեջ», ուսումնասիրության գրախոսություն, 1986:
33 Nogales R., Vier jahie unter dem Halbmand, Berlin, 1925, s.147.
34 Toynbee A. J.. Les massacres armeniens, Paris,1916, Տե՛ս «Ցուշամատեան Մեծ եղեռնի», էջ 1034-1035.

ները հնարավորություն չէին տալիս իրականացնելու այս սրբազան մտադրությունը: Ներկայումս բոլոր խոչընդոտները վերացել են և հայրենիքը այդ մնասակար տարրից փրկելու ժամանակը եկած համարելով, որպես կարևոր խնդիր հանձնարարվում է, որ նրա արգահատելի վիճակի հանդեպ գութի զգացմունքներին չհանձնվեք և նրա գոյությանը վերջ տալով, աշխատեք, որպեսզի Թուրքիայում հայ անունն իսկ չմնա: Ուշադրություն դարձրեք, որպեսզի այդ նպատակն իրականացնող պաշտոնյաները հայրենասեր և վստահելի մարդիկ լինեն»[35]:

Հայերին խաբելը, չփոթեցնելն ու հանկարծակի բերելն երիտթուրքական ցեղասպան ծրագրի կարևորագույն բաղադրիչն էին: Ցոզլատի կայազորի հրամանատար Սալիմը ռազմական դատարանում ցուցմունք տվեց. «1915թ. մարտի 5-ի գաղտնի հրամանագրի մի հոդվածն ասում է, որ խժդժություններ գործադրվեն մանավանդ այն տեղերում, որտեղ գործնականում հարձակման նշաններ չկան և այդպիսով նրանց (հայերի) մեջ համոզում ստեղծել՝ ովքեր հավատարիմ են, չարիքի չեն ենթարկվի»[36]:

Ցեղասպանության իրականացման գործում առանձնահատուկ նշանակություն էր տրվում 4 կետերի՝ Կ. Պոլիս, Կիլիկիա, Վան և Հալեպ: Վերջինս նշանակված էր որպես բանագաղթի նախնական հանգրվան: Այս վիլայեթից էին տարագրյալներն ուղարկվելու աքսորյալների երթուղիների վերջնակետերը: Իսկ որպեսզի Հալեպը կարողանար այդ խնդիրը լուծել, անհրաժեշտ էր Աղանայի իշխանությունների եռանդուն աջակցությունը: Թերևս նաև դրանով է բացատրվում հեռագրերի ու ծածկագրերի այն առատությունը, որոնք հասցեագրված էին այդ վիլայեթների ղեկավարներին: Դրանց թվին է պատկանում մարտի 25-ի հեռագիրը Աղանայի պատվիրակ Ջեմալին. «Դարերի ի վեր պետութեան քաղաքակրթական յառաջադիմութեանց արգելք եղող ծանօթ տարրերուն գոյութիւնը ջնջելու մտադրութիւնը՝ քաղաքական արգելքներե զերծ ընդարձակ սահմանի մը մեջ ապահովելը ամենուս պարտականութիւնն է: Ասոր համար՝ «ինչ կուզե ըլլայ» ըսելով, պետք է ամբողջ պատասխանատուութիւնը ստանձնենք, և կառավարութեան ընդհանուր պատերազմին մասնակցութիւնը որքան մեծ զոհողութեան մը հետևանքն ըլլալը գնահատելով, պետք է աշխատինք ձեռնարկուած միջոցները պահանջուած արդյունքներուն հասցնել:

Ինչպես 18 փետրուարի 1915 թուակիր նամակին մեջ յայտնուած էր, Ճեմիյեթը ասկե վերջ իր ջանքերուն ճամբուն վրայ տարիներ ի վեր իրեն հետ ընդհարուող զանազան ոյժերը հիմեն քանդելու և փճացնելու որոշում տուած և այս մասին դժբախտաբար շատ արիւնոտ միջոցներ ձեռք առնելու ստիպուած է: Վստահ եղեք, որ այս միջոցներուն զարհուրանքը երևակայելով մենք ալ կը զգացուինք, բայց Ճեմիյեթը, իր հավիտենական գոյութիւնը ապահովելու համար ասկե զատ ուրիշ ճամբայ չի տեսներ... Ծանոթ անձնավորութեանց (հայերի) մասին եղած ձեռնարկները մինչև որ չարդիւնավորուին, միւսներուն (հույների, արաբների, սիրիացիների) հետ զբաղիլը չիտակ չէ: Առ այժմ (մտավորականներին, երևելի, ազդեցիկ անձանց) օրինական միջոցներով պատժուիլը յարմար տեսնուած է, ինչ որ ապագայ գործողութեանց մեկնակետը պիտի ըլլայ: Թողուած գոյքերուն խնդիրը դարձեալ ձեր յիշողութեան կը ներկայացնեմ: Շատ կարևոր է: Մատակարարութիւնը ձեր աչքեն հեռու մի բռնեք: Միշտ հաշիվները, գործողութեան եղանակները քննեցեք: Ճամբայ ելլելու օրերնիդ ալ գիտցուցեք»[37]:

Գնալով ծածկագրերի բովանդակությունն ավելի որոշակի ու արյունռուշտ էր դառնում: 1915թ. մարտին մի ծածկագիր պահանջում է. «Թուրքիայում ոչ մի հայ ողջ չպետք է թողնվի և նրանց ունեցվածքը պետք է գրավվի»[38]:

Բանակի հրամանատարությունն ապրիլի 12-ին ծածկագրեց՝ ցրել 4-րդ բանակի գոտում եղած հայկական խմբավորումները և այդ անել առաջին հերթին Դորթյոլում, Ալեքսանդրեթում ու դրանց շրջակայքում: Այդ հրամանով փակվում էր Միջերկրական ծովի միջոցով հայերի կապն արտաքին աշխարհի հետ և պահանջվում էր տարագրված հայերի բնակարաններում տեղավորել մահմեդական գաղթականների: Հայերին վտարել այն բնակավայրերից, որոնք գտնվում են հայկական միավորումների մերձակայքներում:

35 Անտոնեան Ա., նշվ. աշխ., էջ 26:
36 Դիվան Երուսաղեմի, N Մ574-Մ577:
37 Անտոնեան Ա., նշվ. աշխ., էջ 134-137:
38 Ղազարեան Հ., նշվ. աշխ., էջ 117:

Սակայն ակնհայտ է, որ իթիհադի գլխավոր հոգը ոչ թե ընդհանրապես արևմտահայության, այլ Արևմտյան Հայաստանի հայության ոչնչացումն էր: Բնաջնջման երիտթուրքական կոնցեպցիան հանգամանալից շարադրված է նաև ապրիլի 15-ի փողոցային և սադրիչ հրահանգում. «Գերապատվելի նահանգապետներին, մեծահարգ գավառապետներին և հարգելի գյուղական իշխանություններին.

Ձեզ հայտնի են այն անողոք քաղաքական պատճառները, որոնց ճնշման տակ հզոր օսմանյան տերությունը և թուրք մեծ ժողովուրդը, Գերմանիայի և Ավստրիայի հետ միասին, պատերազմի մեջ մտավ ընդդեմ Եռյակ համաձայնության: Այդ ճակատագրական պատերազմից հաղթող դուրս գալու համար յուրաքանչյուր մահմեդական և թուրք, որոնց առաջ է մղում միևնույն սուրբ նախախնամությունը, մեկ մարդու պես պետք է ոտքի ելնեն ընդդեմ ստոր ու անհավատ թշնամիների և հենարան դառնան մեր քաջ ու իմաստուն ղեկավարների և բանակի համար, որը այնպես հերոսաբար, կրքով պաշտպան է կանգնած ծովերում ու ցամաքում, հաղթական պատերազմ մղելով ընդդեմ նենգ թշնամիները: Դիվանագիտությունը, նկատի ունենալով այս պատերազմի բնույթն ու ելքը, անկախ այն բանից՝ դա կլինի մեզ համար բարենպաստ թե անբարենպաստ, սահմանել և պատմականորեն ապացուցել է, որ մեր դեմ պատերազմող և առաջին անգամ համախումբ ռուսական և անգլիական պետություններից մեկն ու մեկը մեզ հետ դաշնակցած պայքարել է մյուսի դեմ, որպեսզի պաշտպանի մեր հողը... Որովհետև գոյություն ունեն ծովերի թագուհի Կոստանդնուպոլիսը և Հնդկաստան տանող ցամաքային ուղին՝ արևելյան վիլայեթները, որոնց զավթումը նրանցից մեկի կողմից՝ մահ է մյուսի, մանավանդ Անգլիայի համար: Հաղթության դեպքում նրանք կարող են համաձայնության գալ... գտնելով այնպիսի մի ժողովուրդ, որը ի զորու լիներ ծառայել նրանց շահերին, որպեսզի իրենք կարողանային միմյանց հետ խոսել այդ ժողովրդի անունից: Աստված մի արասցե, բայց մեր պարտութեան դեպքում հաշտության բանակցություններում ինքնըստինքյան հրապարակ կգա Հայկական հարցը, որն արդեն կես դարից ավելի է, ինչ միջազգային հանգամանք է դարձել և սպառնալի խրվել է մեր կուրծքը: Հետևաբար մեր հայրենիքը, ազգը, պետությունը և կրոնը այդպիսի վտանգի հնարավորությունից պաշտպանելու համար, կառավարությունը, որը ներկայացնում է իսլամ ու թուրք ժողովուրդը և Միություն և առաջադիմություն կոմիտեն, նպատակ ունենալով բոլոր միջոցներով կանխել որևէ մի տեղ և որևէ ձևով Հայկական հարցի առաջադրումը, օգտվելով այն անկախությունից, որ մեզ ընձեռել է պատերազմը, որոշեց վերջնականապես վերջ դնել այդ հարցին, հայերին քշել արաբական անապատները, բնաջնջելով այդ խորթ տարրը, համաձայն տրված գաղտնի հրահանգի: Այդ իրագործման համար պատրվակ են. ա) Հայկական կամավորական ուժերը, որոնք ծառայում են թշնամական բանակներում, բ) Երկրի ներսում գոյություն ունեցող կուսակցությունները, որոնք կազմակերպվել են մեր բանակի թիկունքին հարվածելու նպատակով, գ) Երկրում ամենուրեք հայտնաբերված և բռնված անհամար քանակությամբ զենքն ու զինամթերքը: Այսպիսով, կառավարությունը և իթիհադի կենտրոնական կոմիտեն դիմում են ձեր հայրենասիրությանը և հրամայում տրամադրության տակ եղած բոլոր ուժերով աջակցել Միության և առաջադիմության տեղական մարմիններին, որոնք ապրիլի 24-ին արևածագի հետ, գաղտնի հրամանով, կձեռնարկեն այս հրահանգի կատարումը: Ամեն մի պաշտոնական կամ մասնավոր անձ, որը կընդդիմանա այս սրբազան և հայրենասիրական գործին և չի կատարի իր վրա դրված պարտականությունները կամ որևէ ձևով կփորձի պաշտպանել կամ թաքցնել այս կամ այն հային, կճանաչվի հայրենիքի ու կրոնի թշնամի և համապատասխան դրան կպատժվի»[39]: Հրահանգը ստորագրել էին Թալեաթը, Էնվերն ու Նազիմը:

«Կառավարությունը որոշել է ներկա վիճակին վերջ տալ,- 1915թ. ապրիլին ասաց Թալեաթը,- մի վիճակ, երբ յուրաքանչյուր կրոնական համայնք կարող է քաղաքականություն վարել ու նաև ինքնուրույն քաղաքական միություններ հիմնել և դրանց օժանդակել: Թուրքիայում պետք է վարվի միայն օսմանյան քաղաքականություն»[40]:

Թուրքական տեսակետները անվերապահ ընդունելություն և համերաշխություն էին գտնում Գերմանիայի պաշտոնական շրջաններում ու կառավարամետ մամուլում: Տրապիզոնում գերմանական հյուպատոսի տեղեկագրերից մեկում նույնպես ջարդերն արդարացվում են պատճառաբանությամբ, թե «հայերը դավաճանում էին թուրքական կառավարությանը և գաղտնի ճգնում ու օժանդակում էին ռուսներին»[41]:

39 ՀՀ ՊՊԿԱ, ֆ.314, ց.12, գ.23, թ 1-3 կամ Ա. Քոչեյան Կարմիր դրուագներ հերոսներու կեանքեն. 1915-18, հ. Ա, Բուխարեստ, 1938, էջ 63-35:
40 FO Turkye, 183,Bd 36, Վանգենհայմի 30.04.1915 N267 տեղեկագիր:
41 Կայզերական Գերմանիայի արտ. գործերի նախարարության քաղաքական արխիվ, R1409, Ab10616, Գերմանական արխիվների նյութերի զգալի մասը վերցված է «Армянский вопрос и геноцид армян в Турции» փաստաթղթերի ժողովածուից (Վ. Միքայելյան), Երևան, 1995:

"Deutcher toges zeitung" թերթում է. Ռևենդովը գրեց. «Թուրքիան ոչ միայն իրավունք, այլև պարտականություն ուներ պատժելու ըմբոստ և արյունի ծարավ հայերին»: Գերմանական մամուլը ճգնում էր ապացուցել, թե հանցավորը հայերն էին: «Հեղափոխական հայերն են, որ Ռուսաստանի և մանավանդ Անգլիայի դրդումով պատրաստեցին ապստամբություններ և լրտեսեցին: Թուրքերը լոկ վրեժ լուծեցին: Գործադրեցին կառավարողի իրենց իրավունքը և ճնշեցին հայկական շարժումն առանց ջարդելու»[42]: «Ապացուցված է,- գրում է Բրադերը,- որ Անգլիան Ռուսաստանի և Ֆրանսիայի օգնությամբ Հայաստանում կազմակերպեց բազմաթիվ դավադրություններ, նպատակով՝ երբ դաշնակիցները Դարդանելից ներս մտնեին, ընդհանուր ըմբոստություն պետք է պայթեր: Դժբախտաբար ապստամբությունը բռնկվեց ավելի վաղ...»: Ռևենդովն այս միտքը շարունակում է. «Պետք է որ գերմանացիները գոնե հասկանան, թե որտեղից են գալիս հայկական խժդժությունների մասին լուրերը: Պետք է ընդունել, որ մեր գործը չէ խղճալու հայ հեղափոխականներին և վաճառականներին... որոնք մեծ վտանգ են ներկայացնում մեր հավատարիմ թուրք դաշնակիցների համար և, որոնք մեր մահացու թշնամիների՝ Ռուսաստանի և Անգլիայի ձեռքին գործիք են: Եթե թուրքերը կորովի չպաշտպանվեին, ապա ինչպես իրենց, այնպես էլ իրենց դաշնակիցներին մատուցած կլինեին շատ վատ ծառայություն»[43]: Նա ուղղակի հայտարարեց, «Եթե Բ. Դուն անհրաժեշտ է համարում, որպեսզի բոլոր միջոցներով ճնշվի հայերի ապստամբությունը և բացառվեն դրանց կրկնվելու հնարավորությունները, ապա նման ճնշումը ոչ թե «սպանություն» կամ «դաժանություն» է, այլ արդարացի և անհրաժեշտ միջոց»[44]:

Գիբբոնսն այսպես է նկարագրում իրադարձությունները. «1915-ի ապրիլին Կ. Պոլսից հրաման ուղարկվեց Փ. Ասիայի իշխանություններին՝ ձեռնարկել բոլոր միջոցները կանխելու» և ճնշելու հայերի հնարավոր ապստամբությունը: Հրամանում ասված էր, որ հայերը սպառնում են կայսրության անվտանգությանը և դրա համար էլ, պետության պաշտպանության նպատակով, անհրաժեշտ է կիրառել ամենախիստ քայլեր՝ թշնամուն անվտանգ դարձնելու համար: Պաշտոնատար անձանցից ոմանք պատասխանեցին, թե հայերի վարքագծում իրենք կասկածելի ոչինչ չեն նկատել, և կառավարությանը հիշեցրեցին, որ հայերն ավելի քան անվտանգ են՝ նրանք անզեն են, իսկ առավել առողջ և ուժեղ տարրերը զորակոչված են... Սակայն բողոքողները շուտով պաշտոնազրկվեցին, իսկ մեծամասնությունն ուրախությամբ արձագանքեց Կ. Պոլսի ցանկությանը[45]:

Ա. Մանդելշտամը դիպուկ է ներկայացնում «հայերի ապստամբությունների» վերաբերյալ սադրանքները: «Այն դեպքում,- գրում է նա,- երբ հայերը զենքերը հանձնում էին, Կ. Պոլիս զեկուցում էին, որ «դավադրություն է բացահայտվել», իսկ երբ զենք չէր հայտնաբերվում, այնքան էին խոշտանգում, որ հայերը հարկադրված մահմեդականներից զենք էին գնում և հանձնում իշխանություններին»:

Հայկական ապստամբության մասին երիտթուրքական պնդումը շարունակում էր մնալ հայկական ջարդերն արդարացնելու թուրքական պատճառաբանություններից գլխավորը: Ուստի պատահական չէ, որ նրանք ամեն ինչ անում էին «հայկական ապստամբություն» մոգոնելու և դրանով իրենց կատարածի հրեշավորությունն արդարացնելու համար: Էնվերը 1915թ. հուլիսի 14-ին հրաման ուղարկեց բանակի հրամանատարներին. «Բացարձակապես անհրաժեշտ է օրեօր հավաքել ու պահել բոլոր ապացույցները, բոլոր վավերագրերը, որոնք բնույթ ունեն աշխարհի առաջ արդարացնելու այն միջոցները, որ որդեգրել ենք խորտակելու համար հայ հեղափոխական շարժումը, որպեսզի դրանք հրատարակվեն գրքույկներով»[46]: Ի կատարումն վերադասի կարգադրության, Աղանայի վալին 1915թ. ապրիլի 17-ին հանձնարարում է ոստիկանությանը. «... Կոմիտեին (հայ կուսակցություններին) պատկանող և ձերբակալության ենթակա մյուս անձանց, նրանց մոտ եղած ռումբերով և արգելված զենքերով հավաքաբար և մեծ չափերով լուսանկարեք և լուսանկարներն անմիջապես ուղարկեք»: Աղանայի Բամու քաղաքի պահակատան արաբ կոմիսար Իբրահիմը հայ ոստիկանապետին պատմել է, որ «կառավարության հրահանգով

42 «Ցուշամատեան Մեծ եղեռնի» , էջ 1070:
43 Ն. տ., էջ 1071:
44 "Армянский вестник", 1916, N2.
45 Гиббонс Г. Последние избиения в Армении. Факты и ответственность, Петроград, 1916, стр. 18-24.
46 Դիվան Երուսաղեմի, N3602:

հավաքել են բոլոր պահակներին, աղբահավաքներին, գիշերապահներին, բեռնակիրներին և նման այլ թուրքերի, նրանց հագցրել հայ ֆիդայու տարազ, իրար վրա կույտով թափել են պետական զինանոցից բերված պահեստային հին զենքերը ... իբր հայերից բռնագրավված զենքեր և այդ ամենը լուսանկարել են տվել»[47]: Ոչ միայն Թալեաթն ու Էնվերը, այլև վալիները, զինվորական հրամանատարները, բոլոր մակարդակների կառավարիչներն անդադար հանձնարարում, հրամայում էին իրենց ստորադասներին, որ հավաքեն ու պահեն հայերի «խռովությունները» հաստատող բոլոր տեսակի ապացույցները: Էնվերը պահանջում էր ամեն ամիս գլխավոր շտաբ ուղարկել հայերի «ապստամբական-դիվերսիոն գործունեության մասին վավերագրեր, վկայություններ, լուսանկարներ, դեպքերի նկարագրություններ: Նա պահանջում էր, որպեսզի յուրաքանչյուր զորամաս հատուկ մատյան պահի նման նյութերը հավաքելու և գրանցելու համար»: Ֆ. Ղոսեյնը վկայում է, որ «թուրքերը սպանված հայերին քրդական տարազ էին հագցնում՝ ապացուցելու, որ դա հայերի գործն է»: Որոշ տեղերում նույն նպատակով հայերին թուրքի հագուստ էին հագցնում: Աշխատում էին տպավորություն ստեղծել, որ կոտորողները ոչ թե թուրքերն ու քրդերն էին, այլ հայերը: Այդ նյութերը օգտագործվում էին հայ-թուրքական և հայ-քրդական առճակատումն ավելի սրելու համար[48]:

Տեղերում, դժվարությամբ, բայց ի վերջո գլխի ընկան, թե Կ. Պոլիսն իրենցից ինչ է պահանջում և սկսեցին բռնություններին ենթակա հայերին կնքել «ապստամբ կամ լրտես» մականուններով ու իրենց բռնարարքները ներկայացնել որպես «ապստամբների ու լրտեսների դեմ պայքար»: Կեսարիայի բանակային գնդի հրամանատար Խուլիսը 1915թ. փետրվարի 19-ին հեռագրում է Ցազը Զինի գիշերային կայանի հրամանատարին. «Ձեր իրավասության տակ գտնվող շրջաններում մատնություն անող մի շարք լրտես հայեր տեղահանված են, այսինքն՝ կոտորածի իմաստով: Իսկ զորաբանակի հրամանատարը մոտավորապես նույն շրջանից դիակները մինչև հաջորդ կեսօր հավաքելու հրաման է տվել: Բողազլյանի կայմակամ բեյի հրամանով հանձնարարվում է դիակները ծածկել ժողովրդի ուժերով»[49]: Մի՞թե ակնհայտ չէ, որ տվյալ դեպքում խոսքը գնում է ոչ թե մի քանի լրտեսների սպանության, այլ զանգվածային ոչնչացման մասին: Ապստամբներ ու լրտեսներ էին հռչակվում ոչ միայն առանձին անձինք, մարդկանց խմբեր, այլ ամբողջ բնակավայրեր: Նման բնակավայրերից համարվեց Ցոզղատի Գում Գոյու հայկական գյուղը, որն ուներ 600-700 բնակիչ: Ոմն Թևֆիկը ժանդարմների միջոցով գյուղի մոտ վառելիք էր կուտակել և բնակիչներին «այրել ու այրել էր տվել,- գրում է ռազմական դատարանի նախագահը Ցոզղատի կառավարչին,- օրորոցի մեջ ողջ մնացած երեխաներին կտոր-կտոր էր արել..., ինչ որ հանրահայտ եղելություն է»[50]:

Ասում են. «Ստի ոտքերը կարճ են»: Այդպես է: Ստախոսը նաև կարող է չփոթվել սեփական երևակայության ծնած վարկածներում: Եվ ոչ միայն չփոթվել, այլև չփոթության մատնել մի ամբողջ կառույցի: Նման չփոթվածներից էր Ցոզղատի կառավարիչը: Նա զարմացած գրում է. «Թեև քաղաքացիական իշխանություններն արդեն հրաման ստացել էին հայերի տեղահանության ու աքսորի մասին, ինչը վերաբերում էր կասկածելի անձանց, մինչդեռ զինվորական իշխանությունները՝ առանց բացառության, ընդգրկում է երեխաների, կանանց և տղամարդկանց տարագրությունը»: Արդյունքում «Ցոզղատ քաղաքից և շրջակա գյուղերից տեղահանված հայ քարագրությունը» Արդյունքում «Ցոզղատ քաղաքից և շրջակա գյուղերից տեղահանված հայ բրավանները կոտորվեցին և բնաջնջվեցին ոստիկանների, հրոսակների ու ժողովրդի կողմից»[51]:

Երիտթուրքերի կենտրոնը պարբերաբար տեղական իշխանություններին ու մահմեդական բնակչությանը ահաբեկում էր հայ անիշխանականների գոյությամբ: Ահա կենտրոնի նման հեռագրերից մեկը Աղանայի նահանգապետին. «Վանի և Սրվազի շրջաններում հրոսակներ են

47 «Ցուշամատեան Մեծ եղեռնի», էջ 340:
48 "Геноцид армян", стр. 406.
49 Դիվան Երուսաղեմի, N Մ506:
50 Ն. տ, NՄ306:
51 Ն. տ. N Մ492-494:

երևացել, մեր զորքերը նրանց դեմ կռիվ են մղում և ճզմում են նրանց: Ձեր ուշադրությունն ու շրջահայացությունն եմ հրավիրում և հանձնարարում հայերի ներաշխարհը թափանցելով նրանց դավաճանական նախաձեռնությունների ժամանակը պարզելու համար դիմել բոլոր միջոցներին»[52]:

Այս հրահանգից հետևում է՝ ա) առանց փաստեր ունենալու հավաստիացում, թե հայերի ապստամբություն (կամ դավադրություն) գոյություն ունի, բ) հայերը նախապատրաստում են դավաճանական գործողություններ և անհրաժեշտ է ցանկացած եղանակով դրանք ձախողել: Սա այլ բան չէ, եթե ոչ ազատ արձակել տեղական իշխանություններին՝ հայերի հանդեպ գործադրելու ցանկացած կամայականություն, նկատի ունենալով, որ հայ - թուրքական հարաբերությունները ծայրաստիճանի սրված էին և թուրքերին հայերի դեմ բռնությունների մղելը առանձնակի ջանքեր չէր պահանջում: Տեղական իշխանությունները չհակացան վերադասին: Հայերի տեղահանության Մարաշի հանձնախմբի նախագահը հայտարարեց. «Դուք չեք հասկանում, թե մենք ինչ նպատակ ենք հետապնդում: Մենք ուզում ենք հայի անունն իսկ ոչնչացնել[53]»:

Երիտթուրքերը մահմեդականներին համոզում էին, որ կայսրության անվտանգությունն ու հայության գոյությունն անհամատեղելի են, որ պատերազմում հաղթանակն անհնար է առանց հայերի բնաջնջման: Սղերդի կառավարչատանը առաջնորդական տեղապահին հարկադրեցին ստորագրել իրենց իսկ կազմած կեղծ վկայությունը, թե «երբ թուրքերը մզկիթում ջերմեռանդ աղոթում էին, զինված հայերը ներս խուժեցին ու նրանց կոտորեցին»: Ընդ որում, իթիհադի կենտրոնի գրեթե բոլոր հրահանգները, խորհրդարանի ընդունած օրենքները ելնում էին ոչ թե փաստերից, իրողություններից, այլ կառուցված էին ենթադրությունների, կասկածների վրա և մեծ մասամբ ունեին սադրանքի բնույթ: Անգամ տեղահանության մասին օրենքի ընդունումը հիմնված էր ենթադրության վրա, թե հայերը «ցանկանում են միանալ» Ռուսաստանին: Ոչ թե պետության դեմ գործողությունները, այլ միայն դրանք «ցանկանալը» բավական էր բռնագաղթելու կամ ոչնչացնելու համար:

Արևմտահայերի և նրանց ղեկավարների չեզոք տրամադրվածության մասին մեկից ավելի վկայություններ կան անգամ Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմի տեղեկագրերում: Նա 1914թ. դեկտեմբերի 29-ին զարմացած նշում է, որ հայոց պատրիարքը միանգամայն տրամաբանական էր համարում այն, որ պատերազմի պատճառով բարենորոգումների ուղղությամբ աշխատանքը դադարեցված էր: Նա միայն «դժգոհում էր թուրքական իշխանությունների կողմից դրսևորվող անվստահությունից»: Պատրիարքն ուղղակի ասաց, թե «ցանկացած լրջմիտ հայ ցանկանում է, որ հայերը մնան թուրքերի տիրապետության տակ»[54]:

Իսկ այն, որ արևելյան սահմանամերձ շրջանների հայերը ձգտում են դեպի Ռուսաստան, հետևանք է նրանց կյանքի ծանր պայմանների և Ռուսաստանի հետ տնտեսական սերտ կապերի, մասնավորապես մեծաթիվ հայերի արտագնա աշխատանքի Ռուսաստան: Բայց երբ Թուրքիայում հայերի համար ապրելու և աշխատելու փոքր-ինչ տանելի պայմաններ են ստեղծվում, հայերը լքում են Ռուսաստանն ու վերադառնում իրենց հայրենի բնակավայրերը: «Պատրիարքի ասածները,- նկատում է Վանգենհայմը,- ընդհանուր առմամբ պետք է գտնել իրավացի և սրտաբաց»: Կ. Պոլսի հայ ազդեցիկ ուժերի մեծամասնությունը «ներկայումս հարում է չափավոր կողմնորոշմանը»[55]: Նույն խնդրին Վանգենհայմը վերադառնում է 1915թ. մարտի 9-ին: Նշելով, որ պատերազմի մեջ Թուրքիայի մտնելուց հետո «կապը արևելյան նահանգների հետ շատ հաճախ խզվում է, և հայոց պատրիարքությունը տիրապետում է այդ նահանգներից ստացված միայն չնչին տեղեկությունների, այնուամենայնիվ, համաձայն եղած տվյալների, «ինչ-որ թվով հայեր անցել են Ռուսաստան, հավանաբար զորահավաքից, պատերազմական պայմանների դժվարություններից և վտանգից խույս տալու համար: Դեռ մեծ հարց է, թե իրոք հայ փախստականների մեջ այնքան նշանակալից է թուքահպատակների թիվը, ինչպես այդ պնդում են թուրքական լրագրերը: Նաև պատմում են, որ հայ զինվորներին սպանել են հնարովի դավաճանության համար... Ներկայիս հայ պատրիարքը բոլոր հնարավոր միջոցներով ձգտում է թուրքական կառավարության հետ ունենալ բարի հարաբերություններ»:

52 «Ցուշամատեան Մեծ եղեռնի», էջ 341:
53 Quelques documents sur le sort des Armeniens en 1915-16, Fasciute III, Geneve, 1916, p. 162.
54 R140805, Ab388.
55 Ն.տ.:

Հայերի հանդեպ ամենուրեք բռնություններ են գործադրվում: Իշխանությունները չափազանցնում են հայերի կողմից ոչ թուրքամետ ամեն մի քայլ կամ արտահայտություն: Նրանք այդպես վարվեցին Բիթլիսի իրադարձությունների կապակցությամբ, որում հայերը գրեթե մասնակցություն չունեին, նրանք այդպես վարվեցին Կեսարիայի մի տանը հայտնաբերված ռումբերի ու ծածկագրերի կապակցությամբ: Բացարձակապես ակնհայտ է, որ խելամիտ հայերը «մշտապես իրենց զուսպ են պահում և որևէ ապստամբության մասին չեն մտածում»: Դրան գումարած նաև այն, որ հայկական թերթերը վախենում են «անդրադառնալ բոլոր այն հարցերին, որոնք խիստ գրաքննության պայմաններում կարող են առաջացնել թուրքերի զայրույթը»[56]:

Լսելով Վանում տեղի ունեցող իրադարձությունների մասին՝ Վանգենհայմը ապրիլի 22-ին հարցում է կատարում, որին Թալեաթի գրասենյակում պատասխանեցին, թե իրոք Վանում դեպքեր տեղի ունենում էին և խնդրեցին առայժմ այն հրապարակման չտալ: Վանգենհայմը ամենայն որոշակիությամբ հայտարարեց, թե Պոլսի ձերբակալությունների և Վանի իրադարձությունների միջև որևէ «կապ չի նկատվում», պարզապես «Հայ ազգի ոչնչացման ծրագիրը նախատեսում է նրա առաջատար ուժի՝ մտավորականության բնաջնջում և այն պետք է գաղտնի մնար մինչև ընդհանուր տեղահանության նախապատրաստությունների ավարտը: Դիվանագետները նաև աչքաթող չեն անում, որ ռուսական բանակի կազմում հայ կամավորների մուտքը Վան թուլացրեց երիտթուրքերի կենտրոնի «ընդդիմադիրների», այսինքն՝ հայերի բռնագաղթը սխալ համարողների, դիրքերը և ապահովեց «վերջնական լուծումների կողմնակիցների հաղթանակը»: Իթիհադի պարագլուխների սադրիչ վարքագիծն իր վերջնական ձևավորումն ստացավ Սարիղամիշի ճակատամարտից հետո, երբ Էնվերը Սեբաստիայում հայտարարեց. «Հայերն էին մեր դեմ կռվողները»[57]: Թե որքան պարզունակ ու լպիրշ էին հայերի ըմբոստությունների մասին երիտթուրքական հնարվածքները, կան բազմաթիվ հաստատումներ: Ցոզղատի մութասարիֆ Ջեմալը 1915թ. հուլիսի 11-ին հեռագրեց. «...Բողազյանի կայմակամի փոխանորդը հայտնում է, որ փախստական հայերը հարձակվել են Մուսազիզ, Կանլ-ճա-Ջիֆթլիկ և Կարա Բունար գյուղերի վրա և ավերածություններ են կատարել... Իսկ այս գիշեր ստացված հեռագրով հայտնում են, թե աղմուկն անհիմն է... Տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ գավառցիներից ստացված տեղեկությունները բացարձակապես վստահության արժանի չեն... եթե հետաքննությունը հանձնվի ոստիկանական ջոկատի հրամանատարին... կպարզվի, որ հանցավոր դեպքերը նրա հրամանատարության տակ եղած ոստիկանների գործն են»[58]:Եվ իսկապես, Ահմեդ անունով այդ հրամանատարը նույն օրը հեռագրեց. «Սանջակում հասարակական կարգը կատարյալ է: Խնդիրը հաստատ թյուրիմացության ... հետևանք է... այդ դեպքերից ոչ միայն ժանդարմներն օգտվեցին, այլև բնակչությունը (մահմեդական) կողոպուտի դիմեց:... Սանջակում ոչ մեկի քթից ոչ մի կաթիլ արյուն չի թափվել»[59]:

Սակայն այդ պատասխանը վերադասին չի բավարարում: Հուլիսի 15-ին 5-րդ բանակի հրամանատարին փոխարինող Հալիլ Ռեջայը հրահանգում է. «Հայերի շարժումների և ըմբոստ հարձակումների առնչությամբ մինչև օրս տեղի ունեցած և տեղի ունենալիք դեպքերը օր օրի անթերի ու մանրամասն արձանագրեք հատուկ տետրակի մեջ և ամեն ամսի վերջին ուղարկեք»[60]:

Հրամանատարը «չի հավատում», որ հայերը որևէ հրոսակային գործողություն չեն կատարել՝ «...հնարավոր չէ ուրանալ մի քանի հայ հրոսակների գոյությունը» և հանձնարարում է՝ «եռանդով ու շուտափույթ բնաջնջեք այդ հրոսակներին և ինձ տեղյակ պահեք նրանց թիվը, նրանցից գրավված կամ զրավվելիք զենքերի քանակը, նրանց պատճառած մնասների չափը... Ցոզղատի սանջակին և Զորում կազային ենթակա նահիեներում մնացած կասկածելի և վտանգավոր համարվող հայերի հետ վարվեք, ինչպես վարվեցին Կեսարիայում մնացած հայերի հետ, ովքեր ուղարկվեցին իրենց աքսորավայրերը...»[61]:

56 R 140805, A 9528.
57 Սիրվարդ Սեբաստիայի Մուրադ, Փրավիտենս, 1951, էջ 17-19:
58 Դիվան Երուսաղեմի, N3597-3598:
59 Ն. տ., N3599:
60 Ն. տ., N3603:
61 Ն. տ., N 3611:

Դրան հետևում է 15-րդ զորաբաժնի հրամանատար Շահաբեդդինի հեռագիրը 5-րդ բանակի զեկավարությանը. «Բողազյան կազայում հայերի կողմից որևէ ըմբոստական շարժում գոյություն չունի: Այստեղ առաջացած ցավալի երևույթներից է սաստիկ կողոպուտը հայկական գյուղերում, որը կատարում են տեղի ժանդարմներին համալրած անձինք, չերքեզ հեծյալները և իսլամական մարդաշատ ամբոխը»[62]:

Բայց նման հավաստիացումները որևէ դեր չխաղացին հայերի հանդեպ երիտթուրքերի քաղաքականությունում: Նրանք որոշել էին բնաջնջել հայերին, և ոչ մի փաստարկ իթիհադին հետ պահել չէր կարող: Ահա և հետևանքը: Բողազյան քաղաքի պարետ Մուստաֆան հեռագրում է Շահաբեդդինին (1915թ. հուլիսի 24). «Բողազյանի կայմակամ Քեմալ բեյի հրամանով մի անգամ 300, մի այլ անգամ 1 500 և 3 600 հայ կոտորվել է»[63]: Շահաբեդդինը այդ տվյալները հայտնում է 5-րդ բանակի հրամանատար Հալիլին, իսկ վերջինս էլ՝ Էնվերին՝ «մինչև հիմա Բողազյանի և շրջակա գյուղերի հայերից 2600 հոգի կոտորված է...»[64]:

Թուրք գրող Հաֆիզ Թանսուն վկայում է. «Ցոզղատի մութասարիֆ Քեմալ բեյը (նրան Բողազյանում կատարած ջարդարարությունների համար առաջ էին քաշել) ՆԳ նախարարությունից հետևյալ ծածկագիրը ստացավ. «24 ժամվա ընթացքում տարագրեք սանջակի հայությանը»[65]: Հուլիսի 22-ին վերը նշված Մուստաֆան հեռագրեց, թե 14 կասկածելի հայեր բռնվել և ուղարկվել են « իրենց աքսորավայրերը»[66]: Նույն օրը նա տալիս է երկրորդ հեռագիրը. «... Վերոհիշյալ հայերը կասկածելի լինելու համար ժանդարմական տասնապետ Հ. Ամնիի հոգացությամբ ջարդվել են»[67]: Տեղահանության և ջարդերի ընթացքում էլ Անկարայի վիլայեթում հայկական որևէ նշանակալից շարժում տեղի չունեցավ, և Հալիլ Ռեջային օգոստոսի 10-ին հեռագրեց. «...Զորակոչից մինչև օրս վիլայեթում հայերը չեն կատարել որևէ նշանակալից եղեռնագործ»[68]: Նույն ժամանակ թուրքերը, Տերզիլիի հայ տղամարդկանց գյուղից դուրս կոտորելուց հետո, նրանց հագուստները հավաքած գյուղ վերադառնալով հայ կանանց ասացին. «Ահա տեսեք, ձեր ամուսիններին ու եղբայրներին սպանել ենք: Իսլամություն ընդունեք, ձեզ ամուսին տանք և փրկվեք, այլապես դուք էլ նրանց նման սպանվելու եք»[69]:

Գրեթե նույնն էր վիճակը հայկական ու հայաբնակ բոլոր նահանգներում: «Ի հեճուկս թուրքական կառավարության կեղծ հայտարարությունների, ոչ մի հայկական խռովություն կամ հեղափոխություն չի եղել,- հայտարարում է Ա. Մանդելշտամը:- Հայերը զենք են վերցրել միայն այն ժամանակ, երբ զգացել են կոտորածի վտանգ... պետք է հատկապես շեշտել, որ հայերը միայն պաշտպանվել են և երբեք առաջինը չեն հարձակվել թուրքական զորքերի վրա»[70]:

Ասվածները դիվանագիտական աճպարարություններ չեն, այլ դժբախտ իրականություն: Ապրիլի 28-ին Վանից հայտնեցին, որ Վանի մերձակայքում ու Շատախում ոչնչացվել է 6 000 մարդ[71]: Ի դեպ, Սազոնովը վճռականաբար մերժեց ֆրանսիական գործակալների տարածած տեղեկությունները, թե հայերի ջարդը պատասխան էր նրանց ապստամբությանը Վանում և Զեյթունում[72]:

Թուրքերը հայերին ներկայացնում էին բազում ու բազմատեսակ մեղադրանքներ, հաճախ նաև ծիծաղելի բնույթի: Հայերի երեսին շպրտում էին. «Դուք՝ հայերդ եք, մեղավոր պատերազմի դժբախտության հարցում և ձեզ պետք է ոչնչացնենք... պատերազմի ավարտին ոչ մի քրիստոնյա չի մնա: Այնպես է պետք քրիստոնյաներին մաքրել, որ Կ. Պոլիսը դառնա Քաաբա»[73]:

62 Գրիկեր Եոզղատի Հայասպանության վավերագրական պատմությունը, Նյու Յորք,1980, էջ 88-89:
63 Գրիկեր, նշվ. աշխ., էջ 327-366:
64 Դիվան Երուսաղեմի, N541:
65 Tansu S. Bugunumuz perdenin dibinde, Ist., 1964, s. 297:
66 Դիվան Երուսաղեմի, N511:
67 Ն.տ.:
68 Ն. տ., N 630-631:
69 Նուբարյան գրադարան (Փարիզ), Ցոզղատ, էջ 25:
70 "Геноцид армян", стр. 498-499:
71 Beylerian A., նշվ. աշխ., փաստ. N31:
72 Ն.տ., փաստ.N32:
73 Ֆիերբյուխեր Հ. Հայաստան 1915, Եր., 1995, էջ 49-50:

Հայերի ապստամբության վտանգի մասին շրջաբերականին նույնպես տեղերից պատասխանեցին, թե նման որևէ դեպք չեն նկատել: Տեղական իշխանությունների այդ պատասխանները չէին ընդունվում, անգամ դիտողության և վիրավորանքի էին արժանանում: Ապստամբներ հռչակվեցին այս կամ այն պատճառով բանակ չզորակոչված բոլոր հայերը և նրանց հավաքեցին ու ոչնչացրեցին: «Այս ապստամբները,- գրում է Գիպենզին,- ծակվեցան գնդակներով՝ գիտենալե յառաջ թե ինչ կը պատահեր»: Դրան հետևեց Թալեաթի հեռագիրը, որով նա «չնորհավորեց տեղական պաշտոնեաները իրենց կտրուկ միջոցներու յաջողության համար»: Այդ և նման հեռագրերը հրապարակվեցին մամուլում «նկատի ունենալով, որ դիվանագիտական շրջաններում շշուկներ կային, թե հայկական ջարդերը կրկնվում էին»: Թալեաթը ճգնում էր համոզել, որ ոչ թե ջարդերն էին կրկնվում, այլ բանակ զորակոչված և մի շարք ուրիշ հայեր կայսրության տարբեր մասերում ապստամբել էին: «Եվ բոլոր սպանվածները կը պատկանին այն ըմբոստ տարրին, որն արյունոտ ձեռքերով յանցանքի կամ օսմանեան արարքի մեջ բռնուած է: Մենք բնավ զենք չենք դարձուցած կիներուն և մանուկներուն»[74]:

Դրությունն այդպիսին էր նաև Անկարայի վիլայեթում, որտեղից բռնագաղթվեց 61 հազ. հայ[75]: Դիարբեքիրի վալի Ռեշիդը 1915թ. սեպտեմբերի 15-ին զեկուցեց Բ. Դռանը. «Դիարբեքիրից արտաքսված հայերի թիվը հասնում է 120 000-ի»[76]:

Թուրք սպա Ասրմ բեյը հայտնել է. «Խարբերդից տեղահանված 60 000 հայից Մոսուլ հասավ 15 000-ը: Մնացածները ոչնչացվեցին ճանապարհին»[77]: Այսինքն՝ խոսքը գնում է ոչ թե «խռովարարների ու ապստամբների», այլ հայրուր հազարավոր անմեղ մարդկանց բռնագաղթի և ոչնչացման մասին: Ինչ վերաբերում է Վանում, Շատախում, Սասունում, Մուսա լեռում, Շապին Կարահիսարում, Ուրֆայում, Զեյթունում տեղի ունեցած իրադարձություններին, ապա դրանք այլ բան չէին, եթե ոչ ընդվզումներ ջարդերի դեմ, այսինքն՝ ինքնապաշտպանություն: Թուրքերը առանձնակի եռանդով շահարկում են Վանի ինքնապաշտպանությունը, այն անվանում ապստամբություն: «Կասկած չկա,- 1915թ. մայիսի 1-ին գրեց Սազոնովը,- որ Վանում հայերի ապստամբությունը կոտորածների հետևանք է և ոչ թե հակառակը, որովհետև հայերի համար իմաստ չուներ մինչև մեր զորքերի գալը շարժում սկսել թուրքերի գերակշիռ ուժերի դեմ»[78]:

Սազոնովը միանգամայն իրավացի էր: Կաթողիկոսը նրան տեղեկացնում է. «Թուրքական ժանդարմերիան Վանի վիլայեթում զորահավաքի կամ հասարակական աշխատանքներ կատարելու պատրվակով հավաքում է հայ տղամարդկանց և հայրենի վայրերից հեռու տեղերում զանգվածներով սպանում է, իսկ կանանց ու երեխաներին առևանգում»[79]:

Մի քանի օր անց իտալացի գործակալը Վանից տեղեկագրեց. «Զևդեթ բեյը Սալմաստում, Խոզրակում և Բաշկալեում քրիստոնյաներին կոտորելուց հետո Վանի տղամարդկանցից պահանջեց զորակոչվել բանվորական գումարտակներում աշխատելու համար: Իրականում նրանց հավաքում էին ոչնչացնելու... Վանի մերձակայքի հայերի զենքերը հավաքեցին և 16 000 մարդ սպանեցին»[80]:

Նանսենը նկատում է. «...Զևդեթ բեյը հարձակում պատրաստեց Վանի հայկական թաղերի վրա, միաժամանակ հրամայեց ջարդեր իրականացնել Արճեշի և Հայոց ձորի գյուղերում: Կանանց ու երեխաներին պաշտպանելու համար հայերը քաշվեցին Վանի իրենց թաղերը... Թուրք զինվորներն ու քրդերը ավերում էին Վանի շրջակայքը, հրդեհում տները, կոտորում ծերերին, կանանց, երեխաներին... Թուրքական հարձակման դեմ Վանի հայկական ինքնապաշտպանությունն ունեցավ իր պատմիչը՝ Էնվեր փաշան: Թուրքական կառավարությունը Բեռլինում հրատարակեց մի տեղեկագրություն, որն առաքվեց նաև ուրիշ երկրներ: Ըստ այդ տեղեկագրության՝ ըմբոստ հայերի խմբերը հարձակվել են մահմեդական ժողովրդի վրա: Վանի վիլայեթի 180 հազ. մահմեդականից միայն 30 հազ. կարողացավ ճողոպրել մահից. ...1915-ի հոկտեմբերի 1-ին Բեռլինի թուրքական դեսպանատունը հայտարարեց, որ «ոչ պակաս, քան 18 հազ. մարդ էր սպանվել: Դրանից հետո մահմեդականները վրեժ են լուծում. ի՞նչ հարկ կա զարմանալու»: Հարձակման ժամանակ սպանված 18 թուրքը դարձել է ...18հազար»[81]:

74 «Ցուչամատեան Մեծ եղեռնի», էջ 1065-1066:
75 Ռազմական դատարանի ածանագրություն N8, փաստ. N2:
76 "Takvim-I Vekai", 1919, N3540.
77 R 14088, Ab 30012.
78 "Геноцид армян", стр. 281.
79 Ն.տ.:
80 Ն. տ., էջ 285:
81 Նանսեն Ֆ. Հայաստան և Մերձավոր Արևելք, Վերիտոն, 1956, էջ 267-270:

Հիմնահարցի առնչությամբ հետաքրքրությունից զուրկ չէ Բիթլիսի և Հալեպի նախկին վալի, արյունախում Աբդուլհալիգի վկայությունը, որը զետեղված է Գ. Կնապի գրքում[82]:

«Մուսուլմանների տառապանքները, որոնք արտահայտվում են հիվանդությունների ու պատերազմների միջոցով որպես արդարացի պատիժ, տրված է արդարամիտ Աստծո կողմից հայերին կոտորելու համար: Նրանցից (հայերից) մի քանիսն արժանի էին պատժի, բայց մենք չատ հեռու գնացինք: Այժմ Աստված մեզ պատժում է»: Թուրքական «Ալեմդարը» գրեց. «... Այս երկրում իրավունք ու արդարություն չեն սիրում, այլ կեղեքումն ու ոճիրն են կազմում կառավարության որդեգրած վարքագիծը: Չփորձենք հայերին հանցանք վերագրել, որովհետև չկարծենք, թե աշխարհը ապուշ է: Կողոպտեցինք ունեցվածքն այն անձանց, որոնց տեղահանեցինք ու ջարդեցինք... Մեր արդարադատության նախարարը բանտերի դռները բացեց: Կազմակերպեցին հրոսակախմբեր հայ երեխաներին, ծերունիներին, տղամարդկանց ու կանանց մորթելու համար... Այդ բոլորը մենք արեցինք»: "New York Times"-ը 1915թ. մայիսի 6-ին գրեց. «Վանա լճի շրջանում շարունակվում է Հայաստանի քրիստոնյաներին հաշվեհարդարի ենթարկելու գործողությունը»:

Սադրանքների միջոցով հայերին բռնությունների ենթարկելն ու կոտորելը դարձավ թուրքական իշխանությունների սիրելի գործելակերպը: Երեք ժանդարմներ Սասունի Գելիեզուզան գյուղի լեռներում հանդիպում են մի քանի երիտասարդի և հետապնդում են, թե իբր դասալիքներ էին: Տեղի է ունենում բախում, ժանդարմները սպանվում են: «Օ՜հ, էլ կուսակալն ու կառավարիչը՝ իրենց փնտռածն կը գտնեն, կը հեռագրեն չորս կողմ, թե Մուշ-Սասուն ապստամբեցին... Գիշերով Ապտուլհալիգ Բաղեշեն Մուշ կհասնի, կառավարիչ Սերվեթ արդեն շտապով 20-30 ձիավոր ժանդարմներ Ալիճան ղրկեր և փախած տղաք բռներ և 10 տուներ այրեր, ոգեպահիկներ գրավեր էր, 100-300 ժանդարմներ էլ Կելիեկուզան ղրկեր 20-30 տուներ այրեր և Սասունի լեռներեն աչքի զարնող 50-60 հայեր Մուշ բերեր էր: Կարնոյ ընդհանուր հրամանատարից պատուեր էր տրուեր, որ Տիարպէքիրից եկող յոթ վաշտ զինվորներ Սասուն ելնեն, բոլոր տղամարդիկ բռնեն և ժողովուրդը տեղահան ընեն: Ամեն կողմե կատաղութիւն կը ժայթքեր: Գլխավոր պաշտոնեությունը կամբաստաներ Տարոն-Սասունի ամբողջ հայութիւնն, թե ամենքն ալ խորհրդաբար ապստամբութիւն կը հանեն... Հայկական նահանգներու պարպումն ու ջարդերն սկսեր էին, կարգը եկած էր Տարոն-Սասունին»[83]:

Հայերի ապստամբական, հակաթուրքական գործունեության մասին խոսելիս թուրքերն ամենից առաջ նկատի ունեն մերձռազմաճակատային գոտիների իրադարձությունները: Էրզրումը վերագրավելուց հետո թուրքական հրամանատարությունն աղմուկ բարձրացրեց, թե ռուսական բանակի հետ հեռացող հայերը ջարդել են այդ շրջանների բոլոր մահմեդականներին: Ծավալվեց հակահայկական սանձարձակ քարոզչություն. հնարվում էին զարհուրելի պատմություններ, նկարագրություններ, վիճակագրություններ՝ լցված իսլամ աղջիկներ, փորերը պատռած հղի կանայք, սվինների ծայրին շամփրված նորածիններ, կրծքները կտրված թրքուհիներ, ողնաշարը երկու մասի բաժանված երեխաներ, խարույկների մեջ տապակված ծերեր ու պառավներ, կտոր-կտոր մանրված դիակներ, քանդված օջախներ: Իրավացի է Ա. Անտոնյանը՝ ռուսների ու հայերի կողմից մահմեդական բնակչության հանդեպ բռնարարքների իսպառ բացակայության վրա պնդելը լուրջ չէ: Նախ, նահանջող բանակների վարքագծին հատուկ է թողած տարածքներին ու բնակիչներին մնաս հասցնելը, երկրորդ, ռուսական բանակի հետ հեռանում էին ոչ միայն հայկական կամավորական գնդերը, այլև մահմեդական բնակչության, ոստիկանության և բանակի իրականացրած ջարդերից մազապուրծ, տնավեր արված հայերը, ովքեր բնականաբար ձեռնպահ չէին վրեժխնդիր գործողություններից: Սակայն հայերի այդ գործողությունները մանր-մունր չարություններ էին իրենց հանդեպ թուրքերի կատարած բարբարոսությունների համեմատությամբ, մինչդեռ թուրքական մամուլը դրանք ներկայացնում էր (այսօր էլ ներկայացնում է) ահարկու վայրագություն, որպեսզի մահմեդական բնակչությանն ավելի գրգռեր հայերի դեմ:

Թուրք պատմաբանները կեղծում են, երբ գրում են, թե «ըմբոստական շարժումները շարունակվեցին նույնիսկ տեղահանման հրամանից հետո, ինչը ստիպեց օսմանյան պետությանը այդ

82 Knapp G. The tragedy of Bitlis, New York, 1919.

83 Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 847:

հրամանը տարածելու նաև ուրիշ շրջանների վրա: Ըստ նրանց՝ 1915թ. հուլիսի 23-ին ըմբոստություն տեղի ունեցավ Բուազլինի կենտրոնում, իսկ օգոստոսին՝ Մարաշի Ճընդրկչա ավանում, օգոստոսի 9-ին՝ Ուրֆայի Ջերմուշ գյուղում, սեպտեմբերի 14-ին՝ Մուսա լեռան վրա, սեպտեմբերի 25-ին՝ Ուրֆա քաղաքում: 1916թ. փետրվարի 7-ին՝ Միալահիերում, ապրիլին՝ Ակտիմատերիում և Տուֆայում: Նույն թուրք հեղինակները գրում են. «1915թ. մայիսի 2-ին Թալեաթ փաշային ուղղված տեղեկագրում Էնվերը գրում է, որ հայերը համախմբվում են ըմբոստությունը շարունակելու համար» և առաջարկում է նրանց ուղարկել Ռուսաստան կամ էլ ցրիվ տալ Անատոլիայով մեկ: Սա նույնպես կեղծիք է, որովհետև բռնագաղթն ու կոտորածը սկսվել էին շատ ավելի վաղ: Թալեաթ փաշայի հուշերում նշվում է, որ դեռ ապրիլին տեղերը հրաման ուղարկվեց հայերին տեղահանելու և Միջագետք տեղափոխելու վերաբերյալ և այդ արվելու էր այն վայրերից, որոնց «սպառնում էր ռուսական բանակը», քանի որ «քրիստոնյա ազգաբնակչությունը համակրում էր ռուսական բանակին»[84]:

Ըստ նրա, բռնագաղթը «նախազգուշական ռազմական միջոցառում» էր: Չնայած ինքն էր հայտարարել, թե «կառավարությունն օգտվում է պատերազմական կացությունից, որպեսզի վերջնականապես ձերբազատվի իր ներքին թշնամիներից՝ քրիստոնյաներից՝ չվախենալով օտար տերությունների դիվանագիտական միջամտությունից»[85]:

Մի այլ անգամ նա ասել էր. «Պահը հարմար է, որպեսզի բոլոր կասկածելի մարդկանց հեռացնենք մայրաքաղաքից»[86]:

«Թերճումանը Էֆքյար» պաշտոնական լրագրի 1915թ. մայիսի 19-ի համարում տպագրված տեղահանության մասին իրադեն պատահական չէ, որ կոչվում էր «Ռազմական իշխանությունների կողմից ձեռնարկումների օրենք նրանց դեմ, ովքեր պատերազմի ժամանակ չեն ենթարկվել կառավարության հրամաններին»: Ասել կուզի, թե տեղահանությունը ոչ թե բնաջնջման, այլ խռովարարներին պատժելու խնդիր ուներ, այսինքն՝ այն ընդգրկելու էր ոչ թե ամբողջ հայ ժողովրդին, այլ միայն նրա խռովարար մասին: Սա քարոզչական խարդախության դասական օրինակ է:

Արդեն ասվել է, որ սկսած եղեռնի օրերից տարածում ստացավ այն կարծիքը, թե հայերի բնաջնջման պատճառների թվում գլխավորները երկուսն էին՝ «հայկական սեպի» վերացումն ու հայերի ռուսամետ գործունեությունը, մասնավորապես պատերազմի մեջ թուրքիայի մտնելու առաջին ամիսներին: Օրինակ, Ռ. Սեսիլը գտնում էր, որ ՀԲ Դաշնակցության 8-րդ համագումարի որոշմանը թուրքերը պատասխանեցին 1915թ. ջարդերով[87]:

Սա երկակի կեղծիք է: Նախ, անկախ Էրզրումի համագումարի որոշման բովանդակությունից, հայերը բնաջնջվելու էին, թեկուզ այն պարզ պատճառով, որ բնաջնջման կողմնորոշումն ամբողջացել էր ավելի վաղ, քան այդ համագումարն էր: Երկրորդ՝ ՀԲԴ 8-րդ համագումարի որոշումն արդար և ճիշտ էր: Այն բացառիկ հստակությամբ էր սահմանում հայության երկու հատվածների վարքագիծը աշխարհամարտում: Դա առանձնահատուկ որոշում էր, այն ընդունելով հանրի

Իրականությունն այն է, որ պատերազմը հնարավորություն էր ցեղասպանությունն իրականացնելու, այլ ոչ թե դրա պատճառները ծնելու: Բնաջնջման ծրագիրը շատ ավելի վաղ մշակվել և «պլանավորվել էր ամենայն սառնասրտությամբ»[90]:

Կաթոլիկ գործիչ Ս. Հիացինտը գրում է. «1915թ. փետրվարի 10-ին արդեն հայ ժողովրդից առանձնակի ջանք չէր պահանջվում հասկանալու, թե որ կողմից էր նրան վտանգ սպառնում»: Հայերը հստակ տեսան, որ այդ վտանգը բխում էր Բոսֆորի ափերից: «...Սկզբում երևաց շատ զուսպ հոդված... թե կառավարությունը ժողովրդին հնարավորություն է տվել հնազանդեցնել Հայրենիքի դավաճաններին: Եվ ուրիշ ոչինչ: Չէր նշվում այդ դավաճանների ոչ անունները և ոչ էլ թե որն էր նրանց դավաճանության էությունը... Սակայն հետո ստացվեց սուլթանի ֆերմանը, որով նախ պետք է զինաթափվեին քրիստոնյա ժանդարմներն ու զինվորները, իսկ ապա ամբողջ ոչ մահմեդական բնակչությունը... Թուրք չինովնիկները ստացան հրաման նահանգներից հեռացնելու բոլոր քրիստոնյա զինվորներին»:

Ժողովուրդն այս ամենի նպատակը պարզորոշ չէր հասկանում և անվերապահ կատարում էր Կ. Պոլսի հրամանները: Ինչ-որ բան պարզվեց, երբ աշխատանքից հեռացվեցին պաշտոնատար հայերը: Իսկ ամեն ինչ հասկանալի դարձավ, երբ կառավարման կենտրոնական օղակների պատասխանատու պաշտոնատարները, խորհրդարանականները մեկնեցին քրդական ցեղերի մոտ և «բանակի կարիքների համար ուղտեր հավաքելու պատրվակով, քրդերին կոչ արեցին գործել «Մահ գյավուրներուն» նշանաբանով»: Ապա հանձնարարվեց կազմակերպելու միլիցիա. բանակում չծառայող 30-60 տարեկան բոլոր մահմեդականները ստանում էին հրացան և թուր, զինվորական ուսապարկ և կարմիր թևակապ: Դա պատճառաբանվում էր՝ իբր քաղաքները վատ էին պաշտպանված: Օրենքի կետերից մի քանիսը պարզ ասում էին, թե ում դեմ էին ուղղված ստեղծված զինված միավորումները: Սա առաջին դասն էր: Երկրորդը եղավ զանգվածային սպանության նախապատրաստությունը: Սակայն այդ հաշվեհարդարը պետք է իրականացվեր «շատ զուսպ եղանակներով»: Դրան օրինական բնույթ տալու համար մարդկանց ոչնչացման ծրագիրը դրվեց «պաշտոնական կազմակերպության վրա և իրականացվեց որոշակի եղանակներով»: Այդ կազմակերպությունն օժտված էր անսահմանափակ իրավասություններով, շնորհիվ նրա անդամների զբաղեցրած պաշտոնների, իսկ «մշակված միջոցներն իրենց դաժանությամբ հավասարը չունեին»:

Դա կոչվում էր Հատուկ կազմակերպություն, որի բարձրագույն ղեկավարը Թալեաթն էր: Բոլոր չինովնիկները կենտրոնում, թե տեղերում պարտավոր էին կատարել այդ կազմակերպության հրամանները, այլապես «նրանց սպառնում էր աշխատանքից զրկվել կամ անգամ մահ»: Հատուկ կազմակերպությունն էր մշակում հայերի ոչնչացման եղանակներն ու մանրամասները: Ամեն ինչ իրականացվելու էր Կորանի պատվիրանի նշանաբանով՝ սպանել կրոնական կրքով և հետևյալ եղանակներով՝ մարդկանց, սկսած ամենանշանավոր դեմքերից, ձերբակալել, նրանց աքսորել, առանց հայտնելու, թե ուր, ճանապարհին ձերբակալվածներին բաժանել 50-100 հոգանոց խմբերի. սպանդի վայրում հանել նրանց հագուստները. սպանել և դիակները նետել խորը ջրհորները. կատարվածի շուրջ լռություն պահպանել, որպեսզի չիմանային, թե ինչ է կատարվում: Այդպիսով հնարավոր եղավ ինչ-որ ժամանակ թաքուն պահել եղեռնագործությունը[91]:

Թ. Աքչամը Մեծ եղեռնի մեխանիզմը ներկայացնում է հետևյալ կերպ. «1915թ. փետրվարի ֆերմանով բոլոր հայ զինվորականները զինաթափվեցին և նրանցից կազմվեցին բանվորական գումարտակներ: Այդ գումարտակների զինվորները զոհվեցին քաղցից ու ցրտից կամ ոչնչացվեցին»: Շատ վիլայեթներում մտավորականության ձերբակալությունները սկսվեցին ապրիլի 19-ին և շարունակվեցին մինչև մայիսի 19-ը: Մի շարք տեղերում ձերբակալվածներին հրապարակային մահապատժի ենթարկեցին՝ մնացածներին ահաբեկելու համար: «Այս ամենը մեկ նպատակ ուներ՝ մինիմումի հասցնել հայ բնակչության դիմադրողականությունը բռնագաղթին»: Նույն այդ ժամանակ բոլոր հայերին արձակեցին պետական ծառայությունից, արգելեցին նրանց տեղափոխությունները: Հայ ազգաբնակչության զինաթափման հարցը դրվել էր դեռևս մինչև

90 Einstein L. Inside Constantinople, Former minister plenipoetentionary of United States diplomatic service, New York, 1918.

91 Ohanian P. Turquis, estado genocida. 1915-23, Toma I-Documentes, Buenes Aires,1986, pp.1011.

պատերազմի սկիզբը: «Զենք փնտրելու, հարկեր հավաքելու և դասալիքներ հայտնաբերելու պատրվակով իրականացվեցին նախադեպը չունեցող թալան ու սպանություններ»: Ոչնչացման էին ենթակա նաև ոչ հայ այն պաշտոնատարները, ովքեր տեղերում չէին ենթարկվի բռնագաղթի որոշմանը: «Բռնագաղթի մասին պաշտոնական որոշումն ընդունվեց 1915թ. մայիսի 27-ին... Սակայն հայերի աքսորը սկսվեց դեռ մարտին: Օրինակ, մարտի 15-ից Մարաշի սանջակի և Ադանայի վիլայեթի հայ բնակչությունը զանազան պատրվակներով բռնագաղթվեց մասամբ Կոնիա, մասամբ էլ Դեր Զորի անապատը...»[92]:

Ամենազանգվածային բռնագաղթ ու կոտորած իրականացվեցին արևելյան վիլայեթներում, որովհետև դրանց տարածքների վրա, թուրքերի կարծիքով, պատերազմում օսմանյան պետության պարտության դեպքում կարող էր ստեղծվել հայկական պետություն: Այս վիլայեթներից հայերի աքսորը սկսվեց մայիսին և ավարտվեց օգոստոսին:

«Բռնագաղթի և կոտորածների ձևերն ու եղանակները տարբեր շրջաններում տարբեր էին: Մի քանի տեղերում բնակչությանը նախազգուշացնում էին երկու ժամ առաջ, մինչդեռ ուրիշ տեղերում տալիս էին հինգօրյա ժամկետ: Սակայն, որպես կանոն, այդ ժամկետները ձևական էին»: Առանձին տեղերում հայերին թույլ էին տալիս իրենց հետ վերցնել իրեր, սակայն որոշ շրջաններում արգելվում էր նրանց ունեցվածքի առուծախը, և նույնիսկ եղան մահմեդականներին մահապատժի ենթարկելու դեպքեր, ովքեր համարձակվել էին հայերից գնել անշարժ սեփականություն: Նրանք, ովքեր իրենց հետ վերցրել էին թանկագին առարկաներ, դրանով միայն արագացրին սեփական մահը: Որպես կանոն տղամարդիկ ոչնչացվեցին մինչև բռնագաղթի սկսվելը: Իսկ այնտեղ, որտեղ «զտումը» նախապես չէր կատարվել, առաջին իսկ կանգառին տղամարդկանց առանձնացնում էին կանանցից ու երեխաներից և սպանում՝ գործադրելով ամենատարբեր եղանակներ: Բնաջնջմանը... մասնակցեցին նաև զինվորական ստորաբաժանումները և քաղաքացիական բնակչությունը:

Մայիս-հուլիս ամիսներին, արևելյան վիլայեթների բռնագաղթից հետո սկսվեց հայերի աքսորն Արևմտյան Անատոլիայից և Թրակիայից:

Բախտորոշ այդ պահին հայ քաղաքական ուժերի կեցվածքը, իհարկե, քննադատության չի դիմանում: Սակայն նույնչափ, գուցե անգամ ավելի խիստ, քննադատության արժանի են նաև այդ կեցվածքը քննադատողները, մանավանդ նրանք, ովքեր իրադարձությունների ժամանակակիցն են եղել: Չի կարելի լրիվ մերժել հայոց ցեղասպանության իրողություն դառնալու գործում հայ քաղաքական ուժերի դերը թե օբյեկտիվ և թե սուբյեկտիվ առումով: Այդ դերն արտահայտվում է ոչ թե «անկախական, ապստամբական» տրամադրությունների միջոցով, որոնք պարզապես գոյություն չունեին, այլ ժողովրդի բախտի հանդեպ անպատասխանատվության, իրադարձությունները ճիշտ արժևորելու անկարողության, անդամալույծ հոգեբանության տեսքով: «...Պատմական այս ահավոր օրերուն,- գրում է Գ. Պալաքյանը,- ՄԵՆՔ, ՀԱՑԵՐՍ ԷԻՆՔ, ՄԻԱՇՆ, որ փոխանակ ազդվելու տիրող ընդհանուր մտահոգութենեն... ընդհակառակն ըստ սովորութեան տարվելով մեր զգացումներեն... առաջին օրեն իսկ արդեն կոյրզկուրայն ազգովին նետուած էինք գահավեժ բախտախնդրութեան մը մեջ... և հանդգնութեամբ սկսած էինք մեր խաղի թղթերը բաց խաղալ: Այսպես կը գրգռեինք մեր դարավոր չարանենգ թիւրք թշնամուն, որ վաղուց արդեն պատրուակ կը փնտրեր... մեկ հարվածով բնաջնջելու Թիւրքիոյ ամբողջ Հայութիւնը...»[93]:

«Մայրաքաղաքի հայութիւնը այնքան ակնհայտ էր սկսած արտահայտել իր ներքին զգացումները, որ թուրք թերթերը, ինչպես «Կարակեոզ», հեգնորեն կը գրեին, թե եթե ուզում էք իմանալ, թե այդ օրը ռազմաճակատում վիճակն ինչպես է, նայեք ձեզ հանդիպող առաջին իսկ հայի դեմքին, եթե ուրախ է, Ռուսիան է հաղթողը, եթե տրտում է, ուրեմն Գերմանիան է հաղթողը»[94]:

Կ. Պոլսի հայկական լրագրերը խանդավառությամբ էին արձագանքում Անտանտի բանակների հաջողություններին: «Համազգային ընդհանուր կարգախոսի մը չգոյության պատճառով ամեն հայ և ամեն կուսակցութիւն իւր ըմբռնած ու նախասիրած եղանակով կը գրեր, կը խոսեր և կը գործեր անպատասխանատու կերպով»[95]:

92 Акчам Т. Турецкое национальное "Я" и Армянский вопрос, Москва, 1995, стр. 91.

93 Պալաքեան Գր.Վրդ., Հայ դողգոթան, Եր., 1991, էջ 47:

94 Ն.տ., էջ 48:

95 Ն.տ., էջ 49:

Տոներ, տոնախմբություններ, հավաքական այլևայլ միջոցառումներ, ազգային արժեքների առջև ցուցադրական ծնրադրումներ: Եվ դա այն պահին, երբ Դարդանելում թուրքերը ծանր կացության մեջ էին, երբ Կ. Պոլիսը վտանգված էր: Իթիհադը «հաճույքով էր նայում այդ ամենին և դիտողի դերից դուրս չեկավ մինչև ապրիլի 24-ը»:

Բախտորոշ օրերին հայ քաղաքական կուսակցությունների որդեգրած կրավորական, անդամալույծ կեցվածքի հետևանքով հայության ղեկավար մնաց պատրիարքը, որը նույնպես շփոթված էր: Պատրիարքարան էին թափանցել նաև դավաճան տարրեր, ովքեր գործիք էին Բեդրիի ձեռքին և հայերի բոլոր քայլերի, փոխհարաբերությունների մասին Բ. Դուռն իսկույն տեղյակ էր լինում: Այդ գործակալները հրահրում էին զանազան սադրանքներ, իրար դեմ լարում ազդեցիկ գործիչներին, ավելի սրում միջկուսակցական հակամարտությունները: Պատրիարքարանի գործավար Գ. Շիրինյանը Թալեաթի լրտեսն էր[96]:

Գործակալների գլխավոր խնդիրն էր՝ մասնավորապես, պատրիարքին համոզել, թե հայերին որևէ վտանգ չի սպառնում: Նրանք նաև օգնում էին Թալեաթին՝ համոզելու ՀՅԴ համագործակցելու կառավարության հետ: Չնայած այդ համագործակցությունը չկայացավ, բայց Բ. Դուռը հաջողվեց հայ քաղաքական շրջաններից ինչ-ոչ չափով դուրս մղել մտահոգությունը ազգի վաղվա օրվա համար:

Հ. Երամյանը իր «Ցուշարձանի» Բ հատորում գրում է. «...Պետք է գիտնալ, որ թուրքերն արդեն 1914-ի աշնանը խարդավանքներով զինաթափ ըրած և հեռացուցած էին քաջամարտիկ Զեյթունը և անոր պետերը: Մինչև ապրիլ բոլոր հայաբնակ նահանգներու, մասնավորապես Մուշի և Վանա նահանգներուն մեջ, հայութիւնը արեան բռցերու մեջ խեղդուած էր... Իսկ Արամի ընկեր Իշխանը ապրիլի սկզբները իր երեք համհարզներով դավաճանութեան զոհ կերթար Հիրճ գիւղի մեջ, երբ յուզեալ շատախցիները խաղաղացնելու կը վազեր Ճեղեթի հրամանով: Այսինքն՝ յեղափոխութեան պատասխանատու ղեկավարը՝ փոխանակ ինքը ստանձնելու հայկական գոյամարտը, զայն մարելու կերթար Շատախ...»[97]:

«Հին զինուորը (Սեբաստացի Մուրադը),- գրում է Մ. Վարանդյանը,- չէր փախչեր մեղկ, վեհերոտ, փոքրհոգութեամբ, նա չէր լքեր ռազմադաշտը, այլ կը հեռանար, վանզի քաղաքացիական (կուսակցական) պարտքը այդպես կը թելադրեր:

Սասնոյ յանդուգն ֆետային կրնար խումբ մը կտրիճներով փարթիզանական կռիվներ սկսիլ, քիչ շատ երկար դիմանալ լեռներու, ձորերու մեջ, և նեղը ձգել պատերազմի հոգսերով բռնուած թուրքը, սակայն պատասխանատուութեան ահավոր խնդիրը կար, կուսակցութեան կեդրոնեն ստիպողական հրահանգ կար, հետևաբար Մուրատ կը կրկներ. «Մենք պատճառ չրլլանք ժողովուրդը կոտորել տալու, հեռու մնանք գոյամարտե, թաքնուինք, չքանանք»[98]:

Արևմտահայ ժողովուրդը ոչ թե ինքնակամ վիզը երկարեց յաթաղանին, այլ հայ քաղաքական ուժերի անպատասխանատվությունն ու ամոլությունը նրան դրեցին նման հարկադրանքի առաջ: Արևմտահայերի առանց դիմադրության կոտորվելն ու նրանց աշխարհընկալումը, ինքնապաշտպանության հանդեպ վերաբերմունքը հակադրության մեջ էին: Պատմում է հայ կամավոր Մ. Մելիքյանը: Երբ Տարոնում էր, քրդերը սկսեցին իրենց թաքցրած հայերի վաճառքը: Նրանք բերեցին նաև 30 տարեկան մի հայ կնոջ, որը դիմելով Միսակին՝ ասաց. «Այստեղից մի օրվա հեռավորության վրա իմ գյուղն է, կուզեմ, որ դու ինձ ընկերակցես այնտեղ գնալու»: Երբ հասնում են այդ գյուղը, կինը կանգ է առնում մի ավերված տան առաջ: Ապա ծնկի է իջնում ու սկսում փորել գետինը: «Քիչ անց վայրենի աղաղակով ... հաղթականորեն ճոճեց մի փոքր քսակ: «Ահա,- ասաց նա,- 60 ոսկի է: Գիտեմ, որ քիչ է, բայց դա է իմ ամբողջ կարողությունը: Առ այս դրամը և ազատիր մերոնցից նրանց, ովքեր դեռ գերի են քրդերի մոտ»[99]:

Այդպես էր. հայը հային, իր ժողովրդին փրկելու համար պատրաստ էր զոհաբերել ամեն ինչ, նաև սեփական կյանքը, պատրաստ մարտնչելու, հաստատելու իր ապրելու իրավունքը, բայց նրան հարկադրեցին գառի հնազանդությամբ սպանդանոց գնալ:

96 Պալաքեան Գ., նշվ. աշխ., էջ 56:
97 Երամեան Հ. Ցուշարձան Վան-Վասպուրականի, հ. Բ, Ալեքսանդրիա, 1929:
98 Վարանդեան Մ. Մուրատ, Թեհրան, 1931, էջ 220:
99 Մելիքյան Ս. Հայ կամավորի հուշերից, Թիֆլիս, 1917, էջ 24-28:

ՀՅԴ 1914-15թթ. վարքագիծը որևէ արդարացում չուներ: Թերևս նաև այդ վարքագիծը էական դեր խաղաց, որպեսզի երիտթուրքերը բծախնդրությամբ և առանց որևէ դիմադրության իրականացնեին հայ ժողովրդի բնաջնջման ծրագիրը՝ հայերը հեշտությամբ զինաթափվեցին, որովհետև դա միանգամայն հասկանալի էր թվում պատերազմական պայմաններում: Հայ երիտասարդությունը միանգամայն պատրաստակամ մասնակցեց զորակոչին՝ նորից հասկանալի պատճառով՝ պատերազմ էր: Պատերազմող թուրքական հայրենիքի անվտանգության կարծեցյալ նկատառումով հայ մտավորականությունը հլու-հնազանդ մեկնեց նշանակված աքսորավայր: Մնացած հայերին տեղահանելն այլևս բարդություններ առաջացնել չէր կարող:

Թուրք գիտնականները հաճախ են օգտագործում մի փաստ, որի հավանական լինելը չի բացառվում: Նրանք նշում են, որ Հայոց կաթողիկոսը նախապես տեղյակ էր ապրիլի 24-ի ձերբակալությունների մասին: Նկատի է առնվում այն, որ նույն օրը կաթողիկոսը հեռագիր էր ուղարկել ԱՄՆ նախագահին՝ խնդրանքով, միջամտելու, որպեսզի դադարեցվի Թուրքիայում սկսված հայկական կոտորածները: Մինչդեռ ԱՄՆ դեսպանը ձերբակալությունների մասին իմացավ միայն ապրիլի 27-ին: Ենթադրվում է, որ կաթողիկոսի նամակը գրվել էր մինչև ապրիլի 24-ը:

Ինքնամերկացումների շղթա,ճիշտ ու սխալ ինքնամեղադրանքներ, «ինքնադաստիարակությանը» միտված կեցվածք, բայց ոչ երբեք՝ իրականության անաչառ վերլուծություն և արժեքավորում: Պոլսահայ գործիչները պատերազմի մեջ Թուրքիայի մտնելուց շատ անց էլ չըմբռնեցին կամ գուցե չհավատացին, որ իթիհադը բնաջնջվելու բախտ էր նախապատրաստել արևմտահայության համար: Երիտթուրքերի հետ ՀՅԴ մեղրամիսը վաղուց ավարտվել էր, բայց ուստա հայրենասիրությունը՝ երբեք: Պատերազմի մեջ Թուրքիայի մտնելը Վանի դաշնակցականները դիմավորեցին դհոլ-զուռնայով, չքաքայլքով, որոնք միտված էին ցուցադրել հավատարմություն իթիհադին ու նաև արտահայտությունն էին այն թաքուն հույսի, թե պատերազմը երկնքից թափվող մանանա էր հայերի համար, հնարավորություն մեկընդմիշտ լուծելու Հայկական հարցը: Թագաժառանգ Ց. Իզզեթը հնչակյան մի քանի գործիչների օգնությամբ պետական հեղաշրջում նախապատրաստեց, որպեսզի խափանի Թուրքիայի մուտքը պատերազմ, սակայն այն ձախողվեց: Էնվերը սպանեց Իզզեթին: ՀՅԴ-ն հակառակ դիրքերից էր մոտենում իթիհադին, նույնիսկ վերջինիս գիտությամբ զենքեր էր կուտակում, սակայն հայերի զինաթափման ընթացքում դրանք բռնագրավվեցին, և ՀՅԴ հուչակեցին դավադիր կուսակցություն: «Պարզապես չշմած էի ազգային վարիչ շրջանակներու անփութութեան,- գրում է Գ. Պալաքյանը,- տեսակ մը ճակատագրապաշտ համակերպութեան, քաղաքական անորակելի բարեմտության և անհեռատեսութեան վրայ: Մարտի սկզբեն արդեն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը և Պոլսոյ պատրիարքարանը տեղեկացեր էին քանի մը ամիսներ առաջ իթիհադի կողմե վճռուած ոճիրին տրամադրութեան»:

Բնաջնջման թուրքական քաղաքականությանը կազմակերպված դիմադրություն ցույց տալ չկարողանալու պատճառների առաջին խումբն ընդգրկում է երիտթուրքերի ձեռնարկած միջոցառումները, և ընդհանրապես, ոչ մահմեդականների հանդեպ թուրքերի դարավոր քաղաքական փորձը: Օսմանյան տիրակալներին հաջողվել էր հարյուրամյակների ընթացքում ռայային «ընտելացնել» անմոռուչ հպատակության, նրա միջից վանել ազատության ձգտումը, իսկ զենք կրելու արգելքը հպատակ քրիստոնյաներին հետ էր սովորեցրել, նրանք խորթացել էին զենքին և հայը հոգեբանորեն պատրաստ չէր այն օգտագործելու: Երիտթուրքերը հիմնովին զինաթափեցին հայերին: Դրան նպաստեց դաշնակ-իթիհադ «եղբայրությունը», որի կապակցություններում վերջինիս հաջողվեց նախապես իմանալ ու ոչնչացնել հայերի զենքի թաքստոցները: Հայ ժողովուրդը գլխատվեց, նրա առաջատար խավերը նախապես ոչնչացվեցին ձերբակալությունների ու ոչնչացումների հետևանքով փաստորեն դադարեցին գոյություն ունենալուց քաղաքական կուսակցությունների կայսրությունում գործող կառույցները: Դադարեցին գործելուց ազգային շարժման նաև մյուս առաջատար ուժերը՝ մտավորականությունը, հոգևորականությունը, հայ գյուղապետերը: Նրանց հիմնական մասը ոչնչացվեց մինչև բռնագաղթը: Կայսրությունում կապի միջոցների թույլությանը գումարվում էր դրանք պետության վայրագ վերահսկողության տակ առնելը: Հայերի համար դադարեցին գործել փոստն ու հեռագիրը, խզվեց կապը մայրաքաղաքի և գավառների, քաղաքների ու գյուղերի, անգամ հարևան գյուղերի միջև: Թուրքական բանակն աքցանի մեջ

առավ հայկական նահանգները, կտրեց կապն արտասահմանի հետ: Երիտթուրքերին հաջողվեց Անկախ Հայաստանի վտանգով ահաբեկել, իսկ հայերի ունեցվածքին տիրանալու հեռանկարով շահագրգռել մահմեդական բնակչության լայն շրջաններին բնաջնջելու հայերին: Սրբազան պատերազմը մեծ լիցք հաղորդեց մահմեդական մոլեռանդությանը, ինչը նույնպես խթանեց հայերի բնաջնջմանը մահմեդական զանգվածների մասնակցությունը: Ի տարբերություն համիդյան ջարդերի՝ Մեծ եղեռն իրականացվեց բռնագաղթի միջոցով: Տարագրության քարավանները մինչ ճանապարհ ընկնելը հիմնավորապես «մաքրազարդվում էին» զենք կրելու ընդունակ բնակչությունից: Իրականում տարագրվում էին կանայք, երեխաները, ծերերն ու հիվանդները, որոնք անզոր էին դիմակայելու ոչ միայն ժանդարմների, ոստիկանների, զինվորների, քրդերի, թուրքերի, չերքեզների հարձակումներին, այլև բնությանը՝ շոգին, ցրտին, ճանապարհների բացակայությանը և շաբաթներ շարունակ, գրեթե առանց կանգառի ուղեկցողների հարվածների տակ քայլքին, քաղցին, ծարավին, բռնություններին, համաճարակներին: «Տեղահանությունը ոչնչացում է» երիտթուրքական նշանաբանը գործողության մեջ էր մեծ ու փոքր բոլոր հարցերում, երբ մահն ու սպանությունը նույնանում էին, մարդիկ մեռնում էին, բայց իրականում ամենատարբեր միջոցներով նրանց մեռցնում էին: Գերմանիան ոչ միայն չխանգարեց բռնագաղթին, այլև խրախուսեց ու մասնակցեց դրա իրականացմանը, գերմանացիները չբռնեցին ջարդարարի ձեռքը, այլ խրախուսեցին գազանին: Անտանտի երկրները ձևական ու պասիվ դրսևորեցին իրենց ընդդիմությունը, բավարարվեցին մայիսի 24-ի հայտարարությունով, հայերի փրկությունն ուղղակի կախման մեջ դրեցին ռազմամարտավարական խնդիրներից և ոչ քիչ դեպքերում մարտավարական գործողություններով ոչ թե կասեցրեցին, այլ աջակցեցին ջարդերին: Անտանտի կառավարությունները, օգտվելով անելանելի կացությունից, հայ երիտասարդությանն օգտագործեցին որպես թնդանոթի միս իրենց ռազմական ծրագրերի իրականացման համար, իսկ ապա դավաճանաբար լքեցին հայությանը: Այնտեղ, որտեղ Անտանտի տերությունների շահերը համընկնում էին հայ ժողովրդի փրկության շահերին (Վան, Կիլիկիա), նրանք հայկական շարժումներին աջակցեցին, և հայերը կարողացան թուրքերին համառ դիմադրություն ցույց տալ, անգամ պարտության մատնել: Սակայն հայերի անկախական ձգտումների մասին լուրերն ու հերյուրանքներն Անտանտի տերություններին ավելի քիչ էին անհանգստացնում, քան Թուրքիային: Նրանք չէին ընդունում Հայաստանի գոյությունը և 1916թ. համաձայնության եկան այն իրար մեջ բաժանելու շուրջ: Հայ գործիչները, մասնավորապես արևելահայերը, բավարարվեցին քարոզչական գործունեությամբ, ինչ վերաբերում է կամավորական շարժմանը, ապա այն ենթարկված էր ոչ թե հայության փրկության, այլ դաշնակիցների ռազմավարության շահերին: Արևմտահայ գործիչները, իհարկե, տեղյակ էին երիտթուրքերի դիվային մտադրություններին, նկատում էին, որ հայերին սպառնացող վտանգը գնալով ահագնանում էր, սակայն էական ոչինչ չարվեց աղետի առաջն առնելու համար: Պատրիարքարանը շարունակում էր խոհեմության ու խոնարհության քարոզներ կարդալ, նաև կոչ արվեց զենքերը հանձնել, ամեն տեսակի զոհողությունների գնալ «հանուն օսմանյան հայրենիքի»: Հայ քաղաքական ուժերը նույնպես օգնեցին թուրքական իշխանություններին զինաթափելու արևմտահայությանը: ՀՅ Դաշնակցության արևմտյան բյուրոն ու նրա տեղական կազմակերպությունները փորձ անգամ չարեցին ժողովրդին ոտքի հանելու, պարտիզանական շարժում ծավալելու, ոմանք էլ ժողովրդի պաշտպանությունը պարզապես զոհաբերեցին սեփական անձի փրկության շահին:

Հայ քաղաքական կուսակցությունների, մասնավորապես ՀԲԴ (որովհետև այդ շրջանում նա էր ազգի ղեկավար ուժը) պատմական մեծագույն սխալն ու խայտառակությունն էր, որ պատերազմից որևէ ակնկալիք չունեցող հայ ժողովուրդը տոկոսային հարաբերությամբ աշխարհամարտի ամենաեռանդուն մասնակիցը դարձավ: Նա կռվող բանակներին տվեց 600 հազար մարդ: Այդ վիթխարի ուժը մարտնչում էր ոչ թե սեփական ազգի համար, այլ իրար դեմ մարտնչող բանակների կազմում: Հայ զինվորները միմյանց սպանում էին հանուն իմպերիալիստական խմբավորումների շահերի: Մինչդեռ լրիվ բավարար կլիներ, եթե մարտական այդ ուժի գոնե 10%-ը կազմակերպվեր ու կռվեր հանուն արևմտահայության փրկության: Արդյունքում արևմտահայությունը յաթաղանի դեմ լքված մնաց ոչ միայն մեծ տերությունների, ոչ միայն արտերկրի, մասնավորապես արևելահայերի, այլ նաև ինքն իր կողմից՝ սեփական մարտունակ ուժերին թույլ տվեց զորակոչվելու թուրքական բանակ, որպեսզի ոչնչացվեին այդ նույն բանակի կողմից:

Ավածը նշանակո՞ւմ է, թե արևմտահայությունը գլուխը յաթաղանին մեկնեց առանց դիմադրության, առանց ընդվզումների: Իհարկե ոչ: Ինքնապաշտպանության բնազդը հատուկ է բոլոր էակներին: Մեծ եղեռնն այնպիսի հրեշավոր, ամենաոչնչացնող ու կործանող աղետ էր, որ բնականաբար մարդկանց ուշադրությունը սևեռեց ու շարունակում է սևեռած պահել զոհերի, աղետից տուժածների վրա, ինչն այնքան համապարփակ էր, որ անգամ մեռցնում էր ձգտումը անդրադառնալու երևույթի մյուս կողմին՝ ժողովրդի մաքառմանը՝ եթե անհնար էր փրկվել, ապա սեփական կյանքը հնարավորին չափ թանկ ծախելու ձգտմանը, ազգային ու մարդկային արժանապատվության համար մարտնչելուն:

Չնայած ավելի քան անբարենպաստ իրավիճակին, արևմտահայերը պայքարեցին: Խոսքը միայն Վանի, Մուշի, Սասունի, Շապին-Կարահիսարի, Մուսալեռան, Ուրհայի, Զեյթունի մասին չէ, այլ ընդվզումների այն երկար շարքի, որը դժբախտաբար մինչև օրս գրեթե չի ուսումնասիրված: Իսկ այդ անելն անհրաժեշտ է ոչ միայն գիտական ու բարոյական պարտքի, այլև ժամանակակից սերնդի, ամբողջ ազգի հոգեկան վերակառուցման, պարտվողական, լակեյական հոգեբանության ու դիրքորոշման հաղթահարման համար: "El bien" թերթը 1915թ. սեպտեմբերի 11-ին վկայակոչելով "Daily telegraph"-ին անդրադառնում է 2 000 բնակիչ ունեցող հայկական մի գյուղի, որի բնակիչներից ժանդարմները պահանջեցին հեռանալ: Հայերը չհամաձայնվեցին և պաշտպանության կանգնեցին: Հաջորդ օրը գյուղը շրջապատեց բանակային մի ամբողջ գունդ, որը նախ այն հրկիզեց, ապա գնդացրային կրակի տակ առավ բոցերից փրկվածներին: Միայն չորս հոգի ազատվեց: Ճիշտ է նկատում Գր. Զալդուչյանը. «Երբ Թուրքահայաստանը լողում էր արյան մեջ, հայերը հաղթահարեցին զզվանքը զենքի հանդեպ և զենքի դիմեցին»[100]:

«Հայերն իրենք էլ էին պաշտպանվում,- գրում է Գեմարսկին: - Որոշ փոքր քաղաքներում կազմակերպվում էր ուժեղ դիմադրություն, որին երբեմն մասնակցում էին տեղացի թուրքերը: Լեռներում կազմվեցին հայ պարտիզանների խմբեր: Այնտեղ ապաստան էին գտել նաև կանանց ու երեխաների մի մասը: Թուրքերը կատաղի կռիվներ մղելով, մեծ դժվարությամբ էին կարողանում սարը սարի հետևից գրավել՝ գործադրելով հրետանին և հետևակը: Հայկական դիմադրության կետերից մի քանիսը փրկվեցին»[101]:

Խնդրին հետաքրքիր անդրադարձ ունի Անրի Բարբին: Նա գրում է. «Հաճախ են հայերին հանդիմանում, որ երբեք չկարողացան ոչ կազմակերպվել և ոչ էլ միավորվել, որպեսզի պաշտպանվեն անողոք դահիճներից և ի վերջո, տապալեն թուրքական լուծը, որը նրանց այնքան դաժան ճնշել էր դարեր շարունակ» և ինչո՞ւ էր այդպես. «Ինչո՞ւ հայերը նույնիսկ չփորձեցին մի մարդու նման ապստամբել» և հասնել ազատության[102]:

Բարդ հարց է: Հարկ է նկատել, որ լեռնաբնակ հայերից շատերը երբեք չդադարեցրին պայքարը: «Միշտ զինված, զինված, անգամ դաշտում աշխատելիս, միշտ պատրաստ հակահարվածի՝ նրանք ապրում էին մշտական ահի մեջ՝ չգիտեին հանգիստ, միշտ աչալուրջ՝ հերոսական և անհնազանդ, միաժամանակ պայքարելով թե վաշխառուության, թե թուրքական իշխանությունների դաժանությունների և թե ավազակների անդադար հարձակումների դեմ: Սակայն այն, ինչ հնարավոր էր լեռներում ու գրեթե բացառապես հայերով բնակեցված վայրերում, անիմաստ էր Հայաստանի մեծ մասում: Եվ իրոք, Հայաստանում, այդ վիթխարի տարածքում, որը զուրկ էր հաղորդակցության միջոցներից, գրեթե ամենուրեք հայերը բնակվում էին խառն կամ լուծված քուրդ և թուրք մահմեդական քոչվորների և գիշատիչների՝ իրենց բնական թշնամիների շրջապատում»:

«Հայաստանի պատմությունը,- շարունակում է Բարբին,- անվերջ մարտիրոսություն է: Նույնիսկ նորագույն ժամանակներում, նույնիսկ XIX դարում հայերը շարունակում էին մնալ թուրք նահանգապետերի և պաշտոնատարների կամայականության զոհեր»: Ստորացնող վերաբերմունք, թալան, կանանց փախցնել, հրդեհներ, կամայականություններ, սպանություններ, այս ամենը սովորական երևույթներ էին: Ամբողջ երկրով մեկ ցրված և դարավոր ճնշումների հետևանքով համարձակ գործողություններին վատ նախապատրաստված ազգաբնակչության փոխհամաձայնեցված և համընդհանուր գործողությունների կազմակերպումը ավելի քան դժվար խնդիր էր:

Մինչև 1915թ կոտորածները և նույնիսկ դրանցից առաջ, հենց որ բացահայտ դարձան կառավարության բարբարոսական միջոցառումները, շատ հայ համայնքներ ձգտեցին դիմադրություն կազմակերպել, բայց այդ բոլոր փորձերն անհաջողության մատնվեցին և արագացրեցին

100 Чалхушян Г. Красная книга, Ростов на Доны, 1919, стр. 87.

101 «Խորհրդային Հայաստան», 20.05. 1990:

102 Барбин А. В стране ужаса. Мученица Армения, "Тифлис", 1919, стр. 57.

դրանց մասնակիցների կործանումը: Սակայն ընդհանուր առմամբ «ապստամբած, լեռներում ապաստանածներն ավելի քիչ տուժեցին, քան հնազանդություն դրսևորած բնակչությունը»:

Բարբին ինքնապաշտպանություն ու ապստամբությունը նույնացնում է, ինչը սխալ է: Մի բան է, երբ զանգվածները ոտի են ելնում ինչ-որ հիմնահարց լուծելու և միանգամայն այլ է, երբ պայքարի են բարձրանում ապրելու իրավունքի համար:

Ջիվելեգովը ճիշտ է նկատել. «Վանա լճի ափերից, հարավից, արևմուտքից, անգամ արևելքից ու հյուսիսից, Մշո և Բիթլիսի շրջակայքից, պարսկական սահմանից պոկվեցին ու շարժվեցին... կանայք, երեխաներ, ծերեր: Զինված տղամարդիկ բարձրացան լեռներ, որպեսզի պարտիզանական պատերազմով խաղաղեցնեն թուրքերին ու քրդերին մինչև ռուսական զորքերի վերադարձը: Ով մնաց տեղում, չհասցրեց կամ չկարողացավ հեռանալ... մորթվեց»[103]:

Հալեպում ամերիկյան հյուպատոսի վկայությամբ՝ «Ծովափնյա շրջանների հայերը Ֆրանսիական էսկադրայի հրամանատարի աջակցությամբ դիմում են զենքի: Նրանք իրենց կանանց ու երեխաներին ուղարկել են Եգիպտոս»[104]:

Խոսքը Մուսա լեռնցիների մասին է, որոնք պայքարի ելան ոչ թե սոցիալ-տնտեսական կամ քաղաքական այլևայլ հարցեր լուծելու, այլ փրկվելու, գոյատևելու համար: Ընդհակառակը, մասնագետների մեծամասնությունը հայերին կշտամբում է ոչ թե ապստամբական կողմնորոշման , այլ իր գոյության իրավունքը հաստատելու պատրաստակամության բացակայության համար, ինչը նույնպես չափազանցություն է: Նանսենը զրպարտություն է անվանում հայերի հացեին մեղադրանքը, թե նրանք ջարդերին չդիմակայեցին: Աշխատունակ տղամարդկանց մեծ մասն արդեն զորակոչված էր, գրում է նա, ինչպե՞ս կարող էին անզեն մարդիկ պաշտպանվել ոստիկանների, կանոնավոր զորքի ու բազմաթիվ «կամավորական հրոսակների հարձակումներից: Ամենուրեք, որտեղ դա հնարավոր էր, հայերը խիզախորեն դիմադրում էին, երբեմն որոշակի հաջողությամբ...»[105]:

Խորհրդանշական են նաև հետևյալ դիտարկումները: Մնտեռնիխ. Այժմ նա (Բ. Դուրը) մտադիր է բաժան-բաժան անել և ցրել հայերի վերջին խմբերին, ովքեր ինքնապաշտպանության միջոցով փրկվել են առաջին ցեղասպանությունից[106]:

Վանգենհայմ. «Այս ամսվա սկզբից Դիարբեքիրի վալի Ռեշիդ բեյը սկսել է իր իշխանության տակ գտնվող քրիստոնյա բնակչության ջարդը... Դրա հետևանքով ... Մարդինի և Միդիաթի քրիստոնյա բնակչությունն ըմբոստացել է կառավարության դեմ, մնասել հեռագրագծերը»: Միաժամանակ ապստամբ արաբները գրավել են Մոսուլի փոստային ու երկաթուղային ճանապարհները և ընդհատելով երթևեկությունը այնպես արել, որ կառավարությունը Նիսիբինում դադարեցրել է ռազմամթերքի տեղափոխությունները: Մի ուրիշ ապստամբության օջախ է կազմակերպվել Զյեբել Զինդյարում Մոսուլից դեպի արևմուտք, որտեղ եզդիները զենք են վերցրել: Վերջապես ռուսական վարձկանների թվին պատկանող հայտնի քուրդ առաջնորդ Ա. Բեդրխանը քրդերի և հայերի հետ Բայազետից շարժվեց Սղերդ:

Նման բովանդակությամբ հաղորդագրությունների թիվը դժբախտաբար շատ չէ, բայց եղածը եւս հիմք է տալիս ասելու, որ ցեղասպանության տարիներին դիմադրություն և ինքնապաշտպանական կռիվներ եղել են, որ որոշ վայրերում դրանք կրել են ինտերնացիոնալ բնույթ: Թուրքական պատմագրությունը ամեն կերպ աշխատում է այդ կռիվները ներկայացնել որպես անջատողական միտումներ ունեցող և կամ թուրք ազգաբնակչությանը ոչնչացնելու գործողություններ: Մինչդեռ, կրկնում եմ, ամենուրեք դրանք կրում էին ինքնապաշտպանական բնույթ, որոնց ընթացքում, իհարկե, զոհվեցին նաև մահմեդականներ:Դժբախտությունն այն էր, որ հայոց ինքնապաշտպանական կռիվները մնացին առանց ընդհանուր ղեկավարության, միմյանցից մեկուսացած թե ժամանակի և թե տարածության առումով: Այդ շարժումները նախապես ոչ ծրագրվել էին և ոչ էլ նախապատրաստվել, դրա համար էլ թույլ էին և կոտորածների առաջն առնել չկարողացան:

1915թ. օգոստոսի 12-ին Բեթման Հոլվեգը խոստովանել է. «Իրենց բնակավայրերից տարագրված հայ բնակչության սիստեմատիկ ջարդը վերջին շաբաթներին այնպիսի չափեր է ընդունել, որ մենք արդեն նոր, ավելի խոր պատկերացում ենք կազմել այդ վայրենի բռնադատու-

103 "Русские ведомости", 04. 08. 1915.
104 АВПР, Политархив, д.2490, л. 107.
105 Նանսեն Ֆ., նշվ. աշխ., էջ 350-353:
106 Lepsius J. Deutschland und Armenia, s. 115.

թյունների մասին, որոնց կառավարությունը (թուրքական) ոչ միայն հանդուրժում, այլեւ բացահայտորեն աջակցում է: Այնպես, որ ուրիշ ռասաներին եւ դավանանքներին պատկանող քրիստոնյաները չեն խնայվել: Ավելին: Պետական մարմինները սկսել են հայ բնակչությանը տարբեր վայրերից տեղափոխել Իզմիրի շրջակայքը, այսինքն՝ մայրաքաղաքի անմիջապես մոտերքը՝ պատճառաբանելով, թե իբր նրանք ցանկանում էին Սաքարիայի գետաբերանի մոտ օգնել ռուսական զորքերի անցմանը»[107]:

Վանում, գրում է Ա. Մանդելշտամը, հայերը դիմեցին զենքի՝ շրջակա գյուղերի ազգաբնակչության մեծագույն մասի կոտորվելուց եւ կուսակալ Ջևդեթ բեյի հրամանով նրանց մի քանի գլխավորներին դավաճանաբար սպանելուց, հայկական թաղերը շրջապատվելուց հետո: Այսինքն՝ թշնամական գործողությունները սկսեցին թուրքերը, բայց չկարողացան գրավել հայերի դիրքերը և պաշարումը վերացրին 1915թ. մայիսի 20-ին՝ ռուսների մոտենալու ժամանակ: Նույն միջոցին Դիարբեքիրի թուրքերն ու քրդերը արդեն կոտորել էին Սըլիվանի, Բշերիկի և այն ընդարձակ դաշտի հայերին, որը Դիարբեքիրից տարածվում է մինչև Սասունի լեռների ստորոտը: Սասունի լեռնցիները, ուժեղացած փախստականներով՝ վճռեցին պաշտպանվել: Հուլիսի 10-ին Մուշ քաղաքը նույնպես ռմբակոծվեց: Չորս օր դիմադրելուց հետո արական սեռին պատկանողները սպանվեցին, իսկ կանայք ու երեխաները այրվեցին: Հունիսի վերջին թուրքերին հաջողվեց մտնել Վան և հայերից նրանց, ովքեր չէին կարողացել հեռանալ ռուսական բանակի հետ՝ վերջինիս հանկարծակի նահանջի պատճառով, կոտորեցին:

Վանի, Բաղեշի, Մուշի ու Սասունի հայերը բնավ չէին թերացել պատմության հանդեպ իրենց հավատարմության մեջ՝ մինչև այն պահը, երբ պետք էր թույլ տալ, առանց դիմադրության կոտորվելու, իբրև մնասակար ու վտանգավոր տարրի, հանուն օսմանյան հայրենիքի բարօրության ու ապահովության: Պատերազմի սկզբնական շրջանում, չնայած բոլոր տանջանքներին ու բռնադատումներին, հայերը կարողացան թաքցնել որոշ քանակությամբ զենք և համարձակվեցին դրանք գործածել իրենց դահիճների դեմ: Սակայն նրանք այդ արեցին միայն ինքնապաշտպանության նպատակով, և ոչ մի տեղ նախահարձակ չեղան: Չինված դիմադրության դեպքերից ոչ մեկում չենք տեսնում հեղափոխականների, այլ՝ լոկ դժբախտների, որոնք կարողացել են պահել մի քանի զենք, ավելի ճիշտ՝ նախընտրել են մաքառել մինչև մահ, քան ենթարկվել դանդաղ մահվան կամ տարագրության թշվառությանը: Հայերին, ուրեմն, չպիտի հանդիմանել իրենց կյանքը պաշտպանելու համար: Չպետք է մոռանալ, որ չնչին փոքրամասնությունը միայնակ ի վիճակի չէր այդ անել: Արդեն պատերազմի սկզբում հայերի մեծամասնությանը ստիպեցին զենքերը հանձնել կառավարությանը, և այս դժբախտները պետք է առանց ամենափոքր դիմադրության ընդունեին այդ նույն կառավարության կողմից իրենց համար պատրաստված դաժան ճակատագիրը[108]:

107 Լեփսիուս Յո., նշվ. աշխ., փաստաթուղթ N 501:
108 Зареванд Турция и пантуранизм, Париж, 1930, см. Предисловие А. Мандельштама.

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

1915Թ. ԱՊՐԻԼԻ 24

1915-ի գարունը սովորական չէր: Շոգ էր: Հայաստանն ու Կիլիկիան թաղված էին կանաչի ու ծաղկի մեջ: Իսկ ապրիլի կեսերին արդեն ամառվա շոգ էր, կիզիչ արևը հալածում էր կենդանի էակներին: Ահա այդ արտակարգ շոգին գործողության մեջ դրվեց արևմտահայության բնաջնջման քաղաքականությունը:

Անկարայի ռադիոյի «Հայկական թղթապանակ» արաբերեն հաղորդաշարի 18. 11. 1984թ. թողարկումն ասում էր մի պարզ ճշմարտություն, թե «մինչև Առաջին աշխարհամարտի սկսվելը որոշվել էր հայերին տեղափոխել այլ շրջաններ, քանի որ նրանք ըմբոստանում էին պետության դեմ եւ քայքայիչ գործունեությունն ավելի ուժեղացրեցին պատերազմի ընթացքում»: Եթե ասվածն ազնիվ խոստովանություն է, ապա ակնհայտ է, որ «... մինչև Առաջին աշխարհամարտը որոշված էր հայերին տեղահանել», այսինքն՝ այն պայմանավորված չէր պատերազմով: Տեղահանությունը հետեւանք չէր նաև «հայերի ըմբոստությունների», որովհետեւ 1914թ. փետրվարի 6-ի ռուս-թուրքական համաձայնագիրը հիմնականում բավարարել էր հայերին և նրանք խուսափում էին որևէ քայլից, որը թուրքերը կօգտագործեին խափանելու բարենորոգումները: Իսկ երբ թուրքական ռադիոն ասում էր, թե գործողության մեջ դրվեց մինչև Առաջին աշխարհամարտը մշակված ծրագիրը, նկատի չուներ հայերի ցեղասպանության մտահղացումը, ինչը տասնամյակների պատմություն ուներ, այլ տեղահանության միջոցով հայերի ամբողջական բնաջնջումը, որը պատմության մեջ մտավ Մեծ եղեռն անունով: Այսինքն՝ հայոց եղեռնների շարքում այն ամենախոշորն էր, ամենաամբողջականը, ամենաողբերգականը: Դժբախտ իրողություն էին դառնում Անդրանիկի խոսքերն ասված ՀԾԴ պարագլուխներին 1908թ. «Ձեր այդ իթիհադականները մի օր ձեր գլուխն ուտելու են ձեր ազգի հետ միասին»[1]:

1915թ. ապրիլի 26-ին Զաուեն պատրիարքը դիմեց եպարքոս Սայիդ Հալիմին՝ բողոքելով Կ. Պոլսի հայ մտավորականության ձերբակալությունների դեմ: Վարչապետը պատասխանեց. «Պատերազմեն առաջ համաձայնական տերությանց դիմելով ուզեցիք անջատել ձեր ազգը օսմանեան պետութենեն, այժմ կրեցեք պատիժը. հայերուն մասին եղածը արդինք է ծրագրի մը, որ պիտի գործադրուի»[2]: Ավելի պարզ ասել անհնար է:

Հայ մտավորականության ոչնչացումն այդ ծրագրի կետերից մեկն էր: Հայ մտավորականության այն ներկայացուցիչների պաշտոնազրկումը, բանտարկությունն ու տեղահանությունը, ովքեր կարող էին բողոքի ձայն բարձրացնել բնաջնջման օսմանյան-երիտթուրքական քաղաքականության դեմ, համակայսրական երևույթ էր: Դեռ փետրվարի 15-ին Թալեաթը Վանգենհայմին ֆրանսերեն ասաց. «Այժմ միակ հարմար առիթն է...»: Հաջորդ օրը թուրքական թերթերը գրեցին. «Կասկածելի հայերն՝ անհատ թե խմբովին, այլ վայրեր են տեղափոխվելու»: Մի այլ անգամ Թալեաթը հոխորտաց. «Թուրքիայում պետք է վարել միայն օսմանյան քաղաքականություն... հայերի մեջ կան քաղաքականապես անկայուն մարդիկ, որոնց բնականաբար պետք է փնտրել հենց ակումբների և հրատարակությունների ակտիվիստների շրջանում: Հարկ է նկատի ունենալ, որ պատերազմի անհաջող ընթացքի դեպքում այդ տարրերն անմիջապես ստեղծված հնարավորությունը կօգտագործեն խռովություններ առաջացնելու համար: Թվում է, թե ներկա պահը շատ հարմար է կասկածելի մարդկանց հեռացնելու մայրաքաղաքից»[3]:

«Այն բոլոր հայերը, որ Հայաստան մը շինելու համար խոսքով, գրչով կամ գործով աշխատած են կամ կրնան աշխատիլ,- մի այլ անգամ ասաց նա,- տերութեան թշնամի կը նկատուին և այսպիսի ժամանակում պետք է մեկուսացուին»[4]:

---

1 Թերզիպաշեան Ա. Անդրանիկ, Փարիզ, 1942, էջ 139:
2 Սերոբեան Մ. Հայկական հարցը և անոր փուլերը, Բեյրութ,1937, էջ 156:
3 FO Turkyi, 183,Bd 36, Վանգենհայմի 1915թ. ապրիլի 30-ի թիվ 267 տեղեկագիր:
4 Քոչեյան Ա., նշվ. աշխ., հ. Ա, էջ 48:

Ու նաև կձերբակալվեն բոլոր նրանք, ովքեր «գրութիւններով, իրենց բանախոսութիւններով և կամ արարքներով հայ ազգայնականությանը ի նպաստ գործած ըլլալու կարող եղած պիտի ըլլային»[5]:

«Բ. Դուռն ուզում է օգտագործել համաշխարհային պատերազմը,- գերմանացի բարեկամի առաջ սիրտը բացեց այդ հրեշը,- որպեսզի վերջնականապես մաքրի ներքին թշնամիների (տեղացի քրիստոնյաների) հաշիվը...»[6]:

Վանգենհայմի 1915թ. հունիսի 17-ի զեկուցագիրը կանցներին Էնվերը գտնում էր. «Հայերու մնացորդներն այնպես պետք է ցաք ու ցրիվ արվին երկրով մեկ, որ հարկադրուած ըլլան թիւրք տարրի հետ ձուլուիլ»[7]:

Մտավորականությունը հաշվեհարդարի ենթարկելը նպատակ ուներ, նշում է Լեփսիուսը, հայ ժողովրդին «զրկել իր ղեկավարներից եւ մամուլից այն հաշվով, որպեսզի բունագաղթն իրականացվեր անաղմուկ, առանց որևէ դիմադրության»[8]:

Դրա համար էլ աքսորն ու ոչնչացումը վերաբերում էին հայ մտավորականության բոլոր ճանաչված ներկայացուցիչներին, որոնց հարկ էր այս կամ այն կերպ, բայց հիմնականում ոչնչացնելու միջոցով, լռեցնել: Նրանք լինեին պատգամավոր թե պրոֆեսոր, բժիշկ թե դերասան, գրող թե ժուռնալիստ, անկախ կուսակցական պատկանելությունից, առանց հաշվի առնելու լուսավորչական էին թե կաթոլիկ կամ բողոքական: Միակ պայմանը հայ մտավորական լինելն էր:

Օրը շաբաթ էր: Ձերբակալությունները, որ շատ խնամքով նախապատրաստված էին, սկսվեցին գիշերը: Իմ Թեոնոնը զարմացած բացականչում է. «Կարո՞ղ էք պատկերացնել՝ Թուրքերն ինչպես կարողացան մեկ օրում Կ. Պոլսի 150 հազ. հայ բնակչությունից ձեռք գցել հայ մտավորական գլուխներին՝ գրող, բանաստեղծ, հրապարակախոս, բժիշկ, փաստաբան, ուսուցիչ, շուրջ 270 հոգի...»[9]: Իսկապես, Կ. Պոլսի բնակչության 25%-ը հայ էր: Ձերբակալությունները հիմնականում կատարվեցին Թեչքիլաթի մախսուսայի չեթեների միջոցով ոստիկանական կենտրոնական վարչության, անձամբ Բեդրիի տրամադրած ցուցակներով: Այդ ցուցակները շաբաթներ առաջ ուղարկել էին քաղաքի պահակակետեր կնքված ծրարների մեջ՝ որոշակի օր բացելու և խիստ գաղտնի գործելու հանձնարարականի հետ: Ցուցակները կազմելու գործում ոստիկանությանն օգնել էին մի քանի հայ դավաճաններ, մասնավորապես Արթին Մկրտչյանն ու իթիհադի քաղաքային ակումբները: Բայց գլխավորն այդ դավաճանների «վաստակը» չէր, այլ այն, որ դեռ 1914թ. սկզբներից ոստիկանական վարչությունում առանձին բաժին էր ստեղծված, որի հիմնական աշխատանքն էր կազմել հայ մտավորականության, ազդեցիկ գործիչների «անձնական գործերը», այսինքն՝ լրտեսական տվյալների հիման վրա ստեղծել նրանց քաղաքական անկետան, բնութագիրը:

Եվ այդպես, շաբաթ օրվա գիշերը, ոստիկանության արյունագույն ավտոբուսները Կ. Պոլսի տարբեր թաղերից ու արվարձաններից հայերին տեղափոխեցին կենտրոնական բանտ՝ Մեհեթերհանե: Ձերբակալությունները շարունակվեցին մինչև լույս: Ձերբակալվածների մի մասին նավերով տարան Սիրքեջի բանտ: «Ապրիլի 11 (24) առտվընե,- գրում է Շ. Միսակյանը,- Պոլսի ամբողջ ոստիկանությունը շարժման մեջ դրուած էր: Սկսան հատ-հատ ձերբակալել նախապես պատրաստուած ցուցակով: Գիշերը տեղի ունեցավ բուն դավը, տևելով մինչև առավոտ: Դաշնակցականներե զատ ձերբակալուած են հայկական բոլոր կուսակցութիւններու, հիմնարկութիւններու եւ միութիւններու աչքի ընկնող անդամները, մեկ խոսքով, բոլոր անոնք, որ կարող էին դեր խաղալ հանրային գործերու մեջ»[10]:

Ընդհանուր թվով (խոսքը ամբողջ 1915 թվի մասին է) Կ. Պոլսում ձերբակալվեց 196 գրող, 168 նկարիչ, 578 երաժիշտ, 336 բուժաշխատող, 176 ուսուցիչ, 160 իրավաբան, 62 ճարտարապետ, 64 դերասան:

Ընդունված է ասել, որ Կ. Պոլսում ձերբակալվեց 600, իսկ կայսրությունում՝ 3 000 հայ մտավորական, ինչը ճիշտ չէ: Ձերբակալվածների ու ոչնչացվածների թիվն անհամեմատ մեծ էր: Բանտում հավաքվեց պոլսահայության ընտրանին՝ «ժողովական, երեսփոխան, հեղափոխական, խմբագիր, ուսուցիչ, բժիշկ, դեղագործ, ատամնաբույժ, վաճառական, սեղանավոր և այլ ամեն դասակարգի ազգայիններ: Մեկի ավելի անձեր բերած էին նոյնիսկ սենյակի զգեստներով և հողաթափերով»[11]:

---

5 Նազլեան Հ. նշվ. աշխ., էջ 565:
6 Lepsuis J. Deutschland und Armenia,s. 83:
7 Տաշեան Θ. Հայ ազգային տարագրութիւնը գերմանական վավերագրերու համեմատ, Վիեննա,1921, էջ 21:
8 Լեփսիուս Θ. Տեղեկագիր, էջ 45-46:
9 «Երիտասարդ Հայաստան», մայիս, 1985:
10 Միսակյան Շ. Տերևները դեղնած յուշատետրե մը, Բեյրութ, 1957: Տե՛ս նաև «Հայաստան» (Սոֆիա) 01.05.1915:
11 «Ալիք», 23. 06. 1986:

Ոչ ոք ձերբակալության պատճառը չգիտեր: Կիրակի գիշերը սվինակիր ոստիկանների մեծ խմբի ուղեկցությամբ հայերին բանտից հանեցին, խուզարկեցին, վերցրեցին նրանց մոտ եղած ամեն ինչ, նույնիսկ թղթի կտորները: Ապա 20-ական հոգանոց խմբերով նստեցրեցին ավտոմեքենաներն ու տարան Սարայ Բուրնու, նստեցրեցին գնացք և ուղարկեցին Իզմիդ: Աքսորյալներից ոչ մեկը սննդամթերք չուներ: Միայն Էսքիշեհիրում թույլատրեցին հաց ճարել: Ապրիլի 27-ին Սենջան Քեոյի երկաթուղային կայարանում նրանց բաժանեցին երկու խմբի: Մի խմբին կառքերով տարան Այաշ (71 հոգի), իսկ մյուսներին՝ Զանգը:

Այաշը Անկարայից 12 ժամ հեռավորության վրա գտնվող գավառակի կենտրոն էր: Այստեղ աքսորվեցին հիմնականում կուսակցական գործիչներն ու հեղափոխականները: Նրանց տեղավորեցին Սարը Գչլա զորանոցում, որը 15մ երկարությամբ և 6մ լայնությամբ աղբի մեջ թաղված սրահ էր: Ոմանք ոչ միայն պառկելու, այլ անգամ նստելու տեղ չունեին: Նրանց օրը տալիս էին մեկական հաց և ուրիշ ոչինչ: Սակայն աքսորյալները շուտ հարմարվեցին ծանր պայմաններին: Մի քանի օր անց սրահի տեսքն ամբողջությամբ փոխվեց: Բանտարկյալներն այն վերածեցին բնակվելու համար տանելի կացարանի: Այստեղ էին Սիամանթոն, Է. Ակնունին, Տ. Զյոկյուրյանը, Ն. Տաղավարյանը, Գ. Խաժակը, Հ. Շահրիկյանը, Մ. Կյուրճյանը (Հրանտ), Ս. Բյուրատը, Ռ. Զարդարյանը, Հրաչը(Հ. Թիրեաքյան): Երկու շաբաթ անց Այաշ բերեցին ևս 12 հոգու: Աստիճանաբար բանտային կյանքը մտնում էր իր ավանդական հունը: Խաժակի ղեկավարությամբ ստեղծվեց հանձնաժողով, որը զբաղվում էր բանտի ներքին կյանքի կազմակերպմամբ: Բազում հեռագրեր ուղարկվեցին Թալեաթին բանտարկությունների պատճառը պարզելու համար, ամենատարբեր փաստարկներով աշխատում էին դահճին համոզել, որ իրենք անմեղ էին: Գր. Պալաքյանը ձերբակալություններն ու աքսորները ներկայացնում է հետևյալ կերպ. «Այդ օրերին անգլիական ռազմանավերը Դարդանելից, իսկ ռուսականները Սև ծովից բախում էին Պոլսի դռները: Ձերբակալվածներից ոմանք կարծում էին, որ թուրքական կառավարությունը չի հասցնի Պոլսից հեռանալ և իրենց ձերբակալել էին որպես պատանդ: Երեկոյան բոլոր ձերբակալվածներն բանտի բակը հանեցին և հաշվառում անցկացրեցին... Ապա 20-ական հոգու նստեցնելով ոստիկանական ավտոբուսները և Բեդրիի առաջնորդությամբ տարան Սարա Բուրնու, որտեղ նրանց երկու մասի բաժանեցին և նստեցրեցին Շիրքեթի թիվ 67 շոգենավը՝ 220-ից ավելի ձերբակալված և դրանից ավելի ուղեկցողներ: Նավը նրանց հասցրեց Հայդար փաշայի կայարան, նստեցրեցին գնացք: Երկու օր անց նրանք Էսկյուրիի մոտակայքում գտնվող Սենջան Քյոյի կայարանում էին: Այստեղ Պոլսի բանտապետ Իբրահիմը կարդաց 75 ազգանուն... Նրանց տանելու էին Այաշ»: Իսկ մյուսներին տանում էին Էսկյուրի և անմիջապես նստեցրեցին կառքերը: Կանգ առնելը խստիվ արգելված էր: Երեկոյան հասան Կալայչըկ գյուղաքաղաքը և գիշերն անցկացրին այդտեղ: Հաջորդ օրը տարան Զանգը, լցրեցին գյուղաքաղաքից դուրս մի հսկա շենք: Այդ խմբում էին Կոմիտասը, Դ. Վարուժանը, Գր. Պալաքյանը, Ռ. Սեակը, Տ. Քելեքյանը, Մ. Շամտաճյանը, Ա. Անտոնյանը և ուրիշներ: Միայն երկու շաբաթ անց թույլ տվեցին դուրս գալ զորանոցից և բնակվել գյուղաքաղաքում, որտեղ նրանք ազատ էին:

Ակնունին, Զարդարյանը, Փաշայանը հեռագրով Թալեաթին հիշեցնում էին իրենց ծառայությունները «վայրորության բարգավաճման և առաջադիմության» գործում, ձերբակալությունը համարում «տարօրինակ ու անըմբռնելի», «երկու ազգերի փոխհարաբերությունների պղտորում» և այլն: Այդ նամակները նույնպես մնացին անպատասխան: Հ. Մորգենթաուի ջանքերի շնորհիվ միայն հինգ հոգու թույլատրեցին վերադառնալ Կ. Պոլիս: Դա բնական էր, և հազար անգամ իրավացի էր Լեփսիուսը, երբ գրում է. «... Մի կառավարություն, որը նկատի ուներ բնաջնջելու ամբողջ հայ ժողովրդին», չէր կարող ազդվել այդ հեռագրերից:

Վարդավառի կիրակի օրը աքսորյալների տների մոտ ոստիկաններ երևացին: Հայերը հավաքվեցին կառավարչատան բակում, որտեղ ոստիկանապետը կարդաց 56 հոգու ազգանուն: Նրանց անմիջապես կառքեր նստեցրին ու տարան Դեր Զոր: Արդեն հունիսի սկզբին գավառներից հեռագրեր ստացվեցին, թե ընտանիքներով Երզնկայից «մեկնել են Ակն»՝ իրենց ամբողջ ունեցվածքը թողած «Թուրք բարեկամներին»: Մի քանի օր անց Ակնից հեռագիր ստացվեց, թե մեծ քարավանով մեկնում են Խարբերդ: Դրանից հետո էլ Ակնունին զարմացած բացականչում էր. «Ինչո՞ւ Թալեաթը չի բարեհաճում պատասխանել իմ անձնական հեռագրերին: Իթիհադ-իթիլաֆ թուրքական երկու կուսակցությունների պայքարում, Բալկանյան պատերազմի ժամանակ՝ 1912-13թթ. Պոլսում ես էի, որ Թալեաթին տանս պահեցի և փրկեցի ամենաստույգ մահից, ինչո՞ւ է մոռանում իմ կողմից իրեն արված բարիքը...»[12]:

Որոշ թուրք պատմաբաններ գրում են, թե նախապես մտադրություն կար նրանց դատել Անկարայում, ապա ասացին, թե բոլորը դատարանի առաջ կանգնելու են Դիարբեքիրում: Խաբեություն էր: Հայ մտավորականությանը դատարանի վճռով պատժելն անհեթեթություն էր, քանի որ բացակայում էր դրա համար անհրաժեշտ գլխավոր պայմանը՝ հանցագործությունը: Չնայած Կ. Պոլսում հայերի ձերբակալությունները շարունակվեցին պատերազմի բոլոր տարիներին, բայց ընդհանուր տեղահանություն չկազմակերպվեց: Այդ խնդիրը մի քանի անգամ քննարկվեց իթիհադի կենտրոնում: Կարծիք կա, թե կենտրոնը ձեռնպահ մնաց Պոլսի ամբողջ հայության բռնագաղթից «տեխնիկական հնարավորությունների» բացակայության պատճառով: «Կայսրության մայրաքաղաքը ծանր կացության մեջ էր, Անտանտի զինված ուժերը լրջորեն սպառնում էին նրան»[13]:

Թվում է, թե գլխավոր պատճառն այդ սպառնալից դրությունը չէր, այլ պոլսահայության բռնագաղթի միջազգային արձագանքները, որոնք սպառնալիքի տակ էին դնելու արևմտահայության ամբողջական բնաջնջման հնարավորությունը: Դրա համար էլ այն հետաձգվեց և առաջնությունը տրվեց հայության բնաջնջմանը բուն Հայաստանում, իսկ Կ. Պոլսից առայժմ «Հեռացնել միայն վտանգավոր տարրերին»[14]:

Բացի Կ. Պոլսից և Զմյուռնիայից, ամբողջական տեղահանություն չկազմակերպվեց նաև Քյութահիա և Ուշակ քաղաքներում:

Իրադարձություններին ականատես Ա. Ալպոյաճյանը գրում է. «Առաջին ազդանշանն ու անդրանիկ սարսափը, որ Պոլսի բնակչությանն անակնկալի առաջ էին դնում, դա 1915թվի ապրիլի 11-24-ի ձերբակալությունները եղան: Մեկ գիշերվա ընթացքում Պոլսի մտավորական դասակարգի ամենակարկառուն դեմքերը և ժողովրդի բոլոր դասակարգերից 250-ի չափ անձինք ձերբակալվեցին և Զանգը ու Այաշ տարագրվեցին»[15]: Հայ մտավորականության գողգոթայի և ոչնչացման մասին հարուստ նյութեր կան Թեոդիկի աշխատություններում, մասնավորապես «Ցուշարձան Ապրիլի 11-ին» և «Ազգը չէ մեռած և անհնար է, որ մեռնի» գրքերում: Այս իրողությունը հարկ է առանձնահատուկ նշել, որովհետև արևմտահայ գործիչները, մասնավորապես ՀՅ Դաշնակցության ներկայացուցիչները, խուսափել և այսօր էլ խուսափում են մանրամասն անդրադառնալ 1914-1915թթ. թուրքական ցեղասպան քաղաքականությանը: Ռուբեն Տեր-Մինասյանցը, Միքայել Վարանդյանը, Կարո Սասունին, Սիմոն Վրացյանը և ուրիշներ, ամեն ինչի մասին գրում են, իսկ երբ գործը հասնում է ցեղասպանությանը, խույս են տալիս: Դաշնակցական այդ ավանդույթը շարունակվում է մինչև օրս: Հոյդան հայ ժողովրդի պատմության վերաբերյալ վիթխարի գրականություն է ստեղծել, բայց անօգնական համրի նման է իրեն պահում, երբ հարկ է լինում անդրադառնալ Մեծ եղեռնին: Ջեռքիս տակ է Հր. Տասնապետյանի «ՀՅ Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև Ժ ընդհ. ժողով» (1890-1924) 260 էջից կազմված ուսումնասիրությունը, որի Ը գլխի՝ «Եղեռն-Քաոս-Ցարութիւն. 1915-18» (113-128), «Ցեղասպանութիւնը» ենթագլուխը նույնիսկ մի թերթ չի կազմում: Նման «անտեսման» պատճառաբանությունը նույնն է՝ «Ցեղասպանութեան պատմութիւնն ու դեպքերու նկարագրութիւնը մեր նիւթեն դուրս են»[16]:

Հեղինակը նպատակահարմար է համարում ոչ թե գրել Մեծ եղեռնի տարիներին իր կուսակցության գործունեության մասին, այլ երաշխավորել կարդալու՝ Հ. Մորգենթաուի, Ա. Մանդաշելյանի, Զ. Բրայսի աշխատությունները: Այս երաշխավորությանը հետևում է հետևյալ սխալ միտքը. «Ցիշեցնենք միայն, որ դիվային այդ ծրագրի (հայերի բնաջնջման) սիստեմաթիկ գործադրութիւնը սկսավ 1915 Ապրիլ 11/24...»[17] և ապա ընդհանուր առմամբ ճիշտ հարցադրումը.

---

12 Պալաքեան Գ. Հայ գողգոթան, էջ 125-127:
13 Կիրակոսյան Զ. Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Եր., 1965, էջ 251:
14 Ակնունի Ս., նշվ. աշխ., էջ 105:
15 «Ցառաջ», 08. 09. 1983:
16 Տասնապետեան Հր. ՀՅ Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև Ժ ընդհ. ժողով. 1890-1924, Աթենք, 1988, էջ 113:
17 Ն.տ.:

«...Օսմանեան սահմանադրութեան առաջին քանի մը տարիներու երջանիկ թմբիրեն ետք, և հակառակ 1911-ին սկսեալ կացութեան աստիճանական վատթարացման, համաթուրանական մտածողութեան տարածման և «թիւրքիի»ական ճիգերու բազմապատկումին, Թիւրքիոյ հայերը-ներառեալ դաշնակցական մարմիններն ու շարքերը, անշուշտ, 1915-ին հոգեբանորեն և գործնականապես տակավին պատրաստ չէին գեթ ընդհանուր ինքնապաշտպանութեան դիմելու, եթե ոչ ընդհանուր ապստամբութեան»[18]:

Ճիշտ է ասված, բայց մեզմ ու քնքուշ: Ճշմարտությունն այն է, որ իրեն «ազգի առաջնորդ» հռչակած ՀԾԴ-ն անկարող, թույլ, վախկոտ ու անընդունակ գտնվեց հայությանը սպառնացող վտանգի առջև եւ փաստորեն նրան լքեց՝ որեւէ լուրջ քայլի չդիմեց ժողովրդին կազմակերպելու, նրան ինքնապաշտպանության հանելու համար: Լեփսիուսը նշում է, թե «դաշնակցական պետերը միշտ այն ինքնախաբեության մեջ էին, որ պատահածը սխալմունքի արդյունք էր»[19]:

Վերադառնանք աքսորված մտավորականներին: Այաշում էր նաև Մեծն Մուրադը, որին Մարզվետի հետ տարան Կեսարիա իբր հարցաքննության: Նրան բանտում ահավոր խոշտանգումների ենթարկեցին՝ գիշերները դուրս էին հանում և խարազանների հարվածների տակ առնում, հրաշեկ երկաթով այրում մարմինը, դուրս քաշում եղունգները: Մուրադին մահապատժի դատապարտեցին ու կախաղան հանեցին: Կախաղանի հարթակին կանգնած նա շպրտեց դահիճների երեսին. «Զիս կկախեք, բայց ... հայ մայրերու արգանդը նոր Մուրադներ պիտի ծնի. մարմինս կկախեք, բայց գաղափարս՝ ոչ. նոր սերունդը վրեժ պիտի գոռայ, դուք՝ հրեշներդ նկուղե նկուղ պիտի սողոսկեք, երբ հայուն Արեգին ազատութեան ճառագայթները ծագին...»[20]:

Մ. Աղաջանյանին Կ. Պոլիս տարան ու նույնպես կախաղան հանեցին: Բ. Շահպազին տեղափոխեցին Խարբերդ դատելու: Նրան խոշտանգելով հասցրեցին Մալաթիա և սպանեցին: Իսկ բանտարկյալները շարունակում էին լուրեր ստանալ բռնագաղթի մասին: Իմացան, որ հայերին սպանում կամ տեղահանում էին, Մարզվանի հայերին սայլերով քաղաքից հանել էին, սայլերը երկու ժամ անց վերադարձել էին դատարկ[21]:

Մի շաբաթ անց տարան Տաղավարյանին, Ակնունուն, Խաժակին, Ս. Մինասյանին, Զարդարյանին, Հ. Ճանկյուլյանին: Նրանց ոստիկանական խիստ հսկողության տակ գնացքով ճամփա հանեցին Ադանա-Հալեպ ուղղությամբ՝ իբր տանում էին ներկայացնելու Դիարբեքիրի ռազմական դատարանին: Ադանայում նրանց պահեցին լրիվ մեկուսացված: Երբ լուր ստացվեց, որ քաղաք են բերում Զոհրապին ու Վարդգեսին, ճանապարհ հանեցին դեպի Հալեպ: Հալեպում երկու օր բանտում պահեցին, ապա տարան Ուրֆայի ուղղությամբ: Հաջորդ օրը նրանց շրջապատեցին Դիարբեքիրի վալի Ռեշիդի չեթեները և սպանեցին զազրելի խոշտանգումներով:

Այաշի բանտի պահպանությունը հանձնված էր չերքեզ Զաուշի չեթեական խմբին: Այս չերքեզը չեթե էր եղել դեռ Բալկանյան պատերազմի ժամանակ: «Էնվեր փաշայ զիրենք թապուրներու մեջեն զատեր և չերքեզ Ազիզ պեյի հրամանին տակ դրեր էր»[22]: «Ան պարծանքով պատմեց, թե ինչպես էտիրնեի կողմը 60 քրիստոնեա գիւղեր այրեր էին, թե ինչպե՞ս ժողովուրդը՝ էրիկ, կնիկ, երեխաներով և «փափազներով» կը ժողովեին, քաղաքեն կամ գիւղեն դուրս կը հանեին և քանի մը ժամ անդին բոլորը կը ջարդեին»[23]: Շուտով Այաշում երևացին մինչև ատամները զինված չեթեական ուրիշ խմբեր ևս, որոնք գնում էին «երկրին մեջ գտնվող հայ ապստամբներուն նուաճելու»:

Պոլսահայ մտավորականներից և ուրիշ մահապարտներից ոմանք Այաշի բանտի պատերին թողել էին գրություններ: Ահա դրանցից մի քանիսը. «Հայ երեխաները թրքացվել են... Անկարայից 25 սայլով Գայիշ Բախչե կոչված վայրը, 25 սայլ ալ Ասի Եոզղատի ետևը մինչև 18 տարեկան տղաներ և մեծեր արու լինելով... Այաշի ժանդարմերիայի տասնապետ Հասան Օնբաշին սպանուածների մատները կտրել է մատանիները հանելու համար... Ով դու Նազվրեցի, այս ինչքա՜ն տառապանք է, որ քանի տարիներ ի վեր քո անունով կրում ենք: Լևոն Շամտանճեան... Պոլսից Այաշ աքսորվեց 84 հայ, որոնք այստեղ շատ տառապանքներ կրելուց հետո փոխադրվեցին այլ վայրեր: Այաշ 1915 հուլիսի 29, Արմանի... Անկարայից ջարդվածներ 1370, Ստանոզ՝ 600-700: Մարզվան՝ 11 հազ, կին և երեխա միասին... Շավարշ Քրիսյան, 14 ապրիլի 1915, Հ. Մ. Համբարձումեան 2/15 հունիս (1) 915, Թերջիման, Ատրուշան, Օնիկ Սրապեան, Միհրդատ Հայկազն, Սիմանթո, Բարթոզ, Ալեքսան Քարաղճեան... Տրապիզոնցի Արմավենի, Նշան Շեքերճեանի կինը, նորապսակ 25 տարեկան, պզտիկ Աղամնի աղջկանը հետ՝ 3-4 տարեկան: Ամուսինն ու ինքը բնիկ երզնկացի են, բայց Տրապիզոնի մեջ մեծացած, վաճառական խահուեի ու շաքարի, հայրը և ամուսինը սպանուած դեպքի ատեն յղի վիճակի մեջ Պեսիմ պեյ անուն մաքսատան միւտիրն զայն քովը առած և հետոյ հետը փախցուցած է ընտանիքով, 25 օր նավակով ծովեն .ճամբուն Պոլսոյ մեջ տղաբերութիւն ունեցած է, պզտիկը մեռած է, չէ թրքացուած, բայց թրքուհիի տարազ կը հագնի և տանը Հատիմե կը կանչեն... Ժանտարմա մեհմետ Օնպաշի (Գալայնըզցի) Այաշի մեջ սպանուածներուն դահիճներեն է, ոսկերիչին ինքը խոստովանած է, որ շատ դժուար էր այդ պարտականութիւնը կատարելը, թե ռուսահայ Գ. Պալպալեանը շուտ մեռած է, իսկ Պուկարահպատակը շատ ուշ և դժուար մեռած: ...Մինչև 18 տարեկան տղաք մենք բռնաբարուեցանք»[24]:

Անկարայում ձերբակալվածների մի մասին միացնում են բռնագաղթի քարավաններից մեկին և սպանում քաղաքից 4-5 ժամ հեռավորության վրա գտնվող ձորում: Աթըֆի հրամանով 27 աքսորյալներ հանձնվում են կրետացի կոմիսար Զեքիին, որը նրանց տանում է Կաբըլ Բեյ կոչված վայրն ու բոլորին սպանում: Այդ մասին պատմել է դահիճներից մեկը՝ Խուրշիդ չաուշը. «Երբ կոտորածը սկսեցինք, սպանուողների աղիողորմ ճիչերը, վայնասունը, լեռ ու ձոր էին թնդացնում: Ես դոկտ. Փաշաեանի աչքերը նախ փորեցի, ապա վիզը կտրեցի...»[25]:

Թուրք գյուղացիները սպանվածների ծվեն-ծվեն եղած մարմինները ժամերով խոշտանգեցին, անդամահատեցին, իսկ գիշերը ընթրից դուրս թափվեցին գիշատիչները ամբողջացնելու մարդգազանների պակաս թողածը:

Նույն օրերին Պոլսում շուքով նշվում էր Ազգային սահմանադրության տարեդարձը՝ խնջույքներ, պարահանդեսներ: Ու նաև դպրոցների տարեվերջյան հանդեսներ, օլիմպիական խաղեր, ֆուտբոլային մրցումներ, հեծանվային արշավներ, շոգենավային ուխտագնացություններ:

Զանգըրում մնացած աքսորյալներին հայտարարեցին, թե նրանք ներման են արժանացել և, բացի Պոլսից, կարող են ցանկացած տեղ ապրել: Այդ օրերին էր, որ հայ հինգ մտավորականների, այդ թվում Դ. Վարուժանին և Ռ. Սեակին, Անկարայի ճանապարհով տանում էին Այաշ: Զանգըրի իթիհադականները մարդիկ են ուղարկում Թյունե վայրը: Հաշվեհարդարի գործը հանձնարարված էր Հալո անունով քուրդ ոճրագործին: Օգոստոսի 12-ին Զանգըրի իթիհադական ակումբի քարտուղար Ցունուսը ճանապարհային պահակակետերին հայտնում է հինգ աքսորյալների երթուղին, իսկ հաջորդ օրը հեռագրով հարցնում է Թյունեի պարեկատնից. «Եկածները սպանվա՞ծ են»: Երբ հայերին տեղ են հասցնում, քրդերը կանգնեցնում են կառքերը և նրանց հարկադրում են իջնել: Ձերբակալվածներին տանում են մերձակա ձորը և մերկացնում են: Դ. Վարուժանը դիմադրում է. նրան հարկադրում են փորել սեփական գերեզմանը, ապա դանակով աղիները դուրս են թափում, փորում են աչքերը և մյուսների հետ միասին նետում փոսը[26]: Այս խմբին հոշոտած դահիճները դատարանում հայտարարեցին, թե գործել են Զանգըրի իթիհադի կոմիտեի հանձնարարությամբ: Ահա թե ինչ է պատմել կառապան Հասանը Դ. Վարուժանի ու նրա չորս ընկերներին մեռցնելու մասին: «... Ինձ հրահանգեցին կառքովս գնալ

18 Տասնապետեան Հր. ՀԾ Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև Ժ ընդհ. ժողով. 1890-1924, Աթենք, 1988, էջ 114:

19 Լեփսիուս Ե. Գաղտնի տեղեկագիր Հայաստանի ջարդերուն, էջ 208:

20 «Կիլիկիեան տարեցոյց», 1922, Կ. Պոլիս, 1922, էջ 27:

21 Նեղիմ Մ. Հայ եղեռնը. իմ վկայությունները, Նազարյան Ա. Այաշի բանտը, Բեյրութ, 1978, էջ 156-157:

22 Նեղիմ Մ., նշվ. աշխ., էջ 163:

23 Ն. տ., էջ 162-163:

24 «Ցուշամատեան Մեծ եղեռնի», էջ 213:

25 Պալաքյան Գ. Հայ գողգոթան, էջ 133:

26 Տեր Մ...արքեպիսկոպոս Օ...ի (Օրմանեանի) տեղեկագիրը: Տե՛ս «Թուրքահայ աղետը. պատմական փաստաթղթեր», Էջմիածին, 1919, էջ 16 :

գյուղից քառորդ ժամ հեռավորության վրա գտնվող մի տեղ ոստիկանության տրամադրության տակ: ... Այնտեղ էին ոստիկանական պաշտոնյան մի ժանդարմի հետ, ինչպես նաև Պոլսից Զանգեզուր աքսորված հինգ էֆենդիներ: Նրանցից մեկը երիտասարդ էր, սև մորուքով ու վառվռուն աչքերով:

...Ոստիկանական պաշտոնյան հայերին առաջնորդեց իմ կառքը, իսկ ինքն ու ժանդարմը մտան մյուս կառքը: Հրամայվեց մեկնել Թյունե գյուղի ուղղությամբ, որը Զանգեզրից վեց ժամ հեռու է... Թյունեից կես ժամ հեռավորության վրա էինք, երբ նույն անձը ուղիղ դեպի կառքս եկավ, իջավ ձիուց և իմ ձիերի սանձից բռնած ուզեց կառքը տանել ճանապարհից դուրս բլրի տակ՝ հեղհեղատից գոյացած խոր ձորը... Այդ բոպեին դեմս ցցվեցին չորս հոգի՝ մինչև ատամները զինված: Անծանոթը, որը հավանաբար նրանց պետն էր, նշան տվեց: Այդ մարդիկ... կառքից իջեցրին հինգ աքսորականներին և հրամայեցին ունեցած դրամները հանձնել: Եվ քանի որ նրանց ձեռները կապված էին, խուզարկելու գործը ստանձնեցին ոստիկանները, որոնք կողոպտեցին ամեն ինչ: ... Ոստիկանը մի քանի բառ չշնչաց չեթեների պետի ականջին... Ու մյուս կառքը նստելով մեկնեց: Ինձ էլ... արտոնեցին քաղաք վերադառնալ: Գալով աքսորականներին, չորս չեթեների ու նրանց պետի կողմից հրամայվեց իրենց հետևել: ... Զորամեջը կտրելով անցան մյուս ափը, որտեղ փոքր անտառը զարդարում էր բլուրը... չեթեները հարձակվեցին էֆենդիների վրա, նրանց զգեստները հանեցին և լրիվ մերկացրին... Այս խեղճ զոհերն առանձին-առանձին կապվեցին ծառին: ...Հետո չեթեապետն ու իր մարդիկ դաշույնները մերկացրին և սկսեցին դանդաղ ու հանգիստ մորթոտել»[27]:

Արտասահմանյան թերթերը գրեցին. «Կ. Պոլսից ստացված հեռագիրը հայտնում է, որ տեղի են ունեցել հայերի ձերբակալություններ, որոնցից 15-ը դատապարտվել են մահվան, հազարներն՝ աքսորվել են»[28]: «Կ.Պոլսում մոտ 400 հայ ձերբակալված է...»[29]:

Ապրիլի 28-ին Էրզրումում Գերմանիայի հյուպատոս Շոյբներ-Ռիխտերը հեռագիր ստացավ, թե մայրաքաղաքում «Թուրքական իշխանությունները մի քանի հարյուր ականավոր հայերի ձերբակալեցին և ուղարկեցին Անատոլիա՝ հայտարարելով, թե հայերը զբաղվում են հեղափոխական գործունեությունով»[30]:

Կ. Պոլսից "Армянский вестник"-ի ստացած մի նամակ (24. 09. 1915թ.) պատմում է, թե դեռևս չամուսնացած հայ տղամարդկանց ուղարկում են գավառներ: Արդեն ուղարկվել է 4 000-5000 մարդ: Այաշ և Զանգեզր աքսորվածների մեծ մասը սպանված է: Պահակային ծառայության պետի ազգականն ասաց, թե «Հայերը Սոֆիայում, Ռուշչուկում և այլ տեղերում Թուրքերի դեմ ցույցեր են կազմակերպում: Դրան պատասխանեցինք Այաշում աքսորվածներին ոչնչացնելով»[31]:

Թուրք պաշտոնակատարների կողմից նման հայտարարություններ հաճախ էին արվում, ինչը նույնպես խնդիր ուներ համոզելու, որ կատարվածը ոչ թե ծրագրված սպանություն էր, այլ հայերի «դավաճանությունից» ծնված վրեժխնդրության արտահայտություն:

Ցեղասպանությունից մազապուրծ Զապել Եսայանը Մոսկվայի Հայկական կոմիտեում 1916թ. ապրիլի 20-ին հանդես է գալիս դասախոսությունով Թուրքիայում հայերի վիճակի մասին: Նա ապրիլի 24-ին և հաջորդ երեք ամիսներին թաքնվել էր Պոլսում ու մեծ չարչարանքներով կարողացել էր կայսրությունից հեռանալ: Մտավորականության ձերբակալությունների օրը նա տանը չի եղել: Մի կին լուր էր հասցրել, թե նրան փնտրում էին: Սկզբում այդ լուրը շատ սարսափելի չթվաց, և որոշեց հանգիստ սպասել ձերբակալությանը, քանի որ որևէ հանցանք չէր կատարել: «Ձերբակալության դեպքում,- մտածում էր Եսայանը,- մեծ դատավարություն կլինի, որի ժամանակ իշխանությունների կողմից ներկայացվելիք մեղադրանքները օճառի պղպջակի նման հօդս կցնդեն, և դրանով գործը կավարտվի: ...Նույն ձևով էին մտածում նաև դեռևս չձերբակալված մյուս հայ ընկերները... Սակայն երկուշաբթի օրը հայտնի դարձավ, որ բոլոր ձերբակալվածները՝ 400 հոգի, արդեն ուղարկվել են երկրի խորքերը, առանց նույնիսկ հարցաքննելու»: Գերմանացի միսիոներուհին Եսայանին պատմել էր Միջագետք քշված հայերի վիճակի մասին: Ումն այնտեղ տեսել էր, լիակատար իմաստով կորցրել էր մարդկային դեմքը, հետ էր սովորել «մարդկային լեզվով խոսելուց, միայն ինչ-որ ձայներ էր արտաբերում: Այդպիսիները շրջում էին գրեթե մերկ, բոլորը սովյալ էին, լսածը չէին ընկալում, երբ միսիոներները ուտելիք էին առաջարկում, ձեռք չէին մեկնում: Նրանց մեծ մասը բանականությունից զրկված էր»[32]:

1915թ. մայիսի 5-ին կազմված մի փաստաթղթում նշվում է, որ Կ.Պոլսում ձերբակալվել է 1 800մարդ, այդ թվում՝ Վարդգեսը, Զոհրապը և ուրիշներ: Նրանք մեղադրվում են Անտանտի հանդեպ համակրանք ունենալու և լրտեսության մեջ: Երիտթուրքերը նաև ուզում են տիրանալ հայերի ունեցվածքին[33]:

Կրկնում եմ, չնայած օտարերկրյա դիվանագետների ներկայության ու որդեգրած կեցվածքի շնորհիվ Կ. Պոլսում զանգվածային տեղահանություն չկատարվեց, բայց ձերբակալությունները շարունակվեցին 1915-16 թվերի ամբողջ ընթացքում: 1915թ, սեպտեմբերի 9-ի գիշերը ձերբակալվեց 129 ռուսահպատակ հայ: Նրանց 25 օր քաղցած պահելուց հետո աքսորեցին Անկարա և փակեցին մի կեղտոտ շինությունում, առանց սնունդ տալու: Անկարայի բնակչության 4/5-ը հայեր էին, և ռուսահպատակ աքսորյալներն ականատես եղան տեղի հայ բնակչության բռնագաղթին: «Թուրք սայլապանները, որոնք հայերին տարել էին կոտորածի տեղը, իրենք են ռուսահայ աքսորյալներին ասել, թե հենց որ սայլերը դուրս էին գալիս քաղաքից, բոլոր հայերին սպանում էին մահակով կամ գնդակահարում ատրճանակով: Ամենակոփված մարդիկ անգամ չէին կարողանում առանց սարսուռի դիտել այդ զարհուրելի տեսարանը: Թուրք սայլապաններից երկուսը... սարսափից մահացան...»[34]:

«Կանայք ու երեխաները,- նկարագրում է ամերիկյան դիվանագետ Ջ. Դեուդեսը,- տրված են եղել տանջողների մի այլ խմբի, որի ձեռքին նրանք ավելի շատ են տառապել, քան իրենց հայրերը, եղբայրներն ու ամուսինները: Մահվանից առաջ կանայք ու աղջիկները պատվազրկվել են այդ մարդակերպ գազանների կողմից: Այժմ Անգորան մեռած քաղաք է: ...Հայերին պատկանող բոլոր ապրանքները վաճառվում են աճուրդով»[35]:

Կ. Պոլսի մերձակա շրջաններից հայերի տեղահանությունը սկզբնական շրջանում կատարվում էր հատվածաբար և հիմնականում գնացքներով, որպեսզի տպավորություն ստեղծվեր, թե, իսկապես, ոչ թե ամբողջական տեղահանություն է իրականացվում, այլ «վտանգավոր տարրերը» հեռացվում են ռազմավարական նշանակություն ունեցող շրջաններից: Թալեաթը Կ. Պոլսում Գերմանիայի դեսպանության խորհրդական Մորտմանին ասաց, թե կատարվածը «պարզապես անվտանգության նպատակով իրականացված ժամանակավոր քայլ էր»: Ընդունելով, որ աքսորվածների թվում կային նաև անմեղներ, նա խոստացավ այդպիսիներին «անմիջապես ազատ արձակել» և չեշտեց «օտար միջամտության ավելորդությունը»: Թալեաթը նաև ասաց, որ Բ. Դուռը երկար չի կարող հանդուրժել «կրոնական համայնքներում անկախ քաղաքական կուսակցությունների գոյությունը», այսինքն՝ քաղաքական կուսակցություն ունենալու իրավունք վերապահվելու էր միայն մահմեդականներին[36]:

Նույն միտքը Թալեաթը կրկնում է իր հուշագրություններում. «Երբ Անատոլիայի զանազան տեղերում սկսվեց տեղահանությունը Ստամբուլի հայերի շրջանում և մասնավորապես կոմիտեներում, տիրեց անսովոր տագնապ: Հայ կոմիտեների վարչական կենտրոնը, այսինքն՝ այդ կազմակերպությունների արտաքին ուղեղը գտնվում էր Ստամբուլում: Այս քաղաքը միաժամանակ բոլոր տեսակի զինվորական շարժումների կենտրոն էր: Հետևաբար ընդհանուր կենտրոնը նախ և առաջ Ստամբուլում որևէ հնարավոր ապստամբություն խափանելու և նեղուցների պաշտպանությունը ինչպես հարկն է կազմակերպելու համար, հրամայեց ոստիկանական գերատեսչությանը ձերբակալել ու պաշտպանության շրջանից հեռացնել բոլոր անձանց, որոնք առնչություն ունեն կոմիտեի գործունեության հետ: Ոստիկանության պետը այդ մասին տեղեկացրեց ինձ: Խնդրո առարկա անձանց մի մասը կովկասցի էր: Սրանց բոլորին մի գիշերվա ընթացքում ձեր-

27 «Հայկազեն Տարեգիրք», Կ. Պոլիս, 1922 կամ «Ցուշամատեան Մեծ եղեռնի», էջ 375-376:
28 "EL Dia",20.05. 1915.
29 "El ciglo",29. 04. 1915.
30 Ղազարյան Հ., նշվ. աշխ., էջ 65:
31 "Армянский вестник", 1916, N41.

32 "Армянский вестник", 1916, N15.
33 "Французские архивы о геноциде...", стр. 10.
34 АВПР, Политархив, д.3504.
35 АВПР, Политархив, д. 3504.
36 FO Tyrkyi 183, Bd 36, Վանգենհայմի 1915թ. ապրիլի 20-ի նամակը Բեթման Հոլվեգին:

բակալելով, ուղարկեցին Կոնիա: Ավելի ուշ, Անգլիայի ռազմական ատյան տարվելու ժամանակ, նրանք սպանվել են ոստիկանների կողմից: Դրա համար ռազմական ատյանին հանձնված այդ ոստիկանները դատապարտվել են զանազան պատիժների, նույնիսկ՝ մահապատժի»[37]:

Ընկատելու տանք, որ Թալեաթն այս մի քանի տողում թույլ է տալիս մի քանի կեղծարարություններ, և ուշադրություն դարձնենք հետևյալ նախադասության վրա. «Երբ Անատոլիայի զանազան տեղերում սկսվեց տեղահանությունը, Ստամբուլի հայերի շրջանում ... տիրեց անսովոր տագնապ»: Ստացվում է, որ ոչ թե մտավորականության ձերբակալություններն են նախորդել բռնագաղթին, այլ ընդհակառակը: Սա միակ նման վկայությունը չէ, և մենք հիմքեր ունենք ասելու, որ երկու բռնարարքները կազմակերպվել են միաժամանակ: Ձերբակալություններն արդարացնելու և դրանք նաև մյուս վայրերի վրա տարածելու պատրվակ ստեղծելու համար կառավարությունը ապրիլի 24-ին հայտարարեց Վանում «հայ-թուրքական բախումների» և այն միջոցառումների մասին, որ ձեռնարկվում է «հայկական ապստամբության» առաջն առնելու համար: Դրանք նկատի ունենալով է, որ Վանգենհայմը մայիսի 6-ին գրեց. «...Կառավարությունը նախազգուշական ընդարձակ միջոցներ հրամայած է հայկական շարժման ներսերը տարածելուն դեմ: Կարնոյ մեջ ձերբակալուած են 200 հոգի. մեծագոյն բնակավայրերեն հայոց տարագրումը կը շարունակուի: Ասոնց տեղը կը բռնեն մահմետական գաղթականները»[38]:

Մայիսի 22-25-ին Թալեաթի նախագահությամբ տեղի ունեցավ Հատուկ կազմակերպության վարչական նիստ, որին մասնակցում էին երիտթուրքերի կենտկոմի ու կառավարության անդամները: Այդ նիստից հետո էր, որ ջարդերը համընդհանուր բնույթ ստացան:

Հայերի գործողությունների «կործանարար վտանգավորությունը» թմբկահարելու միջոցով թուրք հասարակության ահաբեկումն այլ բան չէր, եթե ոչ սարսափի մթնոլորտի ձևավորման օգնությամբ իրականացնել հարյուր հազարավոր անմեղ մարդկանց հաշվեհարդարը: Բանը հասնում է տրամաբանությունից դուրս, որևէ հիմքից զուրկ դատողությունների թուփակակերպ կրկնությունների՝ սկսած էնվերից, ով խորհրդավոր տեսքով Վանգենհայմի ականջին շշնջաց. «Միջադեպ հայերին տեղահանելն անհրաժեշտություն է... անհնար է վստահել հայերի հավատարմությանը»: Դա հնարավոր դարձավ, որովհետև հայերի հանդեպ վերաբերմունքում թուրք վերնախավի և խուժանի շահերը համընկնում էին: Առաջինը «թուրքական և թուրանական հայրենիք» էր ստեղծում, իսկ երկրորդը՝ անաշխատ եկամուտների տիրանում: Գնալով իթիհադի պարագլուխները դեն էին նետում քարոզչական դիմակն ու շուտ գալիս դեպի մերկապարանոց գործողությունները:

Սովորաբար ասում են, թե ապրիլի 24-ն էր հայ գործիչների ձերբակալության և աքսորի սկիզբը: Դա ճիշտ չէ. այդ գործողությունները այլևայլ հայաբնակ վայրերում տեղի ունեցան մի քանի օր առաջ՝ ապրիլի 19-ից սկսած: Ձերբակալում էին նույնակերպ՝ առանց մեղադրանք ներկայացնելու, առանց դատի ու դատավճռի, առանց որևէ ոտիթի ու պատճառի: Միաժամանակ շարունակվում էր հայ ազգաբնակչության զինաթափումը և մահմեդականների զինումը: Չի կարելի ճիշտ համարել նաև հետևյալ կարծիքը. «Կ. Պոլսի «մաքրագործումով» սկսվում էր արևմտահայության զանգվածային տեղահանության ու կոտորածի շրջանը...»[39]:

Տեղահանությանը՝ մասնակիորեն այո, բայց կոտորածինը՝ ոչ, այն շատ ավելի վաղ էր սկսվել: Ապրիլին հայերի բնաջնջումը ստացավ համընդհանուր բնույթ, վերածվեց վերևից կարգավորվող միևնույն ձեռագիրը կրող գործողությունների: Հ. Գիբբոնսը գրում է. «Սկսվեց հայերի կոտորածի նոր դարաշրջանը: Հրամանի կատարմանը սպառնացող վտանգն առավելագույնս փոքրացնելու համար սկզբում գյուղերում ու քաղաքներում մնացած հայ արու բնակչությանը հավաքեցին նախապես որոշված հարմար տեղերը՝ մեծիմասամբ բնակավայրերից դուրս: Ոստիկանությունը խստորեն հետևում էր, որ ոչ ոք խույս չտար: Ոչ ոք չէր մոռացվում: Երբ նշված վայրերում հավաքվում էին որոշակի թվով հայեր, նրանց ոչխարի նման մորթում էին: Սովորաբար այդպես վարվում էին փոքր քաղաքներում ու գյուղերում...(իսկ մյուս տեղերում)«հայ

37 Թալեաթ Հուշեր, էջ 76: Տե՛ս ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում պահվող ձեռագիրը:
38 Նալչեան Բ. նշվ. աշխ., էջ 48:
39 Կիրակոսյան Զ., նշվ. աշխ., էջ 253:

երեւելիները սպանվում էին փողոցներում և սեփական տներում: Ներքին նահանգներում հայ տղամարդկանց զինված պահակների ուղեկցությամբ «ուղարկում էին» որևէ այլ քաղաք: Մի քանի ժամ անց նրանց ուղեկցողները վերադառնում էին առանց իրենց գերիների»[40]:

Գիբբոնսի նկարագրությունից հետևում է, որ շատ տեղերում մտավորականներին, ազդեցիկ անձանց ոչնչացնում էին արու ողջ բնակչության հետ միասին: 1915թ. նոյեմբերի 1-ին Կ. Պոլսում գերմանական դեսպանության խորհրդական Ֆոն Նոյրատը ստանում է «մի հուսալի պարոնի» զրոյցները այդ շրջաններից հայերի բռնագաղթի վերաբերյալ: «Հայդար փաշայի կայարանից մեկնելիս ես արդեն նկատեցի հայկական շատ ընտանիքներ, որոնք ժանդարմների ուղեկցությամբ գնում էին բեռնատար վագոններով, որոնցում շատ ավելի մարդիկ էին տեղավորված, քան դրանց տարողունակությունն էր: Իզմիդում այդ մարդկանց իջեցրին և տարան ճամբար, իսկ նրանց փոխարեն նույն ձևով վագոնները լցրեցին շրջապատի հայերին: Էսքիշեհիրում նկատեցի, որ հայերը լցված են անասուններ տեղափոխելու համար նախատեսված վագոնները, որոնց տանիքներին նույնպես մարդկանց էին տեղավորել: Նրանք այդտեղ մնացին ամբողջ ճանապարհին, անգամ ցուրտ գիշերներին»[41]:

Աքսորն ու սպանություններն ուղեկցվում էին Բ. Դռան կողմից դրանց համար հերքումներով և հավաստիացումներով՝ «Թուրքիայի բարեխնամ կառավարության պաշտպանության տակ գտնվող բոլոր հայերը՝ լինի տղամարդ, կին կամ երեխա, վայելում են կատարյալ ազատություն: Եղան մի քանի հանցագործներ, որոնք էլ դատվեցին օրինական դատարանների կողմից»[42]: Այս կարծիքը ճշմարտության տեղ անցկացնելու համար կազմակերպվեցին մեծ թվով ցուցադրական դատավարություններ, բազմաթիվ հայեր կախաղան հանվեցին: Ապրիլի 28-ին Կ. Պոլսում սկսվեց հնչակյան 20 գործիչների դատավարությունը: Նրանք մեղադրվում էին անկախական գաղափարների ու գործունեության համար: Դատախազի ձեռքին էր Փարամազի «Հայի պահանջը» հոդվածը: Դատարանի նախագահ Խուրշիդի «Ինչե՞ր չէին կրնար ընել ձեզի պես խանդավառ մարդիկ, եթե հասարակաց երջանկության իդեալը ընդհանուր դրոշի մը տակ հետապնդուեր» խոսքերին Փարամազը պատասխանեց. «Դուք ոչ միայն անտարբերութեամբ ամլութեան դատապարտեցիք մեր ահագին ջանքերը, այլև գիտակցաբար հետամուտ եղաք մեր բնաջնջումին»[43]:

Մայիսի 24-ին Փարամազը, հանդես գալով վերջին խոսքով, ասաց, թե հնչակյան կուսակցությունը շատ բան է արել Թուրքիայի բարեփոխման, հայ և թուրք ժողովուրդների եղբայրացման ուղղությամբ, բայց Բ. Դուռն ի չիք դարձրեց մեր այդ ջանքերը և սեփական գազանություններն արդարացնելու համար հրապարակ նետեց հնչակյան անկախ Հայաստանի գաղափարը: «Մենք անջատողականներ չենք այս երկրի հանդեպ, ընդհակառակը, ինքն է, որ կանջատուի մեզմե՝ չի կրնալով հաշտվիլ մեզ ոգևորող գաղափարներու հետ»[44]: Փարամազի կեցվածքը դատարանում արտահայտությունն ու վկայությունն է նրա գաղափարայնության, արևմտահայության ազատագրության գործին նրա անսահման նվիրվածության: Դատարանի վճռում ասվում էր, որ ամբաստանյալները նպատակ էին դրել պայքարելու անկախ Հայաստանի համար: Հնչակյան գործիչները դատապարտվեցին մահապատժի: Հունիսի 15-ին Սուլթան Բայազետի հրապարակում նրանք կախաղան հանվեցին: «Այս ամսվա 15-ին,- գրում է մի գերմանացի,- 20 հայ տեղի դատարանի կողմից դատապարտվեց մահվան՝ «պետական դավաճանություն» մեղադրանքով, և կախվեցին Սերաքերաց հրապարակում: Կախաղան հանեցին առավոտ վաղ և դիակներն իջեցրեցին կես ժամ անց... Հավանաբար սպասվում են հերթական կախաղաններ»[45]:

Եթե Հ.Ց Դաշնակցության, հայ մյուս քաղաքական ուժերի հանդեպ իթիհադի թշնամության ակունքը թուրքիզմն էր, ապա նրանք հնչակյաններին համարում էին նաև իրենց դեմ մարտնչող կուսակցություն: Սալոնիկի համագումարում Թալեաթը հայտարարեց, թե «հնչակյաններն են մեր թշնամիները, նրանց վրա հաշվեհարության սարսափով պետք է ազդել եւ նրանց մտադրություններն իրենց հետ մեռցնել»[46]:

40 Гиббонс Г., նշվ. աշխ. стр. 22-24.
41 Konst/ Ankara, 97, Ab 9442.
42 «Էջմիածին»(հնդ), 1965, թիվ 2, 3, 4:
43 Արամեանց Հ. Պատմութիւն հնչակեան կուսակցութեան, հ. Գ, Կ. Պոլիս, 1918, էջ 40:
44 «Արարատ», 18. 06. 1963:
45 R 14086, Ab 19747.
46 Կիրակոսյան Զ., նշվ. աշխ., էջ 346:

1914-ի հուլիսին Թալեաթի հրամանով ձերբակալվեցին հնչակյան մի շարք գործիչներ, իսկ աշնանը բանտ նետվեցին արևելյան վիլայեթների գրեթե բոլոր անվանի հնչակյանները: 1915թ. ապրիլի 8-ին Վանի բանտում գտնվող 120 բանտարկյալներ Զևդեթի հրամանով մորթվեցին[47]:

Ինչո՞վ էին հնչակյաններն արժանացել իթիհադի ատելությանը: Այդ թշնամությունը նոր չէր: Հնչակը մշտապես դեմ է եղել երիտթուրքերի հետ որևէ կապին ու համագործակցությանը և հանդես էր գալիս այդ կուսակցության գաղափարախոսության և քաղաքականության խիստ քննադատությամբ: 1913-ին հնչակյանները Փարիզում մի կոչ հրապարակեցին հասցեագրված եվրոպական կառավարություններին ու ժողովուրդներին՝ պաշտպանել, սատար կանգնել վտանգված արևմտահայությանը, «քանի դեռ Հայաստանի արյունվա ուրվականը կհալածե Եվրոպայի վրդով-խղճմտանքը», նա պարտավոր է «արդար բավարարութիւն տալ բազմաչարչար» հայ ազգին, նրան հնարավորություն ընձեռել իր ձեռքն առնելու երկրի քաղաքական կեանքի կառավարումը»[48]: Իթիհադը այս կոչը ևս պատրվակ դարձրեց երկու տարի անց՝ 1915-ին հայերի դեմ հարձակում սկսելու համար: Կայսրությունով մեկ լուծարվեցին հնչակյան կազմակերպությունները: Թուրքական ոստիկանության ձեռքն անցավ հնչակյանների Կոնստանցիայի համագումարի արձանագրությունը, ինչը ևս սկզբնավորեց սադրանքների մի անբողջ շարք: Չնայած անհնար եղավ ապացուցել մատնիչ Ա. Սարգսյանի դեմ մահափորձին Աչըքպաշյանի, Հրանտի և Գարեգինի մատնությունը, չապացուցվեց նաև Թալեաթի դեմ մահափորձի փաստը, սակայն դա թուրքական դատարանի համար նշանակություն չուներ: Հնչակյան գործիչների դատավարությանը ներկայացված նյութերը կազմեցին «Էրմենի կոմիթեելերի» հատորը, որը նեբառավ 1914թ. օգոստոսից 1915թ. ապրիլ ընկած ժամանակահատվածի՝ Վանի դեպքերի, Կարինի ապստամբության, Շապին Կարահիսարի դիմադրության, Եդեսիայի ընդվզումների և նման ուրիշ իրադարձությունների թուրքական մեկնաբանությունները[49]:

Թալեաթն այնպիսի մեծ շահագրգռվածություն էր հանդես բերում հնչակներին դատելու գործում, որ անձամբ մի ամբաստանագիր հնարեց:

Կախաղան հանվածների թվում էին՝ Փարամազը, դոկտ. Պենե Թորոսյանը, Արամ Աչըքպաշյանը, Գեղամ Վանիկյանը, Երվանդ Թոփուզյանը, Ռուբեն Կարապետյանը, Հովհաննես Տեր-Ղազարյանը, Թովմաս Թովմասյանը, Հակոբ Պասմաճյանը, Մուրադ Զաքարյանը, Մկրտիչ Երիցյանը, Գարեգին Պողոսյանը, Արմենակ Համբարձումյանը, Երեմիա Մանուկյանը, Աբրահամ Մուրադյանը, Մինաս Քեչիշյանը, Սմբատ Գելեջյանը, Գառնիկ Պոլաջյանը, Հրանտ Եկավյանը, Պողոս Պողոսյանը[50]: Նույն օրերին Կեսարիայում կախաղան հանվեցին 12, Խարբերդում՝ 17, Կիլիկիայում՝ 12, Տիգրանակերտում 12 հոգի[51]:

Այն տարիներին 20 նահատակներին անվանում էին «ինքնավար Հայաստանի 20 անշեջ ջահեր»: Լսելով մահվան դատավճիռը՝ նրանք գոչեցին. «Կեցցե՛ Հայաստանը»: Ե. Թոփուզյանը, օղակը վզին, քահանային մեկնելով թաշկինակը, ասաց. «Տեր Հայր, տար այս թաշկինակը մորս, թող գիտենայ անիկայ, թե երբեք չէ թրջուած արցունքներով»: Դոկտ. Պենեն բղավեց. «Քանիս կկախէք, բայց 20 հազարներ պիտի հետևեն մեզի»:

Թուրքական իշխանությունները «Հնչակյանների ապստամբությունը» լայնորեն օգտագործեցին հակահայկական վրեժխնդրությանը նոր թափ հաղորդելու համար: Սուլթան Բայազետի հրապարակի վրա էր գտնվում ռազմական նախարարության շենքը, որի պատշգամբից, երբ դեռ կախաղան հանվածների մարմինները ճոճվում էին օդում, կոչեր էին հնչում՝ Դարդանելում տարած հաղթանակը օգտագործել հայերի վրա ընդհանուր հարձակման անցնելու համար:

Որոշ ժամանակ չաքսորվեցին օսմանյան պետական բարձր շրջաններում պաշտոնավարող և խորհրդարանի անդամ հայերը: Հասկանալի է, որ այդ ամբողջ ընթացքում նրանք ապրում էին սարսափների մեջ, քաջ գիտենալով, որ իրենց նույնպես աքսորավայրերն էին սպասում: Գր. Զոհրապին բազմիցս առաջարկեցին հեռանալ կայսրությունից, բայց չհամաձայնվեց, իսկ Վարդգես

47 Քսան կախաղաններ, Փրավիտենս, 1916, էջ 162-163:
48 Արամեանց Հ. Անկախ Հայաստան, Կ. Պոլիս, 1919, էջ 5:
49 Ն.տ., էջ 13-14:
50 «Արարատ», 18. 06. 1963:
51 Պրայս Ջ. Հայկական ջարդերու փաստաթղթեր, Կ. Պոլիս,1920. էջ 12:

Սերենգուլյանը Թալեաթից թույլտվություն խնդրեց Բուլղարիա մեկնելու համար: «Վարդգես, քեզ Բուլղարիա երթալու հրաման չեմ տայ,- պատասխանեց Թալեաթը,- գիտեմ, օձիքդ ազատել կուզես, բայց ճար չկայ. մենք ինչ-որ ըլլանք, դու ալ մեզի հետ պիտի ըլլաս»[52]:

"New York Times"-ը 1915թ. սեպտեմբերի 30-ին գրեց. «Խորհրդարանի երկու ականավոր անդամների՝ Զոհրապ էֆենդուն և Վարդգես էֆենդուն, դաշնակների առաջնորդ Ակնունին, հասարակական աշխատանքների և գյուղատնտեսության նախկին նախարար Հալաջյան էֆենդուն և Բաստրմաջյան էֆենդուն Ուրֆայում գնացք նստեցրեցին և տեղափոխեցին Դիարբեքիր, որտեղ և նրանց հետո սպանեցին: Պահակախումբը տեղեկացրեց, որ մարդասպանները գործում էին խմբերով: Այն,որ Թալեաթ բեյը դրա համար պատասխանատու է, անվիճելի է»: Եթե Վարդգեսին հաջողվում էր աքսորի ճանապարհին մնալ լավատես, ապա Զոհրապն անմիջապես ընկճվեց: Նա ամբողջ ժամանակ լուռ էր, հազվադեպ արտաբերում էր. «Մեզ տանում են դեպի մահ»: 36-րդ օրը նրանց հասցրեցին Հալեպ, որի վալին՝ Ջելալը, դեմ էր հայերի տարագրությանը նաև ծանոթ էր Զոհրապին ու Վարդգեսին: Ջելալը հայ երկու գործիչներին տեղավորեց ոչ թե բանտում, այլ հյուրանոցում և Թալեաթից թույլտվություն խնդրեց նրանց թողնելու Հալեպում՝ քաջ գիտենալով, որ Դիարբեքիրի ճանապարհին սպանվելու էին Ռեշիդի հրոսակների կողմից: Պատասխանի փոխարեն վալուն կանչեցին Կ. Պոլիս և աշխատանքից ազատեցին բռնագաղթին դեմ լինելու համար: Հալեպի վալի նշանակվեց Բեքիր Սամին, որը նույնպես դեմ էր Զոհրապի և Վարդգեսի հաշվեհարդարին և գերմանական հյուպատոսից խնդրեց Բեռլինի միջամտությունը երկու խորհրդարանականներին փրկելու համար: Բայց ապարդյուն: Մորտմանը հուլիսի 12-ին հայտնեց, թե այդ խնդրով երկու անգամ դիմել է Թալեաթին և երկու անգամ էլ բացասական պատասխան է ստացել: Հալեպում Վարդգեսն ու Զոհրապը հաճախ էին լինում Մազլումյանների հանրահայտ «Պարոններ» պանդոկում, որն այդ տարածքում սովորական առևտրական հաստատություն չէր: Ինչպես և Արմենակ Մազլումյան եղբայրները «նախախնամական դեր մը կատարած են Հալեպի մեջ ջարդի ու տեղահանության զարհուրելի օրերուն, վտանգի տակ դնելով իրենց հարուստ ունեցվածքը, նախանձելի դիրքը, նույնպես իրենց կեանքը»: «Պարոններն», ամենից առաջ «կառավարական և դիվանագիտական չենք մը դարձած էր»: Եղբայրներն ամեն ինչ անում էին հայ մարդուն օգնելու, նաև այնպիսի գաղտների, ինչպիսին էր Զորի մութասարիֆ Զեքին, հայաջինջ կրքերը մեղմելու համար:

Իհարկե, թուրք ցեղասպանները հասկանում էին Մազլումյան եղբայրների վարքագծի միտումները: Մի քանի անգամ փորձեցին քանդել «Պարոններ» պանդոկը, սակայն Հալեպի նահանգապետերը թույլ չտվեցին: Թուրքերը պանդոկը կնքեցին «Հայկական հյուպատոսություն» անունով:

«Պարոններ» պանդոկում Զոհրապը պատմեց իր ձերբակալության հանգամանքները: Այդ օրը երեկոյան Կ. Պոլսի "Cercle d'Orient" հյուրանոցում նա Թալեաթի ու Հալիլի հետ թուղթ էր խաղում: Գիշերն արդեն կես էր դարձել, երբ վեր է կենում գնալու տուն: Թալեաթը մոտենում է նրան ու ամուր համբուրում: Զոհրապը զարմացած հարցնում է. «Այդ համբույրն ի՞նչ է նշանակում»: «Ի սրտե»,- լինում է պատասխանը: Երբ Զոհրապը փողոց է դուրս գալիս, նկատում է՝ ինչ-որ մեկը հետևում է իրեն: Քիչ անց լրտեսը խոստովանում է, որ նրան հետևելու հանձնարարություն ուներ: Տան մուտքի մոտ կանգնած ոստիկանը՝ թե հրամայված է նրան ոստիկանատուն տանել: Գրողը մտնում է տուն, հավաքում է ճամպրուկն ու հարազատների լացի ուղեկցությամբ դուրս գալիս: Նրան և Վարդգեսին տարան Հայդար փաշայի կայարան: Գնացքում նրանց ուղեկցում էին մեկական ոստիկան ու լրտես: Կոնիայում հանդիպում են ունենում տեղի հայերի հետ: Թույլատրվում էր խոսել միայն թուրքերեն: Ադանայում Բոյաջյան անունով մի հայ իր ծառայությունն է առաջարկում նրանց փախուստը կազմակերպելու համար: Հալեպում նույնպես հայերը մշակեցին փախուստի պլան, սակայն Զոհրապը մերժեց այդ առաջարկները: Նա գերադասում էր փրկվել օրինական ճանապարհով: Նամակ գրեց Զեմալ փաշային և նրա օգնությունը խնդրեց, բայց նամակի պատասխանն այդպես էլ չստացվեց[53]:

Հալեպում 13 օր մնալուց հետո նրանց ուղարկում են Ուրֆա, որտեղ հայ երեսփոխաններին ճաշի է հրավիրում Մ. Նեդիմը: Նոր էին սեղան նստել, երբ ներս են մտնում չորս ոստիկաններ ու ասում. «Կառքը սպասում է: Խարբերդ ենք մեկնելու»: Ճանապարհին նրանց միացրին Ուրֆա-

52 Թեհլիրեան Ս. Վերյիշումներ, Կահիրե, 1958, էջ 202:
53 ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր», 1989, թիվ 2: Տե՛ս Е. Отьян На смертном пути. Зограб и Вардгес, стр. 79-82.

յի թեմի առաջնորդ Արտավազդ Գալենտերյանին և տեղի երկու ազդեցիկ հայերի: Ուրֆայից մեկ ժամ հեռավորության վրա գտնվող Կարաքեսպրիվ վայրում հայտնվեցին չերքեզ Ահմեդի ու Հալիլի չեթեները, իսկ ուղեկցող ոստիկանները մեկնեցին: Նրանց տարան Շեյթեն Դերե վայրը: Զոհրապը ենթարկվում է ավազակների հրամանին ու կառքից ցած է իջնում, իսկ Վարդգեսը հրաժարվում է. «Չեմ իջնի, սպանեք այստեղ»: Սակայն նրան ուժի գործադրմամբ իջեցնում են եւ երկաթյա մահակի հարվածով գլորում գետին: Նախ կտրում են նրանց գլուխները, ապա մարմնի մյուս մասերը: Մի քանի օր անց Հալեպի շուկայում վաճառում էին Զոհրապի ամուսնական մատանին[54]: Թալեաթը հեռագրում է Զոհրապի տիկնոջը՝ Կլարային, թե Դիարբեքիրի ճանապարհին նրա ամուսինը կառքի մեջ կաթվածահար է եղել, Վարդգեսի կնոջը թույլատրվում է երկրից հեռանալ:

Այս հաշվեհարդարից ութ օր առաջ նույն վայրում հոշոտվել էր Ուրֆայի և Դիարբեքիրի 4 000 հայ զինվոր:

Գ. Զոհրապը չափավոր հայացքների տեր գործիչ էր, նա ջանադիր էր կանոնավորելու հայ-թուրքական հարաբերությունները: Պատրիարքարանում 1915թ. ապրիլի 10(23)-ին տեղի ունեցած խորհրդակցությունն ընդունեց նրա առաջարկությունները՝ ամեն ինչ անել փոխելու հայերի հանդեպ «աննպաստ մտայնությունը», «հաստատել օսմանյան հայրենիքի հանդեպ մեր հավատարմությունը», այդ նպատակով համապատասխան բովանդակությամբ դիմումներ հղել եպարքոսին, շեյխ ուլ իսլամին, ռազմական, ներքին գործերի և արդարադատության նախարարներին: Ապրիլի 26-ին Զոհրապը պատրիարքի և մի քանի ուրիշ հայ գործիչների հետ այցելեց Սայիդ Հալիմին, որին հանձնվեց նրա կազմած հուշագիրը: «Օսմանեան կառավարութեան կողմե ցոյց տրուած այս աստիճան անվստահութեան համար ազգային տխրութիւնը մեծ է,- կարդում ենք այդ հուշագրում,- սխալ է փախստական զինուորներուն քաղաքական նպատակներ վերագրել, ազգը ոչ թե քաղաքական նպատակներ կհետապնդե, այլ, ընդհակառակը, կը վախենայ, որ միգուցե այսքան խստութիւններուն հաղորդե ընդհանուր ջարդ մըն ալ, թե կառավարութեան կասկածը և ազգին այս մտադրութիւնը իրարու հետ խոտոր կը համեմատեն և այս կացութեան դարման անելու համար ոչ թե խիստ և ճնշող, այլ մեղմ և ներող քաղաքականութիւն մը ավելի նպաստավոր է և անհրաժեշտ, կը խնդրուի այսպես վերաբերուիլ հայ ազգին հետ, գոնե ի հարգանս յիշատակին հազարավոր հայ զինուորներուն, որոնք օսմանեան հայրենեաց պաշտպանութեան համար իրենց արիւնը թափած են... հայոց դեմ ձեռք առնուած միջոցները սահմանադրական կառավարութեան մը արդար զգացմունքներուն չի համապատասխանե բնավ»[55]:

Վարդգեսը վառ անհատականություն էր, անհանգիստ, խիզախ, ուղղամիտ: Ապրիլյան օրերին նա, անդրադառնալով ՀԲ Դաշնակցության քաղաքականությանը, գրեց. «...Կառավարութեան հանդեպ մեր ուղղամիտ ընթացքն ամբողջովին պարապ տեղը եղած է... Մենք ամեն բան կընենք համոզելու համար կառավարութեանը, թե անկատարի ոչ մեկ ձգտում ունինք և ուրիշ վհհապետութիւն չենք ցանկնար, բայց եթե սուլթանին: Մենք հստակ կերպով կտեսնենք, թե կառավարութիւնը չէ համոզուած այս մասին, այլ անիկայ կուզե գիտցած ըլլալ, թե մենք յեղափոխական շարժում մը կազմակերպած ենք իրեն դեմ և թե մենք հակառակորդներ ենք: Ան գրեթե հակառակին համոզուած է, քանի որ խուզարկութիւնները և փնտռտուքները, որոնք ոչ մեկ բան երևան հանեցին, կատարեալ ձախողանք մը եղան»[56]:

Թալեաթի հրեշավոր խոսքին, թե պատերազմը բարենպաստ պայմաններ է ստեղծել և իրենք այն օգտագործելու են այնպես «ցրելու» հայ ժողովրդին, որ նա 50 տարի այլևս գլուխը վեր չբարձրացնի, Վարդգեսը պատասխանում է՝ այդ նշանակում է շարունակել Աբդուլ Համիդի քաղաքականությունը, և Թալեաթը դա չի ժխտում[57]:

Վարդգեսը և Զոհրապը այն փոքրաթիվ հայ գործիչներից էին, ովքեր թուրք պետական այրերի երեսին շպրտում էին նրանց մեղադրող ամենասուր արտահայտություններ, կառավարության քաղաքականությունը խիստ քննադատության ենթարկում օսմանյան խորհրդարանում: Զոհրապի և Վարդգեսի սպանության մասին երիտթուրք գործիչ Ֆ. Աթայը գրում է. «Չեմալ փաշան երկար ժամանակ թղթակցում էր Թալեաթ փաշայի հետ, որ Պոլսից Դիարբեքիրի ռազմական ատյան ուղարկված երկու երեսփոխաններին ազատ արձակեն: Չեմալն ասում էր. «Նրանք իրենցից ոչ մի վտանգ չեն ներկայացնում, թողեք Լիբանան ուղարկեմ»: Թալեաթը պատասխանում է, թե Զոհրապի ու Վարդգեսի անվտանգությունն ապահովված է: «Վերադարձնել չենք կարող, որովհետև նրանց դատարան ներկայացնելն անհրաժեշտություն է»... Որոշ ժամանակ անց լսեցինք, որ Զոհրապն ու Վարդգեսը ճանապարհին սպանվել էին չերքեզ Ահմեդի և Հալիլի հրոսակախմբի կողմից: Չեմալ փաշան հրամայեց երկուսին էլ ձերբակալել: Սակայն նրանք, տեղեկանալով այդ մասին, փախան Պոլիս, քանի որ այնտեղ նրանց հովանավորում էին»[58]:

Չեմալ փաշայի շտաբի պետ Ալի Ֆուադը պատմում է. «Հալեպի նահանգապետից ստացվեց հեռագիր հետևյալ բովանդակությամբ. «Այսօր ինձ մոտ եղան Հալիլ և Ահմեդ բեյերը՝ երկուսն էլ ավազակապետեր են: Ասացին, որ Դիարբեքիրի վիլայեթում (հայերի) ընաջնջման գործն արդեն ավարտված է: Նույն նպատակով եկել են Սիրիա և սպասում են հրամանի: Ես նրանց անմիջապես բանտարկեցի: Սպասում եմ ցուցումի»: «Բերեցին բանակի շտաբում ստացված մի կոչտ հրաման,- շարունակում է Ֆուադը,- Չեմալ փաշայի հրամանն էր Հալեպի նահանգապետին՝ Հալիլին ու Ահմեդին ձերբակալել և հսկողության տակ ուղարկել Դամասկոս: Փախստական (ավազակներին) ձերբակալելու հանձնարարականով հեռագրեր գնացին Ադանա, Կոնիա և Էսքիշեհիր, սակայն ապարդյուն: Կոմիտեականները հավանաբար զգացել էին վտանգը և անհետացել էին: Շուտով նահանգապետը հայտնեց, որ նրանք արդեն Ստամբուլում էին... Չեմալ փաշան մայրաքաղաքում էլ նրանց հանգիստ չթողեց: Կենտկոմը պաշտպանեց փաշային և որոշվեց ձերբազատվել այդ մարդկանցից: Մարդասպաններին և դահիճներին շնորհակալություն հայտնելը հեշտ չէ, քանի որ հետագայում ահաբեկելու են նրանց, ում հանձնարարություններ էին կատարել: Այն, ինչ օգտագործվում է կեղտոտ գործերում, զուգարանի թղթի նման դեն է նետվում, եթե այդպիսիների կարիքն այլևս չի զգացվում»[59]:

Վերջապես գլխավոր հրամանատարի հրամանով Հալիլն ու Ահմեդը ձերբակալվեցին և ուղարկվեցին Դամասկոս, որտեղ ռազմական դատարանը նրանց մահվան դատապարտեց: Կոմիտեականների անձնական իրերի մեջ գտնվեցին դրամներ արյան հետքերով:

Ահմեդը սպանությունների համար մի քանի անգամ դատապարտվել էր, սակայն 1913-ին «առաջ քաշվեց»՝ դարձավ «իթիհադական ֆիդայի»: Վանի կոտորածների գլխավոր հեղինակներից էր[60]:

Գործակցած Դիարբեքիրի կուսակալ Ռեշիդի հետ ոչնչացրեց տեղի հայությանը: «Ոչ միայն Վանը, և շրջակայքը քարուքանդ արեցի այնպես,- հպարտանում էր Ահմեդը,- որ այնտեղ նույնիսկ մի հայ գտնել չես կարող, այլև սպանեցի հայ երեսփոխաններ Զոհրապին ու Վարդգեսին: Զոհրապին բանեցի, գետին տապալեցի, ոտքերիս տակ առա և քարի մեծ կտորով գլուխը ջախջախեցի, մինչև որ մեռավ»[61]:

Ահմեդը գործուն մասնակից էր Ուրֆայի հայության կոտորածին[62], որտեղից անցել էր Հալեպ ու կուսակալին առաջարկել ոչնչացնել նաև հալեպահայությանը: Սակայն ընդդիմության հանդիպեց և Չեմալ փաշայի հրամանով ձերբակալվեց, չնայած վերջինս գիտեր, որ նա Թալեաթի գործակալն է: Ահմեդի պատմածները տարիներ անց տպագրեց թուրքական «Ենի Իսթիքբալ» թերթը: Զ. Եսայանը «Ժողովրդի մը հոգեվարքը» հոդվածաշարում գրում է, թե Զոհրապին գնդակահարեց Հալիլ փաշան[63]:

Գր. Զոհրապի և Վարդգեսի ձերբակալությունն ու ոչնչացումը մտնո՞ւմ էր հայ մտավորականության հաշվեհարդարի ենթարկելու ընդհանուր ծրագրի մեջ, թե հետևանք էր այդ ծրագրի դեմ նրանց ընդվզմանը: Հաստատված է, որ երբ Կ. Պոլսում ձերբակալություններ կատարվեցին, Զոհրապը ՆԳ նախարարություն ուղարկեց երկու նամակ: Նա պատրիարքին առաջարկեց նույնն անել: Զոհրապի նամակում կան հետևյալ տողերը. «Կայսերական կառավարությունը հայերին վերագրում է, թե նրանք պատրաստ են ապստամբելու և սպասողական դիրք են գրավել: Իսկ հայերն իրենց հանդեպ զգում են անիրավ խստություններ և, վերջապես, ընդհանուր ջարդի ենթակա լինելու վախ ունեն: Այս երկու մտայնություններից առաջացած երեւույթները

54 ԳԱ «Լրաբեր», նշվ. համար:
55 Զավեն արք. Պատրիարքական յուշերս. Վավերագրեր և վկայութիւններ, Կահիրե, 1947, էջ 98-99:
56 Թիւրապեան Ց. Դրուագներ հայկական եղեռնեն և վերածնունդ, 1915-ի ջարդերու մասին տեղեկագիրներ եվրոպական, ամերիկեան և հայկական աղբիւրների, Փարիզ, 1946, էջ 160:
57 Նշ. էջ 161:

58 «Յառաջ», 08. 09. 1985:
59 Fuad Erden Birinci dunya harbinde Surya hatirlari, Cilt I, Istanbul, 1954, ss. 120-12.
60 Rafael de Nogales Four years beneath the Crescent, New York, 1926, p. 73, 85.
61 Refik A. Iki komite Iki Kital, Istanbul,1919,ss. 38-39.
62 Bruno E. Meine Erlebnisse in Urfa, Berlin, 1922.
63 «Գործ», 1917, թիվ 3:

խստությամբ մարելու անհրաժեշտությունն արժանի է լուրջ մտահոգության, և դիտմամբ չափազանցեցված թյուրիմացությունը վերացնելու պահանջով հանդերձ, պնդում եմ, որ այս ազգը (հայը) հավատարմությունից բացի որևէ այլ մտադրություն չունի...»[64]:

Շատ ավելի հանդուգն նամակներ գրեց Վարդգեսը: Սակայն գանգատները օգուտ չտվեցին, խստությունները գնալով սաստկացան: Մայիսի 10-ին Վարդգեսը խիստ խոսակցություն է ունենում Թալեաթի հետ, որը ցինիկաբար հայտարարեց. «Իշխանությունը մեր ձեռքում է և կարող ենք անել այն, ինչ ցանկանանք»: Զոհրապը հանդիպելով Թալեաթին, ասաց. «Կգա օրը, երբ ձեզնից հաշիվ են պահանջելու կատարվածների համար»: Թալեաթը ծաղրեց. «Այդ ո՞վ է, որ մեզնից հաշիվ պիտի պահանջի»[65]: Հաջորդ օրը, մայիսի 12-ին երկու հայ գործիչները ձերբակալվեցին: Հ. Ղազարյանի կարծիքով՝ նրանք կարող էին փրկվել, եթե «չեզոք մնային»: Մինչդեռ սեփական ժողովրդի բնաջնջման հանդեպ չեզոքություն հանդես չբերելու երիտթուրքական մտահոգությունը պատճառներից մեկն էր հայ մտավորականության ջարդի: Այդ առումով Զոհրապի և Վարդգեսի հետ կատարվածի շարժառիթը նույնն էր: Այլ բան էր, որ «խոնարհ լինելը» հնարավոր է, որ ինչ-որ չափով երկարացներ նրանց կյանքը, այլ ոչ երբեք՝ ընդհանրապես փրկեր: Վարդգեսի սպանությունը լռության մատնվեց, իսկ Զոհրապի կապակցությամբ կառավարությունը օգոստոսի 8-ին հրապարակեց թուրք բժշկի և հայ քահանայի կեղծ վկայություններն ու հայտարարություն: Բժշկական տեղեկանքում նշվում էր, թե ճանապարհին Զոհրապը վատ է զգացել, անմիջապես բժիշկներ են հրավիրվել եւ պարզվել է, որ սիրտն է: Ինչպես հաշվեհարդարի ենթարկված մյուս երևելիների, այնպես էլ Զոհրապի և Վարդգեսի սպանության հանգամանքները մանրամասն ուսումնասիրվեց և գաղտնի տեղեկանք ներկայացվեց Թալեաթին և Էնվերին: Սեպտեմբերի 12-ին Էնվերը լրացուցիչ տվյալներ պահանջեց: Ստացվեց պատասխան, թե «Զոհրապի մահը արկածի հետևանք էր»: 1915թ. հոկտեմբերի 4-ին Հալեպի վալին ստանում է Թալեաթի հետևյալ ծածկագիրը. «Մի շարք պատճառներով Ստամբուլի երեսփոխան Գր. Զոհրապ Էֆենդու այստեղ մնալը թույլատրելի չէր և հանձնվեց 6-րդ բանակի հրամանատարի տնօրինությանը... Նա արկածի հետևանքով մեռել է...»[66]:

Եվ սկսվեց ձեւական գրագրությունը: Իսկ Ռիֆաթն ուղղակի գրում է, որ Զոհրապին ու Վարդգեսին սպանեցին: Նույն տեղեկագրում նշված է նաև մյուս հայ երեսփոխանների՝ Ստ. Զրաջյանի, Ար. Վռամյանի սպանության մասին[67]:

Թալեաթը հետագայում, մինչև իր չնական կյանքի վերջը, մի քան անգամ անդրադարձել է Զոհրապի ու Վարդգեսի սպանությանը և ստի ու կեղծիքի առաջ կանգ չառնելով, աշխատել է չքմեղանալ: Վարդգեսին թույլ չտվեց մեկնել արտասահման, բայց իր հուշերում գրում է. « Շատ անգամներ հանձնարարեցի Վարդգես էֆենդիին, որ հեռանա Ստամբուլից, նույնիսկ դրամական օժանդակություն խոստացա: Այս մասին տեղյակ է իր կինը... ես ցանկացա նրանց (Զոհրապի ու Վարդգեսի) առաքմանն արգելք լինել, սակայն զինվորական մարմինների կողմից արդեն ճամփա էին հանվել»[68]:

Գործնականում Զոհրապի ու Վարդգեսի ոչնչացումը հանդիսացավ հայ ժողովրդին «գլխատելու», այսինքն՝ նրան իր մտավորականությունից ու ղեկավարներից զրկելու բարձրակետը: Այդ գործընթացի իններորդ ալիքը սկսեց ձևավորվել 1915թ. ապրիլի սկզբներին, երբ ՆԳ նախարարը տեղերն ուղարկեց ծածկագիր՝ «Հայ երևելիներին ձերբակալելու, զենքեր եւ դասալիքներ փնտրելու պատրվակով էլ ավելի ուժեղացնել հայերի հալածանքները» պահանջով: Ապրիլի 30-ին նույն նախարարությունը տեղական իշխանություններին հանձնարարեց ներկայացնել «բանտարկված ու հեռացված» անձանց ցուցակները, ինչպես նաև «հայերի մոտ հայտնաբերված զենքերի» լուսանկարները[69]:

Դրանց ավելի որոշակի բնույթ էին հաղորդում հեռախոսի միջոցով հանձնարարությունները, նահանգներ համապատասխան գործիչների գործուղումները, տեղական իշխանության ներկայացուցիչներին Կ. Պոլիս հրավիրելը և հրահանգավորելը, բազում այլ միջոցներ: Չնայած մտավորականության ձերբակալությունները շատ վայրերում սկսվեցին միաժամանակ, սակայն դրանք Կ. Պոլսից հետո առաջինը լայն ծավալ ընդունեցին Վանում, իսկ եղան գավառներ, որտեղ այդ միջոցառումը ձգվեց մինչև մայիսի վերջերը: Շոյքներ Ռիխտերի վկայությամբ Էրզրումում մայիսի 4-ին ձերբակալվեց չուրջ 200 հայ երևելի, իսկ դրանից հինգ օր առաջ, ապրիլի 30-ին Վանգենհայմը կանցլերին գրեց. «Էրզրումի հայկական մեծ գյուղերը դատարկվում են»[70]: Պատմում է Հալեպում ԱՄՆ-ի հյուպատոս Ջեքսոնը. «Պոլսի մտավորականության ձերբակալությունից երեք օր առաջ տեղի ունեցան գավառի հայ կրոնական առաջնորդների բանտարկությունները, որոնք շարունակվեցին ապրիլի 21-ից մինչև մայիսի 10-ը: Այսպես, չորս շաբաթվա ընթացքում ձերբակալեցին ու տարագրեցին Իզմիրից 100, Պանդրամայից 40, Պարտիզակից 80, Բրուսայից 40, Բալըքեսիրից 30 և Ադաբազարից 80 հայ մտավորական: Սեբաստիայում մտավորականությանը ոչնչացրեցին լեռներում, կիրճերում ու անտառներում: Ամեն օր սպանվում էր 150-200 մարդ[71]:

Սրանց հետևեց Մարզվանից ու Դիարբեքիրից 20-ական հոգու ձերբակալությունը, Կարինում տարագրված երևելիների թիվը հասավ 600-ի, Սեբաստիայում՝ 500-ի, Շապին Կարահիսարում՝ 50-ի, Խնուսում՝ 25-ի: Հերթը նորից Դիարբեքիրինն էր՝ 800 և Կեսարիայինը՝ 200 հոգի: Նույնը տեղի ունեցավ նաև Բաբերդում, Ցոզղատում, Մարաշում, Ուրֆայում: «Ընդհանուր ցուցում էր տրվել հայ ժողովրդին զրկել իր գլխավորներից, որպեսզի հնարավոր լիներ տարագրությունը գլուխ բերել առանց աղմուկի և ընդդիմության»:

Երկրորդ հանգրվանն ընդգրկում էր ընդհանուր տարագրությանը նախորդող շրջանը և վերաբերում էր զինվորագրվածներին: Գրեթե բոլոր գավառներից լուրեր ստացվեցին , թե նրանք իրենց մահմեդական ընկերների կողմից ոչ թե առանձին-առանձին էին սպանվել, այլ 80 կամ 100 և դեռ ավելի հոգանոց ջոկատները սպաների հրամանով հայ զինվորների վրա կրակ էին բացել: «Իթհատական ակումբները ներքին գավառներում բանտերից ազատված ոճրագործներից հրոսակախմբեր կազմակերպեցին: Նրանց բոլոր ազատությունները տրվեցին տղամարդկանց սպանելու, գյուղերը թալանելու և կանանց ու աղջիկներին առևանգելու: Արևելյան վիլայեթներում ավերածությունն այնպիսի բնույթ ընդունեց, որ բոլոր քաղաքներն ու գյուղերը դատարկվեցին իրենց հայ բնակչությունից»[72]:

Որ Ջեքսոնի հաղորդած տվյալները կեղծիք չէին, վկայում է նաև Լեփսիուսը: Նա այդ թվերը գրեթե ամբողջությամբ օգտագործել է իր «Հայաստանի ջարդերը» գրքում: Այս և նաև մի քանի այլ աղբյուրների վկայությամբ հայերի զինաթափումը, թալանը, զինակոչիկների բնաջնջումը շարունակվեցին նաև ապրիլի 24-ից հետո: 1915թ. ապրիլի 21-ին Բ. Շաքիրը խարբերդի մութասարիֆին հեռագրում է. «Արդյո՞ք այդտեղի հայերը բնաջնջվել են: Տվյալներ հաղորդեր ջարդերի վերաբերյալ: Վտանգավոր անձինք վտարվե՞լ են, թե ոչնչացվել»:

Հայ մտավորականության ողբերգությունը կրկնակի էր, նրան քշում էին կառափնարան, որի ճանապարհին ականատես եղավ սեփական ժողովրդի նահատակության սահմռկեցուցիչ տեսարանների:

Մի չերքեզ չաուշ վկայել է, «թե ինչպես Էտիրնեի կողմը 60 հայ քրիստոնեական գյուղեր այրել էին, թե ինչպես ժողովուրդը՝ էրիկ, կնիկ, երեխաներով և «փափազներով» կը ժողովեին, քաղաքին կամ գյուղեն դուրս կհանեին և քանի մը ժամ անդին բոլորը կը ջարդեին»[73]:

Կեսարիայից եկած մի զինվոր պատմել է, «թե Կեսարիայի և Էվերիկի բոլոր կեավուրները կը ջարդուին և բոլոր քաղաքները կը պարպուին»[74]: Երեսուն հայ բանտարկյալների «Էնկիւրի տարեր էին և Էնկիւրիի հայ ժողովուրդին հետ տարագրելով քանի մը ժամ անդին ջարդեր էին»: 24 հոգու «ձեռքերը կապեր և երկու ժամ անդին Այաշ Պելի կոչուած տեղը տարեր և հոն գնդակահար սպաներ էին»[75]:

«Գոմիսերը իր ատրճանակով ամեն մեկուն գլխուն մէյ մեկ գնդակ պայթեցուցեր էր և վրանին կողոպտելով 12 ժամացույց, 150 ոսկի դրամ, հագուստներով միասին առեր տարեր էր»[76]:

Բնաջնջման նախապատրաստական աշխատանքների և ոչնչացման միաժամանակության մասին վկայում է նաև Լեփսիուսը: Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր Լեո Կուպերը նկարագրում է. «Հայ բնակչության բնաջնջումն սկսվեց հայ ղեկավարների ձերբակալությունով, կառավարությունն ամբողջ երկրով մեկ ձերբակալում և աքսորում էր հայ ընտրանուն՝ կրթվածներին, պատգամավոր-

---

64 Ղազարեան Հ., նշվ. աշխ., էջ 380:
65 Ն. տ., էջ 381:
66 Ն. տ. էջ 385-386:
67 Ն. տ., էջ 389:
68 Թալեաթ Հուշեր: Տե՛ս ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվում պահվող ձեռագիր թարգմանությունը:
69 Ղազարեան Հ. նշվ. աշխ., էջ 378:

70 Ղազարեան Հ. նշվ. աշխ., էջ 66:
71 Ազատեան Լ. Հայ որբերը Մեծ եղեռնի, Լոս Անջելես, 1955, էջ 22:
72 Lepsius J. Bericht uber die Lage des armenischen Volkes in der Turkei, Potsdam, 1916, pp. 27-32.
73 Նեղիմ Մ. Հայ եղեռնը. իմ վկայությունները: Նազդաշեան Ա., Այաշի բանտը, Բեյրութ, 1978, էջ 163:
74 Ն. տ., էջ 163-164:
75 Ն. տ., էջ 168:
76 Ն. տ., էջ 169:

ներին, հրապարակախոսներին, գրողներին, բանաստեղծներին, փաստաբաններին, քաղաքացիական պաշտոնյաներին, նոտարներին, բժիշկներին, առևտրականներին, բանկիրներին և բոլոր նրանց, ովքեր որևէ նշանակալից ազդեցություն կամ նշանակություն ունեին: Այս գործողության նպատակն էր հայերին զրկել պարագլուխներից, այնպես որ աքսորը իրականացվեր առանց մեծ աղմուկի և դիմադրության, հայերին թողնել անպաշտպան և նախապատրաստել նրանց բնաջնջումը»:

Մեծ եղեռնի խորհրդանշական օր համարվում է 1915թ. ապրիլի 24-ը, որը ոչ քիչ դեպքերում նաև ներկայացվում է որպես հայոց ցեղասպանության երկրորդ շրջանի սկիզբ: Դա, սխալ լինելուց բացի, մնասակար է: Այն հետևանք է հանգամանքների պատահական դասավորության և նահանգներում կատարվածի վերաբերյալ Կ. Պոլսի անտեղյակության: Ապրիլի 24-ը ցեղասպանության, անգամ Մեծ եղեռնի սկիզբ համարելը մնասակար է նաև մի պատճառով՝ թուրքերն այն օգտագործում են ցեղասպանությունը ժխտելու համար: Տրամաբանությունը հետևյալն է՝ երբ ռուսական զորքերը Սարիղամիշի ճակատամարտում գլխովին ջախջախելով թուրքական 3-րդ բանակին՝ առաջ էին շարժվում դեպի երկրի խորքերը, երբ անգլիացիները Սուեզի ջրանցքից ներխուժելով Պաղեստին, առաջանում էին դեպի հյուսիս, իսկ Դարդանելում, չնայած Անտանտի զորքերի հարձակումը հաջողվեց կանգնեցնել, բայց Կ. Պոլիսը մնում էր վտանգված և գնացքակազմերը կազմ ու պատրաստ կանգնած էին Հայդար փաշայի կայարանում սուլթանին եւ կառավարությանը Կոնիա փոխադրելու համար, այդ նույն օրերին հայերը ապստամբեցին Վանում և վիլայեթի իշխանություններին դուրս քշեցին քաղաքից, Կիլիկիայում պատերազմ էին մղում թուրքական զորքերի դեմ, Սասունի մուտքերը փակել էին թուրք պաշտոնեության ու բանակի առաջ, իսկ հայկական կամավորական գնդերը ռուսական բանակի հետ միասին գրավում էին թուրքական տարածքները, կոտորում մահմեդական բնակչությանն ու ավերում նրանց բնակավայրերը և այլն, և այլն: Նման պայմաններում ուրիշ ի՞նչ պետք է աներ օսմանյան կառավարությունը, եթե չպատժեր երկիրը դեպի կործանում տանող ներքին թշնամուն: Այս պատճառաբանությունը տպավորություն թողնում է նրանց վրա, ովքեր իրողությանը ծանոթ չեն, ովքեր չգիտեն, որ Մեծ եղեռնը սկսվել էր ոչ 1915թ ապրիլին, այլ 1914թ. օգոստոսին, այսինքն՝ մի ժամանակ, երբ օսմանյան կառավարությանը ոչինչ չէր սպառնում, նա պատերազմի մեջ չէր և պատերազմող կողմերն էլ ամեն կերպ սիրաշահում էին Կ. Պոլսին:

Իսկ ի՞նչ հիմք ունենք Մեծ եղեռնի սկիզբը համարելու 1914թ. օգոստոսը: Ահա փաստերը. Օգոստոսի 2-ին կնքվեց թուրք-գերմանական գաղտնի համաձայնագիրը, իսկ օգոստոսի 6-ին լրացուցիչ համաձայնագիր ստորագրվեց, որով Գերմանիան խոստանում էր Թուրքիային տալ Կովկասը: Օգոստոսի 2-ի երեկոյան իթիհադի կենտկոմը լսեց Հատուկ կազմակերպության (Թեշքիլաթի մախսուսա) հարցը եւ որոշեց ստեղծել մի նոր նույնանուն կազմակերպություն «ներքին կարիքների», այսինքն՝ հայերի բնաջնջմանը մասնակցելու համար: Ջարդարարների այդ բանակներում նախատեսվում էր ունենալ 30 հազ. մարդ, այդ թվում նաև քրեական հանցագործներ, բանտերից ազատված մարդասպաններ, մահմեդական խուժան: Զորահավաքի մասին հուլիսի վերջերին հրապարակված օրենքն սկսեց գործադրվել օգոստոսի առաջին օրերից: Դա հայերի հանդեպ իրականացվեց ոչ թե որպես զինակոչ, այլ 17-60 տարեկան հայ արու սեռի, այսինքն՝ զենք կրելու ընդունակ անձանց հավաքագրում, նրանց մեկուսացում ու աստիճանական ոչնչացում: Զորակոչվեց 300 հազ. հայ, որի միայն չնչին մասին զենք տրվեց և ռազմաճակատ տարվեց ոչնչացնելու ոչ այնքան հակառակորդի, որքան նրանց վրա հսկող թուրք զինվորների կողմից: Իսկ մեծամասնությանը ոչ միայն զենք, այլև զինվորական հագուստ չտվեցին և մեռցրեցին ծանր, տաժանակիր աշխատանքներում կամ պարզապես խումբ-խումբ սպանեցին: Օգոստոսին հրապարակվեցին մի քանի հրամաններ, տեղական իշխանություններին գաղտնի հրահանգներ տրվեցին հայկական կուսակցությունների ու կազմակերպությունների գործունեության վրա խիստ վերահսկողություն սահմանելու, այն խոչընդոտելու, հայ պաշտոնատարներին այլևայլ պատրվակներով պաշտոնանկ անելու, հայերի հալածանքները սաստկացնելու վերաբերյալ: Օգոստոսին երիտթուրքերը ՀԸ Դաշնակցության 8-րդ համագումարին առաջարկեցին ռուսական բանակի թիկունքում ապստամբություն բարձրացնել, իսկ երբ բացասական պատասխան ստացան, որոշեցին համագումարի ողջ կազմը ոչնչացնել և միայն պատահական հանգամանքը դաշնակցության ղեկավար կորիզին փրկեց ոչնչացումից:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ
ԱՆՏԱՆՏԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՑՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Երիտթուրք պարագլուխները երբեմն խոստովանելով, որ հայերի բնաջնջումը ծրագրավորված քաղաքականություն էր, մնացած բոլոր դեպքերում անվերապահ մերժում էին ոչ միայն դրանց իրականացումն, այլեւ մտահղացումը: Սայիդ Հալիմը պոլսահայ մտավորականության ամբողջական ձերբակալությունից հետո էլ ժխտում էր հայերի հանդեպ անվստահության գաղափարը, թե իբր «իրենց վստահությունն անխախտ է հայ ազգի հավատարմության հանդեպ»: Նույն միտքը կրկնեց Թալեաթը. «...Կառավարությունն իր վստահությունը խախտած չէ հայերու մասին, թե ձեռք առնուած միջոցները միայն կուսակցականներու դեմ են: Ստոյգ է, որ պետութեան դեմ որեւէ լուրջ շարժման մը ապացոյցներ մը չունինք»[1]:

Նրան են պատկանում նաեւ հետեւյալ խոսքերը. «Օսմանյան կայսրության սահմաններուն հայերի ոչ մի ջարդ տեղի չի ունեցել»[2]:

Բայց նույն օրերին, նույն այդ Թալեաթի հրամանով կայսրության ամենատարբեր մասերում տեղի էին ունենում հայերի տեղահանումներ ու ջարդեր: Դրանց վերաբերյալ տեղեկատվությունները, հակառակ օսմանյան կառավարության ջանքերի, դուրս էին գալիս Թուրքիայից և մատչելի դառնում համաշխարհային հանրությանը: Թուրքական բարբարոսությունները մանրամասներով և դրանք հաստատող լուսանկարներով հայտնվեցին եվրոպական մամուլի էջերում և ցասման ալիք առաջացրեցին: Քարոզչական հարձակում ծավալվեց ոչ միայն Թուրքիայի, այլև Գերմանիայի դեմ: Բնականաբար շահագրգիռ կառավարությունները դրանք ուշադրությունից դուրս չէին թողնում, բորբոքում էին հասարակական հուզումները եւ օգտագործում դիվանագիտական պատերազմում: 1915թ. ապրիլի 26-ին բուլղարական թերթերը տպագրեցին Կ. Պոլսից ստացված մի լուր. «Թուրքական կառավարությունը, հայկական մի դավադրություն բացահայտելով, զանգվածային ձերբակալություններ է կատարել մայրաքաղաքի հայկական շրջանակներում»[3]:

Զորս օր անց «Հայաստան» թերթը տպագրեց Շ. Միսակյանի նամակը պոլսահայ մտավորականության ձերբակալությունների, օսմանյան մայրաքաղաքում ստեղծված իրավիճակի, հայկական շրջաններում թագավորող տագնապի մասին[4]:

Նույն օրերին Կ. Պոլսից Շ. Միսակյանը նաեւ գրեց, որ բաբերդցի մի կնոջ հաջողվել էր հասնել Կ. Պոլիս եւ պատրիարքին պատմել թուրքերի գազանություններ մասին: Շ. Միսակյանը Բուլղարիա է ուղարկում այդ կնոջ պատմածը: Հետագայում նա գրում է. «Չեմ իմանում թե ինչպես կարողացա կազմակերպել եւ արտասահման հաղորդել, բայց հիշում եմ, որ երեք օր չկարողացա ոչ խոսել, ոչ էլ ճաշել»[5]:

Մնջբերումը կատարված է «Ալիքի» նշված համարից: 1915թ. օգոստոսի 1-ին Շ. Միսակյանը «Հայաստանի» խմբագրությանը հայտնում է, որ կոտորված, անհետացած, աքսորված ու մահմեդականացված հայերի թիվը հասել է 835 600 մարդու: Եվ ավելացնում է. «Այս սարսափելի ժողովուրդը նույնիսկ մի սև խաչ չունի իր թաղման վայրը նշելու համար»[6]:

Ստանալով ջարդերի մասին տեղեկություններ՝ Սոֆիայի հայերը կազմակերպում են հանձնաժողով, որը որոշում է. «ա. Օգոստոսի 4-ին փակել բոլոր խանութները՝ ի նշան ընդհանուր սգի: բ. Նույն օրը կատարել հոգեհանգստի ծեսեր, կազմակերպել սգահանդես: գ. Քվեարկել բողոքի բանաձևեր և դրանք հանձնել կառավարությանն ու օտար պետությունների ներկայացուցիչներին, խնդրելով շտապ քայլերի դիմել Բ. Դռան հանդեպ հայկական սարսափներին վերջ դնելու համար... »[7]:

---

1 Զավեն արք., նշվ. աշխ., էջ 100:
2 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 237:
3 «Ալիք», 23. 06. 1986 Զ:
4 «Հայաստան» (Բուլղ.), 01. 05. 115:
5 Միսակեան Շ. Տերեւներ մի դեղնած հուշատետրից:
6 Ն. տ.:
7 Ն. տ:

Բուլղարիայի և Ռումինիայի բոլոր հայաբնակ քաղաքներում տեղի ունեցան հոգեհանգստի ծեսեր ու բողոքի հանրահավաքներ: «Հայաստան» թերթը լույս տեսավ սև շրջանակով ու գրեց. «Եվ փույտ չէ, եթե աշխարհում չգտնվի մի առաքինի տարեգրող, հայ ժողովրդի կենդանի փշրանքները իրենք կդառնան հավիտենական հուշարձաններ, այնպես, որ ապագան երբեք չի կարող մոռանալ Մեծ եղեռնը»[8]:

Այսպիսով Մեծ եղեռնի հիշատակի օրը առաջին անգամ նշվել է 1915թ. օգոստոսի 4-ին:

«Հայաստան» թերթը տպագրեց Կ. Պոլսից ստացված թղթակցությունը «Մեծ ճգնաժամ» վերնագրով: « Դեռ չհագեցավ ճիվաղը: Ամբողջ Հայաստանը, բովանդակ Կիլիկիան, նաև Փոքր Ասիան եւ Բուլթանիան ոչնչացնելուց հետո, Թուրքիայի հայության արևը մարելու համար ահա յաթաղանը Պոլսի գլխին է: Այս ժողովրդից ոչ մի շառավիղ չպետք է մնա: Եվ ահա մի քանի օրում 5000 երիտասարդ կալանավորվեց դիվային խուճապով, որ ահ ու սարսափ է սփռում»: Նույն օրը բուլղարահայ թեմի առաջնորդ Դուրյանը հանգամանալից տեղեկանք կազմեց Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային ջարդերի մասին և վերահաստատեցրեց Ֆրանսիայի կառավարության նախագահ Վիվիանուն, որն իր հերթին այն ուղարկեց Վաշինգտոնում Ֆրանսիայի դեսպան Ժյուսերանին կից գրությունով. «Հաստատվում է, որ Էրզրումի, Տրապիզոնի, Սրվազի, Խարբերդի, Բիթլիսի և Դիարբեքիրի նահանգներում ոչ մի հայ չի մնացել: Այդ նահանգների հայերը բռնագաղթվել են, իրենց հարազատ վայրերից քշվել հարավ: Ճանապարհին շատ հայ կանայք գերադասել են կրծքի երեխաների հետ նետվել Տիգրիս և Եփրատ, քան հանդուրժել խայտառակությունը՝ բավարարել թուրք դահիճների անասնական կրքերը: Երիտթուրքական կառավարությունը որոշել է մեկընդմիշտ վերջ դնել Հայկական հարցին՝ վեց վիլայեթներից ու Կիլիկիայից հայերին դուրս քշելու և ոչնչացնելու միջոցով»: Կից գրությունը մանրամասն տվյալներ է պարունակում զոհվածների, անհայտ կորածների, մահմեդականացվածների և առևանգված հայերի մասին, նշված է ողբերգական իրադարձությունների աշխարհագրությունը: Կրկնվում էր, որ 1915թ. օգոստոսի 25-ին թուրքական վայրագությունների ենթարկված հայերի թիվը հասել էր 835 հազարի[9]:

Դեռ ապրիլի 25-ին Կ. Պոլսի Ֆրանսիական դեսպանության թարգման Մ. Լեդալը Փարիզ, արտաքին գործերի նախարար Դելկասեին հաղորդել էր Կ. Պոլսի հայ մտավորականության ձերբակալությունների մասին: Ձերբակալվածների թվում նշվում է «քաջ հայտնի երաժիշտ» Կոմիտասը: Նաև հայտնում է, որ ապրիլի 25-ին ձերբակալությունները շարունակվում էին, որ քաղաքում լուրեր են տարածվում, թե դրանք Զեյթունում և Վանում հայերի ապստամբության դեմ պատասխան միջոցառում էին: Ապրիլի 29-ին Լեդալը գրեց, թե թուրքերը կատարվածն արդարացնում են Կովկասի և վեց վիլայեթների հայերի վարքագծով եւ կոչված էին կանխելու հայերի կողմից նախապատրաստվող հեղաշրջումը: Ձերբակալությունները, նշում է Լեդալը, հայ համայնքի վրա սարսափելի ազդեցություն են գործել: Կատարվածները նաև ռազմաճակատում ռուսներին հայերի կողմից ցուցաբերվող աջակցությանը պատասխան միջոցառումներ են: Թուրքերը վախենում են, որ նորից կբարձրացվի Հայկական հարցը[10]:

Ապրիլի 27-ին Մորգենթաուն պետական քարտուղարությանը հեռագրեց. «Հարյուրից ավելի լավագույն դասակարգի հայերը ձերբակալվեցին իբր հեղափոխական քարոզչությունը կանխելու համար: Նրանց կյանքը գուցե եւ վտանգված չէ, սակայն տարագրվում են երկրի խորքերը... Հայերի մասին աննպաստ տեղեկություններ ստացվել են նաեւ ներքին նահանգներից: Ես եւ ընկերներս հզոր ջանքեր ենք թափում ծայրահեղություններ թույլ չտալու եւ չարժումները կանխելու համար»:

Ընդառաջելով կաթողիկոս Գեւորգ 5-րդի խնդրանքին՝ ԱՄՆ-ի պետական քարտուղարությունը ապրիլի 27-ին հեռագրեց Մորգենթաուին. «Բարեհաճեք կառավարության ուշադրությունը հրավիրել այս խնդրին և ազդու միջոցներ ձեռնարկել հայերին պաշտպանելու համար...»: Ապրիլի 29-ին պետքարտուղար Բրայանը մի անգամ ևս հանձնարարեց Մորգենթաուին. «Բոլոր միջոցներով պաշտպանել հայերին»[11]:

8 «Ալիք», 23. 06. 1986:

9 Beylerian A., նշն. աշխ., փաստ N131:

10 АН Арм. ССР. инф. бюллетень, "Французские архивы о геноциде...", стр. 8-9.

11 Ղազարեան Հ. Ցեղասպան Թիւրքը, էջ 64:

Սակայն սրանք միայն հավուր պատշաճի գրագրություն էին: Իրականությունը բոլորովին այլ տեսք ուներ: Տպավորությունն այնպիսին է, որ մինչեւ 1915թ. փետրվարի կեսերը Կ. Պոլսի ամերիկյան դեսպանատունը անտեղյակ էր թուրքերի ավելի քան 5 ամիս շարունակվող ջարդարար գործունեություններից: Թուրքական բարբարոսությունների մասին առաջին լուրերը Արեւմուտք հասան նաեւ ամերիկյան մամուլի միջոցով, որովհետեւ Անտանտի տերություններն իրենց բոլոր հաստատությունները Թուրքիայից հանել էին, իսկ Գերմանիան եւ Ավստրո-Հունգարիան, լինելով Թուրքիայի դաշնակիցներ, դրանց մասին լռում էին: Սկզբում այդ հրապարակումներին ոչ ոք հավատ չընծայեց: Իսկ այն հանգամանքը, որ Անտանտի երկրները հրապարակված լուրերն օգտագործեցին Թուրքիային սպառնալու համար, ավելի ուժեղացրեց համաշխարհային հասարակայնության (և ոչ թե Գերմանիայի, ինչպես գտնում են առանձին հեղինակներ) համոզմունքը, թե դա Անտանտի, մասնավորապես Անգլիայի, կազմակերպած հակաթուրքական քարոզչություն է, որը խնդիր ուներ համաշխարհային հասարակական կարծիքն ուղղել Եոյակ զինակցության դեմ:

Սակայն մարտավարական քայլերի ազդեցությունը տեւական լինել չէր կարող: Երկար ժամանակ չպահանջվեց, որպեսզի աշխարհը համոզվեր, որ Փոքր Ասիայում մի ամբողջ ժողովրդի բնաջնջում էին: Թե ինչպիսին էր ամերիկյան մամուլի հետաքրքրությունը Օսմանյան կայսրությունում կատարվածի հանդեպ, բերենք միայն մի փաստ: "New York Times"-ը 1915թ. մարտի 30-ից մինչեւ հոկտեմբերի 8-ը հայոց եղեռնի մասին տպագրեց 39, իսկ մինչեւ 1916-ի վերջը 76 նյութ: Ամերիկյան մամուլը հեղեղվեց հայոց ողբերգության վերաբերյալ տեղեկատվությունով: Տարօրինակ է, բայց փաստ, որ այդ տեղեկատվությունն ամենազորեղ ընդվզումներն առաջացրեց Գերմանիայում: Գերմանացիների համար անսպասելի եւ անընդունելի էր, որ Բեռլինն իրենց երկիրը ներքաշել էր զազրելի իրողությունների ոլորտը, որ իրենք ոչ միայն դաշնակցում էին ազգաջինջների, այլեւ հովանավորում նրանց մարդասպան գործողությունները: Դա Բեռլինին հարկադրեց քայլեր կատարել պատասխանատվությունից խույս տալու նպատակով ճնշում գործադրելու օսմանյան իշխանությունների վրա: Սակայն այդ ճնշումն այնքան թույլ ու երկիմաստ էր, որ երիտթուրքերին շատ ավելի քաջալերում, քան թե զսպում էր: Այնուամենայնիվ, հավանաբար, Բեռլինի միջամտությունը ևս դեր խաղաց, որպեսզի իթիհադականները տեղերից պահանջեին գործելու ավելի զգույշ և ավելի եռանդուն միջոցների դիմելու կատարվածների վերաբերյալ լուրեր տարածողների դեմ: Գերմանացիներից ոմանք՝ Սանդերսը Հալեպում եւ Իզմիրում, Ռեոսլերը Հալեպում ընդդիմացան հայերի ջարդերին: Երբ Գոլցը Բաղդադ հասնելով իմացավ, որ տեղի հայերն աքսորվել են Մոսուլ, որտեղից պետք է տեղափոխվեին Եփրատ, այսինքն՝ դեպի մահ, Մոսուլի վալիին ազդարարեց, թե արգելում է տեղահանությունը եւ, երբ վերջինը չհամաձայնվեց, սպառնաց հրաժարական տալ: Էնվերը հարկադրված տեղի տվեց. միաժամանակ Գոլցին զգուշացնելով, թե նրա «գերագույն հրամանատարի իշխանությունը իրավունք չի տալիս խառնվելու թուրքական պետության ներքին գործերին»[12]:

Ապրիլի 30-ին Վանգենհայմը գրեց Բեռլին. «Ամսի 25-ի՝ շաբաթ գիշերը եւ ամսի 26-ի՝ լույս երկուշաբթի այստեղ տեղի ունեցան հայերի բազմաթիվ ձերբակալություններ: Ձերբակալվածներ-ի ընդհանուր թիվը հասնում է մոտավորապես 50 հոգու հասարակության բոլոր խավերից, մասնավորապես բժիշկներ, լրագրողներ, գրողներ, հոգևորականներ եւ մի քանի պատգամավորներ»: «Ազատամարտ» թերթի՝ դաշնակցություն կուսակցության պաշտոնաթերթի, խմբագրությունը, որի անդամներն էին շատ ձերբակալվածներ, պաշտոնապես փակվեց: Ձերբակալված հայերի մեծ մասը հաջորդ օրերին աքսորվեց Փոքր Ասիայի խորքերը: Այս պատժի դրդապատճառների մասին հասարակության մեջ ասեկոսեներ տարածվեցին, իբր թե հայերի տներում եւ եկեղեցիներում պայթուցիկ նյութեր, ռումբեր եւ զենքեր էին հայտնաբերվել, թե հայերը սուլթանի գահակալության օրվա առիթով Բարձր Դռան եւ մյուս հասարակական շենքերի վրա հարձակում էին գործել[13]:

Գերմանական դեսպանը ոչ այնքան սեփական կառավարությանը տեղեկատվություն հաստատելու, որքան պատմության առաջ չքմեղանալու համար մանրամասն ներկայացրեց իրադարձու-

12 Թեհլիրեան Ս., նշվ. աշխ., էջ 371-372:

13 Գերմանիայի արտաքին գործերի նախարարության արխիվ, գործ թիվ 267:

թյունների զարգացման իր տարբերակը: «Կիրակի օրը, ապրիլի 25-ին, անակնկալի եկած Կ. Պոլիսը իմացավ, որ շաբաթ, լույս կիրակի գիշերը ձերբակալվել են հայ հասարակության քաղաքական ու հոգեւոր ղեկավարները: Կիրակի լույս երկուշաբթի գիշերը շուրջկալները կրկնվեցին: Մոտ 600 հայ մտավորականներ, ազգի ղեկավարներ, երեսփոխաններ, կուսակցական առաջնորդներ, հրապարակախոսներ (լրագրողներ), հոգեւորականներ, բժիշկներ՝ առանց դատ ու դատաստանի տեղափոխվում էին Փոքր Ասիայի խորքերը»: Ապրիլի 29-ին Կ. Պոլսի բնակչությունից պահանջեցին հանձնել զենքերը, որը եւ կատարվեց առանց միջադեպերի; Ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը իր թարգմանչի միջոցով պաշտոնապես տեղեկացրեց դեսպանությանը, թե Թուրքիայում պետք է վարվի միայն «Օսմանյան քաղաքականություն»: Նախարարը մտահոգված էր, որ Կ. Պոլսի հայերի մեջ կան նաեւ ոչ քիչ թվով քաղաքականապես անվստահելի անձինք: «Չի կարելի չընդունել այն մտավախությունը, որ պատերազմի անբարեհաջող շրջադարձի դեպքում նման տարրերը կփորձեն օգտագործել այդ հանգամանքը խռովություն բարձրացնելու համար: Պահը հարմար է, որպեսզի բոլոր կասկածելի անձինք հեռացվեն մայրաքաղաքից: Անշուշտ արտաքսվածների թվում կան այնպիսիները, ովքեր լրիվ անմեղ են, դա Բ. Դուռը չի ժխտում եւ ինքը՝ Թալեաթը, սեփական նախաձեռնությամբ, առանց որեւէ միջամտության, թույլ կտա այդպիսիների վերադարձը: Նման բացատրությունով կանխվում է Գերմանիայի կողմից որեւէ միջամտություն: Ազնիվ եւ հարգված մտավորականների դեմ մեղադրանքներ չեն ներկայացվում: Նրանց մի մասը երիտթուրքերի մոտ ընկերներն են»: Ձերբակալությունները որակավորվում են որպես կանխարգելիչ միջոցառումներ եւ հույս է հայտնվում դատաքննության միջոցով հայտնաբերել կասկածելիներին: Վանգենհայմի այս տեղեկագիրը բացառիկ նշանակություն ունի: Այն հաստատում է, որ (1)մտավորականներին աքսորում էին անկախ նրանց քաղաքական վարքագծից, (2) այդ աքսորումները Վանի ինքնապաշտպանության հետ որեւէ առնչություն չունեին, (3) մտավորականության աքսորը հայերի բնաջնջման ծրագրի բաղադրիչ մասն էր, (4) երիտթուրքերի կենտրոնում (հակառակ Մ. Ռիֆաթի պնդումների) հայերի բնաջնջման հարցում չի եղել միասնական կարծիք: Մշո որբանոցի տնօրեն Այմա Ցոհանսոնը Վանգենհայմին գրում է, որ իր ղեկավարած որբանոցի բոլոր որբերին եւ անձնակազմին թուրքերը կենդանի վառել են: 1917թ. հոկտեմբերի 1-ին դիմումն ուղարկվում է Բեռլին, սակայն այդպես էլ մնում է անարձագանք «քաղաքական նկատառումներով»:

Ժամանակին զուգընթաց փոխվում է Թուրքիայում կատարվածին Վանգենհայմի տված գնահատականները: Մայիսի 31-ին նա տեղեկագրեց. «Էնվեր փաշան մտադիր է, օգտվելով պատերազմական բացառիկ վիճակից, մեծ թվով հայկական դպրոցներ փակել. հայերեն գրագրությունն արգելել, հայերեն թերթերը փակել եւ եղած ապստամբական կենտրոններից կասկածելի ընտանիքներին գաղթեցնել Միջագետք: (Էնվերը) թախանձագին խնդրում է, որ այս գործում նրան չխանգարենք... Այդ միջոցները, անշուշտ, մեծ խատութիւններ են հայ ժողովրդի հանդեպ: Ըստ իս մենք դրանց կիրառման եղանակները անպայման պետք է մեղմենք, բայց սկզբունքորեն չպետք է արգելենք...»[14]:

Տասն օր անց նա գրեց. «Ակներեւ է, որ հայերի տարագրության շարժառիթը լոկ ռազմական նկատառումները չեն... ՆԳ նախարար Թալեաթ բեյը... բացեիբաց հայտարարեց, որ Բ. Դուռն ուզում է օգտվել համաշխարհային պատերազմից արմատախիլ անելու ներքին թշնամիներին, առանց անհանգստանալու օտար դիվանագետների միջամտությունից»[15]:

Խորհրդանշական է, երբ խոսքը գնում է հայերի նկատմամբ կիրառված բռնարարքների հանդեպ վերաբերմունքի մասին, Վանգենհայմն անվերապահ գտնում է, որ թուրքերին չի կարելի մերժել իրականացնելու իրենց ծրագրածը, իսկ երբ խոսքը գնում է «ներքին թշնամուն արմատախիլ անելու» երիտթուրքերի դիտավորության մասին, նա լռում է, որեւէ վերաբերմունք չի ցուցաբերում:

Երբ Մորգենթաուն Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինիին խորհուրդ տվեց միջամտել Բ Դռան առջեւ տարագիրների օգտին, վերջինս պատասխանեց, թե պարտադրված չէ նման քայլ անելու: Սակայն երկու օր անց նա որոշում է «բարեկամաբար զգուշացնել թուրք պետական գործիչներին, թե ընդհանուր իրադրության վրա իրենց ազդեցությունը կարող են ունենալ Թուրքիայի քրիստոնյաների նկատմամբ ձեռնարկվող անմարդկային արարքները, քանի որ մեր թշնամիներին կտրվի մի նոր պատրվակ՝ իրենց ամբողջ ուժն ուղղելու Թուրքիայի դեմ»[16]:

14 Տաշեան Ց., նշվ. աշխ., էջ 16-17:
15 Նազարեան Հ. նշվ. աշխ., էջ 37:
16 "Wiena AHFM, Turkei, 'Berchte...', 1915, N32".

«Հայերի այս հազարավոր ձերբակալությունները ,- գրում է Լեփսիուսը,- հարգարժան ու կրթված մարդկանց՝ պատգամավորներ, հրապարակախոսներ, բանաստեղծներ, իրավաբաններ, փաստաբաններ, նոտարներ, պետական ծառայողներ, բժիշկներ, առեւտրականներ, բանկիրներ՝ բոլոր ունեւոր ու ազդեցիկ մարդիկ, տեղի ունեցան առանց որեւէ հետաքննության: Երբեք նրանց նկատմամբ մեղադրանք չի հարուցվել, թե մասնակցել են պետության դեմ որեւէ գործողության կամ նման ինչ-որ բան կատարել են կանխամտածված: Պարզապես իշխանություններն ուզում էին գլխատել հայ ժողովրդին՝ մինչեւ ձեռնամուխ լինելը նրա առանձին մասերի քայքայմանը»[17]:

Ապրիլի 26-ին Սազոնովը հեռագրեց Լոնդոնում եւ Փարիզում ռուսական դեսպաններ Ա. Բենկենդորֆին եւ Ա. Իզվոլսկուն. «Նախարարությունում նոր տեղեկություններ են ստացվել Ասիական Թուրքիայում տիրող անիշխանության եւ թուրքերի ու քրդերի կողմից հայերի կոտորածների մասին: Բարեհաճեք առաջարկել Ֆրանսիական (անգլիական) կառավարությանը հրապարակելու մեր, Անգլիայի (Ֆրանսիայի) համատեղ հայտարարությունը Բ. Դռանը, որում հայերի ջարդերի համար պատասխանատու համարվեն Թուրքիայի նախարարների խորհրդի անդամները, ինչպես նաեւ քաղաքացիական եւ ռազմական բոլոր պաշտոնատարները, ովքեր առնչվում են այդ իրողություններին... Համաձայնություն ստանալու դեպքում պայմանավորվեք հայտարարության տեքստի հարցում, որը ցանկալի է հրապարակել, որքան հնարավոր է շուտ եւ երեք մայրաքաղաքներում միաժամանակ»[18]:

Մայիսի 5-ին, երբ Խոյում ռուսական փոխհյուպատոսը հաղորդեց հայերի կոտորածի մասին Բաշկալեում, Շատախում եւ այլուր, Վաշինգտոնում Ռուսաստանի դեսպան Մ. Բախմետեւը հանձնարարություն ստացավ հայտնել Մորգենթաուին հայերի պաշտպանությամբ հանդես գալու անհրաժեշտության մասին[19]:

Մայիսի 2-ին ռուսական հեռագրական գործակալությունը տարածեց կառավարական հետեւյալ հայտարարությունը. «Վերջին ամիսներին քրդերը, Թուրքերը Թուրքական իշխանությունների ակնհայտ, երբեմն նաեւ ուղղակի աջակցությամբ, կազմակերպում են հայկական ջարդեր: Նոր տոմարով ապրիլի կեսերին հայկական կոտորածներ տեղի ունեցան Էրզրումում, Դերջանում, Հեղինում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Զեյթունում եւ ամբողջ Կիլիկիայում: Վանի շրջակայքի հարյուրավոր գյուղերի ողջ բնակչությունը մորթված է, իսկ Վան քաղաքում քրդերը շրջապատել են հայկական թաղը, միաժամանակ Կ. Պոլսում թուրքական կառավարությունը հայ խաղաղ բնակչությանը բանտարկում է, ենթարկում անլուր հալածանքների»[20]:

Նույն գործակալությունը մայիսի 13-ին հաղորդեց. «Ավելի քան մեկ ամիս է, որ ամբողջ Հայաստանում տեղի է ունենում հայերի անխնա ջարդ, որն իրականացնում է քուրդ ու թուրք բնակչությունը օսմանյան կառավարության պաշտոնատարների հետ համագործակցած եւ մանավանդ նրանց հովանավորությամբ: Մինչեւ ապրիլի կեսերին հայերի ջարդեր են տեղի ունեցել մասնավորապես Էրզրումի, Դերջանի, Հեղինի, Բիթլիսի, Մուշի, Սասունի, Զեյթունի եւ Կիլիկիայի ամբողջ տարածքներում, անխտիր մորթվել է Վանի մերձակայքի հարյուր գյուղի բնակիչ, իսկ Վան քաղաքի հայկական թաղերը շրջափակված են քրդերի կողմից: Միաժամանակ Կ. Պոլսի թուրքական կառավարությունը ձերբակալում եւ անխնա հալածանքների է ենթարկում մայրաքաղաքի հայ խաղաղ բնակչությանը: Նկատի ունենալով այս նոր հանցագործությունները, որ Թուրքիայի կողմից կատարվում է մարդկության եւ քաղաքակրթության դեմ, Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Անգլիայի դաշնակից կառավարությունները հրապարակավ Բաբը Ալիին (թուրքական կառավարությանը) հայտարարում են, որ այդ հանցագործությունների համար անձնապես պատասխանատու են համարվելու ոչ միայն օսմանյան կառավարության անդամները, այլեւ նրանք, ովքեր մասնակցել են կամ մասնակցելու են այդ կոտորածներին»[21]:

Սա իրականում երեք տերությունների հայտարարության տեքստի ռուսական տարբերակն էր, որը հիմք դարձավ այդ հայտարարության վերջնական ձեւակերպման համար: Հաջորդ օրը կաթողիկոսը գրեց Սազոնովին. «Վերջերս ստացված հավաստի լուրերը վկայում են, որ Թուր-

17 Wiena AHFM, Turkei, "Berichte...", 1915, ss. 28-29.
18 МОЭИ, м. ч.2, стр. 252.
19 Բեյլերյան Ա., նշվ. աշխ., փաստ N22:
20 R 14086, Ab 17657.
21 АБПР, Политархив, оп. 482, д. 3507, л. 15.

քահայաստանի իմ հոտը ապրում է դաժան փորձությունների օրեր: Հայերի կրոնը, սրբությունները եւ ընտանեկան պատիվը զայրացուցիչ ձեւով պղծվում է թուրքերի, ասկյարների ու քրդերի կողմից, հայերի ամբողջ ունեցվածքը հրո ճարակ է դառնում կամ ոչնչացվում»[22]:

Մայիսի 15-ին Սազոնովը Բենկենդորֆին նորից հանձնարարեց անգլիական կառավարությանը համոզել, թե որքան ցանկալի ու ժամանակին է համատեղ հայտարարության հրապարակումը, որը, եթե անգամ անհրաժեշտ ազդեցություն չգործի, ապա գոնե կոգեւորի հայերին, ինչը մեզ համար օգտակար է թուրքերի դեմ պայքարում[23]:

Մայիսի 20-ին նա Իզվոլսկուն հեռագրեց, որ Գրեյն ընդունել է Թուրքիայում հայերի ջարդերի վերաբերյալ Բ. Դռանն ուղղված հայտարարության (Ռուսաստանի արտաքին գործերի) նախարարությունում կազմված տեքստը եւ պատրաստ է այն հրապարակել, հենց որ Ֆրանսիական կառավարությունը հայտնի իր համաձայնության մասին: Բարեհաճեցեք արագացնելու դրա ստացումը[24]:

Իսկ Բենկենդորֆը Սազոնովին տեղյակ էր պահել, որ երբ ինքը Գրեյին ասաց, թե Վանում այսպես կոչված ապստամբության փաստը չի կարող ընդունվել որպես նկատառում, քանի որ այն տեղի է ունեցել կոտորածներից հետո, նախարարը չառարկեց, սակայն նորից սկսեց արտահայտել իր կասկածները այնպիսի սպառնալիքներ հրապարակելու նպատակահարմարության մասին, որոնք կարող են շատ թույլ ազդեցություն ունենալ Թուրքիայի վրա: Դեսպանը պնդեց, թե դաշնակից տերությունների համար շատ օգտակար է հայերի տրամադրությանը սատար կանգնելը: Գրեյը հարցրեց՝ բավարար չի՞ լինի, եթե հայտարարությամբ հանդես գա միայն ռուսական կառավարությունը: Բենկենդորֆը այդ եւս տարբերակ համարեց, բայց շատ ավելի փոքր արդյունավետությամբ: «Բարոյական առումով առավել նշանակություն կունենա,- ասաց նա,- եթե երեք տերությունները բացահայտ դատապարտեն Թուրքերի գործելակերպը, քան այդ արվի միայն որպես ռուսական անմիջական շահերի արտահայտություն»[25]:

Փարիզում Անգլիայի դեսպանը Ֆրանսիայի կառավարությանը տեղյակ պահեց, որ Պետրոգրադը պնդում է կոլեկտիվ հայտարարության վրա[26]:

Նկատի ունենալով, որ Փարիզն ու Լոնդոնը տատանվում էին, Սազոնովը նորից պնդեց իր առաջարկության վրա, նաեւ վկայակոչելով Սիրիայի 1860թ. կոտորածների կապակցությամբ տերությունների կոլեկտիվ հայտարարությունը[27]:

Պետրոգրադի համառությունը Լոնդոնին տեղից շարժեց: Է. Վիլյամսը դիմեց արտաքին գործերի նախարարությանը, թե հնարավո՞ր է հարցում կատարել Միացյալ Նահանգների կառավարությանը՝ համաձա՞յն է հանձնարարելու Կ. Պոլսի իր դեսպանին զգուշացնելու Բ. Դռանը, որ թուրք նախարարները անձնական պատասխանատվություն են կրելու, եթե բռնություններ գործադրվեն հայերի հանդեպ: Նույն օրերին Բրայսը հայտարարեց, որ Թիֆլիսից, Պետրոգրադից, Կ. Պոլսից ու Փարիզից լուրեր են ստացվել, թե Հայաստանում «սարսափելի ջարդեր են տեղի ունեցել»[28]:

Անգլիան ու Ֆրանսիան ձեւականորեն համաձայնվելով ռուսական առաջարկի հետ, շարունակում էին այլեւայլ միջոցներով դրա ազդեցությունը չեզոքացնել: Փարիզում Անգլիայի դեսպանը մայիսի 19-ին իր կառավարությանը նորից տեղյակ պահեց, թե Պետրոգրադը պնդում է կոլեկտիվ հայտարարության վրա: «Ֆրանսիացի դիվանագետները Սազոնովի վերջնագրի տեքստը խմբագրեցին, որպեսզի մահմեդականները չնեղանան»[29]: Միաժամանակ քայլեր էին կատարվում այլեւայլ միջոցներով հարցին լուծում գտնելու, բայց շատ ավելի Պետրոգրադին հակազդելու համար: Պալեոլոգը դեռ փետրվարի 27-ին գրեց Դելկասեին, թե Գյուլբենկյանն առաջարկել է իր օգնությունը երիտթուրքերի որոշ ղեկավարներին, մասնավորապես Ջեմալ փաշային, կաշառելու միջոցով նրանց մղելու ապստամբության իթիհադի վարչակարգի դեմ[30]:

22 Ն.տ., պ. 3508, ս.16:
23 ՄՕՅՀ, т. VII, ч. 2, стр. 260-261.
24 Ն. տ., էջ 488-489:
25 Ն. տ., էջ 490-491:
26 Բեյլերյան Ա., նշվ. աշխ., փաստ N41:
27 Ն.տ., փաստ N18, 19:
28 Bryce Papers, UB 55, Kitchener to Bryce, 10 Apr. 1915.
29 Բեյլերյան Ա. նշվ. աշխ., փաստ N83:
30 Ն. տ., փաստ N11:

Այս խնդրին ուշադրությունը հարաճուն էր: Դրան են նվիրված դիվանագիտական մի շարք փաստաթղթեր (NN157, 158, 159, 160, 161):

Անտանտի տերությունների՝ Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան, ու նրանց դաշնակիցների մամուլը խիստ հարձակումներ սկսեց գերմանա-թուրքական ջարդարար քաղաքականության վրա: «Հավաս» գործակալության միջոցով տարածվեց երեք տերությունների հետեւյալ հայտարարությունը. «Արդեն համարյա մեկ ամիս է, ինչ Հայաստանի թուրք եւ քուրդ բնակչությունը կոտորում է հայերին՝ թուրք իշխանությունների թողտվությամբ եւ հաճախ՝ աջակցությամբ: Կոտորածներ տեղի ունեցան ապրիլի կեսերին Էրզրումում, Դերջանում, Հեղինում, Ակնում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Զեյթունում եւ ամբողջ Կիլիկիայում: Վանի շրջակայքի շուրջ 100 գյուղերի բնակիչներ կողոպտվել են: Միեւնույն ժամանակ, մայրաքաղաքում օսմանյան կառավարությունը դաժանորեն է վարվում անմեղ հայ ազգաբնակչության նկատմամբ: Ի դեմս մարդկության եւ քաղաքակրթության դեմ Թուրքիայի գործած այս նոր ոճիրների, դաշնակից պետությունները հրապարակավ հայտարարում են Բարձր Դռանը, որ անձնական պատասխանատվության կկանչեն օսմանյան կառավարության բոլոր անդամներին եւ կոտորածներին մասնակից նրանց գործակիցներին»[31]:

Հաջորդ օրը, այսինքն՝ մայիսի 25-ին, «Վոլֆ» գործակալության միջոցով տարածվեց Թուրքիայի պատասխան նոտայի տեքստը. «Բ. Դռան կառավարությունը վերոհիշյալ հուշագրի պարունակած վկայություններն ու պնդումները բացարձակապես մերժում է: Օսմանյան տերության սահմաններում հայերի բնաջնջման վերաբերյալ նշված դեպքերն ամբողջովին սուտ են... Քանի որ Էրզրումի, Դերջանի, Հեղինի, Սասունի, Բիթլիսի, Մուշի եւ Կիլիկիայի հայերը երկրի խաղաղությունն ու հանրային անդորրը խանգարող որեւէ քայլ կամ գործողություն չեն կատարել, օսմանյան կառավարության պաշտոնատարները նրանց դեմ արտակարգ միջոցառումների դիմելու անհրաժեշտություն երբեւիցե չեն զգացել... Ովքեր արեւելյան հարցերին եւ իրադարձություններին քաջատեղյակ են, լավ գիտեն, թե հայ ժողովրդին ամեն առիթով օսմանյան կառավարության դեմ ըմբոստության մղողները Եոյակ համաձայնության, մանավանդ ռուս եւ անգլիացի պաշտոնատարներն են... Նույն կառավարությունների Բուլղարիայում եւ Ռումինիայում գործող հյուպատոսները չէի՞ն, որ օսմանյան հպատակ երիտասարդ հայ ասպատակներին Վանայի, Սուլինայի եւ Կոնստանցիայի վրայով ու այլ ճանապարհներով Կովկաս ուղարկեցին եւ ռուսական կառավարությունն էլ այս օսմանցի հայ երիտասարդներին իր բանակի կազմի մեջ մտցնելով, հրացանով ու ռումբերով զինելով, նրանց հեղափոխական թռուցիկներ ու հայտագրեր բաժանելուց հետո Օսմանյան կայսրության սահմաններից ներս ուղարկեց: Այդ երիտասարդների պարտականությունն էր իրենց մեկնած շրջաններում հեղափոխական կազմակերպություններ հիմնել, ինչպես նաեւ Վանի, Շատախի, Հավասորի, Գևաշի եւ Թեմարի հայերին կառավարության դեմ զինված ապստամբության մղել: Դեռ ավելին՝ դրդել այդ շրջանի թուրքերին ու քրդերին հայերին ջարդելու համար... Արմեն Գարո անունով մեկը, որը նախկինում օսմանյան երեսփոխան Գարեգին Բաստրմաջյանն է, հայկական կուսակցությունների ղեկավարների՝ Դրոյի ու Խեչոյի, կողմից հիմնված ասպատակներին միացած, գործակցած վերոհիշյալ ղեկավարների հետ, հայ կամավորների գլուխն անցած օսմանյան սահմանների վրա հարձակում են գործել: Ռուսների կողմից Բայազետի գավառի գրավման ընթացքում նրանք իրենց ճանապարհի վրա գտնված բոլոր իսլամ գյուղերն ավերել են եւ բնակիչներին կոտորել... Ներկայումս էլ Բաստրմաջյանը գործում է Կովկասի սահմանի վրա: Ամերիկայում հրատարակվող դաշնակցության պաշտոնաթերթ «Ապարեզը» այդ անձի պատերազմ մեկնելուց առաջ պաշտոնական երդման կրոնական արարողություն կատարելու միջոցին Դրոյի եւ Խեչոյի հետ հանած մի լուսանկար է հրապարակել: Այս ծրագրված նախապատրաստությունները, անգլիական պաշտոնյաների կողմից Կիպրոսից հատուկ բերված եւ Իսկենդերունի մերձակայքում ցամաք հանված հայերի գործունեության հետ կապը հստակ ու դրականորեն հայտնի է դարձել... Մյուս կողմից, Ֆրանսիայի կամ Անգլիայի ծովային հրամանատարությունները Ադանայի, Դորթյոլի, Ցումուրտալըքի, Իսկենդերունի եւ երկրի այլ շրջանների հայերի հետ թղթակցելով, նրանց ըմբոստության ու խռովությունների էին մղում:

Մասնավորապես անգլիական ու ֆրանսիական կառավարությունների քարոզչության հետեւանքով հայ հեղափոխական կազմակերպությունը սկսած անցյալ փետրվարից սկսեց իր գործունեությունը Զեյթունում, որտեղի հայերը կառավարական պաշտոնատարների վրա զենք բարձրացնելով, շրջա-

31 «Ցուշամատեան Մեծ եղեռնի», էջ 1091 կամ Բեյլերյան Ա. նշվ. աշխ., փաստ N41:

պատեցին պետական շենքերը: Օսմանյան կառավարության պարտականությունն էր ըմբոստությունը զսպել, հսկողության տակ վերցնել հանրային անդորրը: Նման հեղափոխական եւ ծրագրված շարժման զսպման համար բոլոր անհրաժեշտ նախազգուշական միջոցառումների ձեռնարկումը պետական իշխանության ուղղակի իրավասությունն է եւ դրանց միջամտելու ու հակազդելու իրավունք ոչ ոք չունի: Այդ միջոցառումները ներկայումս ընթացող պատերազմի ժամանակ անշուշտ առանձնակի կարեւորություն են ստանում: Բ. Դռան կառավարությունը, մի կողմից, ռազմական ուժով հեղափոխությունը ճնշելու, մյուս կողմից էլ, օտար երկրներում գործող հեղափոխական կազմակերպությունների եւ Եոյակ համաձայնության կառավարությունների պաշտոնատարների հետ հարաբերություններ մշակող հայ հեղափոխականներին հետապնդելու եւ ձերբակալելու պահանջ զգաց:

Հակառակ վերոհիշյալ երեք պետությունների մեղադրանքների, օսմանյան կառավարության զսպումի գործողությունների ընթացքում ժողովրդական ամենաիսկական միջամտության եւ մասնակցության դեպք չի պատահել: Հայ հեղափոխականների բնակարաններում կատարված խուզարկությունների ժամանակ ծրագրված հեղափոխությունն ու գործողությունները հաստատող շատ կարեւոր փաստաթղթեր ու հեղափոխական դրոշակներ են հայտնաբերվել: Սրանից բացի, այդ փաստաթղթերը հաստատում են, որ դրանց գործունեության կենտրոնները՝ Փարիզում, Լոնդոնում եւ Թիֆլիսում հիմնված հայ հեղափոխական կազմակերպությունները, հովանավորվում են ֆրանսիական, անգլիական եւ ռուսական կառավարությունների կողմից: Գավառներում կատարված խուզարկությունների ժամանակ շատ հայերի մոտ գտնվել են հազարավոր ռումբեր եւ հրացաններ, որոնք մատակարարվել են Ռուսաստանի կողմից: Ձերբակալված հայերը, ինչպես նաեւ ֆրանսիացի, անգլիացի եւ ռուս պաշտոնյաների սաղրանքով ու դրդումով զինակոչից խույս տվող, ժանդարմների վրա հարձակվող հայերն անշուշտ հանձնվելու էին համապատասխան դատարաններին...

Օսմանյան կառավարությունը, հանրային անդորրը պահպանելու մտահոգությամբ եւ համաձայն օրենքի բացորոշ տրամադրությունների, չնորհիվ իր ձեռնարկած նախազգուշական միջոցների հայերի հեղափոխական շարժումները կարողացել է զսպել առանց զանգվածային կոտորածի: Եթե նկատի առնվի Պոլսում բնակվող 77 735 հայերին, բացի նշված հեղափոխական շարժումներին մասնակցած 234 հոգու ձերբակալությունից, մնացածները խաղաղ եւ անդորր իրենց գործերով են զբաղվում եւ անվտանգ ապրում, ինչը արդյունք է նախազգուշական միջոցների գործադրման եւ ապացուցում է, որ հայերի նկատմամբ որեւէ կանխամտածված շարժում գոյություն չունի:

Գալով որոշ հայերի տեղահանմանը՝ պատճառն անմիջապես ռազմական գործողությունների գոտիներում այդ հայերի բնակված լինելն է կամ նրանց առկայությունն այդ շրջաններում, ինչը ազգային պաշտպանության առումով առաջացրել էր Բ. Դռան կառավարության մտահոգությունը եւ նրա մեջ իրավացիորեն կասկած էր արթնացրել: Այդուհանդերձ Բ. Դուռը իր թե ցամաքային եւ թե ծովային սահմանների անվտանգության եւ ապահովման համար անհրաժեշտ համարվող բոլոր միջոցառումների կիրառումը համարում է օրինական պարտականություն եւ որեւէ այլ կառավարությանը հաշիվ տալ պարտավոր չէ:

Երբ ֆրանսիական եւ անգլիական ծովային ուժերի հրամանատարները ռմբակոծում էին Զանգակալեի (Դարդանելի) թուրքական շրջիկ կամ ստացիոնար հիվանդանոցները, ռուսական կառավարությունը հայերի միջոցով Կարսի մերձակայքի հազարավոր խաղաղ մահմեդականների սրի էր քաշում եւ Կովկասում գերեվարված օսմանյան զինվորները նույն այդ հայերի ձեռքով բնաջնջում էր, նրանց քաղցի ու ծարավի մատնելով անգթորեն սպանում, արդյո՞ք զարմանալի չէ, որ այժմ այդ նույն պետությունները մարդասիրության մասին են ճառում: Պատերազմող պետությունների հյուպատոսներին անելանելի կացության մատնողը ոչ թե Թուրքիան, այլ նույն ինքը՝ ռուսական կառավարությունն է»[32]:

Նպատակահարմար գտանք պատասխան հուշագրի տեքստը չնչին կրճատումներով ներկայացնել, որովհետեւ այն Մեծ եղեռնի պատմությունը կեղծելու թուրքական առաջին պաշտոնական փաստաթուղթն է, որի վավերականությունը թուրք պատմաբանները կասկածի տակ չեն առնում: Հուշագիրը բացարձակ կեղծիք է համարում այն պնդումը, թե «հայերի դեմ կիրառվել է բնաջնջման գործողություն»: Մասնավորապես ժխտվում է տերությունների կողմից նշված՝ Էրզրումի, Դերջանի, Սասունի, Կիլիկիայի եւ այլ տարածքներում ջարդերն այն պատճառով, որ այդ տարածքների «հայերը երկրի խաղաղությունն ու հանրային անդորրը խանգարող որեւէ քայլ կամ գործողություն չեն կատարել...»:

32 Uras E. Armenians in History and Armenian Question, Istanbul, 1988, pp. 618-621:

Նախ, Թալեաթի եւ Զեմալի հուշերում ճիշտ հակառակն է գրված: Եվ ապա, եթե նշված տարածքներում հայկական ապստամբություններ չեն եղել, ապա ինչո՞ւ հուշագրի հրապարակումից երկու ամիս առաջ արդեն տեղահանված էր Զեյթունը, ինչո՞ւ էր ջարդված Վասպուրականի, Բաղեշատի եւ շատ այլ վայրերի հայ բնակչությունը: Բ. Դուռը ապստամբություն ասելով իրականում նկատի ուներ Վանի ինքնապաշտպանական կռիվները, բայց չէ՞ որ տեղահանության մասին երիտթուրքական կենտրոնի ծրագիրը մշակվել էր դեռ 1913թ., երբ ոչ կամավորական շարժում կար, ոչ Վանի ինքնապաշտպանություն եւ ոչ էլ երիտասարդության դասալքություն: Մի՞թե ակնհայտ չէ, որ հայերի ցեղասպանությունը ամենից քիչ առնչվում էր հայերի վարքագծին: Որովհետեւ եթե հակառակը լիներ, ապա բոնություններ, այդ թվում՝ նաեւ ջարդեր, կկիրառվեին «ապստամբների եւ խռովարարների, ծայրահեղ դեպքում «խռովության եւ ապստամբության» օջախների հայերի, այլ ոչ թե ամբողջ հայ ժողովրդի հանդեպ: Բացի այդ, Բ. Դուռը պնդում էր, որ իբր Վանի նահանգի 180 000 մահմեդականից փրկվել էր միայն 30 000-ը, իսկ 150 000-ն ապրում էր մահվան վտանգի տակ: Իրականում հայերը Վասպուրականի մահմեդականներին ոչ միայն չեն ջարդել, այլեւ նրանց մի մասին հովանավորել էին. 150 000 մահմեդական մինչեւ ռուսների գալը հեռացել էր, գաղթել ուրիշ նահանգներ[33]:

Թուրքական «Սաբահ» թերթը 1918թ. նոյեմբերի 27-ին գրում է. «Գոյություն ունի արեւի պես պարզ մի իրողություն, աղետ, դժբախտություն, որն ուրանալն անհնար է: Սայիդ Հալիմի և Թալեաթի կառավարություններն իրենց անիծյալ հոգում նյութեցին մի զարհուրելի պլան՝ պատերազմի պատրվակով քրիստոնյաներին, հատկապես հայերին, արտաքսելու մի նահանգից մյուսը, ընդհուպ մինչեւ Արաբական անապատը եւ այդ տեղահանության ընթացքում գազանաբար, միջնադարում եւ նոր ժամանակներում չտեսնված տմարդի եղանակներով սպանելու ոչ միայն տղամարդկանց ու երիտասարդներին, այլեւ կրծքի երեխաներին, կանանց, ծերերին, որպեսզի լրիվ կոտորեին, արմատախիլ անեին հայ ազգը»: Մեծ վեզիր Թևֆիկ փաշան 1919թ. հայտարարեց՝ պետք է ստեղծել միջազգային հանձնաժողով հայերի բնաջնջման փաստերն ուսումնասիրելու համար: «Միայն այդ միջոցով Եվրոպան հնարավորություն կունենա իմանալու ճշմարտությունը: Մենք ոչ միայն չենք ժխտում Հայաստանում տեղի ունեցածները, այլեւ խորապես ափսոսում ենք դրանց համար: Մենք այժմ դատում ենք պատասխանատուներին»[34]: Ժամանակակից թուրք պատմաբաններից ոմանք, նույնպես ընդունելով հայերի բնաջնջման իրողությունը, նորից փորձում են պատասխանատվությունից զերծ պահել օսմանյան կառավարությանը եւ թուրք ժողովրդին: Այդ նպատակն է հետապնդում նաեւ Ս. Սոնիերը: Նա գրում է, թե թուրքերը ռազմաճակատում էին եւ տարագրվող հայերի պաշտպանությունը հանձնարարված էր քրդերին, որոնք լինելով հայերի ավանդական թշնամիներ, դաժան էին վարվում նրանց հետ: Այսինքն՝ ցեղասպանություն չի եղել, այլ հնարավորություն է տրվել քրդերին, այն էլ պատերազմական իրավիճակի թելադրանքով, հաղեցնելու հայերի հանդեպ իրենց վրեժխնդրության ծարավը: Թալեաթն իր հուշերում ներկայացնում է մի այլ տարբերակ՝ բանակ զորակոչվեցին կաղդային ռտիկաններն ու ժանդարմները, եւ նրանց փոխարեն հասարակական կարգի պահպանումը հանձնարարվեց պատահական մարդկանց, ովքեր դաժան ռտիկան եւ ժանդարմ գիշատիչ նկատառումներով: Հենց նրանք էլ իրականացրեցին հայերի թալանն ու ջարդերը:

Սկսած 1915թ. մայիսի սկզբներից համաշխարհային մամուլը հայերի բնաջնջման խնդրին առանձնակի տեղ էր հատկացնում: Թերթերում տպագրվում էին հիմնահարցին նվիրված տեղեկատվություն, վերլուծական հոդվածներ, հանդես էին գալիս ականատեսները: Գերմանական "Algemeine misions-zeideschrifte" հանդեսը 1915թ. նոյեմբերին ներկայացնում է ականատեսի պատմածը Դիարբեքիրի եւ Խարբերդի 1300 երեխաների ոչնչացման մասին:

Փարիզում ԱՄՆ-ի դեսպան Շարպը մայիսի 24-ին Հ. Մորգենթաուին ուղարկեց հայկական ջարդերի առնչությամբ հայտարարության ամերիկյան տարբերակը, որը գրեթե նույնն էր, ինչ ռուսականը: Հունիսի 18-ին Մորգենթաուն պատասխանեց, թե այն փոխանցել է Մեծ վեզիրին. նա ցավ արտահայտեց, որ ինքն անձնապես պատասխանատու է համարվում և մերժեց հայ հպատակների հանդեպ վերաբերմունքի խնդրում թուրքական կառավարության սուվերեն իրավունքներին օտար կառավարության միջամտությունը: «Մինչդեռ հայերի նկատմամբ հալածանքը գնալով սաստկանում է: Երեք

33 Lepsius J. Bericht uber die Lage des armenischen Volkes inder Tukei, Potsdam, 1916, p. XXIV.
34 «Լենինյան ուղիով», 1985, թիվ 4, էջ 89:

նշանավոր երեսփոխաններ՝ Վարդգես, Զոհրապ, Պոլատյան, ձերբակալված են: 20 հայի հրապարակով կախեցին Թուրքիան մասնատելու դիտավորության մեղադրանքով: Դրան հետեւելու են ուրիշ կախաղաններ: Զարիքը մեղմելու իմ ջանքերն ապարդյուն անցան եւ երիտթուրքերին չկարողացան ետ պահել որդեգրած ուղուց, ինչը ջանում են արդարացնել ռազմական անհրաժեշտությունով»[35]:

Անտանտի կառավարությունների մայիսի 24-ի հայտարարության վերաբերյալ կարծիքները միանշանակ չեն: Ինքնին դրական գնահատվեց, որ հայերի պաշտպանությամբ միասնաբար հանդես եկան երեք հզոր տերություններ, բայց արդյունքի առումով հնարավոր չէ ասել, թե հայտարարությունը հայերի համար շահեկան ինչ-որ բան նշանակեց: Իսկ Պ. Նուբարը բուլղարական թեմի առաջնորդ Ղ. Դուրյանին գրած նամակում նշում է, որ այն «վատ հետեւանքներ ունեցավ»: Նույն կարծիքին էր նաեւ պաշտոնական Լոնդոնը[36]:

Ֆրանսիական մի փաստաթղթում նշվում է. «Երիտթուրքերը որեւէ ուշադրություն չդարձրեցին Անտանտի սպառնալիքներին»[37]:

Հավանաբար նման խիստ գնահատականը հիմքեր ուներ, քանի որ տերությունների հայտարարության հարցադրումները չամրապնդվեցին դիվանագիտական-քաղաքական գործնական քայլերով: Դրա հետեւանքով ինչպես նկատում է Թեռնոնը, ի պատասխան այդ հուշագրի, օսմանյան կառավարությունը որոշեց քողարկված գործողություններից անցնել հայերի վրա բացահայտ հարձակման: Մայիսի 26-ին Թալեաթը պաշտոնապես ներկայացրեց այն միջոցառումները, որոնք Բ. Դուռը պլանավորել էր «հասարակական կարգը խանգարող եւ երկրի պաշտպանությունը վտանգող» հայերի դեմ: Հաջորդ օրը հրապարակվեց տեղահանության օրենքը[38]:

Նույն օրը հրապարակվեց նաեւ պաշտոնական հայտարարություն տեղահանության վերաբերյալ, որում ասվում է. «Նկատի ունենալով, որ հայերը հակաօրինական գործողություններ են կատարում եւ օգտագործում են ամեն առիթ կառավարությանն անհանգստացնելու համար, որ նրանց մոտ հայտնաբերվել են զենքեր, ռումբեր եւ պայթուցիկ նյութեր պատրաստված ներքին ապստամբության համար, որ նրանք Վանում մահմեդականներին սպանել եւ ռուսական զորքին օգնել են մի ժամանակ, երբ կառավարությունը պատերազմի մեջ է գտնվում Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի հետ, վերջապես, զգուշանալով, որ հայերը, համաձայն իրենց սովորության, կարող են ապստամբությունների, խռովությունների եւ ըմբոստությունների դիմել, կառավարությունը որոշել է, որ բոլոր հայերը պետք է հավաքվեն ու տարվեն Մոսուլի եւ Սիրիայի վիլայեթները: Ընդ որում, նրանց անձը, սեփականությունն ու պարտիվը պետք է պաշտպանվեն: Տրվել են անհրաժեշտ հրամաններ, որպեսզի հոգ տարվի նրանց տեղավորման համար, եւ որպեսզի մինչեւ պատերազմի ավարտը հայերը այդ շրջաններում մնան»[39]:

Թուրքերը քաջ գիտեին տերությունների կառավարությունների խոսքի արժեքը եւ դրա համար էլ անուշադրության մատնեցին, իսկ հօգուտ հայերի Անտանտի գործիչների հայտարարությունները չարունակում էին մանանայի նման թափվել կառափնարան տարվող հայության գլխին: Արիստիդ Բրիանը, պատասխանելով հայկական հալածանքների վերաբերյալ լորդ Լուի Մարտենի 1916թ. նոյեմբերի 1-ի նամակին, գրում է. «Հանրապետության կառավարությունը ուզեց հանդիսավոր առիթի դեպքում նշավակել երիտթուրքերի ոճիրները եւ մարդկության խղճին հանձնել նրանց գազանային ծրագիրը՝ բնաջնջելու մի ամբողջ ցեղ, որին նրանք հանցավոր են համարում առաջադիմություն եւ քաղաքակրթություն սիրելու համար...»[40]:

Ֆրանսիայի խորհրդարանի նախագահ Պոլ Դեշանելը գրեց. «Թող հայերը վստահ լինեն, վաղը Հայաստանը տոնելու է իր ազատագրությունը»: Լլոյդ Ջորջը համայնքների պալատում հայտարարեց. «Այսուհետեւ Հայաստանը չպետք է թողնվի Թուրքերի չարաղետ տիրապետության տակ»: 1918թ. հունվարի 5-ին նա կրկնեց այդ միտքը. «Չի կարելի Հայաստանն իր նախկին տերերին վերադարձնել»[41]:

35 Ղազարեան Հ. Ցեղասպան Թուրք, էջ 67-68:
36 Ջավեն արք., նշվ. աշխ., էջ 153-154:
37 Բեյլերյան Ա., նշվ. աշխ., փաստ N51:
38 ՀՍՍՀ ԳԱ բյուլետեն, Հայերի ցեղասպանության պատմությունից, Երեւան, 1984, էջ 3-4:
39 EL Chaosein F.S. Die Turkenherrscaft und Armeniens Schmerzenchrei, Zurich, 1918, s. 56.
40 Paillaires M. Kemalisme devant les Allies, Paris, 1922, pp. 336-337.
41 Ն. տ., էջ 341-342 :

Անգլիայի մի այլ վարչապետ՝ Ասքվիտը, Լոնդոնի քաղաքապետարանում արտասանած ճառում ասաց. «Թուրքիայի տիրապետության տակ գտնվող ժողովուրդներից ամենաշատը տանջվում, բոլորից շատ հալածվում է հայ ժողովուրդը: Հայերի զանգվածային կոտորածները վերջին երկու տարիներին ցնցեցին ամբողջ կուլտուրական եւ քրիստոնեական աշխարհը: Այդ ժողովրդի անբեւեւակայելի տանջանքները նրա նկատմամբ խոր համակրանք են առաջացրել թե մեզանում եւ թե Ռուսաստանում ու մանավանդ Միացյալ Նահանգներում: Սակայն Գերմանիան, որպես Թուրքիայի գերագույն գերիշխան, կարող էր ձեռքի մի շարժումով կանգնեցնել, իսկ ցանկության դեպքում նաեւ լրիվ արգելել քրիստոնյա ժողովրդի այդ կազմակերպված հալածանքները: Մինչդեռ Գերմանիան բոլոր փաստերին վերաբերվեց լուռ, սառնասիրտ եւ, ինչպես մեզ հայտնի է, նույնիսկ հավանությամբ: Դա գերմանականացված թուրքերի ապագա դերի նշանավոր ցուցադրություն է»[42]:

Խոսքեր, խոստումներ, որոնք անգամ թղթի արժեքը չունեին, որի վրա գրվում էին:

Թուրքական բնաջնջման քաղաքականության, մասնավորապես մտավորականության ձերբակալությունների եւ դրան հաջորդած գործողությունների մանրամասն վերլուծությունն են պարունակում Լեփսիուսի գրվածքները. «1915թ. հունվարից սկսած հայ բանակայիններն ու ոստիկանական ծառայողները զինաթափվեցին եւ 500-1000 հոգանոց խմբերով օգտագործվում էին նախ ճանապարհաշինության եւ բեռներ տեղափոխելու գործում, ապա աստիճանաբար նրանց քշեցին ամայի վայրեր բնաջնջելու... Տեղահանությունները սկսվեցին ապրիլի սկզբին Զեյթունում, մի շրջան, որ անմիջական ռազմավարական նշանակություն չուներ... Տեղահանությունը համընդհանուր դարձնելու համար պատրվակ հանդիսացավ Վանի հայության ինքնապաշտպանությունը: Նահանգապետ Ջեւդեթը ավերում էր այդ շրջանի հայկական գյուղերը, իսկ վանեցիները դիմադրում էին... Երբ Վանի ըմբոստության լուրը Պոլիս հասավ, իթիհադի կոմիտեն անմիջապես օգտվում է առիթից. շուրջ 650 մարդ՝ գրող, փաստաբան, բժիշկ, հոգեւորական, քաղաքական գործիչ բանտարկվում են ապրիլի 24-25-ը, ապա աքսորվում ու սպանվում են...(դա) հայ մտավորականության գրեթե ամբողջական բնաջնջում էր: Ապրիլի 24-ից սկսած, ճշգրիտ գրաֆիկով, կառավարությունը հրահանգում է արեւելյան նահանգների հայության տեղահանումը... Մի «հատուկ կազմակերպություն» էր ստանձնել գործն ավարտելու պարտականությունը: Այն կազմված էր քրեական հանցագործներից, որոնք բանտից ազատված, մարզված եւ իթիհադի կուսակցության կողմից զինված էին: Այս (պետական համակարգին)«զուգահեռ» կազմակերպությունը կապված էր բացառապես նույն իթիհադի կենտկոմի եւ հատկապես Բեհաեդդին Շաքիրի հետ: Պոլիսը հրահանգները տալիս էր վալիներին, կայմակամներին եւ հատուկ կազմակերպության տեղական պատասխանատուներին: Այս վերջինները վայելում էին բացարձակ ազատություն...»: «Կ. Պոլսի մտավորականության ձերբակալությունից երեք օր առաջ,- շարունակում է Լեփսիուսը,-... իշխանությունները իրականացրեցին մեծ թվով երեւելի քաղաքացիների ձերբակալությունը ներքին մարզերի շատ քաղաքներում: Ձերբակալությունները տեղի են ունեցել չորս շաբաթ շարունակ՝ ապրիլի 21-ից մինչեւ մայիսի 19-ը... խոսքը գնում էր համընդհանուր միջոցառման մասին, որը նպատակ ուներ հայ ժողովրդին զրկել իր առաջնորդներից եւ հեռտորներից, որպեսզի արտաքսումները իրականացվեին առանց աղմուկի ու դիմադրության: Ուզում էին նաեւ թույլ չտալ, որպեսզի երկրի ներսում կատարվածների մասին լուրերը ժամանակից շուտ դառնային հասարակայնության՝ Եվրոպայի սեփականությունը: Հունիսի սկզբին պետության մեջ վարչական պաշտոններ զբաղեցնող բոլոր հայերը հանվեցին իրենց պաշտոններից, իսկ բոլոր բժիշկները, որոնք պատերազմի սկզբից հավատարմորեն կատարում էին իրենց պարտականությունները թուրքական հոսպիտալներում, բանտ նետվեցին... Թուրքերը պարզապես ուզում էին գլխատել հայ ժողովրդին՝ նախքան նրա առանձին մասերի ջախջախմանն անցնելը... Բարձր պաշտոններ զբաղեցնող պաշտոնատարներին հասցեագրված հրամանները գալիս էին Ստամբուլից եւ, չնայած այն դիմադրությանը, որ ցուցաբերվում էր առանձին պաշտոնատարների, իսկ որոշ դեպքերում նույնիսկ հենց թուրք բնակչության կողմից, անշեղո-

42 "Армянский вестник", 1916, N5.

րեն և անողոքաբար կատարվում էին: Միջոցառումների երկրորդ փուլը, որ նախորդել է ընդհանուր տարագրությանը, վերաբերում էր բանակ զորակոչվածներին, նրանց մեծ մասը զինաթափվել է եւ օգտագործվել բանակի կարիքների համար՝ որպես բեռնակիր կամ ճանապարհները վերանորոգող բանվոր....»: Գրեթե բոլոր գավառներից լուրեր էին ստացվում, որ ոչ միայն հարկադիր աշխատանքի մեջ գտնվող հայերը տարվել էին մեկուսի տեղերն ու սպանվել իրենց ընկեր- մուսուլմանների ձեռքով, այլեւ ամբողջ խմբեր՝ 80, 100 և ավելի մարդուց բաղկացած, գնդակահարվում էին զինվորների և ժանդարմերիայի ձեռքով՝ սպաների հրամանով: Հավանաբար երբեք, համենայն դեպս մինչև պատերազմի ավարտը, չի պարզվի, թե ինչ չափեր էր ընդունել բանակ զորակոչված հայերի սպանությունը: Զինվորական պարհակ կատարելու պատրվակով շատ քաղաքներում ու գյուղերում 16-70 տարեկան տղամարդկանց, չնայած նրանք բանակում ծառայելուց ազատվելու համար հարկ էին վճարել կամ զինվորական ծառայության համար պիտանի չէին, շարասյուներով տարել են լեռները և գնդակահարել առանց նախաքննության... Բացառությամբ Վանի շրջանի, որ խուսափեց տեղահանությունից, քանի որ գրավված էր ռուսական զորքերի կողմից և երկու -երեք տեղերի, որտեղ հայերը դիմադրություն ցույց տվեցին (Զեյթուն և Շապին Կարահիսար), մնացածներն այնքան հեռու էին պատերազմական գոտուց, որ 1,5 միլիոն բնակչության աքսորումը, որը ցրված էր կայսրության բոլոր մասերում, մանավանդ ռազմական գործողությունների թատերաբեմից ամենահեռու բնակվողներին, ոչ մի կերպ չի կարելի արդարացնել ռազմական նկատառումներով... Կառավարությունը գործում էր համաձայն քաղաքական պլանի, սառնարյուն հաշվարկով և նախապես կշռադատված մտադրությամբ իր առջև խնդիր էր դրել ոչնչացնել հայկական էթնիկական տարրը[43]: Վանում, Զեյթունում, մի քանի այլ վայրերում 1915թ. մարտ- ապրիլ ամիսներին տեղի ունեցած դեպքերը և իրադարձությունները հաստատում են Նանսենի հետեւյալ միտքը. «Հայերի թշնամիները ճգնում են նրանց ստորացնել, ասելով, թե ... նրանք առանց դիմադրության թույլ տվեցին, որ իրենց սպանդանոց տանեին, ինչը հակասում է թուրքերի մեղադրանքին, ովքեր ձգտում են իրենց զոհերին ներկայացնել որպես վտանգավոր խռովարարներ»: Նանսենը տարանջատում է ջարդարարներին հակահարված տալու հայերի պատրաստակամությունը նրանց հնարավորություններից: Հայերն «ինչպե՞ս կարող էին պաշտպանվել զինված ոստիկաններից, զինվորներից և «կամավորների» բազմաքանակ ավազակախմբերից, երբ աշխատունակ տղամարդկանց մեծ մասն արդեն զորակոչված էր, իսկ ազգաբնակչությունը հետեւողականորեն զինաթափվում էր...»[44]:

Ամենափոքր հնարավորության դեպքում հայերը դիմադրում էին, ոչ քիչ դեպքերում պարտիզանական կռիվներ մղում, ջարդարարներին շոչափելի մնասներ պատճառում:

Մեծ եղեռնի առաջին շաբաթներին հայերի տրամադրությունը երկատված էր՝ նախ և առաջ ամեն ինչ արվում էր խաղաղ լուծումներ գտնելու համար: Ջարդարարներին դիմադրություն էին ցույց տալիս միայն, երբ խնդիրն ուրիշ միջոցներով լուծելու հնարավորությունները լրիվ սպառվում էին: Ի դեպ, հայ քաղաքական ուժերն առիթը բաց չէին թողնում հավաստիացնելու, որ իրենք ջատագովն էին հայ-թուրքական հարաբերությունների բարելավման: Ռամկավարների պաշտոնաթերթ «Վան- Տոսպ»-ը 1914թ. նոյեմբերի 1-ին գրում է. «Մենք՝ հայերս, ցարդ ցույց տուած ենք հավատարմութիւն եւ ուղղամտութիւն, այդ կպահանջուի մեզմէ այժմ ալ: Ոչ ռազմիկներեն ալ կսպասուի ամենակատարեալ լրջախոհութիւն և հաստատուն հավատք դեպի վարիչ շրջաններու անկեղծութիւնն ու կարողութիւնը»: Այս կողմնորոշումն ու կեցվածքը 1915թ. առաջին կեսին էական փոփոխություն չկրեցին: Չնայած հայերի հաշտվողական կոմնորոշման, այնուամենայնիվ Մեծ եղեռնի ընթացքում նրանք թուրքերին ամենաազդու հակահարված տվել են հենց մարտ-մայիս ամիսներին: Թերեւս պատճառն այն էր, որ ջարդերի սկզբնական շրջանում, նախ, հայությունը շարունակում էր չհավատալ, որ թուրքական իշխանությունները գործողության մեջ էին դրել ամբողջական ոչնչացման քաղաքականությունը եւ, երկրորդ, արևմտահայության ոգին դեռևս լրիվ խորտակված չէր: Ահա թե խնդիրն ինչպես է ներկայացնում Ա. Բարբին. «Հենց որ հայտնի դարձավ կառավարության բարբարոսական միջոցառումները, շատ հայ համայնքներ փորձեցին դիմադրություն կազմակերպել,

43 (Լեփսիուս Յո. Հայկական ջարդերը) Տոքթ. Եոհաննես Լեփսիուսի տեղեկագիրը, Բեյրութ, 1965:
44 Նանսեն Ֆ. Խաբված ժողովուրդ, Երևան, 2000, էջ 260-261:

բայց նրանց բոլոր փորձերը... մեծի մասամբ արագացնում էին դրանց մասնակիցների կործանումը: Այդպես պատահեց Մարզվանում, որտեղ միայն դիմադրության ակնարկ էր եղել, Շապին Կարահիսարում, որտեղ ապստամբների եռանդուն ջանքերը ընկճվեցին կանոնավոր զորքի կողմից, Ուրֆայում, որտեղ հայերն իսկական կռվի մեջ մտան ջարդարարների հետ եւ տեղի տվեցին միայն այն ժամանակ, երբ նրանց դեմ հանվեցին կառավարական բազմաքանակ զորքեր: Չնայած Սահակ կաթողիկոսի ընդդիմության, Կիլիկիայում ապստամբական շարժումներ ծավալվեցին:

Զոք Մարզվանի անվեհեր բնակչությունը, որը 1895-ին աչքի էր ընկել իսկական արիությամբ, հավատալով թուրքական իշխանությունների խոստումներին, 1915-ին դիմադրություն ցույց չտվեց եւ տարագրվեց»: Զեյթունի երիտասարդները լեռ բարձրացան եւ հաջողությամբ հետ էին շպրտում թուրքական զորքերի հարձակումները, նրանք գրավեցին մեծ քանակությամբ զենք ու զինամթերք, հարձակվեցին նաեւ տարագրության պահակախմբի վրա: Ի վերջո, զեյթունցիները տարագրվեցին Կոնիայի ճահիճները, իսկ Զեյթունում բնակեցվեցին թուրքեր: Փոխեցին նաեւ երկրամասի անունը՝ Սուլեյմանիե՝ ի պատիվ կիլիկիահայերի գնդակից զոհված թուրք սպայի: Սրվազի վիլայեթի որոշ քաղաքներում հայերը սկզբում ամեն ինչ արեցին թուրքերի հետ ընդհարումից խուսափելու համար, բայց կանխատեսելով կոտորածը, գերադասեցին զոհվել զենքը ձեռքին: Այսինքն՝ զինված դիմադրության բոլոր դեպքերում տեսնում ենք ոչ թե ապստամբների, այլ վտանգվածների, որոնք ինչ-որ զենք էին պահել եւ գերադասում էին կռվել մինչեւ մահ, քան աքսորի գեհենով անցնել: «Հայերին անհնար է նախատել, որ պաշտպանում էին իրենց կյանքը: Սակայն... միայն աննշան փոքրամասնությունը կարող էր դա անել: Հայերի մեծ մասը պատերազմի սկզբին զենքը հանձնել էր, որի հետեւանքով էլ առանց նվազագույն դիմադրության ենթարկվելու էր դաժան ճակատագրին, որ նրա համար պատրաստել էր կառավարությունը»:

«Ոչնչացումը սկսավ 1915-ի ապրիլին,- գրում է Լարասը:- Գործողությունները կը ղեկավարվեին կենտրոնական ոյժի մը կողմեն եւ կառաջնային միեւնոյն օրինակով. սկիզբը բանտարկվեցան անվանի դենքերը, եւ մանավանդ կրոնականները, քանի մը օրը ետք զենքի տակ եղած մարդիկը աքսորվեցան ու գրեթե բոլորը, առանց բացառութեան, սպանվեցան: Ի վերջոյ մնացած հայերը անվերջանալի քարավաններով աքսորվեցան դեպի սուրիական անապատ: ... Երզնկայում մեկ գիշերվա ընթացքում ձերբակալվեցավ ու սպանուեցավ 2000 մարդ»: Մի մեջբերում էլ ժողովուրդների մշտական դատարանի (1984թ.) նյութերից. «1915թ. սկզբներին թուրքերի կրած ռազմական լուրջ պարտությունը, ինչպես նաեւ մայրաքաղաքին սպառնացող վտանգը, թույլ տվեցին երիտթուրք արմատականներին հայերին դարձնելու քավության նոխազ՝ նրանց մեղադրելով դավաճանության մեջ եւ համոզելով տատանվողներին, որ ժամանակն էր մեկընդմիշտ լուծելու Հայկական հարցը: Իր «Գենոցիդի մեկնաբանությունը» գրքում Հելեն Ֆեր-նակն էր մեկընդմիշտ լուծելու Հայկական հարցը: Իր «Գենոցիդի մեկնաբանությունը» գրքում Հելեն Ֆեր-նը եզրահանգում է. «XX դարի կանխորոշված եղեռնի զոհերը՝ հրեաները, հայերը, գնչուները, ոչնչացվեցին, որպեսզի իրագործվեն նոր տիպի պետություն ստեղծելու նպատակներ: Երկու դեպքերում էլ պատերազմը օգտագործվեց ազգային կազմը փոխելու համար, ցանկանալով այն հարմարեցնել իշխանության գլուխ անցած ընտրյալների կոնցեպցիային, վերացնելով օտար համարվող տարրը»[45]:

Հայերին հոչոտելու թուրքական պաշտոնական քաղաքականությանը, երիտթուրքերի վարչական, ռազմական, ոստիկանական գործողություններին դիմակայելու համար հայերը բացարձակապես չունեին ոչինչ՝ զենք, զինամթերք, զինված ուժ, քաղաքական ղեկավարներ, ինքնապաշտպանական կողմնորոշում: Այդ ամենի պատճառը հայ հասարակության ներքին բզկտվածությունն էր: Նշված խնդիրը մանրամասն արդեն քննարկվել է: Բավարարվենք անդրադառնալով համախմբվելու հայերի ձգտմանը եւ այն իրականություն դարձնելու նրանց անկարողությանը: Երիտթուրքական հեղաշրջումից հետո ընկած տարիներին հայ հասարակական ուժերը փորձեր կատարեցին նեղ խմբակային շահերից վեր բարձրանալու եւ հայությանը համախմբելու գոյատեւման պայքարի դրոշի շուրջ: Բայց այդ փորձերը հաջողություն չունեցան: Թվենք դրանցից առավել նշանակալիցները: 1909թ. հոկտեմբերի 30-ին Կ. Պոլսում հայ բոլոր քաղաքական կուսակցությունները «Համերաշխության ժողով» գումարեցին եւ պարտավորվեցին թույլ չտալ միմյանց վրա անվանարկիչ և խիստ հարձակումներ[46]:

45 Le Crime de Silence de Genocide des Armeniens, Paris, 1984, pp. 44-45.
46 «Նիւթեր Հ.Յ Դաշնակցութեան պատմութեան համար», հ. Ա, Բեյրութ, էջ 180:

1910թ, ապրիլին ՀԾԴ, հնչակն ու վերակազմյալը որոշում ընդունեցին համատեղ վարել ինքնապաշտպանության գործը «անկախ իրենց քաղաքական և ընկերային համոզումների»[47]:

Երկու որոշումներն էլ չկատարվեցին, որովհետեւ ոչ թե բխում էին կուսակցությունների հավատամքից, այլ լայն հասարակության աչքում «ազգի միասնության ջատագով» երեւալու ձգտումից: Այդ էր պատճառը, որ որոշումներն ընդունվում էին մեծ շուքով, բայց դրանց կատարման մասին անմիջապես մոռանում էին: Հայ ջոջերն ու կուսակցությունները զբաղված էին «ավելի լուրջ» գործերով՝ եկեղեցիները հրապարակային հավաքույթների անցկացմանը տրամադրե՞լ թե ոչ, գործադուլներ կազմակերպելու թույլտվություններ ստանալ, Օրմանյանին հալածել եւ նման այլեւայլ հարցերով[48]:

Սակայն այդ ձախողումների գլխավոր պատճառը ՀԾ Դաշնակցությունն- իթիհադ «Համագործակցությունն» էր: Ա. Ալպոյաճյանի խոսքերով՝ իթիհադը իր «պոչին կապելե ետք դաշնակցութիւնը՝ հայ ամենեն ազդեցիկ կազմակերպութիւնը, այլեւ արհամարհեց հայերը...»[49]:

Դժբախտությունն այն էր, որ դաշնակ ղեկավարներն այդպես էլ չհասկացան այդ «մտերմության վիրավորական լինելն իրենց կուսակցության և վտանգավորությունը հայ ժողովրդի համար»: Միանգամայն իրավացի է Արտ. Դարբինյանը, երբ գրում է. «... ՀԾ Դաշնակցութեան ղեկավարները կը ջանային հավատացնել ուրիշներուն, թե իրենք էին, որ յաջողացրին հուլիսեան ժեոն-թիւրքական հեղափոխութիւնը և, իթիհատականներու ոյժին կոթնած՝ իրենց ձեռքն առին թիւրքահայ ազգային ու քաղաքական կեանքի ղեկը»[50]:

Իրավացի է, որովհետեւ ՀԾԴ արեւմտահայ կյանքում առաջին պլան դուրս եկավ կոթնած իթիհադի աջակցության շնորհիվ: Ռուս դիվանագետներից մեկը 1908թ. Փարիզից Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությանը գրում է, որ երիտթուրքերը «ինչ-որ չափով կապված են հայկական հեղափոխական ընկերությունների հետ և նրանց որոշակի խոստումներ են տվել»[51]:

Դրա փոխարեն դաշնակ ղեկավարները արեւմտահայերին համոզում էին, թե «ոչ մեկ ազգ՝ ավելի քան հայը, իր աշխարհագրական, ցեղագրական, պատմական պայմանների բերումով այնքան շահագրգռուած չէ սիրելու եւ պահպանելու օսմանեան միութիւնը»[52]:

Դեռ ավելին, Ադանայի ջարդերից հետո դաշնակցության եւ իթիհադի միջև կնքված համաձայնագրում հավանություն էր տրվում «ընդհանուր ձուլմանը եւ միաբան գործակցությանը»: Մ. Վարանդյանը դա նկատի ունենալով խոստովանեց. «Մենք մեղանչել ենք»: Իսկ Կ. Սասունին դառնությամբ նկատում է, որ «Թիւրքահայաստանի եւ ամբողջ Թիւրքիոյ մեջ հայութիւնը կը կծկվեր հնազանդութեան եւ ինքնապաշտպանութեան վարագոյրին ետեւ, սպասողական և անգեն»[53]:

Դա պատահական չէր, քանի որ դաշնակցությունը բացեիբաց հրաժարվեց Հայկական հարցից: Ակնունին դաշնակցության գերագույն նպատակը համարեց «օսմանյան սահմանադրութեան պաշտպանութիւնը... իթիհատի հետ» համագործակցելը: Մի ուրիշ գործիչ՝ Ա. Հալաճյանն ասում էր. «Մեր ազգային շահը կպահանջե իթիհատին ուժ տալ, ան ինչքան զորեղանայ, այնքան ավելի լավ: Ան եթե զորեղ եղած ըլլար, մինչև հիմայ քիւրդերը զսպուած կըլլային եւ մեր հողային հարցն ալ բավարար կերպով լուծուած»[54]:

Երիտթուրքական հեղաշրջման խաբկանքին չդիմացավ անգամ Ռոստոմը, որ հավատացնում էր, թե «Թուրքահայաստանի հայ ժողովուրդը 1909-ից ի վեր երբեք այնպես հանգիստ եւ ապահով կյանք չի ունեցել, ինչպես նոր ռեժիմի տակ»[55]:

1908-12թթ. իթիհադամետ կեցվածք ունեին ՀԾԴ գրեթե բոլոր ղեկավար գործիչները: Խորհրդարանական ընտրությունների նախօրյակին Խաժակը բացահայտ քարոզում էր հավատարիմ լինել երիտթուրքերին, որովհետև, ասում էր նա, «Թուրք պետությունն ուժեղացնելը, իթիհադին համագործակցելը» հայերին «շատ օգտակար է», քանի հզորանա իթիհադը, այնքան հեշտ կլինի զսպել քրդերին[56]:

47 «Նիւթեր ՀԾ Դաշնակցութեան պատմութեան համար», հ. Ա, Բեյրութ, էջ 181:
48 Զորմիսեան Լ. Կուսակցութիւնները, Բեյրութ, 1965, էջ 53:
49 Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Մալաթիոյ հայոց, Բեյրութ, 1961, էջ 918:
50 Դարբինեան Ա. Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ,1947, էջ 181:
51 "Красный архив", 1931, т. 44.
52 Ատոմ Մեր հավատամքը ազգային հարցի մասին, Կ. Պոլիս, 1910, էջ 52:
53 Սասունի Կ. Թիւրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին. 1914-18, Բեյրութ, 1966, էջ 30:
54 Սապահ Գիւլեան Ս. Պատասխանատուները, Փրովիտենս, 1916, էջ 293:
55 Տոնապետեան Գ. Հայաստանը եւ հայ ժողովուրդը դարերի միջով, հ. Բ, Փարիզ, 1949, էջ 359:
56 Գանգրունի Հ. Հայ յեղափոխութիւնը օսմանեան բռնատիրութեան դեմ. 1890-1910, Բեյրութ, էջ 340-341:

Բանը հասավ նրան, որ իթիհադին դեմ լինելը համարվեց գործել հօգուտ սուլթանի:

Դաշնակցական ջոջերը նաեւ հասկանում էին, որ իթիհադի բացահայտ հակահայկական քաղաքականության պայմաններում իթիհադամետ քարոզչությունը հղի է կուսակցության մեկուսացման վտանգով: Սակայն այն տարիներին նրանք ոչ միայն չկարողացան, այլեւ փորձ իսկ չարեցին երիտթուրքերից սահմանազատվելու, գոնե նրանց քաղաքականության բացահայտ հակահայկական հոսքի կողմերը քննադատելու: Ինչ այն ժամանակ չարեցին, ջանացին կատարել հետագայում՝ նաեւ մեր օրերում: Կ. Սասունին ճգնում էր ապացուցել, թե 1911թվից հետո «ոչ միայն գործակցութիւն մը գոյութիւն չուներ պետական կուսակցութիւններու միջև, այլ, ընդհակառակը, Բալկանյան պատերազմի բերումով Հայկական հարցի հետապնդումն ու հաջողութեան լուծումը թշնամական դարձուցած էին անոնց յարաբերութիւնները»[57]:

Բանն այն է, որ հեղաշրջումից հետո ակնհայտ դարձավ մի հակադիր գործընթաց՝ իթիհադականները գնալով կոչտացնում էին վերաբերմունքը դաշնակցության հանդեպ, իսկ վերջինս, ընդհակառակը, ավելի ու ավելի ցուցադրական էր դարձնում դաշնակ-իթիհադ «եղբայրությունը», իթիհադը մեկը մյուսի հետեւից նեղացնում էր ՀԾԴ գործունեության շրջանակները, հրաժարվում հայերին տված խոստումներից, իսկ դաշնակցությունը ձգտում էր ավելի ամուր բռնել իթիհադի արյունոտ ձեռքը, հրաժարվում իր նախկին պահանջներից: Բանը հասավ նրան, որ երիտթուրքերը սկսեցին իրենց կուսակցության անդամ հայերին ժողովների չկանչել: «Սալոնիկից պաշտոնական ցուցում տրվեց տեղական վարչութիւնները կազմել բացառապես իսլամներից, իսկ ոչ իսլամներին միայն համակիր անդամներու դրութեան մեջ պահել»[58]:

1912թ. Ակնունին, փառաբանելով երիտթուրքերին, գրում էր, որ նրանք հայերին մի շարք բարիքներ բերեցին՝ «Հայուն զինուորագրութիւնը», «բոլոր տարրերու համերաշխութեան նորաբաց հորիզոնը, մկրտուած թիւրք-հայկական հեղափոխութեան դաշինքով»[59]:

Սակայն իթիհադի հայամերժ կեցվածքն այնքան ակնհայտ ու վտանգավոր էր, որ անգամ Թալեաթի այդ «մերձավոր ընկերը» շտապով հարկադրված եղավ խոստովանել, որ «օսմանեան տարաբախտ երկիրը շարունակում է մնալ վաթանը մեկուսացման քաղաքականութեան, ազգայնական եւ կրոնական հարաճուն պառակտման...»[60], «...պետական միութեան գաղափարը ցնցվեց...նորից սկսվեց հին երգը՝ անապահովութիւն, արիւն, թալան, ատամներու կրճտոց, քեն ու ատելություն»[61]:

Զմյուռնիայի «Աշխատանքը» Օսմանյան կայսրությանն անվանեց «ոճիրների հայրենիք»[62]:

Ընդ որում, եթե Կ. Պոլսում իթիհադը «շատ սիրով, էր վարվում հայ գործիչների հետ, ապա գավառներու մեջ յարաբերութիւնները թշնամական» էին[63]:

ՀԾ Դաշնակցության գործիչները տեսնում էին իթիհադի գործելակերպի արատավորությունը, կռահում երիտթուրքական քաղաքականության վտանգավոր նպատակադրումները, բայց շարունակում էին կառչած մնալ նրանից: Նույնիսկ Լեփսիուսն էր զարմանում. «Անհնար է հավատալ, թե ինչպես սերտ էին հարաբերությունները հայ ակումբների և երիտասարդ թուրքերի միջև»[64]:

Դաշնակցականները տարօրինակ վարքագիծ դրսեւորեցին: Նրանք վերջնականապես համոզվելուց հետո էլ, որ երիտթուրքերը շարունակում էին սուլթան Աբդուլ Համիդի հակահայկական քաղաքականությունը, չնայած ինքնապաշտպանության կոչ էին անում, բայց պայմանով, որ «շարժումը չկորսնցնե իր հանրային, համապետական բնույթը» և ձգտում էին «կովին տալ անկուսակցական և արտազգային կերպարանք»[65]:

Տպավորությունն այնպիսին էր, որ դաշնակցությանը լրիվ բավարարում էր երիտթուրքական հեղաշրջումը, մանավանդ որ նրանք փաստորեն հստակ ծրագիր չունեին, թե հեղաշրջումից

57 Սասունի Կ. Պատմութիւն Տարոնի աշխարհի, էջ 767:
58 Սապահ Գիւլեան Ս. Փոքր Հայքի յիշատակները. մասն առաջին, Զիկագո, 1917, էջ 196:
59 «Ազատամարտ», 16. 06. 1912 :
60 Ն. տ., թիվ 106, 1912:
61 Ն. տ., 16. 06. 1912:
62 Ն. տ. 28. 08. 1912:
63 Հովակիմեան Հ. Պատմութիւն հայկական Պոնտոսի, Բեյրութ, 1967, էջ 179:
64 Լեփսիուս Թեո. Գաղտնի տեղեկագիր Հայաստանի ջարդերուն, Կ. Պոլիս, 1919, էջ 246:
65 Նիւթեր ՀԾ Դաշնակցութեան պատմութեան, հ. Ա, էջ 182-183:

հետո որ ուղղությամբ էին գնալու: Դրա համար էլ իրենց պատից պատ էին խփում, զանգվածների ուշադրության կենտրոնում մնալու համար՝ մերթ հեղափոխություն էին ծավալում Պարսկաստանում, մերթ մասնակցում Բալկանյան պատերազմին ռազմաճակատային գծի երկու կողմերում, նաեւ իթիհադին խոստանում տալու 40 000 կամավոր[66]:

Հայ շատ հարուստներ Բալկանյան պատերազմների ժամանակ Բ. Դոանը ֆինանսական մեծ օգնություն էին ցույց տալիս՝ հանուն Թուրքական զենքի հաղթանակի:

Սայիդ Ալիի եւ Շահաբեդինի ղեկավարած ապստամբությունը (1913-ի վերջերից մինչեւ 1914 մարտս), որը հրահրվել էր երիտթուրքերի կողմից հայկական բարենորոգումները ձախողելու նպատակով, լայն ծավալներ ընդունեց: Քրդերը գրավեցին Բիթլիսն ու Նահանգի զգալի մասը: Երիտթուրքերը Վռամյանին հանձնարարեցին բանակցելու քրդերի հետ: Այդ եւս միտումնավոր էր արված, Եվրոպային ասելու, թե գլխավորը ոչ թե թուրք-քրդական, այլ քուրդ-հայկական հակամարտությունն էր: Չի-հաղ հայտարարելուց հետո Բ. Դոուը Բաղեշի քրդական այդ ապստամբության մասնակիցներին, աշիրեթապետերին ու ցեղապետերին ներում շնորհեց: «Անհավատների» դեմ պատերազմին մասնակցելու համար Բըշարա Զաթոն պայման դրեց ռազմաճակատ մեկնելու ճանապարհին հայությանը ոչնչացնել՝ որպես հատուցում վերջինների կողմից իր հոր՝ Բըշարա Խալիլի սպանության: Խուքն այն Խալիլի մասին էր, որը նենգությամբ սպանեց Աղբյուր Սերոբին և ինքն էլ զոհ դարձավ Անդրանիկի հայդուկային խմբի իրականացրած ահաբեկչությանը: Թուրքական իշխանությունները համաձայնվեցին եւ քրդերին ազատ արձակեցին բնաջնջելու Ախլաթի, Աղջեւազի, Արճեշի հայությանը:

Երբ հայ կուսակցությունները համոզվեցին, որ իթիհադի կառավարությունից հայության համար բարենորոգումներ սպասելը ժամավաճառություն է, 1913թ. մի նոր հայտարարություն հրապարակեցին համատեղ գործելու վերաբերյալ՝ «այլեւս ոչ մեկ երկդիմութիւն, ոչ ալ քայքայիչ հոռետեսութիւն», բոլոր կուսակցությունները պետք է անվերապահ ծառայեն հայ ժողովրդին: Վերջապես առաջ քաշվեց նաեւ ինքնապաշտպանության անհրաժեշտության խնդիրը: «Հորիզոնը», 1913թ. իր N65-ում գրեց. «Մեր գործունեության ծանրության կենտրոնը պետք է լինի տաճկահայ ժողովրդի ինքնապաշտպանությունը»:

ՀԺ Դաշնակցության ութերորդ համագումարը (1914թ.) նույնպես անդրադարձավ այդ խնդրին եւ որոշեց «տեղական անվտանգության երաշխիքների համար» թաքուն զինել բնակչությանը: Նույն օրերին որոշվեց Արեւմտյան բյուրոն տեղափոխել Կ. Պոլսից: Այդ նկատի ուներ Կ. Սասունին, երբ գրում էր, թե պատերազմի նախօրյակին ՀԺԴ «համբերութեան և խոհեմութեան ճամբան բռնած էր», պատրաստ զոհելու ամեն ինչ հայութեան «ֆիզիկական գոյութիւնը պահպանելու համար, մինչեւ որ փոթորիկը» անցներ: Սակայն դաշնակները ճակատագրական խնդրի լուծման միանգամայն հակացուցված ուղի ընտրեցին՝ նրանք հայ բնակչությանը «հնազանդության և խոհեմության» կոչեցին: Նույն օրերին Ղալաթիայի կենտրոնական դպրոցում Գ. Ճեւահիրճյանի նախագահությամբ իր աշխատանքը սկսեց «Հայ ազգային միացյալ կոնգրեսը», որը գործում էր անլեգալ: Կոնգրեսը գտավ. «Բացարձակ անկեղծ ոգով հավատարիմ գտնվիլ թիւրքական գերիշխան կառավարութեանը, թուրքահայերը պետք է բոլորով սրտիվ օժանդակեն անոր յաջողութեան: Կատարել զինուորական պարտականութիւնը խղճմտորեն...»[67]:

Նման դիրքորոշումը, իհարկե, չէր կարող մղել ոչ դեպի ինքնապաշտպանություն, ոչ զենքի ու զինամթերքի ձեռքբերում և ոչ էլ մարտական ջոկատների կազմակերպման հարցերի լուծում: Դրա փոխարեն դաշնակցությունը նոր թափ հաղորդեց ներհամայնքային գզվռտոցին: Օսմանյան իշխանություններին հայ մյուս քաղաքական ուժերի դեմ լարելու համար միջոցների միջև խտրություն չէր դրվում՝ սադրանք, կեղծարարություն, վարկաբեկող-լրտեսական գործողություններ:

Հայերի բնաջնջման թուրքական քաղաքականությունը կազմված էր մի քանի բաղադրիչներից, որոնք գործողության մեջ էին դրվում ոչ միաժամանակ և ոչ էլ ամենուրեք: Այդ մասին առվա են ականատես օտարերկրացիների մեկից ավելի վկայություններ: Նրանցից Գ. Հիասեթն այդ բաղադրիչները ներկայացնում է հետեւյալ տեսքով. «Սկզբում ազդեցիկ անձանց եւ մտավորականության,

66 Головородько И. Старая и новая Турция, Москва,1908, стр. 185.

67 Թումաճեան Ս. Հայ յեղափոխութիւնը պատմական տեսակետե, Կ. Պոլիս, 1932, էջ 22:

իսկ ապա բոլոր հայերի ձերբակալություններ: Նախապես որոշված ուղերթով բռնագաղթվածների առաքում որոշված վայրերը: Ճանապարհին բռնագաղթվածներին 50-100-ական հոգանոց խմբերի բաժանում: Նշանակված վայրերում բռնագաղթվածներին թալանել եւ սրախողխող անելով նետել փոսերը: Կորանի վրա երդում տալ՝ ոչ ոքի ոչինչ չպատմել տեսածի ու լսածի մասին»[68]:

Իվ Թեռնոնը գրում է. «1915թ. հունվար-փետրվար ամիսներին, օսմանեան զորքերը նահանջում են դեպի արեւելյան վիլայեթները: Նրանք ուժասպառ են եղել տիֆից ու խոլերայից: Հայերին թուրքական բնակչությունն ու բանակը մատնանշում են որպես պարտության համար մեղավորներ»: Այն փաստը, որ ռուսական բանակի շարքերում հայ կամավորներ կային «հեշտությամբ օգտագործվում է պաշտոնական քարոզչության կողմից ողջ հայ բնակչությանը դավաճանության մեջ մեղադրելու նպատակով: Բանակի կարիքները հոգալու բռնագրավումների պատրվակով զորքը հայ առեւտրականներին ամբողջովին թալանում է եւ տիրոջ իրավունքով տեղավորվում հայերի տներում»: Բանակի մատակարարման հիմարկները, նկատի ունենալով, որ զինվորների ճնշող մեծամասնությունը երկրի ներսում էր, մեկ օրվա պաշարից ավելի չէին տրամադրում: Հայերը վախենում էին, որ ջարդերը կկրկնվեին: Կեղծ լուրերը բազմապատկվում էին, հայ զինվորներին մեղադրում էին դասալքության եւ լրտեսության, իսկ գյուղացիներին՝ ռուս զինվորներին սննդամթերք մատակարարելու մեջ: Փետրվարի սկզբին իշխանությունները զինաթափ արեցին հայ զինվորներին եւ ոստիկանությանը: «Նրանց... օգտագործում էին ճանապարհային շինարարության կամ բեռնակրի տաժանակիր աշխատանքներում: Քիչ անց պարզ դարձավ, որ այդ աշխատանքային գումարտակներից շատերը ոչնչացվել էին: Միեւնույն ժամանակ հայ պաշտոնյաներն աշխատանքից հեռացվեցին եւ վերացվեցին երկրի ներսում տեղափոխվելու համար հայերի անձնագրերը...»: Սակայն մինչեւ Սարիղամիշի պարտությունը ռազմաճակատում ստեղծված իրավիճակը հնարավորություն չէր տալիս գործելու համաձայնեցված պլանով:

Հայերը դասալիք էին լինում, թուրքերը զանգվածային կոտորածներ սկսում, բնակչությունը համակրում էր ռուսներին: Այդպես է եղել միշտ, երբ ռուսական բանակը մուտք է գործել կայսրության արեւելյան սահմանները: Սակայն փետրվարին ամեն ինչ երերաց: «Զանգվածային բնաջնջման գաղտնի մշակված պլանն սկսել էր գործել: Վալիներին և իթիհադի տեղական ղեկավարությանը բանավոր կամ հեռագրով տեղեկացրեցին նրանց վրա դրված պարտականությունների մասին: Մրագրի իրագործումը վստահվեց Հատուկ կազմակերպությանը, ոստիկանությանը եւ ավազակախմբերին՝ չեթեներին... Ստեղծվեց աքսորի կազմակերպման հանձնաժողով Միդհատ Շուքրիի՝ իթիհադի կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղարի գլխավորությամբ... Աքսորն, իրոք, մեծ նորամուծություն էր: Նախկինում հայերին ոչնչացնում էին տեղում: Կենդանի մնացածները ավերակներից վերաստեղծում էին իրենց օջախները, իսկ աքսորը խնդիր ուներ վերջնականապես լուծելու Հայկական հարցը: Իրենց բնակավայրերից արմատախիլ արված եւ վռնդված հայերը անհայտանալու էին աքսորի ճանապարհներին»: Պատերազմը հարմար պատրվակ էր ռազմաճակատային գոտիներից հեռացնելու կասկածելի բնակչությանը: Առողջ տղամարդկանց զինակոչում էին: Զինվորական գրաքննությունը ապահովում էր գործողությունների գաղտնիությունը եւ կասեցնում ամեն մի տեղեկատվություն:

Իհարկե, բնաջնջման ծրագիրն անհնար էր ներկայացնել ռազմական դատարան որպես ապացույց: «Հանցագործն իրեն ապահովել էր իր կատարած հանցագործության միջոցով: Նա ի վիճակի էր այն կոծկել նույնքան խնամքով, որքան ճարպկությամբ իրագործել էր: Ուրեմն ոչ ուղղակիորեն, այլ բազմաթիվ վկաների հայտնած տեղեկություններն ու զեկույցները վերլուծելով միայն կարելի է պնդել, որ սպանություններ կատարվել էին, ինչը թուրքական կառավարության պաշտոնական փաստաթղթերում նշվում էր որպես հայերի աքսոր... Կարելի է վստահ ասել, որ բավականաչափ ապացույցներ կան, որպեսզի երիտթուրքերի կառավարությունը համարվի հայերի բնաջնջումը նախաձեռնող միակ պատասխանատուն: Նա է ծրագիրը ի կատար ածել եւ դաժան եղանակներով այն իր ավարտին հասցրել»[69]:

68 Նազլեան Հ. Ցուշեր. Մերձավոր Արեւելքի 1914-18թթ. շրջանի կրոնական-քաղաքական դեպքերի մասին, էջ 58:

69 Տե՛ս, Le Crime de Silence de Genocide des Armeniens.

Թվում է, թե Իվ Թեռնոնը ևս ինչ-որ չափով տուրք է տալիս Թուրքական տեսակետին՝ չքմեղացվում է Թուրք ժողովուրդը, Թուրքական պետական մեքենան, միակ մեղավորը համարվում է իթիհադը: Մինչդեռ բնաջնջումը կատարվեց պետական կառույցների ղեկավարությամբ եւ անմիջական մասնակցությամբ: Ցեղասպանություն իրականացնելու բոլոր միջոցները ձեռնարկված էին պետական մարմինների միջոցով: Օրինակ, ջիհադ հայտարարելու համար միայն իթիհադի պարագլուխների կամքը բավարար չէր: Հայերի բնաջնջման կողմնակիցների թիվը Թուրք հասարակության ներսում մեծաթիվ էր, իսկ դեմերը միայն հատուկենտ անհատներ էին:

Ֆրանսիական "Le temps" կիսապաշտոնական լրագիրը նույնպես անդրադառնում է Մեծ եղեռնի կառուցվածքին. «...Իրենց հարստահարիչներին ընդդիմացող հայերը զոհ են դառնում սիստեմատիկ կազմակերպվող ջարդերին: Համաձայն գերմանացիների կողմից իթիհադին տրամադրված մի ծրագրի՝ հայերին ուզում են ցաքուցրիվ անել եւ անհետացնել: Այդ ծրագրով հայերը վռնդվում են իրենց երկրից, եւ Հայաստանը բնակեցվելու է Մինգաեւքի արաբներով եւ Ռումելիի մուհաջիրներով: Ջեռնարկի իսկական նպատակը Հայկական հարցի լուծումն է հայերին ջարդելու միջոցով: Ծրագիրը սկսեց գործադրվել անգամ այն ժամանակ, երբ դեռեւս հաստատված չէր կոմիտեի կողմից: Միջերկրականի ծովափնյա շրջանը հայ բնակչությունից դատարկված է, որին քշել են երկրի խորքերը՝ Դեր էլ Զորի անապատային շրջանները: Հազարի չափ մարդ տարվել է Եփրատ եւ գետի ափին բնաջնջվել: Բիթլիսի շրջանից 9 000 կնոջ ու երեխայի անանահոտի նման հասցնելով Տիգրիսի ափերը, նույն բախտին են արժանացրել: Ահա այսպես հայկական հռչակավոր բարեգործությունները գործադրվում են հայերի հավաքական ջարդերի միջոցով: Թուրքերը զանգվածային ջարդերով են պատասխանում դաշնակիցների (Անտանտի) հայտարարությանը... Հայաստանում, որտեղ էլ աչքդ շուռ տաս, կտեսնես հետեւողական բնաջնջման իրողություն... Թուրք-գերմանական դահիճների գործն առաջ է տարվում ամբողջ ահավորությամբ: Միայն երիտասարդները չեն ջարդվում, այլեւ ծերերը, կանայք, երեխաները: Սրանք Կարմիր սուլթանի սարսափներից շատ ավելի են»[70]:

Բավարարվենք այս երեք վկայություններով, քանի որ հաջորդ գլուխներում խնդիրը կքննարկվի մանրամասն ու բազմակողմանի: Այժմ ընթերցողին ներկայացնենք երիտթուրք երկու պարագլուխների խոստովանություններն ու հայկական ջարդերի մեկնաբանությունները: Բռնագաղթի ու կոտորածների իրողությունը չեն կարողանում ժխտել անգամ դրանց հեղինակները: Թալեաթը համառորեն հերքելով հայերի բնաջնջման նախապես ծրագրված լինելը, չի կարողանում ժխտել ոչնչացման գործողությունների բուն փաստը: Նա գրում է. «Հայերը տեղահանվեցին արեւելյան նահանգներից, բայց ոչ բնաջնջման մշակված ծրագրի հիման վրա: Հայերի ճակատագրի պատասխանատվությունն ընկնում է իրենց՝ հայերի վրա, չնայած ճիշտ է, որ տեղահանությունն ամեն տեղ չէ, որ օրինավոր միջոցներով կատարվեց և շատ անմեղ մարդիկ տառապեցին... Ես այս խոստովանում եմ: Խոստովանում եմ նաեւ, որ կառավարության պարտականությունն էր արգելելու թշնամությունները ու գազանությունները, համենայն դեպս, առնվազն հետապնդելու և խստորեն պատժելու դրանց գործադրողներին»[71]:

Իրողություն էին հանցագործ վարքագծին հատուկ մոտեցումները՝ Թալեաթը հայոց ջարդերի համար մեղադրում էր Թուրք ժողովրդին, իսկ Թուրքական քաղաքական մյուս ուժերը՝ երիտթուրքերին եւ անձամբ իրեն՝ Թալեաթին: Նա ասում էր՝ ովքեր մասնակցել են կոտորածներին, սովորական ոճրագործներ են կամ էլ տգետ, նախանձախնդիր, «կեղծ Թուրքեր, ովքեր գտնում էին, որ հայերը պետք է պատժվեն եւ, որ կոտորելով հայերին, գործում են ի շահ Թուրքիայի»: Թալեաթի կարծիքով՝ ավելի հեշտ էր գործ ունենալ առաջինների, քան երկրորդների հետ, որովհետեւ վերջիններն ավելի հզոր, բազմաքանակ էին, նրանց դեմ ցանկացած պատժողական միջոցառում մեծ դժգոհություններ էր ծնելու զանգվածների շրջանում, որոնք «ճիշտ էին համարում նրանց արաքները»[72]:

«Պատերազմի ժամանակ,- եզրափակում է Թալեաթը,- կանխարգելիչ միջոցառումներ իրականացվում են ցանկացած երկրում, բայց, եթե մյուս երկրներում կատարված ցավալի իրադարձությունների կողքից լռությամբ անցան, մեր արարքների արձագանքը լսվեց ամբողջ աշխարհում, որովհետեւ բոլորը մեր վրա աչք ունեին»[73]:

70 «Հնչակ», 1915, օգոստոս:
71 Ն.տ., 1988, ապրիլ-մայիս:
72 «Հասկ», 1988, ապրիլ-մայիս:

Ջեմալ փաշան «ողբալով» Թուրքերի ու հայերի ավանդական համերաշխության ոչնչացումը եւ «օտարների միջամտության հետեւանքով» հայերի կործանումը, կամա թե ակամա հաստատում է հայերի ջարդերի իրողությունը: Նա պարծենում է, թե իրեն հաջողվեց «150 000-ի չափ կանանց ու երեխաների փրկել, որոնցից կազմված էին տեղահանության քարավանները»[74]:

Ջեմալը գրում է, որ տեղահանության որոշումն ընդունվել է առանց իրեն եւ ինքն ամեն ինչ արել է, որպեսզի իր իրավասության տակ գտնվող տարածքներում այնպիսի «վայրագություններ չկատարվեին, ինչպիսիք արձանագրված են», օրինակ, Խարբերդի ու Դիարբեքիրի շրջաններում: Նա ավելացնում է. «Ոճիրները, որոնք գործադրվեցին 1915-ի տարագրության ժամանակ, արդարացիորեն առաջացրին մարդկության խորը նողկանքը»[75]:

«Դժբախտաբար Հայկական հարցում կառավարության՝ կողմնորոշումը,- շարունակում է նա,- դուռ է բացել Թուրք բնակչության կողմից ոճիրների գործադրման համար...»: Նա անուղղակի ընդունում է, որ երիտթուրքերը Հայկական հարցը լուծում էին հայերի ջարդերի միջոցով ու հարցնում է , թե «արդյո՞ք Հայկական հարցի մի այլ լուծում գոյություն չուներ»[76]:

Պատերազմի ավարտին իշխանության եկած ուժերը Թուրք ժողովրդին անմեղսունակ դարձնելու համար, համաձայնվում են, որ հայերը, իրոք, ոտքի էին ելել օսմանյան կառավարության դեմ, եւ տեղահանությունները արդարացված էին, եթե նկատի առնվի պատերազմական իրավիճակը, բայց որեւէ արդարացում չունի «թալանի ու բնաջնջման» քաղաքականությունը, որն իրականացրեցին իթիհադի պարագլուխները եւ որը դասվում է «մարդկության պատմության մեծագույն ոճրագործությունների շարքին»: Ուստի արդարությունը պահանջում է, որ Թուրք ժողովուրդը չպատժվի «ոչ բանական կառավարության» «ոճրագործ մոլորությունների» համար, ինչը մահմեդականներին նույնքան վնաս պատճառեց, որքան հայերին:

73 «Հասկ», 1988, ապրիլ-մայիս:
74 Ջեմալ փաշա Հայկական հարց, Երեւան, 1927, էջ 52:
75 Ն. տ., էջ 51, 53:
76 Ն. տ., էջ 53:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՑՈՒԹԵՐՈՐԴ

ԲՌՆԱԳԱՂԹ

1915 թվին հայերի բնաջնջման գլխավոր եղանակը տեղահանությունն էր, բռնագաղթը, դեպորտացիան: Բռնագաղթի առաջին երեւույթների հանդիպում ենք դեռ 1914թվին, բայց 1915թ. այն դարձավ համընդհանուր, ամբողջական, սկսվելով մարտ ամսից եւ շարունակվելով մինչև տարվա վերջը, չնայած արեւմտահայերի հիմնական մասի տեղահանությունն ավարտվեց օգոստոսին: Բռնագաղթի մասին թուրքական պետական մարմիններն ընդունել են մի շարք օրենքներ, արձակել հրամաններ, հրահանգներ: Սակայն այն սկսվեց, երբ այդ փաստաթղթերից ոչ մեկը դեռեւս ընդունված չէր, համենայն դեպս տեղերն ուղարկված չէր: Թալեաթը մայիսի 13-ին մեծ վեզիրին պաշտոնական գրություն ուղարկեց, որն այլ բան չէր, եթե ոչ կառավարության որոշումով բռնագաղթին օրինականության շապիկ հագցնել: Որոշ հեղինակների կարծիքով այս զեկուցագրի նախագիծը քննարկվել ու հաստատվել էր Իթիհադի կենտրոնի փետրվարի կեսերի հանրահայտ նիստում: Այն վարչապետին ներկայացվեց «ի գիտություն» վերտառությամբ: Սակայն դժվար է հավատալ, որ փետրվարի կեսերին ընդունված փաստաթուղթը կառավարությանը ներկայացվեր երեք ամիս անց: Կամ վարչապետին հանձնվածը կազմվել էր ավելի ուշ խնդրին առնչվող ծածկագրերի ու հեռագրերի հիման վրա, որոնց թիվն անցնում էր 280-ից, և կամ այն ուշ էր հրապարակման տրվել: Վարչապետին Թալեաթի ներկայացրած փաստաթուղթը ներկայացնում ենք չնչին կրճատումներով, որովհետեւ, չնայած ողբերգության գույները մեղմացնելու ճիգերին, այն հստակ պատկերացում է տալիս օսմանյան կառավարության դիտավորությունների մասին:

«Օսմանյան տարածքային ամբողջականության եւ պետական բարձր սուվերենության դեմ հարձակողական նպատակներ ունեցող եւ կործանարար ցանկություններով տարրերը՝ մասնավորապես պետության հպատակներին տարանջատելու, նրանց միջև խռովություն գցելու և մեզ հայտնի պետությունները խաբելով ու քսությունները մի շարք անձանցից խոստումներ ստանալով, սպառնալով եւ զանազան այլ միջոցներով հայ հասարակության մեջ տեւական են դարձրել անջատողական միտումները: Հայերը խոչընդոտում են պետության ջանքերը եւ հարձակումներ են գործում երբեմն իրենց գործողություններին տալով զինված ապստամբության տեսք: Քննադատում են անվտանգության և խաղաղության պահպանման ուղղությամբ պետության կատարածն ու բարենորոգումները, չնայած տեսնում են դրանց կենսագործման ուղղությամբ ջանքերը, շարունակում են ստեր տարածել արտաքին աշխարհում, մինչդեռ բարենորոգումները զուտ ներքին խնդիր են: Հարկ չկա, որ տեղական բարենորոգումների ջանքերը գործադրվեն օտարների գործակցությամբ, դառնան պետությունների բանակցությունների առարկա, նաեւ՝ որ վարչական հատուկ կարգադրություններով, օտար հսկողության և ազդեցության ներքո տեղական առանձնաշնորհումներ մտցվեն: Օտարների թելադրանքով կայսրությունում մտցված բոլոր բարենորոգումներն ու վերափոխումները հանգում են օսմանյան հայրենիքի բաժանմանն ու անդամահատմանը, որ հաստատվում է անցյալի բազմաթիվ փորձություններով ու ցավալի օրինակներով: Անկախությունը եւ օսմանյան երկրի ամբողջականությունը տեւական դարձնելու հանգամանքը և, մյուս կողմից, օտարի թելադրանքով նշված գործերի կատարումը միշտ էլ տեղի ունեցել են և անհանգստացրել մեր պետությանը: Պետության կենսական նշանակության ջանքերի շարքում այս մտահոգությունը կարեւոր տեղ ունի... Վերջերս պատերազմական շրջաններին կից վայրերում հայ բնակչության մի մասը, երբ կայսերական բանակը զբաղված է օսմանյան սահմանները թշնամի պետություններից պաշտպանելով, դժվարացրել է բանակի տեղաշարժերն ու նրա կարիքների համար սնունդ ու ռազմամթերք տեղափոխելու գործը: Հայության այդ մասը իր ջանքերն ու նպատակադրումները միավորել է թշնամու հետ... և երկրի ներսում հարձակումներ է գործել զինվորական ուժերի ու մահմեդական ազգաբնակչության վրա, կատարելով ջարդ, ավարառություն ու թալան: Նա թշնամու ծովային ուժերի համար մթերքներ է հայթայթել, հանդգնություն է ունեցել նրան ցույց տալու մեր պաշտպանական ամրությունների տեղերը:

Մեր բանակի շարժումներն անխափան դարձնելու համար որոշել ենք նման խռովարար տարրերին ռազմական շրջաններից ու նաև այն գյուղերից հեռացնել, որոնցում խռովություններ կան և կամ դարձել են ապաստարան այդ տարրերի համար:

Կենտրոնական կառավարությունը, խորհրդակցելով տեղական պաշտոնյաների հետ, զինվորական հրամանատարության միջոցով այդ գործն սկսել է Վանի, Բիթլիսի և Էրզրումի նահանգներում:

(Նշում է, ու կառավարությունը անհրաժեշտ է համարում տարագրել Բիթլիսի, Էրզրումի, Վանի, Ադանայի, Մարաշի, Հալեպի, Անկարայի,Դիարբեքիրի, Մամուրեթ ուլ Ազիզի, Տրապիզոնի, Սրվազի, Ջանիկի, Կայսերի, Խուտավենտիկյարի, Կարասի, Նիյդեի,Կարահիսար Սաֆիքի, Կոնիայի և Իզմիդի հայերին): Բացի Ադանա, Սիս և Մերսին քաղաքներից, հայերին տարագրելու էին նաև Ադանայի, Մերսինի, Կոզանի (Հաճընի), Ջեբելբերեկետ սանջակներից, բացառությամբ Մարաշի սանջակի Մարաշ քաղաքի՝ Հալեպի նահանգի կենտրոնական կազայի: Հայերը տարագրվելու էին նաև Իսկենդերունից, Բեյլանից, Ջիզրը Շուղուրից և Անթալիայից...

«Դեպի հարավային նահանգներ տարագրության գործն արդեն սկսված է»:

Վանի նահանգից հյուսիս ընկած շրջանների հայերը պետք է բացառապես տարագրվեն Ուրֆայի սանջակի հարավ, Հալեպի նահանգի հարավ-արևելյան և Սիրիայի վիլայեթի արևելյան շրջանները, նրանց տեւափոխելով ու զետեղելով կառավարության որոշած վայրերում: Այդ գործողությունները արդեն սկսվել ու շարունակվում են: Որոշումն ընդունված է հանուն երկրի բարձրագույն շահերի: Եվ այդ տեղափոխության նույնակերպ ձևի և կանոնի ենթարկվելու անհրաժեշտությունից ելնելով, որոշված է տարագրության ենթակա բնակչությանը տեղահանել և փոխադրել նրանց համար որոշված վայրերը: Հոգ է տարված, որ անցնելիք ճանապարհներին, մինչեւ որոշված վայրեր հասնելն ու տեղավորվելը, տարագրվածների կյանքի և ունեցվածքի անվտանգության ու հանգստության ապահովման համար, մուհաջիրների վարչությունից նրանց սննդամթերք կհատկացվի:

Կարիքավորներին համապատասխան տնտեսական և նյութական օգնություն ցույց տալու համար կառավարությունը բնակարաններ կկառուցի եւ երկրագործներին սերմացու, կարիք ունեցող արհեստավորներին՝ գործիքներ կբաշխվի, քաղաքներում լքած սեփականությունն ու կալվածքները կամ նրանց արժեքները նպատակահարմար ձեւով կվերադարձվեն: Հայերից դատարկված գյուղերում մուհաջիրներ եւ աշիրեթներ են տեղավորվելու և հայերի սեփականությունը (տներ, հողեր) գինը որոշելուց հետո, մուհաջիրներին է հանձնվելու: Ավաններում ու քաղաքներում հայերի թողած ունեցվածքը կարձանագրվի, կգնահատվի ու կբաշխվի մուհաջիրներին, իսկ վերջինների կողմից չօգտագործվածները, ինչպես՝ ձիթանոցները, թթանոցները, այգիները, նարնջի պարտեզները, խանութները, իջեւանատները , գործարանները, մթերանոցները եւ նման այլ սեփականություններ վաճառվելու են աճուրդով կամ վարձով են տրվելու: Գոյացած գումարները սեփականատերերի անունով մուծվելու են պետական դրամանոցները՝ հետագայում տերերին հանձնելու համար: Նպատակահարմար համարվեց ծախսերը կատարել մուհաջիրներին հատկացված գումարներից...

Այս գործողությունները կատարելու համար արդեն պատրաստված է հատուկ կանոնադրություն և դրա պահանջներին համապատասխան լքյալ գույքերը ապահովաբար հավաքվելու և պահեստավորվելու են: Ընդհանուր առմամբ, համաձայն կանոնադրության՝ այդ գույքերի պահեստավորման գործն արագացնելու և կանոնավորելու, դրանք վերահսկողության տակ պահելու համար տեղերում գործելու, կողմնորոշվելու են նախարարությունից ստացված հրահանգներով, նաեւ ստեղծված են առանձին հանձնախմբեր...»[1]:

Մայիսի 14-ին (27-ին) հրապարակված «Տեղահանության մասին» օրենքը տեղահանությունների ու ջարդերի գլխավոր փաստաթուղթն է: Կասկածից վեր է, որ այդ օրենքն ընդունվել ու գործողության մեջ էր դրվել ավելի վաղ և թաքուն էր պահվել մինչեւ հայկական կոտորածների վերաբերյալ Անտանտի պետությունների հայտարարությունը: Ահա այն.

«Ցոդ. Ա. -Երբ ժողովուրդին կողմե որևէ կերպով կառավարութեան հրամաններուն և երկրի պաշտպանութեան, արդարութեան պահպանման վերաբերեալ միջոցներու դեմ անսաստում զենքով դիմադրութիւն տեսնուի, բանակի և զորաբաժիններուն հրամանատարներն ու անոնց փոխանորդները, անկախ կեդրոններու հրամանատարներն անմիջապես զինուորական ոյժով և խիստ կերպով պատժելու և դիմադրութիւնը հիմնովին բնաջնջելու արտոնուած եւ պարտաւոր են:

1 Ղազարեան Հ. Ցեղասպան Թիւրք, էջ 224-225:

Ցոդ. Բ. Զորաբանակներու և անկախ կեդրոններու հրամանատարները՝ զինուորական պետքին համաձայն լրտեսութիւն և դավաճանութիւն զգացուած գիւղերու և գիւղախմբերու ժողովուրդը կրնան անհատապես կամ ամբողջութեանբ ուրիշ վայրեր տարագրել և բնակեցնել:

Ցոդ. Գ. -Սույն օրենքը հրատարակութեան թուականեն սկսեալ գործադրելի է»[2]:

Օրենքն ունեցել է ութ հոդված, որոնցից 3-7-րդը նույնպես վերաբերվել են հայերին, բայց երբեք չեն հրապարակվել: 8-րդը հրապարակվել է որպես 3-րդ հոդված, մինչդեռ իրականում 3-րդ հոդվածը պահանջում է. «Տարագրվածների տները հանձնել թուրք սպաներին»: Համաձայն 4-րդ հոդվածի այդ տների մի մասը հանձնվելու էր վիրավոր կամ զոհված զինվորականների ընտանիքներին, իսկ 5-7-րդ հոդվածները որոշում են մուհաջիրների բաժինը պետական այդ ավազակությունից:

1915թ. օգոստոսի 11-ին օրենքը լրացվեց մի կետով, որը սահմանում է. «Նահատակված, գերի ընկած, վիրավոր կամ հիվանդությունից մեռած թուրքերի ընտանիքներին նույնպես ձրի հատկացնել հայերի լքյալ սեփականությունը բնակության համար»[3]:

Այն գրված է շրջաբերականի ձեւով մանուշակագույն թանաքով՝ ձեռագիր՝ «խիստ գաղտնի» մակագրությունով:

Դժվար է XX դարում գտնել «Տեղահանության մասին» երիտթուրքական օրենքի նման անօրեն, մարդակեր փաստաթուղթ: Այն զորքերի հրամանատարներին իրավունք էր տալիս առանց դատ ու դատաստանի, սեփական հայեցողությամբ ու քմահաճույքով բռնագաղթեցնել մարդկային զանգվածների: Երիտթուրքերի կենտրոնը դրանով չբավարարվեց: Հրապարակ նետվեց էնվերի հրամանը. «Ներկայիս իրավիճակը պահանջում է հայ ժողովրդի ամբողջական բնաջնջում, որի մասին հրատարակված է սուլթանական իրադե:

Հայերի հանդեպ պետք է կիրառել հետևյալը.

«1. Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայկական ծագում ունեցողներին կամ հայկական անուն կրողներին, բացառությամբ մինչեւ վեց տարեկան երեխաները, քաղաքներից հանել ու կոտորել:

2.Կայսրական բանակում ծառայող բոլոր հայ զինվորներին հեռացնել իրենց զինվորական մասերից և ժողովրդից թաքուն գնդակահարել:

3. Բանակում ծառայող հայ սպաներին բանտարկել... մինչև նոր հրամանի ստանալը:

Բոլոր այս երեք կետերի գործադրումը սկսել հրամանը ստանալուց 48 ժամ անց»[4]:

«Atletic Monthly» պարբերականը 1916թ. նոյեմբերին գրեց, որ 1915թ վաղ գարնանը երիտթուրքերը շրջաբերական ուղարկեցին Թուրքիայի ներքին շրջանները, որում ասվում էր. «Հայերն օգտվելով ռազմից ցանկանում են միանալ մեր երկրի մահացու թշնամի՝ Ռուսաստանի հետ, որը պատերազմում է մեր պետության դեմ:

Հանձնարարվում է՝

1. Բոլոր հայերը, բացառությամբ հիվանդների, հինգ օրվա ընթացքում պետք է թողնեն իրենց գյուղերը ժանդարմական պահակախմբերի ուղեկցությամբ:

2. Նրանք կարող են իրենց հետ տանել շարժական ունեցվածքը, բայց դրանք վաճառելու իրավունք չունեն:

3. Անողոք կպատժվի նա, ով կփորձի անհանգստացնել հայերին տեղափոխության ընթացքում:

4. Հայերը պարտավոր են հնազանդվել կառավարության որոշմանը: Եթե որեւէ մեկը զենքով դիմադրության ցույց տա զինվորներին կամ ժանդարմներին, զենք կօգտագործվի, նա կձերբակալվի և կհանձնվի ռազմական դատարանին»:

Հավանաբար այս օրենքը տարածվել էր մի քանի տարբերակներով:

Ամերիկուհի Էլինոր Ֆրանկլին Իկլնը կարողացավ Թուրքիայի գրաքննության ճանկերից հանել եւ Ֆիլադելֆիայի "Saturday evening post" թերթի 1916թ. փետրվարի 5-ի համարում տպել մի հայտարարություն, որի մեջ զետեղված է տարագրության մասին օրենքի տարբերակներից մեկը: Այն ունի ոչ թե չորս, այլ հինգ հոդված: Բայց գլխավորը դա չէ, այլ այն, որ այս

2 Ռիֆաթ. Մ. նշվ. աշխ., էջ 119-120:

3 Ն. տ.:

4 "Кавказское слово", 18.03.1919.

տարբերակում առաջին անգամ բռնագաղթը ներկայացվում է որպես հայերի անվտանգության ապահովմանը միտված միջոցառում, խոստումով՝ պատերազմից հետո ապահովել նրանց վերադարձը իրենց բնակավայրերը: Բացարձակ կեղծիք է, բայց թուրքական քարոզչության կողմից օգտագործվում է մինչ օրս: Ահա այդ տարբերակը. «Մեր հայրենակիցները, հայերը, որոնք Օսմանեան կայսրութեան ժողովուրդներեն մեկը կը կազմեն, անցեալ շատ մի տարիներու ընթացքին, օտար միջամտութեանց որպես արդիւնք, հանրային կարգը խանգարելու բնույթ ունեցող մի շարք գաղափարներ յարուցեցին, և որովհետև անոնք յառաջ բերին արյունալի պատահարներ եւ փորձեցին խանգարել Օսմանեան կայսրութեան խաղաղութիւնն ու ապահովութիւնը, և իրենցիններուն ապահովութիւնն ու շահերը, նաեւ իրենց հայրենակիցներուն, և ավելին՝ համարձակուելով միանալ իրենց գոյութեան իսկ թշնամիին և այն թշնամիներուն, որոնք հիմա պատերազմի մեջ են մեզի դեմ՝ մեր կառավարութիւնը ստիպեուեցաւ անբնական միջոցառումներ և զոհողություններ ձեռք առնել՝ թե երկրին կարգ ու կանոնին եւ ապահովութեան պահպանումին եւ թե հայ համայնքին գոյատեւումին եւ բարօրութեան համար: Ուստի, որպես միջոցառում, որ պիտի զորու ըլլայ մինչեւ պատերազմի վախճանը՝ հայերը պիտի ղրկուին այն վայրերը, որոնք ներքին գավառներու մեջ պատրաստուած են: Արդ բոլոր օսմանցիներեն կը պահանջուի բացարձակ հնազանդութիւն հետեւյալ հրահանգներուն.

Առաջին.-Բոլոր հայերը, բացի հիվանդներեն, այս յայտարարութեան հրապարակումեն հինգ օր ետք պետք է մեկնին, գյուղ առ գյուղ կամ թաղամաս առ թաղամաս, ոստիկան զինուորներու հսկողութեան տակ:

Երկրորդ.-Թեպետև իրենց մեկնումին ատեն ազատ են իրենց շարժուն ինչքեն տանելու այն ինչ-որ կը փափագին՝ անոնց, սակայն, արգելուած է ծախել իրենց հողերը և այլ առարկաները, կամ անոնք հոս ու հոն ուրիշներու մոտ ձգել, որովհետև աքսորը ժամանակավոր է, և անոնց հողային ստացվածքը եւ ապրանքները, զորս պիտի չկարենան տանիլ՝ պիտի պահպանուին պետութեան հսկողութեան ներքոյ եւ ամբարուին փակ ու պաշտպանուած վայրերու մեջ: Ով որ փորձէ ծախել կամ այս հրահանգին հակառակ կարգադրութիւն մը ընե՝ պատերազմական ատեան պիտի հանձնուի: Անոնք ազատ են պետութեանը ծախելու միմիայն այն առարկաները, որոնց կրնայ բանակը պետք ունենալ:

Երրորդ.-(Պարունակում է հայերի կյանքի անվտանգության խոստումներ):

Չորրորդ.- (Սպառնալիքներ ճանապարհին տեղահանվածներին դժվարություններ հարուցողներին):

Հինգերորդ.-Քանի որ հայերը ստիպուած են կառավարութեան այս հրահանգին ենթարկուիլ, եթե անոնցմե ոմանք փորձեն զինվորներու եւ ոստիկան զինվորներու դեմ զենք բարձրացնել՝ պիտի անոնց դեմ զենք գործածուի և անոնք ձեռք անցուին ողջ կամ մեռած: Նույնպես անոնք, որոնք, կառավարութեան որոշումին հակառակ, մեկնելե փախուստ կուտան կամ կը պահուին, եթե այդպիսիները պատսպարին, կամ անոնց օգնութիւն և սնունդ տրուի, այն անձերը, որոնք այս ձևով կը պատսպարին, կամ կօգնեն անոնց՝ պիտի գնդակահարուելու համար պատերազմական ատեանի կողմե դատուին»[5]:

Թուրք պատմաբանները, մասնավորապես վերջին տարիներին, հաճախ են գրում, թե բռնագաղթի վերաբերյալ գրավոր որոշում չի եղել: Ռ. Գյուրունը իր «Հայկական թղթապանակ»-ում զետեղել է Բ. Դռան կազմած հետեւյալ փաստաթուղթը. «Արեւելյան վիլայեթներից, Զեյթունից և մյուս վայրերից հայերին Դիարբեքիրի վիլայեթի հարավ, Եփրատի հովիտ, Ուրֆայի և Սուլեյմանիեի հարավ աքսորելու մասին որոշումն ընդունվել է բանավոր»[6]:

Նույն կարծիքին է նաև Թ. Աքչամը: Նա գրում է. «... Այնպիսի կարեւոր որոշում, ինչպիսին է մի ամբողջ ժողովրդի գաղթը, ընդունվել է բանավոր եւ գործադրվել է շատ ավելի վաղ, քան կկազմվեր գրավոր փաստաթուղթ... նույնիսկ բռնագաղթի վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո էլ թուրքական կառավարությունն իր դեսպաններին տված հրահանգներում շարունակում էր համառորեն պնդել, թե բռնագաղթի մասին լուրերը ամբողջությամբ զրպարտություն էին»[7]:

Չնայած նման քննադատական դիրքորոշման, բռնագաղթի վերաբերյալ պաշտոնական փաստաթղթի գոյության ժխտումը նույնպես խնդիր ուներ պատասխանատվությունը հեռացնելու թուրքական պետականությունից: Այն նաև նպատակ էր հետապնդում եղեռնական իրադարձությունները պայմանավորել ոչ այնքան թուրքերի, որքան հայերի վարքագծով:

5 Բրայս Ջ., նշվ. աշխ., էջ 659-660:

6 Gurun K. Ermeni dosyesi, Ankara, 1988, s. 277.

7 Акчам Т., նշվ. աշխ., стр. 103.

Հասարակական կարծիքը թյուրիմացության մեջ գցելու գործում եւս թուրքերին օգնում էին գերմանացիները: Թուրքիայում կայզրի անձնական ներկայացուցիչը գրում է. «Կյանքիս մեծագույն մասն ապրել եմ Թուրքիայում և ճանաչում եմ հայերին: Նաև գիտեմ, որ հայերն ու թուրքերը նույն երկրում ապրել չեն կարող...հետեւաբար այդ ցեղերից մեկն անհետանալու է... Թուրքերին, ովքեր հայերին վերացնելու վրա են, չեմ մեղադրում... Հայերը ձգտում են անդամահատել Թուրքիան: Այս պատերազմում նրանք թուրքերի ու գերմանացիների դեմ են: Հետեւաբար զուրկ են գոյության իրավունքից»[8]:

Գերմանական "Norddeutsche Allgemein Zeiting"-ը 29.09.1917-ին անդրադարձավ ԻԹիհադի համագումարում Թալեաթի եզրափակիչ ելույթին: Թալեաթն ասել է, որ եթե Թուրքիան պատերազմի մեջ չմտներ, «Եվրոպան ի վիճակի չէր լինի» դիմադրել չորս ամիս: Նա Թուրքիայի այդ քայլն անվանում է «խաղաղ նախաձեռնություն, որը նպատակ ուներ տանջվող մարդկությանը զերծ պահել ավելորդ արյունահեղությունից»: Պատերազմին Թուրքիայի չմասնակցելը «կնշանակեր ի սկզբանե ինքն իրեն դատապարտել անփառունակ մահվան... Հայերը որպես տարր, հարյուրամյակներ շարունակ ապրելով կայսրական կառավարության հովանու տակ,- շարունակում է Թալեաթը,- օգտվում են նրա հոգատարությունից... մինչեւ այն պահը, քանի դեռ չէին հավատացել դրսից եկող փսփսոցներին... Ռուսները, որպեսզի հասնեն իրենց նպատակներին, օգտագործում են քրիստոնեական տարրերին, նրանց սադրում ապստամբելու: XX դարի կեսերին նրանք սկսեցին քարոզչություն տանել հայերի շրջանում (և գտան երազներով տարված մի քանի հայերի, ովքեր նրանց որպես զենք ծառայեցին ապստամբության եւ անկարգությունների համար):1877-ին, երբ ռուսները մտան Սան Ստեֆանո, հայ պատրիարքը դիմեց Մեծ իշխան Նիկոլային և նրան խնդրագիր ներկայացրեց գործելու հօգուտ հայերի անկախության: Դրան հաջորդած իրարանցումը ազդեցություն ունեցավ Բեռլինի դաշնագրի մեջ 61-րդ հոդվածը մտցնելու գործում: Կոմիտեականները դրանից հետո մինչև այժմ մնում են գերի իրենց երեւակայությանը՝ 61-րդ հոդվածն ընկալեցին որպես խորհրդանիշ: Նրանք բարձրացրեցին ապստամբության դրոշը, որպեսզի թյուրիմացության մեջ գցեն ազգաբնակչությանը եւ արտասահմանում իրենց վրա բեւեռեին համընդհանուր ուշադրություն: Ժամանակ առ ժամանակ բռնկված ապստամբությունների հետեւանքով նրանք բազմապատկեցին կառավարության դժվարությունները և դժբախտություն բերեցին իրենց հայրենակիցներին»:

Երբ սկսվեց աշխարհամարտը, հայերը բռնեցին «դավաճան գործողությունների ուղին»: «...Հենց որ ռուսներն անցան սահմանը եւ գրավեցին մեր որոշ տարածքներ, նրանք կորցրեցին հանգիստն ու հավատարմությունը եւ անցան հեղափոխության կողմը: Պատերազմի երրորդ ամսին Վանի պատգամավոր Հարյանը այդ վիլայեթի վալուն հանձնեց հուշագիր, որում շարադրված էին հայերի պահանջները... դրան հաջորդեց դասալքությունը բանակ զորակոչված հայ զինվորների կողմից զենքի հետ միասին և լեռներում հարձակվեցին ժանդարմների եւ մահմեդական բնակչության վրա...Հետագա 1,5 ամիսներին կառավարությունը սպասողական վիճակում էր: Եվ միայն այն բանից հետո, երբ բանակի զորամասերի աչքի առաջ բռնկվեց ապստամբություն Վանում, և երբ բանակի թիկունքում սկսվեց ապստամբությունը նաեւ Զեյթունում, տեղերում խուզարկություն կատարվեց... Գտանք զենքեր, ռումբեր, պայթուցիկ նյութեր Դիարբեքիրում, Ուրֆայում, Կայսերիում, Մեզիքենում, Ջեմիթում, Ադաբազարում, Բաջեդինիում, Ամասիայում, Սրվազում, Տրապիզոնում, Սամսունում, Արաբկիրում, Մալաթիայում, Դորթյոլում, Հաճընում, Բրուսայում, Էրզրումում, Երզնկայում և ուրիշ տեղերում: Այդ զենքերն ու զինամթերքը հիմնականում հայտնաբերվեցին վանքերում և եկեղեցիներում: Ակնհայտ դարձավ, որ բանակը վտանգվում է ինչպես թեւերից, այնպես էլ թիկունքից: Զորքի պաշտպանության համար ձեռնամուխ եղանք հայերի տարագրությունների, ռազմական գործողությունների գոտիներից: Չի կարելի հաստատել, թե դրանք իրականացվեցին կարգուկանոնով: Քանի որ ժանդարմները զորակոչվել էին եւ հնարավոր չէր կարգուկանոնն ապահովել...»[9]:

Համագումարից անմիջապես հետո երիտթուրք կոմիտեն հրատարակեց «Հայկական կոմիտեների նպատակներն ու բանսարկությունները հեղափոխությունից առաջ և հետո» (396 էջ, որից

8 Պողոսյան Ստ. Գոյատևման պայքարի քառուղիներում, Երևան, 1988, էջ 398:
9 PA-AA R14097.

122 էջ-ը փաստաթղթեր են, իսկ 73 էջերը՝ նկարներ) գիրքը: Այն ստացավ նաև «Սպիտակ գիրք» անունը, որում լուսանկարները խմբավորված են՝ 1. Ողբացող Հայաստանը. Անիի ավերակներում, Հետին պլանին Արարատն է: Հայ թագավորների դիմանկարներ եւ սրբեր: Հնչյունների պարագլուխներ, Նուբար, տեսարան Համիդյան ջարդերից: Գերբեր՝ գործված բարձին, ափսեի մեջ, դրոշներ: Փոստային նամականիշ (Լորիս Մելիքով, Այվազովսկի, Բաֆֆի): Հայաստանի քարտեզներ, զենքեր՝ իբր խլված հայերից: Մեծ թվով դիակների նկարներ, որոնք իբր սպանվել էին «հայ ավազակների» կողմից: Փաստաթղթեր՝ 1914թ. բարենորոգումներ, ռուսները Վանում, քաղաքական և կրոնական գործիչներ, ռուսական մեդալներ, որոնցով պարգեւատրվել էին հայերը և այլն[10]:

09.10. 1916 թ. Կ. Պոլսում Գերմանիայի հավատարմատար Ռադովիցը գրում է Բեթմանն Հոլվեգին, որ «Թասվիրի Էֆքիար» ("Tasviri Efkiar") թերթի մի առաջնորդողում քննարկված է Հայկական հարցը եւ եզրահանգում է կատարվել, թե տարբեր ժողովուրդների տարրերին միավորելու և ձուլելու ԻԹիհադի կոմիտեի նախնական առաջարկը «կրախի է մատնվել»: Դրա փոխարեն առաջ է քաշվել պահանջ՝ կայսրությունը «մաքրելու» բոլոր ոչ մահմեդականներից, այսինքն՝ քրիստոնյա տարրերից... Այդ գաղափարը մասամբ արդեն իրականացվել է արեւելյան սահմանամերձ նահանգներից հայերին եւ սիրիական քրիստոնյաներին՝ Փոքր Ասիայի և Ռումելիի առանձին շրջաններից արտաքսելով: Ապա ավելացվում է պահանջ՝ նաև տարագրել նախկինում ներման արժանացած հայերին՝ Կ. Պոլսից և Զմյուռնիայից[11]:

«Կրախ եւ մաքրվել» անունը կրող հոդվածում (07. 01. 1916-ին) կարդում ենք. «Ամբողջ աշխարհին հայտնի է, որ ռազմական գործողությունների գոտում եւ ռազմավարական նշանակության ուղիների երկայնքով բնակվող հայերն այդ շրջաններից հեռացվել են այնպիսի տեղեր, որտեղ մեկուսացված են ռազմական իրադարձություններին ակտիվ կամ պասիվ մասնակցությունից: Բացի Կ. Պոլսից եւ Զմյուռնիայից, տեղ չի մնացել, որ այդ միջոցառումները կամ ինչպես դա հնչում է պաշտոնապես, «վերաբնակեցվել են» (թեջիր) եւ կոտորածներ չեն իրականացվել: Այն հանգամանքը, որ տարբեր տեղերում, ինչպես լսում ենք, չղեկավարվեցին նշված սկզբունքով, ինչը մեզ չօգնեց ազատվելու հուզումներից, որից հետեւում է՝ Հայկական հարցի մեր կոնցեպցիան զուրկ է կայուն եւ ամուր հիմնավորումից: Եվ այդ փաստը մենք ընդունում ենք գոհունակությամբ: Միություն եւ առաջադիմություն կուսակցության համագումարի եզրափակիչ նիստում, որը տեղի ունեցավ վերջերս, այս հարցը շարադրվեց ու բացատրվեց հիմնավորապես, եւ մենք չկարողացանք ասել ոչինչ ավելին, քան այն, որ հայերի դեմ գործողություններ իրականացնող կառավարությանը ոչինչ այլ բան չէր մնում անելու: Մենք այդ գործողությունները համարում ենք խելացի եւ ողջունում ենք դրանք: Սա առաջինին մերժող երկրորդ փաստն է:

Պարտադիր չէ բերելու լրացուցիչ վկայություններ ապստամբություն նախապատրաստելու հայերի ձեռնարկումների եւ առանձին դիպվածների մասին, քանի որ յուրաքանչյուրը կարդացել է դրանք, իսկ թե որևէ պետություն ինչպես կվարվեր փաստերը հաստատվելու դեպքում, երբ ներքաշված էր մահուվենաց դաժան պատերազմի մեջ՝ կարելի է թողնել մարդկության խղճին... Մենք գերադասում ենք լսել այդ մասին իրենց՝ հայերի դատավճիռը, ովքեր այլեւս չեն քաշվում ասելու ճշմարտությունը: Այս առումով ունենք մեծ քանակությամբ նյութեր, սակայն սահմանափակվենք մի քանի դատողություններով, որոնք հրապարակված են հայկական «Darap» օրաթերթում:

Հասկանալի է, որ որոշակի պատճառների հարկադրանքով հայերի արտաքսումն ու տարագրումը, ինչպես այդ ասված է կուսակցության հաշվետվության մեջ, չէր կարող հաճելի լինել տվյալ ժողովրդի համար: «Darap»-ը հայերի սոսկալի տառապանքների պատասխանատվությունը դնում է հայ կուսակցությունների եւ կոմիտեների վրա եւ գրում է. «Հայ կուսակցությունների պատմությունը լի է հանցագործություններով: Իսկական հայերի եւ օսմանյան ազնիվ քաղաքացիների, ինչպիսիք են Թավշջյանն ու Ռնջիյանը, սպանությունները հանդիսանում են հնչակի ու դաշնակցության, վերակազմյալ հնչակի և այլնի կատարած հանցագործություններ, որոնք խայտառակություն են հայերի համար: Նրանք սպանեցին իրենց ազգակիցներին՝ թե մեղավորներին եւ թե անմեղներին...

Պարզ էր, որ հայ կուսակցությունների գործողությունները, ովքեր մտահոգ են միայն սեփական գրպանները լցնելու և բավարարելու սեփական անհագությունը, վնասում են թուրքահայերին և ի վերջո նրանց մղում ինքնասպանության, ինչը և իրապես տեղի ունեցավ»:

10 Pa-AA/14093.
11 Dr/ PA-AA/R 14093/, փ-թ. 303.

Հայ թերթը բերում է զղջման արժանի իրադարձությունների օրինակներ, որոնցում մեղադրում է հայ կոմիտեներին եւ եզրակացնում, թե ոչ մի դեպքում չէր կարելի խոչընդոտել Թուրքական կառավարության ձեռնարկները Ռուսաստանի դեմ[12]:

Կ. Պոլսում գերմանական դեսպան Բյուլմանը 16. 02. 1917թ. Թուրքիայի հայկական քաղաքականության մասին գրում է կանցլերին. «Կառավարման վերջին տարիներին սուլթան Աբդուլ Համիդը հայերին անխնա ոչնչացնելու ուղղությամբ այնքան առաջ գնաց, որ սարսափից քարացան անգամ նրանց սրտերը, ովքեր ընտելացել էին արեւելյան արյունահեղություններին: Երիտթուրքական կոմիտեն բոլոր բնագավառներում ձգտելով սուլթանական քաղաքականության հանդեպ որդեգրել հակառակ դիրքորոշում, ի սկզբանե իր դրոշին գրեց Թուրքիայում բնակվող բոլոր ազգությունների միավորում ազատ եւ կամավոր համագործակցության համար եւ իր գործունեության սկզբում, թեկուզ ոչ երկար ժամանակ գրեթե բոլոր այլախոհ տարրերին՝ արաբներին, հայերին, հույներին, միավորել մեկ ամբողջության մեջ: Սակայն հայերի շրջանում շարունակվող հեղափոխական- անջատողական շարժումը եւ նորից հստակ արտահայտվող դավաճանական տրամադրությունները հայրենիքի հանդեպ հունական եւ հայկական լայն զանգվածների շրջանում Բալկանյան պատերազմի ժամանակ, երբ Թուրքիան կարծես կանգնած էր անկման եզրին, կոմիտեին հանգեցրեցին քաղաքական հեղաշրջման եւ թուրքական-ազգայնամոլական ուղղության հաղթանակին: Այդ քաղաքականության հետեւանք հանդիսացան հայերի լայնածավալ ոչնչացումը եւ մինչ օրս շարունակվող, ավելի փոքր ծավալների գործողությունների հակումներն ու անխնա վերաբերմունքը նաեւ հունական տարրի հանդեպ: Կարծում եմ, որ, որպես վերջնական նպատակ ոչնչացման քաղաքականություն որդեգրելը մնասել է թուրքական կառավարությանը: Հայերի տարագրության քարավանների սարսափները դեռ երկար են ծանրանալու թուրքերի վարկի վրա, դեռեւս երկար են մատակարարելու թունավոր զենք նրանց, ովքեր հրաժարվում են Թուրքիային անվանել քաղաքակիրթ պետություն եւ շարունակելու եւ պահանջել նրան քշել Եվրոպայից: Երկիրն էականորեն թուլացավ այն բանից հետո, երբ բռնագաղթի ենթարկվեց ֆիզիկապես ուժեղ, աշխատասեր ու տնտեսվար բնակչությունը և հատկապես այն բանի համար, որ մարդկանց փոքրաթիվ լինելը հանդիսանում է ամենամեծ խոչընդոտներից մեկը Թուրքիայի ընդերքն արագ մշակելու ճանապարհին»[13]:

Որպեսզի արդարացնեն երիտթուրքերի «դիվային միջոցառումները,- գրում է Հ. Մարկվարտը,- գերմանական մամուլը Գերմանիայի քաղքենու գլխին թափեց զրպարտիչ հաղորդագրությունների հեղեղ, որոնք մասամբ ծագում էին թուրքական աղբյուրներից... Հայերը ներկայացվում էին ամենագրոշ գույներով, որպես առեւտրականներ եւ արյուն ծծող վաշխառուների հավաքածու...»[14]:

Թուրք ազգաբնակչության հանդեպ հայ կամավորների գործադրած գազանությունների մասին թուրքական հերյուրանքների առնչությամբ Ֆ. Նանսենը գրում է. «Անատոլիայի գաղթերից ճողոպրած հայերը միացան այդ (կամավորական) գնդերին: Թուրքերը լրբություն ունեցան նրանց «մատնիչ» անվանելու, որովհետեւ համարձակվում էին կռվել իրենց ժողովրդի դահիճների դեմ... Հայ կամավորական գնդերի զինվորներից ոմանք չկարողացան դիմադրել վրեժ լուծելու գայթակղությանը: Այդ առանձին դեպքերն անհնար է նույնիսկ հեռավոր համեմատության մեջ դնել թուրքերի գործած վայրագությունների հետ»[15]:

Սկսելով զանգվածային բռնագաղթն ու ջարդերը երիտթուրքերը կադրային լուրջ փոփոխություններ կատարեցին, ընդ որում՝ այն պաշտոններում, որոնք անմիջապես առնչություն ունեին ջարդերի հետ, որպես կանոն աշխատանքի էին նշանակում Բալկանյան պատերազմների հետեւանքով Անատոլիա գաղթած մահմեդականներին՝ մուհաջիրներին, ովքեր վրեժխնդրությամբ էին լցված քրիստոնյաների հանդեպ. որովհետեւ նրանք իրենց դադարպյուն էին արել, ավերել իրենց տները եւ քշել Ռումելիից: «Ներքին գործերի նախարարը կանխակալ դիտումով,- նկատում է Գ. Տեր-Կարապետյանը,- հետզհետե հայաբնակ նահանգներում կուսակալներ, կառավարիչներ եւ անոնց տեղակալներ, ամենքն ալ կը նշանակեր Ռումելիի կողմը պաշտոնավարող՝ «ռումելցի իսլամներ, կամ թունդ իթիհադականներ... անոնց կարեւորը ներշնչելով՝ կուղարկեր Հայաստան... Կարնոյ կուսակալ Ռաշիդ փաշան ետ կանչուեցաւ, որովհետեւ պիտի չհամակերպեր. այսպես, Տիարպեքիրի կուսակալ Համիտ պեյ, Հալեպի կուսակալ Պեքիր Սամի պեյ, Գոնիայի կուսակալ Ճելալ պեյ, Ատանայի կուսակալ Ի. Հագը պեյ: Շուտով Վանի, Բաղեշի, Տիարպեքիրի, Մուշի, Խարբերդի, Էրզրումի, Սեբաստիայի, Տրապիզոնի, Ուրֆայի եւ Երզնկայի կառավարիչները բոլորն ալ իթիհադական, ռումելցի ու ՆԳ նախարարի վստահած մարդիկ նշանակուեցան...»[16]:

«ՆԳ նախարարի երկու վատ օժանդակները՝ Պոլիսի կուսակալ Ապտուլ Հալիգ, Մշո կառավարիչ Սերվեթ հոն էին: Հոն կը հասնեին 1914-ի սեպտեմբերի վերջերը: Մշո մեպուս (երեսփոխան) Հոճա Իլիաս, Կենճի մեպուս Մեհմետ, որոնք նույն Թալեաթ պեյի մտերիմներն էին եւ արդեն Էրզրումի մեջ Պ. Շաքիրեն ընդուներ էին հայաջինջ հրահանգները իրենց չար սրտին շատ մոտիկ»[17]:

Ամենայն հավանականությամբ եղել են բռնագաղթի իրականացման վերաբերյալ նաեւ ուրիշ հրամաններ (անգամ օրենքներ): Գերմանական աղբյուրները, մասնավորապես Լեփսիուսը, մեջբերումներ է կատարում մի օրենքից (հրամանից), որն ունի երկու տասնյակից ավելի հոդվածներ[18]:

1916թ. հունվարի 23-ը հայերի հանդեպ ոճրագործությունների մղող հրամանների, օրենքների, հրահանգների թիվը հասավ 853-ի, այսինքն՝ միջին հաշվով օրական երեք հատ:

Էնվերի մայիսի 20-ի հրամանը պարտադրում էր հայ բնակչությանն աքսորել անապատ, Բաղդադի երկաթուղուց հարավ ընկած շրջաններ: Այդ հրամանը հանդիսացավ «Հայ ժողովրդին թաղելու հրահանգ», որովհետեւ նպատակը ամբողջական ոչնչացումն էր երեք բաղադրիչներով՝ քարավան, անապատ, կոտորած: Հատկանշական է, որ իթիհադի դիտավորությունները, հակառակ դրանք թաքցնելու նրա ջանքերին, այնքան պարզ էին, որ անմիջապես ընկալվեցին այնպես, ինչպես այն կար, այլ ոչ թե ցանկանում էին Թալեաթն ու մյուսները: Դրա վառ ապացույցներից էին հեռավոր Ուրուգվայի մամուլի արձագանքները: "Ultima noga de la tribuna popular" թերթը 1915թ. հոկտեմբերի 4-ին գրեց. «Թուրքերը վրեժ են լուծում այն հայերից, ովքեր չփախան եւ չմիացան ռուսական զորքերին իսլամի դեմ պայքարելու համար»: Եվրոպական թերթերը պատմում են «անլուր դաժանությունների մասին, որոնց հեղինակները թուրքերն են: Այժմ արդեն երիտթուրքերի պարագլուխներն անհանգստություն չեն զգում, երբ հայտարարում են, թե հայ ժողովրդի ամբողջական ու վերջնական բնաջնջումը որոշվել է թուրքական կառավարության կողմից եւ ոչինչ չի կարող իրենց շեղել մշակված ծրագրից: Հայերի բնաջնջումն իրականացվում է երեք եղանակով՝ կոտորած, կրոնափոխություն եւ տարագրություն»: Դրանք կիրառվում էին ամբողջ երկրում եւ կրկնվում էին բոլոր գյուղերում եւ քաղաքներում: Ամենուրեք գործը սկսվում էր նրանով, որ մի քանի հարյուր նշանավոր տղամարդկանց ու կանանց մորթում էին, ապա տեղահանում բնակչությանը: Հայերի տներն ու խանութները տրվում էին թուրքերին: «Քարավանների շարժը վերահսկելու համար թուրքական կառավարությունը բանտերից արձակել էր 34 000 կալանավոր, սովորական ոճրագործների»:

Դժվար չէ ենթադրել, թե ինչ էր հայերի համար այդ տարագրությունը, երբ հարկադրված էին քայլել 6-8 շաբաթ, այն էլ բարբարոս տարրերի ուղեկցությամբ: Գյուղերը, ճանապարհները, դաշտերն ու լեռները լցված էին տղամարդկանց ու երեխաների դիակներով, ովքեր սպանվել էին, կամ հյուծվածությունից մահացել: Բնակչությունն ուղարկվում էր հարավ, դեպի ճահճային ու անհաղող վայրեր, Միջագետքից ոչ հեռու: Հայկական բոլոր կենտրոններն արյունոտ տեսարանների հրապարակ էին դարձել, քաղաքներն ու գյուղերն ավերված էին : Կրոնափոխվածների թիվը փոքր չէր, սակայն դա էլ հայ բնակչությանը կոտորածից չէր փրկում: Մարդինում կաթոլիկ եպիսկոպոսները մորթվեցին հավատացյալների հետ: «Շուտով Բ. Շաքիրը Անթալիայի մութասարիֆին հեռագրեց. «Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Սըվազի, Տրապիզոնի վիլայեթներում ոչ մի հայ չի մնացել, բոլորն արտաքսվել են Մոսուլի եւ Դեր Զորի կողմերը»[19]:

Բազմազան էին ոչ միայն բռնագաղթի վերաբերյալ օրենքների, հրամանագրերի եւ հրամանների տարբերակները, այլ նաեւ ձեւակերպումները: Ոմանք օրենքի «անորոշ արտահայտու-

12 DRIPA-AAIR14093, փ.թ. 303.

13 DR PA-AA R14095.

14 "Геноцид армян в Турции", стр. 27.

15 Նանսեն Ֆ. Հայաստան եւ Մերձավոր Արեւելք, էջ 282-283:

16 Սասունի Կ. Պատմութիւն Տարոնի աշխարհի, Բեյրութ, 1956, էջ 840-841:

17 Ն. տ., էջ 842:

18 FO. N 9158.

19 Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Երեւան, 1988, էջ 47:

թյունները որոշակիացրել էին»: Օրինակ, գրեթե բոլոր օրինակների վերջին ավելացրել էին «կոտորել» բառը, որի գոյությունը բնագրում քիչ հավանական էր, քանի որ սկզբնական շրջանում երիտթուրքերը ոչ միայն թաքցնում էին կոտորածի, այլեւ տեղահանության իրենց դիտավորությունը: Ամենուրեք տեղական իշխանությունները բռնագաղթին ձեռնամուխ էին լինում Կ. Պոլսից համապատասխան գրավոր կամ բանավոր հանձնարարություն ստանալուց հետո: Բռնագաղթի սխեման գրեթե ամենուրեք նույնն էր: Հրամանը փակցնում էին պատերին կամ մունետիկի միջոցով բնակիչներին տեղյակ էին պահում՝ երբ են տարագրվելու, ինչ կարող էին իրենց հետ վերցնել, որ ժամին որտեղ էին հավաքվելու եւ սպառնալիք նրանց հայտնեին, ովքեր կփորձեին հրամանի կատարումից խույս տալ:

Բռնագաղթում էին հիմնականում հետիոտն, առանձին դեպքերում տեղափոխում էին նաեւ գնացքով կամ թույլատրում էին տանել փոխադրամիջոց, եթե ունեին, իսկ եթե չունեին՝ գնել: Տեղահանությանը տրամադրվում էին հիմնականում անասուն տեղափոխող վագոններ, իսկ մյուս փոխադրամիջոցները խլում էին, հենց որ բնակավայրից դուրս էին գալիս, ինչ վերաբերում էր վարձված սայլերին ու կառքերին, ապա դրանք տեղահանության հենց առաջին օրերին հետ էին ուղարկվում: Շատ տեղերում հայերին արգելեցին որեւէ շարժական կամ անշարժ ունեցվածք վաճառել, իսկ մահմեդականներին՝ հայերից որեւէ բան գնել: Ա. Թոյնբին վկայում է, որ սովորաբար տեղահանման քարավաններում լինում էր 2 000-5 000 մարդ: Բայց կային նաեւ քարավաններ, որոնք փոքր էին՝ 100-300 ու նաեւ այնպիսիները, որոնցում հաշվվում էր 10000-18 000 մարդ: Քաղաքների հայերը տարագրվում էին մի քանի քարավաններով:

Սկզբնական շրջանում Հալեպ քաղաքն ու մերձակա բնակավայրերը օգտագործվեցին որպես միջանկյալ կայաններ, սակայն հետագայում Թալեաթը հրամայեց. «Հիւսիսեն գալիք հայերը այսուհետեւ, առանց քաղաք կամ ավան մը հանդիպեցնելու, շիտկե շիտակ իրենց տարագրութեան վայրերը ղրկուելնին ընդհանուր կերպով կը յանձնարարեմ»[20]:

Այս հրամանի նպատակը մեկն էր՝ տարագիրների տառապանքները ավելացնել եւ նրանց կործանումն արագացնել: Լեփսիուսը գրում է. «Ընդհանուր տեղահանութիւնը որոշեց երիտասարդ թուրքերի կոմիտեն՝ Թալեաթ եւ Էնվեր փաշաների գլխավորութեամբ»[21]:

Տեղահանությունը վերաբերում էր Թուրքիայում եղած բոլոր հայերին՝ բացառությունները չնչին էին: Պատերազմից առաջ, նշում է Լեփսիուսը, Թուրքիայում կար ընդամենը1.85 միլիոն հայ: «Անատոլիայի ամբողջ հայ բնակչությունը տեղահանուեց բարձրագոյն հրամանով դեպի ... անապատ՝ Տեր Զոր, Ռաքքա, Մեսքենե, Ռաս ուլ Այն, մինչեւ Մոսուլ: Տեղահան եղան մոտավորապես 1.4 միլիոն հայ...»[22]:

Թալեաթի ստորագրած հրամանում ասված է. «Տեղահանության նպատակն է ոչնչացնել»: Եվ համաձայն այս հրամանի՝ գործն առաջ տարվեց, Արեւելյան Անատոլիայի նահանգներից դեպի հարավ տեղահան եղած ամբողջ բնակչության... 90%-ը ճանապարհին սպանվեց, կանայք ու աղջիկները առեւանգվեցին ոստիկանների եւ քրդերի կողմից, մնացածն էլ մեռավ քաղցից եւ ուժասպառությունից: «Ասածս հետեւում է այն փաստաթղթերից,- շարունակում է Լեփսիուսը,- որ հրատարակեցի՝ հավաքելով կայսրութեան արտաքին գործոց նախարարութեան արձանագրութիւններեն, մանավանդ գերմանական հիւպատոսներու եւ Պոլսոյ գերման դեսպաններու զեկոյցներեն... Իրողություններն անտարակուսելի են: Գործադրման եղանակները ամեն տեղ նման են... Հակառակ պարագային, պետք է հարց լիներ, թե ինչպե՞ս կարելի է այնքան կարճ ժամանակի մեջ միլիոնավոր մարդիկ սպանել: Այդ հնարավոր է եղել ամենավայրագ միջոցների շնորհիվ...»[23]:

Հայ ժողովրդի բնաջնջման երիտուրքական քաղաքականությունը տարվում էր խնամքով քողարկված: Անգամ Մորգենթաուն երկար ժամանակ չէր կարողանում կռահել կատարվածի իմաստն ու հետապնդած նպատակը: Նա պետքարտուղարին գրեց. «Ներկայիս օսմանյան կառավարությունը այլեւս հայերին լոյալ չի համարում: Վերջին տարիներս հայերի կրած տառապանքներն ու ճնշումները համեմատած Ռուսաստանում նրանց շնորհված ավելի բարենպաստ

20 Անտոնեան Ա., նշվ. աշխ., էջ 156:

21 Թեհլիրյան Ս. Վերյիշումներ, Թալեաթի ահաբեկումը, Վենետիկ, 1921, էջ 366:

22 Ն. տ.:

23 Ն. տ., էջ 368-370:

վերաբերմունքին, բնականորեն արեւմտահայերին մղեցին բաղառեալու իրենց ճակատագրի հայրենակիցների ճակատագրի հետ... Սակայն բացի Արեւմտյան Հայաստանի լեռնային շրջաններից, հայերը մյուս դժգոհ համայնքներից ավելի միջոցներ կամ մտադրություններ չունեն իրենց ցանկություններին ազատություն տալու: Չնայած դրան, ամբողջ գյուղեր են ավերվել՝ սպանությունների, բռնաբարությունների եւ թալանի ուղեկցությամբ: Թուրքերը նախկինից ավելի հետեւողականորեն վարում են համընդհանուր տեղահանության քաղաքականություն... Մեր Կարմիր խաչի առաջարկած օգնությունը թուրք պաշտոնյաները մերժեցին, ասելով, որ գաղթականներին տեղավորելու են հարեւան գյուղերում: Այս քաղաքականության նպատակը հայկական լավ կազմավորված համայնքի խաթարումն է...»: Դեսպանը միամտաբար կարծում էր, թե համընդհանուր տեղահանության նպատակը հայերին զուտ թուրքական գյուղերում տեղավորելու միջոցով նրանց մասսազերծելն էր: Նրա պատկերացմամբ Վանում խռովությունը ծագել էր հօգուտ ռուսների: «Այդ ապստամբները գրավել են Վանի մի մասը եւ վարում են պարտիզանական պատերազմ մի երկրում, որտեղ կանոնավոր ռազմական գործողություններն արտակարգ դժվար են... Նրանց թվի մասին միանական կարծիք չկա, բայց ոչ ոք տասը հազարից պակաս չի նշում: Մոտավորապես կլինեն 25 հազար»: Վանի իրադարձությունները կասկած նետեցին ուրիշ վայրերի եւ նույնիսկ մայրաքաղաքի հայ բնակչության վրա: Մասամբ վախենալով, որ նրանք ապստամբների հետ առնչություն ունեն եւ մասամբ իրենից բացի ուրիշ ոչ մի կազմակերպություն չհանդուրժելու պատճառով, կառավարությունը քաղաքում մի քանի հարյուր հայերի է ձերբակալել ու աքսորել: Նման ճնշամիջոցներ են կիրառվել նաեւ երկրի մյուս քաղաքներում, մինչդեռ գյուղերում դրանք բացահայտ ծայրահեղությունների են վերածվել: «Զեմ հավատում,- շարունակում է Մորգենթաուն,- թե բանը կոտորածների հասած լինի, բայց ճնշումներն ու հարկադրական միջոցների դիմելը, անկասկած, կյանքեր են արժեցել: Հանգամանքների պատճառով շատ դժվար է պարզել իրական կամ ենթադրյալ կոտորածների մասին լուրերի ճշմարտացիությունը: Ներքին շրջանների հետ նամակագրությունը գործնականում ընդհատված է, ճամփորդել թույլատրում են միայն բացառիկ դեպքերում եւ մեծ դժվարությամբ:

Բանակում համարյա ամենուրեք հայերին զինաթափել եւ օգտագործում են սեւագործ աշխատանքներում: Խստագույն հրամանը, որը մահվան սպառնալիքով հարկադրում է զենքերը հանձնել իշխանություններին, որքան ես հասկանում եմ, տարբեր ձեւով է կիրառվում մուսուլմանների նկատմամբ, նրանց իրավունք վերապահվեց իրենց զենքերը չհանձնել: Վերջին հարկադրական միջոցառումները անտանելի դժվարություններ են ստեղծել այդ վերին աստիճանի խաղաղասեր համայնքի համար: Օր չի լինում, որ չլսենք հուսահատեցնող նորություններ... Մի իրավիճակ է, երբ փոքր կայծը կարող է հանգեցնել ամենալուրջ եւ ամենախիստ հետեւանքների»:

Ժամանակ էր անհրաժեշտ, որպեսզի Մորգենթաուն ընկալեր գործընթացի, մանավանդ հետապնդած նպատակի, հրեշավորությունը: 1915թ. ապրիլ-մայիս ամիսներին Օսմանյան կայսրությունում կատարվածի մասին հետաքրքիր տեղեկություններ էին պարունակում նրա ստացած դիվանագիտական փաստաթղթերը: Այս փաստաթղթերն արժեքավոր են նրանով, որ դրանց վավերականությունն անվիճելի է: Դրանց հեղինակները չեզոք պետության ներկայացուցիչներ էին եւ գրվել էին դեպքերին ու իրադարձություններին զուգընթաց: Ապրիլի 30-ին, ցերեկվա ժամը 4-ին Մորգենթաուն հեռագրում է Վաշինգտոն, որ «Կայսրության որոշ շրջաններում հայերի հալածանքների, թալանի ու կոտորածների վերաբերյալ զեկուցագրերի հոսքը չի դադարում...»[24]:

«Հալեպի հյուպատոսից ստացված մի զեկուցագրից հայտնի դարձավ, որ թուրքական իշխանությունները անհավատալի դաժանությամբ են վերաբերվում Զեյթունի եւ Մարաշի հայ ազգաբնակչությանը, եւ որ հիմնվելով մի քանի դասալիքների արարքների վրա, նրանց տեղահան են անում...»: Մորգենթաուի մայիսի 25-ի զեկույցից երեւում է, որ նա, մի կողմից, տակավին անգիտանում էր, թե ի՞նչ չափեր էին ընդունել տեղահանություններն ու «մասնակի» բռնությունները, մյուս կողմից, որոշակի է, որ դեսպանը լավ բան չէր սպասում թուրք կառավարողներից՝ ելնելով անցյալում կատարվածներից: Փաստաթղթում ասվում է, որ հայ ազգաբնակչության զանգվածային տեղահանություններով հետապնդվում էր անցյալի համեմատ առավել հետեւողական քաղաքականություն: Դեսպանը ուշադրություն է հրավիրում, որ «կառավարությունը անփոփոխ կերպով ժխտում է փաստերը, կամ դրանք ամբողջովին աղավաղում է»:

24 Morgenthau H. The Murder of a Nation, New York, 1975, pp. 27-29.

Ստեղծված իրադրությունը,- եզրակացնում է նա,- կարող է հեշտությամբ հանգեցնել «ամենալուրջ եւ ամենացավալի հետեւանքների»: Եվ իրոք, հուլիսի 10-ին ուղարկած խիստ գաղտնի հեռագրում Մորգենթաուն, հիմնվելով ամերիկյան հյուպատոսներից ստացված զեկուցագրերի վրա, այն կարծիքն էր հայտնում, որ երիտթուրքերի կառավարությունը նպատակ է դրել «արմատախիլ անել խաղաղ հայ ազգաբնակչությանը կամայական ձերբակալությունների, սարսափելի տանջանքների, կայսրության մի ծայրից մյուսը զանգվածային արտաքսումների ու տեղահանության միջոցով...», քայլեր, որոնք «հաճախ ուղեկցվում են բռնությամբ, կողոպուտով, սպանություններով, եւ որոնք ընդունում են ջարդի չափեր...»: Տակավին անտեղյակ իթիհադի զեկավարության գաղտնի նիստերի որոշումներին, դեսպանը մեջբերում է Խարբերդի ամերիկյան հյուպատոս Լեսլի Դեյվիսի հետեւյալ կռահումը. «Թվում է, թե գոյություն ունի մի ծրագիր, որի նպատակն է ջախջախել հայ ցեղը»: Զեկուցագրի վերջում դեսպանը տեղեկացնում է. «Թուրքական իշխանություններն ինձ ամենապարզ ձեւով հասկացնել տվեցին, որ իրավունք չունեմ միջամտելու իրենց ներքին գործերին»[25]:

Մորգենթաուն 1915 թվականի նոյեմբերի 9-ի հեռագրին կցել էր երկու փաստաթուղթ. Ալմա Ցոհանսոնի վկայությունն էր Բիթլիսում եւ Մուշում տեղի ունեցած կոտորածների մասին, մյուսը՝ ազգությամբ գերմանացի բժիշկ Վիլֆրեդ Պոստի 1915թ. հոկտեմբերի 17-ի թվակիր նամակը Կոնիայի հայերի հետ կատարվածի մասին: Մորգենթաուն գրում է. «...Ես կշարունակեմ Ձեզ ուղարկել նման վկայություններ առանց որեւէ մեկնաբանության, նկատի ունենալով, որ դրանք ինքնին բավականաչափ խոսուն են»: Հիրավի, առաջին փաստաթղթի հեղինակը, օրինակ, նկարագրելով Մուշ- Բիթլիսի հայության բարբարոսական ոչնչացումը, եզրակացնում է. «Սա մի պատմություն է՝ գրված արյունով», իսկ Վիլֆրեդ Պոստը իր նամակում ընդգծում է. «Այս ազգի նկատմամբ կիրառվում է մի դաժան եղանակ՝ հետեւողական ոչնչացման ճանապարհով նվազեցնելու հայերի թիվը, որից հետո նրանց իսպառ բնաջնջումը միայն ժամանակի հարց է»:

Ամերիկյան հյուպատոսների զեկույցներում, բացի փաստերից, կան նաեւ գնահատականներ եւ ընդհանրացումներ, որոնք թույլ են տալիս եզրակացնելու՝ տեղերում բռնագաղթին ականատես ամերիկյան դիվանագետները ժամանակին հասկացել էին, որ զանգվածային տեղահանությունների նպատակն էր բնաջնջել արեւմտահայությանը: Հալեպում ամերիկյան հյուպատոս Ջեքսոնը հունիսի 5-ին տեղեկացնում է Մորգենթաուին, որ «կառավարությունը ստացել է դիմումներ զանազան ճանաչված, եւ նույնիսկ իշխանություն ունեցող անձանցից, վերջ դնելու ստեղծված իրավիճակին, որն անկասկած կարող է առավել մեծ դժգոհություն ու քննադատություն առաջ բերել, սակայն բոլոր այդ դեմարշներն ապարդյուն անցան»: «Ինքն անկասկած գնում է,- եզրակացնում է Ջեքսոնը,- խնամքով մշակված մի ծրագրի մասին, որի նպատակն է հայկական ցեղի լիակատար ոչնչացումը»[26]:

Իսկ Տրապիզոնի ամերիկյան հյուպատոս Օսկար Հայզերը հուլիսի 28-ի թվակիր նամակում գրում է. «Գերմանացի հյուպատոսն ինձ ասաց, որ ինքը համոզված չէ, թե հայերին թույլ կտան վերադառնալ Տրապիզոն նույնիսկ պատերազմի ավարտից հետո»[27]:

Մորգենթաուն համիդյան և երիտթուրքական ջարդերի տարբերությունը համարում է այն, որ սուլթանը մի հրաման ուներ. «Սպանե՛լ, սպանե՛լ», մինչդեռ իթիհադը փոխանակ հայերին ջարդելու, նրանց տարագրեց Սիրիական անապատ՝ առանց քաղաքի ու ավանի եւ առանց որեւէ քաղաքակիրթ կյանքի, բնակեցված միայն սակավաթիվ վայրի և մոլեռանդ բեդվի ցեղերով: «Բազմաթիվ տարիներու ընթացքին կատարուած ամենաճարտար աշխատանքն է միայն, որ կրնայ այդ անապատը նշանակելի ժողովուրդի մը բնակավայրի փոխակերպե»[28]:

Բ. Դուռը կայսրության 2 միլիոն հայությանը որոշեց տեղափոխել այդ անապատը: «Եթե նույնիսկ նման տարագրութեան մը ձեռնարկած ըլլային անկեղծ միտքով, անիկա պիտի ներկայացներ անգթութեան և անարդարութեան գերագոյն ձեւը»: Մինչդեռ թուրքերը որեւէ նպատակ չունեին հայերին այս վայրերում հաստատելու: Գիտեին, որ «խոշոր մեծամասնութիւնը չպիտի

25 Morgenthau H., նշն. աշխ., էջ 31-33:
26 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 43-44:
27 Ն.տ., էջ 49:
28 Ն.տ., էջ 255-256:

հասներ սահմանուած վայրը», իսկ ովքեր էլ հասնեին, «ծարաւէ եւ անոթութենէ պիտի մեռնէին» կամ սպանվեին անապատի քոչվորների կողմից: «Տարագրութեան իրական նպատակը ավազակութիւնն էր. անիկա ճշմարտապես ջարդի նոր մեթոդ մը կը ներկայացներ»: Տեղահանության հրամանը դա հայերին մահվան դատապարտելու դատավճիռ էր: Եվ «ինձի հետ ունեցած իր խոսակցութիւններու մէջ,- նկատում է Մորգենթաուն,- Թալեաթը ոչ մեկ մասնավոր ջանք չէր ըներ իրողութիւնը քողարկելու»[29]:

Բռնագաղթից դուրս չմնաց որեւէ հայ: Գաղթի հրամանները կամ փակցվում էին պատերին եւ կամ փոխանցվում էին մունետիկների միջոցով: Իսկ որոշ տեղերում ոչ մեկն էր արվում, ոչ էլ մյուսը: «Ոստիկան-զինուորները կը ցցուեին հայի մը տունին առջեւ, կը հրամայեին բոլոր բնակիչներուն՝ հետեւել իրենց: Տնական գործերով զբաղվող կիները կանեին, առանց թույլ տալու, որ անոնք զգեստները փոխեին»: Կանանց տանում էին լվացքի տաշտերի մոտից, մանուկներին հանում էին անկողնից, հացը թոնրում մնում էր կիսաեփ, ճաշը՝ կեսը չկերած, երեխաներին դուրս էին հանում դասարաններից, գյուղացուն հարկադրում էին արորը նետել դաշտում, անասունները՝ լեռներում: Անկողնուց հանում էին անգամ նոր ծննդաբերած կնոջը: Նույնիսկ հագուստներ փոխելու ժամանակ չէին տալիս: Հայերը շարժական գույքն իրավունք ունեին վաճառելու միայն թուրքերին եւ վաճառում էին չնչին գներով: Կովը տալիս էին մեկ դոլարով: Շատ տեղերում նույնիսկ նման վաճառքն էր արգելվում, որովհետեւ հայերի ունեցվածքը իշխանությունները վաճառելու էին նրանց, իրականում չունեցած, պարտքերը փակելու համար: Անշարժ ունեցվածքը, մասնավորապես տներն արգելվում էր վաճառել, պատճառաբանությամբ, թե հայերը պատերազմի ավարտից հետո վերադառնալու եւ բնակվելու են իրենց տներում, իսկ շարժական ունեցվածքը հավաքվելու էր մի տեղ: Սակայն տարագիրների քարավանները չէին հասցնում բնակավայրերից դուրս գալ , երբ հայտնվում էին հայերի տների նոր տերերը՝ մուհաջիրները: Թուրքերն իրար մեջ էին բաժանում նաեւ հայերի կահկարսին, դրամը, զարդերը եւ այլն:

Սակայն դրանք չնչին բաներ էին համեմատած մարդկանց հետեւողական բնաջնջման հետ»: Հենց որ քարավանը բնակավայրերից դուրս էր գալիս, տղամարդկանց առանձնացնում էին, չորսական հոգու իրար էին կապում ու ոչնչացնում: Օր չէր անցնում առանց կախաղանների, մահապատիժների՝ առանց դատի, «այն միակ հանցանքով, որ զոհերը հայեր էին»: Առանձնակի հրապուրանք կար կրթվածների եւ ազդեցիկ անձանց ոչնչացման հանդեպ:

Քարավաններն առաջ են շարժվում իրենց մեջ ունենալով միայն կանայք, ծերեր ու երեխաներ: Որոշ տեղերում կանանց առաջարկում էին մահմեդականություն ընդունել, սակայն քչերն էին համաձայնվում, չնայած կրոնափոխվածների համար տառապանքները դրանով չէին ավարտվում: Նրանց երեխաներին իսկույն վերցնում էին «իսլամի որբանոցներ» եւ դարձնում թուրք... Սկզբնական շրջանում տարագիրների խմբերն ինչ-որ չափով պաշտպանվում էին: Սպաները քարավանները բաժանում էին խմբերի՝ յուրաքանչյուրում 100 կամ 1000 հոգի: Առաջին տարագրյալների մի մասին նաեւ փոխադրամիջոց էին տրամադրում ունեցվածքից գոնե ինչ-որ բան փոխադրելու համար: Քարավաններին ուղեկցում էին ոստիկանների խմբեր: Տեղահանության քարավանները խիստ խայտաբղետ էին: Երեխաներ գրկին կամ շալակին քայլող կանանց կողքին կառքով, սայլով կամ ձիով գնացողներ, մի կերպ քայլող ծերերի կողքին վիճակի աղետաբերությունը չգիտակցող չարաճճի երեխաներ, ոչխարներ, կովեր, եզներ ու այլ ընտանի կենդանիներ: Քարավաններն իրենց հետեւում թողնում էին փոշու հսկա շիթեր ու տնային զանազան իրերի մնացորդներ: Մեկնելուց մի քանի ժամ անց քարավանները լրիվ այլ տեսք էին ստանում. «Փոշին կը ծեփեր մարդկանց դէմքերն ու զգեստները, ցեխը կը թանձրանար իրենց ոտքերուն ու սրունքներուն վրայ, եւ դանդաղորեն առաջացող ամբոխը, յաճախ յոգնութենէ կորաքամակ եւ ընկերացող «պաշտպաններուն» բրտութենէն ահաբեկուած, կը նմաներ տեսակ մը նոր եւ այլանդակ կենդանիներու ցեղի»[30]:

Ամբողջ Հայաստանը լցված էր այս՝ դեպի մահ առաջացող քարավաններով: Իրար հետեւից դատարկվեցին գյուղերն ու քաղաքները: Վեց ամսում՝ ապրիլ-հոկտեմբեր, տարագրվեց 1.2 մլն հայ:

Գնալով տարագրյալների հալածանքները սաստկանում էին, վիճակները ողբերգական ու անհույս դառնում: Քարավաններին տանում էին ճամփազուրկ տեղանքներով, շուտով դրանք վե-

29 Մորգենթաու Հ. Ցուշեր, էջ 256-257:
30 Ն.տ., էջ 260:

բածվեցին ողբալի տեսք ունեցող մարդկանց զանգվածների: Կանանցից շատերից խլեցին երեխաներին, գնալով ավելի ու ավելի շատ ծերեր էին հետ մնում, կտրվում իրենց ընտանիքներից: Թուրք սայլվորները բեռները թափում ու հեռանում էին եւ քարավաններում այլեւս միայն հետիոտն գնացողներ էին: Բռնագաղթվածներին ամենամեծ թալանողները դարձան ուղեկցող ոստիկանները: Նրանք դաժանորեն հարվածում էին հետ մնացածներին և ուժասպառ գետին ընկածներին, ծննդաբերող կանանց: Ուղերթի ամբողջ ընթացքում հայերը ազատում չունեին մահմեդական բնակչությունից, ովքեր գործում էին ուղեկցող ոստիկանների հետ համագործակցված: Իսկ նշանակված վայրերում քարավաններին սպասում էին չեթեներն ու խուժանը եւ հարձակվում անզեն մարդկանց վրա: Դեղեցիկ կանանց ու աղջիկներին առեւանգելը սովորական երեւույթ դարձավ: Քրդերը խլում էին նաեւ երեխաներին, կողոպտում քարավանները, մինչեւ այն աստիճան, որ որոշ դեպքերում շատ հայեր մնում էին բացարձակ մերկ: Հ. Մորգենթաուից երկար մեջբերումը խնդիր ունի նրա միջոցով ներկայացնել բռնագաղթի համայնապատկերը, որն ամբողջությամբ հաստատվում է մյուս ականատեսների եւ ժամանակակիցների վկայություններով:

Երիտթուրք քաղաքագետներից մեկն ասել է. «Եթե մենք՝ թուրքերս, արյունաքամ լինենք Օսմանյան կայսրությունը պահպանելու համար մղվող այս պայքարում, ապա հաղթանակի դեպքում նրանում այլեւս չպետք է լինեն ուրիշ ազգեր»[31]:

Հալեպում գերմանացի ուսուցիչ Հրետերը նկատում է, որ խոսքը գնում էր ոչ թե այս կամ այն կոտորածի, այլ ամբողջ հայ ժողովրդի բնաջնջման մասին, ինչը «մեծագույն ցինիզմով ընդունում են թուրքական չինովնիկները, սկսած Թալեաթ բեյից վերջացրած վերջին ժանդարմը, եւ (փոքրինչ չփոթված)՝ նաեւ գերմանական հյուպատոսները: Սկզբում երիտթուրքերն ասում էին, թե ուզում են միայն մաքրել պատերազմական գործողությունների գոտիները եւ տեղահանվածներին տրամադրել բնակության նոր վայրեր: Սկսեցին մարտունակ, ըմբոստ լեռնաբնակներից, ապա բռնագաղթն իր ալիքների մեջ առավ ամբողջ կայսրությունը: Տեղահանում էին նույնիսկ այն վայրերից, որոնք ռազմաճակատներից շատ և շատ հեռու էին: Առաջին ընդհանուր կայանը Հալեպն էր: Սակայն Հալեպում այդ խեղճերի տանջանքները չէին վերջանում: Տեղի գերեզմանատներում այլեւս տեղ չկար եւ կենդանի մնացածներին քշեցին սիրիական տափաստաններ»[32]:

Հայերի զանգվածային ջարդերի մասին հարուստ նյութեր կան անգլիացի հետախույզների զեկույցներում: Հուլիսի 11-ին նրանք հաղորդեցին Մարդինի եւ Էրզրումի բռնագաղթի ու ջարդերի մասին: Նշվում է, որ երիտթուրքերը գործում են համարձակ, առանց հաշվի առնելու համաշխարհային հասարակական կարծիքը, ինչը նաեւ հետեւանք է Գերմանիայի համերաշխության[33]:

Մի ուրիշ զեկույցում անգլիացի գործակալը գրում է, թե «երիտթուրքերի հետապնդած միակ նպատակը հայերի ոչնչացումն է»[34]:

1915թ. նոյեմբերի 5-ին անգլիական հետախուզությունը հայտնեց, թե Սամսունի եւ Անկարայի միջեւ ընկած տարածքների բոլոր հայերը տեղահանված են, թե ճանապարհներին թափված են դիակներ[35]:

Կահիրեում Ֆրանսիայի դեսպանը սեպտեմբերի 29-ին Դելկասեին հայտնում է հայերի «զանգվածային բռնագաղթի եւ ջարդի մասին»[36]:

Ջեմալ փաշան գրում է, որ տեղահանությունը սկսելիս հայերից ոմանց նույնիսկ չեն թողել վերցնելու զգեստները: Գեբանում կանանց կանչել են, երբ լվացք էին անում, եւ նրանք հարկադրված ճանապարհ ընկան ոտաբոբիկ, չկարողանալով տանել անգամ «լվացած սպիտակեղենը»[37]:

Ժամանակի մամուլը նույնպես գրեց. «Տարագրվածները, հատկապես կիլիկիաբնակները, չկարողացան հետները որեւէ բան վերցնել»[38]: Իսկ որոշ տեղերում պարզապես արգելում էին հետը տանել ունեցվածք, ընտանի կենդանի, նույնիսկ հագուստ:

31 R 14094, Ab 33457.
32 R 14095, Ab 4543.
33 Բեյլերյան Ա., նշվ. աշխ., փաստ N54:
34 Ն.տ., N57:
35 Ն.տ., փաստ N 136:
36 Ն.տ., փաստ N112:
37 Ջեմալ փաշա, Հայկական հարցը, Երեւան, 1927, էջ ...:
38 "El plata", 04. 10. 1915.

«Բռնագաղթի հրամանը պատերին փակցնելու հետ միաժամանակ,- գրում է Լեփսիուսը,- բնակավայրերը շրջափակվում էին: Բռնագաղթվածներին... քշում էին դեպի մահ: Որպեսզի աքսորից խույս տվողներ չլինեին, խոշտանգումներով կանանց ու երեխաներին հարկադրում էին հայտնելու թաքստոցների տեղերը: Հղի կանանց առնում էին քացու տակ ու պահանջում ասել ամուսնու գտնվելու վայրը: Զափթիեները կտտանքի հնարավորություն ունենալու համար հրճվանքի մեջ էին: «Թուրքերը կորցրել են ողջախոհությունը,- պատմում է մի գերմանացի,- կանանց, աղջիկների առեւանգումները, բռնի կրոնափոխությունները դարձել էին սովորական: Ստույգ մահից խույս տալու համար մեծ թվով ընտանիքներ ընդունեցին մահմեդականություն»[39]:

Թ. Աքչամը նկատում է. «Տեղահանության ձեւերն ու եղանակները տարբեր շրջաններում տարբեր էին: Որոշ վայրերում բնակչությանը զգուշացնում էին երկու ժամ առաջ, ուրիշ տեղերում հնգօրյա ժամկետ էին տալիս: Բայց այս ժամկետները, որպես կանոն, ձեւական էին: Երբեմն հայերին թույլատրում էին իրենց հետ որոշ ապրանքներ տանել, բայց կային նաեւ տեղեր, որտեղ արգելում էին հայերի ունեցվածքի առքն ու վաճառքը»[40]:

Այդ նույն ժամանակ «հայկական գրեթե բոլոր քաղաքների դարպասների մերձակայքի ստրկավաճառության շուկաները միշտ լիքն էին ու բաց: Դրանցում վաճառվում էին կանայք, աղջիկներ, երեխաներ...»[41]:

Վաճառում էին միայն մահմեդականներին, որովհետեւ վաճառքի հանվածները պետք է անպայման մահմեդական դառնային: Այսինքն՝ վաճառվողները մեկընդմիշտ դատապարտվում էին ստրկության, թրքացման կամ քրդացման: Ջ. Բրայսը նշում է. «Տղաքն ու աղջիկները եւս վաճառքի հանուեցան իբրեւ գերիներ, երբեմն միայն 10 են 12 անգլիական շիլինկի հասնող գիներով, մինչ ավելի դեռատի այր տղաք կը յանձնուին տերվիշներուն...»[42]:

Ա. Թոյնբին նույնպես անդրադառնում է այս հարցին. «Դեռ ճամփա չելած մի քանի կանայք վաճառքի հանվեցին: Թուրքերն ամենաերիտասարդներին վաճառում էին բոլոր այն գյուղերում, որտեղ գիշերում էին: Հարյուրավոր կանայք ուղարկվում էին կայսրության ամենավատ համբավ ունեցող հիմնարկները: Մի աղջնակի այդ նպատակով Անատոլիայի արեւելյան շրջաններից հասցրեցին մինչեւ Բոսֆորի ափերը»: Խնդիրն արժանացել է նաեւ Ժ. Մորգանի ուշադրությանը. «Այս վաճառման միջոցին ալ մեթոդով կշարժվին: Ցուրաքանչիւր ավանի կամ քաղաքի մեջ կիները եւ աղջիկները՝ կառավարական շենքերու առջեւ մեկ գծի վրայ շարուած, գնողներու կը ներկայացվին»[43]:

Բ. Գեմբարսկու կարծիքով գյուղաբնակ շրջաններում բնավորությամբ «մեղմ թուրք գյուղացիները» հայերի հանդեպ վայրագություններ շատ թույլ չէին տալիս եւ «սպանություններին արտաքուստ տրված էր օրինական տեսք»: Հազիվ թե հնարավոր լինի այս մտքի հետ համաձայնվել, որովհետեւ ամենազազրելի արարքներն առաջին հերթին կատարվում էին «աչքից հեռու ընկած» գյուղերում: Լեփսիուսը վկայում է, որ եթե քաղաքային բնակչությանը տեղահանելիս գոնե ձեւ էր արվում, թե աքսորյալների անվտանգությունն ապահովելու համար ձեռնարկվում են նախազգուշական միջոցներ, ապա գյուղական համայնքների, մասնավորապես լեռնաբնակների հարցում կառավարությունը հրաժարվեց ձեւականություններից եւ... «չսպասելով, որ նրանք կամովի կատարեն տեղահանման հրաման, անմիջապես հարձակման անցավ»[44]:

Գեմբարսկին տեղահանությունը ներկայացնում է հետեւյալ կերպ. «Քաղաքներում ու գյուղերում միաժամանակ երեւացին հայտարարություններ, որոնցով հայ բնակչությանը հրամայվում էր որոշյալ օրը, որոշյալ ժամին հավաքվել գյուղի կենտրոնում՝ նոր բնակավայր տեղափոխվելու»: Անշարժ գույքն ամբողջությամբ թողնվում էր դառնալու մահմեդականների սեփականությունը: Նշված ժամին հայերը՝ ծեր, կին, երեխա, հավաքվում էին: Նրանց անմիջապես շրջապատում էին հրացաններով ու մտրակներով զինված ոստիկանները: «Սովորաբար թուրք

39 Լեփսիուս Ցո., նշվ. աշխ., էջ 35:
40 «Բնօրրան», 1995, թիվ 1, էջ 100:
41 "Армянский вестник", 1916, N 23:
42 Տե՛ս Թորիկեան Շ. Հայկական հարցը եւ միջազգային օրենքը, Բեյրութ,1976:
43 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 345:
44 Lepsius J. Bericht uber die Lage des armenischen Volkes in der Turkei, ss. 21-24.

բնակչությունն այս տեսարանը դիտում էր իր տնից կամ բակից: Բայց արտաքուստ մեղմ, հանգստաբարո թուրքն իր հոգում դաժանության մեծ չափաբաժին ունի»: Եվ դա առնչություն չունի նրա հետամնացության եւ տգիտության հետ, այլ հետեւանք է յուրատիպ մենթալիտետի: Չէ որ հայ ժողովրդի բնաջնջումը ծրագրեցին եւ իրականացրեցին համալսարանական կրթություն ունեցող թուրքերը: Թուրքի վարքագծի վրա կնիքված էր մահմեդականության ձեւակերպած հոգեբանությունը. «Արդարությունը պարտավոր եմ ամրացնել թրիս սայրին, քաղաքակրթությունը խփել ձիուս պայտերին: Ես պարտավոր եմ ոչնչացնել ամեն բան՝ չթողնել քարը քարի վրա: Իմ հետեւից պետք է թողնեմ այնպիսի ավերակներ, որ դրանք տեսնողն իրավունք ունենա ասելու՝ «Այստեղով թուրքն է անցել»: Սրանք Զիա Գեոքալփի նշանաբանի ուժ ստացած խոսքերն են: Թուրքը հպարտանում էր, որ սպանել է այլազգի երեխաների, կանանց ու հիվանդների, հրճվանքով էր հիշում ջարդերի տարելիցները: Այս աշխատությունում անդրադարձել ենք թուրքի դաժանության խնդրին, որի ձեւավորման հիմքում ընկած են էթնիկական, քաղաքական, մշակութա-կրոնական պատճառներ:

«Բռնագաղթը հայի երեն էր դեպի կառափնարան»: Ասես վառվող վառարանի միջով նրանք գնում էին օրեր եւ շաբաթներ, գնում էին դեպի անապատ, գնում առանց սննդի, առանց ջրի, մտրակների հարվածների տակ ու սվինահարվելով: «Գնում էին անընդհատ զգալով քարավանները հետապնդող չեթեների ու մահմեդական տականքի գիշատիչ հեւքը, հաճախ դառնալով նրանց հարձակումների օբյեկտ»[45]:

Որոշված օրը քաղաքի փողոցները շրջափակվում էին տեղի ժանդարմների կողմից, պատմում է Ա. Թոյնբին, կառավարիչը մահապատժի սպառնալիքով հրամայում է բոլոր նրանց, ովքեր ընդունակ էին զենք կրելու եւ զինվորական ծառայությունից զերծ էին մնացել, ներկայանալ: «Զենք կրելու ընդունակ». այս բառերի իմաստը շատ առաձգական էր, որովհետեւ դրա տակ հասկացվում էին 15-70 տարեկան բոլոր տղամարդիկ, որոնց ժանդարմները առաջնորդում էին քաղաքից դուրս: «Հեռու գնալու կարիքը չունեին, որովհետեւ ջարդելու համար ժանդարմներին օգնելու էին բերվում թիապարտներ, իսկ ավազակներն ու քրդերը դարանակալ սպասում էին լեռներում»: Սպասում էին ջարդելու: Քաղաքից դուրս առաջին մեկուսի դաշտավայրը ականատես էր դառնում այդ դժբախտների հավաքական կոտորածին: Գործն ավարտելուց հետո ժանդարմները հանգիստ վերադառնում էին քաղաք կամ գյուղ: Ասվածից պարզ է, որ տեղահանությանը նախապատրաստվելու համար տրվող ժամանակը Կ. Պոլսի կողմից որոշված չէր: Այն միատեսակ չէր նաեւ տվյալ վիլայեթի տարբեր սանջակներում, կազաներում եւ նահիեներում: Այսինքն՝ այդ ժամանակը որոշում էին տեղական իշխանությունները, ինչը նույնպես լրացուցիչ դժվարություններ էր ստեղծում բռնագաղթվողների համար, նոր հնարավորություններ ընձեռում ջարդարարներին եւ հափշտակիչներին: «Երբ տղամարդկանց հանկարծակի կտրում էին իրենց աշխատանքից... անգամ հնարավորություն չէին տալիս կողպելու իրենց արհեստանոցներն ու կրպակները, երբ նրանց ստիպում էին լքել անասունը սարերում, գոմերը՝ վարելատեղերում, երբ կանանց ճանկում էին անկողիններում կամ լվացք անելիս, նման հանգամանքներում խոսք լինել չի կարող այն մասին, թե հայերը կարողանում էին գաղթից առաջ որեւէ բան անել իրենց գործերը կարգավորելու»: Եթե մի քանի բնակավայրերում հակառակ իրադրի պահանջների, իշխանությունները հայերին թույլ էին տալիս իրացնելու իրենց ունեցվածքը, ապա այն վաճառվում էր չնչին գնով, իսկ ոչ քիչ դեպքերում ստացված գումարը ոստիկանությունը խլում էր: Մանդելշտամը գրում է, որ հայերի գույքը կամ հավաքվում էր խանութներում առանց որեւէ հաշվառման եւ կամ հափշտակվում բնակչության կողմից: Իսկ անշարժ սեփականությունը վարձով տրվում էր մուհաջիրներին: Տարագրվածներին այլ բան չէր մնում, եթե ոչ իրենց հետ վերցնել այնքան, որքան ի վիճակի էին տեղափոխել: Սակայն դա էլ տարագրյալի սեփականությունը չէր, եւ նրանից խլում էին բոլոր նրանք, ովքեր ցանկություն ունեին այդ անելու: Հայերին անգամ թալանում էին նրանց ունեցվածքի անվտանգությունն ապահովելու համար ստեղծված հանձնաժողովների անդամները:

Քարավանների առողջ տղամարդիկ ոչնչացվում էին մեկնման վայրից ոչ հեռու քուրդ ավազակների, թուրք գյուղացիների, ժանդարմների կամ էլ կանոնավոր բանակի միջոցով: Եղան դեպքեր, երբ կոտորեցին առանց խտրականության, բոլորին՝ տղամարդ, կին, երեխա: Նիպագեն պատմում է Ռաս ուլ Այնում բացառապես կանանցից ու երեխաներից բաղկացած քարավանը կոտորելու մասին:

45 Գեմբարսկի Բ. Մահվան դատապարտվածները, Երեւան, 1992, էջ 18-31:

Պատերազմի մեջ մտնելուց հետո «կայսրությունում բնակվող բոլոր հպատակ երիտասարդ քրիստոնեաները դրոշի տակ կը կանչվին,- գրում է Մորգանը: -Բայց զանոնց ճակատ չեն ուղարկեր: Մի քանի հարիւրեակ դասակներու բաժանուած՝ այս մարդիկ կղզկուեն ճամբարներու շինութեան եւ նորոգութեան: Երբ անոնց աշխատանքը կավարտվի, անոնցմե մեծ թիվ մը հրացանազարկ կրնեն»:

Քաղաքներն ու գյուղերը, որտեղ գրեթե միայն ծերեր, կանայք եւ երեխաներ էին մնացել եւ անկարող էին ինքնապաշտպանվելու, զորքեր էին ուղարկվում, սպանում էին տղամարդկանց եւ տղաներին: Բնակչության մնացած մասին հրամայում էին լքել տները եւ 1000-2000 հոգանոց խմբերով տարագրում էին: «Այս ձեւականությունները չէին կատարվում առանց կրոնափոխության ազդարարության եւ խառնիճաղանջ զորքի կատարած ամեն տեսակ սոսկալի ծայրահեղությունների: Տեղահանուածներու գոյքերը կամ կը տրվին մահմեդականներուն եւ կամ կը ծախվին: Խումբերը ճամբայ կը հանվեին հսկողությամբ զինվորներու եւ քիւրտ հեծելազորքերու, որոնք ճանապարհին ամեն գազանութիւն կը գործեն՝ իրենց հաճոյքին համաձայն կը սպանեն, կիները որպես գերի կը ծախեն ճանապարհին պատահած ավաններու մեջ»[46]:

Սահմանված չէին նաեւ բռնագաղթից ազատվելու պայմանները: Որոշ տեղերում սկզբում կաթոլիկներն ու բողոքականները, ինչպես նաեւ մահմեդականություն ընդունած կանայք ու աղջիկները չէին տեղահանվում, իսկ մյուսներում նման բացառություն չէր արվում: Ինչ վերաբերում էր քաղաքական հայացքներին ու կուսակցական պատկանելությանը, ապա դրանք ընդհանրապես հաշվի չէին առնվում: Եթե կրոնական պատկանելության հարցը իշխանությունների կողմից երբեմն շահարկվում էր, ապա կուսակցական պատկանելության մասին անգամ չէին հիշում: Ընդհանուր առմամբ բռնագաղթը կառուցված էր մի սկզբունքի վրա՝ եթե հայ ես, պետք է մեկնես: Այդպես էր մտավորականության ձերբակալության ժամանակ, այդպես էր նաեւ տարագրության եւ ոչնչացման խնդրում: «Կ. Պոլսում հայ մտավորականության ներկայացուցիչներին,- գրում է Գիբբոնսը,- ումն այս կամ այն կերպ հարկ էր լռեցնել՝ բոլորին, անկախ կրոնական եւ կուսակցական պատկանելության, ձերբակալեցին եւ ուղարկեցին գավառներ եւ մեծ մասին աքսորի ճանապարհին մորթեցին»: Նման ճակատագիր մտավորականությանը բաժին ընկավ նաեւ նահանգներում: Առանց մեղադրական որեւէ փաստաթուղթ ներկայացնելու, առանց որեւէ դատի, առանց նույնիսկ փոքր պատրվակի, եթե պատրվակ չհամարենք հայ ծագումը, բոլորը բանտ նետվեցին, աքսորվեցին կամ սպանվեցին: Միաժամանակ հայ բնակչությանը զինաթափեցին, իսկ մահմեդականներին զինեցին: Հավաքագրեցին քրդական ավազակախմբեր: Բանտերից ազատեցին հանցագործներին չեթեներ կազմելու համար:

Բացառություն չէր արվում ո՛չ հիվանդներին, ո՛չ ծերերին, ո՛չ հղի կանանց: Միայն հարուստ վաճառականները, գեղեցիկ կանայք ու աղջիկները հավանականություն ունեին խույս տալու ընդհանուր ճակատագրից, այն էլ պայմանով, եթե կրոնափոխվեին: Թոյնբին նշում է. «Ի պատիվ հայերի հարկ է ասել, որ շատ քչերը գնացին կրոնափոխության»:

Միայն որոշ քաղաքներում նրանց, ովքեր միջոցներ ունեին,- գրում է Գիբբոնսը,- թույլատրվեց անասանելի թանկ գնով ձեռք բերել սայլեր կամ քաշող անասուններ: Սակայն ամեն անգամ, հենց որ քարավանները քաղաքներից դուրս էին գալիս, այդ սայլերն ու անասունները անմիջապես հավաքում էին: Այդպիսով թե հարուստները եւ թե աղքատները ի վերջո մնացին միայն նրանով, ինչ կրում էին»[47]:

Ամենուրեք առաջին գործը եղավ կանանց ու տղամարդկանց իրարից բաժանելը, տղամարդկանց հեռացնելն ու երեխաներին ծնողներից խլելը: Ամենուրեք ճանապարհին, երբեմն դրա հենց մեկնարկին, անգամ մինչեւ քարավանների շարժվելը, ամենագեղեցիկ կանանց ու աղջիկներին, հատկապես ունեւոր ընտանիքներին պատկանողներին, փակում էին առանձին տներում եւ հաճախ այդ արվում էր բացահայտ[48]:

«Ցուրաքանչիւր գիւղի եւ քաղաքի հայ բնակիչները,- գրում է Ջ. Բրայսը,- ամբողջութեամբ դուրս բերուած էին, տուն առ տուն փնտռտուքով: Իւրաքանչիւր բնակիչ քշուած էր փողոց»[49]:

46 Մորգան Ժ. Հայ ժողովրդի պատմութիւն իր տարեգրութեան ամենաստոյգ ժամանակներեն մինչեւ մեր օրերը, Բոստոն, 1947, էջ 344:
47 Гиббонс Г., նշվ. աշխ., стр. 26:
48 Ն. տ., էջ 22:
49 Թորիկեան Ե., նշվ. աշխ., էջ 32-33:

Տղամարդկանց մի մասին անմիջապես նետում էին բանտ, որտեղ նրանց խոշտանգումներով սպանում էին: Մյուսներին բնակավայրից դուրս էին տանում եւ այնտեղ զատում էին եւ ոչնչացնում: Դրա համար նախապես որոշված վայրերում հավաքում էին քրդերի, թուրքերի, չեթեների, որոնք գազանաբար հոշոտում էին նրանց: Ճակատամարտ շրջաններում բռնագաղթը տեղի էր ունենում ոչ այնքան հայերի, որքան թուրքերի եւ քրդերի խումբի պայմաններում: Ընդհանուր խումբ՝ նահանջող զորք եւ չփոթի մատնված բնակչություն, ծնողները կորցնում էին երեխաներին, իսկ երեխաները՝ ծնողներին եւ հարազատներին: Հետեւանքը լինում էին մեծ թվով որբացած, խնամքից ու պաշտպանությունից զուրկ երեխաները, որոնք այլեւս ուժ չունենալով քայլելու, կործանվում էին տեղահանության ու գաղթի ճանապարհներին:

Կատարված մեջբերումները չեն հաստատում Թ. Աքչամի կարծիքը, թե տեղահանությունը տարբեր տեղերում տարբեր ձեւով էր կատարվում: Ընդհակառակը, սխեման ամբողջությամբ նույնն էր, տարբերությունները մասնակի բնույթ ունեին: Բրայսը նկարագրում է. «Մունետիկները հրապարակում էին հրամանը՝ բոլոր տղամարդիկ հավաքվեն մի վայրում, ներկայացողներն անմիջապես կգնդակահարվեն: Հայերն, առանց բոպե կորցնելու, կատարում էին հրամանը: Հավաքվածներին անմիջապես ձերբակալում էին եւ 2-3 ժամ անց բոլորին պարանով իրար կապելով, քշում էին քաղաքից դուրս»: Տանելով որեւէ անմարդաբնակ վայր (անտառ, քարհանք, փոս)՝ նրանց մինչեւ վերջին մարդը ոչնչացնում էին: Զուգահեռաբար «1915թ. գարնանը եւ ամռանը ռազմաճակատային գծի խրամատների ամրացման վրա աշխատելու համար զորակոչված հայերին սկսեցին խմբերով թիկունք տանել եւ առանց բացատրության սպանել»: Տղամարդկանց տանելուց ու ոչնչացնելուց հետո, կանանց եւ երեխաներին հրամայեցին պատրաստվել ճանապարհի: «Կանանց պաշտոնապես առաջարկվում էր գաղթից փրկվելու համար անմիջապես մահմեդականություն ընդունել եւ ամուսնանալ մահմեդականների հետ... Կահույքի վաճառքն արգելվում էր, որովհետեւ դատարկված տներում բնակեցվելու էին թուրքերը»[50]:

Պոլսից եկած բոլոր հրամանները, վկայում է Թոյնբին, իրար նման էին եւ տեղերում գործադրվեցին բացառիկ պարտաճանաչությամբ: Միայն երկու պաշտոնատարներ հրաժարվեցին դրանք գործադրելուց: Մեկը Էվերիկի կառավարիչն էր, որին անմիջապես պաշտոնազրկեցին: Դրա փոխարեն մի ուրիշ կայմակամ հետեւյալ պատասխանը տվեց գերմանացի միսիոների միջամտությանը. «Նույնիսկ եթե օրենքն ու սուլթանը ցանկանան արգելել , միեւնույն է, այդ հրամանները գործադրելու եմ...»[51]: Իսկ Ալի Ֆուադը բռնագաղթի վերաբերյալ Թալեաթի հեռագրին պատասխանեց. «Ոճրի գործիք չեմ կրնար ըլլալ: Դու հրամեցեք տեղահանությունը գործադրելու»[52]:

"El Dia" թերթը, վկայակոչելով Լոնդոնի մամուլին, գրում է, որ Անկարայում, Էրզրումում եւ Սրվազում հայերը խիստ հալածանքների էին ենթարկվում: «Ըստ դիվանագիտական աղբյուրների այս շրջանների հայերը տարագրվել են երկրի խորքերը: Թուրքերը բռնագրավել ու կողոպտել են նրանց ունեցվածքը»[53]:

«Ultima oru dela tribuna popular»-ը 1915թ. սեպտեմբերի 6-ին գրեց, որ Կ. Պոլսում, ինչպես նաեւ Թուրքիայի մյուս հզոր քաղաքներում հայերի վիճակն անտանելի է: Ձերբակալություններն ու բռնագրավումները պարբերական բնույթ ունեն, մտավորականությունը զանգվածաբար ձերբակալվում է, ռազմական դատարանը շատերին կախաղան է հանել»: «...Իրենց հանցավոր ձեռների վրա հետքեր չթողնելու համար,- նկարագրում է Ա. Վեգները,- գերեվարողները, ժողովրդին իր առաջնորդներից ու պատգամավորներից զրկելուց հետո, քշեցին քաղաքներից դուրս... կողոպտեցին նրանց տները, կրակի տվեցին գյուղերը, եկեղեցիները քարուքանդ արեցին կամ մզկիթների վերածեցին, հափշտակեցին անասունները, բռնագրավեցին բոլոր սայլերը, զոհերի բերանից խլեցին հացը, հանեցին նրանց հագի շորերը, պոկեցին նրանց գլխի ոսկեղեն զարդերը... Նրանք քշեցին մի ամբողջ ժողովրդի՝ տղամարդկանց ու կանանց, ալեհեր ծերունիներին ու մանուկներին, հղի մայրերին ու ծծկեր երեխաներին դեպի Արաբական անապատներ՝ չունենալով այլ նպատակ, քան թողնել նրանց սովից տանջամահ լինելու...»[54]:

Հայ կանանց, երեխաների ու ծերերի տեղահանումը խարդախորեն քողարկված մի մահապատիժ էր լոկ, նկատում է Ռ. Պինոն, եւ նրանց ոչնչացումը տեղում ավելի մարդասիրական կլիներ, որովհետեւ դա կազատեր մարդկանց սարսափելի տառապանքներից[55]:

Ա. Մանդելշտամը գրում է. «Տեղահանությունը միանման չէր իրականացվում: Սկզբում տարագրվեց աշխատունակ արական սեռի բնակչությունը: Որոշ տեղերում չզորակոչված երիտասարդները դեռ գարնանը նետվել էին բանտերը... Տեղահանությանը նախապատրաստվելու համար սովորաբար ժամկետ էին տալիս մի քանի օր կամ ժամ և նույնիսկ ընդամենը մեկ ժամ: Շատ հաճախ մունետիկի միջոցով հայերին կանչում էին կառավարական շենքի մոտ ու ձերբակալում, երբեմն էլ կալանավորում էին փողոցում կամ իրենց տներում: Այնուհետև ձերբակալում էին կանանց ու երեխաներին, գործադրելով նույն անողոք եղանակները»:

Ընթերցողը նկատեց, որ մեջբերումը ոչ թե հաստատում է Ա. Մանդելշտամի միտքը, այլ այն, որ բռնագաղթի իրականացման սխեման ամենուրեք նույնն էր եւ, իրոք, տարբերությունները միայն մանրամասներում էին:

Ջեմալ փաշան խոստովանում է, որ «կատարվել էին անախորժ դեպքեր»: Մասնավորապես բռնություններ էին գործադրվել «զենքեր փնտրելիս...վերցնում էին հայերի ձիերը, թանկարժեք իրերը»: Խոստացել էին տեղահանվածներին ճանապարհին օրապահիկ տալ, բայց չէին տվել, եւ հայերը մնացել էին առաց հաց ու ջրի: «Որոշ ընտանիքների հայրերին ուղարկեցին իրենց կանանցից ու երեխաներից հեռու վայրեր: Փոխադրամիջոցների բացակայության պատճառով շատ կանայք հարկադրված էին ազատվել իրենց երեխաներից՝ որպես ավելորդ բեռ, նրանց թողեցին ճանապարհների եզրերին կամ ցանկապատների տակ: Ոմանք նույնիսկ փորձեցին վաճառել երեխաներին»:

Թույլ չտվեցին տանել այն անասունները, որոնք գտնվում էին բնակավայրերից դուրս: «Նմանօրինակ վերաբերմունքն արատավորում էր մեր ազգի պատիվը»,- ամփոփում է Ջեմալը: Նա նույնիսկ հրաման արձակեց տեղահանման գործում «կարգուկանոն մտցնելու»: Այդ հրամանը հետաքրքիր է ոչ թե առաջարկվող միջոցառումներով, որովհետեւ դրանք ամենևին էլ միտված չէին բարելավելու բռնագաղթվողների վիճակը եւ հետապնդում էին քարոզչական նպատակներ, այլ տարագիր հայերի վիճակին եւ թուրքական իշխանությունների վարքագծին տրված գնահատականներով[56]:

Կ. Պոլսում գերմանացի դեսպանը սեպտեմբերի 25-ին հեռագրեց Բեռլին, թե օսմանյան մի բարձրաստիճան պաշտոնատար իրեն ասել է. «Ջնայած տարագիր հայերին սննդամթերքով ապահովելու վերաբերյալ Բ. Դռան կարգադրության, նրանց մեծ մասը սովից կոտորվելու է...»: Այսինքն՝ կարգադրությունն արվել էր ոչ թե կենսագործելու, այլ դիվանագետների աչքերին թոզ փչելու համար: Դա այդպես էր, քանի որ ջարդարարները բացեիբաց ասում էին. «Պետք է սովով մեռցնել բոլոր նրանց, ովքեր հյուծվածությունից չէին մեռել»:

«Հայերի դեմ կիրառված վերջին եւ ամենասարսափելի քայլը,- գրում է Մորգենթաուն,- նրանց բռնի զանգվածային տեղահանությունն էր եւ աքսորը հեռավոր անապատները, ճանապարհին ենթարկելով սարսափների ու տառապանքների: Բռնագաղթվածներին փոխադրական միջոցներով ու սնունդով ապահովելու համար ոչինչ չէր արվել: Զոհերը, որոնց թվում շատ էին կրթված ու երեւելի մարդիկ, ազնվական կանայք, ստիպված էին քայլել օրեր շարունակ՝ միանգամայն անպաշտպան հանցագործների, հատկապես այդ նպատակի համար կազմավորված խմբերի, հարձակումներից»: Տները տառացիորեն կողոպտված էին, ընտանիքի անդամները՝ իրարից բաժանված ու ցիրուցան արված, տղամարդիկ սպանված, կանայք եւ աղջիկները ճանապարհին առեւանգված էին, բռնաբարված կամ հարեմները քշված: Երեխաներին գետն էին նետում կամ մայրերը նրանց վաճառում էին օտարականներին, որպեսզի փրկեն սովամահությունից: «Բացարձակ արժանահավատ ականատես վկաներից դեսպանատան ստացած զեկուցագրերում նկարագրված փաստերն իրենց գազանային ու ճիվաղային դաժանությամբ գերազանցում են մարդկության պատմության մեջ երբեւէ իրագործված կամ անգամ մտահղացված վայրագությունները»:

50 Բրայս Ջ. Հայոց հանդեպ վերաբերմունքը Օսմանեան կայսրութիւնում 1915-16-ին, Կ. Պոլիս, 1920, էջ 26-29:

51 «Ցուշամատեան Մեծ եղեռնի», էջ 1035:

52 Ն. տ., էջ 612:

53 «El Dia», 09.09. 1915:

54 Pinon R. La suppression des armenie'ns. Me'thode allemande, travaille turc, Pariz, 1916, p. 28.

55 Wegner A. An open Letter to Prezident Wilson. The Memoirs of Naim Bey, Pensilvania, 1964,pp. 75-76.

56 Ջեմալ փաշա, նշվ. աշխ., էջ 51-53.

Թուրք իշխանություններն արգելեցին գավառների եւ մայրաքաղաքի միջեւ ամեն տեսակի հաղորդակցությունը՝ «միամտորեն կարծելով, թե իրենց կհաջողվի ավարտին հասցնել բոլոր ժամանակների այս ամենամեծ ոճիրը», նախքան արտաքին աշխարհը կիմանար այդ մասին: Սակայն լուրերը սպրդում էին հյուպատոսների, միսիոներների, օտար ճամփորդների եւ նույնիսկ իրենց՝ թուրքերի միջոցով: «Մենք չուտով իմացանք, որ բոլոր գավառների կառավարիչները հրաման են ստացել ամբողջ հայ ազգաբնակչությանը՝ անկախ տարիքից ու սեռից, աքսոր ուղարկելու մասին: Տեղական իշխանությունները, չնչին բացառությամբ, ամենայն բարեխղճությամբ կատարեցին այդ հրամանը: Բոլոր կարող հայ տղամարդկանց քշեցին բանակ կամ զինաթափեցին: Մնացածները՝ ծերեր, կանայք ու երեխաներ ամենադաժան ու ամենազարհուրելի վերաբերմունքի արժանացան»[57]:

Անգլիական "Southlook"-ը 1915թ. օգոստոսի 18-ին տպագրեց. «Հայերը Փոքր Ասիայում» հոդվածը, որում կարդում ենք. «Հուլիսի 26-ին, լորդերի պալատում կոմս Բրյունը պատասխանելով Վիսկոնտ Բրայսին՝ Հայաստանում քրիստոնյաների սպանություններին վերաբերող հարցին, ասել է. «Ոստիկանները գիշերով խուժեցին այն հայերի տները, որոնց անունները կային Կոստանդնուպոլսից հատուկ ուղարկված ցուցակներում: Նրանց բանտարկեցին, իսկ տները մանրամասն խուզարկեցին՝ իբր հեղափոխական թղթեր գտնելու համար: Երիտասարդ հայերին բանակ կանչեցին, ավելի տարեցներին տեղահանեցին դեպի երկրի խորքերը, կանայք ու երեխաները, եթե նույնիսկ հակառակ ուղղությամբ չէին քշվում, մնում էին միանգամայն անօգնական: Հազարավոր դեպքերում տեղահանությունն իրականացվում էր այնպիսի սկզբունքով, որ իշխանությունների ջանքերով բաժանված ընտանիքները այլեւս երբեք չմիավորվեն»:

Որպես կանոն, ընտանիքները քայքայում էին՝ տղամարդկանց ու կանանց առանձնացնում էին: Տղամարդկանց ոչնչացնում էին առաջին իսկ պատեհ առիթով: Ճանապարհորդության ժամանակ կանանց ու երեխաների ճակատագիրը ամբողջապես պահակախմբի ոստիկանների ձեռքում էր: Նրանք հաճախ համաձայնության էին գալիս ավազակախմբերի եւ քրդերի հետ, որոնք դարանակալած սպասում էին ճանապարհի եզրերին, կամ էլ վերջիններս թվով այնքան շատ էին լինում, որ պահակախումբը չէր կարողանում քարավանը պաշտպանել: Մեծ մասամբ հարձակվող ավազակները խլում էին դրամն ու թանկարժեք իրերը, որոնք կանայք դեռեւս պահել էին իրենց մոտ, կամ էլ բռնաբարում էին նրանց, ովքեր այլեւս ուժ չունեին, առեւանգում էին երիտասարդներին՝ թե՛ տղաներին եւ թե՛ աղջիկներին: Աքսորականները սնունդ չէին ստանում, նրանց վճռականորեն ոչինչ չէին տալիս խմելու: Աննշան զինումների համար պետք է վճարեին թանկարժեք զարդով կամ դրամով: Նրանց տանջամահ կամ ուժասպառ անելու համար կամայականորեն շեղում էին ճանապարհից, պտույտներ գործել տալիս. «Մեր քաղաքից՝ Ադյամանից,- պատմել է բռնագաղթվածներից մեկը,- մինչեւ Շամշար, որը Եփրատի ափին է գտնվում, տասը ժամվա ճանապարհ է: Մեր քարավանը այն անցավ տասը օրում, որովհետեւ մեզ դիտավորյալ ստիպում էին շեղվել ճանապարհից եւ շրջապտույտներ գործել»[58]:

Տեղահանության Թալեաթ-Էնվերյան ծրագիրն ունեցավ իր քննադատները ոչ միայն օտարների շրջանում, այլ նաեւ երիտթուրք պարագլուխների միջավայրում: Ալի Ֆուադ Էրդենին համադրում է տեղահանության երկու ծրագրեր, որոնցից մեկի հեղինակը Թալեաթն էր, իսկ մյուսինը՝ Ջեմալը: Երկու ծրագրերի հիմքում դրված էր նույն սկզբունքը՝ հայերն անհավատարիմ, ապստամբներ են եւ պետք է տեղահանվեին: Ըստ Թալեաթի ծրագրի՝ տեղահանությունն ընդգրկելու էր հայկական վեց վիլայեթները, Տրապիզոնի, Աղանայի եւ Հալեպի վիլայեթները, բացառությամբ Աղանա եւ Հալեպ քաղաքների: Հյուսիսային տարածքների հայերը բնակեցվելու էին Դեր Էլ Զորի սանջակում եւ Մոսուլի վիլայեթի հարավում, իսկ մյուս վիլայեթներից տարագրվածները՝ Սիրիայի հարավում եւ հարավ-արեւմուտքում: Պարտադիր էր համարվում, որպեսզի բռնագաղթված հայերի բնակավայրերը հիմնադրվեին երկաթուղային գծերից առնվազն 25կմ հեռավորության վրա: Տեղահանվածներին իրավունք էր վերապահվում տանելու իրենց արժեքավոր իրերը: Բռնագաղթի հրահանգներից մեկում ասված է. «Նոր տեղերում հայ ազգաբնակչության թիվը չպետք է անցնի տեղի մահմեդականների թվի 10 տոկոսից, աքսորավայրերում հայերի հիմնադրելիք ավանները եւ գյուղերը պետք է ունենան ոչ ավել, քան 50 տուն»:

57 Մորգենթաու Հ. Ցուցեր էջ 251-271:

58 Kunzler J. Im Lande des Blutes und der Traven, Potsdam, 1921, ss. 23-28.

Ջեմալի ծրագիրը ելնում էր հետեւյալից՝ յուրաքանչյուր հայ կայսրության քաղաքացի էր, սակայն մի շարք վայրերում հայերը կազմում էին բնակչության վտանգավոր մեծամասնությունը: Տեղահանության նպատակը պետք է լիներ վտանգավոր մեծամասնությանը վերածել անվտանգ փոքրամասնության: Տեղահանությունը սկսվելու էր Սեւ ծովի ափերից: Պետությունը պարտավոր էր ապահովել տեղահանվածների անվտանգությունը, նրանց բնակեցնել միմիայն ապրելու համար բավարար պայմաններ ունեցող վայրերում: Բռնագաղթի ենթակա չէին հաշմանդամները, ծանր հիվանդները, հղի կանայք եւ նրանց խնամակալները: Սկզբում Ջեմալը դեմ էր զանգվածային տեղահանությանը եւ գտնում էր, որ պետք է գաղթեցնել միայն «անհանգիստ» տարրերին՝ մտավորականությանը, հեղինակություն վայելող անձանց եւ նրանց բնակեցնել Կոնիայի շրջանում: Հետո նա այս ծրագրից հրաժարվեց եւ հանձնարարեց տարագիրների համար բնակության վայրեր նախապատրաստել Համայի, Հավրանի, Քերեքի սանջակներում, ինչպես նաեւ Հալեպից արեւմուտք ընկած շրջաններում:

Ջեմալի ծրագիրը մերժվեց առանց լուրջ քննարկման եւ ընդունվեց Թալեաթի ծրագիրը[59]:

Ջեմալն ընդդիմադիր կեցվածք որդեգրեց:

Բեհաեդդին Շաքիրից ստանալով հետեւյալ բովանդակությամբ հեռագիր. «Մենք Տրապիզոնից, Էրզրումից, Սրվազից, Բիթլիսից, Մամուրեթ ուլ Ազիզից եւ Դիարբեքիրից բռնագաղթվածների 95%-ին ուղարկել ենք Մոսուլի վիլայեթի հարավային շրջանները, իսկ դուք, ինչպես պարզվում է, նրանց ուղարկում եք Հալեպ...», Ջեմալը նրան սպառնաց, որպեսզի այլեւս հեռագիր չուղարկի: Իսկ գլխավոր հրամանատարի տեղակալին գրեց. «Ես նման նահանգապետի եւ հրամանատարի չգիտեմ: Ինչո՞ւ է այդ անձը խառնվում այս գործերին»:

«Հարյուր հազարավոր մարդկանց վերաբնակեցումը,- գրում է Ալի Ֆուադը,- հազարավոր կիլոմետր հեռավորության վրա ընկած շրջաններում, առանց նախապատրաստության, ինչ-որ բանով հիշեցնում է ժողովուրդների գաղթը հին ժամանակներում: Կովկասյան, իրաքյան եւ սիրիական ռազմաճակատներում կռվող բանակների թիկունքի ապահովման աղբյուր հանդիսացող շրջանները դարձան զանազան համաճարակների տարածման հրապարակներ: Պայմանները, որոնցում ապրում էին վերաբնակեցվածները, ավելի քան բարենպաստ էին խոլերայի եւ բծավոր տիֆի համար: Տարագիրները տարածում էին այդ հիվանդությունները, որի հետեւանքով համաճարակը հասավ կանոնավոր բանակի զինվորներին եւ զոհերի թիվը ազգաբնակչության ու զինվորների շրջանում ավելի փոքր չէր, քան բռնագաղթվածների շրջանում»[60]:

Թալեաթի ծրագիրը ոչ միայն ընդունվեց, այլեւ գործադրվեց որպես բնաջնջման միջոց: Բռնագաղթի միջոցով ու դրա քողի տակ իրականացվեց Հայ էթնոսի անհետացման քաղաքականություն, որը միավորում էր մեռցնելու եւ սպանելու միջոցները: «Հայերի նկատմամբ գործադրված անողորմ դաժանության վերջին փուլը,- գրում է Հ. Նտուրմերը,- եղավ համընդհանուր գաղթը: Մարդկանց բռնությամբ իրենց օջախներից հանում եւ աքսոր էին ուղարկում՝ ճանապարհին գործադրելով կոտանքների ամենավայրագ միջոցներ: Տարագրվածներին փոխադրամիջոցով կամ սնունդով ապահովելու համար ոչինչ չէր արվում: Դժբախտները՝ այդ թվում մտավորականներ, բարձրատոհմիկ տիկնայք, ստիպված էին գնալ հետիոտն, դիմակայել իրենց հալածող ավազակներին: Բոլորի տները լրիվ թալանվում էին, իսկ ընտանիքի անդամներին իրարից բաժանում, ցիրուցան էին անում՝ որպես կանոն տղամարդկանց սպանելով, կանանց, աղջիկներին առեւանգելով եւ հարեմ տանելով»:

Թավշունի եկեղեցու չորս կողմը, պատմում է ականատեսը, կարծես հիվանդանոց լիներ: «Սալահատակի վրայ փռուած են անոթի հիվանդներ եւ վիրավորներ, աղիողորմ պատկեր ձեւացնելով, ալ հասարակ դասական պատկեր տարագրութեան քարավաններուն մէջ, ուր որ ալ ըլլան: Էսքեշեհիրի կայարանի դեմի դաշտը անոր նախատիպար գաղափարը տուած է մեզի: Դաշտը անձրեւեն ողողուելով լիճի վերածուած է, ուր մակաղած հազարի չափ տարագիրներ, մինչեւ ծունկները ջուրերուն մէջ կը քալեն անոնց վրայ ծփացող իրենց գոյքերը փրկելու...»:

59 Fuad pasha Political testament, Istanbul, 1953, ss. 120-123 կամ Akçam T. նշվ. աշխ., էջ 156-162.

60 Fuad pasha, նշվ. աշխ., էջ 122-123.

Սկսելով բռնագաղթը, երիտթուրքերը խզեցին բոլոր հարաբերությունները հայ հասարակական-քաղաքական ուժերի հետ: Նախ չեղյալ հայտարարեցին ՀՅԴ-ի հետ կնքած համաձայնագիրը եւ հարաբերությունները դաշնակ գործիչների հետ: Վերջինները, ոչ մի կերպ չկարողանալով հարաբերության մեջ մտնել Թալեաթի հետ, նրան բաց նամակ հղեցին, որը տպագրվեց «Դրոշակի» 1915թ. հունիսի 2-ի համարում: Այդ որքան զգացմունքային, նույնքան էլ պարզունակ-քարոզչական բնույթի նամակը, հավանաբար ուղղված էր ոչ այնքան Թալեաթին, որքան թուրք հասարակությանը: «Խորը կսկիծով է, որ ձեզ ուղղում ենք այս հեռագիրը,- կարդում ենք նամակում,- բողոքելու համար մեր բոլոր ուժով, մեր ողջ կորովով եւ մեր էության բովանդակ խորությունով քրդերի եւ թուրքերի կողմից եւ, ինչը որ ավելի ծանրակշիռ է, թուրքական կանոնավոր բանակի օժանդակությամբ հայ ժողովրդի հանդեպ գործված արհավիրքների դեմ:

Ո՞վ կազմակերպեց այս կոտորածները: Ո՞վ է պատասխանատու այս վայրագությունների, որ նսեմացնում է համիդյան ռեժիմի այնքան սոսկալի արհավիրքները, ո՞վ տարածեց սգո այս քողը ամբողջ Հայաստանի վրա, Կիլիկիայից մինչեւ Արաքս եւ Արարատ լեռը: Ո՞վ այս դժբախտ երկիրը վերածեց ավերակների չեղջակույտի, անգթորեն ջարդելով արու բնակչությանը առանց տարիքի խտրության, բռնաբարելով ու հափշտակելով կանանց եւ թողնելով միայն ծերերին ու հվանդներին լալու մնացող ավերակների վրա:

Զոհերի թիվը հաշվվում էր ոչ թե հարյուրներով, այլ հազարներով: Գրեթե բոլոր հայ գյուղերն էլ վնասված են, նրանցից մեծ թվովները սրի են քաշված եւ այլեւս գոյություն չունեն: Նախահարձակները չեն բավականացել կողոպտելով բնակիչներին, բանակի կարիքների պատրվակով հափշտակելով նրանց ողջ ունեցվածքը, նրանք չեն բավականացել ծառայության ընդունակ բոլոր երիտասարդներին հավաքելով, փոխանակ բանակ ուղարկելու, ստորաբար կոտորել են մեկուսի ձորերի մեջ, բռնանալով եւ վիրավորելով նորահավաք զինվորների ազգային եւ կրոնական զգացմունքները, նրանց բռնադատելով ամոթալի գործերի, ստությամբ ամբաստանելով լրտեսության եւ դավաճանության մեջ եւ հաճախ նրանց սպանելով: Բավարար չէր հայ աչքի ընկնող անձանց անհետացնելը բանտարկելով, մեկուսի վայր ուղարկելով, բավարար չէր սարսափը մի ամբողջ ժողովրդի մեջ թագավորեցնելը, պետք էր Հայաստանն ու Կիլիկիան վերածել ընդարձակ գերեզմանատան:

Ո՞վ է հանցավորը: Ամբողջ աշխարհը եւ առաջին հերթին ձեր դժբախտ զոհերը ձեր երեսին բղավում են ձեր ոճիրի մասին, նաեւ նրանք, ովքեր երեկ ձեր բարեկամներն էին եւ ձեզ հետ աղ ու հաց են կիսել... Արդեն աղքատ երկիրը կատարելապես ավերվեց: Սոսկալի բարդություններ եւ արյունոտ պարտություններ առաջացրիք Հայաստանի սահմանների վրա եւ զոհեցիք անհամար երիտասարդ կյանքեր: Ու այսօր դուք մահացու կռիվ եք մղում եւ այլեւս անկարող փրկելու ձեր հայրենիքը, ստորաբար նետվում եք անպաշտպան ու զինաթափ դժբախտ հայ ժողովրդի վրա:

Ձեր քաղաքականությունն էր, որ ստիպեց հայերին խմբեր կազմել կռվելու իրենց ցեղի սիստեմատիկ բնաջնջումների դեմ: Ձեր ցանածն եք հնձում»:

Այս նամակն ինքնին ուշագրավ փաստաթուղթ է ոչ միայն այն պատճառով, որ արդեն մայիսի վերջի տվյալներով ներկայացնում է Մեծ եղեռնի համայնապատկերն իր հիմնական գծերով, այլեւ հստակ մատնանշում է հանցագործության կազմակերպչին՝ Միությունն եւ առաջադիմությունն կուսակցությանը, նրա անդամների երեսին շպրտելով, թե ՀՅԴ « ձեզ ամբաստանում եւ բարոյապես ու իրավականորեն պատասխանատու համարում հայ ժողովրդի, ինչպես նաեւ Օսմանյան կայսրության դեմ գործած ոճիրների համար»:

Երկար ժամանակ, ջանքեր ու միջնորդություններ պահանջվեց, որպեսզի երիտթուրք պարագլուխներից մի քանիսն ընդունեին Զավեն պատրիարքին: Սկզբում նրան ընդունելը հանձնարարվեց արդարադատության նախարար Իբրահիմին: «Հայկաշեն տարեգրքում» (1922թ.) հրապարակված է պատրիարքի հետ նախարարի զրույցի (21-ը հունիսի) մանրամասները: Պատրիարքն ասում է, թե հոգեւորականների մի մասը բանտերում է, իսկ մյուս մասին որեւէ տեղեկություն չկա, եկեղեցիներն ավերված են կամ փակ, ժողովուրդը քշվում է անապատ: Նախարարը պատասխանում է, թե կառավարությունը բոլոր կարգադրություններն արել է տեղահանված հայերին ապրելու եւ աշխատելու պայմաններով ապահովելու համար: Պատրիարքը նկատում է, թե «հայերն իրենց տներից դուրս են գալիս մերկ, անասուններն ու սննդամթերքը բռնագրավում է իշխանությունների կողմից, իսկ ինչ կարողանում են հետները տանել, ճանապարհին նրանցից խլում են: Ճանապարհներին թափված են դիակներ, փոքր երեխաները լքված, ընկած են երթուղիներում: «Եթե վստահություն չի տածվում հայ ժողովրդի հանդեպ, նրան ազատ թողեք հեռանա երկրից: Հայրենիքի համար մենք էլ արյուն ենք թափում, բայց մեր կանայք ու երեխաները քշվում են անապատներ... մեկ միլիոնի չափ ժողովուրդ մահվան է դատապարտվում»:

Երկու օր անց պատրիարքին ընդունեց եպարքոս Սայիդ Հալիմը, որն ասաց. «Ընդունում ենք, որ հայ ժողովրդի վիճակը ցավալի է, բայց դրա պատճառը ոչ թե մենք, այլ դուք եւ ձեզ պաշտպանել ուզող պետություններն են... այս անգամ խնդիրն այլ բնույթ ունի, գործ ունենք մի հզոր կազմակերպության հետ եւ ժողովրդի մի մասը զենքի է դիմել մեր դեմ»: Պատրիարքը վճռականապես մերժում է հայերի ընդհանուր ապստամբության թեզը: Վարչապետը չի համաձայնվում, բայց նաեւ ասում է. «Զորի հետ թացն էլ է այրվում»: Այդ թացը մեկ միլիոն մարդ էր՝ ծեր, կին, երեխա: «Եթե կառավարությունը գտնում է, որ հայ ազգն ապստամբ է, թող տղամարդկանց ջարդի, այլ ոչ թե կանանցից ու երեխաներից վրեժ լուծի»,- նկատում է պատրիարքը: «Կառավարությունը,- պատասխանում է Ս. Հալիլը,- հայ ազգը բնաջնջելու դիտավորություն չունի, բայց իր որոշածից հետ չի կանգնի»: Ինչ կատարվում է, «պատիժ չէ»:

Թալեաթի հետ հանդիպումը ամիսներ ձգձգվեց եւ տեղի ունեցավ սեպտեմբերի 19-ին: Այս հանդիպման կայացմանը օգնեց Հալիլը: Թալեաթը նույնպես հայերի ողբերգական վիճակի պատճառ համարում էր իրենց՝ հայերին: «Նրանց ներքինն ամենից ավելի իմացողը ես եմ: Մենք տեղյակ ենք ամեն ինչին... Աշխարհի ոչ մի տեղ չի գտնվի մի ժողովուրդ, որը մայրաքաղաքից մայրաքաղաք շրջի եւ իր կառավարության գործերին միջամտություն խնդրի»: Պատրիարքն առարկեց, թե այդպես վարվողներն անհատներ են: Նախարարը չհամաձայնվեց. «Այսօր մի կուսակցություն է, վաղը մի ուրիշը կծնվի, ոչ կուսակցականն էլ կուսակցական կդառնա, գործն ընդհանուր բնույթ ունի: Այդ պատճառով անհրաժեշտություն առաջացավ, որ այս ժողովուրդն իր բնակավայրից հեռացվի ու ... չեզոքացվի»: Կանանց ու երեխաներին էլ բռնագաղթեցնում ենք, որ «իրենց ընտանիքների հետ լինեն»: «Սեբաստիայի Շարկշլայում տարագիրներից երեխաներին խլում են եւ տալիս են տարբեր անցորդների, մի մասին էլ Պոլիս են բերել»,- նկատեց պատրիարքը: «Կքննենք»,- պատասխանեց Թալեաթն ու շարունակեց. «Հայրենիքը հայերից շատ եմ սիրում»:

Եվ հայերը շարունակեցին բռնագաղթվել ու ոչնչացվել: Մահմեդական ամբոխը խրախուսվում էր նրանց թալանելու, բռնություններ գործադրելու: Դրա հետեւանքով տարագիրներն արդեն գաղթի երկրորդ օրը քայլում էին առանց ոչնչի, շատերը լրիվ մերկ: «Կանայք իրենց ամոթները ծածկում էին ծառերի տերեւներով, ժանդարմները թույլ չէին տալիս անգամ ոտից փուշ հանել...»: Կանգառներին քարավաններին ուղեկցող ասկյարներն ու ժանդարմներն աղջիկներին զինարբուքների զոհ էին դարձնում: Երբ քարավաններից մեկը կանգ առավ մահացածին թաղելու համար, ոստիկանը զայրացավ. «Ելեք, մի մեռածի համար չենք կարող քարավանը կանգնեցնել»: Հայերը, թե՝ «էֆենդի, մենք կաթոլիկ ենք»: Ոստիկան. «...Ինչ կաթոլիկ, ինչ բան, աղբը չոր ու թաց ունի՞, բոլորը նույն են»[61]:

Թո. Լեփսիուսը 1915թ. հունիսի 18-ին Սոֆիայից ստացավ հետեւյալ հեռագիրը. «Հայաստանը մաքրում են հայերից: Երզնկայից, Մարաշից, Հաճընից, Այնթափից հայ բնակչությունն ուղարկված է Միջագետքի խորքերը»: Կիլիկիայում զանգվածաբար աքսորում են բոլոր հայերին: Կ. Պոլսում նույնպես: Համընդհանուր հուսալքություն է[62]:

Թուրքիայում գերմանական գործակալ Ֆյունցլերը նույն այդ օրերին հաղորդեց. «Շատ ցավալի է հայկական քաղաքների բնակիչների աքսորումը անմարդաբնակ, կործանարար վայրերը: Գրեթե ամեն օր այստեղ (Ուրֆա) գալիս են Զեյթունի, Հաճընի, Այնթափի եւ այլ քաղաքների բնակիչների քարավաններ, որոնք բոլորն ահավոր տրամադրության մեջ են: Հիվանդներին եւ մեռնողներին թողնում են ճանապարհներին բախտի քմահաճույքին: Ինքս տեսա 80 տարեկան ծերունու՝ պառկած ճանապարհին... Կառավարությունը որոշում է ընդունել, որպեսզի այդ հայերին որեւէ ձեւով որեւէ օգնություն ցույց չտրվի... Հայերը պետք է բնակվեն անմարդաբնակ անջուր

61 Ռազմական դատարանի դիվան, թիվ 16 արձանագրություն կամ Անտոնյան Ա. Մեծ ոճիր, էջ 291:
62 R 14086, Ab 19202.

Զեբել Աբդուլ Ազիզում: Այս ամենը որքան մարդկային կյանքեր կխլի, անմեղ տղամարդկանց, կանանց եւ երեխաների կյանքեր: Երբ ես տեսնում եմ հայ ժողովրդի վիճակը եւ ապա հիշում եմ Թուրք մայոր Հաֆըզ բեյի խոսքերը, թե այս պատերազմից հետո մենք պետք է բնաջնջենք հայ ժողովրդին կամ հարկադրենք նրան տարագրվելու, երկյուղում եմ, որ պատերազմական պայմաններն օգտագործվում են, որպեսզի հնարավորին չափ շատ կրճատվի այդ խելացի ժողովրդի թիվը»[63]:

Պոլսից մի անգլիացի գրում է. «Զեյթունը դադարել է որպես հայկական քաղաք գոյություն լինելուց: Բնակիչները ցրվել են, քաղաքը գրավվել թուրքերի կողմից, փոխվել է անգամ անունը: Նույնը կարելի է ասել Հաճընի մասին, այն տարբերությամբ, որ անունը չի փոխվել: Էրզրումի, Բիթլիսի, Երզնկայի հայերին բռնությամբ մահմեդականացրել են: Ստեղծվել է 1895-ի իրավիճակը: Զեյթուն,Հաճըն քաղաքների բնակչությանը կիզիչ արեւի տակ նախիրի պես քշեցին սոված ու ծարավ: Միայն մի քանի սարսափելի ուժասպառ զեյթունցիներ հասան Ադանա, մյուսները մեռան ճանապարհին: Մոտ հազար ընտանիք Հաճընից հասավ Հալեպ՝ ծայր աստիճան թշվառ վիճակում: Ասում են, որ նրանց ստիպելու են շարունակել ճանապարհը: Ամուսինները բռնությամբ բաժանված են միմյանցից եւ քշված տարբեր ուղղություններով: Երեխաներին էլ պոկել են ծնողներից: Մենք իմացանք, որ 20 հազար թուրք է Զեյթուն բերվել եւ բնակեցվել սերնդեսերունդ հայերին պատկանած տներում...»:

Այս ողբերգական վիճակը չէր խանգարում եթիհադական առաջնորդ, «հայ ժողովրդի բարեկամ» Զեմալին լկտիաբար ասելու. «Եղբայր հայեր, եթե ֆրանսիացիներն ու անգլիացիներն իմանային, թե ինչ է տեղի ունենում հայկական մյուս շրջաններում եւ, եթե համեմատեին Կիլիկիայում տիրող վիճակին, ինձ շնորհակալություն կհայտնեին»:

Հայոց ցեղասպանության առանձնահատկություններից մեկն այն էր, որ այն իրականացվում էր յուրաքանչյուր նահատակին առավելագույն խոշտանգումների ենթարկելու միջոցով: Իբրահիմ անունով մի ավազակապետի մոտից դուրս գալիս թեմի առաջնորդ Զալըքյանի «գլուխը փոշու մեջ պլված էր. նա ոտքերուն վրայ քալելու անկարող, սոսկումնահար, ապուշացած էր»: Մի ուրիշ հոգեւորականի գլխին է իջնում Իբրահիմի խարազանը, «այնքան ուժգին հարվածներով, որ նիհար, կաշի-ոսկոր ծերունին ծոծրակին վրայ սեւ-կապույտ ուռուցք մը կը գոյանայ, յանկարծ քահանային գետին են փռում»: Ապա (Իբրահիմը) ատրճանակը քաշեց եւ մտավ ժողովրդի մեջ, «մեկ հոգի 300 հայերու կիշխե, իբր դահիճ անոնց կեանքին սպառնալով»: Նա հետապնդում է հայ ամբոխին, որ փախչում է այդ գազանից ու վազելով պտտվում եկեղեցու մեջ: Ապա պատվեցնում են «հեղափոխական» կասկածվողներին եւ ֆալախա ու ճիպոտներ են բերում եւ սկսում են ծեծել: Օրինակ ցույց էր տալիս ինքը՝ Իբրահիմը: Մի հանձնախումբ խուզարկություն է սկսում տներում, իսկ եկեղեցում ծեծը շարունակվում է 14 օր, եւ այդ բոլոր օրերին հայերը փակված էին իրենց տներում, իսկ քաղաքը մեռած էր: Զենքերը հավաքեցին, եւ երկու օր հետո սկսվեց բռնագաղթը: 20 հազ. մարդ: «Մարդկային էակներու ծփուն ծով մը, որուն ալիքները բազմաձեւ գալարումներով կը թավալին՝ ողբի հծծիւններով, անեծքի մռնչիւններով, անզոր կատաղութեան յուսահատական մրմունջներով... Սեւ ճակատագրին հեռանկարեն զարհուրած, անոնք հաշտուած են արդեն մահուան... Դիտակցութիւնը ունին վաղուան արիւնոտ արհավիրքներուն... Անորոշ, անգիտակից, աննպատակ տատանումի կոհակներու է վերածուած բովանդակ ժողովուրդը, տուներեն փողոցները թափած, համազանգուած բռնագաղթի բեկորներու թշուառութիւնով, ոչխարի հոտերու բաժան-բաժան խումբերու պես, որոնք հաշիվ չունին, մեծամասնաբար կին ու տղայ, անխնամ տարազներով զգեստավոր, դեռ ճամբայ չելած աղքատ, քանի որ չգիտեին, թե ինչ գոյք առնելու են ... եւ ամեն ինչ լքելու դատապարտուած՝ ծարխելու համար, մինչ գնորդ չկայ, անոթի, անսուաղ, չոր հաց կրծելով... եւ ճակատագրուած երեք օրուան մեջ կայարանը գտնուելով կառախումբ մտնելու, կենդանիի երկյարկ վագոններու մեջ, նախիրի պես խառնիխուռն, վրայ-վրայ, ընտանիքի անդամները իրարմե խզուած... վաղը բորիկ քալելով այն ճամբաները, որոնք հալածական աքսորուածները դեպի անջրդի անապատները կառաջնորդեն, որպեսզի հոն որեւէ խանձած, ծարավե պապակած, անոթութենե հիւծած, յոգնութենե կմախքացած, իյնան մահուան մանգաղեն հնձուելով, եթե մինչ հող, ճամբան հրաչքով ազատած են՝ կողոպուտի եւ թալանի կեղեքումներեն, կոտորածի համաջարդերե, յաթաղաններով խողխողուող ողջակեզներու արիւնի գետերեն:

63 R 14086, Ab 22125.

Փարթամ հայությունը վաչկատուն բոչայի կեանքի մեջ մտցուած է: Ճերմակ սավաններով կազմուած ծաղրանկարային ճամբային ամբողջ երկայնքի երկու եզերքները տեղավորուած է խուռներամ բազմութիւնը, աննկարագրելի խեղճութեան տուայտանքներու մեջ, թիզ մը փոշիի վրա տապլակելով: Անվերջ երթեւեկներու շարժումներեն յուրացուած փոշիի ամպը տեւականապես առկախ կը մնայ օդին մեջ, խաժամուժ ամբոխին դեմքերը եւ վրայ-գլուխը մրոտելով, կիզիչ արեւեն քրտնած մարմիններուն աղտի շաղախով ծեփուելուն ընկերացած»[64]:

Կայարանում հրդեհ բռնկվեց, հավանաբար դիտմամբ էր հրկիզվել խուճապի թոհուբոհում հայերին թալանելու համար: Եվ իսկապես, խուժանը շարժվեց դեպի հայերը, բայց «հայ քաջարի երիտասարդները... ճոկաններով պաշտպանողական գոտի մը կը հաստատեն»:

Ալեքսանդրեթում Գերմանիայի փոխհյուպատոս Հոֆմանը ներկայացնում է. «Հոկտեմբերի վերջերին տեղահանությունն ընդգրկեց ամբողջ Անատոլիայի հայ բնակչությունը մինչեւ Կ. Պոլսի եւ Զմյուռնիայի դարբասները»[65]:

Որ Հալեպի հայերին մինչեւ այդ չէին տեղաշարժել, հավանաբար արդյունք էր տեղական որոշակի ուժերի դիմադրության՝ որոնք հայերի անհետանալուց կրելու են ֆինանսական մեծ կորուստներ: Հայտարարված էր, որ կաթոլիկներն ու բողոքականները հեռացվում են միայն ծովափնյա շրջաններից եւ կարող են բնակություն հաստատել երկրի խորքերում: Սակայն երբ նրանք Հալեպ հասան, «հայ գրիգորյականների նման քշվեցին հարավ:

Ապացուցված կարելի է համարել, որ հայկական վիլայեթներում բռնագաղթն ուղեկցվել է արական սեռի մանկական տարիքից բարձր, իսկ հաճախ նաեւ ամբողջ բնակչության զանգվածային ջարդով»[66]:

Կենդանի մնացածների վկայություններն այնպիսին են, որ բացառում են նախնական գործարքն ու պայմանավորվածությունը: Հավանաբար ամենածանրը եղել է Դիարբեքիրի վիլայեթի վիճակը, որի վալի Ռեշիդը Հալեպ այցելության ժամանակ հրապարակավ հայտարարեց, թե իր վիլայեթում չի հանդուրժի ոչ մի քրիստոնյայի:

Պատմում է Ա. Շիրակյանը. «Սկսվում էր կանանց ու երեխաների տեղահանությունը: Երբեմն հայտարարում էին, թե նրանց տանում էին «իրենց ամուսինների մոտ»: Որոշ տեղերում երիտասարդ կանանց ու աղջիկներին թույլ տվեցին չբռնագաղթել եւ մահմեդականանալ ու անմիջապես իրենց համար մահմեդական ամուսին գտնել. « Այդ պարագային պետք է զատուեին նաեւ իրենց փոքրիկ զավակներեն, որոնք կը հավաքուեին կառավարական հատուկ որբանոցներու մեջ մահմեդական դաստիարակութիւն ստանալու համար»[67]:

Տղամարդկանց քարավաններն ամբողջությամբ կոտորվում էին, իսկ կանանց եւ երեխաներինը՝ ոչ միշտ: Սակայն երկու դեպքում էլ լրիվ թալանվում էին, իսկ կանայք՝ նաեւ վաճառվում էնչին գներով եւ կամ ուղղակի ձրի տրվում մահմեդականներին[68]:

Կանանց, երեխաների եւ ծերերի այս բազմությունը, ամռան կիզիչ արեւի տակ, առանց պաշտպանության եւ հանգստի, քաղցած ու ծարավ՝ դատապարտված էր անվերջ քայլելու, ամիսներ շարունակ: Երբ որեւէ աղբյուրի կամ գետի էին հանդիպում, ոստիկանները հրացանների սպառնալիքով նրանց քշում էին եւ օրերով ծարավ մնացած այդ զանգվածին թույլ չէին տալիս ջուր խմել: Եղան նաեւ ծննդաբերություններ, բայց ոստիկանները քարավանների ընթացքը չխոչընդոտելու համար նորածիններին շպրտում էին կամ ջախջախում քարերի վրա: Քարավանները գնալով հալվում էին ոչ միայն առեւանգումների ու կանանց վաճառքի, այլ, առաջին հերթին, ֆիզիկապես հյուծվելու հետեւանքով: Ով այլեւս քայլել չէր կարողանում, շունչը փչում էր ոստիկանի հրացանի հարվածից: Առեւանգումները եւ կողոպուտները դադարեցին միայն այն ժամանակ, երբ կողոպտելու նույնիսկ ցնցոտի չէր մնացել, շատերը խելագարվել էին, ոմանք կորցրել լսողությունը, նույնիսկ ուտելու բնազդը: Այդպիսին էր բռնագաղթվածների ոգիսականը[69]:

64 «Ցուշամատեան մեծ եղեռնի», էջ 610-612:
65 R 14090, Ab 288916.
66 Ն. տ.:
67 Շիրակեան Ա., Կտակն էր նահատակներու, էջ 53:
68 Ն.տ., էջ 54:
69 Ն.տ.:

Տարբեր հպատակություն ունեցող եւ տարբեր ազգությունների պատկանող ականատեսների վկայություններն այնքան են իրար նման, որ կարծես դրանք միասին են գրել: Այդ վկայությունների միջեւ տարբերությունները հիմնականում մանրամասներում են: Ինչը մեկ անգամ եւս շեշտում է, որ հայերի վկայությունները ոչ թե նրանց երեւակայության արդյունք են, այլ դժբախտ իրականության ճշմարտացի վերարտադրություն:

Ամփոփելով բռնագաղթին եւ ջարդերին վերաբերող նյութերը՝ եզեռնի իրականացման սխեման կունենա հետեւյալ տեսքը՝

-Արեւմտյան Հայաստանի կապը կտրեցին կայսրության մյուս մասերի հետ՝ անգամ քաղաքներն ու գյուղերը միմյանցից մեկուսացվեցին[70]:

-Երիտթուրքական կենտկոմն ու նրա տեղական ակումբները ծավալեցին հակահայկական լկտի քարոզչություն, մահմեդական ազգաբնակչության շրջանում հայերի հանդեպ վրեժխնդրություն եւ ատելություն բորբոքեցին:

-Հայ երիտասարդությանը զորակոչեցին բանակ:

-Մտավորականությանը եւ ազդեցիկ ուժերին ոչնչացրեցին;

-Քրեական հանցագործներին բանտերից արձակեցին, զինեցին եւ նրանց միջոցով հայերին բնաջնջեցին:

-Հայերին զինաթափեցին, նրանց ունեցվածքը թալանեցին:

-Ապրիլի սկզբներից սկսած զորակոչեցին 14-60 տարեկան թուրքերին, զինեցին եւ ուղարկեցին կոտորելու հայերին:

-Բռնագաղթ:

-Ապահովեցին իշխանության մարմինների, բանակի, ոստիկանության եւ ոստիկան զինվորների մասնակցությունը հայերի բռնագաղթին ու ջարդերին:

-Արաբական եւ սիրիական անապատներում համակենտրոնացման ճամբարներ ստեղծեցին, որոնք հայերի համար հանդիսացան «մահվան ճամբարներ»:

Անատոլիայի հայերը հիմնականում կենտրոնացած էին թերակղզու արեւմտյան եւ հարավ-արեւմտյան մասերում, սկսած Բոսֆոր - Դարդանելի ափերից մինչեւ Պաղեստին: Բացի ծովափնյա քաղաքներից հայկական զանգվածների կուտակումներ կային Տավրոսի եւ Ամանոսի լեռներում, Կիլիկիայում՝ դաշտային եւ լեռնային (Ադանայի վիլայեթ), Սիրիայում եւ Միջագետքում, Հալեպի վիլայեթում: Հիմնականում հայաբնակ էին Ադանայի, Սուեսիայի, Քեսաբի, Իսկենդերունի, Քիլիսի, Այնթափի եւ Ուրֆայի շրջանները: Հայկական հոծ զանգվածներ էին բնակվում նաեւ Կենտրոնական Անատոլիայում, մասնավորապես Անկարայի վիլայեթում: Արեւմտյան մասում հայերը կենտրոնացած էին Նիկոմեդիայի սանջակում, Բրուսայի, Կաստամոնուի, Գաղաթիայի, Կոնիայի վիլայեթներում: Սակայն արեւմտահայության ճնշող մեծամասնությունը բնակվում էր Հայաստանում՝ Կարինի, Սեբաստիայի, Խարբերդի, Տրապիզոնի, Դիրաբեքիրի, Վանի, Բիթլիսի նահանգներում:

Բռնագաղթվածների շարժն ուսումնասիրած մի հայ վկայել է.

Ա. Թրակիայի, Բութանիայի, Բրուսայի հայերը Իզմիթ-Էսքիշեհիր-Կոնիա-Պոզանդի գծով տարվել էին Հալեպ: Այդ քարավանին միացել էին Էնկյուրիի, Կասթեմոնուի տղամարդկանց խմբերը եւ Կոնիայի ու Կեսարիայի հայությունը: Առաջին զանգվածային տեղահանությունը կատարվել է 1915-ի հուլիսին, այսինքն՝ անհատական աքսորներից չորս ամիս անց: Այս գծով մինչեւ 1915-ի դեկտեմբերի վերջերը անցավ 150 000 հայ եւ ոչ մեծ թվով կրոնափոխվածներ ու արհեստավորներ էին մնացել Իզմիթի շրջակայքում: Այդ ընթացքում հայերը կորուստներ ունեցան, բայց ոչ մեծաթիվ: Կոնիայի տեղահանությունը նվազ անտանելի էր համեմատած Էրեյլիի խոշտանգումների հետ, «Էրեյլին տանելի էր Ուլու Գշլայեն: Կիլիքեն յետոյ մահերը կը շատանան եւ բուն վտարումն այս գծի վրայ կը սկսի օսմանիեի սուինավոր հալածանքով: Մամուրե կունենայ բավական մեռեալ՝ Իսլահիյե կրկնապատիկ: Ինթիլին կը տեսնե աշխատավոր այրերու հալածանքն ու ջարդը: Իսլահիյեյեն անդին ի Գաղմա եւ յԱռլազ կզգացուի ձմռան խստութիւնը, հիվանդութեան աճումը, անոթութեան խիթերը: Ժողովուրդը ըմբռնած էր, թե դեպի մահ կընթանայ:

70 "The Orient", 07. 04. 1915.

Բ. Կիլիկիա Զեյթունի եւ շրջակայքի աքսորանքեն զատ չտեսներ մեծ դժբախտութիւն: Տարսուս, Ադանա, Սիս, Հաճըն, Մարաշ, Տեորթ Եոլ, Հասան Պեյլի եւ այլն, համեմատաբար լավ պայմաններու մեջ կը ձգեն իրենց տուները եւ անտանելի կացութեամբ ճամփորդելէ վերջ հանգիստ կը գտնեն Հալեպի կուսակալութեան մեջ: Կիլիկիոյ մասը Սիրիոյ կողմը կը տեղավորուի, իսկ մեծ մասը Փոքր Ասիոյ ժողովրդեան հետ կքշուի Հալեպեն անդին՝ Միջագետքի անապատներու մեջ փչանալու:

Գ.Հայաստանի ժողովուրդը, բացի Վասպուրականեն, Հալեպի ճամբով կը դիմեն դեպի Միջագետք: Գաղթականական կեանքին մեջ Սուրիոյ եւ Միջագետքի սահմաններում կարելի չէ եղած հանդիպիլ բաղեշցիի, մշեցիի, երզնկացիի, բաբերդցիի: Հայաստանի սահմաններուն մեջ ամբողջովին փչացած կը թուին:

Կարին, Երզնկա, Քղի, Բասեն, Բաբերդ՝ Բարձր Հայքեն,

Տրապիզոն, Սամսոն՝ Սեւ ծովու ափերեն,

Ամասիա, Եվդոկիա, Սեբաստիա, Նիկոպոլիս՝ Երկրորդ Հայքեն,

Ակն, Արաբկիր, Զմշկածագ, Զարսան ճագ, Մալաթիա, Խարբերդ՝ Եփրատի եզերքներեն: Այս գիծը ոչ միայն 1700. 000 հոգիեն ավելի հայ շարժման մեջ դրած է , այլ ամենեն սոսկալի եւ աներեւակայելի գազանութիւնները ցոյց տուած է վտարեալ հայուն:

Հայաստանի կարավանները կիներե կը բաղկանային, ընդհանրապես: Եթե Փ. Ասիոյ գծին վրայ գտնվողներն իրենց ինչը կորսնցուցին, այս գիծը բռնողներն իրենց պատիվը վրայ տուին. եթե հոն հալածանքն ու թշվառութիւնը թուաբանական յառաջատվութիւն էր, հոս՝ երկրաչափական... Հալեպ կըլլայ հայութեան թշուառութեան կեդրոն ականատեսը:

Դ. Սուրիոյ գիծ.- Համա, Հոմս, Դամասկոս, Տրա, Ամման, Սալը, Քերեկ եւ Մաան գաղթական եւ անուանափոխ հայերու բնակավայր կըլլայ: Թեեւ մինչեւ վերջերը շարժման մեջ էին, բայց համեմատաբար հանգիստ կապրին, եւ մեծ կորուստներ չեն տար: Այս գծին վրայ ընդհանրապես կիլիկեցիք կը տեղավորուին: Երուսաղեմ փոքրաթիվ հայերու բաղդավոր քաղաքը կը դառնայ:

Ե. Միջագետքի գիծ.- Հայաստանի կողմեն եկողները Սուրուժի, Փոքր Ասիայեն եկողները Գաղմայի մեջ մեծ զոհեր տալեն վերջ դիակներով կը լեցնեն Պապը (80. 000մահ), Մեսքենե, Անդուհաթար, Համամ, Ռագգես, Սեպգա, Զոր կատարեալ գերեզմաններ են: Միայն Մեսքենեն 100. 000 հայու դիակ տեսած է: Հալեպ- Ռես իլ Այն, Թայ աշիրեթ եւ Մոսուլի հողերը կշտացած են հայուն դիակներով: Միայն Ռես իլ Այն չերքեզներու ձեռքով 1916-ի տարվոյ կեսերուն 35.000 հայու կոտորածին հանդիսատես եղած է:

Զոր կեդրոն եղած էր բավական հայերու մինչեւ 1916-ի գարուն. նոր ահռելի վտարում մը եւ աներեւակայելի գազանութիւններ լախտի վերջին հարուածը կուտան այդ բազմութեան: 1916-ի յուլիսին ստույգ աղբիւրներե քաղուած տեղեկութեանց համաձայն 120. 000 հայ ջարդուած է Տեր Զոր:

Հալեպեն Միջագետք աքսորականներու խոշոր գերեզմանն է[71]:

Լեփսիուսը գրում է, որ հայերի բռնագաղթը տեղի ունեցավ «երեք տարբեր մարզերու մեջ եւ երեք յաջորդական ժամանակներում»: Խուքն այն երեք մարզերի մասին է, որտեղ հայերն «ավելի միատարր կերպով հաստատուած էին եւ ընդհանուր ազգաբնակչութեան նկատելի մեկ մասը կը կազմեին (10-40%)»:

Դրանք էին՝ «ա. Կիլիկիա եւ Սուրիոյ հյուսիսային մասը:

բ. Արեւելեան Անատոլիան (Արեւմյան Հայաստան)

գ. Արեւմտեան Անատոլիան»[72]:

Նա նաեւ նկատում է, որ բռնագաղթն իրականացվեց Կ. Պոլսում մշակված հերթականությամբ՝ ըստ այս երեք տարածքների՝ հաջորդաբար: Ա. Մանդելշտամը գրում է կայսրությունը հայերից դատարկելու երիտթուրքական կառավարության ոչ միայն որոշման, այլեւ այն իրականացնելու եղանակների պլանի առկայության մասին: «1915թ. ապրիլ-մայիս ամիսները հատկացված էին մաքրելու Կիլիկիան, հունիս-հուլիսը՝ արեւելքը (Էրզրումի, Տրապիզոնի, Վանի, Բիթլիսի, Խարբերդի, Սըվազի վիլայեթները), օգոստոս-սեպտեմբերը՝ Սըվազից արեւմուտք ընկած շրջանները, որոնց բնակչությունն աքսորվեց անատոլիական երկաթուղու շրջան (Անկարա, Ադաբազար, Բրուսա), հարավարեւելքը (Զեբել Մուսա, Ուրֆա, Այնթափ) մաքրվեց միայն հուլիս-սեպտեմբերին: Անդրիանապոլ-

71 Տոնապետեան Պ., նշվ. աշխ., էջ 290-292:

72 Լեփսիուս Յո. Հայերի ջարդերը, Բեյրութ, 1965, էջ 5:

սի հայերը տեղահանվեցին հոկտեմբերին, Կեսարիայի հայերը՝ նոյեմբերին»: Ամբողջությամբ վերցրած «մաքրման» աշխատանքները կատարվեցին 1915թ. ապրիլի 8-ից նոյեմբերի 6-ը[73]:

Մասնակի բռնագաղթեր իրականացվել էին ավելի վաղ: Արդեն 1915թ. ապրիլի 24-ին Դեր Զորի մութասարիֆը գրեց ՆԳ նախարարությանը. «Դեր Զոր եկած 500 հոգին տարբեր քաղաքներից են՝ Ադաբազար, Իզմիդ, Բրուսա»: Իսկ մայիսին Բրուսայի մութասարիֆը հաղորդեց. «Անջկում բնակվող հայերի թիվը 66482 է եւ տարագրության ենթակա բոլոր հայերն աքսորված են»[74]:

Սա չպետք է հասկանալ, թե տարագրվել էր ամբողջ հայությունը, այլ միայն «տարագրության ենթակա» համարվածները:

«Ամենազանգվածային տեղահանությունն ու կոտորածները,- նշում է Աքչամը,- տեղի ունեցան արեւելյան նահանգներում, որոնց տարածքի վրա, Օսմանյան կայսրության պարտության դեպքում, անհավանական չէր հայկական պետության ստեղծումը»[75]:

Այս դիտողությունը պարունակում է թե ճշմարտություն եւ թե սադրանք: Ճշմարտություն, որովհետեւ հայերը երբեք հույսը չէին կորցրել տեր լինելու իրենց հայրենիքին: Սադրանք, քանի որ 1914-15թթ. հայերը Թուրքիայից անջատվելու հարց չէին դնում:

Իվ Թեոնոնը նշում է, որ 1915թ. հուլիսի վերջին արեւելյան նահանգներում արդեն հայ չէր մնացել, այսինքն՝ ավարտվել էր բռնագաղթի առաջին փուլը, որն իր հերթին իրականացվեց երկու եղանակով՝ տարագրություն եւ բնաջնջում տեղում: Այսպիսով, համընդհանուր տեղահանությունը հիմնականում տեւեց մինչեւ օգոստոս եւ իրականացվեց ամենաադաժան եղանակներով: Հայերի ունեցվածքը մասամբ բռնագրավվում էր պետության կողմից, մասամբ էլ տրվում էր խուժանի թալանին, իսկ ինչ բռնագաղթվածները վերցրել էին իրենց հետ, նրանցից խլում էին, հենց որ բնակավայրից դուրս էին գալիս:Տղամարդկանց սպանում էին, քարավանները հարձակման էին ենթարկվում ավազակախմբերի կողմից, իգական սեռի վրա գործադրվում էին գազանություններ, երիտասարդ կանանց ու աղջիկներին քշում էին հարեմները կամ վաճառում էին: «Ճանապարհներին թափված էին մեծ թվով ուժասպառ մարդիկ, ինչպես նաեւ այլանդակված դիակներ: Մնունդն ամենուրեք անբավարար էր, երթուղու վրա ընկած գյուղերի բնակիչներին արգելում էին տարագիրներին սննդամթերք վաճառել: Բռնագաղթի վերջնագիծը, որին քարավանները հասան ամիսներ անց, Բաղդադի երկաթուղու երկայնքով ընկած տարածքներն էին, որտեղ բռնագաղթվածները լցվեցին մահվան ճամբարները:

Նշանակման վայրը հասան գրեթե միայն կանայք ու երեխաները: Նրանցից եւս հարյուր հազարներ զոհվեցին ճանապարհին: Ճամբարներում փակվածները նույնպես դրսից օգնություն չստացան, որի հետեւանքով մեծ թվով տարագիրներ սովամահ եղան, կամ զոհվեցին համաճարակներից:

Օգոստոսի սկզբին սկսվեց հայերի տեղահանությունը Կենտրոնական եւ Արեւմտյան Անատոլիայում: Այստեղ բնակվում էր 300 հազար հայ: Տեղահանությունը ձգվեց մինչեւ հոկտեմբեր: Այն հիմնականում կատարվեց Իզմիդի մութասարիֆությունից եւ Բրուսայի, Կաստամոնուի, Անկարայի եւ Կոնիայի վիլայեթներից: Արեւմուտքում միայն Կիլիկիայում էր տեղահանությունը վաղ սկսվել՝ մարտի կեսերին եւ շարունակվել մինչեւ հունիս:

Հյուսիսային Սիրիայում եւ Միջագետքում սկզբում սահմանափակվեցին հայ երեւելի անձանց ձերբակալությամբ: Հետագայում կայսրության հարավային վիլայեթների հայությունը, չնայած ոչ ամբողջությամբ, տեղահանվեց:

Առանձին հայեր, ովքեր կարողացել էին թաքնվել կամ գնել չտարագրվելու իրավունք եւ կամ թողնվել էին որպես փոխարինող չունեցողներ (շատ արհեստներով զբաղվում էին միայն հայերը), ցրված էին ամբողջ երկրով մեկ: Համաձայն գերմանական աղբյուրների տվյալների՝ ընդհանուր առմամբ հայ բնակչությունը առնվազն կիսով չափ կրճատվեց: Մնացին 130-200 հազ. հոգի Եփրատի ափերին, 150 հազ. Բաղդադի երկաթուղու շրջանում, 45 հազ. Հալեպի մերձակայքում, ավելի քան 200 հազ. հայ փրկվեց Ռուսաստանում[76]:

73 Le sort l' Empire Ottoman par Andre Mandelstam, Lausanne-Paris, 1917, pp. 271-272.
74 Ղազարեան Հ., նշվ. աշխ., էջ 160 :
75 «Բնօրրան», 1995, թիվ 1, էջ 100-101:
76 R 14098, Ab 39028.

Բռնագաղթի սկզբի մասին նույնպես նշվում են տարբեր տարեթվեր: Պատճառներից մեկն այն է, որ բռնագաղթի վերաբերյալ կենտրոնական կառավարության հրահանգները տրվում էին ոչ թե որոշակի ժամանակահատվածում, այլ ցրված էին տարվա գրեթե բոլոր ամիսներում: Օրինակ, ՆԳ նախարարության հրահանգներից մեկը թվագրված է 1915թ. հուլիսի 25-ին եւ հանձնարարում էր. «Որոշված է հայերին տեղափոխել երկրի խորքերը: Դրա համար անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել, որպեսզի ձեր շրջանի բանվորական վաշտերում եղած հայ զինվորները կարգուկանոնը չխանգարեն»[77]:

Այս ծածկագրից հետեւում է, որ ա. Անատոլիայի կենտրոնական մասում կային շրջաններ, որտեղ տեղահանությունը սկսվեց հուլիսի վերջերից, բ. ամալե թաղուրներում հայ զինվորների ոչնչացումը շարունակվում էր բռնագաղթին զուգընթաց եւ տեւեց մինչեւ վերջինիս ավարտը:

Որոշ գիտնականներ բռնագաղթի մասին վերջնական որոշման ընդունումը կապում են Էնվերի մայիսի 20-ի հրամանի հետ, իսկ բռնագաղթի իրավական հիմք համարում են մայիսի 27-ին "Rumigazete"թերթում տպագրված «Տեղահանության ժամանակավոր օրենքը»: Ճիշտ չէ: Զանգվածային տեղահանությունները մի քանի շրջաններում սկսվել էին մարտի կեսերին:

Ի դեպ, սխալ է այն պնդումը, թե Կիլիկիայում բռնագաղթը սկսվեց ապրիլ ամսին: Թ. Աքչամը գրում է. «...Մարտի 15-ից սկսած Մարաշի եւ Ադանայի հայությունը զանազան պատճառներով տեղահանվել էր, աքսորվել մասամբ Կոնիա, մասամբ էլ Դեր էլ Զորի անապատ»[78]:

Արեւելյան նահանգներում, բացի Վանից, տեղահանությունը սկսվեց մայիսի երկրորդ կեսին եւ աստիճանաբար համընդհանուր դարձավ ու հիմնականում ավարտվեց օգոստոսին: Հյուսիսային Սիրիայում եւ Միջագետքում տեղահանությունը սկսվեց մայիսի վերջերին եւ շարունակվեց մինչեւ հոկտեմբեր ամիսը[79]:

Գրեթե նույն ժամանակ Բալկաններից եւ Թուրքիայի այլեւայլ շրջաններից 750 հազ. մուհաջիր բերեցին եւ տեղավորեցին հայկական բնակավայրերում:

Ս. Թեհլիրյանը ներկայացնում է բռնագաղթի երթուղիները՝ Անդաբազար-Բրուսա-Աֆիոն-Կարահիսար-Կոնիա-Մերսին, Կաստամոնու-Զանգըր-Էնկյուրի-Սուլթանիե-Ադանա, Սամսուն-Մարզվան-Ամասիա-Սըվազ-Կեսարիա-Մարաշ-Այնթափ-Իսկենդերուն, Շապին Կարահիսար-Երզնկա-Ուրֆա-Հալեպ, Տրապիզոն-Բաբերդ-Էրզրում-Մուշ-Բիթլիս-Ռաս ուլ Այն[80]:

Այս թվարկումը լրիվ չէ ոչ միայն մասնակի, այլ նաեւ հիմնական ուղերթների առումով: Օրինակ, նշված չէ Խարբերդ-Դիարբեքիր, Մուշ-Դիարբեքիր եւ մի քանի այլ ուղերթներ, որոնցով անցել են մահվան տասնյակ քարավաններ:

Թալեաթը 1915թ. հուլիսին հեռագրեց (հեռագիրը հայտնաբերվել է Կեսարիայում). «Կոնիայի եւ Անկարայի հայկական բնակավայրերում ստեղծված են մահմեդականներ բնակեցնելու կենտրոններ: Կոնիայի գաղթականներն ուղարկվում են Ադանա եւ Դիարբեքիր, իսկ Անկարայից՝ Սըվազ, Կեսարիա, Խարբերդ»[81]:

Բացի այն, որ հայերին կոտորում էին տարագրության երթուղիների ամբողջ երկարությամբ, կային նաեւ հատուկ նշանակված տեղեր, որոնք վերածվել էին սպանդանոցների: Զանգվածային ջարդերը հիմնականում տեղի էին ունենում 40 կետերում, այդ թվում՝ Բողազյան, Քեմախ, Ցուչ-Դեյլիրմենլեր, Կանլըր-Բեչիտ, Քեսաբ, Դեր էլ Զոր, Մեսքենե, Ռաս ուլ Այն[82]:

Համադրելով ցեղասպանության ու ջարդերի վերաբերյալ տարբեր հեղինակների, մասնավորապես Լեփսիուսի եւ Նազյանի հրապարակած տվյալները, կարելի է կազմել հետեւյալ ժամանակացույցը.

Տեղահանություններ

Մարտի 15-ից- Զեյթուն

Մայիսի 15-ից-Կարինի դաշտ

77 «Հասկ», ապրիլ-մայիս, 1985:
78 «Բնօրրան», 1995, թիվ 1, էջ 100:
79 Լեփսիուս Ցո. Գաղտնի տեղեկագիր, էջ 10:
80 Թեհլիրեան Ս., նշվ. աշխ., էջ 318:
81 Ալպոյաճեան Ա. Պատմութիւն Հայ Կեսարիոյ, Հ.Բ, Կահիրե, 1932, էջ 1455:
82 Թեհլիրյան Ս., նշվ. աշխ., էջ 318:

Մայիսի 16-ից-Խարբերդի նահանգ (տեւեց ավելի քան մեկ ամիս)
Հունիսի 2-25-ը- Շապին Կարահիսար
Հունիսի 7-ին եւ Հուլիսի 2-ին- Երզնկա
Հունիսի 14-Հուլիսի15-ը, Հուլիսի 26-ին- Կարին քաղաք
Հունիսի 14-ին - Բաղեշ
Հունիսի 17-ին-Տրապիզոն
Հունիսի 25-ին եւ Հուլիսի 1-5-ը- Սեբաստիա
Հունիսի 27-ին եւ Հուլիսի 12-ին- Սամսոն
Հունիսի 27-ին եւ Հուլիսի 15-ին- Մալաթիա
Հուլիսի 8-ին- Բաբերդ, Դերջան
Հուլիսի 27-30-ին- Կիլիկիայի ընդհանուր բռնագաղթը, որից
-Հուլիսի 27-ին- Ադանա եւ ծովափնյա շրջաններ
-Հուլիսի 28-ին- Այնթափ, Քիլիս,Աղյաման
-Հուլիսի 30-ին-Սուետիա
-օգոստոսի 6-ին- Ֆընտրճակ:
Օգոստոսի 10-19-ին- Փոքր Ասիայի կենտրոնական ու արեւմտյան նահանգներ,
որից -օգոստոսի 10-19-ին Նիկոմեդիա, Պարտիզակ, Բրուսա, Ադաբազար, Իզմիդ
-օգոստոսի 16-ին-Մարաշ, Կոնիա

Ընթերցողը նկատած կլինի, որ բոլոր այս վարչական միավորներից այլեւայլ ծավալի տեղահանություն տեղի է ունեցել նաեւ նշված տարեթվերից առաջ կամ հետո: Տվյալ դեպքում խոսքը գնում է ամբողջական տեղահանության մասին:

Կոտորածներ.
Հունիսի 10-14-ին- Քեմախ (Կամախ)
Հուլիսի 1-ին- Բայազետ
Հուլիսի 1-15՝ Մծբին (հայեր և ասորիներ), Թել Երմենի, Բաղեշ, Մարդին
Հուլիսի 10-30-ը՝ Մուշ, Տարոն
Հուլիսի 15-ին՝ Մալաթիա
Օգոստոսի 5-ին՝ Սասուն
Օգոստոսի 19-ին-Ուրֆա

Ժամանակացույցում նշված չեն Հյուսիսային Սիրիայում եւ Միջագետքում կատարված զանգվածային ջարդերի վայրերը եւ ամսաթվերը: Դրանց կանդրադառնանք հետագա շարադրանքում:

Չնայած սահմանված հերթականության, եկավ պահ (1915թ. հուլիս-օգոստոս), երբ տեղահանություններն ու ջարդերը դարձան համընդհանուր եւ ընդգրկեցին ամբողջ կայսրությունը:

Կ. Պոլսից ուղարկված ծածկագրերից մեկը, որը թվագրված է 1915թ. մայիսի 25, հաստատում է, որ տեղահանությունը սկսվել էր ու առաջ էր տարվում կայսրության ամենատարբեր մասերում: Տեղական իշխանություններին հանձնարարվում էր «հայերից դատարկված գյուղերի անունները եւ նրանց (հայերի) ուղարկված վայրերի մասին տվյալներ հայտնել»[83]:

Դիարբեքիրից մի թուրք ուսուցիչ պատմել է Ֆ. Ղոսեյնուն. «Բրուսայի իշխանությունները հայերին հայտնեցին, թե կառավարությունը որոշել է բոլորին ուղարկել Մոսուլ եւ Դեր Զոր եւ, որ մեկնելու են երեք օրից: Հայերը վաճառեցին այն ամենը, ինչ կարող էին, սայլեր վարձեցին ընտանիքներն ու բեռները փոխադրելու համար եւ նշված ժամին ճանապարհ ընկան: Երբ քաղաքի տարածքներից ահագին հեռացել էին, կառապանները, կատարելով իրենց տրված հրահանգը, լծից արձակեցին կենդանիներին եւ դժբախտ աքսորյալներին լքեցին անապատում: Գիշերը կառապանները վերադարձան ու թալանեցին հայերին, որոնցից շատերը մահացան սարսափից: Մյուսներին կոտորեցին ճանապարհին եւ միայն փոքր մասը հասավ Դեր Զոր»[84]:

83 Ղազարեան Հ., նշվ. աշխ., էջ 66:
84 Faiez of Ghocein Temoignage d'un Arab musulman..., p. 39.

Զեռագիրը թե Հայաստանում եւ թե Անատոլիայում ու Թրակիայում նույնն է, բռնագաղթի ու ջարդերի Կ. Պոլսում մշակված նույն սխեման է, որը մասնակի փոփոխություններով գործադրվեց կայսրությունով մեկ:

Օգոստոսի 31-ին Թալեաթն օտարերկրյա դիվանագետներին ասաց. «Այլեւս Հայկական հարց գոյություն չունի»[85]:

Նման հայտարարության համար նա հիմքեր ուներ: Իրականում տեղի էր ունեցել հայ բնակչության ոչ թե բնակության վայրի փոփոխություն, այլ բնաջնջում: Մնացին խլյակներ, որոնց էլ արգելեցին նոր վայրերում համախումբ բնակվել: Հայերին ցրեցին մահմեդական բնակչության մեջ եւ նաեւ կյանքի ծանր պայմանները, թուրքացման պետական քաղաքականությունը կարճ ժամանակահատվածում նրանց մղելու էր թուրքանալու եւ դադարելու էթնոս լինելուց:

Բռնագաղթի խնդիրը. նպատակները երկար ժամանակ միսիոներական եւ դիվանագիտական շրջաններում կրքոտ քննարկումների նյութ էր: Հայերին տարագրում էին բնաջնջե՞ւ, թե ճամանապրած շրջաններից հեռացնելու համար: Վերջին տեսակետին հարողները վկայակոչում էին բռնագաղթի կազմակերպիչների հրահանգները, որոնցում հանձնարարականներ կան տեղահանվածների անվտանգությունն ապահովելու, «բնակության նոր վայրերում» նրանց օգնություն ցույց տալու վերաբերյալ: Ահա դրանցից մեկը. «Տեղահանությունը Էրեգլիից Պոզնատ կատարել մասամբ գնացքով, մասամբ այլ փոխադրամիջոցներով: Հիվանդները, ծերերը, կանայք, երեխաները նախ եւ առաջ պետք է մեկնեն գնացքով, կառքով, ջորիներով, նաեւ ոտքով՝ եթե ի վիճակի են: Ցուրաքանչյուր քարավանին կցել հատուկ պահակախումբ, ճանապարհորդության ընթացքում տեղահանվողներին բավարար քանակությամբ սնունդ տալ»[86]:

Բերվում են նաեւ Թալեաթի 1915թ. օգոստոսի 2-ի հեռագրերը Խաղավենդիքյարի կուսակալին. «Արգելվում է տեղահանել հայ երեսփոխաններին ու նրանց ընտանիքի անդամներին»[87]:

«Հայ զինվորների, զինվորական բժիշկների, սպաների ընտանիքները ենթակա չեն տեղահանման: Ցանկության դեպքում նրանք կարող են իրենց նախկին բնակավայրերում մնալ»: «Ինը հարց ինը պատասխան» գրքույկում կարդում ենք. «Հայերին տեղահանելու մասին որոշումը պատժամիջոց չէր, այլ անվտանգության խնդիր ուներ: Բացի այդ, օսմանյան կառավարությունը ձեռնարկեց բոլոր միջոցները, որպեսզի տեղափոխության ընթացքում հայերը չտուժեին: Այդ նպատակով հրապարակվեց հետեւյալ հրամանը. «Տեղահանության ճանապարհին հայերն ապահովվում են պետական սպասարկմամբ: Հենց որ նշանակման վայրը հասնեն, նրանց կտրամադրվի շարժական եւ անշարժ ունեցվածք... Պետությունը պետք է կարիքավորներին ապահովի բնակարանով, հողագործներին եւ արհեստավորներին՝ աշխատանքի անհրաժեշտ գործիքներով...»[88]:

«Քանի որ այս հրամանը(տեղահանության) տրվել է, որպեսզի կանխվի հայկական ապստամբական կոմիտեների գործունեությունը, անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել, որպեսզի մահմեդական եւ քրիստոնյա բնակչության միջեւ ընդհարումներ տեղի չունենան»[89]:

«Աքսորվող հայերին պետք է ուղեկցեն հատուկ պաշտոնատարներ, ովքեր նրանց ապահովելու են սննդով պետության կողմից այդ նպատակով հատկացրած միջոցներից»[90]:

Գերմանական աղբյուրները նշում են, որ ռազմաճակատին հարող շրջաններից հայերին տարագրելու հրամանի 15-րդ հոդվածը ձեւակերպված էր հետեւյալ կերպ. «Էրեգլի-Պոզանտի, Էրեգլի-Տարսուս եւ Պոզանտի-Տարսուս ճանապարհներին վարձված փոխադրամիջոցների արժեքը պետք է վճարեն տեղական իշխանությունները՝ կանխիկ գումարով, կեսը ուղեւորության սկզբում, մյուսը՝ վերջում»: Այսինքն՝ կառավարությունը «հոգ էր տարել տեղահանվածների

85 Տաշեան Հ., նշվ. աշխ., էջ 58-59:
86 Համբեն Ա., Բրոն Ժ., Վերականգնված հիշողություն, Երեւան, 1995, էջ 56:
87 Վավերաթուղթ, N170:
88 Վարչապետի գրասենյակի արխիվ (Կ. Պոլիս): Կառավարության արձանագրություններ, Հ. 198, որոշում N1331 (163):
89 FO 371/ 4341/170751.
90 FO 371/9158/5523.

բարեհաջող տեղափոխության համար»՝ փոխադրամիջոցների տերերն իրենց հասանելիք գումարի կեսը ստանալու էին ուղերթի ավարտից հետո, որպեսզի ուղեւորներին անվտանգ տեղ հասցնեին: Տեղահանությանն առնչվող փաստաթղթերում հայերի սպանության կամ բռնարարքների ենթարկելու մասին ակնարկ անգամ չկա: «Էրեգլիից Պոզանտի կամ Տարսուս ուղարկվող քարավաններից յուրաքանչյուրի ուղեւորների թիվը,- կարդում ենք տեղահանության հրամանում,- մեկնելուց անմիջապես հետո պետք է հաղորդել ժամանման վայրը»[91]:

Դա արվում էր այս կամ այն կետում մարդկանց կուտակումներից խուսափելու համար եւ որպեսզի նշանման կետում հնարավորություն ունենային «եկողներին ընդունելու համար պայմաններ ստեղծել»[92]:

Հրամանի 17-րդ հոդվածը սահմանում էր. «Տարագրվող, ինչպես նաեւ իրենց նախկին բնակավայրերում մնացող հայերի անվտանգության ապահովման պատասխանատվությունն, ըստ հաստատված կարգի, դրվում է ներքին գործերի նախարարության վրա»[93]:

Այդպես էր թղթի վրա, իսկ իրականությունը լրիվ հակառակն էր: Հալեպի գաղթականական գրասենյակի կոմիսար Էյուբը, մերժելով մի որբի օգտին միջնորդությունը, ասաց. «Դուք առաջվա նման չեք հասկանում, թե ինչ ենք մենք ուզում. մենք ուզում ենք արմատախիլ անել հայ անունը»:

Բ. Դռան շռայլ խոստումները տեղահանվածների անվտանգությունն ու կենսապայմաններն ապահովելու վերաբերյալ նպատակ ունեին բռնագաղթի սկզբնական փուլում աղմուկից խուսափելու, այսինքն՝ ասելու, թե պատերազմական պայմաններում ռազմական նկատառումներով հայերը տեղափոխվում են հարավ եւ այն էլ ժամանակավոր՝ ապահովելով նրանց ոչ միայն անվտանգությունը, այլեւ ապրելու պայմաններ, որպեսզի բռնագաղթը դրսի միջամտությամբ չխափանվեր: Իսկ երբ հայերի տեղահանությունն արդեն համընդհանուր ընդգրկում էր ստացել, գաղտնապահությունը գրեթե անհետացավ: Բացի դա, կոտորածներն այնպիսի ծավալներ ու թափ ունեին, որ դրանց քողարկելն այլեւս անհնար էր: Լեփսիուսը բռնագաղթին տալիս է հետեւյալ բնութագիրը. «Բռնագաղթի կանոնները շատ շուտ խախտվեցին, ընդունելով հետեւողական բնաջնջման բնույթ: Ամենից առաջ ձգտում կար ազատվելու տղամարդկանցից: Դրա համար ընդհանուր տեղահանման հրամանին նախորդեց մի ահավոր փուլ՝ ձերբակալվեցին քաղաքական ղեկավարները, մտավորականներն ու աքսորվեցին երկրի խորքերը կամ էլ սպանվեցին... Բանակում ծառայող, ճանապարհաշինության վրա աշխատող, բեռնակրություն անող տղամարդկանց ճակատագրի մասին էլ կարելի է եզրակացնել օտարերկրացիների պատմածներից, որոնք այդ վայրերում ճամփորդելիս պատահականորեն տեսել են, թե ինչպես հետեւողականորեն ոչնչացվում են հայ այրերը... Ճանապարհին բաժանված ուտելիքից անգամ զգացվում էր, որ տեղահանությունը հղացողներին ու իրականացնողներին քիչ էր հուզում տարագիրների ճակատագիրը: Ոչ մեկի հոգը չէր, որ աքսորականների կեսը քաղցից ու հիվանդություններից մահանում էր ճանապարհին»[94]:

Ժամանակակից թուրքական պատմագրությունը, երբ փորձում է ապացուցել, թե Նայիմ Անտոնյանի օգտագործած հեռագրերը հայերի կողմից պատրաստված կեղծիքներ էին, բերում է մի քանի փաստարկներ, որոնց թվում տեղահանության վերաբերյալ հրամանը չէր «տարածվում Կ. Պոլսի, Թրակիայի եւ անգամ Կենտրոնական Անատոլիայի հայերի վրա: Հետեւաբար, եթե բռնագաղթը չի տարածվում բոլոր հայերի վրա, ապա զանգվածային ջարդերի մասին խոսք լինել չի կարող»[95]:

Այո, Կ. Պոլսում, Իզմիրում եւ մի քանի փոքր քաղաքներում տեղահանություն չիրականացվեց, ինչն ուներ միանգամայն այլ քաղաքական եւ տնտեսական պատճառներ, որին կանդրադառնանք հետագա շարադրանքում: Ինչ վերաբերում է Թրակիային եւ Կենտրոնական Անատոլիային, ապա թուրք պատմաբանները անամոթաբար կեղծում են: Նիկոմեդիայի հայությունն ամբողջությամբ բռնագաղթվեց եւ ոչնչացվեց: Իսկ Կենտրոնական Անատոլիայի 300 հազ. հայ բնակչից ոչ ոքի տեղում չթողեցին:

91 FO N9158.
92 Ն.տ.:
93 Ն.տ.:
94 Լեփսիուս Ե., նշվ. աշխ., էջ 168-170:
95 "Армянский вопрос на страницах турецкой прессы", Ереван, 1984, N5.

Թուրք պատմաբան Ռ. Իլերին իր «Հայկական թղթապանակում» գրում է. «Գոյություն ունեն Թալեաթ փաշայի իսկական հեռագրեր, որոնք նա ուղարկել է հայերի դեպորտացիայի ժամանակ: Դրանցում խոսքը գնում է հայերի տեղահանության ժամանակ օրենքը խախտողներին պատժելու մասին: Ստացվում է, որ Թալեաթ փաշան, մի կողմից, ուղարկում էր հայերին ոչնչացնելու մասին հրամաններ, մյուս կողմից, հրամայում էր ջարդեր իրականացնող պաշտոնատարներին պատժել»[96]:

Թուրք պատմաբանն իզուր է զարմացած ձեւանում: Երիտթուրքական կառավարությունը, իրոք, երկակի խաղ էր խաղում: Մի կողմից, հեռագրեր էր ուղարկում տեղահանված հայերի անվտանգությունն ու ապրուստի միջոցներն ապահովելու մասին, մյուս կողմից, հակառակ բովանդակությամբ ծածկագրերով պահանջում էր հայերին չխնայել: Դժբախտաբար թուրքական արխիվներում պահպանվել են միայն առաջինները: Համենայն դեպս՝ թուրքերն այդպես են ասում: Հարկ է խոստովանել, որ երիտթուրքերի այս մարտավարությունն իրեն արդարացրեց: Համենայն դեպս, Արեւմուտքը միտումնաբար թե միամտորեն չփոթվեց: Այո, թուրքերին հաջողվեց արտաքին աշխարհում Մեծ եղեռնի վերաբերյալ հակասական, չփոթ կարծիքներ ձեւավորել, ինչը նույնպես նպաստեց տանամյակներ շարունակ հայոց ցեղասպանությունը լռության մատնելուն:

Թուրքական կեղծարարությունները շարունակվեցին նաեւ 1960 -ական թվականներից հետո, երբ «լռության դավադրությունը» ձախողվեց ու հայոց ցեղասպանության շուրջ քննարկումները ծայր առան նոր թափով: Թուրքական քաղաքական գործիչներն ու պատմաբանները ջանք չեն խնայում հավատացնելու, որ իրոք բռնագաղթվածներից մեծ թվով հայեր են մեռել կամ ոչնչացվել, բայց դա հետեւանք էր պատերազմի պատճառով ստեղծված անիշխանական վիճակի: Ինչ վերաբերում է կառավարությանը, ապա Բ. Դուռն իրականացրել է միայն մերձճակատային շրջանների հայերի տեղափոխություն կայսրության հարավային շրջանները, իսկ ջարդերն ու կողոպուտները «բարբարոս քրդերի ձեռքի գործն են»: Նման բացատրությունը փոխ է վերցվել Աբդուլ Համիդից, որը հայկական կոտորածները ներկայացնում էր որպես հայերի ու քրդերի ռասայական հակամարտություն: Իհարկե, ժամանակակից շատ թուրքերի ձեռնտու չէ հիշել Դ. Սալհի եղեռնից տարիներ անց արտասանած խոսքերը. «Մեզ համար Հայաստանն արդեն կորած երկիր է» կամ թուրք պետական գործիչ Ալի Քեմալի խոսքերը. «Արդեն ապացուցված իրողություն է, որ եղեռնը ծրագրվել է իթիհադի ընդհանուր կենտրոնի որոշումներով ու կարգադրություններով»[97]:

Թուրքական ռադիոյի «Հայկական թղթապանակ» հաղորդաշարի 1984թ. նոյեմբերի 11-ի թողարկման մեջ ասվում է. «Ինչ է նշանակում տեղափոխման հրամանը, որը մեր օրերում որպես պատրվակ է օգտագործվում հայ ահաբեկիչների կողմից:

... Օտար լեզուներում այս դեպքի համար օգտագործվում է «դեպորտեյշն» (վոնդել, աքսորել, հեռացնել) բառը: Բայց այս բառն իրականում նշանակում է ստիպել մի տեղ մնալու որպես պատիժ, այսինքն՝ աքսորել: Իսկ տեղափոխում (թաշիր) բառը թուրքերենում հենց բնակության վայրը փոխելու իմաստ ունի: Օրինակ, Կեպան ամբարտակը կառուցելու ժամանակ ապագա լճի տարածքի բնակչությունը ուրիշ շրջաններ, այսինքն՝ նրանց բնակավայրը մի այլ տեղ տեղափոխվեց... Սա է տեղափոխում բառի իսկական իմաստը եւ այն կիրառվեց հայերին այլ վայրեր տեղափոխելու համար: Դա էլ հանդիսանում է Հայկական հարցի «ճարտարապետների» օգտագործած «դեպորտեյշն» բառը»: Ինչու հայերի նկատմամբ իրականացվեց տեղափոխման քաղաքականությունը, որովհետեւ, բարբաջում է հաղորդման հեղինակը. «Չնայած հայերն օսմանյան քաղաքացություն ունեին, բայց իրենց այնպես էին պահում, կարծես ռուսներ, որոշ դեպքերում անգամ կարծես անգլիացիներ կամ ֆրանսիացիներ լինեին... Անկասկած, տեղափոխման որոշումը մարդկային վերաբերմունք էր...»: Շարունակելով կեղծել պատմական իրադարձությունները՝ թուրքական ռադիոն հայտարարում է, որ հայկական ահաբեկչության դեմ պայքարելու նպատակով օսմանյան կառավարությունը ռազմական միավորումներին հանձնարարեց «տեղափոխել այլ շրջաններ այն անձանց», ովքեր զբաղված են լրտեսությամբ: «Այդ հրամանի մեջ ոչ մի ազգի կամ ժողովրդի ու ցեղի անուն չի չեշտված... այդ հրամանը կիրառվել է հիմնականում ըմբոստացող

96 "Армянский вопрос на страницах турецкой прессы", Ереван, 1984, N 5.
97 "Le Renessance", 15.12.1918.

հայերի, լրտեսների ու դավաճանների նկատմամբ: Հայերի տեղափոխումը ոչ թե նրանց պատժելու, այլ ռազմական գործողությունների շրջաններից հեռացնելու միջոցառում էր: Նրանք ռազմաճակատի թիկունքում մեծ գործունեություն ծավալեցին եւ օսմանյան զորքերին երկու կրակի մեջ գցեցին: Այդ գործը պետք է համարվեր դավաճանություն եւ կազմակերպողները պետք է գնդակահարվեին: Բայց օսմանյան կառավարությունը նրանց չպատժեց, այլ հեռացրեց ռազմական գործողությունների շրջաններից՝ նրանց կյանքի եւ ունեցվածքի անվտանգությունը ապահովելու համար... Իրականում օսմանյան կառավարությունը ոչնչացնելու միտք չի հետապնդել: Ճիշտ է, հայերին տեղափոխելու ժամանակ նրանց ունեցվածքի վրա հարձակումներ եղան: Ինչ վերաբերում է նրանց սպանությանը, ապա սուտ է: Սուտ է նաեւ, որ Թուրք բնակչությունն ու բանակը սպանել են հայերին... Ներքին գործերի նախարարության 1916թ. դեկտեմբերի 7-ի զեկուցագրում նշված է, որ տեղափոխման է ենթարկվել 702 հազ. 900 մարդ: Տեղափոխման ծախսերը 1915թ. կազմել էին մեկ միլիոն ղուրուշ: Նույն տարվա վերջում լրացուցիչ գումար հատկացվեց եւ այն ամբողջությամբ կազմեց 150 միլիոն ղուրուշ: Բայց հակաթուրքական քարոզչություն ծավալվեց, զրպարտում էին, թե հայերը ենթարկվել էին ցեղասպանության: Նույնիսկ զրպարտեցին, որ սպանվածների թիվը կազմում է մեկ միլիոն: Այդ թիվը 1915թ. ըստ նրանց զրպարտանքների հասնում էր 300 հազարի, հետագայում դարձրեցին 1.5 միլիոն»:

Բայց ահա թե ինչ է գրում Ռենե Պինոնը. «Անկասկած հետապնդած նպատակն է ամբողջությամբ բնաջնջել հայ ժողովուրդը մեռցնելու ու բռնի մահմեդականացնելու միջոցով... Նույնիսկ եթե հաստատվի, ինչ-որ ճիշտ չէ, թե դավադրություններ ու ըմբոստություններ էին նախապատրաստված, դրանով չի նվազում երիտթուրքերի պատասխանատվությունը: Ոչինչ չի կարող արդարացնել զորակոչված հայերի սպանությունն իրենց զինակիցների կողմից եւ ոչ էլ երեխաների, ծերերի ջարդը, ոչ էլ վերապրողների բռնի հավատափոխությունը, ոչ կազմակերպված թալանը, ոչ էլ այնքան գարշանքները, որ գրիչը նկարագրել չի կարող»[98]:

Թալեաթը հայտարարեց. «Չենք ընդունում, որ անգութ ենք եղել, բայց եղանք կորովի: Պատերազմական ժամանակներում ենք ապրում»[99]:

1916թ մայիսի 4-ին "Berliner Tageblat" թերթը տպագրեց Պոլսի իր թղթակից Պ. Ստելդեմանի զրույցը Թալեաթի հետ, որն ասաց. «Ռազմական անհրաժեշտություն էր հայերի հեռացնելն իրենց երկրից: Միջագետք փոխադրելու ժամանակ հարձակման ենթարկվեցին Թուրքերի կողմից ու նրանց մի մասը սպանվեց: 1915-ի մարտին, Դարդանելի կռիվների ժամանակ անհրաժեշտ համարվեց հեռացնել Պոլսի եւ մերձակայքի հայերին: Կառավարությունը հրամայեց նրանց տեղափոխել Զոր: Դժբախտաբար այս միջոցառումները գործադրող վայ պաշտոնյաները ծայրահեղություններ կատարեցին: Մենք բարբարոսներ չենք: Այս ողբերգական իրադարձությունների մասին պատմություններն ինձ հարկադրեցին անցկացնել բազմաթիվ անգուն գիշերներ»: Այս միտքը գրեթե նույնությամբ շարադրված է Թալեաթի հուշագրություններում: Թալեաթը ստում էր: Եթե նա իսկապես ուներ «անկեղծ խղճահարություն, թող հրամայեր հավաքել բոլոր վերապրածներին,- շարունակում է Պինոնը,- թող վստահեր ամերիկյան միսիոներներին, բռնի իսլամացած երեխաներին եւ հարեմներում փակված կանանց, թող ֆինանսավորեր եւ հաստատեր մի տեղում այն հազարավոր փախստականներին, որոնք ամենածայրահեղ չքավորության մեջ մահացան Միջագետքում: Եվ ամենից առաջ թող հրամայեր դադարեցնել տարագրություններն ու ջարդերը»[100]:

Թալեաթը չէր ժխտում, որ հրաման է տվել բռնագաղթեցնելու հայերին: Նա Մորգենթաուին ասել է, որ «կառավարությունը գործել է անհրաժեշտ ինքնապաշտպանության շրջանակներում: Վանի եւ Զեյթունի հայերը կապված են ռուսների հետ եւ դիմադրում են կառավարությանը: Այնպես որ, բռնագաղթը անհրաժեշտություն է»: Մեղավորի ու անմեղի միջեւ տարբերություն չէր դրվում, որովհետեւ, ըստ Թալեաթի, «ով այսօր անմեղ է, վաղը կարող է դառնալ մեղավոր»[101]:

98 «Ցուշամատեան Մեծ եղեռնի», էջ 1068-1069:

99 Ն. տ. :

100 Ն.տ.:

101 АН АрмССр, Информацион бюллетень АН Советской Армении, Выживание народа, Ереван, 1982, стр. 19.

Սկզբում թվում էր կբռնագաղթվեն միայն այն հայերը, որոնք բնակվում էին արեւելյան սահմանի մերձակայքում, բայց որոշ ժամանակ անց պարզվեց, որ առաջին զոհ են դառնալու նաեւ նրանք, ովքեր բնակվում էին պատերազմական գործողությունների թատերաբեմից շատ հեռու, օրինակ՝ Խարբերդում, Սըվազում, Միրսիֆանում, Անկարայում, Մինչերկրական ծովափին: Ռասիստներին հատուկ ջանասիրությամբ Թուրքական կառավարությունը ձգտում էր ոչ մի հայի չշրջանցել:

Բոստոնի "Cristience science monitor"-ը 1915թ. սեպտեմբերի 15-ին գրեց. «Կոտորածը Թուրքիայում ամենագազանայինն է պատմության մեջ»[102]:

«Հայ ցեղի արու գործունյա տարրից ազատվելուց հետո,- ծաղրում է Է. Գիպենգին,- Թուրք կառավարությունն իրեն անվտանգ չէր զգում: Տեր, կին, երեխա, բոլորն օսմանյան կառավարության համար վտանգավոր տարր էին: Հարկ էր հայերին արմատախիլ անել»: Այդ խնդրի իրականացման միջոց համարվեց տեղահանությունը: Թալեաթը հայտարարեց. «Տեղահանությունը ռազմական անհրաժեշտություն է, բայց կատարելապես մարդկային»:

Մայիսից մինչեւ օգոստոս օսմանյան կառավարությունը հետեւողականորեն իրականացրեց մի ծրագիր, որն «ավելի դժոխային էր, քան բիրտ ջարդը»: Փոքր Ասիայի յուրաքանչյուր նահանգ հեռագիր ուղարկվեց՝ ամբողջ հայությանը տեղահանել Միջագետք: Հրամանը որոշակի էր ու մանրամասն: Ջմռացվեց աննշան գյուղակն իսկ: Այն անվանեցին «պաշտպանական միջոցառում»:

«Երբ ուշադիր կարդում ես հայկական ջարդերին վերաբերող փաստաթղթերը,- գրում է Մորգանը,- զարմանում ես, թե ինչպիսի շրջահայացությամբ ու հմտությամբ էր երիտթուրքական կառավարությունը կազմակերպել այդ սարսափները: Ամեն ինչ նախատեսված էր՝ զոհերի զինաթափում, դիմադրության ընդունակ երիտասարդ տարրի հեռացում, զանգվածային տեղահանություն ու ճանապարհի տառապանքներ, տղամարդկանց հաշվեհարդարի ենթարկել, կանանց ու աղջիկներին ընտրել իսլամացնելու համար եւ, վերջապես, փրկվածներին ոչնչացնել քրդերի ու քարավաններն ուղեկցող ոստիկանների միջոցով Քեմախ Բողազում: Նախապես զոմեշներով լծված սայլեր հավաքել այդ անիծյալ վայրում դիակները տեղափոխելու եւ Եփրատ գետը նետելու համար»[103]:

Ռենե Պինոնը 1916-ին գրեց. «Մի բան, որ ամենից շատ է զարմացնում ականատեսների պատմածներում, դա կանոնավոր ու հետեւողական ջարդերի կազմակերպումն է: Սա այն դեպքը չէ, երբ տարբեր ազգությունների պատկանող հարեւան բնակիչները հարձակվում են միմյանց վրա վայրենի անիշխանության մոլուցքի պահին: Գործողությունն սկսվում է կառավարության դեկրետով, որ փակցվում է գյուղում: Հրահանգները գալիս են Կ. Պոլսից բարձրաստիճան պաշտոնյաներին, իսկ նրանց միջոցով՝ կատարողներին: Այդ մռայլ դրամայում հեռախոսը խաղում է հսկայական դեր... Ամեն ինչ արվում է կարգ ու կանոնով, քաղաքներում չեն սպանում համաճարակից խուսափելու նպատակով... Սխալվելն անհնար է, նպատակը հայ ժողովրդի ոչնչացումն է սպանության կամ բռնությամբ իսլամական կրոն պարտադրելու ճանապարհով...»[104]:

Բնակավայրերից մինչեւ վերջին հայի հանելն ապահովելու համար գործադրվում էին դաժան սպառնալիքներ ու միջոցներ: Իշխանությունները սպառնում էին. «Եթե (մահմեդականներից) որեւէ մեկը համարձակվի իր տանը ապաստան տալ հայ երեխաներին, կանանց ու աղջիկներին, թաքցնողը կհամարվի հայ եւ գլխով կհատուցի»[105]:

Նույն բանն էր հռչակում 3-րդ բանակի հրամանատար Մ. Քյամիլի հեռագիր-շրջաբերականը. «Հային թաքցնող մահմեդականը կախվելու է իր տան առաջ եւ տունն այրվելու է: Հայերին պաշտպանել ցանկացողները, եթե զինվորական են, բանակից հեռացվելու եւ դատվելու համար հանձնվելու են ռազմական դատարանին, իսկ եթե պաշտոնատար են, պաշտոնանկ են արվելու եւ դատվելու են...»[106]:

102 АН АрмССр, Информацион бюллетень Армении, стр. 21.

103 Morgan J. La traitment desArmeniens dan's l'Empire ottoman. Paris, 1916, p. 512.

104 Բինոն Ռ. Հայերու բնաջնջումը. Գերմանական մեթոդ, Թուրքական գործելակերպ, Կ. Պոլիս, 1919, էջ 57-59:

105 ՀՀ ՊԿԱ, ֆ. 1,ց. 1, գ. 219:

106 Ռազմական դատարանի արձանագրություն, N13, փաստաթուղթ N1 կամ Ա. Անանոյան, նշվ. աշխ., էջ 290-291:

Թուրք պաշտոնատարներից Ի. Ալաֆտարը վկայել է. «Հայերուն տեղահանելու մասին Պոլսեն եկած հրամանը շատ խիստ ու ստիպողական էր՝ անխնա կոտորել բոլոր այր մարդկանց 14-են մինչեւ 65 տարեկան, իսկ երեխաներուն, ծերերուն եւ կիներուն չդիպչել, այլ աշխատիլ խլամացնել»[107]:

Որոշ ժամանակ անց թուլատրվեց խլամացնել միայն փոքր երեխաներին, իսկ կանանց, ծերերին, ութից բարձր տարիք ունեցող անչափահասներին բռնագաղթեցրին:

Արդեն ասվեց, որ սկզբում կանանց բռնագաղթից ազատում էին, եթե ամուսնանում էին մահմեդականի հետ: Այդ պայմանը հայ կնոջ համար նշանակում էր նաեւ ազգությունը փոխել, հրաժարվել մինչ այդ ունեցած երեխաներից եւ այն, որ մահմեդականները, չնչին բացառությամբ, հայ կանանց կնության էին վերցնում անազնիվ նկատառումներով: Նրանց որոշ ժամանակ օգտագործում էին իրենց սեքսուալ պահանջմունքներին բավարարություն տալու, տնային եւ դաշտային ծանր աշխատանքներ կատարելու համար, ապա վռնդում էին, եւ այդ կանայք նույնպես հայտնվում էին անապատում: 1915թ. սեպտեմբերի 25-ի հրահանգով հայ կանանց ու աղջիկների հետ ամուսնությունն արգելվեց ընդհանրապես: Թալեաթը նաեւ պահանջեց նախկինում մահմեդականների հետ ամուսնացած կանանց նույնպես տարագրել[108]:

Այլ կերպ սուած, տարագրությունն ու եղեռնը իրենց երախի մեջ առան բոլոր հայ կանանց, անկախ նրանց տարիքի, սոցիալական եւ ընտանեկան վիճակի, կրոնական պատկանելության: Կանանց լրիվ թալանում էին, պատմում է մի թուրք ժանդարմ, գյուղերում նրանց բռնաբարում էին, թուրք գյուղացիներին վաճառում: Հայ կանանցից շատերը թույն էին վերցրել իրենց հետ եւ անելանելի վիճակում ինքնասպանություն էին գործում[109]:

400 բոկոտն կանայք անցան Մարաշով, վկայում է Խարբերդի մերձակայքում աշխատող գերմանացի մասնագետներից մեկը, գրեթե բոլորի գրկին երեխա կար, շատերը նաեւ չալակներին երեխաներ ունեին (հաճախ մեռած), իսկ երրորդի ձեռքը բռնած էին տանում: Մարաշի հայերը 50 տաճկական ոսկով կոշիկ գնեցին խեղճերի համար[110]:

Բռնագաղթվածներից նախ խլում էին հնչուն դրամը, ապա մնացած ողջ ունեցվածքը: Նրանց 3/5-ը ոտաբոբիկ էր եւ «իրեն դժբախտ էր համարում, որովհետեւ չէր կարողանում հողին հանձնել մեռած հարազատներին»[111]:

Ականատեսը մի քարավանի մասին գրում է. «Նրանց անվերջանալի թափորը ճանապարհ ընկավ... ավելի ճիշտ զինվոր-ոստիկաններն առաջ քշեցին մահակի հարվածներով: Իրենց մերկությունը մի կերպ ծածկած հյուծված աքսորականներն ավելի շատ սողում էին, քան քայլում: Ծեր կանայք անզոր ընկնում էին, բայց երբ զափթիեն գավազանը բարձրացրած մոտենում էր, ճարահատ վեր էին կենում: Ոմանց հրում էին մատակների նման: Իմ աչքի առաջ մի երիտասարդ կին ընկավ, բայց մահակի 2-3 հարված ստանալուց հետո տառապանքով ոտքի կանգնեց : Առջեւից երկու թե երեք տարեկան երեխան գրկած, քայլում էր ամուսինը: Քիչ այն կողմ մի ծեր կին սայթաքեց, փռվեց ցեխի մեջ: Զինվոր-ոստիկանը սկսեց բիրով ծեծել նրան: Կինը չէր շարժվում: Ծեծը շարունակվեց ոտքի հարվածներով: Պառավն անշարժ էր: Ի վերջո այնպիսի ուժեղ հարված հասցվեց, որ պառավը գլորվեց փոսը: Հավանաբար արդեն մեռած էր...»: Բաղդադի երկաթուղու համակարգում աշխատող հայ բժիշկներից մեկը հանդիպել էր լրիվ մերկ կանանց ու երեխաների խմբերի: «Խեղճ կանայք եւ աղջիկները ամոթեն մատուտակի տերեւներով գոցեր էին իրենց ծննդական գործարանները, ձեռքերնին ալ վրան դրած էին, որ չիյնան տերեւները: Իսլամ տղայքը գավազաններով անոնց ձեռքերներուն կը զարնեին, որպեսզի նոյնիսկ այդ տերեւներեն մերկանան... Մեծերուն ըրածը պզտիկները կը լրացնեին և այդ թշուառ կիները խելակորոյս այս ու այն կողմ կը վազեին...»[112]:

Տարագրության քարավանների վիճակը բոլոր ականատեսներն ու մասնագետները ներկայացնում էին գրեթե նույն պատկերով, ինչը լրացուցիչ վստահություն է ներշնչում նրանց պատմածների հանդեպ: Խարբերդի ամերիկյան հյուպատոսը նկարագրում է, թե ինչ տեսքով Մամուրեթ ուլ Ազիզ հասան ժանդարմների հսկողության տակ եղող բռնագաղթվածները՝ քաղցած, հիվանդ, Էրզրումից Երզնկա երկու ամիս տեւած ճանապարհին ծածկված կեղտով: Նրանց մեծամասնությունը ճանապարհին սպանվել կամ հյուծվածությունից մեռել էր: Եկածների մեջ կային Էրզրումի շատ հարուստ ընտանիքից երեք քույրեր: Նրանք բացատրվում էին անգլերեն: «Մեր ընտանիքի 25 անդամներից 11-ը սպանվեց ճանապարհին եւ արական սեռի կենդանի մնացածներից ամենաավագն ութ տարեկան տղա է»: Էրզրումից դուրս գալու ժամանակ նրանք ունեին ձիեր, ուղեբեռ, դրամ: Ճանապարհին դրանք բոլորը, նույնիսկ նրանց հագի շորերը խլեցին եւ քույրերից մեկը լրիվ մերկ էր[113]:

Հունիսի 1-ին 3 000 հոգի, հիմնականում կանայք եւ երեխաներ, 70 ոստիկանների ուղեկցությամբ դուրս եկան Խարբերդից: Երթը ղեկավարում էր մի ազդեցիկ թուրք բեյ: Նրանք մինչեւ Հանքեյ հասան անվնաս: Բեյն ասաց, թե երբ Մալաթիա հասնեն, բռնագաղթվածներին տալու է 400 լիրա, սակայն նույն օրը նա անհետացավ դրամի հետ միասին: Երրորդ օրը քարավանը հարձակման ենթարկվեց արաբների ու քրդերի կողմից, մեծ թվով կին եւ աղջիկ առեւանգվեց: Քարավանն ուղեկցող ոստիկաններն օգնում էին ավազակներին: 15-րդ օրը լեռ բարձրանալու ժամանակ քրդերը շրջապատեցին քարավանը եւ 15-30 տարեկան 150 տղամարդու առանձնացրին ու սպանեցին, ապա թալանեցին անպաշտպան կանանց ու երեխաներին: Նույն օրը մի ուրիշ քարավան (Սրվազից, Հեղինից, Թոքատից), որում կային 300 տղամարդ եւ մի քանի հազար կին եւ երեխա, միացավ Խարբերդի քարավանին, տեղահանվածների թիվը հասավ 18 000-ի: Ճանապարհը շարունակեցին քրդերի ուղեկցությամբ: Քուրդ բեյը իր մարդկանց բերեց, ովքեր հարձակվեցին քարավանի վրա եւ թալանեցին: 32-րդ օրը քարավանը հասավ Քիաղխա գյուղը, որտեղ նորից աղջիկներ ու կանայք առեւանգվեցին: 40-րդ օրը Մուրադ գետի ափին տեսան ավելի քան 200 դիակ: Հարեւան գյուղի ռեսը բռնագաղթածներից հարկ հավաքեց որպես հատուցում գետը չնետելու համար: 52-րդ օրը քրդերը թալանեցին հայերի մոտ եղած ամեն ինչ՝ հագուստ, ներքնաշոր: Նրանք հինգ օր բացարձակ մերկ քայլեցին կիզիչ արեւի տակ: Հաջորդ հինգ օրը ոչ մի կտոր հաց ստացան եւ ոչ էլ մի պուտ ջուր: Հարյուրներով մեռնում էին: Նրանց լեզուները սեւացել, ածխագույն էին դարձել: Բայց երբ մի քանի օր անց հանդիպեցին ջրի, ոստիկանները թույլ չտվեցին խմել եւ բաժակը վաճառում էին երեք լիրայով, ոչ քիչ դեպքերում դրամը ստանալուց հետո էլ թույլ չէին տալիս ջրից օգտվել: Երբ 70-րդ օրը հասան Հալեպ, քարավանում մնացել էին 185 կին եւ երեխա[114]:

Էրզրումում ծառայող գերմանացի լեյտենանտ Շտանգեն պատմում է. «Հայերի աքսորը սկսվեց մայիսի կեսերին: Գլխավոր հրամանատար Քյամիլ փաշան հրաման արձակեց տարագրել Էրզրումից հյուսիս ընկած գյուղերի հայությանը, ինչը թուրքական պաշտոնատարները կատարեցին ամենադաժան ձեւով: Տրված չնչին ժամկետում մարդիկ դուրս քշվեցին իրենց տներից: Ժանդարմները ժամանակ չէին տալիս, որ նրանք կարողանային իրենց հետ վերցնել գոնե ամենաանհրաժեշտը: Թողած կամ հետները վերցրած ունեցվածքը թալանվեց ժանդարմների, զինվորների եւ մահմեդական բնակչության կողմից: Տեղահանվածները գիշերում էին բաց երկնքի տակ: Ժանդարմներին դրամ տալու միջոցով հնարավորություն էին ստանում ձեռք բերելու ուտելիք եւ ջուր: Տեղի էին ունենում բռնաբարություններ եւ բացարձակապես իրական է, որ հուսահատված մայրերն իրենց նորածին երեխաներին նետում էին Եփրատ, որոնց չէին կարողանում կերակրել »[115]:

Գերմանացի գթության քույրեր Դ. Բաղալ-Ցարլսբերգն ու Ե. Էլվերսը պատմում են Երզնկայի բռնագաղթի մասին. «Երզնկայի հայերին մի քանի օր ժամանակ տվեցին, որպեսզի վաճառեին իրենց ունեցվածքը, եւ մինչեւ մեկնելն իրենց բնակարանների բանալիները հանձնեին իշխանություններին: Առաջին քարավանը ճանապարհ հանվեց հունիսի 7-ին: Այն կազմված էր հիմնականում հարուստներից, ովքեր կարող էին վարձել փոխադրամիջոց: Հունիսի 6-8 եւ 10-ին ուղարկվեցին նոր քարավաններ, որոնցում ընդհանուր թվով կար 20-25 հազար մարդ: Շուտով լուր տարածվեց, թե անպաշտպան քարավանների վրա հարձակվել են քրդերը եւ լրիվ թալանել են: Դա հաստատեց մեր թրքուհի խոհարարը: Նա արտասուքն աչքերին պատմեց, թե քրդերն ինչպես էին

---

107 ՀՀ ՊԿԱ, ֆ. 57, ց.5, գ.106:
108 Անտոնեան Ա., նշվ. աշխ., էջ 154:
109 Լեփսիուս Յո., նշվ. աշխ., էջ 176-177:
110 Ն.տ., էջ 32-33:
111 Համլեն Ա., Բրոն Ժ.. Վերականգնված հիշողություն, Երեւան, 1995, էջ 42:
112 Լեփսիուս Յո., նշվ. աշխ., էջ149:

113 "Армянский вестник", 1916, N23.
114 Carzou J., Premiere, 1915. Le genocide des armenies. Տե՛ս "Histwria" (Paris), 1980, N405.
115 Carzou J., նշվ. աշխ.: Տե՛ս "Historia"(Paris), 1980, N405.

սպանել կանանց, երեխաներին նետել Եփրատ: Հունիսի 11-ին զորքեր ուղարկվեցին «քրդերին պատժելու համար»: Որոնք, սակայն, այդ անելու փոխարեն «մորթեցին կենդանի մնացած անպաշտպան հայերին, մեծ մասամբ կանանց ու երեխաների: Թուրք զինվորներից խմացանք, որ կանայք ծնկաչոք աղաչել էին ներել, որ նրանցից շատերն իրենց երեխաներին նետել էին գետը»[116]:

Քույրերը վիճակը ներկայացնում են հետեւյալ կերպ. «Մենք ճանապարհին հանդիպեցինք տեղահանվածների խոշոր քարավանի: Նրանում եղածները նոր էին թողել իրենց գյուղերը եւ համեմատաբար տանելի վիճակում էին... Տղամարդիկ խիստ սակավ էին, շատ էին կանայք եւ երեխաների մի ամբողջ ամբոխ... Նրանք՝ մեծերը, թե փոքրիկները, քայլում էին լուռ, որպեսզի շուտով միմյանց կապվեին եւ բարձր ժայռերից նետվեին Եփրատ»[117]:

«Հենց մեր գնացքը շարժվեց, հանդիպեցինք իրար հետեւից անցնող գնացքների, որոնք լեփ-լեցուն էին այդ դժբախտ մարդկանցով: Նրանց տանում էին անապատ»: Բոլոր գնացքները բեռնատար էին: Վագոնների կողքի դռները լրիվ բաց էին եւ երեւում էին ծերեր, պառավներ, մայրեր երեխաների հետ, տղամարդիկ: Նրանք վագոններում խցկված էին ինչպես «ոչխարներ կամ խոզեր: Մարդկային այս էակներին ավելի վատ էին վերաբերվում, քան անասուններին... Մենք սարսափով էինք նայում նման դաժանությանը եւ տանջանքներին»: Երբ գնացքն անցել էր կամրջով, 20 նորածինների նետել էին գետը, որովհետեւ մայրերն այլեւս անկարող էին տանել նրանց տանջանքները: Մի երիտասարդ կին վագոնում ծննդաբերել էր եւ երկվորյակ երեխաների հետ նետվել գետը[118]:

Տրապիզոնի հայության բռնագաղթը նկարագրում է Հայզերը. «Հունիսի 26 շաբաթ օրը հրապարակվեց հայերի տեղահանության մասին օրենքը: Հինգշաբթի, հուլիսի 1-ին, բոլոր փողոցները լի էին սվիններով զինված ժանդարմներով: Նրանք սկսեցին հայերին դուրս հանել իրենց տներից... երբ հավաքվեց մոտ 100 հոգի, ժանդարմները սվիններով նրանց քշեցին «դեպի Էրզրումի ճանապարհը»: Քաղաքից դուրս հավաքվեց 2 000 հոգանոց քարավան: Առաջին երեք օրը ուղարկվեց երեք նման քարավան: Որոշ ժամանակ անց ճանապարհ հանվեց 4 000 հոգուց կազմված եւս մի քարավան, որի մեջ էին հոգեւորականներ, բանկիրներ, իրավաբաններ, արհեստավորներ: Վալին ասաց, թե նրանց փոխադրամիջոց վարձելու համար դրամ է տրվելու, սակայն հունիսի 26-ից հետո հայերին արգելվեց որեւէ բան վաճառել կամ գնել: Եվ անգամ ունեւորները հարկադրված էին գնալ հետիոտն: «Ով այլեւս դժվարանում էր քայլել եւ հետ էր մնում, նրան սվինահարում ու նետում էին գետը»[119]:

Զեյթունից բռնագաղթվածների վիճակի մասին Կոնիայի ամերիկյան հոսպիտալի բժիշկ Վիլյամսը մայիսի 6-ին գրեց Մորգենթաուին: Հայերին Կոնիա տարել էին գնացքով, մի շաբաթ շարունակ ամեն գիշեր տանում էին մի քանի հարյուր մարդ: «Տարսուսից Պեզանտի նրանք ոտքով էին անցել»: Հիմնականում կանայք ու երեխաներ են: Նրանց իրենց տներից հանել էին մեկ ամիս առաջ եւ այդ ամբողջ ժամանակ, հացից բացի, ոչինչ չէին կերել: «Կառավարությունը յուրաքանչյուրին մի հաց էր տալիս, իսկ հինգ տարեկանից փոքր երեխաներին ոչինչ չէին տալիս»: «Գնացի մյուդիրի մոտ եւ խնդրեցի թույլ տան այցելելու բռնագաղթվածներին, բայց մերժեցին, մերժեցին նաեւ նրանց Կարմիր խաչի կողմից օգնություն հասցնել: Նահանգապետն իմ խնդրանքին պատասխանեց. «Դաղթականները որեւէ բանի կարիք չունեն, և ինքը չի կարող թույլտվություն տալ»: Ծառայողներն ասել են, որ հայերին փոքրիկ խմբերով տեղավորելու են գյուղերում: Ինձ համար պարզ է, որ այդ նշանակում էր նրանց բնաջնջում: Դա սպանություն էր այլ եղանակով: Տարագիրները գոյության միջոցներ չունեին, նաեւ հույս չկար, որ թուրք գյուղացիները նրանց կկերակրեին: Իսկ կառավարությունն էլ այլեւս սննդի բաժին չէր տա»: Այստեղ եւս նրանք սովամահ էին լինում եւ ընդհանրապես արտակարգ ողբալի վիճակում են: Դաղթականներին հարյուրական հոգով փակում էին չինություններում, որոնց մուտքերին զինվորներ էին կանգնած: Երբ որեւէ մեկը գնում էր պետքարան, զինվորը հետեւում էր նրան, վիրավորում կանանց, ծակում սվինով: Թուրքերը հայերին տեսնելիս գոչում էին. «Այս գյավուրները դեռեւս

116 "Из истории геноцида армян", Ереван, 1984, бюллетень N1, стр. 17-18.
117 Նշ.տ., էջ 18:
118 Նշ.տ.:
119 Carzou J., նշվ. աշխ.: Տե՛ս "Historia" (Paris), 1980, N 405.

չունչները չե՞ն փչել: Երեկ գիշեր գնացքում ծնվեց երեխա. մայրը նրան պատուհանից դուրս նետեց, որպեսզի նրա տանջանքներին անմիջապես վերջ դրվի»[120]:

Զեյթունի հայերի բռնագաղթին անդրադառնում է նաեւ Հալեպում ԱՄՆ-ի հյուպատոս Ջեքսոնը, որը 1915թ. մայիսի 12-ին գրում է Մորգենթաուին. «...Հայերն իրենց ունեցվածքը վաճառել չեն կարողանում, որովհետեւ ճանապարհին նախապատրաստվելու համար տրվել էր ընդամենը մի քանի ժամ: Նրանց տներում անմիջապես բնակեցնում են մահմեդականներին»: Հարուստ թե աղքատ, բողոքական թե ուղղափառ, գրիգորյանական թե կաթոլիկ՝ բոլորը ենթակա են միեւնույն հրամանին: «Ծերեր, միջին տարիքի մարդիկ, երիտասարդներ, առողջներ եւ հիվանդներ՝ բոլորին քշում են անհայտ է, թե ուր»: Շատ քչերին էր թույլատրվում գնալ ձիով, գոմեշով կամ ավանակով: Ճանապարհին ամենուրեք ընկած էին հիվանդներ: Ծննդաբերած կանայք «երեխաներին խեղդում էին կամ դեն նետում, որովհետեւ անկարող էին խնամել: Հայրերին ուղարկում էին մի, մայրերին մի ուրիշ, իսկ աղջիկներին ու երեխաներին մի երրորդ ուղղությամբ... »: «Ժանդարմներին թույլատրված էր կանանց ու աղջիկների հետ անել, ինչ ցանկանան: «Ես ինքս տեսա մի քանի խմբերի, որոնց տանում էին Հալեպով, նրանք սարսափելի վիճակում էին»: Մարաշում ձերբակալվեցին 300 ամենանշանավոր ընտանիքների գլխավորները: Զեյթուն քաղաքից տարագրվեց մոտ 2 000 մարդ եւ ուղարկվեց Մարաշ, այնտեղից՝ Այնթափ, Հալեպ եւ ապա Մեսոպոտամիա:

Կոնիայից 71 ընտանիք տեղահանվեց ապրիլի 25-ին[121]:

Հունիսի 5-ին Ջեքսոնը նոր հեռագիր ուղարկեց Մորգենթաուին: Նա գրում է. «Ձեւավորվել է հայերի կենդանի հոսք, ովքեր գալիս են Հալեպ մերձակա գյուղերից ու քաղաքներից, հիմնականում Մարաշից, Զեյթունից, Հասան Բեյլիից, Օսմանիեից, Բախչեից, Ադանայից, Դորթյոլից, Հաճընից եւ այլն: Նրանք գալիս են 300-500 հոգով զինված պահակախմբի խիստ հսկողության ներքո, հիմնականում ծերեր, կանայք եւ երեխաներ են»: Իշխանությունները նրանց քաշող անասուններ՝ փոխադրամիջոց չեն տրամադրել եւ ովքեր դրամ չունեն, հարկադրված են գնալ հետիոտն: «Նրանց բոլորին տներից դուրս են քաշել տնային հագուստով...»: «Վստահելի աղբյուրներից հայտնի է դարձել, որ նահանգներում թագավորում է իսկական ահաբեկչություն, հատկապես Դիարբեքիրում», որտեղ զենք գտնելու փնտրտուքի ընթացքում 300 քրիստոնյայի բանտ են նետել: Նույն օրը ձերբակալված 1 000 հայից 22-ը մահացել է խոշտանգումներից[122]:

«Թուրքերի փափագը,- գրում է Մարիա Ցակոբսոնը,- հայերի մահը դժվարացնելն է... Բնաջնջել հայ ազգը շատ ծանր չարչարանքներով: Տարաբախտ մարդիկ ինչ տառապանքներու միջով են անցնում, մինչեւ որ մահ են գտնում: Նրանք մեռնում են ամեն օր, ամեն ժամ, մինչեւ որ կնքում են իրենց մահկանացուն»:

Երբ գերմանացի միսիոնները հարցրեց, թե հայերին ինչու են տարագրում, այլ ոչ թե սպանում իրենց բնակավայրերում, թուրքը պատասխանեց, որ, նախ, ցանկանում են նրանց հարկադրել տանջվել եւ ապա, գյուղերում սպանելը նշանակում է դիակներով վարակել օդը[123]:

Ցոզդատի թուրք պաշտոնատար Շուքրին այս առնչությամբ դատողություն է արել. «...Իթթիհադականներու այս ըրածը առաջինն (Համիդյան ջարդեր) ավելի խոհեմ ճամբայ էր, որովհետեւ, եթե հայերը ջարդել ուզեինք սուլթան Համիտի օրով եղածին պես, այն ատեն մենք ալ շատ զոհեր պիտի ունենայինք: Ինչպես հայերն Ատանայի մեջ 1909-ին ըրին, փողոցներու մեջ շինուած պատնեշներու ետեւ եւ քարաշեն տուներու մեջ ամրանալով, դիւրաւ չպիտի ուզեին անձնատուր ըլլալ, այլ զենքով պիտի դիմադրեին: Տես Շապին -Գարահիսարի եւ Ուրֆայի մեջ հայերն ամիսներով զբաղեցուցին կառավարութեանը: Մի՞թե այս ձեւը (բռնագաղթն) ավելի գործնական չէ. ձեզ աքսոր պիտի տանինք՝ նախ զինաթափ ըրինք եւ ապա ճամբայ հանելով առանց որեւէ

120 Պետական քարտուղարության արխիվ, Վաշինգտոն, R. G. 59.867, 4016/71 "Armenian Review", 1984, vol. 37, N 68:
121 ԱՄՆ-ի պետական քարտուղարության արխիվ, Վաշինգտոն, R. g. 59. 867, 4016/77 կամ "Armenian Review", 1984, vol. 57, N1:
122 ԱՄՆ-ի պետական քարտուղարության արխիվ, Վաշինգտոն, R.G. 59. 867, 4016/72 կամ "Armenian Review", 1984, vol. 37, N1:
123 "Армянский вестник", 1916, N 3.

փոքր մը իսկ ընդդիմութեան մաքրեցինք... իսկ Երզնկայի կիներուն գալով, եթե քաղաքին մեջ ասոնց մաքրել ուզեինք, իրենց մուտը գտնուած ոսկեղեն, արծաթեղեն եւ գոհարեղեն՝ բոլոր զարդերը կոյուղիներու մեջ պիտի նետեին կամ փչացնեին, որպեսզի մեր ձեռքը չիյնան...(տեղահանության ընթացքում) ադամանդեայ շատ զարդեղեններ մեր խուզարկումների միջոցին կլլած էին: Սակայն թիւրք գիւղացիները, մանավանդ կիները, օրերով նեխած հազարավոր այս դիակներու մեջ շրջելով փորոտիքները պատռեցան եւ բավական զարդեղեններ գտան...»[124]:

1894-96թթ. ջարդերը թուրքական իշխանություններին համոզեցին, որ տեղում հայերի ամբողջական բնաջնջում անհնար է: Եվ դա մի պարզ պատճառով՝ սեփական բնակավայրում, սեփական տանը հայը հեշտությամբ չէր ենթարկվի ջարդարարների կամքին: Նա կդիմադրեր, ամեն մի քարե տուն կվերածեր բարիկադի, դիրքի եւ իր կյանքը թանկ կվաճառեր: Հայերի բնաջնջման, ավելի ճիշտ, նրանց 1/3-ըդի՝ 900.000 մարդու, ոչնչացման սուլթան Համիդի ծրագիրը տապալվեց գլխավորապես հենց այդ պատճառով՝ հայն ամենուրեք հակահարված տվեց ջարդարարներին: Պատահական չէ, որ անգամ այն քաղաքներում ու գյուղերում, որտեղ 1915թ. բնաջնջումը կատարվեց առանց բունագաղթի, հայերին ոչնչացրեցին ոչ թե իրենց տներում ու բնակավայրերում, այլ հարեւան գյուղերում, գյուղամերձ տարածքներում, կամ մեծ խմբերով լցրեցին ինչ-որ ջհնություններ՝ մարագ, անասնագոմ, խոշոր հացատուն ու հրդեհեցին: Մեծ եղեռնի ժամանակ սեփական տանը սպանված հայերը չնչին տոկոս էին կազմում: Այո, դեր են խաղացել նաեւ հայերի հանդեպ թուրք մոլեռանդների սադիզմը նույնպես (ինչպես Մ. Ցակոբսոնն է ասում)՝ ոչ թե լոկ սպանել, այլ սպանել խոշտանգումներով ու տանջանքներով: Սխալ չէր նաեւ թուրք պաշտոնատար Շուքրին՝ Աղանայում կենդանի հայ չէր մնա , եթե հայկական թաղերը պաշտպանության չկանգնեին: 1915-ին էլ հայերը կարողացան պաշտպանվել ոչ թե տեղահանության ուղիներում, ինչն անհնար էր, այլ իրենց բնակավայրերում (Վան, Սասուն Շապին Կարահիսար, Ուրհայ): Դեր են խաղացել նաեւ առողջապահական-հիգիենիկ նկատառումները: Տեղում 1.5 միլիոն մարդու բնաջնջումը նշանակում էր Փոքր Ասիան վերածել ոչ թե անցողիկ, այլ տեւական համաճարակների օջախի:

Թուրքիայի ոչ միայն քարոզչական համակարգը, այլեւ ինքը՝ թուրքը, սկսած սուլթանից մինչեւ խուժանը, Հայկական հարցում կրկնում են նույն միտքը, հաճախ անգամ նույն բառերով: Ինչպես Գիպենդին է նկատում, նման դեպքերում նրանք բոլորը «կուրանան փաստերը» եւ ասածդ «կասկածի տակ կը դնեն»: Այն, ինչ 1915-ի ապրիլից սկսվեց, «գործադրութիւնն էր սիստեմատիկ ու խնամքով պատրաստուած ծրագրի մը՝ բնաջնջել հայ ցեղը: Վեց ամսուայ ընթացքին մոտավորապես մեկ միլիոն հայ սպաննուեցաւ»: Նա նույնպես գտնում է, որ «զոհերու թիվը եւ անոնց փչացման եղանակը ժամանակակից պատմութեան մեջ աննախադեպ էր»[125]:

Ի դեպ, «Հայկական Թղթապանակ» գրքույկում «Հերքելով» Ա. Անտոնյանի օգտագործած հեռագրերի վավերականությունը, դա հիմնավորվում է նաեւ հետեւյալ կերպ. «Եթե կառավարությունը դիտավորություն ուներ ոչնչացնելու բոլոր հայերին, նա այդ կարող էր անել տեղում, այլ ոչ թե տարագրության միջոցով: Ջարդերն առանց մեծ դժվարության կարելի էր իրականացնել, հատկապես, ռազմաճակատամերձ շրջաններում» եւ բունագաղթի կարիք չկար[126]:

Ուրեմն ինչո՞ւ երիտթուրքերը հրաժարվեցին (կամ հիմնականում հրաժարվեցին) հայերի բնաջնջման արդյունավետ եղանակից՝ ջարդերը տեղում կազմակերպելուց: Բունագաղթը ա)զանգվածային ջարդեր իրականացնելու ամենահեշտ եւ արդյունավետ միջոցն է, որը, որպես կանոն, բացառում է դիմադրությունը եւ հակաջարդարարական շարժումների ծավալումը, բ) հնարավորություն է տալիս ամբողջությամբ տիրանալ հայերի ունեցվածքին, գ) հնարավոր էր այս կամ այն չափով տեւական ժամանակով քողարկել զանգվածային ջարդերի իրողությունը՝ մահերը ներկայացնելով դեպորտացիային օբյեկտիվորեն ուղեկցող երեւույթներ, դ) հագուրդ տալ մահմեդական մոլեռանդության սադիստական վրեժխնդրությանը, ե) մահմեդական ազգաբնակչությանը զերծ պահել զանգվածային ջարդերին ուղեկցող համաճարակներից:

124 Պալաքյան Գ., նշվ. աշխ., էջ 300-304:
125 «Ցուշամատեան Մեծ եղեռնի», էջ 1065:
126 "Армянский вопрос на страницах турецкой прессы", Ереван, 1984 N5.

Բունագաղթի մասին կարծիքների բազմազանությունից առանձնացնենք Թուրքիայի դաշնակից Գերմանիայի քաղաքական գործիչների, միսիոներների, դիվանագետների վկայությունները: Կոնիայում աշխատող մի խումբ գերմանացիներ 1915թ. օգոստոսին Վանգենհայմին գրեցին. «...Ձեռնարկված բոլոր միջոցառումները, հավանաբար, կհանգեցնեն հայերի լրիվ ոչնչացման: Այդ անմարդկային վերաբերմունքը խայտառակության անջնջելի խարան է...ոչ միայն թուրքերի, այլեւ գերմանացիների ճակատին»[127]:

Լսելով Էնվերի ասածները հայերի ոչ բարեհույս ընտանիքների տեղահանման մասին՝ Լեփսիուսը գրեց Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանը, որ «խոսքը գնում է ոչ թե առանձին ընտանիքների, այլ զանգվածային բունագաղթի մասին»: «Այդ միջոցառումները չեն կարող արդարացվել ռազմական բնույթի պատճառներով: Դրանք ոչ մի կապ չունեն աննշան պատրվակների հետ, որոնցով բացատրվում են: Դրան հակասում են նաեւ թուրքական կառավարության մայիսի 25-ի հայտարարությունը, թե Էրզրումի, Դերջանի, Հեղինի, Սասունի, Բիթլիսի,Մուշի եւ Կիլիկիայի հայերը կայսրական իշխանությունների կողմից որեւէ միջոցառման չեն ենթարկվել, որովհետեւ նրանք որեւէ գործողություն չեն ձեռնարկել հասարակական կարգի եւ հանդարտության դեմ»: Հենց այդ նահանգներում կազմակերպվեց զանգվածային բունագաղթը, որն աստիճանաբար տարածվել է հայկական բոլոր նահանգներում: Հայտարարության այն կետը, թե «որոշակի թվով հայեր պետք է արտաքսվեն իրենց բնակավայրերից եւ դա տեղի ունեցավ, որովհետեւ նրանք բնակվում էին պատերազմական գործողությունների գոտիներում», հիմքից զուրկ է եւ ոչնչով չի պատճառաբանվում, քանի որ խոսքը մեծամասամբ գնում է գավառների մասին, որոնք Անատոլիայի խորքերում են, հեռու ռազմական գործողությունների գոտիներից: Մինչեւ հունիսի 22-ը բունագաղթվել էր մոտ 200 000 հայ: Մասնավորապես Վերին Եփրատի մարզերից (Երզնկա, Քեմախ, Բայբուրդ), Տարսուսի եւ Ամանիսի կողմերից (Զեյթուն, Հաճըն, Այնթափ, Մարաշ) եւ Կիլիկիա: Մյուս վիլայեթներում, ինչպես, օրինակ, Էրզրումում նման միջոցառումներ նախապատրաստվում են: Քանի որ Թրակիայի, Ադրիանապոլի եւ Մարմարայի միջեւ ընկած տարածքներից քշվել են նաեւ հունական գյուղերի բնակիչները, հավանաբար խոսքը գնում է այն մասին, որպեսզի քողարկելով պատերազմի իրողությունով եւ օգտագործելով մահմեդականների շրջանում սրբազան պատերազմի առաջացրած զգացմունքները, խիստ պակասեցնել կայսրության քրիստոնյա բնակչության թիվը, նրանց բունագաղթելով անբարենպաստ կլիմայական պայմաններ ունեցող վտանգավոր վայրերը եւ դատապարտել կործանման»[128]:

Երզնկայի եւ Դիարբեքիրի միջեւ ընկած հատվածի լեռնային ճանապարհին հայերը կոտորվեցին քրդերի կողմից, Էրզրումի եւ Բայբուրդի տակ երեւացին խոշոր ավազակախմբեր, որոնց պետերը ֆրանսերեն էին խոսում:

Լեփսիուսի այս հաղորդագրությունը հաստատում է՝ ա) բունագաղթը կրում է համաարեւմտահայ բնույթ, բ)հայերի կեցվածքը որեւէ դեր չի խաղացել Կ. Պոլսի ջարդարար քաղաքականության ձեւավորման գործում, գ) բունագաղթն առնչություն չունի ռազմաճակատային հիմնահարցերի եւ թուրքական պետության անվտանգության հետ, դ) մայիս ամսից մինչեւ հունիսի 22-ը արդեն բունագաղթվել էր 200 000 մարդ, ինչը տարօրինակություն է հաղորդում Թուրքիայում պաշտոնավարող օտար դիվանագետների վարքագծին, ե) ընդունելով հանդերձ հայերի բնաջնջման իրողությունը, Լեփսիուսը դեռեւս չէր հավատում, որ երիտթուրքերը խնդիր էին դրել իրականացնելու հայ ժողովրդի ամբողջական բնաջնջում:

Անդրադառնանք գերմանական մյուս գործիչների կարծիքներին: Գերմանիան համակարծիք եղավ Էնվերին չխանգարելու Վանգենհայմի մտքի հետ[129] *եւ չբռնեց նրա «բազուկը» ու չարգելեց հայերի տեղահանությունը: Բայց նաեւ գերմանական հյուպատոսական եւ դիվանագիտական տեղեկագրերը հավատում էին, որ ջարդերն իրականացվել են թուրքական կառավարության հրահանգով, որպես իրագործում հայ ժողովրդի լրիվ բնաջնջման ծրագրի: «Հարցը վերաբերվում է մի ամբողջ ժողովրդի բնաջնջմանը կամ իսլամացմանը»*[130]:

127 "Армянский вопрос а странницах турецкой прессы", Ереван, 1984 N5.
128 R 14086, Ah 19605.
129 Տե՛ս Վանգենհայմի 30-ը ապրիլի 1915թ տեղեկագիրը:
130 Տե՛ս Հյուքհոքի 4-ը հուլիսի 1915թ. տեղեկագիրը:

«...Թուրքական կառավարությունը շատ է չափն անցկացրել եւ գիտակցորեն հետապնդում է հայ ժողովրդի բնաջնջման ծրագրի իրականացմանը նախնադարից փոխ առնված միջոցներով»[131]:

«Թուրքիայի ներկայիս քաղաքական ուղղության կողմնակիցներն ընդունում են, որ հայերի դեմ իրենց ձեռնարկած գործողությունների վերջնական նպատակն է Թուրքիայի հայերի ամբողջական ոչնչացումը: Պատերազմից հետո Թուրքիայում այլեւս հայ չի լինելու,- բառացիորեն հայտարարել է իրավասու մի անձ»[132]:

1915թ. հունիսի 2-ին Շոյքներ-Ռիխտերը հեռագրում է Վանգենհայմին. «Իմ բանակցությունները բանակի (Թուրքական 3-րդ բանակի) գլխավոր հրամանատարի հետ հայերի արտաքսման վերաբերյալ չունեցան դրական արդյունքներ: Հայ բնակչությունը ամբողջ հարթավայրից եւ, ըստ երեւույթին, նաեւ Էրզրումից, պետք է աքսորվի Դեր Էլ Զորի ուղղությամբ: Այս մեծ ծավալի բռնագաղթը հավասար է զանգվածային կոտորածների...ռազմական բնույթի պատճառաբանություններն անհիմն են, որովհետեւ տեղական բնակչության ապստամբությունը բացառված է, քանի որ աքսորվածները ծերեր, կանայք ու երեխաներ են... Հայկական լքված, բնակչությունից զուրկ այն գյուղերը, որոնք այցելեցի, թալանված են»[133]:

Սամսոնում Գերմանիայի հյուպատոս Հուկովը հուլիսի 4-ին հայտնեց. «Անատոլիայում տեղի ունեցող տեղահանումը նպատակ ունի ոչնչացնել կամ մահմեդականացնել ամբողջ հայ ժողովրդին»: Հինգ օր անց Տրապիզոնի հյուպատոս Բերգֆելդը գրեց կանցլերին՝ հայ բնակչության բռնագաղթի ու նրանց բռնությունների ենթարկելու միջոցով իթիհադականների «կենտկոմը նպատակ ունի հիմնովին վերջ տալ Հայկական հարցին»[134]:

«Հայերի աքսորի ու ոչնչացման մասին որոշումն ընդունվել է երիտթուրքերի կոմիտեի կողմից Կ. Պոլսում: Հավանաբար այդ կոմիտեի կողմից էլ կազմակերպվել է նույն որոշման գործադրումը ռազմական իշխանությունների եւ զանազան հրոսակների օգնությամբ: Այդ նպատակով, բացի տեղական (Էրզրումի) վարչության ոստիկանության պետ Խուլուս բեյից եւ զորքերի գլխավոր հրամանատար Մ. Քյամիլ փաշայից, տեղերում եղել են կոմիտեի անդամներ Հիլմի բեյը, Շաքիր բեյը, Սեյֆուլլահ բեյը»[135]:

Միանշանակ չեն Ռ. Տրումպենների «Գերմանիան եւ Օսմանյան կայսրությունը 1914-18» գրքի պարունակած գնահատականները: «Նախորդ հարյուրամյակի ընթացքում իրենց անկախության համար Բալկանյան տարբեր ժողովուրդների բարեհաջող պայքարից հետո,- գրում է Տրումպենները,- Օսմանյան կայսրությունում 1914-ին մնացած ամենաստվարաթիվ քրիստոնյա ազգաբնակչությունը հայերն էին... Դարեր շարունակ հանդուրժելով օրինականացված խտրականությունը, տգնապներն ու բիրտ կառավարումը, որի համար նրանք «լոյալ համայնքի» (Millet Sadika) կոչմանն են արժանացել իրենց Թուրք տերերի կողմից, Թուրքահայաստանի հայերից շատերը XIX դարի ընթացքում աստիճանաբար դարձել էին համառ եւ ազգայնականորեն տրամադրված... Թեպետ Պոլսի հայ պատրիարքը եւ զանազան այլ ներկայացուցիչներ պատերազմը սկսվելուց անմիջապես հետո հրապարակայնորեն հայտարարեցին, որ Օսմանյան կայսրությունում բնակվող հայերը կպաշտպանեն կառավարությանը, միանգամայն պարզ էր, որ Թուրքահպատակ շատ հայեր հավանություն չէին տալիս Բ. Դոան ինտերվենցիոնիստական գծին կամ ուղղակի ապավինում էին Թուրքերի նկատմամբ Անտանտի հաղթանակին»[136]:

«Հարկ է ընդգծել,- գրում է գերմանացի մի ուրիշ հետազոտող՝ Ա. Շամբերսը,- հայերի ճնշող մեծամասնությունը ոչ մի ձեւով ընդգրկված չէր որեւէ բացահայտ հակակառավարական գործողության մեջ, եւ բազմաթիվ Թուրք հեղինակների այն պնդումը, թե իբր Անդրկովկասի Թուրքական ճակատին մոտ ընկած հայկական նահանգները լի էին խռովություններով, բացահայտ սխալ է: Մի քանի գերմանական սպաներ, ովքեր այդ շրջանում էին պատերազմի առաջին ամիսներին, իրենց զեկույցներում հաստատում են, որ մինչեւ 1915-ի ապրիլը հայկական մարզերը ըստ էության հանգիստ էին»:

131 Տե՛ս Ռեոսլերի 27-ը հուլիսի 1915թ. տեղեկագիրը:
132 Ն. տ.:
133 «Ցառաջ», 11. 10. 1985:
134 Տե՛ս Սամսոնում գերմանական հյուպատոս Հուկովի 04. 06. 1915թ. տեղեկագիրը:
135 Տե՛ս Շտագեի 23. 08. 1915թ զեկուցագիրը:
136 Trumpener U., Germany and the Ottoman Empire 1914-18, Prinseton, 1968, pp. 359-360.

Թուրքերի եւ հայերի միջեւ կռվի բռնկումը Վանում եւ մի քանի այլ վայրերում 1915-ի ապրիլին Թուրք հեղինակների մեծ մասի եւ արեւմտյան որոշ գիտնականների կողմից գնահատվել է որպես հայ ազգաբնակչության ըմբոստության ապացույց, մի մեկնաբանություն, որն իրական անցքերի սոսկ պարզունականացված վարկածն է: Իրականում վկայությունների մեծ մասը հանգեցնում է այն եզրակացության, որ հայ ազգաբնակչության սիստեմատիկ սպանություններն արեւելյան նահանգներում արդեն իսկ ծրագրված էին իթիհադի վարչակարգի կողմից, եւ որ հուզումները Վանում եւ այլուր պարզապես հարմար առիթ ծառայեցին զանգվածային տեղահանությունների եւ ոչնչացման ծրագիրը մեծ ծավալներով իրագործելու համար[137]:

Հուլիսի 4-ին Վանգենհայմը հուշագիր ներկայացրեց մեծ վեզիրին, թեեւ գերմանական կառավարությունը որեւէ առարկություն չուներ պատժիչ միջոցառումների դեմ, որոնք թելադրված էին «ռազմական նկատառումներով», նա չի կարող անտեսել «այն վտանգը», որ ստեղծվում է «մեղավորների եւ անմեղների դեմ ուղղված ոչ խտրական միջոցառումներով եւ նրանց զանգվածային տեղահանությամբ, մասնավորապես, երբ այդ միջոցառումներն ուղեկցվում են դաժան արարքներով՝ ջարդերով ու թալանով... Գերմանական դեսպանատունն անհրաժեշտ է համարում, որ խիստ ցուցումներ տրվեն նահանգային իշխանություններին արդյունավետ քայլերի դիմելու տարագրված հայերի կյանքն ու սեփականությունը պաշտպանելու համար... դեսպանությունն իրեն պարտավորված կզգար, եթե Բ. Դոան առանձին դեպքերում երկարաձգեր տեղահանությունների ժամկետը եւ բարեգործական հաստատությունների անձնակազմի անդամներին, ինչպես նաեւ սաներին, որբերին եւ կախյալ այլ անձանց թույլ տար մնալու իրենց տեղում...»[138]:

Հուլիսի 12-ին Վանգենհայմը Բ. Դոանը կոչ արեց «միջոցներ ձեռնարկել», Դիարբեքիրի վալի դոկտոր Ռեշիդ բեյի դեմ, որպեսզի նրա դաժան քաղաքականությունը չհանգեցնի այդ շրջանի քրիստոնյաների լրիվ ոչնչացմանը[139]:

Զորս օր անց նա կանցլերին գրեց. «Բ. Դոանն որդեգրած ուղուց հետ կանգնեցնելու միջամտություններն այլեւս ապարդյուն են, ուստի հայկական հալածանքների հնարավոր բոլոր հետեւանքների պատասխանատվությունը պետք է դրվի Թուրքերի վրա»: Գերմանական կառավարությունը հիմքեր ունի պնդելու, որ Ռեյխը միշտ էլ խստորեն դատապարտել է «Թուրքերի ծայրահեղությունները»[140]:

Մոտեցումներում շրջադարձը ակնհայտ է՝ ջանքերը պետք է ուղղել ոչ թե ջարդերը կանգնեցնելու, այլ դրանցից սահմանազատվելու, պատասխանատվությունը Գերմանիայից հեռացնելու համար: Եվ սկսվեց նման բովանդակությամբ զեկույցների հոսքը: Ռեոսլեր՝ Հալեպի հյուպատոս. «Թուրքիայի իշխանությունները որոշել են ոչնչացնել տարագիրներին»[141]:

Շոյքներ-Ռիխտեր՝ Էրզրումի հյուպատոս. «Երիտթուրքերի կոմիտեի մեծամասնությունը համոզված է, որ Թուրքական կայսրությունը պետք է հիմնվի զուտ իսլամական եւ պանթուրքական խարսխի վրա: Պետության ազգաբնակչության ոչ իսլամական եւ ոչ Թուրքական տարրերը պետք է բռնի ուժով իսլամանան եւ թրքանան, իսկ այնտեղ, որտեղ դա հնարավոր չի լինի, պետք է բնաջնջվեն: Այս ծրագիրը իրագործելու համար ներկա պահը այդ պարոններին շատ նպաստավոր է թվում: Իրենց ծրագրի առաջին կետը վերաբերում է հայերի հաշվեհարդարին»[142]:

Էրզրումի մերձակայքում տեղահանությունները «սարսափելի թշվառության պատճառ են դարձել», մտադիր է իշխանություններին միջնորդել «անիմաստ տեղահանության դեմ»[143]:

Վանգենհայմ. «Այս հանգամանքը (ոչ պատերազմական շրջաններից բռնագաղթը) եւ տեղահանության բնույթը ապացուցում են, որ կառավարությունն իսկապես հետապնդում է Օսմանյան կայսրությունում հայ ցեղը բնաջնջելու նպատակ»[144]:

137 Chambers A., In an Anatolian Valley, New York, 1956, p. 221.
138 FO Turkei, 183, Bd. 37,"Antoge zu Bericht", N433.
139 Ն.տ., Bd 27, Վանգենհայմի նամակը Բեթման Հոլվեգին:
140 Ն.տ. Bd. 37, Վանգենհայմի նամակը Բեթման Հոլվեգին:
141 Տե՛ս Ռեոսլերի 03.01. 1916թ. հեռագիրը:
142 Տե՛ս Շոյքներ-Ռիխտերի 04. 12. 1916 հեռագիրը:
143 Տե՛ս նույնի 25.051915 հեռագիրը:
144 Տե՛ս Վանգենհայմի 07.07. 1915 տեղեկագիրը:

Մետեռնիխ.- «Կոմիտեն (երիտթուրքերի) պահանջում է հայերի վերջին մնացորդների բնաջնջում եւ կառավարությունը ստիպված է տեղի տալ: Քանի որ կոմիտեն կառավարական կուսակցության մարմին է ոչ միայն մայրաքաղաքում, բոլոր իշխանություններին կից՝ սկսած նահանգապետերից մինչեւ գավառապետերը, ունի իր ներկայացուցիչը, որի պարտականությունն է նեցուկ կանգնել եւ հսկել կենտրոնի հրահանգների գործադրության վրա: Հայերի տեղահանությունը վերսկսվեց ամենուրեք: Սակայն կոմիտեի սովալլուկ գայլերն այս դժբախտությունից այլ ակնկալիք չունեն, եթե ոչ հագեցում տալու իրենց մոլեռանդ կատաղությանը»[145]*:*

Գերմանացի դիվանագետներն ու գործիչները լավ հասկանում էին, թե ինչու էին երիտթուրքերն ամենուրեք հայկական դավադրություն փնտրում: Լեփսիուսը ծաղրում է, որ 1915թ. ապրիլից սկսած Թուրքիայում մեկը մյուսի հետեւից հայտնաբերվում էին «հայկական ապստամբություններ», որոնց «խաղաղեցումը» գնալով ավելի ու ավելի ջարդարար բնույթ է ստանում[146]*:*

Փաստ է, որ առաջին հերթին գերմանական դիվանագետների տեղեկագրերն են հիմնավորապես ապացուցում, որ հայկական ջարդերը տեղի ունեցան երիտթուրքերի կառավարության հրահանգով: Նրանք օգտագործեցին համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորությունը՝ մեկընդմիշտ փակելու Հայկական հարցը: Անտարակույս պաշտոնական հրահանգների գործադրության ընթացքում թուրք խուժանի մոլեռանդությունը, վայրագությունն ու ընչաքաղց բնազդը հանդես եկան ամենասարսափելի քստմնելության տեսքով, սակայն ջարդերի նախաձեռնությունը երբեք արդյունք չէր հայերի «դավաճանության» հետեւանքով թուրք ժողովրդի զայրույթի, ինչպես ճգնում էին հավատացնել երիտթուրքերը:

Հետաքրքրությունից զուրկ չեն նաեւ Թուրքիայի մյուս դաշնակցի՝ Ավստրո-Հունգարիայի պաշտոնատարների վկայությունները: Պալավիչինի՝ Կ. Պոլսի դեսպան. «Թալեաթն ասաց, որ գավառներում իսկապես զոհվել են հազարավոր մարդիկ, սակայն ժխտում է կանանց ու երեխաների հանդեպ դաժանության փաստերը»[147]*:*

Հուլիսի 1-ին դեսպանը Թալեաթին ասաց, որ բոլոր տղամարդկանց ու երեխաների անխտիր տեղահանությունը «թվում է դժվար արդարացուցիչ»[148]*:*

«Հաստատվել Թալեաթի հավաստիացումների, սրանցում նահանջներում դաժանությունները չարունակվում են»[149]*:*

Սակայն գերմանական աղբյուրների վկայություններն ավելի հստակ են: «Մարդինի հայ բնակիչներից 700 հոգի,- գրում է հյուպատոս Հոլշտեյնը,- ինչպես նաեւ տեղի հայ եպիսկոպոսը գառների նման մորթվեցին»[150]*: Մոսուլի գերմանական հյուպատոսության տվյալներով ոճրագործության պատասխանատուն Դիարբեքիրի վալի Ռեշիդն էր, որն «իրեն արյունախում գազանի պես էր պահում»*[151]*:*

Գերմանական դիվանագիտության երկերեսանի ցինիկությունը սահմաններ չէր ճանաչում: Նա ի գիտություն աշխարհին աղմուկ էր բարձրացնում, թե դեմ է եւ պայքարում է հայերի բնաջնջման քաղաքականության դեմ, իսկ Թուրքերի ականջին շշնջում էր՝ հայերին անպայման տեղահանեք, նրանք մեզ պետք են Բաղդադի երկաթուղու շրջանում, բայց ջարդերի հարցում զգույշ եղեք եւ այդ խնդրում մեր աջակցությունը չսպասեք, չնայած քաջ գիտեր, որ հայ բնակչության 70-80-%-ը ոչնչանում, զոհվում, մեռնում էր տեղահանության ճանապարհին: Ա. Բարբին բացարձակապես իրավացի է, երբ գրում է. «Մի ամբողջ քրիստոնյա ժողովրդի հետեւողական ոչնչացման սարսափելի հանցագործությունը Թուրքական կառավարության եւ Գերմանիայի հանցագործությունն է»: Մահմեդական բնակչության մի մասը ինչպես Տրապիզոնում, այնպես էլ Էրզրումում հայերի հետ ապրում էր լրիվ հաշտ եւ ցանկանում էր միշտ այդպես ապրել: Եղան պաշտոնատարներ, չնայած դրանց թիվը քիչ էր, որոնք ելնելով մարդասիրությունից, արեցին ամեն ինչ, որպեսզի մեղմացնեին Թուրքական կառավարության հրամանների

145 Տե՛ս Վ. Մետեռնիխի (Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան) 30.06. 1916 ծածկագիրը:
146 Lepsius J. Deutscland..., nos. 41, 43-53, 56-58.
147 Wienna AHFM, Turkei Berichte 1915, N32 D/p.
148 Տե՛ս Պալավիչինիի նամակը Բուրիանին:
149 AHFM, Turkei Berichte 1915.
150 Lepsius J., Berichte, 1919, N110, s. 102.
151 Ն.տ.:

անողոք խստությունը, ինչին հայերը «ենթարկվում էին իրենց կամքին հակառակ»: Ջարագործությունների ամբողջ պատասխանատվությունն ընկնում է կառավարության վրա: Սակայն չպետք է մոռանալ եւ հարկ է բարձրաձայն հայտարարել ու կրկնել, որ այդ չարագործությունները կկանխվեին, եթե հենց սկզբում կանգնեցվեին: Դրա համար բավական էր ձեռքի մի շարժում Գերմանիայի կողմից, նրա ներկայացուցչի մի խոսքը Էնվեր փաշային, նույն այն Էնվերին, որը սառնասրտորեն հայտարարում էր. «Ես մտադիր չեմ քրիստոնյաներին այլեւս հանդուրժել Թուրքիայում»: «Սակայն Գերմանիան ոչ միայն որեւէ խոսք չասաց, ոչ միայն գոնե մատը չշարժեց, այլեւ ինքն օգնեց դահիճներին...»[152]*:*

«Տեղահանության նպատակը,- գրում են Հալեպում գերմանական դպրոցի դասատուները գերմանական կառավարությանն ուղղված կոչում,- ողջ հայ ժողովրդի ոչնչացումն է: Այդ դիտավորությունը պարզորոշ երեւում է այն փաստից, որ կառավարությունը սիստեմատիկ խոչընդոտներ է հարուցում երկրում գտնվող այն միսիոներների, գթության քույրերի եւ ուրիշ եվրոպացիների առջեւ, որոնք հայերին օգնություն ցույց տալու համար փորձում են միջամտել: Շվեյցարացի մի բանակային ինժեներ ռազմական դատարանին հանձնվեց տեղահանված հայերի քարավանին հաց բաժանելու համար»[153]*:*

"Le Temps"-ը 1915թ. սեպտեմբերի 29-ին գրեց. «Ստացվել է հայերի նկատմամբ կատարված նողկալի ու սարսափելի գազանությունների մասին տարածված լուրերի հաստատումը: Անկասկած է, որ ինչպես նախորդ դեպքերում, այս ոճրագործություններն էլ ոգեկոչված են Ստամբուլի կողմից: Հիմք կա ենթադրելու, որ հայերի վրա հարձակվելու հարցը վճռվել է Կովկասից Էնվեր փաշայի վերադառնալուց հետո, որտեղ նա ջախջախվել էր եւ կատաղել-փրփրել այն հավանական փաստից, թե հայերն օգնում էին ռուսներին:

Թալեաթ բեյը, հավանաբար, օգտվեց դրանից, որպեսզի վրեժխնդիր լիներ Փոքր Ասիայի հայոց անպաշտպան գաղութներից: Որոշում ընդունվեց հայերին խորը թիկունք արտաքսելու մասին»: Կառավարության այդ հրամանի կատարումն ինքնին նշանակում էր խրախուսել մահմեդականներին գործադրելու սպանություններ, բռնաբարություններ եւ այլ գազանություններ: «Ի տարբերություն նախորդ սպանությունների, ներկայիս գազանությունները չեն սահմանափակվում մեկ մարզով: Սամսոնից ու Տրապիզոնից, Օրդուից ու Այնթափից, Մարաշից ու Էրզրումից նույն լուրերն են ստացվում՝ տղամարդկանց մասին, որոնց անողոքաբար գնդակահարել են, խաչել, խեղել կամ տարել աշխատանքային գումարտակներ, երեխաների մասին, որոնց առեւանգել ու բռնի մահմեդականացրել են, կանանց մասին, որոնց բռնաբարել են եւ ստրկության են վաճառել..., գնդակահարել տեղում երեխաների հետ, աքսորել անապատ՝ Մոսուլից արեւմուտք, որտեղ ոչ ուտելիք կա, ոչ ջուր, կամ թե աքսորել Դեր Էլ Զոր... Երկու դեպքում էլ նրանց սպասում է սարսափելի մահ»: Այդ դժբախտ զոհերից շատերը չեն հասել նշանակված վայրը, որովհետեւ ուղեկցող պահակախումբը նրանց այնպես էր քշում, որ ընկնում էին, երբ ծեծելով ու քացիներով անհնար էր լինում ստիպել առաջ շարժվել, լքում էին, որ մեռնեին ճանապարհներին, եւ նրանց դիակները ճշտորեն ցույց էին տալիս այն ուղին, որով անցել էին աքսորականները: Շատերին կապում էին միմյանց ու շպրտում գետը:

Թերթը միանգամայն ճշմարիտ է նկարագրում բռնագաղթը, սակայն սխալվում է, երբ այն կապում է Կովկասյան ռազմաճակատում, այսինքն՝ Սարիղամիշում, Թուրքերի խայտառակ պարտության հետ: Այն կրկնում է Թալեաթի կեղծ հայտարարությունը, թե հայերի բռնագաղթով ինքը վրեժ էր լուծում Սարիղամիշում Էնվերի պարտության համար: Բռնագաղթի ծրագիրը մշակվել էր շատ ավելի վաղ, քան Թուրքիան պատերազմի մեջ կմտներ:

Նմանօրինակ սխալներից զերծ է "Daily Chronic"-ը, որը 1915թ. օգոստոսին գրեց. «Թուրքական իշխանությունները ծրագրել էին Ասիական Թուրքիայի ոչ մահմեդական բնակչության բնաջնջումով ստեղծել միայն մահմեդականներից բաղկացած, ինչպես իրենք էին անվանում, միատարր ազգ: Այս ծրագրի չարաղետությունը համարժեք էր նույն ծրագրի կույր անխոհեմությանը: Հենց որ (երիտթուրքերը) 1915թ. գարնանը զգացին Դարդանելում դաշնակիցների հարձակման ձախողումը, ձեռնամուխ եղան հայերի ոչնչացման իրագործմանը»: Սկզբում զինաթափ արեցին բոլոր հայերին, որոշ դեպքում էլ հայերի կողմից զենք բարձրացնելու մտադրության պատ-

152 Բարբի Ա., նշվ. աշխ., էջ 25:
153 Bryce J., նշվ. աշխ., p.512:

րանք ստեղծելու համար Թուրքերն իրենք էին իրականում զենք ուղարկում քաղաքներ եւ ապա որպես հանցանշան քրիստոնյաների դեմ, բռնադրավում այն: Երբ քրիստոնյաների «ունեցած» զենքը հավաքվեց, Կ. Պոլիսը տեղական կառավարիչներին ջարդերը սկսելու հրամաններ ուղարկեց: Հայաստանի ողջ բնակչությունը աքսորվեց: Զափահաս տղամարդկանց անգթորեն կոտորում էին: Երիտասարդ կանանց վաճառում էին շուկաներում կամ բռնադատում էին Թուրք սպայության ու քաղաքացիական պաշտոնյաների հարեմներում ստրուկներ դառնալու համար: Երեխաները տրվում էին ուրիշներին՝ տարեց տղամարդիկ եւ կանայք, մայրերն ու նրանց փարված մանուկները պոկվեցին իրենց տներից եւ քշվեցին Հյուսիսային Սիրիայի անապատները: Նրանց մեծ մասը ճանապարհին մահացավ հյուծվածությունից, հիվանդությունից, սովից: Վերապրողներից միայն քչերը կարողացան մի քանի ամիս պահպանել իրենց գոյությունը Հալեպի շրջակայքում եւ Եփրատի երկայնքով: «Շատերը՝ հավանաբար հազարներ, ովքեր մարտիրոսաբար մերժել էին ուրանալ իրենց քրիստոնեական հավատը, խեղդվեցին այդ գետում եւ նրա վտակներում... Հաշվի առնելով ջարդերի սարսափելի ծավալները (ավելի ահարկու, քան Աբդուլ Համիդի օրոք տեղի ունեցածները), ոչ մի կասկած չկա, որ բնաջնջման քաղաքականություն է տարվում:

Ամբողջական առումով հայերն անօգնական էին: Տանջակ, գուցե եւ հարյուր հազարավոր մարդիկ մորթվեցին, ավելի մեծաթիվ մարդիկ տեղահանվեցին...ինչը համազոր է դանդաղ ոչնչացման...»:

Ամփոփենք: Ականատեսներն ու ժամանակակիցները միահամուռ վկայում են, որ 1915թ. հունիսին սկսվեց մի զարհուրելի իրադարձություն, որի նմանը պատմության մեջ չէր արձանագրվել: Կիլիկիայի, Անատոլիայի, Հայաստանի բոլոր քաղաքներից ու գյուղերից հայերը տեղահան արվեցին: Մահաբեր ծրագիրը սկսեց հետեւողականորեն գործադրվել: Թուրքերը որոշել էին օգտվել առիթից մեկընդմիշտ բնաջնջելու այն ամենը, ինչ հայ է եւ հայկական: Տղամարդկանց մեծ մասը զորակոչվել էր եւ ծերերը, կանայք ու երեխաները, հիվանդներն ու հաշմանդամներն աքսորվում էին: Այս դժբախտներից շատերը մեկնելուց մի քանի ժամ առաջ էին իմացել, որ տեղահան են լինելու: Նրանց ստիպեցին լքելու իրենց ողջ ունեցվածքը, տները, հողերը, կենդանիները, կահույքը եւ այլն, որոնք բռնագրավվեցին Թուրքական իշխանությունների կողմից: Փողը, գոհարեղենը կամ մյուս արժեքավոր առարկաները, որ ոմանք կարողացան իրենց հետ տանել, աքսորի ընթացքում հափշտակվեցին ոստիկանների կողմից: Մարդկային դժբախտ էակները տեղահան եղան, քշվեցին մեծ խմբերով, քշվեցին լեռներից դեպի Արաբական անապատներ: Նրանց կերակրելու կամ պատսպարելու համար ոչինչ նախապատրաստված չէր: «Նրանք, ովքեր չսպանվեցին կամ ուժասպառ չընկան, պետք է մեռնեին սովահար: Այս պայմանը կազմում էր ոճրագործների ծրագրի մի մասը:

Մարդկային դժբախտ էակներից բաղկացած քարավանը ճանապարհ էր ելնելու խուզարկու աչքերից հեռու, ամայի վայրերով, ոստիկանների անտարբերությունը փոխակերպվում, դառնում էր անորակելի բռնություն: Բոլոր տղամարդիկ եւ պատանիները հավաքվում եւ անողոքաբար կոտորվում էին: Կանայք, ծերերն ու երեխաները առաջ էին քշվում տառապալից եւ ահավոր վիճակում, նրանք մեռնում էին սովից եւ ծարավից: Ովքեր այլեւս քայլել չէին կարողանում, մտրակահարվում էին, մինչեւ որ ընկնեին գետին, այնուհետեւ սպանվում էին: Քարավանը հետզհետե նոսրանում էր. քաղցը, ծարավը, հոգնությունը եւ սպանություններն ավեր էին գործում»:

Հոլշտեյնը 1915թ. հունիսի 10-ին հեռագրեց, որ 614 հայ՝ ծեր, կին եւ երեխա Դիարբեքիրում լցվեցին լաստերը եւ խեղդամահ եղան. լաստերը Մոսուլ հասան դատարկ: Գետը մարդկային մարմինները կուլ տվեց: Նման ուրիշ լաստեր պատրաստվեցին: Հունիսի 18-ին Էրզրումի գերմանական հյուպատոսը տեղեկացրեց, որ Երզնկայի մոտ հեծելազորային 86-րդ գունդը, քրդերի աջակցությամբ ավելի քան 20 հազար կին եւ երեխա կոտորեց Քեմախի կամրջի վրա: Բիթլիսում հայերի մեծ մասը սպանվեց, 900 կին եւ երեխա Տիգրիսի ջրերը նետվեցին: Սա անվերջ շարքն է անարգ, զզրելի անգթությունների: Շատ հայեր ողջ-ողջ հրկիզվեցին իրենց տներում[154]*:*

Գերմանացի ականատեսների զեկուցագրերը «ցույց են տալիս ոչ միայն դահիճների տմարդությունը, այլ նաեւ անհերքելիորեն աղաղակում են, որ ամեն ինչ կատարվեց երիտթուրքերի եւ նրանց կոմիտեի կողմից մանրամասնորեն մշակված ծրագրին համապատասխան: Հետագայում երիտթուրքերը ստորաբար ուրացան թե ոճիրը եւ թե կանխամտածված լինելը[155]*:*

154 Մորգենթաու Հ. Ցուցեր, էջ 272-275:
155 Ն.տ., էջ 276-277:

«Տեղահանությունը հոմանիշ է սպանության» ասածը՝ միայն մասնակիորեն է ճիշտ: Իրականում այն անհունորեն ավելի վատթար էր, քան սպանությունը: Բիրտ մահվան փոխարեն զոհերը դատապարտված էին ամենաանմարդկային տանջանքների եւ արդարացնելու համար անարդարանալի, բարբարոս եւ ստոր արարքները, իշխանություններն անպատկառորեն դրանք որակում էին «ռազմական անհրաժեշտ միջոցառում»: Հունիս-օգոստոս ամենաշոգ եղանակին բոլոր վիլայեթներից ու քաղաքներից դեպի հարավ, դեպի անապատ շարժվեցին մահվան թափորները[156]*:*

Լեփսիուսի վկայությամբ՝ աքսորականների 2/3-ը ընչասպառ ընկավ ճանապարհին, մյուսները, կիսամերկ, կմախքացած ուրվականներ, հասան Սիրիա եւ Միջագետք, անապատ քշվելու եւ այնտեղ անլուր տանջանքների միջոցով մահանալու համար: Դատապարտվածների շարքերը քայլում էին ամիսներ շարունակ: Բռնագաղթվածների ճամբարներն անընդհատ դատարկվում ու լցվում էին: Կանխամտածված ու հոռի դիտավորությամբ տարագիրներին թողնում էին, որպեսզի մեռնեին անօթեւան ու քաղցած, եթե չմեռնեին, նրանց կմեռցնեին: «Տիֆը սրի դաշնակիցն էր: Դիակները դիզվում էին ճանապարհների երկայնքին, ապականում օդը»[157]*:*

Ֆ. Նանսենը հայոց բռնագաղթն անվանում է «պատմության մեջ հավասարը չունեցող սարսափ»: Նա նկարագրում է. «(Հայերին) զանգվածաբար բոլոր գյուղերից քշեցին... դեպի հաստատ կործանում: Ռազմական գործողությունների թատերաբեմից ամենատարբեր հեռավորության վրա գտնվող գավառները հետեւողականորեն մաքրազարդում էին: Թուրքերը որոշեցին օգտվել առիթից, որպեսզի մեկընդմիշտ վերացնեն այն ամենը, ինչ հայկական է; Տղամարդկանց մեծ մասն արդեն զորակոչվել էր բանակ, մնացել էին միայն ծերերը, կանայք, երեխաներն ու տկարները, որոնք եւ ենթարկվեցին բռնագաղթի: Այդ դժբախտների հսկայական քարավաններին լեռներով քշում էին Արաբիայի անապատները: Նրանց մատակարարումը կազմակերպված չէր: Մեծ թվով փաստաթղթեր ոչ միայն ցույց են տալիս դահիճների անմարդկային լինելը, այլ նաեւ ապացուցում են, որ այդ բոլորը կատարվել է համաձայն երիտթուրքերի պարագլուխների ու նրանց Կոմիտեի նախապատրաստած պլանի»[158]*:*

156 Մորգենթաու Հ. Ցուցեր, էջ 273-274:
157 Լեփսիուս Ցո., նշվ. աշխ., էջ 81-83:
158 Նանսեն Ֆ. Հայաստանը եւ Մերձավոր Արեւելքը, Վերիտաս, 1956:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

ԲՆԱՋՆՋՈՒՄ ԲՈՒՆԱԳԱՂԹԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ

Մշակված էր բռնագաղթվողների քարավաններն ուղեկցելու որոշակի կարգ: Տվյալ բնակավայրի կամ կազայի իշխանությունները «զտված», այսինքն՝ զենք կրելու ընդունակ մարդկանցից «մաքրված» քարավանները հանձնում էին ոստիկանների կամ ժանդարմների խմբին, որի մեջ մտնողների թիվը նախապես որոշված չէր և տատանվում էր մեկից մինչեւ 70 հոգու միջեւ, կախված քարավանի մեծությունից եւ տեղահանման վայրից: Շատ քարավաններ որոշ տարածություն անցնելուց հետո, երբ հիմնավորապես «մաքրազարդվել», այսինքն՝ ոչ միայն լրիվ զրկվել էր դիմադրության ընդունակ մարդկանցից, այլեւ վերածվել հյուծված եւ հուսալքված զանգվածի, նախապես նշանակված կետերում հանձնվում էին Թեչքիլաթի չեթեական խմբերին բնաջնջելու կամ հայերի թիվը այնքան «փոքրացնելու», որ այլեւ չկարողանային «գլխացավ» պատճառել: Ոչ քիչ դեպքերում քարավանները հանձնվում կամ պարզապես վաճառվում էին քրդերին: Հաճախ ժանդարմները եւ ոստիկանները, մինչեւ խմբերը չեթեներին ու քրդերին հանձնելը, վերջինների հետ միասին հարձակվում էին հայերի վրա ու կրկին թալանում, բռնաբարում, սպանում և ոչ քիչ դեպքերում միայն ծերերից ու երեխաներից կազմված քարավանների խլյակներն էին հանձնվում նոր «պահապաններին»: Եղան նաեւ դեպքեր, երբ ոստիկանական կամ ժանդարմական քարավաններն ուղեկցեցին մինչ բռնագաղթի առաջին կայան, այսինքն՝ Հալեպի վիլայեթ: Թալեաթն ու նրան կրկնող թուրք պատմաբանները հայերի ջարդերի պատասխանատվությունից թուրքական կառավարությանն ու երիտթուրքերին զերծ պահելու համար, շարունակ կրկնում էին այն թեզը, թե կաղդային ոստիկաններն ու ժանդարմները զորակոչվել էին ռազմաճակատ և իշխանությունները հարկադրված էին «կարգի պաշտպանների» շարքերը համալրել ոչ միայն անփորձ, այլեւ բարոյական կասկածելի կերպար, նաեւ նախկինում դատված անձանցից, որոնք էլ իրենց հանցագործ բնույթի և ընչաքաղցության մղումով խոշտանգեցին, թալանեցին եւ ոչնչացրեցին հայերին: Երբ Թալեաթը կոկորդիլոսի արցունք էր թափում, թե Բ. Դուտը հայերին ոչնչացնելու որևէ միտում չի ունեցել, թե այն ինչ կատարվեց հայերի հետ «անազնիվ, անբարեխիղճ պաշտոնատարների» արածն էր, առաջին հերթին նկատի ուներ այս ոստիկաններին եւ ժանդարմներին:

Ապացուցելու հարկ չկա, որ նման պատճառաբանությունը իրականությունից շատ հեռու է: Այո, ժանդարմների եւ ոստիկանների մի մասը ռազմաճակատ էր մեկնել, բայց, նախ, քարավաններին ուղեկցող պահակախմբերը ղեկավարում էին կաղդային սպաները, առանց որոնց թույլտվության ու հանձնարարության չարքային ոստիկաններն ու զինվորները ոչինչ չէին անում, երկրորդ, ո՞վ ոստիկանական եւ ժանդարմական այդ ջոկատները համալրեց հասարակության տականքով, քրեական հանցագործներով. օսմանյան իշխանությունները երիտթուրքերի գաղտնի կենտրոնի հանձնարարությամբ, երրորդ, ո՞վ այդ թափթփուկին հանձնարարեց ուղեկցելու անզեն և անպաշտպան կանանց, երեխաների, ծերերի ու հիվանդների քարավանները՝ նույն այդ իշխանություններն ու երիտթուրք կոմիտեն, ո՞վ չեթեական ու քրդական, և, ընդհանրապես, մահմեդական հրոսակախմբեր ձևավորեց, վարժեցրեց, զինեց, հանդերձավորեց ու ներգրավեց տարագրության աշխատանքներում՝ նույն մարմինները: Բրայսը նկատում է, որ «քարավաններն ուղարկվում էին հսկողությամբ ամենեն ցածրորակ զինուորներու, որոնցից շատերը տակավին նոր էին դուրս եկած բանտեն»:

Մի՞թե հասկանալի չէ, որ անպաշտպան մարդկանց հանցագործների տնօրինության հանձնողները նպատակ էին հետապնդում բնաջնջել տարագրության քարավանները:

Ընդ որում, շիտակ չէ նաև այն պնդումը, թե բռնագաղթի քարավանները ուղեկցում էին միայն ոստիկաններն ու ժանդարմները: Հենց սկզբից բռնագաղթի գործադրմանը մասնակցել է նաև բանակը, առանց այդ մասնակցությունը հրապարակայնության տալու: Բայց որովհետև բանակի մասնակցությունն ակնհայտ դարձավ ու դրա մասին տեղեկատվությունը թափանցեց նաև դիվանագետների, գործակալների զեկույցները, արտասահմանյան մամուլ, երիտթուրքերի պարագլուխները գնացին իրենց համար սովորական դարձած կեղծարարության: Լավ առիթ է մեկ անգամ եւս աշխարհին ներկայացնելու «հայերի անիշխանական խռովարար կեցվածքը»[1]:

1 Թորիկեան Շ. Հայկական հարցը եւ միջազգային օրենքը, Բեյրութ, 1976:

Թե Թալեաթը, թե նրա ավազակախումբը, թեեւ հազվադեպ, բայց ամենայն որոշակիությամբ, արտահայտել են իրենց հետապնդած նպատակը: Օրինակ, Էնվերը 1917թ. օգոստոսին Բեռլինում ասաց. «Կառավարության միջոցառումներն ուղղված են ոչ թե հայ քրիստոնյաների, այլ հայերի դեմ ընդհանրապես, ովքեր սպանում են պետության անվտանգությանը»[2]:

Ինքը՝ Թալեաթն էր հրահանգում. «Բռնագաղթը ոչնչացում է», այսինքն՝ այն անհրաժեշտ էր այնպես իրականացնել, որպեսզի հայերի միայն մի չնչին մասը հասներ անապատ: Վանգենհայմը 1915թ. հուլիսի 17-ին իր հայտնի հեռագրում հաստատում է, որ Բ. Դուտն ուզում էր օգտվել աշխարհամարտի ընձեռած հնարավորությունից Հայկական հարցը լուծելու՝ հայերին բնաջնջելու միջոցով[3]:

Նա, վկայակոչելով Սամսոնում Գերմանիայի փոխհյուպատոսին, նշում է, որ «թուրքական կառավարության դաժան միջոցներն արդարացում չեն կարող ունենալ»[4]:

Վանգենհայմին փոխարինած Հոհենլոհը օգոստոսի 2-ին գրում է Հալեպում գերմանական հյուպատոս Ռեոսլերին. «Մեր բոլոր ջանքերն ապարդյուն անցան, որովհետեւ կառավարությունը վճռական է արեւելյան նահանգների քրիստոնյաներից ձերբազատվելու գործում»[5]:

Դրանից մեկ շաբաթ անց Վոլֆ Մետեռնիխը գրեց կանցլերին. «Հայ ցեղի կործանման միջոցով Հայկական հարցը լուծելու իր նպատակը իրողություն դարձնելու ճիգերում թուրքական կառավարությունը որոշել է չընդառաջել թե մեր եւ թե ամերիկյան դեսպանատան ու Պապի պատվիրակի դիմումներին, ինչպես նաեւ համաձայնական տերությունների սպառնալիքներին, հաշվի չառնել Արեւմուտքի հասարակական կարծիքը...»[6]:

Բռնագաղթն անվերապահորեն դիտվում էր որպես բնաջնջման քաղաքականության առանցքային միջոց, ինչը համաշխարհային պատմության մեջ նախադեպ չի ունեցել: Որ տեղահանումը նշանակում էր բնաջնջում, ապացուցում է նաեւ հետեւյալ իրողությունը՝ տարագիրները ոչ միայն զոհվեցին քաղցից, ծարավից, հիվանդություններից, այլեւ նրանց սպանեցին՝ ջարդերը լայն ծավալներ ընդունեցին բռնագաղթի հենց սկզբից: Հունիսի վերջերից սկսած հայերի սպանդանոցի վերածվեց Քեմախը: Հուլիսի 8-ին կոտորածներ տեղի ունեցան Երզնկայում, Բաբերդում եւ Դերջանում: Օգոստոսին ջարդեր տեղի ունեցան Ֆնտըճակում, Պարտիզակում, Բրուսայում, Ադաբազարում, Իզմիրում, Նիկոմեդիայում, Տարոնում, Սասունում, Բայազետում, Բաղեշի գյուղերում, Մարաշում, Կոնիայում: Բռնագաղթի եւ բնաջնջման գործընթացների խաչաձեւելը հետեւանք էր հենց այն բանի, որ բռնագաղթն ինքնին ոչնչացման միջոց էր, որովհետեւ հայերին «ոչ միայն սպանում էին սեփական ձեռքերով, այլ նաեւ միտումնաբար ստեղծում էին այնպիսի պայմաններ, որպեսզի նրանց հնձեին սովը, ծարավը, հիվանդությունները»[7]:

Տարագրություն-բնաջնջում փոխկապակցությունը խոստովանել է նաեւ ինքը՝ Թալեաթը:

Ամփոփելով ավերմունքի առաջին արդյունքները եւ չեշտելով, որ «իրենց ծրագրի իրականացման գործին երիտթուրքերը հաղորդեցին պրուսական բծախնդրություն եւ բացառեցին «բացառությունները», Ջ. Բրայսը գրում է, որ 1912թ. Էրզրումի, Վանի, Բիթլիսի նահանգներում բնակվում էր 580 000 հայ, որոնցից վերապրեց ընդամենը 12 000 մարդ: Ըստ նրա, մինչեւ կոտորածները Թուրքիայում բնակվում էր 2.1 միլիոն մարդ, նրանցից ոչնչացվեց 1.2 միլիոնը:

Բնաջնջումը նպատակ էր, այլ ոչ թե Հայկական հարցի լուծման եղանակներից մեկը: Այն, որ որոշ նահանգներում հայերին ոչնչացրեցին տեղում, այլ ոչ թե տեղահանության միջոցով, նույնպես չի ասում, թե Բ. Դուտը մտահոգված էր ռազմաճակատամերձ տարածքներից նրանց հեռացնելու խնդրով: Հայերին տեղում, առանց տեղահանման ոչնչացրեցին հայկական խիտ բնակչություն ունեցող վիլայեթներում (Վան, Բիթլիս, Դիարբեքիր): Իսկ այնպիսի նահանգներում, ինչպիսիք էին Էրզրումի, Տրապիզոնի, Անկարայի վիլայեթները, տարագրությունն ու ջարդը նույն նշանակու-

2 Carzou J., նշվ. աշխ.: Տե՛ս "Historia" (Paris), 1980, N405:
3 Lepsius J. Deutchland und Armenien 1914-18, փաստ N81:
4 Ն.տ., փաստ N116 կամ R14086, Ab 22101 .
5 Ն. տ., փաստ N127:
6 Ն.տ., փաստ N287:
7 «Բնօրրան», 1995, թիվ 1, էջ 101:

թյունն ունեին, քանի որ բռնագաղթվածների քարավաններից հատուկենտ մարդիկ էին նշանակման վայրը հասնում, մյուս բոլորը ոչնչացվում էին ճանապարհին: Ինչ վերաբերում է Կիլիկիայից բռնագաղթվածներին, ապա քարավանները, չնայած զանգվածային խոշոր ջարդերի չենթարկվեցին, բայց մեծ կորուստներ ունեցան հյուծվածության եւ հիվանդությունների հետեւանքով:

«Գերմանական եղանակ, թուրքական գործելակերպ»: Դիպուկ է ասված: Հայերի բնաջնջումն իրականացվեց «բծախնդիր մաքրազարդմամբ», ինչին ընդունակ են գերմանացիները եւ բարբարոս, անբուսակայելի դաժանությամբ, ինչը բխում է թուրք էթոսի բնույթից եւ նրա բարբարոս կացութաձեւից:

Թուրքերը, այդ թվում նաեւ նրանց պարագլուխները, որոշ ժամանակ անց տարագրության ընթացքում տեղի ունեցած բռնությունների եւ սպանությունների իրողությունը սկսեցին չհերքել: Նրանք տեղահանությունը համարում էին ճիշտ, պատերազմական պայմաններում երկրի անվտանգության ապահովման համար անհրաժեշտ միջոցառում, որը սակայն որոշ պաշտոնատարների անբարեխղճության, ընչաքաղցության եւ ամբոխի մոլեռանդության եւ վայրագության պատճառով դարձավ զգալի թվով հայերի ոչնչացման պատճառ: Այս ձեւակերպման հեղինակը ոչ այլ ոք է, եթե ոչ ինքը՝ Թալեաթը: Այն մինչեւ օրս թուրք պատմաբանների համար մնում է անառարկելի ճշմարտություն:

Մերժելով բնաջնջման ծրագրավորված պետական քաղաքականություն լինելը՝ երիտթուրքերը բնականաբար նաեւ մերժում են, որ բռնագաղթը հանդիսանում էր բնաջնջման գլխավոր եղանակը: Իսկ որ բռնագաղթը նշանակում էր ոչնչացում, ապացուցված է բազմաթիվ, այդ թվում նաեւ թուրքական աղբյուրների, վկայություններով: Երիտթուրքերի դատավարության 300 թղթապանակ կազմող նյութերը, Թալեաթի եւ թուրք մյուս պարագլուխների հեռագրերն ու ծածկագրերը, այդ տարիներին Թուրքիայում ապրած ու աշխատած օտարերկրացիների հուշարարությունները, գիտական ուսումնասիրությունները հաստատում են, որ բռնագաղթի նպատակը, իրոք, բնաջնջումն էր:

Եթե համիդյան ջարդերը տեւում էին մի քանի օր, եւ զազազած ամբոխը, հագեցնելով արյան ծարավը, ընկնում էր թալանի հետեւից, որը շատ հայերի հնարավորություն էր տալիս փրկվելու, ապա բռնագաղթը նման էր չդադարող երկրաշարժի, որից փրկվելն անհնար էր: Հայերին մեռցնում էին մարդկությանը հայտնի սպանությունների բոլոր եղանակներով: Տեղահանության քարավանները մահվան թափորներ էին: Շոյքներ Ռիխտերը գրում է, թե թուրքերը չէին ժխտում, որ իրենց նպատակը հայերի բնաջնջումն էր: «Այստեղ հույս ունեն,- գրում է նա,- որ Միջագետքի երկարատեւ ճանապարհի զրկանքներն ու անսովոր կլիման ամեն ինչ կավարտեն: Հայկական հարցի այս «լուծումը» իդեալական են համարում ծայրահեղ գործողությունների կողմնակիցները, որոնց թվում են զինվորական եւ կառավարական բոլոր պաշտոնատարները»[8]:

Բռնագաղթի քարավաններն իրենց հետեւում թողնում էին չթաղված դիակների դաշտեր: Բռնագաղթված հայերից 800 հազարն ընկավ գաղթի ճանապարհին:

Բռնագաղթով հայերին ջարդելու կապակցությամբ թուրքերի արդարացումները հերքվեց եւ մերժվեց այնպիսի պետական գործիչների եւ հումանիստների կողմից, ինչպիսիք են Հենրի Մորգենթաուն, Առնոլդ Թոյնբին, Ջեյմս Բրայսը, Հերբերտ Ադամս Գիբբոնսը, Ռենե Պինոնը, Անատոլ Ֆրանսը, Այբերտ Թոմասը, Յոհաննես Լեփսիուսը: Ըստ Լեփսիուսի, ոչ թե հայերի դավաճանությունը, այլ էքստրեմիստ երիտթուրքերի ազգայնամոլական քաղաքականությունն էր այս դրամայի պատճառը: Նրանք գտնում էին, որ բնաջնջումը կչեզոքացներ հայերին՝ որպես քրիստոնեական փոքրամասնության պաշտպանելու Եվրոպայի միջամտությունն ու կվերացներ ռասայական մեծ անջրպետը եւ ուղի կհարթեր պանթուրքիստական ծրագրերի իրականացման համար: Հայերի բնաջնջումը կհավերժացներ Արեւմտյան Հայաստանի Արեւելյան Անատոլիա՝ թուրքերի հայրենիք դառնալը:

Գիբբոնսը հայկական ջարդն անվանել է «ժամանակակից պատմության ամենասեւ էջ»: Իսկ Մորգենթաուն գրում է. «Ես համոզված եմ, որ մարդկության ողջ պատմությունը չունի նման ուրիշ սարսափելի դրվագ: Անցյալի մեծ ջարդերն ու հալածանքները համարյա աննշան են թվում, երբ դրանք համեմատում ենք 1915թ. հայերի կրած տառապանքների հետ»[9]:

8 "Геноцид армян в Османской Турции", стр. 295.

9 "Le Crime de silense...".

Տե՛ս Ռ. Հովհաննիսյանի զեկույցը 1916 թվի դեկտեմբերին "Manchester Gardian" թերթը հետեւյալ կերպ ձեւակերպեց Մեծ Բրիտանիայի ընթերցողների կարծիքը. «Մնում է մի բառ- Հայաստան. մի բառ, որը հիշեցնում է Քրիստոսի ծնունդից ի վեր երբեւիցե տեղի չունեցած սարսափի ամենազարհուրելի գործողությունների հուշը՝ ամբողջ ժողովրդի բնաջնջմամբ հողին հավասարեցված մի երկիր: Այդ երկիրը երբեք, ոչ մի առիթով չպետք է տրվի Թուրքիային»: Հայկական եղեռնը, գրում է Իվ Թեռնոնը, «XX դարի առաջին ցեղասպանությունն էր, առաջին կոլեկտիվ սպանությունը՝ իրականացված նախապես մշակված պլանով եւ ժամանակակից միջոցներով, որոնք գտնվում էին տոտալիտար պետության տրամադրության տակ»[10]:

Ա. Մանդելշտամը հաստատում է եվրոպացի գիտնականների այն տեսակետը, թե մեծ եղեռնն արտահայտություն չէր կրոնական առճակատման: Այն կոտորած էր վերեւից ստացված հրամանով, որը կյանքի էր կոչվում զինվորական կամ այնպիսի անձանց կողմից, որոնց մարդակեր բնազդը շահագրգռվելու կարիք չուներ: Թուրք ոստիկանության վերաբերմունքն ավելի մեծ զզվանք, սարսափ եւ արհամարհանք էր առաջացնում, քան քրդերինը կամ գյուղացիներինը:

Հանդես գալով Ս. Թեհլիրյանի դատավարության ժամանակ՝ Լեփսիուսը նույնպես տվեց «Ի՞նչ է նշանակում աքսորը» հարցի պատասխանը. «...Պաշտոնապես հայտարարվում էր, թե աքսորները ծառայում են նախազգուշական կարգադրություններին, անհատապես, սակայն հեղինակավոր անձինք ակնհայտորեն ծանուցում էին, որ նպատակը հայ ազգը ոչնչացնելն էր: ...Իրողություններն անտարակուսելի են: Կատարման եղանակները ամենուրեք նման են միմյանց... Հայերին ոչնչացնելու հրամանի կատարումն ապահովվեց, որովհետեւ Կ. Պոլսից վալիներին, մութասարիֆներին և կայմակամներին, վերին նախարարներին, կառավարական ղեկավարներին եւ նահանգային խորհրդարաններին հանձնվեց տեղահանության իրականացման գործը»[11]:

Լեփսիուսը, անդրադառնալով հայերի բնաջնջման հետեւանքներին, նշում է. «Հայ ազգաբնակչության ոչնչացումը չի նշանակում միայն Անատոլիայի բնակչության 10-20%-ի կորուստ, այլ քաղաքակրթության առումով առավել արժեքավոր եւ տնտեսապես առավել զարգացած տարրերի ոչնչացում»[12], ինչը գործնականում իրականացվեց գրեթե մեկ տարում՝ 1915թ. մայիս – 1916թ. հունիս: (Ժան- Պիեռ Մահիեի կարծիքով՝ հայոց ցեղասպանությունն ավարտվեց 1916թ. վերջերին, թեեւ ջարդերն առանձին տեղերում շարունակվեցին նաեւ 1917-ին): Թվում է, թե Լեփսիուսի նշած ժամկետն ավելի ճիշտ է:

Էլենա դը լա Սուշերն այդ «հեշտ ու արագ» բնաջնջման գլխավոր պատճառներից մեկը համարում է այն, որ Կ. Պոլսի հայ մտավորականությունը, ներառյալ խորհրդարանականները , բոլոր նրանք, ովքեր կարող էին բողոքի ձայն բարձրացնել, լռեցին:

Իհարկե, հայերի հետ կատարվածի հեղինակներին չքմեղացնելն անհնար էր: Ավելի խելամիտներն աշխատում էին ոչ թե ժխտել, այլ դահիճների մեղքը թեթեւացնել: Նման փորձերի տրամաբանությունը թալեաթականության շրջանակներից դուրս չէր գալիս՝ ուղղակի կամ քողարկված կրկնում էին դահճին: Այս հարցում առաջնությունը, իհարկե, պատկանում է գերմանացիներին: Հանդես գալով Ս. Թեհլիրյանի դատավարությունում, Ֆոն Սանդերսն ասաց. « Իմ կարծիքով պետք է երկու մասի բաժանել այն ամենը, ինչ տեղի ունեցավ Հայաստանում եւ որակավորվում է «Հայկական ջարդ» անունով: Նախ՝ երիտասարդ թիւրքերու տեղահանութեան հրամանը: Կարող ենք թիւրք կառավարութիւնը ամբողջապես պատասխանատու նկատել այս կարգադրութեան, իսկ հետեւանքների համար՝ միայն մասամբ...Հայերը ինքնապաշտպանութեան էին դիմել. թիւրք կառավարութեան հրահանգած զինաթափութեան չէին ուզում ենթարկուիլ, եւ ռուսների հետ միացած պայքարում էին թիւրքերու դեմ:

Բնականաբար այդ կոփվները ջարդի համար դուռ բացին: Կարծում եմ, որ սրանք զանազանելի բաներ են: Ռազմական և քաղաքական տեսակետից անհրաժեշտ էին գտնում Արեւելեան նահանգները հայերից պարպել եւ թուրք կառավարութիւնը հրամանագրեց տեղահանութիւն, որի գործադրութիւնը գտնվում էր ամենավատ ձեռքերում»: Թուրքական «շատ լավ» ոստիկանությունը զորակոչվել էր և «փոխարենը ստեղծվեց օգնական ոստիկանություն, որ լավ տար-

10 Ternon Y. Histoire des Armeniens, Toulouse, 1982, p. 493.

11 «Թեհլիրեանի դատավարությունը. Սղագրություն», Երեւան, 1990, էջ 99-101:

12 Լեփսիուս Յո., նշվ. աշխ., էջ 290-291:

րերից չէր կազմված, մասամբ ավազակներ, մասամբ էլ թափառաշրջիկներ էին»: Թուրք զինորները չէին այդ խժդժությունները հրահրողները, այլ ոստիկանների պահակային կազմը: Պետք է նկատի առնել, որ «ոչ միայն հայեր, այլեւ շատ թուրք զինվորներ մեռան սննդի պակասությունից, հիվանդություններից, կազմակերպության բացակայությունից»: Ու նաեւ այն, որ ուղեկցող խմբերը «մասամբ ազդված էին «սուրբ պատերազմի» գաղափարից եւ հայերին նկատելով քրիստոնյաներ՝ կարծում էին, թե նրանց հետ խստությամբ վարվելը բարի գործ էր»:

Սանդերսը ճիշտ չէ, երբ ասում էր, թե թուրք զինվորները հայերի հալածանքներին ու ջարդերին չեն մասնակցել: Դեռ սկզբից իշխանությունները գտան, որ առանց բանակի օգնության բռնագաղթն հաջողությամբ իրականացնել հնարավոր չէր:

Տեղեկատվություն տարածվեց, թե մայիսի 27-ին ռազմական նախարարությունը քննել է ներքին գործերի նախարարության խնդրանքը, որ շատ վայրերում հայերը դիմադրություն են ցույց տալիս, եւ ոստիկանությունը դժվարանում է իրականացնել տեղահանությունը եւ պահանջվում է բանակի օգնությունը: Այս քննարկման նյութի հիման վրա ընդունվեց կառավարության որոշում, համաձայն որի զինվորականությանն իրավունք էր տրվում բազմակողմանի օգնություն ցույց տալ ոստիկանությանը՝ հայերի տեղահանությունն իրականացնելու գործում: Դրան էին կոչված նաեւ Էնվերի մայիսի 20-ի եւ 27-ի հրամանները:

Քարավաններին ուղեկցող ոստիկանների, ժանդարմների, զինվորների, չեթեական խմբերի իրավունքներն ու պարտականությունները կանոնակարգված չէին, ավելի ճիշտ, բռնագաղթվածների հանդեպ նրանց իրավունքները ոչնչով սահմանափակված չէին: Բռնագաղթվածների ու նրանց ուղեկցողների հարաբերություններն իջեցված էին անասնահոտի եւ այն սպանդանոց տանողի հարաբերությունների մակարդակին, վերջիններն ազատ էին իրենց քմահաճույքին հանձնվածների հետ վարվել ինչպես ցանկանային: Ողբերգական վայրագությունների հեղինակներ դարձան ոչ միայն ոստիկանությունը, ժանդարմերիան ու քաղաքացիական բնակչությունը, այլեւ բռնագաղթի կազմակերպմանը մասնակից զինվորականները:

Մ. Լաուֆերը գրում է, որ թուրքերը մեկ առ մեկ ավերում էին հայկական գյուղերն ու քաղաքները: Ջարդերի ժամանակ իշխանություններն օգտագործում էին բոլորին, սկսած քրեական հանցագործներից մինչեւ արաբական, քրդական եւ չերքեզական քոչվորները՝ խոստանալով կողոպուտի ու թալանի անսահման հնարավորություններ[13]:

Ջարդարարների այդ շարքում թուրքական բանակը գրավում էր առաջին տեղերից մեկը:

Եվ ոչ միայն այդ: Բռնագաղթի ու ջարդերի իրականացման ընթացքում հայերի հանդեպ դրսեւորած դաժանությամբ բանակն ամենուին էլ չէր զիջում բանտերից ազատ արձակված քրեական հանցագործներին կամ մահմեդական խուժանին: Այդ են վկայում ականատեսները: Նրանք «տղայքը եւ դեռատի աղջիկները կառեւանգեն եւ կը ծախեն: Երկու դեռատի աղջիկներ կը ծախվին, յուրաքանչյուրը չորս ֆրանքի: Կ. Պոլսի շուկաները կը լցվին ապրանքներ եւ աղջիկները կը ծախվին քանի մը ֆրանքի... Թուրք մը իր բարեկամներով կը բանայ հանրատուն մը: Պաշտոնեաներ կառեւանգեն կիները. հետո զանոնք կանցնեն զինվորականներուն: Կարավանի կայարաններուն մեջ երեկոյին կարձակեն զինվորները եւ մոտակայ քաղաքներու բնակիչները գիշերուան մը համար անոնց վարձու կուտան կիներ»[14]:

Դանիացի հիվանդապահուհին գիշերն արթնանում է հրացանի ձայնից եւ, հասկանալով եղելությունը, գրում է. «Թեթեւութեան տպավորութիւն մը կը զգամ, խորհելով, որ այս դժբախտները զերծ մնացած են մարդկանց գազանութիւններեն: Երջանիկ էին կոտորուածները»[15]:

«Բարձր Հայքի 2 000 կամ 3 000 գյուղացիներեն 40 կամ 50 կմախքներ միայն Հալեպ կհասնին,- կըսե այս քաղաքի դպրոցին գերման ուսուցիչը:- Տգեղները կիյնան հարվածներու տակ անոթութենե, ծարավե, որովհետեւ գետին եզերքը պառկած՝ ջուր խմելը արգելուած էր անոնց: Եվրոպացիներուն կարգիլեն հաց տալ սովյալներուն: 40 կամ 50 ուրվականներ կուտակուած են գավիթին մը մեջ. անոնք խենթացած են, այլեւս չեն գիտեր ուտել: Երբ անոնց հաց կերկնցնեն, անտարբերութեամբ մը կմերժեն: Կը հյուծին, մահվան կը սպասեն: Ամեն օր Հալեպ կբերեն 100-ե ավելի դիակներ: Դեռատի աղջիկներ, կիներ, տղաք, գրեթե մերկ՝ գետինը կերկննան՝ մահամերձներու եւ մեռածներու քով, եւ իրենց վերջին հառաչանքները կարձակեն»[16]:

Տեղահանությունն ու կոտորածն իրականացնողների վարվեցողության, բռնարարքների միջեւ, դրանք լինեն զինվորական, ոստիկան, թե թուրք գյուղացի կամ մարդասպան, էական տարբերություն չկար, որովհետեւ, ինչպես նշում է Բրայսը, հետապնդվող նպատակը հայ ժողովրդի լրիվ բնաջնջումն էր կոտորածի կամ բռնի իսլամացման միջոցով: «Հայկական սարսափների» ամբողջ պատասխանատվությունը երիտթուրքական կառավարության վրա էր, գտնում է Վ. Բրյուսովը. «Ոչինչ, նույնիսկ խռովարար գործունեության առկայությունը, չէր կարող արդարացնել ոչ բանակ զորակոչված հայերի բնաջնջումը զինակից եղբայրների ձեռքով, ոչ երեխաների ու ծերերի կոտորածը, ոչ կենդանի մնացածների բռնի իսլամացումը, ոչ կազմակերպված կողոպուտը, ոչ էլ այն անհամար զազրելի արարքները, որ գրիչը հրաժարվում է նկարագրել»[17]:

Ինչ էլ որ ասեն թուրքերի պաշտպանները, ինչպես էլ վկայակոչեն «պետական անհրաժեշտության» փաստարկները, ոչինչ չի կարող արդարացնել զանգվածային ջարդերը, ամբողջ նահանգների ամայացումը, տեղահանվող բնակչությանը սովամահության դատապարտելը եւ այլն: Հայաստանում չկա «մի ծառ, մի ժայռ, մի կտոր մամուռ,- նկարագրում է Ա. Բարբին,- որը վկա եղած չլինի մարդու կոտորածի, որ պղծված չլինի հեղված արյան վտակներով: Չկա մի առու, գետ կամ գետակ, որ դեպի հավիտենական մոռացություն քշած-տարած չլինի հարյուրավոր, հազարավոր դիակներ: Չկա մի անդունդ, մի կիրճ, որ չլիներ գերեզման բաց երկնքի տակ, որի խորքում սպիտակին չտային կմախքների կույտեր, քանի որ գրեթե ոչ մի տեղ մարդախողխողները ոչ ժամանակ ունեին, ոչ էլ նեղություն էին քաշում թաղելու իրենց զոհերին»[18]:

Ա. Թոյնբին հայերի բնաջնջումը բաժանում էր երկու շրջանի: Դրանք նա անվանում է արարներ: Առաջին արարի մեջ մտցնում էր հայերի զինաթափումը, ընդհանուր զորակոչը, մտավորականության ոչնչացումը, ինչով «հայերը անուժ էին դարձվում երկրորդ արարին նվազագույն դիմադրություն ցույց տալու համար, որն ավելի դիվային եւ ավելի հեռու գնացող բնույթ ուներ: Բնակչության մնացորդին՝ կանանց, ծերերին ու երեխաներին հայտնում էին շտապ տարագրության մասին՝ «տալով մինչեւ 3-4 օր ժամանակ (նայած տեղ)»: Բոլորը պարտավոր էին , առանց բացառության, լքել իրենց օջախները եւ գնալ անծանոթ ուղղություններով, իսկ նրանց տներն ու կայքը անցնում էր թուրքերին»: «Հայ ընտանիքները ձերբակալությունների եւ ջարդերի միջոցով անդամահատվելուց հետո (նրանց զրկեցին ամուսիններից ու հայրերից) դուրս քշվեցին իրենց օջախներից եւ բռնությամբ ուղարկվեցին աքսորի, մահվան», աննկարագրելի զարհուրանքներով հանդերձ[19]:

Հայերը միայն մի միջոց ունեին փրկվելու՝ հավատուրացություն, բայց «շատ փութկոտ չէին այդ միջոցին դիմելու»: Անատոլիայի քաղաքներում հավատափոխությունն ընդունվեց միայն այն անգութ պայմանով, որ իրենց (հայերի) 12 տարեկանից ցածր երեխաներին պետք է հանձնեին իշխանություններին անծանոթ «որբանոցներում մահմեդական ոգով դաստիարակելու համար»:

Քրիստոնեական այն գյուղերով անցնելիս,- պատմում է Գիբբոնսը,- որտեղ տեղահանություն դեռեւս չէր եղել, բռնագաղթվածներին արգելում էին ուտելիք կամ որեւէ այլ օգնություն ընդունել: «Հիվանդները, ծերերն ու երեխաները ընկնում էին ճամփեզրերին ու այլեւս ոտի չէին կանգնում: Երկունքի ցավերով բռնված կանանց առաջ էին մղում սվիններով կամ մտրակի հարվածներով, մինչեւ որ վրա էր հասնում ծննդաբերելու պահը, որից հետո նրանց անօգնական թողնում էին ճանապարհին արյունահոսությունից մեռնելու: Գեղեցիկ աղջիկներին տանում էին հարեմներ... Ով կարողանում էր, վերջ էր տալիս իր կյանքին»: Հարյուր հազարավոր կանայք ու երեխաներ մեռան սովից, ծարավից, ուժասպառ լինելուց եւ ամոթից:

Առաջին օրերին տարագիրների թիվը նվազում էր օր օրի, ապա՝ ժամ առ ժամ: «Այդ տառապյալների բուռն ցանկությունը մեռնելն էր... իսկ ճանապարհի վերջը չէր երեւում»: Եթե

13 Laufer M. Tale of two genocides. Տե՛ս "Journal of Armenian Studies", 1986, vol. II, N2, pp. 79-80.
14 «Հավատք եւ կեանք», էջ 116:
15 Նշ.տ.:

16 Մորգան Ցո., նշվ. աշխ., էջ 347-348:
17 Брюсов В. Летопись исторических судеб армянского народа. Москва, 1918, стр. 100.
18 Барби А. В стране ужаса. Мученица Армения. Тифлис, 1916.
19 Armenian Atrosities, the murder of a nation, pp. 29-30.

որեւէ մեկը փորձում էր շեղվել դժոխքի այդ ճանապարհից, տեղնուտեղը սրախողխող էր լինում կամ գնդակահարվում: Աղանայից վերադարձած մի անգլուհի պատմել է. «Հայերն ուղարկվում են Բաղդադի երկաթուղու երկայնքով, Աղանայով, մահվան ճանապարհով: Այնտեղ, որտեղ երկաթուղիներ կան, դրանցից օգտվում են ընաջնջման գործն արագացնելու համար: Ինչքա՜ն գերադասելի կլիներ, եթե նրանց պարզապես սպանեին, ինչպես Աբդուլ Համիդի օրոք»:

«Այդպես,- եզրակացնում է Գիբբոնսը,- լրիվ համոզվելով, որ ամբողջ Թուրքիայով մեկ տեղի ունեցող կոտորածների ու գաղթերի դեպքերը կարելի է համարել Կ. Պոլսում մշակված առաջադրանքները պլանավորված կենսագործելու արդյունք, մենք պետք է կատարվածի ամբողջ պատասխանատվությունը դնենք Ստամբուլի թուրքական կառավարության վրա...»[20]:

Միանգամայն տրամաբանական եզրահանգում: Զանգվածային ջարդերը ոչ թե տեղական ինքնագործունեություն էին, այլ Կ. Պոլսում մշակված ծրագրի գործադրում:

Տարագիրները «առաջ կը մղուեին զինվորներուն կողմե օրեր շարունակ,- գրում է Ջ. Բրայսը,- միշտ ոտքի վրայ, ծեծի ենթարկուելով կամ ետեւ ձգուելով (որպեսզի մեռնին, երբ չէին կրնան քայլ պահել կարավանին հետ). շատերը ինկան ճամբու վրայ, եւ շատերն ալ մեռան անոթութենե: Ոչ մեկ ձեւով թրքական կառավարութիւնը պաշար կը հայթայթեր անոնց, իսկ իրենց ունեցած պարենն ալ արդեն կողոպտուած էր»: Շատ կանանց պարտադրում էին մերկանալ եւ այդպես քայլել կիզիչ արեւի տակ: Որոշ մայրեր խելագարվեցին եւ նետեցին իրենց փոքրիկներին: «Շատ քչերը կրցան հասնիլ իրենց համար ճշդուած վայրերը, որոնք յատկապես ընտրուած էին անոր համար, որ անկե վերադարձը անկարելի էր եւ որովհետեւ շատ քիչ հավանականութիւն կար, թե անոնք պիտի կարենային վերապրել իրենց չարչարանքներեն»: Մարդուն ամենից ավելի ցնցում էր այն «յարաբերական պաղարյունութիւնը, որով կը պատմուեին այս վայրագութիւնները անոնց կողմե՝ որոնք ուղղակի տեղեկութիւններ ունեին այդ մասին»[21]:

Բռնագաղթվածների թվում կային նաեւ հղիներ: «Նրանցից ոչ մեկը կենդանի չմնաց»,- շարունակում է Բրայսը: Բայց ոչ հղի կանանցից եւս ահռելի թվով կործանվեցին այդ տանջալից ճանապարհին: «Կառավարությունը գիտեր, ինչ է նշանակում այդպիսի ճանապարհորդությունը եւ կառավարական ծառայողները... ամեն ինչ արեցին, որպեսզի ծանրացնեն տարագրվողների ֆիզիկական տանջանքները»: Մահմեդական գյուղերի բնակիչները ճանապարհին հարձակվում էին քարավանների վրա եւ տեղահանվածներին փայտով անողոք ծեծի ենթարկում: Երբ որեւէ գյուղ էին հասնում, ինչպես ստրուկների, կանգնեցնում էին հրապարակում եւ առաջարկում էին, թե ով կվերցներ իր հարեմը: Լեռներում ծերերն ու երեխաները ուղղակի կոտորվեցին քրդերի կողմից[22]:

«Երբ հայ բնակչութիւնը դուրս քշուած էր իր տուներեն կիներուն մեծ մասը սպանուած չէր, այլ՝ վերապահուած էր ավելի վատթար ճակատագրի մը համար: Մեծամասնութեամբ անոնք խլուած էին թուրք բանակայիններու եւ քաղաքային պաշտոնեաներու կողմե եւ տարուած՝ անոնց հարեմները: ...Ամենեն խղճալի պարագան չէր անոնցը, որոնց թշվառութիւնը վերջ կգտներ արագ մահով, այլ՝ այն դժբախտ կիներունը, որոնք իրենց ամուսիններուն սպանութենեն եւ աղջիկներուն բռնաբարումեն ետք, իրենց փոքրերով մեռնելու համար քշուած էին անապատ, որտեղ անոնք ոչ մեկ սնունդ կրնային գտնել, եւ զոհեր էին շրջապատի վայրի ցեղախումբերուն: Այնպես կը թուեր, որ ամբողջ ժողովուրդին 3/4-ը կամ 4/5-ը ջնջուած էր, եւ պատմութեան մեջ չկար պարագայ մը, վստահաբար ոչ Թամերլանի օրերեն ասդին, ուր արձանագրուած է այսքան ահավոր եւ լայնատարած ոճիր մը»[23]:

Թոյնբին հանդիպել է իրադարձությունների ժամանակակիցներին ու ականատեսներին, զրուցել Թուրքիայում աշխատող օտարերկրացիների հետ, ծանոթացել ամերիկյան քննիչ հանձնաժողովի տեղեկագրին եւ, որովհետեւ այդ նյութերը, ինչպես ինքն է ասում, բացարձակապես հավաստի էին եւ վստահության արժանի, զետեղել է իր "Armenian Atrosities"-ի մեջ: Մի քանի վկայություններ այդ աշխատությունից: Իրենց թեւերին երեխաներ տանող կամ ծննդաբերող

20 Гиббонс Г., նշվ. աշխ., էջ 31-32:

21 Թորիկեան Շ. Ալրիլեան եղեռնը եւ միջազգային իրավունքը, տե՛ս «Հասկ», 1965, թիվ 4:

22 «Հասկ», 1965, թիվ 4 :

23 Թորիկեան Շ. Ալրիլեան եղեռնը... տե՛ս «Հասկ», 1965, թիվ 4:

կանանց հարկադրեցին քայլել մտրակի հարվածների տակ, անասունների հոտի նման: Մի կին ծննդաբերեց ճանապարհին, բայց որովհետեւ «ուղեկցող դահիճը նրան ստիպում էր ճամփան շարունակել, արյունահոսությունից մեռավ»: Մի քանի կանայք այնքան ուժազրկվեցին, որ իրենց փոքրիկներին նետեցին ճանապարհին: Մի ուրիշ կին հոգեվարքի մեջ գտնվող իր փոքրիկին գցեց հորը, նրա մեռնելուն ականատես չլինելու համար: Մեկ ուրիշը անասունների մեջ կիսախեղդ դարձած իր փոքրիկին դրեց գնացքի գծի վրա: Քառասունհինգ տղամարդու եւ կնոջ տարան գյուղից ոչ հեռու գտնվող մի բացատ: «Նախ կանայք բռնաբարվեցին սպանների կողմից եւ ապա հանձնվեցին ժանդարմներին կոտորելու... մի տղայի գանգը ջարդեցին ժայռի վրա: Բոլորը կոտորվեցին...»: Մի նահանգ 3/4-ով դատարկված էր. «15 ժանդարմ ուղեկցում էր վերջին քարավանը, որը բաղկացած էր 4 000-5 000 հոգուց: Քաղաքից մի քանի ժամ հեռավորության վրա քարավանը շրջապատվեց ու բոլորը կոտորվեցին հրացաններով ու կացիններով զինված թուրք գյուղացիների կողմից: Նրանք նախ թշվառ տարագիրներին կողոպտեցին... ժանդարմները թուրք գյուղացիներին վաճառեցին այն, ինչ իրենց հետ տանել չէին կարող: Այս թշվառներին կողոպտելուց հետո սկսեցին կոտորել տղամարդկանց... Զխնայեցին նաեւ քահանաներին, որոնցից մեկը 90 տարեկան էր: 6-7 օրում 15 տարեկանից բարձր բոլոր տղամարդիկ կոտորվեցին: Հեծյալ թուրքերը տարան բոլոր գեղեցիկ կանանց»:

«Ճանապարհին միշտ հանդիպում էին տղամարդկանց ու երիտասարդների արյունաթաթախ դիակների: Կային նաեւ կանայք եւ աղջիկներ սպանված իրենց ամուսինների եւ զավակների կողքին: Լեռների գագաթները եւ ձորերի խորքերը լցված էին ծերերի եւ երեխաների դիակներով»: Շատերը ստիպված լինելով ճամփա ելնել հետիոտն եւ առանց դրամի, շուտով այնքան ուժազրկվեցին, որ ետ մնացին, սվինահար եղան եւ գետը նետվեցին: Թույլ չէին տալիս, որ գիշերը քնեին գյուղերում, հարկադրում էին գիշերը քնել բացօթյա: Օգտվելով մթությունից ժանդարմները, ավազակները եւ գյուղացիները աննկարագրելի բռնություններ էին կատարում: «Ամենասոսկալի եւ աննկարագրելի սարսափները սպասում էին Արեւմտյան Եփրատի ափերին ու Երզնկայի դաշտավայրում: Կանանց, աղջիկների եւ երեխաների այլանդակված դիակները մեզ բոլորիս սարսռեցնում էին: ...Ավազակներն ու ժանդարմները գետը նետեցին 15-ից ցածր տարիքի բոլոր փոքրերին: Լողալ իմացողներին հրացանազարկ արեցին»:

Նման անգթություններ գործադրվեցին հարյուրավոր քաղաքներում եւ գյուղերում, հազարավոր կիլոմետրերի վրա եւ վայրի լեռներով ձգված տարագրության ուղիներին: Դրանք գործադրվեցին անհամար անգամներ: «ԱՄՆ հանձնախմբի կողմից հավաքված այս վկայությունները,- նշում է Թոյնբին,- գրի առնվել եւ ամենայն բծախնդրությամբ քննվել էին իրավասու անձանց կողմից: Դրանք ոչ հնարովի ցուցմունքներ էին եւ ոչ էլ չափազանցեցված ընդհանրացումներ»[24]:

Մի հայ հոգեւորական պատմել է տեղահանության մեխանիզմի մասին. «Զորս նահանգներում տեղական իշխանությունները որոշ դյուրություններ ընձեռեցին տարագրության դատապարտվածներին՝ 5 կամ 6 օրվա պայմանաժամ իրենց ունեցվածքի մի մասը վաճառելու եւ ընտանիքների տեղափոխության համար սայլ վարձելու: Բայց մի քանի օր անց սայլվորները վերադարձան՝ այդ խեղճերին թողնելով ճանապարհին»: Այս ձեւով կազմված քարավաններն իրենց մեկնելու հաջորդ օրը կամ մի քանի օր անց հանդիպում էին ավազակների կամ թուրք գյուղացիների, որոնք կողոպտում էին ամեն ինչ: Նրանք միանում էին ժանդարմներին եւ սպանում էին քարավաններում մնացած հատուկենտ այրերին, իսկ կանանց, աղջիկներին ու մանուկներին տանում էին, թողնում միայն ծեր կանանց, որոնք ժանդարմների մտրակների հարվածների տակ առաջ էին քշվում ու մեռնում քաղցից: Տարագրված կանայք օրեր անց լքվեցին Խարբերդի դաշտավայրում, որտեղ բոլորն էլ քաղցից մեռան (օրական 50-60 հոգի), եւ իշխանությունները բավարարվեցին մի քանի հոգի ուղարկելով նրանց թաղելու, որպեսզի իսլամ բնակչության առողջությունը չվտանգվեր:

Ահա չեզոք պետության մի քաղաքացու վկայությունը, որն այդ օրերին գտնվում էր Արածանիի ափի քաղաքներից մեկում: «Եթե հարկադրեն այս քաղաքը թողնելու ու մի այլ վայր գնալու, շատ դժգոհելու հարկ չէր լինի, բայց բոլորը գիտեին, որ այստեղից մեկնելով գնալու էին դեպի մահ»[25]:

24 Toynbee A. Armenian Atrosities... p. 31.

25 «Ցուշամատեան Մեծ եղեռնի», էջ 1018-1019:

«Հետեւողական և անողորմ կոտորած,- գրում է Ա. Թոյնբին,- ահա թե ինչ է նշանակում տարագրությունը, եւ այդ բառը երբեք այլ նշանակություն չի ունեցել»[26]:

Ջեքսոնը 1915թ. օգոստոսին տեղեկագրում է. «Հարձակումների եւ կոտորածի եղանակները, որոնք առաջներում սովորական էին, այժմ որոշ չափով փոխվել են այն առումով, որ մեծ թվով տղամարդիկ ու պատանիներ տեղահանվում են հարազատ վայրերից ու անհայտանում ճանապարհին, որպեսզի ավելի ուշ նրանց հետեւեն կանայք ու երեխաները»: Երկրի խորքերը ճանապարհորդած անձինք հայտնում էին հիմնականում հետեւյալ բնույթի տեղեկություններ, որ տղամարդկանց սպանել են, մեծ թվով դիակներ թափված են քարավանների ուղերթների երկայնքով կամ լողում են Եփրատի ջրերում, որ քարավաններին ուղեկցող ժանդարմները երիտասարդ կանանց, աղջիկներին եւ երեխաներին տալիս էին քրդերին, որ այդ նույն ժանդարմների ու քրդերի կողմից կատարվում էին աներեւակայելի հանցագործություններ: Սկզբում նման հաղորդագրություններին շատ էլ չէին հավատում: Սակայն քանի որ քարավանների շատ հայեր գալիս են Հալեպ, այժմ արդեն նշված իրողությունները կասկած չեն հարուցում»:

Օգոստոսի 2-ին միջին տարիքի 800 կին, ինչպես նաեւ պառավ եւ 10 տարեկանից փոքր երեխա «եկան Դիարբեքիրից ողբալի վիճակում, 45 օր քայլել էին»: Քարավանում եղած բոլոր երիտասարդ կանաց ու երեխաներին քրդերը տարել էին, նրանց վերջին կոպեկը, ամբողջ ունեցածը թալանել էին ու քաղցի մատնել: 4 500 հոգի Սոխգետից ուղարկվեց Ռաս ուլ Այն, 2 000հոգի՝ Մեզերից Դիարբեքիր, այսպես ամբողջ Հայաստանում ու հայաբնակ վայրերում, տղամարդկանց ու պատանիներին, ինչպես նաեւ կանաց մի մասին ոչնչացրեցին, իսկ մյուսներին ցրեցին երկրով մեկ, որոնք նույնպես զոհվեցին քաղցից, հիվանդություններից, ուժասպառությունից: «Հալեպում գտնվող Դեր Զորի կառավարիչն ասաց, որ ներկայումս Զորում կա 15 000 տեղահանված: Երեխաներին վաճառում են սովից փրկելու համար»: Մինչեւ հուլիսի 30-ը միայն Հալեպով անցել էր 15 233 մարդ: Հալեպի վիլայեթից՝ Այնթափ, Անտիոք, Ալեքսանդրեթ, Քեսաբ եւ այլն, տեղահանվել էր 60 հազ. մարդ[27]:

Վկայում է բռնագաղթվածներին փոխադրող թուրք կառապանը՝ Անկարայից «ղուրս գալուց անմիջապես հետո հայերին սպանում էինք փայտով կամ ատրճանակով: Նույնիսկ ամենակոփվածները չէին կարողանում առանց սարսուռի դիտել այդ տեսարանը»[28]:

Հ. Մորգենթաուին քարավաններին ուղեկցող ոստիկան Մստոն պատմել է, թե Տիվերիկի Հայության քարավանին ժանդարմներն ասացին. «Քիւրտերը այս լեռները կտրել են ձեզ կողոպտելու համար: Ձեր դրամներն ու զարդեղենները մեզ պահ տուէք, որպեսզի Արաբկիր հասած ատեն վերադարձնենք»: Հայերը տվեցին: Սակայն նրանց այլեւս ոչինչ չվերադարձրին: Դրա փոխարեն ոստիկանապետի հրամանով դեռեւս կենդանի մնացած տղամարդկանց հավաքեցին մի վայրում եւ սկսեցին չորս կողմից նրանց վրա կրակել, որից հետո «խուժանը կը յարձակեր անոնց վրայ, քարերով, մահակներով, կացիններով ու մանգաղներով կզարկեր... (ապա) բոլոր դիակները (այդ նպատակով պատրաստ սպասող մակույկները) կը տեղափոխեին գետին մեջտեղը եւ կը թափեին ջուրը»[29]:

«Զինվորները, թուրք ժանդարմները, քրդերը հարձակվում են խղճուկ սայլախմբերի վրա գայլերի ոհմակի նման եւ թալանում ամեն ինչ: Մերուններին սպանում են, կամ նրանք մեռնում են քաղցից ու հոգնատանջ լինելուց: Ջահել կանանց ու աղջիկներին բռնությամբ տանում են թուրքական հարեմները կամ էլ հանձնում զինվորներին, որ զվարճանան: Երեխաներին խլում են մայրերից եւ հանձնում մուսուլմաններին»: Ամենավայրենի, ամենանողկալի կրքերը հագուրդ են ստանում աստիճանաբար հալվող ու ոչնչացող ամբոխի հաշվին: Շատ վայրերում նախքան քարավանների ճանապարհելը, թուրք դահիճները գավազաններով ջարդում էին մարդկանց ոտքերի ներբանները, որպեսզի դժվարանային քայլել[30]:

26 Toynbee A. J., նշվ. աշխ., էջ 30-65:
27 R 14093, Ab 24663.
28 Տե՛ս Ջ. Դեուդեսի զեկուցագիրը Հ.Մորգենթաուի:
29 Քոչեան Ե. Հողը փլավ մեր գլխուն, Փարիզ, 1986, էջ 74-75:
30 Ֆինոն Ռ. Հայերու հալածանքը, Փարիզ, 1916, էջ 29-30:

Ուրֆայի ճանապարհին, պատմում է Ղոսեյնը, տեսել է հետիոտն մարդկանց ամբոխներ... Հայ կանայք էին, որոնք քայլում էին բոկոտն ու հյուծված, իսկ նրանց առջեւից ու հետեւից գնում էին ժանդարմները: Եթե որեւէ մեկը ուժասպառ հետ էր մնում, ժանդարմները խզակոթով ծեծում էին... իսկ նրանց, ովքեր հիվանդության պատճառով ուժասպառվում էին, թողնում էին ճանապարհին՝ հոշոտվելու վայրի գազանների կողմից: «Թողնելով Ուրֆան, մենք հանդիպեցինք ցնցոտիների մեջ կորած, սովից ու հյուծվածությունից մեռնող կանաց խմբերի, տեսանք ճանապարհի եզրերին ընկած բազմաթիվ դիակներ»: Կարա Ջուրջ գյուղի մերձակայքում, աղբյուրի մոտ «մի սարսափելի ու նողկալի տեսարան բացվեց աչքերիս առջեւ, գետնին պառկած էր մի կիսամերկ կին՝ կապկպված արնաթաթախ շապիկով, կրծքից չորս տեղով գնդակահարված... տեսա մոտավորապես ութ տարեկան մի տղայի՝ կացնի հարվածով փեղկված գանգով»: Տիվերիկի «ճանապարհին ահավոր տեսարան բացվեց: Ճանապարհի երկու կողմերում մեծ քանակությամբ դիակներ էին ընկած... Տղամարդկանց դիակներն արեւից չորացած, սեւ էին, ինչպես ածուխը: Ինչքան մոտենում էի Տիվերիկին, այնքան ավելանում էր դիակների քանակը, հատկապես երեխաների... Դիարբեքիրի մերձակայքում հանդիպեցինք կանանց քարավանի: Նրանց հուսահատ ու թշվառ տեսքը կշարժեր անգամ քարերի գութը... նրանց միակ մեղքն այն էր, որ հայ էին... Ամենուրեք դիակներ էին. մի տեղ տղամարդ էր ընկած կրծքից զարկված, մի այլ տեղ՝ կին՝ հոշոտված մարմնով, կողքին երեխան, որ քնել էր հավերժական քնով»: Կարա Բոնար ջրանցքի շրջակայքում այրված դիակներ: Ամբողջ ճանապարհը մինչեւ Դիարբեքիրի պարիսպները, քաղաքի դարպասը, ծածկված էր դիակներով[31]:

1915թ. գարնանն ու ամռանը երիտթուրքերի կառավարության հրահանգով, պատմում է Ա. Մանդելշտամը, Թուրքիայի արեւելյան նահանգներում բնակվող հայերի մի մասը տեղում ջարդվեց, իսկ մյուսները քշվեցին դեպի հարավ եւ մեռան տարագրության ճանապարհներին: Թուրքական իշխանությունները քաջալերում եւ հաճախ անգամ կազմակերպում էին քուրդ եւ թուրք գյուղացիներին ու հրոսակներին, որոնք կողոպտում ու սպանում էին տարագիրներին: Իշխանությունների հրահանգով զինվորները ջարդում էին իրենց պաշտպանությանը հանձնված անմեղ հայերին: Հազարավոր տարագիրներ սովամահ էին լինում ծարավից ու հոգնածությունից սպառված: Դահիճները խեղդամահ էին անում իրենց զոհերին, այրում էին ողջ-ողջ կամ թրածեծ մեռցնում դաժան չարչարանքներով... Որոշ տարագիրներ մեռնում էին տկարությունից եւ հիվանդություններից... Հայերի տեղահանությունը... կոտորածի քաղաքավարի տեսակն էր:

Աքսորյալների քարավանները... ճամփա ընկնելու պահից իշխանությունների կողմից դառնում էին ամենաանամոթ շահագործման թիրախ... Քաղաքից հեռու սայլապանները ժանդարմների մասնակցությամբ տարագիրներին իջեցնում էին եւ հետ դառնում իրենց սայլերով, որոնց համար հայերը ոսկու գին էին վճարել... Ավազակները գիշերները հարձակվում էին քարավանների վրա ու թալանում, սպանում տղամարդկանց, բռնաբարում կամ առեւանգում ջահել կանանց, գողանում երեխաներին: Այդ գործում ժանդարմները օգնում էին հրոսակներին, իրենց զոհերից փող շորթելով նրանց «պաշտպանության» համար: Կայմակամները հայերի անվտանգությունը երաշխավորելու պատրվակով նրանց ստիպում էին վճարել, իսկ ապա թույլ էին տալիս, որ հարձակվեին քարավանների վրա: Իշխանությունները տարագրյալների սնունդը չէին հոգում, հաճախ նաեւ խոչընդոտում էին, որ նրանք հայթայթեին սննդի պաշար: Այդ պատճառով էլ աքսորյալները հազարներով զոհվում էին քաղցից ու ծարավից:

Ժանդարմների ու ելուզակների դաժանությունը չափ ու սահման չուներ: Հաճախ նրանք հայերին լրիվ մերկացնում էին եւ հարկադրում այդպես քայլել օրեր շարունակ անապատի կիզիչ արևի տակ, իսկ երբ հասնում էին ջրհորների, վաճառում ջուր խմելու իրավունքը: Ծննդաբերող կանայք ծննդաբերելուց հետո անմիջապես պետք է շարունակեին ճանապարհը. հազարավոր մարդիկ ընկնում էին ճանապարհներին, մահանում սովից, ծարավից ու հոգնածությունից: Դիակները, հատկապես երեխաների, հաճախ կտրված թաթիկներով, մնում էին փռված ճանապարհներին: Ժամանակ առ ժամանակ դահիճները «կանանց ու երեխաներին ջրախեղդ էին անում գետերում, ողջակիզում կամ սպանում դաժան կոտանքներով: Եփրատը հազարավոր դիակներ էր տանում»: Բազմաթիվ ուրիշներ,

31 "Геноцид армян в Османской Турции", стр. 398-405.

թողնվելով անթաղ, ժանտահոտությամբ թունավորում էին մեծ ճանապարհները: Նման պայմաններում, ինչպես վկայում են գերմանացիները, տարագիրների քարավանները, որոնք Մեծ Հայքից ճանապարհ ընկնելիս կազմված էին հազարավոր մարդուց, հարավ հասնում էին «հարյուր եւ ավելի պակաս թվով մարդով: Խարբերդից, Ակնից, Թոքատից եւ Սեբաստիայից 18 հազ. տարագրվածից Հալեպ էր հասել ընդամենը 350 մարդ, իսկ Էրզրումից տեղահանված 19 հազարից ողջ մնացել էր 11 մարդ»:

«Տեղահանությունը երբեք նման «արդյունքների» չէր հանգեցնի առանց Թուրքական իշխանությունների մասնակցության եւ նույնիսկ հրահրման»: Ա. Մանդելշտամն իր միտքը հիմնավորում է նրանով, որ իշխանությունները «խրախուսում ու կազմակերպում էին հրոսակների հարձակումները աքսորյալների վրա, ժանդարմներին ու կանոնավոր զորքին օգտագործելով օրինականացված կոտորածի համար»:

Երկաթուղով փոխադրված հայերը, չնայած խուսափեցին ելուզակների հարձակումներից, բայց նրանց վիճակը նույնպես նախանձելի չէր: Հայերին խցկում էին անասնավագոններ, որտեղ շնչահեղձ էին լինում, մեռնում սովից ու ծարավից, հաճախ մայրերն իրենց երեխաներին պատուհաններից նետում էին գետը, որպեսզի վերջ դնեն նրանց տանջանքներին: Զորքերի տեղաշարժը եւ աքսորյալների մեծաթիվ լինելը շատ էին դանդաղեցնում այդ ճանապարհորդությունը[32]:

Ա. Վեգները նույնպես նկատել է, որ պաշտոնատար անձինք, զինվորականները, քոչվորները մրցում էին արյունալի խրախճանքներ կազմակերպելու մեջ: Հայերի քարավանները, որոնք գաղթի սկզբին կազմված էին հազարավոր մարդուց, Հալեպի ավազուտները հասնելու ժամանակ հաշվվում էին միայն մի քանի հարյուր մարդ: Այդ նույն ժամանակ «դաշտերը ծածկված էին ուռած, սեւացած, օդը գարշահոտությամբ թունավորած դիակներով, մերկ ու բռնաբարված մարմիններով»: Նույնիսկ Հալեպի դարպասների մոտ գաղթականներին շունչ քաշելու ժամանակ չէին տալիս: «Այդ ծայրաստիճանի նոսրացած խմբերին, ոտաբոբիկ, հյուծվածությունից եւ հիվանդություններից ուժասպառ ու խոշտանգված մարդկանց այրվող արեւի տակ քշում էին հարյուրավոր մղոն քարքարոտ կիրճերով եւ անանցանելի սարերով դեպի կիսաարեւադարձային ճահիճները, դեպի մահվան գիրկը»[33]:

Վկայում է Լարասը. «19 հազար հոգուց կազմված մի քարավան, որը ճանապարհ էր հանված Տրապիզոնի մոտերքից, երկու ամիս քայլելուց հետո Հալեպ հասավ 185 հոգով՝ մեծամասնությունը տարեց կանայք: Ամենաահավոր կոտորածներ տեղի ունեցան Քեմախ Բողազի մոտերքը, որի ճանապարհն անցնում էր խոր ձորի մոտով՝ Եփրատի կիրճով»: Գերմանացի բժիշկը տեղեկացրել է. «Հունիսի 8, 9 եւ 10-ին, 20 000 հայ դուրս եկան Երզնկայեն: Ձորի մեջ բռնաբարվեցան ու սպանվեցան դիմացեն քիւրտերու, իսկ ետեւեն Թուրք զինված խմբերու կողմեն»: Հետքերը ջնջելու համար դիակները գետը թափեցին: Հաջորդ օրերին ցորենի արտերում, որտեղ քչերն էին ի վիճակի փախչել, զինվորները կազմակերպեցին մարդաորս:

Մուշում հարյուրավոր հայեր հուլիսի 3-ին անձնատուր եղան: Մինասյանի ընտանիքի 70 անդամները թունավորվեցին ու ինքնասպան դարձան:

Գերմանական Կարմիր խաչի երկու հիվանդապահուհիներ, որոնք հունիսի 21-ին հանդիպել էին մի քարավանի, տեղեկագրեցին. «Տղամարդիկ քիչ էին: Մեծամասնությունը կանայք ու երեխաներ էին, որոնցից շատերը, խարտյաշ մազերով ու կապույտ խոշոր աչքերով, խստությամբ ու վսեմությամբ մեզ էին նայում, կարծես դատարանի առաջ հանված հրեշտակներ լինեին: Նրանք առանց շշուկի գնում էին այնտեղ, որտեղ քիչ անց իրարու կապված՝ ժայռերից ցած էին նետվելու»:

Գերմանացի հիվանդապահուհիները վկայում են. «Բոլոր այրերը արդեն սպանուած են, 30 գեղեցիկ աղջիկ ու կին ձերբակալված են: Հրամայված էր. «Իսլամ դարձեք եւ կամ մեռեք»: «Ուրեմն կմեռնենք»,- պատասխանեցին նրանք»:

«Գիւղերում այր մարդկանց խումբ-խումբ կապեցին ու տարան մինչեւ քաղաքի մուտքը,- պատմում է ականատեսը,- որտեղ սպանեցին: Կանայք ու երեխաները մի քանի օր առանց սննդի նետվեցին դաշտերը, մինչեւ գտան, որ նրանք բավական փափկած պիտի ըլլային իսլամություն ընդունելու»: Բայց որովհետեւ բոլորը մերժեցին իսլամություն ընդունել, խոցվելով սպանվեցին իրենց զավակների աչքի առաջ: Այս ճանապարհը, գրում է Բրայսը, շատ դժվար էր նույնիսկ զինվորների համար, իսկ կանանց համար միանգամայն անտանելի էր[34]:

Կային եւ հղի կանայք: Նրանցից ոչ մեկը կենդանի չմնաց, գրում է Տարլեն: Գաղթականները մեռնում էին քաղցից, ծարավից, արեւահարությունից, կաթվածից, լիակատար հյուծվածությունից: «Դա էլ հենց պահակախմբերին լավ բացատրված վերջնական նպատակն էր՝ ցանկացած միջոցներով հայերի վերջը տալ»[35]:

«Կառավարությունը գիտեր, թե ինչ է նշանակում նման ճամփորդությունը: Կառավարական ծառայողները խլում էին ամեն ինչ, որպեսզի սաստկացնեին հայերի տանջանքները: Երբ հասնում էին որեւէ գյուղի, նրանց ստրկուհիների նման կանգնեցնում էին հրապարակում եւ մահմեդականներին առաջարկում՝ ով ուզում է, թող տանի իր հարեմը»: «Բոպեական քմահաճույքն էր որոշում՝ բարբարոսը հղի կնոջը լեռներն էր տանելու, թե տեղն ու տեղը, առանց վարանելու, սպանելու էր»[36]:

Բրայսի այս միտքը հաստատում է նաեւ Գր. Պալաքյանը: Նա գրում է, թե քարավաններն ուղեկցողներին բացարձակ ազատություն էր տրված. նրանք որեւէ պատասխանատվություն չէին կրում բռնագաղթվողների անվտանգության համար: Քարավաններից մեկի պահակախմբի ղեկավարը հայերին ուղղակի ասաց. «Ոչ ոք կրնայ մեզմե պահանջել զձեզ, զի համրանքով չտուին, որ համրանքով ուզեն»[37]:

Այս պայմաններում տեղահանվածներից քանի՞սն էին հասնում վերջնագծին: Ըստ Լեփսիուսի եւ Ա. Անտոնյանի՝ ընդամենը 10%-ը: Անատոլիայի բնակիչներից մեկի 1915թ. հուլիսի 16 թվակիր նամակում կարդում ենք. «1 000-ից հազիվ 400-ը հասավ այնտեղ, որտեղից ես այժմ գրում եմ . 380 տղամարդ եւ տասնմեկից բարձր տարիքի տղաներ: 85 կին ճանապարհին ժանդարմների կողմից սպանվել կամ խեղդվել են: 120 կնոջ ու աղջկա եւ 40 փոքր երեխաների փախցրեցին: Կենդանի մնացածների 60% -ը հիվանդ է... շուտով նրանց կտեղափոխեն մի այլ վայր, որտեղ բոլորին մահ է սպասվում»[38]: Թոյնբին բացարձակապես ճշմարիտ է, երբ գրում է. «Եթե անգամ վիճակագրական տվյալներն ավելի հարուստ ու շատ բան ասող լինեին, միեւնույն է, մենք ի վիճակի չէինք պատկերացնել կատարվածի իրական ծավալները: Մի ամբողջ ազգ ջնջվեց երկրի երեսից: Այս բառերն արտասանելը հեշտ է, բայց անհունորեն դժվար է թափանցել ասվածի նշանակության մեջ, քանի որ դրանց իմաստը դուրս է մեր բանականությունից ու հասկացողությունից»:

«Երբ 1915-ի օգոստոսին դոկտոր Լեփսիուսը հրաման խնդրեց օգնելու դժբախտներին, պատասխանեցավ իրեն՝ թե թիւրքերը պիտի ստանձնեին այդ հոգսը: Երբ գերմանացիները կը փափագեին սնունդ կամ զգեստ հայթայթել նոյն դժբախտներուն, թիւրքերը կը պահանջեին, որ իրենց հանձնուեին անոնք, բաշխելու համար՝ առ որ անկե: Դժվար չէ կռահել, թե ինչ կը նշանակեր այդ: Գալով ամերիկացիներուն՝ արտոնութիւն իսկ չկրցան ստանալ մոտենալու հայերուն»[39]:

Բռնագաղթվածներին օգնություն հասցնելը խստիվ արգելվում էր, այդ սովյալներին անգամ հացի կտոր տալու համար մարդկանց, այդ թվում՝ եվրոպացիների, հանձնում էին ռազմական դատարանին: Բ. Դուրը Մետեոնիթի առաջարկը՝ թույլ տալու, որ օտարերկրացիներն օգնեն հայերին, մերժեց, պատճառաբանելով, թե «դրանով հայերն արտասահմանի վրա հույս դնելու իրենց ձգտման մեջ խրախուսվելու են»[40]:

Ջեմալը նման մի առաջարկ մերժելով՝ ասաց, թե դրսի օգնությունը կխրախուսի «հայերի ներքին ընդդիմությունը»[41]:

Իսկ Էնվերը 1915թ.օգոստոսի 10-ին Լեփսիուսի երեսին շպրտեց, թե Բ. Դուրը թույլ չի տա նրան կամ որեւէ օտարերկրացու օգնելու հայ տարագիրներին, քանի որ «ներկայումս պետք է հայերի վերջը տալ»[42]:

---

32 Տե՛ս Зареванд Турция и пантуранизм. Предисловие А. Мандельштама, Париж, 1930, Մանդելշտամ Ա., Հայկական հարցը, «Պայքար», 1972, մայիսի 6, 8, 25 եւ Հունիսի 6, 7, 8, 9-ի համարներ, Մանդելշտամ Ա. Օսմանյան կայսրության ճակատագիրը եւ Հայկական հարցը, Կ. Պոլիս, 1919:

33 Wegner A., նշվ. աշխ., pp. 78-80:

34 «Ցուշամատեան մեծ եղեռնի», էջ 1050-1051:

35 "Армянский вестник", 1916, N 2 .

36 Ն.տ.:

37 Պալաքեան Գ., նշվ. աշխ., էջ 174:

38 Ն.տ.:

39 Նանսեն Ֆ.. Հայաստանը եւ Մերձավոր Արեւելքը, էջ 280:

40 Լեփսիուս Յո. Տեղեկագիր, էջ 105:

41 Ն.տ.:

42 Ն.տ., փաստ N 13:

«Ամռան անտանելի շոգին,- տեղեկագրում է Ա. Բարբին,- արեւի կիզիչ ճառագայթների տակ, քայլում էին քաղցած, ուժասպառ, բոբիկ, քրջերի մեջ փաթաթված քարավանները, լավ իմանալով, որ իրենք փրկություն չունեին: Ուղեկցող ժանդարմները մտրակներով ու մահակներով քշում էին դժբախտներին, սպանելով հոգնածությունից ընկածներին... Քարավաններն անընդհատ ենթարկվում էին քրդերի հարձակումներին»: «Այն ամենը, ինչի մասին ես ասում եմ այս ողբերգական հաշվետվության մեջ,- հաստատում է Բարբին,- սարսափների ու մահվան այս բոլոր տեսարանները անհերքելի են: Բոլոր ապացույցները ձեռքումս են: Թուրքական կառավարությունը չի կարող հերքել իր կատարած հանցագործությունները, որոնք անհնար է արդարացնել ոչ ռազմական եւ ոչ էլ ռազմավարական որեւէ նկատառումով: Իմ տրամադրության տակ կան ոչ միայն մահից խույս տվածների, ոչ միայն որոշ ռուսների ու ֆրանսիացիների ցուցմունքները, այլեւ պաշտոնական զեկույցներ և չեզոք պետությունների՝ ԱՄՆ և Իտալիայի պաշտոնական ներկայացուցիչների ցուցմունքները... Իմ տրամադրության տակ են անգամ գերմանական զինվորական հիվանդանոցների անձնակազմի եւ բժիշկների ցուցմունքները»:

«Մահվան քարավաններ». ահա իրականում իսկական անունը այն աքսորյալների ողորմելի կուտակումների, ովքեր առաջին կոտորածներից խույս տալով, թալանված, ուժազուրկ, իրենց դահիճների կողմից քշվելով գնում էին աքսոր, գնում սպանդանոց: Պատմում է հրաչքով փրկվածներից մեկը. «Վարդտի շրջանից աքսորված բոլոր ընտանիքները ճանապարհին կոտորվեցին, դիակները նետվեցին Եփրատը»: Սորդար, Բազու, Հասանովա, Սալեղան եւ Կվարց գյուղերի բոլոր կանանց ու երեխաներին Թուրքերը հավաքեցին ս.Կարապետի վանքում: Նրանց հինգ օր փակված պահեցին, ապա Մեհթի, Բաղու, Ուրուղա, Զիարեթ եւ Հեյբիանա գյուղերի կանանց ու երեխաների հետ քշեցին դեպի Եփրատի կամուրջը: Այստեղ այդ քարավանին միացրեցին Թոմ, Հերբեր, Նորան, Ալաղին, Գոմս, Խախալտուվ, Սուլուխ, Հորոնք, Քաձոր, Ղզլաղաջ, Գոմեր, Շեյխլան, Ավազաղբյուր, Բլել եւ Քուրդմեյդան գյուղերից բերվածներին: Ընդհանուր թվով 10 000 կին ու երեխա: Ուղեկցող քրդերը սկզբում սպանեցին ծերերին ու հիվանդներին: Ամեն երեկո նրանք բոլորի ներկայությամբ բռնաբարում էին 8-10 տարեկան երեխաներին: Ով դիմադրում էր, խոչտանգում կամ սպանում էին»: Սպանում էին նաեւ մայրերին ու փոքրիկ երեխաներին եւ դիակները նետում ճանապարհի երկայնքով: Այլեւս քայլելու ուժ չունեցող երեխաներին թողնում էին ճանապարհին, որտեղ եւ նրանք մեռնում էին: Քարավանն առաջ էր շարժվում, ճանապարհին լքելով դիակներ ու անօգնական երեխաներ: Քրդաբնակ գյուղերից անցնելիս քարավանը թալանվում էր: Շուտով կանայք ու երեխաները մնացին մերկ: Երկու օրը մեկ մի կտոր հաց էին տալիս: Բռնաբաղթվածները սկսեցին ուտել դաշտերում ինչ գտնեին: Շատերը մեռան քաղցից: Քարավանը քայլում էր լուսաբացից մինչեւ մութն ընկնելը, ամռան կիզիչ արեւի տակ, օրերով ջրի երես չէր տեսնում: Իսկ երբ ջրի էր հանդիպում, խմելու համար քիչ ժամանակ էր տրվում, եւ սկսվում էր հրմշտոցը: Մեծ թվով երեխաներ, ոտի տակ ընկնելով, զոհվեցին: Կիսախելագարության հասած շատ կանայք իրենք էին երեխաներին նետում ճանապարհներին: Բարբին հարցաքննել էր այդ շրջանի քրդերին, ովքեր ասել են, թե քուրդ չեթեները հետապնդում էին Քուրդմեյդանում ու Շեյխլանում թաքնված հայերին: Հավաքեցին մոտ 500 չափահաս ու երեխա: Ռեշիդ փաշայի հրամանով բոլորին Շեյխլանում բանտարկեցին եւ գիշերը շենքը հրդեհեցին: Եփրատի ափին քարավանը կանգնեցրին, քրդերը շրջապատեցին ու կրակի տակ առնելով պահանջեցին նետվել գետը: Ամբոխը լցվեց Եփրատ եւ զոհ դարձավ քրդերի արձակած գնդակներին[43]:

Պատմում է տարոնցի մի կին. «Ինչ վերաբերում է ինձ, ես չէի փորձում փախչել: Երբ անցանք Խոցմոյի լեռները, դեպի հարավ տանելու փոխարեն պահակները մեզ քշեցին դեպի արեւմուտք՝ Եփրատի հոսանքի ուղղությամբ: Ցինգայի փաշալըքում փոխվեց պահակախումբը: Նորերն ավելի դաժան դուրս եկան: Նրանց հետ հասանք Ճապաղջուր: Ճանապարհը սկզբում անցնում էր խորը, ուղղաձիգ, ցցուն ժայռերով երիզված հովիտով: ...Հանկարծ հրամայեցին կանգ առնել, իբր հետ մնացածներին հավաքելու համար: Կես ժամ չանցած Ճապաղջրի կողմից հայտնվեցին քրդերի բազմամարդ ավազակախմբերը: Նրանք կրակ բացեցին մեր վրա, միաժամանակ բղավելով. «Նետվեք ջուրը, նետվեք ջուրը»: Գնդակները խոցում էին կանանց ու երեխաներին, որոնք սարսափից եւ խուճապից խելագարված տրորում էին միմյանց: ...Ես նույնպես գետը նետվեցի: Հրաձգությունը

43 Барби А. նշվ. աշխ., էջ 18-24.

սաստկացավ: Լավ նշանառուների համար հիանալի թիրախ էին մեր գլուխները, որոնք մեկ-մեկ անհետանում էին ջրի մեջ: Ես լավ եմ լողանում, եւ երեխային պահելով ջրի մակերեսին, թույլ տվի, որ հոսանքը մեզ քշի դեպի դիակների կույտը, որոնք եւ թաքցրին մեզ... 10 000 աքսորյալներից ոչ ոք ողջ չմնաց: Գետափին մի քանի հարյուր կնոջ դիակներ էին՝ մեկը մյուսի վրա թափված: Հազարավոր խեղդված կնոջ ու երեխայի էլ Եփրատն էր տանում: Սպանդի վայրը թողեցին նաեւ քրդերը, իրենց հետ վերցնելով այն չնչին ավարը, ինչ հնարավոր էր եղել հավաքել, մեկ էլ մի քանի ջահել կնոջ ու աղջկա, որոնց խնայել էին գեղեցկության համար: ...Երբ իջավ գիշերը, ես դուրս եկա իմ թաքստոցից եւ բռնելով գետի հոսանքի ուղղությունը, գնացի Մուշ: Գնում էի միայն գիշերով»[44]:

« Ուժասպառները սպանվում էին հրացանի խզակոթով,- գրում է Գեմբարսկին,- կամ ձիերի սմբակների տակ: Գեղեցիկ աղջիկներին ոստիկանները բռնաբարելուց հետո հանձնում էին չեթեներին, ովքեր իրենց անասնական կրքերը հագեցնելուց հետո ճեղքում էին նրանց արգանդը, կտրում կրծքերը:

Քայլում էր ստվերների անվերջ շարանը Անատոլիայի տոթակեզ քարքարուտներով, երեխան սովից մեռնում էր մոր գրկում՝ մայրը ոչ կաթ ուներ եւ ոչ էլ երեխային կերակրելու այլ հնարավորություն»[45]:

«Քաղցած ու ծարավ, մտրակների ու հրացանների խզակոթերի տակ առաջ էին ընթանում մարդկային ստվերների անծայր շարանները: Ընկնողը մեռնում էր թուրք ոստիկանների կոչիկների տակ կամ սպանվում հրացանի խզակոթով: Շարքից դուրս էին քաշվում գեղեցիկ կանայք ու բազմաթիվ բռնաբարություններից հետո ոչնչացվում»[46]:

Այն տեղերում, որտեղ բացի հայերից բնակվում էին մուսուլմանական ազգային փոքրամասնություններ՝ քրդեր, չերքեզներ, ոստիկանները նեղություն չէին կրում, նրանք հայերի դեմ գրգռում էին քրդերին կամ չերքեզներին, որպեսզի թուրք սպաների ղեկավարությամբ անխնա կոտորեին առաջիններին: Լ. Դեւիսը պատմում է զեյթունցի երկու ազգականների հետ պատահածի մասին. «Քայլելու ժամանակ արեւի ճառագայթներն ընկել էին նրանց վրա, եւ ժանդարմը նկատեց ոսկու փայլը: Խեղճերի մազերը պոկեցին»[47]:

Իհարկե, մարդ-գազանների միջավայրում պատահում էին մարդիկ, ովքեր բռնագաղթվածներին ոչ միայն չէին վնասում, այլեւ օգնում էին: Սակայն այդպիսիները հատուկենտ էին եւ իրադարձությունների վրա որեւէ ազդեցություն գործել չէին կարող:

1915թ. օգոստոսի 30-ին Կ. Պոլսից Վիլհելմ Շվենդլերը գրում է գաղտնի խորհրդական Բոյտլերին. «Կատարվում են այնպիսի գործեր, որոնց հետեւեալը խորապես ամոթ է: Տարբեր նահանգներում հազարավոր հայեր՝ տղամարդ, կին, ծեր, երեխա, գազանաբար սպանված են... Հղի կանանց քշել են բնակարաններից եւ հրացանի կոթերով այնքան են ծեծել, մինչեւ դաղարել են կենդանության նշան ցույց տալ, երիտասարդ աղջիկներին նվիրել են փաշաներին, առանց ամաչելու այդ աղջիկներին առաջարկել նույնիսկ գերմանական սպաներին»: Հազարավոր դիակներ լողում են Եփրատում, անթիվ հայեր առանց սննդի քշվում են անհաճելի երկրամասեր. հաճախ տղամարդկանց մի ուղղությամբ, իսկ կանանց՝ մի այլ, որտեղ նրանք հանդիպելու են քրդական դաժան ցեղերին: Կանանց բռնաբարեցին ամուսինների ներկայությամբ, իսկ ապա վերջիններին սպանեցին իրենց անպատիվ արված կանանց աչքի առաջ: Սպանում են ցանկացած ոճիթով կամ առանց ոճիթի: Թուրքերը հայտարարում էին. «Հայերի ոչնչացումը ռազմական միջոցառում է: Զինվորականները գերմանացիների ազդեցության տակ են, այնպես որ չնորհակալություն ասեք գերմանացիներին»:

«Գերմանական դեսպանության առաջին եւ զուսպ բողոքին,- շարունակում է Շվենդլերը,- թուրքական կառավարությունը պատասխանեց, ինչպես միշտ վկայակոչելով «թուրքերի ներքին դրությունը», իսկ էնվերը օգտվելով առիթից, ասաց. «Այդ ամենամեծ գործն է, որ երբեւիցե իմացել է Երիտասարդ Թուրքիան: Գերմանացիները մեզանից չնորհակալ պիտի լինեն, որ ոչնչացնում ենք իրենց թշնամիներին»: Գերմանացիների բողոքի արդյունքը եղավ, որ պատժվեցին երկու վալի, որովհետեւ նրանք «բավարար համառություն հանդես չէին բերել կառավարության դաժան միջոցառումների իրականացման գործում»:

44 Барби А. նշվ. աշխ., էջ 40-41:
45 Գեմբարսկի Բ. Մահվան դատապարտվածները, Երեւան, 1992, էջ 19-20:
46 Ն. տ., էջ 20-25:
47 Լեփսիուս Յո. Տեղեկագիր, էջ 30-33:

Դատավարության ժամանակ Թեհլիրյանը պատմեց, թե իրենց ընտանիքը ինչպես տարագրվեց: Հազիվ քաղաքից դուրս էին եկել, երբ ոստիկանները կրակ բացեցին եւ հարձակվեցին հայերի վրա, սպանեցին եւ թալանեցին: Փախցրեցին ու բռնաբարեցին նաեւ նրա քրոջը, լսեց մոր կանչը. «Աչքերս քոռանա՛ն», կրտսեր եղբորը կացինով ճեղքեցին: Սողոմոնը եւս գլխին հարված ստացավ եւ ուշաթափ ընկավ: Երկու օր անց աչքերը բացեց՝ ամենուրեք դիակներ էին, ամբողջ քարավանը սպանված էր. մոր դիակի վրա ընկած էր եղբոր դիակը, իսկ ընտանիքի մյուս հինգ անդամների դիակներն այդպես էլ չգտավ: Նույն դատավարության ժամանակ Կարինից տիկին Ք. Թերզիբաշյանը պատմեց. «Կարինցիները տարագրվեցին չորս խմբերով, ութ օրվա ընթացքում ես երկրորդ խմբի մեջ էի... ամեն խումբ 500 ընտանիքից էր կազմված... մեր ընտանիքը 21 անձից էր . մնացին միայն երեքը: Ասում էին, թե Երզնկա պիտի գնանք: Մեզ հետ էին հայրս ու մայրս, երեք եղբայրներս, ամուսնացած քույրս, նրա ամուսինը եւ վեց որդիները... Բոլորի կորուստը իմ աչքերով տեսա... խմբերից 500 երիտասարդի առանձնացրեցին, իրար կապեցին ու ջուրը նետեցին... այո, գետը նետեցին եւ հոսանքը այնպես սաստիկ էր, որ բոլորին քշեց տարավ... երեսուն ոստիկան մի ջոկատ զինվորների հետ սվիններով մեզ առաջ էին մղում, մերթ ընդ մերթ հարվածելով... Երբ Մալաթիա հասանք, բարձրացրին լեռը, տղամարդկանց կանանցից բաժանեցին... կացիններով սպանեցին եւ ջուրը նետեցին... Երբ մի քիչ մթնեց, ոստիկանները եկան եւ ամենագեղեցիկ աղջիկներին ու կանանց տարան... Չհնազանդվողներին խոցում էին սվիններով, պատռում սրունքները: Նույնիսկ հղի կանանց կողերը փշրեցին, երեխաներին դուրս հանեցին ու շպրտեցին»[48]:

Էրզրումի վալի Թահսինը 1915թ. հուլիսի 15-ին հեռագրեց. «Ցայիդ անունով մի հիսնապետ հափշտակել է Արաբյանի չորս աղջիկներին: Հիսնապետ Քյամիլ էֆենդին էլ գողացել է 1863 ոսկի, 35 բեռ կահ-կարասի եւ մեծ քանակությամբ զոհարեղեն: Դրամի եւ կնոջ համար գործադրված խայտառակությունները ծայր աստիճանի ամոթալի են եւ անմարդկային: Պետք է այս վիճակի առաջն առնել եւ մանավանդ վերջ տալ թեչքիլաթի մախսուսայի անվան տակ ամենուրեք գործող չեթեներին: Խարբերդի կուսակալը գրում է, թե «բոլոր ճանապարհները լցված են կանանց ու երեխաների դիակներով, ժամանակ չենք գտնում թաղելու»: Լավ կլինի, եթե պահենք մեր վեհանձնությունը եւ խնայենք ազգային պատմությունը»[49]:

Բաղդադի երկաթուղու ինժեներ Է. Պիեպերը պատմում է. «Կանայք, ովքեր ծննդաբերում էին, պետք է անհապաղ շարունակեին ճանապարհը: Մի կին Այնթափի շրջակայքում երկվորյակներ ծնեց: Դա գիշեր էր, իսկ առավոտյան վաղ անհրաժեշտ էր ճանապարհ ընկնել: Նա ստիպված եղավ լքել նորածիններին թփուտների տակ, իսկ քիչ անց ինքն էլ ուժասպառ փռվեց գետնին: Մի այլ կին ծննդաբերեց ճանապարհի վրա: Նա ստիպված էր անմիջապես քայլել եւ շուտով վայր ընկավ մեռած: Բազմաթիվ նույնանման դեպքեր տեղի ունեցան Մարաշից Հալեպ տանող ճանապարհին»[50]:

Այսպիսով, 1915թ. հունիսից սկսած բոլոր աքսորները, բացառությամբ Կիլիկիայում տեղի ունեցածները, ուղեկցվում էին կոտորածներով, որոնց մասնակցում էին տեղական իսլամական բնակչությունը (մասնավորապես թուրքերն ու քրդերը, ինչպես նաեւ չերքեզներն ու արաբները): «Այս կոտորածների հիմնական նպատակը հայ բնակչության արական սեռի վերացումն էր»[51]:

Թ. Աքչամը հայոց ցեղասպանության գլխավոր առանձնահատկությունը համարում է դրա քաոսային բնույթը: Տպավորություն էր ստեղծվում, թե խոսքը ոչ թե կենտրոնի կողմից ծրագրված գործողությունների մասին էր, այլ հետեւանք տեղական իշխանությունների բացթողումների: «Ցուրաքանչյուր քարավանից կենդանի մնացողների թիվը կախված էր ուղեկցողների մարդկայնությունից ու ազնվությունից: Համապատասխան հրաման չկար, բնաջնջման ծրագիրը բավականին անորոշ էր: Պահանջվում էր սպանությունների, առեւանգումների եւ սովի միջոցով տեղահանվածների թիվը հասցնել նվազագույնի, որպեսզի տպավորություն ստեղծվեր՝ իրոք իրականացվում էր վերաբնակեցում»: Բայց իրողությունն այն է, որ տեղահանության ընթացքում հայերը կամ սովամահ էին լինում, մեռնում ծարավից կամ զոհ դառնում բռնություններին, որոնք կատարվում էին կենտրոնից ստացված հրամաններով; Նույնիսկ այն փաստը, որ ոչ մի «նախապատրաստական աշխատանք չէր կատարվել մի ամբողջ ժողովրդի վերաբնակեցման համար, միանշանակ ցուցադրում է կառավարության մտահղացումը՝ ջնջել հայերին երկրի երեսից»[52]:

Ի պատիվ Թ. Աքչամի նշենք, որ չնայած նա «ցեղասպանություն» բառը չի օգտագործում, բայց ավելի քան ուրիշ որեւէ մեկը, հիմնավորում է, որ 1915-16թթ. իրադարձությունները ցեղասպանություն էին:

«Աշխարհում չկա բավարար հարուստ ու պերճախոս որեւէ լեզու, որն ի զորու լինի նկարագրել այն սարսափները, որպեսզի արտահայտի այն ֆիզիկական ու հոգեւոր տառապանքները, որ ապրեցին այդ անմեղ թշվառները, մինչեւ որ բարձրյալը նրանց չուղարկեց հավերժական հանգստի... Կգա ժամանակ, երբ այդ հանցագործները, լինեն դրանք բռնինցի, թե ասիացի, պետք է պատասխան տան իրենց արաքների համար: Այդպիսի սրիկաների նկատմամբ պետք է անխիղճ լինել...»[53]:

Մանդելշտամը գրեց, թե Փոքր Ասիայում հայ գրեթե չկա, նրանք «բնաջնջվել են կամ աքսորվել եւ միայն հատուկենտ բեկորներն են թաքնվել կղզաշների մոտ... Ռուսական բանակի առաջխաղացման պատճառով էվակուացվող մահմեդականներն իրենց հետ տանում էին հայերի ունեցվածքն ու անասունները»[54]:

Պատմում է ռուս զինվորը. «... Փոսերում զուգահեռ պառկած էր 30 դիակ իրար կողքի երկու շարքով: Բիթլիսի սուրբ Աստվածածին եկեղեցում տեսել եմ 200 սպանված հայի դիակ, նույն տեղում կային նաեւ կախարաններ: Կանանց ու տղամարդկանց դիակները կախարաններից հանեցին մեր զինվորներն ու թաղեցին»: Մուշ քաղաքում 1915թ. հունիսին սպանվեց 17 հազ. հայ: Իսկ Մուշ-Բիթլիսի շրջանում սպանվածների թիվը հաշվվում էր 160 հազ. հոգի, Մշո դաշտում թուրքերը նախապես բոլոր տղամարդկանց բանտարկել էին ու սպանել, իսկ կանանց ու երեխաներին հավաքել էին նկուղներում, մեծ շենքերում եւ այրել: Մուշի եւ Բիթլիսի հայերի կոտորածին մասնակցել է նահանգապետը, ինչպես նաեւ Դիլմանից Բիթլիս եկած 3-րդ համահավաք դիվիզիայի զորամասերը Հալիլ բեյի հրամանատարությամբ: Վերջինիս հրամանով զինաթափվեց և սպանվեց այդ դիվիզիայում գտնվող 800 հայ ասկյար, բժիշկ եւ սպա նույն այդ դիվիզիայի թուրք ասկյարների միջոցով; Տրապիզոնի ազգաբնակչությունը բաժանվեց երկու մասի՝ մի մասին Սամսոն գաղթեցնելու անվան տակ նավերով տարան Սեւ ծով եւ բոլորին թափեցին ջուրը: Նրանց մեջ կային շատ երեխաներ: Ազգաբնակչության մյուս մասին զինվորական պահակների հսկողության տակ աքսորեցին Գյումուշ- խան, որի մոտերքում սպանեցին մոտ 300 տղամարդու, իսկ մնացածին սպանեցին Քեմախի մոտերքում եւ դիակները գցեցին Եփրատը: Հայերի ոչնչացումը ղեկավարում էր անձամբ նահանգապետը: Բայբուրդի կոտորածին մասնակցում էր ինքը՝ կայմակամը... Էրզրումի ու Երզնկայի հայերի 80%-ը սպանվեց Քեմախում, մնացածների ոչ մեծ մասը՝ Զարդախլուի մոտերքում: Փիվզա (Էրզրումից 7 կմ հեռավորության վրա) գյուղի մոտերքում սպանվեց 4 000 հայ ասկյար: Էրզրումի հայերին տեղահանեցին չորս խմբով: Մայիսի 8-ին տեղահանեցին մոտ 20 հազ. գյուղացիների, որոնք կոտորվեցին Բերմազ սարի փեշերին՝ Խարբերդի ու Դիրարբեքիրի արանքում: Էրզրումի հարուստների 70 ընտանիքներ ոչնչացվեցին հունիսին Բալու եւ Խարբերդ քաղաքների միջեւ Բայազետի մութասարիֆի ղեկավարությամբ: Հուլիսի 6-20-ը Էրզրումում հայ չմնաց: Խարբերդցիների վկայությամբ Էրզրումի կանանց երկու խմբեր անցան Խարբերդով: Էրզրումի տղամարդիկ մեծամասամբ մորթվեցին Մամախաթունում եւ Երզնկայի մոտերքում: Քղի քաղաքի եւ շրջապատի հայ ազգաբնակչությունը կոտորվեց, մասամբ Պորտու քաղաքի շրջանում, 700 ընտանիք էրզրումցիների հետ՝ Երզնկայից այն կողմ:

Կոտորածների ժամանակ մոտ 3000 հայ կառուցում էր Էրզրում- Սրվազ ճանապարհը: Շինարարության ավարտից հետո նրանք բոլորը ոչնչացվեցին ասկյարների եւ ժանդարմների կողմից Սանսար դարասում (Մամախաթունի եւ Երզնկայի մեջտեղը): Երզնկայի եւ շրջապատի հայ ազգաբնակչությունը աքսորվեց երեք խմբերով՝ մայիսի 21, 25 եւ 26-ին մոտ 35 հազ. հոգի: 70%-ը սպանվեց խուժանի եւ ժանդարմների կողմից Քեմախի ուղղությամբ, իսկ 20%-ը՝ Հասան Կալե վայրում: Երզնկայի հա-

48 «Թեհլիրեանի դատավարությունը» (Արդարահատույց), էջ 94-97:

49 Ռազմական դատարանի դիվան, փաստ N 8:

50 Sommer E. Die Wahrheit uber die Leiden des armenischen Volkes in der Turkei wahrend des Weltkriegs, Frankfurt, 1919, s. 23.

51 Le Crime de silense..., pp. 123-124.

52 «Բնօրրան», 1995, թիվ 1, էջ 97-98:

53 Մորգան Ժ. Հայ ժողովրդի պատմութիւն:

54 АВПР, Политархив, д. 3504, л. 93.

յերի կոտորածին անմիջական մասնակցություն ունեցավ տեղի խորհրդարանի նախագահ, չեթեների պետ Ալաթ-բեյը: Երզնկայի հայության բռնագաղթից մի քանի օր առաջ 1 000 երիտասարդներ ուղարկվեցին Սանսար-Դարասի ուղղությամբ ճանապարհ կառուցելու, եւ բոլորը ոչնչացվեցին Խան գյուղի մոտ: Երզնկայի մերձակայքում տասնյակ վերստեր լցված էին հայերի ոսկորներով:

Ժան- Մարի Կարզուն եւ Իվ Թեռնոնը գրում են, որ Երզնկայի 20 հազ. հայից 2 000-ին մի գիշերում քաղաքի մերձակայքում ոչնչացրեցին: Ապա տեղահանեցին հարուստներին, իսկ երեք օր անց՝ բոլորին: Երեխաներին վաճառեցին ստրկության: Եփրատի ափին հայերի վրա հարձակվեցին, մի կողմից, կանոնավոր բանակը, մյուս կողմից՝ քրդերը: Շատերի ձեռքերը կապեցին ու նետեցին Եփրատը[55]:

Խարբերդ եւ Մամուրեթ ուլ Ազիզ քաղաքների հայերին բռնագաղթի մասին նախազգուշացրին 1915թ. հուլիսի 1-ին եւ բռնագաղթեցրին հուլիսի 3, 9, 18 եւ 19-ին մինչեւ 10 հազ. հոգանոց խմբերով, գլխավորապես կանայք ու երեխաներ, որովհետեւ տղամարդկանց նախապես ձերբակալել ու սպանել էին Դիարբեքիրի եւ Մալաթիայի ճանապարհների վրա: Խարբերդցիների բռնագաղթը ղեկավարում էր նահանգապետ Սաբիթը: Խարբերդցիների 3 000 հոգանոց մի խումբ՝ կանայք ու երեխաներ, գնդապետի, 100 ժանդարմի եւ Հուսեյնիկի կառավարիչ, երիտթուրք Ցայիկի ուղեկցությամբ ուղարկվեց մինչեւ Խան գյուղը, որտեղ Ցայիկը իր համար կանայք ընտրեց ու վերադարձավ Խարբերդ: Մալաթիայի ճանապարհին Ցրանչիլար գյուղի մոտ մայրերից խլեցին երեխաներին՝ նրանց որբանոցներ ուղարկելու պատրվակով: Ցրանչիլարի մերձակայքում այս խմբին միացրին 11 հազ. հայի՝ Սըվազի, Սամսոնի, Թոքատի եւ Ամասիայի բնակիչների: Նրանց բոլորին հանձնեցին Ադիաման քաղաքի բեկ Բեդրիին, որը Ցեսարունչիգար գյուղում «անվտանգ» ուղեկցելու համար հայերից հավաքեց մոտ 20 հազ. ոսկի: Տաքտլիկ գյուղից արեւմուտք Բաղդադ եւ Վան-Դաղ լեռների փեշերին մորթեցին խմբում եղած բոլոր տղամարդկանց: Այս քարավանին 3,5 ամիս հետո հասցրին Ռաս ուլ Այն:

Տրապիզոնի ջարդերի մասին իտալացի կաթոլիկ գործիչ Լերենցոն պատմում է. «Հայերի բնաջնջումը նախապատրաստված էր համաձայն Միություն եւ առաջադիմություն կենտկոմի մշակած մանրամասն ու խնամքով կազմված պլանի»: Վալի Ջեմալ Ազմին ու իթիհադի տեղական ակումբի նախագահ Նայիլն էին հայերի ջարդերի անմիջական կազմակերպիչները: Նրանք հրամայեցին ժանդարմներին ծովում ոչնչացնել հայ համայնքի երեւելիներին, որոնցից մեկին հաջողվեց փրկվել եւ թաքնվել Իտալիայի հյուպատոսությունում, ապա նրան փոխադրեցին թուրքական հիվանդանոց ու մեռցրին: «Ցուրաքանչյուր քարավանի տղամարդկանց, կանանց ու երեխաների ճակատագիրը նախապես որոշված էր: Ով քարավանից հետ էր մնում՝ սվինահար էին անում»[56]:

Ատրի կրոնական գործիչների կազմած մի տեղեկագրում ասվում է, որ հայերի բռնագաղթի եւ ոչնչացման հրամանը առաջվեց Կ. Պոլսից, իսկ տեղական իշխանություններն այն ընդունեցին լոկ որպես բնաջնջման հրաման[57]:

Ցրանսիական արխիվում պահվող մի փաստաթղթում կարդում ենք. «Թե՛ լեզուն եւ թե՛ գրիչը անզոր են նկարագրել հայերի բնաջնջումը Թուրքիայում: Ժողովուրդների պատմության մեջ չկա որեւէ այլ իրադարձություն, որ հնարավոր լինի համեմատել այս աղետի հետ, չկան բառեր, որպեսզի կարողանան նկարագրել այն»[58]:

«Մի խեղճ աղջնակ, որը ավելի քան մի շաբաթ քայլել էր ոտաբոբիկ, հագին ունենալով միայն պատառոտված զգեստ, դողում էր ցրտից ու քաղցից: Նրա ոսկորները բառացիորեն դուրս էին ցցված մաշկի տակից: Աքսորյալները մոտ 20 երեխայի թողեցին ճանապարհին, որովհետեւ քայլել չէին կարողանում»[59]:

Հայերին մեռցնում էին բոլոր հնարավոր եւ անհնար միջոցներով: Այդպես էր, որովհետեւ, ինչպես հոխորտացել էր Ցոզգատի մութասարիֆի պաշտոնակատար, հայերի արյունախում Քեմալը. «Մենք հայերին բնաջնջելու պաշտոնական հրաման ունենք: Մուսամմերին (Սեբաստիայի վալի), Ռեշիդին (Դիարբեքիրի վալի) եւ ինձ բացարձակ հրաման է տրված, եւ ես որեւէ այլ հրաման չեմ ընդունում»[60]:

55 АН Арм. ССР информационный бюллетень, 1982, N3, лпй. 13.
56 Բեյլիրյան Ա., նշվ. աշխ., փաստ N483:
57 Ն.տ., փաստ N492 :
58 Ն.տ., փաստ N 508:
59 Համլեն Ա., Բրոն Ժ., նշվ. աշխ., էջ 56:
60 Անտոնեան Ա., նշվ. աշխ., էջ 34:

Հային ոչնչացնում էին սեփական տանը, ճանապարհին, լեռներում ու կիրճերում՝ ամենուրեք, որտեղ ափթ ներկայանում էր: Մոսուլում Գերմանիայի հյուպատոս Հոլշտեյնը հունիսի 10-ին հայտնեց. «Եփրատ եւ Տիգրիս գետերով Մոսուլ են ուղարկված հայ աքսորյալներ: Ջրի հոսանքները բերում են մարդկանց մարմնի մասեր»: Տրապիզոնում Իտալիայի հյուպատոս Գորինին հունիսի 24-ին տեղեկագրեց. «Շարունակվում է հայերի կոտորածը: Այդ բնաջնջումը սեւ էջ է մարդկության համար»[61]:

Օգոստոսի 23-ին Գերմանիայի ռազմական հանձնախմբի անդամ Ստագեւիցը Էրզրումից հայտնեց. «Արդեն պարզ է, որ ոչ թե տեղահանություն, այլ բնաջնջում է իրականացվում»[62]:

Բացարձակ իրողություն է, որ բռնագաղթն ու ջարդը ոչ թե իրար հաջորդող, այլ միաժամանակ իրականացվող ձեռնարկներ էին: Դեռ ավելին, որպես կանոն բռնագաղթը սկսվում էր ջարդերով: Սակայն նաեւ ակնհայտ է, որ երբ 1915թ. վերջին Արեւմտյան Հայաստանը դատարկվեց եւ տարագիրները կուտակվեցին Հալեպի վիլայեթում, Իրաքի հյուսիսային շրջաններում, Բաղդադի երկաթուղու երկայնքով, որոշ ժամանակ, քանի դեռ բռնագաղթն ավարտված չէր, տարագրյալները, ճիշտ է, մեռնում էին, բռնություններ զոհ դառնում, բայց թուրքերը դեռեւս ձեռնամուխ չէին լինում նրանց ամբողջական բնաջնջմանը: Իսկ բռնագաղթի ավարտին թուրքական իշխանությունները շուտ եկան դեպի այդ դժբախտները: Բռնագաղթվող քարավանների շարժին, նրանց հետ կատարվածին հետեւողն անհնար էր չնկատեր, որ բռնագաղթի կազմակերպիչների ու ջարդարարների գործունեությունը «վերեւից» ղեկավարվում ու կանոնակարգվում էր:

Երիտթուրքերը հայերի դեմ էին հանել վիթխարի թվով մահմեդականների: Նրանց հաջողվեց այդ գործում ներգրավել թուրք հասարակության բոլոր խավերին: Թուրքերը բնաջնջման գործում վերածվել էին իշխանությունների կամակատարների, այն դարձրել վայրենի կրքեր հագեցնելու եւ հարստանալու միջոց: Երզնկայի քարավաններից մեկին մինչեւ Քեմախ հասցրեցին համեմատաբար տանելի պայմաններում: Քեմախի կիրճում ժանդարմների վերաբերմունքը լրիվ փոխվեց: Ուրեմն դրսից այդ վերաբերմունքը «կարգավորվում էր»: Սկսվեց թալանը: Խլեցին ամեն ինչ՝ ոսկեղեն, դրամ, հագուստ: Նոր էին կիրճից դուրս եկել, երբ վրա տվեցին քրդերը: Նրանք տղամարդկանց առանձնացրեցին, տարան դեպի բլրակը ու կոտորեցին՝ գլուխները ջարդեցին քարերով, բիրերով: Այդ արվում էր կանանց ու երեխաների աչքի առաջ. ողբը երկինք էր բռնել: Տղամարդկանց «հարցը լուծելուց հետո» քրդերն առանձնացրեցին աղջիկներին ու տարան, իսկ մյուսներին նստեցրեցին աղբյուրի մոտ, բայց թույլ չտվեցին ջուր խմել. բռնագաղթվողները հարկադրված եղան թաքցրած զարդերը տալ ժանդարմներին ջրից օգտվելու համար: Ամեն գիշեր վերջինները պահանջում էին կույս աղջիկ: Մասնավորապես Հասան Սամսադում թուրքերը խուժեցին քարավան եւ բռնի ուժով տարան մեծ թվով աղջիկների, կանանց ու երեխաների: Մինչեւ Արաբ-Բունար հասնելը քարավանում աղջիկ չմնաց: Թալանին եւ երեխաների առեւանգմանն ամենաեռանդուն ու ամենասյլանդակ մասնակցությունն էին ունենում թուրք կանայք: Նրանք հարձակվում էին քարավանի վրա, քարեր շպրտում, հայհոյում, ասում, թե իրենց որդիները հայերի գնդակներից են զոհվել, որ իրենց բոլոր նեղությունների պատճառը հայերն են: Այդպես վարվեցին Երզնկայի բոլոր քարավանների հետ:

Մի այլ օրինակ: Զիֆթեկից մինչեւ Ռաս ուլ Այն 180 կմ է: Երկաթգծի երկու կողմերում թափված էին կամ դիզված կանանց ու երեխաների դիակներ: Վագոնները շաղախված էին արյունով: Երբ գնացքը կանգ էր առնում, վագոններ էին խուժում թրքուհիներն ու ամեն տեսակի այլանդակություններ կատարում, իսկ օտարերկրացիները լուսանկարում էին: Նրանցից մեկը՝ Ռ. Նոգալեսը, հետագայում Բուենոս Այրեսում տպագրեց հայերի արհավիրքները ներկայացնող գիրք:

Իսկ ահա թե ինչ կատարվեց Էրզրումում: Քաղաքի թուրքերը համոզում էին հայերին, որ տեղահանությունը ժամանակավոր է եւ մեղավորը ռուսական բանակի առաջխաղացումն է: Հայերի ներկայացուցիչները ժողովի հավաքվեցին կողմնորոշվելու համար: Երիտասարդությունն առաջարկեց չենթարկվել տեղահանության հրամանին եւ, հարկ եղած դեպքում զենքի դիմել: Տարիքավորները, մասնավորապես ունեւորները , չհամաձայնվեցին եւ համոզեցին, որ փրկվելու միակ միջոցը իշխանություններին հնազանդվելն է: Այդպես էլ որոշեցին, եւ էրզրումահայու-

61 Փափազյան Հ. Հայերի ցեղասպանությունը, էջ 7:
62 Ն. տ., էջ 7-9:

թյունը զառի հնազանդությամբ մասնակցեց տեղահանությանը: 11-րդ օրը, իշխանությունների աջակցությամբ վարձված կառքերի, սայլերի, ձիերի, ջորիների վրա բարձեցին ինչ հնարավոր էր տանել և «պահական» զինվորների ուղեկցությամբ քարավանը շարժվեց Երզնկայի ուղղությամբ: Քաղաքի դարպասների մոտ նրանց բարի երթ մաղթեցին վալին, վիլայեթի ու քաղաքի իշխանությունների մյուս ղեկավարները, ինչն ավելի էր ուժեղացնում հայերի հույսը, թե տարագրությունը ժամանակավոր էր եւ իրենք վերադառնալու էին: Դրան գումարած ռուսական բանակի առաջխաղացումը, որի կազմում էին հայ կամավորական գնդերը: Իրենց միանգամայն սիրալիր էին պահում քարավանին ուղեկցող զինվորները: Տվյալ դեպքում հայերը բռնագաղթվում էին, բայց առանց փրկվելու հույսը կորցնելու: Բաբերդի ճանապարհին ընկած էր երեք դիակ: Դա «առաջին ծիծեռնակն էր»: Երզնկայի մոտ կանգ առան: Մի քանի հոգի գնացին քաղաք տուն վարձելու: Բայց Երզնկան դատարկ էր, տները՝ ամայի: Ոչ մի հայ չէր երեւում: Դիմեցին մութասարիֆին, որը ոչ միայն խուսափեց պատասխանել, այլեւ նրանց թույլ չտվեց վերադառնալ, մինչեւ որ մեծ կաշառք չստացավ: Երբ մոտեցան քարավանին, ականատես եղան սոսկալի պատկերի: Էրզրումի կայմակամն ու ասկյարներն անհետացել էին, հարթավայրը բռնել էր թուրք ու քուրդ խուժանը եւ կոտորում էր անպաշտպան ժողովրդին: Դաշտը ծածկվել էր դիակներով: Հատուկենտ մարդկանց հաջողվեց փրկվել եւ գնալ դեպի Բեմախ, ապա Մալաթիա, որը նույնպես հայաթափ էր արված: Կանգ առան գիշերելու Մարագա գյուղում: Տեղի բեկերից մեկը սկսեց քարավանում գեղեցիկ կին փնտրել: Ընտրեց մեծահարուստ Գաֆաֆյանի ընտանիքից միակ կենդանի մնացած հարսին:

Էրզրումցիների եւ խարբերդցիների քարավանների մնացորդները միացան: Տղամարդ չկար: 20 000 կին եւ երեխա գնացին, ավելի ճիշտ նրանց հարկադրեցին գնալ Բերեջիք, որտեղ հարձակման ենթարկվեցին տեղի մահմեդական բնակչության կողմից, տարան 12 տարեկանից բարձր գրեթե բոլոր աղջիկներին: 40 աստիճանի շոգ էր, տեղահանվածները լրիվ թալանված, մերկ ու բորիկ էին: Շատերն ընկան ճանապարհին: Երբ երեւաց Եփրատը, վազեցին ջուր խմելու: Ժանդարմները մահակի տեղատարափ հարվածներով թույլ չտվեցին եւ առաջ քշեցին: Մի թուրք ասաց ժանդարմին. «Ինչ էք չարչարվում... Ով չի լսում, ոտքերից բռնէք ու Մուրադ գետը նետէք»: «Մի անհանգստանա,- պատասխանեց ժանդարմը,- մինչեւ տեղ հասնենք, 600 հոգուց վեցն էլ չի մնա: Մի երկու ամիս հետո դեղի համար հայ չես ճարի»:

Բերեջիքի հայերը որոշեցին մահմեդականություն ընդունել, սակայն դա էլ չփրկեց: Նոյեմբերի 12-ին նրանց նույնպես տեղահանեցին: Դիարբեքիրում նախ թալանեցին շուկան, ապա հայերի տները, որից հետո հրդեհվեց շուկան, այրվեց 1143 խանութ եւ կրպակ: Դրանից հետո նիայն սկսվեց զորահավաքը: Քանի որ զինվորական ծառայությունը հայերի համար նշանակում էր մահ, նրանք աշխատում էին խույս տալ կամ դասալքել: Դա պատրվակ էր: Հրդեհվեցին հայկական թաղերը: Կախաղան բարձրացրեցին օսմանյան խորհրդարանի անդամ Ս. Զրաքճյանին երկու որդիների հետ: Տեսնելով ահազնացող վտանգը՝ տիգրանակերտցիների մի մասը առաջարկեց բարձրանալ Սասուն ու մարտնչել ջարդարարների դեմ, սակայն այդ առաջարկը մերժվեց մեծամասնության կողմից: Խոհեմության եւ խոնարհության հոգեբանությունը կործանեց նաեւ Դիարբեքիրի հայությանը: Զերքեզները հարձակումներ էին գործում դիարբեքիրցիների քարավանի վրա, սպանում, լկում անպաշտպան կանանց ու երեխաներին: Նույնն էին անում նաեւ քրդերը: Դիարբեքիրից մինչեւ Մարդին ձգվող ճորը լիքն էր դիակներով:

Ուրֆայի շուկայում հայ տղաները վաճառվում էին 10 ղրուշով: Եփրատն անընդհատ դիակներ էր բերում՝ 5-10-ական հոգի, ձեռքերը կամ ոտքերը միմյանց կապած: Մայիսի 5-29-ին օրական (գիշերները չհաշված) գետը բերում էր 150-200 դիակ, դրանց մեջ կային նաեւ մայրերին կապված երեխաների դիակներ: Որպես կանոն, կանանց դիակները մերկ էին: Գետի երկու ափերին՝ սկսած Բերեջիքից մինչեւ Ղարադաղ, թափված էր հազարավոր դիակ: Էրզրումից Բիթլիս շինարարական աշխատանքի տարված հայ երիտասարդներին քրդերը մորթեցին զազրելի դաժանությամբ: Այստեղի ճորերը նույնպես լցված էին դիակներով, արյունը հոսում էր գետ դարձած: Զեթենները մարդինցի 300 աղջկ վաճառեցին 200-300-ական ոսկով: Այդ շրջանների հայության բնաջնջումը գլխավորում էր Հալիլը: Նա քրդերից, թուրքերից, առնեուտներից եւ չերքեզներից չեթեական խմբեր էր կազմակերպել:

Ճարապլուսում գործում էր հայերի ունեցվածքի վաճառքի շուկա, որը սպասարկում էր տարածքի մահմեդական բնակչությանը. թուրքերը գրեթե ամբողջությամբ փոխել էին իրենց զգեստները, հագնում էին հայերից թալանածները:

Ապրիլ-նոյեմբեր ամիսներին Ռաս ուլ Այնից, Թել Աբիադից, Արաբ Բունարից մեկը մյուսի հետեւից բռնագաղթվածներով լի գնացքներ էին գնում Ճարապլուս: Անասուն տեղափոխելու համար նախատեսված վագոններում իրար վրա էին թափել մարդկանց, դռները փակել ու տանում էին՝ ոչ թե տեղափոխում, այլ շնչահեղձ անում, ծարավից ու քաղցից մեռցնում: Դրանք արդեն մարդ արարածներ չէին, այլ վայրենացած հիվանդներ, գազազած սովյալներ: Կայարաններում հարձակումները, բռնաբարությունները սովորական երեւույթ էին: Մի բաժակ կեղտոտ ջուրը զինվորները վաճառում էին մի ոսկով: Ահա ջուր խմելու ցանկությամբ վագոնից իջավ մի աղջնակ ու նայելով չորս կողմը բղավեց, թե ում դուստրն է ինքը եւ այնպիսի հայացքով նայեց մոտեցող ոստիկաններին, որ նրանք վախեցած հետ-հետ գնացին: Աղջկա ձեռներն արյունոտ էին: Նա կրծում էր մատների ծայրերը: Այդպես մինչեւ Ճարապլուս «ուղեւորների» թիվն այնքան էր նվազել, այսինքն՝ այնքան էին մեռել, որ քառասուն վագոն տեղ հասավ գրեթե դատարկ: Հունիսի 11-ին Տրապիզոնի վիլայեթի Պլատանա ծովափնյա քաղաքում սրախողխող արվեց 42 հայ երեւելի, որի մասին մանրամասն գրել է ամերիկյան հյուպատոս Հայզերը: Հուլիսի 6-ին քաղաքը լրիվ դատարկված էր հայերից, «շուրջ 1 000 տուն պարպված էր, բնակիչները՝ տարագրված: Ոստիկանները դուրս էին տանում կահ-կարասիները»[63]:

Ծովը ափ էր նետում խեղդված հայերի դիակներ:

Պատերազմից առաջ Տրապիզոնի վիլայեթում 18 343 հայ կար, իսկ երբ ռուսական զորքերը այն գրավեցին, գյուղերում հայտնաբերվեց 367, իսկ քաղաքում՝ 92 հայ: Էրզրումի նահանգի 200 հազար հայ բնակչությունից ռուսական զորքերը քաղաքում գտան ընդամենը 100 հայ: Հույն եպիսկոպոս Ժերմանոսը պատմում է, որ երիտթուրքերի հետ միասին հայերի ոչնչացմանը մասնակցում էր նաեւ թուրք ժողովուրդը[64]: Սամսոնի մութասարիֆը հայոց վերնախավին առաջարկեց մահմեդականանան, որպեսզի խուսափեն տեղահանությունից: Ով համաձայնվում էր, անցնում էր քաղաքում ձգված պարանի թուրքական կողմը[65]:

Սեբաստիայի վիլայեթում հայերի ջարդերը սկսվեցին 1914թ. նոյեմբերին և շարունակվեցին մինչեւ 1915թ. մարտ ամիսը, իսկ Սեբաստիա քաղաքում բռնագաղթը սկսվեց 1915թ. հունիսի 17-ին: «Սեբաստիոյ տեղահանութեան եւ ջարդի գլխավոր կազմակերպիչներն էին,- կարդում ենք մի տեղեկագրում,- ջարդարար վալի Մուամմերը, իթթիհատի տեղական կազմակերպութեան ղեկավար Ղանին, ժանդարմերիայի պետ Հալիլը»: Ջարդերի «սև աշխատանքը» ղեկավարում էին մութասարիֆ Զելալը, ժանդարմերիայի հարյուրապետ Նուրին և այլք:

Բաբերդի հայության երկրորդ քարավանը ճանապարհին հանդիպեց առաջինի դիակներին: «15 տարեկանեն վեր ոչ մեկ արու անհատ ողջ մնաց»: Քաղաքից երկու ժամ հեռավորության վրա քարավանը հարձակման ենթարկվեց «հրացաններով ու կացիններով», զինված թուրք խուժանի կողմից: Եփրատի ջրերում լողացող տղամարդկանց դիակներն անդամահատված էին, կանանց որովայնները՝ բացված: Կեսարիայի մտավորականության ու գործիչների խումբը «չեթեից տապարով նահատակուեցավ: Կեմերեկեն դուրս, ...ջաղացքեն կես ժամ դեպի արեւելք Ղըզըլչար ձորին մեջ, ոտից գլուխ մերկացվելե վերջ նահատակաց մարմինը նետուեցավ Նիրօղլու կոչուած քարայրը»[66]:

Մարզվանի 16 000 հայի բռնագաղթն ու ջարդը կազմակերպեց կայմակամ Ֆայիքը: Իսկ երբ Լիջեի կայմակամ Ներսինի բեյը հրաժարվեց կատարել հայերին ջարդելու վերաբերյալ նահանգապետ Ռեշիդի հրամանը, սպանեցին:

Մահմեդական բնակչության սեռական սանձարձակությունները ծնեցին վեներական հիվանդությունների համաճարակ: «Գարահիսարի եւ Էսպիտերի հայ հարսներն ու կոյսերը՝ հարիւրներով Զարտախլրի ճակատի թիւրք զինուորներու քմահաճոյքին յանձնուեցան,- պատմել է մի թուրք սպա,- որոնք կարճ ժամանակուայ մեջ անասելի սեռային հիվանդութեանց բռնուեցան, եւ գոնե զինուորը փրկելու համար, այս անգամ հիվանդ կամ ոչ՝ հավաքեցին կեավուրները և խարոյկներով ողջ-ողջ այրեցին բոլորն ալ»:

Աներեւակայելի ծանր էր անհատ աքսորվածների վիճակը: Նրանց հասցնում էին Հալեպ ու նետում բանտի բակում եղած կեղտոտ սենյակը, որտեղ 10-15 օր կիսաքաղցած էին պահում,

63 Լեփսիուս Յո., նշվ. աշխ., էջ 37-39:
64 Les Atrocites Turques au Pont-Eutin... Paris, 1919.
65 Լեփսիուս Յո., նշվ. աշխ., էջ 269:
66 «Կիլիկեան տարեցոյց», Կ. Պոլիս, 1922, էջ 184:

ապա ձեռներն ու թեւերը կապած ժանդարմների ուղեկցությամբ ճամփա էին հանում: Քայլում էին մինչեւ որեւէ ամայի վայր, որտեղ ժանդարմները նրանց սպանում էին:

Ցեղասպանությունը Թուրքերի կողմից իրականացվեց ամենաայլանդակ, ամենաանբարոյական ու անմարդկային միջոցներով: Երբ ծանոթանում ես ցեղասպանության միջոցներին, դժվարանում ես հավատալ, որ դրանց հեղինակները մարդիկ են: Ալեքսանդրեթում ԱՄՆ-ի հյուպատոս Բրյուվենտի վկայությամբ Հալեպի վիլայեթի մի վայրում (Կութմա) 250 հազար հայի դիակներ թափված էին իրար վրա: "Journal de Geneve"-ը 1985թ. մարտին գրեց. «...Դեպի Սիրիայի անապատները քշված քարավանները նվազ վայրագ ու բարբարոս չէին, քան նացիստական վարչակարգի մահվան ճամբարներն ու գազախցերը»: ԱՄՆ-ի կոնգրեսի պատգամավոր Մայքլ Ռոսի կարծիքով՝ «...Հայերի ցեղասպանությունը մի ավելի ահռելի բան է, քան հրեաների հետ պատահածը...»: Փաստերը վկայում են, որ Թուրքերը XX դարում եւս մնացել էին նույն բարբարոսները, ինչպիսին եղել էին Կենտրոնական Ասիայում: Մահմեդական մոլեռանդությամբ կուրացած Թուրք եւ քուրդ ամբոխները պանթուրքիստների ձեռքում կամակատար զենք դարձան ու ոչնչացրեցին մի քաղաքակիրթ ժողովրդի[67]:

"Kolner gazet" թերթի Թղթակից Հարրի Շտուրմերը հայոց ցեղասպանությանը նվիրված հոդվածաշարում գրում է. «Հենց սկզբից հալածեցին նաեւ կանանց ու երեխաներին... արեւելյան բոլոր վեց վիլայեթների մի քանի հարյուր հազարի հասնող հայ ազգաբնակչությունը, առանց բացառության, զոհ էր դառնում այնպիսի անասնական դաժանության, որ մարդկության պատմության մեջ անգամ դժվար է համարժեք օրինակ գտնել, բացի թերեւս, աֆրիկյան ստրուկներ որսացողների կամ քրիստոնյաների հանդեպ Ներոնի կազմակերպած նախճիրներից: Թուրք կառավարության արդարացումները, թե իբր նման միջոցների դիմելը թելադրված էր ռազմական նկատառումներով... հերքվում է հենց բռնագաղթի եղանակներով...»: Եթե գերմանական ժողովուրդը իմանա, թե «ինչպիսի սառնասրտությամբ են կոտորում լայնարձակ երկրի ողջ բնակչությանը, իսկ մյուսներին քշում անապատ տանջանքներով մեռցնելու համար, չի կարող ատելությամբ չլցվել Թուրք կառավարության հանդեպ: Ով մարդկային զգացում ունի, որքան էլ Թուրքամետ լինի, այլ կերպ չի կարող դատել»[68]:

Հ. Շտուրմերը այս եզրահանգմանը եկել էր ոչ միայն անձնական դիտարկումների, այլեւ հայերից ու Թուրք պաշտոնատարներից հավաքած նյութերով: Նրա եզրակացություններն ամբողջությամբ համընկնում են Ցո. Լեփսիուսի վկայություններին եւ ամերիկյան դիվանագետների զեկուցագրերի բովանդակությանը:

Բոստոնի "Cristian monitor" թերթը 1915թ. սեպտեմբերի 15-ին գրում է. «Թուրքիայում իրականացվող կոտորածները վատթարագույնն են պատմության մեջ»: Նոյեմբերի 16-ին անգլիական խորհրդարանում նույն բանն էր ապացուցում Ա. Վիլյամսը: Հայկական կոտորածները դատապարտող ամերիկյան կոմիտեի այդ օրերին հրապարակած հայտարարության մեջ ասված է, թե երիտԹուրքերն իսկական պատերազմ են հայտարարել հայերին արմատախիլ անելու համար: Այդ կոտորածը պատմության ամենահրեշավոր ողբերգությունն է»[69]:

Երեխայի ներկայությամբ բռնաբարում էին մորը,- վկայում է Զալղուչյանը, խոշտանգում: Հաճախ մայրերն իրենց երեխաներին գետն էին նետում՝ չցանկանալով նրանց տալ դահիճներին, ապա իրենք էին նետվում ալիքների մեջ: Երբ լրագրողները ոստիկանին հարցրին, թե նրանք ինչպես կարող էին մորթել երեխաներին ու կանանց, պատասխանեց. «Հրամայված է»: «Հիվանդները ընկնում էին ճանապարհին, կանայք ծննդաբերում էին զինվորների հարվածների տակ, աղջիկներին տանում էին հարեմների համար: Պահակները նրանց վաճառում էին»: Զգայուն Թուրքերն ու արաբները խղճահարությամբ օրորում էին գլուխները, երբ քաղաքներում գազազած զինվորները մտրակով խփում էին անցնող քարավանների հղի կանանց, որոնց ոտներն արդեն ուժ չունեին շարժվելու:

Հալեպ-Բաղդադ ճանապարհի վրա բժիշկ-Թղթակիցը տեսել է հազարավոր բլրակներ: «Գյավուրների գերեզմաններն են»,- ասել է պահակը: Ես զարմացած հարցրեցի՝ արդյո՞ք փոքրիկ գյուղում այդքան մարդ է մեռել:

67 Чалхушян Г. Красная книга, стр. 70.

68 Stuermer H. Two years in Constantinople, New York,1917, pp. 105-112 կամ Թեոնոն Իվ եւ Շալյան Ժ. Հայերի ցեղասպանությունը, Բրյուսել, 1980, էջ 61-68:

69 «Արարատ», 05. 05. 1985:

-Ոչ, ոչ: Դու չգիտես: Դրանք չներ են, որ բերվել են այստեղ օգոստոսին, ովքեր չկարողացան տանել կիզիչ արեւն ու ծարավը:

-Արդյո՞ք Եփրատում ջուր չկար, որ նրանց ջրեին:

-Նրանց արգելված էր ամեն օր ջուր խմել[70]:

Գնդապետ Է-ն պատմել է Մուշի մոտ գտնվող գյուղի սարսափների մասին: Նա տեսել է մի հայ ծերունու ցնցոտիների մեջ, որը վկայել է, թե վաղ գարնանը բոլոր բնակիչներին գցել էին ջուրը: Ինքը գյուղում չի եղել եւ փրկվել է: Ուշ աշնանը նա վերադարձել էր տուն: Երբ սկսեցին գյուղը վերականգնել, ամենուրեք հողը փափուկ էր: Երեւացին փոսեր, որոնցում հորել էին կանանց ու երեխաներին: Դիակներն արդեն հոտել էին: Գանգերի վրա երեւում էին վերքերի հետքեր: Նման հորեր գնդապետ Է-ն տեսել էր շատ տեղերում: Երեխաների 10-20-ական դիակներ իրար էին կապված: Կանանց դիակներ գտան եկեղեցիներում, որտեղ նրանց բռնաբարել էին, որպեսզի միաժամանակ պղծեին նաեւ քրիստոնեական սրբությունները[71]: Գնդակահարվածներին հասցեագրված նամակների վրա փոստի ծառայողները գրում էին. «Հասցեատերը բնակավայրը փոխել է եւ նոր հասցեն չի թողել»:

Երբ ամերիկյան միսիոներները Թուրքական իշխանություններին առաջարկեցին թույլ տալ օգնելու հայերին, նրանց պատասխանեցին. «Հայերը ոչնչի կարիք չունեն, նրանց հոգը իր վրա է վերցնում օսմանյան կառավարությունը»[72]:

Ռուս զինվորական Վ. Շչերբինը Կրզիլ Դուզից մայիսի 20-ին գրեց, թե անհնար է նկարագրել «գազանությունների տեսարանները, որոնք Թուրքական կառավարության սադրանքով կատարվել են քրդերի եւ ասկյարների կողմից... հայ բնակչության հանդեպ: Տեսանք կանաց, տղամարդկանց, երեխաների, ծերերի դիակների կույտեր՝ կտրված ձեռներով ու ոտներով, հանած աչքերով: Սահմռկեցուցիչ տեսարան էր»[73]:

«Արճեշի, Բաթնոսի, Ախլաթի, Կոփի եւ Խնուսի կազաներում,- գրում է Դուխովը,- վալու հրամանով Թուրքերը շատ տեղերում մորթել են մի քանի հազար տղամարդ ու երեխա, ներկայումս հազարավոր հայ աղջիկներ ու կանայք շարունակում են մնալ համիդիեների մոտ... Սիփան լեռան շրջապատում թափված մնում է հայ կանանց ու երեխաների մոտ 2 000 դիակ... Այդ բոլոր շրջաններում մոլեգնում են տիֆը, ծաղկախտը եւ այլ հիվանդություններ... Միայն Մանազկերտում տիֆով հիվանդ է 1 000 մարդ»[74]:

Անգլիացի գիտնական Դ. Լանգը գրում է. «Երեխաները բռնությամբ խլվել էին իրենց ընտանիքներից եւ ուղարկվել «որբանոցներ», որոնք իրականում գետնի մեջ փորված փոսեր էին, որտեղ ողջ-ողջ նետում էին մանուկներին: Կանանց ու ծերունիներին հավաքում էին քարավաններում, ստիպելով հարյուրավոր մղոն քայլել դեպի Հալեպում եւ Սիրիայում կազմակերպված համակենտրոնացման կետերը: Ճանապարհին նրանց սպասում էին մարդասպանները, որոնց ձեռքերին կառավարությունն ազատություն էր տվել...»[75]:

Մենք նպատակահարմար համարեցինք բռնագաղթը եւ կոտորածները ներկայացնել վավերագրերի, ականատեսների եւ օտար հեղինակների միջոցով, ինչը բնականաբար լրացուցիչ ծավալներ է ստեղծում, ծնում կրկնություններ: Սակայն գնացինք դրան բռնագաղթի ու ջարդերի իրողությունը բացարձակապես հավաստի ներկայացնելու համար: Եթե նույն միտքը հաստատում են ամենատարբեր աղբյուրներ, ամենատարբեր ազգությունների պատկանողներ, այդ թվում նաեւ՝ Թուրքեր, ապա ասվածը ճշմարտություն է, կեղծարարություն չէ:

Ականատեսի վկայությամբ՝ Դիարբեքիրի ամբողջ հայ բնակչությունը մորթվեց: Թուրք ասկյարները պատմել են, որ սկսած Ուղղու-Կշիլայից մինչեւ Կայսարի եւ Սեբաստիա ծածկված էին Սեբաստիայի, Սեւ ծովի ափամերձ քաղաքների, Ամասիայի, Մարզվանի հայերի գանգերով ու ոսկորներով: Հայերի հանդեպ հաշվեհարդարն ամենուրեք գրեթե նույն ձեւով էր կատարվում՝ ոչնչացնում կամ

70 Чалхушян Г. Красная книга, стр. 68-69.

71 «Հորիզոն», 1916, թիվ 20.

72 Ն. տ., էջ 70-71:

73 АВПР, Политархив, оп. 482, д. 3504, л. 29.

74 "Кавказское слово", 24.07.1915.

75 Lang D. Armenia: Cradle of Civilization. London, 1970, p. 38.

բռնագաղթեցնում էին բոլորին, բացի բանակի կարիքները հոգալուն ծառայող արհեստավորներից, որոնց մահմեդականացրին, մյուսները ոչնչացվեցին 1915թ. վերջին եւ 1916թ. սկզբներին:

Կանանց «ստինքներն էին կտրում եւ նետում նրանց բերանն ու աչքերին: Ըմբոստացողը անպատվվելուց չէր խուսափում՝ նույնիսկ եթե մեռներ: ... Սրի մի հարվածը բավական էր, որպեսզի առանց որեւէ այլ գործողության, մոր փորից մանուկը դուրս նետվեր: Տղամարդկանց հեռացնելով կանգնեցնում էին որպես նշանակետ ու կրակում, իսկ երբ հոգնում էին, անցնում էին սրի օգնությանը, նավթ էին լցնում եւ հրկիզում»:

Մի ավազակ պատմել է. «Գյավուրների հանդեպ խիղճ չունեմ...

Վերջին ջարդերը շատ ծանր չէին: Ամեն ինչից զզվել էինք եւ գյավուրներին այլեւս չարչարանքների չէինք ենթարկում: Մանավանդ, որ մեզ պարտավորեցրին դիակները թաղել, որպեսզի ճանապարհներով անցնող զինվորները չհիվանդանային: 1 200 հոգանոց գաֆլե դաշտ տարանք եւ քանի որ մենք մեռել թաղողներ չէինք, գյավուրների միջոցով երեք օրում ընդարձակ փոսեր բացեցինք: Փոսերը շատ խորն էին: Գյավուրներին, որոնց միայն կաշիներն էին մնացել, այդ փոսերը նետեցինք եւ հողով ծածկելով ողջ-ողջ թաղեցինք»[76]:

Տվյալ դեպքում դիակները գոնե նետել էին փոսերն ու ծածկել, իսկ ահա թե ինչ է հեռագրում Թալեաթը 1915թ. դեկտեմբերի 29-ին. «...Օտար սպաները ճամբաներուն երկայնքը դիզուած դիակները տեսնելով կը լուսանկարեն»[77]:

"Южный край" թերթը տպեց Հռոմի իր թղթակից Պերվուխինի «Խոսող քարեր» հոդվածը. «... Որ հայերի կործանումը սառնասրտորեն որոշված էր Բեռլինի կողմից, որ հենց Բեռլինը բոլոր մանրամասներով մշակեց հայ ցեղի բնաջնջման պլանը եւ Թուրքերին լոկ թողեց դրա իրականացումը՝ միաժամանակ իրեն իրավունք վերապահելով վերահսկելու պլանի կատարման վրա, վաղուց փաստաթղթերով ապացուցված է: Սակայն մի բան Բեռլինը չէր կանխատեսել: Նա մտածում էր, թե Թուրքերը պարզապես կկոտորեն հայերին, մինչդեռ պարզվեց, որ Թուրքերը «ստեղծագործական», անսանձ երեւակայության տեր մարդիկ են: Նրանք հարյուր հազարավոր հայերի բնաջնջումը վերածեցին հաճելի զվարճության, վիթխարի արյունալի հանդեսի: Որպես թատերական արվեստի իսկական սիրահարներ, նրանք, որքան հնարավոր է, երկարացրին իրենց ներվերը խտուտող հաճույքը՝ հայ ցեղի տանջալից հոգեվարքի հանդեսը: Նրանք բազմազան դարձրին միջոցներն ու եղանակները, նրանք ընդմիջումներ տվեցին հանգստի կամ թե չէ այլ գործեր կատարելու համար եւ ապա նորից ու նորից վերադարձան դեռեւս կենդանի մնացած մի բուռ հայերի խոշտանգումներն ավարտին հասցնելու: Դրա հետեւանքով հայկական անօրինակ ողբերգությանը, մի ամբողջ ժողովրդի հոգեվարքին մասնակցեցին չափից ավելի կողմնակի հանդիսատեսներ: Բեռլինի սառը հաշվարկով հղացած եւ ստրկական հաճոյականությամբ ու հիացմունքով դաժանության հեշտանքասերների՝ Թուրքերի, կողմից իրականացված հանցագործությունն ունեցավ կողմնակի անձանց չափից ավելի շատ վկաներ»:

Շվեյցարական մամուլը տպագրեց հայերի հանդեպ Թուրքերի գործադրած դաժանությունների երկու ականատեսների ողբը: Այդ «խոսող քարերը» հանդիսացան երկու գերմանացի՝ մեկը գերմանական, իսկ մյուսը շվեյցարական հպատակ: Եվ նրանց արտոնագրված քարե սրտերի եւ նրանց նյարդերի պարանները, չդիմացան: Մարդիկ խոսեցին, քանի որ մղձավանջային պատկերների ազդեցության տակ հասել էին այնպիսի վիճակի, որ՝

-Բղավիր կամ կխելագարվես[78]:

Բարբյուսը գրեց. «Եթե բաժանես առանձին դրվագների այն ողբերգությունները, որ ապրել է մարդկությունը իր գոյության ամբողջ ընթացքում, դրանից ամենասարսափելին, անշուշտ, հայ ժողովրդի մարտիրոսությունն է»: «Հայերի ճնշումը երիտթուրքերի կողմից,- մի այլ առիթով գրել է նա,- տարբերվում է Ա. Համիդի ու հին կառավարության հալածանքներից նրանով, որ այն կատարվում էր խնամքով մշակված պլանով եւ այդ պատճառով ավելի վտանգավոր էր: Չէ՞ որ այդ պարոններից շատերը ունեին

76 «Ցուշամատեան Մեծ եղեռնի», էջ 550, Տե՛ս Կ. Գաբիկյանի «Եղեռնապատումը»:
77 Անտոնեան Ա., նշվ. աշխ., էջ 148:
78 "Армянский вестник", 1916, N46.

եվրոպական դաստիարակություն: Կան շատ փաստաթղթեր, որոնք ապացուցում են, թե ինչպես դեռ համաշխարհային պատերազմի բռնկումից առաջ որոշված էր «նվազեցնել քրիստոնյա հայ ժողովրդին»:

Որ հայերի բնաջնջումը ոչ թե միայն երիտթուրք պարագլուխների մտահղացումն էր, այլ Թուրքիայի պետական-ազգային քաղաքականությունը, վկայում է նաեւ Թուրք հասարակության բոլոր խավերի եռանդուն (չնչին բացառությամբ) մասնակցությունը կոտորածներին, որ երիտթուրքերը համառորեն անուշադրության մատնեցին մեծ պետությունների միջամտությունները՝ հաստատ կողմնորոշմամբ մինչեւ վերջ հասցնել հայերի ամբողջական բնաջնջման քաղաքականությունը: Այդ, իհարկե, չի նշանակում, թե Թուրքերի շրջանում չկային մարդիկ, ովքեր դեմ էին Հայկական հարցի լուծման երիտթուրքական եղանակին: Իհարկե կային: Բայց ստեղծված էր այնպիսի մթնոլորտ, երբ հային խղճալը, նրա ոչնչացնելուն դեմ լինելը դիտվում էր գրեթե որպես ազգային դավաճանություն, տվյալ անձը լավագույն դեպքում զրկվում էր ոչ միայն իշխանությունների, այլեւ իրեն շրջապատող Թուրք հասարակության վստահությունից:

«Հետիոտն երթին, Անատոլիայի ամառվա կիզիչ արեւի տակ,- նկարագրում է Բ. Գեմբարակին,- ուղեկցում էին հրացաններով եւ մտրակներով զինված ոստիկանները: Եթե մուսուման սրտացավ գյուղացիներից մեկը փորձում էր ջուր տալ հայերին, անմիջապես մտրակի հարվածներ էր ստանում կամ սպանվում տեղն ու տեղը: Եթե գերյալներից մեկն ու մեկը ընկնում էր ուժասպառ... ոստիկանները սպանում էին նրան կամ հարվածում ոտքերով: Երթի հետեւից քարշ էին գալիս չեչենների ու թափառաշրջիկների հրոսակախմբերը, որոնք լկտի ծաղր ու ծանակով մերկացնում էին դիակները ոստիկանների լուռ համաձայնությամբ ու թույլտվությամբ, խլում, փախցնում էին երիտասարդ կանանց ու աղջիկներին՝ հենց որ նրանցից մեկն ընկնում էր կամ մի քայլ ետ էր մնում ընդհանուր երթից: Բազում բռնաբարություններից հետո նահատակում էին նրանց ամենալկտի ձեւերով: Եվ դա, ի միջի այլոց, կատարվում էր գաղտնի հրահանգի համաձայն, որը տրվում էր ոստիկաններին եւ որի իմաստն աքսորյալներին ճանապարհին մեռցնելն էր»: Ապա տղամարդկանց առանձնացրին ճանապարհներ կառուցելու: Ցուրաքանչյուր «աշխատանքային բաժանմունք» հանձնարարություն էր ստանում կառուցելու ճանապարհի երկու կիլոմետր երկարությամբ հատված: Հանձնարարությունը կատարելուց հետո բոլոր «աշխատողներին» սպանում էին[79]:

Գերմանական միսիոներների պաշտոնաթերթ "Allgemeine Mission-szeitchrift"-ը նշում է, որ կանանց հանդեպ բռնություններ էին գործադրում, իսկ երեխաներին միմյանց կապում եւ բարձր ժայռից նետում էին ծովը: Պահանջվող արագությամբ քայլել չկարողացող երեխաների գլխին հարվածելով սպանում էին: 3 000 կնոջ տարան անապատ ու սպանեցին: Լինում էին դեպքեր, երբ բաժանում էին նաեւ իգական սեռի ներկայացուցիչներին, նրանց մի մասին բռնագաղթում էին, իսկ մյուս մասին ոչնչացնում տեղում: «Կարգ մը շրջաններուն եկեղեցիներու մեջ խճողուած հայերու ողջ-ողջ հրկիզումով մարդկային ճարպը դուրս ժայթքեց հեղեղման դրան սեմեն...»[80]:

Երզնկայում, պատմել է մի Թուրք զինվորական, «փոքր սպայից վարժարան յաճախող 70-ի մոտ հայ պատանիներ առավոտեան լուսաբացին, երբ ընդհանուր աշակերտութիւնը դեռ խոր քունի մեջ էր, արթնցուցին, գիշերանոցներով զանոնք առաջնորդեցին դպրոցի պարտեզին շրջապատին տակը, ուր նախապես փորուած փոսերը լեցնելով ողջ-ողջ թաղեցին աղեխարշորեն՝ ի լուր իրենց Թուրք ընկերներուն»[81]:

Այս եւ նման փաստերն այնքան սահմռկեցուցիչ, այնքան խայտառակող էին, որ անգամ վալիներից ոմանք ընդվզեցին դրանց դեմ: Կարինի վալին Հալեպի իր գործընկերոջ՝ Ջելալի օրինակով, տեղահանությունը համարում էր սխալ եւ, երբ առաջին քարավանը ճանապարհին ոչնչացվեց, հրաժարվեց նոր քարավաններ ուղարկելուց եւ պահանջեց երաշխավորել դրանց անվտանգությունը: Սակայն, ի վերջո, նա եւս ընկրկեց Կ. Պոլսի սպառնալիքների առաջ: Իզմիթի նահանգից 180 հազ. հոգու տարագրեցին դեպի Կարամանը, այնտեղ մահվան գիրկը նետելու համար: Բուլդուրում, Սպարտայում հայերը բնաջնջվեցին հոկտեմբերին: Տղամարդկանց սպանելուց հետո Թուրքերը կանանց բռնաբարեցին եւ երեխաների հետ նետեցին խորխորատները: Թրակիայի հայերին հավաքեցին եւ ուղարկեցին Անատոլիա: Ճանապարհին նրանք անհայտացան: Կեսարիայում հա-

79 Գեմբարակի Բ., նշվ. աշխ., էջ 9-10:
80 Լեփսիուս Յո. Հայկական ջարդեր, Կ. Պոլիս, 1919, էջ 147:
81 Ն. տ., էջ 148:

յերը ճամփա հանվեցին հազարանոց խմբերով՝ կանայք մի, իսկ տղամարդիկ մեկ այլ ուղղությամբ: Երբ իշխանությանը դիմեցին, որպեսզի կրծքի երեխաներին թողնեն գթասիրտ իսլամ ընտանիքներում ճանապարհին քաղցից չմեռնելու համար, նրանց պատասխանեցին. «Ձենք ուզում, որ հայի նույնիսկ հոտն այստեղ մնա. գնացեք Արաբիայի ափերն ու այնտեղ հիմնեք Հայաստան»[82]:

Բնաջնջումը տարագրության երեւույթի տակ շարունակվում էր: Պոլսում Ահմեդ Ռիզան եւ այլոք բողոքեցին: Իզմիրում կուսակալ Ռազիմ բեյը բավարարվեց հարուստ հայերից վերցնելով մեծ գումարներ «բանակի կարիքների համար» եւ ձերբակալեց մի քանի կուսակցականների, իսկ ջարդ ու տարագրում Այդնի նահանգում տեղի չունեցան: Գերմանիայի կանցլերը ռայխստագում պատերազմի առաջին տարվա ավարտին նվիրված ճառում չնորհավորեց գերմանացիներին «Թուրքիայի հրաշալի վերանորոգման համար, վերանորոգում ջարդերի, թալանի եւ բռնաբարության միջոցով:

Ամերիկյան "Outlook"-ը 1916թ. հոկտեմբերի 18-ին գրեց. «Մայիսի 1-ից Դիարբեքիրի, Ուրֆայի, Տրապիզոնի, Սըվազի, Խարբերդի եւ Վանի շրջանների բնակչությունը արտաքսվեց դեպի անապատները: «Հայաստան առանց հայերի». սա է օսմանյան կառավարության ծրագիրը: Այն ճանապարհները, որտեղով անցել են աքսորյալների քարավանները, ծածկված են դիակներով, իսկ նրանք, ովքեր ողջ են մնացել, դատապարտված են տանջալից մահվան, քանի որ անապատում չեն կարող գտնել ոչ տուն, ոչ աշխատանք եւ ոչ էլ ուտելիք: Սա պարզապես ազգը բնաջնջելու ծրագիր է: Մի նամակում գրված 1915թ. օգոստոսի 15-ին կարդում ենք. «Էրզրումի, Սըվազի, Խարբերդի, Բիթլիսի եւ Դիարբեքիրի գավառներում չմնաց ոչ մի հայ»:

Պատմում է պարսիկ գրող Ջամալզադեն. «Անցնելով Կ. Պոլսից Արեւմտյան Հայաստան եւ Միջագետքով դեպի Բաղդադ, ես ականատես եղա այնպիսի մահասարսուռ տեսարանների ու դեպքերի, որոնք նկարագրելիս անգամ թանաքը չորանում է: ...Ես Հալեպի մոտ տեսա, թե ինչպես ցնցոտիներ հագած հարյուրավոր ոտաբոբիկ հայ կանանց, տղամարդկանց ու երեխաների հեծյալ մի թուրք հրոսակապետ մտրակի հարվածներով տանում էր դեպի անապատ: Հայ աղջիկներն իրենց մազերը լրիվ խուզել էին՝ թուրք եւ արաբ տղամարդկանց հարձակումից եւ անպատվությունից խուսափելու համար... Անցնելով Եփրատի արեւմտյան ափով՝ ես մի քանի օր շարունակ տեսնում էի հարյուրավոր սպանված, ջուրը նետված եւ ջրի մակերես բարձրացած դիակներ»[83]:

«Քարավաններում,- գրում է Մորգենթաուն,-սպանություններ կատարվում էին գրեթե ամեն օր: Իսկ երբ կանգ էին առնում քրդաբնակ կամ թուրքաբնակ գյուղերում, պարզապես տեղի էր ունենում մարդաորս: Գնալով գազազած էին դառնում ուղեկցող ոստիկաններն ու ժանդարմները, նրանք կարծես շտապում էին օր առաջ ազատվելու տարագիր դժբախտներից, եւ հաճախակի էր դարձել գետնին ընկածին սրախողխողելը: Սկսվեցին սովամահությունը եւ մահացությունը ծարավից: Հայերին չէին թողնում ջուր խմել: Անապատի կիզիչ արեւն էլ այրում էր մերկ կամ կիսամերկ թշվառների մարմինները: Ոտքերը արեւի ճառագայթներից փրկելու համար թաղում էին ավազի մեջ, որի հետեւանքով մնասվել, վերքերով ծածկվել էին, եւ քայլելը դարձել էր անհնար: Եվ նրանք ընկնում էին ճանապարհին մեռնելու կամ սվինահար լինելու համար: Սկսեցին ուտել ինչ պատահեր՝ սատկած շուն, կատու... ամեն ինչ: Քարավաններն իրենց հետեւում թողնում էին մի այլ՝ չթաղված դիակների քարավան: Սկսվեցին դիզենտերիայի, տիֆի, խոլերայի համաճարակները: Քարավաններից շատերը վերածվեցին համատարած հիվանդ, մեջքի վրա ընկած, քաղցած ու ծարավ մարդկանց զանգվածի: Որոշ կանայք իրենց երեխաներին ուրիշներին էին առաջարկում խոշտանգումներից փրկելու համար, կամ նետում էին հորերն ու մացառների մեջ՝ «անվրդով մեռնելու համար»: Աղջիկների գինը խիստ ընկել էր, նրանց վաճառում էին մի մեջիդով, տարածվեցին պոռնկությունն ու վեներական հիվանդությունները: Գիշատիչները հետապնդում էին քարավաններին, ընկածին հոշոտելու համար»: Ամենազազրելի ողբերգությունները տեղի ունեցան գետերի, մասնավորապես Եփրատի ափերին: Ոստիկանները կանանց հրումզցում էին ջուրը եւ հրացան պահած թույլ չէին տալիս որպեսզի մեկը դուրս գար: Հաճախ կանայք երեխաները գրկած իրենք էին նետվում ալիքների մեջ դժոխքից փրկվելու համար:

82 «Ցուշամատեան Մեծ եղեռնի», էջ 1071:

83 Ռաֆի Էսմայիլ, Հայերի ցեղասպանությունը (պարսկերեն), Թեհրան, 1972, էջ 215-217:

Տեղահանվածների հանդեպ գազանային վերաբերմունքը վկայում էր, որ Թալեաթի եւ Էնվերի իսկական նպատակը նրանց բնաջնջումն էր: Քարավանները ոչնչանում, մարդազուրկ էին լինում ճանապարհին: Հալեպի ամերիկացի հյուպատոսը տեղեկագրում էր, որ Հունիսի սկզբին 3 000 հոգանոց, մեծ մասամբ կանանցից, երեխաներից եւ ծերերից կազմված քարավանը դուրս է գալիս Խարբերդից: Քարավանին ուղեկցում էր 70 ժանդարմներից կազմված մի խումբ: Դեռ նոր էին ճամփա ելել, երբ ժանդարմների հրամանատարը քարավանից չորթեց 400 ոսկի Մալաթիա անվտանգ հասցնելու պատճառաբանությամբ: Մինչեւ Ռաս ուլ Այն, որը Բաղդադի երկաթուղու առաջին կայարանն է, այս քարավանն անցավ դժոխքի միջով: «Ժանդարմներն առաջ անցնելով, քոչվոր խուժանին հայտնում էին քարավանի գալու մասին: Արաբներն ու քրդերը հարձակվում էին, աղջիկներին փախցնում, բազում անգամներ բռնաբարում, ապա սպանում եւ այդ ամենին մասնակցում էին նաեւ ժանդարմները: Կանայք ունեցած դրամը կուլ էին տալիս կամ թաքցնում մազերի մեջ: 13 օր շարունակ քարավանը կողոպտելուց, ծեծելուց, բռնաբարելուց եւ սպանելուց հետո ժանդարմներն այն լքեցին: Երկու օր անց հարձակվեցին քրդերը: Նրանք հավաքեցին 15-90 տարեկան 150 տղամարդ եւ բոլորին մորթեցին: Նույն օրը տեղ է հասնում Սեբաստիայից եկող քարավանը եւ տեղահանվածների թիվը հասնում է 18 հազ. հոգու: Ամեն գիշեր աղջիկներին գազանաբար բռնաբարումն էին, քարավանից հետ մնացած ծերերն ու տկարներն անմիջապես սպանվում էին: Հենց թուրքաբնակ գյուղ էին հասնում, մահմեդական մակաբույծները թափվում էին հայ կանանց վրա: Եփրատի վրա երեւաց 200 դիակ: Մահմեդականները հափշտակեցին բազմիցս կողոպտված տարագրյալների վերջին ցնցոտիները: Հարյուրներով մեռած ընկան ճանապարհին: Նրանց լեզուներն ածուխի գույն ունեին ու, երբ հինգ օր անց հասան մի աղբյուրի, բնականաբար ամբողջ քարավանը դեպի այն խուժեց, սակայն ոստիկանները ճանապարհը փակեցին եւ թույլ չտվեցին նրանց մի կաթիլ ջուր խմել: Նրանց նպատակն էր մի բաժակ ջուրը վաճառել 1-3 ոսկով: Երբեմն դրամն առնելուց հետո էլ հրաժարվում էին ջուր տալուց: Մի այլ տեղ, որտեղ ջրհոր կար, կանանցից ոմանք նետվեցին դրա մեջ, քանի որ ոչ պարան կար եւ ոչ էլ դույլ ջուր քաշելու համար: Չնայած այդ կանայք խեղդվեցին, բայց մյուսները ջրհորից ջուր խմեցին, առանց նկատի առնելու, որ դիակները ապականել էին ջուրը: Երբեմն, երբ ջրհորները խորը չէին լինում, եւ կանանցից ոմանք կարողանում էին իջնել դրանց մեջ ու դուրս գալ, մյուսները թափվում էին լիզելու կամ ծծելու նրանց թաց ու խոնավ զգեստները: Երբ մերկ վիճակում անցնում էին արաբական գյուղերով, արաբները խղճում ու զգեստների հին կտորտանքներ էին տալիս մարմինները ծածկելու համար: Շատերը մինչեւ Հալեպ քայլեցին մերկ: 18-րդ օրը միայն մի քանի հոգի հասավ Հալեպ:

«Ինչ ոճիրներ, որ մարդկային ամենախաթարված բնազդը կարող էր հնարել եւ հալածանքի ու անարդարության ինչ նրբություններ, որ ամենաստոր երեւակայությունն ի զորու էր հղանալ, դարձան այս նվիրական ժողովրդի առօրյա դժբախտություններ: Ես համոզված եմ, որ մարդկային ցեղի ամբողջ պատմությունը այդպիսի ահավոր դրվագ չի պարունակում»[84]:

Թուրք սպա Ասըմ բեյը ռազմական դատարանում վկայություն տվեց. «Խարբերդից տեղահանված 60 հազ. հայից Մոսուլ հասան 15 000-ը: Մնացածները ոչնչացվեցին ճանապարհին... Մարդինցի երկու քրդեր ասացին, թե Խարբերդի,Դիարբեքիրի, Մարդինի եւ Վերնիշեհիրի բոլոր հայերը մորթված են»[85]:

Հայերի «հանդեպ գործադրուած միջոցներեն վերջինը եւ ամենեն սոսկալին էր բովանդակ ազգաբնակչության զանգվածային տարագրությունը...,- եզրակացնում է Հ. Մորգենթաուն,- ասոնց տեղահանութեանը կամ սնունդին համար ոչ մի միջոց հոգացուցած էր: Այս զոհերը ... պարտավոր էին քայլելով ճամփորդել, ենթարկուած ոճրագործ ավազակախմբերու յարձակումներուն, որոնք յատկապես այդ նպատակին համար կազմակերպուած էին: Տուները... հիմեն քանդուեցան, ընտանիքները անջատուեցան, այրերը սպաննուեցան, կիները եւ աղջիկները ճամբուն վրա շարունակ բռնաբարուեցան կամ հարեմները տարուեցան: Մայրերը իրենց մանուկները գետերուն մեջ նետեցին կամ օտարներուն ծախեցին, զանոնք անոթութենե փրկելու համար... տեղեկագիրներուն մեջ յիշուած դեպքերը կը գերազանցեն ամենեն անասնական եւ ամենեն դիվային ամեն վայրագութիւններ, որոնք երբեք գործուած կամ երեւակայուած ըլլան աշխարհի պատմութեան մեջ»[86]:

84 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 264-268:

85 Կայզերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվ, F14088, Ab 30012:

86 Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 266-267:

Կ. Պոլսի պատրիարքի փոխանորդ Երվանդ վարդապետը 17. 12. 1917-ին Երուսաղեմից գրում է կաթողիկոսին. «Ա. իթիհադ եւ թերաքը թուրք կոմիտեին որոշումով եւ տեղահան ընելու մասին Գերմանիոյ հավանութեամբ... կառավարութիւնը վճռած է հայոց վտարումը; Բ. Կառավարութեան կողմե կազմակերպուած չեթեներու ձեռքով Էնկիւրիոյ նահանգին մեկ մասը, բարեկարգութեան շրջանակեն դուրս մնացած Սեբաստիոյ նահանգին միւս մասը, նաեւ ամբողջ Պոնտոսը, մասնավորապես, բարեկարգութեան ենթարկուած եօթ նահանգներեն հայ ազգաբնակչութիւնը, նախ ճամբուն վրայ քանիցս կողոպտուելե վերջ չարաչար մորթոտուած է. 15 տարեկանե վեր արուները սպանուած, գեղանի եւ դեռատի կիներն ու կոյսերը առեւանգուած, եօթեն մինչեւ 14 տարեկան մանչերն ու աղջիկները յափշտակուած եւ իսլամացուած են: Գ. Կիլիկիոյ, Պրուսայի նահանգին, Բիւթանիոյ եւ Թրակիոյ ժողովուրդը ճամբուն վրայ թեեւ սիստեմատիկ ջարդի չէ ենթարկուած, բայց կողոպտուած ու խոշտանգուած է: Դ. Հայաստանե աքսորուած հայերու մնացեալ մասը եւ Գ. յոդուածին մեջ նշանակուած ժողովուրդը ուղիղ գծով Սուրիոյ անապատները չեն քշած, այլ խոտոր ճամբաներով անմատչելի լեռներե, անդնդախոր ձորերե եւ անանցանելի գետերե առաջնորդելով, անոնց մեծ մասը ճամբուն վրայ մեռած, գետերու մեջ խեղդուած, անոթութեան եւ համաճարակ հիվանդութիւններու զոհ գացած են: Ե. Հայ աքսորականները ամբողջ 1,5 տարի հանգիստ առնելու հաստատուն կայան մը չեն ունեցած նոյնիսկ Սիւրիոյ ամայի անապատներուն մեջ: Դահիճները խարազան ի ձեռին հալածած են զանոնք տեղեստեղ, մերկ, հիվանդ, սոված վիճակի մեջ: Հայու բնաջնջումին զլխավոր ազդակներեն մեկը այդ տեւական թափառումին մեջ պետք է փնտռել: Զ. Հայ կիներու մերկութիւնը, անոթութեան հետեւանքով մայրերե ոմանց իրենց սրտահատորներուն ոչինչ գնով վաճառումը, ուժասպառ վիճակում իրենց փոքրիկներուն ճամբուն վրայ լքումը, տեսակ մը յիմարութեան նոպայեն բռնուած կաթնակեր մանուկներու գետերու մեջ ընկղմում, քուրտերու եւ արաբներու իրենց տոփանքներուն յագուրդ տալու համար հայ կնոջ պատիվին յայտնի այս եղեռնին ամենեն դրուագներեն մեկը կկազմեն: Է. 1915-ի սկիզբները հայ զինվորներու ձեռքեն զենքերը խլելով գործավոր վաշտերու մեջ տեղավորած էին զանոնք: Ճամբայ շինելու եւ քարեր կոտրելու եւ կրելու աշխատութեանց մեջ անոնց կեանքը կենդանի մարտիրոսութիւն մը դարձած էր արդեն: Ընդհանուր տեղահանութեան միջոցին անոնց մեծագոյն մասը սպանուեցաւ, ուրիշներ անոթութեան, մերկութեան, համաճարակներու զոհ երթալով գրեթե ամենքը փչացան... Ազգերու տարագրութեանց մեջ այս աղետին մոտ եղեռն չկայ. զայն որակելու համար ցեղերու լեզուին մեջ բառ կպակսի»: Բռնագաղթվածների «կեսեն ավելին թշուառ, ախտավոր, արիւնաքամ, դատապարտուած է մեռնելու...»: Հայաշատ կենտրոններից են Դամասկոսը, Հալեպը, Կոնիան: Վերջինում կար 20 000, իսկ Դամասկոսում եւ Հալեպում 25 000-ական հայ: Դամասկոսին պատկանող Տրայի, Սալթի, Ամանի, Քերեքի եւ այլ բնակավայրերում հայերը բռնի իսլամացվել են: Նույնն է կատարվում նաեւ Հալեպի շրջանում: Կիլիկիայում մնացել էր 10 000, Կուտինայում, Աֆիոն Կարահիսարում, Էսքիշեհիրում ու մերձակա շրջաններում՝ 6000, Ցոզղատում, Կեսարիայում, Խարբերդում, Արաբկիրում, Մալաթիայում եւ այլն՝ 7000 հայ: Հայաստանում կենդանի մնացած հայերի մեծ մասը բողոքականներ, կաթոլիկներ են եւ երեխաներ:

Բացի Կ. Պոլսից ու Զմյուռնիայից կայսրությունում կենդանի մնացած հայերի թիվը 200 հազ. չէր անցնում: Սրան գումարած հարեմներում փակված 30-40 000, թուրքական որբանոցներում հավաքված 20-25 000 որբերը:

Փրկվածների 80%-ը կանայք ու երեխաներ էին:

Սպանվել կամ անհետացել էին 19 թեմերի առաջնորդ ու տեղապահ[87]:

15. 10. 1915թ. Գերմանիայի 47 կրոնական բարձրաստիճան ներկայացուցիչներ և գիտնականներ նամակ հղեցին կանցլեր Բեթման Հոլվեգին՝ խնդրանքով փրկելու հայ ժողովրդին, որին «սպառնում է անհետանալը», եթե կարճ ժամանակում վերջ չդրվեն «նրա հանդեպ կիրառվող անմարդկային միջոցներին»: Թուրքական իշխանությունները մերժում են դրսից որևէ օգնություն հայ խլյակներին, որոնք հիմնականում կանայք ու երեխաներ են՝ դիտավորություն ունենալով նրանց մեռցնել սովի ու համաճարակների միջոցով[88]:

Նամակում նաև ասվում էր, որ հայերի հանդեպ, մասնավորապես, գնացքներում կատարվող խժդժությունները թաքուն պահելու նպատակով առանձնակի նշանակություն էր տրվում Թուրքիայի երկաթուղիները հայ աշխատակիցներից մաքրելուն:

87 Տոնապետեան Պ., նշվ. աշխ., էջ 283-289:

88 DR/ RA-AA/ Կ. Պոլսի դեսպանատուն/ Bd. 171:

Ցիմմերմանը 18. 11.1915-ին ծածկագրում է Վ. Մետեռնիխին, թե ուղարկում է Թուրքական հրամանի տեքստը հայերին պաշտոններից ազատելու վերաբերյալ, խոսքն առաջին հերթին վերաբերում է երկաթուղում ծառայող հայերին: Գերմանիայի ԱԳ նախարարության ղեկավարներից մեկը զգուշացնում է Կ. Պոլսի դեսպանին այդ հրամանը խիստ գաղտնի պահելու վերաբերյալ[89]:

Խորհրդանշական է, որ չնայած այս գործի նախաձեռնողը գերմանացիներն էին, սակայն բռնագաղթի եւ բնաջնջման ծավալները մտահոգեցին անգամ գերմանացի գործիչներին: 07. 12. 1915թ. Մետեռնիխը գրում է կանցլերին, որ ինքն այդ հարցի շուրջ խոսակցություն է ունեցել Էնվերի, Հալիլի, Ջեմալի հետ եւ ասել է նրանց. «...Հուզումները և զայրույթն ընդգրկել են լայն շրջանակները, ինչպես նաև բարեկամ երկրները... Էնվերն ու Հալիլը պնդեցին, թե այլևս որևէ բռնագաղթ չի լինելու, առավել ևս Կ. Պոլսից: Նրանք բռնագաղթի պատճառը համարում են ռազմական անհրաժեշտությունը և «խույս են տալիս մեղադրանքից, որ հարթի պատճառը համարում են ռազմական անհրաժեշտությունը և «խույս տալիս մեղադրանքից, որ հայրենի հազարավոր կին, երեխա և ծեր նետվել են աղքատության գիրկը և կործանվում են: Ջեմալ փաշան ասում է, որ սկզբնական հրահանգն անհրաժեշտություն էր, սակայն իրականացումը վատ էր կազմակերպված»: Ջեմալի շտաբի պետ գնդապետ Ֆոն Կրեսը ինձ ասել է, որ աղետը ենթակա չէ որևէ նկարագրության և գերազանցում է բոլոր պատկերացումները: Մինչդեռ երկրում տարածում են, թե գերմանացիներն էին կոտորած ցանկանում»: Թուրքերի խոստումները, որ դրանք այլևս չեն կրկնվի, ոչինչ չի նշանակում: «Ինձ հայտնի է, որ այստեղի ոստիկանության պետի տվյալներով... Կ. Պոլսից վերջին ժամանակներս մոտ 4000 հայ տարվել է Անատոլիա, որ Կ. Պոլսում ատոիճանաբար վերջ են տալու 80 հազ. հայերին: Հարկ է նկատի ունենալ, որ ամռանը մոտավորապես 30 000 հայ Կ. Պոլսից աքսորվել է, նույնքան էլ փրկվել է փախչելով քաղաքից:

"Aldemaine zeitung"-ը գրում է. «Բազում տեղեկատվությունների հետևանքով, որ ստացվում են Գերմանիայում մասամբ նաև արտասահմանյան մամուլից, իրենց նախկին բնակավայրերից ուրիշ վայրեր տարագրված Թուրքիայի հայ բնակչությանը բաժին հասած ողբերգական բախտի մասին, գերմանական ժողովրդի լայն շրջաններում ձևավորել են ահազնացող անհանգստություն: Անգամ գերմանական ժողովրդի լայն շրջաններում ձևավորել են ահազնացող անհանգստություն: Անգամ եթե նկատի առնվի, որ հատկապես պատերազմական պայմաններում թույլատրելի են նման միջոցները խորվարար տարրերի դեմ... սակայն պետության անվտանգության համար անհրաժեշտ միջոցներ կիրառելուց հարկ է խուսափել, որ բռնությունների ենթարկվի ամբողջ ցեղը՝ առաջին հերթին ծերերը, կանայք ու երեխաները... Հայերի հալածանքների ոգին հանդիսանում է Թալեաթ բեյը»[90]:

Այս տեղեկագրի վրա Բեթման Հոլվեգը մակագրել է. «Մեր միակ նպատակն է՝ մինչև պատերազմի ավարտը Թուրքիային պահել մեր կողմում, առանց ուշադրություն դարձնելու՝ հայերը կործանվում են թե ոչ»[91]:

"Frankfurter Zeitung"-ը 12. 10.1915-ին գրում է, որ Կրեմերը Անգլիայի Լորդերի պալատում... ասել է, թե «զոհերի թիվը, իսկապես... կազմում է 800 000...Որոշ շրջաններում բնակչությունը ամբողջությամբ ոչնչացվել է»: Թերթը հայերի հետ կատարվածն անվանում է «այսպես կոչված սարսափներ Հայաստանում»:«Եվ եթե ... գործը հասել է անկարգություններ, ապա մեղավորն Անտանտի պետություններն են, որոնք թունավորել են հայերին՝ գրգռելով և դրամական միջոցներով նրանց մղել ապստամբության: Ընդ որում, ապստամբության սկզբում բազմահազար մահմեդականներ կոտորվել են հայերի կողմից»: "Daily Chronicle"-ը «Հայաստանին անվանեց Անտանտի յոթերորդ դաշնակից: Եթե թուրքերը ձեռք են առել պատասխան դաժան միջոցներ, մեղավորն իրենք՝ ապստամբած հայերն են...»[92]:

Կրեմերը Լորդերի պալատում հնչեցնելով եղեռնի հայ զոհերի թիվը՝ 800 000, միաժամանակ ասաց, թե անգամ «ինքն այդ թվին չի հավատում»: Դրան ոչ ոք չի հավատում..., որովհետև նշանակում է՝ «սպանվել է Թուրքիայում բնակվող հայերի 30%-ը, ներառյալ կանայք և երեխաները»[93]:

Իսկապես, մարդկային բանականությունն անկարող էր հավատալ դրան:

1916թ. օգոստոսին գերմանա-հայկական ընկերության հանձնարարությամբ ստեղծվեց մի փաստաթուղթ հայկական ջարդերի մասին. այն ուղարկվեց ընկերության անդամներին: Փաստաթղթում ասվում է, որ Օսմանյան կայսրության գրեթե ամբողջ հայ բնակչության տարագրության թուրքական կառավարության ծրագիրը ամբողջությամբ կատարվել է... Քանի որ ժամա-

89 PA-AA / Կ. Պոլսի դեսպ./ 171:

90 DR/ PA-AA/ R14089, փ.թ. 209 .

91 Նույն տեղում:

92 PA-AA/ 14089.

93 PA/AA/R14089.

նակակից քաղաքական հարաբերությունների պայմաններում բացարձակապես անհնար է այդ իրադարձությունների քննարկումը մամուլում, հասարակական կարծիքին ոչ միայն չեն տեղեկացրել գործերի իրական վիճակը, այլև լրիվ ապակողմնորոշել են... Եթե Թուրքիայի հետ եղբայրությունը մեզ պարտավորեցնում է, ապա այն չպետք է խոչընդոտի կատարելու մարդկայնության պատվիրանները: Մեր հասարակությունը պետք է, առաջին հերթին, իրեն պատասխանատու համարի անելու ամեն ինչ... որպեսզի լրիվ ոչնչացումից փրկի հայ ժողովրդի դեռևս կենդանի մնացած խլյակներին: Խոսքը գնում է մոտ 600. 000 մարդու մասին՝ ծերեր, կանայք և երեխաներ, ովքեր գտնվում են Միջագետքի անապատի ծայրին և մատնված են սովամահության[94]:

Բացարձակ հերյուրանք են պնդումները հայկական ապստամբության և հայերի հեղափոխական վարքագծի մասին...

Ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմի ժամանակ Թուրքիայում յուրաքանչյուրը կարող էր զենք ունենալ անձնական անվտանգության համար: Արաբները, քրդերը, չերքեզները, Թուրքմենները, լազերը պատերազմի ժամանակ պահեցին իրենց զենքերը, միայն հայերը զինաթափվեցին... Սպանված հայերի թիվը, ըստ գերմանական հյուպատոսների տվյալների, մոտենում էր մեկ միլիոնի: Արդեն աշնանը էնվեր փաշան 300 000 մորթվածներին ավելացրեց մոտ կես միլիոն բնաջնջված կին ու երեխա...ովքեր զոհվեցին անապատի ճանապարհին կոտորածների, հիվանդությունների և քաղցի հետևանքով: Եվս կես միլիոն հոգի ոչնչացվել էր մինչ այդ, Թուրքերը չեն Թաքցնում:

Ռեոսլերը կանցլերին 29. 07. 1916-ին տեղյակ է պահում. «...Հայերի հետապնդումը ոչնչով չի կրճատվել, ընդհակառակն, այն շարունակվում է ամենաանխիղճ ձևով»: Բաղդադից Եփրատի ափերով Հալեպ եկողների մեջ չկա մեկը, որը խորապես ցնցված չլիներ այդ աղետից: Սարկիից Համամով մինչև Մեաքենե ճանապարհը ծածկված էր հագուստի մասերով՝ Թվում է, Թե այստեղով նահանջել է մի ամբողջ բանակ: Միայն Մեաքենում Թաղված է 55000 հայ, այդ վկայել են Թուրք դեղագործն ու ենթասպան:

Հայերի հավաքատեղին Իսլայում,- շարունակում է Ռեոսլերը,- ամբողջ վեց շաբաթ, չնայած գերմանական ինժեներների պաշտպանության, հանդիսանում էր քրդերի բազմաթիվ հարձակումների օբյեկտ, նրանք սպանում էին կանանց ու երեխաներին: Հայերի դիակները մնում էին անթաղ և զոհ էին դառնում վայրի գազաններին: Բացի դա, այն հայերը, ովքեր ծածկի տակ չէին, ովքեր հիվանդ էին և հյուծված, շների կեր էին դառնում[95]:

Գերմանուհի Բ. Ռոների որբանոցում 3336 երեխայից մնացել էր 720-ը: Այդ նկատի ունենալով Կ. Պոլսում Գերմանիայի հավատարմատար Ռադովիտցը գրում է կանցլերին. «Թուրքահայերի թիվը 2,5 միլիոն էր, իսկ տարագրվածների թիվը՝ մինչև երկու միլիոն», եթե հիմք ընդունենք Ռոների որբանոցում կատարվածը, կտացվի 1,5 մլն զոհված եւ մոտ 425 000 կենդանի մնացած: «Մինչև այժմ զոհվածների թիվ համարում են 800 000-ից մեկ միլիոն, ինչը չափազանցություն լինել չի կարող»[96]:

Հալեպում ԱՄՆ հյուպատոսը 19. 08. 1915-ին հայտնում է, որ իր ունեցած տեղեկություններով մինչև օգոստոսի 15-ը ոչնչացվել էր 500 հազար մարդ: Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Անկարայի, Սրվազի նահանգներում հայերն ամբողջությամբ բնաջնջվել են[97]:

Երուսաղեմի Ս. Հակոբ վանքում ապաստանած Բ. Կոտկյանը 21. 12.1917-ին գրում է. «...Միլիոն ու կես անմեղ հայ հոգիներ ոչնչացան, սպանուեցան, խողխողուեցան, սրոյ և հրոյ ճարակ եղան, ողջ-ողջ գետերը թափուեցան»: Իսկ Պ. Զաքարյանն իր նախկին համագյուղացուն տեղյակ է պահում. «Ճանապարհին հայրիկդ, մայրիկդ դժբախտութիւններուն ու նեղութիւններուն չկարողացան տոկալ, մեռան, Վահան և Հայկազ Քեմախ ըսուած տեղ ետ ոտին, և մնացած փոքրիկներ անտեր ասդին-անդին թափառելով մինչև Մերտինի մոտերը եկած են. փոքրիկ Լևոն այդ տեղեր կորսնցուցած են. խեղճ Արմենուհին Թուրքի մը ձեռք մնացեր է... Բագրատ և Սրբուհի խանում դեպի Մոսուլ կը ղրկեն, ճանապարհին քիւրտեր Բագրատին ալ ողջ չեն ձգեր. Սրբուհի խանում... մի քանի օր վերջ այս ցավերուն չկրնար տոկալ և իր մահկանացուն կը կնքե: Եվ ահա ձեր ամբողջ գերդաստան այսպիսով կկորսուի միւս հայաստանցիներու նման»[98]:

Ս. Տևանցը 24. 12. 1917-ին գրում է. «Պաղեստինն ալ թատր եղավ հայկական հալածանքի Թուրքի վայրագ տեսարաններուն... Սինայի անապատը գերեզման եղավ հազարավոր հայ երիտասարդներու...»: Շինարարական գումարտակներում ընդգրկվածների մի մասին ուղարկեցին Սինայի անապատում ճանապարհ կառուցելու... «Հայ բանվոր զինվորներու համար իրական մարտիրոսութիւն մը եղավ անապատի կեանքը... Թուրք վերակացուները զիրար կը գերազանցեին անոնց նկատմամբ վայրագ ատելավառ խստութեան մեջ: Մտրակներու անողորմ հարուածներու տակ օրական 12 ժամ անընդհատ աշխատանք, սնունդի և հագուստի անբավականութիւն, անապատի դաժան կլիմայի անընտելութիւն. ասոնք ամենը քիչ ժամանակի մեջ սպառեցին արդեն հիւծուած կեանքը... Զկար գթութիւն անգամ հիվանդներու հանդեպ, անոնք ծեծի տակ կը բանադատուեին գետին պեղելու, քար ու ավազ կրելու...»: 1915-16թթ. «Սինայի անապատին մեջ հարուածներու տակ կոչկոծուած, զրկանքներե հիւծուած և սպառուած, անհետացան հազարավոր դալար կեանքեր... մոտ 3000 հոգիե բաղկացած հայ բանվորներու գունտե մը 150 հոգի միայն ողջ մնաց: Հայ զինվորներե 346 հոգի մեռավ Երուսաղեմի զինվորական հիվանդանոցին մեջ: Ասոնք... բաղդավոր էին, որ գոնե մահիճներու վրա ավանդեցին հոգին...»[99]:

Մետեռնիխը 1916թ. հունվարին տեղեկագիր ներկայացրեց կանցլերին, որում Բ. Դոանը մեղադրում է մի խումբ հարցերում, այդ Թվում՝

Սանձարձակություններ տեղահանվածների կյանքի հանդեպ.

Դա նշանակում էր. 1.Կառավարության կողմից տարագրվել են հայ կամ ուրիշ քրիստոնյա ժողովուրդներ, դրան էին կոչված մայիսի 14/27-ի օրենքի սահմանումները: Այլևայլ պատրվակներով ստեղծում էին Թուրքական ոստիկանական մարմիններ. նրանք հայի գրպանը Թաքուն դնում էին փամփուշտ և այն օգտագործում որպես խռովարար տրամադրությունների ապացույց: 2. Թուրքական իշխանությունները հրաժարվեցին ճնշելու ավազակախմբերին, որոնք կազմակերպվել էին բանություններ գործադրելու աքսորյալների կյանքի ու սեփականության հանդեպ: Շատ Թուրք չինովնիկներ և զինվորականներ բացահայտ ընդունում էին, որ կառավարության նպատակը ոչ Թե տարագրելն էր, այլ հայերին արմատախիլ անելը: 3. Թուրքական ոստիկանները, ժանդարմները և զինվորները հրամանատարների հրամաններով, մասամբ էլ ինքնագլուխ մասնակցում էին բանագաղթվածների սպանություններին: Այս առումով մասնավորապես եռանդուն էին գործում Դիարբեքիրի վալի Ռեշիդը, Էրզրումի վալի Թահսինը, Էրզրումի ոստիկանության պետ Խուլուսին եւ ոմն Մ. Քյամիլը: Կառավարական չինովնիկները սադրել են նաև մասնավոր անձանց ոչնչացնելու տարագիրներին: 4. Պայքար չէր կազմակերպվում քարավաններում բռնկված համաճարակային հիվանդությունների դեմ:

Ոտնձգություններ տարագիրների սեփականության հանդեպ.

1.Թուրքական ոստիկանները, ժանդարմներն ու զինվորները մասնակցում էին տարագիրների տների հրդեհմանը: 2. Նրանք եռանդուն մասնակցություն են ունեցել տարագիրների տների և քարավանների թալանին: Քարավաններին ուղեկցող ժանդարմները, ինչպես նաև պաշտոնատարները տարագիրներից չորթում էին դրամ: 3. Թուրքական բանակայինները և պետական ծառայողները մեծ կաշառքներ վերցնելով խնայել են որոշ հարուստ հայերի: Այս գործում առանձնապես աչքի էին ընկնում Ադանայի վալի Հազը և ոստիկանապետ Ջեմալը: 4. Տարագիրների անշարժ ունեցվածքը տրվել է միմիայն մահմեդականներին, օտար պարտատերերն անկարող էին ստանալ պարտքի դիմաց անշարժ ունեցվածք: Կառավարության կողմից դրանց համար այնպիսի ցածր գներ էին սահմանվում, որ դրանցով անհնար էր փակել նախկին տերերի պարտքերը[100]:

Գրում է Հերտյու գյուղացի Մ. Մեծիկյանը. «... Զար ոճրագործ Թուրքը բոլոր հայութեան արիւնը խմեց՝ ոչ Թե մենակ... մեկ գիւղի, այլ ընդհանուրը կորսնցուց... մայրը մանուկը մոռցավ... բոլորը իրենց զավակները լեցուցին գետը եւ իւր հոգին առավ ու փախավ. 3-4օր անց, երբ անտառից ելան, ոչ ոք չկար, զարկածին զարկել էին, իսկ մնացածին աքսորել. ազատվածներին քրդերը տարել էին գերիի նման ծառայելու»[101]:

Մի ուրիշ նամակում կարդում ենք. «Մի տարի մնալով քիւրտերու մեջ գերի, օրը կտոր մը հաց կուտային մեզի ու չարաչար կը տանջեին»[102]:

Պատմում է տարագրված Ն. Ռեհանյանը. «...Երկու օրեն հասանք Քալըքան ըսուած տեղը... երեկոյեան ամբողջ ժողովուրդը հավաքեցին իրարու վրայ. առնվազը կային հինգ գիւղի ժողովուրդ. հետոյ տղամարդիկ զատեցին կիներեն և սկսան դրամ հավաքել... ապա Թուրքերը զատուեցան մեկ

94 PA-AA/ R 14093.
95 DR/PA-AA/R 14090, փ.Թ. 22b.
96 Ն.տ., /R 14093, փ.Թ. 302:
97 U.S. State Departmant Record Group, 59. 867. 4016/148.
98 Տոնապետեան Գ., նշվ. աշխ., էջ 295-96:

99 Ն. տ., էջ 293-294:
100 PA-AA/ Կ. Պոլսի դեսպ./99:
101 Տոնապետեան Գ., նշվ. աշխ., էջ 203:
102 Ն.տ., էջ 217:

կողմ և հրաման ըրին քիւրտերուն և սկսան կոտորել և ժողովուրդը սկսավ փախչել... սպանդանոց դարձած այդ տեղը... երբ սկսան կոտորել մութը կոխած էր. ով անտառները կամ քարերը մտավ հազիվ կարողացավ զինքը փրկել... Երբ եկանք Քարմրանք, տեսանք մեր ճանապարհները բռնուած էին քիւրտերեն: Փախուստի մեջ կորսնցուցի եղբայրս ու մնացի մենակ...»[103]:

Երիտթուրք դեկավար գործիչներից Ի. Հազը 07. 10. 1915-ին Կ. Պոլսից մեկնում է Բաղդադ ու գրառում է ճանապարհին տեսածը: Նա ներկայացնում է՝ հայերն «իրենց տուներեն հանուելով քշվեցին Արաբիա: Այդպիսի հայերի հանդիպեցինք. բոլորը մերկ էին ու բոբիկ... Տարսուսի կայարանում անձրևի տակ դողդողացող հազարավոր հայերի տեսանք»: Ադանայում ականատես եղանք հայերի «սաստիկ ցրտին և անպաշտպան անընդհատ տեղացող անձրևու, բացօդեայ հոգինին քաշքշելնին և ճամբաներու վրայ ջուրերուն մեջ կեանքեն բաժանվողներու գլխուն սուգ բռնողներուն ալ քանի ժամ յետոյ միևնոյն աղետալից ճակատագրին ենթարկուելնին տեսանք... Ճամբաները հայ կիներով և մահուան սպասող կարավանով լեցուն էին»: Հասան Բեյլի գյուղի մերձակայքն հատկացված էր հայ գաղթականներին: «Մեկ շաբաթ անընդհատ տեղացող անձրևեն յետոյ իրենց լեփ լեցուն և խոնուած վրաններուն մեջ ապրող հայ գաղթականներու անցուդարձեն ցեխի ծովի երևոյթ առած այս գետնի վրայ գտնվող հայերու վիճակին չը գթալն անկարելի կրլլայ կոր...»[104]:

Գրում է Գ. Ռումյանը (նախկին բանդրմացի) 19. 12.1917թ. «Երեք տարի է հայը կը թափառի լեռնե լեռ, ձորե ձոր, սարե սար, չունի հաստատ բնակութիւն մը, այսօր Մեսքենեի անապատներուն վրայ լարած իր վրանը, վաղը Ռաքքայի, և այսպես շարունակ քշուիլ ծեծերու, սուիններու, սուրերու, հրացաններու, կրակներու և անոթութեան սպառնալիքներու տակ մինչև Տեր Զոր, որտեղ արդեն 5% կարող էր հանիլ:

Հայուն գաղթի ճամբան շատ որոշ էր. անծանոթ ճամփորդ մը շատ դիւրավ պիտի հետևեր անոր գծին. անհամար դիակներու, անթաղ մեռելներու վրայեն քալելով պիտի հասներ Տեր Զորի աղեխարշ տեսարանին առջև, որտեղ կին և աղջիկ բարբարոս ժողովուրդին գազանային կիրքերուն ենթարկուելե յետոյ բազմազան չարչարանքներով կը մարտիրոսանային...»[105]:

"El tempo"-ն նոյեմբերի 3-ին արտատպել էր "The Times"-ի հոդվածն այն մասին, որ «Թուրքիայում գրեթե բնաջնջել են հայերին, երբ գնացքները հասնում են Կոնիայի մերձակա կայարաններից որևէ մեկը, թշվառ ուղևորներին հարկադրում են իջնել: Նրանց ոտքով քշում են դեպի Տավրոս և այնտեղից հարկադրում են քայլել մինչև Մոսուլ: Ճանապարհին նրանց միայն մի քանի տեղերում են սնունդ տալիս: Իրականում նրանք թողնվում էին բախտի քմահաճույքին, ենթակա քրդերի ու բեդվինների ավազակախմբերի հարձակումներին՝ կողոպտվում կամ սպանվում էին: Ով փրկվում էր, սովամահ էր լինում: Փաստն այն է, որ ոչ ոք նշանակման վայր չէր հասնում: Թուրք հովիմներին հրամայված էր փախչողների վրա կրակել: Բազմաթիվ կանայք սարսափից խելագարվել էին, նրանցից շատերն իրենց երեխաներին նետում էին Եփրատ փոքրիկների տանջանքները չտեսնելու համար»:

Ե. Զարենցը հայկական կամավորական գնդի կազմում Իգդիրից Վան գնալիս Թափառեզ սարի վրա կանգ է առնում սարսափելի տեսարանի առաջ: Շուրջ բոլորը սպանված և սառած երեխաներ, կանայք, ծերունիներ, որոնք փախչելով Թուրք ջարդարարներից, քրդական հրոսակներից, բարձրացել էին լեռան գագաթը: Ցնցված Զարենցը նկարագրում է.

Եվ ահա կրկին – մի քանի դիակ,
Եվ այստեղ ահա- վարսեր կանացի:
Իսկ այստեղ - նեխած վերմակների տակ-
Զորցած փշրանքներ արնաներկ հացի:
Իսկ այստեղ - ահա ոսկրացած մի ձեռք:
Մարմինը չկա: Ընկած է անձայն:
Հեռվում գտանք սրունքները մերկ,
Իսկ մի քիչ հեռուն - ատամներ ցիրցան:
... Կեսօր էր արդեն, երբ հսկա լեռան
Ալևոր ու ցուրտ գագաթը հասանք:
... Մոտեցա... Եվ քար կտրած մնացի:
Ձյունների վրա ընկած էր մի կին

103 Ն.տ., էջ 219:
104 Ն. տ., էջ 358-359:
105 Ն. տ., էջ 300:

Եվ առանց խոսքի ու առանց լացի
Ավանդում էր իր մենավոր հոգին,
Զոր ձեռքերի մեջ փշրանքը հացի
Սեղմել էր ամուր, որպես գանձ անգին:

Զարենցն այսպիսին տեսավ Երկիր ավետյացը՝ այրված գյուղեր, մոխրացած քաղաքներ, ծվատված, հոշոտված դիակներ ու մի անսահման դաժան լռություն: Մահվան չարաշուք ստվերն էր իջել Հայաստանի վրա. ոչ մարդ, ոչ շարժում: Վանը «մեռած քաղաք էր»: «Գորշացել էին ջրերը կապույտ, ու գորշ էր թվում աշխարհը ամբողջ»:

Ողբերգությունը ոչ միայն հասունացնում էր պատանի հանճարին, այլև նրա մեջ միս ու արյուն դարձնում ահավոր իրողությունը.

... Բայց ես գիտեմ, որ սիրեցի քեզ մի օր,
Երբ հասկացա, որ աշխարհում դու չկաս...

Զարենցը «Դանթեական առասպելը» նվիրում է Պարսկաստանի սահմանամերձ Սուգդուզ դաշտի 1915թ. դեկտեմբերի 25-ի ողբերգության նահատակների հիշատակին, երբ քրդերը հանկարծակի հարձակում են գործում հայերի վրա և խլում մեծ թվով երիտասարդ կյանքեր: Զարենցն իր աչքերով տեսավ, որ հնամյա քաղաքներից ու գյուղերից մնում էին միայն անուններ, «սատանան քրքջում է» մարդկության դարավոր վաստակի վրա, կյանքը վերածվել էր գահենի:

1915-17թթ. թուրքական մամուլում հայկական ջարդերի մասին նյութեր գրեթե բացակայում էին, կամ այնքան քիչ էին, որ դրանցով դժվար էր ընդհանուր պատկերացում կազմել հայկական սպանդի բնույթի ու ծավալների մասին: Պատճառը խելահեղ գրաքննությունն էր: «Զթույլատրված» նյութ տպագրելու համար թերթը փակվում էր, իսկ տնօրենը (խմբագիրը) դատական հետապնդման ենթարկվում: 1918-ին վիճակը փոխվեց, իսկ 1919-20թթ. մամուլը պարզապես ողողվեց Մեծ եղեռնի մասին հրապարակումներով: Իհարկե, պատճառը հայերի հանդեպ թուրքերի շրջանում «զլուխ բարձրացրած սրտացավությունը» չէր, այլ իթիհադին ջախջախելու և պատմության աղբարկղ նետելու ընդդիմադիր ուժերի ձգտումը: «Ակեմդարը» գրեց. «Բնաջնջման քաղաքականությունն իրականացվեց կոտորածներով ու կողոպուտներով... Եթե Բայազետի հրապարակը թուրք ոճրագործների կախաղանները չտեսնի, ապա Փարիզը (նկատի ունի խաղաղության կոնֆերանսը) մեր պետության և ազգի դատապարտման վայր է դառնալու»[106]:

Թերթը կոտորածները թուրք ժողովրդի համար «ծանրագույն հիվանդություն» անվանեց, որը «ժանտախտից սոսկալի է... Մենք որդեգրեցինք բնաջնջման քաղաքականությունը»[107]:

«Սաբահ» թերթի կարծիքով՝ «եթե թուրքերն իսկապես այս արարքներին (ջարդերին և մյուս չարագործություններին) մասնակից չեն եղել, ապա սրտանց հավանություն են տվել...»[108]:

«Թուրքչե Իստամբուլը» գտնում էր, որ չնայած կոտորածները «շատ բիրտ են, բայց պետք է կրկին ու կրկին վերհիշվեն: Այստեղ չեմ ցանկանում վերամբաստանել միայն միութենականներին (երիտթուրքերին), այլ նաև շատ ու շատ ուրիշ թուրքերի»[109]:

Կ. Պոլսում գերմաներեն հրատարակվող «Վերածնունդ» թերթը հայոց ցեղասպանության համար պատասխանատու էր համարում «1. բուն հեղինակներին, 2. նրանց, ովքեր գործում էին թաքնված առաջինների թիկունքում. Միություն և առաջադիմություն կենտկոմի ազդեցիկ անդամներին, նահանգային ակումբների ղեկավարներին, 3. նրանց, ովքեր գաղտնի կազմակերպությունների մեջ էին՝ կրտսեր սպաներին, բանտերից ազատ արձակված սրիկաներին, 4. այն երեսփոխաններին, ովքեր չբողոքեցին, հավանություն տվեցին ոճիրներին և մասնակցեցին կողոպուտին, 5. հրատարակիչներին, ովքեր ողջունեցին բոլոր ոճիրները..., ովքեր չփոթի մատնեցին հանրային կարծիքն ամեն տեսակի խաբեություններով ու ստախոսություններով, 6. նրանց, ովքեր առևտրի քողի տակ հետապնդեցին շահութաբեր գործեր, 7. մի լեգեոն փաշաներին ու բեյերին, ովքեր շրջապատել էին թալանչիներին և դարձան նրանց քծնողները և խնկարկուները»[110]:

«Թուրքչե Իստամբուլը» պահանջում էր նախկին ծերակույտականներին և երեսփոխաններին անապատ քշել, որտեղ «քավեն իրենց մեղքերը»[111]:

106 "La Renessance", 16. 04. 1919.
107 Ն.տ., 05. 01. 1919:
108 Ն.տ., 01. 05.1919:
109 "La Renessance", 22. 06. 1919:
110 «Ժամանակ», 19. 12. 1918:
111 "La Renessance", 07. 02. 191.

Մի ուրիշ թերթ գրեց երեսփոխանների մասին.
«Հայերը կոտորվեցին, նրանք ծափահարեցին,
Հույները տարագրվեցին, նրանք ծափահարեցին,
Արաբները բնաջնջվեցին, նրանք ծափահարեցին»[112]:

Թուրքիայի ՆԳ նախարար, նշանավոր քաղաքական գործիչ և ժուռնալիստ Ալի Քեմալը 1919թ. հունվարի 28-ին «Սաբահ» թերթում գրեց. «Զորս-հինգ տարի առաջ երկրում գործադրվեց պատմության մեջ նախադեպը չունեցող, աշխարհասարսուռ մի ոճիր: Նկատի ունենալով այդ ոճրի հսկայական ծավալներն ու չափերը, հարկ է ընդունել, որ դրա հեղինակները 5-10 հոգի չեն, այլ ... հարյուր հազարներ: Կոտորվածները, եթե 600 000-ի փոխարեն 300 000, նույնիսկ 200 000 կամ 100 000 լինեին, հարյուր, հինգ հարյուր, հազար ոճրագործներ չէին կարողանալու բնաջնջել այդքան մարդ»: «Սրանք այնպիսի ոճիրներ են,- գրեց «Ալեմդարը»,- որ բնավ կարիք չունեն առանձին-առանձին քննությունների: Դրանք, թե՛ հայտնի են և թե՛ հաստատված: Ձեթեներից շատ քիչ մարդ կա, որ մասնակցած չլինի տարագրությանն ու ջարդերին: Նրանք հավասարաչափ ոճրագործ են, որ իթիհադի հետ ձեռք ձեռքի տված մասնակցեցին (հայ) տարրի եղեռնին...»[113]:

Թուրքական մամուլը հիմնականում բավարարվում էր կատարվածին գնահատական տալով և չէր անդրադառնում եղեռնի իրողություններին, փաստերին: Դա որոշ առումով հասկանալի է և բացատրվում է այդ փաստերի հրեշավորությամբ, դրանց թուրք ազգին խայտառակության սեմին գամող բնույթով:

Իսկ մենք շարունակենք ներկայացնել փաստերը: 1918թ. «Վաքիթ» թերթում տպագրվեց Հալեպի և Կոնիայի նախկին վալի Ջելալի մեծ հոդվածը, նույն թվի դեկտեմբերի 15-ին այն արտատպեց Կ. Պոլսի "La Renessance" թերթը «Զարաշուք պատմական» վերնագրով: «Բոլոր կողմերից սկսվեց հայկական տարագրությունը,- կարդում ենք այդ հոդվածում:- Տարբեր կետերից հասնող քարավանները սկզբում ուղարկում էինք Կոնիա, սակայն շուտով ստացանք նրանց Դեր Զոր ուղարկելու հրահանգը: Խոստովանում եմ, որ չէի հավատում, թե այս հրահանգները և գործողությունները միտում էին բնաջնջելու հայությանը: Չէի կարող երևակայել, թե մի կառավարություն, պետություն կարող էր այսպես բնաջնջել իր հպատակներին, իր մարդկային դրամագլուխը, որը երկրի հարստությունը պիտի համարվեր: Նաև կարծում էի, որ այս միջոցառումները թելադրված էին պատերազմական անհրաժեշտությամբ՝ հայությանը ժամանակավորապես ռազմաճակատային շրջաններից հեռացնելու ցանկությամբ: Դիմեցի ներքին գործերի նախարարին՝ հատկացումներ տրամադրել գաղթական հայերի համար հյուղակներ կառուցելու: Հատկացումների փոխարեն, ինձ մոտ ուղարկվեց «Գաղթականների տեղավորման պատասխանատու» տիտղոսը կրող, սակայն իրականում հայության զանգվածային տարագրությունը կազմակերպելուն կոչված մի անձ: ...Ներքին գործերի նախարարին ուղղված անձնական նամակս հետևյալն էր ասում. «Հայությունը մեր բնակչության կարևոր մասն է կազմում: Հանրային հարստության մոտ քառորդը, ինչպես նաև երկրի ամբողջ տնտեսական նախաձեռնության կեսը նրանց ձեռքում են: Նրանց բնաջնջել՝ կնշանակեր շատ մեծ մնաս հասցնել կայսրությանը, մնաս, որ դարերով կարելի պիտի չլիներ դարմանել: Եթե աշխարհի մեր բոլոր թշնամիները հավաքվեին և մտածեին մեզ մնասելու ձևերի մասին, ավելի մնասակար արարք պիտի չկարողանային գտնել»: Ջելալը երկրի ղեկավարներին համոզելու նպատակով գնում է Կ. Պոլիս: «Ինձ լսել չուզեցին»,- գրեց նա: Խորհրդարանի անդամներից մեկը նրան փոխանցեց, թե այդ որոշումն ընդունվել է «կենտրոնական կոմիտեի կողմից երկար քննարկումներից հետո» և չի կարող վերանայվել, որովհետև կազմում է «ազգային իդեալի բաղկացուցիչ մասը»: Նաև հասկացրեց, թե եթե շարունակեմ համառել, աշխատանքից կազատվեմ[114]:

Հանդես գալով Լորդերի պալատում, Բրայսն ասաց. «Գրեթե մի ամբողջ ազգ ոչնչացված է, և կարծում եմ, որ Թամերլանի ժամանակներից ի վեր պատմությանը հայտնի չեն նման ուրիշ դեպքեր»: Անգլիական հետախուզական ծառայության N1 գործակալի՝ 1915թ. օգոստոսի 11-ի գաղտնի զեկուցագրի եզրակացության մեջ ասվում է. «Թուրքերը կոպտորեն ու մեթոդաբար իրականացնում են ամբողջ հայ ցեղի բնաջնջումը»:

Ողբերգության ֆրանսիացի ժամանակակից Ռենե Պինոն 1916թ. թուրքական կառավարության գործողությունները բնորոշել է որպես «Հայերի բնաջնջում», Ֆրանսիայի մեծ գրող Անատոլ Ֆրանսը «մի ամբողջ ժողովուրդ խեղդամահ անել էր» համարում այն, ինչ կատարում էր սուլթան Աբդուլ Համիդի կառավարությունը հայերի նկատմամբ և «մի ամբողջ ժողովրդի բնաջնջում» այն, ինչ Առաջին աշխարհամարտի տարիներին իրականացրեց երիտթուրքական կառավարությունը: «Տարագիրների խումբերին շատերը,- գրում է Ժ. Մորգանը,- ամբողջովին կը կոտորվին, մասնավորապես Քեմախ-Պողազ կոչված տեղը, Եփրատի վրայ, Երզնկայի հարավային կողմը: Շատ քիչ մնացածները կը հասնին Միջագետք և այնտեղ, անապատի խիստ կլիմայի տակ կը կոտորվին անպատսպար... Արդարև երջանիկ էին զոհերը, որովհետև մնացածներուն ճակատագիրը սոսկալի պիտի ըլլար: Կարավանը, անոթութենե հիւծված, առաջնորդներու գործած անգթութիւններեն տանջրդուած, պետք է քալեր, միշտ քալեր: Մերթ ընդ մերթ կանանց և մանուկներու աղաղակներով օդը կը լեցվեր: Ուժասպառ եղած, սոսկալի անոթութիւնը վրան ավելցած, դրութիւնը աննկարագրելի կըներ: Դժբախտները կլափեն, երբ կը գտնեն արմատ կամ խոտ: Ականատես մը կըսե. «Կը դիտեի զանոնք, վայրի կենդանիները՝ վատագոյնը չէին կըրնար ընել, անոնք կը խուժեին ուտելիք կրող պահապաններուն վրայ, որոնք գավազաններով կը ծեծեին և կը հեռացնեին, երբեմն այնչափ ոյժով, որ կիյնային անշնչացած: Դժվար էր հավատալ, թե անոնք մարդկային էակներ էին... Երբ գետի մը մոտեն կանցնին, մայրերը իրենց զավակները կը նետեն հոն և իրենք ալ անոնց կը ետևին: Կամ զինուորները ջուրը կը նետեն բոլոր պզտիկները՝ 12-15 տարեկանեն վար. անոնք, որ կը լողան, հրացանազարկ կըլլան: Բայց անվերջանալի ճանապարհի վախճանին մարտիրոսությունը չի վերջանար մնացած դժբախտներուն համար...»[115]:

Հայկական կոտորածներն ուսումնասիրող ամերիկյան կոմիտեի կոչում ասվում էր. «Համընդհանուր հրդեհի ժամանակ հրաման արձակվեց ժողովրդին (հայերին) տեղափոխել իր բնակավայրերից և ոչխարի հոտի նման քշել անապատ, անմարդաբնակ վայրեր, որտեղ փրկության հույս չկար: Գործը դրանով չավարտվեց: Բնաջնջման եղանակներից էին սպանությունները կամ ամբողջ երիտասարդությանը բռնի զորակոչելը: Կանանց ու երեխաներին ճանապարհ հանեցին հաճախ առանց հագուստի և սննդի պաշարի, առանց ուշադրություն դարձնելու նրանց առողջական վիճակին կամ տարիքին և ճամփորդության ընթացքում, որը շաբաթներ և ամիսներ էր տևում, նրանց հաճախակի էին թալանում բաշիբոզուկներն ու այլևայլ հանցագործներ: Մի ամբողջ ժողովրդի այս պլանավորված բնաջնջումը շատ ավելի ահավոր ու վրդովեցուցիչ էր, քան պատմության ընթացքում կատարված որևէ այլ կոտորած»[116]:

"Jornal de Geneve"-ը 1915թ. սեպտեմբերի 8-ին գրեց. «...Տեղի է ունենում մի ամբողջ ժողովրդի բիրտ ու սարսափելի ոչնչացում... խոսքը գնում է ամբողջ ժողովրդի ոչնչացման մասին՝ Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում, ամենուրեք, որտեղ որ հայ է բնակվում... Տրապիզոն, Էրզրում, Սեբաստիա, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր, Ադանա վիլայեթները ամբողջությամբ մաքրված են հայերից... Անհերքելի վկայություններով... սրբազան պատերազմի հայտարարումից ի վեր հարյուր հազարավոր հայ կոտորվել է, հարյուր հազարավորն էլ՝ բռնի մահմեդականացվել»: Բանակ զորակոչված հայերից շատերը, որոնք զինաթափվել և օգտագործվում էին ճանապարհաշինության վրա, գնդակահարվել են իրենց զինակիցների ձեռքով: «Անապատ աքսորված հայերը վերածվել են սոսկ խղճուկ հոտի՝ բաղկացած ծերերից, կանանցից ու երեխաներից, որոնք քշվում են ժանդարմների մտրակով: Այդ արտաքսումը քողարկված ոչնչացում է...»: «Ով այսօր անցնում է ամայացած Հայաստանով,- պատմում է Ա. Բարբին,- չի կարող չսարսռալ, այնքան արտակարգ շատ բան են ասում ավերակների ու մահվան այս անվերջ հեռաստանները: Չկա ոչ մի գյուղ, ոչ մի քարափ, մորթու մի կտոր, որը պղծված չլիներ թափված արյան վտակներով: Չկա ոչ մի գետ ու գետակ, որը դեպի հավետ մոռացում չտաներ հարյուր հազարավոր մեռած մարմիններ: Չկա ոչ մի անդունդ, ոչ մի կիրճ, որոնք չլիներ գերեզման բաց երկնքի տակ, որոնց խորքերում սպիտակին չտային կմախքների բաց թմբերը, քանի որ մարդասպանները ոչ մի տեղ ժամանակ և աշխատանք չէին ծախսել իրենց զոհերին թաղելու: Այս լայնարձակ շրջաններում, որոնք մի ժամանակ հայկական ծաղկուն բնակավայրի աշխույժով էին լցված, այժմ քայքայումն ու անմարդաբնակությունն են իշխում: Բեռնում օսմանյան դեսպան Ֆուադ Սելիմը քարտեզի վրա նկատելով «Հայաստան» բառը, բացականչեց. «Անտեղին է Հայաստան անվանել մի տարածք, որտեղ այլևս հայ չկա»[117]:

112 «Արքամարտ», 23. 12. 1918:
113 «Ալիք», 28.04.1985:
114 "La Renessance", 13. 12. 1918.

115 Մորգան Ժ., նշվ. աշխ., էջ 345-347:
116 "Армянский вестник", 1916, N 1.
117 "Revue de Turquie", 18. 03. 1918.

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ

ՄԱՀՎԱՆ ՃԱՄԲԱՐՆԵՐ

Աքսորավայրերում քարավանների խլյակներին լցրեցին ճամբարները: «Տեղ հասածները» նրանք էին, ովքեր հաղթել էին քաղցին, որովայնախտին, գանակոծությանը, կարողացել էին խուսափել ժանդարմների գնդակներից, քրդի սրից, թեչքիլաթի սրիկաների խոշտանգումներից: Դրանք մարդիկ չէին, այլ ուրվականներ, ովքեր ագահ հայացքով մի կտոր հաց ու մի ումպ ջուր էին աղաչում: «Այն հայերից, որոնք քշվեցին Արևմտյան Անատոլիայից, Կիլիկիայից և Հյուսիսային Ասորիքից, անապատի եզրի հավաքատեղիներում հետզհետե կուտակվեց հազարավոր մարդկանց բազմություն: Սրանք հետո ոչնչացան մեծ մասամբ սովի ու ջարդի միջոցով: Երբ ճամբարները լցվում էին ու այլևս տեղ չէր լինում, բռնագաղթվածները խմբերով տարվում էին անապատ...»[1]:

Համակենտրոնացման ճամբարներում եղել են բազմաթիվ օտարերկրացիներ և վիճակը ներկայացրել համաշխարհային հանրությանը: Նկարագրությունները հիմնականում համընկնում են և բոլորը միասին ձևավորում են այդ ճամբարների կերպարը որպես մեծաթիվ զանգվածների միաժամանակ կամ աստիճանական ոչնչացման միջոցների:

Սակայն տեղ-տեղ առաջանում էր գաղթականների այնպիսի խոշոր կուտակում, որ բառացիորեն հաշմում էր անգամ ջարդարար գործողությունները: Դեր Զորի մութասարիֆը մի քանի հեռագիր ուղարկեց ոչ միայն Հալեպ, այլ նաև Կ. Պոլիս, որ դադարեցվի գաղթականների առաքումն այդ սանջակ, որովհետև տեղի իշխանությունները կորցրել են վերահսկողությունը: Նրան մի քանի անգամ մերժեցին, բայց հունիսի 29-ին ստացվում է Թալեաթի հեռագիրը (որը Անտոնյանի հավաքածուում տեղ չի գտել). «Որոշված է, որ հայերը Հալեպի նահանգից արևելք և Քիրկուվի գավառում ու Սիրիայի արևելքում հաստատվեն, ուստի այլևս Զորի նահանգ հայ չուղարկել, որովհետև այն լեփ-լեցուն է և հայերի թիվն անցել է բնակչության 10%-ից»[2]:

Դեր Զորից Մեսքենե մեկնած մի գերմանացի, լինելով գաղթականների վրաններում, գրում է. «Այն ինչ տեսա, վեր է երևակայությունից: Դրանք համեմատել «հազար ու մի սարսափների հետ»՝ նշանակում է ոչինչ չասել: Թվում էր, թե հայտնվել եմ դժոխքում»[3]: Որովայնախտն ու թանչքը հնձում էին, մանավանդ երեխաներին, որոնք առանց այդ էլ կմախք էին դարձել: Աքսորականներին հարկադրում էին փոսեր փորել, ապա նրանց մորթում ու լցնում էին դրանց մեջ: Դեր Զորում հայերին փակում էին քարայրում ու հրդեհում, կամ պարզապես հարկադրում էին անապատակ այնքան քայլել, «մինչև հազարները դառնան հարյուր, հարյուրները՝ մի փոքրիկ խումբ, որը նվազելով վերջանար»:

Առաջին կանգառը Հալեպն էր: Այստեղ կենդանի մնացած հայերին հավաքում էին համակենտրոնացման ճամբարներում: «Այս մահվան ճամբարներից ողջ դուրս գալը հրաշք էր համարվում»: Այստեղից նրանց ուղարկում էին երկու ուղղություններով՝ դեպի հարավային Սիրիա, կամ Միջագետք, այսինքն՝ Արաբական անապատ: «Անապատում ստեղծված համակենտրոնացման ճամբարներն ավելի շուտ պիտի վերածվեին գերեզմանների»[4]:

Արաբական անապատի ճամբարներն այցելածներից մեկը նկատում է. «Այստեղ մարդկանց միանգամից չեն սպանում՝ նրանց տառապանքներին վերջ դնելու համար, այլ նախընտրում են ոչնչացնել դանդաղ մահով, սովի և ծարավի օգնությամբ»: Անապատում քաղցը դարձավ մահվան համաճարակ ծնող հրեշ: Ուտելու համար խոտ չկար, և կանայք «սկսան իրենց մեռելներն ուտել»: Մի կին քաղցից մեռնող իր երեխայի համար հարևան գաղթականներից, որոնք մեռած երեխա էին եփում, մի կտոր միս է խնդրում, բայց մերժում են: Աղջիկը մորը. «Եթե ես ալ մեռնիմ և դուն ալ զիս եփես ուտելու համար, կտոր մը մի տար անոնց»:

1 Թեհլիրեան Ս., նշվ. աշխ., էջ 367:
2 Գալֆայեան Ա. Զոմախլու, Նյու Յորք, 1930, էջ 132-133:
3 Մի քանի փաստաթուղթ հայերի 1915թ. նախճիրի մասին, Ժնև, 1916:
4 «Բնօրրան», 1995, թիվ 1, էջ 106:

Խոսելով բռնագաղթված հայերի աղետալի վիճակի մասին, չպետք է մոռանալ ևս մի գործոնի դերը՝ պատերազմի հետևանքով ամբողջ կայսրությունում ազգաբնակչության, առանց այդ էլ խղճուկ, կենսամակարդակի այնպիսի անկում էր տեղի ունեցել, որ սովի ուրվականը թևերը տարածել էր ամենուրեք: Մինչև 1916թ. սկզբները Սիրիայում և Լիբանանում սովից և համաճարակներից մեռել էր գյուղական բնակչության 40%-ը[5]:

1915թ. առաջին կեսին Բեյրութում, Դամասկոսում և Հայֆայում տեղի ունեցան ընդհարումներ թուրքական զորքի, ժանդարմերիայի և արաբ բնակչության միջև: Երիտթուրքերի թուրքիստական քաղաքականության դեմ էր ուղղված նաև արաբների ապստամբությունը Մեքքայի շերիֆի գլխավորությամբ: Իթիհադը դրանց առաջ ոչ միայն չէր ընկրկում, այլև ավելի էր սաստկացնում բռնությունները: 1916թ. մարտին Սիրիայում և Միջագետքում 933 արաբ դատապարտվեց մահվան: Ջեմալ փաշան դարձավ արաբների դահիճը, նրանց արյան բաղնիքների հեղինակը[6]:

Իհարկե, այս կացությունը ևս անդրադառնում, նպաստում էր հայերի բնաջնջմանը:

Վերադառնանք մահվան ճամբարները: Մանդելշտամը նշում է, որ այդ ճամբարներում «բացակայում էին սանիտարական տարրական պայմանները, տարագրվածները սնունդ չէին ստանում, տիֆի, ջերմախտի և փորհարեքի համաճարակները հնձում էին նրանց»: Տարագրվածները ճամբարներում մնում էին շաբաթներ կամ ամիսներ: Գրեթե բոլորը բացօթյա էին և քրջերից վրաններ էին պատրաստում և դրանց տակ մնում: Թուրք պաշտոնատարներից մեկն ասել է, թե այդ ճամբարների «գաղափարին եկանք անգլիացիների օրինակով, որոնք նույն կերպ էին վարվում բուրերի հետ Հարավային Աֆրիկայում»[7]:

Ռեոսլերը Բեռլին ուղարկեց Հալեպում գործող մի միսիոների հետևյալ տեղեկանքը. «Սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին Հալեպի մերձակայքում գտնվող Համ եկավ 20 000 տեղահանված: Երկու ամսում սովամահ եղավ 3 000 մարդ»: Պատկերը նույնն էր գրեթե բոլոր ճամբարներում, քաղցն ու հիվանդությունները մոլեգնում էին ամենուրեք: Համի մերձակայքի մի գյուղում մեկ շաբաթում մեռավ հարյուր մարդ: Սկսած Կոնիայից մինչև Մոսուլ և Հալեպ ու մինչև Մահան (Մեծյալ ծովի մերձակայք) ճանապարհները, գյուղերը, տափաստանները ծածկված էին գերեզմանաթմբերով և անթաղ դիակներով: Կենդանի մնացածները մերկ էին ու քաղցած: Ոմանք իրենց երեխաներին վաճառեցին երկու մեջիդով: Հալեպում մի տղամարդ ասաց. «Մեր ընտանիքում կար 11 մարդ, միայն ես եմ մնացել»: Մի աղջնակ. «Մենք տասը շունչ էինք, մնացել եմ միայն ես»: Մի կին. «Վեց երեխա ունեի, չորսը մեռան, իսկ երկուսը մահամերձ են»[8]:

Նոյրատի ունեցած գրառումներում կա ականատեսի հետևյալ վկայությունը. «Փհլայունդում տեսա հայկական վիթխարի ճամբար, որում օթևանում էր հազարավոր մարդ: Աֆիոն Կարահիսարի կայարանի դիմացի ճամբարում տեղավորվել էր 12 000 մարդ, իսկ որոշ պահերին նրանց թիվը հասնում էր 50 000-60 000 մարդու: Տեղավորված էին ինքնաշեն վրաններում՝ պատրաստված անկողնու կտորներից: Մեծ մասն ապրում էր բաց երկնքի տակ»:

Կոնիայից տեղահանվածներից մի մասին հետիոտն անցկացնում էին Տավրոսով, իսկ մյուսներին գնացքով տանում էին Բոզանտի: Հետիոտն տարվածների թիվը հասնում էր 10 000-12000: Գիշերներն անցկացնում էին դրսում: Խստիվ արգելված էր նրանց հաց, անգամ ջուր տալ... «Դրանով է բացատրվում, որ կանայք իրենց երեխաներին վաճառում էին մի քանի պիաստրայով կամ թողնում էին փողոցներում»[9]:

Գրում է գերմանացի Բ. Ռոները. «Ապրիլի 20-ին Մեսքենեում կար 3 500 տեղահանված և 100 որբ: Նրանց մի մասն աշխատում էր հացթուխ, սայլապան և այլն...»: Աշխատող բոլոր հայերը մուրում էին, բոլոր վրաններում կային թե հիվանդներ և թե մահամերձներ: Շատերը անվում էին խոտով, որ առանց աղի եփում և ուտում էին: Հարյուրավոր հիվանդներ պառկած էին բաց երկնքի տակ, առանց որևէ ծածկի: Ռոները տեսել էր հուսալքված հայերի, որոնք նետվել էին կո-

5 Лазарев М. Крушение турецкого господства на Арабском Востоке, 1914-18гг. М., 1960, стр. 72-73:
6 Ն. տ., էջ 74:
7 "Der prozess Talaat Pascha", Berlin, 1921, ss. 56-57:
8 R 14090, Ab 4240.
9 Konst/Ankara, 97, Ab 9442.

լեկտիվ գերեզմանները, աղաչելով գերեզմանափորներին իրենց թաղել: Կառավարությունը ոչ հաց էր տալիս և ոչ էլ վրան: «Բաբից եկավ մի քարավան, կազմված հիվանդներից, կանանցից ու երեխաներից: Աննկարագրելի վիճակում էին, նրանց սայլերից ցած էին նետում, ինչպես կոճղերին: Աքսորյալները ջուր էին աղաչում, ամեն մեկի ձեռքը դրեցին մի կտոր սև հաց ու թողեցին պառկած, իսկ ջուր այդպես էլ չտվեցին»: Մի չորսամյա տղա վաղուց հացի երես չէր տեսել, նրա ծնողները մեռել էին անապատում: Հավաքվեց 100 սովյալ երեխա, որոնց խնամում էին Բ. Ռոնների մարդիկ և Հաճընից բարեկիրթ, լավ ուսում ստացած մի կին: Մի քանի շաբաթ անց Ռոներն այդ նույն կնոջը հանդիպել էր Սեպհում գզգզված մազերով և քրքրված հագուստով: Խելագարվել էր և շրջում էր շուկայում ու բոլորից հարցնում. «Որտե՞ղ են իմ երեխաները»: Հավաքում էր զանգեր ու ոսկորներ և ցույց տալիս անցորդներին: Նրան 100 որբերի հետ ուղարկեցին Հարավ: Այդ խմբից փրկվեցին միայն երկուսը: «Մեքենե էին բերել 600 գաղթական Մաարրից, քիչ անց քրջերի մեջ փաթաթված, ոտը ոտից անջատել չկարողացող այդ ողորմելիներին նորից քշեցին Հարավ»: Մնվում էին բացառապես բույսերով, սակայն շուտով դա էլ արգելվեց, նրանց քշեցին Դաբաի: Ճանապարհը ծածկված էր դիակներով, մեռնում էին խմբերով: Ընկածներին ժանդարմները դաժանաբար ծեծում էին, ապա արդարանում, թե ծեծվողները ոչ թե ուժասպառ էին եղել, այլ այդպիսին ձևանում էին: Դաբաում կար 3 000, Աբուհարրում՝ 6 000 գաղթական: Երկուսում էլ ամեն օր մեռնում էր գաղթականների 18%-ը: Մեմամում կար 7 000 տեղահանված, որից 5 000-ը իրենց մարմնի վրա կրում էին բազում վերքեր՝ հիմնականում առաջացած հարվածներից: Շրջապատում բույս չէր մնացել, բոլորը կերել էին: Որսում էին թափառական շների, տարբեր կենդանիների և վայրենիների նման ուտում էին դրանց միսը: Մեռածներին թաղում էին վրանների կողքին: Ռաքքում և նրա մերձակա վրաններում կար 15 000 տեղահանված: Ճամբարը գետափին էր, նրանում եղածներին արգելում էին քաղաք մտնել: 1 500 հայ դրամ ծախսելով հաստատվել էր Սեպհում: 6 000 հոգի Եփրատի մի ճամբարում աղետյալ վիճակում էր: Շատերը հուսահատված գետն էին նետվում: Բնակավայրից բնակավայր գնալիս ժանդարմների դաժանություններից զոհվում էին ամենաքիչը 5-6 մարդ: Երբ չէր հաջողվում հայերից դրամ շորթել, նրանց հարվածների տակ էին առնում: Տիբաում կար 5 000 գաղթված: Ռոներն ամենուրեք հանդիպել էր բռնագաղթվածների: Արաբական ամեն մի գյուղում կային հայ ընտանիքներ, ամեն մի արաբ ընտանիքում՝ աղջիկ կամ երիտասարդ կին: Դեր Զորում տեսել էր 15 000 գաղթական: Երեխաներն ու մեծերը քջուջ էին անում:

Հալեպում գերմանական հյուպատոսության աշխատակիցը Թել Աբիադի ճամբարի մասին գրում է, որ այնտեղ կար 1 000 մարդ (առաջներում եղել էր 5 000): 600-ը տեղավորված էր 80x100 մետր մեծությամբ մի բակում, բացօթյա, իսկ մնացած 400-ը բակի շրջակայքում՝ նույնպես բացօթյա: Դրանք քարավաններից ողջ մնացածներն էին, հիմնականում պառավ կանայք ու երեխաներ: «Իմացա, որ 13-14-ից բարձր տարիք ունեցողներին առանձնացրել ու սպանել էին»: Ճամբարում բոլորը պառկում էին հողին: Շատերը կիսամերկ էին: Հագուստները վաճառել էին մի կտոր հաց գնելու համար: Նրանց վրա լիքն էին միջատ օտարակերներ, մի քանի ամիս հնարավորություն չէին ունեցել լողանալու և սանրվելու: Բակում պառկածներից շատերն այնքան հյուծված էին, որ տեղից բարձրանալ չէին կարողանում և անտարբերությամբ սպասում էին մահվան: «Նրանք միայն խնդրում էին հաց ու ջուր, անգամ ուժ չունեին մի փոքր հեռանալու և իրենց բնական պահանջները բավարարում էին տեղում»: Նրանց տեսքը սարսափելի էր. մնացել էր միայն մաշկն ու ոսկորները: Հյուծվածությունից ու փորհարբեքից օրական մեռնում էր 25-30 հոգի: Ճամբարից 100 մետր հեռավորության վրա փորում էին գերեզմաններ, որոնցից յուրաքանչյուրի մեջ նետում էին 15-20 դիակ, հաճախ դիակները լրիվ չէին ծածկում և երևում էին մարմնի տարբեր մասեր: Ընդ որում «ամեն փոսի լցվելը տևում էր մի քանի օր: Շրջապատում գարշահոտություն էր: Դիակները հորեր տարվում էին պարանով քարշ տալով կամ ձեռնասայլով: Քիչ չէին դեպքերը, երբ այդ հորերը նետում էին դեռևս կենդանի մարդկանց»: Ճամբարը Ային էլ Արուսի կայմակամ Ղարեբ բեյի իրավասության տակ էր: Նա դեմ էր կանանց ու երեխաների հանդեպ գործադրվող խոշտանգումներին, սակայն «ժամերով դիտում էր, թե հայերին ինչպես էին մեռցնում»: Թել Աբիադի ճամբարականներին աստիճանաբար քշում էին ավելի հարավ՝ Ռաքքա: «Ավելորդ է ասել, որ աքսորվածներին այս կամ այն ձևով մահ էր սպասում»[10]:

10 R14090, Ab 2889.

Գրեթե նույնանման նկարագրության ենք հանդիպում նաև Ա. Մանդելշտամի մոտ, ինչը ևս ապացույց է ասվածների ոչ թե հնարովի, այլ իրական լինելու: 1915թ. գարնանն ու ամռանը երիտթուրքերի կառավարության հրահանգով, գրում է Մանդելշտամը, Թուրքիայի արևելյան նահանգներում բնակվող հայերի մի մասը տեղում ջարդվեց, իսկ մյուսները քշվեցին դեպի հարավ և մեռան տարագրության ճանապարհներին: Թուրքական իշխանությունները քաղաքներում և նույնիսկ հաճախ կազմակերպում էին քուրդ և թուրք գյուղացիներին ու հրոսակներին՝ կողոպտելու և սպանելու տարագիրներին: «Թուրքական իշխանությունների հրահանգով զինվորները ջարդում էին իրենց պաշտպանությանը հանձնված անմեղ հայերին»: Հազարավոր տարագիրներ սովամահ էին լինում՝ ծարավից ու հոգնածությունից սպառվում: «Երբեմն դահիճները խեղդամահ էին անում իրենց զոհերին, այրում էին ողջ-ողջ կամ նրանց թրածեծ էին անում դաժան չարչարանքներով: Հաճախ դեռատի կանանց ու երեխաներին առևանգում ու վաճառում էին»: Որոշ տարագիրներ մեռնում էին տկարությունից ու հիվանդություններից Միջագետքի ու Արաբական անապատի վատառողջ արգելակայաններում: «Երբեմն արգելակայան կոչված վայրերում պարզապես կոտորում էին, ինչպես եղավ Ռաս ուլ Այնում հավաքված 14 հազար տարագիրների հետ:

«...Չնայած հալածանքների աշխարհիկ բնույթին՝ դրանք ուղղված էին ոչ թե կրոնի, այլ ռասայի դեմ, այնուամենայնիվ այդ դեպքերի ընթացքում թուրքերի մեջ շատ անգամներ ծնվեցին կրոնական մոլեռանդության բնազդներ»: Թուրքերը հայերի նկատմամբ գործադրում էին անասանելի, բազմազան ու բազմաբնույթ դաժանություններ[11]:

1916թ. հուլիսին Հալեպի գերմանական ռեալական դպրոցի դասատու Մարտին Նիպագեն դիմում հղեց «գերմանական ժողովրդի հեղինակավոր ներկայացուցիչներին», պետական և քաղաքական գործիչներին, մտավորականությանը: Նա գրում է, թե երբ դպրոցական եռամյա արձակուրդից հետո 1915թ. սեպտեմբերին վերադարձա Հալեպ, լսեցի, որ սկսվել է հայերի ջարդերի նոր շրջան, որը եղել է շատ ավելի սարսափելի, քան համիդյան ջարդերն էին և նպատակ ուներ լրիվ ոչնչացնելու հայ ժողովրդին: «Ինձ համար միանգամայն ակնհայտ էր, որ հայերի հասցեին մեղադրանքներն ավելին չէին, քան ջարդերի արդարացման պատրվակներ»: Նիպագեն այցելում է Հալեպի բոլոր այն տեղերը, որտեղ ընկած էին քարավաններից հետ մնացած հայերը: Լքված քարվանսարայներում նա տեսավ մեռածներ, կիսաքայքայված դիակների կույտեր և նրանց մեջ դեռևս կենդանի, վերջին շունչը փչող մարդիկ: Բակերում կային բազմաթիվ հիվանդներ և սովյալներ՝ ընկած անխնամ: Ռեալական դպրոցի մերձակայքի չորս քարվանսարայներից յուրաքանչյուրում 700-800 բռնագաղթված էր թափված: Նրանք սովամահ էին լինում: Բռնագաղթվածների քարավաններին, որոնք կազմված էին կանանցից ու երեխաներից, տեղից տեղ էին քշում, մինչև դրանք դառնային հյուծված մարդկային փոքրիկ խմբեր, որոնք անվերջ երթերում հալվեին, ոչնչանային: Միայն այդ դեպքում էր համարվում, որ նպատակն իրականացված էր: «Այն, ինչ մենք սեփական աչքով տեսանք Հալեպում,- շարունակում է Նիպագեն,- միայն վերջին տեսարանն էր հայերի բնաջնջման մեծ ողբերգության, չնչին մասն այն սարսափների, որոնք միաժամանակ կատարվում են Թուրքիայի մնացած նահանգներում... Բաղդադի երկաթուղու գերմանացի ինժեներներից ոմանք այնտեղից վերադառնալիս օրերով ոչինչ ուտել չէին կարողանում, այնքան սարսափելի բաներ էին տեսել»[12]:

Նրանք պատմել են, թե Թել Աբիադի ու Ռաս ուլ Այնի մերձակայքում երկաթուղային գծի լիցքերում զանգվածաբար թափված էին պատվազուրկ արված մերկ կանանց դիակներ:

Երբ Գոլցը գնում էր Բաղդադ և Ջերաբլուսում պետք է անցներ Եփրատը, այնտեղ կար բռնագաղթված հայերի ճամբար: Մինչև Գոլցի գալը այդ ճամբարի թշվառներին մտրակների հարվածներով, անգամ հիվանդներին ու մահամերձներին քշեցին մի քանի կիլոմետր հեռու: Գոլցը ճամբարը չտեսավ, իսկ որոշ ժամանակ անց, երբ Նիպագեն եղավ այդտեղ, տեսավ գետնին թափված դիակներ, հագուստի մնացորդներ, զանգեր ու ոսկորներ, դիակներ հոշոտող անգղեր: Ռու-

11 Մանդելշտամ Ա. Հայկական հարցը: Տե՛ս «Պայքար», 1973, մայիս-հունիս համարներ:
Мандельштам А. Отрывки из книги "Судьба Оттоманской Империи". В кн. "Русские источники о геноциде армян в Османской Империи 1915-1916гг.", Ер., 1995, стр. 79-87
12 R 14092, Ab 20411, նաև "Istoria", 1980, N 405.

սական "Южный край" թերթի թղթակիցը գրեց. «Համակենտրոնացման ճամբարներում սովամահության առօրեական դարձած վտանգը հայերին հասցրել է այնպիսի վիճակի, որ նրանք խելագարված հոշոտում էին իրենց ընկերների դիակները, ուտում մարդու միս»[13]:

Հետաքրքիր ժառանգականություն է՝ համակենտրոնացման ճամբարների միջոցով մարդկային զանգվածներին բնաջնջելը թուրքերն ընդօրինակեցին անգլիացիներից, իսկ գերմանացիները՝ թուրքերից: Նայիմը վկայում է. «Աղետներու, թշուառութեան, հիվանդութեան հետևանքով օրական 700-800 հայ կը մեռներ: Ասոնց դիակները ճամբաները ցեխի մեջ կը լցուին և գիշակեր թռչունները ծակ-ծակ ըրած էին զանոնք: Գերման և ավստրիացի ականատես սպաները այդ տեսարանները լուսանկարելով կը ղրկեին իրենց երկրները»[14]:

Բ. Դրան հանձնարարությամբ Մեսքենեի ճամբարներն այցելած բժիշկ Թորոսյանը գրում է, որ դրանցում կանայք ու աղջիկները գրեթե մերկ էին: Ամենուրեք հողաթմբեր էին, որոնց շուրջ հավաքվել էին շներ: Ոստիկանն ասաց, որ այդ թմբերը «դյավուրների դիակներ էին», քարավաններով տեղ հասած հայերի դիականոցներ: Բռնագաղթվածները մեռել էին ծարավից: Չնայած կացարանը Եփրատի ափին էր, սակայն հայերին արգելում էին ջուր խմել: Վիթխարի դաշտը հսկա գերեզմանոց էր: Կացարանում կար 5 000 մարդ՝ հիմնականում Մերսինից և Կիլիկիայի մյուս բնակավայրերից: Ժանդարմներն անգամ Թորոսյանի ներկայությամբ էին բռնաբարությամբ զբաղվում: «Երկու կանայք,- նոթագրում է նա,- տանում էին մի աղջկա դիակ: Նրանք հենց իմ կողքից անցան, լսվեց ողբի ձայն: Շուտ եկա: Մի արաբ խփում էր մեռածին: Նա դիակը նետեց ցած եւ, քաջալերված ժանդարմների հավանությունից , փորձեց հայ աղջիկներից մեկին իր հետ տանել: Աղջիկն ուշաթափ ընկավ մեռածի կողքին»: Ժանդարմները գիշերները զբաղվում էին կանանց ու աղջիկների որսով: Ամենուրեք ականատես լինելով հայերի սարսռազդու վիճակին և անկարող լինելով նրանց օգնել, Խ. Թորոսյանը փախչում է Կովկաս: Նրա նոթագրությունները հայությանը ոչնչացնելու սարսափելի միջոցների երկար շարքի նկարագրություններ են:

Միջագետքը դարձավ հայ ժողովրդի հոգեվարքի ավազանը: Ցաթաղանից մազապուրծ հայերը մեռնում էին Հալեպից Բաղդադ ընկած դաժան անապատում: Մննդի գրեթե բացակայություն, մշտական քամիներ, ճմռանը խիստ ցրտեր, իսկ ամռանը՝ անտանելի շոգ: Հայերը մեռնում էին, մեռնում ամեն օր, այն էլ ոչ թե մեկ-երկու հոգի, այլ ամբողջ խմբերով: Դեր Զորի և Մեսքենեի միջև ընկած տարածքներում գտնվող տարագրյալներից միայն քչերին, դեռևս լրիվ չհյուծվածներին էր հաջողել իրենց համար գետափին ստեղծել գետնափոր բներ: Ոմանք էլ փալասներից սարքել էին վրանների նման ծածկեր: Բոլորը սովյալ էին: «Նման էին քայլող կմախքների... Տպավորությունն այնպիսին է, որ կառավարությունը ձգտում է նրանց բոլորին սովամահ անել»,- կարդում ենք հայերին և սիրիացիներին օգնության Ամերիկայի կոմիտեի տեղեկանքում: Ժանդարմները թույլ չեն տալիս, որ հայերը կայարաններից հեռանան, հեռացողները կործանվում էին անապատում, դառնում գազանների կերակուր:

«Աբու-Հերերան փոքրիկ տեղանք է Եփրատի ափին Մեսքենեից հյուսիս և անապատի ամենավատ մասն է: Այստեղ բլուրի վրա տեղավորել են 240 հայի: Նրանք բառացիորեն մեռնում են քաղցից: Նրանք յոթ օր ոչինչ չեն կերել»: Ռաքքան Եփրատի ձախ ափին է. այստեղ բնակվում էր 5 000-6 000 հայ. ամեն տանը 50-60 մարդ: Եփրատի աջ ափին հազարավոր հայեր ժանդարմների հսկողության տակ էին և սպասում էին, թե երբ մահը իրենց համար տեղ կազատի ավելի հեռու գտնվող համակենտրոնացման ճամբարներում: Ռաքքայից հյուսիս Զիարեթում 1 800 հայ կար: Այնտեղ սովը համատարած էր: Նույն վիճակում էին Սաբզե գյուղում բնակվող հայերը[15]:

Ամերիկյան "Current History"-ի 1917թ. փետրվարի համարում գրված է. «Հազարավոր աքսորված հայեր կան Եփրատի հովտի՝ հյուսիսային Արաբիայի և Սիրիայի ճամբարներում: Մի ճանապարհորդ (ոչ ամերիկացի), այցելելով այս ճամբարները, գրել է զեկուցագիր այն մասին, ինչին ականատես է եղել և հանձնել ամերիկյան կոմիտեին: Հեղինակին թույլ էին տվել այցելել բոլոր ճամբարները»: Անհնար է նկարագրել այն սարսափելի տպավորությունները, գրում է նա, որ իմ ճանապարհորդության ընթացքում ստացա հայկական ճամբարներից, որոնք ցրված էին ամբողջ Եփրատով մեկ: Այս

13 "Армянский вестник", 1916, N 46.
14 Անտոնեան Ա., նշվ. աշխ., էջ 148:
15 Բարբի Ա., նշվ. աշխ., էջ 140-149:

դժբախտ ժողովրդին դաժանորեն դուրս էին քաշել իրենց հայրենի երկրից, ուժով պոկել իրենց տներից, ընտանիքներից և կողոպտել»: Եփրատի ճամբարներում միայն ծերունիներ, կանայք ու երեխաներ էին: Նրանք բերվել էին հազարներով, բայց շատերը մահացել էին: Մոտ 60 000 հայ թաղված էր այնտեղ: Կենդանի մնացել էր մոտ 4 500 հոգի, որոնք «կարծես ապրող ուրվականներ լինեին: Ես մի հինգ կամ վեց քառ. մետրանոց վրանում տեսա 450 երեխա, որոնք օրական ստանում էին 150 գրամ հաց: Դրանից առաջ նրանք երկու օր ոչինչ չէին կերել: «Մահն առատ հունձ էր կատարում այնտեղ»:

Որ բռնագաղթվածներն անապատում հանձնված էին մարդու և բնության քմահաճույքներին, ինչը գաղթականական ճամբարներին վերածեցին մահվան ճամբարների, վկայում է նաև նպաստամատույց հանձնաժողովի նախագահ Հ. Քյազիմը, որը 1916թ. մայիսի 30-ին Դամասկոսի գերմանական հյուպատոսին ասաց, թե պաշտոնից հրաժարվում է, որովհետև «այլևս գործել չի կարող, իր կարգադրությունները ոչ միայն չեն կատարվում, այլև իշխանությունները դրան հակազդում են... Կառավարությունն իր տրամադրության տակ չնչին միջոցներ է դրել, որոնցով անհնար է հոգալ հայերի ծով կարիքները... (չեմ հավատում), թե իշխանություններն իսկապես ձգտում են օգնել տարագրյալ հայերին... երկյուղում եմ, որ ուզում են նրանց ոչնչացնել»[16]:

Եվ ոչնչացնում էին: Ռ. Պինոնը ներկայացնում է. «Եթե ոմանք հասնում էին Միջագետք, այնտեղ մնում էին անապատային կամ ճահճոտ վայրերում, առանց օթևանի ու սննդի: Տոթը, խոնավությունը վերջնականապես կործանում էին դժբախտներին... Հայերի քարավանների վերջին մնացորդները մեռան տենդախտից և աղքատությունից»[17]:

Այդ ճամբարներում, գրում է Արմին Վեգները, հայերն «իրենց վերջն էին գտնում՝ քրդերի և ոստիկանների կողմից սպանված ու թալանված, գնդակահարված, կախաղան բարձրացված, թունավորված, խեղդամահ ու սրախողխող արված, ծարավից ու ցրտից կործանված, համաճարակներից հնձված, ջրերում խեղդված...»: «Մի քանի հարյուր հազար հայ,- պատմում է Ջ. Բրայսը,- ովքեր ապրել են բռնագաղթի սարսափները, ներկայումս մեռնում են Արաբական անապատում սովից և իրենց բաժին հասած դժբախտ ճակատագրից... Հիվանդները նետվում են գերեզմանափոսերը և գերեզմանափորներին աղաչում, որ իրենց թաղեն, կանայք խելագարվում են, ծնողները, որպեսզի փրկեն իրենց երեխաներին, նրանց խոտով են սնում, նրանց համար գերեզմաններ փորում...»[18]:

«Կոչնակ» թերթում տպագրվեց թուրք չեյխերի 1916թ. հունվարի 26-ի հետևյալ բողոքը. «Վերջին 20 օրերին հետևողական գազանային հարձակումներ են կատարվում հայերի վրա: 20 հազար հոգու լցրեցին անապատ: Ճիշտ է, այստեղ սննդամթերք կարելի է ճարել, սակայն դրանք այնքան թանկ ու անմատչելի են, որ դժբախտները մատնված են քաղցի: Անապատում գտնվող հայերից 3 000-ը սովից մեռավ: Եվ եթե ներկա վիճակը չարունակվի, դեռևս շատերն են մեռնելու: Այժմ արդեն 868 մարդ աներեւակայելի ողբերգական վիճակում է»:

Ահա և սովորական դարձած երևույթներից մեկը: Հայ որոշ երևելի ընտանիքներ, չկարողանալով կերակրել իրենց երեխաներին, հարկադրված էին նրանց 20-40 պիաստրայով (1ռ. 60 կոպ. -3ռ. 20 կոպ.) վաճառել արաբներին, իսկ ոմանք էլ հուսահատված նրանց գետը նետեցին: Քաղցից ամեն օր մեռնում էր մինչև 30 մարդ: Մեռածների դիակները մնում էին անթաղ, որի հետևանքով տեղական բնակչության շրջանում մեծ չափերի էին հասել համաճարակային հիվանդությունները: «Հայերն անընդհատ հարձակումների են ենթարկվում ոստիկանության բարեհաճությունը վայելող ավազակների կողմից»[19]:

Աքսորյալների մոտ 1/3-ը հասավ Սիրիա և Միջագետք՝ անապատ քչվելու և անլուր տանջանքներով մեռնելու: Կանխամտածված և հոռի մտադրությամբ դժբախտներին լքում էին, որպեսզի մեռնեին անօթևան ու քաղցած, իսկ եթե չմեռնեին, նրանց անպայման մեռցնելու էին: Տիֆը թուրք դահիճների հավատարիմ դաշնակիցն էր: Նույն իրավիճակը հաստատում է նաև Գիբբոնսը, որի կարծիքով անապատ հասավ բռնագաղթվածների ոչ թե 1/3-ը, այլ 1/4-ը:

16 Lepsius J., Raport, N 275.
17 Բինոն Ռ., նշվ. աշխ., էջ 29-30:
18 "Армянский вестник", 1916, N 45.
19 Ն. տ., N 41:

Ժողովուրդների մշտական դատարանի Փարիզի 1984թ. նիստում ներկայացվեցին հետևյալ փաստերը. Ջերաբլուսի և Դեր Էլ Զորի միջև կար 150 000-200 000 հայ, գրեթե միայն կանայք ու երեխաներ: Նրանք տկար էին հիմնականում զրկանքների ու վատ վերաբերմունքի պատճառով: Մեսքենեի շրջանում նույնպես կային հիվանդներ և հոգեվարքի մեջ գտնվողներ: Շատերը պառկում էին բարկ արևի տակ առանց որևէ պատսպարանքի: Կառավարության կողմից տրվող սնունդն ավելի քան անբավարար էր: Մարդիկ ագահորեն մորեխներ էին ուտում, եփած կամ հում խոտի արմատներ, նույնիսկ թափառական շներ ու սատկած անասուններ[20]:

1916թ. ապրիլի 22-ին մի գերմանացու կողմից տեղում անցկացրած ուսումնասիրություններով հաստատվեց, որ մեկ ամիս շարունակ, ամեն օր կամ համարյա ամեն օր 300-500 աքսորականների հեռացրել են ճամբարից և ոչնչացրել Ռաս ուլ Այնից մի քանի տասնյակ կիլոմետրերի վրա: Դիակները նետել են Ջիրջիբ էլ Համար գետը: Մի սպա Ռաս ուլ Այնի կայմակամից բացատրություն է պահանջել այդ սարսափելի արարքների համար: Վերջինս անկեղծորեն պատասխանել է. «Ես ենթարկվում եմ հրամաններին»[21]:

Ապրիլի ջարդերից փրկված 2000 հայ ոչնչացվեց Դեր Էլ Զոր տանող ճանապարհի վրա[22]:

Որպես կանոն աքսորյալներն այնքան ժամանակ իրավունք ունեին մնալու համակենտրոնացման ճամբարներում, որքան դրամ ունեին: Հենց որ դրամական միջոցները սպառվում էին, նրանց ավելի հեռու էին քշում, դեպի ամայի վայրեր, որտեղ դատապարտվում էին սովամահության: 1916թ. մայիսի 4-ին, Մոսուլի գերմանական հյուպատոսությունը տեղեկացրեց, որ «թուրքական հատուկ հանձնաժողովները» առանց խղճի խայթի, առանց աքսորականներին հանգստի հնարավորություն տալու, անդադար մի վայրից մյուսն էին քշում[23]:

1916թ. ամռան վերջին Եփրատի երկայնքով տեղավորված ճամբարները մեծ մասամբ «դատարկված էին»[24]:

Նույն տարվա հուլիսին գերմանական կայսերական մի բարձրաստիճան պաշտոնյա թուրք զինվորական դեղագործից և փոխգնդապետից Մեսքենեում տեղեկանում է, որ «միայն Մեսքենե քաղաքում 55 000 հայ էր թաղված»[25]:

Ամենուրեք Սուլթանիեում, Կոնիայի վիլայեթի առողջության համար վնասակար անապատում, Հալեպի, Համի, Հոմսի և Դամասկոսի շրջաններում, թե ավելի խոշոր հավաքակայանում՝ Դեր Էլ Զորում, հայերը շարունակ ենթարկվում էին այնպիսի վերաբերմունքի, ինչը նվազագույն իսկ կասկած չէր թողնում, որ իշխանությունները ձգտում էին կործանել նրանց: «Հայերը մահանում էին անհամար քանակությամբ, իսկ կառավարությունը ոչ միայն չէր օգնում այդ դժբախտներին, այլև խոչընդոտում էր արտասահմանի օգնությանը»:Հայերը ենթարկվեցին ահավոր դաժանությունների՝ անողոք գանահարության, հանված աչքեր, պոկված եղունգներ ու մազեր, սղոցված կամ կտրված քթեր, ձեռքեր, ոտքեր և մարմնի այլ մասեր, շիկացած երկաթով դաղել, առաստաղից կախել: Ֆ. Վերֆելը ցիտում է թուրք սպայի խոսքերը՝ գաղթականներն «արդեն մարդիկ չեն, այլ ուրվականներ... մարդանման կապիկների ուրվականներ, որոնք վախճանվում էին հեռևողականորեն: Ուտում էին խոտ, ոռնում քաղցից: Կանայք իմ ձիու գոմաղբի մեջ վարսակի չմարսված հատիկներ էին փնտրում»: Մահացությունն օրական անցնում էր 10 000-ից: «Դրանք մազաչափ իսկ տարբերվո՞ւմ էին հիտլերյան մահվան ճամբարներից»: Համակենտրոնացման ճամբարից դուրս մնացած հայը սպանվում էր տեղնուտեղը: Գնդակահարություն էր սպառնում նաև այդպիսիներին օթևան տվողին:

Ամերիկացիներից մեկը պատմել է. «Մի քանի անգամ այցելեցի տարագիրների կայանը և տեսնվեցի այդ դժբախտների հետ: Բոլորը, առանց բացառության, ցնցոտիների մեջ էին, կեղտոտ, սովահար ու հիվանդ: Եվ սա զարմանալի չէ, նկատի ունենալով, որ քայլել էին մոտ երկու ամսից ավելի, առանց կարողանալու հագուստ փոխել, առանց լվացվելու և պատսպարվելու թույլտվության և ուտելիքի չնչին պաշարով: Երբ կայանով անցնում էինք, մայրերն իրենց երեխաներին առաջարկում էին մեզ և խնդրում

20 Le Crime Silence de Genocide des Armeniens, p. 129.
21 Lepsius J., նշվ. աշխ., N260, էջ 256.
22 Ն.տ., N287, 15 281:
23 Le Crime Silence..., p. 132.
24 Ն. տ., էջ 133 :
25 Lepsius J., նշվ. աշխ., N290, էջ 284:

վերցնել: Իրականում թուրքերն այս տղաներից ու աղջիկներից իրենց հավանածները տարել էին՝ նրանց վերապահելով ստրուկի կամ ավելի վատթար ճակատագիր: Թուրքերը նույնիսկ իրենց բժիշկներն էին բերել փոքր աղջիկներին քննելու և այդպիսով լավագույններին հափշտակելու»[26]:

Գաղթականների մեջ շատ քիչ տղամարդիկ կային, որովհետև նրանց մեծ մասը ճանապարհին կոտորվել էր: Շատերը մեռել էին քաղցից ու հիվանդություններից և ճամբարում էլ ամեն օր մեռնում էին: Քարավանները որոշ ճամբարներում մեկ-երկու օր մնալուց հետո հարկադրված էին ճանապարհը շարունակել անհայտ ուղղությամբ: Ճամբար հասածները մեկնարկի դժբախտների շատ փոքր մասն էին կազմում[27]:

Նորից դիմենք Արմին Վեգների օգնությանը. «Թուրքական զափթիեների և զինվորների հսկողության տակ, տարագիրների խառնամբոխ քարավանները Հալեպից գնում էին դեպի հարավ: Հուսահատությունը դրոշմված էր նրանց դեմքերին... Երբ քարավանն արդեն անցել էր և փոշու ամպը ցրվել, երևում էին ճանապարհի եզերքին թավալվող երեխաներ, որոնց ծնողներն էին այնտեղ թողել՝ օրեր շարունակ քայլելուց ու ուժասպառ լինելուց հետո այլևս շալակելու անկարող դարձած և հուսալով, որ գուցե գութ ունեցող թուրք մայրերը հոգան իրենց երեխաների մասին... Հալեպի մոտ բծավոր տիֆից զոհված հարյուրավոր տղամարդիկ, կանայք ու երեխաներ ծածկում էին առևտրական այդ մեծ ոստանի շուրջբոլորը: Անապատի մուտքին, ջրառատ Ռաս ուլ Այնում, արշալույսին տեսա հայ տարագիրների մի մեծ քարավան, որ հիշողությանս մեջ մնացել է որպես ինձ երբևիցե հանդիպած ամենատխուր և թշվառ տեսարանը... Ճանապարհի եզերքին նստած էին 7-10 տարեկան երեխաներ. նրանք կորցրել էին ծնողներին, որոնք քրդերի կողմից սպանվել կամ ուժասպառությունից մահացել էին: Անապատի գիշերային ցրտից սառած ու դողդողուն, նրանք կողք կողքի կծկված բարձրաձայն լալիս էին ու ողբում»: Տիգրիսի ափին «մի խումբ աղջիկներ ու կանայք հավաքվեցին գետեզերքի բարձրադիր մի ցցված քի վրա... իրար կապած սկսեցին երգելով օրորվել և զոհաբերության արքեցումից խելահեղ միասին գետը նետվեցին...»: Մեկ տարի անց Հալեպից Պոլիս վերադառնալիս «տասնյակ հազարավոր տարագիրներից, որոնց տեսել էի ճամբարներում խռնված, միայն մի քանի հարյուրն էին մնացել: Անապատում դիակներ ու դիակներ էին: Երբ գիշերելու համար կանգ էինք առնում իջևանատների առաջ, ստիպված էինք նախ մուտքերին ընկած տարագիրների չորացած կմախքները հեռացնել»[28]:

Անրի Բարբին նույնպես անձամբ եղել էր Միջագետքում, սեփական աչքերով տեսել բռնագաղթված հայերի գողգոթան և այդ մասին պատմել աշխարհին: Սարսռեցնող են անգամ վերնագրերը, որոնք կրում են նրա պատմությունները՝ «Բռնագաղթվածների հոգեվարքը Միջագետքում», «Կոտանքների ու մահվան կայաններ»: Ահա մի քանի պատկերներ նրա պատմածներից: Հեռավոր Եփրատի արևախանձ ափերի երկայնքով, կրակի նման շոգ Միջագետքի և Բաղդեթ էլ Շամամի միջև, Սիրիայի մերկ անապատում, անիծյալ վայրերում, որ ինքնին դժոխք է, բռնագաղթվածների կացարաններն են, այսինքն՝ նրանց, ովքեր փրկվել էին սպանդից: Սկսած Հալեպից մինչև Բաղդադ ընկած այդ ճամբարներում հայերը մեռնում էին[29]:

Տանելով սարսափազդու տանջանքներ, առանց ծածկի, առանց բավարար սննդի, մշտական քամիներից, ձմռան մահաբեր ցրտից և ամռան անտանելի ահավոր շոգից նրանք ամեն օր կործանվում էին: Կոնիայի հայերն առաջին իսկ օրից ենթարկվեցին դաժանագույն բռնություններ: Զեթենները ... զավթեցին 300 կին ու աղջիկ ստրկության վաճառելու համար: Մեսքենեում գաղթվածները «մի կերպ ծածկվում էին քրջերով»[30]: «Մի աղջիկ ինձ ֆրանսերեն ասաց, որ քաղցից մեռնում է... ապա օրորվեց և ընկավ»[31]: «Նա մեռավ... Ուսուցչուհին ևս քաղցից մեռավ»,- լսվեց տանջահար մի ձայն: Այդ ընթացքում շուրջս հավաքվեցին հազարավոր դժբախտներ, հյուծված, ներս ընկած այտերով, ուռած կամ անսովոր փայլող աչքերով, իսկ նրանցից այն կողմ գա-

26 «Ցուշամատեան Մեծ եղեռնի», էջ 1038:
27 Toynbee A., նշվ. աշխ., էջ 62-65:
28 «Նորք» (շբթ), մարտ, 1965թ.:
29 Բարբի Ա., նշվ. աշխ., էջ 87:
30 Ն. տ., էջ 89:
31 Ն. տ., էջ 97:

լիս էին ուրիշները, ով ուժ ուներ, վազում էր և հուսահատ աղմուկով շրջապատեցին ինձ. «Հաց... Հաց... Դեղորայք»,- շարունակում է իր պատմությունը Ա. Բարբին,- ժանդարմները նետվում են ամբոխի վրա և աջ ու ձախ խփում ինչով պատահեր...[32]

Գիշերվա կեսին ինձ արթնացրեց հուսահատ ճիչը... կացարանում որսում էին երիտասարդ հայուհիների: Անասունները դժբախտներին բռնաբարում էին և դաժանորեն ծեծում այն հայերին, ովքեր փորձում էին պաշտպանել կանանց»[33]:

Աշխարհագրական նկատառումներով Սիրիայի և Միջագետքի սահմանի վրա հավաքում էին աքսորյալների քարավանները, ապա բաժանում անապատով մեկ: Մեսքենեի անծայրածիր հարթավայրից տպավորությունը չարագույժ էր: Որքան աչքդ կտրում էր, տեսնում էիր դիակների թմբեր: Դրանցից յուրաքանչյուրի տակ խառնիխուռն թաղված էր 200-300 դիակ, բոլորը կանանց, երեխաների ու ծերերի: 4 000-5 000 հայ բնակեցվել էր Եփրատի և Մեսքենեի արվարձանի միջև և նրանք բոլորը ստվերներ էին: Երբեմն այդ դժբախտները քաղցած էին մնում 3-4 օր: Համե գյուղում ապրում էր 1 600 գաղթական: Նրանց ճնշող մեծամասնությունը քնում էր բացօթյա, մերկ գետնին, առանց որևէ ծածկի և սնվում էր ձմերուկով: Մահացությունը շատ մեծ էր, մանավանդ երեխաների:

Մարդու տանջանքների ահարկու տեսարանները հաջորդում էին միմյանց և ձևավորում այն մահաբեր միջավայրը, որին քրիստոնեության տեսարանները դեռ հին դարերում կնքել էին Դժոխք անունով:

1916թ. աշնանը մի օտարերկրացի, լինելով բռնագաղթվածների ճամբարներում, գրում է. «Ինձ համար անհնար է հաղորդել այն սարսափելի տպավորությունը, որ մեջս մնացել է հայերի, հատկապես Եփրատից արևելք՝ Մեսքենեի և Դեր էլ Զորի միջև ընկած կացարաններն այցելելուց հետո»: Դրանք կացարաններ անվանելն անհնար է: Այնտեղ աքսորյալները մեծամասամբ մերկ, գրեթե առանց սննդի, անասունների նման հավաքվել են միատեղ ու ապրում են բաց երկնքի տակ անապատի անչափ դաժան կլիմայի՝ արևակեզ ամռան և ցրտաշունչ ձմռան ահավոր պայմաններում: «Համակենտրոնացման ճամբարների շուրջը հեռվում շրջում էին հեծյալ ժանդարմներ... փախստականները շրջապատվում էին սոված շների ոհմակներով, որոնք սպասում էին, որ դժբախտներից որևէ մեկը փչի վերջին շունչը»: Թուրքիայում բնակվող մի գերմանացի՝ Էռնստ Քրիստոֆերը, 1917թվի մարտի 26-ին գրեց. «Տարակույս չկա, որ այն ամենը, ինչ գործադրվում է հայ ժողովրդի հանդեպ... մեծագույն ոճրագործություն է համաշխարհային պատմության մեջ»[34]:

"Армянский вестник"-ը իր 1916թ. N94-ում գրեց. «Կոնիայից ու Անկարայից բոլոր հայերը բռնագաղթվել են: Բաղդադի երկաթուղու երկու կողմերի տարածքները լեփ-լեցուն են այդ դժբախտներով: Նրանց խումբ-խումբ ուղարկում են Տարսոն-Հալեպ անապատ քշելու համար: Սիրիա բռնագաղթվածներն անասելի ծանր վիճակում են: Անհրաժեշտ է օգնություն հասցնել գոնե դեռ կենդանի եղողներին փրկելու համար»:

Լեսլի Դևիսը նկատում է. «Ամենքը գիտեին, որ վերջնական նպատակը բոլորին տանջամահ անելն էր: Եթե որևէ մեկը դեռ կասկածում էր, ապա Կարինից ու Երզնկայից հասնող հազարավոր տարագիրներից կազմված քարավանները տեսնելով, հասկանում էր ամեն ինչ: Ես մի քանի անգամ մտել եմ վրանները, շատերի հետ զրուցել: Այդ թշվառ տեսարանն անհնար է պատկերացնել: Բոլորը, առանց բացառության, ցնցոտիների մեջ են, սովալլուկ, կեղտոտ ու հիվանդ»[35]:

Միանգամայն, վստահելի ականատեսների կողմից հյուպատոսություններ ուղարկված զեկուցագրերի պարունակած փաստերը գերազանցում են մարդկության պատմության մեջ երբևիցե հղացած ու իրագործված ամենագազանային, սադայելական բռնությունները:

1916-ին Սիրիայի և Պաղեստինի ամենախուլ շրջաններում Ջեմալ փաշայի հրամանով կազմակերպվեցին աշխատանքային ճամբարներ: Այդ ճամբարները նույնպես բացօթյա էին: Հայերը զբաղ-

32 Բարբի Ա., նշվ. աշխ., էջ 91:
33 Ն. տ., էջ 93:
34 Lepsius J. Deutschland und Armeniens, s. 355.
35 Համլին Ա., նշվ. աշխ., էջ 41:

ված էին հարկադիր աշխատանքով և յուրաքանչյուրը ստանում էր չորս սու: Միշտ չէ, որ խմելու ջուր էին բերում, միաժամանակ արգելում էին օգտվել երկաթուղու տարողություններում եղած ջրից: Մի քանի շաբաթվա ընթացքում ճամբարանակների կեսը մեռավ, կենդանի մնացած ընտանիքների անդամներին միմյանցից առանձնացրին: Իսկ Ջեմալը հպարտանում էր, թե ինքը հայկական գաղութներ է ստեղծել ամոլ հողերի վրա: Նա խստիվ արգելում էր օտարերկրացիների մուտքը ճամբարներ, որոնց մերձակայքում կանանց շուկաներ էին: Մի կնոջ գինը տատանվում էր 8-23 ֆրանկի միջև:

Նաև ստեղծվում են բանվորական գումարտակներ կազմված տղամարդկանցից ու երեխաներից: Նրանց ուղարկում էին անմարդաբնակ վայրեր, որտեղ ոչ ջուր կար, ոչ սնունդ: Հսկող ժանդարմներին իրավունք էր տրված կրակել ամենաչնչին առիթով: Մի քանի օրից այդ ժանդարմները վերադառնում էին միայնակ...[36]

Թուրք պատմաբան Բայուրը գրում է. «Ժողովուրդը զանգվածներով տեղափոխվեց Հալեպի ու Դիարբեքիրի կողմերը: Նրանք ուղարկվեցին քարավաններով, ժանդարմերիայի ուղեկցությամբ»[37]:

Անապատում բռնագաղթվածը պարտադրված էր իր համար սնունդ հայթայթել, ինչը հավասարազոր էր սովամահության: Շուրջ 500 հազ. հայ Միջագետքում մատնված էր ապրելու համար բոլոր հնարավորություններից զուրկ վիճակի[38]:

"Армянский вестник"-ը 1916թ. փետրվարին տպագրեց «Մի ազգի բնաջնջումը» հոդվածը նվիրված Ա. Թոյնբիի համանուն գրքին (The Murder of a Nation), որը որպես հավելված ունի Բրայսի ճառը լորդերի պալատում և հայերի բռնագաղթի քարտեզը: Առաջաբանում նշված է, թե գրքում օգտագործված փաստերը կասկածից վեր են: Նրանում տեղ են գտել միսիոներների պատմածները, հյուպատոսների զեկուցագրեր, բազմաթիվ մասնավոր նամակներ՝ տպագրված Թուրքիային դաշնակից և չեզոք երկրների մամուլում, վկայություններ: Գիրքը վիթխարի տպաքանակով իրացվեց Անգլիայում և Ամերիկայում: Թոյնբին գրում է, որ հայերին բնակեցնելու համար Թուրքական կառավարության կողմից ընտրվել էր երկու վայր՝ Սուլթանիե գյուղը Կոնիայի վիլայեթում, Անատոլիայի կենտրոնում և անապատային մի վայր, որտեղ նույնիսկ թուրք քոչվորները հազիվ էին կարողանում իրենց գոյությունը պահպանել: Այնտեղ նետվեցին հազարավոր հայ կանայք ու երեխաներ, նրանց մեջ միայն 50 չափահաս տղամարդ կար: Հիմնադրելով «Հողագործական այդ գաղութը, թուրքական կառավարությունը հանգստացավ և իրեն նեղություն չտվեց այլևս հոգ տանել գաղութաբնակների մասին: Հայերի մեծ մասը կենտրոնացվեց Հալեպի վիլայեթում, ճահճապատ տարածքներում և այդ ճահիճները բաժանվեցին առաջին գաղթականների միջև: Ումը ճահիճներում տեղ չգտնվեց, ուղարկվեց Դեր էլ Զոր, Եփրատի հոսանքով վար հաջորդ սանջակի գլխավոր քաղաքը, իր կլիմայական պայմաններով այնքան սարսափելի, որի համեմատությամբ նույնիսկ Հալեպի ճահիճներն էին հրապուրիչ: Եվ իսկապես, շատ ժամանակ չպահանջվեց, որ բռնագաղթված հայերը Հալեպը համարեին իրենց բնակության համար լավագույն վայրը: «Տեղ հասնող գաղթականներին,- գրում է Ջ. Ջեքսոնը,- հիմնականում հավաքում էին Կարլուխում՝ մի փոքր գյուղաքաղաքի հյուսիսում կամ ճամբարում... Երկրորդ ճամբարի հայերի մի մասին իշխանությունները վրաններ էին տրամադրել (2000-3000 հոգուց 500-ին), մյուսները կիզիչ արևի, իսկ ապա անձրևի ու ձյան տակ էին... զոհերի թիվն ամեն օր ավելանում էր»: Հոֆմանը 18. 10.1915թ. գրում է Կ. Պոլսի գերմանական դեսպանատանը. «Երեկ հրաման եղավ 14 օրում Հալեպը մաքրել ասկյարներից՝ 20 000 մարդ... Համակենտրոնացման ճամբարները քաղաքից դուրս են: Տարսուսից հարավ երկաթուղին այլևս չի օգտագործվում աքսորի համար: Սեփական քաշող ուժ չունեցող ընտանիքները տեղափոխվելու էին հետիոտն... Կատմայի և Ռաջուի տակ կենտրոնացվել է 40 000 տարագիր... Հարավում (Ռաքքա, Դեր Զոր, Արևմտյան Հաուրան) «բնակվելու» համար ուղարկվել է 300 հազար հոգի, որոնք թողնվելու են բախտի քմահաճույքին և «բոլորը մեռնելու են», քանի որ բնակեցման համար ոչ մի հնարավորություն չկա, համակենտրոնացման ճամբարների համար չի ստացվել ոչ վրան, ոչ

36 Բեյլերյան Ա., նշվ. աշխ., փաստ N298:
37 Bayur H. Turk Inkilabi Tarihi. Cilt III, 1914-18, Kizim III, Ankara, 1957, s. 6.
38 Լեփսիուս Յո. Տեղեկագիր, էջ 100:

բավարար քանակի այուր, ոչ վառելիք. աքսորված գյուղացիներից իշխանությունները բռնագրավել են անգամ բահերը: Համընդհանուր կարծիք է՝ առանց բացառության, բոլոր աքսորյալները մահվան են դատապարտված»[39]:

Հալիլի շտաբից մի գնդապետ հայտարարել է Մոսուլում Գերմանիայի փոխհյուպատոս Հոլշտայնին. «Մոսուլում նույնպես պետք է հայերը ոչնչացվեն և ինքը մտադիր է այդ անել: Նա այդ կանի առանց ուշադրություն դարձնելու անգամ ինձ վրա»[40]:

«Արև» թերթը (Ալեքսանդրիա) 1916թ. օգոստոսի 21-ի և 25-ի համարներում գրում է, թե հայերի տարագրության վայրերը բաժանվում էին երկու մասի. առաջին՝ Արևմտյան Հայաստանից տարագրվածները հասցվում էին Բաղդադի երկաթուղու երկայնքով՝ Ռաղչու, Քաթմա, Զաջուր, Ֆերաբլիս, Հուիլմեն, Նիզիբ, Բերեջիկ, Զրուջ, Թելաբիադ, Արաբ-Բունար, Հարրուն, Ռաս ուլ Այն, Մոսուլ: Այս շրջանները հասել է 150 հազ. տարագիր: Սա հյուսիսային գոտին էր: Երկրորդը՝ Հարավային գոտին՝ Եփրատի ափերն էին՝ Ջիրաբել, Բաբ, Բումբուջ, Ռաքքա, Դեր Զոր, Մեջալին, Անախ, Հիտ և Ռամադի: Հիմնականում այստեղ բերվեցին կիլիկիացիները՝ 180 000- 200 000 մարդ: Բացի այդ, տարագիր հայերին թողեցին երկաթգծի Հալեպ-Դամասկոս հատվածում և Սիրիական անապատում՝ Հալեպ՝ մոտ 30 000, Համա, Հոմս, Դամասկոս և անապատ՝ մոտ 20000 մարդ: 1916թ. սկզբին բռնազաղթված հայերից 400000 հոգին դեռևս ողջ էր: Թուրքերն ամենադաժանը վերաբերվում էին Արևմտյան Հայաստանի հայությանը, համեմատաբար մեղմ էր կիլիկիահայերի հանդեպ: Կիլիկիացիներից 20 000 տղամարդու կենդանի թողեցին: Վերաբերմունքի այս տարբերությունը շարունակվեց նաև տարագրության վայրերում: Հյուսիսային գոտում կանայք ու երեխաները զրկված էին իրենց ազգական տղամարդկանցից, նրանք խստագույն հսկողության տակ էին և տրված չինովնիկների կամայականություններին, փակված քարվանսարաներում, որտեղ վարակիչ հիվանդությունները դարձել էին քրոնիկ. տարագիրները մշտապես բաց երկնքի, հասարակածային այրող արևի տակ էին՝ հարկադրված քաղցը հագեցնելով բույսերով, որովհետև նրանց ոչ սնունդ էին տալիս, ոչ մթերք, բուժօգնությունն իսպառ բացակայում էր, տարագիրներին արգելում էին կառուցել տնակներ, զբաղվել արհեստագործությամբ:

Հարավային գոտու հայերի վիճակը համեմատաբար տանելի էր, վարչական վերահսկողությունը գնալով մեղմանում էր, տրամադրում էին այուրի ինչ-որ չափաբաժին, աշնան ամիսներին հաջողվեց զանգվածային մահացությունների առաջն առնել: Սկսեց օգնություն ստացվել դրսից: Թույլատրվեց զբաղվել առևտրով ու արհեստով, տուն կառուցել: Տարագիրները հիմնադրեցին առևտրական ընկերություններ, զբաղվում էին անտառափայտի մատակարարմամբ: Ռաքքայում նրանք հաց էին մատակարարում անգամ զինվորական հիմնարկներին, հայի աշխատունակությունը նրան ցանկալի դարձրեցին տնտեսական կյանքում, շուտով Եփրատի երկու ափերին երևացին նոր գյուղեր, մեծաթիվ չինություններ, արհեստանոցներ և առևտրի օջախներ: Դեր Զորի կառավարիչը հպարտությամբ էր խոսում «իր հայերի» մասին: «Արևը» հայերի երկու հատվածների վիճակների այս տարբերությունների պատճառը համարում է այն, որ Կ. Պոլիսը ձգտում էր Արևմտյան Հայաստանի հայ բնակչությանն ամբողջությամբ ոչնչացնել, իսկ դրա սահմաններից դուրս բնակված, այդ թվում նաև՝ Կիլիկիայի հայերին ցրել Միջագետքում տնտեսական կյանքը զարգացնելու համար: Սակայն «Արևը» ճշմարտության առաջ մեղք է գործում, երբ գրում է. «Տարագրման վայրերի արաբ բնակչությունը ոչ մի չափով թշնամաբար տրամադրված չէր հայերի հանդեպ, իսկ որոշ տեղերում (որտեղ թուրքերի հանդեպ ատելությունը մեծ էր) հայերին վերաբերվում էին բարեկամաբար»: Մեղք է գործում, որովհետև զգալի թվով արաբներ, մասնավորապես բեդվիններ, տարագրության վայրերում հայերին ոչնչացնող հիմնական տարրերից էին, գուցե այդ գործում շատ ավելի եռանդուն էին գործում, քան անգամ թուրքերը՝ անապատում թուրք քաղաքացիական բնակչություն գրեթե չկար: Հավանաբար, «Արևը» որոշակի կողմնակալություն էր դրսևորել՝ պատահական չէր, որ նշված հոդվածը համարվեց ամերիկացիների ձեռքի գործը, դրա դեմ հանդես եկան նաև Դեր Զոր տարագրված հայերը: Պաուլ Ռորբախը 15. 08. 1916թ. հայտնում է. «Ես այսօր հաղորդեցի, որ դուրս եմ գալիս Գերմանո-թուրքական ընկերությունից, որի համար հիմք են ծառայել Նիպագեի նամակները, որոնցում ներկայացված են հայերի հանդեպ թուրքերի վայրագությունների համայնապատկերը: Քանի դեռ թուրքերը չեն զղջացել, գերմանացու անունը խայտառակված կլինի ամբողջ աշխարհում»: Նամակն ավարտվում է հետևյալ խոսքերով. «Ես իմ ամբողջ ուժերով հանդես եմ գալու հանուն դրա (որ գերմանացիներն ընդունեն իրենց մեծ սխալը), և եթե գա օրը, երբ տեսնեմ, որ դրան հասնելն անհնար է, այն ժամ ես կհանգեմ ամենաճիշտ եզրակացության՝ կդադարեմ լինել գերմանացի այս խոսքի քաղաքական իմաստով»[41]:

***

«Տեղահանությունը, փաստորեն, բնաջնջման քողարկված ձևն էր: Մեկնակետում սպանվում էին ամենադիմացկունները... Ծառերն ու հեռագրայուները կքվել էին կախված մարմինների ծանրության տակ, գետերը քշում էին խեղանդամված դիակները, որոնք հետո դուրս էին նետվում գետափերի ամբողջ երկարությամբ: Արևելյան յոթ նահանգների 1.2 միլիոն հայությունից շուրջ 300 հազարին հաջողվեց անցնել Կովկաս... մյուսները սպանվեցին իրենց բնակավայրերում կամ տարագրվեցին, շուրջ 200 հազար կին ու երեխա հափշտակվեցին: Այս նահանգներից ավելի քան 50 000 վերապրողներ հասան Հալեպ, տարագրության քարավանների ժամադրավայրը: Նույն 1915 թվի հուլիսի վերջին կառավարությունը ձեռնարկում է Կենտրոնական Անատոլիայի և Կիլիկիայի հայության տարագրումը: Ռազմաճակատից հեռու գտնվող այս գոտիներում, որտեղ հայության գոյությունը թուրք բանակի համար որևէ վտանգ չէր կարող ներկայացնել, տեղահանված քարավանները դեպի հարավ էին ուղարկվում և բնաջնջվում ճանապարհներին: Հալեպ հասնելուց հետո տարագրվողներն ավելի հարավ էին քշվում՝ Սիրիայի կամ հարավարևելք՝ Միջագետքի անապատները: Սիրիայի համակենտրոնացման ճամբարները ստեղծվում էին Համայում և Հոմսում, նաև Դամասկոսի մոտ: Այստեղ տեղավորված էր շուրջ 120 հազար տարագրված, որոնց մեծ մասը պատերազմի ավարտից հետո 1919թ. հայրենադարձվեց Կիլիկիա, իսկ Եփրատի երկարությամբ, ընդհակառակը, հայերը քշվում էին դեպի Դեր Զոր, շուրջ 200 հազարը տեղ հասավ: 1916-ի մարտին Պոլսից հրաման է ստացվում ոչնչացնելու Եփրատի ափերին և երկաթգծի երկարությամբ տեղավորված ճամբարների վերջին վերապրողներին»[42]:

1915թ. աշնանն ու ձմռանը ոչնչացվեցին Միջագետք, իսկ 1916թ. գարնանը՝ Սիրիա բռնազաղթվածները՝ մոտ 500 հազար մարդ:

Լեփսիուսը 1916 թվի համար գլխավորը համարում էր. «Համակենտրոնացման ճամբարների հայտնաբերելը և տեղում սովյալներին հագուստով, հացով կամ փողով օգնելը», որը նա գտնում էր գործնականում անհնար, քանի որ «կառավարությունը բոլոր միջոցներով ջանում էր խանգարել»: Գերմանացի գթության քույրերին արգելված էր քաղաքներից դուրս գալ: Աքսորվածների և սովի մատնվածների մեջ կային գերմանական դպրոցներում և որբանոցներում դաստիարակված բազմաթիվ գերմանախոս երեխաներ: Գերմանական հիմնարկների և դպրոցների հայ ուսուցիչներն ու օժանդակ անձնակազմը, գերմանական հիվանդանոցներում աշխատող հայ բժիշկները, դեղագործները, բուժքույրերը «անխտիր աքսորվում էին, նետվում բանտերը, գնդակահարվում, կախաղան հանվում և ամենաքիչը՝ բռնի իսլամացվում»[43]:

Որբանոցներն արագ դատարկվեցին: «Երեխաներին ուղարկում էին երկրի խորքերը՝ Դամասկոս, Կոնիա, Իզմիր և այլ տեղեր: Նրանց հանձնում էին մահմեդական «կառավարական որբանոցներին», որտեղ հայ երեխաները ստանում էին մահմեդական անուններ և դաստիարակվում էին մահմեդական հավատքով»: Որբերին օգնելու առաջարկներին Բ. Դուռը պատասխանում էր. «Թուրքական կառավարությունը ոչ մի դեպքում չի կարող թույլ տալ որևէ օտար օգնություն...»: Նույն խնդրանքին Ջեմալ փաշան պատասխանեց, որ ինքն «անձամբ կուզենար թեթևացնել հայերի ճակատագիրը, սակայն Կ. Պոլսից խստագույն կարգադրություն է ստացել՝ թույլ չտալ գերմանացիների և ամերիկացիների կողմից հայերին օժանդակելու որևէ ձեռնարկ, քանզի... հայերի ապստամբությունը թուրքական կառավարության դեմ միայն այն դեպքում է հնարավոր ճնշել, եթե նրանց հասկացնենք, որ ոչ մի պաշտպանություն չեն կարող սպասել արտասահմանյան որևէ կառավարությունից (29-ը մարտի, 1916)»:

39 DR/RA-AA/ Կ. Պոլսի դեսպանատուն 171, փաստաթուղթ 185:
40 Նույն տեղում, փաստաթուղթ 190:

41 PA-AA/ R14093.
42 «Արմենիա», 19.10. 1985:
43 ԲԵՀ, 1990, թիվ 3:

Մի հետաքրքիր տեղեկատվություն կա. Բ. Ռոների որբանոցի 720 երեխաներից մեկը Եգիպտոսից էր, 40-ի ծննդավայրն անհայտ էր, իսկ մյուսները Սեբաստիայի (142 հոգի), Էրզրումի (50), Հալեպի (189), Ադանայի (162), Անկարայի (21), Խարբերդի (43), Կոնիայի (11), Բրուսայի (22), Դիարբեքիրի (50), Կ. Պոլսի (3), Ադիամանի (3), Զմյուռնիայի (1), Իզմիդի (2) վիլայեթներից էին:

Որբերի հայրերից՝

Սպանված էր 152

Խոշտանգումներից մեռած 85

Սպանված Ադանայում 32

Զորակոչված բանակ 107

Աքսորված 52

Բանտում էր 11

Կենդանի էր 80

Ամերիկայում էր 10

Մեռել էր մինչև տարագրությունը 129

Անհետ կորած էր 62

Որբերի մայրերից՝

Մեռել էին աքսորում 282

Աքսորում էին 91

Իսլամացել էին 4

Կենդանի էին 97

Մեռել էին մինչև աքսորը 53

Անհայտ կորած էին 193

Որբերից առաքելական եկեղեցուն պատկանողներ 554

Բողոքականներ 106

Կաթոլիկներ 2

Սաբբաթեխստներ 1

Չի պարզվել 39

Ոչ բնական մահով մեռած հայրեր՝ 321, մայրեր՝ 379

Բնական մահով մեռած հայրեր՝ 129, մայրեր՝ 53

Հայրը վտանգի մեջ էր՝ 170, մայրը՝ 91

Զինծառայության մեջ էր՝ 107

Բռնագաղթի ժամանակ կորածներ՝ 394 մայրեր - 474

Տարագրվել է, երբ ամուսինը ծառայում էր բանակում՝ 246

Երեխաների այն ազգականները, ովքեր զոհվել էին տարագրության ժամանակ 2616 (3336-ից)

Բռնագաղթի ժամանակ զոհված ազգականներ՝ 335

1-6 տարեկան երեխաներ, ովքեր վկայություն տալ չէին կարող՝ 126

Լրիվ որբ (առանց հոր և մոր)՝ 258

Ընտանիքից մնացել էին երկու հոգի՝ 144

Մնացել էր միայնակ՝ 239 [44]

Թուրք պաշտոնյաներն անգամ հայ եպիսկոպոսին արգելեցին օգնել աղետյալ աքսորականներին: «Պարզ երևում է, որ ամեն մի հասարակական օգնություն, որ կողմից էլ այն գալու լինի, Բ. Դուռը մերժում է» (Վոլֆ Մետեռնիխ): 1916թ. օգոստոսի 12-ին Էյֆելյան աշտարակից ռադիոն ազդարարեց. «...Թուրքիան մերժել է Միացյալ Նահանգների խնդրանքը Սիրիայում չեզոք կոմիտե ստեղծելու վերաբերյալ, որը նպատակ ուներ օգնելու այնտեղ սովից տառապող հազարավոր բնակիչներին»[45]:

Օսմանյան պետական ամբողջ համակարգը կողմնորոշված էր ձախողելու հայերին օգնելու ամեն մի փորձ: Անգամ Ջեմալ փաշայի մասնակի բնույթ ունեցող ձեռնարկումները նախկին վալի (Սալոնիկ, Հալեպ) Հ. Քյազիմի վկայությամբ պաշտոնատարները «ոչ միայն չէին իրագործում, այլև գործում էին դրանց դեմ: Դամասկոս նրա ուղարկած հայերին տեղական իշխանությունները հետ էին վերադարձնում...»: «Բնաջնջման այս հրեշավոր քաղաքականությունը,- շարունակում է թուրք գործիչը,- Թուրքիայի խայտառակությունն է...»:

44 DR/ PA-AA/R14093, փաստաթուղթ 302:

45 Ն. տ.:

Առանձնակի ուշադրություն է պահանջում հայ որբերի վիճակը: Նրանք բաժանվում էին երեք խմբի՝ տեղում մնացած, կամ աքսորի ճանապարհին մահմեդականների տարածներ, Կովկաս անցած որբեր և որբեր, որոնք կործանվեցին անապատում:

Ծնողներին մորթեցին, իսկ երեխաներին բաժանեցին մահմեդական ընտանիքներին, և քրդերը նրանց տարան հեռու՝ լեռները: Սակայն շատ երեխաների հաջողվեց փախչել: Նրանցից ոմանք վերադարձան իրենց հայրենի բնակավայրերը: Դա նշանակում էր հաղթահարել մեծ դժվարություններ, ենթարկվել բազում վտանգների՝ հոգնածություն, ցուրտ, քաղց, հիվանդություն: Շատերը մեռան ճանապարհին, իսկ ովքեր տեղ հասան, չգտան ոչ իրենց գյուղը և ոչ էլ տունը. դրանք ավերված էին: Եվ մնացին բնակվելու ավերակների մեջ՝ մերկ, անսնունդ, աշխարհից կտրված: Այդ փոքրիկներն ամիսներ շարունակ ապրեցին՝ սնվելով միայն բույսերով, արմատապտուղներով, աղբակույտից հավաքած մնացորդներով, սողուններով ու միջատներով:

Երեխաների խմբերը օրեր ու ամիսներ աննպատակ թափառում էին ավերակ դարձած Մշո դաշտում:

Երբ հայ կամավորները հետապնդում էին կանանց ու երեխաներ փախցրած քրդերին, նրանց հետ էր նաև Բարքին: Նրանք լեռան գագաթից նկատեցին մի տարօրինակ քարավան՝ չորս ավանակ՝ յուրաքանչյուրի վրա 2-3 երեխա: Նրանց մեծ մասը 2-6 տարեկան էր, ամենամեծը ութ տարեկան, որն էլ քարավանի պետն էր: Փախել էին քրդերի մոտից և երբ հոգնել էին, բռնել էին սարերում անտեր մնացած էշերին: Գնում էին իրենց գյուղերը, չնայած դրանք ոչնչացված էին: Նրանք գերադասում էին մնալ ավերակների մեջ, քան քրդերի մոտ: Նրանց բոլորի ծնողները, քույրերն ու եղբայրները սպանված էին:

Ժամանակակիցների վկայությամբ Թալեաթն ամենաչատը վախենում էր հայ երեխաներից: «...Ծանոթ անձանց երեխաներին՝ պատրվակով, թե նրանց կերակրելու է գաղթականների պաշտոնատունը, առանց կասկածի տեղիք տալու, հավաքովի ոչնչացնել ու տեղեկացնել»[46]:

Նույն տրամաբանությունն էր ընկած նաև հայ կանանց հանդեպ վերաբերմունքի հիմքում: 1915-ի սեպտեմբերին երիտթուրքական "Tanin" թերթը կոչ արեց. «Բոլոր հայ կանանց ոչնչացնել» կամ «մահմեդականացնել», ինչը թերթը համարում էր միակ միջոցը «կայսրությունը փրկելու համար»[47], իսկ Խարբերդի մուֆթասարիֆը հայտարարեց. «Հայ երեխաները պետք է մեռնեն իրենց ազգի հետ»[48]:

1916թ. հունվարի 23-ին Էնվերը բարբաջեց. «Մի ժամանակ, երբ հազարավոր մահմեդականներ կարիք ունեն աջակցության և սննդամթերքի, անթույլատրելի է ծախսեր կատարել նշված անձանց (հայերի) երեխաներին կերակրելու համար, ովքեր ոչ հեռավոր ապագայում դառնալու են վտանգավոր: Երեխաներին պետք է ճանապարհ դնել տեղահանվածների քարավանների հետ և համաձայն մեր վերջին հրահանգի Սրվազ ուղարկել նրանց, ովքեր ի վիճակի են հաղթահարել այդ ուղին»:

Կատարելով Կ.Պոլսի փաշաների հրամանը՝ Ի. Հագը Մեսքենե-Զոր ճանապարհին գաղթականների վերջին բեկորները ջարդելուց հետո, 300 որբերի հավաքեց և ուղարկեց Դեր Զոր, սակայն նրանցից չուրջ հարյուրը վրա են տալիս ձիու աղբի թմբերին «իրարմե յափշտակելու չմարսուած գարիի հատիկները»: Այդ պահին Աբուհարրարի մյուդիր Ռահմեդդինը ձին քշում է երեխաների վրա և նրանց կոխկրտում սմբակների տակ: Տասնյակ երեխաներ ստացած վերքերից մեռան, մյուսներն անկարող դարձան քայլելու: Նրանց լքեցին, և ագռավներն այդ երեխաներին «ողջ-ողջ հոշոտեցին ուրիշ գիշատիչների հետ», իսկ Զոր հասած 200 փոքրիկներին միացրեցին տեղում եղած 1 500 որբերի խմբին ու քշեցին Մարաթի անապատը, որտեղ նրանց մի մասը շնչահեղձ արվեց քարայրներում թաց խոտի ծխով, մյուսներին ոչնչացրեցին դինամիտի պայթյունով, իսկ ամենահյուծվածներին չոր խոտով ծածկեցին ու վառեցին[49]:

Կենդանի էին թողնում մինչև հինգ տարեկաններին, որոնց պետք է թրքացնեին հատուկ որբանոցներում, որպեսզի համալրեին պատերազմում մարդկային կորուստներ տված թուրք ժողովրդի շարքերը և բարելավեին նրա որակը: Դա պատվաստ էր, ենիչերիության նոր տարատեսակ:

Սկզբում մահմեդականներին թույլատրվում էր որդեգրել հայ երեխաների: Վերջինները հիմնականում հափշտակվում էին, առանձին դեպքերում՝ նաև գնվում: Մարդասիրությամբ չէ, որ առաջնորդվում էին որդեգիրները: Պատերազմը խլել էր նրանց աշխատող ուժը: Հայ երեխաները կոչված

46 Անտոնեան Ա. նշվ. աշխ. էջ 194, 197:

47 Williams W. New Armenia: Past and Present, London, 1916.

48 "New York Times", 13. 12. 1915:

49 Անտոնեան Ա. նշվ. աշխ., էջ 198-199:

էին ինչ-որ չափով փոխարինել զորակոչված և ռազմաճակատում զոհված մահմեդականներին:

Սակայն այս վիճակն էլ Թալեաթին վտանգավոր թվաց և նոյեմբերի 5-ին հրամայեց նման երեխաներին հավաքել ու անապատ ուղարկել[50]:

Մենքենեում փոքր երեխաներին հավաքեցին վրանային ճամբարում, առանց նրանց անունը կազմակերպելու: Որբերը շների հետ կռիվ էին տալիս «անոնցմե խլելու համար ոսկորները, չորս քարերու միջոցով փոշիացնելով կուտեին»[51]:

Ա. Վեգները պատմում է, որ բռնությամբ որբանոցներից տանում էին որբուհիներին իրենց կրքերին հագուրդ տալու: «Այդ ճանապարհներով անցնողները դեմքերը շուռ էին տալիս, որպեսզի չտեսնեին քարավանների աղբի մեջ թափված նորածինների դիակները, որպեսզի չտեսնեին ձեռները կտրած մեծ թվով երեխաների»[52]:

Էրզրումի ժանդարմները 1-5 տարեկան 200 երեխա մայրերից խլեցին և կենդանի հորեցին Քարդասիլ և Խան գյուղերի միջև ընկած տարածքում: Եփրատ նետվեց 500 կրծքի երեխա[53]:

Սիրիայի և Միջագետքի հյուսիսային շրջաններում որբերին կոտորելուց բացի, բռնի դավանափոխ էին անում:

Լայն տարածում ստացավ հայ երեխաների տնային ստրկությունը: Չնայած այդ փոքրիկները չէին հասկանում, թե ինչ է կատարվում և ինչու չէին կարողանում և չէին ցանկանում բնակվել ուրիշների տներում, օտարների միջավայրում:

Այդ հողի վրա ծնվեցին երեխաների ողբերգության և նրանց մանկական ընդվզումների հուզիչ բազում արտահայտություններ:

Նիպագեն և Մ. Շպիկերը 15. 10. 1915-ին գրում են Ռեոսլերին. «Մենք չենք ուզում կանգ առնել արյունալի սարսափների վրա, որոնցով է սովորաբար սկսվում հայերի տեղահանությունն իրենց լեռնաշխարհից, անդրադառնալ հազարավոր տղամարդկանց, ովքեր մորթվեցին առանձին կամ զույգ-զույգ իրենց հարազատների աչքի առաջ, ոչ էլ մեծաթիվ աղջիկների, կանանց և երեխաների, ովքեր ենթարկվեցին բռնության ու վիրավորանքի իրենց պահապանների և նրանց մեղսակիցների կողմից և ճանապարհներին ընկած նրանց մերկ դիակների վրա՝ այդ ճանապարհներով էին անցնելու բռնագաղթվածների ամբոխները, ոչ էլ անասելի դաժանությունների, ծարավի, քաղցի մասին, որոնք մեծապես կրճատեցին կենդանի մնացածների թիվը, ովքեր թալանված էին մինչև որբևայրին և որբը, նրանց վերածելով կմախքի, այստեղ հասնում էր ուղարկվածների վեցից մեկը, որոնց նույնպես ուղարկում են անապատ, նույն ճանապարհներով առանց գոյության միջոցների, որպեսզի անհետանար հայ անունը...»: «Մտնում ենք հայ տարագիրներին տրամադրված շենքը, որը ներկայացնում է մի քանի ներքնահարկ. թշվառ, հյուծված մարմիններ թաքցված քրջերի մեջ, ընկած մերկ գետնին: Միայն կանայք ու երեխաներ են... Ոչ մի տղամարդ: Մտնում ենք բակ... Ծայրում, ներքնահարկի դիմաց հիվանդների մեռնողների, մեռածների բլուրներ են...Հյուծված հիվանդների և դիակների վրա միլիոնավոր ճանճեր: Տնքոցներ, բժշկական օգնություն հայցող անկապ ձայներ... Մերկ դիակների կողքին մի ծերունի երկու երեխաների հետ զբաղված էին իրենց բնական պետքերը բավարարելով»: «Ներսում տասնյակ երեխաներ, սովյալ, անտարբեր, քանի՛ մեռնողներ ու մեռածներ... Ոչ ոք նրանց մասին հոգ չէր տանում...Դարակից դուրս քաշեցին մի տղայի կիսաքայքայված դիակը... Ոչ մի բժիշկ չի երևում: Ոչ մի դեղորայք թեթևություն չի բերում: Բոլորը դատապարտված են ահավոր մահվան: Նրանք մեռնում են քաղցից: Փորհարեք, հյուծվածություն, տիֆ...»: Ամեն օր մեռնում է 100-150 հոգի: Դիակները միմյանց վրա թափված տեղափոխում են սայլերով: Դպրոցի տնօրենը հաստատում է Նիպագեի պատմածներն ու ավելացնում է. «Արդեն մեկ ամիս մենք այստեղ շնչում ենք դիակների հոտը և ապրում ենք մեռածների մեջ»[54]:

---

50 Անտոնեան Ա. նշվ. աշխ., էջ 180:
51 Ն. տ., էջ 192:
52 Wegner A. նշվ. աշխ., էջ 80:
53 Բեյլերյան Ա., նշվ. աշխ., փաստ N 483:
54 Նույն տեղում, փաստաթուղթ 228:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

1916-1917 ԹՎԱԿԱՆՆԵՐ

1915 թվի նոյեմբերին ավարտվեց հայերի բռնագաղթի և ջարդերի առաջին փուլը, որի ընթացքում ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև հայաբնակ բնակավայրերը մաքրազարդվեցին հայերից: Մոտ 2 000 000 հայ քշվեցին հարավ, որոնց կեսը սպանվեց տեղերում և բռնագաղթի ճանապարհներին, մեռավ դժվարություններից, քաղցից, ծարավից ու համաճարակներից:

250-300 հազար հոգի անցավ Ռուսաստան, Պարսկաստան: Մնացած հայերը կուտակվեցին Հյուսիսային Սիրիայում և Հյուսիսային Միջագետքում: Այդ ընթացքում հազարավոր մարդ քշվեց Արաբական անապատի խորքերը: Ա. Անտոնյանի և Լեփսիուսի կարծիքով՝ Սիրիա և Միջագետք անցավ ավելի քան մեկ միլիոն հայ:

1915 թվի դեկտեմբերին սկսվեց հայերի բնաջնջման երկրորդ և ամենաարյունահեղ փուլը: Խնդիր էր դրված ամենակարճ ժամանակահատվածում բնաջնջել համակենտրոնացման ճամբարներում և այլուր կուտակված հայերին: Այդ հրեշավոր ծրագիրն իրականացնելու համար փոխվեցին հարավային վիլայեթների, սանջակների, կազաների մի շարք կառավարիչներ, տեղահանության հետ առնչվող ծառայությունների ղեկավարներ:

1916թ. հունվարի 4-ի հրահանգով այլևս արգելվում էր Հյուսիսային Սիրիա հայ թողնել: Պահանջվում էր տարագիր հայերին քշել անապատի խորքերը, տեղահանել և անապատ ուղարկել նաև Հալեպում ու մերձակայքում կուտակված հայերին:

Ցեղասպանները հանցագործի հոգեբանությամբ ջղագրգիռ էին, անհանգիստ, շտապում էին օր առաջ ավարտելու «գործը»: Սկսվում է հեռագրերի ու ծածկագրերի հեղեղ հացեագրված հարավի նահանգների իշխանություններին: Թալեաթը հանձնարարում էր, հրամայում, սպառնում: Հունվարի 16-ի հեռագրում ասվում է. «Ատանայի կառավարութեան հետ բանակցելով, անմիջապես, առանց Հալեպ հանդիպեցնելու, հետիոտն իրենց տարագրութեան վայրերը ղրկեցեք այդ հայերը... »[1]:

Ապա. «Նոյնիսկ ոճրագործութեան համար դատապարտուած կամ ամբաստանուած և ոստիկանութեան կողմե ձերբակալուած հայերը բանտերը մի պահեք, իսկոյն առաջ ղրկեցեք»[2]:

Քիչ անց նա տեղյակ պահեց՝ տեղահանությունն ավարտված է, մնում է հայերին տեղափոխել իրենց տարագրության վայրերը և «գործադրել այն, ինչ նախապես ծանուցվել է: Որքան արագ, այնքան լավ»[3]:

Թալեաթը ստում էր: Բռնագաղթն ավարտվել էր միայն արևելյան և արևմտյան մի քանի նահանգներում, իսկ կայսրության մյուս մասերից այն շարունակվում էր նաև 1916թ. առաջին ամիսներին:

1916թ. մայիսի 12-ին Զավեն պատրիարքը երեք դիմում հղեց Կ. Պոլսում գերմանական դեսպանին, որոնցում ասվում է, թե չնայած իր ահազանգերին, որևէ միջամտություն չկա և հայերի ջարդերն ահավոր ծավալներ են ընդունել: «Ամեն օր հազարավոր մարդիկ են զոհվում հիվանդություններից, սննդի բացակայությունից և նրանց հանդեպ օսմանյան կառավարության հրեշավոր վերաբերմունքից... հարազատ օջախներից աքսորված մարդիկ... թշվառ վիճակում են և ինչպես թափառականներ դեգերում են Միջագետքի և Սիրիայի անապատներում, որտեղ յաթաղանն անկատ նրանց հնձում է հազարներով, ինչպես վերջերս այդ տեղի ունեցավ Ռաս ուլ Այնում»: Տեղահանությունը շարունակվում էր: Այն տեղի էր ունենում Կաստեմոնուից, Անկարայից, Մարաշից, Ադրիանապոլսից, ամեն շաբաթ այլևայլ պատրվակներով աքսորվում էին հայեր Կ. Պոլսից ու Զմյուռնիայից:

Տարբեր տեղերում՝ Ռոդոսթո, Ադրիանապոլիս, Ցեզարե, Ցոչգոդա, Ամասիա, Սամսոն և այլն, հայ որոշ ընտանիքների թույլատրված է չտեղահանվել, սակայն նրանք ենթարկվում էին ամեն տեսակի ճնշումների, որպեսզի դառնային մահմեդական[4]:

---

1 Անտոնեան Ա. նշվ. աշխ., էջ 58, 148, 156:
2 Ն.տ., էջ 59:
3 "Геноцид армян...", стр. 431.
4 R 14091, Ab 13207.

Դրա հետ միասին գնալով ավելի լայն ծավալ էր ստանում կանանց ու աղջիկների առևտուրը: Կահիրեում Ֆրանսիացի դեսպանը գրում է, որ 1916թ. ապրիլի 15-ին Դամասկոսի հրապարակներից մեկում վաճառվում էր 300-400 հայ աղջիկ ու երիտասարդ կին: «Այսպես կոչված մահմեդական աշխարհի ինտելեկտուալները՝ խոջաները, ուլեմաները, կադերը, մուֆտիները կարողացան արագորեն մեծացնել իրենց ստրուկների թիվը չնչին գումարով, պատճառաբանելով, որ իրենք են նրանց կրոնափոխել, մեծ թվով մահմեդականացված ... կանայք մտցվեցին հարեմները»[5]:

Ցեղասպանության թուրքական պետական քաղաքականությունը շարունակում էր առաջ տարվել: Ռուս ժուռնալիստ Ա. Տիրկովան լավ գիտեր Կ. Պոլսի անցուդարձերը և դրանից ելնելով եզրահանգել էր. «Իթիհադի գլխավոր ղեկավար Թալեաթ բեյը հանդիսացավ հայ ժողովրդի դահիճը»[6]:

"Gazet de Lozane"-ը 1916թ. փետրվարի 16-ին գրում է. «1916թ. հունվարին գրեթե 6 000 հայ Այնթափից քշվեց դեպի անապատ: Ռաս ուլ Այնի կայմակամի հրամանով ամեն օր 300-500 հոգանոց խմբեր տարվում էին գետափ և վարձված ոճրագործները նրանց մորթում էին և նետում գետը: 1916թ. ապրիլի 15-ին 19 000 հայ անապատով (33 կմ) հետիոտն ուղարկվեց Մոսուլ. միայն 2 000 հոգի տեղ հասավ: Կանանց ու աղջիկների մի մասը ճանապարհին վաճառվեց բեդվիններին»:

«Օսմանյան հայերի մեծամասնությունն արդեն զոհվել էր զանգվածային սպանություններից, ճանապարհին նրանց հանդեպ բիրտ վերաբերմունքից, սովից ու ծարավից, սակայն տեղահանման ծրագրի իրականացումից հետո վերապրողներն անգամ կանգնած էին մռայլ անապատի դիմաց ... գրեթե ոչինչ չէր արվում տարագիրներին սննդով, հագուստով ու ապաստանով ապահովելու և նրանց բռնություններից պաշտպանելու համար»[7]:

Լեփսիուսի «Տեղեկագրում» կարդում ենք. «Քրիստոնյա ամենահին ազգը, որովհետև ապրում է թուրքական տիրապետության տակ, կանգնած է ոչնչացման սպառնալիքի առջև: Հայ ժողովրդի 6/7-ը թալանվել, զրկվել է իր ունեցվածքից, վտարվել է տուն ու տեղից և բացի նրանցից, ովքեր ընդունել են իսլամը, սպանվել կամ տարագրվել են անապատները»[8]:

Համաշխարհային հանրության բողոքն այնքան էր հզորացել, որ կայզերն իր դիվանագիտական ծառայություններին հանձնարարեց ճնշում գործադրել Կ. Պոլսի վրա տեղահանությունն ու ջարդերը դադարեցնելու համար: Ցիմմերմանը Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հալիլ բեյին ասաց, եթե նախկինում տեղահանումներն արդարացնել հնարավոր էր ռազմական նկատառումներով, ապա ներկայումս «պլանավորված միջոցառումները կանանց ու երեխաների դեմ, որոնք կազմում են հայ ժողովրդի տխուր մնացուկները, ոչ մի կերպ արդարացվել կամ ներվել չեն կարող»[9]:

Ցիմմերմանի 1916թ. սեպտեմբերի 23-ի հուշագիրը՝ Նույն օրը Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Ֆյուլմանը Բեռլին գաղտնագրեց, որ կառավարության կողմից «հայերի լայնածավալ ոչնչացման իրականացումը և նկատելի ձգտումը նույնքան անխնա, չնայած և սահմանափակ, միջոցները հույների դեմ հանդիսանում են» Բալկանյան պատերազմից հետո երիտթուրքերի առաջ մղած թուրքական- ազգայնամոլական քաղաքականության արտահայտություն: «Ես գիտեմ, որ հայերի ոչնչացման քաղաքականությունը թուրքական կայսրության վրա թանկ է նստելու»: Հայերի դեմ կատարվածի սարսափները դեռևս երկար ժամանակ պետք է ծանրանան թուրքական անունների վրա և դեռ երկար ժամանակ հանդիսանալու են թունավոր զենք նրանց ձեռքին, ովքեր Թուրքիային թույլ չեն տալիս լինելու քաղաքակիրթ պետությունների համագործակցության մեջ և պահանջում են նրան դուրս քշելու Եվրոպայի սահմաններից: Ներքին կյանքում ևս երկիրը թուլացել է ֆիզիկապես ամուր, աշխատասեր և խնայող ազգաբնակչության ոչնչացման ու կործանման պատճառով: Թալեաթ փաշայի հետ գաղտնի զրույցի ժամանակ ես ձեռնպահ չմնացի և արտահայտեցի իմ կարծիքը այդ (հայերի կոտորածների) վերաբերյալ: Ինչպես նա ինձ մտերմաբար հայտնեց, կարելի է հույս ունենալ հայերի բռնագաղթի և հույների

5 Բեյլերյան Ա. նշվ. աշխ., փաստ N298:
6 Тыркова А. Старая Турция и младотурки. Год в Константинополе, П-д, 1916, стр. 92-93.
7 Trumpener U. Germany and the Ottoman Empire, 1914-18. Prinecton, 1968, pp. 286-287.
8 Լեփսիուս Ց. Տեղեկագիր, էջ 6-7:
9 Fo, Turkei, 133 Bd 44: .

նկատմամբ առանձնակի հալածանքների դադարեցման... Իհարկե, ազգայնամոլական վայրենի ուղղությունը դեռ չի մեռել: Ընդունակ ու անխնա ղեկավարները չեն հաշտվելու իրենց ժամանակավոր պարտության հետ: Պետք չէ նաև հույս ունենալ, որ հրաշագործ փայտիկի շարժմամբ կդադարեն գանգատները տարբեր նահանգներից պետական չինովնիկների ճնշումների ու հալածանքների դեմ... »[10]:

Թալեաթը դեսպանին պատասխանել է, թե մտադիր է վարելու նոր քաղաքականություն, «արդեն տեղյակ եմ պահել հայ համայնքների ղեկավարներին, որ անցյալ երկու տարվա ռազմական միջոցառումները վերացվելու են»[11]:

Այդ «նոր քաղաքականությունը» Թալեաթը որպես մեծ վեզիր 1917թ. փետրվարի 17-ին ներկայացրեց խորհրդարանին: «Ազդեցիկ շրջանակներում նշանակալից դարձավ քաղաքական չափավոր հոսանքի տեսակարար կշիռը,- գրում է Ֆյուլմանը,- որն ի հակադրություն Հանրահայտ կոմիտեի անդամների անհեռատես, արյունալի բռնություններից հետո չկանգնող ազգայնամոլական քաղաքականության, Թուրքիայի համար պահանջում է խոհեմ և հանդուրժող ներքին քաղաքականություն»:

Ամբողջությամբ վերցրած բնաջնջման քաղաքականությունը թուրքական կայսրությանը մեծ վնաս է հասցրել: Այն, որ Թալեաթը կառավարության գլուխ անցնելուց հետո արած հայտարարություններով կարևոր էր համարում օսմանյան ազգությունների հավասարությունը, իհարկե, դրական արձագանք ունեցավ: Նա հայ լուսավորչական և կաթոլիկ պատրիարքներին հավաստիացրեց, թե «հայ ազգաբնակչության սահմանադրական իրավունքներին չեն դիպչի»[12]: Թալեաթը նորից ստում էր: Եվ դա հասկանալի է: Առաջադրված նպատակը կատարված էր, Արևմտյան Հայաստանում այլևս հայ գրեթե չկար, հետևաբար գլխավոր խնդիր էր դառնում քարոզչության միջոցով աշխարհին ապացուցել, որ օսմանյան կառավարությունը ոչ թե իրականացրել է հայերի բնաջնջում, այլ ճնշել է հայկական ապստամբությունները: Այդ նպատակով 1916-ին գումարվեց երիտթուրքերի համագումար: Թալեաթի զեկուցումը ձեռքի տակ չունենք, բայց նրա հուշերն այդ զեկուցման գրեթե կրկնությունն են, որովհետև երկուսի խնդիրը մեկն էր՝ համոզել, որ հայերն ապստամբել էին, հայրենիքին դավաճանել, ինչի համար էլ պատժվել են: Նույն նպատակով 1916-ին հրատարակվեցին «Հայ հեղափոխական կուսակցություններն ու կառավարությունը» և «Հայ կոմիտեների հեղափոխական ձգտումներն ու գործունեությունը սահմանադրությունից առաջ և հետո» գրքույկները: Դրանցում տեղ են գտել «վավերաթղթեր», լուսանկարներ, Հայաստանի քարտեզը և այլն՝ ընթերցողին համոզելու, որ հայերը ձգտում էին մասնատել Թուրքիան և նրա տարածքների վրա ստեղծել անկախ Հայաստան:

Թուրք ջարդարարների չքմեղանալու ճիգերը հանդիպում էին տարբեր ազգություններին ու քաղաքական հոսանքներին պատկանող գործիչների մերկացումներին:

Թուրքական հերյուրանքներին Ա. Մանդելշտամը պատասխանեց. «Ի հեճուկս թուրքական կառավարության կեղծ հայտարարությունների, հայկական ոչ մի խռովություն կամ հեղափոխություն չի եղել... Հայերը զենք վերցրեցին միայն այն ժամանակ, երբ նկատեցին կոտորածի վտանգը... պետք է հատկապես շեշտել, որ հայերը միայն պաշտպանվել են և երբեք առաջինը չեն հարձակվել...»[13]:

Թուրք գործիչ Ռ. Միդհատը 1918թ. հունվարի 1-ին գրեց. «Իր գործած հանցագործություններն արդարացնելու համար Թուրքիայի ներկայիս կառավարությունը հրատարակեց բազմաթիվ գիրքույկներ, որոնցում փաստերը ներկայացված են կեղծված: Կանանց ու երեխաներին սպանելուց հետո անհրաժեշտություն առաջացավ հորինելու ամեն տեսակի մեղադրանքներ ջարդերին զոհ գնացած հայ ժողովրդի հասցեին: Դա ավելի քան ցինիզմ է, զուտ թուրքական դաժանություն և ստորություն»[14]:

1916թ. հունիսին Մնքքայի չերիֆ Հուսեյն Ալին ըմբոստության դրոշ է բարձրացնում թուրքական կառավարության դեմ և երբեք հայտարարություն հասցեագրում մահմեդական աշխարհին, որոնցում խարազանում է թուրքական քաղաքականության մի քանի կողմերը: Դրանցում

10 "Коммунист" (газ.), 03.08.1989. Փաստաթուղթը պահվում է Գերմանիայի արտաքին գործերի նախարարության արխիվում:
11 Լեփսիուս Ց. Տեղեկագիր, փաստ N317, 318:
12 Բանբեր Երևանի համալսարանի, 1990, թիվ 3 :
13 "Геноцид армян...", стр. 498-499.
14 "Journal de Geneve", 01. 01. 1918.

կան հետևյալ տողերը. «Իսկ վերջերս հանրահայտ դարձան այն լուրերը, որոնք խոսում են հայ տղամարդկանց, կանանց և երեխաների նկատմամբ գործադրված ջարդերի մասին, որոնց եթե մեկ տասներորդը ճիշտ լինի, ո՞ւր կմնա մեր Առաքյալի հայտնի պատգամը...»:

Գերմանական աղբյուրների վկայությամբ Մոսուլի մոտ գտնվող Թել Արմեն գյուղում եղած 5000 հայերի, այդ թվում նաև շատ կանանց ու երեխաների, մորթեցին: Մարդկանց կենդանի նետեցին ջրհորերը կամ այրեցին:

Ասում էին, թե հայերին բնակեցնելու են Բաղդադի երկաթուղուց 24-30կմ հեռավորության վրա: Բայց քանի որ քարավաններում հիմնականում կանայք ու երեխաներ էին, դա հավասարազոր էր ընտանիքների ոչնչացման, որովհետև ոչ բանվորական ձեռք կար և ոչ էլ փող հողը մշակելու համար: Մի հայ զինվոր արձակուրդում էր և Եփրատի ափերին փնտրում էր իր կնոջն ու երեխաներին: Նման դժբախտների հաճախ կարելի էր հանդիպել նաև Հալեպում: «Ամբողջ մեկ ամիս,- պատմում է օտարերկրացին,- ականատես էինք Եփրատով հարավ հոսող դիակների, հաճախ 2-6 հոգի միմյանց կապված: Տղամարդկանց դիակները հաճախ այլանդակված էին՝ կտրված սեռական օրգանները և այլն, իսկ կանանց դիակները բացված փորերով էին»:

Ջերաբուլուսի կայմակամը հրաժարվում էր դիակները թաղել, պատճառաբանելով, թե տղամարդկանց կրոնական պատկանելությունն անհնար էր որոշել: Ալիքների ափ նետած դիակներին հոշոտում էին շներն ու անգղերը: Բաղդադի երկաթուղու գերմանացի ծառայողներից մեկն ասում էր, որ Դերեջիկի բանտը տևականորեն ցերեկները լցվում էր, իսկ գիշերները դատարկվում, մեռածներին ու սպանվածներին նետում էին Եփրատը: Դիարբեքիրի և Ուրֆայի ճանապարհին թափված էին մեծ թվով դիակներ[15]:

1916թ. մարտին,երբ ռուսական զորքերը գրավեցին Տարոնը, միայն Աղջան և Ալիզոնան գյուղերի փլատակների տակ հայտնաբերեցին հազարավոր ածխացած դիակներ, այդ թվում նաև երեխաների, իսկ Գարնեն գյուղում տեսան 5 000-6 000 սպանված հայ սակրավորների դիակներ: "New York Times"-ը 1916թ. մարտի 6-ին գրում է, որ ռուսներն «Էրզրումում 46 000-ի փոխարեն միայն 16 կենդանի հայ գտան: Բոլոր հայերին տարել էին արևմտյան ուղղությամբ, որտեղ քրդերը կոտորել էին նրանց»: Մարիա Ցակոբսոնը գրում է. «Ես չեմ կրնար բառեր գտնել նկարագրելու համար այս ժողովրդին ցավերը, տառապանքներն ու սարսափները»[16]:

Իթիհադական պաշտոնատար Շևքեթը պատմել է, որ Դիարբեքիրի մերձակայքում հայերին գնդակահարելու ժամանակ, գալիս է մի քուրդ ու խնդրում իրեն տալ մահապարտ հայերից մեկի տասնմեկ տարեկան աղջնակին: Շևքեթն աղջնակին կանչում է և առաջարկում գնալ քրդի հետ փրկվելու համար: Աղջնակը հետ է վազում և կանգնում ծնողների կողքին: Նորից են նրան բերում, նորից համոզում գնալ քրդի հետ: Սակայն աղջնակը նորից փախչում է և հպարտ կեցվածք ընդունած ծնողների հետ գնդակահար ցած է գլորվում[17]:

"Петербургские ведомости" թերթը իր 1916թ. 123-րդ համարում պատմում է, որ մի դատարկ գյուղում ռուսական զինվորները «բարձր պատի տակ տեսան մի քանի դիակ... Հայ կամավորներից էին, հավանաբար հետախույզներ, որոնց թուրքերը գերի էին վերցրել (11 հոգի): Նրանց բոլորի աչքերը հանված, լեզուները կտրված էին և դեռ կենդանի ոտքերից կախել էին... ու այդպես փայտացել էին...»: Այդ օրը ռուսներն անցել էին 30 վերստ և չէին հանդիպել ոչ մի հայի: Բոլոր գյուղերը դատարկ էին: Ֆրանսիացի դիվանագետ Բոն գրում է Սիրիայում աշխատող գերմանական ուսուցիչների նամակի մասին, որը հրապարակվել էր "Basler Nachrichten" թերթում: Նա բերում է նամակի հետևյալ տողերը. «Ամեն օր մեր աչքի առջև տեղի ունեցող սարսափների տեսարանների առկայության պայմաններում ... ուսուցչի մեր աշխատանքը ծաղր է մարդկայնության հասցեին: Մենք ինչպե՞ս կարող ենք հեքիաթներ կարդալ հայ երեխաներին, նրանց գրագիտություն սովորեցնել, երբ հարևան բակերում մահը հնձում է նրանց հարազատներին, ովքեր մեռնում են քաղցից»[18]:

15 R 14095, Ab 4543.

16 Արզումանյան Մ. Դարավոր գոյամարտ, Երևան, 1989, էջ 389:

17 Faiez of Ghocein, Temoignage..., p. 39.

18 Բեյլերյան Ա. նշվ. աշխ., փաստ N298:

Գերմանացի ֆերմերները պատմել են, որ Ատլիտի (Սիրիա) երկաթուղային կայարանում հազարավոր հայեր էին խցկված՝ քաղցած, հուսահատ, պառկած ռելսերի վրա: Եկող գնացքն իր տակ առավ 50 հոգու: Մնքենավարը բղավեց. «Դուք տեսա՞ք, ես գնացքի տակ գցեցի մոտ 50 հայ-խոզերի»: Մեծ թվով հայեր շարունակում էին մեռնել տիֆից և դիակներն օրեր շարունակ մնում էին թափված դես ու դեն: Թուրք սպան դա բացատրեց նրանով, որ այդպես վարակն ավելի արագ է տարածվում և մեծանում է զոհերի թիվը, այսինքն՝ արագացվում է հայերի մահը[19]:

Հայերից Հայաստանը դատարկելուց հետո թուրք գործիչները գտան, որ դրանով «հայկական վտանգը» վերացավ, և միտք հղացան բռնագաղթված հայերի մնացորդներին օգտագործել որպես բանվորական ուժ, որի կարիքը կայսրությունը պատերազմի պատճառով ավելի քան զգում էր: Արդեն նշվել է, որ Ջեմալի հրամանով 100 հազար գաղթական աշխատանք ստացավ: Այդ ուժով Կ. Պոլսում նրան կնքեցին «Հայկական փաշա» մականունով: Հայերը նրա տան առաջ շնորհակալական ցույց կազմակերպեցին և Ջեմալը երեք ժամ շարունակ պատշգամբում կանգնած ունկնդրում էր հայ գաղթականներին: Որոշ ժամանակ անց նույն Ջեմալը այդ նույն հայերին քշել տվեց Սիրիայի ու Պաղեստինի ամենախուլ անկյուններում ստեղծված ճամբարները[20]:

Պատմում է Մ. Նեղիմը. «Զինվորական հրամանատարությունը ստեղծել էր աշխատատեղեր բռնագաղթվածների, մասնավորապես, կանանց ու աղջիկների համար: Օրը 12 ժամ աշխատանքի դիմաց տրվում էր մեկական զինվորական հաց, սակայն քաղցի ու Դեր Զոր ուղարկվելու ահից բոլորը ստիպված էին աշխատել այդ դժոխային պայմաններում: Ջնայած դրան, այս դժբախտները հանգիստ չունեին: Զինվորական ու ոստիկանական սպաները, հիսունապետերը, նույնիսկ շարքային զինվորները անընդհատ այցելում էին աշխատանոցներն ու փնտրում գեղեցիկ կին, աղջիկ ու ձգտում էին նրանց ձեռք գցել»:

1918թ. հունվարի 1-ին "Journal de Genve"-ում տպագրված հոդվածում Քեմալ Միդհատը գրեց. «Ներկայումս արկածախնդիրների ավազակախումբը, որոնք իրենց անվանում են «երիտթուրքեր»... որպեսզի իր ձեռքում պահի իշխանությունը, ամեն օր դիմում է ամենաարյունահեղ միջոցների, որոնք չկային անգամ Աբդուլ Համիդի կառավարման ժամանակ»[21]:

Թուրք գործիչ Ալի Մունիֆը, որը Մալթայի բանտարկյալներից էր, բրիտանական ծառայություններին հասցեագրված նամակում ընդունում է հայերի բնաջնջման իրողությունը[22]:

Ամերիկյան "Daily Chronicle"-ը ռուսական բանակի 1916թ. հարձակման ելագիծն անվանում է «անցյալ տարվա կոտորածների արյունալի թատրոնի մուտք, իսկ թուրքական բանակը՝ Վեհիբի և Հալիլի զորքեր, որոնք «համառորեն կասեցնում» էին ռուսական հարձակումը, «պայքարում հանուն դաժանության այն համակարգի պաշտպանության, որը մեզ վերադարձնում է Աբդուլ Համիդի ժամանակների չարագույժ հանցագործությունները»[23]:

Որպեսզի պարզ լինի, թե 1916 թվի հունվար-ապրիլ ամիսներին ինչ ծավալներ ընդունեց հայերի բնաջնջումը, նշենք, որ Ռաս ուլ Այնում ոչնչացվեց 70 000, Ինթիլլիում՝ 50 000, Դեր Զորում՝ 270 000 մարդ: Իսլահեում տիֆից մեռավ 150 000, Կութմայում և Ազազում՝ 60 000, Բաբում և Մեսքենեում՝ 180 000 հայ: Ընդհանուր թվով՝ մոտ 800 000 մարդ:

Հայերի բնաջնջման ամենազարհուրելի իրադարձությունները տեղի ունեցան անապատում:

Հալեպ.-Հայերի մի մեծ զանգվածի հաջողվել էր մնալ Հալեպում ու նրա շրջապատի բնակավայրերում: Նայիմը գրում է, որ 1915թ. դեկտեմբերի 3-ին ստացվեց Թալեաթի հրամանը նրանց Դեր Զոր քշելու համար, որ «զարհուրելի բան էր դառնալու»: Հրամանում ասված էր. «Նախապես Հալեպի շրջակայքում բնակեցված հայերին անհապաղ ուղարկեք իրենց տարագրության վայրերը և այդ մասին տեղեկացրեք»: Նայիմը նաև մեջ է բերում ներքին գործերի նախարարության հետևյալ հեռագիրը. «Ծանոթ անձնավորությանց (հայերի) առաքման նպատակը հայրենիքին ապագայ բարօրությեան

19 Բեյլերյան Ա. նշվ. աշխ., փաստ N298:

20 Ն.տ.:

21 Ն.տ. N482:

22 Տատրեան Վ. Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով, Բեյրութ, 1995, էջ 24-26:

23 "Армянский вестник", 1916, N23.

ապահովութիւնն է, որովհետև ատոնք՝ ուր որ ալ բնակեցուին՝ դարձեալ ետ չպիտի կենան իրենց անիծապարտ գաղափարներեն, պետք է աշխատիլ, որ կարելի եղածին չափ նուազի անոնց թիվը»[24]:

Հեռագիրն ստանալու օրվա երեկոյան գաղթականների տեսչության պետ Աբդուլհատ Նուրին իր մոտ կանչեց ոստիկանության պետին ու գաղթականների տեսուչ Էյուբ բեյին և հայտնելով հեռագրի բովանդակությունը, նրանց հետ քննեց հայերին կոտորելու եղանակներն ու ձևերը: Նուրի բեյի կարծիքով լավագույն միջոցը «հայ գաղթականներուն ղրկանքի ու ճմռան սաստկութեան ենթարկելն ու այդպես մեռցնելն էր, ինչ-որ ապագայում կծառայեր նրանց բնական մահով մեռած ըլլալու թեզի պաշտպանութեանը»[25]:

Նայիմը պատմում է, որ երբ այդ հրամանը ստացվեց, «կայմակամներին այնպիսի անգութ հրամաններ տրվեցին, որ անհնար էր արցունքը զսպել... Հալեպից ժանդարմներին հրաման տրվեց, որ աշխատեն ճանապարհին քաղցած ու ծարավ թողնելու միջոցով հնարավորին չափ պակասեցնեն գաղթականների թիվը»: Այդպես էլ եղավ: Երբ հայերին սկսեցին դեպի Բաբ քշել, ամեն օր «քաղցից, ցրտից, հիվանդությունից հարյուրավոր մարդկանց մեռնելու լուրեր էին հասնում»: Տիֆի համաճարակն այնքան տարածվեց, որ վարակեց նաև տեղացի ժողովրդին: Այդ նկատի ունենալով՝ Նայիմը Նուրիին առաջարկում է «գաղթականների առաքումը մի քիչ դանդաղեցնել»: Նուրին պատասխանում է. «Տղաս, այս ձևով երկու միասակար տարրերի միանգամից ոչնչացնում ենք: Հայերի հետ սատկողներն արաբները չե՞ն: Վա՞տ է. թրքութեան ապագայի ճանապարհն ենք հարթում»[26]:

Այդ իրողությունն է հաստատում նաև Ռեոսլերը: Նա գրում է, որ 1916թ. հունիսի 19-ին Հալեպում աքսորը վերսկսվեց: Սկզբում հայտարարում էին, թե քաղաքից հանվում են համաճարակ հիվանդությունով տառապողները բնակչության առողջությունը չվտանգելու համար, ապա ասացին, թե աքսորում են «կասկածելիներին»: Իսկ քիչ անց սկսեցին տեղահանել բոլորին, ոչ քիչ դեպքերում՝ նաև տեղի հայ բնակիչներին, չնայած մի քանի անգամ իշխանությունները հրապարակավ հայտարարել էին, որ նրանք չեն տեղահանվելու[27]:

Նույն իրադարձությունը թուրք գործիչ Մ. Նեդիմը ներկայացնում է հետևյալ կերպ՝ Հալեպի փողոցում «տեսա մարդկանց մի հոտ՝ բաղկացած ծերերից, երեխաներից, հիվանդներից, որոնք մեծ դժվարությամբ էին քայլում՝ շրջապատված բիրերով, սվիններով, մտրակներով զինված ոստիկաններով: Շատերի ոտներն ուռած էին և տանջանքով էին քայլ գցում... երկու կանայք մտել էին մի հիվանդ պառավի թևերը և ջանում էին նրան քայլեցնել: Կանանցից մեկի գրկում երեխա կար, որը կմախքացած էր»[28]:

Հալեպի նահանգում կադրային մեծ փոփոխություններ կատարվեցին: Աշխատանքից նախ հեռացվեց կուսակալ Ջելալը, որ ջարդեր կազմակերպելու հրամանին պատասխանեց. «Ես այս նահանգի կուսակալն եմ և դահիճ դառնալ չեմ կարող»: Ջեմալի աղդեցության տակ էր ոստիկանապետ Ֆիքրին բեյը, որը նույնպես աշխատանքից հանվեց: Դա հասկանալի էր, որովհետև 1915թ. վերջերից սկսած ցեղասպանության գլխավոր վայրը դառնում էին Հալեպից Մոսուլ ընկած շրջանները, որովհետև Արևմտյան Հայաստանն արդեն հայերից դատարկված էր և կենդանի մնացածները կենտրոնացած էին այդ շրջաններում: Դրանով է բացատրվում կենտրոնական կառավարության սևեռուն ուշադրությունը մասնավորապես Հալեպի կուսակալության պաշտոնատար անձանց գործունեության նկատմամբ: Նրանց կաղմն ուժեղացնելու համար կայսրության տարբեր մասերից Հալեպ աշխատանքի ուղարկվեցին «վստահելի ու եռանդուն» աշխատողներ,այսինքն՝ ցեղասպան քաղաքականության նվիրյալներ և այդ գործում որոշակի փորձ ունեցողներ: Հալեպի հանդեպ Կ. Պոլսի ուշադրության աճը հետևանք էր նաև այն բանի, որ Բ. Դուռը նպատակադրվել էր իրականացնել հայերի ամբողջական բնաջնջում և «երբեք համամիտ չէր գտնված, որ հայ գաղթականները քաղաքներու, մասնավորաբար Հալեպի մեջ կամ անոր շրջանակները հաստատվին»[29]:

24 Անտոնեան Ա., նշվ. աշխ., էջ 23 :
25 Ն. տ.:
26 Անտոնեան Ա., նշվ. աշխ., էջ 25:
27 R 14092, Ab 1855216.
28 Նեդիմ Մ. Մեծ եղեռն ու իմ վկայությունները..., էջ 84:
29 Անտոնեան Ա. նշվ. աշխ., էջ 25:

Հալեպում տիրող վիճակի մասին հետաքրքիր վկայություններ կան Մ. Նեդիմի հուշերում: «...Սովորական բան էր ամայի փողոցներում հանդիպել 5-10-ական դժբախտի,- գրում է նա,- որոնք թափված աղբի դեզերի մեջ, հավերի նման քջուջ տալով բան էին փնտրում բերանները գցելու... Մի փաթթոցավոր կրոնավոր առևանգել ու բռնաբարել է Սողոմոն էֆենդի Ֆրանջյանի (Խարբերդից) երկու աղջիկներին: Դա այնքան հուսահատական է գործել նրանց մոր վրա, որ խեղճ կինը իր անմեղ մանկիկով նետվել է Եփրատն ու խեղդվել»: Քսան աղջիկ իրենց չպղծվածությունը պաշտպանելու համար, անպատիվ ապրելուց գերադասել են պատվով մեռնելը և նետվել են Եփրատն ու մեռել: Թուրք պաշտոնատար Ասրմ բեյը պատմել է Մ. Նեդիմին. «Առևտրական գործով գնացել էի Բեհիսնի, վերադարձա նավակով: ...Մի բաժակ ջուր խմել չկարողացա՝ Եփրատը լցված էր մարդկանց դիակներով: 8-10-ական հոգու պարանով կապել ու նետել էին գետը: Մեռելների մեջ կային կանայք ու երեխաներ: Բոլորին ասացի, որ մի քանի տարի ձուկ չուտեն»: Ոստիկանների գործած անզգամությունները նկարագրել չեմ կարող, շարունակում է Մ. Նեդիմը, դրամ պահանջելով դաժանորեն ծեծում էին կանաց, և թիվ չկար ծեծից մեռնողներին: «Տեսա մի կնոջ, որը երկու ոսկի էր կուլ տվել: Երբ դրամը չէին գտել, ճեղքել էին նրա փորը ու կատարյալ անտարբերությամբ ստուգել ստամոքսն ու աղիները... Անթիվ դարձան սրտամորմոք եղեռնները: 500 մետր հեռավորության վրա գտնվող մի տեղից տուն էի վերադառնում: Հալեպի բանուկ Բաբ էլ Ֆարաջա փողոցում տեսա 19 դիակ: Մեռել էին քաղցից, ճանապարհի տանջանքներից ու ոստիկանի ճոկանից: Ամեն օր քաղաքապետարանի կառքերը ցրվում էին փողոցները մեռել հավաքելու: Նրանք թաղվում էին առանց կրոնական արարողության: Նետում էին փոսերի մեջ իրար վրա: Նաև եղան զզվածներ ու հուսալքվածներ, որոնք նետվեցին այդ փոսերն ու ողջ-ողջ թաղվեցին: ...Մի օր նստած էի կայմակամի սենյակում, երկու հայ քահանաներ ներս մտան. հագուստները բզկտված էին, իրենք՝ հյուծված քաղցից ու թշվառությունից... Աղերսանքով ասացին կայմակամիմ. «Տարագրվածներ ենք, մի տարի է՝ այստեղ ենք բնակվում: Սկզբում մեզ սննդի համար ցորեն էին տալիս, հիմա կտրել են, շատ թշվառ ենք: Խնդրում ենք հրամայեք, որ գեթ փոքր քանակությամբ մեզ նորից ցորեն տան»: «Լավ, գլխիս վրա: Հիմա կհանձնարարեմ, որ տան»,- պատասխանեց կայմակամը: Երկու թշվառները, շնորհակալություն հայտնելով, գնացին: Նրանց հետևից կայմակամը կրճտացրեց ատամները՝ «Ձեզ ցորե՞ն... կապար, կապար», մոլտաց: Հունվար ամիսն էր, մի ցուրտ առավոտ, օդը ծակող ու կծու էր, որևէ կերպ չէիր տաքանա: Գործով մտա կայմակամի տունը... Միասին գնացինք կառավարական պաշտոնատուն: Բակից ներս մտնելու վրա էինք, երբ երկուսս էլ շփոթվեցինք, սառեցինք ու մեխվեցինք տեղում: Պատի տակ կծկվել էին 22 տղա ու աղջիկ, փոքրիկ երեխաներ, որոնցից փոքրը վեց, իսկ մեծը հազիվ 10 տարեկան լիներ: Դռնչունի նման աղմուկ էր բարձրանում այդ զանգվածից: Մի օր անցնում էի Հալեպի շուկայով, տարագիր մի խումբ խառնիխուռն նստած ու ցրված էր եկեղեցու պատի տակ: Ոչ մեկի երեսին մի գրամ արյուն, ոչ մեկի մարմնի վրա մի գրամ միս չէր մնացել: Բոլորն էլ քաղցից հասել էին կենդանի մեռյալների վիճակի: Մոտ 30 տարեկան մի երիտասարդ նստած էր գետնին, մի ծնկին պառկած էր ծեր, իսկ մյուսին՝ երիտասարդ կին, գիրկը մեկ տարեկան երեխա կար: Թե կանայք և թե երեխան մեռած էին, իսկ երիտասարդը հոգին ավանդելու վրա էր: Մեկը նրա մայրն էր, մյուսը՝ կինը, երեխան էլ որդին էր[30]:

Դրությունն անտանելի դարձավ, երբ սկսեցին հայերին արտաքսել: Գնում ու գնում էին մահվան քարավանները, ճանապարհին խճողված էին դիակները, մահամերձներն ու ուժասպառները, նրանց մեջ վխտում էին գիշատիչները: Երեխաներին խեղդում էին Եփրատի ջրերում, իսկ կանանց՝ զանազան խժդժություններով ու վայրագություններով սպանում: Ռեոսլերը տեղեկագրեց. «Մեռածներին քաղաքից տեղափոխում էին նաև երկաթուղով: Սեպտեմբերին օրական քաղաքում մեռնում էր 25 մարդ, իսկ նույն ամսվա կեսերին՝ 40-60 և ավելի մարդ: Եվ քանի որ կացարան ունեին ոչ բոլոր տարագրյալները, հաճախ մեռածները մնում էին ընկած փողոցներում: Քիչ չէին նաև դեպքերը, երբ հողին էին հանձնում կիսամեռ մարդկանց, մի գերեզմանահորում լցնում էին 5-6 դիակ: Գերեզմանատան մի թարմ թմբի կողքին ընկած էին երկու մեռնող կանայք: Նրանց սայլով այդտեղ էին բերել երեք այլ դիակների հետ թաղելու, սակայն գերեզմանափորը նկատել էր, որ հինգ դիակներից երկու-

30 Նեդիմ Մ., նշվ. աշխ., էջ 84-102:

սը կենդանի էին: Գերագույն իշխանությունների անմտությունը, ինչպես նաև ստորադաս մարմինների կոպտությունը գործում էին միասնաբար և բռնագաղթված հայերին վերաբերվում էին ոչ որպես մարդ արարածի: Եթե Հալեպում իշխանությունների աչքի առաջ էին հայերի հանդեպ վայրագություններ կատարում, ապա ինչե՞ր էին արվում մեկուսի վայրերում»[31]:

Օսմանյան բանակի երկու արաբ զինծառայողներ Ռաս ուլ Այնի ճանապարհին տեսել էին սպանված կանանց բազմաթիվ խանձված, մերկ դիակներ: Մարու անունով մի ենթասպա նույնպես ականատես էր եղել այդ շրջանում կատարված կոտորածներին և վկայություն էր տվել: Այս ջարդարարներին էր հասցեագրված Թալեաթի հետևյալ հեռագիրը. «Թուրքիայի հողի վրա հայերի ապրելու, աշխատելու իրավունքը լրիվ ջնջված է և այդ խնդրում կառավարությունը, ստանձնելով բովանդակ պատասխանատվությունը, հրամայել է նույնիսկ օրորոցի երեխաներին չթողնել: Մի քանի նահանգներում այս հրամանի գործադրության արդյունքները շոշափելի են: Այդպես լինելով հանդերձ, մեզ համար անհայտ պատճառներով, մի շարք մարդկանց համար բացառություններ են արվում և այդ մարդիկ ուղղակի տարագրության վայրերը չեն ուղարկվում և թողնվում են Հալեպում, որով կառավարությունը լրացուցիչ դժվարության է մատնվում: Առանց նրանց պատճառաբանություններն ընդունելու, կին, թե երեխա, նույնիսկ նրանց, ովքեր անկարող են շարժվել, տեղահանեք և թույլ մի տվեք, որ ժողովուրդը նրանց պաշտպանի, որն իր տգիտությամբ նյութական շահերը հայրենասիրական զգացմունքներից բարձր է դասում և չի կարողանում այս գործում կառավարության հետապնդած մեծ քաղաքականությունը գնահատել: Որովհետև ուրիշ տեղերում անուղղակի կերպով բնաջնջման գործողությունները՝ խստություն, արագություն (տարագրության ընթացքում), ճանապարհի դժվարություններ, թշվառություն, այդտեղ կարող են ուղղակիորեն ապահովվել, հետևաբար, առանց ժամանակ կորցնելու, քրտնաջան աշխատեք: Ռազմական նախարարությունից բանակների հրամանատարներին հայտնված է, որ զինվորական կայանների հրամանատարները (Նոքթա-Քոմանդանի)գաղթականների առաքման գործերին չպետք է միջամտեն: Այն պաշտոնյաներին, ովքեր զբաղվելու են այս գործով, հայտնեք, որ առանց պատասխանատվությունից վախենալու պետք է աշխատեն իսկական նպատակն իրականացնելու: Հաճեցեք ձեր գործունեության արդյունքներն ամեն շաբաթ օրը ծածկագրով հաղորդել»[32]:

Այս ծածկագրի, համենայն դեպս նման բովանդակությամբ հրահանգի, գոյությունը միանգամայն պարտադիր էր համարում այն, որ 1916թ. հունիսին Կ. Պոլսում Գերմանիայի դեսպանը գրեց. «Մոտալուտ է Հալեպից բոլոր դրսեցի հայերի աքսորումը... Հալեպ մնալու նախկինում տրված արտոնագրերը հետ են վերցվում»[33]:

Ինչպես մյուս, այնպես էլ նշված ծածկագիրը ստացավ վալին: Գաղթականների առաքման գործողությունները միայն մեկ մարդու ձեռքում թողնելու նպատակն այն էր, որ խժդժություններ գործադրելու համար տրվելիք հրամանները հնարավորին չափ գաղտնի մնային և ոճիրը կատարվեր լռելյայն, առանց տարաձայնությունների տեղիք տալու: Նայիմ բեյը նշում է, որ այս ծածկագիրը Հալեպի գաղթականների առաքման տեսչությանը եռանդուն գործողությունների մղեց: Հալեպից մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող հայերի կյանքը,- նկատում է Նայիմ բեյը,- ժանդարմական որևէ տասնապետի և առաքման պաշտոնյայի քմահաճույքից էր կախված: Նա նկարագրում է իշխանությունների կողմից հայերի համար ստեղծված դժոխքը: «Տիֆի ահագնացման պահին Հալեպում գաղթականության առաքումն այնքան սաստկացավ, որ ոստիկաններն ու ժանդարմները քշքշելով տներից հայերին դուրս էին հանում և խոզի նման պարաններով կապկպում էին» ու քշում: Մի քանի ընտանիքի բոլոր անդամներին, որոնք հիվանդ էին տիֆով, ոստիկանները լցնում են աղբակիր սայլը և տանում Կարլըկ: Նայիմը նշում է, որ իր ծառայության տարիներին հայերից ստացվել է 10 000 դիմում, բայց դրանցից անգամ տասը հաշվի չի առնվել: Հայ քահանային Կարլըկ տանելու ճանապարհին գնդակահարեցին[34]:

31 R 14088, Ab 30049:
32 Անտոնեան Ա., նշվ. աշխ., էջ 35-37:
33 Lepsius J., նշվ. աշխ., էջ 28:
34 Անտոնեան Ա., նշվ. աշխ., էջ 100:

Նայիմ բեյը դառնացած արձանագրում է, որ քաղաքից ու արվարձաններից, ավելի ճիշտ մերձակա տարածքներից, հայ գաղթականներին ոչ թե տեղափոխում, ոչ թե բռնագաղթում կամ աքսորում, այլ պարզապես մեռցնում էին: Որովհետև հյուծված ու մահամերձ մարդկանց սառնամանիքին ճանապարհ հանելը և խզակոթի հարվածների տակ անապատ քշելն անպայման հանգեցնելու էր մահվան[35]:

Ռաս ուլ Այն.- Դեր Զորի մութասարիֆ Սուադը Ռաս ուլ Այնում մի կալվածք ուներ, որի պահպանությունն ու մշակումը հանձնարարել էր այլանդակ բարքերի տեր Դյուրի անունով մեկին: Տեղահանության սկզբին նա աշխատում էր խարբերդում: Հենց որ Եփրատի ափերին քարավան էր երևում, ջոկում էր գեղանի աղջիկների, ատրճանակով սպառնալով նրանց պղծում էր «իր նման սրիկա ու անբարոյական ընկերների հետ», ապա աղջիկներին մեռած թե կենդանի թափում էր գետը: Իր կալվածքում աշխատելու համար նա ընտրել էր 30 հայ ընտանիք, որոնցից յուրաքանչյուրում մի քանի աղջիկ կար: Նրանց այդ սրիկան պղծեց հաճախ «զարհուրելի պարագաներում»: Դիմադրողներին սպանում ու նետում էր գետը, իսկ պղծվածներին նվիրում էր արաբ այն քոչվորին, ով «ջարդերում մեծ դեր էր խաղացել»: Ռաս ուլ Այնի մուֆտին սեփականացրեց ու տարավ 30, Իսմայիլ և Հուսեին բեյերը՝ նույնպես 30-ական ընտանիք, որոնց որոշ ժամանակ աշխատեցրին իրենց կալվածքներում, աղջիկներին պղծեցին, իսկ վերջում նրանց նույնպես դեպի հարավ քշեցին ու սպանեցին: Այդ ամենով հանդերձ, քանի դեռ մութասարիֆը Սուադն էր, Ա. Նուրիի հրամանները չէին կատարվում և գաղթականներն անապատ չէին ուղարկվում: Բայց 1916թ. սկզբին իրավիճակն արմատապես փոխվեց: Ռաս ուլ Այնի չեթեներից, գրում է Նայիմ բեյը, հրոսակախումբ կազմվեց, իբր թե տեղի գաղթականներին տեղափոխության ժամանակ հարձակումներից զերծ պահելու համար: Իրականում նրանք ճանապարհին գաղթականներին կողոպտելու, սպանելու խնդիր ունեին:

Ռաս ուլ Այնի եղերական դեպքերի հրամանը Հալեպից տրվեց: Հրոսակախմբի պետերից մի քանիսը Հալեպ գնացին և տեսակցություն ունեցան կուսակալ Աբդուլհալիկի հետ: Նրանց վերադարձից մի քանի օր հետո սկսվեցին բռնագաղթն ու կոտորածը[36]:

Այդ ավազակապետերից մեկը Ռաս ուլ Այնի թաղապետ Արսլանն էր, որն իր եղբոր հետ ծանրակշիռ դեր խաղացին նաև Դեր Զորի ջարդերի ժամանակ: Նրանք վիթխարի քանակությամբ թալանված արժեքներ ունեին և վաճառում էին Հալեպում:

Ռաս ուլ Այնում կատարվեց մի աներևակայելի եղեռնագործություն: Այստեղ վրանների տակ պատսպարվել էր 50 հազար հայ: Վանի, Մուշի և Բիթլիսի հայության ջարդարար Ջևդեթ բեյը նշանակվել էր Ադանայի կառավարիչ: Նշանակման վայրը մեկնելու ճանապարհին 1916թ. փետրվարին նա կանգ է առնում Ռաս ուլ Այնում և, տեսնելով հայերի վրանները, բղավում է. «Այդ շները դեռ կենդանի՞ են», և հրամայում է բոլորին ոչնչացնել: Ու երբ կայմակամը հրաժարվում է հրամանը կատարելուց, Ջևդեթը բղավում է. «Ուրեմն չգիտե՞ս, թե կառավարությունն ինչ ծրագիր է հետապնդում»[37]:

Կայմակամն աշխատանքից հեռացվեց: Նոր կայմակամ նշանակվեց Ֆ. Ռեֆիին, որը «Ջևդեթ բեյի մարդն էր»: Մարտի 17-ին սկսվեց բռնագաղթը: Ռեֆիին օգնելու համար Հալեպից եկած բռնագաղթի գրասենյակի վարիչ Ադիլը հրամայեց՝ սպանելուց առաջ հայերին թալանել: Նա ջարդարար խուժանին ցուցում տվեց. «Ջլինի թե թեկուզ մեկ հոգու ողջ թողնեք, փոքրերին, նույնիսկ մինչև 7-8 տարեկաններին ջարդեք անխնա, որովհետև, եթե ողջ թողնեք, վաղը դրանք կելնեն և մեզնից վրեժ կլուծեն»[38]:

Այս եղեռնագործության մասին Ա. Անտոնյանի և Նայիմ բեյի պատմածները հաստատող բազմաթիվ վկայություններ կան: Դրանց թվում են ջարդարարների խոստովանությունները: Ռաս ուլ Այնում հայերի ջարդերն ու տեղահանությունը տեղի ունեցան միաժամանակ, որովհետև հայերին ջարդեցին գյուղաքաղաքի մերձակայքում՝ Ջրջրի ափին Շեդդադի ճանապարհի վրա: Մազապուրծ հայերը զարհուրելի բաներ էին պատմել դրանց մասին: Ջարդերը տևեցին մինչև հունիս:

Հալեպից մի քանի քայլ հեռացողների համար ապրելու հույս այլևս գոյություն չուներ: Գաղթականների առաքման գրասենյակի պաշտոնյաներից վստահելիներին պատվիրվում էր, որ մահ

35 Անտոնեան Ա., նշվ. աշխ., էջ 100:
36 Ն.տ., էջ 54-55:
37 Ն.տ., էջ 52-53:
38 Ն. տ., էջ 56:

պատճառող խժդժություններից ձեռնպահ չմնալ: Եփրատի շրջանում գտնվող Աբուհարարի մյուղիր Ռահմեդդինին, որ զարհուրանք էր դարձել գաղթականների գլխին և անընդհատ մարդ էր սպանում, բազմաթիվ բողոքներից հետո իբր դատելու համար Հալեպ տարան: Լուրը Կ. Պոլիս է հասնում և շուտով ստացվում է հետևյալ հեռագիրը. «Հալեպի կուսակալությանը. Լսել ենք, որ մի շարք պաշտոնյաներ ռազմական դատարանին են հանձնվել ծանոթ անձնավորությունների (հայերի) նկատմամբ խստություններ և հարստահարություն գործադրելու մեղադրանքով: Դա որքան էլ ձևական բան է, բայց կարող է համանման պաշտոնյաների համարձակությունը նվազեցնել: Այդ պատճառով հրամայում եմ, որ նման քննություններ չկատարվեն» (Թալեաթ)[39]:

Ռահմեդդինն իսկույն բանտից ազատվեց: Վերադառնալիս նա ատրճանակը պարպեց գաղթականների ուղղությամբ ու բղավեց. «Բողոքեցիք և ի՞նչ եղավ. ահա նորից պաշտոնիս եմ անցնելու»: Եվ անցավ ու աներևակայելի գազանություններ գործեց: Գաղթականները նրան կնքեցին «Ոսկոր կոտրող» մականունով: Բռնագաղթվածներին նույնիսկ թույլ չէին տալիս բողոքներ գրել: «Ընտանիքն ու զավակները մորթված,- գրում է Նայիմ բեյը,- բռնությամբ դատերը խլած, պատիվն արատավորված թշվառը, երբ ճանապարհին... ուզում էր հեռագրով իր ողբալի վիճակը պարզեր և օգնություն հայցեր, հեռագրատան պաշտոնյաները նրան հանդիմանում էին... Դրանք մահապարտների բողոքներ էին...»: Լեփսիուսը գրում է, որ 1916թ. հունվարին գրեթե 6 000 հայի Այնթափից քշեցին դեպի անապատ: «Ապրիլին 14 000 աքսորյալ կոտորվեց Ռաս ուլ Այնում: Կայմակամի հրամանով օրական 300-500 հոգի տարվում էր գետափ և այնտեղ սպանության մեծ փորձ ունեցող, հատուկ այդ նպատակով մարզված չեչեն ոճրագործները նրանց մորթում ու նետում էին գետը»[40]:

Ռաս ուլ Այնի կայմակամ Ց. Զիան գաղթականության տեսչությանը գրեց, որ չորս ամսում քաղցից ու հիվանդություններից մահացել է 13-14 հազար գաղթական[41]:

Հայտնի հրապարակախոս Ս. Նազրֆը, որը 1915թ. Մոսուլի, ապա Բաղդադի կուսակալն էր, Ռաս ուլ Այնով անցնելուց հետո գրեց. «Հայ ժողովրդի բնաջնջումը կդառնա Թուրքիայի պատմության ամենասև էջը»:

Բաբ.- 1916թ. հունվարի 20-ին Ա. Նուրին Բաբի գաղթականների առաքման պաշտոնատար Մուհարեմին գրում է. «Բաբում թույլ չտաք, որ որևէ հայ մնա: Գաղթականների առաքման ընթացքում ձեր կողմից դրսևորված խստությունն ու արագությունը միայն կարող են ապահովել այն նպատակի իրագործումը, որին ձգտում ենք: Միայն թե պետք է ուշադրություն դարձնեք, որ ճանապարհներին դիակներ չմնան: Այս գործի համար ձեր կողմից կարգվելիք մարդկանց տրվելիք վարձերի առավելագույն չափը հայտնեք: Փոխադրության միջոցներ հայթայթելով մի զբաղվեք: Գաղթականները հետիոտն էլ կարող են գնալ: Այս օրերին մեզ ուղարկած չաբաթական մահացությունների ցուցակը գոհացուցիչ չէ: Դրանցից հասկացվում է, որ նրանք (հայերը) այդտեղ շատ հանգիստ են ապրում»: Գաղթականների առաքումը պետք չէ, որ ճանապարհորդության նմանվի: Բողոքին, ողբին նշանակություն մի տվեք: Կառավարության կողմից հարկ եղած հրահանգներ տրվել է նաև կայմակամին: Ջանացեք»[42]:

«Այս Մուհարեմ բեյը,- նկատում է Նայիմը,- ... գաղթականների առաքման համար նշանակված պաշտոնյաներից ամենաարյունարբուն էր: ... 150 ոսկի ամիսը նրան տալիս էին, որպեսզի ընչաքաղցության պատճառով ներողամիտ չլինի: Այս մարդը մեծաթիվ առաքումներ կատարեց: Անձամբ պատճառ եղավ, որ հազարավոր հայեր ամենաանողորմ ձևով մեռնեին ճանապարհներին: Ա. Նուրի բեյը այս անողորմ մարդուն որպես գործակից տվեց հեծյալ ժանդարմների մի հարյուրապետի, որն իր հետ Բաբ տարավ Ա. Նուրիի հետևյալ նոր հրահանգը. «Բաբի կազան հայ գաղթականներից դատարկելու համար կատարվելիք խստությունների համար պատասխանատվության չեք կանչվի»[43]:

39 Անտոնեան Ա. նշվ. աշխ., էջ 38:
40 Լեփսիուս Ցո. նշվ. աշխ., էջ 256:
41 "Армянский вестник", 1916, N23.
42 Անտոնեան Ա. նշվ. աշխ., էջ 91-92:
43 Ն. տ., էջ 92-97:

Համաձայն այս հրահանգների, Բաբի գաղթականները պետք է 24 ժամվա ընթացքում տեղահան արվեին: «Բոլոր պարագաներում,- գրում է Նայիմ բեյը,- այս տեղահանությունը նրանց (գաղթականների) մահվանն էր հանգեցնելու: Եղանակը ձմեռ, ոտից գլուխ մերկ, այս վիճակում նրանք ընկնում էին ճանապարհի եզրերին ու մեռնում: Բաբից մինչև Մեսքենե ճանապարհի երկայնքի արտերը հայերի դիակներով ծածկվեցին: Նրանց դիակների վրա նույնիսկ մի ափ հող չէր լցվում: Դիակների այդպես ընկած լինելու մասին իմանալով կառավարությունն իրար անցավ: Զգուշանալով, որ այդ դիակները կարող են նաև օտարերկրացիները տեսնել, հրամայեց, որ թաղեն: Բահ ու բրիչ ճարեցին: Մեռել թաղողներ նշանակեցին... Մեռածների թիվը 15 օրը մեկ ծածկագրերով Կ. Պոլիս էին հայտնում: Սա ևս ապացուցում է, որ գաղթականների ընդհանուր տեսչության փոխադրության պաշտոնատունը լրիվ ոճրամիտ նպատակով էր ստեղծվել»[44]:

«Կառավարությունը,- շարունակում է Նայիմ բեյը,- պահանջում էր, որպեսզի հայի կյանքն ու պատիվը ոչնչացվի: Այլևս նրանց համար ապրելու, գոյության իրավունք չկար: Թալեաթ փաշան գրում էր. «Դարեր ի վեր Թուրքիայի համար փորձանքի տարր դարձած և վերջին ժամանակներս ամբողջ Օսմանյան կայսրությունը արյան մեջ խեղդել ջանացող հայերի գոյությունն ապահովել ուզողներին որպես հայրենիքի դավաճանների պետք է պատժել տարբեր պատրվակներով...»[45]:

Ականատեսներից մեկի վկայությամբ Բաբում 1 029 հայ սովից մեռան երկուսուկես օրում:

«Երբ Մաարայի, Բաբի և Հալեպի գյուղերում բնակեցված հայերին քշելու հրամանը եկավ,-գրում է Նայիմ բեկը,- կայմակամներին այնպիսի անգութ հրահանգներ տվեցին, որ անհնար էր դրանք կարդալիս զսպել արտասուքը: Հալեպից հրամայում էին ժանդարմներին, որ աշխատեն ճանապարհներին քաղցի ու ծարավի միջոցով հնարավորին չափ պակասեցնել գաղթականների թիվը»[46]:

Հունվարի 20-ին Ա. Նուրին հանձնարարում է Բաբի գաղթականական ծառայության պաշտոնատար Մուհարեմին. «Զգետք է թույլ տաք, որ Բաբում որևէ հայ մնա: Գաղթականների առաքման գործում միայն ձեր կողմից ցուցաբերվելիք խստությունն ու արագությունն են ի վիճակի ապահովելու նպատակը, որ հետապնդում ենք: Միայն ուշադրություն դարձրեք, որ ճանապարհներին դիակներ չմնան...»[47]:

Նման հանձնարարություն տրվում էր մեկին, որին Նայիմն անվանում է «ամենաարյունակզակ»: Ա. Նուրին բոլոր միջոցներով խթանում էր հայ գաղթականներին ամենադաժան եղանակներով ահաբեկչության ենթարկելը: Խնդիր էր դրված Բաբի հայության տեղահանությունն ավարտել 24 ժամում: «Ձմեռ էր, ոտից գլուխ մերկ... ճամբարներից չհեռացած ընկնում ու մեռնում էին: Բաբից մինչև Մեսքենե՝ ճանապարհի երկայնքով արտերը լցվեցին հայերի դիակներով...»[48]:

Սակայն Ա. Նուրին տեղահանման տեմպերից գոհ չէր և անձամբ գնաց այնտեղ: Նրան ուղեկցում էր էյուբը: Կատարվեց ամենազարհուրելի տեղահանությունը՝ այրում էին վրանները, հայերի վրա կրակելով 17 000 գաղթական տեղահան արվեց: Հարյուրավոր մարդիկ ընկան ճանապարհին, մեռան, և դիակները մնացին ընկած ցեխի մեջ: Նույն բանը կատարվեց Մաարայում և Մունբուջում, որտեղ թաղապետ Հ. Ֆեհմին կենդանի թաղեց տասնմեկ տարեկան երեխայի: Թալեաթը պահանջում էր առանձնահատուկ դաժանություն դրսևորել հոգևորականների նկատմամբ և, իսկապես, զանգվածային ջարդերի ժամանակ ամենազարհուրելի միջոցներով ոչնչացնում էին հոգևորականներին: Կատարելով Թալեաթի 1915թ. դեկտեմբերի 1-ի հեռագրով տրված հրահանգը, տեղերում հոգևորականների ճնշող մեծամասնությանը ոչ թե տեղահանում, այլ պարզապես սպանում էին:

Ռաս ուլ Այնից Զևդեթն անցավ Ինթիլլի, որտեղ թափով առաջ էր տարվում երկաթուղու շինարարությունը և կուտակվել էր 50 000 հայ, հիմնականում կանայք ու երեխաներ, ովքեր մի կտոր հացի համար օրնիբուն տնքում էին շինարարության վրա: Դեռ 1915թ. դեկտեմբերին Թալեաթը պահանջեց նրանց ուղարկել «տարագրության վայրեր»[49]:

44 Անտոնեան Ա. նշվ. աշխ., էջ 97-98:
45 Ն. տ., էջ 99:
46 Ն. տ., էջ 91:
47 Ն.տ.:
48 Ն.տ., էջ 97:
49 Ն.տ., էջ 58:

Երկաթուղու ղեկավարությունն աշխատող ուժի սուր կարիք ուներ և անտեսեց ՆԳ նախարարի պահանջը: 1916թ. հունվարին ստացվեց նոր հեռագիր. «Իմացել ենք, որ Ինթիլլից, Այրանից սկսած մինչև Հալեպ երկաթուղու երկայնքով 40-50 հազար հայ, մեծամասամբ կանայք ու երեխաներ, կան: Խստագույնս կպատժվեն նրանք, ովքեր ռազմական առաքումների կարևորագույն նշանակություն ունեցող այդ դիրքերում թշվառության կուտակման պատճառ են դարձել»: Թալեաթը պահանջում էր նրանց անհապաղ քշել «նշանակման վայրերը»[50]:

Նա հարկադրված նոր հեռագիր ուղարկեց, որով թույլատրում էր երկաթուղու շինարարության վրա աշխատողներին մնալ, իսկ ընտանիքներին՝ ոչ: «...Այդ կանանց,- գրում է Նայիմը,- մի օր հանկարծ ճանապարհ հանեցին և քշեցին Մեսքենեի անապատ, այնտեղից Դեր Զոր ուղարկելու համար»[51]:

Մեսքենե.- Նայիմ բեյին Մեսքենե ճանապարհ գցելով, էյուբը հանձնարարեց. «Նայիր, որ այդ մարդկանց (հայերին) ողջ չթողնես. հարկ եղած դեպքում քո ձեռքով սպանիր: Նրանց սպանելը ևս զվարճություն է»[52]:

Մեսքենեն իր աշխարհագրական դիրքի՝ Սիրիայի և Միջագետքի սահմանին գտնվելու հանգամանքով դարձել էր բոլոր բռնագաղթվածների կուտակման վայր՝ մինչ նրանց կբաժանեին Եփրատի երկայնքով: Գաղթականներն այստեղ քշվեցին հազարներով և նրանց մեծ մասը Մեսքենեում մնաց ոսկորների կույտերի ձևով, որտեղ կործանվեց մոտ 60 000 հայ՝ բոլորը դարձան սովի, տանջանքների և հիվանդությունների զոհ: Մեսքենեի դաշտի պատկերը սահմռկեցուցիչ էր: « Գերեզմանների բլուրներ անվերջ շարքեր են: Դրանցից յուրաքանչյուրում թաղել էին ինչքան պատահի՝ 200-300 դիակ՝ բոլորը կին, երեխա, ծեր: 4000-5000 հայ բնակեցվել էր Մեսքենեի ու Եփրատի արանքում: «Նրանք բոլորը լոկ ստվերներ էին... Հաճախ այդ դժբախտներին առանց մնդի թողնում էին 4-5 օր»: «Մեսքենեի և Աբուհարրարի միջև գտնվող Տիրս կոչված զորակայանը ամենազարհուրելի եղեռնավայրերից մեկն էր: Մահվան դատապարտվածներն այնտեղ էին սպանվում ու նետվում գետը: Մեսքենեի մի ծայրից մյուսը լցված էր կմախքներով, այն պարզապես ոսկորների արտի տեսք էր ստացել»[53]:

Ականատեսներից մեկը հաստատում է Նայիմի պատմածը: Նա գրում է. «Մեսքենեի գծի վրա կիսամերկ ու բոկոտն, անօրինակ վայրագությամբ, ձմռան ամենացուրտ օրերին 800 որբերի քշեցին մահվան ուղերթներով: Շատերն ընկան ճանապարհի կեսին կմախքացած ու որդոտած... Շատերին նետեցին գետը և մնացածին քշեցին անապատի խորքերը: 3000 որբեր, աննկարագրելի տառապանքներից հետո, զոհ գնացին թուրք վայրագ ճիվաղների մոլեգնության...»[54]:

«Հալեպից Ռաս ուլ Այնի և Մեսքենեի ճանապարհով 200 հազար հայ ուղարկվեց, և այս մեծ թվից հազիվ 5 000- 6 000 հոգին կարողացավ ողջ մնալ: Երեխաներին Եփրատը գցելով մեռցրին»: Կանանց ճանապարհներին սվիններով կամ հրազենով սպանեցին: Որպես վարձատրություն այդ գազանությունների համար Ա. Նուրին նշանակվեց Թալեաթի խորհրդական:

Մեսքենեի և Աբուհարրարի արանքում հայերին ոչ միայն սպանում էին, գետը նետում, այլև դիակները խոշտանգում: «Մեսքենեն մի ծայրից մյուսը լցված էր կմախքներով՝ պարզապես ոսկորների արտի տեսք էր ստացել»: Որովհետև Նայիմը Մեսքենեում հայերի տեղահանությանը գրեթե մասնակցություն չունեցավ, նրան հետ կանչեցին: Ամերիկյան "Missionary Review of te World"-ի 1916թ. հոկտեմբերի համարում ականատեսը պատմում է. «Մեսքենեում ես հանդիպեցի 3 500 աքսորված հայերի և ավելի քան 100 որբերի: Ձկար մի վրան, որտեղ մահամերձ կամ հիվանդ չլիներ: Ով չէր կարողանում մուրալով մի կտոր հաց ձեռք բերել, ուտում էր խոտ, ինչ որ պատահեր: Հարյուրավոր հիվանդներ մնացել էին առանց ծածկի, այրող արևի տակ»:

Սակայն բոլորին տեղահանել չհաջողվեց: Գործն ավարտին հասցրեց նորից Զևդեթը, որը Բահրեի ժանդարմերիայի հրամանատար Ցաշարի միջոցով հայերին խումբ-խումբ տեղահանեց «մասնավոր պատվերներով»: Դա տեղահանություն չէր, այլ «կատարյալ ջարդ»: 1 800 երիտասարդ լրիվ սպանվեց և քարավանները դիակների վրայով անցան... Նրանց նույն բախտն էր սպասում: Անցորդներն այդ ճանապարհին տեսան իրենց մազերով ծառերի ճյուղերից կախված մերկ աղջիկների, որոնք սպանվել էին «չարաչար պղծվելուց հետո»[55]:

Ճամբարներում մնացին միայն երեխաները, որոնք «ծառերի տակ երբեմն դիակների կողքին» բարձրաձայն լաց էին լինում մերկ ու քաղցած: Ի վերջո նրանց հավաքեց Կոփելը, լցրեց դինամիտի դատարկ արկղերը և տարավ Ինթիլլի իր որբանոցը: Բռնագաղթված հայերի միայն 10%-ը հասավ Մերդին: Նրանցից 500-ին տարան Ռաս ուլ Այն, որոնք որոշ ժամանակ անց ոչնչացվեցին չեչենների կողմից:

1916-ի ապրիլին, երբ Ռաս ուլ Այնի ջարդերը դեռ ընթացքի մեջ էին, և ճամբարները լցված էին փոքր, անգամ կրծքի երեխաներով, ցից հանված կանանց ու տղամարդկանց դիակներով, գերմանացիներն ու գերմանամետները ոչ միայն չկարեկցեցին, այլ գերադասեցին գովաբանել թուրքերի գործելակերպը: Իսկ գերմանական «Էմդեմ» ռազմանավի հրամանատար Ֆոն Մյուքեն ցինիկաբար հայտարարեց. «... Խաղաղության պայմանագիր կնքելուց հետո այնքան լուծելիք խնդիրներ են լինելու, անգամ հավը փետուրը չի շարժելու հայերի համար...»[56]:

«Հալեպի արևելյան կողմում,-պատմում է Լեփսիուսը,- Եփրատի ափին գտնվող Մեսքենեում, համաձայն թուրքերի, 55 000 սովյալ հայ թաղվեց»[57]:

Դեր էլ Զոր.- Ռազմաճակատներում թուրքիայի պարտությունը կայսրությունում ստեղծել էր հեղձուցիչ մթնոլորտ: Այն հաղթահարելու ուղիների փնտրտուքում ձևավորվեց Ելդրրմ (կայծակ) անունով բանակ ստեղծելու գաղափարը, որը գերմանացիների մտահղացմամբ պետք է կայծակի արագությամբ անգլիացիներից խլեր Երուսաղեմը: Այդ բանակը ղեկավարելու էին Ֆալկենհայմը և Մ. Քեմալը: Գերմանիան ջանքեր էր լարում արաբներին անգլիացիների դեմ հանելու համար. Հալեպում արաբական տարազներով հանդիսություններ էին կազմակերպվում «Աստված պատժի Անգլիային» նշանաբանով: Ջերքեզ Հիքմեթին ուղարկեցին Միջագետքի անապատները արաբ շեյխերին ու ցեղապետերին Թուրքիայի կողմը գրավելու առաքելությամբ: Եվ դա հաջողվեց. արաբական շեյխ Հաշիմը, որի ազդեցության գոտին ներառում էր Եփրատի ավազանը, խոստացավ աջակցել Ելդրրմին: Գերմանական քաղաքականության օգտին լայն աշխատանք ծավալեցին Հալեպում բնակվող գերմանուհիները, մասնավորապես տիկին Կոխը, որն անասնական ատելությամբ էր լցված հայերի հանդեպ: Սակայն հայերի ողբերգությունն այնքան ահավոր էր, որ անգամ այդ տիկինը մահակը ձեռքին Հալեպի փողոցներում ծեծում էր հայերին խոշտանգող ոստիկաններին, նաև հավաքում ու խնամում էր հայ որբերին: Նա միաժամանակ պատրաստեց ու տարածեց մի գրքույկ, որը հռչակում էր, թե իսկական մահմեդական չի կարող համարվել նա, ով առնվազն չորս քրիստոնյա չի մեռցրել: Ահա այս մթնոլորտում էր նախապատրաստվում Պաղեստինի վերագրավումը, որի ճանապարհի երկայնքով գաղթականների մեծ կուտակումներ կային, ինչը խանգարող հանգամանք էր բանակի համար: Բ. Դուրը հեռագիր հեռագրի հետևից էր ուղարկում Մեսքենե -Դեր Զոր և ավելի հարավի գիծը տարագրվածներից մաքրելու համար, մանավանդ որ Պաղեստինի վրա արշավող Ելդրրմ բանակի պարենավորումը, ռազմական մատակարարումն իրականացվելու էր այդ ճանապարհով:

Դեր Զորում վիճակն աղետալի դարձավ, երբ սկսեցին հայերից դատարկել Հալեպն ու շրջապատը և տանել Մեսքենե: Դա վերջ չունեցող քարավանների շարան էր: Լրիվ դատարկվեցին Բաբը, Մաարան, Մումբուջը: Հիմնականում հետիոտն, երբեմն նաև ուղտերով կամ ավանակներով հայերին ծեծելով քշում էին Մեսքենե, դեպի Դեր Զոր: Նրանք առավելապես Պոլսի շրջանների, Ռոդոսթոյի, Նիկոմեդիայի, Պարտիզակի, Ադաբազարի, Գեյվենի, Կոնիայի, Անատոլիական երկաթուղու մերձակայքի, Կիլիկիայի հայերն էին: Մեսքենե հասավ Ռաս ուլ Այնի ջարդերի լուրը: Վատ լուրեր էին ստացվում նաև Հալեպից: Օրինակ, ասում էին, թե այլևս գաղթականներն ուղարկվելու են Եփրատի ոչ թե աջ, այլ ձախ ափերով, ինչը նշանակում էր նրանց տանել դեպի մահ՝ մինչև Ռաքքա քայլել անջուր անապատով և մեռնել շոգից, ծարավից, քաղցից: Եփրատի այդ ափը՝ էլ Զեզիրեն, գերեզման տանող ճանապարհ էր: Ա. Նուրին հայերի համար այդ ուղին

---

50 Անտոնեան Ա. նշվ. աշխ., էջ 60-61:
51 Ն.տ., էջ 59:
52 Ն. տ., էջ 102:
53 Ն. տ., էջ 104:
54 «Ավանգարդ» (լրդ), 17. 01.1990:

55 Անտոնեան Ա. նշվ. աշխ., էջ 61-62:
56 Ն.տ., էջ 63:
57 Լեփսիուս Ցո. նշվ. աշխ., էջ 279:

էր ընտրել, որպեսզի հեշտացներ Դեր Զորի ջարդարարների գործը: Գաղթականները ճանապարհին սարսափազդու լուրեր էին ստանում Դեր Զորից: Բաբի գաղթականների ձեռքն ընկավ արդարադատության նախարարության այն հրահանգը, որը պահանջում էր անգամ ոճրագործներին ու դատապարտվածներին բանտերից հանել և Դեր Զոր ուղարկել[58]:

Հայերը նաև տեսնում էին, որ Դեր Զոր էին տարվում նաև մահմեդական ոճրագործները, որ կտրուկ փոխվել էր ժանդարմների և, ամբողջությամբ վերցրած, թուրքերի վերաբերմունքն իրենց հանդեպ: «Անպակաս էր սպառնալից քմծիծաղը, չնական հեգնանքը»: Ա. Անտոնյանը, որը նույնպես բռնագաղթվածների մեջ էր, նկատում է, որ թուրքերն իրենց այնպես էին զգում, որ կարծես «առանց մարդասպանության ապրելն այլևս անհնար էր»[59]:

Իսկ հայերն «ապշել, խելագարվել, գլխիկոր էին՝ ամեն կողմից շրջապատված մահվան սպառնալիքով, այնքան իրական ու բաբախուն, որ կարծես հպվում էր նրանց ինչպես դաշույնի շեղբը, հրացանի գնդակը...»: «Պառավները,- վերհիշում է Ա. Անտոնյանը,- հանել էին հողով լի այն տոպրակները, որ իրենց հետ բերել էին հեռավոր հայրենիքից... Զգալով, որ մեռնելու են, չունեցողներին էին բաժանում այդ հողը... գտնե հայրենի հողի գիրկն ամփոփվելու պատրանքով փակեին իրենց աչքերը»[60]:

Հայերի բռնագաղթի ողբերգականությունն ավելի էր սրում այն հանգամանքը, որ «նշանակման վայր» արտահայտությունն անորոշ էր, կոնկրետ հասցե չուներ: Կառավարության հրամանները՝ «Քարավաններին միացրեք և ուղարկեք», «Ուղարկեք անապատ» և այլն, որոշակի վայր չէին նշանակում. որոշակի էր միայն հարավ և անապատ բառերը, բայց թե հարավում որտեղ և անապատի որ հատվածում, բացարձակապես անհայտ էր: Դրա հետևանքով օրեր, շաբաթներ, ամիսներ շարունակ քայլող հայ տարագիրները այդպես էլ չիմացան, թե իրենց նոր բնակատեղին որտեղ է՝ Հալեպի նահանգում թե Իրաքում, Պարսից ծոցի շրջանում թե Պաղեստինի սահմանամերձ շրջաններում: Օրինակ, Թալեաթի 1915թ. դեկտեմբերի 3-ի ծածկագիրը՝ հայերին «անպայման ուղարկեք իրենց տարագրության վայրը..»[61]:

Ո՞րն է այդ վայրը: Ոչ ոք չգիտեր: Իշխանությունների համար դա նշանակություն չուներ: Հեռագիրը ստանալով՝ «Հալեպի շրջանները հեծյալ ժանդարմներ ուղարկվեցին, որոնք հազար տեսակի կեղեքումներով գյուղերից դուրս էին հանում ժողովրդին ու քշում Մեսքենե...»[62]:

«Կառավարությունը պահանջում էր, որ հայի կյանքն ու պատիվը ոչնչացվեին: Այլևս նրանք ապրելու, գոյություն ունենալու իրավունք չունեին»[63]:

Դեր Զորում վայրագությունների գլխավոր դերակատար Զեքին իր մեջ միավորում էր սադիստական դաժանությունը և հայերի հանդեպ վրեժխնդիր ատելությունը, ինչը նրան դարձրին հայատնագործություն ոչ միայն Զորում, այլև հարևան շրջաններում հայերին անխնա կոտորելու և մեռցնելու համար: Նա 250 000 գաղթականի քշեց Մարաթի և Սուվարի անապատները: Դեր Զորում ստացվեց ՆԳ նախարարի ծածկագիրը. «Այլևս գաղթականներու առաքման վերջը տրված է, նախորդ հրահանգի համաձայն գործողութիւնները սկսեք և հնարավորին չափ շտապեք»[64]:

Զեքի բեյը ծածկագրում է Հալեպ. «Նախարարության կողմից ինձ հաղորդած հրամանի համաձայն, Հալեպից առաքվող գաղթականների թվի փոքրանալուց հետո այստեղ եղած հայերի բնակավայրը պիտի փոխել (այսինքն՝ նրանք պետք է ջարդվեն): Հետևաբար՝ հաճեցեք հայտնել, թե գաղթականների առաքումը մինչև երբ է տևելու»[65]:

Երկու օր անց սկսվեց հայերի կոտորածը, որն իր նախադեպը չուներ: Ավելի քան 200 հազար հոգուց միայն մի քանի գեղեցիկ աղջիկներ կենդանի մնացին: Սպանությունների հսկայական ծավալները սկզբում Զեքիին չփոթության մատնեցին: Նա հարկադրված եղավ Ռաս ուլ Այնից կանչել բոլոր ջարդարարներին, մասնավորապես՝ չեչեններին: Սակայն այդ համալրումը նույնպես բավարար չէր: Նա մերձակա արաբական ցեղերին խոստացավ սպանված հայերի հագուստները, եթե մասնակցեն ջարդերին: Արաբները համաձայնվեցին և դարձան Դեր Զորի սահմռկեցուցիչ ողբերգության գլխավոր դերակատարներից:

Ժողովուրդը Դեր Զորից հանվեց խմբերով, իբր տանում են Մոսուլ, բայց նրանք Շեղդադից այն կողմ չանցան, քանի որ մինչև այդտեղ հասնելը Զեքին հասկանալով, որ անհնար էր այդ վիթխարի զանգվածին սպանելով վերջացնել, առաջացրեց արհեստական սով. մարդիկ «էշերը, շները, կատուները ուտել» վերջացնելուց հետո անցան ձիերի և ուղտերի լեշերին, ապա, երբ այլևս ուտելու բան չկար, սկսեցին ուտել մարդկանց, առավելապես փոքր երեխաների դիակները: Դիվահարների քարավաններ էին այլևս դրանք, որոնցում հնարավոր էր տեսնել սոսկալի տեսարաններ... »[66]:

Մի դեղագործ հատը մի ոսկով թույն էր վաճառում: Զեքին 550 հայ երիտասարդների ձերբակալեց, յոթ օր ոչ ուտելիք և ոչ էլ ջուր տվեց, որով նրանց հարկադրեց միմյանց ուտել: Որպեսզի դաժանության օրինակ ցույց տար իր ստորադասներին, նա փոքր երեխաներին քաշում էր ձիու վրա, ապա խփում գետնին, ջախջախում և ասում. «Մի կարծեք, թե անմեղի մեռցրի: Սրանց (հայերի) նույնիսկ նորածիններն են հանցագործ, որովհետև վրեժի սերմ են իրենց մեջ կրում...»[67]:

Չնայած ահարկու ջարդերին, որոնք խլեցին հարյուր հազարավոր մարդկանց կյանք, այնուամենայնիվ Զորում 1916թ. հուլիս ամսին դեռ կար 20 000 հայ: Դերմանացի սպայի վկայությամբ ութ շաբաթ անց մնացել էին միայն մի քանի հարյուր ահեստավոր: Չեչենները նրանց խումբ-խումբ կոտորել էին: Այդ իրողությունը հաստատում է նաև "Missionary Review of the World"-ը, որը 1916թ. հոկտեմբերի իր համարում գրում է. «Դեր Զորում ու նրա շրջակայքում կա շուրջ 30000 հայ: Դրությունը հատկապես սարսափելի էր Դեր Զորում: Ժողովուրդը չէր կարողանում իր հետ վերցնել անգամ ամենաանհրաժեշտ իրերը: Հաճախ էինք ականատես լինում դեպքերի, երբ մահամերձ մարդիկ գերեզմանափոսերից բարձրանում էին և հաց ու ջուր խնդրում: Նրանք իրենց համար գերեզման էին փորում, պառկում դրա մեջ և սպասում մահվան: Եղել են դեպքեր, երբ սովից գազազած մարդիկ կերել են իրենց երեխաներին: Սա մահվան պայքար էր, մեր երևակայությունից դուրս բան»: Միայն գեղեցիկ աղջիկների մի մասը փրկվեց: Մեկ-երկու շաբաթում նրանց հարկադրեցին մի քանի անկողին փոխել, ապա ուղտերով տարան Ռաս ուլ Այն, Մարտին վաճառելու: Զաղծվածները վաճառվում էին 20, իսկ մյուսները 5 դահեկանով: Ոմանց էլ նետում էին հասարակաց տներ, որոնցից մեկը տեղավորված էր կաթոլիկական եկեղեցում:

Դեր Զորը մարդկության պատմությանը հայտնի ջարդավայրերից ամենաահարկուն, ամենազազրելին ու ամենատմարդին էր, ոչնչացնելու մարդու հնարքների ամենաստոր գործադրման առաջին հրապարակը:

Թուրքական «Թասվիրի Էֆքյար» լրագրի նախկին խմբագիր Ակյու բեյը Սալիհ Զեքիին հարցրել է, թե արդյոք ճի՞շտ է, որ նա սպանել է 10 հազար հայ: Ս. Զեքին պատասխանել է. «Դուք անպատվում եք ինձ: Ես արժանապատվություն ունեմ, 10 հազարն ի՞նչ է, մի քիչ վեր բարձրացեք»: Որոշում կայացնելով ձերբակալել Սալիհ Զեքիին, բրիտանական ներկայացուցիչները Ստամբուլում հայտարարեցին, որ նա մասնակցել է կոտորածին սկզբից մինչև վերջ:

1916թ. հուլիսին բռնագաղթված Արաքսյա Զեբեջյանը գրել է Բ. Ռոներին, որ Դեր Զորում նորից սկսվել է տեղահանություն: «Մենք կյանքի խավարում ենք... Այս շաբաթ Դեր Զորը բռնագաղթվածների համար վերածվեց անապատի և ամեն ոք պատրաստվում է ճանապարհվելու: Դրիչով անհնար է նկարագրել բռնագաղթվածների կարիքները, թշվառությունն ու ողբը: Այսօր ձերբակալեցին բոլոր հոգևորականներին և ղեկավար անձանց: Մարդկանց մի մասը գնաց, մյուսները կմեկնեն շուտով, և հայտարարվեց, որ մինչև շաբաթվա վերջը մեկնելու են բոլորը... Քաղաքում սովորական դարձան ճիպոտն ու գավազանը: Վերջին օրերին հայրենիքից զրկված մարդկանց հետապնդումն ու ճնշումն ընդգրկել են բոլորին: Հարկ է մտածել դեռ չպղծված աղ-

58 Անտոնեան Ա. նշվ. աշխ., էջ 80-81:
59 Ն. տ., էջ 82-83 :
60 Ն. տ., էջ 86-87:
61 Ն. տ., էջ 89:
62 Ն. տ. :
63 Ն. տ., էջ 99:
64 Ն. տ., էջ 106:
65 Ն. տ., էջ 106:

66 Անտոնեան Ա. նշվ. աշխ., էջ 109-110:
67 Ն. տ., էջ 111:

ջիկների մասին, որոնց սովն ու մենակությունը մղում են արաբ տղամարդկանց տներն ու օջախները և հանուն հացի վաճառվում են... Պետք է մտածել երիտասարդների մասին, ովքեր քաղցից ուժասպառ շատ շուտ ծերացան և քայլում են ձեռնափայտի օգնությամբ: Հարկ է ամեն օր փրկագնով ազատել առնվազն 3-4 աղջնակ: Օգնություն աղաչողների թիվն անհամար է: Սպանում և ուտում են թափառող շներ: Կինը կտրում է իր մազերը և վաճառում մի կտոր հացով: Մի կին փողոցում խմում էր հոսող արյուն: Մարդիկ օրերով ոչինչ չեն ուտում: Մի կին իր երեխային հացի կտոր է տալիս, սակայն երեխան անզոր էր այն ծամել»:

"American vacuum oil company"-ի աշխատակից Ա. Բերնոն 1916թ. օգոստոսի 24-ից սեպտեմբերի 4-ը շրջել է Դեր Զորում, եղել է Հալեպի և Դեր Զորի արանքում գտնվող համակենտրոնացման ճամբարում: Նա նկարագրում է Զեքիի «ցնցող տմարդությունը և բարբարոսությունը»: Նա շատ երեխաների է խեղդել գետում, «չի խնայել ոչ ծծկեր երեխաներին, ոչ էլ տկարներին»: Ալեքսանդրեթում գերմանական փոխհյուպատոս Հոֆմանն իր դեսպանին տեղեկացրել է, որ Զեքիի ժամանումից հետո իշխանությունները այլևս «իրենց նեղություն չեն տալիս գաղթականների խմբերն անապատով քշել Մոսուլ, այլ Եփրատ և Խաբուր գետերի միացման տեղում նրանցից արագորեն ազատվում են»[68]: Դիմելով դաժանության ու խոշտանգումների անօրինակ միջոցառումների, Զեքին «խոստովանություններ» էր կորզում հայազգի իր զոհերից, որից հետո տանջելով սպանում էր: Ամերիկյան հյուպատոս Ջ. Զեքսոնը տեղեկագրել է, որ Սալիհ Զեքիի Դեր Զոր գալով «սկսվեց ամենազարհուրելի կոտորածը... Կոտորածներն ի կատար էին ածվում կառավարչի հրամանով», որն անձամբ էր ղեկավարում թալանը: Կոտորածներ իրականացնում էին «Թուրք, չերքեզ և քուրդ քրեական տարրերը, որոնք ազատ էին արձակվել և ուղարկվել սպանելու»: 1918 թվականի նոյեմբերի 18-ին օսմանյան խորհրդարանում Ա. Պոչկեզենյանը Սալիհ Զեքիի գործունեությունը գնահատեց որպես «օսմանյան պետության ամենասրտամորմոք էջ՝ լի հայերի հանդեպ աներևակայելի դաժանություններով»: Նա նկարագրեց, թե ինչպես էր Զեքին պարծեցել, որ «ինքը կոտորել է բոլոր հայերին՝ ծծկեր երեխայից մինչև 70-80 տարեկանը», որից հետո ներկա գտնվող մի քաղաքացիական անձնավորություն թքել է նրա դեմքին: Երբ 1916 թվականի նոյեմբերին Զեքիին կանչեցին Ստամբուլ, նա հետը մեծ թվով մետաղյա տուփեր տարավ լի տասնյակ հազարավոր ոսկե դրամով՝ թալանված իր հայ զոհերից:

Դեր Զորի ջարդերի ընթացքին մանրամասն անդրադառնալը մարդու կարողություններից վեր է: Հազար անգամ իրավացի է Մ. Նեդիմը, երբ գրում է. «Իմ աննշան գրիչն անկարող է նկարագրել Դեր Զորի կոտորածները, որոնք նախադեպը չունեն մարդկության պատմության մեջ»[69]:

Այնուամենայնիվ նպատակահարմար գտանք ընթերցողին ներկայացնել թուրք ավազակ Մահմուդի պատմածը. «Մոտավորապես երկու տարի առաջ Ռաս ուլ Այնի մեր ցեղակից կայմակամն ինձ կանչել էր, և ներկայացա: Ասաց, թե ժամանակն է գործը սկսելու: «Պաշտոնական հրահանգ եմ ստացել գյավուրներին բնաջնջելու: Դու վստահելի անձ ես, հավաքիր քո քաջերին, ահա քեզ նամակ ուղղված Դեր Զորի մութասարիֆին: Հրամանները նրանից կստանաս, և հույս ունեմ, որ ինձ սպիտակերես կանես»: Անմիջապես պատրաստվեցի ու 200 հեծյալներով հաջորդ օրը ճամփա ընկա Դեր Զոր... Գյավուրներին սկսեցինք հետապնդել... վրանների հայերին ջարդել: Ոստիկանությունն ինձ բոլոր լիազորությունները տվել էր, և կարող էի ամեն ինչ անել: Անմիջապես կամուրջից անցա ու պաշարեցի 10 հազ. հայով բնակեցված վրանները 200 հեծյալներով ու արաբական ուժերով... սկսեցինք խուզարկությունը... զենք, դրամ, բոլոր տեսակի ապրանքներ, գեղանի կանանց հափշտակելու համար: Եկան մութասարիֆը, ոստիկանապետն ու ժանդարմները, որոնք մեզ օգնեցին... Զորս ժամ ամբնդհատ կրակելուց հետո դեպի վրաններ իջանք սրերով, թրերով... ծերեր, երիտասարդներ, կանայք, երեխաներ՝ բոլորը մեր ոտքի տակ էին... Կես գիշերն անցել էր, երբ ետ քաշվեցինք, որտեղ դիզել էինք ամբողջ կողոպուտը, որով հետև հաջորդ օրը մութասարիֆի, ոստիկանի և մյուդիրի հետ միասին հաշվելով՝ պիտի բաժանեինք: ...Մառաներից մեկը ... հետը բերել էր 5 կին- աղջիկ ինձ համար. շատ գեղանի էին

68 «Ավանգարդ», 17. 01. 1990:
69 Նեդիմ Մ. նշվ. աշխ., էջ 112:

Նույն ժամանակ եկան հեծյալների երեք հրամանատարները և ասացին, թե գյավուրները, դեռ չմեռած, իրենց ոսկիները կուլ են տվել: Պետք է մարմինները հոշոտել, դրամները հանելու համար: Հավանություն տվեցի և առավոտյան այս գործը կատարեցինք... Մի այլ անգամ 230 կենդանի հայերի լցրեցինք հորը, բերանը փակեցինք ու այրեցինք:

Ռաս ուլ Այնի կայմակամն ինձ հանձնեց 2 000 գյավուրների: Դրանք թալանված մարդիկ էին: Ոչ մի շահի հույս չունեինք, բացի նրանց վրայի հագուստներից, քիչ թե շատ զարդերից ու ոսկի ատամներից: Դեր Զորի մութասարիֆը նրանց (հայերի մի խմբի) ներում էր խոստացել, եթե 10 հազ. ոսկու հանգանակություն անեին Զեմալ փաշային հանձնելու համար: Դրամը հայթայթվել էր և մութասարիֆն իսկապես Հալեպ էր մեկնել: Վերադարձավ, առանց ներում բերելու: Փեզեվանքը 10 հազ. ոսկին ինքն էր կուլ տվել: Այս անգամ (հայերից) պահանջում էր 5000 ոսկի ու նրանց ապրանքները: 5000 ոսկի չկար, բայց գյավուրներն իրենց ապրանքները տրամադրել էին ներում ստանալու համար: Ինչ տխմարություն... հեռացանք, մեր հետ ունենալով 2 000 գյավուր: Երեկոյան տղամարդկանց կանանցից առանձնացրեցինք՝ թվով 500 հոգի, նրանց մերկացրինք ու մեկդի թաղեցինք: ...Կանանց ևս մերկացրինք, նրանց բերաններից ոսկի ատամները քաշեցինք... հետո սկսվեց բռնաբարությունն ու մահվան խաղը:

Մինչ մենք կողոպուտը ձիերի վրա էինք բարձում, այդ նույն ժամանակ կանանց ու մանուկների աղաղակներն օդն էին թնդացնում: Մանուկները վերև նետել ու գետին ընկած պահին ցցված սրի վրա ճիշտ բերողը, բռունցքի մի հարվածով մանկան գանգը փշրողը, մանկան վիզը կծելով գլուխը կտրողը պարգևատրության էր արժանանում: ...Սրի մի հարվածը բավական էր ... մանկանը մոր փորից դուրս հանելու համար: Ամեն ինչ վերջանալուց հետո ողջ մնացածներին զանազան չարչարանքներով սպանեցինք: Գալով տղամարդկանց՝ մեր հետ առնելով, այդ վայրից երկու ժամից հեռացանք և ժամը 4-ին հասանք մի բաց դաշտի ու այնտեղ շարք կանգնեցրինք գիշերվա լուսնի լույսով նշան բռնելու համար: Երեք ժամ տևած մեր այս նշանառությունից ձանձրացած անցանք սրի և երբ համոզվեցինք, որ արդեն բոլորը մեռած էին, մեր մոտ եղած երեք թիթեղյա ամանների վառելիքը լցրեցինք նրանց դիակների վրա ու այրեցինք: Այնտեղ համբավավոր մի ընթրիք արեցինք. երգեցինք, պարեցինք այդ մարդկային լուսավառության բոցերի կողքին: Ժամը 9-ին մոտ էր, լուսավառությունը հետզհետե մարում էր: Լուսաբացին, երբ ձիերը նստած մեկնեցինք, տակավին բոցերն աղոտ լույս էին արձակում ու ճարպային հեղուկը արտի երեսով հոսում էր՝ չորացնելով ամեն բույս»[70]:

Լեփսիուսը գրում է, որ 1915թ ընթացքում շուրջ 60 հազ. հայ ուղարկվեց Դեր Զոր, որտեղ բոլորը մեռան: 1916թ. ապրիլի 15-ին 19 հազ. հայ անապատով (300 կմ հետիոտն) ուղարկվեց Մոսուլ, միայն 2 000-ը տեղ հասավ: Կանանց ու աղջիկների մի մասը ճանապարհին վաճառվեց բեդվիններին, մյուսները մեռան քաղցից ու ծարավից: «Սովի, հոգեվարքի և մահվան նկարագրությունները, որոնք մեր ձեռքն են ընկել, կատարյալ մղձավանջ են ներկայացնում... Թշվառ ուրվականներ, որոնք երբևէ մարդկային էակներ էին, բարեկիրթ կանայք և տղամարդիկ, իրար ձեռքից խլում էին ուտելիքի մնացորդներ, մինչդեռ պահակները, անկարեկից այդ տանջանքներին, դիտում էին նրանց մահը: Սա դժոխք էր»[71]:

***

1916-ի օգոստոսի 1-ին օրենք հրապարակվեց, որով լուծարվում էին հայ ազգաբնակչության քաղաքական ու կրոնական կազմակերպությունները:

Ջեղյալ էր հայտարարվում Հայ Ազգային Սահմանադրությունը, ցրվում էր Ազգային ժողովը: Հա[illegible]ց պատրիարքությունը հանվում էր էջմիածնի իրավասության տակից: Լուծարվում էին Կ. Պոլսի և [illegible]ուսաղեմի պատրիարքությունները: Զավեն պատրիարքն աքսորվեց իր ծննդավայր՝ Մոսուլ: Սիսի

70 Գաբիկեան Կ. Եղեռնապատում Փոքուն Հայոց և Նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Բոստոն, 1924 կամ «Ցուշամատեան Մեծ եղեռնի», էջ 540-550:
71 Լեփսիուս Ցո. նշվ. աշխ., էջ 279-280:

Սահակ կաթողիկոսը հռչակվեց ամբողջ արևմտահայության կաթողիկոս, որի նստատեղին պետք է լիներ Երուսաղեմի ս. Հակոբ եկեղեցին: Վերացվեցին Սիսի և Աղթամարի կաթողիկոսությունները[72]:

Ֆրանսիական արխիվների տնօրեն Բոդույը 1916-ին գրեց Ա. Բրիանին. «Բռնություններից, բռնագաղթից ու ջարդերից հետո երիտթուրքական կառավարությունը կենդանի մնացած (հայերին) պարտադրում է նոր վարչակարգ, որում հայերի արտոնությունների վերջին մնացուկները վերացված են»[73]:

Այդ օրենքով Թուրքիայի հայ հոգևոր ղեկավարների և հայ լուսավորչական եկեղեցու կապը կտրվում էր: Այդպիսով ոտնատակ էր արվում Բերլինի դաշնագրի 62-րդ հոդվածը: Մետեռնիխը գրում է. «Հայերի պատրիարքն այլևս հայ միլիեթի գլխավորը չէ, այլ մի ջումեյեթ, կրոնական համայնքի ղեկավար»: Նոր օրենքով հայ կրոնավորները զրկվում էին բոլոր լիազորություններից: Պատրիարքի նստատեղին Երուսաղեմ տեղափոխելը զրկում էր նրան ժողովրդական-քաղաքական գործադիր իշխանությունից, նա դառնում էր միայն վերևից ստացված հրահանգների կատարող, վերածվում պաշտամունքային հաստատության ղեկավարի և մուտք ուներ միայն կառավարության պաշտամունքային գերատեսչությունները: Գործնականում չնչին դարձվեց եպիսկոպոսների թիվը, քանի որ եպիսկոպոս կարող էր ունենալ 15 000 չունչ ունեցող հայ համայնքը: Իսկ բռնագաղթի ու ջարդի հետևանքով, թերևս միայն Կ. Պոլիսն ու Զմյուռնիան կարող էին այդքան հայ բնակչություն ունենալ: «...Օգոստոսի 1-ի նոր օրենքը,- գրում է Լեփսիուսը,- հանրագումարի է բերում կառավարության միջոցառումները, համաձայն որոնց օսմանյան հայերը, որպես կենսունակ ազգ, պետք է ոչնչացվեն: Զանգվածային տեղահանություններից ու կոտորածներից հետո մնացածների բնաջնջմանը և երեխաների իսլամացմանը հետևում էին ունեցվածքի բռնագրավումը, քաղաքական համայնքի ավերումը»: Դա հայերի «բնաջնջման գործի պսակն էր»:

Իսկ Թալեաթը շարունակում էր ստել, թե հայերի հալածանքները դադարեցված էին: Տեղերում ամեն ինչ կատարվում էր նրա ասածներին հակառակ: Խարբերդի վիլայեթից 1917թ. մարտին տեղահանվեցին վերջին հայերը՝ 300 կին ու երեխա: Պատանիներին շղթայակապ բանտ նետեցին: Իշխանություններն անտարբեր դիտում էին հարյուր հազարավոր կանանց ու երեխաների մահը կայսրության հարավում: «Անապատի եզերքի համակենտրոնացման ճամբարները վեր էին ածվել գերեզմանների: Հայերի՝ իրենց նախկին բնակավայրերը վերադառնալու մասին խոսք անգամ լինել չէր կարող»: Բռնի կրոնափոխությունը շարունակվում էր. 600 երեխաներից, որոնք գտնվում էին չվեյցարացի գթության քրոջ խնամքի ներքո, փետրվարին 70 երեխայի ուղարկեցին Լիբանանի թուրքական որբանոց, 400-ին, որոնք հաղնվում ու սնվում էին օտարերկրյա փողերով, բաժանեցին Կոնիայի, Զմյուռնիայի, Բալիկսերի և Ադաբազարի կառավարական որբանոցներին, որտեղ նրանք պետք է ... իսլամացվեին»[74]:

Հայերի հալածանքները թևակոխել էին վերջին փուլը, «այժմ թուրքական կառավարությունը մտադիր է ջնջել ու քշել հայերի վերջին խլյակները, ովքեր կենդանի են մնացել առաջին աքսորից հետո...»[75]:

1916թ. մայիսի 2-ին Մանդելշտամը Բեռնում ռուսական դեսպանորդի միջոցով Սազոնովին հայտնեց. «Մեր զորքերի հարձակումների պատճառով նահանջելով, թուրքական իշխանությունների հրամանով մուսուլմաններն իրենց հետ տանում են հայերի ունեցվածքն ու անասունները»[76]:

Մայիսի 10-ին Պետրոգրադում բացվեց հայկական կազմակերպությունների համագումարը: Հաջորդ օրը "Новое время"-ն գրեց. «Սարսափելի է մտածել, որ լավագույն դեպքում երեք միլիոն բնակչից 1/4 միլիոնը Ռուսաստանի տարածքում կարիք ունի հոգատարության ու օգնության, 3/4 միլիոնը մորթված է, դրանց գումարած Մինչև թեք աքսորված 200 հազարին»: Անդրադառնալով այդ համագումարին "Приказовский край" թերթը գրեց, թե առաջին հայացքից թվում է, թե համագումարը հավաքվել էր լուծելու միանգամայն գործնական խնդիր՝ կազմակերպել օգնություն գաղթականներին: Սակայն «մեծ միամտություն կլինի ենթադրել, թե համագումարն ու նրա բանաձևը սահմանափակվելու են այդ նեղ շրջանակում: Թուրքիայից փախած հայերի ճակատագիրը սերտորեն կապված է նրանց հայրենիքի՝ Հայաստանի ճակատագրի հետ, և Պետրոգրադի համագումարը, բնականաբար, պարտավոր էր ուշադրություն դարձնել «գաղթականների խնդրի» այս կողմի վրա»[77]:

Համագումարն առանձնակի ուշադրություն դարձրեց որբերի խնդրին և ձևակերպեց նրանց հետ աշխատանքի սկզբունքները՝ գաղթականների և որբերի հետ աշխատանքը պետք է կենտրոնացվեր մի մարմնի ձեռքում, ստեղծվեին «թռչող ջոկատներ» Արևմտյան Հայաստանում որբերին գտնելու և հավաքելու համար, որբանոցներ պետք է բացվեին Հայաստանում, հայկական միջավայրում (Անդրկովկասում), որբանոցներից բացի կազմակերպվելու էին ընտանեկան տիպի մանկական օջախներ: Անթույլատրելի համարվեց որբերին մասնավոր անձանց տալը: Մեծ թվով երեխաների որդեգրել էին ռուսական բանակի զինվորական մասերը, ինչը ևս վտանգավոր համարվեց՝ երեխան զրկվում էր խաղաղ կյանքից, կրթությունից, մոռանում էր մայրենին և այլն: "Биржевые ведомости"-ն գրեց. «Հետապնդումները, որին հայերը ենթարկվում էին Թուրքիայում, իսկապես սարսափելի դարձան վերջին երկու տարիներին: Նրանց մորթեցին քրդերը, թուրքական իշխանությունները նրանց արտաքսեցին վտանգավոր տեղեր, զրկեցին ունեցվածքից, հողից, սնդի միջոցներից: Հայ բնակչության կենդանի մնացած խլյակները փախան այս ու այն կողմ, որտեղ հույս ունեին գտնել ապաստան, օգնություն և ցավակցություն»[78]:

Դա առաջին հերթին Ռուսաստանն էր, ավելի ճիշտ Արևելյան Հայաստանը:

Հետաքրքրությունը հայոց ողբերգության հանդեպ աճում էր նաև Եվրոպայում և Միացյալ Նահանգներում:

Բեռլինի բողոքական միսիոներների ամսագիրը գրեց, թե «ինչպես էին դժբախտ հայերին խեղդում Եփրատում: Այս տեղեկատվությունն այնպիսի տպավորություն գործեց, որ ամսագրի այդ համարը... ոստիկանությունն անմիջապես վաճառքից հանեց»[79]:

Բաթումում անգլիացի հյուպատոսը Լոնդոն հաղորդեց հարյուր հազարավոր հայ գաղթականների՝ հիմնականում կանանց ու երեխաների, խելագար փախուստի և Կովկասում նրանց անելանելի վիճակի մասին: Այս փաստերն Անգլիայում օգտագործվում էին քարոզչական նպատակով: Դրա արտահայտություններից մեկն էլ «Կապույտ գրքի» հրատարակությունն էր 1916թ. Ջ. Բրայսի ու Ա. Թոյնբիի կողմից: Թոյնբին նաև հրատարակեց «Հայկական վայրագություններ», «Մի ազգի սպանություն» և «Թուրքերի ոճրային բռնակալությունը» գրքերը: Տպագրվեց Օրորա Մարտիկյանի «Հոգիների աճուրդ»՝ հեղինակի գողգոթային նվիրված գիրքը:

1916թ., երբ ռուսական բանակը, գրում է Նանսենը, առաջ շարժվեց, «փախչելու հերթը հասավ թուրքերին: Վախենում էին հայերի վրեժխնդրությունից: Աննկարագրելի խուճապի մեջ նրանք ճմռանը փախան արևմուտք, դեպի լեռները, որտեղ շատերը մեռան...» Երիտթուրքերը հանձն էին առել հայ ժողովրդի բնաջնջման ամբողջ պատասխանատվությունը: Ժամանակակիցներից մեկը բնութագրեց. «Էնվեր, Թալեաթ և սրանց հետևորդները Թուրքիայի պատմությանը կցեցին այնքան զարհուրելի մի գլուխ, որ չուքի մեջ է թողնում մյուս բոլոր գլուխները: Ամոթ և նախատինք նրանց: Աբդուլ Համիդի կազմակերպած ջարդերը դժգունում են երիտթուրքերի կազմակերպածի առաջ»:

Անգլիայի լեյբորիստական կուսակցության ղեկավարներից Արթուր Հենդերսենը, որը նաև դաշնակիցների ռազմական խորհրդի անդամ էր, 1916թ. հունվարին հայտարարեց, թե մեծապես ցնցված է Թուրքիայում կատարվող կոտորածներից և բանվոր դասակարգի անունից պահանջեց, որ հայերն այլևս երբեք չենթարկվեն օսմանյան տիրապետությանը[80]:

1919թ. Մեծ Բրիտանիայի արտաքին գործոց նախարարի տեղակալ Ռ. Սեսիլը Բրայսին գրեց. «...Օսմանյան հայերը 1915-ին ծրագրված ձևով թուրքական կառավարության կողմից ջարդվեցին. ավելի քան 700 հազ. հայ ամենասառնարյուն ձևով և դաժան միջոցներով բնաջնջվեց»[81]:

Բ. Գեմբարսկին «Նամակներ աշխարհին» գրքում դիմելով «Թուրք բարեկամին», գրում է, որ հա-

72 «Երիտասարդ Հայաստան», մայիս-հունիս, 1985:
73 Բեյլերյան Ա. նշվ. աշխ., փաստ N 247:
74 ԲԵՀ, 1990, թիվ 3, էջ 59-68:
75 Լեփսիուս Յո. Տեղեկագիր, էջ 286-287:
76 АВПР, Политархив, д. 3504, л. 93.

77 "Армянский вестник", 1916, N7.
78 "Новое время", 11. 05.1916.
79 Ն. տ.:
80 Հակոբյան Ա. Հայաստանը և պատերազմը, 1917, տ.ա. էջ 52:
81 «Հայաստանի պարագան», 1919, էջ 81:

յերին կոտորելուց հետո Թուրքիան լրացուցիչ ստացավ Հայաստանի տարածքի մոտ 60%-ը՝ «յուրահատուկ մի պարգև ժողովրդասպանության համար»: Ինչու հայերին նահատակելը պետք է պարգևի արժանանա, երբ լեհերին ու հրեաներին նույն ձևով նահատակելը պաշտոնապես ճանաչված է իբրև ոճիր գործած մարդկության դեմ... «Չեմ կարող հասկանալ ձեր անտարբերությունն այն ոճրագործության հանդեպ, որ 46 տարի է, ինչ ծանրացել է ձեր վրա: Չեմ հասկանում, թե ինչպես այս պայմաններում կարող է ապրել մի ժողովուրդ, սիրել իր հայրենիքը, ծիծաղել և ուրախանալ, կարդալ մարդասիրական գրքեր, այցելել արտասահման և հյուրընկալել օտարերկրացիներին: Դուք չեք խենթանում և «հակառակ ամեն ինչի» ապրում եք, կարծես ոչինչ չի պատահել»[82]:

Գոյություն ունի այն կարծիքը, թե Մեծ եղեռնը սկսվեց 1915թ. ապրիլին և ավարտվեց 1916թ. նոյեմբերին, այսինքն՝ տևեց 20 ամիս: 1916թ. նոյեմբերը սահմանագիծ ընդունելու հետ համաձայնվել կարելի է, որովհետև 1917թ. զանգվածային ջարդեր տեղի չունեցան: Եթե հայոց ցեղասպանության երկրորդ շրջանից առանձնացվում է Մեծ եղեռնը, ապա այն սկսվեց 1914 թվի օգոստոսին և տևեց 28 ամիս:

Ի դեպ չի կարելի անտեսել նաև այն, որ անգամ 1917-ին բռնագաղթ, չնայած ոչ զանգվածային, տեղի ունենում էր: Պահպանվել են այդ հաստատող վավերագրեր: Ահա դրանցից մեկը, որը վերաբերում է ՆԳ նախարարության 1917թ. հոկտեմբերի 23-ի հեռագրի պահանջը կատարելուն: «Վիլայեթի կայարաններուն մեջ գտնուող շոգեկառքերու պաշտոնեաներեն և ծառաներեն հայերուն անուանացանկը կազմել և ամեն մեկուն հարցաքննութեամբ ինքնութիւնը ճշտել և մինչև հիմա ոտիկանութեան կողմե ինչպես ճանչցուած ըլլալը և անոնց ընտանիքի անդամներեն և ազգականներեն որոնք կան, ատոնց մասին ալ ձեռք բերուած տեղեկութիւնները անոնց անուններուն դիմաց արձանագրելու և շուտով ղրկելու մասին հոկտեմբերի 23, 1917 (1333) թուականներով և 503 ընդհանուր թվի շրջաբերականով հաղորդուած էր, և պատասխանը տակավին չէ ստացուած»[83]:

1916-19 թթ. մեծ տերությունների ղեկավարները հանդես եկան հայերի ջարդերը դատապարտող մի շարք հայտարարություններով, տպավորություն ստեղծելով, որ իրենք մինչ այդ տեղեկություն չեն ունեցել Թուրքիայում իրականացվող ցեղասպան գործողությունների մասին: Իհարկե, այդպես չէր: Մեծ տերություններն ու նրանց կառավարությունները հենց սկզբից տեղյակ էին կոտորածների մասին և հետևում էին դրանց ընթացքին, առանց միջամտելու: Դեռ 1915թ. հուլիսի 27-ին Պողոս Նուբար փաշան եղեռնի մասին պաշտոնական բողոք էր ներկայացրել անգլիական կառավարությանը: Միայն 1915թ. առաջին ինն ամիսներին կաթողիկոսը մեծ տերությունների կառավարություններին ութ անգամ բողոքագիր է ներկայացրել: Բողոքի ձայն բարձրացրին մարդկության լավագույն ուղեղները՝ Վ. Բրյուսովն ու Մ. Գորկին, Ժ. Գուիմանը և Ռ. Ստիվենսը, Ռ. Ուայքերը և Հ. Գեյթսը, Գիբբոնսը և Նանսենը, Ֆավրը և Լեփսիուսը, Բրայսը և Բարբին, Վանդալը և Մարկվարտը, Մակլերը և Ժան Պինոն: 1915-16 թվերին աշխարհի մամուլում հրատարակվեցին հարյուրավոր հոդվածներ, լույս տեսան գրքեր, փաստաթղթերի ու վկայությունների ժողովածուներ:

Մի շարք երկրներում դրանց հեղինակներին հալածում էին: Օրինակ, Գերմանիայում, երբ Լեփսիուսը հրատարակեց «Թուրքիայում հայ ժողովրդի վիճակի մասին» տեղեկագիրը, հալածանքներից հազիվ խույս տվեց ու փախավ Հոլանդիա: Ռայխստագում ի պաշտպանություն հայերի ելույթ ունենալուց հետո Կ. Լիբկնեխտը բանտ նետվեց (1916թ. հունիսի 14-ին), չնայած նրա ձերբակալման պատճառները նաև ներքաղաքական էին:

---

82 Գեմբարակի Բ. Նամակներ աշխարհին, Երևան, 1990, էջ 16-17:
83 Ղազարեան Հ. նշվ. աշխ., էջ 183:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԲՆԱՋՆՋՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ. ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«Պատմության ամենասոսկալի եղելությունները» ուսումնասիրության մեջ Հ. Մորգենթաուն, նկատի ունենալով Մեծ եղեռնը, գրում է. «Քիչ երկրներ են Հայաստանի չափ խոշտանգումների ենթարկվել... Նախադեպը չունեցող սարսափները, որոնց նա զոհ գնաց, այնքան զարհուրելի էին, որ շատերի համար Հայաստան անունը դարձավ նահատակ բառի հոմանիշ: Բնաջնջման տառապանքները գերազանցեցին պատմության արձանագրած բոլոր արհավիրքները»[1]:

Որն է կամ որոնք են Մեծ եղեռնի պատճառները: Ոմանք, գրում է Վ. Մինախորյանը, դրանք տեսել են տիրող և հպատակ ժողովուրդների կրոնական տարբերությունների մեջ, ոմանք ջարդերը համարել են աշխարհակալ պետությունների հակամարտության և դիվանագիտական սադրանքների արդյունք, ուրիշներն իբրև պատճառ նկատել են ազգերի ազատագրական, անջատողական շարժումները:

Բոլորովին սխալ է, թե հայ ժողովուրդը ձգտում էր անջատվել, տենչում էր ծովից ծով Հայաստանի: «Իր բովանդակ ազատագրական շարժման ընթացքում հայ ժողովուրդը ոչ ունեցել է և ոչ էլ հետապնդել է այդպիսի նպատակ: Անկախության գաղափարը, որպես գործնական խնդիր, ծնունդ է առել պատերազմից յետոյ և արծարծուել խաղաղության բանակցութիւններու շրջանում, երբ արդեն հայ ժողովուրդը երկրին մեջ բնաջնջուած էր»[2]:

Անկախության ձգտելու համար «պայմանները խիստ աննպաստ էին»[3], *«Եվ ավելի շատ էին ու հիմնավոր տուեալները՝ երկրի ընդհանուր բարեկարգության հունով ձեռք բերելու ազգայնորեն մի տանելի կեանք»*[4]:

Տեղին է մեջ բերելու նաև Լեփսիուսի խոսքերը. «...Կարդում ենք, թե հայկական ջարդերը հետևանք են այն բանի, որ հայ վաճառականների դասակարգը կեղեքել է թուրքերին, և թուրք բնակչությունը զայրացած՝ ինքնաբերաբար ոտքի է ելել հայերի դեմ: Նախ, ապացուցված է, որ ոչ 1895-96 թվերի ջարդերը և ոչ էլ վերջին ջարդերը ժողովրդական ինքնուրույն խլրտումների հետևանք չեն, այլ պետության վարչական հրամանների գործադրում: Ապա, փաստորեն, Պոլսի, Իզմիրի և Հալեպի նման վաճառատեղերն ու հայ վաճառական դասակարգն էր, որ փրկվեց մահից... Դրա դիմաց Անատոլիայի ամբողջ գյուղացիությունը արհեստավորների հետ միասին, որ կազմում է հայ բնակչության 80%-ը, որոնք մեծ մասամբ հայեր են, քչվեցին անապատ ու ոչնչացան»:

«Համաթուրքական, համաիսլամական պետություն ստեղծելու երևակայական գաղափարը, որում քրիստոնեաները տեղ չպետք է ունենային»,- սա էր երիտթուրքերի նպատակը: Ցեղասպանության պատճառների համառոտ, բայց ինքնատիպ վերլուծություն ունի Ռ. Ջերչիլը: «...Բալկանյան պատերազմից հետո պանթուրքիստները միաժամանակ հրապարակ հանեցին «օսմանացումը» և «թրքացումը», որպես միջոց վերստեղծելու իրենց պետությունը»: Նրանք երկրի ոչ թուրք ցեղերին էին մասամբ վերագրում այն աղետները, որոնց ենթակա էր թրքական կայսրությունը: Բիրտ, բայց հակառալի լեզվով նրանք եզրակացրին, թե այս ցեղերը «արժանի չէին նույնիսկ նկատի առնվելու, բեռ ու արգելք էին, թող գրողը տանի նրանց»: Այն վերածնված պետությունը, որ «հայրենասեր» թուրքերը հույս ունեին մեջտեղ բերել, պետք է կազմված լիներ միայն թուրքերից: Այդ նպատակին հասնելու համար պահանջվում էր անցնել երկար ու դժվար ճանապարհ: Հետևաբար, որքան շուտ և որքան շտապ թուրք ժողովուրդը սկսեր այդ ճանապարհն անցնել, այդքան լավ: Եվ թուրքերն այդ ճանապարհով քայլեցին սկսած 1912 թվականից: Հայերը հասկացան, որ եթե Կովկասի իսլամական շրջանները միավորվեն թուրքական մեծ պետության մեջ, հայկական բարձրավանդակը, ներառյալ նաև

---

1 «Էջմիածին», 1965, թիվ Բ,Գ, Դ., 168-169:
2 Թեհլիրյան Ս. Վերյիշումներ. Թալեաթի ահաբեկումը, Կահիրե, 195 հ., էջ 25-26:
3 Ն. տ., էջ 26:
4 Ն. տ.:

Արևելյան Հայաստանը, անցնելու են Թուրքական գերիշխանության տակ, ինչը վտանգելու էր հայ ցեղի ամբողջ ապագան: Մեծ պատերազմի պայթելն այս հարցերը շարժման մեջ դրեց: Թուրքական կառավարությունը փորձեց ապահովել հայերի, հատկապես ռուսահայերի, աջակցությունը Ռուսաստանի դեմ: Սոսկալի երկընտրանքի մեջ դրվեցին հայ ղեկավարները... Ուշադրության արժանի որոշում ընդունվեց՝ եթե պատերազմ ծագեր, հայ ժողովրդի թուրքական և ռուսական հատվածները պետք է իրենց պարտականությունները կատարեին իրենց կառավարությունների հանդեպ: Նրանք «նախընտրելի համարեցին եղբայրասպան կռիվը, քան իրենց գոյության հարցը կապել կողմերից մեկի հաղթանակի հետ...»: Թուրքերի ռազմական ծրագիրը ձախողվեց: Նրանք մեղադրեցին հայերին Ռուսաստանի օգտին լրտեսության և այլ գործողություններ կատարելու, ինչպես նաև Թուրքիայի հաղորդակցության միջոցների վրա հարձակումներ գործելու համար: 1915թ. Թուրքական կառավարությունը սկսեց ու վայրագորեն գործադրեց Փոքր Ասիայի հայերի ընդհանուր և անկարգ ջարդերն ու տեղահանությունը: Կասկած չկա, որ ոճիրը ծրագրված էր ու գործադրվում էր քաղաքական պատճառներով: Ադիթը ներկայացել էր Թրքական և կովկասյան իսլամական ժողովուրդների միջև տարածքային ուղղակի կապ ստեղծելու համար: Պանթուրքիստները գտնում էին, որ եթե Կ. Պոլիսը ընկներ և Թուրքիան պատերազմը տանուլ տար, նույնիսկ այդ դեպքում հայերի բնաջնջումը Թուրք ցեղի ապագայի համար մշտական առավելություն էր ստեղծելու[5]:

Հայոց ցեղասպանության պատճառները բաժանվում են երկու խմբի՝ հիմնարար-վճռորոշ պատճառներ՝ հայերի հայրենիքը սեփականացնել, իրականացնել պանթուրքիստական ծրագրեր: Ոչ հիմնարար, կողմնակի պատճառներ: Վերջինների թիվը փոքր չէ: Գ. Թագվորյանը դրանցից մեկը համարում է հետևյալը. «Նենգամիտ Թուրքին բարբարոսութիւնը, կեղծիքն ու գաղտնապահութիւնը, մեկ կողմեն, հայ ժողովուրդին հավատարմութիւնն ու անկեղծութիւնը, միւս կողմեն, մանավանդ նուազագոյն վնասով մը փոթորկահար կամուրջեն անցնելու հայկական հաշուագիտութիւնը դիւրացուցին մեր ժամանակակից պատմութեան յավետ անմոռանալի և անդարմանելիորեն աղետավոր այդ թուականին ստեղծումը»[6]:

Մի շարք դեպքերում առաջ էին քաշվում պատճառներ, որոնք պարզապես սադրանք էին: Ռուսական "Новое время"-ն 1913թ. մայիսի 31-ին գրեց. «Եթե Հայաստանը Թուրքանա, ապա Թուրքիան կարող է ակնկալել ինչ-որ չափով տանելի գոյություն, հակառակ դեպքում Թուրքերի փոքրասիական տիրույթները կառանձնանան այնպես, ինչպես առանձնացան նրանց տիրույթները Բալկանյան թերակղզում»: Հազիվ թե հնարավոր լինի համաձայնել Դ. Անանունու կարծիքի հետ, թե «արտաքին դժվարությունները երիտթուրքերին բերեցին ազգայնամոլության առատ վարակ»[7]:

Իհարկե, արտաքին հիմնախնդիրներն ազդեցություն ունենում են պետությունների կյանքի վրա, բայց անկարող են քաղաքականություն ձևավորել, մանավանդ այնպիսի խոշոր երկրում, ինչպիսին էր Օսմանյան Թուրքիան:

Այնուամենայնիվ, փորձենք պատասխանել երկու հարցի՝ Թուրքերն ինչո՞վ են բացատրում հայերի բնաջնջման Թուրքական քաղաքականությունը և ինչո՞ւ հնարավոր դարձավ այդ քաղաքականության կենսագործումը:

Այս հարցերի պատասխաններն առաջին հայացքից են հեշտ թվում: Նախ, դրանք ոչ թե մեկը կամ մի քանիսն են, այլ՝ մի ամբողջ համակարգ: Երկրորդ՝ ընդգրկում են թե քաղաքականությունն ու գաղափարախոսությունը և թե սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական, էթնիկական-սովորութային հիմնահարցերը: Երրորդ՝ խճճված են ոչ միայն անցյալի, այլև ապագայի քաղաքական շահերի հանգույցներում, գտնվում են ժամանակակից բարոյաքաղաքական միջպետական հարաբերությունների ճնշման տակ, կախված միջազգային հանրության, առաջին հերթին մեծ պետությունների՝ խնդրի հանդեպ շահագրգռվածությունից, միջազգային կյանքում իշխող ռազմաքաղաքական իրավիճակից և տնտեսական հարաբերություններից: Մեծ վեզիր (վարչապետ) Սայիդ Հալիմը հայերին ասում էր. «Օսմանյան կայսրությունում միայն երկու ժողովուրդ կա, որոնք հավասարապես շահագրգռված են Թուրքիայի գոյությամբ՝ դրանք Թուրքերն ու հայերն են: Հույներն անհամբեր սպասում են անցնելու Հունաստանին, բուլղարացիները՝ Բուլղարիային: Մենք և դուք գնալու տեղ չունենք»[8]:

Այս խոսքերի մեջ անպայման դիվանագիտական խաղի բաժին կա, սակայն անհնար է հավատալ, որ միայն այդպես է: Ահա թե ինչ է գրում երիտթուրքական առաջնորդներից Ջեմալը. «Հայերն ավելի շիտակ են և ավելի քաջ. նրանք ավելի անկեղծ են իրրև բարեկամներ և ավելի համառ՝ երբ ատում են... Երբ Փոքր Ասիայում մի Թուրք առևտրական նպատակներով գյուղից մեկնել էր ուզում, նա հայ հարևանի խնամքին ու պաշտպանությանն էր վստահում իր ընտանիքը, պատիվն ու իրավունքները. նույն վստահությունն էր տածում նաև հայն իր Թուրք հարևանների նկատմամբ...»[9]:

Կասեն, թե սեփական ազգին արդարացնելուն միտված չաղակրատանք է: Չենք առարկում: Բայց նաև ասենք, որ նույն միտքը մեկից ավելի անգամներ արտահայտել են նաև յաթաղանից փրկված արևմտահայերը:

Իթիհադականները հայերի բռնագաղթի և ցեղասպանության դրդապատճառների մասին առաջ էին քաշում մի շարք վարկածներ: 1915թ. մայիսի 12-ին Թալեաթն իր տանը Վարդգեսին ասաց. «Մեր տկարության օրերին, Էդիրնեի գրավումից հետո (Բալկանյան պատերազմի ժամանակ), ցատկեցիք մեր կոկորդին և հայկական բարենորոգումների հարցն արծարծեցիք: Դրա համար օգտվում ենք մեզ համար նպաստավոր կացությունից ձեր ժողովրդին այնպես ցրելու, որ 50 տարի մտքից հանեք բարենորոգումների ամեն մի գաղափար»: Վարդգես. «Ուրեմն մտադիր եք շարունակելո՞ւ Աբդուլ Համիդի գործը»: Թալեաթ. «Այո»[10]:

1913թ. երիտթուրք պարագլուխները հայ գործիչներին սպառնում էին, որ եթե բարենորոգումներից ձեռք չքաշեին, ապա այնպես էին կոտորվելու, որի համեմատությամբ Աբդուլ Համիդի ջարդերը երեխայական խաղ էին[11]:

Բռնագաղթի պատճառների մասին խոսելիս երիտթուրքերը ոչ հազվադեպ իջնում էին փողոցային ցինիկի մակարդակին: Զավեն պատրիարքը Թալեաթին հարցնում է. «Ով հանցանք ունի, կառավարությունը կարող է անոր պատժել: Անշուշտ կանայք ու երեխաները պետութեան դեմ որևէ հանցանք արած չեն. նրանք ինչո՞ւ կը պատժվին»: Թալեաթ. «Չենք կրնար հայրերից զրկել ընտանիքները... Քիչ ժամանակ անց, երբ ամեն բան հանդարտի, կիմանաք, թե կառավարութիւնն որպիսի օժանդակութիւններ ըրած է հայերուն այդ տեղերն հաստատելու համար»[12]:

Հայ մտավորականների ձերբակալությունների պատճառների վերաբերյալ հարցին Թալեաթը պատասխանեց. «Պատահածը պարզապես անվտանգության նպատակով կատարված ժամանակավոր քայլ է... ձերբակալվածներից ոմանք կարող են վտանգավոր լինել»: Իսկ Վանգենհայմին ասաց. «Բ. Դուռն ուզում է օգտվել պատերազմից անարգել ազատվելու իր ներքին թշնամիներից, առանց արտաքին դիվանագիտական միջամտության»[13]:

Էնվերն ասաց. «Մենք հարկադրված էինք վճռական գործել, պատերազմական ժամանակներ են»: Նույն հարցին եպարքոս Սայիդ Հալիմը պատասխանեց. «Կառավարությունը հայ ազգը բնաջինջ ընելու նպատակ չունի, միայն թե միջոցներ ձեռք առած է... ու այդ նահանգները հայերե կը պարպե: Այս կարգադրութիւնը ձեզի ալ, մեզի ալ օգտակար պիտի ըլլայ, որովհետև մինչև հիմայ ռուսներն ու անգլիացիք ձեզի գործիք կը ծառայեցնեին...»[14]:

Մարտի 16-ին Խարբերդի կուսակալը գերմանական հյուպատոսին համոզում էր, թե հայերը պետք է ոչնչացվեն, որովհետև այնքան են հարստացել և ուժեղացել, որ վտանգավոր են դարձել

---

5 Ցուշամատեան Մեծ եղեռնի, էջ 1041-1042:

6 Թագվորեան Գ. Գորշ գայլը կատղեր էր. 1915, Կահիրե, 1953, էջ 355:

7 Անանուն Դ. Ռուսահայերի հասարակական զարգացումը 19-րդ դարում. 1901-1918, հ. Գ, Վենետիկ, 1926, էջ 510:

8 Тыркова А. Նշվ. աշխ., էջ 62 :

9 Ջեմալ Փաշա, նշվ. աշխ., էջ 11:

10 Շերակյան Ա. Կտակն էր նահատակներուն, Բեյրութ, 1986, էջ 49:

11 Թեհլիրյան Ս. Արդարացոյց. Բեյրութ, 1981, էջ 179:

12 Ցուշամատեան Մեծ եղեռնի. էջ 262:

13 Նանսեն Ֆ., նշվ. աշխ., էջ 270:

14 Ցուշամատեան Մեծ եղեռնի. էջ 262-263:

թուրք ազգի համար: Մարտի 18-ին Զեյթունը պնդում էր, թե Զեյթունի ապստամբությունն է պատճառը: Հունիսի 4-ին և 29-ին Թալեաթը հայերին ջարդարար համարեց, իսկ թուրքերին՝ պաշտպանվող: Հուլիսի 12-ի հայտարարության մեջ չեշտվում է, որ հայերը մեղադրվում են դավաճանության, թշնամու կողմն անցնելու և անգութ ոճիրների գործիք դառնալու մեջ: Թուրքերը գտնում էին, որ հայերի հեղափոխական շարժումը ներմուծվել էր: Նշված թեզը խորացվում է հուլիսի 16-ի հայտարարության մեջ, որտեղ ասված է, թե հայերը մշակել են լայնածավալ ըմբոստության ծրագիր, որը բացահայտվել է: Այդ ծրագրի հեղինակներն ու իրագործողները պետք է հեռացվեն ռազմավարական կետերից: Օգոստոսի 3-ին Թալեաթը Մորգենթաուին հայտնում է, որ հայերը տեղահանվում են, քանի որ մերժել են զինաթափվել, քանի որ Զեյթունի մեջ դիմադրել են կառավարությանը, օժանդակել են ռուսներին:

Կարծիքների ցուցակը շատ մեծ է:

Երբ խոսք է գնում Մեծ եղեռնի պատճառների մասին, անհնար է աչք փակել մի իրողության առջև՝ հայ որոշ պատմաբանների մոտեցումները գրեթե ոչնչով չեն տարբերվում թուրքականից: Լեոյի կարծիքով՝ հայկական շարժումները ծնեցին կոտորածներ: Բ. Բորյանը գտնում է, որ «օսմանյան սուլթանները սկսած 16-րդ դարից մինչև մեր օրերը սիրում և հնարավորության չափ պաշտպանում էին հայերին»: Արտ. Կարինյանը պնդում է. «Հայերն ավելի ունևոր լինելով շահագործում էին թուրքերին»: Մ. Ներսիսյանը գրում է, որ Լեոն ժողովրդի վարքագծի, ազատագրական շարժումների պատճառները փնտրում էր ոչ թե նրա սոցիալ-քաղաքական վիճակի, այլ «դրսի ազդեցությունների և անհատների գործունեության մեջ»[15]:

Մ. Սերոբյանը գտնում էր, որ «չեզոքները», այսինքն՝ անկուսակցականներն իրավունք չունեին «ինքնաարդարացման չքմեղանքով» «ներքին քայքայումի պատասխանատվությունը նետելու Հայ Յեղափոխութեան ուսին վրայ», համարելով, որ հայոց աղետի «մեծագոյն պատասխանատուն» հայ գործիչների «զանգվածային անտարբերությունն» էր[16]:

Մարդիկ, ովքեր գտնում են, թե «հայ ազգին տառապանքն արդիւնք է Հայ Յեղափոխական գործունեութեան», և «հայկական վերջին բնաջնջումի եղեռնը ի գործ պիտի չդրուեր, եթե Կովկասի սահմանագլուխներուն վրայ կամավորական շարժումներ սկսուած չըլլային», խորապես սխալվում են: «...Կուզերն անգամ գիտեն , թե Հայ Յեղափոխութիւնը հազիվ 35 տարուան կեանք ունի, մինչ Հայ տառապանքը իւր մարտիրոս ճակատին վրայ կը կրե դարերու արհավիրքին ... դրոշմը: Հայ Յեղափոխութիւնն արդիւնք է և ոչ թե պատճառ հայ տառապանքին: Վերցուցեք տառապանքը և Յեղափոխութիւնը կը դադարի գոյութեան իրավունք ունենալե, բայց յեղափոխութեան մը դադարեցումը բնավ չի կրցած բուժել արդեն իսկ դարերե ի վեր գոյութիւն ունեցող տառապանքն ու կեղեքումը»[17]:

Ճշմարտությունը դա է: Հայերին հարստահարելու, սպանելու, կրոնափոխելու-ուծացնելու քաղաքականությունը հարյուրամյակների պատմություն ուներ, իսկ նրա ազգային զարթոնքը, դարավոր նիրհից դուրս գալը տեղի ունեցավ XIX դարի 60-80-ական թվականներին: Հայ ազգային շարժումը լայն զանգվածների համար ուրիշ բան չէր, եթե ոչ փրկության խարիսխ: Թուրքական կործանիչ լուծը հային մղեց պայքարի: «Եթե մեղադրելիք կայ... մեղադրենք ոչ թե տկլոր և անոթի յեղափոխականները, այլ մեր հարուստները, որոնք իրենց հարստութեամբ թիւրք վայրագութեան կողոպուտի ախորժակը սրեցին»: Ե. Օտյանի կարծիքով՝ «...Յեղափոխական շարժումին յառաջ բերած օգուտ բաղդատմամբ իր տուած վնասին անհունորեն բարձր, անսահման ու անվիճելի է»[18]:

Համաշխարհային պատմության ամբողջ ընթացքով ավելի քան հաստատված է, որ ճնշումն է ծնում հակագործողություն, ընդվզում, ազգային ճնշումը՝ ազգային-ազատագրական շարժում:

Ավելին, հայոց ցեղասպանությունը հեռավոր, շատ հեռավոր կապ ուներ հայ ազգային շարժման հետ: Ավելի ճիշտ, այն առնչվում էր ոչ այնքան հայկական շարժումներին, որքան հայ մարդու հայ մնալու կամքի հետ: Ապավինած իր լեզվին, կրոնին, զարգացած, դարավոր ավանդույթներ ունեցող մշակույթին և բարքերին հայը ոչ մի կերպ չէր ուծանում, համառորեն շարունակում էր մնալ հայ, իսկ եթե Հայաստանում հայ էր բնակվում, ապա այն թուրքերի հայրենիք դառնալ չէր կարող: Գոյամարտը ոչ միայն ճնշողի և ճնշվողի միջև էր, այլև հայրենիքի համար:

Թուրք որոշ գործիչներ հասկանում էին, որ սեփական ազգային պետության ստեղծման սուլթանական-երիտթուրքական ծրագրի իրականացումն անխուսափելիորեն ձևավորելու էր ճգնաժամային իրավիճակ:

Հայոց ցեղասպանության պատճառները բացահայտելու համար հարկ է նկատի ունենալ սկզբունքային նշանակության ևս մի քանի հանգամանքներ: Նախ, այն իրականացվում էր մի ժամանակաշրջանում, երբ մեծ պետություններն ավարտել էին աշխարհի բաժանումն ու ձեռնամուխ եղել դրա վերաբաժանմանը, ինչն առավել ցուցադրական էր դարձնում տարածքների և ազդեցության գոտիների համար պայքարում եվրոպական կառավարությունների ցինիկ հաշվենկատությունը: Հանուն շահի նրանք չէին խորշում սևին ասելու սպիտակ: Դա առավել ևս վերաբերում էր ամենագայթակղիչ աշխարհատարածքին՝ Օսմանյան կայսրությանը: Աշխարհի սրտում, բացառիկ հնարավորություններ, տնտեսական և ռազմավարական նշանակություն ունեցող օսմանյան տարածքները շարունակում էին մնալ սուլթանի տիրապետության տակ: Ուստի գործադրվում էին բոլոր միջոցներն այդ «բացթողումը» վերացնելու: Դրան ծառայեցնում էին նաև օսմանյան հպատակ ժողովուրդների տեղահանություններն ու ջարդերը՝ կայսրության ներքին գործերին միջամտելու, համեղ պատառներ «թռցնելու» համար: Թուրքիայում կատարվածների, այդ թվում նաև զանգվածային ջարդերի, գնահատականների հիմքն ամենաառօրեական շահն էր: «Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը,- գրում է Գր. Զալդուչյանը,- հայերի պատմության մեջ խաղաց սարսափելի դեր և պատահական չէ, որ ... Ռ. Պատկանյանն այդ հոդվածին նվիրված բանաստեղծություն-անեծք գրեց... Քանի որ Եվրոպային հետաքրքրում էր վիճակագրությունը, ապա Թուրքիան, որպեսզի բարենորոգումներ չմտցվեին, ոչնչացրեց հայկական տարրը և Հայաստանը բնակեցրեց մահմեդականներով: Այսպես. արդեն ռուս-թուրքական պատերազմից և Բեռլինի դաշնագրի ստորագրումից հետո, Կ. Պոլիսը ցուցում տվեց Էրզրումի մերձակայքում մորթել հայերին ռուս բանակի հանդեպ սիրալիր վերաբերմունքի համար: Մորթվեց 6 000 մարդ: Եվրոպան լռեց»[19]:

Ինչը նույնպես սանձազերծեց արևմտահայության զանգվածային կոտորածները:

Հայոց ցեղասպանությունն անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն հայ-թուրքական հարաբերությունների, այլև մյուս հպատակ ժողովուրդների հանդեպ թուրքական քաղաքականության կապակցություններում: Նաև չպետք է աչքաթող արվի, որ հակաօսմանյան շարժումը միայն քրիստոնեական չէր, այլ այդ շարժման մեջ էին նաև մահմեդականները և հենց իրենք՝ թուրքերը: Պատահական չէ, որ սահմանադրության դեմ հանդես եկող հիմնական ուժերը մահմեդականներն էին թե աջից և թե ձախից: Ընդդիմությունն այնպիսի ծավալներ ընդունեց, որ Քյամիլը 1911թ. դեկտեմբերի 20-ին սուլթանին առաջարկեց վերացնել սահմանադրությունը: 1912թ. ստեղծվեց «Փրկիչ սպաներ» կազմակերպությունը, որի գործունեությունը նույնպես ուղղված էր սահմանադրության դեմ: Երկրորդական նշանակություն չուներ այն, որ թե սուլթանը և թե երիտթուրքերը շարունակում էին կայսրության էթնիկական կազմը հօգուտ թուրքերի փոխելու ավանդական քաղաքականությունը: Նաև այն, որ դարեր շարունակ թուրքերն ու հպատակ ժողովուրդները եղել էին մեկուսացած, ինչը նպաստեց, որ ժամանակի ընթացքում նրանց միջև եղած խորթությունը վերածեր թշնամության: Մի կողմից, ոչնչով չսահմանափակված ճնշող, ոչնչացնող գործողություններ ու մեծապետական արհամարհանք, մյուս կողմից, թուրքական գարշելի լուծն օր առաջ թոթափելու ձգտում, ինչը կայսրության ճգնաժամի շրջանում վերածվեց բացահայտ պայքարի, մանավանդ որ թուրքական իշխանություններն անընդհատ թափ էին հաղորդում քրիստոնյաների մահմեդականացման և մահմեդականների թրքացման գործընթացներին: Օսմանյան վարչակարգերն այդ գործընթացների օգնությամբ թուրքերին մեծամասնություն դարձնել չկարողացան, բայց կարողացան նրանց մեջ ներարկել անսանձ ատելություն

15 Ներսիսյան Մ. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնատիրության դեմ, Երևան, 1955, էջ 276:

16 Սերոբեան Մ. Հայկական մղձավանջը, Բոստոն, 1916, էջ Բ:

17 Ն. տ., էջ 5-6:

18 «Կրակ» (Ալեքսանդրիա), 1906, թիվ 3:

19 Чалхушьян Г. Красная книга, Ростов на Доны, 1919, стр. 18.

հպատակ ժողովուրդների և մասնավորապես քրիստոնյաների հանդեպ, ինչը մեծապես օգնեց ջարդերի կազմակերպիչներին հայերի կոտորածներում ներգրավելու Թուրք զանգվածներին: Այս իրողությունը Գերսամ Ահարոնյանը ներկայացնում է հետևյալ կերպ. «Ոչինչ չինեցին օսմանցիք, ոչ մեկ յառաջադիմութիւն արձանագրեցին: Տզրուկի պես փական իրենց հպատակ քրիստոնյա հայ թե իսլամ ժողովուրդներու կռնակին և անյագորեն ծծեցին անոնց արյունը: Առոյգ և զորավոր մնացին՝ այնքան ատեն, որ ծծելիք առատ արյուն կար: Երբ աստիճանաբար արյունաքամ եղան զոհերը՝ նոյն համեմատութեամբ տկարացավ տզրուկն ալ: Օսմանեան կործանիչ տարիներուն, նախապես 20 միլիոն մարդ ապրեցնող «Արգավանդ մահիկի» երկրներեն Իրաքի բնակչությունն ինկավ երկու միլիոնի, ամբողջ Սուրիոյ և Լիբանանի բնակչութիւնն իջավ 1.5 միլիոնի, Եգիպտոսինն ինկավ միայն 2.5 միլիոնի և նոյն համեմատութեամբ պակսեցան հայերն ու պալքանեան ժողովուրդները: Փճացան նաև հպատակ ժողովուրդներու տնտեսությունները: Եվ այս ահավոր կացութիւնն իր կարգին յառաջացուց Թուրքիոյ ծանր «հիվանդութիւնը»... Այդպես կայսրութիւնը ստիպվեցավ հրաժարիլ իր «միջին գոտիեն» ևս: Բնական է, չափազանց կարևոր էր այս կորուստը, սակայն դարձեալ մահացու չէր, այնքան ատեն, որ օսմանեան պետութիւնը կը պահեր իր «միջնաբերդը», Թուրքերու համախումբ բնակութեան կեդրոնը, իր զինվորական ուժին բնական պահեստանոցը, այսինքն՝ Փոքր Ասիան կամ Արևմտեան և Արևելեան Անատոլիան, կրնար վստահ ըլլալ թե վտանգը մահացու չէր: Վտանգը Անատոլիայի կորցնելն էր»:

Դա Հայկական հարցն էր. «Ոչ «պուլկարական հարցին» կը նմաներ ասիկայ, ոչ արաբականին և ոչ ալ որևէ ուրիշ հարցին: Հայ ժողովուրդը կապրեր ճիշտ այն հողերուն վրայ, որտեղ կապրեր Թուրքն ինքը. հայը տնակից էր Թուրքին, նստած էր անոր միջնաբերդին մեջ իսկ: Հայոց դատին յաջողութիւնը պիտի նշանակեր Թրքական պետութեան քանդում», ուստի պետք էր խափանել Հայկական հարցի լուծումը: «Պետք էր ազատուիլ այդ մղձավանջեն, պետք էր իսպառ ջնջել հայկական վտանգը, պետք էր գորշ գայլի պես յոշոտել հայ ժողովուրդը, տարտղնել զայն անապատներուն մեջ, և անոր հետքն իսկ սրբել երկրիս երեսեն, և յետոյ հաստատել զոհունակ թե՝ «Հայկական հարց գոյություն չունի, որովհետև հայ չկա»: 1914թ. հունվարի 26-ի բարենորոգումների ծրագիրն ամրապնդեց «Թուրքերու այդ վախն ու մտադրութիւնը: Մանավանդ որ պատերազմը բարենպաստ պայմաններ էր ընձեռում»»[20]:

Ցեղասպանությունը հանցագործությունների հանցագործություն է ուղղված ոչ թե առանձին անձանց, մարդկանց խմբերի, ժողովուրդների, այլև համայն մարդկության դեմ: Դրա համար էլ ցեղասպանության հեղինակները նախապես իրականացնում են միջոցառումներ իրենց ցեղասպան գործողությունները խնամքով թաքցնելու և, որպես կանոն, նրանցից ոչ մեկը չի խոստովանում, որ ինքը ցեղասպանություն է կատարել: Պատճառը մեկն է՝ ցեղասպան հանցագործություն կատարելը հղի է իրավական ու քաղաքական լուրջ հետևանքներով, որովհետև տվյալ դեպքում պատասխանատվության են ենթարկվում ոչ միայն ցեղասպանությունը գործադրած անձինք, այլ ինքը՝ պետությունը, որը հռչակվելու է մարդկության դեմ հանցագործություն կատարած պետություն:

Ցեղասպանության իրողությունը ժխտելու միջոցների ու հնարքների թվին են պատկանում ցեղասպանության իրականացման տարեթվի՝ ժամանակի կեղծումը: Օրինակ, Թուրքերը հայերի զանգվածային կոտորածը սահմանափակում են 1915-1916 թվերով, որպեսզի կարողանան ցեղասպանությունը ներկայացնել որպես պատերազմական գործողությունների բաղադրիչ կամ հետևանք: Թուրք և Թուրքամետ քարոզչությունը գործը ներկայացնում է հետևյալ կերպ՝ 600 տարի հայերն ու Թուրքերն ապրել են հաշտ ու խաղաղ, կատարյալ ներդաշնակ, բայց հենց սկսվեց առաջին աշխարհամարտը, հայերը ոտի ելան Ռուսաստանի օգնությամբ Արևելյան Անատոլիան Օսմանյան կայսրությունից պոկելու և այնտեղ Հայաստան ստեղծելու համար: Օտարներին այդ միտքը պարտադրելը հեշտանում էր նաև նրանով, որ այն, ինչ կատարվեց 1915 թվին իր ծավալներով ու իրականացման եղանակներով, իհարկե, ստվերի մեջ թողեց մինչ այդ Թուրքերի կատարած ցեղասպան բոլոր գործողությունները: Մինչդեռ ակնհայտ է, որ Մեծ եղեռնը

20 «Նավասարդ» (հնդ.), 1990, թիվ 96:

հանդիսանում էր հայոց ցեղասպանության երկրորդ շրջանը, որ այդ ցեղասպանության սկիզբը ոչ թե 1915, այլ 1880 թվականն է: Այսինքն՝ հայոց ցեղասպանության պատճառները պետք է փնտրել ոչ թե XX դարում, այլ շատ ավելի վաղ, ինչպես միջազգային իրավունքի մասնագետ Ցու. Բարսեղովն է գտնում, նախագենոցիդյան 500 տարիների և օսմանյան հասարակության ցեղասպան բնույթի մեջ: Որովհետև առանց նշված իրողությունն աչքի առաջ ունենալու դժվար է պատասխան տալ մի շարք հարցերի, այդ թվում այնպիսիների, որոնք վերաբերում են ինչպես Թուրք ժողովրդի ցեղասպան վարքագծին, այնպես էլ հայ ժողովրդի «հեզությանը», երբ նրան կառափնարան էին տանում:

Ֆ. Մակլերը միանգամայն իրավացի էր, երբ ասում էր, թե 1915-ը ոչ թե պատերազմի ծնած երևույթ էր, այլ գենոցիդ, որը նախապես ծրագրված էր: Պարտիզակում ամերիկյան դպրոցի ուսուցչուհի Ա. Ջեմբերսը, որը քաջատեղյակ էր կատարվածին, գրում է. «Պատերազմը դրա (ջարդերի) համար միայն հնարավորություն էր և ոչ թե պատճառ... Թուրքական թերթերում երևացին հոդվածներ, որոնք պնդում էին, թե Թուրքիայի բարձրագույն շահերը պահանջում են միատարր բնակչություն՝ ուրեմն հայերը պետք է ոչնչացվեն...»[21]:

Մորգենթաուն տեղահանության իսկական նպատակը համարում էր «թալանն ու ոչնչացումը, ինչը փաստորեն բնաջնջման նոր եղանակ էր»: Որ պատերազմը ոչ թե պատճառ էր, այլ հնարավորություն, վկայում է նաև իթիհադի ղեկավարության հետևյալ ծածկագիրը. «Ասիկայ սուրբ պատերազմ մըն է միացնելու թիւրք ցեղին բոլոր բաժանումները, ատոր համար առաջին անհրաժեշտութիւնն է հայ ցեղին բնաջնջումը: Անհրաժեշտ է փճացնել հայերը և անոնց դիակներուն վրայեն քալելով հասնիլ մեր նպատակին: Հետևաբար մի խնայեք ոչ ոքի և ըրեք ճշդիվ ինչ-որ ձեզի խստորեն հրամայուած է»[22]:

Նույն խնդրի մասին Ջեմալը գրում է. «...Մեր միակ հույսն էր համաշխարհային պատերազմի միջոցով ազատուիլ բոլոր այն համաձայնութիւններից, որոնք սպառնում էին մեր անկախությանը... մեր նպատակը, ինչպես առանձնաշնորհումները և Լիբանանի դաշնակցության վերացումն էր, այնպես էլ հայկական բարենորոգումների խնդրում ազատվելն էր այն համաձայնագրից, որը մեզ պարտադրվել էր ռուսական ճնշման միջոցով»[23]:

Էրզրումում գերմանական հյուպատոս Շոյքներ-Ռիխտերը 1915թ. օգոստոսի 10-ին իր երկրի արտաքին գործերի գերատեսչությանը գրեց, թե Հայկական հարցը, որ տասնյակ տարիներ զբաղեցրել է եվրոպական դիվանագիտությանը, ներկա պատերազմում «վերջապես կլուծվի: Թուրքական կառավարությունն օգտվեց պատերազմական իրավիճակից և օգտագործեց Վանում, Մուշում, Կարահիսարում բռնկած հայկական ապստամբությունների առիթը, որպեսզի Անատոլիայի հայերին բռնի ուժով աքսորի Միջագետք»: Հայկական դպրոցները հալածելու, հայերեն լեզվով թերթակցություններն արգելելու և նման միջոցառումներով իթիհադը հույս ունի «վերջնականապես ճնշել հայերի քաղաքական և մշակութային ձգտումները»: Հավանաբար կառավարությունը նպատակադրվել է այնքան մնաս հասցնել հայերին, որ հետագայում նրանց համար անհնար լինի վարելու ինքնուրույն մշակութային կյանք: Ուզում եմ նշել այն հանգամանքը, որ կառավարական այս միջոցառումներն այնպես են անցկացվում, որ հավասարազոր էին հայերի անպայման ոչնչացման[24]:

Մեծ եղեռնի պատճառները պայմանականորեն կարելի է խմբավորել՝ ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական և ազգային-հոգևոր-մշակութային: Թուրքերը ռազմաքաղաքական պատճառներ համարում են՝ «հայերի դավաճանությունն ու անհավատարմությունը», հայկական ապստամբություններն ու հայերի զինվելը, օտար պետությունների օգնությամբ անկախ Հայաստան ստեղծելու ծրագրերը: Հայերի «դավաճանությունն» ապացուցելու համար բերվում է Վանի ինքնապաշտպանության օրինակը: Սակայն, եթե անգամ ընդունենք, որ Թուրքերն այս հարցում ճիշտ են, ապա այն կարող էր հիմք հանդիսանալ միայն ճակատամերձ շրջաններից հայերի տեղահանման համար: Թուրք աղբյուրներն ավելի քան չափազանցում են հայերի զինված լի-

21 Chambers A. In an Anatolian valley, New York, 1955, p. 221.
22 Թորլաքեան Մ. Օրերուս յետ, Լոս Անջելես, 1953, էջ 470:
23 Ջեմալ փաշա, նշվ. աշխ., էջ 14:
24 Lepsius J. Deutschland und Armenien. 1914-1918, Potsdam, 1919, s. 64:

նելը: Անգամ ամենաանբարոյական կեղծարարը չի կարող ժխտել, որ որոշակի թվով մարդկանց հաշվով մահմեդական բնակչության մոտ տասնյակ անգամ ավելի շատ զենք կար, քան հայերի մոտ: Ընդ որում, եթե առաջինները զենք էին ձեռք բերում հիմնականում ուրիշների, առաջին հերթին, հայերի վրա հարձակվելու, ապա հայերը զենք ճարում էին այդ հարձակումներից պաշտպանվելու համար: Ինչ վերաբերում է անկախ Հայաստանի ստեղծման դիտավորություններին, ապա այդ վկայակոչումները հիմքից զուրկ էին և սադրանքի շրջանակներից դուրս չէին գալիս: Անհնար է հերքել հայերի բնաջնջման հռչակագիրը, որը գերմանացի արևելագետ Մարկվարտը ձևակերպել է հետևյալ կերպ. «...Նույնիսկ Սահմանադրության հռչակումից հետո օսմանյան քաղաքականության հիմնական կարգախոսը մնաց հետևյալը՝ «Երբ չեն լինի հայերը, չի լինի նաև Հայկական հարցը»:

Ի. Զինովևը գրում է. «Թուրքերն իրենց համարում են ընտրյալ ռասա և չեն կարողանում հաշտվել հավասարության հետ, որ հռչակել է սահմանադրությունը»[25]: Ռուս մի այլ դիվանագետ Գ. Նելիդովը կարծում է. «Այսպես կոչված երիտթուրքերի մտավոր շարժումը հին և իսկապես թուրքական շարժում է, որի էությունը հանգում է թուրք-նվաճողի բողոքին ընդդեմ Թուրքիայի վզին դրսից փաթաթվող բարենորոգումների և նորամուծությունների, որոնք նրանց հետզհետե զրկում են «հպատակված» ազգաբնակչության վրա ունեցած իշխանությունից»[26]:

«Երիտթուրքերը,- գտնում է Հասանովան,- իբր ազատության, հավասարության, եղբայրության կողմնակից էին, իսկ իրականում հրահրեցին ազգային հակասություններ Օսմանյան կայսրության ժողովուրդների միջև և իրենք թաղեցին այն ազատությունը, որի համար 1908-ին պայքարում էին կայսրության մյուս ժողովուրդների հետ միասին: Երիտթուրքերի չովինիզմը հանդիսացավ նրանց քաղաքականության կրախի, վերջին հաշվով, Օսմանյան կայսրության անկման ամենալուրջ պատճառներից մեկը»[27]:

"Образование" հանդեսը 1909թ. մայիսի (թիվ 5) համարում նշում է, որ երիտթուրքերը «չափազանց կասկածամտորեն են նայում կայսրության բազմաթիվ ժողովուրդների ինքնուրույնության ձգտմանը և նրանց համար միակ հնարավոր ելքի՝ ինքնավար էթնիկական ու կրոնական կազմակերպությունների դաշնակցային միությունը ճանաչելու փոխարեն, ուժգնորեն աշխատում են իրականացնել կենտրոնացված պետության սկզբունքը՝ ապահովելով տիրապետող ազգի գերիշխանությունը»:

Ընթանում էր մի գործընթաց, որով թուրքական գերիշխանությունը վերածվում էր առարկություն չհանդուրժող իրողության, իսկ հպատակ ժողովուրդները կորցնում էին ոչ միայն ազատագրության, այլև ուծացման վտանգից խույս տալու հույսերը: Բնականաբար դա տանում էր դեպի ազգամիջյան հարաբերությունների սրում:

Ա. Մանդելշտամը «Օսմանյան կայսրության ճակատագիրը» մենագրության առաջին հատորում, որը նվիրված է երիտթուրքերի կուսակցության մինչպատերազմյան գործունեությանը, գրում է. «Մենք ուրախությամբ ընդունեցինք 1908թ. երիտթուրքական հեղափոխության ծաղող արևը, որը հույս էր ներշնչում»: Արևմուտքն ակնկալում էր, որ նոր Թուրքիան պատնեշ էր կանգնելու համագերմանական ծրագրերի առաջ, որոնք գնալով ավելի հստակ էին գծագրվում: Ի վերջո երիտթուրքերը դարձան յակոբիններ, որոնց մոտ թթու ազգայնամոլությունը և մարտնչող համիսլամությունը շատ ավելի ընդվզեցնող է, այն կրոնական համոզմունքի վրա չէր հենվում և ներկայանում էր հեղափոխական մեծ սկզբունքների փոխարեն: Մանդելշտամի կարծիքով՝ երիտթուրքերը սկզբում անկեղծ էին և իսկապես ձգտում էին ազատության և հավասարության, սակայն նրանք չէին հասկանում, որ «կայսրության հին ցեղերից որևէ մեկը չէր ցանկանա ձուլվել անդեմ օսմանցիության մեջ, որ մարդկանց իրավունքների ճանաչումը նաև ենթադրում է... սեփական ազգության ոգու ազատ զարգացում»: Հեղինակի կարծիքով, երիտթուրքերի այդ խեղումը տեղի ունեցավ 1909թ. մարտի 31-ի հեղաշրջման փորձից հետո: «Նրանք դեմ դիմաց մնալով թուրքի տգիտության և սահմանափակության հետ, փոխանակ օգտվելու Շևքեթ փաշայի հաղթանակից... հրաժարվեցին իրենց բոլոր իդեալներից, փոխանակ թուրք ժողովրդին դուրս

25 АВПР, ф. Политархив, д. 1034, л. 55.

26 Ն. տ.:

27 Гасанова Э. Ю. Общественная мысль в Турции в период буржуазной революции 1908г. Сб. Современная философская и социалистическая мысль стран Востока, Москва, 1965, стр. 234 .

բերելու տգիտությունից, որոշեցին շոյել նրա ամենաանարգ բնազդները, որպեսզի հնարավորություն ունենային շահագործելու ինչպես ցանկանային: Ժողովուրդը կատարված փոփոխություններից միայն մի բան շահեց՝ մեկի փոխարեն բազմաթիվ Աբդուլ Համիդներ ունեցավ: Երեկվա հեղափոխականները դարձան բախտախնդիրներ... Գերմանիան շոյում էր նրանց վայրագ փառամոլությունները և քաջալերում գազանային բնազդները՝ մղում անբուժելի ծայրահեղությունների»[28]:

Մանդելշտամը բացահայտում է երիտթուրքական քաղաքականության մի նպատակադրում ևս, որը նույնպես փոխառնված էր Աբդուլ Համիդից: «Երիտթուրքական կառավարության միջոցառումները,- գրում է նա,- ուղղված էին այն բանին, որպեսզի առաջացնեին քրիստոնյաների զանգվածային արտագաղթ: Մեծ տերությունների միջամտությունից հետո ստեղծված հանձնաժողովի եզրակացությունները Փոքր Ասիայից հույներին տարագրելու վերաբերյալ հաստատում են, որ իթիհադականները ձգտում էին առաջացնել արհեստական արտագաղթ և բռնագաղթված քրիստոնյաների հողերը բնակեցնել թուրքերով»[29]:

Կար պատմական փորձ և ինչո՞ւ այն չօգտագործել: Չէ՞ որ 1890-ական թվականների ջարդերից հետո տարբեր երկրներ արտագաղթեց մոտ 200 հազար հայ[30]:

Ի դեպ, եթե 1903-1907թթ. ԱՄՆ արտագաղթել էր 9 000, ապա 1908-1913թթ.՝ 28 000 հայ[31]:

Գնալով կոշտանում էր կուսակցության կեցվածքը ոչ միայն հասարակության, այլ նաև իր անդամների հանդեպ: Բեհաեդդին Շաքիրը խոստովանում է, որ վերջիններից հրաժարվել «չէին կարող առանց կուսակցությունը վտանգի ենթարկելու»[32]:

Սկզբնական շրջանում երիտթուրքերը բացահայտ անհամակիր դիրքորոշում ունեին կրոնի, այդ թվում նաև մահմեդական կրոնի, հանդեպ: Թշնամությունն այնքան սրվեց, որ Շերիի մոլեռանդները փողոցներում հարձակումներ էին գործում երիտթուրքերի վրա[33]:

Համաձայն սահմանադրության սուլթանը նշանակում էր միայն վարչապետին ու շեյխ ուլ իսլամին, իսկ նախարարներին նշանակում էր վարչապետը: Խորհրդարանն ու վերին պալատը կարող էին գումարվել նաև առանց սուլթանի իրադեի: Դրա դեմ 1910-ին հանդես եկավ Դամատ Ֆերիդը: Նա խորհրդարան օրինագծի նախագիծ մտցրեց՝ ասելով. «300միլիոն իսլամների խալիֆը ծնվել է ոչ թե հաստատելու, այլ հրամայելու»: Նրա կարծիքով, ազգային պետություն ստեղծելու պահանջը տանելու էր դեպի պետության քայքայում: Դրան շեյխ ուլ իսլամ Մ. Բյազիզը պատասխանեց. «Ազգային վեհապետությունը բխում է թե Կորանից և թե հենց իր՝ Մարգարեի օրինակից, ով միշտ հնազանդվել է օրենքին»: Այն, որ երիտթուրքերը ոչ միայն մերժեցան մահմեդական կրոնին, այլև որդեգրեցին Աբդուլ Համիդի համիսլամականությունը[34], չէր կարող փոփոխություն չմտցնել այլակրոնների հանդեպ նրանց քաղաքականության մեջ: Նրանք այս ասպարեզում նույնպես վերադարձան Համիդյան քաղաքականությանը: 1910թ. հունիսի 19-ի օրենքով մասնավոր նախակրթարանները դրվեցին կրթության նախարարության վերահսկողության տակ: Մերժվեց ազգային համայնքների (միլլեթների) եկեղեցիները ճանաչել որպես միջնորդ նախարարության ու միլլեթների միջև: Վերացվեցին 1869թ. ուսուցիչներին տրված արտոնությունները: Նրանք ևս զինապարտ համարվեցին: Մանդելշտամը դպրոցներն ու դատարանները Շերիի օրենքներին ենթարկելը համարում էր երիտթուրքերի անկման գլխավոր պատճառը[35]:

Հայերի դրությունը վիլայեթներում անտանելի դարձավ: «Գավառի զանազան կողմերը,- գրում է Ակնունին,- հայոց կացությունն այնքան ծանրացել էր, որ մեկ քանի առաջնորդներ Պոլիս գալ ուզեցին մորթերնին փրկելու համար, սակայն պատրիարքարանը հրաման չտուավ»[36]:

28 Mandelstam A. N. Le Sort de l' empire Ottoman, pp. 128-130.

29 Мандельштам А. Н. Младотурецкая держава. Историко-политический очерк. Москва, 1915, стр. 33-34.

30 Nassbian A. Armenian and the War, London-New york, p. 170.

31 «Հորիզոն», 07. 08. 1913:

32 Գանդրունի Հ. նշվ. աշխ., էջ 393:

33 Mandelstam A. N. նշվ. աշխ., էջ 48:

34 Ն. տ., էջ 56:

35 Mandelstam A. N. նշվ. աշխ., էջ 64:

36 Ակնունի Ս. նշվ. աշխ., էջ 30-31:

Ադանայի ջարդերի ընթացքում կիրառվեցին բռնության եղանակներ, որոնք կանխորոշեցին Մեծ եղեռնի իրականացման թուրքական գործելակերպը: Թուրքական խորհրդարանի հանձնաժողովի տեղեկագրում կարդում ենք. «Համիտը գեթ կը խնայեր տղոց, կիներուն, հիվանդներուն, կողոպուտի և քանդումների մասին տեսակ մը սեղմում կը դներ: Ատանայի մեջ ողջ-ողջ այրած են հիվանդները և վիրավորները: Գիւղերուն և շրջակայ ագարակներուն, Միսիի և Համիտիեի կազաններուն՝ ինչպես նաև Հասան Պէյլիեն իբրև հարստութիւն և կալուած ոչինչ կը մնայ... Ատանայի Աբգարեան վարժարանին մեջ տեղավորուած, շարժելու անկարող 150 վիրավորներ՝ չենքին հրդեհումին ատեն ողջ-ողջ այրուած էին... Շատ մարդիկ ևս մահը գտած են բռցերուն մեջ: 17 հոգի, երկուքը ամերիկեան միսիոներ, մեկը բողոքական հովիվ, անզեն, անպաշտպան և ոչ մեկ բանե գանգատուող, զորս այրած են Օսմանիեի հայ եկեղեցիին մեջ եկեղեցական պաշտամունքի ժամանակ»[37]:

Ադանայի վալի Ջևադը պնդում էր, որ հայերը զենք էին գնել, սակայն ներմուծված 12 հազ. զենքերի մեծ մասը գնել էին թուրքերը: «...Եթե հայերն անջատողականութիւն սնուցած ըլլային, անոնք 31 մարտի Շերիաթական ապստամբութեան շրջանին այդքան մեծ սիրով պիտի չպաշտպանեին Սահմանադրութեան նոր կարգերը»[38]:

Ադանայում առաջինը փորձարկվեց կոտորածները որպես ապստամբության ճնշում նենգափոխելու սադրանքը: 1909թ. ապրիլի 7-ին Ադանայի «Իթիդալ» իթիհադական լրագիրը տպագրեց «Սոսկալի ապստամբություն» հոդվածը: «Ավա՛ղ որ հայոց սրտերուն խորը հավաքուելով արմատացած, փոթորկոտ և ոճրապարտ պոռթկումով մը օրե օր փքուեցող, վերջապես եղերական գոռումներով հիվանդագին և արատավոր մրմունջներով եռացող բարկութեան և անկախութեան հեղեղը երկիրը կործանեց: Ասոր հետ մեկտեղ, հայերուն գրեթե ամեն կետերե ձգուած հրդեհները՝ ամբողջ քաղաքը կործանեց և ավերակ դարձուց»: Վարչապետ Ի. Հագը խորհրդարանում բողոքեց մի քանի թուրք խմբագիրների ձերբակալության դեմ: Դրան Հ. Պապիկյանը պատասխանեց. «Ատանայի մեջ 21 հազ. մարդ սպանուեցավ և հիմա ելեր երկու մարդ կը պաշտպանեք»: Ի. Հագը. «Այսչափ մարդ ջարդուած ըլլալը Պապիկեան էֆենդիի երևակայութեան արդիւնք է»: Վարդգես. «Ճարպիկ գողն ապրանքին տերը կախել կուտայ»: Թալեաթ. «Պետք է խնդիրը լուսաբանել: Ստոյգ տեղեկութիւն չկայ, մինչ Պապիկեան էֆենդին 21 հազ. հոգի մեռած են կըսուի...»: Հ. Պապիկյան. «Կըսուի չէ, այլ ինք կըսե»: Սակայն Ադանայի ջարդի ժամանակ երիտթուրքական քարոզչությունը դեռևս անփորձ էր ու գործում էր վարանոտ: Վախվորած էր նաև կառավարությունը, որին ներքաղաքական սուր պայքարի հետևանքով ամեն օր հրաժարական էր սպառնում: Դրա համար էլ երիտթուրքերի կենտրոնը շտապեց այլևայլ խաղերի միջոցով հարցը փակել: Կառավարությունը վիճակն ուսումնասիրելու համար նոր հանձնաժողով կազմեց, որի եզրակացությունների հիման վրա դատի տրվեցին Ադանայի նախկին վալի Ջևադը, զորահրամանատար Ռեմզին, Ջեբել Բերքեթի կառավարիչ Ա. Էսադը, «Իթիդալի» խմբագիրներ Ի. Ֆիկրին ու Ի. Սաֆան և մի քանի տասնյակ ջարդարարներ: Կառավարության կողմից տեղերն ուղարկված շրջաբերականում ասվում էր. «Բացարձակապես ապացուցվել է, որ հայ ժողովուրդը օսմանյան մեծազոր կառավարության հանդեպ իր հավատարմությունից երբեք չի շեղվել»[39]:

Թուրքական թերթերը տպագրեցին հայերի կոչը. «Կը խնդրենք մեր իսլամ հայրենակիցներեն, որ իրենց շահը չփնտռեն ուրիշին վնասին մեջ: Մենք տուժեցինք... Բայց դուք, իսլամներդ բարձրացա՞ք... մի նեղեք դժբախտ ազգ մը՝ որ Աստուածմե զատ ոչ ոք ունի»:

Հասկանալի է, որ այս ամենն արվում էր կրքերն հանդարտացնելու և ընդդիմությանը սնունդ չտալու համար, որովհետև անգամ երիտթուրք գործիչներից ոմանք խոստովանեցին, որ Ադանայի ջարդի կազմակերպիչն իթիհադն էր: «Իթիհատի կենտրոնը կազմակերպեց Կիլիկիոյ ջարդերը»: «Իթիհատի գլուխներուն հավաքույթներեն ետք են Ատանայի ջարդերը»: «Իթիհատ», իթիհատի օրգանը, բացարձակ գրգռած է ժողովուրդը»: «Ատանայի մեջ իշխանությունը եղեռնին ատեն բոլորովին անհոգ գտնուած է և ամբողջությամբ գրգռիչներուն և ջարդարարներուն

37 Ատանայի եղեռնը, տեղեկագիր Յակոբ Պապիկեանի, Կ. Պոլիս, 1919, էջ 15:

38 Գանգրունի Հ. նշվ. աշխ., էջ 308:

39 Թերզեան Հ. Կիլիկիայի աղետը, Կ. Պոլիս, 1912, էջ 623-625:

նպաստավոր գետին պատրաստած»: «Իթիհատի գլուխեն 18 քաղաքներուն հետևյալ խիստ կարևոր հեռագիրն ուղղուած է. «Կեռվտերելեանը 300 զինուած հայ ֆետայիներով ձեր գիտը պիտի կոխե, և տեղդ գտնուող հայերուն հետ միացած ընդհանուր ջարդ մը պիտի կատարե, ուստի անոնք չեկած դուք եղածն ի գործ դրեք»»[40]:

Կարելի է թուրքական հրապարակումներից նման բովանդակությամբ մեջբերումների ցուցակը շարունակել: Ադանայի կոտորածը հայերի միակ ջարդն էր, որ ոչ միայն թուրքական կառավարությունը, այլ հասարակայնությունն ընդունեց անմիջապես: Անգամ գերմանացիներն էին հարկադրված խոստովանել, որ Թուրքիայում հայերի հետապնդումը հետևանք էր ոչ թե կրոնական թշնամանքի, այլ կենտրոնական կառավարության կողմից զանգվածների մտքերի թունավորման, իսկ «երբեմն նույնիսկ նրա ուղղակի ցուցմունքների»[41]:

Ճիշտ է, քիչ ժամանակ անց դրանք բոլորը միասին և գրեթե յուրաքանչյուրը, առանձին վերցրած, բոլորովին այլ երաժշտություն սկսեցին նվագել, սակայն այդպես էլ չհաջողվեց ժխտել Ադանայում թուրքերի կողմից հայերի ջարդը: Այն միանշանակ գնահատականի արժանացավ նաև օտարերկրյա հանրության կողմից: «Զոհվեց 30 հազար հայ,- գրեց Ժորժ Բրեզոլը,- 300 կալվածք հրո ճարակ դարձավ, հափշտակվեց ավելի քան 10 հազ. գլուխ անասուն, իսկ նյութական վնասը կազմեց 20 միլ. թուրքական լիրա (մոտ 500 միլիոն ֆրանկ)»[42]:

Որ Ադանայի ջարդերը կրում էին անցումային բնույթ՝ 1894-96թթ. Համիդյան կոտորածներից անցում Մեծ եղեռնին, վկայում է նաև այն իրողությունը, որ հայերը թուրք ջարդարարներին հակահարված տվեցին ոչ միայն Ադանայում, այլև Քեսաբում, Զոք-Մարզվանում, Ֆրնտճագում, Շեյխ Մուրադում, Շար Դերեյում, Սիսում, Կարս Բազարի Հաճընում և այլուր: «Ինչ ալ եղած ըլլան Ատանային դեպքին պատճառները,- գրում է Կ. Իզմիրլյանը,- անիկայ երկրորդ ազդարարութիւն մըն էր հայ ժողովուրդին ուղղուած: ... Կռիվի Բ օրը երբ լսուեցավ, թե Մերսինի անգլիական հիւպատոսը Ատանայ եկած է, կը կարծուեր, որ ան վերջ պիտի տայ կռուին, և առ ի խրախճանութիւն՝ հազարավոր զենքեր արձակուեցան հայոց կողմե: Հիւպատոսը քաղաքը մտած ատեն ստացած վերքը հայոց վերագրեց և կռիվն ավելի սաստկացավ: Իսկ մեծ պետութիւններուն Մերսինի առջև խարսխած զրահավորները պարահանդեսներ կը սարքեին, երբ անդին իրենց շուրջը կը ծփային հայ նահատակներու դիակները»[43]:

Թալեաթն իր «մեծ ուսուցչի» օրինակով շարունակում էր հակահայկական գործողություններն արդարացնել՝ դրանք ներկայացնելով որպես «սովորական քրեական հանցագործություններ»,- գրեց "Русская молва" թերթը 1912թ. դեկտեմբերի 23-ին: Երիտթուրքերի երկերեսանի քաղաքականության համար բնութագրական է նաև հետևյալը: Ադանայի կոտորածից հետո կախաղան հանվեց 15 մարդ: Մեղադրյալների թվում կար միայն մի մահմեդական, որը դատապարտվեց վեց ամսվա բանտարկության, երբ ութ հայեր դատապարտվեցին 5-10 տարվա բանտարկության: Հետագայում ձերբակալվեց ևս 362 հոգի, որից քրիստոնյա էր 312-ը:

Երիտթուրքերի քաղաքականությունը, ընդհանրապես, նրանց հայկական քաղաքականությունը, մասնավորապես, հավանության չէր արժանանում, երբեմն նաև դայրույթ էր առաջացնում թե հասարակ թուրքերի և թե քաղաքական գործիչների շրջանում: Բայց այդ տրամադրությունները երկար կյանք չունեցան: Թուրքիստական մեծամտությունը թուխպի նման շատ արագ ծածկեց թուրքական հասարակությանը, խեղդեց բանականությունը և սանձաղերծ արեց հակահայկական կրքերը: Հայերի զիջողականության, անգամ ահաբեկվածության հանդիման կանգնած էր թուրքական անհանդուրժողականությունը: «Հայերին չխնայեք,- 1912թ. նախընտրական հրահանգներից մեկում կոչ էր անում իթիհադը,- կենդանի չունչ չթողնեք. կայք, գոյք՝ ամեն բանի տիրապետեցեք»[44], իսկ Կեսարիայի մուֆթասարիֆը մարգարեացավ. «Եթե այս իթիհադականները մնան, հայ ազգի գլխին նոր և ավելի խիստ փորձանքներ առաջ պիտի բերեն»:

40 Գանգրունի Հ. նշվ. աշխ., էջ 310:

41 «Հորիզոն», 04. 07. 1963:

42 Brezol G. Les Turcs on passn la ... la ve'rtie' sur les massacres d'Adana en 1909, Paris, 1911, p. 12.

43 Իզմիրլյան Կ. Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցեալին և ներկայիս, Բեյրութ, էջ 147:

44 Սապահ Դիլեան Ս. Պատասխանատուները, էջ 330:

Զափազանցում են բոլոր նրանք, ովքեր ցեղասպանության պատճառներից գլխավորը համարում են «հայկական ապստամբությունը»: Ի դեպ, այն մշտապես պատճառների շարքում առաջին տեղում է դրվել սկսած Աբդուլ Համիդ 2-րդից մինչև մեր օրերի թուրք գործիչներն ու պատմաբանները: Եվ դա ոչ այն պատճառով, որ ճշմարտություն է, այլ որովհետև «ապստամբությունը» շատ ծավալուն հասկացողություն է, որի մեջ հնարավոր է մտցնել սկսած աննշան բախումից մինչև զանգվածային ընդվզումները: Արտասահմանում փոքր չէ թուրքական այդ հեքիաթին հավատացողների թիվը: Չեմալը հայկական ապստամբությունը գլխավոր պատճառն էր համարում բնաջաղթի երիտթուրքական քաղաքականության համար: Նա բացի Վանից, ապստամբություն էր համարում նաև Ուռհայի և Զեյթունի ինքնապաշտպանությունները: «Մուսա Բաբայի ապստամբությունը նույնպես կազմակերպված հեղափոխության մի մասն էր», նաև այն, որ Դարդանելի կռիվների օրերին «հայերը ֆրանսիական և անգլիական հրամանատարության հրահանգով միացան Միջերկրականի արևելյան բանակին»: «Ռես-ուլ-Հենզարից դեպի Գոլֆ, Ալեքսանդրեթից Դորտ-Ցոլի վրայով Մուսա Բաբա, Հալեպ, Այնթափ, Ուրֆա և Զեյթուն տարածվող հայկական ապստամբությունը մի գործողություն էր, որն ի զորու էր Սիրիան բաժանել Փոքր Ասիայից»: Սխալ է դրանք «դիմադրության փորձեր» անվանելը, քանի որ ղեկավարվում էին անգլիական և ֆրանսիական սպաների կողմից: Տեղանունների նման շարքի ամենագետ թվարկումը, իհարկե, տպավորություն գործում էր և հավատ ներշնչում անտեղյակներին: Դրանցից էր նաև Լ. Տրոցկին: «Դեռևս ռուս-թուրքական պատերազմի ժամանակներից, այսինքն՝ 70-ական թվականներից, Թուրքահայաստանում լայն տարածում է գտնում զինված ապստամբության գաղափարը՝ ընդդեմ թուրք-քրդական տիրապետության, որը հեղափոխականների կարծիքով պիտի հարուցեր տերությունների, առաջին հերթին, Ռուսաստանի միջամտությունը: Պետերբուրգի դիվանագիտական գործակալները ձգտում էին հրապուրել և իրենց ենթարկել հայ հեղափոխականներին»[45]:

Այս և նման կարծիքները հպանցիկ ծանոթության հետևանք են: Իսկ ահա թե ինչպիսին է հիմնահարցին քաջատեղյակ ուսումնասիրողների կարծիքը: «Չի կարելի լուրջ համարել տեղահանության հիմնական փաստարկները,- գրում է Լեփսիուսը,- բացառությամբ Վանի շրջանի, որը զերծ մնաց տեղահանությունից, որովհետև գրավված էր ռուսական զորքերի կողմից, և երկու-երեք այլ վայրերի, որտեղ հայերը դիմադրություն ցույց տվեցին (Զեյթուն, Շապին Կարահիսար), մնացածներն այնքան հեռու են ռազմաճակատամերձ գոտուց, որ կայսրության տարբեր մասերում ցրված 1.5 միլիոն բնակչության արտաքսումը նույնիսկ պատերազմի թատերաբեմից շատ հեռու ընկած շրջաններից ոչ մի կերպ չի կարելի արդարացնել ռազմական նկատառումներով»[46]:

Լեփսիուսի «Տեղեկագրի» մասին Մանդելշտամը գրում է, որ այն «... վճռականորեն հերքում է երիտթուրքերի կողմից շրջանառության մեջ դրված ամեն կարգի լեգենդներն ու կեղծիքները, որոնց նպատակն է ժխտել կամ նվազեցնել իրենց պատասխանատվությունը... ժողովածուն ջախջախեց հայկական ապստամբության վերաբերյալ թուրքական պաշտոնական լեգենդը: Մինչև տեղահանության սկիզբը եղել է ընդամենը երեք աննշան ընդհարում ոստիկանների և այսպես կոչված խռովարարների միջև (Մուշ, Զեյթուն և Վան): Ջարդը սկսվելուց հետո առանձին վայրերում՝ Վան, Շապին-Կարահիսար, Ուրֆա և Սուեսիա, հայերը միայն զինված դիմադրություն են ցույց տվել մարդասպաններին... Գերմանական հյուպատոսների զեկուցագրերը միաժամանակ հերքում են թուրքերի կողմից հայերին ներկայացված մի այլ մեղադրանք, թե իբր վերջինները նախապատրաստվում էին համընդհանուր ապստամբության... »[47]:

«Բոլոր այս հանցագործությունները հայերի դեմ կատարվել են առանց հայերի կողմից անգամ նվազագույն սադրանքի... Օսմանյան կառավարությունն ի վիճակի չէ թաքցնելու իր հանցագործությունը նախազգուշական միջոցառումների ետևում...»[48]:

45 «Գարուն» (Հնդ.), 1990, թիվ 1, էջ 46:

46 Lepsius J. Bericht uber die Lage des armenischen Volkes in der Turkei, Potsdam, 1916, s. 243.

47 Mandelstam A. N. La Societe des Nations et les Puissances devant le probleme Armenien, Paris, 1926, pp. 46-47.

48 Toynbee A. J. Armenian atrocities: The murder of a nation, New York- London, 1915, pp. 69-70.

Վ. Վիլսոնը գրում է. «Ով ծանոթ է Անատոլիայում տեղի ունեցող պատերազմական իրադարձություններին, ով անաչառ հետևել է այդ ազգի (հայ) ճակատագրին, գիտե, որ հայ ժողովրդի դեմ ուղղված խարդախ մեղադրանքները ոչ այլ ինչ են, եթե ոչ նողկալի զրպարտություն՝ հորինված միջոցների մեջ խտրություն չդնող բռնակալների կողմից, որոնք նպատակ են հետապնդում իրենց զերծ պահել անհոգի ու դաժան գործողությունների հետևանքներից և քողարկել սեփական անկարողությունը՝ անկեղծության և մարդկայնության ոգու ձգտման մեջ»[49]:

Անդրադառնալով ԱՄՆ-ում Թուրքիայի հյուպատոս Ջելալ Մյունիֆի հայտարարությանը, թե կոտորածների «մեղավորներն իրենք հայերն են», Հ. Ադամսը գրում է. «Հայերը Թուրքիայի համար երբեք վտանգավոր չեն եղել և լինել չէին կարող: Նրանք ոչինչ չեն արել, որպեսզի համարվեն դավաճան, մեղադրանք, որն առաջ է քաշվում նրանց կոտորածն ու աքսորն արդարացնելու համար»: Ուսումնասիրելով 1894-96թթ. կոտորածները, նա նկատում է, որ մշտական ճնշումներն ու անարդարությունները բնականաբար «հուզախառն երիտասարդությանը մղեցին ստեղծելու գաղտնի խմբակներ՝ «ձգտելով թե Թուրքիայում և թե արտասահմանում քարոզչություն ծավալելու միջոցով հասնել հայերի և մյուս քրիստոնյա ազգությունների վիճակի բարելավման»: Կային առանձին անհատներ, որոնք ձգտում էին անկախության, սակայն նման քարոզչությունը հաջողություն չէր ունենում: Խոսքը գնում էր հայերի համար քաղաքացիական տարրական իրավունքների ապահովման մասին: «Թուրքերն ու նրանց գերմանացի գաղափարաբանները,- շարունակում է Հ. Ադամսը,- բերում են ռուսական բանակի շարքերում հայերի առկայության փաստը՝ հույսը դնելով այն բանի վրա, որ օտարները վատ գիտեն տարածաշրջանի պատմությունն ու աշխարհագրությունը: Թուրքերն ու գերմանացիներն ափիթից օգտվեցին՝ պնդելու, թե բոլոր հայերը ոտի ելած օգնում էին Անտանտին: Ադանայում որոշ հայեր զենքի դիմեցին միայն այն ժամանակ, երբ համոզվեցին, որ կառավարությունը, հակառակ տված խոստումների, իրենց չի պաշտպանում մահմեդական մոլեռանդներից: «Բացի Վանից, թուրքերը ոչ մի տեղ կասկածի ամենափոքր հիմք չունեին... իսկ Վանը Փոքր Ասիայի այն 30 կետերից միայն մեկն է, որոնցում տեղի ունեցան հայերի կոտորածներ և բռնագաղթեր»[50]:

Աշխատելով այլազգի գործակիցներին դուրս մղել գրված շահավետ դիրքերից, նկատում է խորհրդային թուրքագետ Դ. Երեմեևը, թուրքական բուրժուազիան ավելի ու ավելի հաճախ էր դիմում «անթույլատրելի գործելաձևերի»: Ջարդերն ու կոտորածները մրցապայքարում դառնում են թուրք խանութապահների, անասնավաճառների և կուլակների հիմնական միջոցը: Անատոլացի բուրժուաների դաժանությունն ամենևին նրանց ուժեղությունից չէր, այլ, ընդհակառակը, անզորությունից, թերզարգացածությունից, անլիարժեքության զգացումից: Հաջողության մեջ ապրող հարևան քրիստոնյաների նկատմամբ անողոք նախանձը, որ տարիներով քրքրել էր բուրժուականացած քաղքենու հոգին, պոռթկում է ջարդարարի պաթոլոգիական մոլեռանդության ձևով: Մրցակիցների նկատմամբ տածած ատելությունը թուրքական բուրժուազիան փոխադրում էր «այլազգիների ու այլադավանների» ամբողջ զանգվածի վրա, իր ժողովրդին գրգռելով հայերի, հույների և մյուս ազգային փոքրամասնությունների դեմ[51]:

Ամբողջ Փ. Ասիան, Մարմարա և Էգեյան ծովերից մինչև Կասպից ծովի կովկասյան ափերը, 24-րդ միջօրեականից մինչև 46-ը, այսինքն՝ մոտ 2 000 քառ. վերստ տարածության վրա բնակվում են մուսուլմանություն դավանող թուրքալեզու ժողովուրդներ: «Հենց այս հսկայական տարածքում 34 և 42-րդ միջօրականների միջև, այսինքն՝ մոտ 600 վերստ տարածության վրա է գտնվում Հայաստան անունը կրող մի ճեղքվածք...»[52]:

Պանթուրքիստներին հանգիստ չէր տալիս այդ «ճեղքվածքը», «սեպը» վերացնելու ձգտումը:

Իսկ հայերը հոգնել էին իրենց անհույս վիճակից: «Վերջին տարիներս հայերի կրած տառապանքներն ու ճնշումները համեմատած Ռուսաստանում շնորհված ավելի բարենպաստ վերա-

49 Տե՛ս, Vegner A. The Memoirs of Naim Bey, Appendt, p. 80:

50 The Education of Henry Adams, New York, 1930, pp. 15-17.

51 Еремеев Д. Е. На стыке Европы и Азии> Очерки о Турции и турках, Москва, 1980, стр. 124.

52 Борян Б. А. Армения, международная дипломатия и СССр, т.2, 1929, стр. 418.

բերմունքի հետ,- գրում է Մորգենթաուն,- բնականորեն նրանց մղեցին բաղդատելու իրենց ճակատագիրն այնտեղի իրենց հայրենակիցների ճակատագրի հետ: Սահմանադրական դարաշրջանի առաջին թովչանքներն արագ անցան, մինչդեռ 1909 թվականի Ադանայի եղեռնի հիշողությունը դեռ թարմ է հայերի ուղեղում: Այդ պատճառով էլ չի բացառվում, որ նրանց ճնշող մեծամասնությունը մյուս ոչ մուսուլման համայնքների, ինչպես նաև շատ թուրքերի պես կառավարության մեջ փոփոխության հույս են փայփայում: Սակայն ցանկության և այն իրագործել կարողանալու միջև մեծ անդունդ կա: Բացի Արևմտյան Հայաստանի լեռնային շրջաններից, Զեյթունից, Ալեքսանդրեթից, հյուսիսի հայերը մյուս դժգոհ համայնքներից ավելի միջոցներ կամ մտադրություններ չունեին իրենց ցանկություններին ազատություն տալու»[53]:

«Հայերի պահանջները,- գրում է ֆրանսիացի հայագետ Ֆր. Մակլերը,- վերին աստիճանի համեստ էին: Մեզ, ֆրանսիացիներիս, դա երևակայական է թվում: Եվ իրոք, ի՞նչ էին նրանք պահանջում: Հասարակ բան՝ կյանքի, պատվի և ունեցվածքի անվտանգություն»[54]:

Թուրքերը հայի անգամ այդ պահանջներն էին վտանգավոր համարում՝ գտնելով, որ նրա գոյությունն իսկ «լրջորեն սպառնում էր Օսմանյան կայսրության ամբողջականությանը: Եթե Թուրքիային վիճակված էր կորցնելու Արևելյան Անատոլիան, ապա թող գյավուրներին բաժին հասնեին մերկ լեռներն ու կիրճերը»[55]:

Հայերի ցեղասպանության գործում թուրքերի ցեղապաշտությունը լուրջ դեր խաղացե՞լ է: Թուրք հետազոտող Թաներ Աքչամն այդ հարցին բացասական պատասխան է տալիս՝ պատճառաբանելով, թե թուրքերի մոտ դժվար է հայտնաբերել հայերին որպես ազգի բնաջնջում նախատեսող տեսություն, ինչպես այդ եղել է հրեաների դեպքում, թե «...հայերին, որպես էթնոսի, բնաջնջման գաղափարը չդարձավ ողջ հասարակության մտածելակերպ»: Թվում է, թե Աքչամը սխալվում է: Ինչ ասել է «հասարակական մտածելակերպ»: Եթե խոսքը վերաբերում է օսմանյան հասարակությանը, ապա դա միանգամայն բնական է, իսկ եթե վերաբերում է թուրք հասարակությանը, ապա ոչ թե ցեղասպան մտածելակերպը, այլ հայերին օսմանյան հասարակությունից բացառելու մթնոլորտն անպայման առկա էր: Եթե թուրքերի լայն զանգվածները կողմ չլինեին հայերի ոչնչացմանը, իշխանություններին չէր հաջողվի կարճ ժամանակում, այն էլ պատերազմական պայմաններում, երբ թուրք տղամարդկանց հիմնական մասը ռազմաճակատում էր, ոչնչացնել մեկ միլիոն մարդ: Աշխարհամարտի մեջ Թուրքիայի մտնելուց 8-10 ամիս առաջ օսմանյան հասարակությունը տեղյակ էր, իսկ ովքեր տեղյակ չէին, զգում էին, որ հայերի կոտորածները միայն ժամանակի հարց էին: Չի կարելի համաձայնել Թ. Աքչամի նաև այն մտքին, թե «ցեղասպանությունը յուրահատուկ չէր անգամ օսմանյան իշխող վերնախավին»: Հակառակն ապացուցող ավելի քան բավարար վկայություններ կան: Ինչ վերաբերում է Պ. Նուբարին Հալիմի ուղարկած հրավերին՝ համաձայնություն տալ մտնելու կառավարության մեջ, քաղաքական խաղ էր նրան միջազգային կյանքից մեկուսացնելու, այսինքն՝ զրկելու հնարավորությունից զբաղվելու Հայկական հարցով: Իսկ երբ այդ չստացվեց, 1915թ. սեպտեմբերին նույն Նուբարին դատի տվեցին և պահանջեցին վերադառնալ Թուրքիա դատարանի առաջ կանգնելու համար:

Թուրք պատմաբանը գտնում է. «Հայերի կոտորածը հայ ցեղի բնաջնջման նպատակ չէր հետապնդում: Թուրքական իշխանությունների հիմնական նպատակն էր՝ այն պահին, երբ դրված էր թուրք ազգի լինել-չլինելու հարցը, նվազագույնի հասցնել հայ ազգաբնակչության թիվը, որպեսզի այլևս չկարողանար սպառնալ թուրքական պետականությանը...»: Ծիծաղելի է պնդել, որ 1914-15 թթ. հրապարակի վրա էր «թուրք ժողովրդի լինել կամ չլինելու հարցը»: Թուրքերի գլխին երբեք անհետանալու վտանգ կախված չի եղել: Նաև լուրջ չէ կարծել, թե հայերն ի վիճակի էին «սպառնալ թուրքական պետականությանը»: Երբ պահանջվում էր հայկական նահանգներում բարենորոգումներ մտցնել, թուրք պետական գործիչներն ու գիտնականները բղավում էին, թե այդ նահանգներում հայերը չնչին փոքրամասնություն էին՝ 17%, և արդար չէր

53 Morgenthau H. Ambassador, Morgenthau's story, N. Y., 1919, pp. 21-22.
54 Macler F. La Nation Armenienne: Son passn, ses malheurs, Paris, 1923, p. 44.
55 "Русские ведомости", 04. 08. 1915.

նրանց համար առանձին բարենորոգումներ մտցնել. իսկ երբ հարկ առաջացավ ապացուցելու, որ հայերին ոչնչացնում էին, որովհետև նրանք «սպառնում էին թուրքական պետականության գոյությանը», նույն մարդիկ համարեցին, թե հայերն այնքան մեծաթիվ էին, որ ի վիճակի էին կործանել Օսմանյան կայսրությունը և ձեռնամուխ եղան նրանց թվի նվազեցմանը:

Թ. Աքչամն իրավացի է, երբ գրում է. «...Կոտորածների ժամանակ շահարկված իսլամական գործոնը տվյալ ազգի նպատակները չի բացահայտում: Իշխող շրջաններն այս գործոնի օգնությանը դիմեցին մահմեդական ազգաբնակչությանը բնաջնջման հանցագործությանը մասնակից դարձնելու նպատակով»: Բայց հազիվ թե ճիշտ է նրա այն պնդումը, թե «հավատարմությունը գաղափարական ընտրությանը խորթ է եղել թուրքական իշխանություններին», թե «երիտթուրքերն առանձնապես չէին հետաքրքրվում քաղաքական գաղափարներով»: Այս միտքը հաստատելու համար բերում է Վարդգեսի հայտարարությունն օսմանյան խորհրդարանում 1911թ. «Մեր մեջլիսի անդամների գլխավոր թերությունը սկզբունքների բացակայությունն է»: Վարդգեսի հետ միասին իրավացի է նաև Թուրքիայի նախկին նախագահ Ջելալ Բեյարը, երբ գրում է. «Երիտթուրքերի միջավայրում կարելի է հանդիպել ինչպես պանիսլամիստների, պանթուրքիստների կամ պարզապես թուրք ազգայնականների»: Ճիշտ է նաև իր՝ Աքչամի այն միտքը, թե թուրք «պետական այրերի աչքում յուրաքանչյուր գաղափարախոսության չափանիշը նախ և առաջ դրա օգտակարությունն էր»: Հանրահայտ փաստ է, որ Թալեաթը հաճախ էր ծաղրում Զիա Գյոքալփին տեսություններին մեծ տեղ հատկացնելու, կյանքի երևույթներին այս կամ այն գաղափարախոսության «աչքերով նայելու համար , բայց այդ բոլորից չի բխում, թե երիտթուրքերի «չարժիչ ուժը եղել է» անգաղափարախոսության գաղափարը: Համենայն դեպս իշխանության գալուց հետո երիտթուրքերի համագումարներում քննարկված հարցերը հիմնականում վերաբերել են գաղափարախոսությանը: Այն, որ օսմանյան «իշխող ընտրանու համար ժողովուրդն ընդամենը հպատակ ստրուկների հավաքածու էր... Ժողովրդի ու պետության միջև հսկայական անդունդ» կար, միանգամայն ճիշտ է, բայց որ «այդ անդունդը որևէ գաղափարախոսությամբ լցնելու կարիքը չէր զգացվում», թվում է սխալ: Որպես կանոն գաղափարախոսությունները հոսում են դեպի զբաղեցված գոտիներ, դրա համար էլ ստեղծվում են: Եվ զարմանալու ոչինչ չկա, որ երիտթուրքերը թուրքական գաղափարաբանություններից, սկսած օսմանիզմից, իսլամիզմից և թուրքիզմից, օգտագործում էին այն, ինչը «տվյալ պահին ամենամեծ օգուտն էր բերում»: Հավանաբար Թ. Աքչամը մոռանում է, որ գաղափարախոսությունները ոչ միշտ են նույնանում աշխարհայացքների հետ: Կան գաղափարախոսություններ, որոնք ընդգրկում են տվյալ աշխարհայացքի միայն մեկ կամ մի քանի հիմնահարցեր: Այդպիսիների թվին են պատկանում թուրքական գաղափարախոսությունները, որոնք կարող են գործողության մեջ դրվել ոչ միայն ռազմավարական, այլև մարտավարական նկատառումներով: Նման երևույթների կարելի է հանդիպել ցանկացած երկրում[56]:

Թ. Աքչամից ավելին պահանջելն արդար չի լինի: Գլխավորն այն է, որ թուրք պատմաբանը հայերի զանգվածային կոտորածի փաստը չի մերժում, չնայած ցեղասպանությունը հերքում է: Նույնիսկ հեքիաթներ է պատմում, թե հայերի տեղահանությունը խնդիր ուներ նրանց տեղափոխելու անվտանգ գոտիներ, ինչը կեղծիք է երկու պատճառով. նախ, Թալեաթի խոստովանությամբ՝ «Բռնագաղթը նշանակում էր ոչնչացում» և իրականությունը հաստատեց դրա ճշմարտությունը, երկրորդ, եթե երիտթուրքերը նույնիսկ նպատակադրված չլինեին հայերին բնաջնջելու, միևնույն է, բռնագաղթը հանգեցնելու էր հայության վերացմանը: Հ. Ադամսը նկատում է, որ, այո, կարող էին փրկվել մեծ թվով մարդկային կյանքեր, սակայն չէր փրկվի հայ ազգը: Մարդիկ կլինեին, բայց ազգը՝ ոչ:

Սկսած XVIII դարի վերջերից Օսմանյան կայսրությունը պահպանելու եվրոպական տերությունների քաղաքականությունը (status que) ուղղված էր Ռուսաստանի առաջխաղացման դեմ: Բայց Ռուսաստանին հաջողվում էր առաջ շարժվել չնորհիվ այն բանի, որ թուրքերի հաստատած «տիպիկ ցեղային-բռնատիրական հիմքերի վրա»[57] հպատակներին կարիքի տակ խեղդելու[58]

56 Ахчам Т. Турецкое национальное "Я" и Армянский вопрос, Москва, 1995, стр. 102-104.
57 Архив К. Маркса и Ф. Энгельса, т. 6, Ленинград, 1939, стр. 177 .
58 Լենին Վ. Երկ, հ. 17, Երևան, 1978, էջ 85:

«հին չինական կամ թուրքական»[59] բացարձակ թալանչիական, ձրիակեր, պարազիտային, ռասայական-ջարդարարական պետական համակարգի դեմ ճնշված ժողովուրդների տևական պայքարը խարխլել էր կայսրության հիմքերը: Մահմեդականությունը թուրքական բարբարոսությունների հոգեկան աղբյուրն էր և պահանջում էր այլակրոնների ոչնչացում, որպես մահմեդականների սրբազան պարտք[60]:

«Կորանը» պահանջում էր անխնա պատերազմել «անհավատներից նրանց դեմ, ովքեր ավելի մոտ էին գտնվում»[61]:

Մահմեդականությունը լոկ կրոն չէ, այլ ցեղամոլ աշխարհիկ քարոզչություն: Դրա պահանջները վայրագության գագաթնակետին հասցվեցին թուրքերի կողմից, որոնք Կորանի պատվիրանները կիրառում էին սադիստական բավարարվածությամբ և հաճույքով[62]:

Այս վարքագիծը որպես ժառանգություն անցավ երիտթուրքերին: Դրան գումարվեց գերմանա-տևտոնական ապակեփայլ մարդատյացությունը[63]:

Պանօսմանիզմի պարագլուխներից Աղա Դընդըզը գրում է. «Պատերազմ գնալուց առաջ թող որ ձեզ ասեմ, թե ինչ եմ անելու: Իմ գրված ամեն մի բառ հողից արյուն պիտի ժայթքի, և իմ ճիրանների մեջ գարուններն աչունների և աչունները ձմռան պիտի փոխվեն, եթե ես քարը քարի վրա թողնեմ, ապա թող իմ օջախն ավերակ դառնա: Իմ սվինը վարդաստանները գերեզմանների պիտի վերածի, և ես պատմությանը կթողնեմ այնպիսի ավերակներ, որտեղ տասը դար շարունակ քաղաքակրթությունը չծաղկի: Գթությունն իմ սրի ծայրից կկախեմ, իրավունքը՝ հրացանիս բլթակից, քաղաքակրթությունը՝ ձիուս սմբակներից: Լեռնախորշերը և ավերակների այլանդակ պատկերները հավիտյան կասեն՝ «Թուրքն է անցել այստեղից»»[64]:

Այո, թուրքական կառավարության ցեղասպան կողմնորոշման գործում դժվար է գերագնահատել Կորանի և Շարիաթի կանոնների դերը: Կորանը հանձնարարում է. «Եթե հանդիպեք անհավատի, սրով հարվածեք նրա վզին» (Կորան, սուրահ 47): «Գյավուրների դեմ կռվիր վրեժխնդրությամբ և անգութ եղիր նրանց նկատմամբ», «Ամենազոր Ալլահը թող օգնի, որ անհավատների մարմինները կտրտենք»:

Մահմեդականներին ոչ մահմեդականների նկատմամբ, անկախ նրանց ազգային և սոցիալական պատկանելությունից, ատելություն դաստիարակվում էր մանկուց: Սակայն հազիվ թե ճիշտ է այն միտքը, թե թուրքերը բնաջնջում էին հայերին, որովհետև վերջինները չէին «ցանկանում դավանափոխ լինել, չէին ուզում ուրանալ իրենց մայրենի լեզուն, գիրն ու գրականությունը...»: Լ. և Ա. Շաբրիները գրում են, որ թեև հայերի բնաջնջման քաղաքականությունը երիտթուրքերը պատճառաբանում են նաև կրոնական առճակատումով, քողարկում սրբազան պատերազմով, իրականում կոտորածները պայմանավորված էին թուրք էթնոսը կայսրությունում գերակշիռ դարձնելու ցանկությունով: «Հենց ռասայական գաղափարը և ոչ թե կրոնի պաշտպանությունը դարձավ ջարդի հիմնական պատճառը: Իսլամի պաշտպանությունը երկրորդական նշանակություն ուներ»[65]:

Հ. Ադամսն իրավացի է, երբ գրում է, թե Եվրոպան փորձ իսկ չկատարեց փրկելու հայերին, որի ողբերգությունն այլ բան չէ, եթե ոչ նույն այդ «Եվրոպայի և Թուրքիայի փոխհարաբերությունների հետևանք»: «Հայերն, իհարկե, մահմեդականների տիրապետության տակ» իրենց իրավազրկության հետևանքով «կրել են որոշակի բնույթի տհաճություններ և տանջանքներ», սակայն նաև «օգտվել են համեմատաբար անվտանգ գոյություն և նույնիսկ բարեկեցություն ունենալու հնարավորությունից... Թուրքերի կողմից հայերի ջարդերն ու հալածանքները չի կարելի ներկայացնել որպես կրոնական հողի վրա կատարված երևույթներ»: Ամերիկացի հետազոտողը նաև խորապես սխալվում է, երբ ասում է, թե «զավանությունները վերջին 25 տարվա արարքներ են»[66]:

59 Լենին Վ. Երկ, հ. 23, Երևան, 1979, էջ 339.
60 Коран, Москва, 1963, стр. 145, 149, 152 .
61 Ն.տ., էջ 162:
62 Геноцид армян... 1966, стр. 67.
63 Мандельштам А. Н., Ցշվ. աշխ., էջ 67 .
64 "Правительственный вестник", հ. կ., 1878, N1.
65 Chabry L. Chabry A. Politique et minorities au Proche Orient, Paris, 1984, p. 232.
66 The Education of Henry Adams, pp. 22-23.

Ավատատիրական հասարակության շատ ինստիտուտների գոյատևումը և դրանց ու մահմեդական կրոնի ազդեցության մեծ ուժը Թուրքիայի իշխանությունների և վերնախավերի կողմից օգտագործվում էր ազգայնամոլություն և մեծապետականություն արմատավորելու համար և այդ արվում էր թուրքական գաղափարախոսությունների միջոցով:

Կ. Մարքսը նկատում է, որ Թուրքիայում շատ կարևոր «անկյունաքար էր ռայայի ենթարկումը Կորանին», քրիստոնյաներն օգտվում էին «թուրքական կառավարության պաշտպանության ներքո ռայայի վիճակում ապրելու արտոնությունից»[67] և ոչ ավելին: Իսկ ռայան հոտ էր՝ զրկված բոլոր իրավունքներից, բացի անմռունչ աշխատելու հնարավորությունից, որպեսզի բավարարեր մահմեդականի պահանջմունքները: Դրանից դուրս ռայայի ցանկացած քայլին հետևում էր յաթաղանի հարվածը: Իսլամը ձևավորեց մարդ ռայայի արժեզրկման համապարփակ համակարգ: Հակաքրիստոնեական թույնով էին վարակված թուրք հասարակության բոլոր շերտերը, իսկ թուրքական բանակը «մահմեդական բարբարոսությունների հենարանն» ու առաջատարն էր: Թուրքերի դարավոր արտոնյալ վիճակը նրանց մեջ ձևավորել էր մտածողություն, որ իրենք «առանձնահատուկ իրավունքներ» ի վերուստ ստացած ազգ են, իսկ ազգային առանձնահատկությունների ամեն մի բացարձակացում դուռ է բացում, որպեսզի իշխող հասարակական շերտերը զանգվածների ազգային զգացումները, նրանց տրամադրությունները ծառայեցնեն իրենց նեղ, հատվածային շահերին:

Դա, այսպես կոչված, «թուրքական խուժանի» հոգեբանություն էր, որն իր մեջ միավորում էր թե սոցիալական և թե քաղաքական վիճակի առանձնահատկություններից բխող ապրելակերպ, բարոյականություն և գործելակերպ: «Թուրքական խուժան» հասկացությունը Կ. Մարքսը բնութագրում է հետևյալ կերպ. «Եվրոպայում թուրք բնակչության գլխավոր հենարանը... Կ. Պոլսի և մի քանի այլ քաղաքների խուժանն է: Այդ խուժանը գերազանցապես թուրքական ծագում ունի, և չնայած այն բանին, որ նրան աշխատանք տվողը գլխավորապես քրիստոնյա կապիտալիստներն են, այդ խուժանը, այնուամենայնիվ, մոլեռանդորեն պաշտպանում է իր երևակայական գերազանցությունը և խժդժություններ կատարելու իր իրավունքը, որը նրան, ի հակակշիռ քրիստոնյաների, տալիս է արտոնյալ կրոնին՝ իսլամին պատկանելը»[68]: Հասկանալի է, որ «կորցնելու ոչինչ չունեցող» այդ հասարակական խավը քրիստոնյա հպատակի հանդեպ մահմեդականի գրեթե անսահմանափակ իրավունքների պայմաններում իրենն էր համարում այլակրոն հպատակների ունեցվածքը, անգամ՝ կյանքը: Հետևաբար «թուրքական խուժանը» միանգամայն պատրաստի ուժ էր ցանկացած բռնի գործողության համար՝ սկսած թալանից, վերջացրած զանգվածային ջարդերով: «Ընդհանուր կոտորածի գաղափարը,- «Հնչակի» 1908թ.թիվ 8-12 համարում գրում է Սապահ Գյուլյանը,- որ թուրք խուժանի ոսկորի ու արյան մեջ էր մտել և «քրազ», «քեսըրզ» երգերը հոմանիշ են եղել ամբոխների մի զվարճախաղի,- դա էլ մտել էր երիտթուրքերի ծրագրի մեջ:

Որպես գլխավոր գործիք թուրքական զորքերը հայկական կոտորածներում բաժին ունեցել են, բայց այդպիսի բաժին ունեցավ նաև ինքը՝ թուրք ժողովուրդը՝ խանութներում հայերին ոչխարի պես մորթող կախողները, հայ կույսերին չարաչար մահով սպանողները, հայերին հազարներով ողջակիզողը թուրք ժողովուրդն էր»: Բացարձակապես իրավացի է Զմյուռնիայում ԱՄՆ նախկին հյուպատոս Ջորջ Գորդոնը, երբ գրում է. «1. Թուրքերը միշտ սպանության գործիք են բարձրագույն իշխանության հրամանով... 2. ... որոշակի ժամանակաշրջանում թուրք ազգայնամոլների քաղաքականությունն ուղղված էր Թուրքիայի քրիստոնյա ազգաբնակչության ոչնչացմանը»[69]:

Քրիստոնյա բնակչության, մասնավորապես հայերի համար թե իսլամիզմը և թե թուրքիզմը նշանակում էին վերջ ազգային գոյությանը: Հայը համառեց, նա ապավինեց իր զարգացած քաղաքակրթությանը և կուլ չգնաց թուրքերի ուծացման քաղաքականությանը: Թուրք քաղաքագետները դրանից ջարդարարին վայել եզրակացության հանգեցին՝ եթե չեն ուծացվում, պետք է ոչնչացվեն:

«Հայկական հարցը,- գրում է Լեփսիուսը,- մի ինքնաբույս տունկ չէ, այլ եվրոպական քաղաքագիտության ծնունդ: Հայ ազգը Ռուսաստանի և Անգլիայի հակադիր քաղաքական շահերի

67 Маркс К. И Энгельс Ф. Сочинения, т. 10, стр. 167-168.
68 Ն. տ., հ. 9, էջ 6-7:
69 «Սովետական Հայաստան» հնդ., 1988, թիվ 10, էջ 20:

զոհն է... Լոնդոնի և Պետերբուրգի քաղաքագիտական ճատրակի մեջ հայը զինվոր էր, որ մերթ առաջ էր քշվում, մերթ զոհվում... Մինչև այսօր հայերը միայն միջոց առ վախճան են եղել Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի քաղաքագիտական խաղի ...»:

Եվրոպական պետություններ վրա հայերի հույս դնելը, գրում է Ք. Ուոքերը, որոշ գիտնականներ բացատրում են նրանց քրիստոնյա լինելով: «... Ոչ ճկուն արևմտյան խելքն ուզում է, որ ամբողջ Արևմուտքը լինի քրիստոնեական և «լավ», իսկ ամբողջ Արևելքը՝ մուսուլմանական և «վատ»: Այնպիսի արևելյան քրիստոնյա ազգերի գոյությունը, ինչպիսին հայերն են, հակասում է այդ հիմնարար մտքին: Բանն այն է, որ արևմտյան մտածողությունը չի ուզում ճանաչել քրիստոնյա ազգերի գոյությունը Արևելքում... կարևոր է հայերին հրաժարեցնել այն գաղափարից, թե մյուս քրիստոնյա ազգերը միշտ կօգնեն իրենց»: Դա անիրատես քաղաքականություն է: Բրիտանիայի տնտեսական ու ռազմավարական շահերը նրան ստիպել են վերջին 130 տարիներին Մերձավոր Արևելքում որպես գլխավոր դաշնակից համարել ոչ թե որևէ քրիստոնեական երկրի, այլ Օսմանյան Թուրքիային: Վիկտորյա թագուհին պաշտում էր Աբդուլ Համիդի Թուրքիան: Նա Աստծո վրա զայրանում էր, որ ինքը կին էր ծնվել և հնարավորություն չուներ զենքը ձեռքին մարտնչելու Ռուսաստանի դեմ ի շահ Թուրքիայի: Այսինքն՝ կրոնի հիմքի վրա ազգերի հավատարմությունը միմյանց զուրկ է կենսունակությունից: «Դա մեռյալ գաղափար է»: Կրոնական տարբերությունները հայ-թուրքական հարաբերություններում դեր խաղացել են, բայց ոչ երբեք՝ գլխավոր: Այո, եղել ու կան հայեր, ովքեր կրոնական գործոնն աշխատում են տեսնել առաջին պլանին, սակայն այդ մոտեցումը XIX-XX դարերում ոչ մի պահի որպես քաղաքական գործոն առաջնային չի եղել: «Հայերը քրիստոնեական պետություններին են օգնության ձեռք մեկնել ոչ թե նրա համար, որ դրանք Հիսուս Քրիստոսի հավատքի կրողները, այլ որովհետև տվյալ աշխարհատարածքի ճակատագրի տնօրինողներն էին, առանց որոնց Հայկական հարցի լուծումը պատկերացնելն անհնար էր»:

Այս ամենն ասելուց հետո Ուոքերն ինքն է ընկնում չափազանցության մեջ: Նա գրում է, թե թուրքերը հայերին սպանեցին «պանթուրքիզմի հետևանքով՝ թուրքալեզու ժողովուրդների կողմից թուրքական էթնոսի հիման վրա միասնական պետություն ստեղծելու ցանկությամբ, ինչը ենթադրում էր հայերի ոչնչացում»: Ք. Ուոքերը հայոց ցեղասպանության գործում թուրքիզմի ու պանթուրքիզմի խաղացած դերերը չփոթում է: Հայոց ցեղասպանության գործում վճռական դեր խաղացել է ոչ թե պանթուրքիզմը, այլ թուրքիզմը՝ Արևմտյան Հայաստանը մաքրել հայերից[70]:

1914-18 թվերին Թուրքիայում ծրագրվեց ու իրականացվեց 1.5 միլիոն հայերի ոչնչացում՝ մարդկության պատմության մեջ նախադեպը չունեցող մի երևույթ, որը նպատակ էր հետապնդում մի ամբողջ ժողովրդի բնաջնջման միջոցով հավերժացնել նրա բնօրրանի սեփականացումը: Դրանից առաջ և հետո էլ ցեղասպան գործողություններ եղել են, բայց դրանցից ոչ մեկն այնքան ծավալուն և ամբողջական, լրիվ բնաջնջման նպատակ չի հետապնդել, ինչպես հայոց եղեռնը: Տվյալ դեպքում խոսքը գնում էր ոչ միայն ամբողջ հայ ժողովրդի բնաջնջման մասին՝ վերացնելու քրիստոնեական այն սեպը, որ խրված էր մահմեդական, թուրք-թաթարական ժողովուրդների զբաղեցրած անծայրածիր տարածքների մեջ և խոչընդոտում էր Կովկասի, Միջին Ասիայի, Սիբիրի, Աֆղանստանի, Հնդկաստանի ու Չինաստանի մահմեդականության հետ Թուրքիայի ուղղակի կապին:

Այդ ամենը, իհարկե, իրավացի է, բայց գլխավորը չէ հայերին բնաջնջելու գործում: Գրականության մեջ հաճախ կարելի է հանդիպել, որ եթե արևմտահայերը խոնարհություն և խոհեմություն հանդես բերեին, թուրքերը նրանց չէին ոչնչացնի: Սա ոչ միայն սխալ, այլ նաև վտանգավոր կարծիք է, որի հեղինակը ոչ այլ ոք է, եթե ոչ Բարձրագույն Դուռը, թուրքական կառավարությունը: Նախ, Օսմանյան կայսրությունում հպատակ, մասնավորապես քրիստոնյա ժողովուրդների խոնարհություն և հնազանդություն ասելով հասկանում էին կյանքի և կայքի բացարձակ անապահովություն: Ռայան զուրկ էր մարդկային տարրական իրավունքներից, նրան ազատ ու անկաշկանդ ոչնչացնում, թալանում, ամենաբազմատեսակ բռնությունների էին ենթարկում և այդ կարող էր գործադրել ցանկացած մահմեդական՝ լիներ փաշա, թե փողոցային սինլքոր: Քրիստոնյայի ունեցվածքը ոչնչով պաշտպանված չէր: Մահմեդականը կարող էր դրան

70 «Խորհրդային Հայաստան» օրթ., 23. 06. 1990:

տիրանալ, հային դուրս քշել սեփական տնից ու գյուղից, զավթել նրա ունեցվածքն ու հողերը, տիրանալ նրա կնոջն ու դուստրերին: Հայ կանանց առևանգումն ու թրքացումը զանգվածային բնույթ ուներ: Թուրքերի այդ գործողությունները կենցաղային-սեքսուալ այլասերվածությունից բացի, հետևանք էին իրենց երակներում հայի արյուն ներարկելու միջոցով օսմանցիների ցեղային հատկանիշները բարելավելու ձգտման: Մահմեդականը զինված էր, իսկ հայը զենք կրելու իրավունք չուներ, որ նշանակում էր հայի ստրկական հպատակություն: Հայը շարիաթական դատարանում ցուցմունք տալու իրավունք չուներ, որոշակի առումով օրենքից դուրս էր դրված՝ նաև պետական համակարգում բացառված էր նրա իրավունքների պաշտպանությունը:

Շրջապատված վայկատուն ցեղերով ու մուհաջիրներով, որոնք մինչև ատամները զինված, պետության հովանու և քաջալերանքի տակ գործող ավազակախմբեր էին, արևմտահայությունը ոչնչանում, անհետանում էր: 1878-1915 թվերին յաթաղանին զոհ գնաց շուրջ 1.5 միլիոն հայ, այսինքն՝ նույնքան, ինչքան Մեծ եղեռնի տարիներին: Մինչև 1915 թիվը ցեղասպանությունն իրականացվում էր այլևայլ ձևերով ու եղանակով: Դրանցից գլխավորներն էին՝ տնտեսական քայքայումը, քաղաքական հալածանքներն ու ֆիզիկական ոչնչացումը: Այս պայմաններում ինչպիսի՞ն պետք է լիներ հայի վարքագիծը: Մնա՞ր դարավոր խոնարհ կեցվածքով, ենթարկվել «դանդաղ» ոչնչացման, թե պայքարի ելներ հանուն գոյության իրավունքի, հանուն ազատության ու արժանապատվության: Շատ հայեր ընտրեցին երկրորդ ուղին, որը միակ տրամաբանականն էր, մանավանդ, որ դրության տեր դարձել էր թուրքական բուրժուազիան իր այլամերժ մեծապետական հակումներով ու ծրագրերով:

Հայոց ցեղասպանությունն արևմտահայության վարքագծով հիմնավորելը կեղծիք է: Սակայն դա արդյոք նշանակո՞ւմ է, թե այդ վարքագիծը որևէ դեր չխաղաց 1.5 միլիոն մարդու ոչնչացման գործում: Ոչ և, դժբախտաբար, հազար անգամ ոչ: Թե օբյեկտիվ և թե սուբյեկտիվ բնույթի պատճառներով արևմտահայությանն այդպես էլ չհաջողվեց մեկ ընդհանուր ազգային դիրքորոշման շուրջ միավորվել: Այս գործում որոշակի դեր խաղաց մահմեդական օվկիանոսում հայ փոքրամասնության ցրվածությունը, նույնիսկ Արևմտյան Հայաստանում հայերը միայն հարաբերական մեծամասնություն էին կազմում: Բնականաբար այդ, ինչպես նաև կայսրության ներսում կապի միջոցների թուլությունը, ազգաբնակչության ներփակ ապրելակերպը, տեղափոխությունների անվտանգության բացակայությունը լուրջ դժվարություններ էին ստեղծում հայերի ուժերի համախմբման համար: Մի հանգամանք ևս: Ազգային խնդիրների մոտեցման հարցում մեծ տարբերություն կար Պոլսի ունևոր հայության և բուն Արևմտյան Հայաստանում բնակվող հայերի մոտեցումների միջև, նրանք շատ հաճախ «տարբեր լեզուներով էին խոսում»: Հայ հասարակությունը գերի մնաց մասնատվածության և ուժերի ջլատման հոգեբանությանը, որն իր արտահայտությունը գտավ հասարակական-քաղաքական հոսանքների ու կուսակցությունների իրարամերժ, մեկը մյուսին ժխտող, իրար նկատմամբ թշնամական կեցվածքում: Դառն իրողություն է, որ նույնիսկ Եղեռնի ժամանակ հայ քաղաքական կուսակցությունները միավորվել չկարողացան:

600 տարի պետականությունից զուրկ ժողովուրդը բնականաբար տառապելու էր քաղաքական մտածողության, համազգային շահերի գիտակցման, և հատկապես դիվանագիտության հնարքների և ունակությունների տիրապետելու դեֆիցիտով, ինչը մասնատվածության պայմաններում ունեցավ աղետալի հետևանքներ: Բերենք մի քանի փաստեր: Վասպուրականում զանգվածային կոտորածները սկսվեցին 1914 թվի վերջերից, 100 հայաբնակ գյուղ իսպառ ոչնչացվեց, այս կամ այն ծավալի կոտորածներ տեղի էին ունենում Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր գավառներում, իսկ Կ. Պոլսում նստած հայ ազգային ջոջերը չկարողացան դրանից որևէ լուրջ եզրակացության հանգել ու հեզության, «մահմեդական ազգաբնակչության հետ ընդհարումներից խուսափելու» նպատակով ամեն տեսակի զիջումների գնալու, այդ թվում նաև զենքերը հանձնելու կոչեր էին հնչեցնում: Այդ ջոջերից շատերի քաղաքական միամտությունն ու պարզունակ-երեխայական մտածողությունն աներևակայելի էին: Հայ մտավորականությանը զանգվածաբար կառափնարան էին առաջնորդում, սակայն նրանցից ոմանք շարունակում էին համոզմունք արտահայտել, որ այդ ամենն առանձին պաշտոնատար անձանց չարության հետևանք է, թյուրիմացություն, որ «մեր ընկեր Թալեաթը, եթե իմանա», նման պաշտոնյաներին խստագույնս կպատժի:

Որևէ պատճառ չի կարող արդարացնել այն ահավոր իրողությունը, որ բացի Վանից ու մի քանի բնակավայրերից ոչ մի տեղ ջարդարարները լուրջ դիմադրության չհանդիպեցին: Ինչո՞ւ: Արդյո՞ք հայությունն անընդունակ էր դարձել մարտնչելու, իր անձն ու ընտանիքը պաշտպանելու: Ինչպե՞ս պատահեց, որ Տարոնն ու Սասունը, որոնք դարեր շարունակ, այդ թվում նաև XX դարի սկզբին, հերոսաբար և ոչ առանց հաջողությունների, մարտնչել էին օսմանյան տիրակալության դեմ, 1915 թվին թուրքական բանակին լուրջ դիմադրություն ցույց տալ չկարողացան ու կոտորվեցին: Ինչո՞ւ այդքան հեշտությամբ դատարկվեց Զեյթունը: Հարցեր, հարցեր... Դեր խաղացել են համաշխարհային պատերազմի հետևանքով ստեղծված իրավիճակը, հայ հասարակության հուսալքված, անկազմակերպ, որոշակի նպատակաուղղվածությունից զուրկ կացությունը, որ վարպետությամբ օգտագործվեց երիտթուրքերի կողմից: Երբ ահագնացավ կոտորածների վտանգը, արևմտահայությունը, մնալով առանց ղեկավարների ու գործունեության ծրագրի, չփոթվեց: Մինչև կոտորածների սկսելը երիտթուրքերն իրականացրին մի շարք միջոցառումներ, որոնք անդամալույծ դարձրեցին հայերին:

Սակայն իրողություն էր նաև այն, որ սահմանադրության հռչակումից հետո նորերի կողքին գործողության մեջ մնացին հայերի բնաջնջման հին ուժերն ու գործոնները: Գոյատևում էր Օսմանյան կայսրությունն «իր բաշիբոզուկ խուժաններով, չարիաթապաշտ սոֆթաներով, փաթթոցավոր ճիվաղներով... որ միշտ սպասում էր պատեհ պահի, որպեսզի» գրոհի անպաշտպան գյավուրի վրա: Այդ ուժերն ու նրանց արյունատենչ ձգտումները հայությանը հայտնի էին շատ վաղուց և բնական կլիներ, եթե գործնական դաս քաղած լիներ: Սակայն ոչ: Արևմտահայությունն այդպես էլ համազգային ինքնապաշտպանության, էլ չասած, ազատագրական պայքարի չբարձրացավ: Ճիշտ են նկատել, հայը շարունակեց մնալ քրիստոնեական կրոնական վարդապետության ճանկերում՝ «Աստված ողորմած է...»: Նա այնքան անհոգ էր իր ազգային անվտանգության հանդեպ, որ թվում է, թե զուրկ էր անգամ ինքնապաշտպանության բնազդից: Գուցե ոչ մի ազգ այնքան անհոգ չէր (և ներկայումս էլ չէ) իր ֆիզիկական գոյության խնդիրների հանդեպ, որքան հայը: Նա հաճախ է «մոռանում», որ ամեն ինչից առաջ պետք է ապրել, առանց որի չի կարող լինել ոչինչ՝ ոչ հարստություն, ոչ կրթություն, ոչ մշակույթ, ոչ եկեղեցի և ոչ էլ հայրենիք: Երբ ազգը վտանգված է, մնացած ամեն ինչ ավելին չեն, եթե ոչ պատրանք, ցնորք, հիվանդ երևակայության խաղանք:

Եթե հայրենիքը վտանգված է, վտանգված է նրա ամեն մի ընտանիք, ամեն մի բնակիչ: Մարդը կարող է անգամ իրենից փախչել, բայց հայրենիքի բախտից փախչել չի կարող: Ոչ միայն մարդն է հայրենիքի մեջ, այլ հայրենիքն՝ իր ամեն մի զավակի: Զավակների կորուստն է հայրենիքի մահը: Հետևաբար, հայրենիքի հետ կատարվածը, նրա կայունությունը ձևավորող անհատների հավաքական, բարոյահոգեբանական վիճակի, նրանց զգոնության, նաև կենսափորձի, այսինքն՝ եղածից ճիշտ եզրահանգման գալու կարողության արդյունք կամ հետևանք է: Մինչդեռ «այսօրը» չափազանց նման է «երեկին». մեր պատմությունը հավիտենական վերսկսում է: «Սուր, ցավոտիթ դրուագները վերադառնում են պարբերաբար, յուսահատեցուցիչ միօրինակությամբ»[71]:

1909-ը ողբերգական սոսկալիությամբ վերարտադրեց 1894-96 թվերը, իսկ 1914-16-ը՝ ոչ միայն վերարտադրեց այդ երկուսը միասին, այլև հանգեցրեց բնաջնջող հանգուցալուծման: Ո՞րն է պատճառը, որ մենք խուսափում ենք հետ նայել և սեփական, այլ ոչ թե ուրիշների պատմությունից դասեր քաղել: Հավանաբար պատճառներն երեքն են՝ 1. արյունածոր է հայ ժողովրդի հազարամյա պատմությունը, զրկանքներով, ջարդերով, ողբերգություններով այնքան դեր հագեցած, որ մենք, եթե նույնիսկ չենք վախենում, ապա նեղվում ենք հետ նայել, 2. մենք մեր հայրենիքի հետ հույս չենք կապում, մեր մի ոտը սահմանի այն կողմում է, իսկ սեփական պետությունն օտար ափերում անձնական կյանք կառուցելուն ոչինչ, կամ գրեթե ոչինչ տալ չի կարող, 3. հայի ճակատագիրը ոչ այնքան ինքն է կերտել, որքան պատմությունը, աշխարհագրությունը, օտար ցեղերն ու պետական-վարչական կազմավորումները, որոնք այդ պատմությունը վերածել են սարդոստայնի: Դա կործանման, հեռանկարից զուրկ գոյություն է: Հարատևելու համար հայը պարտադրված էր իր մեջ ուժ գտնել ազատվելու պատմական անցյալի հոսի արատներից, եսակենտրոն, անձնականի հետևից ընկած, ազգային շահերից մեկուսանալու հոգեբանությունից ու բնավորությունից,

71 «Դրոշակ», 1990, թիվ 13:

ձևավորեր ազգային բնավորության այնպիսի համակարգ, որը ղեկավարվեր ազգային շահերն առաջին պլանին պահելու միջոցով, ուղի հարթել յուրաքանչյուրի կյանքի պլանների իրականացման համար, եթե ոչ շարունակելու ենք տաշեղի պես մոլորվել մրրիկների հորձանքներում «առանց հակազդել կարողանալու ու կամենալու»: Համազգային ձևավորված նպատակադրումներն անհատի համար կողմնացույց են, որը թելադրում է անել այն, ինչ հասարակությունը պարտավոր է անել, այլ ոչ թե դեգերել, պատից պատ խփվել: Այդ կողմնացույցի բացակայության պատճառով է, որ հայը մշտապես անպատրաստ ու անզոր է եղել և այսօր էլ անզոր է ողբերգությունների ալիքների դեմ, անարդյունք վատնում է իր եռանդը և ունակությունները, «սիզիփոսյան համառությամբ իր վարդագույն երազները ջարդուփշուր անում բախվելով ճակատագրի ապառաժին»:

Ջարդը միայն ֆիզիկական ոչնչացում չէ, այլ նաև բարոյական գահավիժում: Բախտն ուժեղի սեփականությունն է, լացն ու կոծը՝ թույլի ապրելակերպը: Հայը նման է այն թույլին, որ փոխանակ կռվեր, մարտնչեր, իր կյանքն ու պատիվը պաշտպաներ, սպառնալիքներ և հիշոցներ է շպրտում իրեն հարվածողի, սպանողի հասցեին: Ինչ պիտակներ ասես, որ չենք կպցրել մեր թշնամիներին՝ «չուն, բարբարոս, տգետ, արյունախում», ինչպիսի՜ հերոսներ ենք, երբ ճառ ենք արտասանում, որքա՜ն անպատասխանատու, երբ կատարած քայլը մեր կյանքին ու շահերին չի սպառնում: Բողոքող, գանգատվող, դժգոհ բոլորից ու ամենքից: Մոռանում ենք, որ հասարակությունում նույն տրամաբանությունն է գործում, ինչ բնության մեջ: Բողոքեք երկրաշարժի, ջրհեղեղի, հրդեհի, երաշտի դեմ: Ոչնչի չենք հասնի: Երկրաշարժից պաշտպանվելու համար պետք է ամուր կառուցել, ջրհեղեղի դեմ հզոր ամբարտակներ ստեղծել, հրդեհի դեմ ունենալ հակահրդեհային ուժեղ ծառայություն, երաշտի դեմ՝ ոռոգման համակարգ: Մահմեդական մոլեռանդությունը նույնպես տարերք է, «կույր ու անսիրտ, բութ ու մոլեգին»: Այն իր խուժանային էությամբ անհաշտ է գիտության, զարգացածության, խրատների, բարոյախոսության հետ: Նա ընկրկում է միայն ուժի առաջ: Երիտթուրքերը թուրք ժողովրդին բարձրացրեցին ոչ թե տգիտության, ոչ թե չարիքների, հասարակական վայրագ հարաբերությունների, այլ Աբդուլ Համիդի անձի դեմ: Նրանք առաջ չնայեցին, առաջ չչարժվեցին, այլ ընկճվելով թուրք ժողովրդի «անսահման տգիտության առաջ, խոնարհվելով նրա հոսի բարքերի, կրոնական և այլ սպանիչ նախապաշարումների դիմաց» կամա թե ակամա օսմանյան հասարակությունը շղթայեցին միջնադարին, ինչը չէր կարող չմղել արդարացնելու հնում կատարվածները, դրանք նաև իրենցը չհամարել: Ահա թե ինչու երիտթուրքերը Հայկական հարցին վերաբերում էին ճիշտ և ճիշտ սուլթանի և նրա վարչակազմի նման: Նրանք նույնպես այդ հարցի գոյության համար արդարացում չէին գտնում, նրանք նույնպես հայերի կրած դժվարությունների մեղավոր համարում էին հայերին, նրանք նույնպես արդարացնում էին հայկական կոտորածները և սուլթանական վերամբարձությամբ այնպիսի «մուննաթով» էին վերաբերվում հայերին, որ «կարծես թուրք ժողովուրդն էր մեծապես մնասվել հայերից» և վերջիններս են, որ դեռ մի բան էլ «պարտք են թուրքերին»[72]:

Սա արդեն չարիքի գիտակցություն չէ,- գրում է Ռ. Միքայելյանը,- սա «առանց խտրութեան կրոնի և ազգի խնդիրներ դնող և այդ խնդիրներով տանջուող գործիչներու ընթացք չէ, այլ նույն թուլացող տաճկական պետութեան քաղաքական արտաքին դիմքը պահպանելու ճիգեր, ճիգեր, որոնք իբր թե անպատճառ պահանջում են Հայկական և ուրիշ հարցերի կատարեալ չեզոքացումը Տաճկաստանում...»[73]:

«Երիտթուրքերը նույնիսկ լուրջ փորձ չարեցին դեն նետելու Թուրքիայի վերածննդին խանգարող արգելքը, որն է քրիստոնյա տարրերի հանդեպ տարվող քաղաքականությունը, դրա փոխարեն շուտով ընդունեցին հին վարչակարգի հիմնական սկզբունքները, չնայած խոսքով հավատարիմ էին իրենց կողմից նախկինում հռչակված որոշ կարգախոսներին»[74]:

Ազգի հարատևումն ու ազգային շարժման հաջողությունն անհնար է առանց հակառակորդ ուժերի թույլ և ուժեղ կողմերն ըստ ամենայնի ուսումնասիրելու, առանց թյուր և անլուրջ տեղեկատվության վրա կառուցված բարդույթները հաղթահարելու: Թուրքը մարդ է, ժողովուրդ,

72 «Դրոշակ», 1990, թիվ10:

73 Ն. տ.:

74 "Армянский вестник", 1917, N3.

ինչպես աշխարհի բոլոր մարդիկ ու ժողովուրդները: «Սակայն,- ինչպես նշում է ռուս լրագրող Ա. Տիրկովան,- տեւական դաժան ու անամոթ կառավարումը ժողովրդի հոգում կուտակեցին որոշակի դաժանություն ու տիմարություն: Այդ ծանր ժառանգությունը չէր կարող չանդրադառնալ նաև երիտթուրքերի կոմիտեի խայտաբղետ կազմի վրա»[75]:

Թերևս նաև դրանով էին բացատրվում իթիհադի կողմնորոշումները, որն իր գլխավոր խնդիրը հռչակեց՝ ապավինել ռազմական ուժին: «Մնացածները,- ասում էին երիտթուրքերը,- վարչական բարեկարգումները, կրթությունը, այլազգիների հետ հարաբերությունների կարգավորումը» թող մնան հետո: Արդյունքում բանակին հատկացվեց մոտ 10 միլ. լիրա, իսկ լուսավորությանը՝ 0.9 միլ. լիր[76]:

Թուրքերը հոգեկան հավասարակշռությունը կորցնում էին, երբ հպատակ ժողովուրդները փորձում էին իրենց հարցերը լուծել մեծ պետությունների օգնությամբ: Ա. Ռիզան բողոքում էր. «Ինչո՞ւ Եվրոպան մեզ հանգիստ չի թողնում: Ինչո՞ւ մեզ հնարավորություն չեն տալիս ավարտելու բարենորոգումները»[77]:

Մի հանգամանք ևս: Իթիհադն իր կազմով միատարր չէր: Նրա անդամների մեծ մասը կուսակցության մեջ էր մտել 1908-ի հեղաշրջումից հետո և մտել էր անձնական շահադիտություններով: 1909թ. հետադիմական հեղաշրջման օրերին երիտթուրքերի խորհրդարանական խմբակցության 120-130 անդամներից միայն 50 հոգի անցան ընդհատակ, մյուսները ոչ միայն չթաքնվեցին, այլև համակրանքով էին վերաբերվում հին, «սուլթանական վարչակարգի վերականգնման փորձին»[78]:

Թուրքերը, ինչպես բոլոր այն ժողովուրդները, որոնք մշտապես իշխող ազգ են եղել, մեծապետական են, հպատակներին և ընդհանրապես մյուս ժողովուրդներին թշնամական-արհամարհանքով վերաբերվող, դրան գումարած համոզմունքը, թե «մահմեդական միաստվածությունն ու անսխալականությունը» իսլամին անհասանելի են դարձնում «հեթանոսական կրոններին» պատկանող ժողովուրդներին: Այդ մտածողությունը թուրքերին դարձրեց նաև ամբարտավան: Բայց արի ու տես, որ ամենա, ամենաաբարձր, անհասանելի ժողովուրդը տնտեսության, կրթության, մշակույթի ասպարեզներում աշխարհի հետամնաց ժողովուրդներից մեկն էր: Ահա այդ երկատվածությունը թուրքի ամբարտավանության կողքին դրեց թերզարգացածության, թերարժեքության զգացողություն: Նման հոգեբանական բեռը չէր կարող բացասական ազդեցություն չգործել նրա ազգային բնավորության վրա: Երկերեսանիություն՝ վոլտերականություն խաչաձևված քծնանքի, ստորաքարշության հետ: Թուրքերը «մեծագույն թեթևությամբ գունափոխվում են», իսկ այլակրոններին խաբելն առաքինություն, վաստակ համարում: Թերևս նաև բնավորության այս գծի շնորհիվ է, որ թուրքական դիվանագիտությունը ճկուն է, նպատակասլաց, իր պետությանն ու ժողովրդին հաղթանակներ պարգևող:

Թուրքական բնավորությունը դեր խաղացե՞լ է Հայկական հարցում, Հայոց ցեղասպանության իրականացման գործում, մեր օրերում՝ նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը խոչընդոտելու գործում: Անպայման:

Արդեն ասվել է, որ թուրքերի բնավորության նշված գծերը օբյեկտիվ նշանակություն ձեռք բերած սուբյեկտիվ գործոն են:

Հայկական հարցը Արևելյան հարցի բաղադրիչներից էր, իսկ վերջինն այլ բան չէր, եթե ոչ օսմանյան տարածքների հարց, որն «արդեն ոչ թե թուրքի ու հայի, այլ գաղութատիրական Արևմուտքի և Օսմանյան կայսրության հակամարտություն էր»[79]:

Թուրքերը պնդում են, որ երբ Թուրքիան պատերազմի մեջ մտավ, Հայկական հարցն իր բնույթը փոխեց: Հայերին թվաց, թե պատերազմն օսմանյան տիրապետությունից ազատվելու ամենահարմար պահն էր: Իսկ երբ Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային, վկայակոչում է Թալեաթը, ՀԲԴ օսմանյան բանակի զինվորներին հետևյալ դիմումը հղեց. «Հենց որ ռուսներն անցնեն սահմանը, և օսմանյան բանակը սկսի հետ քաշվել, ամենուրեք պետք է ապատամբություն բարձրացնել: Դրանով թուրքերը կընկնեն երկու կրակի արանքը: Եվ, հակառակը, երբ նրանք հարձակման անցնեն, հայ զինվորներն իրենց զենքերով պետք է լքեն դիրքերը, կամավորական խմբեր կազմած ռուսներին միանան»[80]:

Հնչակյան կուսակցության հայտարարության մեջ ասված էր. «...Ամեն կերպ օգնելու է եռյակ համաձայնության երկրներին, մասնավորապես, Ռուսաստանին... բոլոր ուժերը ներդնելու է Հայաստանում, Կիլիկիայում, Ադրբեջանում և Կովկասում հաղթանակի հասնելու համար»: Օսմանյան խորհրդարանի անդամ Վ. Փափազյանը հայ կամավորական գնդերին կոչ արեց. «...Պատրաստ լինել մարտի, ռուսական բանակի առաջապահ զորամասերի հետ գրավել հանգուցային դիրքեր ու Անատոլիա մտնելով, աստիճանաբար միանալ տեղի հայկական զինված խմբերին»:

«Հենց որ ռուսական զորքերը սահմանն անցան, նրանց սկսեցին առաջնորդել Ռուսաստանի ու Թուրքիայի հայ կամավորները, որոնց մի մասը հետո միացավ պարտիզանական շարժմանը: Վանի հայերը ոտքի ելան ու կոտորեցին Թուրքերին: Միացյալ Նահանգներում լույս տեսնող «Կոչնակ» թերթը 1915թ. մայիսի 24-ին տպագրեց «Վանում ընդամենը 5 000 թուրք է մնացել» հոդվածը: Հայերը դավաճանեցին Թուրքիային»:

Հայերի դավաճանության մասին դիրքորոշումը երիտթուրքերը որդեգրեցին ոչ թե տեղահանությունների սկզբին, այլ շատ ավելի ուշ: Պատերազմի սկզբում իթիհադի պարագլուխները հիացմունքով էին խոսում ռազմաճակատում հայերի անձնազոհության մասին, մերժում էրզրումում, Դերջանում, Էգինում, Սասունում, Բիթլիսում, Մուշում և Կիլիկիայում հայերի ապստամբությունների և ապստամբական տրամադրությունների մասին տարածված կարծիքները:

Ամիսներ անց թուրքական քարոզչությունն ու պաշտոնական շրջանները այս հարցում արմատական շրջադարձ կատարեցին, հայտարարվեց հայերի մի ինչ-որ նոր խոշոր դավադրության բացահայտման մասին, որն իբր անգլիացիներն էին կազմակերպել: Խռովարարները, այդ թվում 21 հայ, ձերբակալվել էին: Բացարձակ կեղծարարություն էր, որովհետև հենց նոր կատարված խռովություն էր ներկայացվում 1912 թվին իթիհադի դեմ ձեռնարկված դավադրությունը: Նույն այդ դավադրությունը հաստատելու համար օրինակ էր բերվում նաև Սարիղամիշի ճակատամարտը:

«Եթե Թուրքիայի կառավարությանը հարցնելու լինեն հայերի բնաջնջման, նրանց պատվի պղծման, ունեցվածքի բռնագրավման, կողոպուտի դրդապատճառների մասին,- գրում է Ղոսեյնը,- կպատասխանե, թե Վանում հայերը կոտորել են մուսուլմաններին, թե նրանք զենք ու ռումբեր են պահում, թե նրանք անկախանալու ձգտումներ ունեն և սպասում են հարմար առիթի ապստամբելու և մուսուլմաններին սպանելու՝ ապավինելով Ռուսաստանի օգնությանը: Ես այդ հարցն ուսումնասիրել եմ: Վանում կառավարությունը շատ ավելի վաղ էր հրամայել բնակչությանը հեռանալ, քան ռուսները կմտնեին քաղաք: Հայերը հրաժարվել էին զենքերը հանձնել՝ վախենալով քրդերի և հենց կառավարության հարձակումներից: Մյուս վայրերում հայերին քշել են երկրի խորքերը, որտեղ նրանց ոչնչացնում էին, չնայած հայերի կողմից ոչ մի մահմեդական չէր սպանվել»: Դիարբեքիրում ևս «չէր եղել ոչ մի միջադեպ, ոչ մի սպանություն կամ անդորրի խանգարում, որը թուրքական կառավարության համար պատրվակ հանդիսանար հայերի դեմ գազանություններ գործադրելու... Հայերի դեմ գործադրված դաժանությունների պատասխանատվությունն ընկնում է Միություն և առաջադիմություն կոմիտեի անդամների վրա..., որոնք առաջնորդվում էին ցեղապաշտ մոլեռանդությամբ...»[81]:

Օբյեկտիվորեն եվրոպական տերություններն էին թուրքական կառավարությանը ոգեշնչում ոճրագործությունների, քանի որ, ականատես լինելով թուրքական անարգ վարչակազմերի բազմիցս կատարած հանցագործություններին, չխանգարեցին շարունակելու մարդկանց ոչնչացումը:

«Ամբողջովին համիսլամական գաղափարներով տոգորված երիտթուրքերի կառավարությունը,- գրում է Վ. Տերյանը,- Հայկական չարաբաստիկ հարցից մեկընդմիշտ ազատվելու պատրվակ որոնող Էնվերի և նման իմպերիալիստորեն երազող հայրենամոլների գլխավորությամբ օգտվեց համաշխարհային հրդեհից, որպեսզի ամենաարմատական ձևով լուծեր Հայկական հարցը: Եվ սկսվեց, մի կողմից,

75 Тыркова А. նշվ. աշխ., 12:
76 Ն. տ., էջ 15:
77 Ն. տ., էջ 26:
78 АВПР, ф. Канцелярия, д. 32, л. 31.
79 Համլին Առնո, Բրոն Ժան-Միշել Վերականգնված հիշողություն, Երևան, 1995, էջ 63:

80 Տե՛ս Թալեաթի հուշերի հայերեն թարգմանության ձեռագիր՝ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ:
81 Ֆայեզ էլ Ղոզեյ Հերոսական հայութեան անցեալեն. Ջարդերը Հայաստանի մեջ, Կահիրե, 1960, էջ 39-44:

Թուրքահայաստանի խաղաղ և անզեն հայ բնակչության անողոք բնաջնջումը, իսկ մյուս կողմից՝ հայերի բռնի արտաքսումը Միջագետք, որն ուղեկցվում էր ոչ միայն հայերի ամբողջ ունեցվածքի կողոպտով, ոչ միայն դաժանություններով, այլև շատ հաճախ արյունալի դատաստանով, այնպես որ արտաքսվողների կեսից ավելին կործանվեց մարդասպանների ձեռքով աքսորավայր չհասած»:

Հայերի բնաջնջման պատճառների վերաբերյալ կարծիքների համանվագում ամենահնչեղն այն էր, որ այդ բնաջնջումը Թուրքի ազգային քաղաքականությունն էր, այլ ոչ թե այս կամ այն անձի կամ վարչակարգի մտահղացումը: «Արևմտահայ ժողովրդի բնաջնջումը միայն Իթիհադի ու նրա ղեկավար դեմքի՝ Թալեաթի գործը չէր: Կար մի հին, արիւնոտ անցեալ, որ դարերի ետևից դեռ ցցում էր իր մռայլ դեմքը: Թալեաթը ժառանգել էր տիրողների մեջ գոյութիւն ունեցող այդ հին արիւնոտ ու ատելաւառ անցեալը: Սակայն նաև Թալեաթի անձը, անկախաբար այդ անցեալից, իր մեծ դերն ունեցաւ»[82]:

«Թուրքիայում հայի համար ջարդի երկիւղը առօրեա ու համատարած էր,- գրում է Ս. Շահպազը:- Անգամ ամենալավատեսները հավատացած էին, որ ջարդը, առևանգումը, թալանը վերջ չունեն, դրանք կարող են վերսկսվել ամեն պահի: Թուրքերը բացեիբաց, տանիքե տանիք, դուռե դուռ, խանութե խանութ, ջարդին մոտալուտ ըլլալը հաճոյքով կը հաղորդեին, ավելցնելով ալ հավ մորթելու ձեռքի շարժումներուն կերպերը»[83]:

Սակայն քիչ դեր չխաղաց նաև այն, որ հայն այդ ամենը տեսնում ու լսում էր, բայց փրկվելու որևէ քայլի չէր դիմում: «Շատ տխուր է այս էջը բանալը, այս կրավորական անշարժութիւնը, այս ճակատագրական համակերպումը, այս անկենդան նայվածքը»:

«Հայը,- գրում է Շահպազը,- կը սիրե ճշմարտութիւնը, որովհետև պարտականութեան զգացումը խորապես ունի, բայց չի սիրեր ալ և չափե ավելի խոշորցուցած իր մասնայատկութիւններն ու կարելիութիւնները, շատ անգամ ծափ ստանալու համար: Այսպես ստեղծուած է հայկական նարկիսիզմը»[84]:

Ժողովրդին ասել ճշմարտությունը նույն այդ ժողովրդի մասին՝ սա էր փրկության ուղին: «... Կրոնական մոլեռանդությունը, ցեղային վայրագ բնազդը, արիւնին համը, թալլելու հաճոյքն ու շահն առնուազն շատ մեծ մասով մղած էին Թուրքը հայերը ջարդելու համար»: Բացի այդ, «Թուրքը տիրած էր յաթաղանով և գիտեր թե սուրով միայն կրնար շարունակել իր տիրապետութիւնը, իր կեանքը»[85]:

Լեփսիուսը գրում է. «Եվրոպական պատերազմի սկիզբեն ի վեր, և առավել ևս ռուս-Թուրքական պատերազմի սկսելուց ասդին երիտԹուրքերի կոմիտեում խորհեցին այն միջոցի շուրջ, որով կարողանային պատերազմի առիթն օգտագործել հայերին պատժելու համար, քանի որ վերջինները պահանջել էին բարենորոգումներ: Եվ այդ կերպ մեկընդմիշտ վերջ դնել Հայկական հարցին: Հանգեցին Ապտիլ Համիտի նախարարներեն մեկու սահմանած եզրակացութեանը, որը շնականորեն հռչակում էր. «Հայկական հարցից ազատվելու լավագույն կերպը հայերի բնաջնջումն է»»[86]:

«Այս մարդիկը, որ յղացան ոճիրը, ունեին բոլորովին ուրիշ նպատակ. ամենքն ալ անհավատ ըլլալով... իրենց միակ միտքը եղավ պետական քաղաքական հարց մը, հարց մը կանխամտածուած և անգութ»[87]:

Հայերի բռնագաղթն ու ոչնչացումը ոչ միայն Թուրք պաշտոնատարները, այլև քաղաքացիական բնակչությունը պատճառաբանում էին հայերի այնպիսի գործողություններով, որոնք իբր կոչված էին մասնատելու Թուրքիան և ուղի հարթելու Թշնամի ուժերի համար: Այդ պատճառաբանությունները գրեթե ամենուրեք ու ամեն առիթով թութակի համառությամբ կրկնվում էին:

Բերենք Երզնկայում շրջանառության մեջ եղած պատճառաբանությունները, որ գրառել են գերմանացի բժիշկները: 1. Հայերի արտակարգ արյունահեղ ապստամբության հետևանքով Վանի նահանգում Թուրքերին տվել են ռուսների կամայականություններին, ովքեր անխնա, առանց տարիքի ու սեռի խտրականության, սպանվել են... 2. Կարահիսարում ապստամբություն է. քաղաքը պաշտպանվում է հայերի կողմից, ովքեր կռվում են բանակի դեմ: 3. Գտնվել է մոտ 300, հիմնականում նոր հրացան, և կարծում են, որ հայտնաբերվելու են նաև ավելի մեծ զինապահեստներ, ինչպես նաև ռազմական ամրություններ և ռումբեր[88]:

Մորտմանը գրում է. «Ինչպես պարզվել է, Սասունից, Տրապիզոնից և Խարբերդից... և, ինչպես մի քանի օր առաջ ինձ համոզում էր Ջանփոլադ բեյը Անատոլիայի քարտեզը ձեռքին, օրերս Թուրքական կառավարությունը որոշել է ավելի ծավալել հայերի արտաքսման միջոցառումները, օրինակ, այդուհետ Ջանիկի, Տրապիզոնի, Սըվազի և Մամուրեթ ուլ Ազիզի նահանգների հայերը նույնպես աքսորվելու են Միջագետք: Սա այլևս անհնար էր արդարացնել ռազմական նկատառումներով. ինչպես ինձ մի քանի շաբաթ առաջ ասաց Թալեաթ բեյը, խոսքն ավելի շուտ գնում է հայերի բնաջնջման մասին»[89]:

Չնայած որոշակի «քաղաքականության չափաբաժնի» առկայության հիմքից զուրկ չեն Վանգենհայմին Սահակ կաթողիկոսի 30. 06. 1915 թվի նամակի հետևյալ տողերը. «Հայերը, ովքեր դարեր շարունակ ապրել են օսմանցիների պաշտպանության ներքո և իրենց կրոնի ու լեզվի գոյատևման համար պարտական են նրան, օտարերկրացիներից հայերը չեն ստացել որևէ հույս, որպեսզի միավորվեին նրանց հետ...»[90]:

Ցու. Նադիի՝ «Թասֆիրի էֆքյարի» թերթի 07. 10. 1916թ. համարում տպագրած «Մանկացումը և մաքրազարդումը» հոդվածը անդրադարձ էր հայերի տարագրությանը և Իթիհադի 1916թ. համագումարի նոր կողմնորոշմանը: Նախ, արձանագրվում էր, որ «ռազմական գոտում և ռազմավարական ուղիների շրջանում բնակվող հայերը տեղափոխվել են այնպիսի վայրեր, որտեղ նրանք ազատված են պատերազմական գործողություններին մասնակցության պարտականությունից: Բացի Կ. Պոլսից և Զմյուռնիայից ոչ մի այլ բնակավայր զերծ չի մնացել... «տեղահանումից» (Թուրքերեն՝ թեհջիր) ... Հայկական հարցը... զրկված է կայուն և ամուր հիմքից... Կառավարությանն այլընտրանք չէր մնացել, և մենք այդ ձեռնարկները համարում ենք բանական և անհրաժեշտ... Հարկ չկա մեկ անգամ ևս ներկայացնելու ապստամբելուն հայերի նախապատրաստվելու միջադեպերը, յուրաքանչյուր ոք տեղյակ է դրանց... մի պետություն, որ խրվել է կենաց ու մահու պայքարի մեջ, ինչպես պիտի գործեր նման պայմաններում, կարելի է թողնել մարդկության խղճին»: Նշելով, որ նույն կարծիքին էին նաև հայկական որոշ շրջաններ, թերթը մեջբերում է «Տաճարից»՝ «Հայկական կուսակցությունների պատմությունը լի է հանցագործություններով... Հասկանալի էր, որ այդ կուսակցությունների գործողությունները, ովքեր միայն մտահոգված էին իրենց գրպաններն ու փորը լցնելով, իրենց ընչաքաղցությունը բավարարելով, վնասում են Թուրքահայությանը և ի վերջո հասցնելու էին ինքնասպանության, ինչը և հետագայում կատարվեց»: Թուրքական թերթը այս ու նման փաստեր օգտագործելով «հանգում է» եզրակացության, թե երիտԹուրքերը հույս ունեին, որ չուտով լեզու էին գտնելու հայերի հետ: «Մինչդեռ հայկական կոմիտեներն այս ծանր ժամանակներում... դարձան մեր ամենավտանգավոր թշնամու գործիք... Այդ պատճառով մենք հարկադրված ենք նոր ուղիով առաջանալ դեպի նոր նպատակ, որովհետև տարբեր տարրերի միավորման քաղաքականությունը սնանկացել է և մեր հայրենիքի համար եկել է «մաքրման» դարագլուխը»:

Թիսցկան հնչակյանների գործն ամբողջությամբ կապում է Շերիֆ փաշայի հետ, որը Իթիհադի երդվյալ թշնամին էր և տարիներ շարունակ աշխատում էր ահաբեկչության ենթարկել այդ կուսակցության ղեկավարներին: Գլխավոր նշանակետը Թալեաթն էր: Ահաբեկչությունը ձախողվելուց հետո Իթիհադը, գրում է նա, օգտագործելով «հնչակյան դավադրությունը» որպես «ցանկալի պատրվակ հրապարակելու» Հայկական հարցի վերաբերյալ «միակ հայտարարությունը», թե հնչակները ձգտում էին ստեղծել «ինքնավար Հայաստան» և գործն այնպես էին ներկայացնում, որ մահմեդականներին գրգռեին «հայերի դեմ» և իրականացնում էին գազանա-

82 Թեհլիրեան Ս. Վերյիշումներ Թալեաթի ահաբեկումը, Կահիրե, 1956, էջ 33:
83 Ցուշամատեան Մեծ եղեռնի, էջ 75:
84 Ն. տ., էջ 76:
85 Ն. տ., էջ 80:
86 Le rapport secret du Dr. Johannes Lepsius, Paris, 1919, pp. 255-256.
87 Ամերիկյան դեսպան Հ. Մորգենթաուի յուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները, Երևան, 1990, էջ 80:

88 PA-AA (Կ. Պոլսի դեսպ.) 96:
89 Ն. տ. (Կ. Պոլսի դեսպ.), 69:
90 Ն. տ. (Կ. Պոլսի դեսպ.), 70:

յին միջոցառումներ: Եվ, իրոք, հայերի խողխողումները, զոհերը և թուրքական բանսարկությունները բացարձակապես ընդհանուր ոչինչ չունեին Հայաստանում կատարվածների հետ: Թիսցկան շեշտում է, թե այն, ինչ կատարվեց հայերի հետ աշխարհամարտի ծնած դժբախտություններից չէր, քանի որ «Հայերի հետապնդումների հետևողական փորձերը ձեռնարկվեցին հանկարծակի... և վաղուց դուրս էին եկել բռնությունների այն արտակարգ միջոցների շրջանակից, որոնք ուղղված էին հայրենիքի դավաճանության դեմ», այլ խնդիր ունեին «լրիվ մասնատելու և աստիճանաբար կոտորելու ամբողջ հայ ժողովրդին»: Հեղինակը բերում է հայերի հետևյալ խոսքերը. «Մենք կարող էինք հասկանալ, եթե հայրենիքի յուրաքանչյուր դավաճանության և լրտեսության համար կախաղան հանեին մի քանի հայրուր տղամարդու որպես ահաբեկիչների: Օրինակ՝ մենք կարող էինք հասկանալ, եթե ռազմական գործողությունների շրջանի իրադարձությունների առաջացրած կատաղության պատճառով հազարավոր հայեր դաժան հաշվեհարդարի ենթարկվեին, ինչպես Աբդուլ Համիդի ժամանակ: Բայց մենք չենք հասկանում, որ ռազմաճակատից հեռու գտնվող... վայրերում անմեղ ընտանիքներին ենթարկում են այնպիսի հաշվեհարդարի, ինչը ներկայումս կատարվում է: Կատաղության հետևանքով կոտորածը ևս հասկանալ կարելի է, բայց ոչ այս նենգ, դանդաղ, լավ մտածված բռնագաղթի քաղաքականությունը»: Անգամ Թուրքամետ գերմանական շրջաններում համոզված էին, որ այդ ամենն ուղղված էր ոչ թե հասարակական որոշակի խմբերի, այլ ամբողջ հայ ժողովրդի դեմ[91]:

Թիսցկան նույնպես գտնում է, որ հայերի ջարդերի քաղաքականության պատճառներից էին հաջողությունները Դարդանելում և «փքված նացիոնալիզմն ու մահմեդական մոլեռանդությունը»: Սակայն թուրքերը գիտակցում էին՝ դա հաղթանակ չէր և բացառված չէր, որ դաշնակիցները նոր, ավելի հզոր հարձակում սկսեին և Թուրքիան պարտվեր: Որպեսզի խաղաղության բանակցություններում կարողանար որքան հնարավոր է ավելի մեծ տարածքներ փրկել Փոքր Ասիայում, Կ. Պոլիսը, մասնավորապես, Ռուսաստանին կատարված փաստի առաջ կանգնեցնել, թե այդ տարածքները թուրքական են, այնտեղ հայեր չկան, որոշեց բնաջնջել արևմտահայությանը: Պատճառների շարքից դուրս չի կարելի թողնել նաև այն, որ, ինչպես գրում է գերմանացի լրագրողը. «Հայերը մեծապես մտավորական, գործունյա և ընդունակ ժողովուրդ են. մինչև ժամանակավոր, բայց ուժեղ խորթացում, ամենալայն շփումներ ունեին կառավարության հետ: Անգամ թուրք նախարարներն էին հայերին համարում իրենցը: Մինչդեռ հույներին համարել են միանգամայն խորթ տարր, ովքեր, ճիշտ է, այս պատերազմում, չնայած ամբողջովին տրամադրված էին Թուրքիայի դեմ, սակայն հիմնվելով հելլենական հզոր իրեդենտիզմի, ինչպես նաև լրտեսական հոտառության վրա, գրեթե միշտ կարողանում էին ցամաք դուրս գալ ջրից... Հայերի պարագայում այդպես չէր. նրանք իրապես համարվում էին Օսմանյան կայսրության բաղկացուցիչ մաս և սահմանից այն կողմ ազատ, անկախ հայ ժողովրդի բացակայությունը հիմք ստեղծեց իդեալիստական ձգտումների համար. հայը Ռուսաստանում ևս զուրկ էր հեռանկարից, նա գիտեր, որ Հայաստանի աշխարհագրական դիրքը իրեն զրկում է անկախության որևէ հույսից և, եթե նա իր արյունով է օգնում ռուսներին գրավելու թուրքերին պատկանող տարածքները, ապա դա լոկ ապացույց է թուրքական ահավոր վատ կառավարման, որը նրան ճնշել է՝ անկախ բարենորոգումների ամեն տեսակի նախագծերի: Եթե նկատի առնվի հին թուրքերին, հայն ավելի վտանգավոր էր, քանի որ ավելի սերտ էր կապված թուրքերի հակառակորդի և մրցակցի հետ, ուստի հարկ էր նրան ոչնչացնել առաջին հերթին և այդ անել պատերազմի ժամանակ: Իսկ դրա համար հարկ էր հայերին բռնագաղթեցնել երկրի ամենածայրամասային շրջանները, մինչդեռ մեծաթիվ հույն բնակչությանը հարմար պահին, այսինքն՝ երբ Հունաստանն այլևս չէր կարողանալու վնաս հասցնել ուժեղացած Թուրքիային», հեշտությամբ տարագրել Հունաստան: Հայերը գնալու տեղ չունեին: Իսկ Բ. Դուտը «չի կարող սպասել մինչև գերմանացիների անող ազդեցությունը պատերազմից հետո դժվարացներ նրանց արտաքսումը»: Կառավարությունը «պատերազմական պայմաններում ի զորու չէր հայերին հրամայել հեռանալու երկրից նախ, որովհետև արտասահմանի հետ կապի անբավարարության պատճառով, երկրորդ՝ նա չէր ուզում, որ մեծ թվով մարդիկ հեռանային Թուրքիայից, ովքեր տեղյակ էին այն ամենին, ինչը տեղի էր ունենում կայսրությունում...»[92]:

91 DR /PA-AA/R 14087.

92 Ն. տ.:

Թիսցկան անդրադառնալով հայերի ջարդերի գործում ռուսական գործոնի դերին, գրում է, որ «եթե թուրքերը չէին վստահում Ռուսաստանի սահմանակից շրջանների հայերին, ապա ինչո՞ւ էին նրանց հեռացնում Ցալովից, Անկարայից, Բրուսայից, Կաստեմոնուից: Այդ վայրերից տարագրվել էր 250. 000 հայ: Նրանք 48 ժամում պետք է թողնեին իրենց տները և գնային աքսոր Հալեպ, Սորտ, Համու, Մոսուլ և անգամ Հաուրան»[93]:

Լեփսիուսը նկատի ունենալով գլխավոր կռվանը՝ Վանի կռիվները, գրում է, թե երբ հայերը ինքնապաշտպանության կանգնեցին, «դեռ ոչինչ չգիտեին ռուսական սահմանի մերձակայքում տեղաշարժերի մասին...»: Նա ժխտում է նաև մահմեդական բնակչության նկատմամբ բռնությունները, որովհետև հայերը զգուշանում էին, որ դա կարող էր հանգեցնել նոր ջարդերի: Մի բարձրաստիճան զինվորական Լեփսիուսին ասել էր. «Մենք կույր պիտի լինեինք, եթե չօգտագործեինք այդ ոտիթը հայերից ազատվելու համար»[94]:

Անդրադառնալով հայերի բնաջնջման իրական պատճառներին Լեփսիուսը վկայակոչում է Էնվերին, որն իր ներկայությամբ ասել էր, թե հայերի տեղահանությունը «ռազմավարական» բնույթի էր: Դա նշանակում է. «Հայերին հեռացնել սահմանամերձ շրջաններից երկրի խորքերը, վնասազերծել ռազմական նշանակություն ունեցող ուղիները», քանի որ, ըստ նրա, հայ զինվորների ու բնակչության միայն զինաթափումը վտանգը չէր վերացնում: Որպեսզի «40 միլիոն թուրքերը... ապահովեին իրենց ազգային կյանքը, հայերին պետք է այնպես ցրեին, որպեսզի ոչ մի տեղ մեծամասնություն չկազմեին»: Էնվերը Լեփսիուսին ասել է. «Եթե դուք կարողանայիք Լեհաստանը Պրուսիա դարձնել, այդպես չէի՞ք վարվի: Դուք այլևս այդ անել չեք կարող, իսկ մենք կարող ենք»[95]:

Երբ Մորգենթաուն Թալեաթին առաջարկում է թույլ տալ Միացյալ Նահանգներ տեղափոխել մեկ միլիոն հայ, վերջինս հարցնում է Էնվերի կարծիքը. «Այդ դեպքում կտեղափոխվեն հարուստները, իսկ տեղում կմնան աղքատները»: Լեփսիուսը եզրակացնում է, որ երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության նպատակներից մեկն էլ «ունևոր հայերի ծրագրված թալանն էր»[96]:

Նա ներկայացնելով հայերի բնաջնջման ամբողջ վնասակարությունը ոչ միայն Թուրքիայի, այլև Գերմանիայի համար, ուշադրություն է դարձնում նաև հետևյալ հանգամանքին, որ թուրքերը տնտեսական գործունեությամբ լրջորեն զբաղվել չէին կարող, թե երիտթուրքական կառավարությունը «լավ չգիտեր ասիական Թուրքիան», քանի որ ձևավորված էր մակեդոնաբնակներից և վարում էր «զուտ գաղափարական, բայց ազգայնամոլական քաղաքականություն»: Սակայն, շարունակում է նա, նացիոնալիզմն էլ «Եվրոպայից ներմուծված ապրանք է, քանի որ իսլամը չեզոքացնում է ազգությունները»[97]:

Նոյոռաթը խնդրի մասին արտահայտում է հետևյալ կարծիքը. « Իմ ունեցած տեղեկատվության համաձայն, հայերի նախապատրաստած հեղափոխություն կամ ապստամբություն տեղի է ունեցել միայն Վանում, մյուս վայրերում կատարվածներն ինքնապաշտպանություն էին»[98]:

Գերմանացի 49 կրոնական գործիչների 15. 10. 1915թ. նամակում հասցեագրված Բեթման Հոլվեգին տրված է հայերի հետ 1915-ին կատարվածի հետևյալ ընդհանրացնող նկարագրությունը. «Երբ արևելյան վիլայեթներում ... քրդերն ու անկանոն կազմավորումները հարյուրավոր հայկական գյուղեր արդեն թալանել էին, սպանել հազարավոր անպաշտպան հայերի, մայիսի վերջին հրաման տրվեց... ամբողջ հայ բնակչությանը քշել դեպի արաբական անապատներ... Այդ միջոցառումն իրականացվեց անմարդկային դաժանությամբ: Մինչ հայ ժողովրդի զենք կրելու ունակ տղամարդիկ զորակոչվել էին, զինաթափվել ու օգտագործվում էին որպես բեռնակիր և ճանապարհաշինարար, այդ նույն ժամանակ թուրք դաժան զինվորները նրանց բնակավայրերից անասունների հոտի նման հազարավոր թափորներով դեպի աքսոր՝ հարյուրավոր մղոններ էին քշում տղամարդու պաշտպանությունից և ունեցվածքից զրկված, առանց պարենի ու հա-

93 DR /PA-AA/ R 14088, փ. թիվ 176:

94 PA-AA/R14088.

95 Ն. տ.:

96 Ն. տ.:

97 Ն. տ.:

98 Ն. տ. (Կ. Պոլսի դեսպ.), 171, փ. թ. 195:

գուստի, բոբիկ, սովահար, հյուծված և մշտապես անարգանքի ու վայրագությունների ենթակա կանանց, երեխաների, հիվանդների և ծերերի: Այդ միջոցառումը սկսվեց Նրանով, որ մայրաքաղաքում ու երկրի խորքերում հանկարծակի բանտ նետվեցին ժողովրդի առաջնորդները՝ մտավորականներ, երևելիներ և եկեղեցական բարձրաստիճան գործիչներ և առանց հարցաքննության ու դատի գնդակահարվեցին կամ տարագրվեցին: Աշխատանքային ծառայության զորակոչվածները հարձակման ենթարկվեցին ու ոչնչացվեցին: Տարագրված կանանց, ծերերի և երեխաների անգամ կեսը չհասավ նշանակման վայրերը: Աղջիկներին ու երիտասարդ կանանց քարշ տվեցին թուրքական հարեմներ ու քրդական գյուղեր, որտեղ նրանք պարտադրված էին ընդունել իսլամ: Անթիվ երեխաների խլեցին իրենց քրիստոնյա ծնողներից և դաստիարակում էին իբրև մուսուլմաններ: Տեղահանումից զերծ մնացին միայն մի քանի հարյուր ընտանիք, ովքեր էլ իսլամացան: Տեղահանումն իրականում ամենամեծ ծավալների կոտորած էր: Ճանապարհի որոշակի հատվածներում ջարդերի, սովի և հյուծվածության հետևանքով տարագիրների թիվը նվազեց շուրջ կիսով չափ... Եթե անգամ ընդունենք, որ բնակչության մի մասը կարող էր փախչել լեռներ կամ հեռավոր շրջաններ և փրկվել, այնուամենայնիվ, մոտ մեկ միլիոն հայ քրիստոնյա տուժել էր բնաջնջումից ու ջարդից... Անկասկած է, Արևելքի ամենաաշխատունակ ու ամենաջանասեր ժողովրդին հասցրած հարվածը... Թուրքիայի ապագայի համար կունենա ճակատագրական հետևանք...

Միջոցառումները, որոնք կործանում են հայ ժողովրդին Բ. Դուռը հիմնավորում է հայկական շրջաններում հեղափոխական խարդավանքներով և սահմանամերձ շրջաններում ռազմավարական միջոցառումներով: Եթե անգամ ինչ-որ առումով իրավացի են կշտամբում հայերին (համաձայն մեր ունեցած տվյալների ոչ մի ապացույց չկա հայ քաղաքական և հոգևոր ազդեցիկ կազմակերպությունների հայրենադավ կեցվածքի վերաբերյալ), եթե անգամ այդպիսիք լինեին, միևնույն է, ոչինչ չէր կարող արդարացնել այդ նախադեպը չունեցող դաժան միջոցառումները... Պատճառներից են մոլեռանդությունն ու քրիստոնյաների հանդեպ ատելությունը: ... Հնչում էին կոչեր. «Երկիրը պետք է լինի միմիայն մահմեդական»...

Հայերի հետ կատարվածի արձագանքներն ու աշխարհի զայրույթն «արդյո՞ք իր ամբողջ խստությամբ չի ուղղվի Գերմանիայի դեմ... ո՞վ կարող էր կանխել այդ սարսափները... Ինչպես Թուրքիայի պատերազմի մեջ ներքաշվելու և «սրբազան պատերազմ» հայտարարելու համար պատասխանատու է Գերմանիան, նրան կվերագրեն նաև քրիստոնյա ժողովրդի բնաջնջման ամբողջ մեղքը... ինչն ամենաողբերգական ազդեցությունը կունենա գերմանացի քրիստոնյաների վրա... Թուրքական կառավարությունն անհրաժեշտ ոչինչ չի արել տարագիրներին սովամահությունից փրկելու, նույնիսկ մերժել է տառապյալ կանանց ու երեխաներին օգնություն հասցնելու փորձերը... Անտանելի է. մենք, գերմանացիներս գերի մահմեդականների համար մզկիթներ ենք կառուցում, երբ հարյուրավոր քրիստոնեական եկեղեցիներ ավերվում են կամ վերածվում մզկիթների»[99]:

Թուրք պատմաբանները համառորեն կառչած են մնում ցեղասպանների հնարած թեզից: Ցու. Բայուրը գրում է, որ պատերազմի սկզբից հայ հեղափոխականները գործակցել են թշնամու հետ, խռովություններ սարքել ճակատամերձ շրջաններում, խանգարել բանակի մատակարարումներին, հարձակումներ գործել մահմեդական խաղաղ բնակչության վրա[100]:

Թխված է Թալեաթից, որի հուշերում ավելի որոշակի է ասված, թե Մուշի, Բիթլիսի և Վանի վիլայեթների հայերը պատերազմի հենց սկզբին ապստամբեցին կառավարության դեմ[101], ինչը հիմքից զուրկ հարցադրում է ու հերյուրանք, որովհետև ա. 1914թ. օգոստոսից, այսինքն՝ մինչև պատերազմի մեջ Թուրքիայի մտնելը, հայ չափահաս բնակչության մեծամասնությունը զորակոչված էր: Ովքե՞ր էին ապստամբություն բարձրացնելու՝ ծերե՞րը, երեխանե՞րը, թե այն հատուկենտ անձինք, ովքեր զինվորական հարկ վճարելու միջոցով ժամանակավորապես ազատվել էին զորակոչից : բ. Պատերազմի սկզբի ամիսներին ռուս-թուրքական բախումներն ու կռիվները տեղի էին ունենում ռուսական տարածքում՝ թեչքիլաթի ավազակախմբերը գործում էին

99 PA-AA/ Կ. Պոլսի դեսպ/ 171, փաստ. թիվ 197:

100 Bayur Y. Turk inkilabi tarhi, Ankara, 1957, vol III,partie 3, p. 7.

101 Թալեաթ փաշայի հուշերը, ՀԱԱ արևելագիտության ինստիտուտ (ձեռագիր):

Կովկասում, մինչև Սարիղամիշում ռուսների հաղթանակը պատերազմական գործողությունները նույնպես հիմնականում տեղի էին ունենում ռուսական տարածքում: գ. Գերմանացի, ավստրիացի և ամերիկացի դիվանագետների այդ ժամանակվա (պատերազմի սկզբի) զեկուցագրերում հայերի «ապստամբությունների» մասին վկայություններ չկան. հետո էր, որ թուրքերն ու նրանց դաշնակիցները համակարգեցին իրենց մոտեցումները և զինակցության երկրների, մասնավորապես Գերմանիայի, գործակալները սկսեցին թմբկահարել «Հայկական ապստամբության մասին» թեզը: Անգամ իրենք՝ օսմանյան պետական գործիչներն ու մամուլն էին երախտագիտություն հայտնում, որ հայերը փայլուն ըմբռնում դրսևորեցին այս հարցում: "Le jeure Ture"-ն 18. 01. 1915թ. գրում է. «...Այն նվիրվածությունը, որ Թուրքիայում ապրող մեր հայ հայրենակիցները չեն զլանում դրսևորել Օսմանյան կայսրության հանդեպ և եռանդը, որ նրանք, ի թիվս օսմանյան տարրերի, դրսևորում են՝ արդարացնելու համար ընդհանուր հայրենիքն ազատագրելու համար արված բոլոր անհրաժեշտ զոհաբերությունները, հայտնի է և ապացուցված»: Այս միտքը հաստատված է նաև Անտանտի պետությունների 1915թ. մայիսի հայտարարության կապակցությամբ օսմանյան կառավարության հանրահայտ հայտարարությունում. «Քանի որ Էրզրումի, Դերջանի, Հեջինի, Սասունի, Բիթլիսի, Մուշի և Կիլիկիայի հայերը երկրի խաղաղությունն ու հանրային անդորրը խանգարող որևէ քայլ կամ գործողություն չեն կատարել, օսմանյան կառավարության պաշտոնատարները նրանց դեմ արտակարգ միջոցառումների դիմելու անհրաժեշտություն երբևիցե չեն զգացել»[102]:

Նաև նշենք, որ հայերի հանդեպ վերաբերմունքի հարցում Էնվերի մոտեցումները համաթրքական ելակետ ունեին. նա հայերի բնաջնջման մոլի ջատագով էր, բայց երկակի մոտեցում էր դրսևորում: Եթե Սարիղամիշից ճողոպրելուց հետո նա Սեբաստիայում հայտարարեց, թե թուրքերի դեմ կռվում էին օսմանահպատակ հայերը, իսկ մի քանի օր անց Կոնիայի հայ հոգևոր առաջնորդին գրեց. «...Պատերազմի թատերաբեմում օսմանյան հայ զինվորները բարեխղճորեն են կատարում իրենց պարտքը, որը ես կարող եմ հավաստել իբրև ականատես»: Էնվերը խնդրում է իր երախտագիտությունը փոխանցել հայ ազգին, որը «բոլոր ժամանակներում հայտնի է եղել իր կատարյալ նվիրվածությամբ օսմանյան կայսրական կառավարությանը»[103]:

Սակայն երկա՞ր պահպանվեց հայերի «հավատարմությունն օսմանյան հայրենիքին»: Իհարկե, ոչ: Եվ պատճառը ոչ թե հայերի «դավադիր ծրագրերն էին», այլ թուրքական կառավարության սանձազերծած բռնություններն ու կոտորածները: Դեռ ավելին, մի քանի տեղերում թուրքական իշխանություններն իրենք էին հայերին գրգռում հակակառավարական գործողությունների: Օրինակ, այդպես եղավ Կիլիկիայում: Իշխանությունները բռնություններ հրահրելով հայերին մղեցին դիմելու ռուսական բանակի օգնությանը: Մինչ այդ կիսանկախ վիճակում գտնված այդ երկրամասի հայ բնակչության հանդեպ բռնություններ չէին գործադրվել: Բնաջնջման վտանգը անհանգստացրեց նաև արտասահմանյան հայ գործիչներին: Ա. Զոպանյանը հանդիպում է Քիթչենների հետ ու խնդրում, որ դաշնակիցները դեսանտ իջեցնեն Կիլիկիայում՝ խոստանալով հայերի եռանդուն օգնություն: Նույն խնդրով Սոֆիայում Անտանտի երկրների ներկայացուցիչներին դիմում է Մ. Վարանդյանը, որի առաջարկը Դերկասեն մերժեց, բայց բարձր գնահատելով դրա «ազնվաբարո բնույթը»[104]:

Այսինքն՝ կիլիկիահայերը բացարձակապես ձեռնպահ էին թուրքական իշխանությունների բռնությունների դեմ ինքնուրույն ընդվզելուց: Նրանք դրա համար ոչ բավարար թվով մարդկային ուժ ունեին և ոչ էլ զենք: Անկասկած, թուրքական բանակի պարտությունները ոգևորում էին հպատակ ժողովուրդներին, այդ թվում նաև հայերին. ոգևորությունն այնքան բացահայտ էր, որ Բեդրին հոխորտաց. «Թող քրիստոնյաները չկարծեն, թե մենք պատրաստվում ենք թողնել Կ. Պոլիսը: Այն օրը, երբ մենք կթողնենք քաղաքը, նրանց համար սգո օր կլինի»[105]:

Արդեն 1915թ. մայիսի 10-ին Ռեոսլերը գրում է Վանգենհայմին. «Կառավարության նպատակը հայերի ոչնչացումն է»[106]:

102 Uros R. Armenians in History and the Armenian Question, Ist., 1988, p. 618.

103 "Osmanischer LLoyd", 26. 02. 1915.

104 Բեյլերյան Ա. նշվ. աշխ., փ. թիվ 2150:

105 «Վերածնունդ», 11. 12. 1919:

106 Lepsius J. Deutschland und Armenien, s. 66.

Միանգամայն իրավացի է Հ. Մորգենթաուն. «...Երեսուն տարի շարունակ այս դժբախտներից հարյուր հազարավորներին կոտորելուց, նրանց կանանց ու աղջիկներին անարգելուց, հայերին աներևակայելի կողոպտելուց ու խոշտանգելուց հետո, Թուրքերը հավակնում են նրանց ամենանուրբ «հավատարմությանը»[107]:

Ա. Բեյլերյանի կարծիքով, եթե հայկական նահանգների հայության բնաջնջումը հետապնդում էր քաղաքական նպատակներ, ապա Կենտրոնական և Արևմտյան Անատոլիայի ու Թրակիայի «հայերի տեղահանությունը հետապնդում էր ուրիշ նպատակ՝ տիրանալ հայերի ունեցվածքին»[108]:

Սա միայն Ա. Բեյլերյանի կարծիքը չէ:

Հայոց ջարդերի պատճառների թուրքական վարկածը շարադրված է Բեթման Հոլվեգին Վոլֆ Մետեռնիխի 18. 12. 1915 թ. զեկուցագրում: Գերմանացի դիվանագետը գրում է, թե «Հանգամանալից զրույց է ունեցել Թալեաթի» հետ, որը նոր էր վերադարձել Անատոլիայից և պատմեց «հայ ընտանիքներին սնունդը կազմակերպելու համար ձեռնարկված միջոցառումների» ու այն մասին, որ «ևս 20 անձ, ովքեր մեղադրվում էին հայերի հանդեպ բռնությունների մեջ, մահապատժի են ենթարկվել»: Թալեաթը նաև բացատրեց. «Ռուսական սահմանին մերձակա շրջաններում և Հալեպի մոտ, անվտանգության նկատառումով զանգվածների տեղահանումներն անհրաժեշտ են եղել: Ռուսական կառավարության հրահրած մեծ դավադրություններ բացահայտվել են գրիգորյանական հայերի շրջանում՝ սահմանամերձ գավառներում և Հալեպի մոտ... անհնար է եղել առանձնացնել ոչ մեծաթիվ հանցագործների: Միայն տեղահանումը կարող էր հանդիսանալ անվտանգության երաշխիք»: Մետեռնիխը պատասխանում է, թե կաթոլիկ հայերը, ովքեր թուրքերի դեմ որևէ գործողություն չէին կատարել, նույնպես աքսորվել են[109]:

Ցեղասպանության խնդրին անդրադարձ կար նաև խորհրդարանում մեծ վեզիր դառնալու կապակցությամբ Թալեաթի արտասանած ծրագրային ճառում՝ «Թուրքիայի պետական կյանքի համար կամավոր ու համոզված համագործակցություն դաստիարակելու փորձերին հաջորդել են ժամանակներ, երբ պետության միասնության համար հարկադրված դիմել ենք ճնշումների և բնաջնջման: Արդյուք Համիդը սուլթանության վերին շրջանում հայերի հանրահայտ կոտորածներով ու բնաջնջման անխնա քաղաքականությունով այնքան էր հեռու գնացել, որ անգամ արյունահեղությանն ընտելացած Արևելքում բոլոր մտածող մարդիկ սարսափահար եղան: Կոմիտեն ... սկզբնական շրջանում Թուրքիայում բնակվող ազգություններին կոչ արեց ազատ և կամավոր համագործակցություն մեկ ընդհանուր պետության կազմում և կարողացավ բոլոր տարրերին՝ արաբներին, հույներին և հայերին, թեկուզ կարճ ժամանակահատվածում, համախմբել: Սակայն հայերի շրջանում շարունակվող հեղափոխական-անջատողական տրամադրությունները և նույն Բալկանյան պատերազմի ժամանակ, երբ կարծես Թուրքիան կործանման եզրին էր, նորովի հանդես եկած հայրենադավ տրամադրությունները նպաստեցին կոմիտեի ներսում թուրք-ազգայնականության լիակատար հաղթանակին»: Քյուհլմանը ներկայացնելով իթիհադի համագումարում Թալեաթի ճառը, գրում է. «Կարծում եմ, որ արդյունքում բնաջնջման քաղաքականությունը վնասեց թուրքական կայսրությանը: Հայերի քարավանների զարհուրանքները դեռ երկար են ծանրանալու թուրք անվան վրա... և կպահանջեն թուրքերի արտաքսում Եվրոպայից: Երկիրն ակնհայտորեն թուլացել է նաև ներքնապես՝ ֆիզիկապես ուժեղ, աշխատունակ և խնայող բնակչության ոչնչացման ու տարագրման պատճառով...»[110]:

Երբ «գործն ավարտված էր», երիտթուրքերի ղեկավարներն անմիջապես ինտերնացիոնալիստի, հայ ժողովրդի շահերի պաշտպանի դիմակ հագան: Թալեաթը հրավիրեց հայ երկու պատրիարքներին ու ասաց. «Հայ բնակչությունը կարող է վստահ լինել, որ նրա սահմանադրական իրավունքները չեն խախտվի: Ինչ արել է նախորդ կառավարությունը՝ ելնելով ռազմական անհրաժեշտությունից, հնարավորության սահմաններում կշտկվի»[111]:

107 Մորգենթաու Հուշեր, էջ 255-256:
108 Բեյլերյան Ա. նշվ. աշխ., հ. 1. էջ 51:
109 PP-AA/R14089, փ. թ. 215:
110 PP-AA/R14095, փ. թ. 317:
111 Ն. տ., թ. 318:

Անհանգստացած էին նաև գերմանացիները: Քյուհլմանը 28. 03. 1917-ին գրում է կանցլերին. «Հայերի հալածանքները Թուրքիայում փաստ են և անհնար է դրանք հերքել: Մեծ թվով ոչ թուրքեր դաշնակից և չեզոք երկրներից ականատես են եղել հայերի բնաջնջման քաղաքականությանը, անկողմնակալ դիտորդների չափազանց շատ օբյեկտիվ շարադրանքներ են հասել արտասահման»: Ելքը մեկն է, գրում է գերմանական առաքելության ղեկավարը, որ Թուրքիան արմատապես փոխի հայերի հանդեպ իր քաղաքականությունը, որի շնորհիվ «ապագայում ոչ մի էական նշանակության նյութ» չի մատակարարվի Արևմուտքին[112]:

Խնդրին մեկ ամիս անց անդրադառնում է նաև Շեթիրը, թե հայ վերապրածներին օգնություն հասցնելը «Համապատասխանում է ինչպես Գերմանիայի քաղաքական շահերին, որոնք Հայաստանում կատարվածների պատճառով վերածվում են հակառակորդների հարձակումների թիրախի, այլև Օսմանյան կայսրության իսկական շահերին»: Դրա հետ միասին պարտադիր է մոռանալ անցյալը, նրա մասին ոչ բանավոր և ոչ էլ գրավոր որևէ հիշատակություն չպետք է թույլ տրվի[113]:

Թուրքերին ու Թալեաթին լավ ճանաչողները կասկածանքով էին վերաբերվում նրա խոստումներին: Մորտմանը գրում է. «Թե իրո՞ք Թալեաթ փաշան կիրականացնի նախկին վարչակազմի հակահայկական քաղաքականությանը վերջ տալու իր հայտնած մտադրությունը, դեռ հայտնի չէ... գոնե ներկայումս որևէ զգալի արդյունք չկա. դրան հակառակ՝ երկրի խորքերից եկող տարբեր լուրերը հանգեցնում են եզրակացության, որ հալածանքները, թեկուզ փոքր չափերով, դեռևս շարունակվում են»[114]:

Բ. Դռան հավանությամբ ու աջակցությամբ ինտերնացիոնալ կազմ ունեցող մի խումբ (գերմանացի, ավստրիացի, թուրք) 1918-ին շրջագայում է Արևմտյան Հայաստանում ու, չնայած իր թուրքամետությանը, արձանագրում է, որ հայկական գյուղերն ավերված էին: Խմբի ղեկավար, գերմանացի Հորսթմանի տեղեկագրում հաստատվում է կանցլերին, ասված է, որ Երզնկայում մինչև պատերազմը բնակվում էր 10.000 հայ, իսկ պատերազմից հետո կար միայն 3000 մահմեդական: «Իմ հարցին, թե քանի՞ հայ է մնացել Երզնկայում կամ վերադարձել,- գրում է Հորսթմանը,- քաղաքի ղեկավարները պատասխանեցին՝ ոչ մի: Այդ սարսափելի ճշմարտության մեջ համոզվեցինք նաև մեր սեփական դիտարկումներով... Հայկական թաղամասն ամբողջությամբ վերածվել էր ավերակի... Կարծես մի հսկա գերեզմանոց լինի: Միայն տները շրջապատող պարիսպներն են մասամբ կանգուն... Մենք զննեցինք տների ներսի աղբակույտերը... Ամենուրեք դուրս էին գալիս մարդու մարմնի մասեր՝ գլուխ, ձեռք, ոտք... Քաղաքի մայր եկեղեցին վերածվել էր աղբակույտի»[115]: Տրապիզոնի և Էրզրումի նահանգներում արշավախումբը հանգեց եզրակացության. «Այս վիլայեթներում իրապես գիտակցում ենք, որ հայերի ունակությունները չեն սահմանափակվում միայն առևտրի ու ֆինանսների բնագավառում: Երզնկայի և Էրզրումի սարահարթերում մինչև Մուշ, Խարբերդ և Վան լիճ, հայն առաջին հերթին առողջ և ուժեղ հողագործ է: Գյուղացի բառիս բուն իմաստով: Ամենից առաջ տեղաբնակ հայ գյուղացիությունն էր նպաստել Արևելյան Անատոլիայի գավառների զարգացմանը: Գյումուշխանե տանող ճանապարհին կիլոմետրերով ձգվող մրգատու այգիները, որոնք մի ժամանակ ծաղկունքի մեջ էին, ներկայումս անտերության մատնված դաշտերն ու մարգագետինները վկայում են անցյալում այստեղի կենցաղային բարձր կուլտուրայի մասին... Հայ գյուղացիությունը խաղաղասեր էր, աշխատունակ և հանդիսացել է առատ աղբյուր պետական գանձարանի համար: Նա զենք վերցնում էր միայն ինքնապաշտպանության համար»[116]:

Անգլիական մի փաստաթղթում ասվում է. «Համաձայն գերիշխող կարծիքի, հայերը հիրավի միակ «անտանտամետ» տարրն են և , ըստ թուրքերի, նրանք եղել են լրտեսներ: Հավանաբար բուն պատճառն այն է, որ թուրքերը ձգտում են կորզել հայերի փողերը և նրանց ունեցվածքը բռնագրավել առանց որևէ խոչընդոտի»[117]:

112 Ն. տ. (Կ. Պոլսի դեսպ.), 174:
113 Ն. տ., /174/ MF 7268/81-85:
114 PA-AA(Կ. Պոլսի դեսպան.)174/ 7268/81-85:
115 Ն.տ., /R14102:
116 PP-AA/ R14102.
117 Բեյլերյան Ա. նշվ. աշխ., փ. թիվ 23:

«Փոքր Ասիայում գտնվող ամերիկացի և գերմանացի միսիոներների վկայությունները հիմնավորապես հաստատում են, որ հայերի, այսպես կոչված, տեղահանությունը Միջագետք իրականացվել է ... անձամբ Թալեաթ բեյի... հրամաններով: Տղամարդիկ մորթվել են ժանդարմների և զինվորների կողմից, ծերունիները, կանայք և երեխաներն անասունների հոտի նման քշվում էին Միջագետքի ուղղությամբ: Բազում հազարավորներ ընկել են ճանապարհին, շատերը խեղդվել գետերում, մեծ թվով կանայք ու աղջիկներ բաժանվել մահմեդական բնակչությանը: Սրա նման, բայց նվազ դաժանությամբ իրականացված արարքներ հնարավոր էր տեսնել 1910թ, Կ. Պոլսի շների տեղահանության ժամանակ, շներին տարան մի անմարդաբնակ կղզի Մարմարայում, որտեղ ... սպանելու փոխարեն, լքել էին, որպեսզի շները սատկեին սովից ու ծարավից»:

Օտար ականատեսների աչքից չի վրիպել մի քանի սկզբունքային նշանակության երևույթներ: Նրանք գրում են. «Թալեաթ բեյը հանդիմանում է ստահակ պաշտոնատարներին, ովքեր գործադրել են ծայրահեղություններ... Բայց մենք չենք լսել, որ նրանցից մեկը չարագործությունների համար պատժված լիներ: Թալեաթը դատապարտում է նաև քրդերին ճանապարհներին հայերի վրա հարձակումներ գործելու և կոտորելու համար, բայց չի նկատում այն, որ Դեր Զորի բեգվիները միջամտել են պաշտպանելու... հայերի թշվառ մնացորդներին նրանց հալածող թուրքերից: Հազիվ թե այս հանգամանքը Թալեաթ բեյի կողմից հաջող ընտրված միջոց է թուրքերին վայրագաբարո լինելու մեղադրանքից պաշտպանելու համար... Ինչ վերաբերում է անքուն գիշերներին, որ նրան պատճառել են հայկական կոտորածների մասին հաղորդումները, ապա դրանք հիշեցնում են կոկորդիլոսի արտասուքները...»[118]:

Իթիհադի 28. 09. 1916թ. ընդհանուր ժողովին ներկայացված տեղեկանքում առանձին բաժին կար «Հայկական հարց» խորագրով, որը կեղծարարության մի ամբողջ ժողովածու էր: Խոսվում էր ռուսների կողմից պարտադրված 61-րդ հոդվածի մասին, որն «ի նպաստ հայերի» էր: «Այն պահից երբ հայերի կացությունն ու ճակատագիրը դրվեցին քաղաքական հարթության վրա... ռուսները և անգլիացիները... դրանք օգտագործեցին որպես Թուրքիայի գլխին կախված դամոկլեսյան սուր»: Ռուսները Հայկական հարցը վերածում էին պատերազմի սպառնալիքի, իսկ Անգլիան անկախ Հայաստան ստեղծելու միջոցով ձգտում էր խանգարել Ռուսաստանի առաջխաղացմանը դեպի Իրաք և Ալեքսանդրեթ: Ապա ներկայացված էր մի առանձին ենթագլուխ՝ «Հայերի ապստամբությունը Ռուսաստանի և Անգլիայի հրահրմամբ», որում շարադրված են հայերին թուրքական տիրապետության դեմ ապստամբության հանելու Լոնդոնի և Պետերբուրգի ջանքերն ու այդ «ապստամբություններն առանց մեծ ջանքերի ճնշելու» թուրքերի գործողությունները: Նաև պնդումներ, թե հայերը ձգտում էին տերությունների միջոցով հասնել անկախության: «...Քաղաքական խմորման նման դրսևորումը կառավարության համար ճգնաժամային պահին մի այնպիսի տարրի կողմից, որի ունեցվածքը, կյանքը և բոլոր սրբություններ» թուրքերը «պաշտպանել են վեց դար շարունակ, արժանի էր վերջինների արդարացի զայրույթին»: Չնայած դրան Բ. Դուռը ճանաչեց հայերի իրավունքները՝ հնարավորություն տրվեց, որ նրանք «թափանցեին տեղական ժողովները»՝ ունենային պատգամավորներ»: «Հայերի դավաճանության ապացույցը» կամավորական գնդերի ստեղծումն էր ու հայ կուսակցությունների միահամուռ որոշումը պատերազմի ժամանակ թուրքական բանակի թիկունքում «հուզումներ հրահրելը», կոտորածներ կազմակերպելը... քայլայերել հայ զինվորներին» դասալքելու, կազմելու հրոսակախմբեր և «կտրելու մեր զորքերի նահանջի ճանապարհները: Էջմիածնի կաթողիկոսը, որը ցարին «հայերի հովանավոր էր» անվանում, «Արարատի» 1914թ. օգոստոսի համարում ... պարտադրում է բոլոր հայերին իրենց ունեցվածքն ու անձը ծառայեցնել ռուսական բանակին: Դրանից հետո օսմանյան բանակից հայերի դասալքությունը բազմապատկվեց...

Հայ հեղափոխականները զբաղվում էին նաև թալանով: 1. Ռուսաստանի հետ պատերազմի հենց սկզբին հրոսակախմբերի առաջնորդ Անդրանիկը, ինչպես նաև օսմանյան խորհրդարանի պատգամավոր Գ. Բաստերմաջյանը, անցնելով սահմանը, հատկապես վերջինը, «գյուղացիների հետ միասին ամայացրեցին այդ կողմերի գյուղերը և կոտորեցին մահմեդական բնակչությանը:

118 Բեյլերյան Ա. նշվ. աշխ., փ. թ. 224:

2. 1914թ. փետրվարի սկզբին հայկական հրոսակամբերը հարձակվեցին զորահավաքի համար խիզան ուղարկված մեր զորամասերի վրա, գրավեցին Վանի և Բիթլիսի ճանապարհները, կտրեցին հեռախոսալարերը: Մուշում կրակ բացեցին ժանդարմների վրա, Կումում հրկիզեցին մյուդիրի տունը և սպանեցին նրան ու ինը զինվորի: Մուշում սպանեցին ժանդարմերիայի հրամանատարին և մի քանի ժանդարմների: 3. Զեյթունում դասալիքներն ու հրոսակները փետրվարի 29-ին պաշարեցին կառավարչատունը և զենքի պահեստը, զավթեցին զենք, կտրեցին հեռագրագծերը, կոտորեցին մահմեդական պաշտոնյաներին և մահմեդական ընտանիքներին, ինչպես նաև զինվորներին: 4. Դհելի քաղաքում ռումբ պայթեց Ամերիկայից վերադարձած Գ. Համբարձումյանի տանը: Հայկական գյուղերում և գերեզմանատանը հայտնաբերվեց 90 ռումբ, մեծ թվով այլ զենքեր, ծածկագրերի բանալիներ, հրահանգներ: Ձերբակալվածները լկտիաբար խոստովանել են, որ այդ ամենը կոչված էին ապահովելու հայերի անկախությունը: 5. 24. 03. 1915-ին Զեյթունի վանքում հավաքված 500 հայ գրոհել է վանքը շրջափակած թուրքական զորքի վրա և սպանել ժանդարմերիայի հրամանատար Սուլեյմանին և նրան ուղեկցողներին: 6. Ադանայում, Դորթյոլում և Ալեքսանդրեթում ու շրջակայքում հետախուզությամբ զբաղվողները և երկաթուղիներ ավերողները հայերն էին: 7. Վանի մերձակայքում հայերը կրակ են բացել ոչխարները հաշվառող պաշտոնյաների վրա, հավաքվել է ավելի քան 1000 ելուզակ: Շարժում էր ծավալվել Գյավաշում և Շատախում: Ապստամբները կտրել են հեռագրալարերը, սպանել են ժանդարմներին ու Գյավաշի դատավորին: 8. Ապստամբությունը ներառել է Վանը, ռումբեր են նետվել մահմեդականների տների, օսմանյան բանակի, հանրային պարտքի վարչության, հարկերի և եկամուտների վարչության ու փոստի շենքերի վրա: Ապրիլի 20-ին հրացան, ռումբ և նռնակ ունեցող ելուզակների թիվն անցնում էր 2500-ից: Վանա բերդում փակված մահմեդական զինվորականներն ու բնակչությունը քաղաքը պաշտպանել են մինչև ապրիլի վերջը: Երբ այն անցել է ելուզակների ձեռքը, հռչակել են ժամանակավոր կառավարություն: Բիթլիսի և Վանի շրջանում ապստամբների խրամատներում հայտնաբերվել են ռուսական և ֆրանսիական գլխարկներ: 9. Միայն Դիարբեքիր քաղաքի եկեղեցիներում և դպրոցներում ապրիլի 25-ին կատարված խուզարկությունը հայտնաբերել է 60 ռումբ, դինամիտի տուփեր և հրապատիճներ, վառոդի արկղեր, մեծ թվով մաուզերներ, մանլիչեր, շնչդեր, ինչպես նաև հազարավոր դասալիք: 10. Խոստովանություններից երևում է, որ Սըվազի վիլայեթում 30.000 մարդուց կազմված մի ուժ էր հավաքվել հարկադրելու Կովկասի (թուրքական) բանակին նահանջելու: Այս խոստովանությունները հաստատվել են ոչ միայն ռումբերի, պատրաստված ժանդարմական համազգեստների, Սըվազում, Սու-Շեհիրում, Մերզիֆոնում և Ամասիայում հայտնաբերված չեփորների և մեծ քանակությամբ զենքերի (որոնց կրելն արգելված էր) միջոցով, այլև ակնհայտ է, որ Սու-Շեհիրի շրջակայքում շատ անգամներ դեպի էրզրում գնացող զինվորական գումակների վրա կատարված հարձակումներն ապստամբության նախերգանք էին: 11. Հունիսի 25-ին խուզարկությունների ժամանակ Կարահիսարի Շաքրիի հայերն ապստամբել ու հրկիզել են քաղաքը: 800 ապստամբներ սպանել են մեծ թվով զինվոր, բնակիչ, ժանդարմ և ոստիկանական գործակալ, որոնց փակել էին բերդում: Սպանվածների թվում էր ժանդարմերիայի հրամանատարը: 12. Իզմիդում, Բաղչեջիկում և Աղաբազարում կատարված խուզարկությունները հայտնաբերել են հարյուրավոր ռումբեր և զենքեր, որոնց կրելն արգելված էր, իսկ Արմաշի վանքի դպրոցում՝ ահռելի հզորության փոքր ու մեծ թվով ռումբեր: 13. Բրուսայի վիլայեթի շատ վայրերում նույնպես հայտնաբերվել են ռումբ ու զենքեր, հրոսակախմբերը սկսել էին խախտել կարգուկանոնը: 14. Մարաշում 500 հոգանոց հրոսակախումբը Ֆինդիջիկ գյուղում փորել է խրամատներ, դիմադրել զորքին և սպանել շատ զինվորների: 15. Նույն ժամանակ մեծ թվով հայ հրոսակախմբեր հարձակվել են Անկարայի վիլայեթի Բողազյան քաղաքի բնակչության և այնտեղ տեղակայված զորքի վրա: 16. Համանման ապստամբություններ տեղի են ունեցել նաև Ուրֆայում:

Որդեգրած միջոցներ... Քանի որ այս ամենը սպառնում էր ռուսական սահմանի շրջանում եղած մեր զորքերի անվտանգությանը, անպաշտպան գումակներին և քանի որ ապստամբական շարժման ծավալումը կարող էր այնքան հզորանալ, որ պարտության մատներ մեր բանակին, ուստի հարկադրված եղանք պատերազմական գոտիներից, բանակատեղիներից և երկաթգծերից հեռացնել բոլոր հայերին, որպեսզի մեր զորքերը չհայտնվեին երկու կրակի արանքում:

Տեղահանության ընթացքում տեղ գտած որոշ չարաշահումներին վերաբերող լուրերը ստանալուն պես ուղարկվել են հետաքննիչ հանձնաժողովներ և օրենք է ընդունվել այլ վայրեր տեղափոխված մարդկանց ունեցվածքը և հողերը չարաշահումից պաշտպանելու համար: Այդ օրենքի հիման վրա ձևավորված հանձնաժողովները կազմել են լքված ունեցվածքների ցուցակներ»[119]:

Այս կեղծարարության մեջ թվարկածները իրենց բնույթով խմբավորվում են. ա) Հայերը զենք ունեին և հարձակվում էին թե թուրք բնակչության և թե պաշտոնատարների, ժանդարմների, զորքի վրա: բ) Հայերն ապստամբել են, ոչնչացրել մահմեդականների, վտանգել թուրքական զորքերի թիկունքը: գ) Ռուսական բանակի կազմում ստեղծել էին կամավորական գնդեր: դ) Հայերը ոչ թե բռնագաղթվել կամ տարագրվել են, այլ լոկ տեղափոխվել ռազմաճակատամերձ շրջաններից ու ամեն ինչ արվել է նրանց ունեցվածքի և հողերի անձեռնմխելիությունն ապահովելու համար:

Այո՛, հայերի մի մասը զենք ուներ և ուներ ոչ թե ապստամբելու, այլ ինքնապաշտպանվելու համար, որովհետև գտնվում էր ամբողջությամբ զինված և իր գոյությունը չհանդուրժող մահմեդական բնակչության շրջապատում, թուրքական վարչակազմի կրնկի տակ և սկսած 1870-ական թվականներից մշտապես հարձակման էր ենթարկվում նրանց կողմից: Կարելի է թվել հայկական մի քանի բնակավայրում կատարված խուզարկությունների ժամանակ հայտնաբերված զենքեր, որոնք բոլորը միասին եռանիշ թվից չէին անցնում ու «մոռանալ» մահմեդական բնակչության մոտ եղած զենքերը, որոնք մի քանի անգամ ավելի շատ էին, քան այդ բնակչության ընդհանուր թիվը, որովհետև մահմեդական ամեն ընտանիքում կար ոչ թե մեկ, այլ մի քանի, հաճախ նաև տասնյակ զենքեր:

Հիմնականում կեղծարարություն է նաև մահմեդական բնակչության վրա հայերի հարձակումների մասին պնդումները, որովհետև մահմեդականի կողմից հային սպանելը գործնականում հանցագործություն չէր համարվում և հազվադեպ էր պատժվում՝ այն էլ ծիծաղելիության աստիճանի ձևական: Որպեսզի համոզեն, թե հայերի հանդեպ վայրագությունները հետևանք են նրանց ապստամբությունների և ապստամբական տրամադրությունների, բերվում են հազար անգամ կրկնված օրինակներ՝ Զեյթուն, Վան, Շանչին, Կարահիսար, Բողազյան և Ուրֆա: Բացարձակ կեղծիք է, որովհետև նախ, հայերին ոչնչացնելու երիտթուրքական կողմորոշումը ձևավորվել էր այդ իրադարձություններից շատ առաջ: Երկրորդ Մեծ եղեռնը սկսվեց առաջին աշխարհամարտի հետ միասին և արդեն 1914թ. վերջին և 1915թ. սկզբի երեք ամիսներին կոտորված հայերի թիվը հասել էր մի քանի հարյուր հազարի: Ինչ վերաբերում է Զեյթունի ընդվզմանն ու Վանի իրադարձություններին, ապա որոշ թուրք գործիչներ իրենք են խոստովանել, որ Զեյթունում զորահավաքի անվան տակ իրականացվում էր հայ բնակչության զինաթափում՝ ջարդարարների դեմ նրան անզոր դարձնելու համար: Վանի հերոսամարտը սկսվեց ապրիլին, բայց Վասպուրականի հայ բնակչության զանգվածային կոտորածները տեղի ունեցան մարտ ամսին և դեռ ավելի շուտ: Ցաթաղանից փրկված մեծ թվով հայ պաշտպաններ լցվեցին Վան նրա բնակիչներին հասկացնելով, որ գավառների հայության ոչնչացմանը հաջորդելու էր քաղաքի հայ բնակչության ոչնչացումը և վանեցիները ոչ թե ապստամբեցին, այլ կանգնեցին ինքնապաշտպանության: Շապին Կարահիսարի, Ուրֆայի և Բողազյանի (Ցոզգատի) իրադարձությունները նույնպես ինքնապաշտպանություն էին և տեղի ունեցան 1915-ի հունիս-հուլիս ամիսներից սկսած, երբ հայերի տեղահանությունն ու ջարդերը արդեն սկսված էին:

Իրողություն էր, որ ռուսական բանակի կազմում ստեղծվել էին կամավորական գնդեր, որոնցում տեսակարար մեծ կշիռ էին կազմում ոչ միայն թուրքահայերը, այլև աշխարհով մեկ սփռված արևմտահայերը, ովքեր յաթաղանից փրկվելու համար էին դարձել աշխարհասփյուռ և ոչինչ արտառոց չկար, որ նրանք ձգտում էին ունենալ մի այնպիսի հայրենիք, որում կարողանային գոնե անվտանգ ապրել: Ինչ վերաբերում է հայերի ոչ թե բռնագաղթին ու տարագրությանը, այլ տեղափոխությանը, ապա դա ինչ տեղափոխություն էր, որ ճանապարհին սպանվեց կամ մեռավ յուրաքանչյուր երրորդ հայը, չուրջ կես միլիոն մարդ: Հայերի ունեցվածքը համարելով «լքյալ գույք», ամբողջությամբ թալանվեց մահմեդական ազգաբնակչության և թուրքական իշխանությունների կողմից:

119 A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 855, ff. 208-212; Բեյլերյան Ա. նշվ. աշխ., փ. թ. 271:

Ի դեպ, հայերի տմարդությունն ու Օսմանյան կայսրությանը դավաճանելու պատճառաբանությունը ու դրանց դերը Մեծ եղեռնի իրականացման գործում առաջ են մղվել ոչ միայն թուրքերի, այլև օտար մի քանի հեղինակների կողմից: Բեռնում ֆրանսիացի դեսպան Բոնը 17. 01. 1917-ին Փարիզ ուղարկեց Հայկական հարցին նվիրված նյութեր: Դրանցից մեկում կարդում ենք, թե առաջին աշխարհամարտը սկսվելուց հետո էլ Բ. Դռան հարաբերությունները ՀԹԴ հետ «շարունակում էին մնալ վայելուչ»: Օրինակ, Թալեաթը ՀԹԴ ղեկավար գործիչներից Գ. Բաստերմաջյանին ուղարկեց Անատոլիա՝ հայ բնակչությանը «կառավարության կողմը գրավելու համար», բայց նա «փախուստի դիմեց և սկսեց վարել ռուսամետ քարոզչություն»: Սա երիտթուրքերի «առաջին հիասթափությունն էր»: Ապա սկսվեցին հայերի զանգվածային դասալքությունները: Դասալիքները «կազմավորում էին զինված հրոսակախմբեր», որոնք աստիճանաբար վերածվեցին «զինված ապստամբությունների»: Նշվում են Վանի, Թիմարի, Զեյթունի «ապստամբությունները»: Եվ որ հայկական շարժումը «ծավալվում էր և վերածվում վտանգի թուրքական բանակի համար... Կայսրության բոլոր մասերում կազմակերպվեցին հանցախմբեր... Զգացվում էր եռանդուն, անգամ անարդարացի միջոցառումների անհրաժեշտությունը: Ժամանակ չկար անմեղներին զանազանելու մեղավորներից»: Այնուհետև ներկայացվում է թուրքական պաշտոնական թեզը, թե քանի որ «հայերի հնարավոր վերադարձ չէր նախատեսվում, կառավարությունը հարկադրված եղավ վերացնել հայերի տիրույթները և փոխանակության կարգով տեղահանվածներին համարժեք տարածքներ հատկացնել կայսրության մյուս մասերում»: Կատարվածն արտակարգ միջոցառում էր, որը «կիրառվել է արտակարգ հանգամանքներում և պետք է ունենար համապատասխան հետևանքներ»: Նաև առաջ էր քաշվում հետևյալ նենգ միտքը, թե անգամ երիտթուրքերն էին ընդունել թուրքական կառավարության համակարգի վատթար վիճակը, կարգ ու կանոնի բացակայությունը և կարելի է պատկերացնել, «թե ինչ կարող էր տեղի ունենալ հայերի տեղահանության ժամանակ, որն իրականացվում էր հետամնաց, հաղորդակցության միջոցներից զուրկ տարածաշրջաններով, թշնամաբար տրամադրված, պատերազմի պատճառով մոլեգնած ժողովրդի միջավայրում, ապաշնորհ աստիճանավորների առկայության պայմաններում... Բայց ի՞նչ կարող էր անել թուրքական կառավարությունը, որը գտնվում էր ռազմական աղետի և վարչական փլուզման հրամայականի առջև»[120]:

Վկայություններն ու կասկածները խայտաբղետ էին, իրարամերժ: Գրում է Տրապիզոնում Ավստրո-Հունգարիայի գլխավոր հյուպատոսը. «Այստեղի հայերը տարվելու են Մոսուլ: Այս ճակատագրական միջոցառման առնչությամբ, որը ոչ մի կապ չունի հայերի մեղավոր լինելու հետ, իմ պարտքն եմ համարում մատնանշել... բռնագաղթի ենթարկվածների, այդ թվում բազում կանանց և երեխաների մեծամասնությանը, դեպի մահ տանելը... Մինչև Մոսուլ երկար տարածություն է և օթևանի ու պարենավորման բացակայության և համաճարակային հիվանդություններով վարակված ճանապարհահատվածներով տարագիրներին տանելը հավասար է դատապարտել մահվան»[121]:

Ավստրիացի մի բարձրաստիճան գործիչ ցեղասպանության պատճառ համարում է «Թուրքերի ներկայիս ազգայնամոլությունն իր բարձրակետին հասած ատելությունն է օտարների և քրիստոնյաների նկատմամբ»[122]:

Պատճառը, կարդում ենք Վիեննա ուղարկված մի ուրիշ փաստաթղթում, միջոցառումների և «հրամանների չարաշահումները և անհամար սանձարձակություններն են, ազգայնականության, թուրքականության, թուրանականության, ազգայնամոլության, ինչպես նաև պատերազմական իրավիճակում թուրքերի, քրդերի և մահմեդական ուրիշ ցեղերի ռազմատենչ և կողոպտիչ, վայրենի կրքերն ու բնազդներն են»[123]:

Քաղաքական որոշ գործիչներ և դիվանագետներ նաև այն կարծիքն են հայտնել, թե հայերի բնաջնջման գործում երկրորդական դեր չխաղաց իթիհադի կենտրոն- վալիներ առանցքը:

120 Բեյլերյան Ա. նշվ. աշխ., փ. թ. 318:
121 "Osterrech -Armenien", BdVI, 1914-15, s. 4612:
122 Ն.տ. էջ 4754:
123 Ն.տ. էջ 4789-4790:

Երիտթուրքերի շարքերից առաջ քաշված «վալիներն ու մութասարիֆները կատարում էին միայն այն կարգադրությունները, որ ստանում էին կոմիտեից, այլ ոչ թե կառավարությունից»[124]:

Ռենե Պինոն գտնում է, որ հայերի «բնաջնջումը սոսկ մի մասն է այն ընդհանուր ծրագրի, որով համագերմանականությանը խանգարող բոլոր ազգերը պիտի վնասազերծվեին»[125]:

Հարկ է նշել, որ այն տարիներին Կ. Պոլսի ղեկավար շրջաններում ձևավորված էր համոզմունք, ինչը նրանք մեծ եռանդով տարածում էին, թե հայերը նախապատրաստվում էին թոթափել թուրքական լուծն ու անցնել Ռուսաստանի տիրապետության տակ: «Էքստրաբլատեդ» թերթը 1915թ. հոկտեմբերի 14-ին տպագրեց երիտթուրքերի կենտկոմի անդամ, ծագումով եգիպտացի Ռիֆաթի հարցազրույցը, որում ասված էր. «Թուրքիայի ամբողջ հայությունը դավադրություն էր պատրաստել... Պոլիսը գցելու դաշնակիցների ձեռքը»[126]:

Ադանայի վալի Հագը մի քանի անգամ պահանջեց, որ ոստիկանությունը ձերբակալի «ՀԲԴ Ադանայի վիլայեթի ղեկավարներին և երևելի ուրիշ հայերի, գտնված լուսանկարի համար, որը պատկերում էր մի խումբ հայերի զենքերի հետ և նոր ձերբակալվածների անուններն ավելացնելով նախապես աքսորված ուրիշ հայերի ցուցակին, ներկայացրին կուսակալության կենտրոնին»[127]:

Թուրք դիվանագետներից Էդմը Բեռլինում հայտարարեց (01. 10. 1915). «Մինչև այս տարվա գարունը հայերի և թուրքերի միջև պահպանվել էին լավ հարաբերություններ... Շրջադարձը տեղի ունեցավ ապրիլին, երբ դեպի Ադրբեջան թուրքական բանակի առաջանալու ընթացքում հայերը խռովություն բարձրացրեցին, որի ընթացքում սպանվեց ոչ պակաս, քան 180. 000 մահմեդական: Զարմանալի չէ, որ մահմեդականները դրա համար վրեժխնդիր եղան: Հայերի հեռացնելը երկրի խորքերը անհրաժեշտ էր ռազմական պատճառներով և բխում էր Թուրքիայի գոյատևման շահերից»: Հայերի վրա հարձակումները «կենտրոնական կառավարության հավանությանը չէին արժանացել»[128]:

Էնվերի հնարած այս թիվը հետագայում հերքվեց Վանում և Վասպուրականում գտնված օտարերկրացիների ու նաև որոշ թուրք պատմաբանների կողմից: Պարզապես մահմեդականները Վանից հեռացել էին ավելի վաղ, քան ռուսական զորքերը տեղ կհասնեին: Ինչ վերաբերում է հայերին, ապա նրանք մահմեդականների վրա ոչ միայն ձեռք չէին բարձրացրել, այլև օգնել էին նրանց: Փաստերը, որ օգտագործված էին նման հրապարակումներում, վերաբերում էին ոչ թե միայն հայերին, այլև արաբներին: «Թանին» թերթում տպագրված «Քաղաքական մի կուսակցություն» հոդվածում, որը վերաբերում էր իթիլաք կուսակցության հակակառավարական գործունեությանը, այն անվանած էր դավադրություն, որն «իր մեջ էր առել Թուրքիայի բոլոր հայերին»[129]:

Անդրադառնալով «Հայկական հեղափոխության» վերաբերյալ հերյուրանքներին, Լեփսիուսը գրում է. «Արդյո՞ք կանայք, երեխաները, հիվանդներն ու ծերերը, որոնք մնացել էին գյուղերում ու քաղաքներում, կամ փոքրաթիվ արական բնակչությունը, որ փրկագին էր վճարել, կամ զինվորական ծառայության համար անընդունակները, որ չէին զորակոչվել, պիտի կարողանային ինչ-որ հեղափոխություն մեջտեղ բերել: Դա ակնհայտ խենթություն էր լինելու»[130]:

Լեփսիուսը գտնում էր, որ արևմտահայության միջավայրում միայն երկու ուժեր կային, որոնք ի վիճակի էին հեղափոխությունը նախապատրաստել և ղեկավարել՝ պատրիարքարանը և ՀԲ Դաշնակցությունը: Պատրիարքարանն իր կառուցվածքով, սկզբունքներով (Ազգային ժողովը, փաստորեն, կազմված էր Կ. Պոլսի Հայ հասարակության վերնախավից)՝ պահպանողական էր, պատրիարքներն «ավելի շատ օսմանյան պաշտոնատարների նկարագիր ունեին, քան իրենց ազգի ներկայացուցիչների», իսկ Ազգային ժողովը շատ հաճախ էր հայության ազգային շահերը զոհաբերում օսմանյան պետական համակարգի հետ իր հարաբերությունները չվտանգելուն:

124 Ն.տ. "Osterrech -Armenien", BdVI, 1914-15, s.4818-4824.
125 Ն.տ., BdVI, 1916-17, s.5173-5174.
126 Լեփսիուս Ցո. նշվ. աշխ., էջ 112-113:
127 Ղազարեան Հ. Ցեղասպան Թուրքը, էջ 182:
128 PA/AA/ R 14088, փաստ. թիվ 178:
129 Լեփսիուս Ցո. նշվ. աշխ., էջ 113:
130 Ն. տ., էջ 117:

Ինքը՝ Զավեն պատրիարքն առաջին պլանին էր դնում պատրիարքարանի ոչ թե քաղաքական, այլ եկեղեցական դերը. նրա ուղեղում չէր տեղավորվում, որ պատրիարքը պետք է իր հավատացյալներին գրգռեր իշխանությունների դեմ: «Դիմել է ամեն տեղ, ինչն իր իրավասության մեջ էր, ցավով ու աղաչանքով նախարարներին բացատրել իր ժողովրդի դժբախտ կացությունը, մինչև որ դռները փակվել են նրա առաջ»: Պատրիարքը ոչինչ չարեց անապատ քշված իր հոտի հետ աշխատելու ուղղությամբ և, ինչպես գրում է Լեփսիուսը, դարձավ «իր ժողովրդի բնաջնջման, պատրիարքարանի իրավունքների վերացման» և արևմտահայության «եկեղեցական կազմակերպության ոչնչացման անտարբեր վկան»[131]:

Լեփսիուսը հիանալի է ներկայացնում նաև ՀԲ Դաշնակցության խաղացած դերը, այդ կուսակցության դեգրադացիան: Նա զարմանքով է նշում, թե չնայած բազմաթիվ հուսախաբություններին, դաշնակցությունը մնաց լծված երիտթուրքերի կառքին: «Ոչ Տրիպոլիսի, ոչ էլ Բալկանյան պատերազմներում դաշնակների մտքով իսկ չանցավ օգտվելու կայսրության տկարությունից հօգուտ հայ ժողովրդի»: ՀԲԴ-ն առաջին աշխարհամարտին արևմտահայության մասնակցության օգտին գործեց վստահությամբ, թե իր «ուղղամտությունն ու հավատարմությունը, որոնց ապացույցները տվել էին ավելի քան յոթ տարի, վերջապես պտուղ էին տալու»[132]:

ՀԲԴ Էրզրումի համագումարը (1914թ. հուլիս-օգոստոս) նույնպես որոշեց «անկեղծ լինել Օսմանյան կայսրության հանդեպ և զենքը ձեռքին պաշտպանել Թուրքիայի անկախությունն ու վեհապետությունը... գտնելով, որ «հայ ազգաբնակչության ապագան լավագույնս ապահովված էր Թուրքիայում, քան Ռուսաստանում»: ՀԲԴ-ն գտնում էր. «Ոչ մի ազգ այնքան շահագրգռված չէ Թուրքիայի գոյությամբ, որքան հայ ազգը... Հայերը ստիպված պիտի լինեին մի նոր Թուրքիա հնարել, եթե այն գոյություն չունենար՝ որպես հենակետ ընդդեմ Ռուսաստանի տարածմանը»[133]:

Լեփսիուսը, առանց երկմտելու, ամենայն որոշակիությամբ գրում է, որ ՀԲԴ «ծրագիրը և երիտթուրքերի հանդեպ վերաբերմունքը, որը բխում էր այդ ծրագրից, անգամ մինչև հայերի բացահայտ ձերբակալությունների և նրանց ղեկավարների տարագրությունների օրը, դաշնակցականների համար եղել են չփոփոխվող ուղղություն սեփական նկատառումներում և գործողություններում»[134]:

Այս համագումարից հետո իթիհադը բացահայտ քայլեր կատարեց ՀԲ Դաշնակցության դեմ: Թալեաթը թույլ չտվեց «իր բարեկամ» Ակնունուն, ինչպես նաև Ռոստոմին և Վռամյանին, հեռանալ Կ. Պոլսից: Կ. Պոլսից թույլ չտվեցին հեռանալ նաև Շահրիկյանին, «Թուրքերն ուզում էին, որ դաշնակցական ղեկավարներն իրենց ձեռքի տակ լինեին»: Ինչ վերաբերում է այնքան թմբկահարվող Դ. Բաստերմաջյանի վարքագծին, ապա, Լեփսիուսի խոսքերով, նա «այն աստիճան վախեցավ անարդար անվստահության նշաններից, որ օգոստոսի վերջին... վերադարձավ Կովկաս, որտեղ ուներ տուն և գործարաններ...»: Չնայած այդ հակառուս գործիչը նեղ պահին ապավինեց ռուսներին, բայց «երբեք ոչ մի գնդակ չարձակեց» Թուրքերի դեմ: Թուրքիային ՀԲԴ հավատարմության արտահայտության ևս մի փաստ. քրդերը ռուսների կողմից կաշառված էին և հայերին առաջարկեցին միացյալ ուժերով դուրս գալ Թուրքերի դեմ: Ընդ որում նրանք հայերին առաջարկեցին զենք տալ քրդերին: Սակայն ՀԲԴ այդ երկու առաջարկությունն էլ մերժեց, որովհետև չէր «ուզում խառնվել Թուրքիայի դեմ որևէ վատ արարքի կամ դավաճանության»[135]:

1914թ. հոկտեմբերի 23-ին ՀԲԴ Արևմտյան բյուրոն կոչ հղեց օսմանաբնակ հայերին՝ համերաշխվել մահմեդականների հետ: «Ընդհանուր կարգին ու անվտանգությանն օգնելու համար անհրաժեշտ է չեզոքացնել որևէ ափթ, որ կարող է միջադեպեր կամ քաղաքական թյուրիմացություններ առաջացնել զանգվածների շրջանում»[136]:

Լեփսիուսն այնուհետև ներկայացնում է ՀԲԴ-երիտթուրքեր հարաբերությունների զարգացման դինամիկան: «Մինչև ընդհանուր տարագրության օրը կուսակցության Կ. Պոլսի գրասենյա-

131 Լեփսիուս Ցո. նշվ աշխ., էջ 121:
132 Ն. տ., էջ 118:
133 Ն.տ ., էջ 122:
134 Ն. տ.:
135 Ն. տ., էջ 124:
136 Ն. տ.:

կի գրագրությունը ցույց է տալիս, որ ՀՅԴ-ն հավատարիմ էր մնացել և առանց սայթաքելու գտնվել է ուղիղ ճանապարհի վրա: Երիտթուրքական կոմիտեի հետ հարաբերությունները տարբեր տեղերում խզվում էին, բայց զարմանալիորեն նորից վերականգնվում էին: ՀՅԴ շարքերում սկսեցին անհանգստություններ արտահայտվել, թե գավառների պղտոր կացությունը և կառավարության համախալամական ձգտումները կարող էին պատրվակ հնարել ազգաբնակչության դեմ մի նոր գրոհի համար: Աճող սրտնեղությամբ արձանագրվում էին այն ախտանիշները, որոնք, թվում էր, արդարացնում էին երկյուղները և գործի էին դրվում բոլոր միջոցները կառավարությանը համոզելու, որ դաշնակցականները հավատարիմ են»: Սակայն դա կույր հավատարմություն էր, որն արդեն ջղագրգիռ էր դարձնում երիտթուրքերին, քանի որ հակասում էր նրանց ծրագրերին: Կատարվածը Լեփսիուսը նմանեցնում է մի փոքրիկ քարի, որը «պոկվում է ձյունածածկ բարձունքից ու գնդակի նման գլորվում, մեծանում է և մի ահագին ձյունազանգված դարձած հարձակվում հայ ժողովրդի վրա և ադետի մեջ թաղում գյուղերը, քաղաքները, կալվածքները, քաղաքակրթությունը, մարդկային կյանքերը»[137]:

Դաշնակցությունն այդպես էլ չէր ուզում հավատալ, որ գավառներում տեղի ունեցող խժդժությունները հրահրվում էին Կ. Պոլսի կողմից, որ դրանց հեղինակները իշխանություններն էին: Անգամ ապրիլյան ձերբակալություններից հետո, մայիսի 1-ին Վարդգեսը գրում է իր կուսակցական ընկերներին. «Ամեն ինչ անում ենք կառավարությանը համոզելու, որ անջատվելու որևէ ձգտում չունենք և ոչ մեկի վեհապետությունը չենք ուզում, բացի սուլթանի իշխանությունից: Պարզորոշ տեսնում ենք, որ կառավարությունը չի համոզվում, այլ կարծում է, թե մենք իր դեմ հեղափոխական շարժում ենք կազմակերպել և մենք իր թշնամիներն ենք... Վանի և Սեբաստիայի (Շապին Կարահիսարի) դեպքերը կառավարությանը թյուրիմացության մեջ գցեցին. թվում է, թե նա վախենում է ընդհանուր ապստամբությունից... Ոչ մի կերպ չենք կարողանում համոզել, թե ինչ տեղի է ունենում երկրի խորքերում, հետևանք է տեղական պաշտոնեության վատ ղեկավարության»[138]: Թալեաթը մի շարք անգամներ հայտարարել էր, թե հայերը տարագրվելու էին, որովհետև ինքը ձեռքի տակ ունի ՀՅԴ հեղափոխական ծրագիրը, սակայն այն այդպես էլ ոչ ոքի ցույց չտվեց, իսկ երբ մայիսի 12 -ին Վարդգեսը մի անգամ էլ խնդրեց, որ ծրագիրը ցույց տա, Թալեաթը ոչ միայն չմերժեց, այլև սպառնաց: Այդ նույն պահին 15 ժանդարմ խուզարկում էր Վարդգեսի բնակարանը:

Փաստերն ու տրամաբանությունն ամենայն որոշակիությամբ հաստատում են, որ ոչ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանն ու հոգևորականությունը, և ոչ էլ ՀՅ Դաշնակցությունը մտադրություն իսկ չեն ունեցել և ի զորու չէին հեղափոխություն կազմակերպել: Միանգամայն իրավացի է Լեփսիուսը, երբ գրում է. «Իրադարձությունների պատմությունը ոչ մի տեղ չի հաստատել, թե հայերը սեփական վարմունքով արժանի են եղել իրենց ցեղի բնաջնջմանը, կամ թե պատճառ դարձել, ինչ ձևով էլ այդ արտահայտվեր, իրենց դեմ ընդհանուր միջոցառումներ կիրառելուն»[139]:

Թուրքական քարոզչության մեջ մեր օրերում առաջնային տեղ են գրավում այն «մեղադրանքները», որ ներկայացվեց հայերին Անտանտի տերությունների 1915թ. մայիսի 24-ի հայտարարությունից հետո և որոնք նույնպես տարածվեցին «Վոլֆ» գործակալության միջոցով, դրանք կոչված էին ժխտելու տերությունների հայտարարությունում ամփոփված դրույթները, միաժամանակ մեղադրանք ներկայացնելու ոչ միայն տերություններին, այլև հայերին: Փաստական առումով դրանք աղքատիկ էին, ստաբար: Գրեթե բոլոր հայտարարություններում օգտագործվում էին նույն «մեղադրանքները», թվով յոթը: Ահա դրանք՝ երկու հայեր՝ Թորոս և Հակոբ անունով, Կիլիկիայում գնացքներ էին գծից հանում, անգլիական և ֆրանսիական նավերի հրամանատարները հարաբերության մեջ էին ծովափնյա շրջանների հայերի հետ, Զեյթունի հայերը դիմադրություն ցույց տվեցին իշխանություններին, չորս հայեր մինչև աշխարհամարտը մասնակցել էին թուրքական ընդդիմադիր կուսակցությունների կողմից պլանավորված դավադրության նախապատրաստությանը, Վանի և Վասպուրականի մի քանի գավառների հայերը «ոտքի էին ելել զենքերը ձեռքին», Շապին Կարահիսարի 500 հայեր գրավել էին միջնաբերդը և վերջապես նորից Արմեն Գարոն: Եթե անգամ այս բոլոր յոթ մեղադրանքները համապատասխանեին իրականությանը, ապա

137 Լեփսիուս Յո. նշվ. աշխ., էջ 125:
138 Ն. տ., էջ 132:
139 Ն. տ., էջ 135:

այդ դեպքում ևս լուրջ չէր հայերին մեղադրել Թուրքիայի դեմ ապստամբության դիտավորության մեջ և դրանով հիմնավորել ու «արդարացնել» մի ամբողջ ժողովրդի ոչնչացումը:

Հայոց ցեղասպանության պատճառների մասին խոսելիս չի կարելի աչքաթող անել թե ջարդող և թե ջարդվող ժողովուրդների ազգային բնավորությունը (մենտալիտետը): Քիչ ժողովուրդներ են ի վիճակի, առանց լուրջ դիմադրություն ցույց տալու ջարդերին, և առավել ևս, մեծ չէ նրանց թիվը, ովքեր ձեռք են բարձրացնում իրենց նման հավաքականությունների վրա: Լեփսիուսը զարմացած գրում է, որ Թուրքիայում «դրամ, անասուն, ցորեն, հող, կին կամ դուստր ունենալը բավական է, որ թշնամի ունենաս: Մենք ցնցվեցինք, երբ կարդացինք վայրենի քրդերի գազանությունների մասին, ովքեր ասպատակում էին գյուղերը, հարձակվում տների վրա, թալանում հայերի ոչխարները, հափշտակում ունեցվածքը, պատվազրկում կանանց և հանգիստ խղճով վերադառնում տուն՝ գիտակցությամբ, թե այդ օրը լավ գործ է արել... Բայց որքան էլ արգահատելի հնչի այդ ամենը, դրանք օրհնանք են համեմատած թուրքական գործելակերպի հետ, այն հիմնվում էր օրենքի ուժի և բանտային սարսափի վրա: Հայ մարդը, որն աղքատության և սովյալ վիճակի պատճառով չէր կարողանում վճարել հնարված հարկը և հրաժարվում էր զրկվել իր կովից կամ գոմեշից՝ դրանք նվիրել զաբթիեին և աղաչում, խնդրում էր խնայել իր կնոջ կամ աղջկա պատիվը, նմաններին նետում էին զնդան, որտեղից այլևս դուրս գալ չէին կարող»: Այդպես էր. Օսմանյան կայսրության ձևավորման առանձնահատկությունները, կայսրության հպատակ ժողովուրդների հանդեպ դարերով ձևավորված արհամարհանքն ու ատելությունը, իսլամական այլակրոն անհանդուրժողականությունը և այլն հոգեբանական-քաղաքական առումով երկրորդական դեր չեն խաղացել թուրքերի ցեղասպան բնավորության ձևավորման գործում:

Պատմագրության մեջ պատշաճ ուշադրություն չի դարձվում ցեղասպանության սոցիալ-տնտեսական պատճառներին և կայսրության ազգային կազմի առանձնահատկություններին: Սովորաբար գաղութատիրական պետություններում մետրոպոլիաների ազգությունները իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման մակարդակով բարձր են եղել գաղութների ժողովուրդների զարգացման մակարդակից: Օսմանյան կայսրությունը բացառություն էր կազմում: Բացի այդ, եվրոպական բազմազգ պետական միավորումները գաղութատիրական դասական երկրներ էին, իսկ Օսմանյան կայսրությունում գաղութային տարածքները մտած էին Թուրքիայի վարչատարածքային ընդհանուր կառուցվածքի մեջ և կայսրությունը դիտվում էր որպես տարածքային ամբողջություն, ինչը հակադրության մեջ էր նույն այդ կայսրության էթնիկական կազմի բազմազանության հետ: Ընդ որում այդ բազմազանությունն արտահայտվում էր ոչ միայն կայսրության տարածքները զբաղեցրած ժողովուրդների ազգային, այլև կրոնական զարգացման մակարդակների խայտաբղետության մեջ:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին կայսրությունը զբաղեցնում էր 2 միլիոն քառ. կմ տարածք 28 միլիոն բնակչությամբ: Մոտավոր տվյալներով թուրքերեն խոսողների թիվը հասնում էր 9 միլիոնի, որից թուրքեր էին 7 միլիոնը: Ալբաներեն խոսում էր 10 միլիոն մարդ, բոլորն էլ արաբներ: Ավելի քան 2 միլիոն հոգի խոսում էր քրդերեն: Մահմեդական էր 21 միլիոն, իսկ քրիստոնյա՝ մոտ 6 միլիոն հոգի: Եթե մահմեդականների ճնշող մեծամասնությունն արաբներն ու թուրքերն էին, 17 միլիոն մարդ, այսինքն՝ կայսրության բնակչության 2/3-ը, ապա քրիստոնյա բնակչությունը կազմված էր ազգային ոչ մեծ հավաքականություններից՝ հայեր, հույներ, սիրիացիներ, քաղդեացիներ և այլն: Թուրքերը հիմնականում բնակվում էին Եփրատից արևմուտք՝ Անատոլիայի հյուսիս-արևմտյան շրջաններում, իսկ Եփրատից արևելք՝ հայերն ու քրդերն էին: Անատոլիայում բնակչության խտությունը մեկ քառ. կմ վրա տատանվում էր 10-50 մարդու միջև, իսկ Արաբիայում այն նույնիսկ մեկ մարդ չէր կազմում: Թե պատերազմի նախօրյակին ինչպիսին էր կայսրության ժողովուրդների թվական կազմը, հստակ նշել հնարավոր չէ, քանի որ ճշգրիտ մարդահամարի բացակայության, ինչպես նաև քաղաքական պատճառներով բնակչության թվական կազմը մշտապես ներկայացվել էր աղավաղված: Այսպես, պատրիարքարանի տվյալներով հայկական վեց նահանգներում 1912թ. բնակվում էր 1.018 միլիոն, իսկ թուրքական վիճակագրության տվյալներով՝ 666 հազ. հայ (նահանգների ամբողջ բնակչությունը նշվում է 2. 615 միլիոն, որից քրդեր՝ 424 հազ. մարդ): Իրականում այդ նահանգների բնակչության 38.9%-ը հայ, 26.5%-ը՝ քուրդ և 25.4%-ը թուրք էին[140]:

140 Մորգան Ժաք դը Հայ ժողովրդի պատմութիւն. իր տարեգրութեան ամենաստոյգ ժամանակներեն մինչև մեր օրերը, Բոստոն, 1947, էջ 350-352:

Սակայն պաշտոնական աղբյուրներում, այդ թվում նաև մարդահամարի նյութերում, ազգային փոքրամասնությունները չէին առանձնացվում: Ուծացման բազմադարյան քաղաքականության պայմաններում ազգային փոքրամասնությունների լեզուներով խոսողների թիվը, որպես կանոն, զգալիորեն փոքր էր Թուրքերի թվից. բացի դա, լեզվի մասին տեղեկատվություններում չէր թույլատրվում առանձնացնել թուրքական խմբի ժողովուրդներին, որոնք խոսում էին թուրքերեն և դրան մոտ լեզուներով: «Թուրքերը ... ձևավորվել են երկու հիմնական էթնիկական կոմպոնենտներից՝ թուրքական (օղուզական) քոչվոր ցեղերից, որոնք Անատոլիայում (Փոքր Ասիայում) սկսել են բնակություն հաստատել XI-XIII դարերում այստեղ բնակվող ժողովուրդների (հույներ, քրդեր, հայեր, վրացիներ և այլն) թուրքացման միջոցով: Թուրքերի կազմում կան մի քանի ազգագրական խմբեր, որոնք մասամբ պահպանել են քոչվոր և կիսաքոչվոր ապրելակերպը՝ յուրյուկ, թախթաջի, ագդալի: Այս խմբերից ամենախոշորը՝ յուրյուկները (300-500 հազ. մարդ) այսօր էլ բնակվում են Թուրքիայի արևմտյան և հարավ-արևմտյան լեռնային շրջաններում: Թուրքերից մշակույթով առանձնանում են նաև կզլբաշները, որոնք մահմեդականության շիիթական թևին են պատկանում և, այսպես կոչված, մուհաջիրները (Հունաստանից և Բալկանյան մյուս երկրներից, ինչպես նաև Կովկասից եկած թուրքացող գաղթականները): Երկրի մյուս թուրքալեզու ժողովուրդներից ամենախոշորը թուրքմեններն են, որոնք Անդրկասպիայից XIII-XIV դարերին Թուրքիա թափանցած քոչվորների ժառանգներն են: Նրանք տեղաբաշխված են ոչ մեծ խմբերով Էրզրումի, Արդվինի և Կարսի վիլայեթներում, թուրքերի հետ խառն են ապրում ու արագորեն ձուլվում են: Կարափափախները (լեզվով մոտ ադրբեջանցիներին) Օսմանյան կայսրությունում վերաբնակվել են 1826-28թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, նրանք հաստատվել էին Կարսի վիլայեթի արևելյան շրջաններում և ընդհանրապես Թուրքիայի հյուսիս-արևելյան ծայրամասում: Թաթարները Թուրքիայում վերաբնակվել են XVIII դարի վերջին: Թաթարների մեծ մասը ձուլվել է, նրանց փոքր խմբեր պահպանվել են հարավ-արևելյան ծայրամասում, Վանի ու Հաքյարիի վիլայեթներում:

Մերօրյա Թուրքիայում մեծ զանգվածներով բնակվում են քրդեր, հիմնականում արևելյան նահանգներում: Նրանք ազգաբնակչության մեծամասնություն են կազմում Հաքյարիի, Վանի, Բիթլիսի, Սղերդի, Մարդինի, Ուրֆայի, Դիարբեքիրի, Մուշի, Աղբրի, Թանզելիի վիլայեթներում: Քրդերը հիմնականում բնակվում են գյուղերում: Քրդական բնակչություն կա նաև երկրի կենտրոնական մասում, Սրվազից արևելք, Ամասիայից հարավ, Անկարայում, Կ. Պոլսում և մյուս խոշոր քաղաքներում: Թուրքական շրջաններում քրդերը բռնի վերաբնակեցվել են XX դարի առաջին տասնամյակներին՝ արագ թուրքացնելու նպատակով:

Արաբները բնակվում են Թուրքիայի հարավային և հարավ-արևելյան մասում Սիրիայի սահմանի վրա: Մինչև առաջին համաշխարհային պատերազմը Իրանի և Իրաքի սահմանամերձ շրջաններում բնակվում էր 750 հազ. ասորի, որոնց մեծ մասը ոչնչացվեց, իսկ մնացածները փախան այլ երկրներ: Որոշ թվով ասորի մնացել է Դիարբեքիր, Մարդին, Նուսայբին և Ուրֆա քաղաքներում»[141]:

XX դարի սկզբին Թուրքիայում հաշվվում էր 1.5 միլիոն հույն: Նրանց մեծամասնությունը երկրից հեռացավ 1919-1922 թթ.: Հույները ևս մի քանի անգամ ենթարկվել են կոտորածի: Ներկայումս որոշ թվով հույներ բնակվում են Ստամբուլում և Զմանկը վիլայեթում, որի Իմթոզ և Բոզջահադա կղզիներում մեծամասնություն են կազմում: Նախկինում Թուրքիայում կային նաև վրացիներ (գյուրջի), հիմնականում աջարներ, ինչպես նաև լազեր, սակայն նրանցից շատերը ձուլվեցին՝ կորցրին մայրենի լեզուն: Աջարները բնակվում էին Ճորոխ գետի և Քուռի վերին հոսանքի հովիտներում: Նրանցից շատերը հետագայում քշվեցին երկրի խորքերը: Լազեր կան Տրապիզոնի, Ռիզեի և Արդվինի մերձակայքում՝ Սև ծովի ափերի երկայնքով:

Արդեն ասվել է, որ «չերքեզ» անվան տակ Թուրքիայում միավորված են հյուսիս-կովկասյան ժողովուրդները, որոնց նախնիները XIX դարում եկել էին Ռուսաստանից: Դրանք են ադիգեյները, կաբարդիները, ուբիխները, ինգուշները, չերքեզները, չեչենները, օսերը, լեզգիները և այլն: Թուրքիա գնացին այդ ժողովուրդների մոտ մեկ միլիոն ներկայացուցիչներ, սակայն թուրքական

141 Брук С.М. Население мира, Москва, 1986, стр. 540-544.

իշխանությունների ձուլման քաղաքականության, կանանց հարեմները լցնելու և չերքեզական ռազմական միավորումներ կազմակերպելու հետևանքով կովկասյան ծագում ունեցող ժողովուրդների թիվը կրճատվեց:

Թուրքերը 1914-1922թթ. ոչնչացրեցին 1.5 միլիոն հայ: Մոտ կես միլիոն հայ անցավ Ռուսաստան, Մերձավոր Արևելքի, Եվրոպայի և Ամերիկայի տարբեր երկրներ: Պաշտոնական տվյալներով՝ 1923թ. Թուրքիայում բնակվող հայերի թիվը չէր անցնում 100 հազարից: Նշված թվերը համընդհանուր ճանաչում ունեն: Նույն աղբյուրների տվյալներով ցեղասպանության երկրորդ և երրորդ շրջաններում (1914-23) թուրքացվել և քրդացվել էր 200 հազ. հայ:

Թույլ եմ տալիս կասկածի տակ առնելու, մասնավորապես, Թուրքիայում ապրող մնացած հայերի, նշված թվերի ճշտությունը: Հայ քարոզչությունը, պատմագրությունը բնականաբար կենտրոնանալով բնաջնջված հայերի թվի վրա, ուշադրությունից դուրս թողեց Թուրքիայում կենդանի մնացած հայերին: Մենք պարզապես ընկանք թուրքական սահմանադրության ծուղակը, որը հռչակում է, թե Թուրքիայում բնակվում են թուրքեր, այսինքն՝ Թուրքիայում բնակվողները, անկախ ազգային պատկանելությունից, բոլորը թուրք են: Եվ եղեռնից փրկված թուրքաբնակ հայը հենց այնպես մեխանիկորեն դարձավ թուրք: Մենք էլ լուռ համաձայնությամբ օրինականացրինք հայերի թուրքացումը:

Վերցնենք Սասունի օրինակը: Ռուս զինվորականների վկայություններով կոտորածներից հետո, երբ ռուսական զորքերը մտան Բիթլիս և Մուշ քաղաքները, Սասնո լեռներից իջավ 12 հազ. հայ, որից շուրջ 4 000-ը բնիկ սասունցիներ էին: Եթե ընդունենք, որ մինչ այդ հաստատել էին Սասունից հեռանալ շուրջ 2 000 հայ, ապա կստացվի, որ կոտորվել էր սասունցիների 50%-ը: Դեռ ավելին, սկսած 1920-ական թվականների վերջերից սասունցիներն ընտանիքներով կամ խմբերով իջնում էին Դիարբեքիր, որոշ ժամանակ անց մեկնում Կ. Պոլիս, իսկ ապա՝ արտասահման: Սասունցի «քուրդ-հայերի» այդ դանդաղ արտագաղթը տևել է տասնամյակներ: 1970-ական թվականների սկզբներին բեյրութահայ լուսանկարիչ Հ. Շիրազը Սասունից վերադառնալուց հետո հավաստիացնում էր, որ լեռնաշխարհում շարունակում է բնակվել ավելի քան 1 500 հայ: Նրանք հայ չեն կոչվում, խոսում են քրդերեն, բայց նաև Շիրազին խնդրել են իրենց անունից «կաթողիկոսին աղաչել, որ եթե ոչ իրենց, ապա երեխաներին տեղափոխի, փրկի, որովհետև քրդանում են»: Եթե նկատի առնվի նաև խառն ամուսնություններն ու այդ ընտանիքներում ծնվածներին, ապա նմանների թիվը Մուշ քաղաքում մոտենում էր 4000-ի, իսկ Սասունում նրանք կազմում էին բնակչության 1/3-ը: Հավանաբար նման վիճակ է եղել ոչ միայն Մուշում և Սասունում: Երբ ռուսական զորքերն ազատեցին Երզնկան, հենց առաջին օրը նրանց շուրջը հավաքվեց մոտ 1 500 տեղացի հայ: Հետևաբար պնդումը, թե Մեծ եղեռնով Հայկական հարցը դադարեց գոյություն ունենալուց, որովհետև Թուրքիայում այլևս հայ չկա, սխալ է: Թուրքիայում հայ կար և այսօր էլ կա:

Ովքեր են ամերիկաբնակ, ֆրանսաբնակ և այլ երկրներում ապրող հայերը, եթե հավատանք անձնագրային տվյալներին՝ ամերիկացի, ֆրանսիացի և այլն: Միթե ակնհայտ չէ, որ աշխարհի շատ երկրներում հրեաների թիվը բազում անգամներ ավելի մեծ է, քան փաստաթղթային գրանցումներով նշվածները: Շատ երկրներում անվտանգության մարմինները քրտնաթոր աշխատանք էին կատարում տվյալ երկրում բնակվող հրեաներին հայտնաբերելու համար: Կասեն, թե հրեաների խնդիրն ուրիշ է՝ նրանք որտեղ էլ լինեն, մնում են հրեա, չնայած շատերը թաքցնում են իրենց ազգությունը: Համաձայն եմ: Բայց ո՞վ է Թուրքիայում մնացած «թուրք կամ քուրդ դարձած» հային, նրա ժառանգներին հարցրել, թե նրանք ազգությամբ ով են և ցանկալի պատասխան չի ստացել: Տողերիս հեղինակը փորձեր կատարել է: Նման դեպքերում թրքաբնակը վախվորած շուրջբոլորն էր նայում ու ապա չչնչում. «Հա, հայ եմ» կամ «Մայրս է հայ», «Տատս է հայ» և այլն: Այն կարծիքին չեմ, թե գործնական քաղաքականության առումով այս հարցադրումը կարող է լուրջ հեռանկարներ բացել, սակայն անպայման մի կոմսորոշում կթելադրի՝ անզգուշությամբ ձեռք թափ չտալ, այլ պայքարել հայրենիքից դուրս բնակվող ամեն մի հայի հայ մնալու համար: Այս խնդիրը գնալով առանձնահատուկ նշանակություն է ստանում, քանի որ հայության 2/3-ը բնակվում է Հայաստանից դուրս:

Թուրքերը կայսրությունում ոչ միայն փոքրամասնություն էին, այլև երկրորդական պլանին էին տնտեսական և մշակութային կյանքում: «Անգամ XIX դարի վերջերին և XX դարի սկզբնե-

րին Թուրքերն արտակարգ թույլ էին մասնակցում երկրում կապիտալիստական կացութաձևի զարգացմանը: Արդյունաբերության մեջ, բանկային գործում, ներքին և արտաքին ոչ մանրածախ առևտրում տիրապետողն օտար և այլազգի կապիտալիստներն էին»[142]:

Մ. Պավլովիչը նկատում է. «Դեռ մինչև իմպերիալիստական պատերազմն աճած և ամրապնդված Թուրքական առևտրական խոշոր բուրժուազիան կազմված է գլխավորապես հույներից, հայերից և լևանտացիներից»[143]:

«1915թ. ,- գրում է ազգբեջանական պատմաբան Խ. Դաբիդուլինը,- Օսմանյան կայսրությունում արդյունաբերական ձեռնարկությունների՝ տեքստիլ, սննդի, թղթի, փայտամշակման, կերամիկական և այլն, կապիտալի 50%-ը պատկանում էր հույն, 20%-ը՝ հայ, 5%-ը՝ հրեական բուրժուազիային»[144]:

1912թ. Թուրքիայի արդյունաբերության, արհեստների և առևտրի 50%-ը հույների ձեռքին էր: Նրանք էին կատարում ֆինանսական գործարքների 40%-ը: Երկրորդ տեղում էին հայերը՝ 26%, երրորդ տեղում հրեաները՝ 19%: Թուրքերը զբաղեցնում էին 4-րդ տեղը՝ 15%: Կայսրությունում աշխատող մասնագետների 86%-ը թուրք չէր: Թուրքիայի ներմուծման 60%-ը, արտահանման 40%-ը, ներքին առևտրի 80%-ը հայերի ձեռքում էր[145]:

Հայկական աղբյուրները բերում են հետևյալ թվերը՝ հայերի ձեռքում էր առևտրի 86%-ը, արդյունաբերության 69%-ը: Հայ էին արհեստավորների ու մանր առևտրականների 79% -ը[146]:

Հայ խոշոր առևտրական տներից ոմն ունեին նաև բանկեր, 44-ը վարկավորում էին զանազան ձեռնարկություններ, տեր էին խոշոր կալվածքների: Հայերը նշանակալից ներդրում ունեին լեռնային արդյունաբերության, հաղորդակցության միջոցների, նավահանգիստների շինարարության մեջ[147]:

Հայկական ջարդերի պատճառ է համարվում նաև այն, որ երիտթուրքական վերնախավը ձգտում էր հարստանալ հայերի ունեցվածքի հաշվին: Դեռ 1912թ. Տրապիզոնում Գերմանիայի հյուպատոս Բ. Պ. Թեքսյոնը գրել է. «... Երիտթուրքերի գրեթե բոլոր առաջնորդների... գլխավոր ձգտումն էր անձնապես հարստանալը»[148]:

Պատերազմի նախօրեին գերմանա-թուրքական բանակցություններում խոսքն ավելի շատ գնում էր ոսկու և փողի, քան հրացանի մասին: Պալավաչինին տեղեկագրեց. «...Ֆինանսների չափը մեծ դեր խաղաց» պատերազմի մեջ Թուրքիայի մտնելու գործում: 1914թ. հոկտեմբերի 11-ին Վանգենհայմը Թուրքիայի համար Բեռլինից պահանջեց. «Երկու միլիոն ֆունտ կանխիկ կամ ձուլված ոսկի»: Բեռլինը տվեց 20 մլն մարկ: Դրան Վանգենհայմը 15. 10. 1914-ին պատասխանեց. «Թուրքերը չեն հարվածի մինչև որ երկու միլիոն թուրքական ֆունտ (մոտ 40 մլն մարկ) այստեղ չլինի»: Դրանից մեկ միլիոն մարկը տրվելու էր կաշառք: Շատ ավելի մեծ էր ակնկալիքները ռազմամթերք ձեռք բերելու ֆինանսական հատկացումների գործում, ինչը հնարավորություն էր ստեղծում շորթումների ու յուրացումների համար: Օրինակ, միայն թնդանոթի պահեստամասերի համալրման համար պահանջվեց ևս 300 մլն մարկ: Բեռլինում մտածում էին, որ եթե պատերազմն ավարտվեր 1915թ. մայիսին, ամենամսյա նպաստները Թուրքիային կազմելու էին 500 000 թուրքական ֆունտ, բայց աշխարհամարտը տևեց մինչև 1918թ.: Արդեն 16. 08. 1916թ. գերմանական գործակալները հայտնեցին. «...Կոմիտեի մի քանի անդամներ անասանելիորեն հարստացել են բանակի համար նախատեսված պաշարները բնակչությանը վաճառելու միջոցով»: Այդ իրողությունն այնպիսի խայտառակ բնույթ ստացավ, որ «գերմանական դեսպանը երկու անգամ սպառնացել է մեկնել (Թուրքիայից)»: Մետեռնիխը 1916թ. աշնանը օսմանյան գործիչների առևտրական գործարքներն անվանեց. «Թալանի թուրքական համակարգ»[149]:

142 Миллер А. Ф. 50-летие младотурецкой революции, Москва, 1958, стр. 20.

143 Павлович М. П. О коммунистическом движении в Турции. См. "Коммунистический интернационал"/М.-Л./, 1921, N 17, стр. 422.

144 Габидуллин Х. З. Նշվ. աշխ., էջ 96:

145 Guttmann J. The beginnings of genocide> A brief account of the Armenian massacres in World War I, New York, 1948, p. 13.

146 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. Քաղվածքներ, գ. 3:

147 Բաբկեն Վրդ. նշվ. աշխ., էջ 26:

148 Գուստ Վ., նշվ. աշխ., էջ 226:

149 Ն. տ., էջ 227-228:

Լեփսիուսը գրում է. «... Երիտթուրքական կոմիտեի անդամները տարված էին միայն մի բանով՝ պատերազմն անամոթաբար օգտագործել անձնապես հարստանալու համար»: Նույն իրողությունը հաստատեց մի թուրք ռազմական դատարանում՝ իթիհադի ազդեցիկ անդամներն «իրականում զբաղված են լոկ հարստություն դիզելու մոլուցքով»: Ցուցացումներն հատկապես մեծ ծավալներ ձեռք բերեցին ռազմական նախարարությունում: Ի. Հագը ինքնաթիռներ գնելու համար նախատեսված գումարներն ուղղեց իշխող խավի գրպանները: Իսկ կրտսեր սպաները յուրացնում էին բանակայինների օրաբաժինները: Եվ քանի որ այլևս հայ չկար, որի հաշվին ապրեին, զինվորները մատնվել էին սովի: Սամսոնում գերմանացի փոխհյուպատոս Մ. Հեսսեն 1918թ. շրջագայելով նահանգներում, գրեց. «Տառապանքները տանում են հիմնականում համբերությամբ՝ ինչն արդար հատուցում է հայերի բնաջնջման համար»: Ա. Հեսի կարծիքով՝ կառավարող վերնախավի կողմից չարաշահումներն առաջացրել էին լայն զանգվածների զայրույթը[150]:

1914-1918թթ. Կ. Պոլսում գներն աճեցին 2000տոկոսով, իսկ շաքարինն ու թեյինը՝ 3000, նավթինը և մսինը՝ 4000 տոկոսով:

Անգլիայի նախկին դեսպանը իր կառավարությանը գրում է. «Ֆաբրիկատերերը տեսնում էին, թե իրենց շահույթներն ինչպես էին հոսում կոմիտեի անդամների գրպանները» և ընդվզում էին: Իթիհադի ղեկավարները թաքուն մենաշնորհներ էին վաճառում, որից ստացված գումարը հասավ 600-800 միլիոն մարկի: Ըստ Մ. Շյուքրիի խոստովանության, իթիհադի շորթումների ընդհանուր գումարը հասավ 12 միլիարդ մարկի: Նկատի ունենալով էնվերի շքեղ կենցաղը Հ. Մորգենթաուն գրում է. «... Որտեղի՞ց այդ մարդուն այդքան փող»[151]:

Դա, առաջին հերթին, հայերից խլված ունեցվածքն ու դրամն էր, ինչը հաստատեց նաև ռազմական դատարանի դատախազ Ռեշիդը. «... Կոմիտեն շահեց տեղահանման վերաբերյալ օրենքից՝ կոտորելով ու հայերի հաշվին հարստանալով»[152]:

18. 03. 1917-ին Պոնիանկովսկին հեռագրեց Վիեննա. «Մահմեդականների հայրենասիրական պարտքը բացեիբաց հռչակվել է՝ սուսուփուս հարստանալ քրիստոնյա գործարարների հաշվին»: 14. 09. 1916թ. Հ. Բերգֆելդը հայտնեց. «Թուրքական այն շրջաններում, ովքեր հայերի արտաքսումից մեծ գումարների էին տիրացել, նկատվում է նաև բոլոր հույներին արտաքսելու միտում, հույս ունենալով նույն կերպ պղտոր ջրում ձուկ բռնել»[153]:

«New York Times»-ը 06. 12. 1918թ. տպագրեց «Պատերազմի ընթացքում մահմեդականները դիզել են միլիոններ» վերնագրով հոդվածը, որում կարդում ենք. «Նախկինում որոշ թուրքեր երբեք այնքան հարուստ չեն եղել, որքան հիմա: Բերայում շարքային ոստիկանը ուներ 10-15 հազար ֆունտ: Հարստության կուտակումը Միություն և առաջադիմություն կոմիտեի ծրագրի մի մասն էր՝ թուրքերին հարստացնել քրիստոնյաների հաշվին»[154]:

Կ. Պոլսում գերմանական դեսպան Բեռնսդորֆը 09. 12. 1917թ. տեղեկագրեց. «Երիտթուրքերի ոսկեմոլությունը դաշնակիցներին վաղուց գլխի է գցել, որ տեղահանության հիմքում ընկած էին ոչ միայն ազգայնական պատճառները, այլև հարստանալը»[155]:

Պոնիանկովսկին իր 18. 03. 1917թ. ծածկագրում արտահայտվում է ամենայն որոշակիությամբ. «...Կառավարության ներքաղաքական բոլոր միջոցառումները, ինչպես օրինակ հայերի հալածանքը, թելադրված էին ղեկավար այրերի ընչաքաղցությամբ»[156]:

Կ. Պոլսում այս կարծիքները ոչ միայն չէին ընդունվում, այլև դրանց հեղինակները որոշակի վերաբերմունքի էին արժանանում, անգամ հալածվում: Մշտապես առաջին պլան էր մղվում պաշտոնական, երիտթուրք պարագլուխների վարքագիծը սրբագործող թեզը, նրանք հայերի

150 Գուստ Վ. նշվ. աշխ., էջ 228-229:

151 Ն. տ., էջ 230:

152 Ն. տ.:

153 Ն. տ.:

154 Ն. տ. էջ 230-231:

155 Ն. տ., էջ 231:

156 Ն .տ.:

բնաջնջումը վերագրում էին տեղահանության վատ կազմակերպմանը, ժխտում այն երիտթուրքերի կողմից կազմակերպված լինելը: Ազգային մեծ ժողովը 1919-ին տպագրեց մի գրքույկ պետության դեմ հայերի ընդհանուր ապստամբության մասին: «Այն բանից հետո,- կարդում ենք այդ գրքույկում,- երբ կայսրական կառավարությունը կարգադրեց անցկացնել զորահավաք, համապատասխան հրահանգներով և կոմիտեների ղեկավարությամբ, հայերը բազմաթիվ վայրերում ապստամբեցին... Ռուսական, անգլիական և ֆրանսիական ոսկով կաշառված քարոզիչ գործակալները, զորահավաքի սկիզբից ի վեր սփռվեցին նահանգները, որոնց հետևեցին Կ. Պոլսից և արտասահմանից ուղարկված բազմաքանակ հռչակագրերն ու հրահանգները»[157]:

Նման կարծիքի էին ոչ միայն շատ թուրքեր, այլ նաև եվրոպացիներ. «... Հայ կամավորներն անցնում էին թուրքական սահմանը զինվորագրվելու ռուսների կազմակերպած հայկական գումարտակներում: Պարտիզանները հաճախակի գրոհում էին զորամասերից հետ մնացած թուրքական զինվորականների ու գումակների վրա: Աչխատանքային պարհակից և զինծառայությունից հրաժարվելը համընդհանուր բնույթ էր կրում»[158]:

Անգամ Վանգենհայմն էր հավաստիացնում. «1908թ. իթիհադականների կողմից սահմանադրական վարչակարգ հաստատելուց հետո հայերը հրաժարվել են հեղափոխության գաղափարից... անհնար է, որ նման հեղափոխություն լիներ»[159]:

Թուրքերի կողմից ամենահաճախ հնչողը «հայերի դավաճանության» մասին «մեղադրանքն» է: Սակայն պարզից էլ պարզ է, որ արևմտահայ քաղաքական ու հոգևոր ուժերը հիմնականում կողմնակից էին չեզոքությանը և ոչ միայն: Նրանք հանդես եկան պատերազմի ժամանակ օսմանյան իշխանությունների հետ համերաշխ գործելու առաջարկությամբ՝ երիտթուրք- ՀԾԴ բանակցությունները Էրզրումում 1914թ. օգոստոսին, պատրիարքի բանավոր ու գրավոր հորդորներն արևմտահայությանը՝ «հավատարիմ ծառայել օսմանյան հայրենիքին»: Նաև իրականություն է, որ ՀԾԴ Արևմտյան բյուրոն հանդես եկավ կամավորական գնդերի կազմավորման դեմ: Այո, ռուսական բանակի շարքերում էին մեծ թվով զորակոչված հայեր (ավելի մեծ թվով հայեր զորակոչվել էին թուրքական բանակ) և կամավորներ: Բայց նման կացության մեջ էին ոչ միայն հայերը, այլև ադրբեջանցիներն ու քրդերը, որոնցից նույնպես մեծ թվով մարդիկ ռուսական բանակի կազմում կռվում էին թուրքերի դեմ: Իսկ հրեաները Դարդանելում էին կամավոր կռվում օսմանցիների դեմ: Քննադատության չի դիմանում նաև «վերաբնակեցման» մասին պնդումը: Ամերիկացի դիվանագետ Լ. Այնչտայնը դա որակավորում է «ցինիզմ»: Լ. Դեյվիսը տեղահանության նպատակը համարում է ոչնչացումը: Միջագետքում ծառայող մի թուրք գեներալ «տեղահանության տարբերակ» ասածը համարում է «հերյուրանք», որովհետև այն ձևով, ինչ այդ արեցին թուրքերը ոչ թե տեղահանություն էր, այլ ոչնչացում[160]:

1915թ. մարտի 15-ից ապրիլի 3-ը կայսրությունում տեղի ունեցածների մասին ռուսական գործակալը գրում է. «Ամբողջ երկրում տեղի են ունենում հայերի ձերբակալություններ... Մեթոդիկ կոտորածներ Էրզրումում, Դորթյոլում, Զեյթունում և շրջակայքում: Արյունալի ընդհարումներ Բիթլիսում, Վանում, Մուշում... բռնություններ, թալան, սպանություններ Ակնում և ամբողջ Փոքր Հայքում... ընդհանուր կոտորած»[161]:

Հ. Կիպլինը այսպես է ներկայացնում Մեծ եղեռնի սկզբնական արարները. «Նախ այս ձեռնարկը կարելի ամենաքիչ դժվարություններով գործադրելու համար դեռևս քաղաքներու և գիւղերու մեջ մնացած հայ բնակչութեան ուժեղ տղամարդիկ ազատարարութիւն ստացան հավաքվիլ հարմարագոյն վայր մը, ընդհանրապես քաղաքեն դուրս: Ժանդարմներն ու ոստիկաններն այս հրամանի գործադրութեան խստիվ հսկեցան: Ոչ ոք աչքե վրիպեցավ: Զանոնք ժողովելե ետքը բոլորն ալ սուրե անցուցին: Գործադրութեան այս մեթոդը հնարավոր էր փոքր տեղերու մեջ... Մեծ քաղաքներում, սակայն,

157 Rustem A. La guerre mondiale et question turco- armenienn, Berne, 1918, p. 58-59.
158 Larcher M. La Guerre torque dans la Guerre mondiale. Paris,1926, p. 395.
159 Հայոց ցեղասպանության պատմություն, 2003, թիվ 8, էջ 141:
160 Ն. տ., էջ 143:
161 ЦГВИАПИ, ч. 2000, т. 1, л. 3852.

Պոլսոյ հրամաններն այդքան ճիշտ ու պարզ կերպով կատարել կարելի չէր միշտ: Հայ երեւելիները փոքոցներու վրայ կամ իրենց տուներուն մեջ սպանուեցան: Ներքին քաղաքներու այրերը հսկողութեամբ «ուրիշ քաղաք» ղրկուեցան: Քանի մը ժամեն վերադարձան պահապանները առանց իրենց բանտարկյալներուն... Ծովեզրեա քաղաքներու հայերը նավակներով «ուրիշ նավահանգիստ մը» տարվեցան: Նավակները զարմանալիորեն շուտ վերադարձան պարպուած իրենց ճամբորդներեն»[162]:

Իհարկե, ցեղասպան հոգեբանությունը ձևավորվել էր ոչ թե մի քանի տարիների, այլ թուրքական նվաճումների առաջին շրջանից սկսած. կայսրությունում թուրքերի չնչին փոքրամասնություն լինելու իրողությունը նրանց մեջ մշակել էր դաժանություն, մասնավորապես հպատակ ժողովուրդների հանդեպ: Այդ դաժանությունը ծնեց ջարդ և ուծացում: Այս, ոչ թե մահմեդական մոլեռանդությունը, այլ թուրք ազգի սառը դաժանությունը հանգեցրեց ցեղասպանության:

«...Բեռլինի դաշնագրից հետո թուրքական կառավարությունը որոշեց ոչնչացնել հայերին... Այդ ժամանակից սկսած կառավարությունն ամբողջությամբ փոխեց իր վերաբերմունքը հայերի հանդեպ և վերջինների հետապնդումն ու ջարդերը տևեցին տարիներ»: Հայերին «կարող էր փրկել միայն Ռուսաստանը, բայց նա ոչ միայն մատը չչարժեց նրանց պաշտպանելու.. այլև հանդիսացավ այնքան անբարոյական, որ խոչընդոտեց Անգլիայի առաջարկածի իրականացմանը՝ դիմելու մեծ տերություններին, որ վերջինները հարկադրեին Բ. Դռանը իրականացնելու բարենորոգումներ»: Հայերի հանդեպ Նիկոլայ 2-րդի քաղաքականությունը «բացառապես քաղաքական հիմարություն էր»: Ռուսական զորքերը սահմանամեջ շրջաններում օգնում էին թուրքերին կոտորելու հայկական ջոկատները: «Սա իսկական աղետ էր, տմարդության բարձրակետ, սև բիծ Ռուսաստանի պատմության մեջ»:

«Ոչ ոք չի կարող ժխտել, որ քուրդ շատ ցեղեր նույնպես մասնակցել են հայկական ջարդերին. գործել են ահավոր դաժանություններ, սակայն նաև քաջ հայտնի է, որ նրանք իրենց տերերի հնազանդ զենքերն էին...»: Հայերը քրդերի հետ համատեղ ապրել կարող էին, իսկ թուրքերի հետ՝ ոչ[163]:

Երբ 1877-ին ռուսները գրավեցին Դարդանելի բերդերից մեկը՝ Կ. Պոլսում «վիթխարի խուճապ էր. խելագարված մահմեդականները... ինչպես միշտ, պաշտպանություն էին փնտրում քրիստոնյաների մոտ»: Երբ ռուսական մի գումարտակ գրավեց Էրզրումի Ազիզիե բերդը, բայց համալրում չստացավ ու նրա ամբողջ կազմը թուրքերը գնդակահարեցին ու այլանդակեցին, իսկ հրամանատարի մարմինը կտորների բաժանեցին[164]:

Այդպես է. թուրքը «հաճախ արտաքուստ սիրալիր ու համակրելի, ներքուստ հիմնականում՝ դաժան, երկերեսանի, դավադիր թույլերի հանդեպ և անճանաչելի ստրկամիտ, գառան նման հեզ ուժեղների հանդեպ»[165]:

Թուրքերի այս վարքագիծն ամբողջ խորությամբ ու լայնությամբ օգտագործվեց հայերի բնաջնջման գործում:

1913թ. ապրիլի 12-ին պատրիարքարանի ներկայացուցիչներ Ս. Զավարյանը, Հ. Զավրիևը, Գ. Զոհրապն ու Լ. Տեմիրճիպաշյանը Ռուսաստանի դեսպան Հիրսին հանձնեցին բարենորոգումների մի ծրագիր[166]:

Զոհրապը Հիրսին տվեց նաև «Սրվազի վիլայեթը տնտեսական և ազգագրական առումներով և հայերի դրությունը» աշխատությունը: Նա ասաց, թե «ինքն արդեն ձեռնարկած է հայաբնակ նահանգաց տնտեսական և մտավորական վիճակագրությունը պատրաստել, որտեղ պիտի տեսնվի հայոց և իսլամաց մեջ եղած ահագին տարբերությունը: Դեսպանը ըսավ, թե այդ շատ կարևոր աշխատություն մըն է, շատ կուզե կցել ծրագրին և իր տեղեկագրին, և որ պիտի ծառայե իբր զորավոր փաստ մը հայոց դատին»[167]:

Ապրիլի 12-ին Հիրսը Սազոնովին է ուղարկում 12 էջանոց մի ճեպագիր և Գ. Զոհրապի աշխատությունը[168]:

162 Ցուշամատեան Մեծ եղեռնի, էջ 1065-1066:
163 «Հայոց պատմության և պատմագրության...», 2003, թիվ 8, էջ 124:
164 Ն. տ., էջ 127:
165 Ն. տ., էջ 128:
166 АВПР, Посольство в К-поле, оп. 517/2, д. 3728, л. 45.
167 Էջմիածնի Մայր դիվանատուն, վավերագիր 288, թ. 25:
168 АВПР, Посольство в К-поле, оп. 517/2, д. 3728, л. 45.

Այն բաղկացած է 18 էջից և պահվում է Մատենադարանում: Զոհրապը նշում է, որ հայերի թվի մեխանիկական նվազեցումը Բ. Դռան կողմից նոր երևույթ չէ: Դեռ 1877-78 թթ. պատերազմից հետո թուրքական կառավարությունը դեմոգրաֆիկ նկատառումով, այսինքն՝ քրիստոնյաներին մահմեդականների մեջ տարրալուծելու նպատակով, օրինակ, Էրզրումի Էյլաեթը, որտեղ հայերը բացարձակ մեծամասնություն էին, մասնատեց՝ ստեղծեց Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Մամուրեթ ուլ Ազիզի վիլայեթները, որոնց կցվեցին մահմեդաբնակ տարածքներ: Ապա սկսեցին մահմեդականներ ներմուծել: Հայերին մասնատելու այդ դիտավորությունը Զոհրապը հիմնավորում էր նրանով, որ Անատոլիայում վիլայեթների միջին տարածությունը 100 հազ. քառ. կմ էր, իսկ Արևմտյան Հայաստանում՝ 35 հազ. քառ. կմ[169]:

Թուրքական կառավարության կողմից 1880 թվին հրապարակված վիճակագրական տվյալներով Հալեպի, Ադանայի, Տրապիզոնի, Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Մամուրեթ-ուլ-Ազիզի և Սըվազի ինը վիլայեթներն ունեին 4 629 373 բնակիչ, որից մահմեդական՝ 3 619 625, հայ՝ 724 625, այլ քրիստոնյաներ՝ 283 000: Պատրիարքարանի տվյալներով այդ նույն թվականին կայսրությունում հայերի թիվը 2 660 հազար, իսկ Արևմտյան Հայաստանում՝ 1 680 հազար էր: Զոհրապը վերլուծում է նաև օտար հեղինակների բերած տվյալները՝ պրոֆեսոր Սյուպանի, հյուպատոս Տրոտերի, Վիտելքինեի, Վամբերիի, Զելինովի և Լինչի[170]:

Արևմտահայերից գանձված զինվորական հարկի (բեդելի ասկերի) չափերը նկատի առնելով նա նշում է, որ 1884 թվին կայսրությունում բնակվում էր շուրջ երեք միլիոն հայ: Զոհրապը կասկածի տակ է առնում պատրիարքարանի նաև 1912թ. տվյալները՝ 2 100 հազար հայ: Սխալ է համարում, որ զազա ցեղին հայ չեն համարում և գտնում՝ դրանք մահմեդականցված հայեր են. սխալ է համարում մահմեդական բառի տակ երկու տարբեր ժողովուրդներին՝ քրդերին ու թուրքերին միավորելը: Զոհրապի նշած թիվը հաստատում է նաև թուրքական պաշտոնական վիճակագրությունը, համաձայն որի 1845-50թթ. կայսրությունում բնակվում էր 3.5-3.6 մլն հայ: Զոհրապը նշում է, որ թեև Սըվազի վիլայեթում հայերը թվական մեծամասնություն չունեին (507 հազարից 165 հազարը) , սակայն տնտեսական ու մշակութային առումով վճռական դեր էին խաղում: Ամասիայի սանջակի 600 արհեստավորից 450-ը հայ էր, 100-ը՝ թուրք, 50-ը՝ հույն: Շապին Կարահիսարի սանջակի 300 արհեստավորից հայ էր 250-ը: Նույն պատկերն էր ամենուրեք: Թոկաթի սանջակի 800 առևտրականից հայ էր 500-ը, Շապին Կարահիսարի սանջակի՝ 400-ից 350-ը, Ամասիայի սանջակի՝ 1000-ից 700-ը: Նա մանրամասն նկարագրում է Սըվազի վիլայեթի տնտեսությունն ու տնտեսական կյանքում հայերի դերը: Մարզվանի (Ամասիայի սանջակ) կտորի բոլոր մանուֆակտուրաները, Շապին Կարահիսարի բամբակյա գործվածքների հինգ, Հաջի Քեյի գուլպայի չորս, Զիլեի բամբակեղենի հինգ ֆաբրիկաները պատկանում էին հայերին: Ամասիայում 35 ջրաղացներից 30-ը հայերինն էր: Վիլայեթի 17.7 հազ. բանվորից հայ էր 14 հազարը: Արդյունաբերական և ֆինանսական կապիտալը գրեթե ամբողջությամբ հայերի ձեռքում էր: «Առևտրի ներմուծման մեջ,- գրում է Զոհրապը,- 166 վաճառականներից 141-ը հայ է, ... արտահանման մեջ 150 վաճառականից 127-ը հայ է, ... բանկիրներից 32-ը հայ են և միայն 5-ը՝ թուրք: 9 800 խանութպանից ու արհեստավորից 6 800-ը հայ է... 153 ֆաբրիկաներից և ալրաղացներից 130- պատկանում էր հայերին, ... ֆաբրիկաների և ալրաղացների տեխնիկական անձնակազմը բաղկացած էր բացառապես հայերից»[171]: Եվ սա այն պայմաններում, երբ թուրքական իշխանությունները խոչընդոտում, իսկ պաշտոնատարներն ու ավազակախմբերը պարզապես թալանում, ոչնչացնում էին այլազգի գործարարներին:

Հայերը հատկապես մեծ դեր էին խաղում ռուս-թուրքական առևտրում: Վանում ռուսական փոխհյուպատոս Տումանսկու վկայությամբ՝ «ոչ միայն Վանի, այլև մերձակա վիլայեթների ամբողջ առևտուրը հայերի ձեռքում էր»[172]:

169 Մատենադարան, Կաթողիկոսի դիվան, ց. 20, թղթ. 338, վավ. 117:
170 АВПР, Посольство в К-поле, оп. 517/2, д. 3728, л. 45.
171 Մատենադարան, Կաթողիկոսի դիվան, ց. 20, թղթ. 338, վավ. 117:
172 АВПР, Новый турецкий стол, д. 3723, л. 37.

Հայերն էին Ռուսաստանից ներմուծում շաքար, ածուխ, փայտ, այուր, ցորեն, գարի, գյուղգործիքներ, երկաթ, նավթ, բրինձ, սպիրտ, գինի, կոնյակ: Էրզրումում նավթի վաճառքով զբաղվում էին «Լույս» և «Արարատ» ընկերությունները, երկաթեղենինը՝ Զաքարյանց և Բոյաջյանց եղբայրները, գյուղգործիքներինը՝ Զաքարյաններն ու Քաֆավյանները, ռետինե ապրանքներինը՝ Օ. Դավիդովը: Բայազետում ռուսական ապրանքների առևտրով զբաղվում էին Օհանյաններն ու Մինասյանները[173]:

Կ. Պոլսում ռուսական ապրանքների առևտրով զբաղվում էր 28 խոշոր առևտրական, որոնցից վեցը հայ էր:

Հայերը գերակշիռ ուժ էին մշակույթի ասպարեզում: Հայկական էին աշխարհիկ դպրոցների 84%-ը: Բաբկեն վարդապետի տվյալներով Արևմտյան Հայաստանում գործում էր 785 հայկական դպրոց և ուսումնական այլ հաստատություններ 82 հազար սովորողով, այն դեպքում, երբ թուրքական դպրոցների թիվը չէր անցնում 150-ից 17 հազար աշակերտով: Եթե թուրքական դպրոցները ֆինանսավորվում էին պետության կողմից, ապա հայկական դպրոցները պահվում էին նվիրատվությունների միջոցով: Ըստ Նազլյանի կայսրությունում հայ աշակերտների ու սովորողների թիվը հասնում էր 150 հազարի:

Արտագերատեսչական 18 945 ծառայողներից հայ էր 14 000-ը: Մեծ էր հայերի բաժինը գյուղատնտեսական արտադրության մեջ: «Այսօրվա Թուրքիայում,- պատերազմի նախօրյակին գրեց Պ. Ռոհրբախը,- հայերն ունեին շատ ավելի մեծ նշանակություն, քան կարելի էր ենթադրել՝ ելնելով նրանց թվից: Կասկած չկա, որ նրանք թե մտավոր և թե նյութական առումով հանդիսանում են ամենագործունյա տարրը... Հայերն օժտված են այնպիսի եռանդով, որ հակադրություն են այն ամենի, ինչը մենք սովոր ենք տեսնել արևելցու կերպարում»[174]:

Պատասխանելով ամերիկյան «Literroi deigest»-ի հարցերին (1915թ. նոյեմբերի 11)՝ օսմանյան Թուրքիայի ԱԳ նախարարն ասաց. «Փաստն այն է, որ թուրքերը հայերի կարիքն ունեն: Երկրի առևտուրը գտնվում է հայերի ձեռքում, հայերը մեծ արժեք ունեն նաև որպես ֆերմերներ: Խորհրդարանում մեծ թվով հայեր կան, կան նաև մի քանի նախարարներ ու ծերակուտականներ: Համարյա բոլոր նախարարների տեղակալները հայ են»: Ամերիկյան մի այլ թերթ «The New York Times» -ը 1915թ. հունվարի 24-ին գրեց. «Հայերն ու հույները, որոնք միասին 5 000 000 են, բարոյական և բանական առավելություններ ունեն թուրքերի նկատմամբ: Նրանք ունակ առևտրականներ ու ֆինանսիստներ են, աշխատասեր ու առաջադեմ: Կրթության մակարդակով թուրքերը շատ հետ են հայերից ու հույներից»: Երբ թուրքական բուրժուազիան սաղմնավորման մեջ շրջանում էր, երբ նա կայսրության շուկայում դեռևս տեղեր ունենալու չէր հավակնում, հանդուրժում էր հայերի, հույների և հրեաների գերակշիռ դերը, իսկ երբ փոքր-ինչ ոտի կանգնեց, ահազանգ հնչեցրեց, թե գյավուրները տզրուկի նման ծծում են մահմեդականների արյունն ու նրանց հաշվին հարստություններ դիզում: Առանձնապես կատաղած հարձակումներ էին գործում հայերի ու հույների վրա: Որովհետև, նախ, հրեաները փոքրաթիվ էին և, երկրորդ, հայերի ու հույների առումով տնտեսական նկատառումներին միանում էին քաղաքական նպատակադրումները՝ Փոքր Ասիան դատարկել նրանցից: «Հայ ժողովրդի վերածնունդը,- գրեց "Новое время"-ն 1913թ. մայիսի 28-ին,- վնասակար է թուրքական պետության շահերի համար: Հայկական նահանգներում բարենորոգումները վարկաբեկում են պանթուրքիզմի ոգով թուրքական Փոքր Ասիայի զարգացմանը»: «Երկու մեծ քրիստոնեական գաղութների (հունական, հայկական) առկայությունը Ստամբուլում փուչ էր թուրքական կառավարության աչքում, մանավանդ որ օտար պետություններն օգտագործում էին այդ իրողությունը... Թուրքիայի վրա ազդելու նպատակով, ստիպելով նրան, որ թույլ տա կոնցեսիաներ եվրոպական կապիտալի համար»[175]:

Երիտթուրքական կառավարող կլիկը,- գրում է Թոյնբին,- ձգտում էր վերացնել ոչ թուրք ժողովուրդների «մշակութային և տնտեսական գերիշխանությունը»[176]:

173 Ն. տ. 1910թ. :
174 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. Քաղվածքներ, դ. 3, թ. 334:
175 Դեմբարսկի Բ. Ա. Նամակներ աշխարհին, Երևան, 1990, էջ 75:
176 Toynbee A. Turkey: A Past and a Future, London-New York, 1917, p. 40-41.

Թուրքերը «ոչ մի կերպ չէին կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ հայերը կարող էին ունենալ իրենց հետ հավասար իրավունքներ»[177]:

Նրանք ասում էին, եթե այս վիճակը շարունակվի, ապա հայերը կդառնան կայսրության տերերը՝ «մեզ՝ Թուրքերիս, թողնելով միայն անվանական իշխանությունը»[178]:

«Հայերը, որ իրենց միջավայրից տվել են առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի մի խումբ, համեմատաբար կարճ ժամանակում յուրացրեցին եվրոպական մշակույթը, աճեցրեցին եվրոպական կրթություն ունեցող մտավորականություն, երկիրը ծածկեցին մշակութակրթական հիմնարկների ցանցով, եվրոպական հիմքի վրա դրեցին գրականությունն ու արվեստը... Այս ձգտումը խոչընդոտի հանդիպեց... Թուրքական պետությունը կառավարողների կողմից, ովքեր ահով հետևում էին հայկական շարժումներին Ասիական Թուրքիայի սրտում», Արևմտյան Հայաստանում[179]:

«Թուրքերը,- գրում է անգլիացի պատմաբան Գոտլիբը,- նախանձով էին նայում իրենցից կուլտուրապես ու տնտեսապես ավելի ուժեղ այդ եռանդուն ժողովրդին»[180]:

Հետաքրքիր և միանգամայն հասկանալի է Թալեաթի պատասխանը Հ. Մորգենթաուի հարցին, թե որն է հայերի հանդեպ Բ. Դռան դաժան քաղաքականության պատճառը: Դրանք, ըստ նրա, հետևյալներն էին՝ հայերը հարստացել են Թուրքերի հաշվին, նրանք ձգտում են իշխել մահմեդականների վրա և առանձին պետություն ստեղծել, բացահայտ աջակցել են Թուրքիայի թշնամիներին, Կովկասում օգնել են ռուսներին, ռազմաճակատում Թուրքական բանակի ձախողումները հետևանք են հայերի գործունեության: Եվ եզրակացնում է. «Մենք չվերանայվող որոշում ենք կայացրել մինչև պատերազմի ավարտը հայերին անզոր դարձնել...»[181]:

Թալեաթը դեսպանին ասում է, որ հայերի տարագրությունը ոչ թե մարտավարություն է, այլ հեռահար նպատակներ ունեցող ռազմավարություն և այդ խնդրում մեր «անելիքը լրիվ որոշված է և ոչինչ այն փոխել չի կարող: Մենք Անատոլիայում այլևս հայ տեսնել չենք ուզում: Նրանք կարող են միայն անապատում ապրել և ուրիշ ոչ մի այլ տեղ...»[182]:

Երիտթուրք այդ պարագլուխը չի ուզում հաշվի նստել ոչ օրենքի, ոչ իրավունքի, ոչ բարոյականության հետ: Նա պատրաստ է կրելու ցանկացած պիտակ, նույնիսկ իր կյանքը տալ, միայն թե կայսրությունում հայ չլինի: «Բեռլիներ տագեբլատի» թղթակցին ասաց. «Մեր երեսին շպրտում են, որ մենք անմեղ և մեղավոր հայերի միջև տարբերություն չենք դնում: Այդ անելը բացարձակապես անհնար է, որովհետև այսօրվա անմեղները թերևս վաղվա հանցագործներն են»: Իսկ Հալիդե Էդիպին ասել է, թե գիտի, որ այն, ինչ տեղի ունեցավ, դրա համար ինքը մեռնելու է: Ասվածից հետևում է, որ Թալեաթը հայերի բնաջնջման պատճառներից առաջինը համարում էր տնտեսական գործոնը՝ հայերը հարստացել էին Թուրքերի հաշվին: Դրանով պետք է բացատրել այն կրքոտությունը, որով երիտթուրքական իշխանություններն ու մահմեդական խուժանը հարստահարում, թալանում էին հայերին, բռնագրավում, ոչնչացնում նրանց ունեցվածքը: Միայն 1913թ. Թուրք կալվածատերերն ու քուրդ բեկերը հայերից խլեցին ավելի քան 3000 հա հողակտոր: «Թույլ են տրվում զավթումներ,-գրում է պատրիարքը,- թե կառավարության և թե տեղական իշխանությունների կողմից»[183]:

Երիտթուրքերը քրդերին ուղղակի հասկացրեցին, որ ցեղապետերն իրենց համար նույնքան թանկ են, որքան թանկ էին հին վարչակարգին:

Հայերի թալանը զանգվածային հարստահարության վերածվեց 1914 թվականի կեսերից և այդ արվում էր բանակի կարիքները բավարարելու նշանաբանով: Ռազմական նախարարության գաղտնի հեռագրերով տեղեկացվում էր, թե բանակն ինչի կարիք ուներ և նշվում, որ դրանք հայրենի արդյունաբերությունը չի արտադրում , այսինքն՝ պահանջվելիքը հնարավոր է ապահովել միայն բռնագրավումների միջոցով: Իհարկե, խոսքն առաջին հերթին վերաբերում էր հայերին և գործնականում թալանում էին միայն հայերին, մասամբ նաև հույներին, որովհետև վերջիններս արտաքսվելով առանց այդ էլ իրենց ունեցվածքի զգալի մասը թողնում էին Թուրքերին: Հազարավոր ընտանիքներ սովի մատնվեցին: Բռնագրավման ենթակա էր ամեն ինչ՝ կաշի, մուճակ, կոշկակարի սեպ, սանձ, պտուտակ, վրան, կտորեղեն, կոճակ, օղակ, ընդեղեն, ցորեն, գարի, ալյուր, ձավար, լոբի, սիսեռ, ոսպ, բրինձ, շաքար, յուղ, ոչխար, այծ, արջառ, գրաստ, դռան և պատուհանի ծխնի, փական, չինափայտ, սոսինձ, կապար, կլայեկ, խողովակ, բժշկական իրեր և այլն[184]:

Հայերի թալանն արդյո՞ք բարելավեց Թուրքական բանակի մատակարարումը: Իհարկե, ոչ: «Ան նողկալի վիճակ մը ուներ, մերկ ու անոթի էր: Սպայութիւնը տարուան մեջ երկու անգամ պայրամ-պայրամ ոտիկ կտանար ու զեղծարարութեամբ, կաշառակերութեամբ կերպով մը գլուխ կհաներ»[185]:

Հիրսը 1914թ. հոկտեմբերի 2-ին հեռագրեց. «Բանակը չի ապահովված հանդերձանքով, հրացաններով և սննդամթերքով: Սկսվել է սով և դասալքություն»[186]:

Մորգենթաուն այդ բռնագրավումներն անվանեց «Գիտակցված ավազակություն»: Ավազակության համար հզոր խթան հանդիսացավ Սրբազան պատերազմը, ինչը մահմեդական խուժանն «ընկալեց որպես այդ պատերազմի իրական և իրավական իմաստ»: Գերմանացիները վկայում էին, որ իթիհադի պարագլուխները լրջորեն մտադրված էին պատերազմի ծախսերը փակել հայերի «դարերով կուտակված» հարստությունների թալանի միջոցով: Մելվան Զադե Ռիֆաթն այդ առնչությամբ գրում է. «Պատերազմը հազիվ սկսած արդեն անզոր եղող Թուրքիոյ մեջ ծայր տուին անոթութիւնն ու թշվառութիւնը: Այս թշուառները խաբել, կշտացնել պետք էր, և ասիկայ ալ հայերուն թողելիք ապրանքներն ու դրամը կրնային իրականացնել: Էրզրումի, Պիթլիսի, Տիարպեքիրի, Մամուրեթ ուլ Ազիզի, Սըվազի նահանգներուն մեջ հայոց ջարդն ու ինչքերուն կողոպուտը սկսավ: Այս գաղտնը ժողովրդին ամեն բան մոռցնել կուտար: Միջազգայնը ալ զգաղեցնել պետք էր: Միջազգայնի դաշտը, ճամբարները, Սուրիոյ անապատները հայերով լեցուեցան: Դարերու ընթացքին պատուաբեր ջանքերով շահուած հայոց ահագին հարստությունն իր ամբողջ շքեղութեամբն ու մեծութեամբը կորեր էր: Ինչ-որ կը մնար՝ պիտի կորեր այդ անապատներուն մեջ, որոնց ժողովուրդը շուտով հասկցաւ, թե գաղթականի կարավաններն իբր զոհ կը ղրկուին իրենց: Սկիզբները մանր մունր յարձակումներ կընեին: Բայց երբ հասկցան ատիկայ, խմբական սպանումներով լրացուցին գործը: Դեպքերուն ամենեն սրտաշարժներն այդ անապատներուն մեջ կատարուեցան»[187]:

Հ. Ադամսը վճռականորեն մերժում է այն կարծիքը, թե «իբր հայերը եղել են վաչխառուներ և անխղճաբար շահագործել են պարզամիտ Թուրքերին»: Կոտորածները բացատրել հայ վաչխառուների ագահությամբ, ծիծաղելի է, քանի որ կոտորածները տեղի էին ունենում ոչ միայն կենտրոններում, այլև գյուղերում, որտեղ հայն ու Թուրքը խառը չէին բնակվում, որտեղ, ի տարբերություն քաղաքաբնակ շատ հայերի, ապրում էր հիմնականում աղքատ ու հարստահարված[188]:

Բացի դա «Փոքր Ասիայում հայկական տարրի գոյությունն անհրաժեշտ էր նաև հենց Թուրքերի բարեկեցության համար»: Հ. Ադամսի կարծիքով առանց հայերի Թուրքերը չէին կարող «ոչ քաղաքականապես, և ոչ էլ տնտեսապես գոյություն ունենալ որպես ինքնուրույն և անկախ ազգ»: Հայոց կոտորածը, գրում է նա, նման է հին հեքիաթին, երբ «հիմարը սպանում է հավին, որը նրա համար ոսկե ձու էր ածում: Իրենց ողորմելի տգիտության և արյունարբուության պատճառով Թուրքերը ձեռք բարձրացրեցին նրանց վրա, ում գոյությունն անհրաժեշտ պայման էր իրենց իսկ ազգային և հասարակական կյանքի ծաղկման համար», եթե անցնենք ամբողջ Թուրքիայով, առանց հայի բնակության «չեք գտնի ոչ մի բարեկեցիկ համայնք»: Նրանց թիվը ոչ մի

177 Ա-Դո Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներ, էջ 327:
178 «Արարատ», 10. 09. 1963:
179 Ռաշիդեան Ա. (Զուրաբեան) Թուրքիան և պատերազմը: Տե՛ս «Պայքար», 1917, թիվ 3:
180 Готлиб В. В. Тайная дипломатия во время первой мировой войны, 1960, стр. 153.
181 Ամերիկյան դեսպան Հ. Մորգենթաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները, Կ. Պոլիս, 1919, Երևան, 1990, էջ 280:
182 Լեո Անցյալից, էջ 240:
183 АВПР, Посольство в К-поле, д. 2078, л. 15 .

184 Լևոն Վարդան Հայկական տասնհինգը և հայերի լքեալ գոյքերը, Բեյրութ, 1970, էջ 143:
185 Սիւրմենեան Գ. Երզնկայ, Կահիրե, 1947, էջ 259:
186 Архив военно-морского флота, ст. 418, оп 1, д 4270, л. 93.
187 Ռիֆաթ Մ., նշվ. աշխ., էջ 90-92:
188 The Education of Henry Adams, p. 23.

տեղ այնքան մեծ չի եղել, որ սպառնային Թուրքիայի անվտանգությանը, մինչդեռ մինչև ջարդերն «ամենուրեք բավարար թիվ էին կազմում նրա տնտեսական ծաղկումն ապահովելու համար»[189]:

Թուրքերն այդ կացությունը չեն ժխտում, բայց դրանով բացատրում են ոչ թե իրենց հայաջինջ, այլ հայերի «անկախական» ձգտումները: Թուրք դիվանագետ Սելիմ Ֆուադը 1917թ. հունվարի 17-ին չվեյցարական «Բլատեր ֆուր դիպլոմատիե» թերթին գրում է. «Հայ ժողովուրդն անկասկած կայսրության բոլոր ժողովուրդներից բարձր էր մտավոր զարգացման առումով: Նրանց դպրոցներն ամենալավն էին, գերազանցում էին հունական դպրոցներին և անհամեմատ ավելի լավ էին կազմակերպված, քան կառավարական դպրոցները, որոնք ծառայում էին մահմեդական ազգաբնակչության մտավոր կարիքներին: Հայերն ունեին իրենց ազգային թատրոնը, իրենց հիվանդանոցները: Հայկական առևտուրը ծաղկում էր, հայ գյուղացիները կարողանում էին հողն ավելի լավ մշակել, հայ ազգաբնակչությունը հարստությամբ մրցում էր հույն ազգաբնակչության հետ, մինչդեռ թուրք ժողովուրդը խարխափում էր աղքատության մեջ»: Սակայն հայերին այդ «դրախտը» քիչ էր: Նրանք շարժումներ ծավալեցին, ապստամբություն բարձրացրեցին, որը սպառնում էր կայսրության գոյությանը, դրա համար էլ կառավարությունը հարկադրված էր բանագաղթեցնել հայերին, իսկ քանի որ պատերազմի շուտափույթ ավարտ չէր սպասվում, ապա կառավարությունը որոշեց վերացնել հայերի սեփականությունը և համարժեքը տալ կայսրության այլ շրջաններում: Մնում է դաժանությունների, կոտորածների, թալանի և այլ չարաշահումների հարցը, որոնց հայերը զոհ դարձան բանագաղթի ընթացքում: «Ահա այստեղ պետք է քաջություն ունենալ և ճշմարտության աչքերին նայել՝ չվախենալով դաժան իրականությունից»:

Ա. Ֆուադն ընդունելով խաղաղ ստեղծագործական գործունեության բնագավառում հայերի առավելությունը, միաժամանակ խուսափում է նշել դրա կարևոր նշանակությունն իրենց՝ թուրքերի համար: Սակայն կան թուրք գործիչներ, ովքեր չեն խուսափում այդ անելուց: Նմանները չեն թաքցնում, գրում են հայերի բանագաղթի պատճառած տնտեսական մեծ վնասների մասին, մերժում հանձինս հայի միայն առևտրական ու վաշխառու տեսնողներին, գտնելով, որ հայերի ճնշող մեծամասնությունն ընդունակ արհեստավորներ էին, եռանդուն, բարեխիղճ և նախաձեռնող հողագործներ: Սակայն անգամ նման ձևով մտածող թուրքերը դեմ էին հայերի հանդեպ մեղմ կամ անգամ «աստիճանական հյուծման» քաղաքականությանը, որովհետև «ցանկացած խաղաղ մրցակցությունում» թուրքերը պարտվելու էին և գտնում էին, որ թեկուզ ի վնաս Թուրքիայի տնտեսության, բնաջնջման «բարդ գործողությունն ի վերջո հանգեցնելու է ... կայսրության առողջացմանը»:

Գերմանացի մտավորական-քարոզիչ Նեպագեն գրում է. «Երիտթուրքերը տարված էին միացյալ ազգային պետության մասին եվրոպական իդեալով: Նրանք հույս ունեին, որ ոչ թուրք մահմեդական ռասաներին՝ քրդեր, պարսիկներ, արաբներ և այլն, նկատի ունենալով մուսուլմանների շահերի ընդհանրությունը, կկարողանան թուրքացնել վարչական կամ թուրքական դպրոցական կրթության միջոցով: Նրանք քրիստոնյա ազգերից՝ հայեր, սիրիացիներ, հույներ, վախենում էին ոչ միայն նրանց մշակութային և տնտեսական առավելությունների պատճառով, այլև հանձինս այդ ժողովուրդների կրոնների տեսնում էին խոչընդոտ վերջիններին խաղաղ թուրքացնելու ճանապարհին: Հետևաբար նրանք պետք է ոչնչացվեին կամ մահմեդականացվեին...»: Հայերը, հույները և սիրիացիները կազմում էին կայսրության բնակչության ավելի քան 1/4 -ը: Թուրքերն ամենաապաշնորհ ազգն էին: Որտե՞ղ էին թուրքական առևտուրը, արհեստը, արդյունաբերությունը, արվեստը, գիտությունը: Նույնիսկ իրավունքն ու կրոնը, ինչպես նաև լեզուն նրանք փոխառել են արաբներից: Եթե չլինեին քրիստոնյա հպատակները, ովքե՞ր էին ապահովելու Թուրքիայի առաջադիմությունը[190]:

Ճիշտ է, կային թուրքեր, ովքեր դեմ էին Հայկական հարցի լուծման գազանային եղանակներին, մասնավորապես գտնում էին, որ կանանց ու երեխաներին բռնությունների ենթարկելը խորթ է իսլամի սկզբունքներին, բայց դրանք հազվադեպ հնչող ձայներ էին: Դրա փոխարեն արաբները բողոքում էին թուրքական վայրագությունների դեմ: Գերմանացի դիվանագետ Հոլշտեյնը պատմում է, որ Թել Աբիդայի մերձակայքում բեդվինների շեյխերից մեկը ծնկաչոք դիմավորեց հայ տարագիրների քարավանը և սիրահոժար պահակախումբ տրամադրեց նրանց ուղեկցելու համար: Տվյալ դեպքում գործ ունենք Օսմանյան կայսրության իրական վիճակի և թուրք ժողովրդի, նրա գործիչների հնարավորությունների ու հավակնությունների միջև գոյություն ունեցող հակասությունների հետ: Մեծ հաշվով հայերի բնաջնջումը չէր բխում թուրք ժողովրդի ազգային շահերից, այլ հետևանք էր թուրքական բուրժուազիայի մեծապետական-ծավալապաշտական մղումների: Պատմական հեռանկարի առումով ցեղասպանությունը չլուծեց և չէր կարող լուծել դրա մտահղացումների հետապնդած գլխավոր նպատակը՝ սեփականացնել հայերի հայրենիքը: Սեփականատիրության առումով եղեռնը փոխեց մի բան՝ եթե մինչև այդ Արևմտյան Հայաստանը պատկանում էր իր իսկական տերերին ՝ հայերին, ապա եղեռնից հետո դրա փաստական տերերը դարձան ոչ թե թուրքերը, այլ քրդերը: Թուրք ջարդարարների ծրագիրը, թե իրենք ի զորու էին քրդերի միջոցով հայերին ոչնչացնելուց հետո թուրքացնել կամ ոչնչացնել նաև քրդերին, անհաջողություն կրեց: Շուտով կբոլորի Մեծ եղեռնի 100 տարին, բայց Արևմտյան Հայաստանի համար մահուկենաց կռիվը թուրքերի ու քրդերի միջև ոչ միայն չի ավարտվել, այլ գնալով ավելի դաժան ու արյունահեղ է դարձել: Թուրքն ու քուրդը կանգնած են մի իրողության առջև՝ այլևս անհնար է նրանց համակեցությունը: Այսինքն՝ հայերի բնաջնջումը Արևմտյան Հայաստանի համար քուրդ-թուրքական պատերազմին հարատև բնույթ ներարկեց: Դրա փոխարեն ինչ շահեց Օսմանյան երբեմնի հզոր կայսրությունը: Նախ, մտնելով պատերազմի մեջ, դադարեց գոյություն ունենալուց և նրա փլատակների վրա ստեղծվեցին մի քանի պետություններ և մեծ պետությունների գաղութներ: Պատերազմի ճակատներում և թիկունքում Թուրքիան, հայերին չհաշված, կորցրեց 2.5 միլիոն մարդ: Կայսրության պետական պարտքերը հասան 2.2 միլիարդ դոլարի, պատերազմական ծախսերը կազմեցին 6.4 միլիարդ դոլար:

Երկրորդական դեր չխաղացին մեծ տերություններն իրենց շահադիտությամբ և փոքր ժողովուրդների հանդեպ արհամարհանքով: Հայկական հարցում Եվրոպայի հարատև փոփոխվող մոտեցումները մշտապես առկախ էին Օսմանյան կայսրության հանդեպ տերությունների կամ նրանցից որևէ մեկի շահագրգռությունների մակընթացություններից և տեղատվություններից, ինչը հայերի մեջ սին հույսեր էր ծնում, նրանց երբեմն չիմաստավորված գործողությունների մղում, թուրքերին հնարավորություն էին տալիս դրանք պատրվակ դարձնել հայերին հաշվեհարդարի ենթարկելու համար: «Եթե հայերը,- հայտարարեց եպարքոս Ս. Հալիմը,- հանգիստ ըլլալ կուզեն, պետք է ռուսներն ու անգլիացիները մոռնան»[191]:

Թալեաթի հուշերում կարդում ենք. «Արևելյան հարցն այնպես, ինչպես ներկայացվում է, մարդասիրական և քրիստոնեական հարց չէ: Ընդհակառակը, գաղչանքի ու շահերի հարց է: Դրա վրա են հենված եղել թուրք պետության ներքին գործերին կատարված բոլոր միջամտությունները»:

Բախտորոշ նշանակություն ունեցավ Գերմանիայի ծավալվելը Մերձավոր Արևելքում: Դեռ 1908թ. գերմանացիները թուրքերին առաջարկեցին հայերին տեղափոխել Բաղդադի երկաթուղու շրջան, որպեսզի օգտագործվի նրանց ընդունակությունները այդ տարածքների տնտեսությունը զարգացնելու համար, իսկ Ռուսաստանին սահմանամերձ շրջաններում բնակեցնել մահմեդականների, առավելապես քրդերի, ռուսների առաջխաղացման դեմ մահմեդական պատնեշ ստեղծելու համար:

Կ. Պոլիսն անմիջապես արձագանքեց այդ առաջարկությանը և այն դրեց հայերի բանագաղթի իր ծրագրի հիմքում:

Սայիդ Հալիմին 1915թ. հունվարի 4-ին գրած նամակում Վանգենհայմը հավաստիացնում է, որ Գերմանիան լիակատար հավանություն է տալիս «Անատոլիայի հայերին տեղափոխելու որոշմանը», որպես «երկրի պաշտպանության կարևոր և օրինական միջոցի» և այդ հարցով դաշնակից Թուրքիայի գործերին չի միջամտի:

Հայերի տեղահանության ծրագիր վաղուց էր մշակված: Երիտթուրքերն ի սկզբանե գտնում էին, որ Աբդուլ Համիդի ձեռնարկած միջոցները արդյունավետ չէին, որ միայն ուծացմանն ընդդիմացող ժողովուրդներից լրիվ ազատվելը կերաշխավորի կայսրության անվտանգությունը: Այս «անհամաչափությունը» մեղմելու համար էր, որ երիտթուրքերն իշխանության գալով կազմակերպեցին թուրք մուհաջիրների տեղափոխությունը Բալկաններից ու նրանց բնակեցրին հայերի տարածքներում:

189 The Education of Henry Adams, p. 24:
190 R 14092, Ab. 20411.

191 Ցուշամատեան Մեծ եղեռնի, էջ 263:

Գերմանացի գեներալ Կոլմար ֆոն Գոլցը 1913թ. հայտարարեց, որ Թուրքիան Անատոլիան կընակեցնի Լոնդոնի պայմանագրով կորցրած տարածքներից փախած մահմեդականներով[192]: Նա այս խնդրի վերաբերյալ ավելի հստակ արտահայտվեց գերմանա-թուրքական ընկերության հիմնադիր ժողովում, որի նախագահն էր: Բեռլինը նաև ծրագրում էր արևմտահայերի մի մասին փոխադրել Լեհաստան հրեաներին հակակշիռ ստեղծելու համար: Սակայն առավելություն տրվեց ծրագրի առաջին տարբերակին: «Միջագետքում,- գրում է Պ. Ռորբախը,- որտեղով անցնում է Բաղդադի երկաթուղին, բնակչությունը շատ նոսր է և դա գերմանացիներին խիստ անհանգստացնում է, քանի որ երկաթուղու շրջանում բավարար թվով բնակչություն չլինելը տնտեսապես թուլացնում է այն: Ուստի պետք է հայերին ստիպել գաղթելու Միջագետք»[193]:

Ռորբախը գտնում էր, որ Արևմտյան Հայաստանը, քանի դեռ այնտեղ հայեր են բնակվում, «անկարգության օջախ է», որի «հրդեհը կանխելու համար անհրաժեշտ է օգտագործել քրդերին»: Նա իր կառավարության անունից հայտարարեց, թե Գերմանիան դեմ է Արևմտյան Հայաստանում արմատական բարեփոխումների անցկացմանը:

Անդրադառնալով այդ պլանին, երիտթուրքական «Իդդամ» թերթը նույնպես առաջարկեց հայերին բռնագաղթել Միջագետք, որպեսզի մահմեդականները կարողանան գրավել նրանց տարածքները: Բնութագրական է Նազիմի խոսքը. «Սուլթանները, հանդես բերելով հանցագործ տկարություն, թույլ տվեցին, որպեսզի նվաճված տարածքներում տեղական բնակիչներն առաջադիմեին, փոխանակ թուրքացման քաղաքականության միջոցով նրանց լուծեին պարկեշտ թուրքի մեջ»[194]:

Իսկ Թալեաթը տեղական իշխանություններին բացատրեց. «Մանոթ ազգի (հայերի) տարագրությունը նպատակ ունի փրկել մեր հայրենիքը, քանի որ նրանք, որտեղ որ ապրելու լինեն, իրենց խռովարար գաղափարներից չեն հրաժարվի: Ուրեմն պետք է աշխատենք, որքան հնարավոր է, նրանց թիվը նվազեցնել»:

Կոտորածները նաև հետևանք էին Օսմանյան կայսրության թուլության. այն այլևս անզոր էր Հայկական հարցն անտեսել կամ քաղաքական միջոցներով չեզոքացնել:

Օսմանյան կայսրության տնտեսական և քաղաքական կյանքում հայերի խաղացած նշանակալից դերը թուրքական պաշտոնական շրջաններն աշխարհին հրամցրել և այսօր էլ հրամցնում են որպես վկայություն Թուրքիայում նրանց շնորհված արտոնությունների, հայերի առանձնաշնորհյալ վիճակի, «հավատարիմ ազգ» համարվելուն: Վերևում նշվեց, որ նման պնդումը կեղծիք է, որովհետև հայ արդյունաբերողների և առևտրականների ճնշող մեծամասնությունը կենտրոնացած էին Կ. Պոլսում, Զմյուռնիայում ու ծովափնյա մյուս քաղաքներում, իսկ բուն Հայաստանում հայ ազգաբնակչության 80 %-ը գյուղացիությունն էր, ապա նաև մանր արհեստավորներն ու առևտրականները, որոնց ոչ միայն ունեցվածքի, այլ նաև կյանքի անվտանգությունը երաշխավորված չէր, որոնք դարեր շարունակ ենթարկվել են քաղաքական, տնտեսական, ազգային ու կրոնական անլուր հալածանքների, վայրագ ճնշումների ու բռնությունների: Ահա թե ինչու հայերի դավաճանության մասին թուրքական պնդումները բացարձակապես հիմքից զուրկ են, որովհետև դրված էր ամբողջ հայ ժողովրդի բնաջնջման հարցը, և հայը ելք էր փնտրում փրկվելու համար: Այն, որ հայ ժողովուրդն իր փրկության հարցը կապում էր Ռուսաստանի հետ, ոչ թե դավաճանություն էր, այլ փրկվելու միակ հնարավոր միջոցը, ուղին: Իր գոյության ու ազատության համար պայքարը տվյալ ժողովրդի անկապտելի իրավունքն է և այդ պայքարը դավաճանություն համարել ու դրանով հիմնավորել ցեղասպան քաղաքականությունը, այլ բան չէ, եթե ոչ մեծապետական- բռնատիրական մարդատյաց հոգեբանություն:

1969թ. Բեյրութում լույս տեսած «Լիբանանն ու աշխարհի պատմությունը» ուսումնասիրությունում կարդում ենք, որ Ջեմալի կախաղանները «պատճառ դարձան, որ սերտ գործակցութիւն ստեղծուի յեղափոխական ոյժերու և քրիստոնեայ ու մահմետական համայնքներու միջև, քանի որ դահիճը տարբերութիւն չէր դնում անոնց միջև: Թրքացման ճիգերն արաբներու մեջ հզորացուց ազգայնական ոգին»[195]:

192 Goltz Colmar von der La jeune defait Turqquie et la posibilite' den son relevement, Paris, 1913, p. 60.
193 Արզումանյան Մ. Դարավոր գոյամարտ, Երևան, 1989, էջ 301:
194 Ռիֆաթ Մ., նշվ. աշխ., էջ 178:
195 Գանգրունի Հ., նշվ. աշխ., էջ 352:

Բեյրութում կազմակերպվեց արաբների, հայերի ու թուրքական ճնշման տակ գտնվող մյուս ժողովուրդների ներկայացուցիչների հանրահավաք, որը պահանջեց վերջ դնել իշխանությունների կամայականություններին և առաջ քաշեց «ժողովրդավարական հասարակություն» ստեղծելու պահանջ[196]:

Արաբ հեղինակ Մ. Թալհամեն գտնում է, որ արաբները «գոհ լինելու պատճառ չունեին իրենց չեզոքացնելու և բոլորին օսմանցի դարձնելու իթիհադական քաղաքականությունից»[197]:

Աշխարհամարտի տարիներին «Լիբանանի 500 հազ. բնակչից 200 հազ. մեռավ քաղցից ու համաճարակից... լեռնային Լիբանանը գրեթե անապատի վերածվեց... Ամեն օր սայլերը դիակներ էին հավաքում»: Արաբ ուսումնասիրող Աբդուլ Վահաբ էլ Ինկլիզին նկատում է. «Նախկինում կար մի Համիդ, իսկ այսօր՝ բազմաթիվ Համիդներ և դժբախտաբար ներկայիս Աբդուլ Համիդները մեկ տարում քանդեցին, լկեցին, տանջեցին ու սպանեցին ավելի շատ, քան Աբդուլ Համիդն իր թագավորության 33 տարիներին»: Արաբների 1913թ. փարիզյան համաժողովը հավաստեց «իր համակրանքն օսմանցի հայերի բարենորոգումների և ապակենտրոնացման պահանջների հանդեպ»[198]:

Թուրք վարչակարգը,- գրում է Լաուրենսը,- իր թուրքացման քաղաքականության տեսության մեջ նույնքան դաժան էր, որքան կյանքում: Թուրքերն արաբներին ասում էին, թե նրանք աղանդի շահերը վեր են դասում հայրենասիրական զգացումներից, գավառների մասնակի շահերը՝ համազգային շահերից: Դատարաններում, հիմնարկներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում արգելվեց արաբերենի օգտագործումը: Արաբները կարող էին պետական ծառայության անցնել միայն մի պայմանով՝ զոհաբերելով իրենց ազգային «դեմքը»: Այդ քաղաքականությունը չէր ընդունվում անմռունչ, ինչն արտահայտվեց բազմաթիվ ապստամբություններով Սիրիայում, Միջագետքում, Արաբական թերակղզում: Արաբները դիմադրում էին ուծացման ակնհայտ փորձերին և մտադիր չէին հրաժարվել իրենց հարուստ ու ճկուն լեզվից և անցնել թուրքերենին:

Երբ երիտթուրքերը մերժեցին պանիսլամիզմը և սկսեցին քարոզել օսմանական եղբայրություն, ճնշված ժողովուրդները հավատացին նոր Արևելք կառուցելու կոչերին, թուրքերին ողջունեցին որպես գործընկերների: Սակայն վերջինները, վախեցած իրենց իսկ արթնացրած ուժերից, նահանջ հայտարարեցին նույնքան հանկարծակի, որքան հանկարծակի հարձակման էին կոչել: «Թուրքիայի թուրքացում թուրքերի համար» կարգախոսը դարձավ հիմնական նշանաբան: Այդ կարգախոսը կյանքի կոչելու համար նրանք նախ պետք է «մաքրեին» կայսրությունն անհնազանդ ու խռովարար հպատակներից: Արաբները, որպես ամենամեծաթիվ այլազգի տարր Թուրքիայում, պետք է դառնային առաջին զոհերը: Արաբ երեսփոխանները քշվեցին, նրանց հասարակական-քաղաքական կազմակերպություններն արգելվեցին, մեծատոհմ արաբներն օրենքից դուրս հայտարարվեցին: Արաբերենն ու արաբների քաղաքական եռանդը էնվեր փաշայի կողմից ավելի դաժանորեն էին ճնշվում, քան առաջներում՝ Աբդուլ Համիդի կողմից: Երիտթուրքական եռապետությունը «նպատակ դրեց ճնշել ոչ թուրք բոլոր, մասնավորապես արաբական և հայկական, շարժումները»[199]:

Երիտթուրքական պարագլուխների հեռագրերից մեկում հայերի հանդեպ բռնությունները բացատրվում են հետևյալ կերպ. «Նկատի ունենալով, որ հայկական կոմիտեները ռումբեր և ատրճանակներ են պահում (զինամթերքի մի մասը բռնագրավվել է Սիրիայում և Սըվազում), կազմել են կամավորական գնդեր՝ մեծ մասամբ թուրքահայերից և նպատակ են հետապնդում ասպատակելու երկիրն ու թիկունքից հարվածելու թուրքական բանակներին... նկատի ունենալով, որ Թուրքիայի կառավարությունը չի կարող աչք փակել ու հանդուրժել այդ (հայկական) կազմակերպությունների գոյությունը, քանի որ մեզ համար մահվանից խնդիր է առաջացնում: Նկատի ունենալով, որ նման կոմիտեների գոյությունն անկայունության աղբյուր է, այն չի կարելի օրինական համարել»[200]:

Թուրքական պետությունը ձգտում էր ազատվել ոչ մահմեդական ժողովուրդներից նաև այն բանի համար, որ բիրտ լուծը չհանդուրժող այդ ազգերը «արգելք էին հանդիսանում կայսրության մյուս ժողովուրդների ձուլման համար»:

196 Գանգրունի Հ. նշվ. աշխ., էջ 351:
197 Ն. տ.:
198 Ն. տ., էջ 353:
199 Laurens A. Le Cwmmandement Naval en Me'diterranee, Paris, 1931, pp. 43-45:
200 «Ալիք», 28. 10. 1984թ.:

Լ. Զորմիսյանը համաձայն է այն տեսակետին, որ հայերն իրենց չմտածված քայլերով նախապատերազմյան լարված մթնոլորտում արհեստականորեն գրգռեցին թուրքերի գազանային կրքերը: Ահա այդ օրերին, գրում է նա, հայերն աշխուժացրին բարենորոգումների համար պայքարը: Նուբարը նշանակվեց «պատվիրակ»: Ով էր բարենորոգումների հարցի բարձրացման նախաձեռնողը՝ կաթողիկո՞սը, հայե՞րը, թե դրսից էր: Պոլսում հրավիրվում է դեսպանախորհուրդ, մշակվում և ընդունվում է ծրագիրը: Հայերը հրճվանքի մեջ էին, առանց նկատելու թուրքերի կատաղությունը: Հավանաբար դա դեր խաղաց հայերի բնաջնջման ծրագիրը գործողության մեջ դնելու համար: Հայերը պարզապես մեծ վստահություն ունեին տերությունների վրա և վտանգավոր կեցվածք ընդունելով լավ չէին հաշվառել իրենց ուժերն ու հնարավորությունները:

Բալկանյան պատերազմները թուրքերին համոզեցին, որ Եվրոպան իրենց համար անվերադարձ կորած է: Արևմուտքը փակ էր, իսկ Արևելքը, մինչև Խաղաղ օվկիանոս՝ բաց, բնակեցված թուրքական ռասայով: Եվ որոշվեց՝ ցեղն ավելի կարևոր է, քան կրոնը, պետության հիմքը ցեղն է, այլ ոչ թե կրոնը: Թուրքերի հայացքը շուռ եկավ Արևելք. նրանք տեսան այդ ճանապարհը, որը սկսվում է հայերով՝ միակ ոչ թուրք ցեղը, մինչև Հեռավոր Արևելք: Պահանջվում էր հայերի դիմադրությունը հաղթահարել, իսկ հայերը բարենորոգումների միջոցով ձգտում էին հզորանալ, գծագրվում էր ապագա հայկական պետության դեմքը[201]:

Հայերի նման կեցվածքը կարո՞ղ էր դեր խաղալ: Թվում է՝ այո, բայց ոչ վճռական: Այն թուրքերի կողմից օգտագործվեց որպես պատրվակներից մեկը: Նույն կարգավիճակում էր հայ կամավորական շարժման խաղացած դերը: Այն միայն անունով էր հայկական: Այդ շարժման տատմերն ու ոգեշնչողը ցարական կառավարությունն էր: Այո, ռուսական իշխանություններն օգտագործեցին Թուրքիայի հայերին ջարդերից փրկելու համայն հայության ձգտումը: Բայց կամավորական շարժումը ջարդերի պատճառ լինել չէր կարող, որովհետև ա) ջարդերի ծրագրի վերջնական տարբերակը հաստատվել էր դեռ 1913-ին, իսկ կամավորական գնդերը սկսեցին ձևավորվել 1914-ի վերջերին, բ) ռուսական բանակի կազմում կռվող հայ կամավորների զգալի մասը երիտթուրքերի նախկին դաշնակիցներն էին, ովքեր հիասթափված այդ կուսակցության քաղաքականությունից և նախազգալով ջարդերի վտանգը, որոշեցին ռուսական բանակի օգնությամբ ու միջոցով փրկել արևմտահայությանը, այլ ոչ թե Արևմտյան Հայաստանն անկախացնել կամ հայերի հպատակությունը փոխել:

Լեփսիուսը գրում է. «Մի ժողովուրդ, որի մոտ երկու միլիոնը բնակվում է Թուրքիայում, 1700 000-ը՝ Ռուսաստանում, չի կարող ինքնավարության հավակնություն ունենալ ոչ մի և ոչ էլ մյուս կայսրությունում: Ուրեմն, իրենց ազգային նկարագիրը պահպանելու համար հայերը պիտի ձգտեին օգտվել այս երկու երկրների հավասարակշիռ հարաբերություններից, որովհետև ռուսական բռնակցումը նրանց համար կնշանակեր վերջնական ձուլում: Ոչ մի ազգ այնքան չահագրգռված չէ Թուրքիայի գոյությամբ, որքան հայերը, քանի որ միայն մեծ պետության հետ միանալով փոքր ազգը կարող է տնտեսական և մշակութային զարգացում ապրել, իհարկե, բնականոն հարաբերությունների դեպքում: Եթե անգամ Թուրքիան գոյություն չունենար, հայերը ստիպված պիտի ստեղծեին, որպեսզի հենարան ունենային ռուսական բռնազավթման դեմ»[202]:

Անհնար է ամբողջությամբ համաձայնել Լեփսիուսի հետ: Նրա կարծիքը Ռուսաստանի և ռուսների դերի մասին ելնում էր ոչ այնքան իրական փոխհարաբերություններից, որքան Գերմանիայի քաղաքականությունից և գերմանա-ռուսական առճակատումից: Սակայն Լեփսիուսը բացարձակապես իրավացի է, երբ շեշտում է, թե հայերն անկախական ձգտում չունեին: Ի դեպ խոսքը դնում է հայերի շրջանում գերիշխող կարծիքի, այլ ոչ թե այս կամ այն հասարակական խմբի կամ անհատի մոտեցումների մասին: Կովկասահայերը ռուսահպատակներ էին և ռուսական բանակի կազմում Թուրքիայի դեմ կռվելը նրանց քաղաքացիական պարտքն էր: Թուրքիայի դեմ պատերազմին մասնակցում էին նաև մեծ թվով մահմեդականներ, թուրքական ազգությունների ներկայացուցիչներ, այդ թվում նաև թուրքերից շատ քիչ տարբերվող ադրբեջանցիներ, սակայն երիտթուրքերը դա դավաճանություն չէին սնվանում, իսկ հայերին նույն քաղաքացիական վարքագծի համար ձգտում էին գամել դավաճանության այունին:

201 Ցուշամտեան Մեծ եղեռնի, էջ 156-157 :

202 (Լեփսիուս) Հայկական ջարդերը: Տոքթ. Եռ. Լեփսիուսի տեղեկագիրը, Կ. Պոլիս, 1919, էջ 217:

Այդ մասին գերմանացի Հ. Շտուրմերը գրում է. «Միայն նման կեղծարարությամբ Բ. Դուռը կարող էր հասնել իր նպատակին՝ նախապես լավ մշակված ծրագրով բնաջնջել հայկական ցեղը»: Միջազգային հասարակական կարծիքին թյուրիմացության մեջ գցելու դիտավորությամբ Թալեաթի և Էնվերի կառավարությունը դավադրություններ էր հրահրում, դիմում ամենանենգ միջոցների: Երիտթուրքերի պաշտոնաթերթերում հրապարակված հոդվածաշարերով իշխանությունները ցանկանում էին համոզել ժողովրդին, թե բոլոր հայերը վտանգավոր թշնամիներ էին՝ «իբր երկու հզոր պետություններ՝ Ռուսաստանն ու Անգլիան, նրանց ոսկի, ինչպես նաև ռումբ ու հրազեն են մատակարարում թուրքերին կոտորելու համար...»: Թուրքերը հետևում էին թուրքական ասացվածքին. «Ով սեփական շանն ուզում է խեղդել, ասում է, թե կատաղած է»:

Ստացվեց թուրքական կարծիքների զավեշտական խճանկար: Թուրք գործիչները ցեղասպանության իրողության հարցում ի վերջո խճճվեցին և հրապարակ նետեցին բազում վարկածներ:

Սխալ են Ա. Համլեն և Ժան-Միշել Բրոնը, երբ գրում են. «Կրոնական մոլեռանդությունը, դարավոր ատելությունը, հայերի բարեկեցության հանդեպ նախանձը ջարդերի հիմնական դրդապատճառները եղան»[203]:

Ընդհանրապես, այս ձևակերպմանն առարկելը դժվար է: Սակայն երբ «ջարդեր» բառն օգտագործվում է «բնաջնջման» իմաստով, միանգամայն անընդունելի է: Զգացմունքային-հոգեոր գործոնները կարող են նպաստել ցեղասպանությանը, բայց ոչ դրա պատճառ հանդիսանալ:

Նախճիրի համապարփակությունը Բեռլինի քաղաքական վարքագծով բացատրելը նույնպես ճշմարտակերպ չէ: Գերմանիայի համար Թուրքիան ոչ այնքան ռազմական նշանակալից ուժ էր, որքան գործոն Անտանտի դեմ հանելու աշխարհի մահմեդականներին, թուրք ռասային պատկանող ժողովուրդներին: Սակայն այս գործոնի դերը նույնպես չպետք է գերագնահատել: Պատերազմում աշխարհի մահմեդականության կեցվածքը դրա ապացույցն է: Թուրքիայի հայտարարած ջիհադը ձախողվեց, այսինքն՝ մահմեդականության շրջանում լուրջ արձագանք չգտավ: Այդ ուղղությամբ Գերմանիայի ջանքերը ևս էական արդյունք չունեցան: Բեռլինն իր վրա էր վերցրել քրիստոնյաների դեմ մահմեդականների արշավի կազմակերպչի դերը: Նա մահմեդականներին անհանդուրժողականության կոչեր էր հղում քրիստոնյաների դեմ, բնականաբար, բացառությամբ գերմանացիների: Սրբազան պատերազմի հռչակագրերը կազմվել կամ խմբագրվել էին Բեռլինում:

Այդ նույն ժամանակ Մեքքայի շերիֆ Հուսեինն անգլիացի զորավար Լոուրենսի խորհրդով ջիհադ հայտարարեց Թուրքիայի և նրա դաշնակիցների դեմ: Երիտթուրքերը շուտով հասկացան, որ սրբազան պատերազմը տանուլ են տվել և թիրախը փոխեցին՝ հարված ուղղելով կայրության քրիստոնյաների դեմ: Գերմանիան դրան դեմ չէր. սկսվեց հայերի ջարդը: «Այն շրջաններուն մեջ, ուր հայերը գրեթե ամբողջութեամբ անզեն ըլլալով հանդերձ, կռուած են, ստիպված կատարած են ինքնապաշտպանութեամբ՝ իրենց ընտանիքներն ու անձերը պաշտպանելու համար վայրագութեանը դեմ այն անգութներուն, որոնք կը կազմեին այսպես կոչուած այս երկրի կառավարութիւնը: Ոչ մեկ ձևով և ոչ մեկ հիման վրայ կարելի է արդարացնել թրքական կառավարութեան վերաբերումը՝ ինչպես որ գերման կարգ մը հեղինակներ և լրագիրներ կը փորձեն կատարել: Սպանդի և տեղահանութեան անոնց քաղաքականութիւնը կատարուած է կամովի և առանց գրգռութեան: Եվ բնաջնջումի քաղաքականութիւնը գործադրուած է շատ ավելի վճռականութեամբ և արիւնի ծարավ կատարելագործումով թրքական վարչամեքենայի ներկայ պարագլուխներուն կողմե՝ անոնք Միութիւն և Ցառաջադիմութիւն Կոմիտե անունով կը նկարագրեն իրենք զիրենք, քան այն, որ կատարվեցավ Ապտիւլ Համիտի ժամանակին»[204]:

Հայերի բռնագաղթն ու կոտորածները երիտթուրքերը նաև ելք էին համարում այն ճգնաժամից, որը 1908թ. հեղաշրջումը ոչ միայն չհաղթահարեց, այլ ավելի խորացրեց: Դեռ Սալոնիկի համաժողովներում արձանագրվեց. «Հույսերը, որ դրվել էին Սահմանադրության վրա, շատ քիչ չափով արդարացան»: Պատճառը համարվեց ոչ թե սահմանադրության հիմքի վրա հասարակության վերակառուցման ձախողումը, այլ այն, որ սահմանադրության հռչակած սկզբունքնե-

203 Համլեն Ա., Բրոն Ժ. Վերականգնված հիշողություն, Երևան, 1995:

204 Թորոկեան Շ. Հայկական հարցը և միջազգային օրենքը, Բեյրութ, 1976, էջ 33:

ը չէին համապատասխանում կայսրության պայմաններին: Անհաջողության պատճառները փնտրելով իրենից դուրս՝ իթիհադը որոշեց, որ մասնավորապես քրիստոնյաները, սահմանադրությունով իրենց շնորհված իրավունքներից օգտվեցին ոչ թե ի շահ ընդհանուր հայրենիքի բարօրության, այլ իրենց մեկուսի նպատակներն իրականացնելու համար, որոնք հակասում էին կայսրության շահերին: Հետևաբար պետք էր վերադառնալ հնին, թույլ չտալ քրիստոնյաներին զարգանալու մահմեդականների հետ մնալու հաշվին: Այդ իրողությունը հաստատում են նաև թուրք պատմաբանները. «Իթիհադը պատեհապաշտ քաղաքականությամբ չկարողացավ հիմնական ծրագիր մշակել... Մի կողմից, հրապարակ հանեց աշխարհիկ ծրագրեր, իսկ մյուս կողմից, դրսևորում էր կրոնական նեղմտություն... իթիհադի շրջանում երկրի տնտեսական դրությունը շատ ավելի վատ էր, քան Համիդի օրոք»[205]:

Դեռ երբեք հայոց ցեղասպանությունը ծնող պատճառներն այնպիսի հրեշավոր նենգափոխությունների չէին ենթարկվել, ինչպես այդ կատարվում էր սկսած 1970-ական թվականներից: Թուրքերն իրենց մոգոնածներին լուրջ տեսք տալու դիտավորությամբ դրանք հրամցնում են որպես «գիտական նորագույն նվաճումների» արդյունք: Պառաված անբարոյական կնոջ հոգեբանությամբ թուրք պատմաբաններն ու քաղաքագետներն աղմկում են՝ «Օգնեցեք, բռնաբարում են, սարսափելի հայերը ոչ միայն բնաջնջել են խեղճ ու անօգնական թուրքերին, այլև սպանության մեղքը նրա վրա են բարդում»: Քարոզչական այդ արշավին եռանդուն մասնակցություն ունեցավ (այսօր էլ ունի) տարբեր երկրների զանգվածային տեղեկատվության միջոցների մի մասը: Արտասահմանյան մամուլը Մեծ եղեռնին անդրադարձել է սկսած այն օրից, երբ տեղի էր ունենում: Օրինակ կարող էր ծառայել ժամանակի ամերիկյան մամուլը, որին առանձնակի անդրադառնալը նպատակահարմար է, որովհետև, նախ, խոսքը գնում է իրադարձությունների «տաք հետքերից ծնված» հրապարակումների և այն մասին, որ 1914-16թթ. ԱՄՆ-ը Մերձավոր Արևելքում դեռևս աշխարհաքաղաքական խոշոր նպատակներ չէր հետապնդում, աշխարհամարտին չէր մասնակցում, այսինքն՝ համարվում էր չեզոք երկիր, և նրա մամուլն ու լրագրողներն էլ ազատ մուտք ունեին Թուրքիա և պարտադրված չէին ցեղասպանության մասին տեղեկատվությունն ամբողջությամբ ենթարկել Մերձավոր Արևելքում Վաշինգտոնի քաղաքական, որոշ առումով նաև տնտեսական շահերին: Սակայն ասվածը բառացի չպետք է հասկանալ, որովհետև այն, որ դարասկզբին ամերիկյան մամուլը եռանդուն անդրադառնում էր Արևելյան հարցին, հաստատում է մի իրողություն՝ ԱՄՆ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումները հրետանային նախապատրաստության դեր էին խաղում Մերձավոր Արևելք նրա տնտեսական ու քաղաքական ներթափանցման համար:

ԱՄՆ Թուրքիայի դեսպան Զիա Մուֆտա Զադեն 1915թ. հոկտեմբերի 18-ին հանդես գալով «New York Times» թերթում և հարձակվելով հայ ժողովրդի պատմության թուրք կեղծարարներին քննադատողների վրա, գրում է. «...Որտե՞ղ է Հայաստանը: Եթե նկատի ունեն բոլոր այն վայրերն ու քաղաքները, որոնցում ապաստան են գտել որոշ թվով հայեր, ապա այդ դեպքում Հայաստանը պետք է ներառի ոչ միայն Հնդկաստանի և Հունաստանի միջև եղած ամբողջ տարածքը, այլև Նյու Յորք քաղաքը, որտեղ մեծ թվով հայեր են բնակվում: Հարցն այն է, որ նշված տարածքներից ոչ մեկում հայերը մեծամասնություն չեն կազմել... Եթե հայերը նկատի ունեն Ռուսաստանին սահմանակից Հայաստանը,- շարունակում է այդ թուրքը,- որտեղ իրենք ավելի խիտ են բնակեցված, ապա պետք է նկատի առնվի նաև Կովկասի՝ Ռուսաստանի հարևան գավառները, որտեղ հայ բնակչությունն առավել խիտ է: Ճշմարտությունն այն է, որ կենտրոնացված Հայաստան չկա, և Թուրքիայի հայերն օսմանյան քաղաքացիներ են, ինչպես նրանք Ռուսաստանի քաղաքացիներ են Ռուսաստանում, կամ ամերիկյան քաղաքացիներ Միացյալ Նահանգներում»: Ուրեմն, երկրագնդի վրա Հայաստան ասած երկիր չի եղել ու չկա, այլ կան միայն աշխարհով մեկ ցրված հայեր: Այսինքն՝ հայը հայրենիք չունի և նրա ինքնավարության և անկախության պահանջը Թուրքիայում նույնքան անտրամաբանական է, որքան անտրամաբանական է այդ պահանջը Նյու Յորքում, Հնդկաստանում, Պակիստանում և այլուր:

205 Chaliand G., Ternon Y. Le Genocide des Arme'niens,Bruxelles, 1980, p. 63.

Շարունակենք մեջբերումը դեսպանի հոդվածից. «... Կարևոր չէ, թե հայերը որտեղ են տեղավորված, լինի դա Թուրքիան, Ասիան, Եվրոպան կամ Ամերիկան, նրանք ամեն տեղ մնում են նույն խռովարար տարրը, որոնց առևտրական հարաբերությունները նպաստում են չհիմնավորված համբավ ձեռք բերելուն... հայերի մեծ մասը ճանաչվել է անցանկալի տարրեր բոլոր նրանց կողմից, ում հետ գործ են ունեցել աշխարհի ցանկացած մասում»: Անդրադառնալով ամերիկյան մամուլում տպագրված հայ կամավորների լուսանկարներին՝ դեսպանը շարունակում է. «Այս նկարները ցույց են տալիս հայ կամավորներին խրամատավորված կրակելիս թուրք զինվորների վրա: Ես կցանկանայի իմանալ, թե ամերիկյան հասարակությունն ի՞նչ կմտածեր, եթե տեսներ հայ կամավորներին խրամատավորված կրակելիս ամերիկյան զինվորների վրա...»: Դեսպանը քաջ գիտեր, որ այդ լուսանկարների մեծ մասը կեղծ էր՝ պատրաստված թուրքերի կողմից: Նա այնուհետև գրում է. «Լորդ Բրայսի ղեկավարած կոմիտեի հրատարակած տեղեկությունների ճշտությունը պետք է կասկածի տակ առնվի, եթե հիշենք, որ կոմիտեն տեղեկատվություն ստանում է գործողությունների մասին, որոնք կատարվում են 1000 մղոն երկարություն ունեցող պետության ներսում և վայրերում, որտեղ հասնելը գործնականում անհնար է»: Դեսպանը միակ հավաստի աղբյուր համարում է ամերիկյան միսիոներների տեղեկատվությունը և մեջբերում է կատարում «New York Times» թերթի 1915թ. հոկտեմբերի 6-ի համարում տպագրված մի նյութից. «27 օր է, 1500 հայ գրավել են Վանը, դիմադրում են 5000 թուրքերի և քրդերի»: Այժմ ուշադրություն դարձրեք իմ խոսքերին: Վանը օսմանյան քաղաք է, հետևաբար հայերի գործողությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ բացահայտ ապստամբություն: Տարօրինակ կերպով դոկտոր Յարովը հանցագործություն է համարում, որ գերմանացի սպաներն առաջնորդում էին թուրքերին և օգտագործում էին հաուբից ապստամբությունը ճնշելու համար... Ես բացարձակապես հերքում եմ կոտորածների ու դաժանությունների վարկածը: Եթե կանայք ու երեխաները սպանվել են կռվի ժամանակ, ես կրկնակի եմ ողբում, բայց ցանկանում եմ նշել, որ նման դեպքեր պատահում են ամեն օր, նույնիսկ արևմտյան ռազմաճակատներում»:

Չորս օր հետո, հոկտեմբերի 22-ին «New York Times»-ում հանդես եկավ մի ուրիշ թուրք գործիչ Էյուսեֆին: Նա գրում է. «Օսմանյան դեսպանատունը հենց նոր ստացավ մի պաշտոնական հաղորդագրություն... մուսուլմանների դեմ ռուսական զորքերի բարբարոսական գործողությունների վերաբերյալ, որոնց համագործակցել են հույներն ու հայերը: Այս վայրագ գործողությունները կատարվում են ռուսական իշխանության աչքի առաջ Թավշեգուերդի, Փենագուերդի, Օլթիի, Արդանուշի շրջաններում: Ռուսական և հայկական ավազակախմբերն ուղղվեցին Մուրադ բեյի՝ Քիրեչաղ գյուղի ամենահարուստ մարդու, տունը... Ռուս և հայ ավազակախմբերը բացահայտ մտադրություն ունեին հարձակվելու նրա ծեր կնոջ վրա: Մուրադ բեյը հասկացավ անպատվությունից փրկության անհնարինությունը և հրացանով սպանեց կնոջը, որից հետո ավազակները սպանեցին նրան և իրենց կատաղությունը թափեցին Մուրադ բեյի հարսի վրա, որդուն՝ Սուլեյմանին, նույնպես սպանեցին: Հանցագործներն այնուհետև տեղափոխվեցին Իզենսուտ գյուղը և ... նախ հաշվեհարդարի ենթարկեցին տղամարդկանց և ապա խուժեցին կանանց վրա... որոնցից 13 տարեկան երկու աղջիկ մահացան բարբարոսությունից ու կոտանքներից: Մուսուլման կանանցից շատերը ապաստան էին գտել Փարջան գյուղում: Նրանց վրա հարձակվեցին հույներն ու հայերը: Կանանցից շատերը նախընտրեցին մահն անպատվությունից՝ նետվելով 200 մետր բարձրություն ունեցող լեռան գագաթից...»:

Դժվար է հաստատ պնդել, որ այս փաստերը բացարձակ հերյուրանք են, չնայած Կորանը խրախուսում է քրիստոնյաներին խաբելը, և թուրքերը դրանից հաճույքով են օգտվում: Ընդունենք, որ Էյուսեֆին չի ստում, բայց չէ՞ որ փոխվրեժի այս գործողությունները միայն կաթիլ էին հայերին զանգվածաբար խոշտանգելու միջոցով ոչնչացնելու թուրքական օվկիանոսում:

«New York Times»-ը 1918թ. հոկտեմբերի 28-ին հանդես գալով ԱՄՆ Թուրքիայի դեսպանի վերը նշված բացահայտ կեղծարարության դեմ, գրեց. «Զիա Մուֆտա Զադեն՝ թուրքական կոտորածների ականավոր ջատագովը, որպես արդարացում օսմանյան կառավարության հանցավոր գործողությունների, հարց է տալիս. «Որտե՞ղ է Հայաստանը»: ...Հալեպի, Ադանայի, Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Մամուրեթ ուլ Ազիզի հայաբնակ նահանգները կազմում են Տաճկահայաստանը: Թուրքական կառավարությունն ինքը ընդունել է Հայաստանի գոյու-

թյունը: Երբ թուրքական բանակները ջախջախվեցին, սուլթանը և նրա խորհրդատուները հասկացան, որ հաղթողը՝ Ռուսաստանը, կարող է պահանջել իր գրաված Էրզրումի, Դիարբեքիրի և Սրվազի նահանգները: Ուստի հայերին ստիպեցին, որ նրանք հայաբնակ գավառների համար պահանջեին ինքնավարություն Օսմանյան գերիշխանության ներքո»:

Բանակցությունները Սան Ստեֆանոյում և Բեռլինում անհերքելի ապացույցներ են:

«Լիթերերի Դայջեսթը» 1916թ. նոյեմբերի 11-ին գրում է. «Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հալիլ բեյը մի հարցազրույցի ժամանակ ասաց. «Հայերը պետք է իրենց մեղադրեն դժբախտության համար: Եթե նրանք հնազանդ լինեին և մտավոր կարողություններով օգնեին Թուրքիային, ապա թուրքերը նրանց չէին կոտորի: ...Երիտթուրքերը հայերին նայում էին որպես թուրքական կայսրության արժեքավոր հատվածի»: Հեղափոխությունից հետո ամեն ինչ գնում էր իր հունով և երիտթուրքերը հուսով էին, որ վերջապես գտել են Թուրքիայի հին վարչակազմին անհանգստացնող հարցի լուծումը: Սակայն Բալկանյան պատերազմը հայերին մղեց նորից առաջ քաշելու առանձնանալու գաղափարը:

«Երբ սկսվեց աշխարհամարտը, մենք ճշտորեն գիտեինք, թե հայերն ինչ էին անելու: Մեծ թվով ռումբեր, հրացաններ և փող էր բերվել երկիր: Ես այդ ժամանակ խորհրդարանի նախագահ էի և շատ էի սիրում հայերին: Ուստի նրանց ներկայացուցիչներն հարցրեցի, թե ինչ են մտադիր անել: Զրույցի վերջում ասացի. «Պարոններ, ես լիովին հասկացա ձեր մտադրությունը և հուսով եմ, որ դուք էլ հասկացաք մերը: Ձեր գործն է պայմանավորվել Անտանտի հետ, բայց իմացեք, որ օսմանյան կառավարությունը կդիմի ամենադաժան գործողությունների, եթե հանդես գաք թուրքերի դեմ... Դուք կարող եք գործել, և ես ձեզ հաջողություն եմ ցանկանում, բայց եթե մենք պարտվենք, իմացեք, որ ձեր կողմից ամենաաննշան վտանգավոր շարժումը դժբախտություն կբերի բոլոր հայերին»: Չնայած այս զգուշացմանը, երբ ռուսները ներխուժեցին Փոքր Ասիա, հայերն ապստամբեցին: Թուրքական կառավարությունը միջոցներ ձեռք առավ մեկուսացնելու հայ առաջնորդներին: Հայերի արտաքսումը թուրքական կառավարության համար վիթխարի կորուստ էր: Բայց ի՞նչ կարող ես անել: Մենք պատերազմի մեջ էինք և առաջին հերթին պահանջվում էր անվտանգ դարձնել մեր երկիրը»:

Թուրքական պատմագրությունը մինչև օրս էլ թութակի համառությամբ կրկնում է, թե օսմանյան կառավարությունը հայերի ոչնչացման ծրագիր ու դիտավորություն չի ունեցել, և եթե հայերը կոտորվել են, ապա միայն այն պատճառով, որ նրանք դավաճանել կամ ըմբոստացել են օրինական կառավարության դեմ: Թուրքիան մի քանի ճակատում մահվենաց կռիվ էր մղում Անտանտի դեմ: Հայերն օգտվելով այդ ծանր վիճակից ապստամբություն բարձրացրին և օգնում էին ռուսական բանակին Արևելյան Անատոլիան, այսինքն՝ Արևմտյան Հայաստանը գրավելու և Ռուսաստանին միացնելու համար: Մինչդեռ իրականությունն այն է, որ կայսրության տարածքում բնակվող ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի ուծացումն ու կոտորածները եղել են օսմանյան կառավարողների ավանդական քաղաքականությունը: Պատմությանը հայտնի են թուրքերի կողմից հույներին, հայերին, հրեաներին, բուլղարներին, սերբերին, արաբներին, քրդերին, ասորիներին զանգվածաբար կոտորելու բազմաթիվ փաստեր: XIX դարի երկրորդ կեսին ձևավորվեց հայերի բնաջնջման քաղաքականությունը, որ 70-ական թվականների վերջերին դարձավ պետական քաղաքականություն: Այդ քաղաքականության իրականացման ձևերն ու եղանակներն իրավիճակին համապատասխան փոփոխվում էին, բայց ցեղասպան գործունեությունը երբեք չի դադարել:

80-ական թվականներին Հայաստանը հայերից դատարկվում էր տնտեսական քայքայման ու քաղաքական հալածանքների միջոցով՝ հայ գյուղացին հողազրկվում, ունեզրկվում էր և լքում էր գյուղն ու հեռանում քաղաքներ և ուրիշ երկրներ կամ բռնի մահմեդականացվում ու թուրքացվում էր: 90-ական թվականները դարձան հայերին ֆիզիկապես բնաջնջելու տարիներ: Ոչնչացվեց շուրջ 300 հազար հայ: 1900-ական թվականներին կայսրությունում ծայրաստիճան խորացավ տնտեսական, սոցիալական և քաղաքական ճգնաժամը: Այդ պայմաններում ուծացման և բնաջնջման քաղաքականությունը որոշ չափով մեղմացավ, բայց երբ իշխանության գլուխ անցան երիտթուրքերը, ցեղասպանության քաղաքականությունը ոչ միայն վերածնվեց, այլ նաև թուրքիզմի գաղափարախոսության հիմքի վրա կայսրության ամբողջականությունը պաշտպանելու և աշխարհակալ տիրակալություն ստեղծելու գլխավոր պայման համարվեց հայ ժողովրդի բնաջնջումը:

Թուրքերի հանցագործությունը, գրում է Լ. Զորմիայանը, որևէ արդարացում չունի: «Ինչ էլ որ եղած ըլլայ հայերու յանցանքը թիւրքերուն հանդեպ, ինչ սխալ ալ գործած ըլլան հայ քաղաքական գործիչները, ինչ դժվարութիւններ և նեղութիւններ ալ պատճառած ըլլան թիւրքերուն, ինչ ընդվզումներ, վատութիւններ, նոյնիսկ դավաճանութիւններ կատարած ըլլան հայ անհատները կամ կազմակերպութիւնները թիւրք պետութեան հանդեպ, կարելի չէ որևէ բանական և արդարացուցիչ պատճառ ցոյց տալ հայ ժողովուրդի ամբողջութիւնը բնաջնջելու գիտակցութիւնը հետապնդող քաղաքական Ոճիրին», որ գործադրեցին թուրքերը: «Ցանցանքը մը պատժելու համար տրուած որոշում մը չէր տարագրութիւնը». թուրքերը պատժում էին ոչ թե հայ այս կամ այն հատվածին խռովարարության կամ ուրիշ հանցագործությունների համար, այլ «հայ ըլլալու փաստին և իրողութեան մեջ իսկ սպանելու, բնաջնջելու արժանի յանցանք մը և ոճիր տեսան»: Նորածինը, ծերունին, կինը, երեխան, ովքեր քաղաքական ու սոցիալական խնդիրներով երբեք չէին զբաղվել, նույնիսկ չէին հասցրել իմանալ մայրենի լեզուն, զուրկ հայրենիք հասկացությունից տարագրվելու և սպանվելու արժանի համարվեցին միմիայն հայկական ծագում ունենալու համար: Ցեղասպանությունը չէր կարող լինել հանկարծակի բռնկման, զայրույթի հետևանք, այլ տևական ժամանակում մտահղացված, ծրագրված ու նախապատրաստված գործ էր: «Ուսումնասիրված, խնամքով նախապատրաստված և գործողության մեջ դրված հաստատ և անընկճելի կամքով, որևէ արգելքի ու դժվարության առջև չընկրկելու, չպահանջելու հաստատ վճռականությամբ»:

Իթիհադն իր աշխարհըմբռնմամբ Աբդուլ Համիդից հեռու չէր: Նախ, նրա հռչակած սահմանադրությունն անհասկանալի էր մահմեդական լայն զանգվածներին և ընդունվում էր միայն մտավորականության մի մասի կողմից: Սահմանադրությունը հռչակեց կայսրության ժողովուրդների ազատություն և բարեկեցություն կայսրության անկումը կասեցնելու համար, իսկ իսլամական մոլեռանդության վրա հարձակվեց թուրք նոր ուժերի համար դեպի հասարակության վերին խավերը ճամփա հարթելու: Երիտթուրքերը կայսրությունը համարում էին նրա բնակչության 1/3-ը կազմող թուրքերի սեփականությունը, իսկ մյուսներին անվանում էին հպատակներ, այսինքն՝ շարունակում էին հին վարչակարգի քաղաքական մտածողությունը: Հայկական կոտորածների ու ցեղասպանության գլխավոր պատճառ հռչակած կայսրության ամբողջականությունը պաշտպանելու սկզբունքը գործում էր նաև XX դարի սկզբներին, մինչև 1910-12 թվերը: Սակայն պանօսմանիզմի քավարանով անցած ու նրա սկզբունքներով մկրտված երիտթուրքերն աստիճանաբար դրանից հեռացան՝ սկզբում դեպի պանիսլամիզմ, իսկ առաջին աշխարհամարտին նախորդած վայրիվերումները նրանց շպրտեցին պանթուրքիզմի գիրկը: Երիտթուրքերի Սալոնիկի 1910-1911 թվերի համաժողովներն այդ անցման արտահայտություններն էին:

Դրա հետ միասին հարկ է նկատի ունենալ, որ թուրքական ոչ մի գաղափարախոսություն «մաքուր» և մյուսներից անկախ չէր: Կրոն և աշխարհիկություն, հավատ և քաղաքակրթություն՝ դրանք բոլորն օգտագործվում էին երկիմաստ, նայած պահի պահանջների: Դրանով պետք է բացատրել նաև երիտթուրքերի շրջադարձները: Նրանք աշխարհիկ հայացքների տեր էին, սակայն մահմեդականության կրողների հետ նրանց առճակատումը շատ արագ թուլացավ, իսկ շուտով իսպառ մոռացան իրենց հակաիսլամիզմը և Սահմանադրությունը դրեցին Կորանի հովանու ներքո: Նույն նկատառումով նրանք ոչ միայն սուլթանությունը, այլև խալիֆությունը չվերացրեցին: Աբդուլ Համիդը գահընկեց արվեց, բայց սուլթան ու խալիֆ հռչակվեց նրա կրտսեր եղբայրը՝ Ռեշադը: Համենայն դեպս, երիտթուրքերն իսլամիզմի և օսմանիզմի շավիղներում երկար չդեգերեցին, շրջադարձ կատարեցին դեպի ազգայնամոլությունը և իրենց նախորդների իզմերը պարուրեցին թուրքիզմով, պանթուրքիզմով ու թուրանիզմով:

ՍՏԵՓԱՆ ԿԱՐԱՊԵՏԻ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ II

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

СТЕПАН КАРАПЕТОВИЧ ПОГОСЯН

ИСТОРИЯ АРМЯНСКОГО ГЕНОЦИДА

ТОМ II

МОНОГРАФИЯ

На армянском языке
Ереван "Айастан". 2009

Խմբագիր՝ *Ռուզան Մարգարյան*
Համակարգչային շարվածքը՝ Մարգարիտ Արիստակեսյանի
Համակարգչային մակետը՝ *Աննա Կոբալյանի*
Կազմի ձևավորումը՝ *Աիդա Համբարձումյանի*

Տպագրությունը՝ *«Եզեա»* տպագրատան

ԵԳԵԱ

Ստորագրված է տպագրության՝ 30.04.2009թ.:
Ծավալը՝ 50.5 տպ.մամուլ:
Չափսը՝ 70x100 1/16:
Տպաքանակ՝ 500:
Գինը՝ պայմանագրային:

«Հայաստան» հրատարակչություն. Երևան, Իսահակյան 28: